ՀՐԻՍՏՈՆՅԱ ԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Üí Çñí áõÙ¿ Ð³ Ûáó Ù»Í ¹³ ñÓÇ
1700-³ ÙÛ³ ÏÇÝ

¶ ÇñùÁÉáõÛë¿ ï »ëÝáõÙ
² Ù»Ý³ ÛÝÑ³ Ûáó Ï³ ÃáÕÇÏáë Ü.ê .ú .î .î . ¶ ³ ñ»· ÇÝ´ Ü»ñëÇëÛ³ ÝÇ
Ð³ Ûñ³ å »ï ³ Ï³ ÝûñÑÝáõÃÛ³ Ùµ:

¶ ÇñùÁï å³ · ñí áõÙ¿
³ ½ÝÇÏ Ýí Çñ³ µ»ñáõÃÛ³ Ùµ ÉÇµ³ Ý³ Ý³ µÝ³ Ï µ³ ñ»ñ³ ñÝ»ñ
ï »ñ »õï ÇÏ ÇÝÄ Çñ³ Ûñ »õ Ð³ ëÙÇÏ ¶ ³ µñÇ»É³ ÝÝ»ñÇ:
ÚÇß»ëó¿ î ¿ñ ½áõËï ë Ýáó³ »õ ÁÝ¹ áõÝ»ÉÇ³ ñ³ ëó¿:

Ð³ Ûñ³ Ï³ ÝÑ³ Ýñ³ · Çï ³ ñ³ ÝÇ· ÍË³ í áñ Ë Ùµ³ · ñáõÃÛáõÝÁ
ßÝáñÑ³ Ï³ ÉáõÃÛáõÝ¿ Ñ³ Ûñ ÝáõÙ
Úà ôÜº ê Î ú -Ç· áñÍ »ñáí Ð³ Ûë ë ï ³ ÝÇ³ ½ ³ ÛÇÝÑ³ ÝÓÝ³ ÅáÕáí ÇÝ
· ñùÇå³ ï ñ³ ëï Ù³ ÝÁóáõó³ µ»ñ³ Í
ÝÛáõÃ³ Ï³ Ý³ ç³ ÏóáõÃÛ³ ÝÑ³ Ù³ ñ:

§øðÆêî àÜÚ² Ð² Ú² êî ² Ü¦ Ð² Üð² ¶Æî ² ð² ÜÆ
¶Æî ² ÊØ´ ² ¶ð² Î ² Ü Êàð Ðàôð¸

Ðàì Ð² ÜÜº ê ² Úì ² ¼Ú² Ü (·ÉË. ËÙµ³ · Çñ-ï Ýûñ»Ý), Ð² ÚÎ Ê² â² îðÚ² Ü (å³ ï ³ ëË³ Ý³ ï áõ ù³ ñï áõÕ³ ñ), Îàêî ² Ü¸ ÆÜ Êà ô¸ ² ì º ð¸ Ú² Ü, Øàõð² ¸ Ð² êð² ÂÚ² Ü, ² ðî ² Þº ê Ô² ¼² ðÚ² Ü (ËÙµ³ · ñáõÃÛ³ Ý í³ ñÇã), ² ð² Ø ê² ð¶êÚ² Ü (·ÉË. ËÙµ³ · Çñ-ï Ýûñ»ÝÇ ï »Õ³ Ï³ É, Ð² Î à´ øÚàêº Ú² Ü
Þ² Ðº ³ ñù.² Öº ØÚ² Ü, º ¼ÜÆî »åë.äº îðàêÚ² Ü, Øº êðàä ùÑÝ.² ð² ØÚ² Ü

¶ÆðøÀ Ðð² î ² ð² Î àôÂÚ² Ü ¾ä² îð² êî º È
§øðÆêî àÜÚ² Ð² Ú² êî ² Ü¦
Ð² Üð² ¶Æî ² ð² ÜÆ ÊØ´ ² ¶ðàôÂÚàôÜÀ

ÊÙµ³ · ñáõÃÛ³ Ý í³ ñÇãª ² ñï ³ ß»ë Ô² ¼² ðÚ² Ü, ³ í³ · · Çï ËÙµ³ · ÇñÝ»ñª ² ÝÝ³ ² ðº ì Þ² îÚ² Ü, ÈÇ¹ ³ Êà ô¸ àÚ² Ü, È³ áõñ³ Îàêî ² ÜÚ² Ü, Øáõñ³ ¹ Ð² êð² ÂÚ² Ü, ê³ Ñ³ Ï êº Ð² ÎÚ² Ü, È· áÝ êº ð¶êÚ² Ü, ² ñ³ êîºö² ÜÚ² Ü

º ðº ì ² Ü 2002

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ð² ÚÎ ² Î ² Ü Ð² Üð² ¶ Æ¶ ² ð² ÜÆ ¶ ÈÊ² ì àð Ê Ø´ ² ¶ ðà ôÂ Úà ðÜ

Ðî ¸ 030:23/28
¶Ø¸ 92+86.37
ø 935

Ð² ÚÎ ² Î ² Ü Ð² Üð ² ¶ ÆÊ ² ð ² ÜÆ
¶ ÆÊ ² Ðð ² î ² ð ² Î â ² Î ² Ü Ð² ÜÒÜ ² Ä à Ôà ì

ü .î . ê ² ð ¶ ê Ú² Ü (Ý³ Ë ³ · ³ Ñ), Ð.Ø. ² Úì ² ¼Ú² Ü (Ý³ Ë ³ · ³ ÑÇ ï »Õ³ Ï ³ É), È.² . ² Ô² Èà ì Ú² Ü, ê .ê . ² ðº ì Þ² î Ú² Ü, ¶ .º . ´ ² Ô¸ ² ê ² ð Ú² Ü, ² .¶ . ´ º ¶ È² ð Ú² Ü, ¶ .² . ´ ð à ñ Ú² Ü, ¾ê . ¶ ² ´ ð ÆÊ ÈÚ² Ü, ¶ .² . ¶ ² Èà Ú² Ü, ¶ .Þ. ¶ Úà¸ ² Î Ú² Ü, ² .Î . º ÔÆ² ½² ð Ú² Ü, ² .² . Â ² È² ÈÚ² Ü, æ.ä . Â à ð à ê Ú² Ü, ¾º . Ê ² â ÆÊ Ú² Ü, ì .º . Ê à æ² ´ º Î Ú² Ü, Úà â.º . Ê à æ² ØÆð Ú² Ü, Ü.Ð. Ðà ì Ð² ÜÜÆê Ú² Ü, ê .¶ . Ô² ¼² ð Ú² Ü, ² .Ð. Ø² ÜÂ ² Þ Ú² Ü, è .Ø. Ø² ð î Æð à ê Ú² Ü, È.Ð. ØÎ ð î â Ú² Ü, Úà â.Ð. Þà ôø à ôð Ú² Ü, ² .Ð. ê ² ð ¶ ê Ú² Ü, Ð.Ð. ì ² ð¸ ² ä º î Ú² Ü, ì .´ . ü ² Ü² ð æÚ² Ü

§ø ñÇëï áÝÛ³ Ð³ Ù³ ëï ³ Ý¦ Ñ³ Ýñ³ · Çï ³ ñ³ Ý: /§ø ñÇëï áÝÛ³ Ð³ Ù³ ëï ³ Ý¦ Ñ³ Ýñ³ · Çï ³ ñ³ ÝÇ
ø 935 · Çï ³ Ë Ùµ³ · ñ³ Ï ³ Ý Ë áñÑáõñ¹ ª Ð.Ø. ² Ûï ³ ½Ù³ Ý (· ËË . Ë Ùµ³ · Çñ-ï Ýûñ»Ý) ¨ áõñÇßÝ»ñ: _
º ñ.: Ð³ Ûï ³ Ï ³ Ý Ñ³ Ýñ³ · Çï ³ ñ³ ÝÇ · ËË ³ í áñ Ë Ùµ³ · ñáõÃÛáõÝ _ 2002. _ 1076 ¿ç: ÜÏ ., ù³ ñï »½

ø 5001000000 / 706(01)_2002 2002

¶Ø¸ 92+86.37

© Ð³ Ûï ³ Ï ³ Ý Ñ³ Ýñ³ · Çï ³ ñ³ ÝÇ
· ËË ³ í áñ Ë Ùµ³ · ñáõÃÛáõÝ, 2002

ISBN 5_89700_016_6

301 թվականին Գրիգոր Լուսավորչի քարոզչությամբ և Հայոց Տրդատ Գ Մեծ թագավորի աջակցությամբ քրիստոնեությունը՝ «Լուսավորչի լույս հավատքը», աշխարհում առաջին անգամ պաշտոնապես հռչակվել է Հայաստանի պետական կրոն: Հայոց առաջին հայրապետ Գրիգոր Ա Լուսավորիչը, շարունակելով Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործը, ապահովել է Հայոց առաքելահաստատ Աթոռի ժառանգականությունն ու հարատևությունը պատմական նոր իրադրությունում:

Հայոց կյանքում պետություն-եկեղեցի հարաբերությունների երկու պատմական և շրջադարձային իրողությունները՝ Տրդատ Գ Մեծ - Գրիգոր Ա Լուսավորիչ (ազգի քրիստոնեացում՝ պետական-քաղաքական շրջադարձ) և Վռամշապուհ-Սահակ Ա Պարթև-Մեսրոպ Մաշտոց (քրիստոնեության ազգայնացում՝ հոգևոր-մշակութային շրջադարձ), արմատական, խոր փոփոխություններ են կատարել հայ ժողովրդի կյանքում, երկիրը հասցրել քաղաքակրթության նոր մակարդակի, պայմանավորել հայի անհատական և հավաքական աշխարհընկալումն ու աշխարհայացքը, նպաստել ազգային ինքնագիտակցության զարթոնքին: Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին արհավիրքներով լի Հայոց պատմության ընթացքում եղել է ազգը ոգեշնչող և միավորող, պետականության բացակայության պայմաններում նրա տրոհված հատվածները շաղկապող հուսալի օղակ:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը, ձեռնարկելով «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի հրատարակումը, նպատակ չի ունեցել ստեղծելու ընդհանրապես քրիստոնեությանը նվիրված համընդգրկուն հանրագիտարան, ուստի աստվածաշնչյան սրբերն ու անձերը, գրքերը, եկեղեցական զգեստներն ու սպասքը, քույր եկեղեցիների պատմությանն առնչվող երևույթներն ու անձերը, կրոնաեկեղեցական բազմաթիվ հասկացություններ ներկայացված են համահավաք հոդվածներում (Աստվածաշունչ, Ավետարան, Առաքյալներ, Մարգարեներ, Մեղք, Զգեստ եկեղեցական, Սպասք եկեղեցական, Ղպտի ուղղափառ եկեղեցի, Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքություն և այլն):

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի նպատակն է ցույց տալ Հայաստանի տեղը քրիստոնյա աշխարհում, բացահայտել քրիստոնյա քաղաքակրթությանը և համամարդկային մշակույթին հայ ժողովրդի բերած անկրկնելի ավանդը: Հանրագիտարանն ընդհանրացնելով հայոց հոգևոր միտքն ու իմաստասիրությունը՝

ներկայացնում է Քրիստոնյա Հայաստանն ու Հայաստանյայց առաքելական եկեղեցին, հայոց դարձն ու Հավատո հանգանակը, հայոց հոգևոր ըմբռնումներն ու մշակութային մարմնավորումները, կրոնաեկեղեցական գաղափարախոսությունն ու աստվածաբանական միտքը,

պարզաբանում է քրիստոնեության ըմբռնումն ու արտացոլումը հայ հոգևոր և աշխարհիկ կեցության մեջ, մշակույթի ոլորտում,

լուսաբանում է հայ ժողովրդի և եկեղեցու ընդելուզված պատմությունը, Հայ եկեղեցու բարոյական սկզբունքներն ու ժողովրդականությունը, ներողամտության ոգին և ազատախոհությունը, նրա տեղը քրիստոնյա քույր եկեղեցիների ընտանիքում:

Հանրագիտարանում ընդգրկված են հետևյալ հիմնական նյութերը. քրիստոնեության մուտքը և տարածումը Հայաստանում, Հայ եկեղեցու պատմությունը, դավանանքը, խորհուրդները, ծեսերը, տոները, նվիրապետությունը, պատրիարքությունները, թեմերը, մասնավոր և հակաթոռ կաթողիկոսական աթոռները, Աստվածաշնչի հայերեն թարգմանության և հրատարակման պատմությունը, Սուրբ Գրքին նվիրված մեկնողական, ճառախոսական մատենագրությունը, Հայ եկեղեցու սրբերը, հայրերը, վկաները, Հայոց վանքերն ու եկեղեցիները, դրչության կենտրոնները, համալսարանները, վարդապետարանները, հայ քրիստոնեական մշակույթը (գիր, դպրություն, հոգևոր գրականություն, երաժշտություն, մանրանկարչություն, եկեղեցական ճարտարապետություն և այլն), տիեզերական և ազգային-եկեղեցական ժողովները, եկեղեցու ականավոր ներկայացուցիչների (կաթողիկոսներ, պատրիարքներ, աստվածաբան վարդապետներ), հայ նշանավոր գիտնականների կյանքն ու գործունեությունը, թեմային նվիրված նրանց մատենագրական վաստակը, շարականագիր երաժիշտները, մանրանկարիչները, ճարտարապետները: Հանրագիտարանում զետեղված են նաև բազմաթիվ հոդվածներ Հայաստանի հարևան քրիստոնյա երկրների, եկեղեցիների, դավանանքների և վարդապետությունների վերաբերյալ:

Իր տեսակի մեջ նախադեպը չունեցող այս հանրագիտարանը պտուղն է հայրենի և արտերկրի ճանաչված գիտնականների, աստվածաբան եկեղեցականների, Մայր աթոռի միաբանների մտքի և սրտի:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի գիտախմբագրական հանձնաժողովը հուսով է, որ այս գիրքը լավագույն նվերն է հայ ժողովրդի մեծ դարձի և մկրտության 1700-ամյակին և իր զգալի ավանդը կունենա հայոց քրիստոնեական վերազարթոնքի առաջընթացում:

* * *

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը պարունակում է 1070 հոդված, 12 քարտեզ, մոտ 700 գունավոր և սև-սպիտակ պատկերազարդում: Ներդիրներով են տրված գունավոր պատկերազարդումները (16 ներդիր) և քարտեզները (1 ներդիր): Գունավոր պատկերազարդում ունեցող հոդվածի վերջում (գրականության կամ երկերի ցանկից առաջ, եթե դրանք կան) նշված է հոդվածի պատկերի առկայությունը ներդիրում: Օրինակ, պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 2-րդ (3–5-րդ) պատկերը (պատկերները). նշանակում է տվյալ պատկերը գտնվում է IV ներդիրի 4.1 էջի 2-րդ (3–5-րդ) համարի (համարների) տակ:

Հանրագիտարանում Աստվածաշնչից վկայությունները և սուրբգրային տեղիների համարները հիմնականում մեջբերված են Մայր աթոռ Ս. Էջմիածնի 1994-ի հրատարակությունից:

Ա

ԱԲԳԱՐ, սուրբ Աբգար, ըստ ավանդության՝ I դարի անդրանիկ քրիստոնյա թագավորը, պարթև Արշակունի Արշամի որդին: Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Թագավորել է Օսրոյենե կոչվող երկրամասում, որի մայրաքաղաքն էր *Եդեսիան*: Ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության», եղել է Հայոց թագավոր (Գիրք 2, գլ. ԻԶ, ԻԷ, ԻԸ, ԻԹ), ըստ այլ աղբյուրների՝ ասորի թագավոր:

Աբգարը եղել է Օսրոյենեի թագավորության (Ք.ծ.ա. 132 – Ք.ծ.Հ. 216) բոլոր գահակալների անունը: Պատմ. փաստերի համաձայն, քրիստոնեությունն առաջինն ընդունած (207-ին) թագավորը եղել է Ա. IX (179–214): 91-ին Օսրոյենեի գահը գրված Հայոց թագավոր Սանատրուկը ստացել է «Եդեսիո թագավոր» տիտղոսը, ենթադրվում է՝ նաև Ա. անունը: Մովսես Խորենացին, հիմնվելով հայերեն թարգմանված ասոր. հնագույն աղբյուրների վրա («Վարդապետութիւն Ադդէի», «Լաբուբնեայ Դիւանագրի Եդեսիոյ. Թուղթ Աբգարու», 1868), Ա. IX-ի դարձի ավանդական պատմությունը վերագրել է Ա. V-ին, որն ապրել է I դ., Հիսուս Քրիստոսի ժամանակ, լսել Փրկչի սքանչելագործությունների համբավը և հավատացել, որ «դրանք մարդու զորություններ չեն, այլ Աստծու, որովհետև մարդկանցից ոչ ոք չի կարող մեռելներ հարուցանել, այլ միայն Աստված» (Գիրք 2, գլ. Լ): Եվ հավատալով, որ Հիսուսը ճշմարիտ Աստծո Որդին է, իր բանբերների միջոցով թուղթ՝ նամակ-խնդրագիր է ուղարկում Երուսաղեմ՝ Փրկչին, որպեսզի նա գա և բժշկի իրեն, «որովհետև նրա մարմինն ապականված էր չարաչար ցավերով» (նույն տեղում)՝ բորոտությամբ: Ա. արժանանում է Փրկչի պատասխանին՝ գրված Թովմաս առաքյալի ձեռքով: Պատասխան թղթում ասվում է, որ Փրկիչը դեռ գործ ունի կատարելու Երուսաղեմում, բայց կուղարկի իր աշակերտներից մեկին, որը կգա, կբժշկի «և կյանք կշնորհի քեզ և քեզ հետ եղողներին»: Փրկչի համբարձվելուց հետո Թովմաս առաքյալը Եդեսիա է ուղարկում *Թադեոս* առաքյալին, որը բուժում է Ա-ին, քաղաքի բոլոր հիվանդներին ու ախտավորներին, քարոզում Ավետարանը և Եդեսիայի episկոպոս կարգում *Ադդե* անունով մետաքսագործին, ապա մեկնում, ըստ Մովսես Խորենացու, Ա-ի քեռորդու՝ Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք (Գիրք 2, գլ. ԼԱ, ԼԲ, ԼԳ):

Այնուհետև Ա. թագավորը նամակներ (թղթեր) է հղում Հռոմ. Տիբերիոս կայսրին, Ասորեստանի Ներսեհ թագավորին, Պարսից Արտաշիր թագավորին, որպեսզի նրանք ևս ընդունեն Հիսուս Քրիստոսին՝ որպես Աստծո Որդու և Փրկչի. նաև հանձնարարում է, որ փընտրեն ու գտնեն Հիսուսի առաքյալներից մեկին (որը, հավանաբար, եղել է Սիմոն կամ Շմավոն Նախանձահույզը)՝ նրանից արքայության խոսքը լսելու նպատակով: Ա. մահացել է «երեսուն և ութ տարի թագավորելուց հետո», հավանաբար՝ Ք. ծ. Հ. 37-ին կամ 50-ին: Ա-ի թղթերը և պատասխանները («Հինգ թղթերի պատճենները») տրված են Մովսես Խորենացու

«Հայոց պատմության» 2-րդ գրքում (գլ. ԼԱ, ԼԲ, ԼԳ):

Ըստ ասոր. «Վարդապետութիւն Ադդէի» և «Լաբուբնեայ Դիւանագրի Եդեսիոյ. Թուղթ Աբգարու» աղբյուրների, Հիսուս Քրիստոսի պատասխանի հետ միասին Ա-ի սուրհանդակ Անանը բերել է նաև Փրկչի «կենդանագիր պատկերը» [թաշկինակի (սրբիչի) վրա դեմքի հպումով տպավորված]: Այդ թաշկինակը կամ դաստառակը պահվել է Եդեսիայում, ապա՝ տարբեր վայրերի եկեղեցիներում:

Հայ եկեղեցին նախապես ս. Ա-ի և ս. Ադդեի հիշատակի տոնը նշել է միասին: Բազմիցս հիշվում է Գրիգոր Մարզվանեցու և Լիակատար կոչվող Հայսմավուրքներում՝ դեկտ. 31-ին: *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսը հետագայում առանձնացրել է ս. Ա-ի հիշատակի տոնը, որը նշվում է Հիսնակի (Աստվածահայտնությանը նախորդող 50 օրերի տոնը) Դ կիրակիից հետո առաջին շաբաթ օրը: Սակայն, ինչպես նշում է Շնորհք արք. Գալուստյանը՝ «...տարեոյն գիրերուն համաձայն կը տեղափոխուի նաեվ Յիսն. Բ և Դ կիրակիներու յաջորդող...» («Հայազգի սուրբեր», 1997, էջ 178) երեքշաբթի օրերին:

Գրկ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւն..., հ. 10, Վնտ., 1814: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Սուրբերու կյանքը, Բեյրութ, 1994:

ԱԲԳԱՐ ԹՈԽԱԹԵՑԻ, Աբգար Եվդոկացի, Աբգար Դպիր, Աբգար Սաֆար Թոխատցի (մոտ 1520 – մոտ 1572), տպագրիչ, հոգևորական, հասարակական-քաղաքական գործիչ: Արծրունյաց թագավոր. տան շառավիղ: 1562-ին մասնակցել է Սեբաստիայի գաղտնի խորհրդաժողովին: Հայոց կաթողիկոս *Միքայել Ա Սեբաստացին* Ա. Թ-ու գլխավորությամբ պատգամավորություն է ուղարկել Հռոմ՝ Հայաստանի ազատագրության, ինչպես նաև դավանաբան. հարցերով: Հռոմի պապի հանձնարարությամբ Ա. Թ. Աղեքսանդր քահանայի հետ կազմել է հայերի Դավանագիրը (Հավատո հանգանակ), որը 1565-ի փետր. ներկայացրել է հատուկ հանձնաժողովին: Այստեղ Ա. Թ. քաղ. նկատառումներով դավան. նվիրվածություն է հայտնել պապին և չեշտել, թե Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միջև տարբերությունները չնչին են: 1565-ին Վենետիկում հիմնադրել է տպարան և տպագրել «Խառնայ փնթուր տումարի» օրացույցը (մեկ էջանոց) և առաջին հայ. «Սաղմոսարանը» (վերջինս մինչև 1880-ական թթ. սխալմամբ համարվել է հայերեն առաջին տպագիր գիրքը, իսկ Ա. Թ.՝ առաջին հայ տպագրիչը): 1567-ին Ա. Թ. տպարանը տեղափոխել է Կ. Պոլիս և Ս. Նիկողայոս եկեղեցում իր որդի Սուլթանշահի գործակցությամբ հիմնադրել Կ. Պոլսի հայկ. առաջին տպարանը, տպագրել հինգ գիրք՝ ամենօրյա ժամերգությունների համար եկեղեցածիս. «Ժամագիրք-Պատարագամատոյց» (1568), յուրաքանչյուր տարվա տոնակարգը ցույց տվող «Տօնացոյց» (1568), «Տաղարան» (1568), «Պարզատումար» (1568), ծիս. կարգերի, օրհնությունների և աղոթքների «Մաշտոց» (1569):



Աբգար Թոխաթեցի

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Զարդարյան Վ., Հիշատակարան (1512–1933), հ. 5, Կահիրե, 1939: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:

Աղավնի Ութուջյան

ԱԲԵՂԱ (ասոր. awila – չամուսնացած, մենակյաց վանական), Հայ եկեղեցում կուսակրոն քահանայության ամենացածր աստիճանը: Ձեռնադրվում է եպիսկոպոսի կողմից, օծվում մյուռոնով: Կուսակրոն *քահանաները*, երբ ստանում են վեղար (ի նշան աշխարհուրացության), կոչվում են Ա., ուխտում ապրել *վանքում*: Ա. կատարում է բոլոր խորհուրդները (ծիսակատարությունները), բացի ձեռնադրությունից և մյուռոնօրհնությունից, որոնք եպիսկոպոսի և կաթողիկոսի իրավունքներն են: (Տես նաև *Կուսակրոնություն*):

ԱԲՐԱՀԱՄ Ա ԱՂԲԱԹԱՆԵՑԻ [VI դ. կես, գ. Աղբաթանք (Ռշտունիք գավառ) – մոտ 613], Ամենայն Հայոց կաթողիկոս 607-ից: Հաջորդել է *Մովսես Բ Եղիվարդեցուն*: Եղել է Ռշտունիք գավառի եպիսկոպոսը: Նրա օրոք է տեղի ունեցել Վրաց եկեղեցու բաժանումը Հայ եկեղեցուց: VI–VII դդ., ինչպես ողջ քրիստոնյա Արևելքում, այնպես էլ Հայ և բյուզ. եկեղեցիների միջև սրվել էր պայքարը

դավան. հարցերի շուրջ: Այդ պայքարն ընթացել է քաղկեդոնականների (տես *Քաղկեդոնի ժողով 451*) և հակաքաղկեդոնականների, նեստորականների (տես *Նեստորականություն*) և արլ. եկեղեցիների, այդ թվում՝ Հայ եկեղեցու միջև: Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև շարունակվող պատերազմում երկու կողմերն էլ ձգտել են իրենց կողմը գրավել քրիստոնյաներին՝ այդ քաղաքականության մեջ մեծ տեղ հատկացնելով դավան. խնդիրներին: Չնայած արդեն V դ. վերջին նեստոր. եկեղեցին Պարսկաստանում պաշտոնապես ճանաչում էր ստացել, սակայն *քաղկեդոնականություն* ընդունած Բյուզանդիայի ազդեցությունից հայերին հեռացնելու համար Պարսից Խոսրով Բ Փարվեզ թագավորը պաշտպանել է Հայ եկեղեցու հակաքաղկեդոն. դիրքը և խրախուսել հակահուն. տրամադրությունները: Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունի Բազմահաղթի (VI դ. վերջ) միջոցով հեռացնելով Հայաստանի հունաց մասի հակաթոռ Հովհաննես կաթողիկոսին, որին հաստատել էր բյուզ. Մավրիկիոս կայսրը (591-ից), թույլատրել է Հայաստանի մայրաքաղաք և կաթողիկոսանիստ Դվինում կառուցել նոր եկեղեցի, իսկ ավելի ուշ՝ *Պարսից ժողովում* Հայ եկեղեցու դավանանքը ճանաչել է միակ ուղղափառ դավանությունը Պարսից տերության սահմաններում: Ա. Ա Ա-ու օրոք պայքարը բյուզ. և պարսկ. կողմնորոշում ունեցող քրիստոնյաների (հայեր, վրացիներ, ասորիներ) միջև շարունակվել է քաղկեդոն. և հակաքաղկեդոն. դավանանքի քողի տակ: Չնայած Ա. Ա Ա-ու ջանքերին՝ հետ պահել Վրաց Կյուրիոն կաթողիկոսին քաղկեդոնականություն ընդունելուց և հույների հետ դավան. միություն հաստատելուց, այնուամենայնիվ 608-ին Վրաց եկեղեցին ընդունել է քաղկեդոնականությունը: Այդ շրջանի իրադարձությունների, դավան. թեժ պայքարի կարևոր վավերաթղթեր են «Գիրք թղթոցում» (էջ 146–211) պահպանված՝ Ա. Ա Ա-ու եպիսկոպոս. և կաթողիկոս. գործունեությանը վերաբերող թղթերը, շրջաբերական գրությունները՝ ուղղված Վրաց Կյուրիոն կաթողիկոսին, Ցուրտավի Մովսես եպիսկոպոսին, *Վրթանես Քերթողին*, Վրկանաց մարզպան Սմբատ Բագրատունուն: Հատկապես Վրաց Կյուրիոն կաթողիկոսին գրած թղթերում Ա. Ա Ա. շեշտել է Հայոց, Վրաց և Աղվանից եկեղեցիների միությունը VI դ. սկզբին, երբ նրանք միասնաբար պայքարել են Հույն եկեղեցու նկրտումների և քաղկեդոնականության դեմ («Գիրք թղթոց», Գ թուղթ, էջ 182–183): Հայոց կաթողիկոսն իր թղթերում կարևոր տեղեկություններ է հաղորդել Դվինի 506-ի Ա ժողովի (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) ընդունած որոշումների, Հայ եկեղեցու հակաքաղկեդոն. դիրքորոշման վերաբերյալ: Ըստ Ա. Ա Ա-ու, Դվինի Ա ժողովի գլխ. նպատակը Քաղկեդոնի և քաղկեդոն. խնդիրների հանդեպ Հայ եկեղեցու և նրա ավագությունն ու դահերեցությունն ընդունող Վրաց և Աղվանից եկեղեցիների դավան. դրության պարզեցումն էր, միասնական պաշտոն. դիրքորոշման արտահայտումը:

Ա. Ա Ա-ու գրություններն օգտագործել են հետագա դարերի հայ պատմիչներն ու մատենագիրները՝ Հայ և Վրաց եկեղեցիների բաժանման դեպքերը շարադրելիս, իսկ *Ուխտանես* եպիսկոպոս պատմիչը Ա. Ա Ա-ու 14 թղթերից 11-ը զետեղել է իր «Պատմություն Հայոց» գրքի «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» հատվածում: Ա. Ա Ա. գրել է նաև դավան. բնույթի ճառեր:

Կաթողիկոս. գահին Ա. Ա Ա-ուն հաջորդել է *Կոմիտաս Ա Աղցեցին*:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908: Ակինյան Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վնն., 1910: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:

Արտաշես Ղազարյան

ԱԲՐԱՀԱՄ Բ ԽՈՇԱԲԵՑԻ, Բաղիշեցի, Մշեցի, Քեղեցի (1677–1734, հանդչում է Վաղարշապատի Ս. Գայանե վանքում), Ամենայն հայոց կաթողիկոս 1730-ից: Հաջորդել է *Կարապետ Բ Ուլնեցուն*: Աշակերտել է *Գրիգոր Շղթայակրին*: 1708-ին՝ Մշո Առաքելոց վանքի առաջնորդ, 1717–30-ին՝ Տարոնի Ս. Կարապետ վանքի վանահայր: 1727-ին ուխտագնացություն է կատարել Երուսաղեմ, որի առթիվ խաչքար է տեղադրվել Ս. Հակոբյանց վանքում: Շինարար. աշխատանքներ է կատարել Էջմիածնի վանքում, պատկերազարդել է տվել Մայր տաճարի երկու խորանները, որմերն ու սյունները, նորոգել մի շարք կառույցներ: Ա. Բ Խ-ու անունով մեզ են հասել 7 ներբող. ու հոգևոր տաղեր (անտիպ) և կոնդակներ:

Կաթողիկոս. գահին Ա. Բ Խ-ուն հաջորդել է *Աբրահամ Գ Կրետացին*:

ԱԲՐԱՀԱՄ

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Ակինյան Ն., Բաղեշի դպրոցը 1500–1700, Վնն., 1952: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Պավել Զոբանյան

ԱԲՐԱՀԱՄ Գ ԿՐԵՏԱՑԻ [ծ. թ. անհտ, ք. Կանդիա (Կրետե կղզում) – 18.4.1737], Ամենայն Հայոց կաթողիկոս 1734-ից, պատմագիր: Հաջորդել է *Աբրահամ Բ Խոշաբեցուն*: Եղել է Երուսաղեմի միաբան և նվիրակ, 1709–34-ին՝ Թրակիայի Թեքիրդաղ (Ռոդոսթո) քաղաքի թեմի առաջնորդ, որի համար կոչվել է նաև Թեքիրդաղցի: Ա. Գ Կ-ու օրոք Անդրկովկասի քաղ. դրությունն անկայուն էր: Իրանում ասպարեզ իջած Թահմազ Ղուլի խանը (ապագա Նադիր շահը), պատերազմելով Թուրքիայի դեմ, վերանվաճել է Իրանի կորցրած հողերը, այդ թվում՝ Անդրկովկասը: Ա. Գ Կ., շահելով խանի վստահությունը, վերականգնել է Էջմիածնի կաթողիկոս. աթոռի կալվածատիր. իրավունքները և գերությունից ու աքսորից փրկել բազմաթիվ հայերի: Ա. Գ Կ-ու միջնորդությամբ խանը թույլատրել է Մելիք Հակոբջանին Երևանում հիմնել դրամատուն և կտրել արծաթե ու պղնձե դրամներ: Ա. Գ Կ-ու «Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին պարսից» (1 հրտ., Կալկաթա, 1796, թրգմ. նաև ֆրանս.) աշխատությունն ընդգրկում է մոտ երկու և կես տարվա ժամանակամիջոց (1734–36), բաղկացած է 53 գլխից, որտեղ մանրամասնորեն նկարագրված են իր կաթողիկոսության ժամանակի և Նադիր շահի իշխանության առաջին տարիների իրադարձությունները: Ա. Գ Կ-ու պատմագր. երկերից են «Հիշատակարանը» («Ծոցի տետրակ») և Անի քաղաքի պատմությունը: Հայտնի են նրա մի քանի կոնդակները:

Կաթողիկոս. գահին Ա. Գ Կ-ուն հաջորդել է *Ղազար Ա Ջահկեցին*:

Գրկ. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:

ԱԲՐԱՀԱՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ, Աբրահամ Զենակացի (ծ. և մ. թթ. անհտ), V դարի մատենագիր, ս. *Ղևոնդյանց* աշակերտներից, վկա: Ծնվել է Տայք նահանգի Զենակս գյուղում: Վկայաբանություններում հիշատակվում է մեկ այլ վկայի՝ Խորեն Խոստովանողի հետ միասին: *Եղիշեն* գրել է նրանց ընդարձակ վկայաբանությունը և զետեղել իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկում: Հայսմավուրքներում հիշատակվում է նրանց վկայաբանության համառոտությունը՝ մի քանի խմբագրություններով: *Ղազար Փարպեցին* նրանց մասին մանրամասն տեղեկություններ է տալիս իր Պատմության մեջ (ԾԳ և ԾԸ գլուխներ): Ըստ Փարպեցու, Ա. Խ. ինքնակամ միացել է Վարդանանց պատերազմից հետո Պարսից Հազկերտ II արքայի հրամանով Պարսկաստան աքսորված հայ նախարարներին ու հոգևորականներին: 454-ին, Ապար աշխարհում Ղևոնդյանց նահատակությունից հետո, Պարսից արքայի հրամանով կտրել են Ա. Խ-ի ու Խորեն Խոստովանողի ականջները և աքսորել Ասորիք: Այստեղ, երկար տարիներ մնալով արքունի ծառայության մեջ, նրանք միաժամանակ ողորմություն են հավաքել և ամեն տարի օգնություն տարել Ապար աշխարհում գերեվարված հայ նախարարներին: Խորեն Խոստովանողը 461-ին մահացել է աքսորավայրում, իսկ Ա. Խ. 463-ին վերադարձել է Հայաստան, որտեղ Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսը (461–478) նրան ձեռնադրել է Բզնունիք գավառի եպիսկոպոս: Ա. Խ. ասոր-ից հայերեն է թարգմանել Մարութա Նփրկերտցու «Վկայք Արևելից» վկայաբան. պատմությունը, որի մի մասն է հասել մեզ: IX–X դդ. պատմագիր Թովմա Արծրունին հիշատակում է Ա. Խ-ի՝ Վարդանանց պատերազմի մասին մեզ չհասած աշխատությունը, որից օգտվել է իր Պատմության Բ դպրության Ա գլուխը կազմելիս:

Գրկ. Զարբհանալյան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վնտ., 1897, էջ 295–296: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901, մաս 1, էջ 45: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Տեր-Պետրոսյան Լ., Աբրահամ Խոստովանողը և նրա «Վկայք Արևելից», Ե., 1976:

Արտաշես Ղազարյան

ԱԲՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԻՑ, Աբրահամ Մամիկոնյան (ծ. և մ. թթ. անհտ), VI դարի մատենագիր, Տարոնի առաջնորդ, Մամիկոնյան նախարարական տան եպիսկոպոս: Կենսագր. տվյալներ չեն պահպանվել: Ստորագրել է որպես աթոռակից *Հովհաննես Բ Գաբեղենցի* (557–574) կաթողիկոսի՝ Սյունյաց և Աղվանից եպիսկոպոսներին ուղղված երկու թղթերի տակ («Գիրք թղթոց», էջ 78–84): Աղվանից Վաչագան Գ Բարեպաշտ թագավորի խնդրանքով գրել է «Թուղթ առ Վաչագան արքայ Աղուա-

նից» և «Կանոնք Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչագան Աղուանից արքայ» խրատականները: Ա. Մ. համարվում է նաև V դ. հույն եկեղեց. պատմագիր Սոկրատի երկի թարգմանիչը կամ խմբագրողը (Փոքր Սոկրատ կոչված խմբագրությունը): Նրա անունով մեզ է հասել «Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի» երկը, որի մեկ այլ խմբագրությունը («Պատմութիւն ժողովոյն Եփեսոսի» կամ «Պատճառ հաւատոյ վասն տիեզերական և սուրբ ժողովոյն Եփեսոսի, և վասն անօրէն հայհոյությանն Նեստորի»)՝ Նաբովկ քաղաքի VI դ. ասորի հակաքաղկեդոնական եպիսկոպոս Փիլոքսենոս Նաբովկացու (Մաբուգեցի) անունով: Գրվածքը հայագիտության մեջ վերագրվել է կա՛մ վերջինիս (Գ. Զարբհանալյան), կա՛մ *Վրթանես Քերթողին* (Ն. Ակինյան), կա՛մ Ա. Մ-ին (Բ. Սարգիսյան):

Հայ եկեղեց. մատենագրության ուշագրավ գործերից է «Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի» երկը, որն առատ նյութ է տալիս *Կյուրեղ Ալեքսանդրացու* և Նեստորի (տես *Նեստորականություն*) դավան. վեճի, *Եփեսոսի Գ տիեզերական ժողովի*, նրա գումարման հանգամանքների, ընթացքի, պետության վերաբերմունքի և միջամտության, կյուրեղյանների ու նեստորականների անհաշտ պայքարի մասին: Անցուդարձերի նկարագրությունից երևում է հեղինակի հակվածությունը դեպի կյուրեղյան-եփեսոսյան դավանությունը: Հայ մատենագրության մեջ գրվածքը եզակի է նշված պատմ. դեպքերի հանգամանալի շարադրանքով:

Երկ. Թուղթ առ Վաչագան արքայ Աղուանից: Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի, Վնտ., 1899:

Գրկ. Զարբհանալյան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վնտ., 1897: Սարգիսյան Բ., Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսն և իւր առ Վաչագան գրած թուղթն, Վնտ., 1899: Ակինյան Ն., Վրթանես վարդապետ Քերթող և իւր երկասիրութիւնները, ՀԱ, 1910, էջ 39–45: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (հուն. *ἀγαθός* – բարի, *ἄγγελος* – հրեշտակ, լրաբեր) (ծ. և մ. թթ. անհտ), V դարի պատմիչ, հեղինակը հայ պատմագրության ու եկեղեցական մատենագրության հնագույն՝ «Պատմութիւն Հայոց» երկի, որը հայտնի է եղել նաև «Գիրք Ս. Գրիգորիսի» կամ «Պատմութիւն և վարք Ս. Գրիգորի» անուններով: Միջնադարում միջազգ. լայն ճանաչման արժանացած եզակի երկասիրություններից է: Կանոնական է համարվել Հայ եկեղեցու կողմից, օգտագործվել իբրև նվիրական, սրբազան մատյան: Առաջաբանում հեղինակը ներկայանում է որպես լատ. և հուն. լեզուների գիտակ հռոմեացի, որն արքունի քարտուղարի պաշտոնով եկել է Հայաստան և *Տրդատ* Գ-ի հրամանով գրել իր Պատմությունը: Սակայն քիչ հետո Ա. հանդես է գալիս իբրև հայ (ուսումնասիրողները նկատել են նաև այլ հակասություններ): Արվել է այն հետևությունը, որ Ա. IV դ. պատմիչ է (հավատել են Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Սեբեոսը և այլք), նրա գրքի բնագիրը եղել է հունարեն և թարգմանվել հայերեն V դ.՝ հայ գրերի գյուտից հետո: Այս ավանդական տեսակետն անվերապահորեն ընդունվել է մինչև XVIII դ. 2-րդ կեսը:

Ա-ի «Պատմութիւն Հայոց»-ի բնագիրն առաջին անգամ Գրիգոր Մարզվանեցու ջանքերով լույս է տեսել 1709-ին, Կոստանդնուպոլսում: 1762-ին Հովհ. Ստիլտինգը հրատարակել է Ա-ի երկի հուն. թարգմանության բնագիրը (հետագայում բազմիցս վերահրատարակվել է) և լատ. համառոտ թարգմանությունը: Նա էլ առաջինը կասկածի տակ է առել Ա-ի հաղորդած պատմ. շատ փաստերի վավերականությունը: Սկիզբ է դրվել Ա-ի գիտ. ուսումնասիրությանը: Պատմության հայերեն բնագրի գիտ. (մի քանի ձեռագրերի համեմատությամբ) առաջին հրատարակությունը Վենետիկում (1835) և հայագիտության զարգացումը խթան հանդիսացան երկի մասին բազում և բազմալեզու ուսումնասիրությունների ի հայտ գալուն: Ա-ի երկի ստեղծման շուրջ կան լուրջ տարակարծություններ: Օտարազգի և հայ մի շարք գիտնականների կարծիքով՝ V դ. երկը կազմել են հայ առաջին թարգմանիչները և այն վերագրել IV դ. ապրած մտացածին հեղինակի (իբր արժանահավատությունը բարձրացնելու միտումով), իսկ «Ա.» ոչ թե անձնանուն է, այլ հուն. հասարակ անուն, որը թարգմանաբար նշանակում է բարի հրեշտակ, բարի ավետիս, ինչպես՝ evangelia – ավետարան ևն: Ըստ այդմ, «Ագաթանգեղոսի Պատմություն» ասելով, պետք է հասկանալ «Բարի ավետաբերի (այսինքն՝ Գրիգոր Լուսավորչի) Պատմություն»:

Այլ ուսումնասիրողների կարծիքով՝ բուն երկը շարադրել է IV դ. հեղինակ Ա., բայց V դ. այն զգալիորեն խմբագրել և փոփոխել են հայ առաջին թարգմանիչները (Կորյունը և

այլք): Ա-ի ֆրանս. թարգմանիչ Վ. Լանգլուան հանգել է այն կարծիքին, որ նա չէր կարող ապրել IV դ. և լինել աշխարհիկ գործիչ (քարտուղար), սակայն չի փորձել ժխտել Ա-ի բնագիրը հուն. գրված լինելու վարկածը: Հ. Ա. Գուտշմիդը տարբեր խմբագրությունների համեմատական ուսումնասիրությամբ հաստատել է, որ Ա-ի բնագիրը հայերեն է, իսկ հունարենը՝ նրա թարգմանությունը: Իշխում է այն տեսակետը, որ Ա. հայ պատմագիր է, և նրա երկը գրվել է V դ. 1-ին կեսի հյութեղ ու կենդանի հայերենով:

Ագաթանգեղագիտությամբ զբաղվել են նաև Բ. Սարգիսյանը, Ռ. Թոմսոնը, Պոլ դը Լագարդը, Ն. Բյուզանդացին, Թ. Թոռնյանը, Հ. Տաշյանը, Գ. Զարբհանալյանը, Գ. Խալաթյանցը, Գ. Տեր-Մկրտչյանը, Մ. Աբեղյանը, Ն. Ադոնցը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ժ. Գարիտը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Պ. Մուրադյանը և ուր.:

Ա-ի «Պատմութիւն Հայոցն» ընդգրկում է III դ. և IV դ. սկզբի անցքերը՝ Սասանյանների իշխանության գլուխ անցնելուց (226) մինչև Հայոց Տրդատ Գ Մեծ թագավորի գահակալության վերջին տարիները: Այն բաղկացած է առաջաբանից և երեք մասից: Առաջաբանում հեղինակը խոսում է երկի շարադրման շարժառիթների ու նպատակների մասին:

Առաջին՝ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի» մասում Ա. պատմում է պարթև Արշակունիների տապալման և Իրանում գահակալած Սասանյանների, հայ Արշակունիների հանդեպ նրանց թշնամանքի, պարսիկների դեմ Հայոց արքա Խոսրով Ա Մեծի հերոսական կռիվների, նրա դավադրական սպանությունից (259) հետո Հայաստանի նվաճման, այնուհետև մինչև III դ. վերջը Տրդատ Գ Մեծի ու *Գրիգոր Ա Լուսավորչի* գործունեության, վերջինիս չարչարանքների, Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերի վկայաբանության մասին: Երկրորդ՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» բաժինը ծավալով ավելի ընդարձակ է, քան Պատմության մնացած մասերը միասին վերցրած: Ի տարբերություն Ա-ի բուն պատմության՝ «Վարդապետութիւնը» մեզ է հասել միայն հայերեն բնագրով: Հայտնի է միայն նրա վրացերեն մի համառոտ տարբերակը, որը վերագրվել է Հիպոլիտոս Հռոմայեցուն և կրել «Վասն հաւատոյ» խորագիրը: «Վարդապետութիւնը» ընդգրկում է Հին և Նոր կտակարանների ողջ բովանդակությունը, որը ներկայացված է հիմն. դրվագներով, աստվածաբան. հարցերում՝ ներհյուսված հեղինակի դաղափարներով ու դատողություններով: Համեմատաբար հանգամանորեն են արծարծված Ս. Երրորդության և Արարչագործության, Մարդեղության, առաքելական քարոզչության, մեռյալների հարության թեմաները: «Վարդապետութիւնը» կառուցված է քրիստոնեության հիմունքները պարունակող բանավոր քարոզի ձևով՝ ուղղված հայ հանրությանը, մասնավորապես Տրդատ Գ թագավորին (առանց անվան հիշատակության) և նրա արքունիքին: Հեղինակը հորդորում է նրանց դարձի գալ, հրաժարվել իրենց ձեռագործ կուռքերից, երկրպագել ճշմարիտ Աստծուն ևն: Վարդապետ., աստվածաբան. խնդիրների քննության մեջ կիրառվել է երկու հիմն. եղանակ՝ ապացույցը և մեկնությունը: Հեղինակն աստվածաբան. այս կամ այն դրույթի փաստարկման հարցում բացարձակ ապացույց է համարել Աստվածաշնչի վկայությունը: Մասնավորապես Աստծո Որդու երկրային գործունեությունը դիտել է որպես վաղուց ի վեր մարգարեություններում կանխատեսված եղելությունների իրականացում: Հեղինակը մեծ տեղ է հատկացրել մարգարեություններին և հաճախ վկայակոչել դրանք՝ իբրև ապացույց աստվածային կամքի իրականացման: «Վարդապետութեան» մեջ գրեթե ողջ աստվածաշնչական նյութը ներկայացվել է մեկնողաբար (ավելի հաճախ՝ *հարցուպատասխանի* եղանակով), ուստի «Վարդապետութիւնը» կարելի է նաև հայ մեկնողական գրականության նշանակալից գործերից մեկը համարել: Մասնագետների կարծիքով՝ Ա. հիմնովին յուրացրել է հայրաբանական գրականությունը, քանզի նրա երկում լայն արձագանք են գտել *եկեղեցու հայրերի* մշակած բազում տեսական դրույթներ: Ըստ Ռ. Թոմսոնի՝ Ա. մեծապես օգտվել է *Հովհան Ոսկեբերանի* աշխատություններից և *Կյուրեղ Երուսաղեմացու* «Կոչումն ընծայութեան» երկից: Բ. Սարգիսյանն իր հերթին մատնանշել է բազմաթիվ ընդհանրություններ «Վարդապետութեան» և *Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Ալեքսանդրացու* և հատկապես՝ Հովհան Ոսկեբերանի գործերի միջև:

Գրքի երրորդ՝ «Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան» մասում Ա. հանգամանորեն պատմում է հին հայկ. հեթանոս. տաճարների

ու աստվածների անդրիների կործանման, քրմերի կալվածքների ու հարստությունների բռնագրավման, հայ վերնախավերի ու ժողովրդի մկրտության, եկեղեցիների ու վկայարանների հիմնադրման, քրիստոնեության հաստատման, հոգևորականների կարգման և այլ իրադարձությունների մասին:

Ա. իր Պատմությունը երկասիրել է քրիստ. դավանանքի ու եկեղեցու ջատագովության դիրքերից՝ ձգտելով հիմնավորել Հայ եկեղեցու ազգ. ինքնուրույնությունը, առաքելական ծագումը և գերապատիվ արժանիքը: Որպես պատմության աղբյուր, այս երկն իր տեսակի մեջ թերևս միակն է, որ տալիս է Հայաստանի դարձը: Ա. արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի պատմ. աշխարհագրության, արքունիքի, պետ. գործակալությունների, զինված ուժերի, նախարար. կարգի, հայոց հեթանոս. կրոնի (հատկապես մի շարք կուռքերի ու նրանց տաճարների), երկրի ներքին կյանքին վերաբերող այլևայլ հարցերի մասին: Ա-ի «Պատմութիւն Հայոցն» ունի նաև գեղ. արժեք: Այն միջնադարում թարգմանվել է հուն., արաբ., վրաց., հաբեշ., լատ. և ունեցել շուրջ երկու տասնյակ խմբագրություններ միջնադարի 9 լեզուներով՝ հայերեն, հուն., ասոր., արաբ., լատ., եթովպ., վրաց., զպտ. (պատառիկ) և սլավոնական տարբերակներ: Առաջին թարգմանությունը հունականն է (ժամանակը բանասերները համարում են VI դ.), որը վճռական նշանակություն է ունեցել Ա-ի երկասիրության տարածման հարցում: Հուն-ից ամենից ավելի թարգմանվել է արաբերեն, հուն-ից են առաջացել այլալեզու գրեթե բոլոր խմբագրությունները: Այն ամբողջությամբ հայտնի է միայն մեկ ձեռագրում և գտնվում է Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանում (Laurentianus, VII, 25): Ա-ի գիրքը նոր ժամանակներում թարգմանվել և հրատարակվել է իտալ., ֆրանս., գերմ. և անգլ.: Աշխարհաբար լիակատար թարգմանությամբ (Ա. Տեր-Ղևոնդյան) հրատարակվել է 1983-ին, Երևանում:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.1, 1-ին պատկերը:

Երկ. Պատմութիւն Հայոց, աշխատասիր. Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Տփղիս, 1909: Հայոց պատմություն, Ե., 1983:

Գրկ. Սարգիսյան Բ., Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վնտ., 1890: Տաշյան Հ., Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վնտ., 1891: Զարբհանալյան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վնտ., 1897: Մառ Ն., Մկրտութիւն հայոց, վրաց, ափխազաց և ալանաց ի սրբոյն Գրիգորէ, Վաղ-պատ, 1911: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 161–213: Մելիք-Օհանջանյան Կ., Ագաթանգեղոսի Պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները, «Մառը և հայագիտության հարցերը», [ժող.], Ե., 1968: Տեր-Ղևոնդյան Ա., Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբ., բնագիր և ուսումնասիրություն), Ե., 1968: Մուրադյան Պ., Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Ե., 1982: Տեր-Պետրոսյան Լ., Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից (Ե դար), Սոչի, 1993: Gutshmid A., Agathangelos, Lpz., 1877; Thomson R.W., The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary, Camb., Massachusetts, 1970.

ԱԳԱՊԵ, Ագապ (հուն. *ἀγάπη* – սեր, առաջին անգամ հանդիպում է Աստվածաշնչի հուն. Յոթանասնից թարգմանության մեջ: Ի տարբերություն իմաստով համարժեք *ἔρως* բառի, որը գերազանցապես ակնարկում է զգայական սերը, Ա. արտահայտում է Քրիստոսի սերը կամ քրիստոնյաների սերը միմյանց նկատմամբ), ս. *Հաղորդությունից* սերված արարողություն: Ա-ի նախատիպեր եղել են ինչպես հրեաների, այնպես էլ հույների և հռոմեացիների մոտ: Նախն. շրջանում Ա. աղքատներին տրվող սիրո ճաշ էր, վաղ եկեղեցում ս. Հաղորդության հետ կապված պաշտոնական ճաշ, որի ժամանակ համայնքի բոլոր անդամներն օգտվել են միևնույն սեղանից: Մատուցվել է ի հիշատակ Քրիստոսի Վերջին ընթրիքի (Ա Կորնթ. **11.**23): Սակայն ժամանակի ընթացքում Ա-ի այդ իմաստը խեղաթյուրվել է: Գանգրայի ժողովը (380) փորձել է վերականգնել Ա-ի նախկին բովանդակությունը, սակայն՝ ապարդյուն: VII դ. վերջին Արևմուտքում Ա. մեկընդմիշտ վերացավ, սակայն արլ. որոշ եկեղեցիներում (զպտիների որոշ հատվածի և հայերի մոտ) մնաց իբրև ս. Պատարագին հաջորդող սիրո ճաշ:

Սահակ Ա Պարթև կաթողիկոսի կանոններում հրահանգվում է քահանաներին Ա-ի պաշտոնն ու Պատարագը չմատուցել առանց Ավետարան կարդալու: Ա-ի հրավիրված աշխարհականները Պատարագից առաջ հաց չպետք է ուտեն: Ժողովուրդը պետք է սիրով մատուցի նախնյաց՝ Ա-ի համար սահմանված ընծաները: *Ներսես Բ Բագրեվանդցի* կաթողիկոսի օրոք գումարված Դվինի ժողովի

ԱԳՈՒԼԻՍԻ

(554) 22-րդ կանոնն ամբողջովին նվիրված է Ա-ի կանոնադրությանը: Ա-ներ մատուցվել են նաև ննջեցյալների հոգու հանգստության համար (*Պարտավի եկեղեցական ժողովի* ԺԸ կանոն): Ա. են կոչվել նաև *մատաղի* համար ընծայաբերված կենդանիները: Հետագայում Ա-ի վերապրուկներն արտահայտվել են ս. Զատկին մատաղ անելու սովորության մեջ:

Գրկ. Հովսեփյան Գ., Ագապի հաստատությունը Հայոց եկեղեցու մեջ, «Արարատ», 1912, էջ 997–1001: *Марр Н., След ἀγάπς у армян, "Христианский Восток", т. 1, 1913, с. 145-147.*

Եղնիկ եպս. Պետրոսյան
Հակոբ Քյոսեյան

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ԱՌԱՔՅԱԼ ՎԱՆՔ, Գողթն գավառի (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջան) Ագուլիս ավանի կենտրոնում: Ըստ ավանդության և Ս. Թովմա եկեղեցու արմ. մուտքի բարավորի չափածո արձանագրության, Ա. Ս. Թ. ա. վ. I դ. հիմնադրել է Բարդուղիմեոս առաքյալը և իր աշակերտ Կումսիին նրա առաջնորդ կարգել, իսկ 305-ին վանքը վերակառուցել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*: Ա. Ս. Թ. ա. վ. եղել է Գողթն գավառի հոգևոր կենտրոնը և վաղ միջնադարից մինչև 1838-ը՝ եպիսկոպոսանիստ: Նրա վերաբերյալ վավերական հիշատակությունները հայտնի են XIV դարից:

Ա. Ս. Թ. ա. վ. որպես կրոն., ուս. և մշակութ. կենտրոն ծաղկում է ապրել XVII դ.՝ վաճառաշահ Ագուլիսի տնտ. բարգավաճման հետ: Վանքի եկեղեցին և շինությունները խարխուլ լինելու պատճառով 1632–33-ին վանահայր Խաչատուր վարդապետը կառուցել է նոր պարիսպներ և շինություններ, իսկ 1634–1636-ին՝ եկեղեցու նոր շենքը: 1668-ին Պետրոս վարդապետը, Վասպուրականից հրավիրած վարպետների ուժերով, շրջանաձև բուրգերով նոր պարիսպներ և դրանց կից 2–3-հարկանի նոր շինություններ է կառուցել սրբատաշ քարով, թրծված աղյուսով ու կրաշաղախով: Վանքի եկեղեցին 1679-ի երկրաշարժից հավանաբար տուժել է, և 1694-ին հիմնովին նոր եկեղեցի է կառուցվել՝ սրբատաշ բազալտով և կարմրավուն ֆելզիտով՝ ներսից յոթանիստ խորանով, չորս խաչաձև մույթերով գմբեթավոր բազիլիկի հորինվածքով: Արմ. ճակատի արձանագրություններում նշված են նոր եկեղեցու շինարարությանն աջակցած Գողթն գավառի 30-ից ավելի բարերարների անունները: Արմ. մուտքի առջևի քառամույթ սրահ-դամատունը կառուցվել է 1825-ին, ամբողջովին վերակառուցվել 1831-ին և 1904-ին: Համանման սրահներ XVII դ. կառուցվել են հս. մուտքի առջև ու հվ. պատի մոտ, որը որպես տապանատուն է ծառայել: Եկեղեցու ներսը XVII դ. վերջին զարդարել է Ա. Ս. Թ. ա. վ-ի դպրոցի սան, ապա նրա ուսուցիչ և վանքի դպիր, նկարիչ *Նաղաշ Հովնաթանը*: Գմբեթը և խորանի գմբեթարդը նկարազարդվել են որպես երկինք՝ կապույտ ֆոնի վրա փայլող աստղերով, բեմի անկյուններում պատկերված են չորս թևատարած հրեշտակներ, իսկ նրա մարմարե ճակատին՝ ս. *Ստեփանոս Նախավկան*: Թաղերը, գմբեթակիր կամարները և առագաստները ծածկված են բազմերանգ բուս. զարդամոտիվներով, սափորների մեջ դրված ծաղկեփնջերով և նկարներով: Եկեղեցու գլխ.՝ արմ. մուտքի ճակատակալ քարին «ս. Թովմայի անհավատությունը» պատկերագրությամբ հարթաքանդակն է: Քառանկյուն շրջանակի մեջ քանդակված են Քրիստոսը՝ խաչափայտը բռնած, և գեղարդով խոցված նրա կողը շոշափող, ծնկաչոք Թովմա առաքյալը: Շրջանակից դուրս, վերևում Նաղաշ Հովնաթանը նկարել է Աստծուն, ձախում՝ Աստվածածնին, աջում՝ Մարիամ Մագթաղինացուն, իսկ նրանց գլխավերևում՝ արեգակ ու լուսին: Պատկերաքանդակի և որմնանկարի միջև ներդաշնակություն ու միասնական հորինվածք ստեղծելու համար գունազարդել է նաև քանդակը: Եկեղեցու հս. մուտքի բարավորին քանդակված է ողջ հասակով կանգնած Պողոս առաքյալը, իսկ հվ. մուտքին՝ Պետրոս առաքյալը՝ դրախտի բանալիները ձեռքին: Արմ. մուտքի փայտե գեղաքանդակ, սաղափով ու փղոսկրով զարդարված դուռը պատրաստվել է 1694-ին, Խոջա Սեթուն միջոցներով:

Ա. Ս. Թ. ա. վ-ում XIV–XVIII դդ. գործել է դրչության կենտրոն, որտեղ ընդօրինակվել է մոտ 90 ձեռագիր: Մեզ հասած հնագույնը Վարդան դրչի՝ 1375-ին ընդօրինակած Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանն» է: Դրչության կենտրոնն ընդլայնել է գործունեությունը XV դ.՝ Հակոբ բաբունապետի ջանքերով: 1425-ին Մատթեոս գրիչն ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանացը», 1447-ին՝ մի «Տոնական», իսկ Թումա գրիչը 1432-ին՝ Միքայել Ասորու «Ժամանակագրությունը», ապա՝ Վարդան Արևելցու «Հավաքումն պատմության», Կիրակոս Գանձակեցու «Պատմություն

Հայոց» աշխատությունները: XVI դարից վկայություններ կան միայն ձեռագրերի նորոգման մասին, իսկ XVII դարից պահպանվել է ութ ձեռագիր: Ա. Ս. Թ. ա. վ-ի գրչության կենտրոնը 1752-ին կողոպտել են Ատրպատականի Ա-զատ խանի, 1789-ին՝ Մուստաֆա խանի հրոսակները: Նրանք վանքի սպասքի հետ հափշտակել են նաև ձեռագրերը (դրանցից 1477-ի «Ճաշոցը» 3900 արծաթով հետ է գնել Պետրոս տիրացուն և վերադարձրել վանքին): Ա. Ս. Թ. ա. վ-ում գրված 10 ձեռագիր պահվում է Մատենադարանում:

1867-ին Ադուլիսի բնակիչների միջոցներով և գրող Պերճ Պռոշյանի նախաձեռնությամբ ու ջանքերով, կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* հրամանով Ա. Ս. Թ. ա. վ-ում բացվել է արական դպրոց՝ «Վերին Ադուլեաց Հայոց հոգևոր ուսումնարան» անունով, որը եղել է եռադասյան և ունեցել է նաև նախակրթարան: Դպրոցի համար վանքում հվարմ. շինություններին հարկ է ավելացվել, հրավիրված ուսուցիչների համար բակում կառուցվել բնակարաններ: Դպրոցն ունեցել է 150 աշակերտ, նրա կանոնադրության համաձայն՝ ընդունել են բնակչության բոլոր խավերի երեխաներին, դասավանդել են լեզուներ, պատմություն և աշխարհագրություն, թվաբանություն և երկրաչափություն, կենսաբանություն, գծագրություն ևն:

Ա. Ս. Թ. ա. վ-ում պահվել են՝ 1821-ին Եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսի նվիրած՝ Թովմա առաքյալի Աչը, Գայանեի մասունքը, Հակոբ Հայրապետի Աչը, 1657-ի ուրար՝ հրեշտակներով շրջապատված Հակոբ Նահապետն իր որդիների հետ ձեռագործ պատկերով, 1763-ի ուրար (այժմ՝ ՀՊՊԹ-ում), 1797-ի ոսկեթել վակաս: 1918-ին թուրք. զորքերն ավերել են Ադուլիսը, կոտորել հայ բնակիչներին, կողոպտել Ա. Ս. Թ. ա. վ., որը դրանից հետո լքվել է և ամայացել:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.1, 2-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Օրդուբադի կամ Վերին Ադուլիսի ոստիկանական շրջան կամ Գողթն, Ա.Հ, գիրք 11–12, Թ., 1904–05: Այվազյան Ա., Ադուլիս, Ե., 1984:

Մուրադ Հասրաթյան

ԱԴԱՆԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1316, գումարվել է հուլիսի 18-ին (ըստ Մ. Օրմանյանի՝ 10.7.1316), Կիլիկյան Հայաստանի Ադանա քաղաքում, Հայոց կաթողիկոս *Կոստանդին Գ Կեսարացու* և Հայոց թագավոր Օշին Ա-ի պահանջով: Քննարկվել է Հայ եկեղեցին Կաթոլիկ եկեղեցուն միացնելու հարցը: Միացման և լատինադավանության տարածման որոշում ընդունվել էր 1307-ի Սսի ժողովում (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), բայց, ուժեղ դիմադրության հանդիպելով, չէր կենսագործվել: 1316-ին Ավինյոնի Հովհաննես XXII պապն Օշին Ա-ից պահանջել է կատարել այդ որոշումը: Կիլիկյան Հայաստանի քաղ. կացությունը, որ վատթարացել էր մամլուքների, թուրքմեն-կարամանների և թաթար-մոնղոլների մշտական հարձակումների, ինչպես նաև ներքին եկեղեցադավան. պառակտումների պատճառով, նրա դահակալներին հարկադրել է տեղի տալ արտաքին միջամտություններին, քաղ. նեցուկ որոնել Արևմուտքում: Օշին Ա-ն և Կոստանդին Գ Կեսարացին, պապի միջնորդությամբ եվրոպ. պետություններից աջակցություն ակնկալելով, գումարել են Ա. ե. ժ., որին մասնակցել են 18 եպիսկոպոս, 7 վարդապետ և 10 իշխան՝ մեծ մասամբ Կիլիկյան Հայաստանի ներքին թեմերից: Նրանք հաստատել են Հայ եկեղեցին Կաթոլիկ եկեղեցուն ենթարկելու որոշումը, որը վճռականորեն մերժել են *արևելյան վարդապետները* և ժողովուրդը: Ա. ե. ժ-ի որոշումներն ու դրանց գործադրման փորձերը, հանդիպելով համառ դիմադրության հատկապես Հայաստանում, մնացել են անկատար: Արքունիքը փորձել է ճնշել հոգևորականության և ժողովրդի ընդվզումները, ինչը միայն խորացրել է պառակտումները և թուլացրել երկրի դիմադրողականությունը թշնամի մահմեդ. պետությունների հանդեպ:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

ԱԴԴԵ, սուրբ Ադդե Հայրապետ, I դարի տոնելի քրիստոնյա նահատակ: Ըստ ասոր. և հայկ. աղբյուրների՝ *Աբգար* թագավորի համար խույր (թագ) գործող վարպետ՝ կերպասագործ: Ըստ ավանդության, Բագրատունիների իշխանական տոհմից: Երբ *Թադեոս* առաքյալն այցելել է Եդեսիա (Ուրֆա), Ա. անձամբ աշակերտել է առաքյալին, որն իր փոխարեն հոգևոր առաջնորդ՝ Եդեսիայի եպիսկոպոս է ձեռնադրել նրան:

Աբգար թագավորի մահից հետո նրա որդին՝ Անանունը, «... հայրենի առաքինության հետևող չեղավ, այլ կուռքերի մեհյանները

բացեց ու հեթանոսական պաշտամունքն ընդունեց» (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», գիրք 2-րդ, գլ. ԼԴ): Անանունը մարդ է ուղարկում Ա-ի մոտ, որ նա «իրեն համար բեհեզից խույր կարե ոսկե բանվածքով, ինչպես անում էր իր հոր համար»: Ա. պատասխանում է. «Իմ ձեռքերը խույր չեն կարի անարժան դագաթի համար, որ չի երկրպագում Քրիստոսին, կենդանի Աստծուն» (նույն տեղում), ինչի համար էլ թագավորի զինվորը սրով կտրում է Ա-ի սրունքները, և նա մահանում է:

Հայ եկեղեցին ս. Ա-ի հիշատակը սկզբնապես տոնել է ս. Աբգար թագավորի հետ: Հետագայում Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը բաժանել է այս տոները. ներկայումս ս. Ա-ի հիշատակը տոնվում է Հիսնակի Դ կիրակիից հետո՝ երկուշաբթի օրը (Հիսնակը Աստվածահայտնությանը նախորդող հիսուն օրերի տոնն է):

Գրկ. Լաբուբնայ կամ Ղեբուբնայ, Եդեսացւոյ թուղթ Աբգարու եւ քարոզութիւն սրբոյն Թադէի, Երուսաղեմ, 1868:

Լևոն Սարգսյան

ԱԴԻԱԲԵՆԵ, Հին Հայաստանին սահմանակից քրիստոնյա երկիր Տիգրիս և Փոքր Զավ գետերի միջև: Դեպի արլ. տարածվել է մինչև Զագրոսի լ-շղթան: Հս-ից սահմանակից էր Մեծ Հայքի Կորճայք և Պարսկահայք նահանգներին: Ըստ Ստրաբոնի, Ա-ում մեծաթիվ ժողովուրդներն էին մարերը, հայերը և բաբելացիները: Գլխ. քաղաքներն էին Արբելան և Նինվեն: Ք. ծ. ա. IV–II դդ. Սելևկյանների թագավորության 72 սատրապություններից մեկն էր: Ք. ծ. ա. II դ. սկզբին (Սելևկյանների անկումից հետո) դարձել է առանձին թագավորություն: Ք. ծ. ա. 80-ական թթ. միավորվել է Հայաստանին, նրա զորքերը մասնակցել են Տիգրան Բ Մեծի վարած բոլոր մարտերին: Ք. ծ. ա. 66-ի Արտաշատի հաշտության պայմանագրով միացվել է Պարթևաստանին: Ք. ծ. հ. I դ. սկզբին այնտեղ հիմնվել է Մոնոբազյանների ժառանգական թագավորությունը (հիմնադիր Մոնոբազ Ա-ի անունով): Երկրորդ դահակալ Իզատեսի օրոք (35–59) թագավորությունն զգալիորեն ընդարձակվել է և հզորացել: Ա-ի կիսանկախ թագավորությունը մոտ հինգ դար (ընդհատումներով՝ մինչև Սասանյանների իշխանության գլուխ անցնելը (226) պահպանել է իր գոյությունը: VI դ. Ա. հիշվում է որպես Սասանյան Պարսկաստանին ենթակա վարչ. առանձին միավոր՝ Հեդայաբ անունով:

Ասոր. *Եդեսիայի* թագավորության նման Ա. Արևելքում քրիստոնեության տարածման առաջին կենտրոններից է: Եկեղեց. ավանդությունը և պատմ. աղբյուրները վկայում են, որ այստեղ դեռևս I դ. կեսին տարածվել է քրիստոնեության նախն. մի ձև: Դա տեղի է ունեցել Մոնոբազ Ա-ի և նրա քույր Հեղինեի օրոք, երբ քրիստ. վարդապետությունը պարարտ հող է գտել Ա-ի հրեա քաղաքային բնակչության շրջանում և անգամ թափանցել թագավոր. ընտանիք: Հրեա պատմագիր Հովսեպոս Փլավիոսի վկայությամբ, Հեղինեն գալիլեացի Եղիազար քարոզչի շնորհիվ ընդունել է «հրեական դավանանք» (մովսեսականություն): Մովսես Խորենացին Հեղինեին համարել է Եդեսիայի թագավոր Աբգարի այրին, որին Հայոց Սանատրուկ թագավորն իբր աքսորել էր Խառան («Հայոց պատմություն», գիրք 2-րդ, գլ. ԼԵ): Ա-ի Մոնոբազյանների տան անդամները դարձել են Հայոց Տրդատ Ա թագավորի հենարանը:

Հռոմեա-պարթևա-հայկ. պատերազմների ավարտից հետո երկարատև խաղաղություն է հաստատվել, որը նպաստավոր պայմաններ է ստեղծել Արևելքում քրիստ. դաղափարների հետագա զարգացման ու տարածման համար: Ենթադրվում է, որ այս տարածաշրջանում են հիմնադրվել Արևելքի անդրանիկ եկեղեցիները, որոնցից ամենաառաջինները Եդեսիայի, Մծբինի և Ա-ի եպիսկոպոսություններն էին: Նրանց կազմավորման մասին մեզ հասած տեղեկությունները հիմնականում ավանդազրույցների բնույթի են: Դրանցից հնագույնը «Ադդայի վարդապետությունն» է, ըստ որի՝ ամբողջ Արևելքի, այդ թվում Ա-ի եկեղեցու հիմնադիրները Հիսուսի 72 աշակերտներից Ադդան և նրա հաջորդ Ագգան են եղել: Երկուսն էլ քարոզել են Արևելքի հրեա քաղաքային բնակչության շրջանում: Սակայն, սկսած I դ. 2-րդ կեսից, քրիստ. վարդապետությունն ընդգրկել է նաև ոչ հրեական տեղական տարրերը, որոնք էլ I դ. վերջին – II դ. սկզբին սկսել են դերակշռող դեր խաղալ քրիստ. համայնքներում: Ասորի ժամանակագիր Մշիխա Զեխան վկայում է, որ Ա-ի եպիսկոպոսության հիմնադիրը եղել է ոչ թե անձամբ Ադդան, այլ նրա հաջորդի՝ Ագգայի աշակերտ Պկիդան: Այս անհամաձայնությունը բացատրվում է նրանով, որ արլ. յուրաքանչյուր եկեղեցի ձգտել

է ապացուցել իր հնությունն ու առաքելականությունը, և որ իրենց հայրապետները քահանայությունն անմիջաբար ստացել են *առաքյալներից*: Այդ միտումները հատկապես ակներև են դարձել V դ., երբ Բյուզանդիայի և Պարսկաստանի հրահրմամբ Արևելքի եկեղեցիների միջև անգիջում պայքար է ծավալվել նախաթոռության համար: Այդ պայքարում որոշակի դեր է խաղացել նաև Ա-ի եկեղեցին: Ի տարբերություն Անտիոքի և Եդեսիայի եպիսկոպոսությունների, որոնք գրեթե միշտ եղել են հռոմ. ազդեցության տակ, Ա-ի եկեղեցին կապված էր Տիզբոնի կամ Արևելքի եկեղեցու (Պարսկաստանի) հետ: Ըստ «Մար Մարիի Վարքի» և «Ադիաբենեի եկեղեցու պատմության», Ա-ից է քրիստ. վարդապետությունը տարածվել Պարսկաստանի քաղաքներում և հատկապես Տիզբոնում: Հեդայաբի (հին Ադիաբենե) եպիսկոպոսությունը V դարից պատկանել է Տիզբոնի կամ Արևելքի կաթողիկոսությանը, իսկ ավելի ուշ *նեստորականությունն* այստեղ, ինչպես ողջ Պարսկաստանում, հռչակվել է պաշտոն. դավանանք: «Արևելյան ժամանակագրությունը» վկայում է, որ Մար Իսահակ կաթողիկոսի՝ 410-ին Տիզբոնում գումարած ժողովում Տիզբոնի կամ Արևելքի (իմա՝ Պարսկաստանի) եկեղեցին բաժանվել է 6 թեմերի: Երրորդ՝ Մծբինի թեմի կամ մետրոպոլիտության մեջ են մտել, ի թիվս այլոց, նաև Բեյթ-Մոկսայի (Մոկք), Կարդուի (Կորճայք), Բեյթ-Զաբդեի (Զավդեք-Ծավդեք) եպիսկոպոսությունները, իսկ հինգերորդ՝ Հեդայաբի կամ Արբելայի թեմին են պատկանել, ի թիվս այլոց, նաև Բեյթ-Նուհադրայի, Բեյթ-Դասենի, Բեյթ-Մահկարտի եպիսկոպոսությունները: Դրանք Մեծ Հայքի Նորշիրական (Նոշիրական) բդեշխության Նիխորական, Դասն և Մահկերտուն գավառներն էին, որոնք Հայաստանի 387-ի բաժանումից հետո կցվել են Պարսկաստանին ենթակա Ադիաբենի կամ Հեդայաբի նահանգին: Արևելքի մետրոպոլիտությունների մեջ մտնող հայկ. այս երկրամասերի և գավառների ասոր. եպիսկոպոսությունները մրցակցել են Հայաստանի հունական թևի հետ: Արաբ. նվաճումներից (VII դ. կես) հետո Ա. ընդգրկվել է Ջեզիրեի (այժմ՝ Իրաքի տարածքում) կազմում, իսկ նրա անունն աստիճանաբար մոռացվել է:

Գրկ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Մելքոնյան Հ., Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Ե., 1980:

Երվանդ Մարգարյան

ԱԴՈՆՑ

ԱԴՈՆՑ (Տեր-Ավետիքյան) Նիկողայոս Գևորգի [10.1.1871, գ. Բռնակոթ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում) – 27.1.1942, Բրյուսել], պատմաբան, բանասեր, ազգային-հասարակական գործիչ: Սանկտ Պետերբուրգի (1916–20) և Բրյուսելի (1931–42) համալսարանների դոկտոր, պրոֆ.: 1931–42-ին՝ Բրյուսելի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ: Ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիր. ֆակ-ի գրականության և արլ. լեզուների բաժինները (1899): Ուսումնառությունը կատարելագործելու նպատակով հետևել է նաև Մյունխենի, Փարիզի, Օքսֆորդի համալսարանների բյուզանդագիտ. դասընթացներին, պարապել Վենետիկի, Վիեննայի և Ս. Էջմիածնի ձեռագրատներում (1899–1902): 1916–17-ին մասնակցել է Մուշի, Էրզրումի և Վանի հնագիտական արշավախմբերի աշխատանքներին: Տիրապետել է հին և նոր բազմաթիվ լեզուների, աշխատակցել պարբ. մամուլին («Հանդես ամսօրյա», «Արարատ», «Նոր դար», «Մշակ», «Բազմավեպ», «Սիոն» ևն), ծավալել ազգ-հաս. բուռն գործունեություն: Թողել է հայերեն, ռուս., ֆրանս., գերմ. և անգլ. 100-ից ավելի աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմությանը, գրականությանը, բյուզանդագիտությանն ու կովկասագիտությանը, Հայ առաքելական եկեղեցու և կրոնի պատմությանը, առասպելաբանությանը, ծիսագիտությանը, լեզվաբանությանը, արվեստին: Հայագիտության խոշորագույն նվաճումներից է Ա-ի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (ռուս., 1908, անգլ., 1969, հայ., 1987) կոթողային մենագրությունը, որտեղ մանրամասն տրված է Հայաստանի պատմաաշխարհագր. նկարագիրը, լուսաբանված են նախարար. կարգն ու հողատիրության ինստիտուտները, շինականների իրավական ու տնտ. դրությունը, Հայաստանի քաղ. կացությունը և հարակից այլ հարցեր: Հայ-հուն. բանասիրության նշանակալից արժեքներից է Ա-ի

Ն. Ադոնց

ԱԴՐԻԱՆ. «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» (ռուս., 1915, ֆրանս., 1970) հետազոտությունը, որտեղ 30 ձեռագրերի բաղդատման հիման վրա հրատարակել է Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ. թարգմանությունը՝ կից հուն. բնագրով: Ա. հեղինակել է մենագրային փոքրածավալ բազմաթիվ աշխատություններ, որոնք վերաբերում են Հին Հայաստանի պատմության սակավ ուսումնասիրված խնդիրներին:

Առանձնակի արժեք ունեն Ա-ի բանասիր. բնույթի հետազոտությունները՝ նվիրված Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը, Կորյունին, Փավստոս Բուզանդին, Եղնիկ Կողբացուն, Մովսես Խորենացուն, Մովսես Կաղանկատվացուն, Ղևոնդ Վարդապետին և այլոց: «Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների» (1925) մենագրությունում բացահայտել է հայոց գրերի պատմության հետ կապված շատ առեղծվածներ: 1930-ական թթ. վերջին Ա. ձեռնարկել է «Հայ ժողովրդի պատմություն» ֆրանս. քառահատոր աշխատության ստեղծումը, որի միայն առաջին հատորն է լույս տեսել (ֆրանս., 1946, հայ., 1972): Մյուս հատորների նյութերը՝ ձեռագիր ու անավարտ վիճակում, պահվում են նրա արխիվում:

Ա. անդրադարձել է նաև Հայ եկեղեցու պատմության բազմաթիվ խնդիրների, հեղինակել միայն եկեղեցուն, եկեղեց. մատենագրությանն ու արվեստին վերաբերող ուսումնասիրություններ: 1899-ին հրատարակության է պատրաստել հայոց Հայսմավուրքներին, Ճառընտիրներին ու Ճաշոցներին նվիրված մենագրությունը, որտեղ վերլուծել է հայ եկեղեց. տոների համակարգը, տվել Հայսմավուրք ժողովածուների ծագման ու զարգացման ուղիները, տարորոշել դրանց խմբագրությունները: Հայ եկեղեցու պատմության առանձին մանրամասներ է շոշափել նաև «Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում» (1902), «Հայ ծաթերի ծագման մասին» (ռուս., 1911), «Քերսոնի եպիսկոպոս Ամպելիոսը» (ռուս., 1913) ուսումնասիրություններում և հատկապես՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված հետազոտությունների շարքում: Ա. փորձել է հերքել Գրիգոր Լուսավորչի ծագման մասին տիրապետող կարծիքները և սկզբնաղբյուրների քննական վերլուծության հիման վրա առաջարկել միանգամայն նոր տեսակետ: «Հայացած Աստվածաշունչն ու նրա պատմական տարողությունը» (1936) երկում վերլուծել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության գրական-գեղարվեստ. առանձնահատկություններն ու արժանիքները: Եղնիկ Կողբացուն նվիրված քննական նշմարներում ճշգրտել է հեղինակի անձի, ժամանակի և գործի խճողված խնդիրները, քննել ու վերլուծել «Ճառք յանդիմանութեան» (1925–26), «Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթեւի» (1925–26), «Նշանագիր կարգաց բանից» (1938) բնագրերը ևն: Ա-ին հետաքրքրել են նաև հին հայկ. դիցաբանության («Տորք աստված հին հայոց», 1911), նախաքրիստ. շրջանի հայոց պաշտամունքի ու գաղափարախոսության հարցերը («Հին հայոց աշխարհայացքը», 1926): Ձեռագիր վիճակում են «Տօնացույց» (600 էջ), «Ճաշոց» (150 էջ) ժողովածուները, «Պատկերների խնդիրը Հայոց եկեղեցու մեջ» (65 էջ), «Ասորա-պարսկական քրիստոնեական եկեղեցու աստիճանակարգությունը» (20 էջ) և այլ ուսումնասիրություններ (բոլորն էլ՝ Բեյրութի Համազգայինի գրական պահոցում):

Գրկ. Գյուզալյան Գ., Նիկողայոս Ադոնցը որպես պատմաբան, Բեյրութ, 1943: Յուզբաշյան Կ., Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, ՊԲՀ, 1962, № 4:

Պետրոս Հովհաննիսյան

«ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ ԱՎԵՏԱՐԱՆ», հայկական մանրանկարչության մագաղաթե ձեռագիր մատյան: Հայերեն հնագույն թվակիր Ավետարաններից է: Գրվել ու պատկերազարդվել է 1007-ին, Բյուզանդիայի Ադրիանուպոլիս քաղաքում. գրիչ՝ Կիրակոս Երեց: Պատվիրատուն է հայ ազնվական, բյուզ. կայսր Վասիլ Բ-ի առաջին սուսերակիր Հովհաննես Պրոքսիմոսը: Մանրանկարչի անունը չի պահպանվել (չի բացառվում, որ պատկերները հեղինակած լինի գրիչը): Ձեռագիրը զարդարված է խորաններով, երկու խաչապատկերով, ավետարանիչների և «Տիրամայրը Մանկան հետ» մանրանկարով ու պատվիրատուի դիմանկարով: «Տիրամայրը Մանկան հետ» հորինվածքը սերտորեն առնչվում է նույն շրջանի բյուզ. օրինակների հետ, մինչդեռ խորանները և ավետարանիչների պատկերներն ավելի շատ կրում են հայ ավանդ. մանրանկարչության դրոշմը:

1883-ին Ավետարանը Կոստանդնուպոլսից բերվել է Ս. Ղազար կղզի, որտեղ ցայժմ պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում (ձեռ. № 887/116):

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.1, 3-րդ պատկերը:

Գրկ. Սարգիսյան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 1, Վնտ., 1914: Հայկական մանրանկարչություն, հ. 1, Վնտ., 1966: Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, Ե., 1982 (կազմ. Ա. Գևորգյան):

Կարեն Մաթևոսյան

ԱԶԱՐԻԱ ՋՈՒՂԱՅԵՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), XVI դարի տոմարագետ: Ապրել և գործել է Ջուղայում: Նրա անունով «Ազարիայի թվական» է կոչվել տոմարական երրորդ պարբերաշրջանը: *Հայոց Մեծ Թվականից* երկու 532-ամյա պարբերաշրջանը վերջանալուց հետո (1616) Ա. Ջ. կազմել է նոր (երրորդ) պարբերաշրջանի բարեփոխված, անշարժ աղյուսակ: Այն ունեցել է 12x30+5 կառուցվածքը: Զորս տարին մեկ 12-րդ ամիսը 30-ի փոխարեն 31 օր էր: Ամսանուններն են՝ Շամս, Ադամ, Շբաթ, Նախայ, Ղամարյ, Նաղար, Թիրայ, Դամայ, Համերայ, Արամ, Օվդան, Նիրհան, Ավելյայ: Տարեսկիզբը համապատասխանել է գիշերահավասարին՝ Շամսի 1-ը = մարտի 21-ին: Լուսնի զատկական բոլոր լրումները տեղի են ունեցել Շամս ամսին: Ջուղայեցիների կամ, ինչպես ձեռագրերում է հաճախ օգտագործվել, Նոր կամ Փոքր թվականը գտնելու համար Հայոց Մեծ թվականից անհրաժեշտ է հանել 532-ամյա երկու պարբերաշրջան. ընդ որում, հարկ է հիշել, որ Հայոց Մեծ թվականով տարեսկիզբը Նավասարդի 1-ին էր, իսկ Նոր կամ Փոքր թվականով՝ Շամսի 1-ին (մարտի 21-ին): Ա. Ջ-ու կազմած տոմարը շուրջ երկու հարյուրամյակ օգտագործվել է Պարսկաստանի և Հնդկաստանի հայկ. գաղթավայրերում: Ա. Ջ-ու «Պատճէն տօմարին Ազարիայի» տոմարագիտ. երկը տպագրվել է «Գիրք տօմարաց Հայոց...»-ի մեջ (1685, էջ 22–39):

Գրկ. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 272–276, 1177–86: Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, [գիրք 1], Ե., 1964:

Ջուլիետա Էյնաթյան

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 1860, Ազգային սահմանադրություն հայոց, արևմտահայերի կրոնահամայնական կյանքը կարգավորող կանոնադրություն: Ընդունել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը 1860-ի մայիսի 24-ին: Սակայն սուլթան. կառավարությունը մոտ 3 տարվա ձգձգումից հետո և էական կրճատումներով (հոդվածների թիվը, երեսփոխան-պատգամավորների, հատկապես՝ գավառները ներկայացնողների քանակը ևն) այն վավերացրել է միայն 1863-ի մարտի 17-ին (թուրք. կոչվում էր «Հայ ազգի կանոնադրություն»):

1853-ին Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչներից ընտրված մարմինների՝ Ազգային, Հոգևոր և Գերագույն ժողովների համաձայնությամբ կազմվել է Ուսումնական խորհուրդ, որի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ն. Պալյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Կ. Ութուճյանը, Մ. և Գ. Աղաթոն եղբայրները 1857-ին մշակեցին կրոն., ազգ., մշակութ., հաս. կյանքին վերաբերող կանոնադրություն: «Սահմանադրություն» է կոչվել Ն. Ռուսինյանի առաջարկով, քանի որ գրվել էր բելգիական սահմանադրության գլխ. սկզբունքների հիման վրա՝ միաժամանակ կրելով 1848-ի Ֆրանս. հեղափոխության գաղափարների ազդեցությունը: Կազմված էր ներածությունից («Հիմնական սկզբունք»), 5 գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում էին առանձին ենթագլուխների, և 99 հոդվածներից (նախն. տարբերակում՝ 150): Որպես հիմն. սկզբունք Կ. Պոլսի հայոց պատրիարքը հայտարարվում էր «ազգի ղեկավար», իսկ «մասնաւոր պարագաներու մէջ»՝ միջնորդ օսմանյան պետության և արևմտահայության փոխհարաբերություններում: Նշված էր նաև, որ յուրաքանչյուր հայ անհատ որոշակի պարտականություններ ունի ազգի հանդեպ, ինչպես և ազգը՝ ամեն մի անհատի: Հետևաբար, ազգն ու անհատը կապված են «փոխադարձ պարտեօք»: Առանձնակի կարևորություն էր տրվում Հայ առաքելական եկեղեցու դավանանքն ու ավանդույթներն անաղարտ պահելու, առանց սեռի խտրության հայ մանուկներին անհրաժեշտ կրթություն ու դաստիարակություն ապահովելու, հաս. կարիքների համար նախատեսված դրամական միջոցներն ըստ անհրաժեշտության օգտագործելու հարցերին ևն: Ա. ս. կարգավորում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի գործունեությունը՝ զգալիորեն սահմանափակելով վերջինիս իրավունքները և նշելով պարտականությունները: Պատրիարքը պարտավոր էր հավատարիմ մնալ Ա. ս-յան սկզբունքներին, հետևել դրանց ճիշտ և ժամանակին կիրառմանը, որոշումներն ընդունել միայն իրեն կից ստեղծված ազգ. կրոն. և քաղ. ժողովների անդամներից կազմված ընդհանուր ժողովի հետ համատեղ ևն: Պատրիարքն իրավունք չուներ ինքնակամ փոփոխել Ա. ս-յան

դրույթները, լուծարել վերոհիշյալ մարմինները: Նշված սկզբունքները խախտելու համար նա կարող էր ենթարկվել պատասխանատվության, իսկ ծայրահեղ դեպքում՝ պաշտոնանկ արվել: Նոր պատրիարքի ընտրությունների նախապատրաստումը գտնվում էր ազգ. կրոն. և քաղ. ժողովների հաստատած տեղապահի իրավասության ներքո: Պատրիարք կարող էր ընտրվել 35 տարին լրացած, օսմ. կայսրության տարածքում Հայ առաքելական եկեղեցու թեմերի «համազգային» հեղինակություն վայելած յուրաքանչյուր եպիսկոպոս: Պատրիարքին կից գործելու էին ազգ. կրոն. (կազմված 14 հոգևորականներից) և քաղ. (կազմված 20 աշխարհիկ անձանցից) ժողովներ: Ազգ. կրոն. ժողովի իրավասությանն էին հանձնված եկեղեց. տարաբնույթ հարցերի քննությունն ու լուծումը: Քաղ. ժողովը տնօրինելու էր աշխարհիկ բնույթի գործերը: Նրա գերատեսչության ներքո ստեղծվելու էին ուս., տնտ., դատաստանական և վանորեից խորհուրդներ, ինչպես նաև՝ 3 հոգաբարձություններ (ելևմտից, կտակաց, հիվանդանոցների, բոլորն էլ ենթարկվելու էին տնտ. խորհրդին): Ինչպես ազգ. կրոն., այնպես էլ քաղ. ժողովների անդամները վերընտրվելու էին 2 տարին մեկ՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ա գլխի 3-րդ մասը վերաբերում էր Երուսաղեմի հայոց պատրիարքարանին: Տեղի պատրիարքն ընտրվելու էր Ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ, 35 տարին լրացած եպիսկոպոսներից, ցմահ՝ ազգ. կրոն. և քաղ. ժողովների համատեղ նիստում:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին կից գործելու էին Ազգ. ընդհանուր ժողովը (բարձրագույն օրենսդիր մարմին) և Ազգ. կենտր. վարչությունը (գործադիր մարմին): Արևմտահայության բոլոր խավերի շահերն արտահայտելու նպատակով Ազգ. ընդհանուր ժողովը պետք է լիներ ներկայացուցչական: Պատգամավորները (երեսփոխանները) ընտրվելու էին ըստ Կ. Պոլսի թաղերի և առանձին գավառների՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, այլ ոչ թե նախկին կարգով՝ ըստ արհեստավորական միությունների (էնաֆությունների): Ընտրելու իրավունք ունեին 25, իսկ ընտրվելու՝ 30 տարին լրացած, նախկինում չդատված անձինք: Ազգ. ընդհանուր ժողովի պատգամավորների թիվը սահմանված էր 140 (20-ը՝ հոգևորական, 120-ը՝ աշխարհիկ, որից 80-ը՝ պոլսահայ, 40-ը՝ գավառների ներկայացուցիչներ): Պատգամավորներն ընտրվում էին 10 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր 2 տարին Ազգ. ընդհանուր ժողովի կազմի 1/5-ը նորացվելու պայմանով: Ժողովը հսկելու էր Ա. ս-յան «անխախտ» կատարումը, ինչպես նաև պատրիարքի (Ազգ. ընդհանուր ժողովի նախագահը), ազգ. կրոն. և քաղ. ժողովների գործունեությունը: Ազգ. ընդհանուր ժողովն էր ընտրելու Կ. Պոլսի հայոց պատրիարքին, ազգ. կրոն. ու քաղ. ժողովների անդամներին, երեսփոխանները մասնակցելու էին Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին: Ազգ. ընդհանուր ժողովի նիստերը գումարվելու էին 2 տարին մեկ (նախն. տարբերակում՝ ամեն տարի):

Տեղական բնույթի այլևայլ հարցեր լուծելու և դրանց իրագործումը վերահսկելու համար Կ. Պոլսում ստեղծվելու էին թաղային խորհուրդներ՝ վերը նշված սկզբունքներով: Գավառների գործերը տնօրինելու էին ազգ. գավառական վարչությունները՝ տվյալ եկեղեց. թեմի առաջնորդի նախագահությամբ: Վերջինս գործավարելու էր տեղական ազգ. և քաղ. ժողովների հետ համատեղ: Գավառներում ևս ընտրվելու էին թաղային խորհուրդներ ևն: Ա. ս. պարտադիր պայման էր համարում աշխատանք և համապատասխան շահույթ ունեցող յուրաքանչյուր հայ անհատի կողմից ամենայն «ազգային տուրքի» մուծումը:

Ա. ս-յան հիմն. սկզբունքները հայտարարվում էին անփոփոխելի: Սակայն անհրաժեշտության դեպքում և որոշակի պայմանով (Ա. ս-յան հաստատումից 5 տարի անց) հատուկ հանձնաժողովին («վերաքննության յանձնաժողով») թույլատրվում էր վերանայել առանձին դրույթներ կամ ձևակերպումներ (փոփոխված հոդվածները կիրառվելու էին Բարձր դռան հաստատելուց հետո միայն):

Չնայած զգալի թերություններին, Ա. ս. նոր և առաջադիմ. երևույթ էր արևմտահայ կյանքում: Նպատակն էր ավելի ժողովրդավար. հիմքերի վրա դնել Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեությունը, կարգավորել օսմ. պետության և արևմտահայության փոխհարաբերությունները: Ա. ս-յան գործադրման ամենաբեղուն շրջանը 1870–90-ական թթ. էին, մասնավորապես՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարքության տարիները (1869–73), երբ Ազգ. ընդհանուր ժողովը բազմիցս քննարկել է գավառահայության հարստահարությունները սանձահարելու որոշումներ, ընտրել հայկ. բարե-

փոխումների ծրագրեր են: Օսմանյան կառավարությունն ամեն կերպ խոչընդոտել է Ա. ս-յան կիրառումը, իսկ 1896-ին Աբդուլ Համիդ II նույնիսկ արգելել է այն: 1908-ին, կրկին արտոնվելով, Ա. ս. գործել է մինչև առաջին աշխարհամարտը (1914–18), երբ Կ. Պոլսի ազգ. մարմինների անդամների մեծագույն մասը դարձավ Մեծ եղեռնի զոհ: 1916-ի օգոստ. 10-ին երիտթուրք. կառավարությունը «Նոր կանոնադրություն Հայոց պատրիարքության վերաբերյալ» օրենքով էական սահմանափակումների է ենթարկել Ա. ս., որի գործունեությունը վերջնականապես կասեցվել է հանրապետական Թուրքիայում (թեև որոշ դրույթներ ներկայումս դեռ կիրառվում են): Այնուամենայնիվ, Ա. ս. զգալի հետք է թողել սփյուռքահայ իրականության մեջ: Նրա հիմն. սկզբունքներն ընկած են ժամանակակից սփյուռքի շատ համայնքների կանոնադրությունների հիմքում (ԱՄՆ, Բուլղարիա, Եգիպտոս, Լիբանան, Հունաստան, Ռումինիա, Սիրիա են): Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 1992-ին ընդունած կանոնադրության մեջ ուղղակիորեն նշված է, որ վերջինիս հիմքը Ա. ս. է՝ «իր ոգով և էական սկզբունքներով»:

Գրկ. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860–1910), հ. 1, Թ., 1912:

Գեղամ Բաղալյան

ԱԹԱՆԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ, սուրբ Աթանաս Մեծ (295, Ալեքսանդրիա – 373, Ալեքսանդրիա), *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*), *Ալեքսանդրիայի* պատրիարք (326-ից): Սերել է հույն քրիստոնյա ընտանիքից: Լինելով տակավին սարկավագ՝ *Նիկիայի Ա տիեզերական ժողովում* (325) լուրջ հակահարված է հասցրել Արիոսին (տես *Արիոսականություն*) ու նրա հետևորդներին: Այնուհետև՝ իր ողջ կյանքի ընթացքում պայքարել է արիոսական հերձվածի դեմ, պաշտպանել նիկիական ուղղափառ դավանանքը: Անգիջում ու հետևողական պայքարի համար հալածվել է արիոսական իշխանավորներից և իր եպիսկոպոսական 47 տարիներից 15-ը անցկացրել աքսորում: Եկեղեցաբաղ., դավան. հակամարտությունների այդ մթնոլորտում նրա աշխատությունները, բնականաբար, ունեցել են տեսական, աստվածաբան. ուղղվածություն: Ա. Ա-ու մատենագր. վաստակը սերտորեն առնչվել է Նիկիական հանգանակի պաշտպանության և հերետիկոսների դեմ մղված պայքարի հետ: Մատենագր. գործունեության վաղ շրջանում (317–319) գրել է «Երկու ճառ ընդդեմ հեթանոսների» ջատագով. բնույթի աշխատությունը: Առաջինում ապացուցել է հեթանոսության կեղծ ու հոռի էությունը և նախանշել ինքնազննման, արտաքին աշխարհի գեղեցկության ընկալման միջոցով Աստծո և Բանի ճանաչողությանը հասնելու ճանապարհը: Երկրորդ ճառում բացահայտել է Բանի մարմնավորման ճշմարտությունն ու իմաստը, դա հիմնավորել մարգարեությունների կատարման իրողությամբ և քրիստոնյա աշխարհի հոգևոր նվաճումների արձանագրումով:

Ա. Ա. իր դավան-հակաճառ. երկերի մեծ մասը շարադրել է աքսորավայրում (356–362): Հատկանշական են հատկապես արիոսականների դեմ գրած երեք ճառերը: Դրանցում հեղինակը ժխտել է արիոսականների տրամաբան. և մեկնաբան. փաստարկները, բացատրել աստվածային համագոյության իմաստը:

Ա. Ա-ու ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման համար խիստ արժեքավոր են նրա Ջատկական նամակները. հուն. բնագրից մեզ են հասել առանձին փշրանքներ, սակայն պահպանվել է դրանց ասոր. թարգմանությունը: Ա. Ա. հեղինակել է Անտոն Անապատականի (250–356) վարքը (մոտ 356–357-ին), նրա կերպարը ներկայացրել իբրև ճգնական նվիրումի չափօրինակ: Երկը զգալի ազդեցություն է գործել սրբախոսական գրականության վրա: Հայերեն է թարգմանվել V դ.:

Ա. Ա-ու հնում հայտնի սուրբգրային բազմաթիվ մեկնություններից մեզ են հասել սաղմոսների, Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների մեկնության լոկ առանձին հատվածներ և Սարգիս Կունդի (XII դ.) Կաթողիկե թղթերի խմբագիր մեկնության մեջ կարևոր տեղ զբաղեցնող աթանասյան ընդարձակ հատվածները, որոնք հայտնի են միայն հայերեն թարգմանությամբ: Ա. Ա. գրել է նաև կանոններ, Պատարագամատույց, ներբողներ, խրատներ, աստվածաբան., քրիստոսաբան., ջատագով. և հակաճառ. բնույթի բազմաթիվ թղթեր:

Ա. Ա-ուն իրավամբ անվանել են «սիւն եկեղեցւոյ» և «սիւն հաւատոյ»: Քրիստ. մտքի պատմության մեջ նրա երրորդաբան. և քրիս-

տոսաբան. ուսմունքն անդերազանցելի ապացույցն է Ընդհանրական եկեղեցու հնագույն ավանդության, ուսուցման և հավատքի: Ալեքսանդրիայի աստվածաբան. դպրոցի ամենակարկառուն ներկայացուցչի՝ Ա. Ա-ու քրիստոսաբանությունը ուղենիշ է հանդիսացել հետագայում *Անտիոքի* դպրոցի դեմ մղված պայքարում և հակաքաղկեդոն. վեճերի շրջանում: Մեծ է եղել նրա ուսմունքի ազդեցությունն արևելաքրիստ., այդ թվում՝ Հայ եկեղեցու աստվածաբան-դավանաբան. մտքի վրա:

Ա. Ա-ու աստվածաբանության և քրիստոսաբանության հիմքը Փրկագործության և Մարդեղության գաղափարն է: Նրա համար Բանի Մարդեղությունը և Հոր հետ համագոյությունը փրկաբանական հարց է, Փրկագործության վարդապետություն: Փրկությունը տեսել է Աստծո հետ մարդու արարված բնության վերամիավորման մեջ, ինչը հնարավոր է միայն Աստծո մարմնավորման և մարդացման պարագայում: Փրկությունը, ըստ Ա. Ա-ու, ոչ այլ ինչ է, եթե ոչ աստվածացում. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա», այսպես է բանաձևել Ա. Ա. Մարդեղության և Փրկագործության վարդապետությունը: Աստվածացումը Աստծուն որդեգրվելն է, «որպեսզի մարդկանց որդիները դառնան Աստծո որդիներ»: Ինչպես ճյուղերն են համագո խաղողի որթին, այնպես էլ մենք մեր մարմնով համաբնույթ ենք Տիրոջ մարմնին, և նրա մարմինը մեզ համար «հարության փրկության արմատ է»:

Ս. *Երրորդության* խորհրդի բացահայտումը Ա. Ա. իրականացրել է արիոսական գաղափարների ժխտման ընթացքում: Եթե «կար ժամանակ, երբ չկար Որդին» (արիոսականություն), ապա նշանակում է, որ Աստված էլ երբևէ Հայր չի եղել, հետևաբար չի եղել Ս. Երրորդություն, այլ եղել է մեկը, որը վերացարկված միաստվածականություն է, բացահայտ հրաժարում քրիստ. նոր Հայտնությունից, Աստծո՝ որպես Ս. Երրորդության, իմացությունից: Իր անփոփոխելիության մեջ Հայրը միշտ Հայր է: Հոր և Որդու հարաբերության մեջ բացառվում է որևէ հերթականություն, տևականություն և տարածություն: Այստեղ տիրում է լիակատար հավերժակցություն, որը ցույց է տալիս, որ Որդին ծնունդ է էությունից և դրա համար էլ համագո է Հորը: Հոր աստվածությունն անխառն և անբաժանելիորեն առկա է Որդու մեջ: Համաձայն Ա. Ա-ու, Հոր և Որդու այսօրինակ հարաբերության ամենաճշգրիտ անվանումը «Համագոյություն» եզրն է: Ս. Հոգու վերաբերյալ ուսմունքը Ա. Ա. ներկայացրել է բացառիկ հստակությամբ: Նրա ելակետը Ս. Երրորդության կատարյալ միասնության գաղափարն է, այսինքն՝ Ս. Հոգին ունի Հոր և Որդու նույն բնությունը՝ «Մի Աստուած երեք անձինք կատարեալք, միով բնութեամբ» («Ճառք...», 1899, էջ 238): Հոգին ծնված չէ և այդ պատճառով չի կոչվում Որդու եղբայր, այլ՝ Ս. Հոգի: Բայց նա դուրս չէ Որդուց, դրա համար էլ կոչվում է Որդեգրության Հոգի, Հզորության և Իմաստության Հոգի: Նա Որդու հետ ունի նույն միասնությունը, ինչ՝ Որդին Հոր հետ: «Յաղագս աստուածութեան Որդւոյ», «Առ Ադելիոս», «Յաղագս Սրբոյ Երրորդութեանն» և այլ գրվածքներում ու ճառերում Ա. Ա. զարգացրել է Ս. Երրորդության աստվածության և միության ուղղափառ ըմբռնումը. «զՄի Աստուած յԵրրորդութեան և զԵրրորդութիւն ի միութեան... այլ Հօր և Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ մի աստուածութիւն, հաւասար փառք եւ յաւիտենական մեծութիւն» (նույն տեղում, էջ 478):

Ա. Ա-ու աշխատությունների զգալի մասը հայացվել է V դ.՝ թարգմանիչ հայրերի, իսկ մյուս մասը VIII դ.՝ *Ստեփանոս Սյունեցու* ջանքերով: Թարգմանված առավել կարևոր երկերից են՝ «Յաղագս ամենասուրբ Երրորդութեան», «Ի Հոգին Աստուծոյ», «Յաղագս մարմնաւորութեանն Որդւոյն եւ Սրբոյ Երրորդութեանն», «Յաղագս փրկական յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդդեմ Մարկիոնի», «Ի ծնունդն Քրիստոսի» ևն: Ա. Ա-ու գործերի հայերեն թարգմանությունների մի մասը (ճառեր, թղթեր, մեկնություններ ևն) հրատարակվել է 1899-ին, տարբեր աշխատություններից հատվածներ և վկայություններ՝ «Կնիք հաւատոյ» ժողովածուում: Ա. Ա-ու երկերը բացառիկ կարևոր դեր են կատարել Հայ եկեղեցու որդեգրած դավանական դրության, մասնավորապես քրիստոսաբանության և երրորդաբանության մեջ: Ուստի և նրա մատենագրության տարբեր հատվածներ լայնորեն վկայակոչվել են հայ դավանաբան. գրականության մեջ («Կնիք հաւատոյ», «Արմատ հաւատոյ», *Անանիա Սանահնեցու* «Հակաճառութիւն», *Պողոս Տարոնեցու*

«Ընդդեմ Թեոփիստեայ հռոմ փիլիսոփայի» ևն): Ա. Ա. իր ուրույն տեղն ունի նաև հայ մեկնաբան. գրականության մեջ:

Հայ եկեղեցին ս. Ա. Ա-ու հիշատակը տոնում է տարին 2 անգամ՝ հունվարին և հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.1, 4-րդ պատկերը:

Երկ. Ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք, Վնտ., 1899: Սաղմոսների մեկնություն, թրգմ. Մ. Ղազարյան, Ե., 2000:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889: Գաթըրճյան Հ., Սրբազան պատարագամատոյցք Հայոց, Վնտ., 1897, էջ 217–318: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Էջմիածին, 1908: Սագարդա Ն., Յոյն-Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը իւր ծաղկման շրջանում (IV–V դդ.), Վաղ-պատ, 1910: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 321–368: Հատիտյան Ա., Սուրբ Աթանաս հայրապետ Ալեքսանդրացի, «Էջմիածին», 1977, № 2: Քյոսեյան Հ., Յունարէն բնագրով անյայտ ճառ ս. Աթանաս Ալեքսանդրացու անուամբ, «Գանձասար», 5, 1994: Նույնի, Ս. Աթանաս Ալեքսանդրացու՝ հունարեն բնագրով անհայտ Անտիոքի եկեղեցուն հղած թղթի հայերեն թարգմանությունը, «Էջմիածին», 1995, № 2–3: Migne J. P., PG, t. 25–28, P., 1857–66; Quasten J., Patrology, v. 3, Utrecht, 1966; Geerard M., Clavis patrum Graecorum, v. 2, Brépols-Turhnout, 1974, p. 12–60.

Հակոբ Քյոսեյան

ԱԹՈՌ, եկեղեցական իմաստով՝ 1. առաքելական շնորհով հաստատված կամ փոխանցված *եկեղեցու* նվիրապետական իշխանության խորհրդանիշ: Նվիրապետ. Ա-ները *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* վարչ. կառուցվածքի բաղկացուցիչ մասն են: Հայ եկեղեցում գոյություն ունեն կաթողիկոսական, պատրիարքական և եպիսկոպոսական Ա-ներ: Կաթողիկոս. Ա-ները երկուսն են՝ Ամենայն հայոց ընդհանրական կաթողիկոսությունը՝ Ս. Էջմիածնում (Մայր աթոռ, տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*) և Կիլիկիո Ա.՝ Անթիլիասում (տես *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո*): Պատրիարքական Ա-ները Հայ եկեղեցում ևս երկուսն են (տես *Երուսաղեմի հայոց պատրիարքություն* և *Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն*): Առաջնորդական Ա. հասկացությունը ներկայումս գործածվում է հիմնականում եպիսկոպոսական Ա-ի համար, իսկ նախկինում գործածվել է նաև վանական առաջնորդությունների կամ վանական առաջնորդական Ա-ի պարագայում (տես *Թեմ* հոդվածում):

2. Եկեղեց. կահավորանքի մաս, գահ, գահավորակ, որի վրա բազմում է եկեղեցու նվիրապետը, աթոռակալը (կաթողիկոս, պատրիարք, թեմական առաջնորդ): Գոյություն ունեն հաստատուն և շարժական Ա-ներ: Հաստատուն Ա. հատուկ է նվիրապետին կամ աթոռակալին, Մայր եկեղեցիներում (առաջնորդանիստ) այն անշարժ դրվում է եկեղեցու աջակողմյան դասի գլխավերևում և, աթոռակալի աստիճանի մեծության համեմատ, կարող է ունենալ մեկ, երկու կամ երեք աստիճան բարձր պատվանդան: Հաստատուն Ա-ին բացի նվիրապետից ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ չեն կարող նստել: Շարժական Ա. եկեղեցում գործածվում է ըստ անհրաժեշտության՝ բեմից քարոզելու, ատյանի (եկեղեցու բեմի և դասի մեջտեղը) համար, ձեռնադրությունների ժամանակ և այլ առիթներով: Ա-ները զարդարվում են նվիրապետության խորհրդանշանով, նվիրական զարդերով, վերին մասում՝ սյուների վրա, կարող է լինել Մայր եկեղեցու կամ կաթողիկեի մանրակերտը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.2, 1-ին պատկերը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, քաղաք Եգիպտոսի (այժմ՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետություն) հյուսիսում, Միջերկրական ծովի ափին, Նեղոս գետի դելտայի արևմտյան եզրին: *Ընդհանրական եկեղեցու* հինգ պատրիարքական աթոռներից, քրիստ. մտքի, մշակույթի և գիտության նշանավոր կենտրոններից: Հիմնադրել է հույն զորավար և պետ. գործիչ Ալեքսանդր Մակեդոնացին (որի անունով էլ կոչվել է) Ք.ծ.ա. 332–331-ին: Մինչ քրիստոնեության մուտքը Ա. եգիպտ., հելլենիստ. և հրեական մշակույթի, գիտության, կրթության կենտրոնն էր, Արևելքն ու Արևմուտքը միացնող Հին աշխարհի նշանավոր քաղաքներից: Հայտնի էր իր մշակութ., գիտ., գրական և կրթ. հաստատություններով (Ալեքսանդրիայի մուսեյոն, Ալեքսանդրիայի գրադարան, հեթանոս. տաճարներ), փիլ. դպրոցներով: Ա-ում տիրող փիլ. ուղղությունը նորպլատոնականությունն էր, որը քրիստ. շրջանում մեծ ազդեցություն է ունեցել ալեքսանդրյան աստվածաբանության ձևավորման վրա: Ա-ում է կատարվել Հին կտակարանի Յոթանասնից կոչված հուն. թարգմանությունը Ք.ծ.ա. III դ.:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Քրիստոնեությունը Ա. մուտք է գործել I դ., Մարկոս ավետարանչի քարոզչությամբ: Վերջինս հիմնել է Ա-ի առաքելական աթոռը և ինքն էլ դարձել առաջին եպիսկոպոսը: Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ Ա-ի եկեղեցին քրիստ. քարոզության, առաքելության և հավատի ուղղափառության կարևորագույն պատվարներից է եղել ողջ քրիստոնյա աշխարհի համար: Ա-ի պատրիարքները, եկեղեց. հայրերը վճռական դեր են կատարել (մանավանդ՝ II–V դդ.) աստվածաբանության և քրիստոսաբանության բոլոր հիմն. հարցերում ուղղափառության պաշտպանության գործում և հերետիկոսությունների դեմ Ընդհանրական եկեղեցու մղած պայքարում: Նրանք և՛ Արևելքում, և՛ Արևմուտքում համարվել են «պաշտպան ուղղափառ հաւատոյ»: Այդ ժամանակաշրջանում Ա-ի եկեղեցու բովից հրապարակ են իջել մեծ դավանաբաններ ու ջատագովներ, ինչպիսիք էին *Կղեմես Ալեքսանդրացին, Որոգինեսը*, Դիոնիսիոս Ալեքսանդրացին (190–265), Պետրոս (Ա-ի պատրիարք 300–312-ին), Ալեքսանդր (312–328), Թեոփիլոս (385–412) Ալեքսանդրացիները, *Աթանաս Ալեքսանդրացին, Կյուրեղ Ալեքսանդրացին, Տիմոթեոս Կուզը* և ուր.:

Ա-ի աթոռի հեղինակությունը բարձրացել է քրիստոսաբան. մեծ վեճերի և երեք *տիեզերական ժողովների* ժամանակ, երբ հաղթել և ուղղափառ է ճանաչվել Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանությունը: Ա-ի պատրիարքները հետևողականորեն պայքարել են *արիոսականության (Նիկիայի Ա տիեզերական ժողով 325)*, հոգեմարտների *(Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381)*, *նեստորականության (Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431)*, *եվտիքականության* դեմ: *Քաղկեդոնի ժողովից* հետո Ա-ի աթոռը գլխավորել է հակաքաղկեդոն. պայքարը, խզել հաղորդությունը բյուզ. եկեղեցուց և հավատարիմ մնացել երեք տիեզերաժողովների դավանությանն ու արևելաքրիստ. ավանդությանը:

641-ին, երբ Ա. գրավել են արաբները, Ա-ի պատրիարքությունը կորցրել է իր երբեմնի փառքն ու նշանակությունը քրիստ. աշխարհում: VII դարից *Ղպտի ուղղափառ եկեղեցին* («ղպտի» անվանումը Եգիպտոս տեղանվան աղճատված ձևն է, արաբներն այդպես կոչել են հին եգիպտացիների հետևորդներին՝ քրիստոնյա եգիպտացիներին, իսկ «ղպտի» անունը տարածվել է նաև Ա-ի եկեղեցու վրա) *քաղկեդոնականությունը* մերժած դավանակից մյուս եկեղեցիների (այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցու) հետ կազմել է Արևելյան ուղղափառ (ոչքաղկեդոնական) եկեղեցիների ընտանիքը:

Ա. Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ հայտնի է ոչ միայն իր պատրիարքական աթոռով, այլև՝ նշանավոր աստվածաբան. դպրոցով, որը քրիստ. աստվածաբան. առաջին դպրոցն էր: *Գնոստիցիզմի* դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով՝ եկեղեցին մեծ ուշադրություն է դարձրել եկեղեց. դրականության զարգացմանը, դպրոցներ հիմնելուն, որոնք պետք է համակարգված հերքեին գնոստիկյան ուսմունքները, սուրբգրային քմահաճ մեկնաբանությունները: Այդպես առաջացավ Ա-ի քրիստ. աստվածաբան. մեծ դպրոցը մոտ 180-ին, որի առաջին ուսուցիչն է եղել սիցիլիացի փիլիսոփա Պանտենոսը (մահ. մոտ 200-ին): Ա-ի դպրոցն առաջինն էր, որ սահմանել է եկեղեց-գիտ. աստվածաբանության հիմն. սկզբունքներն ու եղանակները, առաջին քայլը կատարել դասական հին գիտությունն ու փիլիսոփայությունը «եկեղեցականացնելու» գործում, ձգտելով հաշտեցնել «գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, հին քաղաքակրթությունը՝ Ավետարանի հետ» (Սադարդա, «Յոյն Արևելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտությունը», էջ 17–18):

Եթե եկեղեց. քաղաքականության մեջ Ա. մրցակցել է Կ. Պոլսի աթոռի հետ՝ Արևելքում գերիշխանության հասնելու համար, ապա աստվածաբան. հարցերում պայքարի ու հակաճառության մեջ է եղել *Անտիոքի* աստվածաբան. դպրոցի հետ: Ա-ի դպրոցի մշակած եկեղեց. դրականության որոշիչ նկարագիրն է հավատի բովանդակության բնազանցական ուսումնասիրությունը, մեծ հակումը դեպի Պլատոնի և նորպլատոնական փիլիսոփայությունը և Աստվածաշնչի այլաբանական մեկնությունը (տես *Մեկնողական գրականություն*)՝ ի հակադրություն Անտիոքի դպրոցում գերակշռող Արիստոտելի փիլիսոփայության և Ս. Գրքի մեկնության պատմաբանասիր. եղանակի: Ա-ի և Անտիոքի ուղղությունների միջև պայքարը հող է պատրաստել հաջորդ դարերի դավան. մեծ վեճերի համար:

Ա-ի աստվածաբան. դպրոցը, որը հիմնվել է առավելապես քրիստ. քարոզության նպատակով, ունեցել է կանոնավոր շրջանների բաժանված դասընթացներ, ուսուցման որոշ եղա-

նակ ու ծրագիր թե՛ հեթանոս և թե՛ նորադարձ քրիստոնյա ուսանողների համար: Հեթանոս ուսանողները մասնակցել են ընդհանուր դասախոսություններին: Նրանց համար դասավանդվող հիմն. առարկաներն էին դիալեկտիկան, ֆիզիկան, մաթեմատիկան, երկրաչափությունը, աստղագիտությունը, հուն. փիլիսոփայությունը և հայեցողական աստվածաբանությունը: Իսկ բարձրագույն գիտակրթն. դասախոսություններին մասնակցել են միայն քրիստոնյա ուսանողները, որոնք բացի վերոհիշյալ առարկաներից սովորել են նաև քրիստ. աստվածաբանություն, Աստվածաշնչի այլաբանական մեկնություն և փիլիսոփայություն:

Ա-ի աստվածաբան. դպրոցն իր ծաղկման առաջին շրջանն է ապրել III դ. սկզբին, երբ Պանտենոսի մահից հետո դպրոցը ղեկավարել են Կղեմես Ալեքսանդրացին (200–203) և Որոգինեսը (203–215): Սակայն երբ 215-ին Կարակալլա կայսրը դրավել է Ա., փակել է աստվածաբան. դպրոցը, հալածել դասախոսներին, Որոգինեսը հեռացել է Պաղեստինյան Կեսարիա և այնտեղ հիմնել նոր դպրոց՝ առաջնորդվելով Ա-ի դպրոցում իր մշակած և հաստատած մանկավարժ. ավանդույթներով, ուսման նույն ծրագրերով: Ա-ի դպրոցի երկրորդ շրջանն սկսվել է IV դ. սկզբից և իր ծաղկման գագաթնակետին հասել *եկեղեցու հայրեր*, Ա-ի պատրիարքներ Աթանաս և Կյուրեղ Ալեքսանդրացիների օրոք, որոնք նաև դպրոցի ղեկավարն ու ոգին էին: IV–V դդ. քրիստոսաբան. մեծ վեճերի շրջանում Ընդհանրական եկեղեցու պատմությունն ուղեկցվել է Ա-ի և Անտիոքի աստվածաբան. դպրոցների պայքարով, ու մինչև V դ. վերջը դավան. շարժումների մեջ առաջնորդող դերը պատկանել է Ա-ի դպրոցի աստվածաբանությանը:

Ալեքսանդրյան դպրոցի քրիստոսաբանությունը խարսխված է «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարդացելոյ» բանաձևի վրա: Քրիստոսը կատարյալ Աստված է և կատարյալ մարդ: Աստվածությունը և Մարդեղությունն անփոփոխելի, անշփոթելի և անբաժանելի կերպով միացած են «մի բնության» մեջ: Այս միությունն էական և բնական միություն է և, միևնույն ժամանակ՝ անճառելի և անհասանելի մտքի համար: Ալեքսանդրյան ավանդությունը մերժում է ցանկացած բաժանություն և երկվություն Քրիստոսի մեջ: Մի է Քրիստոս՝ մարմնացյալ Բանը, մի աստվածամարդկային բնություն, մի անձ, մի դեմք, մի կամք, մի ներգործություն: Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանության ամենանշանավոր ներկայացուցիչը Աթանաս Ալեքսանդրացին է: Նա քրիստ. ամբողջ աշխարհայեցողությունը կենտրոնացրել է փրկության գաղափարի մեջ և հաստատել քրիստոնեության էության ըմբռնումը որպես փրկության կրոնի էություն: Նրա բոլոր ձգտումներն ուղղված էին Փրկչին և փրկությանը, փրկության գաղափարի տեսակետից քրիստոնեության մեջ Քրիստոսի կենտրոնական նշանակությունը ճանաչելուն: Հիսուս Քրիստոսի անձնավորության մեջ աշխարհ է եկել կատարյալ և ճշմարիտ աստվածությունը: Փրկության խորհուրդը, որ է՝ Աստվածամարդու միջոցով մարդկության փրկությունը աստվածային կյանքի համար, Աթանաս Մեծը դարձրել է քրիստ. կրոնի մեծ սկզբունքը, աստվածաբանության ուղղությունը: Աթանաս Ալեքսանդրացին փրկության գաղափարը խտացրել է «Աստված մարդացավ, որպեսզի մարդ աստվածանա» բանաձևի մեջ, որը և եղել է քրիստոսաբանության արևելաքրիստոնեական ընկալման առանցքը: Ա-ի դպրոցը չեշտել է Քրիստոսի աստվածությունը, Անտիոքի դպրոցը՝ Քրիստոսի մարդ լինելը: Քրիստոսի մեջ չեշտելով մարդը («խոստովանեսցուք զոր ի մարդումն Աստուած»)՝ Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ Քրիստոսն ամենակալ Աստծուն երկրպագակից մարդ է, ունի երկու բնություն՝ Աստված առանձին, մարդն առանձին, նրանք գոյություն ունեն իրարից անջատ, մեկը՝ ճշմարտապես բնությամբ որդի, իսկ մյուսը շնորհիվ որդեգրության՝ Աստված: Ա-ի և Անտիոքի դպրոցների աստվածաբան. համակարգերի, քրիստոսաբան. խոստովանությունների իրարամերժությունն արտահայտվել է հետևյալ բանաձևով. «Ինքը Աստվածն է մարդ դարձել», «մարդացյալ Աստված» (Ա-ի դպրոց) և «Մարդ, որն աստվածացել է», «Աստվածազգեստ մարդ» (Անտիոքի դպրոց):

Ա-ի դպրոցի ինքնուրույն հոսանք է կապադովկյան հայրերի (*Բասեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի*) աստվածաբանությունը, որը կրում է Աթանաս Ալեքսանդրացու և, հատկապես, Որոգինեսի ազդեցությունը: Իր առանձնահատկություններով հանդերձ կապադովկյան հայրերի աստվածաբան. վարդապետությունը ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանության նոր

շրջանն էր: Ա-ի, ինչպես և Անտիոքի աստվածաբան. դպրոցները փակվել են VI դ., բյուզ. կայսր Հուստինիանոս I-ի օրոք (527–565):

Հայ եկեղեցականի մասին ամենահին տեղեկությունը կապված է Ա-ի աթոռի հետ: *Եվսեբիոս Կեսարացին* իր «Պատմութիւն եկեղեցւոյ» աշխատության մեջ վկայում է, որ Ա-ի Դիոնիսիոս եպիսկոպոսը (248–265) նամակ է գրել հայոց Մեհրուժան եպիսկոպոսին (ըստ Ն. *Ադոնցի՝* նրա նստավայրը գտնվել է Ծոփաց աշխարհի Անգեղ գավառում): Դիոնիսիոս Ալեքսանդրացին Մեհրուժան եպիսկոպոսի կարծիքն է հարցրել քրիստոնյաների դեմ Դեկոս կայսրի (250–253) հալածանքների ժամանակ քրիստոնեությունն ուրացածներին ապաշխարությամբ կրկին եկեղեցի ընդունելու վերաբերյալ: V–VI դդ. կրթություն ստանալու համար Հայաստանից Ա. են մեկնել հայ երիտասարդներ, որոնց թվում՝ պատմահայր *Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը*: V դ. վերջին Ա-ի պատրիարք Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» հակաքաղկեդոն. երկի հայերեն թարգմանությամբ, այնուհետև 506-ին Դվինի եկեղեց. ժողովում Քաղկեդոնի մերժմամբ Հայ եկեղեցին կանգնել է ալեքսանդրյան աստվածաբանության դիրքերի վրա՝ մերժելով հանգանակի վրա ավելացված, ալեքսանդրյան ավանդությանը և երեք տիեզերաժողովների դավանությանը հակասող ամեն մի նորամուծություն:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Էջմիածին, 1908: Սադարդան., Յոյն-Արևելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտութիւնը իւր ծագման շրջանում, Էջմիածին, 1910: Օրմանյան Մ., Հայ եկեղեցին, ԿՊ, 1911: Հատիտյան Ա., Ալեքսանդրիայի եկեղեցու մեծ հայրապետները Բ–Ե դարերում, «Էջմիածին», 1981, № 8: Quasten J., Patrology, v. 2–3, Utrecht, 1966.

Արտաշես Ղազարյան

ԱԼԻՇԱՆ Ղևոնդ (Ալիշանյան Քերովբե Պետրոս-Մարգարի) [6(18).7.1820, Կ. Պոլիս – 9(22).11.1901, Ս. Ղազար, Վենետիկ], բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, բանաստեղծ, թարգմանիչ: Վենետիկի *Մխիթարյան միաբանության* անդամ 1838-ից: Ծնվել է դրամագետ-հնագետի ընտանիքում: Ուսանել է Կ. Պոլսի Զալբյան վարժարանում (1830–32), Վենետիկի Մխիթարյանների վարժարանում (1832–41): 1841–50-ին, ապա 1866–72-ին՝ ուսուցիչ (1848-ից՝ տեսուչ) Վենետիկի Ռափայելյան, 1859–61-ին՝ Փարիզի Մուրատյան վարժարաններում, 1849–51-ին՝ «*Բազմավեպի*» խմբագիր, 1870-ից վարել է միաբանության աթոռակալի պարտականությունը, 1872-ից ամբողջովին նվիրվել գրական գործունեության:

Ֆրանս. ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր (1886), Իտալիայի Ասիական ընկերության (1887), Մոսկվայի հնագիտ. ընկերության (1894), Վենետիկի ակադեմիայի (1896), Սանկտ Պետերբուրգի հնագիտ. ընկերության (1896), Ենայի փիլ. ակադեմիայի (1897) պատվավոր անդամ և դոկտոր:

Ա-ի գիտագեղ. գործունեությունն սկսվել է 1843-ից՝ «Բազմավեպում» տպագրված արձակ ու չափածո և գիտաճանաչող. գործերով, որոնց թվում է նրա բանաստեղծ. ժառանգության բարձրակետը՝ «Նահապետի երգերը»: «*Սոփերք Հայկականք*» մատենաշարով Ա. ընդլայնել է հայ հին գրականության հրատարակման շրջանակն առավել պարզ շարադրանք ունեցող մատենագր. մանր երկերով, որոնք նպաստելու էին Հայ եկեղեցու և դպրության առաջին դարերի պատմության հարցերի լուսաբանմանը: Օսմ. կայսրությունում հայության դեմ ուժեղացող հալածանքների պայմաններում, «Սոփերք Հայկականքի» հերոսների օրինակով, Ա. այլաբանության ու փոխաբերության լեզվով և պատմ. զուգահեռների միջոցով հորդորել է հավատարիմ մնալ հայրենատուր ավանդներին և նահատակների արյամբ ոռոգված հողին: Նույն նպատակին է ծառայել նաև Ա-ի գեղ. արձակը՝ «Յուշիկք հայրենեաց հայոցը» (հ. 1–2, 1869–1870): Այստեղ հեղինակը, ըստ Հայ եկեղեցու Տոնացույցի, ներկայացրել է Հայոց պատմության ու մշակույթի նշանակալից 33 դրվագներ, որոնցում դիմել է Հայկ Նահապետի նորօրյա շառավղին՝ պատանի Հայկակին՝ պատգամելով հավատարիմ մնալ աստվածադիր օրենքներին և հայրենատուր ավանդներին:



Ղ. Ալիշան

1850-ական թթ. Ա., շարունակելով Մխիթարյան աշխարհագրագիտության ավանդները, ձեռնամուխ է եղել պատմ. Հայաստանի նահանգների գավառ առ գավառ տեղագրությանը: Ա. ծրագրել էր պատմ. Հայաստանի նա-

հանգներն ու գավառները տեղադրել 20–22 մեծադիր հատորներով, սակայն մասնակիորեն է իրականացրել իր ծրագիրը՝ հրատարակված չորս հատորով՝ «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890) և «Սիսական» (1893): Դրանք ներկայացրել է համաձայն հին Հայաստանի նահանգների վարչ. բաժանման՝ հանգամանորեն անդրադառնալով նաև պատմ. հուշարձաններին, վանքերին ու եկեղեցիներին, հոգևոր-մշակութ. կենտրոններին:

Կյանքի վերջին շրջանում, ի մի բերելով հայագիտության տարբեր բնագավառներին վերաբերող նյութերը, Ա. հրատարակել է «Հայ-Բուսակ կամ Հայկական բուսաբառութիւն» (1895) և «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (1895) ուսումնասիրությունները: «Հին հաւատքում» միմյանցից հեռու բնակվող ժողովուրդների պաշտամունք. ընդհանրությունները և դրանք արտահայտող բառերի հաճախ միևնույն արմատից ծագելը բացատրում է այն հանգամանքով, որ սկզբնապես բոլորը պաշտել են ճշմարիտ Աստծուն, այնուհետև չեղվել են ճշմարիտ հավատքից՝ կռապաշտ. ու հեթանոս. մոլորություններով և այս խոտորումներով հանդերձ պահպանել սկզբն. հավատքի հեռավոր հիշողությունը: Ըստ Ալիշանի, ոչ թե հեթանոս. սովորություններն են քրիստ. վերիմաստավորման ենթարկվել, այլ պաշտամունքային յուրաքանչյուր ձև, լինելով ճշմարիտ հավատքի խաթարված վիճակ, իր նախասկզբին է գալիս քրիստոնեությամբ:

Ա-ի ավելի քան կեսդարյա գիտագեղ. գործունեության ամփոփումն է «Հայապատումը» (1901): Երկի առաջին մասը՝ «Պատմիչք Հայոց»-ը, նվիրված է հայ պատմագրության պատմությանը, երկրորդը՝ «Պատմութիւնք Հայոց»-ը, տարբեր պատմիչներից ընտրված և դեպքերի ժամանակագր. կարգով խմբավորված 400 հատվածներով ներկայացնում է վաղագույն շրջանից մինչև XVII դ. Հայոց պատմությունը:

Ա. իր գիտ. մեթոդաբանությունը խարսխել է հոգևոր աշխարհայացքի վրա: Համաշխ. պատմությունից բխեցնելով հայոց պատմությունը, որի սկզբնավորումը, ըստ Ա-ի, նույնանում է Ծննդոց գրքին, հեղինակն այն հասցրել է մինչև բաբելոնյան աշտարակաշինությունը, ապա շարունակել Հայկ Նահապետով: Ա-ի անխախտ համոզմամբ՝ Դրախտը գտնվել է Հայաստանում: Այդ հավաստելու համար, ի տարբերություն իր նախորդների, չի բավարարվել միայն Աստվածաշնչի և Ընդհանրական եկեղեցու Հայրերի խոսքերի վկայակոչմամբ, այլ դիմել է ժամանակի բնագիտության, երկրաբանության, բուսաբանության, հնէաբանության ու մյուս գիտակարգերի քննությամբ վեր հանված փաստական տվյալներին ու նյութերին: «Դրախտ Հայաստանիի» մխիթարյան ըմբռնումը, թե Դրախտը գտնվել է Հայաստանում, ու Ջրհեղեղից հետո կյանքը վերստին նորոգվել է Հայաստանից՝ Արարատի փեշերից, արտացոլվել է [Ա-ի աշխարհագր. հատորներից և «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան» (հրտ. 1904) անավարտ գործից բացի] նաև նրա բանաստեղծություններում («Հայրունի») և գեղ. արձակում: Հեղինակը ազգ. հայրենասիրականի ու հոգևոր եկեղեցականի շաղկապվածության գաղափարը «Յուշիկների» վերջաբանում սահմանել է հետևյալ տողերով. «Հաւատարիմն Աստուծոյ և իր անձին՝ հաւատարիմ է և հայրենեաց: Անհաւատարիմն հայրենեաց՝ չէ հաւատարիմ և իր հոգւոյն և ոչ երկնից»:

Եկեղեցու հայրերի ու տարբեր ստեղծագործողների հոգևոր-կրոն. խորհրդածություններին մի գեղեցիկ ծաղկաքաղ է Ա-ի կազմած ու հրատարակած «Սնունդք սրտի եւ հոգւոյ» (1888) գրքույկը: Կրոն. շեշտված դրոշմ են կրում նրա բանաստեղծ. ժառանգությունն ամփոփող «Նուագքի» (հ. 1–5, 1857–58) հատորները («Մանկունի», «Մաղթունի», «Հայրունի», «Տերունի», «Տխրունի»): Հայաստանում առաքելական քարոզչությանը, քրիստոնեության տարածմանը և Հայոց դարձին է նվիրված «Արշալոյս քրիստոնեութեան հայոց» (1901) գիտագեղ. երկը: Ա. իր գրեթե բոլոր ստեղծագործությունների տարբեր հատվածներում անդրադարձել է եկեղեցուն, նրա նահատակներին և նշանավոր սրբերին:

Երկ. Հայոց երգք ռամկական, Վնտ., 1852: Քաղաքական աշխարհագրութիւն, Վնտ., 1853: Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873: Հայ-Վենետ, Վնտ., 1896: Ճառք Հոգեւորք վասն միանձանց, մաս 1, 2, Վնտ., 1904, 1927:

Գրկ. Երեմյան Ս., Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վնտ., 1902: Սարինյան Ս., Հայկական ռոմանտիզմ, Ե., 1966: Շտիկյան Ս., Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Ե., 1967:

Վարդան Դևրիկյան

ԱԽԱԼՑԽԱՅԻ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ, Ս. Նշան, Վ.Հ Ախալցխա քաղաքի Մարդա թաղամասում, Ս. Նշան բլրի վրա, երբեմնի Զարեհնու Ս. Նշան եկեղեցու (հիշատակ-

ԱԽԹԱԼԱՅԻ

ված XVII դ.) տեղում: Կառուցումը սկսվել է 1862-ի մարտին, Ա-խալցխայի առաջնորդական փոխանորդ Գրի-գոր վրդ. Սագինյանի նախաձեռնությամբ և մեծահարուստ մահտեսի Վարդան Վարդան-յանցի հովանավորությամբ: Օծումը և անվա-նակոչությունը տեղի են ունեցել 1863-ին, իսկ շին. աշխատանքները վերջնականապես ա-վարտվել են 1868-ին: Ա. Ս. Վ. ե. 3 մուտքե-րով, կենտրոնագմբեթ, ութանիստ մույթերով, արմ-ից կից՝ եռահարկ, իսկ ճակատների դա-գաթներին՝ քառասյուն փոքր զանգակատնե-րով կառույց է: Ներսում կան երկու մույթեր, իսկ խորանի 2 կողմերում՝ մեկական ավանդա-տուն: 1887-ին եկեղեցու բակում ամփոփվել է Ախալցխայի պատվավոր քաղաքացի, մեկենաս Վարդան Վարդանյանցի, ավելի ուշ՝ նաև նրա կնոջ աճյունը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.2, 2-րդ պատկերը:

Սամվել Կարապետյան

ԱԽԹԱԼԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, ՀՀ Լոռու մարզի Ախթալա քաղաքում, ժայռա-պատ խոր ձորերով եզերված բարձրադիր ըն-դարձակ հրվանդանի վրա: Վաղ միջնադարում բնակավայրը կոչվել է Ադարակ, XII–XIII դդ.՝ Պղնձահանք, իսկ Ախթալա անվանումն ստա-ցել է ուշ միջնադարում: Ա. Ս. Ա. վ. եղել է Հս. Հայաստանի ամենախոշոր քաղկեդոնիկ վանքը, XII–XIII դդ. կատարել է հոգևոր, կրթ. ու մշակութ. զգալի դեր: Վանքի տարածքը շրջապատված է X դ. Կյուրիկյան Բագրատու-նիների օրոք կառուցված ամրոցի բրգավոր պարսպապատերով, որոնք ձգվում են հս-ից հվ., հրվանդանի ամբողջ պարագծով: Գլխ. մուտքը հս-ից է: Այն թաղակապ ձգված սրահ է, որից արլ. բարձրանում է շրջանաձև հատա-կագծով եռահարկ բրգաձև աշտարակը:

XIII դ. Իվանե Ա Զաքարյանը վանքը վերա-ծել է քաղկեդոնիկ մենաստանի: Պղնձահանքը դարձել է Գուգարքի վրացադավան հայերի կրոն. կենտրոն, հայ-վրաց. կրթարան: Ա. Ս. Ա. վ-ում XIII դ. գործել է Սիմեոն Պղնձահա-նեցին: Վանքում հավասարապես ուսումնա-սիրվել է հայկ. և վրաց. մատենագրություն: Պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի վկայու-թյամբ, Իվանե Ա Զաքարյանն այստեղ է պա-հել իշխան Վասակ Պռոշյանի ընծայած՝ Օրբե-լյանների «Աստվածընկալ Սուրբ Խաչը», որն էլ Իվանե Ա 1216-ին նվիրել է Նորավանքին: Պատմիչներ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, 1227-ին Ա. Ս. Ա. վ-ում՝ իր իսկ կառուցած եկեղեցու դիմաց է թաղվել Իվանե Ա-ն: 1250-ին վանքում, հոր կողքին է թաղվել նաև Իվանեի որդի Ավագ Զաքարյանը:

Ա. Ս. Ա. վ-ի գլխավոր՝ Ս. Աստվածածին ե-կեղեցին (XIII դ.) գտնվում է ամրոցի կենտրո-նում և ունի մեկ զույգ ութանիստ մույթերով գմբեթավոր հորինվածք: Եկեղեցու աղոթա-սրահն արլ-ում ավարտվում է Ավագ խորանով, որի երկու կողմերում կրկնահարկ ավանդա-տներն են: Գմբեթը (չի պահպանվել) բարձրա-ցել է երկու մույթի և խորանի եզրապատի հետ համատեղված որմնամույթերի միջև գցված կա-մարների վրա: Եկեղեցու ճակատների հարդա-րանքում առանձնանում են զույգ պատուհան-ների միջից բարձրացող մեծադիր քանդակա-զարդ խաչերն ու շքամուտքերը: Արլ. ճակատը մշակված է եռանկյունաձև խորշերով: Ս. Աստ-վածածին եկեղեցուն արլ-ից կցված են սրահ և փոքր, արտաքին հարուստ դեկորատիվ հարդա-րանքով թաղածածկ, ուղղանկյուն խորանով ե-կեղեցի (XIII դ.): Վանքի բակի հս-արմ. կող-մում կանգուն է միանավ, թաղածածկ եկեղե-ցին (XIII դ.)՝ արլ. ճակատից դուրս եկող կի-սաշրջանաձև խորանով: Վանքն ունեցել է բնա-կելի և տնտ. շինություններ, որոնցից պահ-պանվել են արլ. պարսպապատին հարող կրկ-նահարկ կառույցի պատերը: 1976–78-ին Ա. Ս. Ա. վ. մասնակի վերանորոգվել է:

Ս. Աստվածածին եկեղեցու ներսն ամբողջու-թյամբ (բացի հս-արմ. մասից) նկարազարդված է: Պատերը, մույթերը, կամարները, խորանը ծածկված են Հին ու Նոր կտակարանների ա-ռանձին դրվագներ պատկերող երկչերտ բարձ-րարվեստ որմնանկարներով (XIII դ.): Խորանի գմբեթարդին Աստվածածինն է՝ գահին նստած, նրանից ցած՝ «Հաղորդություն» տեսարանն է, ներքևում՝ երկու շարքով, ողջ հասակով սրբե-րը (Բարսեղ Մեծը, Հռոմի Սեղբեստրոս պապը, Հակոբ Մծբնացին, Գրիգոր Ա Լուսավորիչը, Եվսեբիոս Կեսարացին ևն): Հս. պատի վերին մասում Աստվածածնի պատկերագրության ե-րեք դրվագներն են, եկեղեցու հվ-արմ. կողմը նվիրված է ս. Հովհաննես Մկրտչին: Այստե-ղին, միջնապատերին, կամարներին տարբեր սըր-բերի դիմապատկերներն են, որոնց շարքում ա-ռավել տպավորիչ են այնտանկայցները: Արտա-կարգ բազմազան են զարդանկարները: Տարբեր

տոնայնությամբ ու հնչեղ գույները, կապույտ ֆոնի հետ զուգակցված, ուժեղացնում են որմնանկարների հանդիսավորությունը և ճոխությունը: Որմնանկարների ստորին շերտը, ավետարանական թեմաներով, անմիջական աղերս ունի XI դ. հայկ. մանրանկարչության, հատկապես «*Մողնու Ավետարան*»-ի պատկերազարդման հետ: Այդ նմանությունն արտահայտվում է ոչ միայն որմնանկարների պատկերագրության մեջ, այլև մանրամասներում (դեմքերում, հագուստում ևն): Իսկ որմնանկարների վերին շերտը ոճով մոտ է բյուզ. արվեստին: Հայկ. մանրանկարչության հետ ոճական ընդհանրությունները, վրաց. և հուն. արձանագրությունները վկայում են, որ Ա. Ս. Ա. վ-ի որմնանկարները կատարել են քաղկեդոն. հայ նկարիչներ:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.2, 3-րդ պատկերը:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Ոսկյան Հ., Գուգարքի վանքերը, Վնն., 1960: Եղիազարյան Հ., Ախթալայի վանքը և նրա հետ կապված Ախթալա ավանի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1968, № 7: Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Ե., 1977: Շախկյան Գ., Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Ե., 1986: *Дурново Л., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979;* Lidov A., The Mural Painting of Akhtala, Moskow, 1991.

Ալեքսանդր Ջալալյան
Նիկոլայ Քոթանջյան

ԱԿԱՆՑ ԱՆԱՊԱՏ, Ակներ վանք, Կիլիկյան Հայաստանի գլխավոր վանքերից, գրչության, մանրանկարչության և գիտության խոշոր կենտրոն: Գտնվել է Ցախուտ և Բարձրբերդ գավառների սահմանագլխին, Բարձրբերդ բերդի մերձակայքում, Ակներ գյուղի շրջակայքում, աղբյուրաշատ վայրում: Անվանումը ծագել է ակն, ակներ, ակունք բառերից: Վանքը կառուցել է Լևոն Բ թագավորը 1198–1203-ին, օծել է Հայոց կաթողիկոս *Գրիգոր Զ Ապիրատը*: Գործելով Կիլիկիայի Հայկ. թագավորության քաղ. և ռազմ. հզորության ժամանակաշրջանում՝ վանքը եղել է նաև պետության դիվանագիտ. ու հոգևոր գործերի խորհրդարան: Ա. ա-ի մասին վկայություններ են թողել Սամուել Անեցին (XII դ.), Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Վահրամ Բաբունին (XIII դ.), Հեթում Պատմիչը (XIV դ.), Դավիթ Բաղիշեցին (XVII դ.): Համակառույցի կազմում հիշատակվում են երեք եկեղեցիներ՝ Ս. Աստվածածին, Ս. Հակոբ (կամ Ս. Նշան) և Ս. Առաքելոց:

Ա. ա. իր գոյության համեմատաբար կարճ ժամանակամիջոցում համահայկ. հռչակ է վայելել գրչության արվեստով: Վկայություններ կան նաև Արլ. Հայաստանի հետ կապերի մասին: Գրչության դպրոցից մեզ հասած ամենահին ձեռագիրը 1215-ից է, ամենաուշը՝ 1342-ից: Վանքում ընդօրինակվել են բազմաթիվ հոգևոր ճառերի ժողովածուներ, ժամանակագրություններ, Ավետարաններ, Մաշտոց, Նարեկ, Շարակնոց, Ագաթանգեղոսի Պատմությունը, մեկնություններ ևն (մեզ է հասել շուրջ 30 ձեռագիր), որոնց հիշատակարաններում տեղեկություններ կան ժամանակի դեպքերի, պատմ. անձերի մասին: Գրչության բարձր արվեստով նշանավոր են Պետրոսի, Դավթի, Բարսեղի, Ղազարի, Վարդանի, Ներսեսի, նրա որդի Սերովբեի և այլոց ձեռագրերը: Ա. ա-ի միաբաններից էր պատմիչ Գրիգոր Ակներցին: Նա, 1273-ին կատարելությամբ ընդօրինակելով Միքայել Ասորու «Ժամանակագրութիւն»-ը, գրել է նաև «Պատմութիւն վասն ազգին Նետողաց» աշխատությունը:

Ա. ա. եղել է XIII դ. կիլիկյան մանրանկարչության վերելքի շրջանի ինքնատիպ կենտրոններից մեկը, Գոների և Բարձրբերդի գրչատների հետ կազմել Հովհաննես Արքաեղբայր բաբունապետի մանրանկարչական «դպրոցը», որտեղ մշակվել է գրքի գեղ. ձևավորման մի ոճ, որի առանձնահատուկ կողմերն են՝ մարդկային մարմնի համաչափությունների և զարդապատկերների առանձին դրվագների ճիշտ վերարտադրությունը, պատկերագր. որոշ կանոնների ինքնատիպ լուծման ձգտումը, կատարման յուրահատուկ գրաֆիկական տեխնիկայի կիրառումը: Ա. ա-ում ընդօրինակված և պատկերազարդված ձեռագրերից նշանավոր են 1287-ի Ավետարանը, «*Վասակ իշխանի Ավետարանը*», որոնց նախատիպն է եղել «*Կեռան թագուհու Ավետարանը*» (1272)՝ նվիրված «Ի վանս որ կոչի Ակներ»: Ա. ա-ում են գործել Պողոս, Գրիգոր, Կարապետ, Հովհաննես ծաղկողները, Ռուբեն, Բարսեղ քահանա կազմողները և ուրիշներ:

Ա. ա-ի միաբանությունը եռանդուն մասնակցություն է ունեցել Կիլիկյան Հայաստանի կրոնաեկեղեց. գործերին: Հայոց *Գրիգոր Է Անավարզեցի* կաթողիկոսը 1306-ին Հեթում Բ-ին ուղղած մի թղթում հիշում է Ա. ա-ի միաբանությունը՝ որպես պարկեշտ, կատարյալ և խե-

լոք մարդկանցից կազմ-
ված հաստատություն: 1307-ի Սսի եկեղեց. ժո-
ղովին մասնակցել են նաև Ակների պատգամա-
վորները՝ հանձին Վարդան վարդապետի և Սարգիս վանահոր: Գահից հրաժարվելուց հե-
տո Ա. ա-ում է առանձնացել Հեթում Ա թագա-
վորը (1226–70): Այնտեղ է թաղված Լևոն Բ թագավորի սիրտը, ինչպես և Պաղտին մարա-
ջախտը, իշխաններ, հոգևորականներ: XIV դա-
րից հետո Ա. ա-ի անունն այլևս չի հիշատակ-
վում (հավանաբար ավերել են եգիպտ. զորքե-
րը՝ 1375-ին Սիսը պաշարելու ժամանակ):

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.3, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Ակինյան Ն., «Ականց կամ Ակների վանքը», տես նրա Մատենագրական հետազոտություններ, հ. 5, Վնն., 1953: Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964, էջ 76–88: Մելիք-Բախշյան Ս., Ակների գրչության դպրոցը, ԲԵՀ, 1968, № 3:

ԱԿԻՆՅԱՆ Ներսես Հակոբի (ավազանի անունը՝ Գաբրիել, 10.9.1883, Արդվին – 28.10.1963, Վիեննա), բանասեր, ձեռագրագետ, պատմաբան, մանկավարժ: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1901), Վիեննայի համալսարանի փիլ. պատվավոր դ-ր (1954): Նախն. կրթությունն ստացել է Արդվինում, ապա 1895-ին ընդունվել Վիեննայի Մխիթարյանների վարժարանը: Առաջին ուսուցիչն է եղել Հ. *Տաշյանը*: Հետևել է Վիեննայի համալսարանի հունա-հռոմ., բյուզ. մշակույթի պատմության, հունարենի, լատիներենի, ասորերենի դասընթացներին, հմտացել աստվածաբանության, փիլիսոփայության մեջ, աշակերտել ավստրիացի արվեստաբան, հայ ճարտ-յան և արվեստի նշանավոր հետազոտող Յ. Ստրժիգովսկուն, հետագայում դարձել նրա խորհրդատուն, ապա և աշխատակիցը: Համալսարանի դասընթացներն ավարտելուց հետո 1907-ին ձեռնադրվել է քահանա և պաշտոնավարել Վիեննայի Մխիթարյանների Մայրավանքում. 1907-ին՝ ուսուցիչ դպրեվանքում, 1908–11-ին՝ փոխտնօրեն, 1916–20-ին՝ տնօրեն, 1909–63-ին՝ միաբանության մատենադարանապետ, միաժամանակ (ընդհատումներով)՝ «*Հանդես ամսօրյայի*» խմբագիր: 1931-ին ընտրվել է Մխիթարյան միաբանության ընդհանուր վարչության անդամ, 1931–37-ին՝ Մայրավանքի մեծավոր, հյուրընկալ: Հայ մշակույթն ուսումնասիրելու համար շրջել է «երկրէ երկիր», «բախել ամեն դուռ», հավաքել բազմահազար հայերեն ձեռագիր ու տպագիր գրքեր: 1912-ին Ս. Էջմիածնում մասնակցել է Գևորգ Ե Սուրենյանցի կաթողիկոսական օծմանը, այցելել Գառնի, Այրիվանք, Անի, ապա և ուրիշ հնավայրեր: Առաջին համաշխ. պատերազմի ժամանակ դրամ է հանգանակել, օգնել հայ տարագիրներին ու գերիներին: 1923–29-ին աշխատել է Ս. Էջմիածնի ձեռագրատանը: 1929-ին կալանավորվել է, 40 օր անց ազատվելով՝ ստիպված հեռացել է Հայաստանից: Այնուհետև շարունակել է իր ուսումնասիրությունները Բեռլինում, Մյունխենում, Տյուբինգենում, Փարիզում, Լեհաստանում, Հռոմում, Լիվոռնոյում, Երուսաղեմում: Երկրորդ համաշխ. պատերազմի պատճառով յոթ տարի մնացել է Բեյրութում, 1946-ի աշնանը վերադարձել Վիեննա:

Ն. Ակինյան

Ա. թողել է ավելի քան 40 ուսումնասիրություն, որոնք վերաբերում են միջնադարյան մատենագրության ու հայագիտության տարբեր հարցերի վերլուծմանն ու բնագրագիտ. խնդիրներին: Հայագիտությունը Ա-ին է պարտական աշխարհի տարբեր ծայրերում գտնվող հայերեն բազմաթիվ ձեռագրերի բովանդակությանը ծանոթանալու համար: Նրա ջանքերով են հրատարակվել Կիպրոսի, Լեհաստանի, Ուկրաինայի հավաքածուների ձեռագրացուցակները, ստեղծվել Հայ և Վրաց եկեղեցիների բաժանման պատմության քիչ թե շատ ամբողջ. պատկերը («Հայ-վրացական յարաբերութիւնք Դ-Է դարուն մէջ», 1907): Ա-ին մշտապես հետաքրքրել է Հայ եկեղեցու հաղարամյա (ըստ նրա, Հայ եկեղեցին սկզբնավորվել է III դ. 20-ական թթ.) և մատենագրության ողջ պատմությունը, որոնց համար հաճախ առաջարկել է ինքնատիպ ժամանակագրություն: «Դասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը» (1932) մենագրությունում թվագրել է հայ մատենագրության վաղ շրջանի երկերը, *հունաբան դպրոցի* թարգմանություններից առանձնացրել դասա-

կան հայերենով գրված գործերը: Անդրադարձել է *Ընդհանրական եկեղեցու* հայրերի և մատենագիրների՝ Տիմոթեոս Կուզի, Իրենիոսի, Դիոնիսիոս Արիոպագացու, Հովհան Ոսկեբերանի, Հովհաննես Աստվածաբանի, Եփրեմ Ասորու, Պրոկղ Դիադոխոսի, Հովհան Կլիմաքոսի, Հովհան Դամասկացու և այլոց երկերին, հայ մատենագրության մեջ հայտնաբերել, ուսումնասիրել ու հրապարակել է դրանք:

Ա.-ի ուսումնասիրությունների հիմն. առարկաներն են հայ ինքնուրույն և թարգմ. գրականությունը, մատենագր. երկերի բնագրագիտ. քննությունը: Նա փորձել է սպառիչ տեղեկություններ հաղորդել իրեն հետաքրքրող այս կամ այն երկի վերաբերյալ, սակայն միջնադարյան բնագրերը երբեմն վերաձևել է, հարմարեցրել իր տեսություններին, ինչին «զոհ» են դարձել Ագաթանգեղոսը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Ղևոնդը, Սեբեոսը, Կորյունը և այլք:

Ա. աշխատակցել է հայ., գերմ., անգլ. բազմաթիվ հանդեսների, իր շուրջը համախմբել նշանավոր գիտնականների, Եվրոպայի և Արևելքի մի շարք երկրներում դասախոսություններ կարդացել հայ ձեռագիր մշակույթի մասին, նպաստել հայագիտության զարգացմանը: Ա.-ի անտիպ աշխատությունները պահվում են Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում:

Երկ. Մատենագրական հետազոտություններ, հ. 1–6, Վնն., 1922–64: Քրիստոնեութեան մուտքը Հայաստան և Վրաստան, Վնն., 1949: Ներսես Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի. կյանքը և գրական վաստակը..., Վնն., 1956: Եվսեբիա եպիսկոպոսի Եմեսացւոյ ճառք, ՀԱ, 1956–59: Դավիթ Հարքացի Անհաղթ փիլիսոփա. կյանքը և գործերը, Վնն., 1959:

Գրկ. Հրանտ Արմեն, Խորենացի, Եղիշե և Հ. Ներսես Ակինյան, Երուսաղեմ, 1951: Ինգլիզյան Վ., Հ. Ներսես վրդ. Ակինյան – հայ բանասերը, Վնն., 1954:

Ազատ Բոզոյան

ԱԿՈՌԻԻ Ս. ՀԱԿՈԲ ՎԱՆՔ, Մեծ Մասիս լեռան հյուսիս-արևելյան լանջի վիհի եզրին, Ակոռի գյուղից վերև: Հիմնվել է IV դ., այն տեղում, որտեղ, ըստ ավանդության, ս. *Հակոբ Մծբնացին* հրեշտակից ստացել է Նոյյան տապանի մի կտոր: Ա. Ս. Հ. վ-ի եկեղեցին ունի խաչաձև գմբեթավոր հորինվածք, կառուցվել է սև որձաքարով: Պատերին ունեցել է XIII–XIV դդ. նվիրատվական արձանագրություններ: Վանքի ուղղանկյուն պարիսպներին ներսից կից են եղել միաբանների կացարաններն ու օժանդակ շինությունները: Ա. Ս. Հ. վ-ում պահվել են ս. Հակոբ հայրապետի կարծեցյալ մատը և Նոյյան տապանի փայտի կտորը՝ միմյանց շղթայով ամրացված (այժմ գտնվում է Ս. Էջմիածնում): Վանքի մոտ բխել է սրբազան աղբյուր, որի ջրով հայ շինականները ցողել են արտերը՝ մորեխներից պաշտպանելու համար: Ա. Ս. Հ. վ. կործանվել է 1840-ի հուլիսի 2-ի երկրաշարժից՝ գյուղի և Ակոռիի Ս. Առաքելոց վանքի հետ միասին ընկղմվելով լեռան խորխորատը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1903: Parrot F., Reis zum Ararat, Lpz., 1985.

Մուրադ Հասրաթյան

ԱՂ, անարյուն զոհաբերության նյութ կամ ընծա, որ կիրառվում է եկեղեցիներում: Հոգևոր առումով ունի մաքրագործիչ, պահպանիչ և զորացուցիչ նշանակություն: Ավանդված է դեռևս Հին կտակարանից, մովսիսական օրենքով. «Ձեր ամեն մի զոհաբերությունը Տիրոջը թող աղով աղվի. ձեր զոհաբերություններից չպակասեցնեք Աստծու ուխտի աղը. բոլոր զոհաբերությունների ժամանակ ա՛ղ մատուցեցեք» (Ղևտ. **2.**13): Ա. մատուցվում էր մյուս անարյուն զոհաբերությունների՝ ալյուրի, ձեթի, խունկի, ցորենի և այլ ընծայաբերումների շարքում, որպես երախայրիք Աստծո սեղանին կամ եկեղեցուն: Նոր կտակարանում Ա.-ի խորհրդաբանությունը կապվում է առաքյալների և առհասարակ հավատացյալ մարդու հետ, ինչպես հավաստում է տերունական խոսքը. «Դո՛ւք եք երկրի աղը...» (Մատթ. **5.**13, Մարկ. **9.**49, Ղուկ. **14.**34–35): Ա. օգտագործվում է *մատաղի* ժամանակ:

Աղօրհնեք, Հայ եկեղեցում ընդունված խորհրդապաշտական արարողություն: Ըստ Սահակ Ա Պարթևի եկեղեց. կանոնների և Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականի», Ա.-ի օրհնությունը հաստատել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*: Օրհնված Ա. զոհաբերվող (մատաղացու) կենդանուն տալով՝ վերացվում է նախնական մեղքը, քանզի Ադամի և Եվայի պատվիրանազանցության պատճառով անիծվել են իրենց հետ դրախտում եղած կենդանիները ևս, ինչպես նաև ողջ երկիրը: Քահանայի օրհնած աղը, մաքրելով տվյալ կենդանուն, արժանի է դարձնում նվիրաբերելու Աստծուն:

ԱՂԱՆԴ

Ա. օրհնվում է նաև Տնօրհնեքի (տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում) ժամանակ և այլ պարագաներում:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան
Լևոն Սարգսյան

ԱՂԱՆԴ, համաշխարհային այս կամ այն կրոնում (քրիստոնեություն, բուդդայականություն, մահմեդականություն ևն) ընդդիմադիր հոսանք, ուսմունք, դավանանք կամ վարդապետություն, որ խոտորվում է հիմնական կամ պաշտոնական դավանությունից և հակադրվում նրան: Քրիստոնեության ներսում Ա. է անվանվում մարդկանց (հավատացյալների) խումբը, որն անջատվել է հասարակայնորեն ընդունված հիմն. կրոնական ուսմունքից կամ համայնքից, համեմատաբար փոքրաթիվ է և ինքն իր մեջ պարփակված:

Ա.-ի հետևորդներն ապրում և քարոզում են իրենց «ուսուցչի» գաղափարներն ու բարոյական նորմերը: Աղանդավորների համոզմունքները հիմնվում են իրենց առաջնորդի կարծեցյալ առավելությունների, հեղինակության, նրա աստվածացման վրա, ինչը հանգեցնում է քրիստ. ուղղափառ վարդապետության ժխտման, Աստվածաշնչի աղավաղման կամ աղավաղված մեկնաբանման: Ուստի մեծամասնության կողմից Ա. համարվում է կեղծ, վնասակար և վտանգավոր:

Ա., *հերետիկոսություն*, հերձված հասկացությունների սահմանները այնքան էլ հստակ չեն: Հերետիկոսությունը տարբեր է հերձվածից, որը նույնպես նշանակում է մեկուսացում հավատացյալների եկեղեց. համայնքի կազմից: Հնում հերձված ասելով նկատի են ունեցել եկեղեցու դավանանքի այս կամ այն մեկնաբանությունը չընդունող կամ այլ կերպ մեկնաբանող քրիստ. ուղղություններ, մինչդեռ Ա. ասելով հասկացել են ոչ քրիստ. կրոնները:

Ա.-ի և հերետիկոսության տարբերությունն այն է, որ վերջինս նշանակում է ոչ այնքան մարդկանց ամբողջություն, որ հետևում է որոշակի ուսմունքի, որքան՝ հենց ուսմունքի բուն բովանդակությունը:

Եվրոպայում Ա.-ները (հատկապես Վերածննդից հետո) ժամանակի ընթացքում հասել են ճանաչման և կրոն. պայքարի ընթացքում՝ նայած իշխանությունների հետ ունեցած նրանց հարաբերություններին, երբեմն կոչվել են Ա.-ներ, երբեմն էլ՝ եկեղեցիներ, դավանանքներ կամ կրոններ:

Ուշադրավ է այն հանգամանքը, որ հիմն. հերետիկոս. վարդապետությունների ներկայացուցիչները մի որոշակի շրջանում՝ I–VII դդ., հանդես են եկել ոչ թե որպես եկեղեցու ուսմունքի և հեղինակության ժխտողներ, այլ իբրև այդ ուսմունքի այս կամ այն կետը մեկնաբանելու և բանաձևելու փորձ կատարողներ՝ չբացառելով դեռևս կայուն, դոգմատիկ բանաձևը: Հերետիկոս. այս շարժումների նախաձեռնողներն իրենց չեն համարել եկեղեց. *ավանդության* ընդդիմադիրներ, այլ հակառակը, հանդես են եկել որպես ավանդության արտահայտիչներ ու շարունակողներ: Եկեղեց. դատին ներկայացնելով իրենց դավանանքը՝ նրանք կամ ենթարկվել են նրա որոշումներին, կամ էլ, չհամաձայնելով, կտրել հաղորդակցությունը պաշտոն. եկեղեցու հետ և սկսել իրենց հատուկ կրոն. կյանքը: Առանձնանալով՝ նրանք իրենց դավանությունը վեր են դասել եկեղեցու ընդունած դոգմաներից: Ա. եզրույթը, որ նախն. շրջանում դիտվել է ընդամենը որպես հերետիկոսություն բառի հոմանիշ, այս շրջանում ձեռք է բերել առավել նվազ ծայրահեղական նրբիմաստ, քան հերետիկոսությունը:

Հին և նորագույն ժամանակաշրջանի առանձին մտածողների և աղանդավորների կարծիքով՝ կրոն. ճշմարտությունը տրված է ոչ միայն Հին և Նոր կտակարաններում. նրա հատիկները ցանված են ամենուրեք՝ լավագույն հեթանոս. կրոններում, առանձին փիլիսոփաների և բանաստեղծների ստեղծագործություններում ևն: Դրանք սինկրետիկ (չտարբերակված) Ա.-ներն են, օր.՝ *գնոստիցիզմը*: Ա.-ները հնուց ի վեր բաժանվում են երկու խմբի՝ ռացիոնալիստական և միստիկական: Առաջինները *Հայտնության* և մարդկային գիտակցության միջև միակ միջոցն են դիտում բանականությունը և նույնիսկ որպես Հայտնություն չեն ճանաչում այն ամենը, ինչ վեր է բանականությունից կամ դեմ է նրան: Երկրորդները հավատում են, որ Հայտնությունը մարդուն կարող է հաղորդվել բանականորեն անճառելի և գաղտնի ուղիներով՝ տեսիլքով, մարգարեությամբ ևն: Ստացված հայտնությունները նրանք հաճախ վեր են դասում անգամ գրվածքներից («Գիրը սպանում է, հոգին՝ ապրեցնում» սկզբունքից ելնելով):

Ա.-ները, որպես առանձին՝ կազմակերպված համայնքներ, ընդդիմադիր կեցվածք ունեն ոչ

միայն իշխող եկեղեցու, այլև, հաճախ, պետ. ու սոցիալական տվյալ կարգի նկատմամբ, ինչպես հնագույն քրիստոնյաները, որոնք դեմ էին Հուդայում և առհասարակ Հռոմ. կայսրությունում գործող օրենքներին: Քրիստոնյա տերություններն օրինաստեղծության մեջ և սոցիալական կառույցներում մասամբ կենսագործել են քրիստ. դավան. գաղափարները՝ հաճախ ստեղծելով հարմարավետ փոխհամաձայնություն իրենց քաղ. նպատակների և քրիստոնեության միջև. բարոյական պարտավորությունները յուրովի ըմբռնող Ա-ները դա համարում են կեղծքրիստոնեական, ինչպես քրիստ. նախն. համայնքները, որոնք ընդդիմադիր էին ոչքրիստոնեական տերությունների վարքագծին: Զափավորական Ա-ները սահմանափակվում են նրանով, որ խուսափում են հաս. այնպիսի պարտավորություններից, որոնք չեն համընկնում իրենց սոցիալ-բարոյական գաղափարների հետ: Առավել եռանդուններն ուղղակիորեն ձգտում են սոցիալական բարեփոխումներ կատարել ըստ այդ գաղափարների:

Հնագույն եկեղեցու Ա-ներից նշելի են.

1. Ա-ներ, որոնք հետ են մնացել քրիստոնեության մեջ կատարված կրոն. էվոլյուցիայից. այդպիսիք են Հովհաննես Մկրտչի հետևորդները. սրանց թվին են հաճախ դասվում նաև գնոստիկյան-հովհաննեսականները և այլ՝ մի քանի հնագույն կրոն. ուղղություններ:

2. Հուդայական քրիստ. Ա-ները՝ նախն. շրջանում. նազարեթյաններ (I–VI դդ.), էբիոնիտներ, էբիոնիտ-գնոստիկյաններ (II դ. վերջից):

3. Գնոստիկյան Ա-ներ ընդհանուր անվամբ հայտնի հեթանոս. մեծաթիվ Ա-ները (I–III դդ.): Սրանցից քրիստ. ընդհանուր դավանանքին համեմատաբար մերձ են մարկիոնականները (I–VII դդ.), համեմատաբար հեռու՝ մանիքեականները (տես *Մանիքեություն*), որոնցից հետագայում սերել են մի շարք քրիստ. Ա-ներ, օր., *պավլիկյանները*:

4. Այսպես կոչված՝ նախաձեռնող Ա-ները, որոնցից նշանավոր են մոնտանականները (II–III դդ., գոյատևել են մինչև VIII դ.):

5. Հնագույն եկեղեցուց ծագած Ա-ներ (III–IV դդ.), որոնք բավարարված չէին *Ընդհանրական եկեղեցու* սահմանած նվազագույն բարոյական պահանջներով և նրա ապաշխարության կարգուկանոնով (մի շարք գնոստիկյան Ա-ներ, ինչպես նաև մոնտանականներ, մելետոսյաններ, նովատանյաններ):

6. Դոգմատիկ բնույթի Ա-ներ (IV–VII դդ.). *արիոսականություն, ապոլինարիզմ*, մակեդոնյաններ (հոգեմարտներ), *նեստորականություն, եվտիքականություն, հուլիանոսականներ, սևերիոսյաններ* ևն:

7. Ճգնավորության ծաղկման շրջանում (II–V դդ.) առաջ եկած մի քանի խորհրդապաշտական Ա-ներ, որոնք ընդհանուր քրիստ. դաղափարներից թեքվել էին դեպի ճգնակեցության (մեսալյաններ, եվքիտներ ևն):

XI–XV դդ. բյուզ. եկեղեցում նոր Ա-ներ գրեթե չեն ծագել: Միջնադարյան արևմտյան եկեղեցու, պապական իշխանության հզորացման շրջանում նույնպես համեմատաբար սակավաթիվ Ա-ներ են առաջացել՝ փոքրաթիվ հետևորդներով: Ռեֆորմացիայի շրջանում (XVI դ.) Ա-ներն սկսել են շատանալ. դրանցից հիշատակելի են միստիկական և պանթեիստական Ա-ները (XVI դ.), անաբապտիստները (կրկնամկրտականներ, XVI դ.), Ա-ներ, որոնք ռացիոնալիստներ էին աստվածաբանության և փիլ-յան մեջ (XVII–XVIII դդ.), անգլ. բապտիստները, բապտիստ-շաբաթականները, կվակերները ևն:

XVIII–XIX դդ. առաջացել են նոր Ա-ներ. մեթոդիստները՝ Անգլիայում, մի շարք Ա-ներ՝ բողոքական պիետիզմից, լեհական դեիստները՝ կաթոլիկությունից, հոգեգալստականները (հիսունականներ) ևն:

XIX դ. Ա-ների դասական երկիր է դարձել Հյուսիսային Ամերիկան. մեթոդիզմից բաժանված՝ Փրկության բանակը, Ավետարանի հիման վրա կոմունիզմ քարոզողները, դարբիստները, ադվենտիստները ևն: XIX–XX դդ. առաջացած և ներկայումս տարածված կեղծքրիստ. ու տոտալիտար (ամբողջատիրական) Ա-ներից են մորմոնները (Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի), Եհովայի վկաները, մունները (Միավորման եկեղեցի), սայենտոլոգները (Գիտության եկեղեցի) ևն: Ռուսաստանում տարածված Ա-ներից հիշատակելի են դուխոբորները, որոնք սկիզբ են առել 1740-ական թթ.՝ Հարավային Ուկրաինայից, մոլոկանները (1800-ական թթ-ից), տոլստոյականությունը (XIX դ. վերջ) ևն:

Ա-ները տարածված են եղել նաև միջնադարյան Հայաստանում. հիշատակելի են *բորբորիտները, մծղնեությունը*, պավլիկյանները, *թոնդրակեցիները*: Ներկայումս Հայաստանում գոր-

ծում են մորմոնները, Ե-հովայի վկաները, Նորա-ռաքելոց եկեղեցին ևն:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968: Մայիլյան Ս., Ժամանակակից աղանդները Հայաստանում, Ս. Էջմիածին, 2001:

ԱՂԲԱԿԻ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՎԱՆՔ, Դեյր, Դհեր, Մեծ Հայքի Վասպուրական նահանգում, Մեծ Զաբ գետի աջ ափի բլրի գագաթին: Ըստ ավանդության՝ I դ. հիմնադրել է Սանատրուկ թագավորը *Բարդուղիմեոս* առաքյալի գերեզմանի վրա, նրա մոտ գտնվող Կաթնաղբյուրի ջրով բորոտությունից բուժվելուց հետո: Վանքը հիշատակվում է XIII դարից: 1316-ին Ա. Ս. Բ. վ-ի վանահայր Հակոբը մասնակցել է Ադանայի եկեղեց. ժողովին, 1321-ին Հռոմի Հովհաննես XXII պապը նամակով նրան առաջարկել է ընդունել Կաթոլիկ եկեղեցու ծիսակարգը, 1339-ին վանքում ընդօրինակվել է Ավետարան, 1398-ին՝ Վարդան Արևելցու «Հնգամատյանի մեկնությունը»:

Միջնադարում Ա. Ս. Բ. վ. եղել է Աղբակ գավառի առաջնորդանիստ վանք, հռչակավոր սրբավայր ու ուխտատեղի: Վանքի եկեղեցին XIII դ. կառուցվել է հնագույն բազիլիկի հիմքերի վրա և ունի մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք՝ ներսից բազմանիստ Ավագ խորանով: Հս. ավանդատանը Բարդուղիմեոս առաքյալի գերեզմանն է հետևյալ արձանագրությամբ. «Այս է տապան հանգստեան սբ. Բարդուղիմէոսի սրբազան առաքելոյ առաջին լուսաւորչին Հայաստանեաց աշխարհի»:

Եկեղեցուն արմ-ից կից է նրա հետ ծավալատարածական ամբողջություն կազմող և ուճական ընդհանրություն ունեցող գավիթը, որի խաչվող կամարներով իրականացված ծածկի կենտրոնում երդիկավոր գմբեթն է: Գավթի արմ. պատի վրա փոքր զանգաշտարակ է կառուցված: Եկեղեցու և գավթի ճակատները զարդարված են որմնասյունիկներով, գմբեթի թմբուկի շարվածքում կիրառված է բազմագունություն: Գավիթն արմ. ճակատում ունի պատի ողջ բարձրությամբ խոշոր շքամուտք, որի դռան վերևում քանդակված հեծյալը (համարվում է Բարդուղիմեոս առաքյալը) տեգը ձեռքին սպանում է վիշապին: Դռան երկու կողքերին, ողջ հասակով քանդակված են բուրվառակիրներ և վանքի քարգործ վարպետները՝ շին. գործիքները ձեռքերին: Շքամուտքի վերևի կիսաշրջանաձև ճակատակալ քարին Ս. Երրորդության պատկերաքանդակն է. դահին բազմած Հայր Աստվածը աջ ձեռքով պահում է Քրիստոսին, ձախով՝ աղավնակերպ Ս. Հոգուն, ոտքերի տակ զույգ առյուծներ են, շուրջը՝ հրեշտակներ: Ա. Ս. Բ. վ-ի բարձրաքանդակն այս թեմայով հայկ. պատկերագրության լավագույն ստեղծագործություններից է:

1487-ին և 1490-ին վանքում Մարգար գրիչը ընդօրինակել է Ավետարան: 1647-ին Ա. Ս. Բ. վ. և *Վարագավանքը* ընդհանուր միաբանություն են կազմել: 1651-ին վանքը նորոգել է վանահայր Կիրակոս վարդապետը: 1715-ին երկրաշարժից քանդվել է վանքի եկեղեցու գմբեթը, խարխլվել են պատերը: 1755–60-ին Հովհաննես Մոկացին (Լիմ անապատից) վերականգնել է գմբեթը և նորոգել պատերը:



Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանքի հատակագիծը

XIX դ. սկզբին վանքի ունեցվածքը վատնվել է, մենաստանը բարձրթողի արվել վանահայր Խաչատուր վարդապետի օրոք, ինչի համար կաթողիկոս Դավիթ Ե Էնեգեթցին նրան պաշտոնազրկել է և բանադրել: 1817-ին վանահայր Իսրայել եպիսկոպոսը ընդդիմացել է Ներսես Աշտարակեցու և գեներալ Պասկևիչի՝ արևմտահայերի գաղթը կազմակերպելու ծրագրին, համարելով այն «ազգակործան»: 1843-ին Ներսես Ե Աշտարակեցին դրվատել է *Արտազի Ս. Թադեի վանքի* և Ա. Ս. Բ. վ-ի առաջնորդ, ռուսամետ կողմնորոշում ունեցող Նիկողայոս եպիսկոպոսին, որը չէր ստորագրել հայերի պաշտպանությունը անգլիացիներին հանձնելու խնդրագիրը: XIX դ. վանքում բացվել է վարժարան: 1860-ին քանդվել է Ա. Ս. Բ. վ-ի գմբեթը, որը 1878-ին վերակառուցել է վանահայր, ծայրագույն վրդ. Եղիազարը: 1897-ին երկրաշարժից քանդվել է եկեղեցու պատը: XIX դ. վանքը բավական հարուստ է եղել: Նրա թեմն են կազմել Աղբակ, Գավառ, Ջուլամերկ, Սալմաստ և Ուրմիա գավառները՝ 100-ի հասնող հայաբնակ գյուղերով: Վանքն ունե-

ցել է նաև ագարակներ, հանդեր, արտեր, արոտավայրեր, անտառ: Եղել է սիրված ուխտատեղի, վանքին ավանդաբար նվիրաբերել են հազվագյուտ սպիտակ գոմեշներ, որոնց հավելը համարվել է դիպչողի բաղձանքի կատարման առհավատչյան:

1905-ին վանքը կողոպտվել է, 1966-ին երկրաշարժից քանդվել են եկեղեցու գմբեթը և գավթի ծածկը, ոչնչացել շքամուտքի բարձրաքանդակը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.3, 4-րդ պատկերը:

Գրկ. Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վնտ., 1907: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 3, Վնն., 1947: Bachmann W., Kirchen und Moschen in Armenien und Kurdistan, Lpz., 1913; Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, t. 1–2, 1918; Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988; Thierry J.M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԱՂԲԻԱՆՈՍՅԱՆՆԵՐ, հոգևորական տոհմ Հայաստանում, IV–V դարերում: Հիմնադիրն է Աղբիանոսը: Ըստ Ագաթանգեղոսի, Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակվելուց (301) հետո քրմի որդի Աղբիանոսը կարգվել է եպիսկոպոս և ապա՝ վերակացու Եփրատի շուրջը եղած շրջանների ու Բագրեվանդ գավառի: Կալվածներ է ունեցել նաև Հարք և Բզնունիք գավառներում: Խոսրով Բ Կոտակ թագավորի օրոք (330–338) Աղբիանոսին է տրվել Մանավազյան նախարարների աթոռանիստ Մանազկերտը՝ շրջակա հողերով հանդերձ: Այնտեղ հիմնվել է Մանազկերտի եպիսկոպոսությունը, որն ավելի ուշ Հարք գավառի անունով կոչվել է նաև Հարքի եպիսկոպոսություն: IV–V դդ. Հայոց եպիսկոպոսապետության համար մղվող մրցապայքարում Ա. մնում էին *Գրիգոր Ա Լուսավորչի* տոհմի գլխ. հակառակորդները և հաճախ գերակշռություն ձեռք բերում: Հայրապետ. գահին Ա-ի և Գրիգոր Լուսավորչի հետնորդների աթոռակալելը հիմնականում պայմանավորվել է Հայոց թագավորների վարած արտաքին քաղաքականությամբ՝ Արլ. Հռոմ. կայսրության (Բյուզանդիայի) կամ Պարսկաստանի նկատմամբ ունեցած դիրքով: Լուսավորչի հետնորդները հակված էին դեպի Արլ. Հռոմ. կայսրությունը, անհամերաշխ էին Պարսկաստանի և Հայ Արշակունի այն թագավորների հետ, որոնք փորձում էին Պարսկաստանի դաշնակիցը դառնալ: Ա. ձգտել են համերաշխ մնալ դրացի Պարսկաստանի հետ և Հռոմ. կայսրության վերահսկողությունից ազատել Հայ եկեղեցին (հայ կաթողիկոսներին ձեռնադրել է Կեսարիայի մեծ եպիսկոպոսապետը): 373-ին *Շահակ Ա Մանազկերտցին* կաթողիկոս դարձավ Պապ թագավորի նախաձեռնությամբ, առանց Կեսարիայի մեծ եպիսկոպոսապետի ձեռնադրության՝ վերջ դնելով Հայ եկեղեցու կախվածությանը Կեսարիայի աթոռից: V դ. 2-րդ կեսին Ա. կորցրել են իրենց քաղ. հեղինակությունը: Դրանից հետո Ա-ի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Ա-ից էին՝ *Փառեն Ա Աշտիշատցի*, Շահակ Ա Մանազկերտցի, *Զավեն Ա Մանազկերտցի, Ասպուրակես Ա Մանազկերտցի, Մելիտե Ա Մանազկերտցի* և *Մովսես Ա Մանազկերտցի* կաթողիկոսները:

Գրկ. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1983: Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Մաքսիմ Կատվալյան

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա ՋՈՒՂԱՅԵՑԻ (ծ. թ. անհտ – 1714), Ամենայն հայոց կաթողիկոս 1706-ից: Հաջորդել է *Նահապետ Ա Եդեսացուն*: Եղել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ (1697–1706): Պաշտպանել է Հայ եկեղեցու ուղղափառությունը՝ զգալի դեր խաղալով Նոր Ջուղայում լատին միսիոներների և կաթոլիկ. քարոզչության դեմ ծավալած պայքարում: Այդ առիթով 1682-ին գրել է «Գիրք Ատենական, որ ասի Վիճաբանական» (1687) երկը: Ունի տպագիր և անտիպ աշխատություններ, նամակներ, թղթեր, քարոզներ, տաղեր: Պատմ. արժեք են ներկայացնում նրա նամակները՝ ուղղված Կղեմես XI պապին (կաթոլիկ միսիոներների գործունեությունը զսպելու խնդրանքով) և ռուս. կայսր Պետրոս Մեծին: Ռուս. կայսրին գրած նամակը ցույց է տալիս, որ Ա. Ա Ջ. հարել է Իսրայել Օրու ազատագր. գաղափարներին: Պատմ. բնույթի երկերից է «Կարգ և թիւք կաթողիկոսաց և ամք նոցա»-ն (Մատենադարան, ձեռ. № 1721), որտեղ թվարկված են Հայոց կաթողիկոսները մինչև իր ժամանակները: Ա. Ա Ջ-ու առավել հայտնի գործերից է «Աղօթամատոյց»-ը (1790, 2 հրտ., 1840), որը բաղկացած է երկու մասից. առաջինը ս. Պատարագի սպասքի և արարողությունների մեկնաբանությունն է, երկրորդը պարունակում է ս. Պա-

ԱՂԵՔՍԱՆԴՐ տարագի և այլ աղոթքներ, այդ թվում նաև Գրիգոր Նարեկացու և Ղուկաս Վանանդեցու աղոթքներից: «Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք...» աշխատությունը (Մատենադարան, ձեռ. № 1986) ծաղկաքաղ է Հին և Նոր կտակարաններից, ինչպես նաև եկեղեց. մատենագիրներից: Ա. Ա. Ջ. գրել է տաղեր, այդ թվում՝ դավան. բովանդակությամբ: Մեզ են հասել նաև նրա ձեռքով ընդօրինակված ձեռագրեր:

Կաթողիկոս. գահին Ա. Ա Ջ-ուն հաջորդել է *Աստվածատուր Ա Համադանցին*:

Երկ. Վկայութիւնք ի պէտս քարոզութեանց, աշխատասիր. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 1998:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 1, Էջմիածին, 1842: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:

Արտաշես Ղազարյան

ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ, Ղարաղաշ, Ամենայն հայոց կաթողիկոս 1753–55-ին: Հաջորդել է *Մինաս Ա Ակնեցուն*: *Աբրահամ Գ Կրետացու* օրոք (1734–37) եղել է կաթողիկոս. փոխանորդ: Ա. Բ-ու անունով հայտնի են մի քանի մանր գրություններ, որոնցից կարևորություն ունեն հատկապես Հիշատակարանը (պատմում է նրա կաթողիկոս. ընտրության պարագաները), Վրաց կաթողիկոս Անտոն Ի-ին (1744–55) ու Վրաց արքա Թեյմուրազին (1744–67) հղած թղթերը և մի կոնդակ՝ ուղղված համայն հայությանը՝ Արտազի Ս. Թադե վանքի չինարարության համար միջոցներ հանգանակելու վերաբերյալ:

Կաթողիկոս. գահին Ա. Բ Բ-ուն հաջորդել է *Հակոբ Ե Շամախեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:

Հակոբ Քյոսեյան

ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ, Հայաստանյայց առաքելական եկեղեցուն հակաթոռ կաթողիկոսություն (1113–1895), որի իրավասության տակ էր Վասպուրական նահանգի մի մասը: Աթոռանիստը՝ Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցի: Վասպուրականի թագավորության անկումից (1021) հետո Արծրունիների հետ ազգակցություն ունեցող և նրանց ազդեցության տակ գտնվող հոգևորականները հիմնադրել և ժառանգաբար նստել են Ա. կ-յան աթոռին՝ մարմնավորելով հոգևոր և աշխարհիկ իշխանությունը: Դավիթ եպս. Թոռնիկյանը 1113-ին, պատրվակ դարձնելով Հայոց կաթողիկոս *Գրիգոր Գ Պահլավունու* դեռահասությունը, իրեն հռչակել է Հայոց կաթողիկոս: Նույն տարում Կիլիկիայի Սև լեռան *Քեսունի Կարմիր վանքում* գումարված ժողովը մերժել է Դավթի կաթողիկոսությունը: Վերջինս չի ենթարկվել ժողովի որոշումներին և Ա. կ. հռչակել է ինքնուրույն աթոռ: Մինչև XIII դ. 70-ական թթ. Ա. կ. ժառանգել են նույն ընտանիքից (Թոռնիկյաններ) սերված եկեղեցականներ, իսկ 1272-ից կաթողիկոս է դարձել Աղթամար կղզու և հանդիպակաց ափի հայկ. գյուղերին տիրացած Սեֆեդինյանների ներկայացուցիչ Ստեփանոսը: Սեֆեդինյաններն իրենց համարել են մոր կողմից Արծրունիներ: Ա. կ. մինչև XVI դ. վերջը մնացել է այս գերդաստանի ձեռքում՝ որպես ժառանգական ստացվածք: Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ (1434–64) կարակոյունլու Ջհանշահ Փաղիշահի օժանդակությամբ կարճ ժամանակով իր իշխանության տակ է միավորել Ս. Էջմիածնի կաթողիկոսությունը և Ա. կ.: Մինչև XVIII դ. վերջը Ա. կ. ունեցել է 14 թեմ: Աղթամարի կաթողիկոսին հաստատել են այդ կողմերի մահմեդ. տիրակալները: XVII դ. Ա. կ-յան և Ս. Էջմիածնի միջև վեճեր են սկսվել իրենց իրավասության սահմանների շուրջ: XVIII դ. վերջից Ա. կ. ճանաչել է Ս. Էջմիածնի գերակայությունը: XIX դ. վերջին Ա. կ. ուներ երկու թեմ, որոնք ընդգրկել են Վանա լճի հվ. շրջանները (Հայոց ձոր, Ռշտունիք, Շատախ, Անձևացիք, Մոկք, Կորճայք, Խիզան)՝ 302 եկեղեցիներով և 58 վանքերով: Ա. կ. վերացել է 1895-ին, իսկ թեմերն անցել են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին:

Աղթամարի կաթողիկոսների անվանացանկ (ըստ Ն. Ակինյանի)

Դավիթ Ա (1113 – մոտ 1165), Ստեփանոս Ա Ալուզ (մոտ 1165 – մոտ 1185/90), [Անանուն] (աթոռակալության տարիները հայտնի չեն), Ստեփանոս Բ Նկարեն (հիշատակվում է 1223 – վախճ. 1272), Ստեփանոս Գ Տղա Սեֆեդինյան (1272 – մոտ 1296), Զաքարիա Ա Սեֆեդինյան (1296–1336), Ստեփանոս Գ (հիշատակվում է 1340-ից – վախճ. 1346), Դավիթ Բ (1346 – մոտ 1368), զուգահեռ կաթողիկոս է հիշվում Ներսես Բոլատը (1316, 1324, 1371), Զաքարիա Բ Նահատակ (1369–93), Դավիթ Գ (1393–1433), Զաքարիա Գ (1434–64), Ստեփանոս Դ Տղա (1465–89), Զաքարիա Դ (1489 – մոտ 1496), Ատոմ (հիշատակվում է 1496, 1497, 1499, 1507), Հովհաննես (հիշատակվում է 1512-ին), Գրիգորիս Ա Աղթամարցի (Մեծ) (մոտ 1512 – մոտ 1544), Գրիգորիս

Բ Սեֆեդինյան, Աղթամարցի (Փոքր) (մոտ 1544 – մոտ 1586), Գրիգորիս Գ Փոքր (հիշատակվում է 1595, 1602, 1604, 1605), Մարտիրոս Գուրջի Փշրուկ (1660–62), Պետրոս (վախճ. 1670), Ստեփանոս (հիշատակվում է 1671-ին), Փիլիպպոս (հիշատակվում է 1671-ին), Կարապետ (հիշատակվում է 1677-ին), Հովհաննես Թուլթունջի (հիշատակվում է 1679-ին), Թովմա Ա (1681–98), հակաթոռ կաթողիկոսն էր Ավետիսը (հիշատակվում է 1698-ին), Սահակ Արծկեցի (հիշատակվում է 1698-ին), Հովհաննես Կեծուկ (հիշատակվում է 1699–1704-ին), Հայրապետ Ա Փայխեցի (հիշատակվում է 1706-ին), Գրիգոր Գավաշեցի (հիշատակվում է 1707, 1711-ին), Հովհաննես Հայոցձորեցի (հիշատակվում է 1720-ին), Գրիգոր Հիզանցի (հիշատակվում է 1725-ին), Բաղդասար Բաղիշեցի (հիշատակվում է 1735–36-ին), Նիկողայոս Սպարկերտցի (1736–51), Գրիգոր (մոտ 1751–61), Թովմա Բ Աղթամարցի (մոտ 1761–83), Կարապետ Ղոմֆասմենց (1783–87), Մարկոս Շատախեցի (1788–91), Թեոդորոս (հիշատակվում է 1792–94-ին), Միքայել (հիշատակվում է 1796-ին), Կարապետ (վախճ. մոտ 1813), Խաչատուր Ա Վանեցի (1813–14), Կարապետ (վախճ. մոտ 1823), Հարությունն (վախճ. մոտ 1823), Հովհաննես Շատախեցի (1823–43), Խաչատուր Մոկացի (մոտ 1844–51), Գաբրիել Շիրոյան (1851–57), Պետրոս Բյուլբյուլ (1858–64), Խաչատուր Բ Շիրոյան (1864–95):

Գրկ. Մաքսուդյանց Մ., Հավաքարան անվանց կաթողիկոսաց (Աղթամարա), Էջմիածին, 1916: Ակինյան Ն., Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարա, Վնն., 1920:

Վրեժ Վարդանյան

ԱՂԹԱՄԱՐԻ ՎԱՆՔ, Աղթամարի Ս. Խաչ վանք, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառում, Վանա լճի հարավ-արևելյան մասում, Աղթամար կղզում: Եղել է Վասպուրականի Արծրունյաց թագավորության հոգևոր կենտրոնը, այդտեղ է գործել *Աղթամարի կաթողիկոսությունը* (XII–XIX դդ.), որի կաթողիկոսները միաժամանակ Ա. վ-ի առաջնորդներն էին: Ա. վ-ում է առժամանակ հանգրվանել *Լուսավորչի Աջը*:

915–921-ին ճարտ. *Մանուելը*, Գագիկ Արծրունի թագավորի հանձնարարությամբ, կառուցել է Ա. վ-ի Ս. Խաչ եկեղեցին, որը քառախորան, խորանամերձ անկյուններում երեք քառորդ խորշերով, խաչաձև գմբեթավոր հորինվածքով կրկնել է Արծրունյաց տան տոհմական տապանատուն *Զորադիրի Ս. Էջմիածին եկեղեցու* ճարտ-ը: 1280-ին Աղթամարի Ստեփանոս Գ Տղա Սեֆեդինյան կաթողիկոսը նորոգել է Ս. Խաչ եկեղեցու տանիքը և գմբեթի վեղարը: 1293-ին Ս. Խաչ եկեղեցու հվ-արլ. կողմում Հոռոմշահի որդիներ Ստեփանոսը և Սարգիսը կառուցել են Ա. վ-ի Ս. Ստեփանոս միանավ, թաղածածկ եկեղեցին: 1296-ին Աղթամարի Զաքարիա Ա Սեֆեդինյան կաթողիկոսը կառուցել է Ս. Խաչ եկեղեցուն հս-արլ-ից կից Ս. Սարգիս միանավ մատուռը, ամառային ժամատուն, վերնատուն, դարպաս: 1431-ին Փերի բեկի հրոսակները ներխուժել են Աղթամար կղզի, կողոպտել Ա. վ-ի սպասքը, զարդերը, ոչնչացրել ձեռագրերը: 1556-ին նորոգվել է Ս. Խաչ եկեղեցու գմբեթը: Աղթամարի Գրիգորիս Գ Փոքր կաթողիկոսը (հիշատակվում է 1595–1605-ին) Ա. վ-ին է նվիրել ոսկեկազմ Ավետարան, վերանորոգել ժամատունը, ձիթհան կառուցել, Ս. Ստեփանոս եկեղեցուն նվիրել Երուսաղեմից բերված վարագույր, զգեստներ, ոսկե սկիհներ:

Աղթամարի Բաղդասար Բաղիշեցի կաթողիկոսի օրոք (հիշատակվում է 1735–36-ին) Ա. վ. անկում է ապրել, միաբանների մեծ մասը ցրվել է: 1756-ին Աղթամարի Գրիգոր կաթողիկոսը պատվիրել է Ս. Խաչ եկեղեցու խաչկալը: 1763-ին Թովմա Բ Աղթամարցի կաթողիկոսը Ս. Խաչ եկեղեցու արմ. ճակատին կից, Նախապետ ուստայի ձեռքով, կառուցել է անշուք, պարզունակ և անարվեստ ճարտ-յամբ քառամույթ գավթի շենքը: XVIII դ. վերջին – XIX դ. սկզբին Ախիջանը և Գևորգը Ս. Խաչ եկեղեցու հվ. ճակատին կից կառուցել են Ս. Համբարձում անվանակոչված երկհարկ զանգակատունը, ինչի համար քանդել են Արծրունիների թագավոր. օթյակը տանող քարե բարձակային աստիճանները: Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյանը (1864–95) կառուցել է Վեհարանի, դպրոցի, թանգարանի շենքերը:

Ա. վ-ի համալիրում են հվ-արլ. կողմում գտնվող Ս. Գևորգ և Ս. Աստվածածին (Կարմիր եկեղեցի կոչվող) մատուռները, Ս. Խաչ եկեղեցու արլ. կողմի XII–XIX դդ. գերեզմանատունը՝ Աղթամարի կաթողիկոսների տապանաքարերով և խաչքարերով: Ա.վ-ի ուխտագնացության օրն է *Խաչվերացի* տոնը: 1917-ին Ա. վ. լքվել է և ամայացել: Այժմ կանգուն է միայն վանքի Ս. Խաչ եկեղեցին՝ հայկ. ճարտյան գոհարներից մեկը: Նրա գլխ. առանձնահատկությունը, որով այն դասվում է ողջ քրիստ. արվեստի բացառիկ ստեղծագործությունների շարքը, ճարտ-յան հետ համադրված աստվածաշնչային և աշխարհիկ թեմաներով պատկերաքանդակներն են և որմնանկարները: Եկեղեցու պատերը ողջ պարագծով դրսից

շրջառում են պատկերաքանդակների վեց գոտի: Ստորին գոտին նեղ ժապավեն է՝ ոճավորված բուս. զարդաքանդակներով: Երկրորդ՝ գլխ. գոտին, Հին և Նոր կտակարանների, նաև որոշ աշխարհիկ թեմաներով ստեղծված մեծադիր հարթաքանդակների շարք է: Հին կտակարանի թեմաներից քանդակված են՝ Հովնանի ծով նետվելն ու հրաշքով ազատվելը, Դավիթն ու Գողիաթը, Սամսոնը, Ադամն ու Եվան, Դանիելը՝ առյուծների գբի մեջ, երեք մանկունքը՝ հնոցում:



Աղթամարի վանքի հատակագիծը. 1. Ս. Խաչ եկեղեցին (915–921), 2. մատուռը (1296), 3. նախասրահը (XIV դ.), 4. գավիթը (1763), 5. զանգակատունը (XIX դ.)

Նույն բարձրության վրա, արմ. ճակատին, խորանի լուսամուտի երկու կողքերին, Գագիկ Արծրունի թագավորն է՝ եկեղեցու մանրակերտը ձեռքին, և Քրիստոսը՝ օրհնական *Աջով*: Լուսամուտի տակ, կենտրոնում, երկու հրեշտակներ բռնել են «Փառքի նշանը»՝ խաչազարդ մեդալիոն: Նոր կտակարանի թեմաներից են դահավորակների վրա նստած Քրիստոսն ու Աստվածածինը, սուրբ զինվորները, Հայաստանում քրիստոնեություն քարոզող առաքյալները, *Գրիգոր Ա Լուսավորիչը*, արաբների դեմ ազատագր. պայքարում զոհված, սրբերի շարքը դասված Համազասպ և Սահակ Արծրունի իշխանները: Երրորդ գոտին կազմված է կենդանիների քանդակներից, չորրորդում, խաղողի չընդհատվող որթագալարի մեջ, աշխարհիկ կյանքի տարբեր տեսարաններ են, հինգերորդ՝ ենթաքիվային գոտին ներկայացնում է տոհմանշաններ, զինանշաններ, դիմաքանդակներ, իսկ վեցերորդը՝ գմբեթի թմբուկի ենթաքիվայինը, պատկերում է եղնիկների, այծյամների փախուստը առյուծների, հովազների հետապնդումից: Եկեղեցու ճակատներին տեղադրված են չորս ավետարանիչների խոշոր, ամբողջ հասակով բարձրաքանդակները:

Ա. վ-ի Ս. Խաչ եկեղեցու պատերը ներսից ծածկված են X դ. բարձրարվեստ որմնանկարներով, որոնք մեծ կարևորություն ունեն արևելաքրիստ. արվեստի պատմության համար: Դրանք ոճական սերտ ընդհանրություն ունեն ճակատների պատկերաքանդակների հետ և հիմնականում նվիրված են ավետարան. թեմաներին: Պատկերների շարքը սկսվում է հվ. խորանից և շարունակվում արմ. և հս. խորանների երկարությամբ՝ ժամանակագր. կարգով, ըստ բարձրության տարբեր գոտիներով: Առաջին գոտում պատկերված թեմաներն են «Ավետումը», «Այցելությունը», «Ծնունդը», «Հովսեփի երազը», «Փախուստը դեպի Եգիպտոս», «Մանկանց կոտորածը», «Մկրտությունը», «Այլակերպությունը», «Կանայի հարսանիքը», երկրորդ գոտում՝ «Քրիստոսի քարոզը», «Մուտքը Երուսաղեմ», «Քրիստոսի օծումը Բեթանիայում», «Ոտնլվան», «Քրիստոսը Պիղատոսի առաջ», «Խաչելությունը», «Սուրբ կանայք գերեզմանի մոտ», «Քրիստոսը դժոխքում», «Քրիստոսի հայտնությունը Մարիամ Մագդաղենացուն», «Սուրբ Կույսի ննջումը»: Հին կտակարանից կա մեկ թեմատիկ շարք՝ նվիրված Ադամի և Եվայի ամբողջ պատմությանը:

Ա. վ-ի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներն առնչվում են վաղ միջնադարյան հայկ. արվեստի հետ (*Արուճի Ս. Գրիգոր եկեղեցի, Լմբատավանք*), նաև՝ X–XI դդ. գեղ. նոր ուղղությանը: Եկեղեցին արվեստների՝ ճարտ-յան, քանդակագործության և նկարչության համադրության փայլուն օրինակ է և եզակի՝ միջնադարյան հայկ. մշակույթում: Նրա պատկերաքանդակներն ազդել են ինչպես հայկ. քանդակագործության հետագա զարգացման, այնպես էլ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ձևավորման վրա:

Ա. վ. նշանակալի դեր է ունեցել հայ մատենագրության ու գրչության զարգացման գործում: Վանքում X դ. կազմավորվել և XII դարից ծաղկել է Աղթամարի գրչության կենտրոնը, որը վերելք է ապրել հատկապես Աղթամարի Զաքարիա Ա Սեֆեդինյան կաթողիկոսի (1296–1336) օրոք: Գրիչ Դանիել Աղթամարցին Ստեփանոս արք. Օրբելյանի խորհրդով ընդօրինակել է Թովմա Արծրունու «Պատմու-

թյունը» (1303), իսկ 1330-ական թթ.՝ Անանուն մատենագրի գրած այդ պատմության հավելվածը: Դանիելի սերունդները շուրջ երկու դար զբաղվել են գրչությամբ. նրանց շնորհիվ մեզ է հասել մոտ 100 ձեռագիր: Աղթամարի գրչության կենտրոնի նշանավոր մանրանկարիչներից է Զաքարիա ծաղկողը (XIV դ. վերջ – XV դ. սկիզբ), գրիչներից՝ Թովմա Մինասենցը (XV դ.), Ներսես և Ստեփանոս Դ Տղա կաթողիկոս եղբայրները (XV դ.), *Գրիգորիս Աղթամարցի* (Մեծ) կաթողիկոսը (XVI դ.) և ուր.: Կենտրոնը մեծ հռչակ է ունեցել. այնտեղ ձեռագրեր ընդօրինակելու են եկել Հայաստանի տարբեր վայրերից, նույնիսկ Գլաձորի համալսարանից ու Հերմոնի վանքից: Մեզ են հասել այստեղ ընդօրինակված պատմ. և գեղ. երկեր, բազմաթիվ նկարազարդ Ավետարաններ, Մաշտոցներ, Հայսմավուրքներ, Տաղարաններ և այլ ձեռագրեր:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.4, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1999: Լալայան Ե., Վասպուրական. նշանավոր վանքեր, Թ., 1912: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Մնացականյան Ստ., Աղթամար, Ե., 1983: *Орбели И. А., Избранные труды, т. 1, М., 1968;* Der Nersessian S., Vahramian H., Aght'amar, Milano, 1974 (Documenti di architettura armena, 8); Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան
Արտաշես Մաթևոսյան

ԱՂՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ, միջնադարյան հայ մատենագրության տեսակ. սկիզբ է առել V դարից՝ հայ գրերի գյուտից անմիջապես հետո, խարսխվել քրիստ. վարդապետության և Ս. Գրքի վրա, կանոնացվել Հայ եկեղեցու կողմից: Հայ աղոթագրությունը հիմնականում ամփոփված է զանազան աղոթագրքերի, ժամագրքի, Պատարագամատույցի, Շարակնոցի, Մաշտոցի, Գանձարան-Տաղարանների մեջ: Այն զարգացրել են Սահակ Ա Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Հովհաննես Սարկավագը և ուր.: Ա. մեծարժեք նյութ է պարունակում հայ ժողովրդի պատմաքաղ. անցյալի, ազատագր. ու հայրենասիր. ձգտումների, աշխարհընկալման, աստվածաբան. և փիլ. մտքի վերաբերյալ: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև գեղ. գրականության համար՝ իր կառուցվածքային և լեզվաոճական բազմազան առանձնահատկություններով: V դարից մեծ թափ է ստացել նաև հայ թարգման. Ա.: Թարգմանվել են Ընդհանրական եկեղեցու ս. հայրերի (Հովհան Ոսկեբերան, Բարսեղ Կեսարացի, Եփրեմ Ասորի և ուր.) աղոթքներն ու աղոթագրքերը, որոնք նույնպես տեղ են գտել հայ ծիս. և աղոթքների ժողովածուներում:

Գրկ. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 626–635: Աղոթագիրք, Ե., 1992:

ԱՂՈԹՔ, աղաչանք առ Աստված, օրհնություն, գոհություն, փառաբանություն, «խոսք ընդ Աստված», Աստծո հետ հաղորդակցվելու գլխավոր միջոց: Իր քարոզներից մեկում *Հովհաննես Երզնկացին* (Պլուզ) հետևյալ կերպ է ստուգաբանում բառը. «Աղոթք բառը երկվանկանի է. առաջին վանկը աղ-ն է, որն ունի աղաչական, աղերսական, սրտի խորքից բխած աղաղակի իմաստ: Իսկ ոթք-ը պատշաճ հարակցում է, որով հորջորջվում է աղոթք բառը» (Մատենադարան, ձեռ. № 2173, թ. 391ա): Աղոթել նշանակում է Աստծո հետ միատեղվել, Աստծո շնորհը հագնել, աստվածայինով զգեստավորվել: Ա., որպես Աստծո հետ հաղորդակցության ձև, ունի իր միջոցը, որ է *Սուրբ Հոգին*: Քրիստ. հավատի համաձայն, Ս. Հոգին նաև աղոթողի ուսուցիչն ու օգնականն է Ա-ի ժամանակ, նրա ներշնչման աղբյուրը. «Նույնպես և Հոգին օգնության է հասնում մեր տկարություններին. որովհետև մենք աղոթում ենք...» (Հռոմ. **8.**26):

Ս. Գրքում տրված են Հիսուս Քրիստոսի երկու լրիվ Ա-ները և Գեթսեմանիում նրա Ա-ի (Մատթ. **26.**36–46, Մարկ. **14.**32–42, Ղուկ. **22.**39–46) որոշ մասերը: Առաջինը *Տերունական աղոթքն* է, մյուսը Հիսուսն արտասանել է այն ժամանակ, երբ, կանխավետելով իր հաղթանակը աշխարհի ու մահվան նկատմամբ, պատրաստվում էր վերադառնալ իր Հոր մոտ (Հովհ. **17.**1–26): Հիսուսը հավատացյալ քրիստոնյային պատվիրում է հաճախակի աղոթել (Կողոս. **2.**2), աղոթել ամենայն ժամ (Ղուկ. **18.**1, **21.**36, Եփես. **6.**16) և անդադար (Ա Թեսաղ. **5.**17): Նա հանդիմանում է կեղծավոր, ի ցույց մարդկանց կատարվող Ա-ները (Մատթ. **6.**5), պատվիրում է ծածուկ աղոթել (Մատթ. **6.**6) և աղոթելիս հեթանոսների պես շատախոս չլինել (Մատթ. **6.**7):

Ըստ եկեղեցու ս. հայրերի ուսուցումների, Ա. մուտք է հոգևոր ոլորտ և հաղորդակցու-

թյուն երկնային իրականության հետ, «մըտքի համբարձում երկրային իրողություններից» և «առաջընթաց առաքինությամբ և աստվածային բազմախորհուրդ ճանաչողությունը» (Նեղոս Սինայեցի, IV–V դդ.): Առանց հավատի Ա. անուժ է, և միայն հավատից բխող Ա. է, որ կարող է ներգործություն ունենալ, լսելի լինել Աստծուն: *Գրիգոր Տաթևացին* տվել է Ա-ի տասը հիմն. խորհուրդներ՝ վերցված Ս. Գրքից և ս. հայրերից, որտեղ նա Ա-ի միջոցով շեշտել է մարդու կապը Բարձրյալի հետ՝ ներշնչված Ս. Հոգով, և կարևորել Ա.՝ որպես կատարելության հասնելու միջոց: Ըստ Գրիգոր Տաթևացու, Ա-ի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի Ա. դրանց միջոցով է կատարվում: Ձեռքերի սրբությունն այն է, որ ասել է առաքյալը. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի վեր» (Ա Տիմ. **2.**8), այսինքն՝ ձեռքերը մաքուր պահեն ագահությունից, զրկանք պատճառելուց, արյունից: Լեզվի սրբությունն այն է, որ պետք է Աստծուն աղոթել՝ զերծ մնալով խոսքի բարկությունից, հայհոյանքներից, աղաղակներից: Իսկ սրտի սրբությունն իր, ընկերների և Աստծո հանդեպ է: Ա. պետք է լինի սրտաբուխ, սիրտը մաքրելով բոլոր մեղքերից և չար խորհուրդներից, քանզի, ըստ քրիստ. մարդասիրության, սիրտը մարդու ներաշխարհի հոգևոր կենտրոն և Ս. Հոգու շնորհի ընդունարան է (Սաղմ. **51.**10, Առակ. **4.**23), խորհուրդների շտեմարան, Սուրբ Հոգու տաճար (Գրիգոր Լուսավորիչ):

Կան անհատ. և հրապարակային կամ հաս. Ա-ներ: Անհատի Ա. հաճախ իրականացվում է ներքին խոսքի միջոցով, առանց բառեր արտասանելու: Իսկ «հրապարակային կամ հասարակական Ա. նման է հասարակական պարտքի վճարմանը,... երբ ամենքս կարգված ժամին գնալով եկեղեցի, միաբան աղոթում ենք» (Սիմեոն Ա Երևանցի, XVIII դ.): Ըստ բնույթի Ա-ները լինում են հավատի և փառաբանության, զղջման և ապաշխարության, դավան., բարեխոսական ևն: Իրենց նշանակությամբ էլ կոչվում են «խնդրվածքներ», «օրհնություններ» և «գոհություններ»: IV դ. եկեղեց. հայրերից Հակոբ Մծբնացին հակիրճ տվել է դրանց բնութագրերը. «խնդրվածքները» այն Ա-ներն են, երբ գործած մեղքերի համար դթություն և ողորմություն են խնդրում Աստծուց, իսկ «օրհնություններն» ու «գոհությունները» նրանք են, երբ խնդությամբ գոհանում են երկնային Հորից և օրհնում նրան իր բոլոր գործերի համար: Գրիգոր Տաթևացին, խոսելով Ա-ի տասը խորհուրդների մասին, որպես դրանցից մեկը նշում է գոհությունն ու օրհնությունը Աստծո երախտիքներին, որ արել է մարդկանց համար թե՛ անցյալում, թե՛ ներկայում:

Ա. մեծ տեղ և խորհրդապաշտ. նշանակություն ունի ճգնակեցական կյանքում (տես *Ճգնավորություն*):

Համաձայն արևելաքրիստ. և Հայ եկեղեցու ավանդության, աղոթելու ժամանակ դեպի արևելք են դառնում: Արևելքն իր հոգևոր և կրոն. հասկացությամբ խորհրդապաշտ. բովանդակություն է ստացել, և ավանդաբար ու սովորությունների կիրառումով օրենքի ու կանոնի ուժ է ստացել (բացի բողոքական եկեղեցիներից) նաև աղոթելիս մարդկանց հայացքը դեպի արևելք դարձնելը:

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Նույնի, Ամառան հատոր, ԿՊ, 1741: Աղոթագիրք, Ե., 1992: Աղօթագիրք, Ե., 2000:

Արտաշես Ղազարյան

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ, Աղջոց Ս. Ստեփանոս վանք, ՀՀ Արարատի մարզում, Գեղարդավանքից 7 *կմ* հարավ-արևելք, լեռան լանջին: Ըստ ավանդության՝ հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը* IV դ. սկզբին՝ որպես կուսանաց վանք, Տրդատ Գ արքայի հալածանքներից փախած և այստեղ ապաստանած Ստեփանոս քահանայի նահատակման տեղում: Ա. վ-ի ներկայիս կիսավեր համալիրը կառուցվել է XIII դ. և բաղկացած է երկու եկեղեցուց, գավթից, նրանցից հս. գտնվող բնակելի ու տնտ. շինություններից: Գլխ.՝ Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցել է վանահայր Աբել վարդապետը 1212–17-ին, իշխան Գրիգոր Խաղբակյանի օժանդակությամբ: Եկեղեցին ունի ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով գմբեթավոր հորինվածք (գմբեթն ավերվել է երկրաշարժից): Արմ. կողմից կից է վանքի գավիթը (1217–34), որի ծածկն իրականացված է եղել երկու զույգ խաչվող կամարներով (պահպանվել են գավթի արլ. մասի պատերը): Ս. Ստեփանոս եկեղեցուն հս-ից կից է Երեմիա վանահոր օրոք իշխան Վասակ Խաղբակյանի 1270-ին կառուցած Ս. Պողոս-Պետրոս թաղածածկ եկեղեցին՝ խորանի երկու կողմերում ավանդատներով և հվ. պատին կից սենյակներով:

XIII դ. Ա. վ. որպես նվեր ստացել է հողեր, այգիներ, դրամ: Վանքում XV դ. դրվել են ձեռագրեր (Ավետարաններ, Ճաշոց, Խազ-գիրք): Ա. վ-ում են պահվել ս. Ստեփանոս քա-հանայի Աչը և *Արիստակես Ա Պարթևի* Աչը: XVII դ. սկզբին, շահ Աբբասի արշավանքի ժա-մանակ, Ա. վ. կողոպտվել է, Արիստակես Ա Պարթևի Աչը հափշտակվել ու տարվել Թավ-րիզ, որտեղ այն հետ է գտնել բաղիշեցի մի հայ վաճառական և վերադարձրել Ա. վ-ին (այժմ գտնվում է Ս. Էջմիածնում): 1679-ի հունիսի 4-ի երկրաշարժից շատ վանքերի հետ ավերվել է նաև Ա. վ., բայց նորոգվել է ու գործել մինչև XVIII դ. կեսը՝ մինչև լեզգիների վեր-ջին ասպատակությունը, որից հետո լքվել է ու ամայացել:

Ա. վ-ում կան Հին և Նոր կտակարանների թեմաներով կատարված արժեքավոր պատկե-րաքանդակներ: Ս. Ստեփանոս եկեղեցու արմ. մուտքի ճակատակալ քարին պատկերված է մի դրվագ Ահեղ Դատաստանից. վերևում փառ-քի պսակի մեջ Քրիստոսն է, ներքևում, եր-կու շարքով՝ ընտրյալները: Հվ. պատին քան-դակված է կանգնած Դանիելը՝ առյուծների գբում, ներքևում՝ պատուհանի երկու կողմե-րում զույգ աղավնիներ են, խորանի ճակատի պատին, դեմ հանդիման պատկերված են եր-կու մարդկային գլուխներ՝ աքեմենյան խույր հիշեցնող գլխարկներով: Բազմազան են եկե-ղեցու զարդաքանդակները՝ բուս., երկրաչափ. մոտիվներով, իրականացված մեծ վարպետու-թյամբ ու բարձր արվեստով:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արմ. մուտքի երկու կողմերում Պետրոս և Պողոս առաքյալ-ների՝ մարդու բնական մեծությամբ հարթա-քանդակներն են: Մուտքից աջ երկարամազ և մորուքով Պետրոսն է՝ աջ ձեռքը բարձրացրած, ձախում՝ բանալիներ, իսկ ձախ կողմում՝ Պո-ղոսը, մորուքով և նույնպես երկարամազ, ա-ռանց ավանդ. ճաղատի (Պողոսի նման պատ-կերագրությունը հանդիպում է նաև հայկ. մանրանկարչության մեջ): Առաքյալների այս հարթաքանդակներն իրենց կատարումով ար-մատապես տարբերվում են հայկ. արվեստում մինչ այդ տիրապետող ոճական ուղղությու-նից (քանդակը ճարտ. ձևն ընդգծող տարրն է) և նոր մոտեցման՝ պատկերաքանդակներին ինքնուրույն նշանակություն տալու առաջին օրինակներից են:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.5, 1-ին պատկերը:

ԱՂՎԱՆԻՑ

Գրկ. Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1944: Զաքարյան Լ., Աղվոց վանքը և նոր ուղղության զարգացումը հայ քանդակագործության մեջ XIII–XIV դդ., ՊԲՀ, 1985, № 1: *Материалы по археологии Кавказа, 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻ, Աղվանքի թագավո-րության պաշտոնական եկեղեցի, Արևելյան հակաքաղկեդոնական եկեղեցիներից: Ընդու-նել է *Հայաստանյայց առաքելական սուրբ ե-կեղեցու* դահերեցությունը և «ի հոգևորս» ենթարկվել նրան: III դարից սկսած բուն Աղ-վանքում հանդես են եկել քրիստ. համայնք-ներ: *Գրիգոր Ա Լուսավորչի* թոռը՝ *Գրիգորիս-սը* («Մանուկ Գրիգորիս»), նշանակվելով Աղ-վանից ու Վրաց եպիսկոպոս, քարոզչական ա-ռաքելությամբ Փայտակարան քաղաքից (ուր *Տրդատ Գ* Մեծի կողմից ուղարկվել էր որ-պես հոգևոր առաջնորդ) անցել է Աղվանք, ա-պա՝ Վիրք և Մազքթաց աշխարհ: 338-ին նա-հատակվել է Մազքթաց Սանատրուկ Արշակու-նի թագավորի հրամանով, սակայն նրա ջան-քերով նոր վարդապետությունն Աղվանքում արդեն արմատավորվել էր, և քրիստ. համայնք-ները միավորվել էին: Ավանդաբար Գրիգորիսն էլ համարվում է Ա. ե-ու հիմնադիրն ու անդ-րանիկ հովվապետը:

370-ական թթ. Ուռնայր թագավորը քրիստո-նեությունը հռչակել է Աղվանքի պետ. կրոն: Ըստ ավանդության, նա Աղվանքի մեծամեծնե-րի ու բանակի հետ մկրտվել է Հայաստանում՝ Արածանի գետում և, վերադառնալով հայրե-նիք, դարձել քրիստոնեության փառաբանողն ու պաշտպանը: Ապա երկրում հիմնադրվել են բազում եկեղեցիներ (հաճախ եկեղեցիների են վերածվել հեթանոս. տաճարները), որոնց հատ-կացվել են կալվածքներ: Սահմանվել են առա-ջին եկեղեց. հարկերը՝ պտղին ու տասանորդը: Աղվանքում ևս եկեղեցին կազմավորվել է աշ-խարհիկ իշխանության ընդօրինակությամբ: Նրա գլուխ կանգնած էր արքեպիսկոպոսը (կա-թողիկոսը), որին ձեռնադրել է Հայոց կաթողի-կոսը: Հայաստանի օրինակով Աղվանքում ևս կաթողիկոսն է տնօրինել «Մեծի դատաւարու-թեան» գործակալությունը: Նվիրապետ. աստի-ճանակարգով Ա. ե-ու կաթողիկոսին նախոր-դել են մետրոպոլիտները, եպիսկոպոսները, քո-ռեպիսկոպոսները, քահանաները, սարկավագ-ները, դպիրները, սաղմոսերգուները: Նոր կրո-

նը խթան է հանդիսացել 415–420-ին Բենիամին Երեցի օգնությամբ *Մեսրոպ Մաշտոցի* կողմից աղվանից գրերի ստեղծմանը: Ժամասացության լեզուն նախապես եղել է հունարենը, սակայն Եսվաղեն (Երսվաղեն) թագավորի օրոք (մոտ 414–444) փոխարինվել է հայերենով: IV–V դդ. Ա. ե-ուն են ենթարկվել բուն Աղվանքն ու մերձկասպյան մի շարք երկրամասեր (պաշտոնապես Աղվանքի կաթողիկոսը կրել է «Կաթողիկոս Աղվանից, Լփնաց և Զողայ» տիտղոսը): Սակայն Սասանյան Իրանի արքունիքը Աղվանից մարզպանությանն (461) մեջ քաղ. նկատառումներով մտցրել է նաև Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները («Հայոց Արևելից Կողմանք»), և Ա. ե-ու ենթակայությամբ են գործել այդ երկրամասերի թեմերը:

Ա. ե-ու եպիսկոպոսական աթոռանիստ կենտրոններ են եղել նաև Կապաղակը, Զողը, Շաքին: V դ. վերջին, Արցախի և Ուտիքի (կարճ ժամանակով նաև Աղվանքի) թագավոր Վաչագան Գ Բարեպաշտի (մոտ 487–510) նախաձեռնությամբ կայացած ժողովում սահմանվել են Ա. ե-ու կարգն ու կանոնները, առաջնորդների իրավունքներն ու պարտականությունները (տես *Աղվենի եկեղեցական ժողով*): Կրելով Հայ եկեղեցու անմիջական ազդեցությունը՝ Ա. ե-ու առաջնորդները հիմնականում գործել են Հայոց կաթողիկոսների հետ «համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ», համատեղ հանդես եկել դավան. ու քաղ. կարևորագույն հարցեր քննարկած մի քանի եկեղեց. ժողովներում: 506-ի Դվինի ժողովում (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) Ա. ե. նույնպես մերժել է *Քաղկեդոնի ժողովը*: 554-ի Դվինի եկեղեց. ժողովում Հայ և Աղվանից եկեղեցիները վերջնականապես խզել են հարաբերությունները բյուզ. եկեղեցու հետ: Այդ ժամանակից սկսած Ա. ե-ու հոգևոր պետը կրել է «կաթողիկոս» տիտղոսը (տես *Աղվանից կաթողիկոսություն*): Տարբեր ժամանակներում Ա. ե. գործուն պայքար է ծավալել Աղվանքում զրադաշտականություն տարածելու պարսից արքունիքի քաղաքականության, ինչպես նաև *նեստորականության* և *քաղկեդոնականության* դեմ:

Ա.ե-ու հոգևոր առաջնորդների (արքեպիսկոպոսների) անվանացանկ

ս. Մանուկ Գրիգորիս, ս. Շուփհաղիշո, Մատթեոս, Սահակ, Մովսես, Պանդ, Ղազար, Գրիգոր, Զաքարիա, Դավիթ, Հովնան, Երեմիա:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Հենրիկ Սվազյան

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ, Աղվանից քահանայապետություն, եպիսկոպոսապետություն, հայրապետություն, *Աղվանից եկեղեցու* հոգևոր և եկեղեցավարչական գերագույն կենտրոնական իշխանությունը: Կազմավորվել է VI դ. 2-րդ կեսին: Ընդգրկել է բուն Աղվանքի և Մեծ Հայքի Ուտիք ու Արցախ նահանգների թեմերը, ընդունել *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* գահերեցությունը: Կառուցվածքով հար և նման էր Հայ, Վրաց, Ասորվոց և Արևելյան մյուս եկեղեցիների կաթողիկոսություններին: Գլխավորել է կաթողիկոսը (կոչվել է նաև քահանայապետ, արքեպիսկոպոս, եպիսկոպոսապետ, հայրապետ, հովվապետ), որն ընտրվել է եկեղեց. բարձրագույն ժողովում՝ թեմերի առաջնորդների ու հրավիրված բարձրաստիճան աշխարհականների կողմից և ձեռնադրվել Ամենայն հայոց հայրապետից: Նա կրել է «Կաթողիկոս Աղվանից, Լփնաց և Զողայ» տիտղոսը: Կաթողիկոսության կենտրոնը դարձել է մայրաքաղաք Պարտավը (462-ին հիմնել է Առանշահիկներից Վաչե Բ): Տարբեր ժամանակներում կաթողիկոսանիստ են եղել Կապաղակը, *Ամարասի վանքը*, Զարեքի բերդը, Բերդակուրը (ամառային նստավայր), Խամչի վանքը, Ճալեթը, Գանձակը, *Գանձասարի վանքը*:

Ա. կ. առաջնորդվել է *Աղվենի եկեղեցական ժողովի* մշակած կանոններով: Առաջին գահակալն է եղել Աբասը (551–595): 591–626-ին, Բյուզ. կայսրության գերիշխանության հզորացման հետ, տարածաշրջանում ուժեղացել է *քաղկեդոնականությունը*, որի դեմ հայ-աղվան. հոգևորականությունն անդիջում պայքար է մղել: Արաբ. տիրապետության հաստատումով (VIII դ.) քաղկեդոն. եկեղեցու ազդեցությունը թուլացել է: Արլ. Անդրկովկասի անդրկուրյան դավառներում սկսվել է աղվան. ցեղերի բռնի մահմեդականացում: Արդեն ուշ միջնադարում բուն Աղվանքում զգալիորեն նոսրացել են հակաքաղկեդոն. եկեղեցու կենտրոնները: IX–XI դդ. Ա. կ-յան կենտրոն է դարձել Փառիսոսի թագավորության Միափոր դավառի Խամչի վանքը: XIII դարից Ա. կ. հետևողականորեն պայքարել է կաթոլիկության և այլ կրոնագաղափարախոս. հոսանքների դեմ:

1240-ից բարձրացել է Գանձասարի եպիսկոպոսության հեղինակությունն ու դերը, որտեղ ժառանգաբար գահակալել են Հասան-Ջալալյանները (իշխանական տոհմ Արցախ-Խաչենում): XIV դարից կաթողիկոսությունը տեղափոխվել է Գանձասարի վանք, սկսել է ավելի հաճախակի կոչվել ուղղակի Գանձասարի կաթողիկոսություն՝ ի հոգևորս ենթարկվելով Ս. Էջմիածնի Հայոց կաթողիկոսությանը: XVII դ. կեսից Խաչենի *Երից Մանկանց վանքում* ստեղծվել է հակաթոռ կաթողիկոսություն, ինչը երկփեղկել է Ա. կ. մինչև XIX դ.:

Ա. կ. (Գանձասարի) տնօրինել է բուն Աղվանքի (Կապաղակ, Շաքի, Բաղախատ), Աղվանից մարզպանության հս. հատվածի (Զող, Ցիր) և Մեծ Հայքի «Արևելից Կողմանց» (Պարտավ, Ամարաս, Ուտիք, Գարդման, Հաչու, Մեծկըվենք, Գանձասար, Բաղասական) թեմերը: Քաղ. հանգամանքների բերումով թեմերի թիվը մշտապես փոփոխվել է՝ մե՛րթ ավելացել, մե՛րթ նվազել: Տարբեր ժամանակներում Ա. կ-յանն են ենթարկվել նաև Հաբանդի, Շամախու, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի և այլ եպիսկոպոս. թեմեր:

Ա. կ. հոգևոր բնագավառից բացի գործուն մասնակցություն է ունեցել հաս., քաղ., տնտ. ու մշակութ. կյանքին: Գումարել է համընդհանուր եկեղեց. ժողովներ, որտեղ մշակել է հաս. հարաբերությունները կարգավորող որոշումներ, ճշտել քաղ. դիրքորոշման հարցեր, սահմանել եկեղեց. կանոններ: Ա. կ. անվանումը դարձել է սոսկ վերացական հասկացություն: Գանձասարի կաթողիկոսությունը, հատկապես Հասան-Ջալալյանների հայրապետությամբ, եղել է Արցախում հաստատված մահմեդ. խանների բռնակալության դեմ մելիքների ընդդիմության, XVIII դ. 1-ին քառորդի հայ ազդ-ազատագր. շարժման կազմակերպիչը, ոգեշնչողն ու հոգևոր, քաղ. կենտրոնը: Այն վերածվել է ռուս. կողմնորոշման ուղեցույցի և ռուս. արքունիքում թուրք-պարսկ. լծից ազատագրվելու հայոց իղձերի թարգմանի: 1815-ին ցար. կառավարությունը Ամենայն հայոց կաթողիկոսության միջնորդությամբ լուծարել է Ա. կ.՝ փոխարենը հաստատելով մետրոպոլիտություն: Նախկին Ա. կ-յանը ենթակա նահանգներում կազմվել են նվիրապետական տեսակետից Էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա երկու առաջնորդական թեմեր և մեկ հաջորդական վիճակ: Այդ իրադրությունը վերջնականապես ամրապնդվել է «*Պոլոժենիե*»-ում (1836): Առաջին առաջնորդական թեմի (Շուշիի կամ Արցախի) մեջ մտել են Դիզակ, Վարանդա, Բերդաձոր, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան, Շաքի, Կապաղակ, Հաչի, Խենի, Կամբեճան, Արաշ (Արեշ), Լենքորան (Լանքարան) գավառները:

Երկրորդ առաջնորդական թեմը (Շամախի կենտրոնով) ընդգրկել է Դերբենդի (Դարբանդ), Ղուբայի, Շամախու, Բաքվի, Սալյանի և հարևան գավառների հայկ. եկեղեցիներն ու վանքերը:

Հաջորդական վիճակի կենտրոնն էր Գանձակ (Ելիզավետպոլ) քաղաքը, որին ենթարկվել են Գարդման, Փառիսոս, Զավե գավառները: Հաջորդական վիճակն անմիջապես ենթակա էր Թիֆլիսի կոնսիստորիային: Ա. կ-յան վերջին՝ Սարգիս Բ կաթողիկոսը մինչև իր վախճանը (1828) եղել է մետրոպոլիտ:

Աղվանից կաթողիկոսների անվանացանկ

Աբաս (551–595), Վիրո (595–629), Զաքարիա Բ (629–644), Հովհան Բ (644–671), Ուխտանես (671–683), Եղիազար (683–689), Ներսես Ա (689–706), Սիմեոն Ա (706–707), Միքայել (707–744), Անաստաս (744–748), Հովսեփ Ա (748–765), Դավիթ Բ (765–769), Դավիթ Գ (769–778), Մատթե Բ (778–779), Մովսես Բ (779–781), Ահարոն (781–784), Սողոմոն Ա (784), Թեոդորոս (784–788), Սողոմոն Բ (788–799), Հովհաննես Գ (799–824), Մովսես Գ (824), Դավիթ Դ (824–852), Հովսեփ Բ (852–877), Սամուել (877–894), Հունան (Հովնան, 894–902), Սիմեոն Բ (902–923), Դավիթ Ե (923–929), Սահակ Բ (929–947), Գագիկ Ա (947–958), Դավիթ Զ (958–965), Դավիթ Է (965–971), Պետրոս Ա (971–987), Մովսես Դ (987–993), Մարկոս Ա, Հովսեփ Գ, Մարկոս Բ, Ստեփանոս Ա (հաջորդաբար՝ 993–1079), Հովհաննես Ե (1079–1129), Ստեփանոս Բ (1129–1131), Գագիկ Բ (Գրիգորիս, 1139), Բեժգեն (1140), Ներսես Բ (1149–1155), Ստեփանոս Գ (1155–1195), Հովհաննես Զ (1195–1235), Ներսես Գ (1235–1262), Ստեփանոս Դ (1262–1323), Սուքիաս, Պետրոս Բ (հաջորդաբար՝ 1323–1331), Զաքարիա (1331), Դավիթ Ը (հիշատակվում է միայն ցանկերում), Կարապետ (1402–1420), Հովհաննես Զ (1426–1428), Մատթեոս Գ (1434), Աթանաս (ըստ ցանկերի, գահակալել է 1 տարի), Գրիգոր Բ (ըստ ցանկերի), Հովհաննես Է, որդի Ջալալի (1441–1470), Ազարիա (ըստ ցանկերի), Մատթեոս (1488), Արիստակես (ըստ ցանկերի), Թումա Սոկյութլվեցի (1471), Ստեփանոս (1476), Ներսես Դ (1478), Շմավոն Ա (1481), Առաքել Սոկյութլվեցի (1481–1497), Արիստակես Բ (1515–1516), Սարգիս Ա Ղշլաղեցի (1554), Գրիգոր, որդի Մեյրամբեկի (1559–1574), Պետրոս Գ

(1571), Դավիթ Թ (1573), Փիլիպպոս Տումեցի (ըստ ցանկերի, գահակալել է 1 տարի), Հովհաննես Ը, որդի Մեյրամբեկի (1574–1586), Դավիթ (1584), Աթանաս (1585), Շմավոն Բ (1586–1611), Արիստակես Գ Քոլատակցի (1588), Մելքիսեթ Արաշեցի (1593), Սիմեոն Գ (1616), Պետրոս Խանձկեցի (1653–1675), Սիմեոն Դ Խոտորաշենցի (1675–1701), Երեմիա Բ Հասան-Ջալալյանց (1676–1700), Եսայի Հասան-Ջալալյանց (1702–1728), Ներսես Ե, հակաթոռ (1706–1736), Իսրայել (1728–1763), Ներսես (1763), Հովհաննես Ժ Գանձասարեցի (1763–1786), Սիմեոն Ե Խոտորաշենցի (1794–1810), Սարգիս Բ (1810–1815, 1815–1828-ին՝ մետրոպոլիտ):

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկե Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1–2, ԿՊ, 1912–14:

Հենրիկ Սվազյան

ԱՂՎԵՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ, կանոնադիր ժողով. գումարվել է V դարի վերջին կամ VI դարի սկզբին, Աղվանից արքա Վաչագան Գ Բարեպաշտի (480-ական թթ. վերջ – 510) նախաձեռնությամբ, Պարտավից արևմուտք ընկած թագավորական ամառանոց Աղվենում: Իր բնույթով ժողովն աշխարհիկ-եկեղեցական էր, մասնակցել են 18 հոգևորականներ (արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, երեցներ), ինչպես նաև Արցախի և Ուտիքի ավագանին, իշխաններ, ազատներ: Հրավիրման դրդապատճառը, ինչպես ասված է ընդունված կանոնների Առաջաբանում, բազմաթիվ հակառակություններն էին աշխարհականների և հոգևորականների, ազատների և շինականների միջև, նպատակը՝ ներգործության իրավական միջոցներով դրանք հարթելը: Ժողովն ընդունել է 21 կանոն, որոնք հայտնի են որպես «Վաչագան Աղվանից արքայի կանոնախումբ» կամ «Սահմանադրություն կանոնական Վաչագան Աղվանից արքայի»: Ա. ե. ժ-ի կանոնախումբը վաղ միջնադարի հայկ. եկեղեց. իրավունքի կարևոր հուշարձաններից է: Հիշատակվում է «*Կանոնագիրք Հայոց*»-ում և Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ: Կանոնները չափազանց մերձ են Աշտիշատի 356-ի ժողովի (տես *Աշտիշատի եկեղեցական ժողովներ*) սահմանումներին: Դրանցից հետևում է, որ մինչ այդ ազատներն իրենց դաստակերտներից վտարում էին երեցներին, նոր երեցներ կարգում, եկեղեցիներում սեղան կանգնեցնում, նշխարներ տեղադրում, Պատարագ մատուցում առանց եպիսկոպոսի հետ համաձայնեցնելու՝ յուրացնելով վերջինիս իշխանությունը (կանոն Ի, ԻԱ), կիրակի օրերին իրենց ծառաների հետ եկեղեցի չէին գնում (կանոն ԺԹ), հանգուցյալի հոգեբաժինը չէին հանձնում եկեղեցուն (կանոն Գ), հանգուցյալի հիշատակին նվիրված Պատարագ չէին կատարում (կանոն Ե), շարունակում էին ապրել հեթանոսաբար. ամուսնանում էին մերձավոր ազգականների հետ, կին առնում առանց պսակի և օրհնության, առանց հիմնավոր պատճառի կնոջից ամուսնալուծվում (կանոն Ժ, ԺԱ) ևն: Ժողովը նվազեցրել է աշխարհականներից գանձվող պտղի և տասանորդ կոչվող հարկերը: Նրանց համար սահմանվել են նաև հոգևոր բնույթի մի շարք պարտավորիչ կանոններ. արգելվել են քրիստ. գաղափարներին հակասող հեթանոս. կենցաղավարության առանձին երևույթներ, հետապնդվել հոգևորականների դատապարտելի վարքը (օր., միմյանց վրա մեղք բարդելը, վանքի հասույթները հափշտակելը ևն):

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Բարխուդարյան Մ., Պատմութիւն Աղուանից, հ. 1, Վաղ-պատ, 1902: Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, ՊԲՀ, 1967, № 4: Ակինյան Ն., Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վնտ., 1970: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 2, Ե., 1971, էջ 91–100:

ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔ, ԼՂՀ Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ, Խազազ և Լուսավորիչ սարերի միջև ընկած գոգահովտում: Հնում մտել է Մեծ Հայքի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառի մեջ: Ա. վ-ի եկեղեցին հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը* IV դ. սկզբին: Եկեղեցու արլ. կողմում է թաղված Աղվանքում քրիստոնեություն տարածելիս 338-ին նահատակված *Գրիգորիսը*: V դ. սկզբին *Մեսրոպ Մաշտոցը* Ա. վ-ում բացել է Արցախի առաջին դպրոցը: 489-ին Վաչագան Գ Բարեպաշտ թագավորը, գտնելով Գրիգորիսի արդեն մոռացված գերեզմանի տեղը, վրան մատուռ է կառուցել՝ միաժամանակ ավարտելով եկեղեցու կառուցումը: V դարից Ա. վ. դարձել է երկրամասի խոշոր կրոն. կենտրոն և եպիսկոպոսանիստ: 821-ին վանքն ասպատակել են արաբները: Ստեփանոս արք. Օրբելյանը հավաստում է, որ 1293-ին թաթար Բայտու (Բաթու) խանը

կողոպտել է Ա. վ. և ավարի առել ս. Գրիգորիսի գավազանն ու 36 ակներով ընդելուզված ոսկեձույլ մի խաչ: 1387-ին Ա. վ. ավերվել է Լենկ-թեմուրի արշավանքից: Բայց ամենածանր պայմաններում անգամ վանքն իր անընդմեջ գործող դպրոցով շարունակել է մնալ որպես կրոն. և մշակութ. կենտրոն: XV–XVI դդ. այստեղ գրվել են բազմաթիվ ձեռագրեր: XVII դ. 3-րդ քառորդին Գանձասարի Պետրոս կաթողիկոսը նորոգել է Վարանդայի եպիսկոպոս. կենտրոն Ա. վ. և նրա միաբանության համար ամառանոց ծառայող Հերհեր գյուղում 1667–76-ին կառուցել Գրիգորիսի անվամբ նոր եկեղեցի: XIX դ. 2-րդ քառորդին Արլ. Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո Ա. վ-ի համալիրը, որն ուներ XVII դ. կառուցված բավական ուժեղ պաշտպան. համակարգ, օգտագործվել է որպես ամրոց, իսկ 1832–47-ին եղել ռուս-պարսկ. սահմանի մաքսատունը: 1848-ին Ա. վ. ցար. իշխանությունից հետ է վերցրել Գանձասարի մետրոպոլիտ Բաղդասարը: Խարխլված եկեղեցու տեղում 1858-ին շուշեցիների նյութ. օժանդակությամբ կառուցվել է նորը, իսկ այնտեղ դրված Գրիգորիսի տապանաքարը 1898-ին պատրաստել է շուշեցի ճարտ. Միքայել Տեր-Իսրայելյանցը: XIX դ. վերջին վանքն ուներ կալվածքներ՝ վարելահողեր, այգի, ջրաղաց: Լքվելով և ամայանալով XX դ., Ա. վ. 1992-ին վերաբացվել է որպես *Արցախի թեմի* գործող վանք:

Հարթ տեղանքում կառուցված վանքն ունի կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ (59x85 *մ*)՝ չորս անկյուններում շրջանաձև բուրգերով ուժեղացված, հրակնատներով բարձր պարիսպներով, որոնց ներսից ողջ պարագծով կից են բնակելի և օժանդակ շինությունները: Բնակելի խցերի շարքով անջատվող երկու ներքին բակերից արլ-ը տնտ. նշանակության է (նրա շուրջն են խմբավորված վանքի գոմը, ախոռը, մթերանոցները): Արմ.՝ ավելի ընդարձակ բակի կենտրոնում բարձրանում է Ս. Գրիգորիս երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկը: Եկեղեցու բեմի տակ պահպանվել է ս. Գրիգորիսի մատուռ-դամբարանը՝ արլ-ից արմ. ձգվող ուղղանկյուն (1,90x3,75 *մ*), պայտաձև կտրվածքով թաղով միանավ դահլիճը, որն արլ-ում ունի խորշ և երկայնական պատերում՝ մեկական մուտք: Նախամուտքերի արլ. պատերին քանդակված են ոճավորված արմավենիներ: Գրիգորիսի դամբարանն ունի նույն հորինվածքը, ինչպիսին ունեն Էջմիածնում Գայանեի և Օշականում Մեսրոպ Մաշտոցի V դ. դամբարանները, և կարևոր է Հայաստանում հուշակոթողային ճարտ-յան այդ կառուցվածքների ստեղծման և զարգացման պատմության ուսումնասիրման համար:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.5, 2-րդ պատկերը:

Գրկ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Բարխուդարյանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 2, Տփխիս, 1858: Լալայան Ե., Վարանդա, ԱՀ, գիրք 2, Թ., 1897: Հասրաթյան Մ., Ամարասի ճարտարապետական համալիրը, ԼՀԳ, 1975, № 10:

Մուրադ Հասրաթյան

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1927-ին, Ամենայն հայոց կաթողիկոս *Գևորգ Ե Սուրենյանցի* հայրապետ. կոնդակով: Առաջնորդանիստը՝ Նյու Յորքի Ս. Վարդան եկեղեցի: Մինչ այդ ԱՄՆ-ի հայ համայնքը միավորված էր մեկ թեմի մեջ՝ ստեղծված 1898-ին, Ամենայն հայոց կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցու* կոնդակով: Կենտրոնն էր Ուստր քաղաքը (Մասսաչուսետս նահանգ), 1923-ից՝ Բոստոնը, իսկ 1927-ից՝ Նյու Յորքը: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով (1927) ԱՄՆ-ի արմ. նահանգներն ընդգրկվել են նոր՝ Արմ. թեմի մեջ, իսկ արլ., հվ., հվարմ. և կենտր. նահանգները մնացել Արլ. թեմի իրավասության ներքո: Կենտրոնը մնացել է Նյու Յորքը: Այժմ (2001) ԱՄՆ Ա. թ. ընդգրկում է ԱՄՆ-ի 21 նահանգների 64 եկեղեց. համայնքներ: Թեմի տարածքում է գտնվում ԱՄՆ-ի առաջին հայկ. եկեղեցին՝ Ս. Փրկիչը, որը կառուցվել է 1891-ին, Ուստրում:

1902-ին Մկրտիչ Ա Վանեցին հաստատել է «ի գործադրություն հայ ժողովրդեան Ամերիկայի» սահմանադրությունը, որն այժմ հայտնի է որպես Կանոնադրություն Ամերիկայի (Արլ. թեմ) Հայաստանյայց եկեղեցու:

1898-ից ցայսօր թեմն ունեցել է 11 առաջնորդ: Առաջինը Հովսեփ արք. Սարաճյանն էր, 1939–44-ին՝ Գարեգին արք. Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), 1966–90-ին՝ Թորգոմ արք. Մանուկյանը (այժմ՝ Երուսաղեմի Հայոց պատրիարք):

ԱՄԵՐԻԿԱՅԻ

Թեմի առաջնորդանիստ Մայր տաճարը՝ Ս. Վարդանը, 1968-ին օծել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը: Թեմին են պատկանում շուրջ 42 եկեղեցիներ՝ Յունյըն Սիթիում՝ Ս. Խաչ (1907), Ուոթըրվլիթում՝ Ս. Պետրոս (1916), Ջելթենհեմում՝ Ս. Երրորդություն (1917), Սաուլթ Միլուոքիում՝ Ս. Հարություն (1924), Նյու Բրիթընում՝ Ս. Հարություն (1925), Ջիկագոյում՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ (1926), Սաուլթֆիլդում՝ Ս. Հովհաննես (1931), Վաշինգտոնում՝ Ս. Մարիամ (1963) ևն:

Թեմի հովանու ներքո հիմնվել են մի շարք կրթ. հաստատություններ: Նյու Յորքում 1961-ից գործում է Տիրան արք. Ներսոյանի նախաձեռնությամբ ստեղծված Ս. Ներսես ընծայարանը (ճեմարանը), որը պատրաստում է հոգևոր սպասավորներ (դաստիարակ, ծխատեր քահանա ևն): Ընծայարանն ունի ԱՄՆ-ի Արլ., Արմ. և Կանադայի թեմերի կողմից ընտրված խնամակալ մարմին, որի նախագահն է Արլ. թեմի առաջնորդը:

Կրոն. դաստիարակության բաժանմունքը և Հայ դպրոցների կրթական կենտրոնը ստեղծում են դասագրքեր և պատրաստում ուսուցիչներ թեմի դպրոցների համար: Կրտսերների և պատանիների համար կրոն. դաստիարակության բաժանմունքն ունի ամառային ճամբար (Ս. Վարդան ճամբար):

Գրիգոր և Կլարա Զոհրապ տեղեկատվական կենտրոնն ունի արխիվային նյութեր, մամուլի հավաքածուներ, գրքեր, քարտեզներ ևն: Կազմակերպում է դասախոսություններ և գիտաժողովներ՝ նվիրված հայոց պատմության և մշակույթի խնդիրներին:

Միջեկեղեցական հարաբերության բաժանմունքի միջոցով սերտ կապեր են պահպանվում Առաջնորդարանի և ԱՄՆ-ի կրոն. այլ հարանվանությունների միջև:

Հայ եկեղեցու երիտասարդական կազմակերպությունը մասնաճյուղեր ունի ծխերում, կազմակերպում է տարեկան մարզ. մրցախաղեր և համագումարներ:

Տիկնանց միության կենտրոնական խորհուրդը ևս մասնաճյուղեր ունի ծխերում, աշխատանք է կատարում հայ հավատքի պահպանման համար:

ԱՄՆ Ա. Թ-ի Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) 1988-ին Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո, գործակցելով բարեգործ., հայրենակց. և այլ կազմակերպությունների հետ, զգալի օգնություն է ցուցաբերել աղետյալ բնակչությանը: Միջոցներ է տրամադրել Ստեփանավան քաղաքի վերականգնման համար, բազմաթիվ ծրագրեր իրականացրել մշակույթի, կրթության, առողջապահության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում, մարդասիր. օգնություն կազմակերպել նաև Արցախի բնակչությանը: Հայաստանում և Արցախում գործում են ՀՕՖ-ի մասնաճյուղերը:

Թեմը հրատարակում է «Հայաստանեայց եկեղեցի» կրոնաբարոյախոս. և պատմագեղ. պաշտոնաթերթը (1939–76-ին՝ ամսաթերթ, 1976-ից՝ եռամսյա): Նյութերի մի մասը տպագրվում է անգլ.:

ԱՄՆ Ա. Թ-ի առաջնորդն է Խաժակ. արք. Պարսամյանը (1990-ից):

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.5, 3-րդ պատկերը:

Գրկ. Ավագյան Գ., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Ե., 2000: The Torch was Passed. The Centennial History of the Armenian Church of America, N. Y., 1998.

Արտեն ավ. քհն. Աշճյան (ԱՄՆ)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1927-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս *Գևորգ Ե Սուրենյանցի* հայրապետ. կոնդակով: Առաջնորդանիստը՝ Լոս Անջելեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Մինչ այդ ԱՄՆ-ի հայ համայնքը (ձևավորվել է XIX դ. վերջին) միավորված էր մեկ թեմի մեջ՝ ստեղծված 1898-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցու* կոնդակով: Կենտրոնն էր Ուստր քաղաքը (Մասսաչուսեթս նահանգ), 1923-ից՝ Բոստոնը, իսկ 1927-ից՝ Նյու Յորքը:

ԱՄՆ Ա. Թ-ի գործունեությունը տարածվում է ԱՄՆ-ի արմ. նահանգների վրա՝ իր մեջ ընդգրկելով 25 ծուխ: Առաջնորդարանը սկզբում Ֆրեզնոյում էր, 1957-ից՝ Լոս Անջելեսում:

Թեմի առաջին առաջնորդն էր Գարեգին եպս. Խաչատուրյանը (հետագայում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք): Տարբեր տարիներ ԱՄՆ Ա. Թ. գլխավորել են Շնորհք եպս. Գալուստյանը (1953–56, հետագայում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք), Թորգոմ եպս. Մանուկյանը (1962–66, այժմ՝ Երուսաղեմի հայոց պատրիարք) և ուրիշներ:

Թեմի տարածքում գործող հին հայկ. եկեղեցիներից են Ս. Պողոսը (Ֆրեզնո, հիմն. 1900), Ս. Գրիգոր Լուսավորիչը (Ֆաուլեր՝ 1910-ին), Ս. Աստվածածինը (Կոստա-Մեսա՝ 1911-ին), Ս. Հովհաննեսը (Սան Ֆրանցիսկո, 1924-ին), Ս. Վարդանը (Օկլենդ՝ 1926-ին) և 20 այլ եկեղեցիներ տարբեր քաղաքներում:

ԱՄՆ Ա. Թ-ի առաջնորդարանին կից գործում են Հայաստանյայց եկեղեցու երիտասարդական կազմակերպության, Տիկնանց միության, կիրակնօրյա վարժարանների կենտր. խորհուրդները՝ իրենց մասնաճյուղերով, և այլ կազմակերպություններ: 1987-ին թեմը Ֆրեզնոյի շրջանում (Կալիֆոռնիա) գնել է մի մեծ ճամբար, որն ամռանը օգտագործվում է թեմի զանազան ծխերից ավելի քան 500 աշակերտների հայեցի դաստիարակության, իսկ ձմռանը՝ չափահասների կրոն. և կրթ. դաստիարակության համար: Ճամբարին օգնություն են ցույց տալիս ծխական և համայնքային տարբեր կազմակերպություններ: Առաջնորդարանին կից գործում է հանձնախումբ, որը մշակում է ճամբարի գործունեության ծրագրերը:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում առաջնորդարանը թեմում ծառայելու է հրավիրել մի շարք հոգևոր հովիվների, հատկապես՝ Երուսաղեմից և Հայաստանից: 1999-ին թեմի հոգևորականների ընդհանուր թիվը շուրջ 30 էր: Նրանց մի մասը հոգևոր կրթություն է ստացել Նյու Յորքում Տիրան արք. Ներսոյանի հիմնած Ս. Ներսես ընծայարանում, որը շարունակում է նոր սպասավորներ պատրաստել եկեղեցու համար: ԱՄՆ Ա. Թ. իր գործուն բաժինն ունի Ս. Ներսես ընծայարանի հոգևոր առաքելության մեջ:

Լոս Անջելեսում կան 15 ամենօրյա հայկ. վարժարաններ: Առաջնորդարանի հովանավորությամբ գործում են Ալֆրեդ և Մարգրիթ Հովսեփյան ամենօրյա հայկ. վարժարանը (Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից), ՀԲԸՄ Մարի Մանուկյան նախակրթ. և ՀԲԸՄ Սարգիս և Սեդա Դեմիրճյան երկրորդ. վարժարանները (Քանոգա Փարք), Թեքեյան մշակութ. միության Արշակ Տիգրանյան վարժարանը (Հոլիվուդ): Թեմը յուրաքանչյուր եկեղեցուն կից ունի կիրակնօրյա և շաբաթօրյա հայոց լեզվի վարժարաններ:

1979-ից լույս է տեսնում ԱՄՆ Ա. Թ-ի «Մայր եկեղեցի» պաշտոնաթերթը՝ հայերեն և անգլ. բաժիններով:

ԱՄՆ Ա. Թ. զգալի նյութ. օգնություն է ցույց տվել 1988-ի ավերիչ երկրաշարժից տուժած Հայաստանին և մարտնչող Արցախին: Ստեփանավան քաղաքում թեմի նյութ. օժանդակությամբ կառուցվել է 750 աշակերտի համար վարժարան՝ անհրաժեշտ հարմարություններով:

ԱՄՆ Ա. Թ-ի առաջնորդն է Վաչե արք. Հովսեփյանը (1971-ից):

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.5, 4-րդ պատկերը:

Գրկ. Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Ե., 2000: The Torch was Passed. The Centennial History of the Armenian Church of America, N. Y., 1998.

Աննա Ռ. Մովսեսյան (ԱՄՆ)

ԱՄՐԴՈԼՈՒ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում, Բաղեշ (Բիթլիս) քաղաքի հարավային ծայրամասում: Ըստ ավանդության՝ անվանումը ստացել է վանքը նորոգած եղբայրներ Ամիրի և Դոլուի անուններից: Ունեցել է երեք եկեղեցի՝ Ս. Աստվածածին, Ս. Հովհաննես, Ս. Ստեփանոս: Համալիրի մեջ են մտել նաև մի քանի օժանդակ շինություններ: Հիմնադրման ժամանակն անորոշ է: XIV դարից հիշվել են հայ եպիսկոպոսներ: XV դարից եղել է գրչության խոշոր կենտրոն: Նույն դարում Գրիգոր Տաթևացու աշակերտ Դանիել վարդապետը Ա. վ-ում հիմնել է հոգևոր դպրոց: Դասավանդել են կրոնագիտություն, աստվածաբանություն և տրամաբանություն: Կրթական գործը շարունակել են Հովհաննես Համշենցին, Գրիգոր Արճիշեցին, Ներսես Մատաղը, Ներսես Բաղիշեցին, Ներսես Ամկեցին, Հովհաննես Տարոնեցին: Բարսեղ Աղբակեցին վերծանել է վանքի մատենադարանի իմաստասիր. գրքերը, ընդարձակել դասատումը, բարեփոխել ուս. ծրագրերը, դասավանդվող առարկաներին ավելացրել իմաստասիրությունը, ճարտասանությունը, քերականությունը: Դպրոցը մեծ համբավ է ձեռք բերել *Ներսես Մոկացու* ժամանակ: Այստեղ սովորելու են եկել Հայաստանի տարբեր մասերից: Ա. վ. ծաղկում է ապրել հատկապես XVII դ. պատմիչ-գիտնական Վարդան վրդ. Բաղիշեցու 42 տարիների արդասավոր առաջնորդության ժամանակաշրջանում: Նրա օրոք սկսել են դասավանդել նաև հայ մատենագրություն, մանրանկարչություն, որմնանկարչություն, և վանքի դպրոցը վերածվել է համալսարանի:

ԱՅԼԱԿԵՐՊ. Վարդան Բաղիշեցու վախճանվելուց հետո (1704) Ա. վ-ի դպրոցը չի գործել: Վանքում բարձր մակարդակի է հասել գրչության արվեստը, ձեռք են բերվել հին ձեռագրեր, որոնք նորոգվել են: Այդտեղ են ընդօրինակվել Փավստոս Բուզանդի, Կորյունի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Ղևոնդ Երեցի, Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Թովմա Մեծոփեցու և այլոց երկերը: Մեծ հռչակ է վայելել Ա. վ-ի մեծարժեք մատենադարանը: Պահպանվել է *Վարդան Բաղիշեցու* կազմած վանքի գրացուցակը: Ա. վ-ի նշանավոր սաներից են Կ. Պոլսի պատրիարք *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին*, Երուսաղեմի պատրիարք *Գրիգոր Շղթայակիրը* և այլք: Ա. վ-ի եկեղեցում են ամփոփվել Բարսեղ վարդապետը, Վարդան վրդ. Բաղիշեցին և այլ նվիրյալներ: Ա. վ. ավերվել և ամայացել է 1915-ին. ձեռագրերի մի մասը և ունեցվածքը կողոպտել են թուրքերը:

Գրկ. Ակինյան Ն., Բաղեշի դպրոցը, Վնն., 1952:

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏՅԱՌՆ ՄԵՐՈ ՀԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, տես *Վարդավառ*:

ԱՅՎԱԶՈՎՍԿԻ (Այվազյան) Գաբրիել Կոստանդինի (Գևորգի) (10.5.1812, Թեոդոսիա – 8.4.1880, Թիֆլիս), եկեղեցական և հասարակական գործիչ, բանասեր-պատմաբան, մանկավարժ, թարգմանիչ: *Մխիթարյան միաբանության* անդամ (1830), վարդապետ (1834), եպիսկոպոս (1867), արքեպիսկոպոս (1871): Ծովանկարիչ Հ. Այվազովսկու եղբայրը: Նախն. կրթությունը ստացել է Թեոդոսիայի հայկ. ծխական դպրոցում, ապա՝ Ղարասուբազարի հայ կաթոլիկ. դպրատունը: 1826-ին ուղարկվել է Ս. Ղազար (Վենետիկ), ուսանել մխիթարյանների մոտ: 1830-ից վարել է միաբանության ընդհանուր քարտուղարի պաշտոնը: 1842–48-ին դասավանդել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում: 1843-ին հիմնադրել և մինչև 1848-ը խմբագրել է առաջին հայագիտական հանդեսը՝ «*Բազմավեպը*»: 1848–56-ին՝ Փարիզի Մուրադյան վարժարանի տնօրեն, հայոց լեզվի և պատմության ուսուցիչ: Գժտվելով մխիթարյանների հետ՝ 1856-ին նորից դարձել է դեպի Հայ առաքելական եկեղեցի, Փարիզում Ս. Թեոդորյան և Ա. Գալֆայան վարդապետների հետ հիմնադրել ու ղեկավարել Հայկազյան վարժարանը, 1856–58-ին խմբագրել և հրատարակել «*Մասյաց աղավնի*» հանդեսը: 1858-ին վերադարձել է Ռուսաստան, նշանակվել *Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի* առաջնորդ, թեմական կենտրոնը Քիշնևից տեղափոխել Թեոդոսիա՝ ռուսահայ համայնքների և արևմտահայերի հետ շփումներն առավել դյուրացնելու անհրաժեշտությամբ: 1858-ին ռուս. կառավարության բարոյական և նյութ. աջակցությամբ և մեծահարուստ Հ. Խալիբյանի միջոցներով Թեոդոսիայում հիմնադրել է Խալիբյան վարժարանը (որի տեսուչն էր 1858–65-ին), այստեղ էլ շարունակել է հրատարակել (մինչև 1865-ը) «Մասյաց աղավնին»: *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսի հրավերով Ա. կարգվել է *Գևորգյան ճեմարանի* տեսուչ (1874–76) և Վիրահայոց թեմի առաջնորդ (1876–80):

Գաբրիել արք. Այվազովսկի

Պատմաբանասիր. և թարգման. բնույթի աշխատություններից բացի հեղինակել է կրոնաբարոյական գործեր՝ «Պատմութիւն վարուց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (1854), «Միջակ վարդապետարան ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» (1858), «Դասագիրք քրիստոնէական վարդապետութեան ըստ ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց» (1875), «Նիկոլ Եպիսկոպոս եւ Պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն» (1877) ևն:

Ա-ու հոգևոր-եկեղեց. գործունեությունը բնորոշվել է հաս-ազգ. աշխարհիկ խնդիրների լայն ընդգրկմամբ: 1856-ից ի վեր Ա. պայքարել է կաթոլիկության դեմ, այն համարել վնասաբեր հայ ազգի և եկեղեցու համար: Ա-ու հաս., մանկավարժ. և գրական գործունեության նպատակն էր ժողովրդին ազգ. ոգով կրթելը, նրան ազգ. եկեղեցու շուրջը համախմբելով՝ հայ մշակույթի զարգացմանը սատարելը: Ըստ Ա-ու՝ հոգևորականության կարևորագույն պարտականությունը ժողովրդին լուսավորելն է, իսկ ազգապահպանության ամենահզոր լծակը ազգ. դավանանքն է, Հայ եկեղեցու ինքնուրույնությունը:

Ա-ու ազգ-եկեղեց. և մշակութ-կրթ. գործունեությունը, ինչպես նաև ռուս. կողմնորոշու-

մը առաջ են բերել հայ որոշ խմբավորումների ներկայացուցիչների բացասական վերաբերմունքը. առիթը դեռևս Լազարյանների՝ կաթողիկոսության համար Ա-ու թեկնածությունն առաջադրելու մտադրությունն էր: Վեճերը սաստկացել են Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի եկեղեց. գումարները ուս. նպատակներով օգտագործելու, Հ. Խալիբյանին պաշտպանելու և աշխարհիկ գործերով զբաղվելու պատճառով: Դրանք ի վերջո դադարել են թեմական աթոռից Ա-ու հեռանալով (1867) և Խալիբյան ուսումնարանի փակվելով (1871):

Երկ. Համառօտ պատմութիւն ռուսաց, Վնտ., 1836: Պատմութիւն օսմանեան պետութեան, հ. 1, 2, Վնտ., 1841: Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետիկոյ, Փարիզ, 1857: Խնդրարմունք հայկաբանութեան ի հնումն եւ ի նորումս, Թեոդոսիա, 1869: Հազար եւ մի առակաւոր բանք ազգայինք և օտարք, ԿՊ, 1874:

Գրկ. Նալբանդյան Մ., Երկու տող, ԵԼԺ, հ. 4, Ե., 1983: Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Ե., 1960: Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955: Մ ի ք այ ե լ յ ա ն Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1801–1917, Ե., 1970:

Վարդգես Միքայելյան

ԱՅՐԻՎԱՆՔ, տես *Գեղարդավանք*:

ԱՆԱՆԻԱ Ա ՄՈԿԱՑԻ [ծ. թ. անհտ, գ. Փաս (Մոկք նահանգում) – մոտ 968], Ամենայն Հայոց կաթողիկոս 946-ից: Հաջորդել է *Եղիշե Ա Ռշտունուն*: Նախն. կրթությունն ստացել է Աղթամարի և Վարագա վանքերում, ապա եղել *Վարագավանքի* առաջնորդ: Ա. Ա Մ-ու գահակալման սկզբնաշրջանում խիստ սրվել են Սյունյաց և Աղվանից եկեղեցիների հետ Հայոց կաթողիկոսի հարաբերությունները: Օգտվելով Հայոց կաթողիկոսանիստը Աղթամարում՝ Արծրունիների թագավորությունում գտնվելու հանգամանքից՝ Սյունյաց եպիսկոպոսները և Աղվանից կաթողիկոսը ձգտել են անջատվել Մայր աթոռից՝ սպառնալով Հայ եկեղեցու միասնությանը: Նրանց անջատող. նկրտումներին հակահարված տալու նպատակադրումով 949-ին Ա. Ա Մ. Աղթամարից ժամանել է Բագրատունիների թագավորության Կարս մայրաքաղաք՝ Աբաս թագավորի մոտ, և քայլեր ձեռնարկել Սյունյաց և Աղվանից եկեղեցիները Հայոց Մայր աթոռի հետ միաբանելու համար: Այդ նպատակով Ա. Ա Մ. կաթողիկոս. աթոռն Աղթամարի մեկուսացած կղզուց տեղափոխել է Ա-նիի մոտ՝ Արգինա գյուղաքաղաք (տես *Արգինայի կաթողիկոսարան*)՝ սկիզբ դնելով վերջինիս վանքի համալիրի շինարարությանը: Ա. Ա Մ. մեկնել է Սյունիք և Ճահուկ գավառի Արդախ գյուղում գումարած ժողովում պաշտոնանկ արել Սյունյաց եպիսկոպոսին ու Աղվանից կաթողիկոսին: Սակայն վերջիններս տեղացի իշխանների զորակցությամբ շուրջ ինը տարի շարունակել են ըմբոստանալ Ա. Ա Մ-ու դեմ՝ քամահրելով նրա հորդորները: 958-ին Ա. Ա Մ. վերատին ժամանել է Սյունիք և նրա եպիսկոպոս կարգել Ջիվանշիր իշխանի որդի Վահանին, ապա անցել է Աղվանք և ձեռնադրել Դավիթ կաթողիկոսին (958–965): Ա. Ա Մ-ու օրոք Հայաստանում լայնածավալ դավանաբան. շարժում է ծավալվել Բյուզ. կայսրության, քաղկեդոն. եկեղեցու դեմ: Այդ ընթացքում Հայ եկեղեցին և Բագրատունիների թագավորությունը գործել են համադաշն: Քաղկեդոն. կայսերականացված եկեղեցու դեմ անզիջում պայքարի դրսևորումներից մեկը 960-ական թթ. Ա. Ա Մ-ու հրապարակած օրենքն էր կրկնամկրտության մասին, որով սահմանվում էր վերստին մկրտել քաղկեդոն. ծեսով մկրտվածներին: Ա. Ա Մ-ու օրոք կառուցվել են Հոռոմոսի (Անիի մոտ), Սանահինի, Նարեկա և այլ վանքեր, նորոգվել բազմաթիվ եկեղեցիներ: Ա. Ա Մ. Անիում կայացած ժողովում Բագրատունյաց Հայաստանի բոլոր իշխանների խնդրանքով օծել է Աշոտ Գ Ողորմած թագավորին: 950-ական թթ. Ա. Ա Մ. Վասպուրականի Անձևացիք գավառի Խոսրով եպիսկոպոսին հորդորել է հրաժարվել աղանդամետ քայլերից, բայց մերժում ստանալով՝ 954-ին բանադրանքի է ենթարկել նրան և դատապարտել հատուկ թղթով: Ա. Ա Մ-ու պատվերով իր երբեմնի ուսումնակից *Անանիա Նարեկացին* գրել է «Գիր խոստովանութեան» և «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց» երկերը: Ա. Ա Մ-ու եկեղեցանպաստ, ազգաշահ գործունեությունը նպաստել է Հայ եկեղեցու հինավուրց ավանդների հարատևմանը, նրա դիրքերի ամրապնդմանը, երկրի ներքաղ. կացության կայունացմանը: Ա. Ա Մ-ու հեղինակած բազմաթիվ թղթերից պահպանվել են միայն չորսը («Արարատ», 1896–97), որտեղ տեղ են գտել ժամանակի ներեկեղեց. կյանքին, ինչպես նաև Հայաստանի, Աղվանքի ներքին հարաբերություններին առնչվող արժեքավոր վկայություններ: Ստեփանոս արք. Օրբելյանի հավաստմամբ՝ Ա. Ա Մ. կազմել է «Հաւատոց նամակ» վերտառությամբ թղթերի ժողովածու (չի պահպանվել):

ԱՆԱՆԻԱ

Կաթողիկոս. գահին Ա. Ա Մ-ուն հաջորդել է *Վահան Ա Սյունեցին*:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Տեր-Մկրտչյան Գ., Ա-նանիա Մոկացի, «Արարատ», 1897, № 2, էջ 91–96: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912:

Վրեժ Վարդանյան

ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ, Անանիա Սյունեցի, Անանիաս, Անանե (ծ. և մ. թթ. անհտ), V դարի առաջին հայ թարգմանիչ-ներից, մատենագիր: Աշակերտել է *Մեսրոպ Մաշտոցին*: *Սահակ Ա Պարթևը* նրան ձեռնադ-րել է Սյունյաց եպիսկոպոս (ենթադրաբար՝ 415-ին): Ըստ Ստեփանոս արք. Օրբելյանի՝ ա-թոռակալել է շուրջ 42 տարի՝ «պայծառացնե-լով Սյունյաց աթոռը»: Մեսրոպ Մաշտոցի կեն-սագիր և աշակերտ Կորյունը և պատմահայր Մովսես Խորենացին որոշ տեղեկություններ են հաղորդում Ա. Թ-ի մասին: Ա. Թ. ուղեկցել է Մեսրոպ Մաշտոցին՝ Գողթնի առաջին քարոզ-չության ընթացքում, գործակցել է նրա հետ՝ Սուրբ Գիրքը թարգմանելիս և աղվանական գիրն ստեղծելիս, աղվաներեն թարգմանել ինչ-ինչ կրոն-եկեղեց. գրքեր:

Ա. Թ. մասնակցել է *Շահապիվանի եկեղե-ցական ժողովին* (444), իսկ Արտաշատի ժողո-վին (449) եպիսկոպոս. գահնամակում զբա-ղեցրել է առաջին տեղը:

Ա. Թ-ի գրչի արգասիքն են «Երանելոյն Ա-նանիայի Հայոց վարդապետի՝ ի խորհուրդ Յովհաննու մարգարէի» և «Յաղագս Յովհան-նու Մկրտչի, Անանիայի վարդապետի ասա-ցեալ» խորագրով ճառերը՝ աստվածաբան. բո-վանդակությամբ, ինչպես նաև *Փիլոն Ալեք-սանդրացու*, Իրենեոսի գործերի հայերեն թարգմանությունները:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893, էջ 20, 208: Սարգիսյան Բ., Անանիա Թարգմանիչն և իւր գրական գործոց նմոյշներ, Վնտ., 1899: Ակինյան Ն., Շահապիվանի ժողովին կանոն-ները, Վնն., 1953, էջ 5: Ալեքսանյան Վ., Անա-նիա եպիսկոպոս Սյունեցի, «Էջմիածին», 1999, № 3:

Լևոն Սարգսյան

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ, Անանե Նարե-կացի (ծ. թ. անհտ – 980-ական թթ., ամփոփ-վել է Նարեկավանքի գավթում), մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա, մեկնիչ, Նարեկա-վանքի առաջնորդ և դպրոցի հիմնադիր: *Գրի-գոր Նարեկացու* ազգականը: Ամբաստանվել է *թոնդրակեցիներին* հարելու մեջ՝ իբրև *Խոսրով Անձևացու* և Հակոբ Սյունեցու կողմնակից և համակիր: Կաթողիկոս *Անանիա Ա Մոկացու* պահանջով, աղանդավոր լինելու մասին իր դեմ եղած մեղադրանքները հերքելու համար, գրել է «Գիր խոստովանութեան»-ը (հայտնաբերել և 1892-ին հրատարակել է Գ. *Տեր-Մկրտչյա-նը*): Նույն կաթողիկոսի պատվերով հեղինա-կել է «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեց-ւոց»-ը, որտեղ բացահայտել է թոնդրակեցիներ-ի սխալներն ու մոլորությունները, նզովել նրանց աղանդը: Ա. Ն-ու «Հակաճառությունը» չի պահպանվել: Սակայն Գրիգոր Նարեկացին Կճավա վանքին գրած «Անանիայի խոստովա-նութեան յաղագս սուտ կարծեացն, որ վասն նորա» թղթում ամփոփ տվել է Ա. Ն-ու գրված-քի բովանդակությունը և համառոտ թվել թոնդրակեցիների ուսմունքի 14 կետերը («Ա-րարատ», 1892, էջ 5–18): Ա. Ն-ու աշակերտ *Ուխտանեսը* հիշատակում է նաև «Հաւատար-մատ» գործը (973) ընդդեմ երկաբնակների, ո-րը հեղինակն անձամբ ներկայացրել է կաթողի-կոս *Խաչիկ Ա Արշարունուն*:

Ա. Ն-ու գրվածքները կարևոր աղբյուր են թոնդրակեցիների գաղափարախոսությունն ու-սումնասիրելու համար: Որպես մանկավարժ նա առաջնային է համարել ուսուցչի գիտելիքների հարստությունը, մեծ տեղ հատկացրել գրակա-նությանը և երգեցողությանը: Ստեփանոս Ա-սողիկի վկայությամբ՝ հռչակված էր իր «...բազ-մամարդ պաշտոնապայծառ երգեցողօք և գրա-կան դիտողօք...»: Եղել է Խոսրով Անձևացու որդիների՝ Սահակի, Հովհաննեսի և Գրիգորի (Նարեկացիներ) ուսուցիչը, որոնց կատարած ընդօրինակությունների շնորհիվ մեզ են հա-սել Ա. Ն-ու և Գրիգոր Նարեկացու ստեղծա-գործությունները: Գրիգոր Նարեկացին և Ուխ-տանեսը Ա. Ն-ուն համարել են «հոգեզարդ փի-լիսոփա» և «հռչակավոր հռետոր»: Ուխտա-նեսը Ա. Ն-ու պատվերով է գրել «Պատմու-թիւն Հայոց» երկասիրությունը: Նրանք 980-ի հուլիսի 4-ին «յեզր գետոյն, որ կոչի Ախու-ռեան», զրուցել են «բերան ի բերան... յաղագս պատմութեանս», այսինքն՝ միասին են քննար-կել և ծրագրել աշխատության թե՛ կառուցված-քը և թե՛ բովանդակությունը: Երկի առաջին (Ա) գլուխը ընծայական է Ա. Ն-ուն:

Գրկ. Ուխտանես, Պատմութիւն Հայոց, հ. 1, Վաղ-պատ, 1871: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Աբեղյան Մ., Հայոց հին գրակա-նության պատմություն, հ. 1, Ե., 1944: Թամրազ-յան Հ., Անանիա Նարեկացի, Ե., 1980:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, Շիրակունի, Շիրակավանցի [մոտ 605–610, դ. Շիրակավան կամ Անեանք (Շիրակի գավառ) – մոտ 686–690], գիտնական, մատենագիր, տոմարագետ, մանկավարժ, երաժշտագետ, ճշգրիտ գիտությունների հիմնադիրը Հայաստանում: Ծնվել է չինականի ընտանիքում: Նախն. կրթությունն ստացել է Շիրակավանի *Դպրեվանքի* դպրոցում, որտեղ դասավանդել են օտար լեզուներ, ճարտասանություն, գրչություն, մանրանկարչություն: Սովորելով «զդպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեայց՝ երազել է ուսումնասիրել «համրողական արվեստը», մտածելով, որ առանց թվի ոչինչ չի հիմնավորվում, և որ թիվն է «մայր ամենայն իմաստից»: Ուսումը լրացնելու նպատակով եղել է Բյուզանդիայի մի շարք քաղաքներում, հաստատվել Տրապիզոնում և ութ տարի ուսանել հույն գիտնական Տյուքիկոսի մեծահամբավ դպրոցում: Հմտանալով տիեզերագիտության, տոմարագիտության, աշխարհագրության, պատմության, փիլիսոփայության բնագավառներում՝ «համարողը» (այդպես են կոչել նրան), «մեծահանճար ուսուցչապետը» 661-ին վերադարձել է հայրենի Շիրակավան, բացել դպրոց, որի հռչակը շուտով տարածվել է ամբողջ երկրում: Մանկավարժ. գործունեությանը զուգընթաց զբաղվել է գիտ. աշխատանքով, գրել իր բազմարժեք երկերը:

Ա. Շ-ու աշխատություններից ամենաինքնատիպը թվաբանության դասագիրքն է: Այն բաղկացած է երկու մասից՝ թվաբան. աղյուսակներից և խնդրագրքից: Մաթեմատիկայի պատմության համար ուշագրավ են նաև խոր անցյալում ժողովրդի ստեղծած խրախճանականները (զվարճալի խնդիրներ), որոնք նա է առաջինը գրի առել և, նկատի ունենալով դրանց բարդությունը, զետեղել իր դասագրքի վերջում: Ա. Շ-ու այս աշխատությունն այն բացառիկ դասագրքերից է, որի թվաբանական գործողությունների աղյուսակներն ամենահնագույնն են:

Տիեզերագիտության բնագավառում Ա. Շ. քննել է Արևի, Լուսնի, երկնային համաստեղությունների, աստղերի հետ կապված շատ հարցեր և շարադրել իր ուրույն տեսակետները տիեզեր. կարևոր երևույթների մասին:

Ա. Շ. ոչ միայն *Հայոց Մեծ թվականի*, այլև «Արարչության» կոչվող թվականներից մեկի հիմնադիրն է: Տոմարի պատմության համար բացառիկ արժեք ունի «Պատճէն տումարի» աշխատությունը, որտեղ նա զուգահեռ է անցկացրել հայկ. տոմարի և հարևան ժողովուրդների տոմարական համակարգերի միջև, մեջբերել 14 ժողովուրդների (եբրայական, ասորական, հունական, հռոմեական, եգիպտական, վրացական, իրանական ևն) ամսանունները և նրանց տոմարական հաշվումները: Ա. Շ-ու շնորհիվ տեղեկություններ են պահպանվել նաև անհետացած որոշ ժողովուրդների (օր., աղվանների) տոմարի մասին: Տոմարական աշխատություններից ամենակարևորը «Քրոնիկոն» է: Այն պարունակում է 532 տարիների զուգացանկը [հայտնի է «ՇԼԲ (532) աղյուսակներ» անունով], որտեղ տվյալներ են բերված պարբերաշրջանի յուրաքանչյուր Ամանորի, յոթներյակի, վերադրի, քրիստ. կարևոր տոների և տոմարական այլ հաշվումների վերաբերյալ: Աշխատության մեջ մի շարք արժեքավոր տեղեկություններ կան նաև հին հայկ. նախաքրիստ. տոմարի մասին: Ա. Շ-ու զուգացանկը հիմք է ծառայել հետագա դարերում կազմված այլ զուգացանկերի: Տոմարական բովանդակություն ունեն նաև Լուսնի պարբերաշրջանի նրա կազմած աղյուսակները: Ա. Շ. «Տոմարի մեկնության» մեջ հանգամանորեն անդրադարձել է արարչության, հռոմեական, հրեական, ասոր. և այլ ժողովուրդների թվականներին և ծանոթացրել դրանք հաշվելու սկզբունքներին, կազմել մեր ժողովրդի պատմության կարևոր իրադարձությունների թվականները՝ քրիստոնեության մուտքը, դրերի գյուտը, *տիեզերական ժողովները* ևն: Հայոց կաթողիկոս *Անանաս Ա Ակռեցին* հանձնարարել է Ա. Շ-ուն կարգավորել Հայոց տոմարը՝ կազմել անշարժ տոմար, որը, սակայն, կաթողիկոսի վախճանվելուց հետո չի ընդունվել: Ա. Շ. տոմարագիտ. իր աշխատություններով հայ իրականության մեջ դրել է տոմարի՝ որպես գիտության հիմքը: Այդ աշխատությունները ուղենիշ են հանդիսացել տոմարական բարդ հաշվումների համար և դասավանդվել հայ դրչության դպրոցներում: Տոմարագիտ. բնույթի աշխատություններ են նաև Ծննդին և Զատկի տոներին նվիրված Հայտնության և Զատկի ճառերը, որտեղ նա ջանացել է հիմնավորել հիշյալ տոների ամսաթվերը: «Թիւք որչափութեանն» մատենագիտ. ցանկում թվարկել է Հին և Նոր կտակարանների գրքերը, յուրաքանչյուրի դիմաց նշել տների քանակը (Մատենադարան, ձեռ. № 2188):

ԱՆԱՆԻԱ

Ա. Շ. նախ կարևորել է եկեղեցու հայրերին, նրանց ուսուցումները, ապա և «բարի փիլիսոփաներին», քանի որ նրանք իրենց ընդունած աստվածության և կենցաղավարության սկզբունքներով հանգունակ են եղել քրիստոնյաներին: Աստծո և բնության հարաբերության հարցերում առաջնայինը համարել է Աստծուն: Նա է ստեղծել ամեն ինչ և նա է կառավարում տիեզերքը: Աշխարհի բոլոր գոյացությունների նախանյութը համարել է Աստծո ստեղծած չորս տարրերը (կրակ, օդ, հող, ջուր): Ըստ նրա, այդ տարրերից յուրաքանչյուրն ունի երկու հատկություն. մեկը հատուկ է տվյալ տարրին, մյուսը՝ իրեն և իրեն զուգակցող (համագոյ) նյութին (օր.՝ օդն ունի ջերմություն և խոնավություն, ջուրը՝ խոնավություն և ցրտություն): Աշխարհը, եզրակացրել է նա, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ այս չորս տարրերի խառնուրդից բաղկացած միացություն: Բացի այս չորս տարրերից նա ընդունել է և հինգերորդի գոյությունը, որը երկնքում է և կոչվում է եթեր: Ըստ նրա՝ տիեզերքում ամեն ինչ շարժվում է, փոփոխվում: Բնությանը վերագրելով ստեղծարար մեծ ուժ՝ շարժումն է համարել ստեղծագործ. ուժի ազդակ: Մարմնի շարժվելով ու փոփոխվելով բնության մեջ ոչինչ չի կորչում, այլ մի ձև կամ որակ փոխվում է մի այլ ձևի ու որակի: Հետևելով Հերակլիտյան փիլիսոփայությանը՝ ընդունել է հակադրությունների միասնության և բացասման բացասումի օրենքը: Ամեն մի ծնունդ իր մեջ պարունակում է ոչնչացման սաղմը, ամեն մի ոչնչացում իր հերթին նոր ծննդի սկիզբն է. այս հատկությունների հիման վրա է երկիրը շարունակում պահել իր հավերժական գոյությունը: Ա. Շ-ու համար բնությունը նույնպես այնքան ռեալ է և ստեղծագործող, որքան Աստված: Ընդունելով, որ երկրի վրա կյանքը (կենդանական աշխարհը) ստեղծել է Աստված, գտնում է, որ կենդանիներից մինչև մարդը, մարդկային ուղեղը ստեղծագործ. շարժման մեջ գտնվող ռեալ գոյություններ են: Զգացողության հարցում նա այն կարծիքն է պաշտպանել, որ նախնիների (նկատի ունի անտիկ գիտնականներին) մտածողությունը ավելի զարգացած է եղել, քան իր ժամանակակիցներինը: Ա. Շ. քննադատել է նախապաշարումները, անոտիապաշտությունը, կախարդությունը:

Ա. Շ. հայ իրականության մեջ և ողջ Մերձավոր Արևելքում առաջինն է ամբողջական գծերով ներկայացրել երաժշտ. հնչականության մասին ալեքսանդրյան գիտնականների առաջավոր ուսմունքը: Կազմել է ձայնագիտության բացառիկ արժեքավոր ալեքսանդրյան «տասնակարգեան աղիւսակի» հայկ. տարբերակը, որով մեծապես հարստացրել է հայ երաժշտագիտությունը՝ ձայների, ձայնամիջոցների և ձայնաշարերի կառուցվածքին վերաբերող նոր գաղափարներով: Հեղինակել է Հինանց ժամանակամիջոցում կատարվող Հարության Աճ-Դկ ութ ծավալուն հարցնակարգերի մեծ մասը, Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի *շարականները*: Նա հայտնի է եղել հայ շարականերգության ու ժամագրքի երգեցողությունների հետ կապված հին ու իր ժամանակի ավանդույթների խոր իմացությամբ, ստեղծագործաբար օգտվել դրանցից և նախանշել զարգացման նոր ուղիներ:

Երկ. Մնացորդք բանից, ՍՊԲ, 1877: Յաղագս հարցման և լուծման, ՍՊԲ, 1918: Տիեզերագիտութիւն և տոմար (աշխատասիր. Ա. Աբրահամյանի), Ե., 1940: Լուսնի պարբերաշրջանները (աշխատասիր. Ա. Աբրահամյանի), Ե., 1962: Մատենագրություն (թրգմ., առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի), Ե., 1979: *Космография, пер. с древнеарм., предисл. и коммент. К. С. Тер-Давтяна и С. С. Аревшатяна, Е., 1962.*

Գրկ. Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944: Թահմիզյան Ն., Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսության, ԲՄ, № 5, 1960: Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, Ե., 1964: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 731–774: Petri W., Ananiya Schirakazi-ein armenischer Kosmograph des 7 Jahrhunderts, “Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft”, B. 114, München, 1964.

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ (ծ. թ. անհտ – XI դ. 70-ական թթ.), մատենագիր, մեկնիչ, դավանաբան: Եղել է Հաղբատ-Սանահնի միաբանության անդամ, աշակերտել Դիոսկորոս Սանահնեցուն: Ա. Ս-ու երկերը կարևոր դեր են կատարել հայ աստվածաբան-դավանաբան. մտքի զարգացման և մեկնողական գրականության մեջ: «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» հակաճառական-դավանաբան. աշխատությունը հեղինակը շարադրել է *Պետրոս Ա Գետադարձ* կաթողիկոսի կարգադրությամբ և ավարտել *Խաչիկ Բ Անեցի* կաթողիկոսի օրոք: Դավան. ամենազանազան խնդիրներին նվիրված այս երկը բաղկացած է 14 ճառից, որոնց խորա-

գրերն արտացոլում են դրանց բովանդակությունը («Սակս անխտիր հաղորդելոյ», «Վասն Մեծի Հինգշաբթին», «Առ ապականացու աստղան է զմարմինն Տեառն», «Վասն պատկերապաշտից», «Վասն բաժանմանն Վրաց» ևն): Երկը աստվածաբանականից զատ ունի աղբյուրագիտ. նշանակություն: Արժեքավոր են հատկապես *Անանիա Նարեկացու* «Հաւատարմատ»-ի, ինչպես նաև եկեղեցու Հայրերի զանազան երկերի տարբեր հատվածները, որոնց ամբողջական բնագրերը մեզ չեն հասել: Պետրոս Ա Գետադարձի պատվերով 1055-ին Ա. Ս. շարադրել է Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունը («Մեկնութիւն չորքետասան թղթոցն Պօղոսի առաքելոյն»), որտեղ հեղինակն օգտվել է *Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու* և այլոց համաբնույթ աշխատություններից: Մեկնաբանական մյուս երկերը՝ «Մեկնութիւն Մատթէի» և «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու», հեղինակը գրել է Դիոսկորոս Սանահնեցու պատվերով: Ա. Ս-ու այս երկերը հետագայում իբրև դասագիրք կիրառվել են վանական դպրոցներում և վարդապետարաններում:

Ա. Ս. գրել է նաև ճառագրական և ներբողական գործեր («Յաղագս Յովհաննու Մկրտչի», «Ի խաչելութիւն Պետրոսի», «Ներբողեան ասացեալ ի սուրբ Կաթողիկէ եկեղեցի»): Հեղինակ է նաև տոմարական մի աշխատության, որի մի հատված պահպանվել է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դավանաբան. աշխատության մեջ:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Հաղբատ և Սանահին վանքերը (967–1300), «Արարատ», 1901, էջ 271–277, 338–344: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959: Քյոսեյան Հ., Աստվածաբանական բնագրեր, Ուսումնասիրություններ, 1, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000: Conybeare F. C., A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, L., 1913, p. 339.

Հակոբ Քյոսեյան

ԱՆԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Հիսուս Քրիստոսի մարմնի անապականության վերաբերյալ վարդապետություն: Ա-յան վարդապետությունն արդյունք էր եկեղեցու քրիստոսաբան. մտքի հետևողական զարգացման: Ներկայումս պահպանված է միայն Հայ եկեղեցու քրիստոսաբան. համակարգում: Կարևոր աղբյուրներ են «*Կնիք հավատո*» և «*Գիրք թղթոց*» ժողովածուները, *Հովհաննես Գ Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի, Անանիա Սանահնեցու, Հովհաննես Սարկավագի, Մխիթար Սասնեցու, Գրիգոր Տաթևացու* և այլոց աշխատությունները, որոնցից առանձնացնելի է Հովհաննես Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից» ժողովածուն:

Ա-յան խնդիրը ծագել է Անտիոքի պատրիարք Սևերիոս Անտիոքացու և Հալիկառնասի եպիսկոպոս Հուլիանոս Հալիկառնասցու՝ Տիրոջ մարմնի Ա-յան շուրջ նշանավոր հակաճառությունից, երբ 518-ին երկուսն էլ աքսորվել էին Ալեքսանդրիա: «Ապականություն» և «անապականություն» եզրերը սույն հակաճառության մեջ գործածվել են ոչ թե մարմնի քայքայման կամ ոչ քայքայման իմաստով, այլ՝ Քրիստոսի մարդկային կիրընդունակության (կրքեր կրելու հանձնառություն) կամովի կամ ակամա լինելու իմաստով, այսինքն՝ որքանով են Քրիստոսին բնորոշ մարդկային կրքերը, եթե խոստովանում ենք, որ Քրիստոսն ամեն ինչով նման է մեզ՝ բացի մեղքից: Քրիստոսի մարմնի կիրընդունակության մասին խոսելիս նկատի են առնվում բացառապես անմեղ կրքերը՝ տխրություն, երկյուղ, սով, ծարավ ևն, որոնք դիտարկվում են որպես մեղքի անկման հետևանքային վիճակներ:

Սևերիոս Անտիոքացին պնդում էր, որ Քրիստոսը բոլոր մարմն. կրքերը կրում էր հարկադրաբար (ակամա, ստիպված, անհրաժեշտորեն)՝ սովորական մարդկանց պես: Հակառակ դեպքում նրան թվում էր, թե Քրիստոսն իսկապես մարդացած չէր լինի: Նա ասում էր, որ Քրիստոսի մարմինն ապականացու է բոլոր մարդկանց մարմինների նման: Սևերիոս Անտիոքացու «ապականության» ուսմունքը կտրականապես մերժել է Հայ եկեղեցին: Սակայն Տիրոջ մարմնի Ա-յան վարդապետությունը Սևերիոս Անտիոքացու և Հուլիանոս Հալիկառնասցու հակաճառությամբ ծագած մի նորաստեղծ երևույթ չէր աստվածաբան. մտքի պատմության մեջ, այլ՝ եկեղեցու տիեզերական Հայրերի գրվածքներում բյուրեղացած դավան. ուսմունք: Հայ եկեղեցու Հայրերը և վարդապետները սոսկ շարունակել, զարգացրել են այն, ինչ ավանդված է եղել *Աթանաս Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու* (Աստվածաբան) և ուրիշների կողմից: Դրա լավագույն վկայություններից է «Կնիք հավատո» ժողովածուի ստեղծումը,

ԱՆԱՊԱԿԱՆ. որի զգալի մասը նվիրված է Տիրոջ մարմնի կիրընդունակության և Ա-յան խնդիրներին: VI–VIII դդ. «ապականության» վարդապետության հետևորդների՝ *սևերիոսյանների* դեմ ծավալվել է սուր պայքար, որը եզրափակվել է 726-ի *Մանազկերտի եկեղեցական ժողովով*:

Հայ եկեղեցու հայրերը որքան որ խորշել են Սևերիոս Անտիոքացու «ապականության» վարդապետությունից, նույնքան էլ զգուշացել են Հուլիանոս Հալիկառնասցու Ա-յան մեջ քողարկված *երևութականությունից*: Սակայն հայ հայրերը վիճել են ոչ այնքան Հուլիանոս Հալիկառնասցու, որքան նրա ծայրահեղ հետևորդների հետ: Համենայն դեպս, Հուլիանոս Հալիկառնասցու գրվածքներում չկա այն կոպիտ երևութականությունը, որի մասին հաճախ խոսում էին նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանում, որ Տիրոջ մարմնի Ա-յան իր ուսմունքով նա փրկության խորհուրդը վերածում է ինչ-որ «երևակայության և անրջական պատրանքի» (այստեղից էլ՝ «երևութականներ» անունը):

Տիրոջ մարմնի Ա-յան վարդապետությունն առանձնահատուկ զարգացում է ապրել և բյուրեղացել Հայ եկեղեցու դավան. համակարգում, որը զերծ է թե՛ սևերիոսյան, թե՛ հուլիանոսյան ծայրահեղություններից: Հայ եկեղեցու հայրերը Տիրոջ Մարդեղության որևէ դրվագի մոտեցել են միմիայն փրկաբանական տեսանկյունից: Քրիստոսի երկրավոր կյանքը փրկական տնտեսություն է և զերծ է պատահականություններից: Հետևաբար, Քրիստոսի մարդկային կյանքի ամեն մի պահ, սկսած սուրբ Հղությունից մինչև Հրաշափառ Հարություն, ունի բարձրագույն և փրկաբանական նշանակություն:

Ըստ հայ հայրերի՝ Քրիստոսին բնորոշ են, այսպես կոչված, անմեղ կրքերը, որոնք կոչվում են նաև անպարսավելի, անընդդատանելի, անանգոսնելի կրքեր: Դրանք, զերծ լինելով մեղքից, բնավորվել են մարդկային բնության մեջ մեղքի անկումից հետո, այսինքն՝ հատուկ են մահկանացու և չարչարական մարդկային բնությանը և ոչ թե ադամական նախաստեղծ բնությանը: Ուստի դրանք կոչվում են միաժամանակ և՛ բնավորական, և՛ տրտմական կրքեր: Քրիստոսն անցնում է մարդկային կրքերի միջով կամավորապես և ոչ ի հարկե, առանց բնության բռնադատվածության, հետևաբար այդ կրքերը կամավոր են: Աստված կատարելապես մարդացավ, այսինքն՝ վերցրեց մարդկային բնության ամբողջականությունը մեր փրկության համար, ուստի Տիրոջ մարդկային կրքերը փրկական են, ինչպես նաև՝ տնօրինական կամ տնտեսական:

Քրիստոսը փրկական տնօրինությամբ կրում է բոլոր մարդկային տկարությունները, ազատորեն անցնում մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով դրանց մեջ մեղքի թթիմորը և ազատագրելով մեզ մեղքի դատապարտվածությունից: Հետևաբար տնօրինական գործեր են ոչ միայն աստվածավայելուչ հրաշքները, այլև՝ մարդավայելուչ տկարությունները:

Քրիստոսի մարմինը չարչարելի է և մահկանացու, սակայն ոչ ապականացու (ապականությունն այստեղ դիտվում է որպես մեղքին զուգակցված մարմն. վիճակ, որը հակաբնական է, քայքայում է բնությունը): Բանն Աստված ոչ թե առավ Ադամի նախաստեղծ բնությունը, այլ մեր ապականացու բնությունը՝ ապականակիր մարմինը և մեղանչական հոգին ու միտքը, և, միավորելով իրեն, զատեց մեղքը հոգուց և ապականությունը՝ մարմնից: Տիրոջ մարմնի աճն ու զարգացումը վկայում են ոչ թե նրա ապականացու լինելը, այլ՝ ընդհակառակը, քանզի սրանք կատարելագործում են մարմնի զգայական համակարգը, իսկ ապականությունը՝ քայքայում: Տերը կրեց կամավոր և անանգոսնելի կրքերը և ոչ թե ակամաները և անգոսնելիները, որոնք հարկադիր են, ծառայական և մեղանչական: Սրանով չի թուլանում Տիրոջ Մարդեղության կատարելությունը և համագոյությունը մեզ հետ, քանզի բանական մարդը կամավորներով և անմեղությամբ է մարդ: Այն, ինչ ակամա է և մեղանչական, գործում է ոչ թե ըստ բնության, այլ՝ հակառակ բնության, և բնության մեջ օտար և ներմուծված բան է:

Գրկ. Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Գրիգոր Տաթեվացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Հովհաննես Օձնեցի, Մատենագրութիւնք, Վնտ., 1833: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Lebon J., Le Monophysisme sévèrien, Louvain, 1909; Draguet R., Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ, Louvain, 1924; Florovsky G.V., Byzantine Fathers of the V–VIII [centuries], 1933; Grillmeier A., Christ in Christian Tradition, v. 2, part 4, 1995.

Մեսրոպ քհն. Արամյան

ԱՆԱՊԱՏ, հասարակությունից և բնակավայրերից մեկուսացած քրիստոնյա ճգնավորների մենաստան: Առաջին Ա-ները ստեղծվել են III դ., Եգիպտոսում և տարածվել այլ երկրներում, վաղ միջնադարում՝ նաև Հայաստանում: *Ներսես Ա. Մեծ* կաթողիկոսը IV դ. Հայաստանի անապատականներին հավաքել է առանձին համալիրներում՝ օժտելով այդ Ա-ները հատուկ կանոնադրությամբ, որը նպաստել է երկրում անապատական տարերային շարժումը կազմակերպված, ազդօգուտ և եկեղեցաշեն հաստատությունների վերածելուն: Այս Ա-ների հիմքի վրա զարգացել են հայկ. վանքերը, որոնք միջնադարյան Հայաստանում ոչ միայն գորացրել են քրիստ. հավատքը, այլև դարձել հայ մշակույթի զարգացման ու պահպանման կենտրոններ: Անապատ. շարժումը Հայաստանում մեծ վերելք է ապրել XVII դ. 1-ին կեսին, երբ *Սյունյաց Մեծ անապատից* ելած գործիչները երկրի տարբեր նահանգներում ստեղծել են բազմաթիվ նոր Ա-ներ. Վասպուրականում՝ *Լիմ անապատը, Կտուց անապատը*, Արցախում՝ *Ջարեքա անապատը*, Սյունիքում՝ *Տանձափարախը* և *Տաթևի Մեծ անապատը*, Այրարատում՝ *Երևանի Ս. Անանիա առաքյալ անապատը* են: Ա-ի համալիրը շրջապատող պարսպի պարագծով կից կառուցում էին խցերը և տնտ. շինությունները, իսկ բակի մեջտեղում տեղադրվում էր Ա-ի միակ եկեղեցին: Հայաստանի Ա-ները երբեք չեն եղել զուտ ճգնավոր. (տես *Ճգնավորություն*) հաստատություններ, դրանք հայ մշակույթի զարգացման կենտրոններ էին, իսկ անապատականները դարձել են նաև բարոյական մաքրության տիպարներ ու ազդ-եկեղեց. առաջնորդներ (տես նաև *Անապատականություն*):

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, քրիստոնյա ուխտյալ միայնակյացների շարժում: Ժամանակի ընթացքում նշանակել է նաև կենսաձև: Անապատականները ճգնել են ամայի, անմարդ վայրերում՝ ապաշխարելու, մաքրագործվելու և Աստծո հետ Սուրբ Հոգով հաղորդակցության մեջ մտնելու նպատակով: Ձգտել են ներհայեցողաբար ընդդիմանալ հասարակության մեջ առկա մերժելի երևույթներին: Ա. սերտորեն առնչվում է *ճգնավորության* հետ: Իր բուն էությամբ անխզելիորեն կապված է Եղիա մարգարեի և *Հովհաննես Մկրտչի* անվան հետ: Քրիստ. եկեղեցին նրանց է նկատում իբրև իրենց կոչմանը լիովին համապատասխան, կատարյալ և օրինակելի անապատականներ:

Ա. նոր ոգով և բովանդակությամբ վերարծարծվել է II–III դդ.: Առաջնորդվելով Պողոս առաքյալի խոսքով (Կողոս. 3.1–5)՝ հավատացյալներից առավել ջերմեռանդները հրաժարվել են սեփականությունից, մեկուսացել հասարակությունից, քաշվել անմարդաբնակ վայրեր, որպեսզի կարողանան անարգել իրականացնել առաքյալի պատգամը՝ մեռնել այս աշխարհի համար և իրենց անձը ներամփոփել «Քրիստոսի հետ Աստծու մեջ»: Նրանցից առաջինը ս. Պողոս Թեբայիդացին (Ալեքսանդրացի) էր (235–343), որը 97 տարի ապրել է լիակատար մենության մեջ՝ հիմք դնելով միայնական ճգնակեցության: Հայ եկեղեցին ս. Պողոս Թեբայիդացու հիշատակը տոնում է դեկտ. սկզբին՝ «Սրբոց Հարցն Եգիպտացւոց» տոնին:

Ա-յան մյուս խոշորագույն դեմքը Հայ եկեղեցու կողմից «Նախասկիզբն միանձանց» որակված ս. Անտոն Անապատականն է (251–356), որը, ի տարբերություն ս. Պողոս Թեբայիդացու, բոլորովին կտրված չի եղել մարդկանցից, ունեցել է աշակերտներ և դրա շնորհիվ անհամեմատ մեծ հռչակ վայելել: Հայ եկեղեցին նրա հիշատակը տոնում է հունվարին: Նույնքան մեծ հռչակ է վայելել Ա-յան մյուս սյունը՝ ս. Պախոմիոսը (287–347), որը հիմք է դրել համայնական ճգնակեցության: Համաձայն «Հարանց վարքի», առավել նշանավոր են եղել Մակար, Տիմոթեոս, Պափնուտիոս, Ոնափրիոս, Պողոս Լուստրացի, Ապատուրա, Ամոն, Աբասիոս, Պելենիոս, Հովհան Գբնեցի, Աբբա Մարկոս, Պողոս Միայնակյաց, Մատրիանոս Կրոնավոր, Սիմեոն Սյունակյաց, Իլարիոն Կրոնավոր, Եփրեմ Խուրի Ասորի, Նեղոս Եգիպտացի, Մարկոս Սալոն (Հիմար), Հովհան Անապատական, Ալեքսիանոս Կամավոր աղքատ, Պարսամ, կանանցից՝ Մարիամ (Մարիանոս), Եփրոսինա, Մարիամ Եգիպտացի անապատականները:

Անապատական կանոնադրության բացակայության հետևանքով սկզբ. շրջանում Ա-յան կենցաղն ու հոգևոր կյանքն աչքի են ընկել դրսևորումների բազմազանությամբ: Ըստ ճգնության կերպերի, դրանք մեկտեղվել են հետևյալ խմբերի մեջ. խոտաճարակներ (բավարարվել են բանջարաճաշակությամբ՝ Մա-

րիամ Եգիպտացի), այունակյացներ (տարիներ շարունակ ապրել են այսն վրա՝ Սիմեոն Այունակյաց), գբնեցիներ (տարիներ շարունակ ապրել են գբի՝ փոսի մեջ՝ Հովհան Գբնեցի): III դ. վերջին անապատ. կենցաղավարության մեջ աստիճանաբար տիրական դարձած խմբական համակեցությունն անհրաժեշտություն է առաջացրել կանոններ մշակել վանական կյանքի համար, ինչը և իրականացրել է ս. Պախոմիոսը: Կանանց վանքերի հիմնադրումը ևս կապվում է ս. Պախոմիոսի անվան հետ: Եկեղեց. պատմագրության մեջ արձանագրվել է Ա-յան երեք տարատեսակ. առաջինի մեջ մտնում են միայնակյացները կամ ճգնավորները, որոնք, քաշվելով անմարդաբնակ վայրեր, ճգնել են լիակատար մենության մեջ (ս. Պողոս Թեբայիդացի): Երկրորդ խմբին են պատկանում «համայնականները» («կինոբիտներ»): Սրանք ապրել են խմբերով և հավասար վայելել աշխատանքի արդյունքը (ս. Պախոմիոս): Երրորդ խմբում են ավելի ուշ հանդես եկած ապստամբները («սարաբիտներ»), որոնք տարբերվել են «համայնականներից» նրանով, որ չեն վարել նստակյաց կյանք, եղել են թափառաշրջիկներ, չեն ենթարկվել ո՛չ պետ. օրենքներին և ո՛չ էլ եկեղեց. կանոններին: Ժամանակի և իրավիճակի թելադրանքով այս անապատականները հանդես են եկել ժողովրդաազատագր. պայքարով: Հայտնի է IV դ. կեսին Պարսից Շապուհ II արքայի դեմ նրանց ծավալած շարժումը:

Ա-յան դրսևորումներ Հայաստանում ի հայտ են եկել դեռևս I և II դդ., առանձին անհատների և խմբերի ճգնակեց. գործունեության շնորհիվ (տես *Ոսկյանք, Սուքիասյանք*): Հայ առաջին անապատականներից էր *Գրիգոր Ա Լուսավորիչը*, որը կյանքի վերջում տրվել է ճգնությունների՝ սուրբ օրինակ հանդիսանալով հետագա հայ անապատականների ու ճգնավորների համար: Անապատ. շարժումը IV դ. սկզբին Եգիպտոսից Պաղեստինի և Ասորիքի վրայով թափանցել է Միջագետք, այստեղից էլ՝ Հայաստան: Անապատ. կազմակերպությունների սկզբնավորումը Հայաստանում կապվում է Մար Ավգինի անվան հետ: Նրա նախաձեռնությամբ Մծբին քաղաքի մոտ կազմակերպված անապատ. համայնքն իր գործունմասնակցությունն է բերել նաև հայոց հոգևոր շինությանը (Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն», դպր. Ե., գլ. ԻԵ–ԻԸ): Անապատ. շարժման մեկ այլ ալիք Հայաստան է թափանցել IV դ. 2-րդ կեսին՝ Փոքր Հայքի վրայով: Այս շարժումը կապվում է «անապատական կյանքի սկիզբը հայերի, պափլագոնացիների և մերձպոնտյան ժողովուրդների մեջ» հիմնադրած «Սեբաստիայի հայկական եկեղեցու ղեկավար ս. Եվստաթեոսի» (Սոզոմենուս III, 14, 31) անվան հետ: Եթե Միջագետքից եկած անապատականների գործունեության կենտրոնը Կորդվաց աշխարհն ու Ռշտունիքն էին, ապա Փոքր Հայքից մուտք գործած անապատականներինը՝ Ծոփքը և Աղձնիքը: IV դ. 2-րդ կեսին Ա. ավելի է տարածվել: Անապատականներից շատերը մեծ հեղինակություն են վայելել ինչպես Հայոց արքունիքում, այնպես էլ ժողովրդի մեջ (ս. *Անտոն* և ս. *Կրոնիդես*): Ա-յան ազդեցությունն ու հեղինակությունը թուլացնելու նպատակով նորահաստատ եկեղեցին, Գանգրայի եկեղեցաժողովում (361–362) հանդես գալով հօգուտ եկեղեց. իշխանության, մասնավոր որոշումներով դատապարտել է անապատականների ղեկավար ս. Եվստաթեոսին, որը կոչ է արել ստրուկներին փախչել իրենց տերերից, կանանց՝ հեռանալ իրենց ընտանիքներից, հրաժարվել ունեցվածքից և միանալ անապատականներին: Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ հիշատակվում են անապատ. շարժման այնպիսի ղեկավարներ, որպիսիք են ս. *Հակոբ Մծբնացին*, Շաղիտան, Գինդը, Դանիել Ասորին և ուր.:

Անապատ. շարժման ղեկավարներին հավատարիմ աշակերտներն ու հետևորդները շարունակել են ուսուցիչների գործը՝ զբաղվելով քարոզչական գործունեությամբ, դարձի բերելով բազում հեթանոսների: Այս տեսակետից անապատ. շարժումն զգալիորեն նպաստել է եկեղեցու գաղափարական նկարագրի հզորացմանը: IV դ. 2-րդ կեսին անապատ. շարժումն այնպիսի ծավալներ է ընդունել, որ Հայ եկեղեցին միջոցներ է ձեռնարկել անապատականների գործունեությունը կանոնակարգելու համար: 356-ի Աշտիշատի ժողովի (տես *Աշտիշատի եկեղեցական ժողովներ*) որոշումներից մեկի համաձայն, *Ներսես Ա Մեծ* կաթողիկոսը կարգադրել է անապատականների համար կառուցել երեք կարգի բնակարան. առաջին՝ եղբայրանոցներ կամ վանքեր՝ միաբան կրոնավորների համար, երկրորդ՝ միայնարաններ, այսինքն այնպիսի վանքեր, որտեղ թեպետ շատերը բնակվեին, բայց առանձին ճգնեին, և երրորդ՝ բազում խրճիթներ միայնակյացների հա-

մար, և այս բոլորի համար կանոններ է սահմանել:

Աղբյուրների վկայությամբ, միջնադարյան Հայաստանում առավել մեծ հռչակ է վայելել Վաղարշապատի Սուրենա անապատը (V դ.): Ունեցել է բազում կրոնավորներ, որոնց վերակացու է կարգվել V դ. հայ պատմիչ Ղազար Փարպեցին: V դ. հայտնի է եղել նաև Վիշապաձորի անապատը (Կաղզվանից ոչ հեռու): Այստեղ Վարդանանց պատերազմից (451) հետո ճգնել են *Սահակ Ա Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներ *Թաթուլը* և *Վարոսը*՝ իրենց հետևորդներով: IX դարից անապատ. կյանքի կենտրոններ են դարձել Սևանը, Մաքենիսը և Թանահատը: Վերջին երկուսն այնպիսի բարձր մակարդակի են հասել, որ XI–XIII դդ. Կիլիկիայից եկել են այստեղ կրոնավոր. և աստվածապաշտ. կարգեր ուսանելու: Սևանի անապատը, որի հիմնադրումն ավանդությունը կապում է ս. Գրիգոր Ա Լուսավորչի անվան հետ, ծաղկել է Մաշտոց Եղիվարդեցու վանահայրության (863–897) օրոք (897–898-ին՝ Հայոց կաթողիկոս *Մաշտոց Ա Եղիվարդեցի*): Գոյատևել է մինչև XIX դ. վերջը: X դ. հայտնի են եղել *Տանձափարախ* մենաստանը (Այունիք), *Տաթևի Մեծ անապատը*, *Լիմ անապատը* (XIV–XVII դդ.) ևն: Տես նաև *Վանականություն*:

Գրկ. Վարք սրբոց հարանց եւ քաղաքաւարութիւնք նոցին..., հ. 1,2, Վնտ., 1855: Հակոբ Մծբնացի, Գիրք, որ կոչի Զգօն, ԿՊ, 1824: Եղիշե, Խրատ յաղագս միանձանց (Մատենագրութիւնք, Վնտ., 1859, էջ 159–165): Հուսիկ Եպիսկոպոս, Անապատականներ եւ վանականութիւն, Վաղ-պատ, 1906: Գյուտ Եպիսկոպոս, Արեւելեան անապատականը եւ «Նարեկը» (ուսումնասիրության փորձ), Երուսաղեմ, 1937: Խաչիկյան Լ., Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, Ե., 1951: Սուրբերու կեանքը (ժող.), Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Հակոբ Քյոսեյան

ԱՆԱՍՅԱՆ Հակոբ Սեդրակի [15.5.1904, ք. Էսկիշեհիր (Թուրքիա) – 28.1.1988, Լոս Անջելես], պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, մատենագետ, ձեռագրագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1962), Լա Վեռնի ամերիկահայկ. միջազգ. քոլեջի պատվավոր դ-ր (1984): Ավարտել է Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան վարժարանը (1925), Փարիզում հետևել Կ. Բասմաջյանի հայագիտ. դասընթացներին (1931–34): 1936-ին ներգաղթել է Հայաստան: 1936–47-ին՝ գիտաշխատող ԵՊՀ-ում, 1947–1976-ին՝ ԳԱ պատմության ինստ-ում, 1979–1988-ին՝ Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) Մերձավորարևելյան լեզուների ուս. կենտրոնում: Եղել է նույն համալսարանի Գրիգոր Նարեկացու անվ. հայագիտական ամբիոնի պատվավոր անդամ: Աշխատակցել է հայ պարբ. մամուլին («Երկունք», «Էջմիածին», «Պատմա-բանասիրական հանդես», «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Սիոն», «Շողակաթ» ևն): Տիրապետել է հին և նոր բազմաթիվ լեզուների:

Ա. հեղինակ է հարյուրից ավելի աշխատությունների, որոնք հիմնականում նվիրված են միջնադարյան Հայաստանի քաղ. կացությանը, կրոնի պատմությանը, մշակույթին, գրականությանը, լեզվին, մատենագրությանն ու մատենագիտությանը: Նա զգալի ավանդ ունի հայ ազգ-ազատագր. շարժումների պատմության ուսումնասիրման բնագավառում: «Նպաստ մը հայոց ազատագրական պատմության (ԺԷ դար). Մահտեսի Շահմուրատ և Հովհաննես Թուխունջի» (1934), «XVII դ. ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» (1961), «Ստեփանոս Սալմաստեցի» (1981) և այլ աղբյուրագիտ. ու պատմագիտ. մենագրություններում իր իսկ հայտնաբերած վավերագրերի միջոցով վեր է հանել հայ ազատագր. շարժումների չուսումնասիրված կամ պակաս ուսումնասիրված շատ դրվագներ, լուսաբանել հայ ժողովրդի ծանր վիճակը թուրք-պարսկ. տիրապետությունների ներքո, արժեքավոր նոր տվյալներ ի հայտ բերել ֆրանս. և հաբեշ. արքունիքների հետ հայ քաղ. շրջանակների հարաբերությունների վերաբերյալ: Աղբյուրագիտ., բնագրագիտ. կարևոր նշանակություն ունեն «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» (1957), «Հովհաննես Կամենացի. Պատմութիւն պատերազմին Խոթինու» (1964), «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» (1969), «Գրիգոր Շղթայակրի պատմական մեծ հիշատակարանը» (1980) և այլ աշխատություններ: Ա. կազմել և հրատարակել է վերոհիշյալ հեղինակների երկերի գիտաքննական բնագրերը՝ մանրամասն ծանոթագրություններով: «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» ուսումնասիրությունը կարևոր ներդրում է հայ մատենագրության պատմության մեջ: Նա հայտնաբերել է *Վարդան Այգեկցու* «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» (Մատե-

նադարան, ձեռ. № 2080) դավան. բնույթի ժողովածուն, «Վասն չատահաջ քննողացն հանդիմանութիւն» նամակը և «Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց» գրվածքը: Ա. նորովի է ներկայացրել առակագիր Վարդան Այգեկցուն՝ որպես իր ժամանակի մեծագույն աստվածաբաններից մեկի: «Արմատ հաւատոն» նվիրված է Հայ եկեղեցու դավանության և նրա կարգերի պաշտպանությանը՝ «ընդդեմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց»: «Արմատ հաւատոն» ընդգրկում է և՛ դավան., և՛ ծիսական խնդիրներ: Հայագիտության նվաճումներից է Ա-ի «Հայկական մատենագիտություն. Ե–ԺԸ դդ.» կոթողային աշխատությունը: Հրատարակվել են բազմահատոր այս աշխատության միայն առաջին երկու հատորները (1959, 1976): Գիրքն ունի աղբյուրագիտ., բնագրագիտ., ձեռագրագիտ., պատմագիտ., բանասիր. արժեք և հայ մատենագրության համապարփակ մի հանրագիտարան է: Այստեղ ներկայացվել է հայկ. մատենագրության շուրջ 1500-ամյա ձեռագիր և տպագիր ժառանգությունը, հանրագումարի են բերվել ու գնահատվել հայ մատենագրության անցած բազմամյա ուղու արդյունքները: Ա. գիտականորեն դասակարգել է հայ. բնագրերը, բացահայտել խմբագրությունների ժամանակային սահմանները, փոխադարձ աղերսն ու առնչությունները, նշել հիմն. ու օժանդակ գրականությունը, աշխատությունների մասին գրված գրախոսականները: Նա կազմել է նաև Փավստոս Բուզանդի (1953), Մխիթար Գոշի (1954), Եղիշեի (1957), Կիրակոս Գանձակեցու (1961), Կոստանդին Երզնկացու (1962), Արիստակես Լաստիվերցու (1963), Սայաթ-Նովայի (1963) երկերի մատենագիտությունները:

Մեծ է Ա-ի դերը Հայ եկեղեցու պատմության, դավանանքի, աստվածաբան. գրակ-յան ուսումնասիրման ասպարեզում: Արժեքավոր են հատկապես Աստվածաշնչի հայերեն թարգմանության և նրան աղերսվող «Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը» (1966, 1972), «Էջմիածնի տպարանի սուրբգրային հրատարակությունները» (1972), «Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը» (1972) հետազոտությունները: Ա. հանգել է այն եզրակացության, որ Աստվածաշնչի հայերեն հնագույն թարգմանությունը կատարվել է մինչև 431-ը, ասորական Պեշիտտայից: Առանձին ուսումնասիրման նյութ է դարձրել «Ներսես Շնորհալին և Արմատ հաւատոյ» ժողովածուն, բացահայտել այդ ժողովածուի աղբյուրները՝ հանձինս Իրենեոս Լուգդունացու, Բիտալիոս Անտիոքացու, Գրիգոր Սքանչելագործի, Հակոբ Սրճեցու, Զենոբ Եդեսացու, Դահեղա Եդեսացու, Կղեստինոս Հռոմայեցու և Բարսումա Անտիոքացու ստեղծագործությունների:

Երկ. Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը. «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ», «Էջմիածին», 1972, № 8–9: Հետազոտական ակնարկներ, հ. 1, Վնն., 1984: Մանր երկեր, Լոս Անջելես, 1987:

Գրկ. Հակոբ Սեդրակի Անասյան, Լոս Անջելես, 1984:

Պետրոս Հովհաննիսյան

ԱՆԱՍՏԱՍ Ա ԱԿՈՌԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Ակոռի (Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մասյացոտն գավառ) – 667, Ակոռի, ամփոփվել է իր կառուցած եկեղեցու բակում], Ամենայն հայոց կաթողիկոս 661-ից: Հաջորդել է *Ներսես Գ Տայեցուն*: Եղել է կաթողիկոսի սենեկապետը, վերջինիս կարգադրությամբ հսկել է Զվարթնոցի Ս. Գրիգոր կաթողիկեի շինարարությունը: 652–659-ին, երբ կաթողիկոսը մեկուսացել է, վարել է հայրապետ. ընթացիկ գործերը:

Կաթողիկոսության տարիներին իր ծննդավայր Ակոռի գյուղում կառուցել է եկեղեցի՝ կից հյուրանոցով և աղքատանոցով (1840-ի երկրաշարժից կործանվել է): *Անանիա Շիրակացու* միջոցով Հայոց շարժական տոմարն անշարժ է դարձրել, սակայն, մինչ եպիսկոպոս. ժողովը կվավերացներ, վախճանվել է:

Կաթողիկոս. գահին Ա. Ա Ա-ուն հաջորդել է *Իսրայել Ա Ոթմսեցին*:

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, կաթոլիկական ուսումնակրթական հաստատություն: Հիմնադրվել է 1843-ին, Կ. Պոլսում՝ Սրբուհի Հաջի-Անտոնյանի առաջնորդությամբ: Պաշտոնապես վավերացվել է 1847-ին՝ Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Անտոն Պետրոս Թ-ի (Անտոն արք. Հասունյան) կոնդակով: Ստեղծման օրից իր հիմն. նպատակն է հռչակել հայուհիների կրթությունն ու դաստիարակությունը քրիստ. և ազգ. արժեքներով: Մինչև 1914-ը միաբանությունը Թուրքիայի հայաբնակ վայրերում հիմնել է 30-ից ավելի օրիորդաց դպրոցներ, որբանոցներ, արհեստանոցներ, որոնք փակվել են Մեծ եղեռնի օրերին:

Հայ քույրերից շատերը զոհվել են Դեյր էզ Զորի ճանապարհին: Ողջ մնացածները շարունակել են իրենց առաքելությունը՝ պատսպարելով և խնամելով հարյուրավոր հայ որբերի՝ Կ. Պոլսում, Հալեպում, Բեյրութում, Հռոմում բացված որբանոցներում: Ա. հ. հ. ք. մ-յան Մայրավանքն ու Ընծայարանը 1922-ից փոխադրվել են Հռոմ: Միաբանությունը, իր շուրջ հարյուր միանձնուհիներով, գործում է սփյուռքի բոլոր մեծ համայնքներում, ունի դպրոցներ, մանկամսուրներ, վարժարաններ, երկսեռ որբանոցներ: 1965-ից գործում է ԱՄՆ-ում, 1992-ից՝ Հայաստանի և Վրաստանի հայ կաթոլիկներով բնակեցված շրջաններում: ՀՀ-ում գործում է Ա. հ. հ. ք. մ-յան մասնաճյուղը՝ «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» անունով: Պատասխանատուն է մեծավորուհի քույր Արուսյակ Սաճոնյանը: 1998-ի սեպտ. բացվել է Կուսաստանին կից Գյումրու «Տիրամայր Հայաստանի Պողոսյան կրթական համալիրը», որտեղ ներկայումս (2000) ուսանում են 52 ծնողազուրկ և կարիքավոր երեխաներ, սովորում արհեստներ, պարապում անգլ-ի, համակարգչային և երգի խմբերում: Շիրակի մարզի Արևիկ, Փանիկ, Լանջիկ գյուղերում, Տաշիրի (Լոռու մարզում) մի քանի դպրոցներում մայրապետները դասավանդում են կրոնի պատմություն, աշակերտուհիներին սովորեցնում կարուձև և ժանյակագործություն: Շուրջ 600 ծնողազուրկ և կարիքավոր երեխաների համար ամեն տարի Ծաղկաձորում կազմակերպվում է ամառային ճամբար:

Կուսաստանը, նյութ. աջակցություն ստանալով Պողոսյան եղբայրներից (Շվեյցարիա, Բելգիա), Ջինիչյան Հիշատակի հիմնադրամից, տեր և տիկին Բաղչյաններից (Ֆրանսիա), ԱՄՆ-ի CNEWP կազմակերպությունից, ինչպես նաև այլ անհատ բարերարներից ու հաստատություններից, բազմաթիվ բարեգործ. և կրթ. ծրագրեր է իրագործում Հայաստանի և Վրաստանի հայ կաթոլիկներով բնակեցված գյուղերում:

ԱՆԳԼԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1974-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցի: Թեմի անդրանիկ առաջնորդ է նշանակվել Ներսես արք. Պոզապալյանը (1974–82):

Բրիտանահայ համայնքը՝ որպես հոգևոր հովվություն, XIX դ. վերջից մինչև 1965-ը եղել է Եվրոպայի հայրապետ. պատվիրակության կազմում (տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն*): 1965–74-ին, մնալով հոգևոր հովվություն, եղել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցչություն Քենթբերիի և Համայն Անգլիո արքեպիսկոպոսության մոտ: Համայնքի առաջին հոգևոր հովիվն է եղել Կարապետ վրդ. Շահնազարյանցը (1862–1866), որը 1863-ին Մանչեստրում վարձված անգլ. մատուռում ս. Զատկի տոնին Պատարագ է մատուցել: Նրա ջանքերով Մանչեստրում լույս է տեսել Անգլիայում հայերեն առաջին պարբերականը՝ «Երկրագունդը» (1863–64): 1900–01-ին հրատարակվել է «Եկեղեցի Հայաստանյայց», 11 համարից հետո՝ «Հայոց եկեղեցի» կրոնասաստվածաբան. հանդեսը (խմբագիր՝ Թորոս քհն. Իսահակյան): Անգլիայում առաջին հայկ.՝ Ս. Երրորդություն եկեղեցին կառուցվել է Մանչեստրում, 1870-ին, հոգևոր հովիվ Խորեն վրդ. Կյուրոյանի ջանքերով: Եկեղեցին ունի առաջնորդարան, գրադարան, սրահներից մեկը տրամադրվել է Տիկնանց միությանը (հիմն. 1908) և Հայկական կեդրոնին (հիմն. 1988): Ս. Երրորդություն եկեղեցուն կից գործում է կիրակնօրյա վարժարան (1984-ից), որտեղ 130-ից ավելի աշակերտ ստանում է հայեցի դաստիարակություն: 1975-ից Մանչեստրի Ս. Երրորդություն եկեղեցին չունի մնայուն հովիվ: Եկեղեցու հոգևոր կարիքները հոգում է Լոնդոնից հրավիրված այցելու հովիվը:

Լոնդոնի առաջին հայկ. մատուռը (վարձու) Եսայի վրդ. Աստվածատրյանի նախաձեռնությամբ բացվել է 1885-ին և գործել մինչև 1901-ը: 1922-ին Գալուստ Կյուլպենկյանի բարերարությամբ կառուցվել է Ս. Սարգիս եկեղեցին (օծվել է 1923-ի հունվ., գտնվում է Լոնդոնի կենտր. թաղամասերից մեկում՝ Քենսինգթոնում): 1975-ից Լոնդոնի հայերի վարձակալած Ս. Պետրոս եկեղեցին Վաչե Մանուկյանի բարերարությամբ 2000-ին գնվել է և վերանվանվել Ս. Եղիշե եկեղեցի (օծվել է 2001-ի հունիսի 11-ին՝ ձեռամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի): Կից գործում է կիրակնօրյա դպրոց (1978-ից): Ս. Եղիշե եկեղեցու հովիվն է Ներսես քհն. Ներսիսյանը (2000-ից): 1967–78-ին գործել է Ս.

ԱՆԴԱՍՏԱՆ Սահակ-Մեսրոպ կիրակնօրյա ազգ. վարժարանը:

1986-ից բրիտանահայ գաղութի ներկայացուցչական մարմինը համայնքային եկեղեց. խորհուրդն է: Բաղկացած է 23 անդամից, ունի իր կանոնադրությունը՝ վավերացված 1989-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակով: Խորհուրդը վերահսկում և համադրում է գաղութի եկեղեց., կրթ. և այլ աշխատանքներ, համագործակցում բոլոր միությունների և կազմակերպությունների հետ: Խորհրդի ժողովները նախագահում է թեմի առաջնորդը, որը միաժամանակ Մայր աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչն է Քենթրբերիի և Համայն Անգլիո արքեպիսկոպոսության մոտ:

Ա. թ-ի առաջնորդն է Նաթան եպս. Հովհաննիսյանը (2000-ից):

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.5, 5-րդ պատկերը:

ԱՆԴԱՍՏԱՆ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ԱՆԻ, Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաքը 961–1045-ին, Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստը 992–1046-ին (տես *Անիի կաթողիկոսարան*): Հեթանոսության շրջանում հայերի կրոն. կենտրոններից էր: Ներկայումս անբնակ է, ավերված: Ավերակները գտնվում են Թուրքիայի Կարս նահանգում, հայ-թուրք. սահմանի մոտ, Գյումրի քաղաքից 30 *կմ* հվ-արմ., Ախուրյան գետի աջ ափին: Ա. իր անունն ստացել է Բարձր Հայքի Դարանաղի գավառի Անի բերդաքաղաքից: Քաղաքն ունեցել է մինչև 100 հզ. բնակիչ: Ա. առաջին անգամ հիշատակվում է V դարից (Եղիշե, Ղազար Փարպեցի): Պատկանել է Շիրակի և Արշարունիքի տեր Կամսարական իշխաններին: IX դ. սկզբին Հայաստանի կառավարիչ Աշոտ Բագրատունի Մսակերը Կամսարականներից գնել է Արշարունիքի և Շիրակի գավառները՝ Ա. ամրոցի հետ, և միացրել իր հողերին:

Հայոց միջնադարում Ա. նշանակալից դեր է կատարել որպես կաթողիկոս. աթոռանիստ, եպիսկոպոսանիստ, հոգևոր-եկեղեց. կյանքի կենտրոն, ազգ-եկեղեց. ժողովների գումարման վայր (969, 971, 1038, 1207): Հայ իրականության մեջ Ա. եղել է ամենից մեծաթիվ եկեղեցիներ ու առավել բազմամարդ հոգևորականություն ունեցող քաղաք: Հայոց պետության մայրաքաղաք և հատկապես կաթողիկոս. աթոռանիստ հռչակվելուց հետո դարձել է ոչ միայն քաղ., այլև՝ հոգևոր մայրաքաղաք, որի այս նշանակությունն ընդգծելու համար *Սարգիս Ա Սևանցի* կաթողիկոսը X դ. վերջին *Վաղարշապատից* այստեղ է փոխադրել Հռիփսիմյան կույսերի նշխարների մի մասը՝ հատուկ այդ նպատակով եկեղեցի կառուցելով Ա-ում: Բացի այդ, ավանդաբար, Ա-ի հնագույն քաղաքամասի՝ Ներքին բերդի եկեղեցու հիմնադիր է համարվել *Գրիգոր Ա Լուսավորիչը*: Հավանաբար այս և այլ հանգամանքներ նկատի ուներ Ներսես Շնորհալին, երբ Ա. անվան եռատառ լինելն առնչում էր Ս. Երրորդության խորհրդի հետ:

Ա-ում են աթոռակալել կաթողիկոսներ Սարգիս Ա Սևանցին (992–1019), *Պետրոս Ա Գետադարձը*, որից հետո բյուզանդացիները բռնությամբ քաղաքից հեռացրել են կաթողիկոս. աթոռը: Կաթողիկոս. աթոռի տեղափոխումից հետո եկեղեց. կյանքում մեծ դեր է կատարել Ա-ի եպիսկոպոսությունը: Ա-ի և Շիրակի եպիսկոպոսությունը, որպես Հայ եկեղեցու առանձին հոգևոր և վարչատարածքային միավոր, կազմավորվել է 1072-ին՝ Բարսեղ Անեցու ձեռնադրության ժամանակ: 1072-ից մինչև Սարգսի աթոռակալությունը (վերջին անգամ հիշվում է 1220-ին) Ա-ի եպիսկոպոս. աթոռը գտնվել է Պահլավունիների հետ խնամիացած Ապիրատյան զորեղ տոհմի ներկայացուցիչների ձեռքին, ապա անցել Պահլավունիներին (Գրիգոր, Հովհաննես): XII դ. Ա-ի եպիսկոպոսները հորջորջվել են «արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անւոյ», «եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ», համարվել Հս. Հայաստանի ողջ հայ հոգևորականության առաջնորդ, գլխ. դեր կատարել Հռոմկլայում հաստատված կաթողիկոս. աթոռի հետ հարաբերություններում: XIII դ. քաղաքն ունեցել է երկու եպիսկոպոս, որոնցից մեկը կոչվել է առաջնորդ, մյուսը՝ երեցապետ եպիսկոպոս:

Մեծաթիվ է եղել Ա-ի քահանայական դասը՝ երեցանին, որը XII դ., Շեդդեդյան ամիրաների տիրապետության շրջանում, կարևոր դեր է կատարել՝ գլխավորելով քաղաքի հայ բնակչության ազատագր. պայքարը: Դա չեշտել են նաև արաբ պատմիչները: Ա-ի քահանայական դասը XIII դ. արձանագրություններում հիշվում է «երեցանի» («իրիցանի») ընդհանուր անվան տակ՝ որպես որոշակի արտոնություններ ու շահեր ունեցող սոց. խավ: Մոնղոլ. տիրապետու-

թյան շրջանում նա թեև ամբողջովին չի կարողացել խուսափել հարկահավաքների կամայականություններից, սակայն շարունակ պայքարել է իր իրավունքների պաշտպանության համար և ժամանակ առ ժամանակ հաջողության հասել: Ա-ի եկեղեց. կյանքի հետաքրքիր կողմերից էր քահանաների պայմանական բաժանումը ընիկների ու եկվորների: «Եկվորների» հոսքը հավանաբար սկսվել է XIII դ. սկզբին, երբ Զաքարյանների տիրապետության տակ անցած քաղաքը բուռն ծաղկում է ապրել, և կտրուկ մեծացել է նրա բնակչության թիվը:

XI դ. կեսից քաղաքում երևան են եկել կրոն. փոքրամասնություններ (քաղկեդոնականներ, մահմեդականներ): Ա-ի քաղկեդոնականներին XIII դ. սկզբին գլխավորել է Դավիթ եպիսկոպոսը, որը մեծ համարում է ունեցել Վրաց արքունիքում:

Ա. հայ և օտար մի շարք աղբյուրներում կոչվում է «1001 եկեղեցիների քաղաք»: Այստեղ եկեղեցիներ են հիմնել թագավոր. ընտանիքի անդամները, ազնվականները, հոգևորականները, քաղաքացիները: X–XI դդ. Ա-ում մեկը մյուսի հետևից վեր են խոյացել վեհաշուք եկեղեցիներ, որոնք հաճախ կրկնել են հայ եկեղեց. ճարտ-յան դասական շրջանի ձևերը՝ դրսևորվելով որպես տվյալ տիպի տարբերակված կամ կատարելագործված օրինակներ: Առավել հայտնի էին *Անիի Մայր տաճարը*, զվարթնոցատիպ Գագկաշեն Ս. Գրիգոր, էջմիածնատիպ Ս. Առաքելոց, Աբուղամրենց (Ս. Գրիգոր), Ս. Փրկիչ, Տիգրան Հոնենցի (Ս. Գրիգոր Լուսավորիչ), Հովվի եկեղեցիները: Ա-ի մերձակայքում ժամանակին բարգավաճել են Հռոմոսի, Բազնայրի, Արջո Առիճի, Խծկոնքի վանքերը՝ հանդիսանալով հոգևոր ու մշակութ. առաջնակարգ կենտրոններ: Թե՛ քաղաքի եկեղեցիներում, թե՛ նրա մոտակա վանքերում ու մենաստաններում ծաղկել է հայ քրիստ. մշակույթը, գործել են դպրոցներ, ստեղծվել մատենագր. երկեր, ընդօրինակվել բազմաթիվ ձեռագրեր: Քաղաքը հայտնի էր իր բազմաթիվ մատուռներով, որոնք կառուցվել են պարիսպների բուրգերի մեջ, խաչքարերով: Այդ ամենը մայրաքաղաքին հաղորդել է «քրիստոնեական միջնաբերդի», «աստվածապահ» քաղաքի խորհուրդ:

Ա-ում XI–XIII դդ. գործել է բարձրագույն իմաստասիր. դպրոց, որը ծաղկել է *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Հովհաննես Սարկավագի*, Մխիթար Անեցու (XII դ.) օրոք: Ա-ի իմաստասիր. դպրոցը, մյուսների համեմատ, ավելի աշխարհիկ բնույթ է կրել, դասավանդվող առարկաների մեջ գերակշռել են հատկապես փիլ. և բնական գիտությունները: Դպրոցն ունեցել է հարուստ մատենադարան: Մատենադարաններ կային նաև արքունիքում, կաթողիկոսարանում, վանքերում ու եկեղեցիներում:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.6, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք (կազմ. Հ. Օրբելի), Ե., 1966: Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարերի պատմության մի քանի հարցեր, Ե., 1980: Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Ե., 1995: Մաթևոսյան Կ., Անի, Ե., 1997:

Կարեն Մաթևոսյան

ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1207, գումարվել է Ս. Ծննդյան տոնի նախօրեին, Հայոց իշխան Զաքարե ամիրսպասալարի (Զաքարե Բ Մեծ Երկայնաբազուկ) նախաձեռնությամբ՝ հայկ. բանակում ս. Պատարագի շարժական սեղան ունենալու կամ «վրանում պատարագ մատուցանելու» օրինավոր արտոնություն ստանալու համար: Հայ-վրաց. միացյալ զորքում, որի գերագույն հրամանատարն էր (ամիրսպասալար) Զաքարե զորավարը, վրաց հոգևորականները հեռավոր ռազմարշավների ժամանակ, ռազմաճակատում քարաշեն եկեղեցիներ չլինելու պատճառով, Պատարագ են մատուցել վրաններում և հաղորդություն տվել վրացի զինվորներին, ինչն արգելվում էր Հայ եկեղեցու Կանոնագրքով: Վրաց հոգևորականները հայ զինվորականությանն ու հոգևորականությանը նախատել են այդ պատճառով, ինչն էլ նոր առիթ էր հայ-վրաց. դավան. ու ծիս. տարբերությունների շուրջ կրքեր բորբոքելու և փոխադարձ մեղադրանքներ ներկայացնելու համար: Իվանե և Զաքարե եղբայրները փորձել են այս կետը մի քանի այլ ծիս. անհամաձայնությունների հետ ընդունելի դարձնել Հայ եկեղեցում: Զաքարե ամիրսպասալարն այդ նպատակով դիմել է Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն Բ-ին և Հռոմկլայում նստող Հայոց կաթողիկոս *Հովհաննես Զ Սսեցուն*: 1204-ին Սսում գումարված եկեղեց. ժողովը (տես *Սսի եկեղեցական ժողովներ*) քննարկել և ընդունել է առաջարկությունը: Դրական պատասխանի հետ միասին կաթողի-

կոսը Զաքարեին է ուղարկել նաև շարժական սեղան և ծիսական այլ պարագաներ: Սակայն այդ նորամուծությանը հակադրվել են Հս. Հայաստանի վարդապետները (տես *Արևելյան վարդապետներ*՝ այն դիտելով իբրև զիջում քաղկեդոն. Վրաց եկեղեցուն: Վարդապետների դիմադրությունը կոտրելու և խնդիրը կրկին քննարկելու համար Զաքարե ամիրսպասալարը 1205-ին ժողով է հրավիրել Լոռե բերդաքաղաքում, սակայն արդյունքի չի հասել: 1207-ի Ա. ե. ժ., որին, ըստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու, ներկա են եղել Լոռեի ժողովի բոլոր մասնակիցները՝ Հաղպատի, Անիի, Բջնիի, Դվինի, Կարսի եպիսկոպոսները, վարդապետները, այդ թվում՝ *Մխիթար Գոշը, Դավիթ Քոբայրեցին* և ուր., կրկին մերժել է ծիս. այդ նորամուծությունը: Սակայն Զաքարե ամիրսպասալարն անձն. նախաձեռնությամբ այն կիրառել է հայկ. բանակում:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982:

Ազատ Բոզոյան

ԱՆԻԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ, Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստը 992–1046-ին: 961-ին Անին Հայոց մայրաքաղաք հռչակած Աշոտ Գ Ողորմած թագավորը քաղ. և հոգևոր մեկ կենտրոն ունենալու մտադրությամբ Աղթամարից Անի է հրավիրել *Անանիա Ա Մոկացի* կաթողիկոսին, որը եկել է Շիրակ, բայց հաստատվել Անիի մերձակա Արգինայում: Կարճ ժամանակով Անիում աթոռակալել է Անանիա Ա Մոկացու հաջորդներից *Ստեփանոս Գ Սևանցին*, բայց հետո, *Խաչիկ Ա Արշարունու* օրոք կրկին աթոռանիստ է դարձել Արգինան, որտեղ կառուցվել են համապատասխան եկեղեցի և այլ անհրաժեշտ շինություններ:

Սմբատ Բ Տիեզերակալ թագավորի ժամանակ կրկին դրվել է կաթողիկոս. աթոռը Անի փոխադրելու հարցը, և սկսվել քաղաքի մեծ Կաթողիկեի՝ Մայր տաճարի շինարարությունը (մինչ այդ Աշոտ Գ Ողորմածը կաթողիկոսարանի համար կառուցել էր եկեղեցի, որն աղբյուրներում հիշատակվում է որպես «զփոքր Կաթողիկէն Անւոյ»): Սմբատ Բ-ին հաջորդած Գագիկ Ա Բագրատունին և նրա կինը՝ Կատրանիդեն (վերջինս ստանձնել է անավարտ Կաթողիկեի շինարարության հովանավորությունը), խոստացել են իրականացնել դեռևս Աշոտ Գ Ողորմածի ժամանակ ծրագրված նպատակը, և 992-ին Գագիկ Ա-ի կամքով կաթողիկոս ձեռնադրված *Սարգիս Ա Սևանցին* վերջնականապես թողել է Արգինան ու հաստատվել Անիում: Քաղաքում շուտով ավարտվել է Կաթողիկեի շինարարությունը (1001), իսկ կաթողիկոսը նրա հարևանությամբ հիմնել է Ս. Հռիփսիմյանց վկայարան և Վաղարշապատից այստեղ փոխադրել սրբերի մասունքների մի մասը:

Անիի նորահաստատ կաթողիկոսարանը դարձել է երկրի հոգևոր ու եկեղեց. կյանքի առաջատար կենտրոնը: Արգինայից այստեղ են տեղափոխվել կաթողիկոսարանի բարձրագույն հոգևոր դպրոցը՝ վարդապետարանը, հարուստ դիվանն ու մատենադարանը: Ա. կ-ում են գտնվել ժամանակի նշանավոր վարդապետներից շատերը (Արիստակես Լաստիվերցին անվանապես նշում է նրանցից երեքին՝ Սարգսին, Տիրանունին, Ենոքին): Սարգիս Ա կաթողիկոսի աթոռակալության տարիներին Հայաստանյայց առաքելական եկեղեցին բարգավաճել է, կարգավորվել են եկեղեց. կյանքի զանազան խնդիրներ, վերականգնվել *Այունյաց մետրոպոլիտությունը*, անհրաժեշտ պայքար է մղվել աղանդավոր. շարժումների դեմ:

1019-ին ծերացած Սարգիս Ա Սևանցին իր փոխարեն կաթողիկոս է ձեռնադրել *Պետրոս Ա Գետադարձին*: Նրա օրոք սկիզբ է առել Բագրատունիների թագավորության քաղ. ճգնաժամը, որը խիստ բացասական հետևանք է ունեցել նաև կաթողիկոս. աթոռի համար: Ինքը՝ Պետրոս Ա Գետադարձը, բացահայտ միջամտելով քաղ. խնդիրներին, ավելի է բարդացրել իրավիճակը: Արդյունքը եղել է այն, որ նա 1037-ին Անիում աթոռանկ է արվել, և թագավորի կամքով կաթողիկոս է ձեռնադրվել Սանահինի վանահայր Դիոսկորոսը, բայց մեկ ու կես տարի անց կրկին վերականգնվել է նախկին վիճակը: Դրությունն ավելի է ծանրացել Բագրատունիների թագավորության անկումից (1045) հետո, երբ բյուզանդացիները, Հայոց քաղ. իշխանությունը վերացնելով, պայքար են սկսել նաև եկեղեց. իշխանության դեմ: Նախ Անիից հեռացրել են Պետրոս Ա Գետադարձին (1046-ի վերջ), ապա՝ նրա տեղապահ Խաչիկ Անեցուն (1047-ի սկիզբ) և իրենց տիրապետության օրոք այլևս թույլ չեն տվել, որ Հայոց հայրապետները ոտք դնեն նախկին աթոռանիստ: Որոշ ժամանակ Պետրոս Ա Գետադարձին Պոլսում պահելուց հետո թույլատրել են հաստատվել Սեբաստիայում, որտեղ և նա

վախճանվել է, իսկ *Խաչիկ Բ Անեցու* ժամանակ կողոպտել են Ա. կ-ի գանձերը, ճնշում գործադրել կաթողիկոսի վրա և վերջապես բնակության տեղ հատկացրել Փոքր Հայքում՝ Թավբլուրում: Խաչիկ Բ Անեցու մահից հետո բյուզանդացիները փորձել են ընդհանրապես խափանել նոր կաթողիկոսի ընտրությունը, ինչը, սակայն, չի հաջողվել: Ա. կ. դադարել է գործել բյուզանդացիների անհանդուրժող. քաղաքականության հետևանքով:

Անիի կաթողիկոս. աթոռը կարճ ժամանակով վերականգնվել է 1081-ին, Հաղպատում կաթողիկոսի աթոռակից ընտրված *Բարսեղ Ա Անեցու* շնորհիվ: Սակայն 1105-ին նա տեղափոխվել է Քեսունի Կարմիր վանք (Կիլիկիա) և ազգ. նկատառումներով այլևս չի վերադարձել: Անեցիները մի երրորդ անգամ փորձել են կաթողիկոս. աթոռը վերականգնել XII դ. վերջին, երբ, ի հակակշիռ Հռոմկլայի կաթողիկոս. աթոռի (Կիլիկիա), 1195-ին կաթողիկոս են ձեռնադրել Անիի և Շիրակի արքեպիսկոպոս Բարսեղ Բ-ին, բայց նրա իշխանությունը սահմանափակվել է միայն Հս. Հայաստանի մի քանի շրջաններով, իսկ մահից հետո Անիում այլևս նոր կաթողիկոս չի ձեռնադրվել:

Չնայած համեմատաբար կարճատև գոյությանը, Ա. կ. նկատելի հետք է թողել Հայ եկեղեցու պատմության մեջ: Բագրատունիների շրջանում լայն հնարավորություններ է ունեցել և համայն երկրում առաջնային հեղինակություն վայելել: Պատահական չէ, որ հայկ. տարբեր թագավորությունների միջև ծագած վեճերն ու բախումները սովորաբար հարթվել են կաթողիկոսների միջնորդությամբ: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, Անիի կաթողիկոս. աթոռը ոչնչով չի զիջել Հայոց թագավոր. գահին: Կաթողիկոսարանում մշտապես գտնվել են տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ, վաթսուն կուսակրոն և հինգ հարյուր աշխարհական (ամուսնացած) քահանաներ, մեծաթիվ պաշտոնեություն: Ճամփորդությունների ժամանակ կաթողիկոսին սովորաբար ուղեկցել է 300 հեծյալից բաղկացած զինված պահակազոր:

Մեծ էր նաև Ա. կ-ի հոգևոր-մշակութ. դերը: Այն ուներ վարդապետարան, գրատուն (որը ոչ միայն մատենադարան, այլև գրչության կենտրոն էր): Մատենադարանապետներից նշանավոր էր հատկապես Սարգիս վրդ. Անեցին՝ *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* ուսումնակիցն ու բարեկամը, որը 1041-ի մի հիշատակարանում ակնարկում է այդ «գրանոցի» նկատմամբ ցուցաբերած իր խնամքի մասին: Իսկ Բարսեղ Ա Անեցու ժամանակ կաթողիկոսարանի վարդապետարանի ուսուցչապետությունն ստանձնել էր ժամանակի հռչակավոր վարդապետներից *Հովհաննես Սարկավագը*: Նրա անեցի սաներից Գրիգորը հետագայում դարձել է 1124-ին վերստին օծված Մայր տաճարի առաջին ավագերեցը, նրան հաջորդել է Հովհաննես Սարկավագի մյուս շնորհալի սանը՝ *Սամուել Անեցի* պատմագիրը:

Կաթողիկոս. աթոռի հեռացումից հետո Անին դարձյալ կարևոր դեր է խաղացել Հայաստանի եկեղեց. կյանքում՝ շնորհիվ իր մեծատոհմիկ ու գործուն եպիսկոպոսների և բազմանդամ հոգևոր դասի:

Գրկ. Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Արիստակես Լաստիվերցի, Պատմութիւն, Ե., 1971: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Օրմանյան Մ., Ազգապատում, ԿՊ, հ. 1, 1912: Մաթևոսյան Կ., Անի, Ե., 1997:

Կարեն Մաթևոսյան

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, Անիի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցի, 989-ին հիմնադրել է Հայոց թագավոր Սմբատ Բ Տիեզերակալը, շինարարությունը 1001-ին ավարտել է Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունու կինը՝ Կատրանիդե թագուհին: Կառուցել է *Տրդատ* ճարտարապետը: Քառամույթ գմբեթավոր հորինվածքով (չափերը՝ 24,7x34,3 *մ*) Ա. Մ. տ. իր կոթողային ձևերով և հարուստ հարդարանքով խորհրդանշել է վերածնված հայկ. պետության հզորությունը: «Հայկ. խորշերով» ակոսված արտաքին ճակատները հարդարված են նրբագեղ կամարաշարով: Ավագ խորանը զարդարվել է «Քրիստոսը գահի վրա» պատկերագրությամբ որմնանկարով (հետագայում ծածկվել է սվաղով): Տրդատը կարևոր ավանդ է մուծել եկեղեց. ճարտ. ձևերի զարգացման



Անիի Մայր տաճարի հատակագիծը

գործում. տաճարի մի-ջին՝ գմբեթակիր նավը գերիշխում է շենքի ողջ ներքին տարածության վրա՝ շնորհիվ կողմնային նավերի զգալի նեղացման: Մույթերի և որմնամույթերի փնջաձև տրոհումը, կամարների սլաքաձևությունը Ա. Մ. տ-ին հաղորդում են շեշտված վերսլացություն: Եկեղեցու ներսի այդպիսի լուծումը, հատկապես մույթերի՝ ջլաղեղների նմանությամբ մասնատումը XII–XIV դդ. դարձել են Արմ. Եվրոպայում ձևավորված ու տարածված գոթական ճարտ-յան բնորոշ հատկանիշները: Իր այս առանձնահատկությունների, կառուցվածքային կատարելության և գեղաշուք հարդարանքի շնորհիվ Ա. Մ. տ. դասվում է համաշխարհային ճարտ-յան լավագույն ստեղծագործությունների թվին:

Կատրանիդե թագուհին Ա. Մ. տ. զարդարել է «ծիրանեծաղիկ ոսկեղեն» գործվածքներով, արծաթե ու ոսկե անոթներով: Տաճարի գմբեթին կանգնեցվել է մարդահասակ արծաթե խաչ, իսկ Սմբատ Բ թագավորը Հնդկաստանից բերել է տվել բյուրեղյա հսկա ջահ:

1010-ական թթ. Ա. Մ. տ-ի կողքին կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (992–1019) կառուցել է Ս. Հռիփսիմյանց վկայարան: 1040–1050-ական թթ. Ա. Մ. տ-ի արլ. և արմ. ճակատներին արձանագրվել են Առն Մագիստրոսի և Բագրատ Մագիստրոսի կատարած գործերը (պարիսպների վերակառուցում, քաղաքի ջրատարն անցկացնելը, անեցիների հարկերը թեթևացնելը):

1064-ին սելջուկները գրավել են Անին և Ա. Մ. տ. վերածել մզկիթի: 1124-ին Անիի ամիրան Ա. Մ. տ-ի գմբեթին խոշոր մահիկ է զետեղել: Զայրացած անեցիները հրավիրել են Վրաց Դավիթ Շինարար թագավորին և քաղաքի դարպասները բացել նրա զորքի առջև: Ա. Մ. տ. վերստին օծվել է և գործել որպես եկեղեցի՝ կրկին կարևոր տեղ գրավելով հայ հոգևոր կյանքում: XII դ. տաճարի սպասավորներն են եղել *Հովհաննես Սարկավագը*, պատմիչ *Սամուել Անեցին*, պատմիչ և թարգմանիչ Մխիթար Անեցին: 1126-ին վրացիները ստիպված Անին վերադարձրել են Շադդադյաններին, որոնք երդվել են այլևս Ա. Մ. տ-ի նկատմամբ ոտնձգություններ չանել: 1198-ին Անին Զաքարյան իշխանների ազատագրելուց հետո, XIII դ. Ա. Մ. տ. բազմաթիվ նվիրատվություններ է ստացել (կրպակ, ձիթհանք, արծաթե սպասք, Ավետարան ևն): 1213-ին Տիգրան Հոնենցը նորոգել է տաճարի խարխլված աստիճանները: 1319-ի երկրաշարժից քանդվել է Ա. Մ. տ-ի գմբեթը, 1988-ի երկրաշարժից՝ հս-արմ. անկյունը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.6, 4-րդ պատկերը:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 2, Տփխիս, 1858: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, Ե., 1942: Հարությունյան Վ., Անի քաղաքը, Ե., 1964: Դիվան հայ վիմագրության, պր. 1, Ե., 1966: Մաթեվոսյան Կ., Անի, Ե., 1997: *Марр Н. Я., Ани, Е., 1939; Орбели И. А., Избранные труды, Е., 1963;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, t. 1–2, Wien, 1918; Cuneo P., L'architettura della scuola regionale di Ani nell'Armenia medievale, Roma, 1977; Ani, Milano, 1984 (Documenti di architettura armena, 12).

Մուրադ Հասրաթյան

ԱՆԻԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ, կառուցվել է 1004–1031-ին: Ներսից՝ քառախորան, չորս անկյուններում՝ մատուռ-ավանդատներով, արտաքուստ քառակուսի հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է: Ճակատները մասնատված են երկուական խորշերով և հարդարված որմնակամարներով: Ա. Ս. Ա. ե. *Ավանի կաթողիկոսության* Ս. Հովհաննես եկեղեցուց հետո հայկ. երկրորդ հնագմբեթ եկեղեցին է:

Անիի Ս. Առաքելոց եկեղեցու գավթի (XII դ.) արլ. ճակատը

XII դ. Ա. Ս. Ա. ե-ուն հվ-ից կցել են գավիթ, որի ծածկը խաչվող կամարների կիրառման վաղ օրինակներից է: Հարթ առաստաղը կազմված է սև ու կապույտ ներկված քարե սալերից: Արլ. ճակատի կենտրոնում չքամուտքի խորշն է, երկու կողմերում՝ զույգ խորշերով (այս հորինվածքը նախօրինակ է ծառայել Երևանի Մատենադարանի գլխ. ճակատի

ճարտ-յան համար): Ա. Ս. Ա. ե. XII–XIV դդ. բազմաթիվ նվիրատվություններ է ստացել (դրամ, հողեր, կալեր, ջրաղացներ, կրպակներ): 1031-ին Իշխանաց իշխան Վահրամի որդի Ա-բուղամրը նվիրել է Կառնուտի այգին, 1038-ին ոմն Գրիգոր՝ Ավետարան: Եկեղեցու և դավթի պատերին XIII դ. փորագրվել են Ա-նիի բնակչության կյանքը կանոնակարգող բազմաթիվ հրամաններ և օրենքներ (ապահար-



Անիի Ս. Առաքելոց եկեղեցու հատակագիծը

կության, երկրաշարժից հետո փողոցներում առևտրի արգելման, ամուսնության և ամուս-նալուծման վերաբերյալ, կաշառակերությունը դատապարտող ևն): Ըստ դավթի ներսի արձա-նագրության, 1301-ին Զաքարե Բ Մեծի թոռ իշխան Աղբուղան այցելել է Անի, տեսել «զքա-ղաքս աղքատացեալ... զի շատ հարկ էր ի վերա դրած, որ ի սկզբանե չէր եղել», և հրամայել է քաղաքացիներին զիջել հարկերից երեքը: 1909-ին պեղվել է եկեղեցու տարածքը: Այժմ կիսա-վեր վիճակում պահպանվել է դավիթը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.6, 5-րդ պատկերը:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 2, Տփխիս, 1858: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյու-թեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 2, Ե., 1948: Դիվան հայ վիմագրության, պր. 1, Ե., 1966 (կազմ. Հ. Ա. Օրբելի): *Марр Н., Ани, Е., 1939;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ԱՆԿԱՆՈՆ ԳՐՔԵՐ, տես *Պարականոն գրքեր*:

ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ, խորհրդաբանա-կան երևույթ՝ հավասարազոր *օծմանը*. «Կո-չումն կամ դրութիւն անուանն»: 1. Հայաս-տանյայց առաքելական եկեղեցու Տերունական անշարժ տոներից՝ Հի-սուս Քրիստոսի Անվանակոչության տոնը («Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յի-սուսի Քրիստոսի»): Նշվում է հունվ. 13-ին: Ըստ Ղուկաս ավետարանչի, մարդեղացյալ Աստվածորդուն, նրա ծննդյան 8-րդ օրը, Հով-սեփն ու Մարիամ Աստվածածինը տանում են Տաճար՝ Աբրահամի և Աստծո միջև դրված *ուխտի* (Ծննդ. 17.4–14) համաձայն թլփատե-լու: Թլփատության ժամանակ մանկանն անվա-նում են Հիսուս (եբր. բառ, որը նշանակում է փրկիչ). «Եվ երբ ութ օրերը լրացան, և նա թլփատվեց, նրա անունը Հիսուս դրվեց, ինչ-պես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել մոր որովայնում» (Ղուկ. 2.21):

2. Նվիրական ավանդույթի համաձայն, *Մկրտության* ժամանակ խորհրդակատար քա-հանան մկրտվողին տալիս է նոր անուն, քանի որ մկրտության սուրբ ավազանից վերստին ծնվածն այլևս նոր մարդ է (հմմտ. Հովհ. 3.3, 5–6): Ինչպես ձեռնադրության և օծման ըն-թացքում՝ նվիրյալին, նույնպես և Մկրտու-թյան ժամանակ մկրտվողին որպես նոր անուն շնորհվում է որևէ սրբի (սրբուհու) կամ ակա-նավոր եկեղեց-ազդ. գործչի անունը:

3. Հայ եկեղեցու հայրավանդ կանոնների հա-մաձայն, քահանայանալ ցանկացող ընծայյալին *Ձեռնադրության* խորհրդի ժամանակ ձեռնադ-րող և սրբալույս *Մյուռոնով* օծող եպիսկոպո-սը շնորհում է նոր անուն: Նոր Ա. օծյալ այդ սպասավորին խորհրդաբար դարձնում է նոր անձ, նոր՝ աստվածային առաքելության տեր. «Հեռո՛ւ վանեցեք ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապականված է խա-բեպատիր ցանկություններով. նորոգվեցե՛ք ձեր մտքով և հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու՝ արդարությամբ և ճշմարիտ սրբությամբ» (Եփես. 4.22–24):

4. Հայ եկեղեցու հնավանդ կանոնների հա-մաձայն, նորակառույց եկեղեցու *նավակատի-քին*, հանդիսապետ եպիսկոպոսը, եկեղեցին օ-ծելու ժամանակ Աստծո նորակառույց տաճարն անվանակոչում է ի պատիվ որևէ սրբի (սրբուհու) կամ Տերունական որևիցե տոնի (Ս. Գա-յանե, Ս. Սարգիս, Ս. Հարություն ևն):

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզու-թեան, որ կոչի Ջմեռան Հատոր, ԿՊ, 1740: Կարգ Աս-տուածապաշտութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, [ժող.], Թ., 1907:

Արթուր Կարապետյան

ԱՆՏԻՈՔ, քաղաք Ասորիքում (Սիրիա), Որոնտես գետի ափին: Հելլենիստ., այնուհետև՝ քրիստ. մոգի և մշակույթի կենտրոններից, *Ընդհանրական եկեղեցու* հինգ տիեզեր. աթոռներից: Իր մեծությամբ և կարևորությամբ եղել է երրորդ քաղաքը Հռոմից և *Ալեքսանդրիայից* հետո: Սելևկյանների աթոռանիստ Ա. հիմնել է Սելևկոս I Նիկատորը Ք.ծ.ա. 301-ին և կոչել հոր՝ Անտիոքոսի անունով: Սելևկյանների կառուցած մյուս Ա-ներից տարբերակելու համար հաճախ անվանվել է Ասորիքի Անտիոք (հայկ. աղբյուրներում՝ Ավագն Անտիոք): Հայոց արքա Տիգրան Բ Մեծը, Ասորիքը նվաճելուց հետո, Ք.ծ.ա. 83–69-ին Ա. դարձրել է Հայոց տերության հվ. թագավորանիստը, որտեղ նրա անունով ու պատկերով արծաթե դրամներ են հատվել: Ք.ծ.ա. 64-ին քաղաքը Հռոմ. զորավար Պոմպեոսի գրավելուց հետո՝ մինչև Կոստանդնուպոլսի կառուցումը (IV դ.) եղել է Հռոմ. կայսրության արլ. մասի մայրաքաղաքը: 538-ին Պարսից թագավոր Խոսրով I Անուշիրվանը ավերել է Ա., բնակչության զգալի մասին կոտորել կամ գերեվարել: Բյուզ. կայսր Հուստինիանոս I-ը (527–565) վերաշինել է այն և տվել Աստծո քաղաք անունը, որը պահպանվել է քաղաքի պատրիարքների տիտղոսաշարում: Հետագա դարերում Ա. մի քանի անգամ անցել է մե՛րթ արաբներին, մե՛րթ բյուզանդացիներին: XI դ. քաղաքի կառավարիչներ են եղել նաև հայեր (*Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* որդին՝ Վասակ Պահլավունին, զորավար Փիլարտոս Վարաժնունին): 1084-ին Ա. գրավել են սելջուկ թուրքերը: 1098-ի հունիսի 3-ին, 9-ամսյա պաշարումից հետո, խաչակիրները գրավել են Ա. և հիմնել Ա-ի դքսությունը: 1268-ին քաղաքը նվաճել և հիմնովին ավերել է Եգիպտոսի սուլթան Բեյբարսը:

Ա-ում քրիստոնեության տարածման և առաջին քրիստ. համայնքների մասին վկայում է Գործք Առաքելոցը: Այստեղ գործել են Բառնաբե, Պողոս և Պետրոս առաքյալները: Ա-ի եկեղեցու հիմնադիրը համարվում է Պողոս առաքյալը: Ա-ից քրիստոնեությունը տարածվել է Արևելք: Ա-ում է գտնվել Արևելքում (Փոքր Ասիա) Հռոմ. կայսրության չորս արքեպիսկոպոսություններից (էքզարխատ) մեկը՝ Կեսարիայի, Եփեսոսի, Հերակլեայի հետ: *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի* (381) երրորդ կանոնով Ա-ի աթոռը ճանաչվել է չորրորդ տիեզեր. աթոռը Հռոմից, Կ. Պոլսից և Ալեքսանդրիայից հետո: IV դ. վերջին Բյուզ. կայսրության Արևելքի դքսության 15 մարզերի վրա ստեղծվել է Ա-ի պատրիարքությունը, որի իշխանության տակ էին Փյունիկիան, Արաբիան, Պաղեստինը: Պատրիարքները կրել են Համայն Արևելքի պատրիարք տիտղոսը: Ա-ի պատրիարքությունից հետագայում առանձնացվել են Կիպրոսը, Պարսից եկեղեցին և Երուսաղեմի պատրիարքությունը: 451-ի *Քաղկեդոնի ժողովը* պառակտում է առաջ բերել Ա-ի եկեղեցում և քրիստ. համայնքում: V դ. Ա-ի պատրիարքությունից բաժանվել է նեստորական եկեղեցին, իսկ VI–VII դդ. Ա-ում ձևավորվել են քաղկեդոնական-մելկիտ, միաակամ-մարոնիտ (մարունի) և հակաքաղկեդոն. հակոբիկ հոսանքները: Սրանք կազմել են առանձին եկեղեցիներ իրենց համայնքներով և պատրիարքներով: Երեք եկեղեցիների հոգևոր պետերն էլ իրենց անվանում են Ա-ի պատրիարք, չնայած XI–XII դարերից հետո նրանցից ոչ մեկի նստավայրը Ա-ում չի գտնվել: 1182-ին Մարոնիտ եկեղեցին ճանաչել է Վատիկանի գերագահությունը, իսկ ասոր. հակոբիկյան եկեղեցին մնացել է անկախ՝ մաս կազմելով *Արևելյան ուղղափառ եկեղեցիների* ընտանիքի: Արաբ. նվաճումից հետո (VII դ.) երեք եկեղեց. համայնքներում գործածության մեջ է մտել արաբերենը, որը դուրս է մղել հունարենը (XIII դարից), այնուհետև՝ ասորերենը (XVII դարից):

X–XII դդ. Բյուզ. կայսրությունը Արաբ. խալիֆայությունից կրկին նվաճել է Ա-ի պատրիարքության տարածքը, իսկ Խաչակրաց առաջին արշավանքից (1098) հետո այդտեղ հաստատվել է Կաթոլիկ եկեղեցին, որը մարոնիտների և մելկիտների եկեղեց. կազմակերպության հիմքի վրա ժամանակի ընթացքում ստեղծել է սեփականը: XII–XIII դդ. Ա-ի պատրիարքության համար անզիջում պայքարը հիմնականում ընթացել է Կ. Պոլսի աթոռի և Հռոմի կաթոլիկ եկեղեցու միջև: Ա-ի պատրիարքության տարածքների վրա ստեղծվել են խաչակրաց Արևելքի պետությունները (Եդեսիա, Անտիոք, Տրիպոլի ևն): Ա-ի պատրիարքության տարածքի վրա է ձևավորվել նաև Կիլիկիայի հայկ. իշխանությունը (1198–1375-ին՝ թագավորություն), իսկ պատրիարքության թեմերի մի մասը մնացել է սելջուկներին, ապա անցել Եգիպտոսի մամլուքների տիրապետու-

թյան տակ (Հալեպ, Համա, Հոմս, Բաալբեկ, Դամասկոս, Խառան ևն):

Հայ եկեղեցին անման չի մնացել կաթոլիկ և Արևելքի մյուս քրիստոնյա համայնքների միջև միջեկեղեց. պայքարից: *Հռոմկլայի կաթողիկոսարանի* որոշ գործիչներ, *Ներսես Լամբրոնացու* ղեկավարությամբ, արդեն XII դ. 70-ական թթ-ից իրենց առջև նպատակ էին դրել Կիլիկիայում վերականգնել ոչ միայն հայոց պետականությունը, այլև Հայոց կաթողիկոսի իշխանությունն ընդունելի դարձնել տարածաշրջանի բոլոր քրիստոնյա համայնքներին՝ առաջարկելով Ա-ի պատրիարքի իշխանությամբ օժտել Հռոմկլայի հայոց կաթողիկոսներին: Այդ առաջարկը 1178-ի Հռոմկլայի ժողովում ներկայացվել է բյուզ. եկեղեցուն, իսկ արդեն XIII դ. մի շարք վավերագրերում Հայոց կաթողիկոսն անվանվում է նաև Ա-ի պատրիարք:

Ազատ Բոզոյան

Ա. Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ հայտնի է նաև իր նշանավոր աստվածաբան. դպրոցով, որը *Աստվածաշնչի* մեկնության մեթոդի (տես *Մեկնողական գրականություն*) և քրիստոսաբան. հարցերում հակաճառությունների ու պայքարի մեջ է եղել Ալեքսանդրիայի աստվածաբան. դպրոցի հետ: Ի տարբերություն Ալեքսանդրյանի, Ա-ի աստվածաբան. դպրոցը չի ունեցել հատուկ կամ պաշտոն. ուս. հաստատություններ. դրա ջատագովները հաճախ շրջել են քաղաքներում և քարոզել իրենց ուսմունքը: Չնայած Ա-ի հելլենիստ. հարուստ անցյալին, այնուամենայնիվ անտիոքյան աստվածաբան. ուղղության մեջ մեծ տեղ են գտել բուն սեմական պատկերացումներն ու աշխարհայացքը, հատկապես՝ ասոր. հասարակության տեղական և պատմ. առանձնահատկությունները:

Եթե Ալեքսանդրյան դպրոցին հատուկ էր նորպլատոնականությունը և միստիցիզմը, ապա անտիոքյան աստվածաբանությունն ուներ արիստոտելյան և պատմ. ուղղվածություն: Ս. Գրքի մեկնության անտիոքյան պատմաքերական. մեթոդը հակադրվել է ալեքսանդրյան այլաբան. մեթոդին: Ա-ի եկեղեցու հայրերը խուսափել են իրենց տեքստերը դժվարամատչելի հասկացություններով ու արտահայտություններով ծանրաբեռնելուց և դրանցում չեն քողարկել խորհրդավոր, առեղծվածային մտքեր: Անտիոքացիները բառացիորեն են բացատրել Աստվածաշնչի դժվար ըմբռնելի տեղիները՝ ընթերցողին հասկանալի դարձնելու նպատակով: Ա-ի դպրոցում գերիշխել է զգաստ, տրամաբան. մտածողությունը: Անտիոքյան աստվածաբանները կրոնագիտության միակ չափանիշ են համարել տրամաբանությունը, ձգտել իրենց դավան. տեսություններն անցկացնել մաքուր տրամաբանության ճանապարհով՝ հաճախ ընկնելով չոր բանական փիլ. (ռացիոնալիզմ) ծայրահեղությունների մեջ: Ա-ի ուղղությունը թեև լիովին չի մերժել այլաբանությունը, սակայն գերադասել է պատմ. մեթոդը և խստորեն քննադատել Հին և Նոր կտակարանների կամայական զուգորդումները: Ըստ անտիոքացիների, իսկական այլաբան. միտքը (որը կիրառել են ալեքսանդրացիները) խոսքերի մեջ չէ, այլ՝ խոսքերով արտահայտված իրականության, անձանց և դեպքերի մեջ: Ա-ի դպրոցի մի շարք ներկայացուցիչներ (*Հովհան Ոսկեբերան*, Թեոդորիտ), հավատարիմ մնալով անտիոքյան մեկնաբանության սկզբունքներին, յուրացրել են նաև Ալեքսանդրյան դպրոցի լավագույն կողմերը և տվել գիտ. մեկնությունների օրինակներ, որոնք ուղղափառ մեկնաբանության լավագույն նմուշներն են: Այդ իմաստով նրանց աշխատություններն առ այսօր նշանակալից արժեք են ներկայացնում Սուրբ Գիրքն ուսումնասիրողների համար: Հայ եկեղեցին, դավանության մեջ լինելով Ալեքսանդրյան դպրոցի հետևորդ, Աստվածաշնչի մեկնության մեթոդի հարցում հակվել է Ա-ի դպրոցին՝ հետևելով հատկապես Հովհան Ոսկեբերանին:

Ընդհանրական եկեղեցու պատմությունն ուղեկցվել է Ա-ի և Ալեքսանդրիայի աստվածաբան. դպրոցների պայքարով: Քրիստոսաբան. տարբեր, անդամ հակադիր համակարգերը, Ա-ի և Ալեքսանդրիայի ուղղությունների բախումը հող են նախապատրաստել IV–V դդ. դավանաբան. մեծ վեճերի համար: Ա-ի դպրոցի աստվածաբանները չեշտել են Քրիստոսի պատմական, մարդկային անձնավորությունը, Քրիստոսի մարդ լինելը: Սամոսատի, այնուհետև Ա-ի եպիսկոպոս (260–270) Պողոս Սամոսատցին, որը համարվում է Ա-ի դպրոցի հիմնադիրը, քարոզում էր, որ Քրիստոսը ծնվել է իբրև մարդ և ապա լցվել Լոգոսով, այսինքն նրա մեջ աստվածության երկրորդ անձն է բնակվել և կամքի միությամբ ու սիրո մշտնջենականությամբ մեկ դարձել Աստծո հետ: Նա ավելի բարձր է, քան մարդը, բայց աստվածացել է իր բարոյական զարգացման և

որդեգրության շնորհիվ: Պողոս Սամոսատցին առաջինն էր, որ առաջ է քաշել Քրիստոսի էության երկակիության գաղափարը: Թեև 268-ի Ա-ի եկեղեց. ժողովը բանադրել և աթոռազրկել է Պողոս Սամոսատցուն, սակայն նրա համախոհները, մասնավորապես Լուկիանոս Սամոսատցին, շարունակել են քարոզել իրենց ուսուցչի վարդապետությունը: Ա-ի դպրոցի ներկայացուցիչները, Քրիստոսի մեջ չեշտելով մարդուն («Խոստովանեսցուք զոր ի մարդումն Աստուած»), Քրիստոսին համարել են ամենակալ Աստծուն երկրպագակից մարդ երկու բնությամբ՝ Աստված առանձին, մարդն առանձին, նրանք գոյություն ունեն իրարից անջատ, մեկը՝ ճշմարտապես բնությամբ որդի, մյուսը, շնորհիվ որդեգրության՝ Աստված: Մարդ Քրիստոսը բնակարան, տաճար է եղել աստվածայինի համար: Մարիամը ոչ թե Աստվածամայր է, այլ աստվածության հետ միացած մարդու մայրը (Նեստոր): Ա-ի և Ալեքսանդրիայի քրիստոսաբան. տարբեր մեկնակետերն արտահայտվել են հետևյալ բանաձևերով. «Մարդ, որն աստվածացել է», «Աստվածազգեստ մարդ» (Ա-ի դպրոց) և «Ինքը Աստվածն է մարդ դարձել», «Մարդացյալ Աստված» (Ալեքսանդրիայի դպրոց):

Ի տարբերություն Ալեքսանդրիայի դպրոցի, անտիոքացիները, տարանջատելով Քրիստոսի երկու բնությունները, հանձին Հիսուսի տեսել են մի մարդու, որը ծնվել է մշտնջենական Բանից (Լոգոս) և նրա անբաժանելի մասն է: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նրանք ծիսակատարություններից և իրենց աստվածաբան. գրականությունից դուրս են թողել «Որդի» բառը: Ըստ Ա-ի աստվածաբանության, աստվածային Բանն ընտրել է Հիսուսին որպես իր գործիք, որը, սակայն, զարգացել է զուտ մարդկային բարոյական ուղիով: Դա համարվել է Աստծուն մոտենալու հիմն. ճանապարհը, և այդ ամենը հարգանք է ծնել մաքուր և անարատ դառնալու մարդկային ձգտումների ու ճիգերի հանդեպ: Այդ գաղափարների տրամաբան. շարունակությունն է եղել «ազատ ընտրության» վերաբերյալ պելագիականների ուսմունքը, որն էլ իր հերթին մեծ ազդեցություն է ունեցել Նեստորի վարդապետության վրա (տես *Նեստորականություն*): Նեստորականությունը Ա-ի աստվածաբան. դպրոցի զարգացման վերջին փուլն էր: Ա-ի դպրոցի աստվածաբանության որոշ սկզբունքներ ընկել են *Լևոնի տոմարի* և Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբան. համակարգերի հիմքում: IV դ. վերջին քառորդից մինչև V դ. կեսը եղել է Ա-ի և Ալեքսանդրիայի դպրոցների ծաղկման շրջանը: Թեև IV դ. Ա-ի դպրոցը տվել է արիոսական և *արիոսականությանը* հարող աստվածաբաններ (Եվսեբիոս Նիկոմեդացի, Նումերիոս, Եվսեբիոս Եմեսացի, Այետիոս Անտիոքացի, Եվնոմիոս Անտիոքացի և ուր.), որոնք կրել են նաև Լուկիանոս Սամոսատցու ազդեցությունը, սակայն ունեցել է նաև իր ուղղափառ գործիչները: Եվստաթեոս Անտիոքացին առաջինն էր արիոսականությունը դատապարտողներից, իսկ Հովհան Ոսկեբերանը հռչակվել է Ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից: Ա-ի դպրոցի IV–V դդ. նշանավոր աստվածաբաններից էին նաև Դիոդորոս Տարսոնացին, Թեոդորոս Մոպսուեստացին, Թեոդորետ Կյուրոսցին և ուրիշներ:

Ա-ի, ինչպես և Ալեքսանդրիայի, Աթենքի աստվածաբան. դպրոցները փակվել են VI դ.՝ բյուզ. կայսր Հուստինիանոս I-ի օրոք:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմություն, Էջմիածին, 1908: Սադարդան., Յոյն-Արևելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտությունը իւր ծաղկման շրջանում, Էջմիածին, 1910: *Поснов М.Э., История христианской церкви (до разделения церквей — 1054 г.), Брюссель, 1964; Свенцицкая И.С., Раннее христианство: страницы истории, М., 1989;* Grillmeier A., Christ in Christian Tradition, v. 1–2, 1975.

Արտաշես Ղազարյան

ԱՆՏՈՆ, սուրբ Անտոն (ծ. թ. անհտ – 342/355), ճգնավոր-կրոնավոր, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: *Գրիգոր Ա Լուսավորիչը*, 302-ին Կեսարիայից Հայաստան գալով, ձեռնադրել և իր հետ բերել է նաև ազգությամբ հույն Ա. և *Կրոնիդես* ճգնավորներին:

Ա. և Կրոնիդեսը գործել են Տարոնի Ինանակլնյան բարձունքի Գիսանեի մեհյանի տեղում Գրիգոր Ա Լուսավորչի հիմնած *Մշո Ս. Կարապետ վանքում*: Այստեղ հաստատել են միաբանական ուխտ, վանահայր նշանակել իրենց աշակերտներից Եպիփանին, որը միաժամանակ Տարոն գավառի առաջնորդ Զենոբ Գլակի տեղապահն էր: Ա. և Կրոնիդեսը շուրջ 15 տարի գործել են Մշո Ս. Կարապետ վանքում, ապա մոտ 40 տարի ճգնել շրջակա անտառներում:

Ա-ի գերեզմանը մատնանշվում է Մշո Ս. Կարապետ վանքին մերձ մի մատուռում: Հայ ե-

կեղեցին ս. Ա-ի և ս. Կրոնիդեսի հիշատակը նշում է Խաչվերացի 5-րդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը, տոնելի մյուս հայ ճգնավորների հետ: Թեև չկա նրանց նվիրված առանձին շարական, բայց *Յոթը խոտաճարակներին* նվիրված շարականում հիշատակվում են նաև նրանք.

«Սուրբ երջանիկ երկնահանդես,
Ճգնող Անտոն, Կրոնիդես.
Ի հողանիւթ ծնեալ զարմէն՝
Գերազանցեալ ի բնութենէս...»:

Գրկ. Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, 3 հրտ., Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ԱՇԽԵՆ, սուրբ Աշխեն (ծ. և մ. թթ. անհտ), IV դարի վկա, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ, Հայոց թագուհի: *Տրդատ Գ Մեծ* թագավորը նրան կնության է առել թագավորական տոհմից (Ա. դուստրն էր ալանների թագավոր Աշխադարի) և հռչակել Արշակունի: Ա. արքայաքրոջ՝ *Խոսրովիդուխտի* հետ, *Գրիգոր Ա Լուսավորչի* քարոզչությամբ ընդունել է քրիստոնեություն, վարել առաքինազարդ կյանք: Հայսմավուրքների վկայությամբ, կյանքի վերջին տարիներին, հետևելով ամուսնու օրինակին, հրաժարվել է արքունական ճոխ կյանքից, առանձնացել ու ճգնել:

Հայ եկեղեցին ս. Ա-ի, ս. Տրդատի և ս. Խոսրովիդուխտ կույսի հիշատակը տոնում է միասին՝ Հոգեգալուստին հաջորդող 5-րդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.7, 1-ին պատկերը:

Գրկ. Յայսմավուրք, ԿՊ, 1730, էջ 323: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, 3 հրտ., Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ԱՇՏԻՇԱՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, գումարվել են IV–V դարերում, Մեծ Հայքի Տարոն գավառի Աշտիշատ ավանում, դավանական, եկեղեցականոնական խնդիրների քննարկման համար: Փավստոս Բուզանդի վկայությամբ, Աշտիշատը եկեղեց. ժողովների գլխ. վայրն էր IV դ.: *Ներսես Ա Մեծ* կաթողիկոսը Կեսարիայում օծվելուց հետո հրամայել է բոլոր եպիսկոպոսներին հավաքվել Աշտիշատում, ինքն էլ գնացել է այնտեղ: Թե ի՛նչ հարցեր է քննարկել ժողովը, պատմիչները տեղեկություններ չեն հաղորդում:

Երկրորդ ժողովը գումարվել է 356-ին, Ներսես Ա Մեծ կաթողիկոսի նախաձեռնությամբ, եպիսկոպոսների և ավագ իշխանների մասնակցությամբ, Հայոց Արշակ Բ թագավորի (350–368) օրոք: Ժողովը եղել է կանոնադիր, սահմանել կանոնական որոշումներ: Որոշ չափով սահմանափակել է ժողովրդից գանձվող հարկերը, ամրապնդել եկեղեցու տնտ. և քաղ. ազդեցությունը: Հայաստանում քրիստ. կրոնն արմատավորելու համար սահմանել է բոլոր գավառներում հիմնել հուն. և ասոր. դպրոցներ (Հայաստանում IV դ. ուսուցումը կատարվել է այդ լեզուներով), արգելել պարսկ-ի ուսուցումը, փակել զրադաշտական ատրուշաններն ու մոգության դպրոցները: Ժողովը կանոնադրությամբ արգելել է հեթանոս. որոշ սովորույթներ՝ մերձավոր ազգականների ամուսնությունը, մեռելների վրա մոլեգին լացն ու կոծը ևն: Նախատեսել է բացել որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ, որոնց խնամատարությունը կատարվելու էր ավաններից ու ագարակներից գանձվող հատուկ հարկերի հաշվին:

Երրորդ ժողովը գումարվել է 435-ին, *Սահակ Ա Պարթև* կաթողիկոսի և *Մեսրոպ Մաշտոցի* նախաձեռնությամբ՝ *Եփեսոսի Գ տիեզերական ժողովի* (431) որոշումները պաշտոնապես ընդունելու, ինչպես նաև Հայաստանում տարածվող *նեստորականության* հետ կապված մի շարք խնդիրներ լուծելու համար: Ըստ Կորյունի, Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները Եփեսոսից իրենց հետ բերել են ժողովի որոշումներն ու կանոնները, Աստվածաշնչի հայ. թարգմանության օրինակը և ներկայացրել ժողովին: Ժողովը նախ ընդունել է Եփեսոսի Գ տիեզերական ժողովի դավան. որոշումներն ու վեց կանոնները, ապա զբաղվել նեստորականության խնդրով: Եփեսոսի ժողովում բանադրված նեստորականները, Բյուզ. կայսրությունում հալածվելով, ամրապնդվել էին Պարսկաստանում, որտեղ շուտով նեստորականությունը հռչակվել է Պարսից եկեղեցու պաշտոն. դավանանք: Նեստորի կողմնակիցները եռանդուն գործունեություն են ծավալել նաև Հայաստանում. նեստորականության հիմնադիր հայրեր համարվող Դիոդորոս Տարսոնացու և Թեոդորոս Մոպսուեստացու գրվածքները թարգմանել են հայերեն, ասոր., պարսկ. և տարածել: Մելիտինեի Ակակիոս և Եդեսիայի Ռաբուլաս եպիսկոպոսները գրով զգուշացրել են Հայոց կաթողիկոսին, եպիսկոպոսներին ու նախարարներին չընդունել հերձվածող և

ԱՊԱՇԽԱՐ. Նեստորական վարդապետության ուսուցիչ Մոպսուեստացու գրքերը: Մինչդեռ Կիլիկիայի եպիսկոպոսներն ամբաստանել են Ակակիոսին և Ռաբուլասին՝ նրանց այդ վարվելակերպը համարելով ոչ ճշմարիտ և անձն. վրեժխնդրությունից մղվող արարք: 435-ի ժողովը որոշել է դիմել Կ. Պոլսի Պրոկղ պատրիարքին և կաթողիկոսի թղթով ու Մոպսուեստացու գրվածքներով նրա մոտ ուղարկել երեցներ Ղևոնդին ու Աբելին՝ կամենալով պարզել ճշմարտությունը: Պրոկղը նույն թվին Անտիոքի Հովհաննես պատրիարքի նամակի հետ ուղարկել է նեստորական վարդապետությունը դատապարտող և եփեսոյան դավանությունը պաշտպանող իր պատասխան թուղթը, որն էլ ընդունել են հայերը:

Աշտիշատի 435-ի ժողովը մեծ նշանակություն է ունեցել Հայաստանում նեստորականությունը պաշտոնապես մերժելու և կյուրեղեփեսոյան դավանության դիրքերի վրա կանգնելու գործում:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Ե., 1997: Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ե., 1994: Ադոնց Ն., Մաշթոց և նրա աշակերտները. ըստ օտար աղբյուրների, Վնն., 1925: Տեր-Մինասյան Ե., Պատմաբանասիրական հետազոտություններ, Ե., 1971, էջ 331–345:

Արտաշես Ղազարյան

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից: Նշանակում է զղջալ կատարած հանցանքի, սխալի համար և մեղքը քավել: Կոչվում է նաև խոստովանանք: Ա. արդարության և մաքրության խորհուրդն է, որով մեղավորին իր ճշմարիտ ու գիտակից զղջումով և անկեղծ խոստովանությամբ մեղքերի թողություն է շնորհվում: Հին կտակարանում գոյություն ունեցող Ա-յան (Հովել **2.**12) և խոստովանանքի (Թվեր **7.**58, Ղևտ. **5.**4–10) գաղափարին Հիսուս Քրիստոսն ավելի մեծ նշանակություն է տվել և հոգևոր կյանքի վերածել: Նրա խոսքերը Ա-յան մասին բազմիցս վկայված են Նոր կտակարանում. «Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. **4.**17), «Եթե չապաշխարեք, ամենքդ էլ նույնպես պիտի կորչեք» (Ղուկ. **13.**3), «Ուրախություն կլինի երկընքում մի մեղավորի համար, որն ապաշխարում է, քան իննսունինը արդարների համար, որոնց ապաշխարություն պետք չէ» (Ղուկ. **15.**7) ևն: Քրիստոսն Ա-յան խորհուրդը կատարելու իրավունքը տվել է առաքյալներին և նրանց հաջորդ եկեղեցականներին (Հովհ. **20.**21–33):

Ա-յան խորհրդի պայմանները երեքն են. առաջինը անկեղծ, ճշմարիտ և գիտակից զղջումն է գործած մեղքերի համար: Երկրորդը խոստովանությունն է՝ գործած մեղքի ընդունումը: Խոստովանությամբ մեղավորը ստանում է մեղքերի թողություն (արձակում). «Նախ դու խոստովանիր քո անօրենությունները, որ արդարացվես» (Եսայի **43.**26): Առաքյալների ժամանակ հավատացյալներն իրենց հանցանքները խոստովանել են և իրար պատմել. «Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք» (Հակոբ. **5.**16): Ա-յան երրորդ պայմանը հատուցումն է կամ կրած պատիժը, որը եկեղեցին սահմանում է հանցանքների ծանրությանը համապատասխան՝ հոգեպես վերաշինվելու համար:

Քրիստ. եկեղեցու առաջին դարերի խոստովանությունը հիմնականում հրապարակային էր, երբեմն՝ առանձնական կամ անհատական: Հետագայում առավելապես գործածվել է անհատ. խոստովանությունը: Կաթոլիկ եկեղեցում ապաշխարողն իր մեղքերն առանձնաբար խոստովանում է հոգևորականին: Այդպես է եղել նաև Հայ եկեղեցում: Դվինի Բ եկեղեց. ժողովի (554) ԺԹ կանոնի համաձայն, կարգալույծ է արվել այն քահանան, որն իրեն ծածուկ խոստովանած մեղքերը հայտնել է ուրիշին: Իսկ նույն ժողովի ԺԸ կանոնը արգելել է քահանաներին վարձ վերցնել խոստովանողից:

Հետագայում Հայ եկեղեցում անհատ. խոստովանությունը փոխարինվել է հրապարակային կամ հավաքական խոստովանությամբ: Հրապարակային խոստովանության ձև է Հայ եկեղեցում պատարագիչ եկեղեցականի՝ ս. *Պատարագից* առաջ, նախքան խորան բարձրանալը ներկաներից հրապարակավ թողություն խնդրելը. «Խոստովանիմ առաջի Աստծո և առաջի Տեր, հարք և եղբարք, զամենայն մեղս, զոր գործեալ եմ...» (Ժամագիրք): Հրապարակային խոստովանությունը ժողովրդի ներկայությամբ անձն. մեղքերի հայտարարությունն է: Հոգևորականների համար ևս պարտադիր է խոստովանությունը:

Համաձայն Հայ եկեղեցու վարդապետության, խոստովանությունը կատարվում է եկեղեցում, Աստծո պաշտոնյայի՝ խոստովանա-

հոր առաջ: Միայն ձեռնադրված եկեղեցականն է, որ իրավունք ունի մեղքերի թողություն տալու: Նախքան հաղորդությունը հավատացյալները ծնկի են գալիս քահանայի առաջ, և նրանցից մեկը կամ քահանան ընթերցում է ժամագրքի սկզբում «Զղջման» վերնագրով մեղաների շարքը, որը սկսվում է «Մեղա Ամենասուրբ Երրորդության» աղոթքով: Մնացածները յուրաքանչյուր բաժնի ավարտին «Մեղա Աստծո» խոսքերն են կրկնում: Քահանան ի պատասխան ասում է. «Աստված թողություն շնորհեսցե»: Ապա ընթերցվում են Ա-յան սաղմոսները: Քահանան աղոթում է, որ Աստված լսի մեղավորի աղաչանքն ու խոստովանությունը՝ դարձնելով նրան Սուրբ Հոգու տաճար: Ընթերցում է Եսայի մարգարեից **1.**16–20, Եզեկիելից՝ **18.**21–23, Եփեսացիների թղթից՝ **6.**10–24 համարները և «Անառակ որդու» առակը (Ղուկ. **15.**11–32), որից հետո արևմուտք դառնալով՝ երեք անգամ արտասանում է «Հրաժարիմքը»: Այնուհետև բոլորը շրջվում են դեպի արևելք և ասում դավանության խոստովանությունը՝ «Հավատամքը»: Այդ ամենից հետո միայն ապաշխարողը, մաքրված և թողություն ստացած, պատրաստվում է հաղորդություն ստանալու:

Հայ եկեղեցին շաբաթվա մեջ երկու օր՝ չորեքշաբթի և ուրբաթ, որոնք պահոց օրեր են (տես *Պահք*), համարում է նաև Ա-յան օրեր: *Մեծ պահքը* նաև Ա-յան շրջան է: Նախկինում Հայ եկեղեցին Ա-յան հատուկ օր ուներ, որն Ավագ հինգշաբթին էր (տես *Ավագ շաբաթ*), երբ կատարվում էր «Կարգ ապաշխարողաց» ժամերգությունը, ապա տեղի էր ունենում Պատարագ՝ ի հիշատակ ս. *Հաղորդության* խորհրդի հաստատման:

Գրկ. Զեպեյան Ղ., Հայ եկեղեցվո յոթը խորհուրդները (Կանոնագիտական նկատառումներ), Անթիլիաս, 1988: Սարգսյան Ս., Հայոց եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», հ. 1, 1992, էջ 72–77:

ԱՊԱՐԱՆԻՑ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Մոկք նահանգի Միջա գավառում (հետագայում՝ Մամռատանք), Սարիխաչ լեռան հարավարևմտյան լանջին: Ըստ ավանդության՝ հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը: Ա. Ս. Խ. վ. հիշատակվում է X դարից. եղել է Մոկաց աշխարհի եպիսկոպոսանիստ վանքը: Մոտ 950-ին վանահայր Դավիթը կառուցել է վանքի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին, վախճանվելուց հետո թաղվել եկեղեցու խորանում, իսկ նրա գերեզմանի հողը համարվել է բուժիչ ու հրաշագործ:

Արտաքուստ ուղղանկյուն, ներսից եռախորան, գմբեթավոր հորինվածքով եկեղեցին կառուցված է քարի ու աղյուսի զուգակցումով: Հվ-ից կից է թաղածածկ մատուռը, որը դռնով հաղորդակցվում է եկեղեցու հվ. խորանին:

Դավթի ազգական և նրան հաջորդած վանահայր Ստեփանոս եպիսկոպոսը մոտ 970-ին կառուցել է վանքի Ս. Ստեփանոս Նախավկա՝ խոշոր, թաղածածկ եկեղեցին և նրան հս-ից կից Ս. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցու շինարարության համար միջոցներ հայթայթելու նպատակով Ստեփանոս եպիսկոպոսը վանքի հռչակավոր հողից ուղարկել է Կոստանդնուպոլիս: Հողի գործած հրաշքներից տպավորված բյուզ. Վասիլ II կայսրը, նյութ. օժանդակությունից բացի, Ա. Ս. Խ. վ-ին նվիրել է ոսկեզօծ և մարգարտազարդ ս. Խաչի երկդմանի տապանակը, որի մեջ զետեղված էին Կենաց փայտի և Փրկչի փշե պսակի մասնիկներ, Աստվածածնի հանդերձից մի կտոր և այլ մասունքներ: Ս. Աստվածածին եկեղեցու շինարարության ավարտին կառուցել են վանքի Ս. Առաքելոց, Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Աբդլըմսեհ մատուռները:

983-ին Ս. Աստվածածին եկեղեցու օծմանը ներկա են եղել բազմաթիվ եպիսկոպոսներ, իշխաններ, Վասպուրականի արքայազն եղբայրներ Աշոտը, Գուրգենը, Սենեքերիմ Հովհաննեսը: Օծման շքեղ հանդեսին ս. Խաչի տապանակը Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցուց տեղափոխել են նորակառույց Ս. Աստվածածին եկեղեցի: Հանդեսին ներկա Գրիգոր Նարեկացին Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով գրել է Ա. Ս. Խ. վ-ի պատմությունը և ս. Խաչին նվիրված ներբող, նկարագրել Ս. Աստվածածին եկեղեցու փառավոր նկարները, գեղեցիկ քանդակները, շքեղ սպասքն ու վարագույրները:

XI դ., ապահովության համար, ս. Խաչը տեղափոխել են Աղթամարի վանք: 1441-ին վանահայր Հովհաննես վարդապետը մասնակցել է Էջմիածնի ազգ-եկեղեց. ժողովին և կաթողիկոս. ընտրությանը: XV–XVII դդ. վանքում գործել է գրչության կենտրոն, որից բազմաթիվ ձեռագրեր են պահպանվել: XVI դ. վանահայր Սիմեոն վարդապետը տաղաչափել է Մամիկոնյանների ու Պահլավունիների նվիրված վիպասանությունը, գրել վանքի պատմությունը:

ԱՊՈՂԻՆԱՐ. XVII դ. Ս. Աստվածածին եկեղեցուն արմից կից կառուցել են (քարից և աղյուսից) քառամույթ գմբեթավոր դավիթ: 1638-ին նորոգել են Ս. Աստվածածին եկեղեցու մուտքը: 1651-ին վանահայր Սիմեոն վրդ. Ապարանցին կառուցել է վանքի պանդոկը (չի պահպանվել), գրել 24 տնից բաղկացած տաղ՝ նվիրված Ա. Ս. Խ. վ-ին, 1664-ին կառուցել Ապարանք գյուղի ծխական եկեղեցին: 1762-ին վանքի եկեղեցիների գմբեթներին լույս է ճառագել, որը տևել է մի քանի օր և մեծ ուխտագնացության առիթ հանդիսացել: XIX դ. վանքն ունեցել է 27 արտ, ջրաղաց, ձիթհանք: 1895-ին շրջակայքի քրդերը կողոպտել են վանքի սպասքը, ձեռագրերը, սրբությունները, քանդել Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու գմբեթը և վանական շինությունները:

Գրկ. Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վնտ., 1827: Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1903: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնտ., 1940: Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԱՊՈՂԻՆԱՐԻԶՄ, հերետիկոսական ուսմունք, ըստ որի՝ Քրիստոսի մեջ մարդկությունը չունի բանական հոգի, և Բանն Աստված ընդամենը միավորվել է շնչավոր մարմնի հետ: Աստվածաբան. մտքի պատմության մեջ քրիստոսաբան. հարցն իր ողջ սրությամբ առաջ է քաշվել այս ուսմունքով: Հիմնադիրն է Ապողինար Լաոդիկեացին (մահ. մոտ 392-ին), որը նախապես եղել է Նիկիական հավատի պաշտպաններից մեկը և բարձր գնահատվել մասնավորապես *Աթանաս Ալեքսանդրացու* և *Բարսեղ Կեսարացու* կողմից:

Ապողինարը փորձում էր պարզել այն հանգամանքները, որոնց դեպքում Բանի մարմնացումն իսկապես կլիներ Աստվածության և մարդկության կատարյալ միություն՝ Քրիստոսի անձի կատարյալ միակության դեպքում: Նա ընդունում էր մեկ դեմք, մեկ անձ և մեկ բնություն հետևյալ կերպ. «Աստված և մարդ կազմեցին մեկ բնություն՝ բարդ և բաղադրյալ», և «երկու կատարյալներից» չի կարող կազմվել «կատարյալ միություն»: Եթե Աստված կատարելապես միանար մարդու հետ՝ միտք, հոգի և մարմին ունեցող, ապա կմնար չլուծված երկվություն: Ավելի ստույգ, եթե Բանը վերցներ մարդկային միտքը՝ ազատության և ինքնիշխանության սկիզբը, ապա Ապողինարին թվում էր, որ իսկական միացում չէր լինի, այլ կստացվեր երկու կենտրոն և երկու սկիզբ: Ուստի մարմնավորման հիմն. նպատակը տեղի չէր ունենա. Աստված չէր մեռնի ինչպես մարդ, այլ ոմն մարդ կմեռներ: Բացի այդ, մարդկային միտքը, պահպանելով իր ազատությունը և «ինքնաշարժությունը», չէր կարող հոգու մեջ հաղթահարել մեղքի թթխմորը: Դա հնարավոր էր միայն աստվածային մտքի համար: Ըստ այդմ՝ Ապողինարը բացառում էր մարդկային էության ամբողջականությունը մարմնացյալ Բանի մեջ և պնդում, որ «միտքը» միացման ժամանակ չէր վերցվել, և նրա տեղը զբաղեցրել էր Բանը՝ միանալով շնչավորված մարմնի հետ: Կատարվել է մարմնավորում և ոչ թե մարդացում: Ապողինարը համարում էր, որ Քրիստոսի շնչավորված մարմինն անբաժանելիորեն «էակցվեց» և «սերտաճեց» Բանի հետ, որը նրա մեջ դարձավ գործունեության սկիզբ և վերափոխվեց գոյության մի նոր կերպարի՝ «բաղադրյալ, մարմնավորված և աստվածային բնության միավորությամբ»:

Ա. դատապարտվել է Ալեքսանդրիայի 362-ի և մի շարք եկեղեց. ժողովների, ինչպես նաև 381-ի *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի* կողմից: Ա. սուր քննադատության են ենթարկել *եկեղեցու հայրերը*: IV դ. 70-ական թթ. է վերաբերում անանուն հեղինակի «Ընդդէմ Ապողինարի» երկհատոր գրվածքը, որը գտնվել է Աթանաս Ալեքսանդրացու երկերում: Նշանավոր է Բարսեղ Կեսարացու «Ընդդէմ Ապողինարի» հակաճառությունը:

Բան Աստծո մարդացումը, ըստ Բարսեղ Կեսարացու, «երկու կատարյալ գոյացությունների միավորում» է, որը նա բնորոշել է «տնօրէնութեան միաւորութիւն» կարևոր եզրով: Աստված քաղցեց, ծարավեց, հոգնեց, արտասվեց, խաչվեց, չարչարվեց տնօրենության միավորությամբ և ոչ թե՝ աստվածային բնությամբ: Նույնպես և մարդկային մարմինը, հոգին, միտքը բնությամբ մարդկային են, սակայն տնօրենության միավորությամբ՝ աստվածային, ուստի անապական են և անմեղ: Մարդկության կատարելությունը Քրիստոսի մեջ կարևոր է փրկաբանական տեսանկյունից: Աստված կատարելապես մարդացավ, այսինքն՝ վերցրեց մարդկային բնության ամբողջականությունը, որպեսզի մեր փրկությունը լինի կատարյալ և ամբողջական: Եթե Քրիստոսի մարդեղությունը թերի է կամ

ոչ իրական, ապա իրական չէ մարդու փրկությունը: Աստծո մարմնավորման ողջ խորհուրդը չի կարելի սահմանափակել մարմին հագնելով, և Աստծո մարդասիրությունը՝ մարմնասիրությամբ: Եթե մարմինն անձնավոր չէ, ապա այլևս մարդկային չէ, քանզի առանց բանական անձով անձնավորվելու՝ մարդկային մարմին գոյություն ունենալ չի կարող: Մարմինը մարմին է և անձը՝ անձ. միայն բանական անձի մարմնացումով և մարմնի անձնավորումով է կայանում մարդկային բնությունը:

Ա., որպես քրիստոնեական. ծայրահեղություն, իրենից ներկայացնում է, այսպես կոչված՝ մարդաբանական առնվազություն (մինիմալիզմ): Ա-ի քննադատությանը զուգահեռ առաջ է քաշվել (հատկապես Բարսեղ Կեսարացու, *Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու* կողմից) նաև եզրերի սահմանման հարցը. հարկ էր զանազանել և սահմանել «բնություն», «դեմք», «անձ» եզրերը և հստակ լուսաբանել Աստծո և մարդու միության խորհուրդը:

Ա. պատմ. շարունակություն չի ունեցել: Ա-պողինար Լաոդիկեացու աշակերտների և հետևորդների զգալի մասը վերադարձել է եկեղեցի:

Գրկ. Կյուրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, ԿՊ, 1717: Տիմոթեոս Ալեքսանդրացի, Հակաառութիւն առ սահմանեալն ի ժողովոյն Քաղկեդոնի, Էջմիածին, 1908: Կնիք հաւատոյ, Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: *Спасский А. А., Историческая судьба сочинений А. Лаодикийского, Сергиев Посад, 1895; Болотов В.В., Лекции по истории древней церкви, т. 4, М., 1994;* Lietzmann H., Apollinaris von Laodicea und seine Schule. Texte und Untersuchungen, Tubingen, 1904; Grillmeier A., Christ in Christian Tradition, v. 1, 2, 1975.

Մեսրոպ քհն. Արամյան

ԱՊՐԱԿՈՒՆԻՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Սյունիք նահանգի Երնջակ գավառի (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Ջուլֆայի շրջանում) Երնջակ գետի աջ ափին, Ապրակունիս գյուղի մոտ, սարավանդի վրա: Հիմնադրել է Մաղաքիա Ղրիմեցի վարդապետը 1381-ին: Աշակերտներ հավաքելով՝ հրավիրել է *Հովհան Որոտնեցուն* ու *Գրիգոր Տաթևացուն* և վանքում հիմնադրել Ապրակունյաց բարձրագույն տիպի դպրոցը, որի առաջին ռաբունապետն է դարձել Հովհան Որոտնեցին: Վանքի շինարարությունն ավարտել է Գրիգոր Տաթևացին, որը Հովհան Որոտնեցու մահից հետո՝ 1386-ին փոխարինել է նրան որպես ռաբունապետ, իսկ 1391-ին, Լենկթեմուրի արշավանքի պատճառով, ստիպված հեռացել է Երնջակից: XV–XVI դդ. Ա. Ս. Կ. վ. և նրա դպրոցն անկում են ապրել, XVII դ. եկեղեցին ու մյուս շինություններն արդեն եղել են խարխուլ վիճակում: 1655-ին Եսայի ու Ղազար վարդապետները նոր եկեղեցի են կառուցել՝ քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով, բազմանիստ խորանի երկու կողմերում երկհարկ ավանդատներով: Ս. Կարապետ եկեղեցու հիմն. ծավալը կառուցված է սրբատաշ բազալտից, իսկ բարձր, սլացիկ թմբուկով գմբեթը՝ աղյուսից: Հարդարանքի տարրերն են պատերի ստորին մասի բազմագույն, շախմատաձև շարվածքը և դեկորատիվ կամարաշարը: Եկեղեցու խորանի վերևի արձանագրության մեջ նշված է ճարտարապետի անունը՝ Դավիթ ուստա: Արմ. ճակատին 1664–1666-ին կցել են եռակամար գավիթ-սրահ (այժմ՝ ավերակ): Հվ-ից կից է թաղածածկ, երկար Ս. Ստեփանոս մատուռը, որը, ըստ չափածո շին. արձանագրության, 1714-ին կառուցել է շոռոթեցի վաճառական Խոջա Այվազը: 1705-ին նախիջևանցի պարոն Աղամալը Ս. Ստեփանոս մատուռի տանիքին երկհարկ զանգակատուն է կառուցել: Ս. Կարապետ եկեղեցու ներսը Նաղաշ Հովնաթանի որդիներ Հարությունը և Հակոբը 1740-ին զարդարել են բարձրարվեստ որմնանկարներով. պահպանված հատվածներից արժեքավոր են Աստվածածնի, Պողոս և Պետրոս առաքյալների դիմապատկերները:

Ա. Ս. Կ. վ. XIV–XVIII դդ. եղել է հոգևոր, մշակութ. և դրչության կենտրոն: Այդտեղի ձեռագրերից առանձնանում է Հակոբ դրչի 1386-ին ընդօրինակած «Ժողովածու բանից Գրիգոր Նարեկացվո, Գրիգոր Տղայի և այլոց»-ը: Վանքը եղել է նաև օձի խայթոցը բուժող հայտնի ուխտատեղի: Ա. Ս. Կ. վ-ում պահվել են ս. Կարապետի և ս. Հովհան Ոսկեբերանի մասունքները, «Հազարափրկիչ» խաչը, որը համաճարակների ժամանակ թափորով տարել են ախտահարված վայրերը (օր., 1878-ին՝ Ագուլիս):

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.7, 2-րդ պատկերը:

Գրկ. Սեդրակյան Ա., Հնութիւնք Հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղ-պատ, 1872: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Սմբատյանց Մ., Նկարագիր Սուրբ Կարապետ վանից Երնջակա և շրջակայից նորա, Տփխիս, 1904: Այվազյան Ա., Աբրակունիսի Սուրբ Կարապետ վանքը, «Էջմիածին», 1976, № 7:

Մուրադ Հասրաթյան

ԱՋ, աստվածաշնչյան և կրոնածիսական նշանակությամբ՝ 1. արարչական Ձեռք. օրհնության, աստվածային հաճության նշանակ. բարու խորհրդանիշ. աստվածային զորության, իշխանության ցուցիչ: Աստծո մասին Դավիթն ասում է. «... Իր Աջն ու իր սուրբ բազուկը փրկեցին նրան» (Սաղմ. **97.**1): Ա. հասկացությունն Աստվածաշնչում հանդես է գալիս նաև այլ նրբիմաստներով, սակայն հիմնականում ըմբռնվում է որպես Աստծո Ա.: Ընդ որում եբրայերենում Ա. նշանակում էր նաև հարավ, իսկ ձախը՝ հյուսիս:

Կարմիր ծովով անցնելուց հետո Մովսեսն ու իսրայելացիները փառաբանում են Աստծուն՝ ասելով. «Քո աջը, Տե՛ր, զորությամբ փառավորվեց, քո աջը, Տե՛ր, խորտակեց թշնամուն» (Ելք **15.**6):

Աստծո Ա. խորհրդանշում է Հիսուսին: Հիսուսի համբարձման վերաբերյալ Մարկոս ավետարանիչը գրում է. «Եվ ինքը Տեր Հիսուս, նրանց հետ խոսելուց հետո, դեպի երկինք վերացավ և նստեց Հոր աջ կողմը» (Մարկ. **16.** 19):

Աստվածաշնչում բազմաթիվ են Աստծո Ա-ի հիշատակումները՝ որպես խորհրդանիշ զանազան իրողությունների. Աստծո արարչագործության (Եսայի **48.** 13), Աստծո զորության (Ելք **15.** 6, Սաղմ. **21.**8), պատվի, մեծարման (Սաղմ. **44.**10, Մատթ. **25.**34, Գործք **7.**55), մասնավոր օրհնության (Ծննդ. **48.** 14), եղբայրական սիրո (Գաղատ. **2.**9), թշնամության (Սաղմ. **108.**6, Զաքարիա **3.**1), երդման [Հայտն. **10.**5–6, Ծննդ. **14.** 22 ևն (իսկ երդմնազանց մարդու ձեռքը համարվում է «մեղսագործ աջ», Սաղմ. **143.** 8)]:

Աստծո Ա. սրբապատկերներում առկա է իբրև օրհնության խորհրդանիշ՝ ձեռք, որը երևում է բացված երկնքից:

2. Ա., որպես օրհնության և զորության փոխանցման միջոց, Աստծո կամեցողությամբ տրված է նաև Աստծո սիրելիներին (նահապետներ, մարգարեներ, առաքյալներ): Այսպես, Աստվածաշնչում Հակոբն օրհնում է իր որդու՝ Հովսեփի որդիներին՝ իր աջ ձեռքը դնելով Եփրեմի, իսկ ձախը՝ Մանասեի գլխին (Ծննդ. **48.**12–16): Իսկ սրանից էլ առաջ Աբրահամն իր որդու՝ Իսահակի համար կին բերելու մեկնող ծառային երդվեցնում է՝ վերջինիս ձեռքը դնել տալով իր ազդրի տակ. խորհրդանշական արարողություն, որն, անշուշտ, ունի հատուկ իմաստ (Ծննդ. **24.**3–5, 9): Ձեռքն օրհնվելու ենթակա անձի գլխին դնելու, Ա-ով օրհնելու բազում դեպքեր է վկայում Սուրբ Գիրքը. «Նավեի որդի Հեսուն լցվեց իմաստության հոգով, որովհետև Մովսեսն իր ձեռքը դրել էր նրա վրա...» (Երկրորդ օրենք **34.**9), «Եվ ձեռքը դրեց նրա վրա, ու նույն ժամին հիվանդը ուղղվեց և Աստծուն փառք էր տալիս» (Ղուկ. **13.**13), «Այն ժամանակ ձեռքները դրեցին նրանց վրա, և նրանք Սուրբ Հոգին ստացան» (Գործք **8.**17) ևն:

Տես նաև *Ձեռնադրություն*:

3. Եկեղեցիներում որպես սրբություններ պահպանվում են սուրբ առաքյալների և հայրապետների մետաղե Ա-երը: Հայ եկեղեցու սրբություններից են *Լուսավորչի Աջը, Թադեոս* և *Բարդուղիմեոս* առաքյալների, *Հակոբ Մծբնացու* և մյուս սուրբերի Ա-երը՝ նրանց մասունքներով հանդերձ (տես *Մասունք* սրբոց), որոնք պահպանվում են Ս. Էջմիածնի վանքի թանգարանում: Սուրբերի Ա-երը նշանակ են տվյալ եկեղեցու շնորհաբաշխության:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.7, 3–4-րդ պատկերները:

Լևոն Սարգսյան

ԱՋԱՊԱՀՅԱՆՆԵՐ, իշխանական տոհմ Կիլիկյան Հայաստանում: Ժառանգաբար պահպանել են կաթողիկոս. իշխանության խորհրդանիշ համարվող Սրբազան Աջերը (ս. Գրիգոր Ա Լուսավորչի, ս. Սեղբեստրոսի, ս. Նիկողայոս Աքանչելագործի, ս. Պարսամի) և այլ սրբություններ: Այստեղից էլ՝ տոհմի անունը:

Ձեռագիր հիշատակարաններում արձանագրված ավանդության համաձայն, գերդաստանը սերել է Հեթում Բ թագավորի եղբայր Հովհաննեսից: 1292-ի հուլիսի 28-ին եգիպտ. զորքերը, գրավելով Հռոմկլան, գերեվարել են *Ստեփանոս Դ Հռոմկլայեցի* կաթողիկոսին և տարել կաթողիկոս. բոլոր սրբություններն ու թանկարժեք անոթները: Մի քանի տարի հետո, մեծ ջանքերի գնով, Հեթում արքային ու Հովհաննես Արքաեղբորը հաջողվել է վերադարձնել սրբությունների մի մասը, որոնց թվում՝ նաև սրբազան Աջերը: Հետագայում, նման դեպքերից խուսափելու համար, դրանք հանձնվել են ի պահպանություն Հովհաննես Արքաեղբորն ու իր հաջորդներին: Այսպես հիմնվել է Աջապահյան տոհմը, որը մեծ դեր է կատարել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Սսի, մասնավորապես՝ Կիլիկիայի կաթողիկոսության (տես

Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո) եկեղեց., վարչ., հոգևոր կյանքում: 1731-ին Հուսիկ քհն. Աջապահյանը մեկնել է Կ. Պոլիս և սուլթանից ստացել Կիլիկիայի կաթողիկոսության հրովարտակը, որով Ա-ին իրավունք է տրվել տնօրինելու կաթողիկոսության գահը: 1731–1866-ին, անընդմեջ, կաթողիկոս են օծվել Ա-ի Սսի ճյուղի ներկայացուցիչները հետևյալ հաջորդականությամբ.

Ղուկաս Ա (1731–37), Միքայել Ա (1737–58), Գաբրիել Ա (1758–70), Եփրեմ Ա (1771–84), Եղիազար Ա (1772, անվավեր), Թեոդորոս Ա (այլ ցանկերում՝ Թորոս Գ, 1784–96), Կիրակոս Ա Մեծ (1797–1822), Եփրեմ Բ (1823–33), Միքայել Բ (1833–55), Կիրակոս Բ (1855–66):

Աջապահյան տոհմի կաթողիկոսները (Ղուկաս Ա., Միքայել Ա., Կիրակոս Ա.) ծավալել են շին., վարչ., հոգևոր-մշակութ. և կրթ. մեծ գործունեություն: Գրական գործունեությամբ աչքի է ընկել Եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսը:

1860-ի *Ազգային սահմանադրությամբ* սահմանափակվել են Ա-ի իրավունքները, թեև, համաձայն գերդաստանի սրբազործված ավանդության, Ա-ի ժառանգներն իրենց տիրական ներկայությունը պահել են Կիլիկիայի կաթողիկոսաթոռի միաբանության շարքերում: Մեծ եղեռնի տարիներին նրանք նույնպես ենթարկվել են ջարդի և տեղահանության: Փրկվածները բնակություն են հաստատել Լիբանանում, որտեղից էլ հետագայում սփռվել են այլ երկրներ:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, 3, ԿՊ-Երուսաղեմ, 1914, 1927: Կյուլեսերյան Բ., Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939:

Միքայել ծ. վրդ. Աջապահյան

ԱՌԱՋԱՎՈՐԱՑ ՊԱՀՔ, *Գրիգոր Ա Լուսավորչի սահմանած պահք*, որը հատուկ է միայն Հայ եկեղեցուն: Լինում է *Մեծ պահքից* 3 շաբաթ առաջ: Պահանջվում է խիստ պահեցողություն: Հնում թույլատրվել է ուտել միայն աղ ու հաց: Այդ օրերին չի արտոնվում Պատարագ մատուցել, եկեղեցում ընթերցել Սուրբ Գիրք կամ Ավետարան:

Տարբեր մեկնությունների համաձայն, այս պահքը «Առաջավորաց» է կոչվել իբրև ազդարար Մեծ պահքի կամ, իբրև Հայոց պահք՝ նշանակ Հայաստանի հոգևոր լուսավորության: Ըստ մեկ այլ բացատրության, Աստված 6-րդ օրը մարդուն ստեղծելուց հետո միայն 5-րդ օրն է ուտելու հրաման տվել (Ծննդ. 1.29–30), և չուտիքի հենց այդ 5 օրն է ակնարկում «Առաջավորաց»-ը:

Ա. պ-ի 5-րդ օրը (ուրբաթ) հիշատակվում է ս. Հովնանի քարոզությունն ու Նինվեի ապաշխարությունը, բայց ոչ իբրև Հովնան մարգարեի տոն, այլ իբր մեծ ապաշխարության և ծոմապահության օրինակ:

Ա. պ-ի խորհուրդը հեթանոս. ապականությունից, աղամական մեղքից մարդկային 5 զգայարանների սրբումն է: Հին եկեղեցում սովորություն կար մկրտությունից առաջ 5 օր ծոմ պահել: Գրիգոր Ա Լուսավորիչը նույնպես սահմանում է, որ Տրդատ Գ թագավորն ու մյուսները մկրտությունից առաջ 5 օր ծոմ պահեն, ինչի շնորհիվ էլ նրանք փրկվում են այսահարությունից: Այստեղից էլ Ա. պ. կոչվել է նաև Փրկության պահք:

Ա. պ. միջնադարում թյուրիմացաբար անվանվել է ս. *Սարգսի* պահք՝ ելնելով այն հանգամանքից, որ Ա. պ-ին հաջորդող շաբաթ օրը Հայ եկեղեցին տոնում է ս. Սարգսի տոնը:

Հայ մատենագիրների վկայությամբ, Ա. պ. հնում գոյություն է ունեցել նաև հույների ու լատինների մոտ:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6 հրտ., Թեհրան, 1999:

Եղնիկ եպս. Պետրոսյան

ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ, Պոռեցի [մոտ 1380, գ. Պոռ (Վասպուրական) – 11.1.1454, ք. Արղնի (կամ Արկնի)], վարդապետ, տաղերգու, բանաստեղծ: Աշակերտել է *Գրիգոր Խլաթեցուն* (Ծերենց)՝ լինելով *Թովմա Մեծոփեցու* ուսումնակիցը: Եղել է Զմշկածագի Երկայն-Ընկուզյաց վանքի առաջնորդ (1422): Այստեղ ծավալել է բարենորոգչական-կրթ. և գրական գործունեություն, խրախուսել գրչության արվեստը: Ա. Բ. անձն. ծանոթություն է ունեցել ժամանակի նշանավոր շատ գործիչների, այդ թվում՝ *Մկրտիչ Նաղաշի* հետ, որն իր համադյուղացին էր:

Գրիգոր Խլաթեցու ողբերգական մահվան առթիվ Ա. Բ. ձոնել է «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գրիգոր վարդապետի Խլաթեցւոյ» չափածո եղերերգը (1425) և «Պատմութիւն քաջ և տիեզերալոյս վարդապետին մերոյ Գրիգորի Խլաթեցւոյ Ծերենցն» արձակ վկայաբանությունը (1426), որոնք, գեղ. արժեքից զատ, ունեն արժանահավատ պատմ. սկզբնաղբյուրի նշանակություն:

Ա. Բ. թողել է բազմաժանր գրական ժառանգություն՝ տաղեր, գանձեր, պատմ. պոեմներ, ողբեր, ներբողներ, վկայաբանություններ ևն՝ իր ստեղծագործության մեջ ամենից առաջ կարևորելով հայ ժողովրդի ազատագրության և անկախ պետականության վերականգնման գաղափարը: «Ողբ մայրաքաղաքին Ստամպոլու» պատմաքաղ. պոեմում, գրված 1453-ին Կոստանդնուպոլսի անկման առթիվ, քրիստոնյա Բյուզ. կայսրության փլուզումը համարում է գույժ քրիստոնյա ժողովուրդների և, մանավանդ, հայերի համար, բայց և հավատում է հաղթական գալիքին, երբ վերականգնվելու է Հայոց խորտակված գահը՝ Արշակունյաց քաղաքամայր Վաղարշապատում, կաթողիկոս. աթոռին վերստին բազմելու են Գրիգոր Ա Լուսավորչի տոհմի շառավիղները: «Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» պոեմի համար ուղեցույցաղբյուր է եղել Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը», իսկ «Ներբողեան տաղաչափական ի վերայ վարուց Մեծին Ներսէսի» պոեմի համար՝ Մեսրոպ Վայոցձորեցու (X դ.) «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթևի Հայոց հայրապետի» երկը: Հեղինակն այս պոեմներում դրվատում է Հայ եկեղեցին ու դավանանքը, որոնց մեջ է տեսնում ազգ. անաղարտ դիմագծի պահպանման և Հայոց ապագա ազատության գրավականը:

Ա. Բ. անդրադարձել է նաև պարականոն գրականության առանձին թեմաների. ուշագրավ է «Տաղ աւետեաց» պոեմը, որտեղ դրամատիզմով է պատկերել Մարիամ Աստվածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի կյանքի որոշ դրվագներ, կույս Մարիամի հուզումները՝ Գաբրիել հրեշտակապետի բերած աստվածային՝ կուսական հղության պատգամն ընդունելիս: 1434-ին գրված «Տաղ Յովասափու» պոեմի հիմքում ընկած է Բուդդայի ավանդ. կենսագրության քրիստ. տարբերակներից մեկը, որը, ինչպես ենթադրվում է, սկզբնապես գրված է եղել պահլավերեն, ապա՝ թարգմանվել այլ լեզուներով. հայերեն տարբերակը թարգմանվել է հուն-ից՝ 1048-ին: Ա. Բ. արձակ վեպը վերամշակել է չափածո: Պոեմի գործողությունը ծավալվում է հեթանոս. պաշտամունքի կողմնակիցների և քրիստ. կրոնի լուսակիրների միջև: Գլխ. հերոսը՝ Աբեներ թագավորի որդի Յովասափը, հրաժարվում է դահից ու թագից, դառնում քրիստոնյա և դնում անապատ՝ ճգնելու: Հայրը ևս հետևում է որդու օրինակին:

Ա. Բ-ու տաղերը հիմնականում ունեն բարոյախրատ. բովանդակություն:

Գրկ. Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901, մաս 1, էջ 126: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970, էջ 441–443: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 1106–43: Ղազինյան Ա., Առաքել Բաղիշեցի, Ե., 1971:

Արշալույս Ղազինյան

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ (մոտ 1590, Թավրիզ – 1670, Վաղարշապատ), պատմագիր, եկեղեցական գործիչ: Սովորել է Ս. Էջմիածնի հոգևոր վարժարանում, աշակերտել կաթողիկոս *Փիլիպոս Ա Աղբակեցուն*: Ձեռնադրվել է վարդապետ, զբաղվել ուսուցչությամբ, եղել Ս. Էջմիածնի միաբանության անդամ, ապա՝ *Հովհաննավանքի* առաջնորդ (1636–37): Որպես Ս. Էջմիածնի նվիրակ այցելել է Պարսկաստան, Թուրքիա, Սիրիա, Պաղեստին, Հունաստան, եղել Արմ. Հայաստանի տարբեր գավառներում և հանուն Մայր աթոռի զբաղվել հանգանակությամբ (1645–46): 1651-ին Փիլիպոս Ա կաթողիկոսի հանձնարարությամբ գրել է «Պատմութիւն» («Գիրք պատմութեանց», «Պատմագիրք») աշխատությունը (ընդհատումներով՝ 1651–62): Գրքում հանդիպում են նաև ավելի ուշ շրջանի (մինչև 1668-ը) վերաբերյալ տեղեկություններ, որոնք հետաքրքրություն ընդմիջարկություններ են: Ա. Դ. մանրամասն և ճշմարտապատում նկարագրել է իր ապրած ժամանակների եղելությունները, անդրադարձել Հայաստանի տնտ. ու քաղ. կացությանը, պարսկա-օսմանյան պատերազմների պատմությանը, ջալալիների շարժմանը, վավերականորեն նկարագրել շահ Աբբաս I-ի կազմակերպած՝ հայերի բռնագաղթը (1604) և դրա դառնաղետ հետևանքները: «Պատմութիւնը» արժեքավոր սկզբնաղբյուր է հայկ. գաղթավայրերի պատմության ուսումնասիրության համար, եզակի տեղեկություններ է հաղորդում Լվովի հայերի ներքին կյանքի, ինքնավարության, դատավարության, կենցաղի, Նոր Ջուղայի հիմնադրման ու ծաղկման, արհեստների, առևտրի զարգացման վերաբերյալ:

Ա. Դ. մեծ ուշադրություն է դարձրել Հայ եկեղեցու պատմության հարցերին. մանրամասն անդրադարձել XVII դ. 1-ին տասնամյակներին Ս. Էջմիածնի ողբալի կացությանը, Մայր աթոռի ներքին կյանքի դժվարություններին, հոգևորականության բարքերին, վկայաբանու-

թյուններին, նահատակության առանձին դեպքերի (Անդրեաս Երեց ևն), մանրամասն շարադրել Հայաստանի հոգևոր վերազարթոնքի գործում *Մովսես Գ Տաթևացի*, Փիլիպոս Ա Աղբակեցի, *Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսների գործադրած ջանքերը, նոր վանքերի ու դպրոցների հիմնադրումը, անդրադարձել ժամանակի հայոց մշակույթի ու եկեղեցու նշանավոր դեմքերի (Սիմեոն Ջուղայեցի, Ստեփանոս Լեհացի, Մինաս Ծաղկող, Ներսես Մոկացի և այլոց) ծավալած եկեղեց., կրթ. ու մտավոր-մշակութ. գործունեությանը: Հատկապես արժեքավոր են «Պատմութեան» այն գլուխները, որոնք վերաբերում են լեհահայ գաղութի կյանքին, մասնավորապես լեհահայերի բռնի կաթոլիկացման իրադարձություններին, Նիկոլ եպս. Թորոսովիչի ազգադավ գործունեությունը, ներկայացնում են Հայաստանում, Պարսկաստանում, Լեհաստանում և հայկ. այլ գաղթավայրերում լատին միսիոներների ծավալած քարոզչությունը և նրանց իրական նպատակները, մերկացնում հայությանը պառակտող նրանց գործելակերպը: Հեղինակը կոչ է արել դավան. միասնությամբ ու ազգ. համերաշխությամբ պայքար մղել հոգեորսության յուրաքանչյուր դրսևորման դեմ: Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին գիրքը համարել է «վտանգավոր ու մոլորական» և մտցրել արգելված գրքերի ցուցակի մեջ: Ա. Դ. դատապարտել է այն հայ հոգևորականներին, որոնք փորձել են արևմտահայ հատվածն անջատել Ս. Էջմիածնից և ստեղծել առանձին՝ թուրքահայ կաթողիկոսություն, կանխատեսել է այդ քայլի հնարավոր ողբալի հետևանքները հայության ճակատագրի համար: Անդրադարձել է նաև իր ժամանակի աղանդավոր. շարժումներին, կազմել Հայոց կաթողիկոսների ժամանակագրությունը (գլ. ԼԱ) ևն:

Ա. Դ-ի «Պատմութիւնը» արժեքավոր ու եզակի սկզբնաղբյուր է Պարսկաստանի, Թուրքիայի, Վրաստանի և Մերձ. Արևելքի այլ երկրների պատմության ուսումնասիրության համար: Առաջին անգամ լույս է տեսել դեռևս հեղինակի կենդանության օրոք՝ 1669-ին, Ամստերդամում, *Ոսկան Երևանցու* աշխատասիրությամբ, այնուհետև հրատարակվել ևս երեք անգամ. լավագույնը վերջին՝ քննական հրատարակությունն է (1990): Գրքի կարևորագույն հատվածներից մեկը (գլ. ԻԸ)՝ «Պատմութիւն նեղութեանց և վշտաց, զոր կրեցին հայ ազգաւ քրիստոնեայքն, որ բնակեալք են ի քաղաքն Իլով», լույս է տեսել նաև առանձին («Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. ժամանակակից յիշատակարանք», 1884): Գիրքը թարգմանվել է ֆրանս. (1874), ռուս. (1973), լեհ. (1981), հատվածաբար՝ վրաց. (1974): Ա. Դ. հեղինակ է նաև «Տաղ վասն մահրամայի» և «Տաղ մնուշ և գեղեցկազան» կրոն. բովանդակությամբ տաղերի:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 4, ե., 1970, էջ 512–525: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, ե., 1959, էջ 1144–55: Առաքելյան Վ., Առաքել Դավրիժեցի, ՊԲՀ, 1970, № 3: Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի 14–18-րդ դարերի պատմագրության, ե., 1984, էջ 79–131: Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի 17-րդ դարի պատմության սկզբնաղբյուր, ե., 1978:

Պետրոս Հովհաննիսյան

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ (XIV դ. 2-րդ կես – XV դ. 1-ին կես), աստվածաբան, տաղերգու, Սյունյաց արքեպիսկոպոս (1407-ից): *Տաթևի համալսարանում* աշակերտել է *Հովհան Որոտնեցուն* և *Գրիգոր Տաթևացուն*, որի քրոջորդին էր: Գործել է Տաթևի համալսարանում: Աստվածաբանության ու իմաստասիրության, հավատի ու բանականության և այլ իմացաբան. հարցերում հետևել է Գրիգոր Տաթևացուն՝ հատկապես զարգացնելով նրա նոմինալիստ. (անվանաբան.) և սենսուալիստ. (զգայաբան.) գաղափարները: «Մեկնութիւն քերականին» ուս. ձեռնարկում քերականությունը համարել է բոլոր իմաստությունների նախադուռ, այս առումով կարևորել լեզուների, մանավանդ՝ մայրենիի իմացությունը:

Ա. Ս-ու «Ադամգիրք» (հրտ. 1721) քերթվածի՝ տրամախոսության ձևով կառուցված եռապոեմի հենքը ադամական մեղքի աստվածաշնչյան պատումն է, մարդու տվյալանքն առ կորուսյալ դրախտ: Այս երկին սերտորեն աղերսվում է մյուս՝ «Դրախտագիրք» քերթվածը:

Ա. Ս. գրել է նաև Հիսուս Քրիստոսին, Աստվածածնին և սրբերին նվիրված ուսուցող. բնույթի բանաստեղծություններ, երկնային մարմինների մասին ակրոստիքոսներ: Ա. Ս-ուն բնորոշ է ազգային-կրոն. ավանդությունների մշակումը, քրիստ. բարեպաշտության և բարոյականության հարցերի արծարծումը: Նա հայ պատմիչներից վերցրել և մշակել է Հակոբ Մծբնացուն, Գրիգոր Ա Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն վերաբերող պատումները, հա-

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ. ճախակի անդրադարձել Երգ երգոցին: Զբաղվել է նաև երաժշտության տեսության և գեղագիտության հարցերով, ինչը արտացոլում է ստացել իր «Մեկնութիւն քերականին» երկի մի շարք հատվածներում: Ենթադրվում է, որ Ա. Ս-ու «Ադամգիրքը» ունեցել է նաև երաժշտ. ձևավորում. առանձին հատվածներ երգվել են տաղերի ձևով: Ա. Ս. հայտնի է եղել որպես երգահան, հիմնականում՝ տաղասաց: Նրա երկերից շատերն իրենց հաստատուն տեղն ունեն միջնադարյան ժողովածուներում՝ Գանձարաններում, Տաղարաններում և Մաշտոցում: Տաղերից մի քանիսը հասել են մեզ իրենց մեղեդիներով և ձայնագրվել XIX դ. վերջին:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.8, 1-ին պատկերը:

Երկ. Լուծմունք, յաղագս Սահմանացս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի..., Մադրաս, 1797 (Դավիթ Անհաղթի «Գիրք Սահմանաց...»-ի հետ): Առաքել Սիւնեցի և իր քերթուածները, ուսումնասիրութեամբ հրտ. Մ. Պոտուրյան, Վնտ., 1914: Դրախտագիրք, հրտ. Ն. Տեր-Ներսեսյան, Վնտ., 1956: Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք, աշխատասիր. Լ. Խաչերյանի, Լոս Անջելես, 1982:

Գրկ. Գապասաքալյան Գ., Գիրք երաժշտական, ԿՊ, 1803: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Ե., 1954: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը. V–XV դդ., Ե., 1985: Մաղոյան Ա., Առաքել Սյունեցի. Բանաստեղծը, Ե., 1987: Արեվշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991, էջ 68–70: Tchobanian A., La Roseraie d'Arménie, t. 1, P., 1918.

Արշակ Մաղոյան
Աննա Արևշատյան

ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, շնորհ, հատկանիշ, որն առաքելական որակ է հաղորդում Քրիստոսի *եկեղեցուն*, օժտում շնորհաբաշխությամբ և իշխանությամբ: «Առաքելական» բառը եկեղեցու որակումներից մեկն է. նշանակում է Հիսուս Քրիստոսի *առաքյալների* վկայության հիմքի վրա բարձրացած եկեղեցի և, առհասարակ, առաքելական գործի շարունակությունը եկեղեց. կյանքում: «Առաքյալ»-ը հուն. *αποστολος* բառի հայերեն թարգմանությունն է և նշանակում է Ավետարանը քարոզելու համար ուղարկված անձ, ամենայն իշխանությամբ օժտված դեսպան:

Չորս Ավետարաններում խոսվում է տասներկու առաքյալների մասին, որոնց Հիսուսը կոչեց աշակերտներ և «... նրանց իշխանություն տվեց պիղծ դևերի վրա՝ հանելու դրանք և բժշկելու ամեն ցավ և ամեն հիվանդություն» (Մատթ. **10.**1): Նրանք իրենց հրահանգներն ստացան ուղղակի Քրիստոսից, վկաները եղան նրա կատարած հրաշքներին, նրա հարությանը և համբարձմանը (Մարկ. **16.**1–20):

Հովհաննես ավետարանիչն ավելացնում է, թե Հիսուսն իր առաքյալներին տվեց *Սուրբ Հոգին* և իշխանություն՝ մեղքերը կապելու և արձակելու համար (Հովհ. **20.**22–23): Ղուկաս ավետարանիչը հիշատակում է Հիսուսի խոսքը առաքյալներին, երբ Վերջին ընթրիքի ժամանակ նա օրհնեց և բաժանեց հացը իբրև իր մարմինը և ավելացրեց. «... այս արե՛ք իմ հիշատակի համար» (Ղուկ. **22.**19): Այսպիսով Քրիստոսը տվեց իր աշակերտներին նախ՝ քարոզելու առաքելությունը և ապա՝ բուժելու զորությունը: Նա վստահեց նրանց քահանայագործելու պարտականությունը՝ տալով երկու հիմն. իշխանություն. ա. մեղքերի արձակման, բ. հացն ու գինին սրբացնելու, և դրանք, իբրև Տիրոջ մարմին ու արյուն, իրենց մեղքերի արձակումը ստացած Քրիստոսի արժանավոր հետևորդներին բաշխելու համար:

Գործք առաքելոց գրքում արձանագրված են Քրիստոսի խոսքերն իր համբարձումից առաջ. «... երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, զորություն պիտի առնեք և ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը» (Գործք **1.**8): Ա-յան էությունը վկայությունն է: Երբ Քրիստոսը խոսում է իր աշակերտների հետ իր համբարձումից հետո կատարվելիք բաների մասին, նա շեշտում է վկայության առաքելությունը. «Զգուշացե՛ք մարդկանցից, որովհետև պիտի մատնեն ձեզ ատյանների և պիտի տանջեն ձեզ իրենց ժողովարաններում. ձեզ պիտի տանեն կուսակալների ու թագավորների առաջ իմ պատճառով, որ իմ մասին վկայություն տաք նրանց և հեթանոսներին: Բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի՛ արեք, թե ինչպես կամ ինչ պիտի խոսեք, որովհետև այդ ժամին ձեզ կտրվի այն, ինչ պիտի խոսեք. քանի որ ոչ թե դուք եք, որ պիտի խոսեք, այլ ձեր Հոր Հոգին, որ պիտի խոսի ձեր միջոցով» (Մատթ. **10.**17–20):

Առաքյալներին տրված հիմն. իշխանությունն էր նաև իրենց գործակից կամ հաջորդ լինելու կոչվածների *ձեռնադրությունը*:

Պենտեկոստեից հետո, երբ առաքյալներն ընդունեցին Սուրբ Հոգին, նրանք զորացան Աստծո շնորհներով և իրենց առաքելությունը սկսեցին Երուսաղեմից, կազմակերպեցին նորաստեղծ քրիստոնյա համայնքները՝ նախն. եկեղեցիները. «Հավատացյալներն ամենքը միասին էին, և ինչ որ ունեին, հասարակաց էր» (Գործք 2.44): Սուրբ Հոգու տվչությամբ ու ձեռնադրությամբ գերբնական զորությունն առաքյալից փոխանցվել է նրանց, ովքեր շարունակել են առաքելությունը, այսինքն՝ քրիստոնյա համայնքի՝ եկեղեցու ղեկավարությունը:

Առաքյալների՝ Ավետարանը քարոզելու հիմն. պարտականությունը, ձեռնադրության շնորհների հետ փոխանցվել է նրանց հաջորդներին, որոնք կոչվում են սարկավագ, երեց և եպիսկոպոս: Բանտից գրած իր նամակում Պողոս առաքյալն ամփոփում է Տիմոթեոսին հղված պատգամը. «Ուստի հիշեցնում եմ քեզ, որ վերարծարծես Աստծու շնորհը, որ տվի քեզ՝ իմ ձեռքերը դնելով քեզ վրա...» (Բ Տիմոթ. 1.6): Այս է Ա., որ շարունակվում է Քրիստոսի հիմնած եկեղեցում, Քրիստոսի *Համբարձումից* և *Հոգեգալուստից* սկսած՝ մինչև այսօր:

Թադեոս և *Բարդուղիմեոս* առաքյալները Հայաստան աշխարհում Ավետարանի քարոզիչներն են: Թադեոսի հետևորդներից Զաքարիան ընդունել է առաքելական շնորհները և Թադեոսի նահատակությունից հետո շարունակել Ավետարանի քարոզչությունը: Նույն առաքելությունը, Ա-յամբ տրված շնորհներով, հետագա ժամանակներում շարունակել են Հայոց հայրապետները:

Հայ եկեղեցին կոչվում է առաքելական, որովհետև. ա. Հայաստանի առաջին եկեղեցիները հիմնող առաքյալները ձեռնադրել են առաջին եպիսկոպոսներին: Նրանցով ապահովվել է Ա-յան հաջորդականությունը Հայ եկեղեցում, բ. առաքյալները քարոզել են Ավետարանը, և նրանց ուսուցումը մնացել է անաղարտ, այնպես, ինչպես ընդունվել է քրիստոնյա բոլոր եկեղեցիների և երեք *տիեզերական ժողովների* կողմից, գ. Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին տրված շնորհները, զորությունը և իշխանությունը Աստծո տված շնորհներն են տաններկուսին՝ Քրիստոսի ձեռքով: «Հիմա իմացան, որ այն ամենը, ինչ ինձ տվիր, ես նրանց տվեցի. և նրանք ընդունեցին ու ճշմարտությամբ ճանաչեցին, որ ես քո մոտից ելա. և նրանք հավատացին, որ դո՛ւ ուղարկեցիր ինձ» (Հովհ. 17.7–8):

Հայ եկեղեցին կառուցված է, ինչպես գրված է եփեսացիներին ուղղված Պողոս առաքյալի թղթում՝ «... առաքյալների և մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուսն է: Նրա վրա ներդաշնակությամբ հաստատված ամբողջ կառույցը Տիրոջով վերաճում է մի սուրբ Տաճարի, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծու՝ Սուրբ Հոգու միջոցով» (Եփես. 2.20–22):

Առաքելական է կամ Ա-յամբ օժտված է այն եկեղեցին. 1. որ հիմնված է մի որևէ առաքյալի ձեռքով, 2. որի իշխանությունը առաքելական ձեռնադրության շարունակությունն է, 3. որ պահել է առաքելական աստվածաշունչ ուսուցումը և դավանությունը՝ համաձայն Նիկիո հանգանակի, 4. որ շարունակում է վկայել, թե Հիսուսն է Քրիստոսը՝ Որդին կենդանի Աստծո, 5. որ շարունակում է քարոզել և մկրտել հանուն Սուրբ *Երրորդության*՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

Շահե արք. Աճեմյան

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ, աստվածային շնորհ, որի առկայությամբ մարդը մտքով, խոսքով և գործով չի մեղանչում Աստծո *պատվիրանների* դեմ, այլ գործում է դրանց համապատասխան: Ելնելով Սուրբ Գրքից՝ եկեղեցին Ա. մեկնաբանել է որպես ճշմարիտ և ուղղափառ *հավատի* արդասիք, այն հավատի, որը խոստովանում է Հիսուս Քրիստոսին Աստծո Որդի և Աստված:

Հին կտակարանում կան Ա-յան բազմաթիվ վկայակոչումներ, որոնք բացահայտում են նրա տարբեր դրսևորումները, ինչպես, օր., Ա. որպես պատվի և ճանաչման արժանի հատկանիշ («... իմ ժողովրդի բոլոր ցեղերը գիտեն, որ դու առաքինի կին ես», Հռութ 3.11): Որոշ թարգմանություններում նշված տեղում «առաքինի» բառի փոխարեն գործածվել է «զորավոր»: Հետևաբար, ըստ սուրբգրային մտածողության՝ առաքինին նաև զորավոր է, քանի որ զորություն ունի իշխելու առհասարակ *մեղքի* վրա: Նաև՝ Ա. որպես աստվածահաճո զարդ («Ժրաջան կինն իր ամուսնու պսակն է», Առակ. 12.4: Երբեմն «առաքինին» թարգմանվում է «ժրաջան»), որպես հազվագյուտ արժեք («Թե առաքինի կին գտնվի, այդպիսին թանկ է բոլոր գոհարներից», Առակ. 31.10) ևն:

ԱՌԱՔՅԱԼՆԵՐ Նորկտակարանային գրվածքներում ևս ջատագովվում է Ա., որպես *Սուրբ Հոգով* վերածնված մարդու՝ կենդանի եկեղեցու՝ այսինքն՝ Հիսուս Քրիստոսի հարսի սուրբ հատկանիշներից (զարդերից) մեկը: Պողոս առաքյալը փիլիպեցիներին հորդորում է խորհել միայն այն, «... ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ՝ պարկեշտությամբ, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբավով, ինչ որ՝ առաքինությամբ, ինչ որ՝ գովությամբ...» (Փիլիպ. 4.8): Իսկ Պետրոս առաքյալը պատգամում է. «...որպեսզի հաղորդակից լինեք աստվածային բնությանը..., այս բանի համար իսկ ամեն ջանք գործադրելով՝ ձեր հավատով առաքինություն ձեռք բերեք, առաքինությամբ՝ գիտություն, գիտությամբ՝ ժուժկալություն, ժուժկալությամբ՝ համբերատարություն, համբերատարությամբ՝ աստվածապաշտություն, աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրություն, եղբայրասիրությամբ էլ՝ սեր» (Բ Պետր. 1.4–7):

Եկեղեցու հայրերը Ա. բաժանել են խմբերի. 1. Աստվածային Ա-ներ՝ հավատ, հույս, սեր, որոնք կապվում են Հիսուս Քրիստոսի տնօրինական և փրկչական առաքելության հետ: 2. Ստացական Ա-ներ՝ *աղոթք* (իբրև հաղորդակցություն Աստծո հետ), *պահք* (իբրև սեփական անձի սրբացման պայմաններից մեկը), *ողորմություն* (իբրև մերձավորի հանդեպ սիրո դրսևորում) ևն: 3. Այլ Ա-ներ՝ հեզություն, աշխատասիրություն, պարկեշտություն ևն, որոնք չեզոքացնում են մեղքը:

Գրիգոր Նարեկացին (ըստ այլոց՝ *Գրիգոր Սկևռացին*) իր «Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին» (1992) երկում, օգտվելով չորս կարգի՝ աստվածաշնչական, դավան., վարքագր. և մարդաբան. աղբյուրներից, Նիկիո Հավատո հանգանակով հաստատագրված Սուրբ *Երրորդության* պատկերը հայտածում է նաև մարդու վրա, նշելով, որ բանական հոգին եռամասնյա է՝ ունի խոսք (միտք), ցասում (սիրտ), ցանկություն (ստորին որովայն, երիկամներ), և սրանցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ Ա.՝ «Բանականի առաքինությունը խոհականությունն է, ցասմնականինը՝ արիությունը, իսկ ցանկականինը՝ ողջախոհությունը» (նույն տեղում, էջ 22): Ա. ծագում է անձի մեջ այն ժամանակ, երբ արարչական կարգավորության համաձայն, իբր վեհ և նախադաս, իրենից ցածր եղողների՝ ցասմնականի կամ ցանկականի վրա իշխում է բանականը՝ գլուխը, և ընդհակառակը՝ Ա. կորչում է, երբ խառնակվում է այս կարգավորությունը:

Վերլուծելով Պողոս առաքյալի՝ «Որպես իմաստուն ճարտարապետ, հիմքը դրեցի ըստ Աստծու... Եթե մեկը այս հիմքի վրա կառուցի ոսկով, արծաթով, թանկարժեք քարերով, փայտով, խոտով, եղեգով, յուրաքանչյուրի գործը հայտնի կլինի...» (Ա Կորնթ. 3.10–12) խոսքերը, Գրիգոր Նարեկացին դրանք համարում է այլաբանություններ. «... ոսկին խոհական իմաստութիւնն է, արծաթը՝ բանական առաքինութիւնը, թանկարժեք քարերը՝ պէս-պէս ու զանազան բարեգործութիւնները: Իսկ փայտը, խոտն ու եղէգը չարագործութիւնն են ցուցց տալիս» («Խօսք ճշմարիտ հաւատքի...», էջ 21):

Գրիգոր Տաթևացին, խոսելով Ա-ների մասին, ասում է. «... երեք լույսերով, այսինքն՝ բանականից, գրավոր օրենքներից և Ավետարանի չնորհներից հեղված լույսերով մեր մեջ հաստատվում են աստվածային երեք առաքինությունները՝ Հավատքը, Հույսը և Սերը» («Ոսկեփորիկ», 1995, գլ. ԽԹ, էջ 247): Ընդ որում, Գրիգոր Տաթևացին նույնպես, հետևելով մարդու (անձի) եռամասնյա կառուցվածքի (բանական-ցասմնական-ցանկական) երրորդաբանական տեսությանը, երեք Ա-ներից՝ հավատը վերագրում է բանականին, հույսը՝ ցասմնականին և սերը՝ ցանկականին:

Լևոն Սարգսյան

ԱՌԱՔՅԱԼՆԵՐ (հուն. *αποστολος* – առաքյալ՝ ուղարկված, պատգամավոր), *Հիսուս Քրիստոսի* կողմից ուղարկվածներ՝ քարոզելու բարի լուրը՝ Աստծո թագավորության հաստատումը երկրի վրա:

Ս. Գրքում առկա են առաքելության բազում և տարբեր օրինակներ, ինչպես՝ մարգարեների առաքումը՝ որևէ հանձնարարությամբ, կամ Գաբրիել հրեշտակապետի առաքումը *Մարիամ Աստվածածնի* մոտ, *Հովհաննես Մկրտչի* առաքումը Հիսուսի առջևից՝ մարդկանց համար նախապես ապաշխարության ճանապարհը բացելու ևն: Աստծո գերագույն առաքյալը, սակայն, Աստծո Որդին էր՝ Հիսուս Քրիստոսը, «...որին Աստված ուղարկեց՝ լինելու Քահանայապետն այն հավատի, որ խոստովանում ենք մենք» (Եբր. 3.1):

Հիսուսն իր համար Ա. ընտրեց Հայր Աստծո կամքի համաձայն. նախ, նրանց արդարացրեց իր՝ Հայր Աստծուց ուղարկվածի նկատմամբ հավատքով, այնուհետև փրկագործեց ու մաքրագործեց նրանց. սովորեցրեց իր երկնային պատվիրանները, պատրաստեց իբրև անոթներ՝ իրենց մեջ կրելու Աստծո Խոսքը. տվեց նրանց «իշխանություն պիղծ դևերի վրա» և իր անունով հիվանդություններ բուժելու զորություն (Մատթ. **10.**1): Իր մարմնի՝ որպես երկնավոր հացի, և իր արյան՝ որպես երկնավոր գինու բաշխումը կատարեց նրանց մեջ (տես *Հաղորդություն*), հարություն առնելով՝ նրանց օծեց երկնքում և երկրի վրա մեղքերը կապելու և արձակելու արտոնությամբ՝ նրանց վրա Սուրբ Հոգու փչմամբ (Հովհ. **20.**21–23), ապա, հարությունից հիսուն օր հետո, երբ արդեն համբարձվել էր, նրանց մկրտեց Հորից չնորհված Սուրբ Հոգով ու հրով (տես *Հոգեգալուստ*), որից հետո միայն զորություն հագնելով, նրանք կարողացան կատարել Հիսուսից տրված առաքելական հանձնարարությունը. «...Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. **28.**18–19, տես նաև Մարկ. **16.**14–20, Ղուկ. **24.**46–48, Հովհ. **20.**19–23, Գործք **1.**6–8): Հոգեգալստից ի վեր մարդու եկեղեցագործումը կատարում է աշխարհ առաքված Սուրբ Հոգին:

Հիսուսի ընտրած և նրա հետ շրջող Ա. տասներկուսն էին: Նրանք կոչվում են մեծ Ա.:

Պետրոս առաքյալ (հուն. Պետրոս նշանակում է վեմ), թլփատության անունը՝ Շմավոն, հունացած ձևով՝ Սիմոն կամ Սիմեոն, Հովնանի որդին, Անդրեաս առաքյալի եղբայրը: Հիսուսը նրան անվանել է Կեփաս (արամեերեն՝ վեմ, ժայռ: Հովհ. **1.**42): Ծնվել է Բեթսայիդայում, ապրել՝ Կափառնայում քաղաքում: Եղել է ձկնորս: Քարոզել է Հուդայում, Անտիոքում, Հռոմում: Նահատակվել է Հռոմում՝ գլխիվայր խաչվելով (ենթադրաբար՝ 64-ին): Ավանդության համաձայն՝ Հռոմում է նահատակվել նաև նրա կինը: Պետրոս առաքյալից ավանդված գրվածքներն են առաջին և երկրորդ Ընդհանրական թղթերը՝ ուղղված հրեական սփյուռքի հավատացյալներին:

Պետրոս առաքյալն ի սկզբանե Հիսուսին ճանաչեց որպես Աստծո Որդի (Մատթ. **16.**15–17, Մարկ. **8.**27–29, Ղուկ. **9.**18–21), Հովհաննես և Հակոբոս Ա-ի հետ չնորհ ունեցավ Հիսուսից՝ ներկա լինելու Հայրոսի աղջկա հարությանը (Մարկ. **5.**35–42, Մատթ. **9.**18–26, Ղուկ. **8.**40–56), Հիսուսի պայծառակերպմանը Թաբոր լեռան վրա (Մատթ. **17.**1–13, Մարկ. **9.**1–7, Ղուկ. **9.**28–36) և Գեթսեմանիի պարտեզում Փրկչի աղոթքին՝ մահվանից առաջ (Մարկ. **14.**32–42, Մատթ. **26.**36–46): Թեև երեք անգամ ուրացավ Հիսուսին, ըստ Տիրոջ կանխասացության, բայց վերահաստատվեց առաքելական չնորհի մեջ և հաստատեց իր անունը՝ Վեմ, քանի որ եղավ Երուսաղեմի առաջին քրիստ. համայնքի, իսկ հետագայում՝ Պողոս առաքյալի հետ՝ Հռոմի եկեղեցու հիմքը: Նրա գերեզմանի վրա է կառուցվել Հռոմի Ս. Պետրոս եկեղեցին:

Հայ եկեղեցին Պետրոս առաքյալի հիշատակը տոնում է Պողոս առաքյալի հետ, Սուրբ Ծնունդը կանխող Ավագ տոների շարքում, «Գլխավոր առաքյալներ» անվան ներքո:

Անդրեաս առաքյալ, Պետրոս առաքյալի եղբայրը, նույնպես՝ ձկնորս: Սկզբում աշակերտել է Հովհաննես Մկրտչին, ապա եղբոր հետ առաջինն է հետևել Հիսուսին (Մատթ. **4.**18–22, Մարկ. **1.**16–20, Ղուկ. **5.**1–11): Քարոզել է Սկյութիայում, Հունաստանում և Փոքր Ասիայում (ավանդություն): Նահատակվել է (մ. թ. անհտ) խաչի մահվամբ (ըստ որոշ աղբյուրների՝ Հունաստանում). ըստ ավանդության՝ նրան խաչել են լատ. X տառի ձևով, որը հայտնի է «Անդրեաս սրբի խաչ» անունով:

Հայ եկեղեցին Անդրեասին հիշատակում է Փիլիպպոս առաքյալի հետ, ս. *Խաչվերացի* 9-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Հովհաննես առաքյալ եվ ավետարանիչ, Ա-ից ամենակրտսերն է: Նրան և եղբորը՝ Հակոբոս առաքյալին, Հիսուսն անվանել է Բաներեգես՝ Որոտման որդիներ (Մարկ. **3.**13–19): Որդիներն էին Զեբեդեոսի և Սալոմեի (Սողոմեի): Ծնվել է Բեթսայիդայում, ապրել Երուսաղեմում: Եղել է ձկնորս: Հովհաննեսը գործունեություն է ծավալել Փոքր Ասիայի եկեղեցիներում և Եփեսոսում: 95-ին աքսորվել է Պատմոս կղզի, այստեղ ունեցել Հայտնության մեջ նկարագրած տեսիլները: Ըստ ավանդության՝ աքսորից վերադարձել է և վախճանվել բնական մահով՝ 94 կամ 95 տարեկան հասակում, մոտ 100-ին: Ասվում է, որ նա, արդեն ալեհեր, շարունակ հորդորել է. «Զավակնե՛ր, սիրեցե՛ք միմյանց»: Հեղինակն է Ավետարանների մեկի, երեք Ընդհանրական

թղթերի և Հայտնության: Հովհաննեսը կոչվել է «սիրեցյալ աշակերտ Հիսուսի»: Նա հետևել է Հիսուսին՝ չարչարանաց գիշերից մինչև Գողգոթա: Խաչի վրայից Հիսուսը Հովհաննեսին արժանացրել է գերագույն շնորհի՝ Մարիամ Աստվածածնին նրա խնամակալությանը հանձնելով: Մինչև Հիսուսին հետևելը աշակերտել է Հովհաննես Մկրտչին: Իր եղբոր՝ Հակոբոսի և Պետրոս առաքյալի հետ ներկա է եղել Հայրոսի աղջկա հարությանը, Հիսուսի պայծառակերպմանը Թաբոր լեռան վրա և նրա վերջին աղոթքին՝ Գեթսեմանիի պարտեզում: Նա էր, որ կիրակի առավոտյան Պետրոսի հետ գնաց Տիրոջ գերեզմանը և, այն թափուր գտնելով, հավատաց Հիսուսի հարությանը՝ նրան դեռ չտեսած:

Հովհաննեսն իր եղբայր Հակոբոսի և Պետրոսի հետ եղել է Երուսաղեմի առաջին եկեղեցու սյուներից մեկը:

Հայ եկեղեցին Հովհաննես առաքյալի տոնը նշում է մյուս երեք ավետարանիչների հետ՝ ս. Խաչվերացի վեցերորդ կիրակին նախորդող շաբաթ օրը, նաև՝ եղբոր՝ Հակոբոս առաքյալի հետ:

Հակոբոս առաքյալ (Հակոբոս Զեբեդյան), Հովհաննես առաքյալի եղբայրը (կոչվում է նաև Ավագ կամ Երեց՝ ի տարբերություն մյուս՝ Հակոբոս Կրտսեր առաքյալի): Ծնվել է Բեթսայիդայում, ապրել Երուսաղեմում: Եղբոր հետ կոչվել է Բաներեգես: Երբ սամարացիներից ոմանք չուզեցին ընդունել Քրիստոսին, Հակոբոսն ու Հովհաննեսը խնդրեցին նրան, որ թույլ տա իրենց երկնքից հուր իջեցնել և այրել նրանց: Ըստ մեկնություններից մեկի՝ այդ պատճառով է Քրիստոսը նրանց անվանել Բաներեգես՝ Որոտման որդիք: Նա Հովհաննես և Պետրոս Ա-ի հետ կազմել է այն առանձնաշնորհյալ եռյակը, որն ավելի մերձ էր Հիսուսին, և ներկա է եղել Տիրոջ ամենախորհրդավոր աքանչելագործություններին: Միակ առաքյալն է, որի նահատակությունը նշված է Գործք առաքելոցում (Գործք **12.1**–2): Գլխատվել է Հերովդեսի հրամանով՝ 44-ին, Երուսաղեմում: Հակոբոսը քարոզել է Երուսաղեմում և Հուդայում: Ըստ ավանդության՝ նրա մարմինը նետել են ծովը, և ալիքներն այն դուրս են բերել Իսպանիայի ծովեզերք (Իսպանիայում Հակոբոսը, որպես պաշտելի սուրբ, մեծ ժողովրդականություն ունի):

Հայոց մեջ Հակոբոսը կոչվել է Գլխադիր առաքյալ: Ըստ ավանդության՝ Հակոբոսի գլուխը հանձնվել է Հակոբոս Տյառնեղբայր կամ Կրտսեր կոչված առաքյալին, որն էլ գլուխը թաղել է իր տան պարտեզում: Այս տան տեղում կառուցվել է Երուսաղեմի հայկական Սրբոց Հակոբյանց Մայր տաճարը, որտեղ ցայսօր ի ցույց է դրվում Հակոբոսի գլխի գերեզմանը, այսինքն՝ գլխադիրը: Դա էլ մակդիր է դարձել առաքյալի համար:

Հայ եկեղեցին Հակոբոս առաքյալի հիշատակը տոնում է եղբոր՝ Հովհաննես առաքյալի հետ՝ Սուրբ Ծնունդը կանխող Ավագ տոնեին՝ իբրև վերջինը:

Փիլիպպոս առաքյալը Բեթսայիդայից էր: Քարոզել է Փռյուգիայում: Ըստ ավանդության՝ նահատակվել է խաչի մահվամբ՝ Եփեսոսում կամ Փռյուգիայի Հիերապոլիս քաղաքում: Հայ եկեղեցին Փիլիպպոս առաքյալի հիշատակը տոնում է ս. Խաչվերացի 9-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը՝ Անդրեաս առաքյալի հետ:

Բարդուղիմեոս կամ Բարդողիմեոս առաքյալը Գալիլիայի Կանա քաղաքից էր: Հովհաննեսի Ավետարանում հիշվում է միայն իր սկզբնական՝ Նաթանայել անունով: Թադեոս առաքյալի հետ համարվում է Հայ եկեղեցու հիմնադիրը: Նահատակվել է մորթազերծումով, 66-ին, Վասպուրականի Աղբակ գավառում: Տես նաև *Բարդուղիմեոս*:

Թադեոս, Ղեբեոս կամ Հուդա առաքյալ, Բարդուղիմեոսից առաջ քարոզել է նաև Հայաստանում (Հիմնականում՝ Արտազ գավառում): Հովհաննես ավետարանիչը նրան կոչում է այսպես՝ «Հուդան (ոչ Իսկարիովտացին)» (Հովհ. **14.**22): Մատթեոս առաքյալն իր Ավետարանում գրում է. «... Ալփեոսի որդի Հակոբոս և Ղեբէոս, որ Թադէոս կոչվեց» (**10.**3). այս պատճառով էլ կոչվել է նաև Ալփյան՝ եղբոր՝ Հակոբոս Ալփյանի հետ: Նա գալիլիացի էր, Ալփեոսի (կամ Կղեոպասի) և Մարիամի որդին: Նահատակվել է քարկոծմամբ, Հայաստանում, Հայոց Սանատրուկ թագավորի հրամանով, 46-ին: Հեղինակ է (Հուդա անունով) բոլոր քրիստոնյաներին ուղղված Ընդհանրական մեկ թղթի, որտեղ նշվակվում է հերձվածողությունը: Տես նաև *Թադեոս*:

Հակոբոս առաքյալ (Հակոբոս Ալփյան), Թադեոս (Հուդա) առաքյալի եղբայրը, նույնպես ծնվել է Գալիլիայում: Ալփեոսի և Մարիամի որդին: Կոչվել է Հակոբոս Կրտսեր՝

ի տարբերություն Հակոբոս Ավագ առաքյալի: Հակոբոս Ալփյանը սուրբ էր ծննդյան իսկ օրից, և այդ պատճառով միայն նրան է թույլատրվել մտնել Երուսաղեմի տաճարի սրբարանը՝ ժողովրդի համար Աստծուն աղոթելու: Եղել է Երուսաղեմի Մայր եկեղեցու առաջին եպիսկոպոսը: Քարոզել է Եգիպտոսում և Պաղեստինում, նահատակվել 63-ին՝ քարոզելիս (վայր են նետել Երուսաղեմի տաճարի տանիքից): Հակոբոսի անունով առկա է մեկ Ընդհանրական թուղթ: Նրա անունով է ավանդված նաև ս. *Պատարագի* տեքստը: Հայ եկեղեցին Հակոբոս առաքյալի հիշատակը տոնում է Աստվածածնի Վերափոխման երրորդ կիրակին հաջորդող շաբաթ օրը՝ Շմավոն (Սիմոն) առաքյալի հետ:

Մատթեոս առաքյալը եվ ավետարանիչը նախապես եղել է մաքսավոր Հայրենի քաղաքում՝ Կափառնայումում: Նրա հրեական անունն էր Ղևի կամ Լևի, որդին էր Ալփեոսի, որի համար էլ կոչվել է Ղևի Ալփյան: Հիսուսը նրան կանչեց հետևելու իրեն, երբ նա մաքսատանը գործի վրա էր: Նա անմիջապես թողեց գործը և հնազանդվեց Տիրոջը (Մատթ. **9**.9–13, Մարկ. **2**.13–17, Ղուկ. **5**.27–32): Ղևին վերանվանվել է Մատթեոս, որը նշանակում է «պարգև»: Նա իր տանը մեծ ընդունելություն է ցույց տվել Հիսուսին ու նրա աշակերտներին, հրավիրելով նաև պաշտոնակիցների՝ մաքսավորների, հարկահավաքների: Փարիսեցիներն ու դպիրները մեղադրել են Հիսուսին, թե ինչո՞ւ է նա մաքսավորների ու մեղավորների հետ սեղան նստել: Այստեղ է Հիսուսը տվել իր նշանավոր պատասխանը, թե՝ «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ՝ հիվանդներին», և թե՝ «...ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ...» (Մատթ. **9**.11–13): Մատթեոս առաքյալը Տիրոջ խոսքը քարոզել է պաղեստինյան հրեաներին, ապա մեկնել Աֆրիկա, քարոզել և, ըստ ավանդության, մեծ չարչարանքների ենթարկվելով, նահատակվել Եթիոպիայում: Մատթեոս առաքյալը հեղինակ է Նոր կտակարանի առաջին գրքի՝ Մատթեոսի Ավետարանի:

Հայ եկեղեցին Մատթեոս առաքյալի ու ավետարանչի հիշատակը նշում է մյուս երեք ավետարանիչների հետ՝ ս. Խաչվերացի վեցերորդ կիրակին նախորդող շաբաթ օրը:

Թովմաս առաքյալը, Երկվորյակը (հուն. Դիդիմոս՝ երկվորյակ. ավանդության համաձայն՝ այդպես է կոչվել Թադեոսի կամ մեկ այլ աշակերտի եղբայրը լինելու պատճառով) Գալիլիայից էր: Նրա մասին ակնարկված է երեք Ավետարաններում (Մատթ. **10**.1–4, Մարկ. **3**.13–19, Ղուկ. **6**.12–16), իսկ Հովհաննեսի Ավետարանում հիշատակվում է Ղազարոսին հարություն տալու առնչությամբ, երբ Հիսուսն աշակերտներին առաջարկել է գնալ Բեթանիա՝ մեռած Ղազարոսին «արթնացնելու»: Այս անձնուրաց և Հիսուսին մինչև մահ հետևելու պատրաստ Թովմասը, սակայն, թերհավատություն ցուցաբերեց հարուցյալ Հիսուսի նկատմամբ և մինչև իր աչքով չտեսավ Հիսուսին մարմնով հարություն առած, չհավատաց, բայց և տեսնելուց հետո ասաց. «... Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ» (Հովհ. **20**.24–29): Քարոզել է Սիրիայում, Պարսկաստանում և Հնդկաստանում, որտեղ և նահատակվել է՝ աղոթքի ժամանակ նետահարվելով (ավանդություն): Ցայսօր էլ Արլ. Հնդկաստանում կան իրենց «Թովմաս առաքյալի քրիստոնյաներ» կոչող հավատացյալներ: Գերեզմանը ցույց է տրվում Մադրաս քաղաքի մոտ:

Հայ եկեղեցին Թովմաս առաքյալի հիշատակը տոնում է Աստվածածնի Վերափոխման երրորդ կիրակին նախորդող շաբաթ օրը:

Սիմոն կամ Շմավոն առաքյալ՝ Նախանձահույզ կոչված (հավանաբար՝ Նախանձահույզների շարժմանը հարած լինելու պատճառով): Կանա քաղաքից էր: Անվանվել է նաև Սիմոն Կանանացի: Ըստ հույն եկեղեցու ավանդության՝ նա էր Կանայի հարսանիքի փեսան: Հարսանիքին Աստվածամոր հետ ներկա է եղել Հիսուսը և գործել առաջին հրաշքը՝ ջուրը վերածելով գինու (Հովհ. **2**.): Մեկ այլ ավանդության համաձայն՝ նա քարոզել է Աֆրիկայում, Մեծ Բրիտանիայում, Պարսկաստանում, որտեղ և նահատակվել է խաչի մահվամբ:

Հայ եկեղեցին Սիմոն կամ Շմավոն առաքյալի հիշատակը տոնում է Հակոբոս առաքյալի հետ՝ Աստվածածնի Վերափոխման երրորդ կիրակին հաջորդող շաբաթ օրը:

Հուդա Իսկարիովտացին իր սուրբ կոչումից ընկավ և առաքյալ չկոչվեց, այլ՝ մատնիչ և դավաճան: Նա ընտրված էր և շրջում էր Հիսուսի աշակերտների հետ՝ պահելով նվիրատվությունների համար նախատեսված դանձարկղը: Նրա մասին մատնության գիշերը Հիսուսն ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզնից մեկն ինձ մատնելու է» (Հովհ. **13**.21): Հուդան 30 արծաթով մատնել է Հիսուսին անհավատ հրեաների ձեռքը (Մատթ. **26**.47–56, Մարկ. **14**.43–50, Ղուկ. **22**.47–

53, Հովհ. 13.3–11) և ապա, արծաթ դրամը նետելով եկեղեցու մեջ, ինքնասպան եղել: Նրա զըղջումն ընդունելի չեղավ Աստծուն: Եկեղեցու մեկնաբանական ընթերցվածքի համաձայն՝ նա ինքն իրեն սպանել է ոչ թե ճշմարիտ զղջումից ելնելով, այլ՝ չարության հարուցած հուսահատությունից, ստանալով իր անիրավության վարձը: Պետրոս առաքյալը Հուդայի վերաբերյալ բերում է սաղմոսների մարգարեական խոսքերը. «Թող նրա տունը ավերակ լինի, և չգտնվի մեկը, որ նրա մեջ բնակվի» և՝ «Նրա պաշտոնը թող ուրիշն առնի» (Գործք 1.15–26): Ա., Պետրոս առաքյալի առաջնորդությամբ, վիճակ գցելով, «կորստյան որդու»՝ Հուդա Իսկարիովտացու փոխարեն ընտրել են Մատաթիային:

Մատաթիա («Տիրոջ պարգև») առաքյալը հիշված է Գործք առաքելոցում (Գործք 1.15–26): Վիճակահանությամբ ժամանակավորապես դասվել է տասնմեկ Ա-ի շարքը՝ որպես տասներկուերորդը: Նա Հուդայից էր, հետևորդը Հիսուսի՝ Հորդանան գետում նրա մկրտությունից մինչև համբարձվելը: Հավանաբար քարոզել է Հրեաստանում և Եթովպիայում (ավանդություն), նահատակվել՝ քարկոծմամբ: Պողոս առաքյալի՝ աստվածային հայտնությամբ ընտրվելուց հետո Մատաթիան դասվել է Քրիստոսի 70 (72) աշակերտների շարքը:

Հայ եկեղեցին Մատաթիա առաքյալի հիշատակը տոնում է ս. Խաչվերացի 5-րդ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը՝ Անանիայի, Փիլիպպոսի և մյուս սրբերի հետ:

Պողոս առաքյալը, որը համարվում է 13-րդը, ծնունդով Կիլիկիայի Տարսոն քաղաքից էր, որի համար էլ կոչվել է Տարսոնացի: Հրեական անունը՝ Սավուղ (հունական ձևով՝ Սողոս): Հռոմի քաղաքացի էր, կրթությամբ ու դավանանքով՝ փարիսեցի, արհեստով՝ վրանագործ: Ելնելով հայրենի օրենքի և ավանդույթի հանդեպ նախանձախնդրությունից՝ հալածել է քրիստոնյաներին, նրանց մատնել աքսորի և սպանության: Նա մասնակից էր *Ստեփանոս Նախավկայի* սպանությանը (Գործք 7.54–59): Սակայն Սավուղը կամ Սողոսը (Գործք 9.) Դամասկոս մեկնելու ճանապարհին հանդիպել է հարուցյալ Հիսուսին, որը նրան կարգել է հեթանոսների առաքյալ: Հիսուսին որպես Աստծո Որդի և Փրկիչ ընդունելուց հետո նա, Սուրբ Հոգով լցված, քարոզել է Դամասկոսում, Երուսաղեմում, Անտիոքում, Կիպրոսում, Պամփյուլիայում, Լյուստրիայում (Իկոնիոն), Փռյուգիայում, Հունաստանում, Հռոմում և այլուր՝ ենթարկվելով բազում հալածանքների, չարչարանքների, աքսորի, արկածների, բանտարկության ևն: Պողոս առաքյալը հեղինակ է 14 առաքելական թղթերի, որոնք Ընդհանրական եկեղեցին դիտում է որպես ուղեցույց թղթեր՝ Քրիստոսի վարդապետության ճշմարիտ ընկալման առումով: Դրանք ուղղված են հռոմեացիներին, կորնթացիներին, եբրայեցիներին, հեթանոս նորադարձներին և սիյուռքի հավատացյալ հրեաներին: Պողոս առաքյալի թղթերը համարվում են քրիստ. մտքի ռահվիրաներ՝ գրված ավելի վաղ, քան Ավետարանները: Նա Հռոմում, 67 կամ 68-ին, Ներոն կայսրի օրոք, մարտիրոսական պսակ է ընդունել՝ գլխատվելով:

Հայ եկեղեցին Պողոս առաքյալի հիշատակը տոնում է Պետրոս առաքյալի հետ, Ավագ տոների ընթացքում (Սուրբ Ծննդից շուրջ 10 օր առաջ):

Հայ եկեղեցին Քրիստոսի Ա-ի հիշատակը տոնում է նաև միասին՝ Հոգեգալստյան վեցերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը («Սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Սրբոյն Պողոսի երեքտասաներորդ առաքելոյն»):

Յոթանասուն կամ յոթանասուն-երկու աշակերտներ կամ առաքյալներ: Բացի տասներկուսից Հիսուսն ընտրեց նաև յոթանասունին (ըստ այլ հաշվարկների՝ յոթանասուներկուսին), որոնց ևս տվեց իշխանություն՝ Ավետարանը քարոզելու, մարդկանց միջից դևեր հանելու և զանազան բժշկումներ կատարելու (Ղուկ. 10.1–24): Նրանց անունները ստույգ հայտնի չեն, թեև կան որոշ պարականոն զրույցներ, որոնցում հիշատակվում են ինչ-ինչ անուններ ու վարքաբան. դրվագներ: Սակայն ամենահավաստի իրողությունն այն է, որ դա եղել է առանձին խումբ՝ Աստծո Որդու թագավորության բարի լուրը քարոզելու և Սուրբ Հոգով բժշկելու համար: Ի տարբերություն տասներկուսի, որոնք միշտ Հիսուսի հետ են շրջել, նրանք գործել են նաև առանձին-առանձին՝ ուղարկվելով Հրեաստանի տարբեր գավառներ, իսկ Հիսուսի խաչելությունից ու համբարձվելուց հետո՝ նաև աշխարհի տարբեր երկրներ:

Ըստ եկեղեցու մեկնողական ընթերցման՝ Հին ուխտում նկարագրված տասներկու աղբյուրները խորհրդանշում են տասներկու Ա-ին, յոթանասուն կամ յոթանասուներկու արմավենիները՝ յոթանասուն (յոթանասուներկու) աշակերտներին (Ելք 15.27), իսկ երկու խմբերը, իրենց թվաքանակով, Հիսուսից (իբրև

Կենտրոնից) մերձ կամ հեռու լինելով, կարծես խորհրդանշում են երկնային ու տիեզերական իրողություններ:

Յոթանասնից առաջ սրբերի առանձին խումբ են նկատվում Բեթղեհեմի մանուկները: Գործքում և առաքելական թղթերում հիշատակվում են առաքելություն ունեցող այլ անձինք ևս (Բառնաբաս, Շիղա և ուր.): Ավետարաններում առկա են և ակնարկվում են նաև այլ խմբեր ու առանձին անձեր, որոնց անունները և գործունեությունը գաղտնի են (լրիվ կամ մասամբ): Դրանցից մեկն է մեծահարուստ Հովսեփ Արիմաթացին՝ Հիսուսի ծածուկ աշակերտներից մեկը, որը երևում է միայն Հիսուսին խաչից իջեցնելու ու թաղելու ժամանակ (Մատթ. **27.**57–58, Մարկ. **15.**42–43, Ղուկ. **23.**50–53, Հովհ. **19.**38): Ավետարաններում առկա են նաև այլ խորհրդավոր դրվագներ ու անձեր (ինչպես, օրինակ, զատկական ընթրիքի համար իր վերնատունը տրամադրող անձը), որոնք ունեցել են աստվածային որոշակի պատվեր և որոշակի առաքելություն:

Հայ եկեղեցին Յոթանասնից հիշատակը նշում է ս. Խաչվերացի չորրորդ կիրակին նախորդող շաբաթ օրը:

Տես նաև *Առաքելականություն* հոդվածը:

Պատկերազարդումը տես ներդիր I-ում, 1.8, 2–4-րդ և ներդիր II-ում, 2.1, 1-ին պատկերները:

Լևոն Սարգսյան

ԱՍՈՂԻԿ, տես *Ստեփանոս Տարոնեցի*:

ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ, Սիրիական ուղղափառ եկեղեցի, Հակոբիկյան եկեղեցի, *Արևելյան ուղղափառ եկեղեցիներից*: Ա.ու.ե-ու գլուխն է պատրիարքը (կոչվում է Անտիոքի պատրիարք), նստավայրը՝ 1959-ից Դամասկոսում (Սիրիա):

Քրիստոնեությունն ասորախոս (արամեախոս) աշխարհում տարածվել է առաքելական ժամանակներից, իսկ ասոր. եկեղեցին սկիզբ է առել *Անտիոքի* վաղ քրիստ. համայնքից, ինչը հիշատակված է Գործք առաքելոցում: Այստեղ գործել են Բառնաբաս, Պողոս և Պետրոս առաքյալները: Անտիոքի եկեղեցու հիմնադիր է համարվում Պողոս առաքյալը: Անտիոքից քրիստոնեությունը տարածվել է դեպի Արևելք: Ասորի քրիստոնյաները քարոզել են *Եդեսիայում* (Օսրոյենե), *Ադիաբենեում*, Միջագետքում, արաբներին՝ Պարսկական ծոցում, հասել մինչև Ցեյլոն (Շրի Լանկա), Հնդկաստան և Չինաստան: Ասորախոս քրիստոնյա բնակչությունը բաժանված է եղել Հռոմ. կայսրության և Պարսկաստանի միջև: Պարսից արքա Շապուհ I-ի (243–273) տեղահանումների հետևանքով քրիստոնյա ասորիները Անտիոքի շրջանից հաստատվել են նաև Պարսկաստանում: Այդ ժամանակվանից սկսած Պարսկաստանում գոյություն են ունեցել երկու քրիստ. ասոր. համայնքներ՝ արամեախոս և հունախոս: IV դ. սկզբին ձևավորվել է պարսկ. եկեղեցու նվիրապետությունը՝ Տիզբոնի կաթողիկոսի գլխավորությամբ: Խուսափելով Պարսից Շապուհ II թագավորի (310–380) հալածանքներից՝ քրիստոնյաներից շատերը հաստատվել են Հռոմ. կայսրության սահմաններում: 363-ին, երբ պարսիկները գրավել են Մծբինը, քրիստոնյա ասորիները *Եփրեմ Ասորու* գլխավորությամբ տեղափոխվել են Եդեսիա: Մծբինը և Եդեսիան իրենց նշանավոր դպրոցներով եղել են ասոր. քրիստոնեության հոգևոր կենտրոններ:

410-ին Սելևկիայի ժողովն ընդունել է Նիկիայի *Հավատո հանգանակը* և եպիսկոպոս. ձեռնադրման կանոնները: Պարսկաստանի ասորիները, ձգտելով ձերբազատվել բյուզանդամետության մեղադրանքներից և խուսափել հալածանքներից, 424-ի Մարկաբդայի ժողովում հայտարարել են Պարսից ասոր. եկեղեցու անկախությունը բյուզ. եկեղեցուց: Այս ձևով Պարսկաստանի ասորիները սկսել են հեռանալ Հռոմ. կայսրության ասորիներից, իսկ Տիզբոնի կաթողիկոսը համարվել է Պարսից Արևելյան ասոր. եկեղեցու գլուխ: Հաղորդակցությունը Անտիոքի և այլ ավանդ. կենտրոնների հետ թուլացել է: 431-ի *Եփեսոսի Գ տիեզերական ժողովում* Նեստորի դատապարտությունից հետո նրա հետևորդները, հալածվելով Բյուզ. կայսրությունից, ապաստան են գտել Պարսկաստանում և որպես Բյուզանդիայի հակակշիռ հովանավորվելով Պարսից արքունիքի կողմից՝ ամրապնդել իրենց դիրքերը երկրում: 484-ին Բեթ Լափաթի ժողովը դատապարտել է Եփեսոսի տիեզերաժողովի որոշումները, իսկ 499-ին Սելևկիայի ժողովում *Նեստորականությունը* հռչակվել է Պարսից եկեղեցու պաշտոն. դավանանք:

Քաղկեդոնի ժողովը նոր պառակտումներ է առաջ բերել քրիստոնյա, հատկապես՝ կայսրության տարածքում բնակվող ասորիների միջև: VI դ. Պարսից Նեստոր. եկեղեցուն զու-

դահեռ ստեղծվել է Քաղկեդոնի ժողովը մերժած ասորիների նոր նվիրապետություն, իսկ Պարսկաստանի հակաքաղկեդոնիկ ասորի փոքրամասնությունը, որն ընդդիմացել էր նեստորականությանը, VI դ. կեսին միացել է ուղղափառ (հականեստոր., հակաքաղկեդոն.) ասորիներին: Ասոր. Արևելքի հակաքաղկեդոն. պայքարի ամենանշանավոր ներկայացուցիչը VI դ. սկզբին եղել է Անտիոքի պատրիարք (512–518) Սևերիոս Անտիոքացին, որը մեծ հեղինակություն վայելող աստվածաբան էր հատկապես ասորախոս բնակչության շրջանում: Սակայն բյուզ. Հուստինոս Ի-ի (518–527) հակաքաղկեդոն. հալածանքների հետևանքով՝ նա 518-ին աքսորվել է Ալեքսանդրիա: Նույն թվին Ալեքսանդրիա աքսորված մեկ այլ նշանավոր հակաքաղկեդոնիկ աստվածաբանի՝ Հալիկառնասի եպիսկոպոս Հուլիանոս Հալիկառնասցու հետ Սևերիոս Անտիոքացու վեճը Տիրոջ մարմնի *անապականության* շուրջ նոր պառակտումներ է առաջացրել ասոր. համայնքներում: Հուլիանոս Հալիկառնասցու աշակերտ Եվտրոպոսը, դառնալով եպիսկոպոս, սկսել է Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Արաբիայի, Պարսկաստանի, ինչպես նաև Հայաստանի ասորիների համար եպիսկոպոսներ ձեռնադրել: Իսկ Անտիոքի քաղկեդոնիկ նոր պատրիարք Եփրեմի (527–545) նախաձեռնությամբ Սևերիոս Անտիոքացու հետևորդների դեմ սկսվել են դաժան հալածանքներ: Սևերիոս Անտիոքացին սկզբնապես չի ցանկացել *Ընդհանրական եկեղեցուց* անջատ նվիրապետություն ստեղծել, սակայն իրենց վանքերից աքսորված ասորի սևերյան վանականներն սկսել են իրենց համար հովիվներ ձեռնադրել, և 529-ին Սևերիոս Անտիոքացին ստիպված ճանաչել է բաժանված եկեղեցու օրինականությունը: Սակայն բյուզ. կայսր Հուստինիանոս Ի-ի (527–565) հալածանքների հետևանքով ասոր. հակաքաղկեդոնիկ համայնքների մեծամասնությունը մնացել է առանց եպիսկոպոսների և եկեղեց. կառույցի: Այդ ընթացքում մի շարք եպիսկոպոսներ գաղտնի ճանապարհորդել են նոր քահանաներ ու եպիսկոպոսներ ձեռնադրելու համար:

VI դ. Եդեսիայի Հակոբ Բարադեոս եպիսկոպոսը (542–578) բազմաթիվ եպիսկոպոսներ և քահանաներ է ձեռնադրել՝ Բյուզ. կայսրության ու Պարսկաստանի հակաքաղկեդոն. համայնքների հոգևոր կարիքները հոգալու համար և հաստատել նոր, ինքնուրույն եկեղեց. նվիրապետություն: *Քաղկեդոնականությունը* և նեստորականությունը մերժած ուղղափառ ասորիների այս եկեղեցին հայտնի է Հակոբիկյան եկեղեցի անունով՝ իր սեփական [Արևմտյան ասորական (սիրիական) կամ անտիոքյան կոչվող] ծիսակարգով ու ավանդույթներով: 564-ին Հակոբ Բարադեոսը Անտիոքի պատրիարք է ձեռնադրել Պողոս Բեթ-Ուքամայեցուն (564–577), որի քաղկեդոն. միտումների պատճառով Հակոբիկյան եկեղեցին ներքին ճգնաժամ է ապրել: Սակայն Անտիոքի Աթանաս Ա Գամալա պատրիարքը 615–616-ին հաշտեցրել է կողմերին:

Ա.ու.ե-ու պատրիարքները մինչև 1034-ը նստել են Անտիոքում, այնուհետև՝ Մար Բարսումա (1034–1293), Դերեզ-Զաֆառան (1293–1924) վանքերում, Հոմսում (1924–59) և վերջապես՝ Դամասկոսում:

Միջին դարերում ասոր. ուղղափառ գիտ. միտքը մեծ վերածնունդ է ապրել, համայնքներն ունեցել են աստվածաբանության, փիլիսոփայության, պատմության և այլ գիտությունների բարգավաճող կենտրոններ: Զարգացման իր բարձրակետին (XIII դ.) Ա.ու.ե. ներառել է 20 մետրոպոլիտական աթոռներ և 103 թեմ, որոնք հասել են մինչև Աֆղանստան: Այդ ժամանակաշրջանում Կենտր. Ասիայում գոյություն են ունեցել նաև առանց եպիսկոպոսի առաջնորդվող ասոր. ուղղափառ հավատացյալների համայնքներ: Սակայն XIV դ. վերջին Լենկթեմուրի արշավանքների ընթացքում ասոր. եկեղեցիների և վանքերի մեծամասնությունն ավերվել է, փակվել են կրթության շատ կենտրոններ՝ սկիզբ դնելով երկարատև անկմանը: Ա.ու.ե. մեծ կորուստներ է կրել հատկապես առաջին համաշխ. պատերազմի տարիներին Թուրքիայում իրականացված հալածանքների և ջարդերի պատճառով: Ողջ մնացածներից շատերը գաղթել են Հարևան արաբ. երկրներ, Եվրոպա և Ամերիկա:

XVII դ. կեսից Ա.ու.ե. ներառել է Հնդկաստանի ինքնավար եկեղեցին, որի մի մասն այսօր կոչվում է Մալաբար ասորական ուղղափառ եկեղեցի (Հվ. Հնդկաստանի Քերալա նահանգում), որի գլուխն է կաթողիկոսը (կաթողիկոսանիստը՝ նահանգի մայրաքաղաք Քոթայամում):

Ա.ու.ե-ու ԱՄՆ-ի և Կանադայի թեմերը հիմնվել են 1957-ին: Դրանք ընդգրկում են 18 պաշտոն. ծիսեր և առաքելություն իրականաց-

նող 4 միաբանություններ: 1993-ին Ա.ու.ե-ու պատրիարքը հնդիկ հավատացյալների համայնքները բաժանել է սիրիական թեմից և մետրոպոլիտ Մար Նիկոլոսոս Զաքարիայի հովվական առաջնորդության ներքո Հս. Ամերիկայում ստեղծել Ա.ու.ե-ու Մալաբար (Մալանկարա) թեմը: Այն ներառում է 23 ծուխ, որտեղ ծառայում է 25 հոգևորական: Ավստրալիայում, որտեղ պաշտոնավարում է պատրիարքական փոխանորդ արքեպիսկոպոսը, կան 6 ուղղափառ ասոր. եկեղեցիներ: Ներկայումս (2001) 2,4 մլն հակոբիկ քրիստոնյա բնակվում է Սիրիայում, Իրաքում, Թուրքիայում և Լիբանանում, 2 մլն՝ Հնդկաստանի Քերալա նահանգում, 50 հզ.՝ Արմ. Եվրոպայում, 50 հզ.՝ Հյուսիսային և 50 հզ.՝ Հարավային Ամերիկայում:

Հնագույն ասոր. քրիստոնեությունն ունեցել է խիստ ճգնավոր. բնույթ, շեշտված վանական ավանդություն: Եկեղեցիների կորիզը կազմել են վանական համայնքները: Բյուզ. կայսրության տարածքում հակոբիկ եպիսկոպոսները սովորաբար իրենց աթոռները գաղտնի հաստատել են վանքերում, քանի որ քաղաքներում իշխանություններն ուժով պարտադրել են քաղկեդոնականություն, իսկ քաղաքներից հեռու վանքերը իշխանությունների վերահսկողությունից դուրս են եղել: Ներկայումս միայն մի քանի վանքեր են պահպանվել Հվ-Արլ. Թուրքիայում, Իրաքում, Լիբանանում, Սիրիայում: Մեկ վանք բացվել է Նիդերլանդներում, որն իր տեսակի մեջ միակն է ասոր. սփյուռքում: Վանքերը ներկայումս կրթ. կենտրոններ են, որտեղ ստանում են աստվածաբան. կրթություն: Ա.ու.ե-ու գլխ. աստվածաբան. հաստատությունը Ս. Եփրեմ սիրիական ուղղափառ ճեմարանն է: Հիմնվել է 1939-ին, Մոսուլում (Իրաք), ապա 1960-ական թթ. փոխադրվել Լիբանան: 1968-ին ճեմարանը տեղափոխվել է Բեյրութին մոտ գտնվող Ատչանեհ վայրը, սակայն Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմի պատճառով ուսանողները հաստատվել են Դամասկոսում: 1995-ին Ս. Եփրեմ ճեմարանի նոր մասնաճյուղեր են բացվել Դամասկոսին մոտ գտնվող Սայեդնիյայում:

Ասորիները եղել են քրիստոնեության առաջին քարոզիչները նաև Հայաստանում, որտեղ քրիստոնեությունը պետ. կրոն հռչակվելուց (301) հետո նրանք գործունեության ազատ ասպարեզ են ստացել: Ասորերենը՝ որպես նոր կրոնը քարոզելու միջոց, հունարենին զուգընթաց, IV դ. Հայաստանի եկեղեցիներում ու դպրոցներում պաշտոն. լեզու էր: Հայոց պատմության վաղ շրջանի բազմաթիվ անցքեր ու ավանդություններ արտացոլվել են ասորի մատենագիրների երկերում, որոնցից օգտվել են Հայ մատենագիրները: *Մեսրոպ Մաշտոցին*, հայկական գրերը ստեղծելիս, աջակցել են ասորի գիտնականները: *Աստվածաշնչի* հայերեն առաջին թարգմանությունները կատարվել են նաև ասոր-ից: Ասոր. են թարգմանվել հայ մատենագիրների երկերը:

Հայ-ասոր. եկեղեց. հարաբերությունները, սկիզբ առնելով քրիստոնեության վաղ շրջանից, շարունակվել են հետագա դարերում: Մերժելով նեստորականությունը, հետևաբար՝ Նեստորական եկեղեցու հետ ամեն հարաբերություն՝ Հայ եկեղեցին առնչվել է հակաքաղկեդոն. ասորիների հետ: Հատկապես VI–VIII դդ., երբ Հայ եկեղեցին մեծ հեղինակություն և դիրք է ձեռք բերել Քաղկեդոնը մերժած եկեղեցիների և ժողովուրդների շրջանում, ուղղափառ ասորիներն իրենց պաշտպանությունը գտել են դավանակից Հայ եկեղեցում, իսկ Հայոց կաթողիկոսները եպիսկոպոսներ են ձեռնադրել նաև նրանց համար: Դվինի 506-ի ժողովում (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) քննարկվել է նաև նեստորականներից հալածված՝ Պարսկաստանի ուղղափառ ասորիների հարցը, որոնք օգնության խնդրանքով դիմել էին Հայոց կաթողիկոս *Բաբկեն Ա Որմսեցուն*: Վերջինիս գրած «Թուղթ Հայոց ի Պարս, առ ուղղափառս» երկու թղթերը հավաստել են երկու եկեղեցիների դավան. միասնությունը: 554-ի Դվինի Բ ժողովին, որը, ըստ տիրող կարծիքի, սկիզբ է դրել Հայ և քաղկեդոնիկ եկեղեցիների պաշտոն. բաժանմանը, մասնակցել է նաև ուղղափառ ասորիների Աբդիշո եպիսկոպոսը, որն էլ օգնել է հայերեն թարգմանելու VI դ. հակաքաղկեդոնիկ աստվածաբան Փիլոքսենոս Մաբուգեցու (Քսենայա) գրվածքները: Հայ-ասոր. *Մանազկերտի եկեղեցական ժողովում* (726), որը հրավիրվել էր Հայոց կաթողիկոս *Հովհաննես Գ Օձնեցու* և Անտիոքի Աթանաս պատրիարքի նախաձեռնությամբ, Հայ և Ասորի Հակոբիկ եկեղեցիների միջև կնքվել է դավան. միություն անապատականության խնդրի շուրջ, ինչպես նաև մի շարք ծիսական հարցերում (Քրիստոսի ծննդյան օրվա, Պատարագի անխմոր հացի և անխառն գինու մատուցման ևն) որդեգրվել է

միասնական մոտեցում: Ասոր. եկեղեցու հայրերից մի քանիսը (*Հակոբ Մծբնացի*, Եփրեմ Ասորի ևն), որոնք իրենց գործունեությամբ և մատենագր. վաստակով առնչվել են հայ իրականության հետ, դասվել են Հայ եկեղեցու տոնելի սրբերի կարգը: Եփրեմ Ասորին Հայ եկեղեցու «երկոտասան վարդապետներից» է, համաքրիստ. սուրբ հայրերից (տես *Եկեղեցու հայրեր*): Հայ-ասոր. եկեղեց., մշակութ. առնչությունների լավագույն հետազոտողը եղել է Ե. *Տեր-Մինասյանը*:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցոյ յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908: Մելքոնյան Հ., Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III–V դդ.), Ե., 1970: Roey A., Les débuts de l'Eglise Jacobite, v. 2, Würzburg, 1953; Roberson R., The Eastern Christian Churches, Rome, 1995.

Իգոր Դորֆման

ԱՍՊԻՍԱԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Քաջբերունիք գավառում, Արճեշ քաղաքից հյուսիս, Ասպիսակ և Հարություն գյուղերի միջև, Մեծոփավանքից ոչ հեռու, բարձրադիր վայրում: Հիմնադրման ժամանակն անհայտ է: Ըստ տաճարի արձանագրության՝ վանքը վերակառուցվել է 1256–65-ին, անեցի մեծահարուստ Ավետենց Սահմադինի նվիրատվությամբ: Ա. Ս. Ա. վ. եղել է գրչության կենտրոն (գործել է XIII–XIV դդ.), հիմնադրել է Քաջբերունիքի տեսուչ տեր Աբրահամը: Մեզ հասած առաջին ձեռագիրն ընդօրինակվել է 1281-ին, Հովսեփի ձեռքով (Բրիտանական թանգարան, ձեռ. № 2670): Երևանի Մատենադարանում պահվում է նույն գրչի 1299-ին արտագրած Աստվածաշունչը (ձեռ. № 193): Նշանավոր գրիչներից էր Ղազարը (եղել է նաև ծաղկող): Գրչության արվեստն այդտեղ առավել զարգացման է հասել XIV դ. սկզբին, երբ վանքի առաջնորդ է կարգվել Գլաձորի համալսարանն ավարտած Ստեփանոսը: Նրա օրոք էլ վանքի մատենադարանը հարստացել է հին գրքերի ընդօրինակություններով:

Գրկ. Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, մաս 2, Վնն., 1942:

ԱՍՊՈՒՐԱԿԵՍ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ (ծ. թ. անհտ, Մանազկերտ – 386, Մանազկերտ), Ամենայն Հայոց կաթողիկոս 381-ից: Հաջորդել է *Զավեն Ա. Մանազկերտցուն*: Սերում է *Աղբիանոսյանների* տոհմից: Պայքարել է Հռոմ. կայսրության քաղ. խարդավանքների դեմ, աջակցել Հայոց թագավոր Խոսրով Գ-ին, աշխատել քաղ. ասպարեզից մեկուսացնել Հայաստանի արմ. մասում թագավորող և Հռոմ. կայսրությանը գործակցող Արշակ Գ-ին: Ա. Ա Մ-ու ջանքերի շնորհիվ Հայաստանի՝ բյուզ. ազդեցության ներքո գտնվող արմ. մասում նոր հոգևոր առաջնորդ չի նշանակվել, և Հայոց կաթողիկոս. աթոռը պահպանել է իր համահայկ. նշանակությունը:

Կաթողիկոս. գահին Ա. Ա Մ-ուն հաջորդել է *Սահակ Ա. Պարթևը*:

ԱՍՏԱՊԱՏԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆՔ, խնդրակատար Ս. Ստեփանոս, Քարատակի Կարմիր վանք, Նախիջևան քաղաքից հարավ, Արաքս գետի ձախ ափին, ապառաժոտ բլրի գագաթին: Առաջին անգամ հիշատակվում է 976-ին՝ Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի կոնդակում, նույն թվականին խաչքար է ագուցվել եկեղեցու դռան աջակողմում: Անընդմեջ գործել է մինչև ուշ միջնադար. այդ են վկայում վանքի պատերին դրված XIII–XV դդ. խաչքարերը: Ավերվել է Պարսից շահ Աբբասի ասպատակությունից: Հիմնովին վերակառուցվել է XVII դ. սկզբին՝ Պողոս Մոկացի վարդապետի և նույն դարի երրորդ քառորդին՝ Աստապատի վանքի Հակոբ վարդապետի ջանքերով: 1697–1706-ին վանքի առաջնորդ Հովսեփ վարդապետը նորոգել է պարիսպը և կառուցել արմ. կողմի շինությունները: XIX դ. սկզբին Պարսից թագաժառանգ Աբբաս Միրզան քանդել է արլ. պարիսպը լրիվ և հարավայինը՝ մինչև դարպասը՝ քարերն օգտագործելով իր կառուցած Աբասապատ ամրոցի խանդակը շինելու համար: 1831-ին Նիկողայոս վարդապետը նորոգել է վանքի եկեղեցու հիմնապատերը, սակայն 1840-ի երկրաշարժից քանդվել են գավթի զանգակատունը, ձիթհանն ու ջրաղացը, խարխլվել են պարիսպն ու բնակելի սենյակները: Վերստին նորոգել է Հովակիմ եպիսկոպոսը 1870-ական թթ.: Վանքի մոտավորապես ուղղանկյուն պարիսպներով շրջափակված բակում բարձրանում են մեկ զույգ մույթով գմբեթավոր Ս. Ստեփանոս եկեղեցին և նրան արմ-ից կից գավիթը (աղյուսաշեն գմբեթը և եկեղեցու ծածկը քանդվել են 1970-ական թթ.):

Եկեղեցին 1859–60-ին զարդարվել է բարձրարվեստ որմնանկարներով, որոնք համապատասխան մակագրություններով պատկերում են

Սեղբեստրոս հայրապետին՝ դայիսոնը ձեռքին, բյուզ. Թեոդոս կայսրին, Ներսես Ա Մեծին, Աբգար Թագավորին, Սահակ Ա Պարթևին, Տրդատ Գ արքային, Գրիգոր Ա Լուսավորչին և բյուզ. Կոստանդին կայսրին: Գմբեթակիր կամարների անկյուններում նկարված են չորս ավետարանիչների խորհրդանիշները: Սլաքաձև որմնանկարներով մշակված աղյուսաշեն արտաքին պատերի միակ հարդարանքը Հվ. ճակատի՝ Քրիստոսի մկրտությունը պատկերող բարձրաքանդակն է: Վանքում պահվել են *Ստեփանոս Նախավկայի* և *Արիստակես Ա Պարթևի* արծաթե Աջերը:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան, Թ., 1902: Հասրաթյան Մ., Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը, ՊԲՀ, 1975, № 1:

Մուրադ Հասրաթյան

ԱՍՏՎԱԾ, սուրբ և բարձրագույն անուն՝ տրված երևելի և աներևույթ աշխարհների ու արարածների հավիտենական Արարչին: Անունը փոխառված է փոյուգերենից և պատճեռնումն է թրակո-փոյուգական աստվածություն *Σαβάζιος*-ի: Ըստ Հովհաննես առաքյալի՝ «Աստված սեր է» (Ա Հովհ. 4.8): Բառը իր ամենից ընդարձակ և հին իմաստով նշանակում է գերագույն էակ կամ էակներ, որոնք տիեզերքին իշխող անտեսանելի և վերբնութենական զորություններ են: Քրիստ. հավատի ըմբռնումով «Աստված» բառի իմաստը բոլորովին տարբեր է: Հայ իրականության մեջ այն ստուգաբանվել է «**ասա էած** զմեզ» (*Խոսրով Անձևացի, Ներսես Լամբրոնացի, Հովհաննես Վանական*), այսինքն՝ այստեղ բերող կամ հաստատող իմաստով, ինչն ընդգծում է նրա Արարիչ լինելը: Աստծո մասին հավատը չի ծնվել մարդու՝ իրեն շրջապատող խորհրդավոր և անանձնական ուժերի հանդեպ վախից: Այն հիմնված է *Աստվածաշնչի* վրա, ուր Աստված ներկա է որպես բացարձակ իրողություն. իբրև այդպիսին նա անդրանցական (Ա. ինքն իր համար) և անձնական (Ա. մարդու համար) է: Անդրանցականությունը ցույց է տալիս Աստծո լիակատար անմատչելիությունը, տիեզերականությունը, սեռական պատկանելության բացակայությունը ևն, իսկ անձնականությունը՝ մարդու հետ նրա կենդանի հարաբերությունը: Երբ Աստվածաշունչը խոսում է Աստծո մասին, նա խոսում է կենդանի Աստծո մասին, որի հետ կարող է խոսել մարդը և որը հիմնավորապես տարբեր է անկենդան չաստվածներից, որոնք չեն կարող լինել Բան (Խոսք) և ասել. «Ես»:

Կենդանի Աստծո և մարդու հաղորդակցությունից զարգանում է յուրահատուկ հարաբերություն՝ կենդանի Աստծո և հավատացյալի միջև, հարաբերություն, որ անհատական բնույթ ունի՝ անձնական բարեկամության և մտերմության իր արտահայտությամբ: Այդ հարաբերությունն իր ներքին ուժը ստանում է Աստծո բարյացակամ նախաձեռնությունից:

Հին կտակարանում Ա. ինքն իրեն կոչել է Յահվե, որը նշանակում է «Ես եմ, որ էն»: Եբրայերեն անվանվում է նաև Էլոհիմ (Ելոհիմ), որ հոգնակի է և, ըստ ոմանց, այդպես է գործածվել՝ Աստվածության մեջ *Երրորդությունը* մատնանշելու համար: Նա Արարիչն է երկնի և երկրի, ստեղծիչը մարդու և «երկնի և երկրի Տերը»: Ըստ Ծննդոց գրքի՝ Ա. կատարեց իր արարչագործությունը վեց հանգրվաններով, որոնցից առաջինը՝ լույսի արարչությունն է: Հաջորդ հանգրվաններում Ա. ստեղծեց տիեզերքը, կյանքը և մարդուն (Ծնն. 1): Նա մարդուն ստեղծեց իր նմանությամբ և ըստ իր պատկերի՝ նրան տալով բանականություն և ազատ կամք, որով և՝ իր արարքների պատասխանատվությունը:

Միակ Աստծո պաշտամունքը հայտնվել է հրեա ժողովրդի մեջ: Հին կտակարանում Ա. խոսում է իր ստեղծած առաջին մարդու՝ Ադամի հետ և նրան տալիս առաջին պատվիրանը: Մարդը մեղանչում է: Ա. ընտրում է իր սեփական ժողովրդին, որպեսզի վերականգնի անկյալ մարդուն: Ա. խոսում է իր ժողովրդի հետ նահապետների և մարգարեների միջոցով: Նա *ուխտ* է կնքում իր ընտրյալ ժողովրդի հետ, որով խոստանում է լինել այդ ժողովրդի Ա.: Հրեա ժողովուրդը հավատում է իր Աստծո զորությանը և կոչում է այն «Տէր զորութեանց», հավատում է նրա կենսունակությանը և կոչում այն «Աստված կենդանի», հավատում է նաև նրա սրբությանը և կոչում այն «Սուրբ, Իսրայելի Սուրբը»՝ երկրաչափ անգամ: Իր փրկարար զորությամբ Ա. միջամտում է ընտրյալ ժողովրդի պատմությանը և դառնում նրա փրկարարը՝ նրան ազատելով Եգիպտոսի գերությունից և վերադարձնելով իր Ավետյաց երկիրը, որպեսզի ապրի աստվածային պատվիրանների համաձայն և իր հավատարմու-

ԱՍՏՎԱԾԱԲԱՆ. թյամբ սրբվի: Նա խոստանում է ուղարկել Մեսիային, որը կփրկի ընտրյալ ժողովրդին իր մեղքերից և կարժանացնի հավիտենական կյանքի:

Նոր կտակարանը աստվածային փրկարար խոստումի իրականացման պատմությունն է, որը սկսվում է Բեթղեհեմում Հիսուսի հրաշափառ ծննդով: Նա կոչվում է «Օծյալ Տեր»: Հիսուսի մասին եղած մարգարեությունը կոչում է նրան «Որդի Բարձրյալի»: Նրա մկրտության պահին Ա. խոսում է և կոչում նրան «սիրելի Որդի», և Աստծո Հոգին աղավնակերպ իջնում է երկնքից: Միակ Ա. հայտնվում է իր երեք անձերով՝ Հայր, Որդի և *Սուրբ Հոգի*:

Հին ուխտի մեջ Ա. միայն իր ժողովրդի Հայրն է: Նոր ուխտի մեջ նա Հայրն է բոլոր նրանց, ովքեր դավանում են Քրիստոսին՝ «Որդի կենդանի Աստծո»: «Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծո որդիներ...» (Հովհ. 1.12): Ա. շնորհում է իր Հոգին նրանց, ովքեր կատարում են իր կամքը:

Նոր ուխտի օրենքը սերն է. «Սիրել Աստծուն ամբողջ սրտով և սիրել ընկերոջդ քո անձի պես», որովհետև «Նախ Աստուած սիրեց մեզ»: Սիրով Աստծուն կապված հավատացյալի սիրտը «տաճար է Սուրբ Հոգու»:

Հունարեն գրված Ավետարանների մեջ Ա. կոչված է «Տեր» կամ «Տեր Աստված», Քրիստոս կոչված է «Բանն Աստված», և Սուրբ Հոգին՝ «Տիրոջ Հոգի»:

Հայ եկեղեցու Լուսավորիչը՝ Ս. Գրիգորը, ամփոփել է Սուրբ Երրորդության հավատն իր նշանավոր վկայությամբ. «Իսկ մենք պիտի փառավորենք նրան, որ հավիտյանից առաջ է, երկրպագելով Ս. Երրորդությանը և մեկ Աստվածությանը, Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն»:

Տես նաև *Հիսուս Քրիստոս*:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.2, 1-ին պատկերը:

Շահե արք. Աճեմյան

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, եկեղեցական գրականության տեսակ. ամփոփում է եկեղեցու տեսական, վարդապետական սկզբունքները պարունակող երկերը, որոնց նպատակն է ուժեղացնել եկեղեցու գաղափարական դիրքերը, արթուն պահել հոգևոր, ազգային ինքնագիտակցությունը: Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակվելուց (301) հետո հեթանոսության դեմ մղվող պայքարի գաղափար. զենք է դարձել ջատագովական գրականությունը (տես *Ջատագովություն*), որն ընդգրկել է նաև քրիստոնեության առաջին դարերում ծագած աղանդավոր. գաղափարների քննադատությունը: Այդպիսի երկերից են «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա», «Երանելւոյն Մեսրոպայ հայոց վարդապետի [Խաւսք ընդդէմ հմայից]», *Եղնիկ Կողբացու* «Եղծ աղանդոց»-ը, իսկ ավելի ուշ (XIII դ.)՝ նաև «Հարցմունք եւ պատասխանիք ի գիրս Ծննդոց» աշխատությունը: Հայ Ա.-դ. գ-յան վաղ նմուշներից են *Գրիգոր Ա Լուսավորչին* վերագրվող «Յաճախապատում ճառք»-ը և *Ագաթանգեղոսի* «Պատմություն Հայոց»-ի երկրորդ՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» գիրքը: Հեթանոսության դեմ պայքարին նպաստել են նաև թարգման. երկերը: Այդպիսիներից են Արիստիդես Աթենացու «Ջատագովութիւնը» (Հրտ. 1878), հույն և ասորի եկեղեց. հայրերի երկերի հայերեն թարգմանությունները:

Վաղ շրջանի Ա.-դ. գ-յան մեջ առկա քննադատ. տարրի զարգացմամբ հանդես է եկել դավանաբան-հակաճառ. ժանրը: *Քաղկեդոնի ժողովին* հաջորդած շրջանում, հատկապես Դվինի 506-ի ժողովից հետո (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) ստեղծված եկեղեցաքաղ. իրավիճակում, երբ Բյուզանդիան և Հռոմն ամեն կերպ փորձում էին իրենց ենթարկել անկախությունը կորցրած Հայաստանի պետ. լծակները իր ձեռքում պահող Հայ եկեղեցին, սկիզբ են առել դավան. բուռն վեճեր քաղկեդոնականների կամ երկաբնակների հետ՝ ի պաշտպանություն հակաքաղկեդոն. վարդապետության: Հայ եկեղեցին իր հստակ դիրքորոշումն է ունեցել Քաղկեդոնի ժողովին հաջորդած քրիստոսաբան. վեճերի, Քրիստոսի բնության, կամքի, ներգործության, Տիրոջ մարմնի ապականացու թե անապական (տես *Անապականություն*) լինելու վերաբերյալ հակոտնյա տեսությունների, *պատկերապաշտության* թե *պատկերամարտության*, միութենական թե հակամիութենական գաղափարների հանդեպ: Այդ ընթացքում որոշվել և ճշտվել են հայադավան ուղղափառության սահմանները: Դավան. ասպարեզում հույն և հռոմի եկեղեցիների դեմ Հայ եկեղեցու դարեր շարունակ մղած պայքարի արդյունքն են բազմաքանակ ինքնուրույն և թարգման. աստվա-

ծաբան-դավանաբան. երկերը: Դավան. պայքարի զուտ տեսական հարցերին զուգորդվել են գործն. բնույթի հարցերը (ծիսապաշտամունքային, եկեղեց. իրավունքի ևն), որոնք բխել են թե՛ ընդհանրապես եկեղեց. կարգերի և թե՛ ազգային-եկեղեց. առանձնահատկությունների պահպանման մտահոգությունից: Աստվածաբան. և դավանաբան. երկերը նաև առատ նյութ են տալիս միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի, ինչպես նաև հարևան և հեռավոր երկրների հետ նրա ունեցած փոխհարաբերությունների ուսումնասիրության համար:

Սկսած V դ. վերջից, պայմանավորված Հայ եկեղեցու դավան. սկզբունքների պաշտպանության հրամայականով, գրվել և շրջանառության մեջ են դրվել դավանաբան-հակաճառ. աշխատություններ, որտեղ քննարկվել են գերազանցապես քրիստոսաբան. խնդիրներ: Ա-դ. դ-յան հակաճառ. ժանրին պատկանող վաղագույն նմուշներից են *Հովհաննես Ա Մանդակունու* անվամբ հայտնի «Ապացույց յերկուց բնութեանց ասել զփրկիչն եւ կամ մի բնութիւն», *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովոյն Քաղկեդովնի» (թրգմ. 480–484-ին) գրվածքները: Վերջինիս բովանդակության և կառուցվածքի հետևողությամբ է կազմվել «*Կնիք հավատո*» ժողովածուն:

Դավան. կարևոր ժողովածու է «*Գիրք թղթոցը*», որտեղ Հայ եկեղեցու հայրերի աստվածաբան-դավան. բնույթի նամակներում արտահայտված են ազգ. եկեղեցու դավան. սկզբունքներն ընդդեմ *նեստորականության* և *քաղկեդոնականության*, արծարծված են հայ-լատին միութեն. շարժմանը վերաբերող խնդիրներ՝ ընդդեմ պապականության, Քրիստոսի երկու բնությունների, ներգործությունների ու կամքի, Սուրբ Հոգու՝ Հորից և Որդուց բխելու (Filioque), քավարանի մասին արմ. տեսությունների ևն: VII–IX դդ. քրիստոսաբան. լուրջ վեճերի տեղիք է տվել Քրիստոսին պատկերելու կարելիության և անկարելիության խնդիրը: Այդ առիթով ստեղծվել է հարուստ գրականություն: *Վրթանես Քերթողն* իր «Ընդդէմ պատկերամարտաց» աշխատության մեջ, արձագանքելով այդ վեճերին և արտահայտելով Հայ եկեղեցու դիրքորոշումը (հակառակ պատկերամարտների, որոնք բացարձակեցնելով Քրիստոսի աստվածային բնությունը, անկարելի էին համարում նրա անտեսանելի բնության պատկերագրումը), հաստատել և հիմնավորել է Քրիստոսին պատկերելու կարելիությունն ու անհրաժեշտությունը, նրա՝ որպես Աստծո Բանի մարմնավորման, մարդացման հայտնութենական իրողությամբ: Հայ-բյուզ., հայ-ասոր. դավան. երկխոսության շրջանում են գրվել *Ստեփանոս Սյունեցու* «Վասն անապականութեան մարմնոյն, որք ասեն թէ՝ որ աճէ եւ նուազէ, ապականացու է», *Հովհաննես Գ Օձնեցու* «Ճառ ընդդէմ երեւութականաց», «Ճառ ընդդէմ պաւղիկեանց» երկերը: Հայ աստվածաբան-դավանաբան. մտածողության մի նոր մակարդակ է հայտանշում *Խոսրովիկ Թարգմանչի* մատենագրությունը: Հինգ գլուխներից բաղկացած իր աշխատության մեջ («Առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ անձեւ, անսկիզբն ընկալեալ մարդկութիւն Աստուած Բան ի Կուսէն») հեղինակն աստվածաբան. մանրակրկիտ քննության է ենթարկել քաղկեդոնականների, *հուլիանոսականների, սևերիոսյանների* ու երևութականների (տես *Երևութականություն*) քրիստոսաբանությունը, ինքնահատուկ փաստարկներով ժխտել նրանց տեսակետները:

Հայ եկեղեցու վարդապետ. աստվածաբանության կարևոր աղբյուր է «*Կանոնագիրք Հայոցը*», որտեղ համատեղված են եկեղեցում որպես հավատի հեղինակություն ճանաչված *տիեզերական ժողովների*, տեղական ու ազգ-եկեղեց. ժողովների (տես *Եկեղեցական ժողովներ*), ինչպես նաև Հայ և *Ընդհանրական եկեղեցու* ս. հայրերի սահմանած *կանոնները*: Դրանցից շատերն ունեն ոչ միայն ծիսական, եկեղեցաբան., կենցաղային և բարոյական արժեք, այլև՝ աստվածաբան. ու դավան. հեղինակություն:

XI դ. կեսին Հայաստանում քաղկեդոն. եպիսկոպոսությունների և համայնքների սպառնական չափերի հասնող տարածումը դրանց հակահարված տալու անհրաժեշտություն է առաջացրել: Օրվա պահանջով ստեղծվել և լայն կիրառություն են գտել Հայ դավանաբան. աստվածաբանության հաղպատ-սանահինյան դպրոցի երևելի ներկայացուցիչներ *Անանիա Սանահնեցու, Հովհաննես Սարկավագի* աշխատությունները: Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկասիրությունում շոշափվել են ոչ միայն քրիստոսաբան., այլև ծիսական («Սակս անխտիր հաղորդելոյ», «Վասն մեռոնին», «Վասն բաղարջին», «Պատճառ երից սրբասացութեան»), եկեղեցավարչ. («Վասն չորից աթոռոցն», «Վասն բաժանման վրաց»), տոմարական («Վասն տաւնի

Ծննդեան Քրիստոսի») և այլ հարցեր: Նույնքան արժեքավոր են Հովհաննես Սարկավագի աշխատությունները («Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն», «Յաղագս Որդւոյ», «Յաղագս Հոգւոյ Սրբոյ», «Յաղագս բնութեան Բանի եւ միաւորութեան», «Յաղագս կամացն», «Յաղագս ներգործութեան» ևն): Նրանց գրվածքներում քննարկվել են նաև պատկերի աստվածաբանության (տերունական և սրբոց պատկերների հանդեպ վերաբերմունքի տարբերակում) հետ կապված հարցեր:

Հայ եկեղեցու դավան. սկզբունքների պաշտպանությանն է նվիրված *Պողոս Տարոնեցու* «Ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփայի» երկը, որն ըստ էության պատասխանն է հունադավան Թեոփիստե իմաստասերի հակաճառ. մի գրության: Աշխատության առաջին մասում Պողոս Տարոնեցին քննարկել է երրորդաբանական, քրիստոսաբան. խնդիրներ և, որպեսզի դավան. պատկերը պարզ լինի, մանրամասն ներկայացրել է Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումները, վերլուծել դրանք, ցույց տվել այդ ժողովի հետևանքով տեղի ունեցած քրիստ. եկեղեցու տրոհումը: Երկրորդ մասում հեղինակն անդրադարձել է ծիսական, տոմարական խնդիրների, արժեքավոր տեղեկություններ հաղորդել մանիքեցիների (տես *Մանիքեություն*), *թոնդրակեցիների, ծաթերի* մասին:

Դավանաբան. մտքի զարգացման նոր շրջափուլ է ներկայացնում կիլիկյան հայերի աստվածաբան. մատենագրությունը: Առավել նշանակալից է *Ներսես Շնորհալու* դավան. ժառանգությունը: Պատասխանելով բյուզ. արքունիքի քաղ. նպատակներ հետապնդող միութենական նկրտումներին՝ Ներսես Շնորհալին գրել է մի շարք դավան. աշխատություններ (մեծարժեք են հատկապես «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» դավանագիրը, «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», «Յաղագս աւանդութեան եկեղեցւոյ» թղթերը), որտեղ հետևողականորեն պաշտպանել է Հայ եկեղեցու ուղղադավան սկզբունքները: Այս երկերի դավան. կարևորությունն այնքան մեծ է եղել, որ դրանք վկայակոչվել են հետագայի Ա-դ. դ-յան մեջ:

Հայ Ա-դ. դ-յան կարևորագույն գործերից է *Վարդան Այգեկցու* «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» աշխատությունը: 16 գլխից բաղկացած այս երկում հեղինակը խոսում է «եռանձնեայ Աստուածութեան եւ մի բնութեան» մասին, եկեղեցու հայրերի տարբեր գործերից քաղված բազմաթիվ վկայություններով հաստատում Տիրոջ մարմնի անապական, անախտ լինելը, Ծննդյան և Մկրտության տոնը նույն օրը՝ հունվարի 6-ին կատարելու, ս. Պատարագը անխմոր և անջուր, անաղ և անձեթ մատուցելու, «Խաչեցարը» բացառապես Աստծո Որդուն ուղղելու անհրաժեշտությունը: Երկն աչքի է ընկնում ողջմիտ հանդուրժողությամբ, զուսպ, հավասարակշռված շարադրանքով: Հեղինակն իր առջև խնդիր չի դրել պախարակել մյուս եկեղեցիների դավանանքն ու ծիսակարգը, այլ՝ միայն ցույց տալ, որ Հայ եկեղեցու դավանանքն ու ծեսը հիմնված են վաղնջական եկեղեցու նվիրագործած դավան. հիմնադրույթների, ծիսակարգի և սովորույթների վրա: Դավան. հանդուրժողության ոգով է շարադրված նաև *Մխիթար Գոշի* «Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ» երկը, որը վրացի մատենագիր Արսեն Վաչեսաձի «Դոգմատիկոն»-ի «Երեսուն գլուխ հայոց հերձվածի» գլխում հայերին ներկայացված մեղադրանքների պատասխանն է: Թղթի նպատակն է ներկայացնել հայոց դավանանքը, եկեղեցու ծիսակարգը, ցույց տալ, որ հայերը, ինչպես և հույներն ու վրացիները, հերձվածողներ չեն:

XII–XIII դդ. նվազող բյուզ. ճնշմանը փոխարինել է պապական Արևմուտքի օրավուր աճող եկեղեցավարչ. հարկադրանքը: Քաղ. նկատառումներով Կիլիկյան Հայաստանի հոգևոր և աշխարհիկ իշխանություններն ակներևորեն հակվել են Արևմուտքի կողմը: Ահագնացող վտանգը կանխելու նպատակով *Վարդան Արևելցին* և *Ստեփանոս Օրբելյանը* պայքարի դրոշ են բարձրացրել՝ իրենց շուրջը համախմբելով հայրենասեր ուժերին: Ժամանակակիցների դավան. աչալրջությունը բարձր պահելու, աստվածաբան. անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելու նպատակով Վարդան Արևելցին շարադրել է «Դաւանութիւն հաւատոյ ուղղափառութեան», «Յաղագս բնութեան, թէ զինչ իցէ ըստ ինքեան իմացեալ ի փառս Աստուծոյ» աշխատությունները: Գործակցելով *Կոստանդին Ա Բարձրբերդցի* կաթողիկոսի հետ՝ Վարդան Արևելցին պատասխանել է Հռոմի պապի՝ Կիլիկիայի Հայոց Հեթում Ա թագավորին հղած դավան. գրությանը: Պատասխան թղթում [«Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց, զոր գրեաց առ Հեթում թագաւորն... ի մայրա-

քաղաքն Սիս...ի թուիս Հայոց ի ՈՂԵ» (1246)] Վարդան Արևելցին մերժել է Կաթողիկ եկեղեցու առաջադրած վարչաքաղ. դերագահության գաղափարը և հերքել պապի պարտադրած 15 դավան. կետերը: 1302-ին Ստեփանոս Օրբելյանը գրել է «Թուղթ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ յարեւելեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր...» երկը, որտեղ կոչ է արել *Գրիգոր Է Անավարզեցի* կաթողիկոսին պահպանել Հայ եկեղեցու դավան., ծիսական անաղարտությունը, առաքելավանդ սահմանումները: Սակայն թուղթն իր անհրաժեշտ արդյունքը չի տվել, և Ստեփանոս Օրբելյանը նույն թվականին շարադրել է իր դավան. մյուս երկասիրությունը՝ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակացը», որտեղ երկաբնակ դավանանքի ահագնացող տարածումը նմանեցնելով առողջ մարմինը ճարակող քաղցկեղի՝ տաղնապով գրել է, որ դրանով վարակված է բովանդակ Կիլիկիան, Բագրատունյաց Անին, Շիրակը: Ստեփանոս Օրբելյանի այս աշխատության շարադրումը պայմանավորված էր նաև XIII դ. 2-րդ կեսին Կիլիկիայում շրջառնռված քաղկեդոն. «Արմատ հաւատոյ»-ի աստվածաբան. մերժման անհրաժեշտությամբ: Ստեփանոս Օրբելյանի երկը բաղկացած է 12 «ձեռնարկներից», որոնք շոշափում են քրիստոսաբան. (Բ, Գ, Դ), ծիսական (Ե, Զ, Ժ, Է), տոմարական (Ը), եկեղեցաբան. (ԺԱ, ԺԲ) և այլ բնույթի հարցեր:

Ծիսական և տոմարական բնույթի հարցեր են արծարծվել *Մովսես Երզնկացու* «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց ՉԾԸ» (1309) և «Պատասխանի թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց» աշխատություններում: Քաղ. նկատառումներից ելնելով՝ Կիլիկիայի Հայոց Հեթում Բ թագավորը և Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսը 1307-ի Սսի ժողովում (տես *Սսի եկեղեցական ժողովներ*) ընդունել են Արևմուտքի պահանջները: Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն»-ը ուղղված է եղել այդ ժողովի ազգավնաս որոշումների դեմ: Նրա մյուս երկը գրվել է ի պատասխան հունադավան հայազգի Գրիգոր քահանայի ամբաստանագրի, որտեղ արծարծվել են քրիստոսաբան. (բնության խնդիրը), ծիսական (ս. բաժակի մեջ ջուր չխառնել, մեռոնը կարող է լինել ոչ միայն ձիթապտղից, այլև զանազան նյութերից), տոմարական (Հովհաննես Մկրտչի տոնը կատարել ոչ թե հունիսի 24-ին, այլ՝ հուլիսի 11-ին) խնդիրներ:

XIII–XIV դդ. մյուս դավանաբան հեղինակը *Մխիթար Սասնեցին* է: Նրա գրչին է պատկանում 17 ճառ, որոնք ունեն քրիստոսաբան., ծիսական, վախճանաբան., բարոյաբան. ուղղվածություն:

Արևելքում պապական քաղաքականության իրականացման համար Կաթոլիկ եկեղեցին իր գործակալներին՝ դոմինիկյան քարոզիչներին, ուղարկել է Հայաստան: Նրանք (Բարթուղիմեոս Մարաղացի, Հովհաննես, Հակոբ Քռնեցիներ, Հովհաննես Ծործորեցի և ուր.) Արտազի շրջանում և Նախիջևանում միարարականների (տես *Ունիթորություն*) անվան տակ ծավալել են եկեղեցավարչ., քարոզչ. քայքայիչ գործունեություն: Ընդդեմ պապական քաղաքականության գրվել և հրապարակվել են կաթոլիկ աստվածաբանությունը քննադատող դավան. աշխատություններ: Այդ պայքարին մասնակցել են Հայ եկեղեցու մեծանուն հեղինակություններ *Եսայի Նչեցին* («Դաւանութիւն հաւատոյ», «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ», «Թուղթ ընդդէմ Հեթմոյ Կիւրիկեցւոյն» ևն), *Կիրակոս Երզնկացին* («Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն», «Թուղթ առ Կարնեցիս», որտեղ մասնավորաբար խոսվում է եկեղեցու յոթ խորհուրդների մասին), *Հովհան Որոտնեցին* («Հաւատոյ դաւանութիւն» թուղթը՝ ուղղված Կոստանդին Ե Սսեցի կաթողիկոսին): Հակամիաբար. շարժման հարուստ փորձն իր աստվածաբան. աշխատություններում լավագույնս օգտագործել է *Գրիգոր Տաթևացին*: Միարարների դեմ պայքարն առավել նպատակասլաց մղելու համար նա կիրարկել է միարարների իսկ գործադրած մտակառուցման դպրոցական (սխոլաստիկ) եղանակը, որին հատուկ է աստվածաբան. դրույթների հիմնակարգումը, դասդասումն ու թվակարգումը: Նշված եղանակով է Գրիգոր Տաթևացին շարադրել «Գիրք հարցմանց»-ը և «Ոսկեփորիկ»-ը, որոնք հանրագիտարանային համակողմանիությամբ ներկայացնում են Հայ եկեղեցու վարդապետ. աստվածաբանությունը: Այս երկերում (մասնավորապես «Գիրք հարցմանց»-ում) որոշակի համակարգի են բերվում հայ վարդապետ. աստվածաբանության բազմադարյան նվաճումները: Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում դավան. իրողությունները ներկայացրել է կուռ, ներդաշն համամասնությամբ: Գործը շարադրված է աստվածաբանելու դպրոց. (սխոլաստիկ) ոճին հարազատ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆ. *Հարցուպատասխանի-ների* (Questitiones disputatae) եղանակով:

Գրիգոր Տաթևացուց հետո աստվածաբանական միտքն ունեցել է առանձին առկայծումներ: Հիշատակության արժանի են XV–XVIII դդ. հեղինակներ *Մատթեոս Ջուղայեցու* «Վասն հարցմանց անօրինաց զանազան պատասխանիք», «Երկաբնակացն առ մեզ հարցումն եւ պատասխանիք առ նոսա» (Մատենադարան, ձեռ. №№ 969, 1233), *Աղեքսանդր Ա Ջուղայեցի* կաթողիկոսի «Յայտարարութիւն ընդդէմ Փռանկաց» կամ «Գիրք Ատենական, որ ասի Վիճաբանական» աշխատությունները: Աղեքսանդր Ա Ջուղայեցու տասը գլուխներից բաղկացած երկում հերքվել են լատին դավանության հիմն. դրույթները: Վարդապետ. աստվածաբանության ընդհանուր հարցեր են արծարծվում *Ստեփանոս Լեհացու* «Բանք իմաստասիրականք եւ աստուածաբանականք» (Մատենադարան, ձեռ. № 110), Ստեփանոս Դաշտեցու «Կոչնակ ճշմարտութեան» (Մատենադարան, ձեռ. № 8111), «Մաղախ փչրանաց» (Մատենադարան, ձեռ. № 9689), Հովհաննես Ջուղայեցու «Համառօտ աստուածաբանութիւն» (Մատենադարան, ձեռ. № 7063), «Գիրք որ կոչի սրբազնագործութիւն» (Մատենադարան, ձեռ. № 1935) երկերում:

XIX դ. 1-ին կեսին կաթոլիկ Արևմուտքի դեմ մաքառումը փոխարինել է բողոքական աստվածաբանության դեմ ծավալված պայքարը: Հայ եկեղեցու դավան. անաղարտությանը նախանձախնդիր հեղինակները հանդես են եկել ընդդեմ Լյութերի և Կալվինի: Առավել նշանակալից են Ղազար վրդ. Մարտիրոսյանի «Տեսութիւն ընդդէմ Լիւտերի եւ լիւտերականաց», «Պատասխանի կալվինեանց թիւնալի նորակրօն տետրակին...» աշխատությունները: Այս շրջանում փորձ է արվել ամբողջացնել դավանաբան. աստվածաբանության լավագույն ավանդույթները: Մսեր Մսերյանի (Մսեր Գրիգորյան Զմյուռնացու) աշխատասիրությամբ 1850-ին լույս է տեսել «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց» գիրքը: Աշխատության առաջին մասում Նիկիայի, Կ.Պոլսի և Հայ եկեղեցու *Հավատո հանգանակների* համադիր քննությունն է, ապա վարդապետ. աստվածաբանության տասը հիմն. ստորոգությունները (Գոյութիւն Աստուծոյ, Կատարելութիւնք աստուածայինք, Երրորդութիւն աստուածային անձանց, Արարչագործութիւն, Նախախնամութիւն, Մարդեղութիւն Աստուածորդւոյն, Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդ նորա, Շնորհաբաշխութիւն, Հարութիւն մեռելոց, Վերջին դատաստան) պարզաբանող հարցուպատասխանին: Աշխատության երկրորդ մասում «Վկայութիւնք» խորագրի տակ բերված են վարդապետ. և դավան. աստվածաբանությանը վերաբերող քաղվածքներ Աստվածաշնչից, եկեղեցու Հայրերի ժառանգությունից:

Հայ եկեղեցու վարդապետ. սկզբունքների ընդհանուր պատկերն է տրված Մ. արք. *Օրմանյանի* «Հայոց եկեղեցին» աշխատության ԻԱ-ԻԶ գլուխներում («Դաւանական սկզբունքներ», «Հայ եկեղեցւոյ դաւանութիւնը», «Հաւատոյ հանգանակը», «Ներողամտութեան հոգին», «Եկեղեցւոյ խորհուրդները», «Վարդապետական ճշդաբանութիւնը»): Իր ընդգրկմամբ, փաստերի տրամաբան. քննությամբ աչքի է ընկնում հեղինակի «Տեղիք աստուածաբանութեան» կոթողային աշխատությունը, որտեղ Հայ և արևելաքրիստ. եկեղեցու դավանանքի հիման վրա հեղինակը մանրամասն ներկայացրել է ոչ միայն դավան., այլև բարեպաշտ. աստվածաբանության հիմնակետերը:

Դասախոս. երկարամյա գործունեության արդյունք է Ա. *Տեր-Միքելյանի* «Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը» ստվար աշխատությունը, որը, ինչպես հեղինակն է նկատում, «դաւանական վարդապետութեան ձեռնարկ է»: Իր ժամանակի եվրոպ. գիտության նվաճումների հիման վրա, առաջին անգամ նա է համակարգել և դասդասել հայ դավանաբան. աստվածաբանության բազմադարյան փորձն ու ձեռքբերումները: Գլխավորաբար հայ հեղինակների տեսական – վարդապետ. բովանդակություն ունեցող երկերի (Գրիգոր Ա Լուսավորչին վերագրվող «Յաճախապատում ճառք», Եղիշե, Հովհաննես Ա Մանդակունի, Ներսես Շնորհալի, Գրիգոր Տաթևացի և ուր.) օգտագործմամբ տրված է Հայ եկեղեցու դավանաբան. աստվածաբանության համապարփակ պատկերը: Աշխատության կառուցվածքը թելադրվել է Հայ եկեղեցու Հավատամքի բովանդակությամբ. ա. Աստված և նրա գործերը, բ. Աստվածորդու փրկագործությունը, գ. Ս.Հոգու շնորհաբաշխությունը, եկեղեցին, նրա սուրբ խորհուրդներն ու հանդերձյալ կյանքը (փրկության տնտեսություն և կատարում): Առաջին մասը սկսվում է կրոնագիտ. վերլուծմամբ, որի նպատակը Աստծո գոյության հաստատումն է:

«Սուրբ Երրորդություն», «Աստծո արարչություն», «Աշխարհի ստեղծում», «Հրեշտակները», «Մարդու ստեղծումը», «Աստծո նախախնամությունը», «Չարն ու չարի սկզբունքը» և այլ ենթամասերում Ա. Տեր-Միքելյանը ներկայացրել է աստվածաբանության բոլոր կարևորագույն կետերը: Բ մասի «Միածնի Մարդեղությունը», «Քրիստոսի Աստվածության ու մարդկության միությունը», «Քրիստոսի աստվածմարդկային կյանքի խորհուրդը», «Քրիստոսի գործունեության խորհուրդը» և այլ ենթամասերում բացատրել Փրկագործության խորհուրդը, ինչպես նաև՝ անդրադարձել Հայ եկեղեցու քրիստոսաբանությանը: «Փրկչաբանական մոլորություններ» խորագրի ներքո հեղինակը խոսել է հերձվածների, քրիստոսաբան. շեղումների (*արիոսականություն, ապողինարիզմ*, նեստորականություն, *եվտիքականություն* ևն), կաթոլիկ մարեմաբանության դավանած տեսակետների (Մարիամ Աստվածածնի անարատ հղությունն ու ծնունդը Հովակիմից և Աննայից) մասին: Գ մասում բավական մանրամասն ներկայացրել է Սուրբ Հոգու, եկեղեցու վերաբերյալ Հայ եկեղեցու հրամանակարգ տեսությունները: Հեղինակն առանձնապես կանգ է առել եկեղեցու խորհուրդների աստվածաբանության վրա՝ վիճարկելով կաթոլիկ և բողոքական եկեղեցիների տեսակետները: Աշխատությունն ավարտվում է Հայ եկեղեցու վախճանաբան. տեսակետների համակարգումով և ամբողջացումով («Վախճան և Քրիստոսի Երկրորդ գալուստը», «Մեռելների հարություն», «Դատաստան և վերջին վիճակ»):

XX դ. 40–50-ական թվականներից շահեկան զեկուցումներով և հոդվածներով հանդես է եկել Տիրան արք. Ներսոյանը: Հատկապես արժեքավոր են նրա էկումենիկ ոգով շարադրված «Հայ եկեղեցու քրիստոսաբանական դիրքորոշումը» (1957), «Քրիստոսաբանության մեջ համաձայնության խնդիրները» (1971) հոդվածները:

Գրկ. Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, Ե., 1998: Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Տփղիս, 1900: Օրմանյան Մ., Հայ եկեղեցին, Ե., 1991: Նույնի, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղեմ, 1981: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 216–307: Օղլուգյան Ա., Համառոտ ակնարկ Հայ եկեղեցվո վարդապետական աստվածաբանության գրականության, «Գանձասար», 4, 1993:

Հակոբ Քյոսեյան

ԱՍՏՎԱԾԱԲԱՆ.

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ Երևանի պետական համալսարանի, հիմնադրվել է 1995-ին: Հիմնադիրը և առաջին դեկանն է բանասիր. և փիլ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շահե արք. Աճեմյանը: Ֆակուլտետում ուս. աշխատանքները կազմակերպված են նոր՝ երկաստիճան համակարգով. բակալավր՝ 4 տարի, մագիստրատուրա՝ 2 տարի: Ունի շուրջ 250 ուսանող, յուրաքանչյուր տարի՝ ավելի քան 50 շրջանավարտ: Ֆակուլտետում գործում է երկու ամբիոն՝ աստվածաբանության և կրոնի տեսության ու պատմության: Կրոնի տեսության և պատմության ամբիոնի ծրագիրն ընդգրկում է հին և նոր աշխարհների մեծ կրոնների պատմությունը և ընդհանուր եկեղեցու պատմությունը: Աստվածաբանության ամբիոնի ծրագիրն ընդգրկում է վարդապետ. աստվածաբանություն, Աստվածաշնչի ներածություն և մեկնություն, Հայ եկեղեցու պատմություն, բարոյական աստվածաբանություն, հայրաբանություն, կրոնագիտություն, տոմարագիտություն, ծիսագիտություն, աստվածաբան. հին գրականություն ևն: Շահե արք. Աճեմյանի ջանքերով ֆակուլտետում ստեղծվել է աստվածաբան., աստվածաշնչյան գրադարան, որը կոչվում է իր անունով: Ներկայումս (2001) գրադարանն ունի մանագիտ. բազմալեզու գրականություն, հանրագիտարաններ, բառարաններ (շուրջ 5 հզ. կտոր գիրք): 1997–1998 ուս. տարվանից ֆակուլտետում գործում է համակարգչային կենտրոն, և ուսանողներն օգտվում են ինտերնետային կապի հնարավորություններից: Ա. ֆ-ում աստվածաբան. և աստվածաշնչական թեմաներով դասախոսություններ են կարդացել Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ֆրանսին Լըկլերկը, Քենտրբերիի համալսարանի աստվածաբան-պրոֆեսորներ Հելլեն Դոնելին և Դեյվիդ Քուքը, Հալլեի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Ֆրեդերիկ Գոլցը, Վենետիկի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ դոկտոր Լևոն վրդ. Զեքիյանը, Հռոմի արևելագիտության հայրապետ. ինստ-ի պրոֆեսոր Ռոբերտ Տաֆտը, Ստրասբուրգի աստվածաբան. համալսարանի պրոֆեսոր Ժերար Սիգվալտը:

Ա. ֆ-ում հատուկ կարևորություն է տրվում օտար լեզուների ուսուցմանը: Առաջին երկու տարիների ծրագիրն ընդգրկում է մեկ օտար լեզու (ֆրանս., գերմ. կամ անգլ.), պարտադիր

ԱՍՏՎԱԾԱԲԱՆ. է ռուսերենը, մեկ հին լեզու (լատ., հուն. կամ եբր.) և գրաբար:

Ա. ֆ. Անգլիայի Քեմբրիջի համալսարանի հետ համաձայնեցրած իրագործում է ըստ "British council"-ի ծրագրի անգլ. լեզվի ուսուցման հատուկ համակարգ, որն ուսանողներին նախապատրաստում է G.C.E. քննություններին: Քննությունը բարձր նիշերով հանձնող ուսանողին տրվում է միջազգ. FCO վկայագիր:

Համակարգչային կենտրոնն իրականացնում է նաև հրատարակչ. աշխատանքներ: 1998-ին աստվածաբան. մատենաշարից հրատարակվել է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» գիրքը: Լույս են տեսել Ռ. Վարդանյանի «Հայոց Տոնացույցը» (1999), Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ի երկու հատորները (2000), Վարդան Արևելցու ճառերի և ներբողների քննական բնագրերը Հ.Քյոսեյանի աշխատասիրությամբ (2000): Արևելահայերեն (գրաբար բնագրի հետ միասին) պատրաստվում են տպագրության Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը, Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատում»-ի վերախմբագրված երեք հատորները: Հրատարակվել են նաև քարոզչական բնույթի փոքրածավալ աշխատանքներ, կրոնագիտ. գրքույկներ:

Ա. ֆ. ուս. տարվա ընթացքում կազմակերպում է արշավներ Հայաստանի նշանավոր վանքեր՝ Գլաձոր, Տաթև, Հաղարծին: Առաջին գիտ. արշավը կազմակերպվում է Օշական (յուրաքանչյուր ուս. տարվա հոկտեմբերին, Թարգմանչաց տոնի օրը), և ուսանողները ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին ուխտում են հավատարիմ լինել հայոց քրիստոն. հավատին և լեզվին:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, թեոլոգիա [< հուն. *θεολογία* (*θεος* – Աստված և *λογος* – բան, խոսք) բառից. նշանակում է խոսք Աստծո մասին], գիտություն *Աստծո* մասին, քրիստոնեական *կրոնի* և *հավատի*, եկեղեցու *դավանանքի* և բարոյականության գիտական ու համակարգված շարադրանք: Նպատակն է հիմնավորել և ապացուցել աստվածային *հայտնության* ճշմարտությունը: Քրիստ. Ա. հիմնված է *Աստվածաշնչի* վրա: Ա-յան քննական ուսումնասիրության և մտածողության առարկան բոլոր կրոն. երևույթներն են և Սուրբ Գրքի հիմն. թեմաները. Աստված, այնպես, ինչպես հայտնվեց Քրիստոսով, մարդ, պարտականություն, մեղք, փրկություն, կյանք և վախճան, հավիտենականություն են: Ա. բացատրում է հավատը տրամաբան. վերլուծությամբ, մեկնող. պարզաբանմամբ և իմացական եղանակների կիրառությամբ՝ հասնելու համար հասկանալի, բայց անբացատրելի խորհուրդների բանաձևմանը:

Հին հույներն աստվածաբան են անվանել այն փիլիսոփաներին, գրողներին, բանաստեղծներին, որոնք աշխարհի, մարդու ծագումը վերագրել են «աստվածներին» և խոսել նրանց մասին, իսկ քրիստոնյա հույները՝ Աստծո մասին խոսողներին և Աստծո խոսքի պաշտպաններին: Քրիստ. ավանդությունը չորրորդ Ավետարանի հեղինակին՝ Հովհաննես ավետարանչին մեծարել է «աստվածաբան» պատվանունով՝ Աստծո Բանի հավիտենական ծնունդի, Բանն Աստծո դաղափարը Քրիստոսի անձի հետ միացնելու և Մարդեղության խորհրդի բացահայտման համար:

Քրիստ. առաջին դարերում աստվածաբանել նշանակել է առհասարակ օրհնաբանել Աստծուն, խոսել նրա էության և ինքնության (հարաբերական իմաստով), սիրո և հոգածության մասին համաձայն հայտնության տվյալների, Աստվածաշնչի խոսքերի և մանավանդ՝ Քրիստոսի կյանքի, նրա պատգամած ճշմարտությունների, որոնք փոխանցվել են մարդկությանը առաքելական ավանդության միջոցով: Սակայն հետագայում Ա. դուրս է եկել իր պաշտամունքային և պարզ նկարագր. բնույթի սահմաններից և չի մնացել Աստծո մասին միայն հայտնության տվյալներով խոսելու համեմատաբար սահմանափակ շրջագծում: *Եկեղեցու հայրերը*, ելնելով գնոստիկյան (տես *Գնոստիցիզմ*) և քրիստ. աղանդների ու հերձվածների դեմ դաղափար. պայքարի անհրաժեշտությունից, սկսել են իմացական հայեցողությամբ պարզաբանել քրիստ. հավատը, փիլիսոփայությունից փոխառնելով վերլուծման եղանակներ, փաստարկված, տրամախոս. ոճ, եզրեր, բանաձևումներ: Քրիստ. ճշմարտությունները սկսել են սահմանվել, մեկնաբանվել, պաշտպանվել ընդդեմ հերետիկոս. մեկնաբանությունների, ժխտումների և այլափոխումների: Ա-յան հիմն. բովանդակությունը կազմել են քրիստոսաբանությունը և երրորդաբանությունը: Ստեղծվել են առաջին քրիստ. աստվածաբան. դպրոցները, որոնցից նշանավոր էին *Ալեքսանդրիայինը* և *Անտիոքինը*: Վերջիններս մեծ դեր են խաղացել արլ. և արմ. աստվածաբան. մտքի ձևավորման և զարգացման

գործում: Ա.-յան՝ եկեղեցու հայրերի մշակած եղանակն ունեցել է առավելապես ջատագով., քարոզխոս. և մեկնող. բնույթ:

Արևմուտքում միջին դարերում, հատկապես սխոլաստիկայի ծաղկման շրջանում (XI–XIII դդ.) հույն դասական փիլիսոփաների, մասնավորապես Արիստոտելի մշակած փիլիսոփայության գիտ. և մեթոդաբան. տվյալների ազդեցությամբ Ա. ստացել է գիտ. առարկայի նկարագիր, դարձել ինքնուրույն գիտություն իր ներքին բաժանումներով և ճյուղավորումներով: Ա. գրավել է համալսարանական ուսման կենտր. տեղը, իսկ մյուս գիտությունները որակվել են որպես Ա.-յան «աղախին»: XVI դ. Ռեֆորմացիայի արդյունքում քրիստոնեության մեջ ծնունդ առած *բողոքականությունը* սկիզբ է դրել բողոքական Ա.-յանը՝ իր տարբեր հոսանքներով և ուղղություններով:

Հայ Ա. հիմնականում հետևել է հայրաբանական շրջանի (II–V դդ.) մշակած Ա.-յան տիպին՝ ունենալով գլխավորապես ջատագով. և հակաճառական բնույթ: Սկսած XIV դարից հայ Ա.-յան մեջ երևան են եկել դպրոցական (սխոլաստիկ.) մտակառուցման ազդեցություններ: Գիտ. Ա.-յան հայ մեծագույն ներկայացուցիչը *Գրիգոր Տաթևացին* է, որը Հայաստանում տարածված՝ ժամանակի լատինադավան հոսանքի՝ *ունիթորության* դեմ պայքարել է իրենց իսկ զենքով և եղանակով: Հայոց գրերի գյուտից հետո, երբ *Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Ա Պարթևի, Եղնիկ Կողբացու, Հովհաննես Ա Մանդակունու, Եղիշեի* և այլոց ջանքերով ստեղծվել է աստվածաբան. թարգման. և ինքնուրույն հարուստ գրականություն, ձևավորվել է հայ աստվածաբան. միտքը. նպատակն էր հեթանոսության և զրադաշտականության հերքումը, քրիստ. կրոնի սկզբունքների հիմնավորումը, աղանդավորության (*մանիքեություն, մծղնեություն, պավլիկյաններ, արիոսականություն, նեստորականություն, թոնդրակեցիներ* ևն) դեմ պայքարը: *Քաղկեդոնի ժողովից* հետո մեծ կարևորություն է ստացել *քաղկեդոնականության* դեմ պայքարը, Հայ և Հույն, Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միության փորձերին դիմադրվելը, Հայ եկեղեցու ծիսաղավան. ինքնուրույնության և անկախության պահպանումը: Ասպարեզ են եկել հայ աստվածաբան. մտքի խոշոր ներկայացուցիչներ *Ստեփանոս Սյունեցին, Մաթևոսաղան, Խոսրովիկ Թարգմանիչը, Հովհաննես Գ Օձնեցին, Հովհաննես Սարկավագը, Անանիա Սանահնեցին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին*, Գրիգոր Տաթևացին և ուր.: Նոր շրջանի հայ նշանավոր աստվածաբաններն են Ա. *Տեր-Միքելյանը*, Կ. *Տեր-Մկրտչյանը*, Մ. *Օրմանյանը* (տես նաև *Աստվածաբանական-դավանաբանական գրականություն*):

ԱՍՏՎԱԾԱԲԱՆ.

Ա. բաժանվում է երեք մեծ ճյուղի՝ տեսական, պատմական, գործնական, որոնք իրենց հերթին ունեն ներքին բաժանումներ:

Տեսական Ա. ստորաբաժանվում է երկու մասի՝ վարդապետական կամ դավանաբանական Ա. (կոչվում է նաև ուղղակի դավանաբանություն) և ջատագովական Ա.: Վարդապետական Ա.-յան առարկան են կազմում քրիստ. հավատի էական տարրերը, հիմն. սկզբունքները, որոնք եկեղեցու կողմից ճանաչված են որպես հավատի կանոն կամ դավանանք: Վարդապետական Ա. գիտություն է եկեղեցու վարդապետած ընդհանուր հավատալիքների մասին: Նպատակն է ներկայացնել քրիստ. հավատի ճշմարտությունը, իմացական հայեցողության եղանակով վերլուծել հայտնության տվյալները՝ սուրբգրային և եկեղեց. ավանդության հիման վրա, բացատրել աստվածային տնօրինության իմաստը և այն ներկայացնել որպես ժամանակի ու տարածքի մեջ նյութավորված օրինաչափությունների որոշակի համակարգ: Վարդապետական կամ դավանաբան. Ա. ունի իր առարկաները. իմացաբանական Ա., աստվածագիտություն, երրորդաբանություն, արարչագիտություն, մարդաբանական Ա., քրիստոսաբանություն և փրկագործություն, մարեմաբանություն, հոգիաբանություն (ուսմունք Սուրբ Հոգու էության մասին), եկեղեցաբանություն, խորհրդագիտություն, շնորհաբանություն, վախճանաբանություն:

Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանցի» «Յաղագս աստուածաբանական եղանակած» ենթավերնագրի ներքո վարդապետական Ա. բաժանել է չորս հիմն. մասի. ա. տպավորական, բ. պատճառաբանական, գ. նշանական (սիմվոլիկ), դ. խորհրդական (միստիկ): Այս չորս բաժանումներից բացի, Գրիգոր Տաթևացին, հետևելով Գրիգոր Նազիանզացուն, Ա. բաժանել է ևս երկու մասի («դրութիւն», «բացաբարձումն»)՝ դրականի և ժխտականի, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին՝ երկու ենթամասերի: Դրական Ա. («կա և անվանվում է», «չկա և անվանվում է») իր մեջ բովանդակում է տպավորականը, պատճառաբանականը և նշանականը,

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ որոնք հայտնության հիման վրա տալիս են Աստծո, Ս. Երրորդության անձերի, որպես Լույս, Կյանք, Սեր ևն, որակումները, ինչպես նաև՝ Աստծուն վերագրում առարկաներ կամ հատկություններ, որոնք իրականում չկան («Աստծո մատը», «Աստված հանգստացավ» ևն): Ժխտական Ա-յան մեջ մտնում է խորհրդականը («կա և չի անվանվում»), որն Աստվածությունը բնորոշում է անսկիզբ, անվախճան, անպարագիծ, ոչ միտք, ոչ խոսք և այլ որակումներով: Ա-յան չորրորդ եղանակն իր մեջ մեկտեղում է դրականն ու ժխտականը («չկա և չի անվանվում»): Առաջնորդվելով *Դիոնիսիոս Արիոպագացու* վարդապետությամբ՝ Գրիգոր Տաթևացին հաստատում է, որ աստվածաբանելու բարձրագույն եղանակը խորհրդականն է, որն անճառելի է ու անիմանալի, բացառում է ամեն տեսակ միտք, խոսք ու պատկեր, պաշտամունքն իրականացնում է կատարյալ լռության մեջ:

Ջատագով. Ա-յան նպատակն է հիմնավորել քրիստ. հավատի ճշմարտությունը և ուղղափառությունն ընդդեմ հերքումների, աղանդավոր. և հերձվածող. աղավաղումների, ինչպես նաև ընդդիմանալ մեկ այլ կրոնի: Ա-յան նախն. նկարագիրը եղել է ջատագով., իսկ *ջատագովությունն* ունեցել է ժխտողական բնույթ՝ ուղղված լինելով այս կամ այն աղանդի դեմ («Ընդդէմ հրէից», «Ընդդէմ Մարկիոնի», «Ընդդէմ Կելսոսի», «Եղծ աղանդոց» ևն): Ներկայումս ջատագով. Ա. հետևում է դրական մեթոդաբանությանը և կրել է բովանդակային փոփոխություններ: Ջատագով. Ա. կենտրոնացել է այնպիսի հիմնահարցերի շուրջ, ինչպիսիք են մարդկային ճանաչողության արժեքը, մարդու դերը արտաքին իրականության, հավատի ընկալման և մեկնաբանման մեջ, ժամանակակից գիտ. առաջադիմությունից եկած առարկությունները ևն: Ա-յան այս բնագավառը այլևս չի զբաղվում լոկ ջատագովելով, այլ որպես իր առանցքային նպատակադրումներից է ընկալում ջատագովելու հետ միասին նաև հավատի նկատմամբ մարդու դիրքը իմացաբանորեն և մեկնողաբանորեն հիմնավորելու պահանջը:

Պատմական Ա. ուսումնասիրում է քրիստ. հավատի ծագման, տարածման, մարդկանց և հասարակությունների կյանքում գործնական դրսևորման հարցեր, եկեղեցու ծագումը, զարգացումը և ժամանակակից վիճակը, դավան. բանաձևումների ձևավորման, պաշտամունքի, ծեսի, արարողությունների ծագման և զարգացման ընթացքը, Աստվածաշնչի գրքերի կազմության, կանոնի, խմբագրության, բնագրային մեկնության և հարակից այլ հարցեր: Պատմ. Ա. ստորաբաժանվում է հետևյալ մասերի. Հին և Նոր կտակարանների ներածություն, դավանանքների պատմություն, եկեղեցու պատմություն, ծիսագիտություն, կանոնագիտություն, հայրաբանություն:

Գործնական Ա. բովանդակում է այն մեթոդներն ու միջոցները, որոնցով տեսականորեն ըմբռնված և պատմականորեն լուսաբանված քրիստ. հավատը կարող է փոխանցվել ժողովրդին և գործնականորեն կյանքի կոչել Քրիստոսի քարոզած ճշմարտությունները, քահանայագործության կատարման եղանակները: Տեսական ճշմարտությունն ու պատմ. երևույթն ընթացք են և միջոց քրիստ. հավատը գործնականորեն արտահայտելու, գիտակց. մտքով, պատասխանատվության զգացումով և անձն. վկայությամբ ապրելու համար: Գործն. Ա-յան ստորաբաժանումներն են հովվական Ա., բարոյագիտությունը կամ բարոյական Ա., քարոզխոսությունը:

Գրկ. Գրիգոր Տաթեվացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Տեր-Միքելյան Ա., Աստվածաբանական գիտութիւնները, «Արարատ», 1893, № 6–8: Թոփճյան Հ., Ի՞նչ է արդի աստուածաբանութիւնը, «Լոյս», 1905: Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին..., Ե., 1993: Գարեգին Ա, Համառոտ ձեռնարկ հովուական աստուածաբանութեան, 3 հրտ., Էջմիածին, 1996: Մեսրոպ Գ., Հովուական աստուածաբանութիւն Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, Անթիլիաս, 1979:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԵՐ, Մարիամ Աստվածածնին նվիրված եկեղեցական տոներ, որոնցից մեկը՝ *Վերափոխումն ս. Աստվածածնի*, Հայ եկեղեցու *Տաղավար* տոներից է: Մյուս տոներն են. Հղություն ս. Աստվածածնի (Յղութիւն ս. Աստուածածնի յԱննայէ), Ծնունդ ս. Աստվածածնի, Ընծայումն ս. Աստվածածնի (Երից ամաց Ընծայումն ի տաճարն), Ավետում, Գյուտ տուփի ս. Աստվածածնի, Գյուտ գոտու ս. Աստվածածնի:

Հղություն ս. Աստվածածնի, Աստվածածնի մոր՝ Աննայի հղության հիշատակության տոնն է. բոլոր Արլ. եկեղեցիները նշում են դեկտ. 9-ին, իսկ Կաթոլիկ եկեղեցին՝ դեկտ. 8-ին: 1854-ին Կաթոլիկ եկեղեցին ընդունել է Աստվածածնի անարատ հղության վարդապետությունը, ըստ որի՝ Աստվածամոր ծնունդը, ինչպես Հիսուսինը, զերծ է եղել

սկզբ. մեղքից: Մյուս եկեղեցիները մերժել են հավատի այդ նոր վարդապետությունը:

Ծնունդ ս. Աստվածածնի, անշարժ տոն է: Հայ եկեղեցին նշում է XIII դարից սկսած, սեպտ. 8-ին:

Ընծայումն ս. Աստվածածնի, երեքամյա Մարիամին, իբրև ուխտի զավակի, իր Հովակիմ և Աննա ծնողների կողմից Տաճարին ընծայելու հիշատակության տոնն է: Սկզբնապես Հայ եկեղեցին չի ունեցել Ընծայման կամ Նվիրման տոն, բայց սկսած XVI–XVII դարերից, հետևելով Հույն և Լատին եկեղեցիների սովորությանը, մտցրել է Տոնացույց և նշում է անփոփոխ՝ նոյեմբ. 21-ին:

Ավետում, Ավետման տոն, Գաբրիել հրեշտակապետի՝ Մարիամ Աստվածածնին Ավետիս բերելու հիշատակի օրն է: Հրեշտակապետը լուր բերեց Տիրամորը, թե Աստծո Որդին իրենից պետք է մարմնանա Սուրբ Հոգու զորությամբ և անարատ հղությամբ: «Եվ հրեշտակը նրան ասաց. «Մի վախեցիր, Մարիամ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա դու կըհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես» (Ղուկ. 1.30–31): Այդ օրը նաև Քրիստոսի Մարդեղության տոնն է: Ավետման տոնը Հայ եկեղեցին նշում է անփոփոխ՝ ապրիլի 7-ին: Եթե այդ տոնը նույնիսկ Մեծ պահքին զուգադիպի, եկեղեցու սուգի և ապաշխարության ձևերն ընդհատվում են (նախկինում Ավետման տոնը, եթե Մեծ պահքին էր համընկնում, հետաձգվում էր ս. Զատկի չորրորդ օրվան): Հույն և Կաթոլիկ եկեղեցիները, Ս. Ծնունդը դեկտ. 25-ին նշելով, Ավետումը մարտի 25-ին են կատարում:

Գյուտ տուփի ս. Աստվածածնի, Տիրամոր հիշատակության տոների շարքում ուշ շրջանում ավելացել են նրան պատկանած իրերի հայտնությանը նվիրված տոներ: Դրանցից մեկն է ս. Կույսի տուփի գյուտի տոնը: Ըստ ավանդության, երկու հույն իշխանազուն եղբայրներ, Երուսաղեմ ուխտի գնալով, լսում են, որ Գալիլիա անունով գյուղում մի հրեա կնոջ տանը հրաշքներ են կատարվում: Հետաքրքրվելով, մտնում են տուն և տեսնում մի տուփ, որը պատկանել է Աստվածամորը: Հասնելով Երուսաղեմ՝ պատրաստել են տալիս ճիշտ նույն տուփի մի ուրիշ օրինակ և վերադարձին, կրկին մտնելով հրեա կնոջ տուն, աննկատ փոխում են տուփերը և իսկականը տանում Կ. Պոլիս: Բյուզ. Լևոն կայսրի օրոք (457–474) մեծ թափորով ու պատվով այն զետեղում են Կ. Պոլսի Ս. Աստվածածին եկեղեցում: Հույները հուլիսի 2-ին հատուկ տոն են հաստատում ի հիշատակ տուփի գյուտի: Հայ եկեղեցին այս տոնը նշում է XVIII դարից, երբ այն ընդգրկվել է Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի 1774-ին հրատարակած և բարեփոխած Տոնացույցի մեջ: Տոնակատարվում է Հոգեգալստյան հինգերորդ կիրակի օրը, հունիսի 14-ից հուլիսի 18-ը:

Գյուտ գոտու ս. Աստվածածնի, Տիրամորը պատկանած իրերի հայտնությանը նվիրված տոներից: V դ. սկզբին, բյուզ. Արկադիոս կայսրի օրոք (395–409) Երուսաղեմում գտնվել է Աստվածամոր գոտին, որը հանդիսավորությամբ տարվել է Կ. Պոլիս, պահվել Ս. Աստվածածին եկեղեցում ու պաշտամունքի առարկա դարձել: Դրանից հետո հույները օգոստ. 31-ին սկսել են ս. Աստվածածնի գոտու հայտնության տոնը կատարել: Հայ եկեղեցին մինչև XVIII դ. այս տոնը չի նշել: Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը 1774-ին հրատարակած Տոնացույցում ընդգրկել է այդ տոնը, որը յոթ օրվա շարժականությամբ նշվում է օգոստ. 26-ից սեպտ. 1-ը հանդիպող կիրակի օրը:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.2, 2-րդ պատկերը:

Արտաշես Ղազարյան

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի (ՀԱԸ), միջեկեղեցական կազմակերպություն: Նպատակն է Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանությունն ու հրատարակումը՝ առանց մեկնությունների ու դավանաբան. ծանոթագրությունների, և նրա տարածումը: Ստեղծվել է 1991-ին:

Աստվածաշնչային առաջին ընկերությունը հիմնադրվել է 1710-ին, Գերմանիայում՝ ժողովրդին հասկանալի լեզվով և մատչելի գնով Աստվածաշունչ մատակարարելու նպատակով: XIX դ. սկզբին աստվածաշնչային ընկերություններ են ստեղծվել Անգլիայում, Ամերիկայում, Ռուսաստանում և այլ երկրներում: Բրիտանական աստվածաշնչային ընկերությունը Աստվածաշունչը տարածել է ոչ միայն Անգլիայում և բրիտ. մյուս երկրներում, այլև ամբողջ աշխարհում՝ տվյալ երկրի ժողովրդի լեզվով: 1813-ին ստեղծված Ռուսաստանի աստվածաշնչային ընկերությունը Ռուս. կայսրության տիրապետության տակ գտնվող բոլոր ժողովուրդների լեզուներով Ս. Գիրք և կրոն. գրա-

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ կանությունն է տպագրել ու բաժանել: Ռուս. կայսրության տարբեր ազգերի հոգևոր առաջնորդներ անդամակցել են Ռուս. աստվածաշնչային ընկերությանը և աջակցել նրա գործունեությանը: Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ջորագեղցին (1809–30) դարձել է այդ ընկերության փոխնախագահներից մեկը: Մինչև XIX դ. 1-ին քառորդը Ռուս. և Բրիտ. աստվածաշնչային ընկերությունները համատեղ հազարավոր օրինակ հայ. (գրաբար և աշխարհաբար), ինչպես նաև հայատառ թուրք. Աստվածաշունչ և նրա առանձին մասեր են տպագրել ու զեղչ գներով, երբեմն էլ՝ անվճար, բաժանել ժողովրդին:

Աշխարհի բոլոր աստվածաշնչային ընկերությունների միջև հարաբերությունների սերտացման և նրանց ջանքերի համատեղման անհրաժեշտությունը ծնունդ է տվել աստվածաշնչային ընկերությունների շարժման: 1946-ին ստեղծված Միացյալ աստվածաշնչային ընկերությունը, որպես մասնագիտացված կազմակերպություն, աշխարհի 200-ից ավելի աստվածաշնչային ընկերություններին և գրասենյակներին, այդ թվում՝ ՀԱԸ-ին, հնարավորություն է ընձեռում օգտվելու իր մասնագետների՝ լեզվաբանների, հրատարակիչների, թարգմանիչների, ինչպես նաև տպարանների ուղղակի կամ անուղղակի ծառայություններից:

ՀԱԸ ընդգրկված է Եվրոպա-Միջին Արևելք տարածաշրջանի կազմում, որի աշխատանքները համակարգվում են Անգլիայի Քրոլի քաղաքում գործող տարածաշրջանային կենտրոնի գրասենյակում: ՀԱԸ մասնակցում է տարածաշրջանային տարբեր բնույթի ժողովների ու խորհրդակցությունների, ութ տարին մեկ՝ Միացյալ աստվածաշնչային ընկերության համաշխ. համագումարին, որը սահմանում է ընկերության գործունեության համընդհանուր սկզբունքները և երկկողմանի հարաբերություններ զարգացնում տարբեր երկրների աստվածաշնչային ընկերությունների հետ:

ՀԱԸ ղեկավարում են Ազգային համագումարը (հրավիրվում է տարին մեկ) և հոգաբարձուների խորհուրդը՝ Ընկերության գլխ. քարտուղարի միջոցով: Ներկայումս ՀԱԸ-ի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է յոթ հոգուց՝ չորսը՝ Հայ առաքելական, երկուսը՝ Հայ ավետարանական, մեկը՝ Հայ կաթողիկե եկեղեցուց: Հոգաբարձուների խորհրդի առաջին ատենապետն է եղել Ներսես արք. Պողոսյանը: Ներկայիս ատենապետն է Եղնիկ եպս. Պետրոսյանը, փոխնախագահներն են Ներսես արք. Տեր-Ներսեսյանը՝ Հայ կաթողիկե եկեղեցուց, և վերապատվելի Ռընե Լևոնյանը՝ Հայ ավետարանական եկեղեցուց:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.2, 3-րդ պատկերը:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, Աստվածաշնչի մեջ հանդիպող դժվարհասկանալի բառերի, հասկացություններ և զանազան անունների բացատրական բառարաններ, որոնք տարածված էին միջնադարյան Հայաստանում: Ամենահինը (VI–VII դդ.) «Բառք եբրայեցւոց» բառարանն է, որը եբր-ից թարգմանվել է հուն. և հուն-ից՝ հայերեն: Պարունակում է, ըստ տարբեր ձեռագրերի, 900–1000 բառ: Համաձայն բովանդակության, այստեղ ստուգաբանվող բառերը բաժանվում են երեք հիմն. խմբերի. ա. անձնանուններ, մականուններ, կենդանիների, կուռքերի անուններ (Ադամ, Աբրահամ, Ամբակում, Բահաղ, Բերսաբե, Բեեղզեբուղ, Գերսամ, Դավիթ, Զաքարիա, Ստեփանոս, Քերովբե ևն), բ. տեղանուններ (քաղաքներ՝ Բաբելոն, Գաբաովն, լեռներ՝ Գաղատ, Կարմեղոս, ձոր՝ Կեդրոն, անապատ՝ Սինա ևն), գ. ժողովուրդներ, ցեղեր, տոհմեր, աղանդներ, փառաբանական բառեր (ամովրհացիք, սաղուկեցիք, քաղդեացիք, փարիսեցիք, փերեզացիք, ալելուիա ևն): Այս կարգի բառերի մեծ մասը քաղված է ոչ թե Աստվածաշնչից, այլ եբր. կրոն. այլ գրքերից: Բառարանում տրված է անունների համառոտ ստուգաբանությունը (Դավիթ՝ «զորավոր ձեռն կամ սիրեցյալ», Եղիսաբեթ՝ «Աստուած իմ կամ երդումն», Յովնաթան՝ «տուր կամ առավելագոյն», Իսահակ՝ «ծիծաղ կամ խնդութիւն», Սամսոն՝ «արեգակն նոցա կամ փրկութիւն»): Եբր. հատուկ անուններից զատ «Բառք եբրայեցւոց» բառարանում տրվում է նաև Նոր կտակարանում առկա հուն. ծագում ունեցող բառերի կամ անունների ստուգաբանությունը (Պետրոս՝ «քար, վեմ», Պողոս՝ «փոքր կամ զարմանալի» ևն): «Բառք եբրայեցւոց»-ը հայ միջնադարյան բառարանագրության վաղագույն այբբենական բառարաններից է: Բացառիկ էր նրա դերը միջնադարի հայ վանական դպրոցներում Աստվածաշնչի ուսումնասիրման ընթացքում՝ իբրև աշակերտների մշտական և գործածական ձեռնարկ:

XVII դ. կեսից երևան են եկել Աստվածաշնչի այլ որակի բացատր. բառարաններ՝ հիմնը-

ված «Բառք եբրայեցւոց»-ի վրա: Այս շրջանից հայտնի է Աստվածաշնչի երեք բացատր. և մեկ հատուկ անունների բառարան: Բացատր. բառարանները չունեն այբբենական բառաշարք, այլ բաղկացած են մեծ ու փոքր առանձին բառացանկերից, որոնք բացատրում են Աստվածաշնչի այս կամ այն գրքի, երբեմն էլ առանձին գլուխների բառերը («Բառք ի գրոցն Ելիցն», «Բառք ի գրոց Թուոց», «Բառք ի գրոց մարգարէին Դանիէլի», «Գաղատացւոց գլխոյն» ևն): Այս կարգի բառարաններից է «Բառք Սուրբ Գրոց»-ը (Մատենադարան, ձեռ. № 2292, 5132), որն ընդգրկում է ծիս. տեսակետից առավել գործածական աստվածաշնչյան գրքերի (Սաղմոսներից մինչև Նոր կտակարանի վերջը) բառերի բացատրությունները: Բառարանը պարունակում է շուրջ 1200 գլխաբառ: Նույն կառուցվածքն ունի «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանը, որը XVII դ. կազմել է Երեմիա Մեղրեցին: Նախորդի վրա հիմնված այս բառարանը բաղկացած է 3700 գլխաբառից, մեկնություններն այստեղ բավական ընդարձակ են: Մյուս՝ «Այս բառք Աստուածաշունչ գրոց» բառարանը պարունակում է 1900 գլխաբառ, որից 1600-ը առկա է Երեմիա Մեղրեցու բառարանում: Ի տարբերություն իր նախորդների, այստեղ բառերը դասավորված են այբբենական կարգով: Բառարանում առկա են ընդարձակ, նկարագր. բացատրություններ՝ տրված հավալուսն (անապատի թռչուն է), ճնճղուկ, մանրագոր, հուշկապարիկ, միեղջերու և այլ գլխաբառերի դիմաց:

XVII դ. ստեղծվեցին «Յ եբրայեցւոց, Քաղդեացւոց եւ Յունաց անուանց թարգմանութիւն», «Մեկնութիւն անուանց յեբրայեցւոց լեզուէ ի հայ բարբառ» բառարանները, որոնք բովանդակում են Աստվածաշնչի հատուկ անունների համառոտ բացատրությունն այբբենական կարգով: Առաջին բառարանը, հրատարակված *Ոսկան Երևանցու* տպագրած Աստվածաշնչին կից (1666), տարածված լինելով հայաբնակ վայրերում, մուտք է գործել նաև վրաց. մշակույթ: Նրանից լայնորեն օգտվել է XVIII դ. վրաց բառարանագիր Սուլխան-Սաբա Օրբելիանին՝ *Աստվածաշնչի համաբարբառ* կազմելիս: Երկրորդ բառարանը՝ «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց»-ը, առաջին բառարանի 750 բառի դիմաց ունի 500 գլխաբառ: Այստեղ բացատրություններն ավելի համառոտ են: Երկու բառարաններն էլ հիմնված են «Բառք եբրայեցւոց» բառարանի վրա: Առկա են Աստվածաշնչում հանդիպող անունները՝ իրենց թեք ձևերով, որոնք եբր-ում ունեն մի քանի իմաստ. բերված են բառերի միայն գլխ. իմաստները, հազվադեպ՝ մյուս իմաստները: Երկու բառարանների հեղինակներն էլ աչքի են ընկնում եբր-ի, ասոր-ի, հուն-ի իմացությամբ և բառարանագր. հմտությամբ:

Ա. բ-ի լավագույն ավանդների հաշվառումով է կազմված *Մխիթար Սեբաստացու* «Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եվ Նոր Կտակարանաց»-ը («Բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, 1769): Այստեղ տրված է անվան ուղիղ և թեք ձևը, ինչպես նաև՝ եբր., հուն. ստուգաբանությունը:

Գրկ. Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V–XV դդ.), Ե., 1966, էջ 143–154: Նույնի, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI–XVII դդ.), Ե., 1971, էջ 66–116: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 1177–1242:

Հակոբ Քյոսեյան

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ, Համաբարբառ Սուրբ Գրոց (համաբարբառ՝ ասոր. da-mēhallétē – միախառնում, համախառնում բառի համարժեքը. սկզբնապես կիրարկվել է համապատասխանություն, միաձայնություն, ներդաշնակություն իմաստներով), ընդհանուր իմաստով՝ որոշակի կարգով կազմված բառարան-ցուցիչ, որի նպատակն է երևան բերել *Աստվածաշնչի* գրքերի միջև եղած փոխհամաձայնությունը և աստվածաշնչյան հասկացությունների ու բառերի՝ տարբեր համատեքստերում ունեցած ստույգ իմաստները:

Ա. հ-ների պատմության մեջ վաղագույնը Տատիանոս Ասորու «Համաբարբառ Ավետարանն» է, որն ի հայտ է եկել (180) Ավետարանների վավերականությունը կասկածի տակ առնող աղանդավոր. գաղափարները մերժելու և Սուրբ գրոց ստուգությունը փաստելու հրատապ անհրաժեշտությամբ: Ընդ որում, Տատիանոսի նպատակն էր, ի տարբերություն բոլոր հետագա կազմողների, ոչ թե ապացուցել, որ չորս Ավետարանների միջև առկա է բովանդակային դաշնություն, այլ ի հայտ բերել նրանց «անհամաձայնությունները» և վերացնել դրանք: Ուստի նա փոխադուցել, միա-

խառնել է չորսի բնագրերը՝ կազմելով մեկ Ավետարան (կոչվում է «Դիատեսարոն», բառացի՝ «Միախառնվածների Ավետարան»), որտեղ զանց են առնվել Ավետարանների նույնական հատվածները:

Տատիանոսի «Համաբարբառ Ավետարանը» մեզ չի հասել: Սակայն նրա մասին կարելի է ընդհանուր պատկերացում կազմել *Եփրեմ Ասորու* համապատասխան մեկնությունից, որի մեծ մասը պահպանվել և մեզ է հասել հայերեն թարգմանությամբ: Ենթադրվում է, որ գոյություն է ունեցել նաև Տատիանոսի «Համաբարբառ»-ի հայ. թարգմանություն:

Ի տարբերություն Տատիանոսի, հետագայում կազմված ավետարանական համաբարբառների նպատակն էր ցույց տալ չորս Ավետարանների փոխհամաձայնությունն ու ամբողջականությունը: Այդ բնույթի առաջին համաբարբառը կազմել է III դ. հեղինակ Ամոն Ալեքսանդրացին (այդ մասին կա մի աղբյուր՝ *Եվսեբիոս Կեսարացու*՝ Կարպիանոսին հղած նամակը): Ամոն Ալեքսանդրացու կազմած Ա. Հ-ում երեք Ավետարանների նույնաբնույթ հատվածները համադրված էին Մատթեոսի Ավետարանի հետ՝ խախտելով Ավետարանների բնագրային ձույլ ամբողջականությունը և սուրբգրային կանոնականությունը: Այդ գործը մեզ չի հասել ո՛չ բնագրով և ո՛չ էլ որևէ թարգմանությամբ: Հետևաբար հրամայական անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու Ավետարանների կանոնականությունը փաստող առավել հարմար ձեռնարկ: Դա Եվսեբիոս Կեսարացու կազմածն էր, որ V դ. թարգմանվել է հայերեն: Բաղկացած է Կարպիանոսին հղած նամակից և 10 աղյուսակներից, որոնք կոչվում են կանոններ (Canones): Ի տարբերություն նախորդների, Եվսեբիոս Կեսարացին չորս Ավետարանները բաժանել է հատվածների և համարակալել: Ըստ այդմ, Մատթեոսի Ավետարանն ուներ 355, Մարկոսինը՝ 236, Ղուկասինը՝ 342, Հովհաննեսինը՝ 232 հատված, որոնք նշվում են այբուբենի տառերով. 10 կանոններից յուրաքանչյուրը ներկայացնում է համապատասխան հատվածների առանձին խմբեր: Եվսեբիոսի կանոնները զետեղված են գրեթե բոլոր գրչագիր Ավետարանների սկզբում, ինչպես նաև՝ մի շարք հրատարակություններում (1710, 1729, 1740 ևն, Կ. Պոլիս): Եվսեբիոս Կեսարացու Համաբարբառի շնորհիվ մեկընդմիշտ ապահովվել է Ավետարանների կանոնական անձեռնմխելիությունը: IV–V դդ. երևան եկավ եվսեբյան համաբարբառի մի տարբերակ: Այստեղ համաբարբառային կանոնները զետեղված էին ոչ թե Ավետարանների սկզբում, այլ յուրաքանչյուր էջի ստորին լուսանցքում: Մասնագետների կարծիքով, լուսանցային կանոններն ունեն ասոր. ծագում: Դրանք գալիս են Ավետարանի պեշիտոյական կանոնից և Աստվածաշնչի՝ ասոր-ից հայերեն առաջին թարգմանության վաղագույն վկայություններ են: Ի տարբերություն հուն. (որտեղ իշխում են եվսեբյան 10 կանոնները) և ասոր. ձեռագրերի (որտեղ տիրապետող են լուսանցային կանոնները), հայերեն գրչագրերի ճնշող մեծամասնության մեջ դրանք հանդես են գալիս միասնաբար: Սա ցույց է տալիս հայերեն Աստվածաշնչի ասոր-ից և հուն-ից թարգմանված լինելը: Այսպիսով եվսեբյան և լուսանցային կանոններն այդ երկու թարգման. ավանդույթների անառարկելի վկայությունն են: Դրանք նպաստում են հայերեն Աստվածաշնչի բնագրի և կանոնի ուսումնասիրմանը:

XIII դ. հայերեն գրչագիր Աստվածաշնչերում գոյություն ունի մեկ այլ կարգի համաբարբառ, որը կապ չունի ո՛չ եվսեբյան կանոնների, ո՛չ էլ, առավել ևս, ասորա-պեշիտոյական հատվածումների հետ: Այս Ա. Հ. ունի աղյուսակի կերպարանք, որտեղ տրված են տվյալ Ավետարանի հատվածումների բովանդակությունն արտահայտող խորագրեր և դրանց դիմաց՝ 4 բնագրերի համապատասխանությունը ցույց տվող թվահամարներ.

Սկիզբն գլխոց Ավետարանին որ ըստ Մատթեոսի	Մատթ.	Մարկ.	Ղուկ.	Հովհ.
Վասն մոգուց	ա	–	–	–
Վասն կոտորածի մանկանցն	բ	–	–	–
Վասն յառաջընթաց քարոզութեանն Հովհ. Մկրտչի	գ	–	ե	–
Վասն վարդապետութեան Փրկչին	դ	–	–	–
Վասն երանութեան	ե	–	ժէ	–

Այս համաբարբառը վերագրվում է XII–XIII դդ. մատենագիր *Գևորգ Սկևռացուն*: Սակայն լիովին ինքնուրույն գործ չէ: Այն խմբագրումն ու լրացումն է 909-ին ընդօրինակված (Մատենադարան, ձեռ. № 6202) ձեռագիր Ավետարանի գլխակարգության: Համաձայն նորագույն ենթադրության, գլխակարգություններն ու Աստ-

վածաշնչի նախադրությունները (որոնք դարձյալ կապվում են Գևորգ Սկևռացու անվան հետ) իրականում թարգմանություններ են՝ կատարված թերևս իր՝ Գևորգ Սկևռացու ձեռքով:

Եթե տատիանյան, ամոնյան, եվսեբյան Ա. հները սահմանափակված էին չորս Ավետարաններով և ցույց էին տալիս միայն նրանց համաձայնությունը՝ բացառելով համեմատական քննության հնարավորությունը, ապա IV դ. մատենագիր Եվթաղ Ալեքսանդրացու հորինած «Բովանդակութիւնք աստուածեղեն վկայութեանց» երկը նպատակ ուներ հաշվառել և ճշտել Պողոս առաքյալի 14 թղթերի մեջ Հին կտակարանից բերված վկայությունները: Երկը հայերեն է թարգմանվել V դ.: Բաղկացած է 2 ցուցակից: Ա ցուցակում արտացոլված է վկայությունների քանակն ըստ թղթերի, և որ աղբյուրներից են դրանք քաղվել: Օր., Հռոմայեցվոց թղթի համար ասվում է, թե վկայությունների ընդհանուր քանակը 48 է, որից հետո նշվում են Հին կտակարանից բերված վկայություններն ըստ Ս. Գրքի կանոնի. Արարածոց գրքից՝ 6, Ելից գրքից՝ 3, Ղևտացվոց գրքից 1 վկայություն ևն: Բ ցուցակում մեկտեղված են Ա ցուցակում հիշատակված վկայությունների բնագրերը, որոնք արտացոլված են պողոսյան թղթերի լուսանցային մասերում՝ իրենց բնագրային հերթադայությամբ: Ըստ այսմ, Հռոմայեցվոց թղթում առաջին վկայությունը Ամբակումից է, երկրորդը՝ Եսայուց, երրորդը՝ Սաղմոսից ևն: Աղբյուրագիտ. առավելությամբ հանդերձ եվթաղյան «Բովանդակութիւնք»-ը, սակայն, զուրկ էր բանասիր. հեռանկարից, որովհետև այնտեղ բերված էր միայն վկայված բնագրի բովանդակությունը, ինչը հնարավորություն չէր տալիս այն գտնել իր տեղում: Այս խնդիրը մասամբ լուծվեց XIII դ., ֆրանսիացի դոմինիկյան գիտնական Հուգոնի (1200–1263) ջանքերով: Վուլգատայի (Ս. Գրքի լատ. թարգմանությունը) մեջ սպրդած լեզվական սխալները վերացնելու նպատակով նա ծրագրել և կյանքի է կոչել բառարանային համաբարբառի գաղափարը, որը հիմնվում էր ոչ թե պարբերությունների կամ նախադասությունների, այլ բառերի հաշվառման և բաղդատման սկզբունքի վրա: «Համաբարբառ Սուրբ Գրոց» խորագրով աշխատությունում նա մեծ գլուխները բաժանել է յոթ, իսկ կարճերը՝ ավելի քիչ թվով հատվածների: Սա հնարավորություն էր տալիս վկայված բառը կամ նախադասությունը գտնել իր տեղում: XV դ. իսպանացի գիտնական Հովհաննես Սեգովացին, ի տարբերություն Հուգոնի, իր աշխատության մեջ ներմուծել է նաև լատ-ի բառամասնիկներ, որոնք հնարավորություն էին տալիս ճշտելու տվյալ բառի՝ տարբեր տեղերում ունեցած նրբիմաստները և դրա շնորհիվ լուծելու տվյալ պարագային աստվածաբան. բնույթի խնդիրներ՝ կապված հույների և լատինների մեջ արծարծված Ս. Հոգու բխման (Filioque) դավան. հարցի հետ: Ժամանակի ընթացքում Հուգոնյան Ա. հ. ավելի է կատարելագործվել: Եթե նրա կատարած գլխաբաժանումն անփոփոխ պահպանվել է մինչև այսօր, ապա ներքին հատվածումները վերածվել են առավել մանր բաժանումների՝ տնատումների: Աստվածաշնչի այսօրվա տնատումները կապված են XV դ. հրեա ռաբունի Իսահակ Նաթանի անվան հետ: Նա 1437–45-ին կազմել է եբր. համաբարբառ՝ հիմնված Աստվածաշնչի եբր. կանոնի՝ իր կատարած տնատումների վրա: Սա հնարավորություն էր տալիս բառն անմիջապես գտնել համապատասխան տեղում: Այդ գլխաբաժանումներն ու տնատումները ժամանակի ընթացքում տարածվեցին և սովորական դարձան Աստվածաշնչի՝ բոլոր լեզուներով իրականացված հրատարակությունների համար: Հուգոնյան գլխաբաժանումները XIII դ. վերջից սկսած մուտք են գործել նաև Աստվածաշնչի հայերեն ձեռագրերի մեջ՝ «Ֆրանկաց գլուխներ» անվան տակ: Այս նշումները կրող հնագույն գրչագրերը Մատենադարանի № 179 (1292), № 180 (1295) ձեռագրերն են, որոնցից 2-րդը ընդօրինակվել է Կիլիկիայի Հայոց Հեթում Բ արքայի պատվերով:

Հայերեն Աստվածաշնչի կարգավորման մյուս փորձը կապված է XVII դ. հեղինակներ Ղազար Բաբերդացու և *Ոսկան Երևանցու* անվան հետ: Մատենադարանի № 351 ձեռագիրը (1619) Ղազար Բաբերդացու կարգավորած Աստվածաշունչն է, որտեղ գլխաբաժանումը թե՛ ըստ հայկականի է և թե՛ ըստ լատ-ի: Ի տարբերություն Հեթում Բ-ի, լուսանցքներում ավելացրել է նաև գլուխների հուգոնյան հատվածումներն ու նաթանյան տնատումները: Ղազար Բաբերդացու հետևողությամբ Ոսկան Երևանցին Ամստերդամում 1666-ին հրատարակած Աստվածաշնչին կցել է «Ցանկ վկայութեանց»-ը, որտեղ նշված է, թե Հին կտակարանի յուրաքանչյուր գրքից քանի մեջբերում կամ հիշատակություն կա Նոր կտակարանում: Այս

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ցանկը նույնությամբ վերատպվել է 1668-ին Ամստերդամում հրատարակված Նոր կտակարանում: Ա. հ. են կազմել Անանիա Արզրումեցի Ալլահվերդյանը (1709), Բաղդասար դպիր Կ. Պոլսեցին (1753): Բառարանային համաբարբառի մեկ այլ օրինակ է «Բուրաստան խնկոց»-ը, որը կազմվել է XIX դ. (նախքան 1824-ը), և 1848-ին Զմյուռնիայում հրատարակված «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի» աշխատությունը: Այս Ա. հ. հիմնված է Հովսեփ վրդ. Տեր-Ավագյան Արցախեցու կազմած Ա. հ-ի վրա, որը մեզ չի հասել:

Ա. հ-ների մեջ իր գիտ. մակարդակով և համակարգվածությամբ լավագույնը Երուսաղեմի միաբան Թադեոս վրդ. Աստվածատուրյանի կազմածն է (հրտ. 1895): Այն ցայսօր էլ լայնորեն օգտագործվում է ինչպես սուրբգրային, այնպես էլ առհասարակ հայագիտ. ուսումնասիրություններում:

Առկա է նաև աշխարհաբար (արևմտահայերեն) Աստվածաշնչի համաբարբառը (1963, Բեյրութ):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.2, 4-րդ պատկերը:

Գրկ. Էսապալյան Պ., Տատիանի Համաբարբառն և հայերէն Աւետարաններու առաջին թարգմանութիւնը, Վնն., 1937: Անասյան Հ., Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը (աղբյուրաբանական և բնագրաքննական ուսումնասիրություն), «Էջմիածին», 1972:

Հակոբ Քյոսեյան

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ, Աստվածաշունչ մատյան, Սուրբ Գիրք, Գիրք գրոց, Աստծո խոսք, Կենաց խոսք, *Աստծո* հայտնությունը մարդկությանը, նրա խոսքերի, պատվիրանների, օրենքների, իմաստության, կանխասացությունների, երախտիքների, գործերի և փրկչական ծրագրի ամբողջությունը: Քրիստոնյաների նվիրական ու սրբազան գիրքը: Աստվածաշունչ գրքերը շնորհվել են մարդկությանը շուրջ 1500 տարիների ընթացքում՝ *Սուրբ Հոգու* ներշնչանքով և նրա իսկ կողմից ընտրված շուրջ 40 մատենագիր մարգարեների, ավետարանիչների և *առաքյալների* ձեռամբ: Հայտնությունը մատենագրվել է Աստծո հրամանով (Բ Օր. **31**.24–26, Հեսու **24**.26 ևն)՝ ստուգիվ և անսխալաբար սերնդեսերունդ փոխանցելու նպատակով, որպեսզի «բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությանը» (Ա Տիմ. **2**.4), և որ «կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. **3**.17):

Ա. Աստծո և մարդկության փոխհարաբերության իսկական վկայարան է. այստեղ Աստված բացահայտում է իրեն (աստվածությունը, մշտնջենավորությունը, զորությունը, սրբությունը, հավատարմությունը, սերը), միջամտում մարդկանց կյանքին, *ուխտ* կնքում նրանց հետ: Սրբազան պատմություններում արձանագրվում է նաև մարդու և ժողովուրդների պատասխանը՝ «կյանքն ու մահը, բարին ու չարը» (Բ Օր. **30**.15) ազատ կամքով ընտրելու փրկչական խորհրդի լույսի ներքո: Ա. *դավանանքի*, աստվածաբանության, եկեղեցու ընդհանրական (7 խորհուրդներ, *ծես, Պատարագ* ևն, ինչպես նաև պաշտամունքի առարկաներ՝ *մյուռոն, խաչ* ևն), հավատացյալների առանձնական (*պահք, աղոթք, ողորմություն* և *բարեպաշտություն*) աստվածապաշտության աղբյուրն է: Ա. մարդկության բազմադարյան գրականության և մշակութ. ժառանգության գլուխգործոցն է, համաշխ. քաղաքակրթության ընթացքն ուղենշած և առավել ներգործուն ազդեցություն ունեցած գիրքը:

«Աստվածաշունչը» իբրև հատուկ անուն բնորոշ է միայն հայերին և փոխառված է Նոր կտակարանից, որտեղ Պողոս առաքյալն այն օգտագործել է իբրև ածական. «Աստծու շնչով գրված ամեն գիրք» (Բ Տիմ. **3**.16, գրաբարում՝ «Ամենայն գիրք աստուածաշունչք»): Քրիստ. մյուս եկեղեցիներում գործածվող Biblia բառը փոխառված է հունարեն *τα βιβλια*-ից, որը թեև բառացի նշանակում է գրքեր, սակայն հավաքական՝ մեկ գրքի իմաստ ունի, ինչպես բովանդակ Ա-ի պարագան է: Կազմված լինելով 75 տարաբնույթ ու ավարտուն գրքերից, գրված տարբեր լեզուներով (եբրայերեն, հունարեն, մասամբ՝ արամեերեն), տարբեր քաղաքակրթություններում ու ժամանակաշրջաններում, այդուհանդերձ, աստվածաշնչական գրքերը կուռ ու ամբողջական միասնություն են և ներդաշնակորեն լրացնում են միմյանց:

Սուրբ Գրքի աստվածաշնչականությունը, այսինքն՝ աստվածային ծագումը նրա գլխավոր ու կարևորագույն առանձնահատկությունն է, ինչը պայմանավորում է նրա անառարկելի հեղինակությունը, տարբերությունը մյուս բոլոր գրական ստեղծագործություններից և հարատևությունը. «Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անց-

նեն» (Մատթ. **24.**35): Աստվածաշնչականությունն օժտված է արտաքին և ներքին հավաստի նշաններով: Արտաքին նշանը Աստծո և եկեղեցու նկատմամբ տածած այն հավատն է, որը մարդը, ըստ *Ներսես Շնորհալու*, «Սուրբ Գրքում գրված խոսքերը, որոնք Սուրբ Հոգին խոսեց մարգարեների, առաքյալների և եկեղեցու վարդապետների բերանով, սուտ և առասպել չի համարում, այլ հավատում է, որ ճշմարիտ և ուղիղ են, որպես թե իր աչքերով է տեսնում այն բոլորը, ինչ եղել է, պիտի լինի, և որ է» («Թուղթ ընդհանրական», 1991, էջ 34): Այս է վկայում նաև *Հավատո հանգանակի*՝ Սուրբ Հոգուն վերաբերող բանաձևումը: Աստվածաշնչականության ներքին ապացույցներն ի հայտ են գալիս գրքի վեհաքանչ ու պարզ ոճի, բովանդակության, հեթանոս. բարքերի հետ ընդհանրության եզր և նախադեպ չունեցող բարոյականության, պատմ. փաստերի հավաստիության, իմաստության, բուժելու, մխիթարելու, սիրով տոգորելու զորության և առինքնող ճշմարտության մեջ:

Այս առումով առանձնակի տպավորիչ են սուրբգրային մարգարեությունները: Աստված ինքն է բացահայտում մարգարեությունների շնորհման նպատակը. «Քեզ պատմվեց մինչև այժմ կատարվածը, դեռ չեղած՝ դրանց մասին լուր տվի քեզ, որպեսզի երբեք չասես, թե՝ «դրանք իմ կուռքերը կատարեցին» (Եսայի **48.**5, տես նաև **46.**9–10, Թվեր **23.**19): Հիսուս Քրիստոսի առաջին գալստյան, Իսրայելի պատժի, հեթանոսների դարձի, եկեղեցու հիմնադրման, Պաղեստինում Իսրայելի վերջնական հաստատման, վերջին ժամանակների բարքերի անկման, գիտատեխնիկական առաջընթացի մասին մարգարեությունները *Հովհան Ոսկեբերանի* բնորոշմամբ «համոզում են հրաշքից ոչ պակաս»: Այս, ինչպես նաև անտեսանելի աշխարհն ու մարդու սրտի առեղծվածային խորքերը մտահայելու, մարդկային ամենամվիրական զգացմունքներին և հարցադրումներին (որտեղի՞ց ենք, ո՞ւր ենք գնում, որտեղի՞ց են մահը, այս աշխարհի չարն ու տառապանքը, ո՞րն է կյանքի իմաստը ևն) արձագանքելու շնորհիվ Սուրբ Գիրքը եղել և մնում է աշխարհի ամենաընթերցվող ու ամենաշատ հրատարակվող գիրքը:

Կանոնը սահմանում է գրքերի հեղինակության զանազան աստիճանները, կազմում նրանց ցանկը և մերժում հինկտակարանային և նորկտակարանային ժամանակներում ի հայտ եկած, ձևով սուրբգրային գրքեր հիշեցնող, կեղծ գրվածքները:

Վաղ քրիստոնեությունում կանոնական, այսինքն աստվածաշունչ են ճանաչվել այն գրքերը, որոնք, ըստ *Աթանաս Ալեքսանդրացու*, «ծառայում են որպես փրկության աղբյուր, որոնց մեջ է միայն նախացուցված բարեպաշտության վարդապետությունը»: Եկեղեցու կողմից վավերացված *կանոնական գրքերը* հետագայում կոչվել են նաև նախականոն. այդպիսիք են Հին կտակարանի թվով 39 և Նոր կտակարանի բոլոր 27 գրքերը: Հին կտակարանի 39 գրքերը համապատասխանում են եբրայական կանոնին, որի մեջ ընդգրկված գրքերը հրեաները միավորել են առանձին գրքերի մեջ՝ կամենալով համապատասխանեցնել իրենց այբուբենի 22 տառերի թվին:

Հին կտակարանի հունարեն Յոթանասնից թարգմանությամբ քրիստ. Ա-ի մեջ մտած գրքերը կոչվել են ոչ կանոնական, հետագայում նաև երկրորդականոն: Այս գրքերն աստվածաշունչ չեն, քանզի դրանց հեղինակները մարգարեներ չեն, և դրանք զերծ չեն առանձին սխալներից ու պատմ. անճշտություններից: Այդուհանդերձ *եկեղեցու հայրերը* կարևորել են այս գրվածքները՝ որպես խրատական և օգտակար հավատի շինության համար: Մերժված գրքերը, որոնք ճանաչվել են կեղծ ու վնասակար և չեն ընդգրկվել Ա-ի մեջ, կոչվում են *պարականոն գրքեր*:

Ընդհանրական եկեղեցին երեք *տիեզերական ժողովներում*, զբաղված լինելով հրատապ խնդիրներով, առիթ չի ունեցել սահմանելու Ս. Գրքի կանոնը, ինչի պատճառով տարբեր եկեղեցիներ (աննշան տարբերություններով) ինքնուրույնաբար են մոտեցել այս (մասնավորապես երկրորդականոն գրքերի թվի և կանոնականության) հարցին:

Հայոց կանոնը սկզբում կրել է ասորականի (որը թարգմանվել է անմիջապես եբրայերենից և պարունակել 39 հինկտակարանային նախականոն գրքեր) ու հունական Յոթանասնից ազդեցությունը և դարերի ընթացքում փոփոխվել: Հայ եկեղեցում առաջին պաշտոն. կանոնը սահմանվել է *Պարտավի եկեղեցական ժողովում* (768)՝ *Սիոն Ա Բավոնեցի* կաթողիկոսի նախագահությամբ: Սակայն մեզ է հասել այդ որոշման պատառիկը, ինչը թույլ չի տալիս ճշգրիտ պատկերացում կազմել միջնադարյան հայոց կանոնի մասին: Ներկայիս հայոց կանոնը բաղկացած է 75 գրքից. նախականոն գրքե-

րի (Հին կտակարան՝ 39, Նոր կտակարան՝ 27) հարցում համաձայնելով քույր եկեղեցիների հետ՝ Հայոց կանոնը տարբերվում է երկրորդականոն գրքերի հարցում: Հայոց ինը երկրորդականոն գրքերի (Ա Եզրաս, Հուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիների Ա, Բ, Գ, Իմաստություն Սողոմոնի, Սիրաք, Բարուք, ինչպես նաև Դանիելի մարգարեության և Եսթերի գրքի որոշ հավելումներ) վրա հունականը հավելում է մի գիրք, որը պարականոն է Հայ եկեղեցու համար: Իսկ կաթոլիկ կանոնը պարականոն է համարում հայկ. երկրորդականոններից Ա Եզրասի ու Գ Մակաբայեցիների գրքերը: Բողոքական եկեղեցիներն ընդունում են եբրայական կանոնի բոլոր 39 գրքերը և պարականոն համարում երկրորդականոնները:

Աստվածաշնչական գրքերի գլուխների ժամանակակից բաժանումը 1240-ին ի մի է բերել ֆրանսիացի դոմինիկյան գիտնական Հուգոնը: Հայկ. ձեռագրերում լատ. Վուլգատայի օրինակով գլխաբաժանումների նորամուծության երախտիքը պատկանում է Հայոց Հեթում Բ արքային: Հին կտակարանի բաժանումը համարների կատարվել է XV դ.՝ Նաթան Եբրայեցու կողմից: XVI դ. Եվրոպայում առաջին անգամ Նոր կտակարանը (1551-ին), ապա և բովանդակ Աստվածաշունչը (1555) համարակալել է փարիզաբնակ գիտնական, տպագրիչ Ռոբերտ Սթիվենսը: XVII դարից սկսած այս նորամուծությունը թափանցել է հայկ. ընագրեր:

Ա-ի հիմնական բովանդակությունը: Սուրբ Գիրքը բազմաժանր, տարաբնույթ և բազմաբովանդակ գրքերի ժողովածու է (օրենք, տարեգրություն, պատմություն, վարք, մարգարեություն, իմաստություն, առակ, հոգևոր երգ, սաղմոս, փիլիսոփայական խորհրդածություն, Ավետարան, քարոզ, նամակ և հայտնություն) և աչքի է ընկնում արծարծված թեմաների հարստությամբ: Ա-ի հիմն. բովանդակությունը, որը և իր շուրջն է համախմբում բոլոր թեմաներն ու գրքերը, ի մի բերում սուրբգրային առանձին փաստերը, պատմություններն ու իրողությունները, վերացնում դրանց տեղի ու ժամանակի մեջ սահմանափակվածությունը և տիեզերական, համամարդկային նշանակություն հաղորդում դրանց, Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին վարդապետությունն է:

Ս. Գիրքը բաժանվում է երկու անքակտելի մասերի՝ Հին և Նոր կտակարանների: Այն գրքերը, որոնք մարգարեանում ու նախապատրաստում են Հիսուս Քրիստոսի ընդունելությունը, կոչվում են Հին կտակարան: Իսկ այն գրքերը, որոնք խոստացյալ Փրկչի կյանքի ու նրա վարդապետության մասին են, մտնում են Նոր կտակարանի կազմի մեջ:

Նոր կտակարանում չկա Փրկչի կյանքի, առաքելության, հարչարանքների ու մահվան վերաբերյալ մի փաստ, անգամ մանրամասնություն, որը Հին կտակարանում նախանշված չլինի: Աթանաս Ալեքսանդրացին գրում է, որ Հին կտակարանը շարադրված է միասնական Հոգով և Փրկչի մասին: Ընդ որում մարգարեությունները ոչ միայն կանխասում, այլև հաճախ լրացնելով՝ լույս են սփռում Նորկտակարանային այս կամ այն իրադարձության վրա, օր.՝ Եսայու մարգարեության 53-րդ գլուխը ոչ միայն պարզաբանում է Քրիստոսի հարչարանքների ու քավչարար մահվան խորհուրդը, այլև բացատրում է *Հովհաննես Մկրտչի* «Ահա՛ Գառն Աստծու» (Հովհ. **1.**29) խոսքը: Իսկ մարգարեությունների շղթան սկսվում է Ադամով (այդ իսկ պատճառով կոչվում է Նախաավետարան) և հասնում մինչև Հովհաննես Մկրտչի հայրը՝ Զաքարիան: Նույնն է նաև խորհրդանիշների, նախօրինակների պարագան: Նախօրինակ են կոչվում այն անձինք, պատմ. իրադարձություններն ու առարկաները, որոնք, բացի իրենց ժամանակներում իրողություն լինելուց, խորհրդավորապես վերաբերում են ապագային և արտահայտում կամ կանխանշում մեսիական որևէ հատկանիշ: Օր., ինքը՝ Քրիստոսը, նշում է անապատում Մովսեսի հրամանով բարձրացրած պղնձե օձի (Հովհ. **3.**14), Հովնանի՝ կետի փորում երեք օր ու գիշեր գտնվելու (Մատթ. **12.**40)՝ իր նախօրինակ լինելը: Քրիստոսի նախօրինակներն են Ադամը, Նոյը, Մելքիսեդեկը, Իսահակը, Մովսեսը, Ահարոնը, Հեսու Նավեն, Դավիթը, Սողոմոնը, ինչպես նաև քահանայապետները և այլք, հինկտակարանային զոհերը, Տաճարը ևն: Պողոս առաքյալը գրում է, որ Հին կտակարանի բոլոր արարողություններն ու ողջ պաշտամունքը «գալիք բաների ստվերներն են. բուն մարմինը Քրիստոսն է» (Կող. **2.**17), կամ՝ «արդարև, գալիք բարիքների ստվերն էր օրենքը և ոչ թե իրողությունների բուն կերպարանքը» (Եբր. **10.**1) և, որ այս ամենը «որպես խրատ գրվեց մեզ համար» (Ա Կորնթ. **10.**11) ևն: Մատթեոսի (**1.**1–16) և Ղուկասի (**3.**23–37) Ավետարանների Հիսուսի ազգաբանությունները ոչ այլ ինչ են, քան բովանդակ հինկտակարանային պատմության համառոտագրություն:

Աստվածաշնչի բովանդակային բաժանումը: Ս. Գրքի բաժանումը երկու կտակարանների (կամ ուխտերի) սկզբնավորվել է քրիստոնեության տարածման նախնական շրջանում: «Ուխտ» եզրը, ինչպես նաև «Հին» և «Նոր» ածականները փոխառված են Ս. Գրքից և արձագանքն են այն ուխտերի, որոնք Աստված նախ կնքեց Սինա լեռան վրա Մովսեսի միջոցով Իսրայելի ժողովրդի հետ, ապա ի Քրիստոս՝ մարդկության հետ. «Այս է Նոր Ուխտի իմ արյունը, որ կթափվի շատերի համար» (Մարկ. **14.**24):

Ուխտ բառը (եբր. berit, հուն. diathek, լատ. testamentum) նշանակում է փոխադարձ համաձայնություն, դաշինք, և կնքվում է հավասարը հավասարի հետ: Իսկ Աստծո և մարդու միջև կնքված ուխտը բխում է Աստծո կամքից, և մարդը պետք է ընդունի ու հնազանդվի դրան: Այս խորհուրդը նկատի ունենալով՝ հունարենի թարգմանիչները ուխտ բառը թարգմանել են կտակարան. այսինքն՝ աստվածային ուխտը կտակ է, իսկ Աստծո կամքը բովանդակող սրբազան գրքերը կտակարան են:

Ա. Հին կտակարան: Քրիստ. եկեղեցիներում ընդունված է հինկտակարանային գրքերի հետևյալ բովանդակային բաժանումը՝ օրենսդրական, պատմական, իմաստության և մարգարեական: Հրեաները Հին կտակարանի 22(39) գրքերը բաժանում են երեք մասի՝ Օրենք (Թորա), Մարգարեներ (Նեբիիմ) և Գրքեր կամ Սրբագիրք (Քեթուբիմ): Ընդունելով միայն Հին կտակարանը՝ նրանք այն անվանում են ըստ այս եռամասնյա բաժանման կամ կրճատ՝ Օրենք:

Օրենսդրական գրքեր: Եգիպտոսից իսրայելացիների ելքը առաջնորդող մեծագույն մարգարե Մովսեսի գրած Ա-ի այս առաջին հինգ գրքերը կոչվում են նաև Հնգամատյան, որը Հին կտակարանի մնացյալ գրքերի հիմքն է և խարիսխը նորկտակարանային պատմության, քանզի բացահայտում է փրկագործության աստվածային ծրագիրը: Հնգամատյանը մի շնչով չի գրվել, այլ՝ Աստծուց զանազան օրենքներ ստանալուն համեմատ (իր ներկայիս տեսքով կազմվել է հրեաների քառասնամյա դեգերումների ավարտին, Ք.ծ.ա. շուրջ XIII դ.):

Ծննդոց

Ա-ի առաջին գիրքը բովանդակում է Աստծո կողմից հրեա ժողովրդի նահապետների՝ Աբրահամի, Իսահակի, Հակոբի և Հովսեփի ընտրության պատումները՝ մարդկությունն օրհնելու և աշխարհի փրկությունը նախապատրաստելու համար: Ուստի այս իրադարձություններին նախորդում է մի համապարփակ ներածություն՝ աշխարհի և մարդու արարման, Ադամի և Եվայի անկման ու դրախտից վտարման, մահվան ու տառապանքի առաջացման, ջրհեղեղի, բաբելոնյան աշտարակաշինության, ազգերի կազմավորման և նրանց աշխարհով մեկ սփռվելու մասին: Այս գրքով Աստված աստիճանաբար բացահայտում է իրեն, ինչն իր լրումը պիտի գտներ ի Քրիստոս:

Ելք

Աբրահամի ժառանգները Եգիպտոսում ապաստան գտնելուց և բազմամարդ ժողովուրդ դառնալուց հետո ստրկացվում են փարավոնի կողմից (ինչպես որ այդ մասին Աստված հայտնել էր Աբրահամին): Տերը Մովսեսի միջոցով ազատագրում է իր ժողովրդին, Սինա լեռան վրա ուխտ կնքում ու հայտնում իր պատվիրաններն ու օրենքները: Աստված պատվիրում է խորան կառուցել իր համար, որպեսզի նրա մեջ լինի:

Ղ՝ տական

Այս գրքում Աստված իր ժողովրդի հետ խոսում է *խորանից*: Աստծո հետ հաղորդակցությունն ինքնին սրբություն էր պահանջում իսրայելացիներից, որպեսզի խորանը ճշմարիտ հանդիպման վայր հանդիսանար: Ուստի գիրքը հատուկ նվիրված է օրենքին՝ իր բոլոր մանրամասնություններով հանդերձ, ծեսերին, նվիրական անոթներին, քահանաների և սպասավորների՝ ղևտացիների (այստեղից էլ՝ գրքի անվանումը) պարտականություններին:

Թվեր

Իր անվանումը ստացել է երկու մարդահամարներից: Նկարագրվում է իսրայելացիների քառասնամյա դեգերումը մինչև Մովաբ երկիր (Մեռյալ ծովի արևելքում) հասնելը: Ցույց է տրված արատներով պատված մարդու իսկությունը և հակառակ դրան՝ Աստծո հավատարմությունն ու արդարությունը, որը, սակայն, չի բացառում նրա խստությունը:

Երկրորդ Օրենք

Ավետյաց երկրի շեմին Մովսեսն անապատում մեծացած նոր սերնդին հիշեցնում է Աստծո կատարած գործերն ու երախտիքները, ուխտը, օրենքները, պատվիրանները և խոստումները: Սակայն դա սոսկական կրկնությունը չէ նախորդ գրքերի եղելությունների և օրենքի (այստեղից էլ՝ անվանումը), այլ՝ *քարոզի* միջոցով հիշեցում և նախազգուշացումով

ուղեկցող ուսուցում, որի գլխ. թեման հնազանդությունն է: Խոստանում է մեծ օրհնություններ հնազանդվողներին և անեծքներ անհնազանդներին: Գիրքն ավարտվում է Մովսեսի մահով:

Պատմական գրքեր: Սրբազան հեղինակների նպատակը ոչ միայն դեպքերի ճշգրիտ նկարագրությունն է, այլև պատմության փիլիսոփայության բացահայտումը, այն՝ Աստված միջամտում է մարդկանց պատմությանը և ըստ արժանվույն փրկում կամ պատուհասում:

Հեսու

Գիրքը Մովսեսին փոխարինած Հեսու Նավեի առաջնորդությամբ Ավետյաց երկիրը գրավելու և Իսրայելի 12 ցեղերի միջև բաժանելու մասին է: Սա Աբրահամին տրված Աստծո խոստման կատարումն է. ժողովուրդը նորոգում է իր ուխտը նրա հետ: Իսրայելացիների բնակեցումն Ավետյաց երկրում Քրիստոսի շնորհի նախօրինակն է:

Դատավորներ

Գիրքն ընդգրկում է Քանանի երկրում իսրայելացիների հաստատումից մինչև նրանց առաջին թագավորության հիմնադրման ժամանակաշրջանը (Ք.ծ.ա. 1200–1040) և վերաբերում է այդ ընթացքում Իսրայելում կառավարող և օրինականություն հաստատող դատավորների գործունեությանը: Դատավորներ գրքի աստվածաբան. իմաստը կարելի է ամփոփել Եսայի մարգարեի խոսքերով. «Եվ եթե հոժար լինեք ու լսեք ինձ, դուք կճաշակեք երկրի բարիքները, իսկ եթե չկամենաք ինձ լսել, սո՛ւրը պիտի ուտի ձեզ...» (Եսայի 1.19–20): Այս և հաջորդ երեք գրքի հեղինակը Սամուել մարգարեն է:

Հռութ

Գիրքը սրտառուչ պատմություն է դատավորների կառավարման շրջանում մի օտարերկրացի բարեպաշտ կնոջ մասին, որն Աստծո հովանու ներքո ապաստան է գտնում Իսրայելում: Գիրքը շնորհը տարածում է հեթանոս ազգերի վրա, քանզի այդ հեթանոսուհուց է սերում Դավիթ թագավորը: Այդ իսկ պատճառով Հռութն իր տեղն ունեցավ Հիսուսի ազգաբանության մեջ:

Ա՝ Բ Թագավորություններ

Գրքերը նախ և առաջ վարդապետություն են թագավորական իշխանության մասին: Աստված ընդառաջեց ժողովրդի նախաձեռնությանը և Իսրայելում թագավոր կարգեց: Սակայն Սավուղը մերժվեց, իսկ գահին նստեց աստվածահաճո Դավիթը: Նաթանը Քրիստոսի ծննդից 1000 տարի առաջ մարգարեանում է այս թագավորական տան հավիտենականության մասին, որն իրականացավ Դավթից մարմնով սերված և որպես «Հրեաների թագավոր» խաչված Քրիստոսով:

Գ՝ Դ Թագավորություններ

Պատմվում է Դավթի որդի Սողոմոնի, նրա իմաստության, փառքի, Երուսաղեմի տաճարի, ինչպես նաև երկպառակության հետևանքով Իսրայելի (Սամարիա), Հուդայի (Երուսաղեմ) թագավորությունների առաջացման ու թագավորների վարքի մասին: Իբրև անհրաժեշտություն ընդգծվում է թագավորի ու ժողովրդի՝ Աստծուն հավատարիմ լինելու միտքը, որպեսզի երկիրը բարգավաճի, իսկ ժողովուրդն ազատվի դժբախտություններից: Անհնազանդության և *մեղքերի* պատճառով է, որ ի վերջո Իսրայելի թագավորությունը կործանվեց Ք.ծ.ա. 722-ին՝ Ասորեստանի Սալմանասար, իսկ Հուդայի թագավորությունը և Երուսաղեմի տաճարը՝ Ք.ծ.ա. 578-ին Բաբելոնի Նաբուքոդոնոսոր թագավորների ձեռքով:

Ա՝ Բ Մնացորդաց

Այս գրքերը կրկնում և աստվածաբան. ու պատմ. տեսանկյունից լրացնում են 4 Թագավորությունների տեղեկությունները «մեկուսի մնացած» (այստեղից էլ՝ անվանումը) տվյալներով: Համառոտ շարադրված է Աստծո ժողովրդի պատմությունը՝ նրա ծագումից մինչև բաբելոնյան գերություն: Գրքերը, անցյալի իրենց մտահայմամբ, նախատեսված էին Երուսաղեմ վերադարձողների հույսն ու հավատը զորացնելու, ինչպես նաև Աստծո օրենքին ու պաշտամունքին հավատարմության խրատ տալու: Ըստ եկեղեցու վարդապետների և հրեական ավանդության՝ հեղինակը Եզրաս քահանան է:

Ա Եզրաս

Այս գիրքը հիմնականում կրկնում է Բ Մնացորդաց, Բ Եզրասի և Նեեմիի գրքերի պատումները (աննշան փոփոխություններով)՝ հավելելով մի ինքնատիպ հատված՝ Պարսից Դարեհ թագավորի երեք սենեկապանների միջև ծագած վեճը:

Բ Եզրաս

Գիրքը Ա և Բ Մնացորդաց գրքերի շարունակությունն է: Այս և հաջորդ գրքի հեղինակը նույնպես Եզրաս քահանան է, որը Ք.ծ.ա. մոտ 400-ին նկարագրում է Պարսից արքա Կյուրոսի թույլտվությամբ աքսորյալների ա-

ռաջին և իր գլխավորությամբ երկրորդ խմբի վերադարձը, զոհասեղանի, Տաճարի վերաշինությունը և իր իսկ կողմից բարեփոխություններ անցկացնելը (խառն ամուսնությունների արգելքը):

Նեեմի

Պարսից Արտաշես արքայի հրեա բարձրաստիճան պաշտոնյայի մասին է: Նեեմին գլխավորել է Երուսաղեմ վերադարձող աքսորյալների երրորդ խումբը և 52 օրում կառուցել Երուսաղեմի պարիսպը: Այս խիզախ, բարեպաշտ այրը Եզրասի հետ կրոն. և քաղաքաց. բարեփոխումներ է անցկացրել, որի արդյունքում հրեաների հոգևոր կյանքը վերականգնվել է:

Եսթեր

Գիրքը կազմվել է մինչև Ք.ծ.ա. 160-ը: Բաբելոնյան իշխանության անկումից հետո շատ հրեաներ, որոնք չէին վերադարձել Ավետյաց երկիր, ընկել էին պարսից տիրապետության տակ: Արտաշես արքայի կինը՝ գեղեցկուհի Եսթերը, իր խնամակալի և ազգականի՝ հրեա պաշտոնյա Մուրթքեի խորհրդով փրկում է հրեական համայնքը ոչնչացման սպառնալիքից, որը ձգտում էր իրականացնել Արտաշես արքայի առաջին նախարար Համանը: Նախարարին կախում են, իսկ Եսթերն ու Մուրթքեն՝ առավել մեծարվում: Այս իրադարձությունը ոգեկոչելու համար սահմանվում է Փուրիմ տոնը, որը հրեաներն առանձնահատուկ հանդիսավորությամբ նշում են ցայսօր:

Հուդիթ

Բարեպաշտ ու խիզախ մի այրի կնոջ՝ Հուդիթի մասին է, որի սխրանքի շնորհիվ Հրեաստանը փրկվեց Նաբուքոդոնոսորի զորքերի մահացու վտանգից: Նոր կտակարանում այս գիրքը չի հիշատակվում:

Տոբիթ

Գիրքը կազմվել է Ք.ծ.ա. 200-ին: Ունի խրատական ուղղվածություն: Պատմում է աստվածավախ մի ընտանիքի մասին, որը, հավատարիմ մնալով Աստծո պատվիրաններին, Ռափայել հրեշտակի օգնությամբ ազատվում է ծանր փորձություններից:

Ա Մակաբայեցիներ

Գիրքը կազմվել է Ք.ծ.ա. 100-ին: Հելլենիստ. շրջանի հրեա ժողովրդի պատմության ավելի քան քառասուն տարվա մի ժամանակաշրջանի (Ք.ծ.ա. 176–134) միակ աղբյուրն է: Սելևկյանների՝ իրենց հեթանոս. սովորությունն ու պաշտամունքը հրեաներին պարտադրելու բիրտ քաղաքականությունը պատճառ է դարձել Մակաբայեցիների ապստամբության, որը պսակվել է հաջողությամբ:

Բ Մակաբայեցիներ

Գիրքը կազմվել է Ք.ծ.ա. մոտ 124-ին: Առաջին գրքի շարունակությունը չէ: Այն դիմում է Եգիպտոսի հրեաներին՝ ոգեկոչելու վերանվաճված և սրբագործված Երուսաղեմի տաճարի *Նավակատիքի* հիշատակը: Պատմվում է նաև Տաճարի պղծման և հավատը չուրանալու համար հրեաներին դաժան հալածանքների ենթարկելու, ռազմ. հաջողությունների և հրեական պաշտամունքը վերականգնելու մասին:

Գ Մակաբայեցիներ

Գիրքն ընդհանրության եզր չունի նախորդ երկու գրքերի հետ: Պատմվում է Եգիպտոսում Ք.ծ.ա. 200-ին հրեաների հալածանքի և հրաշքով փրկության մասին:

Իմաստության գրքեր: Հին կտակարանի հաջորդ յոթ գրքերը դասվում են իմաստության գրականության շարքը, որի արժեքը նրա հայտնութենական բնույթն է: Էապես տարբերվելով սոսկ մարդկային փորձառության և մտքի վրա խարսխված աշխարհիկ իմաստությունից՝ իմաստության գրականության մեջ կրոնաբարոյական ճշմարտությունները վերածում են կենդանի համոզմունքի: «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», ահա իմաստության գրքերի նպատակը, որոնց հետ հաղորդակցվողի համար իրապես «կատարելագործվում են գիտելիքն ու բարեպաշտությունը»: Այս գրքերը կազմված են հրեական անզուգական տաղաչափության կանոններով (համահնչունություն, զուգահեռականություն ևն) և հանգավոր արձակով: Այդ իսկ պատճառով կոչվում են նաև բանաստեղծական: Իմաստության գրքերի շարքն է դասվում նաև Սաղմոսարանը՝ հոգևոր երգերի ժողովածուն (տես *Սաղմոս* հոդվածում):

Առակներ

Գիրքն իր ներկայիս տեսքով կազմվել է Եզեկիա թագավորի օրոք: Իմաստալից ասույթների և ուսուցող. խրատների ժողովածու է, որի մեծ մասը մակագրված է Սողոմոնի, իսկ մնացյալը՝ այլ իմաստունների անուններով: Արծարծված են բազում արդիական թեմաներ՝ արդարություն, հիմարություն, ամբարշտություն, հարստություն, աղքատություն, ծուլություն, նենգություն, կաշառք ևն: Առանձնակի գեղեց-

կությամբ շարադրված է իմաստության (գլ. 8, որ 22–31 համարներում եկեղեցու հայրերը տեսնում էին Սուրբ Երրորդության երկրորդ անձին) և առաքինի կնոջ գովքը (**31.**10–31): Հիմն. բովանդակությունը Տիրոջ օրենքն է. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է, արդարների խորհուրդը՝ խոհեմություն, օրենքի իմացությունը մտքի հարստություն է» (**9.**10): Ըստ էր. ավանդության, մինչև Սողոմոնը ոչ ոք պատշաճորեն չէր հասկանում օրենքը:

Ժողովող

Գիրքը Սողոմոնը գրել է ծեր հասակում. այն խորհրդածություն է կատարյալ երջանկության մասին: Նեղությունների և մահվան հարատև սպառնալիքի ներքո ունայն են երիտասարդությունը, հարստությունը, փառքը ևն: Սակայն եթե աշխարհիկ գիտակցությունը փոխվի աստվածայինով, և մարդը կարողանա ի սրտե ապավինել Աստծուն, ապա անխռով կվայելի կյանքը՝ բարիքով և իրեն հասած չարիքով հանդերձ: Մեռյալների հարության մասին ուսմունքին անտեղյակ լինելն է պատճառը, որ հեղինակը քննել է միայն այս աշխարհում երջանկության հասնելու հնարավորությունը, որը, սակայն, Մեսիայի գալստյամբ պիտի իր լրումը գտներ:

Եր· եր·ոց

Սողոմոնը գրել է պատանեկան հասակում: Հարսի և փեսայի երկխոսություններ ձևի մեջ առնված այս բանաստեղծություններում այլաբանորեն նկարագրվում է Քրիստոս-եկեղեցի չնորհական միությունը և բարձրագույն մարգարեությունն է Մեսիայի մասին:

Իմաստություն Սողոմոնի

Գիրքը գրվել է հունարեն, Եգիպտոսում, մի հավատացյալի ձեռքով (ենթադրաբար՝ Ք.ծ.ա. 50–30-ին): Հեղինակը հունական մտածողության (Հոմերոս, Պլատոն ևն) միջոցով իր ընթերցողներին՝ հելլենիստ. մշակույթով տարված հրեաներին ու հույներին, փորձում է համոզել, որ հրեական իմաստությունը գերազանցում է մյուսներին: Իսրայելական դավանությանը հավատարիմ ու քաջատեղյակ այդ այրը մեծ հմտությամբ է օգտվել զանազան աղբյուրներից:

Սիրաք

Գիրքը կազմվել է Ք.ծ.ա. 180-ին: Ստեղծագործության մեջ, որը գրվել է եբրայերեն, ապա թոռան ձեռքով թարգմանվել հունարեն, հեղինակը փորձում է պաշտպանել հրեական կրոնն ու մշակույթը հելլենիզմից: Արծարծված են բազում թեմաներ՝ ընկերություն, ազնվություն, երեխաների դաստիարակություն, կանայք, բժիշկներ, հիվանդներ, Իսրայելի հին պատմություն, պաշտամունք, ազատություն, մահ ևն:

Հոբ

Գիրքը ամենայն հավանականությամբ գրվել է Ք.ծ.ա. մոտավորապես X դ.: Պոեմ է, որտեղ պատմվում է ծանր փորձությունների ենթարկված արդար Հոբի մասին: Նեղությունների մեջ համբերություն սովորեցնող այս գրվածքը մի հարց է պարունակում. եթե Աստված արդար է, ինչո՞ւ են արդարները տառապում: Գրքի նպատակն է Աստծո ճշմարտությունը մաքրագործել մարդկային սուբյեկտիվ մտքի ու բարոյականության կապանքներից:

Մարգարեական գրքեր: *Մարգարեները* Տիրոջ խոսնակներն էին, ովքեր դեռ էին կարգված Իսրայելում՝ հետևելու հասարակական և բարոյական կյանքի երևույթներին, հանդիմանելու, ժողովրդին *ապաշխարության* կոչելու, գալիք պատիժները հրապարակելու համար: Աստվածային փրկագործ. ծրագրի կարևորագույն մաս կազմող մարգարեական առաքելության մյուս կարևոր նպատակը Մեսիայի գալստյան և նրա արքայության նկատմամբ հավատի ամրապնդումն էր:

Աստված բազում մարգարեներ ասպարեզ հանեց, սակայն մատենագիր մարգարեները, այսինքն՝ իրենց խոսքերը գրի առած հեղինակները 16-ն են՝ 4-ը մեծ՝ Եսայի, Երեմիա, Դանիել և Եզեկիել և 12-ը՝ փոքր (այդպես են կոչվում իրենց գրքերի մեծ և փոքր ծավալների պատճառով):

Բ. Նոր կտակարան: Ա-ի երկրորդ և կարևորագույն մասն է. ամբողջացնում է անկյալ մարդու աստվածային փրկագործության պատմությունը: Նոր կտակարանում խոստացյալ Փրկիչը՝ Հիսուսը, իր տնօրինություններով՝ հայտնությամբ, մեղքի և մահվան նկատմամբ հաղթանակով նոր ուխտ կնքեց մարդկության հետ: Դրանով Հիսուսի անվանը հավատացողներին հնարավորություն է չնորհվում ընդունելու կորուսյալ երանությունը՝ «հավիտենական կյանքը» նրա իսկ կողմից հիմնած եկեղեցու միջոցով:

Նոր կտակարանը, որ վկայարանն է այդ ուխտի, բաղկացած է հունարեն գրված 27 աստվածաշունչ գրքերից: Արևելյան եկեղեցում ժողովածուն իր ներկայիս տեսքով վերջնականապես հաստատվել է Աթանաս Ալեքսանդրացու 367-ին գրած 39-րդ զատկական նամակում առաջարկած ցանկի հիման վրա: 397-ին Կարթագե-

նի տեղական ժողովը հռչակել է այդ ցանկը որպես Սուրբ Գիրք: Արևմտյան եկեղեցում կանոնը վավերացվել է V դ.: Նոր կտակարանի Հայտնության գիրքը, թեև հիշատակված է Ա-թանաս Ալեքսանդրացու նույն զատկական նամակում, այնուամենայնիվ միանգամից չի ընդգրկվել Ա-ի մեջ: Հայերեն է թարգմանվել միայն XII դ.՝ *Ներսես Լամբրոնացու* կողմից: Հայտնությունը միակ նորկտակարանային գիրքն է, որից եկեղեցում ոչ մի ընթերցում չի կատարվում: Ք. ծ. հ. I դ. 2-րդ կեսին կազմված սուրբ գրքերի այս ժողովածուն ևս բաժանվում է չորս առանձին խմբերի. Ավետարաններ, գործք, նամակներ, հայտնություն:

Ա վ ե տ ա ր ա ն ն ե ր (տես *Ավետարան*):

Գ ո ր ծ ք ա ռ ա ք ե լ ո ց: Հեղինակը Պողոս առաքյալի սիրելի աշակերտ Ղուկաս ավետարանիչն է: Համարվում է Ղուկասի Ավետարանի շարունակությունը: Նկարագրվում է Հիսուսի *համբարձման*, Սուրբ Հոգու հեղմամբ՝ *հոգեգալուստով* եկեղեցու հիմնադրման և Քրիստոսի Ավետարանը «Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը» (1. 8) տարածելու պատմությունը: Մի շարք ճառերում արծարծվում է քրիստ. վարդապետությունը:

Ն ա մ ա կ ն ե ր: Նոր կտակարանի երրորդ բաժնում ընդգրկված են նամակագրության կանոններով կազմված 21 առաքելական թղթեր, որոնք համարվում են քրիստ. հավատի ուղղափառ վարդապետության աղբյուրը: Առաջին 14 նամակները գրված են հեթանոսների առաքյալ Պողոսի կողմից և նորկտակարանային առաջին գրավոր հուշարձաններն են (50–65-ին): Պողոս առաքյալի աստվածաբանությունը նյութերի հետևողական շարադրանք չէ, այլ որոշակի առիթներով ու որոշակի անձանց ու համայնքներին գրված պատասխաններ: Մյուս 7 թղթերը կոչվում են ընդհանրական, քանզի հիմնականում հասցեագրված են ընդհանուր եկեղեցուն:

Թուղթ հռոմեացիներին

Թղթերի սկզբում զետեղված է Պողոս առաքյալի ամենածավալուն ու աստվածաբան. ամենակարևոր գրվածքը, որի հիմն. նպատակը հավատի և շնորհի դերի բացահայտումն է: Ըստ առաքյալի՝ ո՛չ հեթանոսն իր իմաստությամբ, ո՛չ էլ հրեան իր օրենքով չեն կարող արդարանալ Աստծո առաջ. «քանի որ ոչ մի մարդկային էակ օրենքի գործերով չպիտի արդարացվի նրա առաջ, քանզի օրենքի միջոցով է մեղքի ճանաչումը» (3.20): Իսկ փրկությունն ի Քրիստոս հավատի շնորհիվ է. «արդարը հավատով է ապրելու» (1.17): Խոսվում է նաև Իսրայելի վերջնական փրկության, արդարացման համար անհրաժեշտ բարոյական պահանջների մասին:

Ա՝ Բ թղթերը կորնթացիներին

Արծարծված թեմաներով ամենահարուստ առաջին նամակի գրության (57-ին) առիթը Հունաստանի Կորնթոս քաղաքում Պողոս առաքյալի ստեղծած համայնքի վարքն է: Նույնիսկ մեռելների հարության խնդիրն առնչվում է համայնքում տեղ գտած երկպառակությունների, անբարոյականության, աղանդների, կռապաշտության և այլ մոլորությունների հետ: Հորդորում է չապավինել մարդկային իմաստությանը (որը շատ հատուկ էր կրոն. և փիլ. հոսանքների խաչմերուկ հանդիսացող Կորնթոսի բնակիչներին), այլ ապավինել Աստծո հզոր խոսքին: Նամակում բացահայտվում է Պողոս առաքյալի ներաշխարհը՝ երիտասարդ համայնքի հոգածության, ինչպես նաև սուտ վարդապետների հերյուրանքից իր առաքելության պաշտպանության կապակցությամբ:

Նույն՝ 57-ի վերջին գրված երկրորդ նամակը առավելապես ջատագովական է՝ ուղղված իր իսկ կողմից քարոզած ավետարանական ճշմարտության հաստատմանը:

Թուղթ հաղատացիներին

Հեղինակն այս թղթում, որի ընդհանուր նյութը հար և նման է իր առաջին նամակին, հերքում է հրեա սուտ վարդապետների այն ուսմունքը, ըստ որի՝ քրիստոնյաները պետք է ենթարկվեն օրենքին և թլփատվեն: Այնինչ մարդու արդարացումը ոչ թե Մովսեսի օրենքով է, այլ միայն ի Քրիստոս հավատով: Քրիստոնյաների կառչումը կրոնի արտաքին ձևին, որը հուդայականություն է հիշեցնում, նսեմացնում է խաչելության և քրիստ. ազատության բացարձակ արժեքը: Ցավով պաշտպանում է իր աստվածաշնորհ առաքելության լիազորությունները դրանք վիճարկողներից: Վերջում կոչ է անում գաղատացիներին (գալիական կելտերի հետնորդներ, որոնք հաստատվել էին Փոքր Ասիայում) ապրել բազում հոգևոր շնորհներ բաշխող Սուրբ Հոգու առաջնորդությամբ:

Թուղթ եփեսացիներին

Եփեսացիներին (Եփեսոսի համայնքին), ինչպես փիլիպպեցիներին, Փիլիմոնին, կողոսացիներին ուղղված թղթերը գրվել են բանտում,

ուստի դասվում են «կապանքների» նամակների շարքը: Գրքվածքի առաջին՝ վարդապետական մասում արծարծված է գլխ. թեման: Դա Աստծո փրկագործության իրականացումն է աշխարհում՝ եկեղեցու հիմնադրմամբ: Երբեմնի երկու թշնամիները՝ հեթանոսներն ու հրեաները, եկեղեցում միավորվում են: Քրիստոսը սպանեց այդ թշնամությունը, որպեսզի «... խաղաղություն հաստատի ու իր խաչով հաշտեցնի երկուսին մեկ մարմնի մեջ Աստծո հետ» (2.16): Իսկ Սուրբ Հոգին առաջնորդում է եկեղեցուն, որը Քրիստոսի մարմինն է: Երկրորդ՝ գործնական մասում, որը հենվում է արծարծված վարդապետության վրա, խոսվում է ամուսինների, զավակների և այլնի մասին: Առաքյալը հորդորում է հավատացյալներին հագնել «Աստծո սպառազինությունը, որպեսզի կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարքներին» (6.11):

Թուղթ փիլիպեցիներին

Նամակի գրության առիթը հեղինակի երախտագիտության արտահայտությունն է Փիլիպե քաղաքի (Մակեդոնիայում) բնակիչներին՝ Եվրոպայում առաքյալի հաստատած առաջին համայնքի անդամներին՝ բանտարկության տարիներին իրեն ցուցաբերած նյութ. օգնության համար: Օգտվելով առիթից՝ քաջալերում է նրանց հավատի մեջ անսասան մնալ, միասնություն պահել և քրիստոսավայել խոնարհության մեջ հարատևել՝ ընդդեմ եսասիրության ու հպարտության, և լինել աշխարհի լույսերը: Այս թուղթը կոչվում է «ուրախության թուղթ», ուրախություն, որն արդյունք է Քրիստոսին հավատարիմ լինելու գիտակցումից:

Թուղթ կողոսացիներին

Թուղթը գրվել է փոքրասիական Կողոսիա քաղաքի համայնքում կեղծ ուսմունքներ տարածվելու առիթով: Առաքյալը հիշեցնում է, որ փրկությունն ի Քրիստոս է, և ցույց տալիս նրա բացարձակ իշխանությունը, որի միջոցով Աստված արարեց աշխարհը և իրեն է վերադարձնում մարդկությանը: Մատնանշվում է նրա մարմնի՝ եկեղեցու անդամների նոր կյանքն ու ապրելակերպը: Թուղթը զգուշացնում է բոլոր ժամանակների աղանդավորների համար, ովքեր ուրանում են Քրիստոսի աստվածությունը և հետևում պատիր ուսմունքների:

Ա՛Բ թղթերը թեսաղոնիկեցիներին

Նորկտակարանային հնագույն գրվածք նկատվող (50-ական թթ.) Ա նամակի (ուղղված է Մակեդոնիայի Թեսաղոնիկե քաղաքի քրիստ. համայնքին) կենտրոնական թեման Քրիստոսի երկրորդ գալստյան և մեռելների հարության մասին է: Առաքյալը, սակայն, ցանկանում է աշխարհի վախճանով մտահոգվելու փոխարեն սիրո և հավատի զրահներ հագնել ու իբրև լուսո որդիներ պատրաստ լինել այդ գալուստին:

Բ նամակը առաջինի շարունակությունն ու լրացումն է: Թեսաղոնիկեցիներից ոմանք Տիրոջ վերահաս գալուստի մասին առաքյալի խոսքը սխալ էին հասկացել՝ կարծելով, որ այդ իրադարձության մոտալուտ լինելու պատճառով նույնիսկ աշխատելու կարիք չկա: Տիրոջ օրն այդքան շուտ չի լինի և կհաջորդի *Նեռի* հայտնվելուն: Իսկ այդ սպասման ընթացքում քրիստոնյաները չպիտի փոխեն իրենց սովորական կենսակերպը, քրտինքով պիտի վաստակեն ապրուստը, խույս տան ծուլությունից և հարատևեն աղոթքի ու բարի գործերի մեջ:

Ա՛Բ թղթերը Տիմոթեոսին

Այս երկու, ինչպես նաև հաջորդ նամակը կոչվում են «հովվական թղթեր», քանի որ պարունակում են հովիվներին՝ եկեղեցու պատասխանատուներին ուղղված ցուցումներ:

Տիմոթեոսը՝ առաքյալի մերձավոր գործակիցը և Եփեսոսի եպիսկոպոսը, քրիստոնյա հրեուհու և հեթանոսի զավակ էր, մանկուց քաջատեղյակ Ս. Գրքին: Նրան ուղղված նամակում բացահայտվում են հովվական ծառայության խորհուրդները, հովվի անձնական հատկությունները, արժանիքները ևն: Առաքյալը զգուշացնում է հրեական և հեթանոս. խառնուրդ այն կեղծ վարդապետությունից, ըստ որի՝ նյութ. աշխարհը չար է և փրկության կարելի է հասնել գաղտնի գիտությամբ: Պողոս առաքյալը արծաթասիրությունը բնորոշում է իբրև բոլոր չարիքների արմատ:

Երկրորդ թուղթը, որ առաքյալի կտակն է իր «սիրեցյալ որդուն», ամփոփում է Ավետարանը քարոզողին ուղղված հորդորներն ու խրատները: Առաքյալը կոչ է անում քաջությամբ մարտնչել «որպես հավատարիմ զինվոր Հիսուսի Քրիստոսի»՝ իր պես մղելով բարի պատերազմը:

Թուղթ Տիտոսին

Նամակը հասցեագրված է առաքյալի մերձավոր գործակիցներից մեկին, ում հանձնված էր Կրետեի եկեղեցիների հովվությունը: Պարունակում է հովվական տեսական և գործնական ցուցումներ առաջնորդներին և հիշեցնում քրիստոնյաների պարտականությունները:

Թուղթ Փիլիմոնին

Պողոս առաքյալի անձնական բնույթի այս միակ թուղթն ուղղված է Փիլիմոնին՝ Կողոսիայի եկեղեցու անդամներից և իր գործակիցներից մեկին: Փիլիմոնն ուներ Օնեսիմոս անունով մի ստրուկ, որը փախել էր իր մոտից, այնուհետև բանտում Պողոս առաքյալի միջոցով դարձել քրիստոնյա: Առաքյալը Փիլիմոնին խնդրում է, որ Օնեսիմոսին ընդունի որպես հավատակից եղբայր: Առաքյալը չի պարտադրում իր կամքը, այլ մատնանշում է, թե ինչպես Քրիստոսի սերը և հավատը խորապես վերափոխում են մարդկային հարաբերությունները:

Թուղթ եբրայեցիներին

Այս թուղթն ուղղված է այն հրեա քրիստոնյաներին, ովքեր, ընկրկելով համերկրացիների հարուցած դժվարություններից, ցանկանում էին հեռանալ նոր հավատից: Հինկտակարանային հղումներով հարուստ այս գրվածքում հեղինակը ցույց է տալիս, որ բոլոր մարգարեական խոստումները կատարվել են ի Քրիստոս: Հիսուսը, որ «լույսն է Նրա փառքի և բուն պատկերը Նրա էության», բարձր է հինկտակարանային մարգարեներից, հրեշտակներից, նաև Մովսեսից: Նա Աստծո կարգած հավիտենական քահանայապետն է՝ գերիվեր հին ուխտի բոլոր քահանայապետներից: Քրիստոսի պատարագը քավության այն զոհն է, որի նախօրինակներն էին հինկտակարանային բոլոր կենդանական զոհերը: Եվ նրա միջոցով է, որ հավատացյալները փրկվում են մեղքից ու մահից: Առաքյալի այս կարևորագույն թուղթը Հին կտակարանի գրքերի բանալին է:

Հակոբոս առաքյալի ընդհանրական թուղթը

Հակոբոս Տյառնեղբոր այս թուղթը գրվել է մինչև 62-ը: Իր կառուցվածքով ասույթների և կարճ խրատների մի ժողովածու է՝ ուղղված «աշխարհով մեկ սփռված համայն իսրայելացի ժողովրդին»: Կենդանի խոսքով բացահայտում է քրիստ. ճշմարիտ վարքի խորհուրդը, արծարծում մի շարք հարցեր՝ հարստություն, աղքատություն, փորձություն, լեզվի չափավորություն, իմաստություն ևն: Նամակում առանձնակի շեշտվում է հավատը գործով արտահայտելու կարևորությունը:

Պետրոս առաքյալի Ա ¨ Բ ընդհանրական թղթերը

Առաքյալի առաջին նամակը գրվել է 64–67-ին և ուղղված է Փոքր Ասիայի քրիստոնյաներին: Նպատակն է՝ քաջալերել «Աստծո ընտրյալներին» հալածանքների ու նեղությունների մեջ: Քրիստոնյաների չարչարանքներն անվարձ չեն մնա, եթե ընդունեն ու դիմանան դրանց՝ հիշելով Հիսուսի օրինակը: Պետք է ապրել սուրբ կյանքով՝ իբրև կենդանի տաճարներ, հնազանդվել երկրային իշխանություններին ու սեր տածել բոլորի նկատմամբ և չարին բարի գործերով պատասխանել:

Երկրորդ նամակը առաքյալի կտակն է հավատացյալներին, որտեղ խնդրում է անսասան լինել *հավատի* մեջ, խուսափել սուտ վարդապետություններից: Նամակի խնդրո առարկան Քրիստոսի երկրորդ գալուստն է, որը, ըստ սուտ վարդապետների, չի կայանա: Առաքյալը բացատրում է, որ այս ուշացումը դիտավորյալ հապաղում է, քանզի Աստված կամենում է, որ բոլորն ապաշխարեն:

Հովհաննես առաքյալի ընդհանրական Ա, Բ, Գ թղթերը

Առաքյալի երեք թղթերն էլ գրվել են Եփեսոսում, I դ. վերջին: Ա թղթում հեղինակը երկու նպատակ է հետապնդում. նախ՝ քաջալերում է քրիստոնյաներին՝ հարատևելու Աստծո և նրա Որդու հաղորդության մեջ, որը հատկորոշվում է միմյանց նկատմամբ եղբայրական սիրով, և երկրորդ՝ զգուշացնում է չհետևել կեղծ վարդապետություններին: «Ամեն մի հոգի, որ չի դավանում Հիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա Աստծուց չէ» (4.3): Պետք է սիրել միմյանց, քանի որ «ով սիրում է, Աստծուց է ծնված» (4.7):

Բ նամակը «ընտրյալ տիկնոջը և նրա որդուն» գրված կարճ գրություն է, որտեղ ամփոփված են առաջին թղթի երկու հիմն. թեմաները՝ հարատևություն սիրո մեջ, զգուշացում կեղծ ուսմունքներից:

Գ նամակում, ինչպես և նախորդում, առաքյալն իրեն անվանում է երեց: Հասցեագրված է Գայոսին՝ եկեղեցու առաջնորդներից մեկին: Հեղինակը գովում է նրան՝ հավատարմության և հավատացյալներին մատուցած ծառայությունների համար: Նամակն անուղղակի ձևով ներբող է հյուրընկալության, որը սիրո և հավատի արտահայտությունն է:

Հուդա առաքյալի ընդհանրական թուղթը

Հավանաբար գրվել է 70-ին: Իր հակիրճ ուղերձում առաքյալը ճաղկում է ամբարիշտ մարդկանց՝ հերետիկոսներին, որոնք իրենց

պղծությունների ու հայհոյությունների համար խստագույնս կպատժվեն: Իր ընթերցողներին հորդորում է կշտամբել նրանց ու հաստատ մնալ առաքելական հավատի մեջ: Թղթում շեշտվում է, որ քրիստոնեությունը միայն դավանանք չէ, այլև վարք ու բարքի մաքրություն:

Սուրբ Հովհաննես առաքյալի եվ աստվածաբան ավետարանիչի հայտնությունը: Ա-ի առաջին գիրքը՝ Ծննդոցը, պատասխանում է այն հարցին, թե որտեղից ենք մենք, իսկ վերջին գիրքը՝ Հայտնությունը՝ թե ուր ենք գնում: Պատմոս կղզի աքսորված Հովհաննես առաքյալի այս գրվածքը մարգարեական է՝ կազմված տեսիլքներից ու հայտնություններից: Գիրքը լի է ահեղ այլաբանությամբ և խորհրդավոր նշաններով: Նկարագրում է իր տեսիլքը, որտեղ հայտնվում է Փրկիչը և հրամայում նրան գրի առնել իր հակիրճ ուղերձները Ասիայի 7 եկեղեցիների համար: Այնուհետև պատկերվում են աշխարհի գալիք իրադարձությունները՝ սատանայի և նրա ծառաների վերջնական պարտությամբ, երկնքի ու երկրի վերափոխմամբ և Աստծո Գառի հավիտենական հաղթանակով: Գրքի բուն նպատակն է վստահություն ներշնչել Տիրոջ երկրորդ գալստյան նկատմամբ, որն ավարտվում է Փրկչի խոստումով. «Ես գալիս եմ շուտով»: Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս Քրիստոս» (**22.**20):

Ա-ի ընթերցումը: Աստծո խոսքի հանապազ ընթերցանությունն առանձնական և ընդհանրական աստվածապաշտության անքակտելի մասն է և օրհնաբեր աղբյուրը: Ս. Գրքի կանոնավոր սերտողությունը աստվածային պատգամ է (տես Բ Օր. **6.**6–9, **11.**18–21, Թվեր **15.**39–40, Սաղմ. **1.**2, Հովհ. **5.**39, Ա Տիմ. **4.**13–16 ևն) և յուրաքանչյուր հավատացյալի սրբազան պարտականությունը: Ըստ եկեղեցու հայրերի՝ Ա-ի ընթերցանությունն ընդհանրության եզր չունի աշխարհիկ գրքերի հետ, այսինքն՝ գիտելիքի սոսկ յուրացում չէ, այլ՝ զրույց Աստծո հետ: Նրա խոսքն օժտված է ներգործուն զորությամբ՝ ունակ մխիթարելու, բուժելու և վերափոխելու մարդկանց հոգիները. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթ. **4.**4) և «Աստծո զորությունն է՝ ի փրկություն բոլոր հավատացյալներին» (Հռոմ. **1.**16): «Հոգու սուսեր» է, «որ քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները» (Եփես. **6.**17): «Մուրճ» է, որ փշրում է մեր քարեղեն սրտերը (Երեմ. **23.**29): «Հուր» է, որ այրում է հոգու անմաքրությունը և ջերմացնում մեր բնությամբ անտարբեր սրտերը «Երկնքի արքայության» նկատմամբ (Մատթ. **13.**11–15): «Ճրագ» է, որ լույս է տալիս մութ տեղերում (Բ Պետ. **1.**19) և փարատում մեր տգիտության, կրքերի ու մոլորությունների խավարը: «Սերմ» է, որ մեր սրտերում ծլում, աճում և պտղաբերում է (Մարկ. **4.**20): Վերջապես «Կյանքի խոսք» է, որ շնորհում է հավիտենական կյանք (Փիլիպ. **2.**16):

Պատարագի և *ժամերգությունների* ընթացքում ի լուր բոլորի սուրբգրային հատվածներ՝ ընթերցվածներ են կարդացվում եկեղեցու սպասավորների կողմից: Այս կարգը սկզբնավորվել է Իսրայելում՝ հնագույն ժամանակներից, իսկ առաքյալների օրոք հաստատվել է ներկայիս ընթերցանության եռակարգությունը: Նախ ընթերցվում է Հին կտակարանից՝ իբրև Փրկչի տնօրինությունների կանխասացություն, ապա՝ Առաքելական Թղթերից՝ իբրև վկայություն, և վերջում՝ Ավետարանից՝ իբրև կատարում, ինչը հնարավորություն է ընձեռում խորունկ և ուղղափառ ձևով ընկալել Ս. Գիրքն իր Հին և Նոր կտակարանների միասնության մեջ: Այս ընթերցվածները պատշաճեցված են օրվա, տոնի խորհրդին: Եկեղեցում կազմվել են ընթերցվածների ժողովածուներ, ինչպես՝ Ճաշոց գիրքը, Ատենի, Յուղաբերի, Ճաշի Ավետարանները: Աստծո խոսքն ընթերցելուց առաջ հնչում են հատուկ կոչեր՝ «Օրթի» («ունկնդրեցեք» կամ «ոտքի ելեք»), «Պրոսխումե» («ուղիղ դիմացդ նայիր») և «Ասէ Աստուած», որոնք հրավեր են խոսքն ընկալելուց առաջ զգաստանալու:

«Տօնք, պահք և ընթերցուածք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» ամենամյա օրացույցում նշված են յուրաքանչյուր օրվա ընթերցվածները:

Ըստ եկեղեցու հայրերի, բացի ակնածալից ու երկյուղալից վերաբերմունքից, անհրաժեշտ են հարատևություն, խոնարհություն և սրտի մաքրություն, ինչպես նաև հանապազ խորհրդածություն կարդացածի շուրջ և խորունկ ըմբռնում: Ա. ճիշտ ընկալելու մյուս կարևորագույն պայմանը գրքերի ճիշտ ընտրությունն է՝ ըստ կարևորության, ինչը ենթադրում է Ա-ի ընդհանուր ցանկից տարբերվող հերթականություն՝ կախված տարիքից և հոգևոր հասունությունից: Այսպես, գրքերից

առավելագույն հարգը պատկանում է Նոր կտակարանին՝ իբրև Հին կտակարանի լրումի: Նոր կտակարանից մանավանդ կարևոր են նախ՝ չորս Ավետարանները, ապա՝ մյուսները: Իսկ Հին կտակարանի ամենագերադասելի գիրքը Սաղմոսարանն է: Նոր կտակարանի, մանավանդ Ավետարանների և սաղմոսների քաջ իմացությունն ու անգիր իմանալը պարտադիր են եղել միջնադարյան վանքերում:

Ըստ մատչելիության՝ հին եկեղեցում պատանիներին խորհուրդ է տրվել ընթերցել Սիրաքի գիրքը (նման որոշում է ընդունել նաև 768-ի Պարտավի ժողովը), իսկ ըստ *Գրիգոր Տաթևացու*՝ Առակացը պատանիների համար է, Ժողովողը՝ երիտասարդների, Երգ երգոցը՝ ծերերի: Իսրայելում մինչև 30 տարեկան բոլորելը արգելված է եղել ընթերցել Ա-ի սկիզբը, Եզեկիելի գրքի սկիզբն ու վերջը և Երգ երգոցը:

Ա-ի մեկնությունը: Քրիստոսի եկեղեցին քրիստոնեության մեջ հաստատված այն իշխանությունն է, որին վերապահված է ոչ միայն Ս. Գիրքն անաղարտ պահելու, Աստծո խոսքը քարոզելու և ընթերցանությունը քաջալերելու, այլև այն մեկնելու առաքելությունը: Ս. Գիրքը իբրև գերբնական հայտնություն և երկնային ճշմարտությունների ժողովածու մեծավ մասամբ մատչելի՝ դյուրահասկանալի է, սակայն նրա մեջ առկա են նաև դժվարըմբռնելի ու անըմբռնելի շերտեր (Բ Պետ. **1.**20–21): Ուստի եկեղեցու հայրերն ու վարդապետները, հավատացյալներին քմահաճ բացատրություններից և ըստ այդմ հերետիկոսություններից զերծ պահելու նպատակով, մեկնել են Ս. Գրքի յուրաքանչյուր տողն ու բառը: Քրիստ. աշխարհում առավել հայտնի էին *Ալեքսանդրիայի* և *Անտիոքի* մեկնության դպրոցները, որոնցից յուրաքանչյուրն ուներ իրեն հատուկ ուղղությունը: Ալեքսանդրիայի դպրոցին բնորոշ էր Ա-ի մեկնության այլաբանական, իսկ Անտիոքի դպրոցին՝ տառացի մեթոդը (տես *Մեկնողական գրականություն*): Ա. և նրա առանձին գրքերը մեկնել են Ընդհանրական եկեղեցու բոլոր հայրերը՝ *Որոգինեսը*, Աթանաս Ալեքսանդրացին, Հովհան Ոսկեբերանը, *Կյուրեղ Ալեքսանդրացին, Եփրեմ Ասորին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Նազիանզացին* և ուրիշներ: Սուրբգրային արժեքավոր մեկնություններ են գրել Հայ եկեղեցու հայրերն ու վարդապետները՝ *Եղիշեն, Հովհաննես Գ Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Սարկավագը*, Ներսես Շնորհալին, *Վարդան Արևելցին*, Ներսես Լաբրոնացին, *Եսայի Նչեցին*, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ:

Ա-ի թարգմանությունները: Ա. թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Ա-ի թարգմանությունը հոգևոր, պատմամշակութային նշանակալից իրադարձություն էր ժողովուրդների կյանքում և որպես թարգման. արվեստի գլուխգործոց, ձևավորել է նրանցից շատերի գրական լեզուն, իսկ որոշ դեպքերում էլ՝ պայմանավորել գրերի գյուտը և դպրությունը: Սակայն թարգմանությունների միջոցով Աստծո խոսքի տարածումն աշխարհով մեկ այլ՝ հոգևոր խորհուրդ ունի: Հին կտակարանը բազմիցս մարգարեացել է հեթանոսների՝ «լույսը» տեսնելու, իսկ Փրկիչը հստակ մարգարեացել է այդ մասին. «Այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում» (Մատթ. **24.**14):

Կարևորագույն և դասական են համարվում առաջին թարգմանությունները՝ հունարեն Յոթանասնիցը (Ք. ծ. ա. III դ.), ասորերեն Պեշիտտան (II դ.), դպտերենը (III դ.), լատիներեն Վուլգատան (IV դ.), գոթականը (IV դ.), հայերենը (V դ.), եթիոպերենն ու վրացերենը (V դ.): Հին թարգմանությունների շարքը եզրափակում է սլավոներենը (IX դ.): Դրանց հարգն ու հեղինակությունը պայմանավորված է բացառապես հոգևոր-գործնական նկատառումներով և բարձրարժեք թարգմանություններով, հնությամբ և եկեղեցու հայրերի ու վարդապետների ճանաչմամբ ու վկայություններով: Հին թարգմանությունները չափազանց կարևոր են քննական բնագրերի և մեկնությունների համար:

Այս թարգմանությունների շարքում հնագույնն ու ամենահեղինակավորը Հին կտակարանի Յոթանասնից հունարեն թարգմանությունն է, որը հետագայում դարձել է բազմաթիվ այլ թարգմանությունների աղբյուրն ու բնագիրը: Այս թարգմանության մասին մեզ հասած հնագույն աղբյուրը «Արիստեասյան նամակն» է, ըստ որի՝ այն կատարվել է Պտղոմեոս Երկրորդի (Ք.ծ.ա. 285–246) օրոք: Եգիպտոսի արքան, իր իսկ հիմնած Ալեքսանդրիայի գրադարանը հրեաների սրբազան գրքով համալրելու նպատակով, խնդրում է Երուսաղեմի Եղիազար քահանայապետին Օրենքի գրքի մի օրինակ և 72 թարգմանիչներ՝ յուրաքանչյուր ցեղից 6-ական հոգի: Թարգմանիչներին տանում

են Պատմոս կղզի, մեկուսացնում իրարից և հանձնարարում 72 օրում թարգմանել Օրենքը: Ի զարմանս բոլորի, թարգմանությունները լինում են համահունչ: Այստեղից էլ՝ Յոթանասնից անվանումը: Հրեաները, այդ թվում հոգևոր վերնախավը, ըստ *Փիլոն Ալեքսանդրացու*, Յոթանասնիցն ընդունելի թարգմանություն են համարել՝ թարգմանիչներին վերագրելով աստվածային ներշնչանք: Հետագայում թարգմանվել են Հին կտակարանի մյուս սրբազան գրքերը: Այս թարգմանության մեջ ընդգրկվել են եբրայական բնագրում բացակայող մի շարք երկրորդականոն գրքեր: Ավետարանիչներն ու առաքյալներն իրենց մեջբերումները լիաձեռն քաղել են հունարեն այս բնագրից: Հետագայում, երբ Յոթանասնիցը դարձել է քրիստ. Ա-ի առաջին մասը և տարաձայնություններ առաջացրել քրիստոնյա վարդապետների ու օրենսգետների միջև, հրեաները հետզհետե հրաժարվել են նրանից՝ համարելով այն եբրայական բնագրին անհարազատ թարգմանություն:

Հայերեն Ա.: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը (301), շուրջ մեկ դար անց գրերի գյուտը և Ս. Գրքի հայերեն թարգմանությունը ամենախոշոր և բախտորոշ իրադարձություններն էին Հայաստանում: Ըստ V դ. պատմիչներ Կորյունի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու՝ հայերեն թարգմանությունն ունեցել է որոշակի երկու հանգրվան: Առաջինը կատարվել է անմիջապես գրերի գյուտից հետո (405–406-ին), մի քանի տարիների ընթացքում: *Մեսրոպ Մաշտոցն* իր երկու աշակերտների հետ Սամոսատում ձեռնամուխ է եղել Ս. Գրքի թարգմանությանը: Գրերի գյուտից հետո հայերեն նախ թարգմանվել է Առակաց գիրքը՝ սկսելով «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» խորհրդանշական տողերից: Թարգմանությունն ավարտվել է Վաղարշապատում *Սահակ Ա Պարթևի* համագործակցությամբ: Թարգմանության աղբյուր է ծառայել ասորերեն Պեշիտտան: Ըստ Մովսես Խորենացու՝ փոխադրվել են Հին կտակարանի 22(39) նախկանոն գրքերը և Նոր կտակարանը: Պեշիտտան թարգմանվել էր եբրայերենից և չէր պարունակում երկրորդականոն գրքերը:

Երկրորդ թարգմանության շրջանն ընկնում է Եփեսոսի տիեզերաժողովին (431) հաջորդող տարիներին: Առաջին թարգմանությունը համարվում է «փութանակի», այսինքն՝ հապճեպ և անբավարար: Ուստի Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները Բյուզանդիոնից բերել են Եվսեբիոս Կեսարացու ձեռքով կազմած Հին և Նոր կտակարանների վավերական օրինակներ, որոնք բյուզ. եկեղեցու ընդունած բնագրերն էին: Կեսարյան այս բնագիրը կոչվում է նաև պաղեստինյան կամ երուսաղեմյան: Ընդ որում Հին կտակարանը Յոթանասնից բնագիրն էր՝ երկրորդականոն գրքերով հանդերձ:

Ըստ Մովսես Խորենացու՝ «Մեծն Սահակ և Մեսրոպ ընդունելով (Ս. Գրքի օրինակը) նորից թարգմանեցին մի անգամ շտապովի թարգմանվածը, նրանց հետ միասին, նորից հորինելով ու նորոգելով»: Սահակ-Մեսրոպյան այս թարգմանությունը դարձել է Հայ եկեղեցու կանոնական բնագիրը: Թարգմանության ելախտավորներից են նրանց աշակերտներ Եղնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցացին, Ղևոնդ Վանանդեցին, Կորյունը և Արճան Արծրունին:

Ա. հայերեն թարգմանելու անհրաժեշտությունը կյանքի է կոչել գրերի գյուտը, սկզբնավորել *Թարգմանչաց շարժումն* ու հայ դպրությունը, իսկ իր ճշտության, բնագրային հարազատության, լեզվաոճական գեղեցկության ու վեհության շնորհիվ արժանացել է բազում հայագետների բարձր գնահատականին: Ֆրանսիացի հայագետ Լա Կրոզը Ա-ի հայերեն թարգմանությունը համարել է «Թագուհի թարգմանությանց»:

Ա-ի հայերեն տպագրությունները: Հին կտակարանի գրքերից մեկը՝ Սաղմոսարանը, հայերեն առաջին անգամ տպագրվել է 1565-ին, Վենետիկում, *Աբգար Թոխաթեցու* կողմից: Ս. Գրքի հայերեն առաջին տպագրությունը, չափազանց դժվարին պայմաններում, կատարվել է 1666–68-ին, Ամստերդամում՝ *Ոսկան Երևանցու* և Մատթեոս Ծարեցու ջանքերով, *Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսի հանձնարարությամբ: Հետագայում Ա. բազմիցս հրատարակվել է, որոնցից կարևորագույնները երկուսն են: 1805-ին Վենետիկում Հովհաննես վրդ. Զոհրապյանը, հիմք ընդունելով 1319-ին Կիլիկյան Հայաստանում ընդօրինակված մի ձեռագիր և համեմատելով ինն այլ ձեռագրերի հետ, հրատարակել է առաջին քննական-համեմատական Ա.: Մյուս ձեռագրերի տվյալներն արտահայտված են տողատակում: 1860-ին Վենետիկում լույս է տեսել Արսեն Բագրատունու Ա.՝ «ըստ միա-

բան վաղեմի գրչագրաց մերոց եւ յոյն բնագրաց»: 1994-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատարակած արեւելահայերեն ներկա թարգմանությունը կատարվել է Արսեն Բագրատունու բնագրի հիման վրա: Կազմվել են «Բառարան Սուրբ Գրոց» (1881) և Թ. վրդ. Աստվածատուրյանի «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» (1895) աշխատությունները:

Գրիգոր Դարբինյան

Ինչպես համաշխ., այնպես էլ հայ հին և միջնադարյան գրականության ու արվեստի գաղ. և գեղ. ներշնչման հիմն. աղբյուրը եղել է Ա.: Աստվածաշնչյան թեմաներով գրակ. երկեր են գրել Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Ներսես Շնորհալին, Գրիգորիս Աղթամարցին, Հովհաննես Թլկուրանցին, Առաքել Այունեցին, Հակոբ Թոխաթցին, Մարտիրոս Ղրիմեցին և ուր.: Ա-ի թեմաներով ստեղծվել են քանդակագործ. և գեղանկարչ. բազմաթիվ ստեղծագործություններ: Հին կտակարանի առանձին դրվագներ են ներկայացնում IV–VII դդ. հուշակոթողները (Աղց, Թալին, Օձուն, Անի): Աստվածաշնչյան մոտիվները հատկապես ինքնատիպ և հարուստ են դրսևորվել *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու հարթաքանդակներում և որմնանկարներում:Հայկ. ձեռագրերում միայն XII դարից հետո են հանդիպում նկարազարդ Ա-ներ, թեև X–XI դդ. Ավետարաններում տեղ է գտել «Աբրահամի զոհաբերությունը» պատկերագր. թեման: Ընդհանրապես հայ մանրանկարիչներն ավելի հաճախ Ավետարան են պատկերազարդել, քան Ա.: Դրանից բացի, Հին կտակարանի թեմաներով նկարները տեղ են գտել Սաղմոսներում, Մաշտոցներում և Ճաշոցներում: Պատկերագր. առավել տարածված թեմաներն են՝ «Ծնունդ», «Ավետում», «Աստվածածինը մանկան հետ», «Դեիսուս», «Ննջումն Աստվածածնի», «Ոտնլվա», «Խաչելություն», «Խորհրդավոր ընթրիք», «Մկրտություն», «Մուտք Երուսաղեմ», «Համբարձում», «Դժոխքի ավերումը» են, ինչպես նաև առաքյալների, ավետարանիչների պատկերումները: Հայկ. ձեռագրերի մեջ հնագույն պատկերազարդ Ա. «*Երզնկայի Աստվածաշունչն*» է (1269, Մատենադարան, ձեռ. № 1925): Տաղանդավոր նկարչի գործ են Երևանի Մատենադարանի «Մասունք Աստվածաշնչի» (1263–1266, գրիչ՝ Ստեփանոս, ձեռ. № 4243) նկարազարդումները: Երևանի Մատենադարանում պահպանվում են մանրանկարիչներ Թորոսի (1270, Գոռներ, ձեռ. № 345), Ավագի (1356–1358, Կիլիկյան Հայաստան, ձեռ. № 6230), Թորոս Տարոնացու (1317, Գլաձոր, ձեռ. № 353), Հակոբ Ակնեցու (1643, Կ. Պոլիս, ձեռ. № 188), Մարկոս Պատկերահանի (1686, Կ. Պոլիս, ձեռ. № 349) և այլոց պատկերազարդ Ա-ները: XVI–XVII դդ. մատյանների պատկերազարդումներում թեմատիկ ցանկն ավելի ընդարձակ է. դրսևորվել են նոր ժամանակների նկարչական ըմբռնումները՝ հեռանկար, ծավալային արտահայտում, բնապատկեր ևն: XVII–XVIII դդ. գեղանկարչության և քանդակագործության մեջ աստվածաշնչյան կերպարները մարմնավորվել են առավել տեղական, ազգային գծերով: Հայ *հոգևոր երաժշտության* մեջ *թվերգով* կատարվել են Ավետարանը և մարգարեական գրքերը, իսկ սաղմոսներն ու մարգարեական օրհնությունները՝ նաև երգվել (տես *Սաղմոսերգություն*):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.2., 5-րդ և 2.3, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի, Երուսաղեմ, 1938: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 309–668: Եղիայան Բ., Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, գիրք 1–5, Անթիլիաս, 1976: Պետրոսյան Ե., Ներածություն Նոր կտակարանի, Ս. Էջմիածին, 1996: Մանուկյան Ա., Աստուածաշունչ մատեանը, Թեհրան, 1998: Ներածություն Հին կտակարանի (աշխատասիր. Գ. Դարբինյանի), Ս. Էջմիածին, 2000:

ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, տես *Ծես*:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Ա ՀԱՄԱԴԱՆՑԻ (ծ. թ. անհտ – 10.10.1725, գ. Օշական), Ամենայն Հայոց կաթողիկոս 1715-ից: Հաջորդել է *Աղեքսանդր Ա Ջուղայեցուն*: Կաթողիկոսության շրջանը համընկել է Արլ. Հայաստանում քաղ. բուռն իրադարձությունների հետ: Ա. Ա Հ. դրականորեն էր տրամադրված Դավիթ Բեկի գլխավորած ազատագր. շարժման և ռուս. զորքերի՝ Կովկաս ու Պարսկաստան ծրագրված արշավանքի հանդեպ: Ռուսաստանի հետ կապեր ունենալու ամբաստանությամբ պարսիկները հալածել են նրան: 1724-ի սեպտ. 4-ի նամակով նա դիմել է *Եսայի Հասան-Ջալալյանին* և առաջարկել թուրք. կոտորածներից խուսափելու համար բանակցություններ վարել թուրքերի հետ և այդ նպատակով պատվիրակություն է ուղարկել: Ա. Ա Հ-ու խնդրանքով Պարսից Թահմազ շահը 1724-ին հատուկ հրովարտակով

ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ Պարսկաստանում վերացրել է մահմեդականությունն ընդունած հայերի բացառիկ իրավունքը հայրենական ժառանգության նկատմամբ: Ըստ այդ իրավունքի, քրիստոնյա ընտանիքի մի անդամը, մահմեդականություն ընդունելով, դառնում էր այդ ընտանիքի միակ ժառանգորդը: Նույն թվականին Ա. Ա Հ. վերացնել է տվել նաև գլխահարկի հավելումները: Այդ առիթով նա երկիր վերադառնալու կոչ է ուղղել խարականության հետևանքով ուրիշ երկրներում հաստատված արևելահայ վաճառականներին: Ա. Ա Հ. հատուկ կոնդակով Շամախու, Շիրվանի և Շաքիի թեմերը հռչակել է տերունի և հանել Գանձասարի կաթողիկոսության իրավասությունից: Սակայն Եսայի Հասան-Ջալալյանի՝ Էջմիածին այցելելուց հետո կրկին դրանք հանձնել է Գանձասարի աթոռի իրավասությանը: Շին. աշխատանքներ է կատարել Էջմիածնի Մայր տաճարում, Էջմիածնի կալվածների մի մասն ապահովել վաճառված կալվածագրերով:

Ա. Ա Հ-ուց մեզ են հասել մի շարք երկեր, որոնք մատենագր. վկայությունների քաղվածներ են (Վկայութիւնք յԱստուածաշունչ գրոց, այսինքն՝ ի Հին և ի Նոր Կտակարանաց, ի պէտս ուսումնասէր մանկանց Սիոնի, Մատենադարան, ձեռ. № 3637, 1988: Վկայութիւնք սրբոց վարդապետացն մերոց աստուածիմաստից և բանիբուն իմաստասիրաց, ի պէտս ուսումնասէր մանկանց Սիոնի, Մատենադարան, ձեռ. № 3281: Աստուածատրոյ Համադանեցւոյ իբրու բանասիրէ արարեալ ժողովածու գիրքս՝ ի պէտս քարոզողաց և ի զբօսանս մանկանց եկեղեցւոյ, Մատենադարան, ձեռ. № 56) և կոնդակներ: Նրա պատվերով Ավետիք Տիգրանակերտցին կազմել է մի Գավազանագիրք (Մատենադարան, ձեռ. № 1492): Ա. Ա Հ. լուսնի խավարումը դիտելու ժամանակ տանիքից ընկել է և վախճանվել: Ամփոփվել է Հռիփսիմեի տաճարի գավթում:

Կաթողիկոս. գահին Ա. Ա Հ-ուն հաջորդել է *Կարապետ Բ Ուլնեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976: Կարապետյան Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII–XVIII դարեր), ՊԲՀ, 1988, № 1:

Պավել Զոբանյան

ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ ՎԱՆՔ, ՀՀ Արագածոտնի մարզի Երնջատափ գյուղի մոտ, Քասաղ գետի աջ ափի բլրի վրա: Անունն առաջացել է վանքում պահվող «Աստվածընկալ ս. Խաչ»-ից: Ա. վ-ի Ս. Աստվածածին եկեղեցին (V դ.) թաղածածկ կառույց է՝ հվ-ից կից երկու ուղղանկյուն ավանդատներով: 1207-ին եկեղեցին նորոգվել է, և հաստատվել է վանական միաբանություն: 1244-ին իշխան Քուրդ Վաչուտյանն ու իր կինը՝ Խորիշահը, Ս. Աստվածածին եկեղեցուն հս-ից կից կառուցել են Ս. Նշան եկեղեցին և վանքին նվիրել այգիներ: Մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք ունեցող այս եկեղեցու սեղանի հիմքում ամփոփվել են Հակոբոս առաքյալի մասունքները: XIII դ. ճարտ. Յոհաննես վարդապետը Ս. Նշան եկեղեցուն արմ-ից կից կառուցել է քառասյուն, կենտրոնակազմ գավիթ (այժմ՝ կիսավեր): Վանքի բակում կան XII–XIV դդ. խաչքարեր ու տապանաքարեր:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.4., 1-ին պատկերը:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, Ե., 1942: Պետրոսյանց Վ., Աստվածընկալի վանքը, «Էջմիածին», 1978, № 3:

Մուրադ Հասրաթյան

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1717-ին: Առաջնորդանիստը՝ Աստրախանի Ս. Աստվածածին եկեղեցի: Ռուսաստանի հայոց առաջին թեմը: Միավորել է Ռուսաստանի հայկ. բոլոր համայնքները: Թեմի առաջին առաջնորդն է եղել Ս. Էջմիածնի կողմից 1717-ին նշանակված Ստեփանոս արք. Գաղաթցին: Հետագա տարիներին Ա. Թ-ի առաջնորդների թեկնածությունները համաձայնեցվել են Ռուսաստանի իշխանությունների հետ, ինչը փաստել է Ա. Թ-ի կարևոր դերը ռուս-հայկ. հարաբերություններում:

Ա. Թ. սերտ կապեր է ունեցել Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների հետ, նպաստել Ռուսաստանի հետ հայ ժողովրդի քաղ. և մշակութ. առնչություններին: Ա. Թ-ի առաջնորդ Հովսեփ արք. *Արղությանի* օրոք (1773–1800) Աստրախանում ստեղծվել է հոգևոր խորհուրդ (1786), հիմնվել հայկ. տպագրության պատմության մեջ զգալի դեր խաղացած առաջնորդարանի տպարանը (1789), եկեղեցու միջոցներով բացվել են Ռուսաստանում առաջին հայկ. դպրոցները, կառուցվել

հայկ. նոր եկեղեցիներ Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Աստրախանում, Նոր Նախիջևանում, Ղզլարում, Մոզդոկում: 1800-ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված Հովսեփ Արղությանին Ա. Թ-ի առաջնորդի պաշտոնում փոխարինել է Եփրեմ արք. Ջորագեղցին (1801–09-ին, 1809–30-ին՝ *Եփրեմ Ա Ջորագեղցի* Ամենայն Հայոց կաթողիկոս):

XVIII դ. 2-րդ կեսին և XIX դ. սկզբին Ռուսաստանի հայ բնակչությունը շարունակել է ստվարանալ: Կազմավորվել են հայկ. եկեղեց. նոր համայնքներ, հայաբնակ քաղաքներում կառուցվել հայկ. նոր եկեղեցիներ՝ Ս. Կատարինեն (1770), Ս. Հարությունը (1779)՝ Սանկտ Պետերբուրգում, Ս. Խաչը (1779)՝ Մոսկվայում, Ս. Խաչ վանքը (XVII դ. վերջ)՝ Նոր Նախիջևանում:

1830-ական թթ. սկզբին Ա. Թ-ում գործել է 17 եկեղեցի, բացվել են Աղաբաբյան դպրոցը (1810), Աստրախանի հոգևոր ուսումնարանը (1817), Հայոց թեմական դպրոցը (1838) ևն:

Ռուսաստանում հայ բնակչության աճի հետևանքով Ա. Թ. երկատվել է: 1830-ին կազմավորվել է *Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը*, իսկ Ա. Թ-ի իրավասության ներքո մնացել են Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի, Հս. Կովկասի, Պովոլժիեի, Սիբիրի և Միջին Ասիայի հայկ. համայնքները:

XIX դ. 2-րդ կեսին Ա. Թ-ի կազմում ստեղծվել են հայկ. նոր համայնքներ Միջին Ասիայի քաղաքներում, Եկատերինոդարում, Վլադիկավկազում, Ստավրոպոլում, Պյատիգորսկում, Արմավիրում, Հս. Կովկասի այլ վայրերում: Հայաբնակ քաղաքների և գյուղերի մեծ մասում կառուցվել են եկեղեցիներ, բացվել ծխական դպրոցներ:

XIX դ. 2-րդ կեսին Ա. Թ-ի առաջնորդներ են եղել Հայ եկեղեցու ականավոր դեմքեր Գևորգ արք. Սուրենյանցը (1886–94, 1911–30-ին՝ *Գևորգ Ե Սուրենյանց* Ամենայն Հայոց կաթողիկոս), գրող և մանկավարժ Խորեն արք. Ստեփանեն (1894–1906), հաս. գործիչ Արիստակես արք. Սեդրակյանը: Վերջին առաջնորդն էր Մխիթար եպիսկոպոսը (1906–17):

1917-ի Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ա. Թ-ից անջատվել են Միջին Ասիայի հայկ. համայնքները, նրա իրավասության ներքո մնացել են Հս. Կովկասի և Պովոլժիեի հայ համայնքները: Ա. Թ. վերանվանվել է Հս. Կովկասի և Աստրախանի թեմ, կենտրոնը՝ Արմավիր (1920-ից): 1960-ական թթ. սկզբին թեմը լուծարվել է: 1966-ին նախկին Ա. Թ-ի համայնքները միացել են Նոր Նախիջևանի թեմի հետ, և կազմվել է *Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը*՝ Մոսկվա կենտրոնով:

Գրկ. Խաչատրյան Վ., Հայ-ռուսական քաղաքական կապերի պատմությունից, ՊԲՀ, 1978, № 4: *Ананян Ж., Хачатурян В., Армянские общины России, Е., 1993.*

Ժորես Անանյան
Վարդան Խաչատրյան

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ, Մեծ շաբաթ, ս. *Զատկին* նախորդող շաբաթը (*Ծաղկազարդից* մինչև ս. Զատիկ ընկած յոթնօրյակը): Ավագ է կոչվում նաև այդ շաբաթվա յուրաքանչյուր օրը: Ա. շ. Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի և չարչարանքների վերջին շաբաթն է: Սկսվում է միաշաբթի (կիրակի) օրը՝ Ծաղկազարդով՝ Երուսաղեմ Քրիստոսի մուտքով: Շաբաթվա յուրաքանչյուր օր ունի իր հոգևոր խորհուրդը:

Ավագ երկուշաբթի, տերևազարդ, բայց անպտուղ թզենին անիծելու (Մատթ. **21.**18–19, Մարկ. **11.**12–14, 20–24) և Տաճարը մաքրելու օրն է (Մատթ. **21.**12–13, Մարկ. **11.**15–19, Ղուկ. **19.**45–48): Ավագ երկուշաբթին ս. Զատկի հետ 35 օրվա շարժականություն ունի (մարտի 16-ից ապրիլի 19-ը), իսկ Ա. շ-վա մյուս օրերը հաջորդում են նույն հերթականությամբ:

Ավագ երեքշաբթի, հրեաների հարցումներին Քրիստոսի բացատրության ու փարիսեցիների հանդիմանության օրը (Մատթ. **21.**23–46, **22.**1–46, **23.**1–36): Նույն օրը Երուսաղեմի տաճարում լսվել է երկնային ձայնը, Տաճարի կործանման գուշակությունը, Տաճարից Քրիստոսի վերջնականապես հեռանալը (Մատթ. **23.**37–39, **24.**1–3, Ղուկ. **13.**34–35, **21.**5–7): Եկեղեցին Ավագ երեքշաբթի հիշատակում է նաև տասը կույսերի առակը և Վերջին դատաստանի բացատրությունը (Մատթ. **25.**1–13), ինչպես նաև Ջրհեղեղը և մարդկության կրկին սկզբնավորումը:

Ավագ չորեքշաբթի, հիշատակվում է Քրիստոսի օծումը և Հուդայի մատնությունը: Այդ օրը Բեթանիայում, Սիմոն Բորոտի տանը մի կին թանկարժեք յուղով օծել է Հիսուսին, ինչը խորհրդանշել է Տիրոջ մոտալուտ մահը (Մատթ. **26.**6–12, Մարկ. **14.**3–9, Հովհ. **12.**1–8): Օծմանը հաջորդել է Հիսուսին մատնելու Հուդայի վճիռը:

Ավագ հինգշաբթի, Վերջին ընթրիք՝ ս. *Հաղորդության* խորհուրդի հաստատում,

Ոտնլվա: Վերջին ընթրիքով Քրիստոսը հաստատել է ս. Հաղորդության խորհուրդը: Ավագ հինգշաբթի առավոտյան մատուցվում է ս. *Պատարագ*, որը խորհրդանշում է Քրիստոսի զոհաբերությունը՝ մարդկանց փրկության և մեղքերի թողության համար: Այդ օրը երեկոյան կատարվում է Ոտնլվայի արարողությունը: Վերջին ընթրիքից հետո և *Խաչելությունից* առաջ Քրիստոսը լվաց իր աշակերտների ոտքերը՝ որպես սիրո և խոնարհության օրինակ, որ նրանք ևս այդպես վարվեն: Ոտնլվան խորհրդանշում է նաև ս. Հաղորդության խորհուրդի սրբությունն ու մաքրությունը: Ավագ հինգշաբթի, երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է Խավարում կոչվող արարողությունը, որ խորհրդանշում է Քրիստոսին մատնելը և չարչարանքները: Արարողության ժամանակ խորանի վրա վառվում է 12 մոմ, իսկ մեկ մեծ մոմ դրվում է դրանց մեջտեղը: Յուրաքանչյուր անգամ, երբ կարդացվում է Ավետարանը, հանգցնում են մեկ մոմ, վերջում մնում է միայն մեջտեղինը: Մոմեր հանգցնելը խորհրդանշում է աշակերտների փախչելը, իսկ մեջտեղի մեծ մոմը խորհրդանշում է Քրիստոսին, որ մնացել էր մենակ:

Ավագ ուրբաթ, Հիսուս Քրիստոսի ձերբակալության, խաչելության, մահվան ու թաղումի հիշատակի օրն է: Առավոտյան կատարվում է *ժամերգություն*, կարդում են Ավետարաններ, որոնք բովանդակում են Հիսուսի երկրային կյանքի վերջին ժամերը՝ մատնությունը, ձերբակալությունը, Պետրոսի ուրացումները, Պիղատոսի մոտ տարվելը, մահվան վճիռը, չարչարանքներն ու անարգանքը, Գողգոթայի վրա խաչվելը, արեգակի խավարումը, մահը, թաղումը (Մատթ. **26**.47–75, **27**.1–61, Մարկ. **14**.43–72, **15**.1–47, Ղուկ. **22**.47–71, **23**.1–56, Հովհ. **18**.1–40, **19**.1–42): Ավագ ուրբաթ Պատարագ չի մատուցվում, որովհետև այդ օրը Քրիստոսն ինքը պատարագվեց խաչի վրա՝ որպես կենդանի զոհ: Այդ օրվա երեկոյան արարողությունը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի թաղումը:

Ավագ շաբաթ, դժոխքի ավերում, *Ճրագալույցի* Պատարագ: Քրիստոսը մահից հետո իջավ դժոխք, ավերեց այն՝ փրկություն շնորհելով «ննջեցյալ սրբերի» արդարների հոգիներին (Մատթ. **27**.51–53): Շաբաթ երեկոյան կատարվում է Ճրագալույցի Պատարագ: Նախկինում կարևոր տոների առթիվ սովորություն էր եկեղեցու կանթեղները վառել և ներկանեռին մոմ բաժանել՝ վառելու համար: Հետագայում Ճրագալույց սկսել է անվանվել երեկոյան Պատարագը, որը Հայ եկեղեցում կատարվում է Ս. Ծննդյան և ս. Զատկի նախորդ օրվա երեկոյան: Զատկի Ճրագալույցի Պատարագի ժամանակ, երբ տրվում է Հիսուսի հարության ավետիսը, վերջանում է նաև *Մեծ պահքը*: Պատարագից հետո կատարվում է ս. Հարության նախատոնակը:

Երաժշտություն: Ա. շ-վա բոլոր օրերի կանոնների հեղինակը Սահակ Ա Պարթևն է: Բացառություն են կազմում «Անեղն ի Հօրէ», «Իմաստուն կուսանքն», «Որ յաթոռ փառաց», «Այսօր ի կատարումն» օրհնությունները և Ա. շ-վա «Կենդանին յաւիտենից», «Կուսածին մարմնով» շարականները, որոնք Ներսես Շնորհալու ստեղծագործություններն են: Սրանցից զատ Ա. շ-վա ընթացքում երգվում են բազմաթիվ այլ հոգևոր երգեր, օր., «Ի սկզբանէ Տէր» (Ավագ երկուշաբթի), «Տարցին թագաւորի» (Ավագ երեքշաբթի), «Խորհեցան» (Ավագ չորեքշաբթի), «Որսացան զանձն» (Ավագ հինգշաբթի) առավոտերգերը: Ա. շ-վա երգերի թվին են պատկանում Ավագ հինգշաբթի օրվա «Զահեղ զանքնին, զխորհուրդ խորին» գանձի երկու պատկերները՝ «Այս խորհուրդ լցաւ»-ն ու «Սիրտ իմ սասանի»-ն, որոնց հեղինակը Մխիթար Այրիվանեցին է (XIII դ.): Խաչելության երկու դրվագ են ներկայացնում անանուն հեղինակների «Տիրամայրն» և «Ուր ես, մայր իմ» տաղերը:

Պատկերագրություն: Հայկ. արվեստում Ա. շ-վա առավել տարածված պատկերագր. թեմաներն են «Մատնությունը», «Խորհրդավոր ընթրիքը», «Հաղորդությունը» (տես *Հաղորդություն* հոդվածի Պատկերագրություն մասը), «Ոտնլվան», «Խաչելությունը», «Դժոխքի ավերումը», «Խաչից իջեցումը», «Թաղումը»:

«Մատնության» պատկերագր. թեման տարբեր լեզուներով ընդօրինակված ձեռագրերում հայտնվել, մշակվել և զարգացել է ավելի ուշ, քան տերունական մյուս տեսարանների պատկերագրությունը: XI դարից հայ մանրանկարիչները պատկերել են Հիսուսին և Հուդային՝ մարդկանց խմբով շրջապատված: Ճակատագր. այդ պահը ներկայացնող կապադովկյան որմնանկարների, հայկ. և բյուզ. մանրանկարների առաջին պատկերումներից մինչև XIV դ.

(մինչև Ջոտտոյի «Հուդայի համբույրը» հռչակավոր որմնանկարը) թեմայի հորինվածքային կառուցվածքը համաչափ. արվեստում դրեթե նույնն է մնացել: Կենտր. կերպարը այս պատկերում Հիսուսն է, որին ըստ արևելաքրիստ. պատկերագր. ավանդույթի՝ աջից, ըստ արևմտաքրիստ. ավանդույթի՝ ձախից մոտեցել է Հուդան՝ համբույրով մատնելու Ուսուցչին: Հիսուսին և Հուդային ջահերով, մահակներով, տեգերով, նիզակներով զինված շրջապատել են զինվորները և Երուսաղեմի սինագոգի քահանայապետը: Սրա ծառան՝ Մաղքոսը, բռնել է Հիսուսի թևը, իսկ Պետրոս առաքյալը բարձրացրել է սուրը՝ ծառայի ականջը կտրելու համար: «Մալաթիայի Ավետարան»-ում (1057, Մատենադարան, ձեռ. № 3784) ամբողջ հորինվածքը կառուցված է հորիզոն. ուղիղ գծի վրա, և Հուդան, ըստ հելլենիստ. պատկերագրության ավանդույթի, մոտեցել է ձախ կողմից: Հորիզոն. գծի ավանդ. կառուցվածքը խախտված է «*Ութ մանրանկարիչների Ավետարան*»-ում և Գրիգոր Ծաղկողի համապատասխան լուսանցազարդի պատկերում, որտեղ մանրանկարիչը հասել է գեղ. մեծ ընդհանրացման: «Մատնության» թեմայի ուշագրավ մեկնաբանություններ կան Վասպուրականի ձեռագրերում, հատկապես Ծերունի, Ռստակեսի, Հովհաննես Խիզանեցու մանրանկարներում: Տարածված կանոնից շեղվել և ինքնատիպ գեղ. արդյունքի են հասել «Մատնության» տեսարանը պատկերող նկարիչները «*Վեհափառի Ավետարան*»-ում: Հայ մանրանկարիչները հաճախ միևնույն էջի վրա այս հորինվածքի հետ պատկերել են նաև Պետրոս առաքյալի ուրացման պահը:

«Խորհրդավոր ընթրիքի» պատկերագրությունը սովորաբար ներկայացնում է վերնատունը (հաճախ՝ եկեղեցու, երբեմն՝ այունազարդ սրահի տեսքով), որտեղ սեղանի շուրջը նստած են Հիսուսը և տասներկու (երբեմն ավելի պակաս թվով) առաքյալները: Հիսուսից աջ նստած է լինում Պետրոս առաքյալը, ձախ կողմում՝ Հովհաննես առաքյալը: Հուդան ներկայացվում է կիսադեմով, մնացած բոլորը՝ լրիվ դեմքերով: Սեղանի վրա պատկերվում են հաց, գինի, ձուկ, պնակներ, գավաթներ ևն: Սեղանը լինում է կլոր, ձվաձև, ուղղանկյուն, սիգմայաձև, սեղանի սփռոցը՝ տարբեր գույների: «Խորհրդավոր ընթրիքի» պատկերումները Հայ արվեստում հայտնի են XI դարից և գեղ. բարձր արդյունքի են հասել հատկապես XIII դ. մանրանկարներում: «*Թարգմանչաց Ավետարան*»-ի համապատասխան մանրանկարը համաքրիստ. արվեստի գլուխգործոցներից է:

«Ոտնլվայի» արարողությունը ներկայացնող առաջին պատկերները հայտնի են դեռևս IV–V դդ. տապանաքարերից: Հայկ. արվեստում այն տեղ է գրավել X դ., *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում: «Վեհափառի Ավետարան»-ի տերունական համապատասխան պատկերը հայկ. մանրանկարչության հնագույն նմուշներից է: Տեսարանում պատկերված է Վերջին ընթրիքի սեղանից վեր կացած Հիսուսը՝ Պետրոսի ոտքերը լվանալիս: Մյուս առաքյալները սպասում են, նախապատրաստվում խոնարհությամբ ենթարկվելու Ուսուցչի արարողակարգին: Պետրոսի ոտքերը դրված են լինում կոնքի մեջ: Հիսուսն ավելի հաճախ պատկերվում է կանգնած կամ կանգնած և առաջ թեքված, երբեմն՝ նստած: Վասպուրականի մանրանկարիչները երբեմն Հիսուսին պատկերել են կռացած, ծնրադիր: Ուշագրավ են «Ոտնլվայի» տեսարանը ներկայացնող *Սարգիս Պիծակի* պատկերումները:

«Խաչելության» տեսարանը ամենատարածված թեմաներից է: Հնագույն պատկերները պահպանվել են պաղեստինյան սրվակների վրա, Կապադովկիայի որմնանկարներում, Հռոմում, Հայաստանի IV–V դդ. եկեղեցիների պատերին: Հետաքրքրական են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարի համապատասխան հատվածը (921), «Վեհափառի Ավետարան»-ի «Խաչելության» դրվագը պատկերող մանրանկարը: Ըստ քրիստ. պատկերագրության, Հիսուսը պատկերվում է խաչի վրա գամված, գլուխը թեքած, աչքերը փակ (երբեմն՝ բաց), գլխի շուրջը՝ պսակ: Խաչը կանգնած է Գողգոթան խորհրդանշող վեմի և Ադամի գանգի վրա, որը պատկերվում է վեմի ներսում՝ խորհրդանշական ոճով: XII–XIII դդ. եվրոպացի նկարիչները Հիսուսին պատկերել են փշեպսակով խաչված: Այս շրջանում եվրոպ. (նաև Կիլիկիայում) արվեստում խաչի աջ և ձախ մասերում պատկերվում են թագակիր և թագը գլխից ընկնող երկու կերպարներ, որոնք խորհրդանշում են քրիստ. եկեղեցին և հրեական սինագոգը: Ավելի հաճախ խաչի աջ կողմում կանգնած են լինում Տիրամայրը և սուրբ կանայք, ձախում՝ Հովհաննես ավետարանիչը: Իսկ տեգ և սպունգ կրող զինվորները երբեմն

պատկերված են վիճակ գցելու պահին: Արևի, լուսնի, հրեշտակների, Մարիամի և Հովհաննեսի պատկերումով «Խաչելության» թեման արտացոլվել է նաև XVII–XVIII դդ. հայկ. հաստոցային գեղանկարչության մեջ:

«Դժոխքի ավերումը» կամ «Էջք դժոխք» տերունական պատկերագր. թեման տարածված էր բյուզ. մանրանկարչության և որմնանկարչության մեջ (VIII դ.), Կապադովկիայի ժայռափոր տաճարների որմնանկարներում (IX դ.): Հայկ. արվեստում թեմայի հնագույն պատկերումները հայտնի են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներից և XI դ. մի քանի ձեռագիր մատյաններից: Քրիստ. պատկերագրության համաձայն՝ «Դժոխքի ավերման» տեսարանում դժոխք իջած Հիսուսը բարձրացնում է Ադամին, որի կողքին կամ հետևում պատկերված են Եվան և ուրիշ կերպարներ: Սրանք՝ արդարները, տեղավորված են Քրիստոսից դեպի աջ: Մեջտեղում պատկերված է նախնիների խումբը, որի մեջ սովորաբար նկատելի են Դավիթ և Սողոմոն թագավորները, Հովհաննես Մկրտիչը: Այսպիսի հորինվածք ունի «Թարգմանչաց Ավետարան»-ի համապատասխան մանրանկարը: Հայտնի են պատկերագր. առավել հնավանդ նախօրինակներ, որոնցից նկատելի են փոխառություններ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանի 1236-ի ձեռագրի (ծաղկող՝ Իգնատիոս Հոռոմոսցի) և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1265-ի ձեռագրի (ծաղկող՝ Թորոս Ռոսլին) մանրանկարներում: Հայկ. մանրանկարչության մեջ «Դժոխքի ավերման» տեսարանում Հիսուսը պատկերվում է հաղթանակը խորհրդանշող խաչը մի ձեռքին, մյուսը՝ Ադամի ձեռքին հպելիս կամ բռնած, իսկ 1391-ի Ծերունի ծաղկած ձեռագրում՝ ուղղակի բռնել է Ադամի դաստակը:

«Խաչից իջեցումը» թեմայի առաջին գեղ. մարմնավորումը, «Հնագույնը և հռչակավորը» (Գ. Հովսեփյան) *Հավուց թառ վանքի* Ս. Ամենափրկիչ եկեղեցու փայտե բարձրաքանդակն է (X դ.): Քրիստոսի, Հովսեփ Արիմաթացու և Նիկոդեմոսի քանդակային ու հոգեբ. ներդաշնակությամբ աչքի ընկնող հորինվածքը հավանաբար ընդօրինակված է հին մի նախօրինակից: «Խաչից իջեցման» տեսարաններ են քանդակվել նաև X դ. խաչքարերի վրա: XI դ. տեսարանի կերպարները շատանում են: Այդպես է 1057-ի «Մալաթիայի Ավետարան»-ի և Սեբաստիայի շրջանից հայտնի 1041-ի Ավետարանի համապատասխան մանրանկարներում: Սովորաբար «Խաչից իջեցման» տեսարանում պատկերվում են Մարիամը, Հովհաննեսը, Հովսեփ Արիմաթացին, Նիկոդեմոսը, երբեմն՝ վշտակցող երկու կին (1262-ին Թորոս Ռոսլինի ծաղկած «Սեբաստիայի Ավետարան», 1268-ին նույնի պատկերազարդած «Մալաթիայի Ավետարան»): Ավելի հաճախ (նաև արմ. արվեստում) «Խաչից իջեցումը» և «Թաղումն Տեառն» տեսարանները միավորվել են և ներկայացվել մեկ մանրանկարի տեսքով: Այս դեպքում պատկերվել է գերեզմանի դուռը՝ սովորաբար ձախակողմյան հատվածում: Վասպուրականցի Մարգարեն 1315-ի Ավետարանում «Թաղումն Հիսուսի» տեսարանում պատկերել է Հիսուսի մարմինը ակնածանքով գերեզման իջեցնող Նիկոդեմոսին և Հովսեփ Արիմաթացուն:

Արտաշես Ղազարյան
Մհեր Նավոյան
Մարտին Միքայելյան

ԱՎԱԳ ՎԱՆՔ, Ս. Առաքելոց վանք, Ս. Լուսավորչի անապատ, Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Դարանաղյաց և Եկեղյաց գավառների սահմանում, Սեպուհ լեռան ստորոտին, Կարնի գյուղի մոտ: Ըստ ավանդության՝ 53-ին հիմադրել է *Թադեոս* առաքյալը, IV դ. վերանորոգել ու այստեղ միաբանություն հաստատել *Գրիգոր Ա Լուսավորիչը*: Ա.վ. XIII դ. սկզբին դարձել է գրչության ու արվեստի նշանավոր կենտրոն. պահպանվել են երկու նկարազարդ Ավետարաններ (1201, ծաղկող՝ Հովհաննես) և մեծահռչակ «*Մշո Ճառընտիրը*» (1200–02): XIII դ. սկզբին վանքն ունեցել է չորս եկեղեցի՝ Ս. Աստվածածին, Ս. Թադեոս կամ Ս. Առաքելոց, Ս. Կարապետ և Ս. Ստեփանոս: Ջալալեդդինի հրոսակախմբերի ավերածությունների հետևանքով 1230-ից Ա.վ. առժամանակ չի գործել: Վերաբացվել է XIV դ., վանահայր Մովսես վրդ. Երզնկացու ջանքերով, որը պարսպապատել է վանքը և նորոգել շինությունները:

XII դ. վերջից գործել է վանքի դպրոցը, որը XIV դ. ավարտին աչքի է ընկել ուսուցման բարձր մակարդակով: 1460-ական թթ. սկզբին՝ Հովհաննես Համշենցու ռաբունապետության ժամանակ վերածվել է համալսարանի, որը պատրաստել է վարդապետներ, գրիչներ, նկարիչներ, երաժիշտներ: Այստեղ սովորելու և դասավանդելու են եկել տարբեր վայրերից:

1482-ին համալսարանը տեղափոխվել է նույն դավառի *Կապոսի վանքը*:

XV դ. Ա.վ. վերստին առաջընթաց է ապրել, վերանորոգվել է Աստվածատուր վրդ. Ջերմացու ջանքերով: Արգասավոր գործել է գրչության կենտրոնը, որտեղ բազում ձեռագրեր են ընդօրինակվել (մեծ մասը՝ ձեռամբ Առաքել գրչի): XIX դ. Ա.վ. ունեցել է մատենադարան (մինչև 1915-ը), ինչպես նաև ընդարձակ հողեր, այգի, անտառ, ջրաղաց, ուխտավորների համար՝ 100-ից ավելի սենյակներ: Իբրև թեմ ընդգրկել է 10 գյուղ:

Ա.վ-ի համալիրից պահպանվել է կիսավեր երեք եկեղեցի, իսկ աշխարհիկ շենքերի հետքերը նշմարվում են վանքի արմ. և հվ. կողմերում: Ս. Աստվածածին եկեղեցին ունի եզակի հորինվածք. առանց որմնամույթերի գմբեթավոր դահլիճ է՝ հվ-ից և հս-ից կից ավանդատներով, որոնք կառույցին տալիս են խաչաձև ծավալատարածական կերպար: Հս. կողմում կանգուն Ս. Թադեոս (կամ Ս. Առաքելոց) եկեղեցին մեկ զույգ քառակուսի մույթերով եռանավ բազիլիկ է՝ պայտաձև հատակագիծ ունեցող Ավագ խորանով: Պատերին կան XV դ. արձանագրություններ: Ս. Աստվածածին և Ս. Թադեոս եկեղեցիների միջև, նրանց կից, գտնվում է Ս. Կարապետ միանավ, թաղածածկ եկեղեցին:

Ա.վ-ում պահվող հայտնի սրբություններից է եղել բուժիչ հատկություններով օժտված «Դեղթափ»-ը՝ Կոստանդիանոս Մեծ կայսրի (306–337) և կայսրուհու դիմապատկերները վրան փորագրած հակինթե խոշոր քարը, որը կայսրը Հռոմում նվիրել էր Տրդատ Գ թագավորին:

Ա.վ. գործել է մինչև Մեծ եղեռնը:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.4, 2-րդ պատկերը:

Գրկ. Այուրմենյան Գ., Երզնկա, Կահիրե, 1947: Ոսկյան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վնն., 1951: Թիերի Ժ.Մ., Սեպուհ լեռան հուշարձանները (հնագիտական ուսումնասիրություն), «Էջմիածին», 1989, № 4–6:

Մուրադ Հասրաթյան

ԱՎԱՆԴԱՏՈՒՆ, եկեղեցու խորաններին կից սենյակ. Ավագ խորանից հյուսիսայինը մկրտատունն է, հարավայինը՝ սարկավագատունը (բուն Ա., որտեղ պահվում են եկեղեցու սպասքն ու զարդերը՝ «ավանդները»): IV–V դդ. Հայաստանում Ա-երն ուղղանկյուն թաղածածկ սենյակներ էին՝ հաճախ ծածկի վերևում թաքստոցով: VII դ. սկզբից Ա-ան արլ. պատին փոքր, կիսաշրջանաձև խորան են կառուցել: IX դ. վերջից Ա-եր են կառուցվել նաև եկեղեցիների արմ. կողմում, ինչը լայն տարածում է ստացել IX–XIII դդ.: Հայկ. վանքերի գլխ. եկեղեցիների Ա-երը մեծ մասամբ երկհարկանի են, բարձակային աստիճաններով: Ա-երում քարե փոքր սեղան է դրվել, և տարին մեկ անգամ՝ եկեղեցու տոնին կամ հատուկ այլ օր Պատարագ մատուցվել:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Մուրադ Հասրաթյան

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ սրբազան, գրավոր կամ բանավոր ավանդված աստվածային, մարդարեական, առաքելական պատվիրան կամ պատմություն, ծես և օրենք, որի վրա հաստատված է *Ընդհանրական եկեղեցին*: Ա. տրված է հիշելու, անխաթար պահելու, կիրարկելու, նրանով առաջնորդվելու և սերնդեսերունդ փոխանցելու համար: Ա. Աստծո գրավոր հայտնության՝ Ս. Գրքի լրացուցիչ մասն է: Սրբազան Ա. են կոչվում առաքելական և եկեղեց. Ա-ները միասին:

Առաքելական է անվանվում Մի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական եկեղեցու Ա., որը ժառանգված է Տիրոջից: Հիսուս Քրիստոսը, իր առաքյալներին ուղարկելով ազգերին քարոզելու, ասել է. «Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. **28.**20):

Սրբազան է Ա-յան գրառված մասը՝ *Աստվածաշունչը*, նրանով հայտնված ճշմարտությունները, հայտնությունները, օրենքները, կանոնները, ծեսերը, ուսուցումները, մարգարեությունները, պատվիրանները, սրբազան պատմությունները ևն: Սրբազան են նաև բանավոր փոխանցված և եկեղեցու կողմից ընդունված Ա-ները: Օր., Նոր կտակարանում գրված է. «... Միքայել հրեշտակապետը, բանսարկու Սատանայի հետ Մովսեսի մարմնի մասին վիճելիս, չհամարձակվեց հայհոյալից խոսքերով դատապարտել նրան, այլ ասաց. «Թող Տերը քեզ սաստի» (Հուդա **1.**9): Այս խոսքում հիշատակված դրվագը՝ Մովսեսի մարմնի վերաբերյալ վեճը, հիշատակված չէ Հին կտակարանում, բայց, ինչպես երևում է Հուդա առաքյալի թղթից, այն հայտնի է եղել որպես բանավոր պահպանված սրբազան Ա., ընդունելի համարվել առաքելական շրջանում ու նշվել Նոր կտակարանում: Ուստի սրբազան Ա. է ոչ միայն

գրառյալ Աստվածաշունչը՝ Սուրբ Գիրքը, այլև բանավոր հաղորդված Ա-ները: Դա վերաբերում է և՛ հինկտակարանային, և՛ նորկտակարանային պատումներին: Քրիստ. շրջանի Ա. տրված է ոչ միայն գրավոր, այլև բանավոր ուսուցմամբ, և, ինչպես հայտնում է Հովհաննես առաքյալը՝ «... ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուս արեց, որոնք, եթե մեկը մեկ առ մեկ գրած լիներ, կարծում եմ, թե աշխարհն իսկ բավական չէր լինի պարփակելու այդ գրքերը, եթե դրանք գրված լինեին» (Հովհ. **21**.25): Հետևաբար, Նոր կտակարանում գրառվածից բացի, առաքյալները նաև բանավոր ուսուցումներ են տվել, որոնք սրբությամբ պահպանել է եկեղեցին և ավանդել սերնդեսերունդ: Դա եկեղեցու սրբազան Ա. է: Իրենեոս Լուգդունացու (մահ. 202) համար Ա-յան կենդանի կրողները (եպիսկոպոս, երեց) շատ ավելի մեծ արժեք ունեն, քան նույնիսկ Նոր կտակարանի բնագրերը: Որոշ Ա-ներ՝ առաքելական, վարդապետ., ծիսական, վարքագր. ևն, համաքրիստոնեական են, այսինքն՝ ընդունված բոլոր եկեղեցիների կողմից. որոշ Ա-ներ էլ ունեն տեղային բնույթ՝ այսինքն՝ ընդունված են մի որևէ եկեղեցու կողմից: Օր., Հայ եկեղեցին է միայն, որ ունի Վարագա Սուրբ Խաչի Ա. և տոնը, իսկ «Լույսի» արարողությունը կատարվում է միայն Երուսաղեմի Ս. Հարություն տաճարում ևն: Առհասարակ, եկեղեց. Ա. իր մեջ ընդգրկում է նաև շատ տեղային սովորույթներ, Ա-ներ, մանրամասնություններ, որոնք, չխաթարելով հավաքական հավատի էությունը, նոր կողմերով հարստացնում են սրբազան Ա.:

Վերջապես, սրբազան Ա. է այն ամենը, ինչ Ընդհանրական եկեղեցուն է հանձնված՝ կիրարկելու և սերունդներին փոխանցելու համար: Դրանք են ոչ միայն Սուրբ Գիրքը, բանավոր ու գրավոր Ա-ները, այլև՝ տիեզեր., տեղական և ազգ-եկեղեց. ժողովները, համաքրիստ. և Հայ եկեղեցու հայրապետների սահմանած կանոններն ու կարգերը, Ընդհանրական և Հայ եկեղեցու վարդապետների ուսուցումները, ողջ հայրաբան. գրականությունը:

Ընդհանրական եկեղեցու տեսակետից՝ Աստվածաշունչն ու եկեղեց. սրբազան Ա. կազմում են մեկ ամբողջություն՝ լրացնելով միմյանց. հավասարապատիվ և հավասարարժեք են գրավոր ու բանավոր Ա-ները: Նրանք միևնույն սրբազան Ա-յան երկու տեսակներն են:

ԱՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ, հակաթոռ կաթողիկոսություն: Գործել է 591–602-ին, Երևանի այժմյան հյուսիս-արևելյան մասում: Ստեղծվել է Բյուզանդիայի Մորիկ կայսրի կարգադրությամբ՝ ի հակակշիռ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Դվինի Հայոց հայրապետական աթոռի: Ըստ VII դ. պատմիչ Սեբեոսի, կաթողիկոսարանը կառուցել է Հայաստանի բյուզ. մասի հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցին 591-ին, Այրարատ նահանգի Կոտայք գավառի Ավան գյուղաքաղաքում:

Կաթողիկոսարանի Կաթողիկե եկեղեցին (ավելի ուշ անվանվել է Ս. Հովհաննես եկեղեցի) արտաքուստ ուղղանկյուն է, ներսից՝ խաչաձև գմբեթավոր (գմբեթը չի պահպանվել), քառախորան, չորս անկյուններում շրջանաձև հատակագծով, գմբեթածածկ ավանդատներով, որոնք աղոթասրահի հետ հաղորդակցվում են շրջանի երեք քառորդ հատվածքի խորշերով: Կառուցված է տեղական տուֆի սրբատաշ քարերով, ունի զուսպ հարդարանք. առանձնանում է արմ.՝ ճակատոնազարդ, կամարակապ, տպավորիչ չքամուտքը: Ավանի Կաթողիկեն հռիփսիմեատիպ եկեղեցիների վաղագույն թվագրված նմուշն է և քրիստ. ճարտ. մեջ առաջին հնգագմբեթ եկեղեցիներից: Կաթողիկեին հս-ից կից է կաթողիկոս. պալատը, որը եկեղեցու հետ հաղորդակցվում է հս. խորանում բացված մուտքով: 602-ին Պարսից Խոսրով II Փարվեզ արքան գրավել է Ավանը և վերացրել Ա. կ., որից հետո այն դարձել է վանք:

607-ին Հայոց կաթողիկոս *Աբրահամ Ա Աղբաթանեցու* հրավիրած եկեղեց. ժողովին մասնակցել է Ավանի վանքի երեց Հունանեսը: Ավանի Կաթողիկեի հվ. կողմում է թաղվել 611-ին վախճանված Հովհան Բագարանցի հակաթոռ կաթողիկոսը: 1679-ի հունիսի 4-ի երկրաշարժից Ավանի կաթողիկոսարանի համալիրն ավերվել է: 1940-ին պեղվել է կաթողիկոսարանի տարածքը, նորոգվել են արմ. և մասնակիորեն՝ հս. ու արլ. ճակատները: 1968-ին բարեկարգվել է տարածքը: 1978-ին պեղվել է կաթողիկոսարանի պալատական շենքը, նորոգվել Կաթողիկեի հվ. ճակատը:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.4, 3-րդ պատկերը:

Գրկ. Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, Ե., 1942: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Ե., 1975: Մարության Տ., Ա-

վանի տաճարը և համանման հուշարձաններ, Ե., 1976: Գրիգորյան Վ., Ավանի տաճարի վերակազմությունը, ԼՀԳ, 1983, № 11: *Еремян А., К вопросу о датировке Кафедральной церкви в Аване*, ԼՀԳ, 1969, № 3:

Մուրադ Հասրաթյան

ԱՎԳԵՐՅԱՆ Մկրտիչ Հայրապետի [11.11.1762, ք. Անկյուրա (Թուրքիա) – 3.3.1854, Վենետիկ], աստվածաբան, լեզվաբան-բառարանագիր, թարգմանիչ: Մխիթարյան միաբանության խորհրդական (30 տարի) և ընդհանուր աթոռակալ (20 տարի):

1774-ին մտել է Ս. Ղազար վանք, ձեռնադրվել հոգևորական, ծավալել բեղմնավոր գիտ., մշակութ. գործունեություն: Իբրև աստվածաբան հայտնի է բազմաթիվ երկերով. ամենանշանավորը «Լիակատար վարք և վկայաբանութիւն Սրբոց, որք կան ի հին տօնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց» (հ. 1–12, 1810–15) կոթող. աշխատությունն է, որտեղ լուսաբանել է սրբերի կյանքը, կատարել բանասիր. վերլուծումներ ու ճշգրտումներ: Առանձնակի արժեք ունի 12-րդ հատորը՝ «Մնացորդք Վարուց Սրբոց արտաքոյ տօնացուցին մերոյ, յիշատակելոց ի Յայսմաւուրս կամ ի Ճառընտիրս Հայոց, որպէս և Յունաց և Լատինացւոց» (1815), որն այբբենական սկզբունքով կազմված սրբանունների բառարան է՝ հարուստ հավելյալ տվյալներով: Գրել է կրոնաբարոյախոս. բնույթի բազմաթիվ երկեր, որոնցից «Բարի խորհուրդներ» (1809) և «Դեղ կենաց, որ է հոգեւոր բժշկարան» (1810) աշխատությունները շարադրված են արևմտահայերեն և կարևոր են վերջինիս պատմությունն ուսումնասիրելու առումով ևս:

Մ. Ավգերյան

Ա. վիթխարի աշխատանք է կատարել նաև թարգմանության ասպարեզում. լատ-ից գրաբար է թարգմանել Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը (1842), Աղեքսանդր Թասսոնի «Ապացոյցք կրօնի և պատասխանատուութիւնք»-ը (1844), Սենեկայի «Ճառք իմաստասիրականք»-ը (1849), Կիկերոնի «Յաղագս պատշաճից»-ը (1845), Գրիգոր Մեծի «Կանոն հովուական»-ը (1846) են: Գրաբարից լատ. է թարգմանել *Փիլոն Ալեքսանդրացու* ճառերը և *Եվսեբիոս Կեսարացու* «Քրոնիկոն»-ը (մաս 1–2, 1818), որոնց հուն. բնագրերը կորած են: «Քրոնիկոն»-ն ամփոփում է հայերեն հին թարգմանության բնագիրը և հույն մատենագիրների գրվածքներում պահպանված հուն. հատվածները: Ա-ի գլուխգործոցն է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կամ «Նոր հայկազեան բառարան»-ը (հ. 1–2, 1836–37, համահեղինակներ՝ Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմելյան): Հրատարակել է նաև «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» (1846):

Երկ. Քրիստոնէական վարդապետութիւն ոտանաւորեալ առ հեշտին մտառութիւն համբակաց, ևս առաւել մանկանց դպրատան Լուսաւորչի, Վնտ., 1810: Աղօթագիրք կարճառօտ, Վնտ., 1832: Նուէր սիրոյ առ ամենասուրբ կոյսն Մարիամ Աստուածածին, Վնտ., 1854:

Գրկ. Հանդիստ հոր վարդապետի Մխիթարեան Ավգերեան հ. Մկրտչի, «Բազմավեպ», 1854, № 5: Մխիթարեան յոբելեան, Վնտ., 1901, էջ 101–108:

«ԱՎԵՏԱԲԵՐ», կրոնական, ուսումնական, ընտանեկան և քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1855–1915-ին, Կ. Պոլսում (1855–65-ին՝ «Ավետաբեր և շտեմարան պիտանի գիտելեաց»): Խմբագիրներ՝ Զ. Գրին, Ե. Պլիս, Մ. Մինասյան և ուր.: Ամերիկայի միսիոներների ընկերության հրատարակություն: Հրատարակվել է նաև հայատառ թուրքերենով:

«Ա.» պաշտպանել ու հիմնավորել է բողոքական դավանանքը: Ըստ «Ա.»-ի, Հայ եկեղեցին Ս. Գիրքը քարոզում է ժողովրդին անմատչելի լեզվով՝ գրաբարով, ուստի և այդ եկեղեցին քրիստոնեական է զուտ անվանապես: Մյուս հարցերում «Ա.» Հայաստանյայց եկեղեցուն ներկայացրել է բողոքականների ավանդ. մեղադրանքները՝ նախնական ավետարանական պարզությունից հեռանալը, օտարոտի և ավելորդ ծեսեր ու արարողություններ ընդունելը (ինչպիսիք են, օր., ս. Աստվածածնին և սրբերին աղոթք ուղղելը կամ պաշտոն վերագրելը են):

«Ա.» տպագրել է հոդվածներ և լրատվություն՝ ձեռնադրության, ապաշխարության, դրոշմի, պսակի, վերջին օծումի ևնի վերաբերյալ՝ նախապատվություն տալով բողոքական դավանանքի ընդունած կարգին ու արարողություններին: Ս. Գրքի թեմաներով տպագրել է քարոզներ, մեկնություններ ու ճառեր: Ի տարբերություն ժամանակի մյուս բողոքական

հրատարակությունների, ժխտական կեցվածք է որդեգրել Հայաստանյայց եկեղեցու, նրա դավան. առանձնահատկությունները ներկայացնող ծեսերի նկատմամբ: Քննադատել է Կաթոլիկ եկեղեցուն, հերքել պապի անսխալականության, նրա՝ «դերագույն դատավոր» լինելու և քրիստ. եկեղեցիների մեջ նախապատիվ լինելու տեսությունը:

Կրոն. թեմաներով քարոզների մեջ «Ա.» կարևոր նշանակություն է տվել Ավետարանի ու բնագիտության համերաշխության հարցին: Պարբ-ը առաջարկել է ճիշտ մեկնել Ս. Գիրքը, քանի որ բնագիտությունը հերքում է ընդամենը սխալ մեկնությունները և ոչ բուն Ս. Գիրքը: «Կրոնական լուրեր» խորագրի տակ «Ա.» արտացոլել է բողոքականության հաղթարշավը եվրոպ. երկրներում, Ասիայում, Աֆրիկայում, Հնդկաստանում և մասնավորապես օսմ. Թուրքիայում: Տպագրել է ուշագրավ վիճակագր. տվյալներ Կիլիկիայում, Արմ. Հայաստանում, փոքրասիական հայաբնակ շրջաններում և Արլ. Հայաստանում գործող հայ ավետարանականների վերաբերյալ: Հրապարակել է տեղագր-աշխարհագր., պատմ. ակնարկներ քրիստ. վաղեմի սրբավայրերի, տաճարների, ճարտ. կոթողների մասին:

Ալբերտ Խառատյան

ԱՎԵՏԱՐԱՆ, *Աստվածաշնչի* երկու հիմնական մասերից երկրորդի՝ Նոր կտակարանի առաջին չորս գրքերի ընդհանուր և դրանցից յուրաքանչյուրի առանձին անվանումը: «Ավետարան»-ը հունարեն «*εναγγελιου*» (էվանգելիոն) բառի թարգմանությունն է, որ նշանակում է բարի լուր: Քրիստ. դաղափարախոսության ըմբռնմամբ այդ բարի լուրը՝ ավետիսը, որ տրվել է մարդկությանը, Աստծո և մարդու միջև կնքվող հաշտությունն էր, որով մարդ արարածն արժանի է դարձել Աստվածային շնորհին, այսինքն՝ լինելու ժառանգորդը «երկնային արքայության», ինչը և տեղի ունեցավ *Հիսուս Քրիստոսի* միջոցով: Ի դ. քրիստոնյաներն «ավետարան» բառն օգտագործել են այդ իմաստով: Նույն իմաստով է այն օգտագործվում հուն. Նոր կտակարանի նախն. տեքստում: II դարից սկսած «ավետարան» անվանումը հիմնականում տրվել է Նոր կտակարանի առաջին չորս գրքերին: Դրանք են՝ Ավետարան ըստ Մատթեոսի, Ավետարան ըստ Մարկոսի, Ավետարան ըստ Ղուկասի, Ավետարան ըստ Հովհաննեսի:

Ա-ների գրության երեք հիմն. շարժառիթներն էին. ա. Հիսուս Քրիստոսի միջոցով մարդկությանը հաղորդակից դարձնել աստվածային բարի լուրին, բ. Քրիստոսի երկրային կյանքի եկեղեց. բանավոր *ավանդությունը* վերածել գրավոր վկայության, ինչը I դ. եկեղեցու հրամայականն էր, գ. բավարարել I դ. եկեղեցու քարոզչ. և ծիսական որոշ կարիքներ:

Ա-ների միջոցով եկեղեցին մարդկությանը բացատրում է, թե ինչպես է ծնվել Հիսուսը, ինչ ճանապարհ է անցել իր երկրային կյանքում, ինչ է քարոզել, սովորեցրել մարդկանց, ինչպիսի հրաշքներ է գործել, հանուն ինչի է խաչվել, մահը հանձն առել և ի վերջո՝ հարություն առել: Ա-ները թեև ներկայացնում են Հիսուս Քրիստոսին, սակայն նրա ամբողջական կենսագրությունը չեն, այլ Քրիստոսով ներկայացնում են քրիստ. վարդապետության հիմնադրույթները:

Ա-ները Տիրոջ կյանքից և վարդապետությունից առնված առանձին դեպքերի, դրվագների և խոսքերի շարադրանքն են, որոնք եկեղեցու հարուստ ավանդության մի մասն են միայն: Այդ հատվածական տեղեկությունների հիմն. նպատակն է ցույց տալ, որ Քրիստոսով իրականացան մարդկության փրկության համար տրված Աստծո խոստումները:

Չորս Ա-ներից յուրաքանչյուրն ունի Հիսուս Քրիստոսի անձը, դեպքերը և ուսուցումները շարադրելու իր ուրույն տեսակետը: Ա-ռաջին երեքը ձևի և բովանդակության ընդհանրության պատճառով ստացել են Համատեսական (synoptique) անվանումը և տարբերվում են վերջինից՝ Հովհաննեսի Ավետարանից: Առաջին երեք Ա-ներում նկարագրվում է Քրիստոսի առավելապես մարդկային կողմը, իսկ չորրորդում՝ աստվածայինը: Այդ պատճառով Համատեսական Ա. հին մեկնիչներն անվանել են «մարմնական», իսկ վերջինը՝ «ոգեկան»:

II դարից սկսած ի հայտ են եկել պարականոն, կեղծանուն Ա-ներ (տես *Պարականոն գրքեր*), որոնցից հիշատակելի են Պետրոսի ավետարանը, Հակոբոսի նախավետարանը, Թովմասի ավետարանը կամ Քրիստոսի մանկությունը, Նիկոդեմոսի, Փիլիպպոսի, Մարիամի ավետարանները ևն, սակայն *եկեղեցու հայրերի* հաստատած Նոր կտակարանի կանոնի (տես *Կանոնական գրքեր*) ավետարանական գրքերը

ներկայացնում են Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ա-ները:

Ավետարան ըստ Մատթեոսի

Նոր կտակարանի կանոնի առաջին գիրքն է: Գրվել է Պաղեստինում, ենթադրաբար՝ 70–100-ի միջև: Բաղկացած է 28 գլխից: Եղել է ամենից տարածված, եկեղեցու կողմից առավելագույնս օգտագործվող Ա.:

Գիրքը վերագրվում է Ալփեոսի որդի Հակոբոսի եղբայր, Հիսուս Քրիստոսի 12 *առաքյալներից* Մատթեոսին: Մատթեոս ավետարանիչն իր Ա-ում պատկերում է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքը, ինչի համար էլ եկեղեց. պատկերագրության մեջ ներկայացվում է որպես «մարդ-հրեշտակ»:

Մատթեոսի Ա. սկսվում է Հիսուս Քրիստոսի ազգաբանությամբ, Սուրբ Ծնունդով, այսինքն՝ Տիրոջ երկրային կյանքով և ավարտվում խաչելությամբ, մահվամբ, հրաշափառ հարությամբ և Հիսուսի՝ իր աշակերտներին ուղղած տիեզեր. առաքելության մղող կոչով:

Մատթեոսի Ա-ի բովանդակությունը հիմնականում հետևյալն է.

1. Հիսուսի ազգաբանությունը, ծնունդը, մոգերի երկրպագությունը, փախուստ Եգիպտոս, Բեթղեհեմի մանուկների կոտորածը, վերադարձ Եգիպտոսից (գլ. 1–2):

2. *Հովհաննես Մկրտչի* քարոզչությունը, Հիսուսի մկրտությունը, փորձությունն անապատում, աշակերտները, քարոզչության սկիզբը (գլ. 3–4):

3. Լեռան քարոզը (գլ. 5–7), հրաշքները (գլ. 8–9), Հիսուսի պատգամներն առաքյալներին՝ քարոզչության ուղարկելուց առաջ (գլ. 10):

4. Հովհաննես Մկրտչի մասին, չաբաթ օրով պոկված հասկեր, հրաշքներ, Հիսուսի մայրն ու եղբայրները (գլ. 11–12):

5. Սերմնացանի, որոմների, մանանեխի հատիկի և թթխմորի առակները (գլ. 13):

6. Հովհաննես Մկրտչի գլխատումը (**14.**1–12), հրաշքներ, Պետրոսի խոստովանությունը (**16.**13–20), Հիսուսի պայծառակերպությունը (**17.**1–13):

7. Ամուսնալուծության, մանուկների, հարստության մասին (գլ. 19), մշակների առակը (**20.**1–16), կանխասացություններ չարչարանքի, մահվան և հարության մասին (**20.**17–19), Հակոբոսի և Հովհաննեսի մոր խնդրանքը (**20.**20–28), Երիքովի երկու կույրերի բժշկումը (**20.**29–34):

8. Մուտք Երուսաղեմ, Տաճարի մաքրումը (**21.**1–17), այլ առակներ (**21.**18–**22.**22):

9. Հիսուսի չարչարանքները, խաչելությունը, թաղումը, հարությունը և իր աշակերտներին տված տիեզեր. առաքելությունը (գլ. 26–28):

Ավետարան ըստ Մարկոսի

Ժամանակագր. առումով առաջին Ա. է: Գրվել է մոտ 64–70-ին: Բաղկացած է 16 գլխից: Իշխող կարծիքի համաձայն՝ գրվել է Հռոմում: Ուղղված է հեթանոսությունից դարձի եկած քրիստոնյաներին:

Գրքի հեղինակը Մարկոս ավետարանիչն է՝ Հիսուս Քրիստոսի 72 աշակերտներից, ծագումով՝ երուսաղեմացի: Կոչվել է նաև Հովհաննես (Գործք **15.**37–39), երբեմն էլ՝ Հովհաննես-Մարկոս: Ենթադրվում է, որ Մարկոսն այն երիտասարդն էր, որ Հիսուսի ձերբակալության ժամանակ թողել է իր հագուստն իրեն բռնող հռոմ. զինվորների ձեռքը և մերկ փախել (Մարկ. **14.**51–52): Մարկոս ավետարանիչը Բառնաբասի եղբոր որդին էր, Պետրոս առաքյալի թարգմանը, ինչպես նաև՝ Քրիստոսի առաքելական խմբին կից կանանցից Մարիամի զավակը: Ըստ եկեղեց. ավանդության՝ Մարիամի տանն է Քրիստոսը կատարել Վերջին ընթրիքը: Ենթադրվում է, որ այս տանն են տեղի ունեցել *Հոգեգալստյան* իրադարձությունները, ինչպես նաև այստեղ են հավաքված աղոթել Քրիստոսի աշակերտները, երբ վերադարձել է բանտարկությունից ազատված Պետրոս առաքյալը: 45-ին Մարկոս ավետարանիչը եղել է Պողոս առաքյալի և Բառնաբասի ուղեկիցը քարոզչ. առաջին ճանապարհորդության ժամանակ: 51–52-ին, Երուսաղեմի առաքելական ժողովից հետո, Բառնաբասի հետ մեկնել է Անտիոք, 54–61-ին՝ Պետրոս առաքյալի հետ եղել Անտիոքում, միասին այցելել են Փոքր Ասիայի եկեղեցիները: Պետրոս առաքյալի և Մարկոս ավետարանչի միջև եղած կապն այնքան ջերմ է եղել, որ առաքյալը նրան անվանել է իր «որդին» (Ա Պետր. **5.**13): Հռոմում հանդիպել է ձերբակալված Պողոս առաքյալի հետ, այնուհետև ուղևորվել Եգիպտոս, եղել *Ալեքսանդրիայում*: Համաձայն եկեղեց. ավանդության՝ Մարկոս ավետարանիչը եղել է Ալեքսանդրիայի առաջին եպիսկոպոսը, որտեղ և նահատակվել է տեղի քրիստոնյա համայնքը 20 տարի առաջնորդելուց հետո: Նահատակությունից հետո հեթա-

նոմները փորձել են այրել ավետարանչի մարմինը, սակայն խարույկ պատրաստելու ժամանակ մեծ դղրդյուն է առաջացել, և բոլորը վախեցած փախել են: Քրիստոնյաներն ավետարանչի մարմինն ամփոփել են քարե դամբարանի մեջ: 310-ին Մարկոս ավետարանչի աճյունի վրա կառուցվել է եկեղեցի: 820-ին, քրիստոնյաների դեմ արաբ. իշխանությունների հալածանքների ժամանակ, Մարկոս ավետարանչի աճյունը տեղափոխել են Վենետիկ՝ ամփոփելով իր անունը կրող եկեղեցում:

Եկեղեց. պատկերագրության մեջ Մարկոս ավետարանիչը ներկայացվում է առյուծի տեսքով, որովհետև նրա Ավետարանում ընդգծվում է Քրիստոսի թագավորական պաշտոնը, ինչն ակնարկվում է կենդանիների արքայի՝ առյուծի պատկերագրությամբ:

Մարկոսի Ա-ի բովանդակությունը հիմնականում հետևյալն է.

1. Հովհաննես Մկրտչի քարոզչությունը, Հիսուսի մկրտությունը (**1.**1–13):

2. Առաքյալների ընտրությունը և որոշ հրաշքներ (**1.**14–**2.**17):

3. Առակներ, խոսքեր, բժշկումներ, հրաշքներ (**2.**18–**5.**43):

4. Մեսիայի մերժվելը Իսրայելի կողմից: Աստծո թագավորության հայտնությունը հեթանոսներին (**6.**1–**8.**26):

5. Բժշկումներ, կանխասացություններ Մեսիայի խաչելության մասին, Հիսուսի պայծառակերպությունը, ամուսնալուծության և հարստության մասին խոսքերը (**8.**22–**10.**52):

6. Մուտք Երուսաղեմ և վերջին ուսուցումները (**11.**1–**13.**37):

7. Վերջին ընթրիք, *Հաղորդության* խորհրդի հաստատումը, աղոթք Գեթսեմանիի պարտեզում, մատնություն և ձերբակալում, չարչարանքները, խաչելությունը, մահը, թաղումը և հարությունը (**14.**1–**16.**8):

8. Հիսուսի երևալն իր աշակերտներին, տիեզեր. առաքելություն, Հիսուսի համբարձումը (**16.**9–20):

Ավետարան ըստ Ղուկասի

Ղուկասի Ա-ի գրության ենթադրյալ վայրերն են Անտիոքը, Հռոմը, Կեսարիան, Հունաստանի Աքայիան ու Բիոտիան և Եփեսոսը: Առավել հավանական է համարվում Եփեսոսը: Գրվել է 70-ից ոչ շատ ուշ: Բաղկացած է 24 գլխից: Նախատեսված է հեթանոսությունից դարձի եկածների համար:

Ղուկաս ավետարանիչը Հիսուսի 72 աշակերտներից էր, ծնվել է Անտիոքում: Ծագումով հույն էր, մասնագիտությամբ՝ բժիշկ: Մի շարք եկեղեց. հայրեր և մեկնիչներ Ղուկասին նույնացնում են Էմմավուսի երկու ճամփորդներից մեկի հետ (**24.**13–35), որոնց անունները ավետարանիչը չի տալիս: Ղուկաս ավետարանիչը Նոր կտակարանում անվանապես հիշատակվում է հետևյալ հատվածներում՝ Կողոս. **4.**14, Փիլ. **1.**24, Բ Տիմ. **4.**11: Ավետարանիչը մասնակցել է Պողոս առաքյալի երկրորդ ճանապարհորդությանը՝ դառնալով նրա անբաժան ընկերը: Պողոս առաքյալի նահատակությունից հետո հեռացել է Հռոմից, եղել Աքայիայում, Լիբիայում, Եգիպտոսում, Թեբեում և այլուր: Ըստ հին ավանդության՝ նահատակվել է Թեբեում: Աճյունը Անդրեաս առաքյալի աճյունի հետ Կոստանդին կայսրի օրոք տեղափոխվել է Կ. Պոլիս:

Ղուկաս ավետարանիչը հեղինակն է նաև Նոր կտակարանի գրքերից Գործք առաքելոցի, որը համարվում է «Հինգերորդ Ավետարան» կամ «Սուրբ Հոգու Ավետարան»: Եկեղեց. պատկերագրության մեջ Ղուկաս ավետարանիչը ներկայացվում է եզան կերպարանքով, որովհետև նրա Ավետարանում ընդգծվում է Քրիստոսի քահանայական պաշտոնը, ինչն ակնարկվում է զոհաբերության խորհրդանիշը հանդիսացող եզան պատկերագրությամբ:

Ղուկասի Ա. գրվել է ոմն Թեոփիլոսի խնդրանքով: Վերջինս հրեա չէր, ուստի ավետարանիչն ավետարանական խորհուրդների բացատրությունները ներկայացրել է առավել մանրամասնորեն՝ հեթանոս միջավայրին հասկանալի դարձնելու համար: Ղուկաս ավետարանիչը, իր ձեռքի տակ ունենալով այլ աղբյուրներ, փորձել է առավել համակարգված ներկայացնել իր գրած Ա., ուստի և սկսել է Հովհաննես Մկրտչի ծննդյան ավետումից:

Ղուկասի Ա-ի բովանդակությունը հիմնականում հետևյալն է.

1. Նախաբան: Հովհաննես Մկրտչի և Հիսուսի ծննդյան հետ կապված դրվագներ (գլ. 1–2):

2. Հովհաննես Մկրտչի քարոզչությունը, Հիսուսի մկրտությունը, ազգաբանությունը, փորձությունները, քարոզչության սկիզբը (**3.**1–**4.**30):

3. Հրաշքները Գալիլիայում, Աստծո թագավորության հայտնությունը գործերով և ուսուցումներով (**4.** 31–**9.**50):

4. Ուղևորությունը Երուսաղեմ, հրաշքներ և ուսուցումներ (**9.**51–**19.**28):

5. Հիսուսի մուտքը Երուսաղեմ, վարդապետությունները չարչարանքներից առաջ, Վերջին ընթրիք (**19.**29–**22.**38):

6. Աղոթքը Ձիթենյաց լեռան վրա, մատնությունը, չարչարանքները, խաչելությունը, մահը և թաղումը (**22.**39–**23.**56):

7. Հիսուսի հարությունը, հանդիպումն Էմմավուսի ճամփորդների հետ, երևումն իր առաքյալներին և համբարձումը (գլ. 24):

Ավետարան ըստ Հովհաննեսի

Գրվել է I դ. վերջին, Եփեսոսում: Բաղկացած է 21 գլխից: Հովհաննես ավետարանիչը Հիսուս Քրիստոսի 12 *առաքյալներից* էր և կոչվել է Քրիստոսի «սիրեցյալ աշակերտ» (Հովհ. **13.** 23, **19.**26, **21.**7,20): Եկեղեց. պատկերագրության մեջ ներկայացվում է արծվի կերպարանքով, որովհետև իր Ա-ում Փրկչին պատկերել է ոչ թե որպես պարզապես երկրային մի էակ, այլ աստվածաբանական բարձր ու վերասլաց ձևակերպումներով, երկնային անմատույց հավիտենական լույսի միջից մարմնացյալ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով մարդկանց հավիտենական կյանք պարգևող փրկություն: Չորրորդ Ա-ի աստվածաբան. կարևորությունը հենց սկզբից Քրիստոսի Աստվածությունը հռչակելու մեջ է. «Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն»: Բանի աստվածաբանության այսօրինակ կարևորումը մեծապես պայմանավորված էր անտիկ փիլիսոփայության ավանդներով դաստիարակված հույներին այդ փիլիսոփայության իսկ լեզվով աստվածային խոսքի հայտնությունը բացատրելու անհրաժեշտությամբ: Հովհաննես ավետարանիչը համարվում է քրիստոնյա առաջին աստվածաբանը և հայտնի է նաև Հովհաննես Աստվածաբան անունով:

Հովհաննեսի Ա-ի գրության պատճառը լավագույնս ձևակերպել է ինքը՝ ավետարանիչը. «Այլ այսքանը գրվեց, որ դուք հավատաք, թե Հիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին. նաև՝ որպեսզի հավատաք ու նրա անունով հավիտենական կյանքն ընդունեք» (**20.**31): Հովհաննես ավետարանչի մոտ հրաշքները հատակորեն ձևակերպվում են որպես «նշաններ»՝ շեշտելով Քրիստոսի կատարած հրաշագործությունները որպես մեսիական մի արարք՝ աստվածաբան. խոր իմաստով, ինչպես նաև պատասխանելով այն հրեաներին, ովքեր Քրիստոսից նշան էին խնդրում:

Հովհաննեսի Ա-ի բովանդակությունը հիմնականում հետևյալն է.

1. Հավիտենական Խոսքը՝ Քրիստոս, նրա երկրային ծնունդը՝ մարմնացումը և Հովհաննես Մկրտչի վկայությունը Հիսուսի մասին (**1.**1–34):

2. Հիսուսի առաջին աշակերտները, Փիլիպոսի և Նաթանայելի կոչումը, Կանայի հարսանիքը, Տաճարում առևտուր անողների վտարումը, Հիսուս և Նիկոդեմոս, զրույց սամարացի կնոջ հետ (**1.**35–**4.**42):

3. Բժշկումներ, Մարդու Որդուն տրված իշխանության մասին (**4.**43–**5.**47):

4. Հացի բազմացումը, Հիսուսը քայլում է ծովի վրայով (**6.**1–21): Հիսուս՝ կենաց հաց (**6.**22–72):

5. Վեճ Հիսուսի անձի շուրջ (գլ. 7): Շնացող կինը (**8.**1–11):

6. Հիսուս՝ լույսն աշխարհի (**8.**12–59):

7. Ի ծնե կույրի բժշկումը (գլ. 9): Ճառ բարի հովվի մասին (գլ. 10):

8. Ղազարոսի հարությունը (գլ. 11):

9. Մուտք Երուսաղեմ, խաչի խորհուրդը (գլ. 12):

10. Հիսուսը լվանում է իր աշակերտների ոտքերը (**13.** 1–20), կանխասացություններ (**13.** 21–**16.**33):

11. Հիսուսի աղոթքն առ Հայր (գլ. 17): Մատնությունը, չարչարանքները, խաչելությունը և հարությունը (**18.**1–**19.**42):

12. Հարուցյալ Քրիստոս, երևումներն իր աշակերտներին, Թովմաս առաքյալի անհավատությունը, այլ երևումներ (**20.**1–**21.**25):

Ավետարանը հայ իրականության մեջ: Քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելուց (301) ի վեր Հայաստանի եկեղեցիներում մինչ գրերի գյուտը հունարեն և ասորերեն լեզուներով Ա. է ընթերցվել, թարգմանվել և բացատրվել հայ շինականին, ռամիկին, իշխանավորին և արքունիքի անդամներին: Հայոց պատմության ոսկեդարը պայմանավորված էր Սահակ-Մեսրոպյան գրերի գյուտով, իսկ գրերի գյուտը՝ ավետարանական պատգամները հայ հոգուն առավել հարազատ դարձնելու հրամայականով: Հայոց պատմության մեջ Աստվածաշունչ մատյանի գրքերի մեջ իրենց գերապատիվ տեղն են ունեցել և բազմիցս արժեքավորվել հատկապես Ա-ները: *Եղիշեի* բնորոշմամբ՝ «Հայր մեր զսուրբ Աւետարանն գիտեմք, եւ մայր՝ զԱռաքելական եկեղեցի կաթողիկե»:

Վարդանանց պատերազմի ժամանակ, երբ պարսից զորքը Հայաստան է մտել, հայ հոգևորականներից ոմանք, ըստ Եղիշեի՝ «զԱւետարանն ի ձեռն առեալ» աղոթել են առ Աստված, իսկ մարզպան Վասակ Սյունեցու գործունեության շրջանում հայ եպիսկոպոսները «զԱւետարանն ի ձեռն առեալ» շտապել են սպարապետ Վարդան Մամիկոնյանի մոտ, «սուրբ Աւետարանաւս» աղաչել մարզպանի և պարսից մոգերի կատարած չարագործությունների առաջն առնել: Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստր *Շուշանիկն* իր տառապանքների ժամանակ փոքրիկ Ա. է ունեցել, որը պատկանել է Հայոց կաթողիկոս *Սահակ Ա Պարթևին*, «...եւ Նովաւ ի ծածուկ զԱստուած աղաչէր» («Սոփերք հայկականք», հ. 9, էջ 27): Հայոց թագավորներն իրենց երդումը Ա-ի վրա են տվել:

Գրիգոր Տաթևացին և Վարդան Վարդապետը վկայում են, որ հայերը «բանս յԱւետարանէն գրելով» տվել են հանգուցյալ քահանայի ձեռքը: Ա-ները որպես պաշտպանիչ զորություն պատերազմի դաշտ են տարել: Երբ Վասպուրականի իշխան, զորավար Գուրգեն Արծրունին (Ապուսալճ) կռվում էր արաբ զորապետ Բուղայի դեմ, հայ քահանաները «բարձեալ ի վեր զԱւետարանն սուրբ» աղոթք են արել, և Արծրունյաց իշխանը շահել է 851-ի ճակատամարտը: Ինչպես վկայում են *Հովհան Ոսկեբերանը* և ուրիշներ, որպես պահպանիչ զորություն հնուց ի վեր սովորություն է եղել Ա-ներից հատվածներ ընդօրինակելը և անձի վրա կրելը: Այդ երևույթը եղել է նաև հայ իրականության մեջ. ըստ *Հովհաննես Երզնկացու*, հայ կանայք իրենց զավակների պարանոցից փոքր «ավետարանակ կապեն» որպես պահպանություն: Մեծոփավանքի առաջնորդ և վանքի դպրոցի ղեկավար Հովհաննես Մեծոփեցու (XIV–XV դդ.) մասին *Թովմա Մեծոփեցին* պատմում է, թե «հաւատացելոց եւ անհաւատից» համար «Աւետարանին ընթերցմամբ» ցավեր ու հիվանդություններ էր բժշկում: Հայտնի է, որ բժշկության աղոթքների կողքին կան նաև «Աւետարանք բժշկութեան» (Մաշտոց ծիսամատյան), այսինքն՝ Քրիստոսի աստվածային-աստվածաշունչ խոսքերը կարդալը և ունկնդրելը արդեն իսկ երկնային օգնություն էր հիվանդներին, ուստի, հնուց ի վեր եկած ավանդության համաձայն, յուրաքանչյուր քրիստոնյա հիվանդության ժամանակ հրավիրում է եկեղեցականի, որն իր այցելությամբ՝ ձեռքը հիվանդի գլխին դնելով, կարդում է բժշկության աղոթք՝ Ա.՝ ի ապաքինումն օրհնելով հիվանդին:

Ա. ընթերցվում է եկեղեց. գրեթե բոլոր արարողությունների ընթացքում: Եկեղեցականն օրհնում է «Սուրբ խաչիւս եւ Սուրբ Աւետարանաւս» (Մաշտոց), այսինքն՝ ս. խաչով և ս. Ա-ով: Եկեղեց. ծիսական կյանքում Ա. այն եզակի գիրքն է, որը երկրպագելի և համբուրելի է, սակայն, ինչպես նշում է *Վրթանես Քերթողն* իր «Յաղագս պատկերամարտից» երկում, այդ հարգանքը մատուցվում է ոչ թե գրքի նյութին, այլ՝ Ա-ի միջոցով և նրանում ներկայացված Փրկչին: Հայ մատենագրության մեջ Ա. ամենաշատ ընդօրինակված գիրքն է:

Ավետարանի մեկնությունները: Եկեղեցու բոլոր հայրերը գրել են Ա-ների մեկնություններ, որոնք ունեցել են դավանաբան. և գործնական-ծիսական նշանակություն: Հայ եկեղեցու հայրերը և վարդապետները չափազանց կարևորել են Ա-ների մեկնությունները և տարբեր ժամանակներում, չնայած հրապարակի վրա եղած համաբնույթ մեկնությունների, օրվա հոգևոր կարիքները հոգալու նպատակով, վերստին մեկնել և բացատրել են այս կամ այն Ա.: Ա-ների մեկնության առաջին փորձերը հայ իրականության մեջ կատարվել են դեռևս V դ. (*Դավիթ Անհաղթի* մեկնությունը՝ «Զանազանութիւն Սրբոյ Աւետարանին Քրիստոսի»): Հայ հեղինակներից Ա-ները մեկնել են *Ստեփանոս Սյունեցին* («Մեկնութիւն չորից Աւետարանչաց»), Մատթեոսի Ա.՝ *Անանիա Սանահնեցին*, *Ներսես Շնորհալին*, *Հովհան Որոտնեցին*, Գրիգոր Տաթևացին, Մարկոսի Ա.՝ Բարսեղ Մաշկևորցին (XIII դ.), Ղուկասի Ա.՝ Սարգիս Կունդը (XII դ.), Իգնատիոս Սևլեռնեցին (XIII դ.), *Մատթեոս Ջուղայեցին*, Հովհաննեսի Ա.՝ Սարգիս Կունդը, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Մատթեոս Ջուղայեցին, *Գրիգոր Խլաթեցին* և ուրիշներ:

Ղուկաս աբեղա Զաքարյան

Հայկ. նկարազարդ ձեռագրերի ճնշող մեծամասնությունը Ա-ներ են: Երևանի Մատենադարանում պահվում են շուրջ 1750 ձեռագիր Ա-ներ: Հնագույններն են «Վեհամոր Ավետարանը», որն ընդօրինակվել է VII–VIII դդ., «*Մլքե թագուհու Ավետարանը*» (862), «*Լազարյան Ավետարանը*» (887) և «*Վեհափառի Ավետարանը*» (XI դ.): X–XI դդ. նկարազարդվել են «*Էջմիածնի Ավետարանը*» (989), «*Տրապիզո-*

նի Ավետարանը» (X դ.), «*Ծուղրութի Ավետարանը*» (974), «*Ադրիանուպոլսի Ավետարանը*» (1007), Երուսաղեմի մատենադարանում պահվող № 2555 ձեռագիրը, 1038-ի Ա., «*Կարսի Ավետարանը*» (1064), «*Մղինու Ավետարանը*» (XI դ.) ևն: «*Հաղպատի Ավետարան*»-ի (1221), «Խաչենի Ավետարան»-ի (1224) և «*Թարգմանչաց Ավետարան*»-ի (1232) մանրանկարներում չեշտված են առավելապես ազգային հոգեբանության և տեղի գեղագիտ. նախասիրություններից բխող առանձնահատկությունները: Պատկերաշարի ընդգրկման և դրանց թեմատիկ մեկնաբանության տեսակետից Ա-ների նկարազարդումները հետագա զարգացում են ապրել XII–XIV դդ., Բարձր Հայքի, Սյունիքի, Արցախի, Անի-Շիրակի, Գլաձորի, Ղրիմի, հատկապես Վասպուրականի և Կիլիկիայի *մանրանկարչության* դպրոցներում: Լավագույն նմուշներից են Երևանի Մատենադարանի № 7644 ձեռագիրը (XIII դ.), «*Ութ մանրանկարիչների Ավետարանը*», 1260-ին ընդօրինակված Ա., որը նկարազարդել է *Թորոս Ռոսլինը* (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 251), 1302-ին ընդօրինակված Ա. (Մատենադարան, ձեռ. № 6792) ևն: Ա-ների հարդարանքը ամբողջացնում են դրոշմազարդ և այլ կազմերը, խորանազարդերը, անվանաթերթերը և լուսանցազարդերը (բույսերի, կենդանիների պատկերներ, երկրաչափ. զարդանախշեր):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.4, 4–5-րդ և 2.5, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Բառարան Սուրբ Գրոց, ԿՊ, 1881: Սարաֆյան Գ., Ներածութիւն Նոր կտակարանի, Անթիլիաս, 1950: Եղիայան Բ., Քննական պատմութիւն Սուրբ գրական ժամանակներու, գիրք 4, Ներածութիւն Նոր կտակարանի, Անթիլիաս, 1974: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976: Պետրոսյան Ե., Ավետարանների միջնադարյան հայկական մեկնություններ, «Էջմիածին», 1982, № 1: Նույնի, Ներածություն Նոր կտակարանի, Ս. Էջմիածին, 1996: Մանուկյան Ս., Ներածութիւն Աստուածաշունչի, Ս. Էջմիածին, 1984: Մանուկյան Ա., Աստուածաշունչ մատեանը, Թեհրան, 1995: Կայայան Ա., Նոր կտակարանի ընդհանուր ներածություն, Ե., 1996:

ԱՎԵՏԱՐԱՆԱՅՈՒՅՑ, արարողության ընթացքում Ավետարանների ընթերցման կարգը սահմանող ուղեցույց *ծիսամատյան*, որը, *Տոնացույցի* մաս կազմելով, հաճախ ձեռագրերում հանդիպում է իբրև Ավետարաններին կից առանձին միավոր (Մատենադարան, ձեռ. № 7734, 7534, 3722): Ա. Տոնացույցի զարգացման նախնական փուլն է, մատնանշում է օրվա համար սահմանված Ավետարանի ընթերցումների հերթագայությունն ու բուն ընթերցումը:

Հեղինակի անուն կրող միակ Ա. հայտնի է *Ներսես Շնորհալու* անունով՝ «Շաբաթականք աւետարանք, ըստ խորհրդոյ արարչութեան շարականաց, զոր տէր Ներսես է շինեալ», որն Ավետարանի ընթերցումներ է նշում համաձայն օրերի և զանազան առիթների՝ «Վասն կանանց», «Վասն ննջեցելոց», «Վասն պատերազմի» ևն:

Գրկ. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 959–962:

Հակոբ Քյոսեյան

ԱՎԵՏԻՍ, 1. Քրիստոսի ծնունդն ավետող և օրհնաբանող հոգևոր երգերի տեսակ: Պատկերավոր ներկայացնում է այն պահը, երբ հրեշտակներն ավետում են հովիվներին մանուկ Հիսուսի ծնունդը: Յուրաքանչյուր տողի սկզբում կամ վերջում և կամ կրկնակում պարտադիր առկա է «ա վ ե տ ի ս» բառը: *Շարականների* և *տաղերի* մի որոշակի հատված գրված է Ա-ի ձևով, ինչպես, օր., Մովսես Խորենացուն վերագրվող Ծննդյան և Աստվածահայտնության ութօրեքի շարականներից («Խորհուրդ մեծ և սքանչելի») կամ Ներսես Շնորհալու տաղերից («Նոր ծաղիկ») մի քանիսը: 2. Ժող. համանուն երգեր, որոնք պահպանվել են տարբեր բարբառներում: Հետաքրքրական են նրանով, որ քրիստ. բովանդակության և ծիս. կիրառության պայմաններում պահպանել են հեթանոս., մասնավորապես՝ հին հայկ. ամանորյա երգերի մոտիվների և պատկերների մնացուկներ:

Գրկ. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 108–109:

Աննա Արևշատյան

ԱՎԵՏԻՍ, Ավետիք (ծ. և մ. թթ. անհտ), XIII դարի 2-րդ կեսի գրիչ, գեղագիր: Ապրել է Կիլիկյան Հայաստանում, ստեղծագործել մայրաքաղաք Սիսում, բերդաքաղաք Հռոմկլայում, որտեղ գտնվում էր Հայոց կաթողիկոս. աթոռը: Եղել է իր ժամանակի կիլիկյան ամենահռչակավոր գրիչը: Այդ են վկայում արքունական ընտանիքի անդամների և բարձրաստիճան հոգևորականների պատվերով նրա ընդօրինակած մատյանները: Համագործակցել է *Թորոս Ռոսլինի* հետ: Հայտնի է Ա-ի ընդօրինակած

չորս ձեռագիր (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք, ձեռ. № 2660, 2027, 2563, Մատենադարան, ձեռ. № 7651), որոնց թվում՝ նշանավոր «*Կեռան թագուհու Ավետարան*»-ը և «*Ութ մանրանկարիչների Ավետարան*»-ը:

Հնարավոր է, որ Ա. մասնակցել է նաև 1271-ին Դրազարկում գրիչ Կոստանդինի արտագրած Աստվածաշունչ մատյանի ստեղծմանը (Մատենադարան, ձեռ. № 199), որի գլխատառերը, ըստ ձեռագրի հիշատակարանի, գրել է «զընտիր գրչավորն»: Ա. հիշատակարանում ինքն իրեն անվանել է Ավետիս կամ Ավետիք քահանա (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2027):

Ա-ի ստեղծած մատյանները գրված են կիլիկյան կանոնավոր բոլորգրով (հայկ. մինուսկուլով), որն աչքի է ընկնում արտակարգ գեղեցկությամբ, հղկվածությամբ և գրի հավասար մակարդակով:

Ձեռագրերը հին գրչության արվեստի կիլիկյան բոլորգրի դասական օրինակներ են:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.6, 1-ին պատկերը:

Գրկ. Մաթեվոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., Ե., 1984, էջ 407: Mekhitarian A., Treasures of the Armenian Patriarchate of Jerusalem, Jerusalem, 1969, p. 21, 22, 23; Bogharian N., Grand Catalogue of St. James Manuscripts, v. 7, Jerusalem, 1974, p. 59–66; Idem, v. 8, Jerusalem, 1977, p. 263, 277; Narkiss B., (Ed.), Armenische Kunst. Die Faszinierende Sammlung des Armenischen Patriarchats in Jerusalem, Belser Verlag Stuttgart / Zürich, 1980, s. 63, 148, 149; Korchmasjan E., Drampjan I., Akopjan G., Armenische Buchmalerei des 13 und 14 Jahrhunderts, Leningrad, 1984, s. 28.

Սեյրանուշ Մանուկյան

ԱՎԵՏԻՔ ԵՎԴՈԿԱՑԻ, Թոխաթցի (1.4.1657, Եվդոկիա – 11.7.1711, Փարիզ), Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարք (1702–1706), գրիչ, տաղերգու: Աշակերտել է Սարգիս և Պետրոս քահանաներին, ապա՝ Հակոբ վրդ. Պելենկցուն: Փայասում ձեռնադրվել է սարկավագ (1675), *Կապոսի վանքում*՝ աբեղա, ապա՝ վարդապետ, կարգվել վանքի հոգևոր առաջնորդ: Զնայած օսմ. իշխանությունների և մոլեռանդ մահմեդ. հոգևորականության հարուցած խոչընդոտներին, նրա ջանքերով նորոգվել են Կապոսի Ս. Հակոբ վանքը, Տիրանաշենի Ս. Նշան, Երզնկայի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցիները: Այդ առիթով անբաստանվել ու կարճ ժամանակով բանտարկվել է: Ազատվելուց հետո մեկնել է Էջմիածին, այնտեղ 1691-ին ձեռնադրվել եպիսկոպոս, նույն թվականին Նահապետ Ա Եղեսացի կաթողիկոսը նրան կարգել է Կարինի թեմի առաջնորդ, 1702-ի փետր. 24-ին սուլթան. արքունիքի հովանավորությամբ նշանակվել է Կ. Պոլսի պատրիարք, իսկ հուլիսի 13-ին՝ նաև Երուսաղեմի պատրիարք: Սակայն հակակաթոլիկ. գործունեության համար 1703-ին աքսորվել է Ասորիք, 1704-ին ազատվել է և վերականգնվել Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնում: Նույն թվականի նոյեմբ., Երուսաղեմի հայոց պատրիարք Մինաս Ամդեցու մահից հետո, կրկին միավորել է Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարք. աթոռները:

Ա. Ե-ու պատրիարքության շրջանում Կ. Պոլսում պայքար է ծավալվել հայ առաքելական և կաթոլիկ համայնքների միջև: Ա. Ե. այդ պայքարի հայտնի դեմքերից է: Հիսուսյան կրոնավոր Մոնիեն իր «Ուղեգրության» մեջ նրան անվանել է «ամենամեծ հալածիչ», որ երբևէ ունեցել են կաթոլիկները Արևելքում, իսկ Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան դը Ֆերիոլը՝ «հռոմեական եկեղեցու երդվյալ թշնամի», «կաթոլիկության անդրդվելի և անողոք հալածիչ»: Ա. Ե. խիստ միջոցների է դիմել լատինադավան հայերի նկատմամբ և զոհ դարձել խռովարարների ու իր հակառակորդների մեքենայություններին: 1706-ին պատրիարքը կրկին աթոռազուրկ է արվել և աքսորվել Թենեդոս կղզի: Աքսորից վերադառնալիս դեսպան դը Ֆերիոլը, լատին կրոնավոր Հակինթոսի թելադրանքով, առևանգել է նրան, նետել Սիցիլիայի, Մարսելի բանտերը, Բենեդիկտյանների Ս. Միքայելի վանքը, ի վերջո՝ Փարիզի Բաստիլ բանտը, բռնագրավել գրքերն ու գրությունները: 1710-ին Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Նոայլի առաջ հավատոխոստովանություն կորզելուց հետո միայն Ա. Ե-ուն ազատել են բանտից՝ հսկողություն սահմանելով վրան: Ինն ամիս անց նա վախճանվել է:

Ա. Ե. եվրոպ. պատմագիտությանը հայտնի անձնավորություն է եղել: Նրա անունը կապվել է նշանավոր «Երկաթյա դիմակով մարդու» առեղծվածին: «Երկաթյա դիմակով մարդ» անունը կրող բանտարկյալի ինքնությունը բացահայտելու համար ավելի քան 50 հեղինակներ իրենց ուսումնասիրություններում զարգացրել են տասնչորս վարկածներ, որոնք առնչվել են նաև Ա. Ե-ու անձին:

Ա. Ե. գրել է տաղեր՝ «Տաղ ի վերայ գարնան...», «Տաղ Աւետիքէ ասացեալ» (Մատենադարան, ձեռ. №№ 6517, 10167), «Տաղ Աստուածածնի» (Զմմառի մատենադարան, ձեռ № 142), «Տաղ սուրբ Աստուածածնայ...» (Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. № 156) ևն, զբաղվել գրչագրությամբ, ընդօրինակել 6 ձեռագիր, 5-ը՝ Բաստիլի բանտում, վերջինը 1711-ին՝ ազատվելուց հետո, Փարիզում (Փարիզի Ազգ. մատենադարան, ձեռ. №№ 28, 89, 155, 156, 197, 139): Պատմ. արժեքավոր սկզբնաղբյուր է նրա «Կենսագրությունը» (1709, «Մասիս», 1874, № 1490–1496, 1498–1500):

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Ալպոյաճյան Ա., Պատմութիւն Եվդոկիո Հայոց, Կահիրե, 1952: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976:

Պավել Զոբանյան

ԱՎԵՏԻՔՅԱՆ Գաբրիել (19.9.1751, Կ. Պոլիս – 24.12.1827, Վենետիկ, Ս. Ղազար կղզի), աստվածաբան, մեկնիչ, լեզվաբան, բառարանագիր: *Մխիթարյան միաբանության* անդամ 1773-ից:

Սովորել է Մխիթարյանների Ս. Ղազար կղզու դպրեվանքում, այնուհետև ճեմարանում ուսանել իմաստասիրություն և աստվածաբանություն: Երկար տարիներ վարել է Ս. Ղազարի դպրատան տեսուչի պաշտոնը, դասավանդել է իմաստասիրություն և աստվածաբանություն: 1799-ին ընտրվել է աբբահայր Ստեփանոս Մելքոնյանի փոխանորդ, որը *Մխիթար Սեբաստացու* անմիջական հաջորդն էր: 1800-ին, նոր աբբահոր ընտրության ժամանակ, հանձինս Ստեփանոս Գյուվեր Ագոնցի, Ա. վերահաստատվել է ընդհանուր փոխանորդի պաշտոնում, որը վարել է մինչև մահը:

Գ. Ավետիքյան

Մեծածավալ է Ա-ի գրական ժառանգությունը: Կազմել է «Նոր հայկազեան բառարանի» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1–2, 1836–37) «Ա» տառի բառահոդվածները, կատարել մի շարք ստուգաբանություններ: Բացառիկ արժեք ունեն «Նարեկլուծ»-ը (1801), որը Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի մեկնությունն է, «Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ» (հ. 1–3, 1806–12) աշխատությունը և «Բացատրութիւն շարականաց...»-ը (1814): Հիշարժան է նրա իտալ. գրված «Դիտողութիւններ հայ ծիսական մատեանների սրբագրութեան մասին» (1868) երկը, որի նպատակն էր Հայ եկեղեցու բոլոր ծիսամատյանների անխաթար տպագրումը, պահպանումը և կիրարկումն ընդդեմ հռոմ. եկեղեց. ատյանների, հայ և օտար գրաքննիչների միտումների, որոնք ձգտել են դրանց մեջ «սրբագրություններ» մտցնել:

Ա. աստվածաբան. և հայրախոս. բացառիկ հմտությամբ և խորիմաց փաստարկներով պաշտպանել է Հայ եկեղեցու դավանանքը: Դեռևս կենդանության օրոք վայելել է մեծ աստվածաբանի համբավ, Հռոմում նրան հորջորջել են «սարսափելի աստվածաբան»: Ա. գրել է նաև ճառեր, քարոզներ, կատարել թարգմանություններ:

Երկ. Քերականութիւն հայկական, Վնտ., 1815:

Գրկ. Սարգիսյան Բ., Երկհարիւրամյա գրականական գործունեութիւն և նշանավոր գործիչներ Վենետկո Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905:

Լևոն Զեքիյան

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1968-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Սիդնեյի Ս. Հարություն եկեղեցի: Դեռևս 1950-ական թթ. սկզբին Սիդնեյում և Մելբուռնում կազմակերպվել են հայ եկեղեց. համայնքներ և եկեղեց. վարչություններ՝ առանց շենք ու եկեղեցական ունենալու: Առաջին հայ հոգևորականը, որը Ավստրալիա (Սիդնեյ) է եկել 1954-ին, եղել է Ասողիկ ծայրագույն վրդ. Ղազարյանը (1957-ից՝ եպիսկոպոս): 1958-ին նա նշանակվել է Ծայրագույն Արևելքի (Հնդկաստան, Չինաստան, Ինդոնեզիա, Սինգապուր, Բանգլադեշ, Բիրմա), Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայ գաղութների հայրապետ. պատվիրակ (կենտրոնը՝ Սիդնեյ և Կալկաթա): 1966-ին Գարեգին եպս. Գազանճյանը (Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1990–98-ին) նշանակվել է պատվիրակի փոխանորդ, իսկ 1968-ին՝ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի նորաստեղծ թեմի առաջնորդ:

ԱՎՍՏՐԻԱՅԻ Սիդնեյում հայ համայնքի առաջին եկեղեցին՝ Ս. Հարությունը, օծվել է 1957-ին: 1965-ին քաղաքի հայաշատ արվարձաններից մեկում գնվել է եկեղեցի, որը 1976-ին և 1991-ին վերակառուցվել է հայկ. ճարտ. ոճով: Եկեղեցուն կից գործում են շաբաթօրյա ազգային վարժարան, Տիկնանց միություն, Երիտասարդական միություն, թատերական, մարզական և այլ խմբեր: 1955-ից հրատարակվում է «Լույս» կրոնաեկեղեց. ամսաթերթը:

Մելբուռնի հայ համայնքի առաջին եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, գործում է 1962-ից: 1976-ին համայնքը քաղաքի հայաշատ արվարձանում ձեռք է բերել ավելի մեծ եկեղեցի՝ կից սրահներով և դրասենյակային հարմարություններով: Այստեղ ևս գործում են եկեղեցու վարչություն, եկեղեցուն կից՝ շաբաթօրյա վարժարան (1985-ից), Տիկնանց, Երիտասարդաց և այլ միություններ: 1966-ից լույս է տեսնում «Հույս» երկամյա պարբերականը:

Ավստրալահայ համայնքի ազգ., կրթ. գործը ղեկավարում է թեմի առաջնորդի նախագահությամբ գործող թեմական խորհուրդը՝ բաղկացած 7 հոգուց (4-ը՝ Սիդնեյից, 3-ը՝ Մելբուռնից): Խորհրդին կից գործում է թեմական ուսնեցվածքը համակարգող-տնօրինող մարմին:

Նոր Զելանդիայում բնակվող շուրջ 60 հայ ընտանիքները կենտրոնացած են գլխավորապես Օքլենդ քաղաքում: Համայնքի հոգևոր կարիքները հոգում են այցելու հոգևորականները:

Ա. և Ն. Զ. թ-ի առաջնորդն է Աղան արք. Պալիոզյանը (1981-ից):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.6, 2-րդ պատկերը:

Աղան արք. Պալիոզյան

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ԱՏՈՄ ԱՆՁԵՎԱՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), IX–X դարերի քաղաքական գործիչ, մատենագիր: Արծրունիների Գուրգեն իշխանի կրտսեր որդին: Եպիսկոպոս է ձեռնադրվել կյանքի վերջին տարիներին՝ 938-ից հետո: Մտահոգված կենտրոնաձիգ պետության անվտանգությամբ՝ Ա. Ա. գործունորեն մասնակցել է երկրի ռազմաքաղ. կյանքին: Մանազկերտի Կայսիկ ամիրայի ապստամբությունը ճնշելիս իր զորքով օգնության է հասել Հայոց Սմբատ արքային (902): Սատարել է Վասպուրականի Գագիկ Արծրունի արքային (914)՝ վանելով արաբ բռնակալ, Ատրպատականի Յուսուֆ ամիրայի հարձակումը: Ա. Ա. աչքի է ընկել նաև մշակութ. գործունեությամբ: Ա. Ա-ու և նրա հոր պատվերով են ընդօրինակվել *Կյուրեղ Երուսաղեմացու* «Կոչումն ընծայութեան» աշխատությունն ու *Եղիշեի* Պատմությունը: Նրա հանձնարարությամբ են գրվել Արամի, Արտավազդ Մազազունու և Թովմա քահանայի աստվածաբան. թղթերն ու *լուծմունքները*: Ա. Ա-ու գրչին է պատկանում Հովհաննես Մկրտչին ձոնված մի ներբող, որը շարադրվել է, հավանաբար, 940-ական թթ.: Ներբողում արևելաքրիստ. մեկնաբանական հարուստ փորձի հիման վրա տրվում է Հովհաննես Մկրտչի անձի և գործունեության տեսական-աստվածաբան. համակողմանի վերլուծությունը:

Գրկ. Հովսեփյան Գ., Իններորդ դարի ձեռագրական մի հատակագծոր և Ատոմ Անձևացյաց իշխան, «Էջմիածին», 1946, № 8–10: Քոլանջյան Ս., Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի ձեռագրից, ԲՄ, № 5, 1960: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 704–705: Քյոսեյան Հ., Ատոմ Անձևացին և նրա ներբողը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին, ՀԱ, 1987, էջ 513–526 (ուսումնասիր., բնագիր):

Հակոբ Քյոսեյան

ԱՏՈՄԱԳԻՐ, Ատոմադիր, Տոնացույց, Տոնացուցակ, Հռոմադիր, Հոռոմադիր, վկայաբանությունների և վարքերի ժողովածու: Հռոմադիր է կոչվել հռոմեական ամիսների օրերի համաձայն դասավորված լինելու պատճառով: Ենթադրվում է, որ Ա. անվանումն առաջացել է Ս. Ատոմի վանքից՝ իբրև նույն վանքում կարգավորված ժողովածու: Ա. ժողովածուն կազմել է վանքի վանահայր Գագիկը՝ 897-ին: Կարգավորել է Ատոմ Վարագեցին՝ 1001-ին: Համարվում է *Հայսմավուրքի* նախօրինակը:

Գրկ. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 709–710:

Հակոբ Քյոսեյան

ԱՏՈՄՅԱՆՔ առաջինք (նահ. 449), V դարի տոնելի նահատակ զորականների երկու գունդ՝ շուրջ 1000 հոգի (ըստ այլ աղբյուրների՝ ավելի քիչ): Մարտիրոսական պսակ են ընդունել Հիսուս Քրիստոսին չուրանալու համար: Եղել են հայ նախարարական գնդեր, որոնք Վարդանանց շարժումից առաջ ծառայել են պարսկ. բանակում, Պարսից Հազկերտ արքայի (439–457) օրոք, բնիկ տերերի՝ Ատոմ

Գնունու և Մանաճիհր Ռշտունու առաջնորդությամբ: Վկայաբանության մեջ, հիշյալ երկուսից բացի, հանվանե հիշատակված են Ատոմ Գնունու որդին՝ Վարսը, ապա Վարս Ոստանիկը, Ներսեհ Երվանդունին և Վարճավոր Արծրունին:

Ա., կանխազգալով հայ զինվորներին դավանափոխ անելու Պարսից արքունիքի մտադրությունը, հանուն քրիստ. հավատի խուսափել են Պարսից արքայի հրամանը կատարելուց և, փոխանակ մեկնելու հրամայված վայրը, ուղղվել են դեպի Հայաստան: Պարսկ. զորքը հետապնդել է նրանց և Ա-ց մի մասին շրջապատել Անձևացյաց գավառում, լեռների մեջ: Ատոմ Գնունուն այնտեղ աքանչելի տեսիլք է երևացել՝ կամարաձև լույս և «հահատեսիլ մարդ», որը բաժանել է վարդերից հյուսված պսակներ՝ նշանակ սուրբ նահատակության, որը և կատարվել է շուտով: Մարտիրոսված գնդի զինվորների մասունքների ամփոփման վայրում կառուցվել է Ձիակալ անունով եկեղեցի: Իսկ մյուս գունդը Մանաճիհր Ռշտունու գլխավորությամբ պարսից զորքի կողմից նահատակվել է Ռշտունյաց գավառում: Նահատակման վայրում, ի հիշատակ նրանց, կառուցվել է Ոչխարանից կոչվող եկեղեցին:

Ա-ց վկայաբանությունը, որը գրի է առնվել V դ., VII–VIII դդ., թարգմանվել է վրացերեն:

Հայսմավուրքները Ա-ց հիշատակի օրը նշանակել են օգոստ. 19-ին. Հայ եկեղեցին նրանց տոնը նշում է *Բուն Բարեկենդանից* երկու շաբաթ առաջ՝ երկուշաբթի օրը:

Ունեն «Մանկունք» կոչվող մի շարական. «Աղաչեմք զքեզ, Տէր, բարեխոսութեամբ Սրբոց Ատոմմանց...»:

Ատոմյանք երկրորդք, Նոր Ատոմյանք (նահ. 853, ք. Դվին), IX դարի տոնելի քրիստոնյա նահատակներ՝ 150 հոգի: Անվանումը ստացել են իրենց առաջնորդ Ատոմ Անձևացու (Աղբակ գավառի Որսիրանք գյուղից) անունից: Նահատակվել են արաբ. տիրապետության շրջանում, ոստիկան Բուղայի ձեռքով, հավատուրացության առաջարկից հրաժարվելու համար: Վկայաբանությունը (Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, 1867, գլ. 25: Ասողիկ, Պատմութիւն տանն Արծրունեաց, 1887, դպր. III, գլ. 8) մանրամասն նկարագրել է նրանց չարչարանքներն ու մարտիրոսական պսակ ընդունելը: Հանվանե հիշատակվել են Ատոմ Անձևացու 6 կամ 7 հավատակիցներից երեքը՝ Մլեհ Վարաժնունին, Գեորգ Բողկացին և Վասակ Ակեացին: *Հովհաննես Դ Ովայեցին* այս Ա-ց համար նշանակել է հիշատակության հատուկ օր՝ նոյեմբերի 19-ը:

Ներկայումս Հայ եկեղեցին նրանց հիշատակը տոնում է առաջին Ա-ց հետ:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785, էջ 20: Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւն..., հ. 2, Վնտ., 1811, էջ 113–120: Սոփերք հայկականք, հ. 19, Վնտ., 1854: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Սուրբերու կյանքը, [ժող.], Բեյրութ, 1994: *Памятники армянской агиографии, Е., 1973, с. 186–194.*

Քնարիկ Տեր-Դավթյան

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, իրանահայության հնագույն թեմն է. ընդգրկում է Ատրպատականի տարածքը (Իրանի Արլ. և Արմ. Ադրբեջան նահանգները): Առաջնորդանիստը՝ Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցի:

Ատրպատականում Հայ առաքելական եկեղեցու թեմերը հիշատակվում են XII դարից: Մինչև 1833-ը Ա. թ-ի կենտրոնը եղել է Արտազի (այժմ՝ Մակու) Ս. Թադե վանքը, այնուհետև թեմի առաջնորդ Նիկողայոս Կարբեցի եպիսկոպոսն այն տեղափոխել է Թավրիզ: Մինչև 1956-ը Ա. թ. ենթարկվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնին, այնուհետև՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը:

XX դ. սկզբին թեմի տարածքում բնակվել է ավելի քան 30 հզ. հայ, հետագայում հայրենադարձության և արտագաղթի հետևանքով նրանց թիվը նվազել է և 1980-ական թթ. սկզբին կազմել շուրջ 17 հզ.: Թեմի տարածքում կա շուրջ 180 եկեղեցի և վանք, որոնցից կանգուն են 40-ը: Նշանավոր են Արտազի Ս. Թադե (VI–IX դդ.) և Ս. Ստեփանոս Նախավկա (VII–IX դդ.) վանքերը, Խոյի Ս. Սարգիս (1120), Սալմաստ գավառի Ղալասար գյուղի Ս. Սարգիս(1806), Թավրիզի Ս. Աստվածածին (1872), Ս. Սարգիս (1845) եկեղեցիները: Ա. թ-ի բարձրագույն օրենսդիր մարմինը չորս տարով ընտրվող թեմական պատգամավորական ժողովն է՝ բաղկացած 17 անդամից: Պատգամավոր. ժողովն ընտրում է 7 հոգուց բաղկացած թեմական խորհուրդ, որի նախագահը թեմական առաջնորդն է: 1967-ին Ատրպատականի առաջնորդարանը և թեմական խորհուրդը պաշտոնապես ճանաչվել են որպես կրոնամշակութ. և բարեգործ. ընկերակցություն և արձանագրվել «Ատրպատականի ընդհանուր հայության Ա-

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ առաջնորդարանի խորհուրդ» անունով: Թավրիզ տեղափոխվելուց ի վեր թեմն ունեցել է 14 առաջնորդ, որոնցից ամենանշանավորներն են Կարապետ եպս. *Տեր-Մկրտչյանը*, Ներսես արք. *Մելիք-Թանդյանը*:

Ատրպատականում եկեղեցուն կից (1670-ից) գործել են հայկ. դպրոցներ: 1835-ից բացվել են աշխարհիկ դպրոցներ. հայտնի են 1852-ին բացված Ներսիսյան (1875-ից՝ Արամյան), 1875-ին՝ Հայկազյան, 1909–36-ին՝ Թեմական-կենտրոնական և այլ դպրոցներ:

Ա. Թ-ի առաջնորդն է Կիլիկիո աթոռի կաթողիկոս. փոխանորդ Նշան ծ. վրդ. Թոփուզյանը (2001-ից):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.6, 3-րդ պատկերը:

Գրկ. Մամյան Ն., Ատրպատականի հայոց թեմը, Բաֆֆի տարեգիրք, Ա տարի, 1969, Թեհրան, 1968: Մինասյան Լ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971: Նույնի, Իրանի հայկական եկեղեցիները, Նոր Ջուղա, 1983: Փահլեվանյան Հ., Իրանահայ համայնքը (1911–1979 թթ.), Ե., 1989:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի՝ 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, որը հայոց ազգ. գլխ. սրբավայրերից է (այստեղ է ամփոփված Մեսրոպ Մաշտոցի աճյունը): Ա. Թ. ընդգրկում է ՀՀ Արագածոտնի մարզը (պատմ. Այրարատ նահանգի Արագածոտն ու Նիգ գավառների մեծ մասը): Թեմի տարածքը տարբեր ժամանակներում ենթարկվել է տարբեր եպիսկոպոս. աթոռների: Արագածոտնը վաղ միջնադարում Ամատունիների նախարար. տան եպիսկոպոսների տեսչության տակ էր: Օշականն Ամատունի նախարարների կենտրոն է դարձել Հայոց թագավոր Խոսրով Բ-ի (330–338) ժամանակ:

Ամատունիների եպիսկոպոսության տարածքում հետագայում գործել են Ամբերդի և *Հովհաննավանքի* աթոռները: 1026-ին Ամբերդի եկեղեցու շին. արձանագրության մեջ Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին գրել է. «...չինեցի զկաթողիկէս աթոռ հայրապետական եւ սահմանեցի պտուղ...», այնուհետև նշվում են Նիգ և Արագածոտն գավառներից, ինչպես և Քաղաքաղաշտից (Վաղարշապատ) աթոռին հատկացվող հարկերը: Որոշ ուսումնասիրողներ այս արձանագրությունը համարում են Ամբերդի եպիսկոպոսության հիմնադրման վկայություն: 1243-ին *Կոստանդին Ա Բարձրբերդցի* կաթողիկոսը Հովհաննավանքում թողած արձանագրության մեջ նշում է. «Եւ ոչ Ամբերդու երկիրս սեպհական վիճակ Սուրբ Կարապետիս, ի յԱպարանուց ընդ որ բաժանի զետն Քասաղ, մինչև յԱշնակ»: Նույն արձանագրության մեջ հիշվում է Հովհաննավանքի վանահայր Մկրտիչ եպիսկոպոսը, որին XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին կոչել է «Ամբերդի եպիսկոպոս»: Ենթադրվում է, որ Հովհաննավանքն այդ շրջանում դարձել էր Ամբերդի եպիսկոպոսների նստավայրը:

Ա. Թ-ի տարածքում են գտնվում Փարպիի Ծիրանավոր միանավ (V դ.) և Աշտարակի Ծիրանավոր Ս. Աստվածածին եռանավ (V–VI դդ.), Կարմրավոր Ս. Աստվածածին, Կոչի Ս. Ստեփանոս, Օշականի Մանկանոց Ս. Սիոն, Արտաշավանի Ս. Ամենափրկիչ, Դաշտադեմի Ս. Քրիստափոր փոքր խաչաձև գմբեթավոր (բոլորը՝ VII դ.), Արագածի (VI դ.) ու Իրինդի բազմախորան (VII դ.), Զովունու Ս. Պողոս-Պետրոս, Արուճի Ս. Գրիգոր, Գառնահովտի Ս. Գևորգ (VII դ.), Բյուրականի Ս. Հովհաննես (X դ.) եկեղեցիները, Սաղմոսավանքը, Տեղերի, Ուշիի Ս. Սարգիս (XIII դ.), Աստվածընկալ, Եղիպատրուշի (XIII դ.) վանքերը ևն:

Ա. Թ-ի գործող վանքերն ու եկեղեցիներն են՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցը, Աշտարակի Ս. Մարինեն, Ս. Սարգիսը, Ապարանի Ս. Խաչը, Թալինի Ս. Աստվածածինը, Կարբիի Ս. Աստվածածինը, Կոչի Ս. Գևորգը, Մաստարայի Ս. Հովհաննեսը, Մուղնու Ս. Գևորգ վանքն ու Սաղմոսավանքը:

Օշականում Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կողքին գործում է նրա անունը կրող դպրատունը: Թեմը հրատարակել է «Շողակն» (1998–2000), 2000-ից՝ «Արագածոտն» պարբերականները: 1998-ից Մուղնու առողջարան. կենտրոնում գործում է Ա. Թ-ի կիրակնօրյա դպրոցը:

Ա. Թ-ի առաջնորդական տեղապահն է Վազգեն վրդ. Միրզախանյանը (1999-ից):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.6, 4-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.1:

Գրկ. Մաթևոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, № 2–3: Հարությունյան Ս., Ամբերդ, Ե., 1978:

Կարեն Մաթևոսյան

ԱՐԱԾԱՆԻ (ասուրա-բաբելերեն՝ Արսանիա), Արևելյան Եփրատ, թուրքերեն՝ Մու-

ր ադ, Եփրատ գետի արևելյան մեծ վտակը, որ հնում ոչ միայն առանձին, այլև սուրբ գետ է համարվել: Սկիզբ է առնում Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառի Նպատ կամ Ծաղկանց լեռներից, մոտ 3060 մ բարձրությունից, իր մեջ ներառում բազմաթիվ վտակներ (Բագրեվանդ, Խնուս, Բյուրակն, Կորո ձոր, Մեղրագետ), շրջանցում Հայկ. Տավրոսը և Լուսաթառիճից (Կապան-Մադեն) հս. միախառնվում Արմ. Եփրատին: Երկար. 650 *կմ*: Հոսում է Այրարատ, Տուրուբերան, Ծոփք նահանգների որոշ գավառներով: Արածանիի ավազանում և ափերին են եղել հայ հեթանոս. բազմաթիվ մեհյաններ (օր., Անահիտ դիցուհու), որոնք ժամանակի ընթացքում վերածվել են եկեղեց. ու զինական կենտրոնների (Աշտիշատ, Գլակավանք, Ս. Մեսրոպ վանք, Ս. Ներսես վանք, Ս. Դանիել վանք, Ս. Աղբերիկ վանք, Ողական ամրոց ևն):

Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելիս (301) Ա-ում են մկրտվել Հայոց թագավոր Տրդատ Գ, Աշխեն թագուհին, թագավորի քույր Խոսրովիդուխտը, զորքը և ժողովուրդը:

Անդրանիկ Զեյթունյան

ԱՐԱՄ Ա ՔԵՇԻՇՅԱՆ (ավազանի անունը՝ Պետրոս, ծ. 8.3.1947, Բեյրութ), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս 1995-ի հունիսից: Օծվել է 1995-ի հուլիսի 1-ին: Հաջորդել է Գարեգին Բ Սարգիսյանին (1995–99-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյան*): Նախն. կրթությունն ստացել է Բեյրութի Ազգ. Մեսրոպյան վարժարանում, 1961–65-ին սովորել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքի (Անթիլիաս) ժառանգավորաց բաժնում, 1965–68-ին՝ ընծայարանի բաժնում: 1970-ին ձեռնադրվել է վարդապետ, 1980-ին՝ եպիսկոպոս, 1985-ին ստացել է արքության տիտղոս: 1968–78-ին բարձրագույն կրթությունը շարունակել է Մերձավոր Արևելքի Աստվածաբանական ճեմարանում, Բեյրութի Ամերիկյան համալսարանում, Շվեյցարիայի Պոսե էկումենիկ հաստատությունում, Օքսֆորդի համալսարանի արևելագիտության բաժնում, Նյու Յորքի Ֆորդհամի համալսարանում, ստացել արվեստի պսակավորի, աստվածաբանության մագիստրոսի, Մերձավոր Արևելքի եկեղեց. պատմության և փիլիսոփայության դոկտորի կոչումներ:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա

1968–75-ին (մինչև ԱՄՆ ուսման մեկնելը) զբաղեցրել է Մարտիկյան վարժարանի փոխտեսուչի, Դպրեվանքի տեսուչի օգնականի, այնուհետև՝ փոխտեսուչի, աստվածաբանության դասախոսի, Կիլիկիո կաթողիկոսարանի միջեկեղեց. հարաբերությունների ընդհանուր քարտուղարի պաշտոններ: 1972–75-ին դասավանդել է Հայկազյան քոլեջում, դասախոսություններով հանդես եկել Բեյրութի համալսարանում և նույն քաղաքի Ամերիկյան (AUB) համալսարանում:

1978-ին (ԱՄՆ-ում ուսանելիս) ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Լիբանանի թեմի առաջնորդական տեղապահ, 1979-ին՝ առաջնորդ:

Ա. Ա Ք. իր հոգևոր գործունեության մեջ կարևոր տեղ է հատկացնում միջեկեղեց. և *էկումենյան շարժմանը* թե՛ տեղական, թե՛ միջինարևելյան և թե՛ միջազգ. ասպարեզներում: Մշտական անդամ է շրջանային և միջազգ. մի շարք աստվածաբան. և էկումենիկ հանձնախմբերի և կազմակերպությունների:

1970-ից մասնակցում է Եկեղեցիների համաշխ. խորհրդի (ԵՀԽ) տարբեր բաժանմունքների աշխատանքներին: Խորհրդի երիտասարդ. բաժանմունքի, «Հաւատք եւ կարգ» հանձնաժողովի և նրա գործադիր վարչության մշտական անդամ է: 1983-ին ԵՀԽ Վանկուվերի համաժողովում ընտրվել է խորհրդի կենտր. վարչության անդամ, 1991-ին Կանբերայի (Ավստրալիա) VII համաժողովում՝ կենտր. ու գործադիր վարչության ատենապետ, վերընտրվել է 1998-ին, Հարարեի (Զիմբաբվե) VIII համաժողովում:

Ա. Ա Ք. մեծ աշխատանք է կատարում կաթողիկոսության ներքին կյանքի ու գործունեության վերակազմակերպման, մասնավորապես՝ ազգ. եկեղեց., միջեկեղեց., մշակութ., կրոն. ծառայության բնագավառներում:

Երկ. Հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ դիմագիծը, Բեյրութ, 1970: Ներսես Շնորհալի, Աստուածաբան ու էքիւմենիստ, Բեյրութ, 1974: Ազգ, եկեղեցի, հայրենիք, Անթիլիաս, 1999: The Witness of the Ar-

menian Church in a Diaspora Situation, N. Y., 1978; The Christian Witness at the Crossroads in the Middle East, Nicosia, 1980; Towards an Ecumenical Ethic for a Responsible Society in a Sustainable Creation, Geneva, 1994; The Challenge to be a Church in a Changing World, N. Y., 1997; Defis et Perspectives Ecumeniques, Antelias, 2000.

ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔ, ՀՀ Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի Արատես վտակի ափին, բլրի գագաթին: Ա. վ-ի Ս. Սիոն միանավ թաղածածկ եկեղեցին (X դ.) ունի երեք ավանդատուն՝ խորանի երկու կողքերին և հս. պատին կից: Նրանից հվ. Ս. Աստվածածին եկեղեցին (XI դ.) է, որը մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է: Նրա և Ս. Սիոն եկեղեցու միջև XIII դ. կառուցվել է քառակուսի հատակագծով, արլ. զույգ ավանդատներով գավիթ: Ս. Աստվածածին եկեղեցու արմ. ճակատին կից 1270-ին Հայրապետ աբեղան գավիթ է կառուցել (ճարտ. Սիրանես)՝ փոխհատվող կամարների կիրառմամբ իրականացված ծածկով, որի կենտրոնում շթաքարային մշակումով երդիկով գմբեթն է (քանդվել է 1970-ական թթ.): Ա. վ-ին 1073-ին ոմն Արտավազդ նվիրել է Եղեգիսի այգին և կալվածքներ: 1220-ին իշխան Վասակ Խաղբակյանը Ա. վ-ի պատին արձանագրել է Վայոց ձորի ամրոցների ազատագրման փաստը:

XIII դ. վերջին Ստեփանոս արք. Օրբելյանը Ա. վ. իր կալվածքներով հանձնել է *Նորավանքին*՝ որպես ամառանոց, իսկ 1301-ին Ա. վ-ին է նվիրել Գեղարքունիք գավառի ութ գյուղ: Ա. վ-ում 1303-ին գրիչ Խաչատուր Երզնկացին Ստեփանոս արք. Օրբելյանի պատվերով ընդօրինակել է *Գրիգոր Նյուսացու* «Մեկնութիւն ժողովողին» աշխատությունը: Վանքի տարածքում կան X–XVII դդ. խաչքարեր և տապանաքարեր:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.6, 5-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Վայոց ձորի նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք 26, Թ., 1916: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ԱՐԱՐԱՏ, տես *Մասիս*:

«ԱՐԱՐԱՏ», Մայր աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական ամսագիր: Լույս է տեսել 1868–1919-ին, Ս. Էջմիածնում: 1868-ից՝ իբրև «աշխատասիրութիւն միաբանից Սուրբ Էջմիածնի» և «ամսագիր կրոնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց», 1898-ից՝ «Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի»: Հիմնվել է Ամենայն Հայոց կաթողիկոս *Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցու* նախաձեռնությամբ: Նպատակն էր հայոց կյանքում Մայր աթոռ Ս. Էջմիածնի դերի ու նշանակության բարձրացումն ու ամրապնդումը, Հայ եկեղեցու ուղղափառության, ազգ. նկարագրի, ինքնուրույնության և անկախության պաշտպանությունը: Ամսագրի լեզուն աշխարհաբարն էր: Խմբագրել է Ս. Էջմիածնի միաբաններից կազմված կոլեգիան՝ Ամենայն հայոց կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարությամբ: Խմբագիրներ են եղել Աբել արք. *Մխիթարյանը*, Խորեն վրդ. *Ստեփանեն*, Կարապետ վրդ. *Տեր-Մկրտչյանը*, Գալուստ *Տեր-Մկրտչյանը*, Գարեգին վրդ. Հովսեփյանը (*Գարեգին Ա Հովսեփյան*), Հուսիկ արք. Մովսիսյանը, Աբել աբեղա Աբրահամյանը, Ներսես վրդ. Միքայելյանը և ուր.:



«Ա.» Կովկասում հրատարակվող կրոնագիտ., եկեղեցագիտ., հայագիտ., բանասիր. առաջին լուրջ ամսագիրն էր և մեծապես նպաստել է գիտության այդ ճյուղերի զարգացմանը, մեծ դեր խաղացել հայ ժողովրդի եկեղեց., հաս. կյանքում: «Ա.»-ի շուրջ համախմբվել են ժամանակի գրեթե բոլոր հայ անվանի գիտնականները, աստվածաբան հոգևորականները, գրողները, աշխատակցել են Մ. արք. *Օրմանյանը*, Գ. արք. *Այվազովսկին*, Ե. վրդ. *Տեր-Մինասյանը*, Վ. եպս. Մանկունին, Ս. վրդ. Ամատունին, Վ. վրդ. Բաստամյանցը, *Կոմիտասը*, Ղ. Աղայանը, Հ. Աճառյանը, Ն. *Ադոնցը*, Ստ. Մալխասյանցը, Լեոն, Ն. Մառը, Հ. *Մանանդյանը*, Հայկունին, Ստ. Մելիքյանը, Ե. Լալայանը, Գ. Ղափանցյանը, Ա. Հովհաննիսյանը, Հովհ. Հովհաննիսյանը և ուր.:

«Ա.»-ում հրապարակվել են կաթողիկոս. կոնդակներ և կարգադրություններ, քաղվածքներ *Սինոդի* գրագրություններից, տեղեկություններ թեմերից, ծիսական և թեմական

դպրոցներից, քույր եկեղեցիներից, հայ կաթոլիկ և ավետարան. համայնքների կյանքից: Նյութեր և ուսումնասիրություններ են տպագրվել հայ ժողովրդի պատմության, հայ հին և նոր գրականության, գաղթավայրերի, հայ բանահյուսության, ազգագրության, հարևան ժողովուրդների հետ հայերի առնչությունների մասին: Զգալի տեղ է հատկացվել հայոց վանքերին, եկեղեցիներին, հայ աղանդներին, վարքագրությանը, գիտության տարբեր ճյուղերին և արվեստին: «Ա.» կարևոր դեր է կատարել Հայ եկեղեցու դավանանքի, կրոնի, բարոյագիտության, ծիսագիտության, եկեղեց. իրավունքի և հարակից այլ խնդիրների ուսումնասիրման ասպարեզում, մշտապես եղել հայ դավան. մտքի հանդես, Հայ եկեղեցու ուղղափառության պաշտպանության ամբիոն, հայ դավանաբան. գրականությանը նվիրված բնագրերի հրատարակման ու հետազոտման կենտրոն: Ամսագիրն իր առջև խնդիր չի դրել «հավատո վեճեր նորոգել» («Յառաջաբան»), այլ ձգտել է պահպանել Հայ եկեղեցու կարգն ու կանոնը, պարզաբանել եկեղեցու պատմությանն առնչվող հարցերը, ներկայացնել Հայ եկեղեցու դավան. դիրքը, առաքելականությունը, առաքելական հաջորդականությունը, ազգ. նկարագիրը նոր հրապարակումների լույսի ներքո և աղբյուրագիտ. հիմնավորումներով:

«Ա.» անցել է ստեղծագործ. երկու շրջան՝ 1868–1895 և 1895–1919: Առաջին շրջանում աստվածաբան., դավանաբան. հոդվածներն ունեցել են մատենագր., ջատագովական նկարագիր: Հանդես են եկել Ա. արք. Մխիթարյանը, Հ. վրդ. Մովսիսյանը, Մ. արք. Օրմանյանը, Ա. Տեր-Միքելյանը, Գ. եպս. Այվազովսկին և ուր.: 1895-ից «Ա.»-ում գերակշռել են հայ դավանաբան. մտքի ուսումնասիրմանը նվիրված գիտ. հոդվածները՝ շնորհիվ Մայր աթոռում պաշտոնավարող աստվածաբանների նոր սերնդի և Մ. արք. Օրմանյանի շուրջը բոլորած, Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդ հոգևորականների (Կ. վրդ. Տեր-Մկրտչյան, Գ. Տեր-Մկրտչյան, Ե. վրդ. Տեր-Մինասյան, Գ. վրդ. Հովսեփյան և ուր.): 1888-ին «Ա.»-ում բացվել է «Ս. Էջմիածնի գրադարան» բաժինը, որտեղ հրատարակվել են Հայ եկեղեցու պատմության և դավանության դեռևս «մութ և անծանոթ» մնացած հարցերի վրա լույս սփռող ձեռագիր բնագրեր: 1894-ի դեկտ. – 1899-ին, երբ Կ. վրդ. Տեր-Մկրտչյանը կրոն. բաժնի խմբագիրն էր, «Ա.» բեղուն շրջան է ապրել աստվածաբան., դավանաբան. հարցերի ուսումնասիրման և հրապարակման առումով: 1895-ից ստեղծվել է նոր բաժին՝ «Հավելված»: Նրա էջերում հրատարակվել են «Գիրք թղթոց» դավան. ժողովածուի և մի շարք այլ եզակի բնագրեր և ուսումնասիրություններ: «Ա.»-ի շուրջ համախմբված միաբանները և մտավորականները 1913-ին հրատարակել են «Շողակաթ» հայագիտ. ժողովածուի առաջին գիրքը՝ նվիրված Հայ գրի ստեղծման 1500 և տպագրության 400-ամյա հոբելյաններին:

«Ա.» զբաղվել է նաև ընդհանուր աստվածաբան. հարցերով: 1910-ի համարներում տպագրվել է ռուս նշանավոր աստվածաբան, պրոֆ. Ն. Սադարդայի «Հույն-արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը յուր ծաղկման շրջանում (IV–V դդ.)» աշխատությունը, 1917-ի համարներում՝ ռուս գիտնական Ֆ. Մ. Ռոսեյկինի «Կ. Պոլսի Փոտիոս պատրիարքի առաջին պատրիարքությունը» աշխատությունը ևն:

Ամսագիրը մեծ ավանդ ունի նաև հայագիտության զարգացման ասպարեզում: 1870-ի վերջից ընդարձակվել է «Ա.»-ի հայագիտ. բաժինը: Հայագիտ. ուսումնասիրություններով հանդես են եկել Հ. Մանանդյանը, Ե. վրդ. Տեր-Մինասյանը, Ն. Ադոնցը, Ն. Մառը, Հ. Աճառյանը, Ե. Շահազիզը, Մ. Աբեղյանը, Հ. Օրբելին, թղթակցել են մտավորականներ Տ. եպս. Պալյանը, Բ. վրդ. Կյուլեսերյանը, Կ. Բասմաջյանը և ուր.: Ամսագիրն իր տարածմամբ ու հեղինակների լայն ընդգրկմամբ ստացել է համահայկ. բնույթ: Բացվել են հայագիտության ենթաբաժիններ՝ հայ երաժշտության, խազագրության, շարականների (աշխատակցել են Կոմիտասը, Ս. Ամատունին, Սպ. Մելիքյանը), հայ իրավաբան. մտքի (Ս. Տիգրանյանը, Ա. վրդ. Ղլտճյանը), գրախոսության ևն: «Ա.»-ում հրատարակված հայագիտ., պատմաբանասիր. բնույթի մեծարժեք, հարուստ նյութեր բովանդակող ուսումնասիրություններն ընդգրկել են հայագիտության գրեթե բոլոր, հատկապես՝ ձեռագրագիտության, հնագրության, մանրանկարչության ճյուղերը: Մի շարք հայ և օտարերկրյա մատենագիրների աշխատություններ հրապարակվել են գիտ. համեմատական բնագրով: Հայ անվանի շատ գիտնականների լավագույն աշխատություններն առաջին անգամ լույս են տեսել «Ա.»-ի էջերում: Նրա վերջին երկու հա-

մարները (1918–19) ամբողջովին նվիրվել են հայագիտ. նյութերին: «Ա.»-ի լավագույն նյութերն ընդգրկող մատենագիտ. ցանկերը լույս են տեսել տարբեր պարբ-ներում, ձեռք բերել սկզբնաղբյուրի նշանակություն:

Գրկ. «Արարատ» ամսագրի 100-ամյակին նվիրված նյութեր, «Էջմիածին», 1968, № 11–12: Մատենագիտություն «Արարատ» ամսագրի, Էջմիածին, 1970:

Արտաշես Ղազարյան

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու: Առաջնորդանիստը՝ Երևանի Ս. Սարգիս եկեղեցի: Կազմավորվել է քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակելու առաջին տարիներին, երբ Գրիգոր Ա Լուսավորիչը ձևավորում էր Հայ եկեղեցու նվիրապետական կառույցը: Ինքն էլ եղել է առաջին թեմակալ առաջնորդը: Ագաթանգեղոսի Պատմության հուն. և արաբ. խմբագրությունների համաձայն՝ «Սուրբը ինքը մշտական եպիսկոպոսարաններ կառուցեց Այրարատում՝ Վաղարշապատում, Արտաշատում և Դվինում, և հիշյալ քաղաքները իր աթոռին ենթարկեց»: Թեմում ընդգրկված էին Արարատյան դաշտի Մասյացոտն, Մազազ, Ոստան դավառները, նաև՝ Կոտայք, Նիգ, Ծաղկոտն, Արագածոտն դավառների ու Շարուրի դաշտի տարածքները, որոնք կառավարում էին անմիջականորեն Հայոց կաթողիկոսին ենթակա Վաղարշապատ, Արտաշատ և Դվին քաղաքների եպիսկոպոսները: Ամենայն Հայոց կաթողիկոսը միաժամանակ Այրարատյան թեմի առաջնորդն է (ինչի համար էլ թեմը կոչվում է Ա.Հ.թ.): 449-ի Արտաշատի ժողովի ժամանակ կաթողիկոս. տեղապահ Հովսեփ եպիսկոպոսը (*Հովսեփ Ա Հողոցմեցի*) միաժամանակ հիշատակվում է որպես «եպիսկոպոս Այրարատոյ»: Պահպանվել են թեմի շուրջ երկու տասնյակ նշանավոր վանքերի անուններ՝ իրենց առաջնորդների անուններով հանդերձ. «Աբրահամ՝ սրբո Կաթուղիկե վանից երեց (Ս. Էջմիածնի), Սամուել սրբո Հռիփսիմեի, Բաբյուլաս սրբո Հովհաննու վանաց, Խոսրով Օշականու, Հավիտյան Եղիվարդա, Դավիթ Երևանա, Իսմայել Գառնո, Հունանես Ավանի, Իսրայել Պողավանից, Զոլիկ Արամունից, Հովհանիկ Արտավազդա Ապարանից, Աբաս, Որդյակ և Աբրահամ Փարպեցի, Միքայել Աղցից, Գրիգորիս Արճո, Կոզմաս Ուրդա, Մահեն Մյուս Արճո, Հովհանիս Արծափաց, Սիմոն Դարունից, Սամոտ Բագարանի»: 607-ի այս ցուցակը հիշյալ վանքերից շատերի առաջին հիշատակությունն է պատմ. աղբյուրներում:

Բագրատունյաց թագավորության շրջանում (IX–XI դդ.) Ա. հ. թ-ի մասին հավաստի տվյալներ չկան, իսկ հայկ. պետականության անկումից (1045) հետո և կաթողիկոս. աթոռի երկարատև դեգերումների շրջանում (տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*) Հայոց կաթողիկոսներն այլևս չեն կարողացել անձամբ կամ իրենց նշանակած փոխանորդների միջոցով մասնակցել երբեմնի ընդարձակ այդ թեմի կառավարման գործերին:

Ձեռագրերի հիշատակարանների համաձայն, 1390-ին Արարատյան թեմը միացվել է Բջնո թեմին, և այս երկուսը կառավարել է մեկ եպիսկոպոս: Կես դար անց Արարատյան թեմը մեկ անգամ էլ է հիշատակվում՝ կապված կաթողիկոս. աթոռն Էջմիածնում վերահաստատելու (տես *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողով 1441*) իրադարձությունների հետ, և, ինչպես պարզվում է, նրա երեք վարդապետները՝ Կիրակոս Ռշտունեցին, Սարգիս Ձագավանեցին և Տիրացու Վանանդեցին, գործուն մասնակցություն են ունեցել 1441-ի ազգ. եկեղեց. ժողովին: Բացի Վաղարշապատի առաջնորդարանից ու Մայրավանքից թեմի կյանքում շոշափելի դեր են խաղացել Հավուց թառի, Հովհաննավանքի, Բջնիի, Խոր վիրապի, Կողբի, Բագարանի վանքերն իրենց միաբանություններով: Դարավերջից Արարատյան թեմ անվանումն անհետանում է պատմ. վավերագրերից, և ժամանակ անց նույն տարածքում հիշատակվում է Երևանի թեմը: Դա հետևանք էր XIV դ. վերջից երկրամասում կազմավորված մահմեդ. կիսանկախ իշխանությունների, որոնց մայրաքաղաքն է դառնում օրեցօր բարգավաճող Երևանը:

Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու և Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու (1763–80) վկայությունների, XV–XVIII դդ. Երևանը ձևավորվել է որպես նվիրական թեմ, իսկ նրա մեջ ընդգրկված բնակավայրերը սեփականության իրավունքով բաժանվել են մեծ ու փոքր վանքերի միջև: Ըստ այդմ, Երևանի առաջնորդը միաժամանակ Հավուց թառի վանահայրն էր, որը նշանակվում էր քաղաքացիների ցանկությամբ և կաթողիկոսի հաստատմամբ: XV դարից Հավուց թառի վանահայրեր են հիշվում Զաքարիա (1441), Հովհաննես (1465), Զաքարիա Բ (1487), Համազասպ և Զաքարիա Պահլավունիներ (1526–77),

Սահակ (1602), Համազասպ (1618), Մկրտիչ (1630-ական թթ.), Սիմեոն Ջուղայեցի (1640–50-ական թթ.), Հովհաննես (1650–60-ական թթ.) և այլ եպիսկոպոսներ:

Հավուց թառն ամայացել է XVIII դ. 50-ական թթ., որից հետո Երևանը դարձել է Ս. Էջմիածնի տերունական թեմերից մեկը: Երևանում Հայոց կաթողիկոսներն ունեին իրենց մշտական իջևանը՝ Ջորագյուղի անապատը: Այստեղ կառուցվել են կաթողիկոսարան, կաթողիկոս. փոքր եկեղեցի՝ Ս. Գևորգ անունով, Ս. Հակոբ Հայրապետ և Ս. Սարգիս եկեղեցիները: Էջմիածնից ուղարկված վարդապետները, հաստատվելով այստեղ, կառավարել են Մայր աթոռի երևանյան կալվածները՝ այգիներ, ջրաղացներ, կրպակներ ևն:

1610-ական թթ. Մովսես Սյունեցու նախաձեռնությամբ քաղաքի հս. մասում գտնվող Ս. Աննայի առաքյալի անշուք մատուռի կողքին կառուցվել են Ս. Աստվածածին եկեղեցին, դպրանոց և վանական այլ շինություններ, որոնք կարևոր դեր են խաղացել քաղաքի կյանքում: Այդ կառույցները փայտից էին և կործանվել են 1634–35-ին՝ Թուրք-պարսկ. կռիվների շրջանում: *Փիլիպոս Ա Աղբակեցի* կաթողիկոսը վերականգնել է վանական այդ համալիրը, բայց 1679-ի երկրաշարժի հետևանքով հիմնահատակ կործանվել են ոչ միայն Երևանի, այլև Արարատյան աշխարհի գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը՝ վերաշինվելով միայն XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին: Ս. Աննայի առաքյալի վանքը գործել է մինչև 1835-ը, ապա վերածվել է ծխական եկեղեցու (այժմ՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցի):

Ըստ Ոսկան Երևանցու ցուցակի, 1670-ին Երևանի թեմում ընդգրկված էին խանության տարածքում գործող վանական հին թեմերը կամ եպիսկոպոսարանները և մի քանի շրջանների փոխանորդություններ՝ Առինջի, Եղվարդի, Մուղնու, Սաղմոսավանքի, Կոչավանքի, Հովհաննավանքի, Գեղարդի, Մաղարդավանքի, Վարդիհայրի, Կարբիի, Աղջոց վանքի ու Ջաղավանքի (Գետարդելի) վանական թեմերը և Խոր վիրապի, Ուշիի պատվակալ արքեպիսկոպոսարանները, ընդհանուր թվով՝ ավելի քան մեկ ու կես տասնյակ: Այս թեմին էր ենթարկվում նաև Տփղիսի հայ համայնքը: XVIII դ. կեսին, երբ վերջնականապես կարգավորվել են Հայ եկեղեցու թեմերի սահմանները, Երևանը հիշատակվում է կիսով նվիրական և կիսով տերունի թեմ, որի մեջ համախմբված էին Երևան քաղաքը և շրջակա բոլոր գյուղերը, Արաքսի աջ ափին գտնվող Բլուրավանն ու շրջակա տարածքները: Այս իրավիճակը հարատևել է մինչև 1836-ին «*Պոլոժենիե*»-ի ընդունումը: XIX դ. կեսին ռուս. կայսրության սահմաններում ձևավորվել են Հայ եկեղեցու 6 ընդարձակ թեմեր կամ վիճակներ, որոնցից երրորդը Երևանի թեմն էր, որի իրական առաջնորդն էր Ամենայն Հայոց կաթողիկոսը: Թեմն ունեցել է 4 փոխանորդություն՝ Երևանի, Նախիջևանի, Շիրակի ու Տաթևի: Կարսը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց (1878) հետո՝ 1880-ական թթ., թեմի կազմում ավելացել է նաև հինգերորդ՝ Կարսի փոխանորդությունը, որն ընդգրկում էր ողջ Կարսի մարզը: 1900-ին Երևանի թեմում կար 643 եկեղեցի, 47 վանք, 788 քահանա, 585004 ծխական համայնքի անդամներ՝ որոնցից 66500-ը՝ քաղաքաբնակ, իսկ 518504-ը՝ գյուղաբնակ: Գործում էր 1837-ի սեպտ. 2-ին բացված մեկ թեմական դպրոց՝ 460 աշակերտով և 20 ուսուցչով:

Նախախորհրդ. շրջանում Երևանի թեմի առաջնորդարանը մշտապես գործել է Ջորագյուղի անապատի նախկին կաթողիկոսարանում: Ս. Գևորգ եկեղեցին վերակառուցվել է և օգտագործվել որպես թեմական խորհրդարան և դրատուն: Երևանի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնն են վարել նշանավոր հոգևորականներ Զաքարիա վրդ. Գյուլասպյանը, Հովհաննես վրդ. *Շահխաթունյանցը*, Ստեփանոս արք. Արղությանը, Մեսրոպ արք. Սմբատյանցը, Սուքիաս արք. *Պարզյանը*, Կարապետ եպս. *Տեր-Մկրտչյանը*, Խորեն վրդ. Մուրադբեկյանը (1932–38-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս *Խորեն Ա Մուրադբեկյան*) և ուր.: Խորհրդ. իշխանության տարիներին Ամենայն Հայոց կաթողիկոսության նվիրապետ. կարգը ենթարկվել է արմատ. փոփոխությունների. Երևանի թեմը՝ իբրև հայրապետական, շարունակել է իր գոյությունը, այն տարբերությամբ, որ տրոհված էր երկու փոխանորդությունների՝ Հին Նախիջևանի ու Դարալագյազի և Նոր Բայազետի: Թեմի կազմում էին նաև Սևանի մենաստանը, Մուղնու Ս. Գևորգ և Գնդեվազի վանքերը: 1930-ական թթ. սկզբին փոխանորդությունները վերացել են, և մի կարճ ժամանակ թեմը տրոհվել է 15 գործակալություններ՝ Բաշ Գառնիի, Գառնիի, Վեդի-Բասարի, Հին Նախիջևանի և Գողթնի, Մեղրու, Կոտայ-

ԱՐԱՐՉԱԳՈՐԾ. քի, Ծաղկաձորի, Գեղարքունյաց, Դարալագյազի, Վաղարշապատի, Աշտարակի, Ապարանի, Բաշ Ապարանի, Սարդարապատի, Հրազդանակողմյան, որոնք նույնպես շուտով վերացել են, և Երևանի թեմը դարձել է ձևական կամ անվանական:

Ստալինյան հալածանքների տարիներին փակվել են թեմի տարածքում գործող գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը, բանտարկվել, աքսորվել կամ գնդակահարվել է հոգևորականների զգալի մասը, Երևանում քանդվել են Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին (այժմյան «Մոսկվա» կինոթատրոնի տեղում), Գեթսեմանիի մատուռը (Օպերայի և բալետի ազգային թատրոնի տեղում), Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (Ե. Չարենցի անվ. դպրոցի տեղում), Ս. Հակոբ եկեղեցին, Կոզեռնի մատուռը և միջնադարյան համանուն գերեզմանոցը (ԱԺ շենքի տեղում) ևն:

Երևանի թեմը, արդեն հին անունով (Արարատյան Հայրապետական), աննշան արտոնություններ է ստացել 1960-ական թթ., Վազգեն Ա-ի կաթողիկոսության շրջանում: 1989-ին նրանից առանձնացվել է *Այուսնյաց թեմն* իր այժմյան տարածքով, իսկ 1991-ին՝ *Գուգարքի թեմը*: 1996-ի մայիսի 30-ին, Գարեգին Ա-ի հայրապետ. տնօրինությամբ թեմից անջատվել և առանձին միավոր են կազմել Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի թեմերը:

Ա. Հ. Թ. ներկայումս իր մեջ ներառում է Երևան քաղաքը, Արարատի մարզը և Սևանի վանքը: Թեմն ունի 17 գործող եկեղեցի և վանք, 8 մատուռ:

Ա. Հ. Թ-ի տարածքում են գտնվում Դվինի կաթողիկոսարանի համալիրը, Խոր վիրապ (նշանակվում է Մայր աթոռին), Ս. Հովհաննես Կարապետ, Հավուց թառ, Աղջոց վանքերը, Երևանում՝ Ավանի Ս. Հովհաննես (VI դ.), Քանաքեռի Ս. Աստվածածին (XVII դ.), Նորագավթի Ս. Ծիրանավոր (XVIII դ.), Ս. Սարգիս (XIX դ., վերակառուցված՝ XX դ.) եկեղեցիները, Արարատի մարզում՝ Մրգավանի Ս. Հակոբ, Արգավանդի Ս. Սարգիս, Վերին Արտաշատի Ս. Աստվածածին, Արարատի Ս. Հակոբ, Դալարի Ս. Աստվածածին, Գեղարքունիքի մարզում՝ Սևանավանքի Ս. Առաքելոց և Ս. Կարապետ եկեղեցիները:

Ա. Հ. Թ-ի գործող եկեղեցիներն են՝ Երևանում՝ Ս. Սարգիս, Ս. Զորավոր, Ս. Կաթողիկե, Կոնդի Ս. Հովհաննես, Նորագավթի Ս. Գևորգ, Նորք-Մարաշի Ս. Աստվածածին, Քանաքեռի Ս. Հակոբ, Մալաթիայի Ս. Աստվածածին, Եռաբլրի Ս. Վարդանաց, Շենգավիթի Ս. Խաչ մատուռը:

Երևանում գործում են 3 Հայորդաց տներ (Արաբկիր, Մալաթիա, Նորք թաղամասերում), Հայ եկեղեցու երիտասարդաց միությունը (ՀԵԵՄ), Քրիստոնեական դաստիարակության դպրոցների կենտրոնը (ՔԴԴԿ), Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի մասնաճյուղը, «Շողակաթ» հեռուստակենտրոնը, Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակը, Քանաքեռի մանրանկարչության կենտրոն դպրոցը, բարեգործական ճաշարաններ: 2000-ից լույս է տեսնում «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթը:

Ա. Հ. Թ-ի առաջնորդական փոխանորդն է Նավասարդ եպս. Կճոյանը (1999-ից):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.7, 1-ին պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.2:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխատասիր. Ե. Տեր-Մինասյան, Ե., 1994: Գիրք թղթոց, 2 հրտ., Երուսաղեմ, 1994: Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թ., 1892: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Սիմեոն Երևանցի, Հիշատակարան, տես Դիվան հայոց պատմության, հ. 3, Թ., 1894, հ. 8, Թ., 1908: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի..., հ. 2, Էջմիածին, 1842: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Հովսեփյան Գ., Հավուց թառի Ամենափրկիչը, Երուսաղեմ, 1927: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), Ե., 1994:

Պիոն Հակոբյան

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, տես *Դավանանք* Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոդվածում:

ԱՐԳԵԼԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Առբերանի գավառում, Ծաղկանց լեռների հարավային լանջին, բարձր քարաժայռի վրա: Հիշատակվում է XIII դարից, Տեր Հուսկանորդի Ստեփանոսի անվան հետ կապված: 1251-ին, վերջինիս մահից հետո նրա գերեզմանի վրա, Ա. Ս. Ա. վ-ից ոչ հեռու, հիմնվել է *Բերկրիի Ս. Ստեփանոս վանքը*, և երկու վանքերը մեկ միաբանություն են կազմել: Ա. Ս. Ա. վ. XV դ. դարձել է առաջնորդանիստ, այստեղ գործել է գրչության կենտրոն: 1462-ին վանք է այցելել Աղթամարի Զաքարիա կաթողիկոսը: XVI դ. վանքում գործել են գրիչ և տաղասաց Եղիա Բերկրեցին ու Անդրեաս Արգելանցին: XIX դ. վանքն ունեցել

է ընդարձակ հողամասեր և արոտավայրեր: Վանքի այսօր կանգուն եկեղեցին մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է, որի արտաքին ճակատների երեսապատման սրբատաշ քարերը չրջակայքի բնակիչները պոկել են:

Գրկ. Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1983-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: 1938–82-ին արգենտինահայ համայնքը Ուրուգվայի, Բրազիլիայի և Չիլիի հայ համայնքների հետ միասին ընդգրկված էր Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակության կազմում (կենտրոնը՝ Բուենոս Այրես): Առաջին հայրապետական պատվիրակն էր Գարեգին արք. Խաչատուրյանը (1938–51, 1951–61-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք): Այնուհետև, որպես հայրապետական պատվիրակ, պաշտոնավարել են Սիոն արք. Մանուկյանը (1952–57), Բաբկեն արք. Ապատյանը (1959–1978), Արգենտինայի Կորդովա քա-ի հոգևոր հովիվ Տաթև ծ. վրդ. Ղարիբյանը (1978–83): 1983-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակությունը բաժանվել է երեք առանձին (Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի) թեմերի: Ա. թ-ի առաջին առաջնորդ է նշանակվել Գրիգորիս եպս. Բունիաթյանը (1983–90):

Արգենտինահայ համայնքի ներկայացուցչական համադրիչ մարմինը Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձությունն է՝ Հայ կեդրոն անունով, որը եկեղեցու վարչ. խորհուրդն է. մասնաճյուղեր ունի Կորդովայում և Ռոսարիայում: Խորհրդի գլխավորությամբ գործում են կրթ., բարեգործ. և մշակութ. կազմակերպություններ: Բուենոս Այրեսում, որտեղ ներկայումս (2001) բնակվում է շուրջ 80 հզ. հայ, գործում են Ս. Գրիգոր Լուսավորիչ, Վարագա Ս. Խաչ, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Գևորգ, Ս. Հակոբ, Ս. Երրորդություն հայկ. եկեղեցիները: Հայկ. վարժարաններից Ս. Գրիգոր Լուսավորիչ կրթ. հաստատություն-վարժարանը (հիմն. 1932-ին, 1960-ից՝ ամենօրյա, 1965-ից՝ միջնակարգ) ենթարկվում է եկեղեցու թեմական խորհրդին: Արծրունի ազգ. վարժարանը (հիմն. 1928-ին, 1966-ից՝ ամենօրյա), Պահչեճյան ամենօրյա ազգ. վարժարանը (հիմն. 1962-ին), Վիսենտե Լոպեսի ազգ. ամենօրյա վարժարանը (հիմն. 1966-ին), Խրիմյան կրթ. հաստատությունը և ՀԲԸՄ վարժարանները պատկանում են Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձությանը:

Կորդովայում, որտեղ ներկայումս (2001) բնակվում է մոտ 4 հզ. հայ, 1925-ից գործել է Հայ եկեղեցու հոգաբարձության տեղի մասնաճյուղը՝ Կորդովահայ գաղութային միություն անունով: Կորդովայում է հիմնվել Արգենտինայի անդրանիկ Ս. Գևորգ հայկ. եկեղեցին (1926): Եկեղեցուն կից գործում են կիրակնօրյա դպրոց, Սահակ-Մեսրոպ հայկ. ամենօրյա վարժարանը:

1932–70-ին Բուենոս Այրեսում հրատարակվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձության «Հայ կեդրոն» պաշտոնաթերթը: 1991–92-ին «Հայ կեդրոն»-ի՝ Հայաստանին նվիրված երեք անթվակիր համարները լույս են տեսել իսպաներեն: 1997-ից վերահրատարակվում է հիմնականում իսպաներեն:

Ա. թ-ի առաջնորդն է Գիսակ արք. Մուրադյանը (1990-ից):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.7, 2-րդ պատկերը:

ԱՐԳԻՆԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ, Հայոց կաթողիկոսության նստավայրը 944–992-ին: Հայաստանի մայրաքաղաքը X դ. Շիրակավանում հաստատվելուց հետո *Անանիա Ա Մոկացին* կաթողիկոսարանը Աղթամարից տեղափոխել է VI–VII դարերից անառիկ ամրոցով հայտնի, Շիրակավանին մոտ գտնվող Արգինա գյուղաքաղաքը: Նրա հաջորդի՝ *Խաչիկ Ա Արշարունու* պատվերով, ըստ X–XI դդ. պատմիչ Ասողիկի, ճարտ. *Տրդատը* սրբատաշ քարով կառուցել է Ա. կ-ի Կաթողիկեն, երեք համամման եկեղեցիներ, վերակառուցել կաթողիկոսարանի շինքերը: Կաթողիկեն գմբեթավոր դահլիճ է՝ երկու զույգ որմնամույթերով, արտաքին ճակատներում առանց կամարաշարի: Այստեղ Տրդատն առաջին անգամ կիրառել է եկեղեցու ներսակողմին դեպի վեր դինամիկ շարժում հաղորդող որմնամույթերի ջլատումները՝ հնարք, որը հետագայում ավելի կատարելագործված իրականացրել է *Անիի Մայր տաճարում*: Խաչիկ Ա Արշարունին Կաթողիկեն զարդարել է ոսկե-

ԱՐԴՎԻԻ

թելով գործված վարագույրներով, ոսկե ու արծաթե անոթներով ու ջահերով, Ա. կ-ին կից բացել բարձրագույն դպրոց ու մատենադարան, բազմաթիվ ձեռագրեր հավաքել այդտեղ և ընդօրինակել տվել նորերը: Հայաստանի անկախության կորստից (1045) հետո Արգինայի Կաթողիկեն վերածվել է բերդ-եկեղեցու, նրա ծածկի վրա բարձրացվել են պատեր, և այդ լրացուցիչ ծանրությունը հետագայում նույնպես դարձել է եկեղեցու ավերման պատճառ: XX դ. սկզբին դեռ պահպանվել էին Կաթողիկեի հս. պատը և արմ. պատի մի մասը, արմ. մուտքը՝ 1012-ի արձանագրությամբ (այժմ Կաթողիկեի, ինչպես և կաթողիկոսարանի շենքերի ու Արգինայի մյուս երեք եկեղեցիների հետքերն անհետացել են): Խաչիկ Ա Արշարունին ամփոփվել է Արգինայի Կաթողիկեի հս. կողմում շինված դամբարանում: Ա. կ-ին կից X դ. գործել է մեծ համբավ վայելող վարդապետարան: Այնտեղ աստվածաբանության հետ ուսանել են իմաստասիրություն, հռետորություն, մեկնողական արվեստ: Դասավանդել են Հնձուց վանքի նախկին առաջնորդ Հովսեփ վարդապետը, Թեղենյաց մենաստանից՝

Արգինայի Կաթողիկե եկեղեցին (X դ., ճարտ.՝ Տրդատ) հվ-ից

Կիրակոսը, Աղվանքից՝ Սարգիսը ևն: Արգինայի բարձրագույն դպրոցում սովորել են նաև աշխարհականները: Կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցին* կաթողիկոսարանի հետ միասին Արգինայից Անի է տեղափոխել նաև մատենադարանը և վարդապետարանը (տես *Անիի կաթողիկոսարան*):

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, Ե., 1942: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Հասրաթյան Մ., Արգինայի Կաթողիկեն, ՀԱ, 1977:

Մուրադ Հասրաթյան

ԱՐԴՎԻԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆՔ, Սրբանես վանք, ՀՀ Լոռու մարզի Արդվի գյուղի հյուսիս-արևմտյան եզրին: Բաղկացած է միմյանց կից երկու թաղածածկ եկեղեցիներից,



Արդվիի Ս. Հովհաննես վանքը արմ-ից

զանգակատնից, վանական շինություններից: Հս. եկեղեցու բեմի առջև *Հովհաննես Գ Օձնեցու* խոշոր տապանաքարն է: XIII դ. եկեղեցու արմ. ճակատին կամարակապ մեծ բացվածքով սրահ են կցել: XVII դ., եկեղեցիներից հվ. կառուցել են առանձին կանգնած, խորանարդաձև ստորին ծավալով և վեցայուն ռոտոնդայով զանգակատուն: Վանքի պարսպապատ տարածքում գտնվում են խցերի և տնտ. շենքերի ավերակները, համալիրից արմ. միջնադարյան դեռեզմանոցն է՝ գեղաքանդակ խաչքարերով: Վանքը XIX դ. նորոգել է Ստեփանոս Տարինյանը, 1902-ին՝ Մելիքսեթ Քալանթարյանը:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Թ., 1842: Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986:

Մուրադ Հասրաթյան

ԱՐԵՆԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի գյուղի մոտ, Արփա գետի ձախ ափին, բարձունքի վրա: Ըստ արմ. մուտքի արձանագրության, կառուցել է Այուն-նյաց արքեպիսկոպոս Հովհաննես Օրբելյանը 1321-ին, ճարտարապետն է *Մոմիկը*: Վերասլաց, ներդաշնակ համաչափություններով եկեղեցին մեկ զույգ արմ. մույթերով, խորանի երկու կողմերում ավանդատներով կենտրոնագմբեթ հորինվածք ունի: Ինքնատիպ են խորանի զույգ խաչաձև լուսամուտները: Արմ. մուտքի բարավորի զարդաքանդակի կենտրոնում, գահավորակի վրա Աստվածածինն է՝ մանուկ Հիսուսը գրկին: Եկեղեցու ներսում, գմբեթակիր քառա-

կուսու առագաստներին քանդակված են չորս ավետարանիչների խորհրդանշանները՝ հրեշտակ, թևավոր ցուլ, արծիվ և թևավոր առյուծ: Ա. Ս. Ա. ե-ու պատկերաքանդակներն ակնհայտ ոճական աղերսներ ունեն հայկ. մանրանկարչության ընդհանրացած ձևերի հետ:

1840-ի երկրաշարժից քանդվել է եկեղեցու գմբեթը: 1967–72-ին նորոգվել են Ա. Ս. Ա. ե-ու պատերը և ծածկը: 1998-ին պոլսահայ Արտաշես Տյուզմեճյանի բարերարությամբ և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի հովանավորությամբ վերակառուցվել է եկեղեցու գմբեթն իր նախնական տեսքով՝ բազմանիստ, կիսասյունիկներով զարդարված, հովանոցաձև վեղարով: Եկեղեցու մոտ գտնվում են իշխան Տարսայիճ Օրբելյանի ապարանքի ավերակները, շուրջը՝ XIV–XVII դդ. խաչքարեր և տապանաքարեր:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.7, 3-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Թամանյան Յու., Ազատյան Շ., Մոմիկը որպես ճարտարապետ, «Էջմիածին», № 3, 1969: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԵՐԳԵՐ, արևածագին նվիրված երգեր: Ա. ե-ի հիմն. բովանդակային առանցքն է լույսի, խորհրդաբանորեն՝ աստվածային էության փառաբանումը: Նախաքրիստ. շրջանում կապված են եղել արևի պաշտամունքի հետ և, ամենայն հավանականությամբ, առնչվել մեհենական երգային ավանդույթին:

Հայ եկեղեցու ինը *ժամերգություններից* մեկը նվիրված է արևագալին: Ըստ Մ. արք. Օրմանյանի, VII դ., Հայոց կաթողիկոս *Եզր Ա Փառաժնակերտցու* կարգադրությամբ, Առավոտյան ժամերգության վերջին հատվածը զատելով, կազմվել է հատուկ Արևագալի ժամերգություն:

Արևագալի ժամերգությունը մեկնաբանել են *Ստեփանոս Սյունեցին* (VIII դ.) և *Խոսրով Անձևացին* (X դ.): Մինչև XII դ. Արևագալի ժամերգությունը ներառել է ժամին պատշաճ *սաղմոսները*: XII դ. *Ներսես Շնորհալին*, անդրադառնալով այս ժամերգությանը, արևագալի համար ստեղծել է չորս նոր երգ՝ «Յարեւելից մինչ ի մուտս», «Ճրգնաւորք Աստուծոյ», «Լոյս, արարիչ լուսոյ» և «Ճանապարհ եւ ճշմարտութիւն», սրանց կից՝ չորս հորդորակ: Կա տեսակետ, որի համաձայն, այս ստեղծագործությունները միջնադարյան հոգևոր երգարվեստի մեջ *երգ* ժանրի ձևավորման առաջին դրսևորումներից են և կազմավորվել են հոգևոր երգաժանրերի, ինչպես նաև հեթանոս. պաշտամունք. արվեստի հիման վրա: Մասնավորաբար ակնարկվում է միջնադարում տարածված հայկ. *արևորդիներ* աղանդի պաշտամունք., ծիս. երգարվեստի հետ ունեցած կապը:

Գիշերային և Արևագալի ժամերգությունները փոխարինել են միմյանց, մեկի համար սահմանված օրերին մյուսը զանց է առնվել: Այժմ արևագալը ժամերգվում է միայն *Մեծ պահքի* շրջանում:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Մհեր Նավոյան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ, Հայոց Հյուսիսային Կողմանց վարդապետներ, XII–XV դդ. գիտամանկավարժական գործունեությամբ հռչակված վարդապետների, բաբունապետների, վանահայրերի, դավանաբան տեսաբանների, Հայ առաքելական եկեղեցու ավանդության և ինքնուրույնության պաշտպան հոգևորականների ընդհանուր անվանումը: Հիմնականում գործել են Հայաստանի հս-արլ. շրջանների վանքերում, գիտամշակութ. կենտրոններում, վարդապետարաններում (Հաղպատ, Սանահին, Հաղարծին, Քոբայրավանք, Խորակերտ, Խորանաշատ, Գոշավանք, Կեչառիս ևն): Ա. վ-ի անունները պահպանվել են *Ներսես Շնորհալու*՝ Ա. վ-ին հղած թղթում և *Կիրակոս Գանձակեցու* Պատմության մեջ: Վերջինս նրանց անվանել է «երևելի վարդապետներ»: Ա. վ-ից առավել հայտնի են *Գրիգոր Տուտեորդին, Դավիթ Քոբայրեցին, Հովհաննես Սարկավագը, Պողոս Տարոնեցին, Մխիթար Գոշը* և ուր., որոնք տարբեր ժամանակներում ստանձնել են Հայոց Հյուսիսային Կողմանց վարդապետների ղեկավարի դերը:

Ա. վ., լինելով Հայ եկեղեցու ծիսադավան. կարգի ընդգծված ավանդապահներ, հանդես են եկել Հայ եկեղեցու ավանդությանը սպառնացող նորամուծությունների դեմ, պաշտպանել նրա նվիրապետ. և ծիսադավան. ինքնուրույնությունը Հույն և Հռոմի եկեղեցիների

ԱՐԵՎԵԼՅԱՆ ոտնձգություններից: Վայելել են մեծ հեղինակություն նաև Կիլիկյան Հայաստանում. հատկապես *Հռոմկլայի կաթողիկոսարանի* հայոց հայրապետները (Ներսես Շնորհալի, *Գրիգոր Դ Տղա, Կոստանդին Ա Բարձրբերդցի* և ուր.) միշտ հարցրել են նրանց կարծիքը կարևորագույն խնդիրների վերաբերյալ: Այդ շրջանում Ա. վ. ընդդիմացել են կիլիկյան հայրերին Հայ և Հույն եկեղեցիների միության հարցում, իսկ ավելի ուշ՝ *Սսի կաթողիկոսարանի* վարած քաղաքականությանը՝ Հայ և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների միության, Հայ եկեղեցու ծիսադավան. զիջումների հաշվին Արևմուտքից ռազմաքաղ. օգնություն ստանալու հարցում: Նրանց ջանքերի շնորհիվ չեն իրագործվել 1307-ի Սսի ժողովի (տես *Սսի եկեղեցական ժողովներ*) և 1316-ի *Ադանայի եկեղեցական ժողովի* լատինամետ որոշումները: Բուն Հայաստանում Ա. վ. ընդդիմացել են նաև Զաքարե ամիրսպասալարին (Զաքարե Բ Մեծ Երկայնաբազուկ), որը փորձել է Լոռեի 1205-ի և Անիի 1207-ի (տես *Անիի եկեղեցական ժողով 1207*) ժողովներում ընդունել տալ հայ զինվորների համար բանակում Պատարագի շարժական սեղան գործածելու Վրաց եկեղեցու սովորույթը: Ավելի ուշ, Սյունյաց վարդապետների (*Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի* և ուր.) հետ պայքարել են Հայաստանում ունիթորական շարժման (տես *Ունիթորություն*) դեմ:

Ա. վ-ի առավել ավանդապահ թևը Գրիգոր Տուտեորդու գլխավորությամբ անհաշտ դիրք է բռնել կիլիկյան հայրերի ցանկացած նորարարության, միութենական փորձերի դեմ, Հայոց հայրապետներից ոմանց մեղադրել Հայ եկեղեցու ավանդներից շեղվելու մեջ: Զափավոր թևը, որը գլխավորել է Մխիթար Գոշը, հանդես է եկել դավան. հանդուրժողականության, քրիստոնյա մյուս եկեղեցիների հետ առավել սերտ կապեր պահպանելու գաղափարներով, չխաթարելով, սակայն, Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու հնավանդ կարգը:

Ա. վ. նշանակալի դեր են խաղացել հայ գիտության, մշակույթի, փիլիսոփայության, աստվածաբան. մտքի զարգացման գործում, թողել մատենագր. հարուստ ժառանգություն:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Մելիքսեթ-Բեկ Լ., Վարդապետք Հայոց Հյուսիսային Կողմանց և նրանց ինքնությունը, Տփխիս, 1928 (վրաց.): Մուրադյան Պ., Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, «Գանձասար», 4, 1993:

Արտաշես Ղազարյան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, Արևելյան հնագույն եկեղեցիներ, քրիստոնյա Արևելքում կազմավորված ազգային եկեղեցիներ, որոնք, մերժելով *Քաղկեդոնի ժողովը*, կազմել են *Ընդհանրական եկեղեցու* Արևելյան ուղղափառ ընտանիքը: Ա.ու.ե. իրենց դավանանքով հետևորդներն են *Ալեքսանդրիայի* քրիստոսաբանության և աստվածաբանության, որոնք հաղթանակել և ուղղափառ են ճանաչվել երեք *տիեզերական ժողովներում*: Ընդունելով միայն երեք տիեզեր. ժողովների դավան. վճիռները՝ Ա.ու.ե. գտնում են, որ Նիկիայի Ա (325), Կ. Պոլսի Բ (381), Եփեսոսի Գ (431) տիեզերաժողովները բանաձևել են քրիստ. կրոնի և հավատի հիմն. սկզբունքները, այն է՝ Որդու Աստվածությունը, Ս. *Երրորդության*, Մարդեղության և Փրկագործության խորհուրդները: Հետագայի նորամուծությունները նրանք համարում են ալեքսանդրյան աստվածաբան. ավանդությանը հակասող: Ա.ու.ե., մերժելով միաբնակությունը (տես *Եվտիքականություն*), *նեստորականությունը, քաղկեդոնականությունը* (երկաբնակություն), կանգնել են դավան. այն սկզբունքների վրա, որոնք ավանդվել են Աստվածաշնչով, երեք տիեզեր. ժողովներով և *եկեղեցու հայրերի* ուսուցումներով:

Ա.ու.ե. են՝ *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, Ղպտի ուղղափառ եկեղեցին*, սրանից առանձնացած *Եթովպական ուղղափառ եկեղեցին, Ասորի ուղղափառ եկեղեցին*՝ Անտիոքի պատրիարքությամբ (Հակոբիկյան եկեղեցի) և Հնդկաստանի Մալաբար ասորական ուղղափառ եկեղեցին:

Արտաշես Ղազարյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հայաստանյայց առաքելական եկեղեցու: Կենտրոնը՝ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի: Նախապես կոչվել է Եվրոպայի հայրապետական պատվիրակություն, որը կազմավորվել է XIX դ. վերջին, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու կոնդակով, կենտրոնը՝ Մանչեստր, 1907-ից՝ Փարիզ: Ընդգրկել է Եվրոպայի երկրների հայ հոգևոր համայնքները: Հայրապետ. պատվիրակներ են

եղել Գևորգ եպս. Ութուճյանը, Թորգոմ արք. *Գուշակյանը*, Գրիգորիս եպս. Պալաքյանը, Արտավազդ արք. Սուրմեյանը, Սերովբե արք. Մանուկյանը և ուր.: Երկրորդ համաշխ. պատերազմից հետո Արլ. Եվրոպայի սոցիալիստ. երկրների հայ համայնքները դուրս են եկել Եվրոպայի հայրապետ. պատվիրակության կազմից, որն այնուհետև վերանվանվել է Ա. Ե. Հ. պ.: Ժամանակի ընթացքում առանձնացել են նաև Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Հունաստանի հայ հոգևոր համայնքները: Ներկայումս Ա. Ե. Հ. պ-յան գերակայության ներքո են Ֆրանսիայի հայ համայնքը (Փարիզի, Լիոնի, Մարսելի շրջաններով), Հոլանդիայի հոգևոր հովվությունը, Բելգիայի հոգևոր հովվությունը, Իտալիայի հոգևոր հովվությունը: Վերջինս կատարում է նաև Ալբանիայի հայ ընտանիքների հոգևոր մատակարարությունը:

Փարիզի շրջան, կենտրոնը՝ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի: 1927-ին կազմավորվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Փարիզի և շրջակայքի կրոն. ընկերությունը, որի ղեկավար մարմինը ներկայացուցչական ժողովն է (ընտրվում է չորս տարին մեկ, կազմված է 24 աշխարհիկ և 3 եկեղեց. ներկայացուցիչներից), նախագահն է Փարիզի հայոց հոգևոր առաջնորդը: Նույն թվականին ստեղծվել են Միջին Ֆրանսիայի (կենտրոնը՝ Լիոն) և Հվ. Ֆրանսիայի (կենտրոնը՝ Մարսել) թեմական կազմակերպությունները: Փարիզի առաջնորդին չնորհվել է հայրապետ. պատվիրակի կարգավիճակ:

Փարիզում առաջին հայկ. մատուռը՝ Ս. Էջմիածինը, կառուցվել է 1854-ին (գործել է մինչև 1869-ը): 1870-ից հայերն օգտագործել են Փարիզի Վիեն փողոցում գտնվող, բողոքականներին հատկացված ժողովարանը: 1902-ին կատարվել է Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքը (Ա. Մանթաշյանի նյութ. օժանդակությամբ), 1904-ին՝ օծումը: Կից գործում է մեկօրյա դպրոց:

Փարիզի հայաբնակ արվարձաններից Ալֆորվիլում 1930-ին կառուցվել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, կից գործում է Սահակ-Մեսրոպ վարժարանը (ամենօրյա), Առնովիլ լը Գոնեսում 1931-ին կառուցվել է Վարագա Ս. Խաչ եկեղեցին (օծվել է 1932-ին), կից գործում է շաբաթօրյա վարժարան, Շավիլում 1957-ից գործում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 1975-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը կատարել է Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու օծումը: Կից գործում է շաբաթօրյա դպրոց:

Փարիզի հայոց առաջնորդն է Արմ. Եվրոպայի հայրապետ. պատվիրակ Գյուտ արք. Նագդաշյանը (1984-ից):

Լիոնի շրջան, կենտրոնը՝ Լիոնի Ս. Հակոբ եկեղեցի: Ընդգրկում է Միջին Ֆրանսիայի Լիոնի և Ռոն-Ալպերի հայաշատ շրջանների քաղաքները:

1918-ին Լիոնում, Ստեփան Կարապետ Օղլուի նախաձեռնությամբ, ստեղծվել է Ազգային միություն, որը կազմակերպել է հայ համայնքի, հաս., հետագայում նաև՝ հոգևոր կյանքը: Միության վարչությունը հայ ընտանիքների բնակության համար Ֆուայե Լիոնե թաղամասում վարձակալել է փայտաշեն տներ: 1925-ին այդ տներից մեկը վերածվել է մատուռի՝ Ս. Աստվածածին անունով: Նույն թվականին Լիոնի շրջանի հոգևոր առաջնորդ և հայրապետ. պատվիրակ Գրիգորիս եպս. Պալաքյանը հանդիպել է Ազգ. միության ղեկավարների հետ՝ Ազգ. միությանը զուգահեռ Միջին Ֆրանսիայի թեմական կազմակերպություն ստեղծելու համար: 1927-ից գործել է Լիոնի և շրջակա թեմերի ազգային գավառական խորհուրդ անունով թեմական կազմակերպությունը՝ իր մեջ ընդգրկելով Լիոնի և Ռոն-Ալպերի շրջանի հայկ. ծխերը: Երկրորդ համաշխ. պատերազմից հետո այս թեմական կազմակերպությունը դադարել է գործել:

1932-ին Ս. Աստվածածին մատուռը, պահպանելով անունը, փոխադրվել է մեկ այլ թաղամաս, որտեղ գործել է մինչև 1962-ը: Կից բացվել է մեկօրյա Հայկազյան վարժարանը (1936-ից): 1954-ին եկեղեց. հանձնաժողովի նախաձեռնությամբ Շինարար տիկնանց հանձնախմբի և Հայաստանյայց եկեղեցու երիտասարդ. միության գործակցությամբ (բարերար Կարապետ Հակոբյանի նյութ. օժանդակությամբ) Լիոնում կառուցվել է առաջնորդանիստ Ս. Հակոբ եկեղեցին (օծվել է 1963-ին): Կից գործում է մեկօրյա դպրոց: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1981-ին, օծվել՝ 1984-ին:

1987-ին, Լիոնի շրջանի առաջնորդ Նորվան եպս. Զաքարյանի ջանքերով, Լիոնի աստվածաբան. համալսարանում բացվել է Գալուստ Կյուլպենկյանի անվ. հայագիտ. ամբիոն: 1988-ից ցայսօր Առաջնորդարանին կից գործում է Մարգարյան-Փափազյան ամենօրյա վարժարա-

նը: 1977-ին կազմակերպվել է Լիոնահայ տիկնանց միությունը, որն ունի մատենադարան (Սերովբե արք. Մանուկյանի անվան): Լիոնի «Եփրատ» տպարանում 1982–90-ին տպագրվել է «Ս. Հակոբ» պարբերականը:

Լիոնի շրջանի մեջ են մտնում շրջակա հայաշատ քաղաքները: Դեսինում գործում է Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1946-ին), կից՝ շաբաթօրյա վարժարան: Համայնքի հոգևոր հովիվն է Մկրտիչ քհն. Պալապանյանը:

Շարվիեում գործում է Ս. Նշան եկեղեցին (օծվել է 1982-ին): Ունի իր վարչ. խորհուրդը: Գործում են տարբեր հանձնաժողովներ (կրոն., կրթ., մշակութ.): Համայնքի հոգևոր հովիվն է Կարապետ վրդ. Հարությունյանը:

Սենտ Էտիենում գործում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (օծվել է 1984-ին), կից՝ ժող. տուն՝ մշակութ. նպատակների համար: Համայնքի հոգևոր հովիվն է Տաթև վրդ. Մուրադ-Հակոբյանը:

Ռոմանում, 1988-ին քաղաքապետարանի համաձայնությամբ, Վալանսի կաթողիկե եպիսկոպոսարանի և Լիոնի Հայ առաքելական եպիսկոպոսարանի միջև կնքվել է պայմանագիր՝ Ս. Նիկողայոս կաթողիկե եկեղեցին 30 տարով հայերին հանձնելու մասին: Գործում է եկեղեց. խորհուրդ, որը Ռոման քաղաքի Հայ բարեկամության միության համագործակցությամբ օժանդակում է եկեղեցուն: Համայնքի հոգևոր հովիվն է Նարեկ քհն. Վարդանյանը:

Վալանսում 1951-ին կառուցվել է մատուռ, որը 1953-ին օծվել է որպես եկեղեցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Գործում է Ազգ. կրոն. ընկերակցություն: 1990-ին Եկեղեց. վարչությունը գնել է կաթոլիկ միաբանությանը պատկանող XVII դ. եկեղեց. համալիր (վերանորոգվել է ազգ. բարերար Վ. Պոզաճյանի նյութ. օժանդակությամբ), կառուցվել է հայկ. ոճով խորան, և եկեղեցին վերանվանվել Ս. Սահակ (օծվել է 1992-ին): Եկեղեցուն կից գործում է մեկօրյա Դավիթյան վարժարանը՝ Վալանսի և շրջակայքի հոգևոր հովիվ Անդրանիկ քհն. Մալճյանի ղեկավարությամբ:

Գրենոբլ և Վիեն քաղաքներում առայժմ հայկ. եկեղեցիներ չկան: Գործում են եկեղեց. վարչություններ, որոնք կրոն. արարողություններ կատարելու համար Լիոնից այցելու հովիվ են հրավիրում՝ օգտագործելով տեղի կաթոլիկ եկեղեցին:

Լիոնի շրջանի հոգևոր առաջնորդը և Հայրապետ. պատվիրակի փոխանորդն է Նորվան եպս. Զաքարյանը (1980-ից):

Մարսելի շրջան, կենտրոնը՝ Մարսելի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Սրբոց Թարգմանչաց եկեղեցի (օծվել է 1931-ին): Ընդգրկում է Հվ. Ֆրանսիայի հայաշատ քաղաքները: 1927-ին հայրապետ. պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ Մարսելի շրջանում ստեղծվել է թեմական կազմակերպություն, ընտրվել է Ազգ. կենտր. վարչություն: Մարսելում կառուցվել են՝ 1928-ին՝ Ս. Կարապետ, 1929-ին՝ Ս. Աստվածածին եկեղեցիները:

Դեռևս 1673-ին *Ոսկան Երևանցին* Մարսելում հիմնել է տպարան, որտեղ առաջին անգամ տպագրվել է Գրիգոր Նարեկացու Մատյանը՝ «Գիրք աղօթից» (մնացել է անավարտ):

1920–30-ական թթ. հայերը հաստատվել են նաև Մարսելի արվարձաններում. Բոմոնի Սեն Լուում 1929-ին, Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ և հայերի նյութ. օժանդակությամբ կառուցվել է Ս. Գևորգ եկեղեցին, որին կից գործում է մանկապարտեզ: Սեն Ժերոմում 1933-ին կառուցվել է Ս. Սահակ–Ս. Մեսրոպ եկեղեցին, կից գործում է շաբաթօրյա դպրոց: Սենտ Անտուան-Քամպանյը Ֆրեսնում 1929-ից գործում է Ս. Թադեոս–Ս. Բարդուղիմեոս եկեղեցին, որին կից կազմակերպվում են հայերենի դասընթացներ: Բոմոնում 1932-ից գործում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կից՝ շաբաթօրյա դպրոց: Գործում են Կրոն. ընկերակցություն և թաղային խորհուրդ:

Նիցցա քաղաքում 1928-ին, Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ կառուցվել է Ս. Աստվածածին մատուռը (ներկայումս՝ եկեղեցի): Եկեղեցու շենքում մինչև երկրորդ համաշխ. պատերազմի սկիզբը (1939) գործել է դպրոց, որը հետո վերածվել է մեկօրյա դասընթացների: 1988-ին եկեղեցուն կից կառուցվել է Պարսամյան համալիրը (մեծահարուստ Պարսամյան ընտանիքի նյութ. օժանդակությամբ), որտեղ գործում են ամենօրյա վարժարան, դրադարան: Նիցցայի և շրջանի Հայոց կրոն. ընկերակցությունը զբաղվում է եկեղեցու և Պարսամյան վարժարանի խնդիրներով: Հոգևոր հովիվն է Նարեկ եպս. Շաքարյանը (2000-ից):

Լա Սիոտայում 1994-ին օծվել է Ս. Փրկիչ եկեղեցին, որին կից գործում է շաբաթօրյա դպրոց: Սան Ռաֆայելում 1977-ից գործում է Ս. Հովհաննես եկեղեցին:

Մարսելի շրջանի հոգևոր առաջնորդը և հայրապետ. պատվիրակի փոխանորդն է Տարոն եպս. Ճերեճյանը (1990-ից):

Հոլանդիայի հոգևոր հովվություն, կազմավորվել է 1989-ին: Կենտրոնը՝ Ամստերդամի Ս. Հոգի եկեղեցի:

XVII դ. սկզբին Ամստերդամը եղել է հայ գրչության և գրատպության կենտրոն: Հայերեն գրքերի տպագրությունն իրականացրել են Ս. Էջմիածնից եկած հոգևորականները: 1660-ին Ամենայն հայոց կաթողիկոս *Հակոբ Դ Ջուղայեցու* հանձնարարությամբ Մատթեոս սարկավագ Ծարեցին մեկնել է Ամստերդամ, հիմնադրել տպարան, տպագրել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» ստեղծագործությունը, որը չավարտած՝ վախճանվել է: 1664-ից տպարանի տնօրինությունը ստանձնել է Ոսկան արք. Երևանցին, որը տպագրել է Շարակնոց (1664–1665), Աստվածաշունչ (1666–68), «Հանդերձ Աստուծով» (1666, Այբբենարան), Նոր կտակարան (1668) և 14 այլ գրքեր: 1668-ին տպագրիչ Մատթեոս վրդ. Վանանդեցին Ամստերդամում հիմնել է նոր տպարան, հրատարակել Շարակնոց (1685), Ժամագիրք (1686), «Համատարած աշխարհացույց Մեծ» հայերեն առաջին քարտեզը (1695), Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» (1-ին հրտ., 1695) ևն:

Ամստերդամում առաջին հայկ.՝ Ս. Հոգի եկեղեցին կառուցվել է 1713-ին՝ հայ վաճառականների միջոցներով: Սակայն հայ համայնքի անկման պատճառով եկեղեցին 1874-ին աճուրդով վաճառվել է: 1986-ին Ամստերդամի հայ համայնքի և Մայր աթոռ Ս. Էջմիածնի տրամադրած գումարով եկեղեցու շենքը վերանվել է: 1989-ին կատարվել է Ս. Հոգի եկեղեցու վերաօծումը:

1991-ին Ալմելո քաղաքի հայերի նվիրատվություններով գնվել է դպրոցի շենք, որի սրահներից մեկը վերածվել է աղոթատեղի: Վերջինս 1993-ին օծվել է որպես Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (հոգևոր հովիվ՝ Խաչատուր քհն. Ֆրանկյան):

Հոլանդիայի հայ համայնքի հոգևոր հովիվն է Մանվել վրդ. Երկաթյանը:

Բելգիայի հոգևոր հովվություն, կազմավորվել է 1990-ին: Կենտրոնը՝ Բրյուսելի Ս. Մարիամ Մագդաղենացի եկեղեցի:

Դեռևս 1985-ին Բրյուսելում ստեղծվել է Բելգիայի Հայ եկեղեցու հիմնադրամ՝ Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը հովանավորելու նպատակով: Ունի վարչ. խորհուրդ, որը համագործակցում է բելգիահայ համայնքի պատգամավորական ժողովի հետ: Բրյուսելում առաջին հայկ.՝ Ս. Մարիամ Մագդաղենացի եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1986-ին, օծումը՝ 1990-ին: Եկեղեցու հոգևոր հովիվն է Հարություն քհն. Թաշճյանը:

Իտալիայի հոգևոր հովվություն, կազմավորվել է 1955-ին: Կենտրոնը՝ Միլանի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցի:

Իտալիայի տարածքում հայերի բնակությունը սկսվել է հռոմեական շրջանից: Միջնադարյան շրջանի վերաբերյալ առաջին տեղեկությունները VI–VII դարերից են: Դեռևս XII դարից վկայակոչվել են հայերի կառուցած եկեղեցիներ: XIV դ. սկզբից հիշվում է «Իտալիայի հայերի եպիսկոպոս» եկեղեցական տիտղոսը: XIII–XIV դդ. Հայ առաքելական եկեղեցու ենթակայությամբ ավելի քան 40 եկեղեցի ու մենաստան են հիշատակվում Իտալիայի հս., կենտր. և հվ. շրջաններում, մասնավորապես՝ Վենետիկում, Տրիեստում, Ռավեննայում, Ջենովայում, Հռոմում, Նեապոլում ևն: Հայ համայնքներն ունեցել են իրենց հոգևոր հովիվները՝ քահանա, վարդապետ, և նույնիսկ կառավարվել են եպիսկոպոսների կամ արքեպիսկոպոսների կողմից՝ որպես համայնքային եկեղեց. թեմեր կամ վիճակներ: Եկեղեցիներին կից գործել են հիվանդանոցներ և Հայոց տներ (որտեղ բուժվել են հայեր և իջևանել հայ վաճառականներ): Նեապոլում դեռևս X դ. գործել է Ս. Գրիգոր Հայի եկեղեցին: *Գրիգոր Ա Լուսավորիչը* համարվել է Նեապոլի պաշտպան սուրբը, նշվել է նրա տոնը: Ս. Գրիգոր Հայի եկեղեցում են պահվում ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները: Վատիկան կատարած այցելության առիթով (2000-ի նոյեմբ. 11) մասունքներից մի մաս հանձնվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանին: Դրանք բերվել են Երևան և պահվում են Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու գավթում: Նեապոլում հիշվում է նաև Ս. Հոգի հայկ. եկեղեցին (1328): XI դ. Հռոմում կառուցվել է Ս. Հակոբ եկեղեցին: XI դարից հիշատակվում է Միլանի Ս. Բարսեղ հայկ. եկեղեցին: 1342–1650-ին գործել է հայ հոգևորականների Բարսեղյան միաբանությունը:

Պիզայում 1320-ին հիմնադրվել է վանք, որը, ըստ դամբանական մի արձանագրության, ավելի քան հարյուր տարի պատկանել է հայերին: Այդ վանքում ընդօրինակվել են ձեռա-

գրեր, որոնք պահվում են Վիեննայի ազգ. և Միլանի Ամբրոսյան գրադարաններում: Ջենովայում 1307-ին հայերը կառուցել են Ս. Բարդուղիմեոս վանքը և եկեղեցին (գոյատևել է մինչև 1650-ը): Վենետիկում 1348-ին հիշատակվում են հայկ. Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և վանքը, 1434-ին՝ Ս. Խաչ եկեղեցին (որը 1717-ից պատկանում է Մխիթարյան միաբանությանը):

XIV դ. վերջին, ինկվիզիցիայի հալածանքների և հայերի բռնի կաթոլիկացման հետևանքով, հայկ. եկեղեց. կառույցներն անցել են տեղի կաթոլիկ եկեղեց. իշխանություններին:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու Իտալիայի համայնքն իր այժմյան վիճակով ստեղծվել է 1900-ական թթ. սկզբին, Թուրքիայից և Մերձ. Արևելքի այլ երկրներից գաղթած հայերից, որոնք հաստատվել են Հս. Իտալիայի Միլան և շրջակայքի մեծ ու փոքր քաղաքներում: Համայնքի անդրանիկ հոգևոր հովիվ է կարգվել Եղիշե քհն. Պարսամյանը (1924–37): Նրա մահից հետո համայնքը մեկ ու կես տասնամյակ ունեցել է Փարիզից, Մարսելից, Վիեննայից հրավիրված այցելու հովիվ: Երկրորդ համաշխ. պատերազմի նախօրեին ստեղծվել է Իտալիայի հայոց միությունը, որի կանոնադրությունը պաշտոնապես վավերացրել է Իտալիայի կառավարությունը: 1950-ական թթ. սկզբին հայերը կրոն. արարողությունների համար օգտագործել են Միլանի անգլիկան Ամենայն Սրբոց եկեղեցին: 1955-ին Իտալիայի պետ. իշխանությունները Հռոմում նախագահական հրովարտակով ճանաչել են երկրում Հայ առաքելական եկեղեցու դավանանքին պատկանող հավատացյալների համայնքը և պաշտոնապես թույլատրել եկեղեցի կառուցել: Ներկայումս Միլանում գործող Իտալիայի միակ հայկ.՝ Ս. Քառասուն Մանկունք եկեղեցին կառուցվել է 1957-ին (ճարտ-ներ՝ Ռ. Իսրայելյան, Պ. Սուրյան), օծվել՝ 1958-ին: Հովվական պաշտոնի է հրավիրվել Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության անդամ Զգոն եպս. Տեր-Հակոբյանը (1955–75): Սրան հաջորդել է Ժիրայր վրդ. Թաշճյանը (1975–77):

Եկեղեցու բակում 1986-ին կանգնեցվել է խաչքար՝ ի հիշատակ 1915-ի եղեռնի զոհերի:

Եկեղեցին, ըստ հոգևոր կանոնադրի, ունի համայնքի կողմից ընտրված հինգ հոգուց բաղկացած հոգաբարձուների խորհուրդ: Միլանում է գտնվում Հայ տունը:

Իտալիայի հայոց հոգևոր հովիվն է Սարգիս քհն. Սարգիսյանը (1977-ից):

Ալբանիայում հայկ. եկեղեցի չկա: Հայ ընտանիքների հոգևոր մատակարարությունը կատարում են այցելու հովիվները:

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.7, 4-րդ և 2.8, 1–3-րդ պատկերները:

ԱՐԵՎՈՐԴԻՆԵՐ, Արևորդիք, Հայաստանում և բյուզանդական Միջագետք (Մեսոպոտամիա) բանակաթեմում հիմնականում XI–XII դարերում տարածված քրիստոնեական աղանդ: Ըստ հայկ. աղբյուրների, Ա-ի գաղափարական նախահայր է համարվում մազդակյանների գաղափարախոս Խարգանի որդի մոգ Զրադաշտը (III դ.): Առաջին անգամ հիշատակվում են Գրիգոր Մագիստրոսի՝ հակոբիկ ասորիների կաթողիկոսին գրած նամակում: Արաբ. աղբյուրներում Ա. կոչվում են «չամսիյա»՝ արևային: Նրանք ազգությամբ հայեր էին և ծառայում էին արաբ ամիրաների բանակներում: Ա-ի մասին ավելի մանրամասն հիշատակում է *Ներսես Շնորհալին* «Յաղագս Արևորդեացն դարձի» թղթում: Հայոց կաթողիկոսը հայտնում է, որ իր ժամանակ (1170-ական թթ.) Սամոսատ քաղաքում բնակվող արևորդիք կոչված աղանդավորները որոշել են հրաժարվել հերձվածի գաղափարներից ու հավատալիքներից և վերադառնալ Հայ եկեղեցու գիրկը, «զի որպէս ազգաւ և լեզուաւ ի տոհմէ հայոց են, յօժարին զի և հաւատով և հոգւով ի նոյն միաբանութիւն հաւասարեսցին ընդ նոսա»: Ըստ Ներսես Շնորհալու, Ա-ի աղանդը շատ հին է, գալիս է Գրիգոր Ա Լուսավորչի ժամանակներից, նրանց հավատալիքները կապվում են հեթանոս. պաշտամունքի հետ: Ա-ի պաշտած արեգակի տակ Քրիստոսն է ենթադրվել, և Քրիստոսին արեգակ են անվանել: Պաշտել են նաև շուշան ծաղիկը, բարդի ծառը, քանզի, ըստ Ա-ի, Քրիստոսի խաչի փայտը բարդուց էր: Մանիքեցիների (տես *Մանիքեություն*) և *պավլիկյանների* դեմ բյուզ. եկեղեցու ընդունած «Նզովման բանաձևերում» գրված է. «Նզովում են Քրիստոսին արեգակ անվանողներին և արեգակին աղոթողներին»: Աղբյուրներում Ա-ի մասին վերջին անգամ հիշատակվում է XIV դ.: Մխիթար Ապարանցին վկայում է, որ Մանազկերտի շրջանում դեռևս կային ազգությամբ հայ արևապաշտներ, որոնք ոչ գիր, ոչ դպրություն ունեին, այլ իրենց գաղափարներն ուսուցանում էին նախնիներից պահպանված ավանդազրույցների միջոցով:

Ա-ի առանձին համայնքներ Հս. Միջագետքում, հատկապես Ամիդի շրջանում, պահպանվել են ընդհուպ մինչև XIX դ. վերջը:

Գրկ. Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860: Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղեմ, 1871, էջ 223–229: Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901, էջ 551–552: Վանցյան Գ., Երկու խոսք արևորդիների մասին, ՀԱ, 1896, էջ 12–19: Տեր-Մկրտչյան Կ., Պավղիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր հերձվածային երևույթներ Հայաստանի մեջ, Երուսաղեմ, 1938 (գերմ. թրգմ. Ա. Աբեղյան): *Бартикян Р. М., Еретики Ареворди ("Сыны солнца") в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного, в кн.: Эллинистический Ближний Восток, Византия и Иран, М., 1967, с. 102–113;* Canard M., Une mention des Arewordik dans un texte historique arabe, "Revue des études arméniennes", 1966, t. 3, p. 201–203.

Հրաչ Բարթիկյան

ԱՐԻՈՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, քրիստոնեական աղանդավորական վարդապետություն IV դարում: Հիմնադիրը Ալեքսանդրիայի երեց Արիոսն էր. այստեղից էլ՝ անվանումը: Ա-յան գաղափար. ակունքներն էին հրեական միաստվածությունը (մոնոթեիզմ) և միջինպլատոնականությունը, որոնցից Արիոսը վերցրել էր Աստծո կատարյալ միակության գաղափարը: Արիոսական վեճերի կենտր. խնդիրը Որդի Աստծո՝ Հայր Աստծո նկատմամբ ունեցած հարաբերության հարցն էր: Նախ՝ *Անտիոքի* աստվածաբան. դպրոցի նշանավոր ներկայացուցիչ Լուկիանոս Սամոստացին (Սամոսատցի), այնուհետև Արիոսը կասկածի տակ դրեցին Քրիստոսի աստվածության, աստվածային էության և Հոր հետ համագոյության հարցը: Ժխտելով Հոր և Որդու համագոյությունը՝ Արիոսը ելնում էր այն բանից, որ Աստված կատարյալ եզակիություն է, և այդ աստվածային եզակիությունը Հայր Աստված է: Մնացած ամեն ինչ, որ գոյություն ունի, իր էությամբ խորթ է Աստծուն և ունի մեկ այլ ինքնուրույն էություն: Միակ Աստվածը Հայրն է, ոչինչ հավասար չէ նրան: Նա է միայն հավիտենական, անսկիզբ, անստեղծ, բացի նրանից, ամեն ինչ եղական է և վերջավոր: Արիոսական ուսմունքի հիմն. էությունը հետևյալն էր. «Էր երբեմն յորժամ ոչ էր Որդին» («Ժամանակ կար, երբ Որդին չկար»): Այսինքն, Հոր և Որդու միջև գոյություն ունի ժամանակային վիհ, Որդին սկիզբ ունի, հետևաբար՝ միշտ գոյություն չի ունեցել և չէր կարող լինել Հայր Աստծո էությունից: Նա Աստծո արարած է՝ ստեղծված ոչնչից: Այսպիսով, ըստ Ա-յան, Որդին Հոր էությունից միանգամայն բաժան, տարբեր և անկախ էություն է, հետևաբար՝ իսկական Աստված չէ, այլ միայն Բան (Լոգոս) ու իմաստություն, և Աստծո օգնությամբ, սեփական իմաստությամբ ու շնորհքով է Աստված դարձել:

Ըստ Արիոսի, անկախ էություն է նաև *Սուրբ Հոգին*, ուստի գոյություն ունեն երեք տարբեր և բաժան էություններ. Ս. Հոգին նույնպես արարած է, ինչպես Որդին, և համապատիվ չէ Հորը:

Ընդհանրական եկեղեցին Ա. մերժել է *Նիկիայի Ա տիեզերական ժողովում* (325), որտեղ ընդունված *Հավատո հանգանակը* բանաձևել է Հոր և Որդու համագոյությունը, էակից լինելը և Որդու Աստվածությունը, շեշտելով «էութենէ Հօր» և «էակից Հօր» խոսքերը՝ Որդու վերաբերյալ: Սուրբ *Երրորդության* մասին Արիոսի վարդապետությունը ժխտվել և իր վերջնական ուղղափառ ձևակերպումն է ստացել երեք մեծ կապադովկիացիների՝ ս. *Բասեղ Կեսարացու*, ս. *Գրիգոր Նյուսացու* և ս. *Գրիգոր Նազիանզացու* ուսմունքում: Ա-յան դեմ հիմն. պայքարը ծավալել է Ալեքսանդրիայի պատրիարք, եկեղեցու ս. Հայր *Աթանաս Ալեքսանդրացին*:

Հայ եկեղեցին 325-ի *Վաղարշապատի եկեղեցական ժողովում*, *Գրիգոր Ա Լուսավորչի* հայրապետական հեղինակությամբ ընդունելով Նիկիայի ժողովի դավան. որոշումները և Հավատո հանգանակը, բանադրել է Ա.:

Գրկ. Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք և ընդդիմաութիւնք, Վնտ., 1899: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Կնիք հաւատոյ..., հրտ. Կ. Տեր-Մկրտչյանի, Էջմիածին, 1914: Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց եկեղեցին եւ բյուզանդեան ժողովոց պարագայք, Մ., 1892: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. 1, Էջմիածին, 1908: Արամյան Մ., Երեք տիեզերական ժողովների դավանությունը, «Գանձասար», 1, 1992, էջ 110–112:

ԱՐԻՍՏԱԿԵՍ Ա ՊԱՐԹԵՎ, սուրբ Արիստակես (մոտ 264, ք. Կեսարիա – 333, ամփոփվել է Եկեղյաց գավառի Թիլ ավանում), Ամենայն հայոց կաթողիկոս 325-ից: *Գրիգոր Ա Լուսավորչի* հաջորդը և կրտսեր որդին: Կրթությունն ստացել է Կեսարիայում: Երիտասարդ տարիքում ապրել է ճգնողական կյանքով՝ աշակերտել Նիկոմաքոս ճգնավորին:

ԱՐԻՍՏԱԿԵՍ Հոգևոր կատարելության հասնելու կանոններն ուսանելուց հետո, որպես ճգնավորների խմբի առաջնորդ՝ բնակություն է հաստատել լեռներում: Իրեն ենթարկել է խստակենցաղ կյանքի և այնքան նվիրվել մենակեցությանը, որ երբ Հայոց արքա Տրդատ Գ Մեծի պատվիրակները եկել են նրան Հայաստան տանելու, հրաժարվել է: Սակայն տեղի տալով քրիստոնյա հավատացյալների հորդորներին՝ «Լաւ է, ասեն, քեզ գործ մշակութեանն Աստուծոյ՝ քան զայդ մենաւորութիւն բնակութեան յանապատի այդր», համաձայնել է: Քանի որ Գրիգոր Ա Լուսավորիչը բացակայել է Հայրապետանոցից, որդուն ձեռնադրել է փոխեպիսկոպոսապետ և ընթացիկ գործերի կատարումը նրան հանձնել: Ա. Ա. Պ. մասնակցել է *Նիկիայի Ա տիեզերական ժողովին* (325) և Հայաստան բերել Նիկիայի *Հավատո հանգանակը*: Նրա վերադարձից հետո Գրիգոր Ա Լուսավորիչը ապրել է ճգնակյաց կյանքով: Ա. Ա. Պ. առանց նոր ընտրության և հայրապետ. ձեռնադրության «նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց»: Հայրապետության տարիներին հիմնականում զբաղվել է քարոզչ. աշխատանքով, պայքարել է հեթանոսության դեմ: Սպանվել է Ծոփքում՝ Արքեղայոս նախարարի ձեռքով, հակահեթանոս. պայքար ծավալելու համար: Հետագայում նրա գերեզմանի վրա կառուցվել է Երզնկայի Ջուխտակ-Հայրապետ վանքը:

Ա. Ա. Պ. Հայ եկեղեցու տոնելի սրբերից է, հիշատակը նշվում է Գրիգոր Ա Լուսավորչի «Որդւոց եւ թոռանց» տոնի հետ՝ Ս. Ծննդյան երրորդ կիրակին հաջորդող շաբաթ օրը, երբեմն փոխադրվում է Վարդավառի երկրորդ կիրակին հաջորդող շաբաթ օրը:

Կաթողիկոս. գահին Ա. Ա. Պ-ին հաջորդել է *Վրթանես Ա Պարթևը*:

Գրկ. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1986: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԱՐԻՍՏԱԿԵՍ Բ ԱԹՈՌԱԿԱԼ (ծ. թ. անհտ – 1469, Ս. Էջմիածին), Ամենայն Հայոց կաթողիկոս 1465-ից: Հաջորդել է *Գրիգոր Ժ Ջալալբեկյանցին*, որը 1448-ից Ա. Բ Ա-ին նշանակել է աթոռակից: 1460-ին Աղթամարի Զաքարիա կաթողիկոսն ու Սարգիս եպիսկոպոսը կարակոյունլուների իշխան Ջհանշահի օգնությամբ աթոռազրկում են Գրիգոր Ժ Ջալալբեկյանցին ու Ա. Բ Ա-ին և զավթում Ամենայն Հայոց կաթողիկոս. գահը: 1461-ին Գրիգոր Ժ Ջալալբեկյանցն ու Ա. Բ Ա. վերականգնել են իրենց իրավունքները և վտարել Զաքարիային: 1467-ին Ա. Բ Ա. Լեհաստանի Հայ համայնքի համար եպիսկոպոս է ձեռնադրել, որը պետք է համագործակցեր համայնքի Տանուտերաց ժողովի հետ: Այդ կապակցությամբ նույն թվին մի կոնդակ է հղել լեհահայ համայնքին:

Կաթողիկոս. գահին Ա. Բ Ա-ին հաջորդել է *Սարգիս Բ Ալջատարը*:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Սիմեոն Երեվանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1873: Ջամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, Արիստակես Լաստիվերտցի [մոտ 1002, գ. Լաստիվեր (Բարձր Հայք նահանգի Կարնո գավառ) –1080], պատմագիր: Վկա է եղել սելջուկ թուրքերի վայրագություններին, Արծնի և Սմբատաբերդի (Սմբատաբերդի) սոսկալի կոտորածներին, տեղահանվել է և հալածվել:

Ա. Լ. խորացել է աստվածաբանության և ճարտասանության մեջ, տիրապետել է հունին, ուսումնասիրել Հայաստանի և Բյուզանդիայի պատմությունը: Գլխ. աշխատությունն է 1072–79-ին գրած «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ վարդապետի...» երկը: Բաղկացած է չափածո նախերգանքից, 25 գլխից և հեղինակի հիշատակարանից: Ա. Լ. իր նկարագրած դեպքերի մեծ մասի ժամանակակիցն է և ականատեսը: Ողբալով սելջուկ թուրքերի պատճառած աղետները և նվաճված Հայաստանի վիճակը՝ պատմ. դեպքերին վկայաբան. բնույթ չի տվել, ներխուժումները չի դիտել իբրև կրոն. տարբերության հետևանք, այլ համարել զավթող. պատերազմ, որի դեմ պետք է պայքարել: Բուն շարադրանքն ընդգրկում է 1000–45-ի հայ-բյուզ. հարաբերությունները, սելջուկյան արշավանքները 1047–1048-ից մինչև Անիի գրավումը (1064) և Մանազկերտի ճակատամարտը (1071): Մանրամասն նկարագրել է Տայքը նվաճելու Բյուզանդիայի փորձերը (1000–22), բանակցությունները հայ և վրաց իշխանների հետ, Անիի թագավորության անկումը (1045) ևն: Բյուզանդիայի պատմությանը վերաբերող գլուխները լիովին համընկնում են բյուզ. պատմիչների, ինչպես նաև արաբ և պարսիկ մատենագիրնե-

րի տեղեկություններին՝ երբեմն նաև լրացնելով նրանց:

Պատմությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Xդ. և XI դ. 1-ին կեսի Հայոց կաթողիկոսների (*Պետրոս Ա Գետադարձ, Խաչիկ Բ Անեցի, Սարգիս Ա Սևանցի*), աստվածաբան վարդապետների և մատենագիրների (Սարգիս, Տիրանուն, Ենովք, *Ստեփանոս Տարոնեցի, Սամվել Կամրջաձորեցի, Հովհաննես Կոզեռն*) մասին: Կարևոր են տեղեկությունները կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի քաղ. գործունեության մասին (1022-ի Տրապիզոնի բանակցությունները, նրա դիրքորոշումը 1045-ի Բյուզանդիայի քաղաքականության հանդեպ և Հայրենադավ դերը Անին կայսրությանը հանձնելու գործում): Թոնդրակյան շարժմանը (տես *Թոնդրակեցիներ*) նվիրված 22-րդ և 23-րդ գլուխներն ունեն աղբյուրագիտ. բացառիկ արժեք, որովհետև Ա. Լ-ու տեղեկություններն այլ աղբյուրներում չեն հանդիպում: Ի շարս այլ հոգևորականների՝ նա այն կարծիքին էր, որ Թոնդրակյան շարժումը կործանման է հասցրել Բագրատունյաց թագավորությունը: Թոնդրակյան առաջնորդներից Ա. Լ. ներկայացրել է Հարք գավառի եպիսկոպոս Հակոբի և Մանանաղիի Կունծիկ աբեղայի գործունեությունը, Հակոբին անվանել է «Հայր ամենայն չարյաց», նրա ուսմունքը՝ *մծղնեություն*: Ըստ նրա՝ Հակոբ Հարքացին իր ճառերով ճգտել է «տապալել սուրբ եկեղեցին»: Շարժման կենտրոն Հարքի Թոնդրակ գյուղը Ա. Լ. անվանել է «սատանայի բնակարան»: Պատմությունը XI դ. կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների համար: Այն միաժամանակ հայրենասիր. ողբ է, որտեղ հեղինակը նկարագրում է XI դ. աղետները: Պատկերավոր և ազդու ոճի շնորհիվ Ա. Լ-ու երկը հայ միջնադարյան գեղ. արձակի խոշորագույն գործերից է: Պատմությունը հայերեն առաջին անգամ տպագրվել է 1844-ին, թարգմանվել է ֆրանս., ռուս., վրաց., վերածվել աշխարհաբարի: Աշխատության ձեռագրերը պահվում են Երևանում, Վենետիկում, Վիեննայում, Երուսաղեմում և այլուր:

Ա. Լ-ու մյուս աշխատությունը «Մեկնութիւն ընթերցուածոց»-ն է՝ նվիրված Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոնի ընթերցվածքների մեկնությանը: Հեղինակի նպատակն է բացատրել Ծննդյան և Մկրտության տոնի ութ օրերի խորհուրդը: «Մեկնությունում» Ա. Լ. պաշտպանել է Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը միասին նշելու Հայ եկեղեցու առաքելավանդ կանոնը: «Քարոզ նոր Կիւրակէի» ճառում (կոչվում է նաև «Արիստակէս վարդապետի ասացեալ ի նոր Կիւրակէն») խոսվում է դարման զարթոնքի, ծաղկապտուղների ու ծաղկասերմերի աճի, դարունը ցնծությամբ դիմավորող կենդանիների և սերմնացան մարդու մասին: Ա. Լ. այս համընդհանուր շարժման և վերափոխման մեջ է տեսնում Տերունական տոնի՝ Նոր Կիրակիի խորհուրդն ու մեկնությունը: Տոնի կապակցությամբ հեղինակը կոչ է անում Հիսուսի Հարության օրինակով ոչ թե արտաքնապես, այլ ամբողջ էությամբ վերափոխվել, լցվել նորացման գաղափարով:

Երկ. Պատմություն, Ե., 1971:

Գրկ. Մանուկյան Գ., Արիստակես Լաստիվերցի. Մատենագրության բանասիրական քննություն, Ե., 1977: Բաբայան Լ., Դիվաղներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, IX–XIII դդ., Ե., 1981, էջ 126–146:

Ռաֆիկ Մաթևոսյան

ԱՐԾԿԵԻ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ, Երաշխավոր վանք, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Խորխոռունիք գավառում, Արծկե քաղաքի մոտ, Սիփան լեռան լանջին: Եղել է նշանավոր սրբավայր և ուխտատեղի: Ըստ ավանդության՝ այստեղ պահվել է մանուկ Քրիստոսին լողացնելու բրոնզե տաշտի մի մասը, որն ունեցել է վարակիչ հիվանդություններ բուժելու հատկություն: Վանքում պահվել է նաև Պատերազմաց ս. Նշանը (ենթադրաբար՝ բյուզ. Վասիլ II կայսրի ս. խաչը): VIII դ. 2-րդ քառորդում Ա. Ս. Ս. Ն. վ-ում է հաստատվել *Վահան Գողթնացին*, որի վարքը 736-ին գրի է առել վանքի վանահայր Արտավազդ վարդապետը: XIII դարից մինչև XVIII դ. սկիզբը վանքում ծաղկել է գրչության արվեստը: Ա. Ս. Ս. Ն. վ-ի գրչության կենտրոնից մեզ են հասել XIII–XVII դդ. ընդօրինակված մեկ տասնյակից ավելի Ավետարաններ, 1428-ին ընդօրինակված մեկ Ճառընտիր (գրիչ՝ Աբրահամ), 1475, 1480-ի մեկա-

Արծկեի Սքանչելագործ Ս. Նշան վանքի եկեղեցու ներսի տեսքը

ԱՐԾՎԱԲԵՐԻ կան Հայսմավուրք և 1502-ի մեկ ձառընտիր: XIV դ. Արծկեի եպիսկոպոս *Հակոբ Նետրարենցը* վանքին երկու տաղ է ձոնել: 1442-ին կառուցվել է Ա. Ս. Ս. Ն. վ-ի եկեղեցին, որն ունի հայկ. ճարտ. մեջ եզակի՝ մույթերի փոխարեն երկու գլանաձև այուներով գմբեթավոր հորինվածք՝ արմ-ից կից, եկեղեցու հետ միաժամանակ կառուցված թաղածածկ գավթով: XVII դ. վանքը նորոգվել է, XVIII–XIX դդ. ունեցել է դյուղեր, ագարակներ, դաշտեր, արտեր: 1895-ին շրջակայքի քրդերը կողոպտել են և հրկիզել վանքը, որի ավերված բնակելի ու տնտ. շենքերը XX դ. սկզբին վերակառուցել է վանահայր Եղիշե վարդապետը:

Գրկ. Շ ե ր ե ն ց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Ո ս կ յ ա ն Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 2, Վնն., 1942: *Д е М а ф ф е и Ф., Древняя основа архитектуры церкви в монастыре Сканчелагорц, Е., 1978;* C u n e o P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988; T h i e r r y J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԱՐԾՎԱԲԵՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Խառաբաստավանք, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Աղիովիտ գավառում, Արճեշից հյուսիս-արևելք: Վանքի Ս. Աստվածածին եկեղեցին (VII դ.) հռիփսիմեատիպ է՝ եզակի առանձնահատկությամբ. արմ. ավանդատները սրահաձև են, ներսից մուտք չունեն և արմ. պատի փոխարեն արված կամարակապ մեծ բացվածքով հաղորդակցվում են դրսի հետ: Որպես հս-արլ. ավանդատան բարավոր օգտագործված է ուրարտ. կոթող՝ Արգիշտի Ա թագավորի (Ք. ծ. ա. 786–764) արձանագրությամբ:

Արծվաբերի Ս. Աստվածածին վանքի եկեղեցու (VII դ.) անկյունային խորշերից

Ա. Ս. Ա. վ. ուսումնագիտ. բուն վերելք է ապրել, երբ վանահայր Զաքիոսի հրավերով 1388-ին Աստապատի դպրոցից այստեղ է տեղափոխվել Սարգիս Ապրակունեցու վարդապետարանը: Վանքն ունեցել է 60 աշակերտ, գործել է հռչակված խառաբաստավանքի գրչության կենտրոնը. ողջ Վասպուրականից ձեռագրեր են հավաքել, երկեր ընդօրինակել և նորերը գրել: Ըստ XV դ. պատմիչ Թովմա Մեծոփեցու, Ա. Ս. Ա. վ. վերածվել է «գիտության փեթակի»: Դասավանդող վարպետներից՝ *Հովհան Որոտնեցու* աշակերտ Գրիգոր Խլաթեցին Զաքիոս եպիսկոպոսի մահից (1401) հետո դրպրոցը տեղափոխել է Ցպնավանք: Ա. Ս. Ա. վ-ում գիտ. և գրչական կյանքը վերստին աշխուժացել է *Գրիգոր Տաթևացու* աշակերտ և Թովմա Մեծոփեցու դասընկեր Կարապետ վարդապետի առաջնորդության ժամանակ, որը նորոգել է վանքը, ձեռք բերել Անիշատ գյուղը, այգիներ, արտեր, ջրաղացներ: Հայտնի են Ա. Ս. Ա. վ-ում ընդօրինակված Ոսկեփորիկ (1391, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի), «Մեկնութիւն հնգեմատեանին Վարդանայ Արևելցւոյ» (1393, գրիչ՝ Մխիթար), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (1414, գրիչ՝ Սարգիս) և «Քարոզգիրքը» (1418, գրիչ՝ Հակոբ), ինչպես նաև Մաշտոց (1443), Հայսմավուրք (1457, երկուսն էլ՝ գրիչ Իգնատիոս), Շարակնոց (1462) և 10 այլ ձեռագրեր: 1435-ին վանքը տուժել է Շահռուխի ասպատակությունից: 1441-ին վանահայր Կարապետ վարդապետը մասնակցել է Կիրակոս Վիրապեցու (*Կիրակոս Ա Վիրապեցի*) ընտրությունների, որն իր կրթությունն ստացել էր Ա. Ս. Ա. վ-ում և այստեղ քահանա ձեռնադրվել:

XVIII–XIX դդ. վանքն անկում է ապրել, 1830-ին քանդվել է եկեղեցու գմբեթը, 1867-ին Կ. Պոլսի պատրիարքությունը Ա. Ս. Ա. վ. հանձնել է *Լիմ անապատի* վանահայր Անանիա վարդապետի տնօրինությանը: 1895-ին վանքը և նրա մատենադարանը կողոպտվել են:

Գրկ. Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860: Շ ե ր ե ն ց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Ո ս կ յ ա ն Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 2, Վնն., 1942: T h i e r r y J.M., L'église arménienne de la Mère de Dieu d'Arcuaber, "Cahiers archéologiques", XXV, P., 1976; C u n e o P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան
Արտաշես Մաթևոսյան

«ԱՐԾՎԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ», աստվածաբանական-քաղաքական-մշակութային պարբերական: Հրատարակվել է 1855–56-ին, Կ. Պոլսում, 1858–64-ին՝ Վանի Ս. *Վարագավանքում*: Խմբագիր՝ Մ. Խրիմյան (*Մկրտիչ Ա Վանեցի*): Կ. Պոլսում լույս է ընծայվել պարբ-ի 12 համար: Հոդվածներն ունեն բնութագր. անվանակարգումներ՝ բանախոսական, բարոյական, հայրենասիրական ևն: Հրատարակության 2-րդ

շրջանում նյութերը դասակարգվել են ըստ բաժինների. ա. Հանդես աստվածապաշտության եկեղեցաշեն հարցն, բ. Հանդիսարան հայրենաշեն առաքինյացն հայոց, գ. Տեսարանք հայրենի աշխարհաց ևն: Ամենաուշագրավ՝ առաջին բաժնում հրապարակված հոդվածներում քննարկվել են քրիստ. կրոնի դոգմաները, գնահատվել է Հայ եկեղեցու դերն ազգային կյանքում, արժեքավորվել Հայ եկեղեցու հիմնադիրների, սուրբ կրոնավորների (*Թադեոս* առաքյալ, *Գրիգոր Ա Լուսավորիչ*, *Սահակ Ա Պարթև*, *Ներսես Ա Մեծ* և այլք) գործունեությունը: *Մեսրոպ Մաշտոցը* դիտարկվել է իբրև գիտնական և հոգևոր հայր, որն ստեղծել է հայության գոյապահպանման առաջին գենքը, *Գյուտ Ա Արահեզացին* ու *Հովհաննես Ա Մանդակունին* գնահատվել են իբրև Հայ եկեղեցու ծեսերը կանոնակարգող գործիչներ: Իբրև եկեղեցաշեն հայրեր են ներկայացվել վաղ և ուշ միջնադարյան գիտ. մտքի կարկառուն դեմքերը (Եղնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Թեոդորոս Քռթենավոր): Հոդվածների մեծ մասի հեղինակը Մ. Խրիմյանն է:


ԱՐԾՎԻԿ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ԹԵՐԹ-ՅԻՍՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՑԱՐԵՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐՈՒԳԵԱՑ.
ԽՄԲԱԳԻՐ ՀՈՒՅՐՈՆԱՒՕՒ
ՄԿՐՏՉԻՉ ԽՐԻՄՅԱՆ
1864
ՀԱՏՈՐ ԱՌԱՋՈՅՆ
Ա.
ԻՆՆԱԿԱՆ ՎԱՆՔՈՒՄ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՄԱՏԵՍԻ ԽՐԻՄԵԱՆ

Ավելի ուշ «Ա. Վ.»-ում լույս են տեսել Հայ եկեղեցու՝ XIX դ. նշանավոր գործիչներին (Ներսես Ե Աշտարակեցի և ուր.) նվիրված հոդվածներ, նկարագրվել է արևմտահայության վատթար վիճակը՝ քուրդ և թուրք աղաների ու պետ. հարկահավաքների կեղեքչության պայմաններում: Զեյթունի 1862-ի ապստամբության պարտությունից հետո պարբերականը արևմտահայությանը կոչ է արել չհուսահատվել և շարունակել ազգ-ազատագր. պայքարը:

«Ա. Վ.» Արմ. Հայաստանի տարածքում հայերեն առաջին պարբ-ն էր և մեծ դեր է խաղացել դավառահայության ազգ. ինքնագիտակցությունը արթնացնելու, հայկ. եկեղեցիների և վանքերի տեղագրությունն ու ճարտարագիտ. նկարագրությունը սերունդներին փոխանցելու առումով:

Գրկ. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000:

Էմմա Կոստանդյան

«ԱՐԾՎԻԿ ՏԱՐՈՆՈ», երկշաբաթաթերթ: Հրատարակվել է 1863–65-ին, Տարոնի Ս. Կարապետ կամ Իննակյան վանքում: Խմբագիր՝ Գ. Սրվանձտյանց: Տիտղոսաթերթը՝ «Թուուցեալ թիւոք Վասպուրական Արծվոյն», հայտնում էր թերթի գաղափար. մերձությունն *«Արծվի Վասպուրական»* պարբերականին և նրա խմբագիր Մ. Խրիմյանի հավատամքին: Ունեցել է ժողովրդավար. ուղղվածություն. առաջադրել է ազգ-ազատագր. պայքարի գաղափարներ, խարազանել սեփական և այլազգի շահագործողների ու կառավարական պաշտոնյաների կամայականությունները, բողոքագրեր ուղղել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին: Քննադատել է հայ կղերականության որոշ ներկայացուցիչների քսու և անբարո վարքը՝ հանուն անձն. բարօրության ու կրոն. բարձր աստիճանի: Պատրիարքից պահանջել է բարենորոգումներ Հայ եկեղեցու ներսում, հայ հոգևորականների նոր սերնդի ստեղծում, ազգ. սահմանադրության գործադրություն արևմտահայ գավառներում:

Թուրք. կառավարությունը՝ որպես քաղաքականապես անբարեհույս պարբ., 1864-ին կարճ ժամանակով դադարեցրել է «Ա. Տ.»-ի լույսընծայումը: Վերստին հրատարակվելով՝ թերթը ծավալել է լուսավորական գործունեություն, նպաստել Տարոնում նոր ընկերությունների, աշխարհիկ ու հոգևոր դպրոցների հիմնադրմանը:

«Ա. Տ.» եղել է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության գաղափարների արևմտահայ քարոզիչը, գյուղացուն համարել ազգի «հաստատանը», իսկ երկրագործության զարգացումը՝ հայ ժողովրդի բարգավաճման հիմք: Տարոնի տարածքի այդ առաջին տպագիր պարբ-ը վերջնականապես փակվել է հայ որոշ հոգևորականների և մեծահարուստների ջանքերով:

Գրկ. Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքն ու գործունեությունը), Ե., 1979:

Էմմա Կոստանդյան

ԱՐՂՈՒԹՅԱՆ Հովսեփ Շիոշբեկի, Արղության-Երկայնաբազուկ Հովսեփ Շիոշբեկի (23.5.1743, Սանահին – 9.3.1801, Թիֆլիս), արքեպիսկոպոս, ազգային-ազատագրական շարժման գործիչ: Սերել է Զաքարյանների իշխանական տոհմից: Կրթությունն ստացել է Սանահինում, Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, աշակերտել *Սիմեոն*

ԱՐՂՈՒԹՅԱՆ *Ա. Երևանցուն*, որը 1769-ին նրան ձեռնադրել է եպիսկոպոս, ապա շնորհել արքության տիտղոս ու պատիվ: 1773-ին կարգվել է ռուսահայոց թեմի առաջնորդ, 1780-ից՝ նաև ղրիմահայերի հոգևոր առաջնորդ: Ա. սատարել է շուրջ 12600 ղրիմահայերի արտագաղթը (1778) Ռուսաստան, նրանց համար հիմնել հինգ գյուղ (Զալթըը, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Թոփթի և Նովիթա) ու քաղաք (1780), օրհնել քաղաքի ծնունդն ու անվանել Նոր Նախիջևան:

Իբրև հմուտ քաղաքագետ Ա. յուրաքանչյուր պատեհ առիթով ըստ արժանվույն ներկայացրել է հայ ժողովրդին: 1780-ին Հովհաննես Լազարյանի հետ մասնակցել է Ռուսաստանի կովկասյան քաղաքականության և Հայաստանի ազատագրության հարցերի քննարկման համար ռուս. արքունիքում հրավիրված խորհրդակցություններին: Նույն թվականին խնդրել է ռուս. իշխանություններին արգելել կաթոլիկ քարոզչությունը հայոց մեջ, հատուկ հրովարտակով պարտադրել կաթոլիկ հոգևորականներին իրենց ժամերգությունները կատարել միայն օտար լեզուներով, թույլատրել կաթոլիկ հայերին վերադառնալ Հայ առաքելական եկեղեցի: Ռուս պետ. և ռազմ. գործիչ, դիվանագետ Գ. Ա. Պոտյոմկինն ընդառաջել է Ա.-ին, հրահանգել նահանգապետներին բավարարել նրա խնդիրքը: 1782-ին, ի պատասխան Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Ս. Պոտյոմկինի հարցումների, Ա. ռուս. իշխանություններին է ներկայացրել տեղեկանք հայոց պատմության, նրա ներկայի, սպասելիքների, աջակցության դեպքում ազատագր. պայքարի ելնելու պատրաստակամության և ռուս. օժանդակությունը Հայաստան հասցնելու ուղիների մասին: 1783-ին նա հատուկ տեղեկանք է ներկայացրել նաև Արցախի մելիքությունների վերաբերյալ՝ ընդգծելով հայոց պետականությունը Ռուսաստանի գործակցությամբ վերականգնելու նրանց պատրաստակամությունը: 1783-ին Ա. կազմել և ռուս. արքունիք է ներկայացրել «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց՝ Ռուսաց և Հայոց» նախագիծը: Ռուս-թուրք. պատերազմի ժամանակ (1787–91), Իզմայիլի ազատագրումից հետո 320 տուն հայեր (1650 հոգի) մնացել են անօթևան, մերկ, քաղցած, հուսահատ: Ա.-ի ջանքերով 1792-ին հիմնվել է հայկ. մի նոր քաղաք, որը նրա առաջարկով կոչվել է Գրիգորիուպոլիս՝ Գրիգոր Լուսավորչի անունով: Նորաստեղծ քաղաքի բնակիչներն իրենց խնամատար հորն են մատուցել թանկագին հնություն՝ հայոց թագավորներին պատկանած, հաջորդաբար փոխանցված դաշույնն ու թուրը:

Հ. Արղության

Ա. ռուս. արքունիքի հանձնարարությամբ մասնակցել է ռուս. զորքերի՝ 1796-ի անդրկովկասյան արշավանքին, գլխ. հրամանատարին ներկայացրել իր առաջարկություններն ու խորհուրդները, դիմել հայ ժողովրդին՝ օգնելու ռուս. բանակին: 1799-ին կայսրի հրովարտակով Գրիգորիուպոլսի, Ղրիմի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայ գաղթավայրերի համար սահմանվել են միանական արտոնություններ, որոնց մշակման գործում մեծ դեր է կատարել Ա.: Նա Հայ և Ռուս եկեղեցիների, ինչպես և եկեղեցականների միջև ստեղծել է փոխադարձ հանդուրժողականության մթնոլորտ: Եկատերինա II կայսրուհին նրան շնորհել է ադամանդե խաչ՝ վեղարի համար, և պարեգոտ: 1800-ի հուլիսի 28-ին Պավել I-ի հրովարտակով Ա. ճանաչվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն չի օծվել. Էջմիածին գնալու ճանապարհին՝ Թիֆլիսում, հիվանդացել է ու վախճանվել:

Ա. եղել է ռուսահայ առաջին տպարանի ստեղծման նախաձեռնողներից, հրատարակչական գործի կազմակերպիչն ու ոգեշնչողը: Նրա ջանքերով ռուսահայ կենտրոններում (Սանկտ Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան) հրատարակվել է ավելի քան քառասուն անուն գիրք:

Ա. նամակագր. կապեր է ունեցել Ռուսաստանի հայկ. գաղթավայրերի ներկայացուցիչների, Ամենայն հայոց կաթողիկոս *Ղուկաս Ա Կարնեցու*, Վրաստանի և Հնդկաստանի հայ համայնքների, ռուս. պետ. գործիչների, Վրաց Հերակլ II և Գեորգի XII թագավորների, Արցախի մելիքների և բազում այլ գործիչների հետ: Պահպանվել են նրա առաքած նամակների պատճենները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են XVIII դ. վերջի պատմության ուսումնասիրման համար:

Երկ. Օրինակ հանդիսաւոր ծանուցման եւ ողբոյ, Մադրաս, 1791: Տետրակ համառօտ անուանեալ դուռն

ողորմութեան, Նոր Նախիջևան, 1792: Օրինակ օրհնութիւն թղթոյն, Մադրաս, 1794: Քարոզ, Նոր Նախիջևան, 1795: Խօսք ասացեալ ի վերափոխման Աստուածածնայ յեկեղեցւոջն Հայոց, Աստրախան, 1796: Կոնդակ օրհնութեան, Աստրախան, 1796:

Գրկ. Լեո, Հովսեփ կաթողիկոս Արղութեան, Թ., 1902: Աղանյան Գ., Դիւան հայոց պատմութեան, գիրք 3, մաս 1, Թ., 1911: Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Ե., 1967:

Պավել Զորանյան

ԱՐՄԱՇԻ ՉԱՐԽԱՓԱՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում, Նիկոմեդիայի (Իզմիթ) գավառում, Իզմիթից 25 *կմ* հեռավորության վրա, Արմաշ գյուղում: Վանքը հիմնադրվել է 1416-ին և գործել նույն թվականի դեկտ. 11-ից: Հիմնադիր առաջնորդն է եղել «իւր ծախիւք» 18 խուց կառուցած ծերունի Սրապիոն վարդապետը: Մինչ Արմաշ գյուղի հիմնումը բնակավայրը եղել է հունաբնակ: 1416-ին հույները հրդեհել և լքել են այն, և այդտեղ են հաստատվել 1410-ին Մարաշից գաղթած ու հարևանությամբ ապաստանած հայերը: Տեղանունը «Մարաշի» տարափոխված վերաձայնությունն է:

Մինչև Կ. Պոլսի հայոց պատրիարքության ստեղծումը (1461) Ա. Զ. Ս. Ա. վ. եղել է Արմ. Անատոլիայի վանական կենտրոնը: Հիշատակվել են երկու տասնյակից ավելի առաջնորդներ: 1780-ից առաջնորդ է եղել տաղերգու Պետրոս արք. Ղափանցին: Բարթուղիմեոս արք. Կապուտիկյանի օրոք (1786–1809) վերակազմվել է միաբանությունը, հաստատվել ուսումնարան,

Արմաշի Զարխափան Ս. Աստվածածին վանքը

1786-ին կառուցվել մատենադարանի շենքը: 1804-ին Զակը Հասանն իր թշնամուն ապաստան տալու համար իբրև վրիժառություն ավերել է վանքը: Պողոս արք. Ղարախոջյանը (1810–25) դժվարությամբ ձեռք է բերել վերաշինության իրավունքի հրովարտակ (1820), և նույն թվի սեպտ. 26-ին՝ Վարագա Խաչի տոնին կատարվել է վանքի օծումը: Նրա ջանքերով վանքը վերադարձել է իրեն և՛ իբրև ուխտատեղի, և՛ իբրև ուսումնական կենտրոն: Ստեփանոս արք. Աղավնունու պատրիարքության (1831–39, 1840–41) օրոք վերջնականապես ձևավորվել է վանական համալիրը, ականավոր ուսուցչապետների շնորհիվ ծաղկել դպրոցը: Ստեփանոս արք. Մաղաքյանի (1856–65) գործուն մասնակցությամբ է նախապատրաստվել և ընդունվել Ա. Զ. Ս. Ա. վ-ի սահմանադրությունը: 1864-ին ստեղծվել է տպարան, և սկսվել «*Հույս*» հանդեսի հրատ-ը:

Առաջնորդ Խորեն արք. Աշըգյանը (1872–1888) Արմաշի դպրոցը վերածել է Ղևոնդյանց թոշակավոր գիշերօթիկ բարձրագույն վարժարանի: Սակայն 1888-ի սեպտ. 27-ի հրդեհը ի չիք է դարձրել վանահոր գործունեության արդյունքը: Դառնալով Կ. Պոլսի հայոց պատրիարք (1888–94)՝ Խորեն Աշըգյանը չի հրաժարվել Արմաշի վանքը «Թրքահայոց Վենետիկը» դարձնելու նվիրական ծրագրից: Շուտով որոշվել է Կ. Պոլսի պատրիարքության դպրեվանքը (հոգևոր բարձրագույն ուս. հաստատություն) հիմնադրել Ա. Զ. Ս. Ա. վ-ում: Պատրիարք Խորեն Աշըգյանի հովանավորությամբ և փոխվանահայր-վերատեսուչ Մաղաքիա արք. *Օրմանյանի* նախաձեռնությամբ Արմաշի դպրեվանքը բացվել է 1889-ի սեպտ. 18-ին: Փոխտեսչության պաշտոնն է ստանձնել Մ. արք. Օրմանյանի նվիրյալ աջակից Եղիշե ծ. վրդ. *Դուրյանը* (1897-ից՝ փոխվանահայր ու վերատեսուչ): Կրոն. առարկաներից բացի դասավանդվել են իմաստասիրություն, բնական գիտություններ, հայագիտություն, հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն: Դասավանդվող առարկաների շարքում գլխ. տեղերից մեկը գրավել է երաժշտությունը (եկեղեց. երաժշտություն, երգեցողություն, հայկ. նոր ձայնագրություն և եվրոպ. երաժշտ. մշակույթի ուսումնասիրություն): Երախտավոր երաժշտապետներ են եղել Համբարձում Զերչյանը, Հակոբոս Այվազյանը, Արտավազդ Գալենտերյանը: Ընդունվել են 17–22 տարեկան պատանիներ: Ուսման տևողությունը՝ 7 տարի: Նպատակն էր պատրաստել ոչ միայն հոգևորականներ, այլև՝ ուսուցիչներ: 1895–96-ին դպրեվանքում է տպագրվել Կ. Պոլսի «Մասիս» կրոնական հանդեսը: 1896-ից գործել է որբերի դասարան: Աշակերտների թիվը 1889–1914-ին հասել է շուրջ 300-ի: Շրջանավարտները գործուն դեր են կատարել հայոց կրոն. ու հասմշակութ. կյանքում: 1915-ին վանքը թալանվել է, միաբանությունը տարագրվել:

ԱՐՄԱՎԻՐԻ Ա. Զ. Ս. Ա. վ. եղել է նաև գրչության կենտրոն: Գրչագրեր են ժողովվել դեռևս XVII դարից: Զակը Հասանի արշավանքի ժամանակ բոլոր գրչագրերը ոչնչացվել են: Նոր հավաքածուն սկսել է գոյանալ XIX դ. սկզբից: Նվիրատվությունների և տեղում ընդօրինակված ձեռագրերի հիման վրա 1889-ին ստեղծվել է դպրեվանքի մատենադարանը: 1904-ին Արմաշի դպրեվանքի մատենադարանի գրչագրերի թիվը հասել է 223-ի (գիտակամորեն ցուցակագրել է Հ. Թոփճյանը): Մինչև առաջին համաշխ. պատերազմը դրանց թիվը կրկնապատկվել է: Մեծ եղեռնի ժամանակ այդ ամենը ոչնչացվել է: Ձեռագրերից հնագույնը 1351-ից էր, սակայն եղել են նաև ձեռագրեր, որոնց կողերին կարված էին մեսրոպյան երկաթագրով գրված պահպանակներ: XIV դ. կար 4, XV դ.՝ 7, XVI դ.՝ 8, XVII դ.՝ 30, XVIII դ.՝ 58, XIX դ.՝ 116 ձեռագիր: Մեծ մասը գրվել է Արմաշում, ինչպես նաև Կ. Պոլսում, Սեբաստիայում, Կեսարիայում, Ամասիայում, Եկեղյաց գավառում, Կարինում, Էջմիածնում, Հռոմում, Ղրիմում, Լեհաստանում, Երուսաղեմում և հայաբնակ այլ վայրերում: Այդտեղ են պահվել *Թովմա Մեծոփեցու* «Պատմության» 1597-ին ընդօրինակված մի գրչագիրը, *Հովհան Ոսկեբերանի* անտիպ գործերը, *Սիմեոն Ա Երևանցու* ինքնագիր Քարոզգիրքը, բժշկարաններ, բառարաններ, խազագրված ձեռագրեր, Միքայել *Զամչյանի* նամականին, Կիլիկիայի Հայկ. թաղավորության անտիպ մի դատաստանագիրքը ևն: Սակավաթիվ մանրանկարչական ձեռագրերում եղել են *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու* և այլոց դիմանկարները:

Գրկ. Ծոցիկյան Ս., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947: Օրմանյան Մ., Պատմութիւն Արմաշու դպրեվանքին, «Շողակաթ», 1956, № 11–12: Թոփճյան Հ., Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վնտ., 1962: Մուրադյան Պ., Մուշեղյան Ա., Արմաշի դպրեվանքը, Ե., 1998:

ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի՝ 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Ընդգրկում է ՀՀ Արմավիրի մարզը: Առաջնորդանիստը՝ Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի:

Պատմականորեն Ա. Թ-ի տարածքը, որպես Արարատյան երկրամասի միջուկ, պատկանել է արքունիքին, եկեղեց. վարչատարածքային առումով ընդգրկվել տարբեր եպիսկոպոսությունների (Ամբերդ, Հովհաննավանք, Բջնի) կազմում, իսկ վերջին հարյուրամյակում՝ անմիջականորեն ենթարկվել Ս. Էջմիածնի Մայր աթոռին: Այդպես է եղել նաև վաղ միջնադարում, որի մասին հետաքրքիր վկայություն է պահպանվել X դ. մատենագիր Ուխտանեսի Պատմության մեջ: Վերջինս պատմելով Վրաց Կյուրիոն կաթողիկոսի՝ Հայաստանում կրթվելու և պաշտոնավարելու մասին, նշում է, որ *Մովսես Բ Եղիվարդեցի* կաթողիկոսը նրան տվել է կաթողիկոսանիստ Դվինի Կաթողիկե եկեղեցու վանահայրությունը և Այրարատյան գավառի քորեպիսկոպոսությունը:

Ա. Թ-ի տարածքում են գտնվում Էջմիածնի Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե (VII դ.) և Շողակաթ (XVII դ.) վանքերը (ենթարկվում են Մայր աթոռին), ինչպես նաև Այգեշատի Ս. Թարգմանչաց (VII դ.) վանքը, Փարաքարի Ս. Մարիամ Աստվածածին, Ամբերդի Ս. Թովմաս առաքյալ (XII դ.), Գեղակերտի Ս. Հարություն (XIII դ.), Ս. Պողոս-Պետրոս (XIII դ.), Արագածի Ս. Ստեփանոս, Հովտամեջի Ս. Աստվածածին, Հայթաղի Ս. Աստվածածին (XIX դ.) և այլ եկեղեցիներ, Արշալույսի Ս. Կարապետ, Արմավիրի Ս. Դավիթ, Արևշատի Թուխ Մանուկ, Բաղրամյանի Ս. Սարգիս մատուռները:

Թեմի գործող եկեղեցիներն են՝ Էջմիածնի Ս. Աստվածածինը, Բամբակաշատի Ս. Աստվածածինը, Գայի Ս. Նշանը, Փարաքարի Ս. Հարությունը, Արշալույսի Ս. Աստվածածինը, Տանձուտի Ս. Սահակը, Արտամետի Ս. Աստվածածինը, Մրգաստանի Ս. Հովհաննեսը, Դողսի Ս. Ստեփանոսը: Թեմի տարածքում՝ Էջմիածնում, Արմավիրում, Ակնալճում գործում են մի քանի կիրակնօրյա դպրոցներ:

Ա. Թ-ի առաջնորդի պաշտոնակատարն է Արտակ ավ. քհն. Սիմոնյանը (2001-ից):

Պատկերազարդումը տես ներդիր II-ում, 2.8, 4-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.3:

Գրկ. Մաթևոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, № 2–3:

Կարեն Մաթևոսյան

«ԱՐՄԱՏ ՀԱՎԱՏՈ», «Արմատ հաւատոյ», «Հավատարմատ», հայ պատմաղավանաբանական նյութերի ժողովածուներ, որոնք հիմնականում նվիրված են քաղկեդոնական (տես *Քաղկեդոնի ժողով 451*) և հակաքաղկեդոնական դավանաբանական վեճերին: Հայտնի են չորս տարբեր ժողովածուներ, ո-

ռոնցից երեքը պաշտպանել են Հայ եկեղեցու դավանանքը՝ ընդդեմ Քաղկեդոնի ժողովի, մեկը՝ *քաղկեդոնականությունը*:

Առաջին «Ա. Հ.» կազմել է *Հովհան Մայրավանեցին* (Մայրագոմեցի)՝ *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսի օրոք (613–628): Այդ ժողովածուն այժմ հայտնի է «*Կնիք հավատո*» անունով: Երկրորդ ժողովածուն կազմել է *Անանիա Նարեկացին* (X դ.) «Հավատարմատ» անվամբ, որը մեզ լրիվ չի հասել: Ուխտանես պատմիչի վկայությամբ, հեղինակն իր հակաքաղկեդոն. այդ երկասիրությունը նվիրել է Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսին (973–992): «Հավատարմատից» առանձին հատվածներ տեղ են գտել *Անանիա Սանահնեցու* (XI դ.) «Հակաճառություն ընդդեմ երկաբնակաց» երկում («Գանձասար», 1–3, 1992–93): Երրորդ ժողովածուն, որ հայտնի է «Ա. Հ.» անունով (լրիվ խորագիրը՝ «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» կամ «Համառատ հաւաքումն սրբոց վարդապետաց յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեան ընդդէմ հերձուածոց հակաճառութիւն»), կազմել է *Վարդան Այգեկցին*, 1205-ին: Հեղինակային բնագիրը մեզ չի հասել: Երկը հայտնի է բազմաթիվ ընդօրինակություններով՝ ընդարձակ և համառոտ խմբագրությամբ (լավագույնները Մատենադարանի №№ 2080 և 3295 ձեռագրերն են): Ընդարձակ խմբագրությունը, որ շատ ավելի մոտ է հեղինակային օրինակին, բաղկացած է 16 գլխից: Առաջին երկու գլուխներն ըստ էության առաջաբաններ են, որտեղ խոսվում է աշխատության ստեղծման շարժառիթների ու նպատակների մասին: Այս երկի շարադրումը թելադրված էր կաթոլիկ Արևմուտքի եկեղեցաքաղ. նկրտումները կասեցնելու անհրաժեշտությամբ: Օգտվելով Կիլիկյան Հայաստանում թագավոր. իշխանության հաստատման հետ կապված անկայուն քաղ. կացությունից՝ Արևմուտքի քաղ. շահագրգռությունների խոսափող դարձած լատին (կաթոլիկ) եկեղեցին իր տիրապետությունը մեծացնելու նպատակով գործադրել է դաղափար. ներգործման իր հայտնի եղանակները՝ քաղկեդոն. դավանության միջոցով: Վարդան Այգեկցու «Ա. Հ.» նպատակ ուներ տաղնապի զանգ հնչեցնելով արթուն պահել հայոց դավան. գիտակցությունն ու ազգ. մտածողությունը: Այնքան մեծ է եղել այս աշխատության ազդեցությունը ժամանակակիցների վրա, որ Հայ եկեղեցու հակառակորդները Ավինյոնի պապական արքունիքում այն համարել են երկաբնակ դավանության համար առավել վտանգավոր «մոլորական» գրքերից: XIII դ. 2-րդ կեսին Կիլիկիայում ասպարեզ է եկել թվով չորրորդ «Ա. Հ.», որը կազմել էին քաղկեդոն. հայերը՝ Վարդան Այգեկցու «Ա. Հ.»-ին հակակշռելու, երկրում Արևմուտքի քաղ. և եկեղեց. ազդեցությունը ամրապնդելու նպատակով: Այս ժողովածուն XIV դ. դեռևս եղել է հրապարակի վրա:

Գրկ. Կնիք հաւատոյ, հրտ. Կարապետ Եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), Էջմիածին, 1914 (ներածություն, էջ XXVI–XXXI, CVIII–CIX): Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ, հրտ. Շահէ քհն. Հայրապետյանի, Ներածությունը Հ. Քյոսեյանի, Ե., 1998: Անասյան Հ., Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ, Վնտ., 1969: Նույնի, Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը, «Էջմիածին», 1972, № 8–9: Նույնի, Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 882–889:

Հակոբ Քյոսեյան

«ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ», հասարակական-քաղաքական, բանասիրական թերթ (կիսամսյա, շաբաթական, եռօրյա): Լույս է տեսել 1840–84-ին, Զմյուռնիայում (ընդհատվել է 1882-ի հունիսից 1883-ի հունիսը): Խմբագիրներ՝ Ղ. Պալդազարյան, Հ. Սավալանյան, Նշան Միրզա, Ս. Պալասանյան, ապա՝ Հ. Սվաճյան: Ունենալով պահպանող. ուղղություն՝ թերթը ազգ. իրականության մեջ առաջատար տեղ է հատկացրել Հայ առաքելական եկեղեցուն, հիմնավորել նրա դերը կրթության, լուսավորության և ազգ. կյանքի բոլոր ասպարեզներում: Ազգ. միասնությունը առնչել է Հայ եկեղեցու միասնությանն ու կայունությանը, պաշտպանել Մայր աթոռ Ս. Էջմիածնի գերադաս դիրքը Հայ եկեղեցու նվիրապետության մեջ, հետևողականորեն ջատագովել նրա իրավունքները օսմ. Թուրքիայում, նույնիսկ՝ Կ. Պոլսի պատրիարքության նկատմամբ կաթողիկոսի վաղեմի իրավասություններն այս կամ այն չափով վերականգնելու գնով: «Ա. Ա.» անբարյացակամ է վերաբերվել 1860-ի *Ազգային սահմանադրությանը*, որը ներքին վարչ., եկեղեց. ու կրթ. կյանքն ամբողջովին հանձնել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքին ու Ազգային երեսփոխանական ժողովին՝ զուտ բարոյական դարձնելով Էջմիածնի կրոն. իրավասությունները օսմ. Թուրքիայում: Թերթն ընդգծել է ազգ. միասն. հոգևոր կենտրոնի կարևորությունը նաև Հայ գաղթավայրերի ինքնապահպան-

ման գործում, ձգտել է կասեցնել դավանափոխությունն արևմտահայության մեջ, ջատագովել դավան. հանդուրժողության սկզբունքները, հայ հարանվանությունների համագործակցությունը լուսավորության և մշակույթի բնագավառներում: Մխիթարյանների հանդեպ ցուցաբերել է լայնախոհ վերաբերմունք, ակնածանքով մոտեցել նրանց գիտ. ու մշակութ. գործունեությանը և միայն եզակի դեպքերում (1840–50-ական թթ.) հակադրվել նրանց՝ դավան. խնդիրների առիթով:

«Ա. Ա.» հրապարակել է Հայ եկեղեցուն, կաթողիկոսներին, կրոն. այլ նշանավոր գործիչներին նվիրված բազմաթիվ հոդվածներ, ճանաչող. և պատմագիտ. ուսումնասիրություններ, Հայ եկեղեցուն ձոնված գեղ. երկեր:

Ալբերտ Խառատյան

ԱՐՇԱՐՈՒՆՅԱՑ ԴՊՐՈՑՆԵՐ, գործել են V–XIV դդ., Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արշարունիք գավառում: Մեզ հայտնի գրչության հնագույն խոշոր դպրոցներ են եղել Մայրաքաղաք անապատն ու Սանդղկավանքը: Հիմնադրվել են V դ., *Մեսրոպ Մաշտոցի* և *Սահակ Ա Պարթևի* աշակերտներ *Թաթուլի* ու *Վարոսի* ջանքերով: Բուռն ծաղկում են ապրել VI դ.: Այնտեղ ընդգրկված էին 36 ընտիր գրչագրեր: Ուսուցանել են գրչության արվեստ, աստվածաբանություն և փիլ.: Ըստ *Ստեփանոս Օրբելյանի*՝ Արշարունյաց դպրոցը VII դ. համարվել է «վարդապետարան հայոց...»: Արշարունյաց իշխաններից բացի դպրոցը հովանավորել են Բագրատունիները և Կամսարականները: Վահան Կամսարականի խնդրանքով «քաջ փիլիսոփա և նախընտիր վարդապետ» հռչակված *Գրիգորիս Արշարունին* VIII դ. սկզբին շարադրել է «Մեկնութիւն ընթերցուածոց» աշխատությունը: X դ. վերջին Կարսի Աբաս թագավորը (984–1029) Արշարունյաց գավառում է կառուցել վանք՝ կից կառույցներով և համալրել կրոնավորներով: Նույն դարում աչքի է ընկել Վարդկավանքի դպրոցը, վարդապետարանը վերաշինող՝ առաջնորդ Վարդիկի անունով: Հաճախադեպ արշավանքները կործանել են մշակութ. կենտրոնները, սակայն դրանցից ոչ հեռու ծաղկել են այլ կենտրոններ: X դ. Կաղզվանի մոտ հիմնադրվել է Կամրջաձորի դպրոցը, որն ունեցել է մոտ 300 միաբան ու սան: Նշանավոր էին *Սամվել Կամրջաձորեցին*, նրա աշակերտներ Ստեփանոս Ասողիկը և Գևորգ Թառիճեցին (Ուռճեցին), որոնք հռչակվել են որպես աստվածաբաններ և երաժիշտներ: XI դ. զարգացում են ապրել Մայրաձորի կամ Կանչնուտի և Սանդղկավանքի գրչության դպրոցները: Ա. դ-ից մեզ են հասել «Մողնու», «Սանդղկավանքի» և «Բեկյունց» Ավետարանները, որոնց նկարազարդումները (գրիչ և ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի) հայ մանրանկարչության արժեքավոր գործերից են: XIV դ. հայտնի էին Հանկյունաց վանքի, Կաղզվանի և գրչության այլ դպրոցներ:

Գրկ. Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X–XV դդ.), Ե., 1958: Մաթևոսյան Ա., Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողնու Ավետարանը»), ԲՄ, № 10, 1971:

Արտաշես Մաթևոսյան

ԱՐՏԱԶԻ Ս. ԹԱԴԵ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գավառում (այժմ՝ Իրանի Մակու քաղաքից 20 *կմ* հվ-արլ.): Ըստ ավանդության՝ հիմնադրել է *Թադեոս* առաքյալը, 66-ին:

X դ. սկզբին Ա. Ս. Թ. վ. առաջին անգամ հիշատակել է պատմիչ Թովմա Արծրունին, ապա՝ XI դ. պատմիչ Սամուել Անեցին: 1231-ին վանքն ավերել են մոնղոլները, 1247-ին Ա. Ս.Թ. վ-ի գավիթը նորոգել է Հովսեփ վարդապետը: Կիլիկիայի Հայոց Լևոն Գ թագավորը մոնղոլ Արղուն խանի հետ բանակցելու մեկնելիս այցելել է Ա. Ս. Թ. վ.: 1319-ին երկրաշարժից ավերվել է վանքի համալիրը, և 75 միաբան զոհվել է:

1319–29-ին Ա. Ս. Թ. վ-ի վանահայր Զաքարիա եպիսկոպոսը վերակառուցել է վանքի եկեղեցին՝ գմբեթավոր դահլիճի հորինվածքով: Գմբեթի 12-նիստանի թմբուկը շարված է սև և դեղին սրբատաշ քարերի համադրումով, բազմագունություն է օգտագործված նաև լուսամուտների զարդաքանդակ շրջանակներում: 1340-ին Մեսրոպ վարդապետը (կաթողիկոս *Մեսրոպ Ա Արտազեցի*) Ա. Ս. Թ. վ-ում ճեմարան է բացել:

XIV–XVI դդ. Ա. Ս. Թ. վ. բարգավաճել է, ունեցել գրչատուն: 1650-ին վանահայր Մկրտիչ եպիսկոպոսը նորոգել է վանքի եկեղեցին, Ս. Սանդուխտի մատուռը և կառուցել ժամատուն: 1684-ին վանահայր Իսահակ Մաքվեցին կառուցել է վանքի պարիսպները: 1696-ին երկրաշարժից ավերվել են Ա. Ս. Թ. վ-ի բնակելի ու տնտ. շինությունները և պարիսպները: 1810-ին վանահայր Սիմեոն Բզնունին պարսից փոխարքա Աբբաս Միրզայի թույլտվությամբ քանդել է

տվել վանքի Ս. Թադե եկեղեցու արմ. ճակատը և նրան կցել քառամույթ դմբեթավոր՝ *Էջմիածնի Մայր տաճարի* հորինվածքով (առանց Ա-վագ խորանի, որին փոխարինում է հին եկեղեցին իր խորանով), սպիտակավուն սրբատաշ քարով կառույց և զանգակատուն (անավարտ է): Ճակատները հարդարված են զարդագոտիներով ու պատկերաքանդակներով. որմնասյուների միջև քանդակված են սրբապատկերներ,



Արտազի Ս. Թադե վանքի հատակագիծը

հայ նշանավոր հոգևորականներ, կենաց ծառեր, խաչեր, իսկ զարդագոտիներն ունեն ոճավորված բուսական քանդակներ, աշխարհիկ կյանքի տեսարաններով պատկերաքանդակներ: Ս. Թադե եկեղեցու կցակառույցի հարդարանքում ակնհայտ է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու (X դ.) քանդակների ու Սեֆյան Իրանի արվեստի ազդեցությունը: 1855-ին Ա. Ս. Թ. վ-ի և *Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքի* առաջնորդարանները, միատեղվելով, հիմնել են *Ատրպատականի թեմը*՝ Թավրիզ կենտրոնով:

1903–08-ին Ա. Ս. Թ. վ. եղել է հայ ազատագր. շարժման՝ Վասպուրական փոխադրվող զինյալ ջոկատների հենակետ: 1918-ի հուլիսի 2-ին օսմանյան բանակը ներխուժել է Ա. Ս. Թ. վ., կոտորել այնտեղ ապաստանածներին, կողոպտել վանքը և հափշտակել Թադեոս առաքյալի Աջը:

1946-ին վանքի շրջակա հայկ. գյուղերի բնակչությունը ներգաղթել է Հայաստան, և Ա. Ս. Թ. վ. դադարել է գործել: 1954-ից Ատրպատականի առաջնորդարանը կազմակերպում է ամենամյա ուխտագնացություն դեպի Ա. Ս. Թ. վ.: 1969-ից վանքը վերանորոգվում է. աշխատանքներն իրականացնում են Իրանի «Միրասե ֆարհանգի» («Մշակութային ժառանգություն») հաստատությունը և իրանահայ համայնքը՝ Փարիզի «Երկիր և մշակույթ» կազմակերպության մասնակցությամբ:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.1, 1-ին պատկերը:

Գրկ. Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 2, Վնն., 1942: Ա ճ ե մ յ ա ն Հ., Ս. Թադեի վանքը, մաս 1, 2, Թեհրան, 1959–60: H a g h n a z a r i a n A., Das armenische Thaddaus Kloster in der Provinz Westazerbaidjan in Iran, Aachen, 1973; T h i e r r y J. M., Monuments arméniens du Vaspurakan, P.,1989; K l e i s s W., S e i h o u n H., S. Thadei vank, Milano, 1971 (Documenti di architettura armena, 4).

Արմեն Հախնազարյան

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ Հ ա յ ա ս տ ա ն յ ա յ ց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1989-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի: Ընդգրկում է ԼՂՀ տարածքը և հարակից հայկ. շրջանները:

Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակվելուց (301) հետո Արցախում առաջին վանքը IV դ. սկզբին հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*՝ Ամարաս ավանում (տես *Ամարասի վանք*): Վանքի կառուցումն ավարտել է նրա թոռը՝ Արցախի առաջին եպիսկոպոս *Գրիգորիսը* (թաղված է նույն վանքում):

Արշակունիների հարստության անկումից (428) հետո Արցախն ու Ուտիքը (461-ից, երբ մտել են Աղվանից մարզպանության մեջ), Լփինքի, Բաղասականի և Մազքթաց աշխարհի հետ միասին կազմել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու վեհապետական իրավունքները ճանաչող *Աղվանից կաթողիկոսությունը*՝ Կապաղակ, Պարտավ, ապա՝ Ամարաս, Գանձասար կենտրոններով: XVIII դ. վերջին կաթողիկոսությունն ունեցել է 1736, XIX դ. սկզբին՝ 1311 գործող եկեղեցիներ և վանքեր: Վանքերին (Հոռեկա, Երիցմանկանց, Մեծառանից Ս. Հակոբա ևն) կից գործել են դպրանոցներ: *Մեսրոպ Մաշտոցն* առաջին դպրոցը բացել է Ամարասում (IV դ.): 1800-ին Գանձասարում բացվել է հոգևոր դպրոց:

Գյուլիստանի պայմանագրով (1813) Ղարաբաղը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո, կայսերական հրովարտակով 1815-ին Աղվանից կաթողիկոսությունը վերածվել է մետրոպոլիտության՝ Շամախու և Ղարաբաղի թեմերով: 1838–1920-ին Շուշիում գործել է թեմական դպրոց: 1830-ական թթ. վերջին Ղա-

բաբաղի տարածքում ե-ղել են հայկ. 25 եկեղեց. դպրոցներ: 1850-ական թթ. վերջին – 1860-ական թթ. սկզբին եկեղեց-ծխական դպրոցներ են բացվել նաև Ամարասի, Գանձասարի, Երիցմանկանց, Գտիչ վանքերում: 1860–70-ական թթ. Ղարաբաղի թեմում գործել է եկեղեց-ծխական 30 դպրոց: 1930-ին թեմը դադարել է գործել:

Ա. թ-ի տարածքում են գտնվում հոգևորմշակութ. կենտրոններ Ամարասի վանքը (IV դ.), Հոռեկավանքը (V դ.), Մեծառանից Ս. Հակոբավանքը (V դ.), *Գանձասարի վանքը*, Եղիշե Առաքյալը, *Դադիվանքը*, Խաթրավանքը, *Գտչավանքը* (հինգն էլ՝ XIII դ.), Կատարովանքը (X դ.), ինչպես նաև՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ (XIX դ.) և Ս. Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ, XIX դ.) եկեղեցիները են:

Թեմի տարածքում գործող եկեղեցիներն են. Ասկերանի շրջանում՝ Ս. Ստեփանոսը (XVII դ.), Ս. Աստվածածինը (XVIII դ.), Հադրութի շրջանում՝ Սպիտակ Խաչը, Ս. Հարությունը (երկուսն էլ՝ XVII դ.), Մարտակերտի շրջանում՝ Գանձասարի վանքի Ս. Հովհաննես Մկրտիչը (XIII դ.), Ս. Հովհաննու Կարապետը, Ս. Աստվածածինը (երկուսն էլ՝ XIX դ.), Մարտունու շրջանում՝ Ամարասի վանքի Ս. Գրիգորիսը (IV դ. սկիզբ), Շուշիի շրջանում՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչը, Ս. Հովհաննես Մկրտիչը (Կանաչ ժամ կամ Ղարաբաղցոց), Ս. Աստվածածինը (երեքն էլ՝ XIX դ.), Քաշաթաղի շրջանում՝ Ս. Համբարձմանը և Ստեփանակերտի Ս. Աստվածածինը (նորակառույց): Կառուցվում են Մարտունու շրջանում՝ Ս. Ներսես Մեծ, Քաշաթաղի շրջանում՝ Սրբոց Նահատակաց եկեղեցիները:

1993–94-ին Ա. թ-ում գործել է դպրեվանք: 1990–95-ին թեմի հովանու ներքո բացվել են «Գթություն» բարեգործ. միությունը, ծերանոց: 1990-ից գործում է «Եկեղեցասիրաց եղբայրակցություն» կազմակերպությունը: 1994-ին Երևանում հիմնվել է Ա. թ-ի «Գանձասար» աստվածաբան. կենտրոնը (կից գործում է տպարան):

Թեմը զգալի դեր է խաղացել արցախահայության ազգ-հոգևոր զարթոնքի, ԼՂՀ ազատագրման և պետականության ամրապնդման գործում:

Ա. թ-ի առաջնորդն է Պարգև արք. Մարտիրոսյանը (1989-ից):

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.1, 2-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.4:

Վլադիկ Հակոբյան

ԱՐՈՒՃԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Արագածոտնի մարզի Արուճ գյուղի հարավային կողմում: Կառուցել է տվել իշխան Գրիգոր Մամիկոնյանը կնոջ՝ Հեղինեի հետ: Արձանագրության համաձայն, եկեղեցու շինարարությունը սկսվել է 662-ին, ըստ մատենագր. վկայությունների՝ ավարտվել 666-ին. օծել է Հայոց կաթողիկոս Անաստաս Ա Ակոռեցին (661–667):

Մինչև Ս. Գրիգոր եկեղեցու հիմնադրումն Արուճում գոյություն է ունեցել մեկ այլ եկեղեցի, որի քահանա Գիորգոսը մասնակցել է Դվինի Գ եկեղեց. ժողովին (609): Հավանաբար դա այն բազիլիկ կառույցն է, որը գտնվում է եկեղեցու հվ-արլ. կողմում և հետագա վերակառուցման հետևանքով վերածվել է, ըստ որոշ ուսումնասիրողների, աշխարհիկ շինության:

Ըստ կաթողիկոս-պատմիչ *Հովհաննես Ե Դրասխանակերտցու*, իշխան Գրիգոր Մամիկոնյանը Ա. Ս. Գ. ե-ու հվ. կողմում կառուցել է «իր արքունիքը»՝ պալատական համալիրը: 867-ին, եկեղեցու ներսում՝ հվ-արլ. ավանդատան դիմաց, քերել են սվաղի մի հատվածը և փորագրել Արուճի և Հարևան Կոչ գ-ի ջրօգտագործման հետ կապված վեճը կարգավորող որոշում-արձանագրությունը, որը թողել է Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու ներկայացուցիչ, Վռամի որդի Գրիգորը: 973-ին ոմն Գորամ վարպետ Դավթի ձեռքով նորոգել է Ա. Ս. Գ. ե.:

987-ին Սմբատ Բ Բագրատունի արքան, ըստ եկեղեցու հվ. պատի արձանագրության, Արուճին հարկային արտոնություն է տվել: Ա. Ս. Գ. ե-ու հվ. մուտքի ճակատի վրայի արձանագրության համաձայն, 1285-ին Արուճի բնակիչներն ազատվել են բնահարկից: XIII դ. Մարգար կազմողը եկեղեցու հս. պատի արլ. որմնամույթի վրա քանդակել է չորս մեծ և երեք փոքր խաչեր: XV դ. Խաչատուր վարդապետը նորոգել է Ա. Ս. Գ. ե.: XVI–XIX դդ. եկեղեցին կիսավեր էր և լքված: 1946-ին նորոգվել են եկեղեցու հվ. և արմ. պատերի քանդված հատվածները, վերանորոգվել քիվերը և տանիքը: 1947–52-ին Ա. Ս. Գ. ե-ու հվ. կողմում պեղումներով (ղեկ. Վ. Հարությունյան) բացվել է իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառուցած պալատը: 1958–59-ին ամրացվել է եկեղեցու աղոթասրահի արմ. կող-

մի թաղը: 1964-ին բարեկարգվել է եկեղեցու շրջակա տարածքը:

Ա. Ս. Գ. ե. գմբեթավոր դահլիճի տիպի (16,95 մ x 34,5 մ արտաքին չափերով), արլ-ից երկու ավանդատներով, գմբեթի (այժմ՝ քանդված) առագաստային անցումով բարձրարվեստ կառույց է՝ միասնական ու վեհաշուք ներքին տարածությամբ: Լուսավորվել է 41 պատուհաններից և երեք լայնադիր դռներից ներթափանցող առատ լույսով: Եկեղեցու կառուցմանը ժամանակակից որմնանկարներից պահպանվել են միայն հատվածներ Ավագ խորանում: Գմբեթարդում պատկերված է եղել «Օրհնք տվող Աստծու» պատկերագր. և Ավետարանում շարադրված «Համբարձման» տեսարանի համատեղումը ներկայացնող հորինվածք: Հատկապես տպավորիչ է եղել Քրիստոսի մեծադիր պատկերը, որը սկզբնապես 7 մ բարձր. է ունեցել (պահպանվել է միայն ծնկից ներքև եղած հատվածը): Զարդարուն պատվանդանին կանգնած Քրիստոսը ձեռքին ուներ Հովհաննեսի Ավետարանից վերցված քաղվածքով (Հովհ. 14.21) հայագիր մագաղաթալար: Պատկերի առանձին մանրամասներ եղել են ոսկեզօծ:



Արուճի Ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը

Քրիստոսից ցած, պատվանդանի հավասարությամբ, ողջ խորանը երիզված է խոշոր ականթազարդերից կազմված լայն գոտիով՝ կատարված հայ հելլենիստ. արվեստի ավանդույթներով և մեծ վարպետությամբ: Զարդագոտուց ներքև, Ավագ խորանի երկու կողմերի պատերին եղել են ձեռքերին գրքեր պահած առաքյալների պատկերները (հս. պատին պահպանվել են միայն նրանցից վեցի պատկերները): Քրիստոսի պատվանդանի տակ նկարչի մակագրությունն է. «Ստեփաննոս ն[կ]ա[ր]եաց»: Վերջինս VII դ. հայտնի առաջին հայ նկարիչն է:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.2, 1-ին պատկերը:

Գրկ. Ղեվոնդ, Պատմութիւն, Ե., 1982: Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Եղիազարյան Հ., Գրիգոր Մամիկոնյան իշխանի կառուցած տաճարը և պալատը Թալիշ գյուղում և վերջինիս հնագիտական պեղումները, «Էջմիածին», 1955, № 2: Մաթեվոսյան Կ., Արուճ, Ե., 1987: *Арутюнян В., По поводу датировки храма в Аруче, Е., 1946; Дурново Л.А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; Котанджян Н. Г., Цвет в раннесредневековой живописи Армении, Е., 1978;* Der Nersessian S., L'art arménien des origines au XVII siecle, P., 1977.

Կարեն Մաթևոսյան

ԱՐՔԱՅԱԿԱՂՆԻ ՎԱՆՔ, Արքակաղին վանք, Կիլիկիայի Հայկական պետության եպիսկոպոսանիստ (Մամեստիայի արքեպիսկոպոսների) վանքերից: Գտնվել է Մսիսից (Մամեստիա) հվ-արլ., կաղնիների, սոսիների, ձիթենիների անտառի մեջ: Անունը ստացել է կաղնիներով շրջապատված լինելու համար: Կոչվել է նաև Խճկտոր [այսինքն՝ Հաճկատար, Հաճոյակատար (Տիրամորը տրվող մակդիր), որից ենթադրվում է, թե գլխ. եկեղեցին նվիրված էր Աստվածածնին]: Կառուցման ժամանակն անհայտ է: Հիշատակվել է XII դ. կեսից: Ա. վ-ի մասին հիշատակություններ ունեն Վարդան Արևելցին (XIII դ.), Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Սմբատ Գունդստաբլը (XIII դ.), Հովհաննես Երզնկացին (XIII դ.) և ուր.: Ունեցել է հազվագյուտ և ճոխ ձեռագրերով մատենադարան, դպրանոց, գրչատուն: Հայկ. երաժշտության և գրչության հայտնի կենտրոն էր, որի մասին իր ճառում գովասանքով է արտահայտվել Հովհաննես Երզնկացին: Ա. վ-ում հորինվել են եկեղեց. բազմաթիվ մեղեդիներ՝ «մանրուսում» և «կցուրդք»: Այստեղ է սովորել *Վարդան Այգեկցին*: Վանքը 1206–08-ին եղել է հակաթոռ կաթողիկոս Դավիթ Թավիսս Արքայակաղնեցու (Մամեստիայի արքեպիսկոպոսը՝ 1175–1206) նստավայրը:

Ա. վ-ում են ամփոփվել Լևոն Բ Մեծագործի հայր Ստեփանեն (1167), Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը և ուր.: Վանքը կործանվել է 1269-ի երկրաշարժից, 1284-ին՝ մասնակի նորոգվել: Պահպանվել են ավերակները:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վնտ., 1956: Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Ոսկյան Հ., Կիլիկիայի վանքերը, Վնտ., 1957:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, տես *Պատվո աստիճաններ և պարգևատրումներ* Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոդվածում:

Բ

ԲԱԲԿԵՆ Ա ՈԹՄՍԵՅԻ [ծ. թ. անհտ, դ. Ոթմուս (Վանանդ գավառում) – 516], Ամենայն Հայոց կաթողիկոս 490-ից: Աշակերտել է *Հովհաննես Ա Մանդակունուն*, ում և հաջորդել է: Նրա կյանքի և գործունեության վերաբերյալ հայ մատենագրությունը գրեթե ոչինչ չի հաղորդում: Հայրապետության տարիները համընկել են Վահան Մամիկոնյանի (487–505) և նրա կրտսեր եղբայր Վարդ Մամիկոնյանի (505–510) մարզպանության շրջանին, որն անցել է մեծ մասամբ խաղաղությամբ: Բ. Ա. Ո. եռանդուն մասնակցել է ժամանակի դավան. վեճերին, պայքարել *նեստորականության* դեմ, մեծ դեր խաղացել *Քաղկեդոնի ժողովի* (451) նկատմամբ Հայ եկեղեցու վերաբերմունքի ճշտման և հակաքաղկեդոն. դիրքորոշման ամրապնդման գործում:

Բ. Ա Ո-ուց պահպանվել են երկու դավանաբան. թղթեր՝ միևնույն վերնագրով («Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս»): Առաջինը գրվել է Դվինի 506-ի ժողովի (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) ժամանակ և հավանությամբ (ժողովը հրավիրել և գլխավորել է Բ. Ա Ո.): Պարսկաստանի քրիստոնյա ուղղափառ ասորիները, որոնք հալածանքների էին ենթարկվում նեստորականներից, պաշտպանություն էին հայցել Հայոց կաթողիկոսից և Հայ եկեղեցուց, միաժամանակ խնդրել, որ կաթողիկոսը գրով հաստատի, թե որն է ճշմարիտ հավատը, քանի որ նեստորականները պարծեցել էին, թե հայերը ևս իրենց հավատքն ունեն: Բ. Ա Ո., ի պատասխան այդ խնդրանքի, Հայ եկեղեցու և ժողովի անունից գրել է առաջին թուղթը՝ հավաստելով, որ Հայ եկեղեցին չի ընդունում նեստորականությունը և չի հաղորդակցվում նեստորականների հետ, իսկ Նեստորի և նրա կողմնակիցների վարդապետությունը մերժում է ու նզովում: 508/509-ին գրված երկրորդ թուղթն արձանագրում է, որ Պարսկաստանի ուղղափառ քրիստոնյաները, Սիմեոն Բեթ-Արշամացու գլխավորությամբ, երկրորդ անգամ են եկել Հայաստան և Հայոց կաթողիկոսին տեղեկացրել, որ նեստորականները չեն հավատացել առաջին թղթին և չեն ընդունել ուղղափառ ասորիների ու հայերի դավանությունը ճշմարիտ հավատքի մասին: Նեստորականները՝ «ի ժողովոյն Քաղկեդոնի զօրացեալ», շարունակել են ավելի եռանդուն տարածել իրենց մոլորությունները: Բ. Ա Ո. Տարոնի Մերշապուհ եպիսկոպոսի, Վարդ Մարզպանի և այլ եպիսկոպոսների ու նախարարների անունից երկրորդ թղթով կրկին հավաստել է, որ Հայ եկեղեցին 431-ի *Եփեսոսի Գ տիեզերական ժողովից* հետո չի ընդունում որևէ նորամուծություն, նզովում է Նեստորին և *Անտիոքի* դպրոցի բոլոր ներկայացուցիչներին ու նրանց հետևողներին Պարսկաստանում, այդ թվում՝ նեստորականների Բաբե կաթողիկոսին: Երկրորդ թուղթը կարևոր տեղեկություններ է պարունակում VI դ. սկզբին Հայ եկեղեցու դավան. դիրքորոշման վերաբերյալ: Առաջին անգամ հայ դավան. գրվածքներում և մատենագրության մեջ հիշատակվում է Քաղկեդոնի ժողովը, որն անվանվում է «ստություն», իսկ նրա որոշումները՝ նեստո-

բականներին ուժ ու զորություն տվող: Առաջին անգամ է հիշվում նաև Զենոն կայսրի՝ ավելի շատ արևելյան ուղղափառներին բավարարող «*Հենոտիկոնը*», ինչպես նաև Անաստաս կայսրի թուղթը՝ որպես ճշմարիտ հավատքի գրություններ: Վերջապես, առաջին անգամ, ի թիվս այլ աղանդավորների, նզովվում է նաև Եվտիքեսը, ցույց տալով, որ Հայ եկեղեցին *քաղկեդոնականության* և նեստորականության հետ միասին մերժում է նաև ծայրահեղ միաբնակ վարդապետությունը՝ *եվտիքականությունը*:

Կաթողիկոս. գահին Բ. Ա Ո-ուն հաջորդել է *Սամվել Ա Արծկեցին*:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Ակինյան Ն., Կյուրիոն կաթողիկոս Վրաց. Պատմություն հայ-վրական հարաբերությանց է դարու մէջ, Վնն., 1910: Տեր-Մինասյան Ե., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971, էջ 31–45, 353–363:

Արտաշես Ղազարյան

ԲԱԳԱՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բագրեվանդ գավառի հարավ-արևելյան մասում, Նպատ լեռան ստորոտին, պատմական Բագավան բնակավայրում: Ըստ շին. արձանագրության, Բ. Ս. Հ. վ-ի եկեղեցին կառուցել է *Եզր Ա Փառաժնակերտցին* 631–639-ին (ճարտ.՝ Իսրայել Գոռաղճեցի): Հայկ. ամենախոշոր եկեղեցիներից է (27 *մ* x 46 *մ*, բարձր. առանց գմբեթի՝ մոտ 20 *մ*) և



Բագավանի Ս. Հովհաննես վանքի եկեղեցին (631–639) հս-ից

ունի քառամույթ գմբեթավոր հորինվածք, արլում՝ արտաքուստ եռանիստ ծավալներով շեշտված խորանով և ավանդատներով: 778-ին արաբները կողոպտել են վանքը և սպանել 40 միաբանի: 1210-ին Զաքարե Բ Մեծը, Խլաթի պաշարումից վերադառնալիս, այցելել է Բ. Ս. Հ. վ., գնել գյուղ ու նվիրել վանքին: 1273-ին Կարապետ քահանան 90 դահեկանով այգի է գնել ու նվիրել վանքին: Միջնադարում վանքի եկեղեցին վերակառուցել են ամրոցի՝ տանիքը վերածելով պաշտպանության հարթակի: Վանքն ավերվել է XIV դ.՝ Լենկթեմուրի արշավանքներից և վերստին գործել XVII դ. կեսից, երբ այնտեղ է հաստատվել Բագրեվանդի եպիսկոպոս. աթոռը: Եկեղեցին նորոգվել է 1679–85-ին, փլված գմբեթը փոխարինվել է ցածր, անհամաչափ թմբուկով: Անբավարար միջոցների պատճառով նորոգման աշխատանքներն անավարտ են մնացել, և վանահայր Իսահակ եպիսկոպոսը շրջաբերական թղթով օգնություն է խնդրել Եվրոպայի հետ առևտուր անող հայ վաճառականներից: 1720-ին Մխիթար վարդապետն ազատել է եկեղեցին հարկերից: 1735-ին պարսից զորքը մտել է վանք և սպանել միաբաններին: *Ղուկաս Ա Կարնեցու* և Հովսեփ արք. *Արղությանի* վախճանվելուց հետո *Դավիթ Ե Էնեգեթցին* խոչընդոտել է էջմիածնում ժողով հրավիրելը, ինչի հետևանքով *Դանիել Ա Սուրմառեցին* 1802-ի հունիսի 6-ին կաթողիկոս է ընտրվել Բ. Ս. Հ. վ-ում:

1821-ին Ալաշկերտի վրա Երևանի խանի հարձակման ժամանակ Խաչատուր վարդապետը շրջակա հայ բնակչությանն ապաստան է տվել վանքում: 1861-ին քրդերն սպանել են վանահայր Գալուստ Ատովմյանին: 1862-ին Հովհաննես եպիսկոպոսը Հիմնովին վերակառուցել է վանքի պարիսպները, 1864-ին այնտեղ բացել ժառանգավորաց վարժարան: 1877–1878-ի ռուս-թուրք. պատերազմի ժամանակ վանքն ասպատակել և կողոպտել են շրջակայքի քրդերը: Ավարառումից փրկելու համար վանքի ձեռագրերը 1877-ին թաղել են, սակայն հողում դրանք ոչնչացել են: 1915-ին վանքն ամայացել է և լքվել: 1950-ական թթ. Բ. Ս. Հ. վ-ի եկեղեցին պայթեցվել է:

Գրկ. Սարգիսյան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վնտ., 1864: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1903–07: Մնացականյան Ս., Բագավանի տաճարի շինարարական արձանագրության վերծանման հարցի շուրջը, ՊԲՀ, 1964, № 2: *Орбели И., Багаванский храм и его надписи, "Христианский Восток", т. 5, в. 2, П., 1917;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

Մուրադ Հասրաթյան

ԲԱԳԱՐԱՆԻ Ս. ԹԵՈԴՈՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արշարունիք գավառի հյուսիս-արևելքում, Ախուրյանի աջ ափին: Ըստ շին. արձանագրության, կառուցել են տվել իշխան Բուտ Առավեղյանն ու նրա կինը՝ Աննան, 624–631-ին: Հորինվածքով հարում է *Էջմիածնի Մայր տաճարի* խաչաձև-կենտրոնագմբեթ, քառախորան, քառամույթ տիպին: Հետագայում, Ավագ խորանի երկու կողմերում, ավելացվել են ավանդատներ:

Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցին (624–631) արմ-ից

Եկեղեց. շենքի Էջմիածին-Բագարան տիպը Բյուզանդիայի միջոցով (Կ. Պոլսի Նեա եկեղեցի, IX դ.) տարածվել է Եվրոպայում և նախատիպ է եղել Օուլեանի Ժերմինյի դե Պրե (806–811, ճարտ. հայազգի Օդո լը Մեսսեն), Միլանի Սան Սատիրո (868–888), Աթոս լեռան (Հունաստան) վանքերի X–XII դդ. և այլ եկեղեցիների համար: Բ. Ս. Թ. ե. զգալի տուժել է 1048-ին՝ սելջուկյան թուրքերի արշավանքից, վերանորոգվել 1211-ին: 1950-ական թթ. եկեղեցին պայթեցվել է:

Գրկ. Սարգիսյան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վնտ., 1864: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, Ե., 1942: Զարյան Ա., Եվրոպայում բագարանատիպ կառույցների տարածման հարցի շուրջ, «Հայկազյան հայագիտական հանդես», 3, Բեյրութ, 1972: *Орбели И., Избранные труды, Е., 1963;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

Մուրադ Հասրաթյան

ԲԱԳՆԱՅՐԻ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում, Անիից արևմուտք, Արջո (Ալաջա) լեռան հյուսիսային ստորոտին, Բագնայր գյուղում: Ըստ պատմիչ Սամուել Անեցու, վանքի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին (արձանագրություններում կոչվում է նաև Մայր Լուսո) կառուցել է իշխան Սմբատ Մագիստրոս Պահլավունին: Երկու զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցի է: Նրան արմ-ից կից է կենտրոնակազմ, քառասյուն գավիթը (XI դ.), որի ծածկի կենտր. հատվածն ունի չթաքարազարդ երդիկով գմբեթ: Ս. Աստվածածին եկեղեցուց հվ-արլ. երկու փոքր եկեղեցիներ են, որոնցից հս-ը (XI դ.) խաչաձև գմբեթավոր հորինվածք ունի, հվ-ը՝ Ս. Գրիգոր եկեղեցին (1145), մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է: Այժմ կիսավեր վանական համալիրից 400 մ հս. կանգուն է Ս. Երրորդություն կենտրոնագմբեթ եկեղեցին (XI դ.)՝ արտաքուստ վեցանիստ, ներսից հնգախորան, արմ.՝ վեցերորդ նիստում ուղղանկյուն թաղածածկ խորշով:

Բ. վ. ստացել է բազմաթիվ նվիրատվություններ՝ գյուղեր, հողեր, այգիներ, ջրաղացներ, հնձաններ, Անիում՝ կրպակներ, հյուրատուն, Ավետարաններ ևն: Արժեքավոր է 1232-ին *Հոռոմոսի վանքում* Իգնատիոսի նկարազարդած Ավետարանը, որը պատվիրատուն՝

Բագնայրի վանքը (XI–XIII դդ.) հվ-արմ-ից

Զաքարե և Իվանե Զաքարյանների քեռորդի Խոռասը, նվիրել է Բ. վ-ին: «Բագնայրի Ավետարան» անվամբ այս ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 1519) 2 անգամ գերեվարվել և հետ է գնվել:

Գրկ. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմութեան, Վաղ-պատ, 1893: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, Ե., 1942: Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., L'architettura della scuola regionale di Ani nell'Armenia medievale, Roma, 1977; Thierry J.M., A propos de quelques monuments chretiens du vilayet de Kars (III), "Revue des études arméniennes", t. XVII, P., 1983.

Մուրադ Հասրաթյան

ԲԱԶԵՆԻՑ ՎԱՆՔ, Բազենից Ս. Էջմիածին, Ս. Աստվածածին, Վանա լճի արևելյան ափին, Վան նահանգի Խիզան գավառի Սպարկերտ գավառակում, Բազմենից

(Բազենից) գ. մոտ, Ս. Սահակ Պարթև վանքի դիմաց, բլրի վրա: XV դ. հիշվում է որպես «նորաշէն Սուրբ Էջմիածին, որ անուամբ Բազենից վանք յորջորջի»: Նշանակում է՝ այդ ժամանակ նոր էր կառուցվել կամ նորոգվել: Վանքի համալիրն ունեցել է մի մատուռ՝ Վերին Էջմիածին, և երկու եկեղեցի՝ Ներքին Էջմիածին ու Ս. Աստվածածին անուններով: Եղել է միջնադարյան հայկ. գրչության կենտրոններից: Բ. վ-ից մեզ են հասել մի քանի ձեռագրեր. Մատենադարանի № 4213 Ավետարանը (1441), № 6121 Ժամագիրքը (1443, երկու ձեռագրերի գրիչն է Ղազարը), № 6653 Ավետարանը (1454, գրիչ՝ Հովհաննես, ծաղկող՝ Մինաս), № 5860 Մաշտոցը (1487–89, գրիչ՝ Թումա աբեղա): 1445-ին Բ. վ-ում գրված մի Ավետարան գտնվում է Կալիֆոռնիայում, 1553-ին գրված Շարակնոցը՝ Երուսաղեմում (ձեռ. № 1594), 1475-ին Ռստակեսի և 1566-ին Աստվածատուրի գրած Ավետարանները մինչև Մեծ եղեռնը Վասպուրականում էին:

«**ԲԱԶՄԱՎԵՊ**», «Բազմավէպ», հայագիտական, բանասիրական, գրական հանդես: Սկզբնապես՝ երկշաբաթաթերթ, ամսագիր (1858–72), եռամսյա ուսումնաթերթ («պրակ եռամսյա», 1873–89), երկամսյա, ներկայումս՝ եռամսյա հանդես. տարեկան լույս տեսնող 4 համարներն ամփոփվում են մեկ միացյալ հատորում: Լույս է տեսնում 1843-ից, Վենետիկի Ս. Ղազար կղզում: Վենետիկի *Մխիթարյան միաբանության* հրատ.: Հիմնադիրն է Գաբրիել *Այվազովսկին*: Նպատակը «բարեկիրթ և ուսումնական ազգերէն» հետ չմնալն էր, հայ ժողովրդի հոգևոր և մշակութ. վերելքին նպաստելը, ազգի լուսավորությանը ծառայելը: Խմբագիրներ են եղել Գ. Այվազովսկին, Ղ. *Ալիշանը*, Վ. Հացունին, Ե. Փեչիկյանը, Մ. Ճանաչյանը, Ն. Տեր-Ներսեսյանը և ուր.: Ներկայումս (2001) խմբագիրն է Հ. Պզտիկյանը: Լինելով հայ մամուլի կենդանի նահապետը՝ «Բ.» ամենատարեցն է նաև Իտալիայում հրատարակվող պարբերների մեջ և չորրորդը՝ աշխարհի հնագույն հանդեսների շարքում:

«Բ.» իր բովանդակության հարստության, համազգ. գաղափարների արծարծման, նաև բարձրարվեստ ու նրբաճաշակ տպագրության շնորհիվ լայն ընդունելության է արժանացել հայկ. բոլոր գաղթավայրերում: Առաջինն է հայոց մեջ մարմնավորել ժողովրդանվեր լրագրության գաղափարը. հասցեագրվել է ոչ թե հայության որևէ մեկ շրջանակի կամ հասարակության որոշակի շերտի, այլ՝ «վասն համօրէն աշխարհիս, ուր կանն ի մերազնէից»:

Ազգի լուսավորության և առաջադիմության համար աշխատելու, ժողովրդին մերձենալու նպատակամղումը պայմանավորել է նաև պարբերի լեզվի՝ գտված աշխարհաբարի ընտրությունը: Դրանով այն արագացրել է արդի հայերենի վերջնական հաղթանակը: Այդուհանդերձ, խմբագրակազմը երբեք չի մոռացել գրաբարը, չի հրաժարվել այն բոլորին սովորեցնելու մտքից՝ միշտ հիշեցնելով, որ գրաբարը «մեր նախնեաց եւ թագավորաց լեզուն է»:

Հավատարիմ իր «Բ.» անվանը (այսինքն՝ «բազում բաներ վիպող, պատմող»), նաև որդեգրելով «դյուրիմաց և զվարճալի» ոճ՝ հանդեսը միևնույն համարում տպագրել է պատմաբանասիր. լուրջ քննություններ, տվել կենցաղօգուտ ու տարրական գիտելիքներ, պատմել եվրոպ. վերջին գյուտերի ու նորությունների մասին, հաղորդակից դարձրել աշխարհում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին: Այս իմաստով հանդեսի յուրաքանչյուր հատոր նմանվել է մի փոքրիկ համալսարանի՝ իր մեջ համատեղելով ժող. թերթի և ուսումնագիտ. հանդեսի տարրերը:

«Բ.» արտացոլել է Արևմուտքի առաջավոր ու ազատամիտ գաղափարները հիմնականում Մխիթարյան գաղափարաբանության և քրիստ. ոգով, ինչը հայերի կյանքում առաջադիմ. նշանակություն է ունեցել: Թարգմանվել և հանդեսի էջերում հրատարակվել են եվրոպ. գրականության գլուխգործոցներ: Իրենց հերթին եվրոպացիները «Բ.»-ի էջերում մերթ ընդ մերթ լույս տեսնող օտարալեզու հայագիտ. հոդվածների միջոցով ծանոթացել են հայոց պատմությանն ու մշակույթին: Հայագիտ. հանդեսի վերածելու ճանապարհին պարբ-ի էջերում աստիճանաբար նվազել են բնական գիտությունների վերաբերող նյութերը՝ իրենց տեղը զիջելով գրական-բանասիր. հոդվածներին: Զգալի տեղ են գրավել եկեղեցապատմ. լուսաբանու-

ԲԱՆԱԴՐԱՆՔ թյունները, որոնք, սակայն, դավան. վեճեր հրահրելու նպատակ չեն հետապնդել: Ավելին, լինելով կրոն. միաբանության պաշտոնաթերթ, «Բ.» երբեք առանցքային չի համարել այդօրինակ թեմաների շոշափումը և իր ճակատին չի ունեցել «կրոնական» նշումը: Դրանով այն հավասարապես ընդունելի է եղել թե՛ առաքելական, թե՛ կաթոլիկ հայերի համար: Իր էջերում տեղ տալով տարաբնույթ հեղինակների գրություններին՝ առաջնայինը համարել է գիտ. բարեխղճությունն ու նյութի իմացությունը: «Բ.» միտումնավոր տուրք չի տվել կրոն. որևէ ուղղության, զգուշավորություն է հանդես բերել դրանցից որևէ մեկի պաշտպանության հարցում: Այս իմաստով ևս շարունակել է Մխիթար Աբբահոր (տես *Մխիթար Սեբաստացի*) կեցվածքը՝ պատգամախոս դառնալով քրիստ. մության և միջեկեղեց. հաղորդակցության: Իր անանխադեպ հաջողությամբ «Բ.» պարտական էր Գաբրիել Այվազովսկուն և երիտասարդ միաբան Ղևոնդ Ալիշանին: Նրանց նման Մխիթարյան մյուս հայրերը ևս իրենց ուսումնագիտ. աշխատանքի պտուղներն էին հանձնում ընթերցողին՝ առանց փնտրելու փառք կամ անուն: Նույնիսկ առաջին խմբագրի անունը մեզ է հասել վանական ավանդությամբ միայն: Ալիշանի խմբագրապետության օրոք «Բ.» սկսել է «Հիւրաբար» էջեր տրամադրել նաև հայ մտավորականության մյուս ներկայացուցիչներին՝ հոգևոր թե աշխարհիկ:

Հանդեսի 150-ից ավելի տարեհատորները հայ մշակույթի մնայուն էջերից են, որտեղ ամփոփված են գիտնականների շատ սերունդների հայագիտ. հունձքն ու վաստակը: Առանձնահատուկ են հատկապես «Բացառիկ»-ները՝ նվիրված հայ և համաշխարհային մշակույթի պատմության նշանակալի իրադարձություններին և ականավոր անհատների հոբելյաններին: 1973-ից ի վեր «Բ.»-ին կից հրատարակվում է համանուն մատենաշար: Արդեն լույս տեսած 38 հատորներն (2000) ընդգրկում են հայ մշակույթի գրեթե բոլոր բնագավառները:

Գրկ. Սարգիսյան Բ., Երկուհարիւրամեայ գրական գործունեութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905, էջ 145–160: «Բազմավեպ» հայագիտական-բանասիրական-գրական հանդես, բացառիկ թիվ «Բազմավեպ» հրատարակության 150-մայակի առիթով, Վնտ., 1994: Հակոբյան Պ., «Բազմավեպի» մեկուկես դարը, ԲԵՀ, 1993, № 3: Լաճիկյան Լ., Հայ հրապարակագրության երկացդույն հանդեսը, ՀԵՀ, 1993, № 3: Շտիկյան Ս., Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպ» պարբերականը, «Բազմավեպ», 1995, էջ 5–15: Զեքիյան Լ., «Բազմավեպ». հայագիտական հանդեսներու նահապետը, ՊԲՀ, 1995, № 1:

Լևոն Լաճիկյան

ԲԱՆԱԴՐԱՆՔ, տես *Նզովք* հոդվածում:

«ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ», «Բանք իմաստասիրաց», «Բանք եւ խրատք իմաստանոց», իմաստախոսական ասույթների ժողովածու: Թարգմանվել է հուն-ից, 610–720-ին: Պարունակում է տարբեր ասույթներ՝ քաղված Աստվածաշնչից, անտիկ մտածողների, եկեղեցու հայրերի ժառանգությունից: Իբրև բարոյախրատ., ուսուցող. բնույթ ունեցող հոգեշահ ընթերցանության նյութ, «Բ. ի.» լայնորեն տարածված էր միջնադարյան Հայաստանում: «Բ. ի.» ժողովածուներն իրենց ընդգրկած միավորներով միատարր չեն: Ժամանակի ընթացքում նրանց մեջ ներմուծվել են նորանոր ասույթներ: «Բ. ի.»-ի վաղագույն տարբերակները հիմնականում ունեն հետևյալ թեմատիկ բաժանումը. ա. Իմաստութիւն, բ. Ուսումն, գ. Բարեկամութիւն, դ. Իշխանութիւն և Իշխանք, ե. Արիութիւն, զ. Յաղագս ընչից, է. Արծաթասիրութիւն, ը. Յաղագս փառաց, թ. Յաղագս մահուն և փոխելոյ ի կենաց, ժ. Վասն լավագդութեան, ժա. Յաղագս լռութեան, ժբ. Բախտ և անբախտութիւն, ժգ. Գինի և արբեցութիւն, ժդ. Շոգմոգք և շոգմոգքութիւն, ժե. Վասն պատուոյ հարց, ժզ. Յաղագս դաստիարակութեան որդւոց, ժէ. Յաղագս օրինաց, ժը. Յաղագս անոխակալութեան, ժթ. Յաղագս խրատուց, ի. Յաղագս բժշկաց, իա. Յաղագս երդման, իբ. Յաղագս մեղաց խոստովանութեան, իգ. Յաղագս նախախնամութեան, իդ. Յաղագս կնոջ չարաբարոյի:

Հենվելով «Բ. ի.»-ի ժողովածուների վրա՝ հայ հեղինակները հասարակության հոգևոր կարիքները բավարարելու նպատակով («ի պէտս քարոզութեանց») կազմել են նմանաբնույթ ժողովածուներ: «Բ. ի.»-ի որոշ ասույթներ տեղ են գտել հայ դավանաբան. գրակ. մեջ:

Գրկ. Բանք խրատուց նախնի իմաստասիրաց հունաց, «Սոփերք հայկականք», հ. 1, Վնտ., 1853, էջ 9–59: Պողոս Ադրիանապոլսեցի, Թանգարան խրատու, հ. 1–2, Երուսաղեմ, 1870: Ալեքսանդր Ջուղայեցի, «Վկայութիւնք ի պէտս քարոզութեանց» (Իմաստուն ասույթներ քարոզների համար), աշխատասիր. Հ. Քյոսեյանի, «Էջմիածին», 1990, № 8–9, 1991, № 1–3, № 9–10:

Հակոբ Քյոսեյան

ԲԱՌԱՔԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ, տես *Աստվածաշնչի բառարաններ*:

ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ, սուրբ Բարդուղիմեոս առաքյալ, Հիսուս Քրիստոսի տասներկու *առաքյալներից*: Քրիստոնեություն է տարածել նաև Հայաստանում՝ 60–68-ին: Ըստ Նոր կտակարանի՝ Նաթանայելն է, որի մասին Հիսուսն ասաց. «Ահա իսկական մի իսրայելացի, որի մեջ նենգություն չկա» (Հովհ. **1.**47: Տես նաև Մատթ. **10.**1–3, Մարկ. **3.**13–19, Ղուկ. **6.**12–16):

Համաձայն աղբյուրների՝ Բ. առաքյալը Հայոց Սանատրուկ թագավորի դահակալության 29-րդ տարում եկել է Գողթն գավառ, որտեղ եպիսկոպոս է ձեռնադրել իր պարսիկ հետևորդներից մեկին՝ Կումսիին: Այստեղ ավետարանագործելուց հետո անցել է Հեր և Զարեվանդ գավառները, այնուհետև՝ Անձևացյաց գավառն ու Հայաստանի մյուս շրջանները (ըստ իր վկայաբանության՝ Արտաշատում հանդիպել է *Թադեոս* առաքյալին): Բ. առաքյալի գործուն՝ Սուրբ Հոգով լեցուն քարոզխոսությամբ քրիստոնեություն են ընդունել նաև թագավորի քույրը՝ Իշխանուհին (Ոգուհին), և Տերենտիոս հազարապետը: Բ. առաքյալը նահատակվել է Սանատրուկ թագավորի կարգադրությամբ՝ Արևբանոս (Ուրբանոս) քաղաքում:

Բ. առաքյալի՝ Հայաստանում գործելու մասին են վկայում ոչ միայն հայկ., այլև ասոր. և լատ. աղբյուրները: Նրա կյանքի, անձի և քարոզչական գործունեության մասին են պատմում «Վկայութիւն սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի» («Յայսմաւուրք», 1706, էջ 304–307, «Գիրք որ կոչի Յայսմաւուրք», 1730, էջ 231–234), «Գիւտ նշխարաց սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի» («Անկանոն գիրք առաքելականք», 1904, էջ 333–352, 365–368), «Վերադարձումն պատուական նշխարացն սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի» («Յայսմաւուրք», 1834, մաս 2, էջ 96–97), «Վասն գալստեանն սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի ի յերկիրն Գողթնեաց թղթոյն Թովմայի առաքելոյն», «Վասն գնալոյ սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի ի յԱգուլիս եւ վասն գնոսա լուսաւորելոյն և զամենագով վանքն նոցա շինելոյն յանուն սրբոյ առաքելոյն Թումայի» (Թովմա Ագուլեցի, «Պատմութիւն Թովմայի առաքելոյն...», 1734, էջ 55–64) ընագրերը:

Հայ միջնադարյան գրականության մեջ մեծ տեղ են զբաղեցրել Բ. առաքյալին նվիրված ճառերը, գանձերը, տաղերը, աղոթքները ևն: Որպես Հայաստանյայց առաքելական եկեղեցու հիմնադիր՝ Բ. առաքյալն ըստ արժանվույն է ներկայացվել հայ միջնադարյան կերպարվեստում ևս: Նա սովորաբար պատկերվել է դաշույնով (որով նահատակվել է) և Տիրամոր պատկերը ձեռքին (այն, ըստ ավանդության, Բ. առաքյալն է բերել Հայաստան և զետեղել Անձևացյաց գավառի *Հոգեաց վանքում*):

Հայտնի է Բ. առաքյալի անունով վանք՝ Վասպուրականի Աղբակ գավառում: Ըստ ավանդության, այդ վանքում է թաղվել Բ. առաքյալը: Հայ եկեղեցին Բ. և Թադեոս առաքյալների հիշատակը տոնում է նոյեմբ. կամ դեկտ. ամսին, Հիսնակի 1-ին կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.2, 2-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կպ, 1912: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976:

Հակոբ Քյոսեյան

ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԲՈԼՈՆԻԱՑԻ, Բարդուղիմեոս Մարաղացի [ծ. թ. անհտ, Բոնոնիա (Բոլոնիա, Իտալիա) – 1333, Քռնա], իտալացի աստվածաբան և փիլիսոփա, դոմինիկյան կրոնավոր և քարոզիչ, Մարաղայի առաջին լատին եպիսկոպոսը, հայ իրականության մեջ ունիթորական (տես *Ունիթորություն*) շարժման սկզբնավորող: 1318-ին Հովհաննես XXII պապը նրան Պետրոս Արագոնացու և Հովհաննես Ավինֆորդի հետ ուղարկել է Մարաղա՝ հայերի մեջ կաթոլիկություն տարածելու: Բ. Բ-ը՝ Մարաղայում հաստատած դոմինիկյան վանքն ու դպրոցը դարձել են ունիթորների հոգևոր և կրթ. կենտրոնը: 1330-ին Բ. Բ. տեղափոխվել է Նախիջևանի Երնջակ գավառի Քռնայի վանք, որտեղ իր աշակերտներ և հետևորդներ Հովհաննես Քռնեցու և Հակոբ Քռնեցու հետ հիմնել է ունիթորական միաբանություն, ծավալել եռանդուն քարոզչ., թարգմ. և գիտ. գործունեություն: Մարաղայում սովորելով պարսկերեն և հայերեն՝ նա առավել հաջողությամբ է գործել Նախիջևանի հայության շրջանում՝ կաթոլիկացնելով նրա մի հատվածին: Բ. Բ. ունի հայերեն գրված և միայն հայերենով պահպանված երկեր («Մեկնութիւն վեցօրէից», «Յաղագս հնգից ընդհանրից»,

ԲԱՐԵԳՈՐԾ. «Գիրք դժոխոց», «Քարոզգիրք», «Տրամաբանութիւն» ևն), որոնք ստեղծվել կամ թարգմանվել են հիմնականում Հակոբ Քռնեցու գործակցությամբ: Հատկապես «Քարոզգրքի» բարոյախոս. առակները մեծ հեղինակություն են վայելել, նրանցից կազմվել են առանձին ժողովածուներ: Բ. Բ-ու երկերը քարոզչ. և ուսուցող. բուն նպատակից բացի որոշ դեր են խաղացել հայ գիտ. մտքի զարգացման գործում: Բ. Բ-ու և Պետրոս Արագոնացու ղեկավարությամբ հայ ունիթորները թարգմանել են Թովմա Աքվինացու, Ալբերտ Մեծի, Ջիլբերտոս Պոռետացու և այլոց երկերը: Բ. Բ. կատարել է թարգմանություններ լատիից և պարսկ-ից (Հակոբ Քռնեցու հետ) հայերեն: Նրա երկերը և թարգմանությունները հայ մտածողներին ծանոթացրել են միջնադարյան Եվրոպայի գիտ. մտքին:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Ոսկյան Գ., Հայ-դոմինիկյան մատենագիտական ծանոթագրություններ, «Բազմավեպ», 1922, էջ 138–139, 229–231, 262–263, 1923, էջ 35–39: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 1284–1320: Խաչիկյան Լ., Քռնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քռնեցու գիտական գործունեությունը, տե՛ս Հովհաննես Քռնեցի, Ցաղագս քերականին, Ե., 1977: *Аревшатян С., К истории философских школ средневековой Армении (XIV в.), Е., 1980.*

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, քրիստոնեական կենցաղավարության ու բարեպաշտության հիմնական և անհրաժեշտ դրսևորում, որն իր մեջ ներառում է. ա. կարեկցանք մերձավորի հանդեպ և բ. բարոյական պարտավորություն կարիքավորների ու չքավորների նկատմամբ: Բ. քրիստ. *առաքինություններից* մեկի՝ *ողորմության* արտահայտությունն է:

Նախաքրիստ. շրջանի հռոմեացի հեղինակները մերձեցել են մարդասիրության գաղափարին և խոսել կարեկցանքի մասին: Այնուամենայնիվ, հռոմ. շրջանում Բ. կրել է շղարշված փառասիրության բնույթ (ինչպես, օր., տոնների առթիվ դրամ շաղ տալը, բաղնիքների, ամֆիթատրոնների և այլ հաս. զվարճության վայրերի կառուցումը ևն):

Հին կտակարանում Բ. հանդես է գալիս որպես տկարների նկատմամբ կարեկցանքի արտահայտություն, որը, սակայն, իր ուղղվածությամբ մեկ նպատակ ունի՝ շահել Աստծո բարեհաճությունը: Սկզբ. շրջանում մովսիսական օրենքը կարեկցանքը դիտել է որպես կատարյալ վարքի դրսևորում: Արդարությունն ու Բ. ընդունվել են որպես հոմանիշներ:

Հետագայում, Երուսաղեմի տաճարի կործանումից և զոհաբերությունների հարկադրական վերացումից հետո, Բ. հրեաների մոտ դարձել է կրոն. պարտականություններից առաջինը: Բոլոր քաղաքներում եղել են ծառայողներ, ովքեր զբաղվել են սինագոգի դանձարկղում շաբաթ օրը հավաքված դրամը, նաև այլ նվիրատվությունները կարիքավորներին բաշխելով: «Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին. փորձանքի օրը Տերը կփրկի նրան» (Սաղմ. **40.1**) խոսքը ոչ միայն Բ-յան հորդոր է, այլև աղքատի նկատմամբ պարտականության արտահայտություն: Սակայն Հին ուխտի օրենքներով ու հրահանգներով առաջնորդվող հրեական իրականության մեջ Բ. թելադրվել է ոչ թե ներքին անհրաժեշտությամբ, այլ արտաքին՝ կեղծ-բարեպաշտ. դրդումներով:

Բ. իր բուն նպատակով ու իմաստով երևան է եկել քրիստոնեության հետ միասին և իր էությամբ ամբողջապես քրիստոնեական է: Նոր կտակարանում Բ-յան արտաքին ձևը չի փոխվել, սակայն ձեռք է բերել բացարձակապես հոգևոր-բարոյական արժեք ու նշանակություն. շեշտադրվում է Բ. կատարողի ազատ կամքի, ներքին անձն. կարեկցանքի ու սիրո դրսևորումը: Հիսուս Քրիստոսը Բ. ապարդյուն չի համարում՝ Աստծո նկատմամբ ճիշտ կեցվածք ընդունելու գործում, այլ շեշտում է ճշմարիտ դրդապատճառի անհրաժեշտությունը՝ «Հանուն Աստծո»: Նա դատափետում է իր ժամանակի ցուցադրական Բ. (Մատթ. **6.1**–4) և կարևորում ողորմության ներքին բովանդակությունն ու նրանում թաքնված աստվածային օրհնությունն ու երանությունը:

Քրիստոնյա առաջին հավատացյալները կամավոր, սիրով հրաժարվել են անձն. սեփականությունից և բաժանել կարիքավորներին: Վաղ քրիստ. համայնքում սպասավորների առաջին ընտրությունը տեղի է ունեցել հենց ողորմության անաչառ բաշխման նպատակով. յոթ սարկավագներ են ընտրվել սեղանին սպասարկելու համար (Գործք **6.1**–7): Կարիքավորների պետքերը հոգացվել են (Գործք **4.**32, 34–35), և յուրաքանչյուր քրիստոնյա պարտավորվել է իր ունեցվածքից բաժին հանել չքավորներին:

Բ. հավասարվում է արդարությանը ո՛չ նրա համար, որ արդարացնում է մարդուն (մարդ արդարանում է հավատով. տես Հռոմ. **3.**22, 26), այլ նրա համար, որ Աստծուն մերձենա-

լու լավագույն ճանապարհներից է, և որի համար մեր մերձավորը բարի վկայություն է տալու Աստծո առջև: Հակոբոս առաքյալն իր Ընդհանրական թղթում հավելում է, որ հավատն առանց գործերի մեռած է. կարիքավոր եղբորը կամ քրոջը չօգնողը և երեսպաշտորեն Աստծուն մատնացույց անողը նմանվում է դևի (Հակոբոս **2.**14–26):

Քրիստոնեությունը Հռոմ. կայսրությունում հաղթանակելուց հետո հիմնադրվել են զանազան աստվածահաճո հաստատություններ (հիվանդանոցներ, ուրկանոցներ, անկելանոցներ ևն): *Եկեղեցու հայրերը* մշտապես հիշեցրել են Բ-յան անհրաժեշտության մասին՝ այն համարելով քրիստ. գլխավոր առաքինություններից մեկը: *Բարսեղ Կեսարացին* ասում է, որ խնայված ավելորդ հացը պատկանում է սովյալին, ավելորդ հագուստը՝ մերկին, իսկ հողին պահ տրված արծաթը՝ աղքատին: Իսկ *Հովհան Ոսկեբերանի* ձևակերպմամբ՝ հարուստ լինել չի նշանակում շատ ունենալ, այլ՝ շատ տալ:

Բ. քրիստոնեության մուտքի հետ արմատացել է նաև Հայաստանում: Արդեն *Ներսես Ա Մեծ* Հայրապետի օրոք Մեծ Հայքը պատվել է բարեգործ. հաստատությունների խիտ ցանցով:

Բարեգործ. շարժումը ծավալվել և կազմակերպված բնույթ է ստացել հատկապես XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, հիմնվել են զանազան բարեգործ. կազմակերպություններ: Համայնավար վարչակարգի հաստատումով, սակայն, Բ. որակվել է բուրժուա-կղեր. երևույթ և մերժվել այն պատճառաբանությամբ, թե հավասարների հասարակարգում չեն կարող լինել կարիքավորներ ու չքավորներ: Ըստ այդմ՝ «Բ.» տերմինը կիրառվել է միմիայն հեգնական երանգով:

Հայաստանում ժողովրդավար. կարգերի հաստատումից հետո դարձյալ ստեղծվել են զանազան բարեգործ. հաստատություններ, որոնց մի մասը չի համապատասխանում քրիստ. Բ-յան ճշմարիտ ընկալմանը: Առանց ավետարանական պատշաճ գիտակցության կատարված օժանդակությունը չի կարող նույնանալ քրիստ. Բ-յան հետ, քանզի վերջինս պահանջում է նաև աստվածային մյուս բոլոր պատվիրանների անշեղ կիրառում և աստվածահաճո կենցաղ:

Արդի շրջանում Հայ եկեղեցին նոր թափ է հաղորդել իր բարեգործ. գործունեությանը: Բացել է բարեգործ. ճաշարաններ ծերերի և կարիքավորների համար, օժանդակում է, հատկապես դյուղերում, կարիքավոր ընտանիքներին՝ ստեղծելով փոքր արտադրություններ: Հայ եկեղեցու հովանավորությամբ ՀՀ տարբեր մարզերում և թեմերում գործում են մանկ. ամառային ճամբարներ, որտեղ երեխաներն ստանում են նաև հոգևոր դաստիարակություն, ծանոթանում Հայ եկեղեցու պատմությանը: Հիմնվել են մանկ. գեղագիտ. դաստիարակության կենտրոններ ևն: Այդ ամենը Հայ եկեղեցին իրագործում է սփյուռքահայ բարերարների, ինչպես նաև մի շարք միջեկեղեց. և միջազգ. կազմակերպությունների օժանդակությամբ:

Միքայել ծ. վրդ. Աջապահյան

ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆ, միջնորդություն Աստծո և մարդու միջև՝ հանուն վերջինիս փրկության: Բարեխոսական-փրկչական առաքելությունն ի վերուստ՝ ըստ Հայր Աստծո կամքի, տրված է *Հիսուս Քրիստոսին*: Ինչպես հավաստում է առաքելական թուղթը՝ «... Աստծու առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ Արդարին և Անարատին. և նա՛ է քավությունը մեր մեղքերի, և ոչ միայն մեր մեղքերի, այլև՝ ամբողջ աշխարհի» (Ա Հովհ. **2.** 1–2): Հիսուսի բարեխոսական-միջնորդական առաքելությունն է մատնանշվում նաև *հրեշտակների* բերած ավետիսի մեջ՝ Փրկչի ծննդյան ժամանակ. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՛ւն և հաճույություն մարդկանց մեջ» (Ղուկ. **2.** 14): Պայմանավորված աստվածային երեք Անձերի միակամությամբ՝ Բ. վերաբերում է նաև *Սուրբ Հոգուն*: Պողոս առաքյալը վկայում է. «... Հոգին ինքը բարեխոս է լինում մեզ անմռունչ հառաչանքով» (Հռոմ. **8.**26), «... ըստ Աստծո կամքի է բարեխոսում սրբերի համար» (Հռոմ. **8.**27):

Բացի աստվածային Բ-ից, բարեխոս. գործառույթ է վերագրվում նաև սրբերին և հավատացյալներին առհասարակ՝ թե՛ կենդանի և թե՛ ննջեցյալ: Դա Սուրբ Հոգու միջոցով կատարվող Բ. է: Միմյանց համար աղոթելը (տես *Աղոթք*), բարձրյալ Աստծո առաջ բարեխոսելը պատվիրված է Աստվածաշնչի բազմաթիվ տեղիներով: Այսպես, Աբրահամը բարեխոսում է սոդոմացիների համար, որ Աստված չոչնչացնի նրանց (Ծննդ. **18**), Եզեկիա թագավորը Զատկի տոնին աղոթում է չմաքրված ժողովրդի համար. «Բարերա՛ր Տեր, ողորմի՛ր բոլոր ուղիղ սիրտ ունեցողներին... թեև, ըստ սրբարանի

մաքրության, մաքրված չեն» (Բ Մնաց. **30.**19) և ստանում է ներումն, Պողոս առաքյալն աղոթում, այսինքն՝ բարեխոսում է իր ժողովրդի համար (Եփես. **3.**14), հավատացյալ ժողովուրդը աղոթում է բանտարկյալ Պետրոսի ազատման համար (Գործք **12.**5) ևն: Իսկ Հակոբոս առաքյալը հավատացյալներին հորդորում է. «Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցե՛ք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք. քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակոբոս **5.**16): Տվյալ պարագայում խոսքը բարեխոս. աղոթքի մասին է:

Սուրբգրային ճշմարտությանը հետևելով՝ Հայ եկեղեցին, ինչպես և Ընդհանրական սուրբ եկեղեցին, ընդունում է, որ

1. Ի Քրիստոս հավատացյալ եղբայրներն ու քույրերը պետք է աղոթքով բարեխոսեն միմյանց համար:

2. Երկրային կամ Զինվորյալ (կոչվում է նաև Մարտնչող) եկեղեցին, հագած լինելով Աստծու սպառազինությունը, բարեխոսում է եկեղեցու անդամների և աշխարհի համար, բոլոր փորձությունների և նեղությունների մեջ դավանում Հիսուսին և քարոզում փրկության Ավետարանը:

3. Երկնային կամ Հաղթական եկեղեցին (կոչվում է նաև Անդրանկաց), որ ննջեցյալ հավատացյալների՝ սրբերի բազմությունն է, հավետ կենդանի է Աստծո առաջ և բարեխոսում է Զինվորյալ եկեղեցու համար: Զինվորյալ և Հաղթական եկեղեցիները մի են ի Հիսուս Քրիստոս, մի է նրանց առաջնորդը՝ Սուրբ Հոգին, մի է նրանց նպատակը՝ Երկնքի թագավորության հաստատումը երկրի վրա (տե՛ս նաև *Սուրբեր* Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոդվածը):

4. Ըստ Սուրբ Գրքի և եկեղեցու՝ բարեխոսում են նաև հրեշտակները: Այսպես, Հին ուխտում հրեշտակը բարեխոսում է Աստծուն, որպեսզի ժողովուրդն ազատվի բաբելոնյան գերությունից (Զաք. **1.** 12, 13), Նոր ուխտում Հիսուսը զգուշացնում է՝ մանուկների նկատմամբ վարվել ակնածությամբ, որովհետև նրանց հրեշտակները երկնքում տեսնում են Աստծո երեսը, որը նշանակում է, թե նրանք բարեխոսում են մանուկների համար (Մատթ. **10.**41): Երկրի վրա ապաշխարող անձանց համար երկնայինները՝ հրեշտակները, ուրախանում են, այսինքն՝ բարեխոսում են ցնծալով (Ղուկ. **15.**7):

Հայ եկեղեցին ընդունում է աստվածաշնչյան համաքրիստ. սրբերի հետևյալ աստիճանակարգումը. *Մարիամ Աստվածածին, Հովհաննես Մկրտիչ, առաքյալներ, մարգարեներ, վկաներ, Ստեփանոս Նախավկա, Գրիգոր Ա Լուսավորիչ*, ապա մաքրակրոն վանականներ և խոստովանողներ, որոնց Բ. խնդրվում է եկեղեցու և բանավոր հոտի համար: Այդ խնդրվածքները ներկայացվում են միակ և ճշմարիտ Աստծո՝ Սուրբ Երրորդության անունից, ինչպես և ներկայացվում է *Գրիգոր Նարեկացու*՝ Ս. Երրորդության Անձերից յուրաքանչյուրին ձոնված տաղերում, որոնցից, օր.,

«Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ ի գալուստ Սուրբ Հոգւոյն» տաղում ասվում է.

Գերազանց կոչում և ձայն կենդանի,
Ահաւոր, մեծանուն, հզաւր.
Հոգի հեզութեան, մարդասիրութեան եւ
ողորմութեան.
Բարեխաւսութեամբ Կուսի Իսկուհւոյ,
մաւրդ կենդանեաց
Հանդերձելոյդ ի քէն Տիրամաւրդ և
Աստուածածնիդ
Մաղթողական աղերսարկութեամբ մեծին
ի ծնունդս կանանց,
Մկրտութեանն Կարապետի և համագոյակցիդ
քո ձեռնադրողի.
Խնկանուէր հայցմամբ երջանկացն առաքելոց
եւ մարգարէից,
Մարտիրոսական հանդիսիւ սրբոյն Ստեփանոսի
Եւ որք նովաւ զաւրացան՝ վկայք.
Մեծավաստակ առաքինութեամբ
դավանողին զքեզ՝
Սրբոյն Գրիգորի և ամենեցուն մեր
Լուսաւորչի.
Մաքրակրաւնից ազանց միանձանց և զքեզ
Աստուած խոստովանողաց,
Որ ի վերջնումն աւուր մեծի
Յայտնիս նորոգել, միայն ողորմած,
զ՚ի քէն գոյացեալքս:
Եւ այժմ ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր,
Ըստ մեծի ողորմութեան քում:

(Տաղեր և գանձեր, աշխատասիր. Ա. Քյոշկերյանի, 1981, էջ 160–161):

Լևոն Սարգսյան

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ (բառացի՝ բարի կենդանություն, ուրախություն), գլխավոր շաբաթապահերին նախորդող շաբաթ օրը: Եկեղեցին այդ օրը քահանայական դասին և հավատացյալ ժողովրդին արտոնում է ճոխ սեղան և զվարթություն՝ հաջորդող *պահքը* ուրախ սրտով մտնելու և երկարատև պահոց օրերին դիմակայելու համար:

Հայ եկեղեց. օրացույցում նշվում են մի շարք Բ-ներ. Բ. Վարդավառի պահոց, Բ. Աստվածծնի պահոց, Բ. ս. Խաչի պահոց, Բ. ս. Գրիգոր Լուսավորչի պահոց, Բ. Առաջավորաց պահոց, Բ. Եղիական պահոց ևն:

Հայ եկեղեցին առանձնակի ճոխությամբ նշում է հատկապես *Բուն Բարեկենդանը*:

Լևոն Սարգսյան

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, Աստծո և կրոնական հավատալիքների նկատմամբ հավատարմություն, աստվածային *պատվիրանների* անթերի կենսագործում: Քրիստ. Բ. իր մեջ ներառում է երեք հիմն. առաքինությունների (*աղոթք, պահք, ողորմություն*) կիրառությունն անձն. կյանքում:

Հեթանոս. շրջանում Բ. կուռքերի պաշտամունքի և հեթանոս. ծեսերի հետևողական կիրառումն էր:

Հին կտակարանում Բ. թեև ունեցել է միաստվածային ուղղվածություն, սակայն հաճախ ուղեկցվել է միայն արտաքին ծիսական կողմի ձևական պահպանմամբ: Նահապետների ժամանակաշրջանում Բ. ունեցել է որոշակի ընդգրկում՝ զոհաբերական պրակտիկայի պահպանում և հավատարմություն Աստծուն: Մովսիսական օրենքի տվչությունից հետո Բ. ավելի լայն ոլորտ է ունեցել՝ իր մեջ ներառելով հաս. և ընկերային հարաբերությունների բոլոր բնագավառները, առանց, սակայն, ներթափանցելու անհատական և ներանձնական կյանք: Այդ իսկ պատճառով *մարգարեները* բազմիցս պախարակում են հրեաների ձևական աստվածապաշտությունը, քանզի միայն, ըստ Դավթի՝ «Խոնարհ հոգին է պատարագն Աստծու, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմ. **50.**19):

Բ-յան նկատմամբ վերաբերմունքը կտրուկ փոխվել է *քրիստոնեության* մեջ: Այն, ամեն ինչից առաջ, պահանջում է ներքին մաքրություն և հոգևոր կատարելություն: Քրիստոսը մերժում է արտաքուստ բարեպաշտ, սակայն ներքուստ ամենայն աղտեղությամբ լեցուն փարիսեցիներին: Ճշմարիտ Բ. այստեղ նույնանում է «աստվածապաշտություն» հասկացության հետ: Այն ընդգրկում է քրիստոնեության ներանձնական ապրումի, Աստծո պաշտամունքի ու ծառայության և նրա օրենքների խոնարհ հնազանդության ոլորտները: Քրիստ. աստվածապաշտությունը բխում է կյանքի ու զորության ներքին սկզբունքից և աստվածային *շնորհ* է (Բ Պետ. **1.**3, Բ Տիմ. **3.**5)՝ տրված *Սուրբ Հոգով*:

Աստվածաշունչը Բ. դիտում է մի քանի տեսանկյունից: Հին կտակարանն այն անվանում է «Տիրոջից երկյուղ», ցույց տալով, որ ճշմարիտ Բ. հիմնված է Աստծո նկատմամբ հարգանքի, հնազանդության և խոնարհության վրա: Նոր կտակարանն այն անվանում է «հնազանդություն Ավետարանին» կամ «հնազանդություն ճշմարտությանը» (Հռոմ. **10.**16, Գաղ. **5.**7, Բ Թես. **1.**8, Ա Պետ. **1.**22)՝ Բ. բնութագրելով որպես պատասխան աստվածային *հայտնությանը*: Մեկ այլ տեսանկյունից, շեշտելու համար աշխարհից հրաժարվելու և դեպի Աստված կենտրոնանալու վիճակը, Նոր կտակարանն այն պարզապես անվանում է «սրբություն» (Ա Թես. **4.**3, Եբր. **12.**14, Բ Կորնթ. **7.**1, Ա Թես. **3.**13): Քրիստոսն ուսուցանեց, որ «Աստծո գործը» ինքնին հավատն է (Հովհ. **6.**28–29), և քրիստ. Բ. նշանակում է ապրել այդ հավատով ու այն կենսագործել: Համապատասխանաբար, Հովհաննես առաքյալը Բ. բնութագրում է երկու ամենահատկանշական գծերով. ա. հավատ Քրիստոսի նկատմամբ և բ. սեր քրիստոնյաների նկատմամբ (Ա Հովհ. **3.**22–24):

Նորկտակարանային Բ. ընդգրկում է հավատի գործնական արտահայտությունները՝ ապաշխարությամբ լեցուն կյանք, հավատարմություն առ Աստված, պայքար՝ ցանկությունների դեմ և մեղքի ոչնչացում, մշտական աղոթք, հարատև հաղորդակցություն՝ Գոհության և ս. *Հաղորդության* խորհրդին. հույսի, սիրո, ազնվության, համբերատարության ու բարյացակամության կենտրոնացում անձի մեջ. հարգանք Աստծո կողմից հաստատված եկեղեցու, պետության, ընտանիքի և հասարակության հանդեպ ևն:

Ուղղափառ Բ. պահանջում է գիտակցորեն հետևել եկեղեցու և *ավանդության* կողմից հաստատված ու սրբագործված ծիսական, ազդ., հոգևոր-բարոյական հաստատություններին, ինչպիսիք են եկեղեց. արարողությունների հաճախելը, ազդ. որոշակի ավանդություններով հյուսված կրոն., եկեղեց. տոները պահպանելը, ծիսական խորհրդակատարությունների հետևելը:

Հայ եկեղեցին, որպես ուղղափառ եկեղեցի, առաջնորդվում է Բ-յան ավանդ. ընկալմամբ՝ դրան ավելացնելով ազդ. գիտակցությամբ պայմանավորված տարրեր: Այդ առումով Հայ եկե-

ղեցին մյուս բոլոր ուղղափառ եկեղեցիների նման շեշտում է հավատի կարևորությունը Քրիստոսի նկատմամբ, հոգատարությունը սեփական անձի և սերը մերձավորի հանդեպ (տես նաև *Բարեգործություն*):

Քրիստոսի նկատմամբ անսերկբա հավատի և ուղղափառ կենցաղավարության երեք չափանիշների՝ աղոթքի, պահքի և ողորմության մշտական կենսագործումով է պայմանավորվում յուրաքանչյուր քրիստոնյայի Բ-յան աստիճանը (տես նաև *Հոգևոր բարեպաշտական արարողություններ*):

Նոր կտակարանում Հակոբոս առաքյալը հորդորում է բարեպաշտ լինել գործնականորեն. «Սուրբ և անարատ բարեպաշտությունը Աստծու և Հոր առաջ այս է. այցելել որբերին և այրիներին իրենց նեղության մեջ, անարատ պահել իր անձը աշխարհից» (Հակոբոս 1.27):

Միքայել ծ. վրդ. Աջապահյան

ԲԱՐԻՁՈՐԻ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Խիզան գավառում: XI դ. Կարապետ վարդապետը աղյուսի և քարի զուգակցումով կառուցել է Բ. վ-ի Ս. Աստվածածին եկեղեցին՝ մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածքով: Ընկուզենու փայտից քանդակազարդ դուռը պատրաստվել է 1041-ին: 1421-ին վանքում թաղել են եթովպացի նահատակ քահանաներին: Բ. վ. ունի Ս. Գևորգ, Ս. Սարգիս և Ս. Մերկերիոս մատուռները: XV–XVI դդ. վանքում գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: XVII դ. Ս. Աստվածածին եկեղեցուն արմ-ից քառամույթ գավիթ են կցել: XIX դ. վանքն ունեցել է անտառ և ընդարձակ հողեր: Բ. վ. եղել է նշանավոր սրբավայր և ուխտատեղի, տոնի օրն էր Համբարձման հինգշաբթին:

Գրկ. Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 3, Վնն., 1947: Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՔ, ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղից հյուսիս-արևելք, Ձաղիձորի անտառապատ ձորալանջին: Այժմ կիսավեր վանական համալիրը բաղկացած է երկու եկեղեցիներից, գավթից և մատուռներից: Հս. եկեղեցին (X դ.) թաղածածկ դահլիճ է, որին հվ-ից կից, 1221-ին, Մամիկոնյան տոհմից Մարծպան իշխանը կառուցել է Ս. Աստվածածին գմբեթավոր եկեղեցին, վանքին նվիրել Ծաղկուտ գյուղը, այգի, սպասք և խաչեր: Եկեղեցու ուշագրավ առանձնահատկություններից են մույթերի փոխարեն զույգ սյուների կիրառումը և ներսից հնգանիստ խորանը: 1234-ին Հովհաննես վարդապետը և նրա եղբայր Սարգիսը կառուցել են Ս. Հարություն մատուռը: 1239-ին Համլիկ իշխանը վանքին է նվիրել Տոնական և Կարմիրքար գյուղերը, 1242-ին Սևճին կառուցել է մատուռ: 1245-ին Մարծպանի որդի Ասլանբեկը երկու մատուռ է կառուցել և վանքին նվիրել ոսկով ու մարգարիտներով զարդարված Ավետարան: 1247-ին ավարտվել է Ս. Աստվածածին եկեղեցուն հվից կից գավթի կառուցումը: Գավիթը պատկանում է հայկ. նմանատիպ կառույցների ամենատարածված՝ քառասյուն գմբեթավոր տիպին, սակայն՝ բացառիկ առանձնահատկությամբ. արլ-ում ունի շենքի ծավալից դուրս եկող խորան, որի ճակատին Մամիկոնյան իշխանական տան տոհմանշանի՝ մագիներում գառ բռնած երկգլխանի արծվի հարթաքանդակն է: 1266-ին Գորգ վարդապետը կառուցել է վանքի ձիթհանը: Համալիրի հվ. կողմում, Ս. Հարություն մատուռի շուրջը, խաչքարերով զերեզմանոցն է, արմ. կողմում՝ խցերի ավերակները, ձորում պահպանվել են վանքի XIII դ. կամրջի խեյերը: Բ. Ս. Գ. վ. մասնակի նորոգվել է 1939-ին և պեղվել 1969-ին:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.2, 3-րդ պատկերը:

Գրկ. Զալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Թ., 1842: Սարգսյան Գ., «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1951, № 7–8, 9–10, 11–12: Եղիազարյան Հ., Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորի և Քառասնից Մանկանց վանքերը և գյուղի մյուս՝ առավել կարևոր հուշարձաններն ու դրանց վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1971, № 1, 3: Շահկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986:

Մուրադ Հասրաթյան

ԲԱՐՁՐՅԱԼ ԽԱՉ, դամբարան-մատուռ ՀՀ Տավուշի մարզի Բարեկամավան գյուղից արևմուտք, անտառապատ լեռան գագաթին: Կառուցվել է սրբատաշ կաթնագույն կրաքարով, V–VI դդ.՝ որպես դամբարան: Միջնադարում արլ. լուսամուտին խաչաձև բացվածքով սալ է ագուցվել և ներսում որպես բեմի սեղան խաչքարի բեկոր կանգնեցվել, որով դամբարանը վերածվել է մատուռի (այժմ՝ Հայտնի ուխտատեղի): Բ. խ. ունի հայկ. միջնադարյան ճարտյան համար եզակի ծավալատարած. հորինվածք և հարդարանք: Ներսից գլանաձև է, դրսից՝ 14-

նիստանի, կիսագնդաձև գմբեթով ավարտվող աշտարակաձև ծավալով: Քիվը բաղկացած է տարբեր կենդանիների՝ ցուլի, խոյի, շան, եղջերուի, վարազի բարձրաքանդակներից, որոնք ընդմիջվում են ականթի ու ծաղկեշղթայի զարդաքանդակներով: Ընդհանուր հորինվածքն ու քիվը բնորոշ են անտիկ արվեստին, որի շնորհիվ Բ. խ. Հայաստանում նախաքրիստ. ճարտյան ու քանդակագործության ձևերի կիրառման ինքնատիպ և բացառիկ նմուշ է:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.2, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Karakhanyan G., Ancient Armenian Cupola Memorial, “Atti del Quinto Simposio Internazionale di arte Armena”, V., 1991.

Մուրադ Հասրաթյան

ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ (ծ. թ. անհտ – 1113, ամփոփվել է Կիլիկիայի Սև լեռան Կարմիր վանքում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1105-ից: Հաջորդել է *Գրիգոր Բ Վկայասերին*: Սերել է Պահլավունիների տոհմից: 1070-ին Գրիգոր Բ Վկայասերը նրան ձեռնադրել է Անիի եպիսկոպոս՝ կաթողիկոսի փոխանորդի պարտականություններով: 1081-ին Գրիգոր Բ Վկայասերի համաձայնությամբ, Հաղպատի վանքում Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը նրան ձեռնադրել է Հայոց կաթողիկոսական տեղապահ: 1090-ին Բ. Ա Ա. այցելել է սելջուկյան սուլթան Մելիք-շահին, որը թեթևացրել է հարկերը, ճանաչել Անիի կաթողիկոսության առաջնությունը, որից հետո Բ. Ա Ա. գահընկեց է արել Հոնիի հակաթոռ կաթողիկոսին: Կաթողիկոս դառնալուց հետո Բ. Ա Ա. մնացել է Ծամնդավում (Կարմիր վանք), որտեղ գտնվում էր Հայոց հայրապետ. աթոռը: Թեև Բ. Ա Ա-ու հայրապետ. գործունեության մասին գրեթե ոչինչ չի ավանդվում, բայց հայտնի է, որ նա, հակառակ խառնակ ժամանակների և հայ ժողովրդի տաբադիր վիճակի, շատ հմուտ է կառավարել Հայ եկեղեցին՝ պահպանելով նրա ավանդույթներն ու միասնությունը: Վախճանվել է Երուսաղեմ ուխտագնացության ճանապարհին:

Կաթողիկոս. գահին Բ. Ա Ա-ուն հաջորդել է *Գրիգոր Գ Պահլավունին*:

Գրկ. Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Ե., 1991: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ, սուրբ Բարսեղ, Բարսեղ Մեծ [329, Կեսարիա (Կապադովկիա) – 379, Կեսարիա], *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*), Կապադովկիայի մետրոպոլիտ (370-ից): Սերել է քրիստ. բարեպաշտությամբ և առաքինությամբ հռչակված հույն քրիստոնյա մեծահարուստ և ազնվական ընտանիքից: *Գրիգոր Նյուսացու* ավագ եղբայրը:

Նախն. կրթությունն ստացել է հորից, 7 տարի ուսանել Կեսարիայի դպրոցում, ապա՝ Անտիոքում: 344–351-ին Կ. Պոլսում ուսումը շարունակել է նշանավոր հռետոր Լիբանիոսի դպրոցում, 352–356-ին՝ Աթենքի համալսարանում: Ուսումնասիրել է քրիստ. վարդապետություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, քերականություն, ճշգրիտ և բնական գիտություններ՝ աստղագիտություն, երկրաչափություն, բժշկություն: Անապատական-ճգնավոր. կյանքին ծանոթանալու նպատակով 358–360-ին այցելել է Եգիպտոսի, Պաղեստինի, Ասորիքի մենաստանները: Վերադառնալով Կեսարիա՝ իր ողջ հարստությունը բաժանել է աղքատներին և վանական-միաբան. կյանքով ապրելու համար առանձնացել Իրիս գետի ափին գտնվող Անսիա վայրում (Պոնտոսում): Այստեղ *Գրիգոր Նազիանզացու* հետ ուսումնասիրել է Աստվածաշունչը, հաղորդակցվել եկեղեցու հին հայրերի և ուսուցիչների ժառանգության հետ, Գրիգոր Նազիանզացու հետ կազմել «Սուրբ Գիրքը և նրա մեկնաբանը՝ Որոգինեսը» («Ֆիլոկալիա») աշխատությունը: Պոնտոսում և Կապադովկիայում հաստատել է մենաստաններ ու եղբայրանոցներ, նրանց ղեկավարման և գործունեության համար գրել վանական կանոնադրություններ, իրավամբ համարվել արլ. վանականության հիմնադիր և մեծ օրենսդիր: Ջեռնամուխ է եղել քրիստ. նոր հաստատությունների հիմնմանը, դարձել վանական և միաբան. կյանքի ստեղծողը Պոնտոսում և Կապադովկիայում: Նա վանքերը վերածել է քրիստ. եկեղեցու կարևոր հաստատությունների, որոնք դադարել են ճգնարաններ լինելուց և փոխարկվել դաստիարակության ու արվեստի կենտրոնների: Ընտրվելով Կեսարիայի մետրոպոլիտ՝ Բ. Կ. ապրել է եկեղեց., քաղ., վարչ. բուռն կյանքով, հետևող. պայքար մղել *արիոսականության* դեմ:

Բ. Կ., Գրիգոր Նյուսացին և Գրիգոր Նազիանզացին Ընդհանրական եկեղեցու և համաքրիստ. աստվածաբան. մտքի պատմության մեջ Հայտնի են «Կապադովկյան Հայրեր» կամ «Երեք մեծ կապադովկիացիներ» անունով, որոնց ղեկավարն ու ոգին Բ. Կ. էր: Նրանք եղել են *Աթանաս Ալեքսանդրացու* և *Ալեքսանդրիայի* դպրոցի աստվածաբանության կրողներն ու շարունակողները: Կապադովկյան Հայրերը բանաձևել են աստվածաբան., դավանաբան. շատ հասկացություններ, հատկապես Ս. *Երրորդության* ուղղափառ ըմբռնումը:

Բ. Կ. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն՝ մեկնություններ, դավան., ծիսագիտ., կանոնագր. գործեր, ճառեր, ներբողներ, քարոզներ, զրույցներ, նամակներ: Արիոսական եպիսկոպոս Եվնոմիոսի դեմ գրել է դավանհակաճառ. բնույթի 3 ճառ, որոնցում ժխտել է նրա ենթակարգության (սուբորդինացիոն) գաղափարները (Հայրը բարձր է Որդուց, որովհետև «անծին» է, Որդին ստորադաս է Հորը, որովհետև «ծնվել» է, Սուրբ Հոգին ցածր է Որդուց, որովհետև ստեղծվել է Որդուց) և ապացուցել Հոր, Որդու և *Սուրբ Հոգու* լիակատար հավասարությունն ու Աստված լինելը: Աստվածաբան. կարևոր նշանակություն ունի «Սուրբ Հոգու մասին» ճառը (375), որտեղ պաշտպանել է Որդու և Սուրբ Հոգու համագոյությունը Հայր Աստծո հետ: Արժեքավոր է երրորդաբանական այն միտքը, թե Հայրը նախասկիզբ պատճառ է, Որդին՝ հիմնարար պատճառ, Սուրբ Հոգին՝ իրագործող պատճառ: Բ. Կ-ու դավան. երկերից են նաև «Սուրբ Հոգու աստվածության մասին՝ ընդդեմ Սաբելիոսի և անոմեականների», «Աստծո Որդու աստվածության մասին», «Հավատքի կամ Սուրբ Երրորդության մասին», «Այն մասին, որ Աստված չարի պատճառ չէ» ևն: Բ. Կ. հեղինակ է նաև աստվածաշնչյան մեկնությունների: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 9 ճառից բաղկացած «Վեցօրեայքը», որը, ըստ Ծննդոց գրքի (1.1–26), Արարչագործության վեց օրերի աստվածաբան., փիլ. և բնագիտ. մեկնությունն է: «Վեցօրեայքը» մեծ համբավ է վայելել թե՛ Արևմուտքում և թե Արևելքում: Գրել է նաև սաղմոսների, Եսայու մարգարեության (1.1–16) մեկնություններ: Դաստիարակչ., բարոյագործն. բնույթի գործերից են «Հորդոր պատանիներին՝ ինչպես օգտվել հեթանոս գրողների գրվածքներից» երկը, աշխատասիրության, եղբայրասիրության, աղքատասիրության, ինչպես նաև՝ ագահության, ժլատության, զայրույթի, նախանձի մասին քարոզները: Բ. Կ., որպես արլ. վանականության կանոնագիր, հանգամանորեն զբաղվել է նոր տիպի վանականության հաստատման գործով, գրել կանոններ, ճգնավորությանը նվիրված գրվածքներ: Բարոյականության մասին գրած կանոնախումբը բաղկացած է 80 բարոյախրատ. հրահանգներից: Այդ կանոնախումբը համարվում է վանականության հնագույն և ամենակարևոր օրենսգիրքը: Հեղինակել է *հարցուպատասխանիներից* բաղկացած վանական կանոնագրություններ, որոնք հայկ. ձեռագրերում հայտնի են «Գիրք հարցողաց» կամ «Հարցմունք ճգնաւորացն, պատասխանի սրբոյ Բարսղի»: Բարսեղյան կանոնները մեծապես նպաստել են Արևմուտքի և Արևելքի վանական կյանքի կազմակերպմանը: Բ. Կ-ու ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նրա ծիսական աշխատությունները՝ «Պատարագամատույցը», առավոտյան և երեկոյան ժամերգության կարգերը, աղոթքները, ինչպես նաև կանոնական, ծիսագիտ., դավան. բնույթի նամակները, որոնք մեծ մասամբ ուղղված են եղբորը՝ Գրիգոր Նյուսացուն և նվիրված են Սուրբ Երրորդության վարդապետության բացատրությանը, Նիկիական Հանգանակի պաշտպանությանը, Արիոսի, Եվնոմիոսի, Ապողինարիոսի, Սաբելիոսի և մյուս հերետիկոսների վարդապետությունների հերքմանը:

Պատմ. սկզբնաղբյուրները վկայում են Բ. Կ-ու՝ հայ իրականության հետ ունեցած մերձավոր շփումների մասին: Նրա երկերը հայերեն են թարգմանվել V դարից: Միայն Երևանի Մատենադարանում կան ավելի քան 200 հին ու նոր գրչագիր մատյաններ: Թարգմանվել են «Վեցօրեայքը» (առաջին անգամ տպագրվել է Վենետիկում, 1830-ին), «Պատարագամատույցը» (1897), կանոններ, աղոթքներ: Բ. Կ-ու մի քանի ճառեր և գործերից առանձին հատվածներ են վկայաբերվել *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառութիւն» (1908) երկում, «Կնիք հաւատոյ» ժողովածուում: «Գիրք հարցողացը», «Պահոց» ճգնակեցական հրահանգների ժողովածուն (պարունակում է 33 ճառ) աստվածաբանության սիրված ձեռնարկներ են եղել միջնադարյան վարդապետարաններում: Հայ հեղինակները այդ երկասիրություններն առավել դյուրըմբռնելի դարձ-

նելու համար գրել են դրանց *պատճառը* կամ *լուծմունքը*: Բ. Կ-ու ստեղծագործություններից հատվածներ են մեջբերվել հայ մեկնող., դավան. գրականության մեջ (Վարդան Արևելցի, «Մեկնութիւն Արարածոց», «Կնիք հաւատոյ», Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն», Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» ևն): Նրա ճառերից մի քանիսը մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ:

Հայ եկեղեցին ս. Բ. Կ-ու հիշատակը տոնում է տարին 2 անգամ. հունվարի 1-ի մերձակա շաբաթ օրը և հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.3, 1-ին պատկերը:

Երկ. Ճառք վասն վեցօրեայ արարչութեան, Վնտ., 1830: Քննական բնագիր աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Ե., 1984:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 325–344: Գաթըրճյան Հ., Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, Վնն., 1897, էջ 81–216, 346–352: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 1344–1405: Մուրադյան Կ., Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեայ»-ն հայ մատենագրության մեջ, Ե., 1976: Հատիտյան Ա., Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի, «Էջմիածին», 1977, № 5–7: Քյոսեյան Հ., Ս. Բարսեղ Կեսարացու՝ հունարեն բնագրով անհայտ «Մեծի աւուրն Տեառընդառաջին» ճառի հայերեն թարգմանությունը, «Գանձասար», 2, 1992, էջ 28–46: Նույնի, Ս. Բարսեղ Կեսարացու՝ Ս. Հոգուն նվիրված ճառի հայերեն թարգմանությունը, «Գանձասար», 4, 1993, էջ 165–214: Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, Ե., 1998, էջ 35–37: Migne J. P., PG, t 29–30, P., 1857–66; Ceerard M., Clavis Patrum Graecorum, v. 2, Brépols-Turnhout, 1974, P., 140–178.

Հակոբ Քյոսեյան

ԲԱՐՍԵՂ ՃՈՆ (ծ. և մ. թթ. անհտ), VII դարի երաժիշտ-տեսաբան, երգահան, Շիրակի *Դպրեվանքի* (Կարմիր վանք) վանահայր: Դեռևս VII դ. սկզբին Հայ եկեղեցում հոգևոր երգերի հորինումն ու կատարումն ազատ էր, և այդ երգերն այնքան էին բազմացել, որ անհրաժեշտություն է զգացվել ծեսի և արարողության հարցերով հատուկ զբաղվելու: *Ներսես Գ Տայեցու* հրամանով և Դվինի 645-ի ժողովի հավանությամբ, Բ. Ճ. ձեռնարկել է հայկ. հոգևոր կցուրդ երգերի հավաքման, ընտրման և կանոնացման գործը, որը նշանակալի երևույթ էր թե՛ հայ և թե՛ արևելաքրիստ. երաժշտության պատմության մեջ: Նրա կազմած ժողովածուն՝ «Ճոնընտիր»-ը, հիմք է հանդիսացել ավելի ուշ ձևավորված *Շարակնոցի* համար և միաձուլվել է դրան: Ըստ *Վարդան Արևելցու*՝ նա է նախաձեռնել նաև նույն կցուրդների վերաբերող *ութձայնի* նոր համակարգի հաստատման հնագույն փորձը: Բ. Ճ. եղել է նաև երգահան. այդ մասին տեղեկացնում է Վարդան Արևելցին Ս. Ծննդյան «Անթառամ ծաղիկ» շարականի մեկնության մեջ («Տեսութիւն Անթառամ ծաղկի...», 1834, էջ 6):

Գրկ. Վարդան Վարդապետ Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Թահմիզյան Ն., Բարսեղ Ճոնը և մանագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, ԲԵՀ, 1973, № 1:

ԲԵԹՂԵՀԵՄԻ ԱՆԱՊԱՏ, Թբիլիսիի Քարափի թաղում, Նարիկալա ամրոցի հյուսիսային կողմում: Բ. ա-ի Ս. Աստվածածին միանավ թաղածածկ հորինվածքով եկեղեցին XIII դ. հիմնադրել է Գրիգոր քահանան, շինարարությունն ավարտել է նրա թոռ Բարսեղը (XIV դ.): 1636-ին Հալեպից Թիֆլիս տեղափոխված գրիչ և մանրանկարիչ Մկրտիչը Բ. ա-ում բացել է գրչագրության արվեստի դպրոց: 1641-ին նա ընդօրինակել և նկարազարդել է Կիլիկիայի մանրանկարչության դպրոցին պատկանող Ավետարան:



Բեթղեհեմի անապատի Ս. Աստվածածին եկեղեցին (1746) հս-արլ-ից

1658-ին կառուցվել է Բ. ա-ի ժամատունը: XVII դ. սկզբին վերակառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցու հիմնովին վերակառուցումը, որն ավարտվել է 1746-ին, Ստեփան Խեչոյենցի բարերարությամբ: Եկեղեցին քառամույթ գմբեթավոր բազիլիկ է, որի բազմանիստ թմբուկով գմբեթը բարձրանում է խորանի անկյունների և արլ. մույթերի միջև ձգվող կամարների վրա: Ավանդատները երկհարկ են. 2-րդ հարկերը խոշոր կամարներով բացվում են աղոթասրահի մեջ: Առաջին հարկի հս. ավանդատունը նվիրված է Գրիգոր Ա Լուսավորչին, հվ-ը՝ Հովհաննես Մկրտչին: Գմբեթի թմբուկին «Աստվածածինը մանկան հետ» պատկերաքանդակն է: Եկեղեցում պահվել է Աստվածածնի սրբապատկերը, ըստ ա-

վանդության՝ նկարված Բեթղեհեմի այն մսուրի տախտակի վրա, որտեղ ծնվել է Հիսուս Քրիստոսը: Եկեղեցու ներսում՝ պատերին, ագուցված են 1501-ի և 1679-ի խաչքարեր: Ջախակողմյան ավանդատան պատին կան XVII–XVIII դդ. Բ. ա. այցելած ուխտավորների մակագրություններ:

XVIII դ. Բ. ա-ի հս. կողմում կառուցվել են միաբանների խցերը, արլ. դարպասի վրա՝ աղյուսաշեն զանգակատուն՝ քարե 8-սյունանի ռոտոնդայով:

1884-ին երեցփոխան Հովսեփ Տեր-Աբրահամյանցը նորոգել է Ս. Աստվածածին եկեղեցին և զարդարել գմբեթը Հայր Աստծուն պատկերող որմնանկարներով: 1897-ին Սոփիա Մարտյանցը կառուցել է Բ. ա-ի աղբյուրը: 1898-ին պատրաստվել է եկեղեցու խորանի նրբաճաշակ և բարձրարվեստ, քարակերտ խաչքարը: 1981-ին պեղվել է եկեղեցու հատակը, և բացվել են նախնական՝ միանավ եկեղեցու հիմքերը:

1990-ին Բ. ա-ի Ս. Աստվածածին եկեղեցին «նորոգվել» է, նրա պատերից հանվել են խաչքարերը և հայկ. արձանագրությունները, քանդվել խորանի խաչքարը, մկրտության ավազանը, Բ. ա-ի աղբյուրը:

Գրկ. Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 3 (ԺԸ–ԺԹ դդ.), Ե., 1955: *Аратян М., Памятники средневековой армянской архитектуры в Тбилиси, Е., 1978; Мурадян П., Армянская эпиграфика Грузии, Тбилиси, Е., 1988.*

Մուրադ Հասրաթյան

ԲԵԼԳԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ, տես *Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմ*:

ԲԵՐԿՐԻԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔ, Տեր Հուսկանորդու վանք, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Առբերանի (Տարբերունի) գավառում, *Արգելանի Ս. Աստվածածին վանքի* մոտ: Վերջինիս հետ ընդհանուր միաբանություն է ունեցել: Հիմնվել է XIII դ., Տեր Հուսկանորդի ս. Ստեփանոսի գերեզմանի վրա (մ. 1251-ին): Եղել է նշանավոր սրբավայր և ուխտատեղի: Վանքի՝ այսօր կանգուն Ս. Ստեփանոս եկեղեցին մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է, որին հս-ից կից է ս. Ստեփանոսի թաղածածկ դամբարանը: Մոտակա ժայռերին փորագրված են XV դ. խաչքարեր:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.3, 2-րդ պատկերը:

Գրկ. Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԲԻՍՏԻ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ, Կոպատափ անապատ, պատմական Գողթն գավառի (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջան) Բիստ գյուղից մոտ 1 *կմ* հս.: Ըստ ավանդության, հիմնադրվել է V դ., հիշատակվում է XIV դարից, իսկ XV դ. գործել է որպես անապատ: Վանքի ներկայիս եկեղեցին, ըստ արմ. մուտքի չին. արձանագրության, 1668-ին կառուցել է վանահայր Պետրոս վարդապետը: Մեկ զույգ մույթերով եռանավ փոքր բազիլիկ է, ներսից հնգանիստ խորանով, հվ. ճակատին կից եռակամար գավիթ-սրահով: 1670-ին վանք է այցելել հայ ճանապարհորդ, վաճառական Զաքարիա Ագուլեցին, XVIII դ. 30-ական թթ. Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացին երկու օր հյուրընկալվել է վանքում և հիացական տողեր նվիրել նրան: Եկեղեցին նորոգվել, և ներսը նկարազարդվել է 1877-ին: Բ. Ս. Ն. վ. միջնադարում եղել է գրչության կենտրոն, որի ձեռագրերից արժեքավոր են Երևանի Մատենադարանում պահվող Թոմա Արճիշեցու 1336-ին ընդօրինակած, մանրանկարներով հարուստ Ավետարանը, Գրիգոր գրչի գործ, չորս ավետարանիչների դիմապատկերներով, 1489-ի Ավետարանը, 1689-ի նկարազարդ Ճաշոցը:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Լալայան Ե., Օրդուբադի կամ Վերին Ադուլիսի ոստիկանական շրջան կամ Գողթն, ԱՀ, գիրք 11, 12, Թ., 1904–05: Այվազյան Ա., Գողթն գավառի Բիստ ավանի ճարտարապետական հուշարձանները, ՊԲՀ, 1978, № 1:

Մուրադ Հասրաթյան

ԲՂԵՆՈ ՆՈՐԱՎԱՆՔ, ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավան գյուղից արևելք, անտառապատ դարավանդի վրա: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի, 936-ին վանքը հիմնադրել և Ս. *Ստեփանոս Նախավկա* եկեղեցին, գավիթներ, սրահներ, բնակելի ու տնտ. շինքեր է կառուցել Ստեփանոս եպիսկոպոսը՝ Հրահատ իշխանի օժանդակությամբ: Եկեղեցու օծմանը հրավիրվել է Սյունյաց եպիսկոպոս Հակոբը,

որը վանքի միաբանություն է հաստատել, նրան որպես սեփականություն հատկացրել շրջակա տարածքները: Բ. Ն-ի դիմաց հիմնվել է բորոտանոց, որտեղ հավաքել են բազմաթիվ հիվանդների: Ստեփանոս եպիսկոպոսը 970-ին վախճանվել է և թաղվել եկեղեցու մոտ: 989-ին Բ. Ն-ում ընդօրինակվել է և նկարազարդվել «*Էջմիածնի Ավետարանը*»:

Սպիտակ կրաքարով կառուցված եկեղեցին XI դ. արդեն խարխլված էր, և 1062-ին, Սյունյաց Գրիգոր Ա Աշոտյան թագավորի հրամանով, Գևորգ ու Հովհաննես քահանաները սրբատաշ կապտավուն բազալտով հիմնովին վերակառուցել են այն, որից հետո Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին հայկ. ճարտ. մեջ եզակի է դարձել իր հորինվածքով և հարդարանքով: Ունի ընդհանուր երկթեք ծածկի տակ վերցրած թաղածածկ աղոթասրահ, նրան հս-ից և հվ-ից կից, արլ-ում՝ խորաններով սրահներ, իսկ արմ-ից՝ եկեղեցու հետ ծավալատարած. ամբողջություն կազմող, կենտրոնում կամարակապ մեծ բացվածքով գավիթ: Յուրօրինակ են մեանդրներով մշակված շքամուտքը, գավթի որմնայուսների բուսական զարդաքանդակներով խոյակները, հնգախորշ խորանը, երկայնական պատերի զույգ, կամարակապ քանդակազարդ բացվածքները:

Հայկ. արվեստում բացառիկ են ճակատները ձևավորող, կամնագույն քարի սալերի վրա իրականացված պատկերաքանդակները, որոնք բովանդակում են Քրիստոսի կյանքի հետ կապված առանձին թեմաներ՝ Ավետումից մինչև Համբարձում: Այս բարձրարվեստ քանդակները սերտորեն առնչվում են Սյունիքի մանրանկարչության հետ և հայկ. միջնադարյան արվեստի հանգուցային ստեղծագործություններից են: Բ. Ն. վերակառուցվել է 1962-ին:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.4, 1-ին պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Սարգսյան Գ., Բղենո Նորավանք, «Էջմիածին», 1952, № 3–5: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960:

Մուրադ Հասրաթյան

«ԲՅՈՒՐԱԿՆ», ազգային, գիտական, գրական և քաղաքական հանդես: Լույս է տեսել 1882–1908-ին, Կ. Պոլսում: Տեր և խմբագիր՝ Ս. Ություճյան, 1901-ից տնօրեն՝ Ս. Դավթյան, խմբագիրներ՝ Գ. Անդրեասյան, Հ. Ճիզմեճյան, Ս. Զեոլմեկճյան, Ա. Գալբակճյան: «Բ.» որպես ավետարան. հրատարակություն, արևմտահայության շրջանում քարոզել է բողոք. դավանանքը, կարևորել բողոք. վարժարանների և որբանոցների գործունեության լուսաբանումը, մշտապես լրատվություններ տպագրել դավառի բողոքականների առօրյայի և կրթ. կյանքի մասին: Ձգտել է Հայ առաքելական եկեղեցու հետ պահպանել փոխադարձ հարգանք և ըմբռնում: Պայքարել է Կաթոլիկ եկեղեցու այն մտայնության դեմ, թե իբր Հայ առաքելական եկեղեցին նախապես միացած է եղել Հռոմի կաթոլիկ եկեղեցուն, իսկ հետագայում՝ որպես հերձվածող, բաժանվել նրանից: Այդ տեսակետից ուշագրավ են

Լևոն XIII պապի՝ հայերին ուղղած համբնույթ կոնդակի (1882) դեմ «Բ.»-ի ելույթները, որտեղ դատապարտվել են Կաթոլիկ եկեղեցու հավակնությունները Արևելյան ուղղափառ եկեղեցիների նկատմամբ: Կողմնակից լինելով Հայ եկեղեցու անկախությանը՝ «Բ.» միաժամանակ քննադատել է Հայ եկեղեցու կարծեցյալ «ավելորդապաշտությունները», որոնք իբր աղարտել են նրա «առաքելական պարզությունն ու մաքրությունը»:

Այլ դավանությունների նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտելիս՝ «Բ.» օգտվել է Անգլիկան եկեղեցու տեսական դրույթներից, ընդարձակ նյութեր տպագրել Հայ, Անգլիկան և Հռոմի եկեղեցիների դավան. ընդհանրությունների ու տարակարծությունների վերաբերյալ: Ընդ որում, նրա կարծիքով, Հայ և Անգլիկան եկեղեցիները դավան. շատ ավելի ընդհանրություններ ունեն, քան Հայ և Կաթոլիկ եկեղեցիները: Ուշագրավ են Հայ առաքելական և բողոք. եկեղեցիների՝ Կաթոլիկ եկեղեցու հետ ունեցած դավան. տարակարծություններին նվիրված հրապարակումները:

«Բ.» տպագրել է բողոք. դավանության սկզբունքներով հյուսված քարոզներ, ճառեր, խրա-

ԲՈՂՈՔԱԿԱՆ. տաբարոյական բնույթի նյութեր: Ակնառու են ավետարան. ճշմարտություններին, Ս. Հոգուն նվիրված տաբաբնույթ հոդվածները, որոնք, փաստորեն, բանավեճի դրսևորումներ էին ընդդեմ այլ դավանությունների: Հանդեսը քարոզել է գիտության և Ս. Գրքի կատարյալ ներդաշնակության գաղափարը:

Հայերի շրջանում բողոքականության տարածման պատմության առումով հետաքրքրական են «Բ.»-ի հուշագր. տպավորությունները, որոնք գրի են առել բողոք. քարոզիչները: Հանդեսը անդրադարձել է հայերի մշակութ., ազգ-հաս. կյանքին, հետևել հայ գրականության զարգացման ընթացքին, գնահատել Մ. Մամուրյանի, Ա. Արփիարյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Տ. Կամսարականի ստեղծագործությունները, արժեքավորել իրապաշտ. ուղղությունն արևմտահայերի շրջանում: «Բ.» տպագրել է նաև ազգագր. բնույթի ուշագրավ հոդվածներ:

1897-ից «Բ.» դադարել է բողոք. հրատարակություն լինելուց:

Ալբերտ Խառատյան

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (< լատ. protestans- առարկող, բողոքող), *քրիստոնեության* հիմնական ուղղություններից: Բ. ընդհանուր անվանումն է քրիստ. այն եկեղեցիների, որոնք XVI դ. Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում կրոնագաղափար., հաս-քաղ. շարժման՝ Ռեֆորմացիայի ժամանակ անջատվել են հռոմեականթոլիկ. եկեղեցուց, մերժել Կաթոլիկ եկեղեցու (տես *Կաթոլիկություն*), պապականության և հոգևորականության անհրաժեշտությունը, հավատի աղբյուր հռչակել միայն *Աստվածաշունչը*, մերժել սրբազան *ավանդությունը*: Բ. իր մեջ ընդգրկում է դավան., պաշտամունք. և եկեղեց. առանձնահատկություններով միմյանցից տարբերվող, անկախ եկեղեցիներ և դավանանքներ (լյութերականություն, կալվինականություն, անգլիկանություն, անաբապտիստներ, մկրտականներ, պուրիտանություն, պրեսբիտերականներ ևն):

Բողոքական եկեղեցիները բաժանվում են երկու մեծ խմբի՝ լյութերական և ռեֆորմատական (Եվրոպայում՝ կալվինականություն, ցվինգլիականություն ևն, հս. Ամերիկայում՝ մեթոդիստներ ևն): Ռեֆորմատական և լյութերական եկեղեցիների հիմն. տարբերությունն այն է, որ վերջիններն ընդունում են երկու խորհուրդ (Մկրտություն և Հաղորդություն), իսկ ռեֆորմատական եկեղեցիները մերժում են բոլոր խորհուրդները: Բողոքական եկեղեցիները կոչվում են նաև ավետարանական եկեղեցիներ: Սկզբ. շրջանում ավետարանական անունը կրել են բոլոր բողոքական՝ թե՛ լյութերական և թե՛ ռեֆորմատական եկեղեցիները, քանի որ նրանք իրենց ուսմունքի հիմքը համարել են Սուրբ Գիրքը: XIX դ. ավետարանական անունը տարածվել է հատկապես նոր բողոքական եկեղեցիների վրա՝ ի տարբերություն հին լյութերական և ռեֆորմատական եկեղեցիների: Հայերի մեջ Բ. տարածվել է XVII–XVIII դդ., առանձին համայնքների ձևով, իսկ XIX դ. սկզբնավորված ավետարան. շարժման արդյունքում, 1846-ին վերածվել կազմակերպված ավետարան. եկեղեցու (տես *Հայաստանյայց ավետարանական եկեղեցի, Հայ մկրտական եկեղեցիներ*):

Բողոքական և ավետարան. եկեղեցիների ընդհանուր դաղափարաբանությունը, կարգը և եկեղեց. կառուցվածքը հիմնականում հանդում են հետևյալին: Աստծո և մարդու հարաբերությունն իրականացվում է առանց միջնորդության: Աստծո շնորհին մարդ հաղորդակցվում է ուղղակի Քրիստոսի միջոցով՝ նրան ընդունելով որպես անձնական Փրկիչ: Միակ և բացարձակ հեղինակությունը Աստվածաշունչն է, որտեղ Քրիստոսի խոսքը համարվում է գերագույն, հայտնութենական ճշմարտություն: Ամեն տեսակ ավանդություն ստորադաս է նկատվում Աստվածաշնչին: Հասարակությունը բաժանված չէ կղերական և աշխարհիկ դասի: Ըստ այդմ, *քահանան* չունի *Սուրբ Հոգու* պարգևներն ընդունելու և բաշխելու մենաշնորհ: Յուրաքանչյուր ոք կարող է և իրավունք ունի հոգևոր պաշտոն կատարել, քարոզել, մեկնաբանել Աստվածաշունչը: Բ. ընդունում է հավատացյալների հավասարությունն ու միությունը: Եկեղեցու առավել գործուն անդամները, որոնք աչքի են ընկնում քարոզելու շնորհքով, ժամանակի ընթացքում ձեռնադրումով դառնում են եկեղեցու երեցը (ավագը) և ստանում պատվելի, ավելի ուշ՝ փորձ և հմտություն ձեռք բերելուց հետո՝ վերապատվելի կոչումը: Հոգևոր պաշտամունքն իրականացվում է բացառապես *քարոզի*, Աստվածաշնչի բարոյաբանական մեկնաբանության և *աղոթքի* միջոցով:

Բողոքական և ավետարան. եկեղեցիները չունեն պատմ. եկեղեցիներին (Հայ առաքե-

լական, Ուղղափառ-օրթոդոքս, Կաթոլիկ) հատուկ ծիսակարգ: Բացառապես ընդունում են իբրև առավել նախնական, Աստվածաշնչի հեղինակությամբ վկայված ձեռնադրման և մկրտության (ջրի մեջ ընկղմում) պարզ արարողությունը: Ջունեն պատմ. եկեղեցիներին հատուկ այնպիսի հայտանիշներ (ատրիբուտներ), որպիսիք են ճարտարապետությունը (իր հին տարազի մեջ՝ եկեղեցի, տաճար, վանք), զգեստավորումը, սուրբ անոթները, սրբանկարները, մոմերը, խունկը, մյուռոնը ևն: Ավետարան. եկեղեցիները նախանձախնդիր են պահպանելու քրիստ. եկեղեցու տիեզերականությունը, միությունը և ազատությունը:

Բողոքական և ավետարան. եկեղեցիների աստվածաբանությունը հիմն. գծերով հետևյալն է. Աստվածաշունչը Աստծո շունչն է և բացարձակ հեղինակություն, և լիազոր իրավասություն ունի (Բ Տիմ. **3.**16, Եբր. **4.**12): Սուրբ *Երրորդությունը* բնությամբ մեկ Աստվածություն է, որ բաղկացած է երեք Անձերից. Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի Աստված (Մատթ. **28.**19, Բ Կորնթ. **13.**13): Արարչագործությունը բացառապես Աստծո ձեռքի գործն է (Ծննդ. **1.**1–31, Հովհ. **1.**1–3): *Դրախտը* (երկինքը) իբրև վիճակ և տարածք Սուրբ Երրորդության կենտրոնավայրն է, ինչպես նաև՝ *հրեշտակների* ու հավատացյալների հավիտենական բնակավայրը (Եսայի **6.**1–3, Եզեկ. գլ. 1,10, Եբր. **1.**14): Մարդը ստեղծված է Աստծո նմանությամբ և պատկերով, մարմինը՝ հողից, հոգին ու շունչը՝ Աստծո կողմից (Ծննդ. **1.**26, **2.**7): Սուրբ Հոգով մկրտությունը, լրումը, սուրբ կյանքը Աստծո պահանջն է, նաև՝ եկեղեցու (հավատացյալների) մենաշնորհն ու պարտքը (Գործք **1–6**, Ա Թեսաղ. **5.**26): Եկեղեցին (հավատացյալների ամբողջությունը) Քրիստոսի մարմինն ու Հարսն է (Եփես. **5.**23–32, Հայտն. **19.**7): *Սատանան* անձ է, չարության մարմնացում, չարության աշխարհի իշխանը և ստի հայրը (Հովհ. 8.44): *Դժոխքը*, իբրև դրախտի (երկնքի) հակառակ բևեռ, հավիտենական տարածք է սատանայի, նրա սպասավոր հրեշտակների համար: Դժոխքը մեղավորների տանջանքի վայրն ու վիճակն է (Ղուկ. **16.**23, Մատթ. **25.**41, **13.**42, Հայտն. **20.**10, 15): *Մեղքը* սատանայից է (Ա Հովհ. **3.**8): Մարդն իր կամքը հանձնելով և միանալով սատանային՝ մեղք է գործում, նահանջելով աստվածադիր պատվիրաններից՝ դառնում հին մարդ (Քրիստոսի արյամբ տակավին չփրկված հին Ադամ) և զրկվում օրհնությունից, դիրքից, կյանքից ու Աստծուց (Եփես. **4.**17–22):

Քավությունը բովանդակ աշխարհի փրկության համար Քրիստոսի՝ խաչի վրա զոհվելով պատարագվելն է (Հռովմ. **3.**25, Ա Հովհ. **2.**2): Արդարացումը և վերստին (հոգևոր) ծնունդը (Հռովմ. **4.**20–24) Հիսուս Քրիստոսի քավչարար արյամբ սրբվելն է և նրա շնորհն անվերապահորեն ընդունելով՝ նոր մարդ (նոր Ադամ) լինելը: Քրիստոսի Երկրորդ գալուստը եկեղեցու հույսն է: Քրիստոսով մեռածները հարություն են առնելու, և ապրող հավատացյալները հափշտակվելու են երկինք: Երկրի վրա մնացողներին մեծ նեղություններ են գալու: Հետո Քրիստոս իր սրբերով երկիր է իջնելու, կապելու է սատանային և թագավորելու է հազար տարի (Ա Թեսաղ. **4.**15, Հայտն. **3.**10, **20.**1–4): Վերջին դատաստանի ժամանակ, հազարամյակից հետո, սատանան արձակվելու է, չարերը հարություն առնելով՝ դատվելու են և նետվելու կրակի ու ծծումբի լճի մեջ (Հայտն. **20.**7–15): Արդարները հավիտենական երանության մեջ պետք է հարատևեն (Հայտն. **21**, **22**):

Բացի Նոր կտակարանի գրքերից (27) բողոքական և ավետարան. եկեղեցիներն ընդունում են Աստվածաշնչի մաս կազմող միայն Հին կտակարանի հրեական կանոնը (39 գիրք): Այստեղ բացակայում են Հայ առաքելական եկեղեցու ընդունած Աստվածաշնչի երկրորդական կանոն (ըստ բողոքականների՝ *պարականոն գրքերը*): Թեպետ այդ գրքերը աստվածաշունչ չեն համարում, սակայն ճանաչում են իբրև բարոյապատմական արժեք ունեցող գրվածքներ (տես *Կանոնական գրքեր*):

Հակոբ Քյոսեյան

ԲՈՐԲՈՐԻՏՆԵՐ, II–V դարերում Ասորիքում, Միջագետքում, Եգիպտոսում, Հայաստանում տարածված գնոստիկյան աղանդ: Ինչպես *մծղնեության*, այնպես էլ Բ-ի աղանդը ծագել է I, II և III դդ., *գնոստիցիզմից*: Բ. անվանումը որոշակիորեն ստուգաբանված չէ: Որոշ ուսումնասիրողներ այն կապում են Բ-ի գերագույն սրբության՝ Բարբելոյի անվան հետ: Նմանաձայնության պատճառով այս աղանդավորների անունը հետագայում բացատրել են հուն. «բորբորոս»-տիղմ, կեղտ բառով և մատնանշել

Նրանց անմաքուր բարքերն ու անկարգ սեռական կյանքը: Այլ հետազոտողների կարծիքով, Բ. անվանումն ասոր. «բարբարիտ» («անապատի որդի») բառի յուրատեսակ իմաստավորումն է: Աղբյուրներում անվանվում են նաև բարբելիոտներ, բորբորիանոսներ, բարբուրյաններ, բորբորիտոններ, զաքքեոսներ, կոդդիանոսներ, ստրատիոտիկոսներ, ֆիբիոտներ: Բ-ի գաղափարախոսության մասին հիմն. աղբյուրները եկեղեցու հայրերի գործերն են: Հնագույն հիշատակությունը հանդիպում է II դ. եկեղեց. պատմիչ Իրենիոս Լուգդունացու «Ընդդեմ հերձվածոց» աշխատության մեջ, ապա նրանց մասին գրում է V դ. եկեղեց. պատմիչ Թեոդորետոսը, ամենից հանգամանորեն՝ V դ. պատմիչ Եպիփան Կիպրացին իր «Ընդդեմ 80 աղանդոց» («Պանարիոն») գրքում: Բ-ին խիստ հալածանքների է ենթարկել Եդեսիայի եպիսկոպոս Ռաբուլասը (412–435). նրա կենսագրության մեջ պատմվում է, որ նա իր թեմում ի թիվս այլ աղանդների բնաջնջել է նաև Բ-ին:

Ըստ աղբյուրների, Բ. «Մարիամի ծնունդը» վերնագրով մի գիրք են ունեցել, որտեղ քարոզել են, թե «Հրեաների աստվածը էշի կերպարանք է ունեցել»: Բոլոր աղբյուրներն առանձնապես շեշտում են Բ-ի սանձարձակ անբարոյականությունը, անմաքուր բարքերն ու գործերը: Նրանք բարոյական ոչ մի օրենք չեն ճանաչել, քարոզել են, թե օրենքն այս աշխարհը ստեղծած ստորին աստվածն է որպես մի որոմ սերմանել գերագույն Աստծո ստեղծագործության մեջ, հետևաբար ո՛չ մի օրենք, ո՛չ մի բարոյական նորմ պարտադիր չէ: Պետք է այդ օրենքի և նրա պահանջների հակառակը գործել, եթե մարդ ուզում է ապացուցել, որ հակառակ է ստորին աստծուն:

Բ-ի պատկերացմամբ մարդկային մարմինն ապականացու է, չի կարող հարություն առնել, այն այս աշխարհի արարիչ վիշապաձև արքոնի (իշխանի) ստեղծագործությունն է: Հոգի ունեն ոչ միայն մարդիկ, այլև կենդանիները, ձկներն ու սողունները, ծառերն ու տունկերը: Քրիստոսը Մարիամից չի ծնվել, նա ինքնածին է, մարմին չի ունեցել, նրա մարմինը երևակայական է և երկնքից է բերել (տես *Երևութականություն*): Ըստ Բ-ի, գոյություն ունի ութ երկինք, որոնցից յուրաքանչյուրի վրա բազմած են արքոններ: Վերին՝ ութերորդ երկնքում է Բարբելոն՝ կենդանի էակների մայրը: Հայրն ամենեցուն և ինքնածին Քրիստոսն է, որն աշխարհ եկավ և մարդկանց ցույց տվեց գնոսիսը (իմացությունը): Յոթերորդ երկնքում է գտնվում Բարբելոյի որդին՝ էշի կամ խոզի կերպարանք ունեցող արքոն Սաբաոթը (կամ՝ Խալդաբաոթը)՝ տերը զորության, իրենից ներքև գտնվող երկինքների և երկրի արարիչը: Հոգին, հեռանալով երկրից, անցնում է այդ յոթ երկինքների վրա գտնվող արքոնների միջով և, հասնելով Բարբելոյին, փրկվում է. ընդ որում, նա կարող է անցնել այդ արքոնների միջով և փրկվել միայն այն ժամանակ, երբ լցվի գնոսիսով: Գնոսիսին անհասու հոգիները կուլ են գնում այս աշխարհի արքոնին՝ Սաբաոթին, ապա վերադառնում երկիր և մտնում խոզերի ու այլ կենդանիների մեջ:

Բ. ընդունել են Հին և Նոր կտակարանները, որոնք մեկնաբանել են յուրովի, բայց ունեցել են բազմաթիվ պարականոն գրքեր, ավետարաններ: Չեն ընդունել մարգարեներին, նրանց պաշտած Աստծուն, չեն հավատացել Վերջին դատաստանին, մեռելների հարությանը:

Հայաստանում տարածված Բ-ի մասին վկայում են Կորյունը և Մովսես Խորենացին՝ կապված Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի՝ հեթանոսության, զանազան աղանդների դեմ պայքարի, քրիստոնեության քարոզչության և ավետարանչական գործունեության հետ: Կորյունի և Խորենացու մոտ Բ. անվանված են «ժպիրհ և կամակոր աղանդ բորբորիանոսաց», «ժանտագործ ազգ բարբարիանոսաց», որոնց Կ. Պոլսի պատրիարք Ատտիկոսի (405–426) պահանջով Հայոց կաթողիկոսը վտարել է երկրի սահմաններից՝ 415–423-ի ընթացքում: Մնացած աղանդավորները հարել են մծղնյաններին, նրանց հետ միասին հետագայում ձուլվել *մանիքեության* մեջ:

Բ. անվանումը հետագայում դարձել է հայհոյական ածական: Մովսես Խորենացին Շամիրամին անվանում է «վաւաշն և բորբորիտն Շամիրամ», իսկ *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին* Թոնդրակյան շարժման (տես *Թոնդրակեցիներ*) հիմնադիր Սմբատ Զարեհավանցուն կոչում է «վաւաշ շամբուշ բորբորիտն, պիղծն Սմբատ անիծեալն»:

Գրկ. Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1995: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Տեր-Մկրտչյան Կ., Պավղիկյանք բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր հերձվածային երևույթներ Հայաստանի մեջ, Երուսաղեմ, 1938: Մելիք-Բախշյան Ս. Տ., Պավլիկյան շարժումը Հայաստա-

նում, Ե., 1953, էջ 55–64: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968, էջ 63–73: Բարթիկյան Հ., Աղանդավորական շարժումները Հայաստանում ըստ միջնադարյան հայ և օտար հեղինակների (IV–V դդ.), ԼՀԳ, 1984, № 10:

Հրաչ Բարթիկյան

ԲՋՆԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, ՀՀ Կոտայքի մարզի Բջնի գյուղի հյուսիսային եզրին: 1031-ին վանքը հիմնադրել ու Ս. Աստվածածին եկեղեցին կառուցել է *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին* և, Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի ու Հովհաննես Սմբատ թագավորի հրամանով, այստեղ եպիսկոպոսական աթոռ հաստատել: Բ. Ս. Ա. վ-ի թեմը տարածվել է Սևանա լճից մինչև Ախուրյան գետը, Գուգարքից մինչև Բջնի:

Ս. Աստվածածին եկեղեցին մեկ զույգ արմ. մույթերով գմբեթավոր դահլիճ է՝ պսակված բազմանիստ թմբուկով և հովանոցաձև վեղար ունեցող գմբեթով: Ճարտ. և հարդարանքի առանձնահատկություններից են Ավագ խորանի կենտրոնի խորշը՝ գիպսե չքեղ շրջանակով, և ներսում, պատերի երկայնքով ձգված քարե բարձակային դարակները (ենթադրվում է, որ այստեղ են պահվել վանքում գրված բազմաթիվ ձեռագրերը): Բ. Ս. Ա. վ. եղել է միջնադարյան հայ գրչության և ուսումնագիտ. կենտրոն՝ հայտնի «Մագիստրոսի ճեմարան» անվանումով: 1065-ին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդին՝ Բ. Ս. Ա. վ-ի առաջնորդ տեր Վահրամը, ըստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու, ընտրվել է կաթողիկոս և կոչվել *Գրիգոր Բ Վկայասեր*:

XII դ. Բ. Ս. Ա. վ. Հայաստանում մեծ հեղինակություն է ձեռք բերել. 1113-ին Հայոց կաթողիկոս *Գրիգոր Գ Պահլավունու* հրավիրած՝ Սև լեռան եկեղեց. Բ ժողովի որոշմամբ Հայոց կաթողիկոսը պետք է ընտրվեր չորս գլխավոր աթոռների՝ Տաթևի, Հաղպատի, Արտազի Ս. Թադե և Բ. Ս. Ա. վանքերի համաձայնությամբ ու հավանությամբ:

1201-ին Զաքարե և Իվանե Զաքարյանները Բջնին ազատագրել են սելջուկներից: 1209-ին Վահան իշխանը նորոգել է Բ. Ս. Ա. վ., 1211-ին վանահայր տեր Վրթանեսը կառուցել է վանքի աշխարհիկ շինությունները: 1251-ին *Կոստանդին Ա Բարձրբերդցին* Ս. Աստվածածին եկեղեցու պատին կոնդակ է փորագրել Բ. Ս. Ա. վ-ի վանական խախտված կանոնադրությունը վերահաստատելու մասին և դատապարտել կաշառքով ձեռնադրությունները: XIII դ. Իվանե Զաքարյանի ծոռ իշխան Զաքարեն հարկերից ազատել է Բջնին՝ կոնդակն արձանագրելով վանքի եկեղեցու հվ. պատին:

1272-ին Ս. Աստվածածին եկեղեցուն հվ-ից կից կառուցվել է թաղածածկ մատուռ, որի արմ. պատի խորշում խոշոր խաչքար է տեղադրվել: Բ. Ս. Ա. վ-ում գործել են հմուտ քարգործ վարպետներ. վանքի տարածքում պահպանվել են մի շարք բարձրարվեստ խաչքարեր՝ ինքնատիպ ձևերով, զարդաքանդակների յուրահատուկ մշակումով: 1303-ին և 1306-ին վանքը ստացել է նվիրատվություններ: 1358-ին Զաքարյանների տոհմից իշխան Աթաբակ Զազան նորոգել է Բ. Ս. Ա. վ., վերահաստատել նրա թեմը: 1386-ին Լենկթեմուրի ասպատակության ժամանակ վանքում սպանվել է վանահայր վրդ. Վանականը:

XV դ. Բ. Ս. Ա. վ. վերստին վերականգնել է կրոն. և գիտ. խոշոր կենտրոնի իր նշանակությունը, նրա վանահայրերը կոչվել են «Բջնո և Այրարատի» առաջնորդ: XV դ. վանքում գրչագրվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց թվում է վանահայր Գրիգոր եպիսկոպոսի ընդօրինակած Ավետարանը: XVII դ. սկզբին վանք են ներխուժել ջալալիների հրոսակախմբերը: 1631-ին *Մովսես Գ Տաթևացու* ջանքերով Բ. Ս. Ա. վ-ում վերակենդանացել է վանական կյանքը. այստեղ հավաքվել է 30 միաբան: 1643-ին, ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, *Փիլիպոս Ա Աղբակեցու* հրամանով և ջուղայեցի խոջա Պետրոսի բարերարությամբ, վանքը նորոգվել է: Փիլիպոս Ա Աղբակեցու աշակերտ, վանահայր Մովսես Բաբունապետը (1646–66) կառուցել է Բ. Ս. Ա. վ-ի ուղղանկյուն հատակագծով, անկյուններում շրջանաձև բուրգերով պարիսպները, հս. կողմում՝ թաղածածկ սեղանատունը:

1637-ի մարտին Բ. Ս. Ա. վ. է այցելել և գիշերել ֆրանս. ճանապարհորդ Շարդենը, որը հետագայում նկարագրել է վանքն իր ուղեգրություններում: 1700-ին Բ. Ս. Ա. վ. է այցելել ֆրանս. բուսաբան Տուռնեֆորը:

XVIII դ. վանքն ունեցել է մոտ 50 գյուղ՝ Կոտայք և Վարաժնունիք գավառներում:

XIX դ. պարիսպներին ներսից կից կառուցել են արմ-ում՝ առաջնորդարանի, արլ-ում՝ շտեմարանի, հվ-ում՝ ուսումնարանի շենքերը, հս-ում՝ խցերը, իսկ մատուռի տանիքին կանգ-

նեցվել է փոքր, այուն-նազարդ զանգաշտարակ: 1895-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու կոնդակով արմ-ում կառուցվել է եկեղեցու դպրոցի շենքը: 1946-ին և 1957-ին նորոգվել է Ս. Աստվածածին եկեղեցին:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.4, 2-րդ պատկերը:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղ-պատ, 1895: Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ. նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք 23, 1912, № 2, 1912: Եղիազարյան Հ., Բջնիի վանքը և Բջնի գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1963, № 9–11:

Մուրադ Հասրաթյան

ԲՌԻ ԵՂՅԻ ՎԱՆՔ, ԼՂՀ Մարտունու շրջանի Հացի գյուղի արևելյան կողմում, բլրի գագաթին: Կառուցել են Աղվանից կաթողիկոս Ստեփանոսը և նրա եղբայր Ներսես եպիսկոպոսը XIII դ. (վանքի տարածքում պահպանվել են V–VI դդ. կոթողների բներ, խարիսխներ և խոյակներ): Վանքի համալիրը կազմված է միմյանց կից երկու միանավ եկեղեցիներից, նրանց արմ-ից կից, խաչվող կամարներով ծածկով ընդհանուր գավթից, արմ. կողմում առանձին կանգնած, ճարտ. Խաչենիկ Անեցու կառուցած միանավ եկեղեցուց, դեպի արմ., բլրի ստորոտում, Շահեն ճարտարապետի կառուցած համանման եկեղեցուց և երեք խոշոր որմնափակ խաչքարերից (նրանցից մեկն ունի 1270-ի շին. արձանագրություն): Հվ-արմ. խաչքարը ևս Խաչենիկ Անեցու ստեղծագործությունն է: Անիից հրավիրված ճարտարապետի մասնակցությունն արցախյան վանքի եկեղեցու և խաչքարի կառուցմանը նպաստել է վանքի շինությունների ճակատների ձևավորման «գեղատեսիլ ոճի» կիրառմանը, որը Հայաստանում երևան է եկել XII–XIII դդ. և կապված էր քաղաքային, առաջին հերթին՝ Անիի, մշակույթի զարգացման նոր փուլի հետ:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.4, 3–4-րդ պատկերները:

Գրկ. Բարխուդարյան Մ., Արցախ, Բաքու, 1895: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1982: Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992: Նույնի, Ճարտարապետ Խաչենիկ Անեցի, «Անի» (ժող.), Ե., 1992, № 1:

Մուրադ Հասրաթյան

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1983-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Սան Պաուլոյի Ս. Գևորգ եկեղեցի: Թեմի վարչական տարածքն ընդգրկում է գլխավորապես Սան Պաուլո, Օզասկո, Ռիո դե Ժանեյրո և մի քանի այլ քաղաքներ, որտեղ բնակվում են մեծաթիվ հայ ընտանիքներ: Առաջին հայ հոգևորականը, որը 1923-ին Մերձավոր Արևելքից գաղթածների հետ հաստատվել է Բրազիլիայում, Գաբրիել ավ. քհն. Սամուելյանն էր: Նոր վերաբնակեցվածները կազմել են հանձնաժողով՝ գաղութը կազմակերպելու և վարչություն ստեղծելու համար: Հանձնաժողովը դիմել է ամերիկահայոց թեմի առաջնորդին (Նյու Յորք)՝ իրենց վարչությունը վավերացնելու և Բրազիլիայի հայ համայնքի եկեղեց. ու ազգ. կյանքն իր հովանու տակ առնելու խնդրանքով: 1933-ին Բրազիլիան ընդգրկվել է Հվ. Ամերիկայի հայրապետ. պատվիրակության կազմում (կենտրոնը՝ Բուենոս Այրես): Հայրապետ. պատվիրակ է նշանակվել Գարեգին արք. Խաչատուրյանը (1938–1951, 1951–61-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք):

1983-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Հվ. Ամերիկայի հայրապետ. պատվիրակությունը բաժանվել է երեք առանձին (Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի) թեմերի: Բրազիլիայում առաջին հայկ. եկեղեցին՝ Ս. Հովհաննես Մկրտիչը, կառուցվել է 1935-ին, Օզասկոյում (ներկայումս եկեղեցու սպասարկումը կատարում են Սան Պաուլոյի Ս. Գևորգ եկեղեցու քահանաները): Բ. Թ-ի առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1938-ին, վերակառուցվել՝ 1948-ին:

Բրազիլահայության ազգ. ներկայացուցչական մարմինը բաղկացած է համայնքային միություններ ներկայացնող 40 անդամից, կենտր. վարչ. խորհուրդը՝ 9–11 անդամից: Ժողովնեերին նախագահում է թեմական առաջնորդը: Այս կառույցների հովանավորությամբ են գործում եկեղեցիները, ազգ. մյուս հաստատությունները: 1928-ից Ս. Գևորգ եկեղեցուն կից գործում է թեմին պատկանող միակ հայկ. ամենօրյա դպրոցը, որը 1931-ին անվանակոչվել է Դուրյան ազգային վարժարան՝ ի հիշատակ

Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե արք. *Դուրյանի*: Վարժարանն ունի նախակրթ., միջնակարգ և բարձրագույն դասարաններ: Եկեղեցու հովանավորությամբ գործում են երկու փոքր դպրոցներ Պրեզիդենտե Ալտինո և Ֆեյրա դե Սանտանա քաղաքներում:

Բ. Թ-ի պաշտոնաթերթը «Սիփան» ամսաթերթն է (հայերեն և պորտուգալերեն, հրտ. 1983–87-ին և 1995-ից, խմբագիր և տնօրեն՝ Տ. արք. Ղարիբյան):

Բ. Թ-ի առաջնորդն է Տաթև արք. Ղարիբյանը (1983-ից):

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.4, 5-րդ պատկերը:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է XIX դ.: Առաջնորդանիստը՝ Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցի:

Միջնադարյան Բուլղարիայի մի շարք քաղաքներում [Օխրիդ, Ստրումիցա, Ֆիլիպոպոլիս (այժմ՝ Պլովդիվ), Թըռնովո, Դևոլ] ձևավորվել են քաղկեդոն. և առաքելական հայերի համայնքներ՝ իրենց եկեղեցիներով, վանքերով ու հոգևոր սպասավորներով: XII դ. Ֆիլիպոպոլսում գործել է հայկ. վանք՝ Հովհաննես Ութմանի վանահայրությամբ: Այս ժամանակաշրջանում է հիշատակվում նաև Ֆիլիպոպոլսի հոգևոր առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը, որին *Գրիգոր Դ Տղա* կաթողիկոսը նշանակել էր Հայ առաքելական եկեղեցու պաշտոնական բանագնաց: 1675-ին կառուցվել և 1828-ին վերակառուցվել է Պլովդիվի Ս. Գևորգ եկեղեցին, որը գործում է ցայսօր: Սոֆիայում հայկ. առաջին եկեղեցին կառուցվել է 1673-ին՝ հայ վաճառական Ապրո Զելեբիի միջոցներով: 1936-ին օծվել է Ս. Աստվածածին եկեղեցին, որը ներկայումս Բ. Թ-ի Մայր եկեղեցին է: XVIII դ. վերջին Բուրգասում կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին, 1850-ական թթ.՝ Ս. Խաչը: Ռուսե քաղաքում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին գործել է XIX դ. սկզբից: 1842-ին Վառնայում կառուցվել է Ս. Սարգիս եկեղեցին: Բուլղարիայում XIX դ. գործող հայկ. եկեղեցիների թիվը 15-ից ավելի էր: Բ. Թ. մինչև XX դ. սկիզբը գլխավորել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի առաջադրած առաջնորդական տեղապահը: 1903-ին Բ. Թ-ի առաջնորդ է ընտրվել Վահան վրդ. Տեր-Հակոբյանը: Առաջին համաշխ. (1914–18) և հույնթուրք. (1919–22) պատերազմների տարիներին երկրում գործել է ժամանակավոր թեմական խորհուրդ: 1922-ին թեմի առաջնորդ է ընտրվել Ստեփանոս արք. Հովակիմյանը: 1954–56-ին թեմը գլխավորել է Վազգեն (Լևոն-Կարապետ) եպս. Պալճյանը, որը միաժամանակ *Ռումինիայի թեմի* առաջնորդն էր (1955–94-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Վազգեն Ա Պալճյան*):

Մեծ է Բ. Թ-ի ավանդը բուլղարահայերի լուսավորության գործում: Միջնադարում որոշ հայկ. եկեղեցիներ ունեցել են գրչության կենտրոններ, որտեղ ստեղծվել են հայ. ձեռագրեր: Եկեղեցիներին կից գործել են դպրոցներ: Եկեղեցին նպաստել է հայկ. մշակութ. և լուսավոր. ընկերությունների գործունեությանը: XIX դ. վերջին և, հատկապես՝ 1920-ական թթ. Բ. Թ. զգալի աշխատանք է կատարել երկրում ապաստանած արևմտահայերին օգնություն ցույց տալու համար:

Համայնավար. վարչակարգի պայմաններում սահմանափակվել է հայ կրոն. համայնքի գործունեությունը, փակվել են մի շարք եկեղեցիներ: 1980-ի վերջին գործել է ընդամենը 5 հայկ. եկեղեցի: 1990-ական թթ-ից համայնքն ազդ. զարթոնք է ապրել: 1994-ից գործում է Բ. Թ-ի խորհուրդը (ատենապետ՝ Օնիկ Քիրազյան), որը միջոցներ է ձեռնարկել հայկ. եկեղեցիները վերաբացելու, նորերը կառուցելու ուղղությամբ: Պազարջիկ և Ստարա Զագորա քաղաքների իշխանությունները տեղի հայ համայնքներին եկեղեցաշինության համար հողամասեր են հատկացրել: Նախատեսվում է հայկ. նոր եկեղեցի կառուցել նաև Սոֆիայում:

Բ. Թ-ի առաջնորդն է Տիրայր արք. Մարտիկյանը (1968-ից):

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.4, 6-րդ պատկերը:

Զոհրաբ Ղասաբյան

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, Մեծ պահոց քառասնօրյա շրջանին նախորդող կիրակի օրը: Յուրատեսակ տոն, որն ուղղակիորեն չի առնչվում աստվածաշնչյան որևէ հրահանգի կամ դրվագի հետ: Առավելապես ժող. տոնախմբության, խրախճանքի, ազատության օր է, որը կարծես հավատացյալ ժողովրդին հիշեցնում է նախնի դրախտը, դրախտային երջանկությունն ու զվարթությունը: Եվրոպայում կոչվում է պարզապես կառնավալ: Հայոց մեջ Բ. Բ. անվանվել

է նաև Աբեղաթող՝ քահանայական դասին տրվող որոշ ազատություններ, իսկ ժողովրդախոսակցական լեզվով կոչվել է նաև Բարեկենտանք, Բարիկենանք (տես նաև *Բարեկենդան*):

Բ. Բ-ի նախորդող շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում, վարագուրվում է եկեղեցու խորանը և այդպես մնում մինչև ս. *Զատիկ* տևող քառասնօրյա պահքի ավարտը. վարագույրը բացվում է միայն բացառիկ դեպքերում, երբ եկեղեցու անվանակոչության կամ սրբոց տոների առթիվ հարկ է լինում Պատարագ մատուցել: Բ. Բ-ի օրը Պատարագը մատուցվում է վարագուրված խորանի հետևում. երգվում են շարականներ, որոնց բովանդակային առանցքն Ադամի դրախտային-երանական վիճակն է, երբ առաջին՝ դեռևս անմեղանչական մարդը, տեսնելով Աստծուն՝ «ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ»:

Բ. Բ. շարժական տոն է, նշվում է ս. Զատկից քառասուն օր առաջ՝ կիրակիներն ու շաբաթները չհաշված. այս շրջանն էլ հենց կազմում է *Մեծ պահքը*:

Իբրև ժող. տոնախմբության օր իր մեջ պարունակում է հեթանոս. շրջանից ավանդված տարբեր՝ կերուխում, այլևայլ խաղեր՝ ձիարշավ, սրախաղ ևն, դիմակավորում՝ տարբեր կենդանիների դիմակներով (ըստ հեթանոս. հավատալիքի, դիմակ հագած մարդը լցվում է տվյալ՝ սրբազան համարվող կենդանուն հատուկ դերբնական զորությամբ): Դիմակավոր խաղերի ու խրախճանքների ավանդույթը գալիս է դիոնիսյան ու սաղուռնական (սատուռնական) կոչվող տոներից (որոնք կատարվել են Եվրոպայում) և հեթանոս. Հայաստանում նշվող նավասարդյան տոներից: Հայկ. տարբեր գավառներում ծիսակարգային որոշ փոփոխակներով նշվել է Բ. Բ.՝ որպես ժող. թատերականացված հանդիսություն, կերուխումի և ծիծաղի օր:

Ներկայումս Բ. Բ-ի ժող. տոնախմբությունը կրում է առավել զուսպ բնույթ:

Հայ եկեղեցին Բ. Բ. նշում է փետր. 1-ից մարտի 7-ը ընկած ժամանակահատվածում:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6 հրտ., Թեհրան, 1999:

Լևոն Սարգսյան

Գ

ԳԱԳԿԱՇԵՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ Անի է, ըստ XI դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ), Գագիկ Ա Բագրատունի թագավորի պատվերով 1001–10-ին կառուցել է ճարտարապետ *Տրդատը*՝ Անիում վերակերտելով ավերակ *Զվարթնոցի* հորինվածքը: Եկեղեցին եռաստիճան, դեպի վեր նվազող գլանաձև (արտաքուստ՝ բազմանիստ) ծավալներով կենտրոնագմբեթ կառույց է, որի 1-ին հարկը շրջանց սրահի մեջ (32,65 *մ* ներսի տրամագծով) ներառված քառախորան է՝ անկյուններում չորս հզոր մույթերով: Արտաքին ճակատները զարդարված են զույգ կիսասյունիկների վրա հանգչող կամարաշարերով: Տրդատը, պահպանելով Զվարթնոցի կառուցվածքային ընդհանուր հորինվածքը և չափերը, ստեղծագործաբար վերամշակել է ճարտ. ձևերը, մանրամասները, զարդաքանդակները: Սակայն թաղերի ու կամարների լիցքերում, ի տարբերություն Զվարթնոցի, քարգործ վարպետները պեմզայի փոխարեն բազալտի խիճ են օգտագործել՝ ավելորդ ծանրաբեռնելով 2-րդ հարկը կրող խորանների կենտր. զույգ այուները, որոնք արդեն չին. ավարտի մոտ սկսել են ճաքել: 1013-ին վթարային այուները ներառել են հաստահեղույս մույթերի մեջ (4 *մ*-ից ավել տրամագծով), լրացուցիչ շրջակամար կառուցել արմ. կողմում, շարվածքով փակել արմ. և հս. մուտքերը: Գ. Ս. Գ. ե. կործանվել է XI դ. (հավանաբար՝ Անիի 1046-ի երկրաշարժից):

1905–06-ին, Ն. Մառի ղեկավարած պեղումներով բացվել են Գ. Ս. Գ. ե-ու ավերակները, գտնվել է Գագիկ Ա-ի արձանը՝ եկեղեցու մանրակերտը ձեռքին: Թ. Թորամանյանը ուսումնասիրել և կազմել է եկեղեցու վերակազմության նախագիծը: 1918-ին, թուրք. զորքերի Անի մտնելուց առաջ, Ա. Քալանթարն ու նրա օգնականները արձանը թաղել են Անիի տարածքում, իսկ պեղումների նյութերը տեղափոխել Ախուրյանի ձախ ափ: Գագիկ Ա Բագրատունու արձանը (բարձր. 2,26 *մ*) հպված է եղել եկեղեցու հս. պատին: Այն հայկ. միջնադարյան քանդակագործ. արվեստում կլոր ծավալով իրականացված միակ պահպանված ստեղծագործությունն է: Կերտված է վարդագույն տուֆ քարից և ներկված տարբեր գույներով: Քանդակագործը (ենթադրվում է, որ Տրդատն է) մեծ վարպետությամբ դրսևորել է պատկերվող անձի անհատական, յուրահատուկ գծերը: Ողջ հասակով պատկերված արքան ձեռքին բռնել է բավական մեծ, մնամեջ մանրակերտը, որը վերարտադրում է եկեղեցու ծավալատարած. հորինվածքը և հարդարանքը:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.5, 1-ին պատկերը:

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Մարության Տ., Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Ե., 1963: Դիվան հայ վիմագրության, պր. 1, Ե., 1966: Մնացականյան Ստ., Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Ե., 1971: Թորամանյան Թ., Զվարթնոց: Գագկաշեն, Ե., 1984: Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992: *Марр Н., Ани, Е., 1939; Оганесян К., Зодчий Трдат, Е., 1951;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., Architettura armena dal quarto al dicianno-vesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ԳԱԹԸՐՃՅԱՆ Հովսեփ (ավազանի անունը՝ Ավետիք, 19.2.1820, Կ. Պոլիս – 9.1.1882, Կ. Պոլիս), պատմաբան, աստվածաբան, լեզվաբան, թարգմանիչ, մանկավարժ: Սկզբ. կրթությունն ստացել է Ղալաթիայի Մխիթարյան վարժարանում (1828–33), ապա ուսումը շարունակել Վիեննայի Մխիթարյան դպրոցում (1833–38): 1838-ից՝ *Մխիթարյան միաբանության* անդամ: 1841-ին ձեռնադրվել է քահանա, վարել դանազան վարչ. պաշտոններ՝ Հռոմում որպես ընդհանուր գործակալ, Վիեննայում՝ փոխառաջնորդ, Կ. Պոլսում՝ Մխիթարյան դպրոցների վերատեսուչ: Երկար տարիներ Վիեննայի և Կ. Պոլսի դպրոցներում դասավանդել է կրոն, փիլիսոփայություն, երկրաչափություն, թարգմանել բազմաթիվ դասագրքեր, ինչպես, օր.՝ փիլիսոփայության, երկրաչափության, կենդանաբանության, բուսաբանության ևն (բոլորն էլ՝ անտիպ): Կարևոր աշխատանք է կատարել դասական հայերենի ուսումնասիրման և կանոնակարգման ուղղությամբ, աշխատել է մաքրել այն օտարաբանություններից, որոնք թափանցել էին դասական հայերեն՝ թարգմանիչների երկրորդ սերնդից սկսած: Գ. դասական հայերենը բաժանել է երկու շրջանի՝ V-րդ դ. սկիզբ և V-րդ դ. 1-ին կես: Դասական հայերենով է թարգմանել և հրատարակել Քսենոփոնի, Ցիցերոնի, Կիպրիանոսի և այլոց աշխատությունները, ինչպես նաև Հովհան Ոսկեբերանի, Եվսեբիոս Կեսարացու, Սեբերիանոս եպիսկոպոսի երկասիրություններից առանձին հատվածներ, որոնք ի մի հավաքված լույս են տեսել առանձին գրքով (1849, 1852): «Պատմութիւն մատենագրութեան հայոց» աշխատությունը (1851) ընդգրկում է հեթանոս. անգիր շրջանի բանաստեղծությունները, վերլուծում նրանց տաղաչափ., լեզվաոճ. և գեղ. առանձնահատկությունները: Առանձնապես արժեքավոր է «Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները» ուսումնասիրությունը (ՀԱ, 1887, № 1, 1889, № 2, 3), որտեղ ճշգրտվել են Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու գրությունների ժամանակագր. շրջանակները, հերթականությունը:

Հ. Գաթըրճյան

Գ. կարևոր աշխատանք է կատարել հայոց քննական պատմության ստեղծման ուղղությամբ: Նախատեսել է հինգ հատորով լույս ընծայել «Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս» աշխատությունը, սակայն լույս են տեսել միայն առաջին երկու հատորները՝ «Հին պատմութիւն» (հ. 1, 1849) և «Միջին պատմութիւն» (հ. 2, 1852): Այստեղ ընդհանուր, տիեզերական պատմության ընդգրկուն ծրագրի մեջ համառոտ ներկայացված է նաև հայոց պատմությունը (սկզբից մինչև 480-ը)՝ սկզբնաղբյուրների լայն օգտագործմամբ ու քննական վերլուծությամբ: Հարցերը հիմնականում լուսաբանված են կրոն. տեսանկյունից. գերակշռում է կողմնակալ, շեշտված կաթոլիկ. մտայնությունը:

«Քանի մը խոսք «Մասիս» լրագրույն մեկ հատվածին վրա» աշխատությունում (1854), որն ընդդիմախոսություն է Կ. Ուլթուճյանի «Պապութիւն և Մխիթարեանք» ուսումնասիրության, Գ. գերագնահատել և իդեալականացրել է ընդհանրապես կաթոլիկության և մասնավորապես Մխիթարյանների դերը Հայոց պատմության մեջ: Դավանաբան., աստվածաբան. բազմաթիվ հարցեր է քննարկել «Հիմնական տարբերութիւն կաթուղիկէ եւ Էջմիածնական դաւանութեանց» ստվարածավալ աշխատությունում (1864): Այստեղ տրվել են երկու եկեղեցիների դավան. տարբերությունները, դրանք ծնող պատճառները, զարգացման ընթացքը: Հեղինակի համակրանքը Կաթոլիկ եկեղեցու կողմն է. աշխատությունն այդ եկեղեցու դավան. սկզբունքների փառաբանումն է: Նույն ոգով է գրվել նաև «Իրաւախոհի կեղծիք և իրաց ճշմարտութիւնք...» (1873) աստվածաբան. երկասիրությունը, որտեղ արծարծվել են նաև հայագիտ. և կրոնաբարոյական բնույթի բազմաթիվ հարցեր: Բազմամյա աշխատանքի արդյունք է «Սրբազան Պատարագամատոյցք Հայոց» արժեքավոր հրատարակությունը (1897): 1877-ին, լատ. թարգմանությամբ հանդերձ, հրատարակվել է «Հանգիստ երանելւոյն Յովհաննու» անվավերականը. հետամահու լույս է տեսել «Հանդանակ հաւատոյ, որով վարի Հայաստանեայց եկեղեցի» (1891, լատ. թարգմանությունը՝ 1893) աշխա-

տությունը: Ձեռագիր վիճակում են «Մաշտոց», «Կանոնագիրք Հայոց» ժողովածուների նրա պատրաստած բնագրերը:

Գրկ. Ակինյան Ն., Ակնարկ մը վիեննական Մխիթարեան միաբանութեան գրական գործունեութեան վրայ, Վնն., 1912: Նույնի, Դասական հայերէնը և վիեննական մխիթարեան դպրոցը, Վնն., 1932: «Հովսեփ Գաթերճյան», ՀԱ, 1931, № 1–2:

Պետրոս Հովհաննիսյան

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Շնորհք, Յոզկաթցի, Քնանասեր, Վերծանող [ավազանի անունը՝ Արշակ, 1913, գ. Իյտե (Թուրքիայի Յոզկաթ իլ) – 7.3.1990, Ս. Էջմիածին, թաղված է Կ. Պոլսի Շիշլիի գերեզմանատանը], Կ. Պոլսի հայոց պատրիարք 1961-ից: Մանկությունն անցել է Թալասի (Կեսարիա), Ջիբեյլի (Լիբանան), Նազարեթի (Պաղեստին) որբանոցներում: 1927–32-ին սովորել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, աշակերտել Թորգոմ պատրիարք *Գուշակյանին*: 1932-ին ձեռնադրվել է սարկավագ, 1935-ին՝ կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Շնորհք աբեղա: Եղել է Երուսաղեմի պատրիարք Թ. արք. Գուշակյանի դավազանակիրը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի տպարանի տնօրենը, «*Սիոն*» պաշտոնաթերթի փոխխմբագիրը: Պաշտպանել է վարդապետ. թեզ և ստացել վարդապետ. աստիճան, ընտրվել Երուսաղեմի պատրիարքական աթոռի Տնօրեն ժողովի անդամ և Հայֆա քաղաքի հայոց համայնքի հոգևոր հովիվ: 1941–44-ին նշանակվել է Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ և դասախոս: Մինչև պատրիարք ընտրվելը հոգևոր պաշտոններ է վարել Լոնդոնում, Միլանում, Կալիֆոռնիայում: 1953–56-ին եղել է ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդը, 1957–61-ին՝ Երուսաղեմի վանքի լուսարարապետը, 1955-ին ձեռնադրվել է եպիսկոպոս:

Գ. պատրիարքի անմիջական աջակցությամբ ու հովանավորությամբ վերանորոգվել են Կ. Պոլսի մի շարք եկեղեցիներ (Սկյուտարի Ս. Խաչը, Պեյքոզի, Բանտիլլի, Գնալը կղզու եկեղեցիները), աշխուժացել Ս. Խաչ դպրեվանքի գործունեությունը, հիմնարկվել Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցին, Կ. Պոլսի և շրջանների եկեղեցիներն ապահովվել հոգևորականներով: Գ. իր գործունեությամբ բարձրացրել է Կ. Պոլսի հայոց պատրիարքության հեղինակությունը, ինքը դարձել քրիստ. աշխարհի ճանաչված ու հարգված հոգևորականներից: Արժանացել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի և Մոսկվայի ու Համայն Ռուսիո պատրիարքի պանակներին, Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի, Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարքի, Քենթբերիի արքեպիսկոպոսի և ասորիների պատրիարքի խաչերին, Սեն Լազար ասպետական կազմակերպության շքանշանին ևն:

Շնորհք պատրիարք Գ. հեղինակ է շուրջ երկու տասնյակ կրոնաբարոյական, եկեղեց., աստվածաբան., սրբախոս., բանասիր., գրական բնույթի գրքերի և թարգմանություններ: Գնահատելի ուսումնասիրություններ են հատկապես հայ և համաքրիստ. սրբերին նվիրված երեք գրքերը՝ «Աստվածաշնչական սուրբեր» (1977), «Համաքրիստոնեական սուրբեր» (1978) և «Հայազգի սուրբեր» (1979), որոնք 1997-ին վերահրատարակվել են Երևանում:

Երկ. Մեծ պահքի կիրակիներու ոսկի շղթան, Ստամբուլ, 1971: Գունագեղ կիրակիներ և Հոգեգալուստ, Ստամբուլ, 1972: Ավագ շաբաթ, Ստամբուլ, 1974:

Այվարդ Ղազիյան

ԳԱՅԱՆՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՆԵՐ, կրթական հաստատություններ XIX դարի 2-րդ կեսին, Երևանում և Թիֆլիսում: Նպատակն էր՝ հայ աղջիկներին տալ տարրական կրթություն, ապա մանկավարժներ պատրաստել հայկ. դպրոցների համար: Գործել են եկեղեցիներին կից, Էջմիածնի *Սինոդի* կամ կաթողիկոսի անմիջական հսկողությամբ ու հովանավորությամբ:

Գայանյան օրիորդաց դպրոց Երևանի, հիմնադրվել է 1866-ին, Էջմիածնի Սինոդի հրամանագրով, Պ. Պռոշյանի և առաջադեմ մյուս մտավորականների նախաձեռնությամբ: Կրթությունը նախապես եղել է տարրական, դասերն ընթացել են վարձու տան մեջ: 1877-ից դպրոցը տեղափոխվել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու դավիթ (ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի տեղում): 1870-ական թթ. Կոնդ թաղամասում բացվել է Սահականուշյան իգական դպրոցը: Այս երկու դպրոցների միացյալ տեսչուհի է կարգվել Գայանե Հովհաննիսյանը (Մատակյան): 1883-ին դպրոցները միավորվել են, և Գայանյան դպրոցը դարձել է միջնակարգ (վեց դասարանով): 1884-ին փակվել է, 1886-ին վերաբացվել որպես օրիորդաց հոգևոր դպրոց՝ ուս. վարչության տնօրինությամբ: 1905-ին դպրոցի տնօրինությունը հանձնվել է Հայկ. եկեղեց. վարչությանը: 1911–12 ուս. տարվանից նորից

դարձել է միջնակարգ (9 դասարանով)՝ մանկավարժական ուղղվածությամբ: Ավանդվել են կրոնագիտություն, հայերեն, ռուսերեն, հայ ժողովրդի և եկեղեցու պատմություն, բնագիտություն, ֆիզիկա, մաթեմատիկա, հոգեբանություն, մանկավարժություն, ձեռագործ ևն: Դասավանդել են Պ. Մակինցյանը, Ա. Տերտերյանը, Տ. Ռաշմաճյանը (1916–21-ին՝ նաև տեսուչ) և ուր.: 1921-ին, միանալով Մեսրոպյան դպրոցին, դարձել է երկրորդ աստիճանի դպրոց:

Գայանյան օրիորդաց դպրոց Թիֆլիսի, հիմնադրվել է 1869-ին (Գայանյանց կույսերի տոնի օրը), Մուղնու Ս. Գևորգ եկեղեցուն կից, Վրաստանի թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի (1885–91-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Մակար Ա Թեղուտցի*) նախաձեռնությամբ և մի խումբ համալսարանականների՝ Մ. Սիմոնյանի (առաջին տեսուչ), Ս. Պալասանյանի, Զ. Գրիգորյանի և այլոց ջանքերով: Դասերն ընթացել են վարձու տան մեջ: Միջոցները գոյացել են աշակերտների ուսման վարձից (3 ռուբլի), եկեղեցու տարեկան նպաստից և նվիրատվություններից: Մինչև 1875-ը երկդասյան էր (երկու նախապատրաստական և չորս հիմն. դասարաններ), ապա դարձել է միջնակարգ ուսումնարան: 1878-ին բացվել է նաև հինգերորդ հիմն. դասարանը:

1879-ին կառուցվել է դպրոցի նոր շենք: 1884-ին փակվել է, 1886-ին վերաբացվել որպես օրիորդաց երկդասյան հոգևոր դպրոց: 1896-ին կրկին փակվել է և վերաբացվել 1905-ին: 1911–12 ուս. տարվանից նորից դարձել է միջնակարգ՝ մանկավարժ. ուղղվածությամբ: Ավանդվել են կրոնագիտություն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, բնական գիտություններ, մաթեմատիկա, ֆիզիկա, եկեղեց. երգեցողություն (ազգ. երգեր), ձայնագրություն, մանկ. խաղեր, պար, ձեռագործ: Ուսուցումը տարվել է մայրենի լեզվով: Ավարտական դասարանների աշակերտները մանկավարժ. փորձ են ձեռք բերել՝ դասավանդելով ցածր դասարաններում: Դպրոցի գրադարանը հարստացել է նվիրատվություններով, ստացել է դասագրքեր, պարբերական հրատարակություններ: Դպրոցն ավարտողները ավարտական վկայականի հետ ստացել են նվեր՝ Ավետարան: Դասավանդել են Ս. Պալասանյանը, Գ. Բարխուդարյանը, Գ. Արծրունին, Ա. Եղեկյանը, Լ. Շանթը և ուր.: Շատ ուսուցիչներ աշխատել են անվճար: 1921-ին դարձել է երկրորդ աստիճանի երկսեռ դպրոց:

Գրկ. Տասնամեակ սուրբ Գայանեան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի, Թ., 1879: Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Ե., 1970:

ԳԱՅԱՆՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐ, սուրբ Հռիփսիմյանց եվ սուրբ Գայանյանց կույսեր (նահ. 301, Վաղարշապատ), տոնելի քրիստոնյա վկայուհիներ, նահատակներ: Մարտիրոսական պսակ են ընդունել *Հռիփսիմյանց կույսերից* հետո՝ մեկ օր անց, Հայոց թագավորի՝ *Տրդատ Գ* Մեծի հրամանով: Գ. կ. են կոչվել իրենց ընդհանուր դաստիարակի և մայրապետի՝ ս. Գայանեի պատվին, սակայն ավանդաբար հայտնի են առավելապես ս. Հռիփսիմեի անունով:

Գայանեին չարչարել են, ապա՝ գլխատել: Նրա մարմինը *Գրիգոր Ա Լուսավորիչն* ամփոփել է տապանի մեջ և կնքել արքունի, ապա և քահանայական-հայրապետական կնիքով:

Նրա վկայարանի տեղում հետագայում կառուցվել է *Էջմիածնի Ս. Գայանե վանքը*: Գ. կ-ին (և ընդհանրապես՝ ս. Հռիփսիմյանց կույսերին) է նվիրված *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսի՝ հայոց այբուբենի տառերի հերթականությամբ գրած «Անձինք նուիրեալք» շարականը:

Հայ եկեղեցին ս. Գ. կ-ի հիշատակը տոնում է ս. Զատկին հաջորդող առաջին կիրակիից հետո, երեքշաբթի օրը՝ ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված տոնից մեկ օր անց:

Լևոն Սարգսյան

ԳԱՆՁ, հայ միջնադարյան հոգևոր երգարվեստի ժանր: Որպես երաժշտաբանաստեղծական տեսակ սերում է ժամագրքային հնագույն երգեցիկ քարոզից: Գ-ի ձևավորումը կապված է *Գրիգոր Նարեկացու* ստեղծագործության հետ, որի անվանական ծայրակապ ունեցող և «գանձ» խոսքով սկսվող ներբողները («Գանձ լուսոյ...», «Գանձ բաղձալի...», «Գանձ անապական...») ստացել են այդ անունը: Հետագայում նմանատիպ ստեղծագործությունների համար Գ. ձեռք է բերել ժանրային որակման իմաստ: Գրիգոր Նարեկացուց հետո այս ժանրին են դիմել հայկ. միջնադարի գրեթե բոլոր խոշոր բանաստեղծ-երաժիշտները՝ *Ներսես Շնորհալին, Մխիթար Այրիվանեցին* և ուր., ընդհուպ մինչև *Գրիգոր Խլաթեցին*: Գ-երը ու-

նեն պատմող-նկարագր. բնույթ, ըստ ձևի՝ դրանց մեջ կան թե՛ արձակ բանաստեղծություններ, թե՛ հանգավոր կամ անհանգ տաղաչափված քերթվածքներ: Հնագույն եղանակավոր քարոզից Գ. ժառանգել է բնորոշ կրկնակը և պարտադիր ու անփոփոխ վերջնամասը: Երաժշտ. առումով Գ., որպես կանոն, ունի վանկային կառուցվածք, սաղմոսատիպ, պարզ մեղեդի և ծավալվում է պատմող. ասերգի հունի մեջ: Գ. գանձ-շարքի առաջին միավորն է: Ուշ միջնադարում Գ. ժող. երգարվեստի ազդեցությամբ զգալի փոփոխություններ է կրել: Հայտնի են զուտ ծիս. կիրառության, այսպես կոչված՝ «մեռելաթաղի» Գ-եր, որոնցում Գ. անվանումը զուտ պայմանական է: Դրանք ըստ էության քնարական մահերգեր են՝ ոճով շատ մոտիկ ժող. ողբերին: Մեռելաթաղի Գ-եր են գրել *Առաքել Բաղիշեցին, Մկրտիչ Նաղաշը* և ուր.: Մեռելաթաղի որոշ Գ-եր, մեղեդիներով հանդերձ, բանավոր հասել են մինչև մեր օրերը: Գ-երը XI–XII դարերից ամփոփվել են *Գանձարան* կոչվող հատուկ մատյաններում: Ուշ միջնադարում զետեղվել են նաև Տաղարան (տես *Տաղ*) և *Մաշտոց* ժողովածուներում:

Գրկ. Մկրտիչ Նաղաշ, Բանաստեղծություններ (աշխատասիր. Էդ. Խոնդկարյանի), Ե., 1965: Առաքել Բաղիշեցի, Բանաստեղծություններ (աշխատասիր. Ա.Ղազինյանի), Ե., 1971: Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր (աշխատասիր. Ա. Քյոչկերյանի), Ե., 1981: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5–15-րդ դդ., Ե., 1985: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Arevšatyan A., Le genre du K'aroz (sermon melodisé) dans le chant sacré arménien, "Revue des études arméniennes", 24, 1993.

Աննա Արևշատյան

«ԳԱՆՁԱՍԱՐ» աստվածաբանական կենտրոն: Ստեղծվել է 1991-ի հունվ. 11-ին, Երևանում, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի օրհնությամբ և Արցախի թեմի առաջնորդ Պարգև արք. Մարտիրոսյանի հրամանով:

Կենտրոնն իր աշխատանքներն իրականացնում է ուսումնասիր., կրթ., քարոզչ., բարեգործ. և այլ ուղղություններով: Ուսումնասիրում է ձեռագրեր, կազմում քննական բնագրեր, թարգմանում գրաբար և օտար լեզուներով հրատարակված հայրաբանական աշխատություններ: Ուսումնասիրում և վերլուծում է Հայ եկեղեցու հայրերի և նշանավոր վարդապետների ժառանգությունը, հայ հոգևոր մշակույթի (ճարտարապետություն, երաժշտություն, մանրանկարչություն, խաչքար, ծես ևն) զարգացման օրինաչափությունները և կանոնները: Կազմակերպում է քարոզներ, դասախոսություններ, զրույցներ, ցուցահանդեսներ, հաղորդումներ, սեմինարներ:

Կենտրոնի գործունեության անբաժանելի ուղեկիցն է բարեգործությունը: Նրա հովանավորությամբ 1993-ի սեպտ-ից Երևանում գործում է «Զատիկ» մանկատունը: «Գ.» աստվածաբանական կենտրոնը հրատարակել է նույնանուն հանդեսի 1–6 հատորները (1991–1996), «Շարականի» 1-ին հատորը (1997), դավան., խրատ., մեկնաբան., ծիս., հայագիտ. բնույթի գրքեր (շուրջ 53 անուն):

«Գ.» աստվածաբանական կենտրոնի հիմնադիր ղեկավարն է Մեսրոպ քհն. Արամյանը:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ, տես *Աղվանից կաթողիկոսություն*:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔ, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմացի համանուն լեռան վրա: Հիմնադրվել է մինչև X դ.: Հայոց *Անանիա Ա Մոկացի* կաթողիկոսի՝ *քաղկեդոնականության* դեմ պայքարելու համար 949-ին Խաչենում հրավիրած ժողովին մասնակցել է Գ. վ-ի վանական Սարգիսը: Սելջուկների դեմ պատերազմում զոհված Խաչենի Գրիգոր իշխանի աճյունը 1140-ին բերել և թաղել են Գ. վ-ում, որը, ըստ XII–XIII դդ. մատենագիր, օրենսդիր Մխիթար Գոշի վկայության, նրա նախնիների տապանատունն էր: Արցախ-Խաչենի Իշխանաց իշխան *Հասան Ջալալ Դոլան* 1216–38-ին կառուցել է Գ. վ-ի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (օծվել է 1240-ի հուլիսի 22-ին՝ Վարդավառի օրը): Ըստ Կիրակոս Գանձակեցու, իշխան Հասան Ջալալի կազմակերպած մեծ տոնախմբությանը ներկա է եղել 700 քահանա: Հյուրերի թվում էին Աղվանքի Ներսես կաթողիկոսը, *Վանական Վարդապետը*, իշխաններ և եպիսկոպոսներ, Հայաստանի շատ վանքերի առաջնորդներ:

Սրբատաշ քարից կառուցված եկեղեցին ունի ներքուստ՝ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով գմբեթավոր հորինվածք և հարուստ գեղ. հարդարանք: Ներսում, առագաստների տակ կան երկրաչափ. զարդաքանդակներ (շրջանաձև, աստղաձև, քառակու-

սի), իսկ վերևում չորս ավետարանիչների խորհրդանշանների բարձրաքանդակներն են: Նուրբ և ճոխ մշակում ունի բեմի ճակատամասը: Արտաքուստ ճակատները ունեն զույգ խորշեր և զարդարված են դեկորատիվ կամարաշարով: Հայկ. արվեստում իր հարդարանքով բացառիկ է եկեղեցու գմբեթը, որի թմբուկի նիստերին կան Հին և Նոր կտակարանների թեմաներով պատկերաքանդակներ, կենդանակերպ, երկրաչափ. և բուս. մոտիվներով զարդաքանդակներ: Արմ. նիստերին քանդակված են ծալապատիկ նստած կտիտոր (հիմնադիր և մեկենաս) իշխանները՝ գլխներից վեր պահած եկեղեցիների մանրակերտերով, Քրիստոսը և նրանից ներքև՝ Ադամը և Եվան: Հվ. նիստերին խմբված են ծնկաչոք, լուսապսակներով մարդկանց (հավանաբար՝ առաքյալների) քանդակներ, որոնք դիմում են միջին նիստի ճակտոնում պատկերված Աստվածածնին: Արմ. ճակատին կա բարձրարվեստ խոշոր պատկերաքանդակ՝ «Խաչելություն» տեսարանով:



Գանձասարի վանքի հատակագիծը

Վանքի գավիթը հիմնադրել է Հասան Ջալալ Դոլայի կին Մամքանը՝ 1261-ին, ավարտել է նրանց որդի Աթաբակ-Իվանեն՝ 1266-ին: Գավիթն ունի խաչվող կամարներով ծածկ և հատակագծային-ծավալային հորինվածքով կրկնում է *Հաղպատի վանքի* ժամատան ու *Մշկավանքի* գավթի ձևերը (հավանաբար, երեքն էլ նույն ճարտարապետի կառուցածն են): Գ. վ-ի արմ. շքամուտքն ունի ճոխ ձևավորում, դռան ճակատակալ քարում օգտագործել են բազմագունության հնարք:

1261-ին Ղազվինում (Իրան) սպանված իշխան Հասան Ջալալ Դոլայի աճյունը նրա որդի Աթաբակ-Իվանեն տեղափոխել է հայրենիք և թաղել Գ. վ-ում: 1271–1301-ին Գ. վ. բազմաթիվ նվիրատվություններ է ստացել: Մոտ 1400-ին Գ. վ. դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը: 1417-ին Մատթեոս Մոնոզոնը վանքում գրել է բանաստեղծությունների մի ժողովածու՝ կազմված տաղերից, ներբողներից և Ալեքսանդր Մակեդոնացու չափածո պատմությունից:

1441-ին Գ. վ-ի եպիսկոպոս Ազարիան մասնակցել է Էջմիածնում Հայոց կաթողիկոս *Կիրակոս Ա Վիրապեցու* ընտրություններին: 1462-ին կարակոյունլու սուլթան Ջահանշահի կին Բեգում-խաթունը հրովարտակով հաստատել է Գանձասարի իրավունքները և կարգադրել պետ. պաշտոնյաներին՝ վանքը հարկերից ազատել: 1467–80-ին Գ.վ. որպես նվիրատվություն ստացել է գյուղեր, հողամասեր, դրամ: 1487-ին ակկոյունլու Յաղուբ Փադիշահը հրովարտակով հաստատել է Գանձասարի Շմավոն կաթողիկոսի իրավունքները և նրան ենթակա հոգևորականությանն ազատել հարկերից: Գ. վ. 1493-ին որպես նվեր ստացել է Մսերվին գ., իսկ 1507-ին՝ Տանձաձորը: 1546-ին Սարգիս կաթողիկոսն ընդարձակել է Գ. վ-ի կալվածքները, 1551-ին՝ նորոգել վանքի եկեղեցին: 1606–20-ին Գ. վ-ի նախկին սարկավագ Մեխլուն Արցախի լեռնային շրջաններում գյուղացիական ապստամբություն է հրահրել և ղեկավարել, դատապարտել է վանականների աշխարհիկ, զեխ կյանքը, քարոզել ունեցվածքի հավասարություն:

1628–33-ին Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը նորոգել է վանքը: 1653-ին Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանձկեցին կանգնեցրել է Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթի երկաթե խաչը, նորոգել վանքը: 1659-ին Գ. վ-ում Հովհաննես Ապահունեցին գրել է «Քերականություն» ժողովածուն: 1675-ին մահացել է Պետրոս Խանձկեցի կաթողիկոսը, և Երից մանկանց վանքում ստեղծվել է Գանձասարին հակաթոռ կաթողիկոսություն՝ Սիմեոն Խոտորաշենցու գլխավորությամբ: 1689-ին Երեմիա կաթողիկոսը կառուցել է Գ. վ-ի սեղանատունը: 1699-ին Գ. վ-ում տեղի է ունեցել Գանձասարի կաթողիկոսի և XVII–XVIII դդ. հայ ազատագր. շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրու հանդիպումը: 1702-ին Գանձասարի կաթողիկոս է դարձել *Եսայի Հասան-Ջալալյանը*: Նրա օրոք Գ. վ. դարձել է Ղարաբաղի նաև քաղ. ու ռազմ. կենտրոնը: 1762-ին Գ. վ-ում կայացել է Հովհաննես կաթողիկոսի և XVIII դ. 2-րդ կեսի հայ ազատագր. շարժման ղեկավար Հովսեփ Էմինի հանդիպումը: Վանքում 1778-ին Հովհաննես կա-

թողիկոսը «Դատաստանագիրք» է գրել: 1781-ին Գյուլիստանի Մելիք Աբովը նորոգել է եկեղեցին ու գավիթը: 1783-ին Գ. վ-ում Ղարաբաղի մելիքների և հոգևոր առաջնորդների հավաքը նամակ է հղել ռուս. գեներալ իշխան Պոտյոմկինին՝ խոստանալով նրան Ղարաբաղը պարսկ. տիրապետությունից ազատագրելու արշավանքի ժամանակ օգնել պարենով և ռազմ. աջակցություն ցույց տալ:

1813-ին Ղարաբաղն անցել է ռուս. տիրապետության տակ: 1815-ին ռուս. կառավարությունը վերացրել է Գանձասարի (Աղվանքի) կաթողիկոսությունը և այն փոխարինել մետրոպոլիտությամբ: 1836-ին արքեպիսկոպոս Բաղդասարը մետրոպոլիտության կենտրոնը Գ. վ-ից տեղափոխել է Շուշի: 1898-ին Անտոն վարդապետը Գ. վ-ի արլ. կողմում կառուցել է դպրոցի երկհարկանի շենքը: 1907-ին նորոգվել են Գ. վ-ի գավթի տանիքն ու զանգակատունը: 1923-ին Լենային Ղարաբաղը Խորհրդ. Ադրբեջանին բռնակցվելուց հետո Գ. վ. դադարել է գործել: Վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին վերաբացվել է 1988-ին: 1992-ին ԼՂՀ ներխուժած ադրբ. զորքերի հրետակոծությունից ավերվել են Գ. վ-ի արլ. կողմի շինությունները, որոնք 1993–98-ին վերանորոգվել են:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.5, 2–3-րդ պատկերները:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Հասան-Ջալալյան Ե., Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868: Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Տփխիս,1842: Բարխուդարյանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Ոսկյան Հ., Արցախի վանքերը, Վնն., 1953: Ուլուբաբյան Բ., Գանձասար, Ե., 1981: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1985: Յակոբսոն Ա., Գանձասար, Ե., 1987: Hasratian M., Thierry J. M., Le couvent de Ganjasar, “Revue des études arméniennes”, t. XV, 1981; Ulubabian B., Hasratian M., Gandzasar, Milano, 1987 (Documenti di architettura armena, 17).

Մուրադ Հասրաթյան

ԳԱՆՁԱՍՈՒՆ Ալեք և Մարի Մանուկյան, թանգարան *Էջմիածնի Մայր տաճարի* շրջաբակում, նոր Վեհարանի հարավ-արևմտյան մասում: Բացվել է 1982-ի հոկտ. 11-ին: Կառուցվել է ՀԲԸՄ նախագահ, սփյուռքահայ ազգ. գործիչ և բարերար Ալեք Մանուկյանի միջոցներով: Ճարտարապետն է Բ. Արզումանյանը: Գ-ան շենքը, չհաշված գետնահարկը, երկհարկանի է:

Գ-անը պահվում են համաշխ. արժեք և ճանաչում ունեցող գեղ. ստեղծագործություններ, սուրբ մասունքներ, ձեռագրեր, դրամներ, եկեղեց. սպասքի, նվիրական առարկաների և զգեստների հարուստ հավաքածուներ, որոնք բերվել են Անիից, Թոքատից, Կ.Պոլսից, Վանից, Սեբաստիայից, Կեսարիայից, Կիլիկյան Հայաստանից, Վասպուրականից, Արցախից ևն, ինչպես նաև օտար երկրներից, հայկ. գաղթավայրերից: Հավաքածուների բարձրարվեստ և եզակի նմուշների վրա ազգ. ավանդների և մտածողության հետ դրոշմված է ինչպես տվյալ վայրի, այնպես էլ՝ պատրաստող վարպետի գեղ. հետաքրքրությունների, առանձնահատկությունների կնիքը: Մետաղե գործերի մեջ ամենահինը ս. Ստեփանոս Նախավկայի մասանց պահարանն է, որի վրա պատկերված է նահատակ սրբի մարտիրոսության տեսարանը: Մասանց պահարանի բարձրարվեստ նմուշ է «Խոտակերաց Սբ. Նշանը», որը պատրաստվել է 1300-ին, Էջմի Պռոշյան իշխանի պատվերով: Պահարանի ներսում զետեղված է Հիսուս Քրիստոսի ս. խաչափայտի մասունքը: «Խոտակերաց Սբ. Նշանը» ուշագրավ է ոչ միայն իր հնությամբ, այլև՝ գեղ. հարդարանքով և դրվագման նրբությամբ:

Գ-ան կիրառական արվեստի ստեղծագործությունների մեծ մասը կազմում են խաչերը՝ իրենց բոլոր տեսակներով՝ ավագ սեղանի խաչ, ձեռաց խաչ, լանջախաչ ևն: Լավագույններից են 1747-ին Կ. Պոլսում պատրաստված և Լիմ անապատին նվիրաբերված խաչը ս. Հռիփսիմեի, ս. Գայանեի, ս. Կատարինեի և Քառասուն մանկանց մասունքներով, 1735-ին Ուրֆայում (Եդեսիա) պատրաստված և Մշո Ս. Կարապետ վանքին նվիրված խաչը:

Հավաքածուի կարևոր իրերից են եկեղեց. ծեսերում օգտագործվող քշոցները: Դեկորատիվ-կիրառական արվեստի բարձր արտահայտություններից են 1621-ին՝ Կ. Պոլսում, 1765-ին՝ Բերկրիում և 1749-ին Վանում պատրաստվածները: Ընտիր ձևավորում ունեն ոսկեզօծ սկիհները, գավազանները (կան նաև Զինաստանից բերված փղոսկրե գավազաններ), Ավետարանի կազմերը: Վերջիններս հիմնականում արծաթից են՝ խաչելության կամ Աստվածամոր պատկերներով, երբեմն՝ ագուցված կիսաթանկարժեք բազմագույն քարերով, իսկ կողերը, որպես կանոն, զարդարված են թեթև նախշերով: Ամենահինը Նարեկի պահպանակն է (XIII

դ.): Կատարման վարպետությամբ աչքի են ընկնում 1760-ին՝ Մոկսում, 1788-ին՝ Զեյթունում, 1795-ին Էդիրնեում պատրաստված կազմերը:

Էջմիածնի վանքի թանգարանների հարուստություններից են գործվածքները, որոնց մեծ մասը պահվում է Գ-անը (ավելի քան 1000 նմուշ): Դրանց թվում են՝ խաչվառներ, վարագույրներ, գորգեր, սկիհի ծածկոցներ, սրբիչներ, հանդերձանք ևն: Հավաքածուի հնագույն նմուշը Գրիգոր Ա Լուսավորչի մետաքսե խաչվառն է (1448), չափերը՝ 83x53 *սմ*: Առաջին երեսին պատկերված է գահին բազմած Քրիստոսը, իսկ մյուս երեսին՝ Գրիգոր Ա Լուսավորիչը, Հռիփսիմեն և Տրդատ Գ Մեծը: Վարագույրներից լավագույնը 1704–16-ին Կ. Պոլսում գործված Ավագ խորանի մեծ վարագույրն է, գորգերից՝ Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի (1633–55) արծվագորգը (1751), ինչպես նաև՝ արցախյան բուսակենդ. հորինվածքներով ուղեգորգերը: Հավաքածուներում կան նաև մարգարտահյուս, կիսաթանկարժեք և թանկարժեք քարերով ընդելուզված խույրեր ու արտախուրակներ, գոտիներ, ճարմանդներ, շուրջառներ՝ գործված Չինաստանում, Կ. Պոլսում, Թիֆլիսում և այլուր:

Գ-ան սրահներից մեկը հատկացված է գեղանկարչ. ստեղծագործություններին, սրբանկարներին: Ներկայացված են Հովնաթան և Մկրտում *Հովնաթանյանների* արժեքավոր նկարները, Բալկաններից և այլ վայրերից բերված ռուս. սրբապատկերներ:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.6, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Գանձատուն Ալեք և Մարի Մանուկյան (Ալբոմ), Էջմիածին, 1984:

ԳԱՆՁԱՐԱՆ, եկեղեցական տարվա տոներին նվիրված հանդիսավոր երգաշարքերն ամփոփող հայկական միջնադարյան ձեռագիր խազավոր մատյան: Գ-ի երգաշարքերի կամ գանձ-շարքերի ստեղծումը վերագրվում է *Գրիգոր Նարեկացուն*: Ի տարբերություն *Շարակնոցի* երգերի, Գ-ի երգերը ազատ էին *ութձայնի* կանոններից: Գանձ-շարքը սովորաբար ներառում է 2–4 միավոր. 1. շարքը բացող բուն *գանձը*, որը սերում է հնագույն երգվող *քարոզից*, պատմում է տվյալ տոնի առանցք հանդիսացող իրադարձության կամ անձի մասին: 2. *Տաղը* հուզական մոտեցում է արտահայտում գանձում նկարագրվող իրադարձության հանդեպ: 3. Մեղեդին ավելի է խորացնում շարքի հուզական տրամադրությունը: 4. Փոխը կամ հորդորակը ամփոփում և ունկնդրի հիշողության մեջ ամրացնում է արտահայտված գաղափարներն ու տրամադրությունները:

Գ. որոշակի կառուցվածք ունեցող երգարանժողովածու է, որը ձևավորվել է, հավանաբար, X–XI դդ.: Նրանում առավելապես արտացոլված է հոգևոր հիմներգության, տաղատիպ ժանրերի բուռն ծաղկումը X–XIV դդ.: Հին կամ նախնական խմբագրության (մինչև XIV դ. վերջ) Գ-ներում զետեղված են միայն գանձեր կամ՝ գանձերն ու տաղերը հանդես են գալիս առանձին բաժիններով (ինչպես, օր., Մատենադարանի ձեռ. № 4068 և Փարիզի Ազգ. գրադարանի ձեռ. № 79, 1241 թ., վերջինս հնագույնն է պահպանված Գ-ներից): Հետագայում նույն տոնին ձոնված գանձը, տաղը, մեղեդին և փոխը զետեղվել են արդեն համապատասխան շարքերով: Գ. բովանդակում է հայ միջնադարյան նշանավոր և անհայտ երաժիշտ-բանաստեղծների թողած հարուստ ժառանգությունը, որը խազերի բանալու կորստյան պատճառով իր մեղեդիական բաղադրիչով մեզ է հասել հատուկենտ նմուշներով: Գ-ի ձևավորման և հարստացման գործում կարևոր դեր են խաղացել Գրիգոր Նարեկացին (X դ.), Ներսես Շնորհալին (XII դ.), Կոստանդին Սսեցին (XIII դ.), Մխիթար Այրիվանեցին (XIII դ.), Գրիգոր Խլաթեցին, որի խմբագրած Գ-ով XV դ. եզրափակվել է ժողովածուի զարգացման նախորդ շրջանը: Տեղեկություններ են պահպանվել որոշ հեղինակների, նրանց թվում՝ Գրիգոր Նարեկացու և Մխիթար Այրիվանեցու անհատական Գ-ների մասին: Ուշ միջնադարում Գ-ին բնորոշ է աշխարհականացման միտումը, զուտ ծիս. կիրառություն կամ ժող. ծագում ունեցող ստեղծագործությունների թափանցումը (այսպես կոչված՝ մեռելաթաղի գանձեր, պսակի տաղեր ևն): Տաղարանի երևան գալով՝ Գ. աստիճանաբար կորցրել է իր նախնական նշանակությունը և դուրս մղվել գործածությունից: Ստեղծված բազմաթիվ ուշագրավ Գ-ներից հիշատակելի են Մատենադարանի ձեռ. № 7785, XIV դ., Ղրիմ, ձեռ. № 3503, 1394 թ., Սիս, ձեռ. № 5521, XV դ., Աղթամար, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 231, XIII դ. ևն:

Գրկ. Քյոչկերյան Ա., Գրիգոր Նարեկացու գանձերն ու Գանձարանների սկզբնավորումը, ԲՄ, №

10, 1971: Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր (աշխատասիր. Ա.Քյոչկերյանի), Ե., 1981: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5–15-րդ դդ., Ե., 1985: Հարությունյան Է., Մխիթար Այրիվանեցի, Ե.,1985, էջ 146–197: Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր (աշխատասիր. Ա.Քյոչկերյանի), Ե., 1987: Արեվշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Նույնի, Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, ՊԲՀ, 1992, № 2–3:

Աննա Արևշատյան

ԳԱՎԱԶԱՆ, եկեղեցական ըմբռնմամբ՝ հոգևոր աստիճանի կամ պաշտոնի հայտարար, իշխանության նշանակ: Արքայական Գ. կոչվում է նաև մական, հովվականը՝ ասա, սովորականը՝ ցուպ: Գ. վարդապետին կամ ծայրագույն վարդապետին շնորհում է եպիսկոպոսը՝ ձեռնադրությամբ, Ձեռնադրության Մաշտոցի համաձայն:

Գ-ի մասին, որպես խորհրդավոր ուժակրի, ակնարկվում է դեռևս Ծննդոց գրքում. նահապետներից Հակոբը ջրի դռների մեջ խնկենու, ընկուզենու և սոսու կեղևահան Գ-ներ է դրել, որպեսզի բեղմնավորվող մաքիները, այդ ջրից խմելով, խայտաճամուկ դառներ ծնեն (**30.**37–42): Ելք գրքում Մովսեսի Գ. օժտվել է աստվածային իշխանությամբ և հրաշագործությամբ (**4.**2–5): Այն վիշապ դառնալով՝ կուլ է տալիս քրմերի վիշապներին (Ելք **7.**8–12), բացում Կարմիր ծովը (Ելք **14.**15–22) և կատարում այլ հրաշքներ: Թվոցում Ահարոնի Գ., դրվելով Վկայության խորանում, ծաղկել է (**17.**2–10). Հետագայում այն, ի թիվս այլ սրբությունների, դրվել է *Ուխտի տապանակի* մեջ: Ավելի ուշ, եկեղեցու պաշտոնյաներին տրված Գ-ներն ունեցել են օձի գլուխ և զարդարվել (ծաղկվել)՝ ի հիշատակ և ի նմանություն անապատում Մովսեսի բարձրացրած բուժիչ պղնձե օձի (Թվոց **21.**6–9) և Ահարոնի ծաղկած Գ-ի՝ խորհրդանշելով պատժիչ կամ փրկարար ուժ, զորություն, իմաստություն, հավիտենություն ևն:

Գ-ով հրեաները զատել են Տիրոջը նվիրաբերված տասանորդի անասունները (Ղևտ. **27.**32):

Մինչև XII դ. հայոց եկեղեցիներում վարդապետներն ու եպիսկոպոսները կրել են վարդապետ. երկգլխանի օձագլուխ Գ-ներ: 1184-ին Լուկիոս III պապը Գրիգոր Դ Տղա (1173–1193) կաթողիկոսին նվիրել է կաթողիկոս. պատարագչի լրիվ զգեստ՝ կորագլուխ Գ-ով հանդերձ: Այն Կաթոլիկ եկեղեցում օգտագործել են պապերը, կարդինալները և եպիսկոպոսները: XII դ. վերջին, փաստորեն, հայ եպիսկոպոսները գործածական են դարձրել նաև նման Գ-ները:

Հայ եկեղեցում ընդունված են երկու կարգի Գ-ներ՝ վարդապետական, եպիսկոպոսական կամ հովվական: Հովվականը՝ ասան, կրում են կաթողիկոսները, պատրիարքները և հոգևոր առաջնորդները, ընդ որում, առաջնորդները ասա կրելու իրավունք ունեն միայն իրենց թեմերի սահմաններում:

Գ-ները լինում են փայտե, մետաղե, ոսկրե, երբեմն՝ բյուրեղապակե: Ի տարբերություն մյուս Գ-ների, ասան ազնիվ փայտից է, մոտ 10–12 *սմ*-անոց ոսկե կամ արծաթե գլխիկով:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.7, 1–5-րդ պատկերները:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան
Լևոն Սարգսյան

ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔ, գահացանկ, հոգևոր և աշխարհիկ իշխանավորների հաջորդության ժամանակագրական ցանկ, կարգ, աղյուսակ: Հայ միջնադարյան մատենագրության տեսակ, պատմական երկ: Տարածված են հատկապես աստվածաշնչական նահապետների հաջորդության Գ-եր, որոնք ունեն նաև տարաբնույթ տոհմածառեր կամ տոհմածառերով հավելվածներ: Հայ մատենագրության մեջ ավելի հաճախ հանդիպում են Հայոց կաթողիկոսների Գ-գահացանկերը, որոնք հայտնի են «Կաթողիկոսք Հայոց», «Ըստ կաթողիկոսացն Հայոց», «Անուանք հայրապետացն Հայոց» և այլ խորագրերով: Հնագույնը վերագրվում է V դ. մատենագիր Եղնիկ Կողբացուն: Հայտնի է նաև նույն ցանկի Կանոնագրքի տարբերակը, որը կազմվել է Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի (897–898) օրոք: Հաջորդը պատկանում է Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսին (898–929)՝ «Շարից հայրապետացն Հայոց յայտարարութիւն» խորագրով, որը նաև նրա «Պատմութիւն Հայոց» երկի հենքն է: Գ-ի արժեքավոր և նորություններ պարունակող տարբերակ հեղինակել է Ներսես Լամբրոնացին (1153–98): Ամենատարողունակը և աղբյուրագիտ. առավել մեծ արժեք ունեցողը Հայոց կաթողիկոս Կոստանդին Գ Կեսարացու օրոք (1307–22) կազմված գահացանկն է, որն ընդարձակ և մանրամասն լինելուց բացի պա-

բունակում է նաև Հայոց կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցու (1293–1307) թուղթը Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ թագավորին, Սսի 1307-ի և Ադանայի 1316-ի ժողովների արձանագրություններն ու որոշումները: Հայտնի են նաև XIV դ. մատենագիր, ունիթոր *Ներսես Պալիանենցի*՝ լատ-ից թարգմանած «Գաւազանագիրք Հռոմայեցւոց պապից և կայսերաց» (1348–51) երկի վերջում Հայոց կաթողիկոսների, թագավորների և իշխանների անվանացանկերը, Կ.Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարք *Ա-վետիք Եվդոկացու* «Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք համահաւաքացեալ հին գաւազանագրաց», XVII–XVIII դդ. մշակութ. գործիչ, գիտնական և գրիչ Ավետիք Տիգրանակերտցու «Աղիւսակապատմագիր» երկերը ևն: Նմանատիպ ցանկեր իրենց պատմ. երկերի մեջ ունեն XII դ. պատմիչ Սամուել Անեցին, ասորի ժամանակագիր Միխայել Ասորին և ուր.: Կան նաև առանձին թեմերի, աթոռների, վիճակների առաջնորդների Գ-եր, ինչպես նաև թարգմանական ցանկեր, որոնք ներկայացնում են քրիստ. այլ երկրների հոգևոր կամ աշխարհիկ իշխանությունների գահակալներին և նրանց ժամանակագրությունը:

Նոր ժամանակներում Հայոց կաթողիկոսների ամենաամբողջական ցանկը՝ աղբյուրների համադիր քննության հիման վրա, կազմել է Մաղաքիա արք. Օրմանյանը («Ազգապատում», հ. 3, մաս 3, էջ ԽԱ–ԽԶ): Գ-երը մեծ արժեք են ներկայացնում Հայոց կաթողիկոսների գահակալության ժամանակագր. ցանկը, ինչպես նաև Հայ եկեղեցու և նրա առանձին վիճակների կամ նվիրապետ. մասնավոր աթոռների պատմության ժամանակագր. հենքը ճշտելու համար:

Գրկ. Վարդանյան Յու., Ներսես Պալիանենցին վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին, ՊԲՀ, 1980, № 3, էջ 189–202:

Գևորգ Տեր-Վարդանյան

ԳԱՎԻԹ, 1. Հայկական եկեղեցիներում աղոթասրահից բաժանված արևմտյան մասը՝ նախատեսված ապաշխարողների ու երախաների (չմկրտվածների) համար, որոնք, իրավունք ունենալով ներկա լինելու Պատարագի խրատական քարոզին, հաղորդության ժամանակ սարկավագի ազդարարությամբ պետք է դուրս գային և աղոթեին Գ-ում:

2. Եկեղեցիների արմ. ճակատին (սակավ՝ հվին) կից շենքը, որը փոխարինել է վաղ միջնադարում հայկ. եկեղեցիների արմ. կողմի պարսպապատ բակին: Ըստ *Սահակ Ա Պարթևի* կանոնների, խստիվ արգելվել է թաղում կատարել եկեղեցու ներսում: Հայաստանի հոգևոր ու աշխարհիկ բարձրաստիճան անձանց թաղել են Գ-ներում: Պահպանված վաղագույն հայկ. Գ-ները պատկանում են X դ. (*Վահանավանք, Խոտակերաց վանք, Գնդեվանք*), որոնք արլ-ից արմ. ձգված ուղղանկյուն թաղածածկ դահլիճներ են: XI դ. ձևավորվել է հայկ. ճարտ. մեջ ամենատարածված՝ քառասյուն, գմբեթավոր, կենտրոնակազմ ձևը (*Հոռոմոսի վանք*), որը կիրառվել է Հայաստանի XII–XIII դդ. վանքերի մեծ մասում (*Հաղպատի վանք, Սանահինի վանք, Հառիճավանք, Սաղմոսավանք, Թեղենյաց վանք, Բագնայրի վանք, Աստվածընկալ վանք*, Նեղուցի վանք ևն): Կառուցվածքային համարձակ լուծում ունեն խաչվող կամարներով ծածկված Գ-ները (*Գանձասարի վանք, Մշկավանք, Խորակերտի վանք, Նոր Վարագավանք, Աղջոց վանք, Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանք* ևն): Բացառիկ են Սանահինի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու եռանավ բազիլիկ ձևի ու *Նորավանքի* Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու՝ գոցվող թաղերով ծածկված Գ-ները:

Բազմազան են Գ-ների կենտր. հատվածների երդիկավոր գմբեթի ծածկերը (վրանաձև, շթաքարային, ռոտոնդաձև): Գ-ներն աչքի են ընկնում ներքին տարածության հարուստ մշակումով, հատկապես երդիկների հարդարանքով, ծածկի կողային հատվածների հարթ առաստաղների քանդակազարդումներով, այուների խոյակների ինքնատիպությամբ: Գ-ի տարատեսակն է *ժամատունը*, որը, ունենալով նույն ճարտ. հորինվածքը, հազվադեպ կառուցվել է նաև եկեղեցուց անջատ:

Գ., հիմնականում լինելով տապանատուն և կրոն. խոշոր տոներին եկեղեցում տեղ չգտած հավատացյալների համար լրացուցիչ տարածություն, ծառայել է նաև աշխարհիկ բնույթի ժողովների, ինչպես և ժամերգությունների համար (Ավագ երեքշաբթի և Ավագ ուրբաթ օրերին՝ ցերեկը): Այդ նպատակով որոշ Գ-ներ արմ. կողմում ունեն փոքր խորաններ (*Վարագավանք, Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանք*, Հոռոմայրի վանք ևն): Քառասյուն Գ-ներից շատերը արմ. կողմում ունեն խորանով 1–2 ավանդատուն (*Գոշավանք, Խորանաշատի վանք, Մակարավանք, Գեղարդավանք, Կեչառիսի վանք* ևն): XVII–XVIII դդ. քառասյուն կենտրոնակազմ Գ-ների հետ միաժամանակ

կառուցել են նաև զանգակատան հետ զուգակցված եռակամար բաց սրահներ (*Մուղնու Ս. Գևորգ վանք, Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատ, Շողակաթ վանք* Էջմիածնի ևն):

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.8, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, Ե., 1942: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: *Мнацаканян С. Х., Архитектура армянских притворов, Е., 1952.*

Մուրադ Հասրաթյան

ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆ [17.12.1867, գ. Մաղավուզ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում) – 21.6.1952, Անթիլիաս (Լիբանանում)], Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս 1943-ից (օծվել է 1945-ին), հայագետ, ճեռագրագետ, մատենագետ, հնագետ, պատմաբան, բանասեր, մշակութաբան, մանկավարժ: Փիլ. և աստվածաբանության դ-ր (1897, Լայպցիգ): Հայաստանի գիտական ինստ-ի (Վաղարշապատ) գիտնական անդամ (1921), Մոսկվայի կայսերական հնագիտ. ընկերության Կովկասյան բաժանմունքի և Սանկտ Պետերբուրգի կայսերական հնագիտ. ընկերության իսկական անդամ (1902): Սկզբ. կրթությունն ստացել է *Ամարասի վանքի* դպրատանը և Շուշիի թեմական դպրոցում: 1889-ին Գևորգ Զորեքչյանի *(Գևորգ Զ Զորեքչյան)* և Կարապետ *Տեր-Մկրտչյանի* հետ ձեռնադրվել է սարկավագ՝ դառնալով Մայր աթոռի միաբանության անդամ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1890), աստվածաբանություն և հնագիտություն ուսանել Բեռլինի, Հալլեի, Լայպցիգի համալսարաններում (1892–96): 1897-ից դասախոսել է Գևորգյան ճեմարանում, 1898-ից՝ մատենադարանապետ: 1900–01-ին՝ Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ, 1901–1904-ին՝ Երևանի թեմական տեսուչ, 1905–06, 1915–17-ին՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1907–08, 1918–19-ին՝ «*Արարատ*» ամսագրի խմբագիր: 1908–14-ին եղել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայրը: 1918-ին մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին: 1919-ից ԵՊՀ-ում դասավանդել է հայ արվեստի պատմություն և հնագիտություն, մասնակցել (Ա. Թամանյանի հետ) Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի ստեղծմանը: 1925-ից՝ արքեպիսկոպոս: 1927–33-ին՝ Ղրիմի և Նոր Նախիջևանի, 1938–43-ին՝ ԱՄՆ-ի հայոց թեմերի առաջնորդ: 1917-ից՝ հայրապետական լիազոր պատվիրակ Ռուսաստանի և Հս. Կովկասի հայկ. կենտրոններում, 1934–38-ին՝ սփյուռքում: Նպաստել է սփյուռքահայությանը մայր հայրենիքի շուրջ համախմբելու, Հայ եկեղեցու միասնականությունը պահպանելու, Կիլիկիո կաթողիկոսության և Մայր աթոռ Ս. Էջմիածնի միջև տարաձայնությունները հարթելու գործին, ընդունել ընդհանրական Մայր աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն հայոց կաթողիկոսության գերագահությունը: Գ. Ա Հ. Կիլիկիո կաթողիկոսներից առաջինն էր, որ ներկա է եղել և նախագահել Ս.Էջմիածնում գումարված ազգ-եկեղեց. ժողովում (1945-ի հունիսի 16), որտեղ Գևորգ արք. Զորեքչյանն ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս: Գ. Ա Հ., լինելով դեռևս Հս.Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ, երկրորդ աշխարհամարտի տարիներին գումարներ է հանգանակել խորհրդ. բանակի ու պատերազմի աղետյալների օգտին և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման համար, նպաստել սփյուռքահայերի հայրենադարձությանը:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյան

Գ. Ա Հ. թողել է գրական, գիտ. հսկայական ժառանգություն: Նրա աշխատությունները նվիրված են հայագիտության գրեթե բոլոր բնագավառներին՝ պատմությանը, բանասիրությանը, բանահյուսությանը, հայ գրչությանն ու մանրանկարչությանը, արվեստին, Հայ եկեղեցու և մշակույթի երևելի դեմքերին, եկեղեցագիտությանն առնչվող բազմաթիվ հարցերի, հնագիտությանը, ճեռագրագիտությանը ևն. դրանցից շատերը կոթողային արժեք են ներկայացնում: 1892-ին Գ. Ա Հ. հրատարակել է իր առաջին գիտ. գործերը՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» և «Սասնա ծռեր» էպոսի չորս պատում: Ժող. բանահյուսությունը և ազգագրությունը համարելով հայոց պատմության կարևոր աղբյուր՝ հավաքել և գրի է առել ազգագր. բազմաթիվ այլ նմուշներ: 1917-ին կազմել է ազգագր. նյութերի ժողովածու:

Նշանակալի են Գ. Ա. Հ-ի մատենագիտ. բնույթի հրապարակումները. «Մխիթար Սասնեցի» (1899), «Խոսրովիկ Թարգմանիչ» (1899), «Թովմա Մեծոփեցու կեանքը» (1914), «Մխիթար Այրիվանեցի» (1930) ևն: Հայ միջնադարյան գրականության պատմության ուսումնասիրման համար կարևոր են Գրիգոր Աղթամարցու և Հովասափ Սեբաստացու կյանքին ու գործունեությանը նվիրված նրա գործերը: Հայ եկեղեցու և հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների ու խնդիրների լուսաբանմանն են նվիրված «Ջաղավանից ժողովը» (1913), «Տարսայիճ Օրբելեանի և Մինա Խաթունի սերունդը» (1913, ռուս., 1948, հայ.), «Ազիզբեկենք և նրանց չինարարական գործը» («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք 1,2, 1921, 1922), «ԺԳ դարի քաղաքական և հոգևոր վերելքը Արևելյան Հայաստանում» և այլ երկեր: Հայագիտության մեջ մեծ ներդրում է Գ. Ա. Հ-ի գլուխգործոցը՝ «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ» եռահատոր աշխատությունը (1928–43, 2 հրտ., 1969, Երուսաղեմի «Թարգմանչաց-Դուրյան» մրց.): Հեղինակն իր այս կոթողային ուսումնասիրությամբ լրացրել է Հայոց պատմության մեջ բաց մնացած և գրեթե չուսումնասիրված մի շրջանի՝ XIII–XV դդ. Հայաստանի պատմությունը: Ցույց է տվել, որ Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայաստանը ամլության չի մատնվել, այլ ունեցել է կազմակերպված զորեղ իշխանություններ (Զաքարյաններ ևն), քաղաքակրթ., հոգևոր ու չին. բուռն թափ, մատենագր. և գրչագր. իրագործումներ:

Գ. Ա. Հ. հայագետ Ն. Մառի հետ մասնակցել է հնագիտ. պեղումների (Գառնի, Արագած, Անի), նշանակալի գործ կատարել պատմահնագիտ. և ճարտ. հուշարձանների ուսումնասիրման բնագավառում: Ուշագրավ են նրա «Պտղեվանքը և գմբեթավորումը հայ տաճարներում», «Գերեզմանական կոթողներ և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմութեան համար», «Հավուց թառի ամենափրկիչը» («Նյութեր և ուսումնասիրություններ...», պր.3) աշխատությունները: Հեղինակն իր ուշադրությունը բևեռել է նաև հայկ. արվեստի այլ ճյուղերի վրա: Այդպիսի գործերից են՝ «Հնութեան նշխարներ» (1909), «Խոտակերաց Ս.Նշան, մի նմուշ ԺԳ դարու հայ ոսկերչութեան» (1912), «Լուսավորչի խաչվառը» (1946): Ուշագրավ են հայկ. վանքերի դռների փայտի փորագրությունների արվեստին նվիրված ուսումնասիրությունները: Այդ շարքից են «Սեւանա Առաքելոց վանքի հարավային դուռը» (1932) և «Մուշի Առաքելոց վանքի դուռը» (1937) հոդվածները, հայ արվեստի տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ գործերը: Այդ բնույթի ուսումնասիրություններն ամփոփված են 1935-ին հրատարակված «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության» շարքում:

Գ. Ա. Հ. գրչության արվեստին, հայ մանրանկարչության ակունքներին, վաղեմությանն ու ինքնատիպությանը, ոճերի, ուղղությունների ու դպրոցների առանձնահատկություններին, առանձին ծաղկողներին նվիրված աշխատություններում («Գրչութեան արվեստը հին հայոց մեջ», 1913, «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմութիւնից»,1930, «Նյութեր ու ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պր. 1–4, 1935–51, հ.1,2, 1983, 1987, «Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները», 1949, «Մոմիկ նկարիչ և քանդակագործ», 1947, «Կոստանդին Ա կաթողիկոսը որպես հայ մանրանկարչութեան մեծ հովանավոր» ևն), արժեքավորելով հայկ. մանրանկարչությունը, բացահայտել է բյուզ., ասոր., ղպտ., եգիպտ., վրաց. և այլ ժողովուրդների նմանատիպ արվեստի հետ նրա աղերսներն ու փոխհարաբերությունները: Նրա ուսումնասիրություններն ընդգրկում են հայ մանրանկարչության զարգացման գրեթե բոլոր գլխ. շրջանները և ամենակարևոր դպրոցները: Երկար տարիների իր աշխատանքն ամփոփել է «Քարտեզ հայ մանրանկարչության» մեծածավալ մենագրությունում (անտիպ):

Գ. Ա. Հ. հավաքել, կազմել է մինչև 1250-ը գրված հայ. ձեռագրերի 459 հիշատակարան («Հիշատակարանք ձեռագրաց», հ.1, 1951, նախատեսված էր մի քանի հատոր, որոնք դեռևս անտիպ են)՝ հնագր., մանրանկարչ., կազմարար., բնագր. և այլ բնույթի կարևոր ծանոթագրություններով: Այդ աշխատությունը կարևոր նյութեր է պարունակում հատկապես հայ գրչության և մանրանկարչության պատմության ուսումնասիրության համար: Գ. Ա. Հ. ունի անտիպ մեծածավալ ժառանգություն (Ստեփան Սյունեցու «Մեկնութիւն չորից աւետարանչաց» և «Մեկնութիւն Եզեկիէլի»,

«Հատակոտորք Որիգինէսի, Հիպպոլիտայ, Յովհան Ոսկեբերանի» ևն):

Գրկ. Օշական Հ., Արևելահայ բանասիրությունը և Էջմիածին. Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Անթիլիաս, [1948]: Աճառյան Հ., Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իբրև հայ հնագրության մեծ վարպետ, «Էջմիածին», 1952, № 7: Սիմոնյան Ս., Գարեգին կաթողիկոսի բանասիրական վաստակը, «Էջմիածին», 1952, № 7: Քոլանջյան Ս., Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը, «Էջմիածին», 1962, № 6–8: Հարությունյան Ս., Գարեգին Հովսեփյանը որպես բանագետ, ՊԲՀ, 1968, № 1: Ղազարյան Մ., Հայ արվեստի երախտավոր Գարեգին արք. Հովսեփյան, «Էջմիածին», 1979, № 5:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՍԱՐԳԻՍՅԱՆ [ավազանի անունը՝ Նշան, 27.8.1932, Քեսաբ (Սիրիա) – 29.6.1999, Էջմիածին], Ամենայն Հայոց կաթողիկոս 1995-ի ապրիլի 4-ից: Հաջորդել է *Վազգեն Ա Պալճյանին*: Նախն. կրթությունն ստացել է Քեսաբի Ուսումնասիրաց միացյալ վարժարանում, ապա ուսումնառությունը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքում (1946–52): 1949-ին ձեռնադրվել է սարկավագ, 1952-ին՝ կուսակրոն քահանա, վերակոչվել Գարեգին աբեղա՝ ի հիշատակ Կիլիկիո կաթողիկոս *Գարեգին Ա Հովսեփյանի*, դարձել Կիլիկիո միաբանության ուխտի անդամ: Պաշտպանելով վարդապետ. ավարտաճառը «Հայաստանյայց եկեղեցվո աստվածաբանությունը ըստ հայ շարականներուն» թեմայով՝ 1955-ին ստացել է վարդապետ. աստիճան: Նույն թվականին պաշտոնավարել է Դպրեվանքում՝ որպես ուսուցիչ և վերակացու, 1956-ին ստանձնել Դպրեվանքի տեսչի պաշտոնը: 1957–59-ին Գարեգին վարդապետն ուսումնառությունը շարունակել է Օքսֆորդի համալսարանում (հետևել է աստվածաբան. բարձրագույն ուսմանը)՝ ավարտաճառ ներկայացնելով «Քաղկեդոնի ժողովը և Հայ եկեղեցին» (հրտ. 1965, անգլ., ունեցել է մի շարք վերահրատարակություններ) խորագրով աշխատությունը, ստացել գրականության բակալավրի աստիճան: 1960-ին կրկին ստանձնել է Դպրեվանքի տեսչի պաշտոնը: Նույն շրջանում Գարեգին վարդապետը որպես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ գործուն մասնակցություն է ունեցել միջեկեղեց. մի շարք համագումարների ու ժողովների, եկեղեցիների համաշխ. խորհրդի (ԵՀԽ) միջեկեղեց. համաժողովների: Մեծ է նրա ավանդը 1965-ին Ադիս Աբեբայում (Եթովպիա) Արևելյան ուղղափառ քույր եկեղեցիների պետերի համաժողովի կազմակերպման, ինչպես նաև Մերձավոր Արևելքի եկեղեցիների խորհրդաժողովի ստեղծման գործում: Դիտորդի կարգավիճակով մասնակցել է Վատիկանի II ժողովի երեք հաջորդական նիստերին (1963–65) և Անգլիկան եկեղեցու Լամբեթի համաժողովին (1968): ԵՀԽ-ում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ, 1968-ին ընտրվել ԵՀԽ Կենտր. և Գործադիր վարչությունների անդամ, իսկ 1975-ի Նայրոբիի (Քենիա) համաժողովում՝ փոխատենապետ: Այդ շրջանում աստվածաբանության, գրականության, պատմության և մշակույթի թեմաներով դասախոսել է ՀԲՄ Դարուհի Հակոբյան երկրորդական վարժարանում, Բեյրութի Համազգային Նշան Փալանճյան ճեմարանում, Համալսարանական քոլեջում, Ամերիկյան համալսարանում: 1963-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան, 1964-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1973-ին նրան շնորհվել է արքության պատիվ և տիտղոս: 1971–73-ին վարել է Կիլիկիո կաթողիկոսության Սպահանի (Նոր Ջուղա) թեմի, 1973–1977-ին՝ Հս. Ամերիկայի Արևելյան նահանգների և Կանադայի թեմի առաջնորդի պաշտոնը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյան

1976–77-ին Լիբանանում բռնկած քաղաքացիական պատերազմի տարիներին մեծ դեր է խաղացել լիբանանահայությանն օժանդակելու գործում: 1977-ի մայիսի 2-ին, Խորեն Ա Բարոյանի կաթողիկոսության շրջանում, ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս, 1983-ին՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոս:

Գահակալության տարիներին Գարեգին Բ Սարգիսյանը զարկ է տվել ազգ-կրոն., մշակութ. և շին. աշխատանքներին: Հաստատել է քրիստ. դաստիարակության բաժանմունքը, նպաստել աստվածաբան. ուսուցման բարելավմանը, ընդարձակել ու արդիականացրել է Անթիլիասի Դպրեվանքը (1977-ից Անթիլիասից փոխադրվել է Բիկֆայա), մեծ ուշադրություն դարձրել հրատարակչ. գործին, հիմնել է «*Հատակ*» գի-

տա-աստվածաբան. տա-
ռեգիրքը, նախաձեռնել
Թանգարան-մատենա-
դարանի շենքի շինարարությունը: Կաթողիկոսության շրջանում հովվապետ. այցելություններ է կատարել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմեր, միջեկեղեց. շրջանակներում հանդիպումներ է ունեցել քույր եկեղեցիների հովվապետների հետ: Բազմիցս եղել է Մայր աթոռ Ս. Էջմիածնում: 1988-ի դեկտ. 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո Գարեգին Բ կաթողիկոսը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի հետ իր մասնակցությունն է բերել աղետի գոտու բնակավայրերի վերականգնմանը, կազմակերպել սփյուռքից օգնություն: 1992-ից եղել է «Հայաստան» համահայկ. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ:

1995-ին ընտրվելով Ամենայն հայոց կաթողիկոս՝ Գ.Ա Ս. իր ջանքերն ուղղել է եկեղեց. կյանքի ներքին կարգավորմանն ու կազմակերպմանը, մասնավորապես՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանի գործունեության վերաաշխուժացմանը, *Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի* ստեղծմանը, քրիստ. քարոզչության հանրամատչելի ծրագրերի մշակմանը, եկեղեցիների ու վանքերի նորոգմանը, սոցիալական բնույթի կառույցների ստեղծմանը, աստվածաբան., հոգևոր և հայագիտ. գրքերի հրատարակմանը: Հայ եկեղեցու աշխատանքն առավել նպատակաուղղված դարձնելու նախաձեռնությամբ վերափոխել է Հայաստանի թեմական կառուցվածքը: 1996-ին Հայաստանյան նախկին 4 թեմերի փոխարեն ստեղծվել են 8 թեմեր, հիմնվել են նաև Ուկրաինայի և Հվ. Ռուսաստանի թեմերը: 1997-ի սեպտ., 80-ամյա ընդմիջումից հետո, վերաբացվել է Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնովին վերանորոգված շենքը, սկսվել է ուսանողների համար նոր հանրակացարանի շինարարությունը: Այդ շրջանում բազմապատկվել է նաև ճեմարանի սաների թիվը՝ հասնելով շուրջ 120-ի: Կյանքի է կոչվել Վազգեն Ա-ի ծրագիրը. Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կողքին, վերակառուցված շենքում հաստատվել է ս. Մեսրոպ Մաշտոցի անվ. դպրատունը, որը դարձել է գիտ. և մշակութ. կարևոր կենտրոն: Գահակալության կարճ ժամանակահատվածում Գարեգին Ա կաթողիկոսը հովվապետ. այցելություններ է կատարել Հայ եկեղեցու թեմեր և Կ. Պոլսի հայոց պատրիարքարան, նոր թափ հաղորդել Մայր աթոռ Ս. Էջմիածնի էկումենյան գործունեությանը, պաշտոն. հանդիպումներ է ունեցել քույր եկեղեցիների հովվապետների հետ, Մայր աթոռում ընդունել մի շարք եկեղեց. և էկումենիկ պատվիրակությունների:

Գ. Ա Ս. եղել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, աշխարհի մի շարք կրոն. ու գիտ. հասատատությունների և համալսարանների պատվավոր դոկտոր: Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի հանդիսությունների շրջանակում, Վեհափառ հայրապետի ձեռամբ, 1997-ի ապրիլի 7-ին կատարվել է *Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու* հիմնարկեքը:

Հեղինակ է հայ., անգլ., գերմ., ֆրանս., արաբ. լեզուներով աստվածաբան., հայագիտ., փիլ., բարոյագիտ. և գրական բազում ուսումնասիրությունների և հոդվածների:

Կաթողիկոս. գահին Գ. Ա Ս-ին հաջորդել է *Գարեգին Բ Ներսիսյանը*:

Երկ. Արևելյան ուղղափառ եկեղեցիների վկայությունը, Անթիլիաս, 1968: Հայ եկեղեցին այժմ, Նյու Յորք, 1970: Իրանը և հայերը, Թեհրան, 1971: Հայկական քրիստոնեական ավանդույթը Իրանում, Նոր Ջուղա, 1974: Անցյալը անցած չէ, Անթիլիաս, 1985: Հայ մարդը հայ գրքի դիմաց, Անթիլիաս, 1990: Հոգևոր կյանքի փնտրտուքի մեջ, Անթիլիաս, 1991: Հարություն և հայություն, Անթիլիաս, 1993: Ձեռնարկ հովվական աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՆԵՐՍԻՍՅԱՆ [ավազանի անունը՝ Կտրիճ, ծ. 21.8.1951, գ. Ոսկեհատ (ՀՀ Արմավիրի մարզ)], Ամենայն հայոց կաթողիկոս 1999-ի հոկտեմբերից: Օծվել է 1999-ի նոյեմբ. 4-ին: Հաջորդել է *Գարեգին Ա Սարգիսյանին*: Նախն. կրթությունն ստացել է Հայրենի գյուղում: 1965–71-ին ուսանել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Ավարտելուց հետո մեկ տարի ծառայել է ճեմարանում որպես տեսչի օգնական, միաժամանակ դասավանդել «Նոր կտակարան» առարկան: 1972-ին ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա: Նույն թվականին *Վազգեն Ա Պալճյանի* հոգածությամբ մեկնել է Վիեննա՝ տեղի համալսարանի աստվածաբան. ֆակ-ում սովորելու: 1975-ին նշանակվել է

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյան

Գերմանիայի հայ համայնքի հոգևոր հովիվ՝ միաժամանակ շարունակելով աստվածաբան. ուսումը Բոնnի համալսարանում: 1979-ին ուսանել է Զագորսկի Ռուս ուղղափառ եկեղեցու հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում: 1980-ին նշանակվել է *Արարատյան հայրապետական թեմի* առաջնորդական փոխանորդի օգնական, 1983-ի ապրիլին՝ առաջնորդական փոխանորդ: 1983-ի հոկտ. ձեռնադրվել է եպիսկոպոս, 1992-ին ստացել արքեպիսկոպոսական պատիվ և տիտղոս: 1990-ին Գ. արք. Ներսիսյանը Արարատյան հայրապետ. թեմի հովանու ներքո հիմնել է Սևանի *Վազգենյան հոգևոր դպրանոցը*, թեմում՝ Քրիստ. դաստիարակության կենտրոնը, որը համակարգում է թեմի տարածքի շուրջ 56 հանրակրթ. դպրոցներում եկեղեցու կողմից իրականացվող քրիստ. դաստիարակությունը: 1992-ին նրա ջանքերով Երևանի երեք պլոներ պալատներ վերակազմավորվել են հայորդաց տների, որտեղ հազարավոր երեխաներ հոգևոր-դեղագիտ. կրթություն են ստանում:

1990-ից Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է: 1995-ին Ազգային եկեղեց. ժողովում կաթողիկոսական ընտրության ժամանակ Գ. արք. Ներսիսյանը երրորդ փուլում հանել է իր թեկնածությունը՝ հօգուտ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի (Գարեգին Ա Սարգիսյան՝ Ամենայն հայոց կաթողիկոս): 1998-ին Գարեգին Ա Սարգիսյանի կողմից նշանակվել է կաթողիկոսական Ընդհանուր փոխանորդ:

Ընտրությունից ի վեր Գարեգին Բ կաթողիկոսը ձեռնամուխ է եկեղեց. ներքին կյանքի կարգավորմանն ու կազմակերպմանը, մասնավորապես՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր կրթարանների վերաշխուժացմանը, հոգևորականության նոր սերնդի պատրաստմանը, քրիստ. քարոզչության զորացմանը, եկեղեցիների ու վանքերի նորոգմանը: 1999-ին Մայր աթոռի «Ալեք և Մարի Մանուկյան» դանձատունը հիմնվել է Գարեգին Ա-ի անվան Աստվածաբան. հայագիտ. կենտրոն, որի հարուստ գրականության հավաքածուից օգտվելու հնարավորություն է ընձեռվել նաև մտավորականությանը:

2000-ի հունվ. 14–24-ը Վեհափառ հայրապետն ուխտագնացության է մեկնել Տերունական սրբավայրեր՝ Հորդանան և Երուսաղեմ: Երուսաղեմում Հուլյան տոմարով հանդիսապետել է Սուրբ Ծննդյան արարողությունները, որոնց ներկա է գտնվել ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: 2000-ի օգոստ. 28–31-ին Գարեգին Բ կաթողիկոսը Նյու Յորքում մասնակցել է ՄԱԿ-ի կազմակերպած Կրոն. առաջնորդների՝ հազարամյակի խաղաղության համաշխ. կոնֆերանսին և ՄԱԿ-ի գլխ. ասամբլեայում «Դեպի ներողամտություն և հաշտություն» թեմայի շրջանակներում զեկուցում կարդացել: Վատիկան կատարած այցելության առիթով (2000, նոյեմբ. 11) էկումենիկ արարողության ընթացքում Հովհաննես Պողոս II պապը Վեհափառ Հայրապետին է հանձնել *Գրիգոր Ա Լուսավորչի* մասունքներից մի մաս, որը պահվում է *Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու* գավթում: Հայոց Հայրապետը Հռոմի պապի հետ ստորագրել է համատեղ հայտարարություն, որում Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված կոտորածները բնորոշվել են որպես ցեղասպանություն:

Կարևորելով միջեկեղեց. կապերի ամրապնդումը՝ Գարեգին Բ կաթողիկոսը այցելել է քույր եկեղեցիներ՝ Ռուս, Վրաց, Ռումին, Ղպտի ուղղափառ եկեղեցիներ, Եթովպիայի Թեհահեդո եկեղեցի, Հռոմի կաթոլիկ եկեղեցի, հանդիպել նրանց գահակալ առաջնորդների հետ: Հանդիպումներ է ունեցել նաև Ալ Ազհարի շեյխի, Եգիպտոսի Հանրապետության մուֆթիի, Կովկասի մուսուլմանների հոգևոր պետի հետ: Վերջին հանդիպման ընթացքում (2000-ի նոյեմբ. 24), որը տեղի է ունեցել Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի II-ի միջնորդությամբ, ստորագրվել է համատեղ հայտարարություն՝ ի շահ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվել են Սպիտակի Ս. Հարություն, Վայքի Ս. Տրդատ, Տաշիրի Ս. Սարգիս, Մալիշկայի Ս. Աննա նորակառույց եկեղեցիներն ու Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու զանգակատունը, վերաօծվել են Դվինի Ս. Հարություն, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե, Մուղնու Ս. Գևորգ եկեղեցիները, Ծաղկաձորի Կեչառիսի վանական համալիրը, Շիրակի թեմում կատարվել է Ս. Հակոբ եկեղեցու հիմնարկեքը: Մայր աթոռ Ս. Էջմիածնի տարածքում կառուցվել է Տրդատ Մեծ Բաց խորանը: Գարեգին Բ կաթողիկոսի նախաձեռնությամբ պետությունն անհատույց՝ սեփականության իրավունքով Մայր աթոռ Ս. Էջմիածնին է հանձնել (2001-ի հուլիս) 150 վանք և եկեղեցի:

ԳԵՂԱՐԴ Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, որն Ամենայն Հայոց երեք հայրապետների դրոշմն է կրում, կառուցվել է Վեհափառ հայրապետի անմիջական հոգածությամբ: 2000-ի հունիսի 26-ին Գարեգին Բ Ներսիսյանի հանդիսապետությամբ տեղի է ունեցել Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու խաչերի, 2001-ի սեպտեմբերի 23-ին՝ եկեղեցու օծումը:

1700-ամյա մեծ հոբելյանի տոնակատարության սկիզբը Վեհափառ հայրապետն ազդարարել է 2000-ի դեկտ. 31-ի տարեմուտի գիշերը Մայր աթոռ Ս. Էջմիածնում՝ «Լուսավորչի կանթեղը՝ ուղեցույց առ Աստված» նշանաբանով Գրիգոր Ա Լուսավորչի կանթեղի լույսից տարածված մոմավառությամբ:

2000-ի մարտին ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական եկեղեցու միջև ստորագրվել է «Մտադրությունների հուշագիր», որը նոր ուղիներ է նախանշում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների զարգացման համար: Հուշագրի շրջանակներում 2000-ի սեպտ. Մայր աթոռ Ս. Էջմիածնի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ստորագրվել է ՀՀ զինված ուժերում Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրությունը: Այդ փաստաթղթերով հստակեցվել և կանոնակարգվել է Հայոց բանակում հոգևոր ծառայության գործունեությունը:

Գարեգին Բ կաթողիկոսը «Հայաստան» համահայկ. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, ՀԲԸՄ հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամ: Նրան շնորհվել է Արցախի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Ընտրվել է Միջազգային ինֆորմատիզացիայի ակադեմիայի անդամ: Պարգևատրվել է Հորդանանի բարձրագույն Ա կարգի, «Բեթղեհեմ 2000», Ռումինիայի ազգ. բարձրագույն՝ «Ռումինիայի աստղ» շքանշաններով:

ԳԵՂԱՐԴ, սուրբ Գեղարդ, տեգ, սրբազան *մասունք*՝ կապված Հիսուս Քրիստոսի *խաչելության* հետ: Գ. մոտավորապես 15 *սմ* երկարությամբ տափակ կամ եռանիստ երկաթե տեգ է, որը, փայտի ծայրին ամրացվելով, ծառայել է որպես խոցող զենք: Հիսուսին խաչելուց հետո հռոմեացի զինվորներից մեկը տեգով (Գ-ով) խոցել է խաչի վրա մահացած Հիսուսի կողը, որից «իսկույն արյուն և ջուր ելավ» (Հովհ. 19.33–34): Այդ օրվանից մահվան զենքը՝ Գ., դարձել է քրիստոնյաների համար սրբազան մասունք: Հայ եկեղեցու ավանդության համաձայն, Գ. 33-ին Հայաստան է բերել *Թադեոս* առաքյալը, և երկար ժամանակ այն պահվել է քրիստոնյա համայնքներում: 301-ին, երբ Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն է հռչակվել, Գ. դարձել է Հայ եկեղեցու սեփականությունը: Հիշատակություններ կան, ըստ որոնց, Հայաստանում կամ հարևան երկրներում օգտվել են ս. Գ-ից՝ երկիրը և ժողովրդին օրհնելու, պատերազմից, աղետներից ազատելու համար: Ս. Գ. 500 տարի պահվել է Այրիվանքում, որը հետագայում, ի պատիվ Գ-ի, կոչվել է *Գեղարդավանք*: Հայոց կաթողիկոսները մյուռոնօրհնության ժամանակ *Լուսավորչի Աջի* հետ ս. Գ-ով ևս օրհնում են *Մյուռոնը*: Ներկայումս Գ. պահվում է Ս. Էջմիածնի Մայր աթոռի թանգարանում: Գ-ի արծաթե մանանատուփը 1687-ին պատրաստել է Պռոշյան իշխանատան հետնորդ Դավիթ եպիսկոպոսը:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.8, 3-րդ պատկերը:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ, Այրիվանք, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղից հյուսիս-արևելք, Ազատ գետի Գողթ վտակի ձորալանջին: Հիմնել է Գրիգոր Ա Լուսավորիչը IV դ. սկզբին, հեթանոս. սրբավայրի տեղում: Վանքի համար նախապես օգտագործել են բնական քարայրերը (այստեղից էլ՝ մենաստանի առաջին՝ Այրիվանք անունը): IV դ. Գ. է այցելել կաթողիկոս Ներսես Ա Պարթևը: Գ. եղել է կացարան կաթողիկոս Սահակ Ա Պարթևի համար: VIII դ. 1-ին կեսին *Գրիգոր Գոգիկը* դարձել է Գ-ի միաբան և ծավալել երաժշտ-ստեղծագործ. բեղմնավոր գործունեություն, հիմնել Այրիվանքի դպրոցը: Կաթողիկոս *Հովհաննես Դ Ոձայեցին*, 841-ին թողնելով հայրապետ. աթոռը, հաստատվել է Գ-ում: X դ. կաթողիկոս *Հովհաննես Ե Դրասխանակերտցին*, խուսափելով արաբ ոստիկանի հետապնդումից, ապաստանել է Գ-ում, ապա անցել Սևանի վանք: Արաբները 926-ին ներխուժել են Գ., գանձերի տեղն իմանալու համար տանջել միաբաններին, սպանել շատերին, կողոպտել վանքը (ներառյալ ձեռագրերը) և հրդեհել շինությունները: Սելջուկյան արշավանքներից հետո, XIII դ. կեսից Գ-ում կրոն. կյանքը վերակենդանացել է:

Գ-ի պահպանված հնագույն Ս.Աստվածածին կիսաժայռափոր եկեղեցու հվ. պատին Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի 1181-ի արձանագրությունն է՝ վանքին ս. Անդրեասի մասունքները նվիրելու մասին: XII դ. Գ. ստացել է բազմաթիվ նվիրատվություններ՝ հողեր, այգիներ, դրամ: 1190-ին վանքում գրվել է Տոնապատճառ ժողովածուն: XIII դարից Գ. անցել է հայ իշխան, զորավար Իվանե Զաքարյանի իշխանության ներքո: 1213-ին Տիմոթ և Մխիթար կազմողները վանքում գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել: 1215-ին, Բարսեղ վարդապետի վանահայրության օրոք, սրբատաշ տուֆով կառուցվել է Գ-ի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին: Այն ներսից խաչաձև է,



Գեղարդավանքի հատակագիծը

չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, հվ. ճոխ շքամուտքով, դեկորատիվ կամարաշարով և հարթաքանդակներով զարդարված գմբեթով: Բազմաթիվ անձինք նյութապես օժանդակել են եկեղեցու առանձին մասերի (ավանդատներ, խորան, սալահատակ ևն) շինարարությանը: Իշխան Իվանե Զաքարյանը Գ. է այցելել 1219-ին և նրան նվիրել Բերդաղ գյուղը: 1215–25-ին Կաթողիկեի արմ. կողմին կից կառուցվել է կենտրոնակազմ, քառասյուն, շթաքարային մշակումով գմբեթով դավիթ: Այն հս-արլ. և հվ-արլ. անկյուններում ունի երկհարկ ավանդատներ, որոնցից ձախակողմյան երկրորդ հարկինը նվիրված է Թադեոս առաքյալին: 1217-ին վանքի միաբանների ուժերով (Սարգիս նկարիչ, Աբել գրիչ և Ստեփանոս կազմող) գրվել է մանրանկարներով հարուստ, մեծադիր Ավետարան:

XIII դ. 40-ական թթ. Պռոշ իշխանը վանքը գնել է Իվանե աթաբեկի որդի Ավագից՝ տոհմական տապանատուն դարձնելու նպատակով: 1257–58-ին նորոգվել է Ս.Աստվածածին եկեղեցին, և ներսը ծածկվել որմնանկարներով: Խորանի կենտրոնում պատկերված է երկու կողքերին հրեշտակներով Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, իսկ առաստաղին Պռոշ իշխանի և իր ընտանիքի խմբանկարն է:

XIII դ. կեսից վանքում է պահվել ս. *Գեղարդը*՝ Քրիստոսի կողը խոցած նիզակի երկաթե ծայրը, որը, ըստ ավանդության, Հայաստան է բերել Թադեոս առաքյալը: Այդ ժամանակից վանքը կոչվել է Գեղարդավանք, իսկ ս. Գեղարդը մինչև XVIII դ. այստեղ պահելուց հետո տեղափոխել են Էջմիածին: 1260-ին Կաթողիկեից և դավթից հս., ժայռի մեջ խցեր են փորվել: 1258-ին Պռոշ իշխանը ս. Գեղարդի համար դրվագված պահարան է պատրաստել տվել: Պահարանի արձանագրության սկիզբը սրբության մեծարանքի և նրա պաշտամունքի բանաստեղծ. արտահայտությունն է: XIII դարից Գ-ում են պահել նաև *Նոյյան տապանի* փայտի մասունք: Այս երկու սրբությունները մեծ հռչակ են բերել վանքին:

Գ. XIII դ. դարձել է կրթամշակութ. կարևոր կենտրոն, վերստին գործել է Այրիվանքի դպրոցը, որը 1279-ից գլխավորել է *Մխիթար Այրիվանեցին*: Նրա և Հովհաննես Գառնեցի վարդապետի օրոք Այրիվանքի դպրոցում ծաղկել է գրչության արվեստը (մեզ են հասել Գ-ում գրված բազմաթիվ ձեռագրեր), ստեղծվել է հարուստ մատենադարան:

1230–50-ին Պռոշ իշխանը կառուցել է Գ-ի դավթից մուտք ունեցող, երկու զույգ խաչվող կամարներով և շթաքարային հարդարանքով գմբեթով ու երդիկից լուսավորվող ժայռափոր առաջին եկեղեցին (ճարտ.՝ Գալձաք): Նրա հս. պատի տակ, ժայռից բխում է ավանդաբար հրաշագործ համարվող աղբյուր, որը պաշտվել է հեթանոսության ժամանակաշրջանից: 1283-ին Պռոշ իշխանը դավթի հս. կողմում շինել է ժայռափոր տոհմական տապանատունը և նրանից արլ.՝ երկրորդ վիմափոր եկեղեցին: Տապանատան հս. պատին Պռոշյան իշխանների զինանշանի բարձրաքանդակն է՝ եզան գլուխ, որը պահում է շղթայակապ երկու առյուծի, նրանցից ներքև թևատարած արծիվ է՝ ճանկերում դառ բռնած: Եկեղեցին գմբեթավոր դահլիճ է, քանդակներով հարուստ: 1288-ին Պռոշ իշխանի որդի Պապաքը և նրա կին Ռուզուքանը Գ-ի հա-

մալիրի հս. կողմում, ժայռի վերին մասում շինել են քառասյուն, գմբեթից լուսավորվող խոշոր ժամատուն: Գ-ի ժայռափոր կառույցները միջնադարյան հայկ. ճարտ-յան գլուխգործոցներ են: Մխիթար Այրիվանեցին կյանքի վերջին տարիներին ճգնել է Գ-ի արմ. կողմի քարայրերից մեկում և նրա պատին 1291-ին արձանագրություն թողել: 1387-ին Գրիգոր Խլաթեցին, ուխտի գալով Գ., ձեռք է բերել Մխիթար Այրիվանեցու 1287-ին կազմած ժողովածուն: XV դ. Այրիվանքի դրպրոցի ուսուցչապետ է դարձել *Գրիգոր Տաթևացու* աշակերտ Սիմեոն վարդապետը, որը կարգավորել է վանքի կանոնադրությունը: XV դ. Գ-ում բազմաթիվ ձեռագրեր են գրվել. 1459-ին գրված Մաշտոցում նշվել են «անօրենների»՝ հայ ժողովրդին պատճառած նեղությունները: XV դ. Կաթողիկեի հվ. պատի տակ զույգ խաչքարեր են կանգնեցվել: 1603-ին Գ-ի Աստվածատուր և Հավուց թառի Մանվել եպիսկոպոսները Սպահանում բանակցել են Պարսից շահ Աբասի հետ, իսկ նրա կատարած՝ արևելահայության բռնագաղթի ժամանակ թաքնվել են Գ-ի մոտակա քարայրերից մեկում, սակայն 1605-ին սպանվել են Ամիրգունա խանի զինվորների ձեռքով: 1635–75-ին Գ-ի վանահայր է եղել Պռոշյան տոհմից Դավիթ վարդապետը, որի օրոք Թիֆլիսցի Սուլե Զիթախյանը 1655-ին նորոգել է Կաթողիկեն և վանքին նվիրել արծաթե կանթեղ: 1679-ի հունիսի 4-ի Գառնիի երկրաշարժից Գ. ավերվել է, ժայռերից բեկորներ են թափվել և ծածկել շենքերը: 1684-ին Գ. մաքրել են փլվածքներից, նորոգել վնասված շենքերը, կառուցել բուրգերով պարիսպը և նրան կից բնակելի ու տնտ. շինությունները: 1687-ին պատրաստել են ս. Գեղարդի նոր, արծաթե պահարան՝ կրկնելով հնի արձանագրությունը: Պահարանի դռնակների վերևում «Աստուծոյ» տեսարանն է, դիմացը՝ հրեշտակը, ներքևում՝ «Խաչելությունը», դիմացի փեղկին՝ Գրիգոր Ա Լուսավորիչը: Ոսկերիչ-քանդակագործներ Գրիգորը և Սարգիսը կերպարներին տվել են ասկետի տեսք՝ բնական շարժումներով ու կեցվածքով: 1698-ին քանաքեռցի ոսկերիչ Ավետը պատրաստել է պահարան՝ Գ-ում պահվող Նոյյան տապանի փայտից: Դռնակներին *Հակոբ Մծբնացու* և նրա դիմաց՝ հրեշտակի քանդակներն են: Գ-ի վանահայր Դանիել վարդապետը (Պռոշյան տոհմից) 1708-ին կառուցել է վանքի արմ. կողմի կամարակապ դարպասը: 1715-ին հայ վաճառականները Գ-ին են նվիրել եպիսկոպոս. մարգարտաշար թագ: Վանահայր Պետրոս Ջահկեցին 1733–39-ին նոր հողեր է ձեռք բերել վանքի համար: XVIII–XIX դդ. Գ. ունեցել է այգիներ, ջրաղացներ, ձիթհաններ, ընդարձակ կալվածքներ Նորագավիթ, Նորք, Տաճարաբակ գյուղերում, ստացել Գողթ գյուղի տարեկան բերքի կեսը: 1834-ին վանքը նորոգել է կաթողիկոս *Հովհաննես Ը Կարբեցին*: 1840-ի հուլիսի 2-ի մեծ երկրաշարժից վնասվել են Գ-ի Կաթողիկեն և խցերը: Նույն տարում վանահայր Օհան վարդապետը վանքի տարածքում մրգատու ծառերով մեծ այգի է տնկել: Միքայել Ջամոյան վարդապետը 1868-ին Գողթ և շրջակա մյուս գյուղերից նոր կալվածքներ է գնել և շինել վանքի ճանապարհը: Կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու հրամանով վանահայր Ռաֆայել Շիրակացին 1870-ական թթ. կառուցել է Գ-ի դպրոցը: 1932-ին Թ. *Թորամանյանի* ղեկավարած արշավախումբը Գ-ի արմ. կողմում, ժայռի թեք լանջին պեղումներով բացել և ուսումնասիրել է վիմափոր խոշոր դահլիճ՝ ուղղանկյուն հատակագծով, քանդակազարդ որմնասյուներով, 5 *մ* բարձրությամբ և մոտ 140 $մ^2$ մակերեսով, որը Պռոշ իշխանի օրոք XIII դ. կառուցել է ոմն Մկրտիչ (1967-ին դահլիճը փլվել է): Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի հայրապետության տարիներին վանքի բակի արլ. կողմում աղբյուր է կառուցվել (1958, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան), 1960-ին վերակառուցվել է դարպասը, 1968-ին համալիրի արմ. հատվածում կառուցվել է վանատան երկհարկանի շենքը, և բարեկարգվել վանքի տարածքը: 1978-ին բացվել է վերակառուցված սեղանատունը, վերանորոգվել են պարսպին կից շինությունները, Կաթողիկեի խորանում տեղադրվել է նոր բեմասեղան (ճարտ.՝ Ս. Քյուրքչյան): Պետ. միջոցներով նորոգվել է Երևան–Գառնի–Գեղարդ խճուղին, և Գ-ի վիմափոր կառույցները ներթափանցող ստորգետնյա ջրերից գերծ պահելու համար վանքի հս. կողմում, նրա ողջ երկարությամբ, կառուցվել է թունելախորշ, որով ջրերը հավաքվում և թափվում են Գողթ գետակը: 1987-ին ավարտվել է Կաթողիկեի ու գավթի տանիքների՝ բազալտե քարերով սալարկումը: Հիմնադրման օրից Գ-ի ուխտագնացության օրերը *Վարդավառի* և Աստվածածնի Վերափոխման (տես *Վերափոխումն Ս. Աստվածածնի*) տոներին են:

Պատկերազարդումը տես ներդիր III-ում, 3.8, 4–6-րդ պատկերները:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Մանկունի Վ., Այրիվանք կամ Գեղարդայ վանք, Վաղ-պատ, 1871: Մխիթարյան Ս., Ստորագրութիւն հռչակաւոր Մեծի ուխտին Այրի Վանաց սրբոյն Գեղարդայ, Վաղ-պատ, 1873: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 1, Վաղ-պատ, 1928, մաս 2, Երուսաղեմ, 1944: Հարությունյան Վ., Եկայք չինեսցուք, Էջմիածին, 1988: *Токарский Н.М., Гегард, М., 1948;* Sahinian A., Manoukian A., Aslanian A., Gheg(h)ard, Milano, 1973 (Documenti di architettura armena, 6).

Մուրադ Հասրաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու: Կազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Գավառի Ս.Աստվածածին եկեղեցի: Ընդգրկում է ՀՀ Գեղարքունիքի մարզը:

Գ. թ-ի տարածքը զբաղեցնում է պատմ. Սյունյաց և Հաղպատի եպիսկոպոսություններ-ի տարածքի, համապատասխանաբար՝ հս-արմ. և արլ. մասերը: XV դ. տարածքը ժամանակավորապես ենթարկվել է Գանձասարի կաթողիկոսությանը, սակայն 1513-ին Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը գնացել են *Տաթևի վանք*, ծանոթացել Գեղարքունիքի՝ Սյունյաց աթոռին ենթակա լինելու մասին փաստաթղթերին և ստորագրությամբ վերահաստատել են թեմի ավանդ. վիճակը:

Թեմի տարածքում են Սևանավանքը (IV–IX դդ), *Շողաքավանքը* (IX դ.), *Հայրավանքը* (IX–XIII դդ.): Գ.թ-ի գործող եկեղեցիներն են Գավառի Ս.Աստվածածինը, Ս.Խաչը, Հացառատի Ս.Աստվածածինը, Ս.Գրիգոր Լուսավորիչը, Նորաշենի Ս.Նարեկը, Դդմաշենի Ս.Թադեոսը, Ծովազարդի Ս. Կարմիր Ավետարանը, Նորատուսի Ս.Գրիգոր Լուսավորիչը, Մարտունու Ս. Աստվածածինը, Գեղհովիտի Թուխ Մանուկը, Ջորագյուղի Ս.Կարապետը: Եկեղեց. տոներին արարողություններ են կատարվում նաև *Մաքենյաց վանքում* և *Վանեվանում*: Սևանավանքի *Վազգենյան հոգևոր դպրանոցը* ենթարկվում են անմիջապես Մայր աթոռին: Գործում է երեք կիրակնօրյա դպրոց: Թեմը Մարտունու մանկատան հովանավորն է:

Գ. թ-ի առաջնորդն է Սիոն եպս. Ադամյանը (2000-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 1-ին պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.5:

Գրկ. Բարխուդարյան Ս., Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, ԲՄ, № 8, 1967: Մաթևոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, № 2–3:

Կարեն Մաթևոսյան

ԳԵՎՈՐԳ, սուրբ Գևորգ Զորավար (ծ. թ. անհտ – նահ. մոտ 303, Նիկոմեդիա), III–IV դարերի վկա, սուրբ զորավար, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Մեծացել է քրիստոնյա ընտանիքում: Զինվորագրվելով՝ իր անօրինակ արիության և իմաստության շնորհիվ հռոմ. Դիոկղետիանոս կայսրի օրոք (284–305) հռոմ. բանակում հասել է զորավարի աստիճանի: Երբ սկսվել են քրիստոնյաների դեմ Դիոկղետիանոսի հալածանքները, և կայսրը հրապարակել է հրովարտակ՝ ընդդեմ քրիստոնեության, Գ. պատռել է Նիկոմեդիա քաղաքի հրապարակում կախված արքուն. հրովարտակը: Այդ արարքի համար ենթարկվել է չարչարանքների, սակայն ոչ միայն չի ուրացել հավատը, այլև Տերունական խոսքով քաջալերել է հավատակիցներին՝ կոչելով չվախենալ նրանցից, ովքեր ի զորու են մարմինը մեռցնել, բայց ո՛չ հոգին:

Բազմաթիվ ավանդություններ են հյուսված ս. Գ-ի մասին. ըստ դրանցից մեկի, տեսնելով ս. Գ-ի հրաշագործությունները քրիստոնեություն են ընդունել Մաքսիմոս կայսրի կինը՝ Աղեքսանդրիա թագուհին, և Աթանասիոս անունով կախարդը: Կայսրը հրամայել է սպանել ս. Գ-ին և Աղեքսանդրիա թագուհուն: Ըստ մի այլ ավանդության, ս. Գ. վիշապին սպանելով՝ ազատել է մի կույսի: Առհասարակ նա ընկալվել է իբրև վիշապասպան սուրբ:

Ս. Գ. անունով եկեղեցիներ ունեն հայերը և եվրոպ. ժողովուրդները: Ս. Գ. համարվել է Անգլիայի պահապան սուրբը:

Հայ եկեղեցին նրա հիշատակը տոնում է *Խաչվերացի* 2-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 2-րդ պատկերը:

Գրկ. Սուրբերու կյանքը, Ե., 1994: Գալուստյան Շ., Համաքրիստոնեական սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ԳԵՎՈՐԳ Ա ԲՅՈՒՐԱԿԱՆՑԻ, Խուլորբուկ, Հոյլորբուկ (ծ.թ.անհտ – 795), Ամենայն հայոց կաթողիկոս 792-ից: Հաջոր-

դել է *Սողոմոն Ա. Գառնեցուն*: Գ. Ա. Բ. ծնունդով Արագածոտն գավառից էր: Նրա հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդվում:

Կաթողիկոս. գահին Գ. Ա Բ-ուն հաջորդել է *Հովսեփ Բ Փարպեցին*:

ԳԵՎՈՐԳ Բ ԳԱՌՆԵՑԻ [ծ. թ. անհտ – 897, Վասպուրական, ամփոփվել է Ջորավանքում (Կոխպանք գ. մոտ)], Ամենայն հայոց կաթողիկոս 877-ից: Հաջորդել է *Զաքարիա Ա Զագեցուն*: Գ. Բ Գ. կաթողիկոս է կարգվել Հայոց Աշոտ Բագրատունի Իշխանաց իշխանի ցանկությամբ: Գ. Բ Գ., սատարելով Աշոտ Բագրատունուն և մի քանի նախարարների, Ա-ռաբ. խալիֆայության առջև բարձրացրել է հայկ. պետականության վերականգնման հարցը: 885-ին Երազգավորսում Հայոց թագավոր է օծել Աշոտ Բագրատունուն (Աշոտ Ա.): Աշոտ Ա-ի մահից հետո, 890-ին թագավոր է օծել նրա որդուն՝ Սմբատ Ա Բագրատունուն, դրանով առաջ բերելով Աշոտ Բագրատունու եղբոր՝ Աբաս սպարապետի դժգոհությունը:

Գ. Բ Գ. իր հայրապետ. գործունեությամբ ջանացել է պահպանել Հայաստանի ներքին խաղաղությունը՝ կարգավորելով Վասպուրականի Արծրունիների ու Տարոնի Բագրատունիների, ինչպես նաև Սմբատ Ա Բագրատունու և նրա հորեղբայր Աբասի միջև վեճերն ու գժտությունները: 894-ին Ատրպատականի ամիրա Ավշինը ձերբակալել է հաշտության առաջարկով իր մոտ եկած Գ. Բ Գ-ուն և երկու ամիս անց ազատել փրկագնով:

Կաթողիկոս. գահին Գ. Բ Գ-ուն հաջորդել է *Մաշտոց Ա Եղիվարդեցին*:

Գրկ. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց Տան, Ե., 1985: Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԳԵՎՈՐԳ Դ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Մեծագործ (Քերեստեճյան Գրիգոր Պետրոսի, 5.7.1813, Կ.Պոլիս – 6.12. 1882, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս 1866-ից, օծվել է մայիսի 2-ին: Հաջորդել է *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցուն*: Սովորել է Կ.Պոլսի Գումգափուի ժառանգավորաց վարժարանում: 1835-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա, 1841-ին ստացել ծայրագույն վարդապետ. աստիճան, 1848-ին օծվել եպիսկոպոս: 1844-ից՝ արևմտահայ Բրուսայի թեմի հոգևոր առաջնորդ, 1858-ի հոկտ. 17-ից՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք: Մասնակցել է Ազգ. սահմանադրության մշակմանը: Համաձայն չլինելով սահմանադրության որոշ դրույթների հետ՝ 1860-ի ապրիլի 21-ին հրաժարական է տվել: 1861-ի հոկտ-ից՝ կրկին Բրուսայի թեմի առաջնորդ: Ընտրվելով կաթողիկոս՝ 1866-ի մայիսի 27-ին հրապարակել է իր անդրանիկ հայրապետ. կոնդակը՝ շեշտելով, որ Հայ եկեղեցու վարդապետության մեջ ոչ մի փոփոխություն չպետք է կատարել, եկեղեցում աշխարհաբարը հարկ է գործածել միայն քարոզելիս և խրատելիս, իսկ արարողությունները կատարել բացառապես գրաբարով: Ձեռնարկելով արևելահայ դպրոց. գործի կարգավորումը՝ Գ. Դ Կ. 1867-ին Էջմիածնում կազմակերպել է ուսումնական հանձնաժողով (որը կարգադրել է դպրոցներ բացել հայաբնակ բոլոր քաղաքներում և գյուղերում), 1873-ին՝ թեմերի դպրոցական տեսչություն: 1874-ին հիմնել է Էջմիածնի ճեմարանը, որը հետագայում կոչվել է նրա անունով (տես *Գևորգյան ճեմարան*): Կազմակերպել է նաև «*Արարատ*» ամսագրի հրատարակումը, Էջմիածնի թանգարանը, կարգավորել Մայր աթոռի տպարանն ու մատենադարանը: 1879-ին ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմի վրա կառուցել է Օշականի եկեղեցին: Լինելով հմուտ շարականագետ՝ Գ. Դ Կ. միակերպություն և կանոնավորություն է մտցրել հոգևոր երաժշտության մեջ, 1873–74-ին Կ. Պոլսից Էջմիածին է հրավիրել ձայնագրագետ-երգահան Ն. *Թաշճյանին* և Կ. Պաղտատլյանին, Հ. *Լիմոնճյանի* ստեղծած ձայնանիշերով կազմակերպել հայկ. ձայնագրության նոր համակարգի ուսուցումն ու տարածումը, հոգևոր երգերի ժողովածուների պաշտոնական վավերացումն ու հրատարակումը: Գ. Դ Կ-ի պատվերով Թաշճյանին աշակերտած 25 հայ երիտասարդներ դարձել են Լիմոնճյան համակարգով ձայնագրության ուսուցիչներ: Գ. Դ Կ. տրամաբան. ավարտի է հասցրել Մովսես Այունեցու

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի

սկսած և Սիմեոն Ա. Երևանցու շարունակած գործը՝ կարգավորելով երգեցողության դրվածքը ազգ. դպրոցներում: Ուս., հոգևոր ու շին. զանազան ծրագրերի իրականացման նյութ. կայուն հիմք ստեղծելու նպատակով կարգադրել է, որ հոգևորականների ունեցվածքը նրանց մահից հետո հանձնվի Մայր աթոռի տնօրինությանը: Փորձել է վերացնել կամ սահմանափակել Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների իրավունքները, սակայն հանդիպել է արևմտահայ հոգևոր, հաս. գործիչների դիմադրությանը: Դեմ էր 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմից հետո հայերի գաղթին Անդրկովկաս՝ պատճառաբանելով, որ չպետք է դատարկել Արևմտահայաստանի հայաբնակ գավառները: Հայկ. հարցի և արտաքին քաղ. խնդիրների նկատմամբ զգուշավոր, սպասողական դիրքորոշում է ունեցել, գործուն մասնակցություն չի ցուցաբերել արևմտահայ գաղթականներին օգնելու նպատակով ծավալված համահայկ. հանդանակությունների, ինչի համար ժամանակակիցները քննադատել են նրան: Այդուհանդերձ, ժողովուրդը Գ. Դ Կ-ին, ի պատիվ նրա կատարած ծավալուն գործերի, կոչել է Մեծագործ:

Կաթողիկոս. գահին Գ. Դ Կ-ուն հաջորդել է *Մակար Ա Թեղուտցին*:

Գրկ. Աբեղյան Մ., Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղ-պատ, 1899: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.3, մաս 2, Բեյրութ, 1961:

Վարդան Դևրիկյան

ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑ, Տփղիսեցի (28.8.1847, Թիֆլիս – 8.5.1930, Էջմիածին, ամփոփվել է Մայր տաճարի բակում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1911-ից: Հաջորդել է *Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցուն*: Սովորել է Թիֆլիսի դասական գիմնազիայում (1865–68): Վարդապետ՝ 1872-ին, եպիսկոպոս՝ 1882-ին: 1874-ին նշանակվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ: 1875-ին՝ *Արցախի թեմի* առաջնորդ և դպրոցների տեսուչ: 1877-ին ստանձնել է Ագուլիսի Ս. Թովմա առաքյալ վանքի վանահայրությունը, 1878-ից՝ առաջնորդական փոխանորդ Ալեքսանդրապոլում, 1881-ին նշանակվել է Երևանի փոխթեմակալ, հոգացել ժողովրդի հոգևոր և մտավոր դաստիարակության, եկեղեցիների բարեկարգման մասին: 1886-ից՝ *Աստրախանի թեմի* առաջնորդ: 1894-ին նշանակվել է *Վրաստանի թեմի* առաջնորդ: Գ. Ե Ս. թեմում իր գործունեությունը սկսել է եկեղեցիները նորոգելու, նորերը կառուցելու աշխատանքով: Նրա ջանքերով բացվել են նոր դպրոցներ, ուս. հաստատություններ, Թիֆլիսում ստեղծվել է «Թիֆլիսի հայ քահանաների միաբանությունը»: Գ. Ե Ս. հովանավորել է Մ. *Եկմալյանին* և նրա մշակած քառաձայն պատարագը մտցրել եկեղեցի, կազմակերպել դրա տպագրությունը: 1907-ին նշանակվել է կաթողիկոս. տեղապահ: Գ. Ե Ս. բարերար Ալ. Մանթաշյանի նյութ. աջակցությամբ ավարտին է հասցրել Մայր տաճարի նորոգումը: 1912-ին, արդեն Ամենայն Հայոց կաթողիկոս Գ. Ե Ս-ի նախաձեռնությամբ կազմվել է հայ ազգ. պատվիրակություն (Պողոս Նուբարի ղեկավարությամբ), որը պաշտպանելու էր Հայ դատը եվրոպ. կառավարությունների առջև: Առաջին համաշխ. պատերազմի տարիներին, համոզվելով, որ Ռուսաստանի հաղթանակից է կախված արևմտահայերի ճակատագիրը, Գ. Ե Ս. դիմել է Նիկոլայ II կայսրի օգնությանը: 1918-ի մայիսին զգալի դեր է խաղացել թուրք. զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսամարտերի կազմակերպման գործում: Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումից հետո նա կոնդակներով հայտնի հայությանը կոչ է արել նեցուկ լինել կառավարությանը հայրենաշեն գործում:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանց

Կաթողիկոս. գահին Գ. Ե Ս-ին հաջորդել է *Խորեն Ա Մուրադբեկյանը*:

Սանդրո Բեհբուդյան

ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ (2.12. 1868, Նոր Նախիջևան – 9.5.1954, Էջմիածին, ամփոփվել է Մայր տաճարի բակում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1945-ից: Հաջորդել է *Խորեն Ա Մուրադբեկյանին*: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1879–89), Լայպցիգի համալսարանում (աստվածաբանության և փիլիսոփայության բաժիններում) և կոնսերվատորիայում (1889–94): 1889-ին ձեռնադրվել է սարկավագ, 1913-ին՝ վարդապետ. նշանակվել է Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ: 1915-ի հայկ. կոտորածներից փրկված գաղթականների Եղբայրական օգնության կոմիտեի անդամ էր,

իսկ 1916-ից՝ նախագահ: 1916-ի մայիսի 17-ից՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի Սինոդի անդամ: 1917-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: 1922–27-ին՝ *Վրաստանի թեմի* առաջնորդ, 1927-ից՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ: 1938-ին կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի եղերական մահից հետո մինչև 1941-ը ղեկավարել է Հայ եկեղեցու գործերը: 1941-ի ապրիլին Ազգ. եկեղեց. ժողովում ընտրվել է կաթողիկոսական տեղապահ, 1945-ի հունիսին՝ Ամենայն հայոց կաթողիկոս: Երկրորդ հաամաշխ. պատերազմի տարիներին սփյուռքահայության շրջանում կազմակերպել է հանգանակություն «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների ստեղծման համար: Նրա կաթողիկոսության օրոք վերածնունդ են ապրել ԽՍՀՄ տարածքում գտնվող հայոց թեմերը, հրատարակվել է «*Էջմիածին*» ամսագիրը, վերաբացվել են *Էջմիածնի հոգևոր ճեմարանը*, տպարանը, վերադարձվել ճեմարանի գրադարանը, վանքապատկան շենքերի մի մասը, ինչպես նաև՝ Ս. Հռիփսիմե, Ս. Գեղարդավանք և Խոր վիրապի վանքերը: Գ. Զ Զ. կարևոր խնդիր է համարել մայր հայրենիքի և սփյուռքահայության կապերի ամրապնդումը, սփյուռքի եկեղեց. և ազգ. միասնության ապահովումը: Մեծ ավանդ է ունեցել 1946–48-ի հայրենադարձության կազմակերպման գործում:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ Զորեքչյան

1945-ի ապրիլին Մոսկվայում Ի. Ստալինի հետ հանդիպման ժամանակ բարձրացրել է Արմ. Հայաստանի հողերի խնդիրը, իսկ 1945-ի հոկտ. 25-ին կոնդակով դիմել է ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ հայկ. հողերը Թուրքիայից հետ ստանալու խնդրանքով: 1947-ի ապրիլի 20-ին հրապարակել է ընդարձակ մի կոնդակ՝ «Հայկական հարցի լուծման մասին»: Ողջունել է 1947-ի ապրիլին Նյու Յորքում գումարված Հայկ. համաշխ. կոնգրեսը, որի նպատակն էր վերստին արծարծել Թուրքիայի բռնագրաված հայկ. տարածքների վերադարձման հարցը:

Կաթողիկոս. գահին Գ. Զ Զ-ին հաջորդել է *Վազգեն Ա Պալճյանը*:

Երկ. Քարոզգիրք, Էջմիածին, 1918:

Գրկ. Ս տ ե փ ա ն յ ա ն ց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955 թթ.), գիրք 6. Գևորգ Զ Զորեքչյան կաթողիկոս Ամենայն հայոց, Ե., 1999:

Ստեփան Ստեփանյանց

ԳԵՎՈՐԳ ՄԵՂՐԻԿ, Սեվանցի, Դրազարկցի [մոտ 1043–45, գ. Անալյուր (Մեծ Հայքի Վասպուրական նահանգում) – մոտ 1113–15, Դրազարկ, թաղված է Դրազարկի Մեծ անապատում], մատենագիր, մանկավարժ: Երկար տարիներ եղել է Սևանի վանքի միաբանության անդամ: Սկզբնաղբյուրներում հիշատակվում է «սուրբ և առաքինազարդ», «սքանչելի», «քաղցրուսույց» վարդապետ: Իր բարության, մեղմության համար նրան կոչել են Մեղրիկ: Գ. Մ. եղել է խստակրոն, 50 տարի վարել ճգնավոր. կյանք, ճանաչվել որպես ամենայն հայոց «հայր խոստովանութեան»: XI դ. վերջին մի քանի *արևելյան վարդապետների* հետ գաղթել է Կիլիկիա: Գ. Մ. և *Գրիգոր Բ Վկայասերի* աշակերտ Կիրակոս վարդապետը, որպես գլխավոր վարդապետներ, ուղեկցել են *Բարսեղ Ա Անեցուն* Եդեսիայից Բեսան՝ Կիլիկիայի հայ իշխան Գող Վասիլին և տեղի վանքերն այցելելիս: Հիշատակվում է հատկապես Շուղր անապատի Կարմիր վանք կատարած այցը: Գ. Մ. կյանքի վերջին շրջանում հաստատվել է *Դրազարկի վանքում*, որտեղ (Կիրակոս Գիտնականի հետ) ծավալել է եռանդուն գործունեություն: Նորոգել է վանքը, սահմանել ճգնավոր. կանոններին համապատասխան նոր կանոնադրություն, նույնը հաստատել նաև Սսի Խորին անապատում, զբաղվել մատենագրությամբ: Նրա շնորհիվ այդ շրջանում ավելի է մեծացել Դրազարկի վանքի՝ որպես կրթ., գրչության, գիտ., մշակութ. կենտրոնի դերն ու նշանակությունը:

Գ. Մ-ի գրական ժառանգությունից քիչ բան է պահպանվել: Հայտնի է, որ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի հանձնարարությամբ, որպես ծիս. կանոնների գիտակ, մասնակցել է Ճաշոց ժողովածուի կարգավորման աշխատանքներին, ավելացրել տոներ և համապատասխան ընթերցվածքներ: Պահպանվել են նրա «Խոստովանութիւն հավատացելոց ուղղափառաց», «Աղօթք և երգք աւրհնութեանց», «Աղօթք ի Հայրն երկնաւոր» և այլ աղոթքներ ու երգեր:

«Վարք սրբոց»-ում կա Պետրոս առաքյալի նշխարների պատմությանը նվիրված նրա աշխատության համառոտագրությունը:

Ըստ Հայսմավուրքի, Գ. Մ-ի հիշատակը նշվում է հուլիսի 30-ին:

Էլյա Հարությունյան

ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՌԱՑԻ, Լամբրոնացի, Սեցի (1246/47, Կիլիկիայի Լամբրոն բերդաքաղաք – 1301), վարդապետ, մեկնիչ, գրիչ, հռետոր, մշակութային-հասարակական գործիչ: Նախապես ուսանել է մորեղբոր՝ *Գրիգոր Սկևռացու*, իսկ 1256–57-ին՝ Մխիթար Սկևռացու մոտ, այնուհետև ուսումը շարունակել *Վարդան Արևելցու* հիմնադրած դպրոցում, որտեղ ստացել է աստվածաբան., փիլ. և լեզվաբան. հիմնավոր կրթություն: Անմիջական մասնակցություն է ունեցել Հայ և հռոմ. եկեղեցիների միության դեմ տարվող պայքարին: Գործել է Կիլիկյան Հայաստանի տարբեր վայրերում, մասնավորապես՝ *Սկևռայի* վանքում: 1267-ին խմբագրել է Տոնապատճառ ժողովածուն: Հավանաբար 1295-ին գրել է «Մեկնութիւն Եսայեայ», ապա, Արքաեղբոր պատվերով՝ «Համառօտ մեկնութիւն գործոց առաքելոց» խմբագիր աշխատությունները: Վերջինիս խնդրանքով, 1288-ին Գ. Ս. գրել է նաև «Ներբող Յովհաննէսի ավետարանչին» գործը:

Առանձնահատուկ նշանակություն ունեն նրա՝ գրչության արվեստին նվիրված աշխատությունները, որոնցում կանոնակարգված են հայոց լեզվի՝ ժամանակի գրաբարաձևության, ուղղագրության, կետադրության և առոգանության սկզբունքները («Խրատք յաղագս գրչութեան արուեստի», «Խրատք վասն հանգամանաց հեգից...», «Խրատք վասն առոգանութեանցն»):

Գ. Ս-ուն է վերագրվում Աստվածաշնչի նախադրությունների և գլխադրությունների կազմումը: Նրան է վերագրվում նաև Գրիգոր Խուլի Շարակնոցի՝ «Խլկցի» կոչվող շարականների ուղղումը և խմբագրումը: Գ. Ս. հմուտ է եղել նաև հայերենի տաղաչափության և խազագրության արվեստներին, մշակել է խազանշանների երաժշտ. կիրառության կատարելագործված սկզբունքներ՝ նոր մակարդակի բարձրացնելով միջնադարյան երաժշտածիս. երգարանների արվեստը: Աշակերտների հաղորդած տեղեկությունների համաձայն, գրել է բազմաթիվ դանձեր, ներբողյաններ, խրատներ:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Նույնի, Հայապատում, Վնտ., 1901: Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932: Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Ե., 1954: Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Ե., 1962: Բաղդասարյան Է., Գևորգ Սկևռացու «Վարքը», ԲՄ, № 7, 1964: Թահմիզյան Ն., Հիմնական խազերի միակցությունը, ԲՄ, № 9, 1969:

Համիկ Բաղալյան

ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն Վաղարշապատում: Հայագիտ., մանկավարժ. ու մշակութ. կարևոր կենտրոն: Նպատակն էր՝ Հայ եկեղեցին ու դպրոցը համալրել բարձրագույն կրթությամբ հոգևորականներով և ուսուցիչներով: *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսը Ռուսաստանի Ալեքսանդր II ցարի հետ անձն. հանդիպման արդյունքում (1866) ճեմարան հիմնադրելու թույլտվություն է ստացել: Գ. ճ-ի շինարարությունը սկսվել է 1869-ի մայիսի 25-ին, հանդիսավոր բացումը կատարվել է 1874-ի սեպտ. 28-ին, դասավանդումը՝ սեպտ. 30-ից, 60 սաներով: Նույն թվականին Ռուսաստանի լուսավորության նախարարության վավերացրած կանոնադրությամբ ճեմարանն ունենալու էր երկու բաժին՝ դասարանական՝ 6-ամյա (հավասարեցված ռուս. միջն. դպրոցին) և լսարանական՝ 3-ամյա ուսուցմամբ և տալու էր հոգևոր բարձրագույն կրթություն: 1882-ին, երբ ճեմարանին է միացել Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը, կոչվել է Ժառանգավորաց հոգևոր ճեմարան Ս. Գևորգյան: Հետագայում հիմնադրի անունով վերանվանվել է Գ. ճ.:

Գ. ճ. փակ տիպի գիշերօթիկ էր (փոքրաթիվ երթևեկ աշակերտներով): Ընդունվել են Հայ առաքելական եկեղեցու դավանանքին պատկանող 14–16 տարեկան չնորհալի պատանիներ՝ անվճար ուսուցմամբ: XX դ. սկզբին Գ.ճ. ունեցել է 230 ձրիավարժ և 20 թոշակավոր սաներ: Ուսանողները մանկավարժ. պրակտիկան անցկացրել են հատուկ հենակետային դպրոցում՝ վարժոցում, կամ Վաղարշապատի ծխական դպրոցներում: Ճեմարանը պահվել է Էջմիածնի վանքի եկամուտների, ընդհանուր հանգանակությունների, նվիրատվությունների ու կտակների միջոցով (տարեկան շուրջ 50 հզ. ռուբլի): Վերատեսուչը կաթողիկոսն էր, որը գործերը վարել է ուս. խորհրդի և տեսչի միջոցով: Գ. ճ-ի տեսուչներ են եղել Խորեն

եպս. Գալֆայանը, Գաբրիել եպս. Այվազովսկին, Արշակ վրդ. Նահապետյանցը, Սարգիս եպս. Գասպարյանը, Կ. Կոստանյանցը, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանը, Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանը, Մ. Բերբերյանը, Բագրատ եպս. Վարդազարյանը և այլք:

Չնայած գործադրված ջանքերին՝ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու օրոք շրջանավարտներից որևէ մեկը կուսակրոն հոգևորական չի դարձել: Գ. ճ-ում ավելի շատ իշխել է աշխարհիկ ոգին: Ճեմարանն իր կոչմանը և խնդիրներին նպատակաուղղելու գործում կարևոր դեր է խաղացել *Մակար Ա Թեղուտցին*: Նա ուժեղացրել է ուսուցչական կազմը՝ հրավիրելով Ա. Նահապետյանին, Ա. Մանդինյանին, Փ. Վարդանյանին, Ս. Պալասանյանին, Մ. Պալյանին, Մ. Օրմանյանին: Վերջինս նշանակվել է Գ. ճ-ի աստվածաբան. առարկաների ուսուցիչ: Նրա ջանքերով 1888-ին շրջանավարտներից չորսն առաջին անգամ ձեռնադրվել են կուսակրոն հոգևորական: Ճեմարանը տվել է բազմակողմանի ընդհանուր կրթություն: Դպրոցական բաժնում դասավանդվել են հայոց պատմություն և աշխարհագրություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, հայկ. մատենագրություն, հայոց և օտար լեզուներ (ռուս., ֆրանս., գերմ.), բնագիտություն, տիեզերագիտություն, մաթեմատիկա, Ս. Գիրք, եկեղեց. երաժշտություն, տրամաբանություն ևն: Լսարանական բաժնում դասավանդվել են հայոց լեզու (աշխարհաբար և գրաբար՝ քննական), հայոց պատմություն (քննական), եկեղեց. մատենագրություն, հայ գրականություն, ընդհանուր եվրոպ. գրականություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, մանկավարժություն, քաղաքատնտեսություն, Հայ եկեղեցու պատմություն, հայ եկեղեց. իրավունք, ծիսագիտություն, հին հուն. ևն: Շրջանավարտները ներկայացրել են ավարտական շարադրանք, որը պաշտպանվել է քննական հանձնաժողովի առջև, այնուհետև նրանք ձեռնադրվել են կամ ուսումը շարունակել ռուս. և եվրոպ. բարձրագույն ուս. հաստատություններում: Տարբեր տարիներ Գ.ճ-ում դասախոսել են Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ե. Թաղևոսյանը, Լեոն, Ս. Լիսիցյանը, Ք. Կարա-Մուրզան, Կոմիտասը, Կ. Կոստանյանցը, Ս. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Մանանդյանը, Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս) և այլք: Դասախոսների մի մասը Գ. ճ-ի նախկին սաներն էին: Այստեղ են մշակվել հայկ. դպրոցների ուս. ծրագրերը, կազմվել դասագրքեր ու ձեռնարկներ, գրվել պատմագիտ., բանասիր., մանկավարժ. ու աստվածաբան. բնույթի բազում երկեր, որոնցից շատերը հայագիտության մնայուն արժեքներ են: Ավելի քան 50 տարի Անդրկովկասի հայկ. դպրոցների ուսուցչական կազմը համալրվել է ճեմարանի շրջանավարտներով: XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևելահայ հոգևորականները մեծ մասամբ Գ. ճ-ի շրջանավարտներն էին: Նշանավորներից են Ամենայն հայոց կաթողիկոս *Գևորգ Զ Զորեքչյանը*, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս *Գարեգին Ա Հովսեփյանը*, Հուսիկ արք. *Զոհրապյանը*, Ներսես արք. *Մելիք-Թանգյանը*, Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը և այլք: Մեծ է Գ. ճ-ի ավանդը գրականության, գիտության, հաս-քաղ. մտքի, մանկավարժության զարգացման բնագավառներում: Այդտեղ են սովորել գրողներ Ա. Ահարոնյանը, Ա. Բակունցը, Դ. Դեմիրճյանը, Ա. Իսահակյանը, Լ. Շանթը և ուր., հայագետներ Մ. Աբեղյանը, Ա.Աբրահամյանը, Ն. Ադոնցը, Ն. Աղբալյանը, Թ. Ավդալբեգյանը, Ա. Զամինյանը, Խ. Կանայանը, Ս. Մալխասյանցը, Ա. Տերտերյանը և ուր., երաժշտագետներ Ա. Բրուտյանը, Կոմիտասը, Ա. Շահմուրադյանը և ուր., մանկավարժներ Կ. Աբովյանը, Բ. Բահաթրյանը, Գ. Էդիլյանը, Սիմակը և ուր., հաս-պետ. գործիչներ Ա. Դարբինյանը, Ա. Գյուլխանդանյանը, Գ. Խաժակը, Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ս. Վրացյանը, Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկ) և ուր.: Գ. ճ-ի սաներն ու դասախոս. կազմը գործուն մասնակցություն են ունեցել հայկ. դպրոցները փակելու և եկեղեց. գույքը բռնագրավելու՝ ցար. կառավարության 1903-ի հունիսի 12-ի որոշման դեմ ցույցերին ու ելույթներին, կամավոր. շարժմանը, 1918-ի մայիսյան հերոսամարտերին և այլ իրադարձությունների: 1917-ի վերջին քաղ. ու ռազմ. անբարենպաստ պայմանների հետևանքով, *Գևորգ Ե Սուրենյանց* կաթողիկոսի որոշմամբ, ճեմարանը դեկտ. 21-ին առժամանակ դադարեցրել է պարապմունքները և շենքը տրամադրել զինվորական հրամանատարությանը: 1919–20-ին փորձեր են կատարվել Գ. ճ. վերաբացելու ուղղությամբ: Կաթողիկոսի 1919-ի սեպտեմբերի կոնդակով՝ Գ. ճ. վերաբացվելու էր որպես հայագիտ., աստվածաբան. բարձրագույն ուսումնավայր: Գ. ճ. վերաբացելու ՀՀ կրթության նախարար Ն. Աղբալյանի ջանքերն ապարդյուն են անցել:

Գ. ճ-ի դասախոսները որոշիչ դեր են խաղացել Հայաստանի համալսարանի (հետագայում՝ ԵՊՀ) ստեղծման գործում: Ճեմարանի գրադարանի եզակի և հարուստ հավաքածուն (45 հզ. գիրք) դարձել է Ազգ. գրադարանի և Մատենադարանի հիմնարար ֆոնդերից: 1945-ի նոյեմբ. 1-ին Գևորգ Զ Զորեքչյանի ջանքերով բացվել է *Էջմիածնի հոգևոր ճեմարանը*, որը, ավելի համեստ շրջանակներում, շարունակում է Գ. ճ-ի ավանդույթները: 1995-ին Գ. ճ-ի շենքը որպես սեփականություն վերադարձվել է Մայր աթոռին: 1996–97-ին հիմնովին վերանորոգվել է ամերիկահայ բարերարներ Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների միջոցներով՝ օժանդակությամբ ու հսկողությամբ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ):

1997–98 թթ. ուս. տարվա շեմին տեղի է ունեցել Գ. ճ-ի վերաբացման հանդիսությունը: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կարգադրությամբ Գ. ճ. վերանվանվել է Գևորգյան հոգևոր ճեմարան: Ուսումնառության շրջանը՝ վեցամյա: Դասավանդում են ինչպես նախորդ տարիների ճեմարանական լավագույն շրջանավարտները, այնպես էլ արտերկրից հրավիրված կրոնի ուսուցման մասնագետները: Ուսանողների թիվը՝ մոտ 100: Ճեմարանում գործում են համակարգչային և երաժշտ. սրահներ: Կառուցվել է ննջարանային նոր մասնաշենք (2000):

Վեհափառ հայրապետի և տեսչության ջանքերով հնարավորություն է ընձեռվել ճեմարանավարտներին՝ ուսումը շարունակելու արտերկրի կրոն. հաստատություններում:

Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչն է Եղիշե ավ. քհն. Սարգսյանը (2000-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 3-րդ պատկերը:

Գրկ. Աբեղյան Մ., Գէորգ Դ. մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղ-պատ, 1899: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927: Վարդանյան Մ., Վերաբացվեց Գևորգյան ճեմարանը, «Էջմիածին», 1997, № 8–9:

Պետրոս Հովհաննիսյան

ԳԵՏԱՐԳԵԼԻ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ, տես *Ջագավանք*:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ (ԳՀԽ), Ամենայն հայոց կաթողիկոսին առընթեր վարչախորհրդակցական մարմին: Անդամներին նշանակում է կաթողիկոսը՝ Ազգ-եկեղեց. ժողովի որոշմամբ: Ստեղծել է *Գևորգ Ե Սուրենյանց* կաթողիկոսը 1924-ի հունվ. 1-ին, նախկին *Սինոդի* փոխարեն: Նախկինում բաղկացած էր 6 բարձրաստիճան հոգևորականներից, ապա Ազգ-եկեղեց. ժողովը այն համալրել է նաև 3 աշխարհականներով: Իր գոյության ընթացքում ԳՀԽ կազմն ընդգրկել է 6–7 հոգևորականներ և 3–4 աշխարհականներ: 1938–45-ին ընդհանրապես կազմալուծված է եղել: Ներկայումս ունի 11 հոգևորական և 5 աշխարհական անդամներ: ԳՀԽ լիազոր անդամներն են արտասահմ. 4 երկրամասերից հետևյալ թեմական առաջնորդները՝ Զավեն արք. Զինչինյանը (Մերձ. Արևելք), Գյուտ արք. Նազդաշյանը (Եվրոպա), Գիսակ եպս. Մուրադյանը (Ամերիկա), Աղան արք. Պալիոզյանը (Ծայրագույն Արևելք): Ընդլայնված կազմը ժողով է գումարում տարեկան երկու անգամ: ԳՀԽ քննարկում է վարչական-մակերպչական, մշակութ., եկեղեց., տնտ., շինարար. և բարեսիրական այլ հարցեր: ԳՀԽ նախագահն է Ամենայն հայոց կաթողիկոսը: Անդամ հոգևորականներից մեկն ընտրվում է ատենապետ, իսկ անդամ հոգևորականներից կամ աշխարհականներից մեկը՝ ատենադպիր՝ մեկ տարի ժամանակով: ԳՀԽ-ի քննարկած հարցերի մասին վերջնական որոշում է կայացնում և գործադրում Ամենայն հայոց կաթողիկոսը:

ԳՀԽ անդամներ են եղել Խորեն արք. Մուրադբեկյանը, Գևորգ արք. Զորեքչյանը, Վազգեն եպս. Պալճյանը (հետագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոսներ), Գարեգին արք. Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), ինչպես նաև Ստեփան Կամսարականը, Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը, Աշոտ Աբրահամյանը, Գրիգոր Խանջյանը և ուրիշներ:

Միքայել ծ. վրդ. Աջապահյան

ԳԵՐԵԶՄԱՆՕՐՀՆԵՔ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1991-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցի: Ընդգրկում է Գերմանիայի մի շարք քաղաքներ (Բեռլին, Քյոլն, Մյունխեն, Մայնց, Շտուտգարտ, Ֆրանկֆուրտ ևն), որտեղ հայ համայնքներ կան: Հս. Գերմանիայի և Հվ. Գերմանիայի հայ համայնքներն ունեն իրենց հոգևոր հովիվները: Թեմի կազմավորումից առաջ Գերմանիա-

յի Հայ համայնքի հոգևոր կյանքը գլխավորել է հոգևոր հովվությունը, որը մինչև 1980-ը գտնվել է Փարիզի, 1980-ից՝ Կենտր. Եվրոպայի Հայրապետ. պատվիրակության (կենտրոնը՝ Վիեննա) ենթակայության տակ: Թեմը սերտորեն համագործակցում է Գերմանիայում գործող ավետարանական և կաթողիկե քույր եկեղեցիների հետ և ներկայացնում Հայ եկեղեցին Գերմանիայի միջեկեղեցական կենտրոնական խորհրդում:

Մինչև 1984-ը գերմանահայ համայնքը եկեղեցի չի ունեցել. արարողությունների համար օգտագործվել են տեղի ավետարանական եկեղեցիները: Մշտական օգտագործման համար եկեղեց. շենքեր են վարձակալել միայն Գյոթինգենի և Քյոլնի հայ համայնքները: 1984-ից Գյոթինգենում գործում է Ս. Խաչ եկեղեցին (հայերը վարձակալել են կաթոլիկ գերմանացիներից և ներքնապես վերափոխել): Համայնքը Զալախ գյուղաքաղաքում ունի Հայ տուն, որտեղ կազմակերպվում են մշակութ. միջոցառումներ: Երկրի ավելի քան 10 քաղաքների (Բեռլին, Համբուրգ, Բրեմեն, Հանաու, Բրաունշվայգ, Մյունխեն ևն) Հայ համայնքներում կանոնավոր մատուցվում են պատարագներ, գործում է Հայ տունը, իսկ որոշ համայնքներում եկեղեց. արարողությունները կատարում են այցելու հովիվները:

1998-ին Քյոլնում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանը կատարել է առաջնորդանիստ Ս.Սահակ-Մեսրոպ եկեղեցու օծումը (նախկինում եղել է կաթոլիկ եկեղեցի, այնուհետև նորոգվել է հայկ. ոճով): Թեմի կազմավորմամբ հայ ազգ. կյանքը նկատելիորեն աշխուժացել է: Աշխատանք է կատարվում Գերմանիայի հայ համայնքների միջև կապն ամրապնդելու, գերմանահայ երիտասարդ սերունդն ազգ. ոգով դաստիարակելու ուղղությամբ: 1999-ին թեմի նախաձեռնությամբ հիմնվել է Արմաշի ընծայարանը՝ հոգևորականներին բարձրագույն կրթություն տալու նպատակով: Արմաշի ընծայարանը Այխշթեթ քաղաքի կաթոլիկ համալսարանի Արևելյան ընծայարանի մասնաճյուղն է, որն ավարտելուց հետո (տարին 5 ուսանող) դառնում են հոգևորականներ կամ կրոնի ուսուցիչներ:

Գ. Թ-ի առաջնորդն է Գարեգին եպս. Պեզճյանը (1991-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 4-րդ պատկերը:

Գրկ. Առաջնորդություն հայոց Գերմանիո, Ուղեցույց, Քյոլն, 1995:

ԳԻՆԻ Հաղորդության, *Պատարագի* ու *Հաղորդության* բաժակի նյութ՝ խաղողից պատրաստված անապակ, այսինքն՝ անխառն գինի, որը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի՝ խաչի վրա թափած արյան՝ իբրև փրկության աղբյուրի հիշատակը:

Հաղորդության ժամանակ Հայ եկեղեցում, ի տարբերություն Կաթոլիկ եկեղեցու, Գ. օգտագործվում է *նշխարի* օրհնված հացի հետ: Հայ եկեղեցին ս. Պատարագի ժամանակ անապակ Գ. օգտագործելու ավանդությունը վերցրել է Վերջին ընթրիքից, որտեղ Հիսուսը Գ-ու բաժակն օրհնել և տվել է աշակերտներին՝ ասելով. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. **26.**28):

Ուղղափառ (օրթոդոքս) և Կաթոլիկ եկեղեցիներն օգտագործում են ջրախառն Գ.՝ որպես Քրիստոսի գեղարդահար կողից հոսած արյան և ջրի խորհրդանիշ:

Հին կտակարանում Գ. հիշատակվում է Տիրոջը նվիրաբերված երախայրիների շարքում՝ ընծա սուրբ տաճարին. «Ամեն մի գառան հետ կբերես նաև շուրջ մեկուկես լիտր զտված յուղ՝ շաղված երեք կիլոգրամ ընտիր ալյուրի հետ, ինչպես նաև մեկուկես լիտր գինի իբրև ընծա» (Ելք **29.**40, տես նաև Թվեր **15.**5–10): Գործածվել է *Զատկի* տոնին:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, տես *Վարդապետ* հոդվածում:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԾԱՌ, Բարու եվ չարի գիտության ծառ, Իմացության ծառ, ըստ Աստվածաշնչի՝ մարդու համար արգելված պտուղ տվող այն ծառը, որից ճաշակելով՝ Ադամն ու Եվան ճանաչել են չարն ու բարին և մեղավոր ու մեղսագիտակ դարձել:

Գ. ծ. տնկել էր Աստված *Եդեմի* կենտրոնում՝ *դրախտում*, որտեղ էր նաև *կենաց ծառը* (Ծննդ. **2.**8–9): Դրախտաբնակ մարդուն Աբրահիչը տվել էր իր առաջին պատվիրանը՝ ազատորեն ճաշակել բոլոր ծառերից, բայց ոչ մի դեպքում ձեռք չմեկնել Գ. ծ-ին: Այս պատվիրանը մեկնաբանվում է հետևյալ կերպ. փորձելու և սխալվելու ուղիով գիտություն ձեռք

բերելու, ինքնահաստատվելու մղումը չարից է՝ *սատանայից*, որը նպատակամիտված է մարդուն անկախացնելու Աստծուց, այսինքն՝ հասցնելու իմացության՝ առանց Աստծո: Անհնազանդություն Աստծո պատվիրանին և հնազանդություն Արարչից առանձնանալու սատանայի չար մղումին՝ ահա բուն *մեղքը*, որն առաջացավ Գ. ծ-ից ճաշակելու պատճառով:

Ծննդոցում նկարագրվում է մարդուն իր ստեղծիչ Աստծո դեմ գործել տալու և անմահությունից զրկելու չարի գործելակերպը. օձը (բանսարկուն կամ սատանան) Եվային համոզում է չհավատալ Աստծու պատվիրանին, որը հրահանգում էր՝ Գ. ծ-ից «... չուտեք և չմոտենաք, որպեսզի չմեռնեք» (3.3): «Օձն ասաց կնոջը. «Չեք մահանա, որովհետև Աստված գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը, և դուք կլինեք աստվածների նման՝ կիմանաք բարին ու չարը» (3.4–5): Այսպիսով օձը ճաշակել է տալիս Եվային, Եվան՝ Ադամին: Հետևանքը լինում է այն, որ նրանք նզովվում են Աստծո կողմից և վտարվում դրախտից, որպեսզի հանկարծ չճաշակեն նաև կենաց ծառից ու դառնան անմահ՝ այսպիսով անմահացնելով մեղքը: Օձին տրված աստվածային նզովքի մեջ, թե՝ «Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ միջև, քո սերնդի ու նրա սերնդի միջև: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծնն. 3.15), նախապես հայտարարված է տեսնվում «կնոջ սերնդի»՝ կույս Մարիամից մարմնապես ծնված *Հիսուս Քրիստոսի* ապագա տնօրինական գործունեությունը՝ նրա կողմից օձի՝ սատանայի գլուխը ջախջախելը: Այս նախնական խոստումն են հաստատագրում Օսեի մարգարեությունը (13.14) և Հովհաննեսի Հայտնությունը (5.9):

Լևոն Սարգսյան

«ԳԻՐՔ ԹՂԹՈՑ», կրոնադավանական բնույթի ժողովածու, Հայ առաքելական եկեղեցու ուղղափառ դավանությունը հավաստող հիմնական փաստաթղթերից: Կազմվել է դավան. վեճերում Հայ եկեղեցու ուղղափառությունը հիմնավորելու, նրա անկախությունն ու միասնությունը պահպանելու անհրաժեշտությամբ: Ենթադրվում է, որ «Գ. թ.»-ի նյութերը հավաքվել են VII դ.՝ *Կոմիտաս Ա Աղցեցու* օրոք, ժողովածուում ամփոփվել VIII դ.՝ *Հովհաննես Գ Օձնեցու* կաթողիկոսության շրջանում: Այն հետագայում լրացվել է V–XIII դդ. ընդգրկող նմանատիպ նոր նյութերով (թղթեր, նամակներ ևն): «Գ. թ.» բովանդակում է Հայ եկեղեցու հայրերի նամակներին, Հայոց կաթողիկոսների պաշտոն. թղթակցությունները հարևան ժողովուրդների եկեղեցիների առաջնորդների հետ, շրջաբերականներ, ժողովների արձանագրություններ, Հայ և Վրաց եկեղեցիների բաժանմանը վերաբերող վավերագրեր, դավան., ինքնուրույն և թարգման. գրություններ, հայ-բյուզ., հայ-լատ. եկեղեց. միությանը վերաբերող նյութեր ևն: Կարևոր են հատկապես *Ընդհանրական եկեղեցու* մի շարք հայտնի գրությունների՝ «*Հենոտիկոնի*», Կ. Պոլսի Ակակիոս (471–489), Ալեքսանդրիայի Պետրոս Մոնգոս (483–490) պատրիարքների թղթակցությունների հայերեն թարգմանությունները ևն: Թղթերում, որոնք հիմնականում հակաճառական բնույթի են, արծարծվել են աստվածաբան., ծիսադավան. բազմապիսի խնդիրներ, հերքվել *արիոսականությունը, նեստորականությունը, երևութականությունը* և աղանդավոր. այլ վարդապետություններ, մերժվել *Քաղկեդոնի ժողովը, Լևոնի տոմարը*:

Ժողովածուի առաջին թուղթը Կ. Պոլսի պատրիարք Պրոկղի նամակն է՝ ուղղված Հայոց կաթողիկոս *Սահակ Ա Պարթևին* և *Մեսրոպ Մաշտոցին*: Դատապարտելով Նեստորին ու նրա համախոհներին՝ նա Հայ եկեղեցու հայրերին կոչ է արել զգուշանալ Հայաստանում նեստորականության տարածումից: Երկրորդ թուղթը Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի պատասխանն է Պրոկղ պատրիարքին («Պատասխանի թղթոյն Պրոկղի երանելոյ, ի Սահակայ և ի Մաշդոցէ, սուրբ վարդապետացն Հայոց»), որը որպես ուղղափառության փաստարկ ընթերցվել է 553-ի Կ. Պոլսի ժողովում՝ *Կյուրեղ Ալեքսանդրացու* թղթից հետո: «Գ. թ.» կարևոր աղբյուր է նաև Հայ եկեղեցու պատմության, ծեսերի և դավանանքի, ինչպես և հայասոր., հայ-հուն., հայ-վրաց. եկեղեց. հարաբերությունների ուսումնասիրման համար: Ժողովածուն օգտագործվել է Հայ եկեղեցու և երկաբնակ (քաղկեդոնիկ) հայերի միջև ծիսադավանաբան. վիճաբանությունների ժամանակ:

«Գ. թ.»-ի ուսումնասիրությամբ զբաղվել են Հ. Գյուլխանդարյանը, Ն. *Ադոնցը*, Կ. եպս. *Տեր-Մկրտչյանը*, Ն. *Ակինյանը*, Ե. *Տեր-Մինասյանը*, Պ. Անանյանը, Հ. Ջավախիշվիլին, Մ. Տալոնը, Ա. Շմիդտը և ուրիշներ:

ԳԻՐՔ

«Գ. Թ.»-ի միակ ձեռագիր օրինակը (ընդօրինակվել է 1288-ին) պահվում է *Զմմառի վանքի* մատենադարանում: Ժողովածուն առաջին անգամ տպագրվել է 1901-ին, Թիֆլիսում, 1994-ին Երուսաղեմում վերահրատարակվել Ն.Պողարյանի մասնակի փոփոխություններով ու լրացումներով, 1955-ին տպագրվել է ֆրանս. (թարգմ.՝ Մ. Տալոն), Բեյրութում:

«ԳԻՐՔ ՊԱՏՃԱՌԱՅ», տես *Պատճառ* հոդվածում:

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կաճառ Մեծ Հայքի Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառում (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղի մոտ): Որպես համալսարան ձեռագրերում հիշատակվում է 1291-ից: Հիմնադրվել է *Թանադե վանքում* Խաղբակյան Պռոշ իշխանի (1223–84) նախաձեռնությամբ և Օրբելյան իշխանական տան ու *Սյունյաց մետրոպոլիտության* աջակցությամբ: Գ. հ-ի հիմնարկումը սկսվել է Ս. Ստեփանոս տաճարի կառուցմամբ (1273–79), որը հիշատակվում է նաև Աղբերց վանք, Գլիձոր կամ Գայլիձոր անուններով: 1282-ի գարնանը Վայոց ձոր են հրավիրվել քրդերի հարձակումներից Քաջբերունիքում ապաստանած *Մշո Ս. Առաքելոց վանքի* ուսումնականները՝ բաբունապետ *Ներսես Մշեցու* գլխավորությամբ: Պռոշյանները նրանց են տրամադրել Գլաձորի վանքը (նույնացվում է Թանադե վանքի հետ): Ներսես Մշեցին, հավաքելով իր սաներին, ձեռնամուխ է եղել Գ. հ-ի կազմավորմանը, զբաղվել նյութ. ապահովության, աշակերտների ընտրության, դասախոսների համալրման, ծրագրերի ու ձեռնարկների ստեղծման և այլ հարցերով: Նրա ձեռնարկումներին ըստ ամենայնի աջակցել են Սյունյաց թեմական իշխանությունները, մասնավորապես՝ Հովհաննես եպս. Օրբելյանն ու *Ստեփանոս Օրբելյանը*:

Ուսումնագիտ. կենտրոնի գործունեության 1-ին շրջանում (1282–84, բաբունապետ՝ Ներսես Մշեցի) դասախոսել են *Եսայի Նչեցին*, Մխիթար Երզնկացին, *Թորոս Տարոնացին*, *Մխիթար Սասնեցին*, Վարդան Կիլիկեցին, այնուհետև՝ Դավիթ Սասնեցին, Գրիգոր, Մարտիրոս, Հովհաննես, Կիրակոս, Կյուրեղ բաբունապետները և այլք: Ընդհանուր առմամբ, Գ. հ-ում դասախոսել են 20-ից ավելի բաբունիներ և բաբունապետներ: Ուսումնառության տևողությունը եղել է 7–8 տարի (չհաշված քահանայական կրթության երեք տարին, որը պետք էր համալսարան ընդունվելու համար): Ներսես Մշեցու վախճանվելուց հետո (6.2.1284) բաբունապետությունը ստանձնել է նրա չնորհաշատ աշակերտ Եսայի Նչեցին: Գ. հ-ի բազմամյա դեկավարի (մինչև 1338) օրոք ծավալվել է բուռն գիտամանկավարժ., հոգևոր-մշակութ. ու հաս. գործունեություն. նա 360 շրջանավարտների «պերճազարդեալ էր վարդապետական արժանաւորութեամբ»: Որոշ շրջանավարտներ էլ դարձել են տարբեր կարգի եկեղեց. սպասավորներ: Եսայի Նչեցուն հաջորդած Տիրատուր Կիլիկեցին տնտ. ու քաղ. անբարենպաստ պայմանների պատճառով Գ. հ. տեղափոխել է *Հերմոնի վանք*, որտեղ գործել է մինչև 1363-ը: Այնուհետև բաբունապետ *Հովհան Որոտնեցին* համալսարանը փոխադրել է Հայրենի Որոտան գավառ, որտեղ այն գոյատևել է մինչև 1384-ը: Ապա Հովհան Որոտնեցին մի խումբ աշակերտների հետ տեղափոխվել է Տաթևի մենաստան և հիմնադրել բարձր տիպի նոր դպրոց (տես *Տաթևի համալսարան*):

Գ. հ. իր բնույթով ու թեքումով արվեստից գիտությունների համալսարան էր: Այն դասվում է միջնադարյան Եվրոպայի համալսարանական (universitas) հաստատությունների շարքին: Գ. հ-ում դասավանդվել է աշխարհիկ և հոգևոր կրթությանը վերաբերող առարկաների մի ամբողջ համակարգ: Աստվածաբանություն սովորելուց բացի, սաները պարտավոր էին տիրապետել 7 «արտաքին», այսինքն՝ աշխարհիկ գիտությունների ու արվեստների, որոնք կոչվել են «ազատ արվեստներ»: Դրանցից առաջին երեքն էին՝ քերականությունը, ճարտասանությունը, տրամաբանությունը, որոնք կոչվել են «եռյակ» (trivium): Մյուսները՝ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունն ու երաժշտությունը, կազմել են «քառյակ» (quadrivium) արվեստներ: Դասավանդվել են նաև գրչության արվեստ, մատենագիտություն, մանրանկարչություն, խազագիտություն և այլն: Տրամաբանության դասավանդման համար օգտագործվել են Արիստոտելի ու *Դավիթ Անհաղթի* երկերը: Գ. հ-ում առանձնակի ուշադրություն է դարձվել փիլիսոփայությանը. ուսումնասիրվել են ոչ միայն սկզբնաղբյուրները, այլև դրանց վերաբերյալ մեկնողական գրականու-

թյունը: Սաները պարտավոր էին սերտել Արիստոտելի կատեգորիաները և «Մեկնութեան մասին» աշխատությունը, Պորփյուրի «Ներածությունը» և սրանց նվիրված մեկնությունները: Համալսարանում փիլիսոփայությունն ուսումնասիրել են Արիստոտելի, Պորփյուրի, *Փիլոն Ալեքսանդրացու, Եզնիկ Կողբացու*, Դավիթ Անհաղթի աշխատություններով: Դասավանդվել է տեսական և գործնական փիլիսոփայություն: Սրանք էլ, իրենց հերթին, բաժանվել են երեքական մասերի՝ բնագիտություն, աստվածաբանություն, մաթեմատիկա և բարոյագիտություն, տնտեսագիտություն, քաղաքականություն: Գ. Հ-ում կարևորվել է քերականության ուսուցումը, որը, ըստ Եսայի Նչեցու՝ «Դուռն է ամենայն իմաստասիրութեան և կրթութեան»: Այդ նպատակով նա գրել է դասագիրք՝ «Մեկնութիւն քերականի», որտեղ շեշտել է հայոց լեզվի ու նրա բարբառների ուսումնասիրության և օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը: Համալսարանում պարտադիր է եղել հունարենի և լատիներենի դասավանդումը: Գ. Հ-ի սաներ *Հովհաննես Երզնկացին* (Ծործորեցի), Հովհաննես Քռնեցին, շարունակելով քերականագիտ. ավանդույթները, կազմել են քերակ. ուս. ձեռնարկներ, որոնք օգտագործվել են բոլոր դպրոցներում: Գ. Հ-ին կից գրչատանը առաջինը գրչագրվել է *Դիոնիսիոս Արիոպագացու* մատենագրությունը: 1282–84-ին այդտեղ ընդօրինակվել է չորս ձեռագիր: Համալսարանականների ընդօրինակումներով են մեզ հասել հին հայկ. և վաղքրիստ. աչքի ընկնող հեղինակների բազում աշխատություններ: Գ. Հ-ին կից գրչատան նկարչական արվեստանոցում զարգացման նոր աստիճանի է հասել մանրանկարչությունը (տես *Մանրանկարչություն* հոդվածի Գլաձորի մանրանկարչության դպրոց մասը):

Գ. Հ. ունեցել է ներքին կանոնադրություն, ուսումնագիտ. աստիճանավորում, ավարտաճառերի պաշտպանություն: Շրջանավարտները պարտադիր քննություն են հանձնել դասընթացներից: Նրանց հանձնարարվել է որևէ երկ՝ ավարտաճառ շարադրելու և պաշտպանելու համար: Պաշտպանությունը՝ «հանդէս պսակաղրութեան», իրականացրել է համապատասխան հանձնաժողովը: Ներկա են գտնվել բարձունիներ, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչներ: Շրջանավարտին շնորհվել է վարդապետական գիտ. աստիճան՝ «սպասավոր բանի», տրվել գավազան և վարդապետելու, քարոզելու, ուսուցանելու իրավունք: Հոգևոր իշխանությունները ձգտել են, որ Գ. Հ. իր սաներին տա հիմնավոր աստվածաբան. գիտելիքներ՝ ելնելով նաև կաթոլիկ. քարոզչության դեմ կազմակերպված ու համոզիչ պայքար ծավալելու անհրաժեշտությունից: Նրանց ջանքերով Գ. Հ. դարձել է Արլ. Հայաստանի հակամիարարական շարժման հիմն. կենտրոններից (տես *Ունիթորություն*): Համալսարանականների նախաձեռնությամբ հրավիրված արևելահայ հոգևորականության համաժողովում կտրականապես դատապարտվել է *Գրիգոր Է Անավարզեցու* լատինամետ քաղաքականությունը: Գ. Հ-ում են ստեղծվել «Դաւանութիւն ի սուրբ Երրորդութիւնն», «Վասն դաւանութեան հավատոյ ընդդէմ այրն Հեթմոյ Կոռիկոսացոյն պատասխանի թղթոյն», «Առ Գրիգոր Անավարզեցի» և այլ բանավիճային, հակամիարարական բնույթի երկեր: Գ. Հ. ակնառու դեր է խաղացել նաև Ֆրանցիսկյան և Դոմինիկյան միաբանությունների կաթոլիկ. քարոզչության դեմ մղվող պայքարում: Համալսարանի բարձունապետներն ու վարդապետները (Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, *Գրիգոր Տաթևացի* և այլք) եռանդուն պայքարել են լատինադավանության դեմ (տես *Միսիոներություն*): Գ. Հ-ի շրջանավարտները ծավալել են ազգ-եկեղեց., հայրենասիր. և ուսումնագիտ. բուռն գործունեություն: Հայաստանում, Կիլիկիայում և հայկ. գաղթավայրերում հիմնադրել են վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, դարձել թեմական առաջնորդներ: Նրանք անուրանալի ավանդ ունեն պատմագիտության, գեղ. գրականության, մանրանկարչության, քերականության, փիլիսոփայության, մանկավարժության, աստվածաբանության բնագավառներում: Գ. Հ-ի շրջանավարտներից են հայ մշակույթի և եկեղեցու բազմարդյուն գործիչներ Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Հաղպատեցին, Ավագ Մանրանկարիչը, Դավիթ Նորավանեցին, Կարապետ Տոսպեցին, *Կիրակոս Երզնկացին*, Հովհաննես Արճիշեցին, *Հովհաննես Երզնկացին* (Ծործորեցի), Հովհաննես Քռնեցին, Հովհաննես Օրբելյանը, *Մխիթար Սասնեցին*, Մկրտիչ Թեղենացին, *Մոմիկը*, Պողոս Ակներցին, Ստեփանոս Արճիշեցին, Ստեփանոս Օրբելյանը, Ստեփանոս Օրբելյան Կրտսերը, Տիրատուր Կիլիկեցին և բազում այլք:

Գ. հ. ունեցել է համահայկ. նշանակություն ու հռչակ: Այստեղ սովորելու են եկել նաև Կիլիկիայից և հայկ. գաղթավայրերից: Ժամանակակիցները համալսարանը հորջորջել են «Երկրորդ Աթենք», «Իմաստության մայրաքաղաք և տուն», «Մեծահռչակ համալսարան» և այլ բնութագրումներով, իսկ Ստեփանոս Օրբելյանն անվանել է «Արեգակնափայլ և երկնահանդես, գերահռչակ, հոյակապ և մեծաշուք, Հայկազյան ազգի պարծանք»:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 5-րդ պատկերը:

Գրկ. Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969: Աբրահամյան Ա., Գլաձորի համալսարանը, Ե., 1983: Արեվշատյան Ս., Մաթեվոսյան Ա., Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Ե., 1984: Խաչերյան Լ., Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII–XIV դդ.), Ե., 1973: Ղարիբյան Ի., Գլաձոր (տեղագրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները), Ե., 1983:

Պետրոս Հովհաննիսյան

ԳՄԲԵԹ, հիմնականում կիսաշնդաձև կամ տարբեր ուռուցիկության տարածական սնամեջ ծածկ կամ ծածկը կրող կոնստրուկցիա: Կիրառվելով հնագույն ժամանակներից հայկ. ժող. բնակելի տան ճարտ. մեջ՝ Գ. կատարելության է հասել միջնադարյան Հայաստանի եկեղեց. շենքերում (սրբագործված որպես երկնքի խորհրդանիշ, եկեղեցու հոգևոր իշխանության ընդհանրականության խորհրդապատկեր), որոնցից մեզ հայտնի վաղագույն օրինակներն են *Էջմիածնի Մայր տաճարը* (301–303, վերակառուցված 484-ին և XVII դ.), պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի նկարագրած Շաղատի քառախորան, արտաքուստ ութանիստ, կենտրոնագմբեթ Ս. Ստեփանոս եկեղեցին (306–353) և Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի՝ 462-ին կառուցած Սրկղոնքի եռախորան, վերնահարկով, արտաքին սրահներով, երկգմբեթ Կաթողիկե եկեղեցին: Գ-ի կիրառման անուղղակի վկայությունն է, ըստ պատմիչ Ագաթանգեղոսի, *Գրիգոր Ա Լուսավորչի* տեսիլքում 4 այուների վրա բարձրացող խորանարդաձև Գ-ի նկարագրությունը. «Չորս այուների խաչերի վրա զարմանատես կամարներ միմյանց կապվեցին և դրա վրա գմբեթաձև խորանարդ ու աստվածակերտ, զարմանալի ամպեղեն շինվածք տեսա»: Հայաստանում պահպանված հնագույն Գ. Տեկորի Ս.Սարգիս վկայարանինն է (478–490): Հայկ. գմբեթաշինությունն ունեցել է երկու զուգահեռ ուղղություն. մի կողմից՝ բազիլիկ եկեղեցիների գմբեթավորում, մյուս կողմից՝ կենտրոնագմբեթ կառույցների զարգացում (տես *Եկեղեցական ճարտարապետություն*): Հայկ Գ-ները կառուցվել են թմբուկներով, որոնք վաղ միջնադարում բազմանիստ էին (խորանարդաձև, վեցանիստ, մեծ մասամբ՝ ութանիստ, սակավ՝ 12- և 16-նիստանի), կղմինդրե սաղավարտաձև կամ քարե բրգաձև ծածկով, իսկ X դարից՝ նաև գլանաձև, հովանոցաձև կամ կոնաձև վեղարով: Հայաստանում կիրառվել է նաև կլոր հիմքի վրա առանց թմբուկի կիսագնդաձև Գ. (*Բարձրյալ խաչ*, V–VI դդ.): Սկզբնապես գմբեթատակ քառակուսուց անցումը թմբուկին կատարվել է տրոմպների միջոցով, իսկ VI դ. վերջից՝ նաև առագաստներով (*Ավանի կաթողիկոսություն* Ս. Հովհաննես եկեղեցի): VII դարից հայկ. ճարտ-ը, բացառապես գմբեթավոր դառնալով, ստեղծել է քառախորան կենտրոնագմբեթ եկեղեցիների մի շարք տիպեր, որոնք նորույթ էին քրիստ. ճարտ. մեջ:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.1, 6-րդ պատկերը:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1986: Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. 3, Նյու Յորք, 1944: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, 2, Ե., 1942, 1948: Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե.,1993: *Токарский Н. М., Архитектура Армении IV–XIV вв., Е., 1961;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Khatchatrian A., L'Architecture Arménienne du IVᵉ au VIᵉ siècle, P., 1971; Hasratian M., La coupole dans l'architecture arménienne aux IVᵉ–Vᵉ siècle, "Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena – 1988", V., 1992.

Մուրադ Հասրաթյան

ԳՅՈՒՏ Ա ԱՐԱՀԵԶԱՑԻ, Ութմսեցի, սուրբ Գյուտ Արահեզացի [մոտ 400, գ. Արահեզ (Տայքի նահանգ) – 478, ամփոփվել է գ. Ութմուսում (Վանանդի գավառ)], Ամենայն հայոց կաթողիկոս 461-ից: Հաջորդել է *Մովսես Ա Մանազկերտցուն*: Եղել է Սահակ-Մեսրոպյան կրտսեր աշակերտներից: Կարգվել է Վանանդի եպիսկոպոս, նստել Ութմուս գյուղում: 462-ին Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցում հոգեշունչ քարոզներով դիմավորել է պարսկ. գերեվարությունից վե-

բաղարձած հայ նախարարներին՝ Ավարայրի ճակատամարտում ողջ մնացած հերոսներին: Հաստատել և եկեղեց. Տոնացույց է մտցրել Ավարայրի նահատակների հիշատակի օրը:

Օգտվելով քաղ. համեմատաբար խաղաղ իրավիճակից՝ ձեռնամուխ է եղել եկեղեց. բարեկարգումների: Պայքարել է *նեստորականության* դեմ, նրա խնդրանքով *Դավիթ Անհաղթ* Ներգինացի վարդապետն ի պաշտպանություն ուղղափառ վարդապետության գրել է «Բարձրացուցէք» սկզբնավորությամբ մի ներբող: 468-ին Սյունյաց Անանիա եպիսկոպոսի հետ մասնակցել է Վայոց ձորի նահատակների հիշատակին կառուցված Վկայարանի նավակատիքին: Գաղիշո Խոռխոռունու կողմից ամբաստանվել է իբրև տերությանն անհավատարիմ, որի համար, Սասանյան Պերոզ թագավորի հրամանով, 471-ին կանչվել է Տիզբոն, զրկվել հայրապետ. իշխանությունից և աքսորվել: Հայերի ընդվզումից անհանգստացած՝ արքունիքը հարկադրված Գ. Ա Ա-ուն ազատ է արձակել: Վերադարձել է հայրենիք, հաստատվել Ոթմուսում, արժանացել համաժող. հարգանքի: Գ. Ա Ա. դասվել է Հայ եկեղեցու սրբերի կարգը:

Կաթողիկոս. գահին Գ. Ա Ա-ուն հաջորդել է *Հովհաննես Ա Մանդակունին*:

Գրկ. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 1, Վնտ., 1784: Անանյան Պ., Քննություն Հայ եկեղեցվո պատմության Ե և Զ դարերու շրջանին, Վնտ., 1991:

Արթուր Կարապետյան

ԳՅՈՒՏ ԽԱՉԻ, տես *Խաչի տոներ* հոդվածում:

ԳՆԴԵՎԱՆՔ, ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղից արևմուտք, Արփա գետի ձախ ափի ձորալանջին: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի՝ Գ. X դ. հիմնադրել է Սյունյաց Սոփիա իշխանուհին, որպես ձորի ճգնավորների մենաստան: Առաջնորդ նշանակել է Սարգիս քահանային, շինարարության ղեկավար («գործակալ»)՝ նկարիչ Եղիշե երեցին: Հիմնելով Գնդեվազ գ.՝ Ատչար գ-ի հետ որպես կալվածք նվիրել է Գ-ին, մերձակա տարածքներում տնկել պտղատու այգիներ: Վանքը «մեծամեծ ճգնությամբ» հռչակված հայր Սուփան Գնդունու անունով կոչվել է Գ.:

Գ-ի Ս.Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 931–936-ին, սրբատաշ բազալտով, քառախորան՝ արտաքուստ խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքով (արլ. ավանդատները հավելվել են X դ.): Ճակատները մշակված են «հայկ. խորշերով»: Նկարիչ Եղիշե երեցը եկեղեցու ներսը զարդարել է որմնանկարներով, որոնցից խորանի պատին պահպանվել է Քրիստոսի պատկերի մի փոքր հատված: Գմբեթի առագաստներին չորս ավետարանիչների խորհրդանշանների բարձրաքանդակներն են: Սոփիա իշխանուհին Գ-ի շինարարության ավարտը նշել է մեծահանդես տոնախմբությամբ և եկեղեցու արմ. պատին թողել արձանագրություն. «Վայոց ձորն անակ մատանի էր, շինեցի սա և /որպես/ ակ դրեցի վրան»: 999-ին վանահայր Քրիստափորը եկեղեցուն արմ-ից կից կառուցել է Գ-ի գավիթը՝ թաղածածկ դահլիճ, հս. կողմում երկու սենյակով: 1008-ին վանահայր Սարգիսը մեծ ջանքերով ու ծախսով, 22 *կմ* երկար. ջրանցք է կառուցել վանքապատկան անջրդի ընդարձակ հողերը ոռոգելու համար: 1309-ին Գ. նորոգել է Գրիգորեսը: 1604-ին Պարսից շահ Աբբասը ավերել է Գ. և Գնդեվազի բնակիչներին տեղահան արել: 1691-ին վանահայր Պետրոս վարդապետը նորոգել է Գ-ի եկեղեցին և գավիթը, վանքը շրջապատել բուրգերով ուժեղացված պարիսպներով և նրան կից կառուցել բնակելի ու տնտ. շինություններ: Հավանաբար, այդ ժամանակ է կատարվել եկեղեցու հս. ավանդատան պատին Աստվածածնի պատկերով որմնանկարը, որը ուշ միջնադարի հայկ. կերպարվեստի լավագույն ստեղծագործություններից է:

Գ-ի բակում կան X–XVI դդ. խաչքարեր և օրորոցաձև տապանաքարեր: 1875-ին բակի թաքստոցից հայտնաբերվել են եկեղեց. իրեր և սպասք, որոնց թվում՝ 1307-ի զանգ, 1691-ի ծնծղա ևն: Գ. վերանորոգվել է 1965–70-ին:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.2, 1-ին պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Վայոց ձոր. նշանավոր վանքեր, Ա.Հ, գիրք 16, Թ., 1916: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Մանուչարյան Ա., Ե՞րբ է կառուցվել Գնդեվանքը, ԼՀԳ, 1976, № 7: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ԳՆՈՍՏԻՑԻԶՄ [< հուն. *γνῶσις* (գնոսիս) – գիտելիք, իմացություն, ճանաչողություն], կրոնափիլիսոփայական (թեոսոֆիական) համակարգերի ամբողջություն: Ծագել է Ք. ծ. հ. I–II

դդ. հեթանոս. տարբեր կրոնների ու հույն փիլիսոփաների ուսմունքների խառնուրդից, մուտք գործել քրիստոնեության մեջ, փորձելով քրիստ. ուսմունքը միացնել Արևելքի դիցաբանության, հեթանոսության, վաղքրիստ. հերետիկոս. վարդապետությունների, հելլենիզմի, պլատոնականության, նորպլատոնականության և նորպյութագորականության գաղափարների հետ: Նախաքրիստ. գնոստիկականության հիմքում ընկած էին տարբեր ժողովուրդների կրոն., տիեզերաբան. և մարդաբան. գաղափարները, նորպլատոնականությունը, մովսիականությունը: Քրիստ. Գ., որի կենտրոնը Ասորիքն էր, ընդունել է քրիստ. որոշ դրույթներ, բայց՝ հեթանոս. ըմբռնմամբ, մերժել Հին կտակարանը և դրանով՝ քրիստոնեության պատմ. հողը:

Գ. բաժանվում է երկու մեծ խմբի՝ անանուն գնոստիկականություն [կոչվում է նաև օֆիտականություն, նախաչականություն (օձապաշտություն), հետևորդների մի մասը՝ պերատներ են], որը չունի հիմնադիրներ, մարգարեներ, փիլիսոփաներ և դպրոցներ: Երկրորդ խումբը գնոստիկյան դպրոցներն են: Հայտնի են Մենանդրոսի, Սատորնիլոսի, Բասիլիդեսի, Վալենտինոսի, Կարպոկրատեսի և այլոց դպրոցները, որոնք ներկայացնում էին Գ-ի առավել զարգացած համակարգերը: Գնոստիկյան տարաբնույթ հոսանքների, ուղղությունների, ուսմունքների, դպրոցների մեջ ընդհանուրն այլաբանության եղանակով (հիմնականում մտահայեցական փիլիսոփայության վերածված քրիստոնեության այլափոխման ճանապարհով) կատարյալ իմաստությունը (գնոսիսը) գտնելու ձգտումն էր, որը ձեռք է բերվում «հայտնության» միջոցով և մարդուն ցույց տալիս «փրկության» ուղին:

Գնոստիկականության հիմն. գաղափարներն ընդհանուր գծերով հանգում են հետևյալին. գնոստիկյան վարդապետությունն ընդունում էր հոգեկան նախասկզբի անճանաչելիությունը, որը հակադրում էր նյութականին՝ «չարի» աղբյուրին: Առաջ է քաշվում չարի և բարու դուալիստական ուսմունքը: Քրիստ. փրկության գաղափարը փոխվում է և վերածվում հոգին նյութից ազատվելու վարդապետության: Հոգին և մարմինը բացարձակապես հակադրվում են և դառնում միմյանց դեմ կանգնած տիեզեր. ուժեր: Գլխ. հարցը, որ զբաղեցրել է գնոստիկյաններին, այն է, թե ինչպես է հոգին կամ երկնային կայծն ընկել ու բանտարկվել այս գռեհիկ նյութ. աշխարհի մեջ և ինչպես կարող է կրկին ազատվել: Հոգին սկիզբ է առել միանգամայն այլ տեղում, հավերժական մի աշխարհում, մի ուրիշ աստծո լուսավոր բնակատեղիում, քանզի այս սխալաշատ, նյութ. և անկատար աշխարհը, բարձրագույն աստծո գործը չէ: Աշխարհի ստեղծողն ու օրենսդիրը (կամ տիեզերաստեղծ զորությունը) Դեմիուրգն է՝ հրեաների աստվածը, որը տարբեր է անծանոթ, բարձրագույն աստծուց: Դեմիուրգը Հին կտակարանի ներկայացուցիչն է, իսկ բարձրագույն աստվածը՝ Նոր կտակարանի: Աստվածայինը նյութից ազատելու համար անծանոթ աստվածը երկիր է ուղարկում մի փրկչի, որն իրականացնում է հոգևորի և նյութականի, բարու և չարի վերջն. բաժանումը:

Գնոստիկյանները, տարանջատելով բացարձակ բարձրագույն աստծուն և տիեզերքն ու նյութ. աշխարհը ստեղծող հրեաների աստծուն՝ Դեմիուրգին, իրարից բաժանել են նաև գնոսիսոսի Քրիստոսին և պատմ. Հիսուսին: Ազատարար կամ փրկիչ էոնը (զորությունը) Քրիստոսն է, իսկ պատմ. Հիսուսը տարբեր է նրանից: Էոնը Հիսուսի (այսինքն աստվածայինը՝ նյութականի) հետ միանում է միայն ժամանակավորապես (մկրտության ժամանակ և նրանից հեռանում է մահից առաջ), այլ կերպ ասած՝ երկրային Հիսուսը երկնային փրկչի երկրային երևույթն է, որ պետք է մարմին ընդուներ՝ տեսանելի դառնալու համար: Այդ պատճառով էոնը Մարիամի միջով անցնում է ինչպես ջուրը խողովակի, առանց նյութի հետ առնչվելու կամ նրանով պղծվելու: Այստեղից բխում էր գնոստիկյանների դոկետիզմը (տես *Երևութականություն*): Նրանք չեն ընդունել Քրիստոսի մարմնացումը և իրական մարդ լինելը. նրան հատկացվել է գերմարդկային բնություն և երևութական մարմին, ուստի Քրիստոսի ծնունդը, կյանքը, չարչարանքները, խաչելությունն ու մահը համարել են երևութական: Չեն ընդունել զգայական նշանների կամ նյութ. առարկաների հետ կապված խորհուրդները, պայքարել են հատկապես խաչի պաշտամունքի դեմ: Գնոստիկյանները մերժել են նախն. քրիստոնեության գաղափարները, ապագայի կամ հանդերձյալ կյանքի ակնկալությունները, ինչպես Քրիստոսի վերջին գալուստը, մեռելների հարությունը, Քրիստոսի հազարամյա թագավորությունը ևն: Ամեն բանի վերջը հոգու ազատությունն է նյութից և տանջանքներից,

նյութը պետք է ոչնչանա և ճգնության միջոցով կամ սանձարձակությամբ արհամարհվի: Դա հանդեցրել է ծայրահեղ դրսևորումների՝ բարոյականության մեջ. կա՛մ անհեթեթության հասնող խանդավառ ճգնական կյանք, կա՛մ սանձարձակություն և կենցաղային բոլոր օրենքների ու կանոնների ժխտում:

Գ. ժամանակի ընթացքում մոտեցել է քրիստոնեությանը, այդ գործում կարևոր դեր են խաղացել Մարկիոնը (II դ.), Տատիանոսը (II դ.), Բարդայծան Եդեսացին (II–III դդ.) և ուր.:

Գ-ի գլխ. վտանգը քրիստ. եկեղեցու համար այն էր, որ ներխուժելով քրիստոնեություն, փորձել է քայքայել քրիստ. եկեղեցին ներսից, փոխել նրա բնույթը, մանավանդ նրա փրկագործության գաղափարը, Փրկչի ավետարանական ուսմունքը և այն վերածել մասամբ տիեզերաստեղծ. առասպելների, մասամբ էլ՝ հուն. կրոնափիլիսոփայական աշխարհայացքի: Բացի այդ, գնոստիկյանները, զգալի քանակությամբ գրականություն ստեղծելով, իրենց ուսմունքը լայնորեն տարածել են քրիստ. համայնքներում: Եկեղեցին երկարատև և անզիջում պայքար է սկսել գնոստիկյան աղանդավորների դեմ՝ ստեղծելով իր առաջին աստվածաբան. դպրոցները, հրապարակ հանելով նրանց գաղափարների դեմ ուղղված բազմաժանր ու ծավալուն գրականություն, որտեղից էլ հիմնականում իմանում ենք գնոստիկյանների վարդապետության մասին (նրանց ստեղծած գրականությունը եկեղեցին ոչնչացրել էր): Միայն 1945-ին Վերին Եգիպտոսի Խենոբոսկիոն գյուղում հայտնաբերվել են III դ. գնոստիկյան 44 ձեռագիր երկեր:

Գ-ի ծաղկման շրջանում՝ III դ., գնոստիկյան գաղափարները սակավաթիվ հետևորդներ են ունեցել Հայաստանում: Գնոստիկյան *աղանդները* կամ նրա հիմքի վրա ստեղծվածները Հայաստան են մուտք գործել ավելի ուշ՝ IV–V դդ.: Հիշատակելի են *բորբորիտների*, մծղնյանների (տես *Մծղնեություն*), *պավլիկյանների* աղանդները, տարածված էին նաև եվստաթիոսականների՝ Սեբաստիայի հայազգի եպիսկոպոս Եվստաթեոսի անվան հետ կապված անապատական (տես *Անապատականություն*) շարժումը, որն իր վարդապետության մեջ ներառել էր գնոստիկյան առանձին գաղափարներ: Հավանաբար որոշ տարածում է ունեցել մարկիոնականությունը: Թերևս այդ է պատճառը, որ Մարկիոնի ուսմունքի քննադատությանը *Եղնիկ Կողբացին* իր «Եղծ աղանդոց»-ում առանձին գլուխ է նվիրել: Ենթադրվում է, որ գնոստիկյան է եղել *Ղազար Փարպեցու* հիշատակած «Հայոց աշխարհի աղանդը»:

Գրկ. Տեր-Մկրտչյան Կ., Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձվածաբին երեւոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղեմ, 1938: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968: *Ленцман Я., Происхождение христианства, М., 1960;* Harnack A., Geschichte der altchristlichen Literatur bis Eusebius, Erster Teil, Überlieferung und Bestand, Lpz., 1893; Doresse J., The Secret Books of the Egyptian Gnostics, L., 1960.

ԳՈՀԱՐԻՆՅԱՆՔ, սուրբ Գոհարինյան վկաներ (նահ. 1156 կամ 1155, ք. Սեբաստիա), XII դարի տոնելի վկաներ. չորս սեբաստացի եղբայրներ՝ Գոհարինոս (Գոհարմելիք), Ռատիկոս (Ռատիոս), Ծամիդոս (Ծամիդես) և Տուքիկոս (Տունկիոս): Որդիներն էին Դավիթ անունով սեբաստացի մի հայ իշխանավորի, որն իր ավագ որդու՝ Արեգի (Արևի) հետ ընդունել էր մահմեդականություն՝ ընտանիքը փրկելու նպատակով, բայց հիշյալ չորս երիտասարդները, մահմեդ. բանակում ծառայելով հանդերձ, համարձակորեն վկայում էին իրենց քրիստ. հավատքը՝ հետևելով բարեպաշտ մոր վարքին:

Զինվորները չարախոսել են եղբայրների մասին, թե, լինելով մահմեդ. հոր զավակներ, դարշում են մահմեդականներից և իբր ուրացել են իսլամն ու ընդունել քրիստ. կրոնը: Եղբայրները, հանուն հավատի, հրաժարվել են բանակից, բայց նրանց վերստին ամբաստանել են, ենթարկել բազմապիսի չարչարանքների՝ հավատուրացության մղելու նպատակով: Երբ Գ. ասերկյուղ վկայել են, որ հանուն Հիսուսի պատրաստ են մահվան, այնժամ գլխատման հրահանգ է տրվել, որը գործադրվել է, հավանորեն, 1156-ի հունվ. 28-ին (ըստ այլոց՝ 1136-ին և կամ 1155-ի հուլիսի 28-ին): Չորս մարտիրոսների մարմիններն ու կտրված գլուխները ամփոփվել են Մարդճակի գետեզրի Քառակուսի կոչված ճանապարհի մոտ:

Գոհարինոսի որդին՝ Թեոդորոսը, քահանայացել է: Շուտով նրան էլ են ամբաստանել և դրդել հավատուրացության: Մերժելով՝ Թեոդորոսը բանտարկվել է: Ապարդյուն են անցել նաև նրան բռնությամբ մզկիթ մտցնելու բոլոր ջանքերը: Թեոդորոսը մինչև մահ մնացել է անհողդողդ քրիստոնյա: Նրան սպանել են՝ կտոր-կտոր անելով, հոր մահից 5 ամիս հետո:

ԳՈՇԱՎԱՆՔ

Հայ եկեղեցին ս. Գ-ց հիշատակը տոնում է Վերափոխման 3-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի օրը՝ ս. Ստեփանոս Ուլնեցու հիշատակի հետ միասին:

Գրկ. Գիրք, որ կոչի Այսմաւուրք, ԿՊ, 1730: Ավգերյան Մ., Լիակատար վարք..., հ. 12, Վնտ., 1815, էջ 114–115: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786, էջ 49: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912, էջ 1396–97:

Քնարիկ Տեր-Դավթյան

ԳՈՇԱՎԱՆՔ, Նոր Գետիկ վանք, ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղի եզրին, Գետիկ գետի աջ ափին: Միջնադարյան կրոն., կրթ. և մշակութ. խոշոր կենտրոններից: 1188-ին, իշխան Իվանե Զաքարյանի աջակցությամբ, հիմնադրել է *Մխիթար Գոշը* երկրաշարժից ավերված Գետիկ վանքի մոտակայքում և այստեղ տեղափոխել միաբանությունը: Սկզբում անվանվել է Նոր Գետիկ, Մխիթար Գոշի մահվանից (1213) հետո նրա անվամբ կոչվել Գ.: Ըստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ վանքի առաջին՝ Ս.Գրիգոր Լուսավորիչ «Հրաշագեղ» փայտակերտ եկեղեցու օծմանը Հաղարծինի վանահայր Խաչատուր Տարոնացին Գ-ին նվիրել է երկու գյուղ և այգի:

1191–96-ին Հաթերքի Վախթանգ իշխանի և նրա եղբայրների օժանդակությամբ Մխիթար Գոշը կառուցել է վանքի գլխ.՝ Ս.Աստվածածին եկեղեցին (ճարտ.՝ Մխիթար Հյուսն): Այն ունի մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք, Ավագ խորանի երկու կողմերում՝ կրկնահարկ ավանդատներ: 1197-ին, Ծառզատկի օրը, Հաղպատի վանահայր Հովհաննես եպիսկոպոսի ներկայությամբ եկեղեցու օծման հանդիսությանը Զաքարյան իշխանները Գ-ին նվիրել են կալվածքներ, իսկ Վախթանգ իշխանի կին Արզուխաթունը՝ իր և դուստրերի գործած, Փրկչի ու սրբերի պատկերներով վարագույր, որը, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, հիացրել է ամենքին: 1197–1203-ին Ս. Աստվածածին եկեղեցու արմ. կողմին կից կառուցվել է քառասյուն, կենտրոնակազմ հորինվածքով գավիթ (ճարտ.՝ Մխիթար Հյուսն), ծածկի կենտրոնում՝ ութանիստ, երդիկավոր գմբեթով, արլ. անկյուններում՝ երկհարկանի ավանդատներով: XIII դ. սկզբին Մխիթար Գոշը կառուցել է վանքի Ս. Առաքելոց, Ս.Հռիփսիմե մատուռները և Ս. Հոգի փայտակերտ եկեղեցին, վանքի հվ. բլրակի գագաթին՝ Ս. Համբարձման մատուռ-դամբարանը, որտեղ և թաղվել է (1213):

1231-ին Մարտիրոս և Գրիգոր եղբայրները Գ-ի համալիրի հվ-արլ. կողմում կառուցել են գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Գրիգոր եկեղեցին, որի շինարարությունն ընդհատվել է Ջալալեդդինի արշավանքի ժամանակ և ավարտվել Գրիգոր Կապալեցու ջանքերով: 1237–41-ին, գավթի հվ. պատին գրեթե կից, ամիրսպասալար Ավագ Զաքարյանի կառավարիչ Գրիգոր Տղա իշխանը կառուցել է Ս. Գրիգոր Լուսավորիչ միանավ թաղածածկ եկեղեցին, որին իր հարդարանքի արտակարգ ճոխության և նրբագեղության համար Կիրակոս Գանձակեցին անվանել է «զարմանակերտ»: Եկեղեցին, թեև փոքրաչափ, առանձնանում է Գ-ի ողջ համալիրում, և նրա հարդարանքը հայկ. միջնադարյան դեկորատիվ արվեստի ամենատպավորիչ ստեղծագործություններից է: Վանահայր Մարտիրոսի օրոք (մինչև 1241-ը) գավթից հս., նրան կամարակապ միջանցքով հաղորդակից, կոպտատաշ խոշոր քարերով կառուցվել են վանքի



Գոշավանքի հատակագիծը. 1. Ս. Աստվածածին եկեղեցի, 2. գավիթ, 3. Ս. Գրիգոր եկեղեցի, 4. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 5. ժամատուն, 6. գրատուն-զանգակատուն

փայտածածկ գրատունը և նրան արմ-ից կից ժամատունը: 1254-ին, Մխիթար Գոշի դամբարանի մոտ, Խաչատուր վարդապետը և Բարսեղը կառուցել են խորանարդաձև ծավալով, գմբեթավոր Ս. Գևորգ եկեղեցին:

Գ. XIII դ. եղել է Հայաստանի կրոն., կրթ. և մշակութ. խոշոր կենտրոն: Այդտեղ գործել է բարձրակարգ ուս. հաստատություն, որը

պատմ. աղբյուրներում անվանվել է վարժապետարան, համալսարան, ճեմարան: Գ-ի վարդապետարանում դասավանդել են հայոց և օտար լեզուներ (հուն., լատ.), քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն: Այստեղ կրթվել և գործել են *Կիրակոս Գանձակեցին* և *Վանական Վարդապետը*, որոնք հետագայում իրենց հիմնած դպրոցներում շարունակել են Գ-ի վարժապետարանի ավանդները: Գ-ում ընդօրինակվել և ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք պահվել են վանքի գրատանը:

XIII դ. Գ. ստացել է բազում նվիրատվություններ՝ գյուղեր, այգիներ, վարելահողեր, անտառներ, ջրաղացներ, դրամ, գրքեր ևն: 1242–50-ին Զաքարյան իշխաններն իրենց սեփականություն հանդիսացող Գ., կալվածքներով հանդերձ, 40 հզ. դուկատով վաճառել են Կարինից Արլ. Հայաստան տեղափոխված ժամանակի նշանավոր հարուստներից մեկին՝ պարոն Ումեկին, որի ժառանգները մինչև XIV դ. կեսը տիրել են վանքին: 1260-ին Գ. ազատվել է եկեղեց. տուրքից: 1291-ին վարդապետ Դասապետը և նրա եղբայր Կարապետը, ձեռամբ ճարտ-ներ Զաքիոսի ու Գրիգորի, գրատան փայտե ծածկը փոխարինել են երկու զույգ խաչվող կամարներ ունեցող համակարգով: Նրանք որպես երկրորդ հարկ կառուցել են Ս. Հրեշտակապետաց խաչաձև հատակագծով եկեղեցին և նրա վրա՝ այունազարդ զանգաշտարակ (չի պահպանվել): Գ-ի գրատուն-եկեղեցի-զանգակատունն օրինակ է ծառայել XIV դ. հայկ. երկհարկ եկեղեցիների համար:

Գ-ի համալիրի բաղկացուցիչ մասն են կազմում խաչքարերը, որոնց շարքում առանձնանում են վարպետ Պողոսի կերտած, ասեղնագործ նրբությամբ քանդակված զույգ խաչքարերը՝ դրված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արմ. ճակատի առջև, մուտքի երկու կողմերում (հվ. խաչքարը 1935-ին տեղափոխվել է ՀՊՊԹ): Հս. կողմի՝ տեղում մնացած խաչքարը, ըստ արձանագրության, 1291-ին կանգնեցրել է Սարգիս վարդապետը: XIII դ. վերջին Դասապետ վարդապետը և իր մորեղբայր Իգնատիոսը նորոգել են Ս. Աստվածածին եկեղեցին, պարըսպապատել, այգի տնկել, որի բերքի մի մասը հատկացվել է վանքի հյուրանոցին:

XIV–XVI դդ. Գ-ում վանական կյանքն անկում է ապրել և վերստին աշխուժացել XVII դ.: XIX դ. վերջին վանքը դադարել է գործել: 1890-ական թթ. Սմբատ Փարսադանյանը նորոգել է Մխիթար Գոշի կառուցած Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին: 1937-ին նորոգվել է Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը, 1939-ին՝ Ս. Գրիգոր եկեղեցին, 1957–66-ին՝ Ս. Գևորգ և Ս.Աստվածածին եկեղեցիներն ու գավիթը: 1958-ին Մխիթար Գոշի դամբարանի մոտ նրան նվիրված հուշակոթող է կանգնեցվել, 1972-ին բացվել է Գ-ի թանգարանը, 1978-ին՝ բարեկարգվել վանքի տարածքը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.2, 2–3-րդ պատկերները:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Հարությունյան Ի., Գոշավանք կամ Նոր-Գետիկ, ԱՀ, գիրք 10, Թ., 1903: Եղիազարյան Հ., Նոր Գետկավանք կամ Գոշավանք, «Էջմիածին», 1959, № 5–7: Թամանյան Յու., Գոշավանքի վերանորոգումը, «Էջմիածին», 1972, № 8: Դիվան հայ վիմագրության, պր. 6, Ե., 1977: Goshavank, Milano, 1974 (Documenti di architettura armena, 7).

Մուրադ Հասրաթյան

ԳՈՐԳԵՅԻՆԵՐ, Գորգիկ, աղանդավորական հոսանք XIII–XIV դարերում. տարածված էր Կիլիկիայում, Երզնկայում: Աղանդի հիմնադիրը եղել է ոմն Գորգ (Գորգիոս): Միջնադարյան քնարերգու Հովհաննես Թլկուրանցու (XIV–XV դդ.) տաղերից մեկում ասվում է, որ նա Նարեկ գյուղի տանուտերն էր: Որոշ ժամանակ ապրել է Կիլիկիայում, Լամբրոնից արլ., Արմեն լեռան հս. լանջին գտնվող Արմեն անապատում, ունեցել բազմաթիվ աշակերտներ: Նրանցից ոմանք անցել են Երզնկա և ծավալել աշխույժ գործունեություն: Աղանդի հետևորդները դավանել են արիոսական (տես *Արիոսականություն*) և սաբելյան (աստվածաչարչարություն) դաղափարներ: Ըստ Մխիթար Ապարանեցու (XIV դ.) վկայության, Գ. նույնացնում են Քրիստոսին, Հորը և Սուրբ Հոգուն, հետևաբար, նրանց պնդումով, Խաչի վրա չարչարվեց և մեռավ Սուրբ Երրորդությունը: Երզնկայում ապաստանած աղանդավորներից Մովսեսը սահմանել էր կանոններ, որոնցից մեկը հրահանգում էր ինչպես եկեղեցում, այնպես էլ նրանից դուրս բարձրաձայն չարտաբերել «Հայր մեր» տերունական աղոթքը, «այլ՝ միայն ի միտս եւ ի ծածուկ»:

Գրկ. Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի Պլուզ. կյանքը և գործը, Ե., 1993, էջ 18–20, 210:

Հակոբ Քյոսեյան

ԳՌՆԵՐԻ ՎԱՆՔ, Կիլիկիայի Հայկական թագավորությունում, Մալևոնի գավառում, Բարձրբերդ գավառի սահմանի մոտ: Ըստ Ղ. Ալիշանի՝ կրել է համանուն գյուղի անունը, եղել Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ի կրտսեր եղբայր Հովհաննես Արքաեղբոր «բնիկ հայրենիքը»: Գ. վ-ի մասին պատմ. տեղեկությունները սակավ են, պարզ չէ նույնիսկ համալիրի կազմը, ստույգ տեղը: Եղել է Մալևոնի եպիսկոպոսանիստը: Վանքը հովանավորել, առաջնորդել և զարգացրել է Հովհաննես Արքաեղբայրը: Նրա մահից (1289) հետո Գ. վ-ի առաջնորդությունն ստանձնել են Ստեփանոսը՝ «այր հեզ և մեծ բաբունի», Ներսեսը (1316) և Մխիթարը (հետագայում՝ կաթողիկոս *Մխիթար Ա. Գոշերցի*): Գ. վ. եղել է Կիլիկիայի նշանավոր վանքերից, հայկ. գրչության և մանրանկարչության կենտրոն: XIII դ. 2-րդ կեսին հռչակվել է, ինչպես՝ Հռոմկլան, Ակները, Բարձրբերդը, Արքակաղինը, Դրազարկը, Սկևռան: Գ. վ. գոյատևել է մինչև Կիլիկիայի Հայկ. թագավորության անկումը (XIV դ. վերջ): Գ. վ-ում է գրվել Հովհաննես Արքաեղբոր մանրանկարչական դպրոցի՝ մեզ հասած ձեռագրերից հնագույնը՝ 1263-ի Ավետարանը, որն այժմ գտնվում է Վաշինգտոնում՝ Ֆրիրի ժողովածուում: Երևանի Մատենադարանում են պահվում Գ. վ-ում գրված և պատկերազարդված 1270-ի Աստվածաշունչը (ձեռ. № 345, գրիչ՝ Բարսեղ, ծաղկող՝ Թորոս Ռոբինանց), 1284-ի «Մասունք Նոր կտակարանի»-ն (ձեռ. № 196, գրիչ՝ Կոստանդին, ծաղկողներ՝ Ստեփան Վահկացի, Գրիգոր Պիծակ), 1284–88-ի «Մասունք Աստվածաշնչի»-ն (ձեռ. № 195, գրիչ՝ Կոստանդին) և 1303–04-ի Աստվածաշունչը (ձեռ. № 182, գրիչ՝ Մարտիրոս):

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.2, 4-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Ոսկյան Հ., Կիլիկիայի վանքերը, Վնն., 1957:

ԳՏՉԱՎԱՆՔ, Գտիչի վանք, Մեծ Հայքի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառում (այժմյան ԼՂՀ Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ, Տողասար լեռան լանջին): Հիմնադրվել է վաղ միջնադարում: Ըստ VII դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացու, *Պարտավի եկեղեցական ժողովին* մասնակցել է նաև Գ-ի ներկայացուցիչը: Վանքի անունով Գտիչ է կոչվել նրանից վերև կառուցված ամրոցը, որը IX դ. եղել է Եսայի իշխանի նստավայրը, հետագայում՝ Դիզակի մելիքների Բերդավանը: Գ. բարգավաճել է XII–XIV դդ.: Վանքի համալիրը բաղկացած է երկու միմյանց կից եկեղեցիներից, գավթից, բնակելի սենյակներից: Գլխ. եկեղեցին՝ մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածքով, սրբատաշ ֆելզիտով կառուցել են *Ամարասի վանքի* Սարգիս և Վրթանես եպիսկոպոսները 1241–46-ին և վանքին նվիրաբերել ընդարձակ հողային տարածքներ: Հովանոցաձև վեղարով գմբեթի թմբուկն ունի չեչտված վերձիգ համաչափություններ: Հս-ից կից է կոպտատաշ բազալտով կառուցված միանավ, թաղածածկ, արլ. ուղղանկյուն խորանով երկրորդ եկեղեցին, որի ավանդատները գտնվում են խորանի հատակի տակ (նման տեղադրությունը եզակի է հայկ. ճարտ. մեջ): Եկեղեցիներին կից է թաղածածկ գավիթը, որի ներսում կանգուն է եպիսկոպոս Վրթանեսի 1246-ի խաչքարը:

XV դ. Գ. դարձել է նաև մշակութ. կենտրոն, ունեցել է գրչատուն: 1717-ին Գ-ի գլխ. եկեղեցու գմբեթը նորոգել է Տողի գյուղացի Սայունը: 1723-ին Մելիք Եգանը եպիսկոպոս Մեսրոպին նշանակել է տվել Գ-ի վանահայր: XIX դ. Գ-ի վանահայրն էր Առաքել վրդ. Կոստանդյանցը, որը գրել է Արցախի մելիքներին նվիրված աշխատություն, և նրանից օգտվել է Բաֆֆին իր «Խամսայի մելիքությունները» երկը գրելիս: 1868-ին երկրաշարժից ավերվել է միանավ եկեղեցին, և վնասվել գմբեթավորը, որից հետո Գ. լքվել է և ամայացել:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.2, 5-րդ պատկերը:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Բարխուդարյան Մ., Արցախ, Բաքու, 1895: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1982: Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992:

Մուրադ Հասրաթյան

ԳՐԻԳՈՐ ԱԼՈՒՍԱՎՈՐԻՉ, սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Գրիգոր Պարթև (239–325/326), Հայոց առաջին եպիսկոպոսապետ 302-ից, համաքրիստոնեական տոնելի սուրբ: Երբ մեկամյա մանուկ էր, ստնտու Սոփիան և ոմն Եվթաղ նրան փախցրել են Կապադովկիայի Կեսարիա քաղաքը՝ փրկելով Արշակունիների վրեժխնդրությունից (Հայրը՝ Անակ Պարթևը, Հայոց Խոսրով Ա թագավորին սպանողներից էր, իսկ Անակի ողջ ընտանիքը սրատվել էր): Կեսարիայում անմիջապես մկրտվել է քրիստոնյա՝ Գրիգոր (հուն.՝ ար-

թուն, հսկող) անունով (հեթանոս. ենթադրյալ անունը՝ Սուրեն): Նույն քաղաքում ստացել է բարձրագույն կրթություն («վարժեալ էր հելլենացի և ասորի դպրութեամբ») և Փիրմիլիանոս արքեպիսկոպոսի մոտ քրիստ. հիմնավոր դաստիարակություն: «Յարբունս հասակի հասեալ» ամուսնացել է կեսարացի Դավթի դստեր՝ Մարիամի հետ: Երկու զավակ (Վրթանես ու Արիստակես, ապագա Հայոց կաթողիկոսներ՝ *Արիստակես Ա Պարթև, Վրթանես Ա Պարթև*) ունենալուց հետո բաժանվել են: Գրիգորը մտել է արքունական ծառայության, Մարիամը կրտսեր որդու հետ՝ կուսանոց, իսկ ավագին հանձնել են խնամատուն: 276-ին, երբ պարսից Վռամ թագավորը գրավել է Հայաստանը, Գրիգոր Պարթևը *Տրդատ Գ Մեծի* հետ գնացել է Հռոմ. կայսրություն: 287-ին վերադառնալով Հայոց գահին՝ Տրդատ Գ Մեծը, ի նշան հաղթության, Եկեղյաց գավառի Երիզա ավանի մոտ՝ Անահիտի մեհյանում գոհության տոնախմբություն է կազմակերպել: Հայոց թագավորը քրիստոնյա պալատականներին, այդ թվում՝ Գրիգոր Պարթևին (որոնք ազատվել էին կռապաշտ. արարողություններից), հրամայել է մասնակցել պաշտամունքին և երկրպագություն մատուցել Անահիտի մեհյանում: Գրիգոր Պարթևը մերժել է, և Տրդատ Գ, ըստ *Ագաթանգեղոսի*, որի Պատմությունը Գրիգոր Լուսավորչի վարքի հիմն. սկզբնաղբյուրն է, նրան ենթարկել է չարչարանքների՝ հուսալով, որ նա տեղի կտա և կուրանա Քրիստոսին: Գրիգոր Լուսավորչի չարչարանքների վայրում կառուցվել է ցայսօր կանգուն Զարչարանց Ս. Լուսավորիչ վանքը (Երզնկայից հվ., Մեղուցիկ գ. մոտ, լեռան ստորոտին):

Այդ խոշտանգումները (12 չարչարանքներ) հետևյալ կերպ է նկարագրում Ագաթանգեղոսը.

ա. Ձեռքերը կապած, գայլ ի բերան, թիկունքին՝ աղի բեռ, կուրծքը բարձր գելարանից վար կախեցին: բ. Մեկ ոտքից կախելով՝ աղբ ծխեցրին և դալար բրերով ծեծեցին: գ. Ոտքերը կոճղերի մեջ ճզմեցին: դ. Ոտքին երկաթյա բևեռներ մխելով՝ վազեցրին: ե. Գլուխը կոփահար անելով՝ ծեծեցին: զ. Գլուխը մամլիչի մեջ դնելով՝ քթի մեջ քացախ և բորակ փչեցին: է. Գլուխը մոխրով լեցուն պարկի մեջ կապեցին: ը. Գլխիվայր կախելով՝ նստատեղից ձագարով ջուր լցրեցին: թ. Կողերը երկաթե ճանկերով քերեցին: ժ. Երկաթե դաստակների վրա քաշելով՝ քերեցին: ժա. Ծնկները երկաթե կապիճների մեջ ձգելով՝ կախեցին: ժբ. Հալած կապարով մարմինը այրեցին:

Ագաթանգեղոսի հետևողությամբ հայ միջնադարյան մատենագիրները առանձնակի հոգևոր խորհուրդ են հաղորդել չարչարանքներից յուրաքանչյուրին և դրանց թվով տասներկուսը լինելուն: Այս մեկնաբանություններն ամբողջական և համակարգված տվել է *Գրիգոր Տաթևացին*: Ըստ նրա՝ 12 չարչարանքները փոխկապակցված երկու խորհուրդ ունեն: Առաջինը խարսխվում է միջնադարյան բնագիտ. այն ըմբռնման վրա, որ մարդը 12 անդամներ ու զգայարաններ ունի, որոնք ապականվել էին Ադամի կողմից մեղքի պտուղը ճաշակելիս, երբ նա իր զգայարաններով խաբվել է և ցանկացել ոտքերով ուղղվել դեպի ծառը, ձեռքով պոկել և բերանով ճաշակել: Ըստ այդմ՝ Գրիգորն իր տասներկու չարչարանքներից յուրաքանչյուրով, որոնցից ամեն մեկը հարաբերվում է մարդկային մարմնի տվյալ անդամի և զգայարանի հետ, ջնջել է դրանց ապականությունը:

Երկրորդ բացատրությունն առնչվում է տասներկու *առաքյալների* հետ: Քրիստոնեությունը քարոզելիս և տարածելիս առաքյալներից յուրաքանչյուրը նահատակվել է մյուսներից տարբերվող առանձին մի չարչարանքով: Համաձայն Գրիգոր Տաթևացու՝ առաքյալների կրած այս տասներկու չարչարանքներից յուրաքանչյուրը Գրիգոր Լուսավորիչն է կրել՝ դառնալով բոլոր առաքյալներին չարչարանակից:

Բռնություններից հետո (ավելի քան մեկամսյա) նախարար Արտավազդ Մանդակունու քրոջ ամուսին Տաճատ Աշոցյանը հայտնել է, որ Գրիգոր Պարթևը թագավորահորն սպանողի որդին է: Տրդատ Գ-ի հրամանով 287-ին նրան նետել են մահապարտների բանտ՝ Խոր վիրապ (տես *Խոր վիրապի վանք*):

Ըստ ավանդության, Խոր վիրապում Գրիգոր Պարթևը մնացել է շուրջ 14 տարի: Նրա վիրապային կյանքը հրաշք է, և այդտեղ կենդանի մնալը աստվածային աջանչելիների մի հատուկ նշան է համարվում: Աստվածային դթությամբ մի այրի կին գաղտնի զնդան է նետել հանապազօրյա հացը, և մի հրեշտակ ամենօրյա այցելություններով քաջալերել է Գրիգորին:

Տրդատ Գ Մեծը, հետևելով հռոմ. Դիոկղետիանոս կայսրի օրինակին, հրովարտակով արգելել է նոր կրոնը և դաժանորեն հալածել քրիստոնյաներին: Նրա հրամանով Գրիգոր Պարթևի բանտարկության վերջին տարում՝ 301-ին (վիրապից ելնելուց 9 օր առաջ), Վաղարշապատի մոտակայքում նահատակվել են ս. Հռիփսիմյան և ս. Գայանյան 37 վկայուհիները (տես *Հռիփսիմյանց կույսեր, Գայանյանց կույսեր*):

Համաձայն Ագաթանգեղոսի՝ Տրդատը վեց օր ընկղմվել է մելամաղձոտ տխրության մեջ «առ անձուկ սիրոյ Հռիփսիմեայ», ի վերջո որսի է դուրս եկել, և նույն օրն էլ ի տրիտուր այդ ամենի՝ վրա է

հասել «Տիրոջ պատուհասը»: Դիվահարվել է թագավորը (բոլոր մերձավորներով) և, նմանվելով վայրի խոզի, մտել եղեգնուտը: Հարվածներից զերծ մնացած թագավորաքույր *Խոսրովիդուխտը* (նրա քրիստոնյա լինելու հավատիքն էր) հինգ անգամ կրկնվող տեսիլք է տեսնում, ըստ որի, դիվաբախներին կարող էր բուժել միայն Գրիգորը: Նրան վիրապից հանդիսավորությամբ Վաղարշապատ է բերել Խոսրովիդուխտի խնամակալ Օտա Ամատունին: Գրիգորը նախ հնձանահարկի տակ ամփոփել է նահատակ կույսերի աճյունները, ապա քարոզել Ավետարանը և հնգօրյա պահքով (տես *Առաջավորաց պահք*) նախապատրաստել պատուհասվածներին և ողջ ժողովրդին քրիստոնեություն ընդունելու: Այնուհետև, անսալով աղաչանքներին, բժշկել է արքային և մյուս ընկնավորներին: Ապաշխարած ու դարձի եկած Տրդատ Գ Մեծը հրամայել է, որ դադարեցվի քրիստոնյաների հալածանքը, և ժողովուրդը համարձակ պաշտի Քրիստոսի սուրբ հավատը:

Հաշվի առնելով հայոց քաղ. ու հոգևոր միասնության, անկախ դոյավիճակի ապահովման, հարևան այլակրոն պետությունների ազդեցությունից երկիրը ձերբազատելու կարևորությունը, հայ նախարարների շրջանում հռոմեամետ և պարսկամետ կողմնորոշումների ձևավորումը և այլ հանգամանքներ՝ Տրդատ Գ Մեծը 301-ին քրիստոնեությունը Հայաստանում, առաջինն աշխարհում, հռչակել է պետ. կրոն: Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելով՝ Տրդատ Գ Մեծը և Գրիգոր Լուսավորիչը ձգտել են լուծել պետության ամբողջականության, ազգ. ինքնուրույն պահպանման ու ամրապնդման, ազգի բոլոր հատվածների համախմբման և միասնության խնդիրը: Երկրում իշխող բազմաստվածությունը՝ իբրև աշխարհայացք և դաստիարակություն, պատմ. նոր պայմաններում ոչ միայն ի վիճակի չէր նպաստելու ծառացած խնդիրների լուծմանը, այլև բովանդակում էր հայ նախարարական տների կենտրոնախույս միտումների դաստիար. հիմնավորումը: Բազմաթիվ և խայտաբղետ կրոնադաստիար. վարդապետություններից այդ պահանջներին առավելագույնս բավարարում էր հզորացող քրիստոնեությունը: Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելով՝ հոգևոր և դաստիար. նախադրյալներ են ստեղծվել ինչպես զրադաշտ. Պարսկաստանից, այնպես էլ դեռևս հեթանոս. Հռոմից դաստիարախոսական սահմանազատման, իսկ միջնորդավորված ձևով՝ նաև քաղ. ինքնուրույնության և անկախության համար: Քրիստոնեության ընդունումը նախանշել է հայ ժողովրդի և պետության հետագա զարգացման ուղիները, հոգևոր կյանքի, մշակույթի, գիտության, արվեստի, մտածողության և աշխարհընկալման ուղենիշներն ու չափանիշները, որոնք, թեև դժվարությամբ, բայց հետզհետե թափանցել են ազգ. գիտակցության, ապրելակերպի, կենցաղի մեջ:

Տրդատ Գ Մեծը պետ. հիմքերի վրա է դրել նաև եկեղեցապետի ընտրությունը. հրավիրելով ավագանու ժողով՝ Գրիգոր Լուսավորչին կարգել է Հայոց եպիսկոպոսապետի (Հայրապետի) պաշտոնում, դրանով վավերացնելով եկեղեցու և հովվապետի ենթակայությունը թագավոր. իշխանությանը:

Գ. Ա Լ. 302-ի սկզբին 16 նախարարների ուղեկցությամբ և թագավոր. հրովարտակով մեկնել է Կեսարիա, որտեղ նրան եպիսկոպոս է ձեռնադրել տեղի արքեպիսկոպոս Ղևոնդիոսը: Այդ ձեռնադրությամբ Կեսարիայի աթոռը բնավ չի միջամտել Հայ եկեղեցու գործերին, երբեք հսկողության իրավունք չի ունեցել, և ձեռնադրությունը կրել է զուտ ծիսական բնույթ: Տրդատ Գ Մեծն ու ավագանու ժողովն են ընտրել Հայոց առաքելական աթոռի հաջորդին, իսկ Կեսարիայի աթոռն այդ ձեռնադրությամբ պարզապես հոգևոր շնորհաբաշխություն է տվել Գ. Ա Լ-ին: Հայոց եպիսկոպոսապետը՝ որպես անկախ եկեղեցու գլուխ, ամեն ինչ ինքն է տնօրինել ու կարգադրել, եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ ձեռնադրել, թեմեր հիմնել, տոներ հաստատել, եկեղեց. կանոններ ու ծեսեր սահմանել՝ պահելով տեղական ավանդությունները և հետևելով ընդհանուր քրիստ. սովորություններին:

Գ. Ա Լ. Կեսարիայից գնացել է Սեբաստիա, որոշ ժամանակ հետո, Կարինի ու Հարքի ճանապարհով անցել Տարոն, որը Հայոց հեթանոս. կրոնի մեծ կենտրոններից էր: Կոտրելով քրմերի դիմադրությունը (ինքը՝ խաչով, նախարարները՝ զենքով)՝ Տարոնում հիմնել է քրիստ. կենտրոններ, այդտեղ ամփոփել իր հետ բերած *Հովհաննես Մկրտչի* (Ինանակյան բագինների վայրում, տես *Մշո Ս. Կարապետ վանք*), ս. Աթանագինեսի (իր աներորդու) մասունքների մի մասը, գերեզմանների վրա վկայարան կառուցել, նրանց համար հատուկ տոն սահմանել (ներկայումս Հայ եկեղեցին տոնում է Հոգեգալստյան առաջին կիրակին հաջորդող հինգշաբթի օրը) և պատվիրել, որ ամեն տարի հավաքվեն այդտեղ՝ սրբերի հիշատակը

տոնելու: Հայոց հայրապետը Հովհաննես Մկրտչի նշխարներից ամփոփել է նաև Եղբրդուտ կոչված տեղում (տես *Եղբրդուտի վանք*) և հիմնադրել Մատնավանքը՝ Աշտիշատի ստորոտին: Ապա Աշտիշատում մեծ եկեղեցի է կառուցել, Ս. Երրորդություն անունով սեղան կանգնեցրել, շինել մկրտության ավազան ու մկրտել իրեն ուղեկցող իշխաններին, զորքերին և բազմաթիվ նորադարձների:

Գ. Ա Լ. Տարոնից անցել է Բագրեվանդ: Տրդատ Գ Մեծը արքունիքով ընդառաջ է գնացել և Բագավան գյուղաքաղաքում դիմավորել Հայաստանի հովվապետին: Այստեղ ևս ամփոփելով Հովհաննես Մկրտչի, ս. Աթանագինեսի մասունքների մնացյալ մասը՝ դրանց վրա վկայարան է կառուցել, սեղան հիմնել ու Պատարագ մատուցել: 303-ի հունվ. 6-ի այգալույսին՝ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության օրը, *Արածանու* ակունքների մոտ, Նպատ լեռան ստորոտին մկրտել է Տրդատ Գ Մեծին ու արքունիքին, հայ ավագանու ներկայացուցիչներին: Ըստ Ագաթանգեղոսի՝ նույն վայրում յոթ օրերի ընթացքում մկրտել է նաև արքունական զորքին և ժողովրդին: Ամենամյա Նավասարդի օրը Բագավանում տոնվել է Ամանորի՝ Հյուսիսային Վանատուրի տոնը, որը Գ. Ա Լ. վերափոխել է ս. Հովհաննես Մկրտչի և ս. Աթանագինեսի հիշատակների քրիստ. տոնակատարության: Նույն ձևով հեթանոս. շատ տոներ և սովորություններ ներմուծվել են քրիստոնեության մեջ: 303-ի սկզբին արքան ու եպիսկոպոսապետը վերադարձել են մայրաքաղաք Վաղարշապատ և Գ. Ա Լ., համաձայն իր տեսիլքի, արքունական դահին մերձ, Միածնի իջման վայրում, հեթանոս. մեհյանի տեղում կառուցել է Էջմիածնի («Էջ Միածին») Կաթողիկե եկեղեցին (տես *Էջմիածնի Մայր տաճար*), որտեղ հաստատել է Հայոց առաքելական աթոռի նստավայրը, իսկ Էջմիածնի Կաթողիկեն դարձրել Հայոց Մայր եկեղեցին: Նորակառույց տաճարը Հայոց հայրապետն օծել է 303-ի օգոստ. 15-ին, Աստվածածնի Վերափոխման տոնի օրը (Էջմիածնի Կաթողիկե եկեղեցին նվիրված էր Աստվածածնին): Գ. Ա Լ-ի նախաձեռնությամբ և Տրդատ Գ Մեծի օժանդակությամբ, Հռիփսիմյան և Գայանյան կույսերի նահատակության վայրերում կառուցվել են վկայարաններ՝ այդտեղ ամփոփելով նրանց մարմինները (տես *Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանք, Էջմիածնի Ս. Գայանե վանք*): Գ. Ա Լ-ի տեսիլքի հետ է կապված նաև *Շողակաթ վանքի* կառուցումը:

Գ. Ա Լ. թագավորի հովանավորությամբ ձեռնամուխ է եղել եկեղեց. ամուր նվիրապետության ստեղծմանը: Հիմնել է Հայ եկեղեցու առաջին թեմերը (թեմերի առաջնորդներ է նշանակել դարձի եկած որոշ նախկին քրմապետների և քրմորդիների), ձեռնադրել եպիսկոպոսներ, Հայաստանի տարբեր գավառներում կառուցել նոր եկեղեցիներ, քարոզել Ավետարանը, ծավալել կրթ. գործունեություն: Գիտակցելով, որ հեթանոսությունը խոր արմատներ ունի ժողովրդի գիտակցության, կյանքի և աշխարհընկալման մեջ՝ Գ. Ա Լ. թագավորի անմիջական և գործուն աջակցությամբ ձեռնարկել է նոր սերնդի լուսավորության ու կրթության գործի կազմակերպումը՝ նրան քարոզչ. և կրոնաեկեղեց. գործունեության նախապատրաստելու համար: Նա հիմնել է հուն. և ասոր. բազմաթիվ դպրոցներ՝ լեզուներ սովորեցնելու, թարգմանիչներ պատրաստելու և Ս. Գրքին հաղորդակից դարձնելու նպատակով: Հատուկ ուշադրություն է դարձրել քրմական դասի զավակներին հավատի բերելուն, ինչը լուծում էր մի շարք խնդիրներ. նախ թուլանում էր քրմերի դիմադրությունը, ապա՝ նոր կրոնի տարածման և արմատավորման գործում ներգրավվում էին լավ դաստիարակություն ու կրթություն ստացած երիտասարդներ: Սակայն Գ. Ա Լ. ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է նախարարների, ինչպես նաև հասարակ ժողովրդի զավակների դաստիարակության և կրթության վրա, որոնք կոչված էին դառնալու նոր վարդապետության հիմն. քարոզիչները:

Գ. Ա Լ. քրիստոնեություն է տարածել նաև Վիրքում, Աղվանքում, Հս. Կովկասում, Խաղտիքքում, Մասքթաց երկրում, Միջագետքում, Ատրպատականում: Մանկահասակ թոռանը՝ *Գրիգորիսին* ձեռնադրել է Վրաց և Աղվանից քահանայապետ: Հետևելով քրմությանը՝ Գ. Ա Լ. տոհմ. ժառանգության իրավունքը պահպանել է նաև Հայ եկեղեցու վարչության մեջ: Արիստակես որդուն ձեռնադրելով եպիսկոպոս՝ դարձրել է իր տեղապահն ու եպիսկոպոսակիցը, դրանով հաստատել իր տոհմի հոգևոր ժառանգական իշխանությունը:

Գ. Ա Լ-ի անունով պահպանվել են 23 կրոնաբարոյախոս. ճառ պարունակող «Յաճախապատումը», մի քանի մանր երկասիրություններ և կանոններ: Նրան են պատկանում նաև

Նիկիայի Ա տիեզերական ժողովին (325) մասնակցած Արիստակես Պարթևի բերած Նիկիական կանոններում կատարված հավելումները: Որոշ ուսումնասիրողներ Գ. Ա Լ-ին են վերագրում նաև *Խորհրդատետր-Պատարագամատույցը*, մի շարք ծիսամատյանների կազմումը և նախն. խմբագրումը:

Հայրապետական գործը հանձնելով Արիստակեսին՝ Գ. Ա Լ. կյանքի վերջին տարիներն անցկացրել է ճգնակեցության մեջ, Դարանաղի գավառի Սեպուհ լեռան Մանեի այրում, որտեղ և վախճանվել է (օրը չի հիշատակվում)՝ ամփոփվելով նույն անձավում: Վրթանես Ա Պարթևի կաթողիկոսության ժամանակ նշխարները վերաթաղվել են նույն գավառի Թորդան գյուղում, Լուսավորչի տոհմական կալվածքում:

Գ. Ա Լ-ի նշխարները Թորդանից հանվել և սփռվել են ողջ քրիստոնյա աշխարհում և դարձել պաշտամունքի առարկա: Հայաստանում Գ. Ա Լ-ից մնացած միակ սրբությունն եղել է *Լուսավորչի Աջը*, որը նաև հայրապետ. իշխանության գլխ., պաշտոնական նշանակն է, և պարտադիր է նրա առկայությունը կաթողիկոսարանում:

Գ. Ա Լ-ի մյուս նշխարները և մասունքները հայոց մեջ խտացվել են Լուսավորչի Աջի մեջ: Դրան զուգահեռ XIII–XIV դդ. «Լուսավորչի լույս հավատքի» խորհրդանիշն են դարձել երկու աննյութեղեն առարկաներ՝ Սեպուհ լեռան վրա շողացող Տրդատի Հավլունի թուրը (ժող. ստուգաբանությամբ՝ հավու ուլնի՝ հավի երկաթ, որը կտրուկ և ամուր սրի իմաստն ունի) և Արագած լեռան կատարին առանց պարան կախված Լուսավորչի կանթեղը, որոնք միասնաբար խորհրդանշում են Հայոց արքայի և հայրապետի, եկեղեցու և պետության գործակցությունը, ինչպես նաև Սեպուհ լեռան վերևից ոսկե մի կամարով կապվելով Արագածի գագաթին, հոգևոր խորհրդանշական կապով միացնում են հայության երկու հատվածները:

Ըստ ավանդության՝ Տրդատ Գ Մեծը, Գ. Ա Լ-ի նման, կյանքի վերջին տարիներին տրվել է առանձնության Սեպուհ լեռան վրա: Հայոց հայրապետը, վերցնելով Հայոց արքայի թուրը, օրհնել է, նետել վեր. աստվածային զորությամբ սուրը խաչանման կախվել է Սեպուհ լեռան վրա և, Լուսավորչի մշտավառ կանթեղի լույսով ողողված, լույս է տալիս այնտեղից: Այդ մասին առաջին անգամ գրել է Վարդան Վարդապետն իր «Աշխարհացույց»-ում, որտեղ ասվում է, թե Լուսավորիչն առնելով «զթուրն օծեաց որպես զխաչ, եդ ի յօդն բանին Աստուծոյ»:

Ներսես Գ Տայեցին, ձեռամբ իշխան Գրիգոր Պատրիկ Մամիկոնյանի, Գ. Ա Լ-ի մասունքների մեծ մասը Թորդանից տեղափոխել և զետեղել է *Զվարթնոցում*: Այնուհետև նշխարները տարվել են Կ. Պոլիս, և նրանց հիմն. մասը VIII դ. վերջին հայ կույսերը փոխադրել են Իտալիայի Նեապոլ քաղաքը: Այդտեղ ի պատիվ Գ. Ա Լ-ի կառուցվել է Ս. Գրիգոր Հայի եկեղեցին՝ իր կուսանոցով: Եկեղեցում մեծ պատվով պահել են Գ. Ա Լ-ի գլուխը՝ ամփոփված պղնձե և համակ ոսկեզօծ կիսարձանի մեջ, շղթայի մասեր և այլ նշխարներ: Նեապոլի առաջին պաշտպան ս. Գենարիոս եպիսկոպոսից հետո Գ. Ա Լ. ճանաչվել է քաղաքի երկրորդ երկնային պաշտպանը և ունի հատուկ տոն (սեպտեմբերի 30-ին): 2000-ի նոյեմբ. 11-ին, *Գարեգին Բ Ներսիսյանի* Վատիկան կատարած այցելության ժամանակ Հովհաննես Պողոս II պապը Ամենայն հայոց կաթողիկոսին է հանձնել Գ. Ա Լ-ի մասունքների մի մասը, որոնք պահվում են *Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու* գավթում:

Գ. Ա Լ-ի՝ «Մեծ Հայոց սուրբ Գրիգորի» պաշտամունքը V դ-ից սկսած մեծ տարածում է ունեցել նաև Բյուզանդիայում, մասնավորապես՝ Հունաստանում: Ներկայումս էլ Հունաստանի եկեղեցիներում և վանքերում (Խալկիոնի Ս. Կույս, Սալոնիկի Ս. Նիկողոս Օրփանոս, Լակոնիայի Ս. Աթանաս, Լատիսսայի Ս. Գևորգ, Միստրայի Հոդիղիտրիայի եկեղեցիներ, Ֆոսիդեի Ս. Ղուկաս, Մակեդոնիայի Ս. Հովհաննես Մկրտիչ, Աթոս լեռան Խերապոտամի և Ս. Գրիգոր վանքեր ևն) կան Գ. Ա Լ-ին նվիրված սրբանկարներ, որմնանկարներ, խճանկարներ (դրանց ուսումնասիրությամբ զբաղվել է Ս. Տեր-Ներսեսյանը), ինչպես նաև նշխարներ և մասունքներ՝ ամփոփված արծաթե, բրոնզե և փայտե մասնատուփերում:

Գ. Ա Լ-ի պաշտամունքը դեռ հնուց եղել է նաև Ռուսաստանում: Մոսկվայի Կարմիր հրապարակի կենտրոնում, Վասիլի Երանելու տաճարի համալիրի մեջ, ավելի քան 5 դար կանգնած է Հայոց Գրիգորի եկեղեցին (*Церковь Григориса Армянского*)՝ Երանելու տաճարի գմբեթին կից վեր խոյացող գմբեթով: Կառուցվել է Իվան Ահեղի (1530–84) հրովարտակով, ի երախտագիտություն Կազանի թաթար. խանության դեմ պատերազմում հայ թնդանոթաձիգների անձնազոհության: Եկեղեցու բազում որմնանկարների ու սրբապատկերների շարքում երևելի է Սուրբ Գիրքը ձեռքին Գ. Ա Լ-ի ամբողջ հասակով մեծ սրբապատկերը, որի շուրջը կան նրա կյանքից դրվագներ ներկայաց-

նող տասնվեց նկարներ: Պատկերված են Տրդատ Գ-ի հանդիպումը Գ. Ա. Լ-ին, հեթանոսություն ընդունելու պարտադրանքը, Գ. Ա Լ-ի դատը, տանջահարության պատկերները, Գ. Ա. Լ. Խոր վիրապում, արքայի հիվանդանալը, հրեշտակի հայտնվելը թագավորաքրոջը՝ Խոսրովիդուխտին, ևն, մինչև Խոր վիրապից դուրս գալը: Գ. Ա Լ-ի սրբապատկերները կան Կրեմլի Ավետման և Սպասկու տաճարներում, ինչպես նաև Պսկովի, Ռոստովի, Կոլոմնայի և այլ քաղաքների եկեղեցիներում: Նովգորոդի Ներեդիցա տաճարի պատերը զարդարում են նաև Գ. Ա Լ-ի որմնանկարները:

Հայ եկեղեցին ս. Գ. Ա Լ-ին դասել է ավագ սրբերի կարգը: Նրան անվանում են «Հայոց Մկրտիչ», «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» (*Թադեոս* և *Բարդուղիմեոս* առաքյալներից հետո), իսկ քրիստոնեությունը հայոց մեջ կոչվում է նաև «Լուսավորչի լույս հավատք»: Նրա մասին հորինվել են բազմաթիվ երգեր, շարականներ, ներբողներ, տաղեր, հյուսվել ավանդություններ: Գ. Ա Լ-ին հայտնի ներբող է ձոնել Ընդհանրական եկեղեցու մեծ հայրերից *Հովհան Ոսկեբերանը*: Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոցը» ամբողջովին նվիրված է հայոց դարձին, Գ. Ա Լ-ի վարքին և վարդապետությանը: Հայկ. մանրանկարչության, որմնանկարչության, ձեռագիր մատյանների պատկերազարդման, եկեղեցիների բարձրաքանդակներում մեծ տարածում է գտել Գ. Ա Լ-ի պատկերագրությունը: Նրան նվիրված պատկերներն ընդգրկում են հայոց դարձի և մեծ սրբի կյանքի բոլոր գլխ. և հիմն. դրվագները:

Գ. Ա Լ., որպես համաքրիստ. սուրբ, հիշատակի օր ունի ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիներում (քույր եկեղեցիները նրա հիշատակը տոնում են սեպտեմբերի 30-ին): Հայ եկեղեցում ս. Գ. Ա Լ-ի հիշատակին նվիրված տոներն են. վիրապ մտնելը և չարչարանքները (Մեծ պահքի վեցերորդ կիրակի նախորդ շաբաթ օրը), վիրապից ելնելը (Հոգեգալստյան երկրորդ կիրակի նախորդ շաբաթ օրը), նշխարների գյուտը (Հոգեգալստյան չորրորդ կիրակի նախորդ շաբաթ օրը), իսկ Ս. Ծննդյան չորրորդ կիրակի կամ Վարդավառի երրորդ կիրակի նախորդ շաբաթ օրը տոնվում է ս. Գ. Ա Լ-ի որդիների և թոռների հիշատակը:

Կաթողիկոս. գահին Գ. Ա Լ-ին հաջորդել է Արիստակես Ա Պարթևը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.3, 1–4-րդ և 4.4, 1-ին պատկերները:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Մուտսուպուլոս Ն., Դիմիտրոկալլիս Կ., Սուրբ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Հունաստանի մեջ, «Էջմիածին», 1995, № 5: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997: Աշճյան Մ., Լուսավորչի լույս նշխարները, Ս. Էջմիածին, 2000:

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ, տես *Գրիգոր Նազիանզացի*:

ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ (ավազանի անունը՝ Վահրամ) (ծ. թ. անհտ – 1105, Քեսուն, ամփոփվել է Կարմիր վանքում), Ամենայն հայոց կաթողիկոս 1066-ից: *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* որդին: Հիմնադիրն է Պահլավունի կաթողիկոսների տան, որի ներկայացուցիչները Հայոց կաթողիկոս. գահը ժառանգել են մինչև XIII դ. սկիզբը: Հաջորդել է *Խաչիկ Բ Անեցուն*: Հոր մահից հետո փոխարինել է նրան Միջագետքի դուքսի պաշտոնում (1059): Շատ չանցած հրաժարվել է պաշտոնից և կնոջից, հեռացել աշխարհական կարգից ու դարձել վանական: Կաթողիկոս է ձեռնադրվել Ծամնդավում՝ Աբաս Կարսեցու որդի Գագիկ Շահնշահի միջնորդությամբ: Գ. Բ Վ. իր կաթողիկոսության տարիներին հաճախ է հայրապետ. աթոռը հանձնել փոխանորդների և մեկնել ճանապարհորդության կամ ճգնակենցաղ կյանք վարելու համար քաշվել Կիլիկիայի Սև լեռների վանքերը: Տարբեր տարիներ աթոռակից է նշանակել Գևորգ Լոռեցուն (1066–72), *Բարսեղ Ա Անեցուն*: 1076-ին մերժել է Փիլարտոս Վարաժնունու՝ հայրապետ. աթոռը Փառիսոս փոխադրելու առաջարկը և թույլատրել նրան կաթողիկոսություն հիմնել Հոնի բերդաքաղաքում (Մարաշի մոտ): Գ. Բ Վ. եղել է Կ.Պոլսում (1066 և 1072), Եգիպտոսում (1074 և 1085), Երուսաղեմում (1099): Եգիպտոսում նրան մեծ պատվով ընդունել է Մուսթանսիր խալիֆան: Գ. Բ Վ. իր եղբորորդուն՝ Գրիգորին, ձեռնադրել է եպիսկոպոս և նշանակել Եգիպտոսի հայոց առաջնորդ: Երուսաղեմի գրավման ժամանակ (1099) օժանդակել է խաչակիրներին:

Չնայած Գ. Բ Վ-ին են վերագրում «գիրս բազում», սակայն նրա գրչին պատկանող երկերից հայտնի է միայն 1102-ին Ծռազատկի կապակցությամբ գրված թուղթը: Նրա մեկնասությամբ է աշխատել Կիրակոս մեկնիչն ու

թարգմանիչը, որը Կ.Պոլսում հունարենից հայերեն է թարգմանել բազմաթիվ վարքագր. և հայրաբան. երկեր. այստեղից էլ՝ կաթողիկոսի «Վկայասեր» մականունը: Գ. Բ Վ. նորոգել է Հայ եկեղեցու ծեսերն ու սովորությունները, կատարել կրոնավորական և վանական կյանքի բազմաթիվ կարգադրություններ, պաշտպանել Հայ եկեղեցու ավանդները՝ ընդդեմ լատինադավան հոսանքի: Ձեռագրերում երբեմն սխալմամբ նրան են վերագրվում *Գրիգոր Գ Պահլավունի* (Փոքր Վկայասեր) կաթողիկոսի հեղինակած շարականները (Աստվածածնի Ավետյաց և Երկրորդ Ծաղկազարդի կանոնները): Գ. Բ Վ. համարվում է միության շարժման նախակարապետը: Նրա կաթողիկոսության շրջանում են սերտացել Հայ եկեղեցու փոխհարաբերությունները Ասորի Հակոբիկ, Հույն և Հռոմի եկեղեցիների հետ: Այդ քաղաքականությունը շարունակել են Պահլավունի հաջորդ կաթողիկոսները: Կյանքի վերջին տարիները Գ. Բ Վ. անցկացրել է Կիլիկիայի Քեսուն գավառի նշանավոր Կարմիր վանքում:

Կաթողիկոս. գահին Գ. Բ Վ.-ին հաջորդել է Բարսեղ Ա Անեցին:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.4, 2-րդ պատկերը:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785, էջ 989–996: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901:

Ազատ Բոզոյան

ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ (մոտ 1093, Եփրատից արևմուտք, Տլուք գավառի Ծովք գյուղում – 1166, Հռոմկլա), Ամենայն Հայոց կաթողիկոս 1113-ից: Հաջորդել է *Բարսեղ Ա Անեցուն*: Ուսումը ստացել է *Քեսունի Կարմիր վանքում*, սկզբում՝ *Գրիգոր Բ Վկայասերի*, ապա՝ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի հսկողության ներքո: Պատանեկան տարիքում, Գրիգոր Բ Վկայասերի կտակով, Բարսեղ Ա Անեցին նրան ձեռնադրել է եպիսկոպոս: Օծվելով կաթողիկոս՝ շարունակել է Պահլավունի հայրապետների եկեղեց. քաղաքականությունը: Պատճառաբանելով Գ. Գ Պ-ու երիտասարդ տարիքը՝ Պահլավունիների հակառակորդները Աղթամարում հակաթոռ կաթողիկոս են ձեռնադրել Դավիթ Թոռնիկյանին, դրանով սկզբնավորելով Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը (տես *Աղթամարի կաթողիկոսություն*): Կաթողիկոս. իշխանությունն ամրապնդելու համար Գ. Գ Պ. Սև լեռների Կարմիր վանքում 1113-ին հրավիրել է եկեղեց. ժողով, որտեղ նրա ընտրությունը օրինական են ճանաչել բուն Հայաստանի և Կիլիկիայի եկեղեց. գլխ. թեմերը և քաղ. ուժերը: Նրա օրոք կաթողիկոս. աթոռը Քեսունի Կարմիր վանքից 1116-ին տեղափոխվել է Ծովք, իսկ 1149-ից՝ Հռոմկլա: Գ. Գ Պ. փորձել է կարգավորել Հայ եկեղեցու փոխհարաբերությունները խաչակիրների և Բյուզ. կայսրության հետ: XII դ. 20–30-ական թթ. դիվանագիտ. հարաբերություններ է սկսել բյուզ. կայսր Հովհաննես II Կոմնենոսի հետ՝ փորձելով նրան հետ պահել Կիլիկիայի հայկ. իշխանության և Հայ եկեղեցու դեմ ծրագրված գործողություններից: Մեզ է հասել այդ առիթով բյուզ. կայսրին կաթողիկոսի հունարեն գրած նամակը: 1137-ին Կիլիկիայի տարածքը բյուզ. զորքերի նվաճելուց հետո Գ. Գ Պ. ավելի է սերտացրել շփումները Հռոմի և Արևելքում հաստատված խաչակիրների եկեղեց. կազմակերպությունների հետ: Նամակագր. կապեր է ունեցել Ոնորիոս II, Իննոկենտիոս II և Եվգենիոս III պապերի հետ: 1139–41-ին մասնակցել է Հռոմի պապի՝ Արևելք ուղարկած լեգատ (լիազոր ներկայացուցիչ) Ալբերիկ Օստրացու հրավիրած Անտիոքի և Երուսաղեմի եկեղեց. ժողովներին: Այս ջանքերի շնորհիվ Հռոմի եկեղեցին Գ. Գ Պ-ուն իր պաշտոն. գրություններում դիտել է որպես Արևելքում գործող քույր եկեղեցու առաջնորդ, առաջինը՝ հավասարազոր աթոռների շարքում: Գ. Գ Պ-ու գործունեության շնորհիվ ամրապնդվել է կաթողիկոս. իշխանությունը բուն Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ Եգիպտոսում, Բալկաններում, Փոքր Ասիայում և Ասորիքում: Կաթողիկոս. աթոռը Հռոմկլա տեղափոխելուց հետո Գ. Գ Պ. կրտսեր եղբոր և հաջորդ *Ներսես Շնորհալու* (Ներսես Դ Կլայեցի) հետ ավելի շատ զբաղվել է Հայ եկեղեցու ներքին գործերով, պայքարել աղանդավոր. և պառակտող. միտումների դեմ, հովանավորել գրական և մշակութ. կյանքը, նոր աշխուժություն մտցրել Հայ եկեղեցու հոգևորմշակութ. գործունեության մեջ: Գահակալության վերջին տարիներին (1165) բյուզ. Մանուել I կայսրի հետ սկսել է եկեղեցիների միության նպատակով բանակցություններ, որոնք շարունակվել են նաև իրենից հետո:

Գ. Գ Պ. հայտնի է իր գրական գործունեությամբ: Գրել է բազմաթիվ շարականներ, տաղեր և այլ գործեր: Հետևելով Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսին՝ թարգմանել կամ ուրիշ-

ներին է հանձնարարել վկայաբանությունների թարգմանությունը և կարգադրել, որ սրբերի նախատոնակներին եկեղեցիներում կարդացվեն նրանց վարքերը: Նրան կոչել են Գրիգոր Փոքր Վկայասեր: Գ. Գ Պ-ու հանձնարարությամբ է *Սամուել Անեցին* գրել իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագրությունը, Ներսես Շնորհալին՝ իր մի շարք երկերը: Գ. Գ Պ. շարականագիրների կիլիկյան դպրոցի երևելի ներկայացուցիչներից է: Նրա գրչի արգասիքն են *Շարակնոցի* Աստվածածնի Ավետյաց «Խորհուրդ անճառ» և Երկրորդ Ծաղկազարդի «Մեծահրաշ այս խորհուրդ» կանոնները, ինչպես նաև *Գանձարանի* Գրիգոր Ա Լուսավորչին նվիրված «Ի յելս արեւու արեւ ծագեցաւ մեզ արեւմտից» և *Ջրօրհնեքի* «Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ» տաղերը: «Ով զարմանալի» տաղը, որը մեզ է հասել մեղեդիով հանդերձ, հայ տաղերգության գոհարներից է՝ օժտված երաժշտաբանաստեղծ. բացառիկ արժանիքներով, որտեղ դրսևորվել են կիլիկյան երգարվեստի բնորոշ առանձնահատկությունները: Հարատևել է մի քանի տարբերակներով, որոնք XIX դ. ձայնագրել են Ե. *Տնտեսյանը* և Ն.*Թաշճյանը*, իսկ *Կոմիտասը* մշակել է քառաձայն երգչախմբի համար:

Կաթողիկոս. գահին Գ. Գ Պ-ուն հաջորդել է Ներսես Դ Կլայեցին (Ներսես Շնորհալի):

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կպ, 1912: Թահմիզյան Ն., Երաժշտությունը հայկական Կիլիկիայում, Ե., 1989: Բոզոյան Ա., Հռոմի պապ Ինոկենտիոս Բ-ի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն, «Էջմիածին», 1999, № 3:

Ազատ Բոզոյան
Աննա Արևշատյան

ԳՐԻԳՈՐ ԳՌՁԻԿ, Այրիվանեցի (ծ. և մ. թթ. անհտ), VII–VIII դարերի գիտնական, երաժիշտ: Այրիվանքի (*Գեղարդավանք*) միաբան: *Ստեփանոս Սյունեցու* հետ գիտ. նպատակներով մեկնել է Աթենք, ուսումնասիրել փիլիսոփայություն, աստվածաշնչյան բնագրեր և մեկնություններ: Կ. Պոլսում հուն-ից թարգմանել է Դիոնիսիոս Արիոպագացու, Նեմեսիոսի, Գրիգոր Նյուսացու երկերը, ծանոթացել Գերմանոս պատրիարքի հետ: Վերադառնալով՝ Գ. Գ. հաստատվել է Այրիվանքում: Ըստ *Մխիթար Այրիվանեցու*, մեղադրվել է գողոզամտության մեջ, հավանաբար երաժշտ. արվեստում մեծ վարպետության հասնելու համար, և արժանացել Ստեփանոս Սյունեցու հանդիմանանքին: Այրիվանքում ծավալել է ստեղծագործ. բեղուն գործունեություն: Գ. Գ. ժամանակի նշանավոր երաժիշտներից էր: Նրան են վերագրվում հոգևոր երգեր՝ դավթյան սաղմոսների նմանակմամբ, *Ճրագալույցի* երգերի, Կաղմոսի, Հեղինեի (ըստ Ն. Թահմիզյանի, բյուզանդացի անհայտ հեղինակներ են, որոնց անունները աղավաղված են հիշատակվել), Ռոմանոս Երգեցողի երգերի և այլ ստեղծագործությունների եղանակավորումները: Ն. Թահմիզյանի մեկնությամբ, Գ. Գ. վերոհիշյալ հեղինակների (հատկապես Ռոմանոս Երգեցողի) վանկային տիպի ստեղծագործությունները վերաեղանակավորել է զարդոլորուն (մելիզմատիկ) ոճով: Գ. Գ-ի երգերից առավել հիշատակվում է գիշերային ժամի (տես *Ժամերգություն*) «Օրհնեսցուքը» (որից մեկ սկսվածք է պահպանվել): Ենթադրվում է, որ Գ. Գ. առաջին առավոտերգերի և մեսեդիների (հոգևոր երգի ժանր) հեղինակն է: Նրա ստեղծագործություններն ամփոփվել են ավելի ուշ կազմված *Մանրուսում* ժողովածուներում: Երկար տարիներ ճգնել է Այրիվանքի մերձակա քարայրերից մեկում, որտեղ և վախճանվել է: Գերեզմանը համարվել է հրաշագործ, վրան կառուցվել է մատուռ:

Գրկ. Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վնտ.,1873: Հովսեփյան Գ., Մխիթար Այրիվանեցի (նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր), Երուսաղեմ, 1931: Թահմիզյան Ն., Գրիգոր Գռզիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը, ԲԵՀ, 1968, № 3:

Մհեր Նավոյան

ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱ (մոտ 1123/25–1193, ամփոփվել է Դրազարկում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1173-ից: Հաջորդել է Ներսես Դ Կլայեցուն (*Ներսես Շնորհալի*): Պահլավունիների տոհմից, Ներսես Շնորհալու ավագ եղբոր՝ Վասիլ Պահլավունու որդին: Կրթությունն ստացել է Հռոմկլայի կաթողիկոսարանում, հորեղբայրների՝ *Գրիգոր Գ Պահլավունի* և Ներսես Շնորհալի հայրապետների հսկողության ներքո: Երիտասարդ հասակում ձեռնադրվել է եպիսկոպոս, եղել Ներսես Շնորհալու օգնականն ու տեղակալը: Ըստ Մ. Օրմանյանի, «Տղա» մականունն ստացել է իբրև կաթողիկոսի որդեգիր, որը մշտապես ապրել է կաթողիկոսարանում և մեծացել որպես կաթողիկոսարանի տղա: 1165–1173-ին մասնակցել է հայ-բյուզ. եկեղեց. բա-

նակցություններին, որոնց առիթով հիշատակվում է բյուզ. աստվածաբան Թեորիանոսի Տրամախոսություններում: Իր գահակալության տարիներին շարունակել է հայ-հույն եկեղեց. բանակցությունները, որոնց արդյունքներն ամփոփվել են 1178-ի *Հռոմկլայի եկեղեցական ժողովում*: Սակայն Գ. Դ Տ-ի քաղաքականությունը, ուղղված երկու եկեղեցիների միությանը, հանդիպել է *արևելյան վարդապետներից* ոմանց դիմադրությանը, մասնավորապես, *Գրիգոր Տուտեորդին* խիստ մեղադրական նամակով դատապարտել է կաթողիկոսի միավորական ջանքերը: Գ. Դ Տ., շարունակելով Ներսես Շնորհալու եկեղեց. քաղաքականությունը, փորձել է սերտացնել բուն Հայաստանի և *Հռոմկլայի կաթողիկոսարանի* կապերը, անհամաձայնությունները հարթելու նպատակով նամակներ է գրել արևելյան վարդապետներին («Թուղթ առ վարդապետս Հիւսիսոյ»), առանձնապես՝ Գրիգոր Տուտեորդուն՝ պատասխանելով իր հացեին հնչած մեղադրանքներին և անդրադառնալով Հայ եկեղեցու դավան. տեսակետներին:

Գ. Դ Տ. եռանդուն մասնակցություն է ունեցել Մերձ. Արևելքի եկեղեցաքաղ. իրադարձություններին, միջեկեղեց. խնդիրներին, ընդլայնել Հայ եկեղեցու փոխհարաբերությունները մյուս եկեղեցիների հետ. իր թեկնածու Կոստանդինին առաջարկել է Հերապոլիս-Մմբեջի օրթոդոքս մետրոպոլիտության աթոռին, Կիլիկիայում Հակոբիկ ասորիների պատրիարք է ձեռնադրվել հայ-բյուզ. բանակցությունների մասնակից Թեոդորոս Բար Վահբունը: Գ. Դ Տ. նամակագր. կապեր է ունեցել Խաչակրաց երրորդ արշավանքի ղեկավարների, Եգիպտոսի սուլթան Սալահ ադ Դինի, բյուզ. կայսր Մանուել Ի-ի, Կ. Պոլսի պատրիարք Միքայել III Անքիալոսի, Հռոմի Ղուկիանոս (Լուկիանոս) III պապի հետ: Հետևելով Ներսես Շնորհալուն՝ Գ. Դ Տ. բյուզ. կայսր Մանուել Ի-ին գրած թղթերում կարևորել է եկեղեցիների միությունը, բայց «հաւասար ընդ հաւասարս» սկզբունքի հիման վրա: Հատկապես Հռոմկլայի ժողովի կապակցությամբ 1178-ին գրած թղթում Հայոց հայրապետը չեշտել է, որ հայերը թեև կողմնակից են եկեղեցիների անկեղծ միությանը, միաժամանակ մտադիր չեն նահանջել իրենց առաքելական ուղղությունից և հայրենի ավանդություններից: Այդ ոգով է արևելյան վարդապետներին և հատկապես Գրիգոր Տուտեորդուն գրած թղթերում բացատրել Հայ և Հույն եկեղեցիների միության իր մոտեցումները և հասկացրել, որ *քաղկեդոնականությանը* ոչ մի զիջում անելու մտադրություն չունի: Կյանքի վերջում ըմբոստացել է Լևոն Բ Ռուբինյան իշխանապետի վարած քաղաքականության դեմ:

Գ. Դ Տ., բացի դավան., միջեկեղեց. և ներեկեղեց. խնդիրներ բովանդակող թղթերից ու նամակներից (թվով 7), գրել է նաև չափածո գործեր, այդ թվում՝ պոեմներ, մանկավարժ. գրվածքներ: Չափածո գործերը գրված են *Գրիգոր Նարեկացու* և Ներսես Շնորհալու քերթվածների ազդեցությամբ: «Յիսուս Քրիստոս Որդի և Բան» պոեմը Գ. Դ Տ. գրել է Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գործի, իսկ իր գլուխգործոց համարվող «Ողբ վասն առմանն Երուսաղեմի» պոեմը՝ նույն հեղինակի «Ողբ Եդեսիոյ» պոեմի նմանությամբ: Իր մեծ նախորդին հետևելով հանդերձ, Գ. Դ Տ. զարգացրել է Ներսես Շնորհալուց սկզբնավորված հաս-քաղ. պոեզիան, ավելի ընդարձակել միջնադարյան ողբերի ժանրի շրջանակները: Շարունակելով կաթողիկոս *Գրիգոր Բ Վկայասերի* գործը՝ հավաքել է արժեքավոր ձեռագրեր և գրքեր՝ Կիլիկիայի վարդապետարանների և դպրատների գրադարանները հարստացնելու համար: Նրա հովանավորությամբ են ստեղծվել բժշկապետ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն»-ը, *Մխիթար Գոշի* «Դատաստանագիրք»-ը, *Ներսես Լամբրոնացու* և ուրիշների մի շարք ստեղծագործություններ:

Կաթողիկոս. գահին Գ. Դ Տ-ին հաջորդել է *Գրիգոր Ե Քարավեժը*:

Երկ. Բանաստեղծություններ և պոեմներ (աշխատասիր. Ա. Մնացականյանի), Ե., 1972:

Գրկ. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Ե., 1991: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Հակոբյան Գ., Գրիգոր Տղա, «Էջմիածին», 1964, № 12, 1965, № 1, № 5–10, 1966, № 2–4: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970:

Ազատ Բոզոյան

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻ, Կամախեցի, Գրիգոր Բուք [մոտ 1576, ք. Կամախ (Դարանաղի գավառ) – 22.9.1643, թաղված է Ռոդոսթոյի Ս. Փրկիչ եկեղեցու գավթում], ժամանակագիր, Ռոդոսթոյի Հայոց հոգևոր առաջնորդ (1609–43): Սկզբ. կրթությունն ստացել է Ծնանաուիճի (Կամախ) Ս. Աստվածածին վանքում, այնուհետև՝ Սեպուհ լեռան Քարահատակ կոչված վայրի դպրոցում, աշ-

կերտել է ժամանակի նշանավոր մանկավարժ Պարոն Ճգնավորին (Միակեցի): 1590-ին ձեռնադրվել է աբեղա և դարձել Սեպուհ լեռան Ս. Լուսավորիչ վանքի միաբան (մինչև 1597-ը): Վարդապետ. ուսումնառությունն ստացել է Բաբերդի Վահանաշեն ավանի ուսումնագիտ. կենտրոնում 1597–1600-ին, եղել Սրապիոն վրդ. Բաբերդացու (Օձտեղացու) աշակերտը: Ջալալիների ասպատակությունների շրջանում (XVII դ. սկիզբ) հեռացել է վանքից, շրջագայել Հայաստանում, 1600–03-ին հաստատվել Սաղմոսավանքում, որտեղ ընդօրինակել է Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ը (Վիեննայի մատենադարան, ձեռ. № 124): 1602-ին որպես նվիրակ ուղարկվել է Ջուղա: 1603-ին վերադարձել է Վահանաշեն և Սրապիոն Բաբերդացուց ստացել «դավազան վարդապետական իշխանության», այսինքն՝ ազատ դասավանդելու և քարոզելու իրավունք: 1604-ին Գ. Դ. մեկնել է Կ. Պոլիս, սակայն որոշ ժամանակ անց տեղափոխվել է Եգիպտոս, որտեղ և ձեռնարկել է Աստվածաշնչի ամբողջական ընդօրինակությունը (1605): 1606-ին եղել է Եգիպտոսում:

1607–08-ին հովվել է ջալալիների արշավանքների հետևանքով Կ. Պոլսում հաստատված Երզնկայի և Կամախի հայությանը, փորձել նրանց համար ստեղծել տանելի պայմաններ: 1608-ին նշանակվել է Ռոդոսթո (Թեքիրդաղ) քաղաքի հոգևոր հովիվ, 1609-ին հիմնադրել Ռոդոսթոյի հայոց թեմը, որի ենթակայության ներքո էր նաև Թուրքիայի նվաճած եվրոպ. տարածքներում ապրող հայությունը: Եղել է թեմի անդրանիկ առաջնորդը (1609–43): Բազմիցս շրջագայել է հայկ. գաղթավայրերում՝ Պոնտոս, Ղրիմ, Կ. Պոլիս, Եգիպտոս, Երուսաղեմ, Կիպրոս ևն: Կառուցել և նորոգել է տվել աղոթարաններ, վանքեր, եկեղեցիներ, մեծ դեր խաղացել Արմաշի վանքի հիմնադրման գործում: Ռոդոսթոյում կառուցել է Ս. Հովհաննես և Ս. Փրկիչ եկեղեցիները:

Գ. Դ. հիմնադրել է դպրոցներ, պատրաստել բազմաթիվ «դրոց աշակերտներ»՝ գրիչներ, ձեռագրեր ընդօրինակողներ: Նրան են աշակերտել XVII դ. կեսի նշանավոր եկեղեց. գործիչներ Մինաս Խախթեցին (Բաբերդցի), Խաչատուր Կեսարացին, Գասպար Ակնեցին, Արիստակես Երեցը, Հակոբ Ակնեցին և ուրիշներ: Ժամանակակիցները նրան մեծարել են «ամենայն իմաստիւք լի բաբունապետ», «երամեծ վարդապետ», «քաջարթուն հովիվ» պատվանուններով: Գ. Դ. գործուն մասնակցություն է ունեցել XVII դ. առաջին կեսի հայ հաս. և հոգևոր կյանքին, մասնավորապես՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքական աթոռի շուրջ ծավալված պայքարին: Փորձել է հարթել Գրիգոր Բ Կեսարացի, Հովհաննես Խուլ Կոստանդնուպոլսեցի և Զաքարիա Վանեցի պատրիարքների միջև վեճերն ու շուրջ 40-ամյա պայքարը, որից տուժում էր արևմտահայությունը: Հետապնդվել և հալածվել է Գրիգոր Բ Կեսարացու կողմից: Մեծ է Գ. Դ-ու դերը կաթոլիկ. քարոզչության դեմ պայքարում ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ՝ գավառներում, որի շնորհիվ Կ. Պոլսի հայոց պատրիարքական աթոռը զերծ է մնացել լատինամետ ազդեցությունից:

Գ. Դ. ընդօրինակել է Աստվածաշունչ, «Կանոնագիրք», «Կանոնք և խրատք», պատվիրել «Վարք հարանց», նորոգել տվել Շարակնոց, «Ժողովածու» և բազմաթիվ այլ ձեռագրեր, գրել մի շարք հիշատակարաններ: Հեղինակել է իր ուսուցիչ Պարոն Ճգնավորի կենսագրությունը՝ «Պատմութիւն Սուրբ հօրն երիցս երանելոյն Պարոն Միակեցին» (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 175): Գրել է Սեպուհ լեռան անապատների, մենաստանների ու վանքերի պատմության մասին առանձին աշխատություն՝ «Պատմութիւն Սեպուհ լերանց եւ զՄաքենեց եւ զԹաղենուցն յարեւելից կողմանց» (չի պահպանվել): Գ. Դ-ու գլխ. աշխատությունը 1634–40-ին գրած «Ժամանակագրութիւնն» է (ինքնագիր ձեռագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում): Աշխատության առաջին մասը սկսվում է 1018–1539-ին վերաբերող ժամանակագր. համառոտ ցանկով: Բուն ժամանակագրությունը 1595–1634-ի իրադարձությունների նկարագրություններն են, որոնք հիմնականում ինքնակենսագր. բնույթի նյութեր են: Աշխատության երկրորդ մասը վերաբերում է Ս. Էջմիածնի և Սսի կաթողիկոս. աթոռների 1590–1640-ի պատմությանը, որտեղ ներկայացված են նշանավոր եկեղեց. գործիչների կենսագրությունները և Հայ եկեղեցու կարևորագույն իրադարձությունները: Երկը ազգ-եկեղեց. պատմության արժեքավոր և ստուգապատում սկզբնաղբյուր է, XVI դ. վերջի և XVII դ. 1-ին կեսի Հայ եկեղեցու պատմության յուրօրինակ հանրագիտարան: Հեղինակն անդրադարձել է Ամենայն հայոց

կաթողիկոսության աթոռը Սսից Ս. Էջմիածին տեղափոխելու կարևորությանը, դատապարտել Սսի կաթողիկոսների վարքագիծը («...եղեն կաթողիկոսք Սըսոյ թոյլք և անարիք»): «Ժամանակագրությունը» եզակի և ստույգ տեղեկություններ է պարունակում Հայոց կաթողիկոսներ *Դավիթ Դ Վաղարշապատցու, Մովսես Գ Տաթևացու, Փիլիպոս Ա Աղբակեցու*, Ավետիս և Մելքիսեդեկ աթոռակիցների, Սսի կաթողիկոսների (Խաչատուր Ա Զորիկից մինչև Սիմեոն Բ Սեբաստացի), Երուսաղեմի Գրիգոր Պարոնտեր (Գանձակեցի) պատրիարքի և Կ. Պոլսի հայոց պատրիարքներ Հովհաննես Խուլ Կոստանդնուպոլսեցու, Գրիգոր Բ Կեսարացու, Զաքարիա Վանեցու և նրանց ժամանակակից երևելի հայ հոգևորականների ու վանական հաստատությունների մասին:

Գ. Դ. եղել է Հայ եկեղեցու, նրա ավանդույթների ջերմ պաշտպանն ու քարոզիչը: Անարգանքի սյունին է գամել կաթոլիկությունն ընդունած հայերին, դատապարտել Լվովի հայ համայնքի առաջնորդ Նիկոլ եպս. Թորոսովիչի շահատակությունները: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդել աղանդավոր Մեխլուի գործունեության մասին, նրան անվանել դիվաբնակ, հետևորդներին՝ մարախ, վարակ: Որպես ժամանակակից և ականատես Գ. Դ. պատկերել է Արմ. Հայաստանի քաղ., տնտ. ծանր դրությունը, կրոն. և հարկային քաղաքականությունը: Նկարագրել է ջալալիների շարժման սկիզբն ու վախճանը, նրանց կողմից հայկ. քաղաքների ու գյուղերի հրկիզումը, ժողովրդի գերեվարումը, մեկնաբանել ջալալիների շարժման սոց. դրդապատճառները, հետևանքները, ինչպես նաև Թուրքիայի ներքին՝ ճգնաժամային կացությունը: Անդրադարձել է նաև օսմ. սուլթանների մղած պատերազմների, արշավանքների պատմությանը: Երկը եզակի արժեք ունի Թուրքիայի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար:

«Ժամանակագրության» առանձին հատվածներ առաջին անգամ լույս են տեսել «*Սիոն*» ամսագրում (1866–67) և «Բյուզանդիոն» օրաթերթում (1907): 1915-ին Երուսաղեմում երկն ամբողջությամբ հրատարակել է Մեսրոպ վրդ. Նշանյանը:

Գրկ. Աղավնունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղեմ, 1929: Բաբայան Լ. Հ., Դրվագներ Հայաստանի XIV–XVIII դարերի պատմագրության, Ե., 1984: Պողարյան Ն., Հայ գրողներ (Ե–ԺԷ դար), Երուսաղեմ, 1971: Փաչաճյան Ս., Հուշամատյան Ռոտոսթոյի հայերուն (1606–1922), Բեյրութ, 1971: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կպ, 1914:

Պետրոս Հովհաննիսյան

ԳՐԻԳՈՐ Ե ՔԱՐԱՎԵԺ (ծ. թ. անհտ – 1194, ամփոփվել է Դրազարկում), Ամենայն հայոց կաթողիկոս 1193-ից: Հաջորդել է *Գրիգոր Դ Տղային*, որի քեռորդին էր: Պահլավունիների տոհմից: Դեռևս Գրիգոր Դ Տղայի գահակալման վերջին տարիներին սկսված՝ Հայոց կաթողիկոսության և Կիլիկիայի Ռուբինյան իշխանական տան հակամարտությունը Գ. Ե Քի-ի օրոք ավելի է սրվել: Նրա ընտրությունը պաշտպանել է բուն Հայաստանի հս-արլ. շրջանների (Հաղպատ, Սանահին) հոգևորականությունը, որը դեմ էր ծիսական և դավան. նորամուծություններին: *Արևելյան վարդապետների* և կիլիկյան հայ հոգևորականների հակամարտության պայմաններում կաթողիկոսը վարել է հակաբյուզ., Հայ եկեղեցու անկախությունը և ավանդ. դիմագիծը պահպանելու քաղաքականություն: Գ. Ե Քի. ամբաստանվել է հակառակորդներից, ապա Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Բ-ի հրամանով ձերբակալվել և ուղարկվել Կոպիտառ բերդը: Լևոն Բ թուղթ է գրել Հայաստանի հոգևորականներին՝ նրանց կարծիքն իմանալու համար, սակայն, մինչ պատասխան ստանալը, կաթողիկոսին գտել են բերդի պարիսպների մոտ անշնչացած ընկած, մեջքին՝ պարան (այդտեղից էլ՝ «Քարավեժ» մականունը):

Կաթողիկոս. գահին Գ. Ե Քի-ին հաջորդել է *Գրիգոր Զ Ապիրատը*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կպ, 1914: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, Ե., 1982:

Ազատ Բոզոյան

ԳՐԻԳՈՐ Զ ԱՊԻՐԱՏ (ծ. թ. անհտ – 1203, Սիս, ամփոփվել է Արքակաղնի վանքում), Ամենայն հայոց կաթողիկոս 1194-ից: Հաջորդել է *Գրիգոր Ե Քարավեժին*: Պահլավունիների տոհմից: Ավազանի անունը՝ Ապիրատ, որը դարձել է կաթողիկոսի մականունը: *Ներսես Շնորհալու* Շահան եղբոր որդին: Երիտասարդ տարիքում եղել է զինվորական, ապա՝ Տարսոնի, Լամբրոնի, Անտիոքի և Կեսարիայի արքեպիսկոպոսը: 1173-ի կաթողիկոս. ընտրությունների ժամանակ եղել է կաթողիկոսության թեկնածու: Կաթողիկոս է ընտրվել ծեր հասակում՝ Լևոն Բ-ի հովանավորությամբ, առանց բուն Հայաստանի հոգևորականների համաձայ-

նության: Նոր կաթողիկոսի ընտրության դեմ բողոքել են *արևելյան վարդապետները*, որոնք, չճանաչելով նրա իշխանությունը, 1195-ին հակաթոռ կաթողիկոս են ձեռնադրել Անիի արքեպիսկոպոս Բարսեղին (կաթողիկոս Բարսեղ Ա Անեցու եղբորորդին): Գ. Զ Ա-ի գահակալության շրջանում բուռն բանակցություններ են սկսվել գերմ. կայսր Հենրիկոս (Հայնրիխ) VI-ի, բյուզ. կայսր Ալեքսոս III Անգելոսի, Հույն և Կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչների հետ՝ ծիսադավան. խնդիրների շուրջ: 1197-ին Կիլիկիա է ժամանել Հռոմ. սրբազան կայսրության և պապի ներկայացուցիչ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտտելբախը: Նույն թվին Տարսոնում գումարված ժողովում Գ. Զ Ա. և Լևոն Բ մերժել են Կաթոլիկ եկեղեցու հետ միանալու և պապի գերագահությունն ընդունելու լատին պատգամավորների առաջարկները, բայց այդ շրջանում Հայ եկեղեցին փորձել է բացահայտ առճակատման չգնալ Հույն և Կաթոլիկ եկեղեցիների հետ, մանավանդ որ բանակցությունների այդ փուլում նրանք Հայ եկեղեցուց չէին պահանջում որևէ դավան. խնդրի շուրջ զիջումներ: Քաղ. նպաստավոր պայմաններում 1198-ի հունվ. 6-ին Տարսոնի Ս. Սոֆիա Մայր տաճարում Գ. Զ Ա. հայկ., իսկ Կոնրադ արքեպիսկոպոսը լատ. ծեսով Լևոն Բ-ին օծել են Կիլիկիայի Հայոց թագավոր: Գ. Զ Ա-ի կաթողիկոսության տարիներին միջեկեղեց. հարաբերությունների սրման միակ առիթը եղել է 1197-ի Ծռազատիկը, որի շուրջ կրքեր են բորբոքվել միայն Վրաստանում: Գ. Զ Ա-ով ավարտվել է Պահլավունիների տան գահակալությունը, որը սկսվել էր *Գրիգոր Բ Վկայասերի* աթոռակալությամբ և տևել մոտ 140 տարի:

Կաթողիկոս. գահին Գ. Զ Ա-ին հաջորդել է *Հովհաննես Զ Սսեցին*:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, Ե., 1982: Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.1, ԿՊ, 1912: Անապատական, Համառօտ պատմութիւն հայ-լատին հարաբերութեանց սկիզբէն մինչև 1382, Անթիլիաս, 1981:

Ազատ Բոզոյան

ԳՐԻԳՈՐ Է ԱՆԱՎԱՐԶԵՑԻ, Սսեցի, Մեծքարեցի, Տուրքերիցանց, Երգեցող, Զրող, նաև՝ Հռոմ՝ լատինադավանության համար (ծ. թ. անհտ – 1307), Ամենայն Հայոց կաթողիկոս 1293-ից: Կաթողիկոս Հակոբ Ա Կլայեցու քրոջ որդին: Հաջորդել է *Ստեփանոս Դ Հռոմկլայեցուն*: Եղել է Կիլիկյան Հայաստանի Անարզաբա (Անավարզա) քաղաքի եպիսկոպոսը: Կաթողիկոս է օծվել Հեթում Բ թագավորի կամքով և գործակցությամբ: Գ. Է Ա-ու օրոք հայրապետ. աթոռը տեղափոխվել է Սիս (1293), քանի որ Հռոմկլան ավերել ու գրավել էին (1292) Եգիպտոսի մամլուքները (տես *Սսի կաթողիկոսարան*): 1296-ին Սսի Ս. Սոֆիայի հայրապետանիստ տաճարում Գ. Է Ա. Կիլիկիայի Հայկ. պետության թագավոր է օծել Հեթում Բ-ի եղբայր Սմբատին: Լինելով լատինամետ խմբակցության հոգևոր առաջնորդ, ինչպես նաև ջանալով ապահովել Արևմուտքի օգնությունը Կիլիկիային՝ վարել է Հռոմի պապի գերիշխանությունն ընդունելու, Հռոմի կաթոլիկ եկեղեցուն ծիսադավան. զիջումներ կատարելու քաղաքականություն: Լինելով բանաստեղծ և երաժիշտ՝ հորինել է գանձեր, տաղեր, զանազան տոներին նվիրված շարականներ, որոնք ամփոփված են եղել 30-ից ավելի կանոնների մեջ: Լատ. ծեսի համեմատ նորամուծություններ է կատարել *Հայսմավուրքի, Շարակնոցի, Ժամագրքի* մեջ: Սակայն Գ. Է Ա-ու շարականներից ու կանոններից ոչ մեկն այսօր չի գործածվում (XIV դ. խափանել է Գրիգոր Տաթևացին): Նրանից միայն մեկ կարգադրություն է ներկայումս պահպանվել, այն է՝ Առավոտյան ժամերգության «Մեծացուսցէ» կարգի ամբողջացումն ու ամենօրյա կիրառումը:

Գ. Է Ա. իր նորամուծությունների ընդհանրական կիրառման համար, ինչպես նաև Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ միաբանվելու հորդորով, մի քանի անգամ Կոստանդին Կեսարացի եպիսկոպոսի գլխավորությամբ պատգամավորություններ է ուղարկել բուն Հայաստան՝ *արևելյան վարդապետների* մոտ: Վերջիններս ոչ միայն չեն ընդունել կաթողիկոսի առաջարկությունը, այլև Սյունյաց մետրոպոլիտ *Ստեփանոս Օրբելյանի* գլխավորությամբ ժողով են գումարել և նամակով կաթողիկոսին խստորեն զգուշացրել Հայ եկեղեցու հնավանդ ավանդույթների մեջ փոփոխություններ մտցնելու վտանգների մասին: Արևելյան վարդապետների նամակն զգաստացրել է Գ. Է Ա-ուն, և նա, չհրաժարվելով իր մտադրություններից, նորամուծությունների կիրառման խնդիրը հետաձգել է ավելի նպաստավոր ժամանակների:

Կաթողիկոս. գահին Գ. Է Ա-ուն հաջորդել է *Կոստանդին Գ Կեսարացին*:

Գրկ. Ալիշան Ղ., Հայապատում, հ. 1, Վնտ., 1901: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Անապատական, Համառօտ պատմութիւն հայ-լատին հարաբերութեանց սկիզբէն մինչև 1382, Անթիլիաս, 1981:

Գևորգ Տեր-Վարդանյան

ԳՐԻԳՈՐ Ը ԽԱՆԶՈՂԱՍ (ծ. թ. անհտ – 1418), Ամենայն հայոց կաթողիկոս 1411-ից: Հաջորդել է *Հակոբ Գ Սսեցուն*: Գ. Ը Խ-ի աթոռակալության օրոք *արևելյան վարդապետները* միջոցներ են ձեռնարկել Կիլիկիայից հայրապետ. աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելու համար: 1417-ին «քննիչի եւ այցելուի եւ բարեկարգիչի պաշտոնով» Սիս է ուղարկվել Երուսաղեմի հայոց պատրիարք Պողոս Գառնեցին, որն էլ, բացահայտելով Գ. Ը Խ-ի գեղծումները, քաղ. իշխանության գործակցությամբ, 1418-ին գահընկեց է արել կաթողիկոսին: Ըստ պատմիչ *Առաքել Դավրիժեցու*, Գ. Ը Խ. այնուհետև աքսորվել է, որտեղ էլ, հավանաբար, կնքել է իր մահկանացուն:

Կաթողիկոս. գահին Գ. Ը Խ-ին հաջորդել է *Պողոս Բ Գառնեցին*:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ.3, Վնտ., 1786: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Արթուր Կարապետյան

ԳՐԻԳՈՐ Թ ՄՈՒՍԱԲԵԿՅԱՆՑ (ծ. և մ. թթ. անհտ), Ամենայն հայոց կաթողիկոս 1439–41-ին: Հաջորդել է *Կոստանդին Զ Վահկացուն*: Ժամանակի պատմիչները իրարամերժ կարծիքներ են հայտնել նրա մասին: Թովմա Մեծոփեցին մռայլ գույներով է ներկայացրել Գ. Թ Մ-ին, մինչդեռ Մաղաքիա աբեղան 1443-ին գրած Ավետարանի հիշատակարանում նրան ներկայացրել է որպես «բարեպաշտ, աստվածասեր և իմաստուն»: Գ. Թ Մ-ի օրոք կաթողիկոս. աթոռը Էջմիածին տեղափոխելու համար պայքար է սկսվել, որը ղեկավարել են *Հովհաննես Հերմոնեցին* և *Թովմա Մեծոփեցին*: Նրանք 1441-ին Էջմիածնում ժողով են հրավիրել (տես *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողով 1441*), որը որոշել է կաթողիկոս. աթոռը Սսից փոխադրել Էջմիածին: *Արևելյան վարդապետները* հրավիրել են Գ. Թ Մ-ին՝ գահակալելու Մայր աթոռում: Սակայն անհայտ պատճառներով նա մերժել է հրավերը և շարունակել աթոռակալել Սսում:

Կաթողիկոս. գահին Գ. Թ Մ-ին հաջորդել է *Կիրակոս Ա Վիրապեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Գրիգոր վրդ. Զիֆչյան

ԳՐԻԳՈՐ Ժ ՋԱԼԱԼԲԵԿՅԱՆՑ, Մակվեցի (ծ. թ. անհտ – 1465, Էջմիածին), Ամենայն հայոց կաթողիկոս 1443-ից: Հաջորդել է *Կիրակոս Ա Վիրապեցուն*: 1448-ին Գ. Ժ Ջ-ի աթոռակից է ընտրվել Արիստակեսը: Ծագումով ազնվատոհմիկ Գ. Ժ Ջ. աշակերտել է Տաթևյան դպրոցին, եղել Արտազի եպիսկոպոսը:

Կաթողիկոս Կիրակոս Ա Վիրապեցու ընտրությամբ Մայր աթոռում գերիշխող դիրք են գրավել Վասպուրականի հոգևորականները: Դրանից դժգոհ՝ Հայաստանի արլ. գավառների եպիսկոպոսները 1443-ին, դիմելով Երևանի Յաղուբ բեկին, կաթողիկոս են ձեռնադրել Գ. Ժ Ջ-ին: Վերջինս, ուժով և արտաքին միջամտությամբ հայրապետ. գահին բարձրանալով, շարունակել է Էջմիածնի նորոգությունը և բարեկարգումը, վերահաստատել Մայր աթոռի իրավունքները վանքապատկան գյուղերի վրա: 1460-ին Աղթամարի Զաքարիա կաթողիկոսն ու Սարգիս եպիսկոպոսը կարակոյունլուների իշխան Ջհանշահի օգնությամբ վտարել են Գ. Ժ Ջ-ին ու Արիստակեսին և տիրացել Էջմիածնի կաթողիկոսությանը: Սակայն 1461-ին Գ. Ժ Ջ. և Արիստակեսը վերականգնել են իրենց իրավունքները:

Կաթողիկոս. գահին Գ. Ժ Ջ-ին հաջորդել է *Արիստակես Բ Աթոռակալը*:

Վարդան Դևրիկյան

ԳՐԻԳՈՐ ԺԱ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ (ծ. թ. անհտ – 1545), Ամենայն հայոց կաթողիկոս 1536-ից: Հաջորդել է *Մարգիս Դ Վրաստանցուն*: Գ. ԺԱ Բ-ու հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդվում:

Կաթողիկոս. գահին Գ. ԺԱ Բ-ուն հաջորդել է *Ստեփանոս Ե Սալմաստեցին*:

ԳՐԻԳՈՐ ԺԲ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ (ծ. թ. անհտ, Վաղարշապատ – 1590), Ամենայն հայոց կաթողիկոս 1576-ից: Հաջորդել է *Միքայել Ա Սեբաստացուն*: 1557-ից եղել է *Ստեփանոս Ե Սալմաստեցի* կաթողիկոսի աթոռակիցը, սակայն վերջինիս կամքով՝ իր մահից հետո կաթողիկոս է ընտրվել մյուս աթոռակիցը՝ Միքայել Ա Սեբաստացին: Գ. ԺԲ Վ-ու գործունեությունից հայտնի է, որ գահակալու-

թյան առաջին տարում իրեն աթոռակիցներ է ընտրել Թադեոս և Առաքել եպիսկոպոսներին, որոնք էլ իրականում վարել են կաթողիկոս. առաջնորդությունը: 1584-ին, Թադեոս աթոռակցի մահից հետո, Գ. ԺԲ Վ. աթոռակից է ընտրել Դավիթ եպիսկոպոսին:

Կաթողիկոս. գահին Գ. ԺԲ Վ-ուն հաջորդել է *Դավիթ Դ Վաղարշապատցին*:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Արթուր Կարապետյան

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ, Վկայասեր, Ծերենց, Բզնունեցի [1349, Խլաթ (Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառ) – նահ. 27.5.1425, Ցիպնավանք], նոր վկա, մատենագիր, մանկավարժ, բանաստեղծ, երաժիշտ, հասարակական գործիչ, բաբունապետ: Նախն. կրթությունն ստացել է Խլաթում: Սովորել է *Ցիպնավանքի* Վարդան Ճգնավորի դպրոցում (1361–67): 1367–77-ին զբաղվել է քարոզչությամբ: 1378–86-ին Ապրակունյաց դպրոցում *Գրիգոր Տաթևացու* հետ աշակերտել է *Հովհան Որոտնեցուն*, 1386–88-ին Խառաբաստավանքի դպրոցում՝ Սարգիս Վարդապետ Ապրակունեցուն: 1388-ից դասավանդել է նույն դպրոցում, այնուհետև մեկնել է Սալնապատ, որտեղ 1406-ից որպես բաբունապետ հաջորդել է մեծ ճգնավոր Վարդան վրդ. Հոգոցեցուն: Հետևելով Գրիգոր Տաթևացուն՝ 1408-ին տեղափոխվել է Մեծոփավանք (1410-ից՝ բաբունապետ): Կարճ ժամանակ անց առանձնացել է Ցիպնավանքում, հիմնել իր դպրոցը, շարունակել գիտամանկավարժ., գրչական գործունեությունը: Նրա աշակերտներից են Հովհաննեսը, Կարապետը, Թովման, Ստեփանոսը, *Առաքել Բաղիշեցին*: Վերջինս ուսուցչի մահից հետո տաղ է ձոնել նրան:

Գ. Խ. արտագրել է ձեռագրեր, գրել և խմբագրել ժողովածուներ, շարադրել վարքեր, մեկնություններ, պատմ. երկեր: Հիշատակության արժանի է 1422-ին նրա գրած *Գանձարանի* չափածո հիշատակարանը, որն ընդգրկում է 1386–1422-ի պատմ. իրադարձությունները Հայաստանում: Միջնադարում բարձր է գնահատվել *Հայսմավուրքի* խմբագրման Գ. Խ-ու շուրջ կեսդարյա աշխատանքը: Հայսմավուրքը նա լրացրել և հարստացրել է պատմագրքերից վերցված՝ հայ ժողովրդի կյանքին վերաբերող նյութերով, գրել և լրացումներ արել նոր վկաների մասին, որի համար արժանացել է Վկայասեր անվանը: Նրա շնորհիվ Հայսմավուրքը մասամբ ձեռք է բերել հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրի արժեք: Գ. Խ. 70 տարեկան հասակում ուխտի է գնացել Երուսաղեմ: 1391-ին ընդօրինակել է Ոսկեփորիկ գիրքը, 1399–1400-ին՝ խմբագրել Գանձարան ժողովածուն, 1404–06-ին՝ Ճառընտիրը (Մատենադարան, ձեռ. №№ 1520, 1521): Նրա բանաստեղծություններից հայտնի է «Ցիչատակարան աղէտից»-ը, որտեղ որպես ականատես և ժամանակակից անդրադարձել է 1386–1422-ի քաղ. իրադարձություններին: Գ. Խ. եղել է նաև մանրանկարիչ: Նրա ինքնագրերով մեզ են հասել տասնյակ ձեռագրեր, որոնց մի մասը (Մատենադարան, ձեռ. №№ 1520, 1521, 3714) նկարազարդված է իր իսկ ձեռքով:

Գ. Խ. վայելել է հմուտ երգիչ կատարողի համբավ: Եղել է երաժիշտ, դանձասաց, տաղասաց: Հավաքել է մոռացության մատնված և ժամանակակիցների շատ ստեղծագործություններ, որպես խազագետ-գրիչ և տեսաբան-խմբագիր կազմել երգարաններ: Նրա գրական գործերից երաժշտածիսագիտ. նշանակություն ունեն «Խրատ ժամատեղաց» և «Գովութիւն Սաղմոսի» գրվածքները: Հայ միջնադարյան հոգևոր երգարվեստի պատմ. հեղաշրջման որոշ հարցերի լուսաբանման համար կարևոր են նրա կազմած Գանձարանները (Մատենադարան, ձեռ. №№ 8366, 4011 և 5328): Գ. Խ. տվել է Գանձարանի նոր խմբագրություն (նաև խազավորման իմաստով), ավելացրել նոր միավորներ, ստեղծել գանձ-մեղեդի-տաղ-հորդորակ նոր շարքեր, կրճատից փրկել մի շարք հին գործեր:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.4, 3-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Պողարյան Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 414–418: Քիպարյան Կ., Պատմութիւն հայ հին գրականութեան, Վնտ., 1992: Մաթեվոսյան Ա., Մարարյան Ս., Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Ե., 2000:

ԳՐԻԳՈՐ ԽՈՒԼ, Գրիգոր Վարժապետ (ծ. և մ. թթ. անհտ), XIII դարի երաժիշտ, խազագետ, տեսաբան: Ապրել և աշխատել է Կիլիկիայում: Եղել է Սսի նշանավոր վարժապետներից մեկը և «առաջին քարտուղարը»: Գ. Խ. սկզբունքային մոտեցում է ունեցել հայ հոգևոր երգարվեստն անխառն պահելու և անա-

ղարտ զարգացնելու հարցում: Ըստ ավանդության, աշխարհիկ երաժշտություն չլսելու համար մոմով խցանել է ականջները, ինչի համար էլ ստացել է «Խուլ» մականունը:

Գ. Խ-ի գործունեությունը հատկապես նշանավորվել է շարականների կանոնակարգմամբ: Նրա խմբագրած *Շարակնոցը* կոչվել է իր անունով՝ «Խլկցի» կամ «Բուն Սսու»: Դա վկայում է, որ նա Շարակնոցի վրա աշխատելիս հիմք է ընդունել հայ հոգևոր երգարվեստի տեղի ավանդույթը: XIII դ. երաժիշտ-տեսաբան Գևորգ Սկևռացին իր Շարակնոցի խմբագրման համար հիմք է ընդունել «Խլկցի» օրինակը: Այդ մասին է վկայում Առաքել Սյունեցին իր «Լուծմունս Սահմանաց Դաւթի Անյաղթի» աշխատության մեջ: «Խլկցի» օրինակը մեզ է հասել ընդօրինակություններով, դրանցից մեկի մասին (արտագրված 1309-ին) է վկայում Ղ. Ալիշանը: Հնագույն ընդօրինակությունը ստեղծվել է 1269-ին և պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը (№ 145):

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990:

Մհեր Նավոյան

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ, Գրիգոր Մագիստրոս Բջնեցի (մոտ 990–1058), գիտնական, փիլիսոփա, բանաստեղծ, քաղաքական և ռազմական գործիչ: Սպարապետ Վասակ Պահլավունու որդին: Կրթվել է Անիի դպրոցում, այնուհետև՝ Կ. Պոլսում: Հոր եղբոր՝ սպարապետ Վահրամ Պահլավունու և նրա կուսակիցների հետ պայքարել է ներքին և արտաքին թշնամիների դեմ, նպաստել Բագրատունիների գահի ամրապնդմանը: 1045-ին Կ. Պոլսում Կոստանդին կայսրի կողմից Գագիկ Բ-ի ուխտադրժորեն ձերբակալվելուց հետո, կանխազգալով հայկ. թագավորության անկումը, իր տիրույթները հանձնել է Բյուզանդիային և փոխարենը կալվածքներ ստացել Հվ. Հայաստանում ու Միջագետքում: Բյուզ. կայսրը նրան շնորհել է մագիստրոսի տիտղոս, 1048-ին նշանակել Հվ. Հայաստանի և Միջագետքի կուսակալ: Գ.Մ.Պ-ու գլխավորած ռազմ. ուժերը հաշվեհարդար են տեսել *թոնդրակեցիների* հետ: Գ.Մ.Պ., սակայն, նշում է, որ, ի տարբերություն նախորդ աղանդահալած իշխանների և կաթողիկոսների, ինքը մեղմ է վարվել, թույլ չի տվել, որ զինվորները խոշտանգեն աղանդավորներին, սպանեն կամ աղվեսադրոշմով խարանեն նրանց: Լինելով բարձրաստիճան բյուզ. պաշտոնյա՝ շարունակել է սերտ կապեր պահպանել հայ իրականության հետ, նշանակալից դեր խաղացել Հայաստանի հաս. և մտավոր կյանքում:

Գ.Մ.Պ. եղել է ժամանակի ամենակրթված մարդկանցից, զգալի հետք թողել միջնադարյան հայ մշակույթի պատմության մեջ, նպաստել գիտության և գրականության զարգացմանը: Հիմնել է բարձրագույն տիպի սեփական դպրոց-ճեմարան, դասավանդել ճարտասանություն, փիլիսոփայություն, քերականություն, մաթեմատիկա ևն: Ծավալել է շին. գործունեություն (կառուցել է *Բջնիի Ս. Աստվածածին վանքը, Կեչառիսի վանքի* Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, *Հավուց Թառ վանքի* Ս. Ամենափրկիչ եկեղեցին ևն): Գ.Մ.Պ-ու՝ միջնադարյան Հայաստանի միակ աշխարհական փիլիսոփայի աշխարհայացքն ու գիտ. հետաքրքրությունները արտահայտվել են իր բազմաթիվ նամակներում՝ «Թղթերում» (հրտ. 1910): Գրել է նաև «Մեկնութիւն քերականին» քերականագիտ. երկը [հրտ. Խաչերյան Լ., «Գրիգոր Պահլավունի Մագիստրոս (985–1058 թթ.). Կյանքն ու գործունեությունը» գրքում, 1987], չափածո ստեղծագործություններ (հրտ. «Տաղասացութիւնք», 1868), որոնցից ամենանշանավորը «Առ Մանուէլ» («Հազարտողեան») պոեմն է՝ Աստվածաշնչի համառոտ հանգավորված վերապատումը: Պոեմը բաղկացած է 1016 տողից, որից վերջին 116-ը հեղինակը նվիրել է հայոց եկեղեց. պատմությանը՝ Գրիգոր Ա Լուսավորչից մինչև հայերեն գրերի գյուտն ու թարգմանիչները: Նամակներից պարզվում է, որ թարգմանել և ծրագրել է թարգմանել հույն և ասորի հեղինակների երկեր, որոնցից պահպանվել է միայն Էվկլիդեսի «Սկզբունքների» մի հատվածի թարգմանությունը: Ունեցել է հետաքրքրասիրությունների լայն շրջանակ՝ հին հուն. և հայկ. դիցաբանություն, փիլիսոփայություն ու աստվածաբանություն, ճշգրիտ գիտություններ, պատմություն, գրականություն, արվեստ: Ըստ Գ.Մ.Պ-ու՝ կրթությունը պետք է սկսել Աստվածաշնչի ընթերցանությամբ, այնուհետև ուսումնասիրել դիցաբանություն, գեղեցիկ հատվածներ սերտել «Հոմերական և պղատոնական» երկերից, քանզի դրանք նախապատրաստությունն են «յոթ ազատ արվեստների» ուսումնասիրության, որի առաջին փուլին՝ «եռյակ» գիտություններին (քերակա-

նություն, ճարտասանություն, տրամաբանություն), հաջորդում է ճշգրիտ գիտությունների «քառյակը» (թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն, երաժշտություն): Վերջիններս բաղկացուցիչ մասերն են մաթեմատիկայի, որը բնագիտությունից (ֆիզիկա) բնազանցությանը (մետաֆիզիկա) անցնելու անհրաժեշտ աստիճանն է:

Գ.Մ.Պ., զարգացնելով *Դավիթ Անհաղթի* նորպլատոնականությունը, հակվել է դեպի ռացիոնալիզմը և բնափիլիսոփայությունը: Կարևոր նշանակություն է տվել բնագիտությանը և մաթեմատիկային, որոնք նախապատրաստում են մարդկային միտքը «բնությունից վեր գտնվող» գերագույն գոյի՝ Աստծո ճանաչման համար: Ընդունել է Աստծո գոյության տիեզերաբան. ապացույցը. բնության՝ որպես Աստծո ստեղծագործության ճանաչումով կարելի է ըմբռնել նրա Արարչի էությունը:

Գ.Մ.Պ-ու աշխատություններում ուշադրավ մտքեր կան կենսաբանության, բժշկագիտության, տիեզերագիտության, երաժշտության տեսության, գեղագիտության և այլնի վերաբերյալ:

Գ.Մ.Պ. հայտնի է նաև որպես շարականագիր և տաղասաց: Նա պատկանում է այն սակավաթիվ աշխարհիկ հեղինակների թվին, որոնց հոգևոր երգերը եկեղեցին կանոնացրել է և ներմուծել *Շարակնոցի* մեջ: Ըստ Գրիգոր Տաթևացու շարականագիրների ցուցակի, Գ.Մ.Պ-ու գրչին է պատկանում Խաչի նավակատյաց Ե օրվա «Զորս ըստ պատկերի քում» շարականը, իսկ Հակոբ Սսեցին իր ցուցակում այդ շարականին ավելացնում է նաև նույն կանոնակարգի Դ օրվա «Խաչն կենարար» օրհնությունը: Մի շարք ձեռագիր Գանձարաններում զետեղված է Գ.Մ.Պ-ու «Կարապետ սուրբ հաւատոյ» սկզբնատող ունեցող խազագրված տաղը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին:

Մի Հայսմավուրքում Գ.Մ.Պ-ու գերեզմանը մատնանշված է Դարույնքում (այժմ՝ Հասանկալա):

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.4, 4-րդ պատկերը:

Գրկ. Մենեվիշյան Գ., Գրիգոր Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծումը, Վենն., 1912: Զալոյան Վ., Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975: Արեվշատյան Ա., Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավեպ», 1995, № 1–4:

Սեն Արևշատյան
Աննա Արևշատյան

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻ, սուրբ Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Աստվածաբան [330, Արիանզ (Կապադովկիա) – 390, Արիանզ], *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*): Նախն. կրթությունն ստացել է Նեոկեսարիայում, ուսումը շարունակել Կապադովկյան Կեսարիայում, Ալեքսանդրիայում, ապա *Բարսեղ Կեսարացու* հետ՝ Աթենքի համալսարանում (352–358): Այստեղ ուսումնասիրել է փիլիսոփայություն, քերականություն, ճարտասանություն, արտաքին գիտություններ: 358-ին վերադարձել է հայրենիք, միացել Անիսիայում (Պոնտոսում) ճգնավոր. կյանքով ապրող Բարսեղ Կեսարացուն, միաժամանակ զբաղվել գրական-մատենագր. գործունեությամբ: Բարսեղ Կեսարացու հետ կազմել է «Սուրբ Գիրքը և նրա մեկնաբանը՝ Որոգինեսը» («Ֆիլոկալիա») աշխատությունը, գրել 55 վանական կանոնադրություններ: Գ. Ն. 361-ին կամ 362-ին ձեռնադրվել է քահանա, 371-ին դարձել փոքրասիական Սասիմա, 374-ին՝ Նազիանզ քաղաքների եպիսկոպոս: Մեկ տարի անց առանձնացել է Սելևկիայի Ս. Թեկղի վանքում: *Արիոսականության* դեմ պայքար կազմակերպելու համար 379-ին հրավիրվել է Կ. Պոլիս: Երկու-երեք տարում ձեռք է բերել մեծ հեղինակություն և 381-ին Թեոդոսիոս կայսրի հորդորով առաջադրվել Կ. Պոլսի պատրիարք: *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովում* կարևոր դեր է կատարել Մակեդոնի, Փոտինոսի, Ապողինարիոսի և այլ աղանդապետների վարդապետությունների դատապարտման և ուղղափառության պաշտպանության գործում: Վարչ. աշխատանքի հակումներ չունենալու պատճառով շուտով հրաժարվել է պատրիարքի պաշտոնից և կյանքի վերջին տարիներն ապրել լիակատար մենության մեջ:

Գ. Ն. գրել է 45 ճառ, 237 նամակ, բազմաթիվ պոեմներ և բանաստեղծություններ: Ճառերի մեծ մասը հակաճառ., դավան. բնույթի է, 5-ը՝ ներբողական, 9-ը՝ տոնախոսական: Առավել նշանավոր են նրա աստվածաբան. հինգ ճառերը, որոնք արտասանել է աղանդավորների դեմ Կ. Պոլսում 380-ին: Այդ ճառերի համար Գ. Ն-ուն կոչել են Աստվածաբան: Առաջին ճառը, ըստ էության, Աստծո և Ս. *Երրորդության*

վերաբերյալ վարդապետության ներածությունն է: Երկրորդում խոսվում է Աստծո գոյության և բնության, նրա ստորոգելիների մասին: Երրորդ ճառը բացատրում է Ս. Երրորդության երեք աստվածային անձերի միությունը և Լոգոսի (Բանի) աստվածությունն ու համագոյությունը Հայր Աստծո հետ: Չորրորդ ճառը հակաճառությունն ու հերքումն է արիոսականության, հինգերորդը նվիրված է *Սուրբ Հոգու* աստվածության պաշտպանությանը՝ ընդդեմ Մակեդոնի հոգեմարտ վարդապետության: Գ. Ն. պատվիրել է չքննել Որդու ծննդյան և Սուրբ Հոգու բխման խորհուրդը, քանզի դրանք վեր են մարդկային կարողությունից: «Հերոնի մասին» ճառում սովորեցրել է եռանձնյա Աստվածությանը չվերագրել 3 սկիզբ, որպեսզի որևէ հեթանոսական կամ բազմաստվածության դաղափար տեղ չգտնի ուղղափառ դավանության մեջ:

Գ. Ն-ու ներբողական և վարքագր. բնույթի մի քանի ճառեր ունեն պաշտամունքային-տոնական քարոզների նկարագիր և նվիրված են Ս. Ծննդյան, Աստվածահայտնության, Նոր կիրակիի և Հոգեգալստյան օրերին: Հատկանշական են նրա «Յաւուր պատշաճ»-ի արտասանած ճառերը, որոնցից ամենանշանավորը «Փախուստի ջատագովություն» կամ հայկ. մատենագրության մեջ հայտնի «Փախուստ ի Պոնտոս» ճառն է: Այն նվիրված է քահանայական կոչման վեհությանը և լրջությանը, պատասխանատվության խոր գիտակցության կոչ է հոգևոր պաշտոն ստանձնողներին:

Գ. Ն-ու չափածո գրվածքները (բանաստեղծություններ, պոեմներ) լեցուն են աստվածապաշտությամբ լուսավորված ճշմարիտ բնական ձգտումով, փիլ. խոր մտքերով: Նրա դավան. չափածո երկերը նվիրված են Ս. Երրորդությանը, Արարչագործության բացատրությանը, աստվածային նախախնամությանը, մարդու ստեղծմանն ու անկմանը, Մարդեղության խորհրդին, Հիսուս Քրիստոսի հրաշագործություններին ու առակներին, Աստվածաշնչի կանոնական գրքերին: Պոեմների մեծ մասը պատմ. և ինքնակենսագր. բնույթի ստեղծագործություններ են:

Գ. Ն-ու աստվածաբանությունը բնորոշվում է երեք հիմն. հատկանիշներով. 1. Երրորդաբանական ուսմունքի բանաձևով՝ Աստված մեկ է՝ ըստ էության և երեք՝ ըստ դեմքերի: Սուրբ Երրորդության դեմքերի միասնությունը արտահայտվում է՝ մեկ Աստվածություն, մեկ էություն, մեկ բնություն, իսկ դեմքերի երրորդությունը՝ երեք դեմք, երեք անձնավորություն, յուրաքանչյուր դեմքի առանձնահատկությունը՝ անծննդություն, ծնվածություն, բխվածություն եզրերով: Գ. Ն-ու՝ Սուրբ Հոգու վերաբերյալ ուսմունքն առավել ավարտուն է, քան Բարսեղ Կեսարացունը: Եթե վերջինս Սուրբ Հոգին Աստված է անվանում ոչ ուղղակիորեն, ապա Գ. Ն. զարգացնում է եկեղեցում Սուրբ Հոգու՝ որպես Աստվածության շարունակվող հայտնության մասին ուսմունքը: Ըստ Բարսեղ Կեսարացու, Սուրբ Հոգու դիմային առանձնահատկությունը նրա սրբությունն է (Նիկիական դավանանքի համաձայն, սրբություն ունեն Աստվածության երեք դեմքերն էլ), ըստ Գ. Ն-ու՝ բխվածությունը: 2. Ըստ Գ. Ն-ու՝ Հիսուս Քրիստոսի մարդկային բնությունը կազմված է ոչ միայն մարմնից և հոգուց, ինչպես պնդում էր Ապողինարիոս Լաոդիկեցին, այլև՝ մտքից: Միայն անմարմին մտքի միջոցով Բանը կարող էր միավորվել մարդու մարմնին ու հոգուն: Փրկությունը կատարվում է մարդու բնության աստվածացմամբ, որ տեղի է ունենում Աստվածության հետ միավորման շնորհիվ: Չնայած Հիսուս Քրիստոսի մեջ Աստվածության և մարդու բնության միավորման, Աստվածամարդու անձը միասնական և անբաժանելի է: 3. Ինչպես կապադովկյան մյուս հայրերը (Բարսեղ Կեսարացի, *Գրիգոր Նյուսացի*), Գ. Ն. նույնպես կրում է *Որոգինեսի* աստվածաբանության ազդեցությունը: Երեք մեծ կապադովկիացի հայրապետները շարունակողներն են *Աթանաս Ալեքսանդրացու* աստվածաբանության: Նրանց հաստատած աստվածաբան. բանաձևերը, հասկացությունները (հատկապես Ս. Երրորդության ուղղափառ ըմբռնման հարցում) մեծ նշանակություն են ունեցել հետագա դարերի աստվածաբան., քրիստոսաբան. մտքի զարգացման համար:

Գ. Ն-ու մատենագր. վաստակի մի մասը (նաև նրա նշանավոր «Պատարագամատույցը») հայերեն է թարգմանվել V դ.: Հայտնի են «Քրիստոս ծնեալ» (12 ճառ), «Յաղթեցայ» (8 ճառ), «Առ որս» (15 ճառ), «Որք եգիպտոսէն են» (11 ճառ) ճառաշարերը:

Միջնադարյան Հայաստանում Գ. Ն-ու երկերի տեսական առավել օգտաշատ հատվածներ խմբագրվել և օգտագործվել են որպես աստվածաբան. բարձրագույն ուս. ձեռնարկներ («Առ որս» ճառաշարը, «Հարցումն Բարսեղի

եւ սուրբ Գրիգորի Աստուածաբանին» ևն), գրվել *լուծմունքներ*: Նրա աշխատություններ-ի աստվածաբան. հայեցակետից առավել կարևոր հատվածներ վկայաբերվել են հայ դա-վանաբան. մատենագրության մեջ:

Գ. Ն-ու գործերից հայերեն թարգմանու-թյամբ (մեկ ճառ) առաջին անգամ տպագրվել է «Գիրք և ճառ հոգեշահ» ժողովածուում (1722), ճառերից բազմաթիվ հատվածներ են վկայակոչվել «Կնիք հաւատոյ» ժողովա-ծուում, *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառութիւն» (1908) երկում, *Անանիա Սանահնեցու, Վար-դան Այգեկցու* երկերում և այլուր:

Հայ եկեղեցին ս. Գ. Ն-ու հիշատակը տո-նում է տարին 2 անգամ՝ Սուրբ Ծննդյան եր-րորդ կիրակին նախորդող շաբաթ օրը և հոկ-տեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.4, 5-րդ պատկերը:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 374–378: Մուրադյան Կ., Գրիգոր Նազիանզա-ցին հայ մատենագրության մեջ, Ե., 1983: Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւա-տոյ, Ե., 1998, էջ 37–39: Քյոսեյան Հ., Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 193, 272, 367, 369, 370: Migne J. P., PG, t. 35–38, P., 1857–66; Quasten J., Patrology, v. 3, Utrecht, 1966; Gee-rard M., Clavis Patrum Graecorum, v. 2, Brépols-Turnhout, 1974, p. 179–209.

Հակոբ Քյոսեյան

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, սուրբ Գրիգոր Նարեկացի (հավանաբար՝ 947–1003-ից հե-տո), բանաստեղծ, երաժիշտ, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: *Խոսրով Անձևացու* կրտսեր որդին: Ենթադրվում է, որ ծնունդով եղել է Վասպուրական աշխարհի Ռշտունյաց գավառի Նարեկ գյուղից կամ Անձևացյաց գա-վառից: Հիշատակարաններում իրեն կոչել է «Նարեկա վանից վանական» (այստեղից էլ՝ Նա-րեկացի անվանումը): Կրթությունն ստացել և իբրև կուսակրոն հոգևորական դաստիարակվել է *Նարեկավանքի* բարձր տիպի դպրոցում՝ վա-նահայր և ուսուցչապետ *Անանիա Նարեկացու* (հավանաբար մոր հորեղբոր որդու) խնամակա-լությամբ: Ուսումնառության ընթացքում ի հայտ է բերել բացառիկ ընդունակություններ, յուրացրել ոչ միայն հայ մատենագրության ար-ժեքները, Սուրբ Գիրքն ու թարգմ. մեծահա-րուստ գրականությունը, այլև, քաջ տիրապե-տելով հունարենին, հաղորդակցվել բյուզ. մշա-կույթի հետ: Բանաս-տեղծի հիշատակարան-ներից կարելի է եզրա-կացնել, որ նրա կյանքն անցել է վանական մի-ջավայրում, բայց չի մեկուսացել եկեղեցաքաղ. իրադարձություններից: 977-ին Անձևացյաց Գուրգեն թագավորաղն իշխանի (990–1003-ին՝ Արծրունյաց թագավոր) պատվերով գրել է Երգ երգոցի մեկնությունը, իսկ 983-ին Մոկաց աշ-խարհի *Ապարանից Ս. Խաչ վանքի* նավակա-տիքի առիթով տեղի Ստեփանոս եպիսկոպոսի պատվերով՝ վանքի հիմնադրման ու կառուց-ման պատմությունը: Հավանաբար 990-ական թթ. կեսին գրել է Մոկաց աշխարհի Կճավա-վանքի վանահորն ուղղած դավան. թուղթը (ընդգրկվել է «*Գիրք թղթոց*» ժողովածուում), մերժել ու հերքել *թոնդրակեցիների* աղանդը, բացառել հանդուրժող վերաբերմունքն այդ հերձվածի հետևորդների նկատմամբ: Գ. Ն. ե-ղել է իր դարաշրջանի համահայկ-եկեղեց. խնդիրներով շահագրգիռ գործիչ: Միաբանու-թյան պարտականություններից ազատ ժամա-նակ առանձնացել է Վանա լճից հվ., Նարեկա-վանքից հս. գտնվող լեռան ճգնարան-քարայ-րում և բանաստեղծի իր ներանձնացումն ապ-րել: Դժվարամատչելի այդ ճգնարանը դարեր շարունակ եղել է ուխտատեղի: Ըստ հիշատա-կարանի, մահացել է «Մատյան ողբերգության» պոեմն ավարտելուց հետո: Գերեզմանը գտնվել է Նարեկա Ս. Աստվածածին և Ս. Սան-դուխտ եկեղեցիների հարևանությամբ նրա հի-շատակին կառուցված մատուռ-եկեղեցում, ո-րը 1915-ից հետո վանքի ողջ համալիրի հետ իսպառ ավերվել է:

Գ. Ն. XII դ. կեսից ոչ ուշ դասվել է սրբերի շարքը. նրա ստեղծագործությունը ողջ միջ-նադարում արժանացել է մեծագույն փայփա-յանքի, պահպանվել գրեթե անկորուստ: Մեզ են հասել նրա երկերի բազմաթիվ ընդօրինակ-ություններ: Միայն «Մատյան ողբերգու-թյան» երկի գրչագիր ընդօրինակությունները (առանց հատվածական ձեռագրերի) անցնում են 150-ից: Այն հրատարակվել է գրաբար (ա-վելի քան 60 անգամ), աշխարհաբար (արևմտա-հայերեն և արևելահայերեն), թարգմանվել ու տպագրվել բազմաթիվ լեզուներով (ֆրանս., անգլ., պարսկ., իտալ., գերմ., իսպ., ուկր., լիտվ. ևն), XIII դ. 2-րդ կեսից սկսած՝ բազ-միցս մեկնաբանվել:

Գ. Ն-ու ստեղծագործությունների նկատ-մամբ հետաքրքրությունը պայմանավորված է

դրանց համամարդկային հնչեղությամբ և բացառիկ գեղարվեստականությամբ: Նրա լավագույն տաղերն ու մեղեդիները և «Մատյան ողբերգության» պոեմը (XVIII դարից ժողովուրդն այն անվանել է «Նարեկ») հայ միջնադարյան քնարերգության զարգացման նոր փուլ են նշանավորել՝ արտացոլելով մարդու հոգևոր-իմացական և զգացմունքային աշխարհը, բարձր անհատի փիլ. ներթափանցումները կյանքի գաղտնիքների մեջ: Յուրովի հաստատելով Սուրբ Գրքի աշխարհընկալման պատվիրանները՝ Գ. Ն., ի հավելումն դրանց, առաջնորդվել է գեղագիտ. նոր սկզբունքներով և դրանք լավագույնս իրացրել իր բարձրարվեստ գործերում: Տեսական այդ սկզբունքներն ամենից առաջ արտահայտվել են Երգ երգոցի մեկնության մեջ: Դրանցից կարևորագույնը այլաբանության նրա ըմբռնումն է: Մարդկությունը, սկսած Ադամ-Եվայից, ընկել է մեղսագործության մեջ, հետևաբար և զրկվել Աստծո հետ անմիջականորեն հաղորդակցվելու և աստվածային ճշմարտությունն ուղղակիորեն ճանաչելու շնորհից: Սակայն մարդն առարկայական աշխարհը, շոշափելի ու տեսանելի ամեն բան՝ կենդանի բնությունն ու իրականությունը ճանաչելու ճանապարհով հնարավորություն ունի հասնելու աստվածային ճշմարտության ըմբռնմանը՝ «Ի ձեռն մարմնաւորացս տեսցուք զհոգևորսն»: Դրանով իսկ քերթողական արվեստի համար նա կարևորել է բնության, լայն իմաստով՝ իրականության ընկալումն ու գեղ. դրսևորումը՝ բանաստեղծության մեջ տեսնելով երկու շերտ՝ արտաքին և ներքին. առաջինը՝ որպես բնության պատկեր, այլաբանություն, երկրորդը՝ որպես գաղտնի գաղափար և ճշմարտություն, որոնցով իմաստավորվում է այլաբանությունը. նրա միջոցով են հոգևոր-վերացական գաղափարները ձեռք բերում իրենց բանաստեղծական առարկայացումը, հեշտընկալ դառնում, հրճվանք պատճառում ընթերցողին և ունկնդրին: Գեղ. մտածողությունն այլաբանությամբ շփման մեջ է մտնում իրականության հետ, թոթափում խոսքի գրքային ձևերն ու կաղապարները, հակվում բնականության ու բազմերանգությանը: Գ. Ն-ու տաղարանն արտացոլում է մարդ-քրիստ. հավատ-բնություն (իրականություն) հարաբերությունը: Մյուս սկզբունքը բանաստեղծության մեջ գեղ. համեմատության ու պատկերի հետզհետե զարգացման պահանջն է, ինչպես ինքն է նկատել՝ աստիճան առ աստիճան դրանց հարստացումը, որն իրապես վերաբերում է բանաստեղծական երկի բովանդակության շարժունությանը և այնքան ցայտուն կիրառվել է նրա բարձրարվեստ տաղերում («Տաղ Յարութեան», «Տաղ յօրհնել ջրոյն», «Տաղ ի Յարութիւն Ղազարու» ևն) և «Մատյան ողբերգության» պոեմում:

Գ. Ն. սիրո երգեր չի գրել (այդպիսիք մեզ չեն հասել), բայց Երգ երգոցի առիթով իր վերաբերմունքն է արտահայտել սիրո մասին: Նա սերը համարել է մարդկային ամենազորեղ զգացմունքը՝ հանուն որի սիրահար հոգիները երբեմն քամահրել են հավատի արգելառիթ խոչընդոտները՝ «Արդ, չիք յերկրի պատուական, քան զսէր առն և կնոջ»: Երկրպագելի ս. Տիրամոր քնարական կերպարը պատկերելիս ընդգծել է նրա կանացիությունն ու գեղեցկությունը («Մեղեդի Ծննդեան»): Նարեկացի բանաստեղծն օժտված է անսովոր վառ երևակայությամբ, իրերն ու երևույթները ճոխ ներկայացնելու արտակարգ ձիրքով: Ըստ հարկի ստեղծել է բանաստեղծ. երանգաշնակի հարաբերություններն ու անսպառ հնարավորությունները վկայող քնարական հատվածների բազմաքանակ խտացումներ: Նարեկացի գեղագետն իր ստեղծագործությունը դիտել է ոչ միայն որպես անձնականության դրսևորում, այլ նաև համայն քրիստոնյա մարդկության սեփականություն. «Ե՛ս ամենայնն, և յի՛ս ամենեցունն»: Նա իր անձի ու անհատականության միջոցով արտահայտում է ընդհանուրի հոգին ու ցանկությունները՝ «նշաւակեալ յիւրում պատկերին», ինչը նրա ստեղծագործությանը տալիս է համամարդկային հնչեղություն:

Գ. Ն. X դ. 2-րդ կեսին հայ հոգևոր երգի նոր ժողովածուի՝ *Գանձարանի* կամ հոգևոր Տաղարանի սկզբնավորողն է: Պահպանված 36 բանաստեղծությունները (5-ի հեղինակային պատկանելությունը երկբայելի է) ցույց են տալիս, որ նա է ստեղծել հիշյալ ժողովածուի համակարգը՝ գանձարանային շարքերով, որոնցից յուրաքանչյուրը՝ գանձ-տաղ-մեղեդի և հորդորակ, միավորներով համապատասխանում է եկեղեց. տոնակարգին: Ամեն շարք (կարգ) խոսքի և երաժշտության մի ցիկլ է: Իր բանաստեղծությունների համար Գ. Ն. ինքն է հորինել երաժշտությունը. բանավոր ավանդվելով՝ պահպանվել են նրանցից միայն վեցի մեղեդիները և ձայնագրվել նոր ժամանակներում (մյուսների երաժշտությունը անհայտ է՝ խազերի վերծանված չլինելու պատճառով): Բանաստեղծու-

թյուններում, առավելապես տաղերում ու մեղեդիներում, Գ. Ն-ու նպատակը մարդու ներքին բնության՝ հուզական աշխարհի պատկերումն է՝ կապված քրիստ. հավատի ու պաշտամունքի հետ: Գ. Ն. հայ քնարերգության մեջ բնության հայտնաբերողն է: Բնությունը դիտում է հարափոփոխ շարժման ու արարումի մեջ: Դրա լավագույն օրինակը «Տաղ Վարդավառին» բանաստեղծությունն է, որն արտահայտում է բանաստեղծի հրճվանքը արթնացող ու փթթող բնության հազարերանգ գեղեցկության հանդեպ: Հեթանոս. ժամանակների Վարդավառը վերաիմաստավորվել, վերածվել է Քրիստոսի Պայծառակերպության հանդեսի՝ նորանշանակ Վարդավառի, երբ խուռներամ վարդերը գույնզգույն ծաղկաթերթեր են արձակում, շուշանն է շողում հովտում և հովհարվում հովից: «Ջրօրհնեաց տաղը» ուրախարար ավետիսի երգ է՝ նվիրված Աստծո Որդու հայտնությանը, ծնունդին ու մկրտությանը: Դա աշխարհի ու մարդկության նորոգման հրավերն է՝ նման ամեն նոր գարնանը բնության վերածննդին: Քրիստոսի Մարդեղության տոնը հարսանիք է, և հարսանյաց կոչնատերը Հովհաննես Մկրտիչն է: Նա հրավեր է հղում ո՛չ միայն Ադամի տան որդիներին, Տիրամորը, մարգարեներին ու նահապետներին, այլև «բողբոջախիտ, խիտասաղարթ» ծառերին, հորդ աղբյուրներին ու հույլ վտակներին: Բնության շարժուն ներկայությունը բանաստեղծության մեջ՝ իբրև խորհրդանիշ ու այլաբանություն, գունագեղ ու հուզական է դարձնում երգը: Ինքնատիպ է Քրիստոսի հրաշալի Հարության նարեկացիական ընկալումը («Տաղ Յարութեան»): Նա չի կրկնել ավետարանական պատումը, այլ թեմային հաղորդել է հայկական-տեղական տարազավորում՝ սրբազան գործողությունը կապելով հայ բնաշխարհի հետ: Շքեղ սայլի վրա բեհեզապատ աթոռակին բազմած է Արքայի Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Սայլապանն էլ «ճոճ ու ճապուկ» ճորտ է՝ Հովհաննես Կարապետը, իսկապես մի կտրիճ, որ կոչված է առաջնորդելու սայլն «Ի Մասեաց յայլ կողմանէն»: «Եւ ահա չշարժէր սայլիկն այն, եւ ահա չխաղայր անիւն այն»: Նարեկացին դրամատիկ է դարձրել պահը և անհանգիստ, բայց ահա «լայնաթիկունք, խարտիշագէղ, ահեղագոչ» ճորտը ճայնում է եղնամոլին, և սայլն «անուշահոտ բուրմամբ» ընթանում, ճռնչալով մտնում է Երուսաղեմ: Տիրամայրը Գ. Ն-ու ընկալմամբ երգ է՝ զարմանալի և «շարժվարժենի» («Մեղեդի Ծննդեան»): Բարձրաճաչակ բանաստեղծական բնութագրումների ու համեմատությունների առատությունը երգում տեսանելի ու առարկայորեն շոշափելի է դարձնում Աստվածամոր քնարական պատկերը: Տաղերում ու մեղեդիներում Գ. Ն. շռայլորեն օգտագործել է խոսքի պատկերավորման արտահայտչամիջոցները, բազմազան ձևերով հարստացրել հայոց տաղաչափ. արվեստը, ընդլայնել բանաստեղծության կառուցման հնարավորությունները, կարևորել չափածոյի երաժշտայնությունը՝ ստեղծելով բաղաձայն հնչյունների հանգիտության չգերազանցված օրինակներ: Դա բանարվեստի հարուստ մի համակարգ է, որն ուղեցույց է դարձել հայ քնարերգության հետագա զարգացման համար:

Գ. Ն-ու մեծագույն ստեղծագործական սխրանքը «Մատյան ողբերգության» պոեմն է (1001–03). «... այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է. կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք» (Թումանյան Հ., Երկ., հ. 6, 1994, էջ 266): 95 գլխից բաղկացած երկն աղոթքի ձևով արտահայտված խոսք է՝ ուղղված Աստծուն («Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»), անկեղծ ու անմիջական խոստովանանք, աղաչանք ու աղերսանք, նաև փառաբանության երգ, մաղթանք ու տենչանք՝ իշխող ողբերգական տրամադրությամբ: Իր ցավատանջ ներաշխարհը, մարդկության ու իր փրկության համար տառապագին ապրումները դրսևորելու համար նա գտել է գեղ. բազմազան հնարքներ: Երկում իշխող ողբերգական շունչն արտահայտվում ու պատկերվում է միշտ նորանոր միջոցներով՝ «փոխեալ զեղանակ բանիս, այլ ոչ զեղկութիւն աղէտիս»: Իր հավատի ու խոստովանության գրքում նա փիլիսոփա-բանաստեղծ է, ընդհանուր քրիստոնյա մարդկության մեղքերն ու արատները կամովին ստանձնած և բոլորի փոխարեն քավող անհատ, որ շարունակ բանաստեղծության թարմաշունչ եղանակներ է որոնում, պատկերավոր խոսքի հոսքեր շտրվանում՝ առանց դույզն-ինչ ինքնակրկնման: Գ. Ն. մնացել է բանաստեղծի իր անհաս բարձունքի վրա, նա իր եսի ու համաշխարհի արտահայտիչն է, և «Մատյան ողբերգության»-ը որքան ինքնապատում է, նույնքան էլ համապատում է՝ մեղքից ու արատից տառապող մարդկության փրկության ճիգերի մասին: Ինքնամաքրման

ճանապարհը անկեղծ խոստովանությունն է, մեղքերի զղջումը, որը և ընտրել է բանաստեղծը՝ ձգտելով իր մահացու վերքի ամբարված չարավը խոսքի խարանով հեռացնել, սրտի հոգեկան ցավերից կուտակված դառնությունից ազատվել: Բայց արատներն ու մեղքերը անքանակ են, անկշռելի ու անսահման: Նրանք ավելի են, քան ծովերի բազմակուտակ ավազուտների մանրահատիկները: Ու մինչդեռ ավազահատիկները զուրկ են աճելու ունակությունից, իր մեղքերից ու հանցանքներից ամեն մեկը, ճիշտ հակառակը, նորաժառանգ արատների անվերջ հավելում է պայմանավորում: Իր հանցանքները ծանրությամբ հակակշռում են Արարատ լեռանը: Նրա հոգին բզկտվում է հուսահատությունից ու կասկածից, նա ընկնում է խոր երկվության մեջ: Աչխարհից անբավական՝ խորհրդապաշտ Գ. Ն. մերկացնում ու մերժում է արատավոր իրականությունը, անխիր քննադատում հասարակության բոլոր խավերին: Մարդուն կործանումից ազատողն ու նրա փրկիչը միայն Աստված է, որը որքան հեռու է և անմատչելի, նույնքան էլ մոտ է ու անբաժանելի՝ «Անմատչելի հեռաւոր և անընդմիջելի մերձաւոր»: Եթե Աստված արդարացնում է որևէ մեկին, ապա «ոչ ոք զօրէ դատապարտ առնել»: Քավությունն ու ինքնամաքրումը տանում են դեպի Աստված, հնարավորություն ընձեռում անբաժանելիորեն նրան միանալ, հասնել նրա լույսին, «Աստուած իսկ լինել»:

Միջնադարում ժողովուրդը «Մայան ողբերգությանը»՝ «Նարեկը», համարել է «Դեղ կենաց», որի օգնությամբ ձգտել է մաքրվել հոգով, ազատվել մեղքերից և հասնել կատարելության: Գրքին վերագրվել է բուժիչ զորություն, իսկ հեղինակի անունը սրբացվել է ու միջնորդ-բարեխոս համարվել Աստծո մոտ՝ «մեղավոր հոգիների» փրկության համար: Երկի առանձին գլուխներ ու հատվածներ ընդգրկվել են ոչ միայն եկեղեց-արարող. գրքերում (*Ժամագիրք*, Պատարագամատույց, *Մաշտոց*), այլև ախտարական բնույթի ժողովածուներում (Ուրբաթագիրք, Հմայիլ, Կիպրիանոս): Հավատացել են, որ դրանց ընթերցումով կարելի է փրկվել չար ոգիներից, փարատվել «ջերմատագնապ» ախտերից: Ընդ որում ախտարական ժողովածուներում կան ցանկեր՝ «Զանազանութիւն Նարեկայ գրքոյն..., թէ ամէն մէկ գլուխ ի՛նչ գործոյ ասել օգտակար է» բովանդակությամբ: Գրքի բոլոր գլուխներին տրվել է կիրառական նշանակություն՝ այս կամ այն ցավի, պատահարի ու աղետի դեպքում կարդալու համար: Նման ցանկեր երևան են եկել նաև երկի միջնադարյան ընդօրինակություններում և վաղ շրջանի հրատարակություններում:

«Մայան ողբերգության» երկի մի շարք գլուխներ և տարբեր գլուխների առանձին հատվածներ շոշափում են հոգևոր, աստվածաբան., դավան., եկեղեց. խնդիրներ: 34 և 75-րդ գլուխներն աղերսվում են Նիկիական հանգանակի հետ և ներկայացնում Գ. Ն-ու ըմբռնումները Ս. Երրորդության և եկեղեցու մասին: 92-րդ գլուխը եկեղեցու կոչնակի ներբողն է, 93-րդը՝ սրբազան Մյուռոնի փառաբանությունն ու պանծացումը: Երկուսն էլ հորինված են «թարգմանօրեն», այսինքն՝ մեկնաբան. եղանակով: 33-րդ գլխի երկու հատվածներ *աղոթքի* ժանրի ընտիր դրսևորումներ են և ներառվել են (XII դ. վերջին քառորդից առաջ) հայոց Պատարագի արարողության մեջ, կատարվել իբրև «աղօթք, որ նախ քան զպատարագն մատուցանի»: Որոշ գլուխների տարբեր հատվածներ դիտվել են որպես առանձին աղոթքներ և կատարվել ժամակարգության ընթացքում: Մի քանի գլուխներ հարում են *ներբողի* ժանրին, թեպետև նրանց կապը երկի ներքին հյուսվածքին մնում է ամուր: 80-րդ գլխում Գ.Ն. ներբողում է Աստվածամորը, 81-ում՝ հրեշտակներին, 82-ում՝ առաքյալներին: Ներբողների շարքը լրացվում է բոլոր առաքյալներին և Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ստեղծագործություններով, որոնք գրված են մինչև «Մայան ողբերգությանը»:

Գ. Ն. նաև երաժշտության խոշոր երևույթներից ու նվիրական անուններից է, որի ստեղծագործությունը սերտորեն կապված է եղել հայկ. մասնագիտացված երգարվեստի պատմ. զարգացման նախորդ (V–IX դդ.) և հաջորդ (XI–XV դդ.) փուլերի, ուստի և հազարամյա վերելքի ողջ շրջանի հետ: Նա իր ստեղծագործության հզոր շերտերով նշանակալի հեղաբեկում է առաջ բերել հայոց միջնադարյան մասնագիտացված երգարվեստում՝ հատկապես իր տաղերով, որոնց երաժշտ. բաղադրիչներում վճռականորեն ու տաղանդով կիրառված է *ութձայնի* հին եղանակների համեմատությամբ մեղեդիական ազատ, ավելի բարձր ոճը: Նրա բազմաթիվ տաղերից համեմատաբար անաղարտ մեզ են հասել միայն հինգը (մեկը Ն. Թաշճյանի, չորսը՝ Կոմիտասի մեծարժեք ձայնագրություն-

ների միջոցով)։ Դրանք են. քնարադրամատիկ. «Աչքըն ծով», լայնաշունչ վիպական «Հաւիկը», ոգեշունչ հռետորական «Ահեղ ձայնս», հեզասահ պատմողական «Սայլն այն իջանէր» և խոհաքնարական «Հաւուն-հաւուն»։ Հորինվածքային առանձնահատկությունների առումով այդ տաղերում ակնառու են ձայնաելևէջային ու կշռութային հարստությունը, համաձայնութային անցումների չքեղ երանգավանակը և ճարտարակերտության ավարտվածությունը։ Տաղերը զարգացման մեծ ուղի են անցել հոգևոր արվեստի շրջանակներում։ Սակայն նախատեսված չլինելով պարտադիր կիրառական նպատակների համար՝ ազատ են մնացել եկեղեց. կանոնական մտածողությունից ու ավելի անկաշկանդ հարստացել ժողովրդագուսան. աշխարհիկ արվեստից եկող կենսունակ տարրերով՝ կազմելով հայ միջնադարյան արվեստի կանոնացումից դուրս մնացած բաժնի կարկառուն հատվածներից մեկը։ Ն. Թաշճյանը ժամագրքում, *Շարակնոցում* և Պատարագամատույցում տեղադրել է, համապատասխանաբար՝ «Ընկալ քաղցրութեամբ» աղոթքը, «Փառք Քրիստոսի ամենազօր Յարութեան» շարականը և «Աչքըն ծով» ու «Հաւուն-հաւուն» տաղերը։

Հայ եկեղեցին ս. Գ. Ն-ու հիշատակը տոնում է Խաչվերացի հինգերորդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը՝ սուրբ թարգմանիչ վարդապետների հետ։

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.4, 6-րդ պատկերը։

Երկ. Գիրք աղօթից, ԿՊ, 1700–02։ Գիրք աղօթից, ԿՊ, 1774։ Մատեան ողբերգութեան, Վնտ., 1840։ Նարեկ, արևմտահայերեն արձակ թարգմանություն Թորգոմ եպս. Գուշակյանի, Կահիրե, 1926։ Նարեկ, գրաբար բնագրի հանդիպադրությամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին եպս. Խաչատուրյան, Բուենոս Այրես, 1948։ Մատյան ողբերգության, արևելահայերեն թարգմանություն Մ. Խերանյանի, Ե., 1960։ Մատյան ողբերգության, արևելահայերեն թարգմանություն Վ. Գևորգյանի, Ե., 1970։ Մատեան ողբերգութեան (գիտահամեմատական բնագիր), աշխատասիր. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Ե., 1985։ Տաղեր և դանձեր, աշխատասիր. Ա. Քյոչկերյանի, Ե., 1981։

Գրկ. Նալյան Յ., Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, ԿՊ, 1745։ Ավետիքյան Գ., Նարեկ-աղօթից..., Վնտ., 1827։ Զոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1924։ Մկրյան Մ., Գրիգոր Նարեկացի, Ե., 1955։ Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970։ Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դ., Ե., 1985։ Ղազինյան Ա., Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս, 1995։ Խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Էջմիածին, 1996։

Պողոս Խաչատրյան

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻ, սուրբ Գրիգոր Նյուսացի [334–335, Կեսարիա (Կապադովկիա), 394], *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*)։ Սերել է քրիստ. բարեպաշտությամբ, կենցաղավարությամբ և առաքինությամբ հռչակված մեծահարուստ և ազնվական ընտանիքից։ *Բարսեղ Կեսարացու* կրտսեր եղբայրը, որին համարել է իր ուսուցիչն ու դաստիարակը։ Գ. Ն., Բարսեղ Կեսարացին և *Գրիգոր Նազիանզացին* Ընդհանրական եկեղեցու և համաքրիստ. աստվածաբան. մտքի պատմության մեջ հայտնի են «կապադովկյան հայրեր» կամ «երեք մեծ կապադովկիացիներ» անունով։ Նախն. կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա Պաղեստինյան Կեսարիայի հանրահայտ դպրոցում՝ հմտանալով ճարտասանության և իմաստասիրության մեջ։ Պատրաստվել է դառնալ աշխարհիկ հռետոր, տնօրինել հայրական կալվածքը, սակայն եղբոր՝ Բարսեղ Կեսարացու, և հատկապես Գրիգոր Նազիանզացու հորդորներով դարձել է հոգևորական (ձեռնադրել է Բարսեղ Կեսարացին), 371-ից անցել եկեղեց. գործունեության։ Հեռացել է անապատ, այնտեղ խորացրել կրոն. գիտելիքները։ Եղել է հայաբնակ Նյուսա գյուղի (372–379) և Սեբաստիա քաղաքի (380-ից) եպիսկոպոսը։ Գ. Ն. անդուլ պայքար է մղել *արիոսականության* դեմ, ինչի համար հալածվել է. արիոսամետ Վաղես կայսրը նրան աթոռազրկել է և աքսորել։ Գ. Ն. մասնակցել է 379-ին Անտիոքում գումարված ուղղափառ եպիսկոպոսների ժողովին։ Ժողովի որոշումով որպես թեմական քննիչ և տեսուչ ուղարկվել է Պոնտոսի, Պաղեստինի և Արաբիայի թեմերը՝ ամրապնդելու ուղղափառության դիրքերը, զսպելու արիոսականների և մյուս հերետիկոսների անկարգությունները։ Գ. Ն. մասնակցել է *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովին* (381) և Գրիգոր Նազիանզացու հետ վճռական դեր խաղացել Նիկիական հանգանակը պաշտպանելու և Մակեդոնի հերձվածը դատապարտելու գործում։

Գ. Ն. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն։ Աշխատությունները շարադրել է կյանքի վերջին տարիներին՝ 380–394-ին։ Ի տարբերություն Կապադովկիայի եկեղեցու

մյուս նշանավոր հայրապետների հոգևոր ժառանգության, նրա երկերը հատկորոշվում են վառ արտահայտված խորհրդապաշտ. ուղղվածությամբ: Գ. Ն-ու դավան. գրվածքների մեծ մասը հակաճառ. բնույթի է՝ ուղղված ընդդեմ ժամանակի հերետիկոսների: «Ընդդէմ Եվնոմիոսի» աշխատության մեջ հաստատել է Սուրբ *Երրորդության* ուղղափառ վարդապետությունը: Գ. Ն-ու երրորդաբանական տեսությունը շարադրված է նաև «Սուրբ Հոգու մասին» աշխատությունում, «Առ Եւստաթէոս բժիշկ. Յաղագս Սրբոյ Երրորդութեան» թղթում, Ս. Երրորդության վարդապետության ուղղափառ բացատրությունը նվիրված ճառերում, որոնցից նշանավոր է «Ոչ երեք Աստուածք»-ը, և այլ գրվածքներում: «Հրահանգ քրիստոնէական հաւատքի» գործը հորդոր է ուղղված նորադարձ հեթանոսներին ու հրեաներին, պարունակում է նաև հերետիկոսությանը հակաճառելու եղանակներ: «Ընդդէմ Ապողինարիոսի» երկում հերքել է Ապողինար Լաոդիկեցու ուսմունքը (տես *Ապողինարիզմ*), իսկ «Ընդդէմ մանիքեցիների» երկում ապացուցել, որ Աստված չարի պատճառ չէ: Ցույց է տվել ճակատագրի նկատմամբ հավատի հիմնազուրկ լինելը: Բացառիկ է «Մարդու արարչագործման մասին» երկասիրությունը, որտեղ խոսվում է մարդու մեջ Աստծո պատկերի նախաստեղծ արժանիքների, հոգու ոգեղենության, նրա զորությունների, հարության, մարդու բնության մեջ սողոսկած արատի, դրա ծագման մասին:

Գ. Ն-ու դավանաբան. գլխ. և ծավալուն երկը «Քրիստոնեական»-ն է («Ճառ յաղագս մեծին քրիստոնէականին»), որը հեղինակի ուղղափառ վարդապետության ամփոփումն է: Գ. Ն. ներկայացրել է քրիստ. հրամանակարգ վարդապետության հիմն. կետերը, խոսել Ս. Երրորդության, Արարչագործության, Մարդեղության և Փրկագործության մասին: Գ. Ն-ու գրչին են պատկանում նաև Աստվածաշնչի մեկնություններ, որոնք հիմնականում այլաբան. խորհրդածություններ են: Գրել է *սաղմոսների* երկու մեկնություն, սաղմոսները դնահատել որպես կատարելության ու բարության հասնելու սանդուղքներ, ութ քարոզակերպ այլաբան. մեկնություններ Ժողովող գրքի վրա: Տասնհինգ ներբողներ է հորինել Երգ երգոցի, 5 աղոթքներ՝ Տերունական աղոթքի կամ «Հայր մեր» վերաբերյալ, որոնցում դարձյալ շեշտը դրել է Ավետարանի բնագրի այլաբան. իմաստի վրա, 8 քարոզներ՝ նվիրված Ավետարանների «Երանի»-ներին, 2 մեկնություն՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ին: Ճգնավորական-վանական կյանքն արծարծող գործերում այն միտքն է հայտնել, թե մարդը կարող է հասնել մարդկային ամենաբարձր առաքինությանը միմիայն ճշմարիտ իմաստության շնորհիվ: Հեղինակել է նաև ծիսապաշտ. քարոզներ՝ նվիրված Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության, Զատկի և Հարության, Համբարձման, Հոգեգալստյան տոներին, գրել բարոյախրատ. բնույթի ճառեր, ներբողներ, դամբանականներ, խրատներ, նամակներ:

Գ. Ն-ու աստվածաբանությունը հիմնված է քրիստ. հավատի ընդհանրական դրույթների, *Որոգինեսի* աստվածաբանության, *Փիլոն Ալեքսանդրացու* խորհրդապաշտ. իմաստասիրության և նորպլատոնականության վրա: Կապադովկյան հայրերը եղել են *Աթանաս Ալեքսանդրացու* և *Ալեքսանդրիայի* դպրոցի աստվածաբանության կրողները և, իրենց առանձնահատկություններով հանդերձ, դրա շարունակողները: Նրանք բանաձևել են աստվածաբան., դավանաբան. շատ հակացություններ, հատկապես՝ Ս. Երրորդության ուղղափառ ըմբռնումը, և բացատրել եկեղեցու վարդապետությունը այնպես, ինչպես դա արտահայտված է Նիկիայի հավատո հանգանակում:

Գ. Ն-ու գործերի զգալի մասը հայերեն է թարգմանվել V–VIII դդ.: Թարգմանված առաջին ճառը տպագրվել է «Գիրք և ճառք հոգեշահ» (1722) ժողովածուում, ճառերից հատվածներ՝ «Կնիք հաւատոյ»-ում, *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառութիւն» (1908) երկում, տարբեր աշխատություններից հատվածներ՝ «*Արարատ*»-ում (1902), «*Բազմավէպ*»-ում (1921,1923): Հայաստանի միջնադարյան վարդապետարաններում օգտագործվել և լայն շրջանառության մեջ են եղել հատկապես նրա «Առ այնոսիկ որք ասեն, եթէ մեծ է Հայր քան զՈրդի», «Մեկնութիւն Ժողովողի», «Խաւսք յինն երանութիւնսն», «Ի Հայր մեր որ յերկինսն», «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն», «Յաղագս կուսութեան», «Յաղագս Երգոյ երգոցս», «Բան խոստովանութեան հաւատոյ» աշխատությունները: Գ. Ն-ու երկերից հատվածներ են վկայակոչվել *Անանիա Սանահնեցու* «Հակաճառության» մեջ, *Վարդան Այգեկցու* կազմած «Արմատ հաւատոյ»-ում և այլուր: Նրա աշխատությունների հի-

ման վրա, ուս. նկատառումներից ելնելով, կազմվել են *հարցուպատասխանիներ*: Գ. Ն. եղել է Հայ եկեղեցու սիրված և ընդունված հայրապետներից: Նրա մատենագր. վաստակը սերտորեն կապված է Հայ եկեղեցու և մշակույթի պատմության հետ:

Հայ եկեղեցին ս. Գ. Ն-ու հիշատակը տոնում է տարին 2 անգամ. հունվարի 1-ի մերձակա շաբաթ օրը և հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.4, 7-րդ պատկերը:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 362–374: Մուրադյան Կ., Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Ե., 1993: Հատիտյան Ա., Սուրբ Գրիգոր հայրապետ Նյուսացի (334–394), «Էջմիածին», 1977, № 11: Քյոսեյան Հ., Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 267, 272: Migne J. P., PG, t. 44–46, P., 1857–66.

Հակոբ Քյոսեյան

ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ, Բաղիշեցի, Շիրվանցի, Ամիրտոլցի (1670–12.2.1749, թաղված է Երուսաղեմի Ս. Փրկիչ վանքում), Երուսաղեմի հայոց պատրիարք 1715–49-ին: Ամրդոլու վանքում աշակերտել է *Վարդան Բաղիշեցուն*: 1704-ին վանքի հինգ միաբանների հետ տեղափոխվել է Տարոնի Գլակա վանք (Ս.Կարապետ): 1707-ից՝ Ս. Ստեփաննոս վանքի վանահայր, 1710–15-ին՝ Տարոնի հոգևոր տեսուչ: Պատրիարք է ընտրվել, երբ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը նոր էր անջատվել Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից և գտնվում էր ծանր ու անմխիթար վիճակում: 1718-ին, որպես Երուսաղեմի աթոռի և Ս. Հակոբյանց վանքի պարտքերի վճարման լուծը ստանձնելու խորհրդանիշ, Գ. Շ. իր պարանոցին կրել է երկաթե շղթա՝ ուխտելով չհանել այն մինչև վանքի պարտքերի մարումը: Այստեղից էլ՝ «Շղթայակիր» մականունը: 1717-ին Կ.Պոլսից նրա ուղարկած դրամով նորոգվել է Ս.Հարություն տաճարի՝ հայերին պատկանող մասը: 1720-ին նորոգվել են Հանդերձից բաժանման սեղանը, Յուղաբերից խորանը, Ս. Գերեզմանի գմբեթը: Հոպպեի հայոց վանքի մոտի՝ Ս. Հակոբյանց վանքին պատկանող շինությունները գրավել էր Ռամի փաշան և դրանց տարածքում շենքեր կառուցել: 1720-ին Գ. Շ. նրա որդիներից գնել է այդ շենքերը և նվիրաբերել Ս. Հակոբյանց վանքին՝ այդ մասին հատուկ կոնդակով ծանուցելով վանքի միաբանությանը: Նույն թվականին Հալեպի և Դամասկոսի ճանապարհով ուղևորվել է Երուսաղեմ և այդ ընթացքում նորոգել տվել Հալեպի Հոգետունն ու Դամասկոսի հայոց եկեղեցին: Երուսաղեմ է հասել 1721-ի փետր. 21-ին՝ բազմաթիվ ուխտավորների ուղեկցությամբ: Բազում շրջագայություններով ու նվիրատվությունների ժողովումով Գ. Շ. վճարել է պատրիարքարանի և Ս.Հակոբյանց վանքի պարտքերը: 1727-ին Կ.Պոլսի *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի* պատրիարքի ջանքերով ստացվել է արքունական թույլտվություն Ս.Հակոբյանց վանքի նորոգման մասին: Գ. Շ. Ակնցի Սեղբոս ամիրայի նյութ. օժանդակությամբ հիմնավոր նորոգումներ է կատարել վանքում: 1728-ին Ամենայն հայոց կաթողիկոս *Կարապետ Բ Ուլնեցու* և Հովհաննես Կոլոտ պատրիարքի խնդրանքով Գ. Շ. պարանոցից հանել է երկաթե շղթան և նստել պատրիարքական աթոռին:

1736-ի մայիսին Գ. Շ. կրկին այցելել է Կ.Պոլիս և Հովհաննես Կոլոտ պատրիարքի ու Հարություն ամիրա Մուրադյանի օժանդակությամբ ազատել Ս.Հակոբյանց վանքը հույն եկեղեցականների ոտնձգություններից: 1739-ին ստորագրվել է համաձայնություն հայ և հույն համայնքների միջև Ս.Հակոբյանց վանքի խնդրի շուրջ: 1739-ին, շնորհիվ Գ. Շ-ի, Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպանի միջնորդությամբ նոր հրովարտակ է հռչակվել Երուսաղեմի ազգ. սեփականության մասին: 1740-ի սեպտ. Գ. Շ. վերադարձել է Երուսաղեմ: Երեք անգամ առաջադրվել է կաթողիկոս, սակայն հրաժարվել է:

Երկ. Ստորագրութիւն ուղեւորութեան Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Աթոռոյս՝ յԵրուսաղէմէ ի Կ.Պոլիս (6 մայիս 1736–15 սեպտ. 1740), «Սիոն», 1866, էջ 122–127, 141–143, 184–190:

Գրկ. Տեր-Հովհաննեսյան Ա., Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. 1, 2, Երուսաղեմ, 1890: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Աղավնունի Մ., Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղեմ, 1931: Սավալանյանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հ. 2, Երուսաղեմ, 1931: Անասյան Հ., Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից, «Էջմիածին», 1950, № 3–4:

Պավել Զորանյան

ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ԱԲԱՍԱ, Գրիգոր Աբասյան (ծ. թ. անհտ – 1220/21, հանդչում է Սանահինի Ս.Աստվածածին եկեղեցու գավթում), մատենագիր, *արևելյան վարդապետներից*: 1214-ից մինչև մահը՝ *Սանահինի վանքի* առաջնորդ: Հայտնի է «Գիրք պատճառաց»

ԳՐԻԳՈՐ

(«Պատճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց և ի մի հաւաքեալ և հոդացեալ մեծ բաբունապետին Գրիգորի՝ որդոյ Աբասայ») աշխատությամբ, որը մատենագիտ. բնույթ ունի և բաղկացած է երեք բաժնից՝ 196 ծավալուն հոդվածներով: Յուրաքանչյուր հոդված սկսվում է «սկիզբն և պատճառ» կամ «*պատճառ*» բառերով, այդտեղից էլ՝ գրքի «Պատճառաց» անվանումը: Հետազոտված են թվով 165 գործեր՝ հետևյալ դասակարգումով. ա. Հին կտակարանի գրքեր, բ. Եկեղեց. մատենագիրների և «արտաքին» կոչված գրքեր (արտաքին է համարվել գիտության և գրականության մեջ այն ամենը, ինչ դուրս էր Աստվածաշնչից, կրոն. և եկեղեց. գիտության ու գրականության շրջանակից), գ. Նոր կտակարանի գրքեր: Գ. Ո. Ա., իր երկի Ա և Գ բաժինների հոդվածները պատրաստելիս, օգտվել է հայ հին և օտար մատենագիրների աշխատություններից, իսկ Բ բաժնի նյութերը քաղել է իր ժամանակակիցներ *Վարդան Հաղպատեցուց, Դավիթ Քոբայրեցուց, Մխիթար Գոշից* և ուր.: Այդ բաժնում գրախոսված են *Փիլոն Ալեքսանդրացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Եվագր Պոնտացու, Դավիթ Անհաղթի* աստվածաբան. և փիլ. երկերը, ինչպես նաև *Դիոնիսիոս Արիոպագացու* «Ինքնակենսագրությունը»: Աշխատության մեջ զգալի է արևելյան վարդապետների, ինչպես նաև կիլիկյան հայ վարդապետների գիտ. վաստակի օգտագործումը:

«Գիրք պատճառաց»-ում հեղինակը հանրագումարի է բերել հայոց մատենագրական ժառանգության ուսումնասիրման անցյալի փորձը, նոր մակարդակի բարձրացրել հայ մատենագիտությունը:

Գրկ. Տաշյան Հ., Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վնն., 1895, էջ 213–233: Ակինյան Ն., Ներածություն ի գիրս պատճառաց, տես նրա «Մատենագրական հետազոտություններ», հ. 1, Վնն., 1922, էջ 1–34: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ.1, Ե., 1959, էջ XIII–XVIII:

Պողոս Խաչատրյան

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՎՌԱՑԻ, Լամբրոնացի (մոտ 1160/70-ական թթ., Կիլիկիայի Լամբրոն ամրոց – մոտ 1230-ական թթ.), մատենագիր, մեկնիչ, բանաստեղծ, շարականագիր: *Սկևռա* վանքի ուսումնագիտ. կենտրոնի նշանավոր վարդապետներից: Եղել է *Ներսես Լամբրոնացու* կրտսեր ժամանակակիցը, աշակերտը և գործընկերը, Լևոն Բ թագավորի թարգմանիչը, խոստովանահայրը: Կրթությունն ստացել է Կիլիկիայի Սկևռա վանքում, որտեղ գործել է ժամանակին հռչակված դպրանոցներից մեկը, ինքն էլ դարձել է նրա ղեկավարներից: 1221-ի կաթողիկոս. ընտրություններում եղել է *Կոստանդին Ա Բարձրբերդցու* (1221–67) մրցակիցը: Գ. Ս. բազմաբեղուն մատենագիր է. մեզ են հասել ճառեր, խրատներ, ներբողներ, մեկնություններ, աղոթքներ, շարականներ: Լավագույններն են «Ճառ ի Յարութիւն Քրիստոսի», «Պատմութիւն վարուց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» և Եսայի մարգարեի «Տէր ո՞ հաւատաց» խոսքի էությանն ու մեկնաբանությանը նվիրված ճառերը: Ներբողներից են «Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, քաղաքավարութեան և վերափոխման ամենասուրբ կուսին»՝ գրված Վերափոխման տոնի առիթով, «Ներբողեան ի սուրբն Լամբրոնացի», որը և՛ կենսագր. ներբող է, և՛ պատմ. դրվագ, որտեղ արտացոլված են Ներսես Լամբրոնացու կյանքը, գրական գործունեությունը և ժամանակաշրջանը: Գ. Ս-ուն է վերագրվում Եվագրոսի «Լուսաւոր պատերազմ» երկի մեկնությունը: Գ. Ս. Ներսես Լամբրոնացու երկերի առաջին ընդօրինակողներից է. Ներսես Լամբրոնացին նրան է հանձնարարել Սաղմոսների իր մեկնության ընդօրինակությունը: Գ. Ս. Լևոն Բ թագավորի հանձնարարությամբ 1203-ին հուն-ից հայերեն է թարգմանել Նիկիայի արքեպիսկոպոս Հովհաննեսի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս *Զաքարիա Ա Ձագեցուն*: Գ. Ս. նպաստել է հայկ. երաժշտաբանաստեղծ. մանագիտացված արվեստի զարգացմանը և որպես շարականագիր պահպանել երաժշտության կիլիկյան դպրոցի լավագույն ավանդույթները: Արժեքավոր է Շարակնոցում տեղ գտած Հովհաննես Մկրտչի ծննդյան կանոնի «Արեգականն արդարութեան» սկզբնատողով, այբբենական կարգով և վիպական շնչով գրված նրա օրհնությունը, որտեղ ներկայացրել է Հովհաննես Մկրտչի ծնունդը, կյանքը, քարոզչությունը և նահատակությունը:

Երկ. Գիրք աղօթից, ԿՊ, 1742: Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի, տես Սոփերք հայկականք, հ. 15, Վնտ., 1854:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեանց, հ. 1, Վնտ., 1897:

Ազատ Բոզոյան
Աննա Արևշատյան

ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ, սուրբ Գրիգոր Սքանչելագործ [մոտ 210–213, Նեոկեսարիա (Պոնտոս) – 270–273], Հույն եկեղեցու նշանավոր հայրերից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Սերել է հեթանոս ազնվականի ընտանիքից: Նախաքրիստ. անունը՝ Թեոդորոս (Աստվածապարգև): Ստացել է հելլենիստ. կրթություն: 233–238-ին ուսանել է Պաղեստինյան Կեսարիայի աստվածաբան. քրիստ. դպրոցում, աշակերտել *Որոգինեսին*, ձեռք բերել բազմակողմանի գիտելիքներ: 240-ին դառնալով Նեոկեսարիայի առաջին եպիսկոպոսը՝ գործուն մասնակցություն է ունեցել Անտիոքի 264–265-ի եկեղեց. ժողովին: Ըստ ավանդության, նրա եպիսկոպոսության առաջին տարում Նեոկեսարիա քաղաքում եղել է ընդամենը 17 քրիստոնյա, իսկ 270-ին մնացել 17 հեթանոս: Իր հովվական եռանդուն գործունեության համար հռչակվել է «Պոնտոսի առաքյալ» պատվանունով: Որպես քարոզիչ ձեռք է բերել մեծ հեղինակություն և ճանաչում, նրան վերագրվել են բազմաթիվ հրաշագործություններ, ինչի համար կոչվել է «Սքանչելագործ»:

Գ. Ս-ի գրչին են պատկանում կամ վերագրվում Որոգինեսին նվիրված ներբողը (239), «Աստծո չարչարելիության և անչարչարելիության մասին» երկը՝ ուղղված Թեոպոմպոսին, 11 գլխից բաղկացած «Կանոնական նամակը» (253–254), որը զետեղվել է Հույն եկեղեցու Կանոնական նամակների ժողովածուում և ընդունվում է որպես հայրապետ. իշխանության, եկեղեց. կարգապահության պատմ. կարևոր փաստաթուղթ: «Հավատքի շարադրություն» (262–265) դավանաբան. գրվածքը համարվում է նախանիկիական շրջանի *Ընդհանրական եկեղեցու* ուղղափառ դավանության *Հավատո հանգանակը*: Գ. Ս. առաջին եկեղեց. գրողն է, որը սուրբգրային բնօրինակը թարգմանել է իր ժամանակի հունարենի՝ հավատացյալներին հասկանալի դարձնելու համար: Դա Սողոմոնի Ժողովող գրքի թարգմանությունն է (256–260), որը Յոթանասնից վերածել է իր ժամանակի համար անաղարտ հունարենի՝ վերացնելով եբր. տարրերը և հստակեցնելով խրթիմաստ հատվածները: «Հոգու մասին» գրվածքն ուղղված է Տատիանոսին: Գ. Ս-ի անունով հայտնի են նաև ճառեր, որոնք իրականում հետագայի երկեր են:

Գ. Ս-ի երկերի զգալի մասը հայերեն է թարգմանվել V դ. և մեծ ազդեցություն թողել հայ ինքնուրույն մատենագրության վրա: *Մովսես Խորենացու* Սուրբ Ծնունդին նվիրված նշանավոր շարականը կրում է Գ. Ս-ի անվամբ հայտնի «Խորհուրդ մեծ եւ աքանչելի» ճառի դրոշմը: Միջազգ. հայրաբանության համար հույժ կարևոր են միայն հայերենով պահպանված, ֆրանսիացի հայագետ Ժան Մարտինիի հրատարակած (1883) Գ. Ս-ի ճառերը՝ «Խօսք ի ծնունդն Փրկչի», «Յաղագս Մարդեղութեան», «Յաւետիս Աստուածածնի», «Ներբողեան ի Սուրբ Ստեփանոս», «Գովեստ ի Սուրբ կոյսն Մարիամ»: Անգլիացի արևելագետ-հայագետ Ֆ. Կոնիբերը 1896-ին անգլ. թարգմանությամբ հրատարակել է մեկ այլ՝ նույնպես միայն հայերենով պահպանված ճառ («Յաղագս Աստուածածնի»)՝ այն վերագրելով Գ. Ս-ի գրչին: Նրա երկերից քաղված հատվածներ են օգտագործվել հայ դավանաբան. մատենագրության մեջ՝ «*Կնիք հավատո*» ժողովածուում, *Անանիա Սանահնեցու* «Հակաճառութիւն», *Վարդան Այգեկցու* «*Արմատ հավատո*» գործերում:

Հայ եկեղեցին ս. Գ. Ս-ի հիշատակը տոնում է Խաչվերացի 10-րդ կիրակին հաջորդող կամ Հիսնակաց պահքի առաջին շաբաթ օրը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.5, 1-ին պատկերը:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 374–378: Վարդանյան Ա., Երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի խաչք ի ծնունդն Քրիստոսի, ՀԱ, 1912, էջ 392–398, 469–476: Անասյան Հ., «Արմատ հաւատոյի» աղբյուրներից. Գրիգոր Սքանչելագործ, «Էջմիածին», 1977, № 12: Պետրոսյան Ե., Հայրաբանություն, Էջմիածին, 1996, էջ 172–179: Քյոսեյան Հ., Անանիա Սանահնեցի, Էջմիածին, 2000, էջ 372–373: Migne J.P., PG, t. 10, P., 1857–66.

Հակոբ Քյոսեյան

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, սուրբ Գրիգոր Տաթևացի [ավազանի անունը՝ Խուլթուշահ, 1346, Թմոք ամրոց (Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջավախք գավառ) – 27.12.1409, Տաթև, աճյունն ամփոփված է Տաթևի վանքում], աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ, բաբունապետ, Հայ առաքելական եկեղեցու սուրբ հայրերից և վարդապետներից, տոնելի սուրբ: Ժամանակակիցները և հետագայի հեղինակները Գ. Տ-ուն մեծարել են «եռամեծ վարդապետ», «երկրորդ Լուսավորիչ Հայոց և աստուածաբան», «եօթնալոյս վարդապետ», «խարիսխ հաւատոյ և հիմունք եկեղեցւոյ»,

«տիեզերալոյս վարդապետ», «սիւն և ախոյեան Հայ եկեղեցւոյ», «վարժապետ ամենայն հայոց», «վարդապետ ամենայն հայոց» և այլ պատվանուններով: Սովորել է *Տաթևի վանքի* դպրոցում, աշակերտել *Հովհան Որոտնեցուն*: Ուսուցչի ցանկությամբ սարկավագ է ձեռնադրվել Սեպուհ լեռան Ս. Գրիգոր Լուսավորչի հանգստարանդամբարանում և, հանուն *Գրիգոր Ա Լուսավորչի*, անվանակոչվել Գրիգոր: 1370-ական թթ. սկզբին Հովհան Որոտնեցու հետ ուխտագնացության է մեկնել Երուսաղեմ, այնտեղ ընդունել կուսակրոն քահանայության աստիճան: Վերադարձին կրկին այցելել են Գրիգոր Լուսավորչի գերեզման, որտեղ Հովհան Որոտնեցին նրան ձեռնադրել է վարդապետ: Գ. Տ. Ապրակունիսում Հովհան Որոտնեցուց ստացել նաև ծայրագույն վարդապետ. դավազանի իշխանությունը: Իր ուսուցչի մահից հետո գլխավորել է Տաթևի (տես *Տաթևի համալսարան*) և Ապրակունիսի (տես *Ապրակունիսի Ս. Կարապետ վանք*) բարձրագույն դպրոցները: Ապրակունիսի վանքում երկու տարի մնալուց հետո՝ 1390-ին Գ. Տ. իր աշակերտների հետ տեղափոխվել է Տաթևի վանք, որտեղ մինչև մահը շարունակել է իր գիտամանկավարժ. գործունեությունը: Դասախոսել է նաև *Մեծոփավանքի* դպրոցում, *Սաղմոսավանքում*, միաժամանակ զբաղվել ազգ-եկեղեց. հարցերով, հատկապես՝ Աղթամարի կաթողիկոսության ներսում ծագած խնդրով, այդ առիթով գրել «Վասն աթոռոյն Աղթամարայ, որ էին ի ներքո բանադրանաց» գրվածքը: Գ. Տ-ու ջանքերով, ըստ *Թովմա Մեծոփեցու*, «անհնազանդ աթոռն Աղթամարայ» դարձել է «ի հնազանդութիւն»:

Հաստատվելով Տաթևում՝ Գ. Տ. իր շուրջն է համախմբել Սյունիքից և Հայաստանի տարբեր վայրերից իր մոտ ուսանելու եկած բազմաթիվ աշակերտների: Նրա բարձունապետության օրոք Տաթևի դպրոցը, որը վերածվել էր համալսարանի, հասել է իր ծաղկման գագաթնակետին՝ դառնալով գիտության, մշակույթի, արվեստի, հոգևոր կյանքի համահայկ. կենտրոն, Հայ առաքելական եկեղեցու ուղղափառ դավանության և ավանդության պաշտպանության ամրոց: Սյունյաց վարդապետներն իրենց ուսուցչի գլխավորությամբ, գրչով և քարոզչությամբ անհաշտ պայքար են մղել Հայաստան ներթափանցած կաթոլիկ քարոզիչների՝ ունիթորների (տես *Ունիթորություն*) դեմ:

Գ. Տ. դաստիարակել է 300-ից ավելի աշակերտների, որոնցից 60-ը եղել են սարկավագներ, քահանաներ, անվանի վարդապետներ: Կրթել և պատրաստել է աստվածաբաններ, մատենագիրներ, մանկավարժներ, իմաստասերներ, նկարիչներ, երաժիշտներ, բանաստեղծներ, ծաղկողներ, գրիչներ, որոնք նշանակալի դեր են խաղացել հայ հոգևոր-եկեղեց., գիտ., մշակութ. և հաս. կյանքում: XV–XVI դդ. Հայաստանում և Հայաստանից դուրս քառասուն նշանավոր վանքերի և նրանց կից դպրոցների ու վարդապետարանների գլուխ էին կանգնած Գ. Տ-ու աշակերտները: Տաթևի համալսարանում Գ. Տ. դասավանդել է աստվածաբանություն, Հին և Նոր կտակարանների մեկնություն, փիլիսոփայություն, քերականություն, հայոց լեզու, գրականություն, պատմություն ևն, ինչպես նաև երաժշտություն, երաժշտության տեսություն, երգեցողություն, ճառասացություն, նկարչություն, գրչության արվեստ և բնական գիտություններ: Գ. Տ-ու մանկավարժ. հայացքներն առկա են նրա բազմաթիվ գործերում և առավել ամբողջական ներկայացված են «Սահմանադրութիւն դաստիարակութեան» աշխատությունում, որը բացառիկ երևույթ էր միջնադարի հայ մանկավարժ. գրականության մեջ: Դաստիարակչ. արժեքավոր մտքեր և ուսուցման նոր եղանակներ բովանդակող իր երկում Գ. Տ. առաջ է քաշել ժամանակի կենսական խնդիրներին վերաբերող հարցեր և ձգտել դրանք լուծել դաստիարակության միջոցով:

Գ. Տ. հռչակվել է ոչ միայն իր սրբակրոն վարքով, քարոզչ., մանկավարժ. գործունեությամբ, այլև մատենագր. հարուստ վաստակով: Եղել է միջնադարի հայ աստվածաբան. մտքի այուներից: Նրա մատենագր. ժառանգությունը հատկորոշվում է հանրագիտարանային բազմակողմանիությամբ, գիտ. խորությամբ, կոթողային և մնայուն արժեքով: Գ. Տ-ու հոգևոր ժառանգությունը դարակազմիկ նշանակություն է ունեցել հայ աստվածաբան., դավանաբան., իմաստասիր. մտքի պատմության մեջ: Գրել է մեկնություններ, *լուծմունքներ, քարոզներ*, աստվածաբան., դավան., իմաստասիր. աշխատություններ, որոնցից առավել կարևոր են «Գիրք հարցմանցը» (1729), «Ոսկեփորիկը» (1746), «Գիրք քարոզութեանը»՝ իր «Ձմեռան» (1740) և «Ամառան» (1741) հատորներով, «Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիւրի» (1793), «Լուծմունք համառօտ ի տեսու-

թիւն Դաւթի Անյաղթի», «Համառօտ լուծումն Առաքինութեանցն Արիստոտէլի», «Լուծումն Պարապմանց սրբոյն Կիւրղի»: Մեկնող. բնույթի գործերից են Հոբի, Եսայու, Երգ երգոցի, Սաղմոսաց, Առակաց գրքերի, Մատթեոսի, Հովհաննեսի Ավետարանների լուծմունքները և քաղվածո մեկնությունները:

Հայ եկեղեցու դավանանքի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն հեղինակի «Գիրք հարցմանցը» և «Ոսկեփորիկը»: Հանրագիտարանային բնույթի այս երկերում ի մի են բերված ոչ միայն ժամանակի գիտության և կյանքի ամենաբազմազան խնդիրներին վերաբերող տեղեկությունները, այլև, որ առավել կարևոր է, հայ դավան. մտքի դարավոր ձեռքբերումները: Մասնավորապես «Գիրք հարցմանցը», որը հեղինակի գլուխգործոցն է, Հայ եկեղեցու դասական աստվածաբանության դպրոցն է, վարդապետ. աստվածաբանության չգերազանցված ձեռնարկ: Աշխատությունն աստվածաբան. և վարդապետ. տարբեր հարցերի մի ընդարձակ անդրադարձ է, որը շարադրված է սխոլաստիկ աստվածաբանության մեջ ընդունված սկզբունքով՝ հարց-պատասխանների մեթոդով: Գ. Տ-ու այս երկի վրա առկա է միջնադարի լատին աստվածաբանների՝ Սկովտոս Երինացու (IX դ.), Ալբերտոս Սվաբեցու (XIII դ.) և Թովմա Աքվինացու (XIII դ.) ազդեցությունը: Գ. Տ., որ հմուտ էր լատիներենին և լատին աստվածաբանների սխոլաստիկ ոճին, նրանց իսկ ձևով և զենքերով պայքարել է Հայաստանում այդ ժամանակ տարածված լատինադավան հոսանքի՝ ունիթորության դեմ: «Ոսկեփորիկը» ևս նպատակ ուներ ընթերցողին ծանոթացնել Հայ եկեղեցու դավան. սկզբունքներին և հայ աստվածաբան. մտքի բոլոր կարևորագույն հիմնադրույթներին:

«Գիրք հարցմանց»-ից հետո Գ. Տ-ու երկրորդ մեծ աշխատությունը «Քարոզգիրքն» է, որտեղ ամփոփված են հեղինակի քարոզները, ճառերը, կրոն. բովանդակությամբ դասախոսությունները, մեջբերված են նաև այլ հեղինակների քարոզները: Գ. Տ. եղել է նշանավոր հռետոր և քարոզիչ, կարևորել քարոզը՝ որպես հավատի ամրապնդման միջոց, ուշադրավ մտքեր արտահայտել քարոզելու արվեստի, քարոզի կառուցվածքի, նշանակության և դերի մասին: «Քարոզգրքի» առաջին՝ «Ձմեռան» հատորն ընդգրկում է Ս. Ծնունդից մինչև Հոգեգալուստի տոնը և պարունակում է 184 քարոզ, իսկ երկրորդը՝ «Ամառան» հատորը՝ Հոգեգալստից մինչև Ավագ տոները և պարունակում է 160 քարոզ: «Քարոզգիրքն» ունեցել է գործն., ուսուցող., դաստիարակչ., բարոյախրատ. նպատակ, այնտեղ խոսվում է սիրո, առաքինության, խոհեմության, արիության, աշխատասիրության, ծույլերի, անհոգների, պահքի, եկեղեցու խորհուրդների, տոների, սրբերի, ինչպես նաև «Վասն իմաստութեան», «Վասն երիտասարդաց», «Վասն լեզուի», «Վասն շարժման երկրի» և այլ կրոն., եկեղեց., հաս., գիտ. հարցերի մասին: Գ. Տ-ու այս գործը կոչվել է «Հոգեբուխ և աստուածախոս մատեան», եղել քարոզխոսության, հռետոր. արվեստի դասագիրք:

Գ. Տ. եղել է Հայ եկեղեցու բարեկարգիչ: Նա է սահմանել վարդապետական մասնավոր և ծայրագույն իշխանության կանոնը, նրանց տվչության կարգը, Հայ եկեղեցում վերականգնացրել քարոզխոսությունը, կարևորել քարոզը և քարոզելու իրավունք ձեռք բերելու քահանաների պատրաստվածությունը: Գ. Տ. Հայ եկեղեցու միասնականության և Մայր աթոռի դերի բարձրացման ամենաջերմ պաշտպաններից էր: Նա հայրապետ. աթոռը Սսից Ս. Էջմիածին փոխադրելու ծրագրի առաջին մտահղացողներից և գաղափարախոսներից էր, ծրագիր, որն իրականացրել են իր աշակերտներ Թովմա Մեծոփեցին և *Հովհաննես Հերմոնեցին* 1441-ին Էջմիածնում գումարված ազգ-եկեղեց. ժողովի որոշումով:

Գ. Տ. զարգացրել է նախորդների՝ *Դավիթ Անհաղթի, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Հովհաննես Սարկավագի, Վահրամ Բաբունու*, Հովհան Որոտնեցու փիլ. հայացքները: Փիլիսոփայության հիմն. առարկան, ըստ Գ. Տ-ու, բնությունն է: Նա պաշտպանել է երկակի ճշմարտության սկզբունքը, սահմանազատել հավատի և գիտության, աստվածաբանության և փիլիսոփայության բնագավառները՝ ըստ այդմ ընդունելով ճանաչողության «չնորհական» (աստվածային էությունների ճանաչում) և «բնական» (բնության ճանաչում) ձևերը:

Գ. Տ. նաև մանրանկարիչ ու երաժիշտ էր: Իր մի շարք աշխատություններում և հատկապես «Գիրք հարցմանց»-ում շոշափել է երաժշտաթիս., տես. ու գեղագիտ. կարևոր խնդիրներ: Պահպանվել է մի Ավետարան (Մատենա-

դարան, ձեռ. № 7482)՝ գրված 1297-ին, զարդարված խորաններով ու լուսանցազարդերով, որը 1378-ին լրացվել է Գ. Տ-ու՝ մեծ վարպետությամբ կատարած մանրանկարներով («Ավետում», «Ծնունդ», «Մարիամը մանկան հետ», «Մուտք Երուսաղեմ», «Խաչելություն»): Նկարիչը հագեցած գույներով և զուսպ միջոցներով հասել է արտակարգ արտահայտչականության:

Հայ եկեղեցին ս. Գ. Տ-ու հիշատակը տոնում է *Մեծ պահքի* 4-րդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.5, 2-րդ պատկերը:

Երկ. Մեկնութիւն Սաղմոսաց (համառոտ տարբերակ), աշխատասիր. Ա. Քյոչկերյանի, Ե., 1994: Ոսկեփորիկ, աշխարհաբարի փոխադրումը և ծանոթագր. Հ. Քյոսեյանի, Ե., 1995: Սողոմոնի առակների մեկնություն, քննական բնագիր, աշխարհաբար թրգմ. Խ. Գրիգորյանի, Ե., 2000:

Գրկ. Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958: Կարապետյան Գ., Գրիգոր Տաթևացի, «Էջմիածին», 1959, № 3–4: Պողարյան Ն., Հայ գրողներ. Ե-ԺԷ դար, Երուսաղեմ, 1971: Թահմիզյան Ն., Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, № 5: Հակոբյան Հ., Գրիգոր Տաթևացին արվեստի մասին, ՊԲՀ, 1973, № 4: Քյոչկերյան Ա., Գրիգոր Տաթևացու Սաղմոսաց մեկնության նորահայտ տարբերակը, «Էջմիածին», 1987, № 11–12, 1988, № 5–6: *Аревшатян С., Философские взгляды Григора Татеваци, Е., 1957.*

ԳՐԻԳՈՐ ՏՈՒՏԵՈՐԴԻ (ծ. և մ. թթ. անհտ), XII դարի Հայաստանի «Հյուսիսային կողմանց» (տես *Արևելյան վարդապետներ*) նշանավոր վարդապետներից, Հաղպատի եպիսկոպոս, Սանահինի վանքի վանահայր: Սկզբում հիշատակվում է որպես Հովհաննավանքի վանահայր: 1154-ին կազմել է մի ձեռագիր, որի մեջ թողել է հիշատակարան: Հեղինակ է Հայ և Հույն եկեղեցիների միության խնդրին վերաբերող մի շարք նամակների՝ ուղղված *Ներսես Շնորհալի* և *Գրիգոր Դ Տղա* կաթողիկոսներին: Հյուսիսային վարդապետների առավել պահպանողական և ծիսադավան. զիջումների հարցում անհանդուրժող մասի ակնառու ներկայացուցիչներից է: Մերժել է կիլիկյան հայրերի և Հռոմկլայում նստած կաթողիկոսների առաջարկած՝ եկեղեցիների միության գաղափարը: Առավել արմատապես տրամադրված նրա համախոհ վարդապետները Հայ եկեղեցու ազգ. ավանդույթներից ցանկացած շեղում համարել են սրբապղծություն և ընդդիմացել միությունն իրագործելու ամեն մի փորձի: Գ. Տ. այդ խնդիրներն է արծարծել հատկապես Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղային ուղղված թղթերում և զգուշացրել Հայ եկեղեցու համար նման քայլերի ծանր հետևանքների մասին: Գ. Տ-ու հետ հաշվի են նստել Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանում և Արցախում: Գրիգոր Դ Տղան նրա կարծիքն է հարցրել Աղվանից եկեղեցու թափուր կաթողիկոս. աթոռին նոր գահակալ ձեռնադրելու խնդրում: Գ. Տ. անունը հիշատակվում է ավանդապատում զրույցներում, ինչպես նաև Սանահնի և Հաղարծնի վիմական արձանագրություններում: Ըստ այդ արձանագրությունների, Գ. Տ. Հաղարծնի և Սանահնի վանքերին է նվիրել գրքեր, եկեղեց. օգտագործման թանկարժեք իրեր, դրամ հատկացրել վանական հաստատությունների շինարարության համար: Պահպանվել է Գ. Տ-ու շիրմաքարը, որը դրվել է դեռևս նրա կենդանության տարիներին (1183):

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, Ե., 1982: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Նույնի, Այրարատ, Վնտ., 1890:

Ազատ Բոզոյան

ԳՐԻԳՈՐԻՍ, սուրբ Գրիգորիս (մոտ 295–337/338), Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ, *Գրիգոր Ա Լուսավորչի* թոռը, *Վրթանես Ա Պարթևի* որդին: Ըստ ավանդության, Գ. Հայոց Տրդատ Գ արքայի հանձնարարությամբ քարոզչական գործունեություն է ծավալել Ատրպատականում, Փայտակարանում, Արցախում, Մաղքութների երկրում: Ըստ Մովսես Կաղանկատվացու, 15 տարեկանում ձեռնադրվել է եպիսկոպոս Վրաց և Աղվանից աշխարհի, որտեղ քարոզել է քրիստոնեություն, կառուցել եկեղեցիներ, ձեռնադրել երեցներ: Նախքան մաղքութների մոտ գնալը Գ. Աղվանք է տարել Զաքարիա և Պանդալիոն սրբերի նշխարները և Ցրի քաղաքում մի եկեղեցի կառուցելով՝ դրանք ամփոփել այնտեղ, իսկ Դանիել անունով մի երեցի կարգել է եկեղեցու սպասավոր: Մեկ այլ հիշատակության համաձայն, Գ. կառուցել և նորոգել է մինչև Ատրպատականի գավառները եղած բոլոր եկեղեցիները:

Մաղքութների մոտ Գ-ի քարոզչությունը սկզբ. շրջանում մեծ հաջողություն է ունեցել.

նրանց ավագանին և ժողովուրդը մեծ ոգևորություն են ցուցաբերել քրիստ. գաղափարների նկատմամբ: Սակայն Տրդատ Գ-ի մահից հետո փոխել են իրենց վերաբերմունքը՝ պատճառաբանելով, թե քրիստոնեության տարածումով Հայոց արքան խորամանկորեն ցանկանում է իրենց հետ պահել ավարառությունից: Մազքութները դաժանորեն սպանել են երիտասարդ Գ-ին: Մազքութների Սանեսան թագավորը Գ-ին կապել է ձիու պոչից և բաց թողել Վատնյան դաշտում: Նրան ուղեկցող սարկավագները մարմինը բերել են Արցախի Մյուս Հաբանդ գավառ և ամփոփել *Ամարասի վանքի* բակում: Ս. Գ-ի գերեզմանի վրա 489-ին կառուցվել է դամբարան:

Հայ եկեղեցին ս. Գ-ի հիշատակը տոնում է երկու անգամ. ս. Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների հետ (Ս. Ծննդյան 4-րդ կիրակիի կամ Վարդավառի 3-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը), ապա՝ իր նշխարների գյուտին ի հիշատակ՝ Խաչվերացի 5-րդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը:

Գրկ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.1, ԿՊ, 1912:

Մհեր Պապյան

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ, Գրիգորիս Ա Աղթամարցի (Մեծ) (ծ. և մ. թթ. անհտ), XVI դ. 1-ին կեսի բանաստեղծ, վարքագիր-վկայագիր, գանձասաց, մատենագիր, մանրանկարիչ: Աղթամարի կաթողիկոս (1512–1544): Սերում է Վասպուրականի Արծրունյաց թագավոր. տնից: Կաթողիկոս. աթոռ է բարձրացել ոչ ընտրությամբ, այլ ժառանգ. իրավունքով՝ իբրև Արծրունյաց տոհմին վերապահված կաթողիկոս. դավազանի հաջորդական կրող: Աշակերտել է Արճեշի Ուռնկարի Ս. Նշան վանքի վանահայր և գիտամշակութ. դպրոցի առաջնորդ Գրիգոր վրդ. Բաբունուն, գրիչ, ծաղկող, բանաստեղծ Հովսեփ վրդ. Աղթամարցուն:

Գ. Ա. 1525-ին ընդօրինակել է մի հինավուրց Մաշտոց և նվիրաբերել Ջուղայի Ս. Աստվածածին եկեղեցուն, 1530-ին Արճեշում ծաղկել է Հովհաննես Արճիշեցու գրչագրած մեկ այլ Մաշտոց: 1534-ին Մարգարե Արճիշեցուն պատվիրել է ընդօրինակել և Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն ընծայել մի ընտիր Սաղմոսարան՝ իր իսկ ինքնագիր հիշատակարանում չեշտելով առ Աստված ուղղված քնար. այդ օրհներգությունների «արբեցնող քաղցրությունը»: Ծանրակշիռ է Գ. Ա-ու վաստակը հայ հոգևոր գրականությունը սրբախոս. երկերով հարստացնելու ուղղությամբ: 1516-ին գրել է Մարինոսի չափածո վարքը (280 տող), որն ըստ էության «Վարք Երանուհի կուսին Մարիամու, որ Մարինոս անուանեցաւ» հանրահայտ վարքագրության բանաստեղծ. վերարծարծումն է՝ հավատի համար առաքինի ու ճգնակյաց կույսի մարտիրոսացման մի դրամատիկ պատմություն: Ուշագրավ է նաև 1519-ի իրական դեպքերի թարմ տպավորությամբ գրված Աստվածատուր Խաթայեցու վկայաբանությունը: Գ. Ա-ու կրոն. երկերը դասական կառուցվածք ունեն և ներդաշնակ են Հայ եկեղեցու սահմանած ավանդ. կանոններին. վկայաբանություններն ու գանձերն օժտված են համապատասխան հորդորակներով և մեղեդիներով: Այս իմաստով հայկ. հոգևոր գրականության, հատկապես՝ Գանձարան ժողովածուների մեջ նշանակալի ներդրում է Ուռնկարի Ս. Նշանին նվիրված գանձը՝ հորդորակով ու մեղեդիով:

Ժողովրդի հոգևոր դաստիարակությանն է ծառայել Գ. Ա-ու զուտ կրոն. բնույթի՝ Քրիստոսի խաչելությանն ու հարությանը և Տիրամոր գովերգությանը նվիրված բարձրարվեստ տաղերի շարքը («Արեգակն արդարութեան...», «Անեղին տաճար...», «Արքային փակեալ...», «Տապանակ կազմեալ...» սկսվածքներով)՝ գրված Աստվածաշնչի, մասնավորապես Հովհաննեսի Ավետարանի թեմատիկ-գաղափար. հիմքով, «մեղեդի» կոչված կրոն. հնամենի երգերի արվեստի օգտագործմամբ և ավանդականի թարմաշունչ ու հուզառատ վերակերտմամբ: Հին կտակարանի որոշ բանաստեղծ. դրվագների՝ սաղմոսների, շարականների, երգ երգոցի ներշնչանքով ստեղծված տաղերը («Ահա այդիք մեր ծաղկեցան» ևն), հիմնականում ճոնված դարձյալ Աստվածածնին, Արարչագործության իրական հրաշալիքների հրճվալից փառաբանություն են և Գ. Ա-ու՝ աշխարհի լուսավոր ու քնարական ընկալման վկայություն:

Գ. Ա-ու գրական ժառանգության արժեքավոր մասն են կազմում, այսպես կոչված, այլաբանական, հաճախ վարդ ու բլբուլի սիրավեպ ներկայացնող տաղերը («Գարունն երեկ...», «Գարունն է բացուեր...»), որոնց հիմքում ըն-

կած է կրոն. հայեցակետով իրականության խորհրդանշ. իմաստավորման քրիստ. կանխադրույթը: Արտաքուստ իբրև ծաղկավետ և մրգաշատ այգու հախուռն գովեստ ընկալվող «Յամէն առաւօտ և լուսս» ժողովրդականացած, այլաբան. տաղի բուն՝ աստվածահանաչող. իմաստի ընկալման վկայություններից է եկեղեցածիս. Մաշտոց ժողովածուներում և հետագա ընդօրինակություններում նրան կցված «Այս տաղս հոգևոր է» հիշեցումը (Մատենադարան, ձեռ. № 5668):

Գ. Ա. նորովի վերակերտել և դավան. առումով անխոցելի է դարձրել V դ. հուն-ից թարգմանված և Կալիսթենեսին վերագրված «Աղեքսանդրի վարքը», ինչպես նաև X դ. արաբ-ից թարգմանված «Հազար ու մի գիշեր» ժողովածուի բարոյախոս. զրույցներից մեկը՝ «Պղնձե քաղաքի պատմությունը»: Իր հեղինակած կաֆաներով, բարձրարվեստ մանրանկարներով և ստեղծագործ. այլ եղանակներով Գ. Ա. նոր լիցք և ուղղվածություն է հաղորդել թարգմ. երկերին՝ առավել շեշտելով ժամանակի հայոց կյանքի համար հրատապ գաղափարները, ներմուծելով նաև նոր թեմաներ՝ կապված քրիստ. հավատի և բարոյակրթ. նորմերի, աստվածաշնչյան պատկերացումների, ազգ. ձգտումների հետ:

Հայագիտության համար բացառիկ արժեք են ներկայացնում «Աղեքսանդրի վարքի» գրիգորիսյան երկու ձեռագրերը՝ կազմված 1526-ին, Խառաբաստավանքում (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, «Հարություն Քյուրտյան հավաքածու», ձեռ. № 280) և 1536-ին, Վարագավանքում (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 473), որոնց բնագիրը խմբագրել, սեփական կաֆաներով, մանրանկարներով, լուսանցազարդերով, թռչնագրերով հարստացրել է ինքը՝ Գ. Ա.:

Գ. Ա-ու գործունեության շատ փաստեր ամբողջացնում են Աղթամարի մշակութ. կենտրոնի ընդհանուր պատկերը, արժեքավոր տեղեկություններ տալիս Վասպուրականի գրչության և մանրանկարչության դպրոցների մասին: Նրա ստեղծագործությունների հարյուրավոր ձեռագրեր են պահվում Երևանի Մատենադարանում, Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի ձեռագրատներում: Տաղերը թարգմանվել են անգլ. (Ղ. Ալիշան, 1852), ֆրանս. (Ա. Զոպանյան, 1906), ռուս. (Կ. Կոստանյան, 1913) և այլ լեզուներով:

Գրկ. Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը, հրտ. Կոստանյանց Կ., Թ., 1898: Հովսեփյան Գ., Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, № 1–12, ՀԱ, 1930: Ակինյան Ն., Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վնտ., 1958: Գրիգորիս Աղթամարցի (ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մ. Ավդալբեգյանի), Ե., 1963: Սիմոնյան Հ., Հայ միջնադարյան կաֆաներ, Ե., 1975: Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, աշխատասիր. Հ. Սիմոնյանի, Ե., 1989:

Համիկ Սիմոնյան

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ, Գրիգորիս Արշարունյաց քորեպիսկոպոս (ծ. թ. անհտ – մոտ 730), VII դարի վերջի – VIII դարի առաջին քառորդի մատենագիր, մեկնիչ: 684-ին Սահակ Գ Ձորոփորեցի կաթողիկոսը նրան ձեռնադրել է Արշարունիքի եպիսկոպոս: Եղել է ժամանակի հայ նշանավոր վարդապետներից և դավանաբաններից, մեծարվել «փիլիսոփայական արուեստիւ պայծառացած», «մեծ փիլիսոփա» մակդիրներով: Մասնակցել է 726-ի *Մանազկերտի եկեղեցական ժողովին*, նշանակալից դեր խաղացել *երևութականության* դեմ պայքարում և հայ-ասոր. դավան. դաշինքի հաստատման գործում:

Գ. Ա-ուց մեզ է հասել «Ընթերցուածոց մեկնութիւն»-ը՝ գրված Հայոց իշխան Վահան Կամսարականի խնդրանքով: Երկը բաղկացած է 34 ճառից՝ ամփոփված 34 գլուխների մեջ, ունի առաջաբան և վերջաբան՝ ուղղված Վահան Կամսարականին: Մեկնությունը «ընթերցուածոց» է կոչվել, որովհետև բացատրում է եկեղեցում պաշտամունքի ժամանակ և, մասնավանդ, Մեծ պահոց չորեքշաբթի և ուրբաթ օրերի աստվածաշնչյան ընթերցումների ընտրությունը և համառոտ մեկնաբանել է դրանք: Ճառային, բարոյախոս. բնույթ ունեցող երկում տեղ են գտել վաղ շրջանի *պահքի, ժամերգության, Պատարագի, Ճրագալույցի, Նավակատիքի* հին ավանդությունները: Հեղինակն անդրադարձել է նաև Հայ և Հույն եկեղեցիների տոներին և դավան. տարաձայնությունների խնդիրներին: «Ընթերցուածոց մեկնութիւն»-ը տպագրվել է Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գրքի վերջում (ԿՊ, 1727):

Գրկ. Մեկնութիւն ընթերցուածոց, աշխատասիր. Ք. Զրաքյանի, Վնտ., 1964: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932, էջ 473–474:

Մհեր Պապյան

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, հայ մշակույթի միջնադարյան կենտրոններ, բնակավայրեր կամ հաստատություններ, որտեղ գրվել, ընդօրինակվել, զարդանկարվել ու կազմվել են ձեռագրեր: Ձեռագրեր ստեղծվել են հիմնականում վանքերին ու մենաստաններին, եպիսկոպոսարաններին ու դպրանոցներին կից գրչատներում՝ նպատակ ունենալով ձեռագրերի բազմացումը ինչպես առօրյա օգտագործման, ուսուցման ու ընթերցման կարիքները բավարարելու, այնպես էլ հետագա սերունդներին փոխանցելու համար: Եղել են նաև առանձին տներ, որտեղ գրիչները ձեռագրերն ընդօրինակելու համար օգտագործել են աշակերտների և ընտանիքի անդամների աշխատանքը: Գ. կ-ում ձեռագրեր ընդօրինակելու հետ ստեղծվել են պատմագր., գրակ., գիտ., դավան. բնույթի գործեր: Գ. կ. եղել են գրի պահպանման ու զարգացման, մանրանկարչության ու կազմարար. արվեստի, մագաղաթի ու թղթի մշակման, ներկերի ու թանաքի պատրաստման և գրչության արվեստին առնչված այլ արհեստների կենտրոններ: Խոշոր կենտրոններում եղել են գրչապետներ ու սրբագրիչներ, որոնք հետևել են ձեռագրի գեղեցկությանը և գրագիտությանը:

Հայ առաջին գրչության կենտրոնը Վաղարշապատն է: Այդտեղ, V դարից սկսած, գրվել, բազմացվել և Հայաստանի տարբեր կողմեր են առաքվել հայ. ձեռագրեր: Սրանք իրենց հերթին ընդօրինակվել ու բազմացվել են այլ Գ. կ-ում: Հաշվվում են ավելի քան 1500 Գ. կ., որոնք գործել են տարբեր ժամանակներում և ունեցել տարբեր ընդգրկում: Առավել նշանավոր էին Վաղարշապատի, Այունյաց, Անձևացյաց, Տաթևի, Վարագի, Նարեկի, Արգինայի, Հաղպատի, Սանահինի, Աղթամարի, Գետիկի, Գոշավանքի, Խորանաշատի, Խոր վիրապի, Մշո Առաքելոց և Գլակա վանքերի, Երզնկայի, Կարինի, Կարսի, Գլաձորի, Ապրակունիսի, Խառաբաստի, Մեծոփի, Սսի, Դրազարկի, Ակների, Գոնների, Ադանայի, Խիզանի, Վանի, Բաղեշի, Կաֆայի, Սուրխաթի, Կ. Պոլսի, Երուսաղեմի, Նոր Ջուղայի և այլ Գ. կ.: Հայ Գ. կ. են եղել նաև Վրաստանում, Իրանում, Ռուսաստանում, Իտալիայում, Հնդկաստանում, Հոլանդիայում, Լեհաստանում, Եգիպտոսում և այլուր:

Գրատուն. միջնադարյան հայ գրչության կենտրոն վանքերում կառուցված հատուկ շենքեր (գրանոց, մատենադարան), որտեղ գրվել, արտագրվել, նկարազարդվել և նորոգվել ու պահպանվել են ձեռագրեր: Պատերազմներից, օտարների ասպատակություններից տուժել են բազում Գ. կ., հրկիզվել գրատներ: Պահպանվել է ընդամենը հինգ գրատուն (*Սանահինի վանքում, Գոշավանքում, Հաղպատի վանքում, Սաղմոսավանքում, Հռոմոսի վանքում*), որոնց նշանակությունը որոշակի հայտնի է արձանագրություններից ու պատմիչների տեղեկություններից: Դրանք մոտավորապես քառակուսի հատակագծով, բրգաձև ծածկով (սակայն՝ տարբեր ձևերի) շենքեր են, որոնք հիմնականում լուսավորվել են ծածկի կենտրոնի երդիկից և ներսում, պատերում ունեցել խորշեր՝ ձեռագրերը պահելու համար: Գրատների շենքերը չափերով, կառուցող. տեխնիկայով, հարուստ հարդարանքով չեն զիջել եկեղեցիներին ու գավիթներին՝ լինելով վանական համալիրի ճարտ. կերպարի կարևոր բաղկացուցիչ տարրը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.5, 3–5-րդ և 4.6, 1-ին պատկերները:

Արտաշես Մաթևոսյան
Մուրադ Հասրաթյան

ԳՈՒԳԱՐՔԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու: Վերակազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցի: Ընդգրկում է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերը: Լոռու տարածաշրջանը մինչև Գ. թ-ի հաստատումը մտել է *Շիրակի թեմի* մեջ: 1992-ին Վազգեն Ա Պալճյանի կոնդակով ստեղծվել է Գ. թ.: Առաջնորդարանը գտնվում էր Դիլիջան ք-ում, առաջնորդն էր Արսեն արք. Բեբերեյանը:

Գ. թ-ի տարածքը կազմում է պատմ. Գուգարաց աշխարհի մի մասը: Այժմյան թեմը Հաղպատի նշանավոր եպիսկոպոս. աթոռի հաջորդն է, սակայն այդ երկրամասում վարչատարածք. եպիսկոպոս. վիճակ է եղել շատ ավելի վաղ:

Գուգարքը Արշակունիների օրոք Հայաստանի կողմապահ չորս բդեշխություններից մեկն էր, բդեշխի նստավայրը՝ Ցուրտավը, նաև եպիսկոպոս. աթոռանիստ էր: Ցուրտավում եղել է խոշոր սրբավայր՝ ս. *Շուշանիկի* (նահատակվել է մոտ 475-ին) վկայարանը, որտեղից սրբի աճյունը հետագայում տեղափոխվել է Տփղիս: Ցուրտավն ավերվել է արաբ. արշա-

վանքների շրջանում (VII դ.), իսկ թեմի տարածքը հետագայում դարձել է Հաղպատի եպիսկոպոսության ենթակա տարածք, որի մասին ուշագրավ վկայություն ունի Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս արք. Օրբելյանը: Երբ Բագրատունիները վերականգնել են պետությունը, հիմնադրվել են Սանահնի (967) ու Հաղպատի (977) թագավոր. վանքերը, և աշխուժացել է Գուգարքի հոգևոր-եկեղեց. կյանքը:

Բագրատունիների ժամանակ Գուգարքի եկեղեց. իշխանությունը հաստատվել է Տաշիր գավառում: Սմբատ Բ Բագրատունի թագավորը, 979-ին գալով Սանահին, հատուկ կոնդակով այդ վանքը հաստատել է որպես Տաշիրի եպիսկոպոսի նստավայր, վանահայր Եսայուն ձեռնադրել տվել եպիսկոպոս, հաստատել եպիսկոպոսության ենթակա տարածքը՝ Վրաստանի սահմանից մինչև Նիգ և Շիրակ գավառները: Սմբատ Բ թագավորի հրովարտակի ընդօրինակությունը պահպանվել է Սանահնի «Քոթուկ» կոչվող մատյանում:

XI դ. 60-ական թթ. վերջից Սանահինը հայտնվել է ստվերում, իսկ այդ նույն ժամանակ վերելք է ապրել Հաղպատը, որտեղ 1081-ին, *Բարսեղ Ա Անեցու* կաթողիկոս. ձեռնադրությունից անմիջապես հետո հիմնադրվել է Հաղպատի եպիսկոպոսությունը: Կյուրիկյան թագավորության գահակալները (Գուրգենն ու Դավիթ Անհողինը) մինչև Կյուրիկե Ա, թաղվել են Սանահինում, իսկ Կյուրիկեից սկսած՝ Հաղպատում:

Հաղպատի եպիսկոպոսությունը Սյունիքի, Բջնիի և Արտազի եպիսկոպոս. աթոռների հետ միջնադարում առանձնահատուկ դեր է ունեցել, քանի որ նրանցից որևէ մեկի անհամաձայնության դեպքում անհնար էր Ամենայն հայոց կաթողիկոսների ընտրությունը: Հաղպատի աթոռը գոյություն է ունեցել մինչև ռուս. կայսրության հաստատած «*Պոլոժենիե*»-ն (1836):

Թեմի տարածքը Հայաստանի պատմ. եկեղեց. հարուստ ավանդույթներ ունեցող խոշոր կենտրոններից է: Այնտեղ են գտնվում նշանավոր վանքեր Օձունը (VI դ. վերջ), Հաղպատը, Սանահինը (երկուսն էլ՝ X–XIII դդ.), *Գոշավանքը* (Նոր Գետիկ, XII–XIII դդ.), *Նոր Վարագավանքը* (XII–XIII դդ.), Խորանաշատը (XIII դ.), *Մակարավանքը* (XIII դ.), Հաղարծինը (X–XIII դդ.), Քոբայրը, ինչպես նաև Մորոձորո (V–XIII դդ.), Առաքելոց (XIII դ.), Դեղձնուտի (XIII դ.), Կիրանց (XIII դ.) վանքերը, *Մշկավանքը* (XIII դ.), *Հոռոմայրի վանքը* (XII–XIII դդ.): Միջնադարյան եկեղեցիներ առկա են տարածքի բոլոր հին բնակավայրերում: Թեմի գործող եկեղեցիներն են Վանաձորի Ս. Աստվածածինը, Ստեփանավանի Ս. Սարգիսը, Սպիտակի Ս. Հարությունը, Իջևանի Ս. Ներսես Շնորհալին և Հաղարծնի վանքը՝ իրենց հոգևոր հովիվներով:

Թեմում նորոգվում են բազմաթիվ եկեղեցիներ, գործում են կիրակնօրյա դպրոցներ, եկեղեց. երգչախմբեր, երկու ճամբար:

Գ.թ-ի առաջնորդն է Սեպուհ եպս. Զուլֆյանը (1996-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.6, 2-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.6:

Գրկ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն Կ., Հաղբատ, Ե., 1963: Մ ա թ է վ ո ս յ ա ն Կ., Գուգարաց թեմի պատմությունից, «Էջմիածին», 1998, № 6: Ամփոփ տեղեկագիր Գուգարաց թեմի գործունեության, Վանաձոր, 1997:

Կարեն Մաթևոսյան

ԳՈՒՇԱԿՅԱՆ Թորգոմ [Պիլիճյան Մկրտիչ, 27.9.1874, գ. Պարտիզակ (Սեբաստիայի նահանգ) – 10.2.1939, Երուսաղեմ], Երուսաղեմի հայոց պատրիարք, բանասեր, մատենագետ: Նախն. կրթությունն ստացել է Պարտիզակի Ներսեսյան-Շուշանյան վարժարանում, 1890–1896-ին սովորել Արմաշի դպրեվանքում, աշակերտել Մ. *Օրմանյանին*, Ե. *Դուրյանին*: 1896-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա, 1897-ին՝ վարդապետ, 1902-ին՝ ծայրագույն վարդապետ, 1910-ին՝ եպիսկոպոս, 1897–1906-ին՝ Արմաշի դպրեվանքի փոխտեսուչ, 1906-ին՝ փոխվանահայր: 1907–13-ին եղել է Սեբաստիայի հայոց առաջնորդ, 1914–16-ին՝ եգիպտահայ թեմի առաջնորդ: 1916-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը Գ-ին կարգել է Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետ. պատվիրակ: 1929-ին որպես հայրապետ. լիազոր ներկայացուցիչ շրջել է Եվրոպայի հայաբնակ քաղաքներում, ուսումնասիրել Եվրոպայի թեմ ստեղծելու հնարավորությունները: 1931-ին ընտրվել է Երուսաղեմի հայոց պատրիարք՝ հաջորդելով Ե. Դուրյանին: Իր պատրիարքության շրջանում ծավալել է ազգ-եկեղեց., կրոնակրթ., վանականվարչ. բեղուն գործունեություն: Նրա օրոք կազմակերպված հիմքերի վրա է դրվել *Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի* ուս. մակարդակը, ընդհանրապես՝ կրթ. գործը Պա-

ղեստինում: Գ. խմբագրել է «*Սիոն*» ամսագիրը, հարստացրել Դուրյան մատենադարանը, հիմնել Թարգմանչաց Դուրյան գրական մրցանակը: Մեծ ուշադրություն է դարձրել Ս. Հակոբյանց վանքի տպարանին, այն ապահովել ժամանակի արդիական սարքավորումներով, լույս ընծայել հայագիտ. հրատարակությունների մի պատկառելի շարք: 1936-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը հատուկ կոնդակով Գ. պատրիարքին նշանակել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի համազգ. տոնակատարությունների կազմակերպիչ: Այդ առիթով Գ. խմբագրել և հրատարակել է «Հուշարձան Աստվածաշնչի հայերեն թարգմանության հազար հինգ հարյուրամյակի» հատորը՝ իր ներածությամբ (1938): Գ-ի կենսագիր, պատմաբան Ա. Ալպոյաճյանը հայ ազգ-եկեղեց., գրակ-գիտ. կյանքում ունեցած մեծ վաստակի համար նրան անվանել է Հայ եկեղեցու «արթուն պահակ»:

Գ. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն: Սեբաստիայում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Հեռավոր Արևելքում իր հովվական պաշտոնավարության շրջանում շրջագայել է հայաշատ բոլոր քաղաքներում, ծանոթացել հայ գաղթավայրերի պատմությանը և իր տպավորություններն ու խոհերն ամփոփել հուշագրքերում, հոդվածաշարերում: Այդ ժամրի աշխատություններից են՝ «Հնդկահայք» (1927) հուշագիրքը, Հեռավորարևելյան երկրների (Բիրմայի, Սինգապուրի, Ճավայի, Սումատրայի ևն) հայ գաղութների մասին «Ճամբորդի նոթեր»-ը, 1922-ի Երուսաղեմ ուղևորության օրագրությունը՝ երեք մասից (լույս են տեսել Ա. Լեքսանդրիայի «Արև» պարբ-ում): Այս շարքի գործերից է Վերին Եգիպտոս հովվական շրջագայության առթիվ Սպիտակ և Կարմիր վանքեր այցելության և այնտեղ գտած հայերեն արձանագրության մասին հոդվածը՝ «Հայերեն արձանագրութիւններ Վերին Եգիպտոսի Ղպտի վանքի մը մեջ» վերնագրով («Արև», 1922, № 1050): Հոդվածն արժեքավոր է նրանով, որ հեղինակն իր հայտնաբերած՝ XI դ. հայերեն մի արձանագրությամբ հաստատել է հայ պատմիչների տեղեկությունները՝ նույն ժամանակ Եգիպտոսում հայկ. գաղութի գոյության մասին: Այս հարցին Գ. անդրադարձել է նաև «Եգիպտոսի Հայոց հին եւ արդի եկեղեցիները եւ պատմութիւն չինութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նորաշեն եկեղեցւո Գահիրեի» գործում (1927): Եգիպտոսի հայ գաղութին նվիրված այս պատմ. ուսումնասիրությունը ներառում է նաև հայկ. եկեղեցիների ցանկը՝ համառոտ ծանոթագրություններով: Ձեռագրագիտ. արժեքավոր աշխատություն է «Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշան վանուց ի Սեբաստիա» (1961) գործը, որտեղ նկարագրված է 283 ձեռագիր մատյան:

Հայ եկեղեցու և մշակույթի նշանավոր անհատների կյանքին ու գործունեությանը նվիրված գործերից են՝ «Խրիմյան Հայրիկ (իր ծննդյան հարյուրամյակի առթիվ)» (1925), «Եղիշե պատրիարք Դուրյան» (1929)՝ նվիրված Երուսաղեմի հայոց պատրիարքի քահանայության հիսունամյակին, Գրիգոր Նարեկացու մասին ուսումնասիրությունը («Նարեկ Աղոթամատյան Ս.Գրիգոր Նարեկացվո», 1926), որը հետո իբրև առաջաբան է ծառայել «Մատյան ողբերգության» պոեմի աշխարհաբար հրատարակության համար ևն: Հայ եկեղեցու սրբերին և տոներին են նվիրված Գ-ի «Սուրբք և տոնք Հայաստանեայց եկեղեցւո» (1939) արժեքավոր երկասիրությունը, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ («Վերափոխման տոնին առթիվ քանի մը նկատողութիւններ», «Խոկումներ Վարդանանց տոնին առթիվ», «Նկատողութիւններ Ս. Ծննդյան տոնին առթիվ» ևն), որոնք լույս են տեսել «Սիոն»-ի 1930-ական թթ. համարներում: «Ծաղկաքաղ Հայաստանեայց Ս. եկեղեցւո շարականներեն» (1931) ժողովածուի առաջաբանն ուշադրավ ուսումնասիրություն է Հայ եկեղեցու շարականների և հոգևոր երգերի մասին: Քարոզախոսական, կրոնաբարոյական գործերից են «Աւետարանի ճամբեն» (1927), որը կիրակնօրյա Ավետարանի վերլուծություն է, ճաշու առաքելական ընթերցումների մեկնությանը նվիրված «Առաքելոց շավղով» (1939) քարոզների և հոդվածների ժողովածուները, աստվածաշնչյան դրվագների բացատրությանը, արդի կյանքի հետ նրանց առնչությանը և վերլուծությանը նվիրված հոդվածները՝ «Բեթսամիուսի սայլը», «Արիմաթեմի պատգամը», «Եսաիի հարցումը» ևն, որոնք տպագրվել են «Սիոն»-ի 1927–28-ի համարներում:

Գ. իր պատմագիտ. ու կրոնագիտ. հետաքրքրությունների լայն շրջանակի մեջ քննության է առել նաև Հայ եկեղեցու բարեկարգության խնդիրը: Այս հարցին նա անդրադարձել է դեռևս 1920-ական թթ.: Ավելի ուշ, երբ Խորեն Ա Մուրադբեկյանը 1937-ի օգոստ. 1-ի

ԳՈՒՇԱԿՅԱՆ կոնդակին կից ներկայացրել է եկեղեցու բարեկարգության նախագիծ («Զեկուցումն Հայոց եկեղեցու բարենորոգութեան մասին»), որի վերաբերյալ կարծիքներն ու առաջարկությունները պետք է ուղարկվեին Գ-ին՝ ի եզրակացություն, վերջինս նախագծի շուրջ հոդվածաշարերով և խմբագրականներով հանդես է եկել «Սիոն»-ի 1938-ի նոյեմբեր – 1939-ի համարներում: Հետագայում դրանք հրատարակվել են առանձին գրքով՝ «Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ» (1940) խորագրով: Գ., սկզբունքորեն չմերժելով բարեկարգությունը, որոշակիորեն հանդես է եկել ավանդույթի պահպանման օգտին: Ըստ Գ-ի, Հայ եկեղեցու բարեկարգությունը ոչ թե նվիրապետ. կարգի և ավանդության փոփոխությունն է, այլ եղած կարգի բարվոք պահպանությունը: Եկեղեցու բարեկարգության նպատակը պետք է լինի ոչ թե նրա բաղկացուցիչ տարրերի փոփոխությունը, այլ՝ եկեղեցին ժողովրդին և ժողովուրդը եկեղեցուն մոտեցնելը, հոգևոր կյանքի վերանորոգությունը: Իսկ դրա համար, ըստ հեղինակի, անհրաժեշտ է ոչ թե պարզեցնել եկեղեցու ծեսը, ժամակարգությունը, լեզուն, նվիրապետ. կառույցը, այլ այդ ամենը հասու և ընկալելի դարձնել ժողովրդին: Գ-ի ըմբռնմամբ եկեղեցու բարեկարգության կենտրոնն ու առանցքը կազմում են պատրաստված հոգևորականները և բարեպաշտ ժողովուրդը, ուստի եկեղեցին բարեկարգելու համար պետք է գտնել այս երկու բարձունքները տանող ճանապարհը:

Գ. կատարել է նաև թարգմանություններ՝ Ֆոնսկրիվի «Հոգեբանությունը», Հ. Մարիոնի «Մանկավարժական հոգեբանությունը», Ֆլոբերի «Հերոդիան», Ն. Բուալոյի «Արվեստ քերթողականը» ևն:

Երկ. Ամբողջ. երկ., հ.1–6, Երուսաղեմ, 1939–41: Արմաշու վանքը, տես «Արմաշու դպրեվանքին 25-ամյա հոբելյանին առթիվ», ԿՊ, 1914:

Գրկ. Ալպոյաճյան Ա., Թորգոմ պատրիարք Գուշակյան, Կահիրե, 1940: Կաբաղյան Զ., Թորգոմ պատրիարք Գուշակյանը եկեղեցական բարեկարգության ջատագով, «Էջմիածին», 1999, № 8–9: Ղազարյան Խ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում XIX դարի վերջին քառորդին և XX դարի առաջին կեսին, Էջմիածին, 1999, էջ 251–276:

Արտաշես Ղազարյան

Դ

ԴԱԴԻՎԱՆՔ, Խութավանք, Դադեի վանք, Մեծ Հայքի Արցախ նահանգի Վերին Խաչեն (Ծար) գավառում, Թարթառ (Տրտու) գետի ձախ ափին, անտառապատ լեռան լանջին: Ըստ ավանդության, հիմնադրվել է Ք. ծ. հ. I դ., *Թադեոս* առաքյալի 70 աշակերտներից մեկի՝ Արցախում քրիստոնեության քարոզչության համար նահատակված Դադիի գերեզմանի տեղում: Կոչվել է նաև Խութավանք, որովհետև կառուցվել է խութի (բլրակի) վրա: Դ. պատմ. աղբյուրներում հիշատակվում է IX դ. 1-ին կեսից: XII–XIII դդ. եղել է եպիսկոպոսանիստ, Վերին Խաչենի իշխանության հոգևոր կենտրոնը: 1145-ին վանքն ավերել են սելջուկները, 1170-ական թթ. նորոգվել է:

Դ-ի համալիրը բաղկացած է շինություններից երկու մեծ խմբերից. հս-ում եկեղեցիներն են, գավիթները, ժամատունը, հվ-ում՝ աշխարհիկ շենքերը: Պահպանված Ս. Դադի միանավ եկեղեցին (X–XI դդ.) իր խոշոր չափերով եզակի է հայկ. նույնատիպ եկեղեցիների շարքում: Նրան հվ-ից կից են վանքի երկրորդ՝ ուղղանկյուն խորանով միանավ եկեղեցին և թաղածածկ գավիթը (XII դ.): Դ-ում էր Առանշահիկ-Վախթանգյան իշխանական տան տոհմական տապանատունը: 1211-ին համալիրի հվ-ում պալատ. դահլիճ է կառուցվել, որն ունի քառասյուն կենտրոնակազմ հորինվածք և լուսավորվում է երդիկից: 1214-ին Վախթանգ իշխանի կինը՝ Արզուխաթունը, կառուցել է վանքի գլխ.՝ Կաթողիկե եկեղեցին, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն հորինվածքով: Ներսում XIII դ. որմնանկարներ են: Գմբեթն ու ճակատները հարդարված են դեկորատիվ կամարաշարերով: Հվ. պատին ողջ հասակով քանդակված են Արզուխաթունի որդիներ Հասան և Գրիգոր իշխանները՝ եկեղեցու մանրակերտով, իսկ արլ. ճակատին ս. Դադիի և Վախթանգ իշխանի կիսանդրի պատկերաքանդակներն են:

Կաթողիկեին արմ-ից կից է այունասրահը, որն ավարտվում է զանգակատնով: Վերջինիս ստորին հարկում կանգնեցված են վանահայր Աթանասի՝ 1283-ին պատվիրած, նուրբ զարդաքանդակներով երկու խաչքարերը: 1224-ին Գրիգորիս եպիսկոպոսը Ս. Դադի եկեղեցուն արմ-ից կից կառուցել է քառամույթ, գմբեթավոր ժամատունը: Այունասրահից հվ. կանգուն է վանքի չորրորդ՝ գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցին (XIII դ.), որի թմբուկը կառուցված է աղյուսով: Պալատ. դահլիճին արմ-ից կից է թաղածածկ սեղանատունը՝ խոշոր խոհանոցով, արլ-ից՝ XIII դ. 2-րդ կեսին Գրիգորիսի և Աթանասի կառուցած գրատան շենքը՝ հարակից սենյակներով: Դ-ի համալիրի հվարմ. կողմում են միմյանց կից, երկհարկանի աշխարհիկ շենքերը (XIII դ.), որոնցից հյուրատան վրայինը առաջնորդարանն է: Նույն կողմում է նաև Հասան-Ջալալի ապարանքը, առաջին հարկում՝ հնձանն ու մառանը:

Դ. հայկ. միջնադարյան լավագույն և խոշոր ճարտ. համալիրներից է՝ հատկապես արժեքավոր եկեղեց. ու աշխարհիկ շենքերի բազմազանությամբ, կառույցների և հարդարանքի

ինքնատիպությամբ: Հայկ. կերպարվեստի պատմության համար կարևոր են վանքի Կաթողիկե եկեղեցու որմնանկարները: Հվ. պատին պատկերված են Քրիստոսի կողմից՝ խույրի և Աստվածածնի կողմից Թիկնոցի հանձնումը Նիկողայոս Հրաշագործին, իսկ հս. պատին ս. Ստեփանոսի քարկոծվելով նահատակության և Ծննդի տեսարաններն են: Համալիրի կազմում կան նաև մատուռներ և բարձրարվեստ խաչքարեր: Կառույցների որմերը հարուստ են արժեքավոր արձանագրություններով:

Դ. ունեցել է ընդարձակ կալվածքներ (գյուղեր, վարելահողեր, անտառներ ևն), որոնք տարածվել են մինչև Գեղարքունիք: XIX դ. Դ-ի կալվածքները կազմել են շուրջ 200 հզ. *հա*, XX դ. սկզբին՝ 50 հզ. *հա*: 1920-ին գավառը Ադրբեջանին բռնակցվելուց հետո Դ. զրկվել է կալվածքներից, դադարել գործելուց և լքվել: 1960-ական թթ. ադրբ. իշխանությունները վանքի համալիրի տարածքում գյուղ են հիմնել, որի բնակիչները սկզբնապես ապրել են Դ-ի եկեղեցիներում ու այլ շենքերում և դրանց բավական վնասել: Հատկապես տուժել են Կաթողիկեի որմնանկարները: 1993-ի մարտի 31-ին Դ. ազատագրվել է: 1999-ին սկսվել են Դ-ի վերանորոգման աշխատանքները:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.6, 3-րդ պատկերը:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Տեր-Մովսիսյան Մ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղեմ, 1938: Ուլուբաբյան Բ., Դադի կամ Խութա վանք, «Էջմիածին», 1971, № 6–7: Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Ե., 1999: *Асратян М., Дадиванк, М.*, 1990; Thierry J. M., Eglises et couvent du Karabagh, Antélias-Liban, 1991.

Մուրադ Հասրաթյան

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է XV դ. կեսին *Երուսաղեմի հայոց պատրիարքության* կողմից և գործել նրա ենթակայության ներքո: Առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցի: 1632-ին Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Գանձակեցին (Պարոնտեր) այցելել է Դամասկոս, նորոգել XV դ. կեսին կառուցված Ս. Սարգիս եկեղեցին, նրան կից օթևաններ կառուցել Երուսաղեմ գնացող ուխտավորների համար: 1720-ին Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Շիրվանցին (Շղթայակիր) եղել է Դամասկոսում, վերանորոգել Ս. Սարգիս եկեղեցին, վճարել նրա պարտքերը: 1860-ին եկեղեցին հրդեհվել է: Նրա տեղում 1867-ին, թեմի առաջնորդ Բառնաբաս վրդ. Տեր-Հովհաննիսյանի (Գանձակեցի) ջանքերով կառուցվել է նոր՝ ներկայիս առաջնորդանիստ եկեղեցին: 1906-ին կառուցվել է առաջնորդարանի երկհարկանի շենքը:

Մինչև 1929-ը Դ. թ. պատկանել է Երուսաղեմի հայոց պատրիարքությանը: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վերակազմավորման համար (Մեծ եղեռնից և 1921-ին Կիլիկիայի հայաթափումից հետո նրա ենթակայության տակ էր մնացել միայն Հալեպի թեմը) 1929-ին, Ամենայն հայոց կաթողիկոս *Գևորգ Ե Սուրենյանցի* օրհնությամբ, Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Բեյրութի (Լիբանան) և Կիպրոսի թեմերի հետ Կիլիկիո աթոռին է փոխանցել նաև Դ. թ.: Առաջնորդներ են եղել Խաչ արք. Աջապահյանը (1932–37), Եփրեմ արք. Ասիլյանը (Տոհմունի, 1937–46), Ռուբեն արք. Մանասյանը (1946–48), Շավարշ եպս. Գույումճյանը (1949–56): 1956-ին թեմը չի ճանաչել Զարեհ եպս. Փայասլյանի կաթողիկոսական ընտրությունը, հրաժարվել է ենթարկվել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը և միացել է Մայր աթոռ Ս. Էջմիածնին: 1956–69-ին թեմն առաջնորդ չի ունեցել: Այնուհետև թեմի առաջնորդներ են եղել Տարոն վրդ. Ճերեճյանը (1969–71), Կորյուն եպս. Մանուելյանը (1971–72), Ոսկան եպս. Գալփակյանը (1973–91): 1995-ից Դ. թ. գործում է յուրահատուկ կարգավիճակով: Դեռևս թեմի վարչ. պատկանելության հարցը հստակեցված չէ:

1990-ին կառուցվել է Ս. Սարգիս եկեղեցու գավիթը, 1995-ին գավթից աջ՝ Ապրիլյան նահատակների հուշահամալիրը (Մեծ եղեռնի 80-ամյակի առթիվ): Դ. թ-ին է ենթարկվում նաև Հոմսի հայ առաքելական համայնքը, որտեղ գործում են Ս. Մեսրոպ եկեղեցին և Սահակյան նախակրթարանը: Առաջնորդարանին է պատկանում նաև Դամասկոսի Ս. Թարգմանչաց ճեմարանը (հիմնադրվել է 1898-ին): Դամասկոսի և շրջակայքի (Հոմս) հայ առաքելական համայնքի կենտրոնը կաթողիկոսական փոխանորդությունն է:

Դ. թ-ի առաջնորդական տեղապահն է Գնել արք. Ճերեճյանը (1991-ից), որը Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամ է:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.6, 4-րդ պատկերը:

ԴԱՆԻԵԼ Ա ՍՈՒՐՄԱՌԵՑԻ (ծ. թ. անհտ – 1808, Երևան, ամփոփվել է Ս. Էջմիածնում), Ամենայն հայոց կաթողիկոս 1801–02-ին և 1807-ից: Ընտրությամբ հաջորդել է *Ղուկաս Ա Կարնեցուն*, իսկ գահակալությամբ՝ *Դավիթ Ե Էնեգեթցուն*: 1797–99-ին եղել է Ռումելի (Եվրոպայում օսմանյան տիրույթների ընդհանուր անվանումը) հայոց առաջնորդ, 1799–1800-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք: 1801-ին Դ. Ա Ս. ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն մինչև նրա Էջմիածին հասնելը, ռուս. իշխանությունների աջակցությամբ, կաթողիկոս. աթոռը գրավել է Դավիթ Ե Էնեգեթցին: Դ. Ա Ս-ու կողմնակիցները 1802-ի մայիսի 25-ին Բագրեվանդի Ս. Հովհաննես եկեղեցում նրան օծել են կաթողիկոս: Այդպես Հայ եկեղեցու ներսում սկիզբ է առել Դավիթ-Դանիելյան վեճը՝ կաթողիկոս. գահի համար: 1802-ին Դ. Ա Ս. բռնությամբ Բայազետից տարվել է Ս. Էջմիածին և կալանավորվել, իսկ 1805-ին շահի հրամանով աքսորվել է Մարաղա: 1807-ին Դ. Ա Ս. հետ է կանչվել աքսորից և, պարսկ. խանից գահընկեց արված Դավիթ Ե Էնեգեթցու փոխարեն, բազմել կաթողիկոս. աթոռին: Դ. Ա Ս. 1808-ին հիմնել է Էջմիածնի բարձրադույն մարմինը՝ *Սինոդը*:

Կաթողիկոս. գահին Դ. Ա Ս-ուն հաջորդել է *Եփրեմ Ա Զորագեղցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

Արթուր Կարապետյան

ԴԱՆԻԵԼ ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ, Դանիել Ասորի (ծ. թ. անհտ – նահատակվել է 347), քրիստոնյա վկա, տոնելի: Սկզբնապես՝ *Գրիգոր Ա Լուսավորչի* աշակերտ, ապա՝ քորեպիսկոպոս և կաթողիկոսական իշխանությանը ենթակա եկեղեցիների տեսուչ: Հուչակվել է որպես քարոզիչ, հրաշագործ և ճգնակյաց: Հուսիկ Ա Պարթև կաթողիկոսի սպանությունից հետո ընտրվել է Հայոց կաթողիկոս (սակայն նրա անունը չի նշվում Հայոց կաթողիկոսների ցուցակում): Դ. Քր. գժտվել է Հայոց Տիրան թագավորի հետ՝ նրան հանդիմանելով անվայել վարքի համար: Տիրանը խեղդել է տվել Դ. Քր-ին:

Ավանդությունը Դ. Քր-ին է վերագրում ավետարանական բեղուն քարոզչություն՝ զուգորդված մինչև իսկ մեռելներ հարուցանելու երկնառաք զորությամբ:

Հիշատակը տոնվում է ս. Գրիգոր Ա Լուսավորչի զավակների և թոռների հիշատակի օրը՝ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության 3-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը կամ Վարդավառի 3-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը՝ կապված Ս. Ծննդյան և Մեծ պահքի միջև ընկած ժամանակաշրջանի տևողության հետ: Նրան է նվիրված «Մանկունք» շարականի վերջին տունը («Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճգնութեամբ...»):

Գրկ. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Քնարիկ Տեր-Դավթյան

ԴԱՎԱՆԱՆՔ, դավանություն, աստվածային *հայտնությամբ* տրված և *եկեղեցու* կողմից սահմանված կրոնական ճշմարտությունների ամբողջությունը: Հայերենում Դ. եզրը որոշ իմաստով համապատասխանում է հունարեն *δόγμα* (դոգմա) բառի հոգնակի ձևին (*δόγματα*), որը սկզբնապես գործածվել է որպես այն, ինչ ճիշտ (լավ) է թվում կամ կարծվում, սակայն հետզհետե *աստվածաբանության* մեջ բյուրեղացել է որպես դավան. դրույթ կամ հավատքի ճշմարտություն: Հայերեն եզրն ի տարբերություն հունարենի գործածվում է միայն հավաքական իմաստով: Դավան. խնդիրների հետ առնչվող աստվածաբան. ոլորտը կոչվում է դավանական աստվածաբանություն (dogmatic theology):

Դ-ի աղբյուրը եկեղեցու սրբազան *ավանդությունն* է, որի հեղինակը Աստծո *Սուրբ Հոգին* է: Աստված ինքն է հայտնել իրեն՝ իր Հոգու կենդանի ներգործությամբ, և այդ հայտնությունն արտահայտված է *Աստվածաշունչ* գրքերով, առաքելական ավանդությամբ, սրբազան *ծեսով*, *եկեղեցու հայրերի* և *վարդապետների* գրվածքներով, *տիեզերական ժողովների* սահմանումներով ևն: Այդ հայտնությունը շարունակական է և ոչ թե մեկ անգամ կատարված իրողություն, որի մեջ մուտք գործելու (եկեղեցի մտնելու) համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու հետ կենդանի և գոյաբանական հաղորդակցություն, որի նախահիմքը ուղղափառ դավանությունն է: Համաձայն Տիրոջ խոսքի, ուղղափառ Դ. այն վեմն է կամ ամուր հիմքը, որի վրա կառուցված է եկեղեցին (Մատթ. **16.**18): Ուղղափառ Դ-ին (տեսական հավատք) պետք է անպայմանորեն զուգակցվի

ԴԱՎԱՆԱՆՔ ուղղափառ կենցաղավարություն և աստվածապաշտական ճիգեր (գործնական հավատք). տեսական և գործնական հավատքի ճիշտ համադրությունը, ըստ եկեղեցու հայրերի, հոգևոր կյանքի և փրկության անհրաժեշտ նախապայմանն է:

Դավանաբանության մեջ բարձրագույն հեղինակությունը վերապահված է տիեզեր. ժողովներին, որոնք Սուրբ Հոգու բացառիկ ներգործությամբ սահմանել են Քրիստոսի եկեղեցու ուղղափառ հավատքը: Տիեզերաժողովների կողմից ընդունվել են այսպես կոչված *Հավատո հանգանակներ* կամ նշանակներ, որոնք Դ-ի հակիրճ ձևակերպումներ են: Հավատո հանգանակը կոչվում է նաև Հավատամք կամ Խոստովանություն հավատո կամ Դավանություն հավատո: Այս իմաստով Դ. ուղղափառ հավատքի խոստովանությունն է, իսկ դավանել նշանակում է ընդունել, խոստովանել և վկայել որպես ճշմարտություն:

Պայքարելով զանազան աղանդավոր. շարժումների դեմ՝ եկեղեցին մշտապես կարիք է ունեցել նորոգել և հաստատել հավատացյալ գիտակցությունը: Եկեղեցու հայրերը և վարդապետները ավանդել են մեծածավալ դավան. ժառանգություն՝ ուղղափառ հավատքն ուսուցանելու, բացատրելու, լուսաբանելու և մեկնելու համար: Այդ ժառանգությունը Սուրբ Հոգով տրված սրբազան ավանդության անբաժանելի մասն է:

Գրկ. Կյուրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, ԿՊ, 1717: Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Աթանաս Ալեքսանդրացի, Ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք, Վնտ., 1899: Գրիգոր Լուսավորիչ, Յաճախապատում ճառք և աղօթք, Վնտ., 1954: Օրմանյան Մ., Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղեմ, 1985: The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R.W. Thomson, Lovanii, 1987.

Մեսրոպ քհն. Արամյան

ԴԱՎԱՆԱՆՔ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, Հայ եկեղեցու կողմից որպես ուղղափառ ճանաչվող դավանական դրույթների ամբողջությունը:

Հայ եկեղեցին (նաև մյուս *Արևելյան ուղղափառ եկեղեցիները*) որպես տիեզերական է ճանաչում միայն երեք եկեղեց. ժողովներ (տես *Նիկիայի Ա տիեզերական ժողով 325, Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381, Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431*): Երեք տիեզերաժողովների դավան. որոշումների վրա է կառուցված Հայ եկեղեցու դավան. համակարգը:

Հայ եկեղեցու դավանաբանության կարևորագույն աղբյուրներից են եկեղեցու սուրբ հայրերի՝ *Դիոնիսիոս Արիոպագացու, Աթանաս Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու* դավան. երկերը, որոնց ավանդների հիման վրա զարգացել և ձևավորվել է հայ դավան. միտքը: Կարևոր աղբյուր է նաև *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառութիւն...» երկը, որը զգալի ազդեցություն է թողել հայ դավան. մտքի ձևավորման վրա: Նշանավոր են «*Կնիք հավատո*» և «*Գիրք թղթոց*» ժողովածուները: Հայ եկեղեցու դավան. համակարգը վերջնականապես բյուրեղացել է *Հովհաննես Գ Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Անանիա Սանահնեցու, Պողոս Տարոնացու, Հովհաննես Սարկավագի, Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի, Վարդան Արևելցու, Մխիթար Սասնեցու, Կիրակոս Երզնկացու, Ստեփանոս Օրբելյանի, Եսայի Նչեցու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու* աշխատությունների շնորհիվ:

Հայ դավան. մտքի զարգացման պատմության մեջ առանձնահատուկ դեր է ունեցել 726-ի *Մանազկերտի եկեղեցական ժողովը*, որի ընդունած *նզովքները* ուղղափառ հավատքի սահմանումներ են ընդհակառակից:

Հայ եկեղեցում ծիսական կիրառություն ունի երեք Հանգանակ, որոնք հակիրճ ներկայացնում են հայ հավատքի կարևորագույն սկզբունքները: Առաջինը կոչվում է Նիկիական, սակայն իրենից ներկայացնում է Նիկիա-Կ. Պոլսյան մի խմբագրություն: Երկրորդը Գրիգոր Տաթևացու խմբագրած հավատքի խոստովանությունն է: Երրորդը Մկրտության ծեսի մեջ գործածվող համառոտ տարբերակն է: Դավան. աղերսներով լի են նաև Հայ եկեղեցու ծիսամատյանները՝ *Շարակնոցը, Ժամագիրքը, Մաշտոցը* և *Խորհրդատետր-Պատարագամատույցը*:

Հայ եկեղեցու դավանությունն ունի հետևյալ կառույցը.

1. Աստված, 2. Արարչագործություն, 3. Փրկագործություն: Վերջինս բաժանվում է երեք հիմն. մասերի. ա. քրիստոսաբանություն, բ. Սուրբ Հոգու տնօրինություն և եկեղեցի, գ. վախճանաբանություն:

1. Աստված: Դավանության բուն առարկան մեկ և միակ Աստվածն է. «Հավատում եմ մեկ Աստծո...» արտահայտությամբ է սկսվում *Հավատո հանգանակը*, որը դավանության առաջին և հիմնարար պնդումն է: Աստծո հետ փոխհարաբերության մեջ մտնելու և նրան ճանաչելու ուղին հավատքն է: Ըստ եկեղեցու վարդապետների՝ հավատքն Աստծուց պարգևվող *շնորհ* է, որը զորացնում է հոգին՝ օժտելով բարձրագույն ճանաչող կարողությամբ՝ հաղորդակից դարձնելով արարչական սահմաններից դուրս գտնվող աստվածային ոլորտի հետ:

Աստծո գոյությունը, էությունը և ստորոգելիներն անդրանցական են արարչության նկատմամբ և, ըստ Դիոնիսիոս Արիոպագացու, «գերագույն լույսի պատճառով ծածկված են թաքնախորհուրդ լռության մեջով» («Խորհրդական աստուածաբանության մասին», «Գանձասար», 2, 1992, էջ 144): Աստված ինքնագոյ է, այսինքն նրա գոյությունը պայմանավորված չէ այլ մեկով, չունի ժամանակային պատճառականություն և ենթակա չէ փոփոխության. «Լի է և կատարյալ, որ ամեն ինչ լցնում է ամեն ինչի մեջ» (Եփես. 1.23), և ինքը չի թերանում, ոչ նորոգվում է և ոչ հնանում, ոչ լցվում և ոչ պակասում, որ նույնն է միշտ իր լիության և անբավության մեջ: Եվ այլ տեղից չկա օտարամուտ կամ հավելված բան անհաս, անբավ, անսահման և ամենակատար բնության մեջ» (Գրիգոր Լուսավորիչ, Յաճախապատում ճառք և աղօթք, 1954, էջ 9-10): Աստծո բնության որևէ հատկանիշ, օր., անսահմանությունը կամ անժամանակությունը, լինելով անդրանցական, հասանելի չեն արարչական կերպերով և չեն համընկնում արարչական անսահմանությունների հետ: Աստված իր անճառելի և անքննելի էությունը բացահայտում է հայտնությամբ, որն աստվածագիտության աղբյուրն է: *Աստվածաբանությանը* հայտնի է աստվածագիտության երկու եղանակ, որոնք կոչվում են ճառելի և անճառելի աստվածաբանություններ: Առաջինը հաստատումների միջոցով թույլ է տալիս որոշ սահմանափակ պատկերացումներ կազմել Աստծո մասին, իսկ երկրորդը, որը կատարյալ ուղի է, հետևողական բացասումների միջոցով (ասելով՝ ինչ չէ Աստված) բերում է Աստծո հետ խորհրդական միավորության:

Աստված անձնավոր էություն է, և նրա ինքնությունը եռանձնյա է՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Եռյակ Աստվածությունը կոչվում է նաև Ամենասուրբ *Երրորդություն*: «Մի բնություն և երեք Անձիք»՝ կապադովկյան հայրերի (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի) եզրակերպումը հայտնի չէր հին աշխարհին, որը խարխափում էր հրեական մեկաստվածության ինքնափակության և հեթանոս. բազմաստվածության ածանցվածության բևեռներում: Բանի Մարդեղությամբ բացահայտված եռամիությունն էապես նոր ըմբռնում էր մարդկության համար: Երեք Անձերը, ըստ Դիոնիսիոս Արիոպագացու՝ «մշտնջենավորակցում են հարատև վերաբխությամբ՝ անփոփոխ մնալով բնությամբ» («Խորհրդական աստուածաբանության մասին», «Գանձասար», 2, 1992, էջ 140): Այս հավիտենական վերաբխությունն ունի անժամանակ պատճառականություն, որը Հայր Աստծո Անձն է. «Հայրը Որդու և Սուրբ Հոգու անսկիզբ պատճառն է» («Յաճախապատում ճառք...», էջ 9): Այս պատճառականության մեջ չկա բաժանություն կամ չփոթ, մեծություն կամ փոքրություն, այլ՝ համափառություն միմյանց նկատմամբ և միեղեն նախախնամություն արարչության նկատմամբ՝ առանձնահատուկ տնօրինական նիստերով: Երրորդության աստվածաբանը՝ Գրիգոր Նազիանզացին, գրում է. «Բաժանվում է անբաժանաբար, և այսպես ասեմ՝ միավորվում է զատվելով, որովհետև Մեկ է Եռյակ Աստվածությունը, և Երեքը Մեկ է, որոնցում Աստվածությունն է: Իսկ գերազանցությունը բաց թողնենք՝ ո՛չ միավորությունը խառնակելով, ո՛չ էլ բաժանմամբ օտարելով: Մեկ է Հայր Աստված, Որից է ամեն ինչ, Մեկ է Տեր Հիսուս Քրիստոս, Որով է ամեն ինչ, և Մեկ է Սուրբ Հոգին, Որում է ամեն ինչ» («Դարձեալ իմ Յիսուս», տես «Կնիք հաւատոյ», 1914, էջ 33): Եկեղեցու երրորդաբանական ուսուցման մեջ աստվածային Անձերի միությունը եզրագծվել է համագոյություն կարևոր եզրով, որն աստվածաբան. կիրառության մեջ է մտել Նիկիայի Ա տիեզեր. ժողովով և նշանավորել քրիստոնեության հաղթանակը հրեական և միջինպլատոնական մտքի վրա: Հայրը, Որդին և Սուրբը Հոգին համագոյակից են, այսինքն՝ ունեն նույն բնությունը կամ էությունը: Երրորդության Անձերի բնութենական նույնությունն արտահայտելու համար գործածվում են նաև բնութենակից, էակից, փառակից, երկրպագակից, տիրակից, հա-

մազոր, նույնապատիվ, հավասարապատիվ, համապատիվ, համաբուն, նույնագո եզրերը: Համագոյությունը բացառում է որևէ ժամանակային պատճառականություն Երրորդության Անձերի միջև: Հայրն անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդյամբ և Սուրբ Հոգու՝ բխմամբ: Ծնունդը և բխումը ներբնութենական ակտեր են և ոչ թե Աստվածային բնությունից դուրս ժամանակային առաջացումներ (ընդդեմ *արիոսականության*) կամ միևնույն Աստվածային Անձի տարակերպություններ (ընդդեմ Սաբելիոս Լիբիացու, ըստ որի՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին տարբեր անձեր չեն, այլ՝ մեկ աստվածային անձ՝ երեք տարբեր փուլային գործունեության մոդուսներով: Նախ՝ Աստված գործել է որպես Հայր, մարմնավորումից մինչև Համբարձում՝ որպես Որդի և Հոգեգալուստից հետո՝ որպես Սուրբ Հոգի: Ուսմունքը կոչվում է սաբելիոսականություն կամ մոնարխիստական մոդուլիզմ): Հովհաննես Սարկավագը գրում է. «Ոչ երեք աստվածներ՝ բնությամբ օտար միմյանցից, և ոչ մեկ անձ՝ տկար առատության մեջ, այլ Մի Աստված՝ ըստ բնության նույնության, և Երեք Անձեր՝ ըստ ամենառատության և անճառելի խորհրդի: Դարձյալ՝ ոչ երեք անսկիզբներ, քանզի միայն Հայրն է անսկիզբը՝ ոչ մեկից չծնված, իսկ Որդին Նրա ծնունդն է, և Սուրբ Հոգին ելնում է Նրանից, բայց ըստ ժամանակի՝ անսկիզբ են Հոր պես, և Երեքը սկիզբ չեն միմյանց համար: Քանզի Հայրն է սկիզբը Որդու՝ ծննդյամբ, և Հոգու՝ ելողությամբ, ոչ մեկ անձ՝ երեք լինելով, և ոչ երեք աստված՝ մի բնությամբ, ուստի և անբաժանելի ենք խոստովանում: Եվ պետք չէ կարծել մեկ անձ երեք անուններով, ինչպես Սաբելիոսը, և ոչ երեք տարբեր բնություններ, ինչպես Արիոսը, այլ մի բնություն և Երեք Անձեր» («Գանձասար», 6, 1996, էջ 278):

2. Արարչագործություն: Աստծո կողմից աշխարհի արարումը կամ Արարչագործությունը Հավատքի խոստովանության կարևորագույն դրույթներից է: Աստված Արարիչն է և Ստեղծագործողը երկնքի ու երկրի, երևելի ու աներևույթ արարածների: Արարչագործությունն Ամենասուրբ Երրորդության առաջին արտաքին գործն է: Աստված իր անեղ բնությունից դուրս, մեկ այլ եղական բնությամբ ոչնչից և անգոյությունից ստեղծում է բոլոր արարածներին:

Արարչագործություն եզրով բնորոշվում է նախ՝ Աստծո կամքով սահմանված արարչության անժամանակ գաղափարը, և ապա՝ աստվածային ստեղծագործության արդյունքը ժամանակի մեջ՝ արարչությունը: Ըստ եկեղեցու հայրերի՝ Աստված բոլոր իրերը տեսնում էր մինչև նրանց լինելիությունը՝ Աստվածային Անձերի հավիտենական խորհրդակցությամբ հղանալով դրանց գոյակերպն իր մտքում, այսինքն՝ յուրաքանչյուր էություն ունի իր անժամանակյա աստվածային գաղափարը և գոյության է կոչվում որոշակի ժամանակի մեջ՝ ըստ իր հավիտենական նախասահմանված կերպարի և նմանության. «...կանխապես ունենալով նախագոյությունը և գերագույն լինելով ամեն տեսակ գոյությունից՝ ասում եմ՝ նույնը ըստ նույն գոյության նախագոյացրեց և իր գոյությամբ ամեն բան, ինչպես որ է, գոյացրեց» (Դիոնիսիոս Արիոպագացի, Յաղագս աստուածային անուանց, տես The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R.W. Thomson, 1987, էջ 140): Այս գաղափարները, որոնք կոչվում են նաև օրինակներ, նախասահմանություններ, նախագոյություններ, նախատեսություններ, չեն համընկնում արարածների հետ, այլ սահմանում են այն կերպերը (մոդուսները), որոնցով արարածը հաղորդակցվում է Աստծո արարչական զորություններին: Արարչագործությունն ինքնանպատակ չէ. Աստված է սկզբնավորում և Աստված է վերջն. նպատակը: Յուրաքանչյուր արարած ունի Աստծո հետ հաղորդակցման կետ. դա իր աստվածային գաղափարն է, իր պատճառը, որը նաև իր նպատակն է: Արարչությունը կոչված է Աստծո հետ կատարյալ միության, որը կատարվում է ձգտումով (նպատակաուղղվածությամբ) դեպի իր աստվածային գաղափարները: Աստվածային գաղափարների ամբողջությունը կոչվում է հարացույց: «Եվ ասում ենք՝ գոյություն ունի հարացույց, որն էերի էացուցիչ և միեղեն նախագոյացած սահմանումներն է Աստծո մեջ, որոնք աստվածաբանությունն անվանում է էերի զատողական և արարողական նախասահմանություններ և աստվածային ու բարի կամեցումներ, ըստ որոնց՝ [Աստված] գերագույն էությամբ բոլոր էերը նախասահմանեց և արարեց» (Նույն տեղում, էջ 189):

Արարչությունն Աստծո դժգույն և թույլ արձագանքը չէ, ինչպես պատկերացնում էին

պլատոնականները, այլ կատարելապես նոր գոյություն է, որը հենց նոր դուրս է եկել Աստծո ձեռքերից («Եվ տեսավ, որ այն բարի է», Ծննդ. 1.18):

Արարչագործության մեջ Ամենասուրբ Երրորդության Անձերից յուրաքանչյուրն ունի իր որոշակի տնօրինական նիստը. «Մեկ է Հայր Աստված, Որից է ամեն ինչ, Մեկ է Տեր Հիսուս Քրիստոս, Որով է ամեն ինչ, և Մեկ է Սուրբ Հոգին, Որում է ամեն ինչ»: Երրորդության պատկերով է դրոշմված ողջ արարչությունը՝ իր որոշակի եռակարգություններով: Արարչությունը բաժանվում է երեք աշխարհների՝ նյութական (զգալի), մարդկային (զգալի և իմանալի), հրեշտակային (իմանալի): Այդ երեք աշխարհները նկարագրող դավանաբան. ճյուղերը կոչվում են տիեզերաբանություն (կոսմոլոգիա), մարդաբանություն (անթրոպոլոգիա), հրեշտակաբանություն (անգելոլոգիա): Տիեզերաբանությունը հիմնվելով Ծննդոց գրքի, ինչպես նաև շարունակական հայտնության տվյալների վրա, խոսում է նյութ. տիեզերքի օրինաչափությունների մասին: Մարդաբանությունն Արարչագործության գլխ. թեման է, որովհետև մարդն արարչության կենտրոնն է, այսպես կոչված միկրոտիեզերքը: «Արարենք մարդուն Մեր պատկերով ու նմանությամբ» (Ծննդ. 1.26)՝ սուրբգրային տեղին ցույց է տալիս Աստվածային Անձերի միասնական խորհրդակցությունը՝ մարդուն արարելու համար: Մարդն արարվում է Աստծո պատկերով և նմանությամբ. նա մեծարվում է գերագույն փառքով՝ որպես արարչության պսակ: Իր ստեղծումով մարդը դրվում է նախախնամական և շնորհական միության մեջ իր Սկզբնապատճառի հետ:

Այդ նվիրական միությունը խզվել է *մեղքի* հետևանքով: Մարդն իրեն շնորհված ազատ կամքով խզեց Աստծո հետ իր հավիտենական *ուխտը* և մասնակից դարձավ հրեշտակային ուժերից մեկ դասի ապստամբությանը Արարիչ Աստծո դեմ: Մարդը զրկվեց Աստծո հետ լինելու կատարյալ երանությունից, արտաքսվեց *դրախտի* փափկությունից և օտարացավ Աստծուց: Պատվիրանազանցության գլխ. պատիժը երկակի մահն էր՝ հոգևոր և մարմնավոր: Այսուհանդերձ մարդը չի զրկվում արարչական խնամքից:

Հրեշտակային դասերը ինն են, որոնք բաժանվում են երեք եռակարգ դասերի. ա. աթոռներ, քերովբեներ, սերովբեներ, բ. տերություններ, զորություններ, իշխանություններ, գ. պետություններ, հրեշտակապետներ, *հրեշտակներ*: Հրեշտակներն անմարմին են և իմացական, անմահ և մշտնջենավոր, խնամարկու մարմնեղենների, հնազանդ Աստծո կամքի կատարման, երանելի են Աստծո սիրո և տեսության մեջ, ազատ և անձնիշխան կամքով ընտրում են բարին և խոտում չարը, հրեղեն են բնությամբ և անփոփոխելի՝ շնորհի ու փառքի մեջ: Չարի սկզբնավորումը տեղի է ունենում հրեշտակային մեկ դասի խռովությամբ ընդդեմ Աստծո, որոնք ընկնում են իմանալի երկնքից և հրեշտակային ոլորտից: Ընկած հրեշտակները կոչվում են դևեր: Չարը դիտվում է որպես վիճակ և ոչ թե բնություն, և դևերի բնությունը մնում է հրեշտակային: Դիվային ուժերը պայքարում են մարդուն կործանելու համար, իսկ հրեշտակները խնամարկում և պահպանում են մարդուն՝ ուղեկցելով առ Աստված:

3. Փրկագործություն: Աստված պատվիրանազանցությամբ իրենից հեռացած մարդկությանը չզրկեց իր արարչական խնամքից, չլքեց մահվան ստվերում և երկրավոր կյանքի տրամությունների մեջ՝ խոստանալով փրկել մարդուն և ազատել մեղքի ու մահվան իշխանությունից: Այս խոստման պատմությունը ներկայացնում է Հին կտակարանը՝ Նոր ուխտի ստվերակերպ պատմությունը: Փրկագործության, ինչպես նաև դավանաբանության, կենտր. թեման Բանն Աստծո Մարդեղությունն է, որը ներկայացնող դավան. ճյուղը կոչվում է քրիստոսաբանություն: Սուրբ Հոգու տնօրինությունը ներկայացնում է Սուրբ Հոգու աստվածաբանությունը (պնևմատոլոգիա), որը սերտորեն աղերսված է եկեղեցաբանության (էկլեզիոլոգիա) հետ: Փրկագործության կարևոր խնդիրներից են շնորհը և *աղոթքը*, որոնք հաճախ դիտվում են ընդհանուր եկեղեցաբան. համակարգի մեջ: Փրկագործության եզրափակիչ ճյուղը վախճանաբանությունն է:

Ա. Քրիստոսաբանություն: Քրիստոսաբանությունը, որպես մարմնավորված Բանն Աստծո՝ *Հիսուս Քրիստոսի* խորհրդի դավան. մեկնաբանություն, աստվածաբանության կենտր. թեման է, որի վրա հիմնականում սևեռված է եղել եկեղեց. միտքը: Քրիստոսաբան. խնդիրների շուրջ եղած տարաձայնությունների հետևանքով առաջացել են տարբեր և երբեմն իրարամերժ դավան. համակար-

գեր, որոնք հանդեցրել են եկեղեցիների բաժանման: Քրիստոսաբան. միտքն առանձնահատուկ զարգացում է ապրել Հայ եկեղեցու ավանդության մեջ, որի արդյունքում ստեղծվել է ուրույն քրիստոսաբան. համակարգ՝ հիմքում ունենալով Ալեքսանդրյան աստվածաբան. դպրոցի (տես *Ալեքսանդրիա* հոդվածում) ավանդները:

Ըստ Հայ եկեղեցու վարդապետության՝ Ամենասուրբ Երրորդության Անձերից մեկը՝ Աստծո Միածին Որդին՝ նախահավիտյան Բանը, մարդկանց փրկության համար խոնարհվեց իր Աստվածության անհասանելիությունից և Հոգով կատարելապես մարդացավ ս. Կույս Մարիամից: Ոչ թե նախ ստեղծեց մարդուն և ապա բնակվեց նրա մեջ՝ որպես տաճարի, այլ ինքը՝ Բանը, ճշմարտապես մարդ եղավ, այսինքն իրեն միացրեց մարդկային կատարյալ բնությունը՝ հոգով, մարմնով և մտքով: Ոչ թե Բանը փոխարկվեց մարմնի կամ մարմինը՝ Աստվածության, ոչ թե աստվածայինը կամ մարդկայինը միավորվելիս բնությամբ փոփոխվեցին կամ այլայլվեցին կամ չփոթվեցին, այլ՝ կատարյալ Աստված իրեն միավորեց անթերի մարդկությունը՝ առանց փոփոխության, առանց այլայլության, առանց չփոթության. այսինքն՝ Աստված մնաց Աստված, և մարդը՝ մարդ: Երկու կատարյալները եղան մեկ կատարյալ՝ նոր և աքանչելի միությամբ: Հղության պահից Աստվածությունը և մարդկությունն անբաժանելիորեն միավորված են մեկ Տեր Հիսուս Քրիստոսի մեջ, և Բանի Մարդեղության փրկագործ տնօրինության մեջ սուրբ Հղությունից սկսած որևէ գործի մասին չի կարելի խոսել որպես սոսկ աստվածայինի կամ սոսկ մարդկայինի: Քրիստոսի մեջ աստվածամարդկային միությունը ոչ թե բնությունների հարակցություն, կապակցություն կամ վերաբերություն է, այլ՝ էական, գոյաբանական և բնութենական միություն, որի մեջ հնարավոր չէ ներմուծել որևէ բաժանում կամ լուծարում: Աստվածայինը և մարդկայինը անձով, բնությամբ, կամքով և ներգործությամբ անբաժանելիորեն միավորված են մեկ Տեր Հիսուս Քրիստոսի մեջ: Ուստի մեկ է մարդացած Բանն Աստծո անձը, բնությունը, կամքը, ներգործությունը, և մերժելի են փրկության իսկությունը սասանող որևէ բաժանություն կամ երկվություն Հիսուս Քրիստոսի մեջ: Հովհաննես Գ Օձնեցին գրում է. «Միության մեջ պետք չէ ուրանալ յուրաքանչյուրի կատարելությունը, ոչ էլ յուրաքանչյուրի կատարելության պատճառով հրաժարվել մեկ կատարելությունից՝ միությունն խոստովանելով անայլայլության մեջ և անայլայլությունը՝ միության մեջ: Մեկ բնությունն և մեկ դեմք ունի Քրիստոս ոչ թե ըստ բնության նույնության կամ ըստ մեկանձնականության, քանզի այս երկուսը միասին գրեթե զրկում են Աստծուն մարդանալուց և մարդուն՝ աստվածանալուց, այլ ըստ Բանի՝ իր մարմնի հետ անճառ միավորության» («Ընդդէմ երեւութականաց», տես «Մատենադրութիւնք», 1833, էջ 51-52): Հայ քրիստոսաբան. մտքի համար մերժելի են Բանի ներմարդությունը մարդկային մտքով ընկալելու կերպերը. աշխարհի որևէ օրինակով հնարավոր չէ հասկանալ, նկարագրել կամ բացատրել Աստծո Մարդեղության խորհուրդը, որը հավատքի խորհուրդ է և դավան. ճշմարտություն. Բանն Աստված անճառաբար, անպարիմանալիորեն, մտքի համար անհասանելիությամբ, ինչպես որ Ինքը գիտի, մարդացավ՝ իրենից օտարացած մարդկությանը փրկագործելու համար:

Հայ քրիստոսաբան. մտքի կարևոր արգասիքներից է *անապականության* վարդապետությունը: Նա, ով համադոյակից էր Հորն ըստ Աստվածության, համադոյակից դարձավ մեզ ըստ մարդկության, դարձավ ճշմարիտ և կատարյալ մարդ՝ ամեն ինչում նման մեզ, բացի մեղքից: Քրիստոսը փրկական տնօրինությամբ կրել է բոլոր մարդկային տկարությունները, ազատորեն անցել մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով դրանց մեջ մեղքի թթխմորը և ազատագրելով մեզ մեղքի դատապարտվածությունից: Հետևաբար տնօրինական գործեր են ոչ միայն աստվածավայելուչ հրաշքները՝ ջրի վրայով քայլելը, մեռելներին հարություն տալը, հացի բազմացումը ևն, այլ նաև՝ մարդավայելուչ տկարությունները՝ ծարավը, հոգնությունը, արտասվելը ևն: Երբ Տերն աստվածային հրաշք էր գործում, ապա դա անում էր որպես Աստված և մարդ, որպեսզի մարդը նույնպես կարողանա աստվածային գործերին մասնակից դառնալ: Երբ մարդկային տկարությունների միջով էր անցնում, ապա դա անում էր ոչ թե դատապարտվածությամբ՝ մահկանացուների պես, այլ՝ որպես Աստված և մարդ, որպես հզոր և ազատարար, և ազատում էր մեզ չարի կապանքներից: Քրիստոսի երկրային կյանքի ամեն մի պահ, սկսած սուրբ Հղությունից մինչև հրաշափառ Հարություն, փրկական տնտեսություն է և զերծ պատահականություններից:

Քրիստոսը կամավորապես կամ անապականաբար, ոչ «ի հարկէ» կամ բնության բռնադատվածությամբ կրեց բոլոր մարդկային անմեղ կամ անպարսավ կրքերը, որոնք բնավորվել են մարդկային բնության մեջ մեղքի անկումից հետո, այսինքն՝ հատուկ են մահկանացու և չարչարական մարդկային բնությանը և ոչ թե ադամական նախաստեղծ բնությանը: Բանն Աստված ոչ թե առավ Ադամի նախաստեղծ բնությունը, այլ՝ մեր ապականացու բնությունը՝ ապականակիր մարմինը և մեղանչական հոգին ու միտքը և, միավորելով իրեն, զատեց մեղքը հոգուց և ապականությունը՝ մարմնից: Ուստի Տերունական մարմինն անապական է՝ ոչ թե ըստ բնության, այլ ըստ անճառ միավորության: Նույնպես էլ՝ Քրիստոսի մարմինն ըստ բնության չարչարելի է և մահկանացու, սակայն ըստ միավորության տնօրինության՝ անչարչարելի և անմահ:

Ավետարանական եզրափակիչ իրադարձությունները՝ Տիրոջ *խաչելությունը*, մահը և մեռելներից հարությունը, Փրկագործության կարևորագույն դրվագներն են: Քրիստոսը նոր Ադամն է, որ աշխարհ եկավ, որպեսզի բոլորին կյանք տա և նորոգի հին Ադամով ապականության, մեղքի և մահվան դատապարտված մարդկությանը: Հիսուս Քրիստոսն իրեն հաշտության պատարագ մատուցեց Հայր Աստծուն, որպեսզի իր արյամբ գնի բոլորին՝ ողջերին և մեռածներին (Եբր. **9.**14, 28): Նա, ով Կենդանի է և Կենդանարար, բոլորի համար խաչվեց և ճաշակեց մահը, դրվեց գերեզման միավորյալ Աստվածությամբ և հոգով իջավ *դժոխք* անբաժանելի Աստվածությամբ, քարոզեց չարից բանտարգելված հոգիներին, ցույց տվեց փրկության նորոգումն ու լույսը, ավերեց դժոխքը և ազատեց հոգիներին, ապա՝ երրորդ օրն իր հրաշափառ Հարությամբ անդրանիկը եղավ մեռելներից:

Քրիստոսը նույն մարմնով աստվածապես համբարձվեց երկինքների երկինք, նստեց իր հավիտենական փառքի աթոռի վրա՝ Հոր աջ կողմում, ումից միշտ անբաժանելի է իր Աստվածությամբ: Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ բոլորին արդարապես դատելու և հատուցելու:

Բ. Սուրբ Հոգու տնօրինությունն ավ եկեղեցի: Քրիստոսի փրկագործությամբ աշխարհում հաստատվում է Քրիստոսի եկեղեցու նոր և կատարյալ իրականությունը: Քրիստ. հավատքն ընդունում է միայն մեկ Ընդհանրական և Առաքելական Սուրբ եկեղեցի, որը Քրիստոսի հաստատած կենդանի թագավորությունն է (Ղուկ. **1.**33, Հովհ. **18.**36, Հայտն. **20.**1–6), որի գլուխը ինքը Քրիստոսն է (Եփես. **5.**23, Կողոս. **1.**18), հիմքը՝ ուղղափառ հավատքի դավանությունը (Մատթ. **16.**16–19), իսկ քարերը՝ Աստծուն հոգով և ճշմարտությամբ դավանողները (Հովհ. **4.**23–24, Պետր. **2.**4–10): Եթե Քրիստոսը եկեղեցու՝ իր խորհրդական մարմնի գլուխն է (Կողոս. **1.**18), ապա Սուրբ Հոգին նա է, ով լցնում է Քրիստոսով փրկագործված արարչությունը: Եկեղեցին աստվածային իրականության ամբողջությունն է արարչության մեջ, որովհետև Սուրբ Հոգին այն լցնում և կենսագործում է Աստվածությամբ: Իրենեոս Լուգդունացին (II դ.) գրել է. «Ուր եկեղեցին է, այնտեղ էլ Աստծո Հոգին է, ուր Աստծո Հոգին է, այնտեղ էլ եկեղեցին է» (Migne J.P., PG, t. 7, col. 966c):

Սուրբ Հոգին, որ «խոսեց Օրենքում և Մարգարեներում և Ավետարաններում» (Հավատո հանգանակ), Երրորդության կամքով ներկա է աշխարհում Արարչագործությունից մինչև Փրկագործություն: Բանի մարմնավորումը տեղի է ունենում Սուրբ Հոգով, Քրիստոսը Սուրբ Հոգով է բժշկում, դևեր հանում, հրաշքներ գործում: Սակայն Հովհաննեսի Ավետարանում որոշակիորեն ասվում է. «Բանզի դեռ չկար Հոգին, որովհետև Հիսուս դեռ չէր փառավորվել» (**7.**39): Հետևաբար, այլ է Սուրբ Հոգու գործունեությունը մինչև *Հոգեգալուստ* և այլ է՝ Հոգեգալուստից հետո:

Ինչպես Որդին գալիս է աշխարհ և կատարում իր գործը Սուրբ Հոգով, այնպես էլ Սուրբ Հոգին, առաքվելով Որդու կողմից, գալիս է աշխարհ. «Բայց երբ գա Մխիթարիչը, որին ես ձեզ կուղարկեմ Հորից, Ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից, նա՛ կվկայի իմ մասին» (Հովհ. **15.**26): Հոգեգալուստը Բանի մարմնավորման հետևանքն է. արարածը կարողություն է ստանում կրելու Սուրբ Հոգին, և նա գալիս է աշխարհ և իր ներկայությամբ լցնում եկեղեցին, որ փրկագործվել ու սրբագործվել է Քրիստոսի արյամբ:

Քրիստոսի գործը նախապատրաստում էր Սուրբ Հոգու գործը. «Երկրի վրա կրակ գցելու եկա. և ի՞նչ եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքվեր» (Ղուկ. **12.**49): Այսպիսով, Հոգեգալուստն աստվածային տնօրինության վերջ-

ԴԱՎԹԱԿ

նական նպատակն է երկրի վրա: Քրիստոսը ելնում է Հոր մոտ, որպեսզի դա Սուրբ Հոգին. «Լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև, եթե ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա, իսկ եթե գնամ, նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ. **16.7**): Սակայն Սուրբ Հոգին իր անձնական գալստյամբ իր դեմքը չի հայտնում: Նա գալիս է աշխարհ ոչ թե իր, այլ՝ Որդու անունով, որպեսզի վկայի Որդու մասին, ինչպես Որդին եկավ Հոր անունով, որպեսզի հայտնի Հոր մասին:

Իր գալստյամբ Սուրբ Հոգին լցնում է եկեղեցին իր խորհրդական ներկայությամբ. «Քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց սրբերի մեջ» (Հավատո հանգանակ)՝ մարդկային բնությունն անմիջական հաղորդակից դարձնելով աստվածային իրականությանը: Նա քարոզել է առաքյալների բերանով, հիշեցրել և պատմել ավետարանիչներին, աստվածային գիտությամբ և հանճարով պայծառացրել վարդապետներին, բնակվել սրբերի մեջ և բազմապիսի հրաշքներ գործել: Եկեղեցին Սուրբ Հոգու կենդանի ներկայության և սրբազան ավանդության կրողն է:

Դավան. աստվածաբանության առանձին մասեր են նաև Սուրբ Հոգու տնօրինության և եկեղեցաբանության հետ առնչվող մի շարք խնդիրներ, ինչպիսիք են շնորհը, եկեղեցու սրբազան խորհուրդները, ծիսական աստվածապաշտությունը, աղոթքը ևն:

Գ. Վախճանաբանություն: Վախճանաբանությունը դավանության եզրափակիչ մասն է, որը խոսում է Քրիստոսի Երկրորդ գալստյան, մեռելների համընդհանուր հարության, ահեղ դատաստանի, հավիտենական տանջանքների և երկնքի արքայության մասին: Բոլորը քննվելու են ահեղ ատյանում, մեղավորները ժառանգելու են դժոխքի հավիտենական տանջանքները, իսկ արդարները՝ արքայությունը և հավիտենական կյանքը:

Քրիստոսի Երկրորդ գալուստը և դատաստանը, որպես քրիստ. կյանքի հիմն. սպասում, մշտապես եղել են եկեղեցու վարդապետ. մտքի ուշադրության կենտրոնում:

Գրկ. Կյուրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, ԿՊ, 1717: Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Ստեփաննոս Օրբելյան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, ԿՊ, 1756: Հովհաննես Օձնեցի, Մատենագրութիւնք, Վնտ., 1833: Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղեմ, 1871: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Աթանաս Ալեքսանդրացի, Ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք, Վնտ., 1899: Տիմոթեոս Ալեքսանդրացի, Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի, Էջմիածին, 1908: Կնիք հաւատոյ, Էջմիածին, 1914: Գրիգոր Լուսավորիչ, Յաճախապատում ճառք եւ աղօթք, Վնտ., 1954: Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Ե., 1985: Անանիա Սանահնեցի, Բան Հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց (աշխատասիր. Հ. Քյոսեյանի), «Գանձասար», 1–3, 1992–93: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Մխիթար Գոշ, Թուղթ առ վրացիսն (աշխատասիր. Պ. Մուրադյանի), «Գանձասար», 6, 1996: Արամյան Մ., Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրվագծեր (Դ–Ը դդ.), «Գանձասար», 2, 1992: The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R.W. Thomson, Lovanii, 1987; Mxitar Sasneci's Theological Discourses, ed. by S. Peter Cowe, Lovanii, 1993.

Մեսրոպ քհն. Արամյան

ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ (ծ. և մ. թթ. անհտ), VII դարի բանաստեղծ: Հայտնի է «Ողբք ի մահն Ջեւանշէրի մեծի իշխանին» խորագրով միակ ստեղծագործությամբ՝ պահպանված *Մովսես Կաղանկատվացու* «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքում: Այն միջնադարում հայ գրակ. մեջ լայնորեն տարածված ողբի ժանրի դամբանական կամ գերեզմանական կոչված տարատեսակի վաղագույն օրինակ է: Հորինման առիթ է եղել Հայոց Արևելից Կողմանց (Արցախ և Ուտիք նահանգներ) նշանավոր իշխան Ջևանշերի (637–680) եղերական սպանությունը: Փառապանծ իշխանի մահը Արցախ աշխարհում առաջ է բերել համաժող. սուգ:

Դ. Ք., Մովսես Կաղանկատվացու բնութագրմամբ, մեծ ոգեշնչումների ճարտասանաբանաստեղծը՝ ունակ հանպատրաստից ստեղծագործելու, շատ օրեր առաջ ժամանել էր իշխանանիստ Պարտավ և հյուրընկալվել Ջևանշերի պալատում: Դեպքի ազդեցությամբ հորինել է ողբը՝ խոր քնարականությամբ ներթափանցված մի գործ, որտեղ միահյուսված են գրավոր բանաստեղծության և բանահյուսության ավանդները: *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսի՝ Հռիփսիմյանց կույսերին նվիրված շարականի հետևությամբ, Դ. Ք. ողբը հորինել է անապեստյան ազատ քառոտնյա ոտանավորով և տների այբբենական ծայրակապով: Հեղինակը համեմատություն-զուգահեռներ է վկայակոչում հուն. առասպելաբանությունից, ոգեշնչման համար դիմում աստվածային Բանի արվեստավոր Հոգու զորությանը, ինչպես Հոմերոսը՝ մուսային: Ողբում առավել տիրակա-

նը, անշուշտ, քրիստ. հայացքն է աշխարհիկ նյութի վերաբերյալ, Ս. Գրքի ազդեցությունը: Ըստ այդմ էլ մեկնաբանվում է եղելությունը այն եզրակացությամբ, թե աշխարհի փառքը սնոտի է ու անցավոր:

Երկ. Ողբք ի մահն Ջեւանշիրի մեծի իշխանին, Ե., 1986:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968:

Պողոս Խաչատրյան

ԴԱՎԻԹ Ա ԱՐԱՄՈՆԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Արամոնք (այժմ՝ գ. Արամուս, ՀՀ Կոտայքի մարզում) – 741, Արամոնք, ամփոփվել է Արամոնքի հայրապետանոցում], Ամենայն հայոց կաթողիկոս 728-ից: Հաջորդել է *Հովհաննես Գ Օձնեցուն*: Դ. Ա Ա-ու նստավայրը նախ եղել է Դվինը, ապա՝ հայրենի գյուղը, որտեղ կառուցել է եկեղեցի և հայրապետանոց: Դ. Ա Ա-ու հանձնարարությամբ *Ստեփանոս Սյունեցին* գրել է Կ. Պոլսի պատրիարք Գերմանոսին ուղղված դավան. բնույթի պատասխան թուղթը:

Կաթողիկոս. գահին Դ. Ա Ա-ուն հաջորդել է *Տրդատ Ա Ոթմսեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴԻ (ծ. թ. անհտ, Գանձակ – 1130), իրավագետ, մանկավարժ: Կենսագր. տվյալներ չեն պահպանվել: Երկար ժամանակ զբաղվել է մանկավարժությամբ: Վայելել է մեծ հեղինակություն: Դ. Ա. Ո-ուն հիշատակում են Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուր.: Վարդան Արևելցու վկայությամբ՝ եղել է *Հովհաննես Սարկավագի* «լծակիցը», իսկ Կիրակոս Գանձակեցին նրան անվանել է «սուրբ լուսավորիչ»: Դ. Ա. Ո-ու անունով պահպանվել են 98 խրատական կանոններ՝ «Կանոնական օրինադրություն» խորագրով, որոնք հայտնի են 17 ընդօրինակություններով (15-ը՝ Մատենադարանում, մեկական՝ Վենետիկի Ս. Ղազարի և Վիեննայի մատենադարաններում): Հեղինակն օգտվել է եկեղեցու հայրերի և Հայոց եկեղեց. կանոններից, ժող. ավանդություններից, տվել խրատներ ու հրահանգներ՝ պարզ, հասկանալի և ընդարձակ բացատրություններով: Այդ եղանակով նա, Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու բնորոշմամբ, «դյուրահաս», «գեղեցկահարմար և պիտանացու» է դարձրել իր կանոնները: «Կանոնական օրինադրությունը» ունեցել է գործն. նշանակություն, հետապնդել մշակութալուսավոր. նպատակներ, մերկացրել անբարոյական բարքերը, առաջարկել առողջապահ. միջոցներ, բովանդակել խորհուրդներ «խորշելի» կենդանիների պատճառած վնասներից խուսափելու, կենցաղային, սեռ. մաքրակեցության ու կյանքի, ծննդաբերության մասին ևն: Մի շարք կանոններում խոսվում է պատժի ենթակա զանազան մեղքերի ու հանցանքների մասին: Առանձնապես դատապարտվել են հմայություններն ու անահավատությունը, քահանաների հոռի բարքերը: Կանոնների մի խումբ ուղղակի հրահանգներ են բարեպաշտ. ծեսերի, տոների, ժամերգության, պահքի, մկրտության և այլնի վերաբերյալ: «Կանոնական օրինադրությունը» արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ժամանակի բարքերի, կենցաղի, ժողովրդի բարոյական վիճակի և կյանքի մասին: Դ. Ա. Ո-ու կանոնները լայն տարածում են ունեցել և մեծ ժողովրդականություն վայելել: *Մխիթար Գոշն* իր Դատաստանագիրքը կազմելիս օգտվել է «Կանոնական օրինադրությունից»: Առաջին անգամ լույս է տեսել «Էջմիածին» ամսագրում (1952, № 9–12, 1953, № 1–3)՝ Ա. Աբրահամյանի աշխատասիրությամբ: 1961-ին Բելգիայում անգլ. թարգմանությամբ հրատարակել է անգլիացի հայագետ Զ. Դաուսեթը:

Գրկ. Կոստանյան Կ., Դավիթ վարդապետ Ալավկա Որդի, ԱՀ, գիրք 14, 15, Թ., 1906, 1907: Սամվելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Ե., 1939, էջ 74–75: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970, էջ 83–85:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, Դավիթ Ներգինացի, Դավիթ Արմենիոս [մոտ 475, գ. Ներգին (Տարոնի գավառ) – VI դ. կես, Հաղպատ, հետագայում անցյունը ամփոփվել է Մշո Ս. Առաքելոց վանքում], փիլիսոփա, տրամաբան, նորպլատոնականության Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչ, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Սովորել է Ալեքսանդրիայում՝ Օլիմպիոդորոս Կրտսերի փիլ. դպրոցում: Հրապարակային փիլ. վեճերում հաղթանակների համար ստացել է Անհաղթ պատվանունը: Ծեր հասակում վերադարձել է հայրենիք, գլխավորել *հունաբան դպրոցը*, նպաստել հայ փիլ. գիտության կազմավորմանը, վճռական դեր խաղացել փիլ. ճշգրիտ տերմի-

նաբանության և գիտակարգերի մշակման բնագավառում: Դ. Ա. տրամաբան. գիտության հիմնադիրն է Հայաստանում:

Դ. Ա.-ին վերագրվող բազմաթիվ երկերից անկասկած նրան են պատկանում «Սահմանք իմաստասիրութեան» (կամ «Գիրք սահմանաց»), «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի», «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի» և «Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտելի» աշխատությունները. առաջին երեքը գրվել են հունարեն, ապա թարգմանվել հայերեն (պահպանվել են դրանց հունարեն և հայերեն, իսկ վերջին երկի՝ հայերեն բնագրերը): Որպես նորպլատոնական Դ. Ա. զուգակցել է Պլատոնի, Արիստոտելի և Պյութագորասի ուսմունքները: Բոլոր գոյերի լինելիության պատճառ համարել է Աստծուն, պաշտպանել Աստծո, որպես ամեն ինչի պատճառի և արարչի, գոյության տիեզերաբան. ապացուցման սկզբունքը: Աստված անճանաչելի է, սակայն Աստծուն կարելի է մոտենալ՝ ճանաչելով նրա արարած բնությունը: Աշխարհը Դ. Ա-ի կարծիքով լիովին ճանաչելի է: Ճանաչողության գործընթացը, ըստ նրա, ունի զգայական ու բանական ձևեր և զգայության, երևակայության, կարծիքի, դատողականության ու բանականության աստիճաններ: Առաջին չորս աստիճանները փորձի, արվեստի և գիտության հիմքն են, իսկ բանականությունը՝ փիլիսոփայության, որը ճանաչում է իրերի մեջ ընդհանուրը և անփոփոխը, նրանց էությունը:

Դ. Ա. առաջադրել է գիտությունների դասակարգման հարցը, որի կենտրոնում դրել է «արվեստների արվեստը և գիտությունների գիտությունը»՝ փիլիսոփայությունը, որը բաժանել է երկու մասի՝ տեսական և գործնական: Տեսական փիլիսոփայության գիտությունների շարքը՝ բնագիտությունը կամ Ֆիզիկան, մաթեմատիկան և աստվածաբանությունը փիլիսոփայության հիմն. մասերն են: Գործն. փիլիսոփայության մասերն են բարոյագիտությունը, տնտեսագիտությունը և քաղաքականությունը: Ըստ Դ. Ա-ի՝ տեսական փիլիսոփայությունը, թափանցելով իրերի էության մեջ, ըմբռնելով ճշմարտությունը, օգնում է գործն. փիլիսոփայությանը՝ «խուսափելու չարից» և նախապատրաստելու «ըստ գիտութեան և ըստ գործոց որչափ կարողութիւն է մարդոյն նմանիլ աստծոյ» («Սահմանք իմաստասիրութեան», 1960, էջ 156): Դ. Ա. գտնում է, որ մարմինը հոգու զնդանն է, ժամանակավոր հանգրվանը: Փիլիսոփայությունը կյանքի փորձությունների միջով հոգին անվթար անցկացնելու և կրկին Աստծո հետ միաձուլելու միակ միջոցն է:

Դ. Ա. փիլիսոփայությանը տվել է ընդգծված բարոյագիտ. ուղղվածություն: Նրա համոզմամբ՝ փիլիսոփայությունը ստեղծվել է մարդու հոգին զարգացնելու և կատարելության առաջնորդելու համար: Այդ պատճառով նրա վարդապետության մեջ կարևոր տեղ է հատկացված մարդուն և նրա խնդիրներին: Ըստ Դ. Ա-ի՝ մարդ ձգտում է նմանվել Աստծուն: Աստված հոգում է բոլորի մասին: Ձգտելով նմանվել նրան՝ մարդը նույնպես հոգատար պետք է լինի ուրիշների նկատմամբ, նպաստի, որ նրանք ազատագրվեն չարիքից ու հասնեն կատարելության: Այս ընթացքը պայմանավորված է իրականության ճանաչման խորությամբ: Եվ քանի որ փիլիսոփաներն ավելի լավ կարող են ճանաչել գոյը, ապա նրանք ավելի մոտ են Աստծուն:

Դ. Ա-ի երկերը մեծ ազդեցություն են ունեցել միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման վրա: *Անանիա Շիրակացին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագը, Վահրամ Բաբունին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Սիմեոն Ջուղայեցին* և ուր. կրել են Դ. Ա-ի հայացքների նկատելի ազդեցությունը՝ իրենց հերթին զարգացնելով դրանք և խթանելով նրա գիտ. ժառանգության նկատմամբ հետաքրքրությունը: Շուրջ մեկ հազարամյակ Դ. Ա-ի երկերը եղել են բազմաթիվ մեկնող. աշխատությունների առարկա և անտիկ դասական փիլ. երկերի հետ մտել միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների ծրագրերի մեջ: XVIII դ. նրա երկերը թարգմանվել են վրացերեն և շոշափելի դեր խաղացել նաև վրաց. փիլ. մտքի զարգացման գործում: Շնորհիվ հուն. բնագրերի Դ. Ա-ի աշխատությունները տարածվել են հայկ. շրջանակներից դուրս, դրանց հետքերը նկատելի են միջնադարի իրան., արաբ. և հատկապես բյուզ. փիլ. մտքի վրա (Ալ Քինդի, Իբն Սինա, Ալ Ֆարաբի, Հովհան Դամասկացի, Նիկիֆոր Վլեմիդաս և ուր.):

Ըստ ավանդության, Դ. Ա. բազմաթիվ երգեր է հորինել եկեղեցու համար: Սակայն հայ երաժշտության պատմության մեջ նա հայտնի է տեսական ըմբռնումներով: «Սահմանք ի-

մաստասիրութեան» մեջ կան երգ-երաժշտութեանը վերաբերող նշանակալից աուոյթներ, որոնք դարձել են մեկնության առարկա՝ այդպիսով խթանելով ազգ. երաժշտագիտության զարգացումը:

Դ. Ա-ի անունով մեզ է հասել նաև մեկ ճառ – ներբող՝ «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր» սկզբնավորությամբ:

Հայ եկեղեցին ս. Դ. Ա-ի հիշատակը տոնում է հոկտ. ամսին՝ *Խաչվերացի* հինգերորդ կիրակին նախորդող շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.6, 5-րդ պատկերը:

Երկ. Երկեր (աշխարհաբար թրգմ., առաջաբանը և ծանոթագր. Ս. Արևշատյանի), Ե., 1999: Մատենագրութիւնք և թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վնտ., 1932: Սահմանք իմաստասիրութեան, Ե., 1960: Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտէլի, Ե., 1967: Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի, Ե., 1976: Երկասիրութիւնք փիլիսոփայականք (համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Արևշատյանի), Ե., 1980: *Соч., пер. с древнеармянского, М.*, 1975; Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium, ed. A. Busse, Berolini, 1904.

Գրկ. Արեվշատյան Ս., Դավիթ Անհաղթը հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Ե., 1980: Բրուտյան Գ., Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին, Ե., 1980: Դավիթ Անհաղթ (հոդվ. ժող.), Ե., 1980: Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան (ժող.), Ե., 1983: Դավիթ Անհաղթ: Մատենագիտություն, Ե., 1980: *Аревшатян С.С., Формирование философской науки в Древней Армении (V–VI вв.), Е., 1973; Философия Давида Непобедимого (сб.), М.*, 1984; David Anhaghth the "Invincible" Philosopher, A. Sangian (ed.), Atlanta, 1986.

Սեն Արևշատյան

ԴԱՎԻԹ Բ ԿԱԿԱՂԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Կակաղ (Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մազազ գավառ) – 833, Դվին], Ամենայն հայոց կաթողիկոս 806-ից: Հաջորդել է *Հովսեփ Բ Փարպեցուն*: Նստավայրն էր Դվինը: X դ. կաթողիկոս-պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցին հիշատակում է, որ արաբների դեմ պարսիկների և հայերի ապստամբության ժամանակ Հոլ ոստիկանը Դ. Բ Կ-ուն որպես բանագնաց ուղարկել է ապստամբների մոտ, սակայն այդ առաքելությունն անհաջող է անցել:

Կաթողիկոս. գահին Դ. Բ Կ-ուն հաջորդել է *Հովհաննես Դ Ոլայեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ԴԱՎԻԹ Դ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻ (ծ.թ. անհտ, Վաղարշապատ – 1633, Սպահան), Ամենայն հայոց կաթողիկոս 1590–1629-ին: Հաջորդել է *Գրիգոր ԺԲ Վաղարշապատցուն*: Եղել է Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ, 1584-ից օծվել Գրիգոր ԺԲ Վաղարշապատցու աթոռակից: Դ. Դ Վ., չկարողանալով վճարել օսմ. կայսրության՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի վրա դրված հարկը, ծանր կացությունից դուրս գալու միջոց է համարել հարուստ աթոռակից ընտրելը: 1593-ին աթոռակից է օծվել Մելքիսեդեկ Գառնեցին, 1603-ին՝ Սրապիոն Ուռհայեցի եպիսկոպոսը: 1603-ին շահ Աբբաս Ի-ը օսմ. Թուրքիայից վերադրավել է Ատրպատականի և Հայաստանի մի մասը: Երևանում հաստատվելով՝ նա իր մոտ է կանչել Դ. Դ Վ-ուն, աթոռակից Մելքիսեդեկ Գառնեցուն և պահանջել թուրքերին պարտք մնացած հարկերն իրեն վճարել:

1604-ին շահ Աբբաս Ի-ը Պարսկաստան հայերի բռնագաղթի ժամանակ Սպահան է տարել նաև Դ. Դ Վ-ուն և աթոռակից Մելքիսեդեկ Գառնեցուն: Վերջինիս հաջողվել է փախչել և վերադառնալ Ս. Էջմիածին: Դ. Դ Վ-ի բացակայության ժամանակ Մելքիսեդեկ Գառնեցին Մայր աթոռը անփառունակ վիճակի է հասցրել:

1607-ին կաթոլիկ կրոնավորները, օգտվելով հայերի բռնագաղթից, շրջել են տարբեր գավառներ՝ լքյալ տաճարներից սրբություններ հավաքելու: Երկուսին հաջողվել է Ս. Հռիփսիմե վանքից ս. Հռիփսիմեի մասունքները գողանալ: Սակայն հայ եպիսկոպոսները բռնել են նրանց: Կաթոլիկները աթոռակից Մելքիսեդեկ Գառնեցուն կաշառել են և մասունքների մի մասը վերցրել: Հնդկաստան գնալու ճանապարհին՝ Սպահանում նրանք բռնվել են, և մասունքները հետ են վերադարձվել:

1612-ին Դ. Դ Վ. Երևանի և Նոր Ջուղայի մեծահարուստների հարկադրանքով վերադարձել է Ս. Էջմիածին: Սակայն էական ոչինչ չկարողանալով անել՝ 1617-ին կրկին մեկնել է Սպահան: Նրա օրոք շահ Աբբասի հրամանով, Պարսկաստան գաղթեցված հայերի վերադարձը կանխելու նպատակով, Հայաստանից Պարսկաստան է տարվել *Լուսավորչի Աջը*, թանկագին ոսկե տուփով Ավետարան, այլ սրբություններ և Մայր տաճարից 15 «նշանավոր քարեր»: 1623-ին ինքնակոչ կաթողիկոս Մելքիսեդեկ Գառնեցին, Էջմիածնի վրա դրված ծանր հարկերը չկարողանալով վճարել, իր փո-

խարեն կաթողիկոս է օծել եղբորորդուն՝ Սահակ Գառնեցուն, ինչը 1626-ին հրովարտակով հաստատել է շահ Աբբաս I-ը: Սակայն Հայաստանում և Նոր Ջուղայում նրան որպես կաթողիկոս չեն ընդունել: 1629-ին, ժողովրդի կամքով Դ. Դ Վ. գահազրկվել է:

Կաթողիկոս. գահին Դ. Դ Վ-ուն հաջորդել է *Մովսես Գ Տաթևացին*:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ԴԱՎԻԹ ԴՎՆԵՑԻ (ծ. թ. անհտ – նահ. 701, ըստ այլ աղբյուրների՝ 693, հանդիսում է Դվինի Ս. Կաթողիկե եկեղեցու վկայարանում), վկա, տոնելի: Պարսիկ հոր և քրիստոնյա մոր զավակ, իշխանական տոհմից: Նախկինում՝ մահմեդական (Սուրհան անունով): Ծառայել է Հայաստանում՝ արաբ. բանակում: Մոր միջոցով ծանոթանալով քրիստ. վարդապետությանը՝ կամեցել է մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով: Նրան կնքել է Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսը՝ անվանակոչելով Դավիթ. կնքահայր է կանգնել Գրիգոր Մամիկոնյան իշխանը (պատրիկը): Դ. Դ. ընակություն է հաստատել Դվինում և մոտ 30 տարի ապրել այնտեղ՝ առաքինազարդ քրիստ. կյանքով:

Երբ Սահակ Գ Ջորոփորեցի կաթողիկոսի օրոք (677–703) Հայաստանի վրա ոստիկան է կարգվել «ժանտ» Աբդուլլահը, հալածանքներ են սկսվել քրիստոնյաների նկատմամբ: Դ. Դ-ուն առաջարկվել է ուրանալ քրիստոնեությունը և դառնալ նախկին կրոնին: Հրաժարվելու պատճառով նրան խաչել են՝ երեսը դեպի արևմուտք: Ավանդությունը պատմում է, որ խաչափայտը հրաշքով շրջվել է դեպի արևելք: Գեղարդով խոցել են Դ. Դ-ու սիրտը, կողերը և նահատակել: Այդ գեղարդը, խաչի ձև տալով, հայերը դրել են նրա վկայարանի վրա:

Հայ եկեղեցին ս. Դ. Դ-ու հիշատակը տոնում է Խաչվերացի 3-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի օրը: Նրան է նվիրված երեք տնից բաղկացած «Մանկունք» անվանումով շարականը («Լցեալ աստուածային շնորհիւ...»):

Գրկ. Սուրբերու կյանքը, Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ԴԱՎԻԹ Ե ԷՆԵԳԵԹՑԻ (Ղորղանյան, ծ. թ. անհտ – 31.10.1817, Էջմիածին, ամփոփվել է Ս. Գայանե վանքում), Ամենայն հայոց կաթողիկոս (1801–07): Հաջորդել է *Ղուկաս Ա Կարնեցուն*: 1800-ին ուղարկվել է Կ. Պոլիս, ընտրվել Կ. Պոլսի հայոց պատրիարք, բայց թուրք. կառավարությունը չի հաստատել, և նա վերադարձել է Էջմիածին: Հովսեփ արք. *Արղությանի* մահից (1801) հետո, մինչև ընտրյալ կաթողիկոս Դանիել Ա Սուրմառեցու Ս. Էջմիածին ժամանելը, ռուս. իշխանությունների աջակցությամբ, բայց հակառակ միաբանության կամքի, Դ. Ե Է. օծվել է հակաթոռ կաթողիկոս (1802-ի ապրիլի 28): Շուտով ռուս. կառավարությունը հովանավորել է նրա հակառակորդ Դանիել Սուրմառեցուն, և ծայր է առել կաթողիկոս. գահի համար պատմության մեջ հայտնի Դավիթ-Դանիելյան վեճը: 1807-ին պարսկ. կառավարության հարկադրանքով Դ. Ե Է. հրաժարվել է աթոռից: Դանիել Ա Սուրմառեցու մահից հետո փորձել է վերադրավել այն, բայց հաջողություն չի ունեցել: Կյանքի վերջին տարիներն ապրել է Ս. Էջմիածնում՝ իբրև միաբան:

Կաթողիկոս. գահին Դավիթ Ե Է-ուն հաջորդել է *Դանիել Ա Սուրմառեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

Արթուր Կարապետյան

ԴԱՎԻԹ ՀԱՐՔԱՑԻ, Հերթանացի, Հերեթնացի, Ներքինացի (ծ. և մ. թթ. անհտ), VI դարի կեսի աստվածաբան և փիլիսոփա: Ծնվել է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Հարք գավառի Հերյան (Հերեթ, Հերթ) գյուղում: Ըստ ավանդության, թաղված է Ներքինավանքի մոտ (Հարք գավառում): Կենսագր. տվյալներ չեն պահպանվել: Հաճախ նույնացվել է VI–VII դդ. ապրած Դավիթ անունով մի շարք հեղինակների հետ (Դավիթ Անհաղթ, Դավիթ Քերական, Դավիթ Հյուսպատ): Մասնակցել է ժամանակի աստվածաբան. վեճերին՝ հատկապես *անապականության* խնդրի շուրջ, իր հայացքներով հարել Հուլիանոս Հալիկառնասցուն, եղել Սևերիոս Անտիոքացու հակառակորդ (ասորի աստվածաբաններ Հուլիանոսն ու Սևերիոսն են սկիզբ դրել Քրիստոսի մարմնի անապականության վերաբերյալ վեճին): Ղեկավարել է այն մեծ *հունաբան դպրոցը*, որի գլխ. գործերն են *Փիլոն Ալեքսանդրացու* երկերի թարգմանությունները: Հավանաբար գրել է հայ. և հուն.: Մեզ են հասել Դ. Հ-ուն վերագրվող երկերի պատառիկներ (հրտ. «Արարատ», 1902, № 9–10, 1906,

№ 3): Հիմն. գործը «Իմաստասիրականք և իմաստասիրելիք հարցուածք» խորագրով կրոնափիլ. աշխատությունն է:

Գրկ. Ակինյան Ն., Դավիթ Հարքացի, Վնն., 1959: Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, աշխատասիր. Պ. Հակոբյանի, հ. 2, Էջմիածին, 1998, էջ 223–248: Մովսես պատրաստած յուղի մասին, տես Սրբալույս Մյուռոն, Ս. Էջմիածին, 2001, էջ 95:

ԴԱՎԻԹ ՔՈԲԱՅՐԵՑԻ [մոտ 1150, գ. Քոբայր (այժմ՝ Քոբեր կայարանի գյուղ, ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքի շրջագծում) – մոտ 1220, Հաղպատ], մեկնիչ, մատենագիր, ժամանակագիր, «Վարդապետք Հայոց Հյուսիսային Կողմանց» և Հաղպատի վանքի դպրոցի նշանավոր ներկայացուցիչներից: 1198–1203-ի միջոցին ճանապարհորդել է Կիլիկյան Հայաստանում, Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսից ստացել Հովհաննեսի Ավետարանի մեկնությունը, որը նվիրել է Հաղպատի վանքի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսին: Կենսագր. տվյալներից հայտնի է նաև, որ մասնակցել է Հայոց իշխան Զաքարե ամիրսպասալարի (Երկայնաբազուկ) նախաձեռնությամբ դումարված Լոռեի (1205) և Անիի (տես *Անիի եկեղեցական ժողով 1207*) եկեղեց. ժողովներին: *Արևելյան վարդապետների* մեջ ունենալով չափավոր ավանդապահ դիրքորոշում և ակնածանքով խոսելով կիլիկյան հայրերի մասին՝ այնուհանդերձ Դ. Քոբայրեցի չի քաջալերել ծիսադավան. զիջումների գնով Արևմուտքի հետ եկեղեց. միության հանելու ձեռնարկումները և Հայոց Հյուսիսային Կողմանց վարդապետների հետ ընդդիմացել է կիլիկյան թևին:

Դ. Քոբայրեցի, լինելով իր ժամանակի նշանավոր վարդապետներից, հեղինակել է բազմաբնույթ աշխատություններ (նրա անունով պահպանված երկերի թիվը հասնում է 17-ի)՝ մեկնություններ, *ներբողներ, պատճառներ*, խրատականներ, ժամանակագրություններ: Իր բանիմացության և վաստակի համար ժամանակակիցները Դ. Քոբայրեցուն մեծարել են իբրև «մեծիմաստ և կորավարան, մեծարգի և իմաստուն վարդապետ»: Դ. Քոբայրեցին մասնավորապես հայտնի է որպես հայ մատենագրության նոր բնագավառի՝ պատճառների սկզբնավորող: Քննելով հայրախոս. երկերի «պատճառները» (հեղինակային պատկանելությունը, գրության ժամանակը և շարժառիթները, նպատակները ու բովանդակությունը)՝ հեղինակը հետապնդել է ուսուցող. և դաստիարակչ. նպատակ, իր աշակերտներին ու ընթերցողներին ավանդելով քրիստ. բարոյականություն: Դ. Քոբայրեցու պատճառների մեծ մասը («Պատճառք և լուծմունք ճառից Գրիգոր Աստուածաբանի», «Պատճառք ճառից Գրիգորի Նիւսացւոյ», «Պատճառք գրոց Բարսեղի Կեսարացւոյ» ևն) նվիրված են երեք մեծ կապադովկացիների՝ *Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու* և *Գրիգոր Նյուսացու* գրական ժառանգությանը:

Երկ. Պատճառք ճառից Գրիգորի Նիւսացւոյ, աշխատասիր. Կ. Մուրադյանի, «Շողակաթ», Ստամբուլ, 1995, էջ 137–155: Դաւթայ վարդապետի Պատճառ Պահոցն գրոց՝ ի Բարսղէ կարգելոցն՝ ասացեալ ի հմտութիւն վարժողաց, աշխատասիր. Կ. Մուրադյանի, «Գանձասար», 5, 1994:

Գրկ. Ակինյան Ն., Մատենագրական հետազոտություններ, հ. 1, Վնն., 1922: Հակոբյան Վ., Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1952, № 8: Մուրադյան Պ., Դավիթ Քոբայրեցին և նրա «Պատճառները», «Գանձասար», 5, 1994:

Պարույր Մուրադյան

ԴԱՐԱՇԱՄԲԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆՔ, Մաղարդավանք, Իրանի Հյուսիսում, Արաքս գետի աջ ափին բարձրացող Մաղարդա լեռան լանջին, հայկական Դարաշամբ բնակավայրից (այժմ՝ լքված) մոտ 1 *կմ* արևելք: Ըստ XII դ. ասորի ժամանակագիր Միքայել Ասորու, հիմնադրել է *Բարդուղիմեոս* առաքյալը: Գրավոր առաջին տեղեկությունը *Խաչիկ Ա Արշարունի* կաթողիկոսի 976-ի կոնդակն է, որով հաստատվել են վանքին հարկատու կալվածքների սահմանները: Նույն թվականին վանքը վերահաստատել և վերաշինել է Բաբկեն եպիսկոպոսը: Ս. Ստեփանոս եկեղեցու օծմանը ներկա են եղել Խաչիկ Ա Արշարունին և Հայոց Աշոտ Ողորմած թագավորը, որոնք վանքին ընդարձակ տիրույթներ են նվիրել: Աշոտի դուստր Հռիփսիմեն 981-ին վանքին կտակել է Աստապատի իր դաստակերտը, այգիներ, արտեր: Կտակում նշվում է, որ վանքապատկան երեք եկեղեցիները՝ Ս. Ստեփանոսը, Ս. Աստվածածինը և Ս. Գևորգը, խարխուլ էին, և գլխ. եկեղեցին (Ս. Ստեփանոսը) նորոգել է իր հայրը: Վանքը հիշատակվում է 1173-ին նկարազարդ ձեռագրի ընծայման կապակցությամբ: 1270-ին նկարագրել է Վարդան Բաձրբերդցին: 1330-ին մոնղոլ Աբու Սայիդ իշխանը հաստատել է վանքի կալվածքները: XIII–XIV դդ. վանքը հայտնի մշակութ. կենտրոն էր, 1332-ին այնտեղ տասից ավելի վանականներ ձեռագրեր են ընդօրինակել, գործել է

դպրոց: 1331-ին գրված «Նարեկի» հիշատակարանում վանքն անվանվում է «մեծ ու հռչակավոր»: Դեռ 1427-ին հիշատակվում են նրա երեք եկեղեցիները, սակայն 1541-ին Հայոց կաթողիկոս Գրիգոր ԺԱ Բյուզանդացու կոնդակում նշվում է միայն Ս. Ստեփանոսը: XVI դ. վանքը խարխուլ էր, 1589-ին Մարտիրոս վարդապետը նորոգման աշխատանքներ է կատարել: Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսը 1631-ին վանքին դրամահավաքի իրավունք է տվել և հորդորել ժողովրդին՝ օժանդակել այս կարևոր հոգևոր կենտրոնի պահպանմանը: Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, 1633-ին վանահայր դարձած Հակոբ Ջուղայեցին (ապագա կաթողիկոս *Հակոբ Դ Ջուղայեցի*) մինչև հիմքերը քանդել է վանքի եկեղեցին ու մյուս շինությունները և կառուցել նոր եկեղեցի, պարիսպներ և նրանց կից բնակելի ու օժանդակ շենքեր: Ըստ Ս. Ստեփանոս եկեղեցու գմբեթի թմբուկի արձանագրության, դա կատարվել է 1643–55-ին, սակայն շինարարությունը շարունակվել է մինչև 1662-ը: Հակոբ Դ Ջուղայեցու Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելուց (1655) հետո վանքի շինարարությունը շարունակել են Հովհաննես, Պետրոս և Հակոբ Շամբեցի վանահայրերը. կառուցել են արմ. պարիսպը, սեղանատունը, խցերը և զանգակատունը: 1759-ին վանքի շենքերը վնասվել են երկրաշարժից: Ս. Ստեփանոս եկեղեցին հետագայում նորոգվել է 1704, 1826 և 1865-ին, հս. բակի սենյակները նորոգվել են 1832-ին, իսկ 1840-ին երկրաշարժից վնասված զանգակատունը՝ 1879-ին: 1828-ի Թուրքմենչայի պայմանագրով Արաքս գետը դարձել է ռուս-պարսկ. սահման, և վանքը կորցրել է Նախիջևանի ու Գողթնի իր թեմերը, իսկ Ատրպատականից հայերի արտագաղթից հետո՝ զրկվել եկամուտներից: Փակվել է դպրոցը, գրադարանի ձեռագրերը փոխադրվել են Էջմիածնի մատենադարան: Դ. Ս. Ս. Ն. վ-ի և *Արտազի Ս. Թադե վանքի* թեմերի միավորումով կազմվել է Ատրպատականի առաջնորդություն՝ Թավրիզ կենտրոնով: 1917–21-ին թուրքերը չորս անգամ թալանել են վանքը և հրկիզել գրադարանը: 1973-ին մինչև վանքը կառուցվել է ավտոխճուղի: 1983-ին, իրանահայ համայնքի և «Երկիր և մշակույթ» (Փարիզ) կազմակերպության նյութ. օժանդակությամբ Իրանի պետ. «Միրասե ֆարհանգի» («Մշակութային ժառանգություն») հաստատությունը թիթեղապատել է տանիքները, հենակներով ամրացրել զանգակատան խարխլված կամարները, վերակառուցել արլ. բակի քանդված խցերը, վերանորոգել խոհանոցն ու սեղանատունը: Կիսաշրջանաձև բուրգերով ուժեղացված պարիսպներով շրջապատված ուղղանկյուն համալիրի շենքերը խմբավորված են երկու բակերում, որոնցից հս-ում են գտնվում Ս. Ստեփանոս եկեղեցին՝ հվ-ից կից երկհարկ-եռաստիճան զանգակատնով, և Ս. Պողոս-Պետրոս միանավ թաղածածկ եկեղեցին: Դեղնակարմրավուն ֆելզիտային տուֆի մաքուր տաշված քարերով կառուցված Ս. Ստեփանոս եկեղեցին ներքուստ խաչաձև է, եռախորան, արմ. ուղղանկյուն թևով, արտաքուստ՝ ուղղանկյուն: Պատերը ներսից աղյուսապատ են և սվաղված: Խորանները յոթանիստ են, անկյունային սենյակները՝ երկհարկ: Վերնահարկ ունի նաև արմ. խաչաթևը: Զարդարված է XVII դ. և 1826-ի որմնանկարներով: Կամարաշարով ու պատկերաքանդակներով հարդարված 16-նիստանի թմբուկով գմբեթը պսակվում է հովանոցաձև վեղարով: Ուշ միջնադարի հայ ճարտ. մեջ Ս. Ստեփանոս եկեղեցին առանձնանում է իր գեղ. հարդարանքով: Այստեղ ճակատների հետ ներդաշնակ ամբողջություն են կազմում ավետարան. թեմաներով բազմաթիվ պատկերաքանդակները և զարդաքանդակները (որոնցով հագեցած են բոլոր պատերը և գմբեթը), իսկ ներսի հետ՝ զարդանկարները և որմնանկարները: Գմբեթի թմբուկի նիստերին 12 առաքյալների լուսապսակով դիմաքանդակներն են, իսկ աշխարհի չորս կողմերին նայող նիստերին՝ «Քրիստոսը դահի վրա», ներքևում՝ չորս ավետարանիչների խորհրդանիշներով (արմ.), ինչպես նաև Աստվածածնի (հս.), Հովհաննես Մկրտչի (արլ.) և Գրիգոր Լուսավորչի (հվ.) պատկերաքանդակներն են: Ճակատոնների հարթության մեջ, արլ. ճակատին քանդակված է ս. *Ստեփանոս Նախավկայի* քարկոծումը, արմ-ին՝ «Խաչելությունը», հվ-ին՝ «Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին», հս-ին՝ «Համբարձումը»: Իսկ զանգակատան հվ. պատին, որը միաժամանակ եկեղեցու հս. ճակատն է, առաջին հարկում պատկերված է «Աստվածածինը դահի վրա», երկու կողքերին՝ հրեշտակներ, իսկ երկրորդ հարկում՝ «Աստվածածնի Ավետումը»: Ամբողջությամբ վերցված, վանքի պատկերաքանդակները միասնական շղթա են կազմում՝ ներ-

կայացնելով Տերունական պատկերաշարը («Ա-վետում», «Հիսուսի Ծնունդը», «Խաչելու-թյունը», «Համբարձումը», «Հիսուսը դահի վրա», «Աստվածածինը դահի վրա»), որը լրացված է առաքյալների միջոցով քրիստո-նեության տարածման, Ստեփանոս Նախավկա-յի քարկոծման ու հայ ժողովրդի՝ քրիստոնեու-թյան ընդունման թեմաներով: Ընդ որում, հա-մատեղվել են տարբեր սյուժեներ (օր., ս. Ստե-փանոսի քարկոծումը զուգակցված է Սուրբ Երրորդության հետ): Ավետարանիչների խոր-հրդանիշները՝ արծիվը և հրեշտակը, ներկա-յացված են թռիչքի պահին: Դ. Ս. Ս. Ն. վ-ի բազմաթիվ և բազմազան պատկերաքանդակ-ներն իրենց դեղ. բարձր արժանիքների ու ինք-նատիպ առանձնահատկությունների շնորհիվ դասվում են ուշ միջնադարի հայկ. արվեստի գլուխգործոցների շարքին:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.6, 6-րդ պատկերը:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմու-թեանց, Ե., 1990: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Մինասյան Լ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971: Hofrichter H., Das Kloster Sdepannos Nachawega, “Revue des études arméniennes”, t. 9, P., 1972; Hofrichter H., Uluhogian G., S. Stepannos, Milano, 1980 (Documenti di architettura armena, 10).

Արմեն Հախնազարյան
Մուրադ Հասրաթյան

ԴԺՈԽՔ, գեհեն, Աստծո ներկայությունից թափուր վայր կամ վիճակ. հավիտենական տանջարան, անլույս պատժարան, անհանգչելի կրակ, որը, աստվածային արդարության սահ-մանումով, նախատեսված է *սատանայի*, իր արբանյակների՝ անկյալ *հրեշտակների*, դևերի և սրանց կամակատար մարդկանց համար: Հա-կոտնյան է *դրախտի*:

Դ. եբրայերեն «շեոլ» և հունարեն «հադես» բառերի հայերեն համարժեքն է. նշանակում է մեռյալների հոգիների օթևան, ըստ ոմանց՝ մա-հից անմիջապես հետո, ըստ այլոց՝ օրերի վախ-ճանին՝ Ահեղ դատաստանից հետո: Մինչդեռ «գեհեն»-ը, որ գործածվում է եբրև Դ. բառի հոմանիշ, եղել է Երուսաղեմի հվ. կողմի հով-տի անունը, որտեղ Հուդայի Աքազ թագավորը «...իր որդուն կրակի միջով անցկացրեց...» (Դ Թագ. **16.**3)՝ ի պատիվ Մեղքոմ (Մոլոք) կուռ-քի: Այդ հովիտը Հոսիա թագավորի օրոք վե-րածվել է աղբանոցի: Որպես անարգանք նախ-կին կռապաշտության՝ այստեղ կրակին են հանձնել քաղաքի անմաքրությունները, մահա-պարտների և պղծված կենդանիների դիակնե-րը: Մշտավառ կրակի պատճառով այն կոչվել է կրակի գեհեն: Հի-սուս Քրիստոսն այդ անունը գործածել է Դ-ի իմաստով. «... և ով որ իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհենի կրակին» (Մատթ. **5.**22): Գեհենը Դ., հավիտենական կրակ հասկացութ-յամբ կիրառված է Մատթեոսի (**5.**22, **5.**29, **5.**30, **10.**28, **18.**9, **23.**15, **23.**33), Մարկոսի (**9.**43, **9.**47), Ղուկասի (**12.**5) Ավետարաններում և Հակոբոս առաքյալի ընդհանրական թղթում (**3.**6): Դ. հիշատակվում է սաղմոսներում («... քանզի դժոխքում չես թողնի դու ինձ...», Սաղմ. **15.**10): Որպես «ներքևում» գտնվող և ցեց ու որդ արտադրող պատժավայր կամ ան-հանգչելի կրակ՝ նկարագրվում է Եսայու մար-գարեությունում. «... դժոխքն ալեկոծվեց ներքևում...» (**14.**9), «Քո փառքը, քո մեծ ու-րախությունը դժոխք իջան. ցեցը պիտի տա-րածվի քո տակ, իսկ վրադ որդը պիտի պատի» (**14.**11), «Պիտի ելնեն ու տեսնեն իմ հանդեպ հանցանք կատարած մարդկանց ոսկորները, քանզի նրանց որդը չի մեռնելու, նրանց կրա-կը չի հանգչելու...» (**66.**24): Դ., որպես Զարի հատուցման վայր, մահվան կայան, հանգրվան կամ պատժի ձև հիշատակվում է Աստվածա-շնչի այլ գրքերում ևս (Երկրորդ Օրին. **32.**22, Բ Թագ. **22.**6, Սաղմ. **9.**18, **29.**4, **54.**16, Ելք **14.**9, **14.**15, Մատթ. **11.**23, **16.**18, Ղուկ. **16.**23, Գործք **2.**27, **2.**31, Ա Կորնթ. **15.**55, Հայտն. **1.**18, **6.**8, **20.**13):

Նոր կտակարանն արձանագրել է Հիսուսի առակն աղքատ Ղազարոսի և մեծահարուստի վերաբերյալ, որտեղ դրախտը ներկայացվում է իբրև հանգստության գիրկ՝ Ղազարոսի, իսկ Դ.՝ որպես տանջարան՝ մեծահարուստի համար. «Եվ դժոխքում, մինչ սա տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած»: Եվ նա աղաղակեց ու ասաց. «Հա՛յր Աբրահամ,ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պա-պակում եմ» (Ղուկ. **16.**23–24): Նույն այս ա-ռակում էլ Դ. բնութագրվում է իբրև տան-ջանքների վայր (Ղուկ. **16.**28), որն անանցա-նելի վիհով բաժանված է դրախտից:

Քրիստ. վախճանաբանության (հուն. էսխա-տոլոգիա) համաձայն, ժամանակների վախճանին Հիսուսը հայտնվելու է. այդ ժամանակ (առա-

ջին հարություն) նախ երկինք է հափշտակվելու Հայրը՝ Քրիստոսի եկեղեցին (կենդանի կամ ննջյալ), ապա, քիչ ժամանակ անց, եկեղեցուց թափուր երկիրը տեսնելու է Հիսուսին, որն իր հրե շնչով կործանելու է հակաքրիստոսին և սատանային կապելու է հազար տարի: Հազար տարի անց (երկրորդ հարություն) հարություն են առնելու մնացած բոլոր մեռյալները՝ Վերջին դատաստանի համար: Ահա այս ժամանակ է, որ Դ. է նետվելու սատանան՝ իր արբանյակների և դատապարտված հոգիների հետ, տանջվելու հավիտյանս հավիտենից:

Հայ եկեղեցին ընդունում է Վերջին դատաստանը և մերժում, այսպես կոչված, «առանձնական դատաստանը», ըստ որի, եթե մարդ մեռնում է, ապա ստանում է իր կյանքի վարձատրությունը՝ անմիջապես: Հայ եկեղեցին ընդունում է նաև մինչվախճանական կայանների կամ հոգու օթևանների գոյությունը: Ըստ *Գրիգոր Տաթևացու*՝ առկա են երկու կարգի օթևաններ՝ ձախակողմյան կամ ներքևի (պատժապարտների համար) և աջակողմյան կամ երկնային (Հիսուս Քրիստոսի քավչարար արյունով մաքրվածների համար):

Դժոխքի ավերումը: Ըստ Սուրբ Գրքի, խաչյալ և հարուցյալ Հիսուս Քրիստոսի ձեռքին են նաև Դ-ի բանալիները, քանզի նրան են հնազանդված կյանքն ու մահը. «... ես եմ կյանքը, ես եմ, որ մեռա և ահա՛վասիկ կենդանի եմ հավիտյանս հավիտենից»: Ամեն: «Եվ ունեմ մահվան ու դժոխքի փականքները» (Հայտն. 1.18): Ընդհանրական եկեղեցին, մեկնելով Սուրբ Գիրքը, ընդունում է խորհրդավոր մի իրադարձություն, որը կոչվում է Դ-ի ավերում. Հիսուս Քրիստոսը խաչելությունից հետո իջավ Դ. և քարոզեց մահացածների հոգիներին, որոնք կապված էին սատանայի կապանքներով՝ ադամական մեղքի պատճառով: Հիսուսը քանդեց այդ կապանքները, քանզի իր մահվամբ վճարեց ողջ մարդկության մեղքերի գինը, և ազատության ավետիսը տվեց մինչ Փրկչի գալուստը ննջած բոլոր հոգիներին:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.7, 1-ին պատկերը:

Լևոն Սարգսյան

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԻՈՊԱԳԱՑԻ, Դիոնեսիոս Արիսպագացի, Արեոպագացի սուրբ Դիոնիսիոս (I դ.), *Ընդհանրական եկեղեցու* սուրբ հայրերից, ովքեր Հայ առաքելական եկեղեցում հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*), Աթենքի եպիսկոպոս: Եղել է Պողոս առաքյալի աշակերտը, հավատքի է եկել Աթենքի Արեոպագոսում (ժողովարանում) լսելով նրա քարոզը (Գործք 17.16–34): Պողոս առաքյալն էլ նրան ձեռնադրել է Աթենքի առաջին եպիսկոպոս: Ըստ ավանդության՝ մինչ քրիստոնյա դառնալը Դ. Ա. եղել է նաև Պողոս առաքյալի քարոզչությամբ քրիստոնյա դարձած, «երկոտասան վարդապետներից» առաջինը հիշատակվող Ռեթեոս Աթենացու աշակերտը: Ըստ Դ. Ա-ու վարքի, երեք տարի եղել է Պողոս առաքյալի գործակիցը, շրջել ու քարոզել է Ավետարանը և իր մահկանացուն կնքել նահատակությամբ:

Դ. Ա-ու անունով մեզ են հասել մի շարք աշխատություններ («Յաղագս երկնային քահանայապետութեան», «Յաղագս երկրային քահանայապետութեան», «Յաղագս աստուածային անուանց», «Յաղագս խորհրդական աստուածաբանութեան» ևն), որոնք ընդհանուր անունով կոչվում են արեոպագիտիկաներ («Կորպուս Արեոպագիտիկում»): Այդ գրվածքներն ունեն խորհրդապաշտ. բնույթ, կրում են նաև նորպլատոնական մտածողության ակներև ազդեցությունը: Գիտության մեջ կարծիք է հայտնվել, որ արեոպագիտիկաները հորինվել են V դ. վերջին, նորպլատոնական մի մատենագրի կողմից և իբրև անառարկելի հեղինակություն վերագրվել Դ. Ա-ուն ու եկեղեց. մատենագրության մեջ շրջանառվել նրա անունով: Արեոպագիտիկաները երկակի ընդունելություն են գտել Հույն եկեղեցում: Կ. Պոլսի 553-ի ժողովը մերժել է այդ գրվածքները՝ իբրև ապողինարիստական (տես *Ապողինարիզմ*) մեղանչումներ: Սակայն VII դ. բյուզ. աստվածաբան Մաքսիմոս Խոստովանողն իր մեկնություններում բացահայտել է Դ. Ա-ու երկերի ուղղափառ իմաստը, իսկ VIII դ. բյուզ. աստվածաբան Հովհան Դամասկացին արեոպագիտիկաները (հատկապես՝ աստվածային պատկերների միջոցով ընկալելու ուսմունքը) օգտագործել է *պատկերամարտության* դեմ մղած պայքարում: Մաքսիմոս Խոստովանողի և Հովհան Դամասկացու շնորհիվ Դ. Ա-ու երկերը տարածվել և անվիճելի հեղինակություն են ձեռք բերել Արևելյան և Արևմտյան եկեղեցիների աստվածաբան. ավանդության մեջ:

Դ. Ա-ուն վերագրված գործերի հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է VIII դ.՝ *Ստեփանոս Սյունեցու* և Դավիթ Հյուպատոսի ջանքերով: Արեոպագիտիկաները նախ թարգմանվել են ասորերեն, ապա՝ հայերեն և հետո միայն լատիներեն, ընդ որում հայերեն թարգմանությունը զուգակցվում է Մաքսիմոս Խոստովանողի մեկնությունների թարգմանությամբ: Դ. Ա-ու երկերի երկրորդ հայ թարգմանիչը *Ստեփանոս Լեհացին* է, որը լատ-ից է թարգմանել թե՛ Դ. Ա-ու երկերը և թե՛ Մաքսիմոս Խոստովանողի գրած մեկնությունները:

Դ. Ա-ու երկերը մեծ ազդեցություն են թողել միջնադարի աստվածաբան. մտածողության վրա: Այդ ազդեցությունից անմասն չի մնացել նաև հայ աստվածաբան., դավան., փիլ. միտքը: Արեոպագիտիկաների հետ ակնհայտ ընդհանրություններ կան *Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու, Վանական Վարդապետի* երկերում: Դ. Ա-ու գործերից բազմաթիվ հատվածներ տեղ են գտել հայ դավանաբան. աշխատություններում և ժողովածուներում: Միջնադարի վանական դպրոցներում և վարդապետարաններում կիրառվել են Ստեփանոս Սյունեցու, *Համամ Արևելցու, Եսայի Նչեցու, Վահրամ Բաբուեանու* և այլոց գրած Դ. Ա-ու երկերի *լուծմունքները* և մեկնությունները:

Հայ եկեղեցին ս. Դ. Ա-ու հիշատակը նշում է տարին երկու անգամ. *Խաչվերացի* վեցերորդ կիրակին նախորդող հինգշաբթի օրը՝ Պողոս առաքյալի աշակերտներ Տիմոթեոսի ու Տիտոսի հիշատակի հետ, և հոկտ. վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» տոնին:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.7, 2-րդ պատկերը:

Երկ. Աստուածաբանական. Յիշատակարան գրոց, հրտ. Կարապետ եպիսկոպոս, «Արարատ», 1913, էջ 600–604: Աթենացիների Դիոնիսիոս Արեոպագացի եպիսկոպոսի [թուղթը] եփեսացիների Տիմոթէոս եպիսկոպոսին Խորհրդական աստուածաբանութեան մասին, աշխարհաբարի վերածեց Վ. Ղազարյան, «Գանձասար», 2, 1992: The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R.W. Thomson, Lovanii, 1987.

Գրկ. Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, աշխատասիր. Շահէ քՀն. Հայրապետյանի, Ե., 1998: Ավդերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց..., հ. 7, Վնտ., 1813: Գրիգորյան Մ., Ստեփանոս Սյունեցի, Բեյրութ, 1958: Հատիտյան Ա., Սուրբ Ռեթեոս Աթենացի, սուրբ Դիոնիսիոս Արիսպագացի և սուրբ Սեղբեստրոս հայրապետ Հռոմի, «Էջմիածին», 1979, № 5: Ղազարյան Վ., Արեոպագիտիկաները և նրանց նշանակությունը եկեղեցական վարդապետության մեջ, «Գանձասար», 2, 1992: Գալուստյան Շ., Համաքրիստոնեական սուրբեր, Ե., 1997:

ԴՊՐԵՎԱՆՔ, Շիրակի Կարմիր վանք, «Բարսեղ Ճոնի վանք», Կարս քաղաքից արևելք, Ախուրյանի աջ ափին: Հիշատակվում է VII դարից՝ կապված Դ-ի վանահայր *Բարսեղ Ճոնի* անվան հետ: X դ. այնտեղ են հաստատվել Բյուզանդիայում հալածված հայ հոգևորականները: Դ-ի տեղը ստույգ հայտնի չէ. ենթադրվում է, որ Դ. համապատասխանում է Շիրակի Կարմիր վանքին, որի այժմ կանգուն գմբեթավոր եկեղեցին կառուցվել է 1218-ին՝ արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում խորաններով ավանդատներով հորինվածքով, և նորոգվել է 1887-ին (այլ վարկածի համաձայն, Դ. գտնվել է Կումայրի քաղաքի եզրին, և նրա «մաստարայատիպ» հորինվածքով Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին քանդվել է XIX դ., Ալեքսանդրապոլի ռուս. ամրոցի կառուցման պատճառով):



Դպրեվանքի (1218) ընդհանուր տեսքը

Դ-ում է պահվել Աստվածածնի նշանավոր խաչը, որով բուժվել է Վրաց թագավոր Դեմետրե I-ի (1125–56) կինը, այնուհետև ս. Խաչը տեղափոխել են Վրաստանի Վարձիա վանքը:

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001: Էփրիկյան Ս., Պատկերազարդ ընաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1903–05: Ատրպետ Ս., Դպրեվանք, ՀԱ, 1913, № 10: Thierry N. et M., A propos de quelques monuments chrétiens du vilayet de Kars (Turquie), “Revue des études arméniennes”, t. 8, P., 1971; Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ԴՎԻՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, գումարվել են Հայոց կաթողիկոսության աթոռանիստ Դվինում (տես *Դվինի կաթողիկոսարան*), VI–VIII դարերում: Քննարկվել են դա-

վան., ծիս., ինչպես նաև եկեղեց. կարգ ու կանոնին վերաբերող կարևոր խնդիրներ: Դ. ե. ժ-ում ընդունված որոշումները մեծ նշանակություն են ունեցել Հայ եկեղեցու դավան. դիրքորոշման հստակեցման գործում: Ժողովների մի մասը եղել է կանոնագիր: Ընդունված կանոնախմբերը տեղ են գտել «*Կանոնագիրք Հայոց*»-ում:

Դվինի Ա ժողով (506), հրավիրել է *Բաբկեն Ա Ութմսեցին*՝ դավան. խնդիրներ, մասնավորապես *նեստորականությանը* և *քաղկեդոնականությանը* առնչվող հարցեր քննելու, նրանց հանդեպ Հայ եկեղեցու դիրքորոշումը պարզելու նպատակով: Ժողովին մասնակցել են 20 եպիսկոպոս, վանականներ, երեցներ, 14 նախարար՝ մարզպան Վարդ Մամիկոնյանի (505–509) գլխավորությամբ, Այունյաց եկեղեցու ներկայացուցիչներ, ինչպես նաև Վրաց և Աղվանից եկեղեցիների կաթողիկոսներն ու եպիսկոպոսները: Պահպանվել է միայն մեկ ժողովական՝ «Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս» վերնագրով առաջին թուղթը, որը գրել է Բաբկեն Ա Ութմսեցին: Ժողովն արդեն հրավիրվել էր, երբ Սիմեոն Բեթ-Արշամացու գլխավորությամբ Պարսկաստանի քրիստոնյա ուղղափառ ասորիները, որոնց հատկապես Սելևկիայի 499-ի ժողովից (որտեղ նեստորականությունը հռչակվել էր Պարսկաստանի քրիստոնյաների պաշտոնական դավանություն) հետո հալածանքների էին ենթարկել նեստորականները, պաշտպանություն են հայցել Հայ եկեղեցուց, միաժամանակ խնդրել, որ Հայոց կաթողիկոսը գրով հաստատի, թե որն է ճշմարիտ դավանությունը, քանի որ նեստորականները պարծեցել էին, թե հայերը, հույները, վրացիներն ու աղվանները ևս իրենց հավատն ունեն: Բաբկեն Ա Ութմսեցին, ի պատասխան այդ խնդրանքի, Հայ եկեղեցու և ժողովի անունից հավաստել է, որ Հայ եկեղեցին Նեստորի և նրա կողմնակիցների վարդապետությունը մերժում է ու նզովում: Նամակը գրվել է հայերեն ու պարսկերեն և կնքվել բոլոր ժողովականների ստորագրությամբ: Այս ժողովում ընդունվել է մեզ չհասած «Պայման նամակը» (որը նաև «Հավատո նամակ» է կոչվում), որով մերժվել ու լռելյայն դատապարտվել է *Քաղկեդոնի ժողովը* և *Լևոնի տոմարը*:

Դվինի Ա ժողովը երևույթ էր Հայ եկեղեցու դավան. դրության հստակեցման և զարգացման, նրա հականեստոր., հակաքաղկեդոն. դիրքորոշման ճշտման գործում: Դվինի Ա ժողովը հանրագումարն էր դավան. այն պայքարի, որ Հայ եկեղեցին նախորդ տասնամյակներում մղել է քրիստ. տարբեր հոսանքների՝ քաղկեդոնականության, նեստորականության, *եվտիքականության* դեմ: Միաժամանակ Հայ եկեղեցու հեղինակության և դիրքի ապացույցն էր VI դ. քրիստոնյա Արլ-ում ծավալված դավան. վեճերում: Տարբեր դավանանքների պատկանող դրացի քրիստոնյաները, գիտակցելով Հայ եկեղեցու նշանակությունը և դերը Արևելքի քրիստոնյա եկեղեցիների մեջ, աշխատել են ձեռք բերել Հայ եկեղեցու հովանավորությունը և տեսնել իրենց դավանակից:

Դվինի Բ ժողով (554), գումարվել է «Հակառակ ժողովոյն Քաղկեդոնի» (*Հովհաննես Գ Օձնեցի*), մարտի 29-ին, Ծաղկազարդի օրը, *Ներսես Բ Բագրեվանդցու* օրոք, Պարսից Խոսրով արքայի 24-րդ և բյուզ. Հուստինիանոս կայսրի 14-րդ տարում: Մասնակցել են 18 եպիսկոպոս, մեծ թվով նախարարներ, ինչպես նաև ասորի ուղղափառների Աբդիշո եպիսկոպոսը: Համաձայն տիրող կարծիքի, այս ժողովից է սկսվել պաշտոնական բաժանումը հայ և քաղկեդոնիկ եկեղեցիների միջև: Ըստ Հովհաննես Գ Օձնեցու, Ասողիկ պատմիչի (X–XI դդ.) և Մխիթար Գոշի (XII–XIII դդ.), Դվինի Բ ժողովում է որոշվել Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոնը նշել միասին՝ հունվ. 6-ին (ինչպես տոնել են հայերը առաքյալներից սկսած), դավանել Քրիստոսի մեջ մեկ Աստվածամարդկային բնություն և «Սուրբ Աստված» երգը «խաչեցարով» երգել, ինչպես նաև սկիզբ է դրվել Հայոց նոր թվականին: Ժողովն ընդունել է «Ուխտ միաբանության Հայոց աշխարհիս» գրությունը, որտեղ հիշված են միայն 3 տիեզերաժողովները, նզովվել են նեստորականությունը, պավլիանիտները (III դ. աղանդապետ, Սամոսատի եպիսկոպոս Պողոս Սամոսատացու ուսմունքի հետևորդները) և *մծղնեությունը*: Ժողովում ընդունվել են նաև 37 կանոններ, որոնք «Կանոնագիրք Հայոց»-ում հայտնի են «Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» անունով: Կանոնները ոչ մի հիշատակություն չեն պարունակում դավան., ծիս. կարևոր որոշումների մասին, այլ վերաբերում են միայն եկեղեցու և եկեղեցականների կարգ ու կանոնին: Կանոնները չեն սահմանում մարմնական պատիժներ և դրամական տույժեր, այլ՝ միայն նզովքի, լուծման և ապաշխարության եկեղեց. պատիժ-

ներ: Ա և Բ կանոնները ծխական քահանաներին արգելել են հավատացյալների բերած Պատարագի հացը, գինին և զանազան ընծայաբերությունները տուն տանել, փոխանակ եկեղեցի ուղարկելու: Գ կանոնը քահանաներին արգելել է իրենց հասույթները վաշխով գործածելը կամ իրենց կենցաղ. պետքերից զատ զվարճությունների վրա ծախսելը: Ժէ կանոնով սարկավագներին արգելվել է կատարել մկրտության ծեսը, ԺԶ կանոնով՝ կանանց՝ մկրտության ժամանակ քահանայի մոտ կանգնելը և սպասավորություն անելը: ԺԹ կանոնը զգուշացնում էր, որ քահանան խոստովանության գաղտնիքն ուրիշին հաղորդելու դեպքում կարգալույծ կլինի նզովքով և կզրկվի քահանայական ժառանգությունից: ԻԴ կանոնն արգելել է անչափահասների (առանց տարիքը նշելու) ամուսնությունը, իսկ չափահասները պետք է ամուսնանային միայն միմյանց տեսնելու և հավանելու դեպքում: ԼԶ կանոնն արգելել է աղանդավորներին օթևան տալը:

Դվինի Գ ժողով (609/610), գումարվել է Հայոց կաթողիկոս *Աբրահամ Ա Աղբաթանեցու* և իշխան Սմբատ Բագրատունու օրոք, հոգևորական և աշխարհական անձանց մասնակցությամբ: Աբրահամ Ա Աղբաթանեցու օրոք *Վրաց եկեղեցին* բաժանվել է Հայ եկեղեցուց: Բաժանումն առիթ է տվել բազմաթիվ գրագրությունների՝ Հայոց կաթողիկոսների և Վրաց Կյուրիոն կաթողիկոսի ու եպիսկոպոսների միջև: Վրաց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը ճշտելու նպատակով էլ գումարվել է Դվինի Գ ժողովը: Քննվել է Վրաց կաթողիկոսի քաղկեդոն. լինելու խնդիրը, և ընդհանուր վճռով բոլոր վրացիները համարվել են քաղկեդոնականներ՝ իրենց Կյուրիոն կաթողիկոսին հետևողներ և դավանակից հայերից բաժանվածներ: Աբրահամ Ա Աղբաթանեցին ժողովի որոշումից հետո մի «Շրջագայական թուղթ» է գրել՝ ուղղված ժողովրդին, որով հայտնել է գործի եղելությունը, նզովել Կյուրիոն կաթողիկոսին, նրա համախոհներին, պատվիրել խզել բոլոր հարաբերությունները վրացիների հետ, նրանց եկեղեցին չգնալ: Դվինի Գ ժողովը եկեղեց. կանոններ չի սահմանել, միայն զրկել է վրացիներին Հայոց հաղորդությունից: Ժողովը որոշում է ընդունել Հայոց, Աղվանից, Սյունյաց աթոռների աստիճանների մասին և սահմանել ինը դասերի կարգը: Հայ եկեղեցու գահակալը հռչակվել է պատրիարք, Աղվանից եկեղեցունը՝ արքեպիսկոպոս, Սյունյացը՝ մետրոպոլիտ:

Դվինի Դ ժողով (645), գումարվել է *Ներսես Գ Տայեցու* օրոք, մասնակցել են 17 եպիսկոպոս, նախարարներ, ազատներ: Ընդունվել է 12 կանոն՝ «Կանոնագիրք Հայոց»-ում հայտնի «Կանոնք Դունա սուրբ ժողովոյն» անունով: Մի շարք կանոններ, Շահապիվանի ժողովի ընդունած կանոնախմբի նման, որոշ հանցանքների համար նախատեսել են ծեծ և տուգանքներ: Դ կանոնը վանքերի առաջնորդներին և եպիսկոպոսներին իրավունք է տվել հանցագործներից, պոռնիկներից տուգանք գանձել՝ հօգուտ հիվանդանոցների, դպրոցների, աղքատանոցների, սակայն խստիվ արգելել է բռնությամբ տուգանք վերցնելը: Ե կանոնն արգելել է քահանաների միջև ծխաբաժանությունը. նրանք պետք է բավարարվեին իրենց բաժին հողով և կալվածքով: Շատ կալվածքներ ունեցող հարուստ եկեղեցին իր արդյունքից ոչ մի մաս չպետք է հանձներ դրացի աղքատ եկեղեցուն: Է կանոնը մարմնական պատիժ է սահմանել այն կնոջ համար, որն իր ամուսնու գերության մեջ գտնվելու 7 տարին չլրացած ամուսնացել է ուրիշի հետ: Կանոնը նախատեսել է ծեծ, օտարում ինչքից, որը բաշխվելու էր աղքատներին: Ը կանոնով քահանայական կարգը և քահանայի իրավունքները կալվածքների նկատմամբ հռչակվել են ժառանգական: Պատմ. որոշակի հանգամանքներում ընդունված այս կանոնը հետագայում հանվել է հայ եկեղեց. իրավունքից՝ հակաեկեղեց., հակաավետարանական լինելու փաստարկով: Վերջին 4 կանոնները իշխանների և ազատների համար են: Դրանք աշխարհականներին արգելել են եկեղեցիների և եկեղեցականների իրավունքներն ու հասույթները հափշտակել, նրանց վրա հարկ ու տուրք դնել, վանքերում բնակություն հաստատել, վանականներին իրենց կամքով փոխել, ուղևորությունների ժամանակ վանքերում իջևանել. նաև պատվիրել է իշխաններին՝ բաժին հանել անկելանոցներին և աղքատանոցներին:

Դվինի Ե ժողով (648), գումարվել է Հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցու և Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու օրոք ու նախաձեռնությամբ: Ըստ Սեբեոսի, ժողովին մասնակցել են Հայոց բոլոր եպիսկոպոսներն ու նախարարները (նրանց անուններն ու թի-

վը չի նշվում): 640-ական թթ., Հայաստանի վրա արաբ. արշավանքների ժամանակ, Բյուզանդիան ձգտել է իր կողմը գրավել հայերին, «դավանական միության» առաջարկով պարտադրել քաղկեդոնականություն: Բյուզ. Կոստանդիանոս III կայսրը և Կ. Պոլսի պատրիարքը նամակ են ուղարկել Հայոց կաթողիկոսին և Թեոդորոս Ռշտունի իշխանին՝ հորդորելով ընդունել քաղկեդոն. դավանանքը և վերջ տալ թշնամանքին: Կաթողիկոսը և իշխանը Դվինի Ե ժողովը հրավիրել են նախ պատրաստելու կայսրին և պատրիարքին ուղարկվելիք պատասխանը, երկրորդ՝ կազմելու դավան. ձեռնարկ փաստական պատճառաբանությամբ, և երրորդ՝ իբրև ուղեցույց հավատի ձեռնարկ սահմանելու հայերի համար, որպեսզի պարզ լինի հայոց դավանությունը և նրա տարբերությունը հունականից: Սեբեոսի «Պատմությունից» չի երևում, որ ժողովում կազմած թուղթը ուղարկել են կայսրին: Սակայն ընդարձակորեն բերված է դավան. ձեռնարկը: Նրա ընդհանուր բովանդակությունը հայոց դավանության ամփոփումն է, որտեղ մասնավորապես շեշտվել է Քաղկեդոնի և Հայ եկեղեցու վարդապետությունների տարբերությունը: Հեղինակները հիմնավորել են Հայ եկեղեցու դավանության ուղղափառությունը՝ համաձայն 3 տիեզերաժողովների որոշումների: Վերջում նզովել են բոլոր հերձվածողներին և քաղկեդոնականներին: Ժողովը նզովել է նաև *Հովհան Մայրավանեցու* աշակերտ Սարգսի հերձվածը (հայտնի է Մայրագոմեցիների աղանդ անունով), բացատրել «Սուրբ Աստված» երգը «խաչեցարով» ասելու դավան. սկզբունքը: Թղթում խոսվում է նաև երկրորդ անգամ ամուսնացողներին եռամյա ապաշխարությունից հետո հաղորդություն ընդունելու, իսկ երրորդ և չորրորդ անգամ ամուսնացողներին՝ եկեղեցու հաղորդությունից զրկելու կանոնների մասին: Ժողովի որոշումները ստորագրել են հոգևորական և աշխարհական բոլոր ժողովականները, կնքել իրենց մատանիներով և հանձնել կաթողիկոսին՝ ի պահպանություն:

Դվինի Զ ժողով (719/720), գումարվել է Հայոց կաթողիկոս Հովհաննես Գ Օձնեցու (717–728) օրոք և նախաձեռնությամբ: Ժողովը հետապնդել է երկու նպատակ: Նախ ընդունել և վերջնական տեսքի է բերել Հովհաննես Գ Օձնեցու՝ կանոնական ցաքուցրիվ նյութերից ընտրությամբ հավաքած և կազմած ժողոված-ածուն, որը հայտնի է «Կանոնագիրք» անունով: Երկրորդ, Դվինում նոր ժողով հրավիրելը արձագանքն էր ժամանակի քրիստոնյա Արլ-ում սրված դավան. վեճերի, ինչպես նաև պայմանավորված էր քաղկեդոնականների, նեստորականների, նաև՝ Հայ եկեղեցու ներսում հանդես եկած աղանդների (*պավլիկյաններ*, մծղնեականներ) դեմ պայքարի անհրաժեշտությամբ: Դվինի Զ ժողովն ընդունել է նաև 32 հոդվածից կազմված մի կանոնախումբ, որը հայտնի է «Կանոնք տեառն Յովհաննիսի Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի» անունով: Այդ կանոններով որոշվել է Հայ եկեղեցու ժամերգության կարգը (նշելով առավոտյան, երեկոյան, գիշերային պաշտամունքները, կիրակնօրյա ժամերգությունները), ի մի են ժողովվել Գրիգոր Ա Լուսավորչի, Սահակ Ա Պարթևի, Հովհաննես Ա Մանդակունու բոլոր կանոնները և կարգերը (կանոն ԻԱ–ԻԵ): Ի կանոնով որոշվել են «Սուրբ Աստված» երգի «խաչեցարի» հավելման, ԻԶ և Լ կանոններով՝ Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոնը հունվ. 6-ին կատարելու, Ը կանոնով՝ անապակ գինու և անխմոր հացի գործածության վերջնական խնդիրները: ԼԲ կանոնով խստիվ արգելվել է օթևան տալ կամ հաղորդակցվել պավլիկյան աղանդավորների հետ:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Կնիք հաւատոյ..., Նախաբան, հրտ. Կ. Տեր-Մկրտչյան, Էջմիածին, 1914: Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979, էջ 119–131: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, 2, Ե., 1964, 1971: Մելիք-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, Շուշի, 1903: Ակինյան Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց, ՀԱ, 1904, № 5–6: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.1, ԿՊ, 1912, էջ 481–482, 488–490, 502–511, 546–555, 642–643, 712–727, 828–834: Տեր-Մինասյան Ե., Պատմաբանասիրական հետազոտություններ, Ե., 1971: Ղազարյան Ա., Հայ եկեղեցու դավանաբանական դիրքորոշման հարցը Դվինի 506 թ. ժողովում, «Պայքար», 1996, № 1–2:

Արտաշես Ղազարյան

ԴՎԻՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ, Հայոց կաթողիկոսության աթոռանիստը 484–931-ին: Կաթողիկոսարանի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ: Հայաստանի նկատմամբ պարսիկների ու բյուզանդացիների դավանափոխական նկրտումները ձախողելու նպատակով, հայ նախարարների նախաձեռնությամբ, *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսի օրոք հայրապետ. աթոռը Վաղարշապատից տեղա-

փոխվել է Դվին: IV դ. 30-ական թվականներից Դվինը եղել է Հայաստանի մայրաքաղաքը, Արշակունիների անկումից (428) հետո՝ մարզպանական Հայաստանի քաղ., տնտ., կրթամշակութային խոշոր կենտրոն, ունեցել է եպիսկոպոսական առանձին վիճակ: *Գրիգոր Ա Լուսավորիչը*, վերադառնալով Կեսարիայից (302), «Դվնադաշտի» եպիսկոպոս է կարգել Դիմառիոս Ալեքսանդրացուն (Հովհան Մամիկոնյան): Այդ ժամանակ էլ հեթանոս. մեհյանի տեղում կառուցվել է Դվինի եռանավ քրիստ. տաճարը:

Դ. կ. մեծ դեր է խաղացել երկրի ազդ-ազատագր. շարժման, քաղ. ուժերի միավորման, պետականության ամրապնդման, մշակութ. կյանքի բարգավաճման, Հայ առաքելական եկեղեցու հիմքերի ամրապնդման, աղանդավոր. շարժումների դեմ մղվող պայքարի գործում: Դ. կ-ում գումարված ժողովներում քննարկվել ու կանոնակարգվել են դավան., եկեղեց. ու ազգային հարցեր (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*): Կաթողիկոսարանը տեղափոխելուց հետո կառուցվել է կաթողիկոսի պալատը, վերակառուցվել եռանավ տաճարը, որը, Գրիգոր Ա Լուսավորչի նշխարներն իր մեջ ամփոփելով, ստացել է Ս. Գրիգոր Կաթողիկե անվանումը (տես *Դվինի Ս. Գրիգոր եկեղեցի*):

478–490-ին՝ կաթողիկոս Հովհաննես Ա Մանդակունու օրոք, երկրի տանուտեր ընտրված Վահան Մամիկոնյանի աջակցությամբ նորոգվել և կառուցվել են եկեղեցիներ Դվինում, Վաղարշապատում, Մզուրում, Տեկորում և այլուր:

VI դ. 60-ական թթ. պարսիկներն ուժեղացրել են կրոն. հալածանքները: Քրիստոնեության հանդեպ անհանդուրժողականությամբ հայտնի, ազգությամբ պարսիկ մարզպան Սուրենը (564–571) Դվինում և մի շարք գավառներում հիմնել է կրակապաշտ. մեհյաններ, փակել Դ. կ.՝ դանակոծելով *Հովհաննես Բ Գաբեղենցի* կաթողիկոսին: Կաթողիկոս. պալատը խլվել է կաթողիկոսից, իսկ Կաթողիկեն վերածվել մթերանոցի: Այս պայմաններում բռնկված ապստամբության ընթացքում [571–572-ին Վարդան (Կարմիր) Մամիկոնյանի գլխավորությամբ] պարսիկներն այրել են Կաթողիկե Ս. Գրիգոր եկեղեցին: Հայոց կաթողիկոսներ *Մովսես Բ Եղիվարդեցին* և տեղապահ *Վրթանես Քերթողը* մնացել են ավերված քաղաքում և չեն լքել Դ. կ.: Այս շրջանում ուժեղ պայքար է սկսվել *քաղկեդոնականության* դեմ: Հատկապես աննպաստ էր բյուզ. Մավրիկիոս (Մորիկ) կայսրի (582–602) վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: 591-ի պարսկա-բյուզ. պայմանագրով Հայաստանը բաժանվել է երկու մասի: Մավրիկիոսի ջանքերով բյուզ. կողմում՝ Ավանում, հաստատվել է հայկ. քաղկեդոն. հակաթոռ կաթողիկոսություն, որը տիրացել է ապստամբության ժամանակ Կարին տարված Դ. կ-ի զգեստներին և սպասքին (տես *Ավանի կաթողիկոսություն*):

Աբրահամ Ա Աղբաթանեցի և *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսների օրոք վերականգնվել է Դվինի Կաթողիկեն, կառուցվել Հայրապետանոցի նոր շենքը: Այդ շրջանում ավելի է սրվել դավան. պայքարը քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև, և *Վրաց եկեղեցին*, ընդունելով քաղկեդոնականություն, բաժանվել է Հայ եկեղեցուց: Դ. կ-ի հեղինակության բարձրացման, եկեղեց., շին., պետ., քաղ. հարցերում մեծ դեր է խաղացել *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսը: Նրա շին. գործերից առաջինը Դվինում կառուցված Ս. Սարգիս վկայարանն է, որտեղ ամփոփվել են 640-ի աշնանը Դվինն արաբների գրավելու ժամանակ զոհվածների ոսկորները: Շնորհիվ Դ. կ-ի ճկուն գործունեության, արաբ. տիրապետության սկզբնական շրջանում նկատվել է որոշակի բարեհաճ վերաբերմունք հոգևոր դասի նկատմամբ, թեև 702-ին, ոստիկան Աբդալահի ժամանակ, *Սահակ Գ Զորոփորեցի* կաթողիկոսին շղթայակապ ուղարկել են Դամասկոս: Արաբները բնավ չեն խառնվել եկեղեց. ներքին ինքնավարության խնդիրներին:

Դ. կ-ի գոյության ընթացքում Հայ եկեղեցու ամենանշանավոր հայրերից էր *Հովհաննես Գ Օձնեցին*: Նրա օրոք Դ. կ. անհաշտ պայքար է մղել *պավլիկյանների*, պատկերամարտների, երևութականների և այլ աղանդավոր. շարժումների դեմ:

VIII դ. կեսից կտրուկ փոխվել է արաբների վերաբերմունքը հայ հոգևոր և քաղ. ներքին ինքնավարության նկատմամբ: Զգիմանալով արաբների ոտնձգություններին՝ *Դավիթ Ա Արամոնեցի* կաթողիկոսը Դ. կ-ից հեռացել է Արամոնք գյուղը:

Արաբների դեմ ապստամբություններին մասնակցելու և խրախուսելու համար սկսվել է հոգևորականների հալածանք. ավերվել, քանդվել են եկեղեցիները, հափշտակվել է եկեղեց.

սպասքը: *Եսայի Ա Եղիպատրուշեցի* կաթողիկոսի մահից հետո թաղանվել են Դ. կ-ի դանձերը: *Հովսեփ Բ Փարպեցի* կաթողիկոսի օրոք երկրի ոստիկան Խուզայման ձեռք է բարձրացրել Դ. կ-ի կալվածքների վրա (Կավակերտ, Հոռոմոց Մարդ, Արտաշատ) և ի վերջո յուրացրել Արտաշատն իր դաստակերտներով: Արաբների տիրապետության դեմ հայերի տևական պայքարը, որն ավելի ուժեղացել էր IX դ. սկզբին, ավարտվել է Հայոց թագավորության վերականգնումով: Այս շրջանում Դ. կ. մեծ դեր է խաղացել հայոց պետականության հաստատման, հոգևոր և քաղ. ուժերի համախմբման գործում: Ի վերջո *Գևորգ Բ Գառնեցի* կաթողիկոսը փաստորեն երկրի տիրակալ Աշոտ Բագրատունուն Հայոց թագավոր է օծել (885): IX դ. 50-ական թթ. տիրել է շուրջ 40-ամյա խաղաղություն:

Դ. կ. ծանր կացության մեջ է ընկել 894-ի երկրաշարժից հետո, երբ ավերվել են նաև եկեղեց. բոլոր կառույցները: Գևորգ Բ Գառնեցին տեղափոխվել է *Զվարթնոց*: Հայոց կաթողիկոսությանը մեծ հարված է հասցրել Բագրատունիների և Ատրպատականի ամիրաների պայքարը Դվինի համար, որն ավարտվել է Սմբատ Ա թագավորի (890–914) սպանությամբ: *Հովհաննես Ե Դրասխանակերտցի* կաթողիկոսի՝ Դ. կ-ի վերականգնման ջանքերն անհաջողության են մատնվել: Դվինը արաբ զորապետ Նըսրի գրավելուց հետո՝ նա թողել է Դ. կ. և Վասպուրականի հայ թագավոր Գագիկ Արծրունու (908–943) հրավերով 927-ին մեկնել Աղթամար: Քիչ անց այդտեղ է հաստատվել նաև Հայոց կաթողիկոսությունը:

Ավարտվել է Դ. կ-ի շուրջ չորսուկեսդարյա բեղուն գործունեությունը: Կաթողիկոսարանի վերացումից հետո ստեղծվել է եպիսկոպոս. վիճակ, որը գոյատևել է մինչև XIII դ. 30–40-ական թթ., երբ մոնղոլները գրավել և վերջնականապես ավերել են քաղաքը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.7, 3-րդ պատկերը:

Գրկ. Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Ե., 1941: Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Թովմա Արծրունի եվ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1985: Տեր-Մկրտչյան Կ., Հայոց եկեղեցվո պատմություն, հ. 1, Վաղ-պատ, 1908: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, [հ. 1], Ե., 1952:

Արամ Քալանթարյան

ԴՎԻՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ, Դվինի Կաթողիկե, միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի կենտրոնական թաղամասում: *Դվինի կաթողիկոսարանի* Մայր եկեղեցին: Հիմնադրվել է IV դ. 2-րդ կեսին – V դ. սկզբին: Նախն. տեսքով եղել է եռանավ բազիլիկ՝ ամենամեծը հայկ. նմանատիպ կառույցների շարքում (52,4 *մ* ընդհանուր երկարությամբ): 480-ական թթ. հավելվել են եկեղեցու արտաքին այունասրահը և ավանդատներ՝ Ա-վագ խորանի երկու կողմերում: Աղոթասրահը բաժանվել է 3 նավի՝ 7 զույգ խաչաձև մույթերով: 572-ի ապստամբության ժամանակ պարսիկները եկեղեցին ավերել են: 608–619-ին Հայաստանի մարզպան Սմբատ Բագրատունին հիմնովին վերակառուցել է տուֆ քարով, և եկեղեցին ստացել է եռախորան, խաչաձև գմբեթավոր հորինվածք: Կրճատվել է եկեղեցու երկարությունը, նոր Ավագ խորանի երկու կողմերում կառուցվել են ավանդատներ, վերացել է արտաքին այունասրահը, հս-ից և հվ-ից հավելվել են խորաններ, աղոթասրահի կենտրոնի չորս հաստահեղույս մույթերի վրա խոշոր գմբեթ է դրվել: Քանդվել է 894-ի երկրաշարժից և այլևս չի վերականգնվել: 1907–1908-ին Խաչիկ վրդ. Դաղյանը պեղել է եկեղեցու արտաքին պատերը, որի հիման վրա Թ. Թորամանյանը կազմել է կառույցի նախն. հատակագիծը: Դ. Ս. Գ. ե. վերակառուցումից հետո դարձել է հայկ. ճարտարապետության ստեղծած եռախորան գմբեթավոր բազիլիկի անդրանիկ օրինակը, որի հորինվածքը վերամարմնավորվել է *Թալինի Կաթողիկե եկեղեցում*:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.7, 4-րդ պատկերը:

Գրկ. Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Ե., 1942: Հարությունյան Վ., Դվինի V–VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Ե. 1950: Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, [հ. 1], Ե., 1952: Քալանթարյան Ա., Ղաֆադարյան Կ., Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր, ՊԲՀ, 1990, № 1:

Մուրադ Հասրաթյան

ԴՐԱԶԱՐԿԻ ՎԱՆՔ, Դրազարկի անապատ, Թրազարկ, Փոսիվանք, Ավագ վանք, Կիլիկիայի հյուսիս-արևելյան կողմում, Սիս քաղաքից մոտ 36 *կմ* արևմուտք, Կիլիկյան Տավրոս լեռների լանջին, անառիկ վայրում: Անվանումն առաջացել է «դուռ և

զարկ» կամ «թուր և զարկել» բառերից: Հիմնադրման թվականն անհայտ է: Հավանաբար գոյություն է ունեցել X դարից: XII դ. սկզբին վանքը նորոգել է Թորոս Ա իշխանը (1100–1129), վերածել Կիլիկիայի Ռուբինյան հարստության արքունի դամբարանի և ուսումնագիտ. կենտրոնի: Եղել է նաև Սսի եպիսկոպոսանիստը: Դ. վ-ի նկարագրությունը մեզ չի հասել: Հիշատակարաններում քանիցս կրկնված «մեծ, հրեշտակաբնակ, ականավոր, դեռահռչակ» և համանման որակումները վկայում են, որ հոյաշեն համալիր է եղել: Դ. վ-ի ավագ եկեղեցին կոչվել է Ս. Աստվածածին, որի ավերակները պահպանվել են ցայսօր: Նրան կցված եկեղեցիներից կամ մատուռներից են եղել Ս. Նշանը կամ Ս. Փրկիչը, Ս. Գրիգոր Լուսավորիչը և Ս. Թորոսը: Թորոս Ա իշխանի հրավերով եկած՝ վանքի հիմնադիր-առաջնորդ *Գևորգ Մեղրիկ* Վասպուրականցին և Կիրակոս Գիտնականը (1050–1121) ծավալել են բեղուն մատենագր. գործունեություն, միաբանության համար մշակել կանոնադրություն, ըստ որի, միաբանների զբաղմունքի մի մասը ընթերցանությունն ու ձեռագրերի ընդօրինակությունն էր: Նրանց օրոք սրբագրվել են Հուն-ից թարգմանված Գործք առաքելոցը, Հովհաննեսի Ավետարանի մեկնությունը, լրացվել Տոնականը կամ Ճաշոցը, թարգմանվել են նոր վարքեր ու վկայաբանություններ: Գևորգ Մեղրիկ վարդապետի վախճանվելուց հետո՝ 1114-ին, առաջնորդ է ընտրվել Կիրակոս Գիտնական վարդապետը: Տարիներ անց Դ. վ. ղեկավարել է «առաջնորդի մը յատուկ առաւելութիւններով օժտուած» Բարսեղ վարդապետը: Նրան հաջորդել է Սամուելը (1178–1181): Լևոն Բ-ի (1198–1219) թագադրության արարողությանը ներկա է եղել նաև Դ. վ-ի առաջնորդ և Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսը: Նշանավոր առաջնորդներից էին Հայտնի փիլիսոփա-երաժիշտ, բաբունապետ Բարսեղը (Հեթում Ա թագավորի եղբայրը), Կոստանդինը (Հետագայում՝ կաթողիկոս *Կոստանդին Դ Լամբրոնացի*): Նրա առաջնորդության շրջանում՝ 1305-ին, Դ. վ. թշնամիների թիրախ է դարձել: Դ. վ-ում են գործել Բարսեղ Գիտնավորը, կազմարար Առաքել Հնազանդենցը, *Վարդան Այգեկցին* և ուր.: Դ. վ-ի դպրոցում են սովորել միջնադարյան գրավոր մշակույթի ականավոր գործիչ Հեթում Ա-ի կրտսեր եղբայրը՝ Հովհաննես Արքաեղբայրը (1220-ական թթ. – 1289), *Սարգիս Պիծակը* և ուր.: Դ. վ-ից մեզ հայտնի է շուրջ չորս տասնյակ ձեռագիր մատյան՝ գրված մեծ մասամբ մագաղաթի վրա, բոլորգրով՝ նկարազարդված վարպետ մանրանկարիչների ձեռքով՝ ոսկով ու բազմերանգ գույներով: Ձեռագրեր են ընդօրինակվել Կիլիկիայի թագավորների պատվերներով: Հնագույն ձեռագիրը 1113-ից է, վերջինը՝ 1371-ից: 1113-ի ձեռագիրը Ավետարան է՝ գրված Կիրակոս Գիտնականի համար, Գևորգ գրչի ձեռքով: Արտագրված է Սահակ Ա Պարթևի «ընտիր և ստույգ օրինակից» (Մատենադարան, ձեռ. № 6763): Մատենադարանում են պահվում նաև Դ. վ-ում օրինակված մի շարք ձեռագրեր (ձեռ. №№, 154, 199, 1576, 3792, 3845, 3929, 5736, 6290, 10524): Դրանք Ավետարաններ են, մեկնություններ, Շարակնոցներ, *Մանրուսում* ժողովածուներ ևն, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը, որը հնագույններից է:

Դ. վ. հայտնի է եղել նաև երաժշտագիտ. կրթության բարձր մակարդակով: Այդ կենտրոնի հռչակավոր ղեկավարներից են Թորոս փիլիսոփան (երաժիշտը կամ դասապետը) և Հովսեփ երաժշտապետը: Դ. վ. հռչակված էր Մանրուսում և Շարակնոց երաժշտական ժողովածուների ընտիր օրինակներով: Ունեցել է նաև լեզուների բարձրորակ դասավանդման համբավ, եղել սաների ընդհանուր զարգացման ջատագով: Վանքը դիվանագետներ է պատրաստել Կիլիկիայի Հայկ. թագավորության համար: Թորոս փիլիսոփան ոչ միայն դպրության ականավոր ներկայացուցիչ էր, այլև պետ. գործիչ. Լևոն Գ (1269–89) և Հեթում Բ (1289–1307) թագավորների օրոք երկար ժամանակ եղել է Կիլիկիայի Հայկ. թագավորության դեսպանը Անգլիայում: Դ. վ-ի գերեզմանատանն են ամփոփված Թորոս Ա, Թորոս Բ, Թորոս Գ, Ռուբեն Բ իշխանները, Հեթում Ա թագավորը, Զապել թագուհին, Գրիգոր Դ Տղա, Գրիգոր Ե Քարավեժ, Կոստանդին Ա Բարձրբերդցի, Կոստանդին Դ Լամբրոնացի կաթողիկոսները, Սարգիս Պիծակը, Գևորգ Մեղրիկը և նշանավոր այլ աշխարհականներ ու հոգևորականներ: Վանքի համալիրը կիսակործան վիճակում պահպանվել է մինչև XX դ. 30-ական թվականները:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.7, 5-րդ պատկերը:

Գրկ. Ոսկյան Հ., Կիլիկիայի վանքերը, Վնն., 1957: Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1947:

ԴՐԱԽՏ, երանական վայր, աստվածատունկ պարտեզ: Հակոտնյան է *դժոխքի*: Ըստ Աստվածաշնչի՝ «Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր. և կենաց ծառը՝ դրախտի մեջտեղում, և բարու ու չարի գիտության ծառը» (Ծննդ. **2**.8–9): Ադամի և Եվայի համար, համաձայն եկեղեցու մեկնաբանական ընթերցման, Դ. նաև հոգևոր վայելչության ոլորտ էր, որտեղ նրանք աստվածային շնորհով հաղորդակցվում էին *Աստծո* և *հրեշտակների* հետ: Նրանց հոգևոր աչքերը բաց էին՝ տեսնելու արարածների էությունը (պատվիրանազանցությունից՝ բարու և չարի *գիտության ծառից* ճաշակելուց հետո մարդը վտարվում է դրախտից, և նրա հոգևոր տեսողությունը հետզհետե փակվում է): Դ-ի ծառերի մշակությունը սրբարար աշխատանք էր, որի շնորհիվ նրանք հաղորդ էին դառնում Աստծո խորհուրդներին և օժտվում *առաքինություններով*:

Դ. եբրայերեն «կան» (պարտեզ) բառի համարժեքն է: Նույն՝ «պարտեզ» իմաստով գործածվել է Երգ երգոցում. «Քո տնկիները նռենիների դրախտ են՝ մրգատու ծառերի պտուղներով, նոճով ու նարդոսով» (**4**.13):

Աստվածաշնչի Յոթանասնից հուն. թարգմանության մեջ Դ. բառն է գործածվում՝ եդեմական պարտեզի նկատմամբ (տես *Եդեմ*): Նոր կտակարանը Դ. կոչում է Աբրահամի գոգ, հոգիների հանգստյան վայր («... հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած», Ղուկ. **16**.23–24), զղջացող-ապաշխարող և փրկյալ հոգիների օթևան («Եվ Հիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես»», Ղուկ. **23**.43), անպատմելի, երկնային, սուրբ ոլորտ («Եվ գիտեմ այդպիսի մարդու..., որ հափշտակվեց մինչև դրախտ և լսեց անպատում խոսքեր, որ մարդս արտոնված չէ խոսել», Բ Կորնթ. **12**.3–4), *կենաց ծառի* պարտեզ («Ով ականջ ունի լսելու, թող լսի, ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. ով հաղթի, ես նրան թույլ կտամ ուտելու կյանքի ծառից, որ գտնվում է Աստծու դրախտի մեջ», Հայտն. **2**.7):

Հիմնվելով Ս. Գրքի վրա՝ քրիստ. եկեղեցին հավատում է, որ *Հիսուս Քրիստոսի* գալուստով *երկնային արքայությունը*՝ Դ., հաստատվելու է նաև երկրի վրա, որովհետև ինքը՝ Հիսուսն է հավիտենական կենաց ծառը: Հավիտենական դրախտային կյանքը հասանելի է այն ընտրյալներին, ովքեր վերստանում են այդ կյանքը երկրորդ Ադամի՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ:

Լևոն Սարգսյան

ԴՐՈՇՄ, Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից: Նշանակում է մկրտվածի օծում կամ կնիք, այստեղից էլ՝ *Մկրտությունը* և Դ. միասին կոչվում են նաև կնունք: Դ. Մկրտության խորհրդի անբաժան մասն է: Դ-ի արարողությունը Հայ եկեղեցին կատարում է Մկրտության հետ միասին: Դ. հույսի, *Սուրբ Հոգին* ընդունելու խորհուրդն է, յուրաքանչյուր քրիստոնյայի համար հոգեգալուստ, որով Սուրբ Հոգու *շնորհը*, պարգևները բաշխվում են հավատացյալ անհատին: Եթե մարդը Մկրտությամբ Սուրբ Հոգին ընդունում է մաքրվելու, Աստծուն որդեգրվելու և սկզբ. մեղքը քավելու համար, ապա Դ-ի խորհրդով Սուրբ Հոգին և նրա շնորհները տրվում են քրիստ. կյանքի մեջ զորանալու, կյանքի բոլոր փորձություններին ընդդիմանալու համար:

Հիսուս Քրիստոսի մկրտվելուց հետո Սուրբ Հոգին աղավնակերպ իջել է նրա վրա, որով Հիսուսը ստացել է Սուրբ Հոգու օծումն ու կնիքը (Մատթ. **3**.16–17, Ղուկ. **3**.21–22, Հովհ. **1**.30–34): Առաքյալները Մկրտությունից անմիջապես հետո մկրտվածի վրա ձեռք են դրել և աղոթել, որպեսզի Սուրբ Հոգին ստանան, Սուրբ Հոգով կնքվեն ու դրոշմվեն (Գործք **8**.14–17, **19**.5–7, Եբր. **6**.2–4): Սուրբգրային այս վկայություններն ու արարողությունները նկատի ունենալով՝ եկեղեցին հետագայում հաստատել է Դ-ի խորհուրդը և միացրել Մկրտության հետ, որպես նրա շարունակություն ու ավարտ: Առաքյալների ժամանակ Սուրբ Հոգով դրոշմումը կոչվում էր *օծում*, օծություն (Ա Հովհ. **2**.27, Բ Կորնթ. **1**.21–22), օգտագործվում էր նաև կնքել բառը (Եփես. **1**.13, **4**.30):

Հայ եկեղեցին, ինչպես նաև Արևելքի մյուս եկեղեցիները, Դ-ի խորհուրդը կատարում է Մկրտությունից անմիջապես հետո, ըստ Ընդհանրական եկեղեցու հնավանդ սովորության՝ համաձայն առաքյալների և սուրբ հայրերի օրենքների: Կաթոլիկ եկեղեցին XIII դ. վերջից այս ընդհանուր սովորությունը փոփոխության է ենթարկել և Դ. բաժանել Մկրտությունից՝ կատարելով այն շատ ավելի ուշ: Անգլիկան ե-

կեղեցին Դ. կատարում է միայն ձեռք դնելով: Բողոքական եկեղեցիները չունեն այս խորհուրդը:

Դ-ի խորհրդի զգալի նշանը ս. *Մյուռոնն* է, որը խորհրդանշում է Սուրբ Հոգին: Խորհրդի կատարման առաջին մասը զգայարանների և մարմնի մասերի օծումն է ս. Մյուռոնով, որով էլ նրանցից յուրաքանչյուրին տրվում է մասնավոր շնորհ: Ճակատի կնիքը անապական պարգևների համար է, աչքերինը՝ լուսավորության համար, որ երբեք մահ չտեսնեն, ականջներինը՝ Աստծո *պատվիրանները* լսելու, հոտոտելիքինը՝ կյանքի անուշության բույրը զգալու համար, բերանինը՝ որ այն ամուր մնա շրթունքների պահպանության ներքո, ձեռքերինը՝ առաքինի և բարի գործեր կատարելու համար, սրտինը՝ որ սիրտը սրբության մեջ հաստատվի, և ճշմարիտ Հոգին իր մեջ նորոգվի, մեջքինը՝ որ լինի ամուր վահան չարի բոլոր թունավոր նետերին դիմադրելու համար, ոտքերինը՝ որ նրանք անսասան ընթանան հավիտենական կյանքի ճանապարհով: (Կաթոլիկ եկեղեցին միայն խաչաձև դրոշմում է ճակատը):

Երկրորդ մասը ընծայումն է ս. *Սեղանին*, նվիրումը Աստծուն՝ երեք անգամ երկրպագելով:

Երրորդ մասը, ի լրումն այս բոլորի, Քրիստոսի Սուրբ Մարմնի և Արյան ճաշակումն է (*Հաղորդություն*), նոր՝ աստվածային անվախճան կյանքի ընդունումը:

Քահանան օծում է «Կնիքս հանուն Հիսուս Քրիստոսի» բառերով, իսկ վերջում ասում. «Խաղաղություն քեզ, Աստծո փրկյալ, խաղաղություն քեզ Աստծո օծյալ» խոսքերը: «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով ավարտվում է արարողությունը:

Հայ եկեղեցում Դ-ի խորհուրդը կատարում է քահանան կամ եպիսկոպոսը, մինչդեռ Կաթոլիկ եկեղեցում այն վերապահված է միայն եպիսկոպոսին: Դ., ինչպես և Մկրտությունը, անկրկնելի է. Հայ եկեղեցին այն մատակարարում է միայն չմկրտվածներին:

Գրկ. Դ ե ր ե ն ի կ ե պ ի ս կ ո պ ո ս, Մկրտություն և Դրոշմ (Կնունք), Ե., 1988: Զ ե պ ե յ ա ն Ղ., Հայ եկեղեցւո յոթը խորհուրդները (Կանոնագիտական նկատառումներ), Անթիլիաս, 1988: Ս ա ր գ ս յ ա ն Ս., Հայոց եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 1, 1992:

Արտաշես Ղազարյան

ԴՈՒՐՅԱՆ Եղիշե Աբրահամի (ավազանի անունը՝ Միհրան, 23.2.1860, Կ. Պոլիս – 27.4.1930, Երուսաղեմ), Կ. Պոլսի (1909–10) և Երուսաղեմի (1921–30) հայոց պատրիարք, բանասեր: Բանաստեղծ Պ. Դուրյանի կրտսեր եղբայրը: Սովորել է Սկյուտարի ճեմարանում, որտեղ և դասավանդել է ավարտելուց (1876) հետո: 1878-ին ձեռնադրվել է սարկավագ, 1879-ին ստացել վարդապետ. դավազան: 1880–90-ին որպես քարոզիչ և ուսուցիչ պաշտոնավարել է Պարտիզակում, 1890–1904-ին՝ Արմաշի դպրեվանքի ուսուցիչ-տեսուչ, ապա՝ փոխվանահայր-վերատեսուչ: 1898-ին *Մկրտիչ Ա Վանեցին* Դ-ին ձեռնադրել է եպիսկոպոս: 1904–08-ին՝ Զմյուռնիայի հայոց առաջնորդ, 1908-ի հուլիսից մինչև 1909-ի մայիսը՝ Կ. Պոլսի պատրիարք. տեղապահ, 1911–21-ին՝ Կ. Պոլսի հայկ. դպրոցներում ուսուցիչ, Ազգային կենտր. վարչության ու Կրոն. ժողովի ատենապետ: 1911-ի կաթողիկոս. ընտրության ժամանակ մեկ ձայն պակաս է ստացել Գևորգ արք. Սուրենյանցից (*Գևորգ Ե Սուրենյանց*): Դ. բեղմնավոր գործունեություն է ծավալել Արմաշի դպրեվանքում և Երուսաղեմում: Եղել է Արմաշի դպրեվանքի այուներից, «Արմաշի հոգին», Մ. արք. *Օրմանյանի* համախոհն ու գործակիցը: Նրա սաները՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքներ Մ. արք. Նարոյանը, Գ. արք. Խաչատուրյանը, Ամերիկահայ թեմի առաջնորդ Ղ. արք. Դուրյանը, Բուլղարիայի թեմի առաջնորդ Ե. արք. Փերտահճյանը, Եվրոպայի նվիրակ Գ. եպս. Պալաքյանը, բանաստեղծ, Եդեսիայի առաջնորդ Ա. ծայրագույն վրդ. Գալենտերյանը, բանասեր, Խարբերդի առաջնորդ Պ. վրդ. Տեր-Խորենյանը և ուր., հետագայում մեծ ավանդ են ներդրել հայ եկեղեց., մշակութ., գրական կյանքում: Դ. ձեռնամուխ է եղել *Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի* բարեկարգմանը: Նրա պատրիարքության օրոք Երուսաղեմում բացվել են Կյուլպենկյան ու Մելքոնյան վարժարանները, որտեղ, ինչպես և ժառանգավորաց վարժարանում, դասավանդել է երկար տարիներ: Դ. պատրիարքի կարգադրությամբ 1928-ից վերսկսվել է երկար ժամանակ ընդհատված «*Սիոն*» ամսագրի հրատարակությունը, որին աշխատակցել է կրոն. և բանասիր. հոդվածներով: Նորոգել է տվել 1927-ի երկրաշարժից տուժած՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի, Ազգային նախակրթարանի և մանկապարտեզի շենքերը, Բեթղեհեմի, Ռամլեի, Հոպպեի վանքերը: Նրա առաջարկությամբ

և օժանդակությամբ կառուցվել է Ս. Հակոբյանց վանքի մատենադարանը (1929), որը հետագայում կոչվել է Դուրյան մատենադարան: Այդ անունով էլ հրատարակվել են գրքեր և մատենաշարեր: «Դուրյան մատենադարան» շարքի առաջին համարներում լույս են տեսել Դ-ի գործերը:

Դ. թողել է գիտ. և գրակ. հարուստ ժառանգություն: Հիշարժան են «Ընթացք ի գրոց բարբառ» գործը (մաս 1, 2, 3, 1880, 1883, 1929), «Ընտիր ասացուածք օտարազգի ականաւոր անձանց. կենսագրական համառօտ տեղեկութեամբք» ժողովածուն (1882), «Պատմութիւն հայ մատենագրութեան...» աշխատությունը (1885)՝ երկար ժամանակ Կ. Պոլսի և Երուսաղեմի հայկ. դպրոցների դասագիրքն է եղել, «Բառագիտութիւն կամ Ութ մասունք բանի հայերէն քերականութեան» երկասիրությունը (1886), որը բազմիցս վերահրատարակվել է, «Դասական մատենագրութիւն»-ը (1935), կրոն. բնույթի երկերից՝ «Դրվագներ մանուկ Յիսուսի կյանքէն» (1926), «Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանութիւնը» (1933), «Կրոններու պատմութիւն» (1935), «Բարոյագիտութիւն» (1936) ևն: Դ. գրել է նաև բանաստեղծություններ: Լույս են տեսել «Հովվական սրինգ» (1909), «Սրբազան քնար» (1936) ժողովածուները, եկեղեց. արարողությունները ժողովրդին հասկանալի դարձնելու համար գրաբարից աշխարհաբարի է վերածել մի շարք շարականներ:

Երկ. Ամբողջ. երկեր, հ. 1–9, Երուսաղեմ, 1933–1936:

Գրկ. Թորգոմ արքեպիսկոպոս (Գուշակյան), Եղիշե պատրիարք Դուրյան, Երուսաղեմ, 1932: Գոլանճյան Ե., Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան, «Էջմիածին», 1954, № 11:

Արտաշես Ղազարյան



Ե

ԵԳԻՊՏՈՍԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1825-ին: Առաջնորդանիստը՝ Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ընդգրկում է Եգիպտոսի համայնքը, Եթովպիայի և Սուդանի հոգևոր հովվությունները, Հարավային Աֆրիկայի ծուխը:

Դեռևս X դ. հայերը Եգիպտոսում ունեցել են եկեղեցի և ընդգրկված եղել եկեղեց. համայնքի մեջ: Այդ է վկայում Կահիրեի հայկ. եկեղեցում պահպանված խաչքարը (981): Հայոց կաթողիկոս *Գրիգոր Բ Վկայասերը* 1074–75-ին այցելել է Եգիպտոս և եգիպտահայերի առաջնորդ («պատվիրակ») կարգել Գրիգորիս իշխանին: 1085-ին եգիպտահայ գաղութն այնքան է մեծացել, որ բաժանվել է երկու ծխի. ընտրվել է ևս մեկ առաջնորդ: XI–XII դդ. Եգիպտոսում եղել են երեսունից ավելի գործող հայկ. եկեղեցիներ և մատուռներ: Կահիրեում XI դ. վերջին կառուցվել է Ս. Գևորգ, իսկ XII դ. կեսին Զուեյլայում՝ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Սոհակում՝ իր որմնանկարներով հայտնի Սպիտակ վանքը: Դուրա քաղաքում գործել են Ս. Գևորգ, Ս. Հովհաննես, Ս. Գրիգոր եկեղեցիները, Շինարում՝ 7 հայկ. եկեղեցի, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր եպիսկոպոսը: Եկեղեցիներ են եղել նաև Ալեքսանդրիայում, Իֆտիհում, Գալուսանիայում, Ասյութում: 1311-ից մինչև 1839-ը եգիպտահայ համայնքը գտնվել է *Երուսաղեմի հայոց պատրիարքության* ենթակայության ներքո: Ամրապնդվել են կապերը եգիպտահայ համայնքի և Սսի (Կիլիկիայի) հայոց կաթողիկոսության միջև: XIV դ. Կահիրեում կառուցվել են Ս. Մինաս, Ս. Մարտիրոս եկեղեցիները: Հետագա դարերում եգիպտահայ համայնքը, չնայած քաղ. իրադրության փոփոխություններին, իշխանությունների կողմից հալածանքների չի ենթարկվել: Պատմիչ Սիմեոն Լեհացու վկայությամբ, 1615-ին Կահիրեում գործել են Ս. Սարգիս եկեղեցին և Ս. Մինաս մատուռը, եղել են հայ վանականների մի քանի մենաստաններ, որտեղ գրվել և արտագրվել են մի շարք ձեռագրեր:

1825-ին կազմավորված եգիպտահայոց թեմի անդրանիկ առաջնորդ է նշանակվել Կիրակոս Երուսաղեմցի Մնացականյանը (1825–32): Թեմի առաջնորդն ավագների խորհրդից ընտրված երեք անձանց հետ ներկայացրել է համայնքի գերագույն իշխանությունը: Թեմի առաջնորդին նշանակել է (մինչև 1839-ը) Երուսաղեմի հայոց պատրիարքությունը, հաստատել՝ Թուրք. սուլթանը:

1839-ին Ե. Թ-ի առաջնորդ Գաբրիել եպս. Մարաշցին հռչակել է թեմի անկախությունը Երուսաղեմի հայոց պատրիարքությունից և ձեռնամուխ եղել շին. աշխատանքների: Նույն թվականին Կահիրեում կառուցվել է Ս. Աստվածածին, 1843-ին՝ Ս. Մինաս եկեղեցին և Կույս Մարիամ մատուռը: 1867-ին Ե. Թ. անցել է *Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության*, XIX դ. վերջից՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի ենթակայությանը:

Ըստ հայ համայնքի վավերացված կանոնադրության, եգիպտահայերը ութ տարին մեկ

ընտրում են 24 հոգուց բաղկացած թեմական ժողով, որը գաղութի բարձրագույն օրենսդիր մարմինն է: Թեմական ժողովի անդամներից (կոչվում են երեսփոխաններ) ընտրվում է 7 հոգուց կազմված գործադիր մարմին (2 տարով), որն ի կատար է ածում թեմական ժողովի որոշումները և հաշվետու է նրան: Ժողովը նախագահում է թեմի առաջնորդը: Կահիրեում գործում են Ս. Գրիգոր Լուսավորիչ (կառուցվել է 1824–25-ին), Ամենայն Սրբոց (1953) և Ս. Մինաս (1843) եկեղեցիները: Մինչև 1960-ական թթ. Կահիրեում կանգուն էր նաև Ս. Աստվածածին եկեղեցին: Ս. Մինաս եկեղեցու գերեզմանատանն են թաղված մեծանուն հայեր Երվանդ Օտյանը, Սիրանույշը, Վահան Թեքեյանը:

Ալեքսանդրիայում գործում են Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին (կառուցվել է 1884-ին) և Ս. Գևորգ մատուռը (1927): 1828-ին Կահիրեում հիմնադրվել է Եգիպտոսի առաջին հայկ. դպրոցը՝ Եղիազարյան դպրատունը (հիմնադիր բարերարի անունով), որը 1854-ից կոչվել է Խորենյան (Մովսես Խորենացու անունով) ազգ. վարժարան, 1897-ից՝ Գալուստյան ազգ. վարժարան: Գոյատևում է բարերար Կարապետ Գալուստի կուտակած միջոցներով, ուսումն անվճար է, ունի մանկապարտեզ, տարրական և բարձրագույն նախակրթարանի բաժիններ: Վարժարանը գտնվում է թեմի առաջնորդի և հոգաբարձուների հսկողության տակ: Թեմի առաջնորդարանը հովանավորում է նաև 1924-ին Կահիրեում բացված Նուբարյան ազգ. վարժարանը (կոչվել է ի պատիվ ազգ. բարերար Պողոս Նուբար փաշայի): Վարժարանին կից գործում է գրադարան, մատենադարան, թանգարան: 1840-ին Ալեքսանդրիայում բացվել է Պողոսյան ազգ. վարժարանը. սկզբ. շրջանում կոչվել է Արամյան, 1867-ին՝ Պողոս-Բեյյան (պետ. գործիչ Պողոս Յուսուֆյանի անունով), 1899-ին վերանվանվել է Պողոսյան վարժարան: 1888-ից վարժարանը տեղափոխվել է առաջնորդարանի շենք:

Ե. թ-ի առաջնորդն է Զավեն արք. Զինչինյանը (1977-ից):

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, կենտրոնը՝ Ադիս Աբեբայի Ս. Գևորգ եկեղեցի:

Ներկայիս Դեսիե քաղաքի մերձակայքում հայերը դեռևս VII դ. կառուցել են Ս. Ստեփանոս եկեղեցին (կանգուն էր մինչև 1527-ը): XVI դ. հայ հոգևորականները հիմնել են վանքեր (Դեբրա Մարիամ ևն), կատարել թարգմանություններ (հայերենից եթովպերեն են թարգմանվել ս. Գրիգոր Լուսավորչի վարքը, նրան վերագրվող մի շարք ճառեր): Հայերն իրենց գործունեությամբ կարևոր դեր են խաղացել երկրի հաս-քաղ. կյանքում: Հայտնի է Մատթեոս անունով հոգևորական դիվանագետը, որը 1513-ին հատուկ առաքելությամբ ուղարկվել է Պորտուգալիա:

1923-ին Ադիս Աբեբայում կառուցվել է մատուռ-աղոթատեղի, 1934-ից գործում է Ս. Գևորգ եկեղեցին: 1927-ին Դիրեդավ քաղաքում կառուցվել է Ս. Մինաս մատուռը:

Եթովպիայի հոգևոր հովիվն է Վարդգես աբեղա սարկավագ Նալբանդյանը (1980-ից):

ՍՈՒԴԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, կենտրոնը՝ Խարտումի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (կառուցվել է 1957-ին): Հոգևոր հովիվն էր Սարգիս քհն. Թաշճյանը: Ներկայումս Սուդանում հայեր գրեթե չեն բնակվում, ուստի հովվությունը փաստորեն դադարել է գործել:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ԾՈՒԽ, կենտրոնը՝ Յոհաննեսբուրգ: Հայեր բնակվում են Յոհաննեսբուրգում, Պրետորիայում, Քեյփթաունում: Մշտապես գործող հայկ. եկեղեցի չունենալու պատճառով փոքրաթիվ համայնքը հովվում է այցելու հովիվը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.8, 1-ին պատկերը:

Գրկ. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1–2, Ե., 1964–1967: Յափուճյան Ա., Եգիպտահայ մշակույթի պատմություն, Կահիրե, 1981: Աղազարմ Ն., Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, Կահիրե, 1911: Ալպոյաճյան Ա., Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960: Գուշակյան Թ., Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները..., Կահիրե, 1927: Տեր-Միքայելյան Ն., Եգիպտահայ գաղութը 10–15-րդ դարերում, Բեյրութ, 1980: Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Ե., 1978: Գարտաշյան Ա., Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար, հ. 1, Կահիրե, 1943, հ. 2–3, Վնտ., 1986–87:

ԵԴԵՄ, երանության, բերկրության վայր, հրաշագեղ երկիր, որը, ըստ *Աստվածաշնչի*, գտնվում էր Արևելքում: Նրա կենտրոնում էր Աստված տնկել *դրախտը*, իսկ Ե-ից դուրս էր գալիս մի գետ՝ դրախտային պարտեզը ջրելու համար (դա, ըստ Աստվածաշնչի մեկնիչների,

խորհրդանշում է երկնային գետը, իսկ նրա ջրերը՝ երկնային կյանքի տարածումը): Այնուհետև գետը բաժանվում էր չորս ճյուղերի՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ (Ծննդ. **2.**8–15): Սրանից ելնելով՝ մի շարք մեկնիչներ կորուսյալ Ե. կամ դրախտը զետեղում են Հայաստանում, մյուսները՝ այլ տեղեր: Սակայն, ըստ Աստվածաշնչի, հիշյալ Ե., Ադամի և Եվայի արտաքսմամբ, կորսված է և Աստծո սուրբ կամքի համաձայն՝ արգելված ու փակված հին մարդու՝ Ադամի և նրա սերնդի համար. «Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց բերկրության դրախտի դիմաց և հրամայեց քերովբեներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել դեպի կենաց ծառը տանող ճանապարհները» (Ծննդ. **3.**24): Դեպի դրախտ, դեպի կենաց ծառ տանող ճանապարհը բացվում է *Հիսուս Քրիստոսով*, իր՝ տերունական խոսքի համաձայն, թե՝ «...Ես իսկ եմ հարություն և կյանք...» (Հովհ. **11.**25):

Աստծո Որդու քավչարար արյամբ սրբված հավատացյալներին խոստացվում է մի նոր Ե.՝ կենաց պարտեզ՝ առավել փառավոր և հավիտենական՝ Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալըստյան ժամանակ. «Երանելի՜ են նրանք, որ պահում են նրա պատվիրանները: Նրանք իրավունք ունեն ուտելու կենաց ծառից և մտնելու քաղաքի դռներով» (Հայտն. **22.**14):

Լևոն Սարգսյան

ԵԴԵՍԻԱ, Ուռհա, Ուրֆա (ասոր.՝ Օրհայ, արաբ.՝ Ռուհա), քաղաք Միջագետքի հյուսիս-արևմուտքում: Ք.ծ.ա. 132 – Ք.ծ.հ. 216-ին՝ Եդեսիայի թագավորության (Օսրոյենե, հայկ. աղբյուրներում՝ Միջագետք Ասորվոց) կենտրոնը: Հս-ից սահմանակից էր Հայոց Միջագետքի Արվաստան, Ծավդեք (Զավդեք) և Ամիդ գավառներին: Հիմն. բնակիչներն էին ասորիները և հայերը: Եդեսիայի թագավորության գահակալները, որոնք ազգությամբ կա՛մ ասորի էին, կա՛մ հայ, կրել են Աբգար անունը: Հայոց Տիգրան Բ Մեծ և Սանատրուկ թագավորների օրոք Ե. ողջ երկրի հետ մտել է Հայաստանի կազմի մեջ: 216-ին Հռոմի Կարակալա կայսրը Ե. դարձրել է Հռոմ. գաղութ: 363-ի Հռոմեա-պարսկ. հաշտության պայմանագրով Ե. անցել է Սասանյան Իրանին:

Դեռևս I–II դդ. Ե-ում սկսել են ձևավորվել առաջին քրիստ. համայնքները, որոնք էական դեր են խաղացել Արևելքում քրիստոնեության տարածման գործում: Ըստ ասոր. և հայկ. եկեղեց. ավանդության, Հիսուսի երկու առաքյալների՝ *Թադեոսի* և *Բարդուղիմեոսի՝ Անտիոքից* Հայաստան գալու ճանապարհն անցնում էր Ե-ով: Այստեղ էլ նրանք հիմնել են Արևելքի առաջին եկեղեցին: Քրիստ. ավանդազրույցներում Ե-ի առաջին վարդապետ է հիշատակվում Ադդան (տես *Ադդե*), որին, իր քարոզչական գործունեությունը Ե-ում ավարտելուց և Ծոփք մեկնելուց առաջ, ձեռնադրել էր Թադեոս առաքյալը: Համաձայն եկեղեց. ավանդության, դա կատարվել է Աբգար V Ուկամայի (Սև) օրոք (4–50), որը նամակագրություն ուներ Հիսուսի հետ և նրանից ստացել էր մի կտոր կտավի վրա հրաշքով դրոշմված փրկչական պատկերը: Նույն ասքի համաձայն, ավելի ուշ՝ Հիսուսի համբարձումից հետո, նրա պատգամով Ե. եկած Թադեոսը բուժել է բորոտությամբ տառապող *Աբգար* թագավորին, որը դրանից հետո հրամանով քրիստոնեությունը Ե-ում հռչակել է պաշտոն. կրոն: Այս ավանդապատումներն այլաբանորեն ակնարկում են, որ քրիստ. վարդապետությունը մուտք է գործել Ե. դեռևս Քրիստոսի օրոք և առաքյալների գործունեությամբ ավելի տարածվել ու արմատավորվել բնակչության շրջանում: Պատմ. փաստերը ցույց են տալիս, որ քրիստոնեությունը Ե-ում պաշտոն. կրոն է ճանաչվել քիչ ավելի ուշ, Աբգար IX-ի (179–214) գահակալության տարիներին:

Շնորհիվ իր դիրքի, Ասոր. Միջագետքում և ողջ Արևելքում ունեցած իր դերի ու նշանակության, Ե., սկսած II–III դարերից, եղել է Արևելքում ծագած զանազան գնոստիկյան ուսմունքների (տես *Գնոստիցիզմ*), քրիստ. աղանդների կենտրոն, որոնք այստեղ ունեցել են իրենց կազմակերպված համայնքները, ստեղծել դպրոցներ: Ե-ում մեծ հեղինակություն և բազմաթիվ հետևորդներ ուներ Բարդայծան Եդեսացին (154–222), որն Աբգար IX-ի բարեկամն էր ու քրիստոնյա մկրտողը: Բարդայծանը Ե-ում ստեղծել է մեծ դպրոց, որը հետզհետե հերձվածողական բնույթ է ստացել: III–V դդ. Ե-ում զանազան աղանդավորների աշխուժացումը մեծ վտանգ էր ներկայացնում Ե-ի աթոռի համար: Ե-ի եպիսկոպոս Ռաբուլաս Եդեսացու (412–435) կենսագրության մեջ պատմվում է, որ նա իր թեմում հալածել է բարդայծանականներին, արիոսականներին (տես *Արիոսականություն*), մարկիոնականներին, մանիքեցիներին (տես *Մանիքեություն*), *բորբորիտներին*,

մեսալյաններին (տես *Մծղնեություն*), սադուկեցիներին, աուդականներին, իսկ զղջացողներին և դարձի եկողներին՝ միացրել իր հոտին: *Եփեսոսի Գ տիեզերական ժողովից* հետո, երբ նեստորականները (տես *Նեստորականություն*) դուրս են մղվել Հռոմ. կայսրության սահմաններից, նրանք որոշ ժամանակ ապաստան են գտել Ե-ում Նեստորի կողմնակից, Ե-ի եպիսկոպոս Իբաս Եդեսացու (435–457) շնորհիվ: Այստեղ է գործել ասոր. աստվածաբան. մտքի, փիլիսոփայության, գրականության և մշակույթի զարգացման կենտրոն դարձած նեստոր. նշանավոր դպրոցը: Իբաս Եդեսացու մահից հետո շատ նեստոր. աստվածաբաններ արտաքսվել են քաղաքից: Վերջնական հարվածը նրանց հասցրել է Հռոմ. Զենոն կայսրը՝ 489-ին փակելով Ե-ի նեստոր. դպրոցը: V դ. վերջին – VI դ. սկզբին Ե. ուղղափառության նշանավոր կենտրոն էր Արևելքում: Այստեղ է իր ուսումը ստացել VI դ. ասորի հակաքաղկեդոնիկ նշանավոր աստվածաբան Փիլոքսենոս Մաբուգեցին:

Հայկ. և ասոր. եկեղեց. ավանդությունները, ինչպես և պատմ. փաստերը վկայում են Ե-ի աթոռի հետ Հայ եկեղեցու սերտ կապերի մասին: Ասոր. «Ադդայի վարդապետություն» երկի հայերեն հին թարգմանության մեջ Ե-ի թագավորությունը (Օսրոյենե) հայկ. է համարվում: Մովսես Խորենացին, հենվելով այդ թարգմանության վրա, Աբգար V-ին հայ է համարել և նրան Հայոց Սանատրուկ թագավորի մոտիկ ազգական անվանել: Հայ եկեղեցին կանոնացրել է Աբգարին, նրա կնոջը՝ Հեղինեին (տես *Ադիաբենե* հոդվածում), Ադդե վարդապետին, ասոր. ավանդության հետ կապված քրիստ. մարտիրոսներին և նրանց դասել Հայ եկեղեցու սրբերի կարգը: I դ. առաքյալների, նրանց աշակերտների քարոզչության, Հեղինե թագուհու մասին ստեղծված քրիստ. ավանդույթները և Աբգար թագավորի ու Սանատրուկ արքայի մասին ասքերը միահյուսվել են ավելի ուշ ժամանակներում: Հավանաբար դա տեղի է ունեցել III դ. 1-ին քառորդում, երբ քարոզչական նպատակներով Հայաստան է եկել Բարդայծանը, որին մի շարք սկզբնաղբյուրներ (Հիպպոլիտ, Միքայել Ասորի) հայկ. ծագում են վերագրել: Մովսես Խորենացին վկայում է, որ Բարդայծանը Հայաստանում հետևորդներ չգտավ, բայց արքաները նրան չանտեսեցին: Հայոց թագավոր Խոսրով Ա-ն Բարդայծանին հրավիրել է իր մոտ և հանձնարարել գրել իր նախնիների պատմությունը, որտեղ տեղ են գտել վերոհիշյալ իրադարձությունները: Այդ ավանդություններն ամբողջական և վերջնական տեսք են ստացել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Դրանք վկայում են, որ Ասորիքը, հատկապես Ե. և Ադիաբենեն եղել են այն հիմն. կենտրոնները, որտեղից քրիստ. ուսմունքը թափանցել է հայկ. միջավայր: Քրիստոնեության մի հոսանքը հվ-ից՝ Ե-ից է մուտք գործել Մեծ Հայքի հվ. և հվ-արլ. գավառներ, սկզբում՝ Ծոփք, այստեղից էլ Հայաստանի խորքը՝ Տարոն, Բզնունիք, Հարք ևն: Այդ մասին խոսվում է նաև «*Կանոնագիրք Հայոցի*» առաքելական կանոններից մեկում և Թադեոս առաքյալի Վկայաբանության մեջ: Ե-ում կրթություն են ստացել բազմաթիվ հայեր: Քաղաքն ունեցել է հարուստ մատենադարան, որտեղ պահվել են նաև բազմաթիվ հայկ. ձեռագրեր: Ե-ում և *Սամոսատում* է *Մեսրոպ Մաշտոցն* արարել հայոց գրերը: Նեստոր. գրվածքները և գաղափարները Հայաստան են մտել հիմնականում Ե-ից: Ըստ VI դ. լատին մատենագիր Լիբերատուսի, Ե-ի հականեստոր. Ռաբուլաս եպիսկոպոսը Մելիտինեի Ակակիոս եպիսկոպոսի հետ նամակով զգուշացրել է Հայոց *Սահակ Ա Պարթև* կաթողիկոսին և Մեսրոպ Մաշտոցին, ինչպես նաև բոլոր հայ եպիսկոպոսներին, որ հեռու մնան նեստորականներից, որոնք ներթափանցել էին Հայաստան և ծավալել քարոզչական գործունեություն: Ըստ պատմիչ Թովմա Արծրունու, Ե-ից Հայաստան էր եկել նաև նեստոր. քարոզիչ Բարծուման և, մասնավորապես Մոկաց երկրում, Աղձնիքում, Նիխորական գավառում, փորձել տարածել նեստոր. վարդապետությունը: Հայ եկեղեցին, ինչպես նաև հայ նախարարները խափանել են նրա գործունեությունը Հայաստանում և վտարել երկրից:

Միջին դարերում Ե-ում բնակություն են հաստատել մեծ թվով հայեր: XII դ., արաբ պատմագիր Իբն ալ Ասիրի վկայությամբ, Ե. ամբողջությամբ հայերով էր բնակեցված: XI–XV դդ. Ե. դարձել է կռվախնձոր բյուզանդացիների, արաբների, պարսիկների, թուրքմեն. ցեղերի միջև: 1114-ին քաղաքի վրա են հարձակվել Մոսուլի Զանգի ամիրայի հրոսակները: Քաղաքն ավերվել է, իսկ բնակչությունը բնաջնջվել: Ե-ի պաշտպանների հերոսությանն ու ծաղկուն քաղաքի ավերմանն է նվիրված

Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը: 1637-ից Ե-ին տիրել են օսմ. թուրքերը:

Հնում քաղաքում եղել է 10 հայկ. եկեղեցի, որոնցից մեկի կառուցումն ավանդաբար վերագրվել է Աբգար VII արքային: Ամենանշանավորներն էին Ս. Հովհաննեսը, Ս. Սարգիսը, Ս. Սոփին և Ս. Թորոսը: Սրանց մեծ մասը դեռ XII–XVII դդ. վերածվել է մզկիթների: Ս. Սարգիս վանքում կար որբանոց: Քաղաքի կաթոլիկ և բողոքական հայերը նույնպես եկեղեցիներ ունեին: Մեծ եղեռնի ժամանակ Ե-ի (Ուրֆա) հայերը դիմել են ինքնապաշտպանության, որի շնորհիվ բազմաթիվ հայեր փրկվել են թուրք. կոտորածներից:

Գրկ. Վկայաբանութիւն եւ գիւտ նշխարաց Ս. Թադէոսի Առաքելոյն..., «Սոփերք հայկականք», հ. 8, Վնտ., 1853: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968: Նույնի, Նեստորականությունը Հայաստանում, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971: Մելքոնյան Հ.Գ., Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III–V դդ.), Ե., 1970: Նույնի, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Ե., 1980: Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987: *Пигулевская Н. В., Месопотамия на рубеже V–VI вв. н.э., М.-Л., 1940;* Նույնի, *Сирийские источники по истории народов СССР, М.-Л., 1941;* Gutchmid A., Untersuchungen über die Geschiche des Königreichs Osroëne, “Mémoires de l’Académie imper. de St. – Petersburg”, 1887, sér. 7, t. 35, № 1; Segal J. B., Edessea: “The Blessed City”, Oxf., 1970:

Երվանդ Մարգարյան
Արտաշես Ղազարյան

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ [մոտ 380, գ. Կողբ (Այրարատ նահանգի Ճակատք գավառ) – 450], մատենագիր, իմաստասեր, աստվածաբան, թարգմանիչ: *Սահակ Ա Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* ավագագույն աշակերտներից: Ուսանել է Աշտիշատի դպրոցում, ապա՝ Եդեսիայում և Կ. Պոլսում: Տիրապետել է ասոր., հուն., պարսկ., եբր. լեզուներին: Մասնակցել է *Աստվածաշնչի* և այլ երկերի թարգմանությանը: 428–429-ին Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Ա Պարթևը Ե. Կ-ունն և *Հովսեփ Պաղնացուն* գործուղել են Եդեսիա՝ թարգմանելու ասորի սուրբ հայրերի ավանդությունները: Կատարելով հանձնարարությունները (թարգմանություններն ուղարկել են Հայաստան՝ «պատվական հայրերին»)՝ 431–432-ին անցել են հունական կողմերը, «ուր և ուսանելով և հմտանալով՝ կարգվեցին հելլենական լեզվից թարգմանիչներ»: Կ. Պոլսում որոշ ժամանակ հետո նրանց են միացել *Ղևոնդ Երեցն* ու *Կորյունը*, ապա և, ըստ *Մովսես Խորենացու՝ Հովհան Եկեղեցացին* ու Արճանը: 434-ից հետո Ե. Կ. ընկերների հետ վերադարձել է հայրենիք՝ բերելով թարգմանված «շատ շնորհագիր հայրերի ավանդություններ», *Նիկիայի Ա տիեզերական ժողովի, Եփեսոսի Գ տիեզերական ժողովի* ընդունված կանոններն ու Հին և Նոր կտակարանների հունարեն ստույգ օրինակներ, և Աշտիշատում հանձնել Մեսրոպ Մաշտոցին ու Սահակ Ա Պարթևին: Վերջինս բերված օրինակներով, Ե. Կ-ու օգնությամբ, վերանայել, ճշգրտել ու խմբագրել է Աստվածաշնչի մինչ այդ կատարած հայերեն թարգմանությունը:

Ե. Կ. կյանքի վերջին տարիներին եղել է Բագրեվանդի եպիսկոպոսը, մասնակցել 449-ի Արտաշատի ժողովին (որը մերժել է զրադաշտականություն ընդունելու պարսիկների առաջարկը) և Պարսից արքունիքին ուղղված նամակը կազմելուն: Նրա մասին հիշատակում են ժամանակակից մատենագիրներ Կորյունը, *Եղիշեն*, Մովսես Խորենացին ու *Ղազար Փարպեցին*, հետագա դարերում՝ *Դավիթ Անհաղթը, Վրթանես Քերթողը, Ստեփանոս Տարոնեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Գրիգոր Տաթևացին* և այլք:

Ե. Կ-ու աշխատություններից մեզ է հասել 440-ական թթ. գրված «Եղծ աղանդոցը» («Աղանդների հերքումը»): Բնագիրը պահպանվել է եզակի ընդօրինակությամբ (1280, գրիչ՝ Լուսեր, Մատենադարան, ձեռ. № 1097), վերնագիր չունի, նշված է «Երանելոյն Եզնկայ վարդապետի»: Ելնելով երկասիրության էությունից՝ հրատարակիչներն ու թարգմանիչները հրատարակել են տարբեր խորագրերով («Եղծ աղանդոց», «Յաղագս Աստծոյ», «Գիրք ընդդիմութեանց» ևն): Երկը բաժանված է չորս գլուխների (գրքերի)՝ «Հեթանոսական աղանդների հերքումը», «Պարսից կրոնի հերքումը», «Հունական իմաստասերների հերքումը», «Մարկիոնի աղանդի հերքումը» վերնագրերով:

Ե. Կ-ունն են վերագրվել նաև «Հարցումն Աշոտոյ թագաւորին և պատասխանիք Եզնկայ», «Հարցմունք Արճանայ թագաւորի և պատասխանիք Եզնկայ», «Վասն արարչութեան 10 տող բան» երկերը և Մեսրոպ Մաշտոցին ուղղված ճառի երկու հատված:

«Եղծ աղանդոցը» հայ աստվածաբան-իմաստասիր. մտքի և դասական հայրախոսության կարևորագույն սկզբնաղբյուրներից է: V դ. կեսին հայ ազգ. մտքի առաջ ծառացել էր նոր խնդիր՝ տեսականորեն հերքել և դատապարտել զրադաշտական դուալիստական կրոնի դաղափարատեսական հիմքերն ու ակունքները, ամրապնդել քրիստոնեության դիրքերը Հայաստանում և քրիստոնեության վարդապետության հենքի վրա հիմնավորել ազգ-ազատագր. պայքարի անհրաժեշտությունը: Ուստի Ե. Կ-ու մոտ զրադաշտականության քննադատությունը վերաճել է առհասարակ հեթանոսության համակարգված և տրամաբան. քննադատության: Իսկ դա պահանջում էր անտիկ ուսմունքների իմացություն, քրիստոնեության և հեթանոսության դաղափարախոսությունների հարաբերակցման հարցի լուծում: «Աստծու եկեղեցու գործն է՝ արտաքիններին դատապարտել ճշմարիտ իրողություններով, առանց Գրքի, իսկ կարծեցյալ և ոչ արդարացի ներքիններին՝ Սուրբ Գրքով» («Եղծ աղանդոց», 1994, էջ 91):

Ե. Կ. սահմանազատել է աստվածաբանության և իմաստասիրության ոլորտները, միաժամանակ հիմնավորել անտիկ ժառանգության յուրացման անհրաժեշտությունը: Անտիկ տրամաբանությունն օգտագործվել է թե՛ անընդունելի անտիկ (և որոշ եկեղեցական) ուսմունքների հերքման, թե՛ Ս. Գրքի դրույթների բանական հիմնավորման համար: Քննադատ. վերլուծության ընթացքում նա գործադրել է մի շարք մեթոդներ. ա. որևէ անտիկ տեսության հերքման ժամանակ դիմում է մի այլ անտիկ ուսմունքի, որի ճշմարտացիությունը արտացոլվում է Ս. Գրքի դիտարկումների տվյալներով, բ. հմտորեն օգտագործում է քննադատվող ուսմունքի փաստագր. նյութը, գ. Ս. Գրքի առանձին դրույթների ինքնուրույն մեկնաբանություն: Դրանք հանգեցրել են քրիստ. վարդապետության և որոշ անտիկ տեսությունների միջև ընդհանրությունների բացահայտմանը: Աշխարհայացքային նման դիրքորոշումը, որը ձևավորվել էր *Որոգինեսի, Կղեմես Ալեքսանդրացու* և Կապադովկյան դպրոցի ներկայացուցիչների մոտ, հետագայում զարգացրել են Դավիթ Անհաղթը, *Անանիա Շիրակացին, Հովհաննես Սարկավագը* և այլք:

Ե. Կ-ու գլխ. տեսական խնդիրը միաստվածության աստվածաբան-իմաստասիր. համակարգի մշակումն է: Միակ և գերագույն գոյը Աստվածն է՝ անսկիզբ, մշտնջենական, ոչնչով և ոչ մեկի կողմից չպայմանավորված, արարող և անհասանելի, բայց ամեն ինչի՝ երևելիի և աներևույթի սկզբնավորման պատճառը: Ոչինչ և ոչ ոք չկա նրանից վեր, նրանից առաջ կամ հավասար, հակառակ էություն կամ ներհակ գոյություն: Աստվածային էությունն անճանաչելի է մարդկային բանականության համար, նրան կարելի է հասնել միայն հավատի միջոցով: Աստված ոչնչից նախ ստեղծել է չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը, կրակը առանձին-առանձին և ապա դրանց խառնուրդից՝ բազմազան աշխարհը: Տարրերը փոփոխական են և այդ պատճառով՝ ոչ մշտնջենական, ուստի և չեն կարող համարվել աստվածներ: Արարված բնությունը նույնպես գտնվում է շարժման մեջ, որի աղբյուրը «գաղտնի ուժն է»՝ անշարժ Աստվածը: Ի տարբերություն արիստոտելյան բնափիլիսոփայության ավանդույթների՝ Ե. Կ-ու մոտ նկատելի է երկրային և երկնային մարմինների նյութ. կազմի նույնացման միտումը: Տիեզերքը նա դիտում է իրապես կիսաբոլորակ, իսկ երկիրը՝ սկավառակ: Երկնային լուսատուները գտնվում են անընդհատ և անհամաչափ շարժման մեջ, իսկ երկինքը մնում է անշարժ: Նրա մոտ արդեն նշմարվում է երկնային յոթ գոտիների մասին դաղափարը: Աշխարհակարգի՝ որպես ամբողջականության ընկալումը հանգեցրել է նաև բնության համակարգի ստեղծմանը, որի հիմքում ընկած է Արիստոտելի «բնության աստիճանը»: Բնական համակարգի հիմնարար հասկացություններն են՝ մարմնականն ու անմարմինը, շնչավորն ու անշունչը, կենդանի և ոչ կենդանի հասկացությունները: Առաջին աստիճանը կազմում են անշունչ մարմինները, որոնց բնորոշ հատկություններն են առաջացումը, գոյությունը և ոչնչացումը, երկրորդը՝ բուս. աշխարհը, որն օժտված է նաև սնման, աճի և շնչավորության ստորին ձևի ունակությամբ, երրորդը՝ կենդ. աշխարհը, որն ունակ է նաև տեղափոխության և օժտված է բնազդներով: Վերջին աստիճանը զբաղեցնում է մարդը՝ բնության «պսակը», որն իր մարմն. բնությամբ հաղորդ է մյուս մարմն. էակներին, բայց միաժամանակ նա բանականության կրող է: Ե. Կ. քննադատում է բազմաստվածությունը, գնոստիկյան (տես *Գնոստիցիզմ*), մասնավորապես Մարկիոնի աղանդը, անտիկ ուսմունքները և հատկապես զրադաշտական կրոնաիմաստասիր. դուալիզմը:

Չարին սուբստանցիոնալ բնույթ հաղորդելը տանում էր դեպի չարի աստծո ընդունումը, հիմնավորում չարիքի գոյության անհրաժեշտությունը, աստվածային բնույթը: Մինչդեռ Աստվածը որպես բարության անսպառ աղբյուր և խորհրդանիշ չի կարող չարիքի արարիչ լինել: Իսկ աշխարհում առկա չարը միակ բանական էակին՝ մարդուն շնորհած ազատ կամքի արդյունքն է: Ուստի մարդիկ լիովին պատասխանատու են իրենց բոլոր, այդ թվում՝ չար գործողությունների համար: Իսկ քանի որ չարիքը տրված չէ ի վերուստ, աստվածային ծագում չունի, ճակատագիր չէ, ապա նրա ոչնչացումը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ և աստվածահաճո: Հետևաբար, երբ թշնամին հարձակվում է երկրի վրա, ապա մարդիկ «զորքեր դումարելով և երկրից թշնամուն դուրս վռնդելով՝ ցույց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավազակի բռնությամբ» (նույն տեղում, էջ 133):

Ե. Կ. ռացիոնալիզմի դիրքերից ցույց է տվել սնահավատության, ճակատագրապաշտության, աստղագուշակության, հեթանոսության վերապրուկների անհիմն լինելը: Մարդ անհատի և մարդկության կյանքը նա բաժանել է երեք շրջանների՝ մանկություն, երիտասարդություն և չափահասություն, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի ճանաչող. ունակություններ և սահմաններ: Ե. Կ. բարձր է գնահատում գիտելիքի ընկերային-բարոյագիտ. նշանակությունը և արժեքը, ժառանգորդման գաղափարը: Նրա նպատակն է ուսուցանել ճշմարիտ՝ քրիստ. վարդապետությունը, ուստի և քննարկում է մի շարք մանկավարժ. և բարոյագիտ. հարցեր: Նյութի յուրացումը պահանջում է համապատասխան գիտելիքներ և ունակություններ, պետք է ոչ միայն բնական օժտվածություն, այլև՝ ներքին ճգտում և տաժանակիր աշխատանք: Ընդունակ աշակերտին անհրաժեշտության դեպքում պետք է նաև ստիպել: Իբրև ծայրահեղ միջոց նա ընդունում է մարմն. պատիժը: Գիտելիքը և առաքինությունը դիտվում են որպես այդպիսին այն դեպքում, երբ դառնում են բոլոր մարդկանց սեփականությունը:

Ե. Կ-ու քննական և քննադատ. վերլուծության հիմքն են կազմում Ս. Գիրքը և անտիկ իմաստասիր. ժառանգությունը, ինչը նրա ուսմունքին հաղորդել է իմաստասիր. ուղղվածություն, խթանել իմաստասիր. տերմինաբանության մշակումը, անտիկ մշակույթի տարածումը Հայաստանում: Գիտության պատմության համար կարևոր նշանակություն ունեն Ե. Կ-ու արտահայտած մտքերը բնագիտության (ֆիզիկայի, բժշկության և կենսաբանության) մասին: «Եղծ աղանդոցը» մեծարժեք է նաև լեզվաոճական առումով. այն հայ հին գրավոր լեզվի մեսրոպյան կամ դասական շրջանի բնորոշ օրինակ է: Առաջին անգամ հրատարակվել է 1762-ին, Զմյուռնիայում (հրտ.՝ Հ. Նալյան)՝ «Գիրք ընդդիմութեանց աբարեալ ի Սրբոյ Եղնկայ Կողբացւոյ Հայոց վարդապետէ...» վերնագրով, երկրորդ անգամ (հիմն. հրատարակությունը)՝ 1826-ին, Վենետիկում (հրտ.՝ Ա. Բագրատունի): Երկն ունեցել է գերմաներեն (1834, 1900, 1927), ֆրանսերեն (1853, 1959), ռուսերեն (1858, 1968) և հայերեն բազում հրատարակություններ, որոնցից աշխարհաբար՝ Բուենոս Այրեսում՝ 1951-ին, Երևանում՝ 1970-ին:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.8, 2-րդ պատկերը:

Երկ. Եղծ աղանդոց, Ե., 1994:

Գրկ. Կ ո ր յ ո ւ ն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ե., 1994: Ա բ ե ղ յ ա ն Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երկ., հ. 3, Ե., 1968: Գ ա բ ր ի ե լ յ ա ն Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 1, Ե., 1956: Զ ա լ ո յ ա ն Վ., Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975:

ԵԶՐ Ա ՓԱՌԱԺՆԱԿԵՐՏՅԻ [ծ. թ. անհտ, գ. Փառաժնակերտ (Այրարատ նահանգի Նիգ գավառ) – 641, հավանաբար ամփոփվել է Դվինում], Ամենայն հայոց կաթողիկոս 630-ից: Հաջորդել է *Քրիստափոր Բ Ապահունուն*: 633-ին Կարինում (տես *Կարինի ժողով 633*) հանդիպել է բյուզ. Հերակլ կայսրի (610–641) հետ և հայ պատգամավորության անունից ստորագրել համաձայնեցված դավան. բովանդակությամբ մի փաստաթուղթ: Մինչ այդ, ըստ Սեբեոսի, Ե. Ա Փ. Հերակլ կայսրից խնդրել էր ուղարկել «Գիր հաւատոյ խոստովանութեան» դավանագիրը, որտեղ նզովվում էին բոլոր աղանդավորները, այդ թվում՝ Նեստորը (տես *Նեստորականություն*), բայց երեք *տիեզերական ժողովների* կողքին հիշատակված էր նաև 451-ի *Քաղկեդոնի ժողովը*: Ժամանակի նշանավոր աստվածաբան, եպիսկոպոս Մաթուսաղա Այունեցին և ուրիշ գիտուններ, քննելով Հերակլի ուղարկած թուղթը, հանդել են այն եզրակացության, թե այն իր հիմն. կետերով ուղղափառ է և ընդունելի, միայն թե չի նզովված

ԵԹՈՎՊԱԿԱՆ

Քաղկեդոնի ժողովը: Ե. Ա. Փ-ու հանձնարարականով Մաթուսաղան գրել է Հերակլ կայսրին ուղղված դավան. թուղթ, որը նրան է հանձնվել Կարինում: Այստեղ կայսրը և Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքը (610–638) Ե. Ա. Փ-ուն են ներկայացրել միակամական (տես *Միակամություն*) բովանդակությամբ մի դավանագիր, հավանաբար այնպիսին, ինչպիսին ուղարկել էին Ալեքսանդրիայի մոլեռանդ հակաքաղկեդոնական պատրիարք Կյուրոսին: Այդտեղ չէր հիշվում *Լևոնի տոմարը*, Քաղկեդոնի ժողովը և, թեպետ բացարձակ մի բնություն չէր քարոզում, սակայն ուսուցանում էր մի կամք, մի ներգործություն, որով և անուղղակիորեն ջատագովում էր մի բնության վարդապետությունը: Հայ եկեղեցու պատգամավորությունը ստորագրել է Հերակլ կայսրի առաջարկած հավատո խոստովանության գիրը, որը եղել է ոչ թե քաղկեդոն., այլ՝ միակամական, և հույն հոգևորականների հետ հաղորդվել Կարինի Մայր եկեղեցում: Այդ քայլը պարտադրված էր ժամանակի քաղ. իրադրությամբ, երբ բյուզանդացիների և արաբների նվաճող. նկրտումները ծանրացրել էին Հայաստանի քաղ. կացությունը, երբ Հերակլ կայսրը Ե. Ա Փ-ուն սպառնում էր հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել Մեծ Հայքի բյուզ. մասում: Համաձայնեցված ոչ քաղկեդոն. դավանագրի ստորագրումը որևէ հետևանք չի ունեցել Հայ եկեղեցու համար:

Հետագա պատմիչները (Ստեփանոս Տարոնեցի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան), սկսած Հովհաննես Դրասխանակերտցուց, խստագույնս դատապարտել են Ե. Ա Փ-ու արարքը, հանիրավի մեղադրել նրան քաղկեդոնականություն ընդունելու մեջ: Նրան և հայ պատվիրակության մյուս անդամներին անվանել են տգետներ, կայսրից խաբված դավաճաններ, Հայ եկեղեցու սրբությունները ոտնահարողներ: Սակայն ժամանակակիցների ընկալմամբ Ե. Ա Փ-ու քայլը, ընդհակառակը, զերծ է պահել Հայ եկեղեցին և Հայաստանը շատ ծանր հետևանքներից: Ժամանակակիցներից միակ բացահայտ ընդդիմացողը VII դ. նշանավոր դավանաբան և աստվածաբան *Հովհան Մայրավանեցին* էր (Մայրագոմեցի): Ե. Ա Փ-ուն անարգելու համար նա արտաքսվել է Դվինից: Դեպքերի ականատես Սեբեոս պատմիչը կաթողիկոսի քայլը չի դատապարտել՝ բարձր գնահատելով նրա մարդկային արժանիքները: Անգամ Կարին գնալու Հերակլ կայսրի հրավերը մերժողները՝ Գարդմանի եպիսկոպոս Ստեփանոսը և Սյունյաց եպիսկոպոս Մաթուսաղան, որոնք ժամանակի հայտնի հայ աստվածաբաններից էին, Ե. Ա Փ-ու վերադարձից հետո, հակառակ Հովհան Մայրավանեցու ջանքերին, պաշտպան են կանգնել նրան: Կաթողիկոսը Կարինից վերադարձել է «մեծաւ շքով» և «մեծապարգև փառօք»: Հայաստանում հոգևորականությունը նրան դիմավորել է ոչ թշնամաբար, և Կարինի ժողովից հետո ևս ութ տարի, մինչև իր կյանքի վերջը Ե. Ա Փ. շարունակել է մնալ կաթողիկոս. աթոռին: Վերադարձից հետո նա առաջնորդվել է Հայ եկեղեցու սկզբունքներով, զբաղվել շին. և բարենորոգչ. գործերով (վերակառուցել է Էջմիածնի Կաթողիկեն, Հռիփսիմե ու Գայանե եկեղեցիները): Վախճանվել է ծեր հասակում:

Կաթողիկոս. դահին Ե. Ա Փ-ուն հաջորդել է *Ներսես Գ Տայեցին*:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Սեբեոս, Պատմութիւն, աշխատասիր. Գ. Աբգարյանի, Ե., 1979: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912, էջ 685–706: Բարթիկյան Հ., «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, ԲՄ, № 6, 1962: Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու քրիստոնեաբանությունը, Ս. Էջմիածին, 1995:

Արտաշես Ղազարյան

ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ,

Հաբեշական եկեղեցի, Արևելյան ուղղափառ եկեղեցիներից: Մինչև 1951-ը վարչականորեն ենթակա էր *Ղպտի ուղղափառ եկեղեցուն*: Քրիստոնեությունը Եթովպիա է մուտք գործել տակավին առաքյալների ժամանակներից: Համաձայն Գործք առաքելոցի, Փիլիպպոս առաքյալը մկրտել է եթովպացիների Կանդակա թագուհու ներքինիին (Գործք 8.26–38)՝ դրանով նշանավորելով Ե. ու. ե-ու սկզբնավորումը: Քրիստոնեությունը պետականորեն ճանաչվել է 318 կամ 340-ին՝ Ալեքսանդրիայից եկած հույն բարեպաշտ վաճառական Ֆրումենտիոսի ջանքերով: Նորահաստատ եկեղեցու հոգևոր և վարչ. պետքերը հոգալու նպատակով *Աթանաս Ալեքսանդրացին* նրան ձեռնադրել է (որից հետո նա վերանվանվել է Աբունա Սալամա) և ուղարկել այս նոր թեմին ծառայելու: *Քաղկեդոնի ժողովից* (451) հետո Ե. ու. ե., հավատարիմ մնալով երեք տիեզերական ժողովների դավան. որոշումներին, հարել է Ղպտի եկեղեցուն, որը ալեքսանդրյան աստ-

վածաբան. դպրոցի (տես *Ալեքսանդրիա*) հետևորդ էր: Բյուզ. Հուստինիանոս կայսրի օրոք (527–565), երբ քաղկեդոնականներին հովանավորելու քաղաքականություն էր տարվում, ինչպես նաև ավելի ուշ՝ 640-ական թվականներից, երբ Եգիպտոսն ընկավ մահմեդ. տիրապետության տակ, խզվեցին բյուզ. եկեղեցու հետ բոլոր հարաբերությունները, և Ե. ու. ե. մայր՝ Ղպտի եկեղեցու հետ միասին անխախտ պահեց իր դավանական դիմագիծը:

1498-ից Պորտուգալիայի և Հնդկաստանի միջև ծավալված դիվանագիտ., առևտր. հարաբերություններին զուգընթաց Կաթոլիկ եկեղեցին, հանձին նորահաստատ Հիսուսյան միաբանության, իր քարոզչական գործունեությունը տարածել է այդ ուղու վրա ընկած երկրներում, այդ թվում՝ Եթովպիայում: Սակայն կաթոլիկ Արևմուտքի՝ Ե. ու. ե. դավանափոխ անելու ճիգերը անհաջողության են մատնվել: XIX դ. դեպի Արևելք ծավալված բողոքական շարժումը նույնպես անհաջողություն է կրել:

Ինչպես Հայ առաքելական, Հույն ուղղափառ և Հռոմի կաթոլիկ եկեղեցիները, Ե. ու. ե. նույնպես որոշակի տեղ է զբաղեցնում Սուրբ երկրում (Երուսաղեմ): XX դ. սկզբին Ե. ու. ե-ու հովվապետ Մատթեոս եպիսկոպոսի ջանքերով Երուսաղեմում ձեռք է բերվել Ս. Կոստանդինի և Ս. Հելինեի տաճարը, որը պատկանում էր Հայ եկեղեցուն: Այստեղ Ե. ու. ե. հիմնել է վանք և հյուրատուն:

Հայ եկեղեցուն դավանակից Ե. ու. ե-ու պատմության մեջ կարևոր դեր են ունեցել հայ-եթովպական եկեղեց. հարաբերությունները: Դրանք սերտացել են հատկապես Քաղկեդոնի ժողովից հետո, երբ Ե. ու ե. Հայ, Ասորի և Ղպտի եկեղեցիների հետ միասին մերժել է այդ ժողովի որոշումները: Ե. ու. ե-ու պատմության մեջ կարևոր դեր է խաղացել ներկայիս Դեսիե քաղաքի մոտ գտնվող, եթովպ. ժամանակագրություններում «Հայկական կղզի» անունով հիշատակված բնակավայրը՝ Ս. Ստեփանոս վանքով: Այն հիմնել են VII դ. արաբ. արշավանքների հետևանքով Սիրիայի, Պաղեստինի և Եգիպտոսի վրայով այստեղ գաղթած հայ վանականները: Այս վանքը մեծապես նպաստել է Ե. ու. ե-ու մատենագրության, մշակութ. ավանդույթների զարգացմանը: Վանքի հայրերից Գևորգ վարդապետի (Գևորգ Հայ) գրչին է պատկանում գեեզ լեզվի և եթովպ. կրոն. գրականության գոհարներից մեկը՝ «Տիրամոր փառաբանությունը» (1440):

Ե. ու. ե-ում Հայ եկեղեցու հեղինակության բարձրացումը անխզելիորեն կապված է եթովպ. մեծագույն սրբերից մեկի՝ Մակաբա Էկզիեի (ս. Եվստաթեոս, XIV դ.) անվան հետ, որն իր կրթությունը ստացել է հայկ. Ս. Ստեփանոս վանքում: Եվստաթեոսի գործունեությունն այնքան սերտ է եղել Հայ եկեղեցու հետ, որ նրան հաճախ հայ են համարել ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ՝ հետագայում: Համաձայն վարքի, Եվստաթեոսը Հայաստան է այցելել երեք անգամ: Վերջին այցելության ժամանակ 14 տարի ապրել է Կիլիկիայում և այստեղ էլ մահացել 1358-ին, թաղվել է հայկ. եկեղեցում: Մահվան մահճում իր աշակերտներին պատվիրել է վերադառնալ Եթովպիա և վկայել Հայ եկեղեցու առաքելականության մասին: Եվստաթեոսի վարդապետության հիման վրա Զարա Հակոբ թագավորը վերակառուցել է Ե. ու. ե., ինչը հնարավորություն է տվել եթովպ. քրիստոնեությունը ձերբազատել մահմեդ. և հեթանոս. բարքերից: Հայ եկեղեցու բարոյական ազդեցությամբ կատարված այդ բարեփոխումների շնորհիվ եթովպացիները մեկընդմիշտ ճանաչեցին Հայ եկեղեցու առաջատարությունն Արևելյան եկեղեցիների մեջ: Այս ճանաչման հետևանքով Հայ եկեղեցու մի շարք սրբեր (ս. Գրիգոր Լուսավորիչ, ս. Հռիփսիմե, ս. Գայանե) և ավանդույթներ տեղ են գտել եթովպ. Հայսմավուրքի մեջ: Պատմ., մատենագր. բազում փաստեր վկայում են Հայ և եթովպ. եկեղեցիների փոխհարաբերությունների մասին: Այսպես, Եթովպիա ուղարկված հայ առաջին պատվիրակը Գրիգոր եպիսկոպոսն է՝ Երուսաղեմի հայոց պատրիարքությունից (1652): Մոտ քսան տարի անց Եթովպիա է այցելել Հովհաննես արք. Աղթամարցին (Թուխունջի): 1867–68-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության խնդրանքով Եթովպիա է մեկնել Հայ եկեղեցու հատուկ պատվիրակությունը՝ անգլիացիների հետ գժտված Թեոդորոս II արքայի հետ բանակցություններ վարելու և անգլիացի կալանավորներին ազատ արձակելու նպատակով: Ադիս Աբեբայի նորակառույց հայկ. եկեղեցին օծելու համար 1928-ին Եթովպիա է ուղարկվել Կ. Պոլսի հայոց պատրիարքի տեղապահ Գևորգ արք. Արսլանյանը, որն իր ուղևորությունը գրի է առել և հրատարակել (Կ. Պոլիս, 1930):

Կառուցվածքը: Վարչականորեն Ղպտի եկեղեցուն ենթակա լինելու պատճառով Ե. ու.

Ե-ու եպիսկոպոսապետը, որն ազգությամբ պարտադիր ղպտի պետք է լիներ, ավանդաբար ձեռնադրվել է Եգիպտոսում: Դարեր շարունակ Եթովպիայի միակ եպիսկոպոսը ղպտի մետրոպոլիտն էր: 1951-ին առաջին անգամ Եթովպիայի հոգևորականությունն ու աշխարհիկները ընտրել են ծագումով եթովպացի մետրոպոլիտ: 1959-ին Ղպտի եկեղեցին վավերացրել է Ե. ու. Ե-ու անկախությունը՝ նրա առաջնորդին բարձրացնելով պատրիարքի աստիճանի: Նույն թվին Ղպտի եկեղեցու հովվապետ Կյուրեղ VI պատրիարքը Եթովպիայի Բասիլիոս եպիսկոպոսին ձեռնադրել է Եթովպիայում՝ որպես Ե. ու. Ե-ու պատրիարք: Ե. ու. Ե. երկրի պաշտոն. եկեղեցին էր մինչև 1974-ը, երբ գահընկեց է արվել կայսրը, և հաստատվել համայնավարական վարչակարգ: Հեղափոխությունից քիչ անց եկեղեցին և պետությունը պաշտոնապես բաժանվել են, և եկեղեցապատկան շատ հողեր պետականացվել: Համայնավար. կառավարության տապալումից (1991) հետո եկեղեցին դուրս է եկել մեկուսացած վիճակից և սկսել ավելի գործուն մասնակցել երկրի կյանքին: Հովանավորում է կարիքավորների օգնությանն ուղղված մի շարք ծրագրեր, որբանոցներ, աշխուժացնում հոգևոր. եկեղեց. գործունեությունը: Եթովպիայում եկեղեցին ունի 12 թեմ, երկրից դուրս՝ ԱՄՆ-ում, Լատ. Ամերիկայում, Արևմտյան Եվրոպայում և այլուր, ևս ունի թեմեր: Ե. ու. Ե-ու բարձրագույն մարմինը Եթովպական Սուրբ սինոդն է, որն ընտրում է պատրիարքին, իրավասու է պաշտոնանկ անել թեմերի առաջնորդներին:

Ե. ու. Ե-ու պատրիարքն է Աբունա Պաուլոսը (1992-ից, եկեղեցու անկախացումից հետո 5-րդ պատրիարքը):

Ե. ու. Ե-ու կարևոր հաստատություններից է վանական կառույցը: Վանական դրությունը հիմնված է Եգիպտոսի անապատական հայրերի (տես *Անապատականություն*) օրենսդրության վրա, որին ցայսօր հետամուտ են առավել նախանձախնդիր որոշ վանականներ: Վաղ միջնադարից գործում են երկու վանական միաբանություններ՝ Անտոնյան ու Եվստաթյան, որոնց միջև երբեմնի հակամարտությունն այժմ վերացել է: Անտոնյան միաբանության առաջնորդը ներկայումս Եթովպիայի վանական միաբանությունների ընդհանուր ղեկավարն է: Վանական հայրերը մեծապես նպաստել են հաբեշական քրիստ. մշակույթի, դրականության զարգացմանը: Նրանց ջանքերով բազմաթիվ թարգմանություններ են կատարվել ղպտերենից, հուն-ից, ասոր-ից սեփական գեեզերեն (բառացի՝ բերովի) լեզվի, որն ազգակից է արաբ-ին: Բացի Աստվածաշնչից (որ հրատարակված է ժողովրդին մատչելի ամհարերեն) թարգմանվել են եկեղեց., ծիս. մատյաններ, այդ թվում՝ *Կյուրեղ Ալեքսանդրացու* Պատարագամատույցը, որով և ցարդ առաջնորդվում է Ե. ու. Ե.:

Պաշտամունքը և ծեսերը: Ե. ու. Ե. ունի պաշտամունքային և ծիս. որոշ առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է Արևելքի մյուս եկեղեցիներից (նմանվելով բացառապես Ղպտի եկեղեցուն): Դրանք դրսևորվում են Հին կտակարանից հայտնի հրեական որոշ սովորությունների կիրառմամբ: Այսպես, Ե. ու. Ե. սրբորեն կատարում է թլփատությունն ու մաքրության օրենքը: Հինկտակրանային հայեցողության դրոշմն է կրում նաև շաբաթ և կիրակի օրերի տոնակատարումը, ինչպես նաև սուրբ և անսուրբ կենդանիների զատորոշումը: Ե. ու. Ե-ում տարվա 250 օրը պահոց օրեր են: Ծիս. որոշ սովորություններ ևս վերցվել են հրեական ծիսակարգից: Ղևտացիների (հրեա հոգևորականներ) նման Ե. ու. Ե-ու սպասավորները պարում են *Ուխտի տապանակի* առջև, ձախ ձեռքում՝ դավազան, իսկ աջում՝ բոժոժներ կրելով: Մինչդեռ Ե. ու. Ե-ում թմբուկի կիրառումն ունի հեթանոս. ծագում: Աստվածաշնչի հուն. Յոթանասնից թարգմանության կանոնից զատ Ե. ու. Ե. ընդունում է նաև մի շարք հրեական և քրիստ. *պարականոն գրքեր*, որպիսիք են Ենովքի գիրքը և Կուֆալեն (Հոբելյանների գիրքը):

Ճարտարապետությունը և արվեստը: Թեև Ե. ու. Ե-ու ճարտ-ը հավատարիմ է սկզբ. բազիլիկ, քառանկյուն, խաչաձև ոճին, այնուամենայնիվ, դրան զուգահեռ մշակել է իր ուրույն ոճը՝ ութանկյուն օղակաձև: Հնագույն եկեղեցին Աքսումի Մայր տաճարն է, որը նվիրված է Սիոնի ս. Կույս Աստվածածնին: Տաճարի խորանում պահվում է Ուխտի տապանակը: Ենթադրվում է, որ Սաբայի (Եթովպիա) Մաքեղա թագուհու [որը ամուսնացել էր Իսրայելի թագավոր Սողոմոնի հետ (Գ Թագ. **10.**1–13, Բ Մնաց. **9.**1–12, Մատթ. **12.**42)] ժամանակներից (Ք.ծ.ա. X դ.) ի վեր Ուխտի տապանակը Երուսաղեմի Սողոմոնյան տաճարից փոխադրվել է Եթովպիա (Աքսումի

Մայր տաճար), որտեղ երկար ժամանակ խնամքով պահվել է՝ հետագայում բացառիկ կարևոր տեղ գրավելով եթովպացիների աստվածապաշտ., ծիս. ըմբռնման մեջ: Պատմ. նշանակություն ունեն մասնավորապես Լալիբելայի ժայռափոր, զանգվածեղ, այնուազարդ, կամարակապ տաճար-եկեղեցիները: Կան 9 նման եկեղեցիներ՝ իրենց ոճով խիստ մոտիկ Եգիպտոսի հեթանոս. տաճարներին: Դրանք իրար հետ կապված են գետնուղիների միջոցով: Ի տարբերություն ղպտական վանքերի, որոնք կառուցված են Եգիպտոսի անապատներում, եթովպականները գտնվում են լեռների անմատչելի բարձունքներում (օր., VII դ. կառուցված Տըպրա Տամո վանքը): Սրբանկարչությունը ներկայացնում է Աստվածաշնչի պատմությունը: Ե. ու. ե-ու պատկերագրությունն ընդունում է ս. *Գևորգ* զորավարի ու վիշապի, ինչպես նաև՝ զանազան սրբերի նկարները: Պատկերագրությունն աչքի է ընկնում զուտ ազգ. ոճով, որը հատկանշվում է դեպքի սոսկական նկարագրությամբ, հեռապատկերի բացակայությամբ և վառ գույներով:

Ուսումնական հաստատությունները: Ե. ու. ե-ու բարձրագույն ուս. հաստատությունն է Եթովպական ուղղափառ աստվածաբանության ֆակուլտետը՝ Երրորդության քոլեջը, որը գործում էր որպես Ադիս Աբեբայի համալսարանի մասնաճյուղ: Երբ 1974-ին նոր կառավարությունը փակել է այն (վերաբացվել է 1994-ին), Ադիս Աբեբայում բացվել է Սուրբ Պողոսի քոլեջը: Հոգևորականներին համապատասխան կրթություն տալու նպատակով 1990-ական թթ. հիմնվել են ևս վեց հոգևոր ուս. հաստատություններ՝ «Հոգևորականության վերապատրաստման կենտրոններ»:

Գրկ. Լոոֆս, Հաբեշների՝ իբր մի հին Արևելյան եկեղեցու բնորոշ գծերը և ազգային առանձնահատկությունը, «Արարատ», 1896, էջ 299–302, 348–353: Թուրշյան Հ., Հաբեշ կրոնական գործիչ Ս. Եվստաթեոսը և Հայ եկեղեցին, «Էջմիածին», 1956, № 4–6: Նույնի, Հայ-հաբեշական եկեղեցական առնչություններ, «Էջմիածին», 1956, № 8–9, № 11–12: Ռոբերսոն Ռ., Եթովպական Ուղղափառ եկեղեցի (հայերենի փոխադրեց Բ. Նանյանը), «Էջմիածին», 1999, № 5–6:

Զավեն արք. Զինչինյան (Եգիպտոս)
Հակոբ Քյոսեյան

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Եգիպտոսի թեմ* հոդվածում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳՐԱՎՄԱՆ ՕՐԵՆՔ 1903, ընդունել է Ռուսաստանի կառավարությունը՝ հունիսի 12-ին: Օրենքի համաձայն, Հայ եկեղեցուն և հոգևոր հաստատություններին պատկանող ամբողջ անշարժ գույքը (այգիները, վարելահողերը, մարգագետինները, արոտավայրերը, անտառները, առևտր. կրպակները, ջրաղացները, արհեստագործ. ձեռնարկությունները ևն) և դրամական ունեցվածքը անցնում էին պետության տնօրինությանը: Պետականացված գույքից և դրամական միջոցներից ստացված եկամուտներից բաժին էր հանվելու դրանց իրավատիրոջը՝ հայ հոգևոր հաստատություններին:

Օրենքն այդ ժամանակաշրջանում ռուս. ինքնակալության վարած ազգ. քաղաքականության դրսևորումն էր, որը նպատակ ուներ հայկ. մշակութ. և լուսավոր. կենտրոնները զրկել նյութ. օժանդակությունից և արագացնել հայ ժողովրդի ռուսացման գործընթացը, հայ հոգևորականությանը վերածել պետությունից նպաստ ստացող հնազանդ պաշտոնեության:

Ե. գ. բ. օ. բուռն զայրույթ է առաջացրել հայ բնակչության մեջ: Շարժման գլուխ է կանգնել Ամենայն հայոց կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցին*, որն ամենուր հրահանգներ է ուղարկել՝ չենթարկվել իշխանություններին և ծառանալ նրանց դեմ: Օրենքի դեմ հանդես են եկել նաև հայ ազգ-քաղ. կուսակցությունները, ինչպես նաև՝ սոցիալ-դեմոկրատները: Անդրկովկասի մի շարք քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Կարսում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Ելիզավետպոլում, ինչպես և բազմաթիվ գյուղերում տեղի են ունեցել զանգվածային ցույցեր, ընդհարումներ ժողովրդի և ոստիկանության ու զորքերի միջև: Ցար. մի շարք պաշտոնյաներ ահաբեկվել են: Հայերի հակացար. ելույթները համաժող. բնույթ են ստացել: Արտերկրի հայությունը նույնպես բազմաթիվ բողոքներ է հղել Ս. Էջմիածին և Սանկտ Պետերբուրգ:

Սակայն կառավարությունը հետ չի կանգնել իր որոշումից: Մինչև 1903-ի վերջը օրենքն ի կատար է ածվել: Ըստ պաշտոն. տվյալների, Տավրիկյան, Խերսոնի, Բեսարաբիայի, Ատրախանի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի, Սևծովյան նահանգներում, Դոնի, Կարսի, Բաթումի, Թերեքի մարզերում և Զաքաթալայի օկրուգում բռնագրավվել է շուրջ 145 հզ. դեսյատին հող (որից ավելի քան 83 հզ-ը՝ Ելիզավետպոլի և 34 հզ-ը՝ Երևանի նահանգ-

ներում), 923 ոչ հողային հասութաբեր ունեցվածք և 1.775,8 հզ. ռուբլի կանխիկ դրամ: Դրանից հետո Հայ ժողովրդի պայքարն ընդունել է այլ ձևեր: Նախկին վարձակալները հրաժարվում էին գույքի շահագործումից, գյուղացիները փչացնում կամ ծածուկ Ս. Էջմիածնին էին հանձնում հավաքված բերքը: Արդյունքում սպասված 300 հզ. ռուբլու դիմաց բռնագրավված գույքից 1904-ին ստացվել է միայն 133 հզ. ռուբլու եկամուտ: Հնազանդության փոխարեն հայ ժողովուրդն ավելի սերտ է համախմբվել իր եկեղեցու շուրջ, ցուցաբերել իր նվիրվածությունը ազգային հոգևոր արժեքներին:

Համաժող. բուռն պայքարի և Ռուսաստանում սկսված հեղափոխության ազդեցության տակ ցարիզմն ստիպված էր նահանջել: 1905-ի օգոստ. 1-ին Նիկոլայ II ցարը ստորագրել է եկեղեց. գույքը վերադարձնելու մասին հրամանագիրը, որով միաժամանակ թույլատրվում էր վերաբացել հայկական դպրոցները:

Գրկ. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), Ե., 1970: Համբարյան Ա. Ս., Հայոց եկեղեցական բռնագրված գույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903–1905 թթ., «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1961, № 10:

Ագատ Համբարյան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, հոգևոր դասի ներկայացուցիչների հավաքներ եկեղեցական, վարչական-կազմակերպչական, կանոնական, ծիսադավանական, բարոյական, կարգապահական և այլ հարցեր քննելու համար: Դավանաստվածաբան. տեսակետից Ե. ժ. մասն են *Սուրբ Հոգու*, որ ապրում է եկեղեցում: Եպիսկոպոսներն ու վարդապետները հավաքվում են Ս. Հոգու թելադրմամբ և այն հավատով, որ որոշումներն ընդունվում են Ս. Հոգու առաջնորդությամբ. «...հաճելի թվաց Սուրբ Հոգուն և մեզ...» (Գործք **15.**28), ասում են ժողովականները միմյանց՝ հետևելով առաքյալների օրինակին:

Ե. ժ. բաժանվում են երկու մեծ խմբի՝ կանոնադիր և ոչ կանոնադիր: Կանոնադիր Ե. ժ-ի ընդունած *կանոնները* ձևավորել են կանոնական կամ *եկեղեցական իրավունքը*, որի հիման վրա կազմվել են կանոնական ժողովածուներ (Հայոց համար այդպիսին է «*Կանոնագիրք Հայոցը*»): Կանոնները եղել են պարտադիր և կիրառվել են ինչպես եկեղեցու, այնպես էլ՝ պետության հեղինակությամբ և անունից: Ոչ կանոնադիր Ե. ժ. քննարկել են ամենատարբեր հարցեր՝ դավան., ծիսական, ազգ., եկեղեց., միջեկեղեց. փոխհարաբերություններին առնչվող ևն, ընդունել որոշումներ, գրել թղթեր, նամակներ, պաշտոն. ուղերձներ, շրջաբերականներ: Նրանք ունեցել են կարևոր նշանակություն որևէ եկեղեցու դիրքորոշումն այս կամ այն հարցի վերաբերյալ հստակեցնելու, ծիսադավան. և եկեղեց. խնդիրներում կողմնորոշվելու համար: Շատ որոշումներ էլ ունեցել են զուտ բարոյական նշանակություն: Հայ եկեղեցին իր դավան. և վարդապետական հիմն. սկզբունքները, ի տարբերություն Կաթոլիկ եկեղեցու, կանոնի աստիճանի չի բարձրացրել (դոգմա) և չի պարտադրել:

Ժողովների միջոցով եկեղեց. հարցեր վճռելը սկսվել է դեռևս առաքյալների ժամանակ, երբ նրանք ժողովվել են Երուսաղեմում (51-ին) և որոշել թույլ չտալ քրիստոնյաներին կատարելու մովսիսական ծեսերը (թլփատություն, հեռու մնալ կուռքերին զոհաբերված կենդանիներից ևն, Գործք **15.**1–29): Առաքյալների հաջորդները II–III դարերում շարունակել են նույն շավղով գնալ և հարցերը ժողովով վճռել: Նրանք մասնավոր տեղական ժողովներ են գումարել Պաղեստինում, Փոքր Ասիայում, Հռոմում, Եդեսիայում, Հունաստանում՝ ս. Զատիկը միասին տոնելու վերաբերյալ, և 256-ին Կարթագենում՝ կրկնակնունքի խնդիրը որոշելու համար: Այդ կարգն ընդհանրացել է քրիստոնյա բոլոր ժողովուրդների մեջ, մինչև անգամ սահմանվել, որ տարին երկու անգամ ժողովներ լինեն ամենուրեք, և եկեղեց. խնդիրները քննեն ու լուծեն դրանց միջոցով («Կանոնք առաքելականք», 27-րդ կանոն): Իսկ *Նիկիայի Ա տիեզերական ժողովի* 6-րդ կանոնը սահմանել է, որ տարեկան երկու ժողովներից առաջինը լինի Մեծ պահքից առաջ, երկրորդը՝ աշնանը: Այս սկզբունքն ընդհանուր առմամբ մտավ նաև Հայոց մեջ, բայց ճշգրտությամբ չգործադրվեց. պատմաքաղ. հանգամանքների բերումով Հայաստանում ոչ միայն տարին երկու անգամ, այլ տասնյակ տարիներ Ե. ժ. չէին գումարվում:

Ե. ժ. իրենց նշանակությամբ լինում են երեք տիպի՝ տեղական արտաքին, տեղական ազգային և *տիեզերական ժողովներ*: Առաջին երկուսը կոչվում են նաև մասնավոր ժողովներ: Բոլոր տեղական արտաքին և տիեզերական ժողովները կանոնադիր ժողովներ են:

Տեղական արտաքին Ե. ժ., *Ընդհանրական եկեղեցու* տեղական մասնավոր ժողովներ, որոնք չեն հռչակվել տիեզերական, բայց ընդունած որոշումներն ու կանոնները դուրս են եկել մեկ առանձին մասնավոր աթոռի կամ թեմի շրջանակներից և ստացել համաքրիստ. նշանակություն: Այդպես էր մինչև *Քաղկեդոնի ժողովը*, երբ Ընդհանրական եկեղեցին միասնական էր, չկային պառակտումներ, և մասնավոր ժողովներն ընդունում էին բոլոր քրիստոնյա եկեղեցիները: Այդպիսիք են Անկյուրիայի (313–315), Նեոկեսարիայի (314–315), Գանգրայի (340 կամ 370), Կեսարիայի (Անտիոքի, 341), Սարդիկայի (344–347), Լաոդիկիայի (365) ժողովները: Հայ եկեղեցու ընդունած այս 6 տեղական արտաքին ժողովները հիշվում են 1178-ի Հռոմկլայի ժողովի ժամանակ Հայոց կաթողիկոս *Գրիգոր Դ Տղայի* գրության մեջ՝ ուղղված ժողովականներին: Տեղական 6 ժողովների կանոններն առանձին կանոնախմբով մտել են «Կանոնագիրք Հայոցի» մեջ, և Հայ եկեղեցին դրանք համարում է հայոց եկեղեց. իրավունքի կարևոր աղբյուր: Հռոմի կաթոլիկ եկեղեցին ընդունում է 7 մասնավոր ժողով (նաև 256-ի Կարթագենի ժողովը), իսկ հույներն ընդունում են 8 մասնավոր ժողով (Կարթագենի և 394-ի Կ. Պոլսի ժողովները): Վաղ ժամանակներում Կեսարիայում եղել է արլ. և արմ. եկեղեցիների ժողով՝ Զատկի տոնը կանոնավորելու համար, բայց այնտեղ կանոններ չեն սահմանվել: Հռոմեացիներ Դիոնիսիոս Կրտսերի՝ VI դ. սկզբին, և Հովհան Սխոլաստիկոսի՝ 565-ին հուն-ից լատ. թարգմանած և կարգավորած ժողովածուների մեջ կային 10 ժողովների կանոններ, որոնցից 4-ը՝ տիեզերական և 6-ը տեղական ժողովներ էին: Հայերը նույնն ընդունել են հետևյալ փոփոխությամբ. 4 տիեզերական ժողովից դուրս են թողել Քաղկեդոնինը, իսկ տեղական 6 ժողովից՝ Անտիոքինը (անհայտ պատճառով), և նրա փոխարեն ավելացրել գոյություն չունեցող Կեսարիայի ժողովը:

Տեղական ազգային Ե. ժ., քրիստոնեական որևէ դավանանքի պատկանող առանձին եկեղեցու հոգևորականության կամ հոգևորականության և աշխարհիկ դասի ներկայացուցիչների հավաքներ, որտեղ քննարկված հարցերը և ընդունված որոշումներն ու կանոնները դուրս չեն գալիս տվյալ եկեղեցու հոգևոր վարչատարածքային իրավասության սահմաններից: Հայոց մեջ տեղական Ե. ժ., ըստ իրենց նշանակության և իրավասությունների, լինում են եպիսկոպոսական (եպիսկոպոսաց) և ազգ-եկեղեցական: Եպիսկոպոսական ժողովը Հայ եկեղեցու կանոնադիր մարմինն է՝ նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի: Հնում, ըստ առաքելական կանոնի, Հայաստանում ևս տարին երկու անգամ Հայոց կաթողիկոսը 12 եպիսկոպոսներով շրջել է ամբողջ երկրում, եպիսկոպոսական ժողով գումարել, եկեղեց. կյանքում կարգ ու կանոն հաստատել: Իսկ եպիսկոպոսները Նավասարդի տոնին՝ Շահապիվանում, Ս. Կարապետի տոնին՝ Մուշում հավաքվել են տարին 1–2 անգամ՝ եկեղեցական-բարեկարգական հարցերով, և քննարկվածներից կարևորագույնները ներկայացրել կա՛մ Հայոց կաթողիկոսին՝ ի վավերացումն և կա՛մ Ազգ. ժողովին՝ ի հավանություն: Սակայն հետագայում այդպիսի ժողովներ ավելի քիչ են գումարվել: Նոր ժամանակներում հիշատակելի են 1917-ի հունիսին՝ Ս. Էջմիածնում Գևորգ Ե Սուրենյանցի, 1956-ի մարտին՝ Կահիրեում (Եգիպտոս) Վազգեն Ա Պալճյանի հրավիրած եպիսկոպոս. ժողովները, որոնցում, ի թիվս այլ կարևոր հարցերի, նպատակ է դրվել վերականգնել առաքելական կանոնը ժողովներ գումարելու վերաբերյալ: 1956-ի հոկտ. Ս. Էջմիածնում հրավիրված ժողովը որոշել է տարին գոնե մեկ անգամ գումարել եպիսկոպոս. ժողով:

Կահիրեի ժողովի որոշմամբ հստակ սահմանվել են եպիսկոպոս. և ազգ. Ե. ժ-ի իրավասությունները, համաձայն որի, Հայ եկեղեցու որևէ դավան. և վարդապետ. խնդիր նախ պետք է քննի եպիսկոպոս. ժողովը և հետո միայն ներկայացնի ազգ-եկեղեց. ժողովին և Ամենայն հայոց կաթողիկոսին՝ ի վավերացումն: Հայ եկեղեցում, որին խորթ է կղերապետությունը, ժողովներին հոգևորականության հետ միասին մասնակցել է աշխարհիկ դասը՝ թագավորներ, իշխաններ, ազատներ, ժողովրդի ներկայացուցիչներ: Հնում (IV–V դդ.) այդ հավաքները կոչվել են նաև աշխարհաժողովներ, ավելի ուշ՝ ազգ-եկեղեց. ժողովներ, որոնք գումարվել են արտակարգ՝ կաթողիկոսական ընտրության, քաղ. ճգնաժամային կացությունների, հանդիսավոր արարողությունների ժամանակ և ազգ. ընդհանուր նշանակություն ունեցող կարևորագույն հարցերի քննարկման համար: Ազգ-եկեղեց. ժողովը Հայ եկեղեցու գերագույն օրենսդիր մարմինն

ԵԿԵՂԵՑ. է՝ նախագահությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի:

Գրկ. Մելիք-Թանդյան Ն., Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք 1, Շուշի, 1903:

Արտաշես Ղազարյան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, կանոնական իրաւունք, եկեղեցական օրենսգիտութիւն, եկեղեցու անդամների՝ միմյանց և եկեղեցու հանդեպ ունեցած կանոնական (տես *Կանոն*) հարաբերությունների և նորմերի, իրավունքների և պարտավորությունների համակցություն, եկեղեցու կարգ ու կանոնի, վարչական, կազմակերպչական, բարոյակրթական և ուղղիչ միջոցների ամբողջություն: Արտաեկեղեց. իմաստով Ե. ի. այն օրենքների և սահմանումների ամբողջությունն է, որով որոշվում է եկեղեցու հարաբերությունն այլ մարմինների հետ (պետություն, այլ եկեղեցիներ, կազմակերպություններ ևն): Ե. ի-ով են կարգավորվել նաև քաղաքացիական-իրավական, մասնավորապես՝ ամուսնաընտանեական հարաբերությունները:

Ե. ի. չի վերաբերում եկեղեցու ներքին էությանը, հավատին և բարոյական օրենքներին, այլ առնչվում է արտաքին կազմակերպությանը, երևույթներին, տեսանելի կողմին: Եկեղեցու սահմանած ոչ բոլոր պարտականություններն են իրավական բնույթի: Աղոթելու, ապաշխարելու, մարդու վրա խորհուրդների ներգործությունը և ներանձնական այլ պարտավորություններ կրոնաբարոյական են և իրավաբան. սահմանումներով չեն որոշվում: Սակայն խորհուրդների գործադրությունը կատարվում է արտաքին երևույթներով և ծիսակատարությամբ, որոնք ենթակա են կանոնակարգման: Եկեղեցու բարոյական օրենքներն իրենց մեջ ամփոփում են քրիստոնեության ընդհանուր և մնայուն գաղափարներ, իսկ Ե. ի. և եկեղեց. կանոնները շոշափելիորեն արտահայտում են այդ գաղափարները որոշակի արտաքին ձևերով, դրանք հարմարեցնելով կյանքի և ժամանակի պայմաններին: Քրիստ. բարոյականության նորմերը միշտ և բոլորի համար նույնն են, իսկ Ե. ի. տարբեր ժամանակներում և երկրներում՝ տարբեր:

Բյուզանդիայում Ե. ի. համակարգվել է VI դ.՝ Հուստինիանոս I-ի (527–565) օրոք: Արևմտյան Եվրոպայում կանոնական իրավունքի առաջին համակարգումը ձեռնարկվել է XII դ., Բոլոնիայում, հետագայում, դրա հիման վրա, լրացված և մշակված հրատարակվել է 1582-ին, Հռոմում (Corpus juris canonici): Արևմուտքում կանոնական իրավունք հասկացությունը չի համապատասխանել հույների ընկալումներին: Corpus juris canonici-ն բովանդակել է հոգևոր իշխանության բոլոր իրավական որոշումները՝ թե՛ եկեղեց., թե՛ քաղաքացիական: Իսկ հույների մոտ կանոնական իրավունքն ընկալվել է որպես միայն եկեղեցավարչ. կարգադրությունների, հրահանգների ամբողջություն, որը չի ներառում եկեղեցու աշխարհական անդամների քաղաքացիական հարաբերությունները:

Հայաստանում Ե. ի. առաջին անգամ համակարգել է *Հովհաննես Գ Օձնեցին*՝ կազմելով առաջին կանոնագիրքը (տես «*Կանոնագիրք Հայոց*»): Հայոց մեջ կանոն բառը վերաբերում է եկեղեց. հրահանգներին և օրենքներին, նաև կաթողիկոս. այն կոնդակներին, որոնք զուտ եկեղեց. հրահանգներ են ամփոփում և պարտադիր նշանակություն ունեն, ինչպես օր., *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* 1868-ի «Կանոնական կոնդակը»:

Հայ Ե. ի-ի աղբյուրները բաժանվում են 2 մեծ խմբի՝ ընդհանուր և մասնավոր կամ ազգային: Ընդհանուր են այն աղբյուրները, որոնք ընդունում են բոլոր եկեղեցիները՝ Սուրբ Գիրք, *ավանդություն*, առաքելական կանոններ, երեք *տիեզերական ժողովների*, վեց տեղական ժողովների (տես *Եկեղեցական ժողովներ*), *եկեղեցու հայրերի* կանոններ: Մասնավոր աղբյուրները ազգ-եկեղեց. ժողովների և Հայ եկեղեցու ս. հայրերի կանոններն են, կաթողիկոս. կարգադրությունները, կանոնագրքերը: Որոշակի ժամանակաշրջանի համար Ե. ի-ի աղբյուր կարող են դիտվել նաև պետ. օրենքներն ու կանոնադրությունները, որոնք սահմանվել են դերիշխան պետության միջամտությամբ: Հայոց համար այդպիսիք են «*Պոլոժենիե*»-ն և *Ազգային սահմանադրությունը*:

Գրկ. Մելիք-Թանդյան Ն., Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք 1, Շուշի, 1903: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, 2, Ե., 1964, 1971:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, քրիստոնեական կրոնի պաշտամունքային շենքերի, այլ շինությունների և դրանց համալիրների կառուցման արվեստ: Հայաստանում Ե. ճ. ձևավորվել է IV–VII դդ., երբ ստեղծվել են եկեղեց. շենքերի դրեթե բոլոր այն հորինվածքները, որոնք կիրառվել են նաև հետագայում:

301-ին Հայաստանն աշխարհում առաջինը ընդունելով քրիստոնեությունը որպես պետ. կրոն՝ սկզբից-ևեթ ինքնուրույն է մշակել եկեղեց. շենքերի տիպերը:

Ե. ճ. Հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի կարևորագույն բնագավառն է, նրա բազմաթիվ կառույցներում ցայտուն արտահայտվել են հայկ. ճարտ-յան ինքնատիպությունը, բարձր մակարդակը և գեղ. հարուստ ավանդները:

Քրիստոնեության ընդունումից հետո առաջին տասնամյակները ողջ երկրում նոր պաշտամունքի շենքերի բուռն կառուցման շրջան են եղել: Ըստ պատմիչներ Զենոբ Գլակի և Փավստոս Բուզանդի՝ *Գրիգոր Ա Լուսավորիչը* և *Տրդատ Գ* թագավորը հեթանոս. տաճարների տեղում են կառուցել առաջին եկեղեցիները՝ դրանով իսկ կապելով դարերով սրբագործված վայրերը նոր կրոնի հետ: Ընդ որում տաճարների մի մասը վերակառուցվելով՝ փոխարկվել է եկեղեցու, մի մասն էլ ավերվել է, և նրանց հիմքերի վրա եկեղեցի է կառուցվել: Այդ ընթացքում կրկնվել է հեթանոս. տաճարի երկայնական՝ արլ-ից արմ. ձգված հորինվածքը, միայն բեմը արևմուտքից տեղափոխվել է արևելք: Ագաթանգեղոսը միանգամայն որոշակի հայտնում է Գրիգոր Ա Լուսավորչի՝ նորակառույց եկեղեցիների առաջին ճարտարապետ լինելու մասին:

Հայաստանի՝ մեզ հասած հնագույն եկեղեցիները միանավ դահլիճներ են և, ավելի սակավ, եռանավ բազիլիկներ: IV–VI դդ. տարածված միանավ եկեղեցիների (Լեռնակերտի, Թուղի, Ագարակի, Շենիկի, *Կարենիսի վանքի*) մեծ մասի խորանը ներգծված է շենքի արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ, սակայն կան նաև ընդհանուր ծավալից դուրս եկող, արտաքուստ կիսաշրջանաձև կամ բազմանիստ խորանով եկեղեցիներ (Լուսակերտի, Ջարջառիսի, Ոսկեվազի, Փարպիի, Բայբուրդի): IV դ. վերջին եկեղեցիների խորանի մեկ կողքին կամ երկու կողքերին կառուցվել են սենյակներ՝ եկեղեցում քահանայի բնակվելու վերաբերյալ կաթողիկոս *Սահակ Ա Պարթևի* կանոններին համապատասխան: IV–VI դդ. միանավ եկեղեցիների առանձին ենթատիպն են արտաքին սրահ ունեցողները: Արլ. պատում հաճախ փոքրիկ խորանով այդ սրահները նախատեսվել են դեռ չմկրտվածների և ապաշխարողների համար (Գառնի, *Թանահատի վանք*, Կուրթան, Վարդաբլուր):

Վաղ միջնադարում Ե. ճ-յան մեջ եռանավ բազիլիկները տարածում չեն ստացել. այդ ժամանակաշրջանից հայտնի են միայն յոթ այդ տիպի եկեղեցիներ (ընդ որում VI դարից մինչև XVII դ. բազիլիկներ այլևս չեն կառուցվել): Դրանք բոլորն էլ պատկանում են, այսպես կոչված, «արևմտյան» տիպին. միջին նավը բարձր է կողայիններից և ունի առանձին ծածկ: Եռանավ բազիլիկները, չնայած փոքրաթվությանը, ունեն բազմապիսի ճարտ. լուծումներ: Աղցի բազիլիկն ունի երկու զույգ մույթ, *Երերույքի Ս. Կարապետ վկայարանը*, Քասաղի, Աշտարակի բազիլիկները՝ երեք զույգ, *Ծիծեռնավանքի* և Եղվարդի բազիլիկները՝ չորս զույգ, իսկ Հայաստանի ամենախոշոր՝ *Դվինի Ս. Գրիգոր եկեղեցին* (Դվինի Կաթողիկե)՝ 7 զույգ մույթ: Տարբեր է նրանց Ավագ խորանի շուրջը եղած սենյակների քանակը: Այնասարահով են շրջապատված եղել Երերույքի և Դվինի բազիլիկները: Որոշ միանավ ու եռանավ եկեղեցիներ նախապես ունեցել են փայտե ծածկ, որը VI–VII դդ. փոխարինվել է թաղով:

Հայաստանի վաղքրիստ. Ե. ճ-յան մեջ հստակ նկատվում է նրա զարգացման հիմն. գիծը՝ գմբեթավոր, հիմնականում՝ կենտրոնագմբեթ եկեղեցիների կառուցումը: Ճարտ. այս հորինվածքն ունի տեղական արմատներ՝ քարե գմբեթների ակունքները բխում են հայկ. ժող. բնակելի տների երդիկով, փայտե գմբեթով ծածկերից (Ք.ծ.ա. V դ. այն նկարագրել է հույն պատմագիր Քսենոփոնը):

Հայաստանի հնագույն գմբեթավոր եկեղեցին *Էջմիածնի Մայր տաճարն* է՝ ողջ քրիստ. Ե.ճ-յան մեջ հանգուցային մի կառույց, որի հորինվածքը հետագայում տարածվել է նաև Եվրոպայում: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի նկարագրության՝ Մեծ Հայքի Այունիք նահանգի կենտրոն Շաղատի եկեղեցին (IV դ.) եղել է խորանարդաձև գմբեթով, ուղղանկյուն խորաններով խաչաձև կառույց: Հայաստանում եկեղեց. շենքի խաչաձևությունը՝ քրիստ. կրոնի խորհրդանիշը, առավել հստակ արտահայտվել է «ազատ խաչ» տիպի գմբեթավոր եկեղեցիներում, որոնք ստորաբաժանվում են երեք ենթատիպի՝ քառախորան, եռախորան և միախորան (միայն արլ. կողմում): Դրանց լավագույն օրինակներն են VII դարից անփոփոխ պահպանված՝ Աշտարակի *Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցին* և վերձիգ համաչափու-

թյուններով *Լմբատավանքի* Ս. Ստեփանոս եկեղեցին: Ներսից և դրսից խաչաձև հորինվածքի զարգացման հաջորդ փուլն է ներկայացնում *Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցին*, որի գմբեթատակ տարածությունը զգալի ընդարձակվել է: Այս տիպին են պատկանում նաև VII դ. Ոսկեվարի Ս. Աստվածածին, Արթիկի Ս. Գևորգ և *Հառիճավանքի* Ս. Գրիգոր եկեղեցիները:

Հայաստանում եկեղեց. շենքի կենտրոնագմբեթ համակարգը VI դ. նոր ուղղություն է ստացել՝ միջանկյալ խորշերով և անկյունային սենյակներով քառախորանի ձևով, որի ամենավաղ թվագրված օրինակը *Ավանի կաթողիկոսության* Ս. Հովհաննես եկեղեցին է (VI դ. վերջ): Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը այս հորինվածքն առավել կատարյալ կերառել է հայկ. ճարտ-յան գլուխգործոց՝ *Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքի* եկեղեցում: Նույն տիպին են պատկանում Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցին, *Արծվաբերի Ս. Աստվածածին վանքը, Զորադիրի Ս. Էջմիածին եկեղեցին*, Արամուսի Ծիրանավոր, Գառնհովտի Ս. Գևորգ եկեղեցիները: VI–VII դդ. հայկ. կենտրոնագմբեթ եկեղեցիների մեկ այլ տարբերակն են բազմախորանները, որոնց թվում են Արագածի Գրիգորաշեն, *Եղվարդի Ս. Թեոդորոս վանքի* և Իրինդի Ս. Աստվածածին եկեղեցիները:

Շրջանի մեջ ներգծված քառախորանի յուրօրինակ հորինվածք է մարմնավորել Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կառուցած *Զվարթնոց* տաճարը: Այն ունեցել է եկեղեց. շենքի նոր՝ եռայարկս ծավալային լուծում և VII դ. հայկ. Ե. ճ-յան մեծ նվաճումն է: Կենտրոնագմբեթ եկեղեցիների՝ Հայաստանում ստեղծված և կիրառված տիպերի նման բազմազանությունը, գմբեթատակ տարածության շուրջը ինտերիերի միավորման ձգտումը VII դ. հայկ. Ե. ճ-յան բնորոշ գծերն են, որոնք նրան առանձնացնում են քրիստ. աշխարհի մյուս ճարտ. դպրոցներից:

Հայաստանում վաղ միջնադարում կենտրոնագմբեթներից բացի կառուցվել են նաև երկայնական՝ բազիլիկատիպ եկեղեցիներ: Քառամույթ գմբեթավոր բազիլիկ են Տեկորի Ս. Սարգիս վկայարանը, *Օձունի Ս. Աստվածածին եկեղեցին, Էջմիածնի Ս. Գայանե վանքի* եկեղեցին, *Բագավանի Ս. Հովհաննես վանքը, Մրենի Կաթողիկե եկեղեցին*: Հայաստանում VII դ. մշակվել է խաչաձև, եռախորան գմբեթավոր բազիլիկի տիպը, որին պատկանում են Դվինի Կաթողիկե Ս. Գրիգոր եկեղեցին (վերակառուցումից հետո) և Թալինի Կաթողիկեն: Սակայն գմբեթավոր բազիլիկների ներսի մասնատումը առանձին կանգնած մույթերով նպատակահարմար չէր ծիսակատարության ժամանակ բեմի առջև աղոթասրահի միասնական տարածություն ունենալու առումով: Միաժամանակ, առանձին կանգնած մույթերը կամ սյուները շենքի թույլ տարրերն են երկրաշարժերի ժամանակ, և վաղ միջնադարում հայ ճարտարապետները հաղթահարել են երկայնական, բազիլիկ եկեղեց. շենքերի այդ թերությունը՝ ստեղծելով միանգամայն նոր՝ առանց միջանկյալ հենարանների «գմբեթավոր դահլիճ» տիպը: VII դ. այդ տիպի լավագույն կառույցներն են *Պտղնավանքը և Արուճի Ս. Գրիգոր եկեղեցին*, որոնց գմբեթները հենվում են երկայնական պատերին կից երկու զույգ հզոր որմնամույթերի վրա:

IV–VII դդ. հայ ճարտարապետները եկեղեցիներ կառուցելիս հիմնականում ուշադրություն են դարձրել արտաքին ճակատներին: Հարդարանքի տարրերով շեշտվել են. չքամուտքերով՝ դռները, հոնքաձև քանդակազարդ շրջանակներով՝ լուսամուտները, նախապես ատամնավոր, ապա կիսակամարիկներով դոտիներով՝ քիվերը: Ներսի պատերը սրբատաշ քարերից են և մեծ մասամբ՝ առանց որմնանկարների: Բազմաթիվ լայն պատուհաններով եկեղեցիների ներսը ողողվում է լույսով: Գմբեթների թմբուկներն արտաքուստ բազմանիստ են, գմբեթատակ քառակուսուց գմբեթին անցումը մինչև VII դ. սկիզբը իրականացվել է տրոմպներով, հետո՝ առագաստներով:

Ըստ V դարից գործող հայկ. եկեղեց. կանոնի՝ կառուցվելիք եկեղեցու ձևը հաստատել է եպիսկոպոսը: *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսի կանոններով եկեղեցու հատակագիծը գծվել է գետնին, 12 առաքյալներին խորհրդանշող 12 քարերով նշվել են եկեղեցու անկյունները, աբսիդը, մույթերը, մուտքերը, և քարերն օծվելուց հետո սկսվել է շինարարությունը: Վաղ միջնադարից մինչև XIV դ. եկեղեցիների նախագծումն իրականացվել է քարե մանրակերտներով: Շինարարությունն ավարտվելուց հետո եկեղեցին օծվել է և անվանակոչվել: Միջնադարում Հայաստանի եկեղեցիների մեծ մասը կոչվել է Աստվածածնի, ապա՝ Գրիգոր Լուսավորչի, ս. Հովհաննեսի, ս. Գևորգի, ս. Ստեփանոսի և այլ սրբերի անուններով: VII դ. ավարտվել է Ե. ճ-յան հայկ.

դպրոցի ձևավորումը, որին նպաստել է նաև VI դ. հայ և բյուզ. եկեղեցիների խզումը: IV–VI դդ. հայկ. ե. ճ. շատ ընդհանուր գծեր ունի հարևան քրիստոնյա երկրների ճարտ-յան հետ, բայց VII դարից այն դարձել է միանգամայն ինքնատիպ: Հայաստանում եկեղեց. շենքերի նոր ձևերը հայկ. ե. ճ-յան խոշոր ավանդն են ողջ քրիստ. ճարտ-յան մեջ:

VII դ. վերջին Հայաստանում հաստատված արաբ. ծանր լուծը երկու դար ընդհատել է երկրի զարգացման բնականոն ընթացքը: IX դ. վերջին, անկախության վերականգնումից հետո, նախադրյալներ են ստեղծվել ճարտ-յան զարգացման նոր փուլի համար: IX–XI դդ. Հայաստանի ֆեոդալ. մասնատվածությունը հանգեցրել է առանձին՝ Անիի, Սյունիքի, Վասպուրականի, Լոռու ճարտ. դպրոցների ձևավորմանը: Սկզբնապես եկեղեցիներ կառուցելիս, փորձի և շին. ավանդույթների կորստի պատճառով, կիրառել և կրկնել են VII դ. մշակած և հայտնի ձևերը՝ թաղածածկ դահլիճի (Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցի), «ազատ խաչի» (*Սևանավանք, Հայրավանք*), գմբեթավոր դահլիճի (*Շիրակավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցի*), մաստարայատիպ (*Կարսի Ս. Առաքելոց եկեղեցի*), հռիփսիմեատիպ (*Վարագավանքի* Ս. Աստվածածին եկեղեցի): Այդ ժամանակաշրջանի Հայաստանի Ե. ճ-յան մեջ առաջատար դեր է խաղացել երկրի մայրաքաղաք *Անիի* ճարտ. դպրոցը, որն ազդեցություն է ունեցել հայկ. ճարտ-յան զարգացման ողջ ընթացքի վրա. նրա մշակած ոճական ուղղությունը, հարդարանքի ձևերը տարածվել են երկրի նահանգներում, կախյալ թագավորություններում: Անիի ստեղծագործ. դպրոցի նվաճումներն անխզելիորեն կապված են միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ *Տրդատի* անվան հետ, որը կարևոր ավանդ է մուծել հատկապես Ե. ճ-յան ձևերի մշակման գործում: Անիում տարածում են գտել կենտրոնագմբեթ եկեղեցիների քառախորան ու վեցախորան ձևերը, որոնց շարքում իրենց ճարտգեղ. բարձր հատկանիշներով առանձնանում են *Անիի Ս. Առաքելոց եկեղեցին*, Աբուղամրենց Ս. Գրիգոր և Հովվի եկեղեցիները: Անիի ճարտ. դպրոցի ոճ. առանձնահատկություններից են եկեղեցիների արտաքին ճակատների և գմբեթների թմբուկների՝ կամարաշարով ձևավորումը, գմբեթների հովանոցաձև ծածկը: Անի քաղաքի կառույցներից բացի այս դպրոցի լավագույն գործերն են *Մարմաշենի վանքի, Խծկոնքի վանքի*, Ամբերդ ամրոցի Վահրամաշեն, *Հոռոմոսի վանքի, Բագնայրի վանքի* եկեղեցիները:

Անիից հետո իր նշանակությամբ երկրորդը Սյունիքի ճարտ. դպրոցն է, որը IX–XI դդ. ստեղծել է այնպիսի բարձրարվեստ գործեր, ինչպիսիք են *Բղենո Նորավանքի, Վահանավանքի, Գնդեվանքի, Որոտնավանքի, Ցաղացքար վանքի* եկեղեցիները և հռչակավոր կրոն., գիտ. և կրթ. կենտրոն *Տաթևի վանքի*՝ Հայաստանի այդ ժամանակաշրջանի ամենախոշոր՝ Ս. Պողոս-Պետրոս տաճարը:

Վասպուրականի ճարտ. դպրոցը X դ. ստեղծել է հայկ. միջնադարյան արվեստի գլուխգործոց, ճարտարապետ *Մանուելի* կերտած *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցին, որը երեք արվեստների՝ ճարտ-յան, քանդակագործության և որմնանկարչության ամենափայլուն օրինակն է:

IX–XIV դդ. հայկ. ե. ճ. հիմնականում զարգացել է վանքային համալիրներում: Միջնադարում կառուցվել է ավելի քան 1000 վանք, որը բավական մեծ թիվ է Հայաստանի նման ոչ մեծ երկրի համար: X–XI դդ. ստեղծվել է եկեղեց. շենքի նոր՝ «ներգծված խաչ» տիպը: Այն ունի ներսից խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով (հաճախ՝ երկհարկանի), արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք, որը դարձել է հայկ. վանքերի եկեղեցիների ճնշող մեծամասնության հիմն. ձևը: Հայ ճարտարապետները շարունակել են մեծ ուշադրություն դարձնել արտաքին ճակատների ձևավորմանը: Ե. ճ-յան մեջ գերակշռող է դարձել «գեղատեսիլ» ոճը, ավելացել են քանդակազարդ տարրերը, ճակատներում բազմազանություն է կիրառվել, չքամուտքերը ձևավորվել են չթաքարերով: Զարդաքանդակների հետ ավելացել են պատկերաքանդակները: Եկեղեցիները չափերով մեծ չեն, սակայն ունեն մոնումենտալ ձևեր: Որմնանկարները հազվադեպ են (*Հաղպատի վանքի* Ս. Նշան, Անիի *Տիգրան Հոնենցի եկեղեցի, Ախթալայի Ս. Աստվածածին վանքի, Քոբայրավանքի, Կիրանց վանքի* եկեղեցիներ): Հայկ. միջնադարյան եկեղեցիներին հատուկ չեն իկոնոստասները: Վանքերում եկեղեցիներից բացի (գրեթե բոլորը գմբեթավոր են) կառուցվել են աշխարհիկ շենքեր՝ գրադարաններ, դպրոցներ, հյուրատներ, սեղանատներ, բնակելի, տնտ., արտադր. կառույցներ:

X դ. հայկ. Ե. ճ. ստեղծել է իր նշանակությամբ եզակի շենք՝ *գավիթը*, որը կից է եկե-

ղեցուն և միաժամանակ ունի մի քանի կիրառություն: Նրա առաջացումը կապված է կաթողիկոս Սահակ Ա Պարթևի՝ V դարից ցայսօր գործող այն կանոնի հետ, որով արգելվում է հայկ. եկեղեցիներում թաղում կատարելը, և գավիթները ծառայել են նաև որպես տապանատուն: Վանքային համալիրների մասն է կազմում Հայաստանում IX դ. ձևավորված մեմորիալ հուշարձանի ինքնատիպ նոր ձև՝ *խաչքարը*, որը բացառիկ երևույթ է քրիստ. արվեստում:

Դարերի ընթացքում տարբեր ճարտարապետների կառուցած, բազմաբնույթ շինքերից կազմված հայկ. վանքերն աչքի են ընկնում իրենց բոլոր կառույցների ներդաշնակ փոխկապվածությամբ և շրջակա բնության հետ ողջ համալիրի ներդաշնակությամբ:

Հայաստանի բազմաթիվ վանքերից իրենց ճարտ-յամբ առանձնանում են Այրարատ նահանգում եզակի ժայռափոր շինություններով *Գեղարդավանքը*, Քասաղ գետի անդնդախոր ձորի եզրին կանգուն *Հովհաննավանքը* և *Սաղմոսավանքը*, *Կեչառիսի վանքը*, Արագած լեռան լանջին եռագմբեթ ուրվագծով *Տեղերի վանքը*, Շիրակում՝ Հառիճավանքը, Լոռիում՝ կրոն., գիտ. և կրթ. համահայկ. կենտրոններ Հաղպատի վանքը և *Սանահինի վանքը*, *Գոշավանքը*, *Հաղարծինի վանքը*, Վասպուրականում՝ *Նարեկավանքը* և Վարագավանքը: Արցախում են գտնվում հայկ. ամենախոշոր վանքերից մեկը՝ *Դադիվանքը*, և «XIII դ. հայկ. ճարտ. հանրագիտարան» համարվող *Գանձասարի վանքը*: Սյունիքի Վայոց ձոր գավառում՝ Արենիում և *Նորավանքում* XIII–XIV դդ. ստեղծագործել է այդ ժամանակաշրջանի խոշորագույն արվեստագետ *Մոմիկը*: XIII–XIV դդ. Հայաստանում ստեղծվել է եկեղեց. շինքի նոր՝ երկհարկ տիպը, որը զուգակցում է եկեղեցին *զանգակատան* հետ: Դրա օրինակներն են Գոշավանքի Ս. Հրեշտակապետաց, Եղվարդի Ս. Աստվածածին, Նորավանքի «Բուրթելաշեն» Ս. Աստվածածին, Կապուտանի Ս. Մինաս եկեղեցիները:

XV–XVI դդ. անբարենպաստ քաղ. և տնտ. պայմանների պատճառով եկեղեց. շինարարությունը Հայաստանում ընդհատվել է (երկիրը դարձել էր Թուրքիայի և Իրանի միջև պատերազմների թատերաբեմ): Միայն XVII դ. սկզբին պայմաններ են ստեղծվել քանդված եկեղեցիները նորոգելու և նորերը կառուցելու համար: XVII–XVIII դդ. եկեղեցաշինության առանձնահատկությունը եղել է եռանավ բազիլիկների զանգվածային կառուցումը: Ի տարբերություն վաղ միջնադարի, XVII–XVIII դդ. բազիլիկները ծածկվել են ընդհանուր երկթեք տանիքով: Գմբեթավոր եկեղեցիներ քիչ են կառուցվել և պատկանել են գմբեթավոր դահլիճի (Էջմիածնի *Շողակաթ վանքի* եկեղեցի, *Խոր վիրապի վանքի* Ս. Աստվածածին, *Հավուց թառ վանքի* գլխ. եկեղեցիները) կամ քառամույթ գմբեթավոր բազիլիկի տիպին (*Մուղնու Ս. Գևորգ վանք*, *Ագուլիսի Ս. Թովմա առաքյալ վանք*, *Ապրակունիսի Ս. Կարապետ վանք*, Մեղրու Ս. Աստվածածին եկեղեցի ևն):

Հայաստանի XVII–XVIII դդ. վանքերի ճարտ-յան բնորոշ առանձնահատկությունը երկու տարբեր նշանակության և քաղաքաշին. հորինվածքների՝ կրոն. կենտրոնի ու պաշտպան. համալիրի զուգակցումն է: Վանքերն ու այդ դարերում տարածված ճգնավոր. մենաստանները՝ *անապատները*, շրջապատվել են բուրգերով ամրացված հզոր պարիսպներով: Այդպիսի վանք-ամրոցներ են *Շատին վանքը*, *Արտազի Ս. Թադե վանքը*, *Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքը*, *Տաթևի Մեծ անապատը*, Ագուլիսի Ս. Թովմա, Խոր վիրապի վանքերը: Մյուս առանձնահատկությունը վանական համալիրի կազմակերպումն է կենտրոնում ազատ կանգնած միակ եկեղեցու շուրջը, որը ողջ համալիրի գերիշխող տարրն է: XVII–XVIII դդ. տարածված էր եկեղեցիների արմ., հազվադեպ՝ հվ. ճակատին կից երկհարկ զանգակատների կառուցումը և եռակամար սրահների կցումը:

XIX դ., Արլ. Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, նոր վանքեր այլևս չեն կառուցվել: Քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Գորիս, Շուշի) կառուցվել են գմբեթավոր, իսկ գյուղերում՝ մեծ մասամբ բազիլիկ տիպի ծխական եկեղեցիներ: 1920-ին խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո Հայաստանում դադարել է եկեղեցիների շինարարությունը: 1991-ին Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո Ե. ճ. նոր վերածնունդ է ապրում: Ժամանակակից հայ ճարտարապետները նորակառույց եկեղեցիներում կիրառում են բացառապես միջնադարյան Հայաստանի Ե.ճ-յան ավանդ. ձևերը:

Պատկերազարդումը տես ներդիր IV-ում, 4.8, 3–9-րդ և ներդիր V-ում, 5.1, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1986: Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Ե., 1989: Կանոնագիրք Հայոց, հ. 1, Ե., 1964: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, 2, Ե., 1942, 1948: Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992: *Токарский Н.М., Архитектура Армении IV–XIV вв., Е., 1961; Асратян М., Очерк армянской архитектуры, М., 1985; Нуйнь, Армянская архитектура раннего христианства, М., 2000;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ԵԿԵՂԵՑԻ [< հուն. *εκκλησια* – էկլեսիա (էքլիսիա) – հավատացյալների ժողով, սրբերի հավաք], 1. *Հիսուս Քրիստոսի* խորհրդաբանական մարմինը, երկնային Հարսը, հավատացյալ ժողովուրդը: Հին կտակարանում Ե. բառը գործածվել է բազմիցս՝ մատնանշելու համար Աստծուն երկրպագողների, հավատացյալների հավաքականությունը: Ե. կամ տաճար է նաև Հիսուս Քրիստոսի արյամբ սրբված և արդարացված անհատը: Պողոս առաքյալը գրում է. «Չգիտե՞ք, որ Աստծու տաճար եք դուք, և Աստծու Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորնթ. **3.**16):

Քրիստ. անդրանիկ Ե. *առաքյալների* հավաքն է կամ Վերնատունը, որտեղ *Սուրբ Հոգին* Հիսուսի *համբարձումից* հետո, բոցեղեն լեզուներով իջավ առաքյալների վրա (Գործք **2**)՝ ազդարարելով հավատացյալ մարդկության եկեղեցագործումը՝ Սուրբ Հոգով (տես *Հոգեգալուստ*): Երուսաղեմում (Սիոնում) Վերնատանը տեղի ունեցած զարմանահրաշ իրողությունը նկատի ունենալով՝ Հայոց կաթողիկոս *Սահակ Գ Ջորոփորեցին* Ե. կոչել է «Սիոնի դուստր». «Իսկ «Սիոնի դուստր» պետք է հասկանալ սուրբ Եկեղեցին, քանզի երանելի առաքյալները Նրա արքայության խորհուրդն Աստվածորդուց Սիոնում ընդունեցին. այնտեղ և Սուրբ Հոգու իշխանությունը ստացան աստվածային բերանի փչմամբ. այնտեղից էլ երանելի առաքյալները սուրբ Եկեղեցու հիմնադրումը սկզբնավորեցին. այնտեղից և զանազան լեզուներով քարոզության կոչվեցին և Աստվածորդու Հարությունը նրանո՛ւմ ճանաչեցին: Այս ամենի համար էլ հրամայում է ուրախանալ Սիոնի դստերը, որը սուրբ Եկեղեցին է» («Հայոց Սահակ կաթողիկոսի ճառը՝ ասված Արմավենյայց օրը՝ Ծաղկազարդին», տես «Գանձասար», 5, 1994, էջ 12):

Նոր կտակարանում Ե. բացահայտվում է որպես առաքելական հիմքի վրա բարձրացող հոգևոր կառույց («Եվ ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին...», Մատթ. **16.**18), հավատացյալների ժողով («Իսկ եթե նրանց էլ չլսի, կասես հավատացյալների ժողովում...», Մատթ. **18.**17), Տիրոջ ժողովուրդ («... Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր արյունով», Գործք **20.**28), Սուրբ Հոգու շնորհնեռով ամրացվող կառույց («... իսկ ով մարգարեանում է, ամրացնում է եկեղեցին», Ա Կորնթ. **14.**4), սուրբ մարմին, որի գլուխը Հիսուս Քրիստոսն է («Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպես կհնազանդվեն Տիրոջը, որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. և ինքն է Փրկիչը այդ մարմնի», Եփես. **5.**22–23), Քրիստոսով սնվող և խնամարկվող մարմին, որի անդամներն են Սուրբ Հոգուց վերստին ծնված երկնաքաղաքացիները («...ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպես որ Քրիստոս՝ եկեղեցին. քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից և նրա ոսկորներից» (Եփես. **5.**29–30, տես նաև Կող. **1.**18) ևն: Պողոս առաքյալը, կրկին անգամ խոսելով Քրիստոսի խորհրդավոր մարմնի մասին, ընդգծում է, որ Ե-ու կենարար զորությունը Սուրբ Հոգին է («... և ամենքս էլ այդ մե՛կ Հոգին խմեցինք...», Ա Կորնթ. **12.**13), իսկ անդամներին միասնականացնող կապը Սերն է (Ա Կորնթ. **13**):

Հովհաննես առաքյալը Հայտնության մեջ թվարկում է յոթ Ե-ներ (մեկնաբանվում է որպես հավատացյալների յոթ տեսակներ և նաև այլ կերպ), որոնց Տերը պատգամում, զննում, զգուշացնում և հորդորում է՝ հօգուտ նրանց սրբացման և հոգևոր բարգավաճման: Դրանք նախնական Ե-ներն են՝ Եփեսոսի, Զմյուռնիայի, Պերգամոնի, Թիվատիրի, Սարդիկեի, Փիղադելփիայի և Լավոդիկեի (Հայտն. **2, 3**):

Ե., որպես Հիսուս Քրիստոսի տնօրինական-փրկչական զոհագործության ծնունդ, որպես Սուրբ Հոգու ներկայության վայր, իր գերագույն-հոգևոր կազմությամբ Մի է, այսինքն՝ նրա բոլոր անդամները, բոլոր քրիստոնյա ազգերն ու հավատացյալները հավա-

տում և դավանում են մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին (որն է բոլոր Ե-ների գլուխը) և Ամենասուրբ *Երրորդությանը*, Սուրբ է, քանզի սուրբ է իր գլուխը՝ Հիսուսը, որ իր արյունով սրբեց Ե.: Ընդհանրական է կամ Կաթողիկե, քանզի նա ընդհանրական է ողջ մարդկության համար (տես *Ընդհանրական եկեղեցի*), Առաքելական է, քանզի նրա նվիրապետությունը հաստատված է առաքյալներով: Ե. սուրբ է նաև իր մեջ կատարվող յոթ սրբազան խորհուրդների շնորհիվ, և քանի որ Առաքելական է, օժտված է նաև շարունակական շնորհաբաշխությամբ:

Թեև Ե. Մի է, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական, բայց երկրի վրա այն բաժանված է՝ վարչատարածքային, ազգային, լեզվական, նաև ավանդությունների (տես *Ավանդություն*), դավան. ու ծիսական տարբերությունների և այլ պատճառներով:

Հայ առաքելական եկեղեցին օժտված է վերոհիշյալ չորս հատկանիշներով, այսինքն Մի է, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական, հիմնված է Հիսուս Քրիստոսի առաքյալների՝ *Թադեոսի* և *Բարդուղիմեոսի* կողմից, ուստի Հայոց հայրապետությունը կոչվում է նաև Թադեի աթոռ (տես նաև *Առաքելականություն*):

Հիսուս Քրիստոսի Ե., չնայած առերևույթ տարբերություններին, հիմքում միասնական է և նույնական: Այն որպես խորհրդաբանական մարմին բաժանվում է երկու՝ երկնային և երկրային Ե-ների. երկնայինը կոչվում է Հաղթական կամ Անդրանկաց Ե. (նաև՝ Սրբերի ժողով), որը ննջեցյալ սուրբերի բազմությունն է և հարատևորեն աղոթարկու է երկրային Ե-ու համար (տես *Բարեխոսություն*): Երկրայինը կոչվում է Զինվորյալ կամ Մարտնչող Ե.՝ երկրում հանուն հավատի և սրբության մարտընչելու համար: Զինվորյալ և Հաղթական Ե-ները մեկ են ի Հիսուս Քրիստոս և կազմում են ամբողջական Ե.:

Քրիստ. Ե. խորհրդաբանական (mistic) և նվիրական (sacral) կառույց է, որտեղ կատարվող նվիրական արարողություններն արտացոլում և խորհրդանշում են երկնային իրողություններ:

2. Ե. քրիստ. դավանանքի կառույց է, որտեղ կատարվում են Ե-ու աստվածապաշտական արարողությունները՝ սրբազան խորհուրդները, *ժամերգությունները* և ս. *Պատարագը*: Ե. որպես տեսանելի-առարկայական իրողություն, որպես կառույց ձևավորվել է Վկայության խորանի հիման վրա, երբ Սողոմոն թագավորի ձեռքով կառուցվեց *Երուսաղեմի* տաճարը՝ աստվածային հրահանգների համաձայն (տես նաև *Խորան, Ուխտի տապանակ* հոդվածները): Որպես նվիրական և սուրբ հաստատություն, Ե. այլ նպատակներով չպետք է օգտագործվի: Քրիստոնեությունը որպես պետ. կրոն աշխարհում առաջինն ընդունած Հայաստանում Ե-ներ կառուցվել են IV դ. սկզբից՝ ինչպես բազիլիկ և դահլիճ տիպի, այնպես էլ գմբեթավոր (տես *Գմբեթ*): Ծիսակատարության փոփոխման, չին. տեխնիկայի զարգացման, գեղագիտ. նոր պահանջների հետևանքով ժամանակի ընթացքում փոխվել են նաև Ե-ների հատակագծային և ծավալատարած. լուծումները (տես *Եկեղեցական ճարտարապետություն*): Հայկ. Ե-ների պարտադիր տարրերն են աղոթասրահը, Ավագ խորանը՝ բեմի և դասի մասով ու պատարագամատույց սեղանով, *ավանդատները, մկրտարանը*՝ ավազանը:

Եկեղեց. շենքի տարբեր կերպերն ունեն նաև խորհրդաբանական իմաստ. եռանավ բազիլիկները մարմնավորում են կյանքի հորձանուտով լողացող նավ-Ե-ուն, որով հավատացյալները կհասնեն խաղաղ նավահանգիստ՝ *Երկնային արքայություն*: Խաչաձև Ե. հիշեցնում է, որ քրիստոնեության հիմքում դրված է Քրիստոսի *խաչը*, իսկ բոլորաձև Ե. Աստծո Ե-ու հավիտենականության խորհրդանիշն է:

Հայկ. եկեղեց. կանոնները թելադրել են Ե-ու շենքի ճարտ-յան որոշ առանձնահատկություններ. օր., ի տարբերություն հունադավան և կաթոլիկ եկեղեցիների, Հայաստանում դեռ վաղ միջնադարից խստիվ արգելվել է Ե-ու ներսում թաղում կատարելը, ինչը պայմանավորել է հայկ. ճարտ-յան ինքնատիպ կառույցի՝ առաջին հերթին տապանատուն ծառայող *գավթի* երևան գալը:

Ե. կառուցելիս պարտադիր էր նրա հորինվածքը համաձայնեցնել թեմի եպիսկոպոսի հետ, հակառակ դեպքում նա իրավունք ուներ մինչև իսկ քանդել տալու արդեն կառուցված շենքը: Ե-ու կառուցման գլխ. պայմաններից է հիմնարկեքի և *օծման* արարողությունը: Հիմնարկեք կատարող եպիսկոպոսն օծում է ներկայումս 16 քար, որոնցից 12-ը՝ առաքյալների, 2-ը՝ Մարկոս և Ղուկաս ավետարանիչների, 2-ն էլ՝ Պողոս առաքյալի և *Գրիգոր Ա Լուսավորչի* անուններով: Այնուհետև օծված քարերը դրվում են Ե-ու հիմքում՝ յուրաքանչ-

յուրն իրեն հատկացված տեղում: Ե-ու հիմնարկեքի և օծման արարողությունը կանոնակարգված է Մայր *Մաշտոցում*:

Գրկ. Գրիգոր Տաթեվացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմեռան հատոր..., ԿՊ, 1740: Նույնի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր..., ԿՊ, 1741: Հովհան Մայրագոմեցի, Վերլուծութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յաւրինեալ կարգաց, «Սիոն», 1967, № 1–2: Սարգսյան Ս., Հայոց եկեղեցւոյ խորհուրդներն ու ծէսերը, «Գանձասար», 1, 1992: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Խաչատրյան Տ., Քրիստոնեական տաճարի խորհրդաբանությունը, «Գանձասար», 5, 1994: *Аратян М., Армянская архитектура раннего христианства, М., 2000.*

Լևոն Սարգսյան
Մուրադ Հասրաթյան

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ, տես *Էկումենյան շարժում* հոդվածում:

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ, առաքինազարդ կյանքով ու վարքով հռչակված անձնավորություններ, որոնք եկեղեցու կողմից դասվել են սրբերի կարգը և ճանաչվել իբրև հավատի հիմնական սկզբունքների ճշմարիտ և ուղղափառ երաշխավորներ, Սուրբ Գրքի հեղինակավոր մեկնիչներ ու ավանդապահներ, եկեղեցու ծառայությանը նվիրված և եկեղեցական նվիրապետության պատասխանատու դեմքեր: Արդի իմաստով «եկեղեցական հայր» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Վիկենտիոս Լիրինացին (V դ.): Նա Ե. Հ-ին տարբերակել է եկեղեց. գրողներից և «եկեղեցական գրող» է կոչել քրիստ. այն մատենագիրներին, որոնք չունեն կյանքի սրբություն և ուղղափառ վարդապետություն: *Հայրաբանության* համար Ե. Հ. եկեղեց. գրողներ են, որոնց թողած գրական ժառանգությունը կազմում է հայրաբան. գրականությունը: Կաթոլիկ աստվածաբանները Ե. Հ. են կոչում միայն այն հայրապետներին, որոնք իրենց կյանքի և գործունեության մեջ միացրել են չորս անհրաժեշտ չափանիշներ՝ **ա.** ուղղափառ դավանանք, **բ.** կյանքի սրբություն, **գ.** ճանաչում եկեղեցու կողմից, **դ.** հնություն (վաղեմություն): Օրթոդոքս հայրաբանները, որոշ վերապահումներով ընդունելով **ա-գ** կետերը, մերժում են **դ.** կետի անհրաժեշտությունը այն հիմն. փաստարկով, թե եկեղեցին ապրել և ապրում է հայրերով, և որ Ե. Հ. գոյություն են ունեցել բոլոր ժամանակներում և պիտի ծնվեն ապագայում էլ այնքան ժամանակ, որքան Ս. Հոգին շարունակի հովանավորել Քրիստոսի երկրային եկեղեցուն:

Ժամանակի ընթացքում քրիստ. եկեղեցին եկեղեցու նշանավոր հայրերից կազմել է մի փոքր խումբ՝ եկեղեցու մեծ հայրեր, եկեղեցու վարդապետներ անվանումներով: Արևելքի չորս մեծ հայրերն են *Աթանաս Ալեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկեբերանը* և *Կյուրեղ Ալեքսանդրացին*: Արևմտյան եկեղեցին ևս ճանաչում է համաքրիստ. նշանակություն ունեցող Արևելքի այս չորս մեծ հայրապետներին: 800-ական թթ. Հովհաննես Վանականը Ամբրոսիոսին, Օգոստինոսին, Հերոնիմոսին և Գրիգոր Մեծին համարել է աշխարհի և կրոն. գիտությունների մեծագույն իմաստուններ՝ իբրև «դրախտի չորս մեծ գետերը»: XI դարից սկսած Արևմուտքում այս չորսը կոչվում են եկեղեցու վարդապետներ, իսկ Բոնիֆատիոս VIII պապը 1296-ին նրանց դասակարգել է *առաքյալներից* անմիջապես հետո և կոչել եկեղեցու նշանավոր վարդապետներ: Հետագայում պապական հատուկ որոշումներով և հռչակումներով Հռոմի եկեղեցու վարդապետների կարգին են դասվել նաև Թովմա Աքվինացին, Բոնավենտուրասը, Ֆրանցիսկոս Սալեցին և ուրիշներ, իսկ արևելյան հայրերից, բացի Արևելքի չորս մեծ հայրերից, նաև *Եփրեմ Ասորին, Կյուրեղ Երուսաղեմացին, Գրիգոր Նազիանզացին* և Հովհան Դամասկացին:

Հայ եկեղեցին ունի Ե. Հ-ի և եկեղեցու վարդապետների մի ցանկ՝ «երկոտասան վարդապետք» անվամբ, որն արլ. և արմ. քրիստ. մտածողությունների համադրություն է: Նրանում ընդգրկված են *Ընդհանրական եկեղեցու* հինգ տիեզեր. աթոռների՝ Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Կ. Պոլսի և Հռոմի, ինչպես նաև Աթենքի, Կեսարիայի, Կիպրոսի մեծահռչակ հայրապետները: Հայ եկեղեցու կողմից ընդունված այդ հայրերն են Ռեթեոս Աթենացին (I դ., Աթենքի հայրապետ), *Դիոնիսիոս Արիոպագացին*, Սեղբեստրոսը (III դ., Հռոմի հայրապետ), Աթանաս Ալեքսանդրացին, Կյուրեղ Երուսաղեմացին, Եփրեմ Ասորին, Բարսեղ Կեսարացին, *Գրիգոր Նյուսացին*, Գրիգոր Նազիանզացին, *Եպիփան Կիպրացին*, Հովհան Ոսկեբերանը և Կյուրեղ Ալեքսանդրացին (Հայ եկեղեցին նրանց հիշատակը նշում է հոկտ. վերջին շաբաթ օրը): Հայկ. մի շարք ձեռագրերում (Մատենադարան, ձեռ. №№ 605, 625 ևն) Աթանաս Ալեքսանդ-

բացին, Կյուրեղ Երուսաղեմացին, Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին (Աստվածաբան) անվանվում են «գլուխ երկոտասան վարդապետաց» կամ «դեբագոյնք» վարդապետներ: Համաքրիստ. հայրերի այս ցանկին հայոց Տոնացույցն ավելացրել է նաև զուտ հայ վարդապետների և հայրերի մի ցանկ՝ «թարգմանիչ վարդապետք» անվան ներքո, որոնք են *Մեսրոպ Մաշտոցը, Եղիշեն, Մովսես Քերթողը, Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Հովհաննես Գ Օձնեցին, Հովհան Որոտնեցին* և *Գրիգոր Տաթևացին*: Հայ եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցում կա օտար ու հայ՝ եկեղեցու վարդապետների մեկ այլ ցանկ, որի մեջ մտել են Տոնացույցի 12 վարդապետները, ինչպես նաև *Գրիգոր Աքանչելագործը* և *Հակոբ Մծբնացին*: Մաշտոցի ցանկից դուրս են մնացել Գրիգոր Նարեկացին և Ներսես Շնորհալին: Թարգմանիչ վարդապետներից հիշվում են *Սահակ Ա Պարթև* ու Մեսրոպ Մաշտոցը: Ըստ Մաշտոցի, Հայ եկեղեցու վարդապետներն են *Գրիգոր Ա Լուսավորիչը*, «որդիք և թոռունք Լուսավորչի», Հովհաննես Գ Օձնեցին, Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին: Համադրելով Տոնացույցի և Ձեռնադրության Մաշտոցի տվյալները՝ կազմվում է Հայ եկեղեցու վարդապետների ու հայրերի մի ցանկ՝ Գրիգոր Ա Լուսավորիչ, «որդիք և թոռունք Լուսավորչի», Սահակ Ա Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Եղիշե, Մովսես Քերթող, Դավիթ Անհաղթ, Հովհաննես Գ Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի: *Թովմա Մեծոփեցին* վարդապետների թվում հիշում է նաև *Ստեփանոս Սյունեցուն*, որը, սակայն, չի մտել Տոնացույց:

Ընդհանրական եկեղեցու «երկոտասան վարդապետներից» և Ե. հ-ից բացի Հայ եկեղեցին սրբերի կարգն է դասել նաև Առաքելական հայրեր ընդհանուր անունով հայտնի, I–II դդ. երեք հայրապետներին՝ Կղեմես Հռոմեացուն կամ Հռոմայեցուն (հիշատակը նշվում է Հիսնակաց առաջին կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը), Իգնատիոս Անտիոքացուն (հիշատակը՝ Հիսնակաց չորրորդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը) և Պողիկարպոս Զմյուռնացուն (հիշատակը՝ Հիսնակաց երրորդ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը): Մյուս եկեղեցիների համար Առաքելական հայրեն համարվում նաև Բառնաբասը, Հերմասը և Պապիասը (երեքն էլ՝ II դ.):

Գրկ. Եվսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ..., Վնտ., 1877: Կարգ վարդապետացն Հայոց, «Էջմիածին», 1980, № 2: Գուշակյան Թ., Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1939: Գալուստյան Շ., Համաքրիստոնեական սուրբեր, Ե., 1997: Պետրոսյան Ե., Հայրաբանություն, մաս 1, Էջմիածին, 1996:

Արտաշես Ղազարյան

ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐ, եկեղեցական *տոների* մաս կազմող, եկեղեցու անվամբ կատարվող և նրան նվիրված տոներ: Եկեղեցու տոն կատարելը հայոց համար հատուկ արարողություն է: Եկեղեցին հայկ. եկեղեց. Տոնացույցում դարձել է տոնելի՝ որպես աստվածային հաստատություն և Քրիստոսի փրկագործ տնօրինությունների արդյունք: Եկեղեցին, որի միջոցով քրիստոնյային հաղորդվում են ճշմարտություններ, մատակարարվում խորհուրդներ, բաշխվում շնորհներ, տրվում մեղքերի թողություն, ընկալվում է իբրև քրիստ. մարմնի ամբողջություն, որի գլուխ Հիսուս Քրիստոսն է: Նյութ. առումով եկեղեցիների նվիրագործությունն էլ եկեղեցու տոնախմբությունն է եղել, և եկեղեցիների *օծման* տարեդարձերն էլ (տես *Նավակատիք*) եկեղեցու տոներն են եղել: Տոնացույցի մեջ մուտք գործած Ե. տ. են. 1. Նոր Կիրակին, 2. Աշխարհամատռան Կիրակին, 3. Տոն Կաթողիկե Սրբո Էջմիածնի, 4. Տոն Շողակաթի, 5. Հիշատակ Տապանակի Հնո և Նորո Ուխտի: Դրանցից բացի Ե. տ. են համարվում Ս. Խաչի շաբաթվա երեքշաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի օրերը: Այդ երեք օրերը Ե. տ. համարվելուց բացի մասնավոր կապ ունեն Երուսաղեմում բյուզ. Հեղինե դշխուհու շինած չորս մեծ տաճարների՝ Ս. Հարությունի (Գողգոթա), Ս. Ծնունդի (Բեթղեհեմ), Ս. Համբարձումի (Ձիթենյաց լեռ) և Ս. Աստվածածնի (Գեթսեմանի) հետ: *Խաչվերացի* նախընթաց օրվա նավակատիքը Ս. Հարություն տաճարի նավակատիքի հիշատակն է, իսկ շաբաթվա միջի՝ երեք եկեղեցու տոները մյուս երեք տաճարների նավակատիքների հիշատակներն են: Այդ երեք եկեղեցիների տոները Ս. Խաչի շաբաթվա մեջ կատարվում են յոթ օրերի շարժականությամբ՝ սեպտ. 13, 14 և 15-ից մինչև 19, 20 և 21: Դրանցից բացի, մասնավոր ու հատուկ կերպով, Ե. տ. կատարվում են ամեն նոր օծված եկեղեցում, ինչպես նաև սովորություն է Ե. տ-ի նման տոնել նավակատիքը կամ օծման տարեդարձը:

Նոր Կիրակի, ս. *Զատկին* հաջորդող առաջին կիրակին է, որը կոչվում է նաև Կրկնազատիկ: Քրիստոսի Հարության տոնից բացի նվիրված է հեթանոսների դարձի, Քրիստոսի Եկեղեցու ընդարձակման ու տարածման հիշատակին. այդ պատճառով էլ դասվել է Ե. տ-ի շարքը:

Աշխարհամատռան կամ Կանաչ Կիրակի, խորհրդանշում է աշխարհի առաջին մատուռը կամ եկեղեցին, որը հիմնեցին առաքյալները Սիոնի Վերնատանը, և որտեղ Քրիստոսը կատարեց Վերջին ընթրիքն ու հաստատեց *Հաղորդության* խորհուրդը: Քրիստոսի համբարձվելուց հետո սովորույթ դարձավ առաքյալների հավաքվելը, միասնաբար աղոթելը և նոր հավատացյալների հետ հաղորդվելը (Գործք **2.**42): Ըստ Գործք առաքելոցի, Հովհաննես Մարկոսի մոր՝ Մարիամի տանն էին աղոթքի հավաքվում նորադարձները (**12.**12): Ե. տ-ից ամենագլխավորն է Աշխարհամատռան տոնը, այսինքն՝ Վերնատան հիշատակը իբրև քրիստ. առաջին եկեղեցու, որը բոլոր քրիստոնյա եկեղեցիների նախատիպը եղավ: Աշխարհամատռան Կիրակին կոչվում է նաև Կանաչ Կիրակի, որը նախաքրիստ. շրջանից դարնանը և արթնացող բնությանը նվիրված տոնակատարություններից մնացած անուն է և փոխանցվել է եկեղեցուն: Տոնվում է ս. Զատկի երրորդ կիրակի օրը և Զատկի հետ 35 օրվա շարժականություն ունի (ապրիլի 5-ից մինչև մայիսի 9-ը):

Տոն Կաթողիկե Սրբո Էջմիածնի, ըստ Հայոց առաջին հայրապետ ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, Միածինը՝ Հիսուս Քրիստոսը, երկնքից իջնելով, ձեռքում բռնած ոսկե մուրճով հարվածել է այն տեղին, որտեղ հեթանոս. մեհյան էր, և որտեղ կառուցվելու է Ս. Էջմիածնի Մայր տաճարը՝ նշանավորելով *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* հաստատումը: Տոնվում է որպես Հայ եկեղեցուն նվիրված տոն, *Հոգեգալուստից* հետո 2-րդ կիրակի օրը (մայիսի 24-ից մինչև հունիսի 27-ը): Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին է նվիրված «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը.

«Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա.
Զայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:
Եկայք չինեսցուք սուրբ զնորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի
Հայաստան աշխարհի»:

Տոն Շողակաթի, նույնպես կապվում է ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հետ և նշանակում է «լույսի շող կաթեց» երկնքից: Ս. Էջմիածնի Մայր տաճարի նավակատիքի տոնն է: Տոնակատարության ընթացքում (տոնվում է օգոստոսի առաջին կեսին, Վերափոխման տոնի նախընթաց շաբաթ օրը) հիշատակվում է Հիսուս Քրիստոսի՝ ոսկե մուրճը ձեռքին Վաղարշապատ իջնելը, երկնքից աստվածային շողի ծագելը և հանդչելն այն վայրում, որտեղ կառուցվելու էր Մայր տաճարը: Գրիգոր Լուսավորչի կառուցած վկայարաններից մեկը կոչվում է նաև Շողակաթ:

Հիշատակ Տապանակի Հնո և Նորո Ուխտի, Վարդավառի նախընթաց նավակատիքի օրը (հունիսի 27-ից հուլիսի 31-ը) եկեղեցու նոր տոնի հիշատակն է: *Ուխտի տապանակը* հրեաների ամենամվիրական սրբությունն էր, որը պարունակում էր Տասնաբանյա օրենքների կամ պատվիրանների տախտակները, մանանայով լի սափորը և Ահարոնի զարդարված գավազանը: Մովսեսի շրջանից մինչև Սողոմոն Իմաստունը տապանակը պահվում էր Տաճարի Սրբության Սրբոց կոչված ներքին բաժնում, որտեղ միայն տարին մեկ անգամ քահանայապետը կարող էր մտնել: Ուխտի տապանակի հիշատակությունը վերջին անգամ հանդիպում է Սողոմոնի օրոք. վերջինս այն զետեղել էր նորաշեն Տաճարում, որտեղից անհետացել էր Երուսաղեմի կործանման ժամանակ: Հին տապանակը նախատիպն էր Նոր ուխտի, այն է՝ Քրիստոսի եկեղեցու, և տոնն էլ նվիրված է Հին և Նոր ուխտի հաստատության՝ որպես մեկը մյուսին լրացնողի հիշատակին:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Արտաշես Ղազարյան

ԵԿՄԱԼՅԱՆ Մակար Գրիգորի [21.1(2.2).1856, Վաղարշապատ – 6(19).3.1905, Թիֆլիս], կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: Ավարտել է Ս. Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը (1872), Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիան (1888), աշակերտել Յու. Իոգանսենին, Ա. Լյադովին, Ն. Սոլովևին, Լ. Սակետտիին, մասնագիտացել Ն. Ռիմսկի-Կորսակովի դասարանում: 1873–74-ին Ն. Թաշճյանի ղեկավարությամբ վարժվել է հայկ. նոտագրությանը, մասնակցել հայ հոգևոր երաժշտ. մատյանների նորոգմանն

ԵԿՄԱԼՅԱՆ (Հայկական նոտագրությամբ) ու հրատարակմանը: 1874–77-ին Գեվորգյան ճեմարանում դասավանդել է երգեցողություն և հայ եկեղեց. երաժշտության տեսություն (միաժամանակ հաճախել է այդ հաստատության մի քանի դասընթացների): Սանկտ Պետերբուրգում ուսանելու տարիներին եղել է Հայ եկեղեցու դպրապետ-խմբավար: 1891-ից բնակվել է Թիֆլիսում, երաժշտություն է դասավանդել Ներսիսյան դպրոցում, ղեկավարել արական երգչախումբը: 1893–94-ին երաժշտության տեսություն է դասավանդել ռուս. կայսերական երաժշտ. ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ուսումնարանում, եղել նրա ռեկտորը: Ե. կյանքի վերջին շրջանում կորցրել է հոգեկան հավասարակշռությունը:

Մ. Եկմալյան

Ե-ի վաղ շրջանի ստեղծագործություններում նկատելի է դերմ. ռոմանտիկ. երաժշտության ազդեցությունը: Թեև նա գիտակցաբար և նպատակաուղղված հակվել է ազդ. երաժշտության ակունքներին, և նրա ոճի ձևավորման ու բյուրեղացման համար հիմք է ծառայել ազդ. երաժշտությունն իր ժող., ժողովրդապրոֆեսիոնալ և հոգևոր ճյուղերով, այնուամենայնիվ նրա ստեղծած բազմաձայնությունը հենվում է եվրոպ. երաժշտության մշակած սկզբունքների վրա: Ե-ի ստեղծագործ. ժառանգությունը (մեզ է հասել զգալի կորուստներով) ընդգրկում է տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ դաշնամուրային նոկտյուրն, սիմֆոնիկ նախերգանք, «Ռոզայի դեգերումները» կանտատը (դիպլոմային աշխատանքն է) ևն: Վերջինս գրված է (ըստ Մ. Հոռնի հեքիաթի) սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի, մենակատարների համար (պահպանվել են հատվածներ): Ե-ի երգային ժառանգության առանցքը հոգևոր, աշխարհիկ երգերի մշակումներն են (մենակատար նվագակցությամբ, խմբերգ) և հատկապես նրա գլուխգործոցը՝ «Պատարագը»: Նախքան վերջինիս հրատարակումն ու ամբողջ. կատարումը նրա տարբեր հատվածներ՝ «Սուրբ Աստված», «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ», «Հայր մեր», «Տէր ողորմեա» ևն, Ներսիսյան դպրոցի երգչախմբի կատարմամբ հնչել են եկեղեցում և հետագայում էլ, հաճախ առանձին կատարվելով, ինքնուրույն համերգային կյանք են ունեցել: Ե. մշակել է նաև եկեղեցում կատարվող առանձին շարականներ, հոգևոր երգեր՝ «Նոր-ահրաշ» շարականի քառաձայն խառը կազմով երգչախմբի համար մշակումը, եռաձայն արական խմբի համար մշակված «Աչխարհ ամենայն» ստեղծագործությունը ևն: Ե-ի աշխարհիկ երգային ժառանգությունն ընդգրկում է ժող., քաղաքային, աշուղ., թեմատիկ առումով բազմազան երգերի մշակումներ և իր իսկ ստեղծած մեղեդիներով երգեր: Ժողովրդականություն են վայելում հատկապես նրա ազգ-հայրենասիր. երգերը՝ «Ով հայոց աշխարհ», «Լռեց, ամպերը եկան ծածկեցին երկինք», «Պլպուլն Ավարայրի» ևն:

«Երգեցողութիւնք սրբոյ պատարագի» ստեղծագործությունը (1892, հրտ. 1896), որի սյուժետային հիմքը՝ Քրիստոսի և առաքյալների խորհրդավոր ընթրիքն է, հիմնված է հոգևոր ավանդ. եղանակների վրա: Մշակված է երեք տարբերակով՝ եռաձայն արական, քառաձայն արական, քառաձայն խառը կազմի երգչախմբերի, մենակատարների և նվագարանային նվագակցության համար:

Սահմանված կարգով «Պատարագը» քննել և բարձր են գնահատել Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի և կայսերական կապելլայի խորհուրդները (1893): Հետագայում այն գնահատանքի են արժանացրել Ֆ. Լիստը, Ք. Սեն-Սանսը, Լ. Բուրգո-Դյուկուդրեն:

1895-ին Գևորգ արք. Սուրենյանցի (1911–1930-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանց) միջնորդությամբ, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու (Խրիմյան Հայրիկ) հայրապետ. կոնդակով «Պատարագը» պաշտոնապես ընդունել է Հայ եկեղեցին, և դրանով հիմք է դրվել նրա բազմաձայն կատարմանը (թեև, նախքան այդ, որոշ հոգևոր երգերի բազմաձայն կատարումներ Կ. Պոլսում թույլատրվել էին):

XIX դ. 90-ական թթ. հայ երաժշտ. իրականության մեջ Ե-ի գործունեությունը նշանավորվել է խմբերգային արվեստի մասնագիտ. մակարդակի պատշաճ բարձրացմամբ: Նա հայ պրոֆեսիոնալ երաժշտ. դպրոցի ձևավորման ամենախոշոր դեմքերից է:

Ե-ին աշակերտել են Ա. Շահմուրադյանը, Շ. Տալյանը, Մ. Աղայանը, Ա. Տեր-Հովհաննիսյա-

նը, Ա. Մայիլյանը, Ա. Մանուկյանը, Ա. Տիգրանյանը, *Կոմիտասը* և ուրիշներ:

Գրկ. Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դ. և XX դարասկզբում, Ե., 1970 (Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, հ. 2): Թահմիզյան Ն., Մակար եկմալյան, Ե., 1981: Հարությունյան Մ., Բարսամյան Ա., Հայ երաժշտության պատմություն, Ե., 1996:

Մհեր Նավոյան

ԵՂԻԱ Ա ԱՐՃԻՇԵՑԻ [ծ. թ. անհտ, Արճեշ ավան (Մեծ Հայքի Աղիովիտ գավառ) – 717, ամփոփվել է Դվինում], Ամենայն հայոց կաթողիկոս 703-ից: Հաջորդել է *Սահակ Գ Ձորոփորեցուն*: Եղել է Բզնունիների նախարար. տան եպիսկոպոսը: Վերանորոգել է Դվին քաղաքի եկեղեցիները, հայրապետանոցը: Ե. Ա Ա-ու օրոք, հայոց իշխան Սմբատ Բյուրատյան Բագրատունու գլխավորությամբ, հայկ. զորաբանակի և Հայաստանը նվաճած արաբների միջև 703-ին տեղի է ունեցել Վարդանակերտի, 705-ին՝ Դրաչպետի ճակատամարտերը: Արաբները, վախենալով հայերի նոր ապստամբությունից, 705-ին խաբեությամբ հայ նախարարներին հավաքել են Նախիջևանի և Խրամ գյուղի եկեղեցիներում ու ողջակիզել: 705 թվականը կոչվել է «Կրակի տարի»: Ե. Ա Ա-ու օրոք Աղվանից կաթողիկոս Ներսես Բակուրը հակվել է դեպի քաղկեդոն. դավանանքը և վարել հունամետ քաղաքականություն: Ե. Ա Ա. մի քանի անգամ նամակով հորդորել է Ներսես Բակուրին՝ հետ կանգնել իր ձեռնարկից, սակայն՝ ապարդյուն: 713-ին Հայոց կաթողիկոսը, արաբ ոստիկանից զորաջոկատ ստանալով, գնացել է Պարտավ, ձերբակալել Ներսես Բակուրին և ուղարկել Դամասկոս: Պարտավում ժողով է գումարվել, որն էլ Աղվանից կաթողիկոս է ընտրել Սիմեոն եպիսկոպոսին: Որոշ բարեկարգչական գործեր ձեռնարկելուց հետո Ե. Ա Ա. վերադարձել է Հայաստան: Նա նախաձախնդիր պայքարել է նաև որոշ հայ վարդապետների դեմ, որոնք փորձել են պաշտպանել քաղկեդոն. դավանանքը:

Կաթողիկոս. գահին Ե. Ա Ա-ուն հաջորդել է *Հովհաննես Գ Օձնեցին*:

ԵՂԻԱԶԱՐ Ա ԱՅՆԹԱՊՑԻ, Հռոմկլայեցի (1612 – 8.8.1691, Էջմիածին, ամփոփվել է Ս. Գայանե եկեղեցու գավթում), Ամենայն հայոց կաթողիկոս 1681-ից: Հաջորդել է *Հակոբ Դ Ջուղայեցուն*: 1641-ին ձեռնադրվել է վարդապետ, 1647-ից՝ եպիսկոպոս, Արղնիի վանքի առաջնորդ: 1649-ից՝ Երուսաղեմի, 1651-ից՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք (1652-ին հրաժարվել է), 1657-ին՝ Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ: 1657–1659-ին, բանտարկության (1659-ի փետր. 18 – մարտի 22) գնով, Երուսաղեմի հայկ. Ս. Հակոբյանց վանքը փրկել է հույների ոտնձգություններից: 1659–67-ին շինարարություն է ծավալել Երուսաղեմի հայոց վանքապատկան կալվածներում: 1661-ին Երուսաղեմում հիմնել է «Էջմիածին» մատուռը՝ փորձելով Ամենայն հայոց կաթողիկոսությունից անջատել թուրքահայ թեմերը և կազմել առանձին կաթողիկոսություն: Թուրք. կառավարության համաձայնությամբ, 1664-ի աշնանը *Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում* Կիլիկիայի կաթողիկոս Խաչատուր Գաղատեցին Արմ. Հայաստանի կաթողիկոս է օծել Եղիազար Այնթապցուն, որը մնացել է նաև Երուսաղեմի հայոց պատրիարք:

Եղիազար Այնթապցու այդ անօրինակ քայլը սկիզբ է դրել մեծ խռովությունների՝ ջլատելով Հայ եկեղեցին և հայ ժողովրդի երկու՝ արևելահայ ու արևմտահայ հատվածները: Հակառակող մի թևը՝ հայտնի սասկանություն անունով, ներկայացնում էր Եղիազար Այնթապցին, իսկ մյուսը՝ էջմիածնականությունը՝ Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցին, որը չէր կարող հանդուրժել միասնական եկեղեցու և կաթողիկոսության տրոհումը: Պայքարը հայտնի է նաև Եղիազարյան-Հակոբյան անունով, այն շարունակվել ու փոփոխական հաջողությամբ տևել է մինչև 1680-ը՝ կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու մահը: Ազգ-եկեղեց. պառակտմանը վերջ տալու և հակաթոռ կաթողիկոսության վտանգը չեզոքացնելու համար Ս. Էջմիածնի միաբանությունը Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրել Ե. Ա Ա-ուն: 1682-ի օգոստ. 22-ին Ե. Ա Ա. ժամանել է Մայր աթոռ Ս. Էջմիածին: Գահակալության տարիներին ծավալել է շին. և բարենորոգչ. աշխատանքներ, վերացրել նույնիսկ *Աղթամարի կաթողիկոսության* և Մայր աթոռի միջև եղած վաղեմի ներհակությունը: 1691-ին փորձել է մեկնել Եվրոպա՝ հայ ժողովրդի ազատագրության հարցով, սակայն երկրի խառնակ դրությունը ստիպել է Կարինից վերադառնալ Էջմիածին:

Կաթողիկոս. գահին Ե. Ա Ա-ուն հաջորդել է *Նահապետ Ա Եդեսացին*:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1876: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961:

ԵՂԻՇԵ, I–II դարերի վկա, նահատակ: *Թադեոս* առաքյալի աշակերտներից: Քրիստոսի 72 առաքյալներից մեկը, որը Եվստաթեոս առաքյալի հետ ուղեկցել է Թադեոս առաքյալին՝ նրա քարոզչական շրջագայության ժամանակ: Թադեոսի նահատակությունից հետո Երուսաղեմի առաջին պատրիարք Հակոբոսը Ե-ին ձեռնադրել է Արտազի եպիսկոպոս և ուղարկել Թադեոսի վիճակ (Արտազ): Նահատակվել է Աղվանքում:

Գրկ. Սիմեոն Երեվանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1873, էջ 11, 64, 65:

Քնարիկ Տեր-Դավթյան

ԵՂԻՇԵ, սուրբ Եղիշե (մոտ 410–415-ի միջև – մոտ 470–475-ի միջև), մատենագիր, պատմիչ, իմաստասեր, աստվածաբան, վարդապետ, ազգային ազատագրական պայքարի գաղափարախոս, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ, առաջին թարգմանիչներից: *Սահակ Ա Պարթևի* ու *Մեսրոպ Մաշտոցի* կրտսեր աշակերտներից: Նրանց հիմնադրած դպրոցներում հայերենի հետ սովորել է հուն., ասոր. և պարսկ. լեզուները: 434-ին Մովսես Խորենացու և այլոց հետ մեկնել է Ալեքսանդրիա՝ ուսանելու: 441–442-ին վերադարձել է հայրենիք և դարձել Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դպրապետը: 449-ի գարնանը Տիզբոնում ներկա է եղել Հայոց նախարարների առերես հավատուրացությանը, ապա մասնակցել 450–451-ի Վարդանանց պատերազմին (տես *Վարդանանք*): Ավարայրի հերոսամարտից (451-ի մայիսի 26) հետո անցել է ճգնակեցություն (այդ ընթացքում գրել է «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկը) նախ Մոկքում, ապա՝ Ռշտունիքում, Վանա լճին մերձակա մի քարանձավում, որը կոչվել է ս. Եղիշեի այր: Այդտեղ էլ վախճանվել է (փետր. 27) ու ամփոփվել անձավի մոտ: Հետագայում նշխարները վերաթաղվել են լճին առափնյա Ջաղար Ս. Աստվածածին վանքում (նրա անունով կոչվել է նաև Ս. Եղիշե վանք):

Ե. իր «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» մեծարժեք մատյանը երկասիրել է ոմն Մամիկոնյան Դավիթ երեցի պատվերով (458-ից ոչ շուտ, հավանաբար 464-ից հետո): Երկը Հայաստանի ու հարևան երկրների պատմության ուսումնասիրման կարևոր սկզբնաղբյուր է, հայ պատմահայրենասիր. գրականության գլուխգործոց: Այն V դ. կեսի հայոց ազատագր. պատերազմի պատմությունն է Պարսից Սասանյանների (Հազկերտ II) զավթող. քաղաքականության դեմ: Բաղկացած է ընծայականից և յոթ գլխից («յեղանակներ»): Ունի լրացուցիչ գլուխ («Արտաքոյ եւթն յեղանակին»), որտեղ Ե. նկարագրում է գերեվարված հայ հոգևորականների նահատակությունը, և երկու հավելված («Վասն խոստովանողացն Հայոց...», «Անուանք նախարարացն...»): Մեզ հասած ձեռագրերում եղանակների վերնագրերն ու թիվը տարբեր են, բայց երկի ամբողջականությունը խախտված չէ: Ե. ըստ ամենայնի ուսումնասիրելով հակապարսկ. ապստամբությունը՝ պարզաբանել է դրա պատճառները, ընթացքն ու հետևանքները: Այս նպատակով աշխատությունը բաժանել է երեք մասի՝ «սկիզբ» (հանդամանորեն պատմում է Վարդանանց պատերազմի պատճառների մասին), «միջոց» (նկարագրում նրա ընթացքը) և «ավարտ» (խոսում է շարժման հետևանքների մասին): Հեղինակը նախ ներկայացնում է դարաշրջանի ընդհանուր պատկերը, Հայաստանում ստեղծված քաղ. իրավիճակը և ապա այդ հենքի վրա շարադրում պատմ. իրադարձությունները՝ շեշտելով ոչ միայն կրոն. (հավատքի ճնշումը), այլև հասք-քաղ. հանգամանքները: Պատմիչը հակապարսկ. շարժմանը տալիս է դյուրըմբռնելի բացատրություն՝ պայքար քրիստոնեության ու հայրենիքի պաշտպանության համար: Հանուն այդ նպատակների ինքնազոհողությունը համարում է հոգևոր-բարոյական անմահություն («Մահ ո՛չ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»): Բացահայտելով պատերազմի համաժող. բնույթը՝ կերտում է հերոսներ. դրականները՝ Վարդան զորավարի գլխավորությամբ, բացասականները՝ ի դեմս Հազկերտ II-ի, Միհրներսեհի, մանավանդ Վասակ Սյունեցու: Յուրօրինակ պատմելաոճով փաստական-գիտականը զուգակցում է գեղ. հնարների հետ:

Երկն ունեցել է 40-ից ավելի հրատարակություններ (հինգ անգամ՝ աշխարհաբար), լույս տեսել բազմաթիվ լեզուներով (անգլ., գերմ., իտալ., ֆրանս., ռուս. ևն): Առաջին անգամ հրատարակվել է 1764-ին, Կ. Պոլսում, «Գիրք պատմութեան սրբոյ Վարդանանց զորավարացն հայոց» խորագրով: Գիտահամեմատ. լավագույն հրատարակությունը լույս է տեսել 1957-ին, Երևանում («Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», կազմեց և ծանոթագրեց՝ Ե. Տեր-Մինասյան):

Ե. գրել է նաև Աստվածաշնչի որոշ գրքերի մեկնություններ, որոնցից կարևորագույնը

Ծննդոց գրքին նվիրված «Արարածոց մեկնութիւնն» է (ամբողջական բնագիրը մեզ չի հասել): Առկա հատվածները Լևոն Խաչիկյանի աշխատասիրությամբ հրատարակվել են 1992-ին, Երևանում: Նրա բնորոշմամբ Ե-ի «Արարածոց մեկնութեան» մեջ շոշափվել են տիեզերագիտության, բնագիտության, օդերևութաբանության, կենդանաբանության ու բուսաբանության բնագավառներին վերաբերող բազում խնդիրներ, որոնք լուծվել են ժամանակի գիտ. մտքի մակարդակին համապատասխան: Ուշագրավ է «Հայր մեր» աղոթքի մեկնությունը ճառի ձևով ու գեղեցիկ իմաստներով: 445-ին Ե. գրել է «Յայլակերպութիւն Քրիստոսի կամ Ի Թաբոր Լերին յայտնութիւն Տեառն...» ճառը, որտեղ խորհրդածություններով բացատրել է Ավետարանը, վերջնամասում ըստ ամենայնի նկարագրել Թաբոր լեռն իր երեք եկեղեցիներով, վանականների վարքով, ժամասացության եղանակով ևն: 455-ին գրական գեղեցիկ ոճով հեղինակել է «Բան խրատու յաղագս միանձանց» համառոտ ճառը: Ե-ի երկերից են նաև «Վասն Հոգւոց մարդկան...» (460), «Հարցմունք եւ պատասխանիք ի Գիրս Ծննդոց» ևն: Նրա գրչին են պատկանում մեկնաբան. ու ճառագր. երկեր, որոնցում հակում է դրսևորվել դեպի այլաբանական բազմաշերտ մտակառուցումներով աչքի ընկնող նորպլատոնական իմաստասիրությունը: Ստեղծագործություններն ուշագրավ են խորհրդանշանին տրված որակումներով, որոնց ուսումնասիրությունն այսօր հնարավորություն է տալիս վեր հանելու միջնադարյան խորհրդանշանի աստվածաբանության և գեղագիտության մի շարք առանձնահատկություններ: Այդտեղ ներկայացված են թվերի, առարկաների, երևույթների խորհրդաբան. բացատրությունները, որոնք իրենց տեսակի մեջ վաղագույններից են մեզանում: Այդ բնույթի երկերից են «Յերեւումն Տեառն առ Տիբերայ ծովուն», «Յայլակերպութիւն Քրիստոսի», «Ի չարչարանս Քրիստոսի», «Յերեւումն Տեառն աշակերտաց» ճառերը և «Յեսուայ եւ Դատաւորաց» մեկնությունը:

Ե-ի աստվածաբան. հայացքներում քրիստոսաբան. ուսմունքը հասուն է և ամփոփ, իր կառուցվածքային իմաստով՝ վերջնական: Այդ դիրքերից է Հայ եկեղեցին հետագա դարերում կարողացել հակահարված հասցնել *քաղկեդոնականությանը*: Սուրբ *Երրորդության* վարդապետությունը զարգացած է և ամբողջական, հստակ են ներկայացված երեք Անձերի փոխհարաբերությունները: Ե. հարազատ է մնացել արևելյան աստվածաբանության ավանդույթներին:

Համաչխարհ. քրիստ. գրականության մեջ Ե. առաջիններից էր, որ մշակել է երկնային ու երկրային իշխանության (պետության) մասին ուսմունքը: Երկրայինը կոնվենցիոնալ բնույթ ունի, խարսխված է մարդկայինի վրա, նրա օրենքները միջնորդավորված են, հարաբերական, փոփոխման ենթակա: Նրա իրավասության տակ են աշխարհիկ, նյութ. և տնտ. երևույթների ղեկավարումը, մարդու մարմինը, բայց ոչ հոգին: Երկնայինի հիմքերը երկնայինի մեջ են, բացարձակ են, Արարչագործությունից սերած: Նրա օրենքներն անմիջապես բխում են գերագույնից, անփոփոխ են և ղեկավարում են եկեղեցական, հոգևոր-իմացական բնույթի երևույթները: Իշխանության երկատվածությունից բխում է օրենքների երկվությունը՝ հոգու և մարմնի օրենքները: Օրենքների երկվությունը հիմք է դատավարության երկտեսակության (մարդկային, աստվածային) համար:

Հետևելով *Եզնիկ Կողբացուն*՝ Ե. քրիստոնեության դիրքերից հերքել է զրադաշտական կրոնը: Ըստ նրա՝ քրիստոնեության և Հայրենիքի պաշտպանությունը, հանուն հավատի և ազատության մղվող պայքարը նույնական են: Գոյություն ունեցող նյութ. աշխարհն Արարչագործության արդյունք է: Աստված սկզբից ստեղծել է անկերպ նյութ, բաժանել 4 տեսակների՝ օժտելով որակական որոշակիությամբ, որոնց խառնուրդից ստեղծվել է բնության բազմազանությունը: Աշխարհի հիմքում ընկած 4 սկզբնանյութեր-տարրերը (հող, ջուր, օդ և կրակ) հավերժ են և գտնվում են հակադրության ու միասնության վիճակում: Ըստ Ե-ի՝ գոյություն ունեն 3 աշխարհներ՝ հոգևոր (Աստված), զգայական (բնություն) և զգայական-հոգևոր (մարդ): Մարդը ոգու և նյութի, աստվածայինի և երկրայինի հակադրության միասնության կրողն է: Մարդու նպատակն է հասնել հոգևոր կատարելության, որն անձի ինքնահաստատման միակ ուղին է և փիլիսոփայության հիմն. խնդիրը: Հոգևոր կատարելագործման առաջին աստիճանն արտաքին աշխարհի իմացությունն է, որն իրագործվում է զգայությունների և բանականության միջոցով:

Քրիստոնեացված պլյութագորականության ոգով Ե. հետմաշտոցյան շրջանում առաջին

անգամ ստեղծել է տիեզերքի մոդելը թվերի սիմվոլիկայի հիման վրա, առաջ քաշել երկնային մարմինների գնդաձևության, նաև օրվա և տարվա ընթացքում արեգակի բոլորաձև շարժման (պտույտի) գաղափարը ևն: Այս գաղափարները կուռ բնագիտ. համակարգի է վերածել *Անանիա Շիրակացին*: Ե-ի հայացքները նպաստել են *Փիլոն Ալեքսանդրացու*, նորպյութագորական, նորպլատոնական գաղափարների տարածմանը, հայ փիլիսոփայության, մասնավորապես, նորպլատոնական ուղղության ձևավորմանը:

Հայ եկեղեցին ս. Ե-ի հիշատակը նշում է *Խաչվերացի* հինգերորդ կիրակին նախորդող շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.1, 5-րդ պատկերը:

Երկ. Մատենագրութիւնք, Վնտ., 1859: Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1989: Բուն խրատու յաղագս միանձանց, աշխարհաբար փոխադր. Հ. Քյոսեյանի, «Էջմիածին», 1991, № 9–10, էջ 80–84: «Հայր մեր» աղոթքի մասին, աշխարհաբար փոխադր. Խ. Գրիգորյանի, «Գանձասար», 3, 1993:

Գրկ. «Սոփերք հայկականք», 11, Վնտ., 1854: Տերմինասյան Ե., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971: Խրլոպյան Գ., Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Ե., 1978: Աբաջյան Ա., Եղիշեի աստվածաբանական հայացքները, «Էջմիածին», 1983, № 2–3: Քյոսեյան Հ., Խորհրդանշանը Եղիշեի մեկնաբանական և ճառագրական երկերում, «Էջմիածին», 1989, № 8: *Мирумян К. А., Становление естественно-научной мысли в армянской философии, Е., 1989.*

ԵՂԻՇԵ Ա ՌՇՏՈՒՆԻ, Եղիշե Ա Ռշտունեցի (ծ. թ. անհտ, Ռշտունիք – 946, Աղթամար), Ամենայն Հայոց կաթողիկոս 941-ից: Հաջորդել է եղբորը՝ *Թեոդորոս Ա Ռշտունուն*: Եղել է Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառի եպիսկոպոսը: Վայելել է Վասպուրականի թագավոր Աշոտ-Դերենիկի հովանավորությունը: Գահակալել է Աղթամարում, քաղ. համեմատաբար խաղաղ պայմաններում: Օգնել է Բյուզ. կայսրության փոքրասիական գավառներից գաղթած հայ հոգևորականներին, որոնց հալածել է կայսր Ռոմանոս I Լեկաբենոսը՝ *քաղկեդոնականություն* չընդունելու համար:

Կաթողիկոս. գահին Ե. Ա Ռ-ուն հաջորդել է *Անանիա Ա Մոկացին*:

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԵՂՎԱՐԴԻ Ս. ԹԵՈԴՈՐՈՍ ՎԱՆՔ, Զորավար, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքից մոտ 3 *կմ* հյուսիս-արևելք: Կառուցվել է VII դ.: Ըստ կաթողիկոս, պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցու՝ Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը, *Արուճի Ս. Գրիգոր եկեղեցին* կառուցելուց հետո, 666–685-ին «Եղիվարդ մեծ դաստակերտի արևելյան կողմում կառուցում է պայծառազարդ եկեղեցի և կուսակրոնների համար՝ կացարաններ»: Ե. Ս. Թ. վ-ի դարչնագույն սրբատաշ տուֆով կառուցված եկեղեցին ունի ութախորան, կենտրոնագմբեթ, երկաստիճան ծավալով հորինվածք: Ստորին ծավալն արտաքուստ 18-նիստանի է, ութ խոշոր, եռանկյունաձև կտրվածքով խորշերով, վերին ծավալը 12-նիստանի թմբուկով գմբեթն է: Հարդարանքի տարրերը (ցցուն, հյուսածո զարդադրվագով քիվ, տերևներով նռան քանդակներ, երկրաչափ. գեղազարդով կամարաղեղներ) կրում են *Զվարթնոց* տաճարի ձևերի ազդեցությունը: Եկեղեցու ներսը VII դ. նկարազարդվել է, որից միայն խորաններում հատվածներ են պահպանվել: Դրանք հիմնականում զարդաձևեր են՝ իրականացված գորգային սկզբունքով, և իրենց գունային լուծումով սերտորեն առնչվում են Արուճի Ս. Գրիգոր եկեղեցու որմնանկարների հետ:



Եղվարդի Ս. Թեոդորոս վանքի եկեղեցու հատակագիծը

1191-ին Ե. Ս. Թ. վ. ոմն Արտաշիրից որպես նվիրատվություն ստացել է այգի: XII դ. վանքն ունեցել է դպրոց և գրչատուն: 1197-ին Սարգիս Կունտի աշակերտներ Դավիթն ու Ներսեսը գրչագրել են իրենց ուսուցչի «Մեկնութիւն Ավետարանին Ղուկասու» աշխատությունը: XIII դ. Հովհաննեսը և Վարդանը նորոգել են եկեղեցու որմնանկարները, Ենոք քահանան և Սիոնը վանքին են նվիրել իրենց հայրենական այգիները: XIII դ. կառուցվել է վանքի միանավ, թաղածածկ մատուռը: 1318-ին Ազիզբեկ և Վախախ ամուսինները վերանորոգել են մոնղ. արշավանքներից ավերված Ե. Ս. Թ. վ.: XV դ. վանքում բազմաթիվ ձե-

ռագրեր են ընդօրինակվել, գործել է դպրոցը, որի ուսուցչապետն է եղել Սիմեոն Բաբունապետը: 1628-ին վանքը նորոգվել է: 1638-ին Եղվարդ ներխուժած թուրք. զորքն այրել է Ե. Ս. Թ. վ., որից հետո այն դադարել է եպիսկոպոսանիստ լինելուց: 1735-ին Եղվարդի մոտ թուրք-պարսկ. զորքերի ճակատամարտի հետևանքով Ե. Ս. Թ. վ. ավերվել է ու լքվել: 1975-ին եկեղեցու հս. կողմում, նրան կից, պեղումներով բացվել են քառախորան փոքր մատուռ-դամբարանի պատերը: 1980-ական թթ. Ե. Ս. Թ. վ. մասնակի նորոգվել է:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.2, 1-ին պատկերը:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմութիւն, Ե., 1996: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1903: Եղիազարյան Հ., Եղվարդի Մեծ և Փոքր վանքերը և գյուղի մյուս կարևոր հուշարձանները, «Էջմիածին», 1962, № 7: Մաթեվոսյան Կ., Եղվարդի Ս. Զորավոր եկեղեցին և մենաստանը, «Էջմիածին», 1983, № 7:

Մուրադ Հասրաթյան

ԵՂԲԴՈՒՏԻ ՎԱՆՔ, Ս. Հովհաննես վանք, Ս. Շիշյուղո վանք, Արծվաբերի Ս. Նշան վանք, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում, Մուշ քաղաքից 20–22 *կմ* արևմուտք: Վանքը կոչվել է մերձակայքում աճող եղերդ խոտաբույսի անունով: Ըստ ավանդության, *Թադեոս* առաքյալն այդտեղ է պահել այն շիշը, որի յուղով օծվել են մարգարեները ու առաքյալները (այստեղից էլ՝ Ե. վ-ի մյուս՝ Ս. Շիշյուղո վանք անունը): Շշի հետ Թադեոս առաքյալը թաղել է նաև մի շարք այլ սրբություններ՝ Կենաց փայտի մի մասնիկը, Հովսեփի, Մարիամ Մագդալինացու և Հովսեփ Արիմաթացու մասունքները: Սրբությունները հետագայում գտել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*, որը, ըստ IV դ. պատմիչ Զենոբ Գլակի, հիմնել է Ե. վ.՝ զետեղելով այնտեղ *Հովհաննես Մկրտչի* և ս. Աթանագինեսի մասունքները, որի համար վանքը կոչվել է Ս. Հովհաննես: Ե. վ. անվանվել է նաև Արծվաբերի Ս. Նշան, որովհետև, դարձյալ ըստ ավանդության, արծիվը վանք է բերել այդտեղից մի հովվի գողացած ս. Խաչը:

Այժմ ավերակ Ե. վ-ի Ս. Հովհաննես եկեղեցին թաղածածկ դահլիճ է, որի արմ. անկյունների երկու որմնախորշերը նախատեսված են եղել Հովհաննես Մկրտչի և ս. Աթանագինեսի մասնատուփերը պահելու համար: Ս. Հովհաննես եկեղեցուն հվ-ից կից է Ս. Աստվածածին եկեղեցին, որը եղել է ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով գմբեթավոր եկեղեցի: Նրա հս-արմ. ավանդատունը որպես մատուռ նվիրված է Գրիգոր Ա Լուսավորչին: Ս. Ստեփանոս եկեղեցին տեղադրված է նախորդի հվ. կողմում և ունի ներքուստ խաչաձև, անկյուններում երկհարկ ավանդատներով, գմբեթավոր հորինվածք: 1153-ին եկեղեցու ձախ ավանդատանը դրվել է Սարգիս գծողի կերտած խաչկալը: 1511-ին Գրիգոր վարդապետը կառուցել է Ս. Հովհաննես եկեղեցուն արմ-ից կից քառայուն գավիթը: Ե. վ. մեծությամբ ու բարձրությամբ գրեթե հավասար է եղել Մշո Ս. Կարապետ վանքին և իր նշանակությամբ չի զիջել նրան: XV դ. կեսից մինչև XVI դ. վերջը Ե. վ. գրչության կենտրոն էր: Այդտեղ գրված և ընդօրինակված ձեռագրերից հայտնի են շուրջ 20-ը, որոնցից յոթը պատկանել են նշանավոր գրիչ Ստեփանոսին: Միայն XV դ. 50–80-ական թթ. Ե. վ-ում գրվել է չորս մատյան՝ Ավետարան, Հայսմավուրք, Գանձարան, Շարակնոց: Միջին դարերում վանքն ունեցել է բարձր տիպի դպրոց և ընդարձակ կալվածքներ, բարգավաճել է XVII դ. և XVIII դ. սկզբին: 1650-ին վանահայր Գրիգոր Մշեցին նորոգել է վանքի շենքերի տանիքները, եկեղեցիների գմբեթները և կառուցել արմ. պարսպին կից երկհարկ խցերը: 1707-ին Սարգիս վարդապետը նորոգել է եկեղեցիների ծածկերը, կառուցել վանքի պարիսպը: 1809-ին վարդապետ Մկրտիչ Խանումյանը վերակառուցել է Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը: 1828-ին Ղազար վարդապետը, Պողոս խալիֆայի բարերարությամբ, միաբանների ու թեմի գյուղացիների օգնությամբ, գավթին հս-ից կից կառուցել է վանքի քառամույթ զանգակատունը, որից մուտք է բացվում դեպի Ս. Սարգիս մատուռը: 1866-ին վանքի շինությունները երկրաշարժից զգալի վնասվել են: Ե. վ. նշանակալի դեր է խաղացել նաև նոր ժամանակներում: XIX դ. և XX դ. սկզբին վանքն ունեցել է ընդարձակ վարելահողեր, արոտավայրեր ու անտառներ: Նրա նոր դպրոցը բացվել է 1870-ին՝ Գարեգին վրդ. Սրվանձտյանցի ջանքերով: Այն սկզբում ունեցել է 20 աշակերտ, իսկ 1909-ին արդեն վերածվել որբանոց-դպրոցի՝ 40 աշակերտով: Վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու մոտ եղել է XIII–XIX դդ. տապանաքարերով գերեզմանոց,

Գրկ. Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1905: Ոսկյան Հ., Տաբոն-Տուրուբերանի վանքերը, Վնն., 1953: Թիերի Ժ. Մ., Արևելյան Թուրքիա կատարած հնագիտական ճանապարհորդության նոթեր, «Հուշարձան», տարեգիրք 1, Ե., 1987:

Մուրադ Հասրաթյան

ԵՊԻՍԿՈՊՈՍ, եպիսկոպոսություն (< հուն. *ἐπίσκοπος* – տեսուչ, վերակացու), քրիստոնեական եկեղեցու նվիրապետական կարգի հիմնական աստիճաններից բարձրագույնը: Հայ առաքելական եկեղեցում եպիսկոպոսությունը մի կարգ ցածր է *կաթողիկոսությունից*: Ե. *թեմի* (վիճակի) կամ համայնքի հոգևոր պետն է: Ըստ Պողոս առաքյալի՝ «պետք է, որ եպիսկոպոսն անբասիր լինի, որպես Աստծու տնտես. ոչ հանդուգն, ոչ բարկացող, ոչ անարգող, ոչ կռվարար, ոչ շահասեր, այլ՝ հյուրասեր, բարեսեր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, ամուր կապված վարդապետության հավատի խոսքին, որպեսզի կարողանա հորդորել ողջամիտ վարդապետությամբ և կշտամբել հակառակորդներին» (Տիտ. **1.**7–9):

Ե. իր առաքինությամբ, հեզությամբ, սիրով, ողջախոհությամբ, սրբությամբ պետք է նմանվի Հիսուս Քրիստոսին, քանզի նա է բոլոր «Հոգիների հովիվը և տեսուչը» (Ա Պետր. **2.**25): Ե-ներն *առաքյալներից* տարբերվում են նրանով, որ եթե առաքյալները կոչված էին իրականացնելու Քրիստոսի *Ընդհանրական եկեղեցու* հիմնադրումը, որի համար ավելի մեծ շնորհներով էին օժտված, ապա Ե-ները, առաքյալներից փոխանցված սուրբ *շնորհներով*, կառավարում են ստեղծված տեղային եկեղեցիները: Առաքյալներն ընտրվել (Ղուկ. **6.**13) և իրենց շնորհներն ու իշխանությունը ստացել են Հիսուս Քրիստոսից, իսկ Ե-ները՝ առաքյալներից:

Եպիսկոպոս. իշխանությունը տրվում է *ձեռնադրությամբ* և *օծումով*՝ կանոնական քննությունից հետո և ժողովրդի ներկայացուցիչների ու հոգևոր դասի վկայությամբ: Հայ եկեղեցում Ե. ձեռնադրելու և օծելու իրավունքը վերապահված է *կաթողիկոսին*: Օծելուց հետո նվիրյալի գլխին դրվում է խույրը, և կաթողիկոսը նրան տալիս է *գավազան*, մատանի և Ավետարան՝ իբրև կանոնական իրավասություն: Ձեռնադրության և օծման արարողությունից հետո տրվում է եպիսկոպոս. պանակե՝ հայրապետ. օրհնությամբ և մաղթանքով: Կաթողիկոսը նորընծա եպիսկոպոսին հրահանգում է խղճմտորեն ծառայել՝ պահելով եկեղեցու ուղղափառ դավանությունը, խոհեմությամբ վարել եպիսկոպոս. իշխանությունը և եպիսկոպոս. աստիճանի տված իրավասություններով զեղումներ չգործել:

Ըստ եկեղեց. *կանոնի*, Ե. ձեռնադրվում է թեմի վրա, որի տեսուչն է և թեմի հավատացյալ ժողովրդի հոգևոր-բարոյական կարիքների մատակարարը: Նա նաև եկեղեց. ունեցվածքի և տնտեսության տնօրինողն է, հնում ունեցել է դատական գործառույթներ: Թեմական առաջնորդ Ե. իր թեմի սահմաններում կրում է եպիսկոպոսական ասա (գավազան), կատարում ձեռնադրություններ, ղեկավարում իր իշխանության ներքո գտնվող եկեղեցու պաշտոնեությունը, օծում եկեղեցի, տերունական և սրբերի պատկերներ, եկեղեցու սպասք:

Հայ եկեղեցում կաթողիկոսը, ի գնահատումն Ե-ների ծառայությունների, նրանց շնորհում է արքության պատիվ և տիտղոս: Արքեպիսկոպոսությունը և պատրիարքությունը Հայ եկեղեցում նվիրապետ. հատուկ աստիճաններ չեն: Արքեպիսկոպոսը (տես *Պատվո աստիճաններ և պարգևատրումներ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոդվածում*) և *պատրիարքը* ձեռնադրությամբ և օծումով Ե-ներ են:

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ, սուրբ Եպիփան [315, ք. Ելևթերուպոլիս (Հրեաստան) – 403], *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր վարդապետներից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի համաքրիստոնեական սուրբերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*): Պատանեկան տարիներին ուսանել է հրեական գիտությունն ու ավանդությունները, ձեռք բերել բազմակողմանի գիտելիքներ, տիրապետել եբր-ին, ասոր-ին, հուն-ին, լատ-ին: Լեզուների իմացությունը հնարավորություն է ընձեռել օգտվելու բազմաբնույթ աղբյուրներից:

Ե. Կ. աչքի է ընկել բացառիկ աղքատասիրությամբ, անապատական պարզ, խստաբարո

կենցաղավարությամբ, եղել վանական-ճգնավոր. շարժման հռչակավոր ներկայացուցիչներից: Ճգնավորական կյանքը, վանական կանոնադրությունները ուսումնասիրելու և իր վանական միաբանությունն ունենալու նպատակով այցելել է ժամանակի քրիստ. վանքերը, հանգամանորեն ծանոթացել մանավանդ Եգիպտոսի մենաստաններին և ճգնավորների կյանքին: Եգիպտոսում պայքար է մղել գնոստիկյան աղանդավորների դեմ: Փյունիկիայում հիմնել է մենաստան և մինչև 367-ը մնացել այնտեղ իր աշակերտների ու հետևորդների հետ: Նրա համբավը շուտով տարածվել է Եգիպտոսում, Պաղեստինում, Միջագետքում, Եդեսիայում: Բազմաթիվ գիտնականներ, անվանի անապատականներ եկել են նրա մոտ աշակերտելու: Հռոմում ծանոթանալով Արևմուտքի եկեղեցու ս. հայրերից Հերոնիմոսի (342–420) հետ՝ միասին հանդես են եկել *Որոգինեսի* մի շարք դավան. տեսությունների դեմ: Ձեռնադրվել է սարկավագ, 367-ին ընտրվել Կիպրոսի եպիսկոպոս և կղզու մետրոպոլիտ: Իր եռանդուն գործունեությամբ բարձրացրել է Կիպրոսի աթոռի հեղինակությունը:

Ե. Կ. թողել է հարուստ մատենագր. ժառանգություն: Նրա հաղորդած տեղեկությունները, սակայն, միշտ չէ, որ հավաստի են, քանզի եղել է չափազանց դյուրահավատ, դավան. նախանձախնդրության մեջ՝ ծայրահեղ հախուռն: Այդ մասին ինքն իսկ վկայել է, թե ականջալուր լինելով է ներկայացրել այս կամ այն տեղեկությունը:

Նշանավոր են Ե. Կ-ու «Անկյուրոտոս» («Խարիսխ», 374) և «Պանարիոն» («Դեղատուփ», 375–377) պատմաղավան. աշխատությունները: «Անկյուրոտոսը» նպատակաուղղել է հավատացյալներին, որպեսզի նրանք «չտարուբերվեն հերձվածողական վարդապետության հողմերից»: Իբրև նիկիական դավանության ջերմ պաշտպան (տես *Նիկիայի Ա տիեզերական ժողով 325*)՝ Ե. Կ. անդրադարձել է աստվածային դեմքերի համագոյությանը (տես *Երրորդություն*), Բանի մարմնավորմանը, մեռելներից հարություն առնելուն, հավիտենական կյանքին ու դատաստանին, հերքել արիոսական (տես *Արիոսականություն*), հոգեմարտների և ապողինարյան (տես *Ապողինարիզմ*) հերձվածների վարդապետությունը, հեթանոսությունն ու հրեությունը: «Պանարիոնը» (բաղկացած է երեք գրքից, յուրաքանչյուր գիրք բաժանված է 7 մասի) պարունակում է նախաքրիստ. 20 և քրիստ. 80 աղանդների պատմությունն ու հերքումը: Նախաքրիստ. աղանդները դասակարգել է հետևյալ կերպ. բարբարոսություն (Ադամից մինչև Զրհեղեղ), սկյութականություն (մինչև աշտարակաշինություն), հեթանոսություն, սամարյանականություն և հրեություն: Քրիստ. աղանդների քննությունն ավարտել է մեսալյան աղանդի (տես *Մծղնեություն*) հերքումով: Երրորդ գրքի վերջին մասում թվարկել է հուն. և արլ. փիլ. հոսանքները, այնուհետև շարադրել քրիստ. հավատի առաքելական գլխ. սկզբունքները: Բազմահարուստ տեղեկություններ ամփոփած այս երկը կարևոր սկզբնաղբյուր է աղանդների պատմության հետազոտման համար:

Ե. Կ-ու գրչին են պատկանում կամ վերագրվում Աստվածաշնչի մեկնություններ. Աստվածաշնչում եղած չափերի և կշիռների (թվարկվում են նաև Հին կտակարանի կանոնական գրքերը) բացատրությունը, հրեաների քահանայապետի ծիսական հանդերձի վրայի 12 քարերի խորհրդանշական հատկությունների մեկնաբանությունը, Բարոյախոսը (սա Աստվածաշնչում հանդիպող կենդանիների հատկությունների խորհրդանշական և բարոյաբան. բացատրությունն է) ևն: Ե. Կ. չի ընդունել Ս. Գրքի բացատրության և մեկնության Ալեքսանդրյան դպրոցի այլաբանական մեթոդը (տես *Մեկնողական գրականություն*): Ե. Կ-ու անունով մեզ հասած մի շարք ճառերի հեղինակային պատկանելությունը տակավին ճշտված չէ: Նրա ճառերը պահպանվել են հայերեն և ասոր. ձեռագրերում (հուն. բնագրերը կորած են): Ե. Կ-ու անունով հայերեն թարգմանությամբ հայտնի են «Մեկնութիւն սաղմոսացը» [որը, սակայն, պատկանում է Թեոդորետոս Կյուրացու (393–457) գրչին, լույս է տեսել Կ. Պոլսում, 1801-ին՝ Աթանաս Ալեքսանդրացու և Դավիթ Անհաղթի մեկնությունների հետ], «Առաջաբան Թագաւորութեանց», «Յաճախապատում ԻԲ արարչագործութեանց եւ ԻԲ Նահապետաց...», «Վասն նախապատիւ եկեղեցեաց», «Անուանք Մարգարէից», «Յաղագս ականց», «Բարոյախաւս» աշխատությունները, բազմաթիվ ճառեր ու ներբողներ: Հիշատակելի է հատկապես Քրիստոսի անձեռագործ պատկերին նվիրված նշանավոր ճառը («Յաղագս սուրբ և նկարագրեալ Տէրունական պատկերին ի դաստառակի սրբոյ», «Արարատ», 1869, № 8, 1870, № 9,

10), որն իր բովանդակությամբ կապված է հայ իրականության հետ: Հիշյալ երկերի մեծ մասը հայերեն է թարգմանվել V դ.: Ե. Կ-ու Ավետարանների մեկնության հայերեն թարգմանությունն («Ի սկզբնագիր Արարածոց եւ աւետարանական քարոզութեանց...») ունի սկզբնաղբյուրի արժեք (հուն. բնագիրը կորած է): Երկի հայերեն թարգմանությունը վերագրվում է Մովսես Խորենացուն: Նրա աշխատություններն արդեն V դ. օգտագործել են հայ մատենագիրները (Եղնիկ Կողբացի, Մովսես Խորենացի), աշխատություններից հատվածներ են վկայաբերվել հայ դավան. և մեկնաբան. գրականության մեջ:

Հայ եկեղեցին Ե. Կ-ու հիշատակը տոնում է տարին 2 անգամ՝ Հոգեգալստյան տոնի 3-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի օրը և հոկտեմբերի վերջի շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.2, 2-րդ պատկերը:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ–ԺԳ դդ.), Վնտ., 1889, էջ 401–418: Քյոսեյան Հ., Ս. Եպիփան Կիպրացու Աւետարանի մեկնութեան հայերէն թարգմանութիւնը, «Գանձասար», 6, 1996, էջ 148–159: Նույնի, Ս. Եպիփան Կիպրացու՝ Ս. Մարիամ Աստվածածնին նվիրված ներբողի հայերեն թարգմանությունը, «Էջմիածին», 1997, № 10: Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, աշխատասիր. Շահե քհն. Հայրապետյանի, Ե., 1998, էջ 30–32, 136–139: Migne, PG, t. 41–43; Geerard M., Clavis Patrum Graecorum, v. II, Brépols-Turnout, 1974, p. 324–341 (№ 3744–3807).

Հակոբ Քյոսեյան

ԵՍԱՅԻ Ա ԵՂԻՊԱՏՐՈՒՇԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Եղիպատրուշ (Նիդ գավառ) – 788, Դվին], Ամենայն հայոց կաթողիկոս 775-ից: Հաջորդել է *Սիոն Ա Բավոնեցուն*: Ե. Ա Ե-ու հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդվել: Սովորել է Դվինի կաթողիկոսարանի դպրանոցում: Օծվելով եպիսկոպոս՝ նշանակվել է Գողթն գավառի հոգևոր առաջնորդ: 768-ին մասնակցել է *Պարտավի եկեղեցական ժողովին*:

Կաթողիկոս. գահին Ե. Ա Ե-ուն հաջորդել է *Ստեփանոս Ա Դվնեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմութիւն, Ե., 1996: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ (ծ. թ. անհտ – 1728), Գանձասարի կաթողիկոս 1701-ից, ազգային-ազատագրական շարժման գործիչ և դեկավար, պատմիչ: Սերում է Արցախի Հասան-Ջալալյան իշխանական տոհմից: 1702-ին, Սիմեոն Դ Խոտորաշենցի հակաթոռ կաթողիկոսի մահից հետո, միավորել է Աղվանից պառակտված կաթողիկոս. աթոռը: Ե. Հ-Ջ-ին են ենթարկվել Ղարաբաղը, Բարդան (Պարտավը), Շամախին, իսկ 1720-ից, Ամենայն հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու կոնդակով՝ նաև Գանձակը, Շաքին, Ղաբալան (Կապաղակը) ևն: Միաժամանակ, կաթողիկոսի հատուկ կոնդակով նա իրավունք է ստացել հանգանակություն կատարել Գողթնի, Թիֆլիսի, Կապանի և Նախիջևանի թեմերից: Ստորագրել է «Գանձասարայ, Ղարապաղի և Շիրուանայ կաթողիկոս», «Պատրիարք Աղուանից, որ է Ալանաց, Շիրուանայ և Գանջայու, և մասին Հայոց»:

1710–11-ին հայ ազատագր. շարժման գործիչ Իսրայել Օրու՝ պարսկ. դեսպանագնացության ժամանակ Ե. Հ-Ջ. հանդիպել է նրան և Պետրոս Ի-ից օգնություն խնդրելու նպատակով Իսրայել Օրու հետ մեկնել Մոսկվա: Աստրախանում Իսրայել Օրու հանկարծամահ լինելուց (1711) հետո Ե. Հ-Ջ. չի շարունակել ճանապարհը, վերադարձել է Գանձասար՝ կազմակերպելու «անհավատների լծի տակ հեծող» իր քրիստոնյա ժողովրդի ազատագր. պայքարը: Այցելել է Պարսկաստան (Ղում, Սպահան, Նոր Ջուղա), նամակներ առաքել Լեհաստանի Օգոստոս թագավորին, Հռոմի Կղեմես X պապին: Հայաստանի ազատագրության հարցը կապելով Ռուսաստանի հետ՝ գործուն բանակցություններ է վարել Պետրոս Ի-ի և ռուս. կառավարության հետ: 1716-ին Գանձասարում ընդունել և եպիսկոպոս է ձեռնադրել Այսրկովկաս Պետրոս Ի-ի ուղարկած Մինաս վրդ. Տիգրանյանին և նրան կարգել ռուսահայոց հոգևոր առաջնորդ: Միաժամանակ, Ղարաբաղի հայության անունից, հատուկ նամակով Պետրոս Ի-ին է փոխանցել Ռուսաստանի հովանավորությունը «յօժար սրտիւ» ընդունելու ցանկությունը (նույնը կրկնել է 1718-ի սեպտ. 25-ի նամակում):

Ե. Հ-Ջ. ղեկավարել է Ղարաբաղի հայության ազատագր. պայքարը, վճռական դեր կատարել հայկ. զինված ուժերի միավորման և սղնախների (Արլ. Հայաստանում լեռնային բերդերի և բնական ամրությունների անվանումը) կազմավորման գործում: 1722-ի գարնանը նրա գլխավորությամբ սղնախների զինվորականությունը հակահարված է հասցրել Ղարաբաղ ներխուժած Դաղստանի լեռնականների հրոսակներին: Գանձասարում, այնուհետև Թիֆլիսում, Ե. Հ-Ջ. բանակցել է Վրաց Վախթանգ VI թագավորի հետ, քննարկել Պետրոս Ի-ի պարսկ. («կասպիական») արշավանքին համատեղ ուժերով մասնակցելու հար-

ցը: Կատարելով ստանձնած պարտավորությունները, թողնելով կաթողիկոս. աթոռը՝ Ե. Հ-Ջ. 1722-ի սեպտ. 22-ին մելիքների հրամանատարությամբ, արցախահայոց 10 հզ-անոց զործող զորագնդով, քահանաների ուղեկցությամբ Գանձակին մերձ Զոլակ վայրում միացել է Վախթանգ VI-ի բանակին: 25 օր սպասելուց հետո, երբ պարզվել է, որ Պետրոս I-ը դադարեցրել է արշավանքը, վրաց. բանակը շտապել է Թիֆլիս, իսկ Ե. Հ-Ջ. հայոց զորքի հետ վերադարձել է Ղարաբաղ: Այս անհաջող ձեռնարկումից հետո ամրացել է հայրենի լեռներում, կազմակերպել հակապարսկ. պայքարը, որի շնորհիվ կարճ ժամանակում ազատագրվել է ողջ երկրամասը, ստեղծվել անկախ հայկ. իշխանություն:

Մեծ է Ե. Հ-Ջ-ի ավանդը հատկապես օսմ. բանակների դեմ սղնախների պայքարը կազմակերպելու գործում: Երբ ռուսները տիրել են պարսից ծովեզրյա գավառներին, թուրքերը սկսել են առաջանալ դեպի Հայաստանի խորքերը (1723): Գրավելով Նախիջևանը, Երևանը, Թիֆլիսը, Գանձակը՝ հասել են Ղարաբաղ: Ե. Հ-Ջ. մերժել է թուրքերին հպատակվելու՝ Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու առաջարկը: 1724-ի փետր. Ե. Հ-Ջ. և մի քանի մելիքներ Պետրոս I-ին հղած նամակում պատրաստակամություն են հայտնել դիմագրավելու թշնամուն՝ մինչև ռուս. զորքերի ժամանումը Ղարաբաղ: Հոկտ. 18-ի նամակով նա ծանուցել է թուրք. զորքերի առաջխաղացման մասին՝ օգնական ուժեր ստանալու ակնկալիքով: 1724-ի մարտին նոր խնդրագրեր են կազմվել, այս անգամ արդեն ոչ միայն Ե. Հ-Ջ-ի, այլև մելիքների, հարյուրապետների ստորագրություններով, որտեղ օգնական զորքեր ստանալու խնդրանքը հիմնավորել են մարտի 1-ին օսմ. 4700-անոց զորքի դեմ իրենց տարած հաղթանակով: Պետրոս I-ի մահից հետո էլ Ե. Հ-Ջ. շարունակել է փնտրել ռուս. արքունիքի օժանդակությունը: Սակայն, վերջինիս երկդիմի քաղաքականությունից հուսախաբված, հակվել է թուրքերի հետ բանակցություններ վարելու և համաձայնության գալու մտքին: 1726-ի հուլիսին Ե. Հ-Ջ. Ղարաբաղի մելիքների և տանուտերերի ուղեկցությամբ մեկնել է Բարդա՝ սեռասքեր Սարու-Մուստաֆա փաշայի մոտ՝ հավանաբար բանակցելու նպատակով: Պայքարը շարունակելու կողմնակիցները նրան մեղադրել են դավաճանության և խաբեության մեջ, ինչի հետևանքով Ե. Հ-Ջ. ինքնասպան է եղել:

Ե. Հ-Ջ. կաթողիկոսը՝ «զինվոր հոգևորականը», հայ մշակույթի նշանավոր ներկայացուցիչներից է: 1718-ին նա հավաքել է Ղարաբաղի վանքերի (Դադիվանք, Խաթրավանք, Գոշավանք, Ծարի, Ս. Աստվածածին, Գանձասար ևն) արձանագրություններ, Ավետարանների, Հայսմավուրքների հիշատակարաններ: Արձանագրությունների հավաքածուի հիման վրա կազմել է Ծարի (Վերին Խաչեն) իշխանական տան տոհմաբանությունը: XVIII դ. 1-ին քառորդի հայոց պատմության արժեքավոր սկզբնաղբյուր է նրա հեղինակած «Պատմութիւն Աղուանից»-ը (1839), որն իր ժամանակի դեպքերի նկարագրությունն է և հասնում է մինչև 1723-ը: Երկը լույս է տեսել ֆրանս. (1876), վրաց. (1971), ռուս. (1989):

Երկ. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, 2 հրտ., Երուսաղեմ, 1868:

Գրկ. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1873: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Ե., 1959: Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկ. ժող., հ. 9, Ե., 1987:

Պավել Զոբանյան

ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ (1260, Սասունի Նիչ գյուղ – մոտ 1338, Գլաձոր), մատենագիր, մեկնիչ, քերական, բաբունապետ: Սովորել է Մուշի Առաքելոց դպրեվանքում, ապա՝ Քաջբերունյաց գավառում և Վայոց ձորի Աղբերց վանքում՝ Ներսես Մշեցու մոտ: Ստացել է ծայրագույն վարդապետ. գավազան, իսկ 1284-ից գլխավորել Աղբերց վանքի դպրության աշխատանքները: Ե. Ն. հիմնադրել է *Գլաձորի համալսարանը*, եղել նրա բաբունապետը: Ժամանակակիցները նրան բնութագրել են որպես «սրբակեաց անձ», «անյաղթ հռետոր», «մեկնիչ դժուարիմաց բոլոր խօսքերի և գրքերի»: Դասավանդել է «յոթ ազատ արվեստներ»՝ քերականություն, ճարտասանություն, աստղաբաշխություն, երաժշտություն ևն: Նրան աշակերտել են Հովհան Արճիշեցին, Մխիթար Երզնկացին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Երզնկացին և ուր.: Ե. Ն. պայքարել է պապական նկրտումների, ինչպես նաև ունիթորական (միարարական) շարժման (տես *Ունիթորություն*) դեմ՝ հանուն Հայ եկեղեցու ինքնուրույնության: Նրանից մեզ է հասել հարուստ գրակ. ժառանգություն (դավան. թղթեր, մեկնություններ, ճառեր, քարոզներ ևն): Լավագույն գործերից են «Մեկնութիւն Եզեկիէլի» (Մատենադարան, ձեռ. № 5566, 5717, 5906 ևն, ավելի քան 30 ձեռագիր) և «Վերլուծութիւն քերականութեան»-ը: Առաջինը գրել է 1303-ին, Ստեփանոս արք. Օրբելյանի խնդրանքով: Երկը շարադրելիս հիմնվել է Ընդհանրական և Հայ եկեղեցու ս. հայրերի (Որոգինես, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի, Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյունեցի ևն) համապատասխան մեկնությունների վրա: «Վեր-

լուծութիւն քերականութեան» համալսարանական դասագիրքն իր բնույթով բանաքաղական երկ է, ընդգրկում է Դավիթ Քերականի, Համամ Արևելցու, Արիստակես Գրչի, Գևորգ Սկևռացու և այլոց քերակ. մեկնությունների հիմն. դրույթներն ու հարցադրումները: Եկեղեցու դավանությանը, կարգերին և խորհուրդներին նվիրված գործերից են՝ «Դաւանութիւն և խոստովանութիւն ի Սուրբ Երրորդութիւն» (Մատենադարան, ձեռ. № 614, 8389, 7255 ևն), «Սուղ ինչ պատճառ ձեռնադրութեան քահանայի» (Մատենադարան, ձեռ. № 3937, 3276 ևն), «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» (Մատենադարան, ձեռ. № 3276), «Յաղագս եկեղեցւոյ խորհրդեան» (Մատենադարան, ձեռ. № 9622, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 69, 1279): Ե. Ն-ու դավան. բովանդակության թղթերից հայտնի են մի քանիսը. «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ և ժամուց» (Մատենադարան, ձեռ. № 1326, 1327, 5154 ևն): Այս թուղթն արժեքավոր է Հայ եկեղեցու ժամակարգության պատմության, ինչպես նաև եկեղեց. շենքի բաղկացուցիչ մասերի խորհրդապաշտության ուսումնասիրման տեսանկյունից: Գրվել է Այունյաց վարդապետների և վանահայրերի խնդրանքով, որոնք ցանկացել են հստակ տեղեկություններ ստանալ Հայ եկեղեցու ժամակարգության մասին: «Թուղթ Եսայեայ վարդապետին պատասխանի ընդդէմ պարոն Հեթմոյ» (1321, Մատենադարան, ձեռ. № 573, 9622) գրությունը մի նմուշ է այն թղթակցություններից, որոնք տեղի են ունեցել XIII դ. վերջին և XIV դ. սկզբին *արևելյան վարդապետների* և Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսի (1293–1307), Կիլիկիայի լատինամետ հոգևորականների ու իշխանների միջև: Այս թղթով Ե. Ն. պատասխանել է Կիլիկիայի Օշին պայլի և նրա որդի Հեթումի նամակին: Թղթում հեղինակը խոսել է երեք կարևոր հարցերի՝ ա. Քրիստոսի աստվածային և մարդկային բնության, բ. Հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու սովորության, գ. Ս. Ծննդյան ու Մկրտության տոների կատարման օրվա մասին և հիմնավորել Հայ եկեղեցու վարդապետ. սկզբունքները: Այնուհետև անդրադարձել է *արիոսականության* և *նեստորականության* հարցերին, ներկայացրել դրանց երևան գալու պայմանները, ապա տվել եկեղեցու ուղղափառ վարդապետությունն այդ հարցերում:

Ե. Ն-ու «Թուղթ Եսայեայ ի Տէր Մատթէոսն» (Մատենադարան, ձեռ. № 2776, 8245, 10008) գրությունն ուղղված է Թավրիզի առաջնորդ տեր Մատթեոսին և Ատրպատականի ողջ հայությանը՝ նրանց ունիթորական վտանգից պաշտպանելու նպատակով: Ընդ որում հեղինակը ոչ թե ատելություն և անհանդուրժողականություն է սերմանում Կաթոլիկ եկեղեցու հոգևորականների հանդեպ, այլ կոչ է անում, որ նրանց, ինչպես նաև հույն և ասորի քահանաներին ու աշխարհականներին ընդունեն քրիստ. սիրով, պատվով՝ «իբրև զեղբայրս և ծառայակիցս ի Քրիստոս... յաղագս միաբանութեան հաւատոյ», միաժամանակ պահանջում փոխադարձ սեր և հարգանք Հայ եկեղեցու վարդապետության, կարգերի և ավանդության հանդեպ: Այս թղթում հեղինակը խորհուրդներ է տալիս Մկրտության, Պասկի և Հաղորդության մասին, որոնք արժեքավոր են ծեսի պատմության և նրա զարգացման փուլերի ուսումնասիրման համար: «Թուղթ շրջաբերական յաղագս ողորմութիւն տալոյ ի նպաստ Ս. Կարապետին Տարօնոյ» (Մատենադարան, ձեռ. № 848) թղթում Ե. Ն., հյուսելով Հովհաննես Մկրտչի գովքը, հիշեցնում է, որ նրա նշխարները «իբրև զգանձս երկնային և պարգևս անմահութեան» Հայաստան է բերել Գրիգոր Լուսավորիչը և ամփոփել Տարոնում՝ «ի սիրտ Հայաստան աշխարհին»: Դրանց պահպանության համար էլ հիմնել է Ս. Կարապետ վանքը: Հեղինակը կոչ է անում ժողովրդին նվերներով օգնել և գորավիգ կանգնել հայերի և օտարների մեղքով տուժած ու նեղության մեջ գտնվող Ս. Կարապետ վանքին:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.2, 3-րդ պատկերը:

Երկ. Թուղթ Եսայեայ վարդապետի առ տէր Մատթէոս, «Ճռաքաղ», 1860, հ. 2, տետրակ 7, էջ 157–164 (և շար.): [Քարոզ ի բանն]. «Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք...», «Սիոն», 1866, էջ 27–30: Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիր. Լ. Խաչերյանի, Ե., 1966:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1942: Խաչերյան Լ., Գլաձորի համալսարանը Հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (13–14-րդ դդ.), Ե., 1973: Պետրոսյան Ս., Եսայի Նչեցու թղթերը, «Էջմիածին», 1985, № 11–12:

ԵՎԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ [մոտ 346–347, ավան Իբերիս (Հելլեսպոնտոսի մոտ) – մոտ 400–401], եկեղեցական մատենագիր: Ուսանել է Կեսա-

րիայում, աշակերտել *Բարսեղ Կեսարացուն*, ապա՝ *Գրիգոր Նազիանզացուն*, բարեկամական սերտ կապեր է ունեցել նաև *Գրիգոր Նյուսացու* հետ: Նրանցից սովորել է բնական գիտություններ, իմաստասիրություն, աստվածաբանություն, Սուրբ Գրոց գիտություն և հռետորություն: 379–380-ին Գրիգոր Նազիանզացին նրան ձեռնադրել է գլխ. սարկավագ, միասին մասնակցել են *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովին*: 381–385-ին եռանդուն գործունեություն է ծավալել Բյուզանդիայում: Իբրև ուղղափառության ջատագով պայքարել է ժամանակի տարածված աղանդների՝ արիոսականների, ապողինարիանների, եվնոմիանների դեմ: Կապադովկյան հայրերի պես հրապուրվել է *Որոգինեսի* ժառանգությամբ, կատարել թարգմանություններ նրա երկերից: 385-ին գնացել է Երուսաղեմ, ապա առանձնացել Եգիպտոսի Սկիտ անապատում, աչքի ընկել իր խստակեցությամբ:

Ե. Պ. գրել է ճգնակեց. բնույթի բազում գործեր: Նրա գրչին են պատկանում հարատև պայքարը զանազան կրքերի դեմ պատկերող «Պրակտիկ» ճգնակեց. հրահանգները: Սրա շարունակությունն է «Գնոստիկը». այստեղ նկարագրել է վանական–«գնոստիկի» բարձրագույն ճանապարհը, որը տանում է դեպի Աստծո ճանաչողություն: *Աղոթքի* և հայեցողության հարաբերակցությանն է նվիրված «Աղոթքի մասին» երկը: «Հարիւրաւորքն վեցերորդք» 600 կարճառոտ խորհրդածություններից բաղկացած ժողովածուում քննարկել է դավան. և ճգնակեց. խնդիրներ: Ե. Պ-ու քրիստոսաբանությունը ներկայացնող այս երկը մեզ է հասել հայ. և ասոր. թարգմանություններով:

Ե. Պ-ու վարդապետության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում աղոթքի տեսությունը: Ճգնակյաց վանականի գլխ. զբաղմունքը աղոթքն է: Քրիստոսին հետևել նշանակում է անդադար աղոթել՝ ինչպես ավանդել է Պողոս առաքյալը (Ա Թեսաղոն. 5.17): Ե. Պ-ունն է պատկանում «մտային աղոթք» հասկացությունը, որ «բանականության հարատև հաղորդակցումն է Աստծուն» («Աղոթքի մասին»):

Ե. Պ-ու հոգևոր ժառանգությունը հայերեն է թարգմանվել V դ., հուն-ից: Նրա հոգեղեն խրատներն ու հրահանգներն իրենց որոշակի ազդեցությունն են թողել հայ միջնադարյան մտքի վրա: Նրանից մեծապես օգտվել են *Սահակ Ա Պարթևը, Եզնիկ Կողբացին, Հովհաննես Ա Մանդակունին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին* և ուր.: Նրա երկերի հետևողությամբ հայ հեղինակներ *Գրիգոր Բ Վկայասերը, Մատթեոս Ջուղայեցին, Կիրակոս Երզնկացին* գրել են աշխատություններ, հորինել *լուծմունքներ*: Ե. Պ-ու երկերից իմաստախոս. բնույթի քաղվածքներ են բերված *Աղեքսանդր Ա Ջուղայեցու* կազմած «Վկայութիւնք պիտանիք եւ հարկաւորք...» աշխատության մեջ:

Երկ. Վարք եւ մատենագրութիւնք..., աշխատասիր. Բարսեղ վրդ. Սարգիսյանի, Վնտ., 1907: Մատթեոս Ջուղայեցի, Վասն քարոզութեան բանի՝ առեալ ի վարդապետութենէ սուրբ հօրն Եւագրեայ..., տես Գիրք ութն խորհրդոց մեղայ..., ԿՊ, 1750: Աղեքսանդր Ջուղայեցի, Վկայութիւնք ի պէտս քարոզութեանց, աշխատասիր. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 75–86:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 421–432: Geerard M., Clavis Patrum Graecorum, t. 2, Brépols-Turnhout, 1974, p. 78–97.

Հակոբ Քյոսեյան

ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ, Եվսեբիոս Պամփիլեա (մոտ 260, Պաղեստին – մոտ 340), քրիստոնյա պատմագիր, աստվածաբան, Պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոս (313/314-ից): 309-ին, քրիստոնյաների դեմ հռոմ. կայսր Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ ձերբակալվել է: Բանտից ազատվելուց հետո գլխավորել է Պաղեստինյան Կեսարիայի քրիստ. վարժարանը: Մասնակցել է 325-ի *Նիկիայի Ա տիեզերական ժողովին*, իր ստորագրությունը դրել Նիկիական *Հավատո հանգանակի* տակ, սակայն հետագայում հանդես է եկել որպես Արիոսի ուսմունքի (տես *Արիոսականություն*) չափավոր հետևորդ և հականիկիական ընդդիմության երևելի ներկայացուցիչ: Ե.Կ. եղել է իր ժամանակի ամենակրթված և ամենահեղինակավոր աստվածաբաններից, բեղմնավոր հեղինակ, որը թողել է հարուստ գրական ժառանգություն:

Աստվածաբան. երկերում («Ավետարանական նախապատրաստություն», «Ավետարանական ապացուցում», «Աստծո երևման մասին», «Եկեղեցական աստվածաբանության մասին» ևն) Ե.Կ. առաջ է քաշել ելակետային այն դրույթը, ըստ որի՝ քրիստ. ուսմունքը նորություն չէ մարդկության համար: Այն քողարկված ձևով արդեն իսկ առկա է Հին կտակարանում և փիլիսոփաների ուսմունքներում: Ե.Կ., հետևելով *Փիլոն Ալեքսանդրացուն*, Սուրբ Գրոց ուս-

ԵՎՍՏԱԹԵՈՍ մունքի և փիլիսոփայության միջև բովանդակային զուգադիպությունները բացատրել է կա՛մ հույների՝ եբրայեցիներից կատարած ուղղակի փոխառություններով, կա՛մ էլ նրանով, որ և՛ հույները, և՛ հրեաները հետևություններ են արել բնածին հասկացություններից, որոնց «հեղինակը» նույն Աստվածն է, որն աշխարհն ու մարդուն արարել է իր միածին Որդու՝ Բանի միջոցով: Բանը մասնակից է մարդու արարմանը և հենց ինքն է, որ նախաքրիստ. ժամանակներում ներկայացել է արդարներին՝ Աբրահամին, Հակոբին, Մովսեսին, Հոսիային: Սակայն այդ շրջանում մարդկությունն ի վիճակի չէր ըմբռնել Որդու Բանի ուսմունքը: Միայն մարմնացած և մարդացած Հիսուս Քրիստոսն է՝ Բան Աստվածը, որ ցույց է տվել մարդկանց իր էությունը՝ երկրպագելու և աղոթելու ճշմարիտ ուղին: Եվ եթե քրիստ. ուսմունքը նորություն չէ, ապա նորություն է քրիստոնյաների հավաքը՝ *եկեղեցին*, որն Աստծո օգնությամբ պայքար է մղում բոլոր աղանդավորների և հալածիչների դեմ:

Վարքագր. բնույթի երկերից են «Պաղեստինյան վկայաբանությունները», «Կոստանդին կայսրի վարքը» և «Սրբերի հանրահավաքին ուղղված ճառը» (վերջին երկի պատկանելությունը Ե. Կ-ու գրչին՝ վիճելի է):

Ե. Կ-ու պատմագր. երկերից են «Քրոնիկոնը», նշանավոր «Եկեղեցական պատմությունը», Հիերոնիմոսի լատ. թարգմանությամբ մեզ հասած քառամաս «Աստվածաշնչային հնություններ» երկի երկու մասերը՝ «Տոպիկա» և «Օնոմատիկոն»: «Քրոնիկոնը», որն ընդգրկում է աշխարհի ժամանակագրությունը մինչև 325-ը, ամբողջությամբ պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ (թարգմանության ժամանակի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ): «Եկեղեցական պատմությունը» հիմն. աղբյուր է քրիստոնեության առաջին երեք դարերի (դեպքերի շարադրանքը հասնում է մինչև 324-ը) պատմության ուսումնասիրության համար: Ըստ Մովսես Խորենացու՝ «Եկեղեցական պատմությունը» V դ. հավանաբար (416–420-ին) *Մեսրոպ Մաշտոցի* կարգադրությամբ թարգմանել են նրա աշակերտները: Աշխատությունը թարգմանվել է ասորերենից՝ թերևս միտումնավոր, քանի որ ասոր. թարգմանության մեջ բաց են թողնվել կամ մեղմացվել արիոսական ուսմունքին հարազատ արտահայտությունները: Հայ քրիստոնյաների և հոգևորականների մասին ամենահին տեղեկությունը պահպանվել է Ե. Կ-ու այս երկում: Հեղինակը վկայում է, որ Հայազգի Մեհրուժան եպիսկոպոսին III դ. կեսին (248–265) նամակ է գրել *Ալեքսանդրիայի* Դիոնիսիոս եպիսկոպոսը: Հայ քրիստոնյա համայնքների մասին Ե.Կ-ու մյուս վկայությունը վերաբերում է հռոմ. կայսր Մաքսիմինոս Դայայի (305–313)՝ քրիստոնյաների դեմ հալածանքների շրջանին, երբ 298-ի Մծբինի պայմանագրով Հռոմ. կայսրությանը միացված Անդրտիգրիսյան երկրամասերի (Ծոփք, Անգեղտուն, Աղձնիք, Կորդուք, Միջագետքի մի շարք գավառներ, Մոկք) քրիստոնյա հայ բնակիչներն իրենց իշխանների հետ դիմադրավել են հեթանոս կայսրի հալածանքներին: Ե. Կ-ու պատմագր. երկերից և հատկապես «Քրոնիկոնից» օգտվել են հայ պատմիչներ Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Թովմա Արծրունին, Ասողիկը և շատ ուրիշներ:

Երկ. Ժամանակակից երկմանեայ, հրտ. Մկրտիչ Ավգերյանց, մաս 1, Ժամանակագրութիւն պատմական, մաս 2, Քրոնիկոն կանոն, Վնտ., 1818: Պատմութիւն եկեղեցւոյ յեղեալ յասորւոյն ի հայ ի հինգերորդ դարու, հրտ. Աբրահամ Ճարյան, Վնտ., 1877:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 54–57, 434–443: Մանանդյան Հ., Քաղվածքներ Եվսեբիոսի Կեսարացու Քրոնիկոնից մի հին ձեռագրում, Վնն., 1905: Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք 1, Ե., 1979, էջ 388–400: Lexikon für Theologie und Kirche, Bd. III, Freiburg, 1959, s. 1195–97: Altaner B., Prècis de patrologie, adapt. par H. Chirat, Casterman-P.-Tournai, 1961, p. 336–344.

Օլգա Վարդազարյան

ԵՎՍՏԱԹԵՈՍ, Հիսուսի 72 առաքյալներից մեկը: *Թադեոս* առաքյալի աշակերտներից: *Եղիշեի* հետ ուղեկցել է Թադեոս առաքյալին՝ նրա քարոզչական շրջագայության ժամանակ: Թադեոսը Ե-ին ձեռնադրել է Սյունիքի առաջին եպիսկոպոս: Հանգչում է Տաթևի վանքի տեղում, որը և կրում է նրա անունը:

Գրկ. Սիմեոն Երեվանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1873, էջ 11: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912, էջ 16:

Քնարիկ Տեր-Դավթյան

ԵՎՏԻՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Եվտիքեսականություն, V դարի քրիստոնեական հերձվածողական վարդապետություն: Հայտնի է նաև միաբնակություն (մոնոֆիզիտիզմ) անվամբ: Կոչվել է Կ. Պոլսի վանքերից մեկի վանական Եվտիքեսի անունով: *Եփեսոսի*

Գ տիեզերական ժողովում և *Նեստորականության* դեմ պայքարում Եվտիքեսը բազմիցս հանդես էր եկել Նեստորի վարդապետության դեմ, սակայն, Նեստորին հակառակ ուսուցանելով, ընկել էր մեկ այլ ծայրահեղության մեջ: Եվտիքեսի քարոզածը «Մի բնութիւն Աստծոյ Բանին մարմնացելոյ» ալեքսանդրյան (տես *Ալեքսանդրիա*) բանաձևի «մի բնություն» դրույթի ուղղակի և տառացի ըմբռնումն էր: Ըստ Եվտիքեսի, Քրիստոսը միայն Աստված է՝ օժտված միայն աստվածային բնությամբ: Հիսուսի մարդկային բնությունը միավորությունից հետո խառնվել է աստվածայինի հետ ու ոչնչացել, դարձել մեկ բնություն՝ սոսկ աստվածային: Եվտիքեսն ընդունում էր երկու բնությունների գոյությունը միայն միավորությունից առաջ: Նա Քրիստոսի մեջ մարդկայինը ձուլում էր աստվածության մեջ այնպես, որ մարդեղությունը՝ ճշմարիտ մարդը, դառնում էր երևութական (տես *Երևութականություն*), ու իրական էր մնում լոկ ճշմարիտ Աստվածը: Ս. Կույս Մարիամն Աստվածամայր է (հակառակ Նեստորի), բայց եթե Նեստորը քարոզում էր, թե Մարիամը լոկ մարդ ծնեց, ապա Եվտիքեսը պնդում էր, որ Քրիստոսը մարմնով մեզ՝ մահկանացուներիս էակից և համադոյակից չէ, այսինքն ժխտում էր Քրիստոսի մարդեղությունը և մարդկային բնության համադոյությունը: Բանը մարմին չառավ ս. Կույսից, այլ նրա մարմինը երկնային է՝ «յերկնից եբեր զմարմինն, և ոչ ի սրբոյ Կուսէն»: Եվտիքեսը տարբերակում էր «մարդու մարմինը» «մարդկային մարմնից»: Ըստ նրա, Քրիստոսի մարմինը «մարդկային» է և մարմնավորվել է ս. Կույսից, բայց «մարդու մարմին» չէ: Աստվածածնից Քրիստոսը միայն մարդու նմանություն և կերպարանք առավ, բայց ոչ երբեք՝ մարմին, և չդարձավ մարդացած Աստված:

Հայ եկեղեցին (ինչպես և Արևելյան ուղղափառ մյուս եկեղեցիները) երբեք չի հետևել Ե-յանը: Սկսած V դարից նա դատապարտել և նզովել է Եվտիքեսին՝ նրա ուսմունքում տեսնելով ալեքսանդրյան աստվածաբան. մտքի ծայրահեղացում և Արևելքի քրիստոնեաբանական ըմբռնումների աղավաղում: Հայ մատենագրության մեջ Եվտիքեսն առաջին անգամ հիշատակվում է V դ. պատմիչ *Ղազար Փարպեցու* «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» նամակում, որտեղ նզովվում է Արիոսի (տես *Արիոսականություն*), Նեստորի, Մանիի (տես *Մանիքեություն*) և մյուս աղանդավորների հետ միասին: V դ. վերջին և VI դ. սկզբին Հայ եկեղեցին ընդունել է Զենոն կայսրի «*Հենոտիկոնը*» («Միության գիր»), որտեղ նզովվում է Եվտիքեսը, և հավաստել իր տարբեր ընկալումը եվտիքական միաբնակությունից: Հայ դավան. գրվածքներում առաջին անգամ Եվտիքեսը, ի թիվս այլ աղանդավորների, նզովվում է VI դ. սկզբին, *Բաբկեն Ա Ողբմսեցի* կաթողիկոսի «Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս» 2-րդ թղթում:

Հայ եկեղեցին ալեքսանդրյան վարդապետությունն ընկալում է կյուրեղյան-եփեսոսյան դավանության դիրքերից: Նա, «մի բնության» ուսումը պաշտպանելով, Քրիստոսի մեջ աստվածային կողմն առհասարակ ավելի է շեշտում, սակայն «մի բնություն» ասելով՝ միայն աստվածայինը չի հասկանում և մարդկայինը անտեսում: Հայ եկեղեցու քրիստոսաբան. այս ըմբռնումը լավագույնս ձևակերպել է *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսն իր «Ընդդէմ երևութականաց» ճառում. «Քրիստոս ոչ է սոսկ մարդ, բայց և ոչ Աստուած մերկ, այլ՝ մանաւանդ Աստուած և մարդ միանգամայն»:

Գրկ. Կնիք հաւատոյ..., հրտ. Կ. Տեր-Մկրտչյան, Էջմիածին, 1914: Սոկրատ Սքոլաստիկոս, Եկեղեցական պատմութիւն, Վաղ-պատ, 1897: Տիմոթեոս Աղեքսանդրացի, Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովոյն Քաղկեդովնի, Էջմիածին, 1908: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. 1, Էջմիածին, 1908: *Поснов М.Э., История Христианской церкви, Брюссель, 1964;* Hans-Georg Beck, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959.

Արտաշես Ղազարյան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, տես *Հոգևոր երաժշտություն*:

ԵՐԱՆԻՆԵՐ ինը, Լեռան քարոզ, *Հիսուս Քրիստոսի* խորհրդավոր պատգամախոսությունը՝ նրա քարոզչության սկզբում, ասնապատի փորձությունից հետո. այն խոսքերը, որ նա ասաց իր աշակերտներին լեռան վրա (Մատթ. **5**.3–12, Ղուկ. **6**.20–23): Ե-ին նախորդող խոսքը, թե՝ «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. **4**.17), և այն բժշկությունները, որ նա արեց, պայմանավորեցին հոգևոր կատարելության հաջորդ՝ առավել բարձր աստիճանը, որ Ե. են: Սուրբ Հայրերը ինը Ե. համեմատում են Հակոբին (Իսրայելին) տեսիլքով երևացած երկնային սանդուղքի հետ և Ե-ի քանակը համա-

ում են *հրեշտակների* ինը դասերի խորհրդաբանությունը: Հոգևոր առավել բարձր, կատարյալ աստիճան է խորհրդանշում այն հանգամանքը, որ Հիսուսը, Ե. աստելուց առաջ, անվերջ բժշկություններ ու հրաշքներ սպասող ժողովրդից առանձնացավ, բարձրացավ լեռը և նստեց այնտեղ, ինչը նշանակում է, թե այդ լեռը (հոգևոր բարձրությունը) հաղթահարողները և Հիսուսին մոտեցողները (աշակերտողները) կարող են լինել երանելի՝ ժառանգել *երկնային արքայությունը* ու կոչվել Աստծո որդիներ: Ե. հետևյալներն են.

– Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

– Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն:

– Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:

– Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան:

– Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն:

– Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:

– Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:

– Երանի՛ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

– Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել:

Եկեղեցու հայրերն ու *վարդապետները* դարեր շարունակ մեկնաբանել են այս խորախորհուրդ Ե.: Հոգով աղքատները նրանք են, որ միայն Աստված են տեսնում՝ հոգևորապես թոթափած լինելով անձնական նկրտումները, հպարտությունը, փառասիրությունը (իրենց հոգևոր ունեցվածքը՝ ժառանգած մեղավոր Ադամից): Նրանք իրենց անկատարությունն ու մեղսավորությունը ճանաչող և խոնարհաբար աստվածային *շնորհը* խնդրողներն են: Սգավորները նրանք են, որ արտասուքով զղջում են իրենց մեղքերի համար և իրենց մեջ ճշմարիտ հարազատին՝ կենդանի Աստծուն մեռցրած լինելու համար. նրանք *ապաշխարությամբ* կմաքրվեն և *Սուրբ Հոգով* (որ կոչվում է Մխիթարիչ) կվերստանան իրենց հարազատներին՝ աստվածային կյանքն ու սուրբ շնորհները: Հեզերը, Հիսուսին պատկերակից լինելով, կժառանգեն երկիրը՝ Հիսուսի հետ թագավորելով: Արդարության (Հիսուս Քրիստոսի) քաղցն ու ծարավն ունեցողները, հաղորդվելով Հիսուսի մարմնին ու արյանը, կհագենան հավիտենական հացով ու հավիտենական ջրով: Կարծես հիշեցվում կամ հաստատվում է սաղմոսը՝ «Աստվա՛ծ, Աստվա՛ծ իմ, ես առավոտից քեզ եմ դիմում. հոգիս ծարավ է քեզ, առավել ևս մարմինն իմ» (Սաղմ. **62.1–2**): Ողորմածները մերձավորի հանցանքները ներողներն ու դթությունն ցույց տվողներն են: Նրանք Աստծուց ողորմություն կգտնեն (կմտնեն շնորհի տակ): Սրտով մաքուրները նրանք են, որ խորհուրդների դուռը՝ սիրտը ապաշխարությամբ, *աղոթքով* և ս. *Հաղորդությամբ* մաքրել են չար խորհուրդներից: Նրանց սրտերի մեջ կիջնի շնորհի լույսը, իսկ միտքը կպայծառանա աստվածային խորհուրդների ճառագայթումով և Աստծո փառքի մեծությամբ: Խաղաղարար է նա, ով իր սրտում ունի Աստծուն՝ հանձինս Որդու և Սուրբ Հոգու (Հիսուսը խաղաղություն գործեց, օրինակ՝ խաղաղեցնելով ծովը): Արդարության համար հալածվողները սուրբ Աստծու պատճառով հանիրավի չարչարվողներն են, որոնք հավիտյանս հավիտենից ապրելու են երկնքի թագավորության մեջ: Հանուն Աստծո չար խոսք, նախատինք կրողները Տիրոջ արքայության մեջ մեծ շնորհների, պարգևների ու դիրքի են արժանանալու, ինչպես որ իրենց հավատքի առաջնորդն ու կատարողը, որ հարություն առավ և բազմեց Աստծո աջ կողմը:

Նախ «անապատում կանչողի ձայն»-ի՝ *Հովհաննես Մկրտչի*, ապա և Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողմից ազդարարված երկնային արքայությանը, երանությանը արժանանալու համար հարկավոր է քայլել ինը Ե-ի սանդուղքներով: Ընդ որում Ե. ոչ թե քրիստ. ուսմունքի հայեցակետեր են, այլ՝ բուն Աստծո բնույթի արտահայտությունները. ով ջրից (ապաշխարությամբ) ու Սուրբ Հոգուց (Աստծուց) վերստին է ծնվում, նա կարող է բարձրանալ Աստծո լեռը (սիրո և կատարելության բարձունքը) և դառնալ երկնային արքայության քաղաքացի՝ բնութենակից լինելով և ճանաչելով իր Հորը՝ կենդանի Աստծուն:

Հիսուսն ասում էր այն, ինչ կար իր մեջ, և այն, ինչը պիտի ցույց տար գործով. դրանք էին՝ աղքատացումը՝ հանուն Աստծո, սուգը՝ հանուն անկյալ մարդու, հեզությունը, հնազանդությունը առ Աստված, արդարության՝ աստվածայինի քաղցն ու ծարավը, ողորմածությունը, գթածությունը՝ ախտավոր, բորոտավոր և դևերից բռնված մարդկանց հանդեպ, նրանց բժշկելը, սրտով մաքուր լինելը և դրա համար մշտապես Աստծուն տեսնելը, հալածանքներն ու չարչարանքները կրելը ևն:

Սուրբ հայրերը Ե. անվանել են Ավետարան՝ Ավետարանի մեջ, Քրիստոսի սրբարար ու փրկարար տնօրինություններից մեկը:

Ե-ին հետևում են քրիստոսյան *պատվիրանները*՝ լինել երկրի աղը և աշխարհի լույսը, լիովին բացառել ոչ միայն չար գործերը (սպանություն, շնություն ևն), այլև չար խորհուրդները, չարի փոխարեն չար չհատուցել մարդկանց, այլ բարիով հաղթել չարին, այսինքն՝ լինել կատարյալ. «Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. **5.**48):

Ե. փաստորեն Աստծո բնույթի ներդրումն են մարդու մեջ: Ե-ի աստվածային բնույթն ու նպատակն է հանրագումարի բերվում Ե-ին հաջորդող *Տերունական աղոթքի* մեջ (Մատթ. **6.**9–13):

Լևոն Սարգսյան

ԵՐԳ, հայ հոգևոր երաժշտության մեջ օգտագործվել է ինչպես լայն, ընդհանուր, այնպես էլ նեղ, մասնավոր իմաստներով՝ որպես հատուկ երաժշտաբանաստեղծական տեսակ: Վաղ միջնադարում Ե. են կոչվել առհասարակ և՛ սաղմոսներն ու օրհնությունները («Երգ Սաղմոսից», «Երգ Օրհնութեան»), և՛ V–VIII դդ. ստեղծված ինքնուրույն հոգևոր երգասացությունները: Ե. են կոչվել նաև *ժամերգության* ընթացքում կատարվող «Փառք ի բարձունս» և «Լույս զվարթ» հնագույն համաքրիստոնեական երգասացությունները, որոնք դեռևս *Բարսեղ Կեսարացին* հիշատակել է որպես վաղուց ի վեր ընդհանրացած երգեր: Այդ վերջինների օրինակով XII դ. *Ներսես Շնորհալին* ներմուծել է համանուն մի նոր երաժշտաբանաստեղծ. տեսակ, որը, ի տարբերություն հին չարականների, աչքի էր ընկնում իր հանրամատչելիությամբ ու հուզականությամբ, ձևի դասական պարզությամբ և ժող. երգարվեստից սերող մի շարք հատկանիշներով, որոնցից նշելի են երգային մեղեդայնությունը և որոշ կշռութային բանաձևերի կիրառությունը: Ներսես Շնորհալու գրչին են պատկանում նախապես արտածիսական նպատակներով գրված և հետագայում ժամերգության մեջ կանոնացված, ձայնագրյալ ժամագրքում զետեղված գիշերային ժամի «Յիշեսցուք ի գիշերի»-ն և «Զարթիք փառք իմ»-ը, «Աշխարհ ամենայն»-ը և «Առաւոտ լուսոյ»-ն, առավոտյան ժամի «Նորաստեղծեալ»-ն ու «Արարչական»-ը, *Արևագալի երգերը*, երրորդ ժամի «Օրհնեմք զքեզ», «Խաւարեցաւ», «Զարչարակցեալ» և «Նահապետին Աբրահամու», խաղաղական ժամի «Նայեաց սիրով» և «Ի քէն հայցեմք» Ե-երը: Նույն ժանրին են պատկանում Ներսես Շնորհալու Զարչարանաց «Այսօր անճառ»-ը՝ բոլոր պատկերներով, «Նորոգող տիեզերաց»-ը, Ննջեցելոց «Աստուած անեղ»-ը ու «Արարիչ և մարդասեր, անսխակալ և բարեգութ» Ե-երը (իրենց բոլոր պատկերներով), որոնք հարստացրել են հայ հոգևոր երգարվեստը բարձրարժեք նմուշներով:

Գրկ. Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վնտ., 1873, էջ 444–445: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973, էջ 31, 45–47, 75–90:

Աննա Արևշատյան

«**ԵՐԵՎԱԿ**», կրոնաբանասիրական ուսումնական կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1857–1866-ին, Կ. Պոլսում: Խմբագիր՝ Հ. Զամուռճյան (Տերոյենց):

Տպագրել է քրիստ. կրոնին, Հայ եկեղեցուն, նրա պատմությանը, ծեսերին ու տոներին, խորհուրդներին նվիրված հոդվածներ, դավանաբան. բնույթի նյութեր, բարոյախրատ. զրույցներ, արձակ գործեր ևն: Կաթոլիկության նկատմամբ համակրանքի պատճառով ենթարկվել է ժամանակի հայ հաս. մտքի, ինչպես և ազգ. եկեղեցու ներկայացուցիչների քննադատությանը: Փաստորեն ընդունել է Հռոմի եկեղեցու գերիշխանությունը Հայաստանյայց եկեղեցու նկատմամբ, ինչը դրսևորվել է մասնավորապես կաթոլիկ. կրոնը դրվատող ինքնուրույն և թարգման. հոդվածների տպագրությամբ, երկու եկեղեցիների սերտ մերձավորության և ավանդույթների, խորհուրդների և այլնի նույնության քարոզներով: Հատկանշական է, որ Զամուռճյանը «Ե.»-ում քննադատության է ենթարկել Կ. վրդ. Շահնազարյանի՝ «Դաշանց գրի» հերքմանը նվիր-

ված աշխատությունը, պնդելով, որ Գրիգոր Լուսավորիչը Հռոմի հայրապետ Սեղբեստրոսից է ստացել իր կաթողիկոս. կոչումը, ուրեմն և ստույգ է Հայ եկեղեցու հանդեպ Հռոմի գերակայությունը վկայող «Դաշանց գիրը»: Միաժամանակ, ի պաշտպանություն Հայ առաքելական եկեղեցու, «Ե.» հակադրվել է բողոքականությանը և հանձին Զամուռճյանի անվերապահորեն պաշտպանել Գ. *Այվազովսկու* «Վարդապետարան Հայաստանեայց եկեղեցւոյ» գիրքը բողոքականների քննադատությունից:

«Ե.» XVIII դ. ֆրանս. լուսավորիչների տեսական ժառանգությունը համարել է կեղծ գիտություն: Հայ հաս. մտքի ասպարեզում իր հակառակորդներին՝ Մ. Նալբանդյանին, Հ. Սվաճյանին, Ստ. Ոսկանյանին, Գր. Չիլինկիրյանին, հեղինակազրկելու միտումով Զամուռճյանը փորձել է բացահայտել նրանց գաղափար. աղերսները ֆրանս. լուսավորիչների հետ (Զամուռճյանը, ի դեպ, նույնացրել է ֆրանս. լուսավորիչներին ու մասոններին և սրանց քննադատությունը տարածել արևմտահայ ժող. գործիչների վրա, որոնք, մասնակի բացառությամբ, մասոններ էին՝ միավորված Կ. Պոլսի «Հայկ-Օրիոն» և Զմյուռնիայի «Տիգրան» մասոնական օթյակներում):

Ժամանակին «Ե.» ընթերցողին հետաքրքրել է իր խմբագրի հիրավի բազմակողմանի իմացությամբ, ինչպես և Հայ եկեղեցուն, կրոն. գործիչներին, եկեղեցաշինական արվեստին ևն վերաբերող հարուստ լրատվությամբ:

Այբերտ Խառատյան

ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, գտնվում է քաղաքի կենտրոնում, Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկի անկյունում: Կառուցվել է XIII դ., տեղական տուֆի սրբատաշ քարով, մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածքով: Հվ. պատին մեծահարուստ Սահմադինի արձանագրությունն է՝ 1264-ին Երևանը իր «հողով և ջրով» գնելու մասին: 1284-ին եկեղեցին որպես նվիրատվություն ստացել է հողամաս, 1301-ին՝ ներքնատներով երկու կրպակ, 1318-ին Նորագավիթում՝ հողեր, 1598-ին՝ այգի: 1604-ին Պարսից շահ Աբբասի կողմից Երևանը գրավելու մարտերի ժամանակ եկեղեցին վնասվել է հրազենային գնդակներից և թնդանոթի արկերի բեկորներից: 1609-ին Խոջա Գրիգորը եկեղեցուն արմ. կողմից կից ժամատուն է կառուցել, նվիրել ձեռագրեր, թանկարժեք եկեղեց. սպասք ու իրեր: Ե. Կ. Ս. Ա. ե. XVII դ. ունեցել է օթևան, որտեղ իջևանել և մինչև *Էջմիածնի Մայր տաճարի* նորոգման ավարտը ապրել է *Մովսես Գ Տաթևացի* կաթողիկոսը: Այստեղ 1666-ին գրիչ Ավետիք Երեցը բնագիր ձեռագրից ընդօրինակել է XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու Պատմությունը՝ հեղինակի հսկողությամբ: 1679-ի երկրաշարժից ավերվել է ժամատունը, սակայն Կաթողիկեն՝ Երևանի միջնադարյան եկեղեցիներից միակը, կանգուն է մնացել: 1693–95-ին ժամատան տեղում երկու զույգ խաչաձև մույթերով խոշոր եռանավ բազիլիկ են կառուցել, որի համար որպես Ավագ խորան ծառայել է XIII դ. եկեղեցին: Վերջինիս արմ. պատը 1819-ին զարդարվել է Պողոս և Պետրոս առաքյալներին, ս. Հռիփսիմե և ս. Գայանե կույսերին պատկերող որմնանկարներով: Եկեղեցու բազիլիկ կցակառույցը քանդել են 1937-ին: Այժմ Ե. Կ. Ս. Ա. ե. քաղաքի Կենտրոն համայնքի գործող եկեղեցիներից է:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.2, 4-րդ պատկերը:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Շահազիզ Ե., Հին Երևանը, Ե., 1931: Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Ե., 1975: *Сивков А. В., Об одном сооружении XIII века в Ереване, ՊԲՀ, 1962, № 3:*

Մուրադ Հասրաթյան

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼ ԱՆԱՊԱՏ, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, հին Երևանի Շահար քաղաքամասի հյուսիսային կողմի այգեստանում: Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, XVII դ. 1-ին քառորդում Մովսես վարդապետը (ապագա *Մովսես Գ Տաթևացի* կաթողիկոս) Երևանի Ամիրգունա խանի հորդորով և քաղաքի բնակիչների ու վաճառականների միջոցներով ս. Անանիայի գերեզմանի վրայի մատուռի շուրջը հիմնել է անապատ և կառուցել պարիսպներով շրջապատված համալիր՝ բաղկացած ժամատնից, առաջնորդարանից, խցերից (բոլորն էլ՝ փայտածածկ): Այստեղ կազմավորված միաբանությունում ղեկավարվել են *Այունյաց Մեծ անապատի* կանոնադրությամբ: Ե. Ս. Ա. ա. ա-ում Մովսես վարդապետը հիմնել է նաև դպրոց: Անապատի և դպրոցի համբավը, ըստ Առաքել Դավրիժեցու, տարածվել է մինչև

Հունաստան, Թուրքիա, Վրաստան, Պարսկաստան: 1635–36-ին՝ թուրք-պարսկ. պատերազմի ժամանակ, ավերվել են անապատի բոլոր շինությունները, բացի մատուռից: *Փիլիպոս Ա Աղբակեցի* կաթողիկոսը 1637-ին քարով վերակառուցել է անապատի բոլոր շենքերը՝ հավելելով նաև սեղանատուն: 1679-ի հունիսի 4-ի երկրաշարժից անապատն ամբողջովին ավերվել է: 1693-ին Երևանի մեծահարուստ Խոջա Փանոսը մինչև հիմքերը քանդել է անապատի մատուռը և նույն տեղում սրբատաշ տուֆով կառուցել մեկ զույգ խաչաձև մույթերով երանավ բազիլիկի հորինվածքով Ս. Աստվածածին եկեղեցին և նրա արմ. ճակատին կից՝ եռակամար բաց սրահ, որի կենտրոնում բարձրանում է զանգակատան վեցայուն ռոտոնդան: Եկեղեցու ներսում, հս-արմ. մույթի կողքից, սրահի հս. կողմում մուտք է բացվել դեպի ս. Անանիայի թաղածածկ, ստորգետնյա ոչ մեծ դամբարանը: 1731-ին Ավետիք վարդապետը պատրաստել է տվել եկեղեցու խաչկալը: 1793-ին Գաբրիել հարյուրապետը նորոգել է եկեղեցու տանիքը: 1835-ին Ե. Ս. Ա. ա.ա. դադարել է մենաստան լինելուց, և նրա եկեղեցին դարձել է շուրջը բնակություն հաստատած մարաղացի գաղթականների համար ծխական եկեղեցի: Այնտեղ պահվող, հրաշագործ համարվող և «Զորավոր» կոչվող Ավետարանի անունով եկեղեցին սկսել է կոչվել Զորավոր Ս. Աստվածածին: 1873-ին երևանցի մեծահարուստ Աֆրիկյան եղբայրների միջոցներով ս. Անանիայի գերեզմանի վրա կառուցվել է քառակուսի հատակագծով, երկհարկ, ութասյուն գմբեթով մատուռ, որի ներքնահարկում սրբի գերեզմանն է: Փակվել է եկեղեցու ներսից դեպի դամբարան տանող մուտքը, և մատուռի արմ. կողմից նոր մուտք է բացվել: 1889-ին երեսփոխան Մ. Սարգսյանի միջոցներով նորոգվել է եկեղեցին, հվ. կողմից նոր դուռ և ճակատներում ուղղանկյուն լուսամուտներ են բացվել, ներսում, արմ. կողմում՝ վերնասրահ շինվել: 1974–78-ին ֆրանսահայ բարերար Սարգիս Պետոյանի նվիրատվությամբ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգվել է, հատակը՝ մարմարապատվել, Ավագ խորանում սեղան է տեղադրվել, հս. որմում մկրտարանի ավազան շինվել, Ս. Անանիայի մատուռ-դամբարանի գմբեթը նորոգվել, շրջապատը բարեկարգվել: Այժմ Ե. Ս. Ա. ա. ա. քաղաքի Կենտրոն համայնքի գործող եկեղեցիներից է:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.2, 5-րդ պատկերը:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Շահազիզ Ե., Հին Երևանը, Ե., 1931: Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Ե., 1975: Հարությունյան Վ., Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1988:

Մուրադ Հասրաթյան

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, կառուցվել է 1996–2001-ին: Ճարտ.՝ Ստ. Քյուրքչյան: Կառուցումը մտահղացել է Ամենայն Հայոց կաթողիկոս *Վազգեն Ա Պալճյանը*: 1989-ի հուլիսի 14-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի և ճարտ. հանձնաժողովի համատեղ նիստում որոշվել է ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի՝ «... մայրաքաղաք Երևանում կառուցել մի մեծաշուք եկեղեցի հայկական դասական ճարտարապետական ոճի հիման վրա, որտեղ շուրջ երկու հազար հինգ հարյուր հավատացյալներ կարողանան միատեղ աղոթել» («Էջմիածին», 1989, № 7): 1990-ին Երևանի քաղաքապետարանը Մայր եկեղեցու կառուցման համար Օղակաձև զբոսայգում, Երվանդ Քոչարի փողոցի հարևանությամբ հատկացրել է 1,5 *հա* տարածք: 1990-ի մարտի 31-ին Վազգեն Ա կաթողիկոսի օրհնությամբ հուշաքար է դրվել Մայր եկեղեցու կառուցման տեղում: Իր խոսքում Վեհափառն ասել է. «Իմ հայացքն ուղղելով դեպի մոտ ապագան, մոտ տասը տարի հետո, իմ հոգու աչքերով տեսնում եմ այն հոյակապ տաճարը, որ պիտի բարձրանա այստեղ, և սուրբ խաչը պիտի սլանա դեպի երկինք: Հավանաբար ես այստեղ չեմ լինելու, բայց դուցե կհիշեք ինձ այդ օրը» («Էջմիածին», 1990, № 1–2):

1990-ի ապրիլին հայտարարվել է Մայր եկեղեցու նախագծի մրցույթ. ներկայացվել է 33 նախագիծ Հայաստանի Հանրապետությունից և սփյուռքից: 1991-ի փետր. մրցութային հանձնաժողովը մրցանակի է արժանացրել Ստ. Քյուրքչյանի և Ա. Ղուլյանի (Հ. Ասատրյանի մասնակցությամբ) նախագծերը: Հեղինակներին հանձնարարվել է նախագծերն ըստ արված դիտողությունների վերամշակել: 1992-ի հոկտ. 8-ին մրցութային հանձնաժողովը, Վազգեն Ա կաթողիկոսի մասնակցությամբ և հավանությամբ, ընտրել է Ստ. Քյուրքչյա-

նի նախագիծը: 1996-ի փետր. 29-ին սկսվել են շինարարության նախն. աշխատանքները: 1997-ի ապրիլի 7-ին, Աստվածածնի Ավետման տոնակատարության օրը, Ամենայն Հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյանի* հանդիսապետությամբ կատարվել է Ե.Ս.Գ.Լ.Մ.ե-ու հիմնարկեքը: 2000-ի հունիսի 26-ին Ամենայն Հայոց կաթողիկոս *Գարեգին Բ Ներսիսյանը* օծել է եկեղեցու խաչերը, 2001-ի սեպտ. 23-ին՝ եկեղեցին և մատուցել առաջին Պատարագը:

Ե.Ս.Գ.Լ.Մ.ե. ծավալատարածական ամբողջություն կազմող, Անիի տուֆով երեսապատված տարբեր կառույցների համալիր է՝ բաղկացած եկեղեցուց, նրա հս-արմ. կողմում՝ Ս. Տրդատ և հվ-արմ. կողմում՝ Ս. Աշխեն մատուռներից, եկեղեցուն արմ-ից կից գավթից ու զանգակատնից: Համալիրում գերիշխող և նրա ճարտ. կերպարի հիմն. որոշիչ ծավալը կենտրոնագմբեթ եկեղեցին է՝ ամենախոշորը հայկ. եկեղեցիների շարքում (արտաքին չափերն են 58x58 *մ*, բարձրությունը մինչև խաչի տակ՝ 56 *մ*): Նրա հատակագծային ու ծավալային հորինվածքի հիմքը քրիստ. կրոնի խորհրդանշան խաչն է: Ծածկն իրականացված է երկու զույգ փոխհատվող, երկաթբետոնե կամարների համակարգի միջոցով (կամարներն ունեն 38 *մ* թռիչք և միմյանցից հեռու են 16 *մ*), որի կենտրոնում բարձրանում է ութանիստ թմբուկով, հովանոցաձև վեղարով գմբեթը: Ծածկի նման լուծումը հնարավորություն է տվել եկեղեցու ներսն ազատել առանձին կանգնած հենարաններից և ստանալ միասնական ներքին տարածություն: 1800 $մ^2$ մակերեսով աղոթասրահում կարող են միաժամանակ տեղավորվել 3000 մարդ, 1700-ը՝ նստատեղերով: Ընդարձակ Ավագ խորանի (180 $մ^2$ մակերեսով) երկու կողմերում տեղադրված են խոշոր ավանդատները: Աղոթասրահի արմ. կողմում երգչախմբի ու երգեհոնի համար նախատեսված վերնահարկն է: Եկեղեցու տակ, նրա ողջ մակերեսով, 4 *մ* բարձրությամբ կառուցված է ներքնահարկ, որտեղ գտնվում են ս. Գրիգոր Ա Լուսավորչի հուշահամալիրը, գրադարան, դահլիճներ՝ հանդեսների և դասախոսությունների համար, աշխատասենյակներ: Նույն հորինվածքն ու նույն չափերն ունեցող Ս. Տրդատ և Ս. Աշխեն՝ կենտրոնագմբեթ մատուռները նախատեսված են ծիսակատարությունների՝ պսակադրության, մկրտության, հոգեհանգստի համար: Դրանք խաչաձև են, հովանոցաձև վեղարով ութանիստ թմբուկ ունեցող գմբեթով (մատուռների բարձրությունը մինչև խաչի տակ՝ 29 *մ*) և ունեն եկեղեցիներին բնորոշ բաղադրամասեր:

Եկեղեցու և մատուռների միջև տեղադրված գավիթը նրանց միմյանց կապող հանգույցն է: Ութանիստ սրահ է, որից մուտքեր կան դեպի եկեղեցու աղոթասրահ, վերնահարկ և ներքնահարկ, զույգ մատուռներ: Գավթում են պահվում 2000-ին Նեապոլի Ս. Գրիգոր Հայի եկեղեցուց Գարեգին Բ Ներսիսյան Ամենայն Հայոց կաթողիկոսի բերած *Գրիգոր Ա Լուսավորչի* մասունքները: Գավթին արմ-ից կից է քառակուսի հատակագծով զանգակատունը (8x8 *մ*), 22 *մ* բարձրությամբ աշտարակ, որը պսակվում է 5 *մ* բարձր. ունեցող քարե թեւավոր խաչով:

Ե.Ս.Գ.Լ.Մ.ե., ունենալով հայկ. դասական ճարտ-յանը հատուկ նկարագիր, միաժամանակ արդիական է և որևէ միջնադարյան եկեղեցու նմանակը չէ: Կառուցվելով շրջակայքից 15 *մ* բարձր տարածքում՝ եկեղեցին դիտվում է քաղաքի հեռավոր կետերից, նաև Հանրապետության հրապարակից և իր խոշոր ծավալով ու տպավորիչ ուրվագծով հարստացնում է Երևանի կենտրոնի համայնապատկերը:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.2, 6-րդ պատկերը:

Գրկ. Հարությունյան Վ., Խորան լուսո և հավատքի, «Էջմիածին», 1992, № 8, 1993, № 1–3: Վարդանյան Մ., Գործը՝ հավատքի հայելի... Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հիմնօրհնեքը, «Էջմիածին», 1997, № 4–5:

Մուրադ Հասրաթյան

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ, քաղաքի կենտրոնի հարավային կողմում, Հրազդան գետի ձախափնյա ձորեզրին, նախկին Ջորագյուղ թաղամասում: Հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Եղել է Ջորագյուղի անապատի, ապա՝ Երևանի թեմական առաջնորդարանի եկեղեցի: Ավերվել է 1679-ի հունիսի 4-ի երկրաշարժից և վերաշինվել կաթողիկոս *Նահապետ Ա Եղեսացու* գահակալության տարիներին (1691–1705): XIX դ. սկզբին եկեղեցին խարխլվել է, և Արարատյան թեմի առաջնորդ Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, կաթողիկոս *Հովհաննես Ը Կարբեցու* հրամանով, լրիվ քանդել է այն և նույն տեղում, 1835–42-ին կառուցել ավելի մեծ չափերի նոր եկեղեցի՝ քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով, ներսից

և դրսից սվաղած պատերով: XX դ. Ե. Ս. Ս. ե., դառնալով *Արարատյան հայրապետական թեմի* առաջնորդանիստ, արտաքին անշուք տեսքով չի համապատասխանել իր նշանակությանը: Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսի հրամանով եկեղեցին 1971–76-ին վերակառուցվել է՝ պահպանելով իր հատակագծային հորինվածքը և կարևոր կոնստրուկցիաները (ճարտ. Ռ. Իսրայելյան): Արտաքին ճակատները երեսպատվել են Անիի նարնջագույն տուֆի սրբատաշ քարերով, ներսում՝ արմ. կողմում, երգչախմբի համար վերնասրահ է շինվել, ողջ մակերեսով, եկեղեցու տանիքի վրա վերնահարկ է ավելացվել, քանդվել է գմբեթը, և փոխարենը կառուցվել նորը՝ ավելի բարձր ու գեղեցկատես: Շքեղորեն հարդարվել է գլխավոր՝ արմ. ճակատը, որի շքամուտքի բարավորին՝ Աստվածածնի, պատին Գաբրիել և Միքայել հրեշտակապետների հարթաքանդակներն են, վերևում՝ զարդագոտի (քանդ. Ա. Հովսեփյան): Ներսում՝ գմբեթատակ առագաստներին, քանդակվել են չորս ավետարանիչների խորհրդանշանները՝ կրկնելով *Արենիի Ս. Աստվածածին եկեղեցու*՝ Մոմիկի կերտած բարձրաքանդակները: Եկեղեցին վերակառուցվել է լոնդոնաբնակ բարերար Սարգիս Քյուրքճյանի նվիրատվությամբ: Ե. Ս. Ս. ե. հիմնովին վերակառուցվելուց հետո օծվել է 1976-ի նոյեմբ. 3-ին, որի ժամանակ Վազգեն Ա կաթողիկոսը քարոզում նշել է՝ «Քաղաքամայր Երևանն օժտվեց մի նոր զարդով, հայկ. ճարտարապետության մի նոր կոթողով, աղոթքի սքանչելի մի նոր սրբավայրով»:

2000-ի նոյեմբ. 2-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանի հանդիսապետությամբ օծվել է Ե. Ս. Ս. ե-ուն կից նորակառույց զանգակատունը:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.3, 1-ին պատկերը:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Ե., 1975: Հարությունյան Վ., Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1988:

Մուրադ Հասրաթյան

ԵՐԵՎՈՒԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, դոկետիզմ (հուն. *δοκέω* – թվում եմ բառից), I դարից սկիզբ առած հերետիկոսական ուսմունք, ըստ որի, Հիսուս Քրիստոսի Մարդեղությունը և չարչարանքներն իրական չեն, այլ՝ երևութական, թվացյալ, «առ աչօք», իսկ Քրիստոսն անմարմին էակ է: Ե-ի վարդապետությունը շարադրում և այն գնոստիկյան (տես *Գնոստիցիզմ*) աղանդ է համարում Հիպպոլիտոս Բոստրացին (մահ. 235) «Ընդդեմ հերձվածների» երկում (8, 8–11): Ուսմունքի հիմքում ընկած են մի շարք հեթանոս. պատկերացումներ Աստծո և նյութ. աշխարհի մասին: Ե. արմատացել է հատկապես գնոստիկյանների ուսմունքներում: Ըստ երևութականների, Քրիստոսն իրականում չի խաչվել և մեռել, այլ հրաշքով ազատվել է, իսկ նրա փոխարեն խաչվել է Հուդա Իսկարիովտացին կամ Սիմոն Կյուրենացին, որին Քրիստոսն իր պատկերն էր տվել, իսկ ինքը նրա պատկերով կանգնած էր խաչի մոտ: Ըստ գնոստիկյան մի ուղղության, Գերագույն Հայրը հրեաների աստծուն դահընկեց անելու, չար մարդկանց ու չար ոգիներին ոչնչացնելու և բարի մարդկանց փրկելու համար ուղարկում է փրկիչ Քրիստոսին, որը երևան է գալիս Հիսուսի մեջ որպես մարդ՝ երևութաբար, առանց ծնվելու և մարմնական կերպարանք ստանալու: Դրանով նրանք ուրանում էին Քրիստոսի Մարդեղությունը, նրան վերագրում դերմարդկային բնություն և երևութական մարմին: Ե. առավել բնորոշ է եղել գնոստիկյան Վալենտինի (Վալենտինոս) և նրա դպրոցի ուսմունքին: Ըստ Վալենտինի, Քրիստոսը մարմին է ընդունել միայն տեսանելի դառնալու համար. նա Մարիամի միջով անցել է ինչպես ջուրը խողովակի միջով, առանց նյութի հետ առնչվելու կամ նրանով պղծվելու: Հետևաբար Քրիստոսի ամբողջ երկրային գոյությունը՝ ծնունդը, կյանքը, չարչարանքները, խաչելությունն ու մահը, միայն երևութական է և ոչ իրական: Հետագա եկեղեց. հայրերը, այդ թվում՝ հայ, քննադատելով քրիստոնյա երևութականներին, հաճախ համեմատության եզրեր են մատնանշել նրանց և հատկապես Վալենտինի ուսմունքների միջև:

Պավլիկյանները ևս կրել են երևութական գաղափարներ: Ինչպես գնոստիկյանները, նրանք ևս չեն ընդունել, որ Քրիստոսը մարմին է առել Մարիամից, այլ իր հետ երկնքից բերած մարմնով, ինչպես ջուրը խողովակի, անցել է Կույս Մարիամի միջով: Ե., լինելով գնոստիկյան երևույթ, հետագայում զանազան ձևերով հանդես է եկել քրիստ. աղանդավորների ուսմունքներում: Քրիստոսաբանության

մեջ Տիրոջ Մարդեղության որևէ թերի կամ ոչ իրական խոստովանություն անխուսափելիորեն հանգեցրել է երևութական ծայրահեղությունների, որոնց դրսևորումներից են Եվտիքեսի (տես *Եվտիքականություն*) և հուլիանոսականների վարդապետությունները: VI–VIII դդ. Ե. աշխուժացել է *հուլիանոսականների* շնորհիվ, Հայաստանում տարածվել է VII–VIII դդ. և կոչվել «Մայրագոմեցու աղանդ» (հուլիանոսականության հայ հետևորդ Սարգիս Մայրագոմեցու անունով):

Հայ եկեղեցին սուր պայքար է ծավալել Ե-յան դեմ: *Մանազկերտի եկեղեցական ժողովում* (726) դատապարտել է Հայաստանում նրա դրսևորումներից մեկը՝ հուլիանոսականությունը: Ե-յան դեմ առանձին աշխատություններով հանդես են եկել *Թեոդորոս Քռթենավորը, Հովհաննես Գ Օձնեցին, Խոսրովիկ Թարգմանիչը*: Ավելի ուշ՝ XII դ., Հայաստանում երևութականների գոյության մասին փաստել է *Ներսես Շնորհալին*: Հայոց կաթողիկոսը, խոսելով երևութական աղանդավորների մասին, նրանց ուսմունքի մի շարք կետեր նմանեցրել է Եվտիքեսի, Ապողինարիոսի (տես *Ապողինարիզմ*), մանիքեցիների (տես *Մանիքեություն*), գնոստիկյան Վալենտինի երևութական գաղափարներին:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968: Արամյան Մ., Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրվագծեր (Դ–Ը դդ.), «Գանձասար», 2, 1992:

Արտաշես Ղազարյան

ԵՐԵՐՈՒՅՔԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԿԱՅԱՐԱՆ, ՀՀ Շիրակի մարզի Անիպեմզա գյուղի արևելյան կողմում: Կառուցվել է V դ. վերջին, տեղական նարնջագույն տուֆի սրբատաշ քարով, 3 զույգ խաչաձև մույթերով եռանավ բազիլիկի հորինվածքով, արլ. և արմ. զույգ, երկհարկանի սենյակներով, հս-ից, հվ-ից և արմ-ից՝ այնասարահներով (քանդված են ծածկերը և սրահները): Հվ. պատին, արլ. կողմում հունարեն փորագրված է 92-րդ սաղմոսի 5-րդ երգի 2-րդ մասը՝ «Սրբությունը վայել է քո տանը, Տեր, երկար օրեր» (արձանագրությունը ժամանակակից է վկայարանի կառուցմանը): Ե. Ս. Կ. վ-ի հարուստ և նրբագեղ հարդարանքը (արմ. և հվ. չքամուտքերը, լուսամուտների երեսակալները, որմնասյուների խոյակները և խարիսխները), հատակագծային ու ծավալատարած. հորինվածքն ընդհանրություններ ունեն վաղ քրիստ. ասոր. արվեստի հետ:

VI–VII դդ. վերակառուցվել է արմ. սրահը: X դ., ըստ Ավագ խորանի արձանագրության, Հակոբ քահանան նորոգել է «Սուրբ Կարապետին վկայարանս»: Հվ. ճակատի արլ. չքամուտքի արձանագրության համաձայն, Հովհաննես-Սմբատ Բագրատունի թագավորի կինը 1038-ին Երերույքը ազատել է հարկից: 1045-ին Երերույքն անցել է բյուզ. տիրապետության տակ, 1064-ին՝ սելջուկների: 1199-ին Երերույքն ազատագրել են Զաքարե և Իվանե Զաքարյան իշխանները: 1201–12-ին ամիրսպասալար Զաքարեն Երերույքը նվիրել է Անիին: Ուշ միջնադարում Ե. Ս. Կ. վ. դարձել է Ս. Երրորդություն վանքի եկեղեցի: 1908-ին Ն. Մառը պեղել է Ե. Ս. Կ. վ-ի ներսը, 1948-ին ամրացվել են նրա պատերը: Ե. Ս. Կ. վ. զգալի տուժել է 1988-ի ավերիչ երկրաշարժից և վթարային վիճակում է:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.3, 2–3-րդ պատկերները:

Գրկ. Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, 2, Ե., 1942, 1948: Կուսյումջյան Տ., Երերույքի բազիլիկայի պատմության հետքերով, «Հասկ», հ. 43, Անթիլիաս, 1973: *Марр Н., Ереруйская базилика, Е., 1968;* Paboudjan P., Alpago-Novello A., Ererouk, Milano, 1977 (Documenti di architettura armena, 9).

Մուրադ Հասրաթյան

«ԵՐԶՆԿԱՅԻ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ», հայկական մանրանկարչության մագաղաթե ձեռագիր մատյան: Գրվել և ծաղկվել է 1269–70-ին, Բարձր Հայքի Ավագ վանքի գրչատանը: Գրիչներն են Մխիթարը, Հակոբը և Մովսեսը, պատվիրատուները՝ Երզնկայի արքեպիսկոպոս տեր Սարգիսն ու իր որդին՝ պարոն Հովհաննեսը: Նրանց ջանքերով է կառուցվել Երզնկայի Ս. Փրկիչ եկեղեցին, նրանց անունները պահպանվել են նաև Ներսես Ա Մեծի մասունքների համար պատրաստված թանկարժեք մասնատուփի արձանագրության մեջ:

«Ե. Ա.» մեզ հայտնի առաջին ձեռագիր Աստվածաշունչն է, որը պարունակում է Հին կտակարանի թեմաներով նկարներ: Մինչ այդ Հին կտակարանի գրքերի սկիզբը զարդարել են գլխազարդերով կամ դրանց հեղինակների պատկերներով: «Ե. Ա.»-ում նույնպես կան հեղինակների պատկերներ, բայց որոշ գրքերի սկզբում զետեղված են թեմատիկ նկարազար-

դումներ: Օր., Նավեի որդու Հեսուի գրքի սկզբում պատկերված է հրեշտակի հայտնությունը նրան, Դատավորաց գրքի սկզբում՝ Գոթոնիելը, Գեդեոնը, նաև Սամսոնը՝ ավանակի ծնոտը ձեռքին, որով նա սպանել էր 1000 փղշտացու: Առավել հաջողված են Հոբի և Դանիելի գրքերի սկզբներում տրված մանրանկարները:

Յուրատիպ են ներկայացված տեքստերի հեղինակ-մարգարեները՝ պատկերված դիմացից, ոմանք՝ տեքստի սկզբնատառը գրելիս: Ուշագրավ են նրանց հագուստների խոշոր, ազատ ուրվագծերով ծալքերը: Կիսատոնների օգտագործումը պատկերներին որոշակի ծավալայնություն է հաղորդում: Գեղեցիկ է ձեռագրի օրնամենտալ հարդարանքը, որը շատ զուգահեռներ ունի կիլիկյան լավագույն օրինակների հետ:

Ճոխ զարդարված, ոսկու առատ կիրառմամբ, բարձրորակ մագաղաթի վրա գեղեցիկ բոլորգրով գրված այս ձեռագիրը հայկ. մանրանկարչության գոհարներից է: XVII դ. ձեռագիրը գերվել է, ապա գնվել թուրք. փաշայից՝ Զիրաք անունով մի վաճառականի օգնությամբ, և տեղափոխվել *Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի* մատենադարան, որտեղ պահվում է առ այսօր (ձեռ. № 1925):

Իբրև Աստվածաշնչի Բարձր Հայքի բնագրային ավանդույթը կրող լավագույն նմուշ «Ե. Ա.» ընդգրկվել է Հին կտակարանի հայ. թարգմանության քննական բնագրերի կազմման աշխատանքներում:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.3, 4-րդ պատկերը:

Գրկ. Մուրատ Ֆ., Հովհաննու Հայտնությունը, Երուսաղեմ, 1905: Տեր-Ներսեսյան Ս., Երզնկայի 1269 թվի Աստվածաշունչը, Երուսաղեմ թիվ 1925, «Էջմիածին», 1966, № 11–12: Der Nersessian S., La Bible d'Erznka de l'an 1269, Études byzantines et arméniennes, t. 1, Louvain, 1973, p. 603–610; Armenian Art Treasures of Jerusalem, Jerusalem, 1979, p. 66.

Էմմա Կորխմազյան

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղից 10 *կմ* հարավարևմուտք, Մռավ լեռնաշղթայի հարավային անտառածածկ լանջին: Հիմնադրվել է XVII դ. վերջին քառորդում՝ որպես Գանձասարին հակաթոռ կաթողիկոսության կենտրոն: Ե. Մ. վ-ի եկեղեցին 1691-ին կառուցել է Սիմեոն Ա Խոտորաշենցի հակաթոռ կաթողիկոսը (1675–1704) Սարգիս ճարտարապետի ձեռքով, որը ձգտել է քառամույթ դմբեթավոր բազիլիկի հորինվածքով եկեղեցին արտաքուստ նմանեցնել *Գանձասարի վանքի* Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն:

Կաթողիկոս. ապարանքը տեղադրված է ձորալանջին, և նրա տանիքը վանքի բակի շարունակությունն է կազմում: Բաղկացած է գլանաձև աշտարակից և դրան կից երկու թաղածածկ դահլիճներից: Հս. կողմում վանքի ուղղանկյուն, թաղածածկ սեղանատունն է՝ խոհանոցով և նախասրահով: Վանքի շուրջը տարածվում է XVII–XVIII դդ. տապանաքարերով գերեզմանոցը: Ե. Մ. վ. Արցախի հայտնի գրչության կենտրոններից էր:

Ե. Մ. վ-ի հիմնադրումից ի վեր սկսվել է դրա և Գանձասարի կաթողիկոսության հակամարտությունը, որը ստիպել է Ամենայն հայոց կաթողիկոսներին հանդես գալ հաշտարար միջնորդությամբ: *Նահապետ Ա Եղեսացին* Ե. Մ. վ-ի Սիմեոն Ա և Գանձասարի Երեմիա կաթողիկոսներին հրավիրել է Էջմիածին և պարտավորեցրել Սիմեոնին, որ նրան այլևս նոր կաթողիկոս չհաջորդի: Սակայն 1705-ին նրան հաջորդել է ազգական Ներսեսը, որը սկիզբ է դրել նոր հակամարտության՝ Գանձասարի կաթողիկոս *Եսայի Հասան-Ջալալյանի* հետ: 1707-ին *Աղեքսանդր Ա Զուղայեցին* երկու կաթողիկոսներին կանչել է Էջմիածին, նզովել Ներսեսին և օրինական կաթողիկոս հայտարարել Եսայուն: 1763-ին Ներսեսին հաջորդել է նրա ազգական Իսրայելը (1763–1808), որին բանադրել է *Սիմեոն Ա Երևանցին* և Գանձասարի կաթողիկոս հաստատել *Հովհաննես Հասան-Ջալալյանին*: 1819-ին, հակաթոռ կաթողիկոս Սիմեոն Բ-ի (Սիմեոն Փոքր) մահով, Ե. Մ. վ-ի կաթողիկոսությունը վերացել է: Ե. Մ. վ. որպես վանքամրոց մեծ դեր է խաղացել XVIII դ. սկզբին Արցախում ծավալված ազատագր. պայքարում:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.3, 5-րդ պատկերը:

Գրկ. Բարխուդարյանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. 2, Թ., 1907: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1982: Կարապետյան Ս., XVII դարի վանական երկու համալիր Արցախում, ՊԲՀ, 1985, № 1:

Արտակ Ղուլյան

ԵՐԿԲՆՈՒԹՅՈՒՆ, տես *Քաղկեդոնականություն*:

ԵՐԿՅՈՒՂ, աստվածավախություն, ճշմարիտ աստվածապաշտությանն ուղեկցող

զգացում: Ե. պետք է հասկանալ դրական իմաստով՝ որպես ակնածության, զգաստության, խոնարհության և ցնծության խառը զգացում՝ տածած սուրբ, արդար և ամենակալ Արարչի, Աստծո նկատմամբ: Ինչպես հավաստում է Սողոմոնը՝ «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է, որ բարի հանճար է բոլոր նրանց համար, ովքեր առաջնորդվում են նրանով...» (Առակներ **1.**7):

Ե. բխում է Աստծո անաչառ դատաստանի ներկայության զգացողությունից, և մարդկանցից նա՛ է իմաստուն, ո՛վ գիտակցում է Աստծո երկյուղազդու սրբությունը և դատաստանի անվրեպ արդարությունը. «Եվ ահա լսի՛ր իմ բոլոր խոսքերի վերջաբանը. վախեցի՛ր Աստծուց և պահի՛ր նրա պատվիրանները. ա՛հա այս է մարդն ամբողջովին, որովհետև Աստված պիտի բոլոր արարածների դատաստանն անի նրանց կատարած բոլոր թաքուն գործերի համար՝ լինեն դրանք չար թե բարի» (Ժողովող **12.**13–14):

Աստծո նկատմամբ տածած Ե. կերտում է հավատացյալին հոգևորապես՝ առաջնորդելով նրան դեպի անձն. սրբություն և Աստծո հանդեպ հնազանդություն, հեռու պահելով փորձությունից և մեղքից, որ հարուցում է չարը՝ մղելով աներկյուղության, հանդգնության և, վերջապես, անմտության: Ե. Հիսուս Քրիստոսով սրբերի հատկանիշն է, որն արգելակում է մարդու մեղանչական հակումները և հակառակը՝ զորացնում լավ հակումները, ամրացնում սիրտը հույսի, հավատի և սիրո շնորհներով: Այսպիսով, Տիրոջ նկատմամբ տածած Ե. աստվածային ողորմածության և շնորհի պատուհան է բացում քրիստոնյայի համար:

Աստծո հանդեպ Ե-ի էությունը, որպես աստվածապաշտության ուղեկցող սրբաբար հոգետարերք, ցայտուն է արտահայտվել հատկապես Դավթի սաղմոսներում.

«Աստվածավախնե՛ր, օրհնեցե՛ք Տիրոջը...» (Սաղմ. **21.**24),

«Իրենից ակնածողների կամքը կատարում է Տերը, լսում է նրանց աղոթքն ու փրկում նրանց» (Սաղմ. **144.**19),

«Թող երկյուղ կրի Տիրոջից ողջ երկիրը, և նրանից թող դողան բոլոր բնակիչներն աշխարհի» (Սաղմ. **32.**8),

«Բայց Տիրոջ ողորմությունը հավիտյանս հավիտենից իրենից երկյուղ կրողների վրա է...» (Սաղմ. **102.**17),

«Տիրոջ երկյուղը սուրբ է և սուրբ է մնում հավիտյան...» (Սաղմ. **18.**10) ևն:

Լևոն Սարգսյան

ԵՐԿՆԱՅԻՆ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ, Աստծո թագավորություն, *Հիսուս Քրիստոսի* թագավորությունը՝ տրված Հայր Աստծուց: Ե.ա. արտահայտվում է հիմնականում երկու կերպով. թագավորություն, որը հանուն Հիսուս Քրիստոսի *Սուրբ Հոգին* է հաստատում փրկյալ մարդու մեջ՝ Պենտեկոստեից ի վեր, և աստվածային թագավորություն՝ նոր երկինք ու նոր երկիր, որ իջնելու է Աստծուց (Հայտն. **21**), փոխանակ հին երկնքի և երկրի, որոնք անցնելու են: Ե. ա. է կոչվում նաև Քրիստոսի Հազարամյա թագավորությունը երկրի վրա (Հայտն. **20**)՝ Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ՝ մարդկային բոլոր թագավորությունների (տերությունների) ու չարի կործանումով և նոր՝ հավիտենական *դրախտ* ընծայելով նրա՛նց, ովքեր արդարացված, փրկված ու սրբված են Հիսուս Քրիստոսով: *Տերունական աղոթքի*՝ «Հայր մեր»-ի մեջ ասվում է՝ «Հա՛յր մեր, որ երկնքում ես. սո՛ւրբ թող լինի քո անունը. քո թագավորությո՛ւնը թող գա. քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է...» (Մատթ. **6.**9–10), ուստի Ե. ա. հենց Աստծո կամքի հաստատումն է երկրի վրա: *Հովհաննես Մկրտիչը* Ե. ա-յան ավետիսն էր տալիս մարդկանց, ի դեմս մարդեղացյալ Աստվածորդու. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. **3.**2):

Ե. ա. Հին կտակարանում հիշատակվում է որպես աստվածային հավիտենական թագավորություն («...Նրա արքայությունը հավիտենական արքայություն է...», Դանիել **7.**27) ևն: *Մարգարեները*, խոսելով գալիք Մեսիայի ծննդյան, փրկչական գործունեության, չարչարանքների, մահվան, հարության և այլնի մասին, նշում են նաև, որ նա թագավոր է՝ սերված Դավթի թագավորական տոհմից (որը ճշմարիտ է մարդեղացյալ Հիսուսի վերաբերյալ, քանի որ նա ծնվեց Դավթի ցեղից սերված Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ), որ նա Աստված է՝ բոլոր թագավորությունների վրա («...Տե՛ր Աստված Իսրայելի, դու, որ նստած ես քերովբեների վրա, աշխարհի բոլոր թագավորությունների մեջ միայն դո՛ւ ես Աստված...», Դ Թագ. **19.**15), որ նա է արքայության Տերը («...քանզի Տիրոջն է արքայությունը...», Սաղմ. **21.**29) ևն:

Քրիստոսը, որպես Աստծուց լիազորված ժառանգորդ, ազդարարում էր երկնային իշխանության երևան գալը երկրի վրա: Քրիստոսի տնօրինական-փրկչական գործունեության նպատակը Ե.ա-յան հաստատումն էր, որ կենսագործվում է նախ՝ Աստծո Որդուն հավատացողների և հնազանդվողների մեջ՝ Սուրբ Հոգու մկրտությամբ, իսկ ժամանակների վախճանին Ե.ա. կատարածվի համայն երկրի վրա: Ուստի և մինչև Օծյալ Փրկչի Երկրորդ գալուստը, հավատացյալ մարդկությունը Ե. ա-յան մեջ է հոգևորապես՝ գտնվելով Սուրբ Հոգու ներկայության մեջ: Վերևից՝ Սուրբ Հոգուց վերստին ծնված մարդկանց հոգիներում է Ե. ա., որի համար էլ նրանք կոչվում են երկնքի քաղաքացիներ: Այժմ երկրի վրա Քրիստոսի թագավորությունը տեսանելի ձևով դրսևորվում է հանձինս սուրբ *եկեղեցու*:

Նոր կտակարանի *Երանիների* շարքում առաջինը հիշատակվում է Ե. ա. («Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը», Մատթ. **5.**3), այնուհետև երկրորդվում է մեկ այլ իմաստային դրսևորմամբ՝ «Երանի՜ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. **5.**10):

Ե. ա. Ինքը Հիսուսն է հաստատում մարդու մեջ, որպես աներևույթ թագավորություն («Աստծու արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՝ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև ահա Աստծու արքայությունը ներսում, ձեր մեջ է», Ղուկ. **17.**20–21): Նա առակախոսությամբ ակնարկում է Ե. ա-յան՝ ամենայն ինչից բարձր, սուրբ և գերադաս լինելը, համեմատում է այն գտնված գանձի, մարգարտի, խոշոր ձկան, մանանեխի հատիկի և այլնի հետ, ներկայացնում Ե.ա-յան հասնելու պայմանները. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը և նրա արդարությունը...» (Մատթ. **6.**33): «Ոչ ամեն մարդ, որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա՛, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ. **7.**21):

Ե. ա-յան մեջ, ըստ Սուրբ Գրքի, տեղ չունեն Աստծուն անարգողները, անհավատները, գողերը, մարդասպանները, կռապաշտները, հայհոյողները, ստախոսները, վաշխառուները, պոռնիկները, արվամոլները, գոռոզները, դաժանները, ամբարտավանները, հանձնապաստանները, մոլորեցնողները, առհասարակ՝ *սատանայի* չար կամքը կատարողները, որոնց վերջին հանգրվանը *դժոխքն* է:

Ե. ա-յան մեջ տեղ ունեն Հիսուս Քրիստոսին հավատքով որպես Աստծո Որդի և Աստված ընդունողները, նրա քավչարար արյամբ մաքրվածները, հեզերը, խաղաղարարները, Սուրբ Հոգով վերստին ծնունդ ունեցողները, ովքեր հավատում են Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն և կատարում են հավատի գործը, այդպիսով կենդանացնելով *հավատը*: Նրանք Ե. ա-յան մեջ պետք է լինեն թագավորներ ու քահանաներ՝ կոչվելով Աստծո որդիներ և թագավորելով Հիսուս Քրիստոսի հետ (Բ Տիմ. **2.**12, Հայտն. **22.**5):

Ե.ա-յան հաստատումը երկրի վրա երկնային Փեսայի (Հիսուսի) իղձն է և երկնային Հարսի (Եկեղեցու) ակնկալությունը: Քանի որ Հայր Աստծո կամքի համաձայն ամենայն իշխանություն հանձնված է Որդուն՝ խաչյալ և հարուցյալ Հիսուս Քրիստոսին, ուստի նա է Ե. ա-յան արքան, որի թագավորությունն անվախճան է (տես Ելք **15.**18, Սաղմ. **92.**1, **98.**1, **145.**10, Եսայի **32.**1, Հայտն. **17.**14, **19.**16 ևն):

Գրիգոր Տաթևացին իր «Ոսկեփորիկ» (1995, հ. 1, էջ 3–6) երկում, վերլուծելով սուրբգրային համապատասխան ասույթները, գալիս է այն եզրակացության, որ Ե. ա. են կոչվում. 1. Սուրբ *Երրորդությունը*, 2. Ինքը Քրիստոս՝ Որդին Արքայի, 3. Հիսուս Քրիստոսի Առաջին գալուստը, 4. Սուրբ Գրքերը և Արքայի Ավետարանը՝ Նոր կտակարանը, 5. Սուրբ Եկեղեցին, 6. Եկեղեցու խորհուրդները, 7. Հավատքը, 8. Մարդու հոգին, 9. Տիրոջ Երկրորդ գալուստը, 10. Երկնքի ժառանգությունը՝ թաքցրած գանձը, այն, «որ աչքը չտեսավ և ականջը չլսեց» (Ա Կորնթ. **2.**9):

Լևոն Սարգսյան

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ԵՐԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ, Ամենասուրբ Երրորդություն, Սուրբ Երրորդություն, Ինքն *Աստված*: Համաձայն քրիստ. աստվածաբանության՝ Աստված Երրորդություն է՝ Հայր և Որդի և *Սուրբ Հոգի*: Այլ երրորդություններից (եռյակներից) տարբերելու համար նրան կոչում ենք նաև Սուրբ կամ Ամենասուրբ Ե.: Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված՝ երեք Անձերն են միասնական մեկ Աստվածության՝ Սուրբ Ե-

յան. ո՛չ երեք աստված-ներ, այլ մե՛կ Աստված՝ Եռանձնյա:

Սուրբ Ե-յան դավանությունը անդրանցա-կան (տրանսցենդենտալ) է և հայտնութենա-կան. հայտնված է Քրիստոսով:

«Երրորդություն» եզրն առաջին անգամ օգ-տագործել է Թեոփիլոս Անտիոքացին (180)՝ հունարեն *τριάς* ձևակերպմամբ, սակայն Սուրբ Ե-յան կամ առանձնակի՝ նրա Անձերից յուրա-քանչյուրի հայտնության բազմաթիվ ստվերա-կերպ օրինակներ տրված են դեռևս Հին կտա-կարանում. «Ի սկզբանե Աստված [Հայրը] ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անե-ւևույթ ու անպատրաստ էր, և անդունդի վրա խավար կար, և Աստծո Հոգին [Սուրբ Հոգին] շրջում էր ջրերի վրա: Աստված ասաց [Որդին՝ իբրև Աստծո խոսք՝ Բան]. «Եղիցի լույս». և եղավ լույս» (Ծննդ. 1.1–3): «Աստված ասաց. «Արարենք մարդուն մեր [Սուրբ Երրորդու-թյան] պատկերով ու նմանությամբ...» (Ծննդ. 1.26): Դավթի սաղմոսներում. «Տերն [Հայրը] ասաց իմ Տիրոջը [Որդուն]. «Նստի՛ր իմ աջ կողմում...» (Սաղմ. 109.1): Իմաստության գրքե-րում՝ Աստծո Իմաստությունը խորհրդանշում է Որդուն (տես Առակ. 1.1–4, 5.1–2, 8.1–9, 10.1, Իմաստ. 7.22–30, 10.1–11, 11.1 ևն): Եզեկիել մարգարեի տեսիլքում. «Հոգին [Սուրբ Հոգին] եկավ վրաս, բարձրացրեց ինձ ու կանգնեցրեց ոտքերիս վրա: Ու լսում էի, որ նա խոսում էր ինձ հետ...», «Տիրոջ Հոգին [Սուրբ Հոգին] առավ բարձրացրեց ինձ, և բարձրացած՝ առաջ էի գնում իմ հոգով...» (Եզեկ. 2.2–3, 3.14) ևն:

Սուրբ Ե-յան՝ երեք Անձերի կատարյալ հայտնությունը տրված է Նոր կտակարանում. առաջին անգամ՝ մեր Տեր *Հիսուս Քրիստոսի* մկրտության ժամանակ. «Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն դուրս ելավ ջրից. և ահա երկինքը բացվեց նրան, և տեսավ Աստծո Հո-գին, որ իջնում էր իբրև աղավնի և գալիս էր իր վրա: Եվ ահա՝ մի ձայն երկնքից, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանել եմ» (Մատթ. 3.16–17): Այսինքն՝ Հայր Աստ-ված՝ ձայնով, Որդի Աստված՝ մարդեղությամբ, Սուրբ Հոգի Աստված՝ աղավնակերպ:

Դեռ դրանից առաջ Սուրբ Ե-յան մասին նշված է ավետաբեր Գաբրիել հրեշտակապե-տի խոսքում. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի [Հոր] զորությունը հովանի կլինի քեզ, քանզի նա, որ ծնվելու է քեզանից, սուրբ է և Աստծու Որդի կկոչվի» (Ղուկ. 1.35):

Սուրբ Ե-յան կատարյալ հայտնություն է նաև Քրիստոսի այլակերպության պահը. «Եվ մինչդեռ նա խոսում էր, ահա մի լուսավոր ամպ հովանի եղավ նրանց. ամպից մի ձայն եկավ և ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանել եմ, դրա՛ն լսեցեք» (Մատթ. 17.5): Այ-սինքն՝ Հայրը՝ ձայնով, Որդին՝ մարդեղությամբ, Սուրբ Հոգին՝ լուսավոր ամպով:

Սուրբ Ե-յան մասին կամ Ե-յան Անձերից յուրաքանչյուրի և նրանց միջև ներաստվա-ծային հարաբերությունների մասին Հովհան-նեսի Ավետարանում խոսում է Ինքը Քրիս-տոս (տես Հովհ. 14, 16 գլուխները): Սուրբ Ե-յան Անձերին միասին Քրիստոսը հանվանե հի-շում է նաև Մատթ. 28.19-ում. «Գնացե՛ք այսուհետև, աշակե՛րտ դարձրեք բոլոր հեթա-նոսներին, մկրտեցե՛ք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու [Սուրբ Երրորդության] անու-նով»: Դեռ ավելին՝ այստեղ Սուրբ Ե. ներկա-յացված է մեկ միասնական անունով, որը հստակորեն ցույց է տալիս աստվածային Ան-ձերի մեկ Աստվածությունը:

Սուրբ Ե-յան մասին ասված է նաև առաքե-լական թղթերում: Պետրոսի Ա ընդհանրական թղթում. «Ըստ Հայր Աստծո կանխագիտու-թյան, Հոգու սրբագործմամբ, Հիսուս Քրիս-տոսի հնազանդությամբ և արյան հեղմամբ...» (Ա Պետր. 1.2). Պողոսի Ա և Բ Կորնթ. թղթում. «Թեև շնորհները զանազան են, բայց Հոգին [Սուրբ Հոգին] նույնն է: Թեև սպասավորու-թյունները զանազան են, սակայն Տերը [Որ-դին] նույնն է: Թեև ներգործությունները զա-նազան են, սակայն Աստված [Հայրը] նույնն է, որ ներգործում է ամենը ամենքի մեջ» (Ա Կորնթ. 12.4–6), «Մեր Տեր Հիսուս Քրիստո-սի [Որդու] շնորհը, Հայր Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լի-նի» (Բ Կորնթ. 13.13) ևն:

Սուրբ Ե-յան հայտնությունն ունի զարգա-ցողական (դիալեկտիկական) բնույթ: Զարգա-ցողականության էությունն այն է, որ պահե-լով և հաստատելով նախկին հայտնություն-ները, դրանց ավելանում են նորերը: Այսպես՝ Հին ուխտի շրջանի (մարդու ստեղծումից մին-չև Բանն Աստծո մարդացում՝ մոտ 1 թ-ին) հայտնություններն առավելապես վերաբերում են Հորը, Քրիստոսի երկրային կյանքի շրջա-նինը (մոտ 1–34-ին)՝ առավելապես Որդուն, իսկ *Հոգեգալուստից* (մոտ 34-ին) սկսած մինչև Քրիստոսի Երկրորդ Գալուստ՝ առավե-լապես Սուրբ Հոգուն: Սուրբ Ե-յան հայտնու-

թենական զարգացումը շարունակվեց նաև նշված շրջաններից վերջինում, որտեղ այժմ գտնվում ենք մենք: Մասնավորապես՝ ամբողջ IV դ. անցել է բուռն աստվածաբան. վեճերի մեջ, և նախ և առաջ՝ ընդդեմ *արիոսականության*, որը, ուրանալով Հիսուս Քրիստոսի Աստվածությունը, դրանով իսկ ժխտել է Ե.: 325-ի *Նիկիայի Ա տիեզերական ժողովը* իմաստասիր. սահմանումների միջոցով մերժել է արիոսականությունը: Աստվածային հայտնությամբ տրվել և ընդունվել է «318 սուրբ հայրերի հանգանակը» (Նիկիական հանգանակ = Հավատամք = Credo), որի երկու կարևորագույն աստվածաբան. եզրերն են՝ համագո (էակից) և նույն բնությունից (էությունից), որոնք բնորոշում են Որդու համագոյությունը կամ Որդու՝ նույն Հոր բնությունից լինելը (տես *Հավատո հանգանակ*): «Համագոյության» ժխտումը փլուզում էր փրկության իսկությունը, արարածի և Աստծո միացման ու առնչման իրականությունը: Այս տեսանկյունից քննվել ու մերժվել է նույն արիոսական աղբյուրից առաջացած «հոգեմարտությունը»՝ Սուրբ Հոգու համագոյության և կատարյալ Աստվածության նսեմացումը կամ ժխտումը, քանզի Հոգին արարածի աստվածացման և օծության (տես *Օծում*) սկիզբն ու զորությունն է և, հետևաբար, եթե նա կատարյալ Աստված չէ, ապա նրա տված օծությունն ու օրհնությունն ունայն են և անբավարար: Հոգեմարտությունը հենց սկզբից մերժվել է նիկիական հայրերի, ինչպես նաև 381-ի *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի* կողմից, որն ընդունել է Հոր և Որդու և Սուրբ Հոգու համագոյությունը և վերահաստատել Նիկիական հանգանակը:

Ամենասուրբ Ե-յան դավանությունն առանցքային նշանակություն ուներ Նիկիական հայրերի համար՝ լինելով ոչ միայն անսասան հիմք հավատքի շինության համար, այլև՝ աստվածճանաչողական և հայեցողական սկզբունք: Ե-յան հայտնութենական աստվածաբանությունը հստակ ձևակերպում է ստացել *Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու* և այլոց գործերում և իր զարգացման գագաթնակետին հասել կապադովկյան հայրերի մոտ (*Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի*) և հատկապես՝ Գրիգոր Նազիանզացու (Աստվածաբան) գործերում, որի համար նա կոչվել է «Երրորդության աստվածաբան»: Գրիգոր Նազիանզացին առանձնահատուկ հստակությամբ և ներթափանցությամբ է ձևակերպել Ե-յան դավանությունը. «Մեկ Աստվածություն և զորություն՝ Երեքի մեկությամբ, և Երեքը միասին վերցրած՝ առանց բաժանելու, ո՛չ բնությունների և էությունների առավելությամբ, ո՛չ աճող կամ նվազող գերազանցությամբ և կամ ենթակայությամբ: Բոլոր կողմերից որպես երկնային Մեկ գեղեցկություն և Երեք անբավների մեծության անբավ բնակցություն. Յուրաքանչյուրն ինքնին Աստված՝ որպես Հայր և Որդի և Սուրբ Հոգի՝ Յուրաքանչյուրը պահելով իր առանձնավորությունը: Աստված՝ Երեքը իրար միացած...: Չեմ հասցնում ճանաչել «Մեկ»-ը, Երեքով եմ պայծառանում, չեմ հասցնում Երեքը բաժանել և առ «Մեկ»-ն եմ բարձրացվում...» («Յերախայից վարդապետութիւն», տես «Կնիք հաւատոյ», 1914, էջ 35):

Մեկ Աստվածությունն անբաժանելիորեն բաժանվում է երեք Անձերի, երեք Անձինք առանձնաբար և անչփոթ կերպով միավորվում են Մեկ Աստվածության մեջ. «... բաժանվում է անբաժանաբար և... միավորվում է զատվելով, որովհետև Մեկ է Եռյակ Աստվածությունը, և Երեքը Մեկ է, որոնցում է Աստվածությունը» («Դարձեալ իմ Յիսուս», նույն տեղում, էջ 33), «...Մեկ է Հայր Աստված, Որից ամեն ինչ, Մեկ է Տեր Հիսուս Քրիստոս, Որով ամեն ինչ, և Մեկ է Սուրբ Հոգին, Որում ամեն ինչ» (նույն տեղում): «Երբ խոսում եմ Աստծո մասին, նկատի ունեմ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, քանի որ Աստվածությունը սրանով չի ցնդում. և աստվածների բազմաստվածություն չներմուծենք և այս սահմանից այն կողմ չանցնենք...» («Ի յայտնութիւն Տեառն», նույն տեղում, էջ 32):

Երրորդաբանական եզրաբանության համակարգի ստեղծումն ամենից առաջ կապված է կապադովկյան հայրերի անունների հետ: Նրանց աշխատանքների շնորհիվ բյուրեղացել է երրորդաբանական հիմն. ձևակերպումը՝ «Մեկ էություն (բնություն) և Երեք Անձինք»:

Հայրը, Որդին և Սուրբ Հոգին զանազանվում են Անձերով և նույնանում՝ բնությամբ, համագոյակից են միմյանց: Ե-յան Անձերի բնութենական նույնությունն արտահայտվում է նաև այլ եզրերով՝ բնութենակից, էակից, փառակից, երկրպագակից, տիրակից, համազոր, նույնապատիվ, համապատիվ, համաբուն, նույնագո:

ԵՐՈՒՍԱՂԵՄ Համագոյությունը բացառում է որևէ ժամանակային պատճառականություն Ե-յան Անձերի միջև: Հայրը անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդյամբ, և Սուրբ Հոգու՝ բխմամբ: Ծնունդը և բխումը ներբնութենական ակտեր են և ոչ թե աստվածային բնությունից դուրս ժամանակային առաջացումներ (ընդդեմ Արիոսի) կամ միևնույն Աստվածային Անձի տարակերպություններ (ընդդեմ Սաբելիոսի):

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.3, 6-րդ պատկերը:

Գրկ. Տես *Դավանանք* Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոդվածի գրկ.:

Մեսրոպ քհն. Արամյան

ԵՐՈՒՍԱՂԵՄ (Hierosolyma, սեպագրերում՝ Ursalimmu, գաղափարագրերում՝ Schalam, Եբր.՝ Jeruschalajim – խաղաղության բնակավայր), Ա-վետյաց երկրի (Քանանի երկիր) նշանավոր քաղաքը, սուրբ քաղաք հրեաների, քրիստոնյաների ու մահմեդականների համար: Գտնվում է Մեռյալ ծովից արմ., կիսաանապատային սարահարթի վրա, շրջապատված է լեռներով: Իր հնությամբ հասնում է մինչև «Հավատքի հոր» Աբրահամի ժամանակները (Ք. ծ. ա. 3000, ըստ այլոց՝ 2000) և ենթադրվում է, որ նույն Սալեմ կամ Սաղեմ, նաև Շաղեմ կոչված քաղաքն է, որի թագավորը և քահանայապետը՝ Մելքիսեդեկը (անունը թարգմանվում է՝ արդարության թագավոր, թագավոր խաղաղության), հաց ու գինի է հյուրասիրել և օրհնել պատերազմից հաղթությամբ վերադարձած Աբրահամին, որը դեռևս Աբրամ էր. վերջինս Մելքիսեդեկին տասանորդ տվեց իր ունեցած ամեն ինչից (Ծննդ. **14.**17–20, տես նաև Եբր. **7.**1–2): Ե-ի սուրբ կամ խաղաղության քաղաք անվանվելը կապված է Հիսուս Քրիստոսի ստվերակերպ նախօրինակը եղող խաղաղության թագավորի՝ Մելքիսեդեկի [«Դու Հավիտյան քահանա ես, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. **7.**17)], նաև՝ Հիսուս Քրիստոսի երուսաղեմյան գործունեության, ապա՝ Փրկչի Երկրորդ գալուստի հետ, երբ երկնքից իջնելու է Նոր (երկնային) Ե.: Նոր կամ Վերին Ե. Քրիստոսի Եկեղեցին է և Աստծո քաղաքը. հավատացյալները՝ երկնային Ե. մուտք ունեցող երկնաքաղաքացիներն են (Հայտն. **21.**1–4, Գաղ. **4.**26, Եբր. **12.**22):

Ըստ Հին կտակարանի՝ Դավիթ թագավորը գրավում է Սիոն լեռը (որ մտնում է Ե-ի տարածքի մեջ) և նրա վրա գտնվող հեբուսացիների ամրոցը (Բ Թագ. **5.**6–7), ինչի համար էլ Ե. կոչվել է նաև Դավթի քաղաք, երբեմն անվանվել է նաև Սիոն: Դավթի օրոք Ե. դարձել է հրեական թագավորության կենտրոն. այստեղ Դավթի որդին՝ Սողոմոն Իմաստունը, Ք. ծ. ա. X դ. կեսին կառուցել է Ե-ի նշանավոր Տաճարը (Սողոմոնի տաճարը), որտեղ դրվել է *Ուխտի տապանակը* (Գ Թագ. **8.**6): Ե. այնուհետև Սողոմոնի տաճարի շնորհիվ դարձել է սրբավայր: Այն ավերել են բաբելոնացիները Ք. ծ. ա. 587-ին՝ հրեաների բաբելոնյան գերության ժամանակ: Գերությունից հետո կրկին կառուցված, ավելի ուշ՝ վերակառուցված Տաճարն այլևս չի ունեցել Ուխտի տապանակը և նախկին փառքը:

Սաղմոսներում և մարգարեություններում Ե. բազմիցս հիշատակվում է իբրև Աստծո բարեհաճությանը սպասող քաղաք (Սաղմ. **50.**20), Տիրոջ տուն (Սաղմ. **121.**1–2), աթոռակալ քաղաք («Այնտեղ են դրված դատաստանի աթոռները՝ աթոռներ դրված Դավթի տան մեջ», Սաղմ. **121.**5), Տիրոջ ժողովրդի խորհրդանշան («Ինչպես որ նա շրջապատված է լեռներով, այնպես Տերն իր ժողովրդի շուրջն է՝ այսուհետև մինչև հավիտյան», Սաղմ. **124.**2), Տիրոջ հաճությունն ունեցող (Սաղմ. **127.**5), Տիրոջը օրհնելու սրբավայր (Սաղմ. **133**), Տիրոջ բնակավայր (Սաղմ. **134.**21), ամենապաշտելի (Սաղմ. **136.**5–6), քաղաք, որ կառուցվում է Աստծո ձեռքով (Սաղմ. **146.**2), Աստծուն օրհներգող և օրհնվող քաղաք (Սաղմ. **147.**12–13), Բարձրյալի պատվիրանները լքող, ուստի և պատժվող, ապա վերականգնվող և իր փառքի ու աստվածապաշտության մեջ հաստատվող քաղաք (Եսայի **3**, **4**, **27.**13, **31.**5 ևն): Մարգարեություններում մշտապես հայտնվում է նույն տեսիլը՝ Ե-ի կործանումը՝ Տիրոջ ուխտի նկատմամբ անհավատարիմ լինելու պատճառով, Ե-ի զավակների սփռվելը հեռավոր երկրներ (ողբացյալ Ե.) և ապա, Աստծո բարեհաճությամբ՝ վերադարձ դեպի Իսրայել, դեպի նոր կամ փառավորյալ Ե., երբ նա անվանվելու է մխիթարված ու երանելի: Երեմիա մարգարեն ասում է. «Այն օրերին ու այն ժամանակ Երուսաղեմը Տիրոջ աթոռ են կոչելու...» (Երեմ. **3.**17): Զաքարիա մարգարեն «միայն Տիրոջը հայտնի» օրվա մասին մարգարեանում է. «Այն օրը կենդանի ջուր է բխելու Երուսաղեմում...» (Զաք. **14.**8): Ե-ի մասին տես նաև Եսայի **51.**9, Երեմ. **4.**14, **9.**11, **51.**50, Ողբ Երեմ. **1.**7, Դանիել **9.**25, Հովել **3.**1, **3.**18, Զաք. **1.**17, **2.**2, **8.**22 ևն:

Ե-ի հետ են կապված Հիսուս Քրիստոսի կյանքի, վարդապետության, հարության և համբարձման իրողությունները: Իր խաչելությունից առաջ Հիսուսը մարգարեանում է Ե-ի և Տաճարի կործանումը. «Հիսուս տաճարից դուրս ելած՝ գնում էր. և աշակերտները մոտեցան՝ նրան ցույց տալու տաճարի շինությունները: Եվ նա պատասխանեց ու նրանց ասաց. «Տեսնո՞ւմ եք այդ ամենը. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդտեղ չպիտի մնա քար քարի վրա, որ չքանդվի» (Մատթ. **24.**1–2): Վերջին այս մարգարեությունը կատարվում է Ք. ծ. հ. մոտ 70-ին, երբ Տաճարը հիմնահատակ ավերվում է հռոմ. զորքերի կողմից. հետագայում նրա տեղում բարձրանում են երկու մզկիթ:

Ե-ի հետ են կապված նաև *առաքյալների* գործունեության կարևոր դրվագներից շատերը: Ե-ի Վերնատանն են առաքյալները հաստատել առաջին եկեղեցին, որը կոչվել է Աշխարհամատուռ, մոտ 50–51-ին գումարել առաքելական հայտնի ժողովը, որտեղ քննարկվել են քրիստոնյաներին հուզող մի շարք հարցեր՝ մովսիական օրենքները պահելու, թլփատության, կուռքերին զոհ արվածի ևնի վերաբերյալ:

Հրեական թագավորության անկումից հետո Ե-ին տիրել են Ալեքսանդր Մակեդոնացին, Սելևկյանները, Հին Հռոմը, Բյուզանդիան, Արաբական խալիֆայությունը, խաչակիրները, Այուբյանների և մամլուքների պետությունները, օսմ. կայսրությունը: 1917-ին Ե. գրավել են անգլ. զորքերը, 1920–47-ին այն դարձել է Պաղեստինի անգլ. մանդատային տարածքի վարչ. կենտրոն: ՄԱԿ-ի Գլխ. ասամբլեայի 1947-ի նոյեմբ. 29-ի որոշմամբ, Պաղեստինի անգլ. մանդատը վերացնելուց հետո, Ե. դառնալու էր միջազգ. հատուկ ռեժիմով ինքնուրույն վարչ. միավոր: 1948–49-ի արաբա-իսրայելական պատերազմից հետո Ե-ի արլ. մասն անցել է Հորդանանին, արմ-ը՝ 1948-ի մայիսին ստեղծված Իսրայելին: Ե-ի կարգավիճակը իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարևորագույն հարցերից է:

Հայերի այցելությունները Ե. հիշատակվում են դեռևս քրիստոնեության արշալույսին, իսկ IV դ. արդեն նրանք հիմնել են եկեղեցիներ ու վանքեր: Ե-ի առաջին ուխտավորներից են եղել նաև հայերը՝ իրենց կարևոր նպաստը բերելով Սուրբ երկրում քրիստ. առաջին շինությունների կառուցմանը: IV–V դդ. Ե-ում կառուցված հայկ. եկեղեցիներն ու վանքերը թվարկել և նկարագրել են *Մովսես Կաղանկատվացին* և VII դ. հեղինակ Անաստաս Վարդապետը: Վերջինս 70 վանք, եկեղեցի և մատուռ է հիշատակում Ե-ում՝ ասելով, թե դա կատարում է Համազասպ Պահլավունի Կամսարական իշխանի խնդրանքով, որը ցանկացել է ունենալ հայ իշխանների հովանավորությամբ և հայ ուխտավորների նվիրատվություններով պահվող հայկ. վանքերի ցուցակը: Ավելի ուշ Սիոն լեռան վրա, Գլխադիր կոչվող մատուռ-գերեզմանի տեղում, որտեղ թաղվել է Հակոբոս Զեբեդյան առաքյալի գլուխը, հայերը կառուցել են Ս. Հակոբյանց վանքը (տես *Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք*):

VII դ. հիմնադրվել է *Երուսաղեմի հայոց պատրիարքությունը*, որի տարածքը (Հայկական թաղամաս) ընդգրկում է հին Ե-ի չորս թաղամասերից (Քրիստոնեական, Մահմեդական, Հրեական և Հայկական) մեկը: Ե-ի համաքրիստ. գլխ. սրբատեղիների՝ Ս. Հարություն տաճարի, Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարի, Գեթսեմանիի Ս. Աստվածածին եկեղեցու, Ձիթենյաց լեռան Համբարձման մատուռի և այլ սրբավայրերի երեք ավագ պահապաններն են Հայ, Հույն և Լատին եկեղեցիները՝ հավասար իրավունքներով:

Ե-ի Ս. Հարություն տաճարը (գտնվում է քրիստ. թաղամասում) IV դ. կառուցել է բյուզ. կայսր Կոստանդիանոս Մեծը՝ Քրիստոսի գերեզմանի, Գողգոթայի խաչելության տեղի, Խաչգյուտ քարայրի (այդպես է անվանվում, քանի որ Կոստանդիանոս Մեծ կայսրի մայրը՝ Հեղինեն, ըստ ավանդության, այդտեղ է գտել Քրիստոսի Խաչափայտը) և մի շարք այլ սրբավայրերի վրա: Ս. Հարություն տաճարի կենտր. սրբավայրը Քրիստոսի Ս. Գերեզմանն է, որի վրա կառուցված է 12 սյուներով և Մերձավոր Արևելքի ամենամեծ գմբեթով տաճարը: Վերջինիս ընդարձակ գավիթը, ներքին մուտքը, մուտքի՝ Քրիստոսի պատանավայրը և շրջափակը, Քրիստոսի Ս. Գերեզմանը համատեղ տնօրինում են Հայ, Հույն և Կաթոլիկ եկեղեցիները: Այդ սրբավայրերի եկեղեց. սպասքն ու առարկաները հավասար չափով բաժանված են երեք ավագ պահապանների միջև: Հայ եկեղեցու իրավասությունների շրջանակում մասնավոր իրավունքներ ունեն նաև ղպտիները և ասորիները:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ամեն գիշեր, ժամը 12-ից մինչև առավոտյան 7-ը, նախ՝ հույները, ապա՝ հայերը, հետո կաթոլիկները ս. Պատարագ են մատուցում Քրիստոսի Ս. Գերեզմանի վրա: Ս. Հարությունն տաճարում հայերը շաբաթը երեք օր՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի, երեկոյան մանավոր թափոր կազմելով, այցելում են այն ս. սեղաններին, որոնք նվիրված են Քրիստոսի չարչարանքներին և տնօրինական այլ հիշատակների: Տաճարի՝ հայերի, հույների և կաթոլիկների համար ընդհանուր սրբատեղիներից բացի, միայն հայերին են պատկանում Ս. Գրիգոր Լուսավորիչ, Գողգոթայի Վերնատան եկեղեցիները, Երաշխավոր Ս. Աստվածածին մատուռը, Յուղաբերից Ս. Սեղանը, Աստվածածնի ուշաթափման սրբավայրը, Հովսեփ Արիմաթացու և Նիկոդեմոսի գերեզմանները և մատուռը, Քրիստոսի հանդերձների բաժանման մատուռը, Ս. Հովհաննես Ավետարանչի մատուռը եկեղեցու գավթում:

Բեթղեհեմի (եբր. Բեթ-լեհեմ՝ տուն հացի, արաբ.՝ Բեթլահում) Ս. Ծննդյան տաճարը նույնպես կառուցել է Կոստանդիանոս Մեծը. հետագայում այն ենթարկվել է փոփոխությունների և դարձել բազիլիկ այունազարդ մեծ եկեղեցի: Բացի ընդհանուր սրբատեղիներից միայն հայերին է պատկանում եկեղեցու հս. թևը, ինչպես նաև պատարագամատույց երկու սեղան: Հիսուսի ծննդյան վայրում գտնվում է Պատարագի մի սեղան, որը պատկանում է հայերին ու հույներին. նրանք դրա վրա ամեն օր հաջորդաբար Պատարագ են մատուցում: Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարի այունազարդ մեծ գավթի գեղաքանդակ փայտե դուռը պատրաստել են հայ վարպետները 1227-ին՝ Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա թագավորի ժամանակ: Ըստ ավանդության՝ տաճարի այուներից մեկի վրա Գրիգոր Ա Լուսավորիչը խաչ է նկարել, ինչի համար այն կոչվում է Լուսավորչի խաչ: Ս. Ծննդյան տաճարին կից գտնվում են Բեթղեհեմի հայկ. Ս. Ծննդյան վանքը և Ս. Աստվածածին եկեղեցին:

Գեթսեմանիի Ս. Աստվածածին եկեղեցին գրեթե ամբողջությամբ թաղված է հողի մեջ և Ե-ի ամենաինքնատիպ շինություններից է: Եկեղեցու վերին մասը քանդվել է, այունների խարիսխները ծածկված են 2–3 մ հաստությամբ հողի շերտով, այդ պատճառով ներս են մտնում իջնելով 45 լայնանիստ աստիճաններով: Եկեղեցու կենտրոնից դեպի արլ. է գտնվում Ս. Կույսի գերեզմանը՝ առնված առանձին, փոքր մատուռի մեջ, որտեղ ամեն առավոտ հաջորդաբար ս. Պատարագ են մատուցում հույներն ու հայերը: Շաբաթվա ընթացքում երկու անգամ պատարագում են նաև ղպտիները և ասորիները:

Ձիթենյաց լեռան Համբարձման մատուռում, որի գավթում իրենց քարակերտ սեղաններն ունեն հայերը, հույները, ղպտիներն ու ասորիները, Համբարձման տոնին Պատարագ են մատուցում: Համբարձման սրբատեղիին կից հողերի և շենքերի մի կարևոր մասը Երուսաղեմի հայոց պատրիարքության սեփականությունն է:

Ե-ի հայկ. նշանավոր վանքերից են, բացի Ս. Հակոբյանց վանքից, նաև Ս. Հրեշտակապետացը, Ս. Փրկիչը, Ս. Պետրոսը ևն:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.4, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Հովհաննես Հաննա, Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս, ԿՊ, 1731: Աղավնունի Մ., Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղեմ, 1929: Նույնի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ, Երուսաղեմ, 1931: Սավալանյանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1–2, Երուսաղեմ, 1931: Օրմանյան Մ., Հայկական Երուսաղէմ, Երուսաղեմ, 1931: Կեոքչյան Վ., Հայ Երուսաղէմը դարերու մէջէն, Երուսաղեմ, 1965: Դեվրիկյան Վ., Երուսաղեմի հայ ուխտավորը, Ս. Էջմիածին, 1999:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ, կրոնական, գիշերօթիկ ուսումնական հաստատություն: Հիմնվել է 1843-ին, Ռամլեում, Զաքարիա Կոփեցի պատրիարքի օրոք: Մեկ տարի անց տեղափոխվել է Երուսաղեմ: Գտնվում է *Երուսաղեմի հայոց պատրիարքության* տնօրինության ներքո: Պատրաստում է եկեղեցու սպասավորներ: Ունի երկու բաժանմունք՝ երկրորդական վարժարան (5 տարով) և ընծայարան (3 տարով): Երկրորդականում դասավանդում են գրակ., լեզվաբանություն, պատմություն, ընծայարանում՝ աստվածաբանություն, իմաստասիրություն, եկեղեց. արարողություններին վերաբերող առարկաներ: 1875-ին կառուցվել է վարժարանի նոր շենք: 1851–65-ին և առաջին համաշխ. պատերազմի ընթացքում (1914–18) փակվել է և վերաբացվել միայն 1920-ին: Սովորողների թիվը տատանվել է 30–35-ի միջև: 1976-ին Ալեք Մանուկյանի բարեբարությամբ կառուցվել է 100 տեղանոց նոր շենք: 1992-ից ի վեր Ե. ժ. վ-ում սովորելու են մեկնում Հայաստանցի երիտասարդներ:

Վարժարանում դասավանդել են Ե. *Դուրյանը*, Թ. *Գուշակյանը*, Բ. *Կյուլեսերյանը*, Ե. Տերտերյանը, Տ. Ներսոյանը, Հ. Օշականը, Ն. *Պողարյանը* և ուր.: Դասավանդում են նաև Հայաստանի Հանրապետությունից հրավիրված՝ հայոց լեզվի և գրակ-յան, պատմության մասնագետներ, մշակույթի գործիչներ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ, Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից: Հիմնադրվել է VII դ.: Աթոռանիստը՝ *Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք*: Պատրիարքարանի տարածքը (Հայկ. թաղամաս) զբաղեցնում է հին Երուսաղեմի չորս թաղամասերից մեկը (1/6 մասը՝ 150 հզ. *մ*²):

Երուսաղեմում հայերը (հիմնականում հոգևորականներ) բնակություն են հաստատել քրիստոնեության տարածման առաջին դարերից: Արդեն IV դ. Երուսաղեմում կային հայկ. վանքեր ու եկեղեցիներ: Սիոն լեռան վրա հիմնվել է Ս. Հակոբյանց վանքի միաբանությունը: Երուսաղեմի եկեղեցու առաջին հայրապետը եղել է Հակոբոս Տյառնեղբայրը: Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի (381) որոշմամբ Երուսաղեմի եպիսկոպոսությունը դարձել է պատրիարքություն: Համաձայն *Ընդհանրական եկեղեցու* նվիրապետ. կարգի, հայկ. վանքերն իրենց առաջնորդներով, վանականներով մինչև VI դ. կեսը գտնվել են Երուսաղեմի *պատրիարքի* իշխանության ներքո: Երբ Երուսաղեմի պատրիարքությունը բյուզ. կայսրության ճնշման տակ VI դ. կեսին վերջնականապես ընդունել է քաղկեդոնական դավանանք, Երուսաղեմի Հայ եկեղեցին առանձնացել է, և VII դ. ձևավորվել է Ե. Հ. պ.: Երուսաղեմի հայոց պատրիարքի նվիրապետ. աստիճանն արքեպիսկոպոսությունն է, իսկ պատրիարք կոչումը վարչական անվանում է, որը քաղ. իշխանությունները տվել են Երուսաղեմի հայոց արքեպիսկոպոսներին՝ նրանց ինքնավարությունն ու անկախությունն այլ եկեղեց. աթոռից հաստատելու և Երուսաղեմի հայ վանքերի ու եկեղեցիների գործերը տնօրինելու համար: Այդ պատճառով էլ Երուսաղեմի հայոց պատրիարքները հաճախ կոչվել են Երուսաղեմի արքեպիսկոպոսներ:

Բյուզ. տիրապետության շրջանում, մինչև արաբների կողմից Երուսաղեմի գրավումը (636), Երուսաղեմի Հայ եկեղեցին հալածվել է քաղկեդոնականներից:

VII դ. արաբները Երուսաղեմի հայոց միաբանությանը տվել են հունաց ուղղափառ պատրիարքին հավասար իրավունքներ: Երուսաղեմի հայոց հոգևոր առաջնորդ, առաջին պատրիարք Աբրահամը (638–669) մեկնել է Մուհամմեդ մարգարեի մոտ և նրանից ստացել մի հաստատագիր, որով Ե. Հ. պ. անջատվել է հունականից, հայոց սեփականություն են ճանաչվել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքն իր կալվածներով, Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարը, Ս. Հարություն տաճարի մի կարևոր մասը, ինչպես նաև Ձիթենյաց լեռան ստորոտին գտնվող Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին, Գողգոթայի բարձունքը ևն: Եթովպացիները, ղպտիները և ասորիները ենթարկվել են Ե. Հ. պ-յան իրավասությանը: Հայերին նաև տրվել է զանգ հնչեցնելու իրավունք: Պատրիարքը խոստացել է վճարել սահմանված տուրք և ենթարկվել միայն մահմեդ. իշխողներին: Այդ հաստատագիրը նորոգվել է հետագա ժամանակներում: Իրար հաջորդած բոլոր իշխանությունները (արաբների, խաչակիրների, մամլուքյան, օսմանյան, բրիտ., հորդանանյան, իսրայելական) վերահաստատել են հույների և լատինների հետ հայերի հավասարազոր իրավունքները Երուսաղեմի և ամբողջ Սուրբ երկրի քրիստ. սրբատեղիների նկատմամբ:

Մինչև XI դ. վերջը տևած արաբ. տիրապետության առաջին շրջանում արաբները բարյացակամ են վերաբերվել տեղի քրիստոնյաների, հատկապես Ե. Հ. պ-յան հանդեպ՝ ի հակակշիռ Բյուզանդիայի: Այդ շրջանում հայոց պատրիարքության դիրքը, իբրև բոլոր Արևելյան ուղղափառ եկեղեցիների (ասոր., ղպտ., եթովպ.) ներկայացուցչի, հավասարվել է հուն. պատրիարքությանը: Հաջորդ դարերում, չնայած հրովարտակներով ապահովված առանձնաշնորհումներին, հայկ. վանքերն ու եկեղեցիները հետզհետե ենթարկվել են ծանր հարկումների, թալանի և ավերածությունների: Ե. Հ. պ-յան վիճակը հատկապես ծանրացել է Եգիպտոսի Ֆաթիմյան արաբ. դինաստիայի տիրապետության շրջանում: 969-ին գրավելով Երուսաղեմը՝ Ֆաթիմյանները մեկ դարից ավելի շարունակ կռիվներ են մղել սելջուկների դեմ, և քաղաքը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել, մինչև 1099-ին այն գրավել են խաչակիրները: Կիլիկիայի Հայկ. իշխանության և թագավորության շրջանում (XI–XIV դդ.), հայոց

իշխանների և թագավորների քաղ. պաշտպանության և նվիրատվությունների շնորհիվ Ե. Հ. պ. ամրապնդել է իր իրավունքները սրբատեղիների նկատմամբ և բարձրացրել իր հեղինակությունը:

Հռոմկլայի 1178-ի ժողովին մասնակցել է Երուսաղեմի հայոց պատրիարք Սահակը, որը ստորագրել է ժողովի որոշումների տակ Հայոց կաթողիկոս *Գրիգոր Դ Տղայից*, Աղվանից Ստեփանոս կաթողիկոսից, Անիի Բասիլիոս արքեպիսկոպոսից և Անտիոքի Գրիգորիս արքեպիսկոպոսից հետո՝ «Սահակ արքեպիսկոպոս աստվածակոխ քաղաքին Երուսաղեմի»:

1187-ին Եգիպտոսի սուլթան Սալահեդդինը գրավել է Երուսաղեմը՝ վերջ տալով խաչակիրների իշխանությանը Սուրբ քաղաքում: Սալահեդդինը ոչ միայն վերահաստատել է Երուսաղեմի հայոց պատրիարք Աբրահամի (1180–91) ներկայացրած քրիստ. սրբավայրերի նկատմամբ Ե. Հ. պ-յան իրավունքները, այլև դրանք տարածել նաև խաչակիրների մի քանի եկեղեցիների և վանքերի վրա:

Մինչև 1311-ը Ե. Հ. պ. գտնվել է Կիլիկիայի Հայոց թագավորների և Սսում նստող Հայոց կաթողիկոսների իշխանության ներքո: Զբաղեցնելով Օշին թագավորի, *Գրիգոր Է Անավարզեցի* և *Կոստանդին Գ Կեսարացի* կաթողիկոսների լատինամոլ քաղաքականությունը և չենթարկվելով 1307-ի Սսի ժողովի որոշումներին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Սարգիսը, Հայ եկեղեցու վարդապետությունը անաղարտ պահելու համար Եգիպտոսի սուլթանից հրովարտակ ձեռք բերելով, անջատել է իր Աթոռը Կիլիկիայի քաղ. և եկեղեց. իշխանությունից: 1311-ից Ե. Հ. պ. դարձել է անկախ, ինչը հիմք է տվել որոշ ուսումնասիրողների կարծելու, թե Ե. Հ. պ. հիմնադրվել է այդ թվին:

Օսմ. տիրապետության տարիներին Ե. Հ. պ-յան գերիշխանությունը տարածվել է Սիրիայի, Լիբանանի, Կիպրոսի և մինչև 1839-ը՝ Եգիպտոսի թեմերի վրա: 1664-ին Եղիազար Այնթապցին Երուսաղեմում հաստատել է Մայր աթոռ Ս. Էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն, իրեն ենթարկել օսմ. տերության տարածքում գործող եկեղեց. թեմերը: 1682-ին, *Եղիազար Ա Այնթապցու*՝ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելուց (1681) հետո, Երուսաղեմի կաթողիկոսությունը վերացվել է:

1702-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք *Ավետիք Եվդոկացին* զբաղեցրել է նաև Ե. Հ. պ-յան աթոռը, և մինչև 1715-ը Ե. Հ. պ. կառավարել են Կ. Պոլսից նշանակված փոխանորդները: Պատրիարքությունն ընկել է պարտքերի տակ: 1715-ին Կ. Պոլսի պատրիարք *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին* վերահաստատել է Երուսաղեմի ինքնուրույն պատրիարքությունը: *Գրիգոր Շղթայակիր* պատրիարքը (1715–1749) մարել է պարտքերը, ձեռնամուխ եղել շին. աշխատանքների: 1833-ին Ս. Հակոբյանց վանքում հիմնադրվել է տպարան. այստեղ են տպագրվել Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմագրութիւն Հայոց» (1843), Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» (1868) և այլ գրքեր:

XIX դ. Երուսաղեմում բացվել և հայոց պատրիարքարանի նյութ. միջոցներով գոյատևել են տղաների Մեսրոպյան և աղջիկների Գայանյանց վարժարանները: 1843-ին Ռոմլեում (Ս. Գևորգ վանքում) Զաքարիա Կոփեցի պատրիարքի ջանքերով բացվել է ժառանգավորաց վարժարանը, որը հաջորդ տարի փոխադրվել է Երուսաղեմ և ցայսօր գործում է պատրիարքարանի տնօրինության ներքո (տես *Երուսաղեմի ժառանգավորաց վարժարան*): 1928-ին Եղիշե *Դուրյան* պատրիարքի ջանքերով բացվել է Սրբոց Թարգմանչաց վարժարանը և նրա առաջարկով էլ անվանակոչվել ի հիշատակ ս. Մեսրոպ Մաշտոցի և ս. Սահակ Ա Պարթևի:

Մինչև XIX դ. Ե. Հ. պ. առավել կամ նվազ հաջողությամբ պայքարել է սրբատեղիների հանդեպ հույների և լատինների ոտնձգությունների դեմ: Օսմ. կայսրության թուլացմանը զուգընթաց փոխվել է քաղ. կացությունը, և օտար տերությունները, միջամտելով կայսրության ներքին գործերին, Երուսաղեմի սրբավայրերի վրա իրավունքների հարցում պաշտպան են կանգնել հույներին և կաթոլիկներին: Հուն. պատրիարքությանը զորակցել է Ռուսաստանը, իսկ լատիններին՝ Արևմուտքը, մասնավորապես՝ Ֆրանսիան: Հույներին նույնիսկ կարճ ժամանակով հաջողվել է տիրանալ Ս. Հակոբյանց վանքին, սակայն Կ. Պոլսի հայ ամիրաների նյութ. և քաղ. օգնության շնորհիվ հայերը վերստին ձեռք են բերել Ս. Հակոբյանց տաճարը: Հակառակ դժվարությունների և անհավասար պայքարի, Ե. Հ. պ. կարողացել է պաշտպանել հայոց իրավունքները Հույն և Լատին երկու մեծ եկեղեցիների և նրանց պաշտպան տերությունների ոտնձգություններից: Երուսաղեմի համաքրիստ. երեք գլխ. սրբատեղիների երեք ավագ պահապան-

ները՝ Հայ, Հույն և Լատին եկեղեցիները, 1917-ին, երբ Երուսաղեմն անցավ բրիտ. հովանավորության ներքո, պաշտոնապես հաստատվեցին Երուսաղեմի Ս. Հարությունն տաճարի, Գեթսեմանիի պարտեզի և Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարի երեք իրավատերեր: Սահմանվեցին յուրաքանչյուրի իրավունքները, բաժինները, պաշտամունքի օրերը և ժամերը, յուրաքանչյուր տեղի սրբազան իրերի քանակը, Ս. Տեղիների պատասխանատվությունը: Հայերը կաթոլիկ և ուղղափառ պատրիարքարանների հետ պահպանեցին համահավասար իրավունքներ:

1929-ին Երուսաղեմի բրիտ. ներկայացուցիչը և Երուսաղեմի կառավարիչը բրիտ. կառավարությանն է ներկայացրել «Սրբատեղիների իրավական վիճակը» անունով մի վավերաթուղթ, որտեղ ամփոփված են յուրաքանչյուր քրիստոնյա համայնքի իրավունքները: Մինչև օրս պահպանվում է իրավական այդ վիճակը:

1916-ին երիտթուրք. կառավարությունը հաստատել է Թուրքիայի հայ առաքելականների համար մեկ կաթողիկոս-պատրիարքություն՝ Երուսաղեմ նստավայրով: Կաթողիկոս-պատրիարքի պաշտոնը հանձնվել է Կիլիկիո աթոռի կաթողիկոս Սահակ Խապայանին: Առաջին համաշխ. պատերազմում օսմ. Թուրքիայի պարտությունից հետո Կիլիկիայի կաթողիկոսությունը և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները շարունակել են իրենց գոյությունը: Ե. հ. պ. ծաղկել է Եղիշե արք. Դուրյան (1921–30) և Թորգոմ արք. *Գուշակյան* (1931–38) պատրիարքների օրոք: Վերաբացվել է ժառանգավորաց վարժարանը, մեծ ուշադրություն դարձվել տպարանին, որտեղ լույս են տեսել հայագիտ., կրոն., պատմ. և այլ բնույթի մեծարժեք գրքեր: Պատրիարքությանը կից բացվել է Աստվածաբանական սեմինարիա, որտեղ պատրաստվում են հոգևորականներ: Ս. Հակոբյանց վանքում է գտնվում Երուսաղեմի ձեռագրատունը (ձեռագրերի թիվը՝ շուրջ 4 հզ.)՝ աշխարհում հայ. ձեռագրերի երկրորդ հավաքածուն (Մատենադարանից հետո): Ելնելով որոշ ձեռագրերի ստեղծման թվականից՝ ենթադրվում է, որ հավաքածուն սկզբնավորվել է XII–XIII դդ.: 1866-ից լույս է տեսնում Ե. հ. պ-յան պաշտոնական «*Սիոն*» ամսագիրը (1877–1927-ին ընդհատվել է):

1929-ին Ամենայն հայոց կաթողիկոսության համաձայնությամբ Ե. հ. պ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանն է զիջել Դամասկոսի, Լիբանանի և Կիպրոսի թեմերը: Ներկայումս Ե. հ. պ-յան իրավասության տակ են միայն Իսրայելի և Հորդանանի հայկ. եկեղեցիները:

Պատրիարքը Ս. Հակոբյանց վանքի հոգևոր և վարչ. պետն է, Երուսաղեմի քաղ. իշխանությունների առջև հայ համայնքի ներկայացուցիչը: Նրան ընտրում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովը, որին և հաշվետու է: Ընտրությունը հաստատում են Ամենայն հայոց կաթողիկոսը և Երուսաղեմի վրա իշխող պետության ղեկավարը:

Երուսաղեմի հայոց պատրիարքն է Թորգոմ արք. Մանուկյանը (1990-ից):

Հորդանանի հոգևոր հովվություն, կենտրոնը՝ Ամմանի Ս. Թադևոս եկեղեցի:

Գաղութը ձևավորվել է Մեծ եղեռնից հետո: Հայերը հիմնականում բնակվում են Ամմանում, սակավ թվով՝ Ռուսեյֆա, Մատաբա, Աքաբա քաղաքներում: Համագաղութային բնույթի բոլոր միջոցառումները կազմակերպվում են Ազգային առաջնորդարանի սրահում: Ամմանում լույս է տեսնում Ազգ. առաջնորդարանի «Սուրբ Թադէոս» թերթը (1997-ից): Առաջնորդին նշանակում է Երուսաղեմի հայոց պատրիարքը: Հորդանանի հայ համայնքի ազգ-եկեղեց. գործերով զբաղվում է տեղական խորհուրդը (Թաղականությունը):

Հորդանանի հայ համայնքի հոգևոր հովիվն է (առաջնորդը) Վահան եպս. Թոփալյանը:

Երուսաղեմի հայոց պատրիարքների անվանացանկ

(ըստ Մ. Օրմանյանի)

Աբրահամ (638–669), Գրիգոր Եդեսացի (669–696), Գևորգ (696–708), Մկրտիչ (708–730), Հովհաննես (730–758), Ստեփանոս (758–774), Եղիա (774–797), Անհայտ են (797–885), Աբրահամ (885–909), Անհայտ են (909–981), Գրիգոր (981–1006), Արսեն (1006–38), Մեսրոպ (1008-ին), Անհայտ են (1038–90), Սիմեոն (1090–1109), Մովսես (1109–33), Եսայի (1133–52), Սահակ (1152–80), Աբրահամ Երուսաղեմցի (1180–91), Մինաս (1191–1205), Աբրահամ (1205–18), Առաքել (1218–30), Հովհաննես Կարնեցի (1230–38), Կարապետ Երուսաղեմցի (1238–54), Հակոբ (1254–81), Սարգիս (1281–1313), Աստվածատուր (1313–16), Դավիթ (1316–21), Պողոս (1321–23), Վարդան Արևելցի (1323–32), Հովհաննես Ճոսլին (1332–41), Բարսեղ (1341–56), Գրիգոր (1356–63), Մկրտիչ (1363–78), Հովհաննես Լեհացի (1378–86), Գրիգոր Եգիպտացի (1386–

1391), Եսայի (1391–94), Սարգիս (1394–1415), Մարտիրոս (աթոռակից, 1399), Մեսրոպ (աթոռակից, 1402), Պողոս Գառնեցի (1415–19), Մարտիրոս Եգիպտացի (1419–30), Մինաս (աթոռակից, 1426), Եսայի (աթոռակից, 1430–31), Հովհաննես (1431–1441), Մյուռոն (աթոռակից, 1436–37), Աբրահամ Մսրցի (1441–54), Մեսրոպ (1454–61), Պետրոս (1461–76), Մկրտիչ Իլովցի (1476–79), Աբրահամ Բերիացի (1479–85), Հովհաննես Մսրցի (1485–91), Մարտիրոս Պրուսացի (1491–1501), Պետրոս (1501–1507), Սարգիս (1507–17), Հովհաննես (Թլկուրանցի, 1517–22), Աստվածատուր Մերդինցի (1532–42, 1550–51), Փիլիպպոս (1542–50), Անդրեաս Մերդինցի (1551–83), Դավիթ Մերդինցի (1583–1613), Գրիգոր Գանձակեցի (Պարոնտեր, 1613–45), Աստվածատուր Տարոնեցի (1645–64, 1665–66, 1668–1670), Եղիազար Հռոմկլայեցի (աթոռակից, 1664–1665), Եղիազար Այնթապցի (1666–68, 1670–77), Մարտիրոս Ղրիմեցի (1677–80, 1681–84), Հովհաննես Ամասիացի (Թոփալ, հակաթոռ, 1680-ին), Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (1684–97), Սիմեոն (հակաթոռ, 1688–91), Մինաս Համդեցի (1697–1704), Կ. Պոլսի պատրիարքությանը միացված շրջան (1704–15), Գրիգոր Շիրվանցի (Շղթայակիր, 1715–49), Հակոբ Նալյան Զմմարացի (1749 – հրժրվ. 1752), Թեոդորոս Խորենացի (1752–61), Կարապետ Գանձակեցի (1761–68), Պողոս Վանեցի (1768–75), Հովակիմ Քանաքեռցի (1775–93), Պետրոս Եվդոկացի (1793–1800), Թեոդորոս Վանեցի (1800–18), Գաբրիել Նիկոմիդացի (1818–40), Պողոս Ադրիանուպոլսեցի (1824–47), Զաքարիա Կոփեցի (1840–46), Կիրակոս Երուսաղեմցի (1846–50), Հովհաննես Զմյուռնացի (1850–60), Վրթանես (տեղապահ, 1860–64), Եսայի Թալասցի (1864–85), Երեմիա Սահակյան (տեղապահ, 1885–89), Հարություն Վեհապետյան (Եգիպտացի, 1885–1910), Տեղապահություն (1910–21), Եղիշե Դուրյան (1921–30), Թորգոմ Գուշակյան (1931–38), Մեսրոպ Նշանյան (1939–44), Կյուրեղ Իսրայելյան (1944–49), Եղիշե Տերտերյան (տեղապահ, 1949–56, 1960–90, պատրիարք), Թորգոմ Մանուկյան (1990-ից):

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.5, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Հովհաննես Հաննա, Գիրք պատմութեան Սրբոյ եւ մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս, ԿՊ, 1731: Աղավնունի Մ., Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղեմ, 1929: Նույնի, Հայկական հին վանքեր ու եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ, Երուսաղեմ, 1931: Սավալանյանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1, 2, Երուսաղեմ, 1931: Օրմանյան Մ., Հայկական Երուսաղէմ, Երուսաղեմ, 1931: Հակոբյանց Ս., Մանուկյան Մ., Հայ Երուսաղէմը, Բոստոն, 1943: Կեռոքէյան Վ., Հայ Երուսաղէմը դարերու մէջէն, Երուսաղեմ, 1965: Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն, մաս 1, Էջմիածին, 1995:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔ, գտնվում է Երուսաղեմի հարավ-արևմտյան մասում, Սիոն լեռան բարձունքում, ըստ ավանդության, Հակոբոս Տյառնեղբոր տան տեղում: Նվիրվել է Հակոբոս առաքյալին (նահ. 44-ին) և Հակոբոս Տյառնեղբորը (նահ. 60-ին): Վանքի կառուցման վերաբերյալ պատմ. ստույգ տեղեկություններ չեն պահպանվել: Ազգ. ավանդությունը վերագրում է Տրդատ Գ Մեծին և Գրիգոր Ա Լուսավորչին: Վանքը պատված է ամուր, բերդանման պարիսպներով, որոնց ներսում են Սրբոց Հակոբյանց Մայր տաճարը՝ կից մատուռներով, եկեղեցիներով, Երուսաղեմի հայոց պատրիարքարանը, հոգևորականների, աշխարհականների և ուխտավորների բնակության թաղերը: Ս. Հակոբյանց Մայր տաճարը, ինչպես և Երուսաղեմի մյուս սրբավայրերն ավերվել են, երբ Պարսից Խոսրով II Ափարվեզ արքան գրավել է (614) Երուսաղեմը: Արաբները, Երուսաղեմը գրավելուց հետո (636), հայոց միաբանությանը հույների ուղղափառ պատրիարքին հավասար իրավունքներ են վերապահել, հայոց սեփականություն ճանաչել վանքն իր կալվածքներով: 1099-ին Երուսաղեմը գրավել են խաչակիրները, իսկ 1187-ին՝ Եգիպտոսի սուլթան Սալահեդդինը: Ավանդության համաձայն, երբ նա Երուսաղեմ է մտել, նկատել է Ս. Հակոբյանց Մայր տաճարի փառահեղ գմբեթը. մզկիթի տեղ դնելով խոնարհվել է ու երկրպագել, սակայն երբ պարզվել է իրողությունը, վճռել է կա՛մ հիմնահատակ անել վանքը, կա՛մ մզկիթ դարձնել: Բայց պատրիարք Աբրահամ Երուսաղեմցու և ժողովրդի թախանձագին խնդրանքներից զգացվել է՝ ասելով. «Այս վանքը թող ձեզ մնա, բայց գմբեթը պետք է մի քիչ իջեցնեք»: Գմբեթը «իջեցվել է», իսկ եկեղեցու դուռը յոթ տարով կնքվել: Սալահեդդինը իր հաջորդներին պատվիրել է, որ ոչ ոք հայերին չզրկի այս վանքից: XIII դ. Լևոն Գ թագավորը այցելել է Երուսաղեմ, նորոգել Ե. Ս. Հ. վ. և մյուս հայկ. եկեղեցիներն ու վանքերը:

Չնայած վանքը բազմիցս ենթարկվել է Երուսաղեմը նվաճողների ավերածություններին ու հարվածներին, այն երբեք չի դադարել հայ ուխտավորի սրբատեղի լինելուց: Ս. Հակոբյանց Մայր տաճարը քառամույթ գմբեթավոր կառույց է՝ զարդարված հախճասալերով, նկարներով, ավելի քան 500 արծաթե կանթեղներով, չորս բյուրեղյա հսկա ջահերով, ոսկեզրվագ խաչկալով, սաղավակերտ դռներով, գեղաքան-

դակ փայտե առարկաներով, դարերի հնություն ունեցող ձեռագործներով: Պատերի ստորին մասը ծածկված է Քոթահայի (Կուտինա) նկարազարդ հախճապակիներով, վերին մասը մեծադիր նկարներ են, որոնք հիմնականում հեղինակել է Հովհաննես տիրացուն: Եկեղեցու կենտր. սյուների վրա վեր են խոյացած հոյակերտ կամարներով առաստաղն ու գեղազարդ գմբեթը: Մայր տաճարի շուրջը՝ նրան կից և նրանից բացվող մուտքերով, ինը մատուռ կա ս. Պատարագի 21 սեղաններով՝ Ս. Էջմիածնի, Գլխադիր Ս. Հակոբոս (այստեղ է ամփոփված Հակոբոս առաքյալի գլուխը), Ս. Մինասի (նվիրված է ս. Մինասին և ս. Սարգիս զորավարին), Ս. Մակարի (նվիրված է Երուսաղեմի պատրիարք ս. Մակար Հայրապետին), Ս. Ստեփանոսի, Ս. Նշան (այսպես է կոչվում, որովհետև մատուռում մի խաչ է պահվել, որում Տիրոջ Խաչափայտից մասունք է եղել), Ս. Առաքելոց, Ս. Համբարձման, Ս. Պողոսի և Ս. Պետրոսի: Սրբոց Հակոբյանց վանքի հս. կողմում է գտնվում Ս. Թորոս եկեղեցին, որը կառուցել է Հայոց Հեթում Ա թագավորը Մառիի ճակատամարտում զոհված իր որդու՝ Թորոսի հիշատակին:

Ե. Ս. Հ. վ. նաև մշակութ. նշանավոր կենտրոն է: Այս համալիրում է Զաքարիա Կոփեցու ջանքերով 1833-ին ստեղծվել Երուսաղեմի հայկ. տպարանը, որտեղ կրոն., եկեղեց., պատմաբանասիր., գրականագիտ. բնույթի ուսումնասիրություններից զատ տպագրվել են Ռ. Սևակի, Դ. Վարուժանի, Մ. Զարիֆյանի ժողովածուները, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը, Ն. Պողարյանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց» հատորները (1966–91) ևն: Այստեղ է տպագրվում «*Միոն*» ամսագիրը: Վանքի ձեռագրատանն է պահվում աշխարհում երկրորդ (Երևանի Մատենադարանից հետո) հայերեն շուրջ 4 հզ. ձեռագիր պարունակող հավաքածուն: Ենթադրվում է, որ այն սկզբնավորվել է XII–XIII դդ.: Ձեռագրացուցակների կազմմանն ու հրատարակմանը ձեռնամուխ են եղել Տ. Սավալանյանը (1865), Ա. Այուրմեյանը, Ն. Պողարյանը: Վանքում գործում է *Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը*:

2000-ի հունվարին Երուսաղեմում գտնվող Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանը և ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն այցելել են Ե. Ս. Հ. վ.:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.5, 3-րդ պատկերը:

Գրկ. Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Ե., 1997: Աղավնունի Մ., Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղեմ, 1929: Սավալանյանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1, 2, Երուսաղեմ, 1931: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, Ե., 1983: Դեվրիկյան Վ., Երուսաղեմի հայ ուխտավորը, Էջմիածին, 1999: Thierry J.M., Les arts arméniens, P., 1987.

Մուրադ Հասրաթյան

ԵՓԵՍՈՍԻ Գ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 431, գումարվել է հունիսի 22-ին, Հոգեգալստյան տոնի օրը, բյուզանդական Թեոդոսիոս II Փոքր կայսրի հրամանով: Մասնակցել է 200 եպիսկոպոս: Առիթը Կ. Պոլսի պատրիարք Նեստորի (428–431) վարդապետությունն էր (տես *Նեստորականություն*) և Քրիստոսի մարդկային ու աստվածային բնությունների շուրջ դավան. վեճը, որ եկեղեցու պատմության մեջ մտել է «Քրիստոսաբանական մեծ վեճ» անունով: Վեճին սկիզբ էին դրել *Ալեքսանդրիայի* աստվածաբան. դպրոցի ներկայացուցիչ, Ալեքսանդրիայի պատրիարք *Կյուրեղ Ալեքսանդրացին* և *Անտիոքի* աստվածաբան. դպրոցի ներկայացուցիչ, Կ. Պոլսի պատրիարք Նեստորը: 430-ին երկու կողմերը դիմել են Հռոմին, նույն թվականին Հռոմում գումարված ժողովում Կղեստիանոս պապն իբրև Կյուրեղ Ալեքսանդրացու կողմնակից սպառնացել է բանադրել Նեստորին: Դրանից հետո Կյուրեղ Ալեքսանդրացին Ալեքսանդրիայում ժողով է գումարել, դատապարտել Նեստորին և ժողովի որոշումին կցել իր 12 նշանավոր նզովքները: Դրանց ի պատասխան Նեստորը հրապարակել է իր 12 հականզովքները: Նեստորի կողմն են անցել Անտիոքի պատրիարք Հովհաննես Անտիոքացին, Սամոսատի Անդրեաս և Կյուրոսի Թեոդորետ եպիսկոպոսները: Հայտնի է Թեոդորետ եպիսկոպոսի հակակյուրեղյան նամակը: Ալեքսանդրիայի դեմ ոտքի է կանգնել ողջ Անտիոքի դպրոցը: Հակամարտությունը գնալով բորբոքվել է, և բյուզ. կայսրը հրավիրել է տիեզերական ժողով՝ հարթելու համար *Ընդհանրական եկեղեցու* ներսում ծագած վեճերը: Կյուրեղ Ալեքսանդրացին, որի կողմն էր անցել Եփեսոսի Մեմնոն եպիսկոպոսը, չսպասելով Հռոմի և Ասորիքի եպիսկոպոսների ժամանելուն, բացել է ժողովը, բանադրել Նեստորին և նրա կողմնակից-

ներին՝ որպես «Հայհոյիչ Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի և սուրբ Աստուածածին Մարիմայ»: Մի քանի օր անց, հունիսի 26-ին, տեղ է հասել Հովհաննես Անտիոքացին Ասորիքի 34 եպիսկոպոսների հետ միասին, տեղի ունեցած ժողովը հայտարարել է անօրինական, դումարել առանձին ժողով, դատապարտել Կյուրեղ Ալեքսանդրացուն ու Մեմնոնին և իր որոշումն ուղարկել Թեոդոսիոս II կայսրին: Կայսրը մի թղթով ընդունել է երկու ժողովների վճիռներն էլ և ամբոնից զրկել և՛ Նեստորին, և՛ Կյուրեղին, ինչպես նաև՝ Եփեսոսի եպիսկոպոս Մեմնոնին: Սակայն Կյուրեղի կողմնակիցները, չհամաձայնելով այդ որոշման հետ և վստահ իրենց հաղթանակին, ստիպել են կայսրին վերանայել իր վճիռը: Կայսրի վերջնական որոշման վրա ազդել է Կյուրեղի կողմնակիցների հզորությունը, նաև այն, որ Հռոմն այդ ժամանակ կողմ էր Կյուրեղ Ալեքսանդրացուն և հանձնարարել էր բանադրել Նեստորին: Թեոդոսիոս II-ը ի վերջո ընդունել է Կյուրեղ Ալեքսանդրացու նախագահած ժողովի որոշումները, այն հռչակել է տիեզերական, աքսորել Նեստորին, իսկ Կյուրեղին և Մեմնոնին կրկին բազմեցրել իրենց ամբոնների:

Ե. Գ տ. ժ. Հավատո նոր հանգանակ չի հաստատել, այլ հավանություն է տվել Կյուրեղ Ալեքսանդրացու նզովքներին՝ որպես հավատքի սահման և ուղղափառ դավանություն: Ժողովի որոշումներն ընդհանրապես անտիոքյան աստվածաբանության մերժումն էին, քան սոսկ Նեստորի վարդապետության դատապարտում: Քրիստոս Որդին Աստված է ըստ բնության, թեև եղավ մարդ (մարդացյալ Աստված), և նրանում գործում են միավորված երկու բնությունները: Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունները գոյություն չունեն առանձին-առանձին, այլ միավորված են Աստծո Բանին, անշփոթ, անխառն, անփոփոխ և անայլայլելի ձևով: Ոչ թե երկու որդի և երկու Քրիստոս, մեկը՝ շնորհիվ որդեգրության՝ Աստված, ճշմարիտ և երկրպագելի (աստվածացած մարդ), մյուսը՝ ծնունդով մարդ, ոչ երկրպագելի, ոչ թե երկու առանձին, իրարից անջատ բնություններ (Նեստոր), այլ՝ Աստվածամարդ՝ բնությունների անշփոթ և անբաժանելի միավորությամբ. մի Տեր, մի Հիսուս, մի դեմք և միացյալ աստվածամարդկային բնություն (ընդդեմ Նեստորի): Ս. Կույս Մարիամն Աստվածածին է և ոչ թե սոսկ մարդածին ու Քրիստոսածին (հակառակ Նեստորի), քանզի նա ոչ թե սկզբնավորեց Աստվածազգեստ մարդու, այլ՝ ծնեց Մարմնացյալ Բանին, այսինքն՝ մարդու կերպարանք տվեց հավիտենությունից առաջ ծնված Աստծո Որդուն՝ Հիսուսին (Կյուրեղ-Եփեսոսյան դավանություն): Ժողովն ընդունել է 6 կանոն՝ բոլորն ուղղված Նեստորի և նրա համախոհների դեմ: Կանոններն արգելել են որևէ մի հոգևորականի հաղորդություն ունենալ նրանց հետ կամ քարոզել նեստորականների գրվածքներ, հակառակ դեպքում օրինազանցներին սպառնում էր աստիճանազրկում և եկեղեցուց արտաքսում:

Հայ եկեղեցին չի մասնակցել Ե. Գ տ. ժ-ին, սակայն նախորդ երկու տիեզեր. ժողովների հետ միասին ընդունել է նրա տիեզեր. հեղինակությունը: Կորյունի, Մովսես Խորենացու վկայությամբ, Հայոց *Սահակ Ա Պարթև* կաթողիկոսը և *Մեսրոպ Մաշտոցը* 435-ին, Աշտիշատի ժողովում (տես *Աշտիշատի եկեղեցական ժողովներ*) ընդունել են Ե. Գ տ. ժ-ի 6 կանոնները ու որոշումները, որոնք Եփեսոսից բերել էին Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները՝ Աստվածաշնչի հայ. թարգմանության օրինակի հետ միասին:

Հայ եկեղեցին Ե. Գ տ. ժ-ի և 200 հայրապետների հիշատակը տոնում է Վարդավառի հինգերորդ կիրակին նախորդող շաբաթ օրը կամ Վարդավառին հաջորդող առաջին շաբաթ օրը՝ օգոստոս ամսին:

Գրկ. Սոկրատ Սքոլաստիկոս, Եկեղեցական պատմութիւն, Վաղ-պատ, 1897: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսն եւ իւր առ Վաչագան գրած թուղթն, հրտ. Բ. Սարգիսյան, Վնտ., 1899: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. 1, Վաղ-պատ, 1908: Migne J.P., Patrologiae Cursus Completus, Series Graeca, t. 84, Sinodicon, t. 68–77, 137, P., 1857–66; Hans-Georg Beck, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959; Dumeige G., Histoire de Concile Oecuméniques, P., 1962.

Արտաշես Ղազարյան

ԵՓՐԵՄ Ա ՁՈՐԱԳԵՂՑԻ [Տեր-Հովհաննիսյան, 1748, Ձորագյուղ (Երևանի շրջագծում) – 1835, Էջմիածին], Ամենայն Հայոց կաթողիկոս 1809–30-ին: Հաջորդել է *Դանիել Ա Սուրմառեցուն*՝ ռուսաց կայսրի և պարսից դահաժառանգ Աբաս Միրզայի համաձայնությամբ: 1801–09-ին՝ ռուսահայ թեմի առաջնորդ: Ե. Ա Ձ. զգալի դեր է խաղացել 1813-ի Գյուլիստա-

նի հաշտության պայմանագիրը կնքելիս՝ որպես միջնորդ հանդես գալով Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Նրա օրոք ուժեղացել են խանական կառավարության բռնություններն Էջմիածնի նկատմամբ, վանքը պարտքերի տակ է ընկել: Պարտքերը վճարելու և խանական սպառնալիքներից ազատվելու համար Ե. Ա Ջ. 1821-ին մեկնել է Շուշի՝ ռուսահայոց կողմերում միջոցներ հանդանակելու: Նրան ուղեկցողների մեջ էր նաև գրող, հրապարակախոս Մ. Թաղիադյանը: Քանի որ կաթողիկոսը ծածուկ էր անցել ռուս. սահմանը, և պարսիկներն էլ պահանջում էին հետ վերադառնալ, Ե. Ա Ջ. լարվածություն չստեղծելու նպատակով առանձնացել է Հաղպատի վանքում: 1828-ին, Արլ. Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, վերադարձել է Էջմիածին: 1830-ին հրաժարվել է կաթողիկոսությունից:

«Եփրեմ Ա Ջորագեղցի», Մ. Հովնաթանյան (1830–1840-ական թթ., ՀԱՊ, Երևան)

Ե. Ա Ջ. վերաբացել է (1813) *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսի հիմնած Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը, կառուցել Օշականի ճակատամարտի (1834) հերոսների հուշարձանը Էջմիածնում: Ունեցել է չեշտված ռուս. կողմնորոշում և ցանկացել Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Հայաստանը, վերականգնել հայոց պետականությունը: Այդ նպատակով սերտ կապեր է պահպանել ռուսահայ և հնդկահայ գործիչների հետ:

Կաթողիկոս. գահին Ե. Ա Ջ-ուն հաջորդել է *Հովհաննես Ը Կարբեցին*:

Վալտեր Դիլոյան

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ, սուրբ Եփրեմ Ասորի, Խուրի, Խուրին, Խորին (306, Եդեսիա – 373, Եդեսիա), *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*): Սերել է ասոր. ընտանիքից: Նախն. կրթությունն ստացել է Մծբինում, այստեղ էլ մկրտվել իր ուսուցչի՝ *Հակոբ Մծբնացու* ձեռքով: Ե. Ա. համակողմանի կրթություն է ստացել քրիստ. մշակույթի նշանավոր կենտրոն Եդեսիայի «Պարսից» դպրոցում: Ըստ ավանդության՝ Ե. Ա. Հակոբ Մծբնացուն ուղեկցել է Նիկիա և 325-ին նրա հետ մասնակցել առաջին տիեզերաժողովին: Ավելի քան տասը տարի ապրել և ստեղծագործել է Եդեսիայում, այստեղ գրել իր առաջին գործերը, կրթել բազում աշակերտներ: Պարսից Սասանյան Շապուհ II թագավորի (311–380)՝ քրիստոնյաների նկատմամբ գործադրած հալածանքներից խուսափելու համար՝ Ե. Ա. 360-ական թթ. իր աշակերտների և քրիստոնյա հայրենակիցների հետ տեղափոխվել է Մծբին: Հակոբ Մծբնացին նրան նշանակել է տեղի քրիստ. դպրոցի տեսուչ: Սակայն 363-ին, երբ պարսիկները գրավել են Մծբինը, Ե. Ա. հարկադրված վերադարձել է Եդեսիա, կարճ ժամանակ անց մեկնել Եգիպտոս, որտեղ 8 տարի ճգնել է Թեբայիդի նշանավոր մենաստաններում: 370–371-ին այցելել է Կապադովկյան Կեսարիա, հանդիպել *Բարսեղ Կեսարացուն*, որը, ըստ ավանդության, նրան սարկավագ է ձեռնադրել:

Ե. Ա-ու գրչին են պատկանում կամ վերագրվում սուրբգրային բազմաթիվ մեկնություններ, այդ թվում՝ Տատիանոսի Համաբարբառի մեկնությունը, դավան. աշխատություններ, ճառեր, աղոթքներ, ներբողներ, կցուրդներ, որոնք շարադրված են արևելաքրիստ. մտքին հատուկ խորհրդապաշտ. ոգով, հայտնութենական թափանցումներով, քնարականությամբ: Ե. Ա-ու մեկնություններում Աստվածաշնչի պատմ., տառացի իմաստը գերիշխող է այլաբանականի նկատմամբ: Դավան. աշխատություններն ուղղված են իր ժամանակի զանազան աղանդների և հոսանքների դեմ: Այդպիսիք են՝ «Ընդդեմ հանդուգն փորձարարների», «Ընդդեմ բարդածանական, մարկիոնական և մեսալյան աղանդի», «Յաղագս մարգարտին...», «Կամքի ազատության մասին և ընդդեմ կույր ճակատագրի պաշտպանների», «Ապաշխարության մասին՝ ընդդեմ նովացիանների» և այլ երկեր, որոնք շարադրված են ոչ թե նպատակադիր քննադատության, այլ՝ խորհրդածության, սրտաբուխ հորդորի եղանակով: Ե. Ա. գրեթե երբեք չի խորացել հերձվածների դաղափար. ակունքների բացահայտման մեջ, որովհետև դրանք ուղղված են եղել գլխավորապես ժողովրդի լայն զանգվածներին

և մասամբ էլ՝ գրվել (տաղաչափված) եկեղեցում երգելու նպատակով: Ե. Ա. գրել է բազմաթիվ հոգևոր երգեր՝ նվիրված Ս. Ծննդյան տոնին, Մկրտությանը, Հարությանը, Համբարձմանը, պահքին ևն: Երգերի հորինման շարժառիթը գնոստիկյան Բարդայծան Եդեսացու (154–222) երգերի և Ե. Ա-ու ժամանակ Միջագետքում լայն տարածում գտած մեսալյան աղանդի (տես *Մծղնեություն*) աղոթամատույցների հոգևոր կիրառությունից դուրսմղումն էր և եկեղեց. արարողությունների կարգավորումը: Ե. Ա-ու գրչին են պատկանում նաև Ս. Ծննդյան, Քրիստոսի չարչարանքների և Հարության մասին, թաղման կարգի, ապաշխարության երգաշարեր:

Ե. Ա-ու երկերի մեծ մասը հայացվել են V դ., գրչագրվել և շրջանառության մեջ մտել բազմաթիվ ընդօրինակություններով: Թարգմանվել են Հին և Նոր կտակարանների մեկնություններ, կցուրդներ, աղոթքներ, կանոններ, խրատներ, քարոզներ, ճառեր: Միայն հայերեն թարգմանությամբ պահպանվել են հոգևոր երգերի ժողովածուն (Մաղրաշա), «Նիկոմեդիական եղերերգությունները», Գործք առաքելոցի, Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունները, Տատիանոսի Համաբարբառի մեկնության զգալի մասը, Հնգամատյանի, Հեսուի, Դատավորաց, Թագավորությանց, Մնացորդաց Ա և Բ գրքերի մեկնությունների համառոտ տարբերակները: Ե. Ա-ու աշխատությունների հայերեն թարգմանություններն ունեն երկու կարևոր նշանակություն: Նախ՝ դրանք ներկայացնում են արմ. ազդեցությունից զերծ մնացած բնիկ արամեախոս քրիստ. աստվածաբանության յուրահատուկ գծերը և երկրորդ՝ դրանք շահեկան են աստվածաշնչյան բնագրերի, հատկապես Նոր կտակարանի ուսումնասիրության համար, որովհետև ստեղծված են ավելի վաղ, քան Նոր կտակարանի՝ մեզ հասած հուն. և ասոր. հնագույն ընդօրինակությունները: Ե. Ա-ու գործերի հայերեն թարգմանությունների զգալի մասը, հատկապես մեկնություններն ու աղոթքները, բազմիցս վերահրատարակվել են:

Հայ եկեղեցին ս. Ե. Ա-ու հիշատակը տոնում է տարին 2 անգամ՝ հունվարի 1-ի մերձակա շաբաթ օրը և հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.6, 1-ին պատկերը:

Երկ. Յաղագս ապաշխարութեան, ԿՊ, 1703: Գիրք Աղօթից, ԿՊ, 1734: Մատենագրութիւնք, հ. 1–4, Վնտ., 1836: Մեկնութիւն Գործոց առաքելոց, աշխատասիր. Ն. Ակինյանի, Վնն., 1921:

Գրկ. Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. 10, Վնտ., 1814: Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 443–446: Տեր-Պետրոսյան Լ., Հայ հնագույն թարգմանությունների մատենաշարը, տես Գիրք Ծննդոց, քննական բնագիր, աշխատասիր. Ա. Զեյթունյանի, Ե., 1985: Geerard M., Clavis Patrum Graecorum, v. 2, Brépols-Turnhout, 1974, p. 366–468.

Հակոբ Քյոսեյան

Զ

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ, եկեղեցուն կից, գավթի տանիքին կամ առանձին կանգնած ճարտարապետական կառույց՝ զանգ կախելու և *ժամերգությունը* սկսվելուց առաջ զանգերի զողանջով հավատացյալներին եկեղեցի հրավիրելու համար: Զանգեր են հնչեցվում նաև եկեղեցի ննջեցյալ բերվելու, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականների ժամանման առիթով: Ոռոշ խոշոր եկեղեցիների Զ-երում օծված սեղան է տեղադրվել, և *Համբարձման* ու *Հոգեգալստյան* օրերին ս. Պատարագ է մատուցվում:

Հայաստանում առաջին Զ-երը կառուցվել են X դ. 2-րդ կեսից սկսած, երբ Հայ եկեղեցին ընդունել է զանգի գործածությունը (մինչ այդ կոչնակ է կիրառվել): X դ. Զ-երը փայտաշեն, քառասյուն աշտարակներ էին: Հայկ. վանքերում XIII դ. կառուցվել են այունակազմ ռոտոնդայով պսակված միահարկ (*Քոբայրավանք*, Սրբանեսի վանք) և երկհարկ (*Հաղպատի վանք, Սանահինի վանք*) առանձին կանգնած Զ-եր, կամ դրանք զուգակցվել են գավթի գմբեթի հետ (*Հոռոմոսի վանք, Գանձասարի վանք, Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանք, Հովհաննավանք, Սաղմոսավանք* ևն): XIV դ. երկհարկ, եռաստիճան եկեղեցիները նաև ծառայել են իբրև Զ. (Եղվարդի Ս. Աստվածածին, Կապուտանի Ս. Մինաս, *Նորավանքի* Ս. Աստվածածին եկեղեցիներ):

Զ-երի շինարարությունը Հայաստանում լայնորեն ծավալվել է XVII–XIX դդ., երբ մշակվել է նոր՝ քառամույթ, կամարակապ բացվածքներով երկաստիճան, այունազարդ ռոտոնդայով ավարտվող տիպը, որի նախօրինակն է եղել *Էջմիածնի Մայր տաճարի* արմ. ճակատին կից Զ. (1654–58, ճարտ.՝ Սահակ Հիզանցի): Զ-երը կառուցվել են եկեղեցիների արմ. և հվ. ճակատներին կից (բացառություն է *Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու* արլ. ճակատին կից Զ.): Վասպուրականում Զ-եր կցվել են նաև գավիթների արմ. ճակատին (*Նարեկավանք, Մշո Ս. Առաքելոց վանք և Մշո Ս. Կարապետ վանք, Լիմ անապատ*): XVII դ. ստեղծվել է գավիթ-սրահի և Զ-ան զուգակցված հորինվածք (*Երևանի Ս. Անանիա առաքյալ անապատ, Շողակաթ եկեղեցի, Մուղնու Ս. Գևորգ վանք* ևն): Հայկ. վանքերի համալիրներում Զ-երը գլխ. եկեղեցիների նկատմամբ ստորադաս դեր են խաղում և նրանց առաջնությունն ու վեհությունը չեշտում իրենց տեղադրությամբ, ծավալով և ուրվագծով:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.6, 2-րդ պատկերը:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: *Халпахчьян О. Х., Национальные особенности архитектуры армянских колоколен, "Архитектурное наследство", т. 21, М., 1973.*

Մուրադ Հասրաթյան

ԶԱՎԵՆ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ (ծ. թ. անհտ – 381, ամփոփվել է ք. Մանազկերտում), Ամենայն Հայոց կաթողիկոս 377-ից: Հաջորդել է *Շահակ Ա Մանազկերտցուն*: Սերել է *Աղբիանոսյանների* տոհմից: Եղել է Մանազկերտի եպիսկոպոսը: Զ. Ա Մ-ու օրոք Պապ թագավորի անչափահաս որդի Արշակ Գ-ն օծվել է Հայոց թագավոր (378–

389), և 7 տարի Հայաստանում եղել է խաղաղ ժամանակաշրջան:

Կաթողիկոս. գահին Զ. Ա Մ-ուն հաջորդել է *Ասպուրակես Ա Մանազկերտցին*:

ԶԱՏԻԿ, սուրբ Զատիկ, Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայ առաքելական եկեղեցու հինգ *Տաղավար* տոներից: Նվիրված է Հիսուս Քրիստոսի Հարությանը: Հին կտակարանի Պասեքի տոնը քրիստոնեության մեջ վերածվել է Քրիստոսի Հարության տոնի, որը հայոց մեջ հաճախ կոչվել է Զատիկ Հարության: Քրիստոսի Հարությունը հիշատակվում է Զ. անվամբ: Պասեք բառը, որը V դ. Աստվածաշնչի հայ թարգմանիչները թարգմանել են Զ., ծագում է եբրայերեն բիսախ (բեսախ) բառից, որը նշանակում է անցում, ելք կամ զատում: Զ. բառի վերջնական բացատրություն ցայսօր չկա, այն մե՛ջբ մեկնաբանվում է իբրև բիսախ բառի հայ. թարգմանություն՝ զատվելու, ազատվելու իմաստով, մե՛ջբ իբրև դիցաբանական անուն՝ սերված հին եգիպտ. Սադի, հին հնդկ. Սատի աստծո անունից (Ղ. Ալիշան), երբեմն էլ մեկնաբանվում է երկու նշանակությամբ՝ և՛ որպես զոհ, և՛ որպես ուրախության տոն, ազատություն (Հ. Աճառյան): Իր բարձրագույն իմաստով՝ Հին ուխտի Պասեքը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին, նրա թափած սուրբ քավչարար արյունը և հառնումը մեռելների միջից՝ հանուն Աստծո ժողովրդի փրկության ու ազատության: Ըստ Հայր Աստծո կամքի և մարգարեությունների՝ Աստծո Որդին պիտի մարմնանար, չարչարվեր, խաչվեր, թաղվեր և երրորդ օրը հարություն առներ (Սաղմ. **15.**9–11, **29.**4, **40.**11–13, **117.**16–17, Օսէէ **6.**2–3 ևն), ինչը և կատարվեց:

Հին ուխտում Զ. սկզբնավորվում է Մովսեսի և Ահարոնի միջոցով, Աստծո պատգամի համաձայն, Եգիպտոսում, իսրայելացիների ելքից առաջ, հրեից Նիսան կամ աբիբ ամսի (մարտ կամ ապրիլ) տասնչորսերորդ օրը, երեկոյան (Ելք **12**): Իսրայելացիները, առաջին Զ-ից հետո և մինչև Ավետյաց երկրում հաստատվելը, հատուկ ծիսակարգով, ցայսօր կատարում են Զ-ի տոնը՝ իբրև փրկության և ազատագրության տոն: Հին կտակարանի գրքերում բազմիցս հիշատակվում է Զ. (դրա հետ առընչված՝ նաև Զ-ի գառը), որը, եկեղեցու մեկնաբանական ընթերցվածի համաձայն, Հիսուս Քրիստոսի նախօրինակն է կամ նրա խորհրդաբանությունը:

Ինչպես որ Իսրայելը (Աստծո ժողովուրդը), գերի լինելով Եգիպտոսում (խորհրդաբանորեն՝ մեղքի ծառայության մեջ), նոխազի արյան (խորհրդաբանորեն՝ Հիսուսի արյան) միջոցով ճանաչվեց Տիրոջ կողմից, և զատված լինելով, խուսափեց Ոչնչացնողի (Ելք **12.**23) հարվածներից ու դուրս եկավ Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր (խորհրդաբանորեն՝ Աստծո թագավորություն), այդպես էլ Հիսուս Քրիստոսը՝ «Գառն Աստուծո» (Հովհ. **1.**29), հեղեց իր սուրբ արյունը՝ հանուն մարդկության փրկության և հարություն առավ՝ զատվեց մեռելներից, մեզ ևս չնորհելով հավիտենական կյանքի ավետիսը՝ *Սուրբ Հոգու* միջոցով:

Եկեղեցին Հիսուսի հրաշափառ Հարությունը տոնում է որպես Զ., որովհետև նա է հավիտենական այն զոհը կամ պատարագը, որի միջոցով մարդն ստանում է մեղքերի թողություն, ապա՝ կյանք և հարություն: Պողոս առաքյալը Հիսուսին հենց այդպես էլ կոչում է՝ Զ., «...քանզի Քրիստոս՝ մեր զատիկը, մորթվեց...» (Ա Կորնթ. **5.**7–8):

Զ-ի տոնը քանիցս հիշվում է նաև Նոր կտակարանում: Ընդ որում՝ այդ տոնին մասնակցել է նաև ինքը՝ Հիսուսը. առաջին Զ-ին, մտնելով Երուսաղեմի տաճարը, վտարել է առևտուր անողներին (Հովհ. **2.**13–23): Վերջին Զ. Հիսուսը կատարել է իր երկրային ընթացքի վերջին տարին, Զ-ի (Բաղարջակերաց) տոնին, հենց Պասեքի երեկոյան (ինչպես զատկական առաջին գառը՝ Հին ուխտում), մատնությունից և խաչելությունից առաջ (Մատթ. **26.**17–30, Մարկ. **14.**12–24, Ղուկ. **22.**1–21): Առաքյալները Հիսուսին և՛ Զ., և՛ Զ-ի գառ են անվանում՝ նկատի առնելով նրա փրկարար զոհագործությունը և ս. Հարությունը: «Ես իսկ եմ հարություն և կյանք»՝ իր մասին վկայել է Հիսուսը (Հովհ. **11.**25):

Ըստ Նոր կտակարանի (Մատթ. **28**, Մարկ. **16**, Ղուկ. **24**, Հովհ. **20**, 21)՝ խաչյալ և թաղյալ Հիսուսը երրորդ օրը (միաշաբթի կամ *կիրակի*) առավոտյան հարություն է առել, երևացել Մարիամ Մագդաղենացուն, ապա առաքյալներին՝ Պետրոսին, Հովհաննեսին և մյուսներին՝ Երուսաղեմում: Ութ օր հետո դարձյալ հայտնվել է աշակերտներին՝ Թովմասին հավատքի մեջ հաստատելու համար: Երրորդ անգամ հարուցյալ Հիսուսը աշակերտներին

երևացել է Գալիլիայում, ծովեզերքին: Քառասուն օրերի ընթացքում նա հայտնվել է շատերին, այդ թվում նաև Էմմավուսի ճամփորդներին՝ հավատալով իր հարությունը մարմնով, ապա Ձիթենյաց լեռան վրայից համբարձվել երկինք (տես *Համբարձում*):

Զ-ի տոնախմբության օրը (Հարության ճշգրիտ թվականը) քննարկման առարկա է դարձել եկեղեցիների մեջև: *Նիկիայի Ա տիեզերական ժողովը* (325) որոշել է Զ-ի օրը առանձնացնել հրեական Պասեքից և որպես շարժական տոն, ըստ Ալեքսանդրյան կանոնի, տոնել գարնանային օրահավասարին հաջորդող առաջին կիրակի օրը: Հետագայում, երբ տոմարը փոփոխության է ենթարկվել, օրթոդոքս եկեղեցին հավատարիմ է մնացել հուլյան տոմարին, որով Զ. կատարում են 13 օրվա տարբերությամբ:

Մինչև Զ. լինում է *պահք* (քառասնօրյա պաս՝ շաբաթ-կիրակիները հանած), որը սկսվում է *Բուն Բարեկենդանին* հաջորդող երկուշաբթի օրվանից (տես *Մեծ պահք*):

Զ-ի նախընթաց երեկոյան եկեղեցում կատարվում է *Ճրագալույց*: Որպես բեղմնավոր կյանքի, փրկության և ուրախության խորհրդանշան՝ ներկվում է կարմիր ձու (հավկիթ):

Գրիգոր Տաթևացին ձուն համարել է աշխարհի խորհրդանշանը. դրսի կեղևը՝ երկինքը, թաղանթը՝ օդը, սպիտակուցը՝ ջուրը, դեղնուցը՝ երկիրը: Իսկ կարմիր ներկելը նշանակում է, թե ամբողջ աշխարհը փրկագնվել է Քրիստոսի արյունով:

Ենթադրվում է, որ ձվի գործածությունը հրեաներից է փոխանցվել քրիստոնյաներին, որովհետև Պասեքի տոնի սեղանին զատկական գառան մսի հետ դրվել է նաև խաչած ձու: Ըստ ավանդություններից մեկի՝ Մարիամ Մագդաղենացին մեկնել է Հռոմ՝ քարոզելու: Ներկայանալով Տիբերիոս կայսրին՝ նրան նվիրել է կարմիր ձու և ասել. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

Զ-ի օրը, վաղ առավոտյան սկսվում է *ժամերգությունը*, որի ավարտին ընթերցվում են հատվածներ չորս Ավետարաններից, երգվում շարականներ, կատարվում է անդաստան (տես *Հոգևոր-բարեպաշտական արարողություններ* հոդվածում), ապա սկսվում է *Պատարագը*: Հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» և «Փառք Քրիստոսի ամենազոր հարության» պատասխանները: Զ-ի հաջորդ օրը լինում է *մեռելոց*. Հիսուսի հարության ավետիսը հայտնվում է նաև ննջեցյալներին, որոնք ևս պիտի հառնեն Փրկչի Երկրորդ գալստյան ժամանակ: Զ-ից մինչև *Հոգեգալուստ* ընկած ժամանակամիջոցը կոչվում է Հինունք (Հիսունք), այսինքն՝ հիսուն օր, որոնք բոլորն էլ նվիրված են Քրիստոսի հարությանը, և այդ ընթացքում պասի օրեր չեն նշանակված: Հինունքի շրջանի բոլոր կիրակիներն էլ տոնական են և ունեն առանձին անուններ: Տարվա բոլոր կիրակիները ևս հարության տոներ են, և երբ ուրիշ *Տերունի տոն* է հանդիպում, հարությունը չի ջնջվում, այլ խառնվում է մյուս Տերունի տոնի հետ: Մեծ պահքի յոթ կիրակիների մեջ ևս հարության հիշատակը չի ջնջվում, բայց *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսի կարգադրությամբ հարությանը պատշաճեցված տոները նվազեցվել են:

Ներկայումս Հայ եկեղեցին Զ. նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը (35 օրվա շարժականությամբ, մարտի 21-ից հետո՝ մինչև ապրիլի 26-ը):

Երաժշտություն: Հարության օրհնությունները *Ստեփանոս Սյունեցունն* են (VIII դ.): Ութ հարցնակարգերի մեծ մասի (ըստ Ն. Թահմիզյանի՝ 186 երգ) հեղինակն *Անանիա Շիրակացին* է (VII դ.): Հարցնակարգերն ընդմիջարկող Տապանակի կանոնը հեղինակել է *Հովհաննես Ա Մանդակունին* (V դ.): Հարության և Ծննդյան մի շարք մեծացուսցեների մեծ մասը վերագրվում է *Բարսեղ Ճոնին* (VII դ.): Տոնը ներառում է նաև այլ հոգևոր երգեր, որոնցից հիշարժան է *Ներսես Շնորհալու* (XII դ.) «Գովեա Երուսաղեմ» ստեղծագործությունը: Օրվա սրբասացությունն է՝ «Ով է որպէս Տէր»-ը:

Հարությանը նվիրված տաղերից են Գրիգոր Նարեկացու «Հաւուն, հաւուն»-ը, «Սայլն այն իջանէր»-ը, Ներսես Շնորհալու «Նոր ծաղիկ»-ը ևն: Հարության տոնին է նվիրված նաև Գրիգոր Նարեկացու թերևս միակ շարականը՝ «Փառք Քրիստոսի ամենազոր յարութեանն» հարության տեր երկնիցը, որն ունի մի շարք զուգահեռներ «Սայլն այն իջանէր» տաղի հետ:

Պատկերագրություն: «Հարության» պատկերներն ի հայտ են եկել III դ.: Հնագույնը ասոր. Դուրա Եվրոպոսի մկրտարանի որմնանկարն է (235): Հայկ. արվեստում «Հարության» տեսարանի վաղագույն օրինակներն են

ԶԱՔԱՐԻԱ *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու որմնանկարները (X դ.), որտեղ Յուղաբեր կանանց հետ պատկերված են Պետրոս և Հովհաննես առաքյալները:

«Հարության» տեսարանում սովորաբար պատկերվում են հրեշտակը, դերեզմանը, որից մի փոքր հեռու կամ արդեն մոտեցած՝ Մարիամ Մագդաղենացին, երկու (երբեմն ավելի) կանայք՝ յուղի սրվակներով: Մարիամ Մագդաղենացին երբեմն պատկերվում է միայնակ, և այդ տեսարանը հայտնի է «Քրիստոսի հայտնությունը Մարիամ Մագդաղենացուն» անունով՝ ի տարբերություն «Հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց» առավել հնավանդ խորագրի և հորինվածքային կառուցվածքի: Վերևի կամ կենտր. հատվածում պատկերված են հրեշտակները, իսկ ներքևում՝ քնած զինվորները: Հրեշտակների ձեռքերին շեփորներ կամ գավազաններ կան: Վերածննդի արվեստում «Հարության» տեսարանը պատկերվում է Հիսուսի անմիջական մասնակցությամբ, մինչդեռ բյուզ. և հայկ. մանրանկարչության մեջ Հիսուսը բացակայում է՝ Հարությունն առավել խորությամբ արտահայտելու նպատակով: Հայտնի են *Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի*, Ռստակեսի և այլ հայ մանրանկարիչների «Հարության» պատկերները:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.6, 3–4-րդ պատկերները:

Գրկ. Ղազարյան Վ., Այուժետային մանրանկարը Կիլիկիայում, Ե., 1984: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6-րդ հրտ., Թեհրան, 1999: Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (4–18-րդ դարեր), Ե., 1999: Chevalier J., Cheerbrant A., Dictionnaire des Symboles, P., 1982; Schiller G., Iconography of Christian Art, v. I, L., 1971.

Լևոն Սարգսյան
Մհեր Նավոյան
Մարտին Միքայելյան

ԶԱՔԱՐԻԱ Ա ՉԱԳԵՅԻ (ծ. թ. անհտ – 876), Ամենայն հայոց կաթողիկոս 855-ից: Հաջորդել է *Հովհաննես Դ Ովայեցուն*: Գահակալել է քաղ. ծանր կացության պայմաններում, երբ երկիրը գտնվում էր արաբ. տիրապետության ներքո: Զ. Ա Ջ-ուն հաջողվել է մեղմել արաբ Բուղա ոստիկանի՝ հայերի նկատմամբ գործադրած հալածանքներն ու բռնությունները: Գործուն մասնակցություն է ունեցել հայ-բյուզ. եկեղեց. հարաբերություններում, պաշտպանել Հայ եկեղեցու դավան. սկզբունքները Հույն եկեղեցու նկրտումներից: Նրա օրոք Կ. Պոլսի Փոտ պատրիարքը (858–867, 877–886) բազմիցս փորձել է միացնել Հայ եկեղեցին բյուզանդականին՝ պարտադրելով ընդունել *քաղկեդոնականություն*: Ի պատասխան՝ Զ. Ա Ջ. նամակ է հղել Փոտ պատրիարքին, որով մերժել է Հայ եկեղեցուն հասցեագրված մեղադրանքները և հիմնավորել, որ նրա վարդապետությունը համահունչ է երեք տիեզերաժողովների դավանությանը: Փոտ պատրիարքը նամակով մեկ անգամ ևս փորձել է ապացուցել *Քաղկեդոնի ժողովի* ուղղափառությունը և առաջարկել քաղկեդոնականություն ընդունել: 862-ին Շիրակավանում Զ. Ա Ջ-ու և Աշոտ Իշխանաց իշխանի նախագահությամբ տեղի ունեցած ժողովը մերժել է Փոտի առաջարկը: Բյուզ. կողմը հետագայում ևս դիվանագիտ. ճիգեր է գործադրել՝ գլուխ բերելու եկեղեց. միությունը: Այս խնդրին են նվիրված 864–867-ին Զ. Ա Ջ-ու և Փոտի միջև փոխանակված նամակները:

Զ. Ա Ջ-ու գրչին են պատկանում մի շարք (14) ճառեր, որոնք տեղ են գտել *Ճառընտիրների* և *Տոնապատճառների* մեջ: Դրանք ընթերցվել են եկեղեց. տոների ժամանակ: Ճառերից մի քանիսը («Ի Մկրտութիւնն», «Ի չարչարանս Քրիստոսի», «Ի մեծի աւուր շաբաթուն թաղմանն Տեառն», «Ի Յարութիւն Քրիստոսի») շարադրված են Նիկոդեմոսի պարականոն Ավետարանի, *Եղիշեի, Հովհան Ոսկեբերանի* աշակերտ Թեոփիլոսի, *Գրիգոր Նազիանզացու, Բարսեղ Կեսարացու, Եպիփան Կիպրացու* համաբնույթ ճառերի հետևողությամբ: Ճառերի մեծ մասն ունի մեկնողական ուղղվածություն, ինչը հատուկ էր վաղ շրջանի ճառերին: Զ. Ա Ջ-ու ճառերը կարևոր սկզբնաղբյուր են Հայ եկեղեցու աստվածաբանության, քրիստոսաբանության, աստվածաշնչական պարականոնների (տես *Պարականոն գրքեր*), եկեղեց. ավանդության հետազոտման համար: Այդ ճառերում կան ուշագրավ մանրամասներ, որոնք հաճախ յուրովի լրացնում են պարականոններից արդեն հայտնի պատումները: Զ. Ա Ջ-ու ճառերը կարևոր են հայոց լեզվի բառագանձի ուսումնասիրման համար: Դրանց մեջ առկա բազմաթիվ բառամիավորներ բացակայում են «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» բառարանում (հ. 1–2, 1836–37): Ճառերն աչքի են ընկնում լեզվաոճական ար-

ժանիքներով, հռետորական ձևերի զուսպ, ճաշակավոր կիրարկմամբ:

Կաթողիկոս. գահին Զ. Ա Զ-ուն հաջորդել է *Գևորգ Բ Գառնեցին*:

Երկ. Ճառք, աշխատասիր. Պ. Անանյանի, Վնտ., 1995:

Գրկ. Պողարյան Ն., Հայ գրողներ, Երևան, 1971:

Հակոբ Քյոսեյան

ԶԱՔԱՐԻԱ Բ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻ (ծ. թ. անհտ – 1520), Ամենայն հայոց կաթողիկոս 1515-ից: Հաջորդել է *Սարգիս Գ Մյուսայլին*: Զ. Բ Վ-ու հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդվում:

Կաթողիկոս. գահին Զ. Բ Վ-ուն հաջորդել է *Սարգիս Դ Վրաստանցին*:

ԶԱՔԱՐԻԱ ՓՈՔՈՒՉՅԱՆ, Կաղզվանցի, խըլլը (1719–99, ամփոփվել է Կ. Պոլսի Գուրուչեշմեի եկեղեցում), Կ. Պոլսի հայոց պատրիարք 1773–81 և 1782–99-ին: Պայքարել է Կաթոլիկ և բողոքական եկեղեցիների ազդեցության դեմ: Այդ նպատակով 1778-ին հրավիրել է Ազգային ժողով, որը եվրոպ. տերություններին դեմ բողոքագիր է ներկայացրել սուլթան. կառավարությանը: Նրա պաշտոնավարության ընթացքում Մայր դպրատանը 1790-ին հիմնվել է տպարան, բացվել է Կ. Պոլսի առաջին թաղային վարժարանը Ֆըշըճի փողոցում (Գումգափուում): Ապա թաղային վարժարաններ են բացվել Պալաթում, Օրթագյուղում, Գուրուչեշմեում, Սամաթիայում: Զ. Փ-ի միջոցներով կառուցվել է Մայր եկեղեցու մեծ ավազանը, ապա՝ Գուրուչեշմեի Երևման Ս. Խաչ եկեղեցին, որի օծումը տեղի է ունեցել 1798-ին:

Ալվարդ Ղազիյան

ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ (1626, Քանաքեռ – 1699, Հովհաննավանք), պատմիչ, մատենագիր: 13 տարեկանում անդամագրվել է *Հովհաննավանքի* միաբանությանը, որտեղ և անցկացրել է իր ողջ կյանքը: Սովորել է Հովհաննավանքի վանական դպրոցում, աշակերտել առաջնորդներ Զաքարիա վրդ. Վաղարշապատցուն և Հովհաննես վրդ. Կարբեցուն: Իր ուսուցիչն է համարել նաև *Առաքել Դավրիժեցուն*, որին էջմիածնում օգնել է սրբագրելու «Գիրք պատմութեանց» աշխատությունը: Վանքի բարձրագույն դպրոցում սովորելուն զուգընթաց Զ. Ք. ուսուցչություն է արել նրան կից, մանուկների համար բացված դպրատանը: Հովհաննավանքում աշխատել է որպես դպիր, սարկավագ, ապա՝ սարկավագապետ: Եղել է կաթողիկոս *Հակոբ Դ Զուղայեցու* հավատարիմ գործակիցը, ուղեկցել նրան արտասահմանյան ուղևորությունների ժամանակ, հատուկ հանձնարարականներով այցելել Ղազվին (1675), Զմյուռնիա (1682), Կ.Պոլիս (1684) ևն: Հովհաննավանքի առաջնորդ Սարգիս վրդ. Կարբեցու հանձնարարությամբ 1687-ին գրել է «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննուվանից» աշխատությունը, որտեղ ներկայացրել է վանքի պատմությունը՝ հիմնադրումից մինչև իր օրերը: Հեղինակը ժամանակագր. կարգով ներկայացրել է վանքի առաջնորդների ճշգրտված ցանկը և մանրամասն անդրադարձել իր ժամանակի երեք նշանավոր առաջնորդների՝ Զաքարիա վրդ. Վաղարշապատցու, Հովհաննես վրդ. Կարբեցու և Սարգիս վրդ. Կարբեցու գործունեությանը: Երկում Զ. Ք. զետեղել է նաև վանքի վիմական արձանագրությունները, որոնց չնորհիվ ուսումնասիրությունը պատմագիտ. և հնագիտ. մեծ արժեք է ձեռք բերել: 1651-ին իր ընդօրինակությամբ կազմել է հայ պատմիչների երկերի ժողովածու, ապա ընդօրինակել Ավետարան, վերակազմել և նորոգել բազմաթիվ ձեռագրեր: Մատենադարանում է պահվում ձեռագրագիտ., հնագիտ. արժեքով լայն ճանաչման արժանացած, 1687-ին նորոգված «Մարտիրոսոգ Ճառընտիր» կոչվող ձեռագիրը:

1699-ին Զ. Ք. ավարտել է իր երկհատորանոց «Պատմագրութիւն» աշխատությունը, որն ընդգրկում է Հայաստանի պատմությունը պարթև և հայ Արշակունիների ժամանակներից մինչև 1699-ի դեպքերը: Այն եզակի սկզբնաղբյուր է հատկապես հեղինակի ապրած դարաշրջանի Հայաստանի և հարևան երկրների քաղ. ու տնտ. պատմության ուսումնասիրման համար: Որպես ժամանակակից և ականատես Զ. Ք. գրի է առել պատմ. նշանակություն ունեցող իրադարձությունները, նշանավոր դեմքերի հետ կապված անցուդարձերը, ժող. զրույցներն ու առասպելախառն ավանդությունները: Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրման համար կարևոր են Հայոց կաթողիկոսների գործունեության, հոգևորականության, վանքերի ու եկեղեցիների վիճակի մասին Զ. Ք-ու հաղորդած տեղեկությունները, աղանդավոր. շարժումներին (Մեխլուի և այլոց) վերաբերող դրվագները: Հեղինակն աշխատությանը կցել է «Հովհաննավան-

քի պատմությունը» (որպես երրորդ հատոր) և գործը ներկայացրել իբրև մեկ ամբողջություն: Գիրքը թարգմանվել է Ֆրանս. (1876) և ռուս. (1969):

Երկ. Պատմագրութիւն, հ.1–3, Վաղ-պատ, 1870:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ.4, Ե., 1970, էջ 525–530: Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի XIV–XVIII դարերի պատմագրության, Ե., 1984, էջ 132–161:

Էլեոնորա Հարությունյան

ԶԳԵՍՏ եկեղեցական, հանդերձ եկեղեցական, խորհրդաբանական իմաստ ունեցող, դեռևս Հին կտակարանով ավանդված քահանայական հանդերձանք: Ինչպես Ընդհանրական եկեղեցում, այնպես էլ նրա անքակտելի մաս կազմող Հայաստանյայց առաքելական եկեղեցում հնուց ի վեր գործածվել են եկեղեց. զանազան Զ-ներ, որոնք իրենց ձևով ու նշանակությամբ տարբերվել են աշխարհիկ հագուստներից:

Ավանդության համաձայն, Հայ եկեղեցու սպասավորների Զ-ների ձևը գլխավորապես վերցված է Կեսարիայի և Երուսաղեմի եկեղեցիներից, սակայն, ինչպես բնորոշ է Հայ եկեղեցուն, այդ Զ-ները պատշաճեցվել են հայ ոգուն՝ ստանալով ազգ. յուրահատուկ ձև ու տեսք:

Եկեղեց. Զ-ները դարերի ընթացքում ենթարկվել են մասնակի փոփոխությունների՝ ձևի կամ նյութի առումով, այնուհետև մնացել են անփոփոխ ընդհուպ մինչև մեր օրերը:

Հայ եկեղեցում գործածվող եկեղեց. Զ-ներն ըստ օգտագործման կերպի կարելի է բաժանել երկու տեսակի՝ ընդհանուր Զ-ներ և աստվածապաշտական Զ-ներ:

Ընդհանուր Զ-ներ. առօրյա կենցաղում գործածվող եկեղեց. Զ-ներ:

Սքեմ: Բոլոր ձեռնադրված և օծված, խորհրդակատար հոգևորականները՝ կաթողիկոսից մինչև սարկավագ, կրում են ամենօրյա միևնույն եկեղեց. Զ., որը վերարկու կամ սքեմ է կոչվում: Կարված է սև կտորից:

Վեղար: Կուսակրոն հոգևորականներին հատուկ գլխադիր է, գլխի քող, որով նրանք տարբերվում են կանամբի (ամուսնացյալ) քահանաներից: Վեղարը սրածայր է՝ գմբեթանման, ներսից նույն ձևով գլխանոց ունի, իսկ վրան՝ սև գույնի ասվե կտորից մի ծածկույթ, որը գլուխը ծածկելով իջնում է մինչև հոնքերը, իսկ մեջքի կողմից՝ մինչև գոտկատեղ:

Վեղարը գործածության մեջ է մտել հավանաբար XI դարից հետո, քանի որ մինչ այդ հայ մատենագիրներից ոչ մեկը չի ակնարկել վեղարի գործածության մասին:

Ամենայն հայոց հայրապետի վեղարի ճակատային մասի վրա ավելացվել է ադամանդակուռ խաչ: Սկսած Հովսեփ արք. *Արղությանից* վեղարի խաչը եղել է ռուսահայոց թեմի առաջնորդների մենաշնորհը, իսկ *Եփրեմ Ա Զորագեղցի* կաթողիկոսից սկսած, որպես Ռուսաց կայսրի շնորհած պատվո նշան, դարձել է Ամենայն հայոց կաթողիկոսների խորհրդանշանը և փոխանցվել ամեն նորընտիր կաթողիկոսի:

Վեղարի տվչության ժամանակ եպիսկոպոսն ընթերցում է հետևյալ աղոթքը. «Աստուած զգեցուցանէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ եւ ճշմարտութեամբ, եւ եղիցես դու հպատակ եւ հնազանդ Եկեղեցւոյ, կանխեալ ի սէրն Աստուծոյ հոգւով ի տուէ եւ ի գիշերի. ամէն» («Մաշտոց Ջեռնադրութեան»):

Փիլոն: Մարմինը փաթաթող և կրծքի վրա ճարմանդով ամրացվող սև կտավից կարված Զ. է: Գործածվում է ժամերգությունների և աստվածապաշտ. այլ արարողությունների ժամանակ: Ծայրագույն վարդապետները և եպիսկոպոսները (ինչպես և կաթողիկոսը) որպես պատվո նշան կրում են մանուշակագույն ծաղկյա, իսկ վարդապետները՝ սև ծաղկյա փիլոններ: Սև ծաղկյա փիլոնները, որպես պատվո նշան, հայրապետ. կոնդակով շնորհվում են նաև ավագ քահանաներին:

Աստվածապաշտական Զ-ներ. ծիսակատարությունների ժամանակ գործածվող եկեղեց. Զ-ներ.

Դպիրի, կիսասարկավագի եվ սարկավագի Զ-ներ.

Շապիկը, որ սրբության և անարատության խորհրդանշան է, կրում են և՛ դպիրները, և՛ կիսասարկավագները, և՛ սարկավագները: Այն մինչև կոշիկները հասնող և խաչանիշ ուսանոցով Զ. է: Կարող է լինել զանազան երանգների:

Ուրարը նեղ ու երկայն, մոտ 3 *մ* երկարությամբ և 10–12 *սմ* լայնությամբ գունավոր և ծաղկավոր երիզ է, որն ուրարակիրն ու սարկավագը կրում են իրենց ձախ ուսի վրա: Ուրարը սովորաբար ունենում է 3 խաչ. մեկը ուսի վրա՝ մեջտեղում, մյուս երկուսը՝ հետևից ու առջևից: Ձախ ուսին ուրար կրելը նշան է, ըստ որի՝ այդ կրոնավորը Քրիստոս Աստծո լուծը միայն կիսով չափ է իր վրա կրում և

տակավին կարողություն չունի ամբողջությամբ ստանձնելու:

Բազկուրարը ուրարի փոքր տեսակ է, որը կիսասարկավագը կրում է իր ձախ դաստակի վրա: Սա նշանակում է, որ նա դեռ ամբողջովին չի կարող իր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի լուծը:

Քահանայի, եպիսկոպոսի ՝ կաթողիկոսի Զ-ներ.

Հողաթափ: Ս. *Պատարագի* ժամանակ թե՛ պատարագիչը և թե՛ խորհրդակատարության ժամանակ նրան սպասարկող խոնարհ դասի աստիճանավորները ս. Խորան բարձրանում են հողաթափերով: Պատարագի ընթացքում, վերաբերումից առաջ, քահանան հանում է իր հողաթափերը: Պատարագչի հողաթափերի ներսի կողմը իժի ու քարբի կերպարանքներ են ասեղնագործված՝ ի խորհուրդ սաղմոսի հետևյալ խոսքերի. «Դու կքայլես իժերի ու քարբերի վրայով, ոտքով կկոխոտես առյուծին ու վիշապին» (Սաղմ. **90.**13):

Ի տարբերություն եկեղեց. այլ արարողությունների, Պատարագի ժամանակ քահանան, եպիսկոպոսն ու կաթողիկոսն զգեստավորվում են բոլորովին այլ՝ առավել շքեղ ու գեղեցկահյուս Զ-ներով, որպեսզի Տիրոջ սպասավորությունն ավելի շքեղ և փառավոր կատարվի:

Սաղավարտ: Գնդաձև, կերպասից ասեղնագործված կամ մարգարտազարդ գլխանոց է, որի գագաթին ամրացված է քառաթև փոքր խաչ: Սաղավարտի չորս բոլորը պատկերված են Քրիստոսի փրկագործական տնօրինության չորս գլխ. դեպքերը (Ծնունդ, Մկրտություն, Հարություն, Համբարձում): Սաղավարտի գործածությունը վերցված է Հին ուխտի եկեղեցուց: Այն խորհրդանշում է նաև Հիսուս Փրկչի կրած փշե պսակն ու վարշամակը: Պատարագի ժամանակ սաղավարտը գործածվում է որպես զրահ՝ սատանայական զորության դեմ պատերազմելու: Հայ եկեղեցում Պատարագի ժամանակ սաղավարտը գործածում են քահանաներն ու վարդապետները:

Շապիկ: Ի տարբերություն խոնարհ աստիճանավորների գործածած շապիկների, Պատարագի ժամանակ բարձրաստիճան եկեղեցականներն օգտագործում են առանց ուսանոցի, ճերմակ կտավից, մինչև հողաթափերը հասնող շապիկներ: Ճերմակ գույնը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի անարատ Ծնունդը և անմեղ ու մաքրամաքուր կյանքը, նաև՝ Տիրոջ Հարությունն ավետող հրեշտակի սպիտակաթույր հանդերձը:

Փորուրար: Ուրարի կրկնակի լայնքով ասեղնագործված Զ-ի մաս է, որը ծածկում է հոգևորականի կուրծքը սպիտակ շապիկի վրայից: Երկարությունը մարդահասակ է, վերնամասով՝ կլոր, գլխից հագնելու համար: Փորուրարը խորհրդանշում է այն ծանր լուծը, որ քահանան ամբողջապես առնում է իր ուսերի վրա. «Իսկ քահանայիցն եւս քան զնոսա գերազանցութիւն, զի երկու ուսովքն զնոյնն բառնայ զքաղցր տէրունական լծոյն ապացոյցն...» (Ներսես Լամբրոնացի):

Գոտի: 5–7 *սմ* լայնություն ունեցող ամուր և գեղեցկահյուս կտորից ժապավեն է, որն առջևից ամրանում է ակնազարդ կամ մարգարտապատ զույգ ճարմանդով: Գոտու գործածությունը ևս վերցված է Հին ուխտից: Գոտի կրելու իրավունքը քահանայական աստիճան ունեցողների մենաշնորհն է: Պատարագիչը գոտին կապում է փորուրարի վրայից: Գոտին միևնույն ժամանակ Հիսուս Քրիստոսի ողջախոհության խորհուրդն ունի:

Թաշկինակ: Գոտու հետ պատարագիչ քահանան կրում է նաև թաշկինակ (սրբիչ), ղենջակ, որը հիմնականում ծառայում է պատարագչի ձեռքերը և սկիհը լվացումից հետո չորացնելու համար:

Բազպաններ: Զույգ կարճ թևնոցներ են, որոնք կոճկվում են պատարագիչ եկեղեցականի դաստակների վրա: Բազպանները Զ-ի առանձին մասեր լինելով հանդերձ՝ կարվում են Զ-ի կերպասից (այսինքն՝ այն կտորից, որից կարվել են փորուրարը, շուրջառը, գոտին): Բազպանների հիմն. նպատակը պատարագչի շապիկի թևերի ծայրերը հավաքելն է:

Վակաս (վարշամակ): Պատարագչի ուսանոցն է, որը կիսաբոլորակ ձևով պատում է քահանայի պարանոցը՝ թիկունքի կողմից: Վակասի վրա ընդհանրապես ձուլված կամ ասեղնագործված են լինում 12 առաքյալների պատկերները, իսկ դրանց մեջտեղում՝ Հիսուսի՝ Աստծո Գառան պատկերը: Վակասը ևս վերցված է Հին ուխտից: Խորհրդանշում է մոլորյալ ոչխարին, իմա՝ մոլորյալ մարդկությանը, որին Քրիստոսն իր ուսերի վրա առնելով՝ դեպի փրկություն և հավիտենական կյանք առաջնորդեց: Վակասը միևնույն ժամանակ հավատացյալներին հիշեցնում է Հիսուս Փրկչի քաղցր լուծը և թեթև բեռը:

Շուրջառ (նափորտ): Փիլոնաձև, անթև և գեղեցկահյուս վերարկու է, որը, ամբողջ հասակը ծածկելով, առջևից կրծքի վրա ամրանում է մետաղե զույգ ճարմանդով: Գործածվում է Պատարագի, սրբազան խորհուրդների կատարման, նախատոնակների, թափորի և Ավետարանն ընթերցելու ժամանակ: Խորհրդանշում է աստվածային շնորհների այն զրահը, որով պատարագիչը պատսպարվում է չարի նետերից և հարձակումներից:

Եպիսկոպոսական Զ-ներ: Եպիսկոպոսը բացի քահանայական Զ-ներից կրում է նաև սաղավարտի փոխարեն խույր կամ թագ, արտախուրակներ, եմիփորոն և *գավազան*:

Խույր կամ թագ: Խույրը գեղեցկահյուս, նկարազարդ ու գոհարազարդ, երկու տափակ երեսներից բաղկացած թագ է: Գլխին դնելիս վերևի սրածայր մասերը բացվելով՝ կազմում են երկճղի խույր: Յուրաքանչյուր ծայրին ամրացված է մեկական փոքր խաչ: Խույրը հատուկ է եպիսկոպոսին ու կաթողիկոսին: Հայ եկեղեցում սկսել է գործածվել XII դարից:

Արտախուրակներ: Խույրի հետևից կախված երկու երկար կապեր են, որոնք խույրը գլխին ամուր պահելուն են ծառայել, սակայն հետզհետե վերածվել են զարդարանքի: Այժմ արտախուրակները 50 *սմ* երկարությամբ և 6 կամ 7 *սմ* լայնությամբ, ներքևի կողմն ավելի լայն, խույրի նմանությամբ պատրաստված երկու կտորից զարդեր են, որոնք կախվում են վակասից՝ թիկունքի կողմից:

Եմիփորոն: Լայն ուսանոց-ուրար է, որը հետևից և առջևից ծածկում է եպիսկոպոսի կամ կաթողիկոսի կուրծքն ու թիկունքը, իսկ եմիփորոնի ծոպավոր ծայրերը հասնում են մինչև շուրջառի ծայրերը: Եմիփորոնը խորհրդանշում է եպիսկոպոսի կամ կաթողիկոսի ամբողջապես խաչված լինելը իրենց հինգ զգայարաններով, մեղքերի և աշխարհիկ ցանկությունների համար մեռնելը և միայն Քրիստոսի խաչն իրենց անձերում կրելը:

Հայրապետական Զ.: Ամենայն հայոց կաթողիկոսը, բացի քահանայական և եպիսկոպոսական Զ-ներից, գործածում է նաև կաթողիկոսին հատուկ հանդերձանքի մի զարդ՝ կոնքեռը:

Կոնքեռ: Ոսկեթել զարդ է՝ տարանկյուն զուգահեռագծի ձևով՝ ասեղնագործված կամ ընտիր կերպասից պատրաստված: Կոնքեռի վրա ավանդաբար ասեղնագործվում է խաչակիր մի գառնուկ, որը Աստծո Գառի՝ Հիսուս Քրիստոսի խորհուրդն ունի:

Կոնքեռի երեք անկյուններում կան փոքր ծոպեր, իսկ չորրորդ անկյունից նեղ երիզով կախվում է հայրապետի գոտուց՝ ձախ մասում՝ «որպէս հովուական մախաղ, կամ ի նշան ղենջակին Յիսուսի, կամ բոցեղէն սրոյ սրովբէին»:

Նվիրական առարկաներ: Որպես պատվո նշան քահանայական կարգ ունեցողներին շնորհված իրեր:

Մատանի: Հայ եկեղեցում մատանու գործածությունը գալիս է շատ հնուց: Մատանին ձեռնադրության ժամանակ տրվում է նորընծա եպիսկոպոսին՝ իբրև Ս. եկեղեցու հետ փեսայացման խորհրդանիշ: Նաև իշխանության նշան է: Եպիսկոպոս. մատանին լինում է ոսկեօղակ՝ զարդարված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Եպիսկոպոսները մատանի կրում են աջ ճկույթին, իսկ կաթողիկոսը՝ աջ ձեռքի մատնեմատին:

Լանջախաչ: Եկեղեցականներին կաթողիկոսի կողմից շնորհված պատվո նշան է: Լինում է քահանայական և վարդապետական: Քահանայականը պարզ, ոսկեզօծ, արծաթե խաչ է, 10 *սմ* երկարությամբ, զարդարուն, որը ոսկեզօծ շղթայով կախվում է պարանոցին: Վարդապետականը նույն մեծությամբ մի խաչ է, որի մեջ խաչելության պատկեր կա: Լանջախաչն իրենց պարանոցին քահանաներն ու վարդապետները կրում են տոնական և հանդիսավոր օրերին:

Պանակե: Հիմնականում լինում է բոլորակի ձևով: Օգտագործում են եպիսկոպոսներն ու կաթողիկոսը՝ շղթայով իրենց կրծքին կրելով: Պանակեների կենտրոնում լինում է Աստվածածնի կամ որևէ Տնօրինական դեպքի պատկերը՝ զարդարված կիսաթանկարժեք և հասարակ քարերով:

Ձեռաց խաչ: Սովորական խաչ է, որը, սակայն, ներքևի կողմից մի քիչ երկար բռնակ ունի: Քահանայական աստիճան ունեցողներն օգտագործում են աստվածապաշտ. արարողությունների, ծիսակատարությունների և եկեղեց. հանդիսությունների ժամանակ:

Պատկերազարդումը տես ներդիր V-ում, 5.7, 1–5-րդ, 5.8, 1–5-րդ և ներդիր VI-ում, 6.1, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ..., Վնտ., 1847: Հովհաննես Արճիշեցի, Մեկնություն պատարագի, Ս. Էջ-

միածին, 1999: Կարգ Աստուածապաշտութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Թ., 1907: Հացունի Վ., Պատմութիւն հին հայ տարազին, Վնտ., 1924: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Եղիշե ավ. քհն. Մարգսյան
Արթուր Կարապետյան

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ, Զենոբ Գլակ Ասորի, Զենոբ Ասորի (ծ. և մ. թթ. անհտ), IV դ. պատմիչ: Կապադովկիայի Կեսարիա քաղաքից Հայաստան է եկել *Գրիգոր Ա Լուսավորչի* հետ: Ձեռնադրվել է Մամիկոնյան նախարարության տիրույթ Տարոնի եպիսկոպոս և Ինանկնյան կամ Ս. Կարապետ վանքի (հետո նրա անունով կոչվել է նաև Գլակավանք) վանահայր: Իր «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը գրել է Գրիգոր Ա Լուսավորչի հանձնարարությամբ, ասորերեն կամ հունարեն: Այն հայերեն թարգմանել և իր Պատմությանն է կցել VII դ. պատմիչ Հովհան Մամիկոնյանը: Դա հիմք է տվել որոշ ուսումնասիրողների (Գ. Խալաթյան և ուր.) Զ. Գ-ին համարելու VII դ. պատմիչ:

Զ. Գ. իր աշխատության մեջ պատմում է Հայաստանում քրիստոնեության տարածման, հեթանոս. մեհյանների կործանման և քրիստ. եկեղեցիների հիմնադրման մասին: Որպես ականատես՝ նա մանրամասն նկարագրում է Տարոնի իրադարձությունները, հատկապես Տարոնի քրմապետ Արձանի, նրա որդի Դեմետրի համառ կռիվները Գրիգոր Ա Լուսավորչի ու նոր կրոնի կողմնակիցների դեմ:

Զ. Գ-ի աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Կ. Պոլսում, 1719-ին: Ֆրանս. թարգմանել և հրատարակել է (1867) Վ. Լանգլուան:

Երկ. Պատմութիւն Տարօնոյ, Ե., 1941:

Գրկ. Խալաթյան Գ., Զենոբ Գլակ. Համեմատական ուսումնասիրութիւն, Վնն., 1893: Հովհաննիսյան Մ., Զենոբ Գլակ. հանդէպ արդիական քննադատութեան, ԿՊ, 1912:

ԶՄՄԱՌԻ ՎԱՆՔ, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութից 30 *կմ* հյուսիս-արևելք, Քեսրուանի լեռան լանջին: Հայ կաթողիկե պատրիարքության աթոռանիստը: Հիմնադրվել է 1749-ին: 1750–51-ին կառուցվել են վանքի առաջին խցերը, Վեհարանը, մատուռը, 1771-ին՝ ջրհորը և Ս.Աստվածածին եկեղեցին, որի երկայնական պատերին մոտ դրված սյուների վրա բարձրացող գմբեթը զարդարված է Հռոմից 1780-ական թթ. բերված 12 առաքյալների յուղանկարներով: Պատերին չորս ավետարանիչների նկարներն են, որոնցից առավորիչ է Հովհաննես ավետարանիչի պատկերը (1785, նկարիչ՝ Վինչենցո Միլոնե): Ավագ խորանին Տիրամոր Վերափոխման մեծադիր կտավն է (1780, նկարիչ՝ Պիետրո Լաբրոցցի): XVIII–XIX դդ. Ավագ խորանի առջև թաղված են Հայ կաթողիկե եկեղեցու հինգ կաթողիկոս-պատրիարքներ: Աղոթասրահի հս. և հվ. պատերին Գրիգոր Ա Լուսավորչին և Հովսեփին նվիրված խորաններն են: Հս-արլ. սյան առջև սև էբոնիտից քանդակազարդ պատրիարքական դահն է: 1783-ին կառուցվել է վանքի հյուրանոցը, 1791-ին՝ ժառանգավորաց վարժարանի երկհարկանի շենքը, 1799–1810-ին՝ քարոզիչների խցերը: 1802-ին կայծակից կործանվել է Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը, որը նույն տարում նորոգվել է ավելի փոքր ծավալով և պարփակվել եկեղեցու երկթեք տանիքի տակ:

1834-ին կառուցվել է վանքի սեղանատունը: 1867-ին պատրիարքական աթոռը Զ. վ-ից տեղափոխվել է Կ.Պոլիս (1929-ից կրկին հաստատվել Զ. վ-ում): 1901-ին կառուցվել է վանքի բարձր, սլացիկ զանգակատունը, 1908-ին՝ մեծ դահլիճը: Առաջին համաշխ. պատերազմի տարիներին Զ. վ-ում տեղակայվել է թուրք. զորամաս, որը կողոպտել է վանքը: Այստեղ պահվող ձեռագրերը փրկելու համար թաքցրել են մարոնիտ Մար Շալլիթայի վանքում, սակայն խցերի խոնավությունից շատ մագաղաթներ փչացել են: Մեծ եղեռնի ժամանակ նահատակվել է վանքի 15 միաբան: Զ. վ. ապաստան է տվել Կիլիկիայից տարագիր 400 որբի, սատարել Լիբանանում հաստատված բազմահազար հայ գաղթականների:

1940-ին կառուցվել է Զ. վ-ի Ս. Յավագին Տիրամոր մատուռը, որի սեղանին զետեղվել է Ս. Աստվածածին եկեղեցուց տեղափոխված Տիրամոր սրբապատկերը: Մատուռն օծել է Գրիգոր-Պետրոս ԺԷ կաթողիկոս-պատրիարքը (կարդինալ Գ. Աղաջանյան): 1945-ին Ս. Աստվածածին եկեղեցին նկարազարդել է Հ. Կալենցը: 1946-ին նորոգվել է եկեղեցին, կառուցվել միաբանների դամբարանը, որը 1948-ին պսակվել է Հարուցյալ Հիսուսի արձանով: 1961-ին կառուցվել է վարժարանի նոր շենքը, 1963-ին՝ թանգարանը, 1975-ին զանգակատան գագաթին դրվել է հայաոճ, սյունազարդ գմբեթ: 1976-ին Զ. վ-ի մոտ կառուցվել է վանքի կազդուրման կայանը, 1979-ին Զ. վ. ամբողջովին նորոգվել

է: Վանքը տարբեր վայրերում բազմաթիվ կալվածքներ ունի:

Զ. վ-ի մատենադարանում պահվում է ձեռագրերի հարուստ հավաքածու (շուրջ 1500 ձեռագիր, որոնցից 1300-ը՝ հայերեն, շատերը՝ մանրանկարներով): Զ.վ-ի հավաքածուն առանձնապես հարուստ է Տաղարաններով ու Բժշկարաններով: Այստեղ են պահվում Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հնագույն ձեռագիրը (1240), «*Գիրք թղթոցի*» միակ օրինակը (1288) ևն: Զ. վ-ում է Մերձավոր Արևելքի հայկ. ամենախոշոր գրադարանը՝ մոտ 30 հզ. կտորով, հայկ. առաջին տպագիր գրքերից մինչև Հայաստանի Հանրապետության նորագույն հրատարակությունները: Զ. վ-ի թանգարանում գտնվում են Հայաստանի հետ աղերս ունեցող բազմաթիվ ցուցանմուշներ՝ նախապատմ. ժամանակներից մինչև XX դ.: Հատկապես հարուստ է դրամագիտ. բաժինը: Եկեղեց. իրերի բաժնում կան կիրառ. արվեստի արժեքավոր գործեր՝ Ավետարանների արծաթե հին պահպանակներ և մասնատուփեր, սաղափե, փղոսկրե վարդապետ. գավազաններ, լանջախաչեր, ասեղնագործ շուրջառներ, մարգարտաշար թագեր և արծաթե սաղավարտներ, սկիհներ, մեղալիոններ ու չքանշաններ, իտալ. գեղանկարչության կտավներ, սրբապատկերներ ևն:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.2, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Կ ա ն ջ յ ա ն Ա., Զմմառ դարերու ընթացքին, [Բեյրութ, ա.թ.]:

Մուրադ Հասրաթյան

ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, պ ա տ ա ր ա գ, ընծա, ողջակեզ, առ Աստված նվիրումի, խոստման, ուխտի, ակնկալիքի, տուրքի կամ սրբագործման արտահայտություն: Ծննդոց գրքում հիշատակվում են Աբելի (**4**.3–4), Նոյի (**8**.20–21), Աբրահամի (**22**.1–13) կատարած Զ-ները: Հին կտակարանն առանձնացրել է Զ-յան կամ ողջակեզի տեսակներ՝ տարբեր նպատակների համար. Զ.՝ մեղքի թողության համար (մեղքի ողջակեզ), Զ.՝ խաղաղության համար (խաղաղության Զ. կամ ընծա), Զ.՝ գոհության համար (գոհության Զ. կամ պատարագ), Զ.՝ ողորմության համար, Զ.՝ զատկական, Զ.՝ մաքրագործության համար ևն: Ընդ որում զոհաբերվել կամ ընծայվել են ոչ միայն անարատ կենդանիներ (այծ, գառ, արջառ, թռչուն ևն), այլև հաց (հացի ընծա), ալյուր (ալյուրի ընծա), պտուղներ ևն: (Տես Ելք **12**.27, Ղևտ. **1**.3, **2**.4, **3**.3, **5**.15, **7**.37, Սաղմ. **39**.7 ևն):

Հիշյալ ընծայումները կամ Զ-ները խորհրդանշել են գալիք Մեսիայի՝ Հիսուս Քրիստոսի պատարագվելը և հակադրված էին կուռքերին կամ դևերին նվիրված Զ-ներին և մարդաղոհությանը:

Հիսուս Քրիստոսի՝ Գողգոթայի խաչի վրա պատարագումով նոր՝ քրիստոնյա մարդու համար ավարտվեց զոհաբերությունն ու զոհի մատուցումը: Հին Զ-յանը ինչ-որ ձևով փոխարինել է *մատաղը*, որը Հայ եկեղեցին ընդունում է ոչ իբրև Զ., այլ ողորմություն աղքատներին կամ հոգու հաց, որը հնում կոչվել է նաև *ագապե* (սիրո ճաշ):

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.2, 4–5-րդ պատկերները:

Լևոն Սարգսյան

ԶՈՀՐԱՊՅԱՆ Հուսիկ [1871, գ. Մեծ Սալա (այժմ՝ ՌԴ Ռոստովի մարզում) – 23.10.1942, Բուխարեստ], արքեպիսկոպոս, մանկավարժ, պատմաբան: Աստվածաբանության դ-ր: Սկզբ. կրթությունն ստացել է Մեծ Սալայի ծխական, ապա՝ թեմական դպրոցում: Ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Լայպցիգի համալսարանի պատմափիլ. ֆակ-ը (1900) և Մոսկվայի համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1916): 1894-ից՝ Ս. Էջմիածնի միաբանության անդամ, 1900-ին ձեռնադրվել է վարդապետ, 1924-ին՝ եպիսկոպոս, 1932-ին՝ ստացել արքեպիսկոպոսության պատիվ: 1900–04-ին՝ ս. Սինոդի քարտուղար, 1904-ին՝ Քիշնևի վիճակային Ատյանի անդամ, 1904–05-ին՝ կաթողիկոս. դիվանի, 1905–13-ին՝ Մայր աթոռի դիվանապետ, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական դպրոցի տեսուչ: 1905–12-ին դասավանդել է Գևորգյան, 1913–17-ին՝ Լազարյան ճեմարաններում, 1922–40-ին՝ Բուխարեստի հայոց վարժարանում: 1913–18-ին՝ Մոսկվայի և Պետրոգրադի հայկ. եկեղեցիների հոգևոր հովիվ, 1918–20-ին՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, 1920–1942-ին՝ Ռումինիայի հոգևոր թեմերի առաջնորդ: Զ. մասնակցել է Ռումինիայի հայոց թեմի կազմավորման գործին, թեմական կանոնադրության (կառավարությունը վավերացրել է 1931-ին) մշակմանը: Կարևոր դեր է խաղացել գերմանացիների ծրագրած՝ ռումինահայերի արտաքսումը կանխելու գործում:

Հեղինակ է «Հայոց եկեղեցու պատմություն» (1934) ռումիներեն մենագրության,

որտեղ շարադրել է առաքելական քարոզչությունից մինչև *Խորեն Ա. Մուրադբեկյանի* ժամանակներն ընկած Հայ եկեղեցու համառոտ պատմությունը: Արժեքավոր են նաև նրա հուշերը *Մկրտիչ Ա. Վանեցի* (Խրիմյան) կաթողիկոսի մասին («Էջմիածին», 1971, № 2) և ռուսինական ու ռուսինահայ պարբ. մամուլում տպագրած հոդվածները Հայ եկեղեցու բարեկարգման, հայ նշանավոր հոգևոր-եկեղեց. գործիչների մասին:

Երկ. Istoria Biserici Armenie, Bucarest, 1939.

Գրկ. «Նոր կյանք», Բուխարեստ, 1992, № 12:

Աղավնի Ութուջյան

ԶՈՎՈՒՆՈՒ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի արհեստական ջրամբարի կղզում (1962–67-ին ջրամբարի շինարարության պատճառով տեղափոխված Զովունի գյուղի արևելյան եզրի բարձունքի վրա): Կառուցվել է V դ., որպես բազիլիկ: VI դ. 1-ին քառորդում իշխան Գրիգոր Գնթունին այն վերակառուցել է ներսից՝ պայտաձև, դրսից ուղղանկյուն խորանով գմբեթավոր եկեղեցու՝ երկայնական պատերին հզոր գմբեթակիր որմնամույթեր կցելով: Զ. Ս. Պ-Պ. ե. հայ ճարտ-յան մեջ եկեղեց. շենքի նոր տիպի՝ գմբեթավոր դահլիճի առաջին օրինակն է: Հիմնովին վերանորոգվել է 1896-ին: XX դ. քանդվել են ծածկը և հվ. պատը: Նրա արլ. կողմի IV–V դդ. Թուխ Մանուկ միանավ եկեղեցին և հվ. կողմի V դ. Ս. Վարդան մատուռ-դամբարանը ջրամբարի կառուցման պատճառով 1965–1967-ին տեղափոխվել են բարձրադիր վայր:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.3, 1-ին պատկերը:

Գրկ. Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, Ե., 1942: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. 3, Նյու Յորք, 1944: Սահինյան Ա., Զովունիի ճարտարապետական խումբը, ԼՀԳ, 1968, № 1:

Մուրադ Հասրաթյան

ԶՈՐԱԴԻՐԻ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, Զորադիրի Ս. Էջմիածին, Սորադիրի Ս. Էջմիածին, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Մեծ Աղբակ գավառում, Մեծ Զաբ (Աղբակ) գետի վերին հոսանքի շրջանում, *Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանքի* մոտ: Նույնացվում է Արծրունիների տոհմ. տապանատան՝ Աղբակի Ս. Խաչ եկեղեցու հետ: Երբեմնի վանքային համալիրի մաս կազմող Զ. Ս. Է. ե., ըստ ավանդության, կառուցել է Ս. Բարդուղիմեոս վանքի ճարտարապետի սանը (VI դ. 1-ին կես): Վաղքրիստ. շրջանի քառախորան, երեք քառորդ հատվածքի անկյունախորշերով կենտրոնագմբեթ կառույցներից է՝ Ավագ խորանի երկու կողմերի ավանդատներով: Արմ. կողմում նույնատիպ սենյակներ չկան, և անկյունային խորշերն արտաքուստ արտահայտված են եռանիստ ծավալներով: Արլ. ճակատը մշակված է զույգ «հայկ. խորշերով»: Ներսում որմնասյուների խոյակները զարդարված են բուս. ոճավորված քանդակներով: Ըստ մուտքի ճակատի արձանագրության, 1682-ին Մահտեսի Սարոյի բարերարությամբ վերակառուցվել են երկու զույգ խաչվող կամարներով խոշոր, խորանարդաձև ծավալով գմբեթը և արմ. դռան շքամուտքը:

Գագիկ Արծրունի թագավորի պատվերով, *Մանուել* ճարտարապետը Զ. Ս. Է. ե-ու հորինվածքով կառուցել է *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցին (X դ.)՝ դրանով խորհրդանշելով Արծրունյաց թագավոր. տան հնավանդությունը և Վասպուրականի ճարտ. դպրոցի նվաճումների շարունակականությունը:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.3, 2-րդ պատկերը:

Գրկ. Մելիքսետ-Բեկ Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մաս 2, ԿՊ, 1885: Բրեչչիա Ֆրատադոկի Տ., Զորադիրի Սբ. Էջմիածին եկեղեցին, Ե., 1986: Cuneo P., L'église de Saint-Etchmiadzine á Soradir dans le Vaspurakan, "Revue des études arméniennes", t. V, P., 1968; Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԶՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, տես *Երևանի Ս. Անանիա առաքյալ* անապատ:

ԶՈՐԱՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղի արևելյան եզրին: Ըստ արլ. պատի շին. արձանագրության՝ կառուցել է Սյունյաց Ստեփանոս Տարսայիճ եպիսկոպոսը XIV դ. 20-ական թթ.: Եկեղեցին ունի հայկ. ճարտ. մեջ եզակի հորինվածք. բաղկացած է միայն խորանից և երկու ավանդատնից: Աղթասրահին փոխարինում է եկեղեցու առջևի պարսպապատ հրապարակը: Ենթադրվում է, որ Զ. Ս. Ա. ե. ծառայել է պատերազմ մեկնող զորքերի համար. հայկ. եկեղեցու կանոնների համաձայն, ժամասացություն թույլատրվում է միայն անշարժ պատա-

ԶՎԱՐԹՆՈՑ

բազմամատույց սեղանի առկայությամբ: Զ. Ս. Ա. ե-ու շուրջը XIV դ. տապանաքարեր են: 1977-ին նորոգվել է եկեղեցու արմ. ճակատը:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Վայոց ձոր. նշանավոր վանքեր, Աշ, Թ., 1916, գիրք 26: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Թամանյան Յու., Քարե տարեգրության վերականգնումը, Ե., 1981: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ԶՎԱՐԹՆՈՑ, Զվարթնոցի տաճար, Վաղարշապատի Ս. Գրիգոր եկեղեցի, Առապարի Ս. Գրիգոր, Էջմիածին (Վաղարշապատ) քաղաքից 3 *կմ* հարավ: Պատմիչների վկայությամբ և ըստ պահպանված հուն. արձանագրության, Զ. կառուցել է *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսը, որի Տայքում գտնվելու տարիներին (653–659) չին-յունը շարունակել է նրա փոխանորդ *Անաստաս Ա Ակռեցին*: Ըստ *Մովսես Կաղանկատվացու*, Զ. օծվել է 652-ին: Տաճարը «Զվարթնոց» է անվանել VII դ. պատմիչ *Սեբեոսը*, ըստ նրա, այստեղ են հանդիպել *Տրդատ Գ Մեծը* և *Գրիգոր Ա Լուսավորիչը*: Զ. կանգուն է եղել մինչև X դ. վերջը և, հավանաբար, ավերվել է երկրաշարժից: Տաճարի հողածածկ ավերակների պեղումները կատարվել են (1901–07) Խաչիկ վրդ. Դաղյանի նախաձեռնությամբ, 1904-ից գիտ. ղեկավարը եղել է Թ. *Թորամանյանը*:

Պեղումներով հայտնաբերվել են հնագույն և IV–V դդ. կառույցների մնացորդներ, ուրարտ. Ռուսա Բ թագավորի սեպագիր արձանագրությամբ կոթող, տաճարն ու նրանից հվ-արմ. գտնվող կաթողիկոս. պալատի համալիրը, ոչ հեռու, հվ-արլ. մասում՝ քարաշեն խաղողի հնձան ևն: Անաղարտ պահպանվել են տաճարի հատակը, այուների խոյակները, բեկվածքավոր որմնակամարներ, քանդակազարդ արևի ժամացույց, խճանկարի, որմնանկարի մնացորդներ և այլ մանրամասներ:

Զ. կառուցվել է յոթաստիճան բազմանիստ պատվանդանի կենտրոնում: Ըստ Թ. Թորամանյանի վերակազմության (1905), տաճարն արտաքուստ եռաստիճան, հաջորդաբար նվազող երեք գլանային (բազմանիստ) ներդաշնակված ծավալների միասնական հորինվածք է: Ըստ կառուցվածքի, կենտրոնակազմ դմբեթավոր շինություն է, որի ծավալատարած. հորինվածքի կորիզը քառակոնքն է՝ ստորին աստիճանում ընդգրկված երկհարկ պարարկյալ սրահով: Քառակոնքի խորանները (ստորին մասում՝ կամարակազմ) միմյանց ներդաշնակվում են բարդ կտրվածքի 4 զանգվածեղ մայր մույթերով, որոնք վերին՝ կապող 4 կամարների ու առագաստների հետ կազմում են դմբեթակիր միաձույլ համակարգ: Մայր մույթերի դիմաց (պարարկյալ սրահում) տեղադրված են 4 միակտուր խոշոր այուներ (տրամագիծը՝ 0,8 *մ*, բարձր.՝ մոտ 2,25 *մ*)՝ պսակված թևատարած արծվաքանդակ խոյակներով, թաղակամարներով կապված մայր մույթերին:



Զվարթնոց տաճարի հատակագիծը

Տաճարի 5 շքամուտքերը տեղադրված են հս., հս-արմ., արմ., հվ-արմ., հվ. շառավղային առանցքներով: Ընդհանուր 112 պատուհանից 80-ը (համաքանդակ են նիստերին)՝ վերգիդ համաչափությամբ, կիսաշրջան ավարտով, ներառված են որմնային այուն-կամարակազմ խորաններում, 32-ը (լուսավորել են սրահի երկրոդ հարկը)՝ բոլորակ-քանդակազարդ պսակների մեջ: Անկասկած հվ. մասում է տեղադրված եղել արևային բոլորակ-ժամացույցը:

Առաջին ծավալային աստիճանի խորանաշարի վերին մասը պարագծով ընդգրկող քանդակազարդ գոտին պարունակում է խաղողի որթ ու նռնազարդ ճյուղեր, ռիթմիկ տեղադրված 32 խոշոր ծավալային նուռ, որմնակամարների հանդիպման անկյուններում՝ հոգևոր և աշխարհիկ (քարգործ վարպետների) անձանց 32 բարձրաքանդակ (պահպանվել են 9-ը)՝ արված որոշակի ընդհանրացմամբ ու ազատ հորինվածքով: Տաճարն ընդգրկող զարդագոտիների համակարգում ամենաարտահայտիչ հորինվածքային տարրերից է բոլորակ պատուհանների պսակազարդ պատը:

Զ-ի ուղղաձիգ և հորիզոն. առանցքների հարաբերությունը փոքր է (5:4, բարձր.՝ մոտ 45 *մ*, ստորին ծավալի տրամագիծը՝ 35,78 *մ*), սակայն եռաստիճան ծավալի համաչափության ուղղաձիգ առանցքով զարգացող ռիթմական կարգը կերպարին հաղորդում է հարաճուն վերսլացություն: Տաճարի ներսում խոյակների

թեւատարած արծիվները, որմնասյուների ռիթմը, խոյազարդ սյունակազմ խորանների պատը, մույթերի սլացքը, բարձրադիր լուսաշող գմբեթը ողջ դեկորի հետ ստեղծում են նույն վերսլացությունը: Սակայն տաճարի դինամիկան անսասան սլացք չէր դեպի վեր, այլ՝ հավասարակշռված, հանդարտ ու սահուն վերելք: Զ-ի եռաստիճան ծավալը ամբողջական ձև է, որի արխիտեկտոնիկ կերպարը ներդաշնակ է կառույցի տարածական տեկտոնիկ համակարգին:

Զ-ի կոթողային կերպարը Ներսես Գ Տայեցին մտահղացել է որպես հուշարձան՝ աստվածաշնչյան Արարատի համայնապատկերում: Իր գործառնական առումով լինելով տաճար և ամփոփելով Գրիգոր Ա Լուսավորչի մասունքները՝ հուշարձանը որպես հիմք և պատվանդան պետք է կրեր քրիստոնեության խորհրդանշանը՝ խաչը: Տպավորիչ համաչափություններով ընդհանուր հորինվածքը, կուռ համակարգված կոմպոզիցիոն տարրերն ունեցել են որոշակի նպատակադրում՝ ստեղծել տարբեր դիտակետերից միատեսակ ընկալվող և ներգործող արխիտեկտոնիկ կերպար: Զ-ի համայնապատկերում գերիշխել են Հայկական պարն ու Մասիսը, Հռիփսիմեի տաճարը (618), հեռվից նշմարվել է Ս. Էջմիածինը:

Մեզ հասած հայկ. ճարտ-յան կոթողներից զվարթնոցատիպ են Ներսես Գ Տայեցու կառուցած Իշխանի և Բանակի եկեղեցիները (VII դ.), Աղվանքում՝ Լյակիթի եկեղեցին (VII դ.), Անիում՝ *Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցին*: Հետագա դարերում հայկ. ճարտ-ը մեծապես կրել է Զ-ի ազդեցությունը: Տաճարը վաղ միջնադարյան հայկ. չին., դեկորատիվ արվեստների, քանդակագործության նվաճումների համրագումար է, հայկ. մշակույթի ընդհանուր զարգացման արգասիք: 1980–90-ական թթ. վերականգնվել են խորանների սյունաշարերը, արծվախոյակ սյունները, առաջին աստիճանի պատերի ստորին մասը: 1999-ի մայիսի 2-ին, Մեսրոպ արք. Աշճյանի ղեկավարությամբ, Զ-ի կենտրոնում գտնվող մկրտության ավազանում, 11 դար հետո առաջին անգամ կատարվել է «Հավատք և ժառանգություն» շարժման՝ Հայաստանի և Արցախի վանքերի բարեկարգման աշխատանքների մասնակից պատանիների մկրտությունը:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.3, 4–6-րդ պատկերները:

Գրկ. Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Մարուքյան Տ., Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Ե., 1963: Մնացականյան Ս., Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Ե., 1971: Թորամանյան Թ., Զվարթնոց, Գագկաշեն, Ե., 1984:

Արա Ստեփանյան



Է

ԷԿՈՒՄԵՆՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, էկումենիզմ (հուն. էյկումեն բառից, նշանակում է ամբողջ տիեզերքը, էկումենիկ – տիեզերական), քրիստոնեական եկեղեցիների միավորման շարժում: V դ. *Քաղկեդոնի ժողովից* հետո սկիզբ առած *Ընդհանրական եկեղեցու* պառակտումը, XI դ. Հույն և Հռոմի եկեղեցիների բաժանումը, XVI դ. Ռեֆորմացիայի արդյունքում ավետարանական եկեղեցիների սկզբնավորումը, այնուհետև՝ XVIII–XX դդ. նորանոր եկեղեցիների ծնունդը հանգեցրել են քրիստոնեական եկեղեցիների միության գաղափարի՝ փոխադարձ հարգանքի, վստահության, միջեկեղեց. գործակցության հիման վրա: Է. շ-ման սկզբունքն է՝ նախ լուծել եկեղեցիների միջև առկա տարաձայնությունները և խնդիրները, ապա՝ միավորվել:

Միջեկեղեց. երկխոսության նպատակ էին հետապնդում ԱՄՆ-ի և Եվրոպայի ավետարանական եկեղեցիների նախաձեռնությամբ 1910-ին Էդինբուրգում (Շոտլանդիա) ստեղծված Համաշխարհային ուսանողական քրիստոնեական ֆեդերացիան և Միջազգային միսիոներական խորհուրդը: Էկումենյան հարաբերությունների ձևավորման առաջին պաշտոն. առաջարկը կատարել է Կ. Պոլսի Հունաց տիեզերական պատրիարքը: Նա 1920-ին «Քրիստոսի եկեղեցիներին ամենուրեք» խորագրով մի շրջաբերական գիր է հղել, որտեղ բոլոր քրիստոնյա եկեղեցիներին կոչ է արել հաղթահարել անվստահությունը և զարկ տալ համագործակցությանը՝ անտեսելով դավան. տարաձայնությունները: Եկեղեցիների հարաբերություններն ավելի սերտացնելու և գործնական քայլեր կատարելու համար առաջարկվում էր նաև ստեղծել մի «լիգա» կամ «ընկերակցություն»: 1937-ին որոշվել էր ստեղծել քրիստոնեական եկեղեցիների խորհուրդ, որի իրականացմանը խոչընդոտել է երկրորդ համաշխ. պատերազմը:

Է. շ. կազմակերպ. ձևավորում է ստացել 1948-ի օգոստ. 30-ին Ամստերդամում գումարված իր առաջին համաժողովում, երբ ստեղծվել է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ, նստավայրը՝ Ժնև): Է. շ-ման մասնակից եկեղեցիների գործունեությունը համակարգող այս կազմակերպության նպատակն է՝ զարգացնել քրիստ. եկեղեցիների համագործակցությունը, հաղթահարել տարաձայնությունները: ԵՀԽ բարձրագույն մարմինը համաժողովն է. գումարվում է յոթ տարին մեկ, ընտրում Կենտրոնական կոմիտե, որը հիմն. գործող մարմինն է համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում: Գործադիր աշխատանքները ղեկավարում է գլխավոր քարտուղարը, որին ընտրում է Կենտրոնական կոմիտեն: ԵՀԽ 1961-ին Դելիում գումարված III համաժողովում ընդունել է հետևյալ դավան. բանաձևը. «ԵՀԽ եկեղեցիների մի ընկերակցություն է, որը դավանում է մեր Տեր Հիսուս Քրիստոսին որպես Աստված և Փրկիչ ըստ Ս. Գրոց, և աշխատում է միասին իրագործել իր հասարակական կոչումը, ի փառս Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու»: Մինչև

այժմ (2000) ԵՀԽ գումարել է ութ համաժողով, վերջինը՝ 1998-ին, Հարարեում (Զիմբաբվե): Հռոմի կաթոլիկ եկեղեցին ԵՀԽ անդամ չէ, բայց ունի իր մշտական դիտորդները կազմակերպությունում:

Հայ առաքելական եկեղեցին մշտապես կողմ է եղել քրիստ. եկեղեցիների միությանը, դեմ՝ անհանդուրժող ոգուն, պառակտումներին, մեկը մյուսի վրա իշխելու ձգտումներին, «միակ ճշմարտությունը» դավանելու հավակնություններին: Միաժամանակ ձգտել է, որ յուրաքանչյուր եկեղեցի հավատարիմ մնա իր դավան., ծիս., ազգ. ավանդույթներին, աստվածաբան. և կանոնական մտածողության իր կերպին, պահպանի իր ինքնուրույն ղեկավարությունը: Եկեղեցիների միության հարցում Հայ եկեղեցու դիրքորոշումը եղել է «միութիւն ի կարևորս, ազատութիւն յերկբայականս և սէր յամենայնի» սկզբունքի պաշտպանությունը: Հայ աստվածաբան. միտքը դարեր ի վեր որոնել է այն ուղիները, որոնցով հնարավոր կլիներ կրկին միավորել եկեղեցիները: Եսայի Նչեցին, Ներսես Շնորհալին, Վարդան Այգեկցին, Ներսես Լամբրոնացին, Մխիթար Գոշը և ուր. հանգել են դավան. հանդուրժողականության, քրիստ. եկեղեցիների միավորման անհրաժեշտության գաղափարին: Ներսես Շնորհալին, որը եկեղեցիների միության ամենաջերմ ջատագովներից էր, հանգամանորեն շարադրել է Հայ եկեղեցու դիրքը և սկզբունքը եկեղեց. միության հարցում. «Հաւասար ընդ հաւասարի, և ոչ որպէս տէր ընդ ծառայի... յաղագս աստուածային սիրոյն հաղորդութեան և ոչ իբր ի մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւն»:

Արդի շրջանում էլ Հայ եկեղեցին գործուն մասնակցություն է ունեցել միջեկեղեց. հարաբերություններին: 1927-ին Լոզանում (Շվեյցարիա) տեղի ունեցած «Հավատի և կարգի» շարժման համաշխարհային I վեհաժողովին մասնակցել են շուրջ 100 քրիստ. եկեղեցիների, այդ թվում՝ Հայ եկեղեցու ներկայացուցիչները: Հայ եկեղեցին մասնակցել է նաև 1937-ի Էդինբուրգի, 1952-ի Լունդի (Շվեդիա), 1963-ի Մոնրեալի և այլ «Հավատի և կարգի» ժողովներին: Հայ եկեղեցին ԵՀԽ-ին անդամակցել է 1962-ի օգոստոսին, փարիզյան նստաշրջանում, *Վազգեն Ա Պալճյան* կաթողիկոսի՝ նույն թվականի ապրիլի 26-ի դիմումով: ԵՀԽ-ին անդամակցելու խնդրանքով դիմել էր նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը: Մայր աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակները հայտարարություն են արել ԵՀԽ Փարիզի նստաշրջանի դիվանին՝ շեշտելով, որ Հայ եկեղեցին մեկ ամբողջություն է՝ Ս. Էջմիածնի հոգևոր գերագահությամբ և իշխանությամբ, իսկ նվիրապետ. աթոռներն ունեն իրենց իրավասության սահմանները: Ընդգծվել է նաև, որ երկու դիմումագրերը չպետք է թողնեն այն տպավորությունը, թե երկու տարբեր և անջատ եկեղեցիներ են դիմում անդամակցության համար: Հայտարարության տակ ստորագրել էր նաև Անթիլիասի ներկայացուցիչ Գարեգին վրդ. Սարգիսյանը (Ամենայն Հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյան*): Հայ եկեղեցու պատգամավորության այս հայտարարությունը թեև ընթերցվել է, սակայն ժողովն ընդունել է նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դիմումը՝ իբրև առանձին անդամ եկեղեցու դիմում: 1975-ին ԵՀԽ Նայրոբիի (Քենիա) V համաժողովում Գարեգին արք. Սարգիսյանն ընտրվել է ԵՀԽ փոխատենապետ և պաշտոնավարել մինչև 1983-ը: 1991-ի Կանբերայի (Ավստրալիա) VII համաժողովում Արամ արք. Քեշիշյանը (1995-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա.) ընտրվել է ԵՀԽ ատենապետ՝ նույն պաշտոնում վերընտրվելով նաև 1998-ի Հարարեի համաժողովում:

Է. շ-ման շրջանակներում Հայ եկեղեցին խորհրդակցություններ է ունեցել Արևելյան ուղղափառ, Ուղղափառ, Կաթոլիկ, Բողոքական եկեղեցիների հետ: 1965-ին Ադիս Աբեբայում (Եթովպիա) հրավիրվել է Հայ առաքելական, Եթովպական, Ղպտի, Ասորի, Հնդկաստանի Մալաբար եկեղեցիների առաջնորդների ժողով, որը մեծ նշանակություն է ունեցել դավանակից եկեղեցիների համագործակցության ճանապարհին: Եկեղեցիների միջև աստվածաբան. երկխոսություն և փոխըմբռնում հաստատելու փորձերից, որոնց գործուն մասնակցություն է ունեցել Հայ եկեղեցին, հիշատակելի են Արևելյան ուղղափառ եկեղեցիների և Հռոմի կաթոլիկ եկեղեցու միջև աստվածաբան. երկխոսության Վիեննայի հինգ ոչ պաշտոն. խորհրդակցությունները (1971, 1973, 1976, 1978, 1988), Արևելյան ուղղափառ եկեղեցիների և Ուղղափառ եկեղեցու ոչ պաշտոն. չորս խորհրդակցությունները (1964, 1967, 1970, 1971) և երեք պաշտոն. համատեղ հանձնաժողովի հանդիպումները (Ս. Բիշո վանք՝ 1989,

Զամբես՝ 1990, Ժնև՝ 1993): Դրանք զգալիորեն նպաստել են մեղմելու դավան. տարաձայնությունները, վերացնելու փոխադարձ նզովքներն ու դատապարտությունները, որոնք գոյություն ունեն Քաղկեդոնի ժողովից ի վեր: Հայ եկեղեցին մասնակցել է նաև Արևելյան ուղղափառ եկեղեցիների և Բարեկարգյալ բողոքական եկեղեցիների համաշխարհային միության ներկայացուցիչների համատեղ հինգ ժողովներին (վերջինը՝ 1999-ին, Դամասկոսի Ս. Եփրեմի աստվածաբան. ճեմարան), ինչպես նաև միջկրոն. համաժողովներին (վերջին, թվով 13-րդը՝ 1998-ին, Բուխարեստում), որոնց մասնակցել են բոլոր մեծ կրոնների ներկայացուցիչները, և քննարկվել են միջկրոն. ու միջազգ. կարևորագույն հիմնահարցեր: Քրիստ. եկեղեցիների հետ բազմաթիվ էկումենիկ հանդիպումներ են դումարվել նաև Ս. Էջմիածնում:

Է. շ-ման շրջանակներում քննարկվում են ոչ միայն եկեղեց., կրոն., աստվածաբան., այլև՝ մարդկությանը հուզող բազմաթիվ այլ խնդիրներ, մշակվում են ընկերային, մարդասիր., բարեգործ., կրթ. և այլ համատեղ ծրագրեր, ստեղծվում էկումենիկ կազմակերպություններ, տեղական խորհուրդներ: Այդպիսիներից է ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղանը, որը 1997-ից Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է մի շարք ծրագրեր՝ Հայ առաքելական, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների ուժերով:

Արտաշես Ղազարյան

ԷՋՄԻԱԾԻՆ, տես *Վաղարշապատ*:

«ԷՋՄԻԱԾԻՆ», կրոնական, պատմաբանասիրական ամսագիր, Ամենայն Հայոց կաթողիկոսության պաշտոնական հրատարակություն: Լույս է տեսնում 1944-ից՝ Գ. արք. Զորեքչյանի (*Գևորգ Զ Զորեքչյան*) նախաձեռնությամբ: Մինչև 1961-ը տպագրվել է Երևանում, այնուհետև՝ Էջմիածնում: «*Արարատի*» ավանդույթով ամսագրի խմբագրապետ է համարվել Ամենայն Հայոց կաթողիկոսը: Խմբագիրներ՝ Ա. Առաքելյան, Լ. Կիսիբեկյան, Ա. Աբրահամյան, Ա. Հատիտյան, Ե. Մելքոնյան և ուր., 2000-ից՝ Ա. Զեյթունյան: Խմբագրությունն իր աշխատանքները կազմակերպել է ժամանակի քաղ. իրադրության ու գրաքննության մշտական պահանջներին համապատասխան: Սկզբ. շրջանում կրոն. բնույթի նյութեր գրեթե չի տպագրել: Ամսագրի բաժիններն են եղել՝ Օտարները հայերի և Հայաստանի մասին, Հայրենական պատերազմի ճակատում, Գաղութային կյանք, Մամուլի տեսություն, Հայոց եկեղեցին ևն: «Է.» սկզբից ևեթ մեծ նշանակություն է տվել հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը, ինչն արտահայտվել է «Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ» անդրանիկ խմբագրականում. «Հայրապետական ամսագիրը այն միջոցն է, որը պետք է համախմբի սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան հայրենիքի շուրջը, Մայր աթոռի շուրջը... Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բայց եթե մայր հայրենիքը, Հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն հայոց հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի հայրապետական աթոռով» («Էջմիածին», 1944, № 1, էջ 3): Ներգաղթը Հայաստան կազմակերպելու համար Գևորգ Զ Ամենայն հայոց և Գարեգին Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները Հայաստանի կառավարությանը խրախուսել և իրենց աջակցությունն են հայտնել «Ներգաղթը և հայ հոգևորականները», «Հայրենադարձության ուղիով» և այլ հոդվածներով ու խմբագրականներով:

Ամսագրի հրապարակումից և Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացումից (1945) հետո պատմ. նշանակություն ունեցող մյուս իրադարձությունը, հայրապետ. գահի տևական թափուր մնալուց հետո, 1945-ին Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունն էր և այդ առիթով հրավիրված ազգ-եկեղեց. ժողովը: «Է.» հրապարակել է հիշյալ իրադարձությունը լուսաբանող նյութեր, հոդվածներ, լուսանկարներ:

1950-ական թթ. քաղ. մթնոլորտի մեղմացման շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվել ամսագրի (խմբագիր՝ Ա. Հատիտյան, 1956–82) բուն ուղղության ձևավորման համար: Հրատարակվել են բազմաթիվ և բազմաբնույթ կրոն., եկեղեց. հոդվածներ, և «Է.», ի վերջո, ստանձնել է կրոն. հանդեսի իր առաջնային դերը: Բացվել են նոր բաժիններ՝ Մայր աթոռում, Կրոնա-եկեղեցական, Հոգևոր ճեմա-

ման, 1980–90-ականներին նաև՝ Աստվածաշնչական ընթերցումներ, հետագայում ավելացել է Էկումենիկ կյանք, Դիվան Մայր աթոռի, Թեմական կյանք, Քրիստոնյա աշխարհ: Այդ տարիների հոգևոր զարթոնքն իր բոլոր դրսևորումներով արձագանք է գտել ամսագրի էջերում (ղարաբաղյան տագնապ, եկեղեցիների կառուցում ու վերակառուցում, վերաբացում, քրիստ. դաստիարակության կենտրոնների հիմնում ևն):

Խմբագրությունը պատշաճ տեղ է հատկացրել կաթողիկոսի արտասահմանյան ուղևորություններին, կարևորել դրանց ոչ միայն ազգային-եկեղեց., այլև միջեկեղեց., միջպետ. նշանակությունը: Հրապարակվել են հայրապետ. կոնդակներ, շրջաբերականներ, քարոզներ, թեմերի զեկույցներ, գրություններ (կաթողիկոսի և ազգ. մարմինների, առաջնորդների և թեմ. եկեղեց. խորհուրդների, կաթողիկոսի և քույր եկեղեցիների առաջնորդների միջև ևն): Հիշարժան են նաև Մայր աթոռի դիվանատան հաղորդագրությունները հոգևոր ճեմարանի, եկեղեց. ժողովների, բարձրաստիճան հոգևորականների հանդիպումների, քահանայական ձեռնադրումների վերաբերյալ: Ամսագիրը պարբերաբար հրատարակում է խրատներ, սուրբգրային նյութեր, համակողմանիորեն ներկայացնում Մայր աթոռի, սփյուռքի ու ներքին թեմերի եկեղեց. կյանքը, անդրադառնում միջեկեղեց., միջազգ. կրոն. և խաղաղության հարցերին: Հայ եկեղեցու անկախությունը տարատեսակ հարձակումներից, այլևայլ աղանդներից պաշտպանելը ամսագրի գլխ. խնդիրներից է:

«Է.» իր հրապարակումներում մշտապես անդրադարձել է Էջմիածին-Անթիլիաս երկրամյա հակամարտության պատճառներին, կաթողիկոս. կոնդակներով ու քարոզներով ջանացել վերականգնել խաղաղությունը և միաբանությունը: 1984–86-ին երկու աթոռների միջև բուռն քննարկման առարկա է եղել Հայ եկեղեցու վարչատնտ. կազմակերպչական միասնական կանոնադրության հարցը: «Է.» հրատարակել է կանոնադրության նախագիծը, երկու կաթողիկոսների միջև նամակագրությունն այդ խնդրի վերաբերյալ: Իր եռամյա գործունեության մասին զեկույցում *Վազգեն Ա Պալճյան* կաթողիկոսը եկեղեցու վերականգնման և հզորացման գործում կարևոր և պատասխանատու է համարել ընդհանրապես հայ կրոնական մամուլի և մասնավորապես՝ Մայր աթոռի պաշտոնաթերթի դերը: Նրա մեծ ցանկությունն էր «Է.» ամսագիրը հետզհետե դարձնել նաև հայ աստվածաբան. մտքի զարգացման կենտրոն:

Ամսագիրը մեծ ուշադրություն է դարձրել Հայ եկեղեցու բարեկարգության հարցերին: 1980-ին հրատարակել է Երուսաղեմում այդ առիթով կայացած միաբանական ժողովի նյութերը: Եկեղեց. սահմանադրություն ունենալու հարցը բազմիցս քննարկվել է «Է.»-ի էջերում: Հրատարակվել են սահմանադրության նախագծեր:

Ամսագիրը բազմաթիվ արտատպություններ է արել «Արարատ», «Հասկ», «Շողակաթ», «Սիոն», «Հայաստանյայց եկեղեցի» հանդեսներից, վերահրատարակել Բ. Կյուլեսերյանի, Ե. Դուրյանի, Խրիմյան Հայրիկի, Մ. արք. Օրմանյանի քարոզները, իր էջերը հաճախակի տրամադրել լեզվաբանությանը, բանասիրությանը, եկեղեցու, մատենագրության պատմությանը, ընագրագիտությանը, ձեռագրերին, վիմագրությանը, հայ և օտար հայագետներին, տպագրել նրանց աշխատությունների մատենագիտություններ (Հ. Աճառյան, Հ. Ոսկյան, Ն. Բյուզանդացի, Վ. Բընըցեանու), հետաքրքրական արխիվային նյութեր հրապարակել Կ. Եզյանի, Մ. Սանասարյանի, Մ. Էմինի, Գ. Խալաթյանցի, Հ. Այվազովսկու, Պ. Ադամյանի, Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի մասին:

Հրատարակության ավելի քան հիսունհինգ տարիների ընթացքում «Է.» ունեցել է եկեղեց. ու պետ.՝ համազգ. նշանակության տոներին և հիշատակի օրերին նվիրված բազմաթիվ բացառիկներ՝ կաթողիկոս. աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու 500-ամյակ, Վարդանանց պատերազմի 1500-ամյակ, 1955-ին ազգ-եկեղեց. ժողովի գումարում, կաթողիկոս. ընտրություն և առաջին մյուռոնօրհնեք: Մեծ եղեռնի 50-ամյակին նվիրված 1965-ի միացյալ համարները լի են ականատեսներ Կ. Մելիք-Օհանջանյանի, Հ. Սերինկյուլյանի, Հ. Սիրունու, Հ. Մորգենթաուի հուշերով, նամակներով, դրանք լրացնում, ամբողջացնում է Ս. Քոլանջյանի «Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները» հոդվածաշարը: 1966-ին մեծ հանդիսությամբ նշվել է Աստվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակը,1968-ին՝ «Արարատ» ամսագրի 100-ամյակը (նոյեմբ-դեկտ. միացյալ համարներ), 1970-ին՝ Առաքել Դավրիժեցու մահվան 300-ամյա-

կը, Ներսես Ե Աշտարակեցու ծննդյան 200 և Խրիմյան Հայրիկի՝ 150-ամյակները, 1998-ին՝ Սարդարապատի հերոսամարտի 80-ամյակը. այդ առիթով տպագրվել են ճակատամարտին հոգևորականների մասնակցությունը լուսաբանող նյութեր ևն:

«Է.»-ին աշխատակցել են Հ. Անճառյանը, Ս. Մալխասյանը, Գարեգին Ա կաթողիկոսը, Կ. Ղաֆադարյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ա. Ալպոյաճյանը, Ն. Պողարյանը, Ա. Սյուրմեյանը, Վ. արք. Տերյանը և ուրիշներ:

Կարինե Ավետյան

ԷՋՄԻԱԾՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1441, Վաղարշապատի ազգային ժողով, հրավիրվել է Հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատելու նպատակով: Պատմաքաղ. դեպքերի բերումով 484-ից ի վեր Հայոց կաթողիկոսությունը թողել էր իր նախնական աթոռանիստ Վաղարշապատը և տեղից տեղ փոխադրվել (Դվին, Արգինա, Անի, 1105-ից՝ Կիլիկիա, Հռոմկլա, Սիս. տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*): Կիլիկիայի Հայկ. պետության անկումից (1375) հետո Սսի Հայոց կաթողիկոսությունն ընկել է քաղ., տնտ., հոգևոր-մշակութ. ծանր վիճակի մեջ: Դժվարացել է պայքարը նաև Կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունների, *ունիթորության* և կաթոլիկ քարոզիչների (միսիոներների) դեմ: Այդպիսի աննպաստ պայմաններում Հայոց կաթողիկոսությունն անզոր էր օտար երկրներում ստեղծված հայկ. գաղութների հետ մշտական կապեր հաստատել, ուս. կենտրոններ ստեղծել և տարասփյուռ զանգվածներին ազգ. ավանդույթներով շաղկապել: Մեկուսանալով Կիլիկիայում՝ այն կտրվել էր բուն Հայաստանից ու ժողովրդից, կորցրել կրոն. ու քաղ. երբեմնի կենտրոնի նշանակությունը, ուստի հայ հասքաղ., կրոնաեկեղեց. ու մշակույթի գործիչները դեռևս XIII դ. վերջից ձգտել են Հայոց կաթողիկոսությունը տեղափոխել Հայաստան: Սակայն միայն XV դ. 1-ին կեսին, երբ կարակոյունլու Ջհանշահի տիրապետության (1437–67) օրոք համեմատաբար խաղաղ էր երկրի կենտրոն Այրարատում, հայ աշխարհիկ գործիչներն ու հոգևորականները միջոցներ են ձեռնարկել Հայոց կաթողիկոսությունը Վաղարշապատում վերահաստատելու: Ապագա կաթողիկոսանիստը տնտեսապես ամրապնդելու նպատակով Սյունյաց իշխան Ռուստամ Օրբելյանը 1431-ին, վաճառքի անվան տակ, Էջմիածնի վանքին է նվիրել 7 գյուղ: Ստանալով Ջհանշահի հավանությունը և նրա հանձնարարությամբ՝ Երևանի ամիրա Յաղուբ բեկի աջակցությունը՝ *Հովհաննես Հերմոնեցին* և *Թովմա Մեծոփեցին* 1439-ից սկսել են նախապատրաստել Վաղարշապատի ժողովը: Նամակներ են հղել և ստացել հայ հոգևորականների ու աշխարհիկ խոշոր գործիչների, նաև Կիլիկիայի 4 թեմական եպիսկոպոսների գրավոր համաձայնությունը: Միաժամանակ, 1440-ի վերջին Սսի կաթողիկոսարանից անհայտացել է *Լուսավորչի Աջը*, ինչը հեշտացրել է կաթողիկոս. աթոռի տեղափոխության հարցը (Հայ եկեղեցու ավանդ. կանոնադրությամբ կաթողիկոսարանում պարտադիր է ս. Գրիգոր Լուսավորչի Աջի առկայությունը, որը համարվում է կաթողիկոս. աստիճանի խորհրդանիշը, և որի զորությամբ են տրվում օրհնություններն ու կատարվում օծումները): 1441-ի սկզբին Հովհաննես Հերմոնեցին Էջմիածնում կայանալիք ժողովին մասնակցելու համար շրջաբերական հրավիրագրեր է հղել հոգևոր-եկեղեց., հաս-քաղ. ու մշակույթի նշանավոր գործիչներին: Է. ա-ե. ժ. նշանակված էր ս. Զատկից (1441-ի ապրիլի 16-ից) հետո: Մայիսի սկզբին մասնակիցները հավաքվել են Երևանում և մեծ շուքով մեկնել Վաղարշապատ: Մայիսի 2-րդ կեսին տեղի է ունեցել Է. ա-ե. ժ., որին մասնակցել է ավելի քան 300 մարդ, այդ թվում հանվանե՝ 4 արքեպիսկոպոս, 12 եպիսկոպոս, 21 վարդապետ, ինչպես նաև այլ հոգևորականներ, աշխարհականներ և ժողովրդի ներկայացուցիչներ: Է. ա-ե. ժ-ի որոշումներին նախօրոք գրավոր համաձայնություն էին տվել Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ Աղթամարցին, 7 եպիսկոպոսներ և 16 վարդապետներ: Իր համաձայնությունն էր տվել նաև Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը: Հրավիրված էր և Հայոց կաթողիկոս Գրիգոր Թ Մուսաբեկյանցը, որը թեպետ մերժել էր հրավերը և չէր ցանկացել հեռանալ Սսից, սակայն արգելք չէր հարուցել: Է. ա-ե. ժ. կրել է համազգ. բնույթ և ընթացել հայ եկեղեց. կանոնների հիման վրա՝ օրինականության և վավերականության սահմաններում: Քանի որ Գրիգոր Թ Մուսաբեկյանցը հրաժարվել էր ներկայանալ ժողովին և վերաօծվել կաթողիկոս, ապա առաջադրվել են ուրիշ թեկնածուներ (Զաքարիա Հավուցթառեցի, Հովհաննես Հերմոնեցի, Զաքարիա Աղթամարցի, Գրիգոր Արտազեցի), սակայն, հավանա-

բար կողմերի հավասար քվեների պատճառով, կաթողիկոս է ընտրվել չեզոք անձ՝ Կիրակոս վրդ. Վիրապեցին (տես *Կիրակոս Ա. Վիրապեցի*): Է. ա-ե. ժ-ից որոշ ժամանակ անց հայտնաբերվել է նաև Լուսավորչի Աջը և վերահաստատվել Մայր աթոռ Ս. Էջմիածնում, որով վավերականացվել է կաթողիկոս. գահակալությունը Վաղարշապատում:

Գրկ. Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թ., 1892: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Հովսեփյան Գ., Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղապատ, 1914: Լեո, երկ. ժող., հ. 3, գիրք 1, Ե., 1969:

«ԷՋՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Փղոսկրյա Ավետարան», հայ գրչության և մանրանկարչության ձեռագիր մատյան: Ընդօրինակել է Հովհաննես գրիչը՝ 989-ին, Բղենո Նորավանքի Ս. Ստեփանոս եկեղեցում: Պատվիրատու՝ Ստեփանոս քահանա: Բնագիրը պարունակում է 35x28 *սմ* չափի 233 մագաղաթե թերթ (Մատենադարան, ձեռ. № 2374): Բաղկացած է գեղեցիկ երկաթագրով գրված չորս Ավետարաններից: Մատթեոսի Ավետարանին նախորդում է քառաթերթ մի պրակ՝ ամբողջ էջերն զբաղեցնող մանրանկարներով: 1ա–5ա էջերում Եվսեբիոսի թուղթն է և համաբարառները՝ ճոխ խորանների մեջ առնված: 5բ էջում պատկերված է մի տաղավարիկ (tempietto), որին հաջորդում են թեմատիկ մանրանկարներ. գահին բազմած Հիսուսը (6ա), զույգ-զույգ կանգնած չորս ավետարանիչները (6բ, 7ա), Աստվածածինը՝ Մանուկը գրկին (7բ) և Աբրահամի զոհաբերությունը (8ա): Ձեռագրի վերջում ներմուծված է VI–VII դդ. երկու թերթ՝ 228, 229, որոնց վրա պատկերված են «Զաքարիայի ավետումը», «Մարիամի ավետումը», «Մոգերի երկրպագությունը» և «Մկրտություն» մանրանկարները: «Է. Ա.»-ի լուսանցքներում նույնպես կան պատկերներ:

Ձեռագրի կազմը բաղկացած է 36,5x30,5 *սմ* մեծության փղոսկրե երկու կողքերից, որոնք VI դ. աշխատանք են համարվում: Կողքերից յուրաքանչյուրը բաղկացած է հնգական սալիկից, որոնցից յուրաքանչյուրի վրա պատկերված է առանձին տեսարան: Այդ կազմը վաղ քրիստ. հայկ. արվ-ի նշանակալից հուշարձաններից է: Բացառիկ արժեք ունեն VI–VII դդ. մանրանկարները: Չորս տեսարաններն էլ իրենց խորհրդանշական բնույթով վերաբերում են հայտնության թեմային: Հագեցված և փոքրինչ մուգ ու խաղաղ երանգները կանաչի, կապույտի և ոսկու ոչ շռայլ գործածությամբ ստեղծում են տպավորիչ գունագեղություն: Արտահայտիչ են դեմքերը՝ օժտված ազդ. ինքնատիպությամբ: Կատարողական որոշ առանձնահատկություններով ու երանգավորմամբ այդ աշխատանքները մոտենում են նույն շրջանի հայ որմնանկար օրինակներին (Արուճ, Լմբատ): Սկզբնաթերթերի մանրանկարները ոճական առանձնահատկություններով ու պատկերագրությամբ IX–X դդ. գեղանկարչության ավանդույթների արտահայտությունն են: Գեղեցիկ են խորանները: Օգտագործված են հիմնականում պայտաձև զույգ կամարներ, որոնց հորինվածքը երփներանգ զարդամոտիվների և լրացուցիչ մանրամասների կիրառմամբ համահնչուն է մատյանի ընդհանուր բնույթին: Բացառիկ է «Է. Ա.»-ի մանրանկարների դերը հայ գեղանկարչության հետագա զարգացման գործում:

«Է. Ա.»-ի ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Ուվարովը, Վ. Ստասովը, Ն. Կոնդակովը, Յո. Ստրժիգովսկին, Գ. Վայցմանը, Ֆ. Մակլերը, Ս. Տեր-Ներսեսյանը և ուրիշներ:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.4, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Ստրժիգովսկի Յո., Էջմիածնի Ավետարանը, Վնն., 1892: Macler F., L'Evangile arménien edition phototypique du manuscrit № 229 de la bibliothè que d'Etchmiadzin (989 de J.C.), P., 1920; Der Nersessian S., The Date of the Initial Miniatures of the Etchmiadzin Gospel, Études byzantines et arméniennes, Louvain, 1973, p. 533–558.

Հրավարդ Հակոբյան

ԷՋՄԻԱԾՆԻ ԴՊՐՈՑ, Վաղարշապատի դպրոց (վարդապետարան), հոգևոր-կրթական հաստատություն: Հիմնադրվել է IV դ. սկզբին՝ *Գրիգոր Ա Լուսավորչի* օրոք՝ եկեղեցու սպասավորներ և ուսուցիչներ պատրաստելու նպատակով: V դ. սկզբին *Մեսրոպ Մաշտոցը* և *Սահակ Ա Պարթևը* Վաղարշապատում աշակերտներ են հավաքել հայ գրի տարածողներ ու թարգմանիչներ պատրաստելու համար: Նրանց ջանքերի շնորհիվ է. դ. դարձել է հայալեզու առաջին դպրոցը, վերափոխվել մայր վարժարանի և ժամանակի բարձրագույն կրթարանի, որտեղ հիմք է դրվել նաև գրչության արվեստին: Սկզբում դասավանդել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Ա Պարթևը, այնուհետև՝ Եղնիկ Կողբացին, Աղան Արծրունին: Ուսուցանել են Սուրբ Գիրքը, վարքաբանություն, քերականություն, ճարտասանություն, գրչու-

թյան արվեստ, երաժշտություն, տրամաբանություն, հետագայում՝ նաև աստղաբաշխություն, բարոյագիտական, թվաբանական և այլ առարկաներ (հուն. բարձրագույն դպրոցի օրինակով): Է. դ-ի վրա էր դրված Հայաստանում կրթության կազմակերպման ու ծավալման գործը: Դպրոցն ունեցել է մատենադարան: V դ. վերջին դպրոցը կաթողիկոսարանի հետ փոխադրվել է Դվին և այլ վայրեր՝ կապված կաթողիկոս. աթոռի տեղափոխությունների հետ: Սաներից են Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Պաղնացին, Տիրայր Խորենացին, Թաթիկ Բասենցին, Դանան Եկեղեցացին, Եզնիկ Կողբացին, Ղևոնդ Վանանդեցին, Կորյուն Աքանչելին, Երեմիան, Մովսես Խորենացին, Վարդան Մամիկոնյանը, Տաճատ Գնթունին, Ներսես Քաջբերունին և ուրիշներ:

1441-ին կաթողիկոսարանը վերստին Էջմիածնում հաստատվելուց հետո դպրոցը վերաբացվել է. կազմակերպիչն ու ուսուցչապետը *Թովմա Մեծոփեցին* էր: Անբարենպաստ պայմանների պատճառով դպրոցը երկու տարի հետո փակվել է: 1640-ին Էջմիածնում *Փիլիպոս Ա Աղբակեցու* նախաձեռնությամբ բացվել է նոր դպրոց՝ Վարդապետարան անունով, որը որոշ ընդմիջումներով գոյատևել է մոտ երկու և կես դար՝ հետագայում հայտնի դառնալով Էջմիածնի ժառանգավորաց դպրոց անունով: Ուսուցանել են Ոսկան Երևանցին, Սիմեոն Ջուղայեցին, Ստեփանոս Լեհացին, Առաքել Դավրիժեցին, Պետրոս Նախիջևանցին և ուր.: Դասավանդվել են կրոն. գիտություններ, հայոց լեզու, փիլիսոփայություն, դասական գրակ., տրամաբանություն, քերականություն: Է. դ. կրկին հայտնի է դարձել *Սիմեոն Ա Երևանցու* օրոք: 1813-ին *Ներսես Ե Աշտարակեցին* կառուցել է դպրոցի նոր շենք (50 աշակերտի համար) և աշխատելու հրավիրել Պ. Ղարադաղցուն, որին աշակերտել են Մ. Թաղիադյանը (1832–34-ին դասավանդել է նույն դպրոցում) և Խ. Աբովյանը: Տարբեր տարիներ այնտեղ դասավանդել են Մ. Պատկանյանը, բժիշկ Կ. Վասակյանը, Կ. Շահնազարյանը և ուր.: 1836-ից ուսուցանել են ռուսաց լեզու, իսկ 1860-ական թթ.՝ լատ., ֆրանս., հայոց պատմություն: 1874-ին նրա հիմքի վրա ստեղծվել է *Գևորգյան ճեմարանը*:

Գրկ. Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1946: Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դ. առաջին կեսին, Ե., 1964:

ԷՋՄԻԱԾՆԻ ԺՈՂՈՎՆԵՐ 1547, 1677, գաղտնի խորհրդաժողովներ Հայաստանը պարսկա-թուրքական տիրապետությունից ազատագրելու ուղիներ գտնելու նպատակով: Մահմեդ. նվաճողների ազդ., կրոն., տնտ. ու հարկային ծանր քաղաքականությունը, պատերազմները, գերեվարությունները ու արտագաղթերը հայ ժողովրդին մղել են ազատագր. պայքարի: Ազատագր. շարժման կազմակերպման գործն ստանձնել է Հայ եկեղեցին: Հայոց կաթողիկոսներն ու հոգևորականները փութաջանորեն մասնակցել են շարժման գաղափարախոսության մշակմանը և անձամբ գլխավորել քաղ. բանակցությունները Արևմուտքի երկրների հետ: Հայաստանի ազատագրության խնդիրը քննարկելու համար կաթողիկոս *Ստեփանոս Ե Սալմաստեցին* Ս. Էջմիածնում 1547-ին հրավիրել է խորհրդաժողով՝ Արլ. Հայաստանի բարձրաստիճան հոգևորականության, տանուտերերի ու մելիքների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ժողովն ընդունել է Վենետիկի դոժին ուղղված «Աղերսագիր տերանց Հայոց» փաստաթուղթը, որի հայերեն բնագիրը չի պահպանվել և հայտնի է միայն իտալ. թարգմանությամբ: Այդ թղթում հայ ազատագր. շարժման գործիչները, Վենետիկի Հանրապետությունը ներկայացնելով որպես «պաշտպան բովանդակ քրիստոնեության», ակնկալել են, որ նրանից պետք է սկսվի հայերի փրկությունն ու ազատագրումը: Առանձին դիմումագրեր են ընդունվել՝ ուղղված Պողոս III պապին, որը պետք է գլխավորեր ու հովանավորեր հայերի, ինչպես նաև արևմտաեվրոպ. մի քանի երկրների ազատագրության գործը: Էջմիածնի ժողովը կաթողիկոսի գլխավորությամբ կազմել է պատվիրակություն, որի անդամներ են ընտրվել Զաքարիա եպիսկոպոսը, Դավիթ վարդապետը, Գրիգոր վրդ. Վարագեցին և Լուսիկ սարկավագը: 1547-ին պատվիրակությունը ժամանել է Կ. Պոլիս, հանդիպումներ ունեցել Կ. Պոլսի պատրիարքի հետ, իսկ 1548-ի աշնանը մեկնել է Վենետիկ: Այստեղ պատվիրակությունը Հանրապետության դոժին է ներկայացրել «Աղերսագիրը» և Հայաստանի ազատագրության հեռանկարների վերաբերյալ բանակցություններ վարել նրա հետ: 1549-ի գարնանը պատվիրակությունը ժամանել է Հռոմ, նրան է միացել Պետրոս Երեց Եթովպացին, որն էլ կաթողիկոսին ներկայացրել է Պողոս III պապին: Պատվիրակությունը Հռոմում մնացել է շուրջ մեկ տարի,

որի ընթացքում Ստեփանոս Ե Սալմաստեցին մի շարք բանակցություններ է վարել Պողոս III-ի, իսկ վերջինիս մահից հետո՝ նաև Հուլիոս III պապի հետ: Քաղ. բանակցություններին նախորդել է կաթողիկոսի հայտարարությունը իր ենթակա 27 եպիսկոպոսների անունից՝ պապին հնազանդվելու և Հայ եկեղեցին լատինականին ենթարկելու վերաբերյալ: Սույն զոհողությունը նախապայման էր դիվանագիտ. հետագա բանակցությունների համար և ազգ-քաղ. նկատառումներով հանձնարարված էր Էջմիածնի ժողովի կողմից: Բանակցությունների նման ընթացքով բավարարված՝ Հուլիոս III պապը 1550-ի ապրիլի 25-ին հանձնարարական նամակներով Ստեփանոս Ե Սալմաստեցուն ուղարկել է Գերմանիայի Կառլոս V կայսրի և Լեհաստանի Սիգիզմունդ II Ավգուստոս թագավորի մոտ՝ բանակցությունները շարունակելու: Սակայն Վիեննայում ու Վարշավայում ևս հայ-արևմտաեվրոպ. բանակցությունները շոշափելի արդյունք չեն տվել:

Հայաստանի ազատագրության խնդրի շուրջ Էջմիածնի բանակցությունները կաթոլիկ Արևմուտքի հետ վերսկսվել են XVII դ. 2-րդ կեսին՝ *Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսի նախաձեռնությամբ: 1662-ին նա Հռոմ է ուղարկել Նախիջևանի թեմի առաջնորդ Առաքել վրդ. Բոպիկ (Բոկոտն) Շոռոթեցուն, որը բանակցություններ է վարել պապական շրջանակների հետ: Հատուկ աղերսագրով դիմել է նաև Ռուսաց Ալեքսեյ Միխայլովիչ թագավորին: Հայկ. գրատպության գործը խթանելու նպատակով Արմ. Եվրոպա է ուղարկել Ոսկան վրդ. Երևանցուն, Մատթեոս վրդ. Վանանդեցուն և այլոց: Նրանք նաև հանձնարարականներ են ունեցել այդտեղ նպաստավոր կարծիք ստեղծելու Հայաստանի ազատագրության խնդրի շուրջ և հող նախապատրաստելու հայ-արևմտաեվրոպ. քաղ. ու կրոն. բանակցությունների համար: Այդ ակնկալությամբ նամակագր. կապ է հաստատվել Ալեքսանդր VII պապի, Ավստրիայի Լեոպոլդ I կայսրի և այլոց հետ: 1677-ի սկզբին կաթողիկոսը Ս. Էջմիածնում գումարել է գաղտնի ժողով, ներկայացուցչությամբ՝ բարձրաստիճան հոգևորականության, Արլ. Հայաստանի մելիքների և մեծատուններ (թվով՝ 12) կամ, ինչպես նշված է Հովհան Վիլհելմին ուղղված գրության մեջ՝ «Մեծ Հայաստանի գլխավոր և ղեկավար իշխանների» (6 եկեղեցական և 6 աշխարհիկ գործիչներ): Վերջիններից հանվանե հայտնի են Սիսիանի մելիք Իսրայելը, Կոստան բեյը և Յավրու որդի Աղաջանը: Ժողովը որոշել է օգնության հայցով դիմել Հռոմի պապին և, հնազանդություն հայտնելով, նրա միջնորդությամբ բանակցություններ վարել Արևմուտքի հզոր տերությունների հետ: Քննարկվել է նաև Վրաստանի հետ համագործակցության հարցը: Որոշվել է պատվիրակություն ուղարկել նախ Վրաստան, ապա՝ Եվրոպա: Պատվիրակության կազմում ընդգրկվել է 6 հոգի, որոնցից հայտնի են կաթողիկոսը, Առաքել վրդ. Շոռոթեցին, Սիսիանի մելիք Իսրայելը: Վերջինս, օգտվելով առիթից, իր հետ է վերցրել որդուն՝ Իսրայել Օրուն՝ Եվրոպայում կրթության տալու նպատակով: 1677-ի հունիսին պատվիրակությունը Թիֆլիսում բանակցություններ է վարել Քարթլիի թագավոր Գեորգի XI-ի հետ՝ պայմանավորվելով, որ հայերը դիմեն Արևմուտքին, իսկ Վրաստանը՝ Ռուսաստանին: Հանգանակություն կազմակերպելու պատրվակով պատվիրակությունը անցել է Արմ. Հայաստան, եղել Տրապիզոնում, Կարինում, Երզնկայում, Սեբաստիայում, Թոքատում, Ամիդ-Դիարբեքիրում ևն, 1678-ի վերջին ժամանել Կ. Պոլիս: Այստեղ հանդիպումներ է ունեցել արևմտահայ նշանավոր ազգ-կրոն. գործիչների, Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքների, ինչպես նաև արևմտաեվրոպ. մի շարք երկրների դիվանագիտ. ներկայացուցիչների և պապական նվիրակ Ֆրանցիսկո Ջիլիի հետ: Վատիկանի հետ բանակցություններ նախապատրաստելու համար կաթողիկոսը պատվիրակության անդամներից Առաքել վրդ. Բոպիկին 1679-ին ուղարկել է Հռոմ, իսկ ինքը գրական գործիչ ու պատմագիր Երեմիա Քյոմուրճյանի խորհրդով թղթակցել Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ՝ ակնկալելով նաև նրա օգնությունը: Սակայն պատվիրակության գործունեությունն անսպասելիորեն ընդհատվել է Հակոբ Դ Ջուղայեցու կանխահաս վախճանի պատճառով (1680-ի օգոստ. 1): Պատվիրակության անդամները ստիպված վերադարձել են Հայաստան (բացառությամբ՝ Իսրայել Օրու): Հայ-արևմտաեվրոպ. բանակցություններն առժամանակ հետաձգվել են:

Պատմագրության մեջ արտահայտված այն տեսակետը, թե իբր Է. ժ. մշակել են Հռոմի հանդեպ դավան. մերձեցման և զուգ եկեղեցիների միավորման սկզբունքներ, զուրկ է

պատմ. հիմքից: Հռոմի հանդեպ դավան. մերձեցման անհրաժեշտության վերաբերյալ հայ կաթողիկոսների հայտարարությունները և հռոմեանպաստ արտահայտությունները արվել են ազդ-քաղ. նկատառումներով և սոսկ կաթոլիկ Եվրոպայի համակրանքը շահելու նպատակ են հետապնդել:

Գրկ. Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վնտ., 1896: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Ե., 1959:

Աղավնի Ութուջյան

ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ, հոգևոր բարձրագույն գիշերօթիկ ուսումնական հաստատություն: Բացվել է 1945-ի նոյեմբ. 1-ին, Էջմիածնում, Մայրավանքի մատենադարանի նախկին շենքում՝ *Գևորգ Զ Զորեքչյանի* նախաձեռնությամբ: Է. հ. ճ. *Գևորգյան ճեմարանի* յուրատեսակ շարունակությունն էր, ուստի 1998-ին Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյանի* կարգադրությամբ վերանվանվել է Գևորգյան հոգևոր ճեմարան: Նպատակն է հոգևորականներ պատրաստել Հայ առաքելական եկեղեցու համար: Ուսման տևողությունը 6 տարի է, ունեցել է 2 բաժին՝ ընդհանուր կրթ. և լսարանական, այսօր՝ միայն լսարանական: Առաջին վերատեսուչ է նշանակվել Մինաս Մինասյանը (1945–54):

Ճեմարան են ընդունվում միջն. կրթությամբ 17–24 տարեկան ՀՀ քաղաքացիներ և սովյուռքում հայկ. կրթություն ստացած երիտասարդներ՝ «ձայնեղ, լայնամիտ և առողջակազմ աշակերտներ, որոնք ավարտելուց հետո պետք է ծառայեն միայն Հայ առաքելական եկեղեցում» («Տաթև» տարեգիրք, 1996–97, էջ 14): Դասավանդվում են կրոնական (Հայ եկեղեցու պատմություն, ընդհանուր եկեղեցու պատմություն, քարոզխոսություն, մեկնություն Հին և Նոր կտակարանների, բարոյական աստվածաբանություն, 1962-ից՝ էկումենիկ շարժման պատմություն ևն), հայագիտ. (գրաբար, հայոց լեզու և գրականություն, հայ ժողովրդի պատմություն ևն) առարկաներ, երաժշտություն (եկեղեց. և եվրոպ.), լեզուներ (ռուս., անգլ., հին հուն.):

Է. հ. ճ. իր գոյության առաջին տասը տարիներին (1945–55) կանոնադրություն չի ունեցել և գործել է վերատեսչի տված հրահանգներով ու հանձնարարականներով: 1955-ին, Գևորգյան ճեմարանի կանոնադրության հիման վրա, կազմվել է Է. հ. ճ-ի կանոնադրությունը, նշվել են վերատեսչի, տեսչի, վերակացուի, քարտուղարի, դասախոսների, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները: Ճեմարանը գտնվում է Ամենայն հայոց կաթողիկոսի գերատեսչության ներքո: Նրա հրամանով են հոգևորականներից նշանակվում վերատեսուչ, տեսուչ և վերակացու: Տեսուչներ են եղել Հայկազուն եպս. Աբրահամյանը, Ներսես արք. Պողապալյանը, Եզնիկ քհն. Պետրոսյանը և ուր.: Դասավանդում են Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Բ Ներսիսյանը*, Շահե արք. Աճեմյանը, Ներսես արք. Պողապալյանը, ճեմարանի նախկին սաներ, աշխարհականներ, արտերկրից հրավիրված հոգևորականներ:

Ճեմարանն ունի 120 սան, շուրջ 45 դասախոս (2001): Ճեմարանականները պարտավոր են մասնակցել ամենօրյա ժամերգություններին և ս. Պատարագին: Ճեմարանն ավարտելուց հետո նրանք աշխատում են գիտ. ավարտաճառի վրա (շուրջ մեկ տարի), որը պաշտպանելուց հետո միայն իրավունք են ստանում քահանա ձեռնադրվելու և օծվելու: Ճեմարանավարտին հնարավորություն է ընձեռվում ուսումը շարունակելու արտերկրի կրոն. կրթ. բարձրագույն ուս. հաստատություններում:

Ճեմարանի սաների ջանքերով լույս է տեսնում «Տաթև» ուսանող. պարբերաթերթը:

Է. հ. ճ-ի տեսուչն է Եղիշե ավ. քհն. Սարգսյանը (2000-ից):

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.4, 4-րդ պատկերը:

Արթուր Կարապետյան
Գևորգ Մակարյան

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, Վաղարշապատի Ս. Կաթողիկե եկեղեցի, Շողակաթ Ս. Աստվածածին եկեղեցի, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում: Ամենայն հայոց կաթողիկոսության կենտրոնը: Ագաթանգեղոսի վկայությամբ՝ կառուցել է *Գրիգոր Ա Լուսավորիչը Տրդատ Գ* թագավորի օժանդակությամբ, 302–303-ին, Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում, արքունի ապարանքի մոտ: Ըստ պատմիչի՝ Գրիգոր Ա Լուսավորիչը հայոց առաջին եկեղեցին կառուցելու համար ընտրել է տեսիլքում հրեշտակի ցույց տված՝ ոսկե խարսխի վրա հառնող հրեղեն սյան լուսե խաչի տեղը: Հայոց հայրապետը նախ պարսպապատել է տվել վայրը և ապա կանգնեցրել Փրկչական ս.

Նշանը [XIII դարից տեսիլքին վերադրվել է այլ բովանդակություն, համաձայն որի՝ Աստծո Միածին Որդին լուսեղեն կերպարանքով իջել (այստեղից՝ «Էջմիածին» անունը) և ձեռքի ոսկե մուրճով գետնին զարկելով՝ նշադրել է տաճարի հիմնադրման տեղը]:

Համաձայն Գրիգոր Ա Լուսավորչի տեսիլքի՝ Է.Մ.տ-ի ներսում, ուղիղ գմբեթի տակ, հիմնադրվել է Իջման ս. Սեղանը (նրա կառուցման և ձևի մասին տեղեկություններ չեն պահպանվել):

Ըստ ազգ. ավանդության՝ Համաշխ. ջրհեղեղից հետո Նոյ նահապետն այդտեղ է սեղան կանգնեցրել և գոհունակության պատարագ մատուցել: Հետագայում նույն տեղում կառուցվել է մեհյան:

Տարբեր տեսակետների համաձայն, տաճարի հորինվածքը եղել է եռանավ բազիլիկ (Թ. *Թորամանյան*, Ա. Սահինյան), ուղղանկյուն, քառամույթ գմբեթավոր (Ա. Երեմյան, Ա. Խաչատրյան), ս. Խաչի վրա կանգնած քառասյուն ամպհովանու տեսքով (Ստ. Մնացականյան), թաղածածկ դահլիճ (Ն. Տոկարսկի), սկզբից-ևեթ կառուցվել է ներկայիս հորինվածքով (Վ. Գրիգորյան):

1950-ական թթ. Է.Մ.տ-ի պեղումների ընթացքում բացվել են IV դ. գմբեթակիր մույթերի խաչաձև խարիսխները, Ավագ խորանի տակ՝ Վանի թագավորության ժամանակների կոթող և նախն. խորանը՝ կենտրոնում թոնրաձև կրակարանով: Ձեն հայտնաբերվել ենթադրյալ բազիլիկի հետքերը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ Է.Մ.տ., ի սկզբանե լինելով գմբեթավոր, աշխարհում առաջին գմբեթավոր եկեղեցին է:

Է.Մ.տ-ի նախն. կառույցից պահպանվել են հս. և արմ. պատերի հատվածները, անկյուններում՝ մոդուլիոններով քիվերով փոքրիկ ճակտոնները, հս. պատին՝ Պողոս առաքյալին և ս. Թեկղեին պատկերող, հուն. մակագրություններով պատկերաքանդակ և շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչով, երկու կողմերում թռչուններով հարթաքանդակ, որոնք քրիստ. Հայաստանի քանդակագործ. արվեստի վաղագույն նմուշներն են:

Է.Մ.տ-ի Ավագ խորանում Գրիգոր Ա Լուսավորիչը սեղան է կանգնեցրել և օծել Շողակաթ ս. Աստվածածնի անունով՝ եկեղեցու տոնը կարգելով օգոստոս ամսին, Վերափոխման շաբաթ օրը: Գրիգոր Ա Լուսավորիչն այդտեղ է հաստատել Հայոց քահանայապետությունը, կառուցել հայրապետանոց, կացարաններ, հիմնել *Էջմիածնի դպրոցը*՝ նորաստեղծ քրիստ. եկեղեցու սպասավորներ և ուսուցիչներ պատրաստելու համար:

360-ական թթ. Պարսից Շապուհ II արքան ներխուժելով Հայաստան, ըստ պատմիչ Փավստոս Բուզանդի, գրավել է Վաղարշապատը և ավերել բոլոր շինությունները: Պարսկ. արշավանքից հետո Հայաստանի ավերված վանքերը (նաև Է.Մ.տ.) վերանորոգել են կաթողիկոսներ *Ներսես Ա Մեծը* և *Սահակ Ա Պարթևը*: 484-ին Ամենայն հայոց կաթողիկոսությունը Դվին տեղափոխվելուց հետո Է.Մ.տ. շարունակել է մնալ իբրև Հայ եկեղեցու սրբազնագույն կենտրոն: Պատմիչ Ղազար Փարպեցու վկայությամբ՝ Հայաստանի կառավարիչ, իշխան Վահան Մամիկոնյանը 483–484-ին հիմնովին վերակառուցել է Է.Մ.տ., որից հետո այն ստացել է հատակագծային ու ծավալատարածական իր այժմյան տեսքը: Նրա՝ քառակուսուն մոտ ուղղանկյուն աղոթասրահի արմ., հվ. և հս. կողմերում արտաքուստ չեշտված են ներսից կիսաշրջանաձև ու դրսից հնգանիստ խորանները: Է.Մ.տ-ի արլում դրսից եռանիստ Ավագ խորանի երկու կողմերում մեկական ավանդատներ են: Աղոթասրահի կենտրոնում, չորս հաստահեղույս մույթերի վրա ձգվող կամարները կրում են տաճարի գմբեթը: Է.Մ.տ-ի՝ խաչաձև-կենտրոնագմբեթ, քառամույթ, քառախորան այս հորինվածքը հայկ. եկեղեց. ճարտ-յան մեծ ավանդն է ողջ քրիստ. ճարտ-յան մեջ: Այն VII դ. Հայաստանում կրկնվել է *Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցում* և Բյուզանդիայի միջոցով IX–XI դդ. տարածվել Եվրոպայում (Ֆրանսիա, Իտալիա, Հունաստան):



Էջմիածնի Մայր տաճարի հատակագիծը

V դ., Ղազար Փարպեցու վանահայրության օրոք, Է.Մ.տ-ի փայտե ծածկը հրդեհվել է: Ըստ պատմիչ Սեբեոսի, VII դ. I-ին երեսնամյակին *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսը փայտե ծածկը փոխարինել է քարով: Տաճարը VII դ. կեսին նորոգել է *Ներսես Գ Տայեցի* կաթողի-

կոսը: Համաձայն Ստեփանոս Տարոնեցու, 982-ին արաբ Աբլհաճ Ամիրան իջեցրել է Է.Մ.տ-ի գմբեթի խաչը: Է.Մ.տ. զգալի վնասվել է արաբների, սելջուկյան թուրքերի, թաթար-մոնղոլների արշավանքներից: XIII դ. Ստեփանոս արք. Օրբելյանը առաջին անգամ կիրառել է «Էջմիածին» անունը Մայր տաճարի համար: 1431-ին իշխան Ռուստամ Օրբելյանը Է.Մ.տ-ին 7 գյուղ է նվիրել՝ տնտ. հիմք ստեղծելով Ամենայն Հայոց կաթողիկոսությունը 1441-ին Վաղարշապատում վերահաստատելու համար: Նորընտիր կաթողիկոս *Կիրակոս Ա Վիրապեցին* սկսել է Է.Մ.տ-ի նորոգումը, որն ավարտել է *Գրիգոր Ժ Ջալալբեկյանց* կաթողիկոսը: Տաճարի նորոգմանն աջակցել է *Թովմա Մեծոփեցին*: XV դարից տաճարը կոչվել է Է.Մ.տ.:

XVII դ. սկզբին Պարսից շահ Աբբաս I-ը որոշել է ամբողջապես քանդել Է.Մ.տ., քարերը տեղափոխել Պարսկաստան և Սպահանի մոտ կառուցել նոր տաճար՝ հայրենիքից տեղահանված տասնյակ հազարավոր հայերին նոր բնակատեղիին կապելու համար: Այդ ծրագիրը լրիվ չի իրագործվել, հետագայում որոշվել է տանել տաճարի հանգուցային քարերը, պատարագի ս. Սեղանը, Քրիստոսի իջման տեղի քարը, մկրտության ավազանը, բեմի քարերից, քարե աշտանակներ ևն, ինչպես նաև՝ *Լուսավորչի Աջը*: Տեղափոխված քարերը հետագայում դրվել են *Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի* եկեղեցու պատերի շարվածքում, և դարերի ընթացքում խարխլված տաճարն ավելի է քայքայվել:

XVII դ., ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու, Է.Մ.տ-ի ծածկը և գմբեթը քանդված են եղել, պատերի շատ քարեր՝ թափված, հիմքերը՝ վնասված, տաճարը՝ կողոպտված: *Մովսես Գ Տաթևացի* կաթողիկոսը հիմնովին նորոգել է Է.Մ.տ., նոր գմբեթ կառուցել, դրսից և ներսից ամրացրել պատերը և հիմքերը, վերակառուցել ծածկը: Նա Է.Մ.տ. շրջապատել է 7 բուրգով ամրացված պարիսպներով, նրանց կից խցեր և տնտ. շենքեր կառուցել: Մայր աթոռի համալիրում Է.Մ.տ. թողնվել է ազատ, բակի կենտրոնում, հավասարապես հեռու աշխարհիկ շենքերից: Կառուցապատման այս սկզբունքը հետագայում կիրառվել է XVII դ. հայկ. վանքերում և անապատներում:

Է.Մ.տ-ի նոր գմբեթի թմբուկի 12 նիստերին մեդալիոնների ձևով քանդակված են առաքյալների դիմապատկերները: Նրանք պատկերված են լուսապսակով և կիսանդրիով, կերտված ամենայն մանրամասնությամբ. նրանցից յուրաքանչյուրի դիմագծերն օժտված են շեշտված անհատականությամբ:

Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսը վերակառուցել է 1635–36-ի թուրք-պարսկ. պատերազմի ժամանակ ավերված Էջմիածնի կաթողիկոսարանի շենքերը: Կառուցել է արլ. խցերը, ձիթհանքեր, փայտաշեն սեղանատունը վերաշինել քարով, սալարկել բակը, նորոգել Է.Մ.տ-ի տանիքը: 1654-ին, պոլսեցի մեծահարուստ Անտոն Զելեպիի բարերարությամբ, սկսվել է Է.Մ.տ-ի արմ. ճակատին կից զանգակատան շինարարությունը: 1655-ին Փիլիպոս Ա Աղբակեցու վախճանից հետո զանգակատան ընդհատված շինարարությունը 1657-ին շարունակվել է և 1658-ին ավարտվել՝ *Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսի օրոք: Այն կառուցել է ճարտ. Սահակ Հիզանեցին՝ մասնակցությամբ ուստա Մովսեսի (շինարարության ընթացքում ընկել է շենքից և զոհվել): Շին. աշխատանքները ղեկավարել է վերակացու Հովհաննեսը: Է.Մ.տ-ի եռաստիճան, սլացիկ համաչափությունների այունազարդ զանգակատունը օրինակ է ծառայել XVII–XVIII դդ. հայկ. վանքերի և եկեղեցիների նույնատիպ կառույցների համար:

Է.Մ.տ-ի զանգակատան արմ. ճակատին քանդակված է Քրիստոսի, հվ-ին՝ Գրիգոր Ա Լուսավորչի, հս-ին՝ Տրդատ Գ թագավորի պատկերները: 1664-ին զանգակատան որմնանկարները կատարել է Զաքարե Ոսկերիչը: Նույն թվականին 2-րդ հարկում Ս. Հրեշտակապետաց սեղան է օծվել: 1682-ին կաթողիկոս *Եղիազար Ա Այնթապցին* տաճարի հվ., արլ. և հս. խորանների տանիքներին փոքրիկ զանգակատներ է կանգնեցրել, 1684-ին Իջման ս. Սեղանի վեմ քարը վերցրել է մարմարակերտ չորս այուների վրա կառուցված գեղեցիկ գմբեթի տակ, Ավագ խորանի բեմապատը երեսապատել մարմարե սալերով, նորոգել մույթերը, սալարկել աղոթասրահը, հվ. խորանում՝ ս. Հովհաննես Կարապետի, իսկ հս-ում ս. Ստեփանոսի սեղաններ օծել:

1720-ին *Աստվածատուր Ա Համադանցի* կաթողիկոսի պատվերով Է.Մ.տ-ի գմբեթը, Ավագ խորանը, թաղերն ու կամարները բազմերանգ և ոսկեզօծ զարդանախշերով է պատել նշանավոր տաղերգու և նկարիչ *Նաղաշ Հովնաթանը*: Պահպանվել են միայն գմբեթի վեր-

նամասի նկարազարդումները, որոնցում նկատելի է պարսկ. արվեստի ազդեցությունը՝ արտահայտված զարդերի խիտ հյուսվածքներով, բուս. մոտիվներով արաբեսկային նկարվածքով, նոճիների կիրառումով: Արժեքավոր են Է.Մ.տ-ի պատերին Նաղաշ Հովնաթանի կատարած դիմանկարները և թեմատիկ որմնանկարները: Դրանցից մնացել է երեք հատված (այժմ գտնվում են ՀԱՊ-ում), որոնք պատկերում են Տրդատ Թագավորին՝ Աշխեն Թագուհու և քրոջ՝ Խոսրովիդուխտի հետ, աղոթող զինվորին և Հայկ Նահապետին: Է.Մ.տ-ի ներսի ձևավորման կարևոր տարրերն են եղել Նաղաշ Հովնաթանի գեղանկարչական, հաստոցային գործերը: Նա նկարել է սրբերի, հոգևորականների, բազմաֆիգուր թեմատիկ կտավներ («Ոտնլվա», «Խորհրդավոր ընթրիք» ևն):

Կարապետ Բ Ուլնեցի կաթողիկոսը Ավագ խորանի բեմապատին նկարել է տվել ոսկեզօծ և ծաղկհյուս շրջանակների մեջ ներառված 12 առաքյալների դիմանկարները, կենտրոնում՝ մանուկ Հիսուսին գրկած ս. Աստվածածնին, եզրերին՝ ս. Ստեփանոս ու ս. Փիլիպոս նախաարկավազներին: 1734-ին *Աբրահամ Գ Կրետացի* կաթողիկոսը Ավագ խորանի երկու կողմերում սեղաններ է օծել, աջում՝ նվիրված Հակոբ և Հովհաննես առաքյալներին, ձախում՝ Գրիգոր Ա Լուսավորչին, նկարազարդել է տվել պատերը և մույթերը:

Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսի ջանքերով կառուցվել են Ղազարապատ հյուրանոցը և Վեհարանը: Նա էջմիածին է հրավիրել Նաղաշ Հովնաթանի Հակոբ և Հարություն որդիներին, որոնք նկարազարդել են Է.Մ.տ. և Վեհարանը: 1766-ին *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսը էջմիածնի Մայրավանքը պարսպապատել է երկրորդ շարքով, 1770-ին նորոգել Է.Մ.տ-ի տանիքը, միաբանության ամառային սեղանատունը, 1771-ին հնդկահայ բարերար Գրիգոր Խոջաջանյանի միջոցներով Մայր աթոռում հիմնել Արլ. Հայաստանում առաջին տպարանը: Է.Մ.տ-ի ներսը ձևավորելու համար նա հրավիրել է Հովնաթան Հովնաթանյանին, որն աշխատանքներն ավարտել է 1786-ին, *Ղուկաս Ա Կարնեցի* կաթողիկոսի օրոք: Հովնաթան Հովնաթանյանի՝ Է.Մ.տ-ի զարդարման աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝ Հին և Նոր կտակարանների թեմաներով արված առանձին նկարներ, սրբերի և պատմ. գործիչների դիմանկարներ և ծաղկանկարներ (հաստոցային նկարների մեծ մասը պահվում է ՀԱՊ-ում, իսկ զարդանկարները ծեփով ծածկել է տվել *Մկրտիչ Ա Վանեցի* կաթողիկոսը): Ի դեմս Է.Մ.տ-ի մույթերի, խորանների, պատերի առանձին հատվածների համար նախատեսված նկարների (Սահակ Ա Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու ևն) Հովնաթան Հովնաթանյանը տվել է հայկ. կերպարվեստում չքերթային դիմանկարի առաջին օրինակները: Իսկ թեմատիկ նկարներում («Աստվածընկալ Մարիամ», «Մոգերի երկրպագությունը», «Մուտք Երուսաղեմ», «Խորհրդավոր ընթրիք», «Խաչելություն») կրկին առաջինը հայ գեղանկարչության մեջ ստեղծել է դասական սկզբունքներով ստեղծված հորինվածքներ: Նրա՝ ս. Աստվածածնին պատկերող նկարների շարքում ակնառու է ավանդ. թեմայի ինքնատիպ լուծման հակումը: 1784-ին Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսը փոխել է Է.Մ.տ-ի արտաքին պատերի ներքևի չորս շարքի և որմնախարսխի քայքայված քարերը, 1785-ին՝ բակը սալահատակել, 1786-ին՝ նորոգել տվել տաճարի որմնանկարները և լրացրել նոր, ոսկեզօծ ծաղկանկարներով, ամրացրել գմբեթակիր հս. մույթերը:

1804–13-ին, ռուս-պարսկ. պատերազմի ընթացքում, ռուս. կողմը տաճարն իբրև բերդ է օգտագործել, որի համար խորանների զանգակատների շուրջը պատնեշներ են կառուցվել: Ռուս զինվորները տաճարի տանիքին շուրջօրյա պահակության ընթացքում կրակ են վառել, որի հետևանքով տանիքի սալերը ճաքճքել են, և անձրևաջրերը ներս են թափանցել: 1813-ին *Եփրեմ Ա Զորագեղցի* կաթողիկոսը նորոգել է Է.Մ.տ-ի տանիքը և դպրատուն կառուցել: 1837-ին, Ռուսաց Նիկոլայ I կայսրի՝ Հայաստան այցելելու նախօրյակին, նորոգվել և բարեկարգվել են տաճարը և Մայրավանքը: 1866-ին *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսի նախաձեռնությամբ հանգանակություն է կազմակերպվել Է.Մ.տ-ի նորոգման համար: 1868–1919-ին Մայրավանքում հրատարակվել է Հայաստանում առաջին պարբերականը՝ «*Արարատ*» ամսագիրը, իսկ 1874-ին բացվել հոգևոր բարձրագույն դպրոց (տես *Գևորգյան ճեմարան*): 1868–69-ին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը Է.Մ.տ-ի արլ. կողմում, նրա ողջ լայնությամբ, Ռուսաստանի հայ համայնքների միջոցներով կցաշենք է կառուցել էջմիածնի եկեղեցապատմ. թանգարանի համար:

Նրա արլ. ճակատի միջին մասում խորանաձև ծավալ է դուրս բերվել՝ տաճարի արտաքուստ խաչաձևությունը չխախտելու համար, սակայն կառույցն իտալ. Վերածնության իր ճարտ. ոճով անհարազատ է Է.Մ.տ-ի ընդհանուր կերպարին:

1888-ին ճարտ. Մ. Սալամբեկյանի ղեկավարությամբ սկսվել են Է.Մ.տ-ի նորոգման աշխատանքները: Տաճարի պատերի քայքայված եռաստիճան հիմնախարիսխը փոխարինվել է նորով: Մայրավանքի ընդարձակ բակը, որը զգալիորեն բարձր էր տաճարի հատակից, հողահեռացմամբ ցածրացվել է, և շենքն ազատվել վերգետնյա ջրերի ազդեցությունից: *Մակար Ա Թեղուտցի* կաթողիկոսը, ելնելով Է.Մ.տ-ի պատմաճարտ. և կրոնաազգ. բացառիկ կարևոր նշանակությունից, հրահանգել է նորոգման ժամանակ անաղարտ պահել տաճարի ավանդ. ձևերը: 1889-ին փոխվել են զանգակատան մույթերի վնասված քարերը, վերանորոգվել «Տրդատաղուռ» դարպասը, բակում ծառուղիներ ստեղծվել: Է.Մ.տ-ի մուտքերի (երեքն են) դռները փոխարինվել են կաղնու փայտից պատրաստված, նրբորեն ու հայառճ զարդաքանդակված դռներով:

Մկրտիչ Ա Վանեցի կաթողիկոսը Է.Մ.տ-ի նորոգումը ղեկավարելու համար հրավիրել է նկարիչ Վարդգես Սուրենյանցին: Նա 1909-ին հրապարակել է տաճարի նորոգման իր մշակած գիտամեթոդ. սկզբունքները: 1909–10-ին Է.Մ.տ. մանրամասնորեն չափագրվել է: 1910-ի մայիսի 15-ին Գևորգ արք. Սուրենյանցի նախագահությամբ և Կոմիտաս վարդապետի քարտուղարությամբ կայացած խորհրդակցությունում որոշվել են վերանորոգման աշխատանքների մեթոդներն ու հերթականությունը: 1914-ին, մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանի բարերարությամբ, Է.Մ.տ. մասնակի նորոգվել է:

1915-ին Էջմիածնի Մայրավանքը դարձել է Մեծ եղեռնից մազապուրծ հայ գաղթականների հավաքատեղի և ապաստան:

1921-ին Է.Մ.տ-ի հվ. խորանի գմբեթարդը և տանիքի զանգակատունը փլվել են: 1923-ին Ա. Թամանյանի և Թ. Թորամանյանի գիտ. ղեկավարությամբ հվ. խորանը վերականգնվել է, հանվել են թանգարանի տանիքի զույգ գմբեթները՝ տաճարի ընդհանուր կերպարին անհարիր լինելու պատճառով:

1945-ին կաթողիկոս *Գևորգ Զ Զորեքչյանի* առաջարկով ազգ-եկեղեց. ժողովը որոշում է ընդունել Է.Մ.տ-ի հիմնովին նորոգման մասին, որն իրականացվել է 1954–55-ին՝ Հայաստանի կառավարության հատկացրած միջոցներով: Աշխատանքները կատարվել են հատուկ հանձնաժողովի (գրողներ՝ Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան և Ս. Զորյան, նկարիչներ՝ Մ. Սարյան և Գ. Գյուրջյան, հնագետ՝ Կ. Ղաֆադարյան, ճարտ-ներ՝ Ս. Սաֆարյան, Ռ. Իսրայելյան, Մ. Գրիգորյան, Հ. Մարգարյան, Վ. Հարությունյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Սադոյան և ուր.) հսկողությամբ: Երկաթբետոնով ամրացվել են տաճարի կրող կոնստրուկցիաները՝ մույթերը և կամարները, նորոգվել ծածկի խաչվող թաղերը: Մ. Սարյանի գլխավորած հանձնաժողովի հսկողությամբ, արվեստաբան Լ. Դուռնովոյի ղեկավարությամբ 20 նկարիչներից բաղկացած խումբը մաքրել, ամրացրել ու լրացրել է տաճարի որմնանկարները:

Կաթողիկոս *Վազգեն Ա Պալճյանի* գահակալության ժամանակաշրջանում մեծածավալ աշխատանքներ են կատարվել Է.Մ.տ-ի ուսումնասիրման, նորոգման և բարեզարդման ուղղությամբ: Այդ նպատակով միջոցներ է տրամադրել Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը: 1955–59-ին Է.Մ.տ-ի հատակը պեղվել է, շաղախի ներարկումով ամրացվել են տաճարի պատերը, տանիքը ծածկվել է կապարե թիթեղներով, աղոթասրահը սալահատակվել հայաստանյան մարմարով: Այցելուների համար մատչելի է դարձել Ավագ խորանի տակ բացված լուսավորչաշեն խորանը (մուտքը՝ թանգարանից), գմբեթակիր մույթերի նախն. խարիսխները ծածկվել են ապակիով: 1959-ին վերականգնվել է հվ. խորանի վրայի զանգակատունը: Վազգեն Ա կաթողիկոսը, հաշվի առնելով Իջման ս. Սեղանի չափերի անհարմարությունը Մայր տաճարի ներսում, գմբեթակիր այունազարդ այդ կառույցը փոխարինել է ծավալով ավելի փոքր ու գեղեցիկ մարմարակերտ ս. Սեղանով, որն այլևս չի խանգարում հավատացյալներին՝ հետևելու Ավագ խորանի վրա մատուցվող ս. Պատարագին: Նոր՝ ս. Աստվածածնի պատկերով Իջման ս. Սեղանի ճարտարապետը Ռ. Իսրայելյանն է, նկարիչը՝ Գ. Խանջյանը: Իջման ս. Սեղանի XVII դ. ամպհովանին, նկատի առնելով նրա պատմագեղ. արժեքը, տեղափոխվել է *Էջմիածնի Ս. Գայանե վանքի* եկեղեցու Ավագ խորան: Տաճարի բարեզարդման մաս են կազմել բեմի վարագույրը և հվ. ու հս. խորանների սեղանները (ճարտ՝ Ա. Գալիկյան), բյուրեղապակե ջա-

հերը, պատուհանների երկաթե վանդակները (Գ. Խանջյան): Պատրաստվել է Մկրտության ավազան (ճարտ.՝ Ա. Գալիկյան), որն ունի Քրիստոսի մկրտությունը պատկերող որմնանկար (Հ. Մինասյան): Նորոգվել և հարդարվել է տաճարին կից թանգարանը, որտեղ պահվում և ցուցադրվում են 800-ից ավելի եկեղեց. կիրառ. արվեստի բացառիկ արժեքավոր իրեր (ոսկե ու արծաթե, ականակուռ ու մարգարտաշար խաչեր, խաչվառներ, սկիհներ, բուրվառներ, գավազաններ, գոտիներ, սաղավարտներ, թագեր, խույրեր, բազպաններ, մատանիներ, գորգեր, վարագույրներ, գրամատյաններ, ս. Մյուռոնի սափորներ, կաթսաներ, մանանոուտիներ, շուրջառներ ևն):

Է.Մ.տ-ում են պահվում Հայ առաքելական եկեղեցու կարևորագույն սրբություններ ս. Գեղարդը, Թադեոս առաքյալի Աջը, ս. Գրիգոր Ա Լուսավորչի Աջը, Գետարդելի ս. Նշանը, Նոյյան տապանից և Կենաց փայտից մասնիկներ, Հովհաննես Կարապետի, Պետրոս և Անդրեաս առաքյալների, Մատթեոս և Մարկոս ավետարանիչների, ս. Հռիփսիմեի և ս. Գայանեի մասունքները, ս. Հակոբ Մծբնա հայրապետի Աջը, ս. Արիստակես Ա Պարթևի Աջը, ս. Գևորգ Զորավարի, ս. Նիկողայոս Հրաշագործի մասունքները:

XVIII դարից Է.Մ.տ-ի արմ. կողմը դարձել է Հայոց կաթողիկոսների բացօթյա հանգստարան: Զանգակատան երկու կողմերում են ամփոփվել կաթողիկոսներ Աղեքսանդր Ա Ջուղայեցին, Աղեքսանդր Բ Բյուզանդացին, Դանիել Ա Սուրմառեցին, Հովհաննես Ը Կարբեցին, Ներսես Ե Աշտարակեցին, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին, Մակար Ա Թեղուտցին, Մկրտիչ Ա Վանեցին, Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին, Գևորգ Ե Սուրենյանցը, Խորեն Ա Մուրադբեկյանը, Գևորգ Զ Զորեքչյանը, Վազգեն Ա Պալճյանը, Գարեգին Ա Սարգիսյանը:

Է.Մ.տ-ի արմ. կողմի հրապարակում է կատարվում ս. *Մյուռոն* եփելու արարողությունը: Է.Մ.տ-ում է տեղի ունենում Ամենայն Հայոց կաթողիկոսների ընտրությունը և օծումը:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.5, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1983: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987: Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1879: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Մխիթարյանց Ա., Կաթուղիկէ Մայր եկեղեցի Վաղարշապատայ ընդ չորից վանօրէից նորին, հ. 2, Վաղպատ, 1875: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Թորամանյան Թ., Նյութեր և ուսումնասիրություններ հայկական ճարտարապետության պատմության, [հ. 1, 2], Ե., 1942, 1948: Սահինյան Ա., Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը, ՊԲՀ, 1966, № 3: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974: Գրիգորյան Վ., Էջմիածնի Մայր տաճար, ԼՀԳ, 1986, № 7: Հարությունյան Վ., Սուրբ Էջմիածնի չինարար գահակալները, Էջմիածին, 1996: Khatchatrian A., L'architecture arménienne du IVᵉ au VIᵉ siecle, P., 1971; Vagharchapat, V., 1998 (Documenti di architettura armena, 23).

Մուրադ Հասրաթյան

ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔ, Վաղարշապատ քաղաքի հարավային կողմում, ս. Գայանեի և նրա երկու ընկերուհիների (տես *Գայանյանց կույսեր*) նահատակման վայրում: Այնտեղ, ըստ Ագաթանգեղոսի, 301-ին *Գրիգոր Ա Լուսավորչի* ղեկավարությամբ և նրա գցած հիմքերի վրա *Տրդատ Գ* Մեծը, նրա քույր *Խոսրովիդուխտը* և *Աշխեն* թագուհին վկայարան են կառուցել: 395-ին *Սահակ Ա Պարթևը* վերակառուցել է Ս. Գայանեի վկայարանը: 630-ին *Եզր Ա Փառաժնակերտցին* քանդել է վկայարանը և տեղում սրբատաշ տուֆով շինել այսօր կանգուն Ս. Գայանե եկեղեցին, վանական միաբանություն հաստատել: Ս. Գայանե եկեղեցին ներդաշնակ համաչափություններով, տպավորիչ ինտերիերով քառամույթ գմբեթավոր բազիլիկ է, որի Ա-վագ խորանի տակ գտնվում է սրբուհու՝ հվարլ. ավանդատնից մուտքով թաղածածկ դամբարանը: XVII դ. եկեղեցին եղել է կիսավեր ու լքված: XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցին գրում է, որ Ս. Գայանե եկեղեցու միայն պատերն ու գմբեթակիր մույթերն են կանգուն եղել: *Փիլիպոս Ա Աղբակեցին* 1652-ին հիմնովին վերակառուցել է եկեղեցին, վերականգնել նրա ծածկը և գմբեթը: Միաժամանակ Ս. Գայանե եկեղեցու հիմքերը ստորգետնյա ջրերից պաշտպանելու համար վանքի հվ. պարսպից դեպի դաշտ ջրահեռացման համակարգ են ստեղծել, որպեսզի ջրերը նաև ոռոգման նպատակով օգտագործվեն: 1688-ին *Եղիազար Ա Այնթապցին* կառուցել է վանքի միաբանության շենքերը, պարիսպը, Ս. Գայանե եկեղեցուն արմ. կողմից կցել եռակամար գավիթ-

սրահ, նրա հվ. և հս. ծայրերին պատարագամատույց սեղաններով Պողոս և Պետրոս առաքյալներին նվիրված մատուռներ չունել: Գավիթ-սրահը հետագայում ծառայել է որպես կաթողիկոսների տապանատուն: 1764-ին *Սիմեոն Ա Երևանցին* Է. Ս. Գ. վ-ի տարածքում կառուցել է ստորգետնյա խոշոր սառցատուն՝ վանքի մթերքները պահելու համար: *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* դահակալության տարիներին (1866–82) Է. Ս. Գ. վ-ի վանահայր Վահան Բաստամյանցը նորոգել է վանքը, կառուցել արմ. կամարակապ դարպասը, վանահոր և միաբանների բնակելի շենքերը, դպրոց, որտեղ ինքը դասավանդել է, հիմնել է տպարան և հրատարակել «Դրպրոց» ամսագիրը: 1910-ին Նոր Նախիջևանի հայ համայնքը սև գրանիտից տապանաքար է բերել ս. Գայանեի գերեզմանի համար: 1959-ին Է. Ս. Գ. վ. նորոգվել է, եկեղեցու ներսը մաքրվել է սվաղից, հատակը սալարկվել, տարածքը բարեկարգվել, բակում կառուցվել է մատաղատուն, աղբյուր (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան): 1960-ին վանքի տարածքում Մայր աթոռի՝ 1920-ից հետո թաղված միաբանների գերեզմանների վրա դրվել են մարմարե սալիկներով տապանաքարեր: 1976-ին Ս. Գայանե եկեղեցու շուրջը դարերի ընթացքում կուտակված լիցքը հեռացվել է, պատերի մեջ չաղախ է ներարկվել, և քայքայված քարերը փոխարինվել են նորերով: 1977–80-ին լոնդոնահայ Հարություն Մուրթֆյանի բարերարությամբ, վանքի միաբանության շենքերը նորոգվել են և օժտվել ժամանակակից հարմարություններով, քարե սալերով ծածկվել եկեղեցու տանիքը և գմբեթը: Է. Ս. Գ. վ-ի գավթում են ամփոփված Եղիազար Ա Այնթապցի, Աբրահամ Բ Խոշաբեցի, Ղազար Ա Ջահկեցի, Մինաս Ա Ակներցի, Հակոբ Ե Շամախեցի, Սիմեոն Ա Երևանցի, Ղուկաս Ա Կարնեցի, Դավիթ Ե Էնեգեթցի, Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսները, իսկ վանքի շուրջը՝ բազմաթիվ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, վանահայրեր, Մայր աթոռի բարերարներ, իշխաններ և նշանավոր այլ անձինք:



Էջմիածնի Ս. Գայանե վանքի եկեղեցու հատակագիծը

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.6, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 1, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Հարությունյան Վ., Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Էջմիածին, 1996:

Մուրադ Հասրաթյան

ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔ, Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, ս. Հռիփսիմեի և նրա երեսուներկու ընկերուհիների (տես *Հռիփսիմյանց կույսեր*) նահատակման վայրում: Ըստ Ագաթանգեղոսի, այնտեղ 301-ին, *Գրիգոր Ա Լուսավորչի* ղեկավարությամբ ու նրա դցած հիմքերի վրա *Տրդատ Գ Մեծը*, նրա քույր *Խոսրովիդուխտը* և *Աշխեն* թագուհին կառուցել են վկայարան՝ կիսագետնափոր դամբարան, վրան՝ Մասիս լեռան լանջից Տրդատ Գ-ի բերած քարերից քառասյուն ամպհովանի: 395-ին *Սահակ Ա Պարթևը* վերակառուցել է Ս. Հռիփսիմեի վկայարանը, որն ավերել էր Պարսից Շապուհ արքան: Ըստ VII դ. պատմիչ Սեբեոսի, 618-ին *Կոմիտաս Ա Աղցեցին* քանդել է այդ վկայարանը՝ «ցած և մթին» լինելու պատճառով, և տեղում սրբատաշ տուֆից կառուցել այսօր կանգուն Ս. Հռիփսիմե եկեղեցին: Այն կենտրոնագմբեթ է, քառախորան, չորս անկյունները երեք քառորդ խորշերով, որոնցից մուտքեր են բացվում դեպի ավանդատները: Արլ.՝ Ավագ խորանի տակ ս. Հռիփսիմեի թաղածածկ դամբարանն է, որի մուտքը հս-արլ. ավանդատնից է: Ս. Հռիփսիմե եկեղեցին իր ճարտարապետության բյուրեղյա հստակության և կատարյալ հորինվածքով այդ տիպի եկեղեցիների լավագույն օրինակն է:

Հռիփսիմեատիպ կառույցների շարքին են պատկանում Հայաստանում Մոխրենիսի Օխտը դռնի վանքի (VI դ.), Ավանի Ս. Հովհաննես (VI դ.), Արամուսի Ծիրանավոր Ս. Նշան (VI դ.), Զորադիրի Ս. Էջմիածին (VI դ.), Գառնհովիտի Ս. Գևորգ (VII դ.), Այգեշատի Թարգմանչաց վանքի (VII դ.), Սյունի վանքի Ս. Հովհաննես (VII դ.), Արծվաբերի Ս. Աստվածածին (VII դ.), Արծվանիստի Ս. Աստվածածին (X դ.), Վարագավանքի Ս. Աստվածածին (X դ.), Աղթամարի վանքի Ս. Խաչ (X դ.) եկեղեցիները, Վրաստա-

նում՝ հայ քարգործ վարպետների մասնակցությամբ շինված Մցխեթի Ս. Խաչ (VII դ.), հայ ճարտ. Թոդոսակի կառուցած Աթենիի Ս. Սիոն (VII դ.), Շուամթայի (VII դ.) և Մարտվիլիի (X դ.) եկեղեցիները:

Կոմիտաս Ա Աղցեցին թողել է շին. երկու արձանագրություն, որոնցից Ավագ խորանին փորագրվածում իրեն անվանել է եկեղեցու «շինող»: Հայկ. ճարտ. մեջ վաղ միջնադարում շինող բառը կիրառվել է ճարտարապետ իմաստով, հետևաբար՝ Կոմիտաս Ա Աղցեցին եղել է եկեղեցու ոչ միայն կառուցողը, այլև՝ ճարտարապետը: 628-ին կաթողիկոսը վախճանվել է և ամփոփվել ս. Հռիփսիմեի դամբարանի առջև, եկեղեցու ներսում (տապանաքարը հետագա նորոգումների ժամանակ ծածկվել է սալահատակի տակ): XVII դ. սկզբին Է. Ս. Հ. վ. եղել է կիսավեր և լքված: Այդ տարիներին, ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, կաթոլիկ երկու միսիոներ քանդել են ս. Հռիփսիմեի դամբարանը և հափշտակել տապանում ամփոփված սրբուհու մասունքները: Էջմիածնի Գրիգոր և Վարդան եպիսկոպոսները հետ են խլել մասունքները և նորոգել դամբարանը: *Փիլիպոս Ա Աղբակեցին* 1651–53-ին նորոգել է Ս. Հռիփսիմե եկեղեցու գմբեթը, տանիքը, պատերի որոշ հատվածներ, սալահատակել ներսը և արմ. մուտքի առջև քառամույթ սրահ կառուցել: 1655-ին վախճանված Փիլիպոս Ա Աղբակեցուն Երևանի Մահմադուլի խանն արգելել է թաղել Էջմիածնի Մայր տաճարի մոտ, և կաթողիկոսին ամփոփել են Ս. Հռիփսիմե եկեղեցու ներսում: Եկեղեցու արմ. մուտքի առջև թաղված են Հայոց կաթողիկոսներ Աստվածատուր Ա Համադանցին (1715–25) և Կարապետ Բ Ուլնեցին (1726–29): Արլ. մասում Է. Ս. Հ. վ-ի վանահայրեր Ղազար վրդ. Աստապատցու (XVII դ.), Անտոն վարդապետի (XVIII դ.), ինչպես նաև XVII դ. աստվածաբան, փիլիսոփա Ստեփանոս Լեհացու շիրմաքարերն են:



Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքի եկեղեցու հատակագիծը

Եղիազար Ա Այնթապցին XVII դ. վերջին տասնամյակում նորոգել է Է. Ս. Հ. վ-ի շենքերը, հաստատել վանքի միաբանությունը: *Սիմեոն Ա Երևանցին* 1776-ին կառուցել է վանքի աղյուսաշեն պարիսպները, հս. դարպասը և երկու շրջանաձև բուրգերը՝ Մկրտիչ եպիսկոպոսի միջոցներով: 1790-ին *Ղուկաս Ա Կարնեցին* կառուցել է եկեղեցու արմ. մուտքի առջևի սրահի վրայի զանգակատունը: *Մկրտիչ Ա Վանեցին* 1898-ին վանքի հվ. կողմում կառուցել է միաբանության համար երկհարկանի շենք և չթրծված աղյուսից պարիսպների հվ. և արլ. հատվածները փոխարինել սրբատաշ տուֆից շինված պատերով: 1936-ին մասնակի նորոգվել են վանքի շենքերը: 1945-ին վանքի բակի հվ. մասում այգի է տնկվել: *Վազգեն Ա Պալճյանի* հայրապետության տարիներին բարեկարգվել է վանքի տարածքը, հվ. կողմում աղյուր կառուցվել (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան): 1958-ին մաքրել են եկեղեցու ներսի ուշ շրջանի սվաղը, Ավագ խորանում նոր սեղան տեղադրել և կոփածո երկաթից ջահ պատրաստել: Պեղումներով Ս. Հռիփսիմե եկեղեցու հս-արլ. և հվ-արմ. որմնամույթերի տակ հայտնաբերվել են որպես խարիսխներ օգտագործված, հոնիական ոճի քանդակներով խոշոր քարեր, որոնք պատկանել են, ըստ երևույթին, հին Վաղարշապատի հեթանոս. տաճարներից մեկին (դրանց այդ-օրինակ տեղադրությունը խորհրդանշել է քրիստոնեության հաղթանակը հեթանոսության հանդեպ): 1979-ին Է. Ս. Հ. վ-ի արլ. կողմում պեղումներով բացվել են IV–V դդ. միանավ եկեղեցու հիմքեր, իսկ հս. պարսպից դուրս՝ վաղ միջնադարյան հնձան: 1987-ին հիմնովին վերակառուցվել է Է. Ս. Հ. վ-ի վթարային վիճակում գտնվող զանգակատունը:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.6, 3-րդ պատկերը:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 1, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Հարությունյան Վ., Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1988: *Еремян А., Храм Рипсимэ, Е., 1955.*

Մուրադ Հասրաթյան



Ը

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, Կաթողիկե եկեղեցի, Տիեզերական եկեղեցի, *եկեղեցու* չորս հատկանիշներից կամ ստորոգելիներից (Մի, Ընդհանրական, Առաքելական և Սուրբ) մեկը, որը բանաձևված է *Հավատո հանգանակում*. «Հաւատամք ի Մի միայն Ընդհանրական և Առաքելական Սուրբ եկեղեցի»: Եկեղեցին որպես *Հիսուս Քրիստոսի* խորհրդավոր մարմին և Տիրոջ ներկայության և փրկագործության երկրային արտահայտություն՝ մեկ ամբողջություն է, Մի և Ընդհանրական իր հիմնադրով՝ Հիսուս Քրիստոսով, իր գլխով, որ է՝ Հիսուս Քրիստոս. «Քրիստոս գլուխն է եկեղեցու» (Եփես. **5.**23), կամ «Մե՛կ մարմին և մե՛կ հոգի, ինչպես որ մե՛կ է ձեր հույսը, որին Աստված կոչեց մեզ: Մե՛կ Տեր կա, մե՛կ հավատ, մե՛կ մկրտություն, մե՛կ Աստված...» (Եփես. **4.**4–5): Եկեղեցին Ընդհանրական է, որովհետև Քրիստոսն իր մեջ ունի համայն մարդկությունը, չի ճանաչում ազգ., աշխարհագր. կամ այլ սահմանափակում և կոչված է քրիստոնեությունը քարոզելու ամբողջ աշխարհում ու բոլոր ժողովուրդների մեջ. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց» (Մարկ. **16.**15): Եկեղեցին Մի և Ընդհանրական է իր նպատակով և առաքելությամբ, այն է՝ Աստծո թագավորության հաստատումը և Աստծո կամքի կատարումը, Մի և Ընդհանրական է առ Քրիստոս իր հավատով, իր *առաքելականությամբ*՝ հաստատված նախ Քրիստոսով, ապա *առաքյալների* կողմից Երուսաղեմի Վերնատանը՝ *Հոգեգալստյան* իրադարձությամբ: Այդ եկեղեցին կոչվել է Աշխարհամատուռ, այսինքն՝ աշխարհին պատկանող մատուռ և առաջին եկեղեցի, որն այնուհետև առաքյալների տիեզերական առաքելությամբ աճել, տարածվել, հաստատվել է տարբեր վայրերում ու դարձել բազմաճյուղ: Առաքյալների և նրանց հաջորդների կողմից աշխարհի տարբեր ծայրերում հաստատված եկեղեցիներն Աշխարհամատուռ եկեղեցու ճառագայթումներն են: Եկեղեցին Մի և Ընդհանրական է իր էության և իսկության մեջ, բայց բազմաճյուղ ու բազմաճառագայթ է երկրի վրա. «Ինչպես մեկ է մարմինը և ունի բազում անդամներ, և մարմնի այդ բազում անդամները բոլորը մեկ մարմին են, այնպես էլ՝ Քրիստոս» (Ա Կորնթ. **12.**12): Այս իմաստով հատկանշական է Իգնատիոս Անտիոքացու (I–II դդ.) այն միտքը, թե տեղական եկեղեցին ոչ թե մեկ մասնիկն է Ը. ե-ու, այլ հենց Ը. ե. է՝ գլուխ ունենալով Հիսուս Քրիստոսին և առաքյալներին:

Բազմաճյուղ Ը. ե. Մի և Ընդհանրական է եղել նաև Քրիստոսի խոսքի, մարմնի և արյան խորհրդի հաղորդությամբ, որով եկեղեցին ապահովում է Տիրոջ ներկայությունն իր մեջ և հավատացյալների միջև: Նա, ով դուրս է այդ հաղորդությունից, չի կարող քրիստ. եկեղեցու մաս կազմել: Աղանդավորներն ու հերետիկոսները, ենթարկվելով բանադրանքի, զրկվել են եկեղեցու հաղորդությունից: Եկեղեցու ընդհանրականությունն ու միությունն արտահայտվել են նաև ուղղափառ *դավանան-*

քով, դրսևորվել *տիեզերական ժողովներում*, որոնք բանաձևել են *հայտնությամբ* տրված դավանանքը: Այն եկեղեցիները, որոնք ընդունել են տիեզեր. երեք ժողովների (տես *Նիկիայի Ա տիեզերական ժողով 325, Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381, Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431)* հաստատած հավատի հիմն. սկզբունքները՝ Հոր և Որդու համագոյությունը, Որդու Աստվածությունը, Մարդեղության և Փրկագործության խորհուրդները, Սուրբ Հոգու Աստվածությունն ու Ամենասուրբ Երրորդության վարդապետությունը, Ս. Կույսի Աստվածածին կամ Աստվածամայր լինելը, կազմել են քրիստ. Ը. ե-ու ընտանիքը, միասնաբար պայքարել աղանդների և հերձվածների դեմ:

Ը. ե. ունեցել է տարբեր ժամանակներում հաստատված և հավասար իրավունքներով օժտված հինգ տիեզեր. աթոռներ՝ Հռոմի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի: Եկեղեց. կարևորագույն գործերում նրանցից ոչ մեկն առանց մյուսների համաձայնության չէր կարող որևէ բան ձեռնարկել կամ թելադրել: Բացի այդ հինգ աթոռներից կային նաև այլ հայրապետություններ՝ առաքելահաստատ և առաքելական նույն իշխանությամբ, որոնցից է Հայոց աթոռը կամ հայրապետությունը՝ հաստատված Սուրբ Էջմիածնում: Սակայն հատկապես քրիստոսաբան. տարբեր ընկալումները, արևելաքրիստ. և արևմտաքրիստ. ավանդությունները, *ուղղափառության* սահմանների և հասկացության շուրջ դավան. տարաձայնությունները, ինչպես նաև պատրիարքական աթոռների հակամարտություններն ու քրիստոնյա աշխարհում գերիշխանության հասնելու նկրտումները պատճառ են դարձել Ը. ե-ու պառակտման: 451-ի *Քաղկեդոնի ժողովը* սկիզբ է դրել Ը. ե-ու բաժանմանը, ինչը խախտել է եկեղեցու միությունը, խզել եկեղեցիների միջև հաղորդությունը: Եթե Քաղկեդոնի ժողովից առաջ հայը Հույն կամ Լատին եկեղեցիներում և փոխադարձաբար օտարազգիները Հայ եկեղեցում կարող էին առանց այլևայլության հաղորդվել Տիրոջ մարմնի և արյան խորհրդով, ապա Քաղկեդոնի ժողովից հետո եկեղեցիների միջև ստեղծված դավան. տարբերությունները խախտել են այն ներդաշնակությունը և միությունը, որ ներկայացնում էր Ը. ե.: Եթե մինչև Ը. ե-ու պառակտումը բոլոր եկեղեցիները հավատի ավանդության առնչությամբ ունեցել են ընդհանրական և առաքելական համընդհանուր ակունք, այն է Աստվածաշունչը, տիեզեր. ժողովների դավան. բանաձևումները և վճիռները, համաքրիստ. եկեղեցու սուրբ հայրերի ուսուցումները, ապա բաժանումից հետո յուրաքանչյուր եկեղեցի կամ եկեղեցիների ընտանիք ունեցել է իր դավանանքը, համաքրիստ. եկեղեց. հայրերի ու տիեզեր. ժողովների սեփական ցանկը:

Քաղկեդոնի ժողովի դավան. վճիռները չընդունած եկեղեցիները, այդ թվում՝ Հայ եկեղեցին, կազմել են Ը. ե-ու Արևելյան ուղղափառ ընտանիքը: Ը. ե-ու պառակտումը դարերի ընթացքում ավելի է խորացել և հանգեցրել նորանոր բաժանումների: 1054-ին միմյանց նզովել և խզել են իրենց հաղորդությունը Կ. Պոլսի և Հռոմի աթոռները: Պատմության մեջ դա հայտնի է որպ. և արմ. եկեղեցիների մեծ բաժանում անունով: Առաջացել են ուղղափառ (օրթոդոքս) և արևմտյան (կաթոլիկ) եկեղեցիները: Ավելի ուշ, XVI դ. Ռեֆորմացիայի արդյունքում, երբ ի հայտ է եկել *բողոքականությունը*, ստեղծվել են նոր եկեղեցիներ և հրանվանություններ՝ ձևավորված դավան., վարդապետ., վարչ. և կազմակերպ. տարբեր հիմքերի վրա:

Հայ եկեղեցին ընդունել է տիեզեր. երեք ժողովների դավանությունը համապատասխան վճիռներով և իր Տոնացույցում առանձին հիշատակում է դրանք՝ տոնախմբելով այդ ժողովներին մասնակցած բոլոր եկեղեցիների հայրապետների հիշատակը: Հայ եկեղեցին իր առաքելական հաջորդականությամբ, առաքելությամբ, դավանանքով և ինքնուրույն նվիրապետությամբ Ը. ե-ու մեկ և անբաժան մասն է և ճանաչում է Քրիստոսի եկեղեցին իր միության, սրբության, առաքելականության և ընդհանրականության մեջ: Եկեղեցու ընդհանրականության և միության՝ Հայ եկեղեցու ըմբռնումը խտացված է «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն՝ յերկբայականս, և սէր՝ յամենայնի» բանաձևում: Հայ եկեղեցին որպես անկախ և ինքնիշխան եկեղեցի մշտապես հաղորդակցվել է մյուս եկեղեցիների հետ. դրա արտահայտություններից է նաև քույր եկեղեցիների սրբերի (տես *Սուրբեր Հայաստանյայց առաքելական եկեղեցու*) և հայրապետների (տես *Եկեղեցու հայրեր*) ներկայությունը Հայ եկեղեցու Տոնացույցում ու ծիսական կյանքում: Հայ եկեղեցին ունի եկեղեցու հայրերի

ԸՆԴՀԱՆՐ. մի ցանկ՝ «երկոտասան վարդապետք» անվամբ, որն արլ. և արմ. քրիստ. մտածողության համադրություն է: Այնտեղ ընդգրկված են Ը. ե-ու հինգ տիեզեր. աթոռների, ինչպես նաև Աթենքի, Կեսարիայի, Կիպրոսի աթոռների մեծահռչակ հայրապետները:

Քաղկեդոնի ժողովը խախտել է եկեղեցու միությունը հաղորդության ու դավանանքի պարագայում, բայց եկեղեցու, որպես Քրիստոսի խորհրդավոր մարմնի, ընդհանրականությունն արտահայտվում է մի հոտ լինելու և մի հովիվ ունենալու իրողությամբ՝ «պիտի լինի մի հոտ և մի հովիվ» (Հովհ. **10.**16), և հիմնադրի ու գլխի՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ բոլոր եկեղեցիների ու աթոռների ունեցած հավատարմությամբ, սիրով և հնազանդությամբ՝ «եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին» (Եփես. **5.**24):

Արտաշես Ղազարյան



ԹԱԴԵՈՍ, Ղեբեոս, նաև Լեբե, Ադդե, առաքյալ: Ըստ Նոր կտակարանի՝ Հիսուսի տասներկու աշակերտներից մեկը՝ Հակոբոսի եղբայրը, որը քրիստոնեություն է քարոզել նաև Հայաստանում (43–66-ին): Ի թիվս տասներկուսի՝ Հիսուսն ընտրել է նաև նրանց՝ «...Ալփեոսի որդի Յակոբոս և Ղեբեոս, որ Թադեոս կոչվեց...» (Մատթ. **10.**1–3, Մարկ. **3.**13–19): Տես *Առաքյալներ*:

Համաձայն այլաբնույթ աղբյուրների՝ Թ. եղել է Քրիստոսի 72 (70) աշակերտներից մեկը (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք Բ, գլ. ԼԳ: Յայսմաւուրք, դեկտ. ԻԳ, 1706, էջ 343–346, որտեղ նա հիշվում է իբրև «գլուխ ՀԲ [72] աշակերտացն Քրիստոսի»):

Ըստ Մովսես Խորենացու, Հիսուս Քրիստոսը խոստացել էր, որ իր առաքյալներից մեկին կուղարկի *Եդեսիա* քաղաք՝ *Աբգար* Թագավորին բժշկելու և այնտեղ ավետարանագործելու, ինչը և կատարվել է Թ-ի միջոցով: Աբգարին բժշկելուց, քրիստոնեություն քարոզելուց, ինչպես նաև *Ադդե* անունով մեկին եպիսկոպոս ձեռնադրելուց հետո Թ. Աբգարի հրովարտակով ներկայացել է Հայոց Թագավոր Սանատրուկին (I դ. 2-րդ կես), որը Աբգարի քեռորդին էր: Թ-ի քարոզչությամբ Սանատրուկը ևս ընդունել է քրիստոնեություն, բայց, զգուշանալով իշխանների սպառնալիքից, շուտով հետ է կանգնել:

Թ-ի հրաշագործ քարոզչությամբ քրիստոնեություն են ընդունել շատերը, այդ թվում՝ Թագավորի դուստր *Սանդուխտը*: Շատ չանցած Սանատրուկի կարգադրությամբ Արտազ գավառի Շավարշավան գյուղաքաղաքում նահատակվել են Թ. և Սանդուխտ կույսը: Առաքյալի նահատակության վայրում կառուցվել է *Արտազի Ս. Թադե վանքը*:

Թ-ի՝ Հայաստանում առաքելագործելու մասին վկայում են ոչ միայն հայկ., այլև ասոր. աղբյուրները (Ագաթանգեղոսի ասորերեն համառոտ խմբագրությունը՝ «Ադդեի վարդապետություն»-ը): Թ-ի կյանքի, քարոզչության և նրա անձի հետ կապված հարակից պարագաների մասին են պատմում հետևյալ ընդարձակը. «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն, քարոզութեանն եւ գալստեան ի Հայս եւ կատարմանն որ ի Քրիստոս», «Վկայութիւն սրբոյն Սանդիտոյ դստերն Սանատրկոյ արքայի» («Սոփերք հայկականք», 1853, հ. 8, էջ 9–58, Յայսմաւուրք, 1834, մաս 1, էջ 63–70, մաս 2, էջ 302–303), «Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյ եւ Սամուէլի եւ Իսրայելի եւ այլոց, որ բազում ժամանակս կային ծածկեալ եւ էին ամբողջ եւ յայտնեցան առն ուրումն ճգնաւորի եւ աքանչելատեսի որ ի մանկութեան վարժեալ էր արժանաւոր կարգաւք Կիւրակոս անուն» («Սոփերք հայկականք», 1853, հ. 8, էջ 85–96):

Թ. առաքյալի անունով Հայոց կանոնադրքում առկա են անվավեր կանոններ («Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի ի քաղաքն Ուռհա ի լուսաւորել զնոսա» ևն), որոնք բովանդակում են քրիստ. բարոյականության, վարք ու բարքի ընդհանուր սկզբունք-

ներ և սահմանումներ («Կանոնագիրք Հայոց», 1971, հ. 2, էջ 19–40):

Թ-ի անունով հայտնի են նաև հետևյալ մատենագր. միավորները. «Սուրբ առաքելոյն Թադէոսի Յաղագս առաջին գիւտի Սրբոյ Խաչին...» (Ղեբուբնա Եդեսացի, «Թուղթ Աբգարու...», 1868, էջ 60–72), «Սրբոյն Թադէոսի առաքելոյն վասն յարութեան մեռելոց» («Անկանոն գիրք առաքելականք», 1904):

Իբրև Հայ եկեղեցու հիմնադրի՝ Թ-ին նվիրվել են ճառեր, դանձեր, տաղեր, աղոթքներ ևն: Թ. իր պատշաճ տեղն է զբաղեցրել նաև հայ միջնադարյան կերպարվեստում: Նա սովորաբար պատկերվել է մի ձեռքին դաշույն (որով նահատակվել է), մյուս ձեռքին՝ Հիսուսի կողը խրված *գեղարդը* (որն, ըստ ավանդության, նա բերել էր Հայաստան):

Հայ եկեղեցին Թ. և *Բարդուղիմեոս* առաքյալների հիշատակը տոնում է նոյեմբեր կամ դեկտեմբեր ամիսներին: Թ-ի հիշատակը նշում է նաև երկրորդ անգամ՝ ս. Սանդուխտի հետ:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.7, 1-ին պատկերը:

Գրկ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997, գիրք Բ, գլ. ԼԳ, ԼԴ: Մելքոնյան Հ., Ասորական աղբյուրները Հայ եկեղեցու մասին, «Էջմիածին», 1978, № 7, № 10–12: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Հակոբ Քյոսեյան

ԹԱԹՈՒԼ ճգնավոր, սուրբ Թաթուլ (ծ. և մ. թթ. անհտ), տոնելի սուրբ, V դարի վերջի հայ *ճգնավորության* երևելի ներկայացուցիչ, Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից: Վարդանանց պատերազմից (451) հետո, շարունակվող պարսկ. հալածանքներից խույս տալով, ավագ եղբոր՝ *Վարոսի* հետ առանձնացել է Գաբեղենից (Գաբեղյանց) գավառի լեռներում, Վիշապաձոր կոչված վայրում (այժմյան Կաղզվան քաղաքի մոտակայքում), որտեղ վարել է «Հրեշտակակրոն» կյանք և հռչակվել որպես աստվածառաք տեսիլների տեսանող: Առանձնական ճգնության նվիրվելու համար եղբայրները բաժանվել են. Թաթուլը մնացել է նույն տեղում, իսկ Վարոսը ճգնությունը շարունակել է Դիցմայր (Դիցմայր) կոչվող քարանձավում:

Թ-ի հռչակը լսելով՝ նրա մոտ հավաքվել են ճգնավոր. խմբեր և կազմել ուխտավոր ճգնակյացների միաբանություն: Այնտեղ կառուցել են եկեղեցի, որը միաբանության առաջնորդի անունով կոչվել է Թաթուլի վանք (Թաթլա կամ Թաթլո վանք): Իր աշակերտներից *Թումասին* (Թովմաս) առաջնորդ նշանակելով՝ Թ. ճգնակեցությունը շարունակել է Մայրաձոր կոչված մենարանում՝ մինչև իր վախճանը, որից հետո նրա մարմինը փոխադրվել և ամփոփվել է յուրանուն վանքում:

Հայ եկեղեցին ս. Թ-ի, ս. Վարոսի և ս. Թումասի հիշատակը տոնում է Խաչվերացից հետո՝ 5-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի օրը՝ ս. *Անտոն* և ս. *Կրոնիդես* ճգնավորների հիշատակի հետ միասին:

Գրկ. Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանություն..., հ. 7, Վնտ., 1813, էջ 22–33: «Սոփերք հայկականք», հ. 11, Վնտ., 1854, էջ 50–59: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմ. Ռ. Մաթևոսյան, Ս. Էջմիածին, 1999:

Լևոն Սարգսյան

ԹԱԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի հյուսիսում: VII դ. կառուցել են Կամսարական իշխանները: Քառամույթ բազիլիկի հայկ. ճարտ-յան մշակած խաչաձև, եռախորան տարբերակն է, որի նախատիպն է VII դ. սկզբին վերակառուցված Դվինի Կաթողիկե եկեղեցին (տես *Դվինի Ս. Գրիգոր եկեղեցի*): Թ. Կ. ե. ունի *Զվարթնոցի* տաճարի ազդեցությունը կրող հարուստ արտաքին հարդարանք, խորանների և գմբեթի թմբուկի դեկորատիվ կամարաշարեր, լուսամուտների քանդակազարդ պսակներ, ցցուն բեկվածքներով քիվեր ևն: Ինքնատիպ է արմ. ճակատը, որի զույգ խորշերի միջի սյուների խոյակներին, հավանաբար, արձաններ կամ թևավոր խաչեր են կանգնեցվել: Թ. Կ. ե-ուց արմ. և հս. վաղմիջնադարյան գերեզմանոցն է, որտեղ կան V–VI դդ. քառանիստ կոթողներ՝ թեմատիկ հարթաքանդակներով, IX դ. խաչքարեր: 774-ին արաբները կողոպտել են Թալինը, սպանել և գերի տարել բնակչության մեծ մասին. այս աղետը հայոց պատմագրության մեջ հայտնի է «Թալնո կոտորած» անունով: 783-ին Թ. Կ. ե-ու պատին արձանագրություն է փորագրվել՝ Թալին ջուր անցկացնելու մասին: Բագրատունիների օրոք Թալինը բարգավաճել է: 1040-ին Հովհաննես Սմբատ թագավորը Թ. Կ. ե-ուն այգի է նվիրել: 1162-ին Ելտկուզ ամիրան հանկարծակի հարձակվել է Թալինի և Աշնակի վրա, այրել ավանները և գերեվարել բնակիչներին: Թ. Կ. ե. ավերվել է 1840-ի հուլիսի 4-ի երկրաշարժից. քանդվել

են գմբեթը և շենքի հվ-արմ. մասը: 1866-ին Թալինում Ս. Աստվածածին եկեղեցին կառուցելիս օգտագործել են Թ. Կ. ե-ու քանդակազարդ և այլ քարեր: 1947-ին Թ. Կ. ե. մասնակի վերանորոգվել է: 1970–74-ին վերակառուցվել է գմբեթի թմբուկը, նորոգվել են տանիքները, պեղումներով բացվել Թալինի Կաթողիկե հս. խորանից մոտ 5 *մ* հեռու գտնվող V դ. միանավ բազիլիկ եկեղեցու հիմքերը:

Թ. Կ. ե-ու ներքին պատերն ամբողջությամբ նկարազարդ են եղել: Պահպանվել են բազմաթիվ մեծ ու փոքր հատվածներ Ավագ խորանում և շրջակա պատերին: Ավագ խորանի գմբեթարդում պատկերված է եղել «Քրիստոսը փառքի մեջ» հորինվածքի ինքնատիպ տարբերակ, որտեղ Քրիստոսի փոխարեն ներկայացվել է միայն նրա գահը: Պահպանվել է Տիրոջ գահի պատկերի աջ եզրը՝ բարձիկով և վրան դրված գրքով: Կենտր. պատերի երկու կողմերում նկարված են եղել քառակերպեր (տետրամորֆ): Հատվածաբար պահպանվել են վերջիններիս հսկայական ճերմակ թևերը: Ներքևում եղել են հասակով մեկ կանգնած առաքյալների պատկերները: Դեպի Ավագ խորան տանող կամարին տասը մեդալիոններում սրբերի դիմապատկերներ են, իսկ կենտր. մեդալիոնում՝ Հավասարաթև խաչի պատկեր: Խորանի հվ. պատին դեռևս ուրվագծվում է «Մուտք Երուսաղեմ» հորինվածքը: Պահպանվել են նաև երկու հեծյալների, ինչպես նաև մարդկային ֆիգուրների, ճարտ. շինությունների և այլ հատվածային պատկերներ: Ուշագրավ է, որ Թ. Կ. ե-ու արտաքին հարդարանքի որոշ մասեր, ինչպես, օր., քիվերը և լուսամուտների պսակները, նույնպես եղել են գունազարդված: Եկեղեցու որմնազարդման պատվիրատուն է Մովսես Եկեղեցապանը. այդ մասին է վկայում եկեղեցու ձախ ավանդատան պատին պահպանված եզակի արձանագրությունը:

Թալինի Կաթողիկե եկեղեցու հատակագիծը

Ինչպես բուն կառույցի, այնպես էլ որմնանկարների թվագրման մասին որևէ ստույգ տեղեկություն չի պահպանվել: Տաճարը հավանաբար որմնանկարներով զարդարվել է շին. աշխատանքների ավարտից հետո, բայց ոչ ուշ քան VII դ. 80–90-ական թվականներին:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.7, 2-րդ պատկերը:

Գրկ. Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վնտ., 1905: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, 2, Ե., 1942, 1948: Մանուչարյան Ա., Թալինի Կաթողիկե եկեղեցին, «Էջմիածին», 1988, № 8: *Дурново Л., Краткая история древнеармянской живописи, Е., 1957; Котанджян Н., Цвет в раннесредневековой живописи Армении, Е., 1978;* Der Nersessian S., L'art arménien des origines au XVII siècle, P., 1977.

Մուրադ Հասրաթյան
Կարեն Մաթևոսյան
Աննա Լեյլոյան

ԹԱՆԱԴԵ ՎԱՆՔ, Թանատի վանք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղից 7 *կմ* հարավ-արևելք: Հիմնադրվել է վաղ միջնադարում՝ որպես ճգնավորական մենաստան: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի, 735-ին Թ. վ-ում ամփոփել են *Ստեփանոս Սյունեցու* դին և գերեզմանի վրա փոքրիկ մատուռ կառուցել: 1273–79-ին մատուռի տեղում, Պռոշ իշխանի և նրա ընտանիքի հովանավորությամբ, շրջակայքի բնակիչների ուժերով մուգ կապտավուն բազալտի սրբատաշ քարերով կառուցվել է ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով (արլ. կողմինները՝ երկհարկ), արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածքով Ս. Ստեփանոս եկեղեցին: Գմբեթի հովանոցաձև վեղարով բազմանիստ թմբուկը զարդարված է բարձրաքանդակներով. հվ. լուսամուտից վերև Պռոշյանների զինանշանն է՝ թևատարած արծիվ, մագիլներում՝ խոյ, վեղարի տակ՝ եզան գլուխ, ցուլի վրա հարձակվող առյուծ, թռչուն, հվ. պատին՝ արևի ժամացույցի վրա քանդակված են գավաթից ջուր խմող երկու սիրամարգ, նրանցից ձախ՝ թռչունը ձագի հետ ևն: Ս. Ստեփանոս եկեղեցուն հս-ից կից է XIII դ., սրբատաշ բազալտից միանավ Ս. Նշան կամ Վարագա Ս. Նշան կոչվող եկեղեցին (հավանաբար, որոշ ժամանակ այստեղ է պահվել *Վարագավանքի* հռչակավոր ս. Նշանը): Նրա արմ. մուտքի ճակատակալ քարին քանդակված է Պռոշյան իշխանական տոհմից երիտասարդ հեծյալ, որը նիզակը խրել է առյուծի երախը, իսկ

ԹԱՆԱՀԱՏԻ նրանցից վերև տարբեր թռչուններ են պատկերված: Թ. վ-ի քանդակները միջնադարյան հայկ. աշխարհիկ պատկերաքանդակների արժեքավոր նմուշներ են:

Թ. վ. XIV դ. ստացել է բազմաթիվ նվիրատվություններ՝ հողամասեր, այգիներ, դրամ: 1335-ին Հայրուտը վանքում «աղոթանոց» է կառուցել: Թ. վ-ի շուրջը կան XIII–XVI դդ. խաչքարեր և տապանաքարեր: 1971-ին Թ. վ-ի տարածքը պեղվել է, և բացվել են վանքի դավթի, հվ. կողմում՝ խոշոր միանավ եկեղեցու և նրա դավթի ու աշխարհիկ շինությունների հիմքեր (ենթադրվում է, որ այս շենքերում է գործել *Գլաձորի համալսարանը*): 1984-ին նորոգվել են Ս. Ստեփանոս և Ս. Նշան եկեղեցիները, և Թ. վ-ի տարածքը բարեկարգվել է:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.7, 3-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Շարուր-Դարալագյազի գավառ: Վայոց ձոր կամ Դարալագյազ, ԱՀ, Թ., 1905, գիրք 12: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1944: Եղիազարյան Հ., Թանահատի վանքը կամ Ղարավանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1964, № 10:

Մուրադ Հասրաթյան

ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔ, ՀՀ Սյունիքի մարզի Արևիս գյուղի մոտ, լեռան լանջին: Պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանը Թ. վ. համարել է իր նշանակությամբ երկրորդը (*Տաթևի վանքից* հետո) Սյունիքի վանքերի շարքում: Թ. վ. առաջնորդվել է ճգնավորական մենաստանի կանոնակարգով. միաբանները վանքի տարածքից դուրս չեն եկել, սնվել են հաց ու ջրով, միայն կիրակի օրերին՝ բանջարեղենով ու ընդեղենով: Ղ. Ալիշանը Թ. վ-ի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու կառուցման թվականը համարում է 491-ը: Այն ունի միանավ, պայտաձև հատակագծով և ատամնաշարով զարդարված, շեշտված պայտաձև եզրակամարով (փլվել է 1979-ին) խորան, որից մուտք է բացվում դեպի հվ-ից կից ավանդատունը: Հվ-ից եղել է սյունասրահ. պահպանվել են բազմանիստ սյուների բեկորները, խարիսխները և խոյակները: VI–VII դդ. նախնական փայտե ծածկը փոխարինվել է թաղով, որի համար երկայնական պատերին որմնամույթեր են կցել: Վանքի արմ. կողմում փոքր գերեզմանոցն է, որտեղ գտնվում է վանահայր Մխիթարի գետնափոր դամբարանը (ավանդաբար համարվում է բուժիչ հատկությամբ օժտված): XVII դ. սկզբին Թ. վ-ում են եղել *Սյունյաց Մեծ անապատի* հիմնադիրներ Սարգիս եպիսկոպոսը և տեր Կիրակոսը: Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, Թ. վ. ավերվել է 1658-ի ապրիլի երկրաշարժից:

1975-ին Թ. վ-ի փլատակների մաքրման և պեղման ժամանակ հայտնաբերվել է բազալտի երկնիստ կոթող՝ ուրարտական Արգիշտի Բ թագավորի (Ք.ծ.ա. 714–685) սեպագիր արձանագրությամբ (նիստերից մեկում հետագայում խաչ է քանդակվել), որը հայտնում է Ծուլուկի երկրի (Սյունիքի Ծղուկ գավառ) նվաճման մասին: Ենթադրվում է, որ Թ. վ-ի տեղում դեռևս Ք. ծ. ա. 1-ին հազարամյակից սրբավայր է եղել:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.7, 4-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Զանգեզուրի գավառ, հ. 1, Սիսիան, Թ., 1898: Բարխուդարյան Ս., Պատմահնագիտական-տեղագրական դիտողություններ, «ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր», գիրք 1, Ե., 1936: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Հարությունյան Ն., Արգիշտի II-ի նորահայտ սեպագիրը, ՊԲՀ, 1979, № 3:

Մուրադ Հասրաթյան

ԹԱՇՃՅԱՆ Նիկողայոս (1841, Կ. Պոլիս – 9.9.1885, Կ. Պոլիս), երաժշտագետ, կոմպոզիտոր, մանկավարժ: Սովորել է Խասգյուղի Ներսեսյան վարժարանում, աշակերտել Գ. Երանյանին, ուսումնասիրել հայկ. և եվրոպ. երաժշտության տեսությունը: Հեղինակել է հայրենասիր. երգեր, որոնցից մի քանիսը երգչախմբի համար բազմաձայնել են *Կոմիտասը* և Մ. *Եկմալյանը*: 1879-ից եղել է Կ. Պոլսի Մայր եկեղեցու երաժշտապետը: Պոլսահայ մամուլում հանդես է եկել տեսական հոդվածներով: Թ-ի մեծագույն ծառայությունը հայկ. հոգևոր երգերի վերաձայնագրությունն է: Խազերի բանալին կորելուց հետո XIX դ. շարականները և մյուս երգերը վերաձայնագրելու բազմաթիվ ձեռնարկումներից միայն Ե. *Տնտեսյանի* և Թ-ի փորձերը

Ն. Թաշճյան

հասցրին արդյունքի (երկուսն էլ՝ Հ. *Լիմոնճյանի* նոտագրությամբ)։ Թ. այդ երգերը գրի է առել 1873-ին, Ս. Էջմիածնում, Մ. Եկմալյանի և Պ. Ճեպեճյանի օգնությամբ. հրատարակվել են «Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի» (1874), «Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց... Հայաստանեայց» (1875) և «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ» (1877) ծավալուն հատորներով։ Ներկայումս ապացուցված է, որ Թ-ի գրի առած բազմաթիվ եղանակներում խազային նոտագրությունից շատ բան պահպանվել է առանց զգալի փոփոխության։ Թ-ի հատորները ներկայացնում են V–XV դդ. հայ մանրագիտացված մոնոդիկ երաժշտության պատկառելի բաժինը՝ ժանրերի ու ձևերի բազմազանությամբ, և ունեն գիտ. ու գեղ. մեծ արժեք։ Առանձնակի նշանակություն ունի նաև նրա «Դասագիրք եկեղեցական ձայնագրության հայոցը» (1874), որտեղ հեղինակը, Հ. Լիմոնճյանի նոտագրությամբ համակարգը բացատրելուց բացի, ամփոփում է հայ երաժշտության հին տեսության հիմն. դրույթները, մասնավորապես բացահայտում լադային համակարգի հատկանիշները։

Գրկ. Տ ն տ ե ս յ ա ն Ե., Նկարագիր երգոց..., ԿՊ, 1874: Կ ո մ ի տ ա ս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Հ ի ս ա ր լ յ ա ն Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան..., ԿՊ, 1914: Ա թ ա յ ա ն Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959:

Ռոբերտ Աթայան

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ, տես *Թարգմանչաց շարժում*:

«ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՎԵՏԱՐԱՆ», 1232-ի նկարազարդ մագաղաթե ձեռագիր մատյան։ Գրչագրել է Տիրացուն, ծաղկել՝ Գրիգորը։ Ընդօրինակման վայրը նշված չէ (ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, ընդօրինակվել է Հս. Հայաստանի քաղաքներից կամ վանքերից մեկում)։ XIV դ. սկզբին պատկանել է Վերին Խաչենի իշխան Գրիգոր Դոփյանին ու նրա կնոջը՝ Սյունյաց Տարսայիճ իշխանի դուստր Ասփային, որը ձեռագիրը նվիրել է *Խաղավանքին*։ 1900-ին եղել է Ուտիքի Թարգմանչաց վանքում (այստեղից էլ՝ անվանումը)։ 1916-ին Գարեգին վրդ. Հովսեփյանը այն բերել է Ս. Էջմիածին։ Այժմ պահվում է Մատենադարանում (ձեռ. № 2743), չափերը՝ 30x23 *սմ*, բաղկացած է 374 թերթից։ Գրիգոր Դոփյանի պատվիրած ոսկե կազմը չի պահպանվել, այժմ կաշեկազմ է։

Ձեռագրի գեղանկարչ. զարդարանքը բաղկացած է 10 խորանից, Մատթեոս և Հովհաննես ավետարանիչների դիմանկարներից, 4 անվանաթերթից, 7 ամբողջական էջերի վրա պատկերված տերուն. մանրանկարներից («Ավետում», «Ծնունդ», «Մկրտություն», «Խորհրդավոր ընթրիք», «Հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց», «Դժոխք իջնելը», «Աստվածածնի վերափոխումը»), որոնք դասավորված են ձեռագրի համապատասխան հատվածի կողքին, 15 լուսանցազարդ մանրանկարներից («Քրիստոսի բժշկումները», «Քրիստոսի զրույցը սամարացի կնոջ հետ», «Փորձություն անապատում», «Պետրոսի զղջումը» ևն), ինչպես նաև բազմաթիվ լուսանցազարդերից ու զարդագրերից։

«Թ.Ա.»-ի բնորոշ առանձնահատկությունը կերպարների զուսպ շարժուձևերով հանդերձ լարված դրամատիզմն է՝ արտահայտված զուտ գեղ. միջոցներով, հորինվածքով (որը միշտ կառուցված է կա՛մ հորիզոն. և ուղղաձիգ գծերի, կա՛մ անկյունագծերի առանցքների խաչավորմամբ), ձևերի անհանգիստ բնույթով (հագուստի ծալքերում, ճարտ. կառուցվածքներում և, հատկապես՝ բնանկարի տարրերում, որտեղ ժայռաբեկորները ուժեղ ճնշումից կարծես զարնվում են միմյանց) և կոլորիտով, որն ստեղծվում է թանձր կապույտի և մուգ կարմիր գույներանգների համադրությամբ՝ ներառվելով թավշամանուշակագույն ընդհանուր գունաշարում (որի հետ լավ ներդաշնակվում է կանաչ ներկի ու ոսկու փոշու խառնուրդից գոյացած թույլ առկայծող ոսկու արտասովոր նրբերանգը), ինչպես նաև գործող կերպարների դեմքերով, որոնց յուրահատուկ արտահայտչականություն և հուզական մեծ ուժ է հաղորդում աչքերի ցայտուն երանգավորումը։ Գունագեղության կատարելությամբ և կերպարների արտահայտչականությամբ «Թ.Ա.» հայկ. մանրանկարչության ամենանշանավոր ձեռագրերից է։

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.8, 1-ին պատկերը։

Գրկ. Հ ո վ ս ե փ յ ա ն Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, մաս 1, Ե., 1983: *Д у р н о в о Л.А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979;* Der Nersessian S., La miniature arméniene au XIII siècle, “Archélogia”, N 126, janvier, 1979.

Իրինա Դրամբյան

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՇԱՐԺՈՒՄ, հայ գրերի գյուտից հետո սկզբնավորված շարժում, որի խնդիրն էր՝ նախ հայերեն թարգմանել *Աստվածաշունչը*, հայացնել եկեղեցական *ծեսը*, ապա հայալեզու քրիստ. գրականություն տարածելու, հայոց դպրություն սկզբնավորելու միջոցով նպաստել Հայաստանի հոգևոր վերածննդին, կրոնամշակութային, ինչպես նաև գաղափարաքաղաքական անկախության հաստատմանը: Թ. շ-ման 1-ին փուլն ընդգրկում է V դ. 1-ին կեսը, 2-րդ շրջանը կապված է *հունական դպրոցի* գործունեության հետ (V դ. կես – VIII դ. սկիզբ):

«Թարգմանիչ» են անվանվել հայ գրերի գյուտի հեղինակ *Մեսրոպ Մաշտոցի* և Հայոց կաթողիկոս *Սահակ Ա Պարթևի* շուրջ 100 սաները, որոնք անմիջականորեն աշակերտել են նրանց, չհաշված «կրտսեր թարգմանիչները», հիմնականում՝ աշակերտների աշակերտները: Թարգմանիչ նշանակել է նաև մեկնիչ, մեկնող, Աստվածաշնչի այս կամ այն դրույթը բացատրող: Առաջին թարգմանիչներից հանվանե հայտնի են մոտ երեսունը, իսկ *Տոնացույց* են մտել երեքը՝ V դ. պատմիչ *Եղիշեն, Մովսես Քերթողը* և *Դավիթ Անհաղթը*: Հայ եկեղեցին «սրբոց թարգմանչաց վարդապետացն մեր ոց» անվան ներքո տոնում է վեց թարգմանիչների հիշատակը՝ Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ: Այս վեցյակի մեջ են նաև *Գրիգոր Նարեկացին* և *Ներսես Շնորհալին*:

Հայ գրերի գյուտով (405) սկզբնավորված Թ. շ. դարերի ընթացքում համալրվել է նորանոր անուններով և թարգմ. արժեքավոր գործերով: Հայ քրիստ. միտքը, ելնելով Սուրբ Գրքից, թարգմանությունը համարել է *Սուրբ Հոգու* շնորհներից («Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք,... մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով, ...մյուսին՝ լեզուների թարգմանության շնորհ», Ա Կորնթ. 12.8–10):

Մեսրոպ Մաշտոց-Սահակ Ա Պարթև-*Վռամշապուհ* արքա եռյակի առաջին նպատակն էր իրականացնել Սուրբ Գրքի թարգմանությունը:

Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի անմիջական առաջնորդությամբ կատարված այդ թարգմանությամբ լուծվել են մի շարք խնդիրներ՝ 1. թարգմանչական դպրոցի ստեղծման, 2. հոգևոր-մշակութ., 3. գաղափարաքաղ.: Թարգմանչական առաջին խումբը՝ հանձինս Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Ա Պարթևի և այլոց, նախապես թարգմանել է Աստվածաշունչը. երկրորդ խումբը՝ *Եզնիկ Կողբացի, Կորյուն, Հովսեփ Պաղնացի, Հովհան Եկեղեցացի,* Ղևոնդ Վանանդեցի և մյուսներ՝ իրենց ուսուցիչների հետ միասին, փաստորեն կատարել է Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը՝ համեմատությամբ հունարեն Յոթանասնից թարգմանության: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, որը համարվում է «թարգմանությունների թագուհի», վիթխարի դեր է խաղացել հայերենը համազգ. եկեղեց. և գրական լեզվի վերածելու գործում, նպաստել ողջ Հայաստանի հոգևոր-մշակութ. զարթոնքին: Սակայն Աստվածաշնչի բազմաշերտ ու բազմանշանակ տեքստերը հստակորեն, ուղիղ դավանանքով մեկնաբանելու, ինչպես նաև ծայր առած աղանդավոր. շարժումներին ի պատասխան՝ սուրբգրային իմաստները անխաթար ու ամբողջական պահելու համար հարկավոր էր նաև հայերեն թարգմանել ողջ ուղղադավան-եկեղեց. ու հայրախոսաստվածաբան. գրականությունը:

Սահակ-Մեսրոպյան շրջանում և հետագայում հուն-ից և ասոր-ից հայերեն են թարգմանվել *Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Աթանաս Ալեքսանդրացու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Գրիգոր Նյուսացու* և մյուսների մեկնող., աստվածաբան., դավան. երկերը, ինչպես նաև՝ Արիստիդես Աթենացու, Հիպպոլիտի, Մեթեդիոս Ոլիմպիացու, Եպիփան Կիպրացու և այլոց ջատագով. բնույթի երկերը:

V դ. 1-ին կեսին կատարված թարգմանությունները խմբավորվում են ըստ հետևյալ բաժինների. լիտուրգիկա՝ ծիսական երկեր (*Խորհրդատետր-Պատարագամատույց, Ժամագիրք* ևն), պատրիստիկա՝ հայրախոսական գրականություն (տես *Հայրաբանություն*), մարտիրոլոգիա և հագիոգրաֆիա՝ *վկայաբանություն* և *վարքագրություն*, կանոնական (եկեղեց. ժողովների և սուրբ հայրերի կողմից գրված կանոններ ու սահմանումներ), պատմ. բնույթի երկեր:

Հայ գրերի գյուտից մինչև 440-ական թթ. հիմնականում թարգմանվել են.

1. Աստվածաշունչ (405–408-ին և 430-ական թթ.), 2. Խորհրդատետր-Պատարագամատույցներ (թրգմ. հուն-ից և ասոր-ից), 3. Աթանաս Ալեքսանդրացու 15 ճառերը (հուն-ից), 4. Ժամագիրք (հուն-ից), 5. Հովհան Ոսկեբերանի ճառերը, քարոզները և մեկնությունները, 6. Կյուրեղ Ալեքսանդրացու մեկնությունները՝ նվիրված Ծննդոց գրքին և Պողոս առաքյալի թղթերին, «Ճառ Ս. Երրորդության մասին», նամակներ Նեստորին և 12 նզովքները (հուն-ից),

7. Եվթաղի «Նախաբաններ և մեկնություններ»-ը՝ նվիրված Գործք առաքելոցին և Պողոս առաքյալի թղթերին (հուն-ից), 8. Հիերոնիմոսի մեկնությունը, 9. Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ը (416–420-ական, հուն-ից), 10. Եվլփան Կիպրացու «Մարգարեների վախճանի մասին» (հուն-ից), 11. Սեբերիանոս (Սեվերիանոս) Գաբալացու ճառերը (հուն-ից), 12. Եվագր Պոնտացու ճառերն ու մեկնությունները (հուն-ից), 13. Եվսեբիոս Եմեսացու ճառերը (հուն-ից), 14. Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան»-ը (հուն-ից), 15. Բարսեղ Կեսարացու «Վեցօրյա արարչության մասին», նաև՝ ճառեր, մեկնություններ, խրատներ (հուն-ից), 16. Արիստիդես Աթենացու «Քրիստոնեական հավատի ջատագովությունը» (420–430-ական, հուն-ից, ընդ որում հուն. բնագիրը չի պահպանվել), 17. Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» (430-ական թթ., հուն-ից, հուն. բնագիրը չի պահպանվել), 18. Պրոկղ Եվիսկոպոսի թղթերը՝ ուղղված Սահակ Ա Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին (430-ական թթ., հուն-ից), 19. Ակակիոս Մելիտենացու երկու թղթերը (430-ական թթ., հուն-ից), 20. Եփրեմ Ասորու ճառերը, աղոթքները և Սուրբ Գրքի մասերին նվիրված մեկնություններ (ասոր-ից), 21. ս. Թադեոսի և ս. Սանդուխտի վկայաբանությունը (430-ական, ասոր-ից), 22. Մեթոդիոս Ոլիմպիացու «Անձնիշխանության մասին» երկը (հուն-ից, հուն. բնագիրը չի պահպանվել, երկի զգալի մասն օգտագործվել է Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում), 23. Եվլփան Կիպրացու «Ընդդեմ աղանդոց» երկը (հուն-ից, որոշ հատվածներ միայն պահպանվել են Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում), 24. Հիպպոլիտոս Բոստրացու ճառերն ու մեկնությունները, «Բոլոր աղանդների հերքումը» (430–440-ական թթ., հուն-ից, պահպանվել է Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում), 25. Գրիգոր Սքանչելագործի «Քրիստոսի ծննդյան մասին» (հուն-ից), 26. Զենոբ Ամիդացու ճառը (ասոր-ից), 27. Այիթալա Եդեսացու ճառը (ասոր-ից), 28. Գրիգոր Նազիանզացու ճառերը (հուն-ից), 29. Անտիոքի, Գանգրայի, Լաոդիկեի, Նեոկեսարիայի ժողովների և Նիկիայի Ա տիեզերական ժողովի կանոնները (430–440-ական թթ., հուն-ից):

Ֆ դ. 1-ին կեսին են թարգմանվել նաև անվավեր կամ պարականոն ճանաչված բնագրեր. «Պիղատոսի նամակը Տիբերիոս կայսեր», «Եդեսիա քաղաքի թագավոր Աբգարի նամակը», «Հակոբի ուղերձը Կոնդրատիոսին», «Քրիստոս Պոնտիոս Պիղատոսի առջև», «Առաքյալների վարդապետությունը» (միայն «Աբգարի նամակը»՝ ասոր-ից, մնացյալները՝ հուն-ից): Թարգմանվել են նաև բազմաթիվ վկայաբանություններ և վարքագրություններ՝ և՛ հուն-ից, և՛ ասոր-ից:

Ողջ թարգմանական գրականությունը հիմք է ստեղծել հայ ինքնուրույն՝ մեկնող., աստվածաբան-դավան., իմաստասիր., պատմ. և այլաբնույթ գրականության ստեղծման համար՝ *Գրիգոր Ա Լուսավորչի* (կամ նրան վերագրվող) «Հաճախապատում ճառերը», *Ագաթանգեղոսի* «Հայոց պատմությունը», Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը», *Մովսես Խորենացու* «Հայոց պատմությունը» և այլ երկեր:

Հայալեզու թարգմանական գրականությունը չեզոքացրել է հուն-ի և ասոր-ի գերիշխանությունը, թուլացրել հուն. և ասոր. եկեղեցիների ազդեցությունը, իսկ միջնորդավորված կերպով՝ նաև այդ եկեղեցիների թիկունքին կանգնած տերությունների դաղափարաքաղ. նկրտումները:

Կրոնադավան. երկերից զատ հայ աստվածաբան-իմաստասիր. միտքը անհրաժեշտաբար անդրադարձել է նաև աշխարհիկ գիտ. երկերի թարգմանությանը: Դրա համար անհրաժեշտ էր ընդլայնել գրաբարի բառապաշարը՝ լեզվաճանաչման և գիտ., փիլ. եզրաբանության հայացման ճանապարհով: Այս ասպարեզում կարևոր գործ է կատարել հունաբան դպրոցը (Ֆ դ. կեսից Ֆ դ. սկիզբ):

Փիլոն Ալեքսանդրացու երկերի և Իրենեոս Լուգդունացու (Ֆ դ.) և *Տիմոթեոս Կուզի* դավան. գրվածքների թարգմանությունից (480-ական թթ.) հետո *Ալեքսանդրիայում* և Աթենքում ուսանած հայ թարգմանիչները, մինչ Արիստոտելի բուն երկերի թարգմանությանն անցնելը, կատարել են ճանաչող. նշանակություն ունեցող՝ Պորփյուրի «Ներածութիւն ստորոգութեանցն Արիստոտելի» երկի թարգմանությունը, որը հիմք է ստեղծել 490-ական թթ. թարգմանելու Արիստոտելի «Ստորոգութեանց» և «Յաղագս մեկնութեան» երկերը, այնուհետև, 490–500-ական թթ.՝ նորպլատոնական Յամբլիխոսին (Յամբլիքոս) վերագրվող «Ստորոգութեանց» և «Յաղագս մեկնութեան» երկերը: Ապա թարգմանվել են անտիկ մտածողության ավանդույթները պահպանող քրիստոնյա հեղինակների (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Նեմեսիոս Եմեսացի) երկերը: Հունաբան դպրոցի թարգմանիչների (հատկապես Դավիթ Անհաղթի ինքնուրույն և թարգման. երկերի) շնորհիվ Հայաստանում տարածվել են նորպլատոնականությունը և նորպլատոնականության հայր Պլոտինի երկերը:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ Հայ հեղինակների՝ Պետրոս Սյունեցու, Դավիթ Հարքացու, *Խոսրովիկ Թարգմանչի, Անանիա Շիրակացու, Ստեփանոս Սյունեցու* ինքնուրույն, ապա թարգման. (Զենոնին վերագրվող՝ «Յաղագս բնութեան» տրակտատը, Պսևդո-Արիստոտելի «Յաղագս աշխարհի» և «Յաղագս առաքինութեան» բնագրերը, «Սահմանք փիլիսոփայականք» փիլ. տեքստը ևն) երկերում զգալի է Արիստոտելի, Պորփյուրի և հատկապես Դավիթ Անհաղթի գաղափարների և տերմինաբանության որոշակի ազդեցությունը: Հայ աստվածաբան-փիլ-մաթ. մտքի զարգացման առումով արժեքավոր են նաև Անանիա Շիրակացու (VII դ.) երկերը և նրան վերագրվող՝ Պապոս Ալեքսանդրացու, Պողոս Ալեքսանդրացու և մյուսների աստղաբաշխ. ու օդերևութաբան. երկերի թարգմանությունները, Ստեփանոս Սյունեցու՝ 712-ին թարգմանած՝ Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» և Գրիգոր Նյուսացու «Յաղագս մարդոյ կազմութեան» աստվածաբան., բնափիլ., մարդակազմական երկերը, նույն՝ Ստեփանոս Սյունեցու՝ Դավիթ Հյուպատի աշխատակցությամբ թարգմանած *Դիոնիսիոս Արիոպագացու* «Յաղագս երկնային քահանայապետութեան», «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան», «Յաղագս աստվածայնոց անունց», «Յաղագս խորհրդական աստուածաբանութեան» երկերն ու 10 թղթերը:

Թ. շ-ման ավանդույթները շարունակվել են նաև հետագա դարերում (*Գրիգոր Մագիստրոս Պահլավունի* և ուր.), բայց նոր թափ են ստացել հատկապես XIV դ., լատին միաբարների (տես *Ունիթորություն*) և նրանց հայ հետևորդների շնորհիվ: Քռնայի և Ծործորի դպրոցներում լատ-ից թարգմանվել են Թովմա Աքվինացու, Բոնավենտուրայի, Ժիլբեր Պոռետացու, Ալբերտ Մեծի, Բարդուղիմեոս Բոլոնիացու, Պետրոս Արագոնացու և ուր. երկերը: Թեև միաբարների նպատակն էր հիմնավորել կաթոլիկության առավելությունը, սակայն նրանց գործունեությունը մեծապես նպաստել է եվրոպ. քրիստ. մտքի նվաճումների յուրացմանը, որը հմտորեն իրագործել են Հայ եկեղեցու վարդապետներն ու գաղափարախոսները, հակադրվելով հենց իրենց՝ միաբարներին: XVII դ., հոգևոր մշակույթի աշխուժացմանը զուգընթաց, վերականգնվել են Թ. շ-ման ավանդույթները: Թ. շ. առհասարակ, իր սկզբնավորումից ի վեր, խթանել է լուսավորականության, կրթության, գիտության, լեզվաշինության և նոր գաղափարների զարգացումը: Հին հայկ. թարգմանությունների շնորհիվ պահպանվել են համաշխ. մշակույթի և գիտության բազմաթիվ հուշարձաններ (բնագրերը կորել են):

Հայ եկեղեցին սահմանել է «Սրբոց թարգմանչաց» տոն. նախ, Բուն Բարեկենդանին նախորդող կիրակիից առաջ՝ շաբաթ օրը, տոնվում է ս. Սահակ Ա Պարթևի հիշատակը, իսկ հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին նշվում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի տոնը՝ Օշականում («Սրբոց թարգմանչացն մերոյ Սահակայ եւ Մեսրովբայ»). հոկտեմբերին՝ Մեսրոպ Մաշտոցի և իր աշակերտ-թարգմանիչների տոնը («Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոյ՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անհաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսէսի Կլայեցւոյն»):

Թ. շ-մանը, սուրբ թարգմանիչներին է ձոնված *Վարդան Արևելցու* «Որք զարդարեցին» շարականը՝ իր կանոնով: Հայոց մեջ տարածված են Ս. Թարգմանչաց անունով վանքեր, եկեղեցիներ, կրթ. կենտրոններ (ճեմարաններ, վարժարաններ ևն):

Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ 1979-ից նշվում է (երկու տարին մեկ) «Թարգմանչաց տոնը՝ որպես համաժողովրդական նշանակության իրադարձություն:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.8, 2-րդ պատկերը:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889: Մանանդյան Հ., Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վնտ., 1928: Ակինյան Ն., Դասական հայերէնն եւ վիեննական Մխիթարեան դպրոցը, Վնտ., 1932: Արեվշատյան Ս., Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմա-մշակութային նշանակությունը, ՊԲՀ, 1973, № 1: Նույնի, *Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Е., 1973;* Նույնի, *К истории философских школ средневековой Армении (XVI в.), Е., 1980.*

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ, տես *Թարգմանչաց շարժում* հոդվածում:

ԹԲԻԼԻՍԻԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, Բերդի Մեծ եկեղեցի, Կաթողիկե Ս. Գևորգ, Նարիկալա ամրոցի ստորոտում, Հայաստանյայց առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի առաջնորդանիստը: Ըստ շին. արձանագրության, 1251-ին կառուցել է պարոն

Ումեկը (սկզբնապես կոչվել է Ս. Աստվածածին), որը մոնղոլ. արշավանքների հետևանքով 1242-ին Կարինից գաղթել էր Տփղիս և վրաց արքունիքում բարձր դիրքի հասել:

Թբիլիսիի Սուրբ Գևորգ աղյուսաշեն եկեղեցին ունի մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք, եռյակ լուսամուտներով խորանի երկու կողքերին ավանդատներով: Ճակատները և 12-նիստանի բարձր գմբեթը զարդարված են աղյուսե ձևավոր շարվածքով: 1284-ին Թ. Ս. Գ. ե-ում *Հովհաննես Երզնկացին* (Պլուզ) քարոզ է կարդացել «Յաղագս երկնային շարժմանց» թեմայով՝ նվիրված աստղաբաշխությանն ու օդերևութաբանությանը: XIV–XVIII դդ. Թ. Ս. Գ. ե-ում բազմաթիվ ձեռագրեր են գրվել: 1616-ին Պարսից շահ Աբբասի արշավանքից հետո եկեղեցին խլվել է հայերից և չի գործել: 1779-ին ավագերեց Առաքել Սահառունյանը վերաբացել է այն, 1781-ին հվ-ից և արմ-ից շրջապատել պարսպով, բնակելի շենք կառուցել, նորոգել եկեղեցու գմբեթը և ներսը նկարազարդել: 1792-ին մահտեսի Հակոբջան Արղունյանը նորոգել է ծածկի թաղերը և եկեղեցուն նվիրել Սեյիդաբադի այգիները: 1795-ին Պարսից Աղա-Մահմեդ-խան Ղաջարի արշավանքի ժամանակ Թ. Ս. Գ. ե. կողոպտվել է և հրդեհվել, ոչնչացել են այնտեղ պահվող ձեռագրերը: Հրոսակների ձեռքով զոհվել է նաև Սայաթ-Նովան, որին թաղել են եկեղեցու հս. պատի տակ (ավանդություն): 1808-ին Եղեգարի որդի Դավիթը նորոգել է արլ. ճակատը, 1832-ին երեսփոխան Աբրահամ Քեփրինյանցը կառուցել է եկեղեցու վերնատունը, տանիքը ծածկել կղմինդրով, ներսը սալահատակել: 1882-ին Ավթանդիլյանցի պատվերով պատրաստվել է մկրտության մարմարե ավազանը, 1883-ին Անտոն Սողոմոնյանցի շնորհիվ՝ արմ. դուռը և նրա առջևի ծածկը: 1922-ին գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանը Թ. Ս. Գ. ե-ում նկարել է չորս որմնանկար և Քրիստոսի կյանքը պատկերող մեծադիր կտավներ: 1925-ին նրա աճյունն ամփոփվել է եկեղեցու հս. պատի տակ: 1930-ական թթ. Թիֆլիսի հայկ. Հարանց վանքը քանդելու և տեղում դպրոց կառուցելու պատճառով վանքի տարածքից Թ. Ս. Գ. ե-ու բակ են տեղափոխվել հայ նշանավոր զորավարներ Մ. Լոռիս-Մելիքովի, Ի. Լազարյանի, Ա. Տեր-Ղուկասովի և Բ. Շելկովնիկովի աճյունները: 1977-ին նորոգվել է եկեղեցին, մաքրվել ներսի պատերի յուղաներկի շերտը, բացվել է նկարիչ Հովնաթան Հովնաթանյանի վրձնին պատկանող տասը որմնանկար (XVIII դ. վերջ)՝ ի լրացումն մինչ այդ պահպանված 14-ի: Խորանի գմբեթարդին պատկերված է ամպերին բազմած Քրիստոսը, ձեռքին մագաղաթ՝ «Գնացեք, այսուհետև աշակերտեցեք զամենայն հեթանոսս» գրությամբ, երկընքում՝ աղավնակերպ Ս. Հոգին և սերովբեներ: Խորանի կամարի ճախակողմյան մասում ս. *Աբգարի* պատկերն է՝ Քրիստոսի անձեռագործ դաստառակը ձեռքին, «Սբ. Աբգար նախահաւատ թագաւոր Հայոց» մակագրությամբ, աջակողմյան մասում՝ Տրդատը՝ «Սբ. Տրդատ անդրանիկ թագաւոր Հայոց», և Կոստանդիանոս Մեծը՝ «Սբ. Կոստանդիանոս թագաւոր» գրություններով: Հս. պատի ճախ մասում՝ «Ավետման», հվ. պատի աջ կողմում՝ «Ծննդյան», ճախ մասում «Մկրտության» տեսարաններն են, հս. պատի աջ կողմում՝ «Մարիամի և Եղիսաբեթի հանդիպումն» է, հս. կամարին՝ «Աղոթասասցն Դավթի հալածումը Սավուղ թագավորից»: Թ. Ս. Գ. ե-ու որմնանկարները կատարման ոճով ակնհայտ աղերս ունեն իտալ. գեղանկարչության հետ: Սրբապատկերային կանոնիկ գունային կառուցվածքի հետ որմնանկարների երփնապնակում առաջնակարգ տեղ են գրավում կարմիրի և կանաչի հետ ոսկեգեղին ու թափանցիկ կապույտ գույները, որոնք եկեղեցու ներսում պայծառ և տոնական հանդիսավորություն են ստեղծում:

Թ. Ս. Գ. ե-ու բակում 1914-ից ամեն տարի մայիսին մեծարվում է Սայաթ-Նովայի հիշատակը՝ ժողովրդի այցելությամբ և Վարդատոնով (նախաձեռնողը եղել է Հովհաննես Թումանյանը): Եկեղեցում հին տոմարով նոյեմբ. 10-ին նշվում է ս. Գևորգի տոնը:

Գրկ. Հովհաննես Երզնկացի, Տետրակ համառօտ և լի իմաստախոհ բանիւք... Յաղագս երկնային շարժմանց..., Նոր Նախիջևան, 1792: Ջալալյան Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 2, Տփխիս, 1858: Ավչյան Ս., Թբիլիսիի Մեյդանի սուրբ Գևորգ Կաթողիկե սուրբ Աստվածածին կամ Բերդի մեծ եկեղեցին, «Էջմիածին», 1959, № 2: *Аcратян М., Памятники средневековой архитектуры в Тбилиси, Е., 1978.*

Մուրադ Հասրաթյան

ԹԵԼԵԹԻ Ս. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ, Վրաստանի Հանրապետության Գարդաբանի շրջանի Թելեթ գյուղի մոտ: Ըստ պահպանված արձանագրությունների, տեղում հայկ. եկեղեցի գոյություն է ունեցել դեռևս 1002-ին: Վանքը հոգևոր

ԹԵՀՐԱՆԻ նշանակալի կենտրոնի է վերածվել XVII դ., իսկ XIX դ. սկսվել է Թ. Ս. Գ. վ-ի նոր վերելքի շրջանը, հատկապես 1826-ից, երբ Թիֆլիսի հոգևոր թեմի առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցին վանահայր է կարգել Գևորգ Մեհրաբյանցին: Վերջինիս ջանքերով կառուցվել են եկեղեցին (1826), մի շարք սենյակներ (1830), զանգակատունը (1832): 1834-ին եկեղեցու արլ. պատին ագուցվել են մարմարե 3 սալիկներ՝ ի հիշատակ բարերարներ Գևորգ և Եղիսաբեթ Քեղխուդյանցների: Եկեղեցին նորոգվել է 1850-ական թթ.՝ գյուղի հայ բնակչության միջոցներով: Վանքին նվիրատվություններ են արել Հովհ. Միրիմյանցը, Հ. Պապալյանցը և ուր.: Նույն ժամանակահատվածում հիմնվել է նաև ծխական դպրոցը, որի համար 1870-ին կառուցվել է առանձին շենք: 1864–66-ին Թ. Ս. Գ. վ-ի վանահոր պաշտոնը վարել է Գրիգոր եպս. Աղափիրյանցը: 1887-ին վանահայր դարձած Հմայակ Տեր-Սարգսյանցը 1889-ից ձեռնարկել է վանքի բարեկարգման աշխատանքներ, 1894-ին՝ վերաբացել ծխական դպրոցը: 1901-ին նորոգվել են եկեղեցու ծածկերը, իսկ 1902-ին, Գ. Գյուզալյանցի և Գ. Հակոբյանցի միջոցներով, նաև՝ եկեղեցին, որի համար բարերարներն արժանացել են *Մկրտիչ Ա Վանեցու* օրհնության կոնդակին: 1908-ից վերսկսել է գործել հայոց ծխական երկսեռ դպրոցը (մինչև 1913-ը, կրկին վերաբացվել է 1916-ին): Թ. Ս. Գ. վ. վիրահայոց շրջանում ամենահեղինակավոր ուխտատեղիներից էր: Ամեն տարի, Համբարձման հինգշաբթի օրն այստեղ են հավաքվել բազմահազար ուխտավորներ Կախեթից և Քարթլիից, օթևանել 1904-ին և 1912–1913-ին կառուցված ընդարձակ հյուրասենյակներում: Վանքը մեծ համբավ է ունեցել նաև վրացիների մոտ: Շրջակա բնակավայրերի հայերի համար հոգևոր կենտրոնի իր դերը պահպանել է նաև խորհրդային տարիներին:

1989–91-ին, վանքը նորոգելու պատրվակով վրաց հոգևոր իշխանությունների ձեռնարկած շին. աշխատանքների ընթացքում, ոչնչացվել են եկեղեցու մկրտարանի արձանագիր ավազանը և շինությունների պատերին պահպանված շուրջ 2 տասնյակ հայ. վիմագրերը, հուշնածես եկեղեցիներին հատուկ ձևով հիմնովին վերափոխվել է բեմը ևն: Թ. Ս. Գ. վ. 1992-ին վերաօծվել և գործում է որպես վրաց. եկեղեցի:

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.8, 3-րդ պատկերը:

Գրկ. Մելիքսեթ-Բեկ Լ., Թելեթը հայ և վրաց պատմագրության, բանահյուսության և վիմագրության մեջ, «Էջմիածին», 1961, № 9:

Սամվել Կարապետյան

ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1944-ին: Առաջնորդանիստը՝ Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցի (1973-ից): Ընդգրկում է Իրանի մայրաքաղաք Թեհրանն իր շրջակայքով, Արաքը, Համադանը, Մեշհեդը, Գորգանը, Ռեշտը, Սարին, Էնզելին, Ղազվինը: Մինչև 1958-ը Թ. Թ. իրանահայ մյուս թեմերի նման ենթարկվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնին, այնուհետև անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ:

Թեհրանում հայերը բնակություն են հաստատել XVIII դ. 2-րդ կեսից, 1795-ին հիմնել են Ս. Գևորգ մատուռը (1882-ից՝ Ս. Գևորգ եկեղեցի): 1798-ին, երբ Իրանի տարբեր շրջաններից տասնյակ հայ ընտանիքներ բնակեցվել են Թեհրանում, անհրաժեշտություն է դարձել նոր եկեղեցու կառուցումը: 1808-ին կառուցվել է Ս. Թադեոս-Բարդուղիմեոս եկեղեցին: 1870-ին Թեհրանում հիմնվել է «Ուսումնասիրաց» միությունը, որը հաջորդ տարի Ս. Գևորգ եկեղեցուն կից բացել է դպրոց: 1938–1945-ին Թեհրանում կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին (1944–73-ին՝ առաջնորդանիստ):

1944-ին Թեհրանի համայնքն առանձնացել է *Իրանա-Հնդկաստանի թեմից* և կազմել առանձին թեմ: Թեմի անդրանիկ առաջնորդ է նշանակվել Վահան ծ. վրդ. Կոստանյանը (1944–45), որին հաջորդել է Ռուբեն եպս. Դրամբյանը (1945–49):

Թեմի կազմավորումից երեք տարի հետո ստեղծվել է թեմական խորհուրդ: Վերջինիս և Հայ կանանց եկեղեցասեր միության միջոցներով կառուցվել է առաջնորդարանի շենքը: 1949-ին Թեմական խորհրդի և Թեմական պատգամավոր. ժողովի կողմից ընտրված հանձնախումբը մշակել է թեմի կանոնադրությունը, որը վավերացվել է 1951-ին:

1960–99-ին Թ. Թ. (արդեն որպես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմ) գլխավորել է Արտակ արք. Մանուկյանը, որը միաժամանակ եղել է Իրանի միջեկեղեց. խորհրդի նախագահ: Թեմն ունի իր կանոնադրությունը, որը վավերացվել է պետության կողմից: Թեմի

բարձրադույն օրենսդիր մարմինը Թեմական պատգամավորական ժողովն է (ընտրվում է 4 տարով): Պատգամավորական ժողովն իր կազմից երկու տարով ընտրում է Թեմական խորհուրդ (9–13 անդամից բաղկացած), որը թեմի բարձրագույն գործադիր մարմինն է: Ըստ թեմի կանոնադրության, թեմի առաջնորդին ընտրում է պատգամավորական ժողովը՝ առանց պաշտոնավարության ժամկետ սահմանելու:

Թ. թ-ի տարածքում կառուցված բազմաթիվ եկեղեցիներից այսօր կանգուն են 20-ը, որոնցից 8-ը՝ Թեհրանում: Հնագույնները Ս. Գևորգ, Ս. Թադեոս-Բարդուղիմեոս եկեղեցիներն են: Վերջին 35 տարիների ընթացքում կառուցվել են Ս. Թարգմանչաց, Ս. Սարգիս, Սրբոց Վարդանանց, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մինաս, Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցիները, Նոր Բուրաստան գերեզմանատան և «Արարատ» մարզվանի Ս. Խաչ մատուռները, Գորգանի շրջանում՝ Ս. Աստվածածին մատուռը, Ռեշտ քաղաքում՝ Ս. Մեսրոպ եկեղեցին:

Եկեղեցիներ կան նաև թեմի մյուս քաղաքներում՝ Արաքում, Քալավայում, Ղարաղանում, Մեշհեդում, Քերմանշահում, Համադանում, Էնզելիում, Ղազվինում:

Թ. թ-ի առաջնորդն է Սեպուհ եպս. Սարգսյանը (2000-ից):

Պատկերազարդումը տես ներդիր VI-ում, 6.8, 4-րդ պատկերը:

ԹԵՂԵՆՅԱՑ ՎԱՆՔ, ՀՀ Կոտայքի մարզի Բուժական գյուղից հյուսիս, անտառապատ լեռան լանջին: Հիմնվել է վաղ միջնադարում: Առաջին անգամ հիշատակվում է VIII դ. սկզբին, *Վահան Գողթնացու*՝ վանքում կարճատև ապաստանելու կապակցությամբ: XI–XIV դդ. Թ. վ. եղել է կրթության և գրչության կենտրոն: Թ. վ-ում և *Մաքենյաց վանքում* պահպանվել էր Հայ եկեղեցու ժամասացության կանոնակարգը, որը 1166-ին *Ներսես Շնորհալին* հիմք է ընդունել հայկ. վանքերի և եկեղեցիների համար միասնական ժամակարգ մշակելու համար:

Թ. վ-ի Կաթողիկե եկեղեցին (կառուցվել է XII դ.) զուգդ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է, որի ճակատները մշակված են «հայկ. խորշերով»: Գեղեցկությամբ առանձնանում է Ավագ խորանի ճակատամասը, որի մակերեսին երկրաչափ., բուս. և կենդ. թեմաներով հարթաքանդակներ են: Գեղ. արժեք է ներկայացնում կենտր. սալաքարի վրայի սիրամարգի պատկերաքանդակը՝ բացված պոչով, կիսաբաց թևերով, գլուխն աջ թեքած, և այս բոլորը ներկայված է բազմաժապավեն շրջագծի մեջ: 1207-ին իշխան Վահրամ Զավուշը Կաթողիկե եկեղեցուն կից կառուցել է քառասյուն, կենտրոնում բրգաձև երդիկով շքեղ գավիթ, որի շարվածքի սև և կարմիր տուֆի համադրությունը ներսում բազմագունություն է մտցրել:

1205-ին Լոռի քաղաքում իշխան Զաքարե Բ Մեծի հրավիրած դավան. հարցերի շուրջ ժողովին մասնակցել է նաև Թ. վ-ի առաջնորդ Տուրքիկ վարդապետը: XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին նշել է, որ Տուրքիկ վարդապետի վանահայրությունի օրոք Թ. վ-ի միաբանությունն ապրել է համայնակեցության սկզբունքով՝ «զամենայն ինչ հասարակաց լինել և առանձին ոչ ինչ ստանալ»: XIII դ. Թ. վ-ում որոշ ժամանակ գործել են *Վարդան Արևելցին* (հիմնել է Թեղենյաց մենաստանի դպրոցը) և *Վանական Վարդապետը*: Կաթողիկե եկեղեցուն հվ-ից կից է գրատունը՝ արլ. կողմում գրիչների համար նախատեսված չորս խցերով, իսկ գավթին հս-ից կից է քառախորան մի շինություն, որը ենթադրաբար ծառայել է որպես մատենադարան: Վանական համալիրի հս-արմ. կողմում առանձին կանգնած է ուղղանկյուն, թաղածածկ սեղանատան շինությունը (XIII դ.), արմ. կողմում՝ վանքի գերեզմանատունը: 1827-ին Թ. վ. երկրաշարժից հիմնովին ավերվել է: 1980-ական թթ. պեղվել է վանքի տարածքը (ղեկավար՝ Գ. Սարգսյան)՝ բացվել են Կաթողիկե եկեղեցին, գրատունը, մատենադարանը, հիմն. համալիրից 30 *մ* արլ.՝ փոքր խաչաձև, եռախորան գմբեթավոր Ս. Աստվածածին եկեղեցին (VI–VII դդ.):

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.1, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Եղիազարյան Հ., Թեղենյաց վանքը, «Էջմիածին», 1960, № 6: Պետրոսյանց Վ., Թեղենյաց վանքը իբրև մշակութային կենտրոն, ՊԲՀ, 1982, № 1: Սարգսյան Գ., Թեղենյաց վանքի պեղումները, ՊԲՀ, 1990, № 2:

Մուրադ Հասրաթյան

ԹԵՄ, վիճակ, եպիսկոպոսություն, առաջնորդություն, Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր վարչատարածքային միավոր: IV–V դդ. Հայ եկեղեցու հոգևոր-վարչ. սահմանները հիմնականում համապատասխանել են Հայաստանի վարչաքաղ.

սահմաններին: Թ-երի առաջին տարատեսակները Հայաստանում ձևավորվել են վաղ քրիստ. համայնքների (ծխերի) հիման վրա: IV դ. սկզբին *Գրիգոր Ա Լուսավորիչը* Հայաստանի գավառներում և նահանգներում հիմնել է առաջին Թ-երը՝ որպես եպիսկոպոսություններ, տեսչություններ, հովվություններ և վերակացություններ, դրանց գլուխ կարգել առաջնորդների, որոնք կոչվել են, համապատասխանաբար՝ եպիսկոպոս, տեսուչ, հովիվ, վերակացու: Թ. անվանումն առաջացել է VII դ., Բյուզ. կայսրության արլ. նահանգների վարչ. միավորների՝ Թ-երի անունից: Հայ եկեղեցու վարչ. միավորների բոլոր տարատեսակները կոչվել են Թ-եր (չնայած ունեցել են տարբեր տարածք և ազդեցություն): Գլխավորել են Հայոց կաթողիկոսի կոնդակով նշանակված արքեպիսկոպոսները կամ եպիսկոպոսները՝ տեղերում տնօրինելով հոգևոր, կրթ., մշակութ., անդամ հաս., իրավաքաղ. խնդիրներ: X դ. Հայոց կաթողիկոսությանը ենթակա Թ-եր գործել են նաև Հայաստանից դուրս: *Խաչիկ Ա Արշարունի* կաթողիկոսը (973–992) եպիսկոպոս. Թ-եր է հաստատել նաև Անտիոք, Տարսոն, Տրայանուպոլիս քաղաքներում: Հայ եկեղեցու վարչ. սահմաններն արդեն որոշվել են ոչ թե քաղ., այլ դավան. բաժանումով: Անկախ բնակության վայրից, Հայ եկեղեցուն են ենթարկվել բոլոր հակաքաղկեդոն. հայերը:

Թ-երը եղել են ավատական կենտրոններ և սոց-քաղ. մեծ ուժ ներկայացրել: Թ. կրել է այն երկրամասի կամ բնակավայրի անունը, որտեղ գտնվել է թեմական առաջնորդի աթոռանիստը: Բացի Սյունյաց Թ-ից, որը ճանաչվել է որպես մետրոպոլիտություն, Հայոց բոլոր Թ-երը եպիսկոպոսություններ են եղել: Ուշ միջնադարում պատմաքաղ. հանգամանքների բերումով որոշ Թ-եր վերացել են, մյուսների տրոհմամբ կամ միավորմամբ ստեղծվել են նորերը: Մեծ Թ-երը տրոհվել են, աստիճանաբար նոր տարածք և ազդեցություն ձեռք բերել և վերածվել ինքնուրույն եկեղեցավարչ. միավորների: Ըստ այդմ՝ Հայ եկեղեցում առաջացել են Թ-երի նոր տարատեսակներ՝ եպիսկոպոսական, տեսչական և վանական, եպիսկոպոսական թեմական տեսչություններ, եպիսկոպոսական վիճակ, վիճակ և տեսչական վիճակ, առաջնորդություն, պատվիրակ-առաջնորդություն, առաջնորդական փոխանորդություն, տեսչություն, տեսչություն, վիճակային և վանական տեսչություն, փոխանորդություն, վիճակավոր հովվություն և հովվություն: XIX դ. կեսին արդեն սրանց մեծ մասը ստացել է «առաջնորդություն» ընդհանուր անվանումը, որը նախկինում հատուկ էր միայն վանահայրերին՝ վանքերի առաջնորդներին:

XIX դ. 2-րդ կեսից Թ-երի այս տարատեսակներից առավել խոշորներում (թեմ, տեսչություն, վիճակ) ստեղծվել են հոգևոր և աշխարհիկ անդամներից կազմված թեմական և հոգևոր խորհուրդներ՝ առաջնորդի գլխավորությամբ: Թ-երի կազմավորումն ընթացել է 1860-ի *Ազգային սահմանադրության* սկզբունքներով: Թ-ի կառավարումը կենտրոնացած է առաջնորդի ձեռքում, որին ընտրում է թեմական ներկայացուցչական ժողովը կամ նշանակում Գերագույն հոգևոր իշխանությունը: Թ-ի տարածքում առաջնորդն իրավասու է (եթե եպիսկոպոս է) քահանայական ձեռնադրություններ կատարել, տնօրինել եկեղեցու դատ. հարցերը, վճռել ամուսնության և ամուսնալուծության խնդիրները, մշակութ-կրթ. գործունեություն ծավալել, թեմական ժողով հրավիրել ևն: Թ-ի կառավարումն իրականացնելու նպատակով առաջնորդը կարող էր օգնական կամ փոխանորդ նշանակել, որոնք հաճախ գավառներում, գյուղերում կատարել են նաև թեմական վերահսկիչի դեր (անցյալում կոչվել են քորեպիսկոպոսներ): Հայ եկեղեցու թեմական առաջնորդներ կարող են լինել ոչ միայն եպիսկոպոսները, այլև ծայրագույն վարդապետներն ու վարդապետները, որոնք լիակատար իրավասությամբ կրում են առաջնորդի պաշտոնը: Տարբեր ժամանակաշրջաններում փոխվել են Հայ եկեղեցու թեմերի քանակը, անվանումը, առաջնորդանիստ կենտրոնը: Թեմերն ունեցել են կառավարման անկախ կամ կիսանկախ վիճակ: Ներկայումս Հայաստանյայց առաքելական եկեղեցին Թ-եր ունի ոչ միայն Հայաստանի տարածքում, այլև սփյուռքահայ համայնքներում: Թ-եր ունի նաև Հայ եկեղեցու Կիլիկիո աթոռը (տես *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո*):

1996-ի թեմական բաժանմամբ Հայ եկեղեցում ստեղծվել է վարչատարածքային նոր դրություն: Ներկայումս (2001) Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են.

Արարատյան Հայրապետական, Շիրակի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունյաց, Արագածոտնի, Գուգարքի, Կոտայքի Թ-երը, Լեռնա-

յին Ղարաբաղի Հանրապետության տարածքում՝ Արցախի Թ.:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործում են Վրաստանի, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, Հարավային Ռուսաստանի, Ուկրաինայի, Ատրպատականի, Թեհրանի, Սպահանի, Եգիպտոսի (ընդգրկում է Եթովպիայի և Սուդանի հոգևոր հովվությունները, Հարավային Աֆրիկայի ծուխը), ԱՄՆ-ի Արևելյան, ԱՄՆ-ի Արևմտյան, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի, Կանադայի, Իրաքի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի, Անգլիայի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի Թ-երը, Արևմտյան Եվրոպայի հայրապետ. պատվիրակությունը (ընդգրկում է Փարիզի, Մարսելի, Լիոնի շրջանները, Հոլանդիայի, Բելգիայի, Իտալիայի հոգևոր հովվությունները, Ալբանիայի համայնքը), Կենտրոնական Եվրոպայի հայրապետ. պատվիրակությունը (ընդգրկում է Ավստրիայի և Շվեդիայի հոգևոր հովվությունները, Նորվեգիայի, Ֆինլանդիայի և Դանիայի համայնքները), Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետ. պատվիրակությունը (ընդգրկում է Կալկաթայի հոգևոր հովվությունը, Ծայրագույն Արևելքի հայ համայնքները):

Քարտեզները տես ներդիր XVII-ում, 17.8, 17.9:

Գրկ. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1983: Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղ-պատ, 1871, էջ 71, 100: Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987: Ղազարյան Ա., Հայ եկեղեցու թեմական բաժանումը Ե–Է դարերում, «Էջմիածին», 1995, № 6–7: Նույնի, Հայ եկեղեցու թեմական բաժանումը IV դարում, ՊԲՀ, 1996, № 1–2:

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ, հոգևոր ուսումնական հաստատություն Անդրկովկասում: Ցար. կառավարության՝ 1836-ին հրապարակած «Կանոնադրության» («*Պոլոժենիե*») հիման վրա ռուսահայ յուրաքանչյուր թեմ պետք է ունենար իր Թ. դ.: Այդպիսի դպրոցներ են բացվել Թիֆլիսում (1837-ին Ներսիսյան դպրոցը ստացել է թեմականի կարգավիճակ), Երևանում (1837), Շուշիում (1838), Ատրախանում (1838), ավելի ուշ՝ Նոր Նախիջևանում (1880), Շամախիում (1884): Թ. դ-ների նյութ. միջոցները գոյացել են թեմի եկեղեց. կալվածքների եկամուտներից, նվիրատվություններից, ունևոր ծնողների զավակներից գանձվող ուսման վարձից: Սկզբնապես Թ. դ. եղել է երեքդասյա, ունեցել գիշերօթիկ բաժիններ, որդեգիրներ: Ուս. ծրագրերում ընդգրկվել են կրոն. առարկաներ՝ Հին և Նոր կտակարանների պատմություն, քրիստ. վարդապետություն, Հայ եկեղեցու պատմություն, ավանդվել են նաև ընդհանուր, Հայոց և Ռուսաց պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, ֆրանսերեն: Կադրերի և դասագրքերի պակասության պատճառով որոշ առարկաներ դասավանդվել են ռուսերեն: *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու* նախաձեռնությամբ Թ. դ-ների համար ընդունվել է կանոնադրություն (1859-ին՝ Շուշիում, 1861-ին՝ Ներսիսյան և Երևանի դպրոցներում):

Թ. դ., ունենալով համեմատաբար տևական կյանք, դարձել է ժամանակի (1860–70 թթ.) լուսավոր. շարժմանը ուղղություն տվող կենտրոն, հաս. տարբեր խմբավորումների ու հոսանքների պայքարի ասպարեզ: Ազգ. վերածննդի ընթացքը դպրոցը մոտեցրել է ժողովրդին՝ ընդգծելով նրա ժող., աշխարհիկ բնույթը: Ընդլայնվել են դպրոցի շրջանակները, մեծացել ուսման ծավալն ու դասարանների թիվը, մուտք են գործել բնական գիտությունները, որոնք էլ պայմանավորել են նրա բազմակողմանի հանրակրթ. ուղղությունը: 1869-ին *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին* ընդունել է ընդհանուր կանոնադրություն, կարևորել ժողովրդի՝ աշխարհականներից ու հոգևորականներից ընտրած հոգաբարձության դերը, որի նախագահը եկեղեցու հսկողությունն ապահովող թեմական առաջնորդն էր: 1884–86-ին Թ. դ-ների նշանակությունն ավելի է մեծացել, քանի որ դրանք այդ շրջանում, ինչպես և *Գևորգյան ճեմարանը*, եղել են միակ ուս. հաստատությունները, որոնք պատանիներին տարրականից բարձր հայեցի կրթություն տալու հնարավորություն են ունեցել: 1886-ին Մակար Ա Թեղուտցին Թ. դ-ի մակարդակը բարձրացնելու նպատակով հաստատել է միասնական նոր ծրագիր: Վերացվել են նախապատրաստական դասարանները, ստեղծվել է վեցդասյա կազմ (լրիվ միջնակարգ): Կրոն. մի քանի առարկաներից բացի ավանդվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, ֆրանսերեն, ընդհանուր, Հայոց, Ռուսաց պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ձայնագրություն ևն: Նկատելիորեն ավելացել է աշակերտների թիվը, ուսուցիչների մեծ մասն ունեցել է բարձրագույն կրթություն:

Թ. դ-ի և արևելահայ կրթ. ողջ համակարգում բացառիկ դեր է կատարել Ներսիսյան դպրոցը: Այստեղ են ծնունդ առել մանկավարժ. առաջադեմ մտքերն ու գործերը, այստեղից են հայ պատանիները մեկնել բարձրագույն ուս. հաստատություններ: Այս առաջընթացին մեծապես նպաստել է լուսավորիչ, մանկավարժ Ստ. Նազարյանի տեսչական գործունեությունը (1869–71) Ներսիսյան դպրոցում: 1836-ին բացվել է հինգերորդ դասարան, 1877-ին՝ վեցերորդ, 1878-ին՝ յոթերորդ, որը Ա. Մանդինյանի նախաձեռնությամբ դարձել է մանկավարժ. դասարան, իսկ 1881–1885-ին Ա. Բահաթրյանի ղեկավարությամբ ուսուցիչներ է պատրաստել ազգ. դպրոցների համար: 1880-ական թթ. կեսին դպրոցն արդեն լրիվ միջնակարգ էր (կոչվել է նաև դպրանոց կամ սեմինարիա), որտեղ սովորել է մոտ 500 աշակերտ: Այստեղ հայ ազգ. դպրոցի որոշակի համակարգ ձևավորելու գործում անգնահատելի են Պ. Շանչյանի մանկավարժ. եռանդուն գործունեությունն ու նորամուծությունները: Նա մտցրել է հայոց լեզվով դասավանդում, արգելել ծեծը, աշխուժացրել ստեղծագործ. մթնոլորտը: Պ. Պռոշյանը նրա տեսչական գործունեության շրջանը համարել է ոսկե դար:

Երևանի Թ. դ. աշխուժություն է ապրել 1872-ից՝ Խորեն Ստեփանեի տեսչության շրջանում: 1876-ին նորընտիր հոգաբարձության կազմում ընտրվել են բանիմաց և գործունյա անձինք, տեսուչ է հրավիրվել Ս. Բեգնազարյանը: Նա բացել է չորրորդ դասարան, մտցրել մի շարք նոր առարկաներ, սահմանել աշակերտ. համազգեստ, աշխուժացրել գրադարանի գործունեությունը: Չնայած այս ամենին, դպրոցը մնացել է թերի միջնակարգի մակարդակին. միայն 1877–78 ուս. տարում ունեցել է վեցդասյա կազմ՝ լրիվ միջնակարգի կարգավիճակ:

Շուշիի դպրոցի զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել Պ. Շանչյանի գործունեությունը (1863–64): Նա կարողացել է եվրոպ. լավագույն սկզբունքները ներդնել գավառական Շուշի քաղաքում: Վերելքի տարիներ են եղել նաև Մ. Պլուզյանի տեսչության օրոք (1870–73): Նա հատուկ ուշադրություն է նվիրել հայկաբանությանը, բարելավել հայոց լեզվի ուսուցումը, խրախուսել աշակերտների գրական փորձերը: Մ. Պլուզյանին փոխարինած Խ. Ստեփանեն Շուշի է փոխադրել «Հայկական աշխարհ» պարբերականը: Որոշակի քայլեր են արվել նաև Վ. Պապաջանյանի, ապա և բժիշկ Բ. Աղասարյանի տեսչության շրջանում: Բարելավվել է բնական գիտությունների դասավանդումը, դպրոցը ձեռք է բերել լաբորատոր սարքավորումներ ու գործիքներ, ավելացել է աշակերտների թիվը: 1880-ին Շուշի է հրավիրվել Ա. Մանդինյանը: Նա կազմակերպել է մանկավարժ. հինգերորդ դասարան, որը հաջորդ տարում տվել է իր շրջանավարտները: 1878–79 ուս. տարում բացվել է վեցերորդ դասարան, և Շուշիի դպրոցը նույնպես դարձել է լրիվ միջնակարգ:

Թեմականի անուն է կրել նաև Շամախու դպրոցը, սակայն չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից, իսկ 1896-ից պաշտոնապես դասվել է ծխական դպրոցների շարքը՝ շարունակելով գոյատևել թեմի աղքատիկ եկամուտներով: 1896-ին Շամախու հայերը 400-ից ավելի ստորագրություններով նամակ են հղել Հայոց կաթողիկոսին՝ խնդրելով վերականգնել իրենց «միակ մխիթար հույս ու ապավեն» Թ. դ.: Սակայն *Մկրտիչ Ա Վանեցին* մտադիր էր իր նշանակությունը կորցրած Շամախուց թեմի կենտրոնը տեղափոխել Բաքու: Ցար. իշխանությունները խափանել են ինչպես կաթողիկոսի մտադրությունը, այնպես էլ Թ. դ-ներ բացելու հայերի հետագա փորձերը:

1880-ին Թ. դ-ների շարքը համալրվել է Նոր Նախիջևանի ուս. հաստատությամբ: Քաղաքային դուման 1881-ին որոշել է հնդկահայ մեծահարուստ Մ. Բաբաջանյանի կտակած դրամագլխի տոկոսները հատկացնել նորաբաց Թ. դ-ին:

Թ. դ-ներում դասավանդել են Գ. Պատկանյանը, Ստ. Նազարյանը, Ա. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Պ. Շանչյանը, Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը, *Կոմիտասը*, Մ. *Եկմալյանը*, Ե. Շահազիզը, Մ. Աբեղյանը, Ստ. Մալխասյանը, Ստ. Լիսիցյանը, Ս. Բեգնազարյանը և հայ մշակույթի ուրիշ երախտավորներ, որոնք համառ պայքար են մղել հանուն ազգ. առանձնահատկությունների, լեզվի ու ոգու պահպանման:

Խորհրդ. իշխանության հաստատումից հետո Թ. դ-ներն իրենց տեղը զիջել են միջնակարգ դպրոցներին:

Գրկ. Լեո, Պատմութիւն Երևանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1834–1912, Թ., 1912: Նույնի, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838–1913, Թ.,1914: Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Ե., 1970:

Ռաֆիկ Մաթևոսյան

ԹԵՈԴՈՐՈՍ Ա ՌՇՏՈՒՆԻ, Թեոդորոս Ա Ռշտունեցի (ծ. թ. անհտ, Ռշտունիք – 941, Աղթամար, ամփոփվել է Ս. Աստվածածին ժամատան կողքին), Ամենայն հայոց կաթողիկոս 930-ից: Հաջորդել է *Ստեփանոս Բ Ռշտունուն*: Կաթողիկոս. գահ է բարձրացել Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու հովանավորությամբ, գահակալել է Աղթամարում, քաղ. խաղաղ պայմաններում: Թ. Ա Ռ-ու հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ասվանդվել: Մ. Օրմանյանը նրան անվանել է Ռշտունի ոչ այն պատճառով, որ նա սերվել է Ռշտունիների նախարար. տոհմից, այլ նկատի է ունեցել նրա՝ Ռշտունիքի եպիսկոպոս լինելու հանգամանքը:

Կաթողիկոս. գահին Թ. Ա Ռ-ուն հաջորդել է *Եղիշե Ա Ռշտունին*:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԹԵՈԴՈՐՈՍ Բ ԿԻԼԻԿԵՑԻ (ծ. թ. անհտ – 1392, Սիս), Ամենայն հայոց կաթողիկոս 1382-ից: Հաջորդել է *Պողոս Ա Սսեցուն*: Եղել է Կիլիկիայի ազդեցիկ եպիսկոպոսներից, վայելել Կոստանդին Կիլիկեցի իշխանի հովանավորությունը և նրա ու Սսի ամիրայի օժանդակությամբ կաթողիկոս. գահ բարձրացել: 1382-ի վերջին մեկնել է Կահիրե՝ Եգիպտոսի սուլթանից հաստատում ստանալու: Նրա գահակալության օրոք է Լենկթեմուրը երկու անգամ արշավել Հայաստան և ասպատակել երկրի հվ. շրջանները: Փորձելով բարվոքել Սսի կաթողիկոսարանի վիճակը՝ ընդդիմացել է տեղի օտար իշխանություններին ու կաթոլիկ նկրտումներին, այդ պատճառով, Թովմա Մեծոփեցու վկայությամբ, 16 հայ իշխանների հետ միասին սպանվել է Սսի նոր ամիրա Օմարի հրամանով: Պահպանվել է 1384-ին լեհահայերին հղած Թ. Բ Կ-ու օրհնության կոնդակը:

Կաթողիկոս. գահին Թ. Բ Կ-ուն հաջորդել է *Կարապետ Ա Կեղեցին*:

ԹԵՈԴՈՐՈՍ ՔՌԹԵՆԱՎՈՐ, Թեոդորոս Ճգնավոր (VII դ. սկիզբ – մոտ 680), մատենագիր, աստվածաբան: *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսի եղբորորդին: Սովորել է Սյունյաց վարդապետարանում՝ *Մաթուսաղայի* մոտ, ստացել նաև հուն. կրթություն: Եղել է Արագածոտն գավառի Ս. Աստվածածին վանքի վանահայրը, հիմնել դպրոց: Թ. Քռ-ի սաներից են Հայոց կաթողիկոսներ *Հովհաննես Գ Օձնեցին* և *Սահակ Գ Զորոփորեցին*: Մաթուսաղայի հանձնարարությամբ Թ. Քռ. մասնակցել է 633-ի *Կարինի ժողովին*: Պայքարել է *անապականության* խնդրի շուրջ հուլիանոսականների վարդապետության և *երևութականության* դեմ, իր հակառակորդի՝ *Հովհան Մայրավանեցու* դեմ գրել «Ընդդէմ Մայրագումացոյն» ճառը: Հեղինակ է նաև «Ներբողեան ի սուրբ Խաչն» և «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ճառերի:

Երկ. Ճառք երեք, տես Հովհաննես Օձնեցի, Մատենագրութիւնք, Վնտ., 1833, էջ 147–182:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968:

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐ, քրիստոնյա աղանդավորներ Հայաստանում և Բյուզանդիայում IX–XI դարերում: Անվանումը ծագել է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի Թոնդրակ գյուղի անունից, որտեղ աղանդի հիմնադիր համարվող Սմբատ Զարեհավանցին կազմակերպել է համայնք և դարձրել Թ-ի կենտրոն: Ըստ *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու*, Սմբատ Զարեհավանցին «ի հիմաց սասանեց առաքյալներին և մարգարեներին», «չար մոլորությունն ուսանելով Մրջուսիկ անունով մի պարսիկ բժշկից և աստղաբաշխ մոգից»: Նրան հաջորդած աղանդապետներից հայտնի են Թոդրոսը, Անանեսը, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, Հեսուն և Ղազարը: Թ-ի խոշորագույն կենտրոններից էր Մանանալին, որտեղ ծագել էր պավլիկյան աղանդը (տես *Պավլիկյաններ*): Վերջիններս, ինչպես նաև նախորդ բոլոր աղանդները, մեծ ազդեցություն են ունեցել Թ-ի գաղափարախոսության ձևավորման վրա: Ավելին, ժամանակակիցները Թ-ին համարել են վերստին ասպարեզ իջած պավլիկյաններ և նրանց գաղափարների ուղղակի ժառանգորդներ: Թ-ի մասին տեղեկություններ է հաղորդում *Անանիա Նարեկացին*, որը *Անանիա Ա Մոկացի* Հայոց կաթողիկոսի պատվերով հեղինակել էր մի գործ՝ բացահայտելու Թ-ի սխալներն ու մոլորությունները: Անանիա Նարեկացու հակաճառությունը Սմբատ Զարեհավանցու և Թ-ի ուսմունքի դեմ չի պահպանվել: Սակայն *Գրիգոր Նարեկացին* Կճավա վանքին գրած «Անանիայի գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեացն, որ վասն նորա» թղթում ամփոփ տվել է Անանիա Նարեկացու գրվածքի բովանդակությունը և համառոտ թվել Թ-ի ուսմունքի 14 կետեր: Այնուհետև Թ-ի մասին տեղե-

կություններ են տալիս *Արիստակես Լաստիվերցին* (XI դ.), Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, փիլիսոփա, աստվածաբան *Պողոս Տարոնեցին* (XII դ. սկիզբ), Հայոց կաթողիկոս Ներսես Դ Կլայեցին (*Ներսես Շնորհալի*):

Թ. պատմ. ասպարեզ են իջել IX դ. 30-ական թթ., իսկ նրանց դեմ հալածանքները սկսվել են նույն դարի կեսին: Ըստ Գրիգոր Նարեկացու, Մանազկերտի արաբ ամիրա Աբդուլ-Բարդը 840–850-ական թթ. դաժանորեն ճնշել է նրանց ելույթները և սպանել Սմբատ Զարեհավանցուն: X դ. 2-րդ կեսից սկսվել է թոնդրակյան աղանդի գործունեության վերելքը՝ լուրջ վտանգ ներկայացնելով Հայ եկեղեցու համար: Հարք գավառում, Մանանդի գավառի Կաշե, Աղյուսո, Թուլայլ գյուղերում (Գրիգոր Մագիստրոս Պահլավունին դրանք անվանել է «շնավաններ»), Խնուս, Անի քաղաքներում կազմակերպվել են համայնքներ՝ ծավալելով աշխույժ գործունեություն: Քարոզիչներ են գործել Շիրակում, Ռշտունիքում, Մոկքում: Ըստ Արիստակես Լաստիվերցու, Հարքում, Հակոբ եպս. Հարքացու գլխավորությամբ, Թ. կարգալույծ են արել բարձրաստիճան հոգևորականներին, արգելել կրոն. ծիսակատարություններն ու արարողությունները: Հայոց կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցին* հալածել է Թ-ին, դուրս քշել բնակավայրերից, իսկ Հակոբ Հարքացուն բանտարկել է և ճակատին աղվեսադրոշմ խարանել: Արիստակես Լաստիվերցին իր «Պատմության» 23-րդ գլխում պատմում է Մանանդի գավառի Կաշե և Աղյուսո գյուղերի թոնդրակյան համայնքների մասին, որոնք Կունծիկ աբեղայի ղեկավարությամբ, ազնվական կանանց՝ Հրանույշի, Կամարայի, Ախնիի և Վրվեռ անունով մի իշխանի աջակցությամբ ավերել են եկեղեցիները, սրբատեղիները, կործանել խաչերը: Այնուհետև պատմիչը մանրամասն նկարագրել է Պախր կամ Գայլախազուտ լեռան ստորոտում Բազմաղբյուր ավանի մոտ կանգնած մեծահռչակ խաչը խորտակելու դեպքը: Ի պատասխան դրա՝ Մանանդիի եպիսկոպոս Սամվելը արքունի զորաջոկատով ավերել և հրկիզել է տվել աղանդավորների երկու գյուղերը՝ Կաշեն և Աղյուսոն, իսկ նրանց 6 առաջնորդների ձերբակալելով՝ տարել Ջերմ գյուղաքաղաքը, դատել բազմության առջև ու աղվեսադրոշմ խարանել դեմքերին: Չնայած ծանր հալածանքներին՝ չի հաջողվել վերացնել Թ-ի աղանդը, որը գնալով ավելի է տարածվել և ծավալվել Հայաստանում: Բյուզ. Կոստանդին IX Մոնոմախ կայսրի (1042–54) հրամանով Հայաստանի հվ. նահանգների և Հս. Միջագետքի կառավարիչ նշանակված Գրիգոր Մագիստրոս Պահլավունին 1050–54-ին նոր հալածանքներ է սկսել Թ-ի դեմ՝ նրանց բնաջնջելու նպատակով. այդ մասին տեղեկություններ կան նրա Թղթերում: Գրիգոր Մագիստրոս Պահլավունու զինվոր. ջոկատներն ավերել են Թոնդրակ, Կաշե, Թուլայլ, Խնուս և այլ բնակավայրեր՝ Թ-ին արտաքսելով երկրից և Միջագետքի հս. շրջաններից: XI դ. 30–50-ական թթ. Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի նվաճող. քաղաքականության հետևանքով աղանդավորներով բնակեցված շատ շրջաններ մտել են Բյուզ. կայսրության մեջ, որի կառավարությունը նրանց բռնագաղթեցրել է կայսրության տարբեր շրջաններ, գլխավորապես՝ պավլիկյանների ավանդ. աքսորավայր Ֆիլիպոպոլիս: Այստեղ նրանցից կազմավորվել են զորագնդեր, որոնք մեծապես նպաստել են բյուզ. այդ մասի քաղաքների ու շրջանների պաշտպանությանը ավարառու ցեղերի արշավանքներից: XI դ. վերջին Թ-ի որոշ մնացորդներ ապաստանել են Հս. Միջագետքում՝ հիմնելով կազմակերպված համայնքներ: Աղանդի կենտրոններից մեկի՝ Մանանդիի Կաշե ավանի անունով նրանք կոչվել են կաշեցիք, նույն գավառի Թուլայլ գյուղի անունով՝ թուլայլեցիք ևն: Թ-ի համայնքներ են եղել Տարոնում, Հարքում, Մարդաղիում, Վասպուրականում, Շիրակում, հավանաբար՝ Սյունիքում: Թ-ի ուսմունքի և գաղափարների մասին աղբյուրները շատ ժլատ տեղեկություններ են հաղորդում. հիմնականում նշում են եկեղեցու հեղինակությունն ու կարգերը մերժող հայացքները և ողողված են հայհոյանքներով ու անարգալից խոսքերով: Գրիգոր Մագիստրոսը վկայում է, որ նրանք իրենց համարել են հայ քրիստոնյաներ: Նա Թ-ին բաժանել է երեք խմբի: Ծայրահեղորեն տրամադրված է համարել «հարությունն ի մեռելոց» չընդունողներին, նրանց, ովքեր «ի չարն կատարելագոյնք են» և, ինչպես էպիկուրյանները՝ անաստված: Միջին տեղում գտնվողներին նմանեցրել է մանիքեցիներին (տես *Մանիքեություն*), իսկ ինչ-որ չափով խաղաղ տրամադրվածների մասին ասել է, թե նրանք առերես հետևում են քրիստ. ավանդույթներին: Թ-ի ուսմունքն առավել մանրամասն ներկայացրել է Գրիգոր Նարեկացին Կճառվա վանքին ուղղած իր գրության 14 կետերի

մեջ: Ուսմունքի հետևորդները մերժել են քահանայական կարգը և եկեղեց. նվիրապետությունը, եկեղեցին՝ առհասարակ, ձեռնադրության, մկրտության, հաղորդության խորհուրդները, Քրիստոսի զոհաբերությունը մարդկանց փրկության համար կամ պատարագը, ինչպես նաև մատաղը, ծնրադրությունը՝ որպես պաղատանքի արտահայտություն, տերունական տոները և ընդհանրապես արտաքին բոլոր ծիսակատարություններն ու արարողությունները: Թ-ի վարդապետությամբ կատարյալ սերն այն է, երբ մարդիկ սիրով են մերձենում միմյանց՝ համարելով դա Աստծուն հաճելի կենցաղավարություն. այս հարցում էլ Թ. բոլորովին չեն ընդունել եկեղեցու հեղինակությունը, մերժելով եկեղեց. ամուսնության ու պսակի խորհուրդը, և մծղնեների (տես *Մծղնեություն*) նման ազատ սիրո քարոզը դարձրել են իրենց կենցաղավարության բարոյական չափանիշ: Սա հիմք է տվել հակառակորդներին՝ Թ-ին մեղադրելու անառակ կյանքի և կենցաղի մեջ: Թ. կռապաշտություն են համարել խաչի ու սրբապատկերների պաշտամունքը, քարոզել են «մարդապաշտություն», մերժել Քրիստոսի աստվածությունը՝ նրան համարելով սովորական մի մարդ, իրենց աղանդի գլխավորին անվանել են Քրիստոս, փրկիչ, ազատարար, Աստծո ուղարկած մարգարե, որը վերջ էր տալու չար աշխարհի բոլոր անարդարություններին: Ըստ Գրիգոր Մագիստրոսի, Թ. դաղտնի են պահել իրենց «չար աղանդը», աղանդի ու նրա կենտրոնի մասին հարցնողներին սխալ ճանապարհ ցույց տվել՝ իրենց հետքերը թաքցնելու նպատակով:

Թ-ի աղանդը հայ պատմագիտության մեջ հայտնի է Թոնդրակյան շարժում անունով: Խորհրդահայ պատմաբաններն այն ներկայացրել են ավելի շատ որպես սոցիալական, հակաֆեոդալական շարժում, աշխատավոր գյուղացիության՝ ֆեոդալիզմի դեմ մղած պայքար, անգամ ազգ-ազատագր. շարժում, չափազանց ընդգծելով նրա քաղ. կողմը՝ որպես Հայրենիքի անկախության համար մղած պայքար արաբների և բյուզանդացիների դեմ (Վ. Համազասպյան, Ա. Մնացականյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Պողոսյան ևն): Թ-ի ուսմունքի բուն էությունը, այլ աղանդների հետ նրանց կապերը և նմանատիպ բազմաթիվ հարցեր դրեթե անտեսվել են:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., 1971: Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910: Սարգիսյան Բ., Ուսումնասիրություն Մանիքեապավղիկեան թոնդրակեցիներու աղանդին, Վնտ., 1893: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968, էջ 149–189: *Бартикян Р., Ответное послание Григория Магистра Пахлавуни сирийскому католикосу, Палестинский сборник, в. 7(70), М.-Л., 1962, с. 130–145;* Ter-Mkrttschian K., Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, Lpz., 1893; Conybeare F. C., The Key of Truth. A Manual of the Paulician Church of Armenia, Oxf., 1898; Nersessian V., The Tondrakian Movement, Religious Movements in the Armenian Church from the Fourth to the Tenth Centuries, L., 1987.

Հրաչ Բարթիկյան

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ (ծ. և մ. թթ. անհտ), IX–X դարերի պատմագիր, վարդապետ: 870-ական թթ. սկսել և X դ. սկզբին ավարտել է «Արծրունյաց տան պատմություն» երկը, որտեղ շարադրել է Արծրունիների նախարար. տոհմի պատմությունը՝ այն հարակցելով Հայաստանում ծավալված քաղ., կրոն., մշակութ. տեղաշարժերի հետ: Շարադրանքն սկսվում է վաղնջական ժամանակներից և հասցվում մինչև X դ. սկիզբը: Երկասիրությունը բաժանված է դպրություններ և գլուխներ: Առաջին դպրությունն ընդգրկում է մինչև V դ. տեղի ունեցած եղելությունները: Հեղինակն անդրադարձել է նաև Հայաստանում 301-ին քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու հանգամանքներին, Հայ եկեղեցու պատմությանը, մասնավորապես եկեղեցու և Մարդպետների նախարարության նահապետի (Հայր Մարդպետի) միջև ընթացող սուր մրցապայքարին, Ներսես Ա Մեծ կաթողիկոսի գործունեությանը, հեթանոսության դեմ Հայ եկեղեցու անդիջում պայքարին, Մերուժան Արծրունու և նրա հետևորդների հակաեկեղեց. ձեռնարկումներին, Սահակ Ա Պարթևի գործունեությանը (գլ. Ժ–ԺԱ): Աշխատության Բ դպրությունն ընդգրկում է Հայոց Արշակունիների թագավորության անկմանը (428) հաջորդած իրադարձությունները՝ հասցվելով մինչև 850-ը: Հեղինակը վեր է հանել 450–451-ի ժողովրդաազատագր. պատերազմի հանգամանքները, եկեղեցու, հոգևորականության դերը այդ շարժման ընթացքում (գլ. Ա), Սասանյանների գերիշխանության պայմաններում մարզպան. Հայաստանի, Հայ եկեղեցու կացությանն առնչվող հարցերը (գլ. Բ–Գ), իսլամի ծագման, Հայաստա-

նում Արաբ. խալիֆայության տիրապետության հետ կապված անցքերը (գլ. Դ): Պատմագիտ. կարևոր արժեք ունեն նույն դպրության Ե–Է գլուխները, որտեղ պատմիչը, իբրև դեպքերի ականատես, ընդգրկել է IX դ. կեսին Հայաստանում խալիֆայության զորապետների կատարած խժդժությունների, հայ ժողովրդի ազատագր. պայքարի լուսաբանման համար կարևոր տեղեկություններ: Ազատագր. պայքարի հենքի վրա տրված է նաև Հայ եկեղեցու պատմությունը (գլ. Զ–Է): Թ. Ա-ու երկասիրության առավել արժեքավոր բաժինը Գ դպրությունն է, որտեղ պատմիչը շարադրել է 851-ի Աբբասյան խալիֆայության զորապետ Բուղայի արշավանքը Հայաստան, նրա չարագործությունները, հայ նախարարների դերեվարությունը, երկրի դառնաղետ վիճակը, բռնի կրոնափոխությունը, բռնակալների դեմ հայ ժողովրդի հերոս. պայքարը ևն:

Պատմագիրը պատկառելի տեղ է հատկացրել նաև քրիստ. հավատի համար նահատակվածներին (գլ. Բ, Դ, Թ, ԺԱ, Զ), այդ թվում նաև այն հայ եկեղեցականներին, ովքեր մահը գերադասել են ուրացությունից: Պատմությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև Վրաստանի, Աղվանքի և Հարևան այլ երկրների մասին: Թ. Ա-ու հաղորդած տվյալները հաստատվում են հայ և արաբ մատենագիրների վկայություններով: Թ. Ա-ու երկը թերի է. վերջին [Իթ (29-րդ)] անավարտ գլխից հետո նրան կցվել է Անանուն պատմագրի աշխատության առաջին գլուխը՝ որպես նույնի շարունակություն: Ապա հաջորդում են Անանունի «Պատմության» մյուս գլուխները՝ իբրև Թ. Ա-ու երկասիրության Դ դպրության մասեր, որոնց կցված է հավելյալ մի գլուխ՝ հիշատակարանով: Այդ պատճառով Թ. Ա-ու և Անանունի երկերը ավանդաբար համարվել են միայն Թ. Ա-ու հեղինակած գործ:

Թ. Ա-ու Պատմությունը մեծարժեք պատմ. սկզբնաղբյուր է և աչքի է ընկնում փաստերի առատությամբ և արժանահավատությամբ:

Պատմությունը առաջին անգամ տպագրվել է 1852-ին, Կ. Պոլսում, ապա թարգմանվել և հրատարակվել է Ֆրանսերեն:

Երկ. Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1999:

Գրկ. Բյուզանդացի Նորայր, Թովմա Արծրունի և Անանուն Արծրունի երկու այլևայլ պատմագիրներ են, «Բազմավեպ», 1905, № 5–10: Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968: Վարդանյան Վ., «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում հիշատակված մի քանի տեղանունների մասին, ՊԲՀ, 1973, № 1: Brosset M., Notice sur l'historien arménien Thoma Ardzrouni, "Mélanges Asiatiques", 1862, 1863, t. 4.

Վրեժ Վարդանյան

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ [1378, գ. Աղի (Արճեշ ք. մոտ) – 15.5.1446, գ. Ակոռի (Մայացոտն գավառ), թաղվել է Մեծոփավանքում], պատմիչ, մանկավարժ, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչ: Մեծոփեցի է կոչվել երկար տարիներ Քաջբերունիքի Մեծոփ գյուղում ապրելու համար: Ուսումնառությունն սկսել է 1386-ից, *Մեծոփավանքում՝* Հովհաննես Մեծոփեցու մոտ, 1393-ից ուսանել է Խառաբաստավանքի վարդապետարանում՝ աշակերտելով Սարգիս Ապրակունեցի, ապա՝ Վարդան Հոգոցվանեցի բաբունապետներին: 1406-ից սովորել է *Տաթևի համալսարանում՝ Գրիգոր Տաթևացու* մոտ: 1410-ին Թ. Մ. Մեծոփում ստանձնել է տեղի վանահայրությունն ու վարդապետարանի բաբունապետությունը՝ պաշտոնավարելով ավելի քան 30 տարի: Թ. Մ-ու մանկավարժ. գործունեության ընթացքում Մեծոփա դպրոց են հրավիրվել ճանաչված մասնագետներ, ստեղծվել են դասագրքեր, կատարվել տարբեր երկերի մեկնություններ: Դպրոցի մատենադարանում ընդօրինակել, ծաղկել ու կազմել են հայ. բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Մեծոփը դարձել է գրչության կարևոր կենտրոն, որտեղ Թ. Մ. ուսուցանել է գրչության արվեստ, պատրաստել գրագիրներ, գրիչներ, գրչության արվեստի ուսուցիչներ: Թ. Մ. գրել է պատմ. մի շարք գործեր: Ամենահայտնին «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» (1860, քնն. բնագիրը աշխատասիր. Լ. Խաչիկյանի, 1999) երկն է, որն ընդգրկում է 1386–1440-ի իրադարձությունները: Այն XV դ. պատմ. հազվագյուտ երկերից է և կարևոր աղբյուր Լենկ-Թեմուրի, ինչպես նաև կարակոյունլու և ակկոյունլու քոչվոր ցեղերի մղած պատերազմների շրջանի Հայաստանի ու Միջին Արևելքի պատմության ուսումնասիրման համար:

Թ. Մ-ու պատմ. երկերից է նաև «Յիշատակարանը» (1892), որը շարունակում և լրացնում է Պատմությունը և վերաբերում Հայոց կաթողիկոս. աթոռը Կիլիկիայի մայրաքաղաք Սսից Վաղարշապատ տեղափոխելուն: Պատմ. արժեք ունեն նաև Թ. Մ-ու թղթերը, խմբագրած ձեռագրերի բոլոր հիշատակարանները:

Նա սրբագրել, խմբագրել ու մշակել է կրոնադավանաբան., ծիս., երաժշտ., գեղ. և մեկնողական բազմաթիվ երկեր: 1441-ին *Հովհաննես Հերմոնեցու* և այլոց հետ կազմակերպել է *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովը*՝ մեծապես նպաստելով Հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատելու գործին: Այնուհետև մինչև 1443-ը մնացել է Էջմիածնում և օգնել նորընտիր կաթողիկոսին:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.1, 3-րդ պատկերը:

Գրկ. Հովսեփյան Գ., Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղ-պատ, 1914: Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1946: Մաթևոսյան Ա., Գրիգոր Տաթևացին և Մեծոփավանքի դպրոցի հիմնադրումը, ՊԲՀ, 1969, № 2:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ Թորոս Հարությունի (18.3.1864, Շապին Գարահիսար – 1.3.1934, Երևան, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), ճարտարապետ, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիրը: ՀԽՍՀ գիտ. վաստ. դոկտոր (1933): Բարձրագույն կրթություն ստացել է Կ. Պոլսի Գեղարվեստից վարժարանի ճարտ. բաժնում (1888–93): Աշխատել է որպես ճարտարապետ Կ. Պոլսում, Բուլղարիայում, Ռումինիայում, նախագծել է և կառուցել ամառանոցային, պալատ. շենքեր, մեհյաններ: 1902-ին մեկնել է Փարիզ՝ ճարտ. գիտելիքները խորացնելու: Եղել է Եգիպտոսում, Հունաստանում, Իտալիայում՝ Հին աշխարհի ճարտ-յանը մոտիկից ծանոթանալու նպատակով: 1903-ին տեղափոխվել է Հայաստան, 1904-ի գարնանը ստանձնել *Զվարթնոց* տաճարի հետազոտությունը, ղեկավարել պեղումները: Ամռանը մեկնել է Անի, որտեղ վերսկսվել էին Ն. Մառի հնագիտ. ուսումնասիրությունները, մինչև 1912-ը աշխատել է այնտեղ՝ որպես գիտաշխատող ճարտարապետ: Թ. ուսումնասիրել և չափագրել է Անիի եկեղեց. և աշխարհիկ կառույցները, կազմել վերակազմության նախագծեր: Գիտության համար վերակենդանացրել է Անիի ավերակները:



Թ. Թորամանյան

1905-ին հրատարակվել է Թ-ի՝ Զվարթնոցի տաճարին նվիրված հոդվածը՝ հայ. առաջին ճարտ. գիտ. ուսումնասիրությունը, որտեղ մեկնաբանվել է հայկ. միջնադարյան ամենաբարդ հուշարձանի եռաստիճան հորինվածքի վերակազմությունը: Հրատարակվել են Թ-ի մենագր. ուսումնասիրությունները *Էջմիածնի Մայր տաճարի, Տեկորի Ս. Երրորդություն վանքի*, Անիի *Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու, Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցու, Հոռոմոսի վանքի*, Անիի ճարտ-յան մասին:

Թ. չափագրել և հետազոտել է հատկապես Շիրակի ու Արագածոտն գավառի եկեղեցիներն ու վանքերը (Տեկորի, Բագարանի, Ալամանի, Շիրակավանի, Անիի Հովվի եկեղեցիները, Խծկոնքի վանքը ևն), որոնք այժմ գտնվում են Թուրքիայի տարածքում և ավերված են: Թ-ի չափագրությունները և լուսանկարները հայ մշակույթի այդ արժեքավոր հուշարձանների մասին եղած միակ փաստագր. նյութերն են:

1918-ին Վիեննայի Արվեստի պատմության ինստ-ի պրոֆ. Յո. Ստրժիգովսկին հրատարակել է «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմ. երկհատոր աշխատությունը Թ-ի գիտ. ուսումնասիրությունների (անտիպ և հրատարակված) հիման վրա՝ այդ մասին նշելով առաջաբանում: Այդ համագործակցության շնորհիվ հայկ. ճարտ-ը՝ որպես ինքնուրույն ճարտ. դպրոց, միջազգ. ճանաչում է ստացել:

Թ., շրջելով Հայաստանում, ավելի քան 30 տարի չափագրել, ուսումնասիրել և նկարագրել է հարյուրավոր եկեղեցիներ, վանքեր, միջնադարյան աշխարհիկ շինություններ և իր իսկ հավաքած ու մշակած նյութերի հիման վրա առաջին անգամ տվել է հայ ճարտ-յան պարբերացումը, ծագման ակունքները, փոխազդեցությունները և զարգացման գրեթե բոլոր փուլերի հատկանիշները: 1969-ին ՀԽՍՀ ԳԱ նախագահությունը սահմանել է Թ-ի անվ. մրցանակ, որը շնորհվում է հայ ճարտ-յան պատմությանը նվիրված լավագույն աշխատությունների հեղինակներին (ստացել են Ն. Տոկարսկին, Ա. Սահինյանը, Վ. Հարությունյանը, Հ. Խալփախչյանը, Պ. Կունեոն, Ա. Ալպագո-Նովելլոն):

Երկ. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, կազմ. Կ. Ղաֆադարյան, [հ.] 1–2, Ե., 1942–48: Նամակներ, կազմ. Ն. Թորամանյան, Ե., 1968: Զվարթնոց, Գագկաշեն, Ե., 1984:

Գրկ. Հարությունյան Վ., Թորոս Թորամանյան, Ե., 1984:

Ալեքսանդրա Երեմյան

ԹՈՐԳՈՄԱ ՏՈՒՆ, Տուն Թորգոմա, Հայոց երկրի անվանումը՝ ըստ Աստվածաշնչի և ըստ աստվածաշնչյան հնագույն մեկնությունների: Թորգոմ անունն առաջին անգամ հիշատակվել է Ծննդոց գրքում՝ *Նոյի* որդու՝ Հաբեթի ազգաբանության մեջ. «Հաբեթի որդիներն են Գոմերը, Մագոգը, Մադան, Հավանը, Ելիսան, Թոբելը, Մոսոքը և Թիրասը: Գոմերի որդիներն են Ասքանազը, Ռիփաթը և Թորգոման» (**10.2–3**): Թ. տ. արտահայտությունը երկու անգամ հանդիպում է Եզեկիելի մարգարեության մեջ. առաջին դեպքում՝ իբրև Տյուրոսին ձի ու ջորի վաճառող երկրի անուն («Թորգոմա տնից մարդիկ է, որ ձիերով, հեծյալներով ու ջորիներով լցրել են քո շուկաները», **27.14**), երկրորդ դեպքում՝ կապված Գոգի ու Մագոգի արշավանքի հետ, երբ, ի թիվս այլևայլ ազգերի ու ժողովուրդների, օրերի վախճանին, Թ. տ. էլ է արշավելու վերաբնակեցյալ երկրի՝ Աստծո ժողովրդի վրա, որտեղ և պատժվելու է (**38.**):

Մովսես Խորենացու կազմած ազգացանկում Թորգոմը սերում է Հաբեթից (Հաբեթ-Գոմեր-Թիրաս-Թորգոմ), իսկ Թորգոմից սերում է Հայոց անվանադիր նախնի Հայկ Աղեղնավորը («Հայոց պատմություն», 1997, գիրք Ա, գլ. Ե):

Հետազոտողներն ավանդաբար Թ. տ. նույնացնում են Հայաստանի հետ: Ըստ այլ հետազոտողների՝ Թ. տ. խեթական արձանագրությունների Թեգարամա կամ Թագարամա երկրանունն է և ասորեստանյան արձանագրությունների Թիլ-Գարիմմու երկրանունը:

Ուշագրավ է, որ Մովսես Խորենացին Հաբեթի տոհմի ճյուղագրությունը հանգեցնում է Արամին և Արա Գեղեցիկին՝ հենվելով իրեն հայտնի պատմ. աղբյուրների վրա:

Գրկ. Ալիշան Ղ., Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վնտ., 1904, էջ 114–124: Ինգլիզյան Վ., Հայաստան Ս. Գրքի մեջ, Վնտ., 1948:

Լևոն Սարգսյան

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ (XIII դ. 20-ական թթ. – մ.թ. անհտ), XIII դ. 2-րդ կեսի մանրանկարիչ և գրիչ: Կիլիկյան *մանրանկարչության* դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ: Ապրել և աշխատել է Հռոմկլայում (Կիլիկիա), եղել Հռոմկլայի դպրոցի առաջատար նկարիչը: Աշակերտել է Հռոմկլայի նշանավոր մանրանկարիչներ Կիրակոսին և Հովհաննեսին: Պահպանվել են Թ. Ռ-ի ստորագիր թվագրված 7 ձեռագիր մատյաններ. 1256-ի «Զեյթունի Ավետարանը» (Մատենադարան, ձեռ. № 10450), 1268-ի «Մալաթիայի Ավետարանը» (Մատենադարան, ձեռ. № 10675), 1260-ի, 1262-ի, 1265-ի Ավետարանները և 1266-ի «*Մաշտոցը*» (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, համապատասխանաբար՝ ձեռ. №№ 251, 2660, 1956, 2027), 1262-ի «Սեբաստիայի Ավետարանը» (Բալթիմորի Ուոլտերս պատկերասրահ, ձեռ. № 539): Թ. Ռ-ին են վերագրվում ևս երեք ձեռագրերի՝ 1250-ական թթ. սկզբի Ավետարանի, Հեթում Ա-ի 1266-ի Ավետարանի մասերի (Մատենադարան, ձեռ. №№ 8321 և 5458) և 1260-ական թթ. «Վասակ իշխանի Ավետարան»-ի (Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 32.18) մանրանկարները: Նրան հովանավորել և ձեռագրեր են պատվիրել Հայոց Հեթում Ա և Լևոն Գ թագավորները, Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսը, Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր դասի բարձրաստիճան ներկայացուցիչները:

Թ. Ռ-ի արվեստի արմատները սերում են XII դ. վերջի – XIII դ. սկզբի կիլիկյան մանրանկարչությունից, որն իր հերթին շարունակում է XI դ. հայկ. գրքային գեղանկարչության, այսպես կոչված՝ «ազնվականական» ուղղությունը: Նրա անվան հետ է կապված հայկ. գրչարվեստում մինչ այդ աննախադեպ (և ընդհանրապես՝ հազվադեպ) պատկերազարդման շարքերի ընդարձակումը: Թ. Ռ-ի մանրանկարները պատկերում են ոչ միայն քրիստ. 12 հիմն. պատկերագր. թեմաները (ինչպես սովորաբար ընդունված էր հայկ. ձեռագրերում), այլև՝ հաճախ, քայլ առ քայլ հետևելով ավետարան. ողջ պատմությանը, ներառվում են տեքստի այնակներում և լուսանցքներում: Ավետարան. շարքի հիմն. տեսարաններում Թ. Ռ. ընդհանուր առմամբ հետևել է հայկ. արվեստում ընդունված պատկերագրության նորմերին, երբեմն, բյուզ. օրինակների ազդեցությամբ, փոխել է միայն պատկերագրման տեսակը կամ, հազվադեպ, ընդունել բյուզ. հորինվածքները: Նա ծանոթ է եղել նաև տարբեր երկրների ու ժողովուրդների, մասնավորապես հարևան խաչակրաց պետությունների ձեռագիր մատյաններին: Դրա վկայությունն են պատկերագր. այնպիսի առանձին օրինակներ, ինչպես Զեյթունի և Սեբաստիայի Ավետարանների դեկորատիվ թերթերում՝ Աստծո Գառը խաչով, կամ «Մալաթիայի Ավետարան»-ի «Խաչելությունում՝

եկեղեցին և սինագոգը խորհրդանշող պարեզոտներ կրող կերպարները՝ թագերով և դրոշներով: Բայց դրանք նշանակալի դեր չեն խաղացել Թ. Ռ-ի ո՛չ պատկերագրություններում, ո՛չ էլ մանրանկարների ոճում: Հիմնականում հենվելով հայկ. և բյուզ. պատկերագրության վրա՝ նկարիչը միաժամանակ իր պատկերազարդումներում ներառել է բազմաթիվ նորույթներ՝ ստեղծագործաբար մոտենալով իր առջև դրված խնդիրներին: Թ. Ռ. ոչ թե պարզապես նկարազարդել է ավետարան. պատմության այս կամ այն դրվագը՝ համաձայն պատկերագրության ավանդույթի, ոչ միայն խորամուխ է եղել Ավետարանի համապատասխան հատվածների մեջ, այլև մի շարք դեպքերում զուգահեռներ է անցկացրել հինկտակարանային տեքստերի հետ, ի հայտ բերել դրանց հիանալի իմացություն, ստեղծել գեղանկարչական մեկնության ինքնատիպ օրինակներ: Այսպես. նա հինկտակարանային մարգարեներին տեղադրել է ավետարանական առանձին տեսարաններում և խորանների ճակատամասերում, որտեղ նրանք բռնած պահում են իրենց մարգարեական գրությունների ոլորաթերթերը՝ հիշեցնելով, որ Քրիստոսի կյանքի իրադարձությունները մարգարեացված են Հին կտակարանում:

Թ. Ռ-ի մանրանկարների պատկերագրության ամենահատկանշական ու գրավիչ գիծը ավետարան. պատմություններին նոր հայացքով նայելու ձգտումն է: Նա Քրիստոսին ներկայացրել է որպես կենդանի մարդ՝ շրջապատված չար ու բարի մարդկանցով: Դարերով սրբագործված կանոններում մտցրել է ժամանակի իրողություններն արտացոլող բազմաթիվ տարրեր: Նույնիսկ քրիստոսաբան. շարքի առավել կանոնակարգված գլխ. տեսարաններին Թ. Ռ. տվել է կենդանություն՝ բնական կեցվածքներով ու դեմքերի արտահայտություններով, հաղորդել տարբեր հուզական և հոգեկան վիճակներ: Զարչարանքների շարքի տեսարաններում նկարիչը մեծ վարպետությամբ է հաղորդել կատարվածի դրամատիզմը, գործող անձանց խոր, սակայն զուսպ զգացմունքները: Նա բնական երանգավորում է հաղորդել այնպիսի խորհրդապաշտ. և խորհրդանշական տեսարանի, ինչպիսին է Պայծառակերպությունը, որտեղ համոզիչ կեցվածքով պատկերված են ոչ միայն արտասովոր տեսիլքից զարմացած առաքյալները, այլև Քրիստոսի հետ հանդիստ, մտերմիկ զրուցող Եղիան և Մովսեսը: Ազատ մտածողությամբ առանձնանում են պատմողական ընդարձակ շարքի տեսարանները, որոնցից շատերը հազվադեպ են պատկերել նկարիչները, իսկ մի քանիսն էլ նախադեպը չունեն ո՛չ հայկ., ո՛չ բյուզ. ձեռագրերում: Հետևելով ավետարան. տեքստին՝ Թ. Ռ. երբեմն այն լրացրել է պարականոն աղբյուրներից քաղված մանրամասնություններով: Այսպես. «Մոգերի վերադարձում» զորքի ուղեկցությամբ հեծյալ մոգերի սրընթաց արշավի պատկերը (հնարավոր է, հղացվել է Հիսուսի մանկությունը պարականոն ավետարանից) անկասկած ստեղծվել է նկարչի բազմիցս տեսած՝ Կիլիկիայի հայոց արքայի և իշխանների գլխավորած հեծելախմբերի տպավորության տակ: Զինվորները կրում են նկարչի ժամանակի սաղավարտներ, զենք ու զրահ, ծածանվող դրոշներ: Երկրորդական գործող անձանց (կանանց) զգեստներն ու գլխարկները Թ. Ռ-ի ժամանակի կիլիկյան զգեստներ են՝ ֆրանս. նորաձևությամբ:

Որոշ տեսարաններ գրեթե կենցաղային են. Հուդայի և պահակախմբի համար փող կշռող քահանայապետներն ու ավագանին նման են առևտրականների, իսկ «Հացի ու ձկների հրաշքը» հիշեցնում է զբոսախնջույք բաց երկնքի տակ: «Վասակ իշխանի Ավետարան»-ի «Հաղորդությունում» առաքյալների հետևում պատկերված փակ վարագույրը հայկ. եկեղեցիներում ընդունված արարողակարգից է (եկեղեցում վարագույրը հոգևորականին բաժանում է հաղորդություն ստացող ծխականից): «Մոգերի երկրպագությունը» (1260-ի Ավետարան) նույնպես նկարչի ապրած ժամանակաշրջանից է, որտեղ մոգերի սովորական խմբին ավելացված է ևս հինգ անձ՝ խալաթներով, տափակ գլխարկներով, մոնղոլ. դիմագծերով և մակագրությամբ՝ թաթարներ: Այս պատկերը, անկասկած, անդրադարձն է մոնղոլներին քրիստ. հավատի բերելու այն հույսերի, որ իրական էին թվում Կիլիկիայում, հատկապես Հեթում Ա թագավորի 1254-ին Կարակորում կատարած ուղևորությունից հետո:

Թ. Ռ-ի արվեստի համար հատկանշական է այն, որ նա նույնությամբ չի կրկնել միևնույն հորինվածքը:

Թ. Ռ-ի մանրանկարներում առանձնակի տեղ են գրավում արքայազն Լևոնի (ապագա Լևոն Գ) երկու դիմանկարները: Առաջինում՝ 1250-ական թթ. վաղ ձեռագրում (Մատենադարան, ձեռ. № 8321) պատանի թագաժառանգը կանգնած է կամարի տակ, գլխավերևում՝ զույգ հրեշ-

տակներ, երկրորդում՝ պսակադրության առիթով պատվիրված 1262-ի Ավետարանում (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2660), նա պատկերված է երիտասարդ կնոջ՝ Կեռանի հետ: Ավետարանագիրքը՝ Լևոնի, վառվող մոմը Կեռանի ձեռքում հիշեցնում են հարսանեկան արարողություն: Նրանք կանգնած են երկթռիչք կամարի տակ, վերևում նրանց օրհնող Քրիստոսն է՝ երկու հրեշտակների հետ: Այս երկու դիմանկարները գրեթե փաստագր. տեղեկություն են տալիս Կիլիկիայի արքայական տան տոնական հանդերձանքի մասին: Լևոնի դեմքը երկու պատկերներում էլ վնասված է: Սակայն Կեռանի նուրբ դիմագծերը, կանացի գրավիչ կերպարը վկայում են անհատականացված կերպար ստեղծելու նկարչի ձգտման մասին:

Պատկերված անձանց օժտելով կենսունակությամբ ու դինամիկայով, ձգտելով տարբերել նրանց նկարագիրն ու հոգեվիճակը՝ Թ. Ռ. մասամբ հաղթահարել է մարդու պատկերման՝ միջնադարյան կերպարվեստի համար ավանդական պայմանականությունը:

Թ. Ռ-ի գեղանկարչությունն առանձնանում է գեղ. կառուցվածքի կատարելությամբ, հորինվածքային լուծումների հստակությամբ, տարածականության պատկերման պարզությամբ (հեռանկարչության տարբեր հնարների օգտագործմամբ), գունային երանգների ներդաշնակությամբ (որտեղ վառ, տեղային գույները կապակցվում է բարդ, խառը տոներին), զարդապատկերների հարստությամբ ու նրբաձևությամբ, գծի գեղեցկությամբ, համամասնությունների համաչափությամբ, մարդկային կեցվածքների բնականությամբ: Հիմն. գունային հարաբերություններն են՝ կապույտը ոսկու հետ՝ լրացված սառը մանուշակագույնով, թավշե կանաչով, կավաքարի հարուստ նրբերանգներով, ինչպես նաև սպիտակ (կամ սև) ուղղագծերով և կարմիրի նրբաճաշակ ամրացումներով: Գունագեղ մակերեսի մշակումը բազմազան է. վառ, փայլուն երանգներով ողողված հատվածներին հաջորդում է բարակ, թեթև ու թափանցիկ մակերեսային շերտ, որի տակից լուսարկում է մագաղաթի սպիտակ տոնը: Հատկապես հարուստ են դեմքերի նրբերանգավորումները:

Թ. Ռ-ի գեղագիտ. հավատամքն իր բարձրագույն արտահայտությունն է ստացել Քրիստոսի կերպարում, որտեղ ընդհանուր ոչինչ չկա բյուզ. վերացական մեծափառությունից, խստությունից ու անդրանցականությունից: Շատ կողմերով Քրիստոսի պատկերումը տարբերվում է նաև ավելի վաղ շրջանի հայկ. կերպավորումներից: Այստեղ նա օժտված է ներքին գեղեցկությամբ, ինչը ստեղծվում է ոչ այնքան ճշգրիտ դիմագծերով, որքան ոգեղենի արտացոլման գեղեցկությամբ. մեծությունը զուգակցվում է հեզության, ազնվականությունը՝ ներքին ուժի և առնական զսպվածության հետ: Թ. Ռ-ի արվեստի կերպարային բովանդակությունն ունի լուսավոր հանդիսություն, որտեղ խաղաղ և զուսպ ուրախությունն ուղեկցվում է թեթև թախիծով:

Գեղ. մտածողության ազատությունը և պատկերագր. լեզվի կատարելությունը Թ. Ռ-ի գեղանկարչությունը դասում են միջնադարյան քրիստ. արվեստի ամենաառաջավոր և բարձրագույն նվաճումների շարքը: Լինելով միջնադարյան կերպարվեստի բարձունքներից՝ նրա ստեղծագործությունը մեծ ազդեցություն է ունեցել հայկ. գրքային գեղանկարչության հետագա զարգացման վրա:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.1, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Հովսեփյան Գ., Կոստանդին Ա կաթողիկոսը որպես հայ մանրանկարչության մեծ հովանաւոր, «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան», պր. 2, Նյու Յորք, 1943: Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964: *Дурново Л. А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; Дрампян И. Р., Торос Рослин, Е., 2000;* Der Nersessian S., Armenian Manuscripts in the Walters Art Gallery, Baltimore, 1973; Նույնի, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, W., 1993.

Իրինա Դրամբյան

ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, Մշեցի (ծ. և մ. թթ. անհտ), XIV դարի առաջին կեսի գրիչ, մանրանկարիչ, տաղասաց: Ծնվել է Տարոնի Մուշ քաղաքում: Սկզբ. կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել *Գլաձորի համալսարանում*՝ բարձունապետ *Եսայի Նչեցու* մոտ: Ստեղծագործել է Սյունիքի տարբեր գրչատներում: Մեզ են հասել 1307–46-ին Թ. Տ-ու նկարազարդած 24 ձեռագրեր, որոնցից 11-ը պահվում են Մատենադարանում: Մեզ հայտնի նրա առաջին ձեռագիրը «Եսայի Նչեցու Ավետարանն» է (1307, Ս. Ղազար վանքի մատենադարան, ձեռ. № 1917): Թ.Տ-ու լավագույն ստեղծագործությունների թվին են պատկա-

նում նկարազարդ երկու Աստվածաշունչ (ձեռ. № 206, 353), երկու Ավետարան (ձեռ. № 6289, 8936, չորսն էլ՝ Մատենադարանում) և մեկ Ճաշոց (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 96): Հատկապես ճոխ է զարդարված 1318-ի Աստվածաշունչը (Մատենադարան, ձեռ. № 206), որը մասնագետները համարել են Գլաձորի գրչության դպրոցի գլուխգործոց: Ձեռագրում Ավետարանը զարդարված է կանոնիկ նկարներով, իսկ Հին կտակարանն ու Գործք առաքելոցը զուգորդված են փոքրիկ պատկերներով, որոնք արտահայտում են տվյալ տեքստի ամենաէական դրվագը կամ հիմն. գաղափարը: Այս եղանակը կապված էր լատ. Աստվածաշնչերի նկարազարդման համակարգի հետ:

Օգտվելով լատ. օրինակներից և կրելով կիլիկյան մանրանկարչության ազդեցությունը՝ Թ. Տ. յուրովի է վերարտադրել տեսածը, գրեթե անփոփոխ թողնելով իր ոճը: Հատկապես տպավորիչ են մեծ, նշաձև աչքերով, շեշտված աղեղնաձև հոնքերով կերպարները:

Թ. Տ-ու նկարազարդած ձեռագրերն առանձնանում են զարդաձևերի առատությամբ ու բազմազանությամբ: Տեղական ավանդույթների ու ժող. արվեստի հետ սերտ կապերի մասին է վկայում յուրաքանչյուր մանրուք զարդանախշելու նկարչի ձգտումը: Բուս. և երկրաչափ. զարդերին զուգընթաց առկա են նաև իրական ու հրաշապատում էակների պատկերներ: Դրանցում արտացոլվել են տոտեմական, բնության ուժերի պաշտամունքի, հին հավատալիքների ու հնամենի այլ պատկերացումներ, որոնք քրիստ. արվեստում վերաիմաստավորվել են, ստացել նոր խորհրդանշական իմաստ: Թ. Տ-ու արվեստում մեծ տեղ է գրավում Աստվածամոր կերպարը: Հատկապես հաջողված են «Տիրամայրը մանկան հետ» պատկերի բազմազան տարբերակները: Ուշագրավ են նաև նրա ինքնանկարները, Եսայի Նչեցու դիմանկարը ևն:

Վառ ու հագեցած գունաշարը, ոսկու չափավոր օգտագործումը հնչեղություն ու տոնականություն են հաղորդել նկարչի մանրանկարներին: Թ. Տ. եղել է նաև միագույն գծանկարի մեծ վարպետ:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.2, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Քյուրտյան Հ., Թորոս Տարոնեցի. կյանքն ու իր տաղերը, Նյու Յորք, 1953: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969: Ա-վետիսյան Ա., Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե., 1971: *Дурново Л., Краткая история древнеармянской живописи, Е., 1975, с. 47–48;* Der Nersessian S., Western Iconographic Themes in Armenian Manuscripts, Études bysantines et arméniennes, t. 2, Louvain, 1973, p. 611–630; Korchmasian E., Toros Taronaci, ein armenischer Buchmaler des 14 Jahrhunderts und seine französischen Vorbilder, “Wiener Jahrbuch für Kunstgeschichte”, Band XLII, Wien-Köln, 1989, s. 81–100.

Էմմա Կորխմազյան

ԹՎԵՐԳ, ճարտասանական եղանակավոր խոսքից մինչև ասերգի սահմաններն ընդգրկող երգեցողության ձև (ոգումն, առասացություն, ասերգություն, թվերգություն ևն): Աշխարհիկ երգարվեստում Թ-ի կիրառման հիմն. ոլորտը վիպականն է (բառ ասել, վեպ ասել), որտեղ առկա է նաև Թ-ի և թվելյաց երգերի միջև եղած կապը: Հոգևոր երգարվեստի ոլորտում Թ-ի նշանակությունը առավել կոնկրետացված է և առնչվում է *սաղմոսերգությանը*: Նեղ առումով թվերգությունը սաղմոսերգության երկու (*Կոմիտաս*) տեսակներից մեկն է: Եկեղեցում թվերգությամբ են հնչում *քարոզը*, Ա-վետարանից և Հին կտակարանի մարգարեների գրքերից քաղված հատվածները: Ի տարբերություն սաղմոսասացության (սաղմոսերգության մյուս տեսակն է), Թ. ունի երաժշտ. և տաղաչափ. կանոնավոր նկարագիր:

Թ-ի ձայնելևէջային, կշռութային, կառուցվածքային բնութագրերը պայմանավորված են լեզվի (գրաբարի) առոգանական, մասնավորապես՝ շեշտական և կառուցվածքային հատկանիշներով: Թ-ին բնորոշ է որոշակի ձայնամիջոցով սահմանափակված ձայնակարգային հիմք և մեղեդիական տիպական դարձվածքների առկայություն, որոնցով նա սերտ կապի մեջ է վիպական արվեստի հետ: Թերևս նաև դա է նկատի ունեցել Կոմիտասը, երբ գրել է, թե հնում սաղմոսերգությունը, հավանաբար, կատարվել է ժող. եղանակներով:

Թ. երգվում է լեզվի առոգանության և տրոհության նշանների համաձայն, որոնք, երաժշտական նշանակությամբ հանդերձ, հայտնի են նաև որպես «Առոգանական խազերի համակարգ» (տես *Խազագրություն*): Ըստ իրենց կիրառ. նշանակության, Կոմիտասն այդ նշանները բաժանել է երեք խմբի՝ տևողության, առոգանության, տրոհության: Կիրառվելով VIII

դարից՝ առոգանական խազերի համակարգը զարգացման մի քանի շրջան է ունեցել և XII–XIII դդ. հասել իր բարձունքին: Թ-ի՝ մեզ հասած հնագույն խազագրված օրինակները պատկանում են IX–X դդ.՝ Մլքե թագուհու (851), Աշոտ սպարապետի (909), Էջմիածնի (989), Նարեկյան (1069) և այլ Ավետարաններ:

Գրկ. Կոմիտաս, Հայ եկեղեցական երաժշտություն, տես Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941:

Մհեր Նավոյան

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ, Հայաստանում տարածված սրբավայր-ուխտատեղիներ: Գերեզմանաձև կամ միանավ, թաղածածկ, արևելյան խորանով մատուռանման շինություններ՝ կառուցված մեծ մասամբ բարձունքի վրա կամ ջրերի ակունքի մոտ (հանդիպում են նաև բնակավայրերում): Համարվում են սուրբ և բուժիչ, ունեն ուխտագնացության օրեր: Կա տեսակետ, որ Թ. Մ. սրբավայրերը կապված են հեթանոս. Հայաստանում հերոս նախնիների՝ «Թուխ Մանուկների» պաշտամունքի հետ, որով դաստիարակվել են միություններում համախմբված պատանիները: Հայ իրականության մեջ երիտասարդ. միությունները կամ «կտրիճավորաց եղբայրությունները» փոփոխվելով՝ հարատևել են և պահպանվել նաև միջնադարում: Քրիստոնեությունը աշխատել է Թ. Մ-ի պաշտամունքը վերաիմաստավորել. օր., XIII դ. *Հովհաննես Երզնկացին*, ցանկանալով Երզնկայի «Երիտասարդական եղբայրությանը» քրիստ. կերպարանք տալ, նրա համար հատուկ կանոններ ու ճառեր է գրել: Թ. Մ-ի պաշտամունքը միաձուլվել է նաև Երից Մանկանց, Քառասուն Մանկանց և, ընդհանրապես, Մանկանց պաշտամունքի հետ:

Գրկ. Մնացականյան Ա., «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, ՊԲՀ, 1976, № 2:

Մուրադ Հասրաթյան

ԹՈՒՂԹ, նամակ, ուղերձ, գրական ժանր. Հրապարակախոսական-նամակագրական բնույթի երկ՝ ավանդված դեռևս հունա-հռոմեական բանաստեղծների կողմից (Ք.ծ.ա. I դ. – Ք.ծ.հ. I դ.): Արձակ Թ-ի հիմն. նախատիպերը Մերձ. Արլ-ի զանազան երկրների դիվանատներից դուրս եկած նամակներն են և Նոր կտակարանում ամփոփված առաքելական կամ ընդհանրական Թ-երը: Վերջիններս էլ իրենց նախնական-չտարբերակված օրինակներն ունեն Հին կտակարանում. Երկրորդ Օրինաց գրքի շատ հատվածներ, Նեեմիի գիրքը, Բարուքի Թուղթը ևն: Սակայն ձևավորված և կայուն կառուցվածք ունեն հատկապես Հիսուս Քրիստոսի *առաքյալների* գրած ընդհանրական Թ-երը:

Այս ժանրի երկերը հայ մատենագրության մեջ հայտնի են տոմար, նամակ, թուղթ և այլ անվանումներով: Քանի որ դրանք շատ են ընթերցվել, վաղ միջնադարում և հետագայում գրվել են նաև կեղծ Թ-եր՝ եկեղեցու և մշակույթի նշանավոր գործիչների անունից (օր., նշանավոր «Դաշանց թուղթ»-ը, որը քաղ. նպատակներ է հետապնդել):

Հայ մատենագրության գանձարանում առկա Թ-երը կարելի է տեսակավորել հետևյալ սկզբունքով.

ա. Հրապարակային ընթերցման Թ-եր, որոնք ունեցել են ոչ այնքան գործնական, որքան գրական ստեղծագործության բնույթ (օր., *Ղազար Փարպեցու* «Թուղթ առ Վահան», *Ներսես Լամբրոնացու* «Թուղթ առ Լևոն», *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* Թ-երը ևն):

բ. Վավերագրեր, որոնք պատմ. ուսումնասիրությունների առանձին բնագավառ են և կարող են տալ բազում կնճռոտ հարցերի պատասխաններ: Թ-երի այս տեսակը հիմնականում պատմ. (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ զետեղված Աբգարի Թ-երը՝ ուղղված Փրկչին, Տիբերիոս կայսրին, Ասորեստանի Ներսեհ և Պարսից Արտաշիր թագավորներին ու նրանց պատասխան Թ-երը), միջպետ. ու միջեկեղեց. վավերագրեր են (ինչպես կաթողիկոս. և պետ. դիվանագետների վավերագրերը, որոնցից ամենահայտնիներն են *Ներսես Շնորհալու* Թ-երը):

Սակայն նման բաժանումը պայմանական է, քանի որ նույն Թ-ում հեղինակը կարող է զուգորդել այս երկու հատկանիշներն էլ: Վավերագիր Թ-եր մեզ են հասել նաև մի շարք ժողովածուներով, որոնցից հնագույնը «*Գիրք թղթոցն*» է: Ներսես Շնորհալու «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուում, *Թովմա Մեծոփեցու* կազմած «Թուղթ նամակի վարդապետաց եկեղեցւոյ» հավաքածուում (Ս. Ղազար վանքի մատենադարան, ձեռ. № 1091) և այլ ժողովածուներում շարադրված է բազմաթիվ ծիս. ու դավան. խնդիրների նկատմամբ Հայ եկեղեցու և նրա առաջնորդների դիրքորոշումը:

Յուրաքանչյուր դրչության կենտրոն (նոտարատուն) ստեղծել է Թ-ի (ուղերձի) շարադրման իր բանաձևային համակարգը:

Ազատ Բոզոյան

ԹՈՒՄԱՍ ճգնավոր, սուրբ Թումաս (Թովմաս, ծ. և մ. թթ. անհտ), տոնելի սուրբ, V դարի վերջի հայ ճգնավորության նշանավոր ներկայացուցիչ: Աշակերտել է *Թաթուլ* ճգնավորին, որը նրան նշանակել է Գաբեղենից (Գաբեղյանց) գավառի լեռներում «հրեշտակակրոն» կյանք վարող ճգնակյացների առաջնորդ և այնտեղ՝ Վիշապաձոր կոչված վայրում (Կաղզվան քաղաքին մերձ) կառուցված Թաթլո կամ Թաթլա (Թաթուլի) վանքի վանահայր: Թ. հռչակվել է որպես «հույժ բարեսեր, աստվածապաշտ և երկյուղած...» ճգնող, ուխտավոր միաբանության «սուրբ վերակացու»: Ըստ ավանդության, ամփոփվել է ս. Թաթուլ ճգնավորի մոտ:

Հայ եկեղեցին ս. Թ-ի, ս. Թաթուլի և ս. *Վարոսի* հիշատակը նշում է խաչվերացից հետո՝ 5-րդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը՝ ս. *Անտոն* և ս. *Կրոնիդես* ճգնավորների հիշատակի հետ միասին:

Գրկ. Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւն..., հ. 7, Վնտ., 1813, էջ 642–644: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

Ժ

ԺԱՄԱԳԻՐՔ, Աղոթամատույց, քրիստոնեական եկեղեցու հնագույն ծիսական մատյաններից, եկեղեցական արարողակարգին և տոներին պատշաճեցված աղոթքների, հոգևոր երգերի, քարոզների ժողովածու (տես *Միսամատյան*): Հայոց Ժ-ի կազմավորումը վերագրվում է V դ. սուրբ հայրերին՝ *Սահակ Ա Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, Գյուտ Ա Արահեզացուն, Հովհաննես Ա Մանդակունուն*, հետագա դարերի հեղինակներից՝ *Ներսես Շնորհալուն*: Ժ-ի որոշ հատվածներ պատկանում կամ վերագրվում են նաև Թովմա առաքյալին, *Գրիգոր Ա Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն, Հովհաննես Սարկավագին, Գրիգոր Տաթևացուն, Թովմա Մեծոփեցուն* և այլոց:

Հայոց Ժ., չնայած քրիստ. այլ եկեղեցիներում կիրառվող համանման մատյանների՝ հատկապես հունականի հետ ունեցած ընդհանրություններին, մի շարք առումներով խիստ ինքնատիպ նկարագիր ունի: Դրանում առանձնապես մեծ դեր ունեն հայ հեղինակներին պատկանող հատվածները: Հայ եկեղեցին կիրառել է Ժ-ի երկու դրսևորում՝ Ժ. և Մայր Ժ. (Ատենի). վերջինս ներառում է նաև Սաղմոսարան և *Տոնացույց*:

Ժ-ի մեջ ընդգրկված են հոգևոր բանարվեստի և երաժշտաբանաստեղծ. արվեստի մի շարք ժանրեր՝ աղոթք, *քարոզ*, մաղթանք, ընթերցվածք (Ավետարանից), *սաղմոս*, փոխ, ալելուիա, *կանոն*, թագավոր, մեսեդի, օրհնություն, *երգ* ևն: Վերջիններիս թվին են պատկանում համաքրիստ. երկու երգերը՝ «Փառք ի բարձունս» (Առավոտյան ժամերգություն, տես *Ժամերգություն*) և «Լույս զուարթ» (Երեկոյան ժամերգություն), ապա Ներսես Շնորհալու մի շարք երգերը, որոնցից հանրածանոթ են «Յիշեսցուք ի գիշերի», «Առաւօտ լուսոյ» (Գիշերային ժամերգություն), արևագալի չորս երգերը (տես *Արևագալի երգեր*) ևն:

Ժ-ի կարևորագույն մաս են կազմում ութ սաղմոսականոնները (կամ Ժ-ի կանոնները), որոնք երաժշտ. առումով դասակարգված են ութ ձայնեղանակներին (տես *Ութձայն*) համապատասխան: Յուրաքանչյուր կանոն բաղկացած է յոթ գուբղայից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին՝ 2–6 սաղմոսներից (քանակը՝ կախված սաղմոսների ծավալից): Վերջին գուբղան կոչվում է «Կանոնագլուխ», որն իր երաժշտական լեզվաոճով առավել զարգացած է կանոնի մյուս մասերի համեմատ: Հետագայում հենց սաղմոսներին են կցվել հայոց հոգևոր առաջին ինքնուրույն երգերը, որի հետևանքով էլ կոչվել են «կցուրդ» (սրանք չեն մտնում Ժ-ի մեջ, տես նաև *Շարական*):

Ժ-ի երգասացությունները տարաբնույթ են նաև երաժշտ. լեզվաոճի առումով՝ բնութագրվելով ինչպես պարզ, զուսպ ասերգայնությամբ, այնպես էլ ծանր, հանդիսավոր մեղեդիականությամբ:

Ժ. առաջին անգամ հրատարակել է Աբգար Դպիրը (1568, Կ. Պոլիս), իսկ Մայր Ժ.՝ Խաչատուր Կեսարացին (1642, Նոր Ջուղա): 1877-ին Նիկողայոս *Թաշճյանը* Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու հովանավորությամբ Վաղարշա-

պատում տպագրել է հայկ. ձայնանիշներով գրանցված ժ. («Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ»):

Գրկ. Հացունի Վ., Պատմութիւն հայոց աղոթամատոյցին, Վնտ., 1965: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990:

Մհեր Նավոյան

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, տես *Ժամերգություն*:

ԺԱՄԱՏՈՒՆ, 1. եկեղեցու բակում շենք, որտեղ սենյակներ ունեն քարոզիչներն ու քահանաները, և որտեղ գտնվում է եկեղեցականների կամ թաղականների ժողովարանը: 2. XI–XIII դդ. հայկ. իշխանությունների, գավառների հոգևոր կենտրոն վանքերի գլխ. եկեղեցիներին կից (սովորաբար՝ արմ-ից) կամ առանձին կանգնած կիսաաշխարհիկ-կիսապաշտամունքային բնույթի շենք, ժողովարան, խորհրդարան՝ նահանգի կամ գավառի իշխանների կամ հոգևոր դասի համար: Ունի քառասյուն կենտրոնակազմ *գավթի* ճարտ. հորինվածք: Առանձին կանգնած ժ-ան սակավաթիվ օրինակներից են XIII դ. *Գեղարդավանքի* վիմափոր և *Հաղպատի վանքի* «Համազասպի» ժ-երը:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Մուրադ Հասրաթյան

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ժամակարգություն, *ծեսի* և աստվածապաշտության բաղկացուցիչ հիմնական բաժիններից, հանապազօրյա պաշտոներգություն ըստ եկեղեցական օրվա տարբեր աղոթաժամերի: Ժ. նշանակում է ժամ երգել, այսինքն՝ օրվա որոշ ժամերին կարգավորված (ժամակարգված) եկեղեց. արարողություն կամ պաշտամունք կատարել: Ժող. լեզվով «ժամ» նշանակում է նաև եկեղեցի, այստեղից էլ՝ ժամ գնալ (ծիսական արարողությանը մասնակցել, ներկա գտնվել) արտահայտությունը, ժամվոր (ժ-յանը ներկա գտնվող հավատացյալները), ժամկոչ (եկեղեցու կոչնակը կամ զանգը հնչեցնող և հավատացյալներին արարողության հրավիրող), ժամատուն բառերը: Ժ-ների կարգավորությունը և դրանց հատուկ երգեցողությունները (*աղոթքներ, քարոզներ*, հոգևոր երգեր, բացառությամբ՝ *շարականների*) պարունակող գիրքը կոչվում է *Ժամագիրք*:

Ժ-ները կազմված են *Տերունական աղոթքից, սաղմոսից*, մաղթանքից, քարոզից, աղոթքից, շարականից: Ժ-յան ժամանակ այս շարքը լրիվ կամ մասնակի ձևով երբեմն կրկնվում է մի քանի անգամ:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ կենցաղավարել են Ժ-յան կամ ժամակարգության մեկնություններ, որտեղ տրված են Ժ-ների աստվածաբան. բացատրությունները: Մեկնություններ են գրել *Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Գ Օձնեցին, Խոսրով Անձևացին, Մովսես Երզնկացին*, իսկ ժամագրքի երգեցողությունների հարստացման գործում մեծ է հատկապես *Ներսես Շնորհալու* ավանդը:

Հայոց մեջ տարբեր դարերում և միջավայրերում Ժ-ները տարբեր թվաքանակ են ունեցել՝ 6, 7, 8, ի վերջո ընդունվել է 9 Ժ.: Գլխ. Ժ-ները յոթն են՝ համաձայն սաղմոսերգուի՝ «Օրվա մեջ յոթն անգամ քեզ պիտի օրհնեմ» (Սաղմ. **118.** 164) խոսքերի, իսկ ըստ կանոնակարգի՝ ինը, քանի որ Ճաշու Ժ. իր հերթին բաժանվում է երեք մասի: Համաձայն ժամագրքի՝ Հայ եկեղեցին ունի հետևյալ Ժ-ները.

1. Գիշերային Ժ., նվիրված է Հայր Աստծո փառաբանությանը: Կատարման ժամանակը կես գիշերն է: Ունի հետևյալ իմաստը. քունը Աստծո կողմից շնորհված բարիք է. շնորհակալություն և գոհություն Աստծուն այդ բարիքի համար: Խնդրանք առ Աստված, որ գիշերվա շարունակությունն անցնի խաղաղ, իսկ հաջորդ օրը՝ առանց մեղքի և փորձության:

2. Առավոտյան Ժ., նվիրված է Որդի Աստծո փառաբանությանը: Կատարվում է արշալույսին: Խորհրդանշում է Քրիստոսի երևալը Յուղաբեր կանանց՝ ամփոփելով Քրիստոսի Հարության և Փրկագործության խորհուրդները:

3. Արևագալի Ժ., նվիրված է Սուրբ Հոգուն: Նախկինում եղել է Առավոտյան Ժ-յան մի մասը: Խորհրդանշում է Քրիստոսի Հարությունը և աշակերտներին երևալը: Հաստատել է *Եզր Ա Փառաժնակերտցին*, ճոխացվել է XII դ. Ներսես Շնորհալու գրած երգերով (տես *Արևագալի երգեր*): Կատարվում է արևածագին՝ Քրիստոսի Հարությունը նույնացնելով արևի ծագմանը:

4. Ճաշու Գ ժամի Ժ., ուղղված է Սուրբ Հոգուն: Խորհրդանշում է արգելված պտղից Եվայի ճաշակումը և Քրիստոսով դատապարտումից ազատվելը: Նաև հիշատակումն է Քրիստոսի չարչարանքի: Կատարվում է ժամը 9-ին: *Ապաշ-*

խարության խորհուրդ պարունակող մի արարողություն է:

5. Ճաշու Զ ժամի ժ., ուղղված է Հայր Աստծուն: Խորհրդանշումն ու հիշատակումն է Քրիստոսի չարչարանքների ու խաչելության: Կատարվում է ժամը 12-ին: Այս ժ-յամբ հավատացյալը Աստծուց խնդրում է օգնություն իր մարդկային տկար բնության համար:

6. Ճաշու Թ ժամի ժ., ուղղված է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի մահը, որով և՝ մարդկության ազատումը դժոխքի իշխանությունից: Կատարվում է ժամը 15-ին:

7. Երեկոյան ժ., ուղղված է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի թաղումը: Կատարվում է մայրամուտից առաջ: Գիշերվա սեմին հավատացյալը, աշխատանքից հոգնած և օրվա հոգեկան ալեկոծությունից հետո, խնդրում է Աստծուն, որ իրեն պարգևի խաղաղ գիշեր և բարի քուն:

8. Խաղաղական ժ., ուղղված է Հոգի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի դժոխք իջնելը և արդարների տանջանքների դադարեցումը: Կատարվում է մայրամուտից հետո: Նպատակն է անդորրություն և խաղաղություն բերել ամենօրյա մեղքերով ծանրաբեռնված մարդու հոգուն:

9. Հանգստյան ժ., ուղղված է Հայր Աստծուն: Նախկինում այս ժ. նախորդի շարունակությունն էր և առանձին խորհուրդ չունի: Կատարվում է քնելուց առաջ:

Նախկինում, հատկապես վանքերում, 9 ժ-ները կատարվել են ամեն օր, ճիշտ իրենց ժամին: Ներկայումս ամեն օր կատարվում են Գիշերային և Առավոտյան ժ-ները միասին՝ առավոտյան, և Երեկոյան ժ.՝ երեկոյան: *Մեծ պահքի* օրերին, բացի շաբաթ-կիրակի օրերից, կատարվում են նաև մյուս ժ-ները՝ ըստ հետևյալ կարգի. Գիշերային, Առավոտյան, Արևագալի՝ առավոտյան, Ճաշու 3 և Երեկոյան՝ կեսօրին, Խաղաղականը՝ երեկոյան (երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի օրերին), Հանգստյանը՝ երեկոյան (չորեքշաբթի և ուրբաթ օրերին):

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսագիտութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, Երուսաղեմ, 1977: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990:

Ի

ԻՍՐԱՅԵԼ (ծ. և մ. թթ. անհտ), VII դարում Արցախի Մեծ Կուենք գավառի եպիսկոպոս: Ամրապնդել է Հայաստանի և Աղվանքի նվիրապետությունների կապը: Աղվանից կաթողիկոս Եղիազարի (682–689) նախաձեռնությամբ, որպես Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661–685), Հայոց կաթողիկոս *Սահակ Գ Ձորոփորեցու* (671–703) և Գարդմանի Վարազ-Տրդատ իշխանի բանագնաց, խաղաղության այցով 680-ական թթ. եղել է Հոնաց և Խազարաց աշխարհներում, հաջող բանակցություններից հետո զբաղվել քարոզչությամբ և քրիստոնյա դարձրել հոների ու խազարների զգալի մասին: Նրանց մեծ իշխանները Հայոց և Աղվանից կաթողիկոսներին խնդրել են իրենց հոգևոր առաջնորդ կարգել Ի-ին:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983:

Բագրատ Ուլուբաբյան

ԻՍՐԱՅԵԼ Ա ՈՐՄՍԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Որմուս (Վանանդ գավառ) – 677, Դվին], Ամենայն Հայոց կաթողիկոս 667-ից: Հաջորդել է *Անաստաս Ա Ակոռեցուն*: Եղել է Վանանդի եպիսկոպոսը: *Դվինի եկեղեցական ժողովներում* (645, 648) մասնակցել է աշխարհիկ և եկեղեց. ներքին 12 կանոնների մշակմանն ու սահմանմանը, հայ դավանական ձեռնարկի կազմմանը՝ կանգնելով հակաքաղկեդոնական դիրքերում: Պայքարել է *երևութականության* և *պավլիկյանների* դեմ:

Կաթողիկոս. գահին Ի. Ա Ո-ուն հաջորդել է *Սահակ Գ Ձորոփորեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ԻՏԱԼԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է XVII դ. սկզբին: Առաջնորդանիստը՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք: Իրանահայության հնագույն թեմերից է: Ընդգրկել է Իրանի ամբողջ տարածքը, բացառությամբ *Ատրպատականի թեմի* տարածքի: Նրա գերակայության տակ են գտնվել նաև Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի (տես *Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակություն*), Իրաքի հայ համայնքները (տես *Իրաքի թեմ*): 1944-ին նրանից անջատվել են Թեհրանի և Իրաքի թեմերը, իսկ 1958-ին՝ Հնդկաստանն ու Ծայրագույն Արևելքը, սակայն թեմը շարունակել է պաշտոնապես կոչվել Ի-Հ. թ.: 1958-ին Ի-Հ. թ. անջատվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնից և անցել Կիլիկիո կաթողիկոսության գերակայության ներքո՝ պահելով թեմի անվանումը մինչև 1960-ը, ապա կոչվել է Սպահանի և Հարավային Իրանի թեմ, 1995-ից՝ *Սպահանի թեմ*:

1604-ին շահ Աբբաս I-ը, ռազմավար. և տնտ. նպատակներով Հայաստանից մեծ թվով հայեր բռնագաղթեցնելով Պարսկաստան, նրանց բնակեցրել է երկրի հս. և կենտր. շրջաններում,

գլխավորապես՝ մայրաքաղաք Սպահանում և շրջակայքում: Գաղթականության հետ համավոր գնացել է նաև Ամենայն հայոց կաթողիկոս *Դավիթ Դ Վաղարշապատցին*, նրան ուղեկցել է Մայր աթոռի միաբան Մովսես եպիսկոպոսը: Սպահանի նահանգ գաղթած Ջուղայի հայերը XVII դ. սկզբին հիմնել են Նոր Ջուղան, որն իր հոգևոր, տնտ. և մշակութ. կյանքով մեծ դեր է կատարել թեմի կյանքում: Անդրանիկ առաջնորդ է նշանակվել Մովսես եպիսկոպոսը (1605–20): Կառուցվել են Ս. Հակոբ (1607), Ս. Գևորգ (1611), Ս. Աստվածածին (1613), Ս. Ստեփանոս (1614) եկեղեցիները: Թեմի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի ջանքերով 1655-ին կառուցվել է առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքը:

Ի-Հ. թ-ի աշխարհիկ կառավարիչներն ընտրվել են համայնքի ազդեցիկ հայ ընտանիքներից: Հոգևոր առաջնորդներն ընտրությունից հետո հաստատվել են Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով: Կազմվել է Նոր Ջուղայի համայնական խորհուրդ, որը թեմի գերագույն խորհրդի և թեմական առաջնորդի հետ վարել է թեմի ներքին գործերը: Թեմի իրավասության տակ էր Նոր Ջուղա, Շիրազ, Բուշեր, Թեհրան, Համադան, Ռեշտ, Էնզելի քաղաքների և 8 գավառների 74 գյուղերի հայ բնակչությունը: Նրանք, օգտվելով շահ Աբբաս I-ի հանդուրժող. քաղաքականությունից, կարճ ժամանակամիջոցում հայաբնակ քաղաքներում և գյուղերում կառուցել են 70–80 եկեղեցի: Շահը, հայերի վերադարձը կանխելու նպատակով, 1614-ին Հայաստանից տարել է *Լուսավորչի Աջը*, այլ սրբություններ, 1615-ին՝ Մայր տաճարից 15 «նշանավոր քարեր» Նոր Ջուղայում նոր Էջմիածին կառուցելու համար: Այդ քարերն առ այսօր պահվում են Նոր Ջուղայի մոտ 1611-ին կառուցված Ս. Գևորգ եկեղեցում: Ի-Հ. թ-ի ծաղկուն շրջանը համարվել է XVII դ.: Թեմի առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացու (1620–46) նախաձեռնությամբ թեմում կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ՝ Ս. Հովհաննես Մկրտիչը (1621), Ս. Աստվածածին եկեղեցու բակում՝ Ս. Կատարինե մենաստանը (1623), Ս. Բեթղեհեմը (1628), Ս. Նիկողայոսը (1630), Ս. Գրիգոր Լուսավորիչը (1633) ևն: Խաչատուր Կեսարացին Ս. Ամենափրկիչ վանքում հիմնել է դպրոց (1630), որը ժամանակակիցները կոչել են «Համալսարան»: Այդ դպրոցում են ուսանել կրոն. և ազդ. գործիչներ Փիլիպոս եպիսկոպոսը (1633–55-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Փիլիպոս Ա Աղբակեցի*), Հակոբ եպիսկոպոսը (1655–80-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Հակոբ Դ Ջուղայեցի*), *Ոսկան Երևանցին*, Հովհաննես Ջուղայեցի Քթռեչենցը, *Հովհաննես Մրքուզը*: Նրանք նպաստել են թեմի կրթ., մշակութ. կյանքի զարգացմանը, պայքարել Հռոմի կաթոլիկ եկեղեցու քարոզիչների դեմ (հիսուսյաններ, դոմինիկյաններ ևն): XVII դ. 2-րդ կեսից Արևելքում գործող Հռոմ. եկեղեցու հավատքի տարածման այս միաբանները փորձել են (շուրջ երկու դար) հայերին դավանափոխել: Նրանց հաջողվել է կառավար. հատուկ արտոնագրով Նոր Ջուղայում, Սպահանում իրենց վանքն ու դպրոցն ունենալ: Կաթոլիկ քարոզիչների դեմ առաջին պայքարը կազմակերպել և գլխավորել է Խաչատուր Կեսարացին: Նա 1636-ին առաջնորդարանին կից հիմնել է Արևելքի առաջին և ցայսօր գործող տպարանը, որտեղ տպագրվել են դավանաբան. և հայրենասիր. բնույթի գրքեր: Երկու դարերի ընթացքում կաթոլիկ միաբանությունները, որևէ էական հաջողության չհասնելով, XIX դ. կեսից դադարեցրել են իրենց քարոզչ. գործունեությունը Ի-Հ. թ-ում:

Ի-Հ. թ-ի առաջնորդներ են եղել Դավիթ եպիսկոպոսը (1652–83), Ստեփանոս եպիսկոպոսը (1684–95), Աղեքսանդր Ջուղայեցին (1699–1706, 1706–14-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Աղեքսանդր Ա Ջուղայեցի*), Մովսես Ջուղայեցին (1706–25): XVIII դ. սկզբից թեմը ծանր ժամանակաշրջան է ապրել: Պարսից խաներն ու պետ. պաշտոնյաները զենքի ուժով կողոպտել են հայերին, իսկ 1722-ին աֆղանների արշավանքը դեպի Պարսկաստան ոչ միայն հիմնահատակ քանդել է Նոր Ջուղան, այլև կասեցրել թեմի հոգևոր ու մշակութ. կյանքի առաջընթացը: Պարսկաստանի ներքին քաղ. և տնտ. անկայուն վիճակը, քրիստոնյաների ֆիզիկական անապահով կացությունն Ի-Հ. թ-ի հայությանը մղել են զանգվածային արտագաղթի:

1851–59-ին թեմի առաջնորդ է նշանակվել Թադեոս եպս. Բեկնազարյանը: Նա մարել է առաջնորդարանի նախկին պարտքերը, ձեռնարկել տնտ., ազդ., եկեղեց. բարեկարգչ. աշխատանքներ: Թադեոս եպիսկոպոսի ջանքերով նվազեցվել է հայ համայնքից գանձվող հարկերի չափը: Բացվել են դպրոցներ՝ Ս. Կատարինյան (հիմն.՝ 1858-ին, Ս. Կատարինե մենաս-

տանին կից), Սամյան (հիմն. 1834-ին՝ Ս. Ամենափրկիչ, 1840-ից՝ Ս. Ստեփանոս եկեղեցու բակում) ևն: Ամենայն հայոց կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* նախաձեռնությամբ Նոր Ջուղայում բացվել է Ազգային կենտրոնական դպրոց: Այնուհետև՝ 1899-ին հիմնվել է Քանանյան ազգ. դպրոցը:

Բագրատ եպս. Վարդազարյանը (1901–09) Ս. Ամենափրկիչ վանքի բակում կառուցել է ձեռագրատան նոր շենք (1906), որտեղ պահվում են շուրջ 750 գրչագիր ձեռագրեր, տպագիր գրքեր: 1904–08-ին նրա խմբագրությամբ հրատարակվել է առաջնորդարանի «Նոր Ջուղայի լրաբեր» ամսաթերթը: Ժամանակ առ ժամանակ տպագրվել են ձեռագիր կամ մեքենագիր թերթեր:

1945–52-ին Ի-Հ. թ-ի առաջնորդն էր Վահան եպս. Կոստանյանը:

1952–61-ին թեմը կառավարել է թեմական խորհուրդը:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղ-պատ, 1905: Տեր-Հովհաննյան Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու..., հ. 2, Նոր Ջուղա, 1881: Սարգսյան Ե., Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի հիմնադրումը (պատմական ակնարկ), «Էջմիածին», 1983, № 4–5:

ԻՐԱՔԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1944-ին (մինչ այդ եղել է *Իրանա-Հնդկաստանի թեմի* կազմում): Առաջնորդանիստը՝ Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ի. թ-ի տարածքում ներկայումս (2001) գործում են 8 առաքելական եկեղեցիներ:

Բաղդադում հայերը բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրումից ի վեր (762): XIV դ. համայնքն ունեցել է հոգևոր առաջնորդ: 1638-ին Բաղդադը գրավվել է օսմանյան բանակի հայ թնդանոթաձիգ Գոդ Նազարի (Գևորգ Նազարյան) ձուլած թնդանոթի շնորհիվ: Այդ ծառայության դիմաց Նազարը սուլթանից հողամաս է խնդրել հայերի համար: Սուլթանի հրամանով Բաղդադում հող է հատկացվել հայկ. եկեղեցի կառուցելու և գերեզմանատան համար: 1640-ին (այլ տվյալներով՝ 1639-ին) կառուցվել է Իրաքի առաջին հայկ. եկեղեցին՝ Ս. Աստվածածինը: Տարբեր քրիստոնյա համայնքներ, այդ թվում և նեստորականները, պաշտամունքի վայր չունենալով, հոգևոր ծիս. արարողություններ են կատարել այդ եկեղեցում: Հետագայում նեստորականները, օգտվելով հայերի սակավաթվությունից, գրավել են եկեղեցին (շուրջ մեկ դար): 1750-ական թթ. հայերը դատարանի որոշմամբ, եկեղեցու ճախակողմյան որմի հայկ. արձանագրության հաստատումով, հետ են վերցրել եկեղեցին: Այն հիմնովին վերակառուցվել է 1968–71-ին (բարերարությամբ՝ Արամ Ղարիբյանի), օծվել 1971-ին՝ ձեռամբ թեմի առաջնորդ Ասողիկ եպս. Ղազարյանի: Եկեղեցու շրջակայքը ցայսօր կոչվում է Կեռք Նազար: Այն ուխտատեղի է ոչ միայն հայերի, այլև տեղի մյուս քրիստոնյաների համար:

1847-ին Բաղդադի թեմն անջատվել է (որոշ ժամանակաշրջան) Իրանա-Հնդկաստանի թեմից և անցել Կ. Պոլսի հայոց պատրիարքության գերակայության տակ:

1852-ին Բաղդադի թեմի անդրանիկ առաջնորդ Մեսրոպ ծ. վրդ. Պոլսեցու նախաձեռնությամբ քաղաքի Շորճա թաղամասում կառուցվել է Ս. Երրորդություն առաջնորդանիստ եկեղեցին (1957-ից չի գործում): 1876-ին բացվել է Սրբոց Թարգմանչաց վարժարանը, 1922-ին՝ Սվաճյան դպրոցը, 1948-ին այդ երկուսը միացել են և կոչվել Սրբոց Թարգմանչաց Սվաճյան ազգ. միացյալ վարժարան:

Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1954-ին, օծումը՝ 1957-ին:

1972-ին Բաղդադի Մելինե Դանիել Իսքենտերյան ազգ. ծերանոցի տարածքում կառուցվել է Ս. Կարապետ եկեղեցին (օծվել է 1973-ին): Կից գործում են քահանաների պատրաստության (քառամյա), ինչպես նաև Հայ եկեղեցասիրաց կազմի Ս. Գրոց և Հայ եկեղեցու պատմության դասընթացներ: Բաղդադի հայոց գերեզմանատան տարածքում 1986-ին կառուցվել է Սրբոց Նահատակաց եկեղեցին (1990-ին օծել է թեմի առաջնորդ Ավագ արք. Աստուրյանը):

Բասրայում դեռևս 1222-ին (քաղաքում և նրա շրջակայքում բնակվող հայերի թիվը հաշվի առնելով) հիմնվել է հայոց հոգևոր թեմ: 1736-ին քաղաքի Հին Բասրա թաղամասում կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին (օծվել է 1754-ին): Կից գործել է դպրոց: 1920-ին եկեղեցու տարածքում բացվել է Հայ ազգային վարժարանը: Բասրայի հայկ. գերեզմանատանը 1973-ին կառուցվել է Ս. Հովհաննես Կարապետ մատուռը (1973-ին օծել է Ասողիկ եպս. Ղազարյանը):

ԻՐԱՔԻ

Մոսուլում 1857-ին կառուցվել է Ս. Էջմիածին եկեղեցին, որը մեկ դար հետո ավերվել է: 1968-ին նույն վայրում կառուցվել է ավելի ընդարձակ նույնանուն եկեղեցի (օծվել է 1969-ին), կից բացվել կիրակնօրյա դպրոց և դպրաց դաս:

Կիրկուկի Ղորիա կոչվող հայաշատ թաղամասում 1932-ին կառուցվել է առաջին հողակերտ աղոթատեղին, որին կից 1952-ին հիմնվել է Ս. Աստվածածին եկեղեցին (վեմը օծվել է 1956-ին, նորոգվել 1997–98-ին, եկեղեցին և Ս. Սեղանը օծվել են 1998-ին): Ժամանակի ընթացքում այդ թաղամասում հայերի թիվը նվազել է: Գալուստ Կյուլպենկյան հաստատությունը նորաշեն և արդիական Ալմաս թաղամասում հայ համայնքի համար դնել է հողամաս, որտեղ կառուցվել են դպրոց, քահանայի բնակարան, մարզ. ակումբ:

Զախոյում 1926-ին կառուցվել է աղոթատեղի (կանգուն է, բայց չի գործում): 1935-ին հիմվել է առաջին հողաշեն եկեղեցին՝ Ս. Աստվածածինը: 1969-ին եկեղեցին հիմնովին վերակառուցվել է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության բարերարությամբ (օծվել է 1970-ին):

Իրաքահայ համայնքի ազգ. կյանքը ղեկավարում են Հայոց առաջնորդարանը և Ազգ. կենտր. վարչությունը (7 հոգուց բաղկացած), որոնց կից գործում են կրթ. ազգ. կալվածքները վերահսկող եկեղեց. հանձնաժողովներ: 1990-ից լույս է տեսնում Հայոց առաջնորդարանի «Հաղորդագրություն» պարբերաթերթը:

Ի. Թ-ի առաջնորդն է Ավագ արք. Աստուրյանը (1994-ից):

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.2, 3-րդ պատկերը:

Լ

«ԼԱԶԱՐՅԱՆ ԱՎԵՏԱՐԱՆ», IX դարի հայկական մագաղաթե ձեռագիր Ավետարան: Այդպես կոչվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանին պատկանելու համար: Ճեմարանին էր նվիրել Թեոդոսիայի հայ վաճառական Խաչուկյանը, 1847-ին: 1925-ին ձեռագիրը Լազարյան հավաքածուի (215 միավոր) հետ տեղափոխվել է Էջմիածին (Մատենադարան, ձեռ. № 6200): «Լ.Ա.» մեզ հասած հայերեն ամենահին ամբողջական ձեռագիրն է, որի գրության թվականը հայտնի է. գրիչ և ծաղկող Սահակ Վանանդեցին այն ավարտել է 887-ին: 1899-ին Ավետարանը լուսատիպ նմանահանությամբ հրատարակվել է Մոսկվայում: «Լ.Ա.» նաև մեզ հայտնի թվակիր նկարազարդ առաջին ձեռագիրն է, որի սկզբի պատկերազարդ թերթերն ընկած են. պահպանվել են միայն առաջին երկուսը, որոնց զույգ էջերում նկարված են չորս խորաններ: Ձեռագիրն ունի գրչի ամբողջական հիշատակարան:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.3, 1-ին պատկերը:

Գրկ. Մաթևոսյան Ա., Լազարյան ճեմարանի հնագույն ձեռագիրը, ՊԲՀ, № 1, 1973: *Казарян В., Манукян С., Матенадаран. Армянская рукописная книга VI–XIV веков, т. 1, М., 1991.*

Արտաշես Մաթևոսյան

ԼԵՀԱՀԱՅՈՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ձևավորվել է XI–XIII դարերում, Գալիցյան, Վոլինյան, Պոդոլյան հողերում, որոնք XIV դարում անցել են Լեհաստանի տիրապետության տակ: Մինչև XIV դ. Հալիչի, Խոլմի, Կամենից Պոդոլսկի, Վոլինյան Վլադիմեժի, Լուցկի, Լվովի գաղութահայության կրոն. կենտրոնը Լուցկն էր: 1340-ական թթ. Լեհաստանի թագավոր Կազիմեժ Մեծը գրավել է Գալիցիան ու Վոլինիայի մի մասը: Լուցկը Ս. Ստեփանոս եկեղեցու հայ առաքելական ոչ պաշտոնական արքեպիսկոպոսարանով մնացել է Լիտվայի իշխան Լուբարտի ձեռքում: Լիտվական իշխանության քաղ. ազդեցությունից Հայ եկեղեցին զերծ պահելու նպատակով Կազիմեժ Մեծը 1367-ին հատուկ դեկրետով հայ արքեպիսկոպոսարանը պաշտոնականացրել է և Լուցկից տեղափոխել արքունի քաղաք Լվով, որտեղ տեղի հայությունը դեռևս 1183-ից ուներ փայտաշեն, իսկ 1251-ից՝ աղյուսաշեն եկեղեցի: 1356-ին Կազիմեժ Մեծը Լվովի և Կամենիցի հայ համայնքներին լայն արտոնությունների հետ միասին տվել է նաև անսահմանափակ թվով եկեղեցիներ ու վանքեր կառուցելու իրավունք: 1363-ին ավարտվել է Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման քարաշեն տաճարի կառուցումը, որը 1367-ից դարձել է աթոռանիստ և ճանաչվել Լեհաստանի, Մոլդովայի, Ռումինիայի Հայ առաքելական եկեղեցու արքեպիսկոպոսության կենտրոն: Ըստ եկեղեցու վիմագիր հիշատակարանի, տաճարը կառուցվել է հայ մեծահարուստներ Շահինշահի որդի Հակոբ Կաֆայեցու և Աբրահամի որդի Փանոս Հալաչեցու բարերարությամբ: XVI դ. Լվովում և նրա արվարձաններում գործել են 9 հայկ. եկեղեցիներ ու վանքեր, որոնցից առանձնանում են Ս. Աստվածածնի

Վերափոխման Մայր տաճարը, Ս. Աննայի և Ս. Հակոբի եկեղեցիներն իրենց համընդհանուր վանքով, Ս. Խաչի եկեղեցին՝ իր վանքով:

Կամենից Պոդոլսկում XI–XIV դդ. կառուցվել է 12 եկեղեցի: 1250-ին դեռևս գործող (հետագայում ավերվել է) եկեղեցուց հետո ամենահինը 1394-ին Խութլուբեյի որդի Սինանի ծախքով կառուցված Ս. Նիկողայոսի եկեղեցին էր, որը մեկ դար հետո վերանվանվել է Ս. Աստվածածնի Վերափոխման: 1498-ին կառուցվել է առավել մեծ ու շքեղ նույնանուն (ավերվել է 1939-ին, կանգուն է զանգակատունը), 1522-ին՝ Ս. Աստվածածնի Ավետման եկեղեցին: Վերջինիս բակում Գրիգոր արք. Վարագեցին 1600-ին կառուցել է կուսանոցի շենք: XVII դ. վերջին՝ թուրքերի արշավանքների ժամանակ ավերվել են Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Ստեփանոս Նախավկա, Ս. Խաչ եկեղեցիները: Լուցկ, Լվով, Կամենից Պոդոլսկ քաղաքներում կառուցված 20–22 եկեղեցիներից բացի երկու տասնյակից ավելի եկեղեցիներ են գործել նաև XVI–XVIII դդ. հիմնադրված Լյուբլինի, Զամոշչի, Կուբաչիվցիի, Յարոսլավլի, Տիսմենիցայի, Յազլովեցի, Զլոչովի, Ժվանեցի, Սենյատինի, Ստանիսլավովի, Լիսեցի, Բժեժանիի, Մոգիլյով Պոդոլսկի, Ռաշկովի և լեհահայ այլ գաղթավայրերում:

1367-ին, ըստ Հայոց կաթողիկոս Մեսրոպ Ա Արտազեցու կոնդակի և Կազիմեժ Մեծի դեկրետի, Լեհաստանի և Վալախիայի (Հս. Ռումինիա) Հայ առաքելական եկեղեցու անդրանիկ առաջնորդ է հաստատվել ժողովրդի կողմից ընտրված Գրիգորը: Լեհահայ արքեպիսկոպոսները կես տարի նստել են աթոռանիստ Լվովում, կես տարի՝ Կամենից Պոդոլսկում, որն ուներ եպիսկոպոսական տուն: XV–XVIII դդ. լեհահայ արքեպիսկոպոսության մեջ ընդգրկված էին Լեհաստանի, Լիտվայի, Մոլդովայի, Վոլոշչիզնայի հայ կրոն. համայնքների 22 թեմերը և մինչև կաթոլիկության ընդունումը (1699) ենթարկվել են Ս. Էջմիածնին: Լեհահայ առաքելական եկեղեցին մինչև XVI դ. վերջը խաղաղ հարաբերությունների մեջ է եղել լեհ կաթոլիկ եկեղեցու և Հռոմի հետ: 1540-ական թթ. Լեհաստանում ռեֆորմիստ. շարժման դեմ դուրս եկած Հակառեֆորմացիան հալածանքներ է սկսել հերետիկոսների ու հերձվածողների, ինչպես նաև լեհահայ առաքելականների դեմ: Լեհահայությանը կաթոլիկացնելու բուն պայքարը սկսվել է 1627-ից, երբ Էջմիածնից Լվով ժամանած, *ուսնիթորությունը* գաղտնի ընդունած Մելքիսեդեկ աթոռակից կաթողիկոսը հոգևոր դասից ու ժողովրդից գաղտնի, կաշառքով ու կաթոլիկություն ընդունելու պայմանով Նիկոլ Թորոսովիչին Լվովի Ս. Խաչ եկեղեցում եպիսկոպոս է օծել ու նստեցրել արքեպիսկոպոսական թափուր աթոռին, նրան առաջնորդ չճանաչելու դեպքում ժողովրդին սպառնացել պատիժներով, բարձր հոգևորականությանը՝ բանադրանքով: Լեհահայությունը հայ-հռոմ. եկեղեցիների միության դեմ սկսել է արյունահեղ, վերելքներ ու վայրէջքներ ունեցող պայքար, որը տևել է վեց տասնամյակ: 1629-ին Զիգմունդ III-ը Նիկոլ Թորոսովիչին հաստատել է լեհահայ, մոլդովահայ, ռումինահայ եկեղեցիների արքեպիսկոպոս, իսկ 1630-ին վերջինս բացահայտ ընդունել է կաթոլիկությունը: Լեհահայությունը բազմիցս բողոքագրեր է ուղարկել Հռոմ և Էջմիածին: Արտոնություններից զրկվելու անվերջ սպառնալիքներից երկնչելով՝ լեհահայությունը առերես 1652-ին (2-րդ անգամ՝ 1665-ին) ընդունել է կաթոլիկությունը, սակայն ևս երեք տասնամյակ տևող պայքարից հետո՝ 1699-ին, լեհ թագավոր Ֆրեդերիկ Ավգուստ II-ի և Հռոմի համաձայնությամբ, Վարդան արք. Հունանյանը լեհահայ առաքելական եկեղեցում անցկացրել է ծիսաարարողական մեծ ու օրինականացված ռեֆորմ:

Լեհահայության իրական կաթոլիկացումն ու ուծացումը, սակայն, սկսվել է գաղութի տրոհման շրջանից՝ 1772-ից, երբ տեղի է ունեցել քաղաքականապես ու տնտեսապես թուլացած Ռեչ Պոսպոլիտայի առաջին բաժանումը (1793-ին՝ 2-րդ, 1795-ին՝ 3-րդ վերաբաժանումը) Ավստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի միջև, ինչը և պայմանավորել է Լվովի հայ արքեպիսկոպոսության 18 թեմերի վարչական մասնատումը: 1772-ից Լվովը դարձել է Ավստրիայի նոր անվանում կրող նահանգի՝ Գալիցիայի ու Լոդոմերիայի թագավորության կենտրոնը, իսկ Կամենից Պոդոլսկը, մնալով Լեհական թագավորության մեջ, Լուցկ, Ռաշկով, Բալտա, Մոգիլյով Պոդոլսկ գաղթավայրերի հետ կրոն. հարցերում սկզբնապես ենթարկվել է Լվովի արքեպիսկոպոսությանը, իսկ 1793-ից, Լիտվայի ու Բելոռուսի հետ անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ, մինչև 1810-ը ենթարկվել է Մոգիլյով Պոդոլսկի հռոմեա-կաթոլիկ. եկեղեցուն, այնուհետև՝ նույն քաղաքի Հայ եկեղեցու եպիսկոպոսարանին, 1816-ից՝ ժամանա-

կավորապես, իսկ 1847-ից պաշտոնապես՝ լատ. եկեղեցու եպիսկոպոսարանին: 1784-ին Գալիցիայում՝ Զլոչովում, Զամոշչում, Յազլովեցում, Բժեժանիում և Լվովում ավստր. իշխանությունները փակել են հայկ. վեց վանքեր ու եկեղեցիներ՝ դրանք դարձնելով զինվորական պահեստներ ու բանտի մատուռներ: 1786-ին փակվել է 1666-ից գործող Հայ հոգևոր (կաթոլիկ) բարձրագույն դպրանոցը:

Լվովի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսությունը, որը 1816-ին ուներ 9 թեմ, 14 քահանա, 1918-ից՝ 8 թեմ, 21 քահանա, գոյատևել է մինչև երկրորդ աշխարհամարտի սկիզբը (1939): Լեհահայ կաթոլիկ եկեղեցու վերջին արքեպիսկոպոսը Լեհաստանի Սահմանադրական Սեյմի անդամ, աստվածաբան Յուզեֆ Տեոֆիլ Թեոդորովիչն էր (1911–38), որը լեհահայությանը համախմբելու նպատակով 1930-ին Լվովում հիմնադրել է «Հայ արքեպիսկոպոսական ընկերություն»: Վերջինիս պաշտոնական պարբ-ն է դարձել 1927-ից հրատարակվող «Սբ. Գրիգորի սուրհանդակ» (լեհ.) ամսագիրը, ընդհատումներով հրատարակվել է նաև «Գրիգորիանա» (լեհ.) երկշաբաթաթերթը: Երբ 1939-ին Լեհաստանի արլ. հատվածը Լվով կենտրոնով անցել է ԽՍՀՄ-ին (Ուկրաինային), լեհահայության հիմն. զանգվածը տեղաշարժվել է արևմուտք (Կրակով, Վարշավա, Գդանսկ, Վրոցլավ, Պոզնան, Կատովիցե, Լոձ, Օլավ, Լյուբլին, Գլիվիցե): 1950-ական թթ. Գդանսկում (Հս. Լեհաստան) ստեղծվել է լեհահայ կաթոլիկ հավատացյալների հս. թեմը: 1958-ին լեհահայության ջանքերով նրանց են տրվել Գդանսկի Ս. Պողոս և Ս. Պետրոս առաքյալների եկեղեցին (1976-ին հետ է վերցվել), եկեղեցուն կից Ս. Մարիայի մատուռը: 1975-ին Կրակովի Ս. Իդձեի եկեղեցուն կից (Վավելի մոտ) մատուռը տրվել է կրակովահայերին: Գլիվիցին (Սիլեզիա, Հվ. Լեհաստանում), որպես երկրորդ՝ հարավային թեմի նստավայր, իր Ս. Երրորդություն հայ կաթոլիկ եկեղեցով դարձել է նաև լեհահայությանը համախմբող կենտրոն: 1960-ական թթ. լեհահայերն ունեին չորս կաթոլիկ քահանաներ, 1980-ից՝ մեկը:

Լեհահայ բոլոր գաղթավայրերում եկեղեցիներին կից գործել են տարրական ու միջնակարգ ազգ. դպրոցներ (ոչ կաթոլիկներին արգելվել է կրթ. բարձրագույն կենտրոններ հիմնադրել): 1665-ին Հռոմի նախաձեռնությամբ Լվովում հիմնադրվել է Հայ հոգևոր (կաթոլիկ) բարձրագույն դպրանոց, որտեղ գործել է երեքլեզվյան (հայ., լատ., լեհ.) դպրաթատրոն: 1690-ական թթ. դպրաթատրոն է ունեցել նաև Յազլովեցում նոր բացված հայ կաթոլիկ դպրոցը: XIX դ. սկզբից մինչև 1939-ը Լվովի հայկ. կուսանոցին կից գործել է օրիորդաց դպրոց:

1992-ից Լեհաստանի 15–20 հզ. հայ կաթոլիկների (ընդգրկված հս. և հվ. թեմերում) հոգևոր առաջնորդն է Գլիվիցիի թեմակալ, պրելատ, մագիստրոս Յուզեֆ Կովալչիկը (Հարուցյան հայկական տոհմից):

Գրկ. Բաբսեղյան Բ., Լեհահայության մշակույթն ու գրականությունը XIV–XIX դդ., Ե., 1992: Obertyński Z., Historia Kościola Ormianskiego w Polsce, Warszawa, 1990.

Բելլա Բաբսեղյան

ԼԵՎՈՆԻ ՏՈՄԱՐ, Լեվոնի տումար (Tomos Leonis), Հռոմի Լևոն I պապի (440–461) դավանական թուղթը՝ ուղղված Կ. Պոլսի պատրիարք Ֆլաբիանոսին (447–449): Գրվել է 449-ի հունիսի 13-ին՝ ընդդեմ Եվտիքեսի վարդապետության (տես *Եվտիքականություն*): Լ. տ-ի վրա է հիմնված 451-ի *Քաղկեդոնի ժողովի*՝ Քրիստոսի երկու բնությունների վերաբերյալ դավան. բանաձևը: Լ. տ. դավանում է երկու բնություն մարմնավորումից (մարդեղությունից) հետո. «Երկու բնությունները միավորված են մեկ անձի մեջ»,– սա է Լ. տ-ի դավանական գլխ. ձևակերպումը: Մեկ դեմք, մեկ անձ, երկու բնություն. Քրիստոսի երկու բնությունները տարբեր են իրարից, և այդ բաժանումը սկզբունքային է Լ. տ-ի համար, որը Քրիստոսի մեջ ամեն ինչ փորձում է տեսնել բաշխված ըստ մարդեղության և աստվածության: Ըստ Լ. տ-ի, չարչարվել է Քրիստոսի մարդկային բնությունը, փառավորվել՝ աստվածայինը: Խաչվողը և մեռնողը մարդկային բնությունն է, հարություն առնողը՝ աստվածայինը: Անարգվողը, տառապանքներ և զրկանքներ կրողն այլ է, հարություն առնողը, երկրպագվողը, հրաշագործողը՝ այլ: Քրիստոսի երկու բնությունների տարբեր և բաժան «գործառույթները», այսինքն՝ երբ յուրաքանչյուր բնություն ունի իր հատկությունը, որն արտահայտությունն է *Անտիոքի* աստվածաբան. դպրոցի քրիստոսաբանական երկվության, Լ. տ. ընդունում է որպես հավատքի խոստովանության հիմք: Ուղղված լինելով եվտիքականության դեմ՝ այն ամեն կերպ փորձել

է տարանջատել աստվածությունը մարդեղությունից, որպեսզի վերջինս չկորչի աստվածայինի մեջ և չխառնվի նրա հետ՝ եվտիքեսյան չփոթից խուսափելու համար: Քրիստոսին բաժանելով ըստ աստվածության և մարդեղության՝ Լ. տ. միաժամանակ փորձել է խույս տալ ծայրահեղություններից և պահպանել աստվածության ու մարդկության ամբողջականությունը Քրիստոսի մեջ: Լ. տ-ի աստվածաբան. ընկալումներն ու քիստոսաբան. ըմբռնումները հստակվել և ամբողջականացել են Քաղկեդոնի ժողովի ընդունած դավանական որոշումներում:

Արևելյան, այդ թվում և Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը, մերժում է ցանկացած բաժանություն կամ երկվություն Քրիստոսի մեջ: Չկա բաժանում երկու բնությունների միջև, քանի որ և՛ չարչարանքների, և՛ փառքի կրողը Աստվածամարդն է՝ աստվածամարդկային մեկ անբաժան բնությամբ: «Եւ ոչ է ասել զմի Քրիստոս երկուութիւն»,– այսպես է ձևակերպել Հայ եկեղեցին իր ըմբռնումը քրիստոսաբանական այս հարցի վերաբերյալ: *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսի օրոք ընդունելով Լ. տ. և Քաղկեդոնի ժողովը լուսլյայն մերժող Զենոն կայսրի *«Հենոտիկոնը»* Հայ եկեղեցին իր անհամաձայնությունն է հայտնել Լ. տ-ի քրիստոսաբանական բանաձևումների հանդեպ: 506-ի Դվինի Ա ժողովում (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) Հայ եկեղեցին կրկին իր մերժողական դիրքորոշումն է արտահայտել, իսկ 554-ի Դվինի Բ ժողովն առաջին անգամ պաշտոնապես դատապարտել և նզովել է Լ. տ-ի դավան. բանաձևը և Քաղկեդոնի ժողովը: Հայ դավանաբան. գրվածքներում Լ. տ. առաջին անգամ բացահայտորեն նզովվել է VII դ. սկզբին՝ *Վրթանես Քերթող* կաթողիկոս. տեղապահի, *Աբրահամ Ա Աղբաթանեցի* և *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսների թղթերում:

Գրկ. Սկզբնագիրք տումարի սրբոյն Լեւոնի և սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի, Վնտ., 1805: Գրիգոր Տաթեվացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Նույնի, Ոսկեփորիկ (թրգմ. և ծնթգր. Հ. Քյոսեյանի), Ե., 1995: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Կնիք հաւատոյ..., հրտ. Կ. Տեր-Մկրտչյանի, Էջմիածին, 1914: Տեր-Մինասեանց Ա., Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք, Մ., 1892: Ադամյան Մ., Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրվագծեր (Դ–Ը դդ.), «Գանձասար», 2, 1992: Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու քիստոսաբանությունը, Էջմիածին, 1995:

ԼԻՄ ԱՆԱՊԱՏ, Վանա լճի հյուսիս-արևելքում՝ Լիմ կղզում: Ըստ ավանդության, IV դ. սկզբին հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը: XIV դ. սկզբին Լ. ա-ում եղել են Ս. Աստվածածին, Ս. Կարապետ և Ս. Գևորգ եկեղեցիները: 1305-ին Աղթամարի Զաքարիա Ա կաթողիկոսը հիմնովին վերակառուցել է Լ. ա-ի գլխավոր՝ Ս. Գևորգ եկեղեցին: Ըստ IX–X դդ. պատմիչ Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» երկի անանուն շարունակողի՝ եկեղեցին գմբեթավոր էր, շքեղ հարդարված: 1394-ին Լենկթեմուրի արշավանքից, 1428-ին Սքանդարի ներխուժումից փախչելով՝ Վանա լճի ափամերձ բնակչությունը պատըս-

Լիմ անապատի ընդհանուր տեսքը

պարվել է Լ. ա-ում: 1538-ին Վանի կառավարիչ Գոդչա սուլթանը գրավել է Լիմ կղզին, այրել ու ծով նետել Լ. ա-ի գրատան ձեռագրերը, որոնց միայն մի փոքր մասն է գտնվել ու փրկվել:

Լ. ա. ծաղկում է ապրել XVII դ.: 1621-ին *Սյունյաց Մեծ անապատից* այստեղ է տեղափոխվել Ներսես Մոկացի վարդապետն իր աշակերտներ Ստեփանոս Շատախցու և Մելիքսեթ Վժանցու հետ: Նա Լ. ա-ում հիմնել է բարձրագույն դպրոց, որտեղ ուսուցանել են փիլիսոփայություն, քերականություն, տոմարագիտություն, գրչության արվեստ ևն: Ներսես Մոկացու հաջորդի՝ Ստեփանոս Շատախցու վանահայրության ժամանակ Լ. ա-ի միաբանությունն այնքան բազմանդամ է դարձել, որ նրա մի մասը տեղափոխվել է *Կտուց անապատ*:

1763-ին Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսն այցելել է Լիմ և Լ. ա-ին հատուկ կոնդակով արտոնել համալիրի նորոգության համար գումար հավաքել: Վանահայր Հովհաննես Մոկացին Լ. ա-ի պարտքերը վճարելու համար հանգանակություն է կատարել, 1766-ին քանդել փայտե ժամատունը և 1770-ին քարաշեն նոր

ժամատուն կառուցել (ճարտ՝ Սիոն): 1882-ին վանահայր Պողոս եպիսկոպոսը անապատին կից կառուցել է դպրոց: Լ. ա. կողոպտել և ավերել են քուրդ ավազակախմբերը 1896-ին և 1898-ին: 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, կոտորվել են անապատի միաբանները և կղզում ապաստանած վասպուրականցիները, կողոպտվել եկեղեց. իրերը, ոչնչացվել ձեռագրերը և Լ. ա-ում պահվող ս. Գևորգի ու ս. Սահակ Ա Պարթևի մասունքները:

Լ. ա-ի խաչաձև, գմբեթավոր, սրբատաշ ֆելզիտով կառուցված Ս. Գևորգ եկեղեցուց պահպանվել է միայն հս-արմ. անկյունը: Նրան արմ-ից կից է քառամույթ ժամատունը, որին հս-ից կից է Ս. Սիոն մատուռը, իսկ արմ-ից՝ եռաստիճան, քառամույթ, կամարակապ երկրորդ հարկով ու այունազարդ գմբեթով զանգակատունը (XVIII դ.): Լ. ա-ում XIII–XIX դդ. գործել է գրչության կենտրոն, որտեղ գրվել, ընդօրինակվել, նկարազարդվել ու կազմվել են հարյուրավոր ձեռագրեր: XIII–XIV դարերից մեզ է հասել մոտ մեկ տասնյակ ձեռագիր՝ ընդօրինակված Մովսես, Խաչատուր, Աբրահամ և Մանվել գրիչների ձեռքով: XV դ. կեսին այստեղ են աշխատել Իգնատիոս, Հովհաննես Մանկասարենց գրիչները, իսկ ծաղկող Մինասը նկարազարդել է նրանց ընդօրինակությունները: XVII դ., Լ. ա-ում բարձրագույն դպրոցի գործունեության ժամանակ, ուսումնասիրվել են նաև աշխարհիկ գիտություններ, գրվել են թվաբանության, աստղաբաշխության, բժշկության վերաբերյալ աշխատություններ: Լ. ա. ունեցել է հարուստ մատենադարան. 1693-ին այստեղ կար 3124 գիրք, XIX դ. վերջին՝ 550 ձեռագիր, մոտ 3 հզ. տպագիր գիրք, որոնց մի մասն է փրկվել և մեզ հասել: Մատենադարանում պահվում է Լ. ա-ի 306 ձեռագիր:

Գրկ. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1999: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Լալայան Ե., Վասպուրական. նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք 22, Թ., 1912: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: Մաթեվոսյան Ա., Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ–ԺԵ դարերում, «Էջմիածին», 1966, № 6: Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Արմեն Հախնազարյան

ԼԻՄՈՆՃՅԱՆ Համբարձում, Բաբա կամ Պապա Համբարձում (1768, Կ.Պոլիս – 29.6.1839, Կ. Պոլիս), կոմպոզիտոր, երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, *Նոր հայկական ձայնագրության* ստեղծող: Աշակերտել է ժամանակի լավագույն եկեղեց. երգիչ Պողոս սարկավագին (Զենոնե Պողոս), Ոնոփրիոս (Օնոփրիոս) Թաթավլացուց սովորել հուն. փսալթիկան և տեսությունը, ունկնդրելով դերվիշներին՝ յուրացրել նրանց կատարած դասական երգերի ոճը, ուսումնասիրել եվրոպ. երաժշտության տեսությունը: Դասավանդել է Կ.Պոլսի Լուսավորչյան վարժարանում և Մայր եկեղեցու դպրանոցում: Հայ բանաստեղծների խոսքերով հեղինակել է վոկալ-մոնոդիկ ստեղծագործություններ, մասնավորապես արլ. ոճի բեսթեներ, ինչպես՝ «ՈՀ, ի սկզբան պատերազմինը», որը Վարդանանց հերոսամարտի նկարագրությունն է: Նշանավոր են նաև Լ-ի «Յարեաւ Քրիստոս» խոսքերով 20-ից ավելի տաղերը (յուրաքանչյուրը մի այլ ձայնակարգում) և *Ներսես Շնորհալու* գրառած երգերը: Լ-ի նոր հայկ. ձայնագրության ստեղծումը (1813) անցման փուլ եղավ հին խազերից (տես *Խազագրություն*) դեպի գծային նոտագրությունը, և դրա շնորհիվ պահպանվեց ազգ. ժող. և հոգևոր երաժշտության պատկառելի ժառանգությունն:

Գրկ. Հիսարլյան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան, ԿՊ, 1914: Աթայան Ռ., Ձեռնարկ հայկական ձայնագրության, Ե., 1950:

Ռոբերտ Աթայան

ԼԻՈՆԻ ՇՐՋԱՆ, տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ԼՄԲԱՏԱՎԱՆՔ, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքից հարավ-արևմուտք, բարձունքի լանջին: Լ-ի Ս. Ստեփանոս փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցին (VI–VII դդ.) կառուցված է տեղական տուֆի սրբատաշ քարերով: Ճարտ. առանձնահատկություններն են հս. և հվ. ուղղանկյուն թևերը՝ թաղի փոխարեն ծածկված գմբեթարդներով (եզակի է Հայաստանում), Ա-վագ խորանը՝ առանց լուսամուտի (ներկայիս բացվածքը հետագա հավելում է), հս-արմ. սենյակը: Եկեղեցին ունի վերձիգ համաչափություններով ներդաշնակ ծավալային լուծում: XI դ. ոմն Կարապետ իր միջոցներով Լ-ի համար ջուր է անցկացրել: 1191-ին իշխան Վահրամ Պահլավունու որդի վանահայր Բարսեղը, ըստ գմբեթի արձանագրության, «անօրենների»՝ սելջուկներից, հետ է գնել Լ., վանքին

ԼՎՈՎԻ

նվիրել 3ից գյուղը և վերստին ջուր անցկացրել: XII դ. վերջին Անիի եպիսկոպոս Գրիգորը Լ-ին է նվիրել իր գնած Հայրայց թաղ գյուղը, իսկ XIII դ. սկզբին՝ սեփական Արդիք գյուղը (ներկայիս Արթիկ քաղաքը): XIII դ. 1-ին տասնամյակում Լ-ին են նվիրել Սառնաղբյուր գյուղը: XIII դ. վանքն իր կալվածքներով անցել է Զաքարյան իշխանների տիրապետության տակ, որպես նվիրատվություն ստացել երկու այգի և գյուղ: Ուշ միջնադարում Լ. լքվել է և ամայացել: 1954-ին պեղումներ են կատարվել Լ-ի շուրջը. գտնվել են խաչքարերի պատվանդաններ, IX–X դդ. գերեզմաններ, քանդակազարդ բեկորներ, կղմինդրներ (նախապես եկեղեցին կղմինդրածածկ է եղել): 1955-ին վերանորոգվել են Լ-ի Ս. Ստեփանոս եկեղեցու պատերը, վերականգնվել տանիքի և գմբեթի տուֆե ծածկասալերը:

Լ-ի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարները (VII դ.) վաղ քրիստ. հայկ. մոնումենտալ գեղանկարչության ինքնատիպ և մեծարժեք նմուշներից են: Զբաղեցնում են եկեղեցու Ավագ խորանի գմբեթարդը և դրան հարող արլ. պատը: Գմբեթարդում երևում է հրեշտակների խորքի վրա պատկերված Քրիստոսի մարգարտազարդ գահի զարդարուն պատվանդանը՝ դրված ծիածանակամարի վրա: Վերջինս երիզված է սպիտակ, կանաչ և կարմիր գոտիներով և մի մեծ լուսապսակի պես առանձնացնում է ամբողջ հասակով կանգնած գահակալ Քրիստոսի պատկերը, որի միայն ներքևի մասն է պահպանվել: Ծիածանակամարից դուրս, կենտր. պատկերի աջ և ձախ կողմերում, պատկերված են երկու քառակերպ՝ մարդու, եզան, առյուծի և արծվի գլխով, երկու վեցթևանի սերովբե և երկու զույգ հրեշտակներ: Ենթադրվում է, որ գմբեթարդից ներքև՝ խորանում պատկերված են եղել տասներկու առաքյալները և Տիրամայրը: Խորանին հարող պատերին պատկերված են դեպի կենտրոն շարժվող երկու հեծյալներ՝ ս. Սարգիսն ու ս. Գևորգը՝ ձեռքերին խաչափայտ: Ուշագրավ է, որ ձիերի սմբակների տակ չկան չար ուժերի մարմնավորումները: Հատկապես լավ են պահպանված քառակերպերի պատկերները: Նրանց չորս ճերմակ թևերը ծածկված են բաց աչքերով, իսկ մարդկային դեմքերն օժտված են խոր արտահայտչականությամբ: Որմնանկարն ստեղծվել է գլխավորապես Եզեկիել մարգարեի տեսիլքի գրական հիմքի վրա (Եզեկ. 1.4–28) և ոչ թե հայտնի պատկերագր. հորինվածքի ընդօրինակությամբ՝ դրանով իսկ ներկայանալով որպես «Աստվածահայտնության» տեսարանի պատկերագր. կառուցվածքի հայկ. տարբերակ: Որմնանկարը մեծադիր չէ, կատարված է գծային գրաֆիկ. եղանակով, սակայն ունի վառ գունահնչեղություն:

Լ-ի որմնանկարները հասուն գեղ. միջավայրի ծնունդ են և սերտ աղերսներ ունեն VII դ. հայկ. այլ որմնանկարների (*Թալինի Կաթողիկե եկեղեցի, Կոչի Ս. Ստեփանոս վանք* ևն), ինչպես նաև հայկ. մանրանկարչության հայտնի ամենահին օրինակների հետ (*«Էջմիածնի Ավետարան»*):

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.3, 2-րդ պատկերը:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Թ., 1842: Եղիազարյան Հ., Լմբատավանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1960, № 2: Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Ե., 1982: Մաթևոսյան Կ., Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարները, «Էջմիածին», 1982, № 4: *Дурново Л.А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979;* Der Nersessian S., L'art arménien des origines au XVII siécle, P., 1977.

Մուրադ Հասրաթյան
Կարեն Մաթևոսյան
Աննա Լեյլոյան

ԼՎՈՎԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ,

Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցի, Լվովի հայկական Կաթողիկե, հին քաղաքի հյուսիս-արևելյան մասում, Հայկական (Վերին և Ներքին) ու Կրակովյան փողոցներով եզերված Հայկական թաղամասում: Կառուցվել է 1363–1370-ին, սրբատաշ քարով, Հակոբ Կաֆայեցու և Ստեփան Աբրահամյանցի միջոցներով, հայ վարպետների ձեռքով՝ քարգործ Դորինդի ղեկավարությամբ: Ունի քառամույթ գմբեթավոր հորինվածք, արլ. ճակատում կիսաշրջանաձև ծավալներով արտաքուստ չեշտված խորանով և ավանդատներով, որոնք զարդարված են հայկ. միջնադարյան ճարտ-յանը բնորոշ կամարաշարով: 1390–1437-ին եկեղեցու ներսը նկարազարդվել է: 1427-ին հս-արլ. գմբեթակիր մույթի և խորանի պատի միջև խաչքար է զետեղվել: 1437-ին հվ. ճակատին կցվել է քառակամար սրահ, որի հատակը ծածկված է տապանաքարերով: 1509-ին Աստվածատուր Կոպու-

լենը վերակառուցել է գմբեթը՝ 12-նիստանի թմբուկով և բազմանիստ վեղարով: 1527-ին Լ. Ս. Ա. ե. հրդեհվել է. ոչնչացել են որմնանկարները և փայտաշեն զանգակատունը: 1530-ական թթ. եկեղեցին վերստին նկարազարդվել է, 1571-ին Անդրեաս Կաֆայեցու միջոցներով քարից նոր զանգակատուն է կառուցվել: XVI դ. Լ. Ս. Ա. ե-ու արլ. կողմում կառուցվել է եպիսկոպոսի երկհարկանի տունը՝ մատուռով, դրադարանով, ընդունելությունների չքեղ հարդարված դահլիճով: 1519-ից այստեղ են գործել քաղաքի հայ բնակչության հոգևոր և քաղաքացիական հարցերը վարող դատարանները, որոնք առաջնորդվել են *Մխիթար Գոշի* «Դատաստանագրքի» հիման վրա կազմված «Լվովյան դատաստանագրքով» (Լվովի հայ համայնքը դատական ինքնավարությունը պահպանել է մինչև 1784-ը): XVI դ. վերջին եկեղեցու հս. կողմում կառուցվել է Բենեդիկտյան հայ կուսանաց վանքը, որտեղ կրթվել են Լվովի երիտասարդ հայուհիները (վանքն ավերվել է 1784-ի հրդեհից, վերակառուցվելով՝ դարձել է եռահարկ՝ 400 հոգու համար նախատեսված ննջարաններով, մատուռով, դասասենյակներով ևն): 1615-ին Լ. Ս. Ա. ե-ու կողքի շենքում Հայաստանի Բաղեշ քաղաքից տեղափոխված Հովհաննես Քարմատանենցը տպարան է բացել (հայկ. երրորդ տպարանը՝ Հակոբ Մեղապարտի և Աբգար Թոխաթեցու տպարաններից հետո), որտեղ հրատարակվել են հայերեն և ղփչաղերեն գրքեր (շենքն այրվել է XVIII դ., հրդեհից): 1630-ին, եկեղեցու աղոթարանն ընդարձակելու նպատակով, ճարտ. Կելարը քանդել է միջին նավի արմ. պատը և կցել փայտե քանդակազարդ առաստաղով խոշոր դահլիճ, իսկ հս. ճակատին կից կառուցել նշխարատուն, որի թաղակապ նկուղային հարկը տապանատուն է ծառայել:

1669-ին Լ. Ս. Ա. ե-ու բակում Լվովի հայկ. դպրոցի աշակերտների ուժերով տրվել են թատերական ներկայացումներ: 1716-ին Խաչիկ (Քրիստափոր) Ավգուստովիչը հիմնովին վերանորոգել է եկեղեցին և նրա արլ. կողմում հայ. և լեհ. արձանագրություններով այուն կանգնեցրել, վրան՝ ս. Քրիստափորի արձանը: 1733-ին Լ. Ս. Ա. ե-ու ներսը նորոգվել է և հարդարվել բարոկկոյի ոճով: Հրդեհից ավերված զանգակատունը XVIII դ. վերջին վերակառուցվել է, առաջին հարկում տեղադրվել Ներքին Հայկական փողոցից դեպի եկեղեցին տանող թաղակապ դարպաս: 1908-ին աղյուսաշեն, թաղածածկ անցում է բացվել Կրակովյան փողոցից դեպի եկեղեցի: 1926-ին Յան Ռոզենը եկեղեցու ներսը նկարազարդել է մոդեռն ոճով, իսկ Յուզեֆ Մեգոֆերը գմբեթը զարդարել է խճանկարով: Լ. Ս. Ա. ե-ու որմնանկարների մեծ մասը XVIII դ. ոչնչացել է հրդեհից, պահպանվել են միայն հվ. լուսամուտի խորշի նկարները, որոնք ունեն հայերեն մակագրություններ: Լուսամուտի վերևում՝ մեդալիոնում Ամենակալ Քրիստոսի դիմապատկերն է, ձախ պատին՝ Հակոբ առաքյալը, աջին՝ Հովհաննես ավետարանիչը ս. Պրոխորոսի հետ: Առաքյալի ոտքերի մոտ պատկերված է ծնկաչոք և աղոթող մի աշխարհական, ենթադրաբար՝ որմնանկարների հեղինակն է կամ բարերարը: Լ. Ս. Ա. ե-ու որմնանկարների անհայտ հայ հեղինակը իր ժամանակի առաջնակարգ դիմանկարիչներից է: Առաքյալների ճոխ, գունագեղ հագուստների ծալքերի շեշտված գծային ոճավորումը, արտահայտիչ և տիպիկ հայկ. դիմագծերը, հրավառ գույների մազերը, շարժումները և կեցվածքը սերտորեն առնչվում են հայկ. մանրանկարչության ավանդույթներին, իսկ պատկերների ծավալայնությունը, զարդանախշերը, գույների երփնապլնակը բնորոշ են բյուզանդականից Վերածննդի կերպարվեստին անցման շրջանի եվրոպ. նկարչությանը: XVII դ. վերջին Լեհաստանի նշանավոր նկարիչներից հայազգի Պավել Բոգուշը և իր հայ աշակերտները Լ. Ս. Ա. ե-ու բեմը զարդարել են սրբապատկերներով, որոնցից լավ պահպանվածը և արժեքավորը «Աստվածածինը մանկան հետ» նկարն է: Սրբապատկերի հիմնապաստառի զարդանախշերը հիշեցնում են լեհահայերի ձեռագործները: Աստվածածնի և մանուկ Հիսուսի դիմագծերը շեշտված հայկ. են, խիստ անհատականացված: Սրբապատկերի այս իրապաշտական առանձնահատկությունները նորույթ էին XVII դ. հայկ. կերպարվեստում:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.3, 3–4-րդ պատկերները:

Գրկ. Զոպանյան Ա., Լվովի Հայկական Մայր եկեղեցին և Հովսեփ Թեոդորովիչ արքեպիսկոպոսի կատարած գործը, «Անահիտ», 1930, № 4: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974: *Кривонос Н., Грабовецкий В., Армянская колония во Львове в XIV—XVIII веках*, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ. հաս. գիտ.», 1958, №*12; Степовик Д., Икона Богородицы Одигитрии из армянской церкви во Львове в контексте украинско-армянских художест-*

венных связей XVII века, Е., 1978; Халпахчьян О., Сооружения армянской колонии во Львове в XII — начале XX вв., "Архитектурное наследство", № 27, 1979; Mankovski T., Sztuka Ormian Lwowskich, Krakow, 1934.

Մուրադ Հասրաթյան

ԼՈՒԾՄՈՒՆՔ, մեկնողական գրականության ժանր: Լ.-ում կարճառոտ մեկնությամբ պարզաբանվում են միայն երկի առավել դժվարընկալելի բառերն ու հասկացությունները: Որոշ առումով Լ. կատարում է այդ երկի բառարանի դեր: Հայ մատենագրության մեջ այդ կերպ մեկնաբանվել են ոչ միայն առավել կարևոր թարգմանական, այլև ինքնուրույն երկերը, որոնք մասնավոր սերտողության առարկա են եղել միջնադարի հայկ. բարձրագույն դպրոցներում և վարդապետարաններում: Այդ եղանակով պարզաբանվել են Աստվածաշնչի որոշ գրքեր, անտիկ մտածողների իմաստասիր. վաստակը, եկեղեցու նշանավոր հայրերի աստվածաբան. ժառանգությունը, ինչպես նաև որոշ հայ մատենագիրների երկերը: Հայտնի և կիրարկելի են եղել *Դավիթ Անհաղթի* «Սահմանք իմաստասիրության» *Հովհաննես Սարկավագի* և *Առաքել Սյունեցու* Լ.-ները, *Գրիգոր Նարեկացու* «Մատեան ողբերգության» Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսի, Գրիգոր Խլաթեցու, Հակոբ Նալյան պատրիարքի և այլոց Լ.-ները: Հակոբ Ա Կլայեցու գրչին են պատկանում նաև *Գրիգոր Նազիանզացու* մի շարք ճառերի, *Կյուրեղ Աղեքսանդրացու* «Պարապմանց գրոց» Լ.-ները: Եկեղեցու հայրերի երկերի Լ.-ներ են հեղինակել նաև Գրիգոր Սկևռացին, Գևորգ Երզնկացին և ուր.: Հայտնի են գրչության արվեստի լեզվական-քերականական տեսության մշակողներ Արիստակես գրչի (XII դ.) և Գևորգ Սկևռացու (XIII–XIV դդ.) աշխատություններ՝ Գրիգոր Տաթևացու երեք Լ.-ները:

Գրկ. Միրզոյան Հ., Մադոյան Ա., «Լուծմունք Սահմանաց գրոց» երկի տեսական արժեքը, տես Դավիթ Անհաղթ հոդվածների ժող., Ե., 1980: Մուրադյան Կ., Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Ե., 1983, էջ 185–186: Խաչատրյան Պ., Նարեկի միջնադարյան լուծմունքը, Ե., 1990:

Հակոբ Քյոսեյան

«ԼՈՒՅՍ», ազգային, կրոնաբարոյական և ընտանեկան կիսամսյա, ապա՝ շաբաթական հանդես, իսկ 1882-ից՝ եռօրյա թերթ: Լույս է տեսել Կ. Պոլսում, 1874–85-ին: Խմբագիրներ՝ Հ. Դիմաքսյան, Մ. Գափամաճյան, Բ. Պոզաճյան: Նպատակն էր հոգևորականների լուսավորությունն ու դաստիարակությունը, նրանց կրոնաբարոյական և ազգասիր. զգացմունքների խթանումը: Տպագրել է Հայ առաքելական եկեղեցուն, նրա սրբերի ու նվիրյալների վարքին, ավանդ. ծեսերին, բարոյական ու հոգևոր դաստիարակությանը վերաբերող նյութեր՝ «Կրոնական», «Պատմական», «Ազգային» և այլ խորագրերի ներքո: Ուսյալ հայ կղերի առաջնահերթ խնդիրն է համարել «Ժողովուրդն ի հոգեւոր պաշտամունս կրթելու, նորա բարոյական օգուտներն խորհելու, զանի մեր ս. կրոնի և եկեղեցւոյ վարդապետութեան դեմ եղած օտար ու մոլար վարդապետութիւններէ զգուշացնելու, ի հոգեւոր եւ մարմնաւոր բարիս հառաջացնելու» գործը:

Ժամանակին արձագանք են գտել «Լ.»-ի՝ Բեթղեհեմի տաճարում Հայ եկեղեցու իրավունքների պաշտպանությանը, Անդրկովկասում հայ վարժարանների ազգ. վերահսկողությանն ուղղված ելույթները: Հանդեսն անդրադարձել է նաև հայ կղերի դեմ օսմ. կառավարության ձեռնարկած հալածանքներին, պաշպանել Հայ եկեղեցու իրավունքները Թուրքիայում: Ուշադրավ են «Լ.»-ի բանավիճային հոդվածներն ամերիկյան միսիոներների հրատարակած *«Ավետաբերի»* դեմ: Բողոքականությունը համարելով աղանդավորություն՝ պաշտպանել է Հայ եկեղեցու ծեսերը, ս. նշխարների, ս. պատկերների պաշտամունքը, եկեղեցու խորհուրդները, ուխտագնացությունը ևն: Համեմատաբար քիչ է անդրադարձել Կաթոլիկ եկեղեցու քարոզչությանը:

«Լ.» ազգի և եկեղեցու թուլության պատճառ է համարել հայ ընտանիքների օտարվելը ազգ. ավանդույթներից, հավատի թուլացումը: Կարևորել է կղերական դպրոցների դերը:

Ալբերտ Խառատյան

«ԼՈՒՅՍ», կրոնական, գրական, բանասիրական շաբաթթերթ: Լույս է տեսել 1905–07-ին, Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրեն՝ Բ. *Կյուլեսերյան*:

Տպագրել է կրոնաաստվածաբան. նյութեր, տեսություններ՝ կրոնաբարոյական թեմաներով, քարոզներ, ավետարան. այուժեների մեկնաբանություններ, Հայ եկեղեցուն նվիրված հոդվածներ ևն: Պաշտպանել է Հայ առաքելական եկեղեցու ուղղափառությունը, հետևելով Մ. արք. *Օրմանյանի* առաջարկած՝ «դավանական նրբությանց մեջ չմտնելու, այլ ավելի՝ բա-

րոյական ուղղության վրա քալելու» սկզբունքին: Եկեղեցու ազդեցությունը զորացնելու մտահոգությամբ «Լ.» ուշադրության կենտրոնում է պահել քարոզչության գործը, ընդարձակ հոդվածներ նվիրել քարոզչության արվեստին, քարոզիչներին օգնելու համար տպագրել օժանդակ նյութեր, Նոր կտակարանից՝ օրինակներ ու քաղվածքներ: Շաբաթաթերթին հիմնականում աշխատակցել են Արմաշի դպրեվանքի վարդապետները (Բ. Կյուլեսերյան, Ղևոնդ, Կորյուն, Մեսրոպ և այլք), նրա էջերում առաջ քաշել եկեղեցու բարեկարգման խնդիրներ: «Լ.» խուսափել է դավան. հակադրություններից և վեճերից: Արժեքավոր հոդվածներ է տպագրել Հայ առաքելական, կաթոլիկ, բողոք. եկեղեցիների փոխհարաբերությունների, նրանց անցյալ և ներկա առնչությունների վերաբերյալ: Այս հարցում «Լ.»-ի մեկնակետը եղել է փոխադարձ հանդուրժողության սկզբունքը: «Լ.» չի ընդունել Ընդհանրական եկեղեցու գաղափարը, պաշտպանել է ազգ. եկեղեցիների անկախության տեսակետը: Կողմնակից է եղել քույր եկեղեցիների բարոյական, բայց ոչ վարչ. կապերին: Ընդարձակ հոդվածներ է նվիրել Հայ եկեղեցու պատմությանը՝ ներկայացնելով եկեղեցու հիմնադիրներին, ս. հայրերի, սրբերի և նշանավոր եկեղեցականների վարքն ու գործը:

Հայագիտ. արժեք ունեն «Լ.»-ի տպագրած ձեռագիր Ավետարանների նկարագրությունները: Գնահատելի են Կորյուն վարդապետի հրատարակած՝ Բալուի Ս. Աստվածածին եկեղեցու Ավետարանների ձեռագրացուցակները, Տ. Պալյանի՝ Կեսարիայի վիճակի վանքերի ու եկեղեցիների Ավետարանների մատենագիտ. ցուցակները: «Լ.» տպագրել է նաև Հայ հոգևոր երաժշտությանը, շարականներին նվիրված նյութեր:

Ալբերտ Խառատյան

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋ, *Գրիգոր Ա Լուսավորչի* աջ ձեռքի սուրբ մասունքները, որոնք V դարում ամփոփվել են բազկի և մատների ձև ունեցող արծաթե պատյանում (*Աջի* մեջ): Հայ եկեղեցու ավանդական կանոնադրությամբ կաթողիկոսարանում Լ. Ա-ի առկայությունը պարտադիր է՝ որպես հայրապետական աստիճանի խորհրդանիշ, որի զորությամբ են տրվում օրհնություններն ու կատարվում *օծումները*: Լ. Ա., ս. Խաչափայտի (ս. Նշան) ու Աստվածամուխ ս. *Գեղարդի* հետ, գլխ. սրբությունն է և գործածվում է ս. *Մյուռոնի* օրհնության ժամանակ:

Գրիգոր Ա Լուսավորչի վախճանվելուց (325/326) կարճ ժամանակ անց նրա *նշխարները* տարածվել են ողջ Հայաստանում: Ըստ *Ղազար Փարպեցու*՝ Վարդանանց ժամանակ, երբ նախարարները կեղծ ուրացությամբ վերադառնում էին Պարսկաստանից, հոգևոր դասը եկողներին իրենց քրիստոնյա լինելը հիշեցնելու և դարձի բերելու համար ընդառաջ է ելել «առաքելական նահատակ Սուրբ Գրիգորի նշխարներով»: Նրա հաջորդ վկայությամբ, երբ Վահան Մամիկոնյանը «Հայոց ուխտապահ նախարարներով հանդերձ» վերադարձել է Պարսկաստանից (այնտեղ 485-ին պաշտոնապես ճանաչվել էր սպարապետ), *Հովհաննես Ա Մանդակունին* նրանց դիմավորել է «ճգնավոր նահատակ Գրիգորի սուրբ նշխարներով, որոնցով էլ նրանց բոլորին ճանապարհել էր դեպի արքունիք»:

Մասունքների պաշտամունքը զորացել է կրոն. մաքառման շրջանում՝ *Քաղկեդոնի ժողովից* հետո: Գրիգոր Ա Լուսավորչի լույս նշխարները հիշատակել են նաև մատենագիրներ Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին (VII դ.), Հովհաննես Ե Դրասխանակերտցին (IX–X դդ.), Ասողիկը (X դ.), Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին (XIII դ.), Առաքել Դավրիժեցին (XVII դ.) և այլք: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ *Ներսես Գ Տայեցին* Գրիգոր Ա Լուսավորչի մասունքների մեծ մասը իշխան Գրիգոր Պատրիկ Մամիկոնյանի ձեռքով Թորդանից տեղափոխել է Վաղարշապատ: Այնուհետև, եկեղեցաքաղ. հանգամանքներով պայմանավորված, խամրել են մնացյալ նշխարների մասին եղած պատմությունները, և միակ ճանաչող մասունքի է վերածվել Լ.Ա.: Որպես կաթողիկոսարանի գլխ. սրբություններից՝ առաջին անգամ հիշատակվում է *Ներսես Շնորհալու* «Թուղթ ընդհանրականում»: Վարդան Վարդապետը գրում է, որ նշխարների քանիցս տեղափոխություններից հետո (բյուզ. Զենոն կայսրը V դ. տարել է Կ.Պոլիս, ապա դրանք վերադարձվել և դրվել են *Զվարթնոցում* և այլ տեղերում) իր օրոք մնացել էր միայն «Աջն լուսընկալ և շնորհաբաշխ»: Լ.Ա-ով Հայոց կաթողիկոսները բացառիկ դեպքերում օրհնել են ժողովրդին: *Կոստանդին Բ Կատուկեցին*, հարկադրաբար հրաժարվելով կաթողիկոս. աթոռից (չի

համակերպվել Հեթում Բ թագավորի լատինամետ քաղաքականության հետ), զգեստավորվել է հայրապետ. հանդերձներով, բարձրացրել Լ.Ա., օրհնել Հայոց թագավորությունն ու ամենայն աշխարհը և հեռացել կաթողիկոսարանից: Հռոմկլայի անկումից (1292) հետո եգիպտ. սուլթանը գերի է տարել *Ստեփանոս Դ Հռոմկլայեցուն*՝ կաթողիկոսարանի սրբություններով և Լ.Ա.-ով հանդերձ: Ըստ *Առաքել Դավրիժեցու*՝ Լ.Ա., գերեվարվելով Եգիպտոս, «երբ մտավ նրանց ապարանքը, պատժեց նրանց մահվամբ, ինչպես տապանակի միջոցով (պատժվեցին) այլազգիները: Արդեն անհամար ու անթիվ էին մեռելները, երբ սուրբ Լուսավորիչ Գրիգորի աջ ձեռքը վերադարձրին Կիլիկիա՝ Հեթում Բարեպաշտ թագավորին: Ապա ցասումը դադարեց նրանց նկատմամբ» («Պատմություն», 1988, էջ 325): Այսպիսի եզակի համեմատություն է արվում Հին կտակարանի գլխ. սրբության՝ *Ուխտի տապանակի* հետ, Լ.Ա. համարելով Հայոց Ուխտի տապանակ:

Լ.Ա.-ի՝ Ս. Էջմիածին տարվելու (1441) մասին ժամանակի աղբյուրները նշում են, որ Աջը *Սսի կաթողիկոսարանից* անհետանալով, մոտ չորս տարի հետո հայտնվել է Էջմիածնում: Նույն շրջանի մի շարք այլ աղբյուրներում ասվում է նաև, թե կորած Լ.Ա. գտնվել է Սսում, որի պահպանությունը հանձնվել է *Աջապահյաններին*: Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ (1434–64) կարակոյունլու Ջահանշահ խանի օժանդակությամբ 1461-ին տիրել է Ս. Էջմիածնի աթոռին: Մեկ տարի անց, հարկադրաբար հեռանալով Մայր աթոռից՝ իր հետ տարել է Լ.Ա.: Բերվող Աջին վասպուրականցիները ցնծությամբ են դիմավորել, ինչը հավաստում է նրա հանդեպ եղած համաժողովրդական սերն ու պաշտամունքը: Ապա, Նախիջևանին մերձակա *Օձոփի Ս. Աստվածածին վանքի* միաբաններից Վրթանես եպիսկոպոսի ջանքերով, արկածային վիպական մի պատմություն հիշեցնող գործընթացով, Լ.Ա. վերադարձվել է Ս. Էջմիածին:

Աջը երկրորդ անգամ Ս. Էջմիածնից հանվել է շահ Աբբաս Ի-ի կատարած բռնագաղթից (1604) հետո, երբ նա ի շարս այլ սրբությունների Սպահան է տարել նաև Լ.Ա. (տես *Էջմիածնի Մայր տաճար*): *Փիլիպոս Ա Աղբակեցուն* հաջողվել է 1663-ին այն վերադարձնել Ս. Էջմիածին: Նոր Ջուղայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պահվում է ևս մի Աջ, որը, ենթադրվում է, մի մասունք ունի Լուսավորչի նշխարներից: Պատմության ծանր ժամանակներում, երբ կաթողիկոսները քաղ. իշխանության կողքին լինելու համար անհրաժեշտաբար թողել են Մայր աթոռը, իրենց հետ վերցրել են Լ.Ա.՝ հայրապետ. աթոռի և պաշտոնի վավերականությունը հաստատելու համար: V–XV դդ., քաղ. պարագաների բերումով, կաթողիկոս. աթոռը Լ.Ա.-ով հանդերձ բազմիցս տեղափոխվել է. Դվին (484–931), Աղթամար (931–944), Արգինա (944–992), Անի (992–1065), Ծամնդավ (1066–1105), Շուղրի Սև լեռան Կարմիր վանք (1105–16), Ծովք (1116–49), Հռոմկլա (1149–1292), Սիս (1293–1441) և կրկին Էջմիածին (1441-ից առ այսօր):

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.3, 5-րդ պատկերը:

Գրկ. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Աշճյան Մ., Լուսավորչի լույս նշխարները, Էջմիածին, 2000:

Սահակ Սահակյան

Խ

ԽԱԴԱՎԱՆՔ, խաթրավանք, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից արևմուտք, անտառապատ լեռան լանջին: Կոչվել է *Թադեոս* առաքյալի 70 աշակերտներից Խադի անունով, որը, ս. *Եղիշեի* հետ, Արցախում քրիստոնեության առաջին տարածողն էր: Խ. հիմնադրվել է վաղ միջնադարում, XII դ. եղել Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատունը: Մեծապես տուժել է 1139-ի երկրաշարժից և սելջուկյան թուրքերի 1143-ի ասպատակությունից, որոնք, Զոլի զորապետի գլխավորությամբ, ապստամբած արցախցիներից վրեժխնդիր եղան՝ վանքերն ավերելով ու սրբությունները գերեվարելով: Խ-ի վերականգնումը կապված է *արևելյան վարդապետներից* Հովհաննես Խաչենցու անվան հետ, որը եղել է Սանահինի և Հաղպատի վանքերի վանահայրը: 1204-ին նա կառուցել է Խ-ի Ս. Աստվածածին եկեղեցին և շին. արձանագրության մեջ նշել, որ վանքում հավաքել է գրքեր և խաչքարեր: Դրա շնորհիվ Խ. դարձել է ինքնատիպ քարեդարան-թանգարան և մատենադարան (արձանագրությունը՝ մեկ ամբողջական քարի վրա, տեղափոխվել և գտեղվել է Երևանի Մատենադարանի ցուցասրահում): Խ-ի մատենադարանը հետագայում լրացվել է վանքում գրված ձեռագրերով ու գերեվարված մատյանների, նաև՝ հեռավոր վայրերից, հետգնումով (Անի, Կարին, Կապադովկիա ևն): Խ-ի Ս. Աստվածածին եկեղեցին քառասյուն գմբեթավոր շենք է՝ իր ծավալի մեջ ներառած մինչ այդ շինված Ս. Պրոկոպիոս և Ս. Մինաս մատուռները: Նրա գմբեթն ունի հայկ. եկեղեցիների համար անսովոր, սակայն գավիթներին բնորոշ ձև. Հովհաննես Խաչենցին այստեղ կրկնել է Սանահինի վանքի՝ 1181-ին իր կառուցած գավթի գմբեթը: Այուների պատվանդաններին կան պահպանիչ խորհրդանշանների հարթաքանդակներ (եզան, խոյի, առյուծի գլուխներ, օձեր): Դոփ իշխանուհին 1226-ին կառուցել է Խ-ի եկեղեցու գավիթը (չի պահպանվել) և հս-արմ. պատին կից փոքրիկ մատուռ, որից հս. կանգուն է XIV դ. 1-ին քառորդում Սարգիս եպիսկոպոսի կառուցած երկհարկ զանգակատունը: Մատուռի արմ. պատի վրա կանգնեցվել են (1219-ին և 1220-ին) երկու գեղաքանդակ խաչքարեր: Խ-ի համալիրի հս. կողմում վանահոր բնակարանն է, հս-արլ-ում՝ երկդահլիճ գրատուն-մատենադարանի շենքը: XIII դ. Գրիգոր իշխանը և նրա կին Ասփան պատրաստել են տվել Ս. Աստվածածին եկեղեցու բեմի սեղանը: XIV դ. Ասփա իշխանուհին Խ. տանող ճանապարհի վրա կամուրջ է կառուցել (մնացել են խելերը) և խաչքար կանգնեցրել: Նա վախճանվել է 1311-ին և թաղվել Խ-ում: XIV–XVI դդ. կրոն-մշակութ. կյանքը Խ-ում անկում է ապրել և մասամբ վերակենդանացել XVII դ., երբ (1691-ին) նորոգվել են նրա կառույցները:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.4, 1-ին պատկերը:

Գրկ. Բարխուդարյանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1982: Ուլուբաբյան Բ., Հասրաթյան Մ., Խադա-

ԽԱԶԱԳՐՈՒԹ. վանք-խաթրավանք, «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, 1984, հ. 10: Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992: Thierry J. M., Eglises et couvents du Karabagh, Antelias-Liban, 1991.

Մուրադ Հասրաթյան

ԽԱԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, միջնադարյան երաժշտական գրության արվեստ: Ձևավորվել է VIII դ. և կապվում է *Ստեփանոս Սյունեցու* անվան հետ: Հետագայում զարգացրել են *Գրիգոր Գռգիկը* (Այրիվանեցի), *Անանիա Նարեկացին, Խաչատուր Տարոնացին, Ներսես Շնորհալին, Գևորգ Սկևռացին* և ուր.: Երաժշտ. գրության այս արվեստն ունեցել է



Մի հատված առոգանության խազերի կոմիտասյան վերծանությունից, Ավետարան ըստ Հովհաննեսի, 20.15

շուրջ ութ հարյուր տարվա պատմություն: Նրա զարգացումը մինչև XII–XIII դդ. ընթացել է Հայաստանի երաժշտ. (հիշարժան է *Մաքենյաց վանքը*), իսկ XII դարից՝ Կիլիկիայի Հայկ. թագավորության մշակութ. և *մանրուսման* կենտրոններում: XVI–XVIII դդ. խազեր կարդալը հետզհետե մոռացվել է: Խազերը

Շարականների խազերի տախտակը (ըստ Ռ. Աթայանի)

(գիծ, գիր) հայ միջնադարյան երաժշտության գրանցման նիշեր են: Դրանք գրվել են տողից վերև, իսկ խիտ (առատ) շարակարգի դեպքում՝ նաև տողի վրա: Խազը կարող է զուգորդվել «նևմ» հասկացության հետ:

Խ. ընդգրկում է նշանների 4 համակարգ. մեկը՝ առոգանության, երեքը՝ բուն երաժշտության: Դրանք երբեմն դասակարգվում են նաև ըստ կիրառության ոլորտների՝ Ս. Գրքից քաղվածքների մատուցմանը ծառայող խազեր, Շարակնոցի, Գանձարանների և Մանրուսման խազեր: Առոգանության և բուն երաժշտ. խազերի նախն. համակարգերի պահպանված հնագույն նմուշները պատկանում են IX դ., *շարականի* խազերինը՝ X դ., *մանրուսման* խազերինը՝ XII դ.: Այս համակարգերը սերտ կապակցված են միմյանց հետ, թեև մեկից մյուսին անցած նշանները վերախմաս-



Հնագույն երաժշտական խազեր Մատենադարանի 512 պատառիկից

Շարականային մեղեդիի տրոհումը խազային պարզագույն հյուսվածքում (հորիզոնական գծիկները փոխարինում են խազ չկրող վանկերին)

տավորվել են նոր համակարգի պայմաններում: Առհասարակ յուրաքանչյուր խազի նշանակությունը որոշվել է նրա կիրառման երաժշտ. միջավայրին համապատասխան:

Որոշ առումներով նկատելի են զուգահեռներ բյուզ. նևմային համակարգի և հայկ. խ-յան միջև, սակայն վերջինս օժտված է ինքնուրույն հատկանիշներով և զարգացման յուրատիպ ընթացք է ունեցել: Հայկ. խազերն ուսումնասիրել են եվրոպ. մի շարք գիտնականներ (Յո. Շրյոդեր, Շ. Վիյոտո, Հ. Պետերման, Ֆ. Ֆետիս և ուր.): Հայ խազագիտության մեջ նշանակալից են Ե. *Տնտեսյանի, Կոմիտասի* աշխատությունները: Առոգանության խազերի համակարգը 1899-ին վերծանել է Կոմիտասը: Մյուս համակարգերը ցայսօր համարվում են չվերծանված (վերծանման մասնավոր և որոշ չափով հաջողված փորձեր եղել են): Խազերի վերաբերյալ սկզբունքային երկու մոտեցում է ձևավորվել, որոնք, ընդհանրությունները հանդերձ, նաև հակադիր են: Մեկն այն է, որ խազերը հնարավորություն են ընձեռել գրանցելու ստեղծագործության երաժշտ. նկարագրի որոշ բաղադրիչները միայն (Ն. Թահմիզյան, Գ. Գյոդակյան ևն): Ըստ Ն. Թահմիզյանի, Խ-յամբ կարելի է գրառել երաժշտ. մի շարք բաղկացուցիչներ, սակայն ձայնաբարձրությունները գրանցելը (որը յուրաքանչյուր նոտագրման համակարգի հիմն. նշանակություններից է) դրանցով անհնարին էր՝ առանց ձայնեղանակային համակարգի համադրման: Խ. ամբողջական էր ձայնեղանակային համակարգով հանդերձ: Մյուս մոտեցման համաձայն, Խ. զարգացման բարձր փուլում, այնուամենայնիվ, հասել է երաժշտ. բոլոր տարրերը գրանցելու մակարդակին (Կոմիտաս, Ռ. Ալթայան): Կոմիտասը «Շարականի խազերի նշանակությունը» հոդվածում (հրտ. 1910-ին) խազերը դասակարգել է ըստ տեսակների և թվարկել խազերին առնչվող, նրանց հարակից մշակութ. ոլորտները:

Մեզ հասած շուրջ 2000 խազավոր մատյաններից 1000-ը պահվում է Երևանի Մատենադարանում:

Խ-յան արդի տվյալներով (ըստ Ն. Թահմիզյանի՝ գոյություն ունեն 40-ից ավելի հիմն. խազանիշեր, 20 օժանդակ և բազմաթիվ բաղադրյալ խազեր:

Նշանների արտաքին նկարագրով և անուններով Խ. հիմք է հանդիսացել XIX դ. սկզբին ձևավորված հայկ. նոտագրության (Լիմոնճյան համակարգ) համար (տես *Նոր հայկական ձայնագրություն*): Խազերի՝ որպես միջնադարյան երաժշտ. գրանցման զարգացած համակարգերից մեկի վերծանումը կարևոր է ոչ միայն հայկ., այլև Մերձ. Արևելքի միջնադարյան երաժշտության և համաքրիստ. եկեղեց. երաժշտության ուսումնասիրման համար:



Խազագրության հիմնական նշանների միակցությունը (ըստ Ն. Թահմիզյանի)

Գրկ. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Ալթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Թահմիզյան Ն., Հիմնական դրույթներ խազագրության արվեստի վերաբերյալ, ԲՄ, 1971, № 10: Նույնի, *Теория музыки*

в древней Армении, Е., 1977; Акопян Л., Проблема хазов в прошлом и настоящем. Традиции и современность, Е., 1986; Геодакян Г., Система хазовой нотописи и возможности ее расшифровки. Традиции и современность, Е., 1996; Kevorkian K., Die Armenische Kirchenmusik, "Sammelbände der internationalen Musikgesellschaft", Jahrgang I, Heft I, 1899, s. 54.

Մհեր Նավոյան

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ, Հայ առաքելական եկեղեցու հոգևոր-բարեպաշտական արարողություն: Խաղողի օրհնության արարողությունը սերում է ժող. Նավասարդյան տոնից, որը մեծ շուքով կատարել են նախաքրիստոնյա Հայաստանում՝ Հայոց թագավորների, ավագանու և ժողովրդի մասնակցությամբ: Երինջներ, ցուլեր, քաղցրահամ մրգեր են զոհաբերել Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Վահագն հեթանոս. աստվածներին: *Գրիգոր Ա Լուսավորիչը*, տեսնելով հեթանոս. այս տոնի խոր արմատները ժողովրդի մեջ, Աստվածածնի տոնին (տես *Վերափոխումն ս. Աստվածածնի*) կցել է խ. տոնը. խորհրդանշական իմաստով եկեղեցի բերված խաղողի բերքի օրհնությամբ Հայ եկեղեցին օրհնում է նաև Հայոց ողջ այգեստանները: Խ. համընկել է Սուրբ Գրքի պատվիրանին՝ թե առաջին բերքը պիտի ընծայվի Տաճարին՝ իբրև երախտագիտության արտահայտում: Անդրանիկ բերքն օրհնել է քահանան և զոհությունն մատուցել Տիրոջը (Բ Օր. **26.**1–11):

Քրիստոսն իրեն համարել է ճշմարիտ որթատունկ, իսկ իր հետևորդներին՝ նրա ճյուղերը (Հովհ. **15.**1–7):

Հայ եկեղեցին Խ-ի արարողությունը կատարում է Աստվածածնի Վերափոխման տոնին (օգոստոսի 15-ին մերձակա կիրակի օրը)՝ հանդիսավոր ս. Պատարագից հետո:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ԽԱՉ, սուրբ խաչ, *քրիստոնեության* խորհրդանշան, պաշտամունքի և երկրպագության առարկա: Հին աշխարհում, հատկապես Հռոմ. կայսրության ժամանակաշրջանում, խ. անարգ մահվան, անեծքի, նախատինքի և չարչարանքի գործիք էր: Եղել է ուղիղ (իրար ադուցված ուղղաձիգ և հորիզոնական փայտերից) և լատ. X տառի ձևով: Հռոմ. կայսրությունում Խ-ի մահվան են դատապարտել ամենածանր հանցագործներին ու ավազակներին: Խաչելով սպանելը, իբրև ծայրագույն պատիժ, Հռոմ. կայսրությունում կատարվել է մինչև Կոստանդին I Մեծի ժամանակները, երբ նա 313-ին Միլանի էդիկտով (հռչակագրով) քրիստոնեությունը կայսրության տարածքում հռչակել է ազատ կրոն և ի հարգանք Քրիստոսի Խ-ի, պատժի այդ ձևն արգելվել է: Հիսուս Քրիստոսի *խաչելությունից* հետո Խ. քրիստոնյաների համար վերածվել է փրկության, հաղթանակի և հավիտենական կյանքի նշանակի՝ խորհրդանշելով Գողգոթայի Խ-ի վրա Հիսուսի տարած հաղթությունը *սատանայի* և *մեղքի* նկատմամբ՝ հանուն մարդկության փրկության:

Քրիստ. (այդ թվում՝ հայ) աստվածաբանության մեջ մեծ տեղ է հատկացվել Խ-ի խորհրդաբանությանը և մեկնությանը: Խ-ի աստվածաբան. ընկալումն ու դեղ. գնահատումը մնվել է Պողոս առաքյալի մեկնություններից («Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար», Գաղատ. **6.**14, «Քանի որ ես օրենքի տակ մեռա օրենքի համար, որպեսզի ապրեմ Աստծու համար», Գաղատ. **2.**19, «... որովհետև կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու զորություն», Ա Կորնթ. **1.**18): Հավատացյալն իր փրկությունը միայն Խ-ով կարող է ստանալ, ինչպես բացատրում է Պողոս առաքյալը. «... ու իր խաչով հաշտեցնի երկուսին մեկ մարմնի մեջ Աստծու հետ. քանզի թշնամությունն սպանեց իր խաչով» (Եփես. **2.**16), կամ «և նրանո՛վ հաշտեցնել ամեն ինչ իր հետ՝ խաղաղություն անելով խաչի վրա թափած իր արյամբ և՛ երկրի վրա, և՛ երկնքում եղածների համար» (Կողոս. **1.**20):

Խ-ի պողոսյան աստվածաբանությունը հիմք է դարձել *եկեղեցու հայրերի* արժեքաբանական դիտարկումների համար: Խ. համարվել է Քրիստոսի տնօրինական սխրանքի փառապակը, «պարծանք պարծանցը», նշանակ «հասարակաց ազատութեան և հեզութեան Տեառն մերոյ» ևն: Խ-ի աստվածաբանությունից են ծնվել նաև Տերունական նշանին տրված դեղ. որակումները. «քրիստոնէից լոյս», «կուրաց առաջնորդ», «մոլորելոց դարձուցիչ», «մանկանց դաստիարակ», «նաւավարաց նաւապետ», «եկեղեցւո հիմն» ևն: Բացի ընդհանուր բարոյաբան. գնահատումներից միջնադարի աստվածաբան. գրականությունում Խ. զուգորդվել է հինկտակարանային կարևոր իրականությունների հետ: Համաձայն մեկնող. աստվածաբանության, Խ. նկատվել է *կենաց*

ծառի, գիտության ծառի, Մովսես Նախամարդարեի գավազանի, Զաքարիա մարգարեի տեսած աշտանակի, Նոյի տապանի, Հակոբ Նահապետի սանդուղքի, Սաբեկա ծառի և այլնի խորհրդապատկերը: Մեկնվել և աստվածաբան. հատուկ իմաստներ են տրվել քառաթևի չորս թևերին: Ըստ այդմ, Խ-ի վերին մասը ցույց է տալիս երկնային արքայությունը, ստորինը՝ դժոխքի ավերումը, աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողությունը: Համաձայն *Գրիգոր Տաթևացու* մեկնության՝ «Քառաթև խաչը խորհրդանշում է նաև չորս առաքինությունները, որոնց վրա պետք է տարածենք մեր ներքին մարդուն. վերին մասը նշանակն է սիրո, ստորինը՝ խոնարհության, աջը՝ հնազանդության, իսկ ձախը՝ համբերության» (Գրիգոր Տաթևացի, «Քարոզ Սուրբ Խաչի մասին», 1995, էջ 6–7):

Խ. միշտ առկա է եկեղեցու ծիսական կյանքում, ոչ մի ծես առանց Խ-ի չի կատարվում, այն եկեղեց. *սպասքի* ամենագործածական տարրերից է, հոգևորականի զգեստի կարևոր բաղկացուցիչ (տես *Զգեստ* եկեղեցական), նվիրական նշան և հատուկ առարկա: Խ-ով են նվիրագործվում եկեղեցու սպասքն ու զգեստները: Ըստ կիրառության լինում են՝ մկրտության, խորանի կամ սեղանի (ի հիշատակ Հիսուսի խաչելության), ձեռաց Խ. ևն: Խ-ի նշանը կանգնեցվում է եկեղեցու գմբեթի կամ կաթողիկեի գլխին, զանգակատան գագաթին, եկեղեցու ճակատին: Ըստ Մաշտոց ծիսամատյանի, եկեղեցու օծվելիք տեղերում մեկական քարե Խ. է դրվում, և դրա վրա կատարվում օծումը:

Տարբեր եկեղեցիներում Խ-երն ունեն այդ եկեղեցիներին հատուկ ավանդ. ձևեր և անվանվում են հուն. Խ., լատ. Խ., հայկ. Խ.: Հուն. Խ-ի չորս թևերը հավասար են, իսկ լատ. Խ-ի երեք թևերն են հավասար, ներքևի թևը մյուսներից կրկնակի երկար է: Հայկ. Խ-ի չորս թևերը հավասար են, բայց թևերի կազմած չորս անկյուններից ելնում են ճառագայթներ՝ կազմելով ճառագայթներով Խ.: Այդ բոլորը միասին սոնակի շուրջը սփռվող անվի կամ արեգակնակերպ ճառագայթների նմանություն է տալիս, ինչի համար էլ սոնակաձև անունն է ստացել: Սոնակաձևը եղել է (սոնակաձև Խ., սոնակաձև քառաթև ևն) Հայ եկեղեցու ընդունած Խ-ի պաշտոն. անունը:

Հայոց մեջ, ի տարբերություն այլ քրիստոնյա ժողովուրդների, առավել տարածված է Խ-ի պաշտամունքը՝ խաչապաշտությունը: Պատկերների պաշտամունքը Հայ եկեղեցում հիմնականում հանդել է Խ-ին և Քրիստոսին. «Յոյն և վիրք պատկերագրութիւն առաւել պատուեն, և հայք՝ զխաչ» (Մխիթար Գոշ, «Թուղթ...», «Արարատ», 1900, նոյեմբ., էջ 562): VII–VIII դդ-ից սկսած սրբապատկերների պաշտամունքի հայկականացված ձևը դարձել է խաչապաշտությունը, ինչի սկիզբը դրել է *Հովհաննես Գ Օձնեցին* (տես *Պատկերամարտություն* և *Պատկերապաշտություն* հոդվածներում): Հայոց մեջ հաստատվել է նաև Խ-ի օրհնությունն ու օծությունը, որը հատուկ է միայն Հայ եկեղեցուն: 726-ի *Մանազկերտի եկեղեցական ժողովում* Հովհաննես Գ Օձնեցին հաստատել է Խ-ի օրհնության և օծության կանոնը: Համաձայն դրա, եթե Խ. չի օրհնվել և օծվել ս. *Մյուռոնով*, ապա չի կարելի պատվել և դրանով երկրպագություն մատուցել, քանի որ զուրկ է աստվածային զորությունից և «արտաքոյ ավանդութեան առաքելական եկեղեցւոյ»: *Մաշտոց Ա Եղիվարդեցին* կանոնակարգել է Խ-ի օրհնությունն ու օծությունը: Ըստ ծիսական կարգի, եկեղեց. պաշտամունքի մեջ գործածվող Խ. պետք է օրհնվի և օծվի հինգ տեղից՝ կենտրոնն ու չորս թևերը՝ Ակնը, Թագը, Բուն, Աջն ու Ձախը: Հայոց մեջ Խ-ի՝ որպես կենաց ծառի, պաշտամունքն արտահայտվել է նաև խաչքարային արվեստում (տես *Խաչքար*): Խ-ին ձոնվել են տաղեր, շարականներ, ներբողներ, որոնցից նշանավոր են *Սահակ Գ Զորոփորեցու*՝ Խ-ին նվիրված շարականները: Հայ եկեղեցին ունի Խ-ին նվիրված տոներ (տես *Խաչի տոներ*), որոնցից *Խաչվերացը* հինգ *Տաղավար* տոներից է: Հայոց մեջ տարածված են նաև Ս. Խաչ անունով սրբատեղիներ, ուխտատեղիներ, մատուռներ, վանքեր ու եկեղեցիներ:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.4, 2–6-րդ պատկերները:

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Սահակյան Ա., Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, ՊԲՀ, 1987, № 2: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 244–249:

Հակոբ Քյոսեյան
Արտաշես Ղազարյան

ԽԱՉԱԿՆՔՈՒՄ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Արզրումեցի, Կարնեցի (Առաքելյան, 1666, Կարին – 30. 4. 1740, Վենետիկ, թաղված է Սուրբ Խաչ եկեղեցում), հանրագիտակ, աստվածաբան, փիլիսոփա, մշակութային գործիչ, հայկական կլասիցիզմի տեսության հիմնադիր: Նախն. կրթությունն ստացել է Կարինում: 1682-ին մեկնել է Հռոմ, ուսումը շարունակել Ուրբանյան վարժարանում, խորացել իմաստասիր., աստվածաբան. գիտությունների մեջ, սովորել լեզուներ: Ավարտելուց հետո ստացել է վարդապետ. աստիճան և որպես քարոզիչ 1696-ին հաստատվել Կ. Պոլսում: Աստվածաբան. գիտելիքների խոր իմացության, հմտության, ճարտասան. արվեստին տիրապետելու շնորհիվ քարոզչի մեծ համարում է ձեռք բերել, միաժամանակ զբաղվել գրական-մշակութ. գործունեությամբ: 1697-ին *Մխիթար Սեբաստացին* հայտնել է նրան կրոն. միաբանություն ստեղծելու իր մտադրության մասին՝ առաջարկելով ղեկավարել այն: Խ. Է. պաշտպանել է այդ գաղափարը, բայց չի մասնակցել միաբանության ստեղծմանը: Միևնույն ժամանակ, վեց ամիս շարունակ Մխիթար Սեբաստացուն դասավանդել է քերականություն, ճարտասանություն, իմաստասիրություն, աստվածաբանություն: *Մխիթարյան միաբանության* անդամ չդառնալով հանդերձ՝ Խ. Է. սերտորեն կապված է եղել միաբանությանը, աջակցել նրա գործունեությանը և՛ խորհուրդներով և թե՛ ջատագովությամբ (պաշտպանական գրություններ, նամակներ է գրել Հռոմի սուրբ ժողովին, Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչներին):

1698-ին, իբրև Հռոմի Ինոկենտիոս XII պապի նվիրակ, Խ. Է. մեկնել է Էջմիածին՝ կոնդակ և ընծաներ տարել Հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեսացուն: Վերջինս Խ. Է-ին տվել է ամենուր քարոզելու իշխանություն՝ չնայած նրա կաթոլիկ լինելու հանգամանքին: Կ. Պոլսում դավան. կռիվների ականատեսը լինելով՝ Խ. Է. հաշտություն և միություն է քարոզել պառակտված հայերի շրջանում, ընդգրկվել այն նախաձեռնող խմբում, որը 1701-ի հոկտ. 26-ին նախապատրաստել է հաշտության ու համաձայնության պայմանագրի կնքումը հայության տարաղավան հատվածների միջև, դրա տակ դրել իր ստորագրությունը: Խ. Է., լինելով կաթոլիկ վարդապետ, իրեն համարել է որդին «Լուսաւորչանիստ աթոռոյ սրբոյ Էջմիածնի», իսկ հրատարակած գրքերի տիտղոսաթերթերի վրա նշել ժամանակի հայ կաթողիկոսների անունները: Խուսափելով Կ. Պոլսի հայոց պատրիարքների հալածանքներից՝ 1707-ին տեղափոխվել է Վենետիկ, մեկ տարի անց դարձել տեղի հայկ. համայնքի հոգևոր առաջնորդը և Ս. Խաչ եկեղեցու մատրանապետը:

Խ. Է. գրել է աստվածաբանությանը, փիլիսոփայությանը, բարոյագիտությանը, տրամաբանությանը, ճարտասանությանը, մաթեմատիկային, բնագիտությանը և գիտության այլ բնագավառների վերաբերող ավելի քան մեկ տասնյակ աշխատություններ, որոնցից շատերը ժամանակին դասագիրք են ծառայել հայ նորահաս սերունդների համար: Առաջին՝ «Գիրք քերականութեան» (1696) գրքում ներկայացրել է ազգի լուսավորությանը նպատակաուղղված իր գրական համապարփակ ծրագիրը, որն իրականացրել է ամբողջովին՝ ժամանակակիցներին մատուցելով գիտելիքների մի կուռ համակարգ: Համարելով, որ «գիտութիւն, ըստ ինքեան իմացեալ, լոյս է», և նկատի ունենալով հայության գերված վիճակը՝ գրել է. «Վասն այսորիկ առաւել հարկաւոր են հայոց ազգին ուսմունք»: Խ. Է. նշել է, որ ժամանակի իմաստունները պետք է միաբանվեն և հաստատեն լեզվական խոհեմ կանոններ: Տարիներ անց նա անդրադարձել է խոսքի գեղագիտությանը նաև «Ճարտասանութիւն» (1713) աշխատությունում, կարևորել լեզվական ընդհանրության հաստատման անհրաժեշտությունը, լեզուն համարել դեպի ազգ. միասնություն տանող հիմն. ուղիներից մեկը: «Քերականութեանը» հաջորդել են մեկնող. («Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցն Սողոմոնի», 1700), աստվածաբան. («Համառօտութիւն բարոյականի աստուածաբանութեան», 1709) երկասիրությունները:

Ժամանակի գիտությունների ու արվեստների հանրագիտարան հիշեցնող «Համառօտական իմաստասիրութիւն» (1711) երկհատոր աշխատությունն իր պարունակած նյութի ծավալով ու արծարծվող թեմաների բազմազանությամբ աննախադեպ երևույթ էր հայ բազմադարյան տեսական-փիլ. գրականության մեջ. այն կոչել են նաև «Բովանդակութիւն ամենայն ուսմանց»: Երկում Խ. Է. առաջին անգամ համակարգված ներկայացրել է եվրոպ. մտքի նվաճումները, ժամանակակիցներին մատուցել գիտելիքների ամբողջական մի համակարգ, դրել նոր ժամանակներում հայոց մտավոր կյանքի եվրոպականացման սկիզբը: Ար-

վեստի տեսությանն անդրադառնալիս Խ. Է. հանդես է եկել որպես կլասիցիզմի գեղ. ուղղության սկզբնավորողը հայ իրականության մեջ: Նրա գեղագիտ. տեսության գրեթե բոլոր դրույթները պայմանավորող գործոնը բանականությունն է: Խ. Է-ու տեսության համաձայն՝ արվեստը բանականությամբ պայմանավորված ունակություն է, որը պահանջում է ստեղծագործել ըստ կանոնների: Բանականություն և ճշմարտություն, չափավորություն և պարզություն՝ ահա նրա գեղագիտության կարևորագույն հասկացությունները: Խ. Է-ու տեսական պատկերացումների համար անմիջական հիմք են հանդիսացել մի կողմից հայ միջնադարյան գեղագիտ-փիլ. մտքի ավանդույթները (*Դավիթ Անհաղթ*), մյուս կողմից՝ արևմտաեվրոպ., մասնավորապես ֆրանս. (Բուալո) կլասիցիզմի գեղագիտ. սկզբունքները: Վերջիններս, բնականաբար, արտացոլվել են՝ բեկվելով հայոց կյանքի պահանջներին ու առանձնահատկություններին համապատասխան:

Խ. Է. զբաղվել է նաև արվեստի տեսակների վերլուծությամբ, բաժանել դրանք երկու խմբի՝ «ազատական», որը ներառում է բուն արվեստներն ու գիտությունները, և «ծառայական», որն ընդգրկում է արհեստները, ինչպես նաև ճարտարապետությունը: Իր երաժշտ. գեղագիտության մեջ անդրադարձել է եվրոպ. ձայնային համակարգի շարադրմանը, խոսել գծային նոտագրության և ձայների օկտավային դրության մասին: Այստեղից հետևում է, որ հայկ. գիտ. շրջանակներում եվրոպ. նոտագրության սկզբունքներին ծանոթ են եղել դեռևս XVIII դ. սկզբին: Ըստ կլասիցիզմի պոետիկայի՝ արտահայտման վսեմ ու բարձր եղանակ է «ոտանաւոր բանիւ» ստեղծագործելը, և պատահական չէ, որ Խ. Է. իր 1400 էջանոց «Համառօտական...» կոթողային աշխատությունը հիմնականում շարադրել է չափածո՝ դառնալով հայ ուսուցող. բանաստեղծության խոշորագույն ներկայացուցիչը XVIII դ.:

Խ. Է. «Լիակատար աստուածաբանութիւն» (հ. 1–2, 1729), «Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն» (1733) և «Կարճառօտագունեղ համառօտութիւն ընդհանրականի աստուածաբանութեան» (1736) աշխատությունները գրել է կաթոլիկ աստվածաբան Թովմա Աքվինացու (XIII դ.) հետևողությամբ: Իր մտքերը հաստատելու համար նա մեջբերումներ է արել վաղքրիստ. սրբերից, հատկապես՝ Օգոստինոս Երանելուց: Բանականությանը մեծ տեղ տալով հանդերձ՝ այնուամենայնիվ այն ստորադասել է հավատին: Ճշմարիտ քրիստոնյան նա է, ով ողջ կյանքում ձգտում է կատարելության: Իսկ բարձրագույն կատարելությունը, գեղեցկությունը, բարությունն ու հավիտեն. ճշմարտությունը Աստված է: Նա է ամեն բանի սկզբնապատճառը և վերջն. նպատակը՝ «վերջին վախճանը ամենայն իրաց», և «համայնքն են ի նմանէ և վասն նորա»: Ըստ այդմ էլ աստվածաբանության ուսումնասիրությունը կարևոր է նաև մեր «սկզբի ու վախճանի» կատարյալ ճանաչողության առումով: Խ. Է. աստվածաբանությունը դիտել է իբրև «գիտութիւն գիտութեանց», իսկ փիլիսոփայությունը՝ աստվածաբանության աղախին: Թովմա Աքվինացու հետևողությամբ թվարկել է Աստծո գոյության գոյաբան. հինգ ապացույցները: Ըստ նրա՝ մարդը մի «փոքրիկ աշխարհ» է և, մահկանացու լինելով հանդերձ, ունի անմահ հոգի. ֆիզիկական մահից առավել զարհուրելին հոգևոր մահն է, երբ մարդու հոգին բաժանվում է աստվածային չնորհից:

Խ. Է. իր ստեղծագործությունը ժառանգել է Մխիթարյան միաբանությանը, իսկ Մխիթար Աբբային կարգել «օրինաւոր ժառանգ» և կտակատար:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.5, 1-ին պատկերը:

Գրկ. Թորոսյան Հ., Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Վնտ., 1901: Թահմիզյան Ն., Խաչատուր Երզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, ԼՀԳ, 1966, № 11: Նազարյան Շ., Խաչատուր Երզրումեցու ուսուցողական բանաստեղծությունները, ՊԲՀ, 1969, № 4: Թադեվոսյան Մ., Հայկական կլասիցիզմի տեսությունը, Ե., 1977: Լաճիկյան Լ., Խաչատուր Երզրումեցու էսթետիկական հայացքները, տես «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» գրքում, Ե., 1986: Նույնի, Կլասիցիզմի հիմնական սկզբունքների արտացոլումը Խաչատուր Երզրումեցու գեղագիտության մեջ, ԲԵՀ, 1993, № 1:

Լևոն Լաճիկյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻ (մոտ 1260 – մոտ 1330), բանաստեղծ, գրիչ, մանրանկարիչ, մանկավարժ, հասարակական գործիչ: Եղել է *Կեչառիսի վանքի* միաբանության վանահայր: Սերել է Խաղբակյան-Պռոշյան իշխան. տոհմից: Սերտ առնչություն է ունեցել Գլաձորի և Տաթևի համալսարանների հետ: Մասնակցել է դավան. վեճերին՝ հանուն Հայ եկեղեցու ինք-

նուրույնության: 1295-ին, ի Թիվս իր ժամանակի նշանավոր իշխանների և հոգևորականների, ստորագրել է *Գրիգոր Է Անավարզեցի* կաթողիկոսին ուղարկված՝ *Ստեփանոս Օրբելյանի* կազմած հակաունիթորական «Թղթի» տակ: 1299-ին Ստեփանոս Օրբելյանին պատվիրել է գրել հայտնի «Ողբք և հառաչանք ի դիմաց մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի» քերթվածը: Այն կրում է *Ներսես Շնորհալու* «Ողբ Եդեսիոյ» պոեմի ազդեցությունը ոչ միայն մտահղացմամբ, այլև պոետիկ. առանձնահատկություններով, զգալի է աղերսը Երգ երգոցի հետ:

Խ. Կ-ու գրական ժառանգության ուշագրավ գործերից է Կեղծ Կալիսթենեսին վերագրված՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմության յուրօրինակ մշակումն ու գեղարվեստ. հարստացումը. գրել է նախաբան, վերջաբան, բարառնություններ, հորինել պատմության որոշակի հատվածները եզրափակող կաֆաներ ժամանակի խոսակցական լեզվով, մատչելի շարադրանքով: Փորձել է Ալեքսանդր Մակեդոնացու կերպարը հարմարեցնել միջնադարյան քրիստ. ժամանակներին՝ զուգահեռներ անցկացնելով Ալեքսանդրի և Քրիստոսի կյանքի և գործունեության գլխ. դեպքերի միջև: Հորինել է ողբեր, տաղեր, գանձեր: Խ. Կ. վարդի և բլբուլի այլաբանական սիրավեպի իր մշակմամբ առաջիններից էր, որ գարնան զարթոնքի պատկերով երգել է Հիսուսին: Խ. Կ-ու «Ի գնալն վարդին եկեալ պուլպուլին» տաղի բովանդակությունը կրկնվել է *Գրիգորիս Աղթամարցու* «Յետ գընալոյ վարդին եկ պլպուլն յայգին» քերթվածում: «Ողբ վասն աւերման տանս արևելեան» քերթվածը արժեքավոր փաստեր է պարունակում XIV դ. 2-րդ կեսի հայ նշանավոր իշխանների մասին: Խ. Կ. իր բանաստեղծություններում խորհել է կյանքի և մահվան, հոգու և մարմնի փոխհարաբերության, մարդու և Աստծո միջև հաղորդակցության խնդիրների մասին: Պատգամել է մահից հետո թողնել բարի անուն, բարի գործ, մտորել Վերջին դատաստանի մասին: Մարդկային մեղքի ծանրության գիտակցումը բանաստեղծ. ուշագրավ դրսևորում է ստացել «Ես եմ կորուսեալ ոչխար» սկսվածքով քերթվածում, որտեղ նշմարվում է մաշտոցյան ապաշխարության շարականների ազդեցությունը:

Խ. Կ-ու տաղերում առկա են աստվածաշնչյան մոտիվներ: Նրա որոշ բանաստեղծություններ հայ փիլ. քնարերգության ինքնատիպ էջերից են, որոնցում երևակվում է հեղինակի ծանոթությունը պարականոն զրույցներին, հայկ. և հուն. փիլիսոփայությանը: Հոգու և մարմնի վիճաբանություն է «Հոգիս դատախազ լինի մարմնոյս» բանաստեղծությունը, որտեղ հոգին դատախազ է դառնում և դատում մարմնի մեղքերը: Ժող. ասացվածքների հավաքածու է «Այս կեանքս է յերազ նըման և խաբող անզերծ յանդիման» սկսվածքով քերթվածը: Գրել է «Ծննդյան» երկու տաղ՝ այբուբենի տառերի հերթագայությամբ, ինչպես նաև տաղ Հիսուսի խաչելության մասին, արձակ մի գործ՝ «Վասն գալստեան մոգուց» պարականոն զրույցը, որտեղ ներկայացված է Քրիստոսի ծնունդը, մոգերի գալը նախ Եգիպտոս, ապա Բեթղեհեմ՝ Քրիստոսի ծննդավայրը:

Գրկ. Ավդալբեգյան Մ., Խաչատուր Կեչառեցի, Ե., 1958:

Աելիտա Դոլուխանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ, Խաչատուր Իսահակյան [ծ. թ. անհտ, Նոր Ջուղա – 1792, Բասրա (այժմ՝ Իրաքում)], պատմագիր, եկեղեցական գործիչ: Սովորել է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, աշակերտել *Հովհաննես Մրքուզին*: Ձեռնադրվել է աբեղա, եղել Ս. Ամենափրկիչ վանքի միաբան, նվիրակ: Գրել է «Վասն ճառագրութեան Պարսից աշխարհի» աշխատությունը (հրատարակիչը խորագրել է «Պատմութիւն Պարսից»): Երկը պետք է լիներ երկհատոր՝ Աքեմենյան տերության կազմավորումից մինչև իր ապրած օրերը: Հեղինակը 1787-ին հասցրել է ավարտել միայն առաջին հատորը, որն ընդգրկում է Աքեմենյան Կյուրոս II Մեծից (Ք.ծ.ա. 550–530) մինչև Քերիմ խանը (1760–79) և բաղկացած է երկու մասից. առաջինում տրված է Պարսից թագավորների ժամանակագրությունը, որտեղ համակարգված են հայ մատենագրության մեջ Իրանի պատմության մասին հայտնի տեղեկությունները, օգտագործված են նաև պարսկ. սկզբնաղբյուրներ, վավերագրեր, գավազանացանկեր: Խ. Ջ. զգալի տեղ է հատկացրել առանձնապես XVII դ. սկզբին շահ Աբբաս I-ի կազմակերպած հայերի բռնագաղթին, Նոր Ջուղայի հիմնադրմանը, նրա մշակութ., հաս. ու կրոն. կյանքին, Պարսկաստանի հայկ. համայնքներին: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդել պարսկահայերի տնտ. ծանր վիճակի, ազգ. և կրոն. հալածանքների, հարկային համակարգի մասին: Հետաքրքրություն են ներկայացնում Ս. Ամենափրկիչ

վանքի վանահայրերի, նշանավոր վարդապետների գործունեությանը նվիրված հատվածները: Տրված են հոգևոր առաջնորդների (Խաչատուր Կեսարացի, Սիմեոն Ջուղայեցի ևն) ժամակարգությունը, կենսագրությունները: Եզակի են նրա հաղորդած տեղեկությունները 1625–42-ին Նոր Ջուղայում ծավալված դերձակ Թոմասի (Թումիկի) աղանդավոր. շարժման մասին: Ըստ հեղինակի, Թոմասը «խօսեր զՀայոյութիւնս ընդդէմ ուղղափառ հաւատոյս Քրիստոսի» և «առաւել չարագոյն և դժնդակագոյն» էր, քան Նեստորը, Արիոսը և մյուսները: Թոմասն ու կողմնակիցները չեն ընդունել Քրիստոսի աստվածային էությունը, մերժել են եկեղեց. նվիրապետությունը, ժխտել եկեղեց. խորհուրդները, դատապարտել հոգևորականներին ևն: Խ. Ջ. անդրադարձել է նաև դավանաբան. վեճերին, Պարսկաստանի հայկ. համայնքներում կաթոլիկ քարոզչության հարուցած ազդ. անմիաբանության հետևանքներին, քննադատել պապականության ծավալապաշտ. քաղաքականությունը: Աշխատության երկրորդ մասը Խ. Ջ. շարադրել է որպես դեպքերի ականատես: Այն նվիրված է Քերիմ խանի ժամանակաշրջանին և կարևոր ստուգապատում աղբյուր է պարսկագիտության համար: Գրքի վերջում տրված է պարսկ. թագավորների անվանացանկն ըստ արքայատոհմերի:

Գիրքն առաջին անգամ լույս է տեսել 1795-ին, Մադրասում հրատարակվող «Ազդարար» ամսագրում (№ 5–16, առանց պարսկ. թագավորների անվանացանկի):

Երկ. Պատմութիւն Պարսից, Վաղ-պատ, 1905:

Աղավնի Ութուջյան

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԱՑԻ, Հաղարծնեցի (ծ. և մ. թթ. անհտ), երաժիշտ, բանաստեղծ, գիտնական: Ապրել և ստեղծագործել է XII դ. վերջին և XIII դ. սկզբին, Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանում: Լինելով իր ժամանակի նշանավոր երաժիշտ վարդապետներից մեկը՝ ստանձնել է Հաղարծնի վանքի առաջնորդությունը, նպաստել վանքի հոգևոր բարենորոգմանը, որտեղ նոր մակարդակի է բարձրացրել պաշտոներգության կատարումը: Խ. Տ-ու գործունեությունը նշանավորվել է միջնադարյան մանագիտացված երաժշտության մի շարք բնագավառներում: *Վարդան Արևելցու, Հովհաննես Երզնկացի* Պլուզի հետ Խ.Տ. կիլիկյան հայկ. երաժշտ. մշակույթի հարուստ ձեռքբերումները Հայաստանի տարբեր շրջաններում տարածող և արմատավորող հեղինակներից էր: Որպես նշանավոր խազագետ-գիտնական հենվել է Կիլիկիայում խմբագրված խազագիր երգարանների վրա և Հայաստանի հնարել. շրջաններում, մասնավորապես՝ Հաղպատում, զարգացրել *խազագրության* արվեստը: Խ.Տ. հայ միջնադարյան հոգևոր երգաստեղծության նշանավոր հեղինակներից է: Ստեղծել է գանձեր և զարգացած մեղեդիական նկարագիր ունեցող տաղատիպ *շարականներ*: Դրանցից իր երաժշտ. հնչեղությամբ պահպանվել և մեզ է հասել հայոց Պատարագի նախերգը՝ զգեստավորման «Խորհուրդ խորին» շարականը («Յոյժ ծանր» նշումով տարբերակը), որը հայ հոգևոր երգաստեղծության բարձրարվեստ նմուշներից է: Այս շարականի ստեղծման առիթը եղել է XIII դ. սկզբին Զաքարե Բ Մեծ իշխանի հրամանով (Լոռու մոտերքում) կատարված բացօթյա հանդիսավոր Պատարագը, որի մատուցման ժամանակ Խ.Տ. երգել է այն:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985:

Մհեր Նավոյան

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Գարեգին (ավազանի անունը՝ Խաչիկ, 1880, Տրապիզոն – 1961, Կ. Պոլիս, հանդչում է Շիշլիի գերեզմանատանը), Կ. Պոլսի հայոց պատրիարք 1951–61-ին (1901-ին՝ աբեղա, 1922-ին՝ եպիսկոպոս): Սովորել է Կ. Պոլսի Ազգային, այնուհետև՝ Մխիթարյան, 1896-ին՝ Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Ավարտել է Արմաշի դպրեվանքը (1901): Հոգևոր և ուսուցչական պաշտոններ է վարել Ստամբուլում, Արմաշի դպրեվանքում: Առաջին աշխարհամարտի տարիներին դասավանդել է Հալեպի և Երուսաղեմի վարժարաններում: 1921-ին ընտրվել է Տրապիզոնի հայոց հոգևոր առաջնորդ: 1928–35-ին Կալիֆոռնիայում ծավալել է գրական-քարոզչական աշխատանք: Գործել է իբրև հայրապետական պատվիրակ. 1935–38-ին՝ Հվ. Ֆրանսիայում, 1938–50-ին՝ Հվ. Ամերիկայում:

Հայ եկեղեցու նվիրյալ հոգևորականներ պատրաստելու նպատակով Ստամբուլում բացել է Ս. Խաչ դպրեվանքը (1953), հիմնել ցարդ հրատարակվող «*Շողակաթ*» (1952-ից) կրոնաբարոյական, պատմաբանասիր., հայագիտ. հանդեսը: Վերանորոգել ու ընդարձակել է Ֆերիքյոյի վարժարանն ու Ս. Վարդանանց եկեղեցին:

ԽԱՉԵԼՈՒԹ. Խ. հեղինակ է մի շարք կրոնաբարոյական և ազգ. բովանդակությամբ արձակ ու չափածո երկերի («Կրոնաբարոյական և ընկերային շողակաթումներ», [քարոզներ], 1925, «Աշխարհի լոյսն ի Հայս կամ Աւետարանին լոյսը Հայաստանեայց եկեղեցվո պրիսմակեն», հ. 1, 2, 1936, 1939, «Նարեկ» չափածո ողբերգություն, 1926):

Արշալույս Ղազինյան

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ, *Հիսուս Քրիստոսի* չարչարանքները Գողգոթայի *խաչի* վրա և մահը՝ հանուն ադամական *մեղքի* քավության. մեղքի հատուցման *Պատարագ*, Աստծուն ընդունելի սուրբ զոհագործություն՝ մարդու փրկագործության համար: Պողոս առաքյալը գրում է. «Բայց այժմ, դարերի վախճանին, նա մեկ անգամ ընդմիշտ հայտնվեց՝ իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար» (Եբր. **9.**26): Խ-յամբ Հիսուսը հանձն առավ մարդկությանը վիճակված մեղքի պատիժը, քանդեց Աստծո և մարդու միջև եղած թշնամության պատը, մինչև մահ սուրբ պահեց Աստծո պատկերն ու անունը: Եվ քանի որ Հիսուսը գոհացրեց Աստծո սրբությունն ու արդարությունը՝ ի գին Խ-յան Աստված հաճեցավ աշխարհ ուղարկել Մխիթարիչը՝ *Սուրբ Հոգին*:

Հիսուսի Խ. և Խ-յան դրվագները մարգարեացված էին: Սաղմոսում ասվում է. «Ծակեցին ձեռքերն ու ոտքերն իմ, հաշվեցին բոլոր ոսկորներս, նրանք նայեցին ու տեսան ինձ: Հագուստներս բաժանեցին իրար մեջ և պատմուճանիս վրա վիճակ գցեցին» (**21.**18–19): Ըստ Եսայու մարգարեության՝ «Նա մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարվում, սակայն մենք նրա ցավերը, հարվածներն ու չարչարանքները համարեցինք իբրև Աստծուց եկած բան: Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար նա պատիժ կրեց, և նրա վերքերով մենք բժշկվեցինք» (**53.**4–5): Մարգարեացված էին նաև Հիսուսի Խ-յան մյուս մանրամասները:

Չորս Ավետարաններն էլ նկարագրում են Հիսուսի Խ., որը, ըստ սրբազան ավանդությունների ու մեկնությունների, կատարվել է Գողգոթայի ա՛յն տեղում, որտեղ թաղված է եղել Ադամը: Նա խաչ է բարձրացել ուրբաթ առավոտյան, Գ ժամին (ժամը իններին): Խ-յան ընթացքում կատարված իրադարձություններն ու Հիսուսի արտաբերած խոսքերը աստվածային խորհուրդներ են պարունակում. Խ-յամբ իրականանում էին մեղսաքավության և Փրկագործության խորհուրդները: Այսպես. Հիսուսն իրեն խաչողների համար աղոթում է, թե՝ «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. **23.**34). դա ցույց է տալիս Աստծո սերն ու ողորմածությունը իր դեմ հանապազ մեղանչող և իր չար խորհուրդների մեջ Սուրբին ու Անարատին տանջող մարդու հանդեպ:

Խաչյալ Հիսուսին քացախ են մատուցում (ձողի ծայրին ամրացրած սպունգ՝ քացախի մեջ թաթախված), որը նա չի ճաշակում՝ նշանակ այն բանի, որ Փրկիչը կամեցավ միանգամայն գիտակից վիճակում խմել մահվան բաժակը և իր փրկագործական մահը կնքել անխառն ցավերով, որոնք նախատեսված էին (Մատթ. **27.**48): Նրա երկու կողմերում խաչում են երկու ավազակների, որոնք խորհրդանշում են մարդկությանը. ձախակողմյանը Փրկչին մեղադրող («Դու չէ՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ և մեզ», Ղուկ. **23.**39), չապաշխարող մարդկությունն է, աջակողմյանը՝ Փրկչին Տեր և Թագավոր ընդունող, ուստի և՝ մաքրագործյալ մարդկությունն է, որին էլ Հիսուս Քրիստոսը տվեց իր խոստումը՝ «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. **23.**43):

Հիսուսի խաչափայտի վրա փակցնում են «Հիսուս Նազովրեցի՝ Հրեաների Թագավոր» գրությունը (իբրև հանցապարտության բացատրություն) երեք լեզուներով՝ եբրայերեն, լատիներեն և հունարեն (Հովհ. **19.**19–22): Սա, անկախ խաչողների կամքից, հավաստում էր, որ իսկապես Հիսուսն է Հրեաների՝ Աստծո ժողովրդի կամ Նոր Իսրայելի Թագավորը: Խաչի վրայից Հիսուսը հանձնարարում է իր մորը՝ որպես որդի ընդունել Հովհաննեսին (ավետարանչին և առաքյալին), իսկ նրան էլ՝ որպես մայր ընդունել *Մարիամ Աստվածածնին* (Հովհ. **19.**26–27), ինչը նշանակում էր, թե Աստվածամայրն է բոլոր քրիստոնյաների մայրն ու բարեխոսը: Հիսուսին խաչ հանելուց հետո հռոմեացի զինվորները նրա զգեստները (խորհրդաբանորեն՝ Հիսուսի պարգևած շնորհները) բաժանում են միմյանց միջև, իսկ շուրջանակի հյուսված, անկար պատմուճանի (խորհրդաբանորեն՝ Հիսուսի Եկեղեցու սիրո միության) վրա վիճակ են գցում:

Հիսուսի չարչարալից Խ-յան ընթացքում, միջօրեին, արևը խավարում է հանկարծակի, և Տաճարի վարագույրը պատռվում է մեջտեղից

(Ղուկ. **23**.44–45): Սուրբ հայրերը գտնում են, որ խավարումը եղել է ճիշտ այն ժամին, երբ «խավարել» է Ադամը դրախտում՝ լսելով օձից խաբված Եվային և ճաշակելով արգելյալ պտուղը:

Արեգակի խավարումը խորհրդանշում է Հիսուսի՝ «արդարության արեգակի» հեռանալն աշխարհից և աշխարհի խաբուսիկ փառքն ու լույսը, որը հրամցվել էր Ադամին սատանայի կողմից: Վարագույրի պատռվելը խորհրդանշում է սրբության սրբոցի (երկինքների երկնքի) բացվելը Հիսուսի միջոցով: Հիսուսը Թ ժամին (ըստ հաշվարկների՝ ժամը 15-ին մերձ) աղաղակում է՝ «Էլի՛, Էլի՛, լա՞մա սաբաքթանի», որ թարգմանվում է՝ «Աստվա՛ծ իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մարկ. **15**.34), որպես նշանակ մարգարեության կատարման (Սաղմ. **21**.1):

Հովհաննեսի վկայությամբ՝ Հիսուսը խաչի վրա նաև ասում է՝ «Ծարավ եմ» (Հովհ. **19**.28), ինչը խորհրդանշում է համայն մարդկության (որին այդ ժամանակ ներկայացնում էր Հիսուսը, քանի որ ողջ ադամական մեղքը վերցրել էր իր վրա) ծարավը՝ կենդանի Աստծո նկատմամբ, նոր էակ լինելու ծարավը: Մահից առաջ Հիսուսն աղաղակում է. «Հա՛յր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին» ըստ Ղուկասի (Ղուկ. **23**.46), իսկ ըստ Հովհաննեսի՝ ասում է. «Ամեն ինչ կատարված է» (Հովհ. **19**.30) և, գլուխը հակելով, ավանդում է հոգին: Խոսքը նշանակում էր, թե կատարված է Հայր Աստծո ծրագիրը. մահով խափանված է մահը, սատանան պարտված է, Աստված՝ սրբությամբ փառավորված, մարդը՝ Հիսուսով ազատագրված: Խաչի վրա մահացած Հիսուսի կողը խոցում են *գեղարդով*. դուրս է գալիս ջուր և արյուն. ջուրը *մկրտությունն* է (կամ մկրտված ժողովուրդները), արյունը՝ *հաղորդությունը* Սուրբ Հոգու հետ (փրկության, հավիտենական կյանքի ավետիսը):

Խ-ից հետո Հիսուսը թաղվեց, երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց երկինք՝ բազմելով Հայր Աստծո աջ կողմը, որպես հավիտենական բարեխոս:

«Խաչելությունը» հայ մանրանկարչության տարածված պատկերագր. թեմաներից է (տես *Ավագ շաբաթ* հոդվածի Պատկերագրություն մասը):

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.5, 2–3-րդ պատկերները:

Լևոն Սարգսյան

ԽԱՉԻ ԵՐԵՎՈՒՄ, տես *Խաչի տոներ* հոդվածում:

ԽԱՉԻ ՏՈՆԵՐ, Հայ առաքելական եկեղեցու՝ *խաչը* փառաբանող Տերունական չորս տոները, որոնցից մեկը՝ *Խաչվերացը*, Հայ եկեղեցու հինգ *Տաղավար* տոներից է:

Գյուտ Խաչ, Խաչգյուտ. 327-ին բյուզ. Կոստանդիանոս կայսրի մայրը՝ Հեղինե կայսրուհին, Քրիստոսի խաչը գտնելու նպատակով այցելել է Երուսաղեմ: Հուդա անունով մի հրեա օգնել է կայսրուհուն գտնել Գողգոթայի՝ Հիսուսի խաչվելու վայրը: Որոնումներից հետո գտնվել են Քրիստոսի և նրա հետ խաչված երկու ավազակների խաչերը: Տիրոջ խաչը ճանաչելու համար մի պատանու դիակ հերթով դրել են խաչերի վրա: Երրորդի վրա պատանին հարություն է առել և ոտքի կանգնել. դրանով ճանաչվել է տերունական խաչը: Խաչափայտի գյուտից հետո Հեղինե կայսրուհին բարեկարգել է Երուսաղեմի սրբազան վայրերը և Գողգոթայում Ս. Հարություն անունով տաճար կառուցել, որտեղ էլ հետագայում զետեղվել է Տիրոջ Խաչափայտը: Այդ հրաշքից հետո Հուդա հրեան քրիստոնեություն է ընդունել և դարձել Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոս: Հետագայում մոր՝ Աննայի հետ նահատակվել է: Հայ եկեղեցին Խաչի գյուտը տոնում է հոկտ. 23-ից 29-ը հանդիպող կիրակի օրը: Հույներն այս տոնը միացրել են Խաչվերացի տոնին և կատարում են սեպտ. 14-ին, իսկ կաթոլիկները՝ մայիսի 3-ին:

Երեվման Խաչ, Խաչի երեվման տոն. կատարվում է ի հիշատակ Խաչի հրաշալի երևման, որը տեղի է ունեցել 351-ին՝ Երուսաղեմի վրա Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռ խաչանման լույսի ճառագայթմամբ: Երուսաղեմի հայրապետ Կյուրեղ Երուսաղեմացին այդ առթիվ հատուկ նամակ է հղել բյուզ. Կոստանդիանոս կայսրին, որտեղ, վկայակոչելով Խաչի երևումը, հորդորել է ամուր մնալ քրիստ. ուղղափառ հավատքի և Ընդհանրական եկեղեցու որդեգրած դավան. անառարկելի ճշմարտությունների վրա: Կյուրեղ Երուսաղեմացու այս նամակը V դ. թարգմանվել է հայերեն և ներկայումս էլ տոնի օրը ընթերցվում է Հայ եկեղեցում: Հույները Խաչի երևման տոնը կատարում են մայիսի 17-ին, իսկ Հայ եկեղեցին՝ Հինանց հինգերորդ կիրակի օրը, ս. Զատկից 28 օր հետո, 35 օրվա շարժականությամբ (ապրիլի 19-ից մինչև մայիսի 23-ը): Կաթոլիկ եկեղեցին այս անունով տոն չունի:

ԽԱՉԻԿ Երևման Խաչի տոնին հատուկ շարական չի նվիրվել. այդ օրը երգվում են Խաչի մյուս տոնների շարականները, որոնցով փառաբանվում է Խաչը:

Վարագա Ս. Խաչի տոն. կապված է ազգային ավանդության հետ: Նշում է միայն Հայ եկեղեցին: Այս տոնը 653-ին հաստատել է *Ներսես Գ Տայեցին*: Ըստ ազգ. ավանդության, ս. Գայանյանց կույսերից ս. Հռիփսիմեն իր պարանոցին կրել է Քրիստոսի Խաչափայտից մի մասունք, որը Պատրոնիկե թագուհին Երուսաղեմից բերել էր Հռոմ: Երբ հալածական կույսերն ապաստանել են Հայաստանում, ս. Հռիփսիմեն Վաղարշապատ գնալու ճանապարհին իր պարանոցը զարդարող սև մասունքը, երկու քահանաների պահպանության ներքո, զետեղել է Վարագա լեռան քարայրներից մեկում: Քրիստոնեության դեմ հալածանքների պատճառով երկար ժամանակ ս. մասունքի գտնվելու վայրը գաղտնի է պահվել, իսկ քահանաների մահից հետո՝ մոռացվել, բայց այդ մասին հյուսված ավանդությունը միշտ հետաքրքրել է սրբակյաց ճգնավորներին: 653-ին Վարագա լեռան վրա ապրող Թոդիկ և Հովել ճգնավորներն աղոթել են՝ իմանալու համար, թե որտեղ է պահված ս. մասունքը: Հանկարծ լսվել է մի ձայն, որից հետո երևացել մի պայծառ լույս Վարագա լեռան վրա և 12 լուսեղեն այուներ նրա շուրջը: Լույսերը երկար ժամանակ լեռան վրա մնալուց հետո մտել են եկեղեցի և հանգչել եկեղեցու սեղանի վրա:

Հոգևորականներն ու աշխարհականները, իմանալով այդ մասին, մեծ թափորով շտապել են եկեղեցի: Ժամանակի Ներսես Գ Տայեցի կաթողիկոսն ու Վարդ Ռշտունի սպարապետը, նույնպես Վարագ գալով, ստուգել են եղելությունը և մեծահանդես տոնախմբություն կատարել: Նույն վայրում, որտեղ երևացել էին 12 լուսե այուները, կաթողիկոսը կառուցել է Ս. Նշան եկեղեցին: Վարագա վանքի մեջ հանգչող Խաչափայտը կոչվել է ս. Նշան և երկար ժամանակ պահվել այնտեղ: Դեգերումներից հետո, 1655-ին դրվել է Վանի Ս. Տիրամայր Մայր եկեղեցում, որն այնուհետև կոչվել է Ս. Նշան: Տոնը կատարվում է Խաչվերացից 15 օր հետո՝ սեպտ. 25-ից մինչև հոկտ. 1-ը հանդիպող կիրակի օրը: Ներսես Գ Տայեցին Վարագա Ս. Խաչի տոնի առթիվ հորինել է «Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո Քրիստոս» շարականը:

Գրկ. Գուշակյան Թ., Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 313–323: Օրմանյան Մ., Միսական բառարան, Ե., 1992: Տիգրանյան Ա., Խաչվերացի տոնի ավանդությունները, «Գանձասար», 6, 1996, էջ 110–131: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6 հրտ., Թեհրան, 1999:

Արտաշես Ղազարյան

ԽԱՉԻԿ Ա ԱՐՇԱՐՈՒՆԻ, Արշարունեցի (ծ. թ. անհտ – 992, ամփոփված է Արգինայի Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում), Ամենայն Հայոց կաթողիկոս 973-ից: Հաջորդել է *Ստեփանոս Գ Սևանցուն*: Սովորել է Մեծ Հայքի Արշարունիք գավառի Կամրջաձոր կամ Կապուտքար վանքի նշանավոր դպրոցում: Եղել է Արշարունիքի եպիսկոպոսը: Կաթողիկոս է կարգվել Աշոտ Գ Ողորմած թագավորի հրամանով և եկեղեց. ժողովի ընտրությամբ: Հայրապետ. գործունեության ընթացքում նպաստել է կաթողիկոս. աթոռը Արգինայում (944) հաստատելուն: Պայքարել է Սեբաստիայի և Մելիտինեի մետրոպոլիտների ոտնձգությունների դեմ՝ պաշտպանելով Հայ առաքելական եկեղեցու ուղղափառ դավանությունը: Բյուզ. կայսրության արլ. շրջաններում հայ բնակչությանը հուն. եկեղեցու դավան. ոտնձգություններից զերծ պահելու նպատակով Անտիոքում, Տարսոնում, Իսավրիայում և այլուր նշանակել է եպիսկոպոսներ: Օժանդակել է Հայոց պետականության ամրապնդման համար հայ Բագրատունիների ձեռնարկած միջոցառումներին: Խ. Ա Ա. զբաղվել է շին. աշխատանքներով, Արգինայում կառուցել երեք կաթողիկե եկեղեցի, հիմնել մատենադարան:

Կաթողիկոս. դահին Խ. Ա Ա-ուն հաջորդել է *Սարգիս Ա Սևանցին*:

Գրկ. Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ԽԱՉԻԿ Բ ԱՆԵՑԻ [ծ. թ. անհտ, Անի – 1065, Թավբլուր (Երկրորդ Հայքում), ամփոփվել է Թավբլուրի վանքում], Ամենայն Հայոց կաթողիկոս 1058-ից: Հաջորդել է *Պետրոս Ա Գետադարձին*, որի քրոջ որդին էր: Սովորել է Անիի դպրոցում: 1040-ական թթ. 1-ին կեսին ձեռնադրվել է եպիսկոպոս: Բագրատունյաց թագավորության անկումից (1045) հետո Բյուզ. կայսրությունը փորձել է իրեն ենթարկել նաև Հայոց կաթողիկոսությունը, ինչը կհեշտացներ հայ ժողովրդին դավանափոխելու քաղաքա-

կանության իրագործումը: Այդ նպատակով 1046-ի վերջին – 1047-ի սկզբին Պետրոս Ա Գետադարձն ու Խ. Բ Ա. ձերբակալվել են, սակայն բռնությամբ հաջողության չհասնելով՝ բյուզ. իշխողներն ապրիլի սկզբին արձակել են նրանց: Համոզվելով, որ բռնությունները կշարունակվեն նաև հետագայում՝ Պետրոս Ա Գետադարձը ապրիլի վերջին, Անիում Խ. Բ Ա.-ուն կաթողիկոս. աստիճանով հայրապետ. ձեռնադրություն է տվել և նշանակել տեղապահ, իսկ 1049-ին, Կ. Պոլիս մեկնելուց առաջ, կաթողիկոսական օծմամբ թողել փոխանորդ: Մահից առաջ Պետրոս Ա Գետադարձը Սեբաստիայի Ս. Նշան վանքում Խ. Բ Ա.-ուն օծել է կաթողիկոս: Բայց շուտով, կայսր Կոստանդին Դուկասի հրամանով Խ. Բ Ա. կալանվել է և մի քանի եպիսկոպոսների հետ 1059-ի սկզբին տարվել Կ. Պոլիս: Այնտեղ Խ. Բ Ա.-ուն ենթարկվել են բռնությունների, փորձել դավանափոխ անել, Հայոց կաթողիկոսությունը Հունաց պատրիարքին ենթարկել, Հայ եկեղեցին հարկատու դարձնել: Խ. Բ Ա. մնացել է անդրդվելի և մատնվել աքսորի: 1062-ին ազատվել է և հաստատվել երկրորդ Հայքի Տարոնա գավառի Թավբլուրի վանքում: Խ. Բ Ա.-ու աթոռակալման վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանը ենթարկվել է սելջուկյան նոր ասպատակությունների, որոնց ժամանակ էլ ավերվել է (1065-ի օգոստ.) *Անիի կաթողիկոսարանը*: Թեպետ իր աթոռակալության շրջանում Խ. Բ Ա. երբեք Անիում չի եղել (հույները թույլ չեն տվել մտնել Անի), բայց համարվում է Անիի վերջին Հայոց կաթողիկոսը, որովհետև պաշտոնական կաթողիկոսարանը մինչև ավերվելն Անիում է գտնվել: Խ. Բ Ա.-ու մահից հետո, մինչև 1441-ը, Հայոց կաթողիկոսության աթոռանիստը մնացել է Մեծ Հայքի սահմաններից դուրս:

Կաթողիկոս. աթոռին Խ. Բ Ա.-ուն հաջորդել է *Գրիգոր Բ Վկայասերը*:

Գրկ. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., 1971: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Օրմանյան Մ., Ազգապատում, Հ. 1, ԿՊ, 1912:

ԽԱՉՎԵՐԱՑ, Սուրբ Խաչի Վերացման տոն, Հայ եկեղեցու հինգ Տաղավար և Խաչի չորս տոներից մեկը: Ունի *նավակատիք*՝ ուխտօրյա հանդիսությամբ, և *մեռելոց*: *Խաչի տոներից* ամենահինն է և իր պատմ. սկզբնավորությամբ հասնում է մինչև քրիստոնեության ակունքները, որովհետև խաչը վերացնելու (բարձրացնելու) և փառավորելու առաջին գործողությունը վերագրվում է Տեառնեղբայր (Տիրոջ եղբայր) Հակոբոս առաքյալին: Նա եղել է Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը և, խաչը ի տես ժողովրդի բարձրացնելով, «Խաչի քո, Քրիստոս, երկրպագեմք» օրհնությունն ու աղոթքն է ասել: Ենթադրվում է, որ Հակոբոսը ոչ թե Քրիստոսի բուն խաչն է բարձրացրել, այլ նրա նմանությամբ պատրաստված քառաթևով է այդ արարողությունը կատարել: Հայ և Ընդհանրական եկեղեցում տոնը հաստատվել է IV դ.:

Խաչի փառավորության երկրորդ պարագան Խաչի գյուտն է, երբ բյուզ. Կոստանդիանոս կայսրի մայրը՝ Հեղինե թագուհին, այն գտնելուց հետո մեծ շուքով զետեղել է Երուսաղեմի Ս. Հարություն տաճարում: Խ-ի տոնի նախընթաց օրը նավակատիքի հիշատակ կատարելը և այդ հիշատակը Ս. Հարություն տաճարի նավակատիքի տարեդարձ լինելը, Խաչի գյուտն ու Խ. ներքին կարգով իրար են միացվում:

Երրորդ պարագան, երբ խաչը հատուկ փառավորություն է ստացել, խաչի վերադարձն է: 614-ին, պարսկա-բյուզ. պատերազմի ժամանակ, Պարսից Խոսրով II թագավորը գրավել է Երուսաղեմը՝ գրեթե հիմնովին ավերելով քաղաքը: Թալանելով Երուսաղեմը՝ պարսիկները նյութ. և հոգևոր շատ արժեքների հետ Քրիստոսի Խաչափայտը ևս գերեվարել են և իբրև ավար տարել Պարսկաստան: Միայն 628-ին բյուզ. Հերակլ կայսրը (610–641), հաղթելով Պարսկաստանին և գրավելով Տիզբոնը, վերադարձրել է գերված Խաչափայտը և նույն թվի սեպտ. 14-ին փառավոր հանդեսով զետեղել իր ավանդական տեղում՝ Երուսաղեմի Ս. Հարություն տաճարում: Կայսրը և եկեղեց. հայրերը սեպտ. 14-ը հռչակել են Քրիստոսի Խաչափայտի վերադարձի կամ Խ-ի տոն: Հայ եկեղեցին Խ-ի տոնը կատարում է սեպտ. 14-ի մոտակա կիրակի օրը (սեպտ. 11–17-ը հանդիպող կիրակին): *Սահակ Գ Ջորոփորեցի* կաթողիկոսը (677–703) կարգավորել է Խ-ի արարողությունը՝ գրելով նաև այդ առթիվ երգվող շարականներ:

Խ-ի տոնին հայոց բոլոր եկեղեցիներում երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է հանդիսավոր թափոր և անդաստան (արարողություն, որի ժամանակ քահանաներն օրհնում են աշխարհի չորս ծագերը): Հանդիսավոր թափորի ժամանակ, Մայր աթոռ Ս. Էջմիածնում, ի տես ժողովրդի, բարձրացվում է

ԽԱՉՔԱՐ

Քրիստոսի Խաչափայտի մասունքով ճաճանչավոր մի խաչ, որը սրբությամբ պահվում է Մայրավանքի Թանգարանում:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Տիգրանյան Ա., Խաչվերացի տոնի ավանդությունները, «Գանձասար», 6, 1996, էջ 110–131:

Արտաշես Ղազարյան

ԽԱՉՔԱՐ, միջնադարյան հայ կերպարվեստի տեսակ, ճարտարապետական մանր կոթողային ձև, որի հիմն. բովանդակությունը կազմում է պատվանդանի (խարսխի) վրա կանգնեցված սալաձև խաչարձանը՝ ճակատով դեպի արևմուտք ուղղված: Խ. ժամանակագր. առումով հաջորդել է *խաչով* ավարտվող քառակող վաղ միջնադարյան կոթողներին և թևավոր խաչերին, որոնց ճնշող մեծամասնությունը ոչնչացվել է արաբ. արշավանքների ժամանակ: Արձանագրություններում կոչվել է խաչ կամ սուրբ նշան, XIX դ-ից՝ խաչարձան կամ Խ.: Բովանդակում է քրիստ. հիմն. գաղափարը՝ Հիսուս Քրիստոսի փրկագործությունը: Գլխ. տարրը խաչն է՝ իբրև խաչեցյալի (Քրիստոսի), *կենաց ծառի*, խոստացված երկնային հոգևոր դրախտի ու փրկության խորհուրդ, և որպես պաշտամունքային առարկա հայերի համար փոխարինել է սրբապատկերին: IV–V դդ-ից սկսած Խ. կանգնեցվել է առանձին՝ իբրև կոթող, կամ ագուցվել եկեղեցու որմի մեջ՝ որպես ճարտ. զարդ: Կանգնեցվել են ռազմ. հաղթանակներն ու պատմ. կարևոր դեպքերը հավերժացնելու (սելջուկյան թուրքերի դեմ ամիրսպասալար Զաքարե Բ Մեծի հաղթանակին նվիրված 1175-ի և 1202-ի Խ-երը), տաճարներ, եկեղեցիներ, աղբյուրներ, կամուրջներ և այլ շին. աշխատանքներ նշանավորելու (Սանահինի կամրջի կառուցմանը նվիրված՝ Վանենի թագուհու 1192-ի, Մարտիրոս գ-ի հիմնադրման առթիվ Շնորհավոր վարպետի 1282-ի և այլ Խ-եր), վանքերին խոշոր նվիրատվություններ շնորհելու և այլ առիթներով: Ծառայել են նաև գերեզմանոցներում որպես տապանաքարեր, հանգուցյալի հոգու փրկության համար (Նորատուսի, Սաղմոսավանքի, Հին Ջուղայի գերեզմանատների Խ-եր): Պաշտամունքային հոգևոր նշանակությամբ հանդերձ Խ-երն իրենց արձանագրություններով եղել են պատմ. հուշարձաններ՝ բովանդակելով երկրի ներքին և արտաքին կյանքին վերաբերող կարևոր տեղեկություններ, որոնք չեն արտացոլվել պատմիչների մոտ: Որպես հուշարձաններ դրվելով եկեղեցիների մուտքերի մոտ, դավիթներում, ճամփաբաժաններում, գերեզմանոցներում, բլուրների վրա, ագուցվելով կամ փորագրվելով տաճարների պատերին ու ապառաժներին՝ ընկալվել են իբրև Հավատո հանգանակ: Դրանց զգալի մասը պատվիրատուի անվան կողքին կամ առանձին կրել է պատրաստող վարպետի անունը. հիշարժան են Մխիթար Կազմողը (XII դ.), *Մոմիկը*, Պողոսը (XIII դ.), *Քիրամ Կազմողը* և ուրիշներ:

X–XIII դդ. ձևավորվել և ոճական առումով կատարելության են հասել խաչքարային արվեստի բոլոր հիմն. տեսակները. ա. միակտուր քարերից կերտված Խ-եր, որոնք ստորին պոչուկով ամրացվել են գետնին. դրանք ուղղանկյունաձև են և կամարաձև, բ. միակտուր քարերից կերտված Խ-եր, որոնք հատուկ պոչուկով ամրացվել են խորանարդաձև պատվանդանի վրա, գ. փորված կամ ագուցված Խ-եր՝ եկեղեցիների պատերի և ժայռազանգվածների վրա, դ. Խ-եր աստիճանաձև պատվանդանի վրա, ե. որմնափակ Խ-եր, երբ խաչարձանը առնվել է տանիքավոր կառույցում, զ. XI–XII դդ-ից առաջացել են քիվավոր Խ-եր (երբեմն քիվը պատրաստվել է առանձին քարից և երկաթե դամերով ամրացվել Խ-ին), է. XII դ-ից՝ խմբական Խ-եր, դրվել են մի պատվանդանի վրա կամ հետագայում ավելացվել (տոհմական դամբարան):

Մեզ հասած ամենավաղ շրջանի թվագրված առաջին Խ-երը (879-ին Կատրանիդե թագուհու՝ Գառնիում կանգնեցրած, 881-ին՝ Մեծ Մազրայում Գրիգոր Ատրներսեհ իշխանի, 964-ին՝ Տեկորի և IX–X դդ.՝ մի քանի պարզագույն անթվակիր) արդեն բովանդակում են Խ-ի հիմն. գեղ. սիմվոլիկ տարրերը՝ խաչը վերևում զարդարվել է խաղողի ողկույզներով, ստորին մասում՝ ականթատերևներով (անտիկ ականթազարդը ծառայել է իբրև արմավազարդ): Խաչը նշանակել է երկրպագել Խաչեցյալին, այսինքն՝ նրան, ով խաչ բարձրացավ, մեզ հայտնի իր բոլոր անուններով (Կենաց որթ, Կենաց ծառ, Խոստացված երանություն, Հոգևոր դրախտ, որ հաճախ հառնում էր երկրային դրախտի վրա. ականթազարդերը նշանակում են արդարներ. վարդյակը, որը գրավում էր Ադամի գանգի տեղը՝ խաչի տակ, նշանակում է երկրային դրախտ): Խաչն իր ձևով քանիցս նմանեցվում է մետաղե խաչի՝ իր փորվածքներով և թևերի ծայրերի գնդիկներով (ոսկե կամ արծաթե խաչի ակնեղենի տեղերը):

խաչի վերևում հաճախ պատկերվող խաղողի ողկույզները (հետագայում դառնալով անճանաչելի զարդ) ևս Քրիստոսին են ակնարկում՝ իբրև կենդանի որթ: XI դ-ից պահպանվել են խաչաձև փորագրված կոթողներ (Եղեգնաձոր, Աղավնաձոր՝ 1101 և 1199), որոնք բովանդակում են գծով փորագրված ծաղկած խաչը, որի թևերն ավարտվում են խաղողի տերևներով ու ողկույզներով, իսկ ինքը՝ խաչը, իբրև ծաղկած որթ, կանգնած է եկեղեցու վրա (խաչը եկեղեցով է ծաղկում, որը խորհրդանշում է Մարիամ Աստվածածնին): Խ. խորհրդանշում է նաև սուրբ *խորանը*, ուստի հաճախ է շրջանակվել կամարաձև կամ ուղղանկյուն եզրագոտիով: Հատկանշական է *Ցաղաց քար վանքի* XI դ. Խ., որտեղ խաչը ներդրված է երկու սյուների և դրանց վրա հանգչող կամարի ներսում և հիշեցնում է X–XI դդ. մի շարք Ավետարաններում խորաններն ավարտող խաչի պատկերներ. այդտեղ խաչը հառնում է զիկկուռատ հիշեցնող պատվանդանի վրա՝ իբրև Տիրոջ գերեզման կամ Ադամի դանդի տեղ: Վերջինս հատկապես ցայտուն է արտահայտված Հաղպատի 1004-ի և XII դ. երկու Խ-երից մեկի վրա (մյուսի վրա՝ խաչի վերևում, ինչպես խորանների կամարներին, ավելանում է զույգ թռչունների մոտիվը՝ խորհրդանշելով հրեշտակներին):

Միջնադարում սովորություն է եղել Խ-երը ներկել երբեմն կարմիր գույնով, ավելի հազվադեպ՝ սպիտակ և կապտավուն (կարմիրը խորհրդանշել է և՛ արքայական, և՛ Քրիստոսի արյան գույնը): Խաչարվեստը հետագայում զարգացել է երկու ուղղությամբ՝ գրաֆիկական, երբ զարդերը վերափոխվել են՝ անճանաչելիորեն մթագնելով մոտիվը, և դեղանկարչական (հատկապես գունավոր տուֆի վրա), երբ զարդերի սահմանները կորցրել են իրենց հստակությունը, և ցերեկային լույսի տակ Խ-ի մակերեսին լուսաստվերն ու գույնը ավելի մեծ նշանակություն են ստացել:

Խ-երի մի տեսակը կոչվում է «Ամենափրկիչ», որոնց մի մասի վրա պատկերագր. երկու՝ հարուստ և պարզ տարբերակներով պատկերված է Քրիստոսի խաչելությունը: Ըստ արձանագրությունների՝ կան «Ամենափրկիչ» Խ-եր, որոնց վրա քանդակված է միայն խաչը (1161, 1215, Սանահին, 1265, Վանեվան): Ինչպես աներևակայելիորեն բազմազան է Խ-երի զարդարվեստը (ոչ այնքան մոտիվներով, որքան դրանց բազմապիսի ու հնարամիտ համակցություններով, հյուսվածքներով և հանգույցներով), որը հաճախ կապված է մանրանկարչության և եկեղեց. ոսկերչական զարդարվեստի հետ, գրեթե նույնքան հարուստ են նրանց հետ կապված ժող. հավատալիքներն ու լեգենդները, որոնք խաչքարային արվեստին մոգական հմայք են տալիս. եղել են սիրահար զույգերին չար աչքից անխոցելի դարձնող «Ս. Սարգիս» անունով Խ-եր, բնության տարերքը սանձահարող «Ցասման խաչեր», որոնց զոհաբերել են կենդանիներ:

XII դ-ից թե՛ մանրանկարչության, թե՛ հատկապես խաչքարային ու ճարտ. զարդարվեստում տարածվել են հյուսածո բազմապիսի մոտիվներ. խաչի վրա ավելացել է քիվ, որը կազմել է զարդային առանձին մոտիվ՝ նման պտուղներ ճյուղերի հետ (նուռը հավանաբար խորհրդանշել է նախահայրեր Աբրահամին, Իսահակին, Հակոբին՝ ի նմանություն Քրիստոսի), երբեմն էլ քիվի զարդամոտիվը ոճական հակադրություն կազմելով տարբերվել է բուն ծաղկող խաչի մշակումից: Զարդացել է զարդային հենքի (տեքստուրա) բազմապիսի ու բազմամակարդակ (մի քանի խորությամբ) մշակումը. խաչն իր շրջակայով նմանվել է ասեղնագործ ժանյակի, և քարը կորցրել է իր նյութականությունը (վերջինս զգալի է XII–XIII դդ. Խ-երում): Բազմապիսի և նուրբ ճարտ. լուծումներ են ստացել պատվանդանները, ինչպես Մխիթար Կազմողի 1184-ին Սանահինի վանահայր *Գրիգոր Տուտեորդուն* նվիրած խաչարձանը՝ դրված մոնումենտալ կրկնակի պատվանդանի վրա: Պատվանդաններից ստորինն ունի կամարակապ ելուստներ՝ պսակված «սելջուկյան շղթայով» զարդարված քիվով, իսկ այդ ելուստների միջև աստիճաններ են: Երկրորդ հարկի (վերևի) պատվանդանը խաչապատկերներով և մեջտեղի կամարամեջի վարդյակով, նաև հզոր շթաքարային քիվով ավելի հարթ դեկորատիվ հորինվածքների է վերածված: Իսկ սրանց վրա կանգնեցված խաչերը հագեցած են հյուսածո զարդերով, որոնք չեչտում են ծաղկած խաչի կերպարը:

Նոր Գետիկի (տես *Գոշավանք*) Ս. Գրիգոր եկեղեցու մոտ 1237-ին կանգնեցված՝ վարպետ Պողոսի 1291-ի Խ-ի (նույն վարպետի մյուս Խ. ՀՊՊԹ-ում է) յուրահատկությունը ցանցկեն մշակումն է, որն ապանյութականացրել է կարծր քարը՝ դարձնելով այն կավի նման հնազանդ:

Հատկանշական են այն խ-երը, որոնք ունեն սյուժետային և սրբապատկերային տարրեր: Դրանք են «Խաչելություն» («Ամենափրկիչ» խ-երի վրա), «Դեհիսուս» («Բարեխոսություն»՝ մեջտեղում՝ Հիսուսի, նրա աջ ու ձախ կողմերում Մարիամի ու Հովհաննես Մկրտչի պատկերներով, սովորաբար քիվի վրա կամ խ-ի վերնամասում), «Համբարձում», սուրբ ձիավորներ, կտիտորներ, «Ծննունդ» ևն: XIII դ-ից տարածում են ստացել ֆիգուրատիվ տարրեր ունեցող խ-երը: Այսօրինակ խ-երի գլուխգործոցներ ստեղծվել են Եղեգնաձորում՝ կապված Պռոշ իշխանի (XIII դ.) և Մոմիկի անունների հետ: Պռոշ իշխանի խաչարձանի բեկորի վրա՝ օղակաձև հյուսվածքազարդի ֆոնին ֆրիզաձև պատկերված է «Բարեխոսությունը»՝ կենտրոնում՝ բազմած Քրիստոսը, կողքերին՝ Մարիամ Աստվածածինը և Հովհաննես Մկրտիչը, աջ և ձախ մասերում՝ հրեշտակներ ու մեկական առաքյալ (աջ կողմինը կորած է): Ֆրիզի վերևում և ներքևում ժապավենաձև խոր փորագրված տառեր են: Խ-ի այդ բեկորի հարթաքանդակը կերպարների և ձևերի վայելչությամբ, գծային ռիթմի նրբությամբ ու հարստությամբ մոտ է 1300-ի փայտակերտ խոտակերաց Ս. Նշանին (Էջմիածին), որը արվել է Պռոշ իշխանի որդի Էաչիի պատվերով: 1273-ին Հաղպատում Հովհաննես եպիսկոպոսի կանգնեցրած, Արարատի Ջղին գյուղից Էջմիածին բերված Մամիկոն Համազասպյան-Մամիկոնյան իշխանի (1279, վարպետ՝ Վարհամ), Սևանի «Ամենափրկիչ» խ-երը առաջին հերթին հատկանշական են «Խաչելության» լիակատար տեսարանով՝ Հիսուսը խաչի վրա պատկերված է մերկ, ձախ և աջ՝ խաչի հորիզոնական թևերի տակ Մարիամ Աստվածածինն է և Հովհաննես առաքյալը, խաչի պատվանդանի կողքերին՝ Հովսեփ Արիմաթացին և Հիսուսի ոտքից գամը հանող Նիկոդեմոսը: Հաղպատում «Խաչելությունը» համալրված է ուղղահայաց եզրագոտում 6-ական առաքյալների պատկերներով, իսկ խաչի հորիզոնական թևերի վերևում «Սայ է թագաւոր Հրէից» մակագրության տախտակի երկու կողմում պատկերված են արևը և լուսինը, երկու քառաթև հրեշտակներ և ձեռքերը մեկնած սրբեր (ավետարանիչներ, քանի որ վերոհիշյալ Ջղին գյուղի 1279-ի խ-ի վրա նույն տեղում արևը և լուսինը դրված են արծվի և ցուլի պատկերների վրա, որոնք խորհրդանշում են Հովհաննես և Ղուկաս ավետարանիչներին), իսկ վերևում՝ ֆրիզի վրա, արձանագրություն կրող քիվի տակ ներկայացված է Հիսուսը փառքի մեջ (Հիսուսը գրեթե բոլորաձև փառապսակում, որ բռնել են երկու հրեշտակներ, իսկ աջում և ձախում կանգնած են ևս երկու հրեշտակներ): Եթե մինչև XIII դ. խ-ի հիմնական՝ խաչի մոտիվը շրջապատված է եղել զարդանախշերով, ապա XIII–XVII դդ. զարդերին զուգահեռ, բացի «Խաչելության» և «Դեհիսուսի» մոտիվներից խաչից ներքև ավելացել է սուրբ ձիավորի մոտիվը: Այդպիսիներից են 1231-ի խ. (Էջմիածին, բերվել է Իմիրզեկից), 1279-ի խ. (պատկերում է խորանաձև պատվանդանի վրա հեծյալ Մամիկոն իշխանի որսը), XIV դ. խ. (Էջմիածին, բերվել է Ղարաբաղից, եզրագոտում ս. ձիավորներ են): Խ-ի վրա «Դեհիսուսի» պատկերի կողքերին ավելացել են պատվիրատուների քանդակները: Սևանի XVI–XVII դդ. «Ամենափրկիչ» խ-ում «Խաչելության» պատկերի շուրջը, ուղղանկյուններով բաժանված եզրագոտում տրված է «Ծննդյան» պատկերը՝ Աստվածամոր և մանկան, մսուրի, կենդանիների, երեք մոգերի, երեք հովիվների, իսկ խաչից ցած ներկայացված է «Դժոխքի ավերումը» (Քրիստոսն ազատում է Ադամին՝ Մարդուն):

Խ-ի արվեստը վերացական խորհրդանշանային արվեստ է՝ ամբողջությամբ տոգորված փրկության խորհրդով: Այն իր բանաձևերով երբեք դուրս չի եկել աստվածաբանության գլխ. խորհուրդներից և ունի զուտ աստվածաբան. պաշտամունքային դեր և նպատակ:

Խ-ի արվեստը վերականգնվել է վերջին տասնամյակներում: Մեր օրերում բազմաթիվ քարգործ վարպետներ և քանդակագործներ շարունակում են խ-եր կերտելու դարերով մշակված ավանդույթները:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.5, 4-րդ և 7.6, 1–5-րդ պատկերները:

Գրկ. Հովսեփյան Գ., Հավուց թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, տես Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Ե., 1987: Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Ազարյան Լ., Հայկական խաչքարեր, Էջմիածին, 1973: Շահինյան Ա., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX–XIII դդ. խաչքարերը, Ե., 1984: *Якобсон А. Л., Армянские хачкары, Е., 1986;* Azarian L., Manoukian A., Khatchkar, Milano, 1977 (Documenti di architettura armena, 2).

Վիգեն Ղազարյան

ԽԱՌԱԲԱՍՏԱՎԱՆՔ, տես *Արծվաբերի Ս. Աստվածածին վանք*:

ԽԾԿՈՆՔԻ ՎԱՆՔ, Խծկունք, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում, Կարս քաղաքից հարավ-արևելք, Խծկոնից (կամ Տեկորի) գետակի ապառաժոտ ձորափին (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Հիմնադրվել է X դ.: Կազմված էր հինգ եկեղեցիներից, որոնցից Ս. Կարապետը, Ս. Սարգիսը, Ս. Աստվածածինը և Ս. Ստեփանոսը կառուցված էին միմյանց մոտ, իսկ Ս. Լուսավորիչը գտնվել է դրանցից 100 մ արլ.: Խ. վ-ի համալիրը ճարտ-յան և բնաշխարհի ներդաշնակման կատարյալ օրինակներից է: Վանքի ամենահին՝ Ս. Կարապետ եկեղեցին (X դ.) ունեցել է քառախորան, չորս ավանդատներով կենտրոնագմբեթ հորինվածք: Նրա արմ. մուտքի վերնաշեմին 1001-ին փորագրված են եղել սաղմոսից խոսքեր. «Այս դուռն Տեառն է և արդարք մտանեն ընդ սա»: Ս. Սարգիս եկեղեցին, ըստ Սամուել Անեցի պատմիչի (XII դ.) հիշատակության, 1027-ին կառուցել է իշխան Վեստ Սարգիսը: Ներքուստ՝ քառախորան, չորս ավանդատներով, արտաքուստ 20-նիստանի կենտրոնագմբեթ կառույց է՝ 12-նիստանի թմբուկով և հովանոցաձև վեղարով: Արտաքին ճակատները զարդարված են կամարաշարով: Եկեղեցին իր խոշոր չափերով, ուղղաձիգ հորինվածքով, արտաքին հարուստ հարդարանքով Խ. վ-ի համալիրի գերիշխող կառույցն էր: Եկեղեցու հս. կողմում եղել է խաչքար-կոթող՝ 1031-ի և 1216-ի արձանագրություններով (հիշատակվել է Զաքարե սպասալարի որդի Շահնշահի կողմից վանքը նորոգելու փաստը): Համալիրի մնացած երեք եկեղեցիները՝ Ս. Ստեփանոսը, Ս. Աստվածածինը և Ս. Լուսավորիչը (XI դ.), ունեցել են նույն հորինվածքը՝ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչաձև գմբեթավոր դահլիճներ: 1153-ին վանքը նորոգվել է: Ս. Ստեփանոս եկեղեցին շրջապատված է եղել Կեչրորի ճակատամարտում (1208) նահատակվածների գերեզմաններով: 1222-ին նրանց նվիրված խաչքարկոթող է կանգնեցվել վանքի բակում: Ս. Աստվածածին եկեղեցին արմ-ից ունեցել է թաղածածկ գավիթ: Ս. Լուսավորիչ եկեղեցին եղել է պարսպապատ: 1211-ին իշխան Զաքարե Բ Մեծը, վանքը սելջուկներից ազատագրելուց հետո, Խ.վ-ին նվիրել է դյուղ, Բագարանում՝ այգի: 1220–30-ական թթ. վանքը ստացել է բազմաթիվ նվիրատվություններ (տներ, Անիում՝ ձիթհանք, այգիներ ևն):

1860-ին Կարսի թեմի առաջնորդ Տիմոթեոս եպս. Սափրիչյանը նորոգել է Ս. Սարգիս եկեղեցու՝ քրդերի քանդած պատը: 1878-ին, ռուս. բանակի զորավար Հ. Լազարյանի աջակցությամբ Հարությունն վրդ. Մանուկյանը նորոգել է վանքը: 1892–93-ին համալիրի արմ. կողմում միաբանների և ուխտավորների համար պատշգամբով շենք է կառուցվել: Վանքը եղել է նշանավոր ուխտատեղի՝ հռչակված նաև հանքային բուժիչ ջրերի աղբյուրներով: 1918-ին Խ. վ. լքվել և ամայացել է: 1962-ին թուրք. իշխանությունները պայթեցրել են վանքի եկեղեցիները: Համալիրից մնացել է միայն Ս. Սարգիս կիսավեր եկեղեցին:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.7, 1-ին պատկերը:

Գրկ. Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., Վաղ-պատ, 1893: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, Ե., 1942: Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., L'architettura della scuola regionali di Ani nell'Armenia medievale, Roma, 1977.

Մուրադ Հասրաթյան

ԽՆԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ԽՈՍԲՈՎ ԱՆՃԵՎԱՑԻ (ծ. թ. անհտ – մոտ 964), մատենագիր, մեկնիչ: *Գրիգոր Նարեկացու* հայրը: Կնոջ վախճանվելուց հետո Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը 940-ական թթ. Խ. Ա-ուն ձեռնադրել է Վասպուրականի Անձևացիք գավառի եպիսկոպոս (կաթողիկոսը նրան անվանել է «այր համեստ և գիտնավոր»): Որդիներին՝ Հովհաննեսին և Գրիգորին, Խ. Ա. հանձնել է Նարեկավանք՝ *Անանիա Նարեկացու* մոտ կրոնավորելու: Ենթադրվում է, որ միջնեկ որդին՝ Սահակն է առաջին անգամ ընդօրինակել հոր «Պատարագի մեկնութիւն» գիրքը: Ծեր հասակում Խ. Ա. մեղադրվել է Հայ եկեղեցու կարգերի մեջ նորաձևություններ մտցնելու և աղանդավորությանը (հավանաբար՝ թոնդրակյաններին) հարելու մեջ, ինչի համար Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը բանադրել է նրան (954): «Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնցեւացւոց եպիսկոպոսն» թղթում («Արարատ», 1897, № 6) կաթողիկոսը Խ. Ա-ուն դատապարտել է հերձվածողության համար և չեշտել, որ նա ավելորդ է

ԽՈՍՐՈՎ. համարել խաչի օրհնությունը, հրեշտակներին պաշտելը, չի ընդունել նվիրապետ. կարգը, կաթողիկոսների, եպիսկոպոսների մեծարումը ևն:

Խ. Ա-ուց մեզ է հասել երկու մեկնություն: Նա 950-ական թթ. գրել է Հայ եկեղեցու Պատարագի մեկնությունը: Իր թելադրանքով որդին՝ Հովհաննեսը, 950-ին մեկնել է Աղոթամատույցը: Հայ եկեղեցու ժամակարգության մեկնությանը նվիրված աշխատության մեջ («Մեկնութիւն ժամակարգութեան») հեղինակը ժամագրքի քարոզները, օրհնությունները, աղոթքներն ու մաղթանքները բացատրել է հատված առ հատված՝ դրանց իմաստը լուսաբանելով: Այդ մեկնությունները կարևոր են նաև պատմ. տեսակետից, որովհետև առատ տեղեկություններ են պարունակում X դ. եկեղեց. ծիսական գրքերի հորինվածքի վերաբերյալ:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.7, 2-րդ պատկերը:

Երկ. Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագիւղ (ԿՊ), 1840: Մեկնութիւն աղօթից պատարագին, Վնտ., 1869:

Գրկ. Տեր-Մկրտչյան Գ., Հայկականք, Վաղապատ, 1894: Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932, էջ 535–537:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ, սուրբ Խոսրովիդուխտ կույս (ծ. և մ. թթ. անհտ), III դարի վերջի – IV դարի սկզբի սրբուհի, ճգնակյաց, Հայոց թագավոր Խոսրով Ա Մեծի դուստրը և *Տրդատ* Գ Մեծի քույրը:

Խոսրով Ա Մեծի սպանությունից (259) հետո հայ նախարար Օտա Ամատունին ստանձնել է Խ-ի խնամակալությունը՝ մինչև Տրդատ Գ Մեծի գահակալությունը: Վաղարշապատում, արքունիքում Խ. ապրել է կուսական կյանքով: Տեսնելով *Գրիգոր Ա Լուսավորչի* չարչարանքներն ու լսելով նրա քարոզները՝ աստվածային ներգործությամբ ընդունել է քրիստոնեությունը: Այնուհետև, Գրիգոր Լուսավորչին խոր վիրապ նետելուց և *Հռիփսիմյանց կույսերին* նահատակելուց հետո, երբ անապաշխար Տրդատ արքան պատուհասվել է՝ խոզակերպ դառնալով, արքայաքույր Խ-ին, ըստ ավանդության, երկնառաք տեսիլքով (այլ տարբերակում՝ հինգ անգամ կրկնված երազով) հայտնվել է, որ արքային կարող է բժշկել միայն խոր վիրապ նետված Գրիգորը: Ի զարմանս ամենքի, օձերով և կարիճներով լեցուն խոր վիրապից ողջ են դուրս բերել Գրիգորին, որն էլ բժշկել է թագավորին և դիվահար մյուս հիվանդներին: Հռիփսիմյանց կույսերի մարմինները վկայարաններում ամփոփվել են Գրիգոր Ա Լուսավորչի ձեռքով. ապաշխարած արքան անձամբ է փորել կույսերի գերեզմանները, իսկ *Աշխեն* թագուհին ու Խ. թանկագին զոգնոցներով դուրս են կրել հողը:

Խ., իր արքա եղբոր և Աշխեն թագուհու հետ, Եփրատի ակունքների մոտ, դիմավորել է Կեսարիայից որպես Հայոց քահանայապետ վերադարձող Գրիգոր Ա Լուսավորչին, որն էլ նրանց Եփրատի ակունքներում մկրտել է 301-ին կամ 302-ին: Այս արարողությունը պատկերավոր նկարագրել է *Ագաթանգեղոսը*. «...երանելի Գրիգորը առավ աշխարհաբանակ զորքը և իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին և բանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսանալուն պես, Եփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց առհասարակ ամենքին հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու» («Հայոց պատմություն», 1983, էջ 465):

Խ. կյանքի վերջին տարիները, ակներևաբար, անցկացրել է Գառնիի ամրոցում:

Հայ եկեղեցին ս. Խ-ի հիշատակը նշում է Տրդատ Գ թագավորի և Աշխեն թագուհու հիշատակի հետ միասին՝ Հոգեգալուստին հաջորդող 5-րդ կիրակին կանխող շաբաթ օրը:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.7, 3-րդ պատկերը:

Գրկ. Սուրբերու կեանքը, 3 հրտ., Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք [կազմ. Ռ. Մաթևոսյան], Ս.Էջմիածին, 1999:

Լևոն Սարգսյան

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ (ծ. և մ. թթ. անհտ), VIII դարի երաժիշտ, Գողթնի իշխան *Վահան Գողթնացու* քույրը: Ըստ ավանդության, եղբոր նահատակության առթիվ (737) հորինել է «Զարմանալի է ինձ» դովքը, որը Հայ եկեղեցին կանոնացրել է և ներմուծել *Շարակնոցի* մեջ: Գովքն աչքի է ընկնում գեղ. բարձր արժանիքներով և մի շարք առանձնահատկություններով, որոնք կրում են ժամանակի աշխարհիկ մասնագիտացված երգարվեստի կնիքը: Ի տարբերություն նախորդ շրջանի սաղմոսատիպ փոքրածավալ կցուրդների, Խ-ի ներբողն առաջին նմուշներից է հայ հոգևոր երգարվեստում, որտեղ առկա է յուրահատուկ երաժշտական ձևը, մեղեդու անկաշկանդ և ծավալուն զարգացումը:

Գրկ. Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց հայոց, հ. 2, Վնտ., 1922, էջ 115–178: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5–15-րդ դարերում, Ե., 1985, էջ 192–196:

Աննա Արևշատյան

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ, Խոսրովիկ Հռետոր (ծ. և մ. թթ. անհտ), VIII դարի առաջին կեսի մատենագիր, դավանաբան: *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսի գլխավորությամբ մասնակցել է *Մանազկերտի եկեղեցական ժողովին* (726): Խ. Թ-ի մատենագր. հիմնական ժառանգությունն են կազմում թվով 5 թղթեր, որոնք իրենց բովանդակությամբ մեկ ամբողջություն են՝ նվիրված դավանաբան. և ծիսական նույն խնդիրներին, և սերտորեն առնչվում են Մանազկերտի ժողովի հետ: Դավանաբան. վեճ մղելով Հայ եկեղեցու դաղափարական հակառակորդների դեմ՝ հեղինակը քննադատել և մերժել է *քաղկեդոնականությունը* և ասորական եկեղեցու երկու ծայրահեղ՝ սևերյան և հուլիանոսական հերձվածները (տես *Անապականություն*), հանդես եկել որպես Հայ եկեղեցու դավանության ու ծեսերի ջատագով: Առաջին թուղթն ուղղված է քաղկեդոնականության դեմ: Աստվածաբան. համակողմանի վերլուծումով հեղինակը վեր է հանել քաղկեդոն. դավանության էությունը և հաստատել Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը: Խ. Թ. հերքել է նաև իր օրերի մի նորաթուխ տեսություն, համաձայն որի, բնության միավորումը իրականացվում է առանց դեմքի և անձնավորության:

Երկրորդ և երրորդ թղթերը, որոնք բովանդակությամբ համերաշխվում են Հովհաննես Գ Օձնեցու «Ընդդեմ երևութականաց» ճառին, Հուլիանոս Հալիկառնասցու հետևորդների վարդապետության աստվածաբան. հերքումն են: Խ. Թ. ժխտել է *հուլիանոսականների* ուսմունքը, որի համաձայն, Աստծո Բանը մարմնացել է ոչ թե մարդու մեղանչական, մահկանացու, այլ՝ Ադամի նախամեղանչական, անապական բնությունից: Պաշտպանել և հիմնավորել է քրիստոսաբանական այն մեկնակետը, որ մարդեղացումը կատարվել է ոչ թե Բանի և մարմնի սոսկական նույնացմամբ («ըստ բնության մի բնություն», որ է՝ Բանի և մարմնի համադրություն), այլ՝ «ըստ անճառ միավորության»: Ի հակակշիռ հուլիանական «ըստ բնության անչարչարելի և անմահ» տեսակետի, ինչպես նաև այն պնդման, թե տնօրինությամբ Քրիստոսի մարմինն անհաղորդ է մարդկային կրքերին, նա վավերացրել է Հայ եկեղեցու վարդապետ. այն սկզբունքը, համաձայն որի, Տերունական մարմինը բնությամբ չարչարելի է, մահկանացու և լիովին հաղորդակից մեղքից զերծ մարդկային կրքերին, իսկ միավորված Բանով՝ Աստվածությամբ, անմեղ, անչարչարելի և անմահ է:

Զորրորդ թուղթն ուղղված է Անտիոքի Աթանաս պատրիարքին (724–740), որով Խ. Թ. իրազեկ է պահում պատրիարքի ուղարկած եպիսկոպոսներից մեկի՝ Թեոդորոսի դաղափարներում Սևերոս Անտիոքացու վարդապետության առկայության մասին: Խ. Թ. բացահայտել է Թեոդորոսի դավանած դաղափարների հակասականությունը (Թեոդորոսն ընդունում է ս. Կույսի մեջ Աստծո Բանի միավորումը մարմնին, ուստի և մեկ միավորյալ բնություն ունենալը, միաժամանակ պնդում Քրիստոսի բնության երկփեղկվածությունը, այսինքն՝ մինչ Հարությունը ապականված, Հարությունից հետո՝ փառավորյալ և անապական):

Հինգերորդ թղթում Խ. Թ. անդրադարձել է Սևերոս Անտիոքացու և Հուլիանոս Հալիկառնասցու հերձվածների առաջացմանը, բնորոշել դրանց տեսական առանձնահատկությունները: Այստեղ հեղինակը բերել է Հայ եկեղեցու պատմության համար կարևոր մի մանրամասն, ըստ որի, ասորական եկեղեցու այդ երկու հակամարտ կողմերը ձգտել են միավորվել ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ, այսինքն՝ միանալ Հայ եկեղեցուն: Հայ և Ասորի եկեղեցիների հարաբերության մասին խոսող այս փաստը յուրովի լրացվում է *Պողոս Տարոնեցու* հաղորդած այն տեղեկությամբ, որ «ասորիների մի մասը Լուսավորչի անունով Գրիգորիկ է կոչվում»: Խ. Թ-ից պահպանվել է նաև մի փոքրածավալ երկ, որը պատասխան է Անտիոքի հայրապետներից մեկի հարցումներին՝ կապված Ծննդյան տոնի կատարման հետ:

Գրկ. Տաշյան Հ., Խոսրովիկ Թարգմանիչ..., տես նրա Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հ. 1, Վնն., 1895: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ (Ը դ.), Վաղ-պատ, 1899: Ակինյան Ն., Խոսրովիկ Թարգմանիչ և իւր երկասիրութիւնները, ՀԱ, 1904, 1905: Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորվոց եկեղեցիների հետ, Վաղ-պատ, 1908:

Պողոս Խաչատրյան
Հակոբ Քյոսեյան

ԽՈՏԱԿԵՐԱՑ ՎԱՆՔ, Քարկոփի վանք, ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղի մոտ, բարձրադիր վայրում: Ըստ պատմիչ Ստեփա-

նոս արք. Օրբելյանի, IX դ. վերջին Սյունյաց Աշոտ իշխանը Հովհաննես եպիսկոպոսի հորդորով հիմնովին վերակառուցել է Խ. վ-ի եկեղեցին (որը Հայտնի էր իր հռչակավոր Խոտակերաց Սուրբ Նշանով), վերահաստատել վանքը, այնտեղ հավաքել շրջակայքի բուսակեր («խոտակեր») ճգնավորներին և Խ. վ-ին որպես կալվածք նվիրել Արաստամուղ գ.: XI դ. սկզբին Աշոտ իշխանը մահացել է, սաստիկ երկրաշարժից քանդվել է Խ. վ-ի եկեղեցին, և Աշոտի այրին՝ Շուշան իշխանուհին, ամուսնու հիշատակին 910-ին վերստին կառուցել է վանքի եկեղեցին՝ արմից կից թաղածածկ գավթով: Աստվածածնին նվիրված եկեղեցու օծմանը ներկա է եղել կաթողիկոս *Հովհաննես Ե Դրասխանակերտցին*: Կոպտատաշ բազալտով կառուցված եկեղեցին (այժմ՝ կիսավեր) ունի ներսից խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն գմբեթավոր հորինվածք, որը Սյունիքի ճարտարապետների ավանդն է հայկ. եկեղեցիների այս տիպի ստեղծման գործում: XIII դ. կեսին Խ. վ. նորոգել է Սյունյաց Իշխանաց իշխան Սմբատը: 1300-ին իշխան Էաչի Պռոշյանը Խոտակերաց Սուրբ Նշանի համար պատրաստել է տվել արծաթե բարձրարվեստ և նրբաճաշակ դրվագումով պահարան: Երեսին, վերևում, քանդակված են քառակերպներով շրջապատված, դահին նստած Քրիստոսը և նրա երկու կողմերում՝ հրեշտակներ: Դռնակների վրա, աջից պատկերված է Գրիգոր Լուսավորիչը, ձախից՝ Հովհաննես Մկրտիչը, իսկ կողքերին՝ Աստվածածինը և Հովհաննես ավետարանիչը: Ներսում քանդակված են՝ ձախից Պողոս և աջից՝ Պետրոս առաքյալները, կենտրոնում՝ Էաչի Պռոշյանի կիսանդրին: Դռնակների ներսերեսին պատկերված են՝ աջից Գաբրիել, ձախից՝ Միքայել հրեշտակապետները: Թանկարժեք քարերով զարդարված խաչի ոսկեզօծ դաշտը ծածկված է արմավենիների նրբագեղ քանդակներով: Խոտակերաց Սուրբ Նշանի պահարանը հայկ. միջնադարյան կիրառական արվեստի գլուխգործոցներից է (այժմ գտնվում է Էջմիածնում):

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.7, 4-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Վաղ-պատ, 1928: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967:

Մուրադ Հասրաթյան

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔ, Խորվիրապ, Վիրապ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ոստան գավառում, Արաքս գետի ձախ կողմում, պատմական Արտաշատ քաղաքի բլուրներից մեկի արևելյան լանջին՝ միջնաբերդի տեղում: Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի Լուսառատ գյուղից հվ-արմ.: Հայոց նվիրական սրբավայրերից, հանրահայտ ուխտատեղի: Խ. վ. վ-ի պատմությունը սերտորեն առնչվում է Հայոց դարձի, քրիստ. Հայաստանի կրոն., կրթ. ու մշակութ. զարգացման ողջ ընթացքի հետ:

Ագաթանգեղոսը վկայում է, որ *Տրդատ Գ* Մեծը Հայաստանում քրիստոնյաներին հալածելիս *Գրիգոր Ա Լուսավորչին* տևական տանջանքներից հետո նետել է Արտաշատի արքունի բանտի՝ մահվան դատապարտվածների գուբը, որը հայտնի էր «Վիրապ Արտաշատու» անվամբ: Թունավոր զեռունների հարևանությամբ, վիրապում Գրիգոր Լուսավորիչը մնացել է գրեթե 14 տարի: Նրան կերակրել է մի այրի կին՝ ամեն օր գաղտնի մի նկանակ նետելով խոր վիհի մեջ: Գրիգոր Լուսավորիչը ազատվել է վիրապից *Հռիփսիմյանց կույսերի* նահատակումից 9 օր անց: Ամեն տարի հունիսին նշվում է Հայ առաքելական եկեղեցու նշանավոր տոներից մեկը՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապեն», իսկ մարտին նշվում է «Ս. Գրիգոր Լուսավորչի մուտն ի Վիրապ»:

V դ. վիրապի վրա վանք է հիմնադրվել ու միաբանություն հաստատվել: Մոտ 642-ին *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսը վիրապի վրա կառուցել է Ս. Գևորգ եկեղեցին: Այն, ըստ Ս. Մնացականյանի, X դ. արաբ պատմիչ Ալ Մուկադդասիի նկարագրած եկեղեցին է (սպիտակ կրաքարից, ներսում ութ սյուներով, բոլորաձև կենտրոնակազմ կառույց, ծավալատարած. և կառուցվածքային սկզբունքով նման Զվարթնոցին):

930-ական թթ. Հայաստան արշաված արաբ. բանակի դեմ համատեղ ճակատ կազմելով՝ Հայոց Աբաս Ա Բագրատունի ու Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորները Խ. վ. վ-ի մոտ ջախջախել են թշնամու 13 հզ-անոց զորքը: 1047-ին Դվինի ամիրայի դեմ արշավող բյուզ. բանակը գրավել է Խ. վ. վ.:

XIII դարից Խ. վ. վ., համազգ. սրբավայր լինելով հանդերձ, դարձել է նաև կրթության ու գիտության համահայկ. հռչակավոր կենտ-

րոն: 1255-ին վանքում *Վարդան Արևելցին* հիմնադրել է բարձր կարգի դպրոց՝ վարդապետարան, որտեղ ուսանելու են եկել նաև Կիլիկիայից: Դպրոցը եղել է 9-ամյա՝ նախակրթական, քահանայական երեք և բարձրագույն կրթության վեց տարիներով: Աստվածաբանությունից բացի ուս. ծրագիրը ներառել է անտիկ փիլիսոփաների, տրամաբանների, ճարտասանների, քերականների աշխատությունների և մեկնող. երկերի ուսուցում: Խ. վ. վ-ի դպրոցում Վարդան Արևելցու 40 աշակերտների թվում են եղել *Եսայի Նչեցին, Հովհաննես Երզընկացին, Գևորգ Սկևռացին, Ներսես Մշեցին*, Գրիգոր Բալուեցին, Գրիգոր ԲՀնեցին և այլ անվանի մտածողներ:

1264-ին Վարդան Արևելցին Խ. վ. վ-ից մեկնել է Թավրիզ և, մոնղոլ. Հուլավու խանի հետ բանակցելով, ստացել հատուկ արտոնագիր, որով չափավորվել են Հայաստանից գանձվող կեղեքիչ հարկերը և մեղմացվել կրոն. ճնշումները: Խ. վ. վ-ի վարդապետարանում Վարդան Արևելցին ավարտել է իր «Հավաքումն պատմության» երկասիրությունը, գրել «Աշխարհացույցը» և Դանիելի մարգարեության «Մեկնությունը»: 1271-ին վախճանված Վարդան Արևելցուն փոխարինել է Ներսես Մշեցին, և, որոշ ժամանակ անց, ապահովության նպատակով վարդապետարանը Խ. վ. վ-ից տեղափոխել է *Մշո Ս. Առաքելոց վանք*:

Խ. վ. վ. նաև գրչության կենտրոն էր (մինչև XVIII դ.): Մեզ են հասել մեկ տասնյակից ավելի ձեռագրեր. Մատենադարանում են պահվում Գևորգ Սկևռացու 1267-ի, Մուրատ դպիրի 1663-ի, Գրիգոր Սյունեցու 1774-ի և այլ հեղինակների գրչագրած գործերը:

1441-ին Խ. վ. վ-ից Կիրակոս Վիրապեցին ընտրվել է Էջմիածնի Նորոգ Մայր աթոռի կաթողիկոս (*Կիրակոս Ա Վիրապեցի*): XVI դ. Հայաստանի քաղ. ու տնտ. խիստ անբարենպաստ դրության հետևանքով Խ. վ. վ-ի շինությունները, մնալով անխնամ, զգալիորեն վնասվել են: XVII դ. Խ. վ. վ-ի վանահայր Դավիթ վրդ. Վիրապեցին վերակառուցել է վանքի շենքերը և վերակենդանացրել վանական կյանքը: 1666–1669-ին կառուցել է վանքի պարիսպները և ներսից կից շինությունները: Ուղղանկյուն հատակագծով, 7 շրջանաձև բուրգերով պարիսպները շարել են տեղական կոպտատաշ մարմար քարից: Խ. վ. վ. XVII դ. Հայաստանում ձևավորված կրոն. և պաշտպան. կառույցները զուգակցող նոր համալիրի՝ վանք-ամրոցի լավագույն օրինակն է: 1669-ի մարտի 1-ին խոջա Շմավոն Ագուլեցու՝ վաճառական և տարեգիր Զաքարիա Ագուլեցու եղբոր նախաձեռնությամբ և միջոցներով սկսվել են վիրապի՝ հողից մաքրման ու նորոգման աշխատանքները և XIII դ. նրա վրա կանգնեցված թաղածածկ մատուռի փոխարեն նոր եկեղեցու կառուցումը: 1669-ի սեպտ. 20-ին օծվել է Ս. Վիրապի վրայի նորակառույց Ս. Գրիգոր եկեղեցին (ունի թաղածածկ դահլիճի հորինվածք): Շին. աշխատանքների ընթացքում գտնվել են Վարդան Արևելցու և XIII դ. Խ. վ. վ-ի առաջնորդ Ներսես եպս. Տարոնացու աճյունները, ո-



Խոր վիրապի վանքի հատակագիծը

րոնք 1272-ին ամփոփվել էին Ս. Գրիգոր եկեղեցու արմ. կողմում պատրաստված դամբարանում: Ս. Վիրապի դարեդար կուտակված հողի լիցքը մաքրելիս՝ գրի հատակի տակ բացվել է հոգևորականի աճյունով մատուռանման դամբարան (հավանական է՝ Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի գերեզմանը), որը, սակայն, թողնվել է տեղում և վերստին ծածկվել հողով: Ս. Վիրապը մոտ 4,5 մ տրամագծով և 6,5 մ խորությամբ գուբ է, ուր իջնում են Ս. Գրիգոր եկեղեցու Ավագ խորանի աջ կողմի բացվածքից: Նրա առաստաղի արլ. կողմում այն անցքն է, որի միջով այրին ներս է գցել Գրիգոր Լուսավորչի հանապազօրյա հացը: III դարից պահպանված այս շինությունը հայկ. միջնադարյան ճարտ. հնագույն գմբեթավոր կառույցն է:

Շմավոն Ագուլեցու մահվանից հետո՝ 1669–1672-ին, Խ. վ. վ-ի վերանորոգման աշխատանքներին իր նպաստն է բերել խոջա Ավթանդիլ Տփղիսեցին:

ԽՈՐԱԿԵՐՏԻ 1679-ի հունիսի 4-ի երկրաշարժից ավերվել են Խ. վ. վ-ի Ս. Աստվածածին գլխ. եկեղեցին, վանական շինությունները, որոնք վերակառուցվել են 1680–1695-ին: 1695-ին վախճանվել է վանահայր Դավիթ Վիրապեցին և թաղվել Ս. Գրիգոր եկեղեցու հս. պատի տակ: Եկեղեցու պատին ու տապանաքարին փորագրվել է չափածո դամբանական, որով դրվատվել է վանահոր ազգանվեր գործունեությունը:

1703-ին ավարտվել է վանքի բակի կենտրոնում առանձին կանգնած Ս. Աստվածածին գլխ. եկեղեցու հիմնովին վերակառուցումը, որից հետո այն ստացել է մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք:

Արլ. ճակատին, խորանի լուսամուտից վերև, ագուցված է Հայաստանում քրիստոնեության հաղթանակը պատկերող միակ բազմաֆիգուր հարթաքանդակը: Նրա աջ կողմում, երկու կողմերից հրեշտակներով, պատկերված է Գրիգոր Ա Լուսավորիչը, ձախ ձեռքին՝ Սուրբ Գիրքը, իսկ աջով օրհնում և դիվահարությունից բուժում է պառկած Տրդատ Գ արքային: Նրանցից վերև քանդակված են երկու հոգի (համեմատաբար փոքր), որոնցից հոգևորականի զգեստով աջ կողմինը Խ. վ. վ-ի վանահայր Դավիթ Վիրապեցին է: Քանդակի աջ եզրին գալարվող օձ է, գլուխը՝ Գրիգոր Ա Լուսավորչի ոտքերի տակ:

Պարսից տերության քաղ. վայրիվերումների հետևանքով XVIII դ. Խ. վ. վ. առժամանակ չի գործել: 1765-ին *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսը նորոգել է Խ. վ. վ., վերահաստատել միաբանությունը և թեմին տվել 11 գյուղ: 1734-ին Խ. վ. վ. է այցելել *Աբրահամ Գ Կրետացի* կաթողիկոսը: XIX դ. վանքը Երևանում ունեցել է այգիներ, շրջակայքում՝ ընդարձակ հողատարածքներ: XIX դ. վերջին քանդել են Խ. վ. վ-ի Ս. Աստվածածին եկեղեցու արմ. ճակատին կից եռակամար սրահը և կառուցել սյունազարդ զանգակատուն:

Խ. վ. վ-ից արմ. գտնվում է «Օթեաց խաչ» սրբավայրը, որտեղ, ըստ ավանդության, հանդիպել են *Թադեոս* և *Բարդուղիմեոս* առաքյալները: 1869-ին Խ. վ. վ-ի վանահայր Վարդան Ալեքսանդրապոլսեցին «Օթեաց խաչում» կառուցել է մատուռ: Խ. վ. վ-ի տոնակատարության օրն է Կրկնազատկի կիրակին:

1970–80-ական թթ. *Վազգեն Ա Պալճյանի* հոգածությամբ նորոգվել են Խ. վ. վ-ի կիսավեր պարիսպները, խցերը, տնտ. շինությունները, վանահոր բնակարանը, կառուցվել է մատաղատուն: Հվ. պարսպին կից թաղակապ նկուղի տանիքը վերածվել է դիտահրապարակի, որտեղից բացվում է աստվածաշնչյան Արարատ լեռան համայնապատկերը: Հայոց դարձի նախասկիզբ սրբավայր Խ. վ. վ. վերստին ձեռք է բերել կրոն. կարևոր կենտրոնի իր նշանակությունը: 1989–94-ին վանքում հրատարակվել է «Գավիթ» կրոնամշակութ. թերթը:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.8, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Վարդան Արեվելցի, Հաւաքումն պատմութեան, Վնտ., 1862: Սիմեոն Երեվանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1873: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1905: Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Ե., 1938: Մաթեվոսյան Կ., Խոր վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, № 2–3: Հասրաթյան Մ., Հայոց դարձի նախասկիզբ Խոր վիրապի վանքը, տես Հայոց սրբերը և սրբավայրերը (ժող.), Ե., 2001:

Մուրադ Հասրաթյան

ԽՈՐԱԿԵՐՏԻ ՎԱՆՔ, ՀՀ Լոռու մարզի Ջիլիզա գյուղից 3 *կմ* արևմուտք, Լալվար լեռան արևմտյան փեշին: Ոչ հեռու գտնվել է Խորակերտ գյուղաքաղաքը: Ըստ եկեղեցու արմ. մուտքի ճակատի արձանագրության, Խ. վ. 1252-ին կառուցել է իշխան Ստեփանոսը: Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, անկյուններում ավանդատներով, արլ. ճակատին զույգ «հայկ. խորշերով» հորինվածք ունի: Բացառիկ է գմբեթը (հայկ. ճարտ-ության նմանատիպ եզակի օրինակը), որի տանիստանի սլացիկ թմբուկի ստորին մասը կազմված է 30 վեցնիստանի սյուներից (բարձր. 2 *մ*), որոնց խարիսխները և խոյակները քանդակազարդ են: Գմբեթի ծածկը հիմնվում է 6 փոխհատվող կամարներից կազմված վեցաթև աստղաձև հիմնակմախքի վրա, կենտրոնում ավարտվում է շթաքարով ձևավորված ավելի փոքր գմբեթածածկով: Եկեղեցուն արմ-ից կից է քառակուսի հատակագծով գավիթը, որի ծածկն իրականացվում է 2 զույգ փոխհատվող կամարների համակարգով, որոնց փոխհատումից առաջացած կենտր. քառակուսին պսակված է եղել ութնիստանի բրգաձև ծածկով:

Խ. վ-ի համալիրից պահպանվել են հս-արմ. կողմում ուղղանկյուն, թաղածածկ սեղանա-

տան ավերակները, երկու փոքրիկ մատուռներ, քանդակազարդ գերեզմանաքարեր: Եկեղեցու հս. պատի մոտ կանգուն է քանդակազարդ խաչքարը (XIII դ.):

1661-ին վանքը նորոգվել է: 1965-ի երկրաշարժից քանդվել են դավթի ծածկի խաչաձևվող կամարները:

Պատկերազարդումը տես ներդիր VII-ում, 7.8, 3-րդ պատկերը:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. 1, Թ., 1842: Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986: *Яковсон А. Л., Из истории армянского средневекового зодчества. Армянские монастыри XIII в. Хоракерт и Мшкаванк, "Советская археология", XIV, 1950.*

Մուրադ Հասրաթյան

ԽՈՐԱՆ, 1. Աստվածաշունչը խորան է անվանում այն վրանը, որն անապատում չինեց Մովսեսը՝ որպես հրեաների պաշտամունքի ժամանակավոր տաճար (հաճախ կոչվել է խ. վկայության կամ խ. ժողովքի): Հին կտակարանի Ելք գրքում Աստված հրահանգել է Մովսեսին խ. կառուցել. «Ինձ համար հողաշեն զոհասեղան կպատրաստեք և դրա վրա, ամեն տեղ, ուր կդնեմ իմ անունը, կմատուցեք ձեր ողջակեզներն ու ձեր խաղաղության զոհերը...: Իսկ եթե զոհասեղանը քարից կառուցես, դրա քարերը հղկված թող չլինեն...» (**20.**24–25): Այնուհետև պատվիրում է խ-ին տալ ընծաներ՝ «...ոսկի, արծաթ..., նրբահյուս բեհեզ..., լույսի համար ձեթ և օծության յուղի ու խնկի համար բաղադրանյութեր, սարդիոնի քարեր...» (Ելք **25.**1–7): Մովսեսին Տիրոջ կողմից ուղղակի ասվում է. «Դու խորանն ու նրա ամբողջ սպասքը ինձ համար կպատրաստես ըստ այն օրինակի, որ ցերան վրա ցույց կտամ քեզ...» (Ելք **25.** 9): Հետո, ամենայն մանրամասնությամբ, մատուցվում է խ-ի տարբեր մասերի՝ Վկայության տապանակի, Աստծուն ընծայված հացի սեղանի, աշտանակի, վրանի պատրաստման կերպը, ձևը, չափերը, օգտագործվող նյութերը, պաշտամունք մատուցելու կարգը ևն (Ելք **25**, **26**, **27**, **28**, **29**, **30**, **31**, **33.** 7–11, **35**, **36**, **37**, **38**, **39**, **40**): Ելք գրքի վերջին՝ 40-րդ գլխում նկարագրվում է Վկայության խ-ի կանգնումն ու օծումը. «...Մովսեսն ավարտեց իր ամբողջ գործը...: Ամպը ծածկեց վկայության խորանը, և խորանը լցվեց Տիրոջ փառքով» (**40.**31–32): Ապա վկայվում է, որ «Տիրոջ ամպը ցերեկները կանգնում էր խորանի վրա, իսկ գիշերները իսրայելացիների առաջ դրա վրա կրակ էր վառվում» (Ելք **40.**36): Այս փառավոր Վկայության խ. իսրայելացիների հետ չվում էր տեղից տեղ՝ մինչև Ավետյաց երկիր, որտեղ, Դավթի որդու՝ Սողոմոն թագավորի ձեռքով Երուսաղեմում կառուցվում է Աստծո Տաճարը. Սիոնից դուրս է բերվում Վկայության խ.: *Ուխտի տապանակը* և խ-ի սուրբ սպասքը զետեղվում են Տաճարի սրբությունների սրբարանում (Գ Թագ. **6**, **8**):

2. Ճարտարապետության մեջ. եկեղեցու այն մասը, որտեղ *Պատարագի* Ավագ սեղանն է (այստեղից էլ՝ Ավագ խ.): Որպես կանոն՝ ընդգրկում է կառույցի արլ. աբսիդը: Հայկ. եկեղեցիներում խ. հատակագծում կիսաշրջանաձև է, գմբեթարդ ծածկով (վաղ միջնադարում՝ պայտաձև և, սակավաթիվ՝ ուղղանկյուն): Խ-ի մեջտեղում կանգնեցվում է սեղանը և նրա հետևում՝ խաչկալը: Խ-ի կողմնային որմերին, աջից և ձախից կան մեկական խորշեր (խորհրդանոց), որոնցից աջակողմյանը հատկացված է Պատարագի, նվերների և ս. *Հաղորդության* համար, իսկ ձախակողմյանը՝ *մյուռոնի* և այլ սրբությունների պահպանության:

3. Ավագ խ-ից աջ և ձախ կամ եկեղեցու արմ. անկյուններում (նաև դավթի արլ. անկյուններում) տեղադրված այն սենյակները (ավանդատները), որոնք ունեն փոքր աբսիդ և լրացուցիչ սեղան՝ Պատարագի կամ եկեղեց. այլ արարողությունների համար:

4. Մանրանկարչության մեջ. ձեռագիր չորս Ավետարանների պատկերազարդ ձևավորված ցանկ. *կանոններ*, համաձայնության տախտակներ, համաբարբառ (տես *Աստվածաշնչի համաբարբառ*): Կազմել է *Եվսեբիոս Կեսարացին*՝ եգիպտացի ոմն Կարպիանոսի խնդրանքով: Նա Ավետարանները բաժանել է հատվածների, համարակալել ըստ գլուխների, համարների օգնությամբ կազմել համաձայնության տասը տախտակներ, դրանցից օգտվելու կարգը բացատրել Կարպիանոսին ուղղած թղթում: Կանոնները և թուղթը տեղադրել է 6–12 էջերում՝ աղյուսակների նման, ձևավորել կամարներով ու սյուներով՝ ճարտարապետ. խ-ի ձևով, որի գրական նախատիպը թերևս Մովսեսի խ. է (Ելք **20.**22–26, **26**, Ղևտ. **1**–**9**): Խ. այստեղ նշանակում է նաև կամար. այսինքն՝ թուղթը և համաբարբառի աղյուսակները ձևավորել է կամարաձև, և այն իբրև ավանդույթ պահպանվել է ընդօրինակվող ու պատկերազարդվող ձեռագիր Ավետարաններում:

Ավետարանների խորանապատկերներն ունեն ծագումնաբան., գործն., խորհրդաբան. և գեղագիտ. դիտանկյուններ: Ավետարանները՝ որպես եկեղեցու (Եվսեբիոսի ժամանակ բազիլիկ եկեղեցի) «սրբութիւնք սրբոց», բացվում են կամարաձև աղյուսակաձև ցանկերով, որոնք Եվսեբիոս Կեսարացին կազմել է թվային խիստ խորհրդաբանությամբ: Սկզբում քառայուն տախտակում (աղյուսակում) կարգաբերել է այն գլխահամարները, որոնց բովանդակությունը կրկնվում է չորս Ավետարաններում, ապա՝ երեք աղյուսակային համակցությամբ այն գլխահամարները, որոնց բովանդակությունը կրկնվում է երեք Ավետարաններում, այնուհետև հինգ աղյուսակային համակցությամբ այն գլխահամարները, որոնց բովանդակությունը կրկնվում է երկու Ավետարաններում և, ի վերջո, այն գլխահամարները, որոնց բովանդակությունն առկա է Ավետարաններից միայն մեկում և բացակայում է մյուսներում: Այսպիսով կազմվել է տասը կանոն, որը սրբազան թիվ էր: VII–XI դդ. Խ-ները սկսվել են Կարպիանոսին ուղղված Եվսեբիոս Կեսարացու թղթով, շարունակվել կանոնների աղյուսակներով և ավարտվել տեմպլետտոյով (Տիրոջ գերեզմանի պատկերը, որ կոչվել է կիբորիում, տաղավար) կամ խաչի պատկերով զիկկուռատամման պատվանդանի վրա (*խաչքարի* նախատիպ): Խ-ների թիվը, ըստ աղյուսակների ու թղթի տեղադրման հնարավորության, փոփոխվել է (7–12 և ավելի): Ուստի փոփոխվել է նաև այուների, աղյուսակային այունակների ու կամարների թիվը: Ըստ այդմ էլ իրենց ճարտարապետ. ձևի համար կոչվել են Խ-ներ: Դրանց պատկերային նախատիպ դիտվել են հռոմ. հաղթակամարները, բազիլիկ եկեղեցիների կամարաշարքերը և կամարներով ու այուներով ձևավորվող անտիկ (հատկապես ալեքսանդրյան) պապիրուսե կամ մագաղաթե օրացույցները:

Կանոններից (համաձայնության տախտակներից) օգտվելու կարգի առկա բացատրությունից բացի, հավանաբար, Եվսեբիոս Կեսարացին և եկեղեցու մյուս հայրերը, ինչպես վկայել են *Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին* և ուրիշ հայ հեղինակներ, հոգ են տարել համաձայնության տախտակների ձևավորման մասին և տվել համապատասխան խորհրդաբան. բացատրություններ, որոնք բացի հայերենից որևէ այլ լեզվով չեն պահպանվել: Հայ մատենագրության մեջ դրանք կազմել են առանձին ժանր՝ Խ-ների մեկնություններ: Մեզ են հասել տասներեքը և որոշ հատվածներ: Մեկնություններ են գրել *Ստեփանոս Սյունեցին*, Ներսես Շնորհալին, *Վանական Վարդապետը, Գրիգոր Խլաթեցին*, Գրիգոր Տաթևացին, Պողոս Բաբունապետը, Ստեփանոս Զիդ Ջուղայեցին: Մի քանի մեկնությունների հեղինակներն անհայտ են կամ ընդգրկված են վերոնշյալների երկերում (օր.՝ Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ իբրև նախադրություն): Այդ աշխատություններում տրվել են Խ-ների պատկերազարդման գեղագիտ. և խորհրդաբան. բացատրություններ գույների, ընտրված բուս. և կենդ. մոտիվների, այուների, կամարների, դրանց թվի վերաբերյալ: Յուրաքանչյուր Խ. իմաստավորվել է, ելակետ է ընդունվել կանոնների թիվը՝ տասը, թեև իրականում, տարբեր Ավետարաններում դրանք բաշխված են տարբեր քանակով թերթերի վրա: Ըստ հայ մեկնիչների, յուրաքանչյուր Խ. ունեցել է իր խորհուրդը՝ Աստվածության (Սուրբ Երրորդության) Խ., անմարմինների միջին և վերջին քահանայապետությունների Խ., հրեշտակների, հրեշտակապետների Խ., Ադամի դրախտ, Աբրահամի Խ., Մովսեսի Խ. կամ արտաքին դավիթ, Սողոմոնի տաճար ևն: Այս մեկնություններն իրենց առաջադրած պատկերային խորհրդաբանությամբ հիմնականում ընդհանուր են ոչ միայն հայկ., այլև ասոր., հուն., լատ., վրաց., եթովպ. ձեռագիր քառավետարանների համար, որոնք բոլորն էլ օգտվել են ընդհանուր քրիստ. մշակված խորհրդաբանությունից, և այդ ամենը հայտնի է դարձել շնորհիվ հայ մեկնիչների:

Մանրանկարչության մեջ Խ-ների ձևերը և պատկերային մոտիվները փոփոխվում, կրճատվում կամ հարստանում են ըստ երկրների, տարածքների, ժամանակաշրջանների ու դպրոցների: VII–X դդ. հատկապես բյուզ., լատ., ավելի պակաս հայկ. Խ-ները ձևով ծավալային էին և մոտ ճարտ. նախատիպին: XI դ. հայկ. որոշ դպրոցներում (Փոքր Հայքի, Անիի կամ Արշարունիքի) դրանք ավելի սխեմատիկ կամ դեկորատիվ են դարձել, երբեմն կամարների փոխարեն ունեցել են ուղղանկյուն գլխազարդ՝ լցված զանազան, երբեմն գորգադաշտ հիշեցնող զարդանկարով: XII դ. ուղղանկյունն ստացել է կամարաձև, լյունետաձև զանազան կտրվածքներ. այուների մեջ և գլխազարդի ներսում հայտնվել են երկրաչափ., հյուսածո և բուս. զարդանախշեր: Կիլիկյան դպրոցն ընդունել է հայկ.

բյուզանդամետ և բյուզ. խորանաձևերը ուղղանկյուն գլխազարդերով, այուների, խարիսխների, խոյակների և գլխազարդերի ներքին և արտաքին զարդանախշերը հարստացնելով թե՛ մոտիվների և թե՛ անսպասելի երևակայական ու առասպելական էակների աննախադեպ հարստությամբ: Վասպուրականում Խ-ները պարզեցվել են՝ ստացել ծայրաստիճան գծագր. և պարզ դեկորատիվ տեսք, իսկ Գլաձորի դպրոցը կիլիկյան խորանապատկերները վերափոխել է առավել զարդային և դեկորատիվ դունագեղության՝ որոշ չափով այն կոպտացնելով ու պարզեցնելով:

Բացի վերոհիշյալ ճարտ. սխեմայից (այուներ, կամարներ, ուղղանկյուն գլխազարդեր, որոնք հաճախ համակենտրոն կամարներ են ներառել) Խ-ները կամարներին ու գլխազարդերին, այուներին, պատվանդանների ու քիվերի զարդարուն երիզներին կից ունեցել են բազմապիսի արտաքին հարուստ պատկերներ՝ ծառերի, բույսերի, թռչունների ու կենդանիների, որոնք մեծապես հարստացրել են Խ-ների գեղ. հարդարանքը: Սկզբն. շրջանում (X դ.) պատկերները համեմատաբար զուսպ են եղել (ձկնաքաղ հավքեր, սիրամարգեր, աղավնակերպ հավքեր, աքաղաղներ, վայրի բադեր, կաքավներ, արմավներ, նռան ճյուղեր՝ պտուղով, ականթներ, ձիթենի հիշեցնող ծառեր, անտիկ անոթների պատկերներ), XI դարից անընդհատ հարստացել ու ձևափոխվել են (միայն XI դ. «*Մողնու Ավետարան*»-ի այուների կողքերին, գլխազարդերի ներսում, վերևում ու կողմնային մասերում պատկերված են բույսերի ու կենդանիների, ֆանտաստիկ արարածների տանյակ տեսակներ, բազիլիկ շենքերի տարբեր պատկերներ ևն), իսկ 1211-ի «*Հաղպատի Ավետարան*»-ում, կիլիկյան, գլաձորյան դպրոցների մի շարք քառավետարանների Խ-ներում հայտնվել են մատռվակներ, երգիչներ, ձուկ բերողներ, պատվիրատուներ, որսի տեսարաններ, դիմանկարներ, ինքնանկարներ ևն: Նման փոփոխություն XI–XII դդ. նկատվել է նաև բյուզ. և վրաց. Խ-ներում: Այդ բազմապիսի մոտիվներն իրենց նախատիպերն են ունեցել անտիկ և սասանյան արվեստում, ծագել խճանկարներից ու կիրառ. արվեստից: Խորանապատկերներում ներկայացվող կենդանիների, թռչունների ու բույսերի սիմվոլիկան շարժուն է եղել, քանի որ միջնադարում խորհրդակիր սիրամարգերի, ձկնաքաղերի (հավալուսն, կռունկ, ձկնկուլ, ֆլամինգո), կաքավների, աքաղաղների, վայրի բադերի (մրտիմների) կողքին կարող էին ներկայացվել դրանց նախատիպերը՝ հրեշտակներ, վարձակ կանայք (պոռնիկ և օտարազգի կանայք՝ իբրև Քրիստոսի նախամայրեր), առաքյալները, ավետարանիչները՝ այուների խարիսխներում ու խոյակներում, գլխազարդերի վրա կամ ներսում և այլուր: Արմավի, ձիթենու, նռենու ծառերն ու պտուղները ստացել են բազմապիսի ձևեր, երբեմն հասել անճանաչելիության աստիճանի, երկրաչափ. զարդերը և հյուսածոները հարստացել են՝ ինչպես խաչքարերի վրա. ոսկին ու պայծառ գույները ստեղծում են տրամադրություններ, որոնք մեկնություններում ևս բացատրվել են և՛ խորհրդանշորեն, և՛ հոգեբանորեն՝ որոշ կետերում կանխելով գույների վերաբերյալ XIX–XX դդ. մի քանի տեսություններ:

Խ-ների ձևավորումն ազդել է նաև տիտղոսաթերթերի գլխազարդերի ձևավորման վրա, որոնք կոչվել են կիսախորաններ և հաճախ բովանդակել դրեթե նույն մոտիվները, ինչ Խ-ները:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.1, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Ա ն ա ս յ ա ն Հ., Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, Էջմիածին, 1972: Խորանների մեկնություններ, աշխատասիր. Վ. Ղազարյանի, Ե., 1995: Der Nersessian S., Manuscrits arméniennes illustrés des XIIe, XIIIe et XIVe siecles de la Biblothèque des pères Mekhitaristes de Venise, P., 1936 (texte et album); N o r d e n f a l k C., Die spätantiken Kanontafeln. Textband und Tafelband, Göteborg, 1938; W e s s e l K., Kanontafeln, “Reallexikon zur byzantinischen Kunst”, Band II, Stuttgart, 1971, s. 927–968.

Վիգեն Ղազարյան

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՆՔ, ՀՀ Տավուշի մարզի Ջինարի գյուղից հյուսիս-արևելք, անտառի բացատում: Հիմնել է *Վանական Վարդապետը* XIII դ. 1-ին կեսին, Վահրամյան իշխանների հովանավորությամբ: Խ. վ-ի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին (1211–22) ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք՝ խորանում տասը կիսաշրջանաձև խորշերով (այստեղից էլ՝ Խ. վ. անվանումը): Արմ-ից կից է քառասյուն, կենտրոնակազմ գավիթը (1222–40-ական թթ.)՝ ծածկի կենտր. հատվածում խաչվող կամարներով և արմ. մուտքի շուրջը պահպանիչ խորհրդանշանների բարձրաքանդակներով: Համալիրի հվ. կողմում կանգուն է Ս. Կիրակի փոքր գմբեթա-

վոր եկեղեցին (XIII դ.): Խ. վ-ի համալիրից վեր, դեպի արլ., մատուռի ա-վերակներ են, տապանաքարեր և քանդակազարդ թեւավոր խոշոր խաչ, որն ավանդաբար համար-վում է Վանական Վարդապետի գերեզմանա-քարը: Խ. վ. 1229-ին ավերվել է Խորեզմի շահ Ջալալ էդ Դինի արշավանքից: 1244-ին վանա-հոր պաշտոնում Վանական Վարդապետին փո-խարինել է նրա եղբորորդի Պողոս վարդապե-տը:

Խ. վ. եղել է գրչության կենտրոն: Մեզ են հասել այնտեղ գրչագրված մեկ տասնյակ ձե-ռագրեր (մեծ մասը՝ XIII դ.): Արժեքավոր են Վանական Վարդապետի «Հարցմունք և պա-տասխանիք»-ի ու «Բարոյախոս»-ի հնագույն ընդօրինակությունները և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ձեռագիրը (1283):

Խորանաշատի վարդապետարան, միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր կրթական, գիտամշակութային ու աստվածա-բանական կենտրոններից: Հիմնել է Վանական Վարդապետը 1220-ական թթ. սկզբին, Խ. վ-ում, և ինքն էլ վարել վարդապետարանի ուսուցչա-պետությունը մինչև իր մահը (1251): Այնու-հետև վարդապետարանը գլխավորել է նրա ազ-գական ու աշակերտ Գրիգորիս վարդապետը:

Խորանաշատի վարդապետարանը եղել է պատմագիտ. թեքում ունեցող բարձրագույն տիպի դպրոց, որտեղ ուսանել են 7–8 տարի: Դասավանդել են պատմություն, աստվածաբա-նություն, իմաստասիրություն, մատենագի-տություն, երաժշտագիտություն, քերականա-գիտություն, աստղաբաշխություն, տոմարա-գիտություն, բնագիտություն, բուսագիտու-թյուն ևն, ընդօրինակել ձեռագրեր: Վանական Վարդապետի մի շարք երկեր («Մեկնութիւն Հոբայ», «Հարցմունք և պատասխանիք» ևն) որպես դասագիրք կամ համառոտ ուղեցույց են ծառայել աշակերտների համար: Սաներից շատերը դեռ ուսումնառության տարիներին զբաղվել են գիտությամբ: Շրջանավարտները ստացել են վարդապետական աստիճան և զբաղվել ինքնուրույն գործունեությամբ: Վարդապետարանի սաներից են XIII դ. Հայ եկեղեցու և մշակույթի նշանավոր գործիչներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ակներցին, Ստեփանոս Աղթամարցին, Առաքելը, Արտազ գավառի թեմական, գավա-նական. հարցերում մեծ հեղինակություն վա-յելող Հովսեփ վարդապետը, Խաչենի քաղ. կյանքում ակնառու գործիչ Մարկոս վարդա-պետը, ականավոր փիլիսոփա Սոսթենեսը, հայսմավուրքային ժողովածուների խմբագիր՝ Ներքին Խաչենի արքեպիսկոպոս Իսրայելը, Գրիգորիս Աղթամարցին և ուրիշներ:

Վանական Վարդապետի մահից հետո Խո-րանաշատի վարդապետարանի փառքը սկսել է արագորեն խամրել: Սակայն վերելք են ապրել Խ. վ-ի օրինակով ստեղծված բարձրագույն ու-սումնագիտ. կենտրոնները, որտեղ գործել են Վանական Վարդապետի աշակերտները:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.2, 1-ին պատկերը:

Գրկ. Բարխուդարյանց Ս., Արցախ, Բաքու, 1895: Ոսկյան Հ., Յովհաննէս Վանական և իւր դպրոցը, Վնն., 1922: Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X–XV դդ.), Ե., 1958: Քարտաշյան Հ., Խորանաշա-տի ճարտարապետական համալիրը, ԼՀԳ, 1986, № 4: Շահնազարյան Ա., Վահրամյանների իշխանու-թյունը, Ե., 1990:

Արտաշես Շահնազարյան

ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ (ավազանի ա-նունը՝ Ալեքսանդր Հովհաննեսի Մուրադբե-կյան), Տփղիսեցի (8.12.1873, Թիֆլիս – 6.4.1938, Էջմիածին, ամփոփվել է նախ Ս. Գա-յանե եկեղեցու գավթում, ապա՝ 1996-ի սեպտ. աճյունը տեղափոխ-վել է Էջմիածնի Մայր տաճարի բակը), Ամե-նայն Հայոց կաթողի-կոս 1932-ից: Հաջոր-դել է *Գևորգ Ե Սու-րենյանցին*: 1892-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա ուսումը շարու-նակել Շվեյցարիայի համալսարաններում: 1897-ին Ներսիսյան դպրոցում նշանակվել է երգի ուսուցիչ: 1901-ին ձեռնադրվել է սարկավագ, նույն թվի դեկտեմբերին՝ աբեղա և նշանակվել Նոր Բա-յազետի (այժմ՝ Գավառ) եկեղեցիների բարե-կարգիչ: 1902-ին ձեռնադրվել է վարդապետ: 1903-ի հունիսին, եկեղեց. կալվածքների և ու-նեցվածքի բռնագրավման (տես *Եկեղեցական գույքի բռնագրավման օրենք 1903*) ժամանակ, ցար. իշխանություններին դիմադրություն ցույց տալու համար ձերբակալվել և աքսորվել է Ռու-սաստանի Օրյոլ քաղաք: 1905-ին վերադարձել

Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյան

է աքսորից և նշանակվել Գորի-Իմերեթի-Բաթումի և Արդվինի առաջնորդական փոխանորդ: 1907-ի հունիսին *Մկրտիչ Ա Վանեցի* կաթողիկոսի կոնդակով նշանակվել է Նոր Բայազետի և Դարաչիչակի (այժմ՝ Ծաղկաձոր) եկեղեցիների բարեկարգիչ: 1909-ի դեկտ. ձեռնադրվել է եպիսկոպոս: Առաջին համաշխ. պատերազմի տարիներին Երևանի թեմի եղբայրական օգնության հանձնաժողովի նախագահն էր, կազմակերպել է վիրավոր հայ զինվորների և փախստականների օգնության գործը: 1917-ին նրա նախաձեռնությամբ Երևանում հիմնադրվել է Հայոց Ազգային խորհուրդը: 1919-ին Գևորգ Ե Սուրենյանցի կարգադրությամբ և Հայաստանի կառավարության հրահանգով որպես հայրապետ. պատվիրակ մեկնել է Փարիզ՝ համերաշխություն հաստատելու Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցող հայկ. ազգային երկու պատվիրակությունների միջև: 1920-ին Փարիզից մեկնել է Ամերիկա՝ կարգավորելու պառակտված թեմական կյանքը: Այստեղ կազմակերպել է հանգանակություն Հայաստանի պաշտպանության և վերաշինության համար, ինչպես նաև կատարել Հս. Ամերիկայի հոգևոր առաջնորդի ընտրություն՝ հանձին Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանի: 1920-ի դեկտ. 11-ին Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով նրան շնորհվել է արքության տիտղոս և պատիվ: 1923-ի մարտի 4-ին կարգվել է Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ և Գերագույն հոգևոր խորհրդի նախագահող: Այս պաշտոնում նա պայքար է ծավալել «Ազատ եկեղեցական եղբայրության» խմբավորման դեմ: Գևորգ Ե Սուրենյանցի մահից հետո, 1930–32-ին ղեկավարել է Հայ եկեղեցու գործերը: 1932-ի նոյեմբ. 12-ին ընտրվել, իսկ 13-ին օծվել է Ամենայն հայոց կաթողիկոս: Խ. Ա Մ. պայքար է ծավալել փակված եկեղեցիները վերաբացելու օգտին, հանդես եկել եկեղեցիները քանդելու և ոչ իրենց նպատակին օգտագործելու, խորհրդ. իշխանությունների՝ հայ հոգևորականներին բռնությունների ենթարկելու քաղաքականության դեմ: Զբաղվել է եկեղեցու սահմանադրական, ծիսական, կազմակերպչական համակողմանի քննության ու բարեկարգման, Մայր տաճարի նորոգման, Հայ եկեղեցու նվիրապետ. աթոռների միջև սերտ հարաբերությունների ստեղծման հարցերով: Զգալի աշխատանք է կատարել սփյուռքահայությանը Հայ եկեղեցու շուրջ համախմբելու համար: Սփյուռքում կազմակերպել է Աստվածաշնչի հայ. թարգմանության 1500-ամյակին նվիրված հանդիսություններ: Խ. Ա Մ-ին պետանվտանգության ծպտյալ գործակալները խեղդամահ են արել Վեհարանի իր բնակարանում:

Կաթողիկոս. աթոռին Խ. Ա Մ-ին հաջորդել է *Գևորգ Զ Զորեքչյանը*:

Գրկ. Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994:

Ստեփան Ստեփանյանց

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ-ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՒՅՑ, Խորհրդատետր, ծիսամատյան, որը պարունակում է *Պատարագի* բովանդակությունը և մատուցման կարգը:

Առկա են տարբեր առաքյալների (Անդրեաս, Հակոբոս Զեբեդյան, Հակոբոս Տյառնեղբայր) վերագրված Խ-Պ-ներ: Հայ եկեղեցին ժամանակի ընթացքում հայացրել է մի շարք Խ-Պ-ներ, որոնք հայտնի են բարսեղյան, նազիանզյան, ոսկեբերանյան, հռոմեական անուններով: Բարսեղյան պատարագամատույցը հայ. ձեռագրերում հայտնի է *Գրիգոր Ա Լուսավորչի* անունով: Այս վերագրումը հետևանք է այն բանի, որ Գրիգոր Լուսավորիչն է Կեսարիայից այն բերել Հայաստան և դարձրել կիրակելի: Նազիանզյան Խ-Պ., որ սխալմամբ վերագրվել է *Աթանաս Ալեքսանդրացուն*, խմբագրել է *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսը. որդեգրվելով Հայ եկեղեցու կողմից՝ այն դարձել է նրա հիմն. Խ-Պ.: Ոսկեբերանյան Խ-Պ., որը շատ նման է բարսեղյանին, կիրառվում է գլխավորաբար Հույն եկեղեցում, իսկ հռոմ. Խ-Պ. (հայերեն է թարգմանել *Ներսես Լամբրոնացին*) իր մի շարք հատվածներով ներմուծվել է հայոց Պատարագի մեջ:

Հայոց Խ-Պ. գլխավորապես կազմված է կապադովկյան հայրերի՝ *Բարսեղ Կեսարացու* և *Գրիգոր Նազիանզացու* հեղինակած պատարագամատույցից: Ըստ այմ՝ հայոց Պատարագը կատարվում է համաձայն Խ-Պ-ի, որն ունի հետևյալ մասերը. Ա մաս՝ Պատրաստություն, որի մեջ մտնում են. 1. Զգեստավորում (ոսկեբերանյան-Ոսկ.), 2. Լվացում (հռոմեական-Հռոմ.), 3. Խոստովանություն (Հռոմ.), 4. Նախամուտ (°), 5. Աղոթք՝ Գրիգոր Նարեկացու (Հայ.), 6. Առաջաբերություն (Բարսեղ Կեսարացու-Բրս.), Բ մաս՝ Ճաշու պաշտոնական տարություն, որի մեջ մտնում են. 1. Խնկարկություն (Ոսկ.), 2. Ճաշու մուտք (Բրս.), 3. Ընթերցվածք (Ոսկ.), Գ մաս՝ Կանոն ս. Պատարագի, որի մեջ

մտնում են. 1. Մեծ մուտք (Բրս., Նազիանզացի-Նազ.), 2. Ողջույն (Ոսկ., Նազ.), 3. Սրբազործություն (Բրս., Նազ.), 4. Հիշատակություններ (Բրս., Նազ.), 5. Ճաշակումն (Բրս., Նազ., Ոսկ.), և Դ մաս՝ Արձակում (Ոսկ.):

Խ-Պ-ի բովանդակության վերաբերյալ ժամանակին մեկնաբանություններ են շարադրել *Խոսրով Անձևացին*, Ներսես Լամբրոնացին, *Մովսես Երզնկացին*, Հովհաննես Արճիշեցի Ոսկանակերը (XIII–XIV դդ.):

Հայերեն Խ-Պ. առաջին անգամ տպագրել է Հակոբ Մեղապարտը, 1513-ին, Վենետիկում:

Տես նաև *Միսամատյան*:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.2, 2-րդ պատկերը:

Գրկ. Գաթրճյան Հ., Սրբազան պատարագամատոյցք հայոց, Վնն., 1897: Պողարյան Ն., Միսագիտութիւն, Նյու Յորք, 1990, էջ 75–91:

Հակոբ Քյոսեյան

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, հավատքով ընկալված աստվածային անտեսանելի շնորհների ստացման տեսանելի նշաններ՝ արտահայտված արտաքին *ծեսի*, աստվածապաշտական արարողությունների միջոցով: Խորհուրդներով, ինչպես և մյուս ծեսերով ու արարողություններով, *եկեղեցին* իրագործում է իր փրկագործական առաքելությունը. անհատը դառնում է եկեղեցու իսկական և միակից անդամ և հաղորդակցվում Հիսուս Քրիստոսի հետ:

Աստվածաբան. ձևակերպմամբ՝ խորհուրդները եկեղեց. այն արարողություններն են, որոնց միջոցով հավատացյալն ընդունում է *Սուրբ Հոգու* շնորհները, տեսանելի գործողություններին, խոսքերի և անձերի (խորհուրդների մատակարարում) միջոցով հարաբերության մեջ մտնում գաղտնի ու անտեսանելի երևույթների, հոգևոր ուժերի և կարողությունների հետ: Առաջին անգամ խորհուրդ բառի իմաստը ներկայիս ըմբռնմամբ ձևակերպել է IV–V դդ. աստվածաբան Օգոստինոս Երանելին՝ որպես «տեսանելի նշան անտեսանելի շնորհքի»:

Նոր կտակարանում խորհուրդ բառը հիշվում է իր նախն. իմաստով և նշանակում է ծածկված, վարագուրված, գաղտնիք: Պողոս առաքյալը խորհուրդ բառը գործածել է անցյալում անծանոթ մնացած ու հետո Ավետարանով հայտնված ճշմարտությունը ցույց տալու (Կողոս. 1.26–27), երբեմն էլ՝ երևույթի թաքուն իմաստը մատնանշելու համար. «Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ» (Եփես. 5.32): Պողոս առաքյալն այս իմաստով է հաճախ գործածել խորհուրդ բառը, երբ ասել է՝ «Ավետարանի խորհուրդը», «Քրիստոսի խաչի խորհուրդը», «Քրիստոսի խորհուրդը», «մարդեղության խորհուրդը» ևն: Աստվածաշնչում գործածված խորհուրդ բառը երբեք չի համապատասխանել իր այսօրվա նշանակությանը:

Եկեղեցու ս. հայրերի տնօրինությամբ խորհուրդը քրիստ. մասնավոր նշանություն է ստացել՝ ցույց տալով քրիստ. արարողությունների արտաքին ձևի մեջ թաքնված միտքը և խորհրդավոր ներգործությունը, որոնց միջոցով հավատացյալ քրիստոնյան ընդունում է աստվածային *շնորհներ*:

Հայ եկեղեցին [ինչպես և Կաթոլիկ և Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիները] ունի յոթ խորհուրդ. *Մկրտություն, Դրոշմ, Ապաշխարություն, Հաղորդություն, Պսակ և Ամուսնություն, Ձեռնադրություն, Կարգ հիվանդաց և վերջին օծում*: Անգլիկան եկեղեցին ևս ընդունում է այս յոթ խորհուրդները, բայց տարբերվում է իր մեկնաբանություններով: Բողոքական եկեղեցիների մեծ մասը միայն երկու խորհուրդ է ընդունում (Մկրտությունը և Հաղորդությունը), մյուսները՝ երեք (նաև Ձեռնադրությունը):

Յուրաքանչյուր խորհուրդ ունի իր առանձին, էական նշանակությունը և ներքին բովանդակությունը: Մկրտությունը հավատքի խորհուրդն է, Դրոշմը՝ հույսի, Հաղորդությունը՝ սիրո և խաղաղության, Ապաշխարությունը՝ արդարության և մաքրության, Ձեռնադրությունը՝ հոգևոր կոչումի, շնորհի ու իմաստության ստացման, Պսակը՝ ողջախոհության և մաքուր կյանքի, Վերջին օծումը՝ հավիտենական կյանքի ժառանգության և հոգու փրկության: Անմիջականորեն Հիսուս Քրիստոսի հաստատած խորհուրդները երկուսն են՝ Մկրտությունը և Հաղորդությունը, իսկ մնացած հինգը, ունենալով սուրբգրային հիմք, միջին դարերից եկող ավանդության և եկեղեցու զարգացման արդյունք են: Դրանց վերջնական ձևավորումը վերագրվում է XII դ. եկեղեց. հայրերին: Այդ դարից սկսած Հայ եկեղեցին ևս որդեգրել է յոթ խորհուրդները:

Եկեղեցական խորհուրդների ծիսակատարությունները արտաքին, տեսանելի աստվածապաշտ. արարողություններ են, որոնք հավատա-

ցյալին բերում են Սուրբ Հոգու հոգևոր, մտավոր ու բարոյական անտեսանելի շնորհները կամ հայտնված անըմբռնելի ճշմարտությունը: Այսպես, Մկրտության ժամանակ մկրտվողի վերստին ծնունդով Աստծո որդեգիր դառնալը, Ապաշխարության ընթացքում ապաշխարողին մեղքերից արձակելը, Ձեռնադրությամբ կատարած շնորհաբաշխումը, ս. *Պատարագի* ընթացքում հացի և գինու փոխակերպումը Քրիստոսի մարմնի և արյան անտեսանելի են, սակայն ընկալվում են հավատքով և հավատքի միջոցով դառնում իմանալի ու զգալի:

Խորհուրդների մատակարարության համար անհրաժեշտ են երեք տարրեր. 1. զգալի նշան. այսպես են կոչվում խորհուրդների կատարման ընթացքում գործածվող նյութերը, օր., ջուրը՝ Մկրտության, ս. *Մյուռոնը*՝ Դրոշմի, հացը և գինին՝ Հաղորդության ժամանակ: 2. *Աղոթք*, որը սրբագործում է խորհուրդի զգալի նշանը: Խորհրդակատարության ընթացքում երգվում են շարականներ, ընթերցվում աղոթքներ և Ս. Գրքից հատվածներ: 3. Օրինավոր պաշտոնյա. միայն ձեռնադրված հոգևորականն իրավունք ունի խորհուրդներ մատակարարելու:

Յոթ խորհուրդներից երեքը՝ Մկրտությունը, Դրոշմը և Ձեռնադրությունը, անկրկնելի են: Մնացած չորսը կրկնելի են՝ ըստ կանոնի և ըստ եկեղեց. ավանդության: Չորս խորհուրդները՝ Մկրտությունը, Դրոշմը, Հաղորդությունը և Ապաշխարությունը, պարտադիր են: Մնացած խորհուրդները թողնված են յուրաքանչյուր անհատի ազատ կամքին:

Գրկ. Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Թ., 1900: Ջեպեյան Ղ., Հայ եկեղեցւո յոթը խորհուրդները, Անթիլիաս, 1988: Սարգսյան Ս., Հայոց եկեղեցւո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 1, 1992:

Արտաշես Ղազարյան

ԽՐԱՏ, միջնադարյան մատենագրության ժանր: Ի տարբերություն *ճառի* ու *քարոզի*, նախատեսվել է լայն լսարանի, հասարակության տարբեր խավերի համար: Բովանդակում է փաստ. հարուստ նյութ միջնադարի մշակութ., տնտ. կյանքի վերաբերյալ, իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայ եկեղեցու աստվածաբան. ժառանգության մեջ, ներկայացնում հոգևոր գրականության այն բնագավառը, որն առավելագույն ներդաշնակությամբ արտացոլում է բարոյական *աստվածաբանության* տեսական և գործնական սկզբունքները: Այս է պատճառը այն տևական հետաքրքրության, որ ցուցաբերել են Հայ եկեղեցու հայրերը Խ-ի նկատմամբ: Դա արտահայտվել է տակավին հայ դպրության արշալույսին, երբ Աստվածաշնչի հայացումը սկսվել է խրատական բովանդակություն ունեցող Առակաց գրքի թարգմանությամբ: Ավելի ուշ հայացվել են *եկեղեցու հայրերի*, Խիկար Իմաստունի Խ-ները, «Բանք իմաստնոց» ժողովածուները:

«Պիտոյից գրքի» թելադրանքով հայ միջնադարում խրատական գրականությունը բաժանվել է «յորդորական, հրաժարական, բացասական, պարզ, շարալծեալ, առավելահրաշ» տեսակների: *Հովհաննես Երզնկացին* (Պլուզ) դրանք միավորել է երեք հիմն. խմբերի մեջ՝ հորդորական (դրական), հրաժարական (բացասական), միջակային (այստեղ բարոյաբանությունը բացորոշ չէ): Խ. ունի կանոն., ընդհանր., հորդոր., հոգեշահ, վանական-կրոնավոր., դավան., ծիսական, գիտագործն. և այլ ուղղվածություն ու բովանդակություն: Կանոնական Խ-ում տիրապետող է պաշտոն. հրահանգը, իրավ. երանգ ունեցող խորհուրդը: Նպատակն է, ելնելով տեղական պայմաններից, ժողովրդին մատչելի լեզվով ներկայացնել եկեղեցու սահմանած կանոն. որոշումները (տես «*Կանոնագիրք Հայոց*»), պահպանել հասարակության ներդաշնակ համակեցությունը («Նուաստ վարդապետ Յոհաննիսի Երզնկայեցւոյ խրատ հասարակաց քրիստոնէից, քահանայից եւ ժողովրդոց...», «Խրատ կանոնական համառաւտ»): Խրատականոնական բովանդակություն ունեն նաև Հովհաննես Երզնկացու (Պլուզ) «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը և «Կրկին կանոնք եւ խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց» երկը, որոնց նպատակն է տնտեսական, բարոյական, հոգևոր փոխօգնության կանոն. պարտավորություններ հաստատել արհեստավոր., երիտասարդ. կազմակերպությունների անդամների շրջանում:

Հորդորական, հոգեշահ Խ-ներն էապես կապված են միմյանց հետ: Դրանք [«Երանելւոյն Բարսղի Կեսարու Հայրապետի ասացեալ վասն պահոց» (Մատենադարան, ձեռ. № 4749, թերթեր 233ա–235բ), «Խրատք երանելւոյն Բարսղի վասն ապաշխարութեան» (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 209, թերթեր 211 բ–223 ա), «Նեղոսի խրատ, որ ի բաց մերժեն յապականացուցն (Մատենադարան, ձեռ. № 694, թերթ 47 բ), «Խոսրովու վարդապետի խրատական պատգամք յոյժ օգ-

տակար եւ Հոգեշահ» (տես «Հոգեւոր կեանքի մասին», 1997), Հովհաննես Սարկավագի «Խրատ մանկանց», «Բանք խրատու» («Գանձասար», 2, 1992), Գրիգոր վարդապետի «Խոսք ճշմարիտ հավատքի և առաքինասեր վարքի մասին» (1992), «Գէորգեա Սկեւռացւոյ բան խրատու յաղագս խոստովանութեան» (Մատենադարան, ձեռ. № 40, թերթեր 118ա–121բ), «Յովհաննիսի Գառնեցւոյ բան շահաւէտ եւ աւգտակար ամենայն մարդկան» (Մատենադարան, ձեռ. № 941, թերթ 37ա), Հովհաննես Երզնկացու «Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի», Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի «Խրատական թուղթը» ևն] հորդորներ ու բարոյաբան. թելադրանքներ են աղոթքի, պահքի, Աստվածաշնչի տեւական ընթերցանության, աստվածային պատվիրանների կատարման, խոնարհության, հոգեւոր սթափության և քրիստ. այլ *առաքինությունների* վերաբերյալ:

Վանական-կրոնավոր. խ-ները [Եղիշեի «Բան խրատու յաղագս միանձանց», Հովհաննես Գառնեցու «Խրատ Կրաւնաւորաց» («Սիոն», 1953) ևն] բովանդակում են ներվանական կենցաղավարությունը կարգավորող ճգնակեց. հորդորներ ու ցուցումներ: Հովհաննես Գառնեցու հիշյալ երկում վանականներին թելադրվում է իրենց կենցաղը կազմակերպել համաձայն Հիսուս Քրիստոսի տնօրինական գործի. միջօրեի ծնրադրումն ու աղոթքը կատարել ի հիշատակ Տիրոջ խաչելության, հետմիջօրեի աղոթքը նվիրել խաչի վրա Տիրոջ՝ լեղի ու քացախ ընդունելուն, երեկոյան ժամի աղոթքը՝ Տիրոջ դերեզման իջնելուն ևն («Սիոն», 1953, էջ 318–321):

Դավան. խ-ներում շարադրված են Հայ եկեղեցու ուղղափառ վարդապետության հիմն. սկզբունքները և քրիստ. հավատի ընդհանրական հիմունքները: Այս տեսակետից առավել ներկայանալի են *Վարդան Այգեկցու* այն խ-ները, որոնցում խոսվում է Սուրբ Երրորդության մասին, հոգիների, նրանց ապրելակերպի, հանգստի մասին, ապա և դժոխքի, նրա չար ու դառը տանջանքների, *Նեռի* ծննդյան, դալիք դաժան ժամանակների ու նրա սատակման, կռապաշտության և կախարդության մասին ևն:

Ծիսական խ-ներում բացատրվում է արարողության և նրա բնագրի աստվածաբան., հոգեւոր բովանդակությունը: Այդ ոլորտին են պատկանում Գեւորգ Երզնկացու «Խրատ մկրտութեան», «Խրատ պսակի», Թովմա Մեծոփեցու «Խրատ ժամատեղեաց» կամ «Խրատ գիշերային պաշտաման» երկերը (Մատենադարան, ձեռ. №№ 2335, 7023):

Գիտագործն. խ-ները, ի տարբերություն նախորդների, որոնցում գերակշռում է բարոյական պատգամը, վերաբերում են գրչության արվեստի լեզվաբերակ. տեսությանը: Այս բնույթի խ-ները բովանդակում են ուղղագր., կետադր., վայելչագր. ցուցումներ ու հրահանգներ: Այդպիսիք են Գեւորգ Սկեւռացու, Գրիգոր Տաթեւացու «Խրատ գրչութեան» ձեռնարկները (Մատենադարան, ձեռ. № 267, թերթեր 418ա–455ա):

Գրկ. Սարգսյան Գ., Մխիթարայ Գոշի խրատք ոգեշահք, «Բազմավեպ», 1933, էջ 481–490: Խաչիկյան Լ., Կոստանդին Բարձրաբերդցու խրատական թուղթը առաքված Արևելյան Հայաստան 1251 թվականին, ԲՄ, 1958, № 4: Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Ե., 1977:

Հակոբ Քյոսեյան

ԽՈՒՃԱՊԻ ՎԱՆՔ, ՀՀ Լոռու մարզում, Լալվար լեռան հյուսիսային անտառոտ լանջին: Հնագույն կառույցը միանավ բազիլիկ եկեղեցին է (IX–X դդ.): Խ. վ. սկզբնապես գործել է որպես հայադավան մենաստան, իսկ XIII դ., Զաքարյանների տիրապետության շրջանում, վերածվել է քաղկեդոնիկ վանքի: XIII դ. միանավ եկեղեցուց հս. սրբատաշ ֆելզիտով կառուցվել է գլխ. եկեղեցին՝ զույգ մույթով գմբեթավոր հորինվածքով, հարուստ արտաքին դեկորատիվ հարդարանքով: Հվ. ավանդատանը պահպանվել են որմնանկարների հետքեր: Գլխ. եկեղեցուն արմ-ից կցվել է գավիթ-սրահը, հս-ից ու հվ-ից ավելացվել են երկայնական սրահներ: Գմբեթավոր եկեղեցու կառուցման հետ մեկտեղ XIII դ. վերանորոգվել է բազիլիկ եկեղեցին (հս-ից ու հվ-ից կցվել են երկայնական սրահներ, իջեցվել է բարձրադիր բեմի նիշը): Բազիլիկ եկեղեցուց հս. պահպանվել է փոքր, կիսավեր մատուռ: Խ. վ-ի պարսպապատ տարածքում պահպանվել են բնակելի և տնտ. շինությունների ավերակները:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.2, 3-րդ պատկերը:

Գրկ. Ջալալյան Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Թ., 1842: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վնտ., 1907: Ոսկյան Հ., Գուգարքի վանքերը, Վնտ., 1960: Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986:

Ալեքսանդր Ջալալյան

Ծ

ԾԱԹԵՐ, ծ ա դ ե ր, *քաղկեդոնականություն* ընդունած հայ երկաբնակներ: Անվան իմաստը պարզաբանված չէ: Փորձ է արվել այն բացատրել որպես «խեղված, անկատար, կիսատ» քրիստոնյա, այսինքն՝ տրվել է հայհոյական, վիրավորական իմաստ: Սակայն այս մոտեցման դեմ է վկայում այն հանգամանքը, որ Ծ. իրենց այդ անունով են կոչում: Իրենց վանքերում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրիչները հաճախ անվան կողքին նշել են և իրենց ծաթ լինելը: Պահպանվել են բյուզ. գործիչների արձճե կնիքներ, որոնց հայ տերերն իրենց անվան կողքին նշել են ծաղ մականունը: Ն. Ադոնցը Ծ. նույնացրել է ա-րաբ. աղբյուրներում հիշված զոտտերի կամ զուտտերի հետ, նրանց համարել ժամանակակից գնչուների՝ Հնդկաստանից եկած նախնիներ: Ն. Մառը Ծ-ին հայ-քաղկեդոնիկներ է համարել, իսկ XX դ. սկզբում Ակնի շրջանում բնակվող հայ-հոռոմներին՝ նրանց հետնորդներ: Հիշվում են X դարից: Բնակվել են գլխավորապես բյուզ. Միջագետք բանակաթեմում, Կարինում, Երզնկայում, Ակնում, Կամախում, Զմշկածագում, Եփրատի վերին հոսանքում: Անիի Մայր տաճարի հվ. գավթի մի արձանագրությունում հիշվում է Ծաղնոց տեղանուն:

Ուխտանես պատմիչը (X դ.) իր գրքի նախաբանում նշում է, որ աշխատության III գլուխը (մեզ չի հասել) նվիրված է ծաղ կոչվող «ազգի» մկրտությանը: Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) գրում է, որ Հայոց կաթողիկոս Դավիթ Բ Կակաղեցու (806–833) ժամանակ հայերից (իմա՝ հայադավաններից) անջատվել է Ծ-ի «ազգը»: Կեսարիայի շրջանում բնակվող Ծ-ի մասին տեղեկություններ է հայտնում Մխիթար Ապարանեցին (XV դ.): Ծ. հիշվում են նաև բյուզ. աղբյուրներում: Նիկոն Սևլեռնցին (XI դ.) Ծ-ին համարում է իրենց (հույների) դավանակից եղբայրներ, հայազգի, որ հեռացել են հայադավանությունից: Ըստ բյուզ. աղբյուրների, Ծ-ի մետրոպոլիտին ձեռնադրել է Անտիոքի պատրիարքը: Պահպանվել են նրանց վանքերում ստեղծված կրոն. բնույթի հայ. ձեռագրեր:

Ծ. անունով գյուղ մինչև XX դ. սկիզբը հայտնի էր Արմ. Հայաստանի Էրզրում նահանգի Երզնկա գավառում: Ունեցել է 52 տուն հայ բնակիչ, եկեղեցի (Ս. Աստվածածին), վարժարան: Բնակիչները տեղահանվել և բնաջնջվել են Մեծ եղեռնի ժամանակ: Ծ. անունով գյուղ ներկայումս կա ՀՀ Լոռու մարզում: Այն հիշատակված է դեռևս Սանահինի վանքի 1221-ի մի վիմագիր արձանագրությունում: Հնարավոր է, որ այս գյուղերի բնակիչները նախկինում Ծ. են եղել:

Գրկ. Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871: Հովսեփյան Գ., Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Երիցյան Ա., Ծաղ ազգը հա՞յ է, թե ոչ, «Փորձ», 1881, էջ 125–126: *Из "Тактикона" Никона Дивногорца. Описание греческих рукописей монастыря Святой Екатерины на Синае, т. 1, доп., под ред. В.Н. Бенешевича, СПБ, 1911, с. 584–588; Эмин Н., О цадах. Исследования по армянской мифологии, археологии, истории и истории литературы (за 1858–1884), 2*

изд., М., 1896; Марр Н., Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, "Византийский временник", т. 12, 1905; Адонц Н., О происхождении армян-цатов, "Журнал Министерства народного просвещения", 1911, с. 238–249.

Հրաչ Բարթիկյան

ԾԱՂԿԱԶԱՐԴ, Ծառզարդար, Հայ առաքելական եկեղեցու Տերունի տոներից: Կատարվում է ս. *Զատկից* մեկ շաբաթ առաջ, *Ավագ շաբաթվա* միաշաբթի (կիրակի) օրը: Նվիրված է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին մի քանի դրվագների՝ Երուսաղեմ Հիսուսի հանդիսավոր մուտքի (Մատթ. **21.**1–11, Մարկ. **11.**1–11, Ղուկ. **19.**28–40, Հովհ. **12.**12–19), լումայափոխ և աղավնավաճառ մարդկանցից տաճարի մաքրման (Մատթ. **21.**12–13, Մարկ. **11.**15–19, Ղուկ. **19.**45–48), Ղազարոսին հարություն տալու (Հովհ. **12.**17) հիշատակությանը:

Հիսուսի մուտքը Երուսաղեմ ժողովուրդն ընդունել է խանդավառությամբ՝ ձիթենու և արմավենու ճյուղեր, ինչպես նաև իրենց զգեստները փռելով ճանապարհի վրա և աղաղակելով. «Ովսաննա Բարձրյալին, օրհնեալ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով. օրհնեալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն երկնքում և Փառք բարձունքներում» (Մարկ. **11.**9–10): Համաձայն Եկեղեցու հայրերի ուսուցումների, Հիսուսի առջև հանդերձները նետելը խորհրդանշել է մեղքերի ծածկույթից ազատվելը, որպեսզի Տերը մաքրեր այդ մեղքերը: Ոստեր և ճյուղեր ընծայելը խորհրդանշել է առանձնակի պատիվները և հանդիսավորությունը: Աստվածաշնչում բազմաթիվ են տոնական օրերի առթիվ ձիթենու, արմավենու ճյուղերի գործածության (տոնական օրերի սովորություն) մասին հիշատակությունները: Հրեաները դալար ճյուղերով են նշել Տաղավարահարաց տոնը (Ղևտ. **23.**40): Հնում ձիթենին համարվել է իմաստության, խաղաղության, հաղթանակի և փառքի խորհրդանշան: Հին հույները ձիթենու և դափնու պսակներով են պատվել օլիմպիական խաղերում հաղթած ըմբիշներին: Ձիթենու և արմավենու ճյուղերի ընծայումը Քրիստոսին, որը մեռյալ Ղազարոսին հարություն տվեց, ըստ Եկեղեցու հայրերի, խորհրդանշում էր մահվան հանդեպ հաղթանակը:

Ծ-ի նախօրեին, շաբաթ օրը, կատարվում է Ծ-ի նախատոնակը, բացվում է խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը ժամերգությունից հետո մատուցվում է ս. Պատարագ: Ծ-ի առավոտյան եկեղեցին օրհնում է ձիթենու, իսկ որտեղ ձիթենի չկա՝ ուռենու ոստերը, և բաժանում ժողովրդին: Անցյալում սովորություն էր Ծ-ի օրը եկեղեցում ծառ տեղադրել, մոմերով ու մրգերով զարդարել, իսկ ներկայումս միայն արմավենու, ձիթենու կամ ուռենու ոստերով են զարդարում եկեղեցին: Ծ. ժողովուրդը կոչում է նաև Ծառզարդար: Ինչպես այս երկու անունները, այնպես էլ ժող. ծեսերն ու տոնակատարությունները, սովորություններն ու խաղերը, որոնք տեղի են ունենում Ծ-ի օրը, ծագումնաբանորեն չեն առնչվում քրիստ. տոնի և ավետարանական պատումի հետ: Ծ. հայոց հեթանոս. շրջանի՝ գարնանը նվիրված տոներից մեկն է եղել և այդ տոնակատարությունների ու ծիսակարգի մի մնացորդն է: Խորհրդանշել է գարնան գալուստը, բնության զարթոնքը, Ատիսի, Արայի և գարնան, արթնացող բնության այլ հեթանոս դիցերի միջոցով կապվել գարնանային եղանակի ու ծառի պաշտամունքի հետ: Հիսուսի մուտքը Երուսաղեմ նույնպես տեղի է ունեցել գարնան զարթոնքի շրջանում, իսկ ձիթենու և արմավենու ճյուղերի գործածության ավետարանական հիշատակությունը համընկել է ծառ զարդարելու և բնության ծաղկունքի ժող. տոնակատարության հետ: Ժամանակների և պարագաների այդ նմանությամբ Ծ. միացել է Հիսուսի՝ Երուսաղեմ մտնելու քրիստ. տոնին, փոխանցվել եկեղեցուն և մտել Տոնացույց Ծ. անվանումով:

Երկրորդ Ծ.: Համբարձման տոնին հաջորդող առաջին և ս. Զատկի յոթերորդ կիրակին կոչվում է Երկրորդ Ծ.: Ունի 35 օրվա շարժականություն (մայիսի 3-ից հունիսի 6-ը): Եթե բուն Ծ. խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ, ապա Երկրորդ Ծ. հրեշտակների ուղեկցությամբ Վերին Երուսաղեմ Հիսուսի մուտքի հիշատակությունն է: *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի սահմանած այս տոնը կապված է զուտ ազգ. ավանդության հետ, համաձայն որի, երբ Գրիգոր Լուսավորիչը գտնվել է խոր վիրապում, մի հրեշտակ ամեն օր այցելել է նրան: Համբարձման չորրորդ օրը հրեշտակը չի այցելել: Հաջորդ օրը ս. Գրիգորի այն հարցին, թե ինչո՞ւ նախորդ օրը իրեն չի այցելել, հրեշտակը պատասխանել է, որ Քրիստոսի

Համբարձումը տոնելու համար հրեշտակների ինը դասերը հաջորդաբար տոնախմբություն են կատարում, և ինքը, չորրորդ դասից լինելով, չորրորդ օրը չի ցանկացել իր դասի ուրախություններից բացակայել:

Երկրորդ Ծ-ի օրը նույնությամբ կրկնվում են Ծ-ի ընթերցվածներն ու շարականները:

Երաժշտություն: Շարակնոցում առկա են Ծ-ին նվիրված հետևյալ կանոնները. Սահակ Ա Պարթևին վերագրվող բուն Ծ-ի կանոնը, որի Հարցը XII–XIII դդ. պարականոն է մնացել, և Երկրորդ Ծ-ի հին և նոր կանոնները: Հին կանոնի երգերը (Հարցը և Մեծացուցեն, XII դարից՝ պարականոն) դարձյալ ընծայում են Սահակ Ա Պարթևին, իսկ նոր կանոնի («Մեծահրաշ այս խորհուրդ») հեղինակն է Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը: Ծ-ին նվիրված շարականներն աչքի են ընկնում Հիսուսի Երուսաղեմ մուտքն արտահայտող բերկրալից և ցնծագին բնույթով:

Պատկերագրություն: Հիսուս Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ քրիստ. արվեստում արտացոլվել է դեռևս IV–V դդ.: Հայկ. արվեստում հայտնի հնագույն օրինակը պահպանվել է «*Էջմիածնի Ավետարան*»-ի VI դ. փղոսկրե կազմի վրա:

Պատկերի հորինվածքային կառուցվածքը հետևյալն է. կենտրոնում ներկայացվում է ավանակին նստած Քրիստոսը, նրան հետևում են աշակերտները: Հանդիպակաց կողմում պատկերվում են Երուսաղեմի բնակիչները, որոնցից ոմանք իրենց զգեստները (ըստ միջնադարյան մեկնաբանության՝ իրենց մեղքերը), իսկ ուրիշները՝ ծառերի ճյուղեր են սփռում Տիրոջ ճանապարհին: Երուսաղեմը ներկայացվում է պարսպապատ քաղաքի կամ տաճարի տեսքով, որի ֆոնին էլ հիմնականում պատկերվում են քաղաքի ծերերն ու բնակիչները:

«Մուտք Երուսաղեմ» տեսարանը, պահպանելով թեմատիկ հիմն. կառուցվածքը, ներկայացվում է պատկերագր. մի շարք տարբերակներով (պայմանավորված Ավետարանների տարբեր նկարագրություններով): Մատթեոսի Ավետարանի համաձայն (Մատթ. **21**.2–5), Քրիստոսը պատկերվում է ավանակին նստած, իսկ կողքից գալիս է քուռակը: Մյուս երեք Ավետարաններում քուռակը չի հիշատակվում, ուստի բացակայում են նաև դրա նկարագրությունները: Հիսուսը պատկերվում է երկու հիմն. դիրքով՝ ավանակին բազմած կամ հեծած, դիմացից կամ երեք քառորդ մասով: Ավանակը ներկայացվում է գլուխը խոնարհած կամ բարձր պահած:

Ըստ Մատթեոսի ու Մարկոսի, ձիթենու և արմավենու ոստեր կտրատելու համար քաղաքի բնակիչներից ոմանք ծառ են բարձրանում: Համաձայն Ղուկասի, ծառ է բարձրանում Զաքեոս կարճահասակը Երիքովում՝ Քրիստոսին տեսնելու նպատակով: Մի շարք մանրանկարներում Զաքեոսը պատկերվում է «Մուտք Երուսաղեմ» տեսարանում: Կիլիկյան որոշ մանրանկարներում այս հորինվածքին է կցվում նաև աշակերտների՝ ավանակը բերելու դրվագը:

Որոշ ստեղծագործություններում «Մուտք Երուսաղեմ» տերուն. պատկերը ներկայացվում է որպես զվարթ ժող. տոնախմբություն՝ լիովին նույնացվելով Հայ եկեղեցու Ծ-ի տոնին: Այդ առումով հատկապես ուշագրավ են Վասպուրականի մանրանկարչության դպրոցի օրինակները, որոնցից շատերն ուղղակիորեն կրում են Ծ., Ծառզարդար կամ էլ Արմավենյաց օր խորագրերը:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.2, 4-րդ պատկերը:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1999: Մաթեվոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի ասոմածաբանության, Ս. Էջմիածին, 1995: Chevalier J., Cheerbrant A., Dictionnaire des symboles, P., 1982; Réau L., Iconographie de l'art chrétien, t. 2, P., 1957; Shiller G., Iconography of Christian Art, v. 1, L., 1971.

Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան
Աննա Լեյլոյան

ԾԵՍ, աստվածապաշտություն, խորհրդաբանական գործողություն կամ գործողությունների, արարողությունների շարք՝ արտահայտելու համար որևէ նվիրական, աստվածային երևույթ. հոգևոր պաշտամունքի ձև: Բազմաթիվ Ծ-եր և ծես. արարողություններ են նկարագրված Հին կտակարանի գրքերում, ինչպիսիք են՝ օծման Ծ. (տես *Օծում*), զոհաբերության Ծ. (տես *Պատարագ*), զատկական Ծ. (տես *Զատիկ*) և այլն:

Ծ. նկարագրված է նաև Նոր կտակարանում: Հիսուսն ինքը իր առաքյալների հետ կատարում էր սաղմոսասացություն, օրհներգություն, այսինքն՝ պաշտամունք առ Հայր Աստ-

ված. նա ժողովարան գնաց և ընթերցեց Եսայի մարգարեի գիրքը (Ղուկ. **4.**16–21), կատարեց Հին ուխտով սահմանված Զատիկը (Պասեք), որի ընթացքում, հաց և գինի բաժանելով աշակերտներին, իբրև տերունական մարմնի և արյան խորհուրդ, հորդորեց այն կատարել այնուհետև իր հիշատակի համար. դրանով իսկ հաստատվեց ս. *Հաղորդության* Ծ. կամ ս. Պատարագը (Մատթ. **26.**17–30, Մարկ. **14.**12–25, Ղուկ. **22.**7–20, Հովհ. **13.**21–30, Ա Կորնթ. **11.**23–26):

Ծ. պահպանվել է նաև առաքելական շրջանում. «... և նրանք հարատևում էին առաքյալների ուսուցման, հաղորդության, հացի բեկման ու աղոթքների մեջ» (Գործք **2.**42, տես նաև Գործք **2.**46, **20.**7, 11, **27.**35):

Եկեղեցիների կազմավորման և ճյուղավորման շրջանում յուրաքանչյուր եկեղեցի, պահելով հինկտակարանային և առաքելական շրջանից ավանդված էական Ծ-երը, միաժամանակ նոր հավելումներ է արել՝ պատշաճեցնելով դրանք հիմն. Ծ-երին: Առաջ են եկել հուն., հայկ., ասոր., լատ., ղպտական եկեղեց. Ծ-եր և իրենց հերթին՝ դրանց այլ ճյուղավորումներ:

Հայ եկեղեց. Ծ. սկզբ. շրջանում կատարվել է ըստ հուն. և ասոր. առաքելական ավանդությունների: Գրիգոր Լուսավորչից սկսած, ապա, մասնավորաբար V դարից՝ հայոց գրերի գյուտից և Աստվածաշունչը հայերեն թարգմանելուց հետո, ընդհանրական Ծ., հայացվելով, դարձել է առավել ազգային, օժտվել նոր հավելումներով ու պատշաճեցումներով: Ծ-ի բովանդակային առանցքը կազմող շարականների, աղոթքների խմբագրման և հատուկ դասավորության առումով մեծ դեր են կատարել *Սահակ Ա Պարթև* կաթողիկոսը, *Մեսրոպ Մաշտոցը* և *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսը (տես *Մաշտոց, Հայսմավուրք, Տոնացույց*):

Հայ եկեղեցու Ծ. հարստացել է նաև հետագայում, մասնավորապես VIII, IX, XII դդ.՝ *Ստեփանոս Սյունեցու, Հովհաննես Գ Օձնեցու, Խոսրով Անձևացու*, իսկ կիլիկյան շրջանում՝ *Ներսես Շնորհալու* և *Ներսես Լամբրոնացու* բարենորոգչական ներդրումներով:

Ծ-ի կամ աստվածապաշտության արարողակարգի հիմն. բաղկացուցիչ մասերն են խորհուրդները (տես *Խորհուրդներ եկեղեցական*), *ժամերգությունները, տոները* և *հոգևոր բարեպաշտական արարողությունները*:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Սարգսյան Ս., Հայոց եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 2, 1992: Ժողովրդական ժամագիրք Մեծի Պահոց օրերու (Հրամանաւ Տ.Տ. Գարեգնի առաջնոյ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց), Էջմիածին, 1997:

Լևոն Սարգսյան

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ, Մեծ Հայքի Սյունիք նահանգի Աղահեճք գավառում (այժմ՝ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում), Աղավնո գետի աջ ափին, *Տաթևի վանքին* հարկատու Ծիծառնուվանք գյուղի եզրին: Ծ-ի միաբան Ստեփանոս վանականը որպես վկա ստորագրել է 844-ին Սյունյաց իշխան Փիլիպեի՝ Տաթևի վանքին իր հայրենի Տաթև գյուղը նվիրելու թուղթը: Ստեփանոս արք. Օրբելյանը Ծ. դասել է XIII դ. Սյունյաց նշանավոր վանքերի թվին: 1655-ին Նախիջևանի Գողթն գավառի Ս. Խաչ վանքի վանահայր, եպիսկոպոս, գրահրատարակիչ Թովմա Վանանդեցին Հայաստանի հռչակավոր սրբավայրերին նվիրած իր չափածո ներբողում հիշատակում է Ծ.՝ որպես «մեծ անցյալ» ունեցող: Ծ. բարգավաճել է XVII–XVIII դդ., երբ կառուցվել են պարիսպը՝ կամարակապ մեծ դարպասով (1633), հվ. կողմում՝ սեղանատունը, նորոգվել եկեղեցին (1779): Մինչև XX դ. եղել է գործող վանք (պատկանել է Տաթևի վանքի թեմին՝ «Ծիծեռնակու սուրբ վանք» անունով) և մեծ ուխտատեղի, որտեղ Համբարձման և Սուրբ Խաչի տոներին ողջ Սյունիքից բազմահազար ուխտավորներ են այցելել:

Ծ-ի եկեղեցին իր առանձնահատկություններով և ինքնատիպ հարդարանքով վաղ միջնադարի հայկ. ճարտ-յան կարևորագույն կառույցներից է: Եռանավ բազիլիկ է՝ ուղղանկյուն հատակագծով, չորս զույգ մույթերով, շենքի ծավալում արտաքուստ չեչտված միջին նավով, և հայկ. նույնատիպ կառույցների միակ կանգուն և լավ պահպանված օրինակն է: Բազիլիկն ունեցել է մի քանի շին. փուլեր, որոնցից առաջինն արտաքին պատերի ստորին՝ սրբատաշ բազալտով (7–8 շարք բարձրությամբ) մասն է՝ կառուցված IV դ. (կամ ավելի վաղ. կա տեսակետ, որ Ծ. եղել է եկեղեցու վերափոխված հեթանոս. տաճար): V–VII դդ. հաջորդաբար ավելացվել են պատերի՝ ֆելզիտով վերնամասը, ավանդատները և պայտաձև խորանը՝ սյունազարդ վերնահարկով (բացառիկ է հայկ. եկեղեցիներում), փայտե սյուների փոխարեն՝ կամարաշարերը: Ծ-ի բազիլիկի կարևոր առանձնահատկություններն են արմ. ճա-

կատում մուտք չունենալը (որը հատուկ է հեթանոս. տաճարներին և բնորոշ չէ բազիլիկ եկեղեցիներին), խորանի վերևի կամարակապ սրահը (եզակի է հայկ. ճարտ. մեջ), բեմում լուսամուտ չունենալը, թաղակիր կամարների բացակայությունը ևն: Ի տարբերություն զուսպ արտաքին ճակատների (լուսամուտների երեսակալներ, շրջանագծի մեջ ներառված հավասարաթև խաչեր), ներսը վաղ միջնադարի հայկ. արվեստին հատուկ հարուստ հարդարանք ունի: Մույթերը զարդարված են շախմատաձև ու երկշարք ատամիկներով, ալիքաձև ու պարանահյուս, օձակերպ քանդակներով, ուղղանկյան մեջ ներգծված ութթառագայթանի աստղերով (հանդիպում է հատկապես V դ. 2-րդ կեսում՝ Տեկոր, Երերույք, Փարպի, Ամարաս): Հս. պատին պահպանվել է որմնանկարի մի հատված՝ ողջ հասակով կանգնած երկու սրբերի պատկերով: Բազիլիկի հարդարանքում կարմիր են ներկված որոշ վարդյակներ ու մույթերի խոյակներ:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.3, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Լալայան Ե., Զանգեզուր, ԱՀ, գիրք 4, Թ., 1898: Հասրաթյան Մ., Ծիծեռնավանք, ՊԲՀ, 1980, № 2: Cuneo P., La basilique de Tsitsernakavank (Cicernakavank) dans le Karabagh, “Revue des études arméniennes”, t. 4, 1967.

Մուրադ Հասրաթյան

ԾԻՍԱՄԱՏՅԱՆ, Ծիսական գրականություն, եկեղեցում գործածվող՝ գործնական-արարողական կիրառություն ունեցող սրբազան մատյաններ: *Ծեսի* և դրա հետ կապված Ծ-ի ձևավորումը կապված է Ընդհանրական եկեղեցու՝ որպես վարչ. միավորի, կազմավորման հետ (I դ. վերջ):

Ծ. (առհասարակ ծիսական գրակ-ը) սկզբնավորվել է հին հրեական իրականությունում: Իբրև այդպիսին Հին կտակարանում առկա են ծեսի (գլխավորաբար զոհաբերման և օծման) մի շարք նկարագրություններ (Ղևտ. **9**.3–22, Ա Թագ. **16**.13, Գ Թագ. **18**.31–39 ևն): Նոր կտակարանում (Մատթ. **3**.11, Ղուկ. **3**.21) ու Եպիփան Կիպրացու Ավետարանի մեկնության մեջ (Մատենադարան, ձեռ. № 949, 4750) տրվում են *Պատարագի* և *Մկրտության* վաղագույն նկարագրություններ: Հայ եկեղեցու արարողակարգում առկա են *Ավետարանը* և *Ժամագիրք, Շարակնոց, Ճաշոց, Հայսմավուրք, Տոնացույց, Խորհրդատետր-Պատարագամատույց, Մաշտոց* Ծ-ները: Առաջինները կիրառվում են Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Երեկոյան, Խաղաղական և Հանգստյան ժամասացությունների ժամանակ, իսկ Մաշտոցը՝ անդաստանների դարնանացանն ու աշնանացանը, ջրօրհնեքը, պսակադրությունները, ննջեցյալների թաղումը, մանկանց մկրտությունը կատարելիս: Հայ եկեղեց. մատենագրության մեջ ծեսի մասնակի նկարագրություններ տրվում են *Ստեփանոս Սյունեցու, Խոսրով Անձևացու* և *Ներսես Լամբրոնացու*՝ ժամակարգությանը և Պատարագին նվիրված աշխատություններում:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան
Հակոբ Քյոսեյան

ԾՈՄ, տես *Պահք*:

ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գավառում (այժմ՝ Իրանի Մակու քաղաքից հյուսիս-արևմուտք, Զանգմար գետի ձախ ափին): XIII դ. վերջին հիմնադրել է Զաքարիա եպիսկոպոսը: Հիշատակվում է 1314-ից: Ծ. վ., լինելով Արտազի հայկ. իշխանության մշակութ. կենտրոն, վերելք է ապրել XIV դ. I-ին կեսին, երբ այստեղ է հաստատվել *Հովհաննես Երզնկացին* (Ծործորեցի): Բացվել են բարձրագույն դպրոց, գրչության կենտրոն, գրվել և թարգմանվել են աստվածաբան. երկեր ու մեկնություններ, ընդօրինակվել ձեռագրեր: Հովհաննես Երզնկացին այս վանքում է գրել «Մեկնութիւն մարգարեութեանն Դանիէլի», «Մեկնութիւն Մատթէի Ավետարանին», «Համառօտ տեսութիւն քերականի» երկերը, քարոզներ, չափածո ստեղծագործություններ ևն: 1316-ին Զաքարիա եպիսկոպոսը և Հովհաննես Երզնկացին մասնակցել են *Ադանայի եկեղեցական ժողովին*:

Ծ. վ. XIV դ. դարձել է միարարական շարժման (տես *Ունիթորություն*) կենտրոն: Վանքին կից բացված դպրոցում գիտամանկավարժ. աշխատանք է կատարել Ֆրա Պոնցիուս վարդապետը: Ծործորի բարձրագույն դպրոցում հայերեն են թարգմանվել եվրոպ. սխոլաստիկայի անվանի ներկայացուցիչներ Նիկողայոս Լյուբրացու, Թովմա Աքվինացու, Բոնավենտուրայի երկերը:

Ծ. վ. գործել է մինչև XVII դ. վերջը: 1995-ին Ծ. վ-ի Ս. Աստվածածին խաչաձև գմբեթավոր եկեղեցին (1298–1314, կառուցված է

սրբատաշ քարով), Մակուում արհեստական լիճ ստեղծելու կապակցությամբ, իրանահայ ճարտ. Վ. Առաքելյանի նախաձեռնությամբ ու միջոցներով, տեղափոխվել է բարձրադիր վայր, Բարոն գ. մոտ:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Խաչիկյան Լ., Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, ԲՄ, № 11, 1973: *Аракелян В., Архитектура монастыря Цорцор, "Четвертый международный симпозиум по армянскому искусству", Тезисы докладов, Е., 1985.*

Մուրադ Հասրաթյան

ԾՈՒԽ, ընտանիք, լայն իմաստով՝ հայ հոգևորականի իրավասության տակ գտնվող ընտանիքների, բնակավայրերի ամբողջություն, որի սահմանները որոշում է թեմական առաջնորդը կամ թաղական խորհուրդը: Ծ. ունենում է եկեղեցի ու քահանա, հոգում իր եկեղեցու և սպասավորների՝ ծխատեր քահանայի, դպրապետի և այլոց նյութ. կարիքները: Ծխատեր քահանան, թեմական առաջնորդի արտոնությունն ստանալով, դառնում է եկեղեցու ներկայացուցիչն իրեն վստահված Ծ-ի շրջանում: Նա կատարում է ընտանիքների կամ անհատների համար նախատեսված եկեղեցական արարողությունները՝ տնօրհնեք, կնունք, թաղում, խոստովանություն, հաղորդություն, նաև նշանդրեք և պսակ:

Ծ. ունի իր ծխական դպրոցը, գումարում է ժողովներ, որտեղ ընտրում են հոգաբարձություն և սահմանում ծխահարկ:

Անդրանիկ Զեյթունյան

«ԾՈՒՂՐՈՒԹԻ ԱՎԵՏԱՐԱՆ», հայերեն մագաղաթե ձեռագիր մատյան: Ընդօրինակվել է 974-ին: Գրչության վայրը և մանրանկարիչը հայտնի չեն: Գրիչը Հովհաննես է, հիշատակարանի հեղինակը և ձեռագրի ստացողը՝ Եղիա քահանան: Ձեռագիրը գտնվում է Վրաստանի Հանրապետության Ախալցխայի շրջանի Ծուղրութ գյուղում: «Ծ. Ա.» հայ միջնադարյան արվեստում նշանակալից է նախ՝ հնագրության և ապա՝ մանրանկարչության առումով: Ձեռագրում ներկայացված՝ Հիսուսի կյանքը պատկերող մանրանկարաշարը ուշագրավ է պատկերագրության հնամենի առանձնահատկություններով: Ոճական առումով հայկ. մանրանկարչության, այսպես կոչված՝ «ժողովրդական ուղղությանը» հարող այդ մանրանկարները բնորոշը պարզ, անգամ պարզունակ միջոցներով արտահայտչականության և անմիջական տպավորության հասնելու ձգտումն է:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.3, 4-րդ պատկերը:

Գրկ. Հովսեփյան Գ., Գրչութեան արվեստը հին հայոց մէջ, մաս 3, Վաղ-պատ, 1913, էջ 22–24: Նույնի, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Անթիլիաս, 1951, էջ 129–130:

Հրավարդ Հակոբյան

Կ

ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅՈՒՆ (< հուն. *κάθολικότητα* – ընդհանրականություն), *քրիստոնեության* հիմնական ուղղություններից: Կ-յան սաղմերը երևան են եկել դեռևս IV դ., երբ Արևմուտքի միակ՝ Հռոմի աթոռը, որի գլուխ կանգնած էր Հռոմի եպիսկոպոսը (պապ), իր իրավասությանը ենթարկելով Արևմուտքի եկեղեցիները, ձգտել է Արևելքում ևս տարածել իր գերիշխանությունը: Արևմուտքում ձեռք բերելով գերիշխող դիրք և հեղինակություն՝ Հռոմի աթոռը սկսել է իրեն բարձր դասել տիեզեր. մյուս աթոռներից (Կ. Պոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ) և միջամտել Արևելքի եկեղեց. գործերին: 451-ի *Քաղկեդոնի ժողովը* և քրիստոնյա Արևելքին պարտադրած դավան. նորամուծությունն Արևելքում գերիշխանության հասնելու Հռոմի աթոռի դրսևորումներից էր, որը հանգեցրել է *Ընդհանրական եկեղեցու* պառակտման (տես *Արևելյան ուղղափառ եկեղեցիներ*): Քաղկեդոնի ժողովից հետո, մինչև 518-ը, երբ բյուզ. կայսր Հուստինոս I-ը Քաղկեդոնի հանգանակը հռչակել է պաշտոն. դավանանք, Արևմուտքն ու Արևելքը կրոն. վեճերի մեջ էին, և փաստորեն Հույն և Հռոմի եկեղեցիներն այդ շրջանում բաժանված էին: Հակասություններն ավելի են սրվել VII–IX դդ.: Հռոմի նկրտումներն ավելի ցայտուն են դարձել IX դարից, երբ ձևավորվել է պապականությունը, նրա վարչ. և դաղափար. հիմքերը: Հռոմը կարողացել է ձեռք բերել նաև քաղ. իշխանություն, և 756-ին ստեղծվել է կրոնապետություն՝ Պապական մարզը: Հռոմի պապերի նկրտումներն Արևելքի նկատմամբ հանդիպել են Կ. Պոլսի պատրիարքների (Փոտ, Նիկողայոս Միստիկոս, Միքայել Կերուլարիոս) հակազդեցությանը: 867-ին Կ. Պոլսի ժողովում Հույն եկեղեցին խզել է իր կապերը Հռոմի եկեղեցուց: Այդ խզումը շարունակվել է որոշ ընդհատումներով և իր վերջնակետին հասել 1054-ին, երբ Հռոմն ու Կ. Պոլիսը փոխադարձաբար նզովվել են միմյանց և վերջնականապես բաժանվել: Բաժանման դավան. առիթը Արևմուտքի ընդունած «և Որդւոյ» (Filioque) վարդապետությունն էր, ըստ որի՝ Ս. Հոգին բխում է Հորից և Որդուց: Դրանով քրիստ. եկեղեցում առաջացել է նոր բաժանում՝ արևմտյան կաթոլիկական և արևելյան երկաբնակ ուղղափառ (օրթոդոքս): Այդ ժամանակվանից էլ ձևավորվել է Կ. որպես դավանանք և եկեղեց. կազմակերպություն:

Հռոմի կաթոլիկ եկեղեցու գլուխը Հռոմի պապն է, որի նստավայրը՝ Վատիկանը, 1929-ին ճանաչվել է առանձին պետություն: VIII դ. ստեղծված Պապական մարզը մինչև 962-ը եղել է Ֆրանս. Կարոլինգների թագավորության, այնուհետև՝ Հռոմ. սրբազան կայսրության կազմում: XIII դ. Պապական մարզը դարձել է կայսրերից անկախ, իսկ 1274-ին պաշտոնապես ճանաչվել ինքնիշխան պետություն: Պապությանը լուրջ հարված է հասցրել Ֆրանս. թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկը, որը պապի աթոռանիստը Հռոմից տեղափոխել է Ավինյոն (1309–77): Այդ շրջանը պատմության մեջ հայտնի է պապերի «Ավինյոնյան գերություն» անունով: XVI–XVIII դդ. Պապական մարզում

հաստատվել է բացարձակապետություն, իսկ XIX դ. մտել է միավորված Իտալ. թագավորության մեջ և դադարել գոյություն ունենալուց:

XI դ. Կաթոլիկ եկեղեցին ընդարձակել և ամրապնդել է իր դիրքերը, Հռոմի աթոռն իր շուրջն է համախմբել Արևմուտքի բոլոր եկեղեցիները: Արևմուտքում հաստատվել է Հռոմի պապի բացարձակ դերիշխանությունն ու հեղինակությունը հավատի և կրոնաեկեղեց. հարցերում, վճռորոշ դերակատարությունը քաղ. խնդիրներում: Հռոմի կաթոլիկ եկեղեցին, ձգտելով տարածվել Արևելք, ձեռնարկել է խաչակրաց արշավանքներ (XI–XIII դդ.), ստեղծել ասպետական օրդեններ (Հիվանդախնամների կամ Հյուրընկալների, Տաճարականների, Տևտոնական), կրոն. միաբանություններ (Ճիզվիտական, Դոմինիկյան, Ֆրանցիսկյան, Կարմելյան ևն), Կաթոլիկ եկեղեցու հակառակորդներին, հերետիկոսներին, ազատամիտներին, ժող. շարժումները հալածելու, ճնշելու և պատժելու համար XIII դ. ստեղծել է ինկվիզիցիա (հավատաքննություն), պայքարել *բողոքականության* դեմ:

Հռոմը փորձել է ամենատարբեր եղանակներով Կ. տարածել Հայաստանում, սկզբում՝ Կիլիկյան Հայաստանում Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միության փորձերով, ապա՝ XIV դ. սկզբից բուն Հայաստանում՝ *ունիթորության* միջոցով (տես նաև *Միսիոներություն*): Արևելքում Հռոմի քաղաքականությունը հանգեցրել է Հռոմի կաթոլիկ եկեղեցուն միացած (Uniate) Արևելյան պատրիարքությունների և եկեղեցիների կազմավորմանը, որոնցից է նաև *Հայ կաթողիկե եկեղեցին*:

Կաթոլիկ եկեղեցին ավանդ. մյուս եկեղեցիներից տարբերվում է դավան., վարդապետ., ծիսական, եկեղեց. կառավարման, կազմակերպականոնական յուրահատկություններով: Ունի խիստ կենտրոնացված նվիրապետական կարգ: Կաթոլիկ եկեղեցու գլուխը Հռոմի պապն է, որի լրիվ տիտղոսն է՝ Հռոմի եպիսկոպոս, Հիսուս Քրիստոսի տեղապահ, առաքյալների իշխանի ժառանգորդ, տիեզերական եկեղեցու դերագույն պոնտիֆիկ, Արևմուտքի պատրիարք, Իտալիայի գահերեց եպիսկոպոս (պրիմաս), Հռոմ. գավառի արքեպիսկոպոս և մետրոպոլիտ, Վատիկան քաղաք-պետության միապետ, Աստծո ստրկաց ստրուկ: Համարվում է Պետրոս առաքյալի տեղապահ ժառանգորդը: Հատկանշական է պապի՝ որպես Տիեզերական եկեղեցու գլխի ընկալումը (մյուս եկեղեցիների համար Տիեզերական եկեղեցու գլուխն Աստված է). Քրիստոսն իր եկեղեցին որպես ժառանգություն հանձնել է Պետրոս առաքյալին, նա էլ՝ իր հաջորդներին (իմա՝ պապերին), այստեղից էլ՝ պապը երկրի վրա Աստծո տեղապահը և քրիստոնյա մյուս եկեղեցիների գլխավորն է: Պապի ու Աստծո միտքը և կամքը մեկ են, հետևաբար՝ նա եկեղեցու միապետն է և դերագույն դատավորը, ունի հրեշտակներից, սրբերից և *տիեզերական ժողովներից* բարձր իշխանություն, անհնար է, որ մեղք կամ սխալ գործի (1869–70-ի Վատիկանի I ժողովն ընդունել է պապի անսխալականության դոգման): Պապին կից գործում են նրա վարչ. հիմնարկների պաշտոնյաներից կազմված կուրիան և կարդինալների Կոլեգիան, որի ամբողջությունը Կոնսիստորիան (ժողով) է: Պապի մահվան դեպքում նրա հաջորդին ընտրող արտակարգ ժողովը կոչվում է կոնկլավ (կողպված կամ դռնփակ սենյակ): Կոնկլավը սահմանվել է Լիոնի II ժողովում (1274): Հավաքվում է պապի մահվանից հետո 11-րդ օրը և ընտրում պապ ձայների 2/3 մեծամասնությամբ ու ևս մեկ ձայնով:

Կարդինալի տիտղոսը շնորհում է պապը: 1059-ին և 1179-ին կարդինալներին է վերապահվել պապին ընտրելու իրավունքը, որը հետագայում վերածվել է միայն կարդինալների միջից պապ ընտրելու իրավունքի: Ուրբանոս VI-ը (1378–89) վերջին պապն էր, որ ընտրվել է ոչ կարդինալների թվից: Գոյություն ունի կարդինալների երեք աստիճան՝ կարդինալ-եպիսկոպոս, կարդինալ-քահանա և կարդինալ-սարկավագ: Կարդինալներն աշխատում են կոնգրեգացիաներում (սուրբ ժողովներում), որոնք վարչ. և դատ. մարմիններ են, ունեն իրենց գրասենյակները և վճռում են հավատի, դավանության, իրավունքի, բարոյականության, սրբադասման և այլ հարցեր: Մի շարք կարևոր կոնգրեգացիաներում նախագահում է անձամբ պապը: Հռոմից դուրս, մշտական կամ ժամանակավոր լիազորությամբ, գործում են պապի ներկայացուցիչներ՝ առաքելական փոխանորդներ, նվիրակներ, դիվանագիտ. ներկայացուցիչներ (լեգատ): Պատրիարք, մետրոպոլիտ և արքեպիսկոպոս կոչումները դարձել են պատվանուններ և գործնական արժեք չունեն: Թեմական առաջնորդ-եպիսկոպոսներին օծում է միայն պապը: Նրանք կառավարում են պապին տված հնազանդության երդումով և իրենց աս-

տիճանով ցածր են բոլոր կարգի կարդինալներից: Պապը հրավիրում է Կաթոլիկ եկեղեցու «տիեզերական» ժողովներ, հղում էնցիկլիկներ (կոնդակներ): Կաթոլիկ եկեղեցուն հատուկ երևույթ են «գինվոր»-միաբանությունները, որոնց վանքերը թեմական իշխանություններին ստորադաս չեն և ենթարկվում են հիմնականում Հռոմում նստող իրենց գլխավորներին (գեներալ): Վանականները ճգնակյաց չեն, կատարում են եկեղեց-հաս. պարտականություններ:

Կ-յան գաղափարական հիմքը Օգոստինոս Ավրելիոս Երանելու (IV–V դդ.), Թովմա Աքվինացու (XIII դ.) և այլոց ուսմունքներն են: Կ. ընդունում է ինդուլգենցիան (մեղքերի քավության շնորհագիր) և քավարանի (պաշտոնապես ճանաչվել է Ֆլորանսի ժողովում՝ 1439-ին) գոյությունը, բոլոր կարգի հոգևորականների կուսակրոնությունը, Աստվածամոր մարմնավոր համբառնումը: Ինքնատիպ է Սուրբ Երրորդության, եկեղեց. խորհուրդների մեկնաբանումն ու կիրառումը, օծումն արվում է մկրտությունից զատ՝ նվազագույնը ութամյա (գիտակից) տարիքում, հոգևորականների և աշխարհականների հաղորդության ձևերն ու եղանակները տարբեր են (գինու մեջ ջուր են խառնում, աշխարհականներին հաղորդություն տալիս միայն հացով, իսկ գինին վերապահում եկեղեցականներին ևն): Կաթոլիկ եկեղեցին ընդունում է գոյափոխությունը (տրանսսուբստանցիացիա), այսինքն՝ *Պատարագի* ժամանակ հացն ու գինին փոխվում են մեկ այլ գոյացության՝ Քրիստոսի մարմնի և արյան (պաշտոնապես հաստատվել է Լատերանի IV ժողովում՝ 1215-ին), սուրբ խորհուրդ է համարում ոչ թե եկեղեց. պսակը, այլ՝ հենց ինքնին ամուսնությունը, իսկ ամուսնացողներին՝ խորհուրդն իրականացնողներ: Պսակը բոլոր դեպքերում անքակտելի է, ամուսնալուծությունը՝ անհնար: Նույնպիսին է նաև հոգևորականի կարգաթողությունը, զանցառու կամ մեղավոր հոգևորականը միայն զրկվում է գործելու իրավունքից: Կաթոլիկ եկեղեցին ունի սեփական տոնացույց (Քրիստոսի սրտի, մարմնի ևն) և մեծ մասամբ միջին դարերում ձևավորված սրբարան (օր., կաթոլիկ միաբանությունների հիմնադիրներ Իգնատիոս Լայոլա, Ֆրանկիսկոս Ասսիզցի, Դոմինիկոս Գուսման և այլք): Ընդունում է Մարիամ Աստվածածնի անարատ հղության վարդապետությունը (ընդունվել է 1854-ին): Ունի «տիեզերական» ժողովների սեփական ցանկ (թվով՝ 21): Ընդունում է երկաբնակությունը (տես *Քաղկեդոնականություն*) և Քաղկեդոնի ժողովի հանգանակը:

Կ. տարածված է և միլիոնավոր հետևորդներ ունի հիմնականում Եվրոպայում (հզոր է հատկապես Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Ավստրիայում, Լեհաստանում), Լատ. և Կենտր. Ամերիկայում: Եռանդուն միսիոներ. գործունեության շնորհիվ բավական տարածված է նաև Հս. Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում, Ավստրալիայում:

Գրկ. Գաթըրճյան Հ., Հիմնական տարբերութիւն կաթուղիկէ եւ էջմիածնական դաւանութեանց, ԿՊ, 1864: *Болотов В. В., История церкви в период вселенских соборов, лекция по истории древней церкви, т. 3, СПБ, 1913; Лозинский С. Г., История папства, М., 1961; Мчедлов М. П., Католицизм, М., 1974; Задворный В. Л., История Римских пап, т. 1, 2, М., 1995, 1997.*

ԿԱԹՈՂԻԿԵ, 1. աթոռանիստ եկեղեցի, մայր եկեղեցի: Այդ անունը հատուկ տրվել է *Էջմիածնի Մայր տաճարին*: 2. Հայկական ճարտարապետությանը բնորոշ՝ բարձր թմբուկով և սրածայր վեղարով գմբեթ: Հայաստանում մայր եկեղեցիները գմբեթավոր են եղել, և նրանց օրինակով Կ. են կոչել նաև *գմբեթ* ունեցող եկեղեցիներն ընդհանրապես: Գմբեթի Կ. անվանումը աստվածաբանության մեջ համարվել է եկեղեցու հոգևոր ընդհանրականության տեսանելի խորհրդապատկերը:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Մուրադ Հասրաթյան

ԿԱԹՈՂԻԿՈՍ (հուն. *καθολικός* – ընդհանրական, համընդհանուր), քահանայապետ, հայրապետ, եպիսկոպոսապետ, Արևելյան մի շարք եկեղեցիների [Հայ, Վրաց, Ասորաց, Մալաբարի (Հնդկաստան), Նեստորական ասորիների] գերագույն հոգևոր պետի տիտղոսը: Հայ իրականությունում Կ. համարվում է *Թադեոս, Բարդուղիմեոս* առաքյալների և *Գրիգոր Ա Լուսավորչի* իրավահաջորդը և նրանց իշխանության ժառանգորդը: Կ. տերմինը սկսել է գործածվել V դ. կեսից: Կ. տնօրինում է եկեղեցու վարչատնտ., հոգևոր-բարոյական, ծիսական, դավան. բոլոր հիմն. հարցերը: Նրա անմիջական և առանձնաշնորհյալ իրավասություններն են եպիսկոպոս ձեռնադրելը և *Մյուռոն* օրհնելը: Կ. իրավասու է նաև

հրավիրել ազգ-եկեղեց. ժողով, նշանակել և ազատել թեմական առաջնորդներին կամ վավերացնել նրանց ընտրությունը, պատժել կարգազանց հոգևորականներին (ընդհուպ՝ կարգալույծ անելը): Սկզբ. շրջանում, քանի դեռ կային ժառանգներ, կաթողիկոս. աթոռին բազմել են Գրիգոր Ա Լուսավորչի տան ներկայացուցիչները (325–373, ձեռնադրվել են Կեսարիայում), հետագայում, ժառանգներ չլինելու պատճառով, այս կարգը խախտվել է քրմական ծագում ունեցող Աղբիանոսի տան (տես *Աղբիանոսյաններ*) ներկայացուցիչ Շահակ Ա Մամազկերտցու աթոռակալությամբ (373–377): IV դ. ընթացքում Կ-ները ժառանգաբար պաշտոնի են կոչվել գլխավորապես թագավորների կամքով և օժանդակությամբ, սակայն V դ. կեսից քաղ. կացության կտրուկ վատթարացումը, մասնավորապես պետականության կորուստը, հարկադրել է հայ նախարարներին և եպիսկոպոսներին ստեղծել համատեղ խորհուրդներ կամ ժողովներ, որոնց իրավասությամբ է ընտրվել Կ.: Ռուս. կայսրության օրոք, Հովհաննես Ը Կարբեցուց (1831–1842) սկսած, կաթողիկոս. պաշտոնը հաստատել է ցարը: Այդ կարգը պաշտոնականացվել է 1836-ին ընդունված կանոնադրությամբ՝ «*Պոլոժենիե*»-ով, ինչը զգալիորեն սահմանափակել է Կ-ի իշխանությունը:

Կ-ներին պաշտոնի են կոչել կա՛մ տիրող քաղ. իշխանությունը, կա՛մ ողջ հայ ժողովուրդը ներկայացնող Ազգային-եկեղեց. ժողովի պատգամավորները: Կ-ի պաշտոնը ցմահ է: Ազգային-եկեղեց. ժողովը կարող է դահընկեց անել Կ-ին բացառապես դավան. շեղումների դեպքում: Ընտրվելու իրավունքով կաթողիկոս. ընտրություններին կարող են մասնակցել բոլոր եպիսկոպոսները, իսկ որոշ նախադրյալների առկայության պարագայում՝ նաև աշխարհականները (*Ներսես Ա Մեծ, Զաքարիա Ա Զագեցի*): Կ. կարող են ձեռնադրել տասներկու կամ նվազագույնը՝ երեք եպիսկոպոսներ: Ձեռնադրությունից հետո կատարվում է Կ-ի *օծում* սրբալույս Մյուռոնով՝ ավագագույն արքեպիսկոպոսի և ներկա եպիսկոպոսների ձեռքով: Վախճանվելու դեպքում Կ-ի իրավասությունները, որոշ սահմանափակումներով, ստանձնում է Եպիսկոպոսաց ժողովի ընտրած կաթողիկոս. տեղապահը:

Կ-ները եկեղեց. գործունեության շրջանակից դուրս օժտվել են նաև քաղաքացիական, դատական ատյանի լիազորություններով, տնօրինել են մշակութ., կրթ. կյանքին առնչվող խնդիրներ: Հատկապես հայոց պետականության չգոյության պայմաններում Կ-ները դարձել են երկրի կենտր. անձը և ստանձնել նաև համապատասխան քաղ. իրավասություններ (բանակցություններ վարել, պատվիրակություն ընդունել, բանագնացներ առաքել ևն): Օտարների տիրապետության շրջանում, երբ չեչտված դրսևորվել են ներքին ուժերի կենտրոնախույս հակումները, Կ-ներից շատերը դարձել են հայ ժողովրդին միավորող կարևորագույն գործոն և աջակցել նրա մղած ազատագր. պայքարին:

Քաղ. անբարենպաստ պայմանների թելադրանքով հայոց ընդհանրական Կ-ի նստավայրը բազմիցս փոխվել է (տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*): 1441-ից ի վեր Կ-ի նստավայրը գտնվում է Ս. Էջմիածնում: Ս. Էջմիածնի ընդհանրական Կ. կոչվում է Ամենայն հայոց (այդ տիտղոսը սկսել է գործածվել X դարից, տարածում ստացել՝ XV դարից, պաշտոնապես կիրառվել՝ XIX դարից, *Ներսես Ե Աշտարակեցու* օրոք): Ներկայիս տիտղոսն է Ծայրագույն պատրիարք և Կ. ամենայն հայոց:

Պատմաքաղ. անբարենպաստ հանգամանքների բերումով XVI դարից Կ-ներին կից գործել են «աթոռակից» Կ-ներ, որոնց ներկայությունն ապահովել է եկեղեց. առաջնորդության անվտանգ հարատևումը [Դավիթ Դ Վաղարշապատցի կաթողիկոսը (1590–1629), քաղ. կացությունից ելնելով, 1593-ին աթոռակից Կ. է ձեռնադրել Մելքիսեդեկին]: Եղել են դեպքեր, երբ օրինավոր Կ-ի հետ միաժամանակ, մի այլ վայրում, պաշտոնավարել է հակաթոռ Կ., որի հոգևոր և եկեղեցավարչ. գերագույն իշխանությունն էլ կոչվել է հակաթոռ կաթողիկոսություն:

Կ-ի տարազը հիմնականում համապատասխանում է եպիսկոպոսական զգեստին, այն տարբերությամբ, որ Կ.՝ իբրև գերագույն իշխանության մարմնավորում, իրավունք ունի կրելու նաև հայրապետական ասա (տես *Գավազան*) և կոնքեռ (տես *Զգեստ* եկեղեցական): Կ-ին անմիջապես դիմելու հարգելի ձևը «Վեհափառ Տեր» կամ «Վեհափառ» մակդիրն է: Կ-ի նստավայրը կոչվում է Վեհարան:

1999-ից Ամենայն հայոց հայրապետը *Գարեգին Բ Ներսիսյանն* է:

Գրկ. Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ..., Վնտ., 1847, էջ 83: Գրիգոր Տաթեվացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, ԿՊ, 1741, էջ 52: Մագուստ-

յան Գ., Ընտրեալք Աստուծո. Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը, Ե., 1995:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ, Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետության բարձրագույն աստիճանը, նաև՝ հոգևոր և եկեղեցավարչական գերագույն իշխանությունը Արևելքի քրիստոնեական մի շարք եկեղեցիներում (Հայ, Վրաց, Ասորաց, Հնդկաստանի Մալաբարի, նեստորական ասորիների): Կ. գլխավորում և կառավարում է *կաթողիկոսը*: Կ-յան գործերն իրականացվում են կաթողիկոսարանի (Հայոց մոտ՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի) միջոցով: Հայոց պաշտոնական Կ. հիմնվել է 302-ին, Վաղարշապատում, կոչվել է նաև քահանայապետություն, եպիսկոպոսապետություն, հայրապետություն: XIV–XV դդ-ից կոչվում է Ամենայն հայոց Կ.: Պատմաքաղ. դեպքերի բերումով Հայոց Կ-յան նստավայրը հաճախ է տեղափոխվել (տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*): Ստեղծվել են Հայոց Կ-յան հետ միաժամանակ գործող Կ-ներ, որոնք կոչվել են հակաթոռ (*Ավանի կաթողիկոսություն, Աղթամարի կաթողիկոսություն* ևն): Գոյություն ունեն նաև Կիլիկիայի (տես *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո*), հայ կաթոլիկների (տես *Հայ կաթողիկե եկեղեցի*), ինչպես նաև Արևելքի քրիստ. մի շարք եկեղեցիների (Վրաց, Ասորի Հակոբիկյան, Հնդկաստանի Մալաբարի, նեստորական ասորիների) Կ-ներ:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, Քահանայապետություն հայոց, Եպիսկոպոսապետություն հայոց, Կաթողիկոսություն հայոց Մեծաց, Հայրապետություն հայոց, Ընդհանրական հայրապետություն հայոց, Հայրապետություն ամենայն հայոց, Հայոց կաթողիկոսություն, *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* հոգևոր և նվիրապետական գերագույն իշխանությունը: Պաշտոնապես հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*՝ քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակելուց (301) հետո՝ 303-ին, Վաղարշապատում, երբ կառուցվել է կաթողիկոսանիստ Ս. *Էջմիածնի Մայր տաճարը*, և ինքն էլ դարձել է Հայոց առաջին հայրապետը: Կաթողիկոս. աթոռի հաստատումով գահակալող կաթողիկոսի հոգևոր իշխանության տակ են անցել Մեծ ու Փոքր Հայքերի բոլոր հայ քրիստոնյա համայնքները: Նրան «ի հոգևորս» են թարկվել են նաև Վրաց ու Աղվանից եկեղեցիները, սակայն VII դ. սկզբին *Վրաց եկեղեցին* բաժանվել է Հայ եկեղեցուց և ընդունել *քաղկեդոնականություն*, մինչդեռ *Աղվանից եկեղեցին* հայացել ու հետագայում իր գոյությունը շարունակել է որպես Գանձասարի կաթողիկոսություն (մինչև 1813-ը, որից հետո կոչվել է մետրոպոլիտություն, իսկ նրա թեմերն անցել են Ս. Էջմիածնի ենթակայության ներքո): Կ.ա.Հ. անվանումը տարածում է ստացել XV դարից, երբ Հայաստանում և նրանից դուրս տարբեր ժամանակներում կազմավորված նվիրապետական աթոռները և հակաթոռ կաթողիկոսությունները, ինչպես նաև հայ գաղթավայրերի եկեղեց. բազմաթիվ թեմեր աստիճանաբար ճանաչել են նրա գերագահությունը: Հոգևոր-եկեղեց. գործերից զատ Կ.ա.Հ. մասնակցել է ազգ., մշակութ., իրավական, տնտ., հաճախ նաև՝ քաղ. կյանքին, դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում իր վրա վերցրել ազգի գոյատևման կարևոր առաքելությունը:

Աթոռի գոյության առաջին շրջանը համընկել է Հայոց Արշակունյաց հարստության գահակալության վերջին տասնամյակների հետ: Այդ շրջանում Կ.ա.Հ. իր հիմն. գործունեությունը կենտրոնացրել է քրիստ. քարոզչության, եկեղեց. կազմակերպության ամրապնդման, թեմերի ստեղծման, ինչպես նաև կրթության, լուսավորության և բարեգործ. աշխատանքների վրա: Հայոց կաթողիկոս *Ներսես Ա Մեծի* գահակալության տարիները (353–373) նշանավորվել են բարեգործ. հաստատությունների հիմնադրմամբ: Կ.ա.Հ-ի անմիջական հովանավորությամբ հիմնվել են խնամակալական հաստատություններ՝ հիվանդանոցներ, ծերանոցներ, բորոտանոցներ, իջևանատներ, դպրոցներ, ընդարձակվել են եկեղեց. տիրույթները: Այդ ժամանակ էլ մեծացել է Կ.ա.Հ-ի հաս. և քաղ. դերը. նա միջամտել է արքունի պետ. գործերին, մասնակցել երկրի ներքին ու արտաքին քաղ. կյանքին:

387-ին Հայաստանի մասնատումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, ապա 391-ին բյուզ. հատվածում Հայոց թագավորության վերացումը, իսկ պարսկ. մասում պետության անկախության դեմ ուղղված սպառնալիքը նոր խնդիրներ են առաջադրել, և Կ.ա.Հ. իր ջանքերն ուղղել է հայ ժողովրդին եկեղեցու շուրջ

ԿԱԹՈՂԻԿՈՍ. համախմբելու, ժողովրդի ու եկեղեցու ինքնուրույնությունը պահպանելու, արտաքին ազդեցություններից զերծ պահելու գործին: Քաղ. նման պայմաններում Կ.ա.հ. պետ. իշխանության աջակցությամբ եռանդուն քայլերի է դիմել, որոնց մեծագույն արդյունքը եղավ հայ գրերի գյուտը և հայերեն գրականության ստեղծումը: Ազգ-քաղ. ծանր պայմաններում, Կ.ա.հ-ի ջանքերով և պետության հովանավորությամբ, գրերի գյուտից անմիջապես հետո կերտվել է հայ մշակույթի Ոսկեդարը: Կյանքի են կոչվել ուսումնագիտ. և մշակութ. մի շարք ձեռնարկումներ, բացվել հայալեզու ուսուցմամբ դպրոցներ, դրվել է հայատառ ազգ. դպրության հիմքը, թարգմանվել Աստվածաշունչը և անտիկ ու քրիստ. գրականության բազմաթիվ երկեր: V դ. 2-րդ քառորդից, երկրի քաղ. վիճակի վատթարացման պայմաններում, Հայոց կաթողիկոսությունը *Սահակ Ա Պարթևի* գլխավորությամբ մեծ ջանքեր է գործադրել հայկ. պետականությունը պահպանելու, նախարարների կենտրոնախույս նկրտումները զսպելու համար: Հայաստանի պարսկ. մասում Հայոց Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո Կ.ա.հ. հանձն է առել ազգ. գերագույն իշխանությունն իրականացնելու առաքելությունը, պետականության բացակայության պայմաններում դարձել հայ նախարարություններին միավորող կենտրոն, ազգ. հավաքականությունը ներկայացնող կառույց: Պարսկ. տիրապետության ներքո Կ.ա.հ. կարողացել է պահպանել երկրի ներքին ինքնուրույնությունը և քրիստ. հավատքը լավագույնս օգտագործել՝ ուծացում թույլ չտալու համար: Կ.ա.հ. գլխավորել է V դ. ազգ-ազատագր. զինված պայքարը պարսկ. տիրապետության դեմ՝ հանձինս *Հովսեփ Ա Հողոցմեցի, Գյուտ Ա Արահեզացի* և *Հովհաննես Ա Մանդակունի* հայրապետների:

Կ. ա. հ. գլխավորել է Հայ եկեղեցու պայքարը դավանաբան. վեճերի ընթացքում՝ անմասն չմնալով նաև *Ընդհանրական եկեղեցու* գլխ. հիմնահարցերը լուծելու աշխատանքներից: Գրիգոր Ա Լուսավորչի որդին՝ *Արիստակես Ա Պարթևը*, մասնակցել է *Նիկիայի Ա տիեզերական ժողովին* (325) և իր ստորագրությունը դրել ժողովի որոշումների տակ: Կ. ա. հ. ընդունել է նաև Կ. Պոլսի Բ (381) և Եփեսոսի Գ (431) տիեզերաժողովների դավան. որոշումները: Ավելի ուշ Կ.ա.հ. պայքար է մղել նաև Ընդհանրական եկեղեցին պառակտող հերետիկոսական վարդապետությունների՝ *եվտիքականության* և *նեստորականության* դեմ: Հետագայում Կ.ա.հ. մերժել է *Քաղկեդոնի ժողովի* (451) որոշումները՝ Հայ եկեղեցին զերծ պահելով նորամուտ վարդապետություններից, սատար է կանգնել հայ ժողովրդի անկախությանն ու հոգևոր-եկեղեց. ինքնուրույնությանը: Հայ եկեղեցու դավանանքը, ծիսակարգը, պաշտամունքը անաղարտ և ուղղափառ հիմքերի վրա պահելու, դրանք կանոնակարգելու և եկեղեցու դիրքորոշումը հստակեցնելու համար գումարել է եկեղեց. ժողովներ (*Աշտիշատի եկեղեցական ժողովներ, Շահապիվանի եկեղեցական ժողով 444, Դվինի եկեղեցական ժողովներ, Մանազկերտի եկեղեցական ժողով 726* ևն): Այդ ժողովներում ընդունվել են նաև բազմաթիվ կանոններ ներքին աղանդավորական շարժումների (*մծղնեություն, պավլիկյաններ, թոնդրակեցիներ* ևն) դեմ:

Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժելուց հետո Կ.ա.հ. իր հեղինակությամբ ու գործունեությամբ ղեկավար դիրք է ձեռք բերել *Արևելյան ուղղափառ եկեղեցիների* մեջ, որոնք կարևորել են Հայոց կաթողիկոսության կարծիքը դավան. վճիռներ կայացնելիս, հաճախ էլ պաշտպանություն գտել նրա հովանու ներքո:

Պատմ. պայմանների թելադրանքով Կ.ա.հ-ի աթոռանիստը հաճախ տեղափոխվել է երկրի մի վայրից մյուսը: Վաղարշապատից հետո աթոռը հաստատվել է Դվինում (484–931), Աղթամարում (931–944), Արգինայում (944–992), Անիում (992–1065): Բագրատունյաց թագավորության անկումից (1045) հետո, Կիլիկիայում հայկ. իշխանությունների առաջացման ու հզորացման պայմաններում, կաթողիկոս. աթոռը նույնպես տեղափոխվել է Կիլիկիա: *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսը 1066-ին աթոռանիստ է դարձրել Կիլիկիայի սահմաններին մոտ գտնվող Ծամնդավը: Ավելի ուշ աթոռանիստը փոխադրվել է Շուղրի (Քեսունի դավառում) Սև լեռան Կարմիր վանք (1105–16), ապա՝ *Գրիգոր Գ Պահլավունու* օրոք՝ Ծովք (1116–49), այնուհետև, դարձյալ Գրիգոր Գ Պահլավունու օրոք՝ Հռոմկլա (1149–1292), *Գրիգոր Է Անավարզեցու* օրոք՝ Սիս (1293–1441):

Կիլիկյան հայկ. պետության ժամանակաշրջանում (XIII–XIV դդ.), նաև դրանից վաղ (XI–XII դդ.), Կ.ա.հ-ի գործունեությունը դրսևորվել է հոգևոր, կրթ., մշակութ., ինչպես նաև քաղ-միջպետ., դավան-միջեկեղեց. կյան-

քի ոլորտներում: Այդ շրջանը նշանավորվել է հայ-հույն և հայ-կաթոլիկ միջեկեղեց. հարաբերություններով, ծիսադավան. խնդիրների շուրջ ընթացող երկարատև վեճերով ու բանակցություններով: Սկզբում Հույն եկեղեցին, ապա՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցին փորձել են Կ.ա.Հ. ենթարկել մի դեպքում *Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքությանը*, մյուս դեպքում՝ Հռոմի պապին: Թեև որոշ դեպքերում Կ.ա.Հ-ի գահակալներից ոմանք երբեմն նահանջել են Հայ եկեղեցու ծիսադավան. ավանդույթներից՝ հուսալով, թե այդպիսով կկարողանան շահել Բյուզանդիայի կամ կաթոլիկ Եվրոպայի քաղ. համակրանքն ու աջակցությունը, սակայն Կ.ա.Հ. կարողացել է այդ դժվարին պայքարում անաղարտ պահել իր դավանությունը և Հայ եկեղեցու ամբողջական անկախությունը:

Կիլիկիայի Հայկական թագավորության անկումից (1375) հետո ծանր ժամանակաշրջան է սկսվել Կ.ա.Հ-ի համար: Եկեղեց. և աշխարհիկ շրջաններում ավելի է ամրապնդվել կաթողիկոս. աթոռը մայր հայրենիք տեղափոխելու գաղափարը: 1441-ի *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովը* Մայր աթոռը վերահաստատել է Ս. Էջմիածնում, որտեղ և գտնվում է առ այսօր: Աթոռի տեղափոխությանը հաջորդած երկու դարերում, թուրքմեն. ցեղերի ասպատակությունների, Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության հետևանքով, Հայոց կաթողիկոսությունը ծանր կացության է մատնվել և միայն XVII դարից սկսած մտել է տնտ., նյութ., կրոն., մշակութ. համեմատաբար բնականոն հունի մեջ: *Մովսես Գ Տաթևացի, Փիլիպոս Ա Աղբակեցի, Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսների ջանքերով Կ.ա.Հ. զգալի առաջընթաց է ապրել, վերականգնվել է Մայր աթոռի տնտեսությունը, վանական-միաբանական կյանքը. հիմք է ստեղծվել ազգ-եկեղեց., մշակութ. ու կրթ. արդյունավետ գործունեության համար: Հիմնվել են մի շարք դպրոցներ և վարդապետարաններ Սյունիքում, Էջմիածնում, Վանա լճի Աղթամար, Լիմ և Կտուց կղզիներում, Բաղեշի Ամրդոլու վանքում, Նոր Ջուղայում և այլուր: XVII–XIX դդ. Կ.ա.Հ. դարձել է հայ ազատագր. շարժումների ղեկավար մարմինը: Նրա հովանավորությամբ մշակվել ու զարգացել են հայ-ռուս. և հայ-եվրոպ. հարաբերությունները: XIX դ. վերջին – XX դ. սկզբին կաթողիկոսությունն օժանդակել և նպաստել է Արևմտյան Հայաստանի ֆիդայական և ազգ-ազատագր. շարժումներին, Հայկ. հարցի լուծման քաղ. ձեռնարկումներին: Այդ շրջանում նաև կազմակերպել, հովանավորել ու ղեկավարել է ազգ-հաս., քաղ., կրոնաեկեղեց., գիտամշակութ., ուսումնակրթ. բազմաթիվ ձեռնարկումներ ու հաստատություններ Հայաստանում և հայ գաղթավայրերում: Մեծ եղեռնի ժամանակ և հետագա տարիներին օգնել է բազմահազար աղետյալների ու գաղթականների, միևնույն ժամանակ մեծ գործունեություն ծավալել աշխարհասփյուռ հայության ազգապահպանման և դաստիարակության ասպարեզում: 1918-ի մայիսին, Սարդարապատի ճակատամարտի բախտորոշ օրերին, չնայած զինվոր. ղեկավարության պահանջին, Կ.ա.Հ. և *Գևորգ Ե Սուրենյանց* կաթողիկոսը չեն տեղափոխվել ապահով վայր, իսկ Մայր աթոռի միաբաններն իրենց անմիջական մասնակցությամբ հայ մարտիկներին քաջալերել են ռազմաճակատի առաջին գծում:

1920-ին Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումով չափազանց ծանր պայմաններ են ստեղծվել Կ.ա.Հ-ի համար: Ստալինյան հակաեկեղեց. հալածանքների շրջանում Մայր աթոռն ամփոփվել է միայն Ս. Էջմիածնի վանքի պատերի մեջ, կտրվել է կապը Հայ եկեղեցու թեմերից, նվիրապետ. աթոռներից և հավատացյալներից: Իշխանությունը հաշվեհարդար է տեսել հոգևորականների հետ, փակել, ավերել հարյուրավոր եկեղեցիներ, խլել եկեղեց. կալվածքներն ու ունեցվածքի մեծ մասը: Մայր աթոռն անչքացել է, Ս. Էջմիածնի միաբանական կյանքը՝ դադարել, և Կ.ա.Հ-ի վրա կախվել է վերանալու սպառնալիքը: 1938-ին Ամենայն հայոց կաթողիկոս *Խորեն Ա Մուրադբեկյանի*՝ կասկածելի հանգամանքներում վախճանից հետո, մինչև 1945-ը, կաթողիկոս. գահը մնացել է թափուր:

Դրությունը մի փոքր բարելավվել է երկրորդ համաշխ. պատերազմից հետո: Պատերազմի ժամանակ Կ.ա.Հ. իր սուղ միջոցներից, ինչպես նաև սփյուռքահայության օժանդակությամբ օգնել է ռազմաճակատին: Փոխվել է վարչակարգի վերաբերմունքը Կ.ա.Հ-ի և Հայ եկեղեցու նկատմամբ. սկսվել է իրավունքների մասնակի վերականգնումը: Սակայն կաթողիկոսությունը շարունակել է մնալ սոսկ հանդուրժվածի վիճակում:

Կ.ա.Հ-ի վերազարթոնքը սկսվել է *Գևորգ Զ Զորեքչյան* (1945–54) կաթողիկոսի օրոք, իսկ

ավելի նպաստավոր պայմաններում շարունակվել *Վազգեն Ա Պալճյան* (1955–94) կաթողիկոսի երկարատև աթոռակալության շրջանում, երբ զարգացել են միջեկեղեց. հարաբերությունները, խորացել արտասահմ. թեմերի հետ կապերը, վերաբացվել կամ վերանորոգվել են հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ: Հայկ. պետականության վերականգնումից (1991-ի սեպտ. 21) հետո Կ.ա.Հ-ի առջև բացվել են գործունեության նոր և ավելի լայն հնարավորություններ: Եկեղեց., միաբանական, թեմական, հոգևոր-մշակութ. կյանքն աշխուժացել է *Գարեգին Ա Սարգիսյան* (1995–99) կաթողիկոսի օրոք: ՀՀ-ում վերափոխվել է թեմական կառուցվածքը, կառուցվել ու վերաբացվել են նոր եկեղեցիներ ու վանքեր: Մայր աթոռում հիմնվել է *Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնը*, վերանորոգվել է Գևորգյան ճեմարանի շենքը և հանձնվել Ս. Էջմիածնին, բարելավվել են հոգևոր ճեմարանի ուս. պայմանները: Մայր աթոռում ստեղծված Մամլո դիվանը, «Խորան լուսոյ» ստուդիան, «*Քրիստոնյա Հայաստան*» երկշաբաթաթերթը սկսել են համակարգված քարոզչ. և տեղեկատվ. աշխատանք կատարել: Մայր աթոռի ծավալած գործունեության մի կարևոր ուղղությունն է Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստությունը, որի ընդգրկուն ծրագրի իրականացումն սկսվել է ավելի վաղ. «Հայ եկեղեցու դանձերը» ցուցահանդեսի բացում արտասահմ. երկրներում, գիտաժողովների անցկացում, գրքերի հրատարակում, ուխտագնացություններ, Երևանում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու կառուցում ևն: *Գարեգին Բ Ներսիսյանն* իր գահակալման սկզբից ձեռնամուխ է եղել Մայր աթոռի հոգևոր կրթարանների վերաաշխուժացմանը, եկեղեցիների ու վանքերի նորոգմանը, նորերի կառուցմանը: Նրա նախաձեռնությամբ պետությունը որպես սեփականություն Մայր աթոռին է վերադարձրել 150 վանք ու եկեղեցի, հողային տարածքներ և շենքեր:

Ներկայումս Կ.ա.Հ-ի «ի հոգևորս» ենթակայության ներքո են գտնվում Հայ եկեղեցու երեք մասնավոր նվիրապետական աթոռները՝ *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո* (կենտրոնը՝ Անթիլիաս, Լիբանան), *Երուսաղեմի հայոց պատրիարքություն* (Իսրայել) և *Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն* (Ստամբուլ, Թուրքիա): Հայաստանում և սփյուռքում Կ.ա.Հ-ի անմիջական հոգևորվարչ. իրավասությանն է ենթակա մոտ 40 առաջնորդություն (թեմեր, հայրապետական պատվիրակություններ, հովվություններ, շրջաններ), հինգ վանահայրություն (Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի, Խոր վիրապի): Կ.ա.Հ. ունի Հայ եկեղեցու ներկայացուցիչներ Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության, Քենթրբերիի և Համայն Անգլիո արքեպիսկոպոսության մոտ: Կ.ա.Հ-ին ենթակա են Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, հոգևոր ճեմարանը, «*Էջմիածին*» ամսագրի խմբագրությունը, Մայր տաճարի պաշտոնեությունը (Մայր տաճարի լուսարարապետ, ավագ լուսարար, Մայր տաճարի Մկրտարանի տեսուչ, Մկրտարանի ծիսակատար քահանաներ, խոստովանահայրեր, Դպրաց դաս, քառաձայն երգչախումբ), Ալեք և Մարի Մանուկյան *գանձատունը*: Կ.ա.Հ. ունի դիվանատուն, Միջեկեղեցական հարաբերությունների բաժին, Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն, Տնտեսաֆինանսական վերստուգիչ մարմին, Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի դրասենյակ (վարիչ-քարտուղար Հովնան արք. Տերտերյան):

Հայոց կաթողիկոսներ

Հայոց ավանդական 10 հայրապետներ

ս. Թադեոս առաքյալ – 43–66, ս. Բարդուղիմեոս առաքյալ – 66–68, Զաքարիա – 68–72, Զեմենդոս – 72–76, Ատրներսեհ – 77–92, Մուշե – 93–123, Շահեն – 124–150, Շավարշ – 151–171, Ղևոնդիոս – 172–190, Մեհրուժան – 240–270:

Ամենայն հայոց կաթողիկոսներ

ս. Գրիգոր Ա Լուսավորիչ (Պարթև) – 302–325, ս. Արիստակես Ա Պարթև – 325–333, ս. Վրթանես Ա Պարթև – 333–341, ս. Հուսիկ Ա Պարթև – 341–347, Փառեն Ա Աշտիշատցի – 348–352, ս. Ներսես Ա Մեծ (Պարթև) – 353–373, Շահակ Ա Մամազկերտցի – 373–377, Զավեն Ա Մամազկերտցի – 377–381, Ասպուրակես Ա Մամազկերտցի – 381–386, ս. Սահակ Ա Պարթև – 387–439, ս. Հովսեփ Ա Հողոցմեցի (Վայոցձորցի) – 440–452, Մելիտե Ա Մամազկերտցի – 452–456, Մովսես Ա Մամազկերտցի – 456–461, ս. Գյուտ Ա Արահեզացի (Ոթմսեցի) – 461–478, ս. Հովհաննես Ա Մանդակունի – 478–490, Բաբկեն Ա Ոթմսեցի – 490–516, Սամվել Ա Արծկեցի – 516–526, Մուշե Ա Այլաբերցի – 526–534, Սահակ Բ Ուղկեցի – 534–539, Քրիստափոր Ա Տիրառիջցի – 539–545, Ղևոնդ Ա Եռաստեցի – 545–

548, Ներսես Բ Բագրեվանդցի – 548–557, Հովհաննես Բ Գաբեղենցի (Գաբեղյան) – 557–574, Մովսես Բ Եղիվարդեցի – 574–604, Աբրահամ Ա Աղբաթանեցի – 607–613, Կոմիտաս Ա Աղցեցի – 613–628, Քրիստափոր Բ Ապահունի (Ապահունեցի) – 628–630, Եզր Ա Փառաժնակերտցի – 630–641, Ներսես Գ Տայեցի (Իշխանցի, Շինող) – 641–661, Անաստաս Ա Ակռեցի – 661–667, Իսրայել Ա Ոթմըսեցի – 667–677, Սահակ Գ Ձորափորեցի – 677–703, Եղիա Ա Արճիշեցի – 703–717, ս. Հովհաննես Գ Օձնեցի – 717–728, Դավիթ Ա Արամոնեցի – 728–741, Տրդատ Ա Ոթմսեցի – 741–764, Տրդատ Բ Դասնավորեցի – 764–767, Սիոն Ա Բավոնեցի – 767–775, Եսայի Ա Եղիպատրուշեցի – 775–788, Ստեփանոս Ա Դվնեցի – 788–790, Հակոբ Ա Դվնեցի – 790–791, Սողոմոն Ա Գառնեցի – 791–792, Գևորգ Ա Բյուրականցի – 792–795, Հովսեփ Բ Փարպեցի – 795–806, Դավիթ Բ Կակաղեցի – 806–833, Հովհաննես Դ Ովայեցի – 833–855, Զաքարիա Ա Ձագեցի – 855–876, Գևորգ Բ Գառնեցի – 877–897, Մաշտոց Ա Եղիվարդեցի – 897–898, Հովհաննես Ե Դրասխանակերտցի – 898–929, Ստեփանոս Բ Ռշտունի (Ռշտունեցի) – 929–930, Թեոդորոս Ա Ռշտունի (Ռշտունեցի) – 930–941, Եղիշե Ա Ռըշտունի (Ռշտունեցի) – 941–946, Անանիա Ա Մոկացի – 946–968, Վահան Ա Այուոնեցի (Այուոնի) – 968–969, Ստեփանոս Գ Սևանցի – 969–972, Խաչիկ Ա Արշարունի (Արշարունեցի) – 973–992, Սարգիս Ա Սևանցի – 992–1019, Պետրոս Ա Գետադարձ – 1019–58, Խաչիկ Բ Անեցի – 1058–65, Գրիգոր Բ Վկայասեր – 1066–1105, Բարսեղ Ա Անեցի – 1105–1113, Գրիգոր Գ Պահլավունի – 1113–66, ս. Ներսես Դ Կլայեցի (Շնորհալի) – 1166–73, Գրիգոր Դ Տղա – 1173–93, Գրիգոր Ե Քարավեժ – 1193–94, Գրիգոր Զ Ապիրատ – 1194–1203, Հովհաննես Զ Սսեցի – 1203–21, Կոստանդին Ա Բարձրբերդցի – 1221–67, Հակոբ Ա Կլայեցի – 1268–86, Կոստանդին Բ Կատուկեցի – 1286–89, Ստեփանոս Դ Հռոմկլայեցի – 1290–93, Գրիգոր Է Անավարզեցի – 1293–1307, Կոստանդին Գ Կեսարացի – 1307–1322, Կոստանդին Դ Լամբրոնացի – 1323–26, Հակոբ Բ Անավարզեցի (Կլայեցի) – 1327–41 և 1355–1359, Մխիթար Ա Գոշերցի – 1341–55, Մեսրոպ Ա Արտազեցի – 1359–72, Կոստանդին Ե Սսեցի – 1372–74, Պողոս Ա Սսեցի – 1374–82, Թեոդորոս Բ Կիլիկեցի – 1382–92, Կարապետ Ա Կեղեցի – 1392–1404, Հակոբ Գ Սսեցի – 1404–11, Գրիգոր Ը Խանձողատ – 1411–18, Պողոս Բ Գառնեցի – 1418–30, Կոստանդին Զ Վահկացի – 1430–39, Գրիգոր Թ Մուսաբեկյանց – 1439–41, Կիրակոս Ա Վիրապեցի – 1441–43, Գրիգոր Ժ Ջալալբեկյանց – 1443–65, Արիստակես Բ Աթոռակալ – 1465–69, Սարգիս Բ Աջատար – 1469–74, Հովհաննես Է Աջակիր – 1474–84, Սարգիս Գ Մյուսայլ – 1484–1515, Զաքարիա Բ Վաղարշապատցի – 1515–20, Սարգիս Դ Վրաստանցի – 1520–36, Գրիգոր ԺԱ Բյուզանդացի – 1536–45, Ստեփանոս Ե Սալմաստեցի – 1545–67, Միքայել Ա Սեբաստացի – 1567–76, Գրիգոր ԺԲ Վաղարշապատցի – 1576–90, Դավիթ Դ Վաղարշապատցի – 1590–1629, Մովսես Գ Տաթևացի – 1629–32, Փիլիպոս Ա Աղբակեցի – 1632–55, Հակոբ Դ Ջուղայեցի – 1655–80, Եղիազար Ա Այնթապցի – 1681–91, Նահապետ Ա Եդեսացի – 1691–1705, Աղեքսանդր Ա Ջուղայեցի – 1706–14, Աստվածատուր Ա Համադանցի – 1715–25, Կարապետ Բ Ուլնեցի – 1726–1729, Աբրահամ Բ Խոշաբեցի – 1730–34, Աբրահամ Գ Կրետացի – 1734–37, Ղազար Ա Ջահկեցի – 1737–51, Մինաս Ա Ակնեցի – 1751–53, Աղեքսանդր Բ Բյուզանդացի – 1753–55, Հակոբ Ե Շամախեցի – 1759–63, Սիմեոն Ա Երևանցի – 1763–80, Ղուկաս Ա Կարնեցի – 1780–99, Դավիթ Ե Էնեգեթցի (Ղորղանյան) – 1801–07, Դանիել Ա Սուրմառեցի – 1807–08, Եփրեմ Ա Ջորագեղցի – 1809–30, Հովհաննես Ը Կարբեցի – 1831–42, Ներսես Ե Աշտարակեցի – 1843–57, Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի (Զուհճյան) – 1858–65, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (Քերեստեճյան) – 1866–82, Մակար Ա Թեղուտցի – 1885–91, Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Հայրիկ) – 1892–1907, Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի (Իզմիրլյան) – 1908–10, Գևորգ Ե Սուրենյանց (Տփղիսեցի) – 1911–30, Խորեն Ա Մուրադբեկյան (Տփղիսեցի) – 1932–38, Գևորգ Զ Զորեքչյան (Նորնախիջևանցի) – 1945–54, Վազգեն Ա Պալճյան (Բուխարեստցի) – 1955–94, Գարեգին Ա Սարգիսյան – 1995–99, Գարեգին Բ Ներսիսյան (1999-ից):

Գրկ. Տես *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի* հոդվածի գրականությունը:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ, Կաթողիկոսություն Փոքր Հայոց, Հայրապետություն Մեծին Կիլիկիո, Եպիսկոպոսապետություն Տանն Կիլիկիո, Սսի կաթողիկոսություն, Անթիլիասի կաթողիկոսություն, *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* մասնավոր նվիրապետական աթոռը: Կաթողիկոսանիստը՝ Անթիլիասի (Լիբանան) Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար (1941-ից): Ճանաչում է Մայր աթոռ Ս. Էջմիածնի գահերեցությունը և նախամեծարությունը: Հիմնադրվել է 1446-ին, Կիլիկիայի Սիս քաղաքում՝ Հայոց կաթողիկոսության նախկին նստավայրում, 1441-ի *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովի* որոշմամբ հայրապետ. աթոռը Ս. Էջմիածնում վերահաստատվելուց հետո: Առաջին կաթողիկոսն է եղել Կարապետ Ա Եվդոկացին (1446–1477):

ԿԱԹՈՂԻԿՈՍ. XVI դ. սկզբից, երբ Թուրքերը գրավել և օսմ. կայսրության նահանգի են վերածել Կիլիկիան, սկսվել է կաթողիկոսության ամենածանր ու դժվարին շրջանը: Մինչև XIX դ. կեսը Կիլիկիան շարունակաբար ենթարկվել է Թուրքերի, ինչպես նաև այլ ցեղերի ասպատակություններին: Հաճախ գրավվել ու ավերվել է նաև Սիսը, թալանվել նրա կաթողիկոսարանը: Գահակալներից շատերը (սկսած Հովհաննես Բ Թլկուրանցուց, 1489–1525) ստիպված երկրորդ աթոռանիստ են դարձրել Հալեպը, Ադանան, երբեմն էլ՝ մնացել թափառական, աքսորվել կամ սպանվել: Հատկապես XVI–XVII դդ. Ամենայն Հայոց և Սսի կաթողիկոսությունների միջև սկսվել են վեճեր կաթողիկոս. իրավասությունների սահմանների և եպիսկոպոս. ձեռնադրությունների վերաբերյալ, որոնք սուր բնույթ են ստացել Ամենայն հայոց կաթողիկոս *Փիլիպոս Ա Աղբակեցու* և Սսի կաթողիկոս Սիմեոն Բ Սեբաստացու (1633–48) օրոք: Ներսես Ա Սեբաստացու (1648–54) ժամանակ փոխըմբռնման և համագործակցության մթնոլորտ է ստեղծվել Մայր աթոռի և Կիլիկիո կաթողիկոսության միջև, ինչն արտահայտվել է 1651-ի Երուսաղեմի եկեղեց. ժողովում: Ամենայն հայոց կաթողիկոս Փիլիպոս Ա Աղբակեցին Երուսաղեմի ժողովին մասնակցելու նպատակով այցելել է Հալեպ (այստեղ էր գտնվում Սսի աթոռը) և հանդիպել Ներսես Ա Սեբաստացու հետ: Երկու հայրապետները Զատկի տոնի առթիվ մեծ շուքով ուխտի են գնացել Ս. Երուսաղեմ և ապա մասնակցել ժողովին:

XVI–XVII դդ. մահմեդ. ցեղերի ճնշումներից պաշտպանվելու նպատակով Կիլիկիո կաթողիկոսներից ոմանք, հռոմ. եկեղեցուն ծիսաարարող. որոշ զիջումներ անելու խոստումով, փորձել են շահել Հռոմի պապերի հովանավորությունն ու աջակցությունը: Կիլիկիո կաթողիկոսությունը և աթոռանիստ Սիսը դարձրել են սսականության կենտրոն (Կ. Պոլսի հայոց պատրիարքության հետ), որը պայքարում էր էջմիածնականության դեմ: Սսականության ղեկավարներ Սսի կաթողիկոս Խաչատուր Գ Գաղատացին և Եղիազար Այնթապցին որոշակի դեր են խաղացել հաս. բախումների և խռովություններ հրահրելու, արևմտահայ թեմերը Էջմիածնի Հայոց կաթողիկոսությանը հակադրելու գործում: Պայքարը մեղմացել է 1680-ական թթ., երբ էջմիածնականները, պառակտմանը վերջ տալու նպատակով, Ամենայն հայոց կաթողիկոս են ընտրել սսականության առաջնորդ *Եղիազար Ա Այնթապցուն*: Այնուհանդերձ, Կիլիկիո կաթողիկոսությունն այդ շրջանում ևս շարունակել է իր հոգևոր ազդ. ծառայությունը մատուցել ժողովրդին, կարողացել է պահպանել հայոց ավանդույթները և նպաստել Հայ եկեղեցու ինքնուրույնությանն ու անկախությանը: Այդ գործում հատկապես աչքի են ընկել *Աջապահյաններն* իրենց հակալատին դիրքորոշմամբ: 1733–1865-ին շարունակաբար տիրելով Կիլիկիո կաթողիկոսության աթոռին՝ նրանք վերջ են դրել աթոռակալ. կռիվներին:

1909-ի Ադանայի կոտորածի, ապա Մեծ եղեռնի հետևանքով Կիլիկիան հայաթափվել է (հիմնականում՝ 1920–22-ին): Ջարդերից փրկվածները գաղթել են առավելապես Սիրիա, Լիբանան: 1921-ի դեկտ-ից Սիսը դադարել է Կիլիկիո կաթողիկոսության աթոռանիստ լինելուց, իսկ 1922-ի սկզբին կաթողիկոսարանը մատնվել է ավերի ու թալանի: Կաթողիկոս Սահակ Բ Խապայանը (1902–39), հավաքելով կաթողիկոսարանի հնություններն ու հարստությունները, փոքրաթիվ կիլիկիահայերի հետ տարագրվել է արաբ. երկրներ:

1922–30-ին Կիլիկիո կաթողիկոսությունը *Երուսաղեմի հայոց պատրիարքության*, հայկ. մի շարք միությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև առանձին գործիչների օժանդակությամբ զգալի աշխատանք է կատարել կոտորածներից փրկված ու Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում ապաստանած հայությանը համախմբելու, հազարավոր որբերի խնամելու, որբանոցներ ու վարժարաններ բացելու համար: Ինը տարի Լիբանանի և Սիրիայի զանազան շրջաններ տեղափոխվելուց հետո, 1930-ի հուլիսին կաթողիկոսարանը հաստատվել է Անթիլիասում (Բեյրութի մոտ):

Կիլիկիո աթոռը մինչև 1915-ը ունեցել է 13 թեմ [Սիս, Ադանա, Հաճն, Բայաս, Բերիա (Հալեպ), Մարաշ (Ուլնիա), Ֆրնուզ, Այնթապ, Անտիոք, Մելիտենե, Յոզկաթ, Կյուրին և Կիպրոս], որոնցից Մեծ եղեռնից հետո միայն Հալեպի թեմն էր մնացել: Կիլիկիո կաթողիկոսության թեմերը վերակազմավորելու հարցով 1929-ի ապրիլի 30-ին, *Գևորգ Ե Սուրենյանց* կաթողիկոսի հանձնարարությամբ Երուսաղեմ է մեկնել հայրապետ. պատվիրակ և Եգիպտոսի թեմի առաջնորդ Թ. արք. *Գուշակյանը*: Երուսաղեմի հայոց պատրիարքությունն Ամենայն հա-

յոց կաթողիկոսի օրհնությամբ Կիլիկիո աթոռին է փոխանցել պատրիարքությանը պատկանող Դամասկոսի, Բեյրութի, Լաթաքիայի, Անտիոքի, Հալեպի, Կիպրոսի եկեղեցիները, կալվածները, վարժարանները և առաջնորդարանները: Այսպիսով, 1930-ական թթ. Կիլիկիո աթոռն ունեցել է չորս վերակազմավորված թեմեր՝ Բերիա (Հալեպ), Դամասկոս, Լիբանան և Կիպրոս: Ունենալով հիմն. հանգրվան և գործելու բարենպաստ պայմաններ՝ Կիլիկիո կաթողիկոսությունը հետագա տարիներին ապրել է իր ծաղկման շրջանը: Սահակ Բ Խապայանի, աթոռակից կաթողիկոս Բաբկեն *Կյուլեսերյանի* ջանքերով վերակազմվել է կաթողիկոսարանը, հիմնվել տպարան, 1930-ին վերաբացվել դեռևս դարասկզբին Սահակ Բ Խապայանի հիմնած Դպրեվանքը, հրատարակվել (1932-ից) կաթողիկոսարանի «*Հասկ*» պաշտոնական պարբերականը ևն: Կաթողիկոս Պետրոս Ա Սարաճյանի (1940) ջանքերով և նվիրատվություններով ամերիկյան Նպաստամատույց ընկերությունից գնվել է Անթիլիասի կալվածքը, որը 1922–23-ին ծառայել է որպես որբանոց՝ պատսպարելով Մեծ եղեռնից փրկված ավելի քան 1400 հայ որբերի: Նրա ջանքերով կառուցվել են նաև Դպրեվանքի նոր շենքը, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը, ապրիլյան նահատակների հիշատակին նվիրված Ս. Ստեփանոս մատուռը, որտեղ զետեղվել է Դեյր էզ Զորի անապատից հավաքված՝ հայ ժողովրդի զավակների անթաղ ոսկորների մի մասը: Հոգևոր-մշակութ. կյանքի զարգացումը շարունակվել է նաև հետագայում, հատկապես *Գարեգին Ա Հովսեփյանի* օրոք:

1952-ից ի վեր թափուր մնացած Կիլիկիո աթոռը սառը պատերազմի տարիներին դարձել է քաղ. շահարկումների առարկա (մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը Կիլիկիո կաթողիկոսությունը ղեկավարել է կաթողիկոս. տեղապահ Խաղ արք. Աջապահյանը), ինչը 1956-ին հանգեցրել է երկու աթոռների փոխհարաբերությունների սրմանը և ոտնձգությունների Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակա սփյուռքի թեմերի հանդեպ: 1957-ից սփյուռքի մի շարք թեմեր, որոնք ավանդաբար կապված էին Մայր աթոռ Ս. Էջմիածնի հետ, անցել են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո: Առանց Մայր աթոռ Ս. Էջմիածնի հաստատման և հակականոնական որոշումներով Անթիլիասի աթոռին են միացվել ԱՄՆ-ի Արևելյան թեմի մի մասը, Հունաստանի թեմը և Իրանի երեք թեմերը (Թեհրանի, Սպահանի և Ատրպատականի): Ավելի ուշ կազմվել են Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան ու Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմերը:

1962-ին Կիլիկիո կաթողիկոսությունը ներգրավվել է *էկումենյան շարժման* մեջ՝ դառնալով Եկեղեցիների համաշխ. խորհրդի անդամ, դիտորդներ ուղարկել Վատիկանի II ժողովին: Նայրոբիի (Քենիա) համաժողովում (1975) Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Գարեգին եպս. Սարգիսյանը (1983–95-ին՝ Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ, 1995–1999-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյան*) ընտրվել է Եկեղեցիների համաշխ. խորհրդի փոխատենապետ (մինչև 1983-ը): 1991-ի Կանբեռայի (Ավստրալիա) համաժողովում Կիլիկիո կաթողիկոսության մեկ այլ ներկայացուցիչ՝ Արամ արք. Քեշիշյանը (այժմ՝ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո *Արամ Ա Քեշիշյան*) ընտրվել է Եկեղեցիների համաշխ. խորհրդի կենտր. և գործադիր վարչությունների ատենապետ (վերընտրվել է 1998-ին): Կիլիկիո կաթողիկոսությունը մեծ դեր է խաղացել 1974-ին Միջին Արևելքի Եկեղեցիների խորհրդի հիմնադրման աշխատանքներում: Նա իր միջեկեղեց. հարաբերությունները շարունակում է նաև Անգլիկան եկեղեցու և ավետարանական (բողոքական) եկեղեցիների հետ: Մասնակից է արաբ. երկրների՝ հատկապես Լիբանանի և Սիրիայի անկախությանն ի նպաստ կատարվող աշխատանքներին: Միջազգ. և միջեկեղեց. բարձր մակարդակներում պաշտպանում է ճնշված ժողովուրդների դատը՝ միշտ գտնվելով արաբ. երկրների կողքին: Կաթողիկոսությունը Միջին Արևելքի երկրներում զգալի աշխատանք է կատարում իսլամ-քրիստոնյա երկխոսության զարգացման, այդ ժողովուրդների համատեղ, խաղաղ գոյակցության պայմանների ստեղծման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է նվիրում սփյուռքի, հատկապես Միջին Արևելքի երկրների հայության կյանքի ընկերային, մշակութ., հոգևոր ոլորտներին: Կազմակերպել և առաջնորդել է սփյուռքի տարբեր դաղութներ, կառուցել նոր եկեղեցիներ, դպրոցներ, ստեղծել մշակութ. ու մարզ. ակումբներ: Կաթողիկոսության հովանու տակ են գտնվում Լիբանանի Ջուբեյլ քաղաքում գտնվող հայկ. որբանոցը (Թռչնոց բույն), Լեռնային Լիբանանում՝ Ազգային բուժարանը, Արլ. Բեյրութում՝ Ծերանոց-կուրա-

ԿԱԹՈՂԻԿՈՍ. նոցի համալիրը, ժողովրդին հատկացված բնակարանների մի ամբողջ համալիր Ֆանարում (Բեյրութ), ինչպես նաև կրթ. ու բարեգործ. կենտրոններ հատկապես Լիբանանում, Սիրիայում և Հունաստանում: Կաթողիկոսարանն ունի թանգարան, ձեռագրատուն, մատենադարան, տպարան, Զարեհյան դամբարան, որտեղ ամփոփված են Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի շրջանի կաթողիկոսները և միաբանները: Կաթողիկոսությունն ունի միջեկեղեց. հարաբերությունների, քրիստ. դաստիարակության հատուկ գրասենյակներ, բազմաթիվ գրակ. մրցանակներ, կրթաթոշակներ, Խաչեր Գալստյան մանկավարժ. կենտրոն, կիրակնօրյա վարժարաններ վարիչ-տնօրինություն ևն: Միությունները-ից հայտնի է Հայաստանյայց եկեղեցու համալսարանական երիտասարդների միությունը: Գարեգին Բ-ի օրոք վերստին կյանքի է կոչվել Գարեգին Ա Հովսեփյանի ժամանակ հիմնադրված «Հասկ հայագիտական» կրոնաբանասիր. տարեգիրքը, իսկ Մայրավանքի տպարանում լույս են տեսել հարյուրավոր աստվածաբան., պատմ., հայագիտ. գրքեր:

Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից, 1988-ի դեկտ. 7-ի ավերիչ երկրաշարժից և հատկապես Հայաստանի անկախության հռչակումից հետո Կիլիկիո կաթողիկոսությունը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի գործուն օժանդակությամբ մեծ ջանքեր է գործադրել Հայ եկեղեցու միության ու միասնության ամրապնդման գործում, Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ միասին իր մասնակցությունն է բերել մայր հայրենիքի վերաշինության, հայրենի անկախ պետականության ամրապնդման գործին:

Կիլիկիո կաթողիկոսությունը ղեկավարվում է իր կանոնադրությամբ, որը մշակվել է 1860-ի *Ազգային սահմանադրության* սկզբունքներով: Յուրաքանչյուր թեմ ունի իր սահմանադրությունը: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը գլուխն է Ազգային ընդհանուր ժողովի, որն ընտրում է Ազգային կենտր. կրոն. և քաղ. ժողովները: Կարևոր հարցերի քննարկման համար Կիլիկիո կաթողիկոսը հրավիրում է համատեղ ժողովի նիստ:

Ներկայումս (2001) Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր ծառայությունն են վայելում Լիբանանի (Բեյրութ), Բերիո (Հալեպ), Հյուսիսային Ամերիկայի Արևելյան նահանգների և Կանադայի (Նյու Յորք, ընդգրկում է նաև Վենեսուելայի հոգևոր հովվությունը), Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան (Լոս Անջելես), Կիպրոսի (Նիկոզիա), Թեհրանի (Թեհրան), Իրանա-Հնդկաստանի (Սպահան), Ատրպատականի (Թավրիզ), Հունաստանի (Աթենք), Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների (Էլ Քուվեյթ) թեմերը:

Լիբանանի թեմ: Կազմավորվել է 1929-ին՝ Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության ներքո: Առաջնորդանիստը՝ Բեյրութի Ս. Նշան Մայր եկեղեցի: Մինչ այդ՝ XIX դ. կեսից սկսած Լիբանանի հայ առաքելական եկեղեցիները գործել են Երուսաղեմի հայոց պատրիարքության ենթակայությամբ: Թեմն իր գործերը վարում է 1860-ի Ազգ. սահմանադրության բարեփոխված տարբերակի հիման վրա: Համայնքի Գավառական ժողովն ընտրվում է ժողովրդի կողմից և լիազորված է ընտրելու համայնքի թեմական առաջնորդին և քաղ. ու կրոն. ժողովների անդամներին: Քաղ. ժողովը համայնքի գործադիր մարմինն է և նշանակում է առաջնորդարանի ուս., տնտ., դատաստան., կալվածների և այլ խորհուրդների անդամներին: Կրոն. ժողովն զբաղվում է համայնքի հոգևոր ու կրոն. հարցերով: Լիբանանի համայնքի ներկայացուցիչը թեմական առաջնորդն է, որը նախագահում է գավառ., քաղ. ու կրոն. ժողովների նիստերը և քաղ. ժողովի կողմից նշանակված խորհուրդների հետ վարում համայնքի ընթացիկ գործերը:

Լիբանանի տարածքում հայ առաքելական հնագույն Ս. Նշան եկեղեցին կառուցվել է Բեյրութում, 1851-ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմից Սուրբ Երկիր գնացող հայազգի ուխտավորների համար: 1920-ական թթ. սկզբին Լիբանանի հայկ. գաղթակայաններում կառուցվել են փայտաշեն ու թիթեղաշեն եկեղեցիներ, որոնցից Ս. Խաչ եկեղեցին՝ Բեյրութի վրանաքաղաքում: Հետագայում Բեյրութի հայաբնակ տարբեր թաղամասերում և Լիբանանի նկատելի հայ բնակչություն ունեցող այլ քաղաքներում ու գյուղերում կառուցվել են մի շարք քարաշեն եկեղեցիներ, որոնցից Բեյրութում ցայսօր գործում են Ս. Հարություն, Ս. Գևորգ, Ս. Հակոբ, Ս. Հովհաննես Կարապետ, Ս. Սարգիս, Ս. Աստվածածին, Ս. Վարդանանց և Ս. Քառասուն Մանկանց եկեղեցիները:

Այնճար հայաբնակ գյուղում 1959-ին կառուցվել է Ս. Պողոս եկեղեցին: Զահլե քաղա-

քում հայերը սկզբն. շրջանում օգտագործել են հույն ուղղափառ համայնքի Ս. Նիկոլա եկեղեցին: 1929-ից գործում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ջուբեյլ քաղաքում գործում է Ս. Գայանե եկեղեցին: Ջունիյա քաղաքում 1956-ին, Կյուլապի Կյուլպենկյանի բարերարությամբ, կառուցվել է Ս. Հարություն եկեղեցին: Տրիպոլի քաղաքում 1962-ին Գալուստ Կյուլպենկյանի նվիրատվությամբ կառուցվել է Ս. Հոգեգալստյան եկեղեցին: Անցյալում հայ առաքելական եկեղեցիներ են գործել նաև Սայդա և Սուր քաղաքներում (ներկայումս հայեր գրեթե չեն բնակվում): Եկեղեցիներին կից գործում են ամենօրյա և կիրակնօրյա դպրոցներ:

1929-ից Լիբանանի թեմի կաթողիկոս. փոխանորդի և հետագայում՝ առաջնորդի պաշտոնը վարել են Եղիշե եպս. Կարոյանը (1929–1940), Ներսես վրդ. Հարությունյանը (տեղապահ՝ 1940–42-ին), Արտավազդ արք. Այուրմեյանը (1942–46), Խաղ արք. Աջապահյանը (1946–51), Խորեն արք. Բարոյանը (1951–63), Տաճատ արք. Ուրֆալյանը (1963–78), Արամ արք. Քեչիչյանը (1978–95):

Թեմի առաջնորդն է Գեղամ եպս. Խաչերյանը (1995-ից):

Բերիո թեմ: Կիլիկիո կաթողիկոսության երկրորդ մեծ և հնագույն թեմն է: Առաջնորդանիստը՝ *Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի* (հիմն. XIII դ.): 1660-ական և 1920-ական թթ. եղել է Կիլիկիո վարչ. և հոգևոր կենտրոնը: Բերիո թեմում գործում է Ջեզիրեի առաջնորդական փոխանորդությունը, իսկ մնացած հայաբնակ շրջանները և Հալեպի թաղերը կառավարում են թաղական խորհուրդները: Թեմի հնագույն եկեղեցիներից է Հալեպի Ս. Աստվածածինը (առաջնորդանիստ եկեղեցու տարածքում, այժմ՝ Զարեհյան թանգարան), որը եղել է ուխտատեղի ոչ միայն հայերի, այլև այլազգիների համար: Հալեպում գործում են Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Վարդան, Ս. Գևորգ, Ս. Հակոբ, Ս. Աստվածածին եկեղեցիները. պաշտոնավարում է 14 քահանա: Թեմի տարածքում են գտնվում. Արամոյում՝ Ս. Ստեփանոս (XII դ., վերանորոգվել է 1958-ին), Կամբշլիում՝ Ս. Հակոբ, Լաթաքիայում՝ Ս. Աստվածածին (X դ.), Կարադուրանում՝ Ս. Աստվածածին (վերանորոգվել է 1960-ին), Հասաքեում՝ Ս. Հովհաննու Կարապետ, Յագուպիեում՝ Ս. Հռիփսիմե (վերանորոգվել է 1954-ին), Քեսաբում՝ Ս. Աստվածածին (XIX դ.), Ռաս ուլ Այնում՝ Ս. Աստվածածին եկեղեցիները, Յագուպիեում՝ Ս. Անանա ուխտատեղի-մատուռը, Մարկատեում՝ Ս. Հարություն մատուռը (1995), Քյորքյունայում՝ Ս. Ստեփանոս ուխտատեղի-մատուռը (գործել է մինչև XIX դ. սկիզբը): Դեյր էզ Զորում գործել է Ս. Հռիփսիմե եկեղեցին (1931), որը վերանորոգումից հետո վերաօծվել է և վերանվանվել Ս. Նահատակաց եկեղեցի (1990):

Ջեզիրեի առաջնորդական փոխանորդությունը հիմնվել է 1943-ին: Կենտրոնը՝ Կամբշլիի Ս. Հակոբ եկեղեցի: Առաջին առաջնորդական փոխանորդն է եղել Խորեն վրդ. Բարոյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա Բարոյան): Ներկայիս առաջնորդական փոխանորդն է Նորայր վրդ. Աշըգյանը:

Թեմի առաջնորդն է Սուրեն արք. Գաթարոյանը (1977-ից):

Կիպրոսի թեմ: Կիլիկիո կաթողիկոսության հնագույն թեմերից է: Առաջնորդանիստը՝ Նիկոզիայի Ս. Աստվածածին եկեղեցի: Նիկոզիայում դեռևս V դ. հայերը կառուցել են Ս. Գևորգ եկեղեցին, 560-ին՝ Ս. Մակար վանքը, որը միջնադարում եղել է հայ մշակութ. կենտրոն: XII դ. Նիկոզիայում և Ֆամագուստայում գործել է առաջնորդական երկու թեմ (եպիսկոպոսություն): Նիկոզիայում կառուցվել են 1116-ին՝ Ս. Աստվածածին եկեղեցին (վերանորոգվել է 1884-ին), 1892-ին՝ ազգ. գերեզմանատունը (պոլսեցի Պողոս Օտաճյանի կտակով) Ս. Պողոս մատուռը:

Օսմ. տիրապետության շրջանում (1571–1878) կիպրահայ գաղութն անկում է ապրել, պահպանվել է միայն հոգևոր վարչությունը: Կղզու հնագույն կառույցներից են Ֆամագուստայում Կանչվորի վանք կամ Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1317-ին, ներկայումս թուրքերի բռնագրաված տարածքում է), Ս. Մարիամ, Ս. Սարգիս, Ս. Վարվառա (բոլորն էլ՝ XIII դ. վերջ) եկեղեցիները, որոնք չեն պահպանվել: Կառավարության և Եվրոպայի մի շարք եկեղեցիների նյութ. օժանդակությամբ Նիկոզիայի Ակրոպոլիս թաղամասում 1981-ին կառուցվել են Ս. Աստվածածին (առաջնորդանիստ) եկեղեցին և առաջնորդարանը: Առաջին հայկ. դպրոցները գործել են եկեղեցիներին կից: Հնագույնը 1870-ին Նիկոզիայում Վարդան վրդ. Մամիկոնյանի հիմնած դպրոցն է: 1886-ին հիմնվել են Վարդանանց (արական) և Շուշանյան (իգական) տարրական դպրոցները:

ԿԱԹՈՂԻԿՈՍ. Վահան քհն. Քյուրքչյանի նախաձեռնությամբ 1897-ին բացվել է հայկ. կրթ. որբանոց (գործել է յոթ տարի), դասավանդվել են հայ ժողովրդի պատմություն, թվաբանություն, օտար լեզուներ, ինչպես նաև արհեստներ: 1972-ից գործում է Նարեկ ազգ. վարժարանը:

Լառնակայում, ի հիշատակ Կիլիկիայի հայ նահատակների, 1912-ին կառուցվել է Ս. Ստեփանոս հայկ. եկեղեցին (գործող), 1940-ին՝ Ս. Գրիգոր մատուռը: Առաջին հայկ. դպրոցը բացվել է 1909-ին: 1972-ից գործում է Նարեկ ազգ. վարժարանը:

Լիմասոլում 1940-ին կառուցվել է Ս. Գևորգ եկեղեցին (գործող): Առաջնորդարանի օժանդակությամբ 1951-ին բացվել է առաջին հայկ. դպրոցը: 1972-ից գործում է Նարեկ ազգ. վարժարանը:

Կիպրոսի թեմը կառավարվում է իր կանոնադրությամբ, որը վավերացրել է Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ Սարգիսյանը: Գերագույն մարմինը թեմական ժողովն է, որի անդամներն ընտրվում են չորս տարով: Համայնքը ղեկավարում են թեմի առաջնորդը, ազգ. վարչական մարմինները:

Թեմի առաջնորդն է Վարուժան եպս. Հերգելյանը (1996-ից):

Հյուսիսային Ամերիկայի Արևելյան նահանգների և Կանադայի թեմ: Կազմավորվել է 1957-ին, երբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն իրեն է ենթարկել ԱՄՆ-ի մի շարք եկեղեցիներ, որոնք պատկանել են Մայր աթոռ Ս. Էջմիածնի իրավասության տակ գտնվող ԱՄՆ թեմին: Առաջնորդանիստը՝ Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: 1957-ի հոկտ. ԱՄՆ է ժամանել Կիլիկիո կաթողիկոս Զարեհ Ա Փայասլյանի նվիրակ, Լիբանանի թեմի առաջնորդ Խորեն արք. Բարոյանը և գումարել Ազգ. երեսփոխան. ժողով: Առաջնորդական տեղապահ է ընտրվել Հրանտ արք. Խաչատուրյանը (1957–1961) և 1961-ի նոյեմբ-ից պաշտոնավարել իբրև թեմի առաջնորդ: Նրա օրոք կառուցվել և օծվել են Դետրոյտի Ս. Սարգիս, Ֆիլադելֆիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Էնսինոյի Սրբոց Նահատակաց, Վաշինգտոն Դի Սի-ի Ս. Խաչ, Ալպընի-Թրոյի Ս. Խաչ, Բեյսայտի Ս. Սարգիս, Սբրինկֆիլտի Ս. Գրիգոր, Օհայոյի Ս. Խաչ, Մոնրեալի Ս. Սարգիս, Սան Ֆրանցիսկոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: 1973–77-ին թեմի առաջնորդն է եղել Գարեգին արք. Սարգիսյանը, 1977–98-ին՝ Մեսրոպ արք. Աշճյանը: Վերջինիս օրոք հայ. և անգլ. լեզուներով հրատարակվել են բազմաթիվ կրոն. և պատմ. բնույթի գրքեր, 1978-ի մայիսից լույս է ընծայվել «ԱուԹրիչ» ամսագիրը, կազմավորվել են կրոն. և հայեցի դաստիարակության դպրոցներ: Վերանորոգվել է 1973-ին գնված առաջնորդարանի շենքը, բացվել է Ս. Ներսես Շնորհալի գրադարանը ևն: Ձեռամբ Մեսրոպ արք. Աշճյանի օծվել են Ձիկագոյի Ամենայն Սրբոց, Ուստրի Ս. Երրորդություն, Քեմբրիջի Ս. Նշան, Սենտ Լուիզի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ֆլորիդայի Ս. Կարապետ, Մոնրեալի Ս. Հակոբ, Տորոնտոյի Ս. Մարիամ Աստվածածին, Վանկուվերի Ս. Գրիգոր եկեղեցիները: Թեմի առաջնորդի հոգածությամբ բարգավաճել և առաջադիմել են Նյու Յորքի Ս. Լուսավորիչ և Բոստոնի Ս. Ստեփանոս եկեղեցիներին կից գործող վարժարանները, Կանադայում՝ Ս. Հակոբ եկեղեցուն կից գործող Վարդգես Սարաֆյան երկրորդական դպրոցը, Տորոնտոյի Ս. Աստվածածին եկեղեցուն կից ՀՕՄ-ի Քոլոլյան վարժարանը: Բացվել են ամենօրյա, շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ, որտեղ ներկայումս (2001) սովորում են շուրջ 2000 հայ աշակերտներ:

Հյուսիսային Ամերիկայի Արևելյան նահանգների և Կանադայի թեմի իրավասության տակ է գտնվում նաև Վենեսուելայի հոգևոր հովվությունը (կենտրոնը՝ Կարակասի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, կառուցվել է 1987-ին): Հոգևոր հովիվն է Կոմիտաս եպս. Օհանյանը:

Թեմի առաջնորդն է Օշական արք. Զոլոյանը (1998-ից):

Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմ: Կազմավորվել է 1972-ին, երբ ԱՄՆ Արմ. շրջանի՝ Մայր աթոռից բաժանված եկեղեցիները անջատվել են Նյու Յորքում գտնվող իրենց անթիլիասական կենտրոնից և կազմել նոր՝ Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմ՝ դարձյալ Կիլիկիո աթոռին ենթակա: Առաջնորդանիստը՝ Հոլիվուդի (Լոս Անջելես) Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցի: Առաջին առաջնորդ Սմբատ արք. Լափաճյանի օրոք կազմակերպվել է Օրեյնճ Քաունթիի համայնքը: Հիմնվել են Գլենդեյլի Ս. Աստվածածին եկեղեցին և ամենօրյա վարժարանը (հետագայում՝ Անուշ և Վահան Շամլյան ազգ. վարժարան), սկսվել է Հոլիվուդի Ս. Հովհան-

նես Կարապետ եկեղեցու կառուցումը: 1977–1985-ին թեմի առաջնորդն է եղել Եփրեմ վրդ. Թապագյանը (1980-ից՝ եպիսկոպոս): Կառուցվել են Ազգ. առաջնորդարանի նոր շենքը, Ֆերահյան վարժարանի նոր համալիրը, Սան Ֆրանցիսկոյի Գռուզյան-Զաքարյան վարժարանը, ավարտվել է Հոլիվուդի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու շինարարությունը, կատարվել է Օրեյնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու հիմնարկեքը, Գլենդեյլում գնվել նոր եկեղեցի ևն: Ամերիկայում ապրող հայ երեխաներին հայեցի դաստիարակություն տալու նպատակով կազմվել է «Կանթեղ» դասագիրքը, հրատարակվել «Հռոմկլա» տարեգիրքը, ինչպես նաև՝ բազմաթիվ հայագիտ. գրքեր: 1985–96-ին թեմի առաջնորդ է եղել Տաթև արք. Սարգիսյանը: Նրա պաշտոնավարության ժամանակ օծվել են Օրեյնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց և Գլենդեյլի Ս. Աստվածածին եկեղեցիները, բացվել են Փասադենայի Դավթյան վարժարանը և Թյուֆենկյան մանկամսուրը, տպագրվել են Հայոց պատմության և լեզվի դասագրքեր:

Թեմի առաջնորդն է Մուշեղ եպս. Մարտիրոսյանը (1996-ից):

Քուվեյթի եվ Արաբական ծոցի երկրների թեմ: Կազմավորվել է 1982-ին: Առաջնորդանիստը՝ Էլ Քուվեյթի Ս. Վարդանանց եկեղեցի: Ընդգրկում է Քուվեյթի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Կատարի Հայ համայնքները: 1950–56-ին Քուվեյթի Հայ համայնքի հոգևոր կարիքների համար Քուվեյթ է այցելել Բասրայի (Իրաք) հոգևոր հովիվը: 1956-ից քուվեյթահայ համայնքն անցել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գերակայության ներքո: 1961-ից ունեցել է մնայուն հովիվ (Պարույր քհն. Սարգսյան):

1962-ին քուվեյթահայերը երկրի իշխանություններից ստացել են համայնքի օրինականությունը հաստատող վկայագիր, որը իրավունք է ընձեռել ունենալ սեփական աղոթատեղի: 1963-ին կառուցվել է եկեղեցի՝ հանդիսասրահով:

1979-ին Արաբական ծոցի տարածաշրջանը դարձել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդություն, 1982-ին՝ թեմ: Անդրանիկ առաջնորդ է ընտրվել Օշական եպս. Զոլոյանը (1982–98):

1958-ից ցայսօր գործում է Քուվեյթի կիրակնօրյա դպրոցը: 1960-ին Երվանդ Թերզյանի նախաձեռնությամբ բացվել է հայ-արաբական դպրոցը: 1961-ին այդ դպրոցի հիման վրա ստեղծվել է Քուվեյթի Հայ ազգ. վարժարանը (տնօրեն՝ Պարույր քհն. Սարգսյան): 1974-ին եկեղեցու տարածքում կառուցվել է վարժարանի եռահարկ շենքը (1969–70-ին վարժարանը միջնակարգ դպրոցի կարգավիճակ է ստացել): Գործել է Հայ եկեղեցու կիրակնօրյա դպրոցների օժանդակ միությունը:

Թեմական ժողովի կողմից նշանակվում է համայնքի վարչություն, որը կազմակերպում է գաղութի ազգ-եկեղեց. կյանքը, որոշում դպրոցի հոգաբարձության կազմը ևն:

Արաբական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ), հայերի զանգվածային հոսքը ԱՄԷ սկսվել է 1975-ից: 1977-ին Դուբայի Ս. Երրորդություն անգլիկան եկեղեցում մատուցվել է հայերեն առաջին պատարագը: 1979-ին ձևավորվել են Դուբայի և Աբու Դաբիի առաջին ազգ. վարչությունները: Սկսել է գործել վարձված եկեղեցին իր դպրաց դասով, Քուվեյթից կամ Անթիլիասից պարբերաբար հրավիրվել է այցելու հոգևոր հովիվ: 1993-ից ԱՄԷ-ի հայ համայնքն ունեցել է մշտական հոգևոր հովիվ (առաջինը՝ Բաբկեն վրդ. Զարյան):

1996-ին կազմակերպված համահամայնքային հանդանակությամբ սկսվել են Շարժայում հայկ. եկեղեցու և դպրոցի շենքի շին. աշխատանքները: 1997-ին տեղի է ունեցել ԱՄԷ-ում առաջին՝ Շարժայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (ճարտ.՝ Բաբկեն Այվազյան) հիմնարկեքը, 1998-ին՝ օծումը: Համայնքի հոգևոր հովիվն է Արամ քհն. Տեյիրմենճյանը (1997-ից):

Թեմական խորհրդի, Շարժա-Դուբայի և Աբու Դաբիի ազգ. վարչությունների հովանու ներքո գործում են նաև հայ երիտասարդաց տները, համայնքի մշակութ. կյանքը կազմակերպող Գեղ. հանձնախումբը, դպրոցների գործունեությունն ապահովող հոգաբարձական կազմը և տիկնանց միությունը:

Թեմի առաջնորդն է կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ արք. Թապագյանը (2000-ից):

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսներ

Կարապետ Ա Եվդոկացի – 1446–77, Ստեփանոս Ա Սարաձորցի – 1477–88, Հովհաննես Ա Անտիոքցի – 1488–89, Հովհաննես Բ Թլկուրանցի – 1489–1525, Հովհաննես Գ Քիլիսցի (Կայծակն, Կայծառ) – 1525–39, Սիմեոն Ա Զեթունցի – 1539–45, Ղա-

ԿԱՆԱԴԱՅԻ

զար Ա Զեթունցի – 1545–1547, Թորոս Ա Սսեցի (Մայսենց) – 1548–50, Խաչատուր Ա Զորիկ – 1551–1560, Խաչատուր Բ Զեթունցի (Խաչիկ Ուլնեցի, Երաժիշտ) – 1560–84, Ազարիա Ա Զուղայեցի – 1584–1601, Հովհաննես Դ Այնթափցի (Այթեպցի) – 1601–1621, Մինաս Ա Սսեցի (Կարնեցի, Թացախ) – 1621–1632, Սիմեոն Բ Սեբաստացի – 1633–48, Ներսես Ա Սեբաստացի – 1648–54, Թորոս Բ Սեբաստացի – 1655–57, Խաչատուր Գ Գաղատացի (Մինտերճի, Մինտերճյան) – 1657–74, Սահակ Ա Քիլիսցի (Մեյխանեճի, Մեյխանեճյան) – 1674–86, Գրիգոր Ա Ադանացի (Պիծակն, Բ. Կյուլեսերյանի ցանկում՝ Գրիգոր Բ Ատանացի) – 1686–93, Աստվածատուր Ա Սասունցի (Նարին) – 1693–94, Մատթեոս Ա Կեսարացի (Սարի) – 1694–1705, Հովհաննես Ե Հաճնցի – 1705–21, Գրիգոր Բ Կեսարացի (Ուղուրլու, Ուղուրլյան, Բ Կյուլեսերյանի ցանկում՝ Գրիգոր Գ Կեսարացի) – 1721–29, Հովհաննես Զ Հաճնցի (Տեր Ադամ) – 1729–33, Ղուկաս Ա Աջապահյան (Աջապահ, Աջապան, Սսեցի) – 1733–37, Միքայել Ա Աջապահյան (Սսեցի) – 1737–58, Գաբրիել Ա Աջապահյան (Սսեցի) – 1758–70, Եփրեմ Ա Աջապահյան (Սսեցի) – 1771–84, Թեոդորոս Ա Աջապահյան (Սսեցի, այլ ցանկերում՝ Թորոս Գ Սսեցի Աջապահյան) – 1784–96, Կիրակոս Ա Աջապահյան (Սսեցի, Մեծն, Մեծագործ) – 1797–1822, Եփրեմ Բ Աջապահյան (Սսեցի, Տեր-Մանվելյան) – 1823–31, Միքայել Բ Աջապահյան (Սսեցի, Ղուկասյան) – 1832–55, Կիրակոս Բ Աջապահյան (Սսեցի) – 1855–65, Մկրտիչ Ա Քեֆսիզյան (Մարաշցի) – 1871–94, Սահակ Բ Խապայան (Եղեգցի) – 1902–39, Պետրոս Ա Սարաճյան – 1940, Գարեգին Ա Հովսեփյան – 1943–52, Զարեհ Ա Փայասլյան – 1956–63, Խորեն Ա Բարոյան – 1963–83, Գարեգին Բ Սարգիսյան – 1983–95, Արամ Ա Քեշիշյան – 1995-ից (41-րդ գահակալը):

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.4, 1–6-րդ պատկերները:

Գրկ. Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թ., 1892: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2–3, ԿՊ – Երուսաղեմ, 1914–27: Կյուլեսերյան Բ., Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939: Եղիայան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, 1975:

ԿԱՆԱԴԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1984-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Մոնրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Թեմի կազմավորումից առաջ Կանադայի հայ համայնքի հոգևոր կարիքները հոգացել է *Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի* առաջնորդարանը: Սկզբ. շրջանում կրոն. արարողությունները կատարել են այցելու հովիվները բնակարաններում կամ վարձված տաճարներում: Առաջին ազգ. հոգաբարձությունը կազմակերպվել է 1918-ին, Սենտ Կաթրինզում: 1930-ին կառուցվել է Կանադայի առաջին հայկ. եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը (Սենտ Կաթրինզում):

Մոնրեալի հայ համայնքի եկեղեց. կյանքը պաշտոնապես կազմակերպվել է 1948-ին, երբ ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տիրան եպս. Ներսոյանի ներկայությամբ կազմվել է եկեղեց. հանձնախումբ (6 հոգուց բաղկացած): Այդ ժամանակաշրջանում եկեղեց. արարողությունները կատարվել են Ս. Հովհաննես Մկրտիչ անգլիկան եկեղեցում:

1957-ին Կանադայի իշխանությունները ստորագրել են երկրում Հայաստանյայց առաքելական եկեղեցու պաշտոնական ճանաչման դիմումը: 1967-ին ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արք. Մանուկյանի և թեմական խորհրդի որոշմամբ ստեղծվել է Կանադայի Հայ եկեղեցու փոխանորդություն: Առաջնորդական փոխանորդ է նշանակվել Վաչե եպս. Հովսեփյանը: 1970-ին ծխական խորհրդի որոշմամբ գնվել է եկեղեցի, որը նույն թվականին Կ. Պոլսի պատրիարք Շնորհք Գալուստյանը օծել է որպես առաջնորդանիստ՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Առաջնորդարանի ենթակայությամբ գործում են 10 ծուխ, 5 ծխական վիճակներ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործում է շաբաթօրյա դպրոց (1957-ից), մշակութ. միություններ, տարեցների, տիկնանց, երիտասարդական կազմակերպություններ: 1964-ից եկեղեցու նախաձեռնությամբ հրատարակվում է «Բուրաստան» երկամսյա հանդեսը:

Տորոնտոյի հայ համայնքը սկսել է կազմավորվել 1920-ական թթ., առաջին եկեղեց. հոգաբարձությունը ստեղծվել է 1948-ին: Կրոն. արարողությունները կատարվել են Ս. Ստեփանոս, 1930–53-ին՝ Ս. Երրորդություն անգլիկան եկեղեցիներում: 1953-ին կատարվել է Տորոնտոյի հայկ. առաջին՝ Ս. Երրորդություն եկեղեցու օծումը: Եկեղեցուն կից 1956-ից գործում է Ս. Սահակ-Ս. Մեսրոպ դպրոցը, 1978-ից՝ Ս. Խաչ ամենօրյա ազգ. վարժարանը, մշակութ. հանձնախմբեր, տիկնանց, երիտասարդական կազմակերպություններ: 1987-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը օծել է հայկ. ճարտ. ոճով կառուցված (ճարտ. Թադեոր Հակոբյան) Ս. Երրորդություն եկեղեցին, որին կից գործում են ամենօրյա վար-

ժարան, մշակութ. հանձնախմբեր («Կամար», գործում է 1992-ից), տիկնանց, երիտասարդական կազմակերպություններ: 1987-ից եկեղեցու վարչությունը հրատարակում է «Նոր սերունդ» պարբերաթերթը:

Առաջնորդարանի ենթակայությամբ են գործում նաև Վանկուվերում՝ Ս. Վարդան (կառուցվել է 1964-ին), Համիլտոնում՝ Ս. Աստվածածին (1976), Օտտավայում՝ Ս. Մեսրոպ (1979), Միսիսոկայում՝ Ս. Վարդան (1990), Լավալի Ս. Խաչ (1993), Վինձորի Ս. Հարություն (1995) եկեղեցիները: Վանկուվերի, Սենտ Կաթրինզի, Համիլտոնի, Լավալի եկեղեցիներն ունեն մշտական հովիվներ: Մյուս եկեղեցիները, թեև օժտված են ծխական մարմիններով, սակայն ունեն միայն այցելու հովիվ:

Վերջին շրջանում կազմվել են Նովա Սկոչիայի, Վիննիպեգի, Քինգստոնի, Էդմոնտոնի և Կալգարիի ծխական վիճակները: Այդ քաղաքներում բնակվող սակավաթիվ հայ ընտանիքների հոգևոր կարիքները հոգում են այցելու հովիվները:

Կ. թ. ներկայացնում է Հայ եկեղեցին Եկեղեցիների կանադական խորհրդում (խորհրդի փոխնախագահ՝ Հովնան արք. Տերտերյան):

Կ. թ-ի առաջնորդն է Հովնան արք. Տերտերյանը (1990-ից):

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.5, 1-ին պատկերը:

ԿԱՆՈՆ [< հուն. *κανών* – եղեգի ցողուն, ուղիղ փայտ, ցուցակ, կարգ, օրենք (հատկապես՝ եկեղեցական օրենք)], 1. լայն առումով՝ այն ամենը, ինչ մեկընդմիշտ հաստատված է, դարձել է ավանդական, ստացել օրենքի ուժ, եկեղեցու համար՝ կանոնական: Վաղքրիստ. լեզվում նշանակել է վարքի բոլոր այն նորմերը, որոնց պետք է հետևեն քրիստոնյաները (Բ Կորնթ. **10.**13, Գաղատ. **6.**16, Փիլիպ. **3.**16): *Հովհաննես Գ Օձնեցին* Կ. բառը բացատրել է իբրև «լուսաշաւիղ ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի» («Կանոնագիրք Հայոց», հ. 1, 1964, էջ 535), իսկ *Գրիգոր Տաթևացին*՝ իբրև «ուղղութիւն և կարգ և օրենք»:

2. *Աստվածաշնչի*՝ եկեղեցու կողմից ընդունված և վավերացված գրքերի ամբողջությունը (ցանկը), որը կոչվում է «Կանոն Սուրբ Գրոց»: Հայ եկեղեցին իր կողմից հարազատ և ընդունելի համարված Հին և Նոր կտակարանների գրքերից կազմել է Աստվածաշնչի Կ., որ է *կանոնական գրքերի* ցուցակը, մերժելով՝ որպես անհարազատ, անկանոն կամ *պարականոն գրքերը*:

3. Այն որոշումները, որոնք *առաքյալները* (առաքելական Կ-ներ), *եկեղեցական ժողովները* և *եկեղեցու հայրերը* սահմանել են իբրև հավատի ուղիղ դավանանք (հավատի Կ.), և որոնք վերաբերում են նաև եկեղեցու կազմակերպմանը, ծիսակատարությանը և աստվածապաշտությանը:

Եկեղեց. Կ-ները լինում են հավաքական և անհատական: Առաջինները վերաբերում են բոլոր հավատացյալներին և ճշտում են *դավանանքը*, պաշտամունքներն ու ծեսերը, քրիստոնեաբար ապրելու բոլոր նորմերը, որոնց պետք է հետևի և հավատա ամբողջ եկեղեցին: Անհատ. Կ-ները վերաբերում են առանձին խմբերի, օր., հոգևորականներին, վանականներին, որոնց համար սահմանվում են առանձին Կ-ներ:

Եկեղեցուն վերաբերող ամեն ինչ հիմնված է կանոնական տվյալների վրա: Քրիստ. եկեղեցին, սկսած առաքելական շրջանից, իր առօրյա կյանքը կանոնավորում և խնդիրները լուծում է համաձայն Ս. Գրքի սկզբունքների և ժողովական որոշումների: Տեղական և *տիեզերական ժողովների* սահմանած Կ-ներն ընդունել է նաև Հայ եկեղեցին: Վերջինս գումարել է նաև իր ազգ-եկեղեց. ժողովները, որոնց սահմանած Կ-ները նույնպես կազմում են հայոց *եկեղեցական իրավունքը*: Կ-ներից կազմվել են ժողովածուներ՝ կանոնագրքեր: Հայոց համար այդպիսին է «*Կանոնագիրք Հայոցը*», որն առաջին անգամ խմբագրել և կազմել է Հովհաննես Գ Օձնեցին:

4. *Սաղմոսների* ութ բաժանումներից յուրաքանչյուրը:

5. Սահմանված *շարականներ*՝ որևէ տոնի համար:

ԿԱՆՈՆ (< հուն. *κανών* - եղեգի ցողուն, օրենք, կարգ), Հայ եկեղեցու պաշտոներգության մեջ կիրառվել է մի քանի իմաստներով: *Հոգևոր երաժշտության* մեջ որոշակի հաջորդականությամբ դասավորված երգասացությունների շարքերը կամ կարգերը Սաղմոսարանում, *Շարակնոցում*, *Գանձարանում* և *Մաշտոցում*: 1. Հայկ. Սաղմոսարանը բաժանված է 8 Կ-ի, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է եկեղեց. երգեցողության մեջ բյու-

բեղացած 8 ձայնեղանակներից որևէ մեկին: Այս Կ-ները կազմված են 7 գուբղաներից, ընդ որում ամեն մի գուբղա ընդգրկում է 2–6 *սաղմոս*: Սաղմոսարանի Կ-ները սկզբնապես բաժանված են եղել եկեղեց. օրվա 6 ժամերի վրա ու երգվել միաձայն, երկու դասերի մասնակցությամբ փոխեփոխ՝ երկուական Կ. գիշերային ու առավոտյան, մեկական՝ երրորդ, վեցերորդ, իններորդ և երեկոյան ժամերին: Դեռևս V դ. Կ-ներին կցվել են եղանակավոր *քարոզները*՝ իրենց աղոթքներով, և ծորերգային բնույթի մարգարեական օրհնությունները, որոնք լրացրել են այդ Կ-ները՝ առավել հստակ սահմանազատելով միմյանցից: Հետագայում Սաղմոսարանի Կ-ները բաժանվել են 7, 8 և 9 ժամերի վրա: Կ-ների առաջին 6 գուբղաները երգվել են ասերգային եղանակավորումով, իսկ յոթերորդը, այսպես կոչված՝ կանոնագլուխը, հատկանշվում է մելիզմատիկ բնույթի մեղեդիներով: 2. Շարակնոցում բյուզ. հիմներգությունից փոխառնված 8–9 երգերից բաղկացած Կ. ձեռք է բերել երաժշտաբանաստեղծ. տեսակի նշանակություն: Կ-ի առաջին նմուշները երևան են եկել Անդրեաս Կրետացու, Հովհան Դամասկացու, Կոզմա Մայումացու ստեղծագործություններում: Հայկ. պաշտոներգության մեջ Կ. մուտք է գործել VIII դ., յուրացվել որպես հոգևոր երգարվեստի նոր, առավել զարգացած ստեղծագործության ցիկլային տեսակ: Հայկ. Շարակնոցում Կ-ի ներդրումը կապված է *Ստեփանոս Սյունեցու* անվան հետ, մասնավորապես՝ նրա Հարության ավագ օրհնությունների *ութձայնի* հիմն. եղանակներն ընդգրկող մեծածավալ 8 շարքերի ստեղծման և կիրառման հետ: Կ-ները սկզբնապես կազմվել են շրջանառության մեջ եղած կցուրդներից և կացուրդներից, սակայն դրանց հետ մեկտեղ հետզհետե ստեղծվել են նորերը: Հայկ. Կ., պահպանելով բյուզանդականի հետ ունեցած ընդհանուր մասերը, ստացել է իր ուրույն տեսքը: Կ-ի մասերի անվանումները սերում են Հին կտակարանի մարգարեական օրհնությունների կամ սաղմոսների սկզբնաբառերից.

1. Օրհնութիւն – (Օրհնեսցուք զՏէր, զի փառաւք է փառաւորեալ, Ելք **15.**21):

2. Հարց – (Օրհնեալ է Տէր Աստուած հարցն մերոց, Դան. **3.**52):

3. Մեծացուսցէ – (Մեծացուսցէ անձն իմ զՏէր, Ղուկ. **1.**46):

4. Ողորմեա – (Ողորմեա ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, Սաղմ. **50**):

5. Տէր երկնից – (Օրհնեցէ՛ք Տէր երկնից, օրհնեցէ՛ք, զնա ի բարձանց, Սաղմ. **148**):

6. Մանկունք – (Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր և օրհնեցէ՛ք զանուն Տեառն, Սաղմ. **112**):

7. Ճաշու – երգվում են տարբեր սաղմոսներից վերցված հատվածներ:

8. Համբարձի – (Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն, Սաղմ. **120**):

Օրհնությունը երգվում է գիշերային ժամին, Հարցը, Մեծացուսցէն, Ողորմեան, Տէր երկնիցը և Մանկունքը՝ առավոտյան ժամին, Ճաշուն՝ ցերեկվա ժամին, իսկ Համբարձին նախատեսված է երեկոյան ժամին երգելու համար: Կ. նախապես պարունակել է 9 մաս, սակայն Հարցին հետևող Գործք կոչվող մասը (Սաղմ. **102.**22) հետագայում կորցրել է իր ինքնուրույն նշանակությունը, կցվել Հարցին՝ ստանալով Գործատուն անունը: Եկեղեց. յուրաքանչյուր տոնի աստվածաբան. իմաստը հետևողականորեն բացահայտվում է ըստ նշված դրվագների: Կ-ի երգերում առավել ցայտուն են դրսևորվում տվյալ տոնի իմաստային-կերպարային հիմքի հետ կապված քնարական ոլորտի հարուստ երանգները: Կ. լինում է լրիվ կամ թերի՝ բաղկացած 2, 3, 4 երգերից, երբեմն՝ 10 մասից՝ ընդգրկելով երկուական որևէ մաս: Շարակնոցում հատուկ տեղ են գրավում մեկական երգից՝ Մանկունքներից, կազմված Կ-ները, որոնց հեղինակներն են *Պետրոս Ա Գետադարձը* և *Ներսես Շնորհալին*: Կ-ի ժանրի զարգացմանը մեծապես նպաստել են բուն Հայաստանում և Կիլիկիայում XI–XIII դդ. ստեղծագործող շարականագիրները: 3. Գանձարանի Կ., որը կոչվել է նաև գանձ-շարք, ձևավորվել է X–XIII դդ. տաղային երգարվեստի ծաղկման շրջանում, ամփոփում է 4 միավոր՝ գանձ, տաղ, մեղեդի և հորդորակ: Գանձաշարքում բնորոշը ասերգային, հանդարտ պատմող. գանձի, տաղի կամ մեղեդու հուզական, երաժշտ. առումով ուշագրավ ասերգային-հանկարծաբանական բնույթի երգերի հակադրությունն է, ինչը գեղ. նոր շունչ ու որակ է հաղորդում Գանձարանի Կ-ին: 4. Մաշտոց ծիսարանում արմատացած Կ. ունի ոչ թե ժանրային նշանակություն, այլ համապատասխանում է կարգ հակացությանը: Մաշտոցի Կ-ի երաժշտածիս. բաղադրիչները քաղված են տարբեր ծիսամատյաններից: Բաղկացած է 6 մասից՝ սաղմոս, կցուրդ, քարոզ, աղոթք, հատ-

ված Ավետարանից, ընթերցվածք մարգարեությունից կամ առաքյալների թղթերից, որոնք հաճախ լրացվում են գանձով և տաղով: Մաշտոցի Կ-ի հիմն. առանձնահատկությունը բաց ձևի միտումն է, որը եկեղեցուց դուրս կատարվող ծեսերի ընթացքում մշտապես հնարավորություն է ընձեռել ընդգրկելու երաժշտաբանաստեղծ. նորանոր կտորներ:

Աննա Արևշատյան

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ», «Կանոնագիրք Հայոց», «Կանոնագիրք», «Կանոնագիրք», միջնադարյան հայ *եկեղեցական իրավունքի* ժողովածու: Բաղկացած է հոգևոր-եկեղեց., ծիսադավան., բարոյախրատ., գաղափարաքաղ. և տնտ-քաղաքացիական խնդիրներ ընդգրկող *կանոն* հոդվածներից, որոնք ամփոփված են առանձին կանոնախմբերում: Այդ կանոնախմբերի մի մասը հավաքել, միավորել, դասավորել և «Կ. Հ.» է կազմել *Հովհաննես Գ Օձնեցին* VIII դ. 10-ական թթ.՝ ելնելով *քաղկեդոնականության* դեմ պայքարի անհրաժեշտությունից և նպատակ ունենալով դավանանքի ու պաշտամունքի ծիսական հարցերի մշակմամբ, ազգ. ավանդ. կարգուկանոնով, սովորություններով պահպանել Հայ եկեղեցու ազգ. դիմագիծը, դրանով իսկ պետականության չգոյության պայմաններում դիմակայել հայ ժողովրդի նկատմամբ համաձուլարար քաղաքականություն վարող օտար ուժերին:

Հովհաննես Գ Օձնեցու կազմած ժողովածուն բաղկացած է 24 կանոնախմբից, որոնցից 15-ը թարգմանական են և սերում են հուն. կանոններից: Դրանք են՝ առաքելական առաջին («Կանոնք առաքելականք») և երկրորդ («Երկրորդ առաքելական կանոնք», հայտնի են նաև Կղեմես Հռոմայեցու անունով՝ «Կանոնք Կղեմայ»), «Հարանց հետեւողաց», *երեք տիեզերական ժողովների* (Նիկիայի՝ 325, Կ. Պոլսի՝ 381, Եփեսոսի՝ 431), տեղական վեց ժողովների (Անկյուրայի, Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լաոդիկեի, Սարդիկեի), ինչպես նաև *Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու* և Սևանտոսի կանոնախմբերը: Հովհաննես Գ Օձնեցու կազմած «Կ. Հ.»-ի մյուս 9 կանոնախմբերն ազգ-եկեղեց. ժողովների և Հայ եկեղեցու հայրերի՝ *Գրիգոր Ա Լուսավորչի, Սահակ Ա Պարթևի, Շահապիվանի եկեղեցական ժողովի, Հովհաննես Ա Մանդակունու, Սահակ Գ Ձորոփորեցու*, Հովհաննես Գ Օձնեցու և այլոց կանոնախմբերն են:

X դ. կեսից «Կ. Հ.» համալրվել է նոր կանոնախմբերով և X դ. վերջին արդեն 40 կանոնախումբ ունեցող ամբողջական իրավաբան. ժողովածու էր: XI դ. սկսած «Կ. Հ.» նորից է խմբագրվել, լրացվել այլ կանոնախմբերով և մինչև XVII դ. ընդգրկել 98 կանոնախումբ: Լրացումների և խմբագրումների ընթացքում կանոնախմբերի նախկին դասավորությունը փոխվել է, ժողովածուն հարստացել է նաև այնպիսի կանոնախմբերով, որոնց հեղինակները դրանց կազմողները չեն: Այդպիսիներից են Թադեոս և Փիլիպպոս առաքյալների կանոնները, որոնք բովանդակում են քրիստ. բարոյականության և ծիսակարգի վերաբերյալ կարևոր հրահանգներ:

«Կ. Հ.» հրատարակվել է (լատ., հայերեն) մի քանի անգամ, 1941-ին մասնակիորեն թարգմանվել գերմ.: Առավել ամբողջական հրատարակվել է 1964–71-ին և ընդգրկում է VIII, X և XI դդ. խմբագրումները՝ ԾԷ (57) կանոնախմբով և ՌՅԼԲ (1332) կանոնով:

«Կ. Հ.»-ում տեղ են գտել եկեղեց. պաշտամունքի, ծիսական, հոգևորականների վարքագծի, հայ ավատատիր. հասարակության համակեցության ձևերի, հասարակության անդամների փոխհարաբերությունների, ամուսնության և ընտանիքի, ժառանգության և այլ հարաբերությունների կարգավորման նորմեր: «Կ. Հ.» նաև Հայ եկեղեցու վարդապետ. աստվածաբանության կարևոր աղբյուրներից է. կանոններից շատերն ունեն ոչ միայն ծիսական, եկեղեցաբան., կենցաղ. և բարոյական արժեք, այլև՝ աստվածաբան. և դավան. հեղինակություն: Կանոնագիրքը, բացառությամբ Շահապիվանի ժողովի կանոնների, մարմն. պատիժներ չի նախատեսել: Հանցանքների դեմ պայքարի հիմն. միջոցը համարվել է ապաշխարությունը, բարոյական ներգործությունը: Պատիժները վերաբերել են անձն. ինչքային իրավունքին, պաշտոնյաների գործունեությանը, ծիսակարգի խախտումներին: Կանոնագիրքն արժեքավոր տվյալներ է պարունակում հայ ժողովրդի (նաև այլ ժողովուրդների) կենցաղում և հավատալիքներում հեթանոսությունից մնացած ապրելակերպի, պատկերացումների, ընտանեկան հարաբերությունների մասին: Կանոնագրքում տեղ գտած և մեզ հասած հուն. աղբյուրները հնագույնն են:

«Կ. Հ.»-ի վկայությունները, որպես պաշտոն. վավերագրերի հեղինակություն, օգտագործվել

են և՛ Հայ եկեղեցու իրավասության տակ գտնվող հարցերի վերջնական լուծման կարգադրություններում, և՛ հայ մատենագրության տարբեր բնույթի երկերում, իսկ որպես սկզբնաղբյուր՝ նաև *Մխիթար Գոշի* ու Սմբատ Սպարապետի (1265) դատաստանագրքերում: «Կ. Հ.» մինչև XX դ. 20-ական թթ. գործածվել է Հայաստանում և հայկ. գաղթավայրերում:

Գրկ. Կանոնագիրք Հայոց (աշխատասիր. Վ. Հակոբյանի), հ. 1, 2, Ե., 1964, 1971:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ, Աստվածաշնչի՝ եկեղեցու կողմից ընդունված և վավերացված գրքերի ցանկ՝ ի տարբերություն մերժված, անհարազատ, անկանոն կամ *պարականոն գրքերի*: Հին և Նոր կտակարանների Կ.գ. կազմում են Աստվածաշնչի Կանոնը: Հինկտակարանային եբրայական կանոնի մեջ մտնող 22 գրքերի անվանացանկը բերված է *Որոգինեսի* Սաղմոսների մեկնության մեջ (218), Հին և Նոր կտակարանների Կ. գ. բերված են նաև *Աթանաս Ալեքսանդրացու* 367-ի 39-րդ Զատկական նամակում, ուր առաջին անգամ Նոր կտակարանի 27 գրքերը ներկայացված են իբրև մի ամբողջություն:

Աստվածաշնչի գրքերի մինչմեսրոպյան հայկ. կանոնի մասին ստույգ քիչ բան է հայտնի: Կ.գ-ի որոշ ցուցակներ Հայ եկեղեցուն ծանոթ են եղել նախքան գրերի գյուտը և Աստվածաշնչի թարգմանությունը, երբ Սուրբ Գիրքը Հայոց մեջ կարդացվել ու ընդօրինակվել է հունարեն և ասորերեն: Հայերեն թարգմանության Աստվածաշնչի Կ.գ-ի առաջին ցանկը տվել է *Կորյունն* իր «Վարք Մաշտոցի» երկում: Նրանից հետո Հին և Նոր կտակարանների Կ.գ-ի ցանկերի հանդիպում ենք տարբեր հեղինակների մոտ (*Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Հովհաննես Սարկավագ, Մխիթար Այրիվանեցի, Գրիգոր Որդի Աբասա, Գրիգոր Տաթևացի* և ուր.): Հայ եկեղեցում առաջին պաշտոնական կանոնը սահմանել է 768-ի *Պարտավի եկեղեցական ժողովը՝ Սիոն Ա Բավոնեցու* ձեռամբ: Ժողովի 23-րդ որոշումը հիշատակում է Հին կտակարանի 37 գիրք իբրև կանոնական: Նոր կտակարանի գրքերը չեն հիշատակվում: Ըստ Մ. *Օրմանյանի*՝ մեզ է հասել Պարտավի ժողովի որոշման միայն պատառիկը, որը բավարար չէ ճիշտ պատկերացում կազմելու Հայոց մեջ այդ ժամանակ ընդունված Կ. գ-ի մասին: Դարերի ընթացքում Կ. գ-ի ցուցակը կրել է որոշ փոփոխություններ: Ներկայիս հայկ. կանոնն ընդգրկում է 75 գիրք (Հին կտակարանի 48, Նոր կտակարանի 27 գիրք):

Աստվածաշնչի Յոթանասնից հունարեն թարգմանության բնագիրը, բացի 39 Կ.գ-ից, որոնք կազմում են եբրայական կանոնը, ընդգրկել է նաև, այսպես կոչված՝ երկրորդականոն գրքերը: Երկրորդականոն են այն գրքերը, որոնք թեև աստվածաշունչ չեն, սակայն որպես ոչ մերժելի, բարեպաշտական գրություններ հանձնարարելի են ընթերցման և հավատի շինության համար: Հայկ. երկրորդականոն գրքերը թվով ինն են. Եզրասի Ա, Հուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիներ Ա, Բ, Գ, Իմաստություն Սողոմոնի, Սիրաք, Բարուք, ինչպես նաև Դանիելի և Եսթերի գրքերի այն մի քանի հատվածները, որոնք բացակայում են եբրայական բնագրում: Երկրորդականոն այս գրքերից տարբերելու համար Հին կտակարանի 39 աստվածաշունչ գրքերը կոչվում են նաև նախականոն: Դրանք են՝ Ծննդոց, Ելք, Ղևտական, Թվեր, Երկրորդ օրենք, Հեսու, Դատավորներ, Հռութ, Ա, Բ, Գ, Դ Թագավորություններ, Ա, Բ Մնացորդաց, Բ Եզրաս, Նեեմի, Եսթեր, Սաղմոս, Առակներ, Ժողովող, Երգ երգոց, Հոբ, Եսայի, Օսեե, Ամոս, Միքիա, Հովել, Աբդիու, Հովնան, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անդե, Զաքարիա, Մաղաքիա, Երեմիա, Ողբ, Դանիել, Եզեկիել (տես նաև *Աստվածաշունչ* հոդվածի Կանոն մասը):

Գրկ. Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, պր. 1, Ե., 1964, էջ 30–35: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե.,1976, էջ 309–358:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, տես *Եկեղեցական իրավունք*:

ԿԱՊՈՍԻ ՎԱՆՔ, Ս. Հակոբ Մծբնա հայրապետի վանք, Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Դարանաղյաց ու Եկեղյաց գավառների սահմանագծին՝ Սեպուհ լեռան արևելյան լանջի դարավանդի վրա: Հիմնվել է XII դ. (ավանդաբար կապում են Տրդատ Գ-ի ժամանակների հետ): Գրավոր աղբյուրներում հիշատակվում է 1230-ից: XIII–XV դդ. կրոն. ու գրչության հայտնի կենտրոն էր. ունեցել է վարդապետարան, գրատուն, եղել եպիսկոպոսանիստ: 1416-ին վանքը հրդեհել ու ավերել են ակկոյունլու հրոսակները: Որոշ ժամանակ անց վերանորոգվել է՝ «առավել ևս չքեղ, քան առաջ»: 1425-ին կառուցվել է վանքի գավիթը: 1535-ին ավերվել է երկրաշարժից. քանդվել են

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, շինքերի մեծ մասը: XVI դ. Կ. վ. անկում է ապրել: 1684-ին հիմնովին վերանորոգվել է վանահայր *Ավետիք Եվդոկացու* ջանքերով: XVII դ. Կ. վ. դեռևս Բարձր Հայքի ամենանշանավոր վանքերից էր:

Կ. վ-ի Ս. Հակոբ եկեղեցին ունեցել է երկմույթ գմբեթավոր հորինվածք, հատակագծում՝ պայտաձև խորանի երկու կողմերում ավանդատներով: Եկեղեցում պահվել են *Հակոբ Մծբնացու* մասունքները: Ուշագրավ են Ավագ խորանի կամարի խոյակներին ցուլի գլխի և քայլող առյուծի պատկերաքանդակները: Վանքի երկրորդ՝ Ս. Սիոն եկեղեցին, գավիթը, պարիսպը, խցերը և աշխարհիկ մյուս շինություններն այսօր ամբողջովին ավերակ են:

Կ. վ-ի դպրոցը հայ գրչության և ուսումնառության կենտրոններից էր: Գրչության արվեստը ծաղկել է XIII–XV դդ. (XIII դարից հայտնի է երեք ձեռագրի ընդօրինակություն), իսկ դպրոցը համբավ է ձեռք բերել հատկապես XIV դ. վերջից, երբ բաբունապետ է եղել Տաթևի համալսարանի սան Գևորգ Երզնկացին: Կ. վ-ի դպրոցում ուսանելու են եկել Հայաստանից և այլ վայրերից: *Հակոբ Ղրիմեցին* այստեղ է հմտացել տոմարագիտության մեջ և հետագայում այդ առարկան դասավանդել նույն, ապա՝ *Մեծոփավանքի* դպրոցում: Գևորգ Երզնկացու մահից (1416) հետո դպրոցը մի քանի տասնամյակ անչքացել է, բայց վերստին ծաղկել և համալսարան է դարձել Հովհաննես Համշենցու բաբունապետության օրոք: Կ. վ-ի գրչատանն են ընդօրինակվել Մատենադարանում պահվող Հակոբ Ղրիմեցու ժողովածուն (1389), Քարոզգիրք (1416), Լուծմունք (1494, գրիչ՝ Մաղաքիա Բաբերտացի) և բազմաթիվ այլ ձեռագրեր: Ընդօրինակությունների մի մասն էլ պահվում է Երուսաղեմի և Վիեննայի մատենադարաններում:

Գրկ. Ոսկյան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վնն., 1951: Թիերի Ժ. Մ., Սեպուհ լեռան հուշարձանները (հնագիտական ուսումնասիրություն), «Էջմիածին», 1989, № 4–6:

Մուրադ Հասրաթյան
Արտաշես Մաթևոսյան

ԿԱՊՈՒՏԿՈՂԻ Ս. ՀԱԿՈԲ ՎԱՆՔ, Ընձաքարի վանք, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառում, Կապուտկող լեռան արևելյան լանջին, Ընձաք գյուղի մոտ: Վանքը նվիրվել է *Հակոբ Մծբնացի* հայրապետին, այստեղ էլ պահվել է նրա ճկույթը: Ըստ ավանդության՝ Կ. Ս. Հ. վ. հիմնադրվել է IV դ.: Ծաղկում է ապրել X–XI դդ., Վասպուրականի Արծրունյաց թագավորների հովանավորությամբ: Նրանք կառուցել են Ս. Հակոբ, Ս. Աստվածածին, Ս. Հովհաննես և Ս. Երեք Մանկունք եկեղեցիները: Վանքի միաբանների թիվը եղել է շուրջ 300: XIII–XIV դդ. Կ. Ս. Հ. վ. լքվել է և ավերվել: 1412-ին վանահայր Ստեփանոս Փիրը հիմնովին վերակառուցել է վանքը (ճարտ-ներ՝ Գրիգոր և Հովհաննես), վերականգնել Ս. Հակոբ եկեղեցու գմբեթը (աղյուսով), խցերը, տնտ. շինությունները, պարիսպը: XV դ. վանքը ստացել է բազմաթիվ նվիրատվություններ՝ արտեր, այգիներ, ձեռագրեր: Ունեցել է հարուստ գրադարան: 1445-ին եպիսկոպոս Ստեփանոսը նորոգել է վանքի պարիսպը և շինությունները, սալարկել եկեղեցիների աղոթասրահները: XVII–XVIII դդ. վանքը եղել է նշանավոր ուխտատեղի: 1850-ին շրջակայքի քրդերը հափշտակել են վանքում պահվող Հակոբ Մծբնացու մասունքը և Նոյյան տապանի մասնիկը: 1877-ին վանքը զգալի տուժել է ռուս-թուրք. պատերազմից և 7 տարի լքված եղել: Վերջնականապես դադարել է գործել 1895-ին: 1970-ին թուրք իշխանություններն ամբողջովին քանդել են վանքը և նրա տեղով խճուղի անցկացրել:

Կ. Ս. Հ. վ-ի Ս. Հակոբ եկեղեցին ունեցել է գմբեթավոր, ներքուստ՝ խաչաձև, չորս անկյուններում՝ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն հորինվածք: Եկեղեցու ներսը, բացի ավանդատներից, լրիվ ծածկված է եղել արժեքավոր որմնանկարներով (X դ.), որոնք պատկերագր. ու ոճական շատ ընդհանրություններ ունեն *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու որմնանկարների հետ: Հվ. խաչաթևում պատկերվել է «Ավետման» տեսարանը (պահպանվել էին դահավորակին նստած Աստվածածնի և Գաբրիել հրեշտակապետի պատկերները), փախուստը Եգիպտոս, վիշապին սպանող ս. Գևորգը, չքեղ հագուստներով երկու անձնավորություն (հավանաբար վանքը կառուցող Արծրունյաց թագավորական տան անդամները), սրբեր, զինվորներ ևն:

Գրկ. Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Լալայան Ե., Վասպուրականի նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք 22, Թ., 1912: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988; Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ԿԱՐԱՊԵՏ Ա ԿԵՂԵՑԻ, Բ ո կ ի կ [ծ. թ. անհտ, գ. Կեղի (Ծոփքի Խորձյան գավառ) – 1404, Սիս], Ամենայն Հայոց կաթողիկոս 1392-ից: Հաջորդել է *Թեոդորոս Բ Կիլիկեցուն*: «Բոկիկ» մականունն ստացել է հավանաբար մինչև հոգևորական ձեռնադրվելը, աղքատ՝ բոկոտն լինելու պատճառով: Վաղ պատանեկությունից ուսանել ու դաստիարակվել է Սսի Հայրապետանոցում: Կաթողիկոսական գահ է բարձրացել Կիլիկիայի կառավարիչ Կոստանդին Կիլիկեցի զորավարի (1376–1424) աջակցությամբ: Գահակալել է քաղ. ու տնտ. աննպաստ պայմաններում: Հաճախակի են դարձել եգիպտ. մամլուքների և փոքրասիական թուրքմենների հարձակումները Կիլիկիայի ու Սսի վրա: Կիլիկիայի Լևոն Զ թագավորի մահը (1393) ավելի ծանր կացության մեջ է դրել հոգևոր ու աշխարհիկ հայ իշխանավորներին: Դավանաբան. վեճերով նորից գլուխ են բարձրացրել ունիթորները (տես *Ունիթորություն*): Ստեղծված դրությունից ելք գտնելու համար Կ. Ա Կ. Կոստանդին Կիլիկեցու, Սսի կառավարիչ պարոն Կարապետի և տեղի այլ իշխանների հետ 1404-ին ժողով է գումարել (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), որտեղ որոշվել է բնակչությանը գաղթեցնել երկրից: Սսի բնակչության մեծ մասը բոլոր իշխանազունների հետ հեռացել և հաստատվել է Կիպրոսում ու Եվրոպայում: Կաթողիկոսը փոքրաթիվ բնակիչների հետ մնացել է քաղաքում: Սակայն չկարողանալով դիմադրավել Սսի վրա նորից հարձակված թուրքմեն ամիրա Ռամազանի զորքերին՝ 1404-ի հունիսի 6-ին անձնատուր են եղել: Ենթադրվում է, որ Կ. Ա Կ. վախճանվել է թունավորումից:

Կաթողիկոս. գահին Կ. Ա Կ-ուն հաջորդել է *Հակոբ Գ Սսեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ԿԱՐԱՊԵՏ Բ ՈՒԼՆԵՑԻ, Ծ ծ կ ե ր [ծ. թ. անհտ, գ. Ուլն (Զեյթուն գավառ) – 2.10.1729, Վաղարշապատ, ամփոփվել է Ս. Հռիփսիմե տաճարի արևմտյան կողմում], Ամենայն Հայոց կաթողիկոս 1726-ից: Հաջորդել է *Աստվածատուր Ա Համադանցուն*: Սովորել և եպիսկոպոս է ձեռնադրվել Սսի կաթողիկոսարանում: Եղել է Գաղաթիո (Գալաթիա՝ Անկյուրա կենտրոնով) Հայոց թեմական: 1725-ի աշնանը դժբախտ պատահարի զոհ է դարձել Աստվածատուր Ա Համադանցին: Երկիրը գտնվել է պատերազմ. վիճակում. թուրքերը գրավել էին Այրարատը, իսկ Սյունիքում և Արցախում շարունակվել են ազատագր. կռիվները: Թուրք. հարձակումների պատճառով Ս. Էջմիածնի միաբանները ցրվել էին, և կաթողիկոսի օրինական ընտրություն Վաղարշապատում հնարավոր չէր: Այդ պատճառով էլ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտ Բաղիշեցու նախաձեռնությամբ ընտրությունը տեղի է ունեցել Կ. Պոլսում: Ստանալով Կ. Պոլսի, Սսի և Երուսաղեմի հայոց աշխարհիկ ու հոգևոր գործիչների համաձայնությունը՝ նա պատվիրակներ է հղել Անկյուրա՝ Կ. Բ Ու-ուն Կ. Պոլիս առաջնորդելու: 1726-ի փետր. 27-ին Կ. Պոլսի Ս. Աստվածածին Մայր եկեղեցում 12 եպիսկոպոսներ կատարել են օծումը: Կ. Բ Ու. առժամանակ մնացել է Կ. Պոլսում, կարգավորել իրավական-նական ու հոգևոր-դավան. որոշ խնդիրներ և վեճեր: 1727-ի հունիսին մեկնել է Կ. Պոլսից, այցելել հայոց հոգևոր թեմերի մի շարք կենտրոններ (Բրուսա, Անկյուրա, Եվդոկիա ևն) և 1728-ի սկզբին հասել Էջմիածին: Էջմիածնում համախմբել է ցրված միաբաններին, կարգավորել վանքապատկան կալվածագրերը և նպաստել հոգևոր-մշակութ. կյանքի զարգացմանը: Կ. Բ Ու-ու պատվերով Հակոբ Հովնաթանյանը նկարել է 12 առաքյալների պատկերները Մայր տաճարի խորանի կամարին:

Կաթողիկոս. գահին Կ. Բ Ու-ուն հաջորդել է *Աբրահամ Բ Խոշաբեցին*:

ԿԱՐԱՊԵՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Կ ա ր ա պ ե տ ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս [ավազանի անունը՝ Հովհաննես, 18(29).5.1779, գ. Հունուտ (Սպերի գավառ) – 3.6.1856, Ախալցխա], եկեղեցական-հասարակական գործիչ, Կարինի և Վիրահայոց թեմերի առաջնորդ: Նախնական կրթությունն ստացել է (1791-ից) Ակնի հոգևոր առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսի մոտ, այնուհետև Կ. Պոլսում ուսանել աստվածաբանություն, ճարտասանություն, քերականություն և լեզուներ: 1801-ին Ակնում ձեռնադրվել է վարդապետ, ապա նշանակվել Կարնո և Ակնի վիճակների վանքապատկան կալվածքների հոգաբարձու: 1808-ից՝ Կարնո հայոց հոգևոր թեմի առաջնորդ: 1811-ին Եփրեմ Ա Ջորագեղցին նրան շնորհել է արքության պատիվ և տիտղոս: Կարնո թեմում ծավալել է տնտ. և հոգևոր-մշակութ. արդյունավետ գործունեություն: Հիմնել է իր անունը կրող Կարապետյան վարժարանը: Աջակցել է ռուս. զորքին ու արքունիքին 1829-ին՝

Էրզրումի գրավման ժամանակ: Երբ Ադրիանուպոլսի պայմանագրով (2.9.1829) Էրզրումի, Բայազետի և Կարսի փաշայությունները վերադարձվել են Թուրքիային, Կ. Բ., վախենալով Թուրքերի վրեժխնդրությունից, Էրզրումի և շրջակայքի հայության անունից, 29 պատվավոր քաղաքացիների հետ, ռուս. բանակի հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչին է ներկայացրել (15.12.1829) աղերսագիր՝ խնդրելով թույլատրել տեղի հայերին գաղթել Ռուս. կայսրության սահմանները: Կ. Բ-ու հորդորանքով և առաջնորդությամբ 1830-ին Էրզրումից և շրջակա հարյուրավոր գյուղերից մոտ 50 հզ. (7298 ընտանիք) հայ գաղթել և բնակություն է հաստատել Ախալցխայում, Ախալքալաքում, Ծալկայում, Լոռի-Փամբակում և Շորագյալում: Կ. Բ-ու ջանքերով Էրզրում քաղաքի և շրջակա գյուղերի վանքերից ու եկեղեցիներից հավաքվել և Ախալցխա են տեղափոխվել հոգևոր-մշակութային արժեքներ (որոնց թվում՝ «*Ծուղրութի Ավետարան*»-ը): Դրանք հիմնականում զետեղվել են Ախալցխայի Նորակառույց (1835–37) Ս. Փրկիչ եկեղեցում: Կ. Բ-ու օժանդակությամբ ու մասնակցությամբ են ստեղծվել Ախալցխայի Նոր, աջափնյա մասը՝ Պլանը, 100-ից ավելի գյուղեր՝ Ախալցխայի, Ախալքալաքի, Ծալկայի գավառներում, մոտ 60 եկեղեցի, Նոր Կարապետյան դպրոցը (1842–44, այժմ՝ քանդված), Ախալքալաքի Ս. Մեսրոպյան արական դպրոցը ևն:

Կարապետ արք. Բագրատունի

1837-ի հունվ. 20-ին Կ. Բ. նշանակվել է Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ ու այդ պաշտոնում մնացել մինչև մահը: 1837-ի սեպտ. Ախալցխայում դիմավորել և ընդունել է Անդրկովկասի նորանվաճ երկրամասերն այցելած Նիկոլայ I ցարին: Կ. Բ-ու խնդրանքով կայսրը մեկ տարով ևս երկարաձգել է Ախալցխայի հայ գաղթականների՝ հարկեր չվճարելու արտոնությունը: Ռուս. կառավարությանը մատուցած ծառայությունների համար Կ. Բ. պարգևատրվել է (20.10.1830) Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով: Թաղված էր Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու դավթում, որտեղից 1953-ին աճյունը տեղափոխվել է քաղաքային գերեզմանատուն: Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցու բակում կանգնեցվել է Կ. Բ-ի հուշարձանը (2000, քանդ.՝ Լ. Գրիգորյան):

Գրկ. Գալամդարյան Վ., Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, «Էջմիածին», 1956, № 11–12: Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս. կենսագրություն, Ե., 1999:

ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՑ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ, այցելություն հիվանդներին, Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից: Խորհուրդի հիմն. նպատակը հիվանդի *մեղքերը* քավելն է՝ խոստովանությամբ, զղջումով ու մեղքերի թողությամբ: Այս խորհուրդով եկեղեցին աստվածային շնորհներ է մատակարարում իր հիվանդ հավատացյալներին՝ ապաքինության և կազդուրման համար: Հայ եկեղեցում Կարգ հիվանդացի խորհրդակատարությունը կոչվում է «Կանոն գիշերային ժամու աղոթից»: Կատարում է եկեղեցու պաշտոնյան՝ «ի վերա ծանր հիվանդաց՝ ի բժշկություն ցավոցն և ի քավություն հանցանաց»:

Հիսուս Քրիստոսը տարբեր ձևերով է կատարել հիվանդների բժշկությունը. երբեմն՝ ձեռքի հպումով, երբեմն էլ՝ միայն խոսքով: Հաճախ բժշկելուց առաջ մեղքերի թողություն է տվել ենթակային (Մատթ. **9.**2–7) և պատվիրել, որ մեղք չգործի (Հովհ. **5.**14), որովհետև մեղքը և մարդկային մոլորությունները ընդհանրապես համարվում են հիվանդության սկիզբն ու պատճառը: Քրիստոսն իր 12 առաքյալներին իշխանություն տվեց բժշկելու հիվանդներին՝ աղոթքով, ձեռք դնելով, յուղով օծելով (Մատթ. **10.**1–8, Մարկ. **6.**12–13, **16.**18, Գործք **28.**8):

Կարգ հիվանդացը կատարվում է հիվանդների վրա, որպեսզի նրանք բժշկվեն Սուրբ Հոգու զորությամբ: Խորհուրդի կատարման հիմքը զղջումն է և հավատը. «Եվ հավատքով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի» (Հակոբ. **5.**15): Հիվանդի հավատը և մեղքերից հրաժարվելու մտադրությունը էական պայմաններ են բժշկվելու համար, և Հիսուս Քրիստոսը հաճախ է շեշտել հավատի կարևորությունը (Մատթ. **9.**27–30):

Կարգ հիվանդացի խորհուրդը Հայ եկեղեցում դիտվում է որպես Վերջին օծման շարու-

նակական լրացում: Հայ եկեղեցին Վերջին օծման խորհուրդը կատարում է *Դրոշմի* խորհուրդի ժամանակ (զգայարանների կնքումով): Իրենց նախնական վիճակում Վերջին օծումը և Կարդ հիվանդացը զուգակցված են եղել: Հետագա դարերում Հայ եկեղեցու հայրերն օծման արարողությունն անջատել են աղոթական մասից, միավորել Դրոշմի խորհուրդին և դարձրել մեկ անգամ կատարվող խորհուրդ, իսկ մնացած մասը՝ Կարդ հիվանդացը, վերածվել է շարունակաբար կատարվող հոգևոր բարեպաշտական արարողության: Հույն և Կաթոլիկ եկեղեցիները գործադրում են յուղով օծելու սովորությունը: Հայ եկեղեցին որդեգրել է ձեռք դնելով, աղոթքներով, աստվածաշնչյան ընթերցումներով բժշկելու ձևը. յուղով օծելու սովորությունը ներկայումս չի գործադրվում: Հիսուս Քրիստոսը մարդկանց բժշկելու համար երբեք յուղ չի գործածել: Հայ եկեղեցին հունա-հայկ. և լատինա-հայկ. վեճերի ժամանակ հրահանգել է երբեմն գործածել յուղը՝ հիվանդների օծման համար, սակայն դա տեւական չի եղել և դադարել է, հավանաբար, VIII–IX դդ.: XII դ. հայ մատենագիր, մեկնիչ Սարգիս Շնորհալին գրել է, որ «Հիվանդին առողջություն տվողը ոչ թե յուղն է, այլ՝ Տիրոջ անունը»:

Հայ եկեղեցին ունի իր ննջեցյալ եկեղեցականներին օծելու սովորությունը, բայց դա խորհուրդ չէ: Վերջին անգամ օծվում է ննջեցյալի ճակատն ու աջ ձեռքը:

Կ. հ. և Վ. օ-ման խորհուրդից բացի Հայ եկեղեցին ունի նաև մահամերձ հիվանդներին «Հաղորդ տալոյ» (*Հաղորդություն* տալու) կանոնը՝ կարևորելով այդ արարողությունը իբրև նախապատրաստություն հանդերձյալ կյանքի համար:

Գրկ. Զեպեյան Ղ., Հայ Եկեղեցվո յոթը խորհուրդները (Կանոնագիտական նկատառումներ), Անթիլիաս, 1988: Սարգսյան Ս., Հայոց Եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 2, 1992:

ԿԱՐԵՆԻՍԻ ՎԱՆՔ, Կարենավանք, Առաքելոց վանք, ՀՀ Կոտայքի մարզի Արգել գյուղից հարավ, Հրազդանի ձորում: Վանքի համալիրից պահպանվել են սրբատաշ տուֆով կառուցված, միանավ, թաղածածկ, առանց պատուհանի խորանով եկեղեցին (V–VI դդ.) և նրան արմ-ից կից, կոպտատաշ բազալտով XVII դ. շինված, գմբեթավոր դահլիճի հորինվածքով գավիթը (նման ձևը եզակի է հայկ. գավիթների ճարտ. մեջ): Կ. վ-ի եկեղեցու աղոթասրահի հատակի տակ կա փոքր, թաղակապ, արլ. խորանով մատուռ-դամբարան, որի հվ. պատի երկու խորշերում, ըստ ավանդության, պահվել են Մատթեոս ավետարանիչի և Անդրեաս առաքյալի մասունքները: Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, XVII դ. սկզբին «Ֆռանկ հայրերը» փորձել են հափշտակել սրբերի մասունքները, սակայն վանահայրը դրանք հետ է խլել և վանքից արտաքսել նրանց: Վարդապետ Սիմեոն Գառնեցին 1725-ին մասունքների համար արծաթապատ պահարան է պատրաստել՝ Մատթեոսի և Անդրեասի ոսկեզօծ պատկերներով: Կ. վ. XVIII դ. ունեցել է երեք ջրաղաց, Օշականում՝ այգի, ձիթհանք ևն: Վանքը լքվել և ամայացել է XIX դ.: 1895-ին Կ. վ-ից սրբերի մասունքները տեղափոխվել են Էջմիածին:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղ-պատ, 1895: Հասրաթյան Մ., Լուսակերտի ճարտարապետական երկու հուշարձաններ, ԼՀԳ, 1972, № 2:

Մուրադ Հասրաթյան

ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎ 633, բյուզանդական Հերակլ կայսրի (610–641) և Հայոց կաթողիկոս *Եզր Ա Փառաժնակերտցու* միջև Կարին քաղաքում կայացած հանդիպում, որտեղ քննարկվել են Հայ և Հույն եկեղեցիներն անջրպետող դավանական խնդիրներ և ստորագրվել համաձայնեցված դավանաբանական բովանդակությամբ մի փաստաթուղթ:

VII դ. սկզբին բյուզանդա-պարսկ. պատերազմում հաղթելով Պարսկաստանին՝ Հերակլ կայսրը վերստին Բյուզանդիային է միացրել իր նախկին արլ. նահանգները՝ Սիրիան, Պաղեստինը ևն, որտեղ մեծ տարածում ուներ արևելյան ուղղափառությունը: Ցանկանալով վերականգնել պետության միասնականությունը, որը խաթարվել էր *Քաղկեդոնի ժողովի* (451) առաջ բերած դավան. պառակտման հետևանքով, ինչպես նաև ձգտելով հաշտեցնել Անտիոքի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքությունները Կ. Պոլսի աթոռի հետ՝ Հերակլը և Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքը (610–638) առաջ են քաշել դավանաբան. մի նոր բանաձև (տես *Միակամություն*), որը նրանց համոզմամբ ընդունելի պետք է լիներ երկու կողմերին: Բյուզ. կայսրը ծրագրել էր Քաղկեդոնի ժողովը մերժած Հայ եկեղեցու հետ ևս միության եզրեր փնտրել, քանի որ Սասանյանների պար-

տությունից հետո Հայաստանի մի շարք նահանգներ մտել էին կայսրության կազմի մեջ, և փորձել է Քաղկեդոնի ժողովի հետևանքով Հայաստանի և Բյուզանդիայի միջև առաջացած եկեղեցադավան. վիհը կամրջելու նպատակով Հայաստանում ևս տարածել միակամության դավանանքը: Այդ նպատակով Հերակլը, բյուզ. հայազգի զորավար Մժեժ Գնունու միջոցով, 633-ին Եզր Ա Փառաժնակերտցուն, բազմաթիվ եպիսկոպոսների ու վարդապետների հրավիրել է Կարին: Ջներկայանալու դեպքում՝ սպառնացել է Մորիկ կայսրի օրինակով հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել (590–611-ին գոյատևած Ավանի հակաթոռ քաղկեդոնիկ կաթողիկոսության նման):

Եզր Ա Փառաժնակերտցին չորս եպիսկոպոսներով և երեք վարդապետներով (մնացած հրավիրյալները հրաժարվել են գնալ) Կարինում ստորագրել է Հերակլ կայսրի առաջարկած հավատո խոստովանության Գիրը, որը բովանդակել է ոչ թե քաղկեդոնական, այլ միակամության դավանանքը: Կ. ժ-ին մասնակից հայ հոգևորականները ստիպված են եղել կայսրի և հույն հոգևորականների հետ հաղորդվել Կարինի եկեղեցում: Կ. ժ-ում Եզր Ա Փառաժնակերտցու ստորագրած դավանագիրը ժամանակի քաղ. իրադրությունից պարտադրված քաղ-դիվանագիտ. մի ակտ էր՝ ոչ մի եկեղեցում ամուր հող չգտած վաղանցիկ դավանական մի բանաձևի՝ միակամության վերաբերյալ:

Մաղաքիա արք. Օրմանյանը Կարինում տեղի ունեցածը ժողով չի համարել, քանի որ նիստեր տեղի չեն ունեցել, որոշումներ ու կանոններ չեն ընդունվել: Պարզապես եղածը մի կայսերական հրաման էր, որին հայերը, առկա քաղ. կացության հետևանքով, պարսիկներից հույսը կտրած, արաբ. արշավանքների օրըստօրե մեծացող վտանգի դեմ հանդիման, անհրաժեշտ են համարել ենթարկվել և համագործակցել բյուզանդացիների հետ:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Սեբեոս, Պատմութիւն, աշխատասիր. Գ. Աբգարյանի, Ե., 1979: Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912, էջ 687–700: Բարթիկյան Հ., "Narratio de rebus Armeniae" հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, ԲՄ, № 6, 1962:

Հրաչ Բարթիկյան

«ԿԱՐՄԻՐ ԱՎԵՏԱՐԱՆ», «Մեծ շենի Ավետարան», հայ գրչության և մանրանկարչության մագաղաթե ձեռագիր մատյան (Մատենադարան, ձեռ. № 6202): Աշոտ Սպարապետի պատվերով ընդօրինակել է Թուխթայել գրիչը, 909-ին, Կ. Պոլսում: Մատյանը սկզբնապես չի պատկերազարդվել: Բնագիրն ունի հնագր. արժեք: XIII դ. 30–40-ական թթ. Շիրակում գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցին ձեռագրի սկզբում ավելացրել է 6 թերթ, նկարել 10 խորան, Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների պատկերներով սկզբնաթերթ: Խորանների այուների ու երիզների վրա թողել է նաև հիշատակարաններ, որտեղ պատմում է մոնղոլների ներխուժման և նրանց գործած դաժանությունների մասին: Նկարազարդման մեջ գերիշխում է կարմիր գույնը (հավանաբար այստեղից է «Կ. Ա.» անվանումը):

Հետագայի հիշատակարանները վկայում են, որ XIII դ. 2-րդ կեսին ձեռագիրը տարվել է Վասպուրական, ավելի ուշ՝ Արցախ: «Կ. Ա.» Արցախի Մեծ շեն (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում) գյուղից XX դ. սկզբին Էջմիածնի մատենադարան է բերել Գարեգին վրդ. Հովսեփյանը (1943–52-ին՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա.):

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.5, 2-րդ պատկերը:

Գրկ. Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, Ե., 1983:

Կարեն Մաթևոսյան

ԿԱՐՄՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Արագածոտնի մարզային կենտրոն Աշտարակ քաղաքի հյուսիս-արևելյան բարձրադիր մասում: Կառուցվել է VII դ. 2-րդ կեսին, կարմրագույն տուֆի սրբատաշ քարերից: Հայկ. փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցիների անաղարտ պահպանված (ներառյալ նախնական կըղմինդրե ծածկը) լավագույն նմուշն է. գեղատեսիլ է, ներդաշնակ համաչափություններով, բարձրարվեստ ծավալային հորինվածքով: Ներսում պահպանվել են արևելաքրիստ. արվեստին բնորոշ VII դ. որմնանկարների մնացորդներ: Գմբեթարդին «Քրիստոսը փառքի մեջ» պատկերագր. հորինվածքն է, իսկ արմ. խաչաթևին պատկերված են սուրբ հեծյալները՝ համապատասխան մակագրություններով: Հվ., արլ. և հս. պատերը դրսից երիզող մեկտողանոց չին. արձանագրությունը հայտնում է, որ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցել են Դավիթն ու իր որդիները: 1292-ին Հակոբ երեցը եկեղեցու մոտ կառուցել է «տնանկների օթևան»: XIII

դարից մինչև 1813-ը Կ. Ս. Ա. ե. եղել է կուսանոցի եկեղեցի: 1326-ին եկեղեցին շրջապատվել է հվ. կողմում դարպաս ունեցող պարսպով: 1813–60-ին դարձել է ուխտատեղի: XIX դ. սկզբին Մկրտիչ վարդապետը եկեղեցու արմ. կողմի գերեզմանոցում մատուռ է կառուցել: 1860-ին Կ. Ս. Ա. ե. վերածել են ծխական եկեղեցու և արմ. ճակատին կից կառուցել փայտածածկ դահլիճ՝ «ժողովրդանոց». այդ նպատակով քանդել են գերեզմանոցն ու մատուռը: XIX դ. վերջին քառորդում Աշտարակի խարխլված Ս. Ամենափրկիչ եկեղեցուց Կ. Ս. Ա. ե. են տեղափոխել հնդկահայերի 1709-ին գործած նկարազարդ վարագույրը: 1955-ին քանդել են եկեղեցու կերպարն աղճատող, արմ. կողմից կից դահլիճը, նորոգել փողոցից դեպի եկեղեցի տանող աստիճանները: 1978-ին բարեկարգել են Կ. Ս. Ա. ե-ու տարածքը:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.5, 3-րդ պատկերը:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Ե., 1982: Շահազիզ Ե., Աշտարակի պատմությունը, Ե., 1987: *Яралов Ю. С., Аштарак, М., 1947.*

Մուրադ Հասրաթյան

«ԿԱՐՈՍ ԽԱՉ», հայ ժողովրդական-կրոնական վիպերգ: Տարածված է եղել Մուշի, Մոկսի, Վանի շրջաններում: Վիպերգը գրառել են ժող. բանասացները XIX դ. 2-րդ կեսին և XX դ. սկզբին, երաժշտությունը՝ *Կոմիտասը* և Ս. Մելիքյանը: Ցարդ հայտնի են վիպերգի 7 տարբերակ և մեկ վերամշակված օրինակ: Ամենաընդարձակ տարբերակը բաղկացած է շուրջ 200 բանատողից: Բանատողերը մեծ մասամբ ավարտվում են «ին» հանգով, իսկ յուրաքանչյուր հատվածի վերջում կրկնվում է վիպերգին քնարական հնչեղություն հաղորդող «Ծառա կըլնիմ Կարոս Խաչին» տողը: «Կ. Խ.» կազմված է սկզբնապես միմյանցից անկախ երկու մասի վիպական հարակցումից: Առաջին մասում հոտաղները դաշտում եղեգնաբույսից խաչ են արարում, երկրպագում: Խաչն օժտվում է գերբն. զորությամբ և իբրև մի կենդանի էակ թռչում մտնում է կարոսի (նեխուր) ածուի մեջ (այստեղից էլ՝ վիպական անունը): Երկրորդ մասում լուրը հասնում է գյուղի իշխանին: Նա իր մարդկանցով փորձում է տիրանալ խաչին, բայց խաչը թռչում է քահանայի գիրկը: Խաչի զորությամբ իշխանն ու նրա մարդիկ չարաչար պատժվում են, իսկ քահանան օրհնում է խաչը և մեծ թափորով տանում դնում տաճարում: Հրաշագործ խաչը «ցերեկը հով էր անում աշխարհին, գիշերը՝ լույս կամար կապում տաճարին»:

Վիպերգի հիմքում բուսապաշտության հնագույն հավատալիքն է: Սուրբ զորությամբ օժտված բույսը՝ խաչը, ժողովուրդը համադրել է քրիստ. կրոնի սրբության խորհրդանիշ խաչի հետ և այն դարձրել առավել զորավոր: Վիպերգում խաչը հայ ազգի փրկության ու հովանավորման մի նմուշ է, հայոց սրբավայրերն ու սրբությունները կողոպտող ու ավերող, անհավատներին պատժող և պատուհասող մեծագույն զորություն:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 1, Ե., 1966, էջ 502–506: Հարությունյան Ս., «Կարոս Խաչ» վիպերգի մի միջնադարյան պատում, ԼՀԳ, 1975, № 8: «Կարոս Խաչ». Ուսումնասիրություններ և բնագրեր, կազմ. և խմբ. Ս. Հարությունյանը և Ժ. Խաչատրյանը, Ե., 2000:

Սարգիս Հարությունյան

«ԿԱՐՍԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Գագիկ Թագավորի Ավետարան», «Գագիկ Շահնշահի Ավետարան», XI դարի մագաղաթե ձեռագիր մատյան: Ընդօրինակվել է Կարսի Գագիկ Աբասյան թագավորի (1029–65)՝ ժամանակի կրթված ու լայնախոհ, հմուտ աստվածաբանի պատվերով: Պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում (ձեռ. № 2556, չափերը՝ 47x36 *սմ*): Բաղկացած է 481 թերթից, տեղ-տեղ (հատկապես նկարները) վնասված են եղել, խնամքով նորոգվել է 1703-ին: Կաշեկազմ է, ոսկեզօծ շրջանակով, մեջտեղը՝ խաչ: Ձեռագիրը գրված է գեղեցիկ բոլորագիծ երկաթագրով, երկսյուն է, սկզբնատառերը զարդարված են տերևներով, ծաղիկներով, կենդանիների գլուխներով ու թռչուններով: Լուսանցքներում ու սյունակների միջև պատկերված են հարյուրավոր թռչուններ, կենդանիներ, անոթներ: Պահպանվել են *Եվսեբիոս Կեսարացու* թուղթը Կարպիանոսին՝ Գագիկ թագավորի ոսկետառ ընծայագրով, չորս խորաններ, անվանաթերթերը՝ գլխազարդերով ու ոսկետառերով, տեքստի ներսում կամ տակը՝ բազմաթիվ պատմողական նկարներ. «Քրիստոսի փորձությունը» (թերթ 18բ), «Երկրորդ և երրորդ փորձությունները» (մասամբ վնասված, թերթ 16բ, 21բ), «Քրիս-

տոսը կանչում է առաքյալներին» կամ «Լեռան աղոթքը» (թերթ 118բ), «Քրիստոսը Գեթսեմանիում» (թերթ 125ա), «Հռոմեացի զինվորները ծանակում են Քրիստոսին» (մասամբ հատված), «Յուղաբեր կանայք» (թերթ 134բ), «Գագիկ թագավորը իր տիկնոջ՝ Գորանդուխտ թագուհու և դստեր՝ Մարեմի հետ» (թերթ 143բ) ևն (պահպանվել է քսան այուժետային նկար):

«Կ. Ա.»-ում, ինչպես և «*Տրապիզոնի Ավետարան*»-ում ու «*Ադրիանուպոլսի Ավետարան*»-ում, ամենից ավելի ցայտուն է դրսևորվում որոշ ծաղկողների հակումը (յուրաքանչյուրինը՝ յուրովի) դեպի X–XI դդ. բյուզ. արվեստը, այլապես *Արուճի Ս. Գրիգոր եկեղեցու* VII դ. որմնանկարների մնացորդների նման պետք է որ պահպանված լիներ արևելահելլենիստ. դեղ. ուղղությունը: Այդ ձեռագրերից յուրաքանչյուրը տարբեր է թե՛ պատկերագրությամբ, մարդկային ֆիգուրների համամասնություններով, մշակման ձևով, կոլորիտով և թե՛ բյուզ. արվեստի հետ ունեցած առնչություններով:

Տեքստում լուսանցազարդերի, թռչնատառերի ու կենդանատառերի նման հարստություն ու բազմազանություն չկա ժամանակի հայկ. կամ բյուզ. և ոչ մի ձեռագրում (XI դ. բյուզ. մի քանի ձեռագրերի անվանաթերթերում միայն կան մարդակերպ կամ թռչնակերպ պատմականացված գլխատառեր): Այդ առումով «Կ. Ա.» ձեռագրի պատկերազարդումը կիլիկյան մանրանկարչության ակունքներից է:

Եզակի է Գագիկ Աբասյան Բագրատունու ընտանեկան նկարը, որի տեղը ձեռագրի վերջից բերվել է առաջ (այն վերին մասում վնասված է): Պատկերված են թագավորը, Գորանդուխտ թագուհին և Մարեմ արքայադուստրը՝ ծալապատիկ նստած թախտին՝ մութաքաների վրա: Թախտի ոտքերի տակ երկու առյուծ է նկարված, գլուխներին ոսկե անոթ՝ մեջը միրգ: Թախտին գցված է գորգ՝ կարմիր ֆոնի վրա աստղազարդ ու խաչազարդ նախշերով: Հետաքրքրական են նաև գորգի վրայի բոլորակների մեջ առնված փղերի մոտիվները: Արքայական հագուստներն արևելյան են: Արքայական հարթապատկերային զարդարուն հագուստներ VII դ. սկսած կարելի է տեսնել նաև բյուզ. կայսրերի և կայսրուհիների որմնանկար և մանրանկար կերպարներում:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.5, 4-րդ պատկերը:

Գրկ. Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Ե., 1987, էջ 335–338: *Измаилова Т. А., Армянская миниатюра XI века, М., 1979;* Tchobanian A., La Roseraie d'Arménie, t.3, P., 1929; Der Nersessian S., Armenia and the Byzantine Empire, Camb., Massachusets, 1945, p. 119–120; Նույնի, L'art armenien, P., 1977, p. 109–114; Narkis B., Stone M.E., Sangian A.K., Armenian Art Treasures of Jerusalem, Jerusalem, 1979, p. 32–34, 147.

Վիգեն Ղազարյան

ԿԱՐՍԻ

ԿԱՐՍԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ, կառուցել է Աբաս Ա Բագրատունի թագավորը՝ X դ. Հայաստանի մայրաքաղաքը Շիրակավանից Կարս տեղափոխելուց հետո: Կ. Ս. Ա. ե. պատկանում է քառախորան, կենտրոնագմբեթ մաստարայատիպ եկեղեցիների թվին: Ունի հս., հվ. և արմ. ճակատներից դուրս շեշտված, արտաքուստ հնգանիստ խորաններ, Ավագ խորանի երկու կողմերում՝ ուղղանկյուն ավանդատներ: Գմբեթի 12-նիստանի թմբուկը հարդարված է կամարաշարով: Նիստերի հատման անկյուններում կան մարդկանց պարզունակ պատկերաքանդակներ (ենթադրաբար՝ 12 առաքյալների): Լայնաթռիչք գմբեթը հենվում է խորանների գմբեթարդներին և անկյունային տրոմպներին: XVI դ. թուրքերը եկեղեցին վերածել են մզկիթի: 1877-ին (Կարսը ռուս. զորքերի գրավելուց հետո) Կ. Ս. Ա. ե. վերաօծվել է որպես ուղղափառ եկեղեցի: Հվ., հս. և արմ. մուտքերի առջև կցվել են պորտիկներ, իսկ արլ. ճակատի ողջ երկայնքով՝ թաղածածկ սրահ, որոնք աղճատել են եկեղեցու ճարտ. տեսքը: Ներսում՝ Ավագ խորանում, քարակերտ խաչակալ է դրվել: 1918-ին, Կարսը վերստին թուրք. տիրապետության տակ անցնելուց հետո, եկեղեցին կրկին վերածվել է մզկիթի: 1920-ական թթ. թուրք. իշխանությունները որոշել են եկեղեցին քանդել, ինչը չի իրագործվել: 1950-ական թթ. օգտագործվել է որպես պահեստ, ավելի ուշ՝ դարձել թանգարան:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.6, 1-ին պատկերը:

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Thierry J.M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989; Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ԿԵՆԱՑ ԾԱՌ, կյանքի ծառ, փայտ կենաց, ըստ *Աստվածաշնչի*՝ հավերժական կյանքն իր մեջ մարմնավորող դրախտային ծառ, որը տալիս է անմահարար պտուղներ. դրսևորում է դիցաբանական և աստվածաշնչային պատկերացումը կյանքի մասին՝ ի հակադրություն մահվան կամ չարի ու բարու *գիտության ծառի, Հիսուս Քրիստոսի* խորհրդաբանությունը՝ ըստ աստվածաշնչային մեկնությունների: Կ. ծ. արտացոլում է կյանքը կրող էակների (բույսեր, կենդանիներ, մարդիկ) աստիճանական աճը և տարածումը: Դիցաբան., աստվածաշնչային և հոգևոր համակարգերում Կ. ծ. շեշտում է կյանքի վերընթաց գիծը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերում: Նրա բարձրագույն նպատակը անմահությունն է:

Կ. ծ. հանդես է գալիս բազմաթիվ անուններով՝ աշխարհածառ, տիեզերական ծառ (arbor mundi), բեղմնավորության ծառ, երկնային ծառ, բարու ծառ, աշխարհի առանցք ևն: Լինում է եռամաս, քառամաս, առկա է գրեթե բոլոր դիցաբանություններում, աշխարհաստեղծման առասպելներում, գեղ. մշակույթներում, աճի հետ կապված համակարգերում, արվեստներում, վիպ. և քնար. երկերում՝ ստանալով բազմապիսի ձևեր: Շումեր., աքքադ., եգիպտ., ասորա-բաբել., ուրարտական-հայկական, իրան. մշակույթներում այն հանդես է գալիս և՛ որպես վիպական-գրական երևույթ (Ինաննա աստվածուհուն նվիրված շումերական, աքքադա-բաբելական ներբողներում, զրադաշտ. օրենքներում, վեդաներում և ուպանիշադներում ևն), և՛ ստանում բազմապիսի արտահայտություններ կերպարվեստում (ամերիկա-հնդկացիական, եգիպտ., հս. ժողովուրդների, հնդեվրոպ., ասորա-բաբել., հայկ., իրան., հունա-հռոմ. ևն): Հատկապես քրիստ. և մահմեդ. արվեստներում ու հոգևոր կյանքում Կ. ծ. առաջնային է ինչպես գեղարվեստում, այնպես էլ սյուժետային նկարներում:

Արարատյան թագավորությունում (Ուրարտու) որմնանկարներում և տաճարական ծիսական արվեստում արդեն Կ. ծ-ի կողքերին պատկերվել են անմորուք և մորուքավոր քրմեր (Էրեբունիի որմնանկարներում) և անթև պատանիներ, թևավոր աստվածություններ՝ հովանի ունենալով պահպանիչ օձեր (Արգիշտիի սաղավարտի վրա). Էրեբունիում հայտնաբերվել են որմնանկարների բեկորներ՝ խաղողի որթերով ու ողկույզներով. մի ամբողջ տիեզերաստեղծական (կոսմոգոնիական) պատկեր կա միայն մի ֆրիզի դրվագներում՝ սրբազան երկնքով, սրբազան արմավի ծառերով, որթատունկերով, որոնց մեջ պատկերված է պտտվող ծաղիկ կամ արևի սկավառակ, որոնք պահպանում են սրբազան ցուլերը և առյուծները: Էրեբունիի որմնանկարների բեկորներում հայտնաբերված արմավը, որթատունկը, նուռը սրբազան մոտիվներ են դարձել նաև հայ *մանրանկարչության* մեջ:

Իրանում հայտնի է հազար ու մի դարման ունեցող Գաոկերընա ծառը, որ տնկել է Ահուրամազդան: Այն բարձրանում է Վուրուկաշա ծովում. նրա ճյուղերում Սաենա թռչունն է: Իրան. դիցաբանության մեջ մեծ տեղ ունի Էլբրուս լեռան վրա աճող Հաոմա Կ. ծ., որը հետ է մղում մահը: Հաոման և զրադաշտականության մեջ ավելի ուշ հայտնի Գոկարդ ծառերն ունեն Գաոկերընայի տարրերը: Գոկարդը աճում է օվկիանոսում կամ ծովում և սկիզբն է ամբողջ բուսականության: Սիմուրղ (սինամրա, սենմուրվ ևն) թռչունը կոտրել է նրա ճյուղը և սերմերը խառնել ջրերին: Այդ ծառի մականունը Ցաղ-բեչ է՝ «չարահալած»: Դժվար չէ տիեզերաբան. իմաստներ գտնել աքեմենյան արվեստում ներկայացված ծառերի պատկերաքանդակներում: Պերսեպոլիսի ապադանների (տաճարների) պատկերաքանդակներում գլանակնիքների վրա առկա են նոճիների սրբազան ծառեր, արմավների պատկերներ: Սասանյան արծաթե գավաթների վրա կան ծովի վրա հառնող լեռան պատկերներ՝ ծառերին կանգնած ձկներով, արծաթե թասեր՝ սիմուրղ հավքերի պատկերներով:

Կ. ծ. իր բնորոշումներն ունի Աստվածաշնչում. «Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը և չարի ու բարու գիտության ծառը, տնկեց դրախտի մեջտեղում» (Ծննդ. **2**.8–9): Անբաժան են այստեղ մարդը և Կ. ծ.: Կ. ծ-ից զրկվելով՝ մարդը զրկվում է հավիտենական կյանքից՝ հրե սպառնալիքի տակ («Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց բերկրության դրախտի դիմաց և հրամայեց քերովբեներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել կենաց ծառը տանող ճանապարհները», Ծննդ. **3**.24): Կ. ծ. այնուհետև հիշատակվում է Սողոմոնի առակներում (Առակ. **3**.18, **11**.30, **13**.12, **15**.4), որտեղ իմաստուն և արդար այրը (Հիսուսի նախատիպը)՝ «... կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են նրան և վստահությամբ հենվում նրա վրա, ինչպես Տիրոջ վրա» (**3**.18), որ՝ «Կյանքի ծառը բուսնում է արդարության պտղից» (**11**.30):

Հայտնության գրքում ավելի է հարստանում Կ. ծ-ի գաղափարը, լրանում Աստծո *դրախտի* մեջ գտնվող «կենաց փայտով» (այսինքն՝ խաչով)՝ փոխարենը արևելքում տնկված դրախտի Կ. ծ-ի: Հայտնության Կ. ծ. տալիս է տասներկու պտուղ՝ ըստ ամիսների թվի, իսկ «... ծառի տերևը ազգերի բուժման համար էր» (Հայտն. 22.2): Մի այլ անգամ Հիսուսի անունն հիշատակվելուց առաջ խոսվում է *պատվիրանները* պահողների մասին, որոնք «իրավունք ունեն ուտելու կենաց ծառից» (22.14): Հիսուսն իրեն համարում է «արմատ եւ սերունդ [ազգ]... Դավթից» (22.16), որ անվանվում է «Հեսսեի ծառ» և XIX դարից նկարվում է իբրև տոհմածառ Մատթեոսի (երբեմն նաև Ղուկասի) Ավետարանի անվանաթերթում:

Զարդարվեստի բուս. մոտիվների ամենագլխ. արտահայտությունը Կ. ծ. է: Այն ունի հիմն. մոտիվներ, աճի հետ կապված՝ բույսի ամենագլխ. օրգանները՝ հատիկի (սերմի), ծաղկի և վարսանդաառէջքային օրգանների գաղափարապատկերները:

Քրիստոնեության սկզբ. շրջանում գերիշխող հելլենիստ. և մերձավորարևելյան (իրանա-սեմական)՝ հիմնականում ճարտ. զարդարվեստի ազդեցության տակ մի քանի բուս. մոտիվներ (արմավազարդեր, ակաթազարդեր կամ արջամագիլներ, զանազան հյուսվածքազարդեր, նռան ու խաղողի մոտիվներ) մեծ տարածում են ստացել: Սակայն քրիստ. (մանավանդ հայ միջնադարյան) արվեստում Կ. ծ. համարվող այդ մոտիվները վեր են բարձրանում «զույգ ծաղիկ», «պտղաբերություն» և նման թեև կենսական, բայց նախն. պարզ գաղափարներից և հարստանում աստվածաշնչային և մեկնող. հոգևոր հարուստ գաղափարաբանությամբ: Արմավն արդեն խորհրդանշում է արդարներին և *երկնային արքայությունը* (Երուսաղեմ մտնելիս Հիսուսի առջև պատանիները արմավի ճյուղեր են փռում), Հիսուսի տոհմածառը կամ Հեսսեի (Դավթի հոր) ծառը, որտեղ որպես արմավի պտուղ պատկերվում են Հիսուսի նախնիները (թիվը փոփոխական է)՝ զարդարված արմավի ճյուղերով, ինչպես՝ մեդալիոններով: Ձեռագիր Ավետարանների խորանապատկերներում, անվանաթերթերում և այլուր, ինչպես նաև *խաչքարերի* վրա է՛լ ավելի է ընդլայնվում Կ. ծ-ի գաղափարը՝ տարածվելով նոնենների, ձիթենիների, խաղողի որթի վրա, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը՝ կապված նահապետների, մարգարեների, ճգնավորների դասերի, առաքյալների հետ ևն: Կ. ծ-ի բովանդակությունն է՛լ ավելի է հարստանում՝ կապվելով զույգ և ավելի մեծ թվով թռչունների ու կենդանիների խորհրդաբանության հետ (աքաղաղներ, սիրամարգեր, ձկնաքաղ հավքերի տեսակներ՝ հավալուսն, կռունկ, ձկնկուլ, կոցար, նաև կաքավներ, աղավնիներ ևն): Դրանք նախն. իմաստներով թեև առնչվում են ծնող զույգի գաղափարին, բայց ստանում են առավելապես հոգևոր բովանդակություն՝ էպիկուրյան և պլատոնական վայելքի ու սիրո (էրոսի) գաղափարն ուղղելով դեպի հոգևոր վայելքի հունը (*Դիոնիսիոս Արիոպագացու* երկերը): Դրանց մասին առանձին խոսվում է *Ստեփանոս Սյունեցու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու* և ուրիշների «Խորանների մեկնություններում»:

Կ. ծ-ի և ծաղկող խաչի հետ կապված գաղափարները նախն. իմաստներից (աճ, տերև, վարսանդ, առէջքներ, ծաղիկներ, ծնող զույգ ևն) հոգևոր վերելք են ապրում նաև հայ և քրիստ. միջնադարյան պոեզիայում: Կ. ծ-ի նախն. իմաստները (զուգավորման, բազմացման) ավելի ցայտուն են ժող. երգերում («Ջան դյուլումներ», խաղեր, էպոս ևն), որտեղ հետագայում խառնվում է կրոնական-հոգևորը:

Գրիգոր Նարեկացու Վարդավառի և Հայտնության (Ավետիսի) տաղերում առավելագույնս արտահայտված է Կ. ծ-ի այն գաղափարը, որն առկա է մանրանկարչության մեջ (հատկապես կիլիկյան՝ Հեսսեի ծառի պատկերի լավագույն օրինակներում), ճոխացված գրական չքեղ խորհրդավոր պատկերներով, որոնք դժվար է արտահայտել մանրանկարչության մեջ: Գրիգոր Նարեկացու բարձր ոճն ավելի մտերմիկ ու հուզական երանգ է ստանում ժող. կամ միջին հայերենով մեզ հասած «Ավետիսներում», «Ծովին և նավին» ու «*Կարոս Խաչին*» տաղերում:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.6, 2–4-րդ պատկերները:

Գրկ. Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Ե., 1955: Խորանների մեկնություններ, աշխատասիր. Վ. Ղազարյանի, Ե., 1995: Schmidke Baum Fr., “Reallexikon fur Antike und Christentum”; Nerausgegeben von Theodor Klauser, Band 2, 1954, S. 2–14.

Վիգեն Ղազարյան

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հայաստանյայց առաքելական եկեղեցու,

կազմավորվել է 1980-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Կենտրոնը՝ Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցի: Ընդգրկում է Ավստրիայի և Շվեդիայի հոգևոր հովվությունները: Կ. Ե. Հ. պ-յան կազմի մեջ մտնում էր նաև Գերմանիայի հոգևոր հովվությունը, որը 1991-ին հռչակվել է առանձին թեմ:

Ավստրիայի հոգևոր հովվություն, առաջնորդանիստը՝ Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցի: 1913-ին հայերը Վիեննայում կառուցել են Ս. Փրկիչ մատուռը (գործել է մինչև 1968-ը): Առաջին հոգևոր հովիվ է կարգվել Սուչավայից (Ռումինիա) հրավիրված Արիստակես քհն. Ցեսլյանը: 1928–58-ին հոգևոր հովվությունը ստանձնել է Եղիշե քհն. Ութուջյանը (հետագայում՝ ծայրագույն վարդապետ): Ս. Հռիփսիմե եկեղեցին կառուցվել է 1965–68-ին (ճարտ.՝ Է. Սրապյան, Երևան): Օծել է (1968) Վազգեն Ա. Պալճյանը: Եկեղեցու բակում 1984-ին տեղադրվել է հուշարձան՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին (հեղ.՝ Ռ. Թամրազյան-Հարությունյան): Համայնքի եկեղեց. վարչությունը, նորակառույց եկեղեցու շուրջը հայերին համախմբելու նպատակով, համայնքի միջոցներով գնել է շենք, որը դարձել է Ազգային տուն: 1981-ին նույն շենքում բացվել է միակ և ցայսօր գործող «Հովհաննես Շիրազ» շաբաթօրյա դպրոցը, որի գործունեությունը գլխավորում են եկեղեց. վարչությունն ու ծնողական խորհուրդը:

1962-ից ավստրահայ համայնքի հոգևոր հովիվն է Մեսրոպ արք. Գրիգորյանը, որը նաև Կենտր. Եվրոպայի հայրապետ. պատվիրակն է:

Շվեդիայի հոգևոր հովվություն, կենտրոնը՝ ք. Ուփսալա: Շվեդահայ համայնքում կրոն. կյանքը սկսել է ձևավորվել երկրում հայկ. մշակութ. միությունների ստեղծմանը զուգընթաց: Հայ հոգևորականները 1970-ի կեսից ժամանակ առ ժամանակ այցելել են Շվեդիայի հայ համայնք, պատարագ մատուցել և կնունք կատարել: Ստոկհոլմում, Ուփսալայում, Բուլթշիրկայում գործում են Հայ եկեղեցու խորհուրդներ: Համայնքում հայկ. եկեղեցի չկա, արարողությունները կատարվում են շվեդ. եկեղեցիներում. հայտնի է Ուփսալայի Ս. Հովհաննես եկեղեցին: Կենտր. Եվրոպայի հայրապետ. պատվիրակը կարգում է հոգևոր հովիվ: Եկեղեց. գործունեության համար Շվեդիայի Ազատ եկեղեցին հատկացնում է նպաստ: Շվեդահայ համայնքի հոգևոր հովիվն է Սարգիս քհն. Մելքոնյանը (1990-ից):

Կ. Ե. Հ. պ. կազմակերպում է նաև Նորվեգիայում, Ֆինլանդիայում և Դանիայում բնակվող հայ ընտանիքների հոգևոր մատակարարությունը:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.7, 1-ին պատկերը:

ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆՔ, Կեչառուք, ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի հյուսիս-արևմուտքում: Վանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցել է *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*: Հվ. մուտքի արձանագրության մեջ կառուցման տարեթիվը նշված է ՆՁԲ (1033, սակայն հավանական է 1013, երբ ողջ էին արձանագրությունում հիշատակվող Հայոց Գագիկ Ա Բագրատունի թագավորը և Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը): Ըստ պատմ. տեղեկության, Գրիգոր Մագիստրոսը 1051-ին Կ. վ-ում եկեղեցի է կառուցել. այն իր ճարտ-յամբ միայն XI դ. պատկանող Ս. Նշանը կարող էր լինել: Բջնիի եպիսկոպոսները XI դ. Կ. վ-ին որպես թեմ տվել են 25 գյուղ: Ըստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հվ. ճակատի արձանագրության, Գրիգոր Մագիստրոսը 1054-ին սելջուկներից ազատագրել է «իր մեծ և հռչակավոր եկեղեցիները»: 1099-ին Կ. վ-ում թաղվել է Պահլավունյաց տոհմի Ապիրատյան Գրիգոր իշխանը, որը զոհվել էր Արշարունիք գավառում սելջուկների դեմ ճակատամարտում: XII դ. սելջուկների գերիշխանության հետևանքով վանքը ծանր վիճակում էր. ձեռագրերից մեկի հիշատակարանում նշվում է, որ «սկզբնապես ծաղկուն Կեչառիսը անշուք դարձավ»: 1161–65-ին Զաքարիա ամիրսպասալարը Կ. վ. ազատագրել է սելջուկներից, ինչի շնորհիվ հոգևոր կյանքը վերակենդանացել է, վանքը խոշոր նվիրատվություններ է ստացել, և նոր կառուցումների հնարավորություններ են ստեղծվել: 1196–1206-ին կառուցվել է վանքի գավիթը: 1205-ին Կ. վ-ի վրդ. Գրիգոր Մոնոնիկը մասնակցել է Լոռի քաղաքում գավառաբան. հարցերին նվիրված եկեղեց. ժողովին: 1203–14-ին Վասակ Խաղբակյանը Կ. վ-ում կառուցել է Կաթողիկե կոչվող եկեղեցին՝ հավանաբար ճարտ. Վեցիկի ձեռքով (վերջինիս խաչքար-մահարձանը կանգուն է համալիրի արլ-ում): 1220-ին կառուցվել է վանքի Ս. Հարություն եկեղեցին, իսկ 1223-ին պարոն Վաչեն նորոգել է Ս. Նշան եկեղեցին: Ըստ գավթի

ներսի արձանագրության, Խաչենի Խոյական բերդի տեր Վախթանգի որդի Հասան իշխանը և նրա կինը՝ Բաղաց թագավորի դուստր Մամքանը, մեծամեծ ծախքով նորոգել են թաթարմոնղոլների ավերած Կ. վ-ի եկեղեցիները: 1284-ին վանքում թաղվել է «Մեծ իշխան» Պռոշը: 1295-ին վանահայր *Խաչատուր Կեչառեցին* Կ. վ-ում գրել է իր նշանավոր «Ողբը»: Նա Կ. վ-ում դպրոց է ունեցել, որի աշակերտների մասին հետագայում հիշատակություններ են արվել այլ վանքերում գրված ձեռագրերում: XV–XVII դդ., չնայած մահմեդ. ծանր լծին և ասպատակություններին, Կ. վ-ում շարունակվել է հոգևոր ու մշակութ. կյանքը: 1491-ին վանքում գրված Ավետարանում գրիչ Գալուստը հիշատակարանում նշել է այդ «դառն և չար ժամանակը և անօրենների պատճառած նեղությունները», իսկ 1499-ին Փիլիպոս վանահոր առաջնորդության օրոք գրված Մաշտոցի հիշատակարանում գրիչ Մաթևոսը թվարկել է վանքի եկեղեցիները՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Աստվածածինը, Ս. Նշանը և Ս. Հարությունը (Ս. Աստվածածին է կոչվել վերանվանված Կաթողիկեն): Վանքի անունով Ծաղկոցաձոր կամ Ծաղկունյաց ձոր բնակավայրը որոշ ժամանակ կոչվել է Կեչառիս կամ Կեչառուք: XVIII դ. Կ. վ. ամայացել է և լքվել: 1828-ին երկրաշարժից քանդվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց (1828) հետո Կեչառիսը դարձել է Երևանի պետ. հիմնարկների ծառայողների համար ամառանոց: 1843-ին, ամռանը հանգստացողների համար ժամերգություններ կատարելու նպատակով, վանքի ընդարձակ գավթի արմ. կողմում բեմ են կառուցել, և գավիթը ծառայել է որպես եկեղեցի: 1947–49-ին Կ. վ-ի շենքերը վերանորոգվել են, տանիքները ծածկվել քարե սալերով, վանքի տարածքը բարեկարգվել է և պարսպապատվել: 1990-ական թթ. նորոգվել են Կաթողիկե և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների գմբեթները: Վանքի բոլոր շենքերը կառուցված են սրբատաշ բազալտ քարով: Գլխավոր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք՝ բեմի երկու կողմերում երկհարկանի ավանդատներով: Արմից կից է ուղղանկյուն հատակագծով, քառասյուն կենտրոնակազմ գավիթը: Հվ. կողմում գտնվում են ոչ մեծ, սլացիկ համաչափություններով, գմբեթավոր Ս. Նշան եկեղեցին և նրա կողքին՝ Կաթողիկեն, որը ներքուստ՝ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով է: Նրանցից 120 *մ* արմ. կանգուն է Ս. Հարություն փոքրիկ եկեղեցին՝ բարձր թմբուկով գմբեթով: Կ. վ-ի XI–XIII դդ. բազմաթիվ խաչքարերի շարքում առանձնանում է ճարտ. Վեցիկի մահարձանը, որը կերտել են նրա ճարտարապետ եղբայրները: Այն բաղկացած է երկաստիճան որմնախարսխով պատվանդանից և նրա վրա դրված, հիմնաքարի վրա բարձրացող խաչքարից: Կ. վ-ի համալիրի արտահայտչականությունը պայմանավորված է առանձին կառուցվածքների բազմապիսի ու տարբեր չափերի ծավալների ներդաշնակ համաչափություններով (որը կազմակերպում և խմբավորում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին), բնապատկերին համահնչուն ճարտարապետությամբ, գունագեղությամբ:

Նորոգումից հետո (բարերար՝ Վ. Հարությունյան) 2000-ի հուլիսի 9-ին տեղի է ունեցել Կ. վ-ի վերաօծումը՝ ձեռամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանի:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.7, 2-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի..., Վաղ-պատ, 1895: Լալայան Ե., Կեչառիսի վանքը, ԱՀ, գիրք 22, 1912: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1942: Եղիազարյան Հ., Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1955, № 9, 12: *Халпахчьян О., Архитектурные ансамбли Армении, М., 1980;* Hasratian M., Alpago-Novello A., Ketcharis, Milano, 1982 (Documenti di architettura armena, 11).

Մուրադ Հասրաթյան

«ԿԵՌԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ», կիլիկյան պատկերազարդ ձեռագիր մատյան: Պատվիրել է Կեռան թագուհին 1272-ին, ամուսնու՝ Լևոն Գ-ի թագադրության առիթով: Ընդօրինակել է նշանավոր գրիչ Ավետիսը, Սսում: Ծաղկողի անունը հայտնի չէ: Ըստ հիշատակարանի՝ ընդօրինակումն ավարտելուց հետո թագուհին ձեռագիրը մանրանկարներով, *խորաններով* ու ոսկով նկարազարդելու համար հանձնել է հմուտ վարպետի, ապա՝ նվիրել Ակներ վանքին: Այժմ պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում [ձեռ. № 2563, չափերը՝ 32,2x23,5 *սմ*, 384 մագաղաթե թերթեր, կազմը (ուշ շրջանի) ոսկեզօծ է, կազմի երեսին «Խաչելությունն» է, հետևում՝ «Աստվածածինը Քրիստոսի հետ»]:

Ձեռագիրը զարդարում են 12 խորանները, 4 ավետարանիչների պատկերները, 4 անվանաթերթերը, ամբողջական էջերի վրա պատկերված տերունական 13 մանրանկարները («Ծնունդ», «Մկրտություն», «Պայծառակերպություն», «Խորհրդավոր ընթրիք», «Հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց», «Ավետում», «Տյառնընդառաջ», «Համբարձում», «Ղազարոսի հարությունը», «Ոտնլվա», «Խաչելություն», «Հոգեգալուստ», «Թովմայի անհավատությունը»), լուսանցքներում ավետարանական երկրորդական իրադարձությունները պատկերող 103 մանրանկարները և թագավորական ընտանիքի նկարը:

«Կ. Թ. Ա.»-ի մանրանկարները կրում են *Թորոս Ռոսլինի* արվեստի անուրկբա ազդեցությունը: Շատ պատկերներ («Մկրտություն», «Խորհրդավոր ընթրիք», «Ոտնլվա», «Հոգեգալուստ») և մանավանդ արտաքին ու ներքին տարրերը յուրովի համատեղած «Թովմայի անհավատությունը» աղերսվում են նրա մանրանկարների հետ: Կապը Թորոս Ռոսլինի արվեստի հետ վկայում են նաև խորանները և որոշ լուսանցանկարներ, սակայն այս վերջիններում «Կ. Թ. Ա.»-ի նկարիչն ավելի անկախ է և հետամուտ իր սեփական երևակայությանը, իսկ որոշ հորինվածքների առանձին տարրեր վկայում են նրա ծանոթ լինելը արևմտաեվրոպ. նմուշներին (մոդերի երկրպագությունը «Ծննդյան» պատկերում կամ ուշաթափվող Աստվածածինը «Խաչելությունում»):

Թորոս Ռոսլինի գեղանկարչությանը սերտորեն կապված լինելով հանդերձ՝ «Կ. Թ. Ա.»-ի մանրանկարները ի հայտ են բերում կիլիկյան արվեստի նոր միտումներ, որոնք լիովին դրսևորվելու էին XIII դ. 80–90-ական թթ. («*Հեթում Բ թագավորի Ճաշոց*»-ում, XIII դ. 80-ական թթ. 2-րդ կեսի մի շարք Ավետարաններում և XIII դ. 90-ական թթ. մի քանի Աստվածաշնչերում): «Կ. Թ. Ա.»-ի նկարիչը սկսում է հեռանալ ռոսլինյան պարզ ու հստակ, հակիրճ հորինվածքներից, զուսպ զգացմունքայնությունից: Նրա պատկերները դառնում են ավելի բազմամարդ, հագեցած ճարտ. և ընապատկերային տարրերով: Նա նույնպես արտահայտում է խոր ապրումներ, վիշտ ու տառապանք, ուրախություն ու հիացմունք, սակայն, ի տարբերություն Թորոս Ռոսլինի՝ ուժեղացնում է դրամատիկ վիճակները, ընդգծում հերոսների պեծուի հուզումնալից կացությունը՝ շեշտելով նրանց շարժումները, դեմքերի արտահայտությունը: Այդ ամենին զուգորդվում են ժայռերի ոլորուն ձևերը, ծառերի գալարուն ուրվագծերը, բարդացված ճարտ. միջավայրը:

«Կ. Թ. Ա.»-ում իրենց գունագեղությունը լավ պահպանած ներկերն աչքի են զարնում արծնի փայլով, ինչն ավելի է ընդգծում ֆոնի հարթությունը պարփակող առատորեն օգտագործված ոսկին՝ ցայտուն դարձնելով նկարի առանձին մանրամասներ և հատկապես տպավորիչ արտացոլելով զգեստապատկերները: Զարմանց հետաքրքիր է թագավորական ընտանիքը պատկերող «Կ. Թ. Ա.»-ի խմբանկարը՝ և՛ իր պատմ. վավերականությամբ, և՛ որպես յուրօրինակ բարձրարվեստ հորինվածք: Թագավորը, թագուհին և նրանց հինգ զավակները ծնկաչոք, ձեռքերի շարժումներով աղոթում են առ «Դեհսուս» (դահին նստած Քրիստոսին և նրա առջև իբրև բարեխոս կանգնած Աստվածածնին ու Հովհաննես Մկրտչին): Թագավորական ընտանիքի անդամները հագել են իրենց որպիսությունը հավաստող հանդիսավոր շքեղ հանդերձներ: Թագավորն ու թագուհին ոսկե ժապավեններից ու թանկարժեք քարերից կարված զգեստներով են, սկյուռենու աստառով ծիրանիով, թագավորի որդիները՝ լայն թևքեր ունեցող զգեստներով, դուստրերը՝ կախովի ոսկե ճակատազարդերով: «Կ. Թ. Ա.» ծաղկուն դարաշրջանի կիլիկյան գրքարվեստի զարգացման կարևոր օղակ է:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.7, 3–4-րդ պատկերները:

Գրկ. Տեր-Մովսիսյան Մ., Կեռան Թագուհու Ավետարանը, «Անահիտ», 1907, № 10–12: Նույնի, Հայկական մանրանկարներ, ԱՀ, 1910, գիրք 20, № 2: Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, W., 1993.

Իրինա Դրամբյան

ԿԻՐԱԿԻ, Կյուրակե (հուն.՝ Տերունի կամ Տերունական՝ Տիրոջը նվիրված օր), միաշաբթի, ըստ Աստվածաշնչի՝ անդրանիկ օրը, այսպես ասած՝ օրերի օրը, երբ Աստված արարեց լույսը. «Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: Աստված տեսավ, որ լույսը լավ է, և Աստված լույսը բաժանեց խավարից: Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը կոչեց գիշեր: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր առաջին» (Ծնն. 1.3–5): Կ. օրը տեղի ունեցան մի շարք աստվածային իրողություններ. Նոյը դուրս եկավ տապանից, Աստ-

ված խոսեց Աբրահամի, ինչպես նաև Մովսեսի հետ՝ Սինա լեռան վրա: Նույն Կ. օրը եղան Օրենքի տվչությունը, Հիսուս Քրիստոսի Հարությունը, Սուրբ Հոգու հեղումը Հոգեգալուստի օրը ևն:

Կ., որն Աստվածաշնչի առաջին հայ թարգմանիչները V դ. թարգմանել են միաշաբթի (և որը, ըստ էության, օրվա ստույգ անվանումն է՝ որպես առաջին օրվա), դիտվել է իբրև սկիզբ ամենայն խորհրդավոր և աստվածային իրողությունների, ուստի և հետագայում սրբացվել է քրիստոնյաների կողմից:

Մովսիսական օրենքով հանգստյան օր է համարվել շաբաթը (շաբաթ օրը), որ եբր. նշանակում է հանգիստ, քանզի Աստված վեց օր արարչագործելով՝ յոթերորդ օրը հանգստացավ (Ծննդ. **2.**2–3) և սրբագործեց այն, որպես հանգստյան կամ խաղաղության օր: Ի տարբերություն հրեաների, քրիստոնյաների համար սրբագործյալ հանգստյան յոթերորդ օր դարձավ շաբաթվա առաջին օրը՝ միաշաբթին, որը կոչվեց Կ.: Դեռևս առաքելական շրջանից համար նկատվեց հրեական շաբաթը փոխարինել Կ-ով՝ որպես Տիրոջը նվիրված և Հարության օր: Դրա համար հիմք ծառայեց նաև այն հանգամանքը, որ ինքը՝ Հիսուսը, չէր պահում շաբաթը՝ հրաշքներ ու բուժումներ կատարելով (Մատթ. **12.**9–13, Մարկ. **3.**1–6, Ղուկ. **6.**6–11), ազդարարելով, որ «...մարդու Որդին շաբաթ օրվա տերն է» (Մատթ. **12.**1–8, Մարկ. **2.**23–28, Ղուկ. **6.**1–5), ինչպես նաև քրիստոնյա եկեղեցու այն մեկնաբանական ընթերցվածքը, թե Հիսուսն է բուն ճշմարիտ Հանգիստը, ուրեմն և շաբաթապահությունը, Տիրոջ այցելությունից հետո, այլևս հին է: Այսպիսով Տերունի դարձավ Հիսուսի Հարության օրը՝ միաշաբթին կամ Կ., որը, որպես տոնական սուրբ օր, մշտապես խորհրդանշում է Հիսուսին: Առաջնորդվելով վերն ասվածով և առաքելական թղթերում առկա ակնարկումներով՝ *Ընդհանրական եկեղեցին* Կ. օրը առանձնացրել է. այդ օրը կատարվում են միայն Տիրոջը՝ Հիսուսին, նվիրված տոներ:

Հայ եկեղեցին սրբոց տոները զատել է Տերունի տոներից ու *պահքերից* և, որպեսզի Տերունական տոները չնսեմանան, Կ. և պահոց օրերին սրբերի տոներ չի դրել: Տերունի տոները բաժանելով Կ-ների վրա՝ Հայ եկեղեցին սահմանել և նշում է հետևյալ Կ-ները.

Աշխարհամատրան կամ Աշխարհամատուռն Կ. (նշվում է *Զատկի* երրորդ կիրակի օրը, 35 օրվա շարժականությամբ՝ ապրիլի 5-ից մինչև մայիսի 9-ը): Հիշատակումն է Սիոնի Վերնատունը (հավանաբար՝ Հովհաննես Մարկոսի տանը) կատարված զատկական ընթրիքի, որի ընթացքում հաստատվեց *Հաղորդության* խորհուրդը (Մարկ. **14.**12–25, Ղուկ. **22.**7–23, Ա Կորնթ. **11.**23–25): Վերնատունը դիտվում է իբրև առաջին եկեղեցին, և այս իմաստով Աշխարհամատուռն նշանակում է աշխարհաժողով կամ աշխարհաեկեղեցի: Կոչվում է նաև Կանաչ Կ.:

Անառակի Կ., Մեծ պահոց երրորդ Կ. է: Զատկից 5 շաբաթ (35 օր) առաջ է նշվում: Հիշվում է Ղուկասի Ավետարանի 15-րդ գլխի անառակ որդու խրատական դասերով հարուստ առակը, որից և բխում է անվանումը:

Առաջավորաց Կ. (Բուն Բարեկենդանից 3 և Զատկից 10 շաբաթ առաջ հանդիպած Կ., 35 օրվա շարժականությամբ ընկնում է հունվ. 11-ից փետր. 15-ը): Ներսես Շնորհալին Առաջավորաց անունը բացատրում է իբրև առաջին պաս: Բացատրվում է նաև իբրև *Մեծ պահքից* հետո եկող առաջին Կ. կամ՝ Գրիգոր Ա Լուսավորչի հաստատած առաջին պասը:

Արտաքսման Կ., Մեծ պահոց երկրորդ Կ. է: Հիշվում է Ադամի՝ դրախտից արտաքսվելը և մեղավորների՝ Քրիստոսի միջոցով դարձյալ դրախտին արժանի դառնալը:

Դատավորի Կ. (մարտի 1-ից մինչև ապրիլի 4-ը): Այդ օրը ընթերցվում է Ղուկ. 18 գլուխը (Դատավորի և Մաքսավորի առակները), որոնք ուսուցանում են առանց ճանձրույթի բախել Աստծո դուռը, ճանաչելով սեփական մեղսավորությունը՝ Երկնավորից ընդունել մեղքերի թողություն:

Գալատյան Կ. (Զատկից 15 օր առաջ, մարտի 8-ից ապրիլի 11-ը, որին նախորդում է *Ավագ շաբաթը*): Հիշատակվում է Քրիստոսի երկրորդ՝ փառավոր գալուստը (Մատթ. **23.**39, **24.**30):

Կանաչ Կ., Զատկի չորրորդ Կ. է, հավանաբար վերցված է ժող. հանդիսություններից, որպես բողբոջման տոն՝ կանաչով զարդարված:

Կարմիր Կ., Հինգշաբթի չորրորդ Կ. է՝ Զատկից 22 օր հետո: Խորհրդանշում է Հիսուսի թափած արյունը, որի նշանն են կարմիր կակաչները:

Կրկնազատիկ, ժող. անուն՝ տրված Զատկի ութերորդ՝ Նոր Կ-ին:

Նոր Կ., Զատկին հաջորդող առաջին Կ. է: Խորհրդանշում է Տիրոջ Հարությունը, նաև եկեղեցու ընդարձակումն ու տարածումը:

Տնտեսի Կ., Մեծ պահքի չորրորդ Կ. է: Կարող է ընկնել փետր. 22-ից մարտի 28-ը: Այս օրը խորհրդաբանվում են Տնտեսի առակը և նրան հարակից՝ Մեծահարուստի և աղքատ Ղազարոսի առակները (Ղուկ. 16): Աստծո զավակներին՝ լուսո որդիներին, հրահանգվում է լինել խորագետ, բացահայտվում է հանդերձյալ կյանքի խորհուրդը:

Կ. օրերին Հայ եկեղեցին նշում է Տերունի և *Տաղավար* տոները (Ս. Ծննդից զատ) և սրբոց տոներից զատ՝ շարժական մյուս տոները:

Գրկ. Գուշակյան Թ., Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1939: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6-րդ հրտ., Թեհրան, 1999:

Լևոն Սարգսյան

ԿԻՐԱԿՈՍ Ա ՎԻՐԱՊԵՑԻ, Խորվիրապեցի [մոտ 1370, գ. Խառաբաստ (Քաջբերունիք գավառ) – 1448], Ամենայն Հայոց կաթողիկոս 1441–43-ին: Հաջորդել է *Գրիգոր Թ Մուսաբեկյանցին*: 1409-ից հաստատվել է Այրարատի Խոր վիրապի վանքում (այստեղից էլ՝ անվանումը): Կաթողիկոս է ընտրվել և օծվել Էջմիածնի 1441-ի ժողովում (տես *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողով 1441*): Ընտրվելուց անմիջապես հետո հրապարակել է Կիլիկիայից Ս. Էջմիածին հայրապետական աթոռի փոխադրությունն ավետող կոնդակ: Կ. Ա Վ. Հայաստանյայց եկեղեցու միասնությունը պահելու համար Աղթամարի աթոռն ազատել է 1113-ի Սև լեռան Կարմիր վանքի եկեղեց. ժողովի նզովքից: Զբաղվել է շինարարությամբ (Էջմիածնի վանքում և այլուր) և ծիսաբան. բարեկարգումներով: Այունեցիները, ձգտելով հայրապետական աթոռին բազմեցնել իրենց ներկայացուցչին, դժգոհել են այդ ընտրությունից: Նրանք 1443-ին ժողով են գումարել և գահընկեց հռչակել Կ. Ա Վ-ուն:

Կաթողիկոս. գահին Կ. Ա Վ-ուն հաջորդել է *Գրիգոր Ժ Ջալալբեկյանցը*:

Գրկ. Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թ., 1892:

Սանդրո Բեհբուդյան

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Գետիկցի, Արևելցի (մոտ 1201/1203 – 1271, Նոր Գետիկ), պատմիչ, վարդապետ, բաբունապետ: Ծնվել է «Գանձակի երկրում» (Գանձակեցի է անվանվել XVII դարից): Վաղ մանկությունից սովորել է Նոր Գետիկի վանքում (հետագայում՝ *Գոշավանք*): 1215-ից հետո տեղափոխվել է Տավուշ՝ *Խորանաշատի վանք*, աշակերտել *Վանական Վարդապետին* և նրանից ստացել վարդապետ. աստիճան: 1225-ին Խորանաշատի ավերումից հետո ուսուցչի հետ տեղափոխվել է Տավուշի Լորուտ գյուղին մերձակա փոքրիկ եկեղեցի և շարունակել գիտամանկավարժ. գործունեությունը: 1236-ին Կ. Գ-ուն ընկերների և Վանական Վարդապետի հետ գերել են մոնղոլները: Մոնղոլ. բանակում եղել է թարգմանիչ ու գրագիր, այնուհետև փախել է և ապաստանել Նոր Գետիկում: 1250-ին մասնակցել է Դավիթ Ծարեցու (Դավիթ Մոլորեցուցիչ) բանադրմանը, 1251-ին՝ Հռոմի Ինոկենտիոս IV պապի Հավատո թղթի պատասխանը գրելուն: Մասնակցել է Սսի 1243-ի եկեղեց. ժողովին: Ենթադրվում է, որ Վանական Վարդապետի մահից (1251) հետո գլխավորել է Նոր Գետիկի վանքի դպրոցը: 1255-ին Նիդ գավառի Վարդենիս գյուղում հանդիպել է Քուրդ իշխանի տանն իջևանած Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ին (վերջինս վերադարձել էր մոնղոլ Մանգու ղանի մոտից) և գրառել նրա հայտնած տեղեկությունները: 1260-ին նրա միջամտությամբ Գետիկի բնակչությունն ազատվել է աթոռահարկից: Անձնապես մտերիմ է եղել ժամանակի նշանավոր ռազմաքաղ. գործիչներ Պռոչ, Քուրդ, Գրիգոր ու այլ իշխանների և ուսումնակից *Վարդան Արևելցու* հետ, որը նրա պատվերով կատարել է (1265) Երգ երգոցի մեկնությունը: 1268–69-ին այցելել է Կիլիկյան Հայաստան, այնուհետև վերադարձել Նոր Գետիկ:

Կ. Գ-ու գլխ. երկը չուրջ հազար տարվա ընդգրկում ունեցող «Հայոց պատմությունն» է (սկսել է շարադրել 19.5.1241-ին և 1265–1266-ի դեպքերը նկարագրելիս վախճանվել): Բաղկացած է «Առաջաբան»-ից (կոչվում է «Ժամանակների համառոտ պատմություն, որ սուրբ Գրիգորից...», որտեղ թվարկված են մատենագիրները՝ *Ագաթանգեղոսից* մինչև Վանական Վարդապետ) և 65 գլուխներից: Բաժանվում է երկու մասի: Առաջինը՝ Գրիգոր Ա Լուսավորչի և թաթար-մոնղ. արշավանքների միջև ընկած ժամանակաշրջանի համառոտ, երկրորդը՝ մոնղոլների առաջին արշավանքների և Հայաստանում նրանց տիրապետության սկզբ. շրջանի հանգամանալի պատմությունն է: Աշխատության կրոնաեկեղեց. մասի աղբյուրներն են Աստվածաշունչը, վարքագր-սրբագր. երկերը, եկեղեց. ժողովների կանոնները (իրավ. թղթեր), Վանական Վարդապետին վերագրվող «Խրատ

դաւանութեան»-ը ևն: Օգտագործվել են ընդհանուր եկեղեց. պատմությանը վերաբերող երկեր՝ *Եվսեբիոս Կեսարացու* «Եկեղեցական պատմությունն» ու «Քրոնիկոնը», Սոկրատես Աքոլաստիկոսի «Պատմությունը», կրոնաժող. մանրապատումներ: Սկզբնաղբյուր են ծառայել նաև *Մովսես Կաղանկատվացու*, *Սամուել Անեցու*, Վանական Վարդապետի և այլոց երկերը, արձանագրություններ, դիվանական վավերագրեր, նամակներ, դեպքերի մասնակիցների բանավոր տեղեկություններ ևն:

Կ. Գ. քննական վերլուծական մոտեցում է ցուցաբերել և՛ աղբյուրներին, և՛ շարադրանքին: Նա ժամանակաշրջանի և հարցադրումների մեծ ընդգրկումով տվել է IV–XIII դդ. քաղ., տնտ., եկեղեցու ներքին կյանքի ու միջեկեղեց. հարաբերությունների, մշակութ. և հաս. շարժումների պատմությունը՝ այն սերտորեն կապակցելով հարևան երկրներում (Վիրք, Աղվանք, Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ) կատարվող իրադարձությունների հետ: «Հայոց պատմության» առաջին գլխում («Համառոտ պատմություն ու հիշատակություն սուրբ Գրիգորի և նրա աթոռը հաջորդածների անունների») թվարկել է Գրիգոր Ա Լուսավորչին հաջորդած կաթողիկոսներին (*Արիստակես Ա Պարթևից* մինչև *Ներսես Շնորհալի*)՝ հաղորդելով որոշ մանրամասնություններ նրանց գործունեության մասին: Ներկայացրել է նաև Գրիգոր Ա Լուսավորչի մասունքների համառոտ պատմությունը՝ մինչև Կ. Պոլսում տեղի ունեցած նշխարաց գյուտը: Երկրորդ գլխում (խորագրվել է «Հայաստանյայց եկեղեցու խոստովանության հավատո գիր՝ գրված հայոց Գրիգորիս կաթողիկոսի եղբայր Ներսես եպիսկոպոսի կողմից...») շարադրել է Հայ եկեղեցու հավատի գլխ. սկզբունքները, երրորդում՝ Լևոն Բ Մեծագործի գահակալումը Կիլիկիայում (1198) և Զաքարյանների իշխանության շրջանի իրադարձությունները Հայաստանում: Տեղեկություններ են հաղորդվում Զաքարե Բ Մեծի կողմից Հայ եկեղեցու ծեսերում որոշ փոփոխություններ կատարելու փորձի մասին (տես *Անիի եկեղեցական ժողով 1207, Սսի եկեղեցական ժողովներ*): Այնուհետև առանձին գլուխներում հեղինակը պատմում է *Աղվանից եկեղեցու* անցուդարձի մասին՝ Թադեոս առաքյալի աշակերտ *Եղիշեից* մինչև Աղվանից Ներսես կաթողիկոսը (1235–62): Նշվում է նաև այդ եկեղեցու սերտ կապը Հայաստանյայց Մայր եկեղեցու հետ, Զաքարե և Իվանե իշխանների հովանավորությունը Աղվանից կաթողիկոսին ևն: Կ. Գ. առանձին գլուխներ է նվիրել *Մխիթար Գոշին*, Նոր Գետիկ վանքի կառուցմանը: Երկում կարևոր տեղեկություններ կան *Կոստանդին Ա Բարձրբերդցի* կաթողիկոսի կանոնական հրամանների, շրջաբերական թղթի, կանոն. սահմանադրության, ինչպես նաև Հայ ու Կաթոլիկ եկեղեցիների հարաբերությունների մասին: Կ. Գ., որպես դեպքերի ականատես, տեղեկություններ է հաղորդում մոնղոլների՝ Անդրկովկաս ու Հայաստան կատարած արշավանքների, լեզվի, կենցաղի, բարքերի, հաս. կառուցվածքի, Հուլավյանների պետության քաղ., տնտ. պատմության, Հայաստանի հայ իշխանների, Կիլիկիայի Հայկական պետության և մոնղոլների փոխհարաբերությունների մասին: Պատմությունը կարևոր նշանակություն ունի նաև հիշյալ իրադարձությունների վերաբերյալ տվյալներ պարունակող այլ աղբյուրների (իրան., արաբ. ևն) արժանահավատությունն ստուգելու առումով: Այն գնահատել և օգտագործել են դեռևս Կ. Գ-ու ժամանակակիցները՝ Վարդան Արևելցին, *Մխիթար Այրիվանեցին*, հավանաբար նաև՝ իրան. պատմիչ Ռաշիդ էդ Դինը (1247–1318), հետագայում ուսումնասիրել են բազմաթիվ հայ և օտարազգի գիտնականներ (Ք. Պատկանյան, Հ. Մանանդյան, Մ. Բրոսսե և այլք):

«Հայոց պատմություն»-ը մեզ է հասել 47 ընդօրինակություններով (31-ը պահպանվում են Երևանի Մատենադարանում, մնացածը՝ Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի, Կ. Պոլսի, Սանկտ Պետերբուրգի մատենադարաններում ու գրադարաններում և մասնավոր հավաքածուներում): Առաջին անգամ հրատարակվել է 1858-ին՝ Մոսկվայում, գիտաքննական հրատարակությունը՝ 1961-ին, Երևանում՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի աշխատասիրությամբ: Ֆրանսերեն լույս է տեսել 1870-ին՝ Սանկտ Պետերբուրգում, ռուսերեն՝ 1976-ին, Մոսկվայում: Առանձին հատվածներ ռուս., ֆրանս., անգլ. և լատ. լեզուներով տպագրվել են դեռևս XIX դ.:

Կ. Գ-ու գրչին են պատկանում նաև թղթեր՝ ուղղված Վանական Վարդապետին, Վարդան Արևելցուն և այլոց (չեն պահպանվել), բանադրական թուղթ ընդդեմ Դավիթ Ծարեցու, Աստվածածնի Վերափոխման շարական և Պողոս եպիսկոպոսի վարքը (վերջինս զետեղված է 1253–69-ին իր իսկ հարմարեցրած ու լրացրած «Յայսմաւուրք»-ում. պահ-

վում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում):

Երկ. Հայոց պատմություն, Ե., 1982:

Գրկ. Ոսկյան Հ., Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, Վնն., 1922:

Ռաֆիկ Մաթևոսյան

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ [1270-ական թթ., Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառի Ագրակ (Ադարակ) ավան – 1356 (Հակոբ Կարնեցու վկայությամբ՝ ամփոփվել է Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցում)], վարդապետ, աստվածաբան, մատենագիր, իմաստասեր, մեկնիչ, բանաստեղծ, մանկավարժ, բարեբնապետ: Կ. Ե. առաջին անգամ հիշատակվում է 1315-ի ձեռագիր հիշատակարաններից մեկում՝ իբրև բարեբնապետ: Եկեղեց. ավանդության մեջ մեծարվել է որպես «մեծ և հռչակաւոր վարդապետ», «արժանաւորն ամենայն գովեստի եւ յիշման», «գերաշնորհ եւ եռամեծ բարեբնապետ» ևն: *Եսայի Նչեցու* բարեբնապետության օրոք ուսանել է *Գլաձորի համալսարանում* և Երզնկայում, որտեղ ծավալել է գիտամանկավարժ. բեղուն գործունեություն:

Կ. Ե. թողել է բազմաժանր գրական ժառանգություն՝ դավան., մեկնող. երկեր, խրատներ, ներբողներ, լուծմունքներ, չափածո գործեր, շարականներ: Նրա գործերը մեզ են հասել բազմաթիվ ընդօրինակություններով, ինչը վկայում է դրանց մեծ տարածում ունենալու մասին: Այդ գործերից են՝ «Նախերգան Տեառնընդառաջին» (Մատենադարան, ձեռ. № 2187), «Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն» (Մատենադարան, ձեռ. №№ 2542, 8727 ևն, Վենետիկի մատենադարան, ձեռ. № 241), «Լուծմունք հարիւրաւոր թուոցն Եւագրեայ» (Մատենադարան, ձեռ. №№ 518, 1480, 1980 ևն, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, ձեռ. №№ 132, 620 ևն), «Յաղագս Ը խորհրդոցն Եւագրեայ» (Մատենադարան, ձեռ. №№ 2542, 4040 ևն, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, ձեռ. № 1407 ևն), «Թուղթ առ Կարնեցիս» (Մատենադարան, ձեռ. № 639, 750, 6608 ևն):

Կ. Ե. շարունակել ու զարգացրել է Երզնկայի դպրոցի և նրա մեծ բարեբնապետների՝ *Հովհաննես Երզնկացու* (Պլուզ) և *Մովսես Երզնկացու* մանկավարժ. ավանդները: Փիլ. երկերի, ճառերի, մեկնությունների, կանոնական խրատների ու գիտության տարբեր բնագավառներ ընդգրկող նյութերի ընտրությամբ կազմել է բարձրագույն կրթության ձեռնարկներ (օր.՝ Մատենադարան, ձեռ. № 1379): Հատուկ ուշադրություն է դարձրել ավանդվող առարկաների և նյութի ընտրությանը, մատուցման եղանակին: Գիտելիքներ օգտագործելն ու ուսուցանելը համարել է մտավորականի սրբազան պարտականությունը, աշակերտներ չպատրաստելը՝ հանցանք: Նա նմանվելու, ընդօրինակելու հակումը համարում է աշակերտի ամենաբնորոշ գիծը: Կ. Ե. խնդիր է դրել իմացական ու բարոյական կրթությունը կազմակերպել նախ դրական օրինակով ու գործով, ապա՝ խոսքով, սկզբից վերացնել արատ ծնող պատճառները՝ երեխայի մեջ ուժեղացնելով գիտակցական գործոնը, սխալն զգալու և ուղղելու կամքը: Նա, ելնելով տարիքային առանձնահատկություններից, դաստիարակությունը բաժանել է երեք շրջանի: Առաջին շրջանում պետք է գերակշռի դաստիարակի դերն ու միջամտությունը, երկրորդում՝ դաստիարակվողի գիտակցությունն ու իր արարքների համար պատասխանատվությունը, երրորդում՝ այդ երկու ազդակների զուգակցումը:

Կ. Ե. զարգացրել է նախորդների, հատկապես Հովհաննես Երզնկացի Պլուզի փիլ. հայացքներն ու առաջադիմ. տեսակետները: Համադրելով հին աշխարհի իմաստասերների գաղափարները՝ առաջնությունը տվել է Արիստոտելի աշխարհըմբռնմանը: Քննել է անցավորի և հավիտենականի, մարմնի և հոգու, նյութի և ստեղծագործության, եզակիի և ընդհանուրի փոխհարաբերության, իմացության միջոցների ու աստիճանների, գիտությունների դասակարգման և այլ փիլ. խնդիրներ: Մարմնի և հոգու փոխհարաբերությունը վերլուծել է որպես նյութի և մտքի, նյութի և արվեստի, ձևի և բովանդակության փոխհարաբերություն: Հոգին նույնացնելով մտքի հետ՝ հաստատել է նաև մարդու հոգևոր էությունը մշտապես կատարելագործելու հնարավորությունը: Համաձայն Կ. Ե-ու, ճանաչողության առաջին աստիճանը զգայականն է, իսկ իրի կամ երևույթի վերջնական և ամբողջական ճանաչման համար անհրաժեշտ հինգ հիմն. գործոններից (զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոհություն, միտք) ամենակարևորը միտքն է, որի էությունը, ըստ նրա, ընդհանրացման ունակությունն է՝ կոնկրետից ընդհանուրը և հակառակ ուղղությամբ ընթացող մտավոր գործունեությունը: Այս բոլորի հիմքում նա առանձնացրել է մարդու առաքինությունը՝ նրա բարոյական կողմնորոշվածությունը:

Կ. Ե-ու երկերում կարևորվում են կանոնական խրատները, որոնք ունեն նաև օրենսդր. նշանակություն: Հանցանքը քննելիս հեղինակն անհրաժեշտ է համարել անհատական և հոգեբանական մոտեցումը (տարիքը, սեռը, ընտանեկան, ամուսնական վիճակը, սոցիալական պայմանները, դրդապատճառները ևն):

Կ. Ե-ու աշխատություններն ունեն պատմաճանաչող. մեծ արժեք, բովանդակում են հայ և այլ ժողովուրդների կենցաղը, բարքերը, սովորույթները, օրենքները, զբաղմունքը, հետաքրքրությունները, հաս-քաղ. կյանքն արտացոլող տեղեկություններ:

Շարունակելով իր դպրոցի ավանդները՝ Կ. Ե. հետևողականորեն պայքարել է հայոց միասնությունը պառակտող այլազգի ու դավանափոխ հայ քարոզիչների դեմ: «Թուղթ առ Կարնեցիս» երկում (գրել է 1323–24-ին), որի ստեղծման հիմն. շարժառիթը *ունիթորության* դեմ Հայ եկեղեցու, հատկապես *արևելյան վարդապետների* և Այուսյաց վարդապետների ծավալած սուր պայքարն էր, Կ. Ե. ցույց տալով դավանափոխության կործանարար հետևանքները, հորդորում է զգուշանալ և հետևողական լինել հավատի մաքրության հարցերում: Պատասխանելով կարնեցիների հարցադրումներին, նա անդրադարձել է դավան., ծիսական և բարոյական մի շարք կարևոր խնդիրների՝ Քրիստոսի բնությունների, Մարդեղությանը, մարմնի *անապականությանը*, եկեղեցու յոթ խորհուրդներին ևն:

Կ. Ե-ու չափածո գործերը (քիչ են պահպանվել) իրենց բարձր մակարդակի շնորհիվ հեղինակին միջնադարի մեծ շարականագրի հռչակ են բերել: Նրա երաժշտաբանաստեղծ. գործերի բարձր արվեստի վկայություններից է *Շարակնոցը* եզրափակող՝ Աստվածածնի Վերափոխմանը նվիրված «Արեւելք գերարփին...» շարականը, որն աչքի է ընկնում ավանդ. հնարանքների (գրվել է այբբենական ակրոստիքոսի ձևով), բանաստեղծ. ներշնչման և մեղեդիական մարմնավորման ներդաշնակ զուգորդումով: Կ. Ե. հազարամյա զարգացման ուղի անցած հայ շարականերգության վերջին ականավոր ներկայացուցիչներից է:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.8, 1-ին պատկերը:

Երկ. Թուղթ առ Կարնեցիս, «Գանձասար», 6, 1996, էջ 557–584:

Գրկ. Եվագր Պոնտացի, Վարք և մատենագրութիւնք, աշխատասիր. և ծնթ. Բարսեղ Սարգիսյանի, Վնտ., 1907: Քյուրտյան Հ., Երիզա և Եկեղեց գավառ, հ. 1, Վնտ., 1953, էջ 225–236: Սրապյան Ա., Բանասիրական ճշգրտումներ, ՊԲՀ, Ե., 1972, № 4: Դանիելյան Ա., Կիրակոս Երզնկացի, «Գանձասար», 6, 1996:

ԿԻՐԱՆՑ ՎԱՆՔ, ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գյուղից մոտ 12 *կմ* արևմուտք, Ոսկեպար գետակի վտակ Կունենի ձախ ափին, գեղատեսիլ անտառապատ հարթավայրում: Հիմնադրվել է XIII դ.: Կ. վ-ի համալիրը կազմված է երեք եկեղեցիներից, երկու սրահ-գավիթներից ու տնտ. շինություններից: Վանքը շրջապատված է եղել բարձր պարիսպներով, որոնք այժմ ավերակ են: Պահպանվել է կամարակապ մեծ դարպասը, որը բացվում է դեպի հվ-արմ.: Կառույցների մեծ մասը աղյուսաշեն է՝ սրբատաշ քարե մանրամասներով: Շինությունների գետնախարիսխներն ու պատերի ստորին շարքերը, ինչպես նաև գլխ. եկեղեցու քանդակազարդ բեմառաջքը քարից են: Կ. վ-ի գլխ. եկեղեցին (XIII դ.) ունի զույգ մույթերով գմբեթավոր հորինվածք՝ խորանի երկու կողմերում տեղադրված կրկնահարկ ավանդատներով: Ճակատները ձևավորված են խաչերի մեծադիր քանդակներով, որոնք բարձրանում են աստիճանաձև հիմքերի վրա և պսակում պատուհանների բացվածքները: Արլ. ճակատը մշակված է զույգ, եռանկյունաձև խորշերով: Աղյուսաշեն պատերի վրա առանձնանում են սրբատաշ քարով իրականացված քանդակազարդ արմ. և հվ. շքամուտքերը: Եկեղեցին պսակված է ութանիստ, ուղղաձիգ համաչափություններով սլացիկ թմբուկով, որի բոլոր նիստերը երեսպատված են երկրաչափ. զարդանախշ կազմող բազմագույն ջնարակված սալիկներով: Գլխ. եկեղեցու երկու մուտքերը բացվում են սրահ-գավիթների մեջ: Կ. վ-ի մյուս երկու աղյուսաշեն միանավ եկեղեցիները հվ-ից և հս-ից կցվել են գլխ. եկեղեցուն: Վանքի սեղանատունը գտնվում է գլխ. եկեղեցուց արևմուտք: Վանքի տարածքում պահպանվել են միաբանության բնակելի շինությունների ավերակները, դերեզմանատունը՝ տապանաքարերով: Կ. վ-ի կառույցների ճարտարապետությունն ու հարդարանքը հայկ. ու վրաց. շին. ավանդույթների, ճարտ. ձևերի ու տարրերի, ինչպես նաև գմբեթում դրսևորված պարսկ. դեկորատիվ արվեստի յուրօրինակ համադրություն են:

Կ. վ-ի գլխ. եկեղեցին և սեղանատունը զարդարված են եղել որմնանկարներով (սեղանա-

տանը միայն դրանց հետքերն են մնացել): Գլխ. եկեղեցու գմբեթին «Համբարձման» տեսարանն է՝ չորս հրեշտակ (երկուսն են պահպանվել) վեր են բարձրացնում կապույտ Փառապսակը՝ «Քրիստոսը գահին նստած» պատկերով, թմբուկի վերին մասում աղոթող Աստվածածինն է՝ հրեշտակներով և երկու առաքյալներով շրջապատված, միջին մասում առաքյալներն են, ներքևում՝ տեսարաններ Հին կտակարանից: Չորս առագաստներին պատկերված են նստած ավետարանիչները:

Խորանի գմբեթարդին գահին նստած Աստվածածինն է Մանկան հետ, կողքին՝ երկու հրեշտակ: Որմնանկարների հաջորդ շարքում «Հաղորդության» տեսարանն է՝ կանգնած Քրիստոսին երկու կողմից մոտեցող 6-ական առաքյալներով: Լուսամուտի խորշում պատկերված են հրեշտակները, ցածում, շարժման մեջ՝ ձեռքերին մագաղաթե գալարափաթեթներով տասը սրբեր:

Կ. վ-ի որմնանկարները, ընդհանուր առմամբ առնչվելով XIII դ. բյուզ. արվեստի հետ, միաժամանակ ունեն արևելաքրիստ. արվեստին բնորոշ առանձնահատկություններ:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.8, 2-րդ պատկերը:

Գրկ. Тер-Аветисян С., Заметки о Воскепаре и Киранце, в сб. Материалы по истории Грузии и Кавказа, в. 7, Тб., 1937; Тьерри Н., Росписи церкви Киранца, Тб., 1983; Нерсесян Л., Монастырь Киранц — памятник культуры армян-халкидонитов, в сб. Памятник в контексте культуры, М., 1991.

Ալեքսանդր Ջալալյան
Իրինա Դրամբյան

ԿՂԵՄԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ (Տիտոս Փլաբիոս Կղեմես) (150, Աթենք – 216, Կապադովկյան Կեսարիա), աստվածաբան, եկեղեցական մատենագիր, *Ալեքսանդրիայի* պատրիարք: Ծնվել է բարեկեցիկ հեթանոս ընտանիքում, Աթենքում ստացել բարձր կրթություն: Քրիստոնյա դառնալուց հետո Կ. Ա. ճանապարհորդել է Հվ. Իտալիայում, Ասորիքում, Պաղեստինում, Եգիպտոսում և, ինչպես նշում է իր «Ստրոմատիս» երկում, աշակերտել ժամանակի նշանավոր քրիստոնյա մտածողներին: Կ. Ա-ու ուսումնառության կարևորագույն հանգրվանն է եղել Ալեքսանդրիան, որտեղ ուսանել է տեղի նշանավոր աստվածաբան. դպրոցում, աշակերտել դպրոցի առաջին ուսուցիչ, սիցիլիացի փիլիսոփա Պանտենոսին: Վերջինիս մահից (200) հետո ստանձնել է Ալեքսանդրիայի դպրոցի տեսչի պաշտոնը, դարձել Ալեքսանդրիայի պատրիարք (200–203): Հռոմ. Սեպտիմոս Սևերոս կայսրի (193–211) հալածանքների ժամանակ, 203-ին Կ. Ա. ստիպված հեռացել է Ալեքսանդրիայից, տեղափոխվել նախ Կապադովկյան Կեսարիա և ապա՝ Երուսաղեմ, իր երբեմնի աշակերտ, Երուսաղեմի Ալեքսանդր եպիսկոպոսի մոտ: Կյանքի հետագա տարիների մասին գրեթե ոչինչ հայտնի չէ: Ըստ *Եվսեբիոս Կեսարացու*՝ Կ. Ա. 215/216-ին Անտիոք է տարել Ալեքսանդր Երուսաղեմացու մի նամակը:

Կ. Ա. *Որոգինեսից* հետո Ալեքսանդրիայի աստվածաբան. դպրոցի III դ. ամենանշանավոր ներկայացուցիչն էր, առաջին քրիստոնյա գիտնականը, գիտ. *աստվածաբանության* հիմնադիրը: Նա քրիստ. հավատին ու վարդապետությանը հաղորդել է աստվածաբան. բնույթ՝ գիտ. հիմքով, հելլենիստ. կրթությունը և փիլիսոփայությունը ծառայեցրել քրիստ. հավատին: Ըստ նրա՝ փիլիսոփայությունն օժանդակ միջոց է հավատին հասնելու, նախապատրաստություն հավատացյալին՝ ճշմարտությունն ընդունելու և ի Քրիստոս առաջնորդելու համար: Հելլենիստ. բարձր կրթություն ստացած Կ. Ա. փիլիսոփայությունը համարել է Աստծո «գործ», աստվածային նվեր մարդուն և, հետևաբար, «բարի»: Այն տրվել է հույներին այնպես, ինչպես Օրենքը՝ հրեաներին, Ավետարանը՝ ողջ աշխարհին: Ձգտելով հույներին (հեթանոսներին) դարձի բերել՝ Կ.Ա. ոչ միայն ապացուցել է քրիստոնեության առավելությունը հեթանոսությունից, այլև, նրանց չվիրավորելու համար, դրական վերաբերմունք է ցույց տվել հուն. փիլիսոփայության նկատմամբ, այն համարել օգտակար և ձգտել քրիստոնեությունը բարձրացնել կրթված հույների մոտ հարգված փիլիսոփայության աստիճանի:

Ալեքսանդրիայի զարգացած քաղաքակրթության համար եկեղեցու ավետարան. տիպարը համարվել է պարզամիտ և անբավարար: Կ.Ա. փորձել է ավետարան. կամ եկեղեց. քրիստոնյային բարձրացնել «գնոստիկ» (իմացական, գիտուն) քրիստոնյայի մակարդակին, որը կդիմագրավեր հուն. փիլիսոփայության և գնոստիկականության (տես *Գնոստիցիզմ*) քննադատություններին: Ըստ նրա, հավատացյալների մի մասը, որոնք հասել են գիտությանը, կարող են լինել «գնոստիկներ»: «Գնոստիկ» քրիստոնյան Տիրոջ միակ ճշմարիտ աշակերտն է և

Տիրոջ խորհուրդների ու վարդապետության միակ ճանաչողը, միակ բարեպաշտը, անմեղանչողը: Նա է կատարյալ քրիստոնյան, որ մահից հետո ուղղակիորեն գնում է երկնային արքայություն: Կ. Ա. իրեն անվանել է «գնոստիկ»: Նրա ուսմունքը թեև մեծ դեր է խաղացել հեթանոսության և հելլենիստ. մտածողության հանդեպ քրիստոնեության հաղթանակի գործում, սակայն նրա «գիտական քրիստոնեությունը» պարունակել է գնոստիցիզմի տարրեր: Վարդապետ. մի շարք հարցերում թույլ է տվել սխալներ (նյութի հավիտենականության, Որդու արարած լինելու, Լոգոսի երևութական մարմնացման, հոգեփոխության ևն), որոնք հետագայում քննադատել են *եկեղեցու հայրերը*:

Կ. Ա-ու խորագիտակությունն անտիկ և քրիստ. գրականությանը, Աստվածաշնչին, ինչպես նաև գնոստիկյան և հերետիկոս. հեղինակների գործերին, մեծ հետք է թողել նրա մատենագիտ. վաստակի վրա: Նրա երեք գլխ. աշխատությունները՝ «Բան յորդորական առ Հելլենս», «Դաստիարակ» և «Ստրոմատիս», կազմում են միասնական եռագրություն և ամփոփում հեղինակի աստվածաբան. հասկացություններն ու հայացքները:

Առաջին աշխատությունն ուղղված է հեթանոսների (հույների) դեմ, սակայն իրականում ջատագով. բնույթի ձեռնարկ է քրիստոնյաների համար, որպեսզի նրանք կարողանան պաշտպանվել հեթանոսների քննադատությունից և ամրապնդվեն իրենց հավատի մեջ: Հեղինակը ներկայացրել է հեթանոս. կրոններն ու խորհրդապաշտությունները իրենց անիմաստությամբ և անբարոյականությամբ: Միակ ու ճշմարիտ կրոնը քրիստոնեությունն է՝ հիմնված Բանի (Լոգոս) Մարդեղության և աստվածային բարձրագույն հայտնության վրա:

«Դաստիարակը» ևս եռագրություն է: Հեղինակի նպատակն է եղել հեթանոսությունից քրիստոնյա դարձածներին դաստիարակել նոր կրոնի հավատով ու բարոյականությամբ: Ճշմարիտ դաստիարակն աստվածային Բանն է (Լոգոսը), որը լուսավոր վարդապետությամբ և փրկագործ. կյանքով դաստիարակում է հավատացյալին և բարձրացնում բարոյապես: Հիմն. սկզբունքը, որով Լոգոսը դաստիարակում է իր որդիներին, դուրն է և սերը և ոչ թե Հին կտակարանի երկյուղը: «Դաստիարակ» երկը նաև մեծարժեք աղբյուր է Ալեքսանդրիայի բնակչության այն ժամանակվա կենցաղի և բարքերի ուսումնասիրության համար: Աշխատությունն ավարտվում է Քրիստոսին ուղղված գովաբան. աղոթքով:

Կ. Ա-ու եռագրության վերջին մասը՝ «Ստրոմատիս» (Ձեռնարկներ, Գործեր) աշխատությունը, բաղկացած է ութ մասից, որտեղ կրկնվում են բազմաթիվ թեմաներ նախորդ երկու երկերից: Արծարծվում են կատարյալ կյանքի, ամուսնության օրինականության, Աստծո մասին գիտելիքի, Բանի (Լոգոսի) վարդապետության, Ս. Գրքի մեկնաբանության և այլ հարցեր: Երկի հիմն. նյութը քրիստոնեության և հուն. փիլիսոփայության փոխհարաբերությունն է:

Կ. Ա. գրել է նաև մեկնող., դավանաբան., քարոզխոս. աշխատություններ, նամակներ: Պահպանվել են նաև տարբեր երկերից առանձին հատվածներ և ցայսօր կորած համարվող մի շարք գործերի վերնագրեր մատենագիրների մոտ:

Գրկ. Եվսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, Վնտ., 1877: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Էջմիածին, 1908: Հատիտյան Ա., Ալեքսանդրիայի եկեղեցու մեծ հայրապետները Բ–Ե դարերում, «Էջմիածին», 1981, № 8: Պետրոսյան Ե., Հայրաբանություն, մաս 1, Էջմիածին, 1996, էջ 116–130: Nautin P., Biographie de Clément d'Alex., "Lettres et écrivains chrétiens des II et III siecles", P., 1961; Quasten J., Patrology, v. II Utrecht (Antwerp), 1966.

ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ Բաբկեն, Բաբկեն Ա (ավազանի անունը՝ Հարություն, 23.3.1868, Այնթապ – 9.7.1936, Անթիլիաս, թաղված է Հալեպի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցու գավթում, 1966-ին աճյունը տեղափոխվել է Անթիլիասի կաթողիկոսարանի Զարեհյան դամբարան): Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս 1928-ից (օծվել է 1931-ի ապրիլի 15-ին), պատմաբան, բանասեր, ձեռագրագետ, մշակութային գործիչ: 1885–89-ին ուսանել է Այնթապի Վարդանյան վարժարանում, 1889–1896-ին՝ Արմաշի դպրեվանքում, աշակերտել Մ. *Օրմանյանին*, Ե. *Դուրյանին*: 1895-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա, 1896-ին՝ վարդապետ, 1897-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան, 1910-ին Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս, 1931-ին՝ արժանացել արքության պատվի ու տիտղոսի: 1896–1906-ին Կ. քարոզչ. գործունեություն է ծավալել Կ. Պոլսի, Մուշի, Տրապիզոնի, Մարաշի հայկ. եկեղեցիներում և համայնքներում: 1897–99-ին եղել է Ճանիկի (Սամսուն) առաջնորդական

տեղապահ, ապա՝ Տարոնի ընդհանուր վանահայր և առաջնորդական տեղապահ: Զորավար Անդրանիկի հետ մտերմություն ունենալու կասկածով 1900-ի վերջին, երբ ընտրվել էր Տրապիզոնի հայոց առաջնորդ, ձերբակալվել է Մուշում, ազատվել Մ. Օրմանյանի ջանքերով: Հարկադրաբար վերադարձել է Կ. Պոլիս, նշանակվել Բերայի և Ղալաթիայի եկեղեցիների քարոզիչ, միաժամանակ՝ Կ. Պոլսի Ազգ. մատենադարանի մատենադարանապետ, դրաբար դասավանդել Կեդրոն. և Պերպերյան վարժարաններում: 1907–1909-ին եղել է Արմաշի դպրեվանքի փոխվանահայր և վերատեսուչ, 1909–13-ին՝ Գաղատիայի հայոց առաջնորդ, 1924-ից դասավանդել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, 1930-ին Անթիլիասում բացել դպրեվանք, ապա նվիրվել կաթողիկոսարանի աշխատանքներին. հիմնել է տպարան, գրադարան, դանձատուն-թանգարան, մանկապարտեզ-նախակրթարան, քահանայից դասընթացներ, կիրակնօրյա դպրոցներ: Կ-ի նախաձեռնությամբ 1931-ին Բեյրութում հիմնվել է Հայ երիտասարդաց ընկերակցությունը: Պարբերաբար այցելելով Կիլիկիո կաթողիկոսության թեմեր՝ Կ. կազմակերպել և կարգավորել է նորահաստատ հայկ. գաղութների կյանքը: 1905–06-ին խմբագրել է Կ. Պոլսի «*Լույս*» եկեղեց. շաբաթաթերթը, 1922-ին Ա. Նազարյանի հետ Բոստոնում՝ «Տավրոս» ամսագիրը, 1927-ին ձեռնարկել է «*Սիոնի*» վերահրատարակումը, 1932-ից հրատարակել և խմբագրել «*Հասկ*» հանդեսը: Աշխատակցել է «Բյուզանդիոն», «Բյուրակն», «Արարատ», «Արևելք», «Լուսա», «Արևելյան մամուլ», «Դաշինք», «Հանդես ամսօրյա» պարբերականներին:

Կ. հեղինակ է Հայ եկեղեցու և գաղթավայրերի պատմությանը, պատմ., բանասիր-ազգագր., կրոնաաստվածաբան. հարցերին վերաբերող աշխատությունների, կազմել է կրոնագիտության և ծիսագիտության ձեռնարկներ ու դասագրքեր, ձեռագրացուցակներ:

Կ., դեռևս ուսանող, հաճախ է հանդես եկել Հայ եկեղեցու բարեփոխումների թեմայով: «Քննական ուսումնասիրություն մը Եղիշե պատմիչի մասին» իր վարդապետական ավարտաճառում անդրադարձել է V դ. Հայ եկեղեցուն, նրա հիմն. առանձնահատկություններին և հանգել այն եզրակացության, որ հարկավոր է վերադառնալ եկեղեցու գործունեության նախն. պարզ ձևերին: Աշխատությունը հրատարակվել է երկու անգամ. 1909-ին՝ «Եղիշե. քննական ուսումնասիրություն» և 1912-ին՝ «Հայաստանեայց եկեղեցին Ե դարու մէջ» վերնագրերով: Երկրորդ հրատարակությանը որպես հավելված կցել է բարենորոգչ. իր առաջարկները: Հայ եկեղեցու բարեփոխումների խնդրին Կ. անդրադարձել է նաև «Հայ եկեղեցի» (1932), «Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ» (1940) աշխատություններում, հանդես եկել բազմաթիվ հոդվածներով: Նրա տեսակետները չեն առնչվել եկեղեցու ուսմունքի ու դավան. հիմնադրույթների հետ: Ըստ Կ-ի՝ դավանանքը չպետք է էական փոփոխությունների ենթարկվի բարեփոխումների ընթացքում: Դավանանքն անհրաժեշտ է ոչ միայն «ուղղափառությունը պահպանելու, այլ նաև ժողովրդեան առաջնորդելու համար»: Բարենորոգման ենթակա են դպրոցները, հոգևորականների կրթության գործը, ժամերգություններն ու արարողությունները, եկեղեց. իրավունքը: Կ. առաջարկել է, հավատարիմ մնալով Հայ առաքելական եկեղեցու նվիրագործված ավանդույթներին, իրականացնել ժամանակի պահանջներին համապատասխանող կանոնական, կազմակերպ. ու ծիսաարարողակարգային բարեփոխումներ՝ մշտապես ելակետ ունենալով եկեղեցու և հավատի շարունակական զարգացումը, այն է՝ նրանց կենսունակության հարատևման սկզբունքը:

Երկ. Ժողովուրդին Տօնացոյցը, ԿՊ, 1901: Քարոզներ, ԿՊ, 1904: Ծովք, Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կլայ, Վնն., 1904: Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վնն., 1930: Հայ եկեղեցի, Երուսաղեմ, 1930: Դասեր Աւետարանէն, Ա, Բ շարք, Անթիլիաս, 1934–36: Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939: Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957: Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961: Քրիստոնէական..., Անթիլիաս, 1971: Վարդապետութեան ատիճանները հայ եկեղեցւոյ մէջ, Անթիլիաս, 1980: Հայ եկեղեցւոյ եօթը խորհուրդները, Անթիլիաս, 1988:

Գրկ. Ակինյան Ն., Բաբկեն Ա Կաթողիկոս Տանն Կիլիկիո, ՀԱ, 1936, № 7: Եղիայան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, 1975: Ղազարյան Խ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999:

ԿՅՈՒՐԵՂ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ, սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացի (375, Ալեքսանդրիա – 444, Ալեքսանդրիա), *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից,

Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*), *Ալեքսանդրիայի* պատրիարք (412-ից): Կրթությունն ստացել է Ալեքսանդրիայի աստվածաբան. դպրոցում, մորեղբոր՝ Ալեքսանդրիայի պատրիարք Թեոփիլոս Ալեքսանդրացու (384–412) հովանու ներքո, ուսումնասիրել եկեղեցու հայրերի ժառանգությունը, ծանոթացել հեթանոս հեղինակների գրվածքներին: 403-ին Թեոփիլոս Ալեքսանդրացու հետ մասնակցել է արքունիքի դեմ արտասանած քարոզների համար *Հովհան Ոսկեբերանին* դատապարտած եկեղեցաժողովին: Մորեղբոր մահից հետո ընտրվելով Ալեքսանդրիայի պատրիարք՝ պայքարել է Կ. Պոլսի աթոռի դեմ, փակել հերետիկոս նովատյանների եկեղեցիները, բռնագրավել հրեաների գույքը՝ հօգուտ եկեղեցու, հանդես եկել հեթանոս. մշակույթի մնացուկների դեմ: 429-ին Զատկի կապակցությամբ Ալեքսանդրիա այցելած Եգիպտոսի վանականները Կ. Ա-ուն իրազեկ են դարձրել Կ. Պոլսի պատրիարք Նեստորի ուսմունքին, ըստ որի՝ Տիրամայրը Աստվածածին չէ, այլ սոսկ Քրիստոսածին (տես *Նեստորականություն*): Կ. Ա. Նեստորի ուսմունքը հերքել է 429-ի զատկական «Առ Նեստոր» նամակում և ապա՝ եգիպտ. վանականներին հղած «Առ Սեկունդոս» առաջին թղթում՝ «Եթե Քրիստոս Աստված է՝ ինչպե՞ս կարող է Տիրամայրը Աստվածածին չլինել» հարցադրումով: 430-ին Կ. Ա. ևս մի նամակ է հղել Նեստորին, միաժամանակ երեք նամակ՝ Թեոդոսիոս II կայսրին, նրա երեք քույրերին և կայսրուհուն՝ մանրամասն շարադրելով Քրիստոսի աստվածության և Բանի Մարդեղության խորհրդի ուղղափառ հիմնադրույթը: 430-ին Կ. Ա. Ալեքսանդրիայում ժողով է գումարել, որտեղ դատապարտել է Նեստորին՝ ժողովի թղթին կցելով իր նշանավոր 12 նզովքները: Դրանք հետագայում Ընդհանրական եկեղեցին ընդունել է որպես ուղղափառ վարդապետության բանաձևեր:

Դավան. տարաձայնություններին վերջ տալու համար Թեոդոսիոս կայսրի հրամանով 431-ին գումարվել է *Եփեսոսի Գ տիեզերական ժողովը*, որը նախագահել է Կ. Ա.: Անգիջում, երկարատև պայքարից հետո նա կարողացել է հիմնավորապես հերքել Նեստորի քրիստոսաբան. հերձվածը: Ժողովը բանադրել է Նեստորին և դատապարտել նրա վարդապետությունը:

Կ. Ա. Ընդհանրական եկեղեցու ամենաակնառու և բեղմնավոր հեղինակներից է: Թողել է մեկնող., ջատագով., դավան-հակաճառ., բարոյախրատ. հարուստ ժառանգություն: Նրա աստվածաբան. ժառանգությունը կանոնական հեղինակություն է վայելել արևելաքրիստ. եկեղեցում ընդհանրապես, Հայ եկեղեցում՝ մասնավորապես: Կ. Ա-ու աստվածաբանության հիմքում ընկած է Մարդեղության և Փրկագործության գաղափարը: Նրա դավան. գործերում արծարծվել են Քրիստոսի բնությունների, Աստվածության, մարմնի անապականության, Մարիամին Աստվածածին համարելու, Ս. Երրորդության հարցերը, որոնք իր ժամանակի քրիստոսաբան., աստվածաբան. վեճերի նյութ են դարձել: Կ. Ա. շարունակել է *Աթանաս Ալեքսանդրացու*, ընդհանրապես Ալեքսանդրիայի դպրոցի աստվածաբանությունը, պայքարել *Անտիոքի* դպրոցի ներկայացուցիչների դեմ:

Կ. Ա. իր դավան-հակաճառ. աշխատությունները գրել է Արիոսի (տես *Արիոսականություն*) և, հիմնականում, Նեստորի ուսմունքի դեմ: Դավան. փայլուն երկասիրություններից է «Սուրբ Երրորդության մասին» գործը, որը հայտնի է «Գիրք դանձուց» անվամբ: Երկը գրված է Արիոսի և Եվնոմիոսի հերձվածող. գաղափարների դեմ: Աչքի է ընկնում խոսքի պարզությամբ և ապացույցների տրամաբան. հիմնավորվածությամբ: Նեստորի դեմ գրած երկերից ամենաընդարձակը 5 գրքից բաղկացած «Ընդդէմ Նեստորի» աշխատությունն է: «Յաղագս սուրբ կրօնից քրիստոնէից ընդդէմ գրոց ամբարիշտ Յուլիանոսին» (441) աշխատությունը գրված է հռոմ. կայսր Հուլիանոս Ուրացողի (361–363) դեմ, որը հալածել է քրիստոնեությունը և փորձել հեթանոս. կրոնը դարձնել պետական: Կ. Ա-ու այս գործը համարվում է քրիստոնեության հնագույն և ամենաուժեղ հակաճառությունը հեթանոսության դեմ:

Կ. Ա-ու մատենագր. վաստակի մեջ կարևոր և ծավալուն տեղ են գրավում մեկնող. աշխատությունները, որոնք կրում են Ալեքսանդրիայի դպրոցի այլաբանական-խորհրդապաշտական մեկնաբան. մեթոդի ազդեցությունը: Հին կտակարանից մեկնել է Հնգամատյանի որոշ հատվածներ (17 մեկնություն), Ծննդոց (7 մեկնություն), Ելք (3 մեկնություն), Ղևտացիների, Թվերի, Երկրորդ օրինաց (մեկական)

գրքերը, Եսայու մարգարեության և տասներկու փոքր մարգարեների գրքերը, Նոր կտակարանից՝ Հովհաննեսի Ավետարանը (429-ին, աստվածաբան-վիճաբան. բովանդակությամբ), Ղուկասի Ավետարանը (430-ին, քարոզչ., բարոյախոս-գործն. բնույթի), Մատթեոսի Ավետարանը (428-ին, մեկնող. բնույթի), Պողոս առաքյալի «Առ Հռոմայեցիս», «Առ Կորնթացիս» Ա և Բ, «Առ Եբրայեցիս» թղթերը:

Կ. Ա. հեղինակել է նաև բազում ճառեր, ներբողյաններ, գանձեր, քարոզներ, աղոթքներ, թղթեր, կանոններ, ինչպես նաև՝ 30 Զատկական նամակներ՝ հովվական բնույթի և դավան-եկեղեցագիտ. բովանդակությամբ:

Կ. Ա-ու երկերը հայացվել են V–VIII դդ.: Մի շարք գործեր պահպանվել են միայն հայերեն թարգմանություններով: 714–715-ին Դավիթ Հյուպատոսի և *Ստեփանոս Սյունեցու* ջանքերով թարգմանվել է «Գիրք պարապմանցը», որի 44 ճառերի վերաբերյալ *Գրիգոր Տաթևացին* գրել է «Լուծմունք ի պարապմունս սրբոյն Կիւրղի» ընդարձակ և հմտալից մեկնությունը (տպագրվել է «Գիրք պարապմանցի» հետ): «Գիրք պարապմանցը» և «Գիրք գանձուցը» իբրև դավան. կարևորագույն ձեռնարկներ մեկնաբանվել ու դասավանդվել են հայ միջնադարյան վարդապետարաններում, բարձրագույն դպրոցներում: Կ. Ա-ու աշխատություններից հատվածներ կամ ամբողջական գործեր են տպագրվել «*Գիրք թղթոց*» և «*Կնիք հավատո*» ժողովածուներում:

Կ. Ա-ու աստվածաբանությունը երեք *տիեզերական ժողովների* դավան. որոշումների կուռ ամբողջացումն է, ուստի և Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը համերաշխ է Կ. Ա-ու վարդապետությանը: Հայ դավանաբան. մատենագրության մեջ լայնորեն կիրառվող «Քրիստոս յերկուց բնութեանց միացեալ» արտահայտությունը Աթանաս Ալեքսանդրացու ընդունած և Կ. Ա-ու կանոնակարգած «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ» կամ «Յերկուց բնութեանց մի» բանաձևի բյուրեղացումն է: Հայ եկեղեցին, ընդունելով Կ. Ա-ու քրիստոսաբանությունը, նրա ոգով և դավան. սկզբունքներով է պարզաբանել դավան. նոր խնդիրները, մերժել այն ամենը, ինչը չեղվել է նրանից: Հայ դավանաբանները Կ. Ա-ու գրվածքներն օգտագործել են իրենց հակաճառությունների մեջ՝ Հայ եկեղեցու ուղղափառությունը պաշտպանելիս:

Հայ եկեղեցին ս. Կ. Ա-ու հիշատակը տոնում է տարին 2 անգամ. Ս. Ծննդյան երրորդ կամ երկրորդ կիրակիի նախորդ շաբաթ օրը և հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Երկ. Գիրք պարապմանց, ԿՊ, 1717:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 503–524: Գաթերճյան Հ., Սրբազան պատարագամատոյցք հայոց, Վնն.,1897: Կնիք հաւատոյ..., աշխատասիր. Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914, էջ 51, 126, 128, 156, 170–241, 279–280: Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, Ե., 1998, էջ 47–49: Migne J. P., PG, t. 68–77, P., 1857–66; Geerard M., Clavis patrum Graecorum, v. 3, Brépols-Turnhout, 1979, p. 1–57; Quasten J., Patrology, v. 3, Utrecht, 1966.

Հակոբ Քյոսեյան

ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ, սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի (315–386), *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*), Երուսաղեմի պատրիարք (348-ից): Կրթությունն ստացել է Երուսաղեմի, ապա՝ Պաղեստինյան Կեսարիայի բարձրագույն քրիստ. դպրոցներում, հանգամանորեն ուսումնասիրել *Որոգինեսի* մեկնող. աշխատությունները և աստվածաբան. տեսությունները: 335-ին Երուսաղեմի հայրապետ Մաքսիմոս Բ Խոստովանողից (333–348) ձեռնադրվել է քահանա և նշանակվել նրա օգնական ու փոխանորդ: Ամեն տարի Զատկի տոնին աշխարհի տարբեր կողմերից Երուսաղեմ ուխտի եկած նորադարձ քրիստոնյաների հոգևոր կրթության և դաստիարակության համար Կ. Ե. նշանակվել է ուսուցանող վարդապետ և «գլուխ քարոզչաց», հանդես եկել դասախոսություններով և քարոզներով:

Ընտրվելով Երուսաղեմի պատրիարք՝ Կ. Ե. պայքարել է արիոսականների դեմ (տես *Արիոսականություն*): Վերջիններս Պաղեստինյան Կեսարիայի արիոսական մետրոպոլիտ Ակակիոսի գլխավորությամբ և հռոմ. արիոսական կայսրերի հովանավորությամբ հալածանքներ են սկսել ուղղափառ եպիսկոպոսների ու հոգևորականների, այդ թվում՝ Կ. Ե-ու դեմ, ինչի պատճառով նա երեք անգամ աթոռազրկվել և աքսորվել է: Կ. Ե. գործուն մաս-

նակցություն է ունեցել 381-ի *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովին*:

Կ. Ե-ու մատենագր. ժառանգության մեջ կարևորագույնը «Կոչումն ընծայութեան» կամ «Յաղագս երախայից» երկասիրությունն է: Հայերեն է թարգմանվել V դ., իսկ հայերեն առաջին անգամ տպագրվել 1727-ին, Կ. Պոլսում: «Կոչումն ընծայութեան»-ը 24 ճառերի կամ քարոզների (հայերեն թարգմանությունը, որ ամենայն հավանականությամբ կատարվել է աստորերենից, պարունակում է 18 ճառ) ժողովածու է, որը հոգևոր դիտելիքների և քրիստ. հավատի յուրօրինակ հանրագիտարան է եղել նորադարձ քրիստոնյաների համար: Կ. Ե. այդ քարոզներն արտասանել է 347–348-ին, երբ դեռ քարոզիչ քահանա էր Երուսաղեմի Ս. Հարություն տաճարում, և դրանք ունեցել են ուսուցող-դաստիարակչ. նշանակություն չմկրտված («երախա») նորադարձ քրիստոնյաներին մկրտության պատրաստելու համար: Ժողովածուն բաժանվում է երկու խմբի. առաջինը քրիստ. վարդապետության սկզբունքների բացատրությանը կամ մեկնությանը նվիրված նախապատրաստական 19 քարոզներն են՝ ուղղված Զատկի *Ճրագալույցին* մկրտություն ընդունողներին, իսկ երկրորդը՝ 5 քարոզներ են՝ նվիրված Մկրտության, Դրոշմի, Հաղորդության խորհուրդների կատարման կարգին և ս. *Պատարագի* արարողությանը: Կ. Ե-ու «Կոչումն ընծայութեան»-ը բազմիցս վկայակոչվել է հայ դավանաբան. գրականության մեջ, հիշատակվել դեռևս *Ղազար Փարպեցու, Հովհաննես Բ Գաբեղենցու, Անանիա Շիրակացու* երկերում:

Կ. Ե-ու հայրապետության օրոք, 351-ի մայիսի 7-ին Երուսաղեմում տեղի է ունեցել Քրիստոսի Խաչի երևումը երկնքում: Այդ առթիվ նա բյուզ. Կոստանցիոս I կայսրին (337–361) գրել է իր հայտնի թուղթը՝ «Թուղթ Կիւրղի եպիսկոպոսի Երուսաղէմայ առ Կոստանդեայ թագաւորն վասն երևելոց սուրբ Խաչին յերկնից»: Հայերեն թարգմանվել է V դ., առաջին անգամ տպագրվել «Կոչումն ընծայութեան» երկի հետ (1727, էջ 197–201): Հայ եկեղեցում Կ. Ե-ու այդ թուղթը կարդացվում է ս. Խաչի երևման տոնին (տես *Խաչի տոներ* հոդվածում): Հայկ. ձեռագրերում կան Կ. Ե-ուն վերագրվող երկբայելի բազմաթիվ ճառեր, ներբողյաններ, թղթեր:

Հայ եկեղեցին ս. Կ. Ե-ու հիշատակը տոնում է տարին երկու անգամ. *Մեծ պահքի* երրորդ կիրակիի նախորդ շաբաթ օրը և հոկտեմբերի վերջին՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.8, 3-րդ պատկերը:

Երկ. Կոչումն ընծայութեան, Վնն., 1832:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 524–529: Գուշակյան Թ., Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1939: Քոլանջյան Ս., Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից, ԲՄ, № 5, 1960: Հատիտյան Ա., Սուրբ Կյուրեղ հայրապետ Երուսաղեմացի, «Էջմիածին», 1978, № 5, 6:

«ԿՆԻՔ ՀԱՎԱՏՈ», «Կնիք հաւատոյ», դավանական ժողովածու: Կազմվել է Հայոց կաթողիկոս *Կոմիտաս Ա Աղցեցու* օրոք, հույն աստվածաբան *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն...» երկի նմանությամբ: Ենթադրվում է, որ ժողովածուն կազմել և խմբագրել է ժամանակի հայ նշանավոր աստվածաբան *Հովհան Մայրավանեցին*: «Կ. Հ.» ունի հակաքաղկեդոն., հականեստոր. բովանդակություն: Նպատակն էր պաշտպանել Հայ եկեղեցու *ուղղափառությունը*, դավան. սկզբունքները, հերքել աղանդավոր. վարդապետությունները, ամրապնդել Հայ եկեղեցու դիրքերը VI դ. վերջին – VII դ. սկզբին սրված դավան. պայքարում, հատկապես քաղկեդոնականների (տես *Քաղկեդոնականություն*) և նեստորականների (տես *Նեստորականություն*) ոտնձգություններից: Խորագիրը պայմանավորված է հերձվածները մերժելու և Հայ եկեղեցու դավանությունը ուղղափառության մեծագույն հեղինակությունների վկայակոչումներով հաստատելու (կնիք) թելադրությամբ: Նյութերը խմբավորված են 10 գլուխներում, որոնք «Բան» են կոչվում: Դրանցից յուրաքանչյուրը նվիրված է դավան. մի խնդրի՝ *Երրորդությանը*, Մարդեղությանը, Փրկագործությանը, *անապականությանը* ևն: Ի պաշտպանություն Հայ եկեղեցու դավանանքի՝ «Կ. Հ.»-ում որոշակի սկզբունքով վկայություններ են բերված *Ընդհանրական եկեղեցու*, այդ թվում Հայ եկեղեցու սուրբ հայրերի ու վարդապետների (Գրիգոր Ա Լուսավորիչ, Սահակ Ա Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Եղնիկ Կողբացի, Հովհաննես Ա Մանդակունի, Հովհան Մայրավանեցի, Դիոնիսիոս Աթենացի, Իրենիոս Լուգդունացի, Գրիգոր Սքանչելագործ, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրի-

ԿՈՄԻՏԱՍ դոր Նյուսացի, Աթանաս Ալեքսանդրացի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Հովհան Ոսկեբերան, Եփրեմ Ասորի և այլք) երկերից:

«Կ. հ.» կարևոր դեր է խաղացել Հայ եկեղեցու և հայ ժողովրդի ազգ. ինքնուրույնության համար մղված պայքարում: Բացի բուն հավատի խնդրից բացառիկ արժեք ունի նաև հայ թարգման. մատենագրության պատմության համար: Բնագիրը գիտությանը հայտնի է XIV–XV դդ. մեկ ընդօրինակմամբ, որը 1911-ին Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքում հայտնաբերել և 1914-ին ընդարձակ ներածականով հրատարակել է Կ. եպս. *Տեր-Մկրտչյանը*:

Գրկ. Կնիք հաւատոյ..., հրտ. Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914: Տեր-Մինասյան Ե., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971:

ԿՈՄԻՏԱՍ, Կոմիտաս վարդապետ [Սողոմոնյան Սողոմոն Գևորգի, 26.9(8.10).1869, Քյոթահիա (Կուտինա, Թուրքիա) – 22.10.1935, Փարիզ, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], կոմպոզիտոր, երաժշտագետ, երգիչ և խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր: 1881-ին Քյոթահիայի առաջնորդական փոխանորդ Գևորգ վրդ. Դերձակյանը որբացած պատանուն բերել է Էջմիածին և ուսման տվել *Գևորգյան ճեմարանում*, որտեղ գեղեցիկ ձայնի և երաժշտ. ցայտուն ունակությունների համար հատուկ ուշադրություն է դարձվել նրա երաժշտ. դաստիարակությանը: Վաղ հասակում, Սահակ Ամատունու ղեկավարությամբ հիմնովին ուսումնասիրել է եկեղեց. երաժշտության տեսական ու գործնական հիմունքները, հայկ. նոտագրությունը, հեղինակավոր աղբյուրներից գրի առել հնագույն հոգևոր եղանակներ: Միաժամանակ սկսել է ժող. երգեր հավաքել, ուսումնասիրել և ստեղծագործ. փորձեր կատարել: 1893-ին ավարտելով ճեմարանը՝ նշանակվել է երաժշտության ուսուցիչ և Մայր տաճարում խմբավար: 1894-ին ձեռնադրվել է աբեղա, 1895-ին դարձել է վարդապետ և ստացել Կոմիտաս անունը (ի պատիվ *Կոմիտաս Ա. Աղցեցի* կաթողիկոսի): Նույն տարվա աշնանը Թիֆլիսում ուսանել է Մ. *Եկմալյանի* մոտ, 1896–99-ին ուսումը շարունակել և ավարտել է Բեռլինում՝ Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և Արքունական համալսարանում:

Կոմիտաս

Կ. Միջազգ-երաժշտ. ընկերության (ՄԵԸ) հիմնադիր անդամներից է, ընկերության հավաքներում հանդես է եկել հայ երաժշտության մասին զեկուցումներով, ներկայացրել ժող. երգեր և դրանց սեփական մշակումները: Վերադառնալով Էջմիածին՝ 1899-ից շարունակել է գիտ., ստեղծագործ., մանկավարժ. աշխատանքը, ճեմարանի քառաձայն երգչախմբով համերգներ տվել Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում և Բաքվում: Մեծ հաջողությամբ 1906-ին Փարիզում ներկայացրել է (Ֆրանսիայի «Լամուրյո» համերգային ընկերության երգչախմբով) հայ ժող. և հոգևոր երգերի իր մշակումները: 1907-ին Ռ. Ռոլանի հրավերով Սոցիալական գիտությունների բարձրագույն դպրոցում դասախոսություններ է կարդացել հայ երաժշտության վերաբերյալ: Փարիզում տպագրվել է Կ-ի 12 երգերից կազմված ստեղծագործությունների առաջին ժողովածուն (1907): Կ. համերգներ է տվել նաև Շվեյցարիայում (Ցյուրիխ, Ժնև, Լոզան), դասախոսել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում: 1910-ին Էջմիածնի վանական միջավայրն իր գործունեության համար նեղ նկատելով՝ տեղափոխվել և մշտական բնակություն է հաստատել Կ. Պոլսում: Այստեղ կազմել է 300 հոգուց բաղկացած «Գուսան» (1912-ից՝ «Հայ գուսան») բազմաձայն երգչախումբը, բազմաթիվ համերգներ տվել Կ. Պոլսում, Ադաբազարում, Պարտիզակում, Ալեքսանդրիայում, Կահիրեում և այլուր:

Մամուլում նշվել է Կ-ի արվեստի նշանակությունը ոչ միայն հայերի, այլև Արևելքի այլ ժողովուրդների երաժշտության զարգացման համար: 1913-ին Կ. Պոլսի «Ազատամարտ»-ում տպագրվել է «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հրապարակախոս. բնույթի փայլուն հոդվածը: 1914-ին Փարիզում Կ. հայկ. ժող. և հոգևոր երաժշտությանը նվիրված մի քանի զեկուցումներ է կարդացել ՄԵԸ կոնգրեսում, արժանացել Եվրոպայի առաջատար երաժշտագետների բարձր գնահատանքին:

Կ. մասնակցել է նաև թուրք. մշակութ. կյանքին, Ստամբուլի Բայազետ թաղի «Թուրք օջախ» մշակութ. կենտրոնի հատուկ հրավերով դասախոսել է 1915-ի ապրիլի 2-ի և 3-ի բացառիկ երեկույթներին, մեներգել և իր երգչախմբով կատարել իր իսկ ստեղծագործությունները, որոնք մեծ ընդունելություն են գտել: 1915-ի ապրիլի 24-ին թուրք. կառավարության կազմակերպած հայկ. կոտորածն ընդհատել է Կ-ի բեղմնավոր գործունեությունը: Եղեռնի սարսափներն ապրելով և անձամբ կրելով աքսորի մղձավանջը՝ նա կորցրել է մտավոր հավասարակշռությունը և մինչև կյանքի վերջը (Փարիզի հոգեբուժ. հիվանդանոցներում) չի ապաքինվել: Հիվանդության առաջին տարիներին զգալի տուժել է նաև նրա ձեռագիր ազգագր. և գիտ. ժառանգությունը:

Կ-ի բազմակողմանի գործունեության մեջ առավել կարևորը ստեղծագործությունն է և հավաքչական ու գիտ. աշխատանքը: Ժող. երգերը նա գրառել է գեղջկ. կենցաղի ընդերքում, ժողովրդի պատմության ու հոգեբանության խոր իմացությամբ, ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի վերլուծ. մոտեցումով: Դրանք բազմաժանր են, հիմնովին երևան են բերում հայ ազգային ոճն ու լեզուն, արտահայտչամիջոցների բազմազանությունն ու ինքնատիպությունը: Կ-ի՝ երաժշտ. ֆոլկլորի մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը (հորովելների եղանակները, «Սասունցի Դավիթ» և «Մոկաց Միրզա» հնագույն վիպերգերը, միջնադարյան անտունիները, հոգևոր տաղերը) դիտվում է որպես պատմամշակութ. խոշոր հայտնագործություն: Կ-ի հավաքած հայ գեղջկ. երգերն ամբողջությամբ ներկայացնում են հայ ժող. երգարվեստի անթոլոգիա: Նույնքան նշանակալից են Կ-ի ձայնագրած հայ հոգևոր երգարվեստի նմուշները, որտեղ նա հանդես է եկել որպես հայ *հոգևոր երաժշտության* առանձնահատկությունների խոր գիտակ՝ իր ձայնագրություններում երևան հանելով հազվագյուտ և մեղեդիական գեղեցկության առումով ինքնատիպ կոթողներ: Ուշագրավ են Գրիգոր Նարեկացու «Հավիկ», «Հավուն-հավուն», «Սայլն այն ի-ջանէր», «Ահեղ ձայնս», Ներսես Շնորհալու «Ստեղծող մանկանց», «Աշխարհ ամենայն», Գրիգոր Գ Պահլավունու «Ով զարմանալի», Հովհաննես Երզնկացու «Այսօր ձայնն հայրական», Մխիթար Այրիվանեցու «Սիրտ իմ սասանի» տաղերի, ինչպես նաև *շարականների* և *Պատարագի* երգասացությունների ձայնագրությունները (հիմնականում ամփոփված են 1892-ին՝ Կուտինայում, 1893-ին Էջմիածնում կազմված և 1946-ին Փարիզում լույս տեսած «Տաղք և աղերք Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ» ժողովածուներում): Այս նմուշների մի մասը Կ. հետագայում նաև դաշնավորել է:

Կ. իր տեսական աշխատություններով փաստորեն դրել է հայ երաժշտ. ֆոլկլորագիտության և միջնադարագիտության հիմքերը՝ կարևոր տեղ հատկացնելով ինչպես գեղջկ. երգի, այնպես էլ հոգևոր երաժշտության քննությանը: Նա նկարագրել է ժող. երգաստեղծագործության բուն զարգացումը, վերլուծել հայ ժող. երգի տեսակներն ու հորինվածքային հատկանիշները: Հոգևոր երաժշտությանը նվիրված ուսումնասիրություններում անդրադարձել է հոգևոր երգարվեստի կազմավորմանն ու պատմ. զարգացման պարբերացմանը, ժանրերին, հայ եկեղեց. ձայնեղանակների տեսությանը, *մանրուսման* արվեստին և խազաբանության հարցերին: Սկզբունքորեն կարևոր է նաև Կ-ի կողմից ժող. և հոգևոր երաժշտության հիմքերի միասնության բացահայտումը:

Կ-ի ստեղծագործությունը, որը գլխավորապես մեներգային և խմբերգային է, ամբողջովին սերում է ժող. կամ հոգևոր երգարվեստի սկզբնաղբյուրներից: Դրանք քնար. սրտառուչ պատումներ են («Գարուն ա», «Քելեր, ցոլեր» ևն), երկրագործ. աշխատանքը փառաբանող հիմներ («Լոռու գութաներգ», «Կալերգ և սայլերգեր» ևն), սոց. կեցություն դրսևորող երգ-մենախոսություններ («Ծիրանի ծառ», «Անտունի» ևն), հայրենի բնությունը կամ ավանդ. ծեսերը գեղարվեստորեն վերարտադրող ծավալուն տեսարաններ («Լուսնակն անուշ», «Արարատյան գիշեր», Հարսանեկան, պարերգային և այլ շարերը): Կոմպոզիտորը դիմել է նաև այլ ժանրերի, եզակի են նրա «Դաշնամուրային պարերը», որտեղ կիրառված են տվյալ դարաշրջանի համաչխ. երաժշտության համար նոր և խիստ ինքնատիպ միջոցներ ու հնարներ:

Պահպանվել են նաև Կ-ի՝ Հ. Պարոնյանի խոսքերով «Քաղաքավարության վնասներ» կատակերգության, Հ. Թումանյանի խոսքերով «Անուշ» պոեմի և «Սասնա ծռեր» էպոսի հիման վրա գրված առանձին երաժշտ. հատվածներ, օպերային էսքիզներ ևն:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Կ-ի հոգևոր գործերը՝ բազմաթիվ տարբերակներով, և հատկապես արական խմբի համար գրված վեհաշունչ «Պատարագը», որն ըստ էության ազգ. մասնագիտացված երաժշտության կանտատային-օրատորիալ ժանրին պատկանող առաջին դասական նմուշներից է: Դրանց մեջ ցայտուն դրսևորվել է հոգևոր նյութի նկատմամբ ստեղծագործողի անհատականության զորեղ ներգործությունը, ներդաշնակության և մասնավորապես պոլիֆոնիայի մեջ մշակված ազգ. երաժշտության և իր ժամանակի եվրոպ. երաժշտագրության արտահայտչամիջոցների յուրօրինակ համադրումը: Կ-ի ստեղծագործությունն ու կոմպոզիտոր. մեթոդը լայն հեռանկարներ են բացել ազգ. երաժշտ. արվեստի զարգացման համար՝ դնելով այն համաշխ. երաժշտության հունի մեջ, ինչպես նաև նկատելի ազդեցություն ունեցել արլ. այլ ժողովուրդների երաժշտության զարգացման գործում:

Կ-ի անունով են կոչվում Երևանի պետ. կոնսերվատորիան, կամերային երաժշտ. տունը, լարային քառյակ, պողոտա, զբոսայգի, Ստեփանակերտի երաժշտ. դպրոցը ևն: Կ-ի արձաններ են կանգնեցված Երևանում, Վաղարշապատում և այլուր:

Երկ. Երկ. ժող., հ. 1–10, Ե., 1969–2000:

Գրկ. Զոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1924: Հովսեփյան Գ., Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդությունը Եվրոպայում, «Արարատ», 1907, № 10–11: Ազատյան Թ., Կոմիտաս վարդապետ, ԿՊ, 1931: Պերպերյան Շ., Կոմիտաս վարդապետ, Բուխարեստ, 1936: Աթայան Ռ., Ժողովրդական երգի ներդաշնակման սկզբունքը Կոմիտասի մոտ, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1949, № 9: Շահվերդյան Ա., Ակնարկներ հայ երաժշտության պատմության, Ե., 1958: Յոլյան Ի., Կոմիտաս, Ե., 1969: Բրուտյան Ց., Կոմիտաս (կյանքն ու ստեղծագործությունը), Ե., 1969: Թերլեմեզյան Ռ., Կոմիտաս, Ե., 1992: Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչէն, աշխատասիր. Աբել վրդ. Օղլուգեանի, Մոնրեալ, 1994: Թահմիզյան Ն., Կոմիտասը եւ հայ ժողովուրդի երաժշտական ժառանգութիւնը, Փասադենա, 1994: Կոմիտաս (Մատենագիտություն), կազմ. Ն. Թեյմուրազյան, Ե., 1957:

Ռոբերտ Աթայան
Աննա Արևշատյան

ԿՈՄԻՏԱՍ Ա ԱՂՑԵՑԻ, Շինող [ծ. թ. անհտ, գ. Աղցք (Արագածոտն գավառ) – 628, Դվին], Ամենայն Հայոց կաթողիկոս 613-ից: Հաջորդել է *Աբրահամ Ա Աղբաթանեցուն*: Եղել է Տարոնի եպիսկոպոսը: Մասնակցել է Տիզբոնում *Պարսից ժողովին*, որտեղից վերադարձել է որպես կաթողիկոս: Ժողովին ներկայացրել է Հայ եկեղեցու Հավատո գիրը կամ դավանության թուղթը, որտեղ դատապարտել է *Քաղկեդոնի ժողովը*, ինչպես նաև *Նեստորականությունը*: Եռանդուն մասնակցություն է ունեցել ժամանակի դավանաբան. վեճերին, պաշտպանել Հայ եկեղեցու դավան. սկզբունքները քաղկեդոնականների և նեստորականների ոտնձգություններից: Մասնակցել է հույն աստվածաբան *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն ընդդեմ Քաղկեդոնի ժողովի» հակաքաղկեդոնական, հականեստորական երկի նմանությամբ «*Կնիք հավատո*» դավանաբան. ժողովածուի կազմմանը: Կ. Ա Ա. ծավալել է շին. և հոգևոր-մշակութ. մեծ գործունեություն, որի համար ստացել է Շինող մականունը: Ավարտին է հասցրել դեռևս 608-ին սկսված Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու շինարարությունը, Հոհանիկ վանահոր հսկողությամբ հիմնովին նորոգել Վաղարշապատի Ս. Էջմիածին Կաթողիկեն, 618-ին, Գրիգոր Լուսավորչի հիմնած նախկին Վկայարանի տեղում կառուցել տվել *Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքը*, հետամուտ եղել հոգևոր-կրթ. կենտրոնների (Այուդայց, Արշարունյաց, Դվինի կաթողիկոսարանի, Էջմիածնի վանքի, Մայրավանքի դպրոցներ, Շիրակի դպրեվանք ևն) զարգացմանը:

Կ. Ա Ա. նաև բանաստեղծ-երաժիշտ է, հայ շարականերգության նշանավոր ներկայացուցիչներից: Նրա ամենահայտնի ստեղծագործությունն է ս. Հռիփսիմյանց կույսերի հիշատակին նվիրված կանոնի օրհնությունը՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը, որտեղ ազգ. հիմքի վրա առաջին անգամ կիրառվել են բյուզ. կոնդակի տաղաչափ. և կառուցվածքային առանձնահատկությունները: Շարականը գրված է այբբենական ակրոստիքոսի ձևով և շեշտական տաղաչափությամբ: Վերջինս հազվագյուտ երևույթ է հայ հիմներգության մեջ: «Անձինք»-ը վարպետորեն չափված գրական խոսքի և մեղեդային մտածողության ինքնօրինակ դրսևորման շնորհիվ դարեր շարունակ չափանմուշ է եղել հետագա շարականագիրների համար: Այդուհետ այբբենական ծայրակապով հորինված շարականները ստացել են «Անձինք» անվանումը:

Կաթողիկոս. դահին Կ. Ա Ա-ուն հաջորդել է *Քրիստափոր Բ Ապահունին*:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Կնիք Հաւատոյ..., Էջմիածին, 1914: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Թահմիզյան Ն., Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, № 1:

Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան

ԿՈՆԴԱԿ (հուն. *κοντάκιον* – կոնդակիոն՝ գլանաձև ձող, գավազան, գալարված մագաղաթ, փաթույթ, նաև՝ համառոտ հոգևոր երգ, հորդորակ, մաղթանք), V–VII դդ. ուղղափառ եկեղեցիներում երգասացության հիմնական ժանրը: Հայ մատենագրության մեջ և եկեղեց. կիրառություններում նշանակում է կաթողիկոսական (երբեմն նաև առաջնորդ-եպիսկոպոսի) հիշատակագիր, գիր կամ թուղթ, նամակ, ուղերձ, շրջաբերական, կտակ: Իրենց գործունեության ընթացքում կաթողիկոսները հղել են բազում Կ-ներ՝ տարբեր բովանդակությամբ և մեծությամբ: Այսօր էլ Կ-ին գլանաձև փաթույթի տեսք են տալիս, ճակատը զարդարում մանրանկարներով և պարտադիր հայրապետական խորհրդանշանով: Կ-ներն ունենում են պատմ., քաղ., ազգ-եկեղեցական, դավան., իրավավարչական, մշակութ., կրթ., ինչպես նաև եկեղեցականներին բարձր պաշտոնների նշանակելու, նրանց գնահատելու, պատժելու և այլ բովանդակություններ: Կաթողիկոս. Կ-ները սկզբնաղբյուր են ազգ-եկեղեց. կարևոր հարցերը պատմ. որոշակի ժամանակաշրջանի մեջ ճշգրտելու գործում:

Պատկերազարդումը տես ներդիր VIII-ում, 8.8, 4-րդ պատկերը:

ԿՈՇԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔ, ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ գյուղից հյուսիս-արևելք, ձորալանջին: Վանքի եկեղեցին (VII դ.) կառուցված է դեղնակարմրավուն ու դարչնագույն սրբատաշ տուֆից և ունի խաչաձև գմբեթավոր հորինվածք, խորանի երկու կողմերում ավանդատներով ու միակ՝ հվ. մուտքով (գմբեթը չի պահպանվել): Եկեղեցուց արլ. մատուռի ավերակներն են, դեպի արմ.՝ XIII դ. խաչքարերով և փոքր մատուռով վանքի գերեզմանոցը: Համալիրի հս-արմ. կողմում կոպտատաշ բազալտից, կրաշաղախով շինված, ներսից սվաղած, թաղածածկ ջրամբարն է (4,8x13,5 մ ներսի չափերով, 2,85 մ բարձր.): Վանքը 981-ին որպես նվիրատվություն ստացել է հողատարածքներ, ջրաղաց, այգի, իսկ 1649-ին՝ այգի և ձիթհանք: Կ. Ս. Ս. վ. գործել է մինչև XVIII դ.: 1970–73-ին նորոգվել են եկեղեցու պատերը և ծածկերը:

Եկեղեցու ներսում պահպանվել են VII դ. որմնանկարների հատվածներ. խորանին «Քրիստոսը փառքի մեջ» հորինվածքն է, իսկ արլ. լուսամուտի երկու կողերին կրկնակի պատկերված է Քրիստոսը, որը տեքստով մագաղաթե գալարը մեկնում է իրեն մոտեցող առաքյալներին (երկու կողմից՝ վեցական): Դա «Տերը տալիս է օրենքը» պատկերագրության ինքնատիպ տարբերակն է՝ կատարված գծային-գրաֆիկական եղանակով, որը որմնանկարին հաղորդում է հարթապատկերային բնույթ:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.1, 1-ին պատկերը:

Գրկ. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1783: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Ե., 1982: *Котанджян Г., Цвет в раннесредневековой живописи Армении, Е., 1978; Дурново Л., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979.*

Մուրադ Հասրաթյան

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ, Բարձրաբերդցի, Մավուիանցի (1180-ական թթ., Բարձրբերդ – 1267, Հռոմկլա), Ամենայն հայոց կաթողիկոս 1221-ից: Հաջորդել է *Հովհաննես Զ Սսեցուն*: Սովորել է Մլիճի վանքում և Հռոմկլայի կաթողիկոսարանում, եղել Մլիճի (ենթադրաբար՝ նաև Բարձրբերդի) եպիսկոպոսը: Վարել է երկրի ամրապնդման ու հզորացման, Հայ եկեղեցու միաբանության, ինքնուրույնության և անկախության քաղաքականություն: Օգնել է Կոստանդին պայլին՝ Կիլիկիայից վտարելու բոլոր լատինադավանների: Զբաղվել է հոգևոր-մշակութ. գործունեությամբ, բացել նոր դպրոցներ, հիմնել միաբանություններ, գրչության կենտրոններ ևն: Մասնակցել է 1242-ի հայ-մոնղոլ. բանակցություններին: 1243-ին *Վարդան Արևելցու* հետ Սսում հրավիրել է Կիլիկիայի աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչների ժողով (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), որի ընդունած կանոններն ու սահմանումներն ընդարձակ շրջաբերականով հղել է (1246) հայոց *արևելյան վարդապետներին*՝ հաստատելու: Այնուհետև, իր պատվիրակ-բանագնաց Թեոդոս Վարդապետի միջոցով ստանալով մոնղոլ զորավար Անագուրակ-նոյինի (Անգուն) համաձայնությունը,

նպաստավորել ու վերաշինել է տվել *Արտազի Ս. Թադէ վանքը*, հիմնել միաբանություն և այն դարձրել (1247) թեմական կենտրոն: Հակոբ վրդ. Կլայեցու միջոցով 1254-ին քաղ. բանակցություններ է վարել բյուզ. կայսր Հովհաննես Վատակեսի ու Մանվել պատրիարքի հետ և միառժամանակ խաղաղություն հաստատել Կիլիկիայի Հայկական թագավորության և Բյուզանդիայի միջև: 1259-ին հանդիպել է Հուլավու խանի հետ և նպաստել հայ-մոնղոլ. դաշինքի ամրապնդմանը: 1264-ի սկզբին Կ. Ա Բ. և Հեթում Ա մերժել են Հռոմի պապի նվիրակի հարուցած դավանաբան. վիճաբանությունների խնդիրները: Նույնպիսի խնդիրներ է հարուցել նաև Կղեմես IV պապը 1265–66-ին: Սակայն Կ. Ա Բ. պահպանել է Հայ եկեղեցու դավանական ինքնուրույնությունը:

Կաթողիկոս. գահին Կ. Ա Բ-ուն հաջորդել է *Հակոբ Ա Կլայեցին*:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ ԿԱՏՈՒԿԵՑԻ, Պրոնագործ [մոտ 1210-ական թթ., ավան Կատուկ (Կիլիկիա) – 1293-ից հետո], Ամենայն Հայոց կաթողիկոս 1286–89-ին: Հաջորդել է *Հակոբ Ա Կլայեցուն*: Սովորել է Հռոմկլայի կաթողիկոսարանում, ապա ձեռնադրվել վարդապետ և նշանակվել Խորին մենաստանի (Բարձրբերդի և Լևոնկլայի միջև) առաջնորդ: 1289-ի հուլիսի 7-ին Հռոմի պապ Նիկողայոս IV-ը նամակ է հղել Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Բ-ին՝ հայ ժողովրդին դավանափոխ անելու և կաթոլիկություն պարտադրելու նպատակով: Սակայն Կ. Բ Կ. ընդդիմացել է: Հեթում Բ և լատինադավանության ջատագով Գրիգոր եպս. Անավարզեցին (տես *Գրիգոր Է Անավարզեցի*) 1289-ի վերջին Սսում մանկակի ժողով են գումարել և որոշել Կ. Բ Կ-ուն գահընկեց անել: Հակառակորդների ջանքերով Կ. Բ Կ. բանտ է նետվել: Ազատվել է 1293-ին՝ Հեթում Բ-ի հրամանով և նշանակվել *Սկևռա* վանքի (Լամբրոնին մերձ) առաջնորդ: Կ. Բ Կ. 1293-ին արձանագրություն-հիշատակարան է թողել Սկևռայի Սրբարան կոչվող մանատուփի վրա:

Կաթողիկոս. գահին Կ. Բ Կ-ուն հաջորդել է *Ստեփանոս Դ Հռոմկլայեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ ԿԵՍԱՐԱՑԻ, Հերձվածող, Առաջին աղթարմա (մոտ 1240-ական թթ. – 1322, Սիս), Ամենայն Հայոց կաթողիկոս 1307-ից: Հաջորդել է *Գրիգոր Է Անավարզեցուն*: Եղել է Կեսարիայի արքեպիսկոպոսը: Կիլիկիայի Թագավոր Հեթում Բ-ի հետ Սսի Ս. Սոֆիա եկեղեցում 1307-ին հրավիրել է ժողով (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), որն ընդունել է հայադավանությանը հակամետ որոշումներ: Այդ ժողովում էլ Հեթում Բ-ի կամքով ընտրվել է կաթողիկոս: Այնուհետև ջանացել է կիրառել այդ որոշումները, սակայն ամենուրեք (բացառությամբ արքունիքի և կաթողիկոսարանի) հանդիպել է ընդդիմության: Այդ որոշումները մերժել են նաև հայոց *արևելյան վարդապետները*: Դիմադրությունն ավելի է մեծացել, երբ նոր դահ բարձրացած Օշին Ա և Կ. Գ Կ., գործակցելով, սկսել են ժողովրդին պարտադրել ժողովի որոշումները: Զայրացած ժողովուրդն ու եկեղեցականները 1308-ին Ադանայի ժողովում մերժել են ծիսականոնական բոլոր նորամուծությունները Հայ եկեղեցում: 1309-ին Սսի ժողովը նույնպես մերժել է դրանք: Կ. Գ Կ. և Օշին Ա ստիպված դիմել են բռնության: Բողոքները չեն դադարել. թե՛ Կիլիկիայում, թե՛ բուն Հայաստանում ժողովուրդն ու հոգևորականությունն ընդդիմացել են պարտադրվող լատինադավանությանը: Ընդվզել է նաև Երուսաղեմի հայոց եպիսկոպոսություն-պատրիարքությունը, որը 1311-ին խզել է ներքին հարաբերությունները Հայոց կաթողիկոսության հետ: Ներքին այս երկպառակությունների օգտվել և բազմիցս Կիլիկիայի վրա են հարձակվել շրջակա մահմեդ. իշխանությունները: Նրանց դեմ Արևմուտքից ռազմ. օգնություն ստանալու հույսով Կ. Գ Կ. և Օշին Ա դիմել են նոր փորձի. լատինադավանությունը պարտադրելու համար կատարելով Ավինյոնի պապ Հովհաննես XXII-ի պահանջը՝ Ադանայում գումարել են (ըստ Մ. Օրմանյանի՝ 10.7.1317) նոր ժողով (տես *Ադանայի եկեղեցական ժողով 1316*), բայց չեն հասել ցանկալի արդյունքի: Հայ եկեղեցին պահպանել է իր անկախությունն ու դավանանքը:

Կաթողիկոս. գահին Կ. Գ Կ-ուն հաջորդել է *Կոստանդին Դ Լամբրոնացին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, Դրազարկցի (ծ. թ. անհտ – 1326, Սիս, ամփոփ-

վել է Դրազարկի վանքում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1323-ից: Հաջորդել է *Կոստանդին Գ Կեսարացուն*: Դրազարկցի է կոչվել այնտեղ առաջնորդական պաշտոն վարած լինելու պատճառով: Մասնակցել է Սսի (տես *Սսի եկեղեցական ժողովներ*) և Ադանայի (տես *Ադանայի եկեղեցական ժողով 1316*) ժողովներին: Սկզբում գործակցել է լատինամոլությամբ հայտնի իր նախորդ կաթողիկոսի հետ, սակայն կաթողիկոս. դահ բարձրանալուց (օծվել է Ս. Ծննդյան տոնի օրը՝ հունվարի 6-ին, Սսում, ծեր հասակում) հետո հրաժարվել է լատինամետությունից: Ենթադրվում է, որ այդ պատճառով նա Կիլիկիայի Հայկական թագավորության խնամակալ Օշին պայլի՝ Հռոմի հետ վարած թղթակցություններին ու բանակցություններին չի մասնակցել՝ գրավելով չեզոք դիրք: Հետամուտ է եղել երկրի քաղ. կյանքի, նրա դիրքերի ու խաղաղության ամրապնդմանը: Այդ նպատակով մեկնել է (1323) Եգիպտոս և 15-ամյա հաշտություն կնքել Նասր սուլթանի հետ և պայմանավորվել, որ հայերի որոշ հարկագումարի դիմաց Եգիպտոսի սուլթանությունն արտոնի վերաշինելու Կիլիկիայում իր ավերած բերդերը:

Կաթողիկոս. դահին Կ. Դ Լ-ուն հաջորդել է *Հակոբ Բ Անավարզեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ – 1374, Սիս), Ամենայն Հայոց կաթողիկոս 1372-ից: Հաջորդել է *Մեսրոպ Ա Արտազեցուն*: Ենթադրվում է, որ Սսում եղել է արքունի եպիսկոպոս: Նրա դահակալության սկզբում ավելի են հզորացել Կիլիկիայի Լուսինյանները, իսկ Հեթումյան հարստությունն անկում է ապրել: Կ. Ե Ս. հիշատակվում է Կիպրոս մեկնած այն պատգամավորության կազմում, որը Կիպրոսի Պետրոս II թագավորին խնդրելու էր Լևոն Զ-ի վանորդի Լուսինյանին (Կիլիկիայի թագավոր Լևոն Զ) կարգել Կիլիկիայի թագավոր:

Կաթողիկոս. դահին Կ. Ե Ս-ուն հաջորդել է *Պողոս Ա Սսեցին*:

Գրիգոր վրդ. Զիֆչյան

ԿՈՍՏԱՆԴԻՆ Զ ՎԱՀԿԱՑԻ (ծ. թ. անհտ – 1439), Ամենայն Հայոց կաթողիկոս 1430-ից: Հաջորդել է *Պողոս Բ Գառնեցուն*: Նրա դահակալման տարիներին ավելի է հասունացել կաթողիկոս. աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու հարցը: Հայաստանի քաղ. կացությունը ծանրացել է թուրք. ցեղերի մշտական ասպատակությունների պատճառով: Վիճակը տագնապալից է եղել նաև եկեղեց. հողի վրա. հռոմեական եկեղեցուց Հայ և լատին եկեղեցիների միության վերաբերյալ գրեր են ստացվել՝ Քաղկեդոնի դավանությունը և լատ. ծիսակարգն ընդունելու առաջարկությունների: Մասնավորապես Հայտնի է դավանության և ծեսերի վերաբերյալ՝ պապի առաջարկներով «Հրահանգ առ Հայս» թուղթը, որը մերժվել է: Այդ առնչությամբ 1435-ին Կ. Զ Վ. վերաշարադրել է տվել Հայ եկեղեցու դավանության սկզբունքները: Ըստ Թովմա Մեծոփեցու, վախճանվել է թունավորմամբ:

Կաթողիկոս. դահին Կ. Զ Վ-ուն հաջորդել է *Գրիգոր Թ Մուսաբեկյանցը*:

Գրիգոր վրդ. Զիֆչյան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ Բ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 381, գումարվել է հռոմեական Թեոդոսիոս I Մեծ կայսրի հրամանով: Առիթը *Ընդհանրական եկեղեցին* ալեկոծած Կ. Պոլսի եպիսկոպոս Մակեդոնի վարդապետությունն էր, որը կասկածի տակ էր առել *Սուրբ Հոգու* Աստվածությունը (այստեղից էլ՝ հոգեմարտներ կամ հոգեմարտների աղանդ անվանումը): Ժողովին ներկա էին Արևելքի եկեղեցիների 150 եպիսկոպոսներ, որոնցից 36-ը՝ մակեդոնյաններ: Կ. Բ տ. ժ-ին մասնակցել են IV դ. նշանավոր աստվածաբաններ, եկեղեցու ս. հայրեր *Կյուրեղ Երուսաղեմացին, Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Նազիանզացին* (Աստվածաբան) և այլք: Ժողովի որոշումներն առաջին հերթին ուղղված էին Մակեդոնի վարդապետության դեմ: Ըստ նրա, Ս. Հոգին ո՛չ Հոր և ո՛չ էլ Որդու էությունից է, այլ՝ օտար մի էություն՝ ոչ համագոյակից նրանց: Մակեդոնի վարդապետությունը ծագել է *արիոսականությունից*: Արիոսը Որդուն արարած էր համարում և ոչ էակից Հայր Աստծուն, իսկ Ս. Հոգին, ըստ Մակեդոնի, բխում է Որդուց, և քանի որ Որդին Աստված չէ, Ս. Հոգին ևս չէր կարող Աստված լինել. «եւ ի Հոգին սուրբ որ յՈրդւոյ գոյացեալ է»: Սրանից հետևեցնելով, Մակեդոնը քարոզում էր, որ Ս. Հոգին Որդուց բխելով՝ Աստված չէ, այլ Որդու արարչագործություն: Իսկ Ս. Հոգին Հայր Աստծուց բխելը չէր ընդունում: Սրանով Մակեդոնը, ինչպես Արիոսը, Սուրբ *Երրորդության* խորհուրդն էր մերժում և երեք անձերի համաբնույթ լինելը:

ԿՈՍՏԱՆԴ. Կ. Բ տ. ժ-ում թեպետ Նիկիայի *Հավատո հանգանակը* կրկին ընդունվեց, և Նիկիական հավատքը հաստատուն մնաց՝ դավանական տեսակետից որպես կատարյալ, սակայն Ա տիեզեր. ժողովից հետո նոր աղանդների երևան գալը ստիպեց որոշ լրացումներ անել. Գրիգոր Նյուսացին Կ. Պոլսում ժողովված ս. հայրերի հավանությամբ ժամանակի պահանջներին համապատասխան հավելումներ արեց Նիկիական հանգանակի վրա: Ժողովը բանաձևեց Ս. Հոգու Աստվածությունը և ավելացրեց՝ «Ի Հօրէ բղխեալ» (ընդդեմ Մակեդոնի), այսինքն՝ Ս. Հոգին բխում է Հորից և Հայր Աստծու ու Որդու հետ միասին երկրպագելի, փառավորելի ու համադոյակից է: Ժողովը նզովեց IV դ. բոլոր աղանդավորներին (Փոտինոս, Ապողինարիոս ևն): Փոտինոսը քարոզում էր, թե Բանն Աստված սկիզբ առավ ս. Կույս Մարիամից և մշտնջենավորությամբ ու հավիտենությամբ էակից չէ Հորը: Քանի որ Նիկիայի հանգանակում միայն ասված էր, որ Որդին ծնվել է Հորից, ժողովն ավելացրեց. «Ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս» (ընդդեմ Փոտինոսի), այսինքն՝ Որդին ծնվել է հավիտենությունից առաջ, դրանով ընդգծելով, որ Որդին ընդամենը մարմին առավ ս. Կույսից և մարդու կերպարանք զգեցավ: Ժողովը հրատակեցրեց նաև Բանի Մարդեղությանը և հոգու բանականությանը (ընդդեմ Ապողինարիոսի, տես *Ապողինարիզմ*) վերաբերող մասերը:

Կ. Բ տ. ժ. ընդունել է 7 կանոն: Ա կանոնը հավաստում է, որ ժողովը հավատարիմ է մնացել Նիկիայի հանգանակին, նզովում է Մակեդոնին, Փոտինոսին, Ապողինարիոսին և մյուս աղանդապետներին: Բ կանոնը սահմանում է, որ յուրաքանչյուր եկեղեցի, անկախ ավագության աստիճանից, միայն իր եկեղեց. և վարչ. սահմաններում է իրավասու գործելու ու տնօրինելու, իրավունք չունի խառնվելու մյուսների գործերին կամ կարգադրություններ անելու: Գ կանոնը վերաբերում է աթոռների ավագությանը: Կ. Պոլսի աթոռը հայտարարվել է երկրորդը՝ Հռոմից հետո, «քանզի Կ. Պոլիս՝ նոր Հռոմ է»: Սա ուղղված էր *Ալեքսանդրիայի* աթոռի դեմ, որի աճող հեղինակությունը հարվածում էր թե՛ Հռոմի, թե՛ Կ. Պոլսի շահերին: Ըստ ավագության, Ալեքսանդրիայի աթոռը երրորդն էր, *Անտիոքինը*՝ չորրորդը, *Երուսաղեմինը*՝ հինգերորդը: Մնացած չորս կանոնները վերաբերում են եկեղեցու կարգ ու կանոնին:

Հայ եկեղեցին Նիկիայի Ա (325) և Եփեսոսի Գ (431) տիեզեր. ժողովների հետ միասին ընդունում է Կ. Պոլսի ժողովի տիեզեր. հեղինակությունը, թեև չի մասնակցել ժողովին: Այդ ժողովի և Մակեդոնի հոգեմարտ վարդապետության մասին հայ իրականության մեջ առաջին անգամ հիշատակվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, *Բաբկեն Ա Ողմսեցի* կաթողիկոսի (490–516) թղթերում, որտեղ Կ. Բ տ. ժ. հիշվում է իբրև Նիկիայի ժողովի որոշումները վավերացնող: Այնուհետև, VI–VII դդ., *Ներսես Բ Բագրեվանդցի, Հովհաննես Բ Գաբեղենցի, Աբրահամ Ա Աղբաթանեցի* կաթողիկոսների և Հայ եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման առթիվ փոխանակված դավան. թղթերում երեք ժողովները հիշվում են միասին և միակերպ՝ որպես տիեզեր. հեղինակություն և ուղղափառ դավանության սահման:

Հայ եկեղեցին Կ. Բ տ. ժ-ի և 150 հայրապետների հիշատակը տոնում է *Բուն Բարեկենդանին* նախորդող շաբաթ օրը:

Գրկ. Սոկրատ Սքոլաստիկոս, Եկեղեցական պատմութիւն, Վաղ-պատ, 1897: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Հովնանյանց Պ., Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ..., Վնն., 1847: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, Ե., 1964: *Болотов В. В., История церкви в период вселенских соборов, т. 3, СПБ, 1913;* Migne J. P., Patrologiae Cursus Completus, Series Graeca, t. LXXXIV, Sinodicon, t. CXXXVII, P., 1857–66; Mansi J. D., Sacrorum conciliorum nova et amplissema colectio, Graz, Akademische Druk – U. Verlagsantall, v. 3, 1960–62; Hans-Georg Beck, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959.

Արտաշես Ղազարյան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ, Պատրիարքություն հայոց Թուրքիո, Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից: Ստեղծվել է 1461-ին: Աթոռանիստը՝ Գումգապուի Ս. Աստվածածին Մայր եկեղեցի:

Մինչև պատրիարքության հաստատումը օսմանյան պետության սահմաններում ապրող հայ համայնքներն ընդգրկված են եղել երեք թեմերում. Սվազի, կենտրոնը՝ Ս. Նշան վանք, Էնկյուրիի (Անկարա), կենտրոնը՝ Ս. Աստվածածին կամ Կարմիր վանք, Բուրսա (Պրուսա)-Քյոթահյա (Կուտինա)-Գարամանի, կենտրոնը՝ Բուրսա: Վերջինիս առաջնորդն էր Հովակիմ եպիսկոպոսը: XIV դ. սկզբին Կ. Պոլսում գոր-

ծել են Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, լատինադավան Ս. Նիկողայոս եկեղեցու մի մասը, որը հատկացվել էր հայածես արարողությունների համար: Կ. Պոլսի առաջին պատրիարք է եղել Հովակիմ եպիսկոպոսը (1461–78), որի աթոռանիստն էր Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցին: 1641-ից պատրիարքարանը տեղափոխվել է Գումգափու, որտեղ և գտնվում է ցայսօր:

Կ. Պոլսի հայոց պատրիարքներն օժտված էին ընդարձակ կրոն. և աշխարհական մասնակի իրավունքներով, նրանք տնօրինել են Թուրքիայի վարչական իրավասության ներքո գտնվող հայության կրթությունն ու լուսավորությունը, տպագրության գործը, բարեգործ. և մշակութ. հաստատությունները, պետության և համայնքի օգտին հավաքել մասնակի հարկեր: Օսմ. կայսրության սահմանների ընդարձակմանն ու զորացմանը զուգահեռ ընդարձակվել են նաև պատրիարքության իրավասության աշխարհագր. սահմանները, բարձրացել նրա դերն ու հեղինակությունը, քանի որ պետության տարածքում բնակվող հայության պաշտոնական ներկայացուցիչ է ճանաչվել Կ. Պոլսի հայոց պատրիարքը:

XVII դ. սկզբին պատրիարքության իշխանությունը տարածվել է օսմ. տիրակալության բոլոր հայաբնակ շրջանների վրա: Սսի կաթողիկոսությունը, *Աղթամարի կաթողիկոսությունը, Երուսաղեմի հայոց պատրիարքությունը* իրենց առաջնորդության իրավունքը զիջել են Կ. Պոլսի պատրիարքին: Որոշ ժամանակաշրջան փորձ է արվել ինքնիշխան դիրք գրավել նաև Մայր աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ, սակայն դա չի իրականացել, և Կ. Հ. պ. օրինաչափորեն ընդունել է Մայր աթոռի գերագահությունը:

1700-ական թթ. վերջին պատրիարքությունը բաղկացած էր 20, 1834-ին՝ 36, իսկ 1900-ին՝ 43 վիճակից՝ 1181 եկեղեցով և 132 վանքով: 1997-ին Կ. Հ. պ-յան իրավասության ներքո եղած 6 վիճակներն են. Հին քաղաք, Արլ. Բոսֆոր, Արմ. Բոսֆոր, Իշխանաց կղզիներ, Գավառ, Կրետե կղզի: Դարերի ընթացքում Կ. Պոլսում կառուցված 55 առաքելական եկեղեցիներից այսօր գործում են 35-ը՝ Սկյուտարի Ս. Խաչը, Սամաթիայի Ս. Գևորգը, Ֆերիգյուղի Ս. Վարդանանցը, Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչը ևն: Գավառում գործում է 6, Կրետե կղզում՝ 1 եկեղեցի: Թուրքիայի 14 հայկ. համայնքներում եկեղեցի չկա:

Սկզբ. շրջանում Կ. Պոլսի հայոց պատրիարքներին նշանակել է սուլթանը: XVIII դ. սկսած պոլսահայ համայնքն օրեցօր ստվարացել է, հատկապես բարձրացել է ամիրայական դասի հեղինակությունը, ինչը սուլթաններին ստիպել է պատրիարքների նշանակման ժամանակ հաշվի առնել նաև նրանց կարծիքը: Ներկայումս Կ. Պոլսի հայոց պատրիարքն ընտրվում է համայնքների ներկայացուցիչների պատգամավորական ժողովում: 1461-ից ցարդ պատրիարքական աթոռը զբաղեցրել են 84 հոգևորականներ: Նրանցից չորսը՝ Մատթեոս Բ (*Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի*), Գևորգ Բ (*Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի*), Մկրտիչ Վանեցի (*Մկրտիչ Ա Վանեցի*), Մատթեոս Գ (*Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի*) ընտրվել են Ամենայն հայոց կաթողիկոս: Կ. Պոլսի հայոց պատրիարքներ Ներսես *Վարժապետյանը*, Մաղաքիա *Օրմանյանը*, Եղիշե *Դուրյանը* նշանակալի դեր են խաղացել հայոց հաս., մշակութ., գիտ., հոգևոր-եկեղեց. կյանքում:

Արևմտահայությունը զարթոնք է ապրել *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի, Հակոբ Նալյան, Զաքարիա Փոքուզյան* Կաղզվանցի պատրիարքների պաշտոնավարության ընթացքում: Շուրջ ութ տասնյակ տարիների ընթացքում հիմնվել ու բացվել են դպրոցներ, թանգարան-մատենադարան, տպարան-գրավաճառանոցներ, լույս են տեսել ինքնուրույն ու թարգմանական, կրոն. ու աշխարհիկ բովանդակությամբ տասնյակ գրքեր, կառուցվել են նոր և վերակառուցվել մի շարք եկեղեցիներ: Ազգ-հոգևոր ու մշակութ-կրթ. վերելքը շարունակվել է նաև XIX դ.՝ Պողոս Ադրիանուպոլսեցու, *Ստեփանոս Աղավնիի, Հակոբոս Սերոբյանի* և այլ պատրիարքների անմիջական մասնակցությամբ ու գլխավորությամբ:

Թուրքիայի հայոց առաջին թաղային, հասարակության միջոցներով պահվող վարժարանը բացվել է 1790-ին, Գումգափու թաղամասում: 1834-ին պատրիարքարանի հովանու ներքո գտնվող գավառներում գործել է 114 հայկ. դպրոց: Դարասկզբին Կ. Պոլսում և գավառներում եղել է 860 հայկ. վարժարան, որտեղ սովորել են 90 հզ. երկսեռ աշակերտներ: Այժմ գավառներում հայկ. դպրոցներ չկան, իսկ Կ. Պոլսում գործում է 14 վարժարան, որտեղ սովորում է 4000 աշակերտ:

Պատրիարքարանն ի սկզբանե կարիք է ունեցել ազգ. ավանդներով կրթված ու դաստիա-

բակված հոգևորական-ների: Արմաշի դպրեվանքում (տես *Արմաշի Զարխափան Ս. Աստվածածին վանք*), որը ծառայել է այդ նպատակին, սովորել են նշանավոր եկեղեց. գործիչներ (Բաբկեն *Կյուլեսերյան*, Թորգոմ *Գուշակյան*, Զավեն Եղիայան, Մեսրոպ Նարոյան, Գարեգին Խաչատուրյան և ուր.): Վերջին երեքը հաջորդաբար եղել են Կ. Պոլսի հայոց պատրիարք: Նույն նպատակին է ծառայում նաև Կ. Պոլսի Ս. Խաչ դպրեվանքը (1954-ին հիմնադրել է Գարեգին պատրիարք Խաչատուրյանը): Պատրիարքարանին ենթակա եկեղեցիներում գործող դպրաց դասի երգչախմբերի գործունեությունը նպատակամղված է հայոց ազգ-հոգևոր երաժշտության անաղարտ պահպանմանը: 1719-ին Հովհաննես Կոլոտ պատրիարքը Մայր եկեղեցուն կից բացել է ինքնուրույն կանոնադրությամբ ղեկավարվող առաջին կազմակերպված դպրաց դասը (գործում է ցայսօր): Դպրաց դասի երգչախումբը տարբեր ժամանակներում ղեկավարել են Համբարձում *Լիմոնճյանը*, Արիս Հովհաննիսյանը, Նիկողայոս *Թաշճյանը*, Գրիգոր Մեհթերյանը, *Կոմիտասը*, Էդգար Մանասը, Հովհաննես Զեքիջյանը և այլ նշանավոր երաժիշտ-երաժշտագետներ: Առաջին բազմաձայն եկեղեց. երգեցողությունն ու երգեհոնի գործածությունը Մայր եկեղեցում տեղի է ունեցել 1906-ին՝ Գրիգոր Մեհթերյանի ղեկավարությամբ:

Կ.Հ.պ-յան գործունեությունն ավելի կանոնակարգված բնույթ է ստացել 1860-ին ընդունված և 1863-ին սուլթանի կողմից վավերացված *Ազգային սահմանադրության* հռչակումից հետո: Արլ. Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց (1828) հետո Կ. Հ. պ. թուրք. կառավարության համար ավելի մեծ կարևորություն է ստացել: Հայ ազատագր. շարժման հարցում պատրիարքությունը հիմնականում զգուշավոր դիրք է գրավել՝ աշխատելով չգրգռել թուրք. կառավարությանը, փորձելով դիվանագիտ. միջոցներով արևմտահայությանը զերծ պահել արյունահեղությունից:

Մեծ եղեռնից հետո պատրիարքությունը կորցրել է իր նախկին իրավունքներն ու դերը: Այժմ այն Թուրքիայի հայկ. համայնքների հոգևոր ներկայացուցչությունն է: Իր գործունեությամբ նպաստում է հայ ցրված համայնքների համախմբմանը, նրա ազգ. ինքնուրույնության, լեզվի ու մշակույթի պահպանմանը:

Կ. Պոլսի հայոց պատրիարքը իր իրավասությունից բխող գործողություններն իրականացնում է Կրոն. ժողովի միջոցով: Ներկայումս (2001) Կրոն. ժողովը բաղկացած է հինգ հոգևորականից, երկու ատենապետից, երկու ատենադպիրից, նախագահում է պատրիարքը: Պատրիարքի նախագահությամբ է գործում նաև խորհրդակցական մարմինը, որն ունի երկու փոխնախագահ, ատենադպիր և ինն աշխարհական անդամ: Պատրիարքարանը հրատարակում է կրոնաբարոյական, գրական և պատմաբանասիր. «*Շողակաթ*» հանդեսը (հիմն. 1952-ին) և տեղեկատվական «Լրաբեր» պարբ-ը (հիմն. 1996-ին):

Կ. Հ. պ-յան պատրիարքն է Մեսրոպ արք. Մութաֆյանը (1998-ից):

Վարուժան Քյոսեյան
Ալվարդ Ղազիյան

Կ. Պոլսի հայոց պատրիարքների անվանացանկ

Հովակիմ Պրուսացի (1461–78), Նիկողայոս (1478–89), Կարապետ (1489–1509), Մարտիրոս (1509–26), Գրիգոր (1526–37), Աստվածատուր (1537–50), Ստեփանոս (1550–61), Տիրատուր Սսեցի (1561–63, 1596–99), Հակոբ (1563–73), Հովհաննես Տիարպեքիրցի (1573–81), Թովմաս Գաղատիո (1581–87), Սարգիս Ուլնիո (1587–90), Հովհաննես Բ (1590–91), Ազարիա Ջուղայեցի (1591–92), Սարգիս Բ Պարոն-Տեր Զեթունցի (1592–96), Մելքիսեդեկ Գառնեցի (1599–1600), Հովհաննես Խուլ Կոստանդնուպոլսեցի (1600–01, 1609–11, 1621–23, 1631–36), Գրիգոր Բ Կեսարացի (1601–08, 1611–1621, 1623–26), Զաքարիա Վանեցի (1626–31, 1636–40), Դավիթ Արևելցի (1640–41, 1643–49, 1650–51), Կիրակոս Երևանցի (1641–42), Խաչատուր Սեբաստացի (1642–43), Թովմաս Բ Բերիացի (1644, 1657–59), Եղիազար Այնթապցի (1651–52), Հովհաննես Դ Մուղնեցի (1652–55), Մարտիրոս Բ Քեֆեցի (1659–60), Ղազար Սեբաստացի (1660–1663), Հովհաննես Ե Թութունճի (1663–64, 1665–1667), Սարգիս Գ Թեքիրտաղցի (1664–65, 1667–1670), Ստեփանոս Բ Մեղրեցի (1670–74), Հովհաննես Զ Ամասիացի (1674–75), Անդրեաս Ստամպոլցի (1675–76), Կարապետ Բ Կեսարացի (1676–79, 1680–81, 1681–84, 1686–87, 1688–89), Սարգիս Դ Էջմեքճի (1679–80), Թորոս Ստամպոլցի (1681, 1687–88), Եփրեմ Ղափանցի (1684–86, 1694–98, 1701–02), Խաչատուր Բ Ճլեցի (1688), Մատթեոս Կեսարացի (1692–94), Մելքիսեդեկ Բ Սուպհի (1698–99, 1700–01), Մխիթար Քյուրտիստանցի (1699–1700), Ավետիք Եվդոկիացի (1702–03, 1704–1706), Գալուստ Կայծակն Ամասիացի (1703–04), Ներսես Պալաթցի (1704), Մարտիրոս Գ Երզնկացի (1706), Միքայել Խարբերդցի (1706–07), Սահակ Ա-

պուչեխցի (1707, 1708–14), Հովհաննես Է Իզմիրցի (1707–08), Հովհաննես Ը Գանձակեցի (1714–15), Հովհաննես Թ Կոլոտ Բաղիշեցի (1715–41), Հակոբ Բ Նալյան Զմմարացի (1741–48, 1752–64), Պրոխորոն Սիլիստրեցի (1749), Մինաս Ակներցի (1749–1751), Գևորգ Ղափանցի (1751–52), Գրիգոր Գ Պասմաճյան Կոստանդնուպոլսեցի (1764–73), Զաքարիա Փոքուզյան Կաղզվանցի (1773–81, 1782–1799), Հովհաննես Ժ Համատանցի (1781–82), Դանիել Սուրմառեցի (1799–1800), Հովհաննես Զամաշըրճյան Բաբերդցի (1800–01), Գրիգոր Խամսեցի (1801–02, 1802–13), Աբրահամ Գոլյան Տաթևացի (1813–15), Պողոս Գրիգորյան Ադրիանուպոլսեցի (1815–23), Կարապետ Գ Պալաթցի (1823–31), Ստեփանոս Բ Աղավնի Զաքարյան (1831–39, 1840–41), Հակոբոս Գ Սերոբյան (1839–40, 1848–58), Աստվածատուր Բ Կոստանդնուպոլսեցի (1841–44), Մատթեոս Բ Զուխաճյան Կոստանդնուպոլսեցի (1844–48), Գևորգ Բ Քերեսթեճյան Կոստանդնուպոլսեցի (1858–60), Սարգիս Ե Գույումճյան Ադրիանուպոլսեցի (1860–61), Ստեփան Մաղաքյան (տեղապահ, 1861–63), Պողոս Բ Թաքիադյան Պրուսացի (1863–69), Իգնատիոս Գագմաճյան Իսթանպուլցի (1869), Մկրտիչ Վանեցի Խրիմյան (1869–1873), Ներսես Բ Վարժապետյան Իսթանպուլցի (1874–84), Հարություն Վեհապետյան (1885–88), Խորեն Աշըդյան (1888–94), Մատթեոս Գ Իզմիրլյան Իսթանպուլցի (1894–96, 1908–09), Մաղաքիա Օրմանյան Իսթանպուլցի (1896–1908), Եղիշե Դուրյան Իսթանպուլցի (1909–11), Հովհաննես Արշարունի Իսթանպուլցի (1912–13), Զավեն Եղիայան Պաղտատցի (1913–15, 1919–22), փոխանորդության շրջան (1915–19), Տեղապահության շրջան (1922–27), Մեսրոպ Նարոյան Մշեցի (1927–44), Տեղապահության շրջան (1944–50), Գարեգին Խաչատուրյան Տրապիզոնցի (1951–61), Շնորհք Գալուստյան Յուզկատցի (1961–90), Գարեգին Բ Գալանճյան (1990–98), Մեսրոպ Բ Մուրթաֆյան (1998-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.1, 2-րդ պատկերը:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927: Պերպերյան Հ., Նիւթեր Կ. Պոլսո հայոց պատմութեան համար, Վնն., 1965: Սիրուն Հ., Պոլիս և իր դերը, հ. 1–4, Անթիլիաս, 1965–87: Հայ Պոլիս, Ե., 2000: «Շողակաթ» (բացառիկ), 1962:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ, Կոստանդնուպոլսի եկեղեցի, Կոստանդնուպոլսի աթոռ, *Ընդհանրական եկեղեցու* հինգ տիեզերական պատրիարքություններից կամ Աթոռներից: VI դարից Կ. տ. պ-յան հիմնադրումը, այն առաքելական հայտարարելու մտահոգությամբ, վերագրվել է Անդրեաս առաքյալին: Կ. Պոլսի եկեղեցու առաքելական լինելու հանգամանքը մերժել է Հռոմի եկեղեցին, որը պնդել է, որ Բյուզանդիոնը (հետագայում՝ Կ. Պոլիս) միայն III դ. է դարձել եպիսկոպոսանիստ քաղաք: *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի* (381) ընդունած 3-րդ կանոնի (հայերեն թարգմանությունում՝ 2-րդ) համաձայն, Կ. Պոլսի աթոռը ճանաչվել է երկրորդը՝ Հռոմի աթոռից հետո: *Քաղկեդոնի ժողովի* (451) 28-րդ կանոնը ևս Կ. Պոլսի աթոռը ճանաչել է երկրորդը Հռոմի աթոռից հետո՝ ընդունելով, սակայն, որ այն վայելում է Հռոմի աթոռի հետ ավագության հավասար պատիվ: Երկու ժողովների որոշումներն էլ ուղղված էին *Ալեքսանդրիայի* աթոռի դեմ, որը դերիշխող դիրք և հեղինակություն էր ձեռք բերել քրիստոնյա Արևելքում: 691-ի Կ. Պոլսի ժողովի 36-րդ կանոնով հաստատվել են նախորդ երկու ժողովների ընդունած որոշումները: Ըստ այդ կանոնի, քրիստոնյա աշխարհում հաստատվել է 5 տիեզերական աթոռների հետևյալ աստիճանակարգը՝ Հռոմ, Կ. Պոլիս, Ալեքսանդրիա, *Անտիոք* և *Երուսաղեմ*: Չգտելով հասնել Կ. Պոլսի պատրիարքության գերագահությանը՝ բյուզ. Հուստինիանոս I կայսրը (527–565) Կ. Պոլսի եկեղեցին անվանել է «Գլուխ համայն եկեղեցիների»:

Երբ VII դարից արաբներն ու իսլամը տիրել են Արևելքի երեք պատրիարքություններին (Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ), Կ. տ. պ. Արևելքում մնացել է «ուղղափառության» միակ պատվար:

IX դ. կեսից Կ. Պոլսի եկեղեցին ընդհարվել է Հռոմի եկեղեցու հետ: Վերջինս ձգտել է իր գերագահությունը հաստատել բոլոր եկեղեցիների հանդեպ՝ պահանջելով ճանաչել իրեն Ընդհանրական եկեղեցու միակ ղեկավար: Կ. Պոլսի Փոտ պատրիարքը (858–867, 877–886) մերժել է այդ պահանջը, ինչը առաջ է բերել խզում, այսպես կոչված՝ «Սխիզման» Հռոմի և Կ. Պոլսի եկեղեցիների միջև: Երկու եկեղեցիները վերջնականապես առանձնացել են 1054-ին, երբ միմյանց նզովել են Կ. Պոլսի պատրիարքն ու Հռոմի պապը: Խզումն ավելի է խորացել դավան. վեճերի պատճառով: Ս. Հոգու բխման (Filioque) վարդապետությունը, որ X դ. պաշտոնապես ընդունել էին Հռոմի եկեղեցին և ողջ Արևմուտքը, քաղաքականից զատ, դավանապես ևս բաժանել է երկու եկեղեցիները: Մինչև Կ. Պոլսի անկումը (1453) ութ փորձ է կատարվել Հռոմի և Կ. Պոլսի եկեղեցիների

միջև առաջացած վիհը կամրջելու համար, բայց բոլորն էլ՝ անհաջող:

Երբ Թուրքերը գրավել են Կ. Պոլիսը և Ս. Սոֆիայի տաճարը վերածել մզկիթի (1453), պատրիարքարանը բազմիցս տեղափոխվել է, իսկ 1600-ից հաստատվել Ֆանար թաղամասի դարպասի մոտ՝ Ս. Գևորգ տաճարում, որտեղ գտնվում է մինչև օրս:

Թուրք. տիրապետության շրջանի առաջին պատրիարք Գեննադիոս Սքոլարիոսը ջանքեր է թափել շարունակելու Կ. Պոլսի փիլ. դպրոցի գործունեությունը: Թուրքիայի և Հունաստանի մի շարք քաղաքներում հիմնադրվել են բազմաթիվ դպրոցներ, որոնք վառ են պահել հույների մեջ քրիստ. կրոնը և ազգ. նկարագիրը Թուրք. երկարատև տիրապետության ժամանակ: Կ. Պոլսի պատրիարքին ընտրել են նրա ենթակայության տակ գտնվող մետրոպոլիտությունների ղեկավարները, որոնց վերապահված էր նաև պատրիարքին գահընկեց անելու իրավունքը: Գործնականում վերջին խոսքը պատկանել է կայսրին: V դարից սկսած Կ. Պոլսի պատրիարքը կարևոր դեր է խաղացել կայսրի թագադրության հանդեսին: Մինչև 1453-ը (երբ Թուրքերը գրավել են քաղաքը) Կ. Պոլսի աթոռն ունեցել է 135 պատրիարք: Թուրք. նվաճումից հետո Տիեզերական պատրիարքը համարվել է բարձր պաշտոնյա և հաստատվել սուլթան. բերատով: Զնայած Լոզանի կոնֆերանսում (1923) թուրք. պատվիրակությունը չի կարողացել պատրիարքությունը հեռացնել քաղաքից, բայց այն զրկվել է մի շարք իրավասություններից: Ներկայումս նրան է ենթակա հուն. սփյուռքը, իսկ Հունաստանն ունի իր արքեպիսկոպոսը: Այժմ Թուրքիայի տարածքում մնացել են Կ. տ. պ-յանը ենթակա չորս մետրոպոլիտություններ, որոնք կրում են հին մետրոպոլիտությունների անվանումները՝ Քաղկեդոնի, Խալդիայի, Լաոդիկիայի, Սարդիսի և Փիլադելփիայի, բայց չունեն հոտ:

Կ. տ. պ. իր շուրջ 1700-ամյա գոյության ընթացքում ունեցել է հարաբերություններ Հայոց կաթողիկոսության հետ: Բյուզ. կայսրության սահմաններից դուրս գտնվող քրիստ. եկեղեցիների հետ իր հարաբերություններում Կ. տ. պ. գործել է քաղ. իշխանությունների հետ ձեռք ձեռքի տված: Կայսրերը դավան. հարցերն օգտագործել են քաղ. խնդիրները սքողելու համար: Դեռ 417-ին *Սահակ Ա Պարթև* Հայոց կաթողիկոսը գրագրություն է հաստատել Կ. Պոլսի Ատտիկոս պատրիարքի (406–425) հետ, խնդրելով նրա միջնորդությունը կայսրից թույլտվություն ստանալու՝ Հայաստանի բյուզ. մասում հայկ. դպրոցներ բացելու, ինչպես նաև իր իրավասություններն այստեղ ևս տարածելու համար: *Եփեսոսի Գ տիեզերական ժողովից* (431) հետո Կ. Պոլսի Պրոկղ (Պրոկլոս) պատրիարքը (434–446), Հայաստանում *նեստորականության* տարածումը կանխելու նպատակով, նամակագրություն է ունեցել Սահակ Ա Պարթևի, *Մեսրոպ Մաշտոցի* հետ և զգուշացրել նեստորականության վտանգի մասին: Միաժամանակ ուղարկել է Եփեսոսի ժողովի ընդունած վեց կանոնները և Սուրբ Գրոց ստուգված բնագրերը:

Քաղկեդոնի ժողովի հետևանքով, երբ տրոհվել է Ընդհանրական եկեղեցին, Կ. Պոլսի պատրիարքությունը, որն ընդունել էր Քաղկեդոնի հանգանակը, քրիստոնյա Արևելքում որոշ ժամանակ մնացել է առանձնացած: Քաղկեդոնի երկաբնակ դավանությունը մերժել էին Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքությունները: Հայ եկեղեցին ևս, քիչ ավելի ուշ, իր հատակ հակաքաղկեդոն. դիրքորոշումն է հայտնել: Կ. Պոլսի պատրիարքությունը և բյուզ. կայսրերը եկեղեցիների միջև առաջացած վիհը կամրջելու բազմաթիվ փորձեր են արել V–VII դդ.: Պատրիարքությունը մեծ տեղ է հատկացրել Հայ եկեղեցուն՝ ձգտելով նրա միջոցով իր ազդեցությունը տարածել Քաղկեդոնի ժողովը մերժած հայերի, ասորիների, վրացիների վրա՝ ի հակակշիռ Պարսկաստանի: Բյուզ. Զենոն կայսրի 482-ի հրապարակած «*Հենոտիկոնը*» (Միության գիր), VI դ. սկզբին Անաստաս կայսրի՝ Արևելքի ուղղափառներին սիրաշահելու և քաղկեդոնականներին հալածելու քաղաքականությունը, Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքի (610–638) և Հերակլիոս կայսրի առաջ քաշած *միակամության* վարդապետությունը, ինչպես նաև 553-ի Կ. Պոլսի ժողովի (անվանված 5-րդ տիեզեր. ժողով) որոշումները՝ ուղղված նեստորականության պարագլուխների (այսպես կոչված՝ «Երեք գլուխների» դատապարտումը) դեմ, կոչված էին Կ. Պոլսի պատրիարքության կողմը գրավել *Արևելյան ուղղափառ եկեղեցիներին* և ուժեղացնել կայսրության քաղ. ազդեցությունն Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վրա:

Արաբ. տիրապետության շրջանում (VII–IX դդ.) Կ. Պոլսի պատրիարքության և Հայ եկեղեցու փոխհարաբերությունները գրեթե ընդ-

հատվել են: Միայն մեկ անգամ Կ. Պոլսի պատրիարք Պյուրոսը (638–641, 654) և Կոստանդ II կայսրը Հայոց *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսին և Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունուն դիմել են երկու եկեղեցիների միությունն հաստատելու կոչով: Այն քննարկվել է Դվինի 648-ի ժողովում և մերժվել:

Հայ-հույն եկեղեց. հարաբերությունները վերսկսվել են IX դ., Կ. Պոլսի Փոտ պատրիարքի և Հայոց կաթողիկոս *Զաքարիա Ա Ձագեցու* օրոք: Այդ ժամանակ՝ Արաբ. խալիֆայության թուլացման պայմաններում, բյուզ. կայսրությունը ծրագրեր է նյութել ողջ Հայաստանը նվաճելու համար: Ինչպես միշտ, այս անգամ էլ առաջ է քաշվել կայսրության քաղ. նկրտումները շղարշող դավան. հարցը: Հայ. թարգմանությամբ և հուն. բնագրերով պահպանված՝ Փոտ պատրիարքի բազմաթիվ նամակներն ու գրությունները (հատկապես ուղղված Զաքարիա Ա Ձագեցուն) վկայում են Կ. Պոլսի պատրիարքության՝ *քաղկեդոնականությունը* Հայաստանում տարածելու և երկրի պաշտոն. դավանանքը դարձնելու նոր փորձերի մասին: 862-ին Հայոց իշխան Աշոտ Բագրատունուն Փոտի գրած նամակից պարզվում է, որ Կ. Պոլսի պատրիարքությունն այդ գործում որոշ հաջողություններ էր հասել Զորրորդ Հայքում և Տարոնում: Այդ քաղաքականությունը շարունակել է Նիկողայոս Միստիկոս (901–907, 912–925) պատրիարքը, որը Հայաստանի համար քաղ. դժվարին տարիներին Հայոց թագավոր Սմբատ Ա-ին և Հայոց կաթողիկոս *Հովհաննես Ե Դրասխանակերտցուն* ուղարկել է նամակներ, որտեղ դատապարտել է Հայ եկեղեցու դավանությունը և հորդորել ընդունել քաղկեդոնականություն: Բյուզ. Հովհաննես Զմշկիկ կայսրի օրոք Կ. Պոլսի պատրիարքի հետ նամակագրություն է պահպանել *Վահան Ա Սյունեցին*, որը քաղկեդոնականությանը հարելու մեղադրանքով դատապարտվել է Անիի եկեղեց. ժողովում և կարգալույծ արվել:

Բագրատունյաց թագավորության անկումից (1045) հետո մայրաքաղաք Անին անցել է Բյուզանդիային, որը *Խաչիկ Բ Անեցի* Հայոց կաթողիկոսի մահից (1065) հետո արգելել է Հայոց կաթողիկոս. աթոռի գոյատևումը Անիում՝ պետ. իշխանությունը կորցրած հայ ժողովրդին նաև հոգևոր-եկեղեց. իշխանությունից զրկելու նպատակով:

Կ. Պոլսի պատրիարքության և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերություններն աչխույժ են եղել հատկապես Կիլիկիայի Հայկ. պետության գոյության ամբողջ ընթացքում: Կիլիկիայում նստող առաջին Հայոց կաթողիկոսը, որը Կ. Պոլսի պատրիարքության հետ հարաբերություններ էր հաստատել, *Գրիգոր Բ Վկայասերն* էր: Նրա այդ գործունեությունը շարունակել են *Գրիգոր Գ Պահլավունի* և Ներսես Դ Կլայեցի (*Ներսես Շնորհալի*) Հայոց կաթողիկոսները: Բյուզ. աղբյուրները հարուստ տեղեկություններ են հաղորդել *Հռոմկլայի կաթողիկոսարանի, Սսի կաթողիկոսարանի* և Կ. Պոլսի պատրիարքության ու բյուզ. կայսրերի կապերի մասին: Այդ շրջանում հայ-բյուզ. եկեղեց. հարաբերությունները միշտ եղել են, մի կողմից՝ Հայոց կաթողիկոսների և թագավորների, մյուս կողմից՝ Կ. Պոլսի պատրիարքների ու բյուզ. կայսրերի ուշադրության կենտրոնում: Հայ և հույն վարդապետների, աստվածաբանների հաճախակի դավանաբան. վեճերը, որպես կանոն, տեղի են ունեցել Կ. Պոլսում՝ Ս. Սոֆիայի ամբիոնից: Դրանց մասնակցել են նաև աշխարհիկ տերերը: Կ. Պոլսում նման բանավեճեր են ունեցել *Հակոբ Սանահնեցին*, Գագիկ Բ Բագրատունին, Գագիկ Աբասյանը, *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*, Բագրեվանդի իշխան Ատրներսեհը և ուրիշներ:

Հայ կաթողիկոսներից Բյուզանդիա է գնացել միայն *Պետրոս Ա Գետադարձը*, որին պատրիարքն ու կայսրը ընդունել են փառք ու պատվով: Կաթողիկոսը, հավանաբար, առերես ստորագրել է եկեղեցիների միության գիրը՝ կանխելու համար բյուզանդացիների ներխուժումը Շիրակի Բագրատունիների թագավորություն: Հայոց կաթողիկոսներից ոմանք էլ (Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Ներսես Շնորհալի), չնայած հրավերներին, չեն մեկնել Կ. Պոլիս՝ խուսափելով քաղկեդոնականների հետ հաղորդակցվելուց և քաղկեդոնականությանը հարելու մեղադրանքներից: 1700 տարվա ընթացքում Կ. Պոլսի միայն մեկ Տիեզերական պատրիարք՝ Բարդուղիմեոս Ա է այցելել Հայաստան (1997-ին)՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի հրավերով, ի պատասխան վերջինիս Կ. Պոլսի աթոռ կատարած այցելության:

Թուրք. տիրապետության հենց սկզբում՝ 1461-ին Կ. Պոլսում ստեղծվել է Հայ եկեղեցու Կ. Պոլսի պատրիարքությունը (տես *Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն*):

Դրանից հայ-հուն. եկեղեց. հարաբերությունները թեև չեն աշխուժացել, բայց քաղ. դժնդակ պայմանների բերումով Կ. Պոլսի հայոց և հունաց պատրիարքությունները շատ հարցերում համագործակցել են՝ մոռացության տալով դավան. տարաձայնությունները:

Մեծ եղեռնի ժամանակ, երբ ցեղասպանությանը զոհ են դնացել բազմաթիվ հայ հոգևորականներ, փրկված հայերը մնացել են առանց քահանաների: 1919-ի մայիսի 29-ին Կ. Պոլսի եկեղեցու Սինոդը Կ. Պոլսի Տիեզերական աթոռին ենթակա մետրոպոլիտներին մի շրջաբերական գրությամբ հայտնել է, որ հայոց Զավեն պատրիարքը խնդրանքով դիմել է Կ. Պոլսի պատրիարքություն, որպեսզի այն վայրերում, որտեղ չկան հայ քահանաներ, թույլատրվի օրթոդոքս քահանաներին ժամանակավորապես սպասարկել այդտեղի հայերի հոգևոր կարիքները: Կ. տ. պ. համաձայնել է և ընդառաջել:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Զեքիյան Լ., Համամիութենական տրամախոսություն մը ԺԲ դարուն, «Բազմավեպ», 1977, № 3–4: Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը, Ե., 1988: Նույնի, Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների վավերագրերը (XI–XII դդ.), Ե., 1996: Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին Թ Մոնոմախ, ԲԵՀ, 1988, № 1: Նույնի, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, «Աշտանակ», 1, Ե., 1995, էջ 112–126:

Հրաչ Բարթիկյան

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի՝ 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ընդգրկում է ՀՀ Կոտայքի մարզը:

Կ. Թ. պատմականորեն և տարածքով Բջնիի եպիսկոպոս. աթոռի ժառանգորդն է: Բջնիի աթոռի հիմնադրման մասին Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու պատին պահպանվել է կաթողիկոս *Պետրոս Ա Գետադարձի* հրամանը (1031) պարունակող վիմագիր արձանագրություն: Բջնիի աթոռը հետագայում մեծ հռչակ է ստացել, և տեղի եպիսկոպոսները կոչվել են Արարատյան դավառի դիտապետ: 1390-ին Բջնո թեմին է միացել Արարատյան թեմը: Ղ. Ալիշանը կազմել է թեմի եպիսկոպոսների դավանանագիրքը:

Կ. Թ-ի տարածքում են գտնվում Արզնիի Ս. Կիրակի (VI դ.), Արամուսի Ս. Ծիրանավոր (VI դ.), Սոլակի Ս. Աստվածածին (VI–VII դդ.), Բջնիի Ս. Սարգիս (VII դ.), Ալափարսի Ս. Վարդան (VII դ.), Գառնիի Ս. Աստվածածին (XII դ.), Նուռնուսի Ս. Գրիգոր Նարեկացի (XII–XIII դդ.), Ս. Հարություն (կառուցվում է) եկեղեցիները, Պտղնավանքը, Եղվարդի Ս. Թեոդորոս, Կարենիսի, Թեղենյաց, Նեղուցի (XIII դ.), Թեժառույքի (XIII դ.) վանքերը, Ակունքի Պողոս-Պետրոս մենաստանը, Ջագավանքը, Մայրավանքը, Մաքրավանքը (XIII դ.), Հրազդանի Ս. Խաչ եկեղեցին (XIII դ.) ևն, ինչպես նաև Գեղարդավանքը, որը ենթարկվում է Մայր աթոռին:

Թեմում գործում են՝ Ծաղկաձորի Կեչառիսի վանքը, Հրազդանի Ս. Աստվածածին, Եղվարդի Ս. Աստվածածին, Առինջի Ս. Հովհաննես, Ս. Աստվածածին, Ջրվեժի Ս. Կաթողիկե, Բջնիի Ս. Աստվածածին, Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցիները, Ջարենցավանի աղոթատեղին: Թեմի տարածքում գործում են կրոնի ուսուցիչների լսարաններ, կան կիրակնօրյա դպրոցներ, մանկ. հոգևոր երգչախմբեր: Կ. Թ-ի առաջնորդարանում ստեղծվել է *Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն* (1997): Թեմը Ծաղկաձորում ունի մանկ. բարեգործ. ճամբար (1998-ից): Հրատարակվում է «Կեչառիս» ամսաթերթը (2000-ից):

Կ. Թ-ի առաջնորդն է Առաքել եպս. Քարայանը (1996-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.1, 3-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.7:

Գրկ. Մաթեվոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, № 2–3:

Կարեն Մաթևոսյան

ԿՈՐՅՈՒՆ (մոտ 380 – մոտ 450), մատենագիր, *Թարգմանչաց շարժման* առաջնեկներից, վարդապետ:

Նորագյուտ մաշտոցյան այբուբենը փորձարկելուց հետո *Սահակ Ա Պարթևը* և *Մեսրոպ Մաշտոցը* Վաղարշապատում 406-ին աշակերտներ են ժողովել՝ քարոզիչներ պատրաստելու, որոնց էլ, իբրև Հայոց գրերով Աստվածաշունչը տարածողներ, ուղարկել են Հայոց աշխարհի զանազան կողմերը: Կ. նրանցից մեկն էր:

429-ին Կ. Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի հանձնարարությամբ գնացել է Ասորիք, ապա՝ Բյուզանդիոն՝ ասորերենի և հունարենի մեջ կատարելագործվելու: Մինչ այդ Բյուզանդիոն էին մեկնել *Եզնիկ Կողբացին* և *Հովսեփ Պաղնացին*: Նրանք հայրենիք են վերադարձել 431-ից հետո՝ իրենց հետ բերելով Սուրբ Գրքի հունարեն լավագույն օրինակ և Նիկիայի (325) ու Եփեսոսի (431) տիեզերական ժողովների կանոնները: Մեսրոպ Մաշտոցի մահից հետո Կ. շարադրել է իր ուսուցչի վարքը՝ «Աղքանազյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարգև գրի մասին, թե երբ և որ ժամանակ բաշխվեց և ինչպիսի մարդու ձեռով եղավ այդ աստվածային նոր գրված շնորհքը»:

«Վարք Մաշտոցին» (գրվել է 433–449-ի միջև) հայ ազգ. մատենագրության երախայրիքն է, V դ. սկզբին Հայաստանում ծավալված մտավոր ու քաղ. շարժման առաջին և միակ հավաստի սկզբնաղբյուրը՝ գրված ժամանակակցի, իրադարձությունների մասնակցի և ականատեսի ձեռքով: Վարքաբանական ձևի տակ Կ. կարևոր տեղեկություններ է հաղորդել հայոց, վրաց և աղվանից գրերի գյուտի մասին: Հետագա բոլոր պատմիչները V դ. սկզբի մշակութ. շարժման, Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի գործունեության և գրերի գյուտի վերաբերյալ տեղեկությունները քաղել են Կ-ից:

Կ-ի «Վարք Մաշտոցին» մեզ հասել է երկու տարբերակով՝ համառոտ և ընդարձակ: Համառոտ տարբերակը Կ-ի և *Մովսես Խորենացու* երկերի համաձուլվածք է՝ երկու հեղինակներին համաձայնեցնելու և բնագիրն ավելի մատչելի դարձնելու նպատակով: Այն չունի աղբյուրագիտ. նշանակություն: Կ-ի բուն երկը ընդարձակ տարբերակն է, որի պահպանված ամենահին օրինակը XVII դարինն է՝ Ամրդոլու վանքում Սահակ Վանեցի գրչի կատարած ընդօրինակությամբ:

«Վարք Մաշտոցին» հրատարակվել է մի քանի անգամ (առաջինը՝ 1833-ին, Վենետիկում), թարգմանվել գերմ., ֆրանս., անգլ., ռուս.: Կ-ին են վերագրվում մի քանի այլ աշխատանքներ ևս, որոնց ստուգությունը չի հաստատվում: Նրան է վերագրվում նաև Աստվածաշնչի Մակաբայեցւոց գրքի թարգմանությունը: Կ. զբաղվել է եկեղեց. գործունեությամբ, ձեռնադրվել Վրաստանի եպիսկոպոս:

Երկ. Վարք Մաշտոցի, Ե., 1995:

Գրկ. Բյուզանդացի Ն., Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900: Մարտիրոսյան Ա., Մաշտոց, Ե., 1982: Ա ճ ա ռ ե ա ն Հ., Հայոց գրերը, Ե., 1984:

Արտաշես Մարտիրոսյան

«**ԿՌՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ**», ազգային, բարոյախոսական, լուսավորական, բանասիրական, լրատվական ամսօրյա հանդես: Լույս է տեսել 1860–63-ին, Թիֆլիսում: Խմբագիր՝ Մ. Աղաբեկյան, հրատարակիչ-տնօրեն՝ Հ. Էնֆիաճյանց: Հանդեսի հավատամքը ազգի կրթությունն ու լուսավորությունն էր: Նրա մշակած լուսավոր. ծրագրում նախանշվել է հստակ տարբերակված կրթ. երկու համակարգ, որի հիմքում դրվել են հոգևոր և ազգ. ուսուցման ինքնուրույն ուղիները՝ կրթ. ողջ համակարգի ընդհանուր ղեկավարությունը հանձնարարելով բարձրաստիճան հոգևորականներին: Հանդեսը մշտապես անդրադարձել է բարոյական (կրոնական) և ազգ. (աշխարհիկ) կրթության կազմակերպման գործն. խնդիրներին, հայերի լուսավորության աղբյուրը համարել Հայ առաքելական եկեղեցին և հայերին կոչ արել պահպանել իրենց եկեղեցին, կրոնը, լեզուն: Ընդունելով, որ հայ հոգևորականները XIX դ. հետ են մնացել իրենց նախորդներից՝ հանդեսը, այնուամենայնիվ, ազգի հոգևոր վերածնության հուսալի հեռանկարները պայմանավորել է «եկեղեցու արիաշան հովիվների» եռանդուն գործունեությամբ, նրանց խելացի քարոզչությամբ: Մերժելով Հայ առաքելական եկեղեցու վերանորոգման՝ Ստ. Նազարյանցի տեսակետը («Ռեֆորմ ոտքից գլուխ»), հավատել է, որ Հայ առաքելական եկեղեցին կարիք չունի վերափոխման: Այն կարիք ունի միայն հայրենասեր հովիվների, որոնք, քարոզելով քրիստ. ճշմարտությունները, անփոփոխ կպահպանեն Հայ եկեղեցու ներքին և արտաքին դիմագիծը. «Հայոց ազգն իրեն եկեղեցու ամեն մի ծեսն, ամեն մի քարն, նրա սեղանի և

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
1860

խորանների չինվածքի ձևն անգամ անփոփոխ է համարում, սուրբ ու նվիրական...» («Կռունկ Հայոց աշխարհին», 1860, № 10, էջ 846):

«Կ. Հ. ա.» լուսաբանել է համայն հայության առօրյան, նրա հոգսերը և ապագայի ակնկալիքները: «Հայոց աշխարհին կռնկան խապրիկները» բաժնում հանդեսը հաղորդումներ է նվիրել Արևմտյան Հայաստանի իրադարձություններին: Հրատարակել է *Ազգային սահմանադրության* ընագիրը, լուսաբանել դրա քննարկման ընթացքը, բազմաբնույթ արժեքավոր նյութերով անդրադարձել Զեյթունի 1862-ի ապստամբությանը. տպագրել է ականատես ճանապարհորդների նոթեր, Ս. Երիցյանի նամակը Կ. Պոլսից, ֆրանս. «Նորդ» թերթից թարգմանված մի ծավալուն հոդված՝ Զեյթունի պատմության և վերջին անցքերի վերաբերյալ, ուղերձ՝ քրիստոնյա տերության մեջ ապրող հայերին, որ չմոռանան «խորը Տաճկաստանում կրակի ու սրի տակ հալումաշ եղող իրանց եղբարցը»: «Կ. Հ. ա.» կարևոր դեր է կատարել գրական աշխարհաբարի ձևավորման գործում՝ հրատարակելով Խ. Աբովյանի, Պ. Պռոշյանի, Գ. Շերմազանյանի, Ռ. Պատկանյանի և այլոց գեղ. երկերը: Հետաքրքրական է հանդեսի «Աղբյուր ազգային արդյան պատմության» բաժինը, որտեղ տպագրվել են ուղեգրական նոթեր, ուսումնասիրություններ, թարգմանություններ:

Մարգո Մխիթարյան

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏ, Վանա լճի Կտուց կղզում: Ըստ ավանդության, հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը* Հռոմից վերադառնալիս՝ այստեղ ամփոփելով իր հետ բերած Կենաց փայտի մի մասը և յոթ սրբերի մասունքները, կառուցել յոթ եկեղեցի ու իր աշակերտներից մեկին առաջնորդ կարգել: Կ. ա-ի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է XI դ.: 1462-ին անապատի վանահայր Գրիգոր եպիսկոպոսը Ստեփանոս վարդապետի ձեռքով վերանորոգել է Ս. Հովհաննես Կարապետ և Ս. Խաչ եկեղեցիները: XV դ. Կ. ա. դարձել է գրչության նշանավոր կենտրոն և ծաղկում ապրել հայտնի գրիչներ Խաչատուրի ու Հովհաննեսի գործունեությամբ: 1462-ին Խաչատուրը Հայսմավուրք է ընդօրինակել, որտեղ հիշատակում է իրեն օգնած բազմաթիվ միաբանների (ձեռագիրը նկարագարդել է Վասպուրականում հռչակված Մինաս ծաղկողը):

Խաչատուրի գործը շարունակել է Հովհաննեսը, որից մեզ հասած ամենահին ձեռագիրը 1470-ի է: Հայտնի են նաև Մինաս և Բարսեղ գրիչները (XV դ. 70–80-ական թթ.):

XVI դ. Կ. ա. անկում է ապրել: XVII դ. *Լիմ անապատի* միաբանների մի մասը տեղափոխվել է Կտուց կղզի, վերակենդանացրել Կ. ա., կառուցել բնակելի ու տնտ. շենքեր, նորոգել հները: 1712-ին Կ. ա-ի վանահայր Սիմեոն արքեպիսկոպոսը հիմնովին վերակառուցել է

Կտուց անապատի ընդհանուր տեսքը

Ս. Կարապետ եկեղեցին (ճարտ.՝ Խոշխաբար Բաղիշեցի): Սրբատաշ ֆելզիտով կառուցված, մեկ զույգ դմբեթակիր մույթերով եկեղեցու աղոթասրահը արլ-ից ավարտվում է յոթանիստ խորանով: Եկեղեցին ունեցել է որմնանկարներ (XX դ. սկզբին մույթերի վրա դեռևս նկատելի էին Աբգար Թագավորի և Կոստանդին կայսրի պատկերները):

1740-ին եկեղեցու արմ. ճակատին կից Կարապետ Դատիկ եպիսկոպոսը քառամույթ դավիթ է կառուցել, որի հս. պատից մուտք է բացվում դեպի ուղղանկյուն խորանով Ս. Հրեշտակապետաց մատուռը, որտեղ պահվել են Կ. ա-ի ձեռագրերը: Համալիրի հս-արմ-ում գտնվում են միջնադի չուրջը երկչար դասավորված մութ ու ցածր խցերը, արլ-ում՝ հյուրատունը, իսկ հվ-ում՝ վանահոր բնակարանը:

XIX դ. Կ. ա-ի թեմն ունեցել է ութ գյուղ: Նրան են պատկանել Վանա լճի մերձափնյա ցորենի արտերը, այգիներ, ձիթհանք, ջրաղաց, տներ, խանութներ ևն: Կ. ա. ամայացել է Մեծ եղեռնի ժամանակ:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Լալայան Ե., Վասպուրական. նշանավոր վանքեր, ԱՀ, պր. 1, Թ., 1912: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: *Бречиа Фратадокки Т., Несколько замечаний*

об архитектуре церкви Ктуц, Е., 1978; Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Արմեն Հախնազարյան

ԿՐՈՆ, փիլիսոփաներն ու աստվածաբանները կրոնը սահմանել են տարբեր ձևով՝ բնորոշման հիմքում դնելով մարդու այս կամ այն յուրահատուկ վերաբերմունքը այն բարձրագույն էակի կամ բարձրագույն ուժերի հանդեպ, որին կամ որոնց նա երկրպագում է: Ոմանք Կ-ի էությունն են համարել սուբյեկտիվ *հավատը*, ուրիշները՝ օբյեկտիվ *հայտնությունը*, ոմանք Կ. սահմանել են որպես մարդկային հոգու անհատական վերաբերմունք աստվածայինի նկատմամբ, ուրիշներն այն հանդեցրել են հավաքական ստեղծագործությանը և սոցիալական կազմակերպությանը, որոնք ծնում են պաշտամունք, *դավանանք*, կրոնական համայնք և *նվիրապետություն*: Ընդհանուր գծերով Կ. կարելի է բնորոշել որպես մարդկային հասարակության կազմակերպող և կազմակերպված հավատ, որպես կազմակերպված երկրպագում բարձրագույն ուժերին: Նման երկրպագումը՝ լինի դա զգայական, նյութական կամ թե ծառայության ոգով և ճշմարտությամբ, հավատացյալի համար ենթադրում է իր երկրպագած բարձրագույն ուժերի աներկբայորեն իրական լինելու գիտակցում:

Կ. սահմանվում է նաև որպես մարդու հավատն առ Աստված և այն պաշտամունքն ու *ծեսը*, որոնցով արտահայտվում է այդ հավատը: Կրոնագիտ. բացատրությամբ՝ Կ. աստվածությունը ներկայացնող համակարգ է, մարդու և Աստծո միջև հոգևոր հարաբերություն, որն իր արտահայտությունն է գտնում հավատի միջոցով, իսկ այդ հարաբերությունը տեղի է ունենում աստվածապաշտության, ծեսի ընթացքում:

Եվրոպ. լեզուներում religon բառի արմատը՝ reli, նշանակում է կապ, հարաբերություն, տվյալ դեպքում՝ մարդկանց և Աստծո միջև: Հայերենում, ըստ Հ. Աճառյանի Արմատական բառարանի՝ կարգ, կանոն, վարք, օրենք, սովորություն, վարդապետություն, հավատք. **կիր** (կրել) արմատից – **ոն** (օն) մասնիկով: Ըստ Հայկազյան բառարանի՝ **կրել և պահել** կամ **կրելի օրենք**: Ղ. Ալիշանի բացատրությամբ՝ **կիրք** բառից, իբրև «ներքին զգացում»:

Կ-ի ծագումը մարդկության չափ հին է և նախնադարյան շրջանից ունեցել է համամարդկային ու տիեզերական բնույթ: Չի եղել որևէ ժամանակաշրջան, մարդկային որևէ հասարակություն կամ հավաքականություն առանց Կ-ի, կրոն. զգացումի և կրոն. երևույթների: Կ. ունեցել է իր զարգացման պատմությունը և վաղ ժամանակների կրոն. հավատալիքներից, բնապաշտությունից, բազմաստվածությունից հասել է միաստվածության գաղափարին:

Կ. պայմանականորեն դասակարգվում է՝ 1. տոհմացեղային կամ նախնադարյան հասարակության հավատալիքներ (մոգություն, կախարդություն, ոգեպաշտություն, բնապաշտություն, տոտեմիզմ, ֆետիշիզմ, անիմիզմ ևն), 2. ազգային կամ մեկ էթնիկական կազմավորման Կ-ներ (հուդայականություն, հինդուիզմ, ջայնիզմ, սինտոյիզմ ևն), 3. համաշխարհային Կ-ներ, որոնցից ամենատարածվածներն են *քրիստոնեությունը*, բուդդայականությունը, մահմեդականությունը:

ԿՐՈՆԻԴԵՍ, սուրբ Կրոնիդես (ծ. թ. անհտ – 355 կամ 342, հանդչում է Մշո Ս. Կարապետ վանքին մերձ մի մատուռում՝ դործակցի՝ ս. Անտոն ճգնավորի հետ), III–IV դարերի ճգնավոր, հայ ճգնավորության հիմնադիրներից: Տես *Անտոն*:

Լևոն Սարգսյան

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ, կուսական *առաքինությունը* կրող կրոնավորների՝ կուսակրոնների ամբողջությունը: Հայ եկեղեցում գոյություն ունի ամուսնացյալ և կուսակրոն սարկավագություն (տես *Սարկավագ*) և քահանայություն (տես *Քահանա*): Կ. *նվիրապետության* մեջ առանձին կարգ չէ, այլ սարկավագության և քահանայության դասերից մեկը, քանի որ մեկ է սարկավագական *ձեռնադրությունը* և մեկ է քահանայական ձեռնադրությունն ու *օծումը*: Ձեռնադրվելուց հետո քահանան, եթե ամուրի է, ընդունում է Կ., կոչվում *աբեղա*, որին մասնավոր արարողությամբ, ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարվելու, տրվում է վեղար (տես *Զգեստ* եկեղեցական հոդվածում): Հայ եկեղեցում ամուսնացյալ եկեղեցականները քահանայությունից բարձր կարգ չեն կարող ընդունել:

Կ. գոյություն է ունեցել նաև նախաքրիստ. շրջանում, սակայն առավել տարածվել է քրիստոնեության մեջ: Առաքելական շրջանում Կ-յան համար հատուկ կարգադրություն և օրենք չի եղել. *առաքյալների*, նաև եկեղեցու սպասավորների, ավետարանչական և քարոզչ. աշխա-

տանքներին լծվածների մեջ կային և՛ ամուսնացյալներ, և՛ ամուրիներ: Հետագայում Կ. մենակեցության, *անապատականության* և ճգնական կյանքի հիմքի վրա զարգացել է, ստեղծվել են *վանքեր*, առաջացել *միաբանությունները*, և Կ. պարտադիր է դարձել վանականների (տես *Վանականություն*) համար: Վանքերում բնակություն հաստատած կուսակրոնները տրվել են առանձնության, աղոթքի, Ս. Գրքի ընթերցանության, պահքի և հոգևոր խորհրդածությունների՝ Աստծուն և հավատին նվիրվածության, զգաստության և ժուժկալության օրինակ դառնալով եկեղեցու մյուս անդամների համար: Հնում վանականների և անապատականների մեջ եղել են քահանայական ձեռնադրություն և օծում չունեցող կուսակրոն աշխարհականներ, որոնց ևս տրվել է վեղար: *Ներսես Շնորհալին* իր «Թուղթ ընդհանրական»-ում կուսակրոններին արգելել է դուրս գալ վանքերից և հաստատվել քաղաքներում ու գյուղերում: Հետագայում կուսակրոնները թեմերում զբաղեցրել են պաշտոններ, շփվել ժողովրդի հետ, զբաղվել քարոզչությամբ:

Կ. մեծ տարածում է գտել և պարտադիր դարձել հատկապես Կաթոլիկ եկեղեցում, որտեղ բոլոր հոգևորականները կուսակրոններ են: Կ. պարտադիր չէ Անգլիկան եկեղեցում, *եպիսկոպոսներն* անգամ ազատ են Կ-յան և ամուսնանալու հարցում: *Բողոքականությունը* մերժում է Կ.:

Հայ եկեղեցում Կ. մուտք է գործել տիրող սովորության համաձայն և հաստատվել ավանդությամբ: Գրիգոր Ա Լուսավորչից մինչև Սահակ Ա Պարթևը Հայոց *կաթողիկոսներն* ամուսնացած են եղել, սակայն կաթողիկոս ձեռնադրվելուց հետո դարձել են կուսակրոն: V դ. սկսած Հայ եկեղեցում վարչ. և քարոզչ. իշխանությունը վերապահվել է բացառապես կուսակրոններին, և բարձրաստիճան հոգևորականությունը (կաթողիկոս, եպիսկոպոս, *վարդապետ*) ընտրվում է կուսակրոն քահանաներից: Նրանք ստանձնում են նաև եկեղեց. պատասխանատու պաշտոններ: Կուսակրոն են ոչ միայն վանականները, այլև *Աթոռի* միաբանները:

ԿՈՒՍԱՆՈՑ, կուսաստան, վանքերում քրիստոնյա միանձնուհիների կրոնական հաստատություն, միաբանություն: Ղեկավարել է գլխ. մայրապետը (հիմնականում սարկավագուհու կոչումով), որն ուներ վանքի վանահորը գրեթե հավասար լիազորություններ: Կ. քրիստ. դաղափարախոսության արդասիք է, առաջացել է III–IV դդ.՝ աշխարհիկ կյանքը մերժելու, ճգնակեցությամբ և աղոթքներով Աստծուն մերձենալու նշանաբանով: Ծառայել է նաև բարեպաշտություն քարոզելու, հավատացյալներին ջերմեռանդ դարձնելու նպատակին: Կ. մտնողները ընդունել են նրա կանոնադրությունը, երդվել հավատարիմ մնալ կուսակրոն կյանքին, ենթարկվել իրենց մայրապետներին: Ուխտել են դառնալ գթության քույրեր հիվանդանոցներում և անկելանոցներում՝ կատարելով ամենադժվար աշխատանքները: Միանձնուհիներին տվել են նոր անուն, կտրել մազերը (խորհրդանշել է Աստծո ծառա դառնալը): Նախն. շրջանում Կ-ների ապրուստը հոգացել են միանձնուհիների ընտանիքները, մասամբ՝ պետությունը: Հետագայում նվիրատվությունների հաշվին Կ-ները դարձել են կալվածատերեր, որոնց կից սովորաբար գործել են հիվանդանոցներ: Միջնադարում Կ-ների թիվը խիստ աճել է համարյա բոլոր քրիստ. երկրներում: Հատկապես Եվրոպայում Կ. հաճախ ծառայեցվել է քաղ. նպատակների. բռնի այդտեղ են նետվել պալատական խարդավանքներում պարտություն կրած բարձրաստիճան կանայք, անգամ՝ թագուհիներ: Կ-ները համալրել են նաև դժբախտացած և կյանքից հիասթափված կանայք:

Առաջին Կ-ները հիմնադրվել են Եգիպտոսում, Պաղեստինում, Ասորիքում, Հռոմում: Նշանավորներից էր Պողոս առաքյալի Կ. Հռոմում, որտեղ հավաքվել էին ավետարանական մաքուր վարքագծով կույսեր: Նրանք քրիստոնեության արշալույսին դարձել էին նոր կրոնի ջատագովները՝ հաճախ ընդունելով մարտիրոսության պսակը: Հռոմի Կ-ից էին III դ. վերջին Հայաստանում ապաստանած կույսերը՝ Գայանեի մայրապետությամբ (տես *Հռիփսիմյանց կույսեր, Գայանյանց կույսեր*), որոնց նահատակված վայրերում *Գրիգոր Ա Լուսավորչի* նախաձեռնությամբ և *Տրդատ Գ Մեծի* օժանդակությամբ կառուցվել են վկայարաններ՝ այդտեղ ամփոփելով նրանց աճյունները (տես *Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանք, Էջմիածնի Ս. Գայանե վանք*): Ըստ ավանդ. պատմության, Հայաստանում առաջին Կ. հիմնադրել է *Բարդուղիմեոս* առաքյալը: Փավստոս Բուզանդը վկայում է, որ *Ներսես Ա Մեծը* ի շարս բազ-

մաթիվ բարեսիր. հաստատությունների հիմնադրել է նաև Կ-ներ, որոնք արգելվել են Պապ թագավորի (370–374) հրամանով: Հետագայում Հայոց նշանավոր Կ-ներից են եղել *Հալիձորի կուսանաց անապատը*, *Շնհերի կուսանաց անապատը*, Հաղպատի կուսանաց անապատը (XIII դ.), Նոր Ջուղայի Ս. Կատարինե վանքը: Վերջինս 1623-ին հիմնադրել են Նոր Ջուղայի Ս. Հովհաննես եկեղեցու մոտ ապաստանած երեք կույսեր: Գոյության առաջին հիսուն տարիներին միաբանների թիվը հասել է 33-ի, ապա հետզհետե նվազել է: 1954-ին Ս. Կատարինե վանքը փակվել է (ունեցել է նաև աղջկանց ճեմարան):

Թիֆլիսի Ս. Ստեփանոս Կ. վանքը 1727-ին հիմնադրել է Պեհբովդյանց ընտանիքը՝ իր կալվածքների վրա: Հիմնարկուները երկու կույս են հրավիրել Նոր Ջուղայից՝ Ս. Կատարինե վանքի կարգ ու կանոնը այստեղ հաստատելու համար: Կույսերի թիվը հասել է 18-ի (բոլորն էլ՝ սարկավագուհիներ): Վանքի մեծավորուհին (գլխ. մայրապետը) ավագ սարկավագության կոչում է ունեցել: Կ-ի բուն նպատակն էր որբ ու անտեր աղջնակներին խնամել, մեծացնել և «ի հարկին օժիտով ամուսնացնել»: Հիշվում է նաև Շուշիի Կ., որի անդամների թիվը չորս-հինգ հոգուց չի անցել:

Հիշարժան է Կ. Պոլսի Գալֆյան Կ.: Միաբանությունը 1866-ին հիմնադրել է Սրբուհի Գալֆյանը՝ որբախնամության հիմն. նպատակով: Անդամները եղել են սարկավագուհիներ, իսկ մեծավորուհին՝ ավագ սարկավագուհի: Կ. ցարդ գոյատևում է՝ ի դեմս միաբան-սարկավագուհի և այժմ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում ծառայող քույր Հռիփսիմե Սասունյանի:

Կիլիկյան Հայաստանում սարկավագուհիների մասին եղած մասնակի վկայություններից ենթադրվում է, որ այնտեղ էլ են եղել Կ-ներ:

Կ-ներին մեծ հարված է հասցրել Ռեֆորմացիան (XVI դ.) և Ֆրանս. մեծ հեղափոխությունը: *Բողոքականությունն* ընդհանրապես արգելել է նրանց գոյությունը: Խորհրդ. Միությունում և նախկին սոց. երկրներում կալվածքների և գույքի բռնագրավումից հետո Կ-ները գրեթե վերացել են: Հայաստանում ներկայումս գործում է *Անարատ հղության հայ քույրերի միաբանության* մասնաճյուղը՝ «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» անունով:

Գրկ. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987: Աբել աբեղա, Հայ եկեղեցու սարկավագուհիները, Նյու Յորք, 1991: Նույնի, Հայ եկեղեցու սարկավագուհիները կանոնական տեսանկյունից դիտված, «Էջմիածին», 1993, № 1–3:

Սահակ Սահակյան

ԿՈՒՔԻԻ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ, Հազարաբյուրաց վանք, պատմական Շահապոնք գավառի Կուքի գյուղի մոտ: Կառուցվել է XIII դ., եղել Խաղբակյան իշխանների տիրույթի հոգևոր կենտրոններից: Քառանկյունի, հվ. մեծ դարպասով պարսպին արմ. և հվ. կողմերից կից են խցերը, բակի հվ-ում աղբյուրի շենքն է, կենտրոնում՝ ներքուստ խաչաձև, եռախորան, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն եկեղեցին, որին արմ-ից կից է զույգ թաղակիր կամարներով գավիթը: Հս-արմ. կողմում, մոտ 1 մ հեռու, երկար, թաղածածկ, երեք երդիկով լուսավորվող շինությունն է, որը, հավանաբար, վանքի գրատուն-մատենադարանն է եղել: Համալիրն այժմ կիսավեր է: Վանքի տարածքում Պռոշ իշխանի ավագ որդի Պապաքի՝ 1287-ին կանգնեցրած խաչքարն է, հս-արմ. կողմում՝ գերեզմանատունը:

Կ. Ս. Ն. վ. եղել է գավառի մշակութ. կենտրոնը, այստեղ ընդօրինակվել և գրվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից պահպանվել են *Ներսես Լամբրոնացու* «Պատարագի» երկու մեկնությունները (1276 և 1333), Հովհաննես Քոնեցու թարգմանած «Գիրք դժոխոցը» (XIV դ.), Արիստոտելի «Գիրք ստորոգութեանցը» (1409) ևն: XV դ. վանքում բեղմնավոր գործունեություն է ծավալել Մանուել գրիչը, որի ընդօրինակած և նկարազարդած ձեռագրերից առավել արժեքավոր են Հայսմավուրքը (1471), Գանձարանը (1478), Մաշտոցը (1493), Ավետարանները (1495 և 1496):

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1942: Այվազյան Ա., Օձոփի և Կուքիի հուշարձանները, ՊԲՀ, 1976, № 2:

Մուրադ Հասրաթյան

Հ

ՀԱԼԵՊԻ Ս. ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Բերիո թեմի առաջնորդանիստ եկեղեցի: Հիմնադրվել է XIV դ.: Առաջին պատմ. հիշատակությունը վերաբերում է 1429-ին, նորոգվել է 1452-ին: Վարպետ Հիսա Հռոմկլայցին 1499-ին կառուցել է եկեղեցու խորանը: Հ. Ս. Ք. Մ. ե-ու մատուռ-դամբարանում են թաղվել XVI–XVII դդ. տաղերգու Ազարիա Ջուղայեցին, Պետրոս Կարկառեցին (1608):

Ներկայիս եկեղեցին 1616-ին կառուցել է իշխան Զելեպին՝ իր ազգական Սանոս Զելեպիի վերակացությամբ: Հ. Ս. Ք. Մ. ե. բաղկացած է առանց միջնապատի միմյանց կից երկու եռանավ բազիլիկներից, որոնցից հվ-ը ունի չորս զույգ, հս-ը՝ ավելի մեծը, երեք զույգ մույթեր, ներսից բազմանիստ խորանի երկու կողքերին՝ ուղղանկյուն ավանդատներ, արմ. կողմում՝ վերնահարկ-պատշգամբ՝ երգչախմբի համար: Ծածկերն իրականացված են խաչվող թաղերով:

Հ. Ս. Ք. Մ. ե-ուն կից են օժանդակ սենյակներ, հվ-արմ. կողմից՝ բարձր, սլացիկ, ժամացույցով զանգաշտարակը, շուրջը տեղադրված են առաջնորդարանի շենքերը, դահլիճը, բակում՝ Մեծ եղեռնին նվիրված հուշարձան (բոլորը՝ XX դ.): Եկեղեցու տակ ընդարձակ գետնափոր հարկ է՝ ջրհորով, գաղտնի անցքով: Այն միջնադարում ծառայել է իբրև ապաստարան-թաքստոց, ապա՝ ամռան հեղձուցիչ տապին՝ զով ներքնատուն հոգևորականների համար:

Հ. Ս. Ք. Մ. ե-ու հս. պատին կան XVII–XVIII դդ. խոշոր, մեծաղիր «Ահեղ դատաստան», «Քառասուն մանկունք» և «ս. Գևորգ» յուղաներկ նկարները: Ըստ արձանագրության, «Ահեղ դատաստանը» (1,5x3 մ չափերով) մահտեսի Գրիգորի պատվերով նկարել են քհն. Նեյմեթուլլան և նրա որդի Անանիան՝ 1708-ին: Նկարը հիմնականում ունի կանոնիկ հորինվածք՝ վերևում, դահին նստած Քրիստոսի երկու կողքերին խոնարհված կանգնած են Աստվածածինն ու Հովհաննես Մկրտիչը, կենտրոնում՝ հրեշտակի շուրջը պատկերված են դերեզմանից ելնող հոգիները, նրանց կուլ տվող դազաններն ու ձկները, արդար ծերունիները, «խելոք և հիմար կույսերը» ևն: Նկարում միաժամանակ կան և՛ գծանկարային լուծումով (մեղավորներին դժոխք տանելը), և՛ գեղանկարչ. խոշոր ծավալներով ստեղծված հատվածներ (հրեշտակներ, կույսեր), ինչպես նաև սրբապատկերներից եկող հարթապատկերային մանրամասեր: Առատ օգտագործված ոսկեզօծ մակերեսների հետ (Գաբրիել Հրեշտակապետի թևերը) առկա է վառ գույների արլ. ճոխությունը (հատկապես ծաղկազարդերում): Հ. Ս. Ք. Մ. ե-ու «Ահեղ դատաստան» կտավում զուգակցվում է բյուզ. նկարչության, արաբ. զարդարվեստի և հայկ. մանրանկարչության ազդեցությունը:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.2, 1-ին պատկերը:

Գրկ. Սուրմեյան Ա., Պատմութիւն Հալեպի հայոց, հ. 3, Փարիզ, 1950: Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1979: Տեր-Գևորգյան Շ., Ակնարկ Հալեպի Ս. Քառասնից

Մանկանց եկեղեցու գետնափոր կառույցի մասին, «Գեղարդ: Սուրիահայ տարեգիրք», գիրք 2, Հալեպ, 1976–78:

Մուրադ Հասրաթյան

ՀԱԼԻՃՈՐԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ, Հալիձորի բերդ, ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի շրջագծի մեջ մտնող Բեխ գյուղի մոտ, Ողջի գետի աջ ափին, զառիթափ անտառապատ լեռան լանջին: Հիմնվել է XVII դ. 1-ին կեսին. հիշատակվում է 1653-ին անապատի մայրապետ Հռիփսիմեի՝ ձեռագիր ընդօրինակելու առիթով: 1668-ին ունեցել է 70 միանձնուհի: 1711-ին անապատում չարամենդորեն սպանվել է Տաթևի վանքի առաջնորդ Առաքել եպիսկոպոսը: XVIII դ. հայ զորավար Դավիթ Բեկը, անառիկ դիրքի շնորհիվ, Հ. Կ. ա. դարձրել է Սյունիքի ազատագր. պայքարի գլխ. ամրոցը: Սակայն այդ տարիներին ևս այն մնացել է մենաստան: Երբ 1727-ին թուրք. բանակը պաշարել է Հալիձորը, պաշտպանությանը մասնակցել են նաև միանձնուհիները: Համալիրը շրջապատված է պարիսպներով, որոնք հատակագծում ունեն տեղանքից բխող անկանոն քառանկյան ձև: Միակ՝ շրջանաձև բուրգը ամրոցի հվ-արմ. անկյունում է: Անմշակ

Հալիձորի Կուսանաց անապատը (XVII դ.) արլ-ից

բազալտով կառուցված խոշոր եկեղեցին ունի թաղածածկ դահլիճի հորինվածք, որին հս-ից և հվ-ից կից երկհարկ շինությունները գավթի դեր են խաղացել, իսկ դրանց տանիքներից գնդակոծել են թշնամուն: Հ. Կ. ա-ի պաշտպանական հաջող համակարգը և անառիկ դիրքը հնարավորություն են տվել այստեղ պատըսպարված Դավիթ Բեկին իր փոքրաթիվ զինակիցներով հաջողությամբ դիմադրել թուրք. բազմահազարանոց բանակի հարձակմանը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Հասրաթյան Մ., Հալիձորի բերդը, «Հայկազյան հայագիտական հանդես», 3, Բեյրութ, 1972:

Մուրադ Հասրաթյան

ՀԱԼԻՃՈՐԻ ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ, տես *Սյունյաց Մեծ անապատ*:

ՀԱԿՈԲ Ա ԿԼԱՅԵՑԻ, Տարսոնացի, Սսեցի (1200-ական թթ. – 12.2.1286, Հռոմկլա), Ամենայն Հայոց կաթողիկոս 1268-ից: Հաջորդել է *Կոստանդին Ա Բարձրբերդցուն*: Կաթողիկոս է դարձել Մամեստիայում (Մսիս) Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ի գումարած ազգ-եկեղեց. ժողովի ընտրությամբ և օծվել նույն քաղաքում՝ փետր. 12-ին: Հայտնի է որպես գիտնական ու հռետոր, մեծ վարդապետ, մեկնիչ ու բանաստեղծ: Եղել է Մեծքարի վարդապետանոցի առաջնորդը, Կոստանդին Ա Բարձրբերդցու գործակիցը, օգնականն ու տեղապահը: Նրա հանձնարարությամբ 1240-ական թթ. սկզբին և 1254-ին Նիկիայում քաղ-միաբանական հաջող բանակցություններ է վարել հույն պատրիարքներ Գերմանիկոս II-ի ու Մանվելի և Հովհաննես Վադակես կայսրի հետ: Մասնակցել է 1243-ի և 1248-ի *Սսի եկեղեցական ժողովներին*: Հ. Ա. Կ. որպես անդրանիկ հայրապետ. կոնդակ օգտագործել է *Ներսես Շնորհալու* «Թուղթ ընդհանրական»-ը՝ իր կողմից ավելացնելով նրա ընթերցումը պարտադրող մի թուղթ և տարածել գլխ. թեմերում ու վանքերում: Իր հայրապետ. գործունեությամբ, որպես Հայ եկեղեցու ավանդույթների նախանձախնդիր պաշտպան, շարունակել է Կոստանդին Ա Բարձրբերդցու քաղաքականությունը՝ Հայ եկեղեցու անկախության և ծիսադավան. ինքնուրույնության պահպանման ուղղությամբ: Մերժել է Հռոմի Գրիգոր X պապի 1271-ին Լուգդունում գումարած ժողովին մասնակցելու հրավերը, պայքարել լատինադավանների դեմ: Օծել և գործակցել է Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Գ-ին, հաշտ հարաբերություններ պահպանել հարևան իշխանությունների հետ, նպաստել հայ-եգիպտ. հաշտության կնքմանը (1282): Հ. Ա. Կ. հայտնի է նաև որպես շարականագիր: Նրա գրչի արդասիքն է *Շարակնոցը* բացող, ս. Աստվածածնի ծննդյանը ձոնված առաջին կանոնը («Երգեցեք որդիք Սիոնի»), որը հորինված է հայ շարականերգության ավանդ. և նոր՝ կիլիկյան դպրոցի լավագույն ձեռքբերումների հմուտ համադրմամբ:

Կաթողիկոս. դահին Հ. Ա Կ-ուն հաջորդել է *Կոստանդին Բ Կատուկեցին*:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.2, 2-րդ պատկերը:

ՀԱԿՈԲ

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Անապատական, Համառօտ պատմութիւն հայ-լատին յարաբերութեանց սկիզբէն մինչև 1382, Անթիլիաս, 1981: Թահմիզյան Ն., Երաժշտությունը հայկական Կիլիկիայում, Ե., 1989:

Արթուր Կարապետյան
Աննա Արևշատյան

ՀԱԿՈԲ Բ ԱՆԱՎԱՐՁԵՑԻ, Տարսոնացի, Սսեցի (1280-ական թթ., Տարսոն – 1359, Սիս), Ամենայն հայոց կաթողիկոս 1327–41-ին, հաջորդել է *Կոստանդին Դ Լամբրոնացուն*, և 1355–59-ին, հաջորդել է *Մխիթար Ա Գոներցուն*: Հայոց կաթողիկոս *Գրիգոր Է Անավարզեցու* քրոջ որդին: Սովորել է Սսի կաթողիկոսարանում, եղել կաթողիկոսարանի, ապա՝ Կապանի (Կիլիկիայում) եպիսկոպոս, Անարզաբայի (Անավարզա) արքեպիսկոպոս: Մինչև կաթողիկոսանալը Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Ե-ի հանձնարարությամբ դեսպանագնացությունների է մեկնել Եվրոպա՝ օգնություն հայցելու: Գահակալման առաջին տարիներին շարունակել է Լևոն Ե-ի լատինամետ քաղաքականությունը՝ հույս ունենալով Հռոմի պապերի աջակցությամբ ստանալ եվրոպ. երկրների օգնությունը՝ ընդդեմ եգիպտ. սուլթանների և շրջակա մահմեդ. իշխանությունների հարձակումների: Սակայն հիասթափվելով պապերի կեղծ խոստումներից, ինչպես և տեսնելով Կիլիկիայում ու բուն Հայաստանում *ունիթորության* ազդեցության տարածումը և վնասակարությունը Հայ եկեղեցու համար՝ հրաժարվել է նախկին քաղաքականությունից, դարձել հակունիթորական, Հայ եկեղեցու ծիսադավան. անկախության ջերմ պաշտպան ու հայ-եգիպտ. մերձեցման կողմնակից: 1337-ին օգնել է Լևոն Ե-ին՝ եգիպտացիների հետ կնքելու հաշտության պայմանագիր, որի առաջին պայմանը եվրոպ. պետությունների հետ հարաբերությունների դադարեցումն էր: Իսկ երբ արքունիքում մեծ ազդեցություն ձեռք բերած լատինների և լատինամետ հայ իշխանների ու կրոնավորների ճնշմամբ Լևոն Ե նորից Արևմուտքի հետ դաղտնի հարաբերություններ է սկսել, Հ. Բ Ա. ընդդիմացել է դրան: Սկսված երկպառակությունների պատճառով 1341-ի սկզբին ստիպված հրաժարվել է գահից: Նրան հաջորդած Մխիթար Ա Գոներցու մահից (1355) հետո նորից է ընտրվել Հայոց կաթողիկոս (աննախադեպ փաստ Հայ եկեղեցու պատմության մեջ): Երկրորդ գահակալման ընթացքում Հայ եկեղեցու գործերը վարել է կանոնավոր և խաղաղ, Կիլիկիայի Հայոց թագավոր Կոստանդին Դ-ի հետ գործել համերաշխ և դադարեցրել հարաբերությունները Արևմուտքի հետ:

Կաթողիկոս. գահին Հ. Բ Ա-ուն հաջորդել է *Մեսրոպ Ա Արտազեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՀԱԿՈԲ Գ ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ – 1411, Սիս), Ամենայն հայոց կաթողիկոս 1404-ից: Հաջորդել է *Կարապետ Ա Կեղեցուն*: Կաթողիկոս. աթոռին է նստել Սսի մահմեդ. տիրակալ Ռամազան ամիրայի աջակցությամբ: Ի նշան երախտիքի կաթողիկոսարանի թանկարժեք շատ սպասքներ ընծայել է ամիրային: Սսի կաթողիկոսարանն ընկել է ծանր պարտքերի տակ: Թղթակցել է *Գրիգոր Տաթևացու* հետ, որի խորհրդով բանադրանքից ազատել է Աղթամարի կաթողիկոսությունը (1409) և կատարել առաջին քայլն այդ աթոռի հավակնությունը, որպես Ամենայն հայոցի, ի չիք դարձնելու ուղղությամբ: Իրեն հորջորջել է «կաթողիկոս ամենայն Հայկազնեայց հանուրց և Վաղարշապատու», որով հակաթոռ բոլոր կաթողիկոսությունները պարտավորվելու էին ճանաչել Ս. Էջմիածինը որպես կաթողիկոս. աթոռի բուն նստավայր, իսկ իրենց՝ տեղական աթոռներ: Սակայն նրա ջանքերը որևէ արդյունք չեն ունեցել, և Սսի Հայոց կաթողիկոսությունը շարունակել է անկում ապրել: Ենթադրվում է, որ նրան թունավորելով սպանել են ընդդիմադիր միաբանները:

Կաթողիկոս. գահին Հ. Գ Ս-ուն հաջորդել է *Գրիգոր Ը Խանձողատը*:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786, էջ 455–457: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

Աղավնի Ութուջյան

ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1598, Նոր Ջուղա – 1.8.1680, Կ. Պոլիս, ամփոփվել է Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցու բակում), Ամենայն հայոց կաթողիկոս 1655-ից: Հաջորդել է *Փիլիպոս Ա Աղբակեցուն*: 1605-ին, շահ Աբբասի բռնագաղթի ժամանակ, Հ. Դ Ջ-ու ընտանիքը տեղահանվել և հաստատվել է Սպահանում, որտեղ ստացել է նախնական կրթությունը՝ աշակերտելով Նոր Ջուղայի թեմի առաջնորդ, Նոր Ջուղայի դպրոցի հիմնադիր և մատենադիր Խաչատուր Կեսարացուն: Բարձրագույն հո-

գևոր ուսումն ստացել է Էջմիածնում՝ աշակերտելով Մելքիսեդեկ Վժանեցուն և *Սիմեոն Ջուղայեցուն*: Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի ժամանակ վարել է Մայր աթոռի գործերը, իսկ նրա երկարատև շրջագայությունների ընթացքում զբաղեցրել տեղապահության պաշտոնը: Կաթողիկոսական առաջին իսկ տարիներից մեծ աշխատանք է կատարել Մայր աթոռը նյութապես ապահովելու և հզորացնելու համար: Շահ Աբբասի հատուկ հրամանագրով հաստատել է Մայր աթոռի իրավունքները, ընդարձակել աթոռապատկան գյուղերի կալվածքները, ավելացրել վանքապատկան գյուղերի թիվը, կառուցել ջրատարներ, ջրամբարներ, ջրաղացներ: 1658-ին ավարտին է հասցրել Ս. Էջմիածնի վանքի զանգակատան կառուցումն ու քանդակազարդումը, ամբողջությամբ վերաշինել *Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքը*, նորոգել Ս. Գայանեի և Ս. Հռիփսիմեի վկայարանները: Հ. Դ Ջ. արդյունավետ գործունեություն է ծավալել կրթության, լուսավորության բնագավառներում: Նրա միջնորդությամբ *Առաքել Դավրիժեցին* ավարտին է հասցրել իր «Գիրք պատմութեանց» երկը: Հայ տպագրությունը խթանելու նպատակով՝ Հ. Դ Ջ. Եվրոպա է ուղարկել Մատթեոս Վանանդեցուն, Մատթեոս Ծարեցուն, *Ոսկան Երևանցուն* և ուրիշների: Հաջողությամբ վարել է նաև Մայր աթոռի արտաքին գործերը: 1665–67-ին այցելելով Զմյուռնիա, Երուսաղեմ, Կ. Պոլիս՝ հաջողությամբ կարգավորել է Աղթամարի կաթողիկոսության, Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների միջև սկված պառակտումներն ու հակաթոռության չփոթությունները:

Հ. Դ Ջ. ունեցել է Արևմուտքի օգնությամբ Հայաստանը պարսկ. լծից ազատագրելու քաղ. մեծ ծրագիր: Հուսալով Հռոմի պապի հետ համաձայնության եզրեր գտնել համաքրիստ. գաղափարախոսության շրջանակներում՝ ձգտել է պապի հովանավորությամբ անցկացնել ներքին բարեկարգություններ: Այդ նպատակով Ալեքսանդր VII պապին հղել է Հայ եկեղեցու հավատո խոստովանության ուղերձը, թղթակցել Կղեմես X պապի հետ: Փորձել է դավանաբան. հարցերը լծորդել քաղաքականի հետ: Կապեր է ունեցել Ֆրանսիացի միսիոներների հետ՝ ակնկալելով Լյուդովիկոս XIV թագավորի հովանավորությունը: Ներքին քաղ. ծրագրերի քննարկման շուրջ 1677-ին Էջմիածնում, Ղարաբաղի մելիքների և հոգևորականների մասնակցությամբ գումարել է խորհրդակցություն, որտեղից էլ սկսվել է Արևելյան Հայաստանի ազատագրության համար Իսրայել Օրու հայրենանվեր գործունեությունը: Հիմնականում իր քաղ. ծրագրերի, իսկ մասնավորապես Երուսաղեմում Եղիազար Ա Այնթապցու մտահղացած հակաթոռ կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության հետ վերստին ծագած խնդիրները կարգավորելու նպատակով, կազմել է պատվիրակություն և ուղևորվել Կ. Պոլիս ու Եվրոպա: Ճանապարհին՝ Թիֆլիսում բանակցել է Քարթլիի Գեորգի XI թագավորի և Վրաց կաթողիկոսի հետ, նրանց հետ մշակել հայ-վրաց. համատեղ պայքարի ծրագիր: 1679-ի վերջին ժամանել է Կ. Պոլիս, ազգօգուտ խնդիրներ լուծելու մտահոգությամբ բանակցել պապական ներկայացուցիչների հետ, նամակներ հղել Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկուն: Նպատակ է ունեցել իր ծրագրերի շուրջ հրավիրել խորհրդակցություն, ապա ուղևորվել Հռոմ, սակայն վերջնականապես հասկանալով, որ Հռոմի հետ մերձեցումը կխաթարի Հայ եկեղեցու ինքնությունը՝ հրաժարվել է այդ մտադրությունից: Թեև կողմնակից էր Արևմուտքի հետ համագործակցությանը, Հ. Դ Ջ. նամակ է հղել նաև ռուս. ցար Ալեքսեյ Միխայլովիչին՝ Ռուսաստանից ակնկալելով օգնություն և հովանավորություն: Հ. Դ Ջ-ու մահից հետո պատվիրակությունը վերադարձել է: Կաթողիկոսի գերեզմանը ճանաչվել է Հոգևոր-Տեր անունով և դարձել ուխտատեղի:

Կաթողիկոս. գահին Հ. Դ Ջ-ուն հաջորդել է *Եղիազար Ա Այնթապցին*:

Գրկ. Զաքարիա Սարկավագ (Քանաքեռցի), Պատմագրութիւն, Վաղ-պատ, 1870: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Ե., 1959:

Էլեոնորա Հարությունյան

ՀԱԿՈԲ Ե ՇԱՄԱԽԵՑԻ (XVII դ. վերջ, Շամախի – 21.3.1763, Վաղարշապատ, ամփոփված է Էջմիածնի Ս. Գայանե եկեղեցու բակում), Ամենայն հայոց կաթողիկոս 1759-ից, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: Հաջորդել է *Աղեքսանդր Բ Բյուզանդացուն*: Մանկությունից բնակվել և ուսանել է Էջմիածնի կաթողիկոսարանում՝ դառնալով Մայր աթոռի միաբանության նշանավոր անդամներից: Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու բնորոշմամբ՝ «գիտուն և չնորհաշատ» վարդապետ, տիրա-

պետել է տարբեր լեզուների: 1743-ից կազմել է Գավազանագիրք՝ շարադրելով կաթողիկոսարանի դեպքերը: 1747-ին այլոց հետ ենթարկվել է *Ղազար Ա Ջահկեցու* հալածանքներին: *Մինաս Ա Ակներցի* և Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսների օրոք եղել է նրանց փոխանորդը և Հայրապետանոցի ընդհանուր հոգաբարձուն, իսկ 1755–59-ին՝ կաթողիկոսական տեղապահ: Կ. Պոլսում հրավիրված ժողովում (1759) ընտրվել է կաթողիկոս, օծվել՝ Էջմիածնում:

Հ. Ե Շ. ծավալել է շին. մեծ գործունեություն, նորոգել է Երևանի տարածքի մեջ մնացող Ջորագյուղի անապատը՝ դարձնելով «տուն հայրապետանիստ», կարգավորել Էջմիածնի վանքապատկան կալվածագրերը: Պարսիկ խաների և կովկասյան լեռնականների իրար հաջորդող ասպատակություններին վերջ տալու և Արլ. Հայաստանը պարսկ. տիրապետությունից ազատագրելու նպատակով կապեր է պահպանել ժամանակի նշանավոր գործիչների հետ: 1760-ի գարնանը Վաղարշապատում զրույցներ է ունեցել հայ ազատագր. շարժման գործիչ Հովսեփ Էմինի հետ, նամակներ գրել Վրաց Թեյմուրազ II և Հերակլ II թագավորներին: Կոնդակ է հղել (20.7.1760) Ռուսաց կայսրուհի Ելիզավետա Պետրովնային՝ խնդրելով օգնել հայ և վրաց ժողովուրդներին՝ ազատագրվելու պարսկ. լծից:

Կաթողիկոս. գահին Հ. Ե Շ-ուն հաջորդել է *Սիմեոն Ա Երևանցին*:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786, էջ 865–866, 871: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

ՀԱԿՈԲ ԹՈԽԱԹՑԻ [1563, ք. Եվդոկիա (Թոխաթ) – 1657/63], տաղասաց, թարգմանիչ, գրիչ: Աշակերտել է Հակոբ Այվաթենց Թոխաթցուն, որից տարբերվելու համար իրեն կոչել է Հակոբ Բաթուկենց Թոխաթցի: 1593–95-ին՝ քահանա Օլախաց երկրի (Վալախիա) Յաշ քաղաքում, ապա Հոգևոր գործունեությունը շարունակել է Ջամոշչում (Արմ. Ուկրաինա): Հեղինակ է «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» (1595–96), «Տաղ և ողբանք ի վերայ Եւդոկիա քաղաքին» (1604) պատմ. թեմայով ողբերի, քնար. բնույթի զղջական-խրատ. տաղերի, դանձերի ու ներբողների: Հիշարժան է նրա «Յակոբի Սաղմոսարան» (1627) ստվարածավալ երկը, որը Դավթի սաղմոսների չափածո վերաշարադրանքն է: 150 սաղմոսները մշակված են հանգավոր ոտանավորով, տաղաչափ. բազմազան ձևերով: Սկսվում է յուրահատուկ նախերգանքով՝ 3 բանաստեղծությամբ, որոնցից երկուսը հորինված են *Գրիգոր Նարեկացու* ազդեցությամբ՝ «Ի բանից Նարեկայ» հեղինակային նշումով: Դրանք «Մատյան ողբերգության» պոեմի առաջին գլուխների քաղվածո հանգավոր վերամշակումն են՝ *տաղի* և *դանձի* գրական ձևերով:

Հ. Թ. լատ-ից հայերեն է թարգմանել հնդկ. «Եօթն իմաստասիրաց պատմութիւն»-ը (1614), որը, խմբագր. որոշ փոփոխություններով, հրատարակվել է 9 անգամ (առաջին անգամ՝ 1696-ին): Այս գործը հայերենից թարգմանվել է թուրք. (1803), ռուս. (1847), ֆրանս. (1919), վրաց. (XIX դ., անտիպ):

Հ. Թ-ու գրչությամբ պահպանվել է 6 ձեռագիր (Երևանի, Վիեննայի Կայսերական և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանների հավաքածուներ): Բացառիկ արժեք ունի նրա գրչագրած «Գեղայի տաղարանը» (Մատենադարան, ձեռ. № 10050), որն ամփոփում է հայ միջնադարյան բանաստեղծության հարյուրավոր նմուշներ:

Գրկ. Ակինյան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, Վնտ., 1921, էջ 141–202: Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր (XIV–XVII դդ.), Ե., 1969, էջ 167–176, 264–273: Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975:

Պողոս Խաչատրյան

ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ [1360-ական թթ., Սուրխաթ (Ղրիմ) – 1426, Յիպլանվանք], տոմարագետ, մեկնիչ, մանկավարժ, երաժշտագետ: Սկզբ. կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել Երզնկայի դպրոցում: Ավարտելուց (1389) հետո դասավանդել է նույն դպրոցում, որտեղ ուսուցչի՝ Գևորգ վրդ. Երզնկացու խնդրանքով գրի է առել իր դասախոսությունները և կազմել տոմարագիտության ձեռնարկ (ձեռագրերում պահպանվել է «Ի խնդիրս հասարակաց օգտի» վերնագրով): «Հարցումն Գէորգ բաբունապետի և ծառայաբար կատարումն Յակոբ աշակերտի» աշխատության մեջ քննել է տոմարագիտ-եկեղեց. հարցեր, որոնց *Հովհաննես Սարկավագից* հետո ոչ ոք չէր անդրադարձել: Աշխատության հրատապությունը պայմանավորված էր Հայ առաքելական եկեղեցին մյուս եկեղեցիների ազդեցություններից զերծ պահելու միտումով: 1410-ին Հ. Ղ. հրավիրվել է *Մեծոփավանքի* նորաբաց դպրոցը, դասավանդել տոմարագիտություն, իմաստասիրություն,

գրչության արվեստ, երաժշտություն: Թովմա Մեծոփեցու խնդրանքով խմբագրել, լրացրել, առավել ամբողջական է դարձրել Գրիգոր Տաթևացու երկհատորյա «Քարոզգիրքը» (1415), գրել իր մեծարժեք «Մեկնութիւն տումարի» (1416) երկը, որը երկար ժամանակ ուս. ձեռնարկի դեր է կատարել և լավագույնս գաղափար է տալիս միջնադարյան Հայաստանի բարձրագույն ուս. հաստատություններում քառյակ գիտությունների՝ թվաբանության, երկրաչափության, երաժշտության և աստղաբաշխության բնագավառներում դասավանդվող գիտելիքների ծավալի և բովանդակության մասին: 1416-ին գրել է նաև «Յաղագս ազգականութեան», «Յաղագս պսակի ամուսնացելոյ» գործերը:

«Հակոբ Ղրիմեցի», գծանկար 1756-ին ընդօրինակված «Տումարի մեկնութիւն»-ից (Մատենադարան, ձեռ. № 2013)

Երկ. Տումարագիտական աշխատություններ (աշխատասիր. Զ. Էյնաթյանի), Ե., 1987:

Գրկ. Խաչիկյան Լ., Հայ բնագիտական միտքը XIV–XVIII դարերում, ՊԲՀ, 1971, № 2:

Զուլիետա Էյնաթյան

ՀԱԿՈԲ ՄԾԲՆԱՑԻ, սուրբ Հակոբ Մծբնա հայրապետ (ծ. թ. անհտ, ք. Մծբին – 338/348, Ռշտունիք), ճգնավոր, համաքրիստոնեական սուրբ, Մծբինի ասորի եպիսկոպոս: Երիտասարդ տարիքից տրվել է ճգնողական-աղոթանվեր կյանքի: Ըստ հայոց *Ճառընտիրների՝ Գրիգոր Ա Լուսավորչի* հորաքրոջ որդին էր, պարթևական տոհմից: Ըստ վկայաբանության, Հայոց Խոսրով Ա Մեծ (211–259) թագավորի սպանությունից հետո, դայակի ձեռքով տարվել է Կեսարիա, որտեղ կրթվել է քրիստ. հավատքով: Ապա քույրը նրան տարել է Պարսկաստան, որտեղ Հ. Մ. ապրել է արքունիքում: Սակայն հետագայում ընտրել է ճգնավոր. կյանքը և, Սուրբ Հոգու ներգործությամբ, մեկնել Մծբինի վանքերից մեկը՝ Մարուգե (Մարուքե) ճգնավորի մոտ:

Հ. Մ., Եղիա մարգարեի նման վերարկուն ջրերին զարնելով՝ քայլել է Սաթիթմա կոչվող գետի ջրերի վրայով: Կամեցել է բարձրանալ Արարատ (*Մասիս*) լեռը՝ Նոյյան տապանը գտնելու, բայց Մասիսի լանջերին հոգնել է և ննջել: Ըստ ավանդության, Աստծո հրեշտակը նրան մատուցել է Նոյյան տապանից փայտի մի կտոր: Այնտեղ, որտեղ Հ. Մ. հրեշտակից ստացել է Նոյյան տապանի կտորը, հիմնվել է *Ակոռիի Ս. Հակոբ վանքը*. այստեղ էլ պահվել են Հակոբ Մծբնա հայրապետի մատի ոսկրը և Նոյյան տապանի փայտի կտորը՝ միմյանց շղթայով ամրացված (այժմ Հ.Մ-ու Աջի հետ այդ փայտի կտորը պահվում է Ս. Էջմիածնի վանքում):

338-ին Հ. Մ. կազմակերպել է Պարսից արքա Շապուհ II-ի զորքերից պաշարված Մծբինի 70-օրյա պաշտպանությունը: Սուրբ Մարուգե ճգնավորի տեսիլքի համաձայն ընտրվել է Մծբինի եպիսկոպոս (320-ական թթ.): Ենթադրվում է, որ մասնակցել է *Նիկիայի Ա տիեզերական ժողովին* (325): Եղել է *Եփրեմ Ասորու* ուսուցիչը: Ըստ ավանդությունների, գործել է հրաշքներ՝ մեռցրել է մեռած ձևացածին և ապա կենդանացրել նրան, Հիսուս Քրիստոսի անունով բուժել անդամալույծների, հարություն տվել մի մեռած մանկան ևն:

Հայ եկեղեց. մատենագրության մեջ Հ. Մ-ու անունով հայտնի է 22 ճառերից բաղկացած «Զգոն» կամ «Զգոն գիրք» ժողովածուն, որը, սակայն, իրականում պատկանում է III–IV դդ. պարսիկ կամ ասորի քրիստոնյա հեղինակ Ափրահատի գրչին:

Հույն եկեղեցին ս. Հ. Մ-ու հիշատակը տոնում է հոկտ. 31-ին, Կաթոլիկ եկեղեցին՝ հուլիսի 15-ին, Հայ եկեղեցին՝ Հիսնակաց 3-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Գրկ. Սուրբերու կեանքը, 3 հրտ., Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Համաքրիստոնէական սուրբեր, 3 հրտ., Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ՀԱԿՈԲ ՆԱԼՅԱՆ, Զիմարացի, Զմմարացի (1706, Զիմարա – 1764, Կ. Պոլիս), Կ. Պոլսի հայոց պատրիարք (1741–49, 1752–64), Երուսաղեմի հայոց պատրիարք (1749–52), մատենագիր, մեկնիչ: Ուսանել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի դպրատանը՝ աշակերտելով Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտ Բաղիշեցուն (1678–1741): 1728/29-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1734-ին ստացել ծայրագույն վարդապետ. աստիճան և «աստվածաբան» կոչումը, նշանակվել Երուսաղեմի հայոց պատրիարքության միաբան, 1740-ին՝ Երուսաղեմի

պատրիարքության փոխանորդ: Հիմնադրել է Կ. Պոլսի Գումգափու թաղի Մայր դպրատունը և դասավանդել այնտեղ: Պայքարելով Կաթոլիկ եկեղեցու ազդեցության դեմ՝ ձգտել է հայությանը համախմբել Հայ եկեղեցու շուրջ:

Հ. Ն. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն: Աշխատություններն ունեն աստվածաբան., դավան. բնույթ: Մեկնող. բնույթի երկերից են՝ «Մեկնութիւն Հայր մերի» (Մատենադարան, ձեռ. № 8128), «Մեկնութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ» (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 106), «Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան» (Մատենադարան, ձեռ. №№ 1014, 1015, 1016, 4863, 9782) ևն: Հ. Ն-ի երկերից 15-ը անտիպ են, 9-ը՝ տպագրված, որոնցից ութը՝ իր կենդանության օրոք: Մեծ արժեք ունեն Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը և ներբողներին նվիրված *լուծմունքը* («Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ», հ. 1–2, 1745), որտեղ փորձ է արված բանասիր., աղբյուրագիտ. և աստվածաբան. առումներով քննել Գրիգոր Նարեկացու գրական ժառանգությունը: Հ. Ն-ի առաջաբանով առաջին անգամ հրատարակվել է *Եղնիկ Կողբացու* «Եղծ աղանդոց»-ը («Գիրք ընդդիմութեանց», 1762):

Երկ. Գիրք կոչեցեալ վէմ հաւատոյ, ԿՊ, 1733: Գիրք կոչեցեալ քրիստոնէական ուսմանելի և կամ քրիստոնէից վարժիչ, ԿՊ, 1737: Գրքուկս կոչեցեալ Հոգեշահ, երկուց ճառից Սրբոյն Յօհաննու Ոսկեբերանին..., ԿՊ, 1746: Գրքուկս կոչեցեալ Ճրագ ճշմարտութեան, ԿՊ, 1756: Գիրք կոչեցեալ Զէն հոգևոր, ԿՊ, 1757: Գիրք կոչեցեալ Գանձարան Ծանուցմանց, ԿՊ, 1758: Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր, ԿՊ, 1760: Տետրակ զունայնութենէ կենցաղոյս..., ԿՊ, 1805:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Բամպուքճյան Գ., Հակոբ պատրիարք Նալյան, «Էջմիածին», 1981, № 8:

Պողոս Խաչատրյան

ՀԱԿՈԲ ՆԵՏՐԱՐԵՆՑ, Հակոբ Արծկեցի [ծ. թ. անհտ, ք. Արծկե (Տուրուբերանի Բզնունյաց գավառ) – 1501], գրիչ, մատենագիր, բանաստեղծ: Ուսանել է Արծկեի վարդապետարանում: Ձեռնադրվել է քահանա, կնոջ մահից հետո դարձել վարդապետ (1464), մեկուսացել Արծկեի Աքանչելագործ Ս. Նշան վանքում, նվիրվել խորհրդապաշտության, զբաղվել գրչությամբ, գրական աշխատանքով: 1472-ից Հ. Ն. հիշատակվում է իբրև Արծկեի եպիսկոպոս: Ընդօրինակել է Ավետարաններ, Գանձարաններ (պահպանվել են միայն երեքը): Հիշարժան են նրա 1491-ին (եղբոր՝ Ղազարի մահից հետո) ընդօրինակած Գանձարանի երկրորդ մասը (Մատենադարան, ձեռ. № 5438), 1499-ին (եղբորորդի Զաքարիա դպիրի դրչակցությամբ) ընդօրինակած Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 8761):

Հ. Ն. գրել է ազգ-եկեղեց. և տերունական թեմաներով 13 չափածո գանձեր ու տաղեր, վարքեր («Վարք Հուսկան որդի Ստեփանոս քահանայի»), եղբոր հիշատակին նվիրված ողբ, զարթնող-հառնող բնության երգեր ևն: Իբրև գանձասաց և տաղերգու նա դեռևս իր կենդանության օրոք ճանաչվել է և արժանացել բարձր գնահատականի:

Գրկ. Ակինյան Ն., Հակոբ Նետրարենց եպիսկոպոս Արծկեի. հայ բանաստեղծ մը ԺԵ դարու երկրորդ կեսեն, տես նրա Մատենագրական հետազոտություններ, հ. 4, Վնն., 1938, էջ 119–139:

Պողոս Խաչատրյան

ՀԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑԻ (ծ. թ. անհտ, Ջուղա – մ. թ. անհտ), XVI դ. կեսի – XVII դ. սկզբի մանրանկարիչ: Գեղանկարչ. կրթությունն ստացել է Վասպուրականի Լիմ վանքում: Վերադառնալով Ջուղա՝ 1605-ին, շահ Աբբասի հրամանով իր համաքաղաքացիների հետ գաղթել է Սպահան. այստեղ հայերի կառուցած Նոր Ջուղայում ապրել ու ստեղծագործել է մինչև կյանքի վերջը: Պահպանվել է նրա 25 տարիների ստեղծագործ. աշխատանքի ընթացքում պատկերազարդած 8 ձեռագիր, որոնցից XVI դ. 80-ական թթ-ից մինչև 1610-ը թվագրված ու ստորագրված 6 Ավետարան՝ 1585-ի (Մատենադարան, ձեռ. № 9691), 1586-ի (մինչև 1980-ը՝ Փարիզ, մասնավոր հավաքածու), 1587-ի (Մանչեստր, Ջ. Ռայլենդսի գրադարան), 1592-ի (Երուսաղեմ, ձեռ. № 3424), 1607-ի (Նոր Ջուղա, Ս. Սարգիս եկեղեցի, ձեռ. № 18), 1610-ի (Մատենադարան, ձեռ. № 7639): Վաղ շրջանի նրա հայտնի աշխատանքը Մատենադարանի ձեռ. № 6758 Ավետարանն է: Հ. Ջ. մասնակցել է նաև Կալիսթենեսին վերագրվող «Աղեքսանդրի պատմության» ձեռագրի պատկերազարդմանը (Մատենադարան, ձեռ. № 5457):

Հ. Ջ. 25 տարիների ընթացքում ապրել է ստեղծագործ. նկատելի զարգացում: Փոխվել է պատկերների ընտրությունը, դրանց պատկերագրությունը, մանրանկարների ոճը: Մանրանկարների շարքում, ավետարան. պատկերների հետ մեկտեղ (XV–XVI դդ. Վասպուրականի գեղանկարչության ավանդույթներին համա-

պատասխան) ներառել է նաև վաղ շրջանի գործերի մի շարք տեսարաններ (որոնք բացակայում են նրա ստեղծագործ. հասուն շրջանում) և վախճանաբան. շարքերի տեսարաններ (որոնց, ինչպես և Քրիստոսի հրաշքների և ավետարան. երկրորդ. իրադարձությունների նկատմամբ հետաքրքրությունը, ընդհակառակը, մեծացել է): Հ. Ջ. տեսարանների պատկերագրության առումով նույնպես հիմնականում հետևել է Վասպուրականի ավանդույթներին, սակայն նրա մանրանկարներում երբեմն թափանցել են արևմտաեվրոպ. պատկերագրության որոշ տարրեր, իսկ առանձին դեպքերում՝ նաև ամբողջական հորինվածքներ: Բացի այդ, հասուն շրջանի գործերում մի շարք տեսարաններ կառչած չեն պատկերագր. կանոնից և ներկայանում են որպես ինքնուրույն հորինվածքներ: Տարիների հետ փոխվել է և Հ. Ջ-ու գեղ. արտահայտչաեղանակը: Ձևավորվել ու դրսևորվել է նրա ստեղծագործ. վառ անհատականությունը:

Հ. Ջ-ու ամենակատարյալ՝ ժամանակագր. առումով վերջին ձեռագիրը 1610-ի Ավետարանն է, որը բացառիկ երևույթ է հայ գրքային գեղանկարչության ասպարեզում և՛ Ավետարանների պատկերազարդման անսովոր մանրամասներով (59 մանրանկար՝ ամբողջական էջերի վրա), և՛ հոյակերտ ձևավորմամբ (ոչ միայն ավետարանիչների դիմանկարները և չորս Ավետարանների անվանաթերթերը, այլև ձեռագրի բոլոր էջերն առնված են շքեղազարդ, գմբեթավոր շրջանակների մեջ):

Հ. Ջ-ու արվեստը համակված է տոնական լուսաշող աշխարհազգացողությամբ: Այն ամենից առաջ ստեղծվել է արծն հիշեցնող պայծառ, շողշողուն գույնով, կապույտ, դեղին, նարնջի երանգներով ու ոսկով և հարուստ, բազմազան զարդանկարներով: Ձևերի այդ ողջ բազմազանությունը ենթարկվում է պարզ ու հստակ հորինվածքին: Հ. Ջ-ու արվեստը ժամանակային առումով գտնվում է հայկ. երկրաձգված միջնադարի և սկսվող նոր ժամանակների սահմանագծում: Ստեղծագործելով բուն միջնադարյան ժանրում՝ ինչպիսին մանրանկարչությունն է, նա նոր, աշխարհիկ մտածելակերպի տարրեր է հաղորդել կրոն. թեմային: Նկարչի հորինվածքներն աչքի են ընկնում իրենց համարձակ լուծումներով, նրա տիպարը զերծ է իդեալականացման որևէ միտումից: Կյանքի նրա ընկալումը հակադրվել է միջնադարին հատուկ գեղ. ձևերի պայմանականությանը և հայկ. արվեստում նշանավորել նոր փուլի ձևավորումը: Հ. Ջ-ու արվեստը, որ վերջին անգամ իր երբեմնի բարձունքին է հասցրել հայ գրքային գեղանկարչությունը, իրենով ավարտել է նրա 1300-ամյա զարգացման ընթացքը:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.2, 3-րդ պատկերը:

Գրկ. Դրամբյան Ի., Հակոբ Ջուղայեցու մանրանկարների պատկերագրությունը, ԲՄ, 1971, № 10: Նույնի, *Новые материалы по биографии Акопа Джугаеци*, ԼՀԳ, *1969, № 10;* Նույնի, *О рукописи Матенадарана № 6758*, «Հայկական արվեստ», [ժող.], գիրք 2, Ե., 1984; *Дурново Л., Краткая история древнеармянской живописи, Е., 1957; Дрампян И., Корхмазян Э., Художественные сокровища Матенадарана, М., 1976.*

Իրինա Դրամբյան

ՀԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Հակոբոս Քարափնեցի (ծ. թ. անհտ – 1085, Ուռհա), ժամանակագիր, դավանաբան, Սանահնի դպրոցի սաներից: Աշակերտել է Սանահնի վանահայր, ապա՝ *Պետրոս Ա Գետադարձի* հակաթոռ կաթողիկոս (1037–38) Դիոսկորոսին: Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է «սուրբ գրոց քաջագիտակ», որ «յուրացրել էր Աստծո Հին և Նոր կտակարանները, ուսանել և հմտացել հռետորական արվեստին, ծանոթացել փիլիսոփայական խորիմաստ բոլոր գիտություններին»: Եռանդուն մասնակցություն է ունեցել հայ-հուն. եկեղեց. բանակցություններին և դավանաբան. վեճերին: Հայադավանների և հայադավանության դեմ բյուզ. կայսր Կոստանդին Դուկասի սկսած հալածանքների ժամանակ Վասպուրականի նախկին թագավոր Սենեքերիմի որդիներ, Սեբաստիայի իշխաններ Ատոմ և Աբուսահլ Արծրունիների հետ Հ. Ս. մեկնել է Կ. Պոլիս (1065) և դավանաբան. բանավեճի մեջ մտել հույն հոգևորականների հետ: Նա Ս. Սոֆիայի ատյանում «հոռոմների բոլոր հարցերին բազմիցս ընդդիմացավ, բայց Քրիստոսի երկու բնությունների հարցում մի փոքր անցավ հոռոմների կողմը», այսինքն՝ ճանաչեց 451-ի *Քաղկեդոնի ժողովի* որոշումները, և կայսրի ճնշմամբ «գրեց հայոց և հոռոմոց միության գիրը», որը, սակայն, կայսրի ներկայությամբ Հայոց նախկին արքա, աքսորական Գագիկ Բ Բագրատունին պատռել է, իսկ Հ. Ս-ու արարքը խստիվ դատապարտել:

Հ. Ս. հեղինակն է մի «ժամանակագրության», որից փոքր հատվածներ են պահպանվել Մատենադարանի № 9832 ձեռագրում («Ի ժամանա-

կագրութենէ Յակոբայ քահանայի»): Այն գրվել է Անիի Բագրատունիների և կաթողիկոս. դիվանի արժեքավոր փաստաթղթերի, բացառված չէ նաև՝ Կ. Պոլսի պատրիարքարանի դիվանի նյութերի և բյուզ. պատմիչների աշխատությունների հիման վրա: Այդ երկն օգտագործել է Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ՝ 1085-ին նախորդող դեպքերի նկարագրության համար:

Հ. Ս-ուց պահպանվել է նաև Ննջեցելոց կարգի մեջ զետեղված «Յանսկզբնական ծոցոյ Հօր» հուզաթախտ ողորմեան, որի ծայրակալը հոդում է հեղինակի անունը:

Գրկ. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Խաչիկյան Լ., Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, ԲԵՀ, 1971, № 1:

Հրաչ Բարթիկյան

ՀԱԿՈԲՈՍ ՍԵՐՈԲՅԱՆ, Հակոբոս Գ (1780–1858), Կ. Պոլսի հայոց պատրիարք 1839–1840 և 1848–58-ին: Հ. Ս-ի պաշտոնավարության տարիներին Թուրքիայում 1850-ին պաշտոնապես կազմավորվել է հայ ավետարանական համայնք, որի առաջին ազգապետն է եղել նրա եղբայր Ստեփան Սերոբյանը: Նույն թվականին Հռոմի Պիոս IX պապը հաստատել է Թուրքիայի տարածքում գործող հայ-կաթոլիկ հինգ համայնք (Էնկյուրի, Արդվին, Բուրսա, Էրզրում, Տրապիզոն): Հ. Ս. ծավալել է եկեղեցաշինական գործունեություն: Կառուցել է տասը եկեղեցի (Ս. Գրիգոր Լուսավորիչը Գնալը կղզում՝ 1855-ին, Ալթը Մերմերի գլխադիր Ս. Հակոբը՝ 1856-ին ևն): Վերանորոգվել են Քարթալի Ս. Նշան, Ռումելի Հիսարի Ս. Սանդուխտ, Էյուպի Ս. Աստվածածին եկեղեցիները: Բացվել են մի շարք վարժարաններ, որոնց թիվը հասել է 42-ի: Տպագրվել են բազմաթիվ գրքեր, լույս տեսել մոտ քսան լրագիր: Խասգյուղում բացվել է Կ. Պոլսի առաջին հայկ. թատրոնը (1858): Հիմնադրվել են Ընթերցասիրաց (1852), Եղբայրասիրաց (1857) ընկերությունները, որոնք կոչված էին սատարելու կրթալուսավոր. գործին: Հ. Ս-ի նախագահությամբ կայացած ժողովը 1857-ին ընդունել է Ազգային կանոնադրություն, որը, սակայն, չի հաստատվել:

Այվարդ Ղազիյան

ՀԱՂԱՐԾԻՆԻ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջորոփոր (հետագայում՝ Կայան) գավառում: ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքից 18 *կմ* հս., Հաղարծին գետակի վերին հոսանքի ափին, համանուն գյուղատեղիից մոտ 2 *կմ* հեռավորությամբ՝ անտառապատ վայրում: Հիմնադրման ժամանակն անորոշ է: Ծաղկում է ապրել XII դ. վերջին, XIII դ. սկզբին՝ Խաչատուր վրդ. Տարոնացու (Հաղարծնեցի) վանահայրության օրոք: Որպես ուսումնագիտ. կենտրոն հիշատակվում է (Ստեփանոս արք. Օրբելյան, Կիրակոս Գանձակեցի և ուր.) XIII դ. առաջատար մշակութ. կենտրոնների շարքում: Հ. վ. ունի չորս եկեղեցի, երկու գավիթ (մեկը՝ ավերված), սեղանատուն, աղոթարաններ, խաչքարեր: Հնագույն՝ Ս. Գրիգոր եկեղեցին (մոտ X դ.) ներքուստ՝ խաչաձև, չորս անկյուններում՝ ավանդատներով (արլ. երկուսն առանձնացված չեն աղոթասրահից), արտաքուստ՝ ուղղանկյուն, գմբեթավոր կառույց է: XI դ. Հ. վ. ավերվել է սելջուկյան թուրքերի արշավանքներից: XII դ. Վրաց Գեորգի III թագավորի և հայոց իշխանների հրամանով համալիրը նորոգվել է, և վերականգնվել են վանքի հողատիրական իրավունքները: XII դ. վերջին և XIII դ-ի սկզբին Հ. վ. ստացել է բազում նվիրատվություններ՝ այգիներ, վարելահողեր, դրամ, ձեռագրեր ևն:

1184-ին Խաչատուր վրդ. Տարոնացին և Սուքիաս վարդապետը նորոգել են Ս. Գրիգոր եկեղեցին: 1194-ին Հարբա որդի Խալթը Ս. Գրիգորին հս-ից կից կառուցել է միանավ, թաղածածկ, Կաթողիկե կոչված փոքր եկեղեցին: XII դ. վերջին իշխան Իվանե Զաքարյանը Ս. Գրիգոր եկեղեցուն արմ-ից կից կառուցել է քառասյուն տիպի գավիթ, որի շինարարությանն աջակցել են Զաքարյանների վասալ Արտավազը և Աթանեսը: Գավթի արմ. մուտքի ճակատակալ քարի արձանագրությամբ Իվանե Զաքարյանը հայտնում է Հայոց աշխարհը սելջուկներից ազատագրելու և, ի հիշատակ իր վախճանված եղբոր՝ Զաքարե Մեծի, Հ. վ-ին այգի նվիրելու մասին: Գավթի առաստաղի անկյունային հատվածներին կան հարթաքանդակներ, որոնցից արժեքավոր են հայր Դանիելի և չերեփը ձեռքին՝ վանքի տնտես Սիմեոնի ողջ հասակով պատկերաքանդակները՝ համապատասխան մակագրություններով:

1244-ին Ս. Գրիգոր եկեղեցու արլ. կողմում, նրան բավական մոտ, կառուցվել է կապտավուն բազալտից, նրբագեղ մանրամասներով, Ս. Ստեփանոս գմբեթավոր եկեղեցին:

XIII դ. Հ. վ. Զոսիմա քահանայի միջոցով ստացել է 350 *կգ* կշռող բրոնզե կաթսա, որի պատկերազարդ շուրթի փորագրությունը նշում

է պատրաստման տարեթիվը՝ 1232: Կաթսան հայկ. գեղ. մետաղագործության բարձրարվեստ նմուշներից է, ունի քանդակազարդ ոտքեր: Վերջինիս չորս կանթերն առյուծների արձանիկներ են:

1281-ին տեր Հովհաննեսը և տեր Սարգիսը, բարերարների օժանդակությամբ, հիմնավորապես վերակառուցել են Հ. վ-ի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին (հիմնադրված, հավանաբար, X–XI դդ.): Մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է, ճակատները (բացառությամբ՝ արմ-ի) մշակված են «հայկ. խորշերով»: Գմբեթի բարձր թմբուկը զարդարված է դեկորատիվ կամարաշարով, հվ. և արմ. դռներն ունեն XIII դ. բնորոշ շքամուտքեր: Արլ. ճակատին կառուցող երկու հոգևորականների պատկերաքանդակն է՝ եկեղեցու մանրակերտով: Ս. Աստվածածին եկեղեցուն արմ-ից կից է եղել այժմ ամբողջովին ավերված ժամատունը:

1248-ին, վանական համալիրի արմ. կողմում, ճարտ. Մինասը Գրիգորեսի և Մովսեսի մասնակցությամբ կառուցել է Հ. վ-ի սեղանատունը, որը միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտ-յան լավագույն ստեղծագործություններից է: Ընդարձակ, ուղղանկյուն դահլիճ է (21,6x9,5 *մ* չափերի)՝ մեկ զույգ մույթերով բաժանված երկու հավասար, երդիկավոր մասերի, յուրաքանչյուրը՝ ծածկված երկու զույգ փոխհատվող կամարների համակարգով: Արմ. ճակատում կա լայնաթռիչք կամարակապ բացվածք: Ներքին պարագծով ճգվում է քարե նստարանը: Հայկ. ճարտ-յան նմանատիպ երկու կառույցներից մյուսը *Հաղպատի վանքում* է: Սեղանատան արլ. կողմում փայտածածկ խոհանոցն է:

Հ. վ-ի տարածքում կան թաղածածկ մատուռներ, գեղաքանդակ խաչքարեր: Հ. վ-ի համալիրը հայկ. ճարտ. կառույցների՝ շրջակա բնության հետ ներդաշնակության լավագույն օրինակներից է:

1671-ին թիֆլիսաբնակ հոգիջանի ընտանիքը նորոգել է Ս. Ստեփանոս, իսկ 1681-ին Զիթաղյանները՝ Ս. Գրիգոր և Ս. Աստվածածին եկեղեցիները: XVIII դ. վերջին Հ.վ. ավերվել և լքվել է Աղա Մահմեդ խան Ղաջարի արշավանքից: Վերստին գործել է 1862-ից, նորոգվել՝ 1901-ին:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.2, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Ե., 1982: Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Տփխիս, 1842: Տեր-Մովսիսյան Մ., Հայկական երեք մեծ վանքերը՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շենքերը, Երուսաղեմ, 1938: Ոսկյան Հ., Արցախի վանքերը, Վնն., 1953: Եղիազարյան Հ., Հաղարծնի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1954, № 10, 11: Դիվան հայ վիմագրության, պր. 6, Ե., 1977: *Якобсон А.Л., Из истории зодчества средневековой Армении: Агарцин, Сагмосаванк, Нор-Гетик, "Ежегодник Института истории искусств", М., 1952;* Zarian A., Manoukian A., Haghartzin, Milano, 1984 (Documenti di architettura armena, 13).

Մուրադ Հասրաթյան

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ, սուրբ Հաղորդություն, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից: Նշանակում է հաղորդակցություն, հաբաբերություն, միացում: Հ. սիրո և սրբության խորհուրդն է. Քրիստոսի մարմնի և արյան փոխակերպված *հացի* ու *գինու* ճաշակումով հավատացյալ քրիստոնյան հաղորդվում, միավորվում է Հիսուս Քրիստոսի հետ: Հ-յան խորհուրդով մարդկային կյանքը միանում է Աստվածայինին, սրբագործված հացի ու գինու ճաշակումով Աստված բնակվում է մարդու մեջ (Հովհ. **6.**57): Հ-յամբ հավատացյալները հաղորդակցվում են ոչ միայն Հիսուսի, այլ նրա միջոցով՝ նաև միմյանց հետ:

Հ-յան խորհուրդը հաստատել է Հիսուս Քրիստոսը, Երուսաղեմի Վերնատան մեջ կատարված Վերջին ընթրիքի ժամանակ, իր *խաչելության* նախընթաց օրը. «Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Հիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցեք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. **26.**26–28, տես նաև՝ Մարկ. **14.**22–24, Ղուկ. **22.**19–20, Ա Կորնթ. **11.**23–26): Այլ առիթներով էլ է Հիսուս Քրիստոսը խոսել Հ-յան մասին. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի, և այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որը ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա» (Հովհ. **6.**51–52), կամ՝ «Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, հավիտենական կյանք ունի..., քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և իմ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք» (Հովհ. **6.**55–56): Հ-յան խորհուրդով Հի-

սուսը խաչի վրա շարունակել է իր կատարած փրկագործությունը: Խորհուրդի արարողության ընթացքում Հիսուսն անընդհատ իջնում է ս. Սեղանի վրա, հացն ու գինին փոխակերպում իր մարմնի և արյան ու դրանով ընծայվում, պատարագվում Հայր Աստծուն՝ մարդկանց մեղքերի *քավության* և թողության համար:

Հիսուս Քրիստոսը պատվիրեց իր առաքյալներին, որ Հ-յան խորհուրդը կատարեն իրեն հիշելու համար: Գործք առաքելոցը ցույց է տալիս, թե ինչպես էին առաքյալները Հիսուսի հիշատակի համար նորադարձ քրիստոնյաների հետ իրենց տներում եղբայրական հավաքույթներ ունենում և կտրում հացը (հացի բեկում) (Գործք **2**.42, 46, **20**.7, 11, Ա Կորնթ. **10**.16–17): Հավաքույթներում հացի բեկումը, այսինքն՝ Հ-յան խորհուրդը և սիրո ճաշը (տես *Ագապե*) միասին են կատարել: Քրիստոնյաները նախապես շաբաթը չորս անգամ են հավաքվել և հացի բեկում կատարելով՝ հաղորդվել, հացից բաժին են հանել նաև աղքատներին: Բայց, ժամանակի ընթացքում, այդ հավաքները վերածվել են գինարբուքների, և Պողոս առաքյալը, դատապարտելով կորնթացիներին, որոնք Տերունական ընթրիքի անվան տակ զեղումներ էին թույլ տալիս, արգելել է այն և պարզ ընթրիքը բաժանել Տերունականից, այսինքն՝ Հ-ից: Առաքելական շրջանից սկսած Տերունական ընթրիքը եկեղեց. հատուկ արարողության կերպարանք է ստացել, զարգացել և պարզ արարողությունից վերածվել այսօրվա Պատարագի: Հ-յան խորհուրդի արարողությունը կոչվում է «անարյուն պատարագ»: Կատարում է եկեղեցու ձեռնադրված պաշտոնյան՝ պատարագիչը: Ս. *Պատարագը* Հ-յան խորհրդակատարությունն է, ծեսը:

Հ-յան խորհուրդի զգալի նշանը կամ նյութը հացը (*նշխար*) և գինին են, որոնք Պատարագի ժամանակ Սուրբ Հոգու ներգործությամբ խորհրդավոր, անճառելի կերպով փոխակերպվում են Քրիստոսի ճշմարիտ մարմնի և արյան: Հայ եկեղեցին Հ-յան խորհուրդի համար գործածում է անխմոր բաղարջ հաց և անապակ գինի՝ համաձայն ավետարանական պատգամի և ավանդության: Հույն և Կաթոլիկ եկեղեցիները գինու մեջ ջուր են խառնում՝ որպես Հիսուսի տեգահար կողից հոսած արյան և ջրի խորհրդանիշ: Հայ եկեղեցին Քրիստոսի մարմնով և արյամբ հաղորդություն է տալիս բոլոր հավատացյալներին, մինչդեռ Կաթոլիկ եկեղեցին միայն հացով է հաղորդում իր հավատացյալներին, առանց հացը գինու մեջ թաթախելու, իսկ գինին վերապահում է միայն եկեղեցականներին. բացի այդ, մանուկներին, մինչև որոշակի տարիքը, զրկում է հաղորդությունից:

Հայ եկեղեցին թելադրում է իր հավատացյալներին, որ նվազագույնը տարին հինգ անգամ հինգ *Տաղավար* տոներին հաղորդվեն:

Պատկերագրություն: «Հաղորդության» պատկերները սկզբնավորվել են IX–X դդ.: Հայտնի են այս թեմայի հետհուստինյան շրջանի բյուզ. բարձրաքանդակները, X դ. Սաղմոսարանների պատկերազարդումները:

«Հաղորդության» տեսարանում, ըստ քրիստ. պատկերագրության, ներկայացվում է Քրիստոսը՝ խորհրդավոր ընթրիքի պահին հացն ու գինին աշակերտներին բաժանելիս: Նրա շուրջը հավաքված են սուրբ Հ. ընդունող տասներկու առաքյալները: Ուշագրավ է Քոբայրի եկեղեցու որմնանկարը (1263). հերթով, ռիթմիկ շարժումներով, պարզած ձեռքերով Քրիստոսին են մոտենում աշակերտները՝ Նոր ուխտի արյունը ճաշակելու, Հ-յան միջոցով իրենց ուսուցչին միանալու նպատակով:

1320-ին Կիլիկիայում պատկերազարդված «Ութ մանրանկարիչների Ավետարան»-ի մեջ կան «Հաղորդության» տեսարաններ: Մատթեոսի Ավետարանում Քրիստոսն իբրև քահանա կանգնած է ամպհովանու տակ, որին երկու կողմից մոտենում են առաքյալները, իսկ Հովհաննեսի Ավետարանում «Հաղորդության» պատկերի մեջ Հուդան ներկայացված է երկու անգամ՝ մեկը՝ հացի պատառը վերցնելիս, մյուսը՝ հեռանալիս: Ծերուն մանրանկարչի ծաղկած Ավետարանում (1391) Քրիստոսը հացի առաջին պատառը մեկնում է Հուդային:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.3, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց Ս. Եկեղեցու քրիստոնէականը, Թ., 1900: Զեպելյան Ղ., Հայ Եկեղեցվո յոթը խորհուրդները (Կանոնագիտական նկատումներ), Անթիլիաս, 1988: Սարգսյան Ս., Հայոց Եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 1, 1992: Ղազարյան Վ., Այուժետային մանրանկարները Կիլիկիայում, Ե., 1984: Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993:

Արտաշես Ղազարյան
Մարտին Միքայելյան

«ՀԱՂՊԱՏԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Գետաշենի Ավետարան», հայ միջնադարյան մագաղա-

թե ձեռագիր (Մատենադարան, ձեռ. № 6288): Ընդօրինակել է գրիչ Հակոբը՝ Սահակ Անեցու պատվերով, 1211-ին, Հաղպատում: Նույն թվականին Անիի Բեխենց վանքում պատկերազարդել է Մարգարե ծաղկողը, կազմել է Աբրահամ կազմողը՝ Հոռոմոսի վանքում: «Հ. Ա.» ընծայաբերվել է Անիի մերձակա Արջո առիճի վանքի՝ Սահակի տոհմի կառուցած եկեղեցուն: 1223-ին Ավետարանը գնել է արցախեցի Սարգիսը և նվիրաբերել իր հայրենի գավառի Մեծ-կողմանաց եպիսկոպոսարանին: Ձեռագիրը շուրջ ութ դար պահվել է Արցախում, մի քանի անգամ նորոգվել ու կազմվել: XX դ. սկզբին պահվել է Գետաշեն գյուղում, որտեղից 1920-ական թթ. Էջմիածնի մատենադարան է բերել Գարեգին Հովսեփյանը (1943–52-ին՝ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո *Գարեգին Ա Հովսեփյան*) և, ուսումնասիրելով, դրել գիտ. շրջանառության մեջ:

«Հ. Ա.» (30x20 *սմ*) գրված է երկաթագրով, ունի խորաններ, անվանաթերթեր, մեկ տերուն. և մեկ ընծայական պատկեր, լուսանցազարդեր: Ձեռագիրը նշանավոր է հատկապես մանրանկարներով, որոնք Անիի մանրանկարչության դպրոցի ցայժմ հայտնի եզակի նմուշներից են:

Ծաղկող Մարգարե աբեղան նոր մոտեցում է ցուցաբերել՝ Ավետարանի պատկերազարդման մեջ ներմուծելով Անիի աշխարհիկ արվեստի տարրեր: Խորանների լուսանցամասերում պատկերել է իր ժամանակակիցների՝ իրական անձանց դիմանկարներ, որոնցից են Բեխենց վանքի վանահայր Եղբայրիկը, Աբրահամ կազմարարը, երիտասարդ Շերանիկը և ուր.: «Մուտք Երուսաղեմ» տերուն. պատկերում Քրիստոսին դիմավորող քաղաքացիների շարքում պատկերել է Սահակ Անեցու ընտանիքի անդամներին. հորը՝ քաղաքի մուտքի մոտ, մորը՝ շինության պատուհանում, երկու քույրերին՝ նույն շենքի պատշգամբում, և ընտանիքի երեք արու զավակներին՝ ծառերի վրա: Նրանք բոլորը կրում են քաղաքային տարազ և թե՛ չափով, թե՛ պատկերման սկզբունքներով տարբերվում նույն մանրանկարի ավետարան. կերպարներից: Ուշագրավ է նաև ընծայական մանրանկարը, որտեղ Սահակն ու իր եղբայր Առաքելը պատկերված են Քրիստոսի երկու կողմերում կանգնած:

«Հ. Ա.»-ի մանրանկարները, ներկայացնելով հայ միջնադարյան մանրանկարչության մի ինքնատիպ ճյուղը, ունեն առանձնահատուկ արժեք:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.3, 3–4-րդ պատկերները:

ՀԱՂՊԱՏԻ

Գրկ. Հովսեփյան Գ., Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց («Գետաշենի Ավետարանը»), տես նրա Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. 1, Երևան, 1935: Մաթևոսյան Կ., Նկարիչ Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը, ԼՀԳ, 1982, № 9:

Կարեն Մաթևոսյան

ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔ, Հաղբատի վանք, միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային և գիտաուսումնական խոշոր կենտրոն, վանքային համալիր: Գտնվում է ՀՀ Լոռու մարզի Հաղպատ գյուղի հվ-արլ. բարձրադիր մասում: Վանքի առաջին՝ Ս. Նշան եկեղեցին և միաբանությունը 976-ին հիմնադրել են Աշոտ Գ թագավորը և նրա կին Խոսրովանույշը՝ իրենց որդիներ Կյուրիկեի (Գուրգենի) և Սմբատի արևշատության համար: Հիմնադիր վանահայրն է եղել Սիմեոնը, որը Տիրանուն երեցի հետ ղեկավարել է եկեղեցու շինարարությունը (ավարտը՝ 991-ին) և հիմնել վանքի հոգևոր դպրոցը: *Սանահինի վանքից* և այլ վայրերից հրավիրվել են գիտնական և ուսուցիչ վանականներ, և շուտով Կյուրիկյան թագավորության այս երկու վանքերում միաբանների ընդհանուր թիվը հասել է 500-ի: XI դ. 1-ին քառորդում Ս. Նշան եկեղեցու հս. պատին կից կառուցվել են երկու մատուռ-տապանատներ (1005–20), Ս. Գրիգոր եկեղեցին (1005) և վանքի նախն. պարիսպը: XI դ. կառուցվել է նաև դրատունը, որի փայտե ծածկը հետագայում վերաշինվել է քարով:

1064-ին Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկե Ա Բագրատունին, ճանաչելով սելջուկ թուրքերի գերիշխանությունը, կարողացել է կիսանկախ վիճակում պահպանել թագավորությունը և նրա հոգևոր կենտրոնները: Նույն ժամանակ նա եպիսկոպոս. աթոռը Սանահինից տեղափոխել է Հաղպատ, որտեղ 1081-ին օծանդակել է Անի-Շիրակի եպիսկոպոս Բարսեղին՝ օծվելու կաթողիկոսական տեղապահ (1105–13-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Բարսեղ Ա Անեցի*): Հաղպատում Կյուրիկյան թագավորության եկեղեց. թեմի առաջնորդ է կարգվել Սարգիս եպիսկոպոսը: 1105-ին Ղըզըլ ամիրան հարձակվել, ավերել և կողոպտել է մի շարք բնակավայրեր և վանքեր, այդ թվում՝ Սանահինի և Հաղպատի միաբանությունները:

Կյուրիկյան թագավորության անկումից (1113) հետո Վրաց թագավոր Դավիթ Շինարարը հայ իշխաններ Օրբելյանների ու Զա-

քարյանների օժանդակությամբ, 1118-ին այդ տարածքը մաքրել է սելջուկներից, միացրել Վրաստանին և Լոռին իր շրջակայքով նվիրել Օրբելյաններին: Ըստ Ս. Նշան եկեղեցու մուտքի վերևի արձանագրության, նա հովանավորել է Հաղպատի և Սանահինի միաբանությունները, նվիրել այգիներ, գյուղեր և վերահաստատել բոլոր կալվածները:

1177–78-ին Վրաց թագավոր Գեորգի III-ի դեմ Իվան Օրբելու գլխավորած ապստամբության պարտությունից հետո Լոռին կարճ ժամանակով հանձնվել է սպասալարի պաշտոնով ղփչաղ Խուբասարին, այնուհետև՝ Մահկանաբերդի Արծրունիներին: Վերջիններիս իշխանության հիմնադիր Վահրամ Արծրունին, որն ազգակցական կապ է ունեցել Զաքարյան իշխանների հետ և 1181-ից վրաց արքունիքի ամիրսպասալարն էր, հիշատակվում է որպես Մահկանաբերդի և Հաղպատի տեր: Նրա որդիներից ամիր Քուրդ Արծրունին Քարթլիի և Թիֆլիսի ամիրապետն էր, Բարսեղ եպս. Արծրունին՝ Հ. վ-ի առաջնորդը, որը Թամար թագուհու հրամանով նշանակվել էր նաև Քարթլիի արքեպիսկոպոս:

XII դ. 2-րդ կեսին սկսվել է Հաղպատի միաբանության վերելքի նոր ժամանակաշրջան, որը շարունակվել է նաև XIII դ.՝ Զաքարյան իշխանների տիրապետության օրոք: Վանքում կատարվել են շին. մեծածավալ աշխատանքներ, որոնք չեն ընդհատվել նույնիսկ մոնղոլ. տիրապետության տարիներին: Այդ ժամանակահատվածում է հիմնականում ձևավորվել և ամբողջացել վանքի ճարտ. համալիրը: 1185-ին Կյուրիկե Գ թագավորի դուստր Մարիամը Ս. Նշան եկեղեցու արմ. կողմում կառուցել է Կյուրիկյան թագավորների սրահ-տապանատունը, որը XIII դ. 1-ին քառորդին, վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենացու օրոք հիմնովին վերակառուցվել է և վերածվել եկեղեցու ընդարձակ գավթի: Նրա ժամանակ կառուցվել են նաև Ուքանանց տոհմի երեք խաչքար-դամբարանները, նորոգվել Ս. Նշան և Ս. Գրիգոր եկեղեցիների ծածկերը, կատարվել վանքի տարածքի ընդարձակման, պարսպապատման և բարեկարգման աշխատանքներ: Համալիրի տարածքից դուրս կառուցվել է Կուսանաց անապատը: XIII դ. 1-ին քառորդին է վերագրվում նաև սեղանատան կառուցումը, որի ճշգրիտ ժամանակը հայտնի չէ:

Մոնղոլ. արշավանքների նախօրեին՝ 1233-ին, Հովհաննես Մածնաբերդցի վանահոր օրոք, միաբանության պաշտպանության նպատակով վանքից ոչ հեռու, լեռնային դժվարամատչելի հրվանդանի վրա կառուցվել է Կայան բերդ կոչվող ամրոցը, որը, սակայն, անկարող է եղել դիմագրավել թշնամուն և 1241-ին ավերվել է: Հաջորդ վանահոր՝ Համազասպի ժամանակ կառուցվել են նոր, ընդարձակ գավիթը, զանգակատունը և պարսպի արլ. մուտքը: XIII դ. 2-րդ կեսին, Դոփյան տոհմից սերող Հովհաննես վանահոր օրոք վերակառուցվել է գրատան ծածկը, կից կառուցվել է սրահ, աթաբեկ և ամիրսպասալար Սադուն Արծրունու արևշատության համար կանգնեցվել է «Ամենափրկիչ» նշանավոր խաչքարը: Վանքի տարածքից դուրս կառուցվել են Ս. Սիոն եկեղեցին և աղբյուր: Դարավերջին գրատան սրահի վրա հավելվել է փոքր մատուռ:

XI–XIII դդ. վանքի համար եղել են նաև կրթության, գիտության և մշակույթի մեծ վերելքի ժամանակաշրջան: Այդտեղ ուսանել, ստեղծագործել և դասավանդել են ժամանակի բազմաթիվ նշանավոր հոգևորական գիտնականներ. ուսուցչապետ *Հովհաննես Սարկավագը* (Իմաստասեր), նրա աշակերտներ՝ պատմիչներ Երեմիա Անձրևիկը և *Սամուել Անեցին*, իրավագետ և մանկավարժ *Դավիթ Ալավկա Որդին*, մատենագիր *Վարդան Հաղպատեցին*, նրա աշակերտ, ուսուցչապետ *Դավիթ Քոբայրեցին*, մատենագիր Մխիթար Քոբայրեցին, պատմիչ, մատենագիր, աշխարհագրագետ և փիլիսոփա *Վարդան Արևելցին*: Հաղպատում գրվել, ընդօրինակվել և ծաղկվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք օգտագործվել են նաև միջնադարյան Հայաստանի գիտաուս. այլ կենտրոններում: Առավել նշանավոր է «*Հաղպատի Ավետարանը*» (Մատենադարան, ձեռ. № 6288), որը մանրանկարչական արվեստի լավագույն նմուշներից է: Վանքն ունեցել է իր ժամանակագրության ավանդական մատյանը՝ «Քրոնիկը», որը չի պահպանվել:

XIV դ. վերջին, Զաքարյանների իշխանական տան տրոհումից հետո, Հաղպատն անցել է նրանց շառավիղների՝ տեղական իշխանների տնօրինությանը. նրանք այստեղ և այլ վանքերում եղել են նաև հոգևոր առաջնորդներ:

XIV–XV դդ. վանքի ձեռագրերը կողոպուտից և ոչնչացումից փրկելու նպատակով թաքցվել են մոտակա դժվարամատչելի քարայրերում, իսկ գրատունը վերածվել է մառանի:

Մոռացված ձեռագրերը հայտնաբերվել են XVIII դ. վերջին քառորդին, Աբրահամ Թեքերտաղցի առաջնորդի ժամանակ: Վերջինս այրել է քայքայված ձեռագրերը՝ որպես գործածության համար ոչ պիտանի:

1155-ին թուրք-իրան. պայմանագրով Լոռին անցել է Սեֆյան Իրանին և ընդգրկվել Քարթլի-Կախեթի վալիության մեջ, իսկ 1747-ին անկախացել է Իրանից և 1762-ին դարձյալ մտել Վրաստանի կազմի մեջ:

XVII դ. Հաղպատն իր շրջակայքով պատկանել է Բարաթյաններին: Միաբանությանը հովանավորել են նաև Բեհբությունները: Նույն դարի 2-րդ կեսին վանքում կատարվել են վերանորոգչական մեծ աշխատանքներ: Ըստ արձանագրության տվյալների, 1651, 1655-ին Խոջա Բեհբութը և Մահմեդի Ազիզը նորոգել են եկեղեցիները, որոնք վերանորոգվել են 1668-ի երկրաշարժից հետո: 1676–77-ին նորոգվել են Կուսանաց անապատը, վանքի պարիսպը և դրատան սրահի վերջին մատուռը:

XVII–XVIII դդ. լեզգիները բազմիցս հարձակվել և ավերել են վանքը, ուստի Հաղպատի առաջնորդարանը 1751–76-ին և հետագայում ևս ստիպված ժամանակավորապես պատսպարվել է Թիֆլիսում: 1776-ին առաջնորդարանը կրկին հաստատվել է Հաղպատում: Վրաց թագավոր Հերակլ II-ի օժանդակությամբ նորոգվել և բարեկարգվել է անխնամ մնացած վանքը: Սակայն դեռևս վտանգավոր իրավիճակը 1783-ին դարձյալ ստիպել է տեղափոխվել Թիֆլիս: Հաղպատի առաջնորդարանում 1768-ից՝ որպես աբեղա, իսկ 1778-ից՝ որպես Ս. Նշան եկեղեցու լուսարար ծառայել է Սայաթ-Նովան՝ Տեր-Ստեփանոս անվամբ:

1786-ին Հաղպատի վրա է հարձակվել լեզգի Ումմա (Օմար) խանը, սակայն հանդիպելով գյուղացիների դիմադրությանը՝ նահանջել է, իսկ 1795-ին Թիֆլիսում Հաղպատի առաջնորդարանը ենթարկվել է Աղա Մահմուդ խանի ավերածություններին ու կողոպուտին. այլ արժեքների հետ ոչնչացվել է նաև վանքի «Քոթուկը»:

XIX դ. սկզբին Լոռին Վրաստանի հետ միասին անցել է ռուս. կայսրությանը: XIX դ. 1-ին քառորդին Հաղպատի առաջնորդներն են եղել Հովհաննես Ակնեցին (1808–11), Աստվածատուր Արցախեցին (1811–14) և Ներսես Աշտարակեցին (1814-ից), որոնք միաժամանակ վարել են նաև վիրահայոց առաջնորդությունը: Այդ տարիներին երկրում տիրող ռազմաքաղ. անկայուն վիճակը ստիպել է *Եփրեմ Ա Զորագեղցի* կաթողիկոսին 1822–1824-ին ապաստանել Հաղպատում: Բռնի ռուսականացման քաղաքականության դեմ անհաղթաժողովականության համար Ներսես Աշտարակեցին գեներալ Ի. Պասկևիչի թելադրանքով 1828-ին աքսորվել է Բեսարաբիա, որտեղ առաջնորդել է տեղի հայ եկեղեց. թեմը, իսկ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, բանաստեղծ ու մանկավարժ Հարությունն Ալամդարյանը 1830–1832-ին աքսորվել է Հաղպատ:

1836-ին, Զաքարիա արք. Գուլասարյան-Բեհբուդյանցի առաջնորդության ժամանակ վերացվել է Հաղպատի եպիսկոպոս. աթոռը: Նախկին վիճակը և կարողությունները կորցրած վանքը գոյատևել է ևս մի քանի տասնամյակ: Հ. վ-ի վերջին վանահայրն է եղել Սերովբե եպս. Արարատյանը. նա հիշատակվում է նաև 1873-ին Դեբեդ գետի վրա քարե կամրջի կառուցման առնչությամբ:

Խորհրդ. իշխանության տարիներին վանքը պահպանվել է որպես պատմամշակութ. հուշարձան: Պարբերաբար կատարվել են ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ (ճարտ-ներ՝ 1927-ին՝ Ա. Թամանյան, 1929-ին՝ Ն. Տոկարսկի, 1930-ին՝ Ա. Ավետիսյան, 1950-ին՝ Ա. Բալասանյան, 1954–55-ին՝ Հ. Հակոբյան, 1965–66-ին՝ Վ. Խաչատրյան, 1973–75-ին՝ Հ. Գասպարյան):

1989-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, վանքը վերադարձվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի տնօրինությանը: Հայկ. պատմաճարտարապետ. հուշարձաններից Հ. վ. առաջինն է, որ ընդգրկվել է (1996) ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության ցանկում»:

Համալիրի՝ տարբեր ժամանակներում կառուցված և տարաբնույթ շինություններն ի վերջո կազմել են ամբողջական, ներդաշնակ, ասիմետրիկ, բայց հավասարակշիռ մի հորինվածք, որի բաղկացուցիչ յուրաքանչյուր տարրը և մանրամասները համահունչ են միմյանց և շրջակա բնությանը: Վանքի ընդհանուր համայնապատկերում առանցքային և գերիշխող դիրք է գրավում Ս. Նշան եկեղեցին (976–991), որին կից աստիճանաբար ձևավորվել է համալիրի կորիզը կազմող հուշարձանախումբը: Եկեղեցին պատկանում է գմբեթավոր դահլիճի տիպի խաչագմբեթ ենթատիպին՝ արտաքուստ՝ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագծով և անկյուններում տեղադրված երկհարկ ավանդա-

տներով: Մուտքեր ունի հս. և արմ. կողմերից: Ընդարձակ և միանա-կան ներքին տարածքը պսակվում է լայնանիստ և բարձրադիր գլանաձև գմբեթով: Արլ., հվ. և հս. ճակատները ջլատված են եռանկյունաձև հատվածքով երկուական ուղղաձիգ խորշերով, որոնք, կառույցին թեթևություն և տարածա-կան կոշտություն հաղորդելուց բացի, զուսպ մշակված քիվերի և պսակների հետ կազմում են նրա հարդարանքի էական տարրը: Արլ. ճա-կատի վերին մասում խորաքանդակ պատկեր-ված են Սմբատ և Գուրգեն (Կյուրիկե) թագա-վորները՝ կանգնած դեմ հանդիման, ձեռքերում՝ եկեղեցու մանրակերտը: Եկեղեցու Ավագ խո-

Հաղպատի վանքի հատակագիծը. 1. Ս. Նշան եկեղեցին, 2. գավիթը, 3. Ս. Գրիգոր եկեղեցին, 4. Ս. Աստվածածին մատուռը, 5. տապանատուն, 6. գրատուն, 7. «Համազասպի ժամատունը», 8. զանգակատուն, 9. սեղանատուն, 10. Ուքանանց տոհմի դամբարանները, 11. մուտքեր

բանը և պատերի առանձին հատվածներ պատ-ված են եղել որմնանկարներով, որոնցից միայն հետքեր են պահպանվել: Ավագ խորանի պա-տին պատկերված է եղել գահին նստած Քրիս-տոսը, իսկ դրանից ցած՝ «Ավետման», «Ծննդյան» և «Մկրտության» տեսարաններ (X դ.): Հվ. պատին ամբողջ հասակով նկար-ված են եղել Սադուն Արծրունու և նրա որդու՝ Խուլթլու Բուղայի պատկերները (XIII դ.): XIX դ. մատենագիր, Սանահինի վանքի վանահայր Հովհան Ղրիմեցին, հենվելով մի հին ավանդու-թյան վրա, Ս. Նշան եկեղեցու կառուցումը վե-րագրել է Անիի նշանավոր ճարտ. *Տրդատին*, ինչը հավանական են համարում նաև որոշ հե-տազոտողներ:

Հայ միջնադարյան ճարտ-յան բացառիկ արժեքավոր նմուշներից է Ս. Նշան եկեղեցու գավիթը (1210–25), որը կառուցված է եկեղեցու արմ. կողմում, նրան կից, իշխանուհի Մարիամի հիմնադրած սրահ-տապանատան (1185) տեղում: Վերակառուցումից հետո վերջինից պահպանվել են արլ. և արմ. ծայրային հատ-վածները, որոնք վարպետորեն ընդգրկվել և մաս են կազմել նոր կառույցի: Ուղղանկյուն հատակագծով ընդարձակ դահլիճը ծածկված է երկու զույգ, միմյանց հետ խաչվող կամար-ներով, որոնք արլ. կողմում հենվում են եկե-ղեցու արմ. պատին կից որմնասյուներին, իսկ արմ. կողմում՝ առանձին կանգնած սյուներին:

Չորս կամարներով ստեղծված կենտր. քա-ռակուսին իր հերթին ծածկված է դրանց վրա հենված խաչվող կամարների մի նոր, առավել փոքր համակարգով՝ ստեղծելով բարդ, սակայն տեկտոնիկ, տրամաբանված ու գեղարվեստորեն հարուստ ու բազմապլան տարածական կոնստ-րուկտիվ հորինվածք, որն ավարտվում է երդի-կով և սլացիկ ռոտոնդայով: Գավթի արտաքին պարզ ու զուսպ հարդարանքի ֆոնի վրա առա-վել չեշտված երևում է հարուստ զարդաքան-դակներով մշակված արմ. շքամուտքը:

Համալիրի երկրորդ գավիթը (1255), որը կա-ռուցող վանահոր անունով կոչվում է նաև «Համազասպի ժամատուն», գտնվում է Ս. Նշան եկեղեցու հս. կողմում, մոտ 8 *մ* հեռավորու-թյամբ: Կառույցը պատկանում է քառակուսի հատակագծով կենտրոնակազմ չորս սյուների վրա հենված կամարածածկ և երդիկավոր գա-վիթների տարածված տիպին և ամենամեծն է դրանց շարքում (մոտ 330 $մ^2$): Արլ. կողմում առանցքային տեղադրությամբ այն հաղորդակից է անհամեմատ փոքր չափերով միանավ թաղա-ծածկ եկեղեցուն, որն ունի ընդամենը 20 $մ^2$ մակերես: Վերջինիս և գավթի այս անսովոր և անհամաչափ համադրության պատճառով հա-ճախ անտեսվել է եկեղեցու գործառնական դե-ը, և գավիթը համարվել է ինքնուրույն, ա-ռանձին շինություն՝ ժողովարան:

Փոքր չափեր ունի նաև Ս. Գրիգոր եկեղե-ցին (1125), որը ներքուստ խաչաձև, արտա-քուստ ուղղանկյուն հատակագծով, անկյուն-ներում՝ ավանդատներով (արմ. կողմում՝ կրկնահարկ), թաղածածկ և երկլանջ տանիքով կառույց է՝ տեղադրված Ս. Նշան եկեղեցու գավթին կից, հվ. կողմում:

Համալիրի երրորդ փոքր՝ Ս. Աստվածածին եկեղեցին (XIII դ.) գտնվում է Ս. Նշան եկեղեցու գավթի հս. կողմում, նախկին սրահ-դամբարանի պահպանված մասից 2 մ հեռավորությամբ: Ներքուստ խաչաձև, սակայն առանց ավանդատների, կենտրոնակազմ գմբեթավոր կառույց է, որի հս. և հվ. խաչաթևերի խորությունն այնքան փոքր է, որ հատակագծում դրանք ընդգրկվել են եկեղեցու պարզ ուղղանկյան եզրագծի մեջ: Արմ. ճակատի առանցքով տեղադրված շքամուտքը հարդարված է քանդակազարդ շրջանակով: Եկեղեցին կոչվում է նաև Խաթունաշեն, կառուցողի՝ Դեսումյանց Հասան իշխանի դուստր Խաթունի անվամբ:

Վանքի գրատունը (XI դ., վերակառուցվել է 1258–62-ին) քառակուսի պարզ հատակագծով սրահ է, սկզբնապես ծածկված է եղել փայտե այունահեծանային կոնստրուկցիայով: Վերակառուցման ժամանակ այն փոխարինվել է քարաշեն խաչվող կամարների համակարգով, որը հենվում է պատերին կից հավելված որմնապյուռների վրա: Ծածկի կենտր. քառակուսին պսակվում է ութանիստ վրանաձև երդիկավոր գմբեթով: Սրահի որմնակամարներով ջլատված պատերն ունեն նաև որմնախորշեր, որոնք կատարել են գրապահարանի դեր: Միակ մուտքը արմ. կողմից է և բացվում է Ս. Նշան եկեղեցու և «Համազասպի ժամատան» միջանկյալ տարածքում՝ գրատան վերաշինության հետ միաժամանակ կառուցված սրահի մեջ:

Հուշարձանախմբից անջատ, գրատան հս-արլ. կողմում, մոտ 5 մ հեռավորությամբ կանգնած է 25 մ բարձր. ունեցող զանգակատունը, որը նմանատիպ առավել վաղ և լավագույն օրինակներից է: Նրա երկհարկ հիմն. զանգվածը ավարտվում է այունազարդ զանգաշտարակով: Առաջին հարկի հատակագծի եզրագիծը հավասարաթև խաչ է, երկրորդ հարկինը՝ այն ներգծող քառակուսի՝ հատված անկյուններով: Այս համադրության շնորհիվ արտաքին անկյուններում ստեղծվել են ստալակտիտային տրոմպների համակարգով պսակվող ուղղաձիգ խորշեր, որոնք շքամուտքի ու լուսամուտների կամարազարդ բացվածքների շրջակալների, ճակատոնների քիվերի և հովհարաձև վեղարով զանգաշտարակի հետ կառույցին հաղորդում են թեթևություն և վերասլաց համաչափություն: Պատի միջին բարձրության վրա գտնվող շարքերից մեկը, որը չի ընդհատվում բացվածքներով, ողջ պարագծով կառուցված է որպես հակաերկրաշարժային հոծ գոտի, որտեղ քարերը միմյանց ադուցված են ձգման ուժերին դիմակայող ատամնաձև եզրաստներով: Հարկերը միմյանց հետ հաղորդվում են ներքին քարե աստիճաններով: Առաջին հարկում կան երկու, իսկ երկրորդում՝ չորս մատուռ-աղոթարաններ՝ ինչի պատճառով վիմագրերում կառույցն անվանվում է նաև եկեղեցի:

Հայ միջնադարյան աշխարհիկ կառույցների մեջ բացառիկ տեղ է գրավում սեղանատունը (1220-ական թթ.), որը կառուցված է վանքի պարսպապատ տարածքի հս. եզրին: Արլ-արմ. երկայնական առանցքով ուղղանկյուն ընդարձակ սրահ է՝ կողմերի 1:2 հարաբերությամբ: Կենտր. մասում լայնական առանցքով դրված երկու այուներով սրահը բաժանված է երկու քառակուսի մասերի, որոնցից յուրաքանչյուրը ծածկված է որմնապյուռներին և կենտր. այուներին հենվող խաչվող կամարների համակարգով և ութանկյուն երդիկավոր գմբեթով: Մուտքը արմ. կողմից է, իսկ արլ. պատը ներքուստ ձևավորված է կամարակապ խորշով:

Պարսպապատ տարածքից դուրս, մոտ 100 մ արլ. գտնվում է վանքի աղբյուրը (1258): Այն ուղղանկյուն հատակագծով երկարավուն սրահ է, որի երեք պատերը խուլ են, իսկ հվ. երկայնական պատը ձևավորված է երկթեք տանիքի ճակատոնի տակ առնված կենտր. մեծ կողմնային երկու փոքր կամարակապ բացվածքներով: Ներսում, հս. պատի ողջ երկայնքով տեղադրված են միմյանց հետ հաղորդվող վեց տաշտակներ, որոնց միջով հոսում է ջուրը: Նույն ուղղությամբ ավելի հեռու, բարձունքի վրա գտնվում է Կուսանաց մնապատը՝ Ս. Տիրամայր եկեղեցով (XIII դ.), որը ներքուստ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն փոքր կենտրոնագմբեթ կառույց է:

Վանական համալիրի տարածքում և շրջակայքում պահպանվել են մեմորիալ և մոնումենտալ արվեստի բազմաթիվ հուշարձաններ: Դրանցից առավել նշանավոր է բարձրարվեստ պատկերաքանդակներով հարուստ «Ամենափրկիչ» խաչքարը, որը տեղադրված է Ս. Նշան եկեղեցու հս. մուտքի մոտ, սրահի ներսում: Հիշարժան են նաև Ուքանանց իշխան. տոհմի երեք խաչքար-դամբարանները՝ վանքի հս-արմ. պարսպի մոտ: Հ. վ-ում վավերագրվել և վերծանվել է մոտ 260 վիմագիր արձանագրություն, որոնց ժամանակագրությունն ընդգրկում է X–XVIII դդ.: Դրանք պարունակում

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ են արժեքավոր տեղեկություններ պատմ. իրադարձությունների, թագավոր. և իշխան. տների, հոգևոր և մշակութ. գործիչների, տնտ. կյանքի և վանքի շին. գործունեության մասին:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.4, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Հովհան Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշան, Վնն., 1965: Երզնկյան Ռ., Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի, Վաղպատ, 1886: Լալայան Ե., Բորչալուի գավառ, ԱՀ, 1901, գիրք 7: Ղաֆադարյան Կ., Հաղբատ, Ե., 1963: Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986, էջ 94–101: Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 249–250, 298–301: *Халпахчьян О. Х., Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 181–199;* Mnazaganian S., Alpago-Nowello A., Hakhpat, Milano, 1968 (Documenti di architettura armena, 1).

Կորյուն Ղաֆադարյան

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ, տես *Աստվածաշնչի համաբարբառ*:

ՀԱՄԱՄ ԱՐԵՎԵԼՑԻ, Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ Գրիգոր (ծ. և մ. թթ. անհտ), IX դարի մատենագիր, մեկնիչ: Աղբյուրների վկայությամբ՝ Հայոց Բագրատունյաց տոհմից: Եղել է իշխան, Աղվանից թագավոր: Գահից հրաժարվելով՝ նվիրվել է հոգևոր և մշակութ. գործունեության: Ապրել ու գործել է Հայոց *Գևորգ Բ Գառնեցի* կաթողիկոսի օրոք:

Պահպանվել է Հ. Ա-ու երկու արձանագրություն. մեկը՝ Մեծ Մազրայում, «Գրիգոր Ադրներսեհյան» – «Ադրներսեհի որդի» անունով՝ 881-ին կանգնեցված խաչարձանի վրա, մյուսը՝ Տիգրանակերտ բերդաքաղաքի ավերակներում՝ անթվակիր:

Հ. Ա. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն, որտեղ կարևոր տեղ են զբաղեցնում նրա աստվածաբան. («Հարցմունք և պատասխանիք», 856–865) և մեկնողական բնույթի [«Մեկնութիւն Առակացն Սողոմոնի», «Մեկնութիւն «Ով է դա»-ի» (Հոբ), «Վերլուծութիւն Քերականի» (Դիոնիսիոս Թրակացի)] երկերը, որոնք շարադրված են այլաբան. բացատրության ընկալյալ սկզբունքների կիրարկումով:

Հ. Ա-ու անվամբ հայտնի է «Կարգաւորութիւն Սաղմոսաց» խորագրով երաժշտաբանագրագիտ. բնույթի մի աշխատություն, որի նպատակը եկեղեց. ծեսի մեջ սաղմոսների կիրառման սահմանների ճշգրտումն ու երաժշտ. կարգավորումն է: Հ. Ա. հեղինակ է նաև «Հայր երկնաւոր, անկանիմ առաջին անոխակալ գթութեամբդ» սկսվածքով մի շարականի, որի ակրոստիքոսը հողում է հեղինակի անունը:

Նրա գրչին են պատկանում նաև այլ մեկնություններ՝ «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Սաղմոսին, որ է Ամբիծք», ինչպես նաև պատմագր. մի երկ. դրանք համարվում են կորած:

Երկ. Մեկնութիւն Առակացն Սողոմոնի (աշխատասիր. Մխիթար քհն. Սարիբեկյանի), Ե., 1994:

Գրկ. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մ., 1860: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Կոստանդյանց Կ., Համամ Արևելցի, Վաղ-պատ, 1896: Մնացականյան Ա., Աղվանից գրականության հարցերի շուրջը, Ե., 1966:

Հակոբ Քյոսեյան

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, սուրբ Համբարձման տոն, Հայ առաքելական եկեղեցու *Տերունի տոներից*: Հիսուս Քրիստոսի հարության օրվանից քառասուն օր հետո՝ հինգշաբթի օրը, Հայ եկեղեցին տոնում է Հիսուսի երկինք համբարձվելու հիշատակը: Հ-ման տոնը Զատկի հետ 35 օրվա շարժականություն ունի և նշվում է ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ն ընկած ժամանակահատվածում:

Քրիստոսը, հարությունից հետո քառասուն օր երկրի վրա մնալով, քառասուներորդ օրը Ձիթենյաց լեռան վրա իր վերջին պատգամները, հորդորներն ու օրհնություններն է տվել իր առաքյալներին, համբարձվել երկինք ու նստել Հայր Աստծո աջ կողմում (Մարկ. **16**.19–20, Ղուկ. **24**.50–53, Գործք **1**.9–11): Ըստ Գործք առաքելոցի, մինչ աշակերտները զարմացած ու այլայլված երկինք էին նայում, նրանց երկու սպիտակազգեստ հրեշտակներ են երևում և ասում. «Ով գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին, այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը» (Գործք **1**.11): Հ. նշանավորում է Հիսուս Քրիստոսի երկրային առաքելության ավարտը:

Հ-ման տոնը Հայաստանում, իր մեջ ներառելով հեթանոս. շրջանի մի շարք սովորություններ ու ավանդություններ, վերածվել է

ժող. տոնակատարություն: Հ-ման օրը ժողովուրդը կոչում է նաև «Վիճակ», «Ծաղիկ գովել», «Ջան գյուլում»: Այդ օրը աղջիկները, գույնզգույն, հատկապես կարմիր ու կանաչ զգեստներ հագած, գարնանային ծաղկած դաշտերում կամ այգիներում կազմակերպել են զբոսանք և վիճակախաղ: Անցյալում Հ-ման «Ջան գյուլումը» մեծ տոնախմբություն է եղել և միայն աղջիկներին վերաբերող տոն համարվել: Այդպես է կոչվել, որովհետև վիճակի համար երգվող տաղերը վերջացել են «Ջան գյուլում»-ով, ինչը ծաղկի, մասնավորապես՝ վարդի փառաբանությունն էր: Հ-ման նախընթաց օրը (չորեքշաբթի) աղջիկները դաշտերից, այգիներից հավաքել են 7 գույնի ծաղիկ և փնջեր կապել, որոնցից մեծը և խաչաձևը կոչվել է Ծաղկամեր: Ապա 7 աղբյուրի ջրից լցրած կժի մեջ յուրաքանչյուրը որևէ իր է գցել: Կուժը ծաղիկների հետ պահել են և հսկել, որ տղաները չգողանան: Մյուս օրը՝ Հ-ման տոնին, նստել են բոլորակ՝ իրենց առաջ դնելով կուժն ու ծաղկեփնջերը, և սկսվել է վիճակը (վիճակահանությունը): Երգել են մի-մի տուն ժող. երգ, որի մեկ տողն էր «Ջան գյուլում, ջան, ջան», մյուս տողը՝ «Ջան ծաղիկ, ջան, ջան»: Ամեն մի տունը երգելուց հետո մի փոքրիկ աղջիկ կժից հանել է մի իր: Այդ իրի տիրոջ բախտը որոշվել է երգի կամ արտասանված քառյակի բովանդակությամբ: Այս արարողությունը կոչվել է «Ծաղիկ գովել»: Ծաղիկների, ծառերի, տերևների միջոցով հմայություն և գուշակություն են արել, իսկ ծաղիկներն ու տերևները գործածել որպես բուժիչ դեղ: Բոլոր ծաղիկները բաժանելուց հետո Ծաղկամերը նվիրել են եկեղեցուն:

«Վիճակը», «Ջան գյուլումը», «Ծաղիկ գովելը» հայկ. սովորությունների և կենցաղի մաս են կազմել: Դրանք, ինչպես Կանաչ և Կարմիր կիրակիները և գարնանային այլ տոներ, սերտորեն կապվել են գարնան զարթոնքի, բնության զարդարանքի և ծաղկումի հետ: Այդ օրերին եփել են կաթնապուր, և տոնը կոչվել է նաև կաթնապուրի տոն:

Երաժշտություն: Շարակնոցում Հ-ման կանոնը, որի հեղինակն է Ներսես Լամբրոնացին, երկու պատկեր ունի: Առաջին՝ «Համբարձաւ Տէրըն մեր» (7 մաս) և երկրորդ՝ «Ծագումն Միածնի»՝ 2 Հարց և 2 Տէր երկնից ունեցող 9 միավորից բաղկացած պատկերը: Հ-մանը նվիրված բազմաթիվ տաղեր են ստեղծվել. մի քանիսը («Այսօր անդրանիկ», «Եւ ի յերկինս վերացեալ») մեղեդիներով հանդերձ հարատևել և երգվում են եկեղեցում առ այսօր:

Պատկերագրություն: «Համբարձման» պատկերները Հայտնի են IV դարից: Հայկ. արվեստում հնագույն օրինակները Պտղնիի, Օձունի (VI դ.) եկեղեցիների բարձրաքանդակներն են, «*Էջմիածնի Ավետարան*»-ի կազմի փորագրությունը: «Համբարձման» տեսարանում Քրիստոսը պատկերվում է մանդորլայի (Աստծո փառքի առարկայական արտահայտություն) մեջ (ավելի հաճախ՝ էլիպսաձև) նստած կամ կանգնած, որին դեպի երկինք են տանում հրեշտակները: Ներքևում կանգնած է առաքյալներով շրջապատված Տիրամայրը, ում աջ և ձախ կողմերում սովորաբար լինում են հրեշտակներ, նրանց կողքին՝ Պողոս և Պետրոս առաքյալները: Տիրամայրն առաքյալների հետ պատկերվում է նաև առանց հրեշտակների: «Համբարձման» տեսարանը հայկ. արվեստում մեծ տարածում ունի: Ինքնատիպ են Կիլիկիայի վարպետների, «*Մողնու Ավետարան*»-ի, *Մոմիկի* պատկերազարդած «Պատերազմի Ավետարան»-ի պատկերումները:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.5, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1999: Մաթեվոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995: Schiller G., Iconography of Christian Art, v. I, L., 1971.

Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան
Մարտին Միքայելյան

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ, Հայ կաթողիկե պատրիարքություն, Տանն Կիլիկիո հայ կաթողիկե պատրիարքություն, Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետևորդ հայազգի անհատների (եկեղեցական և աշխարհական) հավաքականություն, որը միացած է Հռոմի աթոռին եկեղեցական և դավանական հաղորդությամբ, ճանաչում և ընդունում է Հռոմի պապի գերագահությունը: Արլ. միացյալ (Uniate) կաթողիկե պատրիարքություններից մեկն է, ինչպիսիք են Մարոնիտ (1216), Քաղդեական (1553), Հույն (Մելքիդ՝ 1724), Ասորի (1783), Ղպտի (1824) կաթողիկե պատրիարքությունները: Հ. կ. ե. իբրև կառույց և եկեղեց. առանձին նվիրապետություն կազմավորվել է 1740-ի նոյեմբ. 26-ին,

Հալեպում, երբ Աբրահամ Արծիվյանն օծվել է հայ կաթոլիկ համայնքի պատրիարք (Աբրահամ Ա Արծիվյան): 1742-ին Հռոմի պապ Բենեդիկտոս XIV-ը վավերացրել է Աբրահամ Ա Արծիվյանի պատրիարքական ընտրությունը: Ներկայումս հայ կաթողիկե պատրիարքական աթոռը գտնվում է *Զմմառի վանքում* (Լիբանան, հիմնվել է 1749-ին): Տանն Կիլիկիո Հայ կաթողիկե պատրիարքության կաթողիկոս-պատրիարքն է Ներսես Պետրոս ԺԹ Թարմունին (1999-ից):

Հայերը *կաթոլիկության* և Լատին եկեղեցու հետ առաջին անգամ առնչվել են Կիլիկիայի հայկ. իշխանապետության շրջանում՝ Խաչակրաց արշավանքների ժամանակ (XI դ. վերջ – XII դ. սկիզբ): Կիլիկյան Հայաստանը, շրջապատված լինելով մահմեդ. պետություններով, փորձել է դաշնակցել Արևմուտքի հետ և, ընդառաջելով Կաթոլիկ եկեղեցու հորդորներին, բազմիցս քննարկել է Հայ և Կաթոլիկ եկեղեցիների մերձեցման հարցը (Անտիոքի 1141-ի, Երուսաղեմի 1143-ի, Սսի 1307-ի, Ադանայի 1316-ի ժողովներ ևն): XIV դ. սկզբին տարածվել է *ունիթորությունը*, երբ Հայաստանում «Միաբանող եղբայրները» սկսել են քարոզել միություն Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ: XIV դ. 1-ին կեսին Հայաստանի արլ. գավառներում ու երկրամասերում (Նախիջևան, Երնջակ, Ջահուկ ևն) և պարսկահայոց մեջ կազմակերպվել են հայ ունիթոր. համայնքներ (կենտրոնը՝ *Ապրակունիսի Ս. Կարապետ վանք*): XV–XVII դդ. Հայաստանում (հիմնականում արմ. մասում և օսմ. կայսրության Ախալցխայի փաշայության գավառներում) և հայկ. գաղթավայրերում կաթոլիկության տարածմանը նպաստել են Արևելքում եռանդուն գործունեություն ծավալած Դոմինիկյան, Ֆրանցիսկյան, Կապուչինյան, Կարմելյան, Հիսուսյան լատին միաբանությունների քարոզիչները (տես *Միսիոներություն*): Նրանց քարոզչությունն առավել հաջողություն է ունեցել Արմ. Հայաստանի գավառներում: 1688-ին Հիսուսյան կրոնավորները հաստատվել են Կարինում: Կաթոլիկ միսիոներությունը բաժանված էր երկու խմբի. մեկը կոչվել է Ս. Գրիգոր և իր գործունեության շրջան դարձրել Դերջան, Հասանկալա, Կարս, Բայազետ և Արաբկիր քաղաքներն ու շրջակա գյուղերը: Երկրորդը կոչվել է Ս. Իգնատիոս և գործել Սպեր, Բաբերդ, Տրապիզոն, Գյումուշխանե քաղաքներում ու մերձակա գյուղերում: Զգալի էր կաթոլիկ քարոզիչների գործունեությունը նաև Կ. Պոլսում և Կիլիկիայում: Մինչև XVIII դ. կաթոլիկացվել են Լեհաստանի և Հունգարիայի հայ գաղութները: Հայ կաթոլիկները, որպես Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից անկախ և առանձին կրոն. համայնք, օսմ. կայսրությունում ճանաչվել են 1829-ի սեպտ. 14-ին:

Արլ. Հայաստանում հայ կաթոլիկ համայնքները հիմնականում արդյունք են Ադրիանուպոլսի դաշնագրից (1829) հետո Կարին-Երզրումից, Ալաշկերտից, Մուշից և այլ վայրերից տեղի ունեցած գաղթերի, երբ հայության որոշ զանգվածներ, այդ թվում՝ կաթոլիկ համայնքներից, անցել են ռուս. կայսրություն և հիմնել մի քանի տասնյակ գյուղեր Շիրակում, Տաշիրում, Լոռիում, ինչպես նաև՝ Ջավախքում: Նորեկները կառուցել են եկեղեցիներ, դպրոցներ, հիվանդանոցներ, ունեցել են քահանաներ ու վարդապետներ: Նրանք հայ կաթողիկե նվիրապետությանը տվել են անվանի հոգևորականներ (օր., կարդինալ Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաջանյան և ուր.), Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան վանքերին և Զմմառի ուխտին անդամակցող միաբաններ: Արլ. Հայաստանի և Ջավախքի հայ կաթոլիկ գյուղերի ու գավառների համար Հռոմի աթոռը XIX դ. կեսից ստեղծել է եկեղեց. կազմակերպություն, իսկ 1909-ին ամբողջ Կովկասի համար առաքելական կառավարիչ նշանակել Սարգիս ծ. վրդ. Տեր-Աբրահամյանին, որը պաշտոնավարել է մինչև խորհրդ. կարգերի հաստատումը: Այդ տարիներին ռուս. կայսրության 172 հայ կաթոլիկ գյուղերում կային 71 եկեղեցականներ (63 քահանա և 8 վարդապետ): Հայ կաթոլիկների ընդհանուր թիվն անցել է 61 հազարից: Ռուս. կայսրության տարածքում եղել են 70-ից ավելի եկեղեցիներ և մատուռներ: Հայ կաթոլիկ շուրջ 40 հոգևորականներ դարձել են ստալինյան հալածանքների զոհ, քանդվել են բազմաթիվ եկեղեցիներ ու մատուռներ կամ օգտագործվել այլ նպատակներով:

Մինչև 1915-ը՝ հայոց Մեծ եղեռնը, Արմ. Հայաստանում հայ կաթոլիկ համայնքներ են եղել Սվազում, Ադանայում, Անարզաբայում, Երզրումում, Խարբերդում, Մուշում, Իզմիրում և այլուր: Եպիսկոպոս. աթոռներ են եղել Կ. Պոլսում, Հալեպում, Բեյրութում, Մարաշում, Ադանայում, Դիարբեքիրում: Գործել են՝ 19 թեմ, 156 եկեղեցի, 110 առաքելություն, 148 դպրոց, 32 վանք, 6 դպրեվանք: Ցեղասպանության և տեղահանությունների հետևանքով

մեծ կորուստներ է կրել նաև հայ կաթոլիկ համայնքը: Զարդերից մազապուրծ հայ կաթոլիկները սփռվել են աշխարհով մեկ: Թեմերից 16-ը, առաքելություններից 98-ը, դպրոցներից 137-ը, վանքերից 21-ը, եկեղեցիներից ու մատուռներից 117-ը, դպրեվանքերից 5-ը ավերվել և փակվել են: Զարդերին զոհ են գնացել հայ կաթոլիկ 8 եպիսկոպոսներ, 111 քահանա, 53 մայրապետ, Զմմառի վանքի 15 միաբան, 65 հզ. ավելի հայ կաթոլիկներ: Լիբանան գաղթած շատ հայ տարագիրներ, որքեր ապաստան են գտել Զմմառի վանքում կամ վայելել միաբանության հովանավորությունը:

Աշխարհասփյուռ հայ կաթոլիկներին համախմբելու և Հ. կ. ե. վերակազմելու նպատակով 1928-ին Հռոմում գումարվել է հայ կաթոլիկ եպիսկոպոսների բանակցական ժողով, որտեղ որոշվել է պատրիարքական աթոռը վերահաստատել Զմմառի վանքում (1931-ից) և հռչակել Լիբանանի պատրիարքական թեմը: 1934-ին կառուցվել է Էշրեֆիեի պատրիարքարանի շենքը, ինչպես նաև Ս. Ավետման եկեղեցին: Պատրիարքարանի տարածքում կառուցվել է նաև Մեծ եղեռնի զոհերին ոգեկոչող մի հուշարձան: 1749–1866-ին Լիբանանի հայ կաթոլիկ համայնքի հոգևոր առաջնորդներ են համարվել Զմմառում գահակալող կաթողիկոս-պատրիարքները, որոնք համայնքի գործերը հսկել են պատրիարքական դիվանին մաս կազմող փոխանորդ եպիսկոպոսների միջոցով: Կաթողիկոս. աթոռը Կ. Պոլսում գտնվելու ժամանակ (1866–1931-ին) լիբանանահայ կաթոլիկ համայնքի հոգևոր առաջնորդի պարտականությունները կատարել են Զմմառի վանքում գործող կաթողիկոսական փոխանորդները կամ վանքի մեծավորները: 1931-ին կաթողիկոս-պատրիարքի նստավայրը Լիբանանում վերահաստատվելուց հետո լիբանանահայ կաթոլիկ համայնքը որոշ ժամանակ իր հայախոս և արաբախոս հավատացյալների համար իբրև առաջնորդ ունեցել է երկու առանձին կաթողիկոսական փոխանորդներ: Այդ թվականից Լիբանանում գահակալել են Ավետիս Պետրոս ԺԴ Արփիարյան (1931–37), Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաջանյան (1937–62), Իգնատիոս Պետրոս ԺԶ Պաթանյան (1962–76), Հմայակ Պետրոս ԺԷ Կետիկյան (1976–82), Հովհաննես Պետրոս ԺԸ Գասպարյան (1982–99) և Ներսես Պետրոս ԺԹ Թարմունի (1999-ից) կաթողիկոս-պատրիարքները:

Հ. կ.-ե-ու ամենահայտնի կաթողիկոս-պատրիարքը և Հռոմի կաթոլիկ եկեղեցու XX դ. ակնառու հոգևորական գործիչներից է կարդինալ (ծիրանավոր) **Գրի·որ Պետրոս ԺԵ Աղաջանյանը** (ավագանի անունը՝ Ղազարոս): Ծնվել է 1895-ի սեպտ. 18-ին, Ախալցխա քաղաքում՝ Հարությունն և Իսկուհի Աղաջանյանների ընտանիքում: 1906-ին Ղազարոս Աղաջանյանը Ախալցխայի առաքելական կառավարիչ Սարգիս ծ. վրդ. Տեր-Աբրահամյանի խորհրդով և նրա աջակցությամբ մեկնել է Հռոմ և ընդունվել Ուրբանյան քոլեջ, հաճախել նաև Հռոմի Լատերանյան համալսարանի իրավաբանության դասընթացներին: 12 տարվա ուսումնառությունից հետո (ստացել է աստվածաբանի, փիլիսոփայի և իրավաբանի վկայագրեր) 1917-ին ձեռնադրվել է վարդապետ՝ ընդունելով Ֆրանցիսկոս անունը: Կարճ ժամանակով վարել է Ուրբանյան դպրոցի փոխտեսուչի պաշտոնը: 1919–21-ին եղել է Թիֆլիսի հայ կաթոլիկների առաջնորդ, պաշտոնավարել տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Վրաստանում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո, 1921-ին մեկնել է Հռոմ և նույն թվին նշանակվել Հռոմի հայ կաթոլիկ Լևոնյան քահանայական վարժարանի փոխմեծավոր, 1923-ից՝ մեծավոր: Երկար տարիներ (1921–37-ին) դասավանդել է Հռոմի Ուրբանյան քոլեջի փիլիսոփայության, ապա՝ աստվածաբանության ամբիոններում: 1935-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1937-ի նոյեմբ. 30-ին ընտրվել և դեկտ. 5-ին օծվել է Տանն Կիլիկիո կաթողիկե հայոց կաթողիկոս-պատրիարք՝ ստանալով Գրիգոր Պետրոս ԺԵ անունը:

Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաջանյանը երկրորդ համաշխ. պատերազմից հետո մեծ դեր է խաղացել Վատիկանի միջոցով նորանկախ արաբ. պետությունների շահերը Արևմուտքի առաջ պաշտպանելու, նրանց միջև դիվանագիտ. կապեր հաստատելու և ամրապնդելու գործում: Այդ շրջանում կաթողիկոս-պատրիարքը ստանձնել է նաև Լիբանանի համայնքների միջև միջնորդի և հաշտարարի դեր: 1946-ի փետր. 18-ին ընտրվել է կարդինալ և որպես 32 նորընտիր կարդինալների շարքում առաջինը նրան է պատիվ տրվել 1946-ի մարտի 12-ին հայածես Պատարագ մատուցել Սիքստինյան կապելլայում՝ Հռոմի Պիոս XII պապի գահակալության 7-րդ տարեդարձի առթիվ: Որպես կաթողիկոս-պատրիարք այցելել է հայ կաթոլիկ թեմեր Եվրոպայում, Մերձ. Արևելքում, Հս. և Հվ. Ամերիկայում, 1952-ին օծել է Ամմանի (Հորդանան) հայ կաթոլիկ նորակառույց եկեղեցին, 1954-ին՝ Թեհրանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1959-ին՝ Բեյրութի Ս. Եղիա – Ս.Գրիգոր Լուսավորիչ աթոռանիստ եկեղեցին ևն: 1952-ին պարգևատրվել է Ֆրանսիայի Պատվո լեգեոնի Մեծ խաչ շքանշանով: Որպես կաթոլիկ եկեղեցու կարդինալ ջանացել է ընդլայնել կաթոլիկության ազդեցությունը տարբեր երկրներում, կազմակերպել է կաթոլիկ նոր թեմեր, առաքելություններ, հիմնել դպրոցներ:

1955-ին նշանակվել է Արևելյան եկեղեցիների կանոնագրի պատրաստման Կարդինալների հանձնախմբի նախագահ, 1960-ին՝ Վատիկանի II ժողովը նախապատրաստող Առաքելությունների հարցերի քննիչ հանձնախմբի պատասխանատու, 1958-ին՝ Հավատի տարածման (Պրոպագանդայի) Ս. ժողովի փոխնախագահ, 1960–1970-ին՝ նախագահ: Այդ պաշտոններն անհրաժեշտ են դարձրել իր մշտական ներկայությունը Հռոմում, ուստի 1962-ի օգոստոսին հրաժարվել է կաթողիկոս-պատրիարքի պաշտոնից: Հռոմի Հովհաննես XXIII պապի վախճանվելուց հետո համարվել է Հռոմի պապի ամենահավանական թեկնածուն, մասնակցել պապի ընտրությանը, սակայն քաղ. հանգամանքների բերումով կարդինալների դռնփակ ժողովը՝ կոնկլավը (1963-ի հունիսի 19), պապ է հռչակել Պողոս VI-ին: 1966-ին նշանակվել է Վատիկանի II ժողովի վճիռների Գործադիր հանձնախմբի անդամ: Վախճանվել է 1971-ի մայիսի 16-ին: Աճյունն ամփոփված է Հռոմի Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռում:

Ն վ ի ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն ը: Տանն Կիլիկիո Հայ կաթողիկե պատրիարքությունը ներկայումս առաջնորդություններ (թեմեր, վիճակներ, էքզարքություն, փոխանորդություն, համայնքներ) ունի Եվրոպայում, Հս. և Հվ. Ամերիկայում, Մերձավոր Արևելքում, Ավստրալիայում, Հայաստանում և Վրաստանում: Հայ կաթոլիկ խոշոր համայնքներ կան Հայաստանում (մոտ 120.000 մարդ), Լիբանանում (20.000), Սիրիայում (25.000), Վրաստանում (40.000), Եգիպտոսում (1.650), Իրաքում (2.500), Իրանում (2.500), Թուրքիայում (4.000), Ռումինիայում (11.000), Հունգարիայում (800), Լեհաստանում (մոտ 10.000), Ֆրանսիայում (30.000), Իտալիայում (500), ԱՄՆ-ում և Կանադայում (35.000), Հարավային Ամերիկայում (40.000), Ավստրալիայում (3.000):

Լ ի բ ա ն ա ն ի պ ա տ ր ի ա ր ք ա կ ա ն թ ե մ (Բեյրութ): Թեմի առաջնորդը կաթողիկոս-պատրիարքն է, որը թեմը վարում է իր ընդհանուր փոխանորդի և վարչ. խորհրդի միջոցով: Ունի նաև օգնական եպիսկոպոս: Գործում է 9 եկեղեցի, առավել հայտնի են Բեյրութի Ս. Եղիա-Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Փրկիչ և Ս. Խաչ եկեղեցիները: Հայ կաթոլիկ եկեղեցիներ կան նաև Ռաուդայի դպրեվանքի և Հազմիեի Մխիթարյան վարժարանի շրջակայքում, Զմմառում, Այնճարում, ինչպես նաև մի մատուռ Բիկֆայայի Մխիթարյանների ամառանոցում: Անցյալում հայ կաթոլիկ եկեղեցիներ են գործել նաև Սայդա, Սուր և այլ բնակավայրերում, որտեղ ժամանակին եղել է հայ կաթոլիկ ստվար բնակչություն:

Լիբանանում հոգևոր և կրթ. լայն գործունեություն են ծավալում Զմմառյան, Մխիթարյան և Անարատ Հղության քույրերի միաբանությունները: Բեյրութի Հազմիե արվարձանում Մխիթարյաններն ունեն երկրորդական մի վարժարան, 1972-ին բացվել է Մխիթարյան միաբանության Ռաուդայի դպրեվանքը: Ներկայումս Բեյրութում գործում են Անարատ Հղության քույրերի միաբանության Ս. Հռիփսիմյանց (1922-ից), Ս. Ագնես վարժարանները, ինչպես նաև դպրոցներ Զահլեում և Այնճարում, Զմմառի աղջկանց և Այնճարի երկսեռ որբանոցները: 1937-ին հիմնված Ս. Շուշան վարժարանը 1997-ին վերածվել է մանկամսուրի: Անցյալում լիբանանահայ պատանիներին հայեցի դաստիարակություն տալու գործում մեծ է եղել նաև Հիսուսյան միաբանության Բեյրութի Ս. Գրիգոր Լուսավորիչ ճեմարանի դերը: Թեմում գործում են բազմաթիվ մշակութ., բարեսիր., մարզ. և սկաուտական միություններ, 4 երգչախումբ:

1931-ից Լիբանանի պատրիարքական թեմի հայ կաթոլիկ առաջնորդի պարտականությունները հաջորդաբար կատարել են Հովհաննես արք. Նազլյանը, Ալոզիոս արք. Պաթմանյանը, Սահակ եպս. Կոզյանը, Մեսրոպ եպս. Թերզյանը, Անդրեաս եպս. Պետողլյանը, Վարդան եպս. Աշգարյանը, Մանվել եպս. Պաթագյանը:

Բ ե ր ի ո թ թ ե մ (Հալեպ, Սիրիա): Առաջնորդանիստը՝ Հալեպի Տիրամայր Մայր օգնությանց եկեղեցի (կառուցվել է 1840-ին): Թեմն ունի 5 եկեղեցի, 5 դպրոց: Գործում են մշակութ., բարեսիր., մարզ. միություններ:

Բ ա ր ձ ր Ջ ե զ ի ր ե ի թ ե մ (Կամըշլի, Սիրիա): Ունի 3 եկեղեցի և 1 դպրոց: Գործում է Ընկերային կենտրոնը:

Դ ա մ ա ս կ ո ս ի պ ա տ ր ի ա ր ք ա կ ա ն էքզարքություն (Սիրիա): Ունի 1 եկեղեցի և 1 դպրոց: Գործում են երիտասարդ. և սկաուտ. խմբեր, երգչախումբ:

Պ ո լ ս ի թ ե մ (Թուրքիա): Ունի 4 եկեղեցի և 4 դպրոց, որոնք կառավարվում են Մխիթարյան միաբանության և Անարատ Հղության քույրերի միաբանության կողմից: Թեմի խնամակալության տակ է Սուրբ Հակոբ հիվանդանոցը:

Ա լ ե ք ս ա ն դ ր ի ա յ ի թ ե մ (Կահիրե, Եգիպտոս): Ունի 3 եկեղեցի (Կահիրեում, Հելիոպոլսում, Ալեքսանդրիայում) և 1 դպրոց՝

Անարատ Հղության քույրերի միաբանության տնօրինությամբ:

Սպահանի թեմ (Թեհրան, Իրան): Ունի 2 եկեղեցի և 2 դպրոց, մեկը՝ թեմական, մյուսը՝ Անարատ Հղության քույրերին պատկանող: Թեմի տնօրինության տակ են Հայկաշենի հայկ. ավանը և մեկ Տարեցների տուն:

Բաղդադի թեմ (Իրաք): Ունի 1 եկեղեցի և 1 դպրոց՝ ղեկավարությամբ Անարատ Հղության քույրերի միաբանության:

Երուսաղեմի պատրիարքական փոխանորդություն (Իսրայել): Ունի 1 սրբավայր՝ Քրիստոսի Խաչի ճանապարհի վրա՝ Երրորդ և Չորրորդ Կայան, նրան կից՝ ուխտավորների համար հյուրանոց: Փոխանորդության հետ կապված է Հորդանանի փոքրաթիվ համայնքը, որն Ամմանում ունի 1 եկեղեցի և 1 դպրոց:

Ֆրանսիայի թեմ: Առաջնորդարանը՝ Փարիզում: Ունի 6 եկեղեցի (Փարիզ, Առնովիլ լը Գոնես, Լիոն, Մարսել, Վալանս, Սենթ-Շամոն): Գործում են Անարատ Հղության քույրերի միաբանության Մարսելի վարժարանը և Լիոնի Աղջկանց կենտրոնը:

Հունաստանի վիճակ: Առաջնորդարանը՝ Աթենքում: Ունի 2 եկեղեցի:

Հյուսիսային Ամերիկայի թեմ (Նյու Յորք): Թեմն ընդգրկում է ԱՄՆ-ը և Կանադան: ԱՄՆ-ում կան 8 համայնքային կենտրոններ՝ իրենց եկեղեցիներով. Նյու Յորք, Ֆիլադելֆիա, Դետրոյթ, Լիթըլ Ֆոլզ (Նյու Ջերսի), Լոս Անջելես (երկու), Սան Դիեգո, Քեմբրիջ: Գործում է 3 դպրոց՝ Ֆիլադելֆիայում, Բոստոնում, Լոս Անջելեսում՝ Անարատ Հղության քույրերի միաբանության ղեկավարությամբ, և մեկ դպրոց՝ Մխիթարյան Հայրերի (Լոս Անջելես): Կանադայում գործում են 2 եկեղեցի (Մոնրեալ և Տորոնտո) և 1 դպրոց:

Հարավային Ամերիկայի թեմ (Բուենոս Այրես, Արգենտինա): Ունի 3 համայնքային կամ ծխական կենտրոն՝ իրենց եկեղեցիներով [Բուենոս Այրես, Սան Պաուլո (Բրազիլիա) և Մոնտեվիդեո (Ուրուգվայ)]: Բուենոս Այրեսում կա մեկ դպրոց՝ Մխիթարյանների ղեկավարությամբ:

Իտալիա: Ունի 2 եկեղեցի և Վենետիկի Մխիթարյան միաբանության Մայրավանքը Ս. Ղազար կղզում: Հռոմում գործում են Լևոնյան քահանայական վարժարանը (տեսուչ՝ Եղիա վրդ. Եղիայան), Վատիկանի Ջայնասփյուռի հայկական բաժինը:

Հայ կաթոլիկ համայնքներ կան Լեհաստանում (տես *Լեհահայոց կրոնական համայնք* հոդվածում), Ավստրալիայում (գործում են 2 ծխական եկեղեցի Սիդնեյում և Մելբուռնում, 1 դպրոց, համայնքն ունի 3 վարդապետ), Հունգարիայում (1 եկեղեցի):

Հայաստանի, Վրաստանի եվ Արևելյան Եվրոպայի թեմ (առաջնորդարանը՝ Գյումրիում): Կազմավորվել է 1991-ին՝ Հռոմի պապի վճռով: Ընդգրկում է նաև Ռուսաստանը և Ուկրաինան: Ստեղծման օրից թեմի առաջնորդն է Մխիթարյան հայր Ներսես արք. Տեր-Ներսիսյանը (լրիվ տիտղոսն է՝ արքեպիսկոպոս Սեբաստիո հայոց և առաջնորդ Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմի): Թեմում գործում են Փանիկ, Արևիկ, Ազատան, Լանջիկ, Ջիթհանքով (Շիրակում), Աշոցքի Մեծ Սեպասար և այլ գյուղերի, ինչպես նաև Վրաստանի Նինոծմինդայի, Ախալքալաքի և Ախալցխայի շրջանների գյուղերի եկեղեցիները: Թեմն ունի 8 վարդապետ (4-ը՝ Հայաստանում, 4-ը՝ Վրաստանում), որոնք գործում են Փանիկ, Արևիկ, Ազատան, Լանջիկ, Մեծ Սեպասար, Տաշիրի և շրջակա հայ կաթոլիկ գյուղերում, Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Հեչտիա և շրջակա կաթոլիկ գյուղերում, Ախալցխայի շրջանի Սուխլիս, Ծղալթբիլա, Ջուլղա և շրջակա հայ կաթոլիկ գյուղերում, Ախալքալաքի շրջանի Տուրցխի և շրջակա հայ կաթոլիկ գյուղերում: Թեմն ունի 2 սարկավագ (Աշոցքի Մեծ Սեպասար և Վրաստանի Ախալցխայի շրջանի Ծինուբան գյուղերում): Գյումրիում և շրջակա գյուղերում, Տաշիրում, Աշոցքում, Սպիտակում և Վրաստանում (Հեչտիա, Տուրցխ, Սուխլիս, Ծղալթբիլա գյուղեր) գործում են 26 հայ և օտարազգի մայրապետներ Անարատ Հղության հայ քույրերի միաբանությունից (9 հոգի), Հիսուսի փոքրիկ քույրերի միաբանությունից (2), Մայր Թերեզայի Գթության քույրերի միաբանությունից (6), Էվխարիստին (Հաղորդություն) միաբանությունից (3), Սալեզյան միաբանությունից (6):

2000-ի օգոստ. օծվել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Ժդանովական գյուղի Ս. Սարգիս նորակառույց եկեղեցին: Աշոցքում գործում է «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցը, Գյումրիում՝ Ներսիսյան դպրեվանք-ընծայարանը: Անարատ Հղության հայ քույրերին է պատ-

կանում Գյումրու «Պողոսյան կրթական համալիրը», երկուական քույրերով փոքր կենտրոնները՝ Տաշիրում (Հայաստան) և Հեչտիայում (Վրաստան): Հայ կաթոլիկներ են ապրում նաև Ռուսաստանի Սոչի, Ադլեր, Կրասնոդար, Մոսկվա և այլ քաղաքներում:

Միաբանություններ, կազմակերպություններ: Հ. կ. ե-ու ծոցում գործում են երեք միաբանություններ. *Մխիթարյան միաբանությունը*, Զմմառյան կաթողիկոսական միաբանությունը և *Անարատ հղության հայ քույրերի միաբանությունը*: Մխիթարյանները մեծ ներդրում ունեն հայ հոգևոր, մշակութ. և գիտ. զարթոնքի ու վերելքի գործում, նշանակալից է հատկապես նրանց հայագիտ-բանասիր., հրատարակչական-կրթ. գործունեությունը: Հայ գաղթավայրերում Մխիթարյանները մեծապես նպաստել են հայապահպանությանը: Հայ մշակույթի և գիտության զարգացման գործում մեծ է մխիթարյան հայրերի՝ *Մխիթար Սեբաստացու*, Մ. *Զամչյանի*, Մ. *Ավգերյանի*, Հ. Ավգերյանի, Ղ. Ինճիճյանի, Մ. Չախչախյանի, Ա. Բագրատունու, Ղ. *Ալիշանի*, Հ. *Գաթըրճյանի*, Հ. *Տաշյանի*, Ն. *Ակինյանի*, Պ. Անանյանի և այլոց վաստակը, որոնք հեղինակել են պատմագիտ., աշխարհագր., հայագիտ. կոթողային աշխատություններ, բառարաններ, լեզվաբանական-թարգմ. գործեր: Մխիթարյաններն իրենց թանգարաններում, մատենադարաններում, ձեռագրատներում ունեն հայերեն և օտար լեզուներով գրքերի, հայկ. ձեռագրերի, կիրառ. արվեստի, կերպարվեստի, դրամների և բազմաթիվ այլ նյութերի հարուստ հավաքածուներ:

1993-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է «Հայաստանի Մխիթարյան կենտրոնը», որի նպատակն է օժանդակել Հայաստանի և սփյուռքի ազգ-մշակութ. և կրթ. կյանքին: Կազմակերպում է դասախոսություններ, հրատարակում գրքեր: Կենտրոնի ղեկավարն է Սերոբ վրդ. Զամուրլյանը (2000-ից):

Զմմառյան միաբանությունն իր հոգևոր և մշակութ. առաքելությունն իրականացնում է հայկ. շատ գաղթավայրերում: Վանքի ձեռագրատունը, մատենադարանում, թանգարանում, դիվանում պահպանվում են հայկ. ձեռագրերի, հայ և օտար հրատարակությունների, սրբազան իրերի, գեղ. գործերի, եկեղեց. և ազգ. պատմությանը վերաբերող վավերագրերի եզակի հավաքածուներ:

Անարատ Հղության հայ քույրերի միաբանությունը գործում է սփյուռքի բոլոր մեծ համայնքներում՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Իրան, Իրաք, Ֆրանսիա, ԱՄՆ: 1992-ից միաբանության քույրերը գործում են նաև Հայաստանում և Վրաստանի հայ կաթոլիկներով բնակեցված գյուղերում:

Հ. կ. ե. ունի նաև ընկերային, բարեսիր., մշակութ. կազմակերպություններ. Լիբանանում գործում են Հայ կաթողիկե երիտասարդաց միությունը, երկու որբանոց, Ստամբուլում՝ հիվանդանոց, Թեհրանում՝ ծերանոց: Մի շարք թեմերում ստեղծվել են մշակութ. կենտրոններ:

Կրթական կենտրոններ: Հ. կ. ե. և Մխիթարյան միաբանությունն իրենց կրթական առաքելությունն իրականացնում են սփյուռքի բոլոր խոշոր համայնքներում և Հայաստանում: Հ. կ. ե-ու նվիրապետության հովանու ներքո գործում են 44 դպրոցներ: Դրանց մեծ մասը երկրորդական վարժարաններ են (լիցեյի մակարդակով), որոնցում ավելի քան 35 հզ. աշակերտ ստանում է հայեցի և քրիստ. կրթություն: Անարատ Հղության հայ քույրերը ևս ունեն իրենց դպրոցները և ընծայարանները: Ամենահայտնի հայ կրթ. կենտրոններից էր Վենետիկի *Մուրատ-Ռափայելյան վարժարանը* (1998-ից չի գործում). ունեցել է հարուստ գրադարան և թանգարան: Մխիթարյանների տնօրինության տակ գործում են Բուենոս Այրեսի, Հալեպի, Բեյրութի, Լոս Անջելեսի Մխիթարյան վարժարանները: XVIII–XIX դդ. Մխիթարյան վարժարաններ են գործել Արմ. Հայաստանում, Թուրքիայի հայաշատ վայրերում, Հունգարիայի հայ գաղթավայրերում, Սիմֆերոպոլում, Ախալցխայում և հայաբնակ այլ վայրերում: Կաթոլիկ հայ հոգևոր կադրերի պատրաստման բարձրագույն դպրոց է 1883-ին Հռոմում հիմնադրված և ցայսօր գործող Լևոնյան քահանայական վարժարանը: Հայաստանի հայ կաթոլիկ համայնքի համար հոգևորականներ պատրաստելու նպատակով Գյումրիում բացվել է Ներսիսյան դպրեվանք-ընծայարանը (1994-ից):

Մամուլ: Հ. կ. ե. կրթ-դաստիարակչական, գիտ-մշակութ. ասպարեզներում կարևոր ներդրում է ունեցել իր մամուլով, ինչպես նաև հայագիտ., կրոն., աստվածաբան., գեղ., բառարանագիտ., քաղ. բնույթի բազմաթիվ հրատարակություններով, մատենաշարերով:

1843-ից անընդմեջ Վենետիկի Մխիթարյանները հրատարակում են «*Բազմավեպ*» հայա-

գիտ-բանասիր. հանդեսը, որը ներկայումս հրատարակվող հայ ամենահին պարբերականն է: Վիեննայի Մխիթարյանները 1847–63-ին հրատարակել են «Եվրոպա» շաբաթաթերթը, 1887-ից՝ «*Հանդես ամսօրյա*» հայագիտ-բանասիր. ամսագիրը: Հայ կաթոլիկների հրատարակած ամենահայտնի պարբերականներն են՝ «Կաթողիկե արձագանք» (1911–15, Հռոմ և Կ. Պոլիս՝ 1912-ից) Կ. Պոլսի հայ կաթոլիկների պաշտոնաթերթը, Մխիթարյան լիցեյի հրատարակություններ «Շող» կիսամսյա հանդեսը (1911–13, Կ. Պոլիս) և «Ուսումնարան» ամսագիրը (1911–15, Կ. Պոլիս), «Հայ աշխարհ» (1937–38, Բրյուսել, հայ. և ֆրանս., վերջում՝ միայն ֆրանս., Բելգիայի Հայ կաթոլիկ եկեղեցու պաշտոնաթերթը), Վենետիկի Մխիթարյանների «Հայ ընտանիք» (1969-ից) դպրոցական պատկերազարդ ամսագիրը (1947–60-ին՝ «Մխիթարյան ընտանիք», 1960–62-ին՝ «Ընտանիք», 1963–69-ին՝ դարձյալ «Մխիթարյան ընտանիք»), Հռոմի Լևոնյան ժառանգավորաց վարժարանի «Հռոմկլա» պատկերազարդ պարբերաթերթը (1963–68, Հռոմ), Զմմառի Հայ կաթողիկե պատրիարքարանի «Ավետիք» պաշտոնաթերթը (Բեյրութ, 1932-ից), «Մասիս» (Բեյրութ, 1947-ից), «Զվարթնոց» (Բեյրութ), «Եկեղեցին Հայկական» (Փարիզ), «Վերելք» (Լոս Անջելես), «Ավետաբեր» (Լոս Անջելես), «Զահ» (Նյու Յորք) ամսաթերթերը, ինչպես նաև մի շարք տեղեկատվական թերթեր՝ բազմաթիվ թեմերում և եկեղեցիներում: Մխիթարյանները շարունակում են «Հայագիտական մատենաշար» (Վենետիկ) և «Ազգային մատենադարան» (Վիեննա) արժեքավոր մատենաշարերի հրատարակումը:

Տանն Կիլիկիո Հայ կաթողիկե պատրիարքության կաթողիկոս-պատրիարքներ

Աբրահամ Պետրոս Ա Արծիվյան (1740–49), Հակոբ Պետրոս Բ Հովսեփյան (1749–53), Միքայել Պետրոս Գ Գասպարյան (1753–80), Բարսեղ Պետրոս Դ Ավգատյան (1780–88), Գրիգոր Պետրոս Ե Գյուբելյան (1788–1812), Գրիգոր Պետրոս Զ Ճերանյան (1812–40), Հակոբ Պետրոս Է Հոլասյան (1841–43), Գրիգոր Պետրոս Ը Տեր-Աստվածատուրյան (1843–66), Անտոն Պետրոս Թ Հասունյան (1866–80), Սեփանոս Պետրոս Ժ Ազարյան (1881–1899),Պողոս Պետրոս ԺԱ Էմմանուելյան (1899–1904), Պողոս Պետրոս ԺԲ Սապպաղյան (1904–09), Պողոս Պետրոս ԺԳ Թերզյան (1910–31), Ավետիս Պետրոս ԺԴ Արփիարյան (1931–37), Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաջանյան (1937–62), Իգնատիոս Պետրոս ԺԶ Պաթմանյան (1962–1976), Համայակ Պետրոս ԺԷ Կեռիկյան (1976–82), Հովհաննես Պետրոս ԺԸ Գասպարյան (1982–99), Ներսես Պետրոս ԺԹ Թարմունի (1999-ից):

Գրկ. Գալանոս Կղեմես, Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ Մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռոմայ, հ. 1, 2, Հռոմ, 1650, 1661: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Փափազյան Ի., Պատմութիւն եկեղեցական, Վնտ., 1848: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Սարգիսյան Բ., Երկհարիւրամյա գրականական գործունեութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկո Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905: Սրապյան Ս., Հայք և ունիթոռք, ՀԱ, 1919, № 11: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1–3, ԿՊ-Երուսաղեմ, 1912–27: Ակինյան Ն., Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան միաբանութեան գրական գործունեութեան վրա, Վնն., 1912: Հացունի Վ., Կարևոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վնտ., 1927: Անտոնյան Ռ., Հայ Կաթողիկե Եկեղեցին, «Պայքար», Բոստոն, 1993, Ա տարի, № 3–4, էջ 9–16: Tournebize Fr., Histoire politique et religieuse de L'Armenie, P., 1900; Amadouni G., L'Eglise arménienne et la Catholicité, V., 1978.

ՀԱՅ ՄԿՐՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, Հայ ավետարանական մկրտական եկեղեցիներ, ավետարանական (բողոքական) դավանանքին պատկանող ուղղություններից մկրտականության (բապտիզմի) հայազգի հետևորդների եկեղեցիներ: Սփյուռքում, բացառությամբ Թբիլիսիի և Սուխումի, առանձին Հ. մ. ե. կամ համայնքներ չկան: ՀՀ-ում պաշտոնապես գործում են երկու առանձին Հ. մ. ե.՝ Գյումրու Հայ ավետարանական մկրտական եկեղեցին և Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցիները (Երևանի, Աբովյանի, Արարատի մարզի Արևշատ գ., Արարատի, Վանաձորի, Ստեփանավանի ևն):

Մկրտականությունը հայերի մեջ տարածվել է ավետարանականության հետ գրեթե միաժամանակ՝ XIX դ. սկզբին, բայց, ի տարբերություն ավետարանականության՝ գլխավորապես Արլ. Հայաստանում և Անդրկովկասում: 1836-ին Շիրակ գավառի Արխվելի գ. (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Լեռնուտ գ.) բնակիչների (որոնք գաղթել էին Արմ. Հայաստանի Խնուս գավառի Զեվիրմե գյուղից, 1829–30-ին) մոտ հայտնաբերվել է «Բանալի ճշմարտության» անունով մի դավանագիրք՝ գրված 1782-ին, Տարոն գավառում: Գյուղի բնակիչները, որոնք հայ պատմագրության մեջ անվանվում են «նոր թոնդրակեցիներ», հետևել են բողոքականության ազդեցությամբ հայկ. միջավայրում իր առանձ-

նահատուկ գաղափարական տեսքն ստացած ավետարան. և մկրտական վարդապետությանը: Գրքի ողջ դավանանքն էլ համահունչ է մկրտականության ուսմունքին: Հայ մկրտականներ եղել են Կարսի նահանգի Ղարաղալա գյուղում, Ալեքսանդրապոլում և շրջակա մի շարք գյուղերում: Շուշիում 1889-ին հայ ավետարանականներից բաժանվել են մկրտականները, որոնք, ժամանակակցի վկայությամբ, մկրտվել են գետում և պաշտամունքները կատարել ավետարանականներից առանձին: 1890-ին Շուշիում բացվել է առաջին հայկ. մկրտական եկեղեցին: XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ մկրտական ազդեցիկ համայնք կար Բաքվում: Նրանք ունեին առանձին եկեղեցի, որը պաշտոնապես չէր ճանաչել ռուս. կառավարությունը: Բաքվի հայ մկրտականները հրատարակել են «Բարի լուր» կրոն. երկշաբաթաթերթը (1906–17), որը միակ ավետարանական հայկ. թերթն էր Անդրկովկասում: Բաքվի Հայ մկրտական եկեղեցում երկար տարիներ պաշտոնավարել է վերապատվելի Պատվական Թառայանը, որը «Բարի լուրի» հիմնադիրն ու անփոփոխ խմբագիրն էր: 1908-ին Բաքվի մկրտականները հիմնել են «Բաքվի որբախնամ ընկերությունը», որի որբանոցում սաների թիվը հասել է 40–50-ի: Ունեցել են նաև Ս. Գրոց անունով դպրոց: 1917-ի ապրիլին «Բարի լուրի» հրավերով Բաքվի մկրտականների ժողովարանում տեղի է ունեցել Կովկասի Հայ ավետարանականների համագումար: 1918–20-ի Բաքվի հայկ. կոտորածների ժամանակ հայ մկրտականները արտագաղթել են Թիֆլիս: 1923-ին այնտեղ բացվել է տեղի հայ մկրտականների ժողովարանը (եկեղեցի): 1920-ական թթ. մկրտական եկեղեցի է բացվել նաև Լենինականում (այժմ՝ Գյումրի): Լենինականի Հայ մկրտական եկեղեցին մինչև 1965-ը մաս է կազմել Երևանի Հայ ավետարանական քրիստոնյա բապտիստների եկեղեցու: Այնուհետև պաշտոնապես գրանցվել է որպես առանձին միավոր ու համայնք և ձեռնադրված առաջնորդ ունենալու իրավունք ստացել: Խորհրդ. իշխանության տարիներին միավորել է ավետարանականներին ու մկրտականներին: Գյումրու Հայ ավետարանական մկրտական եկեղեցու ավետարանչական գործունեության դաշտն ընդգրկում է Գյումրու մերձակա Մարմաշեն, Կամո, Շիրակ գյուղերը: Եկեղեցին ունի 2 երգչախումբ, կիրակնօրյա դպրոց՝ 120 երեխաներով: Անդամների թիվը 250 է: Գյումրու Հայ ավետարանական մկրտական եկեղեցին Հայաստանի ավետարանական եկեղեցիների միության հիմնադիր անդամներից է: ՀՀ-ում վերագրանցվել է 1994-ին: 1995-ից եկեղեցու հովիվն է վերապատվելի Ռ. Փահլևանյանը:

Երբ 1944-ի հոկտեմբերից ԽՍՀՄ-ում թույլատրվել է մկրտականների և ավետարանական քրիստոնյաների գործունեությունը մեկ միասնական միության մեջ, Հայաստանում գործող մկրտական և ավետարան. խմբերը ևս միավորվել են և կոչվել Ավետարան. քրիստոնյաների և բապտիստների համայնք կամ եկեղեցի, որը մաս էր կազմում Համամիութենական ավետարանական քրիստոնյա-բապտիստների եկեղեցու: Եկեղեցու ղեկավար մարմինը Ավետարան. քրիստոնյա-բապտիստների համամիութ. խորհուրդն էր: Այդ ժամանակ Հայաստանում առանձին-առանձին պաշտոնապես գործող ավետարան. և մկրտական եկեղեցիներ ու համայնքներ չկային: 1945-ի մայիսին ստեղծվել է Ավետարան. քրիստոնյաների և բապտիստների (ԱՔ և Բ) Երևանի կրոն. համայնքը, որը 1946-ի փետր. գրանցվել է պաշտոնապես: 1960-ական թթ. վերանվանվել է Երևանի Հայ ավետարան. մկրտական եկեղեցի, իսկ 1994-ից վերագրանցվել Երևանի Հայ ավետարան. մկրտական քրիստոնյաների եկեղեցի անվամբ: 2000-ից առանձին գրանցմամբ գործում է Երևանի «Բեթել» մկրտական եկեղեցին (Մալթիա-Սեբաստիա համայնք): Մկրտականների մոտ 1 տասնյակ փոքր ժողովարաններ և աղոթարաններ են գործում նաև քաղաքի տարբեր շրջաններում: Մկրտականների թիվը Երևանում ներկայումս (2000) մոտ 800 է: Եկեղեցին ունի երիտասարդաց պաշտամունքներ, կիրակնօրյա դասընթացներ, երգչախումբ, ռուս. խումբ: Հայ ավետարան. մկրտական քրիստոնյաների եկեղեցիներ (նույն կանոնադրությամբ գրանցված) կան նաև Աբովյանում, Վանաձորում, Ստեփանավանում, Արտաշատում, Արարատում: Ներկայումս (2000) եկեղեցու անդամների ընդհանուր թիվը մոտ 2000 է: Հայ ավետարան. մկրտական քրիստոնյաների (ՀԱՄՔ) եկեղեցիների ավագ հովիվն է վերապատվելի Յուրի Ավանեսյանը (1979-ից): ՀԱՄՔ եկեղեցիները հիմնադիր անդամն են 1995-ին ստեղծված Հայաստանի ավետարան. եկեղեցիների միության (նախագահը՝ վերապատվելի Յուրի Ավանեսյան):

Հ. մ. ե-ու վարդապետությունն ու պաշտամունքը, կազմակերպչական ձևը նույնն են, ինչ որ Հայ ավետարան. եկեղեցունը, այն բացառությամբ, որ մերժում են երեխաների և անչափահասների մկրտությունը: Առաջնահերթ տեղ են հատկացնում հավատի գիտակցված (անհատական) և հավատով փրկվելու գաղափարին: Իսկ գիտակցված հավատ կարող են ունենալ միայն չափահասները: Մկրտվողը միայն իր գիտակցական հավատով է բռնում մաքրագործման և փրկության ճանապարհը, մինչդեռ նախապատրաստական շրջան չանցած, չապաշխարած, ուսում և հավատ չունեցող անգիտակից երեխայի մկրտությունը, ըստ նրանց, ճշմարիտ մկրտություն չէ և ոչ էլ ճշմարիտ փրկություն (տես նաև *Հայաստանյայց ավետարանական եկեղեցի* հոդվածը):

Արտաշես Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ, Հայ առաքելական եկեղեցի, Հայաստանյայց եկեղեցի, Հայ եկեղեցի, Հայոց եկեղեցի, *Արևելյան ուղղափառ եկեղեցիներից*, հայ ժողովրդի ազգային եկեղեցին: Կենտրոնը՝ ՀՀ *Վաղարշապատ* քաղաքի Ս. Էջմիածնի վանք (Մայր աթոռ Ս. Էջմիածին): Հ. ա. ս. ե. մեկ ամբողջական միություն է, որի գլուխը, եպիսկոպոսապետն ու բարձրագույն հոգևոր պետը *կաթողիկոսն* է (Ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Ամենայն հայոց): Եկեղեցու հոգևոր և նվիրապետ. գերագույն իշխանությունը Ամենայն հայոց կաթողիկոսությունն է: Հայ եկեղեցին առաքելական է կոչվում, որովհետև այն հիմնադրել են Հիսուս Քրիստոսի առաքյալներ *Թադեոսը* և *Բարդուղիմեոսը*, որոնք Հայաստանում առաջինն են քարոզել *քրիստոնեությունը* և այստեղ էլ նահատակվել (Ք. ծ. հ. I դ.): Նրանք կոչվում են «Առաջին Լուսավորիչք Հայաստանեայց»: Այդ ժամանակ է քրիստոնեությունը Ասորիքից ու Կապադովկիայից մուտք գործել Հայաստան և սկզբնապես տարածվել Մեծ Հայքի թագավորության հվ. ու արմ. երկրամասերում ու գավառներում: Քրիստոնեության քարոզչությունը ժողովրդի ամենատարբեր խավերի, այդ թվում՝ արքունական ընտանիքի անդամների շրջանում, առաջին նորադարձ քրիստոնյաների (*Ոսկյանք, Սուքիասյանք, Սանդուխտ* արքայադուստր ևն) նահատակությունները, քրիստ. համայնքների հիմնումը, մատուռների և եկեղեցիների, վկայարանների (ինչպես *Հռիփսիմյանց կույսերի* և *Գայանյանց կույսերի* նահատակման վայրերում) կառուցումը նպաստավոր պայմաններ են ստեղծել Հայոց առաջին հայրապետ *Գրիգոր Ա Լուսավորչի* համար՝ երկրում քրիստոնեության արմատավորման, հեթանոսության դեմ պայքարի, առաջին թեմերի հիմնման և Հայ եկեղեցու կազմակերպման գործում: 301-ին, Հայոց *Տրդատ Գ* թագավորի օրոք, քրիստոնեությունը պաշտոնապես հռչակվել է Մեծ Հայքի թագավորության պետ. կրոն: Այդ թվականը համարվում է Հ. ա. ս. ե-ու պաշտոնական հիմնադրման տարեթիվ:

Հայաստանում քրիստոնեության տարածումը և որպես պետ. կրոն ընդունելը երկիրը քաղաքակրթության նոր մակարդակի է հասցրել. նախ՝ բարեփոխիչ նշանակություն է ունեցել ժողովրդի կյանքում ու կենցաղում, ապա պայմանավորել պետության արտաքին քաղ. հարաբերությունները, ազգ. մշակույթի կողմնորոշումը, հայի անհատ. և ազգ. աշխարհընկալումն ու աշխարհայացքը:

Մինչև 368-ը Հայոց կաթողիկոսները ձեռնադրվել են Կեսարիայում: Պապ թագավորի հատուկ կարգադրությամբ Հայոց կաթողիկոսները սկսել են ձեռնադրվել Հայաստանում:

303-ին Վաղարշապատ մայրաքաղաքում կառուցվել է *Էջմիածնի Մայր տաճարը*: Այն դարձել է Հայոց կաթողիկոսների գահանիստը, որը, սակայն, պատմ. պայմանների բերումով բազմիցս տեղափոխվել է (տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*): 325-ին *Նիկիայի Ա տիեզերական ժողովին* մասնակցել է Գրիգոր Ա Լուսավորչի որդի Արիստակեսը, որը հոր մահից հետո դարձել է կաթողիկոս (տես *Արիստակես Ա Պարթև*): Նա իր հետ Հայաստան է բերել և Գրիգոր Ա Լուսավորչին ներկայացրել ժողովի ընդունած դավան. բանաձևը՝ Նիկիական *Հավատո հանգանակը* և 20 կանոնները: Հայ եկեղեցու դավանանքն ու վարդապետությունը հիմնված են Սուրբ Գրքի, սրբազան *ավանդության*, Նիկիայի (325), Կ. Պոլսի (381), Եփեսոսի (431) *տիեզերական ժողովների*, Հայ եկեղեցու ժողովների ու վարդապետների, *եկեղեցու հայրերի* հաստատած կանոնների և ուսուցումների վրա (տես *Դավանանք Հայաստանյայց առաքելական եկեղեցու* հոդվածում):

Հ. ա. ս. ե-ու առաջին բարեՆորոգիչը *Ներսես Ա Մեծ* կաթողիկոսն էր: 356-ին նրա նախաձեռնությամբ գումարվել է Աշտիշատի ժողովը, որտեղ ընդունվել են կազմակերպչ., բարեսիր. աշխատանքներին, ինչպես նաև դավան. և ծիսական հարցերին վերաբերող որոշումներ: Ներսես Ա Մեծը պայքար է ծավալել պարսկ. ազդեցության տարածման դեմ, ոչնչացրել զրադաշտ. ատրուշաններն ու մոգության դպրոցները, արգելել պարսկերենի ուսուցումը, պայքարել հեթանոս. սովորությունների դեմ, ձեռնամուխ եղել Հայաստանում քրիստոնեության ամրապնդման գործին: Բացել է դպրոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ և այլ հաստատություններ, վերակառուցել մի շարք վանքեր ու եկեղեցիներ, կարգավորել Հայ եկեղեցու ժամասացությունը, եկեղեց. տոները:

Գրիգոր Ա Լուսավորչից հետո շուրջ մեկ դար քրիստ. պաշտամունքը, ինչպես նաև ուսուցումը Հայաստանի դպրոցներում կատարվել է հուն. և ասոր. լեզուներով, որոնք անհասկանալի էին ժողովրդին և չէին նպաստում քրիստոնեության արմատավորմանը, ինքնուրույն քրիստ. պաշտամունքի, ծիսակարգի, գրավոր մշակույթի ձևավորմանը: IV դ. վերջին, երբ Հայ ժողովրդին սպառնում էր պետականության կորուստ և ուծացում, ասպարեզ են եկել Հայոց պատմության, եկեղեցու, մշակույթի երկու խոշոր գործիչներ՝ *Մեսրոպ Մաշտոց* վարդապետը և *Սահակ Ա Պարթև* Հայոց կաթողիկոսը: Սահակ Ա Պարթևի հետ համագործակցությամբ ու նախաձեռնությամբ, Հայոց *Վռամշապուհ* թագավորի հովանավորությամբ ու աջակցությամբ Մեսրոպ Մաշտոցը 405-ին ստեղծել է հայերեն այբուբենը: Հայոց գրերի գյուտը դարակազմիկ իրադարձություն էր և բախտորոշ նշանակություն է ունեցել Հայ ժողովրդի համար՝ իր ինքնության ու մշակույթի պահպանման, ազգ. կրթության ու լուսավորության վերելքի գործում: Գրերի գյուտը և դրան հաջորդած հայագիր ու հայալեզու դպրոցի հիմնումը, *Աստվածաշնչի* թարգմանությունը, ծիսական գրականության հայացումը, ազգ. դպրության, գրականության, մշակույթի զարգացումը մեծապես նպաստել են ոչ միայն քրիստոնեության համընդհանուր տարածմանը Հայաստանում, այլև՝ քրիստոնեության հայացմանը, Հայ եկեղեցու ինքնության պահպանմանը: Գրերի գյուտին անմիջապես հետևել է հայ միջնադարյան գրականության և մշակույթի ոսկեդարը: Ստեղծվել են աստվածաբան., մեկնող., ջատագով., հակաճառ., վարքաբան., պատմագիտ. բազմաթիվ երկեր:

Հ.ա.ս.ե. կենտր. դեր է խաղացել V դ. *Վարդանանց* և Վահանանց ազատագր. պատերազմներում: Հայոց կաթողիկոսներն ու հոգևորականները միշտ գտնվել են պարսից տիրապետության դեմ մարտնչող զինվորների ու ժողովրդի կողքին, ոգեշնչել նրանց, մասնակցել ու նահատակվել «Հանուն Հայրենյաց և Հավատքի» մղված «Հայոց պատերազմներում»:

Հայ եկեղեցին Հայ ժողովրդի և իր ինքնության պահպանման կարևորագույն գործոն է համարել ոչ միայն սեփական գրերի ստեղծումը, ազգ. դպրության, լեզվի, մշակույթի զարգացումը, հանուն քրիստ. հավատի այլակրոն Պարսկաստանի դեմ մղած պատերազմները, այլև՝ դավան., ծիսապաշտամունք. և եկեղեց. ինքնուրույնության պաշտպանությունը քրիստոնյա Բյուզանդիայի համաճուլարար քաղաքականությունից: 451-ի *Քաղկեդոնի ժողովից* հետո Բյուզանդիան եկեղեց. և դավան. խնդիրները փորձել է ծառայեցնել Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վրա իր քաղ. ազդեցության ուժեղացման, նրանց թե՛ եկեղեցադավան., թե՛ ազգ-մշակութ. ինքնուրույնությունից զրկելու համար: Քաղկեդոնի ժողովի ընդունած «Մի Քրիստոս յերկուս բնութիւնս» դավան. բանաձևը բյուզ. և Արևելյան եկեղեցիների միջև սկիզբ է դրել դավան. վեճերի, պատճառ դարձել *Ընդհանրական եկեղեցու* պառակտման: Հայ եկեղեցին մերժել է Քաղկեդոնի ժողովը, քանի որ այն հակասում էր ինչպես Հայ ժողովրդի ազգ. ինքնության պահպանման շահերին, այնպես էլ աստվածաբան. սեփական ըմբռնումներին և եկեղեցու անկախության պահպանման ձգտումներին: Քրիստոսի բնությունների հարցում Հայ եկեղեցին ընդունում է «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» Ալեքսանդրյան աստվածաբան. դպրոցի (տես *Ալեքսանդրիա*) բանաձևը: *Բաբկեն Ա Ոթմսեցի* կաթողիկոսի հրավիրած 506-ի Դվինի Ա ժողովում, Հայ եկեղեցին, առաջնորդվելով բյուզ. Զենոն կայսրի «*Հենոտիկոնի*» (Միության գիր) ոգով, տիեզերական է հռչակել միայն երեք ժողովներ (Նիկիայի 325-ի, Կ. Պոլսի 381-ի և Եփեսոսի 431-ի ժողովները), իսկ *Ներսես Բ Բագրեվանդցի* կաթողիկոսի օրոք գումարված

Դվինի 554-ի Բ ժողովում բացեիբաց նզովել է Քաղկեդոնը և խզել հաղորդակցությունը կայսերական եկեղեցուց: Պապ թագավորի ժամանակ ձեռք բերած վարչ. անկախությունից հետո, VI դ. պատմ. հանգամանքների բերումով Հ.ա.ս.ե. դավանապես ևս զատվել է բյուզ. եկեղեցուց՝ բռնելով ինքնուրույն զարգացման ուղին: Այն վերջնականապես ամբողջացել է VIII դ.՝ *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսի օրոք, երբ Դվինի 720-ի ժողովում որոշակիացվել և կանոնակարգվել են Հայ եկեղեցու ծիսապաշտամունք. կարգը, ժամերգությունները, տոները, ընդունվել «*Կանոնագիրք Հայոց*»-ը՝ որպես հայ եկեղեցիրավ. նորմերը կանոնավորող ժողովածու:

Բյուզանդիան չի կարողացել իրեն ենթարկել Հայ եկեղեցին, բայց հաջողության է հասել Վրաստանում. Վրաց Կյուրիոն կաթողիկոսն ընդունել է *քաղկեդոնականություն*, և 608-ին *Վրաց եկեղեցին* բաժանվել է Հայ եկեղեցուց: Վրաց եկեղեցին մինչ այդ անբաժան էր Հ.ա.ս.ե-ուց և ճանաչել է նրա գահերեցությունը: «Ի հոգևորս» Հայ եկեղեցու գերակայությունն ընդունել է նաև *Աղվանից կաթողիկոսությունը* (հետագայում կոչվել է Գանձասարի կաթողիկոսություն) և համարվել Հ.ա.ս.ե-ու նվիրապետ. աթոռներից մեկը: XIX դ. սկզբին ռուս. կառավարության որոշմամբ վերածվել է մետրոպոլիտության, իսկ նրա թեմերն անցել են Ս. Էջմիածնի ենթակայության ներքո:

VII դ., բյուզ. Հերակլ կայսրի (610–641) ժամանակ *միակամության* վարդապետության շուրջ բյուզ. և Հայ եկեղեցիների միավորման փորձ է կատարվել: 633-ին *Կարինի ժողովում* կայսրը և Հայոց կաթողիկոս *Եզր Ա Փառաժնակերտցին* համաձայնության են եկել եկեղեց. միավորման շուրջ: Նման մի քայլ է կատարվել նաև 654-ին, երբ Կոստանդ II կայսրը և Հայոց *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսը միասին հաղորդություն են ստացել Դվինի Ս. Գրիգոր Մայր տաճարում: Սակայն այդ դեպքերը հիմնարար բնույթ չեն ստացել, այլ պայմանավորված լինելով քաղ. պատեհությամբ, անմիջապես կորցրել են իրենց ուժն իրավիճակի փոփոխմանը զուգընթաց: Իսկ քաղ. իրավիճակն արմատապես փոխվել է, երբ պատմ. ասպարեզ են իջել իսլամի դրոշի տակ համախմբված արաբները, որոնք կարճ ժամանակ անց զավթել են Հայաստանը: VII դ. 40-ական թթ-ից Հայաստանը դարձել է արաբա-բյուզ. պայքարի թատերաբեմ: Շուրջ երկու տասնամյակ տևած պատերազմ. խառնակ շրջանին հաջորդել է համեմատաբար կայուն վիճակ Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառավարման տարիներին (661–684) և պահպանվել մինչև դարավերջ: Այս շրջանում Հայաստանը թեև անվանապես համարվել է Արաբ. խալիֆայությանը ենթակա, սակայն ներքին կյանքն ամբողջովին Հայոց իշխանի ձեռքում էր: VII դարը դարձել է մշակութ. առաջընթացի ժամանակահատվածներից մեկը, հայ ճարտարապետության ոսկեդարը: Այդ ժամանակ են կառուցվել Ս. Հռիփսիմե տաճարը (տես *Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանք*), Ս. Գայանե եկեղեցին (տես *Էջմիածնի Ս. Գայանե վանք*) Վաղարշապատում, *Զվարթնոցը*, եկեղեցիներ Դվինում, Խոր վիրապում, Տայքում և այլուր: Բացվել են դպրոցներ, որոնց մեջ եզակի տեղ ուներ *Անանիա Շիրակացու* դպրոցը:

Արաբ. տիրապետության շրջանում և հետագա դարերում (մինչև XI–XII դդ.) Հայաստանի մի շարք գավառներում մեծ տարածում են ստացել աղանդավոր. շարժումները (*պավլիկյաններ, թոնդրակեցիներ*), որոնց դեմ անողոք պայքար է մղել Հայ եկեղեցին:

Հայ ժողովուրդը Բագրատունիների գլխավորությամբ թոթափել է երկու դարից ավելի տևած արաբ. լուծը և վերականգնել պետ. անկախությունը: 885-ին Բագարանում Աշոտ Ա Բագրատունին թագադրվել և հռչակվել է Հայոց թագավոր: Արաբ. խալիֆայության թուլացմանը զուգահեռ զորացող Բյուզանդիան կրկին հանդես է եկել դավան. զիջումների պահանջով: Կ. Պոլսի Փոտ պատրիարքի՝ երկու եկեղեցիների միավորման և հայ-հուն. դավան. միություն ստեղծելու պահանջը քննարկելու համար 862-ին հրավիրվել է Շիրակավանի ժողովը, որը, սակայն, մերժել է կայսրի և պատրիարքի առաջարկը:

Անին Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք հռչակվելուց (961) հետո այստեղ է հաստատվել նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստը (992–1065): Այս շրջանում Հայ եկեղեցին բարգավաճել է. հիմնվել են դպրոցներ, մատենադարաններ, վանքերին կից բացվել գրչության ու մանրանկարչության կենտրոններ, կառուցվել թագավորաշեն և իշխանաշեն բազմաթիվ եկեղեցիներ, որոնցով հռչակված էր հատկապես մայրաքաղաք Անին (տես *Անիի կաթողիկոսարան*):

Բագրատունյաց թագավորության անկումից (1045) հետո Հայաստանն ընկել է սելջուկների տիրապետության տակ, սկսվել է երկրի քաղ. մասնատումը, իսկ Հ.ա.ս.ե. զրկվել է իր մշտական աթոռանիստ վայրից: Հայոց կաթողիկոսները, Բյուզանդիայից հալածված և սելջուկների ասպատակություններին ենթակա, շրջել են երկրով մեկ, հաճախ ապաստանել Կիլիկիայում: Նման պայմաններում տեղի են ունեցել, մի կողմից կաթողիկոսարանի տեղափոխություններ, մյուս կողմից՝ հակաթոռ կաթողիկոսների ձեռնադրություններ: Երկրի տարբեր կողմերում (Մարաշ, Աղթամար) ի հայտ են եկել հակաթոռ կաթողիկոսություններ: *Աղթամարի կաթողիկոսությունը* Հայոց ամենաերկարակյաց հակաթոռ կաթողիկոս. աթոռն էր, որը գործել է 1113–1895-ին:

XI դ. վերջից, հայ քաղ. կյանքի կենտրոնը Կիլիկիա տեղափոխվելուն զուգընթաց, հայ եկեղեց. կյանքը բուն Հայաստանից բացի զարգացել է նաև Կիլիկիայում: Հայաստանի և Կիլիկիայի քաղ. տարբեր իրավիճակների և պատմ. զարգացման տարբեր հանգամանքներով են պայմանավորվել Հայաստանաբնակ հոգևորականների՝ Հաղպատի, Սանահինի, Խորանաշատի հոգևոր կենտրոններում համախմբված *արևելյան վարդապետների* և Կիլիկիայի հայ հոգևորականների միջև ծագած հակասությունները եկեղեցաղավան., ծիսապաշտամունքային հարցերում: Երբ XII դ. կեսից բյուզ. կողմից կրկին դավան. միության առաջարկներ են հնչել (ավելի ուշ եկեղեց. միության առաջարկներ են եղել Հռոմի կաթոլիկ եկեղեցու կողմից), Կիլիկիայում գտնվող հոգևորականները, առաջնորդվելով քաղ. նկատառումներով, հակված են եղել ընդունելու Արևմուտքի առաջարկները, մինչդեռ արևելյան վարդապետները ցուցաբերել են անզիջում դիրքորոշում: Կիլիկիայում գտնվող կաթողիկոս. աթոռը (տես *Հռոմկլայի կաթողիկոսարան, Սսի կաթողիկոսարան*) հետագայում ևս շարունակել է քայլեր ձեռնարկել եկեղեցիների միավորման ուղղությամբ՝ այս անգամ կապեր հաստատելով Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ: Այդ շրջանի Հայոց կաթողիկոսներից ոմանք փոքր-ինչ նահանջել են Հայ եկեղեցու ծիսադավան. դիրքերից՝ հուսալով այդպիսով շահել Բյուզանդիայի կամ կաթոլիկ Եվրոպայի քաղ. համակրանքն ու աջակցությունը: Օգտվելով դրանից, Կաթոլիկ եկեղեցին փորձել է իր ազդեցության տակ դցել Հայ եկեղեցին (տես *Ունիթորություն*): Սակայն այդ դժվարին պայքարում Հ. ա. ս. ե. կարողացել է անաղարտ պահել իր դավանությունը, պահպանել եկեղեց. անկախությունը և նպաստել մշակույթի, արվեստների, գիտության զարգացմանը XII–XIV դդ.՝ թե՛ Կիլիկիայի Հայկ. թագավորությունում, թե՛ բուն Հայաստանում: Այդ շրջանում Հ.ա.ս.ե. ապրել է նոր վերելք: Կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, վանքերին կից բացվել են դպրոցներ, վարդապետարաններ, համալսարաններ (Գլաձորում, Տաթևում, Հերմոնում, Որոտնավանքում, Հաղպատում, Սանահինում, Հռոմկլայում, Սսում և այլուր): Ընդօրինակվել են ձեռագրեր, ստեղծվել գրականության և արվեստի արժեքավոր գործեր, գրվել պատմ., փիլ., աստվածաբան., բնագիտ., իրավագիտ. բնույթի բազմաթիվ երկեր:

Կիլիկիայում հայկ. պետականության առկայության պայմաններում Հայոց կաթողիկոսությունը կարողացել է կատարել հոգևոր-եկեղեց. բարձրագույն իշխանության իր դերը: Սակայն Կիլիկիայի Հայկ. թագավորության անկումից (1375) հետո Սսի Հայոց կաթողիկոսությունը կորցրել էր քաղ. հենարանը, իսկ Կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունների դեմ մղած երկարատև պայքարի և Կիլիկիայում հայ բնակչության հետզհետե նոսրացման պատճառներով՝ քայքայվել տնտեսապես: Ծանր էր վիճակը նաև հոգևոր-մշակութ. կյանքում: Քաղ. ու տնտ. աննպաստ պայմաններում Հ.ա.ս.ե. անզոր էր մշտական կապեր հաստատել հայկ. գաղթավայրերի հետ, ստեղծել ուս. կենտրոններ և ազգ. ավանդույթներով շաղկապել հայրենիքից տարասփյուռ զանգվածներին: Մեկուսանալով Կիլիկիայում՝ Մայր աթոռը կտրվել էր բնաշխարհի ժողովրդից, կորցրել նրա համար քաղ. ու հոգևոր-կրոն. երբեմնի կենտրոնի նշանակությունը: Այդ հանգամանքները նկատի ունենալով՝ հայ կրոնաեկեղեց., մշակույթի, հաս-քաղ. գործիչները դեռևս XIII դ. վերջից ցանկացել են Հայոց կաթողիկոսությունը տեղափոխել քաղաքականապես ու տնտեսապես ապահով վայր: Սակայն որոշակի քայլեր ձեռնարկվել են միայն XV դ. 1-ին կեսին, երբ կարակոյունլու Ջահանշահի տիրապետության օրոք (1437–67) համեմատաբար խաղաղություն է տիրել երկրի կենտրոնում՝ Այրարատում: Հայ աշխարհիկ գործիչ-

ներն ու հոգևորականները միջոցներ են ձեռնարկել Մայր աթոռը վերահաստատելու իր նախն. վայրում՝ Վաղարշապատում: *Հովհաննես Հերմոնեցու* և *Թովմա Մեծոփեցու* ջանքերով 1441-ին դումարված *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովը* Ամենայն Հայոց կաթողիկոսությունը վերահաստատել է Վաղարշապատում: Դա պատմաքաղ. կարևոր ու շրջադարձային իրադարձություն էր Հայ ժողովրդի ազգ. և եկեղեց. կյանքում: Վաղարշապատը կրկին դարձել է համայն Հայության հոգևոր-կրոն. կենտրոնը, որպիսին մնում է առ այսօր: Հայրենիքում Հ.ա.ս.ե. կարողացել է դիմակայել բոլոր փորձություններին, իսկ Մայր աթոռ Ս. Էջմիածինը դարձել է պետականությունից զրկված, աշխարհով մեկ սփռված Հայ ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև՝ ազգ-քաղ. կենտրոնը:

Էջմիածնի 1441-ի ժողովը կաթողիկոս է ընտրել Կիրակոս վրդ. Վիրապեցուն (տես *Կիրակոս Ա Վիրապեցի*), որը դարձել է Ս. Էջմիածնում վերահաստատված աթոռի առաջին գահակալը: Նորընծա կաթողիկոսի առաջին գործերից է եղել սուրբ *Մյուռոնի* օրհնությունն ու բաժանումը Հայաստանի եկեղեցիներին: Նա հատուկ կոնդակով չեղյալ է համարել նախընթաց տասնամյակներին Հայ եկեղեցու տարբեր հատվածների՝ միմյանց հասցեին արված նզովքները, սիրո ու միաբանության կոչ ուղղել բոլոր թեմերին ու եկեղեցիներին: Կիրակոս Ա Վիրապեցին նորոգել է Էջմիածնի Մայր տաճարը, բարեկարգել վանական համալիրը, իսկ բաբունապետ ու մատենագիր Թովմա Մեծոփեցին վերաբացել է հայատառ առաջին դպրոցը (տես *Էջմիածնի դպրոց*):

1446-ին Կարապետ եպս. Եվդոկացին կաթողիկոս օծվելով՝ հիմնել է Սսի կաթողիկոսությունը (այժմ՝ *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո*):

XV–XVI դդ. Հ.ա.ս.ե. չափազանց ծանր ժամանակաշրջան է ապրել, ինչը, փոքր բացառություններով, շարունակվել է մինչև XVII դ.՝ *Մովսես Գ Տաթևացու* գահակալությունը: Նրա և ապա հաջորդ կաթողիկոսների՝ *Փիլիպոս Ա Աղբակեցու, Հակոբ Դ Ջուղայեցու* ջանքերով վերականգնվել է Մայր աթոռի նյութ. վիճակը, վանական-միաբան. կյանքը, հիմք ստեղծվել ազգ-եկեղեց., մշակութ. ու կրթ. արդյունավետ գործունեության համար: Կարգավորվել են հարաբերությունները պարսկ. արքունիքի, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքությունների հետ, հարթվել նրանց միջև եղած տարաձայնությունները: Հիմնվել են մի շարք դպրոցներ Սյունիքում, Վաղարշապատում, Վանա լճի Աղթամար, Լիմ և Կտուց կղզիներում, Բաղեշի Ամրդոլու վանքում, Նոր Ջուղայում և այլուր:

XVII–XVIII դդ. Հ.ա.ս.ե. եռանդուն մասնակցել է պարսկ. տիրապետությունից Հայաստանն ազատագրելու ծրագրերին, կազմակերպել, ղեկավարել ու հովանավորել է ազգ-հաս., քաղ. բազմաթիվ ձեռնարկումներ (տես *Էջմիածնի ժողովներ 1547, 1677*): *Սիմեոն Ա Երևանցին* կարգավորել է եկեղեց. հասույթները օրինական կալվածագրերով, Վաղարշապատում հիմնել տպարան և թղթի գործարան, հոգ տարել ուս., մշակութ. գործերի մասին, կարգավորել Հայ եկեղեցու տոները:

1828-ին Արլ. Հայաստանին տիրացած Ռուսաստանն իր քաղ. ծրագրերում մեծ կարևորություն է տվել եկեղեց. խնդրին և Հ.ա.ս.ե-ուն: Ցար. իշխանությունը փորձել է փոքրացնել Հայ եկեղեցու ավանդ. իրավասությունների շրջանակը և քաղ. դերը երկրի ներսում, նաև օգտագործել Հայոց կաթողիկոսության հեղինակությունը՝ Ռուսաստանի տարածքից դուրս բնակվող հայության վրա իր ազդեցությունը տարածելու համար: Ռուս. կառավարությունը 1836-ին հատուկ կանոնադրությամբ՝ «*Պոլժենիե*»-ով կանոնակարգել է կայսրության և Հայ եկեղեցու հարաբերությունները, միաժամանակ հնարավորություն ստացել ազդելու Մայր աթոռի վրա: «Պոլժենիե»-ն ուժը կորցրել է 1917-ին՝ ցարիզմի անկումից հետո: Արևմտահայերի, Կ. Պոլսի հայոց պատրիարքության և Թուրքիայում Հայ եկեղեց. ներքին կյանքին վերաբերող կանոնադրություն էր 1860-ի *Ազգային սահմանադրությունը*, որը դադարել է գործել 1915-ից: Ազգ. սահմանադրության որոշ դրույթներ այժմ էլ գործածվում են կանոնակարգելու Կ. Պոլսի հայոց պատրիարքության հարաբերությունները պետության հետ: Նրա հիման վրա են կազմված Կիլիկիո կաթողիկոսության և նրա թեմերի կանոնադրությունները:

Դեռևս 1804–13 և 1826–28-ի ռուս-պարսկ. պատերազմների ժամանակ Ներսես արք. Աշտարակեցին (1843–57-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս *Ներսես Ե Աշտարակեցի*) աջակցել է

ռուս. զորքերին, մեծ հույսեր կապել նրանց հաղթանակների հետ: Ռուսաստանի հովանու ներքո հայկ. անկախ պետություն ստեղծելու նրա ձգտումը, սակայն, հարուցել է ցար. կառավարության դժգոհությունը, ինչի պատճառով նա հեռացվել է Անդրկովկասից: Կաթողիկոս ընտրվելուց հետո վերադարձել է Ս. Էջմիածին, պաշտպանել Հայ եկեղեցու շահերը ցար. իշխանություններին ոտնձգություններից, զբաղվել հաս., շին., կրթամշակութ. աշխատանքներով: Ներսես Ե Աշտարակեցու գործունեությամբ սկիզբ առած Հ.ա.ս.ե-ու հոգևոր-մշակութ. նոր վերելքը շարունակվել է ողջ XIX դ. ընթացքում. Էջմիածնում բացվել է *Գևորգյան ճեմարանը* (1874), թանգարանը, 1868-ից լույս տեսել Մայր աթոռի պաշտոնական «*Արարատ*» ամսագիրը, 1879-ին կառուցվել Օշականի եկեղեցին Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա, Հ.ա.ս.ե-ու նախաձեռնությամբ ու հովանավորությամբ ստեղծվել են գիտամշակութ., ուսումնակրթ. բազմաթիվ կենտրոններ ու հաստատություններ Հայաստանում և հայ գաղթավայրերում:

Հայ եկեղեցին եռանդուն աջակցել է XIX դ. վերջի – XX դ. սկզբի հայ ազգ-ազատագր. շարժումներին, Հայկ. հարցի լուծման քաղ. ձեռնարկումներին: Մկրտիչ եպս. Խրիմյանը (1892–1907-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցի*) իբրև Հայոց ազգ. պատվիրակության ղեկավար այցելել է Արմ. Եվրոպա՝ փորձելով ապահովել եվրոպ. պետությունների դիվանագիտ. աջակցությունը Հայկ. հարցի լուծմանը, մասնակցել է 1878-ի Բեռլինի կոնգրեսին: 1894–96-ի արևմտահայերի ջարդերի ժամանակ անդուլ աշխատանք է կատարել՝ նյութապես օգնելու գաղթականներին, պայմաններ ստեղծելու հայրենի երկիր վերադառնալու համար: Եռանդուն պայքար է մղել ցար. կառավարության՝ 1903-ի հունիսի 12-ի *եկեղեցական գույքի բռնագրավման օրենքի* իրագործման դեմ՝ եկեղեց. թեմերին արգելելով ենթարկվել այդ օրենքին: 1912-ից Մայր աթոռ Ս. Էջմիածինը զգալի ջանքեր է գործադրել Հայ դատի խնդիրը բարձրացնելու համար: Եվրոպ. պետությունների ուշադրությունը Հայ դատի վրա բևեռելու նպատակով *Գևորգ Ե Սուրենյանցը* ստեղծել է Ազգային պատվիրակություն՝ հայտնի հայ հաս. գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Ազգ. պատվիրակության գործունեությունն ամբողջությամբ համաձայնեցվել է Մայր աթոռի հետ: Մեծ եղեռնի ժամանակ և հետագա տարիներին, հաս. կազմակերպությունների հետ մեկտեղ Հայ եկեղեցին օգնել է բազմահազար աղետյալների: 1914-ի դեկտ. 28-ին Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով և նրա անմիջական նախագահությամբ ստեղծվել է Եղբայրական օգնության կոմիտեն, որը զբաղվել է վիրավոր հայ կամավորներին և տանջյալ հազարավոր փախստական հայերին օգնություն ցուցաբերելու խնդիրներով: Եղբայրական օգնության կոմիտեի բաժանմունքներ են ստեղծվել Երևանում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Պետրոգրադում, Մոսկվայում և այլուր:

Գիտակցելով Հ. ա. ս. ե-ու դերը հայ ժողովրդի կյանքում՝ օսմ. կայսրությունը 1915–1923-ին հայոց ցեղասպանության ժամանակ նպատակամղված կոտորել է հայ հոգևորականներին, ոչնչացրել քրիստ. մշակույթը, եկեղեցիներն ու վանքերը, կրթագիտ. կենտրոնները, հայկ. եկեղեց. հաստատությունները, ձեռագիր մատյանները: Ծրագրելով և կազմակերպելով հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ թուրք. կառավարությունը ձգտել է մեկուսացնել ժողովրդի շահերը Բ. Դռան առջև ներկայացնող և պաշտպանող ազգ-եկեղեց. կառույցները և նրանց ղեկավարներին: Առաջին համաշխ. պատերազմի սկզբից թուրք. կառավարության վերաբերմունքը Կ. Պոլսի հայոց պատրիարքության հանդեպ կտրուկ վատացել է: Պատրիարքությունը զրկվել է հայ ժողովրդի շահերը պաշտպանելու հնարավորությունից: Թուրք. իշխանությունները Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանին աքսորել են Բաղդադ, ապա՝ Մոսուլ: Նույն կերպ են վարվել նաև Սսի կաթողիկոսի հետ: Սահակ Բ Խապայանն աքսորվել է Բաբ (Հալեպի մոտ), հետո՝ Երուսաղեմ: Արմ. Հայաստանի հայությունը մնացել է առանց հովվապետների: Մեծ եղեռնի տարիներին մարտիրոսացել է շուրջ 4 հզ. հայ հոգևորական: Իրենց հոտի հետ նահատակվել են Կարինի հոգևոր առաջնորդ Սմբատ եպս. Սահատեթյանը, Բաղեշի առաջնորդ Սուրեն ծ. վրդ. Գալեմյանը, Խարբերդի առաջնորդ Պսակ ծ. վրդ. Խորենյանը, Բրուսայի առաջնորդ Պարգև ծ. վրդ. Դանիելյանը, Տրապիզոնի առաջնորդ Գևորգ ծ. վրդ. Թուրեյանը, Վանի Կտուց անապատի վանահայրի տեղապահ Եղիազար ծ. վրդ. Պետրոսյանը, Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան ծ. վրդ. Հակոբյանը և ուրիշներ:

Դեռևս 1912–13-ին օսմ. կայսրության ՆԳՆ հանձնարարությամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը կազմել և կառավարությանն է ներկայացրել կայսրության տարածքում գտնվող հայկ. եկեղեցիների և վանքերի լրիվ ցուցակը: Թուրք. կառավարության այդ հետաքրքրությունն առաջին աշխարհամարտի նախօրյակին որոշակի կապ է ունեցել հայերին կոտորելու ծրագրերի հետ: Ըստ Մ. արք. *Օրմանյանի* տվյալների, Արմ. Հայաստանի եկեղեցիների և վանքերի թիվը 1912-ին 2200 էր: Դրանց մեծ մասը եղեռնի ժամանակ թալանվել, այրվել կամ ավերվել է: Ոչնչացվել են գրչության կենտրոններում, վանքերի վարդապետարաններում, մատենադարաններում, դպրեվանքերում պահվող տասնյակ հազարավոր ձեռագիր մատյաններ: Թեև ոչնչացված ձեռագրերի թվի մասին կան որոշ տվյալներ (Վասպուրականում՝ շուրջ 3000, Տարոնում՝ շուրջ 2000, Կեսարիայում և շրջակայքում՝ 700, Անկյուրիայում և շրջակայքում՝ ավելի քան 300, Արմաշում՝ շուրջ 250, Սեբաստիայում և շրջակայքում՝ շուրջ 170 ևն), այնուամենայնիվ դրանց ստույգ թիվն անհայտ է, որովհետև XIX դ. վերջին և XX դ. սկզբին դեռևս չկար հայերեն ձեռագրերի համահավաք ցուցակ: Մինչև ցեղասպանությունը մեծ թվով հայկ. ձեռագրեր են պահվել Սսի, Ադանայի, Կ. Պոլսի, Եվդոկիայի, Խիզանի, Տարոնի, Կարինի, Սեբաստիայի, Մալաթիայի, Վասպուրականի և Արմ. Հայաստանի ու օսմ. կայսրության այլ վայրերի վանքերում ու եկեղեցիներում, անհատ անձանց մոտ: Ոչնչացված ձեռագիր մատյանների մեջ եղել են Աստվածաշունչներ, Սաղմոսարաններ, Մաշտոցներ, Ճաշոցներ, Ավետարաններ, Ժամագրքեր, Պատարագամատույցներ, Կանոնագրքեր, հայ և օտարազգի հեղինակների աստվածաբան., վարքագր., պատմ., ծիսական, փիլ., բնագիտ. բնույթի երկեր, հայկ. մանրանկարչության գլուխգործոցներ: 1894–96-ին և 1915–23-ին հայկ. վանքերի ու եկեղեցիների, պատմաճարտ. հուշարձանների ավերումը, հայկ. մեծարժեք ձեռագրերի ոչնչացումը մեծ հարված էր ոչ միայն Հ.ա.ս.ե-ուն, հայ ժողովրդին, հայկ. մշակույթին, այլև համաշխ. մշակույթին ու գիտությանը և անդառնալի կորուստ մարդկության համար:

1918-ի մայիսին Սարդարապատի ճակատամարտի բախտորոշ օրերին, չնայած զինվորական ղեկավարության պահանջին, Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը չի լքել Ս. Էջմիածինը, իսկ Մայրավանքի միաբան Գարեգին եպս. Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս *Գարեգին Ա Հովսեփյան*), Զավեն եպս. Մահտեսի Բաբայանը և ուրիշներ հայ մարտիկներին քաջալերել են ռազմաճակատի առաջին գծում: Սարդարապատի մարտերին մասնակցել են Դանիել, Թադևոս և Եղնիկ վարդապետները, ինչպես նաև Կոտայքի Թաղագյուղի ծխատեր Զաքար քհն. Տեր-Հարությունյանն իր 250-հոգանոց ջոկատով: Իսկ Բաշ Ապարանի հերոսամարտին մասնակցել են Հովհ. քհն. Տեր-Մինասյանի և Տաճատ քահանայի զինված խմբերը: Այդ ժամանակ Ղարաքիլիսայում կուտակված մեծ թվով փախստական հայերի կարիքներն են հոգացել Մ. եպս. Տեր-Մովսիսյանը և Ա. եպս. Սմբատյանը: Գևորգ Ե Սուրենյանցը 1918-ին ողջունել է Հայաստանի առաջին հանրապետության ծնունդը: Հայաստանի առաջին հանրապետության կարճատև և դժվարին ժամանակաշրջանում (1918–20) Հայ եկեղեցու իրավական կարգավիճակի ամրագրման և պետության մեջ նրա դերի բարձրացման հարցը դարձել է երկրի ղեկավարության ուշադրության առարկա: Այդ նպատակն է հետապնդել «Հայաստանյայց առաքելական Մայր եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք դաշնագրի նախագիծը» (12. 2. 1920), որը մնացել է անիրագործելի:

1920-ին Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումով չափազանց ծանր պայմաններ են ստեղծվել Հ.ա.ս.ե-ու համար: Համայնավար վարչակարգը, պաշտոնապես հռչակելով աստվածությունը (աթեիզմ) իր գաղափարախոսության ուղենիշներից մեկը, հալածանք է սկսել եկեղեցու և կրոնի դեմ: Իշխանությունները զանազան միջոցներով հաշվեհարդար են տեսել հոգևորականների հետ (Արսեն վրդ. Ղլտճյան, Դանիել վրդ. Զադոյան, Գրիգոր քհն. Հայրապետյան, Եղնիկ վրդ. Վարդանյան և ուր.):

1920-ի դեկտ. 17-ին դպրոցն անջատվել է եկեղեցուց, իսկ դեկտ. 19-ին բռնագրավվել են Էջմիածնի վանքի շենքերը և ունեցվածքի մի մասը՝ Գևորգյան ճեմարանը (փակվել է 1921-ի հունվ.), մատենադարանը, թանգարանը, տպարանը ևն, քիչ ավելի ուշ՝ վանքապատկան կալվածքները, Մայր աթոռի բոլոր այգիները Էջմիածնում, Փարաքարում և Օշականում: 1921-ի

հունվ. Հայհեղկոմը որոշում է ընդունել Էջմիածնի Մայր տաճարից նրա արժեքներն առգրավելու մասին: 1921-ի հուլիսին արգելվել է տպագրել եկեղեց. օրացույց: Եկեղեցին ճնշելու և ահաբեկելու գործին լծված էին «Ազատ եկեղեցու եղբայրություն» կազմակերպությունը (1923–1928)՝ Բենիկ վրդ. Եղիազարյանի գլխավորությամբ, «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթը (խմբ. Մեսրոպ քհն. Մելյան), վարչակարգի հովանու ներքո գործող «Անաստված» միությունը, Շիրակի թեմի առաջնորդ Աշոտ եպս. Շխեյանի գլխավորած խռովարարների խումբը ևն:

Այնուամենայնիվ Գևորգ Ե Սուրենյանցը կատարել է որոշ բարեփոխումներ (Նոր տոմարի որդեգրումը 1923-ին, *Գերագույն հոգևոր խորհրդի* հիմնումը 1924-ին, ազգ-եկեղեց. ժողովի կանոնադրության հաստատումը 1925-ին ևն): Կաթողիկոս *Խորեն Ա Մուրադբեկյանի* գահակալության տարիները (1932–38) ստալինյան հակաեկեղեց. հալածանքների ամենածանր շրջանն էին: Հայաստանում Հայ եկեղեցին ամփոփվել էր միայն Ս. Էջմիածնի վանքի պատերի ներսում: 1920-ական թթ-ից սկիզբ առած վանքերի ու եկեղեցիների ավերումը նոր թափով է սկսվել 1930-ից: Երևանում հիմնահատակ քանդվել են Ս. Պողոս-Պետրոս, Նորքի Սիմեոն Ծերունի, Ս. Աստվածածին, Կաթողիկե եկեղեցիները, 1949-ին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը ևն: Հայկ. եկեղեցիներ և վանքեր են ավերվել Հայաստանի բոլոր շրջաններում, ինչպես նաև Վրաստանում, Ադրբեջանում, Աստրախանում, Հս. Կովկասում և այլուր: Շարունակվել է ահաբեկչությունը հայ հոգևորականության դեմ: Ոչ լրիվ հաշվարկներով Հայաստանում բռնադատվել է շուրջ 200 հոգևորական: Միայն 1937-ի առաջին ամիսներին կալանավորվել է 70-ից ավելի հոգևորական, որոնցից շատերը գնդակահարվել են, մյուս մասն աքսորվել: Բռնադատվածների մեջ էին բազմաթիվ ականավոր հոգևորականներ՝ Բագրատ արք. Վարդազարյանը, Ադրիստակես եպս. Զուլոլյանը, Իսահակ եպս. Միքայելյանը, Թադևոս եպս. Հակոբյանը, Սրապիոն եպս. Սամվելյանը, Արտակ եպս. Սմբատյանը, Հովհ. վրդ. Հյուսյանը, Վրթանես եպս. Հակոբյանը, Եղիշե վրդ. Շահումյանը, Տիրայր վրդ. Դալլաքյանը, Հակոբ քհն. Խաչվանքյանը, Խորեն քհն. Շուշանյանը և ուրիշներ: 1938-ի ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը հատուկ ծառայության գործակալները Վեհարանում սպանել են Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանին:

Երկրորդ համաշխ. պատերազմի տարիներին կաթողիկոս. տեղապահ Գևորգ արք. Զորեքչյանի նախաձեռնությամբ հանգանակություններ են կազմակերպվել «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների ստեղծման համար: Վարչակարգի վերաբերմունքը Հայ եկեղեցու նկատմամբ մասամբ փոխվել է: Նրա իրավունքների մասնակի վերականգնումը սկսվել է 1944-ից: Թույլատրվել է կաթողիկոս. ընտրության անցկացումը, «*Էջմիածին*» ամսագրի հրատարակությունը, տպարանի վերականգնումը, *Էջմիածնի հոգևոր ճեմարանի* վերաբացումը: *Գևորգ Զ Զորեքչյանը*, ընտրվելով Ամենայն հայոց կաթողիկոս, սկիզբ է դրել Մայր աթոռի վերազարթոնքին, թեև համայնավարների հարուցած գաղափարախոս. խոչընդոտները շարունակվել են և ավելի կամ պակաս չափով գործել ընդհուպ մինչև Խորհրդ. Միության փլուզումը:

Ամենայն հայոց կաթողիկոս *Վազգեն Ա Պալճյանի* երկարատև աթոռակալությունը (1955–94) Հ. ա. ս. ե-ու համար եղել է բարգավաճ ժամանակաշրջան: Նրա օրոք անհամեմատ ընդարձակվել են Հայ եկեղեցու միջեկեղեց. հարաբերություններն ու միջազգ. կապերը: 1962-ին Հայ եկեղեցին դարձել է Եկեղեցիների համաշխ. խորհրդի անդամ, խորացել են հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները, որոնց մեծապես նպաստել են Վազգեն Ա կաթողիկոսի արտասահմանյան թեմեր կատարած շուրջ երեք տասնյակ հովվական այցելությունները: Զուտ եկեղեց. և մշակութ. բազմաճյուղ գործունեությունից բացի կաթողիկոսն ուղղակի կամ անուղղակի նպաստել է հայ ժողովրդի ազգ. հայրենասիր. վերելքին: Վազգեն Ա կաթողիկոսն օրհնել է Հայոց նորանկախ պետականության ծնունդը (1991-ի սեպտ. 21), առաջինը լինելով, 1994-ին արժանացել է ՀՀ բարձրագույն պարգևին՝ Հայաստանի ազգային հերոս կոչմանը:

1995-ի ապրիլի 3-ին Ս. Էջմիածնում շուրջ 400 պատգամավորների մասնակցությամբ գումարված ազգ-եկեղեց. ժողովը Ս. Գրիգոր Լուսավորչի աթոռի 131-րդ գահակալ է ընտրել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին, այդուհետ՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյան*: Գարեգին Ա

Սարգիսյանը նախ վերափոխել է Հ.ա.ս.ե-ու՝ Հայաստանի թեմական կառուցվածքը, այն համապատասխանեցնելով երկրի նոր վարչ. (մարզային) բաժանմանը և ելնելով պատմ. նախադրյալներից: Նախկին 4 թեմերի փոխարեն 1996-ի մայիսին ստեղծվել են 8 թեմեր: Դրա շնորհիվ տեղերում զգալիորեն աշխուժացել է եկեղեց. կյանքը, հիմնվել են առաջնորդարաններ, ստեղծվել թեմական խորհուրդներ, մշակվել աշխատանքային ծրագրեր, վերաբացվել տասնյակ նոր եկեղեցիներ: Վերելք է ապրել հոգևոր և կրթամշակութային կյանքը: Մայր աթոռում բացվել է *Քրիստոնեական քարոզչության և դաստիարակության կենտրոն*, բարելավվել են Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուս. պայմանները, ուսանողների թիվն անցել է 100-ից (նախկին 40-ի փոխարեն), նորոգվել է Գևորգյան ճեմարանի շենքը և հանձնվել Մայր աթոռի տնօրինությանը: Մայր աթոռի տպարանում հրատարակվել է քարոզչ., կրոնաճանաչող., հայագիտ., գրական-պատմ. շուրջ 100 անուն գիրք, ուս. լիարժեք կյանքով են սկսել գործել Սևանի *Վազգենյան հոգևոր դպրանոցը*, Շիրակի թեմի հոգևոր ընծայարանը: Ներկայումս (2001) այդ հոգևոր ուս. հաստատությունների սաների թիվը համապատասխանաբար 60 և 45 է: 1995-ի սեպտ. Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ հիմնվել է ԵՊՀ *աստվածաբանության ֆակուլտետը*, իսկ 1996-ի ապրիլին՝ Հայաստանի *Աստվածաշնչային ընկերությունը*:

Մայր աթոռում ծավալված գործունեության կարևոր ուղղություններից է Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստումը: Այդ կապակցությամբ մշակված ընդարձակ ծրագրի կարևորագույն կետերից մեկը Երևանում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու կառուցումն է, որի հիմնարկեքը, ձեռամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի, տեղի է ունեցել 1997-ի ապրիլի 7-ին:

Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Բ Ներսիսյանն* իր գահակալման սկզբից (1999) ձեռնամուխ է եղել եկեղեց. ներքին կյանքի կարգավորմանն ու կազմակերպմանը, մասնավորապես՝ Մայր աթոռի հոգևոր կրթարանների վերաշխուժացմանը, հոգևորականության նոր սերնդի պատրաստմանը, եկեղեցիների ու վանքերի նորոգմանը: Պետությունը Հ.ա.ս.ե-ուն որպես սեփականություն հանձնել է 150-ից ավելի եկեղեցի ու վանք, հողային տարածքներ և շենքեր, նոր եկեղեցիներ են կառուցվում Հայաստանի բոլոր թեմերում: Գարեգին Բ Ներսիսյանի ձեռամբ օծվել են Սպիտակի Ս. Հարությունն, Վայքի Ս. Տրդատ, Տաշիրի Ս. Սարգիս, Մալիշկայի Ս. Աննա նորակառույց եկեղեցիներն ու Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու զանգակատունը: Վերաօծվել են Դվինի Ս. Հարությունն, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե, Մուղնու Ս. Գևորգ եկեղեցիները, Ծաղկաձորի Կեչառիսի վանական համալիրը: Մայր աթոռ Ս. Էջմիածնի տարածքում սկսվել է բաց խորանի շինարարությունը: Վեհափառ հայրապետի հանդիսապետությամբ 2001-ի սեպտեմբերի 23-ին տեղի է ունեցել *Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու* օծումը: Վատիկան կատարած այցելության առիթով (2000, նոյեմբ. 11) Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանին է հանձնվել Գրիգոր Ա Լուսավորչի մասունքների մի մաս, որը պահվում է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում: Հայ եկեղեցին նոր թափ է հաղորդել նաև ընկերային, մարդասիր., բարեգործ. ծառայությանը:

Գարեգին Բ Ներսիսյանը Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների սկիզբ է ազդարարել 2000-ի դեկտ. 31-ի տարեմուտի գիշերը, Մայր աթոռ Ս. Էջմիածնում՝ «Լուսավորչի կանթեղը՝ ուղեցույց առ Աստված» նշանաբանով Գրիգոր Ա Լուսավորչի կանթեղի լույսից տարածված մոմավառությամբ:

Հ.ա.ս.ե. ունի հետևյալ վարչ. կառուցվածքը.

Ընդհանրական կաթողիկոսություն Ամենայն հայոց (Ս. Էջմիածին),

Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո (Անթիլիաս, Լիբանան),

Երուսաղեմի հայոց պատրիարքություն,

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն,

Թեմական առաջնորդություններ (տես *Թեմ* հոդվածում),

Վանական միաբանություններ,

Համայնքային (ծխական) հովվություններ:

Հայ եկեղեցին ներկայացուցիչներ ունի Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության, Քենտրբերիի և Համայն Անգլիո արքեպիսկոպոսության մոտ:

Հ.ա.ս.ե-ու հոգևոր և վարչ. իշխանության մարմիններն են.

ՀԱՅԱՍՏԱՆ. Ազգային-եկեղեց. ժողով, Գերագույն օրենսդիր մարմինն է՝ նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի:

Եպիսկոպոսաց ժողով, կանոնադիր մարմինն է՝ նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի:

Գերագույն հոգևոր խորհուրդ, բարձրագույն գործադիր իշխանությունն է՝ նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի:

Թեմական պատգամավորական ժողով, թեմի բարձրագույն օրենսդիր մարմինն է՝ նախագահությամբ թեմական առաջնորդի:

Թեմական խորհուրդ, թեմի բարձրագույն գործադիր իշխանությունն է՝ նախագահությամբ թեմական առաջնորդի:

Ծխական ժողով, համայնքի կամ ծխի անդամական ընդհանուր ժողովն է՝ նախագահությամբ հոգևոր հովվի:

Ծխական խորհուրդ, համայնքի կամ ծխի գործադիր վարչ. մարմինն է՝ նախագահությամբ հոգևոր հովվի:

Քարտեզները տես ներդիր XVII-ում, 17.8 և 17.9:

Գրկ. Սրվանձտյանց Գ., Հնոց և նորոց, ԿՊ, 1874: Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց առաքելական ուղղափառ Սուրբ եկեղեցին և իւր Սուրբ կարգը, Վաղ-պատ, 1897: Զամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, մաս 1–2, Նոր Նախիջևան, 1908–09: Տեր-Մկրտչյան Կ., Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս 1, Վաղ-պատ, 1908: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1–3, ԿՊ – Երուսաղեմ, 1912–1927: Նույնի, Հայոց եկեղեցին, ԿՊ, 1913: Ոսկյան Հ., Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վնտ., 1953: Քոլանջյան Ս., Մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, № 2–7, 1966, № 8–10, 1967, № 5–6: Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994:

Կարեն Մաթևոսյան
Արտաշես Ղազարյան
Ստեփան Ստեփանյանց

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, Հայ ավետարանական եկեղեցի, քրիստոնեության երեք հիմնական ուղղություններից *բողոքականության* (ավետարանական) հայազգի հետևորդների եկեղեցի: Կազմավորվել է 1846-ի հուլիսի 1-ին, 40 հիմնադիր հաղորդական անդամներով, Կ. Պոլսի Բերա թաղամասում: Հ. ա. ե. հետևանքն էր Հայ բարեկարգչական կամ Ավետարանական շարժման, որը սկիզբ էր առել XIX դ. 20-ական թթ. և՛ արևմտահայոց, և՛ արևելահայոց շրջանում գրեթե միաժամանակ՝ իրարից անկախ: Հայ ավետարան. շարժումը մեկ ընդհանուր ամբողջություն է՝ հայ ժողովրդի երկու հատվածներում իր ծագման, ընթացքի և զարգացման տարբերություններով հանդերձ:

1836-ին հայ ավետարանականները Կ. Պոլսում ստեղծել են «Բարեպաշտության միաբանությունը», որով սկզբնավորվել է Հայ ավետարան. շարժումը: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը «Բարեպաշտության միաբանության» անդամներին համարել է այդ ժամանակ Կ. Պոլսում հաստատված ամերիկյան «Բորդ» միսիոներ. ընկերության վարձկաններ: Հալածանքները հայ ավետարանականների հանդեպ դնալով սաստկացել են, իսկ 1846-ի հունիսի 21-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Զուխաճյանը (1858–65-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի*) հրապարակել է իր բանադրական կոնդակը՝ հայ ավետարանականներին զրկելով Հայ առաքելական եկեղեցու անդամակցությունից և հաղորդությունից: Ավետարանականները, արտաքսվելով Մայր եկեղեցուց և զրկվելով պատրիարքարանի աջակցությունից, 1846-ի հուլիսի 1-ին հիմնել են առաջին Հայ ավետարան. եկեղեցին: Հենց սկզբից նրանք հրաժարվել են որդեգրել բողոք. հարանվանություններից որևէ ձև և, հակառակ միսիոներների դժգոհության, կոչվել Հ. ա. ե.: Առաջին հովիվ է ընտրվել Աբիսողոմ Ուլթուճյանը: Հ. ա. ե-ու կազմավորումից հինգ ամիս անց ստեղծվել են երեք ուրիշ եկեղեցիներ՝ մոտ 1000 հոգու անդամակցությամբ: 1850-ի նոյեմբ. 27-ին թուրք. կառավարությունը հատուկ հրամանագրով (ֆերման) պետականորեն ճանաչել է ավետարան. հայերին՝ իբրև Հայ առաքելական եկեղեցուց և Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունից անջատ կրոնական համայնք, որն իրավունք ուներ առանձին ազգապետով ներկայանալու պետ. բոլոր ատյաններին: Հայ ավետարան. համայնքի առաջին ազգապետ է դարձել Ստեփան Սերոբյանը (Կ. Պոլսի Հայոց պատրիարք *Հակոբոս Սերոբյանի* եղբայրը):

XIX դ. կեսից Հայ ավետարան. շարժումը տարածվել է Արմ. Հայաստանի բոլոր նահանգներում, Կիլիկիայում, Թուրքիայի արմ. Հայաշատ շրջաններում: 1860-ական թթ-ից Թուրքիայի տարբեր շրջաններում Հայ ավետարան. եկեղեցիները կամավոր անդամակցությամբ կազմակերպել են Միություններ: Մինչև Հայոց Մեծ եղեռնը Թուրքիայում գործել է 4 Միություն: Առաջինը Բուլթանիայի միու-

թյունն էր, որն ստեղծվել է 1864-ին (ուներ 27 եկեղեցի), 1866-ին կազմվել է Արևելյան միությունը՝ չորս շրջաններով (68 եկեղեցի), 1867-ին՝ Կիլիկիո միությունը՝ չորս շրջաններով (65 եկեղեցի), 1868-ին՝ Կենտր. միությունը՝ երեք շրջաններով (42 եկեղեցի): XX դ. սկզբին տարագիր հայ ավետարանականներն ԱՄՆ-ում ստեղծել են ևս 2 միություն՝ Արլ. նահանգների Հայ ավետարան. միությունը (1901) և Կալիֆոռնիայի Հայ ավետարան. միությունը (1908):

Առաջին համաշխ. պատերազմից առաջ Թուրքիայում, Արմ. Հայաստանում և Կիլիկիայում գործել են 137 կազմակերպված ավետարան. եկեղեցիներ, կար 82 ձեռնադրյալ հովիվ, 97 քարոզիչ, եկեղեցու 14 հզ. հաղորդական անդամ, 270 կիրակնօրյա դպրոց, 7 քոլեջ, 46 բարձրագույն վարժարան, 3 աստվածաբան. ճեմարան: Արևմտահայ ավետարանականների ընդհանուր թիվը մոտ 51 հզ. էր: XIX դ. վերջին Թուրք. կառավարության իրականացրած հայկ. ջարդերը, աքսորները, ապա՝ Մեծ եղեռնը մեծ հարված են հասցրել նաև Հ. ա. ե-ուն: Ցեղասպանությունից փրկված հայ ավետարանականները (14–15 հզ.) գաղթել են Եվրոպա, Ամերիկա, Մերձ. Արևելքի երկրներ, որտեղ և հիմնել են հայ ավետարան. եկեղեցիներ և ավետարան. միություններ:

Ներկայումս (2000) սփյուռքում գործում են 3 հայ ավետարան. միություններ՝ Մերձ. Արևելքի (ստեղծվել է 1924-ին, կենտրոնը՝ Բեյրութ, ընդգրկում է Լիբանանի 6, Սիրիայի 11, Թուրքիայի 3, Եգիպտոսի 1, Իրանի 3, Հունաստանի 2 հայ ավետարան. եկեղեցիները), Ֆրանսիայի (ստեղծվել է 1927-ին, կառավարությունը ճանաչել է 1946-ին, կենտրոնը՝ Փարիզ, 14 եկեղեցի) և Հս. Ամերիկայի (ստեղծվել է 1971-ին, կենտրոնը՝ Նյու Ջերսի, ընդգրկում է ԱՄՆ-ի 20 և Կանադայի 4 հայ ավետարան. եկեղեցիները): Հայ ավետարան. եկեղեցիներ կան Բուենոս Այրեսում (Արգենտինա, կազմ. 1922-ին), Սան Պաուլոյում (Բրազիլիա, 1927), Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ, 1924, մինչև 1944-ը այստեղ գործել է 2 հայ ավետարան. եկեղեցի), Լոնդոնում (Անգլիա), Բրյուսելում (Բելգիա), Սոֆիայում (Բուլղարիա), իսկ 1973-ից՝ Սիդնեյում (Ավստրալիա): Այս եկեղեցիները որևէ ավետարան. միության մեջ չեն մտնում:

Արևելահայերի շրջանում ավետարան. գաղափարները տարածվել են XVIII դ. վերջին – XIX դ. սկզբին, առաջին բողոքական անհատների և փոքր խմբերի միջոցով, որոնք հիմնականում Արլ. Հայաստան գաղթած խնուսցի «Նոր թոնդրակեցիներ» կոչված աղանդի հետևորդներ էին: Արևելահայերի մեջ ավետարանականության տարածմանը նպաստել են Արլ. Հայաստանում և Վրաստանի մի շարք շրջաններում բողոքականությանը և մկրտությանը հարող այդ ցաք ու ցրիվ փոքր համայնքներն ու անհատները, ինչպես նաև XIX դ. 20-ական թթ-ից Կովկասում հաստատված գերմ., շվեյց. և շվեդ. բողոքական քարոզիչները:

Արևելահայ ավետարան. եկեղեցիները Հ. ա. ե-ու առանձին և ինքնուրույն միավոր են: Արևելահայ ավետարանականներին, չնայած բազմաթիվ դիմումներին, մինչև 1914-ը ռուս. կայսրությունը պաշտոնապես չի ճանաչել որպես առանձին կրոն. հասարակություն, ինչպես Թուրքիայում (ռուս. կայսրությունում պաշտոնապես գործել է միայն Լյութերական եկեղեցին): Երբեմն սրացել է պայքարն արևելահայ ավետարան. եկեղեցիների և Լյութերական պաշտոնական եկեղեցու միջև, որը ձգտել է իրեն ենթարկել Կովկասի հայ ավետարանականներին:

XIX դ. 2-րդ քառորդից մինչև 90-ական թթ. Անդրկովկասում հայ ավետարանականության կենտրոնը Շամախին ու Ղարաբաղն էին: 1823–37-ին Շուշիում գործել են Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» լյութերական միսիոներները՝ Ա. Դիտրիխի և Ֆ. Զարեմբայի գլխավորությամբ: 1827-ին Շուշիում բացվել են նրանց ուսումնարանն ու տպարանը: Հրատարակել են աշխարհաբար արևելահայերենով հանրամատչելի կրոն. գրքեր: Ավետարան. քարոզիչների ուսումնարանը, որտեղ դասավանդել են նաև հայ հոգևորականներ, լավագույններից էր Անդրկովկասում: Նրանց օրինակով դպրոցներ են բացվել Ղարաբաղի մի շարք գյուղերում: Քարոզիչների բուռն գործունեության շնորհիվ ստեղծվել է Շամախիի Լյութերական միաբանությունը: Այստեղ ավետարանականության տարածմանը նպաստել է շամախեցի վարժապետ Սարգիս Համբարձումյանը: Նա 1842-ին բացել է ուսումնարան, որը գործել է 20 տարուց ավելի և արժանացել դպրոց. իշխանությունների բարձր գնահատականին: Արևելահայ ավետարանականների դեմ

հալածանքները սաստկացել են Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու օրոք, որը դեռևս Կ. Պոլսի պատրիարք եղած ժամանակ անհաշտ պայքար էր ծավալել արևմտահայ ավետարանականների դեմ:

1861-ի ապրիլի 25-ին Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին կոնդակով բանադրել է նաև արևելահայ բողոքականներին՝ զրկելով նրանց Հայ եկեղեցու հետ հաղորդությունից ու անդամակցությունից: 1866-ի օգոստ. 22-ին ցար. հրովարտակով Շամախիի հայ բողոքականները պաշտոնապես ճանաչվել են առանձին կրոն. հասարակություն՝ ենթակա Մոսկվայի ավետարան. Լյութերական եկեղեցուն և ենթարկվել Ռուսաստանում նրա համար սահմանված օրենքներին:

XIX դ. կեսին հայ ավետարան. համայնքներ կային Վաղարշապատում, Ալեքսանդրապոլում, Կարսում և նրանց մերձակա գյուղերում: Երևանում առաջին ավետարանականները հիշատակվում են 1867-ից, իսկ XIX դ. վերջից Երևանի Հայ ավետարան. եկեղեցին դարձել է ամենազորեղը Կովկասի հայ ավետարան. եկեղեցիների մեջ: Կազմավորված հայ ավետարան. եկեղեցիներ կային Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, Սուխումում: 1914-ին ստեղծվել է Հայ ավետարան. Արարատյան միությունը, որը նույն թվին պաշտոնապես ճանաչել է ռուս. կառավարությունը: Միությունը, որի կենտրոնը գտնվում էր Երևանում, գործել է մինչև 1928-ը. անփոփոխ նախագահն էր վերապատվելի Վահան Միքայելյանը: 1923-ին ԽորՀրդ. Հայաստանի կառավարությունը պաշտոնապես ճանաչել է Հայ ավետարան. Արարատյան միությունը և գրանցել նրա կանոնադրությունը: 1918–30-ին հայ ավետարանականների թիվը Հայաստանում եղել է մոտ 2500–3000, իսկ ողջ Անդրկովկասում (Թիֆլիս, Բաթում, Սուխում, Բաքու, Ղարաբաղ, Շամախի)՝ մոտ 3500–4000: Գրեթե բոլոր համայքներն ունեցել են եկեղեցիներ կամ աղոթատներ, կիրակնօրյա դպրոցներ, ձեռնադրված հովիվներ: 1920-ական թթ. վերջից ԽորՀրդ. Միությունում ուժեղացել են հալածանքները կրոն. համայնքների նկատմամբ. 1930-ից ԽՍՀՄ տարածքում, ի թիվս այլ կրոն. կազմակերպությունների, արգելվել է նաև հայ ավետարան. եկեղեցիների գործունեությունը:

1944-ի հոկտ. ԽՍՀՄ-ում թույլատրվել է բապտիստների (մկրտականներ) և ավետարանականների պաշտոնական գործունեությունը մեկ ընդհանուր միության մեջ. ստեղծվել է Ավետարանական քրիստոնյա-բապտիստների եկեղեցին, որն ընդգրկել է նաև ՀԽՍՀ տարածքում գործող բոլոր ավետարան. և մկրտական եկեղեցիները: Ղեկավար մարմինը Ավետարան. քրիստոնյա-բապտիստների համամիութ. խորհուրդն էր: Հայաստանում ևս 1945-ի հոկտ-ից թույլատրվել է ավետարանականների և մկրտականների (տես *Հայ մկրտական եկեղեցիներ*) միավորումը մեկ միության մեջ: 1946-ի փետր. ՀԽՍՀ կառավարությունը պաշտոնապես ճանաչել է Երևանի Հայ ավետարանական քրիստոնյա-բապտիստների եկեղեցին, որի մասն է կազմել նաև Գյումրու ավետարանական մկրտական եկեղեցու համայնքը: Այդ ժամանակից մինչև 1991-ը, երբ Հայաստանում սկսել է գործել Ամերիկայի Հայ ավետարանական ընկերակցության երևանյան գրասենյակը, մկրտականներից առանձին ավետարանական համայնք և եկեղեցիներ ՀՀ-ում չկային: 1994-ի հուլիսի 1-ից Հ. ա. ե. ստացել է ՀՀ-ում պաշտոնապես գործելու իրավունք: Հ. ա. ե-ու մաս են կազմում Երևանի, Վանաձորի և Ստեփանավանի ավետարան. եկեղեցիները: Եկեղեցիների, պարզ ժողովարանների և աղոթատների թիվն անցնում է մեկ տասնյակից: Հ. ա. ե-ու հոգևոր հովիվը 1994-ի նոյեմբերից վերապատվելի Ռընե Լևոնյանն է:

1995-ի մայիսին Հայաստանի ավետարան. եկեղեցիները (Երևանի, Վանաձորի, Ստեփանավանի), Գյումրու Հայ ավետարան. մկրտական եկեղեցին և Հայ ավետարան. մկրտական քրիստոնյաների եկեղեցիները ստեղծել են Հայաստանի ավետարան. եկեղեցիների միություն (կենտրոնը՝ Երևանում, նախագահ՝ վերապատվելի Յուրի Ավանեսյան): Միությունն ունի 30-ից ավելի եկեղեցի և աղոթատուն, մոտ 30 հովիվներ և օգնական քարոզիչներ: Հայ ավետարան. հինգերորդ միությունը ստեղծվել է 1995-ի օգոստ. և կոչվում է Հայաստանի, Վրաստանի, Արլ. Եվրոպայի և Միջին Ասիայի Հայ ավետարան. միություն (կենտրոնը՝ Երևանում, նախագահ՝ վերապատվելի Ռընե Լևոնյան): Միությունն ընդգրկում է Հայաստանի Հայ ավետարանական եկեղեցիների միությունը, Վրաստանի Հայ ավետարան. եկեղեցիները (ավետարան. եկեղեցիներ կան Թիֆլիսում, Ախալքալաքում, Ախալցխայում, Բոլնիսում, Լիլոյում, Իսանիում), Սուխումի Հայ ավետարան. մկրտական եկեղեցին, Սոչիի Հայ ավետարան.

եկեղեցին, Մոսկվայի Հայ ավետարան. եկեղեցին, ինչպես նաև Ամերիկայի Հայ ավետարանական ընկերակցության Հայաստանի ներկայացուցչությունը:

1994-ի աշնանը պառակտվել է Հ. ա. ե-ու համայնքը Երևանում, կազմվել է առանձին եկեղեցի, որը պաշտոնապես գրանցվել է 1997-ի մայիսին՝ Երևանի ավետարան. եկեղեցի անվամբ: Նորաստեղծ այս եկեղեցին Հայ ավետարան. այն սակավաթիվ եկեղեցիներից է, որը չի պատկանում որևէ միության և գործում է առանձին:

Դավանանքը և պաշտամունքը: Հ. ա. ե. քրիստ. հիմն. վարդապետություններ՝ Աստծո, Քրիստոսի և Ս. Հոգու վերաբերյալ հարցերում դավանակից է ավանդական եկեղեցիներին: Ընդունում է Ս. Երրորդության ուղղափառ բանաձևումը, Հիսուս Քրիստոսի Մարդեղությունը և Աստվածությունը, Հարությունը, Ս. Հոգու ներկայությունը և առաջնորդությունը, բայց ոչ թե եկեղեց. վարդապետների, ս. հայրերի կամ տիեզերական ժողովների հեղինակության ու որոշումների վրա հենվելով, այլ այդ վարդապետությունների՝ Ս. Գրքին համաձայն լինելու համար: Հիմն. հատկանիշն այն է, որ Աստվածաշունչն ընդունում է որպես հավատքի և գործերի միակ ճշմարիտ, բացարձակ ու գերագույն հեղինակություն, միակ առաջնորդ ու կանոն: Եկեղեց. այլ հեղինակություններն ու ավանդությունները երկրորդական են և ստորադաս Աստվածաշնչին: Հ. ա. ե. ընդունում է առաքելական և Նիկիական Հավատո հանգանակները, նաև ունի իր Հավատո հանգանակը: Մերժում է սրբերի միջնորդությունը, այդ թվում՝ Մարիամ Աստվածածնի: Քրիստոսից բացի չի ճանաչում ուրիշ որևէ միջնորդ և բարեխոս Աստծո ու մարդկանց միջև: Աստծո շնորհին մարդ հաղորդակցվում է ուղղակի Հիսուսի միջոցով՝ նրան ընդունելով որպես անձնական Փրկիչ: Քրիստոսը եկեղեցու միակ գլուխն է, փրկիչն ու բարեխոսը, մեղքերի քավության միակ միջոցը: Հ. ա. ե. մերժում է նաև սրբերի, խաչի, մասունքների պաշտամունքը: Համաձայն ավետարան. վարդապետության, մեղավորն իր փրկությունը ստանում է միայն շնորհիվ հավատքի և ոչ թե՝ իր բարի գործերի կամ եկեղեցուն իր նվիրատվությունների, ծոմապահության, ապաշխարության, եկեղեց. խորհուրդների կատարման: Բարի գործերը փրկության արդյունք են և ոչ թե պայման: Մեղավորի փրկությունը կարող է տեղի ունենալ եկեղեցուց դուրս և առանց կղերի միջնորդության: Հ. ա. ե. ընդունում է բոլոր հավատացյալների ընդհանուր քահանայությունը, հավասարությունն ու միությունը: Հասարակությունը չի բաժանում կղերական և աշխարհիկ դասի: Յուրաքանչյուր ոք կարող է և իրավունք ունի հոգևոր պաշտոն կատարել, քարոզել, մեկնաբանել Աստվածաշունչը: Ավետարան. եկեղեցու հովիվը (պատվելի, վերապատվելի) պարզապես առաջնորդն է դավանակիցների, բայց քահանա չէ, այսինքն՝ միջնորդ չէ Աստծո և մարդկանց միջև: Հոգևոր պաշտամունքն իրականացվում է բացառապես քարոզի, Աստվածաշնչի բարոյաբանական մեկնաբանության և աղոթքի միջոցով: Հ. ա. ե., հարգելով հին եկեղեցիների խորհուրդները, բայց իբրև միայն խորհրդանիշ, ընդունում է առավել նախնական, Աստվածաշնչի հեղինակությամբ վկայված երկու խորհուրդ՝ *Մկրտություն* և պարզ *Հաղորդություն* (մերժում է *Պատարագի* հաղորդությունը): Մկրտությունը կատարվում է ջրով, առանց մյուռոնի: Ձեռնադրությունը վերածված է աշխարհիկ ծեսի: Հ. ա. ե. չունի հին եկեղեցիներին հատուկ ծիսակարգ և հայտանիշեր, որպիսիք են զգեստավորումը, սուրբ անոթները, սրբանկարները, մոմերը, խունկը, մյուռոնը, ճարտարապետությունը (իր հին տարազի մեջ՝ եկեղեցի, տաճար, վանք): Ճշմարիտ քրիստոնյաների ցանկացած խմբակցություն կազմում է Հիսուս Քրիստոսի եկեղեցին: Ճշմարիտ եկեղեցին մարդկանց, հավատացյալների հավաքականությունն է, խումբը և ոչ թե շենքը կամ կառույցը: Հ. ա. ե. նախանձախնդիր է պահպանելու քրիստ. եկեղեցու տիեզերականությունը, միությունը և ազատությունը: Հ. ա. ե. ճանաչում և ընդունում է կրոն. հարցերում անձնական դատողության իրավունքը, կրոն. խմբավորումների և աստվածաբան. զանազան հայացքների առկայությունը, անհատի իրավունքներն ու ազատությունները:

Հ. ա. ե. Հայաստանյայց առաքելական եկեղեցուն համարել և համարում է Մայր եկեղեցի, ընդունում է Հայ եկեղեցու ս. հայրերին: Հայ եկեղեցու նման Հ. ա. ե. ևս միայն երեք տիեզերական ժողով է ընդունում: Ներկայումս պաշտամունքների ժամանակ օգտագործում է Հայ միջնադարյան շարականներ, Հայ առաքելական եկեղեցու հոգևորականներին երբեմն մասնակից է դարձնում իր պաշտամունքներին. կա-

տարվում են եկեղեց. համատեղ արարողություններ:

Կազմակերպական ձևը: Հ. ա. ե. չունի նվիրապետություն (կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, թեմեր): Հոգևոր պաշտոնյաներն են եկեղեցու հովիվը, պաշտոնակից կամ օգնական հովիվը, դաստիարակ տեսուչը, արտոնյալ քարոզիչը, սարկավագը և հոգաբարձության ու այլ հանձնախմբի անդամները:

Ավետարան. եկեղեցիներին բնորոշ է ապակենտրոնացումը: Եկեղեցու գլուխ Քրիստոսն է, հետևաբար եկեղեցիները վարչականորեն չեն ենթարկվում ոչ մի մարմնի կամ հոգևոր պետի: Յուրաքանչյուր ավետարան. եկեղեցի անկախ է և ինքնաբավ: Յուրաքանչյուր եկեղեցի ինքն իր մեջ միություն է իր հովիվով և ժողովրդով: Եկեղեցին կազմող տարրը ժողովուրդը չէ, այլ՝ եկեղեցու հաղորդական անդամները, այսինքն նրանք, ովքեր վկայել են, որ հավատքով փրկվել են իրենց մեղքերից և որոշ արարողությամբ անդամակցում են եկեղեցուն:

Յուրաքանչյուր եկեղեցի ունի պաշտոնական երեք մարմին. 1. Եկեղեցու հոգաբարձություն, որը հսկում է եկեղեցու ընդհանուր, մանավանդ՝ հոգևոր գործունեությունը: 2. Խնամակալություն, որը հսկում է եկեղեցու տնտ. գործերը և ունեցվածքը, նաև տալիս է ամուսնության արտոնագիր: 3. Դպրոցի հոգաբարձություն, որը հսկում է եկեղեցուն պատկանող դպրոցը (դպրոցները): Ավետարան. եկեղեցիների անհրաժեշտ մասն են կազմում կիրակնօրյա դպրոցները, պատանիների, երիտասարդների, ամուսն. զույգերի Ս. Գրոց սերտողությունները, Քրիստոնեական Ջանից կամ այլ երիտասարդ. քրիստոնեական կազմակերպությունները, տիկնանց միությունները, մշակութային բազմապիսի խմբերը, միասնական աղոթքի խմբերը:

Աշխարհի 16 երկրներում գործող 110-ից ավելի Հայ ավետարան. եկեղեցիները, բացառությամբ մի քանիսի, ներկայումս ընդգրկված են 5 Հայ ավետարան. միությունների մեջ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ընտրովի նախագահը: Միության բարձրագույն մարմինները եկեղեցիների ներքին գործերին չեն միջամտում, բացառությամբ այն դեպքերի, երբ եկեղեցին միության միջամտությանն է դիմում: 1980-ական թթ. սկզբին սփյուռքի 3 միությունները կազմել են Հայ ավետարանական համաշխարհային խորհուրդ (կենտրոնը՝ Նյու Ջերսիում, ԱՄՆ), որը վարում է միությունների ընդհանուր գործերը: Այս մարմինն ունի ընտրովի նախագահ, որը փոխվում է երկու տարին մեկ և կարող է վերընտրվել ևս մեկ անգամ: 1995-ին ՀՀ-ում ստեղծված 2 միությունները նույնպես անդամակցել են Հայ ավետարան. համաշխարհային խորհրդին: Հայ ավետարան. եկեղեցիների ավետարանչական գործունեության կազմակերպիչը և գործադիր մարմինը, Հայ ավետարան. առաջին և առայժմ միակ միսիոներական կազմակերպությունը Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունն է (1918), որը ներկայացնում է Հ. ա. ե. իր ամբողջության մեջ՝ լինելով կապող օղակը այդ եկեղեցիների միջև:

Հ. ա. ե. իր բարեսիր., կրթ., հրատարակչ., ընկերային ծառայությունները ավետարանչական գործունեության հետ մեկտեղ իրագործում է մոտ մեկ տասնյակ բարեգործ. կազմակերպությունների միջոցով, որոնք ղեկավարվում են կա՛մ միայն Հ. ա. ե-ու, կա՛մ միասնաբար առաքելական ու Հայ կաթոլիկ եկեղեց. մարմինների հետ: Նշանավոր են Ջինիչյան, Փիլիպոսյան, Կարագյոզյան հիմնադրամները, Հայ ավետարան. ընկերային ծառայության կենտրոնը (Լոս Անջելես), Հայ ազգային բուժարանը (Բեյրութ), Հայ ծերանոցը (Հալեպ) ևն: Հ. ա. ե. Եկեղեցիների համաշխ. խորհրդի անդամ է՝ նրա հիմնադիրներից, գործակցում է ամերիկյան, եվրոպ., մերձավորարևելյան բողոքական եկեղեցիների հետ:

Կրթության կենտրոնները: Հ. ա. ե-ու կարևորագույն գործերից է աջակցությունը դաստիարակության և կրթության մարզում: Հայ ավետարանականները, միսիոներներին հետևելով կամ նրանց աջակցությամբ, հիմնել են հարյուրավոր նախակրթարաններ, երկրորդական վարժարաններ, քոլեջներ, դպրոցներ: Ավետարան. հաստատություններում գիտ. և մասնագիտ. կրթություն են ստանում բոլոր ցանկացող հայերը՝ առանց դավանական խտրականության: Երկրորդական վարժարանների թիվը 1908-ին 35 էր, որոնցից 20-ը՝ աղջիկների համար: Մինչև Մեծ եղեռնը Թուրքիայում գործել են Խարբերդի (1859), Մարզվանի (1865), Մարաշի (1864) ավետարան. աստվածաբան. ճեմարանները: 1875–1915-ին Հ. ա. ե. Թուրքիայում հիմնել է 7 քոլեջ. Կենտր. Թուրքիո քոլեջ (Այնթապ, 1876), Եփրատ քոլեջ (Խարբերդ, 1878), Աղջկանց կենտր. քոլեջ (Մարաշ, 1885), Անատոլիա քոլեջ (Մարզվան, 1886), Ս. Պողոս քոլեջ (Տարսոն, 1888),

Ճենանյան քոլեջ (Գոնիա, 1892), Միջազգային քոլեջ (Իզմիր, 1903): Անդրկովկասում մեծ համարում են ունեցել Շուշիի, Շամախիի, Թիֆլիսի հայ ավետարան. դպրոցներն ու ուսումնարանները: Բացվել են նաև բազմաթիվ հիվանդանոցներ, ծերանոցներ, նաև որբանոցներ, որտեղ հազարավոր հայ որբեր ուսում և քրիստ. դաստիարակություն են ստացել:

Ներկայումս (2000) սփյուռքում գործում են 17 հայ ավետարան. կրթ. հաստատություններ՝ նախակրթարանից մինչև համալսարանական մակարդակի: Դրանցից 9-ը գործում են Լիբանանում, 5-ը՝ Սիրիայում, մեկական՝ Հունաստանում, Իրանում և ԱՄՆ-ում: Նշանավոր են՝ Մերձ. Արևելքի Աստվածաբանական դպրոցը (Բեյրութ), Հալեպ քոլեջը (Սիրիա) և Հայկազյան համալսարանը (Բեյրութ), որը սփյուռքի հայկ. միակ բարձրագույն ուս. հաստատությունն է: 1997-ի ապրիլին Երևանում բացվել է Հայաստանի ավետարանական աստվածաբանական ճեմարանը:

Մամուլը: 1839–54-ին Զմյուռնիայում ընդմիջումներով լույս է տեսել հայ լրագրության պատմության մեջ առաջին աշխարհաբար թերթը՝ «Շտեմարան պիտանի գիտելեացը»: Նրա շարունակությունն էր «*Ավետաբերը*» (Կ. Պոլիս, հայ. և հայատառ թուրք.): 1872–1915-ին Կ. Պոլսում լույս է տեսել «Ավետաբեր տղայոց համար» մանկ. թերթը (հայ. և հայատառ թուրք.): Առավել հայտնի ավետարան. թերթերն էին՝ «*Բյուրակն*» (Կ. Պոլիս), «Կոչնակ» (1900–1960, Բոստոն, Նյու Յորք), «Բարի լուր» (1906–17, Բաքու), «Բահնյումա» (1910–15, Կ. Պոլիս), «Եփրատ» (1910–15, Խարբերդ), «Ջանասեր» (1916–23, ԱՄՆ), «Ավետագիր» (1945–47, Նյու Յորք) են: Ներկա պարբերականներից առավել հայտնի են «Ջանասեր» (1937-ից, Բեյրութ), «Պատանեկան արձագանք» (1936-ից, Բեյրութ), Ֆրանսահայ ավետարան. միության «Բանբեր» (1925-ից, Փարիզ), «Լը Լյումինյոն» (Մարսել, Ֆրանս.), Հայ ավետարանչական ընկերակցության «Լրաբեր» (1965-ից, Նյու Ջերսի, ԱՄՆ) ամսագրերը, Հս. Ամերիկայի Հայ ավետարան. միության «Ֆորում» (1975-ից) և «Զհայ մեր հանապազորդ» (1991-ից) պարբ-ները, «Հայկազյան հայագիտական հանդես» (1970-ից, Բեյրութ) տարեգիրքը, Վանաձորի Հայ ավետարան. եկեղեցու «Աղ և լույս» (1995-ից) ամսաթերթը, «Հայաստանյայց ավետարանական եկեղեցի» (1997-ից, Երևան) եռամսյա պատկերազարդ հանդեսը են:

Գրկ. Ղուկասյանց Հ., Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ, Թ., 1886: Ութուճյան Ստ., Ծագումն և ընթացք ավետարանականութեան ի Հայս, ԿՊ, 1914: Մրմրյան Հ., Բողոքականութեան ի Հայս ծագման պարագայք և անձինք, «Ավետաբեր», ԿՊ, 1914, էջ 106, 152, 203, 229, 252, 327, 378, 393, 502, 549, 620, 740, 787, 833: Քասունի Եղ., Լուսաշաւիղ. Պատմութիւն Հայ ավետարանական շարժման. 1846–1946, Բեյրութ, 1947: Խրլոբյան Մ., Ոսկեմատեան, հ. 1, 2, Բեյրութ, 1950, 1951: Ատանալյան Կ., Յուշարձան Հայ ավետարանականաց և ավետարանական եկեղեցվո, Ֆրեզնո, 1952: Տարագճյան Պ., Հայ ավետարանական եկեղեցու վարդապետական առանձնահատկութիւնները, «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, հ. 2, 1971, էջ 171–193: Եղիայան Բ., Հայ կաթոլիկ և ավետարանական յարանվանութեանց բաժանումը ԺԹ դարուն, Անթիլիաս, 1971: Քասունի Եր., Հայաստանեայց ավետարանական եկեղեցին, Բեյրութ, 1986: Թութիկյան Վ., Հայ ավետարանական եկեղեցին. 1846–1996, Դետրոյտ, 1996: Ղազարյան Ա., Լեվոնյան Ն. Ռ., Հայաստանյայց ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Ե., 1999: Leon Arpee, A Century of Armenian Protestantism, N. Y., 1946; Sahagian J. D., Le Movement Evangelique Arménien, P., 1966; Chopourian G., The Armenian Evangelical Reformation, N. Y., 1972; Chakmakjian H., The Armenian Evangelical Movement, Fresno, 1985.

Արտաշես Ղազարյան

«ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ», միջնադարյան բարոյախրատական զրույցների ժողովածու: Բնօրինակը ստեղծվել է 1480-ին, հրատարակվել 1481-ին՝ «Հայելի օրինակաց» վերնագրով: Ժողովածուն ընդարձակել, լրացրել և վերամշակել է բելգիացի մատենագիր Հովհաննես Մայորը և անվանել «Մեծ Հայելի»: IV–XVI դդ. բազմաթիվ հեղինակների և զրուցապատում տարբեր հավաքածուների նյութեր պարունակող, քարոզիչների համար նախատեսված լատ. ժողովածուն միջնադարյան արձակի յուրատեսակ շտեմարան է: Խորապես արտացոլել է միջնադարյան մարդու աշխարհընկալումը, նրա մտածելակերպն ու հավատալիքները, ըմբռնումներն ու մտապատկերները: «Մեծ Հայելին» XVII–XVIII դդ. լայն ճանաչում է ստացել, թարգմանվել մի շարք լեզուների, հրատարակվել:

Ժողովածուն լեհերենից հայերեն է թարգմանել *Ստեփանոս Լեհացին* (թարգմ.՝ 1651, հրտ.՝ «Գիրք հայելի վարուց որ ասի հարանց վարք», 1702): Նա վերականգնել է լատ. նախօրինակի վերնագիրը՝ «Հայելի վարուց»: Լատ. և լեհ. 2000 զրույցից թարգմանել է ընդամենը

247-ը: Թարգմանության թեմաներից յուրաքանչյուրը մի առանձին գլուխ է (ընդամենը 71), որտեղ զետեղված են աստվածաշնչյան տասը պատվիրանները բովանդակող, միմյանց հարակցող զրույցներ: Ջեռնարկելով կաթոլիկ. միջավայրում ստեղծված երկի թարգմանությունը՝ Ստեփանոս Լեհացին ջանացել է ձերբազատվել կաթոլիկ. միտումներից, արել է զրույցների խիստ ընտրություն. չի ընդգրկել Կաթոլիկ եկեղեցու հայտնի դեմքերին, հրաժարվել է տեղանուններից, թվականներից, կաթոլիկ. բնույթը բացահայտող մեծաթիվ արտահայտություններից, կատարել բառափոխություններ: Ստեփանոս Լեհացին տեղայնացրել է զրույցները՝ հասկանալի դարձնելով հայ ընթերցողին, պարզաբանել ոչ միայն իր վերաբերմունքը ժամանակի հուզող հարցերի նկատմամբ, այլև Հայ եկեղեցու դավան. դիրքորոշումը, հայերի կրոն. պատկերացումները, բարոյականության առանձնահատկությունները:

XVII դ. մշակութ. զարթոնքի շրջանում «Հ. վ.»-ի բարոյախրատ. զրույցները համահունչ են եղել հայ մշակույթի, եկեղեցու առաջադեմ գործիչների գաղափարներին: Զրույցներում ձաղկվել են աշխարհիկ իշխանավորների և հոգևորականության արատները, քանզի եկեղեցու սպասավորները միայն «զդեստիւք և ոչ վարուք, անուամբ և ոչ արդեամբք» էին կրոնավոր և ջանում էին «ժողովել զինչս և զստացուածս և փառս աշխարհիս՝ քան թէ, հոգալ վասն փրկութեան ժողովրդեան, և բարի օրինակ լինել հօտին իւրոյ»: «Հ. վ.»-ի ժողովրդականացմանը առավել նպաստել են վիպ. հարուստ նյութերը՝ առակները, քրիստ. լեգենդները, հեքիաթները, պատմ. զրույցները, զվարճախոսությունները, որոնք միջնադարյան արձակի գողտրիկ նմուշներ են («Յաղագս իմաստասիրութեան», «Յաղագս նախանձու», «Յաղագս կամապաշտութեան»): Հիշարժան են երևակայական-հեքիաթային այլաբանություններով զրույցները. դրանք, հարակցվելով նրա գաղափար. պահանջներին, պարուրվել են կրոնախրատ. երանգով՝ չկորցնելով իրենց գեղ. հմայքը: Ժողովածուի զրույցների՝ հատկապես տեսիլքների ու հրաշապատումների ակունքը բանարվեստին հատուկ հեքիաթային-առասպել., երևակայական-դերբնական տարրերն են՝ կերպափոխումներ, կախարդանք, տարերային աղետների առաջացում ևն: Ժողովածուի զրույցները, նրա ամբողջ. գլուխներ ներհյուսվել են առակագրքերին, քարոզգրքերին, վարքագր. երկերին, թափանցել բանավոր խոսքարվեստ, տեղայնացել, հաճախ ձուլվել հայ մատենագրությանը հնուց ի վեր հայտնի այլաբանություններին, ընկալվել որպես սեփական արժեք: Այս ամենի շնորհիվ հայ. տարբերակը նույնպես ընդգրկել է ընթերցողների լայն շրջանակ, բազմիցս ընդօրինակվել: «Հ. վ.» իր ուրույն հետքն է թողել ուշ միջնադարի գեղ. գրակ-յան արձակում:

Գրկ. Հայելի վարուց (աշխատասիր. Քնարիկ Տեր-Դավթյանի), Ե., 1994:

Քնարիկ Տեր-Դավթյան

ՀԱՅԵՐԵՆ, հայոց լեզու, հայ ժողովրդի ազգային, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն: Վկայված է պատմ. և տարած. մի շարք տարբերակներով՝ հին (V–XI դդ.), միջին (XII–XVI դդ.), նոր կամ աշխարհաբար (XVII դարից), իր երկու՝ արլ. և արմ. գրակ. տարբերակներով և չորս տասնյակից ավելի բարբառներով: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքին՝ որպես առանձին ինքնուրույն ճյուղ: Համեմատաբար մեծավոր առնչակցություն ունի իրան., բալթիկ-սլավոն. լեզուների և հուն-ի հետ: Կազմավորվել է որպես հայ էթնոսի լեզու՝ հնդեվրոպ., կովկասյան, խուռիուրարտ. մի շարք լեզուների հետ սերտ շփումների պայմաններում, աստիճանաբար տարածվել և մոտավորապես Ք.ծ.ա. առաջին հազարամյակի կեսին տիրապետող դարձել Մեծ Հայքի ամբողջ տարածքում: Նախքան գրի առնվելը մշակվել է բանահյուսության, թատեր. ներկայացումների, պաշտամունք. արարողությունների, արքուն. կյանքի ոլորտներում, քրիստոնեության տարածման շրջանում նաև՝ բանավոր քարոզչության ընթացքում: Գրավոր հուշարձաններով ավանդված է V դ. սկզբից՝ հայոց գրերի գյուտից (տես *Մեսրոպ Մաշտոց*) անմիջապես հետո ստեղծված ինքնուրույն և թարգմ. հարուստ մատենագրությամբ: Հայոց ազգային գրի ստեղծումը խորապես գիտակցված և նպատակադրված, նույնիսկ նախապես ծրագրված քայլ էր, որ բխում էր այդ ժամանակաշրջանում Հայաստանի պետ-քաղ. և կրոն-գաղափարախոս. բարդ ու վտանգավոր իրադրությունից: Երկիրը գտնվում էր երկու աշխարհակալ պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի նվաճող. ձգտումների կիզակետում, իսկ Հայ եկեղեցին ենթարկված էր վաղ միջնադարի քրիստոնյա աշխարհում գե-

ուրիշող դիրք գրավող հուն. և ասոր. եկեղեցիների ազդեցությանը: Հայոց գրի ստեղծման առաջին և կարևոր հետևանքը Հայ եկեղեցու փաստացի անկախության ձեռքբերումն էր, քրիստ. կրոնի ազգայնացումը, որն իրականացվել է առաջին հերթին եկեղեց. ծիս. կարգերի և արարողությունների ոլորտից օտար լեզուների՝ հունարենի, ասորերենի արտամղումով: Հայ եկեղեցում Հ. որպես պաշտոն. լեզու ընդունելու շնորհիվ հայ ժողովրդին ավելի ծանոթ ու հասկանալի են դարձել արդեն մեկ դարից ավելի պետականորեն ճանաչված քրիստ. կրոնի գաղափարախոսությունը, կանոններն ու ավանդությունները: Գրերի գյուտից անմիջապես հետո Հ. սկսել է գործածվել նաև որպես կրթության լեզու, սկիզբ է դրվել հայ դպրության: Գրի ստեղծումը նպաստել է նաև Հ-ի զարգացմանն ու նրա գործառույթների ընդլայնմանը: Սկիզբ է դրվել լեզվի գիտակցված և նպատակադրված մշակմանը, նորմավորմանն ու կանոնարկմանը: Կիրառվելով հաս. ու մշակութ. կյանքի գրավոր հաղորդակցում պահանջող բոլոր ոլորտներում՝ հայոց գրակ. լեզուն ձեռք է բերել հարստանալու և կատարելագործվելու լայն հնարավորություններ: Հ., դառնալով եկեղեցու պաշտոն. լեզուն, հեղինակություն ձեռք բերելով շնորհիվ նրանով ստեղծված եկեղեց. ինքնուրույն և թարգմ. գրականության (հատկապես *Աստվածաշնչի թարգմանության*)՝ կարողացել է դիմագրավել օտար լեզուների տիրապետությանը հայոց հոգևոր մշակույթի ասպարեզում: Արքունիքի ներքին պետ. պաշտոն. գրագրությունը նույնպես կատարվել է Հ-ով: Թեև պետականության կորուստը (428) հնարավորություն չի տվել հայոց նորագիր գրական լեզվին ձեռք բերելու նաև պետ. լեզվի կարգավիճակ, սակայն պահպանվել է երկրի ներսում վարչ. և պաշտոն. գրագրությունը Հ-ով վարելու ավանդույթը: Այսպիսով V դ. գրական Հ. ուներ կիրառման լայն շրջանակներ՝ դպրոց և եկեղեցի, պետ. ու հաս. կյանք, գեղ. գրականություն, գիտություն, պատմագրություն, դավանաբանություն, արարողակարգ, նամակագրություն ևն: Ինչպես քրիստ. աշխարհի ամեն մի նոր ծագող ազգային գրականություն, հայ մատենագրությունը նույնպես սկսվել է թարգմանությունից՝ անմիջականորեն և կարճ ժամանակում հաղորդակից լինելու համար տվյալ ժամանակաշրջանի ու տարածքի մշակութ. նվաճումներին: V դ. 1-ին քառորդում սկսված մշակութ. գրական շարժումն ուներ մեկ միասն. նպատակ և ուղղվածություն՝ գրական երկերի թարգմանությունն ու յուրացումը կատարել որոշակի նախագծի համաձայն: Գրերի գյուտը մեծապես պայմանավորված էր քրիստ. կրոնի ազգայնացման, տարածման ու ամրապնդման նպատակադրումով, ուստի առաջին հերթին թարգմանվել են (տես *Թարգմանչաց շարժում*) կրոն. բնույթի երկերը՝ Աստվածաշունչը, ապա և վաղ քրիստ. շրջանի եկեղեցու հայրերի ստեղծագործությունները ու արարող. գրքերը՝ ժամանակի քրիստ. գիտության ու մատենագրության մեջ ընդունված թեմատիկ-ժանրային դասակարգմամբ՝ սուրբգրային, մեկնողական, ջատագովական, նվիրագործական և ծիսական, հայրաբանական, վկայաբանական, կանոնական, պատմական: Թարգմանության ընթացքում գրական Հ. մշակվել, հարստացել և կատարելագործվել է, մասնավորապես ձևավորվել է կրոն. տերմինաբանությունը՝ հնից եկող բառերի վերաիմաստավորմամբ (պատարագ, քարոզ, քահանայ), նոր փոխառություններով (ամէն, ալելուիա, ովսաննա, պռոսխուսմէ), ինչպես նաև Հ-ի սովորական բառերի (վարք, վկայ, հայր, առաքեալ, խորան, սեղան) տերմինացմամբ: Ընդ որում, կրոն. փոխառյալ տերմինների մեծ մասը քրիստոնեության քարոզչության վաղ շրջանում Հ-ին է անցել բանավոր ճանապարհով: Գրերի գյուտից հետո թարգմանիչները, որպես կանոն, խուսափել են փոխառությունից, գերադասել են թարգմանել կամ պատճենել օտար տերմինը, գտնել հայերեն համարժեքը: Այս սկզբունքը հատկապես հետևողականորեն կիրառել է *հունաբան դպրոցը*, որի ներկայացուցիչները մեծ դեր են խաղացել Հ-ի քերական., ճարտասան., փիլ., աստվածաբան. տերմինաբանության ստեղծման գործում: V և հաջորդ դարերի ընթացքում հին գրական Հ-ով՝ գրաբարով, գրվել են նաև կրոն. բովանդակությամբ բազմաթիվ ինքնուրույն գործեր՝ վարքեր, վկայաբանություններ, ջատագովություններ, ծիս. գրքեր, որտեղ քրիստ. ընդհանուր աղոթքների, ժամասացությունների կողքին ստեղծվել են բուն հայկ. ծագում ունեցող գրական ստեղծագործություններ՝ *շարական, գանձ, տաղ, աղոթք*, մաղթանք, մեծածավալ չափածո երկ: Սրանց մեջ առանձնահատուկ տեղ ունի *Գրիգոր Նարեկացու* «Մատեան ողբերգութեան» պոեմը, որից բազմա-

թիվ հատվածներ մտել են Հայ եկեղեցու արարողակարգի մեջ: Գրաբար մատենագրության պատկառելի մաս են կազմում եկեղեց. ծիսական գրքերը, կանոնագրքերը, կաթողիկոս. կոնդակներն ու ընդհանրական թղթերը, որոնք, ընդհանուր մշակութ. արժեքից բացի, ունեն նաև եկեղեց. կյանքի կազմակերպման գործն. նշանակություն: Այդ շրջանում ստեղծվել է լեզվ. մի մակարդակ, որը լիովին բավարարել է Հայ եկեղեցու, ամբողջ հայ ժողովրդի հոգևոր պահանջները:

Հ-ի զարգացման հաջորդ շրջանում (XII–XVI դդ.) լեզվ. նոր որակի՝ միջին Հ-ի կողքին գրական լեզվի դերը շարունակել է պահպանել նաև գրաբարը, ընդ որում, գրական այդ երկու լեզուների միջև եղել է մատենագրության ժանրային-թեմատիկ բաժանում: Գրաբարով շարունակել են գրել պատմ. երկեր, դավանաբան., վարքագր., մեկնող., աստվածաբան-փիլ. աշխատություններ, միջին Հ-ով՝ գեղ. ստեղծագործություններ, բժշկագիտ., դեղաբան., երկրագործ., իրավագիտ. բնույթի գործեր, ուս. ձեռնարկներ, մասամբ՝ հիշատակարաններ, վիմական արձանագրություններ: Կիլիկյան Հայաստանում միջին գրական Հ. փաստորեն ձեռք է բերել պետ. լեզվի կարգավիճակ. նրանով են գրվել արքունի հրովարտակները, արտոնագրերը, իրականացվել դատավարությունը: Եկեղեց. արարողությունները, սակայն, կատարվել են գրաբարով: Երկու գրական լեզուների գոյակցության այս իրավիճակը պահպանվել է նաև աշխարհաբարի կազմավորման շրջանում (XVII դ.): Նոր ձևավորվող աշխարհաբարը գրական լեզվի աստիճանի է բարձրացել իր գործառույթները շարունակող գրաբարի կողքին: Վաղ աշխարհաբարով պահպանվել են թե՛ ձեռագիր, թե՛ տպագիր գործեր՝ դասագրքեր, ուս. ձեռնարկներ, օրագրություններ, գեղ. երկեր (հատկապես քնարերգություն), ինչպես նաև կրոն. գրականություն: Կրոն. բովանդակությամբ առաջին տպագիր աշխարհաբար գիրքը Հովհաննես Հոլովի «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն» է (1687): Հաջորդ դարերի ընթացքում գրական աշխարհաբարի հետագա զարգացումը, հաս. կյանքում նրա դերի մեծացումը, գրապայքարում նրա տարած հաղթանակն ավելի են ընդլայնել նոր գրական Հ-ի կիրառման շրջանակները: Նրա երկու ճյուղերը՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, աստիճանաբար թափանցել են կրոն. մշակույթի ոլորտը, նրանցով ստեղծվել են աղոթագրքեր, բարոյախրատ. երկեր, Սուրբ Գրքի մեկնություններ, կրոնի դասագրքեր, ձեռնարկներ: Հրատարակվել են հայ մատենագրության աստվածաբան-փիլ. բովանդակություն ունեցող երկերից շատերի աշխարհաբար թարգմանությունները: Հայ եկեղեցու արարողակարգի այն հատվածներում, որոնք ուղղված էին հավատացյալների բազմությանը (մկրտություն, պսակադրություն, թաղման ծեսեր), ավանդ. գրաբար բանաձևերի ու աղոթքների կողքին սկսվել է կիրառվել նաև ժողովրդին ավելի հասկանալի նոր լեզուն: Հաղորդակցումը եկեղեցու սպասավորների և հավատացյալների միջև կատարվել է աշխարհաբարով, հատկապես բանավոր քարոզներն ամբողջությամբ եղել են աշխարհաբար: Ստեղծվել են ժամանակակից լեզվով նոր աղոթքներ, կրոն. բովանդակությամբ երգեր (հայրապետ. աղոթքը ևն): Եկեղեցու պաշտոն. գրագրությունը նույնպես անցել է աշխարհաբարի, թեև լեզուն զգալի չափով ոճավորված էր գրաբարյան արտահայտություններով ու քերական. ձևերով, հին մատենագրությունից քաղված գրաբար հատվածներով: Աշխարհաբարի զարգացման ընթացքում գրաբարը մնացել է որպես ուսումնասիրության, ուսուցման առարկա հոգևոր դպրոցներում, ճեմարաններում, բարձրագույն մասնագիտ. ուս. հաստատություններում: Դրանով պահպանվում է լեզվի պատմ. զարգացման տարբեր շրջանների միջև ավանդ. կապի գիտակցումը, և հայ ժողովուրդը հաղորդակից է լինում իր անցյալի հոգևոր մշակույթին:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.5, 4-րդ պատկերը:

Լիանա Հովսեփյան

ՀԱՅԵՐԵՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԹՂԹՅԱ ՁԵՌԱԳԻՐ, մեզ հասած հայերեն ամենահին թղթյա ձեռագիրը՝ գրված 981-ին: Հայ ձեռագր. արվեստի բարձրարժեք նմուշներից է (Մատենադարան, ձեռ. № 2679): Բաղկացած է 360 թերթից, ունի 28,5x15,5 *սմ* մակերես («Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի», նմանատպություն: Ուսումնասիրութ., վերծանութ., ծանոթագր. ցանկեր. աշխատասիր. Ա. Մաթևոսյանի, Ե., 1997): Հնությամբ աշխարհում չորրորդն է, բովանդակության կարևորությամբ՝ առաջիններից (որպես գիտ. նյութերի ժողովածու): Հ. Հ. Թ. ձ. ինքնագրով մեզ հասած առաջին ժողովածուն է և բոլորգրով գրված առաջին ամբողջական մատյանը: Կազ-

մել է Դավիթ քահանա մատենագիրը, գրել որդին՝ Ղուկասը (հավանաբար՝ Արդինայում): Բովանդակում է աստվածաբան., պատմագր., տիեզերագիտ., տոմար., չափագր., աշխարհագր., փիլ. նյութեր, ժամանակագր., գեղ. առանձին երկեր, հանելուկներ ևն: Ընդգրկում է հայ հեղինակների մեծ ցանկ. Գրիգոր Ա Լուսավորիչ, Եղիշե, Մովսես Խորենացի, Հովհաննես Ա Մանդակունի, Աթանաս Տարոնացի (որպես ժամանակագիր առաջին անգամ ենք հանդիպում), Դավիթ Հարքացի, Պետրոս Սյունեցի, Վրթանես Քերթող, Անանիա Շիրակացի, Հովհաննես Գ Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի և ուրիշներ: Այստեղ ընդգրկված են նաև Փիլոն Ալեքսանդրացու, Աթանաս Ալեքսանդրացու, Գրիգոր Նազիանզացու, Ապողինար Լաոդիկեցու, Գրիգոր Նյուսացու, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու և այլոց երկերից հատվածներ:

ՀԱՅՈՑ ԱՆՇԱՐԺ ՏՈՄԱՐ, տես *Հայոց Փոքր թվական*:

ՀԱՅՈՑ ԲՈՒՆ ԹՎԱԿԱՆ, տես *Հայոց տոմար*:

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԹՎԱԿԱՆ (մատենագրության մեջ և վիմագիր արձանագրություններում նաև՝ թուականութիւն ասքանազեան, թուականութիւն թորգոմեան, թուականութիւն թորգոմեան, թուաբերութիւն արամեան, թուականութիւն հայկազեան տոհմի ևն), տարեթվերի հաշվման հայկական թվականություն. սկսվել է Ք.ծ.հ. 552-ի հուլիսի 11-ից: Հայոց առաջին ամսի՝ Նավասարդի 1-ը այդ տարի համապատասխանել է հուլյան տոմարի հուլիսի 11-ին: Հ. Մ. Թ-ի հիմնադրման հարցը 554-ին քննվել է Դվինի երկրորդ եկեղեց. ժողովում, սակայն պաշտոնապես ընդունվել է 584-ին:

Ինքնուրույնության ձգտող Հայ առաքելական եկեղեցին, ստեղծելով իր թվականությունը, զատվել է հարևան եկեղեցիներից, նրանց անցանկալի ազդեցություններից (եկեղեց. տոների, ժամանակի հաշվման և այլ հարցերում): Ըստ ձեռագիր տեղեկությունների՝ մի քանի տարի զատկական հաշիվները չփոթելուց հետո Էաս Աղեքսանդրացու հայտնաբերած զատկացանկի գործածության հետ մեկտեղ սկիզբ է առել Հ. Մ. Թ.: Ընդ որում, առաջին տարվա հիմն. եկեղեց. տոները՝ Ս. Ծնունդը և ս. Զատիկը, համընկել են, համապատասխանաբար՝ 553-ի հունվ. 6-ի և ապրիլի 20-ի հետ: Հ. Մ. Թ-ի առաջին տարին կապվել է եգիպտացի տոմարագետ Էաս Աղեքսանդրացու հայտնաբերած 532-ամյա զատկացանկի գործածության հետ: Եթե հարևան քրիստոնյա ժողովուրդների տոմարների հիմքում ընկած էր նույն հուլյան տարին, և հուլյան տոմարից դրանք տարբերվել են միայն ամսանուններով ու տարեսկզբով (որոնց նահանջի հաշվարկը կատարվել է 4 տարին մեկ), ապա հայոց տոմարում տարին մշտապես 365 օր հաշվելու հետևանքով հայոց և հռոմ. (և ոչ միայն հռոմ.) ամիսների համապատասխանությունը խախտվել է 4 տարում 1 օրով: Այդ է պատճառը, որ Հ. Մ. Թ. անվանել են շարժական տոմար: Ձեռագրերում տոմարական զուգահեռ հաշիվներում Հ. Մ. Թ. հիշատակվել է հիմնականում հռոմեական թվականի հետ, որն սկիզբ է առել Ք.ծ.հ. 248-ին՝ Հռոմի հիմնադրման 1000-ամյակից: Ըստ որում, հռոմեական և հայոց թվականությունների տարբերությունը 304 տարի է: Իսկ Քրիստոսի ծննդյան թվականի հետ համեմատելիս մի քանի տարվա տարբերություն է ստացվել՝ կապված հետծննդյան թվականի ճշգրտման հետ:

Հայոց շարժական և հուլյան անշարժ տոմարների միջև, մինչև 532-ամյա պարբերաշրջանի ավարտը, առաջացել է 1 տարվա շեղում, որը *Հովհաննես Սարկավագը* առաջարկել է հանել 532-ամյա պարբերաշրջանի հետ (տես *Հայոց Փոքր թվական*): Հ. Մ. Թ-ի և Քրիստոսի ծննդյան թվականի միջև զուգահեռ հաշվումներ կատարելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ 1317–20-ին Նավասարդի 1-ը համընկել է հունվարի 1-ին: Ուստի հայոց տարեսկզբի համար հաշվումներ կատարելիս Ք.ծ.հ. Հ. Մ. Թ. ստանալու համար մինչև 1320-ը պետք է հանել 551, իսկ 1320-ից հետո՝ 550:

Գրկ. Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, 2, Ե., 1964, 1968: Նույնի, Տոմարի պատմություն, Ե., 1972: Բաղալյան Հ., Օրացույցի պատմություն, Ե., 1970: Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973:

Ջուլիետա Էյնաթյան

ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱԿԱՆ ՏՈՄԱՐ, տես *Հայոց տոմար*:

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐ, հայկական օրացույց, ժամանակի հաշվարկի հայկական համակարգ: Հայերը դեռևս Ք. ծ. ա. ունեցել են տոմար: Սկզբում, հավանաբար, օգտագործել են լուս-

նայինը, հետագայում անցել ավելի կատարելագործված՝ արեգակնային տոմարի: Թե երբ է սկիզբ առել Հ. տ., ինչպիսին է եղել սկզբ. շրջանում և ինչ փոփոխություններ են թարկվել, այդ մասին կան միայն կցկտուր տեղեկություններ: Սակայն, որոշակիորեն կարելի է ասել, որ հայոց հին արեգակնային տոմարը շարժական էր (12x30+5), և դրա հետևանքով խախտվել են ոչ միայն ամիսների ու տարվա եղանակների որոշակի համապատասխանությունները, այլև, որ շատ կարևոր է, եկեղեց. տոների, ծիսակատարությունների ժամանակները: Որոշ տոմարագետներ Հ. տ. նմանեցրել են եգիպտ. տոմարին: Եգիպտացիների օրացուցային տարին, ինչպես և հայկականը, իրական արեգակնայինից մեկ չորրորդ օրով պակաս է եղել, որի հետևանքով տարեսկիզբը յուրաքանչյուր չորրորդ տարին մեկ օրով շուտ է սկսվել և իր դիրքը վերականգնել է միայն 1460 հուլյան տարի անցնելուց հետո: Եգիպտացիները այն կոչել են Սոթիսի շրջան, հայերը՝ Հայկյան շրջան: Տոմարագետների մեծ մասը Հ. տ-ի սկիզբը համարել է Ք. ծ. ա. առաջին 1000-մյակի կեսը: Ձեռագրերում պահպանված ավանդության համաձայն, Հ. տ-ի սկիզբը կապվել է Հայկ Նահապետի՝ Բելի դեմ տարած հաղթանակի հետ (Ղևոնդ Ալիշանը իր հաշվումներով հետ գնալով Հայկյան շրջաններով՝ այդ թվականը ստացել է Ք.ծ.ա. 2492, այսինքն՝ Հայոց Բուն թվականը), իսկ ամսանունները կոչվել են նրա 12 ուստերների ու դուստրերի անուններով՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից և Ավելյաց: Ք.ծ.ա. 26-ին եգիպտացիներն անցել են անշարժ տոմարի, իսկ Հայոց շարժական տոմարը հարատևել է հարյուրամյակներ, ընդ որում 12x30+5 տիպի արեգակնային տոմարները գործածել են աշխարհի տարբեր մասերում ապրող ժողովուրդները: Նիկիայի Ա տիեզերական ժողովից (325) հետո հուլյան տոմարը ընդունել են քրիստոնյա բոլոր ժողովուրդները: Մինչդեռ Հայ եկեղեցին շարունակել է առաջնորդվել Հայոց շարժական տոմարով: Հայերը, ինչպես և մյուս ժողովուրդները, եկեղեց. տոները կարգավորել են Անդրեաս Բյուզանդացու կազմած 200-մյա (352–551) աղյուսակով, իսկ դրա ավարտից հետո գործածվել է Էսաս Աղեքսանդրացու 532-մյա զատկացուցակը, որով և սկիզբ է առել *Հայոց Մեծ թվականը*: Ձեռագրերը վկայում են, որ VII դ. *Անաստաս Ա Ակոռեցու* հանձնարարությամբ *Անանիա Շիրակացին* կազմել է անշարժ տոմարի նախագիծ, որը, սակայն, գործածության մեջ չի մտել:

Երկրորդ՝ 532-մյա աղյուսակի (552+532) հետ է առնչվում *Հայոց Փոքր թվականը* (Հայոց անշարժ տոմարը): Ադանայի եկեղեց. ժողովում (1316) որոշվել է հրաժարվել Հ. տ-ից և ընդունել հուլյանը: Այդ որոշումը, սակայն, չի իրականացվել: 1584-ին Հռոմի Գրիգորիս III պապի կարգադրությամբ հայերեն է թարգմանվել և հրատարակվել նոր՝ գրիգորյան տոմարը: Այդուհանդերձ, հայոց ժամանակի հաշվարկը շարունակել են կատարել ավանդ. շարժական տոմարով: Երրորդ՝ 532-մյա պարբերաշրջանի (552 թ.+532+532) հետ է կապվում *Ազարիա Ջուղայեցու* տոմարը: Հ. տ. հարատևել է մինչև XX դ.: 1920-ին Հայաստանում ընդունվել է գրիգորյան տոմարը, որը Հայ եկեղեցին պաշտոնապես ընդունել է 1923-ին:

Գրկ. Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, Ե., 1964: Բաղալյան Հ., Օրացույցի պատմություն, Ե., 1970: Նույնի, Հայոց տոմարի պատմություն, Ե., 1976: Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (4–18-րդ դարեր), Ե., 1999:

Ջուլիետա Էյնաթյան

ՀԱՅՈՑ ՓՈՔՐ ԹՎԱԿԱՆ, Սարկավագադիր թվական, *Հայոց Մեծ թվականի* սկզբից առաջին 532-մյա պարբերաշրջանն անցնելուց հետո (1084) սկսվող թվական: Հեղինակն է *Հովհաննես Սարկավագը*: Նրա կազմած երկրորդ՝ 532-մյա պարբերաշրջանի աղյուսակում (մինչև 1616) առաջին տարվա Ս. Ծնունդն ու ս. Զատիկը համապատասխանաբար ընկել են 1085-ի հունվ. 6-ին և ապրիլի 20-ին: Հովհաննես Սարկավագը կազմել է Հայոց անշարժ տոմար. տարին միշտ սկսվել է օգոստոսի 11-ից և հաշվվել 365,25 օր, այսինքն՝ 4 տարին մեկ ունեցել է 366 օր: Հայոց Մեծ թվականի հաշիվներում կուտակված 1 տարվա շեղումը նա առաջարկել է հանել 532-մյա պարբերաշրջանի հետ, այսինքն՝ 532-ի փոխարեն հանել 533: Հ. Փ. Թ. սահմանափակ գործածություն է ունեցել, հիմնականում օգտագործվել է Հայոց Մեծ թվականին զուգահեռ: Եվ քանի որ Սարկավագադիր տոմարը անշարժ էր, ապա Հ. Փ. Թ-ի և Հայոց Մեծ թվականի զուգակցությունը՝ մեկից մյուսին անցնելը, պարզ տեսք է ստացել: Օգոստոսի 11-ից դեկտեմբերի 31-ի միջև ընկած օրերի համար այն 1083 է, մնացած դեպքերում՝ 1084: Հ. Փ. Թ.

եկեղեց. որևէ ժողով պաշտոնապես չի հաստատել:

Գրկ. տես *Հայոց Մեծ Թվական* հոդվածի գրականությունը:

Ջուլիետա Էյնաթյան

ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔ, Յայսմաւուրք (XIII դարից կիրառվող այս անվանումը ծագել է գրաբարյան «Յայսմ աւուր» այս օրը բառակապակցությունից, ինչով սկսվում է սրբերի պատմությունը), *ծիսամատյան*, որը պարունակում է սրբերի կյանքի (վարքի) և նահատակության (վկայության) պատմությունները, որոնք հավաքվելով, գրի են առնվել IV դ.՝ *Եվսեբիոս Կեսարացու* կողմից: «Հաւաքումն պատմութեան մարտիրոսաց Հնոց» խորագիրը կրող այդ ժողովածուն կորել է VI դ., ինչը անհրաժեշտություն է առաջացրել վերստին հավաքել և կազմել նոր ժողովածուներ՝ ծիսական նպատակներով:

Ի տարբերություն սրբերի հիշատակի կատարման համար Հույն և Լատին եկեղեցիների որդեգրած արեգակնային, ամսաթվային կարգի, որն անշարժ է, Հայ եկեղեցին ընդունել է յոթնեկական դրությունը, որը շարժական է: Սակայն հայոց մեջ կիրառվել է նաև սրբոց հիշատակման մի եղանակ ևս՝ համաձայն անուններին այբբենական կարգի: Հայոց Հ. կազմավորվել է V–XV դդ. ընթացքում: Մատենագր. աղբյուրները Հ-ի կազմավորումը կապում են *Սողոմոն Մաքենացու*, Գագիկ վարդապետի (IX–X դդ.) և Ատոմ եպիսկոպոսի (X դ.) անվան հետ: Հայոց Հ-ի կազմավորմանը զգալիորեն նպաստել է հունաց Հ-ի հայերեն թարգմանությունը (991), որն իրականացրել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցին: Հատկապես կարևոր է եղել *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի կազմած Հ., որը, ենթարկվելով զանազան փոփոխությունների, ժամանակի ընթացքում ձեռք է բերել կայուն նկարագիր և հիմք դարձել այդ ծիսամատյանի տարբեր խմբագրումների համար: Հայոց Հ. ունի չորս խմբագրություն. Տեր Իսրայել Խաչենցու (մահ. 1249), *Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Է Անավարզեցի* կաթողիկոսի և *Գրիգոր Խլաթեցու:* Տեր Իսրայել Խաչենցին իր Հ. կազմել է Վանական Վարդապետի (XIII դ.) և Հասան-Ջալալ Դոլա իշխանի պատվերով: Նա ճշգրտել է Գրիգոր Բ Վկայասերի սահմանած՝ հայ նահատակների վկայության օրերը և դրանք տեղադրել Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած հունական Հ-ի մեջ: Տեր Իսրայելը փոխել է նաև օրվա մեջ նշվող տոնի կարգը՝ առաջնությունը տալով հայոց տոնակարգին:

Ի տարբերություն թե՛ Տեր Իսրայելի, որը տարվա տոնաշարն սկսում է հունվարի 1-ից (Բարսեղ Կեսարացու վարքով), և թե՛ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած ժողովածուի, որտեղ տարին սկսվում է սեպտեմբերով (Սիմեոն Սյունակյացի վարքով), Կիրակոս Գանձակեցին իր Հ-ի համար ընտրել է հայկ. ամսակարգը՝ Գրիգոր Բ Վկայասերի օրինակով տոնաշարն սկսելով Նավասարդի 1-ից, որ է՝ օգոստոսի 11-ը (սկսվում է Հովհաննես Մկրտչի տոնով): Սրա շնորհիվ Կիրակոս Գանձակեցու խմբագրած Հ. ձեռք է բերել ազգային կերպարանք: Նրա կազմած Հ-ի առաջին խմբագրության մեջ (1252) ներմուծվել են 112 վկայաբանական նոր միավորներ, իսկ 1269-ին Սսում ընդօրինակված Հ-ի մեջ՝ ևս 170-ը:

Գրիգոր Է Անավարզեցու կազմած Հ. նախորդներից տարբերվում է ոչ հայկական՝ լատինադավան տոնակարգով: Հայոց Հ-ի լատինականացումը նպատակ ուներ նպաստելու Հայ և Կաթոլիկ եկեղեցիների մերձեցմանը, ինչն ի հայտ է բերում Գրիգոր Է Անավարզեցու քաղ. կողմնորոշումը: Գրիգոր Է Անավարզեցու կազմած Հ., որը հիմնված էր Տեր Իսրայելի Հ-ի վրա, Գրիգոր Փեշտիմալճյանի ձեռքով վերախմբագրվելուց հետո՝ 1834-ին թյուրիմացաբար հրատարակվել է իբրև Տեր Իսրայելի խմբագրություն:

Գրիգոր Խլաթեցու կազմած Հ. զգալիորեն տարբերվում է նախորդ խմբագրություններից իր ծավալով, ընդգրկած նյութերի բազմազանությամբ: Նրա խմբագրությունը Կիրակոս Գանձակեցու Հ-ի ընդարձակ տարբերակն է, որն ունի ավելի քան 700 միավոր: Այն աչքի է ընկնում իր ընդգրկած պատմ. նյութի հարստությամբ: Հեղինակը ոչ միայն հավաքել է նախկինում շարադրված վարքերն ու վկայաբանությունները, այլև նրանց մեջ ներմուծել նորանոր տվյալներ, որոնք ունեն պատմագիտ. արժեք: Նա փոխել է դրանց լեզուն՝ այն դարձնելով ժողովրդին մատչելի: Գրիգոր Խլաթեցու Հ-ի մեջ բազմաթիվ են տեղանունների, անձնանունների ժող. ստուգաբանության օրինակները: Նա լայն տեղ է հատկացրել ժող. բարքերի, կենցաղի, նիստուկացի, սովորույթների նկարագրությանը:

Տես նաև *Վարքագրություն* և *Վկայաբանություն*:

ՀԱՅՏՆՈՒԹ. Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.6, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Ավդալբեգյան Մ., «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Ե., 1982: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990, էջ 47–62: Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (4–18-րդ դարեր), Ե., 1999: Մաթեվոսյան Ա., Մարաբյան Ս., Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Ե., 2000, էջ 95–106:

Հակոբ Քյոսեյան

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ, *Աստծո*, նրա կամքի և աստվածային անհայտ, անճառելի իրողությունների բացահայտումը մարդուն: Հ. Աստծո մեծագույն հրաշքն է. նա որևէ գաղտնիք, երևույթ, պատգամ կամ կանխատեսություն է բացահայտում մարդկանցից նրան, ում որ արժանի է համարում: Պատկանելով աստվածային կամեցողության ոլորտին՝ Հ. տրվում է որպես *շնորհ* կամ ողորմածություն, կամ էլ ի վարձատրություն՝ մարդու ապրած մաքուր, երկնահաճո վարքի:

Հ., *Աստվածաշնչի* համաձայն, տրվում է *հրեշտակների, մարգարեների, առաքյալների* միջոցով: Այն կարող է տրվել տեսիլքով, երազով, նշաններով, խոսքով, այլաբանորեն, բացահայտորեն, հրաշքով ևն: Երկնայինը կամ աստվածայինը ծածկված, վարագուրված է մարդուց նրա մեղանչական, մեղսավոր բնույթի պատճառով: Հ-յան արժանանալու համար մարդը կարիք ունի մաքրագործության, ինչպես և *սաղմոսներում* ու *երանիներում* է մշտապես ընդգծվում՝ միայն սրտով մաքուրներն ու արդարները կտեսնեն Աստծուն:

Աստված Մովսեսին տվել է իր օրենքներն ու *պատվիրանները*, որոնք Հ-ներ են: Հ. է ողջ Աստվածաշունչը՝ որպես Աստծո Խոսք՝ տրված *Սուրբ Հոգով*: Աստծո կամքն է արտահայտված *Հիսուս Քրիստոսով*, ուստի աստվածային կատարյալ Հ. է Աստծո Որդու մարդեղանալը, քանի որ իր Անձով նա հայտնվեց մարդկությանը, քարոզեց *երկնային արքայությունը*, հրաշքներ ու բժշկումներ կատարեց, չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, օրեր անց համբարձվեց և Հոր հաճությամբ ուղարկեց խոստացված Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որը Պենտեկոստեից ի վեր Ինքն է, որ Աստծուն հայտնում է մարդկանց: Հ. է լինելու նաև Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալուստը:

Հ-ներ են նաև Հիսուս Քրիստոսի տնօրինական գործունեության միջոցով հաստատված *Եկեղեցու* խորհուրդները և *դավանանքը*: Ամեն ոք, ով հավատում է, որ Հիսուս Քրիստոսն է Աստծո Որդին, որ գալու է, նա մաքրում է իրեն *աղոթքով*, բարի գործերով, *ապաշխարությամբ* և սուրբ *հաղորդությամբ*: Եվ Աստծո *օծումը* սովորեցնում է նրան ամեն բան (տես Ա Հովհ. 2.27–28), այսինքն՝ տալիս է ամեն Հ.:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.6, 4–5-րդ պատկերները:

Լևոն Սարգսյան

ՀԱՅՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, պատրոլոգիա (հուն. πατήρ և λόγος բառերից), պատմական *աստվածաբանությանը* պատկանող գիտություն, որն զբաղվում է *եկեղեցու հայրերի, վարդապետների* և մատենագիրների կյանքի, գործունեության, հոգևոր ժառանգության ուսումնասիրությամբ: Եկեղեցու հայրերի հոգևոր ժառանգությունը հաճախ անվանում են հայրախոսություն (patristica): Հ. անունը (patrologia) առաջին անգամ օգտագործել է Հովհաննես Գերհարդը (Johannes Gerhard), որի համանուն գիրքը լույս է տեսել 1653-ին: Այս անվանը զուգահեռ օգտագործվում են «Քրիստոնեական գրականության պատմություն», «Աստվածաբանական գրականության պատմություն», «Հին քրիստոնեական գրականություն» ևն: Հուն. Հ. ընդգրկում է Քրիստոսի ծնունդ. Հ. 80–90-ական թթ-ից մինչև Հովհան Դամասկացու (մահ. 749) ժամանակաշրջանը, իսկ լատին. Հ.՝ մինչև Իսիդոր Սեբիլլացու (մահ. 636): Ըստ այդմ, Հույն և Լատին եկեղեցիների Հ. ուսումնասիրում է I–VIII դդ. քրիստ. գրականությունը, որը բաժանվում է երեք հիմն. շրջանների՝ 1. նախանիկիական շրջան (80/90–325), 2. ոսկեդար (325–451), 3. անկման շրջան (451–749): Հ-յան վերջնասահմանի համար եղել են նաև այլ տեսակետներ, օր., 842-ը՝ Բյուզ. կայսրությունում ուղղափառության հռչակման տարին, 1054-ը՝ Հռոմի և Հույն եկեղեցիների վերջն. բաժանման թվականը, 1453-ը՝ Կ. Պոլսի անկման տարին ևն: Հայ եկեղեցու համար Հ-յան վերջնասահմանը համարվում է 451-ի *Քաղկեդոնի ժողովը*, քանի որ *Ընդհանրական եկեղեցու* պառակտումից հետո այլ եկեղեցիների որևէ եկեղեց. հայր, վարդապետ և գրող իր ազդեցությունը չի թողել Հայ եկեղեցու աստվածաբան. մտքի վրա:

Հ-յան սաղմերն արդեն առկա են եղել *Եվսեբիոս Կեսարացու* «Եկեղեցական պատմության» մեջ, որտեղ տեղեկություններ են հաղորդվում եկեղեցու հայրերի և մատենագիր-

ների կյանքի, աստվածաբան. ժառանգության վերաբերյալ: Պատմագիտականից զատ այս երկն ունի նաև աղբյուրագիտ. կարևոր նշանակություն, որովհետև բերված կենսագր. շատ տվյալներ և երկերից քաղված հատվածներ գիտությանը հայտնի են միայն «Եկեղեցական պատմության» շնորհիվ: Հ-յան առավել համակարգված շարադրանքը տվել է Հերոնիմոս Ատրիդոնացին (մահ. 420) իր «Նշանավոր մարդկանց մասին» երկում (392): Հետևելով Պլուտարքոսի (46–127) և Սվետոնիոսի (70–140) կենսագր. համաբնույթ գործերին՝ Հերոնիմոս Ատրիդոնացին իր երկում ներկայացրել է 135 հեղինակների (մինչև *Հովհան Ոսկեբերանը*): Նրա նպատակն է եղել հակառակ Կելսոսի (մահ. 178), Պորփյուրի (233–304) և Հուլիանոս Ուրացող կայսրի (361–363) ցույց տալ, որ եկեղեցու ծոցում ևս գործել են հիշատակության արժանի նշանավոր այրեր: Այս աշխատանքը նույն խորագրով շարունակել են Գեննադիոս Մարսելացին (480/490), Իսիդոր Սեբիլլացին (615–618, նրա երկը նվիրված է բացառապես իսպանացի աստվածաբաններին), Իդելփոնսոս Տոլեդացին (VII դ. կես.): Արմ. հայրաբաններից առավել հայտնի են Զիգեբերդ Կամբրեացին [XII դ., իր երկի 171 գլուխներում ներկայացրել է թե՛ արլ. (մինչև *Դիոնիսիոս Արիոպագացին*), թե՛ լատին աստվածաբաններին], Հովհաննես Տրիթեմիոսը, որն «Եկեղեցական գրողների մասին» գրքում (հրտ. 1494) ներկայացրել է 964 գրողների կյանքն ու մատենագր. վաստակը: Արլ. Հ-յան պատմության մեջ բացառիկ է Կ. Պոլսի Փոտ պատրիարքի (858–867, 877–886) «Գրադարան» աշխատությունը (շարադրել է 857-ին՝ եղբոր խնդրանքով, մինչև պատրիարք դառնալը), որտեղ ներկայացրել է 281 հեղինակների՝ նրանց ժառանգության ամփոփ նկարագրությամբ, երբեմն՝ երկերի առանձին հատվածների վկայակոչմամբ: Երկն ունի աղբյուրագիտ. արժեք: Հայրաբան. արժեքավոր նյութ է պարունակվում նաև Սուիդասի բառարանում (1000), Եբեդեսու բար Բերիքայի կազմած «Եկեղեցական հայրերի ցանկում» (1317–18):

Վերածնունդի շրջանը նոր խթան է դարձել եկեղեցու հայրերի կյանքի և մատենագրության ուսումնասիրման համար: Հայրաբան. հետազոտություններն ու հրապարակումները գիտ. բնույթ են կրում սկսած XVII դարից: Ռոբերտ Բելլարմինոն 1613-ին հրատարակել է «De scriptoribus ecclesiasticis» աշխատությունը, Պիեռ Հալուան 1633-ին իր ուսումնասիրությունը՝ արլ. հայրերի գրական վաստակի վերաբերյալ, բենեդիկտյան հայրերից Նիկողայոս Նուռռին 1703–15-ին Լիոնում հրատարակել է I–IV դդ. եկեղեցու հայրերի կյանքը և գործը լուսաբանող մի շարք ավարտաճառեր "Apparatus ad bibliothecam maximam veterum patrum et antiquorum scriptorum ecclesiasticorum" խորագրով: Հայրաբան. նյութի առավել գործնական շարադրանք է Ռեմի Սելյեի «Ընդհանուր պատմություն հոգևոր և եկեղեցական մատենագրության» երկրորդ, ճշտված, լրացված հրատարակությունը (1860–65): Նույն բնույթի գործ է Լյումպերի «Սուրբ հայրերի և այլ եկեղեցական մատենագիրների կյանքի, երկերի և դավանաբանության աստվածաբանական և քննական պատմությունը» (հրտ. 1789–99), որտեղ ներկայացրել է առաջին երեք դարերի հայրախոս. վաստակը:

Հայրաբան. ուսումնասիրությունները լայն թափ են ստացել XIX դ.: 1828-ին Բրյուսը հրատարակել է «Դրվագներ քրիստոնեական գրականության պատմության» մենագրությունը, որն ընդգրկում է մինչև XV դ.: Նյութի քննական շարադրանքով աչքի են ընկնում Ֆ. արք. Գումիլևսկու (*Ф. арх. Гумилевский*) «Պատմական ուսմունք եկեղեցու հայրերի մասին» (1882), Կ. Կրումբախերի (K. Krumbacher) «Պատմություն բյուզանդական գրականության Հուստինիանոսից մինչև Արևելահռոմեական կայսրության վախճանը» (1897), Օ. Բարդենհեուերի (O. Bardenhewer) «Պատմություն հին եկեղեցական գրականության» (1913–32), Ա. Ալթաների, Ա. Սթուիբերի (A. Altaner, A. Stuiber) «Հայրաբանություն. եկեղեցու հայրերի կյանքը, մատենագրությունը և վարդապետությունը» (1978), Ա. Բաումստարկի (A. Baumstark) «Արևելքի քրիստոնեական գրականություն» (1911), Հ. Բեքի (H. Beck) «Եկեղեցին և աստվածաբանական գրականությունը Բյուզանդական կայսրությունում» (1959), Ա. Փուշի (A. Puech) «Հույն քրիստոնեական գրականության պատմություն» (1928–30), Ջ. Քուասթենի (J. Quasten) «Հայրաբանություն», հ. 1–3, 1950–60), Ս. Պապադոպուլոսի (Σ. *Παπαδόπουλος*) «Հայրաբանություն» (1977–80), Պ. Խրիստուի (Π. *Χρήστου*) «Հունական հայրաբանություն» (1976–92) և այլոց աշխատությունները:

ՀԱՅՐԱՊԵՏ. Հայ իրականության մեջ այդ բնույթի գործերից են Գ. Զարբհանալյանի «Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմեացւոց և հայոց եկեղեցւոյ...» (1856), «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» (1889), Եղնիկ ծ. վրդ. Պետրոսյանի «Հայրաբանություն» (մաս 1, Ս. Էջմիածին, 1996) աշխատությունները:

Հ-յան մեջ առանձին ենթամաս է կազմում եկեղեցու հայրերի և ուսուցիչների աստվածաբան. ժառանգության հրատարակումը: XVI–XVII դդ. եվրոպ. լեզուներով տպագրվել են հայրախոս. բնագրեր, կատարվել թարգմանություններ: Հայրախոսական հավաքածուներ են հրատարակել Ֆ. Կոմբեֆիսը (F. Combefis, 1605–79), Բ. Մոնֆոկոնը (B. Montfaucon, 1655–1741), Էդ. Մարտենը (Marténe, 1654–1739), Լ. Մուրատորին (L. Muratori, 1672–1750), Ժ. Փիթրան (J. Pitra, 1812–89) և ուր.: Հ-յան բնագրերի հրատարակման մի անանախադեպ ծրագիր է կյանքի կոչել Ժակ-Պոլ Միյնը (J.-P. Migne, 1800–75): Նրա ջանքերով լույս են ընծայվել եկեղեցու հայրերի, ուսուցիչների և մատենագիրների աստվածաբան. ժառանգությունն ի մի բերող 382 մեծադիր հատորներ՝ «Հայրաբանական լիակատար ճեռնարկ» (“Patrologia cursus completus”) խորագրով: Լատին հայրերի ժառանգությունը (Series Latina) հրատարակվել է (1824–55) 221 հատորով՝ Փիթրայի գործուն մասնակցությամբ: Այն ընդգրկում է Տերտուղիանոսից (II–III դդ.) և Կիպրիանոսից (200–258) սկսած մինչև Իննոկենտիոս Գ պապը (1188–1216) ընկած եկեղեց. մատենագրությունը: Հույն հայրերի վաստակը (Series Graeca) հրատարակվել է (1857–66) 161 հատորով և ընդգրկում է մինչև Ֆլորենցիայի 1439-ի ժողովը, Բյուզանդիայի անկումը (1453): Դրա համառոտ տարբերակը 85 հատորով բովանդակում է բնագրերի միայն լատ. թարգմանությունը (հրտ. 1856–1861): Միյնի հրատարակած հայրախոսական այս շարքերը (PG, PL) հայրաբան. հետազոտությունների հիմն. աղբյուրն են:

Հայրախոս. բնագրերը շարունակվում են հրապարակվել նաև մասնավոր շարքերում: 1903-ից Փարիզում լույս է տեսնում «Արևելյան հայրաբանություն» (“Patrologia Orientalis”) շարքը, որտեղ զետեղված են ասոր., ղպտ., հայ., արաբ., վրաց., եթիոպ. բնագրեր (առ այսօր հրտ.՝ 400 հատոր): Գիտ. շրջանակներում նույնքան լայն համարում ունի «Քրիստոնեական մարմին» (“Corpus christianorum”) շարքն իր ենթաշարքերով [“Continuato medievalis” (Turnhout, 1969-ից՝ հրտ. 127 հատոր, շարունակվում է), Series Latina (1954-ից՝ 176 հատոր, շար.), Series Graeca (1977-ից՝ 27 հատոր, շար.) ևն]: Հայրաբան. հրապարակումներում առավել գործնական բնույթ ունեն թարգման. շարքերը (ռուս., ֆրանս., անգլ. ևն): XVIII դ. հայերեն թարգմանությամբ հրապարակվում են եկեղեցու հայրերի և ուսուցիչների, մասնավորապես Հայ եկեղեցու «երկոտասան վարդապետաց» մատենագր. ժառանգությունը: Հայրախոս. բնագրեր են հրապարակվել և հրապարակվում «Գիրք և ճառք հոգեշահ արարեալ յուղղափառ և յաստվածաբան վարդապետաց» (Կ. Պոլիս, 1722) ժողովածուում, *«Բազմավեպ»*, *«Հանդես ամսօրյա»*, *«Ճառաքաղ»*, *«Արարատ»*, *«Էջմիածին»*, *«Գանձասար»* պարբ-ներում և այլուր: Հ-յան զարգացման գործում իրենց նպաստն են բերում մատենագիտ. աշխատությունները, որոնցից նշելի է “Clavis patrum graecorum” (Cura et studia M. Geerard, Turnhout, 1974–87) հինգ հատորով հրատարակությունը:

Հակոբ Քյոսեյան

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ, կաթողիկոսական պատվիրակություն, *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* հոգևոր վարչատարածքային միավոր:

XIX դ. վերջին, Համիդյան ջարդերից հետո (1894–96), երբ Արմ. Հայաստանից մեծ արտագաղթ է սկսվել դեպի Եվրոպա և ԱՄՆ, հայ համայնքները կազմակերպվել են երկու տարբեր ձևերով՝ մշակութային և եկեղեցական: Եվրոպայում, Հս. Ամերիկայում և Հվ. Ամերիկայում նորակառույց եկեղեցիները կազմակերպվել են իբրև ծխեր և ունեցել են իրենց ծխական խորհուրդները: Հատկապես Մեծ եղեռնից հետո, երբ ծխերի քանակը մեծացել է, Ամենայն Հայոց կաթողիկոսները նշանակել են պատվիրակներ, որպեսզի նրանք տեղերում ծխերից կազմեն հովվություններ, ապա՝ թեմեր և հիմնեն առաջնորդարաններ: Հայրապետ. պատվիրակին տրվել է առաջնորդի կարգավիճակ, և նա Հ. պ-յան գերակայության տակ գտնվող հայ համայնքներում ունեցել է փոխանորդներ:

Որոշ երկրներում Հ. պ-յան ձևից անցումը թեմական ձևին չի կայացել: Այնտեղ, որտեղ

հայ համայնքները կազմակերպված են եղել իբրև ազգ. փոքրամասնություն և ունեցել արդեն իսկ պետության կողմից ճանաչված որևէ վարչ. կառույց, եկեղեցու շուրջը ազգ. կյանքի վերակազմակերպում տեղի չի ունեցել: Այդպիսի համայնքներում համայնքային կազմակերպությունն իրեն վերապահել է եկեղեց. խորհուրդ ստեղծելու և այն նշանակելու նախաձեռնությունը:

XX դ. սկզբին Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու կոնդակով, նկատի ունենալով Եվրոպայում բազմացող հայ համայնքները, ստեղծվել է Եվրոպայի հայրապետ. պատվիրակությունը, որը երկրորդ համաշխ. պատերազմից հետո վերանվանվել է *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն*:

1980-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով ստեղծվել է *Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակությունը*:

1980-ին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի գերակայության տակ է անցել *Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակությունը*: Ներկայումս (2001) Հայաստանյայց առաքելական եկեղեցին ունի երեք Հ. պ.

ա. Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն, կենտրոնը՝ Փարիզ:

բ. Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակություն, կենտրոնը՝ Վիեննա:

գ. Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակություն, կենտրոնը՝ Կալկաթա և Սիդնեյ:

Շահե արք. Աճեմյան

ՀԱՅՐԱՎԱՆՔ, Հայր Հովհաննու վանք, Մարդաղավնյաց վանք, ՀՀ Գեղարքունիքի մարզի Այրիվան գյուղի հյուսիսարևելյան կողմում, Սևանա լճի առափնյա ապառաժուտ հրվանդանի վրա: Հ-ի Ս. Ստեփանոս եկեղեցին (IX դ.) ունի քառակոնք կենտրոնագմբեթ հորինվածք (հայկ. ճարտ-յան եզակի նմուշներից է. ներքուստ և արտաքուստ բոլորաձև խորաններով) և կառուցված է կոպտատաշ բազալտից, իսկ կամարները, ութանիստ թմբուկով գմբեթը՝ սրբատաշ տուֆից: 1211-ին եղբայրներ Հովհաննես և Ներսես վարդապետները նորոգել են եկեղեցին ու նրան արմ-ից կից երկայուն, երդիկավոր ութանիստ, չթաքարեզարդ գմբեթով գավիթ կառուցել: Հ. XIII դ. բազմաթիվ նվիրատվություններ է ստացել. 1211-ին Գեղարքունիք գավառի տեր, Զաքարյան իշխանների գործակից, սպարապետ Բուբայից՝ Առինջում այգի և Քանաքեռում՝ ջրաղաց, 1213-ին ոմն Համազասպից՝ այգի, Բեշքեն և Ինանիկ (Իվանե) Օրբելյան իշխաններից՝ Բերդ գյուղի հարկի մի մասը ևն:

Հ-ի պարսպապատ փոքրիկ բակում կան XVI դ. տապանաքարեր ու խաչքարեր, պարըսպից դուրս խցերի և տնտ. շենքերի ավերակներն են: Հ. գործել է մինչև XIX դ.: 1980-ական թթ. վանքը նորոգվել է, եկեղեցու գմբեթը՝ վերակառուցվել:

Հ-ի «Մարդաղավնյաց» անունը կապված է կաթողիկոս *Ղազար Ա Ջահկեցու* գրի առած մի ավանդության հետ, ըստ որի, 1381-ին՝ Լենկթեմուրի արշավանքի ժամանակ, Հ-ի վանահայր Հովհանը Քրիստոսի խաչափայտի մասունքով խաչի զորությամբ բռնակալի գերեվարած հազարավոր հայերի փոխակերպել է աղավնու և ազատ արձակել (խաչը հետագայում տեղափոխել են *Սևանավանք*):

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.7, 1-ին պատկերը:

Գրկ. Ղազար Ջահկեցի, Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, Վաղ-պատ, 1734: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի..., Վաղ-պատ, 1895: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 4, Ե., 1973:

Մուրադ Հասրաթյան

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱ», «Հանդէս ամսօրեայ», հայագիտական հանդես: Վիեննայի *Մխիթարյան միաբանության* պաշտոնական հրատարակություն: Լույս է տեսնում 1887-ից, Վիեննայում: Հիմնադիր՝ Ա. Այտընյան, խմբագիրներ՝ Ղ. Հովնանյան, Հ. *Տաշյան*, Գ. Գալեմքյարյան, Գ. Մենևիշյան, Վ. Մելքիսեդեկյան, Թ. Կետիկյան, Հ. Համբարյան, Ն. *Ակինյան*, Ա. Վարդանյան-Ճըլըզյան, Հ. *Ոսկյան*, Վ. Ինգլիզյան, Պ. Տեր-Պողոսյան, Օ. Սեքուլյան, Մ. Թո-

փալյան, Պ. Գոճանյան: Մինչև 1914-ը հրատարակվել է ամեն ամիս, ապա՝ անկանոն (երկամսյա, եռամսյա, վեցամսյա, ամենամյա), սակայն հակառակ արտաքին ու ներքին անհարմարությունների՝ շարունակել է իր գործունեությունը: Սկզբ. շրջանում հանրագիտ. բնույթի նյութեր է տպագրել իրավագիտության, բժշկության, մանկավարժության, արվեստի, բանասիրության, կրթադաստիարակչ. և այլ բնագավառներից:

1890-ական թթ-ից ակնհայտ է դարձել Հանդեսի հայագիտ. միտվածությունը, նրա շուրջ համախմբվել են հայ և այլազգի հայագետներ, մտավորականներ, գիտնականներ (Հ. Տաշյան, Կ. Բասմաջյան, Ա. Սարուխանյան, Լեո, Մ. Տեր-Մովսիսյան, Հ. Աճառյան, Ն. Ադոնց, Մ. Օրմանյան, Հ. Մանանդյան, Գ. Հովսեփյան, Մ. Աբեղյան, Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Ն. Մառ, Ա. Կարիեր, Ֆ. Մակլեր, Ֆ. Ֆեյդի և ուր.), ստեղծվել է գիտամշակութ. ուրույն մի դպրոց: Հայագիտության բազմաթիվ հարցեր ու բնագավառներ՝ հայոց պատմություն, հայոց գրական լեզուներ ու բարբառներ, բանահյուսություն, Հայ եկեղեցու մատենագրության պատմություն, ազգագրություն, ձեռագրագիտություն, հնագրություն ևն, եղել են «Հ. ա.»-ի մշտական հետաքրքրության և քննարկման առարկան: Մասնավորապես մեծ տեղ է հատկացվել միջնադարյան մատենագրությանը, հայրաբանությանը, հրատարակվել մինչ այդ անհայտ մնացած ինքնուրույն ու թարգման. բազմաթիվ բնագրեր, պատմիչների, տաղասացների երկեր, քննական ուսումնասիրություններ: Համակողմանիորեն ներկայացվել է հայ գաղթավայրերի պատմությունը՝ աղբյուրներով, դիվանական փաստաթղթերով ու արձանագրություններով, մշակութ. կյանքը («Եղիսաբեթուպոլսոյ հայք», «Հունգարիոյ եւ Դրանսիլվանիոյ ազգայինք», «Պարսկաստանի հայերը, նրանց անցեալը, ներկան», «Հոլանդան եւ հայերը», «Թիֆլիսի հայոց պանթէոններում»): «Հ. ա.»-ի ուսումնասիրությունների զգալի մասը հրատարակվել է առանձին գրքերով՝ Ազգային մատենադարան մատենաշարով (240 հատոր): Եվրոպ. հայագետների աշխատությունները տպագրվում են և՛ բնագրերի լեզուներով (գերմ., անգլ., ֆրանս.), և՛ թարգմանաբար: «Հ. ա.»-ի միջոցով են այլազգի հայագետները ծանոթանում հայ գիտնականների աշխատություններին:

Հանդեսի էջերում զգալի տեղ է հատկացվում ձեռագիր հավաքածուների (Վիեննայի, Մյունխենի, Վատիկանի, Կարինի, Կեսարիայի, Կրակովի, Լվովի, Նոր Ջուղայի, Էջմիածնի ևն) նկարագրությանը: Դրանք 1976-ին հրատարակվել են նաև առանձին հատորով՝ «Ցուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայ»: Հայ բարբառագիտության համար արժեքավոր ներդրում է Հանդեսում տպագրված Ակնի, Արաբկիրի, Մարաշի, Եվդոկիայի գավառաբարբառների ուսումնասիրությունը: «Հ. ա.»-ի էջերում առաջին անգամ փորձ է արվել գրել հայ մամուլի պատմություն [Գ. Գալեմքյարյանի «Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը (1794–1860)»], կազմվել են մատենագիտություններ: «Հ. ա.» ունեցել է Հանդեսի և ազգ. հոբելյաններին՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության 100 և «Հ.ա.»-ի հրատարակության 25, 40, 50, 75-ամյակներին, հայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակին, Աստվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակին, Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյակին նվիրված բացառիկներ:

Կարինե Ավետյան

ՀԱՆԴԵՐՁ եկեղեցական, տես *Զգեստ* եկեղեցական:

ՀԱՌԻՃԱՎԱՆՔ, ՀՀ Շիրակի մարզի Հառիճ գյուղում, Արագածի հյուսիսային լանջին, երկու ձորակներով գոյացող հրվանդանի վրա: Կառուցվել է VII–XIII դդ.: Հնագույն հիշատակությունը պատմիչ Մխիթար Անեցունն է (XIII դ.): Հ. ավերվել է XI դ.՝ սելջուկների արշավանքների ժամանակ: Վանքի առաջնորդ Աբասի որդի Գրիգորը (XIII դ.) վերականգնել է այն (գերեզմանատանը պահպանվել է Գրիգորի տապանաքարը): Զաքարե ամիրսպասալարը (Զաքարե Բ Մեծ Երկայնաբազուկ), գնելով Հառիճ գյուղը և շրջակա հողերը, ձեռնարկել է վանքի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը, որը, ըստ շին. արձանագրության, ավարտվել է 1201-ին: Զաքարե ամիրսպասալարը զարդարել է եկեղեցին սպասքով ու մասունքներով, կատարել բազմաթիվ նվիրատվություններ: Նույն արձանագրության մեջ խոսվում է նաև վանքի պարսպի շինարարության մասին, որից մի փոքր հատված՝ կամարակապ մուտքով, պահպանվել է վանքի արլ. մասում: Հ-ի կառույցների բազմաթիվ վիմագիր արձանագրությունները

ները վանքին վերաբերող տեղեկություններ են հաղորդում մինչև XIV դ.: Վրաց Հերակլ II թագավորը XVIII դ. Ղահրիման անունով ոմն պարսիկի պարգևել է Վերին Շիրակը: Սա բնակություն է հաստատել Արթիկ գյուղում և Հ-ի եկեղեցիների վրա պաշտպան. աշտարակներ կառուցել: 1795-ին Աղա Մահմեդ խանը ներխուժել է Հայաստան և, պարտության մատնելով Ղահրիմանին, ավերել Հ-ի պարիսպներն ու Ս. Հարություն եկեղեցին: 1830-ին, ռուս-թուրք. պատերազմի ավարտից հետո, Կարսի առաջնորդ Ստեփանոս արք. Խաժակյանը հաստատվել է Հ-ում և մինչև 1841-ը եղել վանքի առաջնորդը: Նա նորոգել և բարեկարգել է վանքը, կառուցել նոր սենյակներ և տնտեսատուն:

Հ-ի հնագույն կառույցը կենտրոնագմբեթ խաչաձև Ս. Գրիգոր եկեղեցին է, որը VII դ. բնորոշ «մաստարայատիպ» շինություն է: Հվ-արլ-ից ունի քառանկյուն հատակագծով ավանդատուն: Երկրորդ ավանդատունը Ս. Գրիգոր եկեղեցուն կցվել է հվ-արմ-ից: Նրա վրա XIII դ. մատուռ է կառուցվել: Եկեղեցու գմբեթը սկզբնապես եղել է կղմինդրածածկ, իսկ 1863-ին վերակառուցվել է քարով՝ կիսագնդի ձևով (այժմ ունի բրգաձև վեղար): XII–XIII դդ. Ս. Գրիգոր եկեղեցուն արմ-ից կցվել է գավիթ, որը չի պահպանվել: Հ-ի Ս. Աստվածածին եկեղեցին կրկնում է XI–XII դդ. Հայաստանում տարածված գմբեթավոր դահլիճի տիպը այն տարբերությամբ, որ արմ. կողմի երկրորդ հարկի ավանդատներն այստեղ փոխարինված են հայկ. ճարտ-յան եզակի եռակամար բացվածքներով այնուհետև հարդ օթյակներով, որոնք շինությանը տալիս են պալատային տեսք: Եկեղեցին աչքի է ընկնում կառուցող. բարձր արվեստով, քարի երանգների հմուտ օգտագործմամբ, արտաքին ճակատների «հայկ. խորշերով» մշակումով: Ուշագրավ է արլ. ճակատի հարդարանքը՝ Զաքարե և Իվանե Զաքարյան իշխանների կոթորական քանդակով: Ս. Աստվածածին եկեղեցուն կից XIII դ. առաջին քառորդում իշխան Վահրամ Հեճուպը կառուցել է գավիթ (քառասյուն տիպի) և վանքի ջրմուղը: Հ-ի դպրատունը (XIII դ.) տեղադրված է Ս. Գրիգոր եկեղեցուց հս-արլ. (պահպանվել է հս-արմ. մի փոքր հատված): Դպրատնից հվ-արմ., անմատչելի, մենավոր ժայռի վրա գտնվում է «ճգնավորի մատուռը»: Վանքը հս-ից և արլ-ից պաշտպանված է պարսպով, իսկ արմ-ից և հվ-ից՝ ձորերով: Հ-ի տարածքից դուրս՝ գերեզմանատանը, գտնվում են Ս. Հարություն եկեղեցու (1201–1216) ավերակները:

Հ. միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոններից էր, վանքի դպրոցը գործել է VII դարից: Պահպանված ձեռագիր մատյանները վկայում են, որ Հ. եղել է նաև գրչության կենտրոն: Հայտնի է հնագույն մի ձեռագիր Ավետարան, որը 1209-ին լրացրել, ծաղկել և կազմել է Մարգարեն, և որից միայն մի թերթ է հասել մեզ՝ հիշատակարանի մասից: Հաջորդ ձեռագիրը 1219-ից է՝ գրված Գրիգորի առաջնորդության ժամանակ, երբ գրչության արվեստը բարգավաճել է Հ-ի դպրոցում: Նկարները կապվում են հնագույն Ավետարանների հետ (Մատենադարան, ձեռ. № 1382): Հետագա դարերից հիշվում են այստեղ նորոգված ձեռագրեր:

1850-ին Գյումրիում մի խումբ երիտասարդ հայրենասերների նախաձեռնությամբ ստեղծվել է «Հառիճի վանական ընկերություն» («Հառիճավանքի ընկերություն») մշակութային-կրթ. կազմակերպությունը, որի նպատակն էր վերականգնել Հ-ի երբեմնի կրոնամշակութ. դերը, նորոգել շինությունները: Ընկերությանն անդամակցել են ժամանակի նշանավոր մտավորականները, ճանաչված անձինք, այդ թվում՝ Ավետիք Իսահակյանի ծնողները: Ընկերության նախագահ Հովսեփ Կոստանյանի անմիջական ղեկավարությամբ սկսվել են մեծածավալ շին. աշխատանքներ: Վանական համալիրի, հատկապես Ս. Աստվածածին եկեղեցու նորոգումներն իրականացրել են գյումրեցի նշանավոր վարպետները (Թադևոս Անտիկյան և ուր.): 1856–57-ին ընկերության ջանքերով բացվել է Հառիճի կիսագիշերօթիկ ուսումնարանը, որը 1860-ին Հայոց կաթողիկոս *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու* կոնդակով վերանվանվել է «Հառիճի հոգևոր դպրոց»՝ հետագայում դառնալով Գևորգյան ճեմարանի նախապատրաստ. բաժանմունք: 1887–89-ին Հ-ի դպրոցում սովորել է Ավետիք Իսահակյանը: 1869-ին Հ-ում իր հանդիստն է անցկացրել Հայոց կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին*: Որոշվել է վանքի տարածքում կառուցել կաթողիկոս. ամառանոց: 1871-ին ավարտվել է Վեհարանի շենքի շինարարությունը, իսկ հաջորդ տարում Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին իջևանել է նորակառույց Վեհարանում: 1872-ին կառուցվել է նաև վանքի սեղանատունը, ավելի ուշ՝ տնտ. օժանդակ

չինություններ, հյուրասենյակներ, ընդարձակվել է վանքի տարածքը: Ընկերության նախագահ Հ. Կոստանյանի հիշատակը հավերժացնելու համար Ս. Գրիգոր եկեղեցուն կից 1886-ին կառուցվել է զանգակատուն, իսկ 1893-ին՝ ձորամիջի կամուրջը, որն ընկերության վերջին չին. ձեռնարկումն էր: 1915-ից դադարել է «Հառիճի վանական ընկերության» կրթ. և չին. բեղմնավոր գործունեությունը: Հ-ում կատարվում են չին. աշխատանքներ՝ համալիրը լրիվ վերականգնելու և գործող վանք դարձնելու նպատակով:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.7, 2–3-րդ պատկերները:

Գրկ. Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Ե., 1983: Մխիթարյանց Ա., Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ, Տփխիս, 1856: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը, Ալեքսանդրապոլ, 1909: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, 2, Ե., 1942, 1948: Ջալալյան Ա., Հառիճի հուշարձանախումբը (ճարտարապետական սրբագրումներ), ԼՀԳ, 1986, № 2: *Халпахчьян О., Архитектурные ансамбли Армении 8 в. до н.э. – 19 в. н.э., М., 1980.*

Ալեքսանդր Ջալալյան

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԴՈԼԱ (ծ. թ. անհտ – նահ. 1261), նոր վկա. Հայոց Արևելից Կողմանց գահերեց իշխան, Առանշահիկների տոհմից, Խաչենի մեծ իշխան Վախթանգ Բ Տանգիկի և Զաքարյան Սարգսի դուստր Խորիշահի որդին: Հասան-Ջալալյանների տոհմի հիմնադիրը: Կառուցել է *Գանձասարի վանքը*, նորոգել թաթարների արշավանքի ժամանակ ավերված *Կեչառիսի վանքը*: Հարկադրաբար ընդունել է մոնղոլ-թաթարների գերիշխանությունը և Արլ. Հայաստանը զերծ պահել ավերածություններից: Հայտնի էր որպես աստվածասեր, ողորմած, աղոթքների ու աղաչանքների մեջ ճգնող: Քրիստոսի նվիրյալը լինելու և խուլ ընդվզման համար Արղուն խանը նրան նեղել է հարկերով «առավել քան զկարն», կալանավորել, փայտ է դրել նրա պարանոցը և երկաթ՝ ոտքերին: Արղունը նրան իր հետ տարել է Ղազվին: Հ-Ջ. Դ-ի դուստրը՝ Ռուզուքանը, որը Զարմաղանի որդու կինն էր, դիմել է մեծ խան Հուլավուի կին Տողուս Խաթունին՝ խնդրելով ազատել իր հորը: Արղունն իմանալով այդ՝ գիշերով նահատակել է Հ-Ջ. Դ-ին, մարմինը հոդակոտոր անելով՝ գցել ջրհորը: Հ-Ջ. Դ-ի որդի Աթաբակը հոր մարմինը փոխադրել և թաղել է Գանձասարում՝ «ի գերեզմանս հարց իւրոց»: Ե՛վ սպանելիս, և՛ մասունքները տեղափոխելիս վրան պայծառ լույս է իջել:

Գրկ. Վարդան Պատմիչ, Պատմութիւն տիեզերական, Մ., 1861: Հայոց նոր վկաներ [ժող.], Վաղպատ, 1903, էջ 101–103: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, գլ. ԿԳ: Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Ե., 1975: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք (կազմ. Ռ. Մաթևոսյան), Ս. Էջմիածին, 1999:

Քնարիկ Տեր-Դավթյան

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ Բաղդասար, Բաղդասար մետրոպոլիտ [1.12. 1775, գ. Վանք (Արցախի Խաչեն գավառ) – 9.6.1854, Շուշի (ամփոփված է Գանձասարի վանքում)], եկեղեցական-հասարակական գործիչ: Սերել է Հասան-Ջալալյան իշխանական տոհմից. որդին էր Դանիել բեկի, եղբորորդին՝ Հովհաննես և Սարգիս Աղվանից կաթողիկոսների: Կրթությունն ստացել է Գանձասարում: Վանական կյանքի հակում ունենալով՝ փոքր հասակից աշխատել է *Գանձասարի վանքում*. եղել է սպասավոր, երգել ժամասացությունների ժամանակ: Հովհաննես կաթողիկոսի նահատակությունից (1786) հետո, Հ-Ջ. հոր և հորեղբոր՝ Սարգիս արքեպիսկոպոսի հետ փախել է վանքից, ապաստանել Գանձակում՝ Ջավադ խանի մոտ: Եկեղեց. թաքցրած գանձերը փրկելու համար Դանիելը հետ է եկել Գանձասար, բայց ընկնելով Իբրահիմ խանի ձեռքը՝ նահատակվել է 1791-ին: Հ-Ջ. և Սարգիս արքեպիսկոպոսը Գանձակում մնացել են վեց տարի: Այստեղ 1792-ին Սարգիս արքեպիսկոպոսը, Ջավադ խանի հրովարտակով, ձեռնադրվել է Աղվանից կաթողիկոս: 1796-ին Հ-Ջ. ստացել է սարկավագի աստիճան, 1798-ին Սարգիս կաթողիկոսը նրան ձեռնադրել է վարդապետ: Գանձակից նրանք անցել են Վրաստան, ապա հաստատվել Հաղպատի վանքում: 1808-ին Հ-Ջ. վերադարձել է Ղարաբաղ՝ հայրենի կալվածքները հետ վերցնելու և Գանձասարի վանքը շենացնելու նպատակով: Չորս տարվա ընթացքում նա նորոգել է ավերված վանքը, ի մի հավաքել ցրված միաբաններին և վանքապատկան գյուղերի բնակիչներին: Նրան հաջողվել է թուրք բեկերի ու աղաների ձեռքից հետ վերցնել նրանց յուրացրած վանքապատկան ու հայրենի կալվածքները: 1812-ին Սարգիս Հասան-Ջալալյանը վերադարձել է Գանձասար: 1815-ին Գանձասարի կաթողիկոսությունը վերացվել է, իսկ Սարգիս Հասան-Ջալալյանին

ընորհվել է մետրոպոլիտի աստիճան: Մետրոպոլիտությունն իրենց տոհմի ձեռքում պահելու մտայնությամբ՝ նա Հ-Ջ. վարդապետին ուղարկել է Էջմիածին, և 1820-ին *Եփրեմ Ա Զորագեղցի* կաթողիկոսը նրան ձեռնադրել է եպիսկոպոս:

Սարգիս մետրոպոլիտի մահից (1828) հետո, ժողովրդի և մելիքների խնդրանքով, Հ-Ջ. եպիսկոպոսը 1830-ին պաշտոնապես նշանակվել է մետրոպոլիտ՝ «բոլոր աղվանից հայոց»: Նրա ջանքերով Գանձասարի վանքին վերադարձվել են ավելի քան 60 գյուղ և կալվածքներ. ընդ որում, դրանց մի մասը Հասան-Ջալալյան տոհմի սեփականությունն էր, որը Բաղդասար մետրոպոլիտը նվիրաբերել է Գանձասարի վանքին: Նա հիմնել է նաև մանավոր դպրոց, հրավիրել հմուտ մանկավարժ, ճանաչված գիտնական Հովսեփ վրդ. Արցախեցուն (Տեր-Ավագյան) և ուր., կառուցել երկհարկանի առաջնորդարան, կարգավորել ճանապարհը, վերականգնել *Ամարասի վանքի* սեփականատիր. իրավունքները:

«*Պոլոժենիե*»-ի ընդունումից հետո *Հովհաննես Ը Կարբեցի* կաթողիկոսը Բաղդասար մետրոպոլիտին կանչել է Էջմիածին և հաստատել Ղարաբաղի թեմի առաջնորդ՝ պահպանելով մետրոպոլիտի կոչումը: 1837-ին նա տեղափոխվել է թեմի կենտրոն Շուշի՝ ծավալելով եռանդուն գործունեություն: Հետ է վերցրել պարսիկ բեկերի սեփականած ու հափշտակած մեծ ու ընդարձակ կալվածքները, 1843-ին կառուցել եռահարկ առաջնորդարան:

1837-ին Շուշիից վտարվել են Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» միսիոներները: Բաղդասար մետրոպոլիտը Շուշիի հայոց թեմական դպրոցի համար գնել է նրանց տպարանը: 1839-ին հրատարակել է *Եսայի Հասան-Ջալալյանի* Պատմությունը, թեև տպարանում հիմնականում տպագրվել են կրոնաեկեղեց. բնույթի երկեր: Շնորհիվ իր նվիրյալ գործունեության Բաղդասար մետրոպոլիտը մեծ ժողովրդականություն է վայելել: Կառուցել է տվել Շուշիից մինչև Քոլատակ գ. ձգվող Արցախի ամենաերկար մայրուղին, որը մինչև այժմ էլ ժողովուրդն անվանում է Բաղդասար մետրոպոլիտի ճանապարհ: 1839-ին ռուս. ցար Նիկոլայ I-ը նրան պարգևատրել է Ս. Աննայի առաջին աստիճանի թագազարդ շքանշանով:

Գրկ. Տեր-Հովհաննիսյան Գ., Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւնը, «Փորձ», 1880, № 5: Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1898–1913, Թ., 1914: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927, էջ 3705–3707:

Վալտեր Դիլոյան

«ՀԱՍԿ», կրոնական, կրթական, գրական և բանասիրական ամսագիր: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հրատարակություն: Լույս է տեսնում 1932-ից, Անթիլիասում (Լիբանան): Հիմնադիր խմբագիր՝ Բ. *Կյուլեսերյան*, խմբագիրներ՝ *Գարեգին Ա Հովսեփյան*, Գարեգին Բ Սարգիսյան (*Գարեգին Ա Սարգիսյան*), Ա. Թրթռյան, Վ. Բերբերյան: Տպագրում է կրոնագիտ., քարոզախոս., հայրախոս., պաշտոնական, արխիվ. նյութեր, կոնդակներ, միջեկեղեց. հարաբերությունների մասին հաղորդումներ, լուրեր կաթողիկոսարանից, քրիստ. դաստիարակության բաժանմունքից, դպրեվանքից, կիրակնօրյա դպրոցներից, թեմերից, հրապարակում գրական-բանասիր., ինչպես նաև մանրանկարչությանը, երաժշտությանը, պատմությանը նվիրված հոդվածներ, գրախոսականներ: Ամսագիրը զգալի տեղ է հատկացնում հայրենասիր. և քրիստ. դաստիարակությանը:

1948-ից լույս է տեսնում «Հասկ» հայագիտ. տարեգիրքը (երկարատև ընդհատումներով): Հիմնադիրն է Գարեգին Ա Հովսեփյանը: Հրատարակվել է ութ գիրք (7–8-րդը՝ 1997-ին): Տարեգիրքը նվիրված է Հայոց պատմության, Հայ եկեղեցու պատմության, մատենագրության, հնագիտության, արվեստի հարցերին: Եկեղեց. նյութերի շարքում տպագրվում են պատմությանը, քույր եկեղեցիների հետ հարաբերություններին, արխիվ. թեմաներին վերաբերող հոդվածներ, աղոթքներ, շարականներ, Ավետարանների ձեռագրեր, գրախոսականներ: Պատմության նյութերի շարքի հոդվածները վերաբերում են Մեծ եղեռնին, ազգագրությանը, գաղթավայրերին, դիցաբանությանը: Գրական նյութերի շարքում ընդգրկվում են մամուլին, գրականագիտությանը, ձեռագրերին, լեզվաբանությանը, դավառաբարբառներին վերաբերող հոդվածներ: Արվեստի նյութերի շարքը երաժշտության, ձայնագրությունների, դրամագիտության, արվեստագետների՝ մանրանկարիչների, նկարիչների, գրիչների, ծաղկողների մասին է: Տարեգրքում լույս են տեսնում նաև անգլ. հոդվածներ: Հոդվածները հեղինակել են Հ. Թոփչյանը, Գնել ծայրագույն վարդապետը, Ս. Մրսբը-

յանը, Ա. Թրթռյանը, Հ. Արմենը, Ե. Քասունին, Լ. Վարդանը, Հայր Լուի Մարիեսը, Գ. Աճեմյանը, Ա. Տեր-Խաչատրյանը, Ս. Մալխասյանցը և ուրիշներ:

ՀԱՍՈՒՅԹ ԵԿԵՂԵՑՈՒ, հանուն եկեղեցու ընծայված նվիրատվություն, ինչպես նաև տուրքերից, եկեղեցուն տրվող հարկերից և եկեղեցական գանձումներից ստացված եկամուտ: Հնագույն ժամանակներից ի վեր եկեղեցին ունեցել է անշարժ և շարժական կալվածքներ, որոնք, ըստ համապատասխան երկրների օրենսդրության, տնօրինել են եկեղեց. իշխանությունները: Ստացված եկամուտներն օգտագործվել են եկեղեցու և նրա հովանու տակ գտնվող ազգ., կրթ. և մշակութ. հաստատությունների կարիքների համար: Եկեղեցու հասույթ են ս. Պատարագի ժամանակ հավատացյալների կամավոր նվիրատվությունները, եկեղեցում տեղադրված գանձանակներում հավաքվող գումարները, մոմավաճառությունը, մկրտության, պսակի, հուղարկավորության, հոգեհանգստյան, հիշատակների պատարագի մատուցման և այլ խորհրդակատարություններից ստացված նվերները, նպատակային աշխատանքների կատարման համար ազգ. բարերարների նվիրատվությունները ևն: Եկեղեց. հասույթ են նաև կաթողիկոս. և առաջնորդ. տուրքերը, Մայր աթոռից հայկ. գաղթավայրեր և թեմեր ուղարկված կաթողիկոսի ներկայացուցիչների՝ *նվիրակների* հավաքած նվիրատվությունները (դրամ, թանկարժեք զարդեր, գույք ևն): Հնում վանքերն ունեցել են հատուկ հասույթ, որն ստացվել է գյուղացիներից և կոչվել պղի:

Ըստ Աստվածաշնչի, եկամտի կամ շահի ստացվածքի տասներորդ մասը ընծայվել է Աստծուն և կոչվել տասանորդ. «Հողի բերքի, ծառերի պտուղների մեկ տասներորդ մասը Տիրոջն է պատկանում: Դրանք Տիրոջն են նվիրաբերվում... Տասը արջառից ու ոչխարից մեկը, ինչպես և հովվի գավազանի տակով անցնող տասը անասունից մեկը պատկանում են Տիրոջը» (Ղևտ. **27.**30–32, տես նաև Թվեր **18.**21–24, Բ Օր. **14.**28–29, հմմտ. Մատթ. **23.**23, Ղուկ. **18.**12):

Հայոց կանոնագրքում տասանորդը հիշված է եկեղեց. պղի, ինչպես նաև տոկոսի (վաշխ) առումով: Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ տասանորդ գանձվել է հողից, բերքից, ռազմագերիներից, ավարից: Ի տարբերություն ջրովի հողերից վերցված հարկի (հնգեկ՝ բերքի հինգերորդ մասը), տասանորդ գանձվել է նաև անջրդի հողերից:

Բագրատունյաց թագավորությունում և Զաքարյան իշխանություններում տասանորդ գանձվել է նաև ձկնորսությունից, արհեստավորների ու վաճառականների եկամուտներից ևն:

Գրկ. Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 2, Ե., 1971: Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Ե., 1975: Մանանդյան Հ., Երկ., հ. 4, Ե., 1981:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՀԱՎԱՏ, հավատք, աստվածային գլխավոր *առաքինություն*, *Սուրբ Հոգով* մարդու մեջ հաստատված վկայություն՝ *Հիսուս Քրիստոսի* Աստվածության հանդեպ: Հովհաննես առաքյալը նրան է համարում ճշմարիտ հավատացյալ, ով *Աստծուց* վերստին ծնված լինելով «...հավատում է, թե Հիսուսն է Քրիստոսը» (Ա Հովհ. **5.**1), այսինքն՝ ով ընդունում է, որ Հիսուսն է Աստծուց եկած Օծյալը:

Պողոս առաքյալը Հ. անվանում է «...հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում...» (Եբր. **11.**1): Նաև ավելացնում է. «Հավատո՛վ ենք իմանում, որ աշխարհներն ստեղծվել են Աստծու խոսքով՝ անտեսանելի բաներից տեսանելիներ դառնալով» (Եբր. **11.**3): Հ. ասելով, ինչպես և նույն թղթում պարզաբանում է Պողոս առաքյալը, պետք է հասկանալ առ Աստված ունեցած մարդու Հ., որը հավաստի է դառնում միայն Աստծո Հոգով, քանի որ Աստծուն կարելի է միայն Աստծո միջոցով հավատալ: Մինչև մարդեղացյալ Հիսուս Քրիստոսի հայտնվելը երկրի վրա, նախնիների մեջ Հ. առ Աստված գործել է Աստծո Հոգու ներգործումով: Հ-ով, վստահությամբ են ընթացել ու գործել Աբելը, Ենոքը, *Նոյը*, հավատքի հայր Աբրահամը, մյուս նախահայրերը, Մովսեսը, Գեդեոնը, Դավիթը, Սամուելը, Եղիան և մյուս մարգարեները: Պողոս առաքյալը սուրբ Հ-ի օրինակներ բերելուց հետո եզրակացնում է, որ ճշմարիտ, աստվածային Հ-ի առաջնորդը Հիսուսն է. «...նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ դրված ուրախության համար հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու աթոռի աջ կողմում» (Եբր. **12.**2):

Հ. մարդ էակին անհրաժեշտ է Աստծո առջև արդարանալու համար, որովհետև Աստված

հաճենում է մարդուն փրկել *սատանայի* որոգայթներից ա՛յն դեպքում, երբ նա արդարանում է Աստծո Որդու նկատմամբ տածած Հ-ով, այսինքն՝ երբ վկայում է, թե իսկապես Հիսուսն է Աստծո Որդին: Պողոս առաքյալը գրում է. «... եթե քո բերանով Հիսուսին Տեր խոստովանես և քո սրտում հավատաս, թե Աստված նրան հարություն տվեց մեռելներից, կփրկվես. քանի որ արդարանալու համար սրտով եք հավատում և փրկության համար խոստովանում բերանով» (Հռոմ. **10**.9–10): Առաքյալն Աբրահամի վերաբերմամբ ևս հավաստում է, թե նրա հավատը իրեն՝ Աբրահամին «որպես արդարություն համարվեց» (Հռոմ. **4**.22), միտք, որը կանխապես ասված էր դեռևս Ամբակումի մարգարեությունում՝ «Արդարև արդարը հավատքով կապրի...» (Ամբ. **2**.5):

Նոր կտակարանում Հիսուս Քրիստոսի փրկչական գործունեությունը մշտապես ուղեկցվում է Հ-ով. արդարացնելու համար Հիսուսը Հ-ի դրավական է պահանջում բոլոր նեղյալներից, կապյալներից, ախտավորներից և բուժման ու մեղքերի արձակման կարիքն ունեցողներից: Հ-ի դրսևորման դեպքում դրան հաջորդում է փրկությունը (հոգևոր և մարմնավոր բժշկումներ, մահացածի հառնում ևն), որը տրվում է մարդեղացյալ Որդու կողմից. սատանայի կապանքով կապվածներն արձակվում են, խուլերը՝ լսում, կաղերը՝ քայլում, կույրերը՝ տեսնում, և ողջ աշխարհին քարոզվում է արքայության *Ավետարանը*: Հ-ի դրսևորման բազում օրինակներ են նշվում Ավետարաններում:

Հ. ինքնին աստվածային *շնորհ* լինելով՝ աստվածային շնորհների աղբյուր է, զենք՝ փորձիչի հարուցած փորձությունների դեմ: Հ. մեռած է, եթե այն հանգում է միայն դավան. բանաձևերի և չի զարդարվում *աղոթքով*, սիրով, բարի գործերով, *ողորմությամբ* և մյուս առաքինություններով. «Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակոբոս **2**.26):

Քրիստոնյան հավատում է բարձրյալ Հայր Աստծուն, նրանից անժամանակապես ծնված Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Սուրբ *Երրորդությանը*, Ավետարանին, ավետարան. բոլոր ճշմարտություններին, սուրբ *եկեղեցուն*, սրբազան *ավանդությանը*, եկեղեցու խորհուրդներին: Այսպես, Սուրբ Երրորդության երեք Անձերի մեկ էությունը և մեկ աստվածությունը, դավան. անճառելի ճշմարտությունները «խորհուրդ խորին» են, անքննելի և ընկալելի միայն Հ-ով, կամ մկրտության ժամանակ մկրտվողի վերստին ծնունդով Աստծո որդեգիր դառնալը, ապաշխարության ընթացքում ապաշխարողին մեղքերից արձակումը, ձեռնադրությամբ կատարված շնորհաբաշխումը ևն, թեև անտեսանելի են աչքերով, սակայն ընկալվում են Հ-ով և Հ-ի միջոցով դառնում իմանալի ու զգալի:

Ըստ *Գրիգոր Տաթևացու*՝ Հ. աստվածային երեք առաքինություններից մեկն է՝ հույսի և սիրո հետ միասին և, ըստ միջնադարյան մարդաբանական պատկերացումների, պատկանում է մարդու բանական մասին, ինչպես հույսը՝ ցասմնականին և սերը՝ ցանկականին: Ըստ երրորդաբանական պատկանելության՝ Հ. համապատասխանում է Հայր Աստծուն, հույսը՝ Որդուն, սերը՝ Սուրբ Հոգուն (Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, 1995, էջ 248):

Լևոն Սարգսյան

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ, Հավատամք, քրիստոնեական *հավատի* խտացված բանաձևումը: Հավատացյալը, մասնավորաբար՝ մկրտվելու կոչված հավատացյալը, արտասանում է այն՝ իբրև իր հավատի խոստովանություն: «Հանգանակ» բառը՝ կցված «հավատին», նշանակում է, որ այն անհատական դավանություն չէ, այլ հավաքական: «Հանգանակ» բառի հնագույն բացատրությանը հանդիպում ենք Հռուփինոսի (մահ. 410) մի գրության մեջ, որը կոչվում է Commentarium in Symbolum Apostolorum (Մեկնություն առաքյալների հանգանակի): Հայ հին թարգմանիչները հուն. *σύμβολον* բառը, որը համապատասխանում է լատ. Symbolum-ին, թարգմանել են «հանգանակ»: Արևմտյան եկեղեցիների հայրերի մոտ տարածված էր այն ավանդությունը, թե Հ. հ-ի հեղինակներն են Հիսուսի տասներկու *առաքյալները*:

Դարեր շարունակ քրիստոնյա եկեղեցիներում մեծ հեղինակություն է վայելել Առաքելական հանգանակը: Նկատի ունենալով, որ նրա հեղինակները Քրիստոսի առաքյալներն են, այդ հանգանակի դավան. բանաձևումներն անվիճելի են համարվել: Առաքելական հանգանակն ընդունվել է իբրև Նոր կտակարանի բովանդակած քրիստ. կրոնի հավատալիքների ամփոփում, որը եկեղեցին ժառանգել է իր հիմնադիրներից: Առաքելական հանգանակի հնագույն բացատրությունը տվել է Հռուփինոսը: Նա

նկարագրում է, թե ինչպես են առաքյալները խմբագրել հանգանակը, և այն ներկայացնում է որպես առաքյալների ժամանակներից հասած ավանդություն:

Առաքելական հանգանակի կազմության մասնամասն պատմությունը տրված է Օգոստինոսին վերագրված ճառերից մեկում՝ «Հանգանակի մասին» վերնագրով: Այստեղ տրվում է, թե առաքյալներից յուրաքանչյուրն ինչ է ասել, և ըստ այդմ՝ հանգանակի բանաձևումներից ամեն մեկը վերագրվում է որևէ առաքյալի:

Միջին դարերում Արևմտյան քրիստ. եկեղեցին ամբողջապես ընդունել է հանգանակի առաքելական ծագումը, իբրև հավաքական խմբագրություն՝ կատարված *Սուրբ Հոգու* ներշնչումով:

Նույնը չէր կացությունը բյուզ. և Արևելյան եկեղեցիների պարագայում: Ֆլորենցիայի եկեղեց. ժողովում (1439) Եփեսոսի մետրոպոլիտ Մարկոս Եվկենիգոսը առարկել է ավանդական մոտեցման դեմ՝ պնդելով, թե առաքյալները եթե իրապես խմբագրած լինեին Հ. Հ., ապա դա անպայման կհիշվեր Գործք առաքելոցում, *Հոգեգալուստի* պատմությունից հետո: Այս առարկությունից հետո Արևմուտքի եկեղեցիները չեն պաշտպանել դարավոր այդ ավանդությունը և հանգանակը դիտել են իբրև II դ. խմբագրված դավանաբան. մի բացատրություն՝ նորադարձների հավատն ամրապնդելու համար:

Երկրորդ Հ. Հ., որը ցայսօր ընդունում է Արևմտյան եկեղեցին իբրև *Նիկիայի Ա տիեզերական ժողովի* (325) կատարած խմբագրություն, հետևյալն է.

«Հաւատամք ի մի Աստուած, Հայր ամենակալ, Արարիչ ամենայնի, երեւելեաց եւ անտեսութիւնից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ծնեալ ի Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած, համադոյակից Հօր, որով եղեւ ամենայն, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ եւ եղեալ մարդ, չարչարեցաւ եւ յարեաւ յաւուր երրորդի, համբարձաւ յերկինս: Գալոց է ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Եւ ի Սուրբ Հոգին: Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր եւ թէ յառաջ քան զծնունդն ոչ էր, կամ յոչէից եղեւ եւ կամ ասեն յայլ էութենէ կամ գոյացութենէ է Որդին Աստուծոյ կամ թէ փոփոխելի է կամ այլայլելի, զայսպիսիսն նզովէ կաթուղիկէ եւ առաքելական Եկեղեցի»:

Նիկիայի տիեզերաժողովի կանոններում չկա Նիկիայի Հ. Հ. անունով ծանոթ այս բնագիրը: Անկարևոր մանր տարբերակներով այն գտնում ենք *Եփեսոսի Գ տիեզերական ժողովի* և *Քաղկեդոնի ժողովի* արձանագրություններում, ինչպես նաև՝ Կեսարիայի եկեղեցուն հասցեագրված *Եվսեբիոս Կեսարացու*, Հովբիանոս կայսրին ուղղված՝ *Աթանաս Ալեքսանդրացու* թղթերում, Թեոդորետի և Սոկրատեսի եկեղեցական պատմությունների մեջ ևն:

Նիկիայի հանգանակում ընդգրկված «Համագոյակից Հօր» և «ծնեալ ի Հօրէ» բացատրությունները տեղիք են տվել բազմաթիվ քննադատություններ, որոնցից հիմնականը այդ բացատրությունների անհամապատասխանությունն էր ավետարանական բառապաշարին:

Արևմուտքն ընդունել է երկու բանաձևերը, սակայն առանց վստահ լինելու, թե Նիկիայի հավատամքը գործածվել է *Մկրտության* ժամանակ, իբրև հավատո դավանանքի պարտադիր բանաձև: *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովը* (381) որոշ հավելումներ է արել Նիկիայի հանգանակի վրա: Հռոմի կաթոլիկ եկեղեցին և բողոքական եկեղեցիները կանոնացրել և մինչև այսօր արտասանում են Նիկիա-Կոստանդնուպոլսի կոչված հանգանակը, որտեղ նույնությամբ պահված են երկու բնորոշումները՝ «Համագոյակից Հօր» և «ծնեալ ի Հօրէ».

«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անտեսութիւնից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ, միածին՝ ծնեալն ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս:

Լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարիտէ, ծնունդ եւ ոչ արարած: Համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղեւ: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով եւ մարդացաւ, խաչեցաւ վասն մեր ընդ Պոնտոս Պիղատոսի: Վասն մեր մեռեալ եւ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ըստ գրոց, ելեալ ի յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է փառօք ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, եւ թագաւորութեան նորա ոչ գոյ վախճան:

Եւ ի Սուրբ Հոգին, տէր եւ կենսատու, բղխեալ ի Հօրէ, որ ընդ Հօր եւ Որդւոյ պաշտեալ եւ փառաւորեալ, որ խօսեցաւ ի մարգարէս:

Եւ ի մի միայն յընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի: Հաւատամք ի մի մկրտութիւն, ի թողութիւն մեղաց: Ակն ունիմք ի յարութիւն մեռելոց եւ ի կեանսն յաւիտենականս»:

Ինչպես Նիկիայի, այնպես էլ Կոստանդնուպոլսի Հ. Հ. չկա 381-ի Կ. Պոլսի տիեզերաժողովի արձանագրության մեջ:

Այդ Հ. Հ. Կ.Պոլսի 680-ի ժողովի արձանագրության մեջ պահված բնագրի բառացի կրկնությունն է:

Նիկիայի և Կ. Պոլսի անունով հայտնի հանգանակները պահված են միայն Քաղկեդոնի ժողովի արձանագրությունում: Քաղկեդոնի ժողովի վկայության հիման վրա վերջին Հ. Հ. կոչվում է «Նիկիոյ-Կոստանդնուպոլսոյ հանգանակ»:

Արևմուտքում մեծ տարածում էր գտել այն ավանդությունը, թե Նիկիայի Հ. Հ. հիմնված է Առաքելական հանգանակի վրա, իսկ Կ. Պոլսի 381-ի ժողովին վերագրվածը՝ Նիկիայի Հ. Հ-ի վրա, և թե՝ Արևմուտքի գործածած այսօրվա բանաձևն այս վերջինն է, այսինքն՝ 381-ի Կ. Պոլսի ժողովի խմբագրածը:

Արդի հետազոտողները համաձայնաբար կարծում են, թե Արևմտյան եկեղեցիների Հ. Հ. ծագել է Հռոմում տարածված Մկրտության հին հանգանակից, և թե այն խմբագրվել է IV դ. և տարածվել միայն Արևմուտքում: Այդ տեսակետը փաստում է *Եպիփան Կիպրացին*: Կ. Պոլսի 381-ի ժողովից 7 տարի առաջ նա հիշատակում է մի Հ. Հ., որը գրեթե բառացի համապատասխանում է այդ ժողովին վերագրված հանգանակին:

Եպիփան Կիպրացին հիշատակում է երկու այլ հանգանակներ ևս: Դրանցից առաջինը համապատասխանում է Նիկիա-Կոստանդնուպոլսի հանգանակին, այսինքն՝ Արևմտյան եկեղեցու ավանդությանը: Ներկայացրած մյուս Հ. Հ. հետևյալն է.

«Հաւատամք ի մի Աստուած՝ Հայր ամենակալ արարիչ ամենայնի՝ երեւելեաց եւ անտեսանելեաց:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ, ծնեալն Աստուծոյ՝ Միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած Աստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ Աստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկնիս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ անտեսանելիք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, ծնաւ կատարելապէս, ի Մարիամայ սրբոյ կուսէն, յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ եւ մարդացաւ, որ է ասել եղեւ մարդ կատարեալ, առեալ հոգի, մարմին եւ միտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդն, բաց ի մեղաց, ոչ մարդկային սերմէ, ոչ ի մարդ բնակեալ այլ առեալ մարմին ինքեան ի մի էութիւն ոչ որպէս ներշնչեաց զմարգարէս, խօսեցեալ կամ աշխատեալ ի նոսա այլ եղեալ մարդ կատարեալ, յաղագս մարդկան առեալ մարմին ոչ կրեալ փոփոխութիւն իմն եւ աստուածային բնութիւնն ոչ փոխեալ ի մարդկային, այլ հրաւիրեալ զնա ի մի կատարելութիւն եւ մի աստուածութիւն: Զի կայ մի Տէր Յիսուս Քրիստոս եւ ոչ երկու, նոյնն՝ Աստուած, նոյնն՝ Տէր, նոյնն՝ թագաւոր: Զարչարեալ մարմնով եւ յարուցեալ եւ նովին մարմնովն համբարձեալ յերկինս եւ փառօք նստեալ ընդ աջմէ Հօր եւ գալոց է նովին մարմնով ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, որ խօսեցաւ յօրէնս, քարոզեաց ի մարգարէս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի Սուրբսն: Հաւատամք ի նա որպէս Սուրբ Հոգին Աստուծոյ, Հոգի կատարեալ, մխիթարիչ Սուրբ Հոգին, ոչ արարեալ, այլ բղխեալ ի Հօրէ եւ յՈրդւոյ ընկալեալ որում հաւատամք:

Հաւատամք եւ ի մի միայն յընդհանրական եւ առաքելական Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից, հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ոչ էր Որդին կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Ս. Հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ կամ զՍուրբ Հոգին եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ մայր մեր ամենեցուն՝ կաթուղիկէ եւ առաքելական Եկեղեցի»:

Այս հանգանակի ներածականում, իբրև աղբյուր, Եպիփան Կիպրացին հստակորեն հիշատակում է Երուսաղեմը և Նիկիայի տիեզերաժողովի «երեք հարյուր տասից ավելի» հայրերին, ինչը չի արել մյուս հանգանակների

պարագայում: Ավելին, Եպիփան Կիպրացին ներկայացնում է այս Հ. Հ. իբրև Մկրտության հանգանակ՝ տարածված 381-ի Կ. Պոլսի ժողովից առաջ:

Երուսաղեմի հին Հ. Հ. մեզ է հասել շնորհիվ Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետի (350-ին): Երուսաղեմի հին Հ. Հ. հետևյալն է.

«Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, արարիչ երկնի եւ երկրի, երեւելեաց եւ ամենայն անտեսանելեաց: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, միածինն, ծնեալ ի Հօրէ՝ Աստուած ճշմարիտ, յառաջ քան զյաւիտեանս, որով ամենայն ինչ եղեւ, մարմնացեալ եւ մարդացեալ, խաչեալ եւ թաղեալ, երրորդ աւուր յարուցեալ, եւ համբարձեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Հօր եւ գալոց է փառօք ի դատել զկենդանիս եւ զմեռեալս եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի: Եւ ի մի Սուրբ Հոգի՝ մխիթարիչն, որ խօսեցաւ ի մարգարէսն եւ ի մի մկրտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց եւ ի յարութիւն մարմնոյ եւ ի կեանս յաւիտենականս»:

Քրիստոնյա եկեղեցիների մեջ զարգացած և բանաձևված Հ. Հ-ները պատկանում են երկու ավանդությունների, որոնցից մեկը ձևավորվել է Հռոմում և, ընդհանրապես, Արևմուտքում, իսկ մյուս խումբը՝ Արևելյան եկեղեցիներում:

Հիմնական տարբերություններն են.

Արևմուտքի հանգանակների մեջ.

ա. Պիղատոսի հիշատակությունը՝ կապված Քրիստոսի խաչելության հետ:

բ. Սուրբ Գրոց հիշատակությունը՝ Քրիստոսի հարության մասին:

գ. Համագոյակից Հոր՝ նիկիական բացատրությունը:

դ. Սուրբ Հոգուն վերաբերող մասում եղած ակնարկությունը Հիսուսի մկրտության ընթացքի, Սուրբ Հոգու հայտնության մասին, ինչը չենք գտնում այլ հանգանակներում:

ե. Նույնն է պարագան Սուրբ Հոգու բնակության մասին՝ «ի սուրբսն»:

զ. Նզովքը պահված չէ Արևմտյան ավանդության մեջ, մինչդեռ խստիվ պահված է Արևելքի ավանդությունում:

Արևելյան ավանդությունը չունի առաջին երկուսը, իսկ «Համագոյակից» բառի փոխարեն ունի «ի բնութենէ Հօր»: Այս ավանդության ամենից հատկանշական տարբերությունը մյուսից՝ երեք անգամ շեշտված հավելումն է՝ «նովին մարմնով» բացատրության. նախ՝ Քրիստոսի համբարձման, ապա՝ Երկրորդ գալստյան և երրորդ՝ մեռելների հարության կապակցությամբ:

Հայ եկեղեցին հավատարմորեն հետևել է Արևելյան ավանդությանը՝ ընդունելով Երուսաղեմի հանգանակը: Հայ եկեղեցում կանոնացած հանգանակի և հին հանգանակների միջև եղած նմանություններն ավելի պարզ են երևում, երբ կարդում ենք այն իր ամբողջության մեջ.

«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անտեսանելեաց:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ, Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած Աստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարիտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկնիս եւ ի վերայ երկնի՝ երեւելիք եւ անտեսանելիք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնով եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս, ի Մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի Սուրբսն:

Հաւատամք եւ ի Մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստան յաւիտենից, հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն կամ յայլմէ էութենէն ասեն լինել զՈրդին Աստուծոյ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայսպիսիսն նզովէ Կաթուղիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի»:

Աշխարհաբար.

«Հավատում ենք մի Աստծու՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և անտեսանելիների Արարչին:

Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն՝ ծնված Հայր Աստծուց՝ միածին, այսինքն՝ Հոր էությունից: Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ՝ արարած: Նույն ինքը՝ Հոր բնությունից, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա՝ երևելիներ և անտեսանելիներ: Որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար, երկնքից իջնելով, մարմնացավ, մարդացավ, Սուրբ Հոգով կատարելապես ծնվեց սուրբ Կույս Մարիամից: Որով վերցրեց մարմինը, հոգին և միտքը և, ամենայն ինչ, որ ունի մարդ՝ ճշմարտապես և ոչ կարծյոք: Զարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով ելավ երկինք և նստեց Հոր աջ կողմում: Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, ում թագավորությունը վախճան չունի:

Հավատում ենք և Սուրբ Հոգուն՝ անեղին և կատարյալին, որ խոսեց Օրենքում, Մարգարեներում և Ավետարաններում: Որ իջավ Հորդանան, քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց սուրբերի մեջ:

Հավատում ենք նաև միայն Մի, Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու, մի մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության. մեռելների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին:

Իսկ ովքեր ասում են, թե կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ թե՝ ոչչից եղան, կամ ասում են՝ այլ էությունից են Աստծո Որդին և կամ Սուրբ Հոգին և թե փոփոխելի են կամ այլայլելի, այնպիսիններին նզովում է Կաթողիկե և Առաքելական Սուրբ Եկեղեցին»:

Հայ եկեղեցին, ինչպես մյուս բոլոր եկեղեցիները, հնուց ի վեր ունեցել է իր Հ. Հ., որը գործածում է ս. *Պատարագի* սկզբում: Նրա կանոնականացումը վերագրում է *Գրիգոր Ա Լուսավորչին*, որն ընդունել է այն Նիկիայի ժողովից և դրան հավելել իր խոստովանությունը. «Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ Միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Հայ եկեղեցին պահել է նաև մի շատ ավելի հին Հ. Հ., որ արտասանվում է Մկրտության խորհրդի սկզբում, «Հրաժարիմք»-ից հետո, երբ մկրտող քահանան, մկրտվողը և իրեն ընկերակցող բոլոր աղոթողները դառնում են դեպի Արևելք՝ ասելով. «Եւ ապա դառնամք ի լոյս աստուածագիտութեան».

«Հաւատամք յԱմենասուրբ Երրորդութիւնն, ի Հայր, եւ յՈրդի, եւ ի Սուրբ Հոգի: Զավետումն Գաբրիէլի, զԾնունդն Քրիստոսի. զՄկրտութիւնն, զՁարչարանս, զԽաչելութիւնն, զԹաղումն երեքօրեայ, զՅարութիւնն, զաստուածապէս Համբարձումն, զնստիլն ընդ աջմէ Հօր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ Գալուստն՝ խոստովանիմք եւ հաւատամք»:

Կանոնականացած Հ. Հ. նույնպես արտասանվում է Մկրտության ժամանակ, սակայն Ավետարանի ընթերցումից հետո, Սուրբ Խորանի դիմաց՝ վեր բարձրացնելով Ավետարանը: Նույն ձևով, այսինքն Ավետարանի ընթերցումից հետո և Ավետարանը բարձրացնելով՝ արտասանվում է կանոնացած նույն Հ. Հ., ս. Պատարագի սկզբում:

Հայ եկեղեցին ունի նաև մեկ այլ Հ. Հ., որն արտասանվում է գիշերային ժամից առաջ, առավոտյան *սաղմոսերգությունից* հետո, երբ պատարագիչը հրաժարվում է սատանայից, ինչպես մկրտվողը, և, դառնալով դեպի Արևելք, ասում է.

«Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած՝ անեղ, անծին եւ անսկիզբն, այլ եւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն Սրբոյ:

Հաւատամք զԲանն Աստուած, անեղ, ծնեալ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ոչ յետոյ եւ ոչ կրտսեր, այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին եւ Որդին՝ Որդի:

Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ, ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ. էակից Հօր և փառակից Որդւոյ:

Հաւատամք զԵրրորդութիւնն Սուրբ, մի բնութիւն, մի աստուածութիւն, ո՛չ երեք աստուածք, այլ՝ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երեւելեացս եւ անտեսանելեաց:

Հաւատամք յԵկեղեցի սուրբ՝ զթողութիւն մեղաց, հաղորդութեամբ սրբոց:

Հաւատամք զմին յերից անձանց զբանն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յաստուածածին կոյսն Մարիամ՝ առեալ յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն. ինն ամսեայ ժուժ-

կալեալ յարդանդի ա-
նարատ կուսին: Եւ ե-
ղեւ Աստուածն կատա-
րեալ՝ մարդ կատարեալ. հոգւով եւ մտօք եւ մարմնով. մի՛ անձն, մի՛ դէմ եւ միաւորեալ մի՛ բնութիւն: Աստուածն մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլայլութեան. անսերմն յղութիւն եւ անապական ծնունդ. որպէս ո՛չ է սկիզբն աստուածութեան նորա եւ ո՛չ վախճան մարդկութեան նորա (զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան):

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս շրջեալ ի վերայ երկրի: Յետ Լ (30) ամաց եկեալ ի մկրտութիւն: Հայր ի վերուստ վկայեալ՝ դա՛ է Որդի իմ սիրելի. եւ Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա: Փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա: Քարոզեալ մարդկան զփրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ եւ ծարաւեալ: Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ եւ մեռեալ մարմնով. եւ կենդանի Աստուածութեամբն: Մարմինն եղեալ ի գերեզմանի՝ միաւորեալ աստուածութեամբն. եւ հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս եւ ազատեալ զհոգիսն: Յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն:

Հաւատամք զտէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Հօր: Այլև գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան: Հաւատամք եւ զյատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական»:

Այս հանգամանակը պետք է արտասանի նաև ձեռնադրության ատիճանին արժանացողը՝ իր կատարած երդումից հետո:

Հայ եկեղեցու մեջ կանոնացած և պահպանված երեք հանգամանները դավանում են Աստծուն իբրև մեկ Աստված, ամենակալ Հայր, Արարիչ երկնի և երկրի, երևելիների և անտեսանելիների: Աստվածաշնչի առաջին տողում գործածված բայը «արար»-ն է, և Ծննդոց գրքի առաջին գլուխները նվիրված են Արարչագործությանը: Նույն հիման վրա հավատո բոլոր հանգամանակները՝ հնագույնները և մինչև այսօր գործածվածները, բոլոր եկեղեցիներում, Աստծուն որակում են «Արարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անտեսանելեաց»: Բացառություն է կազմում Հայ եկեղեցու Նոր Հ. Հ., որը սկսվում է՝ բնութագրելով Հայր Աստծո էությունը և ոչ թե գործը. «անեղ, անծին և անսկիզբ», հիմնվելով Նոր կտակարանի վրա, որտեղ Աստված հայտնվում է իր երեք Անձերով. առաջինը Հայրն է՝ «ծնող որդւոյ և բղխող Հոգւոյն Սրբոյ»:

Հայկ. Հ. Հ-ները դավանում են Հիսուս Քրիստոսին իբրև Բանն Աստված, Տեր, էությամբ նույն՝ Հոր Աստծո հետ, նույնպես Արարիչ ամենայնի, միածին, բայց ոչ արարած, որ ճշմարտապես և ոչ երևութապես առավ մարմին, հոգի և միտք, որպեսզի մարդկության փրկության համար չարչարվի, խաչվի և հարություն առնի: Երուսաղեմի հին Հ. Հ-ի հետևությամբ, Հայ եկեղեցու երեք հանգամանակները շեշտում են Հիսուսի մարմնով համբարձումը: Դավանում են Սուրբ Հոգին անեղ և կատարյալ, որ չունչն է Սուրբ Գրոց՝ օրենքի, մարգարեությունների և Ավետարանների, առաքյալների բերանով խոսողը և բնակիչը՝ տաճարացած սրբերի մեջ: Դավանում են Վերջին դատաստանը, երբ Հիսուսը դարձյալ պիտի գա «նովին մարմնով»՝ դատելու ողջ մարդկությանը: Այստեղ մեկ անգամ ևս շեշտվում է, թե դատաստանը պիտի ընդգրկի մարդն իր ամբողջության մեջ՝ հոգի և մարմին:

Հայ եկեղեցու հայրերը, սկսյալ Գրիգոր Ա Լուսավորչից, հատուկ շեշտել են Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների անքակտելի միությունը, որովհետև հավատացած են, թե մարդացյալ նույն Աստվածն է, որ ծնվեց Սուրբ Կույսից, նույն Քրիստոսն է, որ մկրտվեց, նույնը, որ քարոզեց և հրաշքներ գործեց, նույնը, որ չարչարվեց և խաչվեց, նույնը, որ հարություն առավ և երևաց իր աշակերտներին, և նույնը, որ վերստին պիտի գա նորոգելու ամբողջ արարչությունը, այն պարզ հասկացողությամբ, որ միայն Աստված կարող էր լինել Սուրբ Պատարագը, որ պիտի մատուցվեր մարդկանց փրկության համար:

Հայոց երրորդ Հ. Հ. շեշտում է հատկապես Քրիստոսի մարդկային և աստվածային բնությունների միության անքակտելիությունը՝ ավելացնելով. մեկ անձ, մեկ դեմք և միավորված մեկ բնություն: Աստված մարդացած՝ առանց փոփոխության և առանց այլայլության. անսերմ հղիություն և անապական ծնունդ: Նրա աստվածությունը չունի սկիզբ, և նրա մարդկությունը չունի վախճան, որովհետև Հիսուս Քրիստոս նույնն է երեկ և այսօր. նույնն է հավիտյան:

Գրիգոր Տաթևացին, որ երրորդ հանգանակի հեղինակն է, իր «Գիրք հարցմանց»-ում, հիմնվելով Առաքելական հանգանակի վրա, ներկայացնում է հայոց հավատքի ամփոփումը հետևյալ տասնչորս կետերի մեջ.

Եօթն վերաբերին առ Աստուածութիւն.

Առաջինն է՝ հաւատալ զմիութիւն աստուածային բնութեան:

Երկրորդ՝ հաւատալ զանձն Հօր. այն որ ասէ «Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ»: Ասաց զայնս Պետրոս առաքեալ:

Երրորդ՝ զորդին գոլ Աստուած. որ ասէ «ի մի տէր Յիսուս Քրիստոս»: Ասաց զայն Անդրէաս:

Չորրորդ՝ զՀոգին Սուրբ Աստուած. որ ասէ «Հաւատամք ի Հոգին Սուրբ»: Ասաց զայն Բարթուղիմէոս:

Հինգերորդ՝ Սիմոն ասաց «Հաւատալ ի յեկեղեցի, զքաւութիւն եւ զթողութիւն մեղաց»:

Վեցերորդ՝ յարութիւն մեռելոց: Ասաց Թադէոս:

Եօթներորդ՝ հատուցումն բարեաց. ընդ որոյ եւ պատիժ չարեացն. որ ասէ ի կեանս յաւիտենականս: Ասաց Մատթիա:

Եւ այս երեք աստիճանս վերաբերին առ Աստուածութիւնն.

Զի ի թողութիւն մեղաց, որ է կենդանութիւն հոգւոյ՝ աստուածային զօրութեամբն լինի:

Նաև յարութիւն մարմնոյ:

Նաեւ հոգւոյ եւ մարմնոյ փառաւորութիւն:

Իսկ եօթնեքին աստիճանք առ մարդեղութիւն Քրիստոսի են այս.

Առաջինն՝ հաւատալ զորդին Աստուծոյ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ:

Եւ զերկրորդն՝ ծնեալ ի կուսէն Մարիամայ: Ասաց զերկոսինս զայս Յակոբոս Զեբեթեայ:

Երրորդն՝ Որդին Աստուծոյ վասն մեր չարչարեալ եւ խաչեալ եւ մեռեալ: Ասաց զայս Յոհաննէս:

Չորրորդն՝ Որդին Աստուծոյ իջեալ ի դժոխս ըստ Հոգւոյն: Ասաց զայս Թովմաս:

Հինգերորդն՝ յարուցեալ երրորդ աւուր: Ասաց զայս Մատթէոս:

Վեցերորդն՝ ելեալ ի յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր. որ է հաւասարութիւն Հօր: Ասաց Յակոբոս Ալփեան:

Եօթներորդն՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս. որ է զբարիս եւ զչարս: Ասաց. զայս Փիլիպպոս:

Ինչպես երևում է, Գրիգոր Տաթևացին ծանոթ է եղել այն հին ավանդությանը, թե եկեղեցու առաջին Հ. Հ-ի խմբագիրներն են Քրիստոսի առաքյալները, ավանդություն, որ վկայակոչել են Եպիփան Կիպրացին, Օգոստինոսը և այլ եկեղեց. հայրեր: Սակայն այն տարածված չէր Արևելյան եկեղեցիներում: Արևմտյան և Արևելյան ավանդություններից սերվող հանգանակների տարբերությունների մեծ մասը խմբագր. բնույթի են, որոնց աղբյուրը տարբեր եկեղեցիներում ձևավորված մկրտության հանգանակն է, դավանանքը՝ միշտ նույնը:

Գրկ. Հաւատոյ հանգանակ. Դաւանանք Հայ եկեղեցւոյ, պատրաստեց Շահէ արք. Աճեմյան, Ս. Էջմիածին, 2001:

Շահէ արք. Աճեմյան

ՀԱՎՈՒՑ ԹԱՌ ՎԱՆՔ, Ամենափրկիչ Հավուց թառ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մազազ գավառում, ներկայումս՝ ՀՀ Կոտայքի մարզում, Գառնիից արևելք, Ազատ գետի ձախ ափին, լեռան գագաթին: Միջնադարյան Հայաստանի կրոն., կրթ., մշակութ. ու գրչության կենտրոններից: Վաղ միջնադարում հիմնադրված Հ. Թ. վ-ում, ըստ *Մխիթար Այրիվանեցու*, մոտակա Քեղվա բերդի իշխան Գևորգը (հավանաբար՝ Գևորգ Մարզպետունին) եկեղեցի է կառուցել: XI դարից Հ. Թ. վ-ում է պահվել Հայ եկեղեցու հնագույն և հռչակավոր սրբությունների մեկը՝ Քրիստոսին խաչից իջեցնելու տեսարանը բովանդակող Ս. Ամենափրկիչ կոչվող փայտակերտ սրբապատկերը (այստեղից էլ՝ վանքի երկրորդ անունը):

1013-ին *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*, ըստ չին. արձանագրության, «վերստին» կառուցել է Հ. Թ. վ-ի եկեղեցին և «նորոգեալ» հաստատել վանքի միաբանությունը: Վանքը, XII–XIV դդ ստանալով բազում նվիրատվություններ, ծաղկման շրջան է ապրել: 1205-ին Հ. Թ. վ-ի Եղիա վարդապետը մասնակցել է Լոռու ժողովին: 1213-ին կառուցվել է վանքի հվ-արլ. կողմի Ս. Կարապետ մատուռը: Ի չարս XIII դ. Հայաստանի նշանավոր վանքերի՝ պահանջվել է նաև Հ. Թ. վ-ի հավանությունը Վատիկանի ոտնձգությունների դեմ *Կոստանդին Ա Բարձրբերդցու* և *Վարդան Արևելցու* գրած «Թուղթ խրատական»-ին (1246)՝ ուղղված Արլ. Հայաստանի բնակչությանը: 1441-ին Ամենայն հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատելու գործում կարևոր դեր է խաղացել Հ. Թ. վ-ի վանահայր Զաքարիա եպիսկոպոսը: 1640-ական թթ. կաթողիկոս Փի-

ՀԱՐԱՎԱՅԻՆ լիպոս Ա Աղբակեցին Հ. Թ. վ-ի վանահայր է կարգել *Սիմեոն Ջուղայեցուն*, որն իր բանաստեղծությունում գովերգում է վանքի Կաթողիկե, Ս. Աստվածածին և Ս. Հարություն եկեղեցիները, «բարձրագմբեթ» զանգակատունը և «հաստատակառույց» ժամատունը: 1679-ի հունիսի 4-ին համալիրն ավերվել է երկրաշարժից: XVIII դ. սկզբին *Աստվածատուր Ա Համադանցին* նորոգել է Հ. Թ. վ., կառուցել պարիսպները, նրանց խցերը և թաղածածկ հյուրատունը: 1721-ին քառասյուն ժամատան ավերակի հս. կեսի վրա սկսել է գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Կարապետ եկեղեցու կառուցումը, որն անավարտ է մնացել լեզգիների առաջին արշավանքի պատճառով: 1755-ին լեզգիների երկրորդ արշավանքից հետո Հ. Թ. վ. լքվել է, և Ս. Ամենափրկիչ սրբապատկերը տեղափոխվել է Էջմիածին:

Վանքի համալիրը բաղկացած է չինություններ երկու խմբից: Արմ. խմբի գլխ. եկեղեցին (XIII դ.) ունի ներքուստ խաչաձև, անկյուններում ավանդատներով գմբեթավոր հորինվածք (գմբեթը քանդված է): Բազմաղունության սկզբունքով շարված պատերը հարուստ են արձանագրություններով: Եկեղեցուն հվ-ից կից են երկու թաղածածկ մատուռներ (այժմ՝ ավերակ): Արլ. խմբի կենտրոնում անավարտ Ս. Կարապետ եկեղեցին է, հվ-ից՝ ժամատան և նրան արլ-ից կից՝ զանգակատան ավերակները: Ս. Ամենափրկիչ սրբապատկերն ունի հայկ. ճարտյան և մանրանկարչության մեջ տարածված հյուսկեն զարդաքանդակով շրջանակ: «Խաչից իջեցնելու» պատկերաքանդակն ուշագրավ է ոսկերչական արվեստի ազդեցությամբ կատարված գեղ. մշակումով: Խաչված Քրիստոսի աջ կողմից Հովսեփը գրկել է նրա մարմինը, իսկ ձախից Նիկոդեմոսը աջցանով հանում է գամերը: Քրիստոսի գլխավերևում փորագրված է թևատարած աղավնու տեսքով Սուրբ Հոգին, իսկ ավելի բարձր՝ Աստծո օրհնող *Աջը*:

Հ. Թ. վ-ի գրչության կենտրոնի հայտնի առաջին ձեռագիրը (Ավետարան) ընդօրինակել է Իգնատիոս գրիչը 1214-ին՝ Թադևոս և Հայրապետ կրոնավորների պատվերով (Վենետիկի մատենադարան, ձեռ. № 137): Պետրոս քահանան վանքի գրչատանն ընդօրինակել է Ավետարան (1236), Գրիգոր գրիչը՝ Ավետարան (1297) ու Սաղմոսարան (1298, Մատենադարան, ձեռ. № 2838, 4160, 6473), գրիչ և ծաղկող Ստեփանոսը՝ Շարակնոց (1458), երկու Ավետարան (1471, Մատենադարան, ձեռ. № 215, 3759, 10154, որոնցից մեկի պատվիրատուն իր մայրն է եղել): Ձեռագրեր ընդօրինակվել են նաև XVI–XVII դդ.:

Հ. Թ. վ-ին են նվիրվել մի շարք ձեռագրեր՝ Ավետարաններ (1321, 1657), Մաշտոց (1423), Շարակնոց (1482): Մինչև 1294-ը վանքում է պահվել հայ հնագույն ձեռագրերից մեկը՝ VII դ. վերագրվող «Վեհամոր Ավետարանը», որն այնուհետև տեղափոխվել է Արցախ (այժմ պահվում է Մատենադարանում, ձեռ. № 10668): 1410-ին Հ. Թ. վ-ում է թաղվել Մեծոփավանքի դպրոցի ղեկավար Հովհաննես վրդ. Մեծոփեցին: Վանքը գործել է մինչև XVIII դ. 2-րդ կեսը:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.7, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Ե., 1987: *Материалы по археологии Кавказа, 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1997-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի կոնդակով՝ 1991-ին ստեղծված Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդության հիման վրա: Առաջնորդանիստը՝ Կրասնոդարի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցի: Թեմի առաջին առաջնորդն է եղել Եղնիկ ծ. վրդ. Պետրոսյանը: Թեմն ընդգրկում է Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետություններում գործող հայկ. եկեղեցիներն ու ծխական համայնքները: Թեմի տարածքում գործում է շուրջ 20 եկեղեցի՝ Վլադիկավկազի Ս. Գրիգոր Լուսավորիչ (1843), Արմավիրի Ս. Աստվածածնի Վերափոխման (1846), Բուդյոնովսկի Ս. Խաչ (XIX դ. վերջ), Եղեսիայի Ս. Աստվածածին (1914), Պյատիգորսկի Ս. Սարգիս (1992), Շահումյանի Ս. Էջմիածին (1994), Կիսլովոդսկի Ս. Վարդան (1997), Կուրգանինսկի Ս. Նիկողայոս (1997), Կրասնոդարի Ս. Հովհաննես Ավետարանիչ (1997), Ադլերի Ս. Սարգիս (1997), Գեորգիևսկի Ս. Գևորգ (1997), Ստավրոպոլի Ս. Մարիամ Մագդալենացի (1997), ինչպես նաև մատուռներ՝ Սոչիի Ս. Խաչ (1993), Հայկաձորի (Անապա) Ս. Սարգիս (1995), Ս. Սամուել մարգարե (1997) ևն:

Վլադիկավկազում, Կրասնոդարում, Սոչիում եկեղեցիներին կից գործում են կիրակնօրյա դպրոցներ:

Լույս են տեսնում «Խաչքար» (“*Хачкар*”, 1993-ից, ռուս.) հանդեսը և «Նաշա ցերկով» (“*Наша церковь*”, 1995-ից, ռուս.) պաշտոնաթերթը:

Հ. Ռ. Թ-ի առաջնորդական տեղապահն է Մովսես եպս. Մովսեսյանը (1999-ից):

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.7, 6-րդ պատկերը:

Եղնիկ եպս. Պետրոսյան

ՀԱՐՅՈՒՊԱՏԱՍԽԱՆԻ, հարցում, հարցմունք եվ պատասխանիք, քրիստոնեական մատենագրության ամենատարածված տեսակներից, որտեղ հարց ու պատասխանի եղանակով արծարծվել են աստվածաբանական, դավանաբանական, բնագիտական հաճախ վիճելի, հրատապ խնդիրներ: Ելնելով ուսումնագիտ. նկատառումներից՝ հայ մատենագիրները եկեղեցու նշանավոր հայրերի երկերից քաղել և կազմել են Հ-ներ. առավել ներկայանալի օրինակներից են Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու Հարցմունքը, Գրիգոր Նազիանզացու «Առ որս» ճառաշարի հիման վրա կազմված Հ. ևն: Հայ ինքնուրույն մատենագրության մեջ հայտնի են հետևյալ երկերը. Գրիգոր Լուսավորչի Հարցումը, «Եղիշէ վարդապետի Հարցմունք եւ պատասխանիք ի գիրս Ծննդոց», «Հարցումն Արձանայ Թադաւորի և պատասխանիք Եղնկա վարդապետի Կողբացւոյ», «Հարցումն Աշոտոյ Սմբատայ Թագաւորի եւ պատասխանիք Եղնկայի հայոց վարդապետի», «Դաւթի Հարքացւոյ եւ փիլիսոփայի որ յիմաստասիրված եւ յիմաստասիրելի հարցուածս», «Հարցումն Աշոտոյ իշխանին վասն մատաղի պատասխանի Սահակի հայոց վարդապետի», «Կոմիտասի հայոց կաթողիկոսի եւ Պիռոսի պատրիարգի՝ Հարցաքննութիւն եւ վիճաբանութիւն», «Տիրանայ հայոց վարդապետի պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի եւ Փիլէի», «Հարցմունք զանազանք՝ արարեալ Վանական վարդապետի և պատասխանի բարառնաբար», «Հարցումն սուրբ վարդապետին Դաւթի մականուն Ալաւկա որդի», «Հարցումն պատրիարգին եւ պատասխանի սրբոյն Ներսիսի»: Փոքր թիվ չեն կազմում նաև անանուն Հ-ները. «Հարցմունք եւ պատասխանիք հայոց վարդապետաց ընդդէմ երկաբնակաց», «Հարցմունք եւ պատասխանիք ի Գրոց Սրբոց» ևն:

Գրկ. Եղիշէ վարդապետի Հարցմունք..., հրտ. Ն. Ակինյան, Վնն., 1924: Խաչիկյան Լ., Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես մատենագրության երախայրիք, ԲՄ, № 7, 1964, էջ 315–328:

Հակոբ Քյոսեյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ, տես *Զատիկ*:

ՀԱՑ, ս. Հաղորդության հաց, Հիսուս Քրիստոսի մարմինը խորհրդանշող բաղարջ հաց, որ ս. *Պատարագի* օրերին պատրաստվում է եկեղեցում՝ Պատարագը սրբագործելու և որպես *Հաղորդություն* քահանայական դասին ու հավատացյալ ժողովրդին տալու համար: Թխվում է առանց թթխմորի, լավագույն ալյուրից, ունենում է կլոր, ճաշի ափսեի մեծության լավաշի տեսք: Թափանցիկության աստիճանի բարակ է:

Որպես երկնավոր Հ-ի խորհրդանիշ՝ առկա է դեռևս Հին ուխտում. «Այդ գիշեր թող ուտեն կրակի վրա խորոված միսը, այն թող ուտեն բաղարջ հացով ու դառն խոտերով» (Ելք **12.**8), «Յոթը օր բաղարջ հաց կուտեք, առաջին իսկ օրից ձեր տնից կվերացնեք թթխմորը...» (Ելք **12.**15): Նոր ուխտում Հ-ի խորհուրդը հաստատվում է *Տերունական աղոթքով* («...Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր...») և Վերջին ընթրիքի ժամանակ՝ ս. Հաղորդությամբ, երբ «...Հիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առեք, կերեք, այս է իմ մարմինը» (Մատթ. **26.**26): Ապա մատուցեց ս. Հաղորդության *գինին*, որպես տերունական արյան խորհուրդը (Մատթ. **26.**27–28):

Պատարագի ժամանակ Ս. Հաղորդության Հ., *Սուրբ Հոգու* ներգործությամբ, փոխակերպվում է Հիսուսի ճշմարիտ մարմնի՝ կենաց բանին, որը պետք է ճաշակել արժանավորապես՝ սրբությամբ:

Մաս: Ս. Հաղորդության Հ. անվանվում է նաև Մաս: Հուն. կոչվել է antidoron (anti – հակա, փոխարեն, doron – նվեր, պարգև), նշանակում է նվերի փոխարեն, իմա՝ ս. Հաղորդության փոխարեն: Ս. Պատարագի ավարտից առաջ հատուկ մատուցարանի մեջ դասավորված Հ. օրհնում է բարձրաստիճան որևէ եկեղեցական, մանրացնում և ապա բաժանում հավատացյալներին, որոնք չեն հաղորդվել: Մաս բառն արդեն իսկ բացատրում է իմաստն իբրև մասնիկ կամ մնացորդ ս. *Սեղանի* վրա օգտա-

գործված Հ-ի, որը քահանայի հաղորդվելուց հետո բաժանվում է ժողովրդին: Եկեղեցականն ամեն անգամ, երբ Մաս է բաժանում, կրկնում է. «Սա եղիցի Մաս և բաժին քեզ», այսինքն՝ մասնակից լինես ս. Հաղորդության Հ-ին և նրա շնորհին:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

«ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ ՃԱՇՈՑ», գեղարվեստական առումով ճոխ և կատարյալ մագաղաթե ձեռագիր մատյան, մեզ հասած ամենավաղ նկարազարդված *Ճաշոցը*: Գրիչն ու նկարիչն անհայտ են: Ընդօրինակվել է 1286-ին, Կիլիկյան Հայաստանում (հավանաբար՝ Սկևռայի վանքում), Հեթում Թագաժառանգի պատվերով (հետագայում՝ Հեթում Բ Թագավոր): Պահվում է Մատենադարանում (ձեռ. № 979, չափերը՝ 33,5x24,5 *սմ*, բաղկացած է 475 թերթից): Հայկ. Ճաշոցների գեղ. ձևավորումը, ի տարբերություն բյուզ. և արևմտաեվրոպ. Ճաշոցների, բավական համեստ է: «Հ. Բ թ. Ճ.», սակայն, հեռացել է այդ ընդհանուր կանոնից: Նրա բոլոր էջերը (շուրջ 500) նախշածածկ են, պատկերազարդ: Մանրանկարների կազմը պայմանավորված է հայկ. Ճաշոցի բովանդակությամբ, որն ի տարբերություն բյուզ. Ճաշոցի, հաջորդել է առավել վաղ, այսպես կոչված՝ երուսաղեմյան խմբագրությանը՝ իր մեջ ներառելով ոչ միայն Նոր, այլև Հին կտակարանից փոխառված պատարագային ընթերցումները: Ուստի «Հ. Բ թ. Ճ.»-ում պատկերազարդվել են նաև հինկտակարանային իրադարձություններ:

«Հ. Բ թ. Ճ.» բաղկացած է ութ հիմն. մասերից, որոնք համապատասխանում են ութ շրջանների բաժանված հայկ. եկեղեցածիս. տարուն: Մասերից յուրաքանչյուրն ունի իր շքեղազարդ անվանաթերթը, իսկ նրա հանդիպակաց էջում եկեղեց. տարվա այդ մասի հիմն. տոնը պատկերող մանրանկարն է (պահպանվել են միայն երկուսը՝ «Տյառնընդառաջ» և «Մուտք Երուսաղեմ»): Հիշյալ մասերի գլուխները բացվում են գլխազարդերով, լուսանցազարդերը մատնանշում են ընթերցման սկիզբը: Տեքստի հետ դրված յոթ մանրանկարները («Քրիստոսը զրուցում է աշակերտների հետ», «Քրիստոսին խաչից իջեցնելը և թաղումը», «Անցումը Կարմիր ծովով», «Երեք մանուկները հնոցում», «Յուղաբեր կանայք Տիրոջ գերեզմանի առաջ», «Հովնան մարգարեին ծովը նետելը», «Հովնանի վերադարձը ցամաք») և մոտ 130 մանրանկար լուսանցքներում (մարգարեների ու նահատակների պատկերներ, տեսարաններ նրանց կյանքից, իրադարձություններ եկեղեցու պատմությունից) ուղեկցում են ընթերցվածքները՝ նվիրված տոներին, սրբերի հիշատակի օրերին, եկեղեցու կարևոր իրադարձություններին: Սրբերից մեկի՝ Բարսեղ Կեսարացու դիմանկարը պատկերված է ոչ թե լուսանցքում, այլ ամբողջ էջի վրա՝ հասակով մեկ: Այդ մանրանկարով էլ բացվում է ձեռագիրը: Բարսեղ Կեսարացու նման առանձնացումը կապված է ոչ միայն նրա հիշատակի օրը հունվ. 1-ին տոնելու (այդ թվից է սկսվում հայկ. եկեղեց. տարին), այլև Հայոց մեջ Բարսեղ Կեսարացու Պատարագը կիրարկելու հետ: Նկարի հանդիպակաց էջին պատկերազարդ անվանաթերթն է, որի լուսանցքում պատկերված է Թագավորական ինքնատիպ խմբանկարը (բուսազարդերի մեջ միմյանց վրա տեղավորված է վեց պատկեր):

Չնայած պարզությանն ու ոչ մեծ չափերին, աչքի են ընկնում տիեզերական ժողովների լուսանցապատկերները: 381-ի Կ. Պոլսի տիեզերաժողովը ներկայացված է կիսաշրջանաձև նստած վեց եպիսկոպոսների պատկերով: Սուրբ Երրորդության պատկերից իջնող լույսի ճառագայթները հիշեցնում են, որ այդ ժողովն է հաստատել Սուրբ Հոգու աստվածությունը, բանաձևել Սուրբ Երրորդության Անձերի մեկ էությունը: Ցածում, եպիսկոպոս. պատմուճանը մի կողմ ընկած, գետնին նստած է մերժված Մակեդոնը, որի վարդապետությունը դատապարտել է Կ. Պոլսի տիեզերաժողովը:

«Հ. Բ թ. Ճ.»-ի պատկերազարդման սկզբունքը բազմաբովլային է, այսինքն՝ նրա մանրանկարների համար օրինակ են ծառայել տարբեր բովանդակություն ունեցող պատկերազարդ ձեռագրեր, և ոչ միայն ձեռագրեր: Այսպես՝ Բարսեղ Կեսարացու դիմանկարից երևում է սրբանկարչության ակնհայտ ազդեցությունը բուն հորինվածքում, կերպարի ճակատային դիրքում, հարուստ ու ճոխ զարդանախշված շրջանակներում: Տերունական պատկերները, ավետարանական երկրորդական տեսարանները, շքեղ նկարազարդված անվանաթերթերթերը հաջորդել են քառավետարանների նկարազարդման համար մշակված պատկերագրությանը, որի ավանդույթները Հայաստանում զարգացած են եղել: Հին կտակարանի գրքերի տեսարանները, որոնց նկարազարդման փորձառությունը երկարատև ու կայունացած

չէր, պատկերագր. առումով ավելի անկաշկանդ են ու ինքնատիպ: Ընդ որում, առավել հետաքրքրականը շարականների նկարազարդումներն են («Անցումը Կարմիր ծովով», «Երեք մանուկները հնոցում», «Հովնանի պատմությունը»), որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է հիմն. մեծ հորինվածք տեքստում և լրացուցիչ լուսանցազարդ մանրանկարների շարք: «Հ. Բ Թ. Ճ.»-ի գեղ. ձևավորումն ընդգրկում է նաև 150 լուսանցազարդ և ավելի քան 3000 սկզբնատառ (մեծ մասամբ նախշազարդ են կամ կազմված թռչուններից, ձկներից, կենդանիներից, երբեմն էլ նաև «պատմականացված» սկզբնատառեր՝ բաղկացած մարգարեների և սրբերի պատկերներից):

Գեղ. առումով «Հ. Բ Թ. Ճ.» XIII դ. 80-ական թթ. կիլիկյան գեղանկարչությանը բնորոշ օրինակ է, որը, զարգացնելով *Թորոս Ռոսլինի* արվեստի ավանդույթները, ի հայտ է բերել նոր միտումներ: XIII դ. կեսի գեղանկարչության պարզ հավասարակշռված ու զուսպ պատկերավոր կառուցվածքին փոխարինել է դրամատիկ ու արտահայտիչ ոճը: Բուռն շարժումը թափանցել է «Հ. Բ Թ. Ճ.»-ի հորինվածքում, տեսարաններում ավելացել են գործող անձինք, բարդացված է ճարտ. ու բնանկարային ֆոնը: Ձեռքերի եռանդուն շարժումով գործող անձինք չեն թաքցնում իրենց զգացմունքները: Ձգտելով հասնել առավելագույն արտահայտչականության՝ «Հ. Բ Թ. Ճ.»-ի նկարիչը հաճախ դիմել է ձևախախտման, կարողացել լավ վերարտադրել սրտահույզ վիճակները, երբեմն անհատականացնել կերպարները: Նրանց կենսական արտահայտչականությունը մեծ մասամբ ստեղծվում է ծավալային կերպավորման միջոցներով, որը կերտվում է գունային նրբերանգավորմամբ: «Հ. Բ Թ. Ճ.»-ի կոլորիտը չափազանց հարուստ է գուներանգներով. վարդագույնի, երկնագույնի, մանուշակագույնի, դեղինի, բաց կանաչի նրբերանգները զուգակցվում են լայնորեն ու բազմակերպ օգտագործված կապույտի, վառ կարմիրի երանգներին և ոսկուն (ֆոնի հարթություններում, հանդերձանքի նրբագծերում, հատուկ մածուկի միջոցով ստացված՝ մանրանկարների շրջանակների դրվագազարդանկարներում): «Հ. Բ Թ. Ճ.»-ի զարդացանկը, որտեղ բուս. ու երկրաչափ. բազմատեսակ մոտիվները զուգորդվում են մարդակերպ ու կենդանակերպ պատկերներով (մարդկանց, գազանների, թռչունների, հրեշների), վկայում է նկարչի անհատնում երևակայության մասին: «Հ. Բ Թ. Ճ.» իր զարդարվեստի ճոխությամբ, վարպետությամբ և գեղ. փայլուն ու կատարյալ ոճով դասվում է համաքրիստ. գրքարվեստի նշանավոր գործերի շարքը:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.8, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Հովսեփյան Գ., Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին (Արքայական ճաշոց), «Անահիտ», 1911, № 5–6: *Дурново Л.А., Портретные изображения на первом заглавном листе Чашоца 1288 г.*, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1946, № 4; *Дрампян И.Р., Лекционарий 1286 г. киликийского царя Этума II, "Музей 7. Художественные собрания СССР", М., 1987, с. 147–159; Матенадаран, т. 1, Армянская рукописная книга VI–XIV вв. (составители и авторы текста В. О. Казарян и С. С. Манукян), М., 1991, с. 245–246;* Drampian I., L'enluminure cilicienne, տես Drampian I., Korkhmazian E., Akopian G., La miniature arménienne XIIIe–XIVe siècles. Collection du Matenadaran գրքում, Erevan-Leningrad, 1984, p. 25–26, planches et commentaires, 112–125; Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, W., 1993, Appendix II, p. 165–167.

Իրինա Դրամբյան

«ՀԵՆՈՏԻԿՈՆ» («Միության գիր»), 482-ին բյուզանդական Զենոն կայսրի (474–475, 476–491) հրապարակած հրովարտակ՝ *Քաղկեդոնի ժողովի* պատճառով բաժանված ու թշնամացած Արևելքի քրիստոնյաներին ու պատրիարքական աթոռներին իր իշխանության ներքո միավորելու, քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև կրոնական երկպառակությունների առաջացած վիհը կամրջելու նպատակով: Հեղինակներն էին Կ. Պոլսի Ակակիոս (471–489) և Ալեքսանդրիայի Պետրոս Մոնգոս (483–490) պատրիարքները: «Հ.» դատապարտում էր Քաղկեդոնի ժողովն ու նրա դավանաբան. ձևակերպումները՝ առանց այդ ժողովի անունը տալու: «Հ.»-ում հիշվել և ուղղափառ են ճանաչվել միայն Նիկիայի 325-ի, Կ. Պոլսի 381-ի և Եփեսոսի 431-ի տիեզեր. ժողովները, հաստատվել են *Կյուրեղ Ալեքսանդրացու* 12 նզովքները. նզովվել են Նեստորն (տես *Նեստորականություն*) ու Եվտիքեսը (տես *Եվտիքականություն*) և բոլոր նրանք, ովքեր չեղվել են ս. հայրերի հավատքից: «Հ.» մերժել է Քրիստոսի մեջ բաժանում դնողներին և Որդու մեջ երկվություն քարոզողներին, քանզի

ՀԵՐԵՏԻԿՈՍ. նրան են վերաբերում «և աքանչելագործ զուրութիւնքն և չարչարանքն»՝ ճիշտ հակառակ *Լևոնի տոմարի*: Արևելքն ընդունել է «Հ.» և հիմնականում հակաքաղկեդոն. իմաստով էլ մեկնաբանել այն (Անտիոքի պատրիարքներ Պետրոս Թափիչ, Սևերիոս Անտիոքացի, Երուսաղեմի Մարտիրոս պատրիարք, ասորի աստվածաբան Փիլոքսենոս Մաբուգեցի ևն): Ալեքսանդրիայի այն միաբնակները, ովքեր մերժել են «Հ.», անջատվել են իրենց պատրիարքից և ավելի ուշ, ինչպես և նրանց հետևած բոլոր միաբնակները, կոչվել «անգլուխներ»: Հռոմի Ֆելիքս III պապը 484-ին մերժել է «Հ.» և բանադրել Ակակիոսին, Պետրոս Մոնգոսին և Պետրոս Թափիչին, ինչպես նաև Զենոն կայսրին՝ պատճառաբանելով, թե աշխարհականն իրավունք չունի խառնվելու եկեղեց. գործերին: Իր հերթին Ակակիոսը ջնջել է Ֆելիքս III պապի անունը Կ. Պոլսի եկեղեցու սրբանկարներից, և այսպես 484–519-ին ստեղծվել է «Ակակիական բաժանումը» Արևելյան ու Արևմտյան եկեղեցիների միջև: «Հ.» ուժի մեջ է մնացել բյուզ. Անաստաս I կայսրի (491–518) ժամանակ, բայց 519-ին Հուստինոս I կայսրը մերժել է այն:

Հայ եկեղեցու կողմից «Հ.»-ի ընդունման ժամանակի վերաբերյալ հայագիտության մեջ կան տարբեր տեսակետներ: Ոմանք (Կ. Տեր-Մկրտչյան, Գ. Տեր-Մկրտչյան, Մ. Աբեղյան, Ս. Մալխասյանց) գտնում են, որ այն ընդունվել է *Հովհաննես Ա Մանդակունու* օրոք՝ V դ. 80-ական թթ., իսկ մյուսները (Մ. Օրմանյան, Ն. Ակինյան, Ե. Տեր-Մինասյան և ուր.)՝ VI դ. սկզբին, *Բաբկեն Ա Ոթմսեցու* ժամանակ:

Հայ դավանաբան. գրվածքներում «Հ.» առաջին անգամ հիշատակվել է Բաբկեն Ա Ոթմսեցու «Թուղթ Հայոց ի Պարս, առ ուղղափառս» Բ թղթում, որի ոգով էլ գրվել է այդ թուղթը, այսինքն՝ զգուշավոր և մեղմացրած բանաձևերով լռելյայն դատապարտել է Քաղկեդոնի ժողովը: Զենոն կայսրը հայկ. աղբյուրներում դնահատված է որպես «բարեբանեալ թագաւոր Հոռոմոց» (Բաբկեն Ա Ոթմսեցի), ուղղափառ, բարեպաշտ, որ «միաւորիչ թղթովն աւտարացուցանող և կորստական անաւրէն «Քաղկեդոնի ժողովը» եբարձ ի միջոյ» (Վրթանես Քերթող), կամ՝ «Զենոնի և Անաստասայ բարեպաշտ թագաւորացն զոր ընդունիմք և տաւն կատարեմք նոցա» (Ստեփանոս Սյունեցի) ևն:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորվոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908: Նույնի, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971: Tournebize Fr., Histoire Politique et Religieuse de l'Arménie, P., 1900, p. 321–323, 339; Salaville S., L'affaire de Hénotique ou le premier schisme byzantin au Ve siècle: L'Hénotique de Zenon, Échos d'Orient, XVIII, 1918, p. 255–266, 389–397, XIX, 1920, p. 49–68; Townsend W.T., The Henotikon Schism and the Roman Churche, "Journal of Religion", 16, 1936, p. 78–86.

Հրաչ Բարթիկյան

ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ (< հուն. *αἵρεσις* – ընտրություն, հատուկ մտածելակերպ), դիտակցական ու միտումնավոր շեղում՝ հստակորեն արտահայտված ու բանաձևված քրիստոնեական ուղղափառ *դավանանքից*: *Աղանդի* և Հ-յան պայմանական տարբերությունն այն է, որ վերջինս նշանակում է ոչ այնքան մարդկանց ամբողջություն, որ հետևում է որոշակի ուսմունքի, որքան հենց ուսմունքի բուն բովանդակությունը:

Հ. պայմանականորեն տարբերակվում է նաև հերձվածից: Վերջինս նույնպես նշանակում է առանձնացում եկեղեցու հավատացյալ համայնքից, բայց ի տարբերություն Հ-յան, հերձվածողությունը տվյալ եկեղեց. նվիրապետության հեղինակությանը չի ենթարկվում՝ քրիստ. ավանդության հարցում տարաձայնություն (ոչ գիտակցական, ոչ միտումնավոր) ունենալու պատճառով: Նա, հետ մնալով եկեղեցու ընդհանուր զարգացման ընթացքից, հետևում է հնադավան ուսուցմանը: Հերձվածը (հուն.՝ սխիզմա – խզում) փաստորեն նշանակում է հնադավանություն: Հերձվածողական կարծիքներ են արտահայտել II–III դդ. եկեղեցու որոշ հեղինակավոր վարդապետներ (Դիոնիսիոս Ալեքսանդրացի, *Որոգինես*), երբ աստվածաբանության բնագավառում իշխում էր կարծիքների ազատությունը, իսկ եկեղեց. ուսմունքի ճշմարտությունները դեռևս հստակորեն բանաձևված չէին տիեզերական և տեղական ժողովների կողմից:

Հ-յան ակունքները հիմնականում հետևյալն են. 1. քրիստոնեություն ընդունած հուդայականների և հեթանոսների, ինչպես նաև արլ. դուալիզմի հետևորդների՝ իրենց նախկին կրոնափիլ. աշխարհայացքից հրաժարվելու չկամությունը. նրանք ձգտում էին իրենց հնացած պատկերացումներն ու դոգմաները համատեղել նոր՝ քրիստ. ըմբռնումների հետ: Արլ. դուալիզմի և քրիստոնեության խառնուրդ էին *մանիքեությունը*, մոնթանականները և շատ այլ աղանդներ (այստեղ տեղին է նշել, որ եթե աղանդը ձեռք է բերում այնպի-

սի հատկանիշ, ինչպիսին է կանխամտածված, միտումնավոր հակադրվածությունը Ընդհանրական եկեղեցուն և շեղումը ընդունված դոգմայից, այդպիսի աղանդն ինքնին Հ. է): 2. Հ-ներ էին ձևավորվում քրիստ. ուսմունքի և մեծ մտածողների դաղափարների ու անտիկ աշխարհի փիլ. աշխարհայեցողության համադրման հետևանքով, ինչը հանդեցնում էր ռացիոնալիզմի. այդպիսին էր *արիոսականությունը*: 3. Հ-յան աղբյուր էին նաև որոշ քրիստ. վարդապետների ինքնատիպ աստվածաբանության և բանականության միակցումը (որը բացառվում էր Ընդհանրական եկեղեցու և սրբազան ավանդության կողմից), *եկեղեցու հայրերի* անձն. կամ մասնավոր կարծիքները քրիստ. վարդապետության այս կամ այն մասնրամասնի վերաբերյալ, ինչպիսիք էին, օր., *Եվսեբիոս Կեսարացու*, *Գրիգոր Նազիանզացու* և մյուսների որոշ կարծիքներ:

Քրիստ. եկեղեցու ծնունդից ի վեր, մինչև մեր ժամանակները, հանդես են եկել մի շարք՝ հնագույն և նոր հերետիկոս. շարժումներ, որոնց դեմ անընդմեջ պայքար է մղել եկեղեցին:

Վաղ քրիստ. Հ-ները (նիկողոսյաններ, մոնթանականներ) կրել են հուդայական կրոնի հեսսեների աղանդի և նորպլատոնականության (*Փիլոն Ալեքսանդրացու* ուսմունքը) ազդեցությունը: Ունենալով մարտնչող բնույթ՝ դրանք պայքարել են միահեծան եպիսկոպոսության, «հարուստ եկեղեցու» դեմ, քարոզել *երկնային արքայության* մոտալուտ գալուստը:

I–III դդ. տարածվել է *գնոստիցիզմը*, IV–VI դդ.՝ արիոսականությունն ու *նեստորականությունը* (Հայաստանում՝ գլխավորապես *բորբորիտներն* ու *մծղնեությունը*, ապա, մծղնեության ազդեցությամբ՝ մանիքեությունը): Հերետիկ. բնույթ են ունեցել Հայաստանում և Բյուզանդիայում տարածված *պավլիկյանները*, VII–VIII դդ. Բուլղարիայում՝ բոգոմիլների աղանդը, IX–X դդ. Հայաստանում լայն ծավալում ստացած *թոնդրակեցիները*, Եվրոպայում XI դ. կեսից՝ կաթարների և ալբիգոյցիների աղանդները: Հ-ները՝ «Առաքելական եղբայրները», դոլչինականները (Իտալիայում), լոլլարդները (Անգլիայում), թաբորականները (Չեխիայում), մերժել են մասնավոր սեփականությունը, ինչպես նաև աշխարհիկ պետ. կառույցները՝ որպես չարի իշխանության արտահայտություններ, պայքարել իրավահավասարության համար: Այդօրինակ բնույթ են կրել Հայաստանում Դավիթ Ծարեցու (XIII դ.) և Մեխլուի (XVI–XVII դդ.) շարժումները:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968: *Иванцов-Платонов, Ереси и расколы трех первых веков, М., 1877.*

ՀԵՐՀԵՐԻ Ս. ՍԻՈՆ ԱՆԱՊԱՏ, ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհեր գյուղից մոտ 1 *կմ* հյուսիս-արևելք, երկու ձորերով եզերվող բլրակի գագաթին: Հիմնադրվել է վաղ միջնադարում: Կազմված է երկու եկեղեցուց և մատուռից: Հ. Ս. Ս. ա-ի հնագույն՝ Ս. Սիոն եկեղեցին կառուցված է կոպտատաշ ավազաքարից, ներսից սվաղված է և ունի միանավ, թաղածածկ, արլ. և արմ. կողմերում կիսաշրջանաձև խորաններով հորինվածք, որը եզակի է հայկ. ճարտ-յան մեջ: Նրան հս-ից կից է փոքրիկ թաղածածկ մատուռ, իսկ հվ-ից՝ Ս. Աստվածածին եկեղեցին, որը, ըստ շին. արձանագրության, կառուցել է Վահրամ Շահուռնեցի իշխանը 1283-ին: Սրբատաշ քարից կառուցված եկեղեցին միանավ է, թաղածածկ, արլ-ում զույգ կիսաշրջանաձև խորաններով, արմ. ճակատին ճանկերում խոյ բռնած արծվի բարձրաքանդակով:

Հ. Ս. Ս. ա. XIII–XIV դդ. եղել է Շահուռնեցի իշխանների հոգևոր կենտրոնը և բազմաթիվ նվիրատվություններ է ստացել: XIV դ. անապատի համալիրը նորոգել է Մեթաքը: 1349-ին այստեղ Վահան գրիչը Ավետարան է ընդօրինակել: Անապատի բակում և նրա շուրջը կան XIII–XVII դդ. բազմաթիվ խաչքարեր:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.8, 3-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Հովսեփյան Գ., Խաղբակենք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1944: Եղիազարյան Հ., Հերհերի Ս. Սիոն և Ս. Գևորգ անապատները և դրանց վիմական արձանագրությունները, «Էջմիածին», 1974, № 9: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ՀԵՐՋՎԱԾ, տես *Հերետիկոսություն* հոդվածում:

ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ, Ահերմոնի վանք, Կնեվանք, ՀՀ Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի ձախափնյա ձորալանջին: Հիմնադրել են Սյունյաց դահերեց իշխան Սմբատը և Տեր-Հակոբ եպիսկոպոսը 936-ին: Վանքը կոչվել է ծերունի ճգնավոր Ահերմոնի անունով:

X դ. *Գնդեվանքը* կառուցած իշխանուհի Սոփին գնել և Հ. վ-ին է նվիրել գյուղ, այգիներ, ծաղկանոցներ ևն: 1338-ին Հ. վ-ում է հաստատվել *Եսայի Նշեցու* աշակերտ, *Գլաձորի համալսարանի* շրջանավարտ Տիրատուր վրդ. Կիլիկեցին և հիմնել նոր դպրոց, որը հայտնի է որպես Հ. վ-ի դպրոց: Հ. վ-ի գրչության կենտրոնը և դպրեվանքը համահայաստանյան ճանաչում են ստացել XV դ. 40-ական թթ.՝ վանահայր *Հովհաննես Հերմոնեցու* օրոք: Հ. վ. տվել է նշանավոր մտավորականներ, գրիչներ, նկարիչներ: Այստեղ գրվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ (պահպանվել են շուրջ 30-ը): Հ. վ. նյութ. մեծ աջակցություն է ստացել Սյունյաց Օրբելյան իշխաններից, որոնք հովանավորել են նրա գործունեությունը: Հ. վ-ի ներկայիս Ս. Գրիգոր եկեղեցին հիմնովին վերակառուցվել է XVII դ. (նախկինի օգտագործված քարերից մեկի վրա պահպանվել է վանքի անունը): Սրբատաշ բազալտից է և ունի մեկ զույգ մույթով եռանավ բազիլիկի հորինվածք: Պարըսպապատ ուղղանկյուն բակում նկատվում են երբեմնի համալիրի շինությունների հետքերը:

XIV դ. Հ. վ-ի դպրոցը գործել է Գլաձորի համալսարանին զուգընթաց: XV դ. դպրոցի սաներից Հովհաննես Հերմոնեցին դարձել է Հ. վ-ի դպրոցի բաբունապետ և 1441-ին *Թովմա Մեծոփեցու* հետ իրականացրել Ամենայն հայոց կաթողիկոսարանը Էջմիածնում վերահաստատելու գործը:

Հ. վ-ի դպրոցը գործել է շուրջ հարյուր տարի. մեզ են հասել այնտեղ ընդօրինակված մեկ տասնյակից ավելի ձեռագրեր՝ մեկնություններ, լուծմունքներ ևն:

Պատկերազարդումը տես ներդիր IX-ում, 9.8, 4-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Բարխուդարյան Ս., Հերմոնի դպրոցի տեղագրությունն ու գործունեությունը, ԲՄ, № 5, 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Հասրաթյան Մ., Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (13–15 դդ.), Ե., 1981:

Գրիգոր Գրիգորյան

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, տես *Աստվածաշունչ* հոդվածում:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ [Հիսուս < եբր. Հեշուա – Փրկիչ: Քրիստոս < հուն. *χριστός* – Օծյալ, եբր.՝ Մաշիյահ, հուն. *μεσσιας* – Մեսիա], Մեկն Ամենասուրբ *Երրորդությունից*, Հոր և *Սուրբ Հոգու* համագոյակիցը, *Աստծո* Միածին Որդին և անժամանակ Ծնունդը, Աստված՝ Աստծուց, նախահավիտյան Բանը, որ մարդկանց փրկության համար ճշմարտապես մարդացավ ս. Կույս Մարիամից: Մարմնացյալ Աստծո Որդին, ճշմարիտ Աստված ու ճշմարիտ Մարդը, Աստծո Օծյալը և աշխարհի Փրկիչը, որի սուրբ մարդեղությամբ հաստատվեց *Եկեղեցու* թագավորությունը: Նա, որ չարչարվեց, խաչվեց, երրորդ օրը հարություն առավ մեռելներից, նույն մարմնով համբարձվեց երկինք և նստեց Հոր աջ կողմում՝ ազատագրելով մարդուն *մեղքի* դատապարտվածությունից և ցույց տալով փրկության ճանապարհը: Հանուն նրա Աստված երկիր ուղարկեց Սուրբ Հոգին՝ Մխիթարիչը, Աստծո Հոգին, որը եկեղեցագործում է աշխարհում *Հոգեգալստի* օրվանից և առաջին աշխարհամատուռն եկեղեցին (Վերնատունը) հաստատելուց ի վեր՝ մինչև Քրիստոսի Երկրորդ գալուստը՝ զորությամբ և բազում փառքով: Տես նաև *Հավատո հանգանակ*:

Սուրբ Գրքում Հիսուս Քրիստոսն անվանվում է և բնութագրվում՝ Աստծո Որդի (Հովհ. **1.**34), Որդի (Ա Հովհ. **4.**14), կենդանի Աստծո Որդի (Մատթ. **16.**16), Աստծո միածին Որդի (Հովհ. **3.**18), միածին Որդի, որ Հոր ծոցում է (Հովհ. **1.**18), պատկերն անտեսանելի Աստծո և բոլոր արարածների սկիզբը (Կողոս. **1.**15), Հոր սիրելի Որդի (Կողոս. **1.**13), օրհնյալ Աստծո Որդին (Մարկ. **14.**61), Բարձրյալի Որդին (Ղուկ. **1.**32) ևն: Հիսուս Քրիստոսին որպես Աստծո Որդի են վկայում Հայրը՝ «Եվ ահա մի ձայն երկնքից [Հայր Աստված՝ ձայնով], որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. **3.**17, տես նաև Մարկ. **1.**9–11, Ղուկ. **3.**21–22), «Դա՛ է իմ սիրելի Որդին,... դրա՛ն լսեցեք» (Մատթ. **17.**5, տես նաև Մարկ. **9.**2–12, Ղուկ. **9.**28–36), ինքը Հիսուսը՝ «Աստծու Որդի եմ» (Հովհ. **10.**36), Սուրբ Հոգին՝ «Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու Ավետարանի...» (Մարկ. **1.**1: Սույն վկայությունը տրված է Սուրբ Հոգով, ինչպես ամբողջ *Աստվածաշունչը*), հրեշտակը՝ «Հրեշտակը պատասխանեց և նրան ասաց. «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծու Որդի կկոչվի» (Ղուկ. **1.**35), մարդիկ՝ *Հովհաննես Մկրտիչը*

(«Եվ ես տեսա ու վկայեցի, թե սա՛ է Աստծու Որդին», Հովհ. 1.34), Հովհաննես առաքյալը («Այլ այսքանը գրվեց, որ դուք հավատաք, թե Հիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին», Հովհ. 20.31), նավակում եղած աշակերտները («Արդարև Աստծու Որդին ես դու», Մատթ. 14.33), Պողոս առաքյալը (Գործք 9.20), Նաթանայելը (Հովհ. 1.49), Մարթան (Հովհ. 11.27) և մյուսները: Հիսուսից զարհուրելով՝ նրան որպես Աստծո Որդի են ճանաչում նաև անմաքուր, դիվական ոգիները («Եվ պիղծ ոգիները, երբ տեսնում էին նրան, ընկնում էին նրա առաջ, աղաղակում էին ու ասում. «Դու Աստծու Որդի ես», Մարկ. 3.11), դևերի բազմությունը, որ կոչվում էր լեգեոն («Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսուս՛ս, բարձրյալ Աստծու Որդի...», Մարկ. 5.7):

Սուրբ Գիրքը նաև վկայում է, որ Հիսուս Քրիստոսն Աստված է, *երկնային արքայության* հավիտենական թագավորը և Տերը. Նա կոչվում է Աստված (Հովհ. 1.1, Մատթ. 1.23, Եսայի 40.3), որի աթոռը հավիտենական է (Եբր. 1.8), հավիտենական Տեր Աստված (Եսայի 40.28), ճշմարիտ Աստված (Ա Հովհ. 5.20), հզոր Աստված (Եսայի 9.6), Տեր և Աստված (Հովհ. 20.28), Աստված և Փրկիչ (Ղուկ. 1.47), բոլորի վրա իշխող օրհնյալ Աստված (Հռոմ. 9.5), համայն երկրի Աստվածը (Եսայի 54.5), Աստված, որ հայտնվեց մարմնով (Ա Տիմոթ. 3.16, մեր Աստվածն ու Փրկիչը (Բ Պետրոս 1.1), Էմմանուէլ, որ նշանակում է Աստված մեզ հետ (Մատթ. 1.23), Աբրահամի, Իսահակի, Հակոբի Աստվածը (Ելք 3.16), Բարձրյալ (Ղուկ. 1.76), Տեր Աստված (Եսայի 40.10), Զորությունների Տերը (Եսայի 6.3), Փառքի արքա, հզոր և պատերազմում զորեղ Տեր (Սաղմ. 23.8), Փառքի Տերը (Ա Կորնթ. 2.8) ևն:

Որպես Սուրբ Երրորդության համագո (նույնաբնույթ) Անձերից նա, ով Հոր և Սուրբ Հոգու հետ արարել է տիեզերքները՝ դուրս և առաջ է ժամանակներից, անժամանակ Երրորդությամբ փառավորված և կոչվում է նաև հավիտենության հայր (Եսայի 9.6), սկիզբը և վախճանը, ալֆան ու օմեգան (Հայտն. 1.8), ամենայն ինչի արարիչը (Կողոս. 1.16), կյանքը (Ա Հովհ. 1.2) և հավիտենական կյանքը (Ա Հովհ. 5.20), Կենաց Բանը և կյանքը, որ «Հոր մոտ էր և հայտնվեց մեզ (Ա Հովհ. 1.1–2), Բանը (Հովհ. 1.1), Բանն Աստված (Հովհ. 1.1), մարմնացած Բանը («Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ...», Հովհ. 1.14), «Նա, որ լույսն է նրա [Հոր] փառքի և բուն պատկերը նրա էությունն» (Եբր. 1.3), Աստծո իմաստությունը և զորությունը (Առակ. 8.12, Ա Կորնթ. 1.24), *Ուխտի* հրեշտակը կամ պատգամաբերը (Մաղաք. 3.1), Տիրոջ հրեշտակը (Ծննդ. 22.15), Աստծո հրեշտակը (Ծննդ. 31.11) և Աստվածը (Ծննդ. 31.13) ևն:

Քանի որ Հիսուս Քրիստոսը, Հայր Աստծո կամքի համաձայն ճշմարտապես մարդացավ՝ հանուն մարդու փրկության, ուստի և կոչվում է մարդու Որդի (Մատթ. 12.8, Մարկ. 10.33), Դավթի որդի՝ մարմնով Դավթի թագավորական ազգատոհմից լինելու համար (Մատթ. 1.1), Աբրահամի որդի (նույն տեղում), Երկրորդ մարդը՝ Տերը երկնքից (Ա Կորնթ. 15.47), Հիսուս Քրիստոս՝ Մարդը (Ա Տիմոթ. 2.5), Մարիամի որդին (Մարկ. 6.3), կնոջ սերունդը, որ ջախջախելու է օձի (սատանայի) գլուխը (Ծննդ. 3.15):

Հիսուսը եկավ, որպեսզի կատարի Հայր Աստծո կամքը՝ «Ահա՛վասիկ գալիս եմ քո կամքը կատարելու ով Աստված» (Եբր. 10.7, 9): Գրվածքներն Աստծուց եկած Հիսուսին անվանում են Հոր կողմից սրբացված և աշխարհ Առաքված (Հովհ. 10.36), Ուղարկված (Եբր. 3.1), մեծ մարգարե (Ղուկ. 7.16), մարգարե (Գործք 3.22–23), ծառա Աստծո (Փիլիպ. 2.7), Նազովրեցի՝ Նազարեթում բնակված լինելու պատճառով (Մատթ. 2.23) ևն:

Մարդանալով՝ Աստծո Որդին՝ Հիսուսը, իր վրա վերցրեց Ադամի սերնդին վիճակված արարչական անեծքը (տես *Նզովք*), անարգանքների և չարչարանքների մատնվեց, յուրայիններին երևալով իբրև օտար և կողմնակի՝ հյուր (Սաղմ. 68.9), «Հարվածների ենթակա մի մարդ» (Եսայի 53.3), քանի որ, ինչպես ասում է Պողոս առաքյալը՝ «Քրիստոս մեզ վերստին գնեց օրենքի անեծքից՝ անեծք դառնալով մեզ համար (որովհետև գրված է, թե՝ «Անիծյալ է այն մարդը, որը կախված է փայտից»), որպեսզի Աբրահամի օրհնությունը Քրիստոս Հիսուսով դա հեթանոսների վրա, և որպեսզի Սուրբ Հոգու խոստումը մենք ընդունենք հավատով» (Գաղատ. 3.13–14):

Եվ քանի որ Հիսուսն իր Անձով փառավորեց Հայր Աստծո անունը, դրա համար Հայրը «... նրան չնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն, որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարամետականների, և ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոս Տե՛ր է՝ ի փառս Հայր

Աստծու» (Փիլիպ. 2.9–11): Ուստի և նա կոչվում է նաև Հիսուս Քրիստոս՝ մեր Տերը (Հռոմ. 5.21), Տեր Հիսուս (Գործք 7.58), Օծյալ (Սաղմ. 2.2), Աստծո Քրիստոսը (Ղուկ. 9.20), Քրիստոս, օրհնյալ Աստծո Որդին (Մարկ. 14.61), Փրկիչն աշխարհի (Հովհ. 4.42): Որպես Նոր Ուխտի (Արյան Ուխտի) միջնորդ, որն իր քավչարար և սուրբ արյունը հեղեց Գողգոթայի *խաչի* վրա՝ հանուն մարդկության փրկության, նա անվանվում է Աստծո Գառը (Հովհ. 1.29), «անբիծ և անարատ, ինչպես մի գառ» (Ա Պետրոս 1.19), մորթված Գառը (Հայտն. 5.12), հաղթող Գառը (Հայտն. 17.14), Գառը, որպես քաղաքի՝ երկնային *Երուսաղեմի* տաճար (Հայտն. 21.22), Գառը, որպես քաղաքի ճրագ (Հայտն. 21.23): Որպես երկնային Երուսաղեմի՝ եկեղեցու Տերը, նա հոգևորապես անվանվում է Փեսա (տես Մատթ. 9.15, Հայտն. 21.9), որպես եկեղեցու Տերը և Առաջնորդը՝ կոչվում է Հովիվ (Հովհ. 10.16), Աստծո հովիվը, որի վրա արթնանալու է սուրը (Զաքարիա 13.7), բարի հովիվ, որն իր կյանքն է դնում ոչխարների համար (Հովհ. 10.11), հոգիների Հովիվը և Տեսուչը (Ա Պետրոս 2.25), «...հավիտենական ուխտի արյունով ոչխարների մեծ հովիվն» է, որը հարություն է առել մեռելների միջից (Եբր. 13.20), Հովվապետ, որը երևալու է դարձյալ (Ա Պետրոս 5.4), Ճանապարհը (Հովհ. 14.6), ոչխարների դուռը (Հովհ. 10.7): Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է հարությունը և կյանքը («Ես իսկ եմ հարությունն և կյանք...», Հովհ. 11.25), *կենաց ծառը*, «որ գտնվում է Աստծու դրախտի մեջ» (Հայտն. 2.7), Շառավիղը (Զաքարիա 6.12), Դավթի արմատը (Հայտն. 5.5), ճշմարիտ որթատունկը (Հովհ. 15.1), ճշմարիտ *հացը*՝ Աստծուց և երկնքից (Հովհ. 6.32–33), կենաց հացը (Հովհ. 6.35), կենդանի հացը (Հովհ. 6.51), թաքցված մանանան (Հայտն. 2.17): Ի տարբերություն Ադամին ու Եվային խոստացված սատանայական կեղծապատիր լույսի, Հիսուս Քրիստոսն ինքն է աստվածային Լույսը (Հովհ. 12.35), ճշմարիտ Լույսը (Հովհ. 1.9), աշխարհի Լույսը (Հովհ. 8.12), Լույս՝ հեթանոսների կամ ազգերի համար (Եսայի 42.6), աստղը (Թվեր 24.17), առավոտյան աստղը (Հայտն. 2.28), բարձունքից այցելող արեգակը (Ղուկ. 1.78):

Որպես եկեղեցու փրկության անփոփոխելի հիմք Հիսուս Քրիստոսը կոչվում է վեմ կամ հիմք (Ա Կորնթ. 3.11, Ա Կորնթ. 10.4), անկյունաքար (Ա Պետրոս 2.6): Հիսուս Քրիստոսի սրբության, տնօրինական փրկագործության, անդրանկության, քավչարար զոհագործության, երկնային ու երկրային հավիտենական իշխանության և աստվածային մյուս հատկանիշների ու գործառույթների մասին են վկայում հավիտենական Քահանայապետ (Եբր. 8.1), «միջնորդ՝ Աստծու և մարդկանց միջև» (Ա Տիմոթ. 2.5), բարեխոս (Ա Հովհ. 2.1), Աստծո ընտրյալը (Ղուկ. 23.35), Աստծո փրկությունը (Ղուկ. 2.30), Ճանապարհը և Ճշմարտությունը (Հովհ. 14.6), Հավատարիմը և Ճշմարիտը (Հայտն. 19.11), հավատարիմ և ճշմարիտ վկան (Հայտն. 3.14), հաղթական առյուծը, որ Հուդայի ցեղից է (Հայտն. 5.5), Իսրայելի Սուրբը (Եսայի 49.7), Աստծո Սուրբը (Մարկ. 1.24), Սուրբ և Արդար (Գործք 3.14), Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ (Եսայի 6.3) անվանումներն ու հաստատումները: Այս վերջին անվանումը, որ Աստծո նկատմամբ կիրառել է Եսային, հիշատակում է Հովհաննես ավետարանիչը. «Եսային այս ասաց, որովհետև տեսավ նրա [Հիսուսի] փառքը և խոսեց նրա մասին» (Հովհ. 12.41): Քրիստոսը նաև Աստծո ստեղծածների սկիզբն է (Հայտն. 3.14), անդրանիկը՝ մեռելների միջից (Կողոս. 1.18), վերջին Ադամը (Ա Կորնթ. 15.45), Հարությունը (Հովհ. 11.25), եկեղեցու [Քրիստոսի մարմնի] գլուխը (Կողոս. 1.18), ամենայն պետության և իշխանության գլուխը (Կողոս. 2.10), փրկության առաջնորդը (Եբր. 2.10), հավատի զորագլուխն ու կատարելագործողը (Եբր. 12.2), տերերի Տերը և թագավորների Թագավորը (Հայտն. 17.14), շաբաթ օրվա [հանգստյան կամ խաղաղության] տերը (Ղուկ. 6.5), իշխան (Միքիա 5.2), մեռյալներին ու կենդանիներին հավասարապես տիրող (Հռոմ. 14.9), բոլորի Տերը (Գործք 10.36), կյանքի Առաջնորդը (Գործք 3.15), Դատավորը (Գործք 17.31), թագավորի [Աստծո] որդին (Սաղմ. 71.2), ամբողջ երկրի թագավորը (Զաքարիա 14.9), խաղաղության թագավոր (Եբր. 7.2), փառքի արքան և զորությունների Տերը (Սաղմ. 23.10), Տերը, որ պիտի թագավորի հավիտյան (Սաղմ. 28.10), Հավատարիմը և Ճշմարիտը, որն «արդարությամբ է դատում ու պատերազմում» և իր գլխին կրում է «բազում պսակներ» (Հայտն. 19.11–12):

Հին կտակարանում ամենայն մանրամասնությամբ մարգարեացված է Հիսուս Քրիստոսի՝ սպասված Մեսիայի Հայտնությունը: Ստորև բերվում են և՛ հինկտակարանային, և՛ նորկտա-

կարանային տեղիները (ոչ բոլորը)՝ ցույց տալու համար համապատասխան մարգարեությունը և դրա իրականացումը՝ Նոր Ուխտի մեջ: 1. **Առաջին ալուստը** («Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ միջև, քո սերնդի ու նրա սերնդի միջև: Նա [գալիք Հիսուսը] պիտի ջախջախի քո [Օձի] գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը», Ծննդ. **3.**15, Գաղատ. **4.**4: «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, նրա՛ն կլսեք, քանի որ, երբ Քորեբում հավաքվել էիք, ձեր Տեր Աստծուն խնդրելով՝ ասում էիք. «Այլևս չլսենք մեր Տեր Աստծու ձայնը, այդ մեծ կրակն այլևս չտեսնենք, որպեսզի չմեռնենք»: Այն ժամանակ Տերն ինձ ասաց. «Ճիշտ է այն ամենը, ինչ նրանք ասացին. ես նրանց եղբայրներից քեզ նման մի մարգարե մեջտեղ կհանեմ, իմ պատգամները կդնեմ նրա բերանը, և նա նրանց կասի այն, ինչ ես կպատվիրեմ նրան: Այն մարդը, որ չի լսի իմ անունից խոսող մարգարեին, նրանից վրեժ կլուծեմ», Բ Օրենք **18.**15–19, Գործք **3.**20–23: «Ահա ես Սիոնի հիմքում մեծագին քար եմ դնում, պատվական ու ազնիվ անկյունաքար՝ նրա հիմքում, և ով որ հավատա նրան [Հիսուսին]՝ չի ամաչի», Եսայի **28.**16, Ա Պետրոս **2.**6, 7: Տես նաև Եսայի **42.**6, **49.**1–3, **55.**4, Եզեկիել **34.**23–24, Դանիել **2.**44, Միքիա **4.**1, Զաքարիա **3.**9): 2. **Գալատյան ժամանակը** («Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա նա [Հիսուսը], ում պատկանում են հանդերձյալները: Նրա՛ն են սպասում ժողովուրդները», Ծննդ. **49.**10: «Ես ցույց եմ տալու նրան [Հիսուսին], բայց ոչ հիմա...», Թվեր **24.**17: «Մեկ յոթանասունյոթնյակ է սահմանված..., որպեսզի վերջ դտնեն մեղքերը, ավարտվեն անօրենությունները, ջնջվեն անիրավությունները, ներվեն ամբարշտությունները, և դա հավիտենական արդարությունը...» [Հանձին Հիսուսի], Դանիել **9.**24, Ղուկ. **2.**1–20: «Ահա ես ուղարկում եմ իմ պատգամաբերին, և նա կտեսնի իմ ճանապարհները՝ իմ առաջ. և հանկարծակի իր տաճարը կգա Տերը, որին դուք փնտրում եք, և ուխտի պատգամաբերը, որին կամենում եք դուք», Մաղաքիա **3.**1): 3. **Հիսուսի Աստվածությունը** («Տերն ասաց ինձ. «Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ..», Սաղմ. **2.**7, Ղուկ. **1.**32, տես նաև Սաղմ. **44.**7 ևն: «Քանզի մեզ համար մանուկ ծնվեց, մի որդի տրվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի. նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ, Աքանչելի խորհրդակից, Աստված հզոր, Իշխան, Հայր հանդերձյալ աշխարհի», Եսայի **9.**6, տես նաև Երեմիա **23.**6, Միքիա **5.**2 ևն): 4. **Հիսուսի կատարյալ մարդ լինելը** («Քո [Աբրահամի] սերնդի [Հիսուսի] շնորհիվ պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ազգերը...», Ծննդ. **22.**18, Գաղատ. **3.**16, Բ Թագ. **7.**14, Սաղմ. **17.**51, **21.**21–23 ևն): 5. **Հիսուսի ալատյան նախապատրաստումը** («Անապատում կանչողի [Հովհաննես Մկրտչի] ձայնն է. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները», Եսայի **40.**3, Հովհ. **1.**23, Մաղաքիա **3.**1, **4.**5): 6. **Հիսուսի ծնունդը** («Դրա համար էլ Տերն ինքը ձեզ նշան է տալու: Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուէլ [Աստված մեզ հետ]», Եսայի **7.**14, Մատթ. **1.**18, 23): 7. **Ծննդյան վայրը** («Եվ դո՛ւ, Բեթղեհէ՛մ, Եփրաթայի սակավամարդ տուն...», Միքիա **5.**2, Մատթ. **2.**1 ևն): 8. **Մոր երկրպագությունը մանուկ Հիսուսին** (Սաղմ. **71.**10–11, Մատթ. **2.**1–11, Եսայի **60.**6): 9. **Փախուստը դեպի Եգիպտոս** (Օսէէ **11.**1, Մատթ. **2.**13–15): 10. **Մանուկների կոտորածը** (Երեմիա **31.**15, Մատթ. **2.**16–18): 11. **Նրա՝ Հիսուսի դեսպանորդությունը կամ առաքելությունը** (Ծննդ. **12.**3, **49.**10, Եսայի **59.**20 ևն): 12. **Քահանայությունը՝ ըստ Մելքիսեդեկի կարգի** (տես Քահանա): 13. **Մարգարե՝ Մովսեսի նման** (Բ Օրենք **18.**15, Գործք **3.**20–22): 14. **Հեթանոսներին դիմելը** (Եսայի **11.**10, Հովհ. **10.**16, Գործք **10.**45, 47, Բ Օրենք **32.**43, Սաղմ. **17.**50 ևն): 15. **Ծառայությունը Գալիլիայում** (Եսայի **9.**1–2, Մատթ. **4.**12–16): 16. **Կատարած հրաշքները** (Եսայի **35.**5–6, **42.**7, **53.**4, Մատթ. **11.**4–6): 17. **Հոգ որ կատարելությունը** (Սաղմ. **44.**7, Եսայի **11.**2 ևն): 18. **Քարոզչությունը** (Սաղմ. **77.**1–2, Եսայի **2.**3, Միքիա **4.**2 ևն): 19. **Տաճարի մաքրագործումը** (Սաղմ. **68.**10, Հովհ. **2.**17): 20. **Հիսուսի չարչարանքները, հուդայականների և հեթանոսների կողմից մերժվելը** («Ինչո՞ւ խռովություն արեցին հեթանոսները, և ժողովուրդները դատարկ բաներ խորհեցին: Հավաքվեցին երկրի թագավորները, և միավորվեցին իշխաններն ընդդեմ Տիրոջ ու նրա օծյալի...», Սաղմ. **2.**1–2, **40.**6 ևն, Գործք **4.**25–28, Եսայի **6.**9, 10 ևն): 21. **Հետապնդում և անարգանք** (Սաղմ. **34.**7 ևն, Եսայի **49.**7, Հովհ. **15.**23–25 ևն): 22. **Հանդիսավոր մուտքը Երուսաղեմ** («Ուրախացի՛ր խնդությամբ, դո՛ւստրդ

Սիոնի, կանչի՛ր ցնծությամբ, դու՛ստրդ Երուսաղեմի, ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագավորը՝ հեծած էշի, էշի քուռակի վրա», Զաքարիա **9.**9, Մատթ. **21.**1–10): 23. **Մատնվելն ընկերոջ կողմից՝ անհավատ հրեաների ձեռքը** (Սաղմ. **40.**10, **54.**13–15, Զաքարիա **13.**6, Մատթ. **26.**31, 56): 24. **Մատնությունը՝ 30 արծաթ դրամի դիմաց** (Զաքարիա **11.**12, Մատթ. **26.**15): 25. **Մատնիչի [Հուդա Իսկարիովտացու] մահը** (Սաղմ. **54.**16, 24, **108.**8–9, Մատթ. **27.**3–5, Գործք **1.**18–19): 26. **Բրուտի ա·արակի ձեռքբերումը** (Զաքարիա **11.**13, Մատթ. **27.**7): 27. **Աշակերտներից լքվելը** (Զաքարիա **13.**7, Մատթ. **36.**31, 56): 28. **Կեղծ մեղադրանքներ** (Սաղմ. **26.**12, **34.**11 ևն): 29. **Լռություն՝ մեղադրանքների հանդեպ** (Սաղմ. **37.**14–15, Եսայի **53.**7, Մատթ. **26.**63, **27.**12–14): 30. **Ծաղրուծանակ՝ վիրավորանք, հայհոյություն՝ թուք** (Սաղմ. **21.**8–9, 17, **108.**25, **34.**15–21, Եսայի **50.**6, Մարկ. **14.**65, Հովհ. **19.**1): 31. **Համբերություն՝ չարչարանքների մեջ** (Եսայի **53.**7–9): 32. **Խաչելություն** (Սաղմ. **21.**13–17): 33. **Լեղի և քացախ** (Սաղմ. **68.**22): 34. **Աղոթք՝ թշնամիների համար** (Սաղմ. **108.**4): 35. **Աղաղակ՝ խաչի վրա** (Սաղմ. **21.**2, Մարկ. **15.**34): 36. **Մահ՝ ծաղկուն հասակում** (Սաղմ. **88.**46, **101.**23–24): 37. **Մահ՝ չարա·ործների հետ** (Եսայի **53.**12): 38. **Մահ՝ վկայված բնության սասանումով** (Ամոս **5.**20, Զաքարիա **14.**6, Ղուկ. **23.**44–45): 39. **Հիսուսի հանդերձների վրա վիճակ ·ցելը** (Սաղմ. **21.**19): 40. **Նրա ոսկորը չպիտի կոտրվի** (Սաղմ. **33.**21): 41. **Խոցում ·և·դարդով** (Սաղմ. **21.**18, Զաքարիա **13.**6, Հովհ. **19.**34): 42. **Կամավոր մահ** (Սաղմ. **39.**7–9): 43. **Փոխանորդական մահ** (Եսայի **53.**4–6, Դանիել **96.**26): 44. **Հուղարկավորում՝ մեծահարուստի կողմից** (Եսայի **53.**9): Այս համարը եբրայական կանոնում այսպես է՝ «Նրա գերեզմանն ամբարիշտների հետ դրվեց, բայց երբ մեռավ, հարուստի հետ եղավ»: Այլ կերպ է հայկական կանոնի որոշ թարգմանություններում): 45. **Հիսուսի հարությունը** (Սաղմ. **15.**9–11, **29.**4, **40.**11–13, **117.**17, Մատթ. **28.**1–10, Մարկ. **16.**1–8, Ղուկ. **24.**6, 31, 34, Օսէէ **6.**1–3): 46. **Համբարձումը** (Սաղմ. **15.**11, **23.**7, Գործք **2.**32–33 ևն): 47. **Համաշխարհային՝ հավիտենական իշխանություն** (Ա Մնացորդաց **17.**11–14, Սաղմ. **2.**6–8, **8.**6, **44.**6–7 ևն, Եսայի **9.**7, Դանիել **7.**14, Ղուկ. **1.**32–33): 48. **Երկրորդ ա·լուստը՝ փառքով** (Սաղմ. **49.**3–6, Եսայի **9.**6–7, Զաքարիա **12.**10, **14.**4–8, Մատթ. **24.**29–31, Մարկ. **13.**24–27, Ղուկ. **21.**25–28):

Նոր կտակարանն արձանագրում է, թե սուրբ դրվածքներով մարգարեացված և սպասված Մեսիան՝ Հիսուս Քրիստոսը, ծնվում է սուրբ կույս Մարիամից՝ Սուրբ Հոգով (տես *Մարիամ Աստվածածին*), ինչպես Մարիամին ավետել էր Տիրոջ հրեշտակը (Մատթ. **1.**18–23): Նրա անունը դրվում է Հիսուս՝ աստվածային նախասահմանությամբ: Ինչպես հաշվում է Մատթեոս ավետարանիչն իր ազգաբանությունում (Մատթ. 1)՝ Աբրահամից՝ Հավատքի հորից մինչև Քրիստոս լինում է 42 սերունդ: 42-րդը Քրիստոսն է՝ Դավիթ թագավորի սերնդից: Ընդունված կարծիքն այն է, որ Հիսուսը ծնվել է մ.թ. 1 թվականին (որով սկսվում է մեր թվարկությունը): Այլ հաշվարկների համաձայն՝ նա ծնվել է մ.թ.ա. [Ք.ծ.ա.] 4 թվականին, Հերովդես Մեծի մահվանից անմիջապես առաջ: Շուրջ երեսուն տարեկան հասակում (Ղուկ. **3.**23) հայտնում է իրեն աշխարհին և շուրջ երեք տարի ավետում մարդկանց Աստծո փրկության ու երկնքի արքայության բարի լուրը: Հիսուս Քրիստոսի փրկագործ տնօրինության երկրավոր շրջանն ավարտվում է *խաչելությամբ* և հրաշափառ Հարությամբ:

Չորս *Ավետարանները*, ժամանակային տարբեր հատվածներից սկսելով, պատմում են Հիսուս Քրիստոսի Ծննդյան, կյանքի, *առաքյալների* ընտրության, քարոզչության, սուրբ վարքի, հրաշքների, բժշկումների, պայծառակերպության (տես *Վարդավառ*), մեռելներ հարուցանելու մասին, ներկայացնում են Հիսուսի առակները, պատվիրանները, նկարագրում չարչարանքները, խոսում Վերջին ընթրիքի, այսինքն՝ *Հաղորդության* խորհրդի հաստատման, մահվան մատնվելու, խաչվելու, թաղվելու, հարություն առնելու, համբարձվելու, երկրորդ անգամ զորությամբ երկիր վերադառնալու և այլնի մասին: Չորս Ավետարաններն էլ (Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի) արձանագրել են Հիսուսի կյանքի այն դրվագները, որոնք մարգարեացված էին և կատարվում էին մեկ առ մեկ՝ իրականացնելով Աստծո փրկության ծրագիրը:

Հիսուսի կողմից խոստացված Սուրբ Հոգու էջքի և առաքյալների գործունեության պատմությունն է տրված Գործք առաքելոցում: Հիսուս Քրիստոս Անձի, առաքելության և վարդապետության խորհուրդն է բացահայտվում

առաքելական թղթերում: Հովհաննեսի Հայտնությունը վերաբերում է Հիսուս Քրիստոսի հայտնությանը և Երկրորդ գալստյանը:

Հիսուս Քրիստոսով կատարվեց Աստծո ժողովրդի (Իսրայելի) հետ Աստծո կնքած Ուխտը. դա են հաստատում իր իսկ խոսքերը, թե՝ «Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու [կատարելու]» (Մատթ. **5.**17): Հիսուսի կյանքը եղավ կատարյալ առաքինության օրինակ, նվիրում՝ Հայր Աստծո կամքի կատարմանն ու նրա անվան սրբացմանը (տես *Տերունական աղոթք*): Հովհաննես Մկրտիչը Հիսուսի մասին վկայում է՝ «Ահա՛ Գառն Աստուծո, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. **1.**29): Եվ ոչ միայն վերացնում է մեղքը, այլև «...մկրտում է Սուրբ Հոգով» (Հովհ. **1.**33)՝ կնքելով հավիտենական փրկության և կյանքի համար: Հիսուս Քրիստոսին հավատալով՝ մարդը արդարանում է Աստծո առջև, արդարանալով՝ փրկվում է, փրկվելով՝ սրբացվում է Սուրբ Հոգու կնիքով և ընդունում հավիտենական կյանքի ավետիսը: Մինչև Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալուստը, որ խոստացված է Ավետարաններով և Հովհաննեսի Հայտնությամբ, քրիստ. եկեղեցին գտնվում է Սուրբ Հոգու հայտնության շրջանում: Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստյամբ «Հրավառ երկինքը պիտի չքանա, և տարերքը հրկիզվելով պիտի հալվի: Բայց մենք, Աստծու խոստման համաձայն, աչքներս հառած սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի, որոնցում արդարությունն է բնակվում» (Բ Պետրոս **3.**12–13): Այդ ժամանակ է տեղի ունենալու Ահեղ դատաստանը. Աստծո Հակառակորդը՝ *սատանան*, կապվելու է և նետվելու «կրակի և ծծմբի ծովի մեջ» (Հայտն. **20.**9), մեռելները հարություն են առնելու, ոմանք՝ հավիտենական կյանքի և ոմանք՝ երկրորդ մահվան համար: Եվ լինելու է «Նոր երկինք ու նոր երկիր», Աստծուց ու երկնքից իջնելու է սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղեմը՝ «զարդարված ու պատրաստված, ինչպես հարսը իր փեսայի համար» (տես Հայտն. **20**, **21**):

Ավետարանները և առաքելական թղթերը զգուշացնում են բոլոր ուղղափառ քրիստոնյա հավատացյալներին՝ սուտ քրիստոսի կամ *Նեռի* հայտնությունից (տես Ա Հովհ. **2.**18–25), տալիս են ճշմարիտ Քրիստոսի Երկրորդ գալստյան նշանները (տես Մատթ. **24.**26–27, 29–31, Մարկ. **13.**24–27, Ղուկ. **21.**25–28):

Աշխարհ գալով մարդու փրկության համար՝ Հիսուս Քրիստոսը ոչ միայն միջնորդ և բարեխոս եղավ Աստծո և մարդու միջև, այլև մի նոր փոխհարաբերություն հաստատեց նրանց մեջ: Նա ադամորդուն մեղքի ծառայությունից ազատելու և նրան ճշմարիտ աստվածճանաչողության առաջնորդելու համար իր տնօրինական գործունեությամբ իրականացրեց երեք կարևոր պաշտոններ՝ մարգարեական, քահանայական և թագավորական: Ինչպես Հին կտակարանում այս երեք պաշտոնների գործադրումով միջնորդություն էր կատարվում Աստծո և ընտրյալ ժողովրդի միջև, այնպես էլ Նոր կտակարանում Աստծո և մարդու միջև խախտված ուխտը նորոգվում է՝ Հիսուսի կողմից այս երեք պաշտոնների սիրահոժար հանձնառությամբ: Սրա շնորհիվ վերականգնվում է մարդու՝ Աստծո Որդի կոչվելու բարձր պատիվը: Եթե Հին կտակարանում մարգարեն հանդես էր գալիս աստվածային ճշմարտությունը վկայելու, քահանայապետը զոհ էր մատուցում ժողովրդի մեղքերի քավության համար, թագավորը դատում ու պաշտպանում էր ընտրյալ ժողովրդի իրավունքները, ապա Նոր կտակարանում միջնորդության այս երեք պաշտոնները լիալիր կատարելությամբ կենսագործվում են Քրիստոսի տնօրինության շնորհիվ: Նա որպես հայտնութենական ճշմարտություն՝ Նոր Ուխտ է հաստատում ու իրականացնում Աստծո և մարդու միջև (Մարգարեություն), որպես հաշտության անման զոհ մեկընդմիշտ քավում է մարդու մեղքը և հաշտեցնում Աստծո հետ (Քահանայություն), և որպես Թագավոր հաստատում իր ամենահաղթ տիրապետությունը (Թագավորություն):

Ուշ անտիկ, միջնադարյան մշակույթը հարուստ է Հիսուս Քրիստոսի տնօրինական-փրկչական գործունեության մեկնողական ու գրական-գեղ. (տես *Մեկնողական գրականություն, Ճառ, Քարոզ, Ներբող*), պատկերագրական (տես *Մանրանկարչություն, Որմնանկարչություն*), ծիսա-երաժշտական (տես *Խորհրդատետր-Պատարագամատույց, Ժամագիրք, Ճառընտիր*) արտացոլման և վերարտադրման բազմապիսի օրինակներով, որոնք աստվածաբանական բյուրածալ ու նրբին արժեքավորումներով ներկայացնում են նրա տնօրինական բովանդակ սիրանքը: Միջնադարյան կերպարվեստում բացառիկ դեր է վիճակվել մաս-

ՀՆԴԿԱՍՏ. նավորաբար Հիսուս Քրիստոսի անձեռագործ պատկերին, որը, իբրև հայտնութենական դրոշմ կրող նախատիպ, չափօրինակ է ծառայել Հիսուս Քրիստոսի պատկերագրական կանոնի հաստատման և լայն կենցաղավարության համար (սույն պատկերի մասին տես *Աբգար* հոդվածում):

Տես նաև *Ապողինարիզմ, Արիոսականություն, Բարեխոսություն, Դավանանք Հայաստանյայց առաքելական եկեղեցու, Եվտիքականություն, Երանիներ* ինը, *Զատիկ, Զոհաբերություն, Խաչի տոներ, Խորհուրդներ եկեղեցական, Ծաղկազարդ, Կիրակի, Համբարձում, Մկրտություն, Նեստորականություն, Պատարագ, Պատվիրաններ* տասը, *Սաղմոս, Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն, Տերունի տոներ, Տյառնընդառաջ, Ուխտ, Ուխտի տապանակ, Օծում, Օրհնություն, Քրիստոնեություն* հոդվածները:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.1, 1–5-րդ պատկերները:

Լևոն Սարգսյան

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1958-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Պատվիրակության կենտրոններն են Կալկաթա և Սիդնեյ քաղաքները:

Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայ համայնքները XVI դարից եղել են *Իրանա-Հնդկաստանի թեմի* կազմում, 1958-ին անջատվել են թեմից և ամբիշամորեն ենթարկվել Մայր աթոռ Ս. Էջմիածնին: 1958-ին Ասողիկ եպս. Ղազարյանը նշանակվել է Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի [Չինաստան, Ինդոնեզիա, Սինգապուր, Բանգլադեշ, Բիրմա (1989-ից՝ Մյանմա), Ավստրալիա և Նոր Զելանդիա] հայրապետ. պատվիրակ: 1968-ին Ավստրալիան և Նոր Զելանդիան անջատվել են և հռչակվել առանձին թեմ: 1980-ին Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Հ. և Ծ. Ա. Հ. պ. հանձնվել է Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդարանի (Սիդնեյ) իրավասությանը՝ մինչև նոր տնօրինություն:

Հնդկաստանի առաջին հայկ. եկեղեցին կառուցվել է 1547-ին, Մադրասում, Ս. Թովմայի բլրի վրա, 1562-ին եկեղեցի է կառուցվել Ագրայում: Ագրայի գերեզմանատանը պահպանվել են հայագիր տապանաքարեր, ցայսօր կանգուն է Ս. Մարտիրոսի մատուռը: 1695–97-ին Զինսուրահում կառուցվել է Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (կանգուն էր մինչև XIX դ. կեսը): Մադրասում 1712-ին կառուցվել է Ս. Աստվածածինը: Եկեղեցու բակում է թաղված հայ առաջին պարբերականի՝ «Ազդարարի» խմբագիր, հրատարակիչ Հարություն քհն. Շմավոնյանը: Բոմբեյում 1796-ին կառուցվել է Ս. Պետրոս Առաքյալ եկեղեցին:

Կալկաթայի հոգևոր հովվություն, կազմավորվել է XVII դ.: Կենտրոնը՝ Ս. Նազարեթ եկեղեցի: Կալկաթայում պահպանվել են հայերեն գրություններով տապանաքարեր (թվագր. 1630, 1646): 1724-ին կառուցվել է Ս. Նազարեթ եկեղեցին (1734-ին եկեղեցուն կից ավելացել է զանգակատուն), 1909-ին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, 1821–23-ին՝ Ս. Երրորդություն մատուռը: Հայ համայնքը ղեկավարել է եկեղեցական վարչությունը (ընտրվել է 4 տարին մեկ), որն առաջնորդվել է իր կանոնադրությամբ: 1821-ին եկեղեց. վարչության հովանավորությամբ բացվել է Հայոց մարդասիրական ճեմարանը (գործում է ցայսօր): 1928-ին ճեմարանին կից բացվել է Արարատյան գրադարանը (ունի հայերեն ձեռագրեր, հայագիտ. գրքեր, պարբ. մամուլի հարուստ հավաքածու):

Կալկաթայի հոգևոր հովիվն է Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը (2000-ից):

Ծայրագույն Արևելքի (Չինաստան, Ինդոնեզիա, Սինգապուր, Բանգլադեշ, Մյանմա) հայ համայնքները կազմավորվել են XVII դ.: Չինաստանի Խարբին քաղաքում 1920-ական թթ. կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Շանհայում՝ մատուռ: Ջակարտայում (Ինդոնեզիա) կառուցվել է Ս. Հովհաննես (1852) եկեղեցին, Սուրաբայայում՝ Ս. Գևորգը (1927): Հայ համայնք չլինելու պատճառով Չինաստանի և Ինդոնեզիայի եկեղեցիներն այլևս հայկ. չեն: Դաքայում (Բանգլադեշ) կառուցվել է Ս. Հարություն (1781), Յանգոնում (Մյանմա)՝ Ս. Հովհաննես (1862), Սինգապուրում՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ (1885, չգործող) եկեղեցիները: Հարուստ անցյալ ունեցող այս գաղութներում այսօր հատուկենտ հայեր են բնակվում: Մնացել են անցյալի փառքի խոսուն վկաներ եկեղեցիները և շիրմաքարերը:

Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետ. պատվիրակն է *Ավստրալիայի և Նոր*

Զելանդիայի թեմի առաջնորդ Աղան արք. Պալիոզյանը (1981-ից):

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.2, 1-ին պատկերը:

ՀՆԵՎԱՆՔ, ՀՀ Լոռու մարզի Կուրթան գյուղից արևելք, Ջորագետի աջ ափի ձորում: Հնագույն շինությունը VII դ. դեղնավուն սրբատաշ ֆելզիտից կառուցված խաչաձև գմբեթավոր եկեղեցին է՝ ներքուստ եռախորան, արտաքուստ ուղղանկյուն, Ավագ խորանի երկու կողմերում ավանդատներով: Գմբեթն ութանիստ է՝ մշակված որմնակամարներով: Գմբեթային փոխանցումն իրականացված է եռանիստ երկշարք տրոմպներով:

XII–XIII դդ. Հ. գործել է որպես քաղկեղոնիկ վանք: Վրաստանի Դավիթ Շինարար թագավորը 1123-ին Հ. և Լոռի-Տաշիրն ամբողջությամբ հանձնել է ամիրսպասալար Իվանե Օրբելյանին: 1128-ին ամիրսպասալար է դարձել Իվանեի որդի Սմբատը, որը 1154-ին վերանորոգել է Հ-ի գլխ. եկեղեցին (ըստ թմբուկի քիվատակ գոտու վրացերեն արձանագրության), համալիրի գլխ. եկեղեցուն 1186–1206-ին արմ-ից կցվել է գավիթը: Միաժամանակ կառուցվել է միանավ գմբեթավոր սրահը, որը հս-ից բացվում է գավթի մեջ: Սրահի միակ մուտքը հվ-ից է: Մուտքի վերին մասում, խաչաքանդակի երկու կողմերում կա չին. արձանագրություն: Հ-ի երկրորդ՝ միանավ եկեղեցուց պահպանվել են միայն ստորին երկու շարքերը և կիսաշրջանաձև խորանի հատվածը: Համալիրի արլ. և արմ. կողմերում կանգուն են Հ-ի՝ կոպտատաշ բազալտից կառուցված տնտ. շինությունները:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.2, 2-րդ պատկերը:

Գրկ. Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Ե., 1977: Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Ե., 1982: Շախկյան Գ., Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Ե., 1986:

Ալեքսանդր Ջալալյան

ՀՈԳԵԱՑ ՎԱՆՔ, Հոգվոց վանք, Հոգոց վանք, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Անձևացիք գավառում, Վան քաղաքից հարավ, Կանգուար ամրոցից ոչ հեռու: Ըստ Մովսես Խորենացուն վերագրված մի ավանդության, *Բարդուղիմեոս* առաքյալը Հայաստան է բերել Աստվածածնի դիմապատկերը, քանդել տվել Կանգուար ավանի մոտ գտնվող Անահիտի մեհյանը և տեղում կառուցել Ս. Աստվածածին եկեղեցին, կից՝ կուսանոց, հանձնել պատկերը՝ հիմնելով Հ. վ.:

Քրիստոնեությունը պետ. կրոն հռչակվելուց հետո *Գրիգոր Ա Լուսավորիչը* Հ. վ-ում կառուցել է Ս. Սիոն եկեղեցին: Հ. վ. է այցելել *Ներսես Ա Մեծ* կաթողիկոսը և վանքին կից հիվանդանոց հիմնել: IV դ. Հ. վ. եղել է եպիսկոպոսանիստ, վանահայրերը կոչվել են «Աստվածածնի պատկերի առաջնորդ», IX–XI դդ. նրանք գործուն մասնակցություն են ունեցել Վասպուրականի կրոն. և քաղ. կյանքին: XVI–XVII դդ. Հ. վ. եղել է գրչության, ձեռագրերի նկարազարդման կենտրոն (1669-ին, 1670-ին ծաղկած Ավետարանները, 1696-ի բժշկ. ձեռնարկը ևն), ունեցել է ձեռագիր մատյանների հարուստ գրադարան: 1730-ին վանահայր Մարգար վարդապետը *Աբրահամ Բ Խոշաբեցի* կաթողիկոսից ստացել է վանքը նորոգելու համար հանգանակության թույլտվություն: 1765-ին նորոգվել են Ս. Աստվածածին եկեղեցին և վանքի պարիսպները: 1895-ին վանքն ավերել ու կողոպտել են շրջակայքի քրդերը, վերանորոգվել է 1904-ին, ամայացել՝ Մեծ եղեռնից հետո:

Հ. վ. վանք-ամրոց է՝ երկշարք պարիսպներով, որոնց արտաքինը քառանկյուն է (46x43 *մ*), 7–8 *մ* բարձրությամբ, անկյուններում կիսաշրջանաձև աշտարակներով: Մուտքը հվ-ից է: Հիմն. կառույցները միջնաբերդի նման խմբված են հս-արմ. կողմում, երկու ներքին բակերի շուրջը: Ս. Աստվածածին եկեղեցին մեկ զույգ որմնասյուներով գմբեթավոր դահլիճ է, որի Ավագ խորանի տակ պահվել է Տիրամոր պատկերը: Եկեղեցուն արմ-ից կից է հորինվածքով եզակի՝ երկդահլիճ, երկգմբեթ ժամատունը, որի հս. պատից մուտք է բացվել դեպի մեկ զույգ որմնամույթով թաղածածկ Ս. Սիոն եկեղեցի: Վանքից քիչ հեռու Ս. Հովհաննես մատուռն է: Հ. վ-ի ուխտագնացության օրերն են եղել Համբարձման և Վարագա խաչի տոները:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.2, 3-րդ պատկերը:

Գրկ. Շերենց Գ., Սրբավայրեր, Թ., 1902: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 3, Վնն., 1947: Cuneo P., Le Basiliche di Tux, Xncorgin, Pasvack, Hogeacvank, Roma, 1973; Thierry J.M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Արմեն Զարյան

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ, հուն. Պենտեկոստե (հիսուն օր), հայերեն՝ Հինունք, Հի-

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ սունք: *Տերունի տոն*: Հինունք կամ Հիսունք անունը տրվել է ս. *Զատկից* մինչև Հ. 50 օրերի տոներին, որոնք ամբողջովին Տերունի են՝ ի պատիվ Հարության, իսկ վերջին՝ 50-րդ օրը *Սուրբ Հոգու* գալստյանն է նվիրված: Հրեաները ս. Զատկից հիսուն օր հետո, ի հիշատակ տասնաբանյա (սինայական) օրենքի ստացման, հատուկ տոն ունեն (Պենտեկոստե): Քրիստոնեական Հ-յան տոնը՝ Սուրբ Հոգու գալուստը, համընկել է Պենտեկոստեի օրվա հետ:

Հ. Սուրբ Հոգու աղավնակերպ գալուստն է առաքյալների վրա: Հիսուս Քրիստոսը Վերջին ընթրիքի ժամանակ խոստացել էր Սուրբ Հոգին ուղարկել առաքյալներին (Հովհ. **14.**26, 16.7) և Համբարձման օրն էլ հրամայեց Երուսաղեմում սպասել, մինչև Սուրբ Հոգին ընդունեն (Ղուկ. **24.**49): Ըստ Գործք առաքելոցի, դա կատարվեց ս. Զատկի հիսուներորդ օրը. «Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք **2.**4):

Ս. Գրքում երկու անգամ է խոսվում լեզվափոխության մասին. աշտարակաշինության ժամանակ, երբ մարդկանց լեզուները խառնվում են, և նրանք իրար չեն հասկանում և Հ-յան օրը, երբ կատարվում է հակառակը՝ բոլորը խոսում են այլևայլ լեզուներով ու պատմում Աստծո մեծագործությունների մասին: Հռոմ. կայսրության զանազան վայրերից Երուսաղեմ հավաքված տարբեր ազգերի մարդիկ խոսում էին տարբեր լեզուներով, ինչը խոչընդոտում էր Ավետարանի քարոզչությանը: Սուրբ Հոգու իջմամբ առաքյալներն օժտվեցին անծանոթ լեզուներով խոսելու շնորհքով և նոր ուսմունքի ճշմարտությունները բոլոր ազգերին քարոզելու կարողությամբ (Գործք **2.**4–12): Ըստ Գործք առաքելոցի, Հ-յան օրը երեք հազար մարդ դարձի եկավ, մկրտվեց (Գործք **2.**41), ընդունեց Սուրբ Հոգու պարգևը, և օրեցօր ավելանում էր քրիստոնյաների թիվը (Գործք **2.**42–47):

Հայ եկեղեցին, Հարության օրից հիսուն օր հաշվելով, ավանդաբար Հ. նշում է կիրակի օրը, որը ս. Զատկի հետ 35 օրվա շարժականություն ունի (մայիսի 10-ից հունիսի 16-ը): Հնում մեկ օր էր միայն տոնվում Հ., բայց XII դ. *Ներսես Շնորհալին* սահմանել է ամբողջ շաբաթ, ի պատիվ Սուրբ Հոգու, տոն կատարել՝ ճոխացնելով այդ տոնը հատուկ ընթերցվածներով ու շարականներով:

Երաժշտություն: Հ-յան կարգը սահմանում է հետևյալ հոգևոր երգերը՝ «Համբարձաւ Տէրն մեր», «Առաքելոյ աղաւնոյ», հարց «Զհոգւոյն գալստեան», «Երրորդութիւն անբաժանելի», «Որ ի յարաշարժ», «Այսօր երկնայինքն», «Որ ի վերայ բղխեալ», «Կենդանարար Աստուած», «Որ համագոյդ ես» շարականները, ինչպես նաև առավոտերգեր՝ «Զգալուստ հոգւոյն օրհնեսցուք» ևն, սրանցից բացի՝ ալելուիաներ, սաղմոսներ ևն: Թափորի շարականն է «Առաքելոյ աղաւնոյ», սրբասացությունը՝ «Հրեշտակային»-ը: Տոնին նվիրվել են նաև տաղեր, օր., Գրիգոր Նարեկացու «Յանկարծահնչեաց»-ը (մեղեդին մեզ չի հասել):

Պատկերագրություն: «Հոգեգալըստյան» պատկերագր. թեման հայտնի է դեռևս VI դարից: Հայկ. արվեստի հնագույն օրինակը «*Մողնու Ավետարան*»-ի մանրանկարն է: Ուշագրավ են Կիրակոս Աղբակեցու, Ռստակեսի, Մկրտիչ ծաղկողի, Զաքարիա Գնունեցու Հ-յան պատկերումները: Սովորաբար արարողությունը պատկերվում է Վերնատանը, երբեմն՝ եկեղեցում: Պատկերի վերին հատվածում աստվածային երկինքը խորհրդանշող շրջանն է, որի մեջ նկատելի է Տիեզերական Քահանայապետի Աթոռը: Սրա վրա դրված է լինում *Ուխտի տապանակը* (խաչազարդ ծածկոցով)՝ վրան բազմած Հիսուսի խաչը պահող աղավնակերպ Սուրբ Հոգին: Այս տեսարանի վերնամասում երբեմն պատկերվում է գահին բազմած Քրիստոսը: Պատկերի կենտր. մասում բոլորաձև նստած են առաքյալները, որոնց վրա երկնքից որպես լույսի ճառագայթներ իջնում են Սուրբ Հոգու շնորհները: Առաքյալների գլխավերևում պատկերված են հրեղեն լեզուներ, իսկ առաքյալների հետ երբեմն պատկերվում է Տիրամայրը: Պատկերի ստորին մասում հաճախ լինում է Վերնատան մուտքը խորհրդանշող խորան, որի մեջ ներկայացված են հրեաները և հեթանոսները, երբեմն այլակերպ՝ շան գլխով:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.3, 1–2-րդ պատկերները:

Արտաշես Ղազարյան
Մհեր Նավոյան
Մարտին Միքայելյան

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, աստվածապաշտության կամ *ծեսի*, պաշտամունքի բաղկացուցիչ հիմնական

բաժիններից: Կատարվում են հավատացյալների կյանքում որոշակի պահերի և դեպքերի առիթով կամ եկեղեց. տոների հետ առնչվող պարագայում: Հ. բ. ա-ից շատերը [խաչակնքում, մոմավառություն, մյուռոնօրհնեք (տես *Մյուռոն*), տնօրհնեք, ուխտագնացություն, *Ջրօրհնեք* ևն] հատուկ են քրիստ. շատ եկեղեցիների, մյուսները զուտ Հայ եկեղեցուն բնորոշ ազգ-քրիստ. արարողություններ են (*մատաղ*, մատաղօրհնություն, *Տյառնընդառաջի* խարույկ, *Խաղողօրհնեք*, աղօրհնեք ևն): Հ. բ. ա-ի մեծ մասն ընդհանուր է բոլոր հավատացյալների համար, բայց Հայ եկեղեցու *Մաշտոց* ծիսարանում հիշատակվում են մի շարք այնպիսի բարեպաշտ. սովորություններ, որոնք առնչվում են առանձին հավատացյալների կամ նրանց կյանքի հետ կապված երևույթների («Կանոն վասն դժվարածին հղի կնոջ», «Կանոն ջրհոր օրհնելո», «Կանոն ուխտերեից», «Կանոն քառասնօրեին» ևն) հետ: Առավել տարածված Հ. բ. ա. են.

Խաչակնքում. *Ընդհանրական եկեղեցու* հնավանդ և սրբազան ծիսական արտահայտչաձևերից: Հավատացյալը խաչակնքում է եկեղեց. արարողությունների ընթացքում, եկեղեցի, սրբատեղի մտնելիս և ելնելիս, աղոթքի սկզբում և վերջում, սրբապատկերին կամ որևէ սրբության մոտենալիս, խնկարկության և պատարագիչ քահանայի խաչանիշ օրհնության ժամանակ: Խաչակնքվում են նաև վտանգի, փորձության պահին, պաշտպանելով սեփական անձը չարի դեմ՝ խնդրելով Աստծո օգնությունը և ապավինելով ս. *Խաչի* պահպանությանը: Խաչակնքելու սովորությունը քրիստոնյաների մոտ սկիզբ է առել դեռևս առաքելական շրջանում, հետագայում եկեղեցին նվիրագործել է այն: Խաչակնքումը կատարվում է աջ ձեռքի երեք մատները (բթամատը, ցուցամատն ու միջնամատը) միացրած, ինչը խորհրդանշում է անբաժան և միասնական Սուրբ *Երրորդությունը*: Մյուս երկու մատները ծալվում են ափի մեջ՝ խորհրդանշելով Քրիստոսի մեջ կատարյալ Աստծո և կատարյալ մարդու անբաժան միությունը: Խաչակնքվում են աջ ձեռքի երեք միացրած մատները տանելով ճակատին (ասելով՝ «Հանուն Հոր»), իջեցնում են ներքև (ասելով՝ «և Որդվո»), ապա՝ ձեռքը տանում են դեպի ձախ (ասելով՝ «և Հոգվույն») և դեպի աջ (ասելով՝ «Սրբո»): Այս ձևով խաչակնքվողն իր վրա պատկերում է ս.Խաչի նշանը: Այնուհետև, ձեռքի բաց ափը դնելով կրծքին, խոնարհվում են՝ ասելով. «Ամեն», որը եբրայերեն նշանակում է «թող այդպես լինի», «ճշմարիտ է»:

Մոմավառություն. Ընդհանրական եկեղեցու բարեպաշտ. սովորություն, հոգևոր ապրումի ու հավատի տեսանելի նյութականացված արտահայտություն: Խորհրդանշում է խավար շրջապատի, այլակերպորեն՝ դարձի չեկածների, հեթանոսների և անհավատների լուսավորումը, ինչպես նաև՝ հավատացյալ քրիստոնյայի լուսավոր հավատը («Դո՛ւք եք աշխարհի լույսը...», Մատթ. 5.14), աստվածային կրակով մեղքի մոխրացումը: Եկեղեցում մոմ վառելը գալիս է առաքելական շրջանից, երբ առաջին քրիստոնյաները, խուսափելով հալածանքներից ու հետապնդումներից, հավաքվել, մոմերով լուսավորել են իրենց գետնափոր բնակավայրերը՝ կատակոմբները, և գաղտնաբար աղոթել: Եկեղեցիներում և աղոթավայրերում մոմի հետ միասին գործածվել են նաև կանթեղներ, որոնք վառվել են ձեթով և լուսավորել աղոթատեղին: Երբ քրիստոնեությունը հռչակվել է պետ. կրոն, և հիմնվել են նոր եկեղեցիներ, որտեղ կատարվելու էր աստվածապաշտ. կարգը, դրանք լուսավորելու համար պահպանվել է կանթեղի ու մոմի գործածությունը: Կանթեղներն ու մոմերը եկեղեցուն խորհրդավորություն են տալիս և երկյուղածություն ստեղծում, եկեղեց. արարողություններին շքեղություն ու վեհություն հաղորդում:

Եկեղեցում հավատացյալի մոմ դնելը և վառելը դիտվում է որպես *զոհաբերության* յուրատեսակ մի արտահայտություն՝ ուղղված Հիսուս Քրիստոսին՝ «Աշխարհի լույսին» (Հովհ. 8.12), ինչպես նաև՝ նյութական օժանդակություն եկեղեցուն (ուստի չի խրախուսվում եկեղեցում դրսից բերված մոմ վառելը): Ընդունված է, որ հավատացյալն այդ զոհաբերությունը և եկեղեցուն օգնությունը իր անձն. միջոցներով կատարի:

Խնկարկություն. եկեղեցում ծիսակատարության ընթացքում խունկ ծխելը կամ խնկարկությունը հնագույն կրոն. ավանդույթ է: Եբրայեցիները սովորություն ունեին կրոն. ծիսակատարությունների ընթացքում խունկ ծխել: *Երուսաղեմի* տաճարում եղել են ողջակեզի, խնկի և առաջավորության հացի սեղաններ: Խունկի սեղանը, ինչպես նկարագրվում է Ելք գրքում, եղել է սրբություն կոչված վայրում, և քահանաներն այստեղ են կատարել խնկարկությունը: Եկեղեցում, արարողության

ընթացքում սարկավագը և քահանան խնկարկում են սրբապատկերների, ս. *Սեղանի* և ս. *Հաղորդության* նշխարի առջև: Հայ եկեղեցում ծիսակատարության և ս. *Պատարագի* ընթացքում գործածվող խունկը (պատրաստվում է հոտավետ ծառերի խեժից) նախապես օրհնում է քահանան: Մաշտոց ծիսարանը հատուկ աղոթք է պարունակում խունկն օրհնելու համար: Խնկարկվում է հավատացյալ ժողովուրդը: Խնկարկությունը խորհրդանշում է առ Աստված բարձրացող աղոթքն ու օրհնությունը, իմաստավորում այն: Խնկարկության ընթացքում ժողովուրդն աղոթում է, խաչակնքում ու երկրպագում խնկարկության ծխի առջև՝ խունկի անուշաբույրի մեջ Աստծուն փառաբանելով: Խունկի բուրմունքի հետ աղոթքը բարձրանում է երկինք: Խնկարկություն է կատարվում նաև ննջեցյալների տանը կամ գերեզմանատուն այցելելիս, ինչպես Յուղաբեր կանայք Հիսուսի թաղման հաջորդ օրն այցելել են գերեզման՝ իրենց հետ խունկ տանելով:

Երկրպագություն. ս. Պատարագի և մյուս խորհրդակատարությունների ընթացքում Աստծուն երկրպագելու սովորություն: Ընդհանրապես բոլոր եկեղեց. արարողությունները, ծեսերը, տոները, ժամերգությունները երկրպագություն են Աստծուն՝ ի դեմս Սուրբ Երրորդության երեք Անձերի, ինչպես նաև սրբերին և մարգարեներին՝ որպես հարգանքի, ակնածանքի, անվերապահ հեղինակության ընդունում սեփական անձի, կյանքի և գործերի նկատմամբ: Երկրպագությունը կատարում են պատարագիչ քահանան և հավատացյալները, երբ ս. Պատարագի ընթացքում ասվում է «Աստծոյ երկրպագեսցուք»: Երկրպագում են նաև սրբապատկերների առջև: Երկրպագելիս երեսը խաչակնքում են: Երկրպագությունը կարող է կատարվել գլուխը խոնարհելով կամ ծնրադրությամբ: Վերջինս կոչվում է նաև ծնրադիր երկրպագություն, որ հատուկ է հատկապես առանձնական աղոթքին և աստվածապաշտությանը: Կիրակի օրը չեն ծնրադրում (նման կանոն առաջին անգամ ընդունվել է *Նիկիայի Ա տիեզերական ժողովում*), այլ՝ Աստծուն երկրպագում են կանգնած: Դրանով պատվում են կիրակի օրվա խորհուրդը, որովհետև այդ օրը Քրիստոսը հարություն առավ և մարդկանց ոտքի կանգնեցրեց մեղքերից:

Տնօրհնեք. քրիստ. շատ եկեղեցիներին հատուկ արարողություն: Ս. Ծնունդին և ս. *Զատկին* քահանան այցելում է իր ծխի տները՝ Հիսուսի Ծնունդը կամ Հարությունն ավետելու և պատշաճ արարողությամբ հավատացյալներին ու նրանց տները օրհնելու, որպեսզի Աստված հովանի և պահապան լինի տան բնակիչներին: Տնօրհնեքը գալիս է առաքելական շրջանից, երբ Հիսուսի տասներկու աշակերտները Տիրոջ Ծնունդն ու Հարության Բարի լուրն ավետելու և օրհնելու համար այցելել են հավատացյալների տները: Տնօրհնեքի ժամանակ քահանան օրհնում է նաև տան հացը, ջուրը և աղը: Տնօրհնեք կատարվում է նաև այն ժամանակ, երբ տանը խախտվում է խաղաղությունը, կամ զգացվում է դիվային ուժերի ներկայություն:

Անդաստան. աշխարհի չորս ծագերի օրհներգությանը նվիրված արարողություն. մատուցվում է նաև անդաստանների կամ արտերի պտղաբերության և արգասավորության համար: Հնում անդաստանի արարողությունը կատարվել է եկեղեցուց դուրս՝ արտերի և այգիների մեջ: Տոնացույցի համաձայն՝ «անդաստան ելանել» կամ «անդաստան օրհնել» նշանակում է եկեղեցու ատյանում չըլելով՝ աշխարհի չորս կողմերը օրհնել: Արարողության ժամանակ հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարանով երգելով օրհնում է արևելքը և այնտեղ գտնվող Հայոց հայրապետությունը՝ ս. Խաչի և Ավետարանի նշանով, հանուն Սուրբ Երրորդության: Այնուհետև օրհնվում է և պահապան խնդրանք ներկայացվում աշխարհի արևմտյան կողմի համար, որտեղ քրիստոնյա թագավորություններ և ազգեր կան: Դեմքերը դեպի հարավ դարձնելով՝ օրհնում են հարավը, այնտեղի երկրները, անդաստանները և տարվա պտղաբերությունը: Դեպի հյուսիս դառնալով՝ օրհներգվում են աշխարհի հյուսիսային կողմն ու այնտեղ գտնվող վանքերը, անապատները, քաղաքներն ու գյուղերը և նրանց բնակիչները: Անդաստանի արարողությունը Տոնացույցի համաձայն, տարվա ընթացքում կատարվում է հետևյալ տոներին. Զատկին, Երևման ս. Խաչին, *Համբարձումին*, Երկրորդ Ծաղկազարդին, *Խաչվերացին*, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, *Վարդավառին*, Աստվածածնի Վերափոխմանը, *Ծաղկազարդին*՝ առավոտյան և երեկոյան, Նոր Կիրակիին, Կարմիր Կիրակիին, Տյառնընդառաջին՝ երեկոյան, իսկ Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակիին և Հինունքին՝ առավոտյան:

Գերեզմանօրհնեք. ըստ քրիստ. փրկաբանական ըմբռնման՝ գերեզմանը մահացածի մշտական և անփոփոխ հանգրվանը չէ, այլ՝ նախնական հանգստարան: Գերեզմանի հանգիստը մինչև հարություն ժամանակավոր քուն է, իսկ մահացողը՝ ննջեցյալ և ոչ թե մեռյալ: Դրա հետ է կապված փրկաբանական այն գաղափարը, որ գերեզմանն ինչ-որ ժամանակ հարության վայր է դառնալու: Քրիստոնյայի համար հավիտենական կյանքի հավատը (ամրապնդված Քրիստոսի կողմից մահվան հաղթահարման, փրկագործության և հարության հավատով) վերացնում է մահվան զորությունը: Թաղման կարգի հետ կապված արարողություններն ու ծեսերը (սաղմոսերգություն, հիմներգություն, բարեխոսական աղոթք հանգուցյալի համար, հանգուցյալի մահվան հիշատակի տարեդարձ ևն), այդ թվում և գերեզմանօրհնեքը, քրիստ. հարության գաղափարի արտահայտություններն են: Գերեզմանօրհնեքի նպատակն է հիշել հանգուցյալներին և ավետել նրանց հարության հույսը: Ըստ Մաշտոց ծիսարանի՝ քահանան հողին հանձնված դիակի մոտ Աստծուն խնդրում է հոգևոր կնիքներով և օրհնությամբ ապահովել հանգուցյալի հանգիստը մինչև նրա հարությունը: Հանգուցյալին հողին հանձնելուց, քահանայի կողմից գերեզմանը խաչակնքելուց և համապատասխան աղոթքից հետո գերեզմանը համարվում է օրհնված և կնքված: Նախ կնքվում է գերեզմանի արևմտյան (գլխի) կողմը, ապա՝ արևելյան (ոտքերի) կողմը, հետո՝ գերեզմանի սիրտը (ննջեցյալի սրտի մոտ): Օրհնելուց և կնքելուց, համապատասխան աղոթքներից հետո քահանան ննջեցյալի գլխավերևում ասում է. «Անշարժ եղիցի կնիք տէրութեան ի վերայ գերեզմանի ծառային Աստուծոյ մինչև ի գալուստն Քրիստոսի, որ եկեալ միւսանգամ՝ նորոգեսցէ փառօք ի փառս Հօր և Հոգւոյն Սրբոյ. ամէն»: Կնիք դնելու խորհրդանշանը հնում ունեցել է կրոն. մեծ նշանակություն: Նախաքրիստ. շրջանում գերեզմանի կնքման սովորությունը համընդհանուր բնույթ է կրել, օգնել է որոշել մահացածի պատկանելությունը և խուսափել օտարների անակնկալ հարձակումից: Հիսուսի գերեզմանը ևս Պիղատոսի կարգադրությամբ կնքվել է, որպեսզի դիակը չգողանան (Մատթ. 27.66): Քրիստոնյաները խորհրդաբանորեն կնքում և օրհնում են հանգուցյալների շիրիմները՝ ապահովելով նրանց հանգիստը դիվային ուժերից, ճանաչել տալով մահացածին որպես Աստծուն ենթակա: *Տաղավար* տոներին հաջորդող *մեռելոց* օրերին ևս Հայ եկեղեցին գերեզմանօրհնեք է կատարում:

Հոգեհանգիստ. ննջեցյալի համար կատարվող արարողություն, բառացի նշանակում է «հանգիստ՝ հոգու համար»: Հայ եկեղեցում հանգուցյալների հիշատակումը կատարվում է հոգեհանգստի միջոցով, ինչպես նաև Տաղավար տոներին հաջորդող գերեզմանօրհնեքի ժամանակ: Նախաքրիստ. շրջանի հայկ. մեռելապաշտամունքի մեջ գերիշխող՝ նախնիների հանդեպ հարգանքի տուրքը Հայ եկեղեցին ընդօրինակել է՝ փոխարինելով հանգուցյալների հիշատակման օրերով: Այդ օրերին գերեզմանի մոտ տեղի են ունեցել ճաշկերույթներ՝ հանգուցյալի հոգու հանգստության համար: Հակառակ հեթանոսների՝ դիակի նկատմամբ խուսափող. վարմունքի, քրիստ. հավատի համաձայն՝ ննջեցյալը, որ պիտի հարություն առնի՝ Աստծո հետ միանալու համար, սուրբ է և մաքուր: Քրիստ. եկեղեցին ուսուցանում է կենդանի և ննջեցյալ մարդկանց միասնությունը, քրիստ. կյանքի սկիզբն ու վերջը շաղկապվում են միմյանց: Հայ եկեղեցու վարդապետության համաձայն, մեռելները մահից հետո սպասում են Վերջին դատաստանի օրվան: Հոգեհանգստյան արարողությունն էլ այս իմաստով է կատարվում: Այն երախտագիտության արտահայտություն է, ինչպես նաև աղոթք՝ ննջեցյալների համար: Ողջերը, հիշելով նրանց, հոգեհանգստի ընթացքում ողորմություն են հայցում Աստծուց՝ ննջեցյալների հոգիների համար: Եկեղեց. օրենք և սովորություն է հոգեհանգստի արարողություն կատարել մահից կամ թաղումից հետո, ի վերջավորություն ս. Պատարագի: Հոգեհանգիստ կատարվում է նաև թաղման հաջորդ օրվա առավոտյան, թարմ գերեզմանի մոտ՝ հանգուցյալի հիշատակությամբ: Հնում այս սովորությունը կոչվել է «այգալացն»: Կապված է Ավետարանի Հարության հատվածի հիշատակության հետ, երբ Յուղաբեր կանայք այգաբացին գալիս են Քրիստոսի գերեզման՝ նրան օծելու, և տեղը թափուր են գտնում (Մարկ. 16.1–11): Այս իմաստով է *Գրիգոր Տաթևացին* մեկնաբանում հաջորդ առավոտվա հիշատակումը. «Որպէս իւղաբեր կանայքն նախ եկին ի գերեզմանն և տեսին յարուցեալ զՔրիստոս, եւ ապա առաքեալքն, նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց

նախ ի գերեզմանն եւ ապա՝ արանց, եւ հոգեւոր տեսութեամբ ուրախանալ»: Այս արարողությամբ [ժողովրդի մեջ հայտնի է «ինքնահող» կամ «էքնահող» («այգուց», այսինքն՝ վաղ առավոտյան բառի ժողովրդախոսակց. տարբերակն է) անունով] Հայ եկեղեցին տարբերվում է մյուս եկեղեցիներից, որոնք ընդունում են միայն երրորդ օրվա հիշատակությունը, որը պատկանում է քրիստ. հնագույն ավանդույթների թվին և հնում կապվել է գերեզմանի մոտ տեղի ունեցող *ագապե* ճաշկերույթի և հաղորդության հետ: Ներկայումս ընդհանրացված սովորություն է հոգեհանգիստ կատարել մահվանից հետո, թաղման հաջորդ օրը, յոթնօրյակին, քառասունքին և մահվան տարելիցին: Հոգեհանգստյան արարողության ընթացքում երգվում են հանգստյան շարականներ, ընթերցվում է հանգստյան Ավետարանը և վերջում՝ «Քրիստոս Որդի Աստծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները, որպեսզի Վերջին դատաստանի օրը Աստված հիշի նրանց և արդարությամբ ու գթությամբ դատաստան անի:

Գրկ. Կարապետյան Ա., Հոգեւոր բարեպաշտական արարողություններ, Ս. Էջմիածին, 1999:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, արեւելաքրիստոնեական աշխարհի երաժշտական մշակույթի հնագույն ճյուղերից. ձեւավորվել է IV–V դդ.: Լինելով բացառապես միաձայն (մոնոդիկ) և կազմավորվելով Արեւելքի և Արեւմուտքի հինավուրց բազմահարուստ երաժշտ. ավանդույթների խաչմերուկում՝ դարերի ընթացքում ձեռք է բերել ինքնատիպ գծեր, որոնք պայմանավորված էին եկեղեց. ճայնեղանակների ուրույն համակարգով (տես *Ուլթձայն*) և ունեին ժող. ու գուսան. արվեստի հետ ընդհանուր առնչություններ: Զարգանալով հազարամյակի ընթացքում (V–XV դդ.)՝ Հ. ե. մշտապես եղել է ազգ. մշակույթի կարկառուն դեմքերի ուշադրության կենտրոնում և հարստացել է նրանց ստեղծագործություններով:

Քրիստոնեության ընդունումը որպես պետ. կրոն (301) և գրերի գյուտը (405) կարևոր խթան են հանդիսացել նաև հոգեւոր երգարվեստի ու պաշտոնական երգեցողության զարգացման համար: Թարգմանվել և աստիճանաբար ազգ. դիմագիծ են ստացել Հայ առաքելական եկեղեցու հիմն. երաժշտածիս. մատյանները՝ *Խորհրդատետր-Պատարագամատույցը* և *Մաշտոցը*: Աստվածաշնչից առանձնացած դավթյան *սաղմոսների* հիման վրա դրսևորել է հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագիրքը՝ իր ութմասնյա սաղմոսականոններով, երգեցիկ *քարոզներով* և նրանց հարող աղոթքներով:

Հ. ե-յան ձևավորման սկզբ. փուլում պաշտոնական երգեցողության հիմքը կազմող *սաղմոսերգությունը* և երգեցիկ ընթերցանությունը պայմանավորել են նոր գեղագիտ. պահանջներով թելադրվող ելևէջային սահմանափակ տիպային եղանակների շրջանակը: Առաջին ինքնուրույն հոգևոր *երգերի*՝ կցուրդների (տես *Շարական*) երևան գալը (V դ.) դրել է ազգ. շարականերգության սկիզբը: Դրանց ստեղծումը ավանդաբար վերագրվել է *Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Ա Պարթևին, Մովսես Խորենացուն* և *Հովհաննես Ա Մանդակունուն*: Ըստ շարականագիրների պահպանված միջնադարյան ցուցակների, Մեսրոպ Մաշտոցը հորինել է *ապաշխարության* վշտագին-քնարական շարականները, Սահակ Ա Պարթևը՝ *Ավագ շաբաթվա* հանդիսավոր երգասացությունները, Մովսես Խորենացին՝ Ծննդյան և Աստվածահայտնության հզոր շնչի վիպաքնար. երգերն ու *ավետիսները*, Հովհաննես Ա Մանդակունին՝ Առաքելոց և Տապանակի մի շարք խստաշունչ կցուրդները: Այդ շրջանում են կազմավորվել Հայ շարականերգությանը հատուկ կերպարային արտահայտչականության հիմն. ոլորտները, աստվածաշնչային նյութի բանաստեղծ. մշակման հնարները, Հայ եկեղեց. երգեցողության հիմն. տիպերը՝ հորդոր, չափավոր-միջակ և ծանր երգերը, որոնց մեջ շարժումը (տեմպը) պայմանավորել է նաև գրական խոսքի հնչյունավորման կերպը: Երգեցողության այդ տիպերի մշակումը կապված է նաև պաշտոնական երգեցողության մեջ նրանց գրված տեղով, այսինքն՝ ծիսական կիրառությամբ: Ամենօրյա *ժամերգությունների* համար նախատեսված երգասացությունները, բնականաբար, ունեն պարզ և գնայուն նկարագիր. կատարում է դպրաց դասը: Կիրակի օրերին և եկեղեց. մեծ տոների ժամանակ կատարվող երգասացություններն օրվա հանդիսավորությունն ընդգծելու նպատակով ստանում են ավելի մեծ ծավալ, ծորերգային-զարդոլորուն (կամտիլենային-մելիզմատիկ) բնույթ և հնչյունավորվում մենակատար հմուտ երգեցողների կողմից: Ապաշխարանքի, մարդու մեղավորության գաղափարի և Վերջին դատաստանի սպասում արտահայտող շարականների կողքին քիչ չեն պատմող. և մեկնող. բովանդակության, ինչպես և

լուսավոր, բերկրալից, քնարական զգացումներ արտահայտող փառաբանական բնույթի երգերը: V դ. պատմիչների (*Փավստոս Բուզանդ, Ագաթանգեղոս, Կորյուն, Եղիշե,* Մովսես Խորենացի, *Ղազար Փարպեցի*) աշխատություններում վկայված է առնվազն երեք ժանրային տեսակի կիրառություն՝ սաղմոս, օրհնություն, որի տակ պետք է հասկանալ հինկտակարանային մարգարեական երգեցիկ օրհնությունները, և հոգևոր երգը, այն է՝ առաջին ինքնուրույն հոգևոր երգերը՝ կցուրդները:

VII–VIII դդ. Հ. ե. նկատելի առաջընթաց է ապրել: Կարևոր տեղաշարժեր են կատարվել պաշտոներգության բարեկարգման, նոր երաժշտաբանաստեղծ. տեսակների ներմուծման և ութձայն համակարգի կիրառության ոլորտում: Հանդես են եկել նոր շարականագիրներ՝ *Կոմիտաս Ա Աղցեցի, Անանիա Շիրակացի* (Հարության շարականներով), *Սահակ Գ Զորոփորեցի* (խաչին և եկեղեցուն նվիրված շարականներով), *Բարսեղ Ճոն, Ստեփանոս Սյունեցի, Հովհաննես Գ Օձնեցի* և ուր., որոնց շարականները զգալիորեն ընդլայնել են Հ. ե-յան շրջանակները: Իրենց վեհ տրամադրությամբ, մեծակերտ ոճով և մեղեդային նկարագրի մաքրությամբ ու նրբակերտությամբ աչքի ընկնող այդ օրհներգերը բնութագրվում են դեղ. ընդհանրացման ավելի բարձր աստիճանով: Տվյալ ժամանակաշրջանի չափանմուշային կոթող է Կոմիտաս Ա Աղցեցու՝ *Հռիփսիմյանց կույսերին* ձոնված «Անձինք նուիրեալք» շարականը՝ գրված այբբենական ակրոստիքոսի ձևով, որտեղ յուրովի կիրառվել են բյուզ. կոնդակիոնին բնորոշ հատկանիշները: Հայ իրականության մեջ, ստանալով «կցուրդ» անվանումը, այդ երաժշտաբանաստեղծ. տեսակը մեծ տարածում է գտել հետագա դարերի հեղինակների մոտ: Այդուհետ այբբենական ծայրակապով գրված շարականները ստացել են նաև «Անձինք» անվանումը: Նույն ժամանակաշրջանում, *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսի հանձնարարությամբ, Բարսեղ Ճոնը կազմել է հոգևոր ինքնուրույն երգերի պաշտոնապես վավերացված առաջին ժողովածուն, որը կոչվել է «Ճոնընտիր» և հիմք է դարձել ապագա *Շարակնոցի* համար:

Հ. ե-յան ասպարեզում մեծ է Ստեփանոս Սյունեցու դերը, որի անվան հետ է կապված *կանոն* ժանրի ներմուծումը, Հարության Ավագ օրհնությունների ստեղծումը, *ութձայն* համակարգի բարեկարգումը, ինչպես նաև *խազագրության* նախն. կիրառումը: Տվյալ շրջանի շարականերգության ցայտուն օրինակ է *Խոսրովիդուխտի* «Զարմանալի է ինձ» նշանավոր ողբը կամ գովքը, ձոնված իր նահատակ եղբոր՝ *Վահան Գողթնացու* հիշատակին: Այդ շրջանի հոգևոր երգաստեղծության մեջ, ըստ պատմ. և վարքագր. աղբյուրների, զգալի ներդրում են ունեցել նաև Ստեփանոս Սյունեցու քույրը՝ միանձնուհի *Սահակադուխտը*, և աշակերտակիցը՝ *Գրիգոր Գոգիկը*: IX դ. *Մաշտոց Ա Եղիվարդեցի* կաթողիկոսը կարգավորել է հայոց ծիսարանը՝ Մաշտոցը: Երգահաններից հիշատակելի է *Համամ Արևելցին*՝ իր զղջական «Հայր երկնավոր» պարականոն շարականով:

Հ. ե. աննախադեպ վերելք է ապրել X–XIV դդ.: Այդ շրջանի Հայաստանի երաժշտ. մասնագիտացված մշակույթը պատկանում է քրիստոնյա աշխարհի եկեղեց. երգարվեստի առավել նշանակալի երևույթների շարքին: X–XIV դդ. երաժշտածիս. մատյաններում արտացոլվել է հոգևոր մոնոդիայի՝ շարական, *գանձ, տաղ,* սրբասացության տարբեր տեսակների բուռն զարգացումը: Առաջատար նշանակություն է ստացել այսպես կոչված՝ մեծակերտ-զարդոլորուն (մոնումենտալ-մելիզմատիկ) երգառոը, որը գերակշռող է դարձել մի շարք շարականագիրների և տաղերգուների ստեղծագործություններում: Այդ ժամանակաշրջանում է, որ իրենց վերջն. տեսքն ու գեղագիտապես կատարյալ ձևն են ստացել Շարակնոցը, *Ժամագիրքը,* Պատարագամատույցը, Մաշտոցը: Երևան են եկել նոր տիպի ժողովածուներ՝ *Գանձարանը, Մանրուսումը* և Տաղարանը:

Հատուկ տեղ է գրավել Անիի երաժշտ. մշակույթը, որի կազմավորման վրա ներազդել են հայ միջնադարյան երաժշտարվեստին առնչվող այնպիսի գործիչներ, ինչպիսիք են *Սարգիս Ա Սևանցի* և *Պետրոս Ա Գետադարձ* կաթողիկոսները, *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագը,* որոնք պատմության մեջ մտել են նաև որպես շարականագիրներ: Շարակնոցում վավերացված, Անիում գործած շարականագիրների հոգևոր երգերը վկայում են, որ նրանք իրենց մեջ խտացրել են V–VIII դդ. հայ հիմներգության լավագույն ձեռքբերումները և ընդլայնել ավանդ. թեմաների շրջանակը: Նրանց գործերում առանձնակի հնչեղություն է ստացել հայրենասիր. թեման (Պետրոս Ա Գետադարձի՝ *Վարդանանց* հիշա-

տակին նվիրված «Ա-րիացեալք առ հակառակն» երկարաշունչ մանկունքը կամ Հովհաննես Սարկավագի՝ *Ղևոնդյանց* կանոնի «Պայծառացան այսօր» գողտրիկ ճաշուն)՝ կապված ժամանակի իրողությունների և ազգ-ազատագր. պայքարի հետ: Այդ շարականագիրները զգալի չափով նախապատրաստել են Կիլիկյան Հայաստանի հեղինակների ստեղծագործության մեջ իրագործված հետագա մեծ թռիչքը:

Առանձին փայլուն էջ է *Գրիգոր Նարեկացու* տաղային արվեստը: Նրա՝ մեղեդիներով հանդերձ պահպանված տաղերը՝ «Հավուն, հավուն», «Հավիկ», «Ահեղ ձայնս», «Այլն այն իջանէր», «Աչքն ծով ի ծով», որակապես նոր մակարդակի են բարձրացրել երաժշտաբանաստեղծ. արվեստը, այն հագեցնելով մեղեդային վառ կերպարներով, հորինվածքային նորարար հնարքներով, որոնք բոլորովին նոր հորիզոններ են բացել հայ երաժշտ. մշակույթում:

Կարևոր գլուխ է կազմում Կիլիկիայի Հայկ. թագավորության երաժշտ. մշակույթը: Երեք հարյուրամյակի ընթացքում այդտեղ ծաղկել է աշխարհիկ և հոգևոր երգարվեստը, վանքերին կից վարդապետարաններում մեծ տեղ է հատկացվել երգ-երաժշտության դասավանդմանը, քննարկվել են երաժշտության տեսության և գեղագիտության հարցեր, ստեղծվել և ընդօրինակվել են բարձրարժեք երաժշտածիս. մատյաններ:

Հ. ե-յան գագաթներից է *Ներսես Շնորհալու* ստեղծագործությունը, որի, ինչպես և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության նշանակությունը դուրս է եկել զուտ ազգ. շրջանակներից: Ներսես Շնորհալու տաղանդի և կազմակերպչ. եռանդի շնորհիվ Հայաստանում պաշտոներգությունը նոր մակարդակի է բարձրացել: Նրա անմիջական մասնակցությամբ և կարգադրությամբ իրագործվել է երաժշտածիս. գրքերի՝ միջնադարի չափանիշներով ամենածավալուն բարեփոխումը, որի ընթացքում այդ գրքերը մաքրվել են հնացած երգասացություններից և համալրվել հենց իր՝ Ներսես Շնորհալու գրչին պատկանող բազմաթիվ գործերով: Դրանցից են *Պատարագի* մի շարք գեղեցկակազմ այլ սրբասացությունները և մեծ քարոզը, ժամագրքի կազմում ընդգրկված «Յիշեսցուք ի գիշերի», «Զարթիք փառք իմ», «Առավօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», *Արևագալի երգերը*, բազմաթիվ շարականներ և տաղեր, որոնք աչքի են ընկնում մեղեդային ոճի անհատականությամբ և բանաստեղծ., տաղաչափ. վարպետությամբ: Ներսես Շնորհալու երգերից շատերը տակավին միջնադարում ստացել են չափանմուշային նշանակություն, հաճախ հիշատակվել որպես մեղեդի-նմուշ: Նման ժողովրդականությանը մեծապես նպաստել է նաև այն, որ Ներսես Շնորհալին իր ստեղծագործություններում հմտորեն կիրառել է ժող. երաժշտ. արվեստի բազմապիսի տարրեր, այդպիսով հագեցրել հոգևոր երգարվեստը՝ ժողովրդին հոգեհարազատ ելևէջներով և մատչելի ձևերով:

Ներսես Շնորհալու ստեղծագործ. ավանդույթները խոր ազդեցություն են թողել հետագա շարականագիրների և տաղերգուների վրա, որոնցից հատկապես նշելի են բուն Հայաստանում գործած *Խաչատուր Տարոնացին* (Պատարագի նախերգը հանդիսացող քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» շարականով), *Հովհաննես Երզնկացին* (Գրիգոր Ա Լուսավորչին և Ներսես Ա Մեծին նվիրված շարականներով և Ջրօրհնեքի «Այսօր ձայնն հայրական» տաղով), *Վարդան Արևելցին* (սրբոց թարգմանչաց նվիրված «Որք զարդարեցին» և «Որք թագաւորաց» երգերով), *Մխիթար Այրիվանեցին* (Ռոնլվայի «Սիրտ իմ սասանի» դրամատիկ. տարրերով հագեցած գանձով), իսկ կիլիկյան հեղինակներից՝ *Ներսես Լամբրոնացին, Հակոբ Ա Կլայեցին, Գրիգոր Սկևռացին* և ուր.:

Սակայն XIII դ. վերջին շարականի ժանրի զարգացումը գրեթե միանգամից դադարել է: Միջնադարի վերջին շարականագիր *Կիրակոս Երզնկացու*՝ Աստվածածնի ննջման «Արևելք գերարփի» շարականով եզրափակվել է Շարակնոցը: Ժամակարգությունը փակվել է, և ժամակարգության կանոնի մեջ նոր երգեր այլևս չեն ընդունվել:

Արդեն XIII դ. կեսից քաղ. անբարենպաստ պայմանները, այնուհետև հայկ. պետականության կորուստը ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում խաթարել են արվեստի, այդ թվում նաև Հ. ե-յան բնականոն զարգացումը, թեև վանքերում շարունակվել են, ի թիվս այլ մատյանների, երաժշտածիս. ժողովածուների ընդօրինակման, խմբագրման և լրացման աշխատանքները: Հիշատակելի են Շարակնոցի՝ մասնավորապես *Գևորգ Սկևռացու* և *Գրիգոր Խուլի* խմբագրությունները: Ուշ միջնադարում Հ. ե. այնուհանդերձ անցել է որոշ

շրջափոխում, մի շարք հին երգերի երաժշտ. բաղկացուցիչը վերանայվել է ըստ նոր ժամանակների ճաշակի: Սակայն ընդհանուր առմամբ այն բնորոշվել է աստիճանական անկումով, միջավայրի շեշտակի մահմեդականացման հետևանքով հայ ավանդ. եղանակների կատարողական մեկնաբանման «արևելականացմամբ», Հ. ե-յան ժանրերի աշխարհականացմամբ:

XV–XVIII դդ. մեծ տարածում են ստացել Տաղարանները և խառը տիպի ժողովածուները, որոնք իրենց մեջ ամփոփել են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ բնույթի տաղեր, գանձեր, ողբեր ևն:

Այդ ժամանակաշրջանում կարևոր դեր են կատարել հայկ. նորաստեղծ գաղութները Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Հնդկաստանում, որտեղ հետզհետե աշխուժացող մշակութ. կյանքը շատ բանով նպաստել է անցյալի ժառանգության, այդ թվում նաև Հ. ե-յան ավանդույթների պահպանմանը: Վերականգնման շրջանը (XVII–XVIII դդ.) իր հետ մի շարք դրական տեղաշարժեր է բերել ազգ. ինքնագիտակցության վերելքի, մշակութ. ժառանգության պահպանման, տպագրության զարգացման ասպարեզում: Ամստերդամում, *Ոսկան Երևանցու* ջանքերով 1664–65-ին իրականացվել է առաջին տպագիր Շարակնոցի հրատարակումը, որտեղ ձեռագր. վստահելի աղբյուրներից հավատարմորեն ընդօրինակվել են ձայնեղանակային նշումներն ու հոգևորականների մեծամասնության համար արդեն զուտ խորհրդանշական իմաստ կրող խազային նշանները:

XIX դարից Հ. ե-յան զարգացումը մտել է նոր ծիրի մեջ: Մտավորականության և հոգևորականության շրջանում գնալով հասունացել է Հ. ե-յան նմուշների պահպանման, հետագա աղավաղումներից և մոռացությունից փրկելու գաղափարը: 1813-ին Հ. *Լիմոնճյանի* ստեղծած հայկ. նոր նոտագրությամբ (տես *Նոր հայկական ձայնագրություն*) փորձեր են արվել ձայնագրելու Շարակնոցը, նախ՝ հենց իր, այնուհետև Ե. *Տնտեսյանի*, Արիստակես Հովհաննիսյանի, Համբարձում Զերչյանի և այլոց կողմից: 1866-ին *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին* Էջմիածին է հրավիրել ժամանակի նշանավոր երաժիշտ Ն. *Թաշճյանին*՝ տեղի ավանդ. եղանակները ձայնագրելու, բազմատեսակ հնչող հոգևոր երգերը միակերպության բերելու նպատակով: Այդ աշխատանքներին մասնակցել է նաև Մ. *Եկմալյանը*: 1866–78-ին իրականացվել է Պատարագի, Ժամագրքի և Շարակնոցի երգասացությունների վավերացումն ու հրատարակությունը: Այն ժամանակվա չափանիշներով դրանք հայկ. հոգևոր երգարանների առաջին գիտ. հրապարակումներն էին, որոնք կարևոր դեր են խաղացել թե՛ գործնականում և թե՛ Հ. ե-յան հետագա ուսումնասիրման համար:

Հայ երաժիշտների հաղորդակցումը արևմտաեվրոպ. երաժշտության հետ և վերջինիս ազդեցությունը պայմանավորել են բազմաձայնության (պոլիֆոնիայի) ներմուծման անհրաժեշտությունը: Շրջադարձային նշանակություն է ունեցել Մ. Եկմալյանի Պատարագի բազմաձայն մշակումը, որի շնորհիվ Հ. ե. սկսել է հնչել ոչ միայն եկեղեցիներում, այլև համերգային բեմահարթակներում:

Հ. ե-յան զարգացման, ուսումնասիրման և տարածման նոր փուլ է նշանավորել *Կոմիտասի* ստեղծագործ., կատարող. և գիտ. գործունեությունը: Նրա Պատարագը, հոգևոր այլ երգերի խմբերգային մշակումները հիմնված էին միջնադարյան երգարվեստի առանձնահատկությունների խոր իմացության, ինչպես նաև XIX դ. վերջի – XX դ. սկզբի եվրոպ. երաժշտությանը բնորոշ միտումների և հորինվածքային հնարքների ինքնատիպ զարգացման վրա, որոնք աշխարհիկ գեղջկ. և քաղաքային երգերի մշակումների հետ մեկտեղ դրել են հայ մասնագիտացված կոմպոզիտորական դպրոցի հիմքերը: Մ. Եկմալյանի և Կոմիտասի Պատարագները դարձել են նոր ժամանակների խմբերգային դասական երաժշտության առաջին մեծակտավ ստեղծագործությունները:

Հ. ե. մեծ ազդեցություն է գործել 1960–1990-ական թթ. հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների վրա: Ազգ. երաժշտ. նեոկլասիցիզմի դրսևորումներ կարելի է համարել ժամանակակից հայ կոմպոզիտորների բազմաթիվ բարձրարժեք գործերը, որտեղ անդրադարձվել և ստեղծագործաբար մարմնավորվել են Հ. ե-յան հարուստ ավանդույթները: Դրանց թվում են Է. Հովհաննիսյանի, Լ. Աստվածատրյանի, Ս. Աղաջանյանի, Տ. Մանսուրյանի, Մ. Իսրայելյանի, Ե. Երկանյանի և այլոց սիմֆոնիկ, խմբերգային, վոկալ-գործիքային կամերային գործերը, որոնք իրենց ակնառու տեղն են գրավում ժամանակակից հայ երաժշտության մեջ:

ՀՈԳԵՎՈՐ

Հայաստանի անկախացումից (1991) հետո փոխվել է վերաբերմունքը Հ. ե-յան հանդեպ: Կազմակերպվում են Հ. ե-յանը նվիրված փառատոներ, մրցույթներ և գիտաժողովներ, լույս են տեսնում գիտ. նոր հրատարակություններ, ինչպես, օր., «*Գանձասար*» աստվածաբան. կենտրոնի կողմից իրականացվող «Շարական»-ը (հ. 1, 1997, խմբ. Ս. Ռոստոմյան) և Հայ հոգևոր երաժշտության կատարման, ուսումնասիրության և վավերագրման պետ. կենտրոնի Հ. ե-յան ուսումնասիրման հարցեր լուսաբանող «Մանրուսում» տարեգիրքը (հ. 1, 2001, պատ. խմբ. և կազմ. Ա. Արևշատյան):

Տեսության բնագավառում դեռևս V–VI դդ. մշակվել են եկեղեց. ձայնեղանակների (դրանց առաջին կարգավորումը ըստ *Հայմավուրքի* իրականացրել է Սահակ Ա Պարթևը), ձայնի և ներդաշնակության հենքի մասին (*Դավիթ Անհաղթ*) ուսմունքները: Երաժշտության, իբրև արվեստի տեսակներից մեկի, ճանաչողական, դաստիարակչական և զգայական-էթիկական ներգործության և դասակարգման հարցերն արծարծվել են Դավիթ Անհաղթի, Դավիթ Քերականի և Ստեփանոս Սյունեցու աշխատություններում: VII դ. սկզբին տեսությունը հարստացել է հնչյունականության (ակուստիկայի) մասին ուսմունքով (Անանիա Շիրակացի): VIII դ. Ստեփանոս Սյունեցու ջանքերով կիրառվել է խազագրության նախն. համակարգը, որը հիմնված էր առոգանության և տրոհության նշանների վրա: Հ. ե-յան ասպարեզում տեսության մյուս մասն ընդգրկում է հետևյալ տարբնույթ գրվածքների և պատառիկների ամբողջությունը՝ շարականագիրների միջնադարյան ցուցակներ, ձայնեղանակների մեկնություններ և ավելի ուշ՝ Մանրուսման կամ Խազգրքերում զետեղված մանրուսման եղանակների ցուցակները և «Անուանք» խազից կոչվող հատվածները: Այդ գրվածքների շարքում «Մեկնութիւնք ձայնից»-ն առավել արժեքավոր են: Դրանք համաքրիստ. մշակույթի չափանիշներով մի ինքնատիպ երևույթ են, որոնք յուրահատուկ ձևով արտացոլել են ձայնեղանակների մասին ուսմունքի աստվածաբան., երաժշտ., տեսագեղագիտ. և ծիսական-գործնական ոլորտների հետ կապված հայ միջնադարյան մտածողների փորձը: Այդ մեկնությունների հեղինակների թվում են *Մովսես Քերթողը*, Ստեփանոս Սյունեցին, *Անանիա Նարեկացին*, Վարդան Արևելցին, *Գրիգոր Տաթևացին*, *Թովմա Մեծոփեցին* և ուր.: Նշված երկասիրություններն արտացոլել են հայկ. եկեղեց. ձայնեղանակների զարգացման տարբեր փուլերը և դրանց հետ կապված տարբեր ժամանակների՝ սկսած հեթանոս. շրջանի աշխարհիկ երաժշտ. տեսության և գեղագիտության վերապրուկներից մինչև միջնադարյան մտածողությանը հատուկ աստվածաշնչային հայեցակարգի (Մովսես Քերթող, Անանիա Նարեկացի, Գրիգոր Տաթևացի) դասական դրսևորումները: Տվյալ մեկնությունները խոսուն վկայություն են միջնադարում հայկ. ուրթձայնի տեսագեղագիտ. և գործնական մշակվածության մակարդակի մասին:

Շարականագիտության, ձայնեղանակների տեսության, հոգևոր և աշխարհիկ (վոկալ և գործիքային) երաժշտության փոխհարաբերության հարցերը արծարծվել են նաև *Վանական Վարդապետի* «Հարցմունք և պատասխանիք»-ում, Վարդան Արևելցու «Ժղլանք»-ում և Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում: Հայ եկեղեց. ձայնեղանակների և պարսկաբաբ. ավանդ. եղանակների համեմատական ուշագրավ մեկնություն է տվել Հովհաննես Երզնկացին (Պլուզ) իր «Մեկնութիւն քերականին» ձեռնարկում: Ավետարանի նկարագրման մեջ օգտագործվող հիմն. գույների և եկեղեց. ձայնեղանակների համադրման եզակի մեկնություն է պարունակում Թովմա Մեծոփեցու «Մեկնութիւնք ձայնից»-ը:

Տեսության առանձին բաժին է կազմում մանրուսման՝ որպես զարդոլորուն, նրբակերտ երգեցողության արվեստը, որն իր բարձրակետային զարգացմանն է հասել Կիլիկյան Հայաստանում: Դրանով հատուկ զբաղվել է Ներսես Շնորհալին՝ խազային նշանների մինչ այդ կիրառվող համակարգը հարստացնելով նոր՝ 23 նշաններով: Դրանք, ի տարբերություն շարակնի խազերի, ստացել են մանրուսման խազեր անվանումը: Սակայն ուշ միջնադարի պայմաններում, ինչպես արվեստն ընդհանրապես, հայ միջնադարյան երաժշտ. տեսագեղագիտ. միտքը նույնպես անկում է ապրել: Այդ բնագավառում նոր փուլ և որոշ աշխուժացում է նկատվել XVII–XVIII դդ.: Տվյալ ժամանակաշրջանի գիտնականներն աշխատել են հավաքել միջնադարյան ինքնուրույն և թարգման. մատենագրության մեջ ստեղված երաժշտատեսական գրվածքները և նույնիսկ բանաքաղելու միջոցով ստեղծել ամբողջական հոդված-

ներ: Իրենց գիտելիքները նորովի համալրելու նպատակով դիմել են և՛ արլ. երաժշտագիտ. աղբյուրներին, և՛ բյուզ. ձայնագրագիտությանը, և՛ արևմտաեվրոպ. երաժշտության տեսությանը, ինչը երևում է Ավետիք Պաղտասարյանի (Ընթերցող Տիգրանակերտցի), Զեննե-Պողոսի, *Խաչատուր Էրզրումեցու* և *Մխիթար Սեբաստացու* գործունեությունից: Գրիգոր դպիր Գապասակալյանը, միջնադարին հատուկ հայկ. երաժշտատես. ու գեղագիտ. դրույթները ձևակերպելուն և դասակարգելուն զուգընթաց, փորձել է ճգնաժամ ապրող խազային հին նշանագրության փոխարեն մի նոր համակարգ ստեղծել՝ հայկ., ընդհանուր արլ. և բյուզ. նոտագրության տարրերով շաղախված: Դա առանձնապես խթանել է հայկ. նոր ձայնագրության ստեղծումը, որը 1813-ին հեղինակել է Հ. Լիմոնճյանը: Այդ նոտագրությունը լավագույնս հարմարեցված էր ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ մոնոդիական երաժշտության առանձնահատկությունները համարժեք արտահայտելուն և ձայնագրելուն:

XIX դ. Կ. Պոլսի եկեղեց. երաժիշտ-տեսաբանները (Հ. Լիմոնճյան, Ե. Տնտեսյան, Ն. Թաշճյան և ուր.) կարևոր ներդրում են ունեցել շարականագիտության, հոգևոր երգարվեստի նմուշների հավաքագրման, ձայնագրման և աղավաղումներից փրկելու գործում: 1874-ին գրեթե միաժամանակ լույս են տեսել Ն. Թաշճյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց» և Ե. Տնտեսյանի «Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ եւ յաւելուած բովանդակութիւն երգոց ըստ ութ ձայնից» գրքույկները, որտեղ ամփոփված էին այդ երևելի ձայնագրագետների ձայնագիտ. և շարականագիտ. բազմամյա պրպտումների արդյունքները:

Հ. ե-յան ուսումնասիրությունը նոր աստիճանի է բարձրացել Կոմիտասի հետազոտությունների շնորհիվ, որոնց մեջ արծարծվել են շարականների կառուցվածքի, տաղաչափության, պատմ. զարգացման, Հ. ե-յան տեսակների, եկեղեց. ձայնեղանակների տեսության և Մանրուսման գրքերի ուսումնասիրման հարցերը, որոնք առաջին անգամ են ներկայացվել եվրոպ. գիտ. հանրությանը:

Նոր փուլ է կապված խորհրդ. շրջանի և արդի գիտնական-երաժշտագետների՝ Հ. ե-յանը նվիրված ուսումնասիրությունների հետ: Ք. Քուշնարյանի, Ռ. Աթայանի, Ն. Թահմիզյանի, Ա. Արևշատյանի, Մ. Նավոյանի և այլոց աշխատություններում լայնորեն և բազմակողմանի լուսաբանվել և քննվել են Հ. ե-յան պատմության, տեսության, գեղագիտության, առանձին հեղինակների ստեղծագործության հարցերը: Այդ ուսումնասիրությունները մեծապես նպաստել են Հ. ե. և հայ երաժշտ. միջնադարագիտությունը միջազգ. ասպարեզ հանելուն: Հ. ե. ուսումնասիրվում է Մատենադարանում, ԳԱԱ արվեստի ինստ-ում, Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիայում և Հայ հոգևոր երաժշտության կատարման, ուսումնասիրության և վավերագրման պետ. կենտրոնում:

Գրկ. Գապասակալյան Գ., Գիրք երաժշտական..., ԿՊ, 1803: Ավետիքյան Գ., Բացատրութիւն շարականաց, Վնտ., 1814: Տնտեսյան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, ԿՊ, 1874: Հիսարլյան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւն երաժիշտ ազգայնոց (1714–1909), ԿՊ, 1914: Մելիքյան Ս., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Ե., 1935: Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Ե., 1973: Նույնի, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Նույնի, Կոմիտասը և հայ ժողովրդի երաժշտական ժառանգությունը, Փասադենա, 1993: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Նույնի, Աստվածաշնչական կոնցեպցիան հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններում, «Աստվածաշնչական Հայաստան», Օշական, 2001: Հոգևոր երգեր, Ե., 1998: Նավոյան Մ., Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Ե., 2001: *Кушнарев Х., Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958; Геодакян Г., Комитас, Е., 1969; Худабашян К., Армянская музыка на пути от монодии к многоголосию, Е., 1977; Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977; Акопян Л., Проблема армянских невменных знаков (хазов) в прошлом и настоящем, сб. "Традиции и современность", в. 1, Е., 1986, с. 63—79; Его же, Восьмигласие как идея (на примере средневековой армянской гимнодии), сб. "Православная монодия: ее богословская, литургическая и эстетическая сущность", Киев, 2001, с. 95—101; Аревшатян А., Армянские средневековые толкования на гласы, сб. "Гимнология", в. 1, кн. 2, М., 2000, с. 510—517; Сборник "Манрусум" и монастырская певческая традиция Киликийской Армении XII—XIV вв., сб. "Монастырская певческая традиция в древнерусском песнетворчестве, СПБ, 2001, с. 267—274;* Fétis F., Histoire générale de la musique, t. IV, P., 1874; Ataian R., Les chants des maitres arméniens

du Moyen age, “Musica antiqua”, 2, Bydgoszcz, 1962; Essays on Armenian Music (R. Ataian, S. Poladian, N. Tahmizian and others), L., 1978; Arevchatian A., Deux textes arméniens médiévaux sur l’Interpretation des modes musicaux; Les traités arméniens médiévaux sur l’Interpretation des modes musicaux et leurs parallels au Proche Orient, “Revue des études arméniennes”, 26, P., 1996–97, pp. 339–355, 357–366; Ibid, La typologie du genre des šarakans dans le contexte de l’hynmographie de l’Orient chrétien, “Revue des études arméniennes”, 28, P., 1999–2000.

Աննա Արևշատյան

ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր-վարչատարածքային ենթամիավոր: Հ. Հ. համեմատաբար նոր հասկացություն է: Եկեղեցու նախնական կառույցի մեջ հիմն. օղակը թաղի, համայնքի եկեղեցին էր, որը հետագայում կազմավորվել է իբրև *թեմ*: Հայ եկեղեցում «հոգևոր հովիվ» հասկացությունը տարածվել է հատկապես XIX դ-ից: Գաղթի և տեղաշարժերի հետևանքով կազմավորված հեռավոր գաղութներում կաթողիկոսները նշանակել են հոգևոր հովիվներ, այսինքն՝ տվյալ քաղաքի հայ գաղթականների հոգևոր կարիքները հոգալու համար այնտեղ են ուղարկել քահանաներ և վարդապետներ: Իրանա-Հնդկաստանի թեմից Հնդկաստան, Բուշեր, Ճավա, Հեռավոր Արևելք ուղարկված քահանաների մասին ասել են, թե «գնացել են թեմի»: Մանչեստր, Ուստր, ԱՄՆ ուղարկված հոգևորականները կոչվել են հոգևոր հովիվներ: Այժմ Ամերիկայի, Եվրոպայի տարբեր քաղաքների հայ համայնքներում ծառայող հոգևորականները նույնպես կոչվում են հոգևոր հովիվներ: Միաժամանակ այն երկրներում, որտեղ թեմական կառույց գոյություն չունի համայնքի փոքրաթվության պատճառով, ծառայող հոգևորականը կոչվում է հոգևոր հովիվ, իսկ շրջանը՝ Հ. Հ.: Ներկայումս նման շրջաններից են Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի (*Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության* կազմում), Եթովպիայի և Սուդանի (*Եգիպտոսի թեմի* կազմում), Ավստրիայի և Շվեդիայի (*Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակության* կազմում), Հորդանանի (*Երուսաղեմի հայոց պատրիարքության* կազմում), Կալկաթայի (*Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակության* կազմում) Հ. Հ-ները:

ՀՈԼԱՆԴԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում, Անիից հյուսիս-արևելք, Ախուրյան գետի աջ ափին (այժմ՝ Թուրքիայի սահմաններում): Հիմնադրվել է X դ. 2-րդ քառորդում, Հայոց թագավոր Աբաս Բագրատունու (929–953) օրոք: Հիմնարկները վանքի անդրանիկ վանահայր Հովհաննես վարդապետի առաջնորդությամբ Բյուզանդիայից փախած և Հայաստանում ապաստանած հայ վանականներն էին (այստեղից էլ՝ Հոռոմների վանք անվանումը): Հ. վ-ից հվ.,



Հոռոմոսի վանքը (X–XIII դդ.) հվ-արմ-ից

Անի տանող ճանապարհին, կանգուն է մի ինքնատիպ շինություն՝ գմբեթավոր զույգ աշտարակներով «հաղթական կամարը» (հավանաբար՝ X–XI դդ.):

Վանքի համալիրը (կառուցված մինչև XIII դ.) բաղկացած է շինությունների երկու խմբից՝ Ախուրյանը երիզող ճորում և բարձրադիր լեռնադաշտի վրա: Հ. վ-ի հնագույն շինություններն են Ս. Մինասը (930–953, հիմնադիր՝ Հովհաննես վարդապետ) և Գագիկ Ա Բագրատունու կառուցած Ս. Գևորգը (1013-ից հետո): Երկուսն էլ գմբեթավոր դահլիճ են, երկու զույգ որմնամույթերով, «հայկ. խորշերով» մշակված ճակատներով: Ս. Գևորգ եկեղեցու ներսը ծածկված է եղել որմնանկարներով (պահպանվել են հետքերը): Նրանից արլ. թաղածածկ մատուռ է, կողքին՝ Աշոտ Գ Ողորմած Բագրատունու (953–977) դամբարանը:

969-ին Հ. վ-ի վանահայր Սարգիս վարդապետը մասնակցել է *Վահան Ա Սյունեցու* հրավիրած Անիի եկեղեց. ժողովին: 982-ին, ըստ

պատմիչ Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ), Աբլհաճ ամիրան հրդեհել է Հ. վ. և վայր բերել եկեղեցու գմբեթի խաչը:

1038-ին Հովհաննես Սմբատ Բագրատունին Ախուրյանի ձորեզրին կառուցել է Ս. Հովհաննես եկեղեցին և դրան արմ-ից կից մեծ գավիթը: Եկեղեցին մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է՝ ճակատները «հայկ. խորշերով» մշակված, որի Ավագ խորանը լուսավորվում է զույգ պատուհաններով: Գմբեթի արտաքուստ գլանաձև թմբուկը ծածկված է կոնաձև վեղարով: Գավիթն ունի ուղղանկյուն հատակագիծ՝ չորս կենտրոնական սյուներով, բազմանիստ և չքեղ քանդակազարդ երդիկով, որի վրա բարձրանում է ութասյուն զանգակատունը: Առաջին անգամ Հ. վ-ի գավթում մշակված քառասյուն կենտրոնակազմ հորինվածքը դարձել է XI–XIII դդ. հայկ. գավիթների ու ժամատների հիմն. ձևը:

1198-ին վանահայր Մխիթարն Ականց գետից ջրատար է կառուցել Հ. վ-ի համար: 1206-ին Զաքարե Բ Մեծը վերահաստատել է գետից օգտվելու Հ. վ-ի իրավունքը և քանդել նրա վրա այլոց կառուցած ապօրինի ջրաղացը: XII դ. Հ. վ-ում է ուսանել պատմիչ Մխիթար Անեցին: 1215-ին, ըստ շին. արձանագրության,



Հոռոմոսի վանքի հատակագիծը

Ս. Հովհաննես եկեղեցու հվ. պատին կից իշխանուհի Խութլուխաթունը մոր՝ Ռուզուքանի համար երկհարկ դամբարան է կառուցել, որի երկրորդ հարկը կազմված է միմյանց կից երեք մատուռներից (կենտրոնինը գմբեթավոր է): Դամբարանի առաջին հարկի ներսում, արլ. պատին ագուցված են չորս չքեղ քանդակազարդ խաչքարեր: XIII դ. նմանատիպ դամբարան է կառուցվել նաև Ս. Հովհաննես եկեղեցու հս. պատին կից:

XIII դ. 2-րդ քառորդում իշխան Վահրամ Հեճուպի դուստր Խաթունը նորոգել է Հ. վ-ի եկեղեցիները և Ռուզուքանի դամբարանին հվ-ից կից կառուցել մատուռ: Ս. Հովհաննես եկեղեցին և նրա երկու կողմերում սիմետրիկ կառուցված գմբեթավոր դամբարանները ու թաղածածկ մատուռներն ունեն մեկ հարթության վրա մշակված արլ. ընդհանուր ճակատ, որի տարբեր ծավալների միասնական նման լուծումը բնորոշ է քաղաքային ճարտ-յանը:

Հ. վ. ծաղկում է ապրել XIII դ.՝ Վաչուտյանների իշխանական տան հովանավորությամբ: 1229-ին, ըստ շին. արձանագրության, Վաչէ Վաչուտյանը Հ. վ-ի համալիրի հվ. կողմում կառուցել է քառակուսի հատակագծով նշխարատան շենք: 1246-ին վանքը տուժել է թաթար-մոնղոլների արշավանքից: 1251-ին ոմն Առյուծ և նրա կին Սեդան նորոգել են վանքը, վերաշինել թաթարների ավերած ջրատարը, 1277-ին կառուցել նշխարատան նոր շենք՝ երկու զույգ փոխհատվող կամարներով ծածկված: Նշխարատներին արլ-ից կից է քառասյուն, կենտրոնակազմ հորինվածքով, ներսում՝ արլ. պատում խորանով մի շենք (ժամատուն կամ գրապահոց-գրատուն): Հ.վ. շրջապակված է քառանկյունի պարսպով, որի հարմ-ում են գտնվում մի կիսաշրջանաձև բուրգ և միակ մուտքը:

XIII դ. Հ. վ. ստացել է բազում նվիրատվություններ՝ գյուղեր, այգիներ, ջրաղացներ, Անիում՝ տներ և կրպակներ: Նվիրատուների թվում են Անիի մեծահարուստներ Տիգրան Հոնենցը, Ուքանանց տոհմից Քարիմադինը և այլք: 1336-ին իշխան Վահրամ Զաքարյանը վերահաստատել է Հ. վ-ի սեփականատիր. իրավունքներն իր նախնիների նվիրատվությունների նկատմամբ և ինքն էլ մեծ նվիրատվություն կատարել:

Հ. վ. եղել է միջնադարյան Հայաստանի մշակութ. կենտրոններից: Այդտեղ է կրթվել ու գրչության արվեստով զբաղվել XIII դ. վերջի և XIV դ. կեսի գրիչ և մանրանկարիչ Մխիթար Անեցին: Մատենադարանում է պահվում նրա Հ. վ-ում ընդօրինակած և պատկերազարդած՝ Սամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկի ձեռագիրը (ձեռ. № 3613):

XV–XVI դդ. Հ. վ. դադարել է գործելուց և զգալիորեն ավերվել: 1685-ին վանահայր Դա-

նիել վարդապետը համալիրը մաքրել է աղբից, նորոգել Ս. Հովհաննես եկեղեցին, վերստին միաբանություն հաստատել: 1755-ին, լեզգիների երկրորդ արշավանքի ժամանակ, սպանվել է Հ. վ-ի վանահայր Եղիա վարդապետը: 1788-ին վանահայր Հովհաննես եպս. Շամբեցին նորոգել է վանքը: 1800-ին և 1807-ին, Էջմիածնի անապահովության պատճառով Մայր աթոռի միաբաններն ապաստանել են Հ. վ-ում: 1852-ին Հ. վ. նորոգել է Վարդան վրդ. Օձնեցին, 1868–71-ին՝ Գրիգոր վարդապետը: Հ. վ. եղել է Բագրատունիների տոհմական հանդստարանը, թագավորների և իշխանների դամբարանավայրը: Վանքում է ամփոփվել *Սարգիս Ա Սևանցի* կաթողիկոսը: 1918-ից Հ. վ. լքվել է և այժմ կիսավեր է:

Գրկ. Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, ե., 1942: Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., L'architettura della scuola regionali di Ani nell'Armenia medievale, Roma, 1977; Thierry J.M., Le couvent arménien d'Horomos, Louvain-P., 1980.

Մուրադ Հասրաթյան

ՀՈՎԱՔ Ա ԴԱՆԵՑԻ (ծ. թ. անհտ – 791), Ամենայն Հայոց կաթողիկոս 790-ից: Հաջորդել է *Ստեփանոս Ա Դվնեցուն*: Հ. Ա Դ-ու հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդվում: Վախճանվել է իր գահակալության տարին չբոլորած:

Կաթողիկոս. գահին Հ. Ա Դ-ուն հաջորդել է *Սողոմոն Ա Գառնեցին*:

ՀՈՎԱԿԻՄ ՊՐՈՒՍԱՑԻ (ծ. թ. անհտ – մոտ 1478), Կ. Պոլսի Հայոց առաջին պատրիարք 1461–78-ին: Հ. Պ-ուն 1461-ին պատրիարք է հռչակել թուրք. սուլթան Մուհամեդ II-ը (Մեհմեդ), որը, հիմնադրելով Հայոց պատրիարքությունը, կամեցել է Հայ բնակչությանը կենտրոնացնել իր մայրաքաղաքում, օսմ. կայսրության հայկ. թեմերը ենթարկել արքունիքի իրավասության տակ գտնվող պատրիարքությանը:

Մինչ այդ Հ. Պ. եղել է թուրք. տիրապետության տակ գտնվող Փոքր Ասիայի Հայ համայնքների հոգևոր առաջնորդը, նստավայրը՝ սկզբում Կուտինայում, ապա՝ Պրուսայում: Հովակիմ եպիսկոպոսի հետ միասին, սուլթանի առաջարկով, Կ. Պոլիս են տեղափոխվել պրուսացի բազմաթիվ հայ ընտանիքներ: Գաղթականության շնորհիվ Կ. Պոլսի հայ բնակչությունը ստվարացել է՝ կենտրոնանալով քաղաքի վեց թաղերում, և պետության կողմից պաշտոնապես ճանաչվել է իբրև վեց համայնք (ալթը ճեմաաթ): Պատրիարքարանը հաստատվել է Սամաթիո հայաշատ թաղամասում: Սուլթանի հրամանով հայերին է տրվել Սուլու Մանասթիրի հունական եկեղեցին, որը, վերանվանվելով Ս. Գևորգ, դարձել է պատրիարքանիստ և այդպիսին մնացել մինչև 1641-ը: Ա-վանդաբար Հ. Պ-ուն է վերագրվում Կ. Պոլսի առաջին հայկ. վարժարանի բացումը:

Ալվարդ Ղազիյան

ՀՈՎԱՍԱՓ ՍԵԲԱՍՏԱՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), XVI դարի մշակութային գործիչ, վարքագիր, վկայագիր, բանաստեղծ, մանրանկարիչ, գրիչ: Հոգևոր կոչումը՝ սարկավագ: Ապրել և ստեղծագործել է Սեբաստիայում: Մանրանկարչության և գրչության արվեստի առաջին դասերն առել է հորից՝ տաղասաց և ծաղկող Թադեոս քահանայից:

Հ. Ս. հեղինակ է բանաստեղծությունների և պոեմների, սրբախոսական արձակ և չափածո երկերի, իմաստասիր., բարոյախոս., ներբողական տաղերի, տոմարագիտ. քերթվածների, սիրո երգերի: Զարգացրել և նոր աստիճանի է բարձրացրել սրբախոսական գրականության առաջատար ժանրերը՝ վարք, վկայաբանություն, տեսիլք, ստեղծելով մի շարք արձակ և չափածո գործեր՝ «Վարք և պատմութիւն Երինէ կուսին...», «Յիշեմք զսքանչելիս մանկանցն», «Յայսմ աւուր վկայաբանութիւն նոր վկային Քրիստոսի Կաւկեցային», «Յայսմ աւուր յիշատակ է Թաթէոս քահանային» ևն, որոնցում գեղ. պատկերավորությամբ ներկայացրել է քրիստոնեության բարոյագիտ. առանցքային դրույթները, հայոց նահատակների օրինակով քարոզել հավատացյալների վարքի կանոնները, վկայաբան. երկերն օժտել հայրենասիր. պաթոսով, ինչի շնորհիվ Քրիստոսի ուսմունքի նահատակ հերոսները դարձել են նաև հայրենիքի ուխտյալ հավատավորների խորհրդանիշներ: Այս կերպ Սեբաստիայում նահատակված խոջա Կոկճայի կտտանքները պատկերող վկայաբանությունը 1536-ին կատարված դրամատիկ դեպքի ականատեսի և ժամանակակիցների հայրենասիր. ոգորումների արտահայտություն է: Նման հեղինակային երկերի շարքն իր կազմած ձեռագրերում Հ. Ս. համալրել է տարբեր աղբյուրներից քաղած սրբախոսական այլ միավոր-

ների սեփական տարբերակ-խմբագրություններով՝ «Ագաթոնի անյաղթ փիլիսոփայի ասացեալ վասն Նեռինն գալստեանն», «Վկայաբանութիւն Հարապետ աբեղային» են: Տեսիլքային գրականության իր մշակումներում ուրույն հայեցակետով մեկնաբանելով ավանդ. դավանաբան. նյութերը՝ Հ. Ս. չեշտել է քաղ. և հոգևոր ուժերի համախմբման ազգօգուտ արդյունքները: Աստվածաշնչյան դրվագներն ու զուտ կրոն. նյութերը, յուրովի կապվելով ազգային խնդիրներին, արդիական որոշակի հնչեղություն են ստացել մասնավորապես «Տեսիլ տեառն մեծին Ներսէսի» չափածո երկում՝ հետազոտողներին հիմք տալով Հ. Ս-ուն համարելու «ազատագրական տեսիլքների ջերմեռանդ հավատավոր»: Սրբախոսության մեջ մուծելով ժող. լեզվամտածողության տարրեր, բանահյուս. պատկերացումներ և կենդանի պատկերներ՝ Հ. Ս. մեծապես նպաստել է հոգևոր երկերի կիրառության ավանդ. սահմանները ընդլայնելուն, հետևաբար և դրանց գործն. նշանակությունը մեծացնելուն:

Հ. Ս. ըստ ամենայնի արձագանքել է Սեբաստիայում և շրջակայքում ձևավորվող ազատագր. ձգտումներին: 1548-ի փոթորկալի անցքերի ցնցող վավերագրեր են «Վասն մեղայ մեր մահացու», «Փրկի՛չ, մի՛ տար զմեզ ի փորձանք չարին» քերթվածները, որտեղ ցավագին շեշտերով հիշատակվում է «քրիստոնեայ ազգի» նախճիրը՝ կոտորած, գերեվարություն, ասպատակություն:

Հ. Ս-ու բանաստեղծ. ժառանգության պսակն է կազմում 160-տողանոց, իմաստասիր. «Աշխարհիս սահմանն է հանց» կաֆայաշարքը: Կյանքի վայելքներին մարդու բնական ձգտումը՝ ավետարանական դրվագների բացահայտ համադրությամբ, դիտվում է իբրև նախաստեղծ երևույթ, որ սրբագործվում է բարու արարումով, առաքինի բարքով, հույս-հավատով: Այս երկը Ֆրանս. է թարգմանել Ա. Զոպանյանը («Վարդենիք Հայաստանի», հ. 3, 1929):

Հ. Ս. գրել է պարզ ու աշխույժ լեզվով, դիմել բանահյուս. ձևերի, օգտագործել ժողովրդագուսան. հայրեն-կաֆաների արվեստը («Յիշէ զբան Աւետարանին», «Կաֆա վասն աղեկ մանկանն Գրիգորի» են), որի շնորհիվ նրա կրոն. ավանդ. թեմաները՝ Աստծո արարչագործություն, Հին և Նոր կտակարանների այուժեներ, Հայ եկեղեցու նահատակներ, ստացել են կենսական լիարյունություն և անմիջականություն:

Հ. Ս-ու գործունեության կարևոր ոլորտներից է համաշխ. հնագույն և դասական գրական արժեքների քրիստոնեացումը և հայկականացումը: Կալիսթենես Ողյունթացուն վերագրվող «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» («Աղեքսանդրի վարքը») երկը, որի խորենացիական թարգմանությամբ սկզբնավորվել է հայ գեղ. արձակի պատմությունը, իր հերոսական ոգով և պետականության գաղափարի ջատագովությամբ ներշնչել է Հ. Ս-ուն՝ 1535-ին ստեղծելու այդ երկի մեծարժեք մի օրինակ՝ սեփական գրչությամբ, նկարազարդմամբ ու խմբագրմամբ (Բեռլինի Ազգ. գրադարան, ձեռ. № 805): Հայ և օտարազգի գիտնականների կարծիքով այն արժեքավոր է ոչ միայն հելլինակի գեղանկարչական տաղանդի, այլև հայ մանրանկարչության պատմության տեսանկյունից՝ իբրև աշխարհիկ նկարազարդումներ պարունակող հնագույն վավերագիր:

Հ. Ս-ու ինքնագիր, իր իսկ նկարազարդած ձեռագրերում առկա մատենագր. նյութերից հիշատակելի են նաև «Աղվանից գիր» եզակի հիշատակագրությունը (Բեռլինի Ազգ. գրադարան, ձեռ. № 805), հայ թագավորների և այլ ժամանակագրությունները (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1455), Յայսմավուրքը (Ամասիայի Ս. Հակոբ վանքում պահված, այժմ կորած է համարվում), տոմարագիտ. հինգ ոտանավոր («Վասն լինելութեան արարածոցն» են):

Հ. Ս. հայ անդրանիկ բանահավաքներից է, հայրենների հավաքման գործի նախաձեռնողներից, զբաղվել է նաև պատմագր. նյութերի հավաքումով ու վերամշակումով, կրոն. երկերի թարգմանություններով:

Հ. Ս-ու ստեղծագործ. ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել են Ղ. Փիրղալեմյանը, Ա. Տևկանցը, Ն. Մառը, Ֆ. Մուրատը, Ֆ. Մակլերը, Ա. Զոպանյանը և ուրիշներ:

Երկ. Բանաստեղծություններ, Ե., 1964:

Գրկ. Հովսեփյան Գ., Հովսեփ Սեբաստացի, «Արարատ», 1918, էջ 226–280: Սիմոնյան Հ., Հայ միջնադարյան կաֆաներ, Ե., 1975:

Համիկ Սիմոնյան

ՀՈՎՀԱՆ ԵԿԵՂԵՑԱՑԻ (IV դ. վերջ, Մեծ Հայքի Եկեղյաց գավառ – V դ. սկիզբ, թաղված է Մշո Առաքելոց վանքում), *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտն ու գործակիցը. թարգմանիչ, մատենագիր, *Թարգմանչաց շարժման* առաջին գոր-

ծիչներից: 405-ին Մեսրոպ Մաշտոցին Ասորիք ուղեկցող աշակերտների մեջ է եղել նաև Հ. Ե.: 405-ին Սամոսատ՝ հույն գեղագիր Հռոփանոսի մոտ ուղևորվելիս, Մեսրոպ Մաշտոցն իր հետ տարել է Հ. Ե-ուն և *Հովսեփ Պաղնացուն*: Սամոսատում այբուբենը վերջնական տեսքի բերելուց հետո Մեսրոպ Մաշտոցը, Հ. Ե. և Հովսեփ Պաղնացին հատվածներ են թարգմանել *Աստվածաշնչից*: Դրանք հայերեն գրված առաջին տողերն էին: 406-ին Հ. Ե. վերադարձել է Հայաստան և զբաղվել մատենագր., քարոզչ., թարգմանչ. գործունեությամբ: Նրա մասին տեղեկություններ են հաղորդում *Կորյունը, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին* և ուրիշներ:

Արտաշես Մարտիրոսյան

ՀՈՎՀԱՆ ՄԱՅՐԱՎԱՆԵՑԻ, Մայրագոմեցի [մոտ 572–650, գ. Գետաբեկ (Գարդման գավառ)], աստվածաբան, դավանաբան, մատենագիր: Կրթությունը ստացել է Դվինի կաթողիկոսարանի նշանավոր դպրեվանքում: *Կոմիտաս Ա Աղցեցի, Քրիստափոր Բ Ապահունի* և *Եզր Ա Փառաժնակերտցի* կաթողիկոսների օրոք եղել է Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու փակակալը (ավագ լուսարարապետ)՝ նրանց բացակայության ժամանակ ստանձնելով նաև կաթողիկոսական տեղապահությունը: Հ. Մ. գերազանցապես հայտնի է իբրև դավանաբան մատենագիր, ժամանակին մեծ հեղինակություն վայելող վարդապետ, աչքի է ընկել դավանաբան. սկզբունքայնությամբ, Հայ եկեղեցու վարդապետ. հիմնադրույթներն անխաթար պահելու նախանձախնդրությամբ: Խստակրոն դավանաբանի և սրբակյաց հոգևորականի մեծ համարում ունեցող Հ. Մ. եղել է Հայ եկեղեցու խոշորագույն տեսաբաններից մեկը: Դասախոսել է Դվինի կաթողիկոսարանի դպրեվանքում և արժանացել «փիլիսոփա կատարյալ և աստվածային գրոց գիտության բանիբուն» պատվանունին, իսկ X դ. պատմիչ Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) նրան համարել է VII դ. լավագույն աստվածաբան գիտնականը: Հ. Մ-ուն է նվիրվել մի ամբողջ երկ՝ «Պատմութիւն Յովհաննու Մայրավանեցւոյ» (VIII դ.), որի միայն պատառիկն է պահպանվել: Իր սկզբունքայնության, անկախ մտածողության ու գործելակերպի պատճառով ունեցել է նաև հակառակորդներ, իսկ Հ. Մ-ուց հետո հետագա դարերում հայոց վարդապետների մեջ եղել են նրան հետևողներ և քննադատողներ:

634-ին Հ. Մ. ընդհարվել է կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցու հետ, երբ վերջինս 633-ի *Կարինի ժողովում* հույների հետ ստորագրել էր հավատո խոստովանության գիրը՝ *միակամության* վարդապետության շուրջ: Զհանդուրժելով Հ. Մ-ու ըմբոստությունը՝ կաթողիկոսը նրան հեռացրել է կաթողիկոսարանից: 638-ին Հ. Մ. քաշվել է Բջնիի Մայրագոմ վանքը, ապա՝ Գարդմանք: Ըստ ավանդության, իբր Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսը Հ. Մ-ուն իբրև անարգանք «Մայրագոմեցի» է անվանել, սակայն վարդապետի հետևորդները այն փոխել են «Մայրավանեցու»:

Ըստ Ստեփանոս Տարոնեցու, ինչպես նաև *Մխիթար Այրիվանեցու* «Ժամանակագրության» մեջ պահպանված մի տեղեկության, Հ. Մ. հեղինակել է երեք գործ՝ «Խրատ վարուց», «Հաւատարմատ» և «Նոյեմակ»: «*Կնիք հավատո*» ժողովածուում պահպանվել են Հ. Մ-ու դավանաբան. երեք երկերի առանձին հատվածներ. «Բան հաւատոյ» (4 հատված), «Վասն Տնօրէնութեան Փրկչին» կամ «Ի Տնօրէնութիւնն Քրիստոսի» (4 հատված), «Վասն չարչարանաց եւ աներկիւղ մատնել զանձն իւր ի մահ վասն արարածոց» (1 հատված):

«Խրատ վարուց» գիրքը 23 ճառերից կազմված ժողովածու է և մի խումբ ձեռագրերում վերագրվում է Հ. Մ-ուն, իսկ ձեռագրերի մեկ այլ խմբում՝ կաթողիկոս *Հովհաննես Ա Մանդակունուն* (հրատարակվել է «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք» խորագրով, 1836): Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի օրոք կազմված «Հաւատարմատ» ժողովածուն, որը կոչվում է նաև «Արմատ հաւատոյ», այժմ հայտնի «Կնիք հավատո» դավանաբան. ժողովածուի առաջին խմբագրությունն է՝ կատարված Հ. Մ-ու ձեռքով, կամ «Հաւատարմատ»-ի օրինակով է կազմվել «Կնիք հաւատոյ»-ն: Ըստ Նորայր արք. *Պողարյանի*, հեղինակի մյուս երկի անունը՝ «Նոյեմակ», առաջացել է «Հաւատոյ նամակ» բառերի աղավաղումից: Ենթադրվում է, որ այժմ անհայտ այդ աշխատության առանձին մասերն են ներկայացնում Հ. Մ-ու «Բան հաւատոյ» երկի 4 հատվածները, որոնք հետագայում նրա համախոհները, ի հարգանս իրենց ուսուցչի, զետեղել են իր իսկ կազմած «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ: Իր դավանաբան. գրվածքներում Հ. Մ. մեծ տեղ է հատկացրել *անապա-*

կանության խնդիրներին: Լինելով անապականության եռանդուն ջատագով, Հ. Մ., սակայն, չի ընկել *երևութականության* գիրկը: Ծայրահեղացնելով անապականության նրա գաղափարները, Հ. Մ-ու աշակերտները (Սարգիս Մայրագոմեցի և այլք) հետագայում նորանոր տեսություններ են հյուսել իրենց ուսուցչի աստվածաբան. ուսմունքի շուրջ, սկզբնավորել հայ իրականությունում երևութականության դրսևորումներից մեկը՝ «Մայրագոմեցիների աղանդ» կոչված հոսանքը, ինչի հիման վրա *Թեոդորոս Քռթենավորն* ու այլոք Հ. Մ-ուն վերագրել են աղանդավոր. գաղափարներ, որոնք իրականում ոչ մի կապ չունեն նրա ուսմունքի հետ: Ընդունելով հանդերձ Տերունական մարմնի անապականությունը՝ Հ. Մ. այն չի համարել աննյութական և երևութական, այլ ընդգծել է «թեպէտեւ յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին, ինքն միշտ անապական ասի»: Ջանալով հաստատել «անապական մարդեղության» ուսմունքը, այսուհանդերձ, չի ընդունել Գեթսեմանիի պարտեզում Քրիստոսի ապրած տագնապն ու տրտմությունը (Ղուկ. **22**.43–44), քանզի դրանք, ըստ դավանաբան հեղինակի, աղամորդուն հատուկ ապականացու կրքեր են, որոնք սկզբունքորեն չէին կարող տեղ գտնել Քրիստոսի բնության մեջ:

Հ. Մ-ու գրչին է պատկանում նաև «Վերլուծութիւնք կաթուղիկէ եկեղեցւոյ եւ որ ի նման յաւրինեալ կարգաց» խորագրով աշխատությունը: Ըստ Մայր աթոռի միաբան Կարապետ եպս. *Տեր-Մկրտչյանի*, այս երկը սկզբնապես հեղինակի «Նոյեմակ» գրվածքի մասն է կազմել: Հ. Մ-ու այս գործը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում հայ վաղ միջնադարի խորհրդանշանի (սիմվոլիկա) աստվածաբանության ու գեղագիտ. մտքի վերաբերյալ: Գրվածքում հեղինակը ներկայացրել է եկեղեցու ներքին տարածքի, ճարտ. առանձին մասերի, ինչպես նաև եկեղեց. սպասքի և քրիստ. ծիսակարգի այլ բաղադրիչների խորհրդանշական բացատրությունը, տվել դրանց այլաբան. վերլուծությունը:

Գրկ. Կնիք հաւատոյ, Վաղ-պատ, 1914: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Տեր-Մկրտչյան Կ., Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», Վաղ-պատ, 1913: Քենդերյան Հ., Հովհան Մայրագոմեցի, Ե., 1973: Քյոսեյան Հ., Հովհան Մայրագոմեցին և հայ միջնադարյան խորհրդանշանի աստվածաբանության մի քանի հարցեր, «Էջմիածին», 1986, № 1:

Հակոբ Քյոսեյան

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, Հովհաննես Ոսկեբերան, սուրբ Հովհան Ոսկեբերան (մոտ 347–354, Անտիոք – 407, աքսորավայրի ճանապարհին՝ Կոմանայի մոտ, 438-ին աճյունը աքսորավայրից տեղափոխվել է Կ. Պոլիս և ամփոփվել Ս. Առաքելոց Մայր տաճարում), *Ընդհանրական եկեղեցու* նշանավոր հայրապետներից, Հայ առաքելական եկեղեցու համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերից, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով (տես *Եկեղեցու հայրեր*), Կ. Պոլսի պատրիարք (398–404): *Անտիոքի* Մելետիոս հայրապետը (ազգությամբ՝ հայ) նախ՝ Հ. Ո-ին, ապա և ծնողներին քրիստոնյա է մկրտել: Մելետիոսի հսկողությամբ Հ. Ո. ուսանել է Անտիոքի նոր մկրտվածների դպրոցում: Քրիստոնեության դասերին զուգընթաց նշանավոր հռետորների և իմաստասերների մոտ հետևել է փիլիսոփայության և արտաքին գիտությունների դասընթացներին, այնուհետև Աթենքում փիլիսոփայության ուսումնառությունը շարունակել Անթոմիոս փիլիսոփայի մոտ: 18 տարեկանում եռանդով ու հետևողականորեն սկսել է զբաղվել Սուրբ Գրքի և աստվածաբանության ուսումնասիրությամբ, ապա Անտիոքի մոտակա լեռներում, քարայրի մեջ երկու տարի անձնատուր եղել ճգնավորական խստակեցության: 381-ին Հ. Ո. ձեռնադրվել է սարկավագ, 386-ին՝ քահանա և կարգվել Անտիոքի գլխ. եկեղեցու քարոզիչ:

Հ. Ո-ի քարոզներն աչքի են ընկել հռետոր. բարձր արվեստով, հոգեբանական նրբին թափանցումներով: Իր հոգեղեն քարոզների և պերճախոսության համար կոչվել է «Ոսկի բերան»: Հ. Ո. ծավալել է նաև աղքատախնամ գործունեություն: Անտիոքի եկեղեցում նրա հոգածությամբ ամեն օր կերակրվել են շուրջ 3 հզ. որբեր, այրիներ, բանտարկյալներ: Իր կամքին հակառակ ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք: Իրեն հատուկ ուղղամիտ համարձակությամբ դատապարտել է հասարակության, հատկապես՝ արքունիքի հոռի բարքերը: Նրա դեմ կազմվել է հակառակորդների զորեղ խումբ, որը ստոր միջոցներով անվանարկել է նրան ու տապալել: 403-ին, Քաղկեդոնի մոտ, Կաղնյաց ժողովը աթոռազրկել է Հ. Ո-ին, աքսորել Բյուրթանիա (Կ. Պոլսի մոտ): Մեկ օր անց, ժողովրդի պահանջով, հովվապետը վերադարձել է Կ. Պոլիս: Սակայն կրկին դառնա-

լով արքունիքի խարդավանքների զոհ՝ աքսորվել է Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքը. «առեալ տարան յանապատն Հայոց», որտեղ մնացել է 3 տարի: Այդ ընթացքում ուխտավորների անընդմեջ շարք է ձգվել Անտիոքից դեպի Կոկիսոնի Հայոց եկեղեցի: Տեսնելով Հ. Ո-ի աճող հեղինակությունը՝ թշնամիները խնդրել են Արկադիոս կայսրին աքսորել նրան մերձևեծովյան Պիտիոս անմարդաբնակ վայրը: Հ. Ո. ենթարկվել է ծանր տաժանակրության. ցուրտ ձմռանը ճանապարհի մեծ մասն անցել է հետիոտն և Պոնտոսի Կոմանա քաղաքի մոտ, աքսորավայր չհասած, վախճանվել:

Հ. Ո. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն (մեկնություններ, դավան. և հակաճառ. գրվածքներ, ճառեր, քարոզներ, ներբողներ, թղթեր ևն), որը կարևոր դեր է կատարել քրիստ. մտքի պատմության մեջ: Հ. Ո-ի երկերն իրենց բովանդակությամբ ու ձևով միջնադարում եղել են հռետոր. խոսքի ու ոճի, եկեղեց. բեմբասացության դասական չափօրինակ: Նրա անունով մեզ են հասել Հին և Նոր կտակարանների քարոզ-մեկնություններ: Մեկնել է (386–388) Ծննդոցի 1–28 գլուխները, սաղմոսներ, որտեղ անդրադարձել է առաքինության և մոլորության խնդրին, ճշմարիտ աղոթքի կարևորությանը, եկեղեցիներում սաղմոսերգության կարգին, քահանայական պաշտոնի վեհությանը և այլ թեմաների: Սաղմոսների քարոզ-մեկնություններում կան նաև հակաճառություններ *արիոսականության, մանիքեության*, Պողոս Սամոսատցու մոլորությունների դեմ: Հին կտակարանից մեկնել է նաև Եսայու, Երեմիայի, Դանիելի մարգարեությունները, Առակների և Հոբի գրքերը, Ա Թագավորությունից որոշ հատվածներ:

Նոր կտակարանից Հ. Ո. մեկնել է բոլոր չորս Ավետարանները. մեզ են հասել միայն հատվածներ Մատթեոսի (390) և Հովհաննեսի (391) Ավետարաններից: Մատթեոսի Ավետարանը մեկնելիս մերժել է մանիքեական աղանդավորների այն սխալ կարծիքը, թե Հին և Նոր կտակարանները խորապես տարբերվում են միմյանցից, ցույց տվել, որ Հին և Նոր կտակարանների Աստվածը նույն օրենսդիրն է: Մատթեոսի Ավետարանի մեկնությունն ուղեկցվում է մյուս Ավետարանների համապատասխան տեղիների համադրական բացատրությամբ: Յուրաքանչյուր համարի բացատրությանը հետևում է հորդորակը, որը տվյալ համարում արծարծված հարցերի բարոյաբանական եզրակացությունն է: Հովհաննեսի Ավետարանի մեկնությունն-ճառերն արտասանվել են առավոտյան ժամերգության ընթացքում, կրում են հակաճառ. բնույթ և ուղղված են ընդդեմ արիոսականների: Հ. Ո. այդ ճառերում ապացուցել է, որ ավետարանական բնագրերը կատարելապես համաձայն են եկեղեցու դավանած ճշմարիտ վարդապետությանը: Հովհաննեսի Ավետարանի մեկնություններն ունեն քրիստոսաբան. նկարագիր և իրենց ձևով ու բովանդակությամբ տարբերվում են հեղինակի մյուս մեկնություններից: Գործք առաքելոցի մեկնության ճառերը, Հ. Ո-ի իսկ վկայությամբ, գրվել են Կ. Պոլսում, 400-ին, հոգեկան տագնապների, եկեղեցական-քաղ. հուզումների պայմաններում: Նա նշել է, որ Գործքը լեցուն է քրիստ. իմաստությամբ և հստակ վարդապետությամբ, ուստի նախաձեռնել է գրքի մեկնությունը, որպեսզի այդ գանձն անթեղված չմնա: Հ. Ո. ընդհանրապես կարևորել է Ս. Գրքի ուսումնասիրման անհրաժեշտությունը: Նրա մեկնողական վաստակի մեծագույն մասը նվիրված է Պողոս առաքյալի կյանքին, գործունեությանը և թղթերի մեկնությանը: Պողոս առաքյալի Առ Հռովմայեցիս թղթի 32 ճառ-մեկնությունները համարվում են նրա նույն թղթի վրա գրված հայրաբանական մեկնությունների ամենանշանավոր և ամենագեղեցիկ գործը, իսկ 23-րդ ճառը՝ քրիստ. քաղ. մտածողության ամենակուռ և փայլուն գրվածքը: Հ. Ո-ի մեկնությունները շարադրված են Անտիոքի աստվածաբան. դպրոցին հատուկ եղանակով և առանձնանում են պատմաբանասիր., լեզվաքերականական ուրույն հատկանիշներով (տես *Մեկնողական գրականություն*): Հինկտակարանային մեկնություններում Աստվածաշնչի հունարեն Յոթանասնից թարգմանությունը հաճախ համեմատել է այլ թարգմանությունների հետ, բացահայտել մեկնաբանվող համարի իմաստային նրբերանգները: Պատմաբանասիր. մեկնաբանման այս եղանակն է կիրառել նաև Նոր կտակարանը բացատրելիս:

Հ. Ո-ին են վերագրվում բազում ճառեր, սակայն ոչ բոլորն են նրա գրչին պատկանում: Դավան. և հակաճառ. բնույթի ճառաշար է գրել «Յաղագս անճառելի բնութեանն Աստուծոյ» թեմայով, որտեղ պաշտպանել է Աստծո անճառելի, անըմբռնելի և անիմանալի բնությունը՝

ընդդեմ հերետիկոսների բնապաշտ. հակումներին, որոնք ժխտել են քրիստ. կրոնի անդրանցականությունը և Որդու բնության հավասարությունը Հոր բնությանը (տես *Երրորդություն*): Նշանավոր են քահանայական ծառայությանը վերաբերող ճառերը: «Յաղագս անդրիանդաց» և անտիոքյան շրջանի այլ երկերում գերակշռում է քրիստ. սիրո գաղափարը: «Ընդդեմ հրեաների և հրեացող քրիստոնյաների» ճառը Անտիոքի պատրիարքի թողտվությամբ գործող հրեաների ու նրանց ազդեցությանը ենթարկվող քրիստոնյաների դեմ է: Բարոյախոս. ճառերում նա գովաբանում ու բարձրացնում է ողորմածասիրության քրիստ. առաքինությունը՝ «լավ է տալն, քան զառնուլն» առաքելական սկզբունքով (Ա Կորնթ. **16.**1–4): Դրա համար էլ նրան կոչել են նաև «Սուրբ Հովհաննես Ողորմած»: Ճարտասան. արվեստի ընտիր նմուշ է Անտիոքի ժողովրդին ուղղած «Յաղագս անդրիանդաց» ճառը: Գրել է նաև ներբողներ՝ նվիրված Հին կտակարանի մեծ սրբերին, Պողոս առաքյալին, մարտիրոսներին, Անտիոքի եկեղեցու նշանավոր հայրապետներին:

Հ. Ո-ի կյանքը և մատենագր. վաստակը մի շարք կողմերով կապված է հայ իրականության հետ: Նրա երկերի մեծ մասը թարգմանել են հայ վարդապետները V դ.՝ գրերի գյուտից և Աստվածաշնչի թարգմանությունից անմիջապես հետո: Թարգմանությունների լեզուն և ոճը համարվում են դասական՝ իրենց հստակությամբ, ճշգրտությամբ ու գեղեցկությամբ: Միայն Երևանի Մատենադարանում նրա երկերի ամբողջական կամ հատվածական բազում ձեռագիր թարգմանություններ են պահվում: Առաջին տպագիր երկը՝ «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին՝ ըստ Յօհաննու» (1717), բաղկացած է 87 ճառից և «յորդորակներից», ընդ որում, յուրաքանչյուր ճառ համարվում է «աստվածախօս» մի գիրք: Տպագրվել են ս. Գրիգոր Ա Լուսավորչին նվիրված «Ներբողեանք...»-ը (1734), որոնք Հ. Ո. գրել է աքսորավայրում, Կոկիսոնի հայության խնդրանքով և արտասանել «յոգնախումբ բազմութեանն» առաջ. «Երանելի՜ քեզ, անապատ Հայաստանեայց որ ժողովեցեր զարեգակնդ բազմաճառագայթ ի ծոց քո և լուսաւորեցեր արփիափայլ նշուլիւք դորա» (էջ 110–115): Տպագրված գործերի շարքում իր ուրույն տեղն ունի «Հատընտիր գիրք և ճառք և ներբողեանքը» (հ. 1–2, 1818): Հ. Ո-ի մատենագր. վաստակի հայերեն թարգմանված և տպագրված գործերի մեջ կարևոր տեղ են գրավում նաև Մատթեոսի Ավետարանի («յԱւետարանագիրն Մատթեոս, գիրք 1, 2, 1826) և Պողոս առաքյալի թղթերի («Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի», հ. 1, 2, 1862) մեկնությունների վենետիկյան հրատարակությունները: Միջազգ. բանասիրության համար խիստ կարևոր է Եսայու մարգարեության մեկնության (հունարեն բնագրի մեծ մասը կորած է) հայերեն թարգմանությունը (հրտ. 1880): Միայն հայերենով են պահպանվել նաև Եզեկիելի, Ամբակումի մարգարեությունների, Մարկոսի, Ղուկասի Ավետարանների, Կաթողիկե թղթերի հատվածական մեկնությունները, բազմաթիվ ճառեր: Մեզ է հասել Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի թարգմանությամբ Հ. Ո-ի վարքը, որը տպագրվել է 1751-ին, Վենետիկում՝ «Պատմութիւն վարուց» խորագրով: Հ. Ո-ի երկերի հայերեն թարգմանությունները լայնորեն օգտագործվել են հայ մեկնողական (*Անանիա Սանահնեցու*, Սարգիս Կունդի, *Գևորգ Սկևռացու*, *Վարդան Արևելցու* խմբագիր մեկնություններ), դավանաբան. («Կնիք հաւատոյ», «Արմատ հաւատոյ» ևն) գրականության մեջ:

Հայ եկեղեցին ս. Հ. Ո-ի հիշատակը տոնում է տարին 2 անգամ՝ Խաչվերացի 7-րդ կիրակիին հաջորդող հինգշաբթի և հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց» հետ:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Գուշակյան Թ., Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1939: Սեքլեմյան Ա., Սուրբ Յովհան Ոսկեբերան, ԿՊ, 1892: Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 581–617: Վարդանյան Ա., Անտիպ հատուածներ Ոսկեբերանի Պաւղոսի մեկնութենէն, ՀԱ, 1912, № 12, 1913, № 1: Ակինյան Ն., Յովհաննու Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնութեան նորագիւտ հայերէն թարգմանութիւնը, ՀԱ, 1917–18: Հատիտյան Ա., Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետ Անտիոքացի, «Էջմիածին», 1977, № 12, 1978, № 1, 4: Քյոսեյան Հ., Նորահայտ նշխարներ Հովհան Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնությունից, ԲՄ, 1986, № 15: Նույնի, Հունարեն բնագրով անհայտ հատվածներ ս. Հովհան Ոսկեբերանի Եզեկիելի մեկնության հայերեն թարգմանությունից, «Էջմիածին», 1996, № 2–3: Migne J. P., PG, t. 47–64, P., 1857–66; Quasten J., Patrology, v. 2, Utrecht, 1966.

Հակոբ Քյոսեյան

ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ, սուրբ Հովհաննես Որոտնեցի, Կախիկ [1315, գ. Վա-

ղադնի (Սյունիքի Ծղուկ գավառ) – 1386, Ապրակունիս, թաղված է Երնջակի Ս. Գևորգ վանքում], աստվածաբան, իմաստասեր, մատենագիր, ուսուցչապետ, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Սյունյաց մեծ իշխան Իվանեի որդին: Սովորել է *Գլաձորի համալսարանում*, աշակերտել *Եսայի Նչեցուն* և Տիրատուր վարդապետին: Նրանց մահից հետո, 1340-ական թթ. վերջին փոխադրվել է նախ՝ Հերմոնի, ապա Որոտանի վանքը (այստեղից էլ՝ Որոտնեցի): Գիտ. և մանկավարժ. գործունեություն է ծավալել Դարանաղյաց գավառի, իսկ 1370-ական թթ.՝ Տաթևի և Ապրակունիսի վանքերում: 1373-ին հիմնադրել է *Տաթևի համալսարանը* և Ապրակունիսի բարձր տիպի վանական դպրոցը, որոնք դարձել են հայ աստվածաբան. և փիլ. մտքի կարևորագույն կենտրոնները: Հ. Ո. ղեկավարել է գաղափար. պայքարը միարարների (տես *Ունիթորություն*) դեմ, *Գրիգոր Տաթևացու* հետ միասին ընդդիմացել Կաթոլիկ եկեղեցու ոտնձգություններին Հայ եկեղեցու նկատմամբ, ուժեղացրել վերջինիս դիրքերը Արլ. Հայաստանում: Թողել է գիտ. հարուստ ժառանգություն՝ իմաստասիր., աստվածաբան., մեկնող. բնույթի աշխատություններ, ունեցել բազմաթիվ աշակերտներ ու հետևորդներ:

Իմաստասիր. կարևոր գործերից են՝ «Հաւաքումն համառաւտ վերլուծութեանն Ստորոգութեանցն Արիստոտելի», «Համառօտ լուծմունք Պերի արմենիաս գրոց», «Համառօտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծիցն», «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» աշխատությունները, որտեղ Հ. Ո. բացահայտել է իմաստասիր. կարգույթների աստվածաբան. հիմքերը: Իմաստասիրությունը, ըստ Հ. Ո-ու, պետք է օգնի բանականորեն ընդունելու այն, ինչ «ըստ շաւղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ…, իսկ որ արտաքոյ է ի շաւղաց Աստուածաշունչ գրոց՝ ոչ ընդունել» («Հավաքեալ ի բանից իմաստասիրաց», ԲՄ, № 3, 1956, էջ 379): Հ. Ո-ու աստվածաբան. հայացքների ուսումնասիրման համար կարևոր են մանավորապես «Տեսութիւն աւետարանական բանին, զոր ասէ Յովհաննէս», «Ի սկզբանէ էր Բանն…», «Մեկնութիւն մարգարէական բանին, որ ասէ «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցէր», «Մեկնութիւն բանին, որ ասէ մարգարէն. «Ո՞ ստեղծ առանձինն սիրտ նոցա», «Ի բանն առաքելոյն, որ ասէ «Մարդով եղեւ մահ եւ մարդով՝ յարութիւն», «Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ…» և այլ աշխատություններ: Սրանց մեջ արծարծված են Հայ եկեղեցու արարչաբանությանը, հրեշտակաբանությանը, եկեղեցաբանությանը, *Սուրբ Հոգուն* վերաբերող բազմաթիվ խնդիրներ: Մասնավոր հետաքրքրություն են ներկայացնում հատկապես մարդկային հոգու մասին հեղինակի խորհրդածությունները: Այսպես, ըստ Հ. Ո-ու, առաջնայինը հոգին է, որը կենդանություն է տալիս մարմնին և շարունակում է ապրել մարմնից դուրս ու անկախ՝ նրա քայքայումից հետո: Որոշ երկեր ունեն հանրագիտարանային բնույթ («Մեկնութիւն մարգարէական բանին, որ ասէ «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցէր»): Այսօրինակ գործերում մեկտեղված են աստվածաբանությանը, գոյաբանությանը, իմացաբանությանը, տրամաբանությանը, լեզվաբանությանը, աշխարհագրությանը, երկրաբանությանը, օդերևութաբանությանը, կենդանաբանությանը, բուսաբանությանը, աստղաբաշխությանը վերաբերող շատ տեղեկություններ: Հակառական բնույթի դավանաբան. խնդիրներ են արծարծվում «Հարցմունք երկաբնակաց եւ պատասխանիք», «Հաւատոյ դաւանութիւնք» աշխատություններում, որոնք ուշադրավ են Հայ քրիստոսաբանական, երրորդաբանական (տես *Երրորդություն*) մտքի ուսումնասիրման համար: Հ. Ո-ու աստվածաբանությանը հատուկ է սխոլաստիկ մտակառուցման եղանակը՝ թելադրված է Կաթոլիկ եկեղեցու շահերին ծառայագրված գաղափարական հակառակորդներին (միարարներին) նրանց իսկ լեզվով պատասխանելու անհրաժեշտությամբ:

Հ. Ո-ու ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում մեկնողական երկերը («Լուծմունք գրոցն Յոբայ», «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի», «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի», «Յինն երանութիւնսն Քրիստոսի», «Մեկնութիւն Զորեքտասան թղթոցն Պօղոսի»), որոնք շարադրված են արևելաքրիստ. մեկնաբանական ավանդույթի հետևողությամբ: Հ. Ո-ու աստվածաբան. և իմաստասիր. դպրոցի ավանդույթները շարունակել են Գրիգոր Տաթևացին, *Մատթեոս Ջուղայեցին, Առաքել Սյունեցին*:

Հայ եկեղեցին ս. Հ. Ո-ու հիշատակը նշում է Մեծ պահքի 4-րդ կիրակին նախորդող շաբաթ օրը՝ ս. Գրիգոր Տաթևացու, ս. Հովհաննես Երուսաղեմացու և ս. Հովհաննես Գ Օձնեցու հիշատակի հետ:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.3, 4-րդ պատկերը:

Գրկ. Ա ր ե վ շ ա տ յ ա ն Ս., Տաթևի փիլիսոփայական դպրոցը..., ԲՄ, № 4, 1958: Գ ա բ ր ի ե լ յ ա ն Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Ե., 1958: Գ ր ի գ ո ր յ ա ն Գ., Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Ե., 1980:

Հակոբ Քյոսեյան

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ, վանական համալիր ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում, Քասաղ գետի կիրճի աջափնյա բարձրադիր սարավանդի եզրին: Հիմնվել է վաղ միջնադարում, եղել հոգևոր, մշակութ. և գիտակրթ. կենտրոն: Ըստ ավանդության՝ Հ-ի հիմնադիրը և առաջին վանահայրը եղել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*, որն այստեղ է բերել և թաղել *Հովհաննես Մկրտչի* մասունքները: Ենթադրվում է, որ այդ պատճառով է սրբատեղին կոչվել Հ.: Գրիգոր Ա Լուսավորիչն իրենից հետո վանահայր է կարգել ոմն Այուղիանոսի, որի անունով Հ. մատենագրության մեջ հիշատակվում է նաև Այուղի անապատ: Պահպանված հնագույն կառույցը Ս.Կարապետ միանավ եկեղեցին է (V դ.), որը մեզ է հասել բազմաթիվ վերաշինություններով: V դ. 2-րդ կեսին Վահան Մամիկոնյանը նորոգել է եկեղեցու ծածկը և վանահայր նշանակել *Ղազար Փարպեցուն*, որը, հավանաբար, այստեղ է գրել իր «Պատմություն Հայոց» երկը: Հիշատակություն կա, որ VI դ. կեսին Դվինից Հ. է եկել ոմն Գևորգ Մանկիկ և ձեռագրեր ընդօրինակել: VII դ. վանքը զգալի դեր է կատարել երկրի քաղ. կյանքում և դավանաբան. վեճերում, որոնց գործուն մասնակցություն է ունեցել Բաբիլաս վանահայրը:

Վանքի շին. և մշակութ. գործունեությունը վերելք է ապրել XII–XIII դդ.: Ըստ վիմագիր արձանագրությունների՝ XII դ. վերջին Կյուրիկյան Աբաս Ա Բագրատունի թագավորի կնոջ՝ Նանայի (Վանենու) միջոցներով և նրա որդեգիր Մարգարե եպիսկոպոսի հսկողությամբ կառուցվել է վանքի պարիսպը: 1221-ին իշխան Վաչե Վաչուտյանի հովանավորությամբ և Աստվածատուր վանահոր ջանքերով կառուցվել է վանքի Կաթողիկե եկեղեցին, որը նույնպես կոչվել է Ս. Կարապետ: Վաչեի որդի Քուրդ իշխանը 1243-ին, Մկրտիչ վանահոր օրոք կառուցել է եկեղեցու գավիթը: Այդ ժամանակաշրջանում վանքը եղել է Ամբերդ և Նիգ գավառների եպիսկոպոսանիստը, ունեցել մեծ ազդեցություն և ընդարձակ տիրույթներ:

XIII դ. վերջին քառորդին վանքի առաջնորդ է եղել Համազասպ եպս. Մամիկոնյանը (1274–1300): Նրա օրոք գրվել և ընդօրինակվել են Հայոց պատմագրքեր (որոնց մի մասը մեզ հասած այդ երկերի հնագույն օրինակներն են), գործել են վանքի դպրոցն ու գրադարանը: XIV դ. սկզբին նրա գործը շարունակել է ազգական և հաջորդ Ներսես Մամիկոնյանը: Վերջինս նաև արտագրել է ձեռագրեր:

XV դ. վանքը դեռևս պահպանել է իր ազդեցիկ դերը երկրի քաղ. և հոգևոր կյանքում: Այդ է վկայում այն փաստը, որ 1441-ին Հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատվելու հետ միաժամանակ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս *Կիրակոս Ա Վիրապեցին* Հ-ի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին շնորհել է աթոռակալի կարևոր պաշտոնը: Այդ պաշտոնը անցել է նաև նրա հաջորդ Գաբրիել եպս. Վաղարշապատցուն:

Միաբանության հոգևոր և մշակութ. կյանքը, ինչպես նաև վանքի տնտեսությունը նոր վերելք է ապրել XVII դ.: 1637-ին վանահայր Զաքարիա Վաղարշապատցին լայն գործունեություն է ծավալել վանքի տիրույթների ընդարձակման և հզորացման համար: Այդ ժամանակաշրջանում նոր ընդօրինակություններով համալրվել է գրադարանը, հիմնվել է բարձր կարգի հոգևոր դպրոց, որտեղ դասավանդել են *Սիմեոն Ջուղայեցին* (բնական գիտություններ), Նիկողայոս Լվովցին (երաժշտություն), *Զաքարիա Քանաքեռցին* (հայոց լեզու): Վերջինս իր երկերում շարադրել է նաև Հ-ի պատմությունը: Կառուցվել են նոր առաջնորդարան, սեղանատուն, տնտ. շինություններ, նորոգվել են եկեղեցիները, գավիթը և պարիսպը: Զաքարիա Վաղարշապատցուն հաջորդել է նրա աշակերտ Հովհաննես Կարբեցին, որը վերակառուցել է գավթի հս. պատին կից տապանատունը:

Երևանի 1669-ի հզոր երկրաշարժը զգալի վնաս է հասցրել վանքին, հիմնովին ավերվել են միանավ սրահի ծածկը և Կաթողիկե եկեղեցու գմբեթը: Դրանցից առաջինը վերակառուցվել է 1734-ին, Ամենայն հայոց կաթողիկոս *Աբրահամ Գ Կրետացու* հանձնարարությամբ, վանահայր Հակոբ վարդապետի ջանքերով, իսկ երկրորդը՝ 1682-ին՝ վանահայր Սարգիս Կարբեցու օրոք:

XVIII դ. վանքն ապրել է անկման ժամանակաշրջան, կորցրել է իր կալվածները և վիճա-

կը, իսկ XIX դ. սկզբին՝ լրիվ ամայացել: 1918-ի երկրաշարժից ամբողջությամբ ավերվել են Կաթողիկե եկեղեցու գմբեթն ու ծածկը, ինչպես նաև Հվ. պատի մեծ մասը և արլ. պատի Հվ. հատվածը: Վտանգավոր ճաքեր և տեղաշարժեր են առաջացել գավթի կրող կառուցվածքներում:

1923-ից վանքը, որպես պատմամշակութ. հուշարձան, վերցվել է պետ. պահպանության ներքո: Կատարվել են ամրակայման և վերականգնման մեծածավալ աշխատանքներ (1938–1954-ին, հեղ.՝ ճարտ. Ն. Տոկարսկի): 1993-ին ավարտվել է Կաթողիկե եկեղեցու ամբողջական վերականգնումը (հեղ.՝ ճարտ. Հ. Գասպարյան): 2001-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, Հ. Հանձնվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի տնօրինությանը, որը և շարունակում է գավթի ամրակայման և վերականգնման աշխատանքները:

Վանական համալիրի տարբեր ժամանակներում կառուցված հիմն. շինությունները՝ միանավ եկեղեցին, Կաթողիկեն, գավիթը և տապանատունը, այդուհանդերձ, կազմում են ներքին տարածքով միմյանց հետ հաղորդվող, հավաք և ամբողջական մի հորինվածք՝ Կաթողիկեի բարձր և վեհաշուք գմբեթի գերիշխությամբ:

Վանքի V դ. եկեղեցին իր ժամանակին բնորոշ, արլ-արմ. ուղղությամբ ձգված միանավ սրահ է, որի սկզբ. փայտաշեն ծածկը VI դ. փոխարինվել է թաղով: Այն կրել են երեք զույգ որմնասյուների վրա հենված պայտաձև կամարները:

Մուտքը, որ նախապես եղել է Հվ-ից, հետագայում, այդ կողմում միանավ եկեղեցուն կից վանքի Կաթողիկեն կառուցելու հետևանքով, փակվել է: Նոր մուտքը բացվել է արմ-ից և այժմ գտնվում է ավելի ուշ կառուցված գավթում: 1669-ի երկրաշարժից ավերված ծածկը 1734-ին փոխարինվել է նախկինից 4 մ ավելի ցածր տեղադրված և սլաքաձև կամարների վրա հենվող թաղով: Այդ շրջանում նորոգվել, ձևափոխվել և ամրացվել են նաև վնասված պատերն ու որմնասյուները: Նախնական կառույցից անխաթար պահպանվել են արմ. կողմի երեք և Հվ. կողմի մեկ՝ պայտաձև կամարներով պսակված պատուհանները: Եկեղեցու ճարտ. ձևերը պարզ են՝ զուրկ զարդաքանդակային հարդարանքից: Բացառություն է կազմում արլ. պատի զույգ թռչուններ պատկերող բարձրաքանդակը, որը տեղադրվել է XIII դ.՝ որպես Վաչուտյանների տոհմանշան: Ըստ մատենագր. աղբյուրների, եկեղեցին Հվ. կողմում ունեցել է փայտաշեն ծածկով գավիթ, որը քանդվել է Կաթողիկեի կառուցման ժամանակ:

Ս. Կարապետ Կաթողիկե եկեղեցին իր հորինվածքով պատկանում է գմբեթավոր դահլիճ տիպի խաչագմբեթ ենթատիպին՝ արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագծով և անկյուններում՝ երկհարկ ավանդատներով: Ներքին խաչաձևությունն արտաքինից արտահայտվել է յուրաքանչյուր կողմում առանցքային բարձրադիր ճակատոնների առկայությամբ: Աղոթասրահի արմ. հատվածի հս. և Հվ. պատերից ելուստավորված միակտոր քարե բարձակային աստիճանները, որ ձևավորված են բեկված քանդակազարդ եզրագոտով, տանում են արմ. ավանդատների վերին հարկերը: Եկեղեցու միակ՝ արմ. շքամուտքը ձևավորված է աստիճանաձև դեպի ներս խորացող տարբեր հարթությունների վրա գտնվող նեղ և սլացիկ կամարակապ որմնասյուներով, որոնց միջանկյալ տարածքը, ինչպես նաև դռան՝ մեծածավալ քարերից կառուցված շրջանակի մակերեսը ամբողջությամբ մշակված են երկրաչափ. և բուս. նուրբ, հյուսածո զարդաքանդակներով: Դրանք տարածվում են նաև դռան կիսաշրջան ճակատակալ քարի վրա, որտեղ պատկերաքանդակված են գահին բազմած Քրիստոսը և նրա երկու կողմերում կանգնած «իմաստուն և հիմար կույսերը»: Հարուստ մշակում ունի նաև բեմի ճակատը, որը հարդարված է կարմիր և սև քարերից պատրաստված և նուրբ զարդաքանդակված հնգաթև աստղերի, հնգակողմ բազմանկյունների և շեղանկյունների համադրությամբ: Արլ. և Հվ. (տեսանելի) ճակատների հարթությունները ջլատված են եռանկյուն հատվածքով ուղղաձիգ զույգ խորշերով, որոնք ավարտվում են նուրբ ժանեկավոր քանդակազարդ պսակով: Ճակատների հարդարանքի տարբեր են նաև տրամատավոր գոտիները, որոնք խաչաձևությամբ շրջանակում են առանցքային պատուհանները, մյուս պատուհանների կիսաշրջան պսակները, վարդյակները և թռչնաքանդակները: Եկեղեցու ծավալը պսակվում է 12-նիստանի հսկա գմբեթով, որը հարդարված է անկյունային զույգ որմնասյուներով և ծածկված հովհարաձև սլացիկ վեղարով:

Գավիթը կառուցվել է Կաթողիկե եկեղեցու արմ. պատին կից, նրանից ավելի լայն և նրա երկայնական առանցքից դեպի հս. մի փոքր շեղումով, ինչը հնարավորություն է տվել միա-

ժամանակ ընդգրկել երկու եկեղեցիների մուտքերը: Այդուհանդերձ, պահպանվել է գավթի և եկեղեցու հվ. պատերի շարունակականությունը միևնույն հարթության վրա: Գավիթը քառակուսի հատակագծով կենտրոնակազմ և քառասյուն ընդարձակ դահլիճ է, որտեղ սյուները կամարներով կապվում են միմյանց և հանդիպակաց պատերի որմնասյուների հետ՝ ներքին տարածքը բաժանելով կենտր. մեծ և եզրային ութ փոքր քառակուսի հատվածների: Կենտրոնականը վերևում ստալակտիտային տրոմպների միջոցով ձևափոխվում է ութանկյուն լայն բացվածքի (երդիկի), որը պսակվում է 12 սյուների վրա հենված զանգաշտարակով: Մյուս հատվածներն ունեն տարատիպ առաստաղներ. արմ-ները՝ գմբեթածածկ և գլանաձև թաղ, արլ. միջինը՝ ստալակտիտավոր, հվ-արլ. անկյունայինը՝ խաչվող գծեր, հվ. միջինը՝ հարթ: Կառույցը ծածկված է չորս կողմերի ճակատոններով ստեղծված ութանջ տանիքով: Արմ. ճակատին ասիմետրիկ, սակայն եկեղեցու առանցքով տեղադրված շքամուտքը ձևավորված է դռան բացվածքը երիզող կամարակապ որմնասյուներով՝ ամփոփված քառանկյուն քանդակազարդ շրջանակի մեջ: Վերջինիս ներքին հարթ մակերեսը դրվագված է շեղանկյուն տարրերի զարդանախշով: Ճակատակալ քարի վրա պահպանվել է բազմատող և գեղագիր նվիրատվական մի արձանագրություն, որն ընդհանուր հարդարանքի մաս է կազմում: Շքամուտքից վեր կան միջնասյունով անջատված զույգ պատուհանի բացվածքներ՝ առնված ստալակտիտային մշակումով ճակատոնին ներգծվող որմնակամարի մեջ: Շքամուտքի երկու կողմերում ճակատի հարթությունը ձևավորված է սլացիկ զույգ որմնասյուներին հենված կամարաշարով, որը մեկական թռիչքի չափով անցնում է նաև հս. և հվ. ճակատներին:

Գավթի հս. պատին կից պահպանվել է տարբեր ժամանակներում կառուցված երկու շինությունների համադրությամբ ստեղծված, անկանոն հատակագծով մի կառույց, որը XVII դ. կոչվել է տապանատուն (Զաքարիա Սարկավագ): Ենթադրվում է, որ դրա արմ. հատվածը պատկանել է առավել հին մի կառույցի, որը նրա տեղը զբաղեցնող գավթի շինարարության ժամանակ մասամբ քանդվել է: Հետագայում, պահպանված մասն օգտագործելու նպատակով, այն նորոգվել և արլ. կցակառույցով միացվել է միանավ սրահին:

Վանական համալիրի տարածքը հս., արմ. և հվ. կողմերից շրջապատված է կիսաշրջան բուրգեր ունեցող պաշտպանական պարսպով, որի մուտքը գտնվում է արմ. հատվածի կենտր. մասում: Արլ. կողմից բնական անառիկ պատնեշ է ծառայել կիրճը:

Կառույցների ներսում, վանքի տարածքում և պատմ. գերեզմանոցում պահպանվել են բազմաթիվ քանդակազարդ և արձանագիր հուշարձաններ՝ խաչքարեր, տապանաքարեր: Պարսպից դուրս, մուտքի մոտ՝ երկաստիճան պատվանդանի վրա, կանգնեցված է բազմանիստ կամարաքանդակ խարսխով և բարդ տրամատավորված խոյակով հուշասյուն: Պահպանվել են նաև չին., նվիրատվական և այլ բնույթի հարյուրից ավելի վիմագիր արձանագրություններ:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.3, 5-րդ և 10.4, 1-ին պատկերները:

Գրկ. Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ. 3, Վաղ-պատ, 1870: Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948: Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992: *Халпахчьян О.Х., Архитектурные ансамбли Армении, М., 1980;* Jakobson A., Ghafadarian K., Curotola G., K'asakhi vank'er, V., 1986 (Documenti di architettura armena, 15).

Կորյուն Ղաֆադարյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, սուրբ Հովհան Մանդակունի [մոտ 403, գ. Ծախնոտ (Արշարունյաց գավառ) – 490], Ամենայն հայոց կաթողիկոս 478-ից: Հաջորդել է հորեղբորը՝ *Գյուտ Ա Արահեզացուն*: Եղել է *Սահակ Ա Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտը: Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո, երբ սկսել էր աճել Հայոց կաթողիկոսության դերը, Հ. Ա Մ. եռանդուն մասնակցություն է ունեցել երկրի քաղ. կյանքում, հետևողական պայքար մղել պարսից բռնապետության և պարսկ. կողմնորոշում որդեգրած խմբավորման դեմ: Այդ նպատակով գործակցել է պարսկ. տիրապետության դեմ ապստամբած Վահան Մամիկոնյանի հետ, հայրապետական քարոզներով, օրհնություններով, հայրենասիր. կոչերով գոտեպնդել հայ ռազմիկներին Ներսեհապատի ճակատամարտում (482): Վահան Մամիկոնյանի մարզպանության տարիներին զբաղվել է տնտ. և չին. գործերով (վերակառուցել է տվել Վաղարշապատի, Դվինի եկեղեցիները ևն): 484-ին կաթողիկոս. աթոռը Վաղարշապատից փոխադրել է Դվին:

Պատմիչների վկայությամբ, Հ. Ա Մ. կարևոր մասնակցություն է ունեցել ծիսական մատյանների կազմման գործում: Նրան են պատկանում *Ժամագրքի* մաս կազմող «Զարթուցեալքս ամենեքեան» քարոզը, «Զքէն գոհանամք» աղոթքը, *Մաշտոց* ծիսամատյանի մեջ մտած մկրտության, պսակ, խաչ, եկեղեցի, հիմնարկեքի, ավազան, սկիհ, մաղզմա, գիրք և պաշտամունքի հանդերձ, ժամահար, ինչպես նաև՝ սարկավագ, քահանա, եպիսկոպոս օրհնելու կարգերը: Հ. Ա Մ-ու անունով մեզ են հասել «Խրատ վանականաց միանձանց» երկը, որտեղ հավաքված են հոգևոր կենցաղավարությունը կարգավորող հրահանգներ՝ ուղղված մենակյաց վանականներին, ինչպես նաև՝ «Ի սուրբ վկայսն Քրիստոսի», «Կոչումն ապաշխարութեան» մատենագր. միավորները և Կանոններ: Հ. Ա Մ-ուն են վերագրվում նաև թարգման. երկեր. հունից թարգմանել է *Աթանաս Ալեքսանդրացու* անունով հայտնի «Պատարագամատույցը», երեկոյան ժամերգության նշանավոր «Լոյս զուարթ» օրհներգությունը, ինչպես նաև՝ Պողոս առաքյալի Առ Կորնթացիս Գ թուղթը և «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի» նորկտակարանային *պարականոն գրքերը*: Վարդան Արևելցի պատմիչի վկայությամբ, Հ. Ա Մ. հատվածներ է թարգմանել նաև Գործք առաքելոցից: Հեղինակ է նաև բազմաթիվ շարականների: Հ. Ա Մ. շատ ավելի հայտնի է իր ճառերով, քարոզներով, որոնց թիվը ձեռագրերում հասնում է 40-ի: Նրան են վերագրվում «Յաղագս պահոցն քառասուներրորդացն» («Շողակաթ», տարեգիրք, 1913) կանոնագր. ճառը, ինչպես նաև 26 միավորից բաղկացած մի ժողովածու («Ճառք», 1836), որ տարբեր ձեռագրերում հայտնի է մե՛րթ *Հովհան Ոսկեբերանի*, մե՛րթ *Եփրեմ Ասորու* անվամբ: Հայագիտության մեջ այդ ճառերի հեղինակ է ճանաչվել *Հովհան Մայրավանեցին*: Ճառերը շոշափում են քրիստ. բարոյականությանը վերաբերող հարցեր: Սրանց մեջ մարդու հոգևոր կյանքը կազմակերպող կարևորագույն գործոններ են նկատվում պահքը, ապաշխարությունը, պատվիրանապահությունը, վերջին դատաստանի գիտակցությունը: Հասարակության մեջ այս արժեքներն արթուն պահելու են կոչված եկեղեցու սպասավորները, որոնք պետք է մարդկանց սովորեցնեն հեռու մնալ մեղքերից, զանազան մոլորություններից և նրանց առաջնորդեն Աստծո ճանապարհով:

Հ. Ա Մ. գործուն մասնակցություն է ունեցել ժամանակի քրիստոնյա Արևելքում ծավալված դավան. վեճերին, Հայ եկեղեցին կողմնորոշել դեպի Ալեքսանդրյան դպրոցի (տես *Ալեքսանդրիա*) դավան. սկզբունքները, պայքարել Հայաստան ներթափանցած *Նեստորականության* և *քաղկեդոնականության* դեմ: Հ. Ա Մ-ու օրոք է ընդունվել *Քաղկեդոնի ժողովը* լուելյայն դատապարտող բյուզ. Զենոն կայսրի «*Հենոտիկոնը*», ինչպես նաև թարգմանվել հույն աստվածաբան *Տիմոթեոս Կուզի* հականեստոր-հակաքաղկեդոն. «Հակաճառություն» դավանաբան. երկը: Այս աշխատության որոշակի ազդեցությամբ է շարադրված Հ. Ա Մ-ուն վերագրվող «Ապացոյց յերկուց բնութեանց ասել զփրկիչն եւ կամ մի բնութիւն» քաղկեդոնականության դեմ ուղղված գրությունը, որն իբրև Հայ եկեղեցու քրիստոսաբան. դիրքորոշումը հաստատող դավան. կարևորագույն վավերագիր մտել է «*Գիրք թղթոց*» ժողովածուի մեջ: Նրանից մի ամբողջական հատված՝ «Ի հակաճառութենէն Քաղկեդովնի ժողովոյն, որ ասի Ապացոյց» խորագրով, վկայաբերված է «*Կնիք հավատո*» դավանաբան. ժողովածուում: Հ. Ա Մ. նաև V դ. նշանավոր շարականագիրներից է: Նրան են վերագրվում Հինանց («Գովեա» կոչված) երգերը, Տիրոջ Տապանակի, Հովհաննես Մկրտչի նշխարների («Այսօր ցնծան դասք») կանոնները, ինչպես նաև Թարգմանչաց և Առաքելոց կանոնների հնագույն շարականները:

Կաթողիկոս. գահին Հ. Ա Մ-ուն հաջորդել է *Բաբկեն Ա Որմսեցին*:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.4, 2-րդ պատկերը:

Երկ. Յաղագս սիրոյ եւ սրբութեան, որով պտղաբերին արարածք, աշխատասիր. Գ. Տեր-Մկրտչյանի, Վաղ-պատ, 1903:

Գրկ. Կանոնագիրք Հայոց, հ. 1, Ե., 1964, էջ 491–500: Սարգիսյան Բ., Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վրայ, Վնտ., 1895: Տեր-Մկրտչյան Կ., Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», Վաղ-պատ, 1913: Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 3, գիրք 1, Ե., 1968: Ակինյան Ն., Տեր-Պողոսյան Պ., Մատենագիտական հետազոտություններ, Հովհաննես Ա կաթողիկոս (Մանդակունի), ՀԱ, 1971, № 4–12: Քենդերյան Հ., Հովհան Մայրագոմեցի, Ե., 1973:

Հակոբ Քյոսեյան
Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ԳԱԲԵՂԵՆՑԻ, Գաբեղյան [ծ. թ. անհտ, գ. Սյունձեղուն (Գաբեղյանք գավառ) – 574, Կ. Պոլիս], Ամենայն Հայոց կաթողիկոս 557-ից: Հաջորդել է *Ներսես Բ Բագրեվանդցուն*: Գործուն պայքար է ծավալել *նեստորականության* և *քաղկեդոնականության* դեմ: Այդ նպատակով թղթեր է հղել Սյունյաց Միհրարտաշիր իշխանին, Վրթանես եպիսկոպոսին և Աղվանից Աբաս կաթողիկոսին՝ հորդորելով պայքարել նեստորականության և քաղկեդոնականության հետևորդների դեմ: Հ. Բ Գ. քաջալերական մի նամակ է գրել Երուսաղեմի հայ միայնակյացներին, որոնց հաղորդել են հույն հոգևորականները՝ Քաղկեդոնի ժողովը չընդունելու և «երկու բնություն» չխոստովանելու համար: 571-ին զորավար Վարդան Մամիկոնյանի հետ գլխավորել է Կ. Պոլիս մեկնած Հայոց պատվիրակությունը՝ Պարսկաստանի դեմ պատերազմում Բյուզանդիայից օգնություն խնդրելու նպատակով: Հավատալով կայսրի խոստումներին՝ Հ. Բ Գ. և Վարդան Մամիկոնյանը դավան. հարցում համակերպվող դիրք են բռնել և Ս. Սոֆիայի Մայր եկեղեցում հաղորդվել հույների հետ (ըստ Ասողիկ պատմիչի, այն դուռը, որտեղից հայերը եկեղեցի են մտել, կոչվել է «Դուռն Հայոց»): Սակայն, ըստ ժամանակի ասորի պատմիչ Հովհաննես Եփեսացու, Հայաստանում իմանալով այդ մասին, բոլոր եպիսկոպոսները խիստ և սպառնալի ուղերձ են ուղարկել կաթողիկոսին ու հայ նախարարներին, որոնք համարձակվել էին հաղորդվել «սինոդիտների», այսինքն՝ քաղկեդոնականների հետ: Հ. Բ Գ. տեսնելով, որ հույները չեն կատարում հայերին զինական օգնություն ցույց տալու իրենց խոստումները, և ընկըրկելով իրեն ուղղված սպառնալիքների առաջ, խզել է կապերը հույների հետ և 572-ին Կ. Պոլսում հիմնել հայոց առանձին կրոն. համայնք: Գրել է մի քարոզ, հուն-ից թարգմանել տվել Կ. Պոլսի պատրիարք Եվտիքես Կոստանդնուպոլսեցու (553–565, երկրորդ անգամ՝ 577–582) «Յաղագս զանազանութեան բնութեան եւ առանձնաւորութեան» երկը՝ գրված ի պաշտպանություն Քաղկեդոնի դավանության, և «Գիրք էակացը»: Վախճանվել է ուղղափառ խոստովանությամբ՝ տարադրության մեջ:

Կաթողիկոս. գահին Հ. Բ Գ-ուն հաջորդել է *Մովսես Բ Եղիվարդեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Տեր-Մինասյան Ե., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971:

Արթուր Կարապետյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ ՕՁՆԵՑԻ, սուրբ Հովհաննես Օձնեցի, Հովհան Իմաստասեր [ծ.թ.անհտ, գ. Օձուն (Գուգարքի Տաշիրք գավառ) – 728, գ. Արդվի, ամփոփված է եկեղեցու բակում], Ամենայն Հայոց կաթողիկոս 717-ից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Հաջորդել է *Եղիա Ա Արճիշեցուն*: Կրթություն ստացել է Այրարատի Արագածոտն գավառում, աշակերտել *Թեոդորոս Քռթենավորին*, հմտացել մասնավորապես Սուրբ Գրքի, աստվածաբանության, իմաստասիրության, քերականության և հռետորության մեջ: Ենթադրվում է, որ ուսանել է նաև Սյունյաց դպրոցում, որը հռչակ էր վայելում իր կրթ. և գիտ. բարձր մակարդակով, հատկապես իմաստասիր. ուղղվածությամբ և հունաբան դպրությամբ: Մինչև կաթողիկոս դառնալը նրա մասին աղբյուրներն այլ տեղեկություններ չեն հաղորդում: Ենթադրվում է, որ Եղիա Ա Արճիշեցու կողմից ձեռնադրվել է եպիսկոպոս և կարգվել Արագածոտն գավառի (Աբր. Զամինյան) կամ իր հայրենի Գուգարաց նահանգի թեմերից մեկի (Մ. Օրմանյան) առաջնորդ: Արաբ. խալիֆայության տիրապետության պայմաններում ձգտել է ամրապնդել Հայ եկեղեցու դիրքերը: 719-ին մեկնել է Դամասկոս՝ Օմար ամիրապետի մոտ, խնդրել Հայ եկեղեցին և հոգևորականությանն ազատել որոշ հարկերից, ապահովել քրիստ. կրոնի ազատ դավանությունը խալիֆայության սահմաններում և վերացնել քրիստոնյաների հալածանքները: Ամիրապետը գրավոր համաձայնություն է տվել պահպանել և կատարել Հ. Գ Օ-ու խնդրանքը, իսկ կաթողիկոսն իր հերթին խոստացել է ապահովել հայերի հնազանդությունը: Կարծիք կա, որ ամիրապետի՝ Հ. Գ Օ-ուն տված հրովարտակում ձևակերպված են եղել նաև Հայ եկեղեցու հողատիր. իրավունքները Հայաստանում: Հայոց կաթողիկոսին հաջողվել է թույլտվություն ստանալ, որ Արաբ. խալիֆայության դեմ հայերի 703–705-ի ապստամբության ճնշումից և 705-ին Խրամում ու Նախճավանում հայ իշխանների ողջակիզումից զերծ մնացած, գերեվարված, աքսորված, Բյուզ. կայսրությանը ենթակա Արմ. Հայաստանում ապաստանած հայ նախարարները հայրենիք վերադառնան, վերստանան իրենց ժառանգական հողատիր. տիրույթները և վերականգնեն նախարար. իրավունքները: Ենթադրվում է նաև, որ Դա-

մասկոսում պայմանավորվածություն է ձեռք բերվել *քաղկեդոնականության, պավլիկյանների* դեմ պայքարի վերաբերյալ: Հ. Գ Օ. Հայաստան է վերադարձել արաբ. զորաբանակի հետ և երկրից դուրս վտարել հույներին, կայսեր. վերակացուներին և զինվորներին: Վերադարձից հետո ձեռնարկել է մի շարք եկեղեց. բարեփոխումներ, 720-ին Դվինում հրավիրել եկեղեց. ժողով (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*), որի ընդունած՝ Հ. Գ Օ-ու հեղինակած 32 կանոնները վերաբերում են Հայ եկեղեցու արարողակարգին, ծիսակարգին, հերձվածների ու աղանդների (հատկապես՝ *երևութականության* և պավլիկյանների) դեմ պայքարին: Հայ եկեղեցու պատմության մեջ կարևոր նշանակություն է ունեցել Հ. Գ Օ-ու հրավիրած Մանազկերտի հայասոր. միացյալ եկեղեց. ժողովը (տես *Մանազկերտի եկեղեցական ժողով 726*), որը ոչ միայն հստակեցրել է Հայ եկեղեցու վերաբերմունքը Քրիստոսի մարմնի *անապականության* խնդրի նկատմամբ, այլև ամբողջացրել և վերջնական տեսքի է բերել Հայ եկեղեցու ընդհանուր դավան. սկզբունքները, մասնավորապես՝ քրիստոսաբան. համակարգը:

Հ. Գ Օ-ու գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում «*Կանոնագիրք Հայոց*»-ի կազմումը, որը Հայոց կաթողիկոսի եկեղեց. բարեփոխումների ամփոփումն ու հաստատագրումն էր: Հայ եկեղեցու ծիսաղավան. կարգը քաղկեդոնականության, ինչպես նաև տարաբնույթ աղանդների ազդեցություններից հեռու պահելու նպատակով Հ. Գ Օ. կազմել է Կանոնագիրքը, իր իսկ հիմնավորմամբ՝ որպես «լուսաշաւիղ ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի»: Հ. Գ Օ-ուն է վերագրվում «*Գիրք թղթոց*» ժողովածուի խմբագրումը:

Հ. Գ Օ., լինելով ժամանակի մեծագույն հայ աստվածաբանը և իմաստասերը, ոչ միայն ինքն է գրել աշխատություններ, այլև իր գիտ. պատրաստվածությամբ և հեղինակությամբ մեծ դեր է խաղացել ժամանակի մատենագրության, աստվածաբան. և մեկնող. գրականության ստեղծման գործում և որպես կաթողիկոս պատվերներ տվել ճանաչված վարդապետներին ու մատենագիրներին: Օր.՝ նրա պատվերով է *Գրիգորիս Արշարունին* գրել իր «Ընթերցուածոց մեկնութիւն»-ը: Հ. Գ Օ. զբաղվել է նաև թարգման. գործունեությամբ, ինչն ուղղակիորեն վկայված է նրա վարքում: Ըստ հայ պատմիչների հաղորդած որոշ տվյալների՝ Հ. Գ Օ. կատարել է չին. ձեռնարկումներ: Վերակառուցել կամ նորոգել է Օձունի եկեղեցին, նրան կից կատարել կառուցումներ: Օձունից ոչ հեռու՝ Արդվի գ. հս-արմ. մասում է գտնվում «Սրբանեսի» (Սուրբ Հովհաննեսի) վանքը, որի անունը կապվում է Հ. Գ Օ-ու անվան հետ: Վանքի հս. եկեղեցու բեմին կից գտնվում է մի քարե սարկոֆագ, որը համարվում է Հայոց կաթողիկոսի դամբարանը: *Հայսմավուրքում* տեղ գտած Հ. Գ Օ-ու վարքի վկայությունները, ինչպես նաև «Սրբանեսի» վանքի շինություններում հին եկեղեցու հետքերի առկայությունը մասնագետներին թույլ են տվել Հ. Գ Օ-ուն վերագրել վանքի որոշ շինությունների կառուցումը:

Հ. Գ Օ. ունեցել է սրբակյաց եկեղեցականի համբավ, աչքի ընկել բազում առաքինություններով, որոնց մասին վկայում են հայ պատմիչները և պատմ. հիշատակարանները: Իր գիտ. պատրաստվածությամբ, աստվածաբան., դավանաբան. և իմաստասիր. հմտությամբ մեծարվել է «Իմաստասէր», «Իմաստասէր և սուրբ» պատվանուններով: Գաղափար. անհաշտ պայքար է մղել քաղկեդոնականության, ինչպես նաև զանազան հերձվածների դեմ՝ դրսևորելով աստվածաբան. փայլուն գիտելիքներ, խորաթափանց վերլուծական միտք: Իր ողջ գործունեությամբ ձգտել է ամրապնդել Հայ առաքելական եկեղեցու դիրքերը, նրա դավան., ծիսապաշտամունքային և կանոնական ինքնուրույնությունը ծառայեցնել երկրի և ժողովրդի կենսական շահերին: Իր գործունեությամբ, մատենագր. վաստակով և վարքով խոր հետք է թողել հայ ժողովրդի և Հայ եկեղեցու պատմության մեջ:

Հ. Գ Օ. կյանքի վերջին տարիներին մեկուսացել է հայրենի Օձուն գյուղում, զբաղվել ուսուցչությամբ, աղոթքներով և ճգնակեցությամբ: Կյանքի այդ շրջանում է, որ Հայ եկեղեցու սրբացված հայրապետի մասին հյուսվել են բազմաթիվ ավանդազրույցներ: Նրա ազդեցությունն այնքան մեծ է եղել ժամանակակիցների և հետագա սերունդների վրա, որ պաշտվել է որպես հրաշագործ սուրբ, իսկ նրա գերեզմանը դարեր շարունակ եղել է սրբատեղի: Հայսմավուրքը Հ. Գ Օ-ու հիշատակի օր է նշում ապրիլի 17-ը, ինչն էլ հիմք է տվել Մ. Օրմանյանին ապրիլի 17-ը համարել նրա մահվան օրը:

Հ. Գ Օ-ու մատենագր. վաստակը բազմաժանր է՝ աստվածաբան-դավան., ծիսապաշտամունք. բնույթի երկեր, ճառեր, շարականներ: Ամենահայտնի գործերն են «Ատենաբանութիւն»-ը, «Ճառ ընդդէմ պաւղիկեանց»-ը և «Ճառ ընդդէմ երեւութականաց»-ը: «Ատենաբանության» նպատակը մինչ այդ Հայ եկեղեցու *ժամերգության* մեջ իշխող խառնաշփոթը վերացնելն ու այն միօրինակության բերելն էր: VIII դարից սկսած Հայ եկեղեցու ժամերգությունը կանոնակարգվել է, այսինքն՝ երգերի շարքերը հարմարեցվել են եկեղեց. տոներին: Այդ գործում մեծ է *Ստեփանոս Սյունեցու* և Հ. Գ Օ-ու դերը: *Խոսրով Անձևացու* ժամակարգության մեկնության մեջ Հ. Գ Օ-ու սահմանած սաղմոսները, օրհնությունները, կցուրդները, քարոզները, աղոթքները և մաղթանքները բերված են նույնությամբ: Հայոց կաթողիկոսը «Ատենաբանություն»-ում իր դժգոհությունն է հայտնում, որ ոմանք Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնը միասին կատարելու փոխարեն միայն Ս. Ծննդյան տոնն են նշում: Հիշեցնում է, որ մեր նախնիները մանավոր կցուրդներ են հորինել նաև Մկրտության տոնի համար:

«Ընդդէմ պաւղիկեանց» ճառը գրվել է Հայոց մեջ այդ շրջանում աշխուժացած պավլիկյան աղանդի դեմ: Պավլիկյանները խաչի, սրբազան առարկաների և պատկերների նկատմամբ հարգանքը համարել են նյութապաշտություն և կռապաշտություն: Հ. Գ Օ. սպառիչ փաստարկներով հերքել է աղանդի պատկերամարտ. (տես *Պատկերամարտություն*) սկզբունքները, հիմնավորել եկեղեցում կիրառվող սրբազան առարկաների նկատմամբ հարգանքի անհրաժեշտությունը և Հայ եկեղեցու պատկերապաշտ. (տես *Պատկերապաշտություն*) ըմբռնումների մեկնակետերը: Հ. Գ Օ. պատկերամարտներին անվանել է «խաչամարտներ», որոնց պատկերամարտությունը հանգում է խաչամարտության և Քրիստոսատյացության: Հ. Գ Օ. պատկերների ջատագովությունից անցել է *խաչի* պաշտպանության՝ նպաստելով հայոց մեջ խաչի քարոզչության ու պաշտամունքի տարածմանը և, ի տարբերություն Հույն եկեղեցում ընդունված սրբապատկերների պաշտամունքի, սկիզբ դրել զուտ խաչապաշտությանը: Հ. Գ Օ-ու հիմք դրած խաչապաշտության ջատագովության ավանդույթը հունադավանության և աղանդավորության դեմ մղած իրենց գաղափար. պայքարում շարունակել են *Անանիա Սանահնեցին, Հովհաննես Սարկավագը, Մխիթար Գոշը* և ուրիշներ:

«Ճառ ընդդէմ երեւութականաց»-ը (1807, լատ. 1816) գրվել է երևութականների աղանդի դեմ, որոնք, հետևելով Եվտիքեսի հերձվածին (տես *Եվտիքականություն*), «առ աչօք» են համարել Աստծո Բանի իրական մարմնացումը, ժխտել Քրիստոսի մարդկային բնությունը՝ բացարձակացնելով աստվածայինը: Հ. Գ Օ-ու գրչին են պատկանում նաև «Յաղագս կարգաց եկեղեցւոյ», «Հատուածք բանից ի Հաւաքմանց յաղագս կարգաց եկեղեցւոյ», «Վասն մեծի աւուր միաշաբթին», «Սակս գիշերային ժամու», ինչպես նաև երկբայական և անհարազատ համարվող մի շարք երկեր, ճառեր, թղթեր [«Հիմնարկեք եկեղեցւոյ», «Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ», «Սակս ժողովոցն որ եղևն ի Հայս» (վերջինս հրատարակվել է «Գիրք թղթոց»-ում), «Խոստովանութիւն անշարժ յուսոյ...» (Հրտ. Կարապետ վարդապետ, 1896), «Յաղագս եկեղեցւոյ» ևն], որոնք «Մատենագրութիւնք» ընդհանուր խորագրի տակ հրատարակել է Մ. Ավգերյանը 1833-ին, Վենետիկում, իսկ 1834-ին՝ նաև լատիներեն թարգմանությամբ, գրաբար բնօրինակների հետ:

Իր երկերում Հ. Գ Օ. կարևոր անդրադարձներ ունի և՛ կերպարային, և՛ գունային, և՛ ճարտ., և՛ ծիսական խորհրդանշանների, աստվածաբան. խորհրդանշանային հասկացությունների և դրանց ընկալման ձևերի մասին: Խորհրդանշանի շուրջ նրա աստվածաբան. դատողությունների ու մեկնությունների վերլուծումը հնարավորություն է տալիս պարզելու հայ վաղմիջնադարյան գեղագիտության տեսական առանձնահատկություններն ու օրինաչափությունները, որոնք երևան են հանում հայ եկեղեց. մշակույթի աստվածաբան. նախահիմքերն ու աղբյուրները:

Հ. Գ Օ. հռչակված է եղել նաև փիլ. գիտելիքներով: Իր ստեղծագործություններում նա անտիկ հեղինակների, *եկեղեցու հայրերի* և ժամանակի փիլ., աշխարհաճանաչող. գիտ. նվաճումները փորձել է ծառայեցնել Հայ եկեղեցու դավան. գծի ամրապնդման և եկեղեցու հակառակորդների դեմ ծավալած իր պայքարին: Նրա դավան. ճառերում առկա են սենսուալիստ. և ռացիոնալիստ. որոշակի շեշտադրումներ, ինչը նորություն է հայ փիլ. մտքի և աշխարհընկալման զարգացման մեջ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Հ. Դ Օ. նաև իր ժամանակի աչքի ընկնող շարականագիր էր: Նրան է վերագրվում չորս ավագ տոների երգեցողությունների մեծագույն մասը: Դրանք են. Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի կանոնը (ունի 5 շարական. Օրհնություն՝ «Յաղթող գտաւ», Հարց՝ «Մեղաք յամենայնի», Ողորմեա՝ «Անսկիզբն Աստուած», Տեր երկնից՝ «Երդուաւ Տէր», Մանկունք՝ «Օրհնեցէք զՏէր»), Ստեփանոս Նախավկայի կանոնը (ունի 7 շարական, որոնցից 2-ը՝ Օրհնություն, մնացածը՝ Հարց, Ողորմեա, Տեր երկնից, Մանկունք, Ճաշու), Պետրոս և Պողոս առաքյալների կանոնը (ունի 6 շարական. Օրհնություն՝ «Ցնծայ այսօր եկեղեցի», Հարց՝ «Որ խոստացար տալ», Ողորմեա՝ «Ամոլք հաւատոյ», Տեր երկնից՝ «Երանելի սուրբ առաքեալքն», ստեղի Մանկունք՝ «Որ արփիահրաշ», ստեղի Համբարձի՝ «Որ անպարագիրն է»), Որոտման որդիների կանոնը (ունի 5 շարական. Օրհնություն՝ «Որ էն էութեան», Հարց՝ «Որ զամենայնըն յոչընչէ արարեր», Ողորմեա՝ «Որդիքն Որոտման», Տեր երկնից՝ «Հոգի իմ կանխէ առ քեզ, Աստուած», ստեղի Մանկունք՝ «Որ յանստուեր ի լուսոյն»): Շարականներն աչքի են ընկնում աստվածաբան. և դավան. խորությամբ, լեզվի գեղեցկությամբ:

Հայ եկեղեցին ս. Հ. Դ Օ-ու հիշատակը տոնում է *Մեծ պահքի* չորրորդ կիրակիի նախորդ շաբաթ օրը:

Կաթողիկոս. դահին Հ. Դ Օ-ուն հաջորդել է *Դավիթ Ա Արամոնեցին*:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.4, 3-րդ պատկերը:

Երկ. Մատենագրութիւնք, Վնտ., 1953: Երկեր (գրաբարից փոխադրում, առաջաբան և ծանոթագր. Վ. Համբարձումյան), Ե., 1999:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1981: Կանոնագիրք Հայոց, հ. 1, Ե., 1964: Զամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, հ. 1, Նոր Նախիջևան, 1908: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 1, Ե., 1956: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Պալյան Խ., Հովհան Օձնեցուն վերագրվող շարականները, «Էջմիածին», 1984, № 11–12: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դարերում, Ե., 1985: Սահակյան Ա., Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, ՊԲՀ, 1987, № 2: Քյոսեյան Հ., Խորհրդանշանը Հովհան Օձնեցու մատենագրության մեջ, «Գանձասար», 2, 1992: Համբարձումյան Վ., Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, «Էջմիածին», 1997, № 4–5: Պապյան Մ., Հովհան Իմաստասեր Օձնեցի, Ե., 1998:

Հակոբ Քյոսեյան
Մհեր Պապյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Դ ՈՎԱՅԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Ովայք (Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոտայք գավառ) – 855, Սոդք գավառ, ամփոփված է Մաքենացոց միաբանության գերեզմանատանը], Ամենայն հայոց կաթողիկոս 833-ից: Հաջորդել է *Դավիթ Բ Կակաղեցուն*: Հայոց Իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին, տեղի տալով զրպարտությունների, մանավանդ որ իր կամքին հակառակ էր Հ. Դ Ո. կաթողիկոս ընտրվել, հրովարտակով պատվիրել է «բոլորին հեռու մնալ հովվապետին ընդունելուց»: Հ. Դ Ո. գահակալման ութերորդ տարում (841) հեռացել է կաթողիկոսարանից և հաստատվել Այրիվանքում (*Գեղարդավանք*)՝ նվիրվելով ճգնակեցության: Սակայն Հայոց Սմբատ Բագրատունի սպարապետը և հայ նախարարները եկեղեց. ժողով են գումարել, արդարացրել կաթողիկոսին և վերահաստատել իր աթոռին:

850-ական թթ. արաբ. արշավանքների հետևանքով Հայաստանում ստեղծված դառնաղետ պայմաններում Հ. Դ Ո., չնայած ծեր տարիքին, շրջել է երկրով մեկ և ջանացել ոգեպնդել բնակչությանը, ուրացությունից հետ պահել որոշ նախարարների: Ի հիշատակ արաբ զորապետ Բուղայի արշավանքի ժամանակ նահատակվածների՝ կաթողիկոսը հաստատել է տարեկան տոն (ներկայումս չի նշվում):

Կաթողիկոս. դահին Հ. Դ Ո-ուն հաջորդել է *Զաքարիա Ա Զագեցին*:

Գրկ. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ե., 1985: Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ե ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ [ծ. 845–850-ի միջև, գ. Դրասխանակերտ (Այրարատ նահանգ) – մոտ 929], Ամենայն հայոց կաթողիկոս 898-ից, պատմագիր: Հաջորդել է *Մաշտոց Ա Եղիվարդեցուն*: Կրթությունն ստացել է Սևանա կղզու վանքում, իր նախորդի՝ Մաշտոց Ա կաթողիկոսի մոտ: 908-ին, Հայաստանի վրա Ատրպատականի ամիրա Յուսուֆի արշավանքը կանխելու նպատակով, Հայոց թագավոր Սմբատ Ա-ի հրահանգով մեկնել է Ատրպատա-

կան՝ Յուսուփի հետ բանակցելու, սակայն ձերբակալվել և բանտ է նետվել: Բանտից փախել և անցել է Աղվանք, Վրաստան, ապա վերադարձել է Հայաստան և հաստատվել Տարոնում: Սմբատ Ա-ի մահից հետո, 914-ին Կ. Պոլսի պատրիարք Նիկողայոսը բարեկամական նամակ է հղել Հ. Ե Դ-ուն՝ առաջարկելով Բյուզանդիայի հետ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի միասնության ծրագիր: Հ. Ե Դ. չի մեկնել Կ. Պոլիս (որտեղ բանակցությունների համար Աշոտ Երկաթ թագավորի հետ հրավիրված էր նաև ինքը): Դվինում հաստատված Հ. Ե Դ., խույս տալով արաբ զորապետ Նըսրի հալածանքներից, անցել է Սևանա կղզի, ապա՝ Բյուրական, Բագարան: Երբ Նըսրը գրավել է կաթողիկոսանիստ Դվինը, կաթողիկոսը Վասպուրականի Գագիկ թագավորի հրավերով 927-ին մեկնել է Վասպուրական:

Հ. Ե Դ-ուց պահպանվել է երկու աշխատություն. «Շարք կաթողիկոսացն Հայոց» և «Պատմութիւն Հայոց» (հրտ. 1843): Առաջինը Հայոց կաթողիկոսների ցանկն է՝ սկզբից մինչև իր ժամանակը, կենսագր. համառոտ տվյալներով: Առավել արժեքավոր է նրա «Պատմութիւն Հայոց»-ը, որն ընդգրկում է Հայաստանի պատմությունը նախնական ժամանակներից մինչև 924-ը: Բաղկացած է առաջաբանից, բուն նյութից և վերջաբանից: «Պատմութիւն Հայոց»-ը չի բաժանված մասերի ու գլուխների: Մինչև IX դ. կեսի մասին եղած տեղեկությունները քաղված են նախորդ պատմիչներից, բայց կան տվյալներ, որոնք ոչ մի աղբյուրում չեն հանդիպում: Հատկապես արժեքավոր է երկի՝ IX դ. 2-րդ կեսից հետո ընդգրկող մասը, որը Հ. Ե Դ. գրել է որպես դեպքերի ականատես և մասնակից: Հ. Ե Դ-ու Պատմությունը լույս է տեսել Ֆրանս. (1841) և վրաց. (1965) թարգմանությամբ:

Կաթողիկոս. գահին Հ. Ե Դ-ուն հաջորդել է *Ստեփանոս Բ Ռշտունին*:

Երկ. Շարից հայրապետացն Հայոց (տես Սամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկում, Վաղ-պատ, 1893, էջ 272–277): Հայոց պատմություն, Ե., 1996:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ Ծործորեցի [մոտ 1270-ական թթ., հավանաբար՝ Երզնկա (Մեծ Հայքի Եկեղյաց դավառ) – 1338, ենթադրվում է, որ շիրիմը գտնվում է Հաղպատի վանքում], փիլիսոփա, մեկնիչ, քերական, բանասեր, մանկավարժ: Նախն. կրթությունն ստացել է Եկեղյաց դավառի դպրատներում: Գործել է *Գլաձորի համալսարանում*, եղել *Եսայի Նչեցու* գործընկերը: Հետագայում տեղափոխվել է Արտազ՝ *Ծործորի վանք*: Գրել է գիտափիլ. երկերի առաջաբաններ, մեկնություններ, քարոզներ, թղթեր, բանաստեղծություններ, ընդօրինակել մի շարք իմաստասիր. երկեր: Նպաստել է Հայաստանում *կաթոլիկության* տարածմանը, եղել հայ *ունիթորության* ներկայացուցիչ, մասնակցել 1316-ի *Ադանայի եկեղեցական ժողովին*, սերտ կապեր պահպանել *Բարդուղիմեոս Բոլոնիացու* հետ: 1321-ին թարգմանել է XIII դ. կաթոլիկ աստվածաբան Թովմա Աքվինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատությունը: Հ. Ե. կրել է Թովմա Աքվինացու փիլ. և աստվածաբան. հայացքների ազդեցությունը:

«Համառօտ տեսութիւն քերականի» աշխատության մեջ Հ. Ե. տվել է քերակ., գրակ., գրականագիտ. հասկացությունների սահմանումներ (միջնադարյան ըմբռնումով): Իր նախորդների թարգմանությունները քննահամեմատ. մեթոդով բաղդատել է հույն և լատին բնօրինակների հետ, կատարել պատմաբանասիր., բնագրային ճշգրտումներ, իմաստասիր., լեզվական ստուգաբանություններ: Շարունակել է *Ներսես Շնորհալու*՝ Մատթեոսի Ավետարանի անավարտ մեկնությունը, Ներսես Շնորհալու օրինակով գրել հայոց այբուբենին նվիրված բանաստեղծություն: Հ. Ե-ու չափածոն (գանձեր, երգեր, շարականներ, խրատական ոտանավորներ, հանելուկներ) քնար. և պատմող. ստեղծագործություն է՝ գրված ազատ չափ ու հանգով, դյուրըմբռնելի լեզվով:

Հ. Ե-ու ձեռագրերը պահվում են Մատենադարանում («Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. 1, 2, 1965, 1970):

Երկ. Մեկնութիւն սուրբ Աւետարանին..., ԿՊ, 1825 (համահեղինակ Ներսես Շնորհալի):

Գրկ. Քյուրդյան Հ., Երիզա և Եկեղյաց դավառ, հ. 1, Վնտ., 1953: Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի, Ե., 1958: Խաչիկյան Լ., Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, ԲՄ, № 11, 1973:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ Պլուզ [1220–1230, Մեծ Հայքի Եկեղյաց դավառ, հավանաբար՝ Երզնկա – 1293, Կիլիկիա, Ակների վանք (նշխարները հետագայում տեղափոխվել են Երզնկա. շիրիմը գտնվում է Ս. Նշան եկեղե-

ցու առաջնորդական աթոռի տակ)], հանրագիտակ, իմաստասեր, աստվածաբան, տիեզերագետ, բնագետ, մեկնիչ, քերական, արվեստագետ, գեղագետ, մանկավարժ, երաժիշտ, բանաստեղծ: Սերել է իշխանական տոհմից, սովորել Երզնկայի դպրատներում (մասնավորապես՝ Ս. Մինասի անապատում), ապա աշակերտել *Վարդան Արևելցուն*, որին հիշել է երախտագիտությամբ, անվանել իր հոգևոր հայրը: 1268-ին ստացել է վարդապետ. աստիճան:

1270–80-ական թթ. Հ. Ե. արդեն համբավավոր գիտնական էր, աստվածաբան, *ունիթորության* դեմ հաս. ու եկեղեց. կանոնների հեղինակ, որոնցով ղեկավարվել են երկրի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները, ժողովուրդը: Այդ տարիներին շրջագայել է հոգևոր ու մշակութ. առաքելությամբ, երկրի հոգևոր և աշխարհիկ առաջնորդներին ուղղել գործնական խրատներ՝ պահպանելու Կիլիկիայի Հայկ. թագավորությունը, լինելու «ազատ» ու «անծառայելի», հորդորել իմաստությամբ ու արդարությամբ վարել իշխանությունը, գործով և ոչ միայն անվամբ լինել իմաստուն ու արդար:

Աստվածաբան., գիտ. ու խրատ. ճառեր և քարոզներ է կարդացել Սսում, Դրազարկում, Անարզաբայում, Երուսաղեմում, Կարինում (Թեոդուպոլիս), Տփղիսում (Թիֆլիս), վանքերում ու անապատներում, արքունիքում և *Հռոմկլայի կաթողիկոսարանում*, մասնակցել է ազգապահպանման և հայկ. պետականության ամրապնդման համար մղվող պայքարին: Այցելել է Լևոն Գ թագավորին, թագաժառանգներին, *Հակոբ Ա Կլայեցի* և *Ստեփանոս Դ Հռոմկլայեցի* կաթողիկոսներին, հատուկ խորհուրդներ ու խրատներ տվել Ռուբինյան գահակալ իշխաններին: Հակոբ Ա Կլայեցու խնդրանքով քերականություն և աստվածաբանություն է ավանդել նրա սաներին: 1281-ին Երուսաղեմում Ստեփանոս Կուռիկոսցի վարդապետի խնդրանքով գրել է եկեղեցուն նվիրված հատուկ հորդորակ, Տփղիսի Ումեկ իշխանի որդու՝ Վախթանգի և Հոհան եպիսկոպոսի խնդրանքով քաղաքի Կաթողիկե եկեղեցում տիեզերագիտ. մեծ քարոզ կարդացել են: 1280–84-ին գրել է *Փիլոն Ալեքսանդրացու* ճառերի մեկնությունը, կատարել թարգմանություններ երկնային մարմինների ու դրանց շարժման, օդերևութաբան. երևույթների ու նման այլ նյութերի մասին եղած աղբյուրներից: 1283–84-ին Ապլոց իշխանի խնդրանքով գրել է իր նշանավոր տիեզերագիտ. չափածո աշխատությունը: 1291-ին Ս. Մինասի անապատում «ի դուռն սուրբ Լուսավորչիս գաւառին» ավարտել է «Հավաքումն քերականին մեկնութեան» աշխատությունը (ձեռնարկել էր 1270-ական թթ.): Նույն թվականին Երզնկայի մեծ դրասեր ու մեկենաս Ահարոն վարդապետն ընդօրինակել է տվել այն և «Խրատ հասարակաց», «Սահման և կանոնք...» գրվածքների հետ կազմել ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 2329):

Հ. Ե. եղել է Երզնկայի քաղաքային շերտերից՝ արհեստավորներից և առևտրականներից կազմավորված «Եղբայրության» հոգևոր ղեկավարը, գրել «Սահման ու կանոնքը...», «Կրկին կանոնք և խրատք տղայահասակ մանկաց աշխարհականաց», «Յաղագս միաբանութեան եղբարց բանք սակաւք և պիտանիք», «Խրատ մանկտաւագաց» և այլ խրատականներ, որտեղ հորդորել է եկեղեցի հաճախել, աղոթել, հաղորդվել, մեղքերը խոստովանել, ավետարան. պատվիրանները կատարել ևն: Առանձնապես ուշադրավ է «Խրատ հասարակացը», որտեղ բազմաթիվ գործն. կանոններ է հրահանգել՝ ժողովրդին բարեկրթելու և լուսավորելու նպատակով՝ հաճախակի վկայակոչելով նաև հայոց մեծերին: Հ. Ե. Հայ եկեղեցու ոչ միայն քարոզիչն էր, այլև նրա խրատների և կանոնների ժողովողը, նորերի ստեղծողը և տարածողը: Դրա վկայությունն են նրա բազմաթիվ գործերը՝ նվիրված Հայ եկեղեցու տոներին ու ծեսերին, Ծննդյան, Մկրտության, Խաչելության խորհրդին, առաքյալներին, Գրիգոր Ա Լուսավորչին ու Ներսես Ա Մեծին, Հայ եկեղեցու մյուս սուրբ հայրերին: Լինելով Հայ եկեղեցու ամենանշանավոր հայրերից ու տեսաբաններից՝ Հ. Ե. պայքարել է *թոնդրակեցիների, գորգեցիների* և այլ աղանդավորների դեմ, մեղադրել ունիթորներին ու քաղկեդոնականներին, մերժել նրանց առաջարկած, ըստ էության քաղ., նվաճող. նպատակներ հետապնդող դավան., ծիսական զիջումները Հռոմի կաթոլիկ եկեղեցուն, պաշտպանել Կիլիկիայի Հայկ. թագավորության անկախությունն ու Հայ եկեղեցու ինքնուրույնությունը: Այդ նպատակով Հ. Ե. խրատներ է սահմանել և ուղղել ոչ միայն ժողովրդին, այլև՝ հոգևորականությանը, որպեսզի նրանք «ուսանիցին և ժողովրդոց իւրեանց քարոզեսցին»: Այդ ամենի հետ մեկտեղ նա սեփական միջոցներ է տրամադրել՝ ծավալելու հայրենի դավառի կրթ. գործը, զբաղվել չին. գործունեու-

թյամբ, Երզնկայի վանքերում ստեղծել 4–5 դրադարան, հիմնել դպրոցներ, կազմել տվել ժողովածուներ, անձամբ կրկնօրինակել ձեռագրեր ևն: Հատուկ եռանդ է գործադրել Երզընկայի, մասնավորապես Սեպուհ լեռան Գրիգոր Ա Լուսավորչի անվան հետ կապված սրբատեղիներին համաքրիստ. հնչեղություն հաղորդելու համար, գրել Գրիգոր Ա Լուսավորչին և նրա ժառանգներին նվիրված երկու ներբող:

Հ. Ե-ու ստեղծագործությունը հայ միջնադարյան գրականության զարթոնքի, գիտության և արվեստի վերածնության արտահայտությունն է: Գիտ. մտքի խորությամբ և ընդգրկմամբ նա հավասարվել է Վերածնության մեծերին:

Հ. Ե. մեծարվել է «առաքելաշնորհ», «գերիմաստ», «սուրբ և իմաստուն», «բանիբուն և աշխարհալոյս վարդապետ», «առավել իմաստուն բարձրապետ» և այլ բարձրապատիվ մակդիրներով, նկարներում պատկերվել լուսապսակով: Նրա մասին պահպանվել են զանազան հրաշագործությունների հետ կապված ավանդություններ, իսկ գերեզմանը դարձել է սրբատեղի:

Հ. Ե. բազմավաստակ, բազմաժանր հեղինակ է: Պահպանվել են նրա ավելի քան հարյուր արձակ ու չափածո ստեղծագործություններ՝ փիլ., աստվածաբան., դավան. երկեր, ճառեր ու քարոզներ, քերակ., մեկնող., կանոն., խրատ. գործեր, շարականներ ևն, որոնք նշանավորել են հայ միջնադարյան գիտ. մտքի ու քերթող. արվեստի զարգացման նոր աստիճան (արձակի զգալի մասն ամփոփված է առանձին ժողովածուներում, որոնցից են Մատենադարանի №№ 2173, 2854, 2992 ձեռագրերը): Նրա գրվածքներում առանձնահատուկ տեղ են գրավում աշխարհընկալման և աշխարհաճանաչման խնդիրները: Փիլիսոփայության օգնությամբ նա ձգտել է զարգացնել ոչ միայն գիտությունը, այլև երկրի կառավարման ու կեցության կարգը, մարդու բարոյական ու գաղափար. աշխարհը՝ ի նպաստ հայ ժողովրդի ու հայ պետականության գոյատևման, բնափիլ. մտքը խարսխել իր աստվածաբան., կրոնաեկեղեց. հայացքների, Սուրբ Գրքի, հույն իմաստասերների (հիմնականում՝ Արիստոտելի), իր նախորդների և իր իսկ համոզմունքների վրա: Նա աշխարհը համարել է նյութական և իմանալի: Ճանաչումը չի դիտել իբրև ինքնին գործողություն, այլ արտաքին աշխարհի՝ նյութի զորության ու ներգործության արդյունք. ուստի՝ առանց մեծ աշխարհի ուղղակի ու անմիջական ներգործության չի կարող տեղի ունենալ ճանաչում և իմացում: Հ. Ե. զգայական ճանաչման և իմացության աղբյուրը կամ հիմքը ընդունում է իրականությունը, իսկ աշխարհի ընկալման միջոցը՝ հինգ զգայարանները: Հետևելով Պլատոնին, Արիստոտելին ու *Դավիթ Անհաղթին՝* աշխարհաճանաչման սկիզբը համարել է աքանչացումը, սերն ու հետաքրքրությունը հանդեպ իրը, առարկան, երևույթը, որն իր մեջ ունի ոչ միայն զարմանքի, այլև հիացմունքի հատկանիշ:

Հ. Ե-ու գրվածքներում հոգի և մարմին հասկացությունները և դրանց փոխհարաբերությունները յուրօրինակ լուծում են ստացել: Նա առաջնությունը տալիս է հոգուն՝ որպես բանականության դրսևորում, ի հակադրություն ճանաչման բուն ընթացքի, որտեղ առաջնությունը պատկանում է մարմնականին՝ որպես ազդող, ներգործող զորություն: Առանց բանական հոգու մասնակցության՝ մարդու բոլոր գործողություններն անմիտ են: Հ. Ե. հանգամանորեն բացատրում է, թե ինչ կերպ, ինչ ճանապարհով է դրսևորվում հոգին, հոգևորը, հոգեկանը: Ինչպես որ «միտք և բան աստվածութիւնն է», «սոյնպէս և ի մեզ՝ բան և միտք, ըստ նմանութեան էին բանի և մտաց... Եւ այսպես. է՛ հոգին ծնաւղ, և բանն՝ ծնունդ և խաւսքն արտաքս բխումն...»: Այսպիսով նա հոգուն վերագրում է միտք և բան ծնելու ունակություն, այսինքն՝ բանականություն, որի շնորհիվ նա հասու է դառնում իրերի և երևույթների ճանաչմանն ու կարգավորմանը: Նա մերժում է աշխարհի ճանաչելիությունը կասկածի ենթարկող ուսմունքները և պնդում, որ հինգ զգայարանները բավական են աշխարհի բոլոր իրողությունների մասին գաղափար կազմելու համար: Արժեքավոր են բնության գոյության օրենքների և նյութի ու տեսակի մասին Հ. Ե-ու հայտնած մտքերը: Նա կյանքի և գոյության հիմքը համարում է շարժումը: Ամեն ինչ, որ կա բնության մեջ, շարժական է և փոփոխելի, ունի սկիզբ և վախճան: Շարժումն ու փոփոխությունը կատարվում են ժամանակի մեջ և ժամանակի ծնունդ են, սակայն ժամանակը նույնպես շարժման արգասիք է՝ ընթացքի ու փոփոխության մեջ, և ունի սկիզբ ու վախճան: Հ. Ե. շարժման, բնության մշտահոլովության պատճառ է համարում նաև մարդու ծնունդն ու մահը: Ամեն բան դիտելով ժամա-

նակի ու շարժման արդասիք և հենվելով *Գրիգոր Նյուսացու* փիլ. ըմբռնումների վրա՝ Հ. Ե. վախճանը համարում է ոչ միայն «քակտումն մասանց», այլև տեսակի փոփոխություն և նոր տեսակի առաջացման սկիզբ: Նա պարզորոշ արտահայտել է նյութի պահպանման գաղափարը: Հ. Ե. թե՛ առարկայական, բուս. ու կենդան. աշխարհի և թե՛ բանական արարածի՝ մարդու վախճանը չի համարում ոչնչացում, այլ՝ բնության չորս տարրերի քայքայում: Մասնավորը, անհատը, տվյալ դեպքում՝ մարդը, վախճանական է, մահկանացու, մինչդեռ ընդհանուրը (մարդկությունը)՝ անվախճան, «անեղծ ու անմահ»:

Հ. Ե. զբաղվել է նաև հոգեբանությամբ, բնախոսությամբ, կազմախոսությամբ, բժշկագիտությամբ, մանկավարժությամբ և ուրիշ շատ խնդիրներով: Շարունակելով իր գիտ. հետազոտությունները՝ նա նոր, պատկերավոր օրինակներով վկայել է, որ մարդու զգայական և հոգեկան ունակություններն արտաքինի վրա դրոշմվում են բազմաթիվ ձևերով ու արտահայտություններով, քանի որ մարմինն անմիջական հաղորդակցման մեջ է հոգեկանի հետ: Այս առումով հետաքրքիր է հոգեկան տարբեր զգացումների ու վիճակների ներգործության հետևանքով մարմնի, մասնավորապես դեմքի վրա առաջացած փոփոխությունների միանգամայն գիտ. նկարագրությունը՝ կապված սրտի գործունեության հետ: Նա գտել է, որ արյան շրջանառության, նյութափոխանակության խախտումները, զանազան հոգեկան երևույթների առաջացումն ու դրանց բնույթը անմիջականորեն կապված են արտաքին ազդակներից: Ուղեղը դիտել է որպես զգացողության ու մտածողության, հոգեկանի ու բանականի կենտրոն, ուղեղի միջին փորվածքին է հատկացրել բանականության՝ զգայական ներկայից իմացական ապագային հանդելու ամենանուրբ ունակությունները, մարդկային բնության նորը ճանաչելու անհագությունը, գլխուղեղի բջիջների կամ մտքի ինֆորմացիա ստանալու կարողության անսահմանությունը: Ինչպես բոլոր գիտությունների և արվեստների, այնպես և բժշկագիտության համար ուսումնասիրության ելակետ է ընդունել նյութը: Գրել է դիահերձումների, ազդակցական ամուսնությունների, ազդապղծության հետևանքով առաջացած հիվանդությունների ու արատավոր ծնունդների, անզավակության պատճառների, բուսական միջոցներով, խոսքով ու երաժշտությամբ կատարվող բուժումների, հիվանդությունների և այլ իրողությունների մասին: Հ. Ե. հատուկ ուսումնասիրություններ է նվիրել տիեզերքի քննությանը, մանրամասն տեղեկություններ հաղորդել աշխարհի ստեղծման, Արևի և Լուսնի խավարման, տարվա չորս եղանակների, երկնային մարմինների պտույտի, 12 կենդանակերպի, մոլորակների ու լուսատուների մասին: Գիտականորեն պարզաբանել է նաև օր ու գիշերվա առաջացման, նրանց կարճացման ու երկարացման պատճառները, երկրագնդի տարբեր գոտիների, արեգակնային համակարգի ու մոլորակների հետ կապված երևույթները, Արկտիկայի անբնակ լինելը:

Հ. Ե. նաև նշանավոր քերական է: Ուսումնասիրել է իրենից առաջ եղած հայ և օտար քերականներին: 1291-ին ավարտել է «Հաւաքումն մեկնութեան քերականին» աշխատությունը: Հայ բանասիրության, մասնավորապես՝ քերականագիտության պատմության համար առանձնապես կարևոր են գրքի լուսանցքների աղբյուրագիտ. նշումները, որոնք նյութեր են պարունակում Դավիթ Անհաղթի, Անանուն Մեկնիչի, Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու և այլոց անհետ կորած քերական. մեկնությունների մասին: Այն սկզբնաղբյուրի արժեք է ունեցել քերական մեկնիչներ Եսայի Նչեցու, Հովհաննես Քոնեցու, Առաքել Սյունեցու և այլոց համար: Երկում կան գրական ժանրերի (տաղ, ողբերգություն, դյուցազներգություն, կատակերգություն, դամբանական, զրույց, առասպել, պատմություն ևն) սահմանումներ, հոգևոր ու աշխարհիկ երաժշտ. հասկացությունների բնութագրումներ, տվյալներ Հոմերոսի կենսագրությունից, հատվածներ «Իլիական»-ից ու «Ոդիսական»-ից ևն: Այս աշխատությունը երկար ժամանակ ծառայել է որպես քերական. գիտելիքների հիմն. ձեռնարկ և միջնադարի հայ դպրության ամփոփումն է:

Հ. Ե. նշանավոր մանկավարժ է. մշակել է դաստիարակչ. մեթոդներ՝ հաշվի առնելով մարդու (հատկապես՝ երեխաների) տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև սոց. պայմաններն ու միջավայրը, հանդել Վերածնության յուրահատուկ առաջադեմ հետևության. մարդու լավ կամ վատ, բարոյական կամ անբարո վարքագիծը սոսկ բնածին՝ ի սկզբանե տրված կայուն ու անփոփոխ վիճակ չէ: Գիտական դաստիարակը ամենից առաջ խնդիր է դնում կրթությունն սկսել մանուկ հասակից,

երբ երեխայի միտքը հստակ, մաքուր ու անբիծ է ինչպես հայելի: Նրա մեջ ամեն ինչ իր ճիշտ ու անմիջական արտացոլումն է գտնում: Նա հավատում է, որ հենց մանուկ հասակում է մարդ տենչում ըմբռնել տեսածն ու լսածը, ինչ ընկալում է իր բոլոր հինգ զգայարաններով: Ուսումն ու կրթությունն ուշ սկսվելու դեպքում միտքը մնում է անխրատ և խոպանանում, իսկ խոպան միջավայրում չարիք է աճում, դժվարանում է լավի արմատավորումը: Հ. Ե. գիտության ու լուսավորության տարածումը համարում է մեծ առաքինություն:

Գեղագետ գիտնականի չափածոն զարգացել է երեք ուղղությամբ՝ կրոն., աշխարհիկ և գիտ.: Կրոն. ստեղծագործությունները՝ շարականներ, մեղեդիներ, ներբողներ, արծարծում են մարդկային մտքի խորությունն ու ներհակությունը, կյանքի ու բնության մեծ սերը, անվախճան ու հավիտենական գոյության երկընտրանքը, գեղեցիկը կորցնելու վախն ու ցավը, հոգու տագնապն ու տառապանքը, երկինք ու երկիր օգնության կանչող մարդու հառաչանքն ու աղերսական կյանքը: Հ. Ե. գրել է Ադամին նվիրված՝ «Ադամ նստել դուռն ի դրախտին», «Ադամա որդիք ամէն ծնունդ ի հողէն», «Մեր Տէրն ի դրախտն երեկ» սկսվածքներով տաղեր: «Աստուածածին սրբուհին» սկսվածքով տաղը որդեկորույս մոր վիշտն ու սուգն է: Նա ստեղծել է Ներսես Ա Մեծին, Գրիգոր Ա Լուսավորչին նվիրված շարականներ, որոնք քնար. չնչով ու ջերմությամբ հորդող քերթվածներ են: Գրիգոր Ա Լուսավորչին ու Ներսես Ա Մեծին նվիրված ներբողներում ողբում է երկրի անմխիթար վիճակը, հայ ժողովրդին հորդորում միանալ իրեն՝ ազգ. արժանապատվության ոգին բարձրացնելու համար: Ողբին հաջորդում է սփոփանքի կոչը, ուրախության և հուսո ներշնչանքը: Գրիգոր Ա Լուսավորչի ներբողը Հ. Ե-ու բանաստեղծ. արվեստի, երաժշտականության, գաղափար. ու գեղագիտ. մտքի բարձրակետն է: Նա իր աշխարհիկ բանաստեղծություններում ևս անդրադառնում է աստվածաշնչային, քրիստ. թեմաների, մատչելի դարձնում հավատի ու դավանության հետ կապված որոշ հասկացություններ, մեկնաբանում դրանք՝ միավորելով աշխարհիկն ու հոգևորը, երկրայինն ու երկնայինը, գործնականն ու բանականը, շոչափելին, զգայականն ու վերացականը:

Կանխելով արլ. և արմ. մի շարք հեղինակավոր մտածողների, Հ. Ե. երաժշտարվեստը համարել է մարդկային իմացության ձևերից մեկը՝ անմիջաբար կապված «լսողական»՝ ձայնային աշխարհի հետ: Նա նորովի է բացատրել մարդու հոգու և մարմնի վրա երաժշտության ներգործության մասին հինավուրց դրույթները, տեսականորեն հիմնավորել միջնադարյան Հայաստանում երաժշտարվեստի օգնությամբ հիվանդներ բուժելու տարածված փորձը: Արտահայտելով աշխարհիկ երգ-երաժշտության նկատմամբ Հայ եկեղեցու պաշտոն. նոր վերաբերմունքը և յուրովի լրացնելով Դավիթ Քերականի մտքերը երաժշտարվեստի եռակի բաժանման մասին («բարու», «չարի» և «միջակի»)՝ առաջադրել է երկակի բաժանում՝ «աստվածային», որ կատարվում է տաճարներում՝ զղջական արցունքներ քամելով ներկաների աչքերից ու նրանց մղելով բարի խոկումների, և «մարդկային», որ կատարվում է «ուրախական» հանդեսներում, խրախճական ժողովներում:

Հ. Ե. մի ամբողջ ուսմունք է ստեղծել երաժշտի գիտակցության մեջ ծագող «անմարմին» ելևէջների ու կատարման ընթացքում մարմնավորվող «մեծ ու փոքր», «ծանր ու թեթև», «սուր ու բութ», «սուղ ու երկար» ֆիզիկական երևույթի, տեսակների ու երաժշտության ձայնի տարբերիչ հատկանիշների մասին: Խորացնելով այդ մասին Դավիթ Անհաղթի մտքերը՝ կազմել է ձայների տեսակների՝ միջնադարի չափանիշներով հարուստ մի աղյուսակ, որտեղ արդեն պատշաճ տեղ է գրավում նաև «չափ» ու «կշիռով» աչքի ընկնող «արուեստաւոր» (երաժշտական) ձայնը: Հ. Ե. խորացրել է տաղային արվեստի աշխարհականացման ընթացքը և, միաժամանակ, կարևոր ավանդ մուծել հոգևոր երաժշտության զարգացման մեջ: Նա օժտված է եղել նաև գեղեցիկ երգչային ձայնով և կատարող. հազվագյուտ ձիրքով: Միջնադարը ըստ արժանվույն է գնահատել նրան՝ մկրտելով «քաղցրիկ», «քաղցրաձայն» և «պիւլպիւլ» (բլբուլ) վարդապետ մականուններով:

Հ. Ե-ու գործերն առաջին անգամ հրատարակվել են 1664-ին, ապա նաև՝ 1665-ին՝ Ամստերդամում, Շարակնոց ժողովածուներում:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.4, 4-րդ պատկերը:

Երկ. Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք..., Յաղագս երկնային շարժմանց..., Նոր Նախիջևան, 1792: «Սոփերք հայկականք», հ. 5, Վնտ., 1853: Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք Յովհաննէս Երզընկացին, ԲՄ, № 4, 1958, էջ 302–313: Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, աշխատա-

սիր. Է. Բաղդասարյանի, ԲՄ, № 10, 1971, էջ 303–314: Բանք չափաւ, աշխատասիր. Ա. Սրապյանի, Ե., 1986: Յաւուր Ծննդեան և Մկրտութեան Քրիստոսի..., աշխատասիր. Ա. Սրապյանի, «Գանձասար», 6, 1996: Յաղագս միաբանութեան եղբարց, աշխատասիր. Է. Բաղդասարյանի, «Գանձասար», 6, 1996: Ամանորեայ օրհնութիւն և խրատք..., աշխատասիր. Է. Բաղդասարյանի, «Գանձասար», 6, 1996:

Գրկ. Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Խաչիկյան Լ., Դիահերձումը հին Հայաստանում, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ», 1947, № 4: Քյուրտյան Հ., Երիզա և Եկեղյաց գավառ, հ. 1, Վնտ., 1953: Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի (ընդգրեր և ուսումնասիրություն), Ե., 1958: Նույնի, Հովհաննես Երզնկացի-Պլուզ. կյանքը և գործը, Ե., 1993: Գրիգորյան Գ., Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Ե., 1962: Թահմիզյան Ն., Ջայնի մասին ուսմունքը հին և միջնադարյան Հայաստանում, ԲՄ, № 6, 1962: Նույնի, Էջեր միջնադարի հայկական երաժշտական գեղագիտությունից, «Էջմիածին», 1963, № 11: Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը (ընդգրեր և ուսումնասիրություն), Ե., 1977: Նույնի, Հովհաննես Երզնկացին Կիլիկիայի զինվորական կազմակերպությունների մասին, ԲՄ, № 16, 1994:

Արմենուհի Սրապյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Զ ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ – 2.5.1221, ամփոփվել է Դրազարկի վանքում), Ամենայն հայոց կաթողիկոս 1203-ից: Հաջորդել է *Գրիգոր Զ Ապիրատին*: Սերել է Հեթումյան տոհմից: Եղել է Սսի արքեպիսկոպոս, *Դրազարկի վանքի* վանահայր: Հ. Զ Ս. նպաստել է Հայ եկեղեցու դավան. ու ծիս. ավանդույթների պահպանմանը: Եկեղեց. սպասքի վաճառքից գումարներ է հատկացրել Հռոմկլա բերդի ամրացմանը: 1204-ին Հայոց իշխան, ամիրսպասալար Զաքարե Զաքարյանը (Զաքարե Բ Մեծ Երկայնաբազուկ) դիմել է Հ. Զ Ս-ուն՝ պարզելու հայ-վրաց. միացյալ զորքում հայ ռազմիկների հետ կապված եկեղեց. որոշ խնդիրներ, մասնավորապես՝ հաղորդության հետ կապված միջոցների, ս. Պատարագի շարժական սեղանի, խորանաձև վրան ունենալու մասին: 1204-ին Սսում գումարվել է եկեղեց. ժողով (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), որը հայ զինվորների համար արտոնել է «վրանում պատարագ մատուցանել»: Կաթողիկոսը Զաքարիա ամիրսպասալարին է ուղարկել շարժական սեղան և ծեսը կատարելու համար նախատեսված այլ սպասք (տես *Անիի եկեղեցական ժողով 1207*): 1218-ին, Լևոն Բ թագավորի խնդրանքով, Հ. Զ Ս. կաթողիկոս. գահը Հռոմկլա բերդաքաղաքից տեղափոխել է Դրազարկի վանք:

Կաթողիկոս. գահին Հ. Զ Ս-ուն հաջորդել է *Կոստանդին Ա Բարձրբերդցին*:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786:

Արթուր Կարապետյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Է ԱՋԱԿԻՐ (ծ. թ. անհտ – 17.10.1506, Կ. Պոլիս), Ամենայն հայոց կաթողիկոս 1474–84-ին: Հաջորդել է *Սարգիս Բ Աջատարին*: 1470–74-ին եղել է նրա աթոռակալը: Հ. Է Ա-ի օրոք այլ սրբություններ հետ Աղթամարի կաթողիկոսարանից Ս. Էջմիածին է վերադարձվել *Լուսավորչի Աջը*, որի համար նա ստացել է «Աջակիր» մականունը: Հ. Է Ա. որևէ կապ չունի Կիլիկիայի *Աջապահյանների* հետ: Ակկոյունլուների տիրապետության պայմաններում Հ. Է Ա-ի գործունեությունն ուղղված էր Ս. Էջմիածնի միաբանության և ընդհանրապես հայ հոգևոր դասի համար հարկային արտոնություններ ձեռքբերմանը: 1484-ին Հ. Է Ա. Ս. Էջմիածնի միաբանության և լեհահայ գաղթականների համար հանգանակություն կազմակերպելու նպատակով ուղևորվել է Լեհաստան: 1484-ից հետո չի վերադարձել Մայր աթոռ, և ենթադրվում է, որ հրաժարվել է կաթողիկոսությունից:

1506-ին, ըստ Մ. արք. *Օրմանյանի*, նա Սարգիս եպիսկոպոսի և Դավիթ աբեղայի հետ որպես Էջմիածնի նվիրակ մեկնել է Կաֆա, Մոլդովա, Սուչավա, Լվով, Աքերման, ապա՝ Կ. Պոլիս: Այստեղ թուրք. իշխանությունները նրանց ձերբակալել են, առաջարկել դավանափոխ լինել. մերժում ստանալով՝ երեքին էլ գլխատել են:

Կաթողիկոս. գահին Հ. Է Ա-ին հաջորդել է *Սարգիս Գ Մյուսայլը*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Միքայել Ծայրագույն վրդ. Աջապահյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ը ԿԱՐԲԵՑԻ (1762–26.3.1842), Ամենայն հայոց կաթողիկոս 1831-ից: Հաջորդել է *Եփրեմ Ա Զորագեղցուն*: Հայոց կաթողիկոսներից առաջինն էր, որ կոչվել է թվահամարի մակդիրով (Հովհաննես Ութերորդ), ինչը տարածվել է նաև իր հաջորդների վրա: Միաժամանակ ընդունվել է նախորդ կաթողիկոսներին պատմականորեն թվահամարով կոչելու սկզբունքը: Նա առաջին կաթողիկոսն էր Արլ. Հայաստանը Ռուսաստանին միացվելուց (1828) հետո, երբ Էջմիածնի Մայր աթոռը նույնպես անցավ ռուս. կայսրության տնո-

րինության ներքո: Կաթողիկոս է դարձել ցար. կառավարության գործուն միջամտությամբ՝ բռնի հրաժարեցնելով իր նախորդին:

Հ. Ը Կ-ու առաջին մտահոգությունն էր Էջմիածնի կաթողիկոսության և արևմտահայ թեմերի, մասնավորապես՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքության հետ հարաբերությունների վերականգնումը (վերջիններս 1800-ական թթ. սկզբից որոշ հանգամանքների բերումով խզել էին կապերը Մայր աթոռից): Սակայն այս ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերն անհաջողության են մատնվել: Ի պատասխան Հ. Ը Կ-ու կոնդակների՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքը տնօրինել է, որ եկեղեցիներում հիշատակվի Ս. Էջմիածնի աթոռը, սակայն առանց նրա գահակալ Հ. Ը Կ-ու անվան, ինչն աննախադեպ իրողություն էր Հայ եկեղեցու պատմության մեջ: Կ. Պոլսի եկեղեցիներում Պատարագի ընթացքում ժամանակի Ամենայն հայոց կաթողիկոսի անվան հիշատակումը վերսկսվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս Կոստանդնուպոլսեցու (տես *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի*) օրոք: Հ. Ը Կ-ու գործունեությունն անհաջող է եղել նաև Հայ եկեղեցու ներքին կառավարման բնագավառում: Ամբողջապես տարվելով զուտ դրամական գործերով՝ անուշադրության է մատնել Մայր աթոռի կառավարումը: Դա առաջ է բերել միաբանության մի շարք անդամների դժգոհությունը, որը վերջիվերջո հանգեցրել է կաթողիկոսի դեմ խռովության՝ ցար. կառավարությանն առիթ տալով ավելի եռանդուն միջամտելու Հայ եկեղեցու գործերին: Հ. Ը Կ. չի կարողացել կայուն հարաբերություններ հաստատել նաև թեմական առաջնորդների հետ (Ներսես Աշտարակեցի՝ Նոր Նախիջևան-Բեսարաբիայի թեմ, Սերովբե Կարնեցի՝ Աստրախանի թեմ ևն):

Հ. Ը Կ-ու աթոռակալության օրոք՝ 1836-ին, հաստատվել է Հայ եկեղեցու կանոնադրությունը՝ «*Պոլոժենիեն*»: Այդ փաստաթղթի նպատակն էր զրկել Հայ եկեղեցին իր ազգ. արմատներից՝ դարձնելով նրան ցար. վարչակարգին հնազանդ մի կազմակերպություն: Հ. Ը Կ. որպես եկեղեցու գլուխ, հետևաբար և՝ նրա ճակատագրի համար պատասխանատու, ոչ միայն չի միջամտել այդ կանոնադրության ստեղծմանը (ցար. կառավարությունը նրան նույնիսկ մասնակից չի արել «Պոլոժենիեն» ստեղծող հանձնաժողովի աշխատանքին), այլև շատ դեպքերում ինքն է փորձել հիմնավորել կանոնադրության կետերը՝ որպես օգտակար Հայ եկեղեցուն և հոգևորականությանը: Հ. Ը Կ-ու օրոք կառուցվել է Էջմիածնի Սինոդի շենքը:

Կաթողիկոս. գահին Հ. Ը Կ-ուն հաջորդել է *Ներսես Ե Աշտարակեցին*:

Գրկ. Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս 1–2, Թ., 1894–95: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927:

Կարեն Ալեքսանյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒԹՈՒՆՋԻ, Վանեցի, Արևելցի, Շամիրամակերտցի (ծ. թ. անհտ, Վան – 1703, Տրապիզոն), Կ. Պոլսի հայոց պատրիարք, Աղթամարի կաթողիկոս: Կյանքի սկզբ. շրջանի վերաբերյալ կենսագր. տեղեկություններ չեն պահպանվել: 1650-ին, արդեն վարդապետ, Հ. Թ. եղել է Կ. Պոլսում և, հավանաբար 1647–48-ին, երկրաշարժերից Վասպուրականի տուժած վանքերի ու եկեղեցիների վերականգնման պատրվակով, զբաղվել է կեղծ ժողովարարությամբ՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Փիլիպոս Ա Աղբակեցու* անունից, ինչի համար վերջինս բանադրել, անգամ կարգալույծ է արել նրան: 1652-ին, հաշտվելով Փիլիպոս Ա Աղբակեցու հետ, նշանակվել է Էջմիածնի նվիրակ: Հ. Թ-ի հետագա գործունեությունը բնորոշվում է հակասական, հաճախ՝ արկածախնդրական ելևէջումներով: Գործի դնելով նվիրակության ընթացքում հավաքած դրամը՝ 1663-ին դարձել է Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ գժտվելով *Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսի հետ: Թեև 1664-ին Հ. Թ. պաշտոնանկ է արվել, սակայն օսմանյան իշխանությունների, ինչպես նաև Հակոբ Դ Ջուղայեցու հակառակորդ Եղիազար Այնթապցու (կաթողիկոս *Եղիազար Ա Այնթապցի*) և մեծահարուստ Ապրո Ձելեպիի հովանավորությամբ 1665-ի մայիսին դարձյալ տիրացել է պատրիարք. աթոռին (մինչև 1667-ը):

Պատրիարքության տարիներին Հ. Թ. կազմակերպել է Մահտեսի Մուրատ Բաղիշեցու առաքելությունը Ֆրանսիա (1666)՝ օգնության դեպքում խոստանալով կազմակերպել հայհուն. միասնական հակաթուրք. ապստամբություն: Երկրորդ անգամ գահընկեց լինելով՝ Հ. Թ. տեղափոխվել է Վան, դարձել Վասպուրականի թեմական առաջնորդ՝ միաժամանակ պաշտոնավարելով որպես Վարագա, Հոգյաց, Ս. Աստվածածին և Սալնապատի Ս. Գրիգոր վանքերի վանահայր: 1670–72-ին Աղթամարի կաթողիկոսն էր: 1678–80-ին ուղևորվել է Եթով-

պիա՝ հավանաբար ապահովելու այս երկրի մասնակցությունը Լյուդովիկոս XIV-ի հակաօսմանյան կոալիցիային (թողել է ճանապարհորդ. գրառումներ): Որպես Էջմիածնի նվիրակ, 1680-ին մեկնել է Լիվոռնո (Իտալիա): 1682–83-ին Հայաստանի ազատագրությանը և Մարսելի հայկ. տպարանին առընչվող հարցերի քննարկման առիթով պաշտոն. տեսակցություններ է ունեցել Փարիզում և Վերսալում: Ենթադրվում է, որ մասնակցել է «XIV խաչակրաց արշավանքին» («Սրբազան լիգայի» մղած պատերազմներին): 1692-ին եղել է Եգիպտոսում, այնուհետև՝ Լեհաստանում, որտեղից տեղափոխվել է Տրապիզոն:

Գրկ. Ալպոյաճյան Ա., Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հայէշխտան ԺԷ դարուն, Կահիրե, 1946: Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Ե., 1961:

Պավել Զոբանյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՂԵՌՆ, Տարոնացի (ծ. և մ. թթ. անհտ), XI դ. 1-ին կեսի գիտնական, տոմարագետ: Կրել է «Հայոց վարդապետ» պատվանունը: 1022-ին Հայոց կաթողիկոս *Պետրոս Ա Գետադարձի* հետ այցելել է Տրապիզոն և Հայոց թագավորի անունից բանակցություններ վարել Բյուզանդիայի Վասիլ II կայսրի հետ՝ Հովհաննես Սմբատ Բագրատունու մահից հետո նրա թագավորության հողերը կայսրությանը հանձնելու շուրջ: Ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցու հավաստմամբ՝ Հ. Կ. հեղինակել է «Գիր հաւատոց» և «Պատմութիւն Բագրատունեաց» երկերը (չեն պահպանվել): Գրել է տոմարագիտ. աշխատություններ («Մեկնութիւն տոմարի» ևն): Հ. Կ-ին է վերագրվել նաև «Տեսիլ» անվաեր գրվածքը, որը, սակայն, ստեղծվել է նրա մահից հետո (այդ գործի իսկական հեղինակները չահարկել են Հ. Կ-ի անունը): Կյանքի վերջին տարիներին ապրել է Երևանում, որտեղ և վախճանվել է, թաղվել է Կոնդ թաղամասի հս-արմ. ծայրամասի՝ հետագայում իր անունով («Կողեռն») կոչված գերեզմանատանը (ներկայիս Ազգային ժողովի շենքի տեղում):

Գրկ. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Քյուրդյան Հ., Հովհաննես Կողեռն, ՀԱ, 1967, № 1–3: *Марр Н.Я., Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, "Восточные заметки", СПБ, 1895.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ԲԱՂԻՇԵՑԻ, Հովհաննես Թ (1678, Բաղեշ – 13.2.1741, Հանգչում է Կ. Պոլսի Ս. Լուսավորիչ եկեղեցու բակում), Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1715–41-ին: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1726-ին՝ *Կարապետ Բ Ուլնեցի* կաթողիկոսի կողմից: Կոլոտ մականունը նրա տոհմանունն է:

Հ. Կ. Բ-ու պաշտոնավարության շրջանում զարթոնք է ապրել Թուրքիայի հայոց ազգային, մշակութ. ու կրթ. կյանքը, իրագործվել են մի շարք նշանակալից ձեռնարկումներ: 1719-ին օծվել է Գումգափուի Մայր եկեղեցին, որը մեկ տարի առաջ հիմնովին այրվել էր, 1727-ին կառուցվել է Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցին, 1730-ին՝ Պալաթի Ս. Հրեշտակապետը՝ նախկինից երիցս ընդարձակ, 1729-ին՝ Խասգյուղի փայտաշեն եկեղեցին, 1732-ին վերաշինվել է Ղալաթիայի՝ նախկինում այրված Ս. Լուսավորիչ եկեղեցին: Վերանորոգվել են Սկյուտարի Ս. Խաչ և Օրթագյուղի եկեղեցիները: 1715-ին բացվել է Կ. Պոլսի առաջին դպրանոցը՝ Սկյուտարի հոգետունը, որը մատենադարանի հետ միասին հետագայում տեղափոխվել է Գումգափուի պատրիարքարան: Բացվել է երկու նոր տպարան. արժանահիշատակ է Սրապյան տպարանը, որը գործել է մինչև XIX դ. կեսը: Տպագրվել է ավելի քան 80 ինքնուրույն և թարգմանական գիրք: 1719-ին Մայր եկեղեցուն կից կազմակերպվել է դպրաց դաս, որի երգչախմբերը կարևոր դեր են խաղացել հայկ. ազգ. հոգևոր երաժշտությունը պահպանելու և սերունդներին փոխանցելու գործում:

Հ. Կ. Բ. պատրիարքը 1715-ին հաստատել է Երուսաղեմի հայոց պատրիարքական աթոռի ինքնուրույնությունը:

Գրկ. Կյուլեսերյան Բ., Կոլոտ Յովհաննէս պատրիարք, Վնն., 1904:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ (ծ. թ. անհտ – 1787, Շուշի), Գանձասարի կաթողիկոս (1763–87), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: *Եսայի Հասան-Ջալալյանի* եղբորորդին: Հայաստանի ազատագրության նպատակով կազմակերպչական գործունեություն է ծավալել Արցախում և Արլ. Հայաստանի մյուս գավառներում: Գործակցել է հայ ազատագր. շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Էմինին (1726–1809), կապ պահպանել Ամենայն հայոց կաթողիկոսության, հնդկահայ ազատագր. խմբակի (Շահամիր Շահամիրյան, Մովսես Բաղրամյան) և ռուսահայ գործիչների (Հովհաննես Լազարյան, Հովսեփ *Արղության*) հետ: Հ.Հ-Ջ-ի նախաձեռնությամբ գումարվել են Արցախի մելիքների ու հոգևորականների ժողովներ, նա-

մակներ հղվել ռուս. արքունիք՝ օսմ. բռնապետության դեմ կռվելու պատրաստակամության հավաստիացումներով: Հ. Հ-Ջ-ի ռուս. կողմնորոշումը հարուցել է Շուշիի Իբրահիմ խանի թշնամանքը, որը, օգտվելով Կովկասյան պատերազմներում Ռուսաստանի զբաղվածությունից, 1787-ի գարնանը հարձակվել է Գանձասարի վրա, կողոպտել կաթողիկոսարանը, կալանավորել Հ. Հ-Ջ-ին և սպանել տվել Շուշիի բանտում:

Գրկ. Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-х гг. XVIII столетия, Е., 1990.

Բագրատ Ուլուբաբյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԵՐՄՈՆԵՑԻ, Կոլոտիկ (ծ. թ. անհտ – 1443), Հերմոնի վանքի առաջնորդ, բաբունապետ, մատենագիր: Սկզբ. կրթությունն ստացել է Վայոց ձորի *Հերմոնի վանքում*, ապա *Տաթևի համալսարանում* աշակերտել *Գրիգոր Տաթևացուն*: Վերջինիս մահից հետո եղել է Տաթևի դպրոցի ուսուցչապետ և մեծ վարդապետ: Իր գիտամանկավարժ. արդասավոր աշխատանքի շնորհիվ ունեցել է մեծ ճանաչում. նրան անվանել են «քաջակրոն», «տիեզերալույս հռետոր», «եռամեծ»: Հ. Հ-ու օրոք Հերմոնի վանքը չի դադարել Այունիքի կրոն. և մշակութ. նշանավոր կենտրոն լինելուց: Այնտեղ աշխատել, ստեղծագործել են ժամանակի անվանի մտավորականներ, նկարիչներ, շուրջ հարյուր տարի գոյատևած գրչատան դպրոցում ընդօրինակվել ու գրվել են բազմաթիվ ձեռագրեր, մեկնություններ, լուծմունքներ: Հ. Հ-ու պատվերով ընդօրինակվել են Քարոզգիրք (1421), Վարդան Արևելցու «Մեկնութիւն սաղմոսաց» (1415), Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք գանձուց» (1418), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» (1419), Մանրուսում (1424) ժողովածուները ևն: Հ. Հ-ու երկերից առավել հիշարժան է Եսայու մարգարեության մեկնությունը:

1430-ական թթ. Հ. Հ. *Թովմա Մեծոփեցու* հետ պայքարել է Հայոց կաթողիկոսությունը Սսից Էջմիածին տեղափոխելու համար (տես *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողով 1441*), վճռական դեր կատարել *Կիրակոս Ա Վիրապեցի* կաթողիկոսի գահընկեցության և *Գրիգոր Ժ Ջալալբեկյանցի* կաթողիկոս ընտրվելու գործում:

Գրկ. Ժե դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 1, կազմ. Խաչիկյան Լ., Ե., 1955: Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թ., 1892: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.2, կՊ, 1914:

Ռաֆայել Մաթևոսյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿԸՐՏԻՉ, Հովհաննես Կարապետ, Ամլորդի, ըստ քրիստոնեական մատենագրության՝ վերջին մարգարեն, որ կանխավետել է Մեսիայի՝ *Հիսուս Քրիստոսի* գալուստը. առաքյալներից առաջինը, որ փաստորեն քարոզել է և իրագործել Քրիստոսի վարդապետությունը, Հորդանանում մկրտել Հիսուսին: Ավետարանները (Մատթ. 11.10, Մարկ. 1.2) հաստատում են, որ հինկտակարանային մարգարեությունները՝ «Ահա ես ուղարկում եմ իմ պատգամաբերին, և նա կտեսնի իմ ճանապարհները իմ առաջ» (Մաղաքիա 3.1), «Անապատում կանչողի ձայնն է. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները» (Եսայի 40.3, Մատթ. 3.3), իրականացվում են հանձինս Հ. Մ-ի: Ըստ էության, մարգարեական այս կանխասահմանումների հետ է անխզելիորեն կապված Հ. Մ-ի «Կարապետ» (առաջնեկ) անվանումը: Այն բնորոշում է Հ. Մ-ին՝ իբրև Քրիստոսի տնօրինական գործունեությունը նախապատրաստող (Տիրոջ ճանապարհը հարթող) մարգարեի կամ առաքյալի:

Հ. Մ. որդին էր քահանայական դասի շառավիղ Զաքարիայի և ամուլ Եղիսաբեթի (այստեղից էլ՝ Հ. Մ-ի «Ամլորդի» անվանումը), որ ազգականն էր *Մարիամ Աստվածածնի*: Հ. Մ-ի ծնունդը (6 ամսով մեծ էր Հիսուսից), անունը, գործունեության բնույթը և ուղղվածությունը Գաբրիել հրեշտակապետը նախապես ծանուցել է Զաքարիային, երբ վերջինս սպասավորում էր տաճարի սեղանի առջև (Ղուկ. 1.5–25, 57–79): Հ. Մ. ապրել է խստաբարո ճգնավորի կյանք (կրել է ուղտի ստևից զգեստ, մեջքին՝ կաշվե գոտի, «... նրա կերակուրն էր մորեխ ու վայրի մեղր», Մատթ. 3.4) Հրեաստանի արևելակողմում գտնվող անապատում, արդեն երեսուն տարեկան հասակում, Տիբերիոս կայսրի օրոք (Ղուկ. 3.1), Ք.ծ.Հ. 27–28-ին, համբավվել է իբրև Աստծո մարգարե: Որպես այդպիսին ժամանակակիցները նրա մեջ տեսել են մարգարեական նույն շունչն ունեցող Հին կտակարանի Եղիա մարգարեին: Բնույթի նմանությունը տեղիք է տվել մի ենթադրության (եթե ոչ համոզման), ըստ որի՝ Հ. Մ-ի մեջ բնակվել է Եղիայի հոգին: Այս կարծիքն այնքան տիրական և տարածված է եղել, որ Հ. Մ. հարկ է համարել ժխտել այն (Հովհ. 1.21): Բայց Հիսուսը, նկատի ունենալով մեկ այլ՝ գալիք իրողություն, ասում է. «Եվ եթե ուզում եք ընդունել, Հովհաննե՛սն է Եղիան, որ գալու է» (Մատթ. 11.14): Հ. Մ-ի հռչակն այնքան մեծ էր, որ Հրեաստանի տարբեր կողմերից մարդիկ գալիս էին ունկնդրելու նրա կրկոտ քարոզները. «Հովհաննեսը մկրտում էր անապատում և քարոզում ապաշխարության մկրտություն՝ մեղ-

քերի թողության համար» (Մարկ. 1.4): Հ. Մ-ի քարոզները հատկորոշվում են վախճանաբանական ուղղվածությամբ. «Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. 3.2): Այս պատգամն ընդունողներին Հ. Մ. մկրտել է Հորդանան գետում (այստեղից էլ՝ Հովհաննեսին բնորոշող «Մկրտիչ» անվանումը. հունարեն բառացի՝ «սուզում»): Համաձայն Հ. Մ-ի, մկրտությունը ապաշխարության վավերացումն ու տեսանելի դրսևորումն է: Ապաշխարության մկրտությունը նախապայման է Քրիստոսի բերած փրկարար շնորհն ընդունելու համար: Հ. Մ. Հորդանան գետում Հիսուսին մկրտելիս մասնավոր նշանով՝ Տիրոջ վրա աղավնակերպ *Սուրբ Հոգու* էջքով, նրա մեջ տեսավ երկար սպասված Մեսիային: Ինչպես և մարգարեացված էր՝ Հ. Մ. նախապատրաստել և սկիզբ է դրել Քրիստոսի տնօրինական գործունեության, որ կենսագործումը եղավ Տիրոջ համար ասված իր իսկ մարգարեական խոսքի. «Ահա Գառն Աստծո, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. 1.29): Հ. Մ-ի կրակոտ քարոզչական գործունեությունն ու ճգնական սխրանքը նրա շուրջն ստեղծել են անվերապահ սիրո և ակնածանքի մթնոլորտ: Այնքան մեծ է եղել այդ ակնածանքը Հ. Մ-ի անձի նկատմամբ, որ ժողովրդի մի մասը տարակույսով մտածել է. «... մի՞թե սա է Քրիստոսը» (Ղուկ. 3.15): Փարատելով այս տարակույսը՝ Հ. Մ. ասում է, որ ինքը մկրտում է ջրով, բայց իրենից հետո եկողը (ակնարկում է Հիսուսին) մկրտելու է Սուրբ Հոգով և հրով:

Հ. Մ. ուներ բազում հետևորդներ և աշակերտներ, ինչն ինքնին վկայում է այն հսկա ազդեցության մասին, որ թողել է նրա քարոզչությունը հասարակության վրա (Գործք 19.3):

Հ. Մ. գործել է Հիսուսից առանձին: Դա թերևս այդպես էլ պիտի լիներ ճակատագրորեն՝ ըստ սուրբ գրվածքների: Նա մի անգամ կարծես տարակուսել է, թե՝ Հիսու՞սն է արդյոք Մեսիան: Այդ տարակույսը ցրելու համար Հ. Մ. բանտից իր աշակերտներին ուղարկել է Քրիստոսի մոտ՝ ստուգապես իմանալու. «Դու՞ ես, որ գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք» (Մատթ. 11.3): Սույն տարակույսին ի պատասխան՝ Քրիստոսն ասում է. «Կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չի ելել. բայց երկնքի արքայության մեջ ամենից հետինը նրանից մեծ է» (Մատթ. 11.11): Սա նշանակում է, որ իբրև մարգարեներից վերջինը՝ Հ. Մ-ին վիճակվեց տեսնել Քրիստոս-Մեսիային, սակայն, իբրև Տիրոջ մահվամբ և հարությամբ հաստատված Աստծո թագավորությանն անհաղորդ մեկը, նա փոքր է երկնքի արքայության մեջ եղած ամենափոքրից: Իբրև օրենքի և արդարության նախանձախնդիր Հ. Մ. հանդես է եկել Գալիլիայի կառավարիչ Հերովդես Ագրիպիասի անբարո վարքի քննադատությամբ: Վերջինս, ոտնահարելով հրեական օրենքն ու սովորությունները, իր եղբորից՝ Փիլիպպոսից, բռնությամբ խլել էր նրա կնոջը՝ Հերովդիադային, և ամուսնացել նրա հետ: Հերովդեսը Հ. Մ-ին բանտ է նետել, սակայն, վախենալով նրա վայելած մեծ ժողովրդականությունից, չի համարձակվել մահապատժի ենթարկել: Հերովդեսի ծննդյան տոնի առիթով Հերովդիադայի դուստր Սալոմեն (որի անունը չի հիշատակվում Ավետարաններում) պարել է: Հերովդեսը այնքան է հավանել նրա պարը, որ բազմաթիվ հյուրերի ներկայությամբ խոստացել է Սալոմեին տալ այն, ինչ կցանկանա նա: Մոր թելադրանքով Սալոմեն խնդրել է Հ. Մ-ի գլուխը: Խնդրանքը կատարվել է, և Հ. Մ-ի գլուխը սկուտեղով մատուցվել է Սալոմեին, որն էլ այն տվել է մորը: Հ. Մ-ի մարմինը թաղել են իր աշակերտները (Մատթ. 14.6–12, Մարկ. 6.21–29):

Համաձայն միջնադարյան Հայաստանում տարածված մի ավանդության, հիշյալ դեպքերից հետո երկնքից մի քար է ընկել և խորտակել Հերովդեսի տունը: Տարիներ անց, Երուսաղեմ ուխտ գնացած երկու ճգնավորների աղոթքին ի պատասխան, մասնավոր տեսիլքի շնորհիվ, Հ. Մ-ի գլուխը գտնվել է փլատակների միջից: Գլուխը տոպրակի մեջ գետեղելով՝ նրանք ճանապարհ են ընկել: Ճանապարհին նրանց է միացել մի մուրացկան: Երբ ճգնավորները ննջել են, ինքը՝ Հ. Մ., երևացել է մուրացկանին և պատվիրել վերցնել գլուխն ու հեռանալ: Մուրացկանը կատարել է Հ. Մ-ի պատվերը: Բազում ցավագարներ են բուժվել Հ. Մ-ի գլխի շնորհիվ: Ժամանակ անց Հ. Մ-ի գլուխը հասել է Արցախի տեր *Հասան Ջալալ Դոլայի* եղբորը: 1211-ին Հասան Ջալալ Դոլան, գնալով եղբոր մոտ, խնդրել է Սուրբի գլուխը: Սակայն եղբայրը մերժել է: Հասան Ջալալ Դոլան բռնությամբ խլել է գլուխը և բերել Գանձակի կողմերը, Արցախ գավառ: Հ. Մ-ի գլուխն ամփոփելով այստեղ՝ իր հայրենական շիրիմ-հանգստարանում, վրան կառուցել է «... զարմանաշէն և հրաշազան կաթուղիկէ եկեղեցի...: Եւ աւուր նաւակատեաց անուանակոչութեան վերաձայնեաց Գանձասարա սուրբ Յովհաննէս» (Մովսես Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», 1983, էջ 349):

Հ. Մ-ի կերպարն իր պատշաճ դրսևորումն է գտել միջնադարի քրիստ. մշակույթի բոլոր մարզերում: Հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ ստեղծվել են Հ. Մ-ին նվիրված բազմաթիվ ճառեր, ներբողներ, քարոզներ, շարականներ, որտեղ պանծացվում են նրա արժանիքները: Առավել հայտնի են *Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի*, Հակոբ Սրճեցու (451–521), *Մովսես Խորենացու, Ատոմ Անձևա-*

ցու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Անանիա Սանահնեցու (հրապարակված V դ. մատենագիր Անանիա Թարգմանչի անունով), *Ներսես Լամբրոնացու, Վարդան Արևելցու, Գրիգոր Սկևռացու* և այլոց ստեղծագործությունները: Ատոմ Անձևացու, Անանիա Սանահնեցու և Վարդան Արևելցու ճառ-ներբողներում տեսական բաղադատման են ենթարկվում Հ. Մ-ի և Եղիա մարգարեի կերպարները: Եղիան և Հ. Մ. համարվում են «լուսատու ճրագ» և «աքաղաղի ձայն» (հատկանշական է, որ Գրիգոր Նարեկացու՝ Հ. Մ-ին նվիրված գանձերից մեկի սկզբնատառերը հոդում են «Ի Ձայնն երգ» բառերը): Ինչպես «լուսատու ճրագը» (Եղիան) անհրաժեշտ է խավարը (մեղքը) հալածելու, այնպես էլ «աքաղաղի ձայնը» (Հ. Մ.)՝ մարդկանց արթնացնելու մեղքի քնից և ազդարարելու արդարության Արեգակի (Քրիստոսի) գալուստը: Սակայն, ի տարբերություն Եղիայի, Հ. Մ. ոչ միայն մարգարեական օրենքի, այլև այդ օրենքի լրումը հանդիսացող մարգարեական և առաքելական շնորհի կրողն է:

Հ. Մ. քրիստ. կերպարվեստի ամենասիրված դեմքերից է: Պատկերագր. կանոնն ու ավանդույթը լայն տեղ են հատկացրել նրա կերպարին: Արևելաքրիստ. (այդ թվում՝ և հայ) եկեղեց. ավանդույթը սրբությամբ և հոգևոր արժանիքով Հ. Մ-ին հավասար է դասում բացառապես Մարիամ Աստվածածնին, իրողություն, որն իր արտահայտությունն է գտել «Դեիսիս» («Դեիսուս»՝ «Բարեխոսություն») անունը կրող հորինվածքի մեջ, որի կենտրոնում՝ դահին բազմած Քրիստոսի երկու կողմերում, կանգնած են Մարիամ Աստվածածինն ու Հ. Մ.: Եթե Արևմուտքի պատկերագր. ավանդույթը Հ. Մ-ին առավելապես ներկայացնում է իբրև մարգարե և Քրիստոսի գալստյան ազդարար, ապա արևելաքրիստ. (այդ թվում՝ հայ միջնադարյան) ավանդույթը նրան ներկայացնում է նաև իբրև ճգնակյաց և անապատական: Ուստի պատահական չէ, որ շարականներից մեկում Հ. Մ. բնորոշվում է «Տատրակ անապատի» բառերով: Հայ մանրանկարչության մեջ Հ. Մ-ի կերպարը գերազանցապես ներկայացվում է ծառաբնին խրված կացնի հետ միասին՝ «Մկրտության» պատկերագրությունում: Սա պատկերային դրսևորումն է Հ. Մ-ի վարդապետական գլխ. սկզբունքը առարկայական դարձնող հայտնի արտահայտության. «... Կացինն ահա ծառերի արմատին է դրված» (Մատթ. 3.10, Ղուկ. 3.9): Հայ մեկնողական գրականության մեջ աքաղաղը (որի պատկերը շատ է տարածված հատկապես խորանների պատկերագրությունում) համարվում է Հ. Մ-ի խորհրդապատկերը: Միջնադարյան Հայաստանում (Մուշ, Բաղեշ, Երևան, Սառնագյուղ ևն) Հ. Մ-ի անունով բազում վանքեր ու եկեղեցիներ են բարձրացվել:

Հայ եկեղեցին ս. Հ. Մ-ի հիշատակը տոնում է տարին չորս անգամ. Անվանակոչությանը հաջորդող հինգշաբթի օրը նշվում է ծնունդը, Կրկնազատիկի նախորդ շաբաթ օրը՝ գլխատման հիշատակը, Հոգեգալստյան առաջին կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը՝ Աթանագինես եպիսկոպոսի (տոնը հաստատել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*) և Վերափոխման երրորդ կիրակիին հաջորդող առաջին հինգշաբթի օրը՝ Հոր արդարի հիշատակի հետ:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.4, 5-րդ պատկերը:

Գրկ. Յայսմաւուրք, ԿՊ, 1706, էջ 511–512: Եփրեմ Խուրի Ասորի, Մատենագրութիւնք, հ. 4, Վնտ., 1836, էջ 129–142: Հակոբ Սրճեցի, Բան ներբողական ս. Կարապետին եւ Մկրտչին Յովհաննու, «Արարատ», 1888, էջ 271–283: Անանիա Թարգմանիչն եւ իւր գրական գործոց նմոյշներ (հրտ. Բ. Սարգիսյան), Վնտ., 1899, էջ 16–29: Հեսիքիոս Երուսաղեմացի, Ի սուրբն Յովհաննէս Մկրտիչ (աշխատասիր. Ե. Պետրոսյանի), «Էջմիածին», 1980, № 2–3: Քյոսեյան Հ., Բաբիլաս Ալեքսանդրացու անվամբ Հովհան Ոսկեբերանի մի ճառը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին, «Էջմիածին», 1983, № 7: Նույնի, Ատոմ Անձևացին և նրա ներբողը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին, ՀԱ, 1987, էջ 521–526: Գալուստյան Շ., Աստվածաշնչական սուրբեր, Ե., 1997:

Հակոբ Քյոսեյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՐՔՈՒԶ, Հովհաննես Ջուղայեցի, Սպահանցի (1643, Նոր Ջուղա – 1715, Նոր Ջուղա), փիլիսոփա, աստվածաբան, տրամաբան, քերական, նկարիչ: Սկզբ. կրթությունն ստացել է իր ավագ եղբայր Կիրակոս քահանայի մոտ: 1658-ին ընդունվել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք, 1661-ին ձեռնադրվել քահանա, 1669-ին՝ վարդապետ, իսկ 1681-ին ստացել վարդապետական գավազան: Մերժել է եպիսկոպոս դառնալու տեղի աշխարհիկ իշխանավորների և *Աղեքսանդր Ա Ջուղայեցի* կաթողիկոսի առաջարկը և մինչև կյանքի վերջը զբաղվել գիտ., մանկավարժ., մշակութ. ու հաս. գործունեությամբ: Հայերեն ու պարսկ. զուգահեռաբար գրել է մի շարք աշխատություններ, պարսկ. ու արաբ. է թարգմանել Ավետարանը և կրոն. բնույթի այլ երկեր:

Մեծ համբավ է ունեցել հայերի, պարսիկների և արաբների միջավայրում, նպաստել ինչպես հայ, այնպես էլ իրանական փիլ. մտքի զարգացմանը (ժամանակակիցները նրան անվանել են «տիեզերալույս փիլիսոփա»): Որպես հակամիարարական շարժման (տես *Ունիթորություն*) տեսաբան ու գործնական առաջնորդ՝ բազմիցս դավանաբան. բանավեճերի մեջ է մտել ինչպես կաթոլիկադավան և կաթոլիկամետ հայերի, այնպես էլ այդ ժամանակ Իրանում եռանդուն գործող կաթոլիկ միսիոներների հետ: Հաճախ բանավիճել է նաև մահմեդ. հոգևորականների ու իմաստասերների, անգամ՝ Պարսից երկու շահերի (շահ Սուլեյման, Սուլեյման Հուսեյն) հետ և կարողացել համոզել նրանց, որ թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները պաշտում են աստվածային միևնույն էությունը՝ տարբեր պատկերներով ու միջոցներով, ուստի կարիք չկա արտաքինձևական տարբերությունների համար հալածել ու բռնադատել հայերին: Շնորհիվ այդ ամենի կասեցրել է Իրանում ծավալված կրոնափոխական քաղաքականությունը, որոշ չափով ցրել Պարսից շահերի և մահմեդ. հոգևորականության թյուր պատկերացումները Հայ եկեղեցու մասին: Հենց Սուլեյման Հուսեյնի հանձնարարությամբ էլ հայերեն և պարսկ. զուգահեռաբար գրի է առել հիշյալ բանավեճերը, որոնցից Սուլեյման շահի հետ ունեցած բանավեճի հայերեն մասը մոտ մեկ դար հետո (1797, Կալկաթա) հրատարակվել է «Գիրք պատմութեան» վերնագրով: Նկատի ունենալով Պարսից երկու շահերի հետ ունեցած կրոնաաստվածաբան. բանավեճերը՝ ժամանակակիցները նրան կոչել են նաև «թագաւորաց աստուածաբան»:

Հ. Մ-ի թողած մատենագր. հարուստ ժառանգության մի մասը ոչնչացրել են ժամանակի հեռատես կղերականները, մի մասը զոհ է դարձել ամենակուլ ժամանակին, իսկ մյուս մասը մեզ է հասել ձեռագիր և տպագիր վիճակում: Նրա առաջին կարևորագույն աշխատությունը՝ «Դաւանութիւն հաւատոյ...» կամ «Գիրք համառօտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ...», դեռ հեղինակի կենդանության ժամանակ ունեցել է երեք հրատարակություն (1688, Նոր Ջուղա, 1713, Կ. Պոլիս, երկու տարբեր տպարաններում, դրանք իրարից տարբերվում են ամենից առաջ հակակաթոլիկ. ոգով՝ չափավոր և արմատական), իսկ վերջինը՝ «Մեկնութիւն Երգոց երգոյն» (1713, Մատենադարան, ձեռ. № 1111), մեզ է հասել հեղինակային ինքնագիր օրինակով՝ խիստ վնասված վիճակում: Նրա գրչին են պատկանում «Մեկնութիւն Սաղմոսի», «Թուղթ առ Լուդովիկոս Լատինաց» և այլ երկեր:

Փիլ. հայացքներով Հ. Մ. իդեալիստ էր: Որպես աշխարհի սկզբնապատճառ ընդունել է Աստծուն, իսկ աշխարհի ճանաչողությունը, ըստ նրա, սկսվելով զգայությունից, ընթանում է դեպի աստվածային էության իմացությունը: Սակայն Աստծո գոյությունն ապացուցելիս նա հենվում է նախ բնական և բանական փաստերի, ապա միայն Աստվածաշնչի և եկեղեցու հայրերի հեղինակության վրա: Ուշագրավ մտքեր

Հովհաննես Մրքուզ. «Զննող ակն», աջ կողմում ծնկաչոք նկարչի ինքնանկարն է (XVIII դ., Հովսեփ Հարեմաթացի եկեղեցի, Նոր Ջուղա)

է արտահայտել ճանաչողության բնախոսական հիմքերի, հոգու և մարմնի միասնության ու փոխազդեցության, զգայությունների ու բանականության կապի մասին ևն: Հայ հասարակագիտ. մտքի կարևոր նվաճումներից է լյութերական շարժմանը Հ. Մ-ի տված գնահատականը: Նա լյութերականության մեջ տեսել է ազգային ինքնագիտակցության ու ազգ-ազատագր. պայքարի տարր: Հ. Մ. վեր է հանել աշխարհիկ և հոգևոր իշխանությունների և նրանց վարած քաղաքականության միջև եղած սերտ կապը: Նրա կարծիքով՝ նայած աշխարհիկ ինչպիսի ուժ ու իշխանություն է կանգնած այս կամ այն եկեղեցու թիկունքում, ըստ այդմ՝ վերջինս վարում է համապատասխան քաղաքականություն, դրսևորում համապատասխան վերաբերմունք մյուս եկեղեցիների ու կրոնների հանդեպ: Եթե եկեղեցու թիկունքում կանգնած է աշխարհիկ հզոր իշխանություն, մյուս եկեղեցիների հանդեպ նա դրսևորում է գաղափար. անհանդուրժողություն և ոչ զիջողական վերա-

բերմունք, և ընդհակառակը, եթե թույլ է այդ իշխանությունը կամ ընդհանրապես չկա, ապա նման եկեղեցին անհամեմատ ավելի ներողամիտ ու հանդուրժողական է մյուսների հանդեպ:

Հ. Մ. շարունակել ու զարգացրել է Արիստոտելի, *Դավիթ Անհաղթի, Սիմեոն Ջուղայեցու* և այլոց, այդ թվում նաև պարսկ. և արաբ. տրամաբան. ուսմունքների առաջադիմական գաղափարները: Քննարկել է տրամաբանություն առարկայի, ուսումնասիրության մեթոդի, մյուս գիտությունների համար նրա ունեցած նշանակության, ինչպես նաև մտահանգումների տեսության հետ կապված մի շարք հարցեր՝ հաճախ առաջադրելով նոր և ուրույն գաղափարներ:

Հ. Մ. ճանաչված է եղել նաև որպես գեղանկարիչ: Ղեկավարել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Հովսեփ Հարեմաթցի եկեղեցու ձևավորումը, մասնակցել այդ աշխատանքներին (նրան է վերագրվում «Քրիստոսի կյանքը», «Գրիգոր Լուսավորչի կյանքը», «Լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները» նկարաշարը, իր ինքնանկարը գետեղել է նույն եկեղեցու խորանի աջ կողմի «Զննջող ակն» նկարում): Պատկերներ է ստեղծել նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար («Տաճարի ընծայումը», «Տաններկու տարեկան Հիսուսը քարոզելիս» ևն): Նրա աշխատանքներին բնորոշ են դիմագծերի անհատականացված բնութագրումներ, հոգեբանական շեշտադրումներ, բնանկարի իրապաշտական ըմբռնումներ: Հ. Մ. այն եզակի հայ արվեստագետներից է, որ, ելնելով ստեղծագործ. իր կենսափորձից, թողել է գեղագիտ. արժեքավոր դատողություններ, որոնց զգալի մասը վերաբերում է գեղանկարչության ստեղծագործական բուն գործընթացին:

Երկ. Գիրք որ կոչի սրբազնագործութիւն, Մադրաս, 1812: Քերականութիւն, ԲԵՀ, 1993, № 1:

Գրկ. Թաղիադյան Մ., Գրագիտութիւն Նոր Ջուղա, «Ազգասեր», Կալկաթա, 1845, № 8: Լեվոնյան Գ., Հովհաննես վարդապետ Մրքուզ, «Էջմիածին», 1944, № 1: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974: Միրզոյան Հ., Հովհաննես Ջուղայեցու «Գիրք սրբազնագործութեան» երկի տպագրության պատմության շուրջը, ԲԵՀ, 1980, № 3: Նույնի, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Ե., 1983: Նույնի, Հովհաննես Ջուղայեցու հասարակական-քաղաքական հայացքները, «Տարեգիրք-85», Ե., 1986:

Հրաչ Միրզոյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ, Հովհաննես Իմաստասեր, Սոփեստոս, Պոետիկոս (1045–1050-ի միջև, Արցախի Փառիսոս գավառ – 1129, Հաղպատ, ամփոփված է Հաղպատի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատանը), աստվածաբան, փիլիսոփա, տոմարագետ, մատենագիր, մանկավարժ, երաժշտագետ-տեսաբան, երգահան: Ծնվել է քահանայի ընտանիքում: Սովորել է *Հաղպատի վանքում*, ապա՝ Ուռճացի վարդապետի մոտ: Ենթադրվում է, որ շատ երիտասարդ տարիքում ձեռնադրվել և երկար տարիներ եղել է սարկավագ, ինչն էլ հետագայում դարձել է նրա մականունը՝ անգամ վարդապետ դառնալուց հետո: Երկար տարիներ ապրել ու գործել է Անիում, ղեկավարել Անիի բարձրագույն իմաստասիր. դպրոցը: Հ. Ս. հետևել է *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* ուսման ծրագրին և կատարելագործել այն: Դպրոցում դասավանդվել են աստվածաբանություն, Ս. Գրքի մեկնություն, քերականություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն, տիեզերագիտություն, տոմարագիտություն ևն:

Հ. Ս. Անիում մանկավարժությանը զուգընթաց զբաղվել է նաև հովվական գործունեությամբ, եղել Անիի Մայր տաճարի ավագերեցը: Հետագայում տեղափոխվել է Հաղպատի վանք, գլխավորել տեղի դպրոցը, որը նրա շնորհիվ դարձել է գիտության և մշակույթի նշանավոր կենտրոն: Հավանաբար եղել է Հաղպատի վանքի վանահայրը: Կրթել է բազում աշակերտների, որոնցից նշանավոր են *Սամուել Անեցին*, Երեմիա Անձրևիկը, Խաչատուր Անեցին, Գրիգոր Անեցին և ուր.: Մեծ հեղինակություն է վայելել նաև Վրաց արքունիքում և վրաց հոգևորականության շրջանում: Պահպանվել է Հ. Ս-ի չիրմաքարը՝ «Արձանս այս սեմական է Սոփեստոսի Սարկաւագին» մակագրությամբ:

Հ. Ս. թողել է գրական հարուստ և բազմաբովանդակ ժառանգություն: Հեղինակ է աստվածաբան-դավան., մեկնող., հակաճառ., պատմ., տոմարական, տիեզերագիտ., փիլ., բարոյախրատ. և գեղագիտ. բնույթի երկերի, ինչպես նաև բազմաթիվ աղոթքների, շարականների, տաղերի, ներբողների: Կորել է նրա պատմ. երկը, որից մեջբերումներ է կատարել Սամուել Անեցին: Հ. Ս. մեծ ուշադրություն է դարձրել անցյալի գրավոր ժառանգությանը: Անիի դպրոցում դասավանդելու ժամանակ սրբագրել, խմբագրել, արտագրել է հայ և օտարազգի աստվածաբանների ու փիլիսոփաների (Դավիթ Անհաղթ, Մովսես Խորենացի, Արիստոտել, Փիլոն Ալեքսանդրացի, Դիոնի-

սիոս Արիոպագացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Հովհան Ոսկեբերան և ուր.) բազում քնագիր աշխատություններ, որոնք օգտագործվել են նաև որպես դասագիրք: 1084-ին բարեկարգել է Հայոց շարժական տոմարը, այն վերածել անշարժի, հաստատել տոների օրերը: Լրացնելով *Հայոց Մեծ թվականի* առաջին պարբերաշրջանը՝ Հ. Ս. կազմել է հետագա 532 տարիների (մինչև 1616-ը) աղյուսակը (տես *Հայոց Փոքր թվական*), որը կոչվել է Սարկավագաղիր տոմար:

Տոմարին նվիրված աշխատություններում («Յաղագս ամսոց Հայոց եւ տօնից եւ յաղագս ԴԺ-որդաց [=40-որդաց] լուսնոյ Զատկի», «Յաղագս ըստ Հռոմոց ամսոց եւ ԴԺ-որդին լուսնոյ Զատկաց եւ փոփոխմանց իրաց եւ յարակից», «Պատճէն տոմարի», «Նամակ առ Սարգիս» ևն) ներկայացրել է հայ և ուրիշ ժողովուրդների թվականների ու ամիսների համեմատական ցանկերը, քննության ենթարկել դրանք, խոսել շարժական լինելու պատճառով Հայոց տոմարում շփոթությունների առաջացման մասին, հիմնավորել ամիսների անշարժության վերաբերյալ իր տոմարական բարեփոխումները: Հ. Ս-ի տոմարագիտ. բնույթի աշխատությունները դարեր շարունակ եղել են տոմարական հաշվումների տեղեկատու-ձեռնարկ: Տիեզերագիտ. բնույթի է «Վասն շարժման եւ սասանութեան երկրի» գրվածքը, որը շարադրել է վրացի մի եպիսկոպոսի խնդրանքով, երբ մոտ 1123–25-ին Վրաց Դավիթ Շինարար թագավորի հրավերով գտնվել է Թիֆլիսում՝ դավան. հարցեր քննարկած մի ժողովի մասնակցելու համար: Պահպանվել է Հ. Ս-ի մաթեմատիկական մի աշխատություն՝ «Յաղագս անկիւնաւոր թուոց» վերնագրով: Աշխատության ընդօրինակություններից մեկը պարունակում է նաև պյութագորասյան բազմապատկման աղյուսակի հայկ. տարբերակը:

Հ. Ս. XI դ. վերջի – XII դ. սկզբի հայ աստվածաբան-դավան. մտքի նշանավոր ներկայացուցիչներից է: Հ. Ս-ի դավան. բնույթի լավագույն երկերից է «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից» 14 դավան. թղթերից կազմված ժողովածուն, որը, բացի աստվածաբան. խնդիրներից, հարուստ նյութ է պարունակում քրիստ. մշակույթի, պատմության, ավանդությունների, տոների, ծիսական խնդիրների մասին: Ժողովածուն Հայ եկեղեցու երրորդաբանության, քրիստոսաբանության և Սուրբ Հոգու աստվածաբանության համակարգված շարադրանք է: Հատկապես քրիստոսաբան. հարցերը ժողովածուի կենտր. թեմաներն են: Հ. Ս. սուր քննադատության է ենթարկել *Քաղկեդոնի ժողովը* և *քաղկեդոնականությունը*, ինչպես նաև հերձվածող. մի շարք ուսմունքներ՝ *ապողինարիզմը, եվտիքականությունը, նեստորականությունը, արիոսականությունը, մանիքեությունը* ևն: Առանձնահատուկ տեղ է գրավել *անապականության* խնդիրը, և այս առումով ժողովածուն անապականության վարդապետությանը նվիրված հիմնարար ու եզակի երկասիրություն է հայ դավան. գրականության մեջ: Հ.Ս-ի աստվածաբան-դավան. հայացքները, ինչպես նաև ծիսական և նշանական (պատկերների խորհրդանշանների) աստվածաբանության մի շարք հարցեր արծարծվել են նաև նրա «Վասն պատկերաց», «Վասն մասանց պատուոյ» և այլ գրվածքներում:

Հ. Ս-ի աղոթքների մի մասը լույս է տեսել «*Սոփերք Հայկականք*»-ում (հ. 17, 1854), իսկ բարոյախրատ. ճառերի մեծ մասն անտիպ է: Հ. Ս-ի կարևոր գործերից է Սաղմոսարանի սրբագրումը և բազմացումը: Նրան է վերագրվում նաև «Կարգաւորութիւնք Գրոց սրբոց» գրվածքը, որը Աստվածաշնչի կանոնական՝ «սուրբ», ինչպես նաև «նուրբ» կոչված գրքերի ցանկ է:

Հ. Ս. ստեղծել է արվեստի ընդհանուր տեսություն: Նրա գեղագիտ. ուսմունքը հիմնականում շարադրված է «Բան իմաստութեան ի պատճառս...» 188-տողանոց պոեմում, որը երկխոսություն է հեղինակի ու «սարեկի» (սարյակի) միջև: Թեման արվեստի ակունքների խնդիրն է: Հեղինակը երաժշտության և բանաստեղծության աղբյուրը տեսնում է բնության մեջ, բնությունից է մարդ ստանում իր տաղանդը, հետևապես մարդու մեջ երաժշտության և բանաստեղծության ձիրքերը բնածին են: Գեղ. ստեղծագործության կարևորագույն նախապայմաններից է համարել «հայտնությունը»՝ իբրև բնական շնորհ, տաղանդ և աստվածային ներշնչում:

Հ. Ս. XI–XII դդ. երևելի երաժշտագետներից ու երգահաններից է, նպաստել է Անիի և Հաղպատի գիտագեղ. ավանդույթների զարգացմանը և ուղի հարթել դեպի Կիլիկիա անցումն իրագործող հայկ. երաժշտ. մշակույթի հետագա ծաղկման համար: Հ. Ս. իրեն աշակերտած հոգևորականներին ուսուցանել է

նաև խաղագրություն, ինչպես և ծիսական մատյանների երաժշտանշանագր. բովանդակությունը բացահայտելու՝ ընթերցելու-վերծանելու սկզբունքները: Հայտնի է Հ. Ս-ի ներդրումը *սաղմոսերգության* նորոգման ասպարեզում: Սաղմոսարանի ստուգման-ճշգրտմանը և սաղմոսերգության բարեկարգմանը զուգընթաց Հ. Ս. հսկել է ամենօրյա ժամերգությունների և կիրակնօրյա պատարագների անթերի, բարեձև կատարմանը և ինքն էլ մասնակցել դրանց՝ հանդես գալով Հաղպատի վանքում ու Անիի Մայր տաճարում: Նշանակալի է Հ. Ս-ի ավանդը աղոթքի ժանրի զարգացման գործում: Կուտակել է *Գանձարան* ժողովածուի նյութերը և էապես հարստացրել շարականների հորինման վերսկսված փորձը: Ղևոնդյանց հիշատակին նվիրված նրա «Անճառելի բանդ Աստուած» մանկունքը, զարգացնելով *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականի լավագույն հատկանիշները, նախապատրաստել է *Ներսես Շնորհալու*՝ Ավարայրի ճակատամարտի հերոսներին ոգեկոչող «Նորահրաշ պսակաւոր» ստեղծագործությունը:

Հ. Ս. ուսման գործի բարենորոգիչ է, մշակել է ընդհանուր մանկավարժ. տեսություն, մեթոդական, ուսուցող. սկզբունքների համակարգ՝ խարսխված հայ մանկավարժ. մտքի նախընթաց նվաճումների վրա: Նրա տես. և գիտ. ժառանգությունը, մեթոդական. սկզբունքները մեծ դեր են խաղացել հայոց գիտության, մշակույթի և լուսավորության հետագա զարգացման գործում:

Երկ. Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, աշխատասիր. Ա. Աբրահամյանի, Ե., 1956: Սոփերք հայկականք, հ. 3, 5, Վնտ., 1853, հ. 17, Վնտ., 1854: Հարցումն վասն գայթակղութեան: Հարցումն վասն մեղաց եւ հանդերձելոց: Խրատք մանկանց: Եթէ արժան իցէ թողուլ զեղբարս, «Գանձասար», 6, 1996:

Գրկ. Ալիշան Ղ., Սարկաւագ Սոփեստես, տես նրա «Յուշիկք հայրենեաց հայոց», հ. 2, Վնտ., 1870, էջ 279–307: Աբեղյան Մ., Հովհաննես Սարկավագ վարդապետ, Երկ., հ. 4, Ե., 1970, էջ 63–82: Միրումյան Կ., Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Ե., 1984: Թահմիզյան Ն., Հովհաննես Սարկավագ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը, «Բազմավեպ», 1978, № 3–4: Քյոսեյան Հ., Հովհաննես Սարկավագի «Վասն պատկերաց» և «Վասն մասանց պատուոյ» աշխատությունները, ՊԲՀ, 1979, № 4: Մնացականյան Ա., Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան» պոեմը և նրա գնահատությունն ըստ օգտագործված աղբյուրների, ԲՄ, № 14, 1984: Արամյան Մ., Հովհաննես Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից» ժողովածուն, «Գանձասար», 6, 1996: Ուզունյան Տ., Հովհաննես Սարկավագ վարդապետ, «Գանձասար», 6, 1996:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ, Հովհան Սեբաստացի (մոտ 1765, Սեբաստիա – 26.11.1829, Սեբաստիա), պատմագիր, բանաստեղծ, Սեբաստիայի հայոց հոգևոր առաջնորդ: 1797-ին ձեռնադրվել է վարդապետ, 1812-ին՝ եպիսկոպոս՝ *Եփրեմ Ա Զորագեղցի* կաթողիկոսի ձեռքով: 1807–09-ին՝ Սեբաստիայի առաջնորդական տեղապահ, 1809–29-ին՝ առաջնորդ: Հիմնել է դպրոցներ, կառուցել և վերանորոգել եկեղեցիներ ու վանքեր: Մասնակցել է Կ. Պոլսի ազգ-եկեղեց. ժողովին (1826):

Հ. Ս-ու «Պատմութիւն Սեբաստիոյ» երկասիրությունում ժամանակագր. խստագույն կարգով տրված է Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիայի պատմությունը՝ 1021-ից մինչև 1829-ը. հետագայում ուրիշները շարունակելով այն հասցրել են մինչև 1872-ը: Հ. Ս-ու հիշյալ երկը վստահելի սկզբնաղբյուր է հայ ժողովրդի, մասնավորապես եկեղեցու (հատկապես XVII–XVIII դդ.) պատմության ուսումնասիրման համար: Այստեղ հեղինակը զգալի տեղ է հատկացրել հայերի նկատմամբ կիրառվող կրոն. հալածանքների մանրամասներին, դերեվարությունններին, մանկահավաքներին, վկայաբանություններին, անդրադարձել կաթոլիկ. քարոզչությանը՝ մերժելով Հայ եկեղեցին Հռոմի գերիշխանությանը ենթարկելու փորձերը, հաղորդել է հայոց նեղեկեղեց. կյանքին վերաբերող կարևոր տվյալներ: Վարել է Ս. Նշան վանքի հաշվեմատյանը, գրել ոտանավորներ, չափածո տապանագրեր, «Քարոզգիրք» (Մատենադարան, ձեռ. № 10185) ևն: Նրա ոտանավորները ներբողներ են՝ նվիրված Հիսուս Քրիստոսին, Մարիամ Աստվածածնին, Ս. Էջմիածնին, Ս. Երուսաղեմին, Սեբաստիայի Ս. Նշան վանքին, Եփրեմ Ա Զորագեղցի կաթողիկոսին ևն: Հատկանշական է «Յաղագս Գիւտի հայկական տառից և գովեստ նմին և յորդոր առ համբակս առ ի ուսանիլ զայն» ներբողը, որտեղ հայոց տառերը համարել է ազգապահպանության գերագույն գործոն:

Երկ. Ներբողական նուագերգութիւնք..., Թ., 1825: Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիր. Բ. Զուգասզյանի, Ե., 1974:

Գրկ. Նաթանյան Պ., Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ, ԿՊ, 1877: Պերպերյան Հ., Համեմատություն Անանուն Սեբաստացիի (ԺԳ դար) և Հովհաննես Սեբաստացիի (ԺԸ–ԺԹ դար) քանի մը հատվածներուն միջև, «Հասկ», 1957, ապրիլ-մայիս: Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք-Հուշամատյան Սեբաստիո և գավառի հայության, հ. 1, Բեյրութ, 1974:

Աղավնի Ութուջյան

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐ, նկարիչների ընտանիք XVII–XIX դդ.-ում: Տոհմի հիմնադիրը Գրիգորի և Զորիկի որդի, գրիչ և ծաղկող Հովհաննես (Յոհան Շոռոթեցի, ծ. թ. անհտ – 1679) քահանան էր: Հայտնի են Շոռոթում նրա ընդօրինակած երկու Ավետարանը (1653, Մատենադարան, ձեռ. № 2494, 1663, ձեռ. № 9242) և Հայսմավուրքը (1662–63, Մատենադարան, ձեռ. № 7363): Գրիչ և մանրանկարիչ էր Հովհաննեսի և Սողոմեի ավագ որդին՝ Մարգար դպիրը, որը 1679-ին Շոռոթում ընդօրինակել է Ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 4418): Հովհաննեսի կրտսեր որդին էր *Նաղաշ Հովնաթանը*, որը երկար ժամանակ համարվել է տոհմի հիմնադիրը: Մարգարի որդին՝ տիրացու Հայրապետը, 1765-ին Ագուլիսում ընդօրինակել է Նաղաշ Հովնաթանի Տաղարանը (Մատենադարան, ձեռ. № 4426): Նաղաշ Հովնաթանի որդի Նաղաշ Հակոբը (1685/90–1757) եղել է աշուղ, մանրանկարիչ և գեղանկարիչ: Նկարազարդել է «Քաղուածք Յավետարանաց»-ը (1720, Մատենադարան, ձեռ. № 8645): Նրան են վերագրվում «Սանդուխտ կույսը», 1727, «Թադեոս առաքյալը», 1727, «Ղազարոսի հարությունը», 1729 (բոլորը՝ ՀԱՊ, Երևան): Մյուս որդին՝ Հարությունը (Հարություն Շոռոթեցի, ծ. և մ. թթ. անհտ), ձևավորել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը» (1731, Մատենադարան, ձեռ. № 2162): Նաղաշ Հակոբ և Հարություն Շոռոթեցի Հովնաթանյան եղբայրները միասին Էջմիածնում պատկերազարդել են մի Հայսմավուրք (1725–30, Մատենադարան, ձեռ. № 1533), որմնազարդել *Ապրակունիսի Ս. Կարապետ վանքը* (1740), Էջմիածնի վանքի Ղազարապատ հյուրանոցը (1741), Վեհարանը, եկեղեցիներ Ադնաբերդում և Աստապատում: Նաղաշ Հակոբի որդին էր Հովնաթան Հովնաթանյանը [1730-ական թթ., գ. Շոռոթ (Սյունիքի Երնջակ գավառ) – 1801/02, Թիֆլիս]: 1760–86-ին կատարել է Էջմիածնի տաճարի ձևավորման և նկարազարդման աշխատանքները: Ձևավորել է նաև Երևանի խանի պալատը: Պատմ. գործիչների դիմանկարներով հայ արվեստում ստեղծել է հանդիսային դիմանկարի առաջին օրինակները: Նկարել է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Ա Պարթևի, Ներսես Շնորհալու, Հովհաննես Գ Օձնեցու և ուր. դիմանկարները: Իր թեմատիկ պատկերներում (Էջմիածնի տաճարի «Ավետընկալ Մարիամ», «Մոգերի երկրպագությունը», «Խորհրդավոր ընթրիք» ևն) առաջին անգամ հայ իրականության մեջ ստեղծել է դասական սկզբունքներով լուծված հորինվածքներ: «Աստվածամոր փառքը» աշխատանքում առկա է ավանդ. թեմաների ստեղծագործ. և ինքնատիպ լուծման միտումը: Եղել է Վրաց Հերակլ II թագավորի պալատական նկարիչը:

Տոհմի հաջորդ սերնդի ներկայացուցիչն է Հովնաթանի որդի Մկրտումը (1779, Թիֆլիս – 1845/46, Թիֆլիս), որը դիմանկարիչ էր, ուներ աշակերտներ: Պահպանվել են Եփրեմ Ա Զորագեղցի կաթողիկոսի, մեծահարուստ Ս. Գուրգենբեկյանի դիմանկարները (ՀԱՊ), հայ թագավորների դիմանկարների շարքը (ՀԱՊ և Էջմիածնի վանքի Վեհարան), Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու որմնանկարները (1834–35):

Մկրտումի որդիներն էին Հակոբ և Աղաթոն Հ.: Հակոբը (1806, Թիֆլիս – 1881, թաղված է Թեհրանի Ս. Գևորգ եկեղեցու բակում) եղել է գեղանկարիչ և դիմանկարիչ: Հոր հետ նկարազարդել է Թիֆլիսի եկեղեցիների (Սիոնի Կաթողիկե, Ս. Նշան, Նորաշեն ևն) ներսը, ստեղծել դիմանկարներ («Եփրեմ կաթողիկոսի դիմանկարը» ևն): Սանկտ Պետերբուրգի գեղ. ակադ-ին ներկայացնելով Ե. Ա. Գոլովինի դիմանկարը՝ ստացել է «Ոչ դասական նկարչի» կոչում (1841): Արժանացել է ոսկե մեդալի և 14-րդ դասի աստիճանավորի կոչման (1842): 1865-ին տեղափոխվել է Իրան, ապրել և ստեղծագործել Թավրիզում, ապա՝ Թեհրանում: Եղել է շահի պալատական նկարիչը, կրել «Նաղըշ բաշի» (նկարիչների գլխավոր) տիտղոսը, արժանացել «Էլմի» (գիտություն) շքանշանի:

Հակոբը հիմնականում դիմանկարիչ էր: Նրա պատվիրատուները Թիֆլիսի տոհմիկ քաղաքացիներն էին, վաճառականները, աստիճանավորներն ու նրանց կանայք: Նկարիչը, պահպանելով բնորդի արտաքինը, զգալի տեղ է հատկացրել պատկերվողի տարազին, նրա գունային և դեկորատիվ հնչեղությանը:

Հակոբի արվեստը, ամփոփելով տոհմի գեղանկարչ. նորամուծությունները, տեղի գեղագիտ. պահանջները միահյուսել է Արևելքի (հատկապես Իրանի) գեղ. ըմբռնումներին, որակապես նոր աստիճանի է բարձրացրել գեղանկարչության ազգ. մտածողությունը: Հակոբի դիմանկարների կարևոր առանձնահատկություններից է սոց. տարբեր խավերի տիպ. առանձնահատկությունների հոգեբ. վերհանումը: Նրա արվեստը խոր հետք է թողել ժա-

մանակի գեղանկարչության զարգացման վրա: Նրա կերտած դիմանկարները գրակ-յան մեջ հայտնի են «Հովնաթանյան դպրոց» կամ «XIX դ. 1-ին կեսի Թիֆլիսյան դպրոց» անվամբ: Հակոբը նոր որակ է հաղորդել XVII–XVIII դդ. ձևավորված հայ նոր գեղանկարչությանը, ուղենիշ եղել ազգ. արվեստի զարգացման ընթացքում: Նրա աշխատանքների մեծ մասը գտնվում է ՀԱՊ-ում, Վրաստանի արվ. թանգարանում (Թբիլիսի), Արևելքի ժողովուրդների արվ. պետ. թանգարանում (Մոսկվա), մասնավոր հավաքածուներում:

Աղաթոնը (1816, Թիֆլիս – 1893, Սանկտ Պետերբուրգ) հայտնի է որպես դիմանկարիչ: 1843-ին ավարտել է Սանկտ Պետերբուրգի գեղ. ակադեմիան, սովորել Կ. Բրյուլովի արվեստանոցում: Հիմնականում զբաղվել է գրաֆիկայով, վիմագրել այլ նկարիչների գեղանկարները, այդ թվում եղբոր՝ Հակոբի, գենեռալ Զասի (1836), իշխան Մ. Ս. Վորոնցովի (1849) դիմանկարները, ռուս նկարիչներ Ա. Ի. Շառլեմանի «Հիշողություններ պաժերի կորպուսի մասին» գծանկարների ալբոմը (1859), Ի. Կելլերի «Ա. Մ. Գորչակովի դիմանկարը» (1869) ևն:

Խարսխված լինելով հայկ. միջնադարյան արվեստի վրա, հարևան ժողովուրդների մշակույթներից յուրացնելով իրենց ընկալումներին հոգեհարազատ տարրեր, դրանք զուգակցելով նոր ժամանակների հայ արվեստի պահանջներին՝ Հ. սկզբնավորել են հայկ. կերպարվեստի մի շարք սկզբունքներ, կանոններ, ժանրեր, որոնք օրինակ են ծառայել ժամանակի կովկասյան գեղանկարչության համար:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.5, 1–3-րդ և 10.6, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Զոպանյան Ա., Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910: Ակինյան Ն., Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատությունք, Վնն., 1911: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. 4, Անթիլիաս, 1951: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974: Լեվոնյան Գ., Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, ԽԱ, 1938, № 1, 2, 4: Գևորգյան Ա., Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, ՊԲՀ, 1982, № 2: Նույնի, Մի լրացում Հովնաթանյան տոհմածառին, ՊԲՀ, 1996, № 1–2: *Казарян М., Художники Овнатаняны, М., 1968.*

ՀՈՎՍԵՓ Ա ՀՈՂՈՑՄԵՑԻ, Հողոցիմցի, սուրբ Հովսեփ Վայոցձորցի (ծ. թ. անհտ – 25.7.452), Ամենայն հայոց կաթողիկոս 440-ից: Հաջորդել է *Սահակ Ա Պարթևին: Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներից: Եղել է Այրարատի եպիսկոպոս, ապա Մեսրոպ Մաշտոցի պատվիրանով կարգվել կաթողիկոս:

Հ. Ա Հ-ու նախաձեռնությամբ 444-ին գումարվել է *Շահապիվանի եկեղեցական ժողովը*, 449-ին՝ Արտաշատի ժողովը: Մասնակցել է Սասանյանների դեմ 450–451-ին հայերի մղած ազատագր. պատերազմին: Ավարայրի ճակատամարտից հետո ձերբակալվել և աքսորվել է Վրկան երկրամաս, ապա տեղափոխվել Ապար աշխարհ, որտեղ և նահատակվել է Ղևոնդյանց խմբի հետ:

Հայ եկեղեցին Հ. Ա Հ-ու և նրա հետ նահատակված մյուս կրոնավորների հիշատակը տոնում է ս. Ղևոնդյանց անունով, ս. Վարդանանց տոնի օրը: (Տես նաև *Ղևոնդյանք* և *Վարդանանք*):

Կաթողիկոս. գահին Հ. Ա Հ-ուն հաջորդել է *Մելիտե Ա Մանազկերտցին*:

Գրկ. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1994:

Արտաշես Մարտիրոսյան

ՀՈՎՍԵՓ Բ ՓԱՐՊԵՑԻ, Կարիճ [ծ. թ. անհտ, գ. Փարպի (Արագածոտն գավառ) – 806], Ամենայն հայոց կաթողիկոս 795-ից: Հաջորդել է *Գևորգ Ա Բյուրականցուն*: Կաթողիկոսին տրված «Կարիճ» մականունը, ըստ Մ. արք. Օրմանյանի, գրչագր. սխալի հետևանք է. փոխանակ «Կտրիճ» գրվելու, ձեռագրերում ընդօրինակվել է «Կարիճ»: Հ. Բ Փ. դիմադրել է արաբ. իշխանությունների ոտնձգություններին, հատկապես կաթողիկոս. կալվածները բռնի յուրացնելու խուզեյմա ոստիկանի փորձերին: Այդ պատճառով ոստիկանը բռնել և բանտ է նետել Հ. Բ Փ-ուն: Սակայն Հարուն ալ Ռաշիդ խալիֆը, անսալով Հ. Բ Փ-ու բողոքին, ազատ է արձակել նրան և վերադարձրել բռնագրավված կաթողիկոս. կալվածների մեծ մասը:

Կաթողիկոս. գահին Հ. Բ Փ-ուն հաջորդել է *Դավիթ Բ Կակաղեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ՀՈՎՍԵՓ ՊԱՂՆԱՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), V դարի եկեղեցամշակութային գործիչ, թարգմանիչ, *Մեսրոպ Մաշտոցի* ավագագույն աշա-

կերտներից: Եղել է հայոց գրի ստեղծման և եկեղեցու արարողակարգը հայերեն վարելու խնդրով Մեսրոպ Մաշտոցի հետ Ասորիք մեկնած հանձնախմբի կազմում: Մեսրոպ Մաշտոցի ղեկավարությամբ *Հովհան Եկեղեցացու* հետ կատարել է *Աստվածաշնչի* թարգմանության առաջին փորձը՝ իբրև հայերեն գրավոր խոսքի նմուշ՝ սկսելով Սողոմոնի առակներից՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Հ. Պ. իր ուսուցչի հրահանգով կրկին մեկնել է Ասորիք՝ եկեղեց. հայրերից թարգմանություններ կատարելու: Նրան ընկերակցել է *Եղնիկ Կողբացին*: Ասորիքից մեկնել են Կ.Պոլիս՝ հունարենի մեջ հմտանալու: Այնտեղ նրանց միացել են *Ղևոնդ Երեցը* և *Կորյունը*: Հ. Պ. և նրա ընկերները կարգվել են հունարենի թարգմանիչ: Վերադառնալիս նրանք իրենց հետ բերել են Աստվածաշնչի հուն. լավագույն օրինակ՝ հայերեն վերաթարգմանելու համար, և Նիկիայի ու Եփեսոսի տիեզերական ժողովների կանոնները (431-ից հետո):

Արտաշես Մարտիրոսյան

ՀՌԻՓՍԻՄԵ, տես *Հռիփսիմյանց կույսեր* հոդվածում:

ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՆԵՐ, կրթական կենտրոններ XIX դարում Հայաստանում (Արևելյան և Արևմտյան) և հայաշատ քաղաքներում (Զմյուռնիա, Բաքու ևն): Նպատակն էր կրոն. և այլ գիտելիքներ տալ հայ օրիորդներին, հայկ. դպրոցների համար պատրաստել ուսյալ ուսուցչուհիներ: Պահվել են հիմնականում Հայ եկեղեցուց ստացված դումարներով, նվիրատվություններով և հանգանակություններով: Գործել են մեծ մասամբ եկեղեցիներին կից, Էջմիածնի *Սինոդի* կամ կաթողիկոսի անմիջական հսկողությամբ ու հովանավորությամբ, հաճախ էլ փակվել հենց նրանց կողմից: Մի շարք դպրոցներին կից կազմակերպվել են տիկնանց բարեգործ. ընկերություններ: Հ. օ. դ. երբեմն կոչվել են իգական գիմնազիա կամ վարժարան:

Հռիփսիմյան վարժարան Զմյուռնիայում, հիմնադրվել է 1838-ին: Սկզբնապես կոչվել է Սարգսյան, 1849-ից՝ Հռիփսիմյան: Պահվել է հայ համայնքի նվիրատվություններով և զանազան ընկերությունների (Սյունյաց, Հոգատար, Հռիփսիմյան կրթասիրաց, Ուսումնասեր ևն) օժանդակությամբ: Մինչև 1877-ը ուսուցումը եղել է ձրի, այնուհետև վարձ են վճարել միայն ունևորները: Սաներն ստացել են յոթնամյա կրթություն: Դասավանդել են Ս. Գիրք, կրոն. առարկաներ, հայոց լեզու և պատմություն, գեղագիտություն, դիցաբանություն, թվաբանություն, բնագիտություն, գծագրություն, ֆրանս., անգլ., թուրք., ձեռագործ, երաժշտություն: Հատուկ ուշադրություն է նվիրվել աշակերտուհիների բարոյագեղագիտ. դաստիարակությանը: Փակվել է 1922-ին:

Հռիփսիմյան իգական գիմնազիա Երևանում, հիմնադրվել է 1850-ին, Կովկասի Ս. Նինայի անվ. կանանց բարեգործ. ընկերության Երևանի վարչության միջոցներով: Սկզբում կոչվել է Հռիփսիմյան օրիորդաց վարժարան, 1884-ին դարձել է օրիորդաց պրոգիմնազիա, 1898-ին՝ իգական գիմնազիա: Ենթարկվել է պետ. դպրոցական իշխանություններին և գործել պետ. ծրագրերով: Ուսուցումը տարվել է ռուսերեն: Դասավանդվել են կրոն, ռուսերեն, հայերեն, պարսկերեն, թվաբանություն, աշխարհագրություն, ձեռագործ: Հռիփսիմյան իգական գիմնազիայում սովորել են հայեր, ռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ: 1918-ին դարձել է հայկ. օրիորդաց գիմնազիա, 1921-ին՝ երկրորդ աստիճանի երկսեռ դպրոց:

Հռիփսիմյան օրիորդաց դպրոց Բաքվում, հիմնադրել է Մարդասիրական ընկերությունը 1866-ին, Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Դասավանդել են կրոն, ռուսաց լեզու, թվաբանություն, վայելչագրություն, երգ, ձեռագործ և տնարարություն: Հետագայում դպրոցն անցել է հոգևոր իշխանության տնօրինության տակ, իսկ ծախսերը հոգացել է Մարդասիր. ընկերությունը: 1873-ին ավելացել է դասարանների ու դասավանդվող առարկաների թիվը, դպրոցն անվանվել է Ս. Հռիփսիմյան: 1880-ական թթ. դարձել է երկդասյան: 1909/10 ուս. տարուց դպրոցն աստիճանաբար վերածվել է միջնակարգի՝ հայկ. դպրոցների համար ուսյալ ուսուցչուհիներ պատրաստելու նպատակով: 1917-ին տվել է միջնակարգ կրթությամբ առաջին շրջանավարտները: Դպրոցին կից կազմակերպվել է բարեպաշտ տիկնանց բարեգործ. ընկերություն: 1892-ին Ք. Կարա-Մուրզան դպրոցում ստեղծել է երգեցիկ խումբ: 1920-ին դպրոցը պետականացվել է և դարձել երկսեռ:

Հռիփսիմյան օրիորդաց դպրոց Նոր Բայազետում, հիմնադրվել է 1867-ին, Ս. Աստվածածին եկեղեցու դավթում: 1868-ին անցել է հոգաբարձության տնօրինության տակ: Սկզբում պահվել է հանգանակությամբ, այնուհետև՝ Ս. Թարգմանչաց մարդասիր. ընկերության միջոցներով: Դասավանդվել են կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, եկեղեցու պատմություն, թվաբանություն, քերականություն, Հայաստանի աշխարհագրություն, երգեցողություն, գծագրություն և ձեռագործ: 1880-ին տեղափոխվել է նոր շենք, աղջիկների դպրոցը կոչվել է Ս. Հռիփսիմյան, տղաներինը՝ Ս. Մեսրոպյան: 1896–1905-ը փակվել է ցար. կառավարության հրամանով: 1918-ին դարձել է երկսեռ դպրոց:

Հռիփսիմյան օրիորդաց դպրոց Վաղարշապատում, հիմնադրվել է 1872-ին, մասնավոր տան մեջ: Կաթողիկոսի հատուկ կոնդակով ստեղծվել է 4 խնամակալուհիների հոգաբարձություն, որը դպրոցի համար նվիրատվություններ է կազմակերպել: Սկզբում դպրոցը եղել է միդասյան, այնուհետև՝ երկդասյան՝ 5 բաժանմունքով: Մայր աթոռի ծախսերով դպրոցի համար շենք է կառուցվել: Սկզբում ունեցել է 26 աշակերտուհի, հետագայում՝ մինչև 300: Մի քանի անգամ փակվել է ցար. կառավարության հրամանով: Վերջնականապես դադարել է գործել 1918-ին:

Հռիփսիմյան օրիորդաց դպրոց Գանձակում, հիմնադրվել է 1874-ին, Ս. Հովհաննես եկեղեցու դավթում, մի քանի մտավորականների և հասարակության ջանքերով: Մի քանի անգամ ցար. իշխանությունը կամ Էջմիածնի Սինոդը փակել են դպրոցը: Դպրոցի եկամուտներն ստացվել են եկեղեցուց, հասարակությունից: 1894–95 ուս. տարում ունեցել է 252 աշակերտուհի: Դասավանդել են Ս. Գիրք, կրոն. առարկաներ, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, բնական պատմություն, վայելչագրություն, երգեցողություն, նկարչություն և ձեռագործ: 1910-ական թթ. վերջին դարձել է երկսեռ դպրոց:

Հռիփսիմյան օրիորդաց դպրոց Նոր Նախիջևանում, հիմնադրվել է 1881-ին, Ս. Լուսավորիչ եկեղեցու դավթում: Պահվել է եկեղեցուց, քաղաքային իշխանությունից ստացված գումարներով, դպրոցական կալվածքներից, կտակներից, նվիրատվություններից գոյացած եկամուտներով, Հայուհյաց խնամակալական ընկերության օգնությամբ, կրթաթոշակներով: Գործել է վարձու տներում: 1887-ին դպրոցի համար շենք է կառուցվել: 1888-ին անցել է Հայուհյաց խնամակալական ընկերության հովանավորության տակ: Դասավանդվել են կրոն. առարկաներ, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, գեղագրություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, բնական պատմություն, Հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, եկեղեց. երգեցողություն, ձեռագործ: Հայերեն են դասավանդվել միայն կրոնը, Հայոց լեզուն, Հայոց պատմությունը և Հայաստանի աշխարհագրությունը: 1918-ին դպրոցն անցել է Նոր Նախիջևանում ստեղծված հայ համայնքի ուս. խորհրդի տնօրինության տակ: 1920-ին, խորհրդ. կարգերի հաստատումից հետո, պետականացվել և դարձել է երկսեռ:

ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐ, ս. Հռիփսիմյանց և ս. Գայանյանց կույսեր (նահ. 301, Վաղարշապատ), տոնելի քրիստոնյա վկայուհիներ, նահատակներ: Հ. կ. առաքինազարդ վանական կյանք են վարել Հռոմում, իրենց մայրապետի՝ Գայանե կույսի առաջնորդությամբ: Հռոմ. Դիոկղետիանոս կայսրի (284–305) հալածանքներից խուսափելով՝ ի վերջո ապաստանել են Հայաստանում (Վաղարշապատի Հնձանք կոչված վայրում): Ավանդությունը հալածանքների պատճառ է համարում այն, որ կույսերից գեղեցկագույնը՝ երկնավոր հարս Հռիփսիմեն, հրաժարվել է Դիոկղետիանոս կայսրի առաջարկներից՝ դառնալու նրա կինը և Հռոմ. կայսրության թագուհին: Կայսրը լուր է հղել Հայոց *Տրդատ Գ* Մեծ թագավորին, որ գտնի Հայաստանում ապաստանած կույսերին և վերադարձնի Հռոմ, բայց եթե ուզենա, կարող է և կնության առնել Հռիփսիմեին: Տրդատ թագավորը, գտնելով կույսերին ու տեսնելով Հռիփսիմեի գեղեցկությունը, ինքն էլ է ցանկությամբ համակվել: Հռիփսիմեն հրաժարվել է Տրդատից ևս: Դրա համար նրան ենթարկել են անլուր չարչարանքների, կտրել լեզուն, հանել աչքերը և քառատելով այրել: Սրահար են արել նաև Հռիփսիմեի 32 հավատակից վկայուհիներին: Սրբուհիների մարմինները 9 օր մնացել են անթաղ, մինչև որ Խոր վիրապից դուրս եկած *Գրիգոր Ա Լուսավորիչը* ամփոփել է

ՀՌՈՄԿԼԱՅԻ

նրանց մարմինները տապաններում ու թաղել իրենց նահատակութեան տեղերում՝ Հռիփսիմեին՝ իր հավատակիցների հետ, *Գայանյանց կուսերին*՝ առանձին, իսկ հիվանդության պատճառով Հնձանք վայրում միայնակ մնացած կուսին՝ Հնձանքում, որտեղ հետագայում *Նահապետ Ա. Եղեսացի* կաթողիկոսը կառուցել է Ս. *Շողակաթ վանքը*:

Ս. Հռիփսիմեի վկայարանի վրա *Կոմիտաս Ա. Աղցեցի* կաթողիկոսը 618-ին կառուցել է Էջմիածնի Ս. Հռիփսիմե եկեղեցին, որի խորանի գետնահարկ մատուռի մեջ ցայսօր զետեղված է մնում սրբուհու տապանը: Իսկ *Եզր Ա. Փառաժնակերտցի* կաթողիկոսը Ս. Գայանյանց կուսերի մատուռի տեղում բարձրացրել է *Էջմիածնի Ս. Գայանե վանքը*:

Ըստ Մ. Օրմանյանի, Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե տաճարների ներքո մեծամեծ քարերով շինված գետնափորեր կան, որտեղ ամփոփված են կուսերի ոսկորները:

Հայաստան եկած կուսերի թիվը, ըստ Ագաթանգեղոսի, 70-ից ավելի էր, նահատակվածներինը՝ 37: Հանվանե հիշատակված են Հռիփսիմեն, Գայանեն և Մարիանեն: Գրիգոր Ա. Լուսավորիչը Հ. կ-ին դասել է սրբերի շարքը: Որպես սրբեր Հռիփսիմեն և Գայանեն նշվում են ոչ միայն հայերեն, այլև հուն., լատ., արաբ., դպտի., ռուս. Հայսմավուրքներում:

Հ. կ-ի նահատակությունը հիմք է հանդիսացել հայ քրիստ. գրականության վաղ հուշարձաններից մեկի՝ Հռիփսիմյանց վկայաբանության համար, որը, անցնելով Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու Պատմություններին մեջ, լայն տարածում է ստացել ինչպես հայ, այնպես էլ ողջ միջնադարյան քրիստ. գրականության էջերում:

Ս. Հռիփսիմե վանքի օծման կապակցությամբ 618-ին Կոմիտաս Ա. Աղցեցի կաթողիկոսը գրել է ս. Հ. կ-ին նվիրված շարականը.

Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի,
Երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք...
(Շարակնոց, 1853, էջ 487):

Հայ եկեղեցին ս. Հ. կ-ի հիշատակը տոնում է ս. *Զատկին* հաջորդող կիրակիից հետո՝ երկուշաբթի օրը:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.7, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Մովսես Խորենացի, Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց..., տես Մատենագրութիւնք, Վնտ., 1865, էջ 277–303, 304–325: Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Ե., 1986: Սարգիսյան Բ., Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վնտ., 1890, գլ. Զ: Սուրբերու կյանքը [ժող.], Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ՀՌՈՄԿԼԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1178, տեղի է ունեցել ապրիլ ամսին, *Գրիգոր Դ Տղա* կաթողիկոսի օրոք: Բյուզ. Մանուել I Կոմնենոս կայսրի, Միքայել III Անքիալոս պատրիարքի և հուն. Սինոդի հետ թղթակցությունններից (1173–78) հետո Գրիգոր Դ Տղան հույների առաջարկները քննելու և պաշտոն. պատասխան տալու համար հրավիրել է Հ. ե. ժ.: Ժողովի հիմն. նպատակն էր ընդհանուր հայտարարի գալ հայ-բյուզ. եկեղեց. միության հարցում, որի շուրջ 1165–78-ին Կ.Պոլսի պատրիարքարանի և արքունիքի հետ տեղի էին ունեցել երկարատև բանակցություններ: Հ. ե. ժ-ին մասնակցել են 33 հոգի՝ հոգևորականներ բուն Հայաստանից, վանքերի առաջնորդներ, ասորի պատգամավորներ, Աղվանից կաթողիկոսը, որոնք և ստորագրել են Կ.Պոլսի պատրիարքին ուղղված պատասխան թուղթը: Ժողովից մեզ հասած վավերագրերը բաժանվում են երկու խմբի՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոն. վավերագրերը երկուսն են՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի անունից գրված երկու նամակները, որոնցից առաջինն ուղղված է բյուզ. կայսր Մանուել I Կոմնենոսին, երկրորդը՝ Կ.Պոլսի պատրիարքին: Այս գրությունները մեզ են հասել *Ներսես Լամբրոնացու* կազմած «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուի կազմում: Պատրիարքին գրված թղթում զիջում է նկատվում Հայ եկեղեցու դավան. ձևակերպումից: Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք «խոստովանիմք համաձայն Ձեզ ի Քրիստոսի անճառ միութիւնն երկու բնութեան տեսութիւն» բանաձևին: Սակայն, ի տարբերություն «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածու մտած մյուս վավերագրերի, այս նամակները հանգամանքների բերումով չեն հասել հասցեատերերին: Ժողովին վերաբերող ոչ պաշտոն. վավերագրերի մեջ առանձնանում են Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութիւն» երկը և «Գլխակարգութիւնք Հոռոմոց...» ու «Խնդիրք ի Հայոց ի Հոռոմոց» գրությունները: Ուսումնասիրողները «Ատենաբանութիւնը» համարում են Հ. ե. ժ-ում արտասանած ճառ, իսկ մյուս երկուսը 1171-ին Հռոմկլա ուղարկված բյուզ. 9 կետից բաղկացած պահանջների պատասխաններն են:

Ժողովի գումարման և որոշումների դեմ հանդես են եկել *արևելյան վարդապետները*, որոնք մեղադրական թղթեր են ուղարկել Գրիգոր Դ Տղային՝ հանդիմանելով ինքնագլուխ գործելու, հույներին կրոն. զիջումներ անելու և հունամետ լինելու մեջ:

Ազատ Բոզոյան

ՀՌՈՄԿԼԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ, Հայոց կաթողիկոսության նստավայրը 1149–1292-ին, Կիլիկյան Հայաստանի Հռոմկլա բերդաքաղաքում: Հայոց կաթողիկոս *Գրիգոր Գ Պահլավունին* Տլուք գավառի Ծոփք դղյակից այստեղ է տեղափոխել Հայոց կաթողիկոսական աթոռը և կառուցել Ս. Գրիգոր Լուսավորիչ ու Ս. Աստվածածին եկեղեցիները: Ավելի ուշ՝ Հռոմկլայում կառուցվել է նաև Ս. Փրկիչ եկեղեցին: 1178-ի *Հռոմկլայի եկեղեցական ժողովը*, որին մասնակցել են գրեթե բոլոր հայ արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները և վանքերի առաջնորդները, ճանաչել է Հ. կ-ի համահայկ. իրավունքը: Հռոմկլայի Հայոց հայրապետանոցի գոյության գրեթե ողջ շրջանը համընկել է Կիլիկիայի Ռուբինյան հայկ. իշխանապետության (1080-ից) հզորացման և Կիլիկիայի Հայկ. թագավորության (1198-ից) բարգավաճ ժամանակաշրջանի հետ, ինչը նպաստել է Հայ եկեղեցու հոգևոր նոր վերելքին, կաթողիկոսարանի արդյունավետ գործունեությանը եկեղեց. և կրոնամշակութ. ոլորտներում: Հռոմկլան դարձել է համահայկ. մշակութային, գրական, մտավոր կյանքի կենտրոնը: Կաթողիկոսարանում հավաքվել, բազմացվել և պատկերազարդվել են բազմաթիվ ձեռագրեր, ստեղծվել նորերը: Հ. կ-ի բարձրագույն դպրոցում են կրթվել և գործել ժամանակի նշանավոր հայ գիտնականները, հոգևորականները, Հայոց կաթողիկոսները: Ծաղկում են ապրել վանքերն ու վանական դպրոցները, բացվել են վարդապետարաններ, գրչության, մանրանկարչության կենտրոններ (Դրազարկ, Սկևռա, Ակներ, Բարձրբերդ, Մեծքար, Հռոմկլա, Մաշկևոր, Մլիճ, Շուղր ևն), որտեղ կրթվել և գիտամանկավարժ. գործունեություն են ծավալել *Մխիթար Գոշը, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Սկևռացին, Գևորգ Մեղրիկը*, բժշկապետ Մխիթար Հերացին, ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին և ուր., ինչպես նաև բազմաթիվ գրիչներ, մանրանկարիչներ:

Հ. կ. եռանդուն մասնակցություն է ունեցել Մերձ. Արևելքի եկեղեցաքաղ. իրադարձություններին, միջեկեղեց. խնդիրներին, ընդլայնել Հայ եկեղեցու փոխհարաբերությունները մյուս եկեղեցիների հետ: Միջեկեղեց. հարաբերություններում կարևորագույն տեղ է գրավել հայ-բյուզ., ավելի ուշ՝ հայ-հռոմ. եկեղեց. միության խնդիրը: Գրիգոր Գ Պահլավունու գահակալության վերջին տարիներին Բյուզ. կայսրության հետ սկսվել են այդ խնդրին նվիրված բանակցություններ, որոնք նոր թափով շարունակվել են հատկապես Ներսես Շնորհալու և *Գրիգոր Դ Տղայի* օրոք: Հ. կ. հայ-բյուզ. եկեղեց. միության հարցում առաջնորդվել է Ներսես Շնորհալու սկզբունքներով. ոչ թե «Տէր ընդ ծառայի», այլ՝ «հաւասար ընդ հաւասարի»: Միության փորձերին հակադրվել են *արևելյան վարդապետները*, որոնք քննադատել են Հռոմկլայի կաթողիկոսների քաղաքականությունը: Չնայած դրան՝ Հայոց կաթողիկոսները ձգտել են սերտացնել բուն Հայաստանի հոգևորականության և Հ. կ-ի կապերը: Ներսես Շնորհալին կարևորել է արևելյան վարդապետների կարծիքը կրոնաեկեղեց., ծիսադավան. կարևոր որոշումներ կայացնելիս, պարզաբանել միության հարցում իրենց դիրքորոշումը, այն է՝ Հայ եկեղեցու ավանդության և անկախության պահպանումը:

Հայ-բյուզ. եկեղեց. միության հարցում Հ. կ-ի և Կիլիկիայի Ռուբինյան իշխան. տան միջև տարաձայնություններ են առաջացել հատկապես Գրիգոր Դ Տղայի գահակալման վերջին տարիներին և *Գրիգոր Ե Քարավեժի* օրոք, որոնք, դեմ լինելով ծիսադավան. նորամուծություններին, վարել են հակաբյուզ., Հայ եկեղեցու անկախությունը, ինքնուրույնությունը և ավանդ. դիմագիծը պահպանելու քաղաքականություն: Ավելի ուշ, *Գրիգոր Զ Ապիրատի* օրոք, երբ սկսվել են նաև Հայ և Կաթոլիկ եկեղեցիների բանակցությունները, Հ. կ. (*Կոստանդին Ա Բարձրբերդցի, Հակոբ Ա Կլայեցի, Կոստանդին Բ Կատուկեցի*) նույն գործելակերպն է որդեգրել Հռոմի հանդեպ, պայքարել Հռոմի պապերի եկեղեցաքաղ. նկրտումների դեմ, դիմադրավել Կաթոլիկ եկեղեցու հարուցած ծիսադավան. վիճաբանություններին, Կիլիկիայից վտարել լատինադավանների:

Կաթողիկոսարանը գործուն մասնակցություն է ունեցել նաև քաղ. կյանքում. Կիլիկիայի քաղ. իշխանությունների հետ մասնակցել է հայ-մոնղոլ. բանակցություններին (XIII

դ. կես), նպաստել հայ-մոնոզոլ. դաշինքի ամրապնդմանը, մեծ դեր խաղացել հայ-եգիպտ. հաշտության կնքման (1282), ինչպես նաև Բյուզանդիայի և Կիլիկիայի Հայկ. թագավորության միջև առժամանակ հաշտության հասնելու, խաչակիրների հետ փոխհարաբերությունների կարգավորման գործում ևն: Հ. կ. նախաձեռնել է *Սսի եկեղեցական ժողովներից* չորսի (1204, 1243, 1251, 1289) գումարումը, որոնցից վերջին երեքում քննարկվել են Կաթոլիկ եկեղեցու վերարծարծած դավան. խնդիրներ: Հ. կ-ի վերջին շրջանում, *Ստեփանոս Դ Հռոմկլայեցու* օրոք, Կիլիկիայի քաղ. իշխանությունները և հոգևորականության ազդեցիկ մասը հարել են լատինադավանությանը, և թեպետ կաթողիկոսարանը, ի դեմս կաթողիկոսի, երբեմն ընդդիմացել է, սակայն, անզոր լինելով ճնշումների առաջ, աստիճանաբար նահանջել է իր նախկին դիրքերից:

1292-ին Եգիպտոսի մամլուքները գրավել և ավերել են Հռոմկլան, թալանել կաթողիկոսարանը, իսկ Ստեփանոս Դ Հռոմկլայեցուն գերել են ու տարել Կահիրե: *Գրիգոր Է Անավարզեցին* կաթողիկոսական աթոռը տեղափոխել է Սիս (տես *Սսի կաթողիկոսարան*):

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Կյուլեսերյան Բ., Ծովք, Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կլայ, Վնն., 1904: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, 2, ԿՊ, 1912, 1914: Անապատական, Համառօտ պատմութիւն հայ-լատին յարաբերութեանց սկզբէն մինչև 1382, Անթիլիաս, 1981:

Արտաշես Ղազարյան

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ (< Ավեստայի լեզվի՝ զենդերենի fraēšta – պատգամավոր, առաքյալ իմաստից), նախապես նշանակել է սուրհանդակ, երկնային դեսպան, պատգամավոր (եբր. malāck, հուն. *'ανγελος*), շարքային պատգամավոր (Հոբ **1.**14, Ա Թագ. **11.**3, Ղուկ. **9.**52), քահանա (Մաղաք. **2.**7), թղթատար մարդարե (Անգե **1.**13), նախակարապետ, կանխանշան: Աստվածաշունչը վկայում է, որ Հ., իբրև լուսեղեն էակներ, ստեղծվել են առաջին օրը՝ լույսի հետ միասին: Լինելով անդրանցական (տրանսցենդենտալ) տարածքի բնակիչներ՝ Հ. զերծ են ժամանակի ներգործությունից, չունեն սեռական հատկանիշ (Մատթ. **22.**30, Ղուկ. **20.**35–36): Թեպետ նրանք թևավոր են հորջորջվում, բայց, ինչպես ասվում է ս. Գրիգոր Ա Լուսավորչի Վարդապետության մեջ, «մարմնեղեն թևավորներ չեն, այլ՝ նմանությամբ» (Ագաթանգեղոս, Պատմութիւն, Տփղիս, 1909, § 323): Հ. բազմաթիվ են (Մատթ. **26.**53, Ղուկ. **2.**13, Եբր. **12.**22, 23), զորավոր (Սաղմ. **102.**20, Բ Պետր. **2.**11, Հայտն. **5.**12, **18.**21), մեծագործ (Դատ. **13.**20, Եսայի **6.**2–6, Հայտն. **8.**13): Հ. ներկայացնում են Աստծո երկնային հրեղեն բանակները (Բ Օր. **33.**2, Սաղմ. **67.**18, Հայտն. **5.**11), որոնք ունեն իրենց զորագլուխ ղեկավարները՝ Գաբրիել, Միքայել, Ռափայել, Անայել, Ուրիել, Բարաքիել, Ադոնիել, Փանուել, Երեմիել, Սաղաթիել և այլ առաջնորդ հրեշտակապետներ (Դանիել **9.**21, **10.**13, 21, **12.**1, Ղուկ. **1.**19, 26, Տոբիթ. **12.**15):

Հին կտակարանում Հ. հանդես են գալիս իբրև Աստծո ներկայացուցիչներ, միջնորդներ՝ հոգևոր և նյութ. աշխարհների միջև. այս հանգամանքն իր նորորակ դրսևորումն է գտնում հանձինս Հիսուս Քրիստոսի: Իբրև այդպիսին նա արդեն ներկա է Հին կտակարանում՝ «Տիրոջ հրեշտակ» կամ «Աստծո հրեշտակ» անվանումով, որն իր առաքելության գիտակցությամբ իրականացնում է Աստծո և մարդու հաղորդակցումը նահապետական, մովսիսական և ապա քրիստ. տնօրինության մեջ (Ծննդ. **16.**7–13, **22.**11–18, **31.**11–13, Ելք **3.**2–6, 14, **23.**20, Դատ. **13.**16–22, Գործք **7.**30–38):

Համաձայն Հայ եկեղեցու հրեշտակաբանության, Հ. «անմարմին գոյացություններ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անմահ և սպասավոր Աստծուն»: Այս բնորոշումները հետևյալ կերպ են մեկնաբանել *Հովհան Որոտնեցին* և *Գրիգոր Տաթևացին*. «գոյացությունը» Հ-ին տրված ընդհանրական որակում է, որը մատնացույց է անում նրանց տեսակը: Մյուս բնորոշումները հայտանշում են Հ-ի այս կամ այն առանձնահատկությունը. մասնավոր առումով՝ «գոյացությունը» ցույց է տալիս նրանց նկարագրի հաստատուն, որոշակի լինելը, «անմարմինը»՝ պարզ և անբաղադրելի էությունը: Ի տարբերություն մարդկային հոգիների, որոնք թեպետ «անմարմին» և անյութական են, սակայն զետեղված են նյութական տարածքի՝ մարմնի մեջ, Հ., լինելով անմարմին էակներ, անպարագրելի են և կաշկանդված չեն նյութի կամ նյութ. իրականության կապանքներով: Մարդկային հոգիների և Հ-ի համար ընդհանուրն այն է, որ դրանք «սահմանավոր» են, որովհետև եղական են, այսինքն՝ արարած:

Երկնային կանխասահմանումով Հ. տեսապես փառաբանում են Աստծուն: Սակայն նրանց մի մասը, չարաշահելով իրեն վերապահված ինքնիշխանությունը, ապստամբեց Աստծո դեմ և դարձավ չար հրեշտակ կամ *սատանա*, դև (Մատթ. **25.**41, Հայտն. **12.**9): Աստված սրանց «խավարի կապանքներով գցեց տարտարոսը, որպեսզի նրանք պահվեն դատաստանի օրվա համար» (Բ Պետր. **2.**4, հմմտ. Հուդա **1.**6):

Լուսո Հ. Աստվածության կամակատար, հոգեղեն, երկնաբնակ էակներ են (Սաղմ. **90.**11, **102.**20, Բ Թեսաղ. **1.**7, Եբր. **1.**14 ևն), որոնք կոչված են սպասավորել Աստծուն և մարդկանց: Ըստ այսմ, Հ-ի գործունեությունն ունի երկու ոլորտ. անդրանցական և հայտնութենական: Հայտնութենականը Հ-ի կենցաղավարության նյութ. ոլորտն է, որտեղ նրանք, Աստվածության կամքով, գործում են ժամանակի, պատմության մեջ՝ մարդու հետ և մարդու համար (Ադաթանգեղոս, Պատմութիւն, 1909, § 323–327): Իբրև սպասավոր էակներ Հ. ցածր են մարդուց, որովհետև մարդը ստեղծված է Աստծո կերպարանքով և նմանությամբ, և երկրորդ՝ աղամորդու փրկության համար Աստծո Որդին ոչ թե հրեշտակացավ, այլ՝ մարդացավ (Եբր. **2.**16): Մարդկանց՝ Աստծո սրբերին, վերապահված է նույնիսկ դատել Հ-ին (Ա Կորնթ. **6.**3):

Աստվածաշունչը ակնարկներ է պարունակում Հ-ի կարգապետական առանձնահատկությունների մասին (Եսայի **6.**2–6, Եզեկ. **10.**1, Եփես. **1.**21, Կողոս. **1.**16, Ա Պետր. **3.**22, Հայտն. **12.**7): Ըստ այսմ, *Դիոնիսիոս Արիոպագացին* հայտորոշում է Հ-ի ինը դասեր: Սրանք ունեն երեք՝ եռյակ կարգապետություն. առաջին եռյակը կոչվում է Աթոռներ, Քերովբեներ (միակերպարան, երկկերպարան կամ քառակերպարան էակներ են. Ելք **25.**20, Եզեկ. **10.**14, **41.**18), որոնք ունեն երկու, չորս կամ վեց թև (Գ Թագ. **6.**27, Եզեկ. **1.**6, Հայտն. **4.**8), և Սերովբեներ (ունեն վեց թև). երկրորդը՝ Տերություններ, Զորություններ, Իշխանություններ, երրորդը՝ Պետություններ, Հրեշտակապետներ, Հրեշտակներ: Յուրաքանչյուր եռյակի անդամները «համակարգ և համիմացք» են, այսինքն՝ իրենց քահանայապետական կոչումի մեջ հավասար և համապատիվ: Սակայն եռյակներն իրենց արտաքին հարաբերության մեջ զանազանվում են իրարից. առաջին եռյակը աստվածային լույսին հաղորդակցվում է անընդմիջաբար, միջին եռյակը՝ առաջինի միջոցով, իսկ երրորդ եռյակը՝ միջինի շնորհիվ: Այս աստիճանակարգումով Աստծո լույսն ու շնորհը հանդչում են արարածների վրա: Ճիշտ հակառակ հարաբերությամբ էլ արարածների՝ Աստվածությանն առաքված փառքը, պատիվը և աղոթքը կարգով՝ ստորին եռյակից բարձրանում են միջինը և այստեղից էլ՝ վերին եռյակը, որի շնորհիվ հասնում են Աստվածությանը: Հ-ի յուրաքանչյուր եռյակին կանխասահմանված է գործունեության մասնավոր դաշտ: Առաջին եռյակը տեսապես սովորեցնում է, երկրորդը՝ սովորում և սովորեցնում, իսկ երրորդը՝ միայն սովորում: Այս նույն կարգով էլ առաջին եռյակը իշխում է, երկրորդը՝ իշխանության ներքո է և միաժամանակ իշխում է, երրորդը՝ իշխանության ներքո է ևն: Գրիգոր Տաթևացին տալիս է նվիրապետական դասերի անունների աստվածաբան. հետևյալ ստուգաբանությունը. Աթոռները բարձր են, ուղիղ և հաստատուն, որովհետև նրանք վեր են ամեն տեսակ նյութական բաներից, բացարձակապես անհաղորդ երկրավոր խորհուրդներին և մյուս կողմից՝ ուղղակիորեն հաղորդ Աստվածությանն ու աստվածային գիտելիքին: Քերովբե անունը եբրայերենից թարգմանաբար նշանակում է գիտության բազմություն և իմաստության հեղուսն: Քերովբեները, ընկալելով Աստծո գիտության և իմաստության լույսը՝ որպես իմացական մի հայելի, փոխանցում են միջին դասի Հ-ին: Իսկ Սերովբե թարգմանաբար նշանակում է տաքացնող կամ կիզող, ինչը մատնանշում է նրանց՝ կրակից կազմված լինելը: Սերովբեների այսօրինակ բնույթը ինքնին ցույց է տալիս նրանց՝ աստվածային սիրո կրակով համակված լինելը և, մյուս կողմից, այլոց այդ կրակով մաքրելն ու լուսավորելը: Սերովբեները, Աստծո աթոռի շուրջը հավաքված (Երկրորդ Օր. **4.**24, Եբր. **12.**29), մշտապես օրհներգում են, փառաբանում Աստծուն՝ բացականչելով՝ «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորությունների Տերը և ամբողջ երկիրը լցված է նրա փառքով» (Եսայի **6.**2–3):

Հ-ի երկնային նվիրապետության առաջին եռյակի երեք աստիճանները անդրանցական ոլորտում համապատասխան կերպով խորհրդաբանորեն ակնարկում են Սուրբ *Երրորդության* երեք անձերը՝ Սուրբ Հայրը (Աթոռներ), Սուրբ Որդին (Քերովբեներ) և Սուրբ Հոգին (Սերով-

բեներ), որոնցից յուրաքանչյուրն իր գործունեությամբ իրականացնում է Աստվածության երկնային և երկրային ծրագիրը: Ստորին ոլորտում այս եռյակին համապատասխան են եկեղեցու սպասավորներն իրենց նվիրապետական պաշտոնով. եպիսկոպոսը՝ Աթոռներին, քահանան՝ Քերովբեներին և սարկավագը՝ Սերովբեներին: Այս նույն համաբանությամբ էլ Հ-ի միջին և վերջին դասը իրենց երեք աստիճաններով համապատասխանում են Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Սրանից զատ երկնային նվիրապետության վերջին երեք աստիճանները խորհրդանշում են Միքայել հրեշտակապետին (Պետություններ), որ օժտված է կառավարելու, թագավորելու շնորհով, Գաբրիելին (Հրեշտակապետներ), որին տրված է վերին խորհուրդները ավետարանելու շնորհ, և Ռափայելին (Հրեշտակներ), որն աղոթքը տանում է վեր (Տոբիթ **12.**15) և պահպանում յուրաքանչյուր ադամորդու:

Հայ միջնադարյան գրականության մեջ Հ-ին նվիրվել են բազում ճառեր, քարոզներ, ներբողներ, շարականներ, հոգևոր երգեր: Հատկապես հիշատակության արժանի է Վարդան Անեցու (X–XI դդ.) «Վասն կառացն Աստուածութեան» ներբողյանը, որտեղ «աստվածաբանական խորատեսությամբ» (Ղ. Ալիշան) և նրբին բանաստեղծականությամբ պանծացվում են Եզեկիել մարգարեի տեսիլքում (**1.**1–28, **2.**1–9, **10.**1–17) երևացող քառակերպարան էակները, որոնք իրենց պատկերներով (Մարդ, Առյուծ, Եզ, Արծիվ) խորհրդանշում են Աստվածությունն ու Կառքը պահող Քերովբեների համապատասխան հատկությունները: Հայ միջնադարի հրեշտակաբանության համար բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում *Ներսես Շնորհալու* «Սրբոց հրեշտակապետաց» ընդարձակ ներբողը (1167), որը բաղկացած է երկու մասից՝ «Գովեստ բանի ներբողականի Յաղագս տօնի գերագունից էութեանց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրութեանցն, զոր տօնեն եկեղեցիք Քրիստոսի...» և «Մաղթանք առ սուրբ հրեշտակն»: Նվազ ուշադրավ չէ *Վարդան Արևելցու* «Վասն կառացն Եզեկիէլի» ճառը և Եզեկիելի մարգարեության մեկնության համապատասխան մասը:

Շարակնոցում առկա է մասնավոր կանոն՝ նվիրված «Սրբոց հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի եւ ամենայն երկնային զօրացն»: Հ. բարձրորեն արժեքավորվում են *Գրիգոր Նարեկացու* և Ներսես Շնորհալու տաղերում ու գանձերում: Մասնավորապես գովերգվում է Գաբրիել հրեշտակապետը Ա-վետման և Ս. Ծննդյան տոնին նվիրված միավորների մեջ: Սրանց մեջ ակնառու է Ներսես Շնորհալու «Սրբոց հրեշտակապետաց» տաղը, որ քերթողական մանրակերտն է հեղինակի համանուն ներբողի:

Հայ միջնադարյան մանրանկարչության մեջ ընդունված է պատկերել գլխավորաբար Գաբրիել հրեշտակապետին՝ Տիրամորը ավետելիս: Հ. պատկերվել են իբրև անքակտելի բաղադրիչներ Եզեկիելի տեսիլքում նկարագրված կառքի: Հ. առկա են նաև «Ծննդյան» (1450, Ճաշոց, Մատենադարան, ձեռ. № 982), «Մկրտության» (1038, Ավետարան, ձեռ. № 6201), «Համբարձման» («Մողնու Ավետարան», XI դ. կես), ինչպես նաև՝ «Թաղման» և «Հարության» (1302, Ավետարան, ձեռ. № 6792) հարակից պատկերագրության մեջ: Հ. պատկերվում են բորբոքուն հնոցի մեջ գտնվող երեք մանուկներին (Դանիել **3.**19–90) հովանավորելիս: Հ. ներկա են Տիրամոր և Մանկան պատկերաքանդակում, որտեղ երկու կողմերում կանգնած՝ նրանց պահում են իրենց թևերի հովանու տակ:

Հ-ի կամ Սրբոց Հրեշտակապետաց անունով հայտնի են Զվարթնոց տաճարը, Ս. Էջմիածին մայրավանքի զանգակատան խորանը, Աստապատի Հրեշտակապետ եկեղեցին, Թոքատի Սուրբ Հրեշտակապետ վանքը, Սեբաստիայի Սրբոց Հրեշտակապետաց վանքը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ս. Հրեշտակապետաց, ինչպես նաև՝ Կ. Պոլսի Պալաթ թաղամասում գտնվող նույնանուն եկեղեցին:

Պատկերազարդումը տես ներդիր X-ում, 10.7, 3–4-րդ և 10.8, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Դիոնիսիոս Արիոպագացի, Յաղագս երկնային քահանայապետութեան, տես Corpus Scriptorum Christ. Orient, v. 488, Script. Apmeniaci, t. 17, The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite, ed. by R.W. Thomson, Lovanii, 1987, p. 1–53: Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառք. Ը, Թ, ԺԵ, ԿՊ, 1894: Ներսես Շնորհալի, Ներբող սրբոց հրեշտակապետաց, ԿՊ, 1780: Տօն սրբոյ աւետաբեր հրեշտակապետին Գաբրիէլի, Տօն է սուրբ եւ փառաւորեալ հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի և ամենայն երկնաւոր զօրացն, տես Յայսմաւուրք, ԿՊ, 1834, հ. 1, էջ 154–155, հ. 2, էջ 16, 226–228: Գրիգոր Տաթեվացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր..., ԿՊ, 1741, էջ 564–586: Կարգաւորութիւնք ինն դասուց հրեշտակաց, տես Ժողովածու, ԿՊ, 1710, էջ 278–279: Տեր-Մի-քելյան Ա., Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու քրիս-

տոնէականը, Տփղիս, 1900, էջ 95–98: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 196–204:

Հակոբ Քյոսեյան

ՀՈՒԼԻԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ, քրիստոսաբանական վարդապետության հետևորդներ: Հիմնադիրն է Հուլիանոս Հալիկառնասցին, որը հակաքաղկեդոն. պայքարի նշանավոր դեմքերից էր: Բյուզ. կայսր Հուստինոս Ի-ի (518–527) օրոք, երբ վերսկսվել են հալածանքները *Քաղկեդոնի ժողովը* մերժողների դեմ, Հուլիանոս Հալիկառնասցին մի շարք հայտնի եպիսկոպոսների հետ 518-ին աքսորվել է *Ալեքսանդրիա*: Աքսորյալների մեջ էր նաև Անտիոքի պատրիարք Սևերիոս Անտիոքացին, որի հետ Հուլիանոս Հալիկառնասցին վեճի է բռնվում Տիրոջ մարմնի *անապականության* շուրջ: Հայտնի է, որ Հուլիանոս Հալիկառնասցին այլևս չի վերադարձել Հալիկառնաս, և նրա հետագա ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ: Հեղինակ է Սևերիոս Անտիոքացու դեմ ուղղված չորս գործերի, որոնցից պահպանվել են բազում հատվածներ, նաև վերականգնվել նրա նամակներից շատերը:

Հայ եկեղեցու հայրերը մերժելով Սևերիոս Անտիոքացու «ապականության» վարդապետությունը (տես *Սևերիոսյաններ*), միաժամանակ զգուշացել են Հուլիանոս Հալիկառնասցու անապականության մեջ քողարկված *երևութականությունից* (դոկետիզմ): Սակայն հայ հայրերը վիճում էին ոչ այնքան Հուլիանոս Հալիկառնասցու, որքան նրա ծայրահեղ հետևորդների հետ: Համենայն դեպս Հուլիանոս Հալիկառնասցու գրվածքներում չկա այն կոպիտ երևութականությունը, որի մասին հաճախ խոսել են նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան Տիրոջ մարմնի անապականության իր ուսմունքով փրկության խորհուրդը ինչ-որ «երևակայության և անրջական պատրանքի» (այստեղից էլ՝ «երևութականներ» անունը) վերածելու մեջ:

Հ. ավելի հեռու են գնացել. նրանց անվանել են «ֆֆտարդոկետներ» (անապականներևութականներ) և «ֆանտազիստներ». այս անունները լավագույնս ցույց են տալիս նրանց մտածելակերպի մեջ բույն դրած երևութականությունը: Հուլիանոս Հալիկառնասցու ծայրահեղ հետևորդներից ոմանց համոզմամբ՝ աստվածամարդկային միության մեջ պայծառակերպված և աստվածացած մարդեղությունը չի կարելի անվանել «արարչական». այսպես առաջացել է «անարարչականների» աղանդը:

Հուլիանոս Հալիկառնասցու ծայրահեղ հետևորդներ (երևութականներ) հայտնվել են նաև Հայաստանում, որոնց դեմ սուր պայքար է ծավալվել: Երևութականությունը հայոց մեջ կոչվել է նաև «Մայրագոմեցու աղանդ» (Սարգիս Մայրագոմեցու անունով): Սարգիս Մայրագոմեցու հետևորդներին սուր քննադատության է ենթարկել *Թեոդորոս Քռթենավորն* իր «Ընդդէմ մայրագոմեցւոյն» գրվածքում: Նրանց դեմ պայքարն իր գագաթար. ամբողջականությանն է հասել *Հովհաննես Գ Օձնեցու* և *Խոսրովիկ Թարգմանչի* գրվածքներում:

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, Մատենագրութիւնք, Վնտ., 1833: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երևան, 1994: Արամյան Մ., Հովհաննես Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից» ժողովածուն, «Գանձասար», 6, 1996: *Болотов В. В., Лекции по истории древней церкви, т. 4, М., 1994;* Lebon J., Le Monophysisme sévérien, Louvain, 1909; Draguet R., Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ, Louvain, 1924; Grillmeier A., Christ in Christian Tradition, v. 2, part 4, 1995.

Մեսրոպ քհն. Արամյան

«ՀՈՒՅՍ», ազգային, կրոնական, իմաստասիրական, գիտական, բանասիրական ամսագիր: *Արմաշի Զարխափան Ս. Աստվածածին վանքի* միաբանության հրատարակություն: Լույս է տեսել 1864–77-ին, Արմաշում: Խմբագիր՝ Խ. արք. Աշըքյան: Տպագրել է աստվածաբան. ուսումնասիրություններ, կրոնաբարոյախոս. հոդվածներ, խրատ. զրույցներ ու քարոզներ, Հայ առաքելական եկեղեցու դավանությանը նվիրված նյութեր, հայոց պատմ. անցյալի թեմաներով չափածո ստեղծագործություններ ևն: Հիշարժան են «Հ.»-ի՝ կրոնի պատմությանը, Զրադաշտին, հին հույների հեթանոս. հավատալիքներին, կաթոլիկությանը, բողոքականությանը վերաբերող ինքնուրույն և թարգման. հոդվածները: «Հ.» տեսականորեն սատարել է Հայ եկեղեցուն, պաշտպանել նրա դավան. ուղղափառությունը, միաժամանակ ընդգծել քրիստ. չափավորության, պարկեշտության և այլ առաքինությունների կարևորությունը, ճաղկել բարքերի և բարոյականության անկման երևույթները, տպագրել «Կանոնք նշանագրության և հարսանյաց Պարտիզակին»՝

իբրև այդպիսի բարեկարգման օրինակ: Ազգի հիմն. հատկանիշները համարել է կրոնը, հայրենիքը, լեզուն, ազգ. ինքնիշխանությունն ու օրենքը, եզրահանգել, որ հայությունը այդ հատկանիշներից պահպանել է միայն կրոնը: «Հ.» քննադատաբար է վերաբերվել ժամանակի մատերիալիստ. փիլ. ուսմունքներին, ճշմարտության միակ չափանիշ համարել քրիստ. կրոնը՝ այն հակադրելով «փիլիսոփայության աղճատ և աղավաղ վարդապետություններին»:

«Հ.» սկզբնապես զուսպ է վերաբերվել Հայ առաքելական եկեղեցու պաշտպանության հարցերին, խուսափել դավան. բանավեճերից: 1860-ական թթ. վերջին և 1870-ական թթ. սկզբին ամսագիրն առավել նախանձախնդրությամբ է հանդես եկել Հայ եկեղեցու դավանանքի պաշտպանությամբ ու հիմնավորմամբ: Հռոմի պապի՝ Արևելյան եկեղեցիներին ուղղած «տիեզեր. ժողովի» հրավերի (1869) առիթով «Հ.» հերքել է Հայ եկեղեցու ուղղափառության դեմ ուղղված մեղադրանքները: Ընդունել է եկեղեց. միությունը, սակայն քրիստ. հոգևոր միասնության սահմաններում՝ յուրաքանչյուր եկեղեցու ինքնուրույնության անվերապահ պաշտպանության համոզմունքով: Նույն դիրքերից խստագույնս քննադատել է բողոքական քարոզիչներին, առաջարկել բողոքականության տարածումը կանխարգելող միջոցներ: Կաթոլիկության և բողոքականության դեմ վարած բանավեճի տեսանկյունից հատկանշական է «Հ.»-ի տպագրած՝ Հայ առաքելական եկեղեցու անխաթար դավանանքը հիմնավորող «Վարդապետական ընդհանրական ուղղափառ եկեղեցւոյ հանդերձ տարբերութեամբք որ ընդ այլ եկեղեցիս քրիստոնէից» գործը: «Հ.»-ի ուշադրությունից չի վրիպել ազգ. կրոն. դաստիարակությունը, առաջարկել է այդ նպատակին նվիրաբերել վանական միջոցները, տնտեսապես կայունացնել վանքերը, դրանց կից բացել դպրոցներ: Տպագրել է Հայ եկեղեցու պատմությանը նվիրված վավերագրեր:

Ալբերտ Խառատյան

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑ, V դ. կեսի – VIII դ. սկզբի թարգմանական, գիտական և կրթական-լուսավորական ուղղություն Հայաստանում: Նպատակն էր հայոց պետականության բացակայության պայմաններում, կապված ազգ. անկախության հարցերի լուծման հետ (որը նաև ենթադրում էր տեսական կողմնորոշում)՝ զարգացնել հոգևոր և աշխարհիկ գիտելիքը: Հ. դ-ի գործունեությունը հիմնված էր գիտությունների անտիկ դասակարգման (հատկապես արիստոտելյան) ու ուսման ծրագրերի վրա: Հունաբանները (Դավիթ Քերական, *Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ* և ուր.), առաջնակարգ կրթություն ստանալով հելլենիստ. մշակույթի խոշորագույն կենտրոններում (Ալեքսանդրիա, Եդեսիա, Կ. Պոլիս, Աթենք), քաջ ծանոթ էին այդ ժամանակի «եռյակ» (քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն-դիալեկտիկա) և «քառյակ» (թվաբանություն՝ թվերի տեսություն, երաժշտություն՝ երաժշտության տեսություն, երկրաչափություն և աստղաբաշխություն) գիտություններին: Դրանով էր պայմանավորված նախ Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» և «Գիրք պիտոյից» ճարտասանական երկերի և հետո միայն զուտ տրամաբան., փիլ., բնափիլ. և այլ բնույթի աշխատությունների (ավելի քան 60 միավոր) թարգմանվելը:

Հ. դ-ի թարգմանություններն ընդգրկում են անտիկ գիտափիլ. ժառանգությունը (Արիստոտել, Պլատոն, *Փիլոն Ալեքսանդրացի*, Պորփյուր և ուր.), անտիկ տեսական ավանդույթներին հարող քրիստ. մտածողների (*Գրիգոր Նյուսացի*, Նեմեսիոս Եմեսացի և ուր.) և կրոնաեկեղեց. հեղինակների (*Տիմոթեոս Կուզ*, Իրենիոս, Եվտիքիոս Կոստանդնուպոլսեցի և ուր.) երկերը:

Հելլենիստ. մշակույթը Հայաստանում ուներ խոր արմատներ: Հայերը քաջածանոթ էին հուն. մշակույթի արտահայտություններին մինչև Հ. դ-ի գործունեությունը: Սակայն *Մեսրոպ Մաշտոցի* և *Սահակ Ա Պարթևի* կողմից հայ գրերի գյուտը զարկ է տվել հունալեզու գրականության թարգմանությանը, ազգ. լեզվով անտիկ տեսական ժառանգության յուրացմանն ու տարածմանը (թե՛ գիտ., թե՛ ուսումնակրթ. նպատակներով), ազգ. բարոյահոգեբան. արժեքների ու սկզբունքների համակարգի մեջ դրանց ներառմանն ու ազգայնացմանը: Ստեղծվել է դավան., հասարակագիտ., փիլ.՝ հունարենին համարժեք հայերեն տերմինաբանություն, գիտաաստվածաբան. հարուստ բառապաշար, այդպիսով ընդլայնելով հայերենի արտահայտչաձևերը՝ հիշյալ և հարակից բնագավառներում: Հ. դ-ի ներկայացուցիչները հունարենի հիման վրա ձևավորել են հայերենի գիտ. լեզվատարբերակը՝ հունաբան հայերենը, հայերեն լեզվում

արմատավորել մի շարք նախածանցներ (ապ, առ, արտ, բաղ, բաց, դեր, ենթ, մակ, հակ, ստոր, վեր, փոխ ևն), ընդարձակել հայերենի բառակազմական միջոցները:

Հ. դ-ի որոշ թարգմանություններ ունեն բնագրային արժեք, քանզի հուն. բնագրերը (մասամբ կամ ամբողջովին) չեն պահպանվել (Փիլոն Ալեքսանդրացու յոթ գրվածքները, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը, Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկի վերջին չորս գլուխները ևն): Մեկ այլ խումբ (հատկապես Արիստոտելի «Ստորոգութիւնք»-ը և «Յաղագս մեկնութեան»-ը, Պորփյուրի «Ներածութիւն»-ը ևն) հնագույններից են համաշխ. թարգմ. գրականության մեջ: Իրենց ճշգրտությամբ գերազանցելով այլալեզու թարգմանություններին, նաև ուշ շրջանի հուն. ձեռագրային նմուշներին՝ դրանք հնարավորություն են ընձեռում վերականգնելու սկզբ. հուն. տեքստերը: Թարգմանական գրականությունը դարձել է ազգ. մշակույթի բաղկացուցիչ մասը (տես *Թարգմանչաց շարժում*): Դրա հետ մեկտեղ ստեղծվել է ինքնատիպ պատմ., փիլ., քերակ., բնափիլ. հարուստ գրականություն, մշակվել համապատասխան գիտ. տերմինաբանություն, առանց որի անհնար էր ազգ. գիտության ու փիլ-յան ճյուղերի ձևավորումն ու զարգացումը: Այդ գործում մեծ էր Դավիթ Անհաղթի և *Անանիա Շիրակացու* դերը: Առաջինի շնորհիվ Հայաստանում ձևավորվել է փիլ. գիտությունը, երկրորդի շնորհիվ՝ բնագիտ. ուղղությունը: Ստեղծված ինքնատիպ գրականության զգալի մասն ունի մեկնողական բնույթ (տես *Մեկնողական գրականություն*): Թարգմ. ու ինքնուրույն գիտափիլ. գործունեությանը զուգընթաց զարգացել է նաև ուսումնակրթ. համակարգը:

Հ. դ-ի գործունեությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի հոգևոր-մշակութ. ինքնուրույնության հաստատմանը, դրանով իսկ՝ նաև քաղ. և պետ. անկախության պայքարի ծավալմանը:

Գրկ. Մանանդյան Հ., Հունական դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վնն., 1928: Մուրադյան Ա., Հունական դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971: Մուրադյան Գ., Դասական և հունական թարգմանությունների բաղադրության փորձ, ՀԱ, 1999, էջ 187–215: Նույնի, «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերի լեզուն և հայ հեղինակների հունաբանությունները, «Աշտանակ» (հայագիտական պարբերագիրք), Ե., 2000, էջ 99–122: *Аревшатян С. С., Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Е., 1973.*

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1920-ական թթ.: Առաջնորդանիստը՝ Աթենքի Ս. Աստվածածին եկեղեցի: Հունահայ հոգևոր համայնքը ղեկավարել են (շուրջ 23 տարի) Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից ուղարկված այցելու հոգևոր հովիվները: 1923-ին Կ. Պոլսի պատրիարքությունը Հ. Թ-ի առաջնորդ և հայրապետ. պատվիրակ է նշանակել Կարապետ արք. Մազլումյանին (1923–51): 1951-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնի կարգադրությամբ *Եգիպտոսի թեմի* առաջնորդ Մամբրե արք. Սիրունյանը (1951–53, այցելու թեմական առաջնորդ) նշանակվել է Հ. Թ-ի առաջնորդ: 1956-ին Աթենքի հայոց ազգ. վարչության հրավերով Հ. Թ-ի առաջնորդական տեղապահի պաշտոնը ստանձնել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության անդամ Իսահակ վրդ. Ղազարյանը: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի 1957-ի հուլիսի 7-ի կոնդակով Իսահակ վրդ. Ղազարյանը նշանակվել է Հ. Թ-ի առաջնորդ և հայրապետ. պատվիրակ: Հ. Թ. մինչև 1958-ը ղեկավարել են Մայր աթոռ Ս. Էջմիածնի գերակայությամբ գործող Ազգ. վարչությունը և առաջնորդարանը: Ազգային վարչության նախագահն էր Հ. Թ-ի առաջնորդը: 1958-ի հոկտ. Հ. Թ. անջատվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնից և անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայությանը: Համայնքի մի մասը չի ընդունել այդ որոշումը և հայտարարել է առանձին էջմիածնական թեմական խորհուրդ ստեղծելու իր որոշման մասին:

1992-ին Հունահայոց անթիլիասական թեմը դիմել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին՝ Ս. Էջմիածնի ենթակայությանը վերադառնալու խնդրանքով: Չնայած Մայր աթոռի ձեռնարկած քայլերին, այս խնդիրը դեռևս իր լուծումը չի ստացել: Ներկայումս (2001) Հունաստանում գործում են հայկ. երկու առաջնորդարաններ՝ իրենց առաջնորդներով և եկեղեցիներով: Հունաստանի իշխանությունների մոտ հունահայ համայնքը պաշտոնապես ներկայացնում է Անթիլիասի գերակայությամբ գործող Ազգ. առաջնորդարանը: Ազգ. վարչության նախագահն է հունահայ համայնքի և անթիլիասական թեմի առաջնորդ Սահակ արք. Այվազյանը (1958-ից):

Աթենքում 1900-ին կառուցվել է հայկ. մատուռ, 1933-ին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (ներկայումս անթիլիասական թեմի առաջնորդանիստ եկեղեցին է): Անթիլիաս. թեմին են պատկանում Աթենքում գտնվող ևս 2 եկեղեցիներ (Ս. Հակոբ և Ս. Կարապետ) և «Ազատամարտ» ակումբը: Ս. Հակոբ եկեղեցին (Կոկինիայի շրջան) կառուցվել է 1921-ին և կոչվել Ամենայն Սրբոց եկեղեցի: 1932-ին վերակառուցվել է և վերանվանվել Ս. Հակոբ: 1922-ին Նեոս Կոսմոս (նաև՝ Ֆիքս) շրջանում կառուցվել է Ս. Կարապետ փայտաշեն եկեղեցին, որը 1969-ին քանդվել է: 1992-ին նույն թաղամասում կառուցվել է Ս. Կարապետ անունով նոր եկեղեցի:

1924-ին Կարեա-Կեսարիանիի շրջանում եղել է հայկ. մատուռ, որը 1937-ին վերակառուցվել է և կոչվել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: 1957-ին եկեղեցին քանդվել է: 1970-ին նույն շրջանում կառուցվել է «Ազատամարտ» ակումբը, որտեղ կատարվում են եկեղեց. արարողությունները: 1903-ից Սալոնիկում գործում է Ս. Աստվածածին եկեղեցին, 1932-ից Կավալայում՝ Ս. Խաչը, 1927-ից Քսանթիում՝ Ս. Աստվածածինը: Դիդիմոտիկոյի Ս. Գևորգ եկեղեցին հուն. մատուռ էր, որը 1735-ին հույները նվիրել էին հայ համայնքին:

Արլ. Մակեդոնիայի և Թրակիայի տարածքում գործում է հայ հոգևոր հովվություն: Ունեն մշտական հովիվ: Թրակիայի հնագույն հայկ. բնակավայրերից Կոմոտինիում 1834-ին կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 1886-ին Ալեքսանդրուպոլսում կառուցվել է Ս. Կարապետ եկեղեցին:

1957-ին Հայասեր շվեյցարացիների միությունը կառուցել է Կոկինիայի հայկ. ծերանոցը, որը 1985-ից հանձնվել է Ազգային առաջնորդարանի խնամակալությանը:

Մայր աթոռ Ս. Էջմիածնի գերակայությամբ գործող թեմական խորհրդին է պատկանում Աթենքի Պերիստերի (նախկինում՝ Արմենիկա) շրջանում 1917-ին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին: Թեմ. խորհրդի հետ անմիջականորեն կապված է նաև Կրետե կղզում գտնվող Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (1636):

Հունաստանի էջմիածնական թեմի առաջնորդն է Ոսկան արք. Գալփակյանը (1991-ից):

ՀՈՒՍԻԿ Ա ՊԱՐԹԵՎ, սուրբ Հուսիկ Ա Պարթև (295–347, ամփոփվել է Դարանաղյաց գավառի Թորդան գյուղում), Ամենայն հայոց կաթողիկոս 341-ից: *Գրիգոր Ա Լուսավորչի* թոռը, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Հաջորդել է հորը՝ *Վրթանես Ա Պարթևին*: Նախապես գտնվել է արքունիքում. խնամակալվել է Տիրան թագավորի կողմից, ամուսնացել վերջինիս դստեր հետ: Կաթողիկոս է դարձել կնոջ մահից հետո (ձեռնադրվել է Կեսարիայում): Պարսից Շապուհ II արքայի՝ 338-ին Հայաստանի վրա հարձակումներից հետո, մինչև 345-ը հայ-հռոմեա-պարսկ. նոր ընդհարում չի եղել: Տիրան Հայոց արքան հարկ է վճարել ինչպես Հռոմին, այնպես էլ՝ Պարսկաստանին՝ ստեղծելով հավասարակշռված վիճակ երկու տերությունների հետ փոխհարաբերություններում: Երկրի ներսում նախարարները դադարեցրել են կենտրոնախույս նկրտումները և եղբայրասպան կռիվները: Այս պայմաններում Տիրանը ցանկացել է ազատվել եկեղեցու հովանավորությունից, ինչը լուրջ տարաձայնություններ է առաջացրել թագավորի և կաթողիկոսի միջև: Ըստ Մովսես Խորենացու, Հ. Ա Պ. արգելել է Հայոց արքային Հուլիանոս Ուրացող կայսրի պատկերը դնել եկեղեցում, ոտքերով այն տրորել է ու ջարդել: Համաձայն Փավստոս Բուզանդի, Հ. Ա Պ. Տիրանին անարժան է համարել և արգելել մտնել եկեղեցի: Վերջինիս հրամանով կաթողիկոսը բրածեծ է արվել և սպանվել Ծոփքի Բնաբեղ բերդում:

Հայ եկեղեցին ս. Հ. Ա Պ-ի հիշատակը տոնում է Ս. Ծննդյան 3-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը կամ Վարդավառի 3-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը՝ ս. Գրիգոր Լուսավորչի «որդւոց և թոռանց» հիշատակի հետ:

Կաթողիկոս. գահին Հ. Ա Պ-ին հաջորդել է *Փառեն Ա Աշտիշատցին*:

Գրկ. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Հակոբ Հարությունյան

2

ՁԱԳԱՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1270, գումարվել է *Ձագավանքում*, Հայոց կաթողիկոս *Հակոբ Ա Կայեցու* օրոք, Բջնիի Գրիգոր եպիսկոպոսի և *Վարդան Արևելցու* անմիջական նախաձեռնությամբ, մեծ իշխան Պռոշի (1223–84՝ Պռոշյան իշխանական տոհմի անվանադիրը) հրամանով: Մասնակցել են *արևելյան վարդապետները*, եպիսկոպոսներ, վանականներ, քահանաներ, նախարարներ և ազատներ:

1243-ի Սսի ժողովին (տես *Սսի եկեղեցական ժողովներ*) արևելյան վարդապետները չեն մասնակցել: Բայց այդ ժամանակ Կիլիկիայում է գտնվել Վարդան Արևելցին: Առիթից օգտվելով՝ Հայոց կաթողիկոս *Կոստանդին Ա Բարձրբերդցին* Վարդան Արևելցու միջոցով Արևելք (Մեծ Հայք) է ուղարկել Սսի ժողովի կանոնները՝ իր շրջաբերական կոնդակով: Վարդան Վանականը կաթողիկոսի մարդկանց հետ 1245–46-ին շրջել է Հայաստանի դավառներում և, ժողովի վերաբերյալ հավանության թուղթ ստանալով գլխ. եպիսկոպոսներից, վանքերից ու իշխաններից, ուղարկել կաթողիկոսին: Բայց նա, չբավարարվելով Սսի ժողովի կանոնների վերաբերյալ հավանության գրերով, ամբողջ կյանքի ընթացքում, ինչպես վկայում է Հովհաննես Երզնկացին (Ծործորեցի), այս և այն կողմերում հայ իշխանների և տեղի եպիսկոպոսների աջակցությամբ ժողովներ է գումարել, վճիռներ հաստատել տվել՝ իրագործելու Հայաստանում Սսի ժողովի կանոնները: Այդպիսիներից է Ջ. ե. ժ., ինչպես նաև Հաղպատի ժողովը, որոնց մասին միակ և հավանցիկ տեղեկություն է տալիս XIII դ. մատենագիր Մխիթար Այրիվանեցին: Ջ. ե. ժ-ի կանոնների (հայտնի են «Սահմանք ժողովելո Ձագա, որ եղեւ ի ձեռն տէր Գրիգորո եւ Վարդան Վարդապետին» անունով) հեղինակ է համարվում Վարդան Վանականը: «Սահմանքի» հեղինակը տոգորված է Սսի ժողովի կանոնների դաղափարներով, բայց դրանք հարմարեցրել է տեղական պայմաններին: Հեղինակն օգտվել է նաև նախկին ժողովների և հայրերի կանոններից: Ջ. ե. ժ-ի կանոնները չեն մտել «*Կանոնագիրք Հայոց*»-ի մեջ: Ի տարբերություն XIII դ. Հայաստանում գումարված մյուս ժողովների (Լոռու, Անիի ևն), որոնց որոշումներն ավելի դավանաբան. և ծիսական բնույթի էին, Վարդան Վանականի գլխավորությամբ գումարված ժողովները, այդ թվում՝ Ջ. ե. ժ., դաստիարակչական, գործնական են եղել: Դրանք հարուստ նյութ են տալիս XIII դ. կրոնաեկեղեց. և ժող. ներքին կյանքի ու դրվածքի մասին: Ժողովի կանոնների գլխ. կետերը հայհոյելու վատ սովորության, երեխաների կրոն. դաստիարակության, ամուսնության, քահանաների և ժողովրդի փոխադարձ պարտականությունների, քահանաների եկամուտների կանոնավորման և վանականության սրբակեցության մասին են: Ջ. ե. ժ-ի կանոններով քահանաները պետք է ազատվեին հարկերից, պետ. պաշտոնյաներին իջևան տալու պարտականությունից: Կանոնները գրված են ժող. մատչելի լեզվով և պարզությամբ: Գրության այդ եղանակը հատուկ է եղել XIII–XIV դդ.

շատ հեղինակների կանոնական, խրատական գրվածքներին և քարոզներին: «Սահմանքը» օրինակ է ծառայել *Հովհաննես Երզնկացուն* (Պլուզ) իր «Խրատ հասարակաց քրիստոնէից» աշխատությունը նույն աշխարհիկ ոճով և ոգով գրելու համար:

Գրկ. Հովսեփյան Գ., Ձագավանից ժողովը, «Շողակաթ», Վաղ-պատ, 1913, էջ 22–46:

Արտաշես Ղազարյան

ՁԱԳԱՎԱՆՔ, Գետարգելի Ս. Նշան վանք, ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գյուղից 2 *կմ* հարավ-արևելք, բլրի լանջին: Հիմնադրվել է վաղ միջնադարում, վանքի հնագույն եկեղեցին VII դ. եռախորան, փոքր խաչաձև գմբեթավոր կառույցներից է: Պահպանվել են սրբատաշ տուֆից շինված պատերի ստորին շարքերը: Եկեղեցուն հս-ից և հվ-ից կից են նրա հետ միաժամանակ կառուցված և ընդհանուր գետնախարիսխ ունեցող մատուռներ: 855-ին Ձ-ի սարկավագ Զաքարիան ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս (*Զաքարիա Ա Ձագեցի*): Ձ-ում 1270-ին գումարվել է *Ձագավանի եկեղեցական ժողովը*: Ձ. նշանավոր կրոն. կենտրոն և հայտնի ուխտատեղի է դարձել, երբ 1293-ին *Գրիգոր Է Անավարզեցին* վանքին նվիրել է Գետարգելի ս. Նշանը՝ Հռոմի Սեղբեստրոս պատրիարքի՝ ս. Գրիգոր Լուսավորչին տված Քրիստոսի խաչափայտի մասունքը, որով, ըստ ավանդության, *Պետրոս Ա Գետադարձը* 1022-ին, Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ի ներկայությամբ, Տրապիզոնում *Ջրօրհնեքի* տոնին քաղաքի միջով անցնող գետը կանգնեցրել է (այստեղից էլ՝ Գետադարձ և Գետարգել անունները): Ձ-ում 1293-ին, ս. Նշանը պահելու համար, կառուցել են երկհարկանի գմբեթավոր եկեղեցի, որից պահպանվել է քառակուսի հատակագծով և ուղղանկյուն բեմով առաջին հարկը: XIV դ. սկզբին Ձ-ում գործել է Թադևոս Բոկիկ Ձորավանեցի վարդապետը: XV դ. Գեղարդավանքից Ձ. է տեղափոխվել Սիմեոն Բաբունապետը, որը բարեկարգել է վանքը: 1425-ին Ձ-ում Ստեփանոս գրիչն ընդօրինակել է Հակոբ Ղրիմեցու «Մեկնություն տոմարի» երկը, ապա՝ Սարգիս Ձագավանեցի վարդապետի (1441-ին մասնակցել է Հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատելու արարողությանը) վանահայրության ժամանակ՝ «Քերականություն և բառգիրք»-ը: Ձ. ավերվել է 1679-ի երկրաշարժից, մնալով, սակայն, մինչև XX դ.՝ որպես գործող վանք, ունենալով բազմաթիվ կալվածքներ, ջրաղացներ, Երևանում՝ այգիներ: Գետարգելի ս. Նշանը (ոսկե խաչը) այժմ գտնվում է Էջմիածնում, և մյուռոնօրհնության ժամանակ կաթողիկոսը առաջինը նրանով է օրհնում ս. *Մյուռոնը*: Գետարգելի ս. Նշանի տոնը կատարվում է գարնանը՝ ս. Զատկի հաջորդ կիրակին:

Գրկ. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Սմբատյանց Մ., Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղ-պատ, 1895:

Սարգիս Մխիթարյան
Մուրադ Հասրաթյան

ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆ (codex), գրչի կողմից արտագրված գիրք: Հայ. Ձ. մ-ները բաղկացած են իրար կարված 6, 8, 12 և 16 թերթ ունեցող տետրերից, որոնք կազմի մեջ են ագուցվել և ստացել գրքի տեսք: Գրվել են մագաղաթի և թղթի վրա: Ամենավաղ մագաղաթե Ձ. մ-ի պատառիկները թվագրվում են V դ.: Ամենահին ամբողջական մագաղաթե Ձ. մ. Երևանի Մատենադարանի ձեռ. № 10680, VII դ. «Վեհամոր Ավետարանն» է: Թղթե ամենավաղ Ձ. մ. Մատենադարանի ձեռ. № 2679 ժողովածուն է՝ թվագրված 981: Իսկ ամենաուշ հայերեն Ձ. մ-ները ստեղծվել են XIX դ.:

Հայերեն Ձ. մ-ների մեծ մասը թվագրված և տեղայնացված է հիշատակարանների շնորհիվ. դրանք, որպես կանոն, մատյանի վերջում գրել են գրիչը, ծաղկողը, կազմարարը, պատվիրատուն (ստացողը) կամ նոր ձեռագրատերը:

Ձեռագիրը հայ ժողովրդի համար եղել է սրբություն: Նրա մասին Ձ. մ-ների հիշատակարաններում խոսվում է ինչպես մի թանկագին էակի մասին. այն պահպանել են աչքի լույսի պես, փրկել զավթիչներից, ազատել գերությունից: Հիշատակարաններում անեծք է հղվում նրանց, ովքեր գողանում, վաճառում կամ գրավ են դնում ձեռագիրը (նման հիշատակարաններ հանդիպում են նաև ռոմանական ձեռագրերում): *Սարգիս Պիծակի* 1336-ի «Արքունական Ավետարան»-ի (Մատենադարան, ձեռ. № 5786) հիշատակարաններում ձեռագիրն իր սրբությամբ համեմատվում է *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու հետ, որտեղ այն պահվում էր:

Ըստ միջնադարյան աղբյուրների՝ Ձ. մ-ները ստեղծվել են վանքերին կից գործող գրչակենտրոններում: Մատյանի ստեղծումը բաղկացած էր մի քանի փուլերից. գրչության նյու-

թի պատրաստում, գրչություն, ծաղկում և պատկերազարդում, տեսրերի կապում և կազմում: Գիրքն ընկալվել է որպես բարդ, սակայն միասնական մարմին, որի մեջ համաձայնեցված էին բոլոր տարրերը՝ մատյանի բովանդակությունը, չափը, գրի տեսակն ու մեծությունը, գեղ. հարդարանքի բնույթը, տեքստի հետ մանրանկարների իմաստային և ֆիզիկական հարաբերակցությունը, վերջիններիս և մելանի երանգների համադրությունը, կազմի ընտրությունը:

Կազմը պաշտպանել է մատյանը մաշվելուց ու փչանալուց և որոշել նրա արտաքին տեսքը: Գրված, համարակալված տետրերի «կապը» հագցվել է փայտե տախտակների մեջ, որոնք պատվել են կաշվով, թավիշով կամ փղոսկրե, արծաթե և ոսկե դրվագներով՝ երբեմն զարդարված կիսաթանկարժեք քարերով: Այդ փուլում կիրառվել են դրոշմանկարչություն, դրվագում, հատիկավորում, ֆիլիգրան (ոլորած բարակ մետաղաթել), սևադ, ոսկերչություն ու արծաթագործություն, ինչը վկայում է միջնադարյան Հայաստանի կիրառ. արվեստների բարձր մակարդակի մասին: Երևանի Մատենադարանի գլուխգործոցներից է ձեռ. № 2374՝ «*Էջմիածնի Ավետարան*»-ի փորագրված քանդակազարդ փղոսկրե կազմը (թվագրվում է VI դ. 1-ին կես), որը աշխարհում պահպանված նմանատիպ՝ 5-մասանի, 7 կազմերից բաղկացած և երկփեղկանի բացառիկ կազմանմուշ է: Մետաղե արժեքավոր կազմերից է Մատենադարանի ձեռ. № 7680՝ «Կիլիկյան Ավետարան»-ի 1255-ի պատկերազարդ կազմը՝ դրվագված ոսկեզօծ արծաթով:

Կազմը գրքին ամրացնելու համար որպես ներկապ (փորզաց) օգտագործվել են տարբեր գործվածքների կտորներ, որոնք լավ պահպանվել են ցայսօր և միջնադարյան ջուլհակագործության եզակի օրինակներ են:

Մատյանների առաջին ու վերջին էջերը պահպանելու համար նրանց մեջ ներմուծվել են մի քանի առանձին թերթեր, որոնք կոչվել են պահպանակներ: Երբեմն պահպանակների համար օգտագործվել են ավելի հին Ձ. մ-ների պատառիկներ: Օր., իբրև «Էջմիածնի Ավետարան»-ի պահպանակ մեզ են հասել էջով մեկ արված VI դ. չորս քրիստոսաբանական մանրանկարներ՝ ներկայումս ամենահին պատկերները հայկ. ձեռագրարվեստում:

Հայկ. ձեռագրերի մագաղաթը շատ բարձր որակի է, բաց երանգի, երբեմն ուղղակի սպիտակ, թղթի պես բարակ և փափուկ, երկու երեսը ողորկած, ինչը չի խանգարել ներկը ամուր պահելուն: Հայտնի են մագաղաթի պատրաստման Գլաձորի, Տաթևի և հատկապես Հռոմկլայի արհեստանոցները:

Դեռևս Մեսրոպ Մաշտոցը մեծ ուշադրություն է դարձրել տառերի գեղ. տեսքին: Կորյունի վկայությամբ, տառաձևերի մշակման համար նա հրավիրել է բյուզանդացի անվանի գրիչ Հռոփանոսին, որը և գծագրել է նրանց վերջնական պատկերը: Ըստ երևույթին, նույն V դ. են ձևավորվել երկու հիմն. հայկ. ձեռագիր տառատեսակները՝ երկաթագիրը (մայուսկուլ) և բոլորգիրը (մինուսկուլ)՝ իրենց տարատեսակներով: Մինչև XIII դ. գերիշխել է երկաթագիրը, XIII դարից՝ բոլորգիրը: Ավելի ուշ կազմավորվել են շղագիրը (XI դարից) և նոտրգիրը (XIII դարից): Հայ գրերի բոլոր տեսակները բնորոշվում են տառերի նկարագրի հստակությամբ՝ դրանց բազմաձևության առկայությամբ:

Երկաթագիրը եղել է նաև վիմագիր, ունի կոթողային բնույթ: Քարի վրա գրվել է երկաթե գրոցով, ինչը և պայմանավորել է այս գրի անունը: Երկաթագիրը մեծատառ, խոշոր և անջատ գրատեսակ է: Նրա բոլոր նշանները գրվել են տողի վրա, երկու զուգահեռ գծերի միջև, որոնց սահմաններից գրեթե դուրս չեն գալիս դուրս բերվող տարրերը, բացառապես Փ և Ք տառերի: Ձ. մ-ներում օգտագործվել են երկաթագրի երկու տեսակներ՝ բոլորագիծ երկաթագիր, որը կոչվում է նաև մեծ մեսրոպյան, և ուղղագիծ երկաթագիր, որը կոչվում է նաև միջին մեսրոպյան:

Բոլորագիծ երկաթագրի հաստ հիմն. ուղղահայաց և մագանման օժանդակ գծերը կապվել են իրար սահուն աղեղանման անցումով, ինչը և պայմանավորել է նշանների բոլորագիծ լինելը: Այս գրի տառաձևերը որպես գլխատառեր են ծառայել մյուս բոլոր տառատեսակների համար: Ուղղագիծ երկաթագիրը կազմվել է ուղղագիծ տարրերից, իրար միացված անկյան տակ: Հիմն. գծերը ուղղահայաց չեն տողին, ինչպես բոլորագիծ երկաթագրում, այլ՝ թեքված սուր անկյան տակ:

Բոլորգիրը ստեղծվել է մատյան գրելու համար և ստացել ավելի նուրբ և գրաֆիկ. ձևեր: Չնայած անվանմանը՝ այս գրի տարրերը միանում են իրար սուր անկյան տակ, և նշաններն էլ ունեն անկյունավոր ուրվագիծ: Հիմն. և օժանդակ գծերի հաստությունները իրար չեն հակադրված, ինչպես երկաթագրում, և գրեթե հավասար են: Բոլորգիրը բաղկացած է փոքրատառերից, իրար ավելի մերձ և կապակցված, ունի նոր և ձևափոխված տառանշաններ: Բոլորգիրը «չորստողանի» տառատեսակ է:

ՁԵՌԱԳԻՐ

Տառերի մարմինը պառկած է տողի վրա՝ մտովի անցկացրած երկու զուգահեռների միջև, որոնց սահմաններից վերև և ներքև են ձգվում մինչև երկու այլ մտովի զուգահեռներ դուրս քաշվող տարրերը՝ պոչերը, կեռերը, օղերը, աղեղները, կապերը են: Մատյաններում հանդիպում է երկու տիպի բոլորգիր՝ կիլիկյան և արևելյան (բուն Հայաստանի): Կիլիկյան բոլորգիրն աչքի է ընկնում իր կանոնավորությամբ և հղկվածությամբ՝ ի տարբերություն արևելյան բոլորգրի, որը մոտ է ուղղագիծ երկաթագրին և հանդիպում է նաև ուղիղ գրությամբ: Բոլորգիրը հիմք է դարձել ժամանակակից տպագիր տառատեսակների համար:

Շղագիրը հանդիպում է հիշատակարաններում: Գրվել է ղալամով, որի ծայրը շյուղի նման սրվել է և հնարավորություն ստեղծել տառի բոլոր տարրերը գրել նույն բարակությամբ: Նման է արևելյան ոչ կանոնավոր մանր բոլորգրին, ունի և՛ ուղիղ, և՛ թեք գրություն: Հիմք է հանդիսացել ժամանակակից ձեռագրերի համար:

Նոտրգիրը ծնվել է բոլորգրի և շղագրի խաչաձևումից և ստացել մանրաբաց գրի տառաձևեր:

Հնագույն գրերի օրինակները պահպանվել են կրկնագիր (պալիմպսեստ) մատյաններում՝ նոր տեքստերի տակ, որոնց թվին է պատկանում Մատենադարանի ձեռ. № 7735՝ 986-ի «Սանասարյան Ավետարանը»՝ գրված V դ. տեքստի վրա. պահպանվել են նաև վաղ շրջանի բազմաթիվ պատառիկ մատյաններում (Մատենադարան, ձեռ. №№ 1, 9, 14, 28, 41, 48, 77, 90, 436, 463, 1256, 1261, 1266): Գրչության արվեստի գոհարներ են ձեռ. № 10110՝ IX դ. Գոգարանի, ձեռ. № 3793՝ գրիչ Հովհաննեսի Ավետարանները (1053, բոլորագիծ երկաթագիր), ձեռ. № 275՝ Սմբատ Պատրիկի Ավետարանը (1071–78, ուղղագիծ երկաթագիր), ձեռ. № 10675՝ Թորոս Ռոսլինի «Մալաթիայի Ավետարանը», ձեռ. № 979՝ «Հեթում Բ թագավորի Ճաշոցը» (բոլորգիր), ձեռ. № 4243՝ գրիչ Ստեփանոս Վահկացու Աստվածաշունչը (մանրագույն մարգարտաշար բոլորգիր):

Մատյանի տեքստերը գրվել են բուս. և քիմ. ծագում ունեցող բարձրորակ թանաքներով՝ հիմնականում սև և կարմիր, երբեմն շագանակագույն, կանաչ, կապույտ ու մանուշակագույն, և մինչև այժմ պահպանել են իրենց պայծառությունը: Դրանք տեղադրվել են էջի վրա մեկ, երկու, երբեմն երեք այունակներով, չորս կողմից շրջապատված լուսանցքներով: Արտաքին լուսանցքներն ավելի լայն էին, քան ներքինները, այնպես, ինչպես հաճախ վերին լուսանցքները՝ ստորին լուսանցքներից, որոնք իրենց հերթին ավելի մեծ էին, քան արտաքին լուսանցքները: Ըստ Գրիգոր Տաթևացու, լուսանցքները, շրջանակելով տեքստը, պահպանում էին այն մաշվելուց և հարաբերակցվում խաչի չորս թևերի և Մովսեսի քառանկյուն տախտակների հետ:

Էջի կամ գրքի բացվածքի տեքստային հորինվածքի համար մեծ դեր են ունեցել նախադասությունների և պարբերությունների գլխատառերը, որոնք ստեղծել են որոշակի ռիթմ, տեսողական հատած, ընդմիջարկում՝ նախապատրաստելով ընթերցողին նոր մտքի ընկալմանը: Գլխատառի կամ մեծատառի հասկացությունը հայ գրում հանդես է եկել շատ վաղ, դեռևս երկաթագրում, որի համար որպես մեծատառ օգտագործվել է նույն երկաթագիր նշանը՝ մեծացված չափերով: Այլ գրատեսակների համար գլխատառ են հանդիսացել ոչ թե սեփական՝ մեծացրած տառաձևերը, այլ նույնպես երկաթագրի նշանները:

Մատյանների գրիչները մեծ ուշադրություն են դարձրել գրքերի տարբեր «վերջավորությունների» ձևավորմանը, ինչը հարստացրել է էջի տեքստային հորինվածքը: Տողերի վերջին տառերը անջատվել են բառից և կազմել աջ այունակի ուղղաձիգ եզրը: Տների, տեքստի ինքնուրույն մասերի, Ավետարանների և այլ գրքերի վերջին բառերը գրվել են այունակի մեջտեղում, իսկ ամբողջ վերջամասերին հաճախ տրվել է եռանկյան կամ խաչի տեսք:

Հայերեն Ջ. մ-ներում կիրառվել են տեքստի հատվածավորման (ռուբրիկացիայի, հնում այդպես են կոչվել երկի առանձին մասերի գլուխները, որոնք սովորաբար գրվել են կարմիր ներկով, Հայաստանում առավելապես՝ որդան կարմիրով) բոլոր տեսակները: Սուրբ Գրքի ամեն մի տուն սկսվում է նոր տողից, նրանց գլխատառերը կազմում են այունակների ձախ եզրը կամ էլ դուրս գալով եզրագծից՝ ստեղծում են մի նոր ռիթմ տեքստի հորինվածքում: Մատյանի գլխաբաժանումները՝ հիմնականում եկեղեց. ընթերցվածքները, անջատված են իրարից «կարմիր տողերով», պարբերության առաջին տողը ներս է ընկած, նրա գլխատառը կամ մի քանի սկզբնատառերը կամ ամբողջ տողը իսկապես գրված են կարմիր թանաքով կամ տեքստից տարբերվող մի այլ թանաքով: Շքեղ մատյաններում «կարմիր տողը» կամ նրա գլխատառերը գրված են ոսկով և գունազարդ տառերով: Տիտղոսաթերթի տեքս-

տերը, ինչպես և գլխատառերը, XII դարից գրվել են հատուկ մշակված զարդագրերով՝ կենդանագրով, թռչնագրով, ծաղկագրով, ձկնագրով կամ խճանկարագրով:

Հայերեն Ձ. մ-ների մեծ մասը կազմում են Ավետարանները, որոնք եղել են, ըստ խմբագրության, Քառավետարաններ (բացակայում են բյուզ. խմբագրության Ապրակոս-Ավետարանները, որոնց դերը հայկ. ձեռագրային ավանդույթում նույնպես կատարել են Քառավետարանները՝ հատվածավորման միջոցով): Հիմն. մատյաններից են եղել *Աստվածաշունչը*, Նոր կտակարանը, Սաղմոսարանը, եկեղեց. ծիսական գրքերի ժողովածուն, որի մեջ մտնում էին *Ժամագիրքը, Խորհրդատետր-Պատարագամատույցը, Տոնացույցը, Մաշտոցը, Շարակնոցը*, ավելի ուշ՝ *Ճաշոցը*: Ստվար մաս են կազմում նաև պատմ., փիլ., աստվածաբան., քերակ. երկերը: Կազմվել են Ճառընտիրներ, Հայսմավուրքներ, խառը ժողովածուներ, որոնք ընդգրկում են բժշկ. և աշխարհագր., օդերևութաբան. և աստղաբաշխ., տոմարագիտ. և ալքիմիական ուսումնասիրություններ, եկեղեցու հայրերի և անտիկ հեղինակների գործերի հատվածներ ևն:

Ձ. մ-ները հաճախ պատկերազարդվել են մանրանկարներով: Առավել հարուստ է Ավետարանների դեղ. ձևավորումը: Շքեղ նկարազարդվել են նաև Աստվածաշունչը (կամ նրա հատվածները), *Ճառընտիրը* և Ճաշոցը: Այլ գրքեր ունեն ավելի համեստ հարդարանք՝ կազմված գլխազարդից, զարդագրված վերը նշված գլխատառերով, երբեմն տեքստերի հեղինակների դիմանկարներով և բազմաթիվ ու բազմաբնույթ լուսանցազարդերով: Վերջիններս բնորոշ են միմիայն հայերեն Ձ. մ-ներին:

Հայկ. մանրանկարները մեծ մասամբ պահպանել են ոսկու և ներկերի թարմությունը: Դա պայմանավորված է ներկերի որակով և նկարչական կատարյալ տեխնիկայով: Մանրանկարների համար ներկերը բացել են ջրով, աշխատանքի վերջում փայլեցրել են, ինչպես ոսկին, կամ ծածկել մեղրամոմով, հետո նոր փայլեցրել: Այդ հնարքի շնորհիվ է, որ հայկ. մանրանկարները մինչ օրս չեն խամրել: Մինչև XIII դ. օգտագործել են թերթավոր ոսկին, XIII դարից սկսած՝ թերթավորի հետ մեկտեղ շաղախված, «եփած» ոսկին՝ ներկի ձևով: Ոսկե մասերը երբեմն դրվագել են՝ ստեղծելով նկարի վրա ռելիեֆ, որը մանրանկարին ոսկերչական իրի որակ է հաղորդել:

ՁԵՌՆԱԴՐ.

Հայկ. ներկերը մեծ համբավ են վայելել դեռևս անտիկ ժամանակներից ոչ միայն մանրանկարչության, այլև որմնանկարչության, գորգագործության և ջուլհակագործության համար: Հատկապես գնահատվել են հայկ. մարենան և որդան կարմիրը, որն Արևմուտքում հայտնի էր որպես «հայկական կոչենիլ», իսկ մահմեդ. աշխարհում՝ որպես «քիրմիզ» (կարմիր): Այն ստացվել է միայն Արարատյան դաշտում բազմացող կարմիր որդերից:

Հայ. Ձ. մ-ները ձեռագրարվեստի որակով, նյութի բազմազանությամբ և մեծաքանակությամբ, մանրանկարչության արտահայտչականությամբ և գունագեղությամբ միջնադարյան մշակույթի փայլուն էջերից են: Հայտնի են տասնյակ գրչակենտրոններ և մանրանկարչական դպրոցներ այն կենտրոններին կից, որտեղ արտագրվել ու ծաղկվել են Ձ. մ-ները: Այդ կենտրոնները սփռված են եղել աշխարհով մեկ՝ Հնդկաստանից մինչև Իտալիա, Կամենեց Պոդոլսկից մինչև Բեթղեհեմ: Զնայած մեծ կորուստներին, ներկայումս աշխարհի տարբեր հավաքածուներում պահպանվում են շուրջ 30 հզ. հայկ. Ձ. մ-ներ (տես *Մատենադարան* հոդվածում):

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.1, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Հովսեփյան Գ., Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, Վաղ-պատ, 1913: Առաքելյան Բ., Կազմերի զարդարման արվեստը միջնադարյան Հայաստանում, ԲՄ, № 4, 1958: Խաչերյան Լ. Գ., «Գրչության արվեստի» լեզվական-քերականական տեսությունը Հայաստանում, Ե., 1962: Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973: *Арутюнян А., Краски и чернила по древнеармянским рукописям, Е., 1941; Дурново Л. А., Армянская миниатюра, Е., 1967; Казарян В. О., Манукян С. С., Матенадаран. Армянская рукописная книга 6—14 веков, т. 1, М., 1991;* Der Nersessian S., Études byzantines et arméniennes, t. 1–2, Louvain, 1973.

Սեյրանուշ Մանուկյան

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ, տես *Մատենադարան*:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, Կարգ ձեռնադրության, Կարգ քահանայության, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից: Նշանակում է ձեռք դնել կրոնական աստիճան, կարգ կամ իշխանություն ստացողի գլխին: Ձ-յամբ և օծությամբ եկեղեցուն ծառայության կոչված անձը *Սուրբ Հոգու* շնորհներն ու նվիրապետական կարգ է ստանում եկեղեց. արարողությունները կատարելու, Ավետարանը քարոզելու և ուսուցանելու, ժողովրդին ապաշխարու-

թյան հրավիրելու ու նաև *շնորհ* փոխանցելու: Ձ. շնորհի և իմաստության ստացման խորհուրդն է: Կոչվում է նաև շնորհաբաշխում, պարգևատրություն:

Ձ-յան խորհուրդը հաստատել է Մովսես մարգարեն, և ապա վերահաստատել Հիսուս Քրիստոսը: Նա իր աշակերտներին իշխանություն է տվել քարոզելու, եկեղեցու սպասավորներ կարգելու, բժշկելու, մեղքերի թողություն տալու, *Հաղորդության* և *Մկրտության* խորհուրդները կատարելու, ավետարանելու ևն: Առաքյալներն իրենց հերթին, Հոգեգալստյան օրը, լցվելով Սուրբ Հոգու շնորհներով, նույն այդ իշխանությունը փոխանցել են իրենց անմիջական հաջորդներին: Գործք առաքելոցը վկայում է, թե ինչպես էին առաքյալները եկեղեցիների համար սարկավագներ, երեցներ, եպիսկոպոսներ ձեռնադրում եկեղեցում ծառայելու, Ավետարանը քարոզելու, պաշտամունք կատարելու համար (Գործք **6**.6, **13**.2–3, **14**.22, Ա Տիմ. **4**.14, Բ Տիմ. **1**.6 ևն): Պողոս առաքյալը եփեսացիներին ուղղած իր թղթում ասում է. «Նա շնորհ տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ և ուսուցիչներ» (Եփես. **4**.11):

Ձ-յան խորհրդակատար պաշտոնյան պետք է անպայման լինի եպիսկոպոս, իսկ ձեռնադրվողը (ընծայելը կամ նվիրյալը)՝ Հայ եկեղեցու զավակ և պետք է համապատասխանի կանոնական պայմաններին. դրանք են՝ 1. Ֆիզիկական առողջություն և չափահասություն՝ համաձայն հինկտակարանյան պատվիրանի, որ Աստված տվել էր Մովսես մարգարեին (Ղևտ. **21**.16–18, 21): 2. Մտավոր և բարոյական պատրաստություն: 3. Աստվածային կոչում, այսինքն՝ նվիրյալի ներքին զգացողություն, որ ինքը կոչում ունի քահանայության: 4. Միակամ ընտրություն: 5. Հանձնառություն՝ հետևելու Հայ եկեղեցու ուղղափառ դավանանքին և ս. հայրերի ուսուցումներին՝ միաժամանակ մերժելով բոլոր աղանդավոր. վարդապետություններն ու հերետիկոսությունները: 6. Հանձնառություն՝ ամենօրյա խոսքով և գործով լինել աստվածային ճշմարտության քարոզիչ՝ առաջնորդվել Աստվածաշնչով և Հայ եկեղեցու վարդապետությամբ ու ավանդությամբ:

Ձ-յան խորհուրդը սկսվում է եկեղեցու սպասավորությանը նվիրված դպիրների օրհնությամբ, որոնք ստանում են դպրության չորս աստիճանները՝ դռնապանություն, ընթերցողություն, երգմնեցուցչություն և ջահընկալություն: Բուն Ձ. սկսվում է կիսասարկավագությունից: Սարկավագ կարող է ձեռնադրվել նա, ով ստացել է դպրության այդ աստիճանները: Սարկավագությունը, քահանայությունը և դրանց առնչվող աստիճանները (կուսակրոնության պարագայում) տալիս է եպիսկոպոսը, իսկ եպիսկոպոսի Ձ. կատարում է կաթողիկոսը (տես նաև *Նվիրապետություն*):

Ձ-յան խորհուրդը կատարվում է ընծայելի ընտրությամբ և արժանիքների վկայությամբ, ապա՝ աղոթքով առ Աստված, այնուհետև՝ սուրբգրային համապատասխան հատվածների ընթերցումով, ձեռք դնելով (համաձայն Մովսես մարգարեի և առաքյալների սահմանած կարգի, որոնք այդ ձևով էին եկեղեցու սպասավորներ կարգում. տես Ծննդ. **48**.14, Դ Թագ. **5**.11, Թվեր **27**.18, Մարկ. **10**.16, Գործք **6**.6, **19**.6, Ա Տիմ. **4**.14 ևն) և ապա օծելով, որից հետո հանձնվում են պաշտոնի իրերը (սկիհ, բանալի, բուրվառ, գավազաններ): Արարողության մաս է կազմում ձեռնադրվողի ուղղափառ հավատի խոստովանությունը և աղանդավոր. գաղափարների մերժումը: Նվիրապետ. յուրաքանչյուր կարգ ունի իրեն հատուկ աղոթքներ, որոնցով հայցվում է Սուրբ Հոգու շնորհը ձեռնադրվողի վրա, որպեսզի կարողանա իր պաշտոնը կատարել ավետարանական ուսուցումների և Հայ եկեղեցու սկզբունքների ու ավանդություններին համաձայն: Ձեռնադրությունից հետո տեղի է ունենում *օծման* արարողությունը, և այդ ընթացքում ձեռնադրվողը նոր անուն է ստանում՝ որպես նոր մարդ դառնալու խորհրդանշան: Նվիրապետ. յուրաքանչյուր աստիճան ունի իրեն հատուկ կարգ և Ձ-յան խորհուրդի իրագործման ընթացք: Խորհուրդը միշտ կատարվում է *Պատարագի* ժամանակ, իսկ ձեռնադրիչ եպիսկոպոսը սովորաբար լինում է օրվա պատարագիչը:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.1, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Ձ ե պ ե յ ա ն Ղ., Հայ եկեղեցվո յոթը խորհուրդները, Անթիլիաս, 1988: Ս ա ր գ ս յ ա ն Ս., Հայոց եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 2, 1992:

Արտաշես Ղազարյան

Ղ

ՂԱԶԱՐ Ա ՋԱՀԿԵՑԻ, ճահկեցի (ծ. թ. անհտ, Ջահուկ գավառ – 1751, ամփոփված է Էջմիածնի Ս. Գայանե վանքի գավթում), Ամենայն հայոց կաթողիկոս 1737-ից: Հաջորդել է *Աբրահամ Գ Կրետացուն*: Եղել է հայրապետ. նվիրակ Զմյուռնիայում: Աջակցել է Արմ. Հայաստանից մեծազանգված հայ գյուղացիությանը Երևանի և Նախիջևանի գավառներում վերաբնակեցնելու գործին: Պարսկ. իշխանություններից հալածվել և աքսորվել է Սևանա կղզի: 1747-ին ազատվել և վերահաստատվել է կաթողիկոս. գահին: Կառուցել է Էջմիածնի վանքի Վեհարանը և մի հյուրանոց՝ Ղազարապատը: Երկասիրել է «Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի»-ն (1735)՝ նվիրված Հայ եկեղեցու դավանանքի պաշտպանությանը, և «Գիրք Աղօթից որ կոչի Աստուածաղերս»-ը (1744, 2 հրտ., 1786): Գրել է նաև տաղեր, որոնք մեծ մասամբ ամփոփված են իր «Գիրք Նորաբոյս որ կոչի Երգարան»-ում (1737):

Կաթողիկոս. գահին Ղ. Ա Ջ-ուն հաջորդել է *Մինաս Ա Ակնեցին*:

Գրկ. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղ-պատ, 1873: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Պավել Զորանյան

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ [440/443, գ. Փարպի (Այրարատ նահանգի Արագածոտն գավառ, այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզ) – VI դ. սկիզբ], մատենագիր, պատմիչ: Մեծացել և դաստիարակվել է Հայոց սպարապետ և մարզպան Վահան Մամիկոնյանի մոր՝ Ջվիկ իշխանուհու խնամակալության ներքո: Հիմնապես կրթվել է Գուգարաց բդեշխ Աշուշայի պալատում (այդտեղ էին հավաքվել Մամիկոնյան ու Կամսարական տոհմերի պայազատները), Վահան Մամիկոնյանի քեռու՝ Աղան Արծրունու մոտ, որից և ստացել է «կրօնաւորութեան ձեռնադրութիւն»: Մոտ 465–470-ին ուսանել է Բյուզանդիայում և «լիով զմարգարիտն... ընկալեալ» վերադարձել հայրենիք ու հաստատվել Կամսարականների նախարարական տիրույթ Շիրակում, զբաղվել ուսումնակրթ. գործունեությամբ: Այստեղից մոտ քառասնամյա Ղ. Փ. գնացել է Այունիք և երկու տարի վարել ճգնողական կյանք: 486-ին արդեն մարզպան Վահան Մամիկոնյանը մանկության ընկերոջը բերել է Այունիքից և նշանակել իր կողմից հիմնովին վերակառուցված Վաղարշապատի վանքի առաջնորդ (տես *Էջմիածնի Մայր տաճար*): Ղ. Փ. մարզպանի, նրա եղբայրների, Կամսարական իշխանների հովանավորությամբ և իր բնածին ընդունակությունների շնորհիվ կարճ ժամանակում պայծառացրել է վանքն ու իր ազդու քարոզներով արժանացել ժողովրդի համակրանքին: Սակայն ի դեմս խավարամիտ հոգևորականության՝ հանդիպել է զորեղ հակառակորդների, որոնք, ջանալով ձեռք բերել նույն վանքի առաջնորդության պաշտոնը (նույնիսկ կաշառք առաջարկելով Վահան Մամիկոնյանին) և ձախողվելով, ամեն ինչ արել են Ղ. Փ-ուն մարզպանի մոտ վարկաբեկելու ու վանքից հալածելու համար: Մոտ 490-ին Ղ. Փ. հեռացել է Ամիդ քաղաքը: Այդ-

տեղից գրել է իր հայտնի «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» ինքնապաշտպանական նամակը (բնագիրը մեզ է հասել աղավաղումներով ու բացթողումներով): Վահան Մամիկոնյանը նրան կանչել է իր մոտ, պաշտպանել չարախոսներից և հանձնարարել գրել «Հայոց պատմությունը»:

Ըստ ավանդության՝ Ղ. Փ. թաղված է Փարպիից արլ. գտնվող Ղազարավան գյուղում (աղավաղված ձևը՝ Նազարավան, այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում), իր հիշատակին կառուցված եկեղեցու (դեռևս XIX դ. կանգուն) հվ. ավանդատան մեջ: Մի այլ տարբերակով՝ *Մշո Ս. Առաքելոց վանքում*:

Ղ. Փ. թուղթ-ուղերձում (կոչվել է նաև «Մեղադրութիւն ստախօս աբեղայից») իրեն պաշտպանում է ստախոս աբեղաների մեղադրանքներից: Նրա փոքրիկ առաջաբանը, ըստ Գ. Խալաթյանի՝ գրել է Ղ. Փ-ու աշակերտներից մեկը: Երկը տեղեկություններ է հաղորդում Ղ. Փ-ու կյանքի ու գործունեության, մասամբ Վահան Մամիկոնյանի մասին, կարևոր (թեպետև կցկտուր) տվյալներ մի քանի նշանավոր հեղինակների վերաբերյալ: Թղթի գլխ. նշանակությունն այն է, որ գաղափար է տալիս V դ. 2-րդ կեսին հայ եկեղեց. շրջանակներում գոյություն ունեցող խմբավորումների, նրանց փոխադարձ մեղադրանքների և բախումների մասին: Բանակռիվ է մղվել երկու ուղղության, հավանաբար՝ ասոր. և հուն. դպրոցների միջև: Առաջինը մարմնացրել է հինն ու ավանդականը, իսկ երկրորդը՝ նորն ու առաջադիմականը: Հուն. դպրոցի ներկայացուցիչներն իրենց խորագիտակությամբ, լայն աշխարհայացքով, լեզվական նորամուծություններով, ազատ մտածողությամբ (գուցե և ավելի ազատ նիստ ու կացով) իրենց դեմ են դրդռել հոգևորականության ստվար մասին: Հետևաբար «Թուղթը» խտացված պատկեր է այն մեծ, հավիտենական կռվի, որ բոլոր ժամանակներում մղվել է հնի ու նորի միջև: Ղ. Փ. ինքն այդ կռվի զոհերից է, ուստի մեծ դառնությամբ են հնչում նրա խոսքերը՝ ուղղված թշնամիներին, ինչպես նրա մյուս գինակցի՝ *Մովսես Խորենացու* «Ողբում» նույնպիսի հակառակորդներին հասցեագրված ծանր խոսքերը: Թուղթ-նամակի հեղինակն իր թշնամիների անունները չի տալիս: Նա ընդվզում է հաս. միջավայրում խավարի թագավորության դեմ, որտեղ երկրի արժանավորներն ամբաստանված ու հալածված են, իսկ գողերն ու կաշառակերները տնօրինում են ամեն ինչ: «Թուղթը» ժամանակի տգետ ու նախանձոտ հոգևորականությանը ամբաստանող, անհատի իրավունքները պաշտպանող, միջնադարյան ազատամտությունը արտացոլող կարևոր փաստաթուղթ է: Հետազոտողները բազմիցս նշել են «Թղթի»՝ իբրև հրապարակախոս. գործի, բարձր ճարտասան. արվեստը: Երկն առաջին անգամ (1853-ին, Մոսկվայում) հրատարակել է Մկրտիչ Էմինը՝ «Թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնէից» խորագրով: Աշխարհաբարի է փոխադրել Մ. Նալբանդյանը (Սանկտ Պետերբուրգ, 1868):

Ղ. Փ-ու «Պատմութիւն Հայոց»-ը կոչվում է Երրորդ պատմություն՝ *Ագաթանգեղոսի* և *Փավստոս Բուզանդի* երկերից հետո՝ շարունակելով վերջինիս: Պատմությունը բաղկացած է առաջաբանից և երեք դրվագներից: Առաջաբանում Ղ. Փ., հիշատակելով իր նախորդների երկերի համառոտ բովանդակությունը, արժեքավորում է դրանք, նշում, որ գրավոր աղբյուրներից բացի օգտագործել է նաև ականատեսների պատմածները՝ նախապես ստուգելով ու ճշտելով: Պատմությունն ընդգրկում է մեկ հարյուրամյակ՝ Հայաստանի 387-ի բաժանումից (Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև) մինչև 487-ին ներքին ինքնուրույնության արտոնումն ու սպարապետ Վահան Մամիկոնյանի մարզպան նշանակվելը: Առաջին դրվագում հանգամանորեն պատմագրված են Արշակ Գ-ի և Վռամշապուհի գահակալության տարիների քաղ. իրադարձությունները և Սասանյան Պարսկաստանի պառակտիչ ու դավադիր քաղաքականությունը մինչև Արշակունյաց արքայատոհմի անկումը (428): Այդ դրվագում է ներկայացված նաև *Սահակ Ա Պարթևի* տեսիլքը և նրա մեկնությունը: Այն ավարտվում է Սահակ Ա Պարթևի և *Մեսրոպ Մաշտոցի* մահվան հետ առնչվող դեպքերի նկարագրությամբ: Երկրորդ դրվագը ներկայացնում է Վարդանանց (առաջին կրոն.) պատերազմը, որը համընկնում է *Եղիշեի* «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկասիրության ժամանակաշրջանին և շատ ընդհանրություններ ունի նրա հետ: Երրորդ դրվագը միակ աղբյուրն է Հայոց շուրջ 25-ամյա պատմության: Նյութը Վահանանց (երկրորդ կրոն.) պատերազմն է, պայքարի առաջնորդ և հաջողությամբ պսակող Վահան Մամիկոնյանի կենսագրությունը: Որպես սկզբնաղբյուր ամենաարժեքավորն է, քանզի Ղ. Փ. իր նկարագրած դեպքերի ականատեսն է: Ընդգրկում է 460–480-ական թթ. հայ-պարսկ.

փոխհարաբերությունների և հայոց 482–484-ի հակապարսկ. ապստամբության պատմությունը: Այստեղ հեղինակը նաև բացահայտում է ուրացության կործանիչ հետևանքները: Պատմությունն ավարտվում է Վաղարշապատի եկեղեցում *Հովհաննես Ա Մանդակունու* ատենաբանությամբ՝ արտասանած Վահան Մամիկոնյանի մարզպան նշանակվելու առիթով:

Ղ. Փ-ու հաղորդած տեղեկություններն անգնահատելի աղբյուր են Հայաստանի և հարևան երկրների քաղ. ու սոց-տնտ. կյանքն ուսումնասիրելու համար: Ըստ նրա՝ պատմագրությունը պետք է ենթարկվի խոհեմության ու անաչառության սկզբունքներին, հիմք ունենա ուղղափառ հավատը և, պատմության բարոյական էությունն օգտագործելով, կատարի դաստիարակչ. դեր: Պատմությունը մի կողմից՝ նախախնամության, մյուս կողմից՝ մարդկանց անձնիշխան գործունեության դրսևորումն է: Նա աշխարհիկ տերերի իշխանությունը սահմանափակում է տնտ., քաղ., եկեղեցականինը՝ կրոն. գործունեությամբ: Համաձայն Ղ. Փ-ու՝ ղեկավարը չպետք է բացարձակացնի, գերագնահատի իր իշխանությունն ու հեղինակությունը, նրա և ղեկավարվողի միջև պետք է լինի որոշակի համապատասխանություն և հաղորդակցականություն:

«Պատմութիւն Հայոց»-ն առաջին անգամ տպագրվել է 1793-ին, Վենետիկում (աշխարհաբար՝ 1895-ին, Ալեքսանդրապոլում): Ֆրանս. մասնակի հրատարակվել է 1843-ին, Գ. Գապամաճյանի, ամբողջությամբ՝ 1869-ին, Ս. Կանթարյանի (Կեսարյան) թարգմանությամբ:

Երկ. Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982:

Գրկ. Խալաթյան Գ., Ղազար Փարպեցի եւ գործք նորին, Մ., 1883: Պողարյան Ն., Նորագյուտ հատված Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան», ԲՄ, № 8, 1967: Մուրադյան Պ., Յուզբաշյան Կ., Ղազար Փարպեցու Պատմության նորահայտ պատառիկը, ԲՄ, № 11, 1973: Խրլոպյան Գ., Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Ե., 1978: Մելիք-Բախշյան Ս., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Ե., 1979:

ՂԵՎՈՆԴ Ա ԵՌԱՍՏԵՑԻ [ծ. թ. անհտ, դ. Ե-ռաստ (Առբերանի գավառ) – 548], Ամենայն Հայոց կաթողիկոս 545-ից: Հաջորդել է *Քրիստափոր Ա Տիրառիջցուն*: Ղ. Ա Ե-ու հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդվում:

Կաթողիկոս. գահին Ղ. Ա Ե-ուն հաջորդել է *Ներսես Բ Բագրեվանդցին*:

ՂԵՎՈՆԴ ԵՐԵՑ, սուրբ Ղեվոնդ, Ղեվոնդ Վանանդեցի [ծ. թ. անհտ, ըստ Եղիշեի և Ղազար Փարպեցու՝ դ. Իջևանք (Վանանդ գավառ) – նահ. 454, Պարսկաստանի Ապար նահանգում], V դարի վկա, Հայ եկեղեցու Քահանայից անվանված սրբերից և *Վարդանանց* պատերազմի առաջնորդներից: Նրա անվամբ են նահատակյալ ինը քահանաները (ինքը՝ Ղ. Ե., Հովսեփ կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս Ռշտունյաց, Թաթիկ եպիսկոպոս Բասենի, Մուշե քահանա Աղբակեցի, Արշեն երեց Բագրեվանդցի, Սամվել քահանա, Աբրահամ սարկավագ, Քաջաջ սարկավագ) կոչվել ս. *Ղևոնդյանք*:

Ղ. Ե. պաշտոնավարել է Բագրեվանդ գավառում: Եղել է Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից: Մասնակցել է Շահապիվանի եկեղեց. ժողովին (444): Պարսից արքա Հազկերտ II-ի օրոք Հայ եկեղեցու և քրիստոնեության նկատմամբ ծավալված հալածանքների ժամանակ գլխավորել է հավատացյալ ժողովրդի պայքարը զրադաշտ մոգերի ու մոգպետների դեմ, իսկ Ավարայրի ճակատամարտի (451) ընթացքում, մյուս հավատակիցների ու գործակիցների հետ, ոգեշնչել է հայոց զորքին՝ արիաբար մարտնչելու հավատի թշնամիների դեմ, ինչի համար և արժանացել է «Ավարայրի արծիվ» պատվանունին:

Ավարայրի ճակատամարտից հետո պարսիկները Քահանայից դասին և 37 հայ նախարարների տարել են Տիզբոն, մեղադրել իբրև «կրակապաշտների» և պատերազմի հրահրիչների, բանտարկել Նյուշապուհ քաղաքում, ապա աքսորի ճանապարհին չարչարել, որպեսզի ուրանան Հիսուս Քրիստոսին: Տեսնելով հայ քահանաների անհողդողդ հավատքը և ստանալով վճռական մերժում՝ արքունի պաշտոնյա Դենշապուհը հրամայել է գլխատել նրանց, այդ թվում՝ նաև Ղ. Ե-ին (հավանաբար հուլիսի 25-ին):

Հայ եկեղեցին ս. Ղ. Ե-ի հիշատակը նշում է Բուն Բարեկենդանին նախորդող երեքշաբթի օրը: Ս. Ղևոնդյանց նվիրված «Մանկունք» շարականի մեջ նրան են վերաբերվում հետևյալ տողերը.

«Լուսաւորիչն ամենեցուն Ղեւոնդէի Ս. Վարդապետ

Խոհական մեծ խորհրդով խրատեալ լոյոյ զաշակերտեալն...»:

ՂԵՎՈՆԴ. *Գրկ.* Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1994: Սուրբերու կյանքը, Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ՂԵՎՈՆԴՅԱՆՔ, սուրբ Ղեվոնդյանք, V դարի նահատակ եկեղեցականների խումբ (ինը հոգի): *Տոնացույցի* մեջ հիշվում են Քահանայից անունով: Հայաստանում դրադաշտականության տարածման դեմ պայքարի և Վարդանանց պատերազմի գործուն մասնակիցներ: Ավարայրի ճակատամարտից հետո, 452-ի սկզբին պարսիկները 37 նախարարների հետ նրանց ևս աքսորել են Վրկան (այժմյան Մազանդարան): Նրանք էին. *Ղևոնդ Երեց* Վանանդեցին (որի անունով և կոչվել են Ղ.), Հովսեփ կաթողիկոսը (*Հովսեփ Ա Հողոցմեցի*), Սահակ Ռշտունի եպիսկոպոսը, Մուշեղ Արծրունին (Աղբակից), Արշեն կամ Արսեն երեցը (Բագրեվանդի Եղեգիկ գյուղից), Քաջաջ սարկավագը Ռշտունիքից, Թաթիկ եպիսկոպոսը, Սամվել քահանան և Աբրահամ սարկավագը (երկուսն էլ՝ Այրարատ նահանգի Արած գյուղից): Գերության մեջ են մնացել մինչև 454-ի սկիզբը, երբ քուշանների հետ պատերազմից հետո պարսիկները սաստկացրել են հալածանքները քրիստոնյաների դեմ և մահապատժի դատապարտել գերյալ եկեղեցականներին: Սահակ քահանան և Աբրահամ սարկավագը նահատակվել են Ապար նահանգի (այժմյան Խորասան) Վարդգետ գավառում, 454-ի հուլիսի 7-ին, Թաթիկ եպիսկոպոսը՝ Խուժաստանում, մնացյալ 6-ը՝ Ապար աշխարհում, Նյուշապուհ քաղաքի մոտակայքում, 454-ի հուլիսի 25-ին: Այդ խմբի մեջ հիշատակվում է նաև Նյուշապուհ Պարսից մոգպետը, որը մկրտվել է և նրանց հետ նահատակվել:

Հայ եկեղեցին ս. Ղ-ց հիշատակը տոնում է *Բուն Բարեկենդանին* նախորդող երեքշաբթի օրը:

Գրկ. Յայսմաւուրք, ԿՊ, 1730, 31-ը հուլիսի: Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, ԿՊ, 1912, հ. 1, էջ 392–404: Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1994, գլ. 8: *Святые армянской церкви. Книга I. Мученики. Составитель Верх. архимандрит Езник, Св. Эчмиадзин, 1996.*

Քնարիկ Տեր-Դավթյան

ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ, Արևելյան ուղղափառ եկեղեցիներից: Հիմնադիրը և Ղ. ու. ե-ու հնագույն հոգևոր կենտրոնի՝ *Ալեքսանդրիայի* աթոռի առաջին եպիսկոպոսը Մարկոս ավետարանիչն է (I դ.): Եկեղեցու գլուխը պատրիարքն է, նստավայրը՝ Ալեքսանդրիայից հետո, սկսած XI դարից, Կահիրեում (1968-ին կառուցված Ս. Մարկոս Մայր տաճար): Մինչև XX դ. կեսը Ղ. ու. ե-ուն վարչականորեն ենթակա է եղել դավանակից *Եթովպական ուղղափառ եկեղեցին*, որի եպիսկոպոսապետը պարտադիր պետք է ազգությամբ ղպտի լիներ և ձեռնադրվեր Եգիպտոսում:

Մինչև VII դ. (արաբ. արշավանքներ) Եգիպտոսի եկեղեցին հայտնի էր Տիեզերական հինգ պատրիարքություններից մեկի՝ Ալեքսանդրիայի աթոռ կամ պատրիարքություն անունով: «Ղպտի» անվանումով, որը Եգիպտոս տեղանվան աղճատված ձևն է, արաբները կոչել են հին եգիպտացիների հետևորդներին՝ քրիստոնյա եգիպտացիներին, իսկ «ղպտի» անունը տարածվել է նաև Եգիպտոսի եկեղեցու (Ալեքսանդրիայի աթոռի) վրա:

Ալեքսանդրիայի աթոռը կարևոր դեր է խաղացել *Ընդհանրական եկեղեցու* պատմության մեջ: Ընդհանրական եկեղեցու ամենահռչակավոր հայրերից մի քանիսը եղել են Ալեքսանդրիայի պատրիարքներ: Աթոռի հեղինակությունը բարձրացել է հատկապես IV–V դդ. քրիստոսաբանական մեծ վեճերի և երեք *տիեզերական ժողովների* ժամանակ, երբ Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանությունը հաղթել է և ուղղափառ ճանաչվել տարաբնույթ հերձվածողների և աղանդների դեմ պայքարում: Այդ շրջանի ամենանշանավոր պատրիարքներից էին Պետրոս Ա (293–303), *Աթանաս Ալեքսանդրացին, Կյուրեղ Ալեքսանդրացին, Տիմոթեոս Կուզը,* Դիոսկորոսը (443–458), որոնք հետևողականորեն պայքարել են *արիոսականության* (*Նիկիայի Ա տիեզերական ժողով 325*), մակեդոնականության (*Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381*), *նեստորականության* (*Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431*), *եվտիքականության*, ինչպես նաև *քաղկեդոնականության* դեմ: Մերժելով 451-ի *Քաղկեդոնի ժողովի* վարդապետությունը՝ Ղ. ու. ե. հավատարիմ է մնացել երեք տիեզեր. ժողովների դավանությանը, խզել հաղորդությունը բյուզ. եկեղեցու հետ և դավանակից մյուս եկեղեցիների (այդ թվում՝ Հայ եկեղեցու) հետ կազմել *Արևելյան ուղղափառ եկեղեցիների* ընտանիքը:

XI–XIII դդ., խաչակրաց արշավանքների ժամանակ և հետագա դարերում, Հռոմի կաթոլիկ

եկեղեցին ձգտել է ղպտիների մեջ տարածել կաթոլիկություն. հիմնվել են կաթոլիկ միաբանություններ, եկեղեցիներ, վանքեր, նույնիսկ փորձ է արվել (1438) ստեղծելու երկու եկեղեցիների (ներառյալ Եթովպական եկեղեցին) ունիա, սակայն այդ ճիգերը ոչ մի արդյունքի չեն հանգեցրել: Նման քայլեր են ձեռնարկվել նաև հետագայում (1597, 1824), բայց՝ ապարդյուն: XIX դ. կեսից Եգիպտոս են թափանցել բողոքական միսիոներներ, որոնք տարբեր միջոցներով ձգտել են վերացնել ղպտիների ավանդ. ծիսակատարությունները և իրենց ազդեցության ոլորտի մեջ առնել Ղ. ու. ե.: Այդ նույն շրջանում նման նպատակ է հետապնդել նաև Ռուս ուղղափառ եկեղեցին, սակայն ղպտիներին դավանափոխ անելու բոլոր փորձերը, աննշան բացառությամբ, անհաջողության են մատնվել: Իբրև հակազդեցություն օտար եկեղեցիների այդօրինակ նկրտումների, XIX դ. կեսից սկսվել է Ղ. ու. ե-ու վերազարթոնքի և բարեկարգության շրջանը, որը կապված է Կյուրեղ Դ պատրիարքի (1854–61) անվան հետ: Նա բացել է նոր դպրոցներ, որոնցից մեկը՝ աղջիկների համար, կառուցել է նոր եկեղեցիներ, վերանորոգել հները, վերակենդանացրել է ղպտիերենը, Եգիպտոսում հիմնել երկրորդ տպարանը, որտեղ մեծաքանակ կրոն. գրքեր է տպագրել: Կյուրեղ Դ պատրիարքը բարեկարգել է Ղ. ու. ե-ու ծիսակատարությունը, շարականներն ու երաժշտությունը, կանոնակարգել սարկավագների աշխատանքը ևն: Նա ուղղափառ եկեղեցիների միության եռանդուն ջատագովն էր, մերձեցման փորձեր է կատարել հատկապես Հույն ուղղափառ եկեղեցու հետ: Ղպտիները նրան անվանել են Վերածնդի հայր: Ղ. ու. ե-ու բարեկարգության գործը շարունակել է Կյուրեղ Ե պատրիարքը (1874–1927), որն իր երկարատև գահակալության շրջանում զարկ է տվել հատկապես ուս. և կրթ. գործին:

Ղ. ու. ե-ու պատմության մեջ կարևոր դեր են ունեցել հայ-ղպտ. եկեղեց. և մշակութ. հարաբերությունները, որոնք սկիզբ են առել V դարից: «Մենք նույն հավատքն ունենք և միահամուռ ենք եղել նույնիսկ Քաղկեդոնի ժողովը մերժելու և Արևելյան ուղղափառ եկեղեցիների ընտանիքը կազմելու հարցում»,– շեշտել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանը 1998-ի հունվարին եգիպտահայ թեմ իր հովվական այցելության ժամանակ, Կահիրեի Ս. Մարկոս Մայր տաճարում («Էջմիածին», № 2–3, 1998, էջ 14): VII դ. Երուսաղեմի սրբավայրերի զգալի մասը գտնվել է հայերի, ղպտիների, ասորիների և եթովպացիների տնօրինության տակ: Այժմ Երուսաղեմում ղպտիները ծիսակատարությունները կատարում են հայկ. եկեղեցիներում: Ղպտի մատենագիրները ծանոթ են եղել հայ մատենագրությանը, մասնավորապես՝ Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց»-ին, որից պահպանված արաբ. համառոտ խմբագրությունը թարգմանվել է ղպտիերենից:

1998-ի հունվարին Կահիրեում Գարեգին Ա և Ղ. ու. ե-ու պատրիարք Շենուդա Գ ստորագրել են համատեղ հայտարարություն երկու եկեղեցիների հետագա համագործակցության վերաբերյալ, հաստատել երկու եկեղեցիների «...քրիստոնեական հավատքի միությունը, որը հավատարմորեն պահպանվել է անցյալ բոլոր դարերի ընթացքում և որը հիմնված է Սուրբ Գրքի վրա, վաղ եկեղեցական ավանդության վրա, ինչպես որ բանաձևված է երեք Տիեզերական ժողովների կողմից, որ է Նիկիա (325), Կոստանդնուպոլիս (381) և Եփեսոս (431)» (նույն տեղում, էջ 48–50):

Նվիրապետությունը: Ղ. ու. ե. ունի նվիրապետ. երեք աստիճան՝ եպիսկոպոսություն, քահանայություն և սարկավագություն: Պատրիարքը եպիսկոպոսներից մեկն է, բայց քանի որ մայրաքաղաքի եպիսկոպոսն է և ս. Մարկոսի ժառանգորդը, նա ստանում է նախապատվություն և վայելում ավագ եղբոր իրավունքներ: Սարկավագներին ու քահանաներին ընտրում է իրենց ծուխը, եպիսկոպոսներին՝ իրենց թեմերը, իսկ պատրիարքին՝ ամբողջ ազգը՝ ընդհանուր քվեարկությամբ: Ներկայումս (2000) Ղ. ու. ե-ու պատրիարքն է Շենուդա Գ (1971-ից, Ալեքսանդրիայի 117-րդ պատրիարքը): Ղ. ու. ե-ու բարձրագույն իշխանությունը եպիսկոպոսների ժողովն է, որը որոշումներ ընդունելիս պետք է խորհրդակցի աշխարհիկ առաջնորդների հետ: Եթե ժողովականների ձայները կիսվում են, պատրիարքը ստանում է երկու ձայնի իրավունք: Կան ամուսնացած և կուսակրոն քահանաներ:

Հս. Ամերիկայում գործում է Ղ. ու. ե-ու թեմ: ԱՄՆ-ում գոյություն ունի 51, Կանադայում և Ավստրալիայում՝ 14 ծուխ: Վեց ղպտի համայնքներ կան Անգլիայում և մեկը՝ Իռլանդիայում: 1994-ին Ղ. ու. ե. պաշտոնա-

պես իր իրավասության ներքո ընդունեց Բրիտ. կղզիների փոքրիկ ուղղափառ եկեղեցուն, որը վերանվանվեց Բրիտանական ուղղափառ եկեղեցի: Սակայն վերջինս բավական առանձնացած է Շենուդա Գ պատրիարքի անմիջական իրավասության ներքո գտնվող Բրիտ. կղզիների ղպտի ուղղափառ համայնքներից:

Ղ. ու. ե-ու կարևոր հաստատություններից է վանական կառույցը: Քրիստոնեության վրա ունեցած Ղ. ու. ե-ու ամենավճռորոշ ազդեցությունը վանական կյանքի (տես *Վանականություն*) նկատմամբ որդեգրած նրա բացառիկ դիրքորոշումն է: *Անապատականությունը* սկզբնավորվել է Ղ. ու. ե-ում: Վանական ճգնակեցության առավել երևելի ներկայացուցիչը ս. Անտոն Անապատականի աշակերտ ս. Մակար Մեծն է: Ալեքսանդրիայի պատրիարքների մեծ մասն ընտրվել է ս. Մակարի հետևորդներից, որի համար նա համարվել է պատրիարքների հայր: Ներկայումս Ղ. ու. ե. ունի 12 վանք՝ շուրջ վեց հարյուր վանականներով, և 6 կուսանոց՝ մոտ 300 միանձնուհիներով:

Դավանանքը եվ վարդապետությունը: Ղ. ու. ե-ու դավանանքը հիմնված է երեք տիեզեր. ժողովների դավանության վրա, մերժում է Քաղկեդոնի ժողովը և հավատքի վրա ավելացրած հետագա բոլոր նորահայտ բանաձևումները: Եգիպտական եկեղեցու հայրերի գործուն մասնակցությամբ են Նիկիայի Ա տիեզեր. ժողովում վավերացվել *Հավատո հանգանակը*, մեկ Մկրտությունը (ինչպես մարմնավոր ծնունդն է լինում մեկ անգամ, այնպես էլ՝ հոգևորը), քահանաների ամուսնությունը (այն հիմամբ, որ առաքյալների մեջ կային թե՛ ամուսնացածներ և թե՛ կուսակրոններ) և ս. *Զատիկի* օրը (որը սահմանվեց կատարել հրեական Զատիկից հետո, ապրիլի առաջին շաբաթվա և մայիսի առաջին շաբաթվա միջև. բոլոր եկեղեցիները դրանով առաջնորդվել են մինչև 1582-ը): Հայ եկեղեցու նման Ղ. ու. ե. ևս Մարիամին համարում է մշտնջենական Կույս: Ղպտի հայրերն առաջինն էին, որ Մարիամին անվանեցին Աստվածամայր և Աստվածածին: Տիրամոր Վերափոխման տոնը Ղ. ու. ե. կատարում է օգոստ. 22-ին:

Խորհուրդները եվ ծեսերը: Ղ. ու. ե-ու խորհուրդները յոթն են. 1. Մկրտություն, 2. Դրոշմ (կատարվում է Մկրտությունից անմիջապես հետո), 3. Հաղորդություն (բնորոշ է, որ դրանից հետո ղպտի հավատացյալը ո՛չ երկրպագում է, ո՛չ ծնրադրում, ո՛չ էլ խոնարհվում, որովհետև իր մեջ կրում է Քրիստոսին), 4. Խոստովանություն և Ապաշխարություն (Ղ. ու. ե-ում խոստովանությունը կոչվում է հոգևոր բժշկություն, իսկ խոստովանահայրը՝ հոգևոր բժիշկ), 5. Օծում (Ավագ ուրբաթ օրը, ծեսի ավարտից հետո հավատացյալին օծում է պաշտոնակատար քահանան), 6. Պսակ, 7. Ջեռնադրություն: Առաջին վեց խորհուրդները կատարում են եպիսկոպոսները և քահանաները, իսկ յոթերորդը՝ միայն եպիսկոպոսները:

Ղ. ու. ե-ու ծեսի և արարողությունների մեջ կենտր. տեղ է գրավում Պատարագը: Կիրառվում են Կյուրեղյան (ավանդել է Մարկոս ավետարանիչը, գրի առել ու ամբողջացրել Կյուրեղ Ալեքսանդրացին), Գրիգորյան (գրել է *Գրիգոր Նազիանզացին* IV դ. վերջին), Բարսեղյան (գրել է *Բարսեղ Կեսարացին* IV դ. վերջին) պատարագները: Բարսեղյանը Ղ. ու. ե-ում ամենահաճախ կատարվող պատարագն է: Ղ. ու. ե-ում ընդունված է պատարագ մատուցել հավատացյալների պատվերով՝ ընտանիքի որևէ մահացած անդամի անվան հիշատակության նպատակով: Պատարագ կարող է մատուցվել նաև հարս ու փեսայի համար՝ նախքան նրանց պսակադրությունը, նաև նրանց համար, ովքեր պատրաստվում են վիրահատվել, մեկնել երկարատև ճամփորդության, նոր աշխատանքի անցնել ևն: Նման պատարագները կոչվում են մասնավոր:

Ղ. ու. ե-ում կատարվող արարողություններից են նաև «Յոթ կանոն ժամերը», որ կատարել են անապատական հայրերը III դարից սկսած: Կարգը բաղկացած է յոթ ժամերգությունից, որոնք կատարվում են օրվա որոշակի ժամերին: Դրանցից յուրաքանչյուրն սկսվում է Տերունական աղոթքով, դոհության աղոթքով և ԾԱ սաղմոսով: Ղ. ու. ե-ու պահքերն են. ա. Գալստյան պահքը, որը նախորդում է Սուրբ Ծնունդին (տևում է 43 օր), բ. Մեծ պահքը (55 օր), գ. Երեք օր՝ ի հիշատակ Նինվեի ապաշխարության (Հովնան 3.5–10), դ. Հոգեգալստին հետևող պահք, որը կոչվում է Առաքյալների պահք: Այս պահքը շարժական է՝ կապված ս. Զատկի օրից. ե. Սուրբ Կույսի պահք, որն ավարտվում է Տիրամոր Վերափոխմամբ և տևում 15 օր: Պահքի օրեր են նաև տարվա բոլոր չորեքշաբթի և ուրբաթ օրերը

(բացառությամբ Զատկի և Հոգեգալուստի միջև ընկած հիսուն օրերի):

Ղ. ու. ե-ու կարևոր ծեսերից է Կիակը: Այսպես է կոչվում ղպտիների այն ամիսը, որը վերջանում է հունվ. 8-ին: Ղ. ու. ե-ու հաշվարկով Սուրբ Ծնունդը եղել է Կիակի 29-ին: Այս ամսվա յուրաքանչյուր շաբաթ օր երգվում են աղոթքներ, որոնք հիմնականում նվիրված են Մարիամ Աստվածածնի մեծարմանը:

XII դ. ղպտիերենը դադարել է խոսակց. լեզու լինելուց, ղպտիները դարձել են արաբախոս: Ղպտիերենը մնացել է իբրև գրավոր հաղորդակցման և եկեղեց. ծեսերի լեզու: Այնուհանդերձ, ընդհուպ մինչև XVIII դ., ղպտիերենով գրվել են եկեղեց. հիմներ: Ղպտիական գրականությունը սկզբնավորվել է Եգիպտոսում քրիստոնեության տարածման հետ և հիմնականում զարգացել վանքերում: Ղպտիական առաջին գրավոր հուշարձանները եղել են Հին և Նոր կտակարանների, քրիստոնեական աստվածաբանների երկերի թարգմանությունները հուն-ից: Ղպտիերենով ստեղծվել է վարքագր. հարուստ գրականություն: Լայն ճանաչում են ունեցել ճգնավորների մասին առասպելները: Ուշ միջնադարում երևան են եկել նաև քերական գրողներ, վանքերի և եկեղեցիների պատմությունը արձանագրողներ, որոնց թվում՝ Աբու Սալիհ անունով հայազգի պատմիչը: Ղպտիերենով պահպանված գրականության մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում *պարականոն գրքերը* («Ավետարան Թովմայի», Հովհաննես առաքյալի «Ավետարան առ Եգիպտացիս», «Հայտնություն Պողոս առաքյալի», «Գործք Պետրոս առաքյալի» ևն):

Ճարտարապետությունը և արվեստը: Եկեղեց. ճարտարապետության հիմն. ոճը բազիլիկն է, իսկ սկզբնապես, քրիստոնեության վաղ շրջանում, հեթանոս. տաճարներն էին վերափոխում եկեղեցիների: Ճարտ. կոթողները (եկեղեցիներ, վանքեր, դամբարաններ ևն) սփռված են ողջ Եգիպտոսում՝ Կահիրե, Ալեքսանդրիա, Նեղոս գետի հովիտներ: Պահպանվել են Բաուիտի վանքը (IV դ.), Սպիտակ վանքի մեծ բազիլիկը (440), Կարմիր վանքը (V դ.), Բաղաուատի մի քանի հարյուրի հասնող դամբարանները, որոնք ունեն գմբեթավոր աղոթարաններ (IV–VI դդ.): Ճարտ. կոթողներում առկա են աստվածաշնչյան և ավետարան. թեմաներով վաղ շրջանի որմնանկարներ: Ղպտիների արվեստը նոր ծաղկում է ապրել XVII դ.: Ղպտիական եկեղեցիներում պահպանվել են բազմաթիվ սրբապատկերներ, որոնց զգալի մասի հեղինակը հայազգի Հովհաննես է (Հանա էլ Արմանի) և նրա համագործակիցները՝ որդին՝ Հովսեփը (Կերգեսը), արաբ. նկարիչ Իբրահիմ էլ Նասիխը, Հաջի Դեֆին Մերկերիոսը:

Ուսումնական հաստատություններ: Ղ. ու. ե-ու նշանավոր ուս. հաստատություններից են Աստվածաբանական ճեմարանը, որը վերաբացվել է Կյուրեղ Ե պատրիարքի ջանքերով, և Ղպտիական հետազոտությունների բարձրագույն ինստիտուտը (1954): Աստվածաբանական ճեմարանի մի ճյուղն է Դիդիմուսի դպրանոցը, որտեղ ուսանում են դպիրները: Հին Կահիրեի երկու ամենահին և նշանավոր եկեղեցիների՝ Օրհնյալ Կույսի և Աբու Սերգանի միջև է գտնվում Ղպտիական թանգարանը՝ իր հարուստ գրադարանով: Գրադարան ունեն նաև վանքերը և կուսանոցները: Միջազգ. հռչակ ունի «La Sosiété de l'Archéologie Copte» ընկերությունը (1932), որն զբաղվում է գրքերի հրատարակությամբ, գիտաժողովների կազմակերպմամբ: Կյուրեղ Ե պատրիարքի ժամանակներից Ղ. ու. ե-ում գործել են կիրակնօրյա դպրոցներ, որոնք այժմ տարածված են Ալեքսանդրիայից մինչև Ասուան՝ ընդգրկելով նաև գյուղերը: Դրանք հայտնի են որպես հոգևոր կրթարաններ և գործում են ուրբաթ ու կիրակի օրերին:

Գրկ. Միքայելյան Ն., Նկարիչ Հովհաննես Երուսաղեմացին Եգիպտոսում, ՊԲՀ, 1967, № 2–3: Այրիս Էլմըսրի, Ղպտի եկեղեցի, «Գանձասար», 6, 1996, էջ 587–615: Ղպտի ուղղափառ եկեղեցի, «Էջմիածին», 1999, № 4:

Զավեն արք. Զինչինյան (Եգիպտոս)
Հակոբ Քյոսեյան

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑԻ (1722, Կարինի գավառի Քղի ավան – 1799, ամփոփվել է Էջմիածնի Ս. Գայանե վանքի բակում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1780-ից: Հաջորդել է *Սիմեոն Ա Երևանցուն*: Ուսանել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, աշակերտել Սիմեոն Ա Երևանցուն: 1751-ին ձեռնադրվել է քահանա և նվիրակի պաշտոնով մեկնել Ռումելի: 1763-ին օծվել է եպիսկոպոս և նշանակվել Զմյուռնիայի (Իզմիր) հայոց առաջնորդ: Ղ. Ա Կ. Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանության կողմից իրեն կաթողիկոս ընտրելու մասին տեղյակ է պահել Կ. Պոլսի Զաքարիա Կաղզվանցի պատրիարքին: Վերջինս մերժել է այդ ընտրությու-

նը: Զաքարիա պատրիարքի աքսորից հետո, 1781-ին Հովհաննես Համադանցի պատրիարքն ընդունել է Ղ. Ա Կ-ու ընտրությունը և օսմ. կառավարությունից ձեռք բերել հաստատման հրովարտակ: 1782-ին Ղ. Ա Կ. դիմել է ռուս. հրամանատարությանը՝ հայ ժողովրդին պարսկ. լծից ազատագրելու խնդրանքով: 1797-ին խնդրել է ռուս. Պավել I կայսրին իր հովանավորության տակ վերցնել հայ ժողովրդին և ճանաչել Ս. Էջմիածնի հոգևոր իշխանությունը Ռուսաստանի հայերի նկատմամբ (խնդրանքը բավարարվել է 1798-ի փետր. 26-ի կայսերական հրովարտակով):

Ղ. Ա Կ. ծավալել է շին. գործունեություն, նորոգել է տվել Մայր տաճարը, իսկ նկարիչ Հովնաթան Հովնաթանյանը նկարազարդել է այն:

Կաթողիկոս. գահին Ղ. Ա Կ-ուն հաջորդել է *Դավիթ Ե Էնեգեթցին*:

Երկ. Դիվան Հայոց պատմության. Նոր շարք, գիրք առաջին, հ. 1, Ղուկաս Կարնեցի, աշխատասիր. Վ. Գրիգորյանի, Ե., 1984:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Արթուր Կարապետյան

ՂՈՒԿԱՍ ԼՈՌԵՑԻ, Ղուկաս Հաղպատեցի (XV դ. 80-ական թթ., Հաղպատ – 1561, Արցախ), մատենագիր, մանկավարժ, գրիչ: Դասավանդել է Էջմիածնի (1513–41), ապա Սանահինի դպրոցներում: Ղ. Լ-ու մոտ ուսանելու և վարդապետ. աստիճան ստանալու են եկել Հայաստանի գրեթե բոլոր վայրերից՝ Վանից, Գողթնից, Արցախից, Լիմից, Քաջբերունիքից: Ձեռագրերում հիշատակվում է «տիեզերալույս վարդապետ», «մեծ բաբունի», «քաջ գրամատիկոս, ուղղափառության վարդապետ» և այլ անվանումներով:

Ղ. Լ-ու երկասիրություններից ցայժմ հայտնի է միայն նրա աշակերտներ Հովհաննես Ծարեցու և Թորոս վարդապետի խնդրանքով 1540–50-ական թթ. Էջմիածնում գրված «Քարոզգիրքը»: 40 քարոզներից բաղկացած, ստվարածավալ աշխատությունը հեղինակի ինքնագրով պահպանվում է Մատենադարանում (ձեռ. № 4355): Ղ. Լ-ու քարոզներն ունեցել են մեծ ճանաչում, բազմաթիվ ընդօրինակություններով պահպանվել ավելի քան 50 ձեռագրերում: Քարոզներն սկսվում են աստվածաշնչյան բնաբաններով: Դրանք ունեն մեկնողական, կրոնախրատ. բնույթ, գրված են միջին հայերենով, պարզ, մատչելի ոճով: Քարոզները տոգորված են հայրենասիր., ազգային միաբանության, համերաշխության գաղափարներով: «Քարոզգիրքը» հարուստ շտեմարան է երկրի ներքին կյանքի ուսումնասիրման համար: Այնտեղ շոշափված են սոցիալտնտ., առևտրաարտադրական, դատ ու դատաստանին, հոգևորականությանը, գյուղացիությանը, քաղաքային կյանքին վերաբերող բազմապիսի հարցեր: Օգտագործելով աստվածաշնչյան պատումները՝ քարոզիչը խորհուրդներ, հոգեշահ խրատներ է տվել, հորդորել մարդկանց չհուսալքվել, պահպանել հավատը, ազատության ոգին: Իր խոսքն առավել դյուրըմբռնելի և պատկերավոր դարձնելու համար Ղ. Լ. քարոզներին միահյուսել է առակներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, ժողովրդ. բառ ու բան, նաև գրավոր և բանավոր աղբյուրներից քաղած 24 զրույց:

«Քարոզգիրքը» ունի պատմագր., աղբյուրագիտ. սկզբնաղբյուրի արժեք և իր ուրույն տեղը XVI դ. լուսաբանող գրականության մեջ: Ըստ հիշատակարանային տեղեկությունների, 1517-ին Էջմիածնում Ղ. Լ. գրել է նաև Դավթի սաղմոսների մեկնությունը և նվիրել Լիմ անապատի միաբանությանը: Հեղինակել է նաև դավանաբան. բնույթի վեց գլխից բաղկացած մեկնություն, կատարել ընդօրինակություններ: 1560-ի Հայսմավուրքի մի ընդօրինակության պատվիրատուն և ստացողն է: Հայսմավուրքը գրվել է Այրարատում և ավարտվել Արցախում, 1561-ին:

Գրկ. Ակինյան Ն., Մովսես Գ կաթողիկոս Տաթևացի և յուր ժամանակը, Վնտ., 1936, էջ 373–375: Հարությունյան Է., Ղուկաս Լոռեցին և նրա Քարոզգիրքը, ԲՄ, № 10, 1971:

Էլեոնորա Հարությունյան

Ճ

ՃԱՇՈՑ, Տոնամակ, Տոնանամակ, Հայ առաքելական եկեղեցու ծիսամատյան: Ճ-ի բովանդակությունը *Տերունի տոների* տարեկան տոնակարգի սահմանումն է՝ համապատասխան ընթերցվածներով: Պարունակում է կեսօրվա («ճաշու») ժամերգության ընթերցվածները և երգասացությունները: Ճ-ի նախն. կազմավորումն ավանդաբար կապվում է Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբոր (I դ.) և *Կյուրեղ Երուսաղեմացու* անունների հետ: Ենթադրվում է, որ այլ ծիսամատյանների հետ Ճ. հայերեն է թարգմանվել և կարգավորվել V դ.: Ընթերցվելիք նյութը հիմնականում քաղված է Հին և Նոր կտակարաններից, հատկապես՝ Գործք առաքելոցից, որն ընդմիջարկվել է սկզբ. շրջանում՝ համապատասխան սաղմոսներով և մարգարեական օրհնություններով, իսկ ավելի ուշ՝ նաև շարականներով: Հայտնի են Ճ-ի երուսաղեմյան, մինչվկայասերյան և վկայասերյան տարատեսակները, որոնց բոլորին բնորոշն այն է, որ տոները ամսաթվային չեն, այլ շարժական՝ շաբաթվա օրերով սահմանված (օր., «Զ կիրակի զկնի Հոգեգալստեան», որը նշանակում է՝ Հոգեգալուստի տոնից հետո վեցերորդ կիրակին): Ժամանակի ընթացքում Ճ., մասամբ դավան. նկատառումներով և մասամբ անփութության հետևանքով, ենթարկվել է զանազան փոփոխությունների և այլայլումների, որոնք VIII դ. վերացրել է *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսը: Նա կարգավորել և վերստին հաստատել է Կյուրեղ Երուսաղեմացու սահմանած ընթերցումները: XI դ. *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի ջանքերով Ճ. մուտք է գործել նաև տոմարական տոնակարգը՝ տոների ամսաթվային նշումներով: Նույն շրջանում Տերունի տոների կողքին Ճ-ում իրենց ընթերցվածներով սահմանվել են նոր՝ հայկ. տոներ, նվիրված Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Ա Պարթևին, Թարգմանչաց, Վարդանանց, Ղևոնդյանց, Վահան Գողթնացուն և Հայ եկեղեցու մյուս ս. հայրերին, վկաներին և պատմ. իրադարձություններին, ինչի շնորհիվ ծիսամատյանի դիմագիծն առավել ազգայնացել է: Աստվածաշնչյան ընթերցումներից զատ Ճ-ի մեջ ներառված են տարբեր հատվածներ ինչպես Հայ եկեղեցու հայրերի (Եղիշե՝ աղոթք «Այլակերպության», Զաքարիա Ա Ձագեցի՝ ներբող խաչի «Խաչվերաց», Ներսես հայրապետ՝ աղոթք «Խաղողօրհնեք», Ներսես Լամբրոնացի՝ աղոթք «Հոգեգալուստ», Հովհաննես Երզնկացի Պլուզ՝ խրատ «Ոտնվայի»), այնպես էլ հույն և ասորի հայրերի (Բարսեղ Կեսարացի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Երուսաղեմացի, Եփրեմ Ասորի, Հակոբ Սրճեցի) մատենագր. ժառանգություններից: Ճ-ի հնագույն ձեռագրերը թվագրում են VIII–IX դդ.: Ճ-ները նաև պատկերազարդվել են: Մատենադարանում պահվող Ճ-ներից առանձնանում է «*Հեթում Բ թագավորի Ճաշոցը*» (1286, ձեռ. № 979):

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.2, 1-ին պատկերը:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կպ, 1912: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990, էջ 40–47: Ավդալբեգյան Մ., Գրի-

գոր-Վահրամ Վկայասերի «Տօնամակ» ժողովածուն, ՊԲՀ, 1977, № 4: Renoux Ch., Le Čašoč, Tipicon-Lectionnaire: origines et évolution, “Revue des études arméniennes”, 20, 1986–87, p. 123–151; Le Lectionnaire de Jérusalem en Arménie – Le Čašoč I, Turnhout, 1989 (Patrologia Orientalis, 44, 4); Office du matin et Lectionnaires, “Revue des études arméniennes”, 23, 1992, p. 13–25.

Մայիս Ավդալբեգյան
Հակոբ Քյոսեյան

ՃԱՌ (հուն. *ὁμιλία* – հոմիլիա), մատենագրական տեսակ: V դ. սրան համարժեք է եղել նաև «թարգմանություն» բառը, որ ունեցել է «զրույց», «քարոզ» (տես *Քարոզ*), «բեմասացություն» իմաստը: Այս իմաստով է այն կիրառվել Անկյուրիայի Ա և Լավոդիկեի եկեղեցաժողովների ԺԹ հոդվածներում: Ճ. ունի հրեական ծագում: Սինագոգներում սրբազան մատյաններից օրվա խորհրդին պատշաճող հատվածը ընթերցելուց հետո քարոզիչը պարզ բարոյաբան. զրույցով մեկնաբանել է այդ հատվածը: Խոսքի այդ պարզությունը, որ հատուկ էր նաև վաղ շրջանի քրիստոնյա քարոզիչներին, ժամանակի ընթացքում ենթարկվել է զգալի փոփոխությունների: IV–V դդ. *Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Հովհան Ոսկեբերանի*, Օգոստինոսի, Հիերոնիմոսի, Ամբրոսիոսի գրչի տակ Ճ. վերածվել է հռետորական օրենքներով հղկված մատենագր. տեսակի: Քրիստ. ճառագրության մեջ, ըստ բովանդակության, Ճ. բաժանվում է երկու տեսակի՝ բարոյաբանական և դավանական: Բարոյաբան. Ճ-ի դասական օրինակ է հատկապես Հովհան Ոսկեբերանի՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը (հրտ. 1826), որտեղ իբրև բնաբան՝ մեկնվող հատված, բերված է ավետարանական մի համար, որի յուրաքանչյուր արտահայտությունը՝ նայած իր խորքի, բացատրվում է, իսկ վերջում զետեղված հորդորակը պարունակում է բացատրության բարոյախոս. եզրակացությունը կամ պատգամը: Դավան. ճառագրության առավել ներկայանալի օրինակներ են Աթանաս Ալեքսանդրացու և Գրիգոր Նազիանզացու Ճ-երը, որտեղ նախ բերվում է դաղափար. հակառակորդի տեսակետը, և հետո շարադրվում այդ տեսակետի աստվածաբան. ժխտումը: Արդեն IV դարից սովորություն է դարձել կարող քարոզիչներ չունեցող եկեղեցիներում ընթերցել առավել մեծ հեղինակություն վայելող *եկեղեցու հայրերի* Ճ-երը: 529-ին տեղի ունեցած նահանգային մի եկեղեցաժողովի կանոնի համաձայն, «եթե երեցը հիվանդության պատճառով անկարող է ինքը քարոզելու, ապա սարկավագը պետք է կարդա սուրբ հայրերի ճառերը»:

Հայ իրականությունում տարածված են եղել հատկապես *Գրիգոր Ա Լուսավորչի* անունով հայտնի «Յաճախապատում ճառքը», ինչպես նաև՝ *Հովհաննես Ա Մանդակունու, Եղիշեի, Զաքարիա Ա Զագեցու* և այլոց Ճ-երը, որոնք շարադրված են քրիստոնեական ճառագրության լավագույն ավանդների հետևողությամբ: VII դարից հետո գրի առնված Ճ-երը զետեղվել են մասնավոր ժողովածուների մեջ՝ պատշաճեցվելով եկեղեց. տոնի խորհրդին (տես *Ճառընտիր*):

Գրկ. Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, Ե., 1964, էջ XXII–XXIII: Քենդերյան Հ., Հովհան Մայրագոմեցի, Ե., 1973, էջ 98–103:

Հակոբ Քյոսեյան

ՃԱՌԸՆՏԻՐ, Տոնական (լատ. Homeliaire), *ճառերի* ընտրանի, ժողովածու. բովանդակում է ճառեր, *քարոզներ*, մեկնողական երկերից քաղված առանձին հատվածներ, *աղոթքներ, տեսիլքներ*, վարքեր (տես *Վարքագրություն*), *վկայաբանություններ*, պատմագրական գործերից բերված առանձին հատվածներ, *թղթեր* (նամակներ), կանոններ, զրույցներ ևն: Նախապես կոչվել է Տոնական, քանի որ ամփոփել է համաքրիստ., ինչպես նաև հայ սրբերի վկայաբանությունները՝ համակարգված ըստ քրիստ. տոների: Հետագայում ժողովածուի մեջ ներմուծվել են ճառական միավորներ (այստեղից էլ՝ Ճ. անվանումը): Ճ. հայ միջնադարի ձեռագրական մշակույթի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում: Նյութերի բազմազանությունն ու բովանդակության հարստությունը այն դարձնում են հայագիտության ամենատարբեր մարզերի համար տևապես օգտագործելի և շահեկան մի սկզբնաղբյուր (օր., նշանավոր «*Մշո Ճառընտիրը*», Մատենադարան, ձեռ. № 7729, պարունակում է 327, Փարիզի Ազգ. գրադարանի № 110 ձեռագիրը՝ 233, № 116–118 ձեռագիրը՝ 287 նյութ-միավոր ևն):

Ճ. ժողովածուի կազմավորումը կապվում է *Սողոմոն Մաքենացու* անվան հետ: Առաջին անգամ նրա ջանքերով, 747-ին մեկտեղվել են ճառական բնույթի զանազան նյութ-միավորներ:

Ճ. ժողովածուի նյութերը հիմնականում դասավորված են համաձայն *Տոնացույցի* և պատշաճեցված են տվյալ տոնի խորհրդին՝ այն

մեկնաբանելու կամ տարփողելու նպատակով: Այս առումով Ճ. որոշ չափով նման է *Տոնապատճառ* ժողովածուին: Սակայն, եթե Տոնապատճառի նյութերը, համեմատաբար նույնական լինելով թե՛ բովանդակությամբ և թե՛ հերթագայությամբ, սահմանափակվում են բացառապես տոների պատճառների, շարժառիթների մեկնաբանությամբ և հետապնդում են նեղ, ուսումնագիտ. նպատակներ, ապա Ճ. ժողովածուները, ենթարկվելով դարի պահանջին և հոգևոր շահագրգռություններին, ժամանակի ընթացքում համալրվում են նորանոր ու բազմաբնույթ նյութերով:

Ճ. ժողովածուի նյութերն առհասարակ տարբեր ձեռագրերում ունեն տարբեր կազմ և դասավորություն: Սակայն ընդօրինակման ժամանակով իրար մոտ ձեռագրերում նկատվում է նյութերի և դրանց հերթագայության որոշ նույնություն կամ նմանություն: Այդպիսին է Երևանի Մատենադարանի №№ 7729 (1200–02), 996 (1442), 993 (1456) ձեռագիր Ճ-ների պարագան, որոնցում Հիսուսի ծննդյանը, մկրտությանը, Մարիամ Աստվածածնին և Անտոն Անապատականին նվիրված ճառական միավորները (հոդվածները) լիովին նույնական են: Սակայն մեծ մասամբ այդ նույնականությունը խախտվում է. նույն տոնը ներկայացվում է տարբեր մատենագրական միավորներով: Քիչ չեն և այն դեպքերը, երբ Ճ-ում նույն տոնի տակ զետեղված են լինում մեկից ավելի ճառական միավորներ (ձեռ. № 996, Պետրոս Ալեքսանդրացու և Աբիսողոմ սարկավագի պատմությունն ու վկայաբանությունը, ԻԵ–ԻԷ), իսկ մյուսում (ձեռ. № 993)՝ մեկ միավոր (ԾԲ, որ նույնական է ձեռ. № 996-ի ԻԶ միավորին):

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.2, 2-րդ պատկերը:

Գրկ. Մաթեվոսյան Ա., Ե՞րբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական-Ճառընտիրը, ԲՄ, № 9, 1969: Van Esbroeck M., Zanetti U., Le manuscrit Érévan 993 inventaire des piéces, “Revue des études arméniennes”, t. XII, 1977, p. 123–167; Van Esbroeck M., Description du répertoire de l’homéliaire de Muš (Maténadaran 7729), նույն տեղում, t. XVIII/1–2, 1984, p. 237–280.

Հակոբ Քյոսեյան

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ճգնակեցություն, հասարակությունից առանձնացած որոշակի ապրելաձև, որի նպատակն է զսպել և սահմանափակել մարդկային բնության մարմնավոր մղումներն ու հակումները հանուն հոգևոր և բարոյական կատարելագործման: Ճ. զատորոշվում է *անապատականությունից*: Վերջինս նաև հոգևոր ընդդիմություն է հասարակության մեջ առկա մերժելի երևույթներին, մինչդեռ Ճ. հոգևոր ներանձնական կյանքի մի ճանապարհ է և ենթադրում է հոգևոր մաքրագործմամբ ու կենտրոնացումով հաղորդակցում Աստծո հետ:

Քրիստոնեության մեջ Ճ. երևան է եկել II–III դդ. (Եգիպտոսի անապատներում), երբ շատ քրիստոնյաներ, հետևելով Եղիա մարգարեի և *Հովհաննես Մկրտչի* օրինակին, հրաժարվել են աշխարհիկ կյանքից ու վայելքներից, հեռացել են անապատներ, տրվել ճգնության և աղոթքի: Առաջին քրիստ. ճգնավորները (նշանավոր էին Պողոս Թեբեացին, Անտոն Անապատականը, Պախոմիոսը և ուր.), որոնք նաև առաջին անապատականներն էին, չեն ունեցել նվիրապետ. աստիճաններ, այլ, հովվական և այլ պարտավորություններից զերծ լինելով, ինքնազրկմամբ ձգտել են հասնել բարոյական մաքրության և Աստծո հետ մերձեցման: IV դ. Ճ. տարածում է ստացել նաև Պաղեստինում, Կապադովկիայում, Հայաստանում, ավելի ուշ՝ Եվրոպայում (հատկապես՝ Իտալիայում և Իսպանիայում): Սակայն Ճ-յան խստակրոն կենսակերպը եկեղեցու կյանքում մեծ տարածում չի ստացել, և շուտով ճգնավոր. խմբերը միավորվել են, ստեղծվել են *միաբանություններ*, հաստատվել են *կանոններ* (այդ գործում մեծ դեր են խաղացել հատկապես *Բարսեղ Կեսարացու* վանական կանոնադրությունները), որոնք պարտադիր էին բոլորի համար. բացառվում կամ չէին խրախուսվում ծայրահեղությունները: Հիմնվել են առաջին *վանքերը*, որոնց մեջ աստիճանաբար ներառվել են նաև եկեղեցու ծառայողները՝ կուսակրոն հոգևորականները (տես *Կուսակրոնություն*): Ասկետիկ, խստակրոն Ճ., իր որոշ առանձնահատկությունները պահպանելով հանդերձ, միջին դարերում իր տեղը զիջել է *վանականությանը*: Ճգնավորների համառոտ վարքերը և նրանց հոգեշահ խրատներն ամփոփված են «*Վարք հարանց*» կոչված ժողովածուներում:

Ճ-յան հիմքում ընկած է մարդկային բնության ներքին երկվության գաղափարը: Հոգին և մարմինը համարվում են գոյաբանորեն հակադիր սկզբունքներ, ընդ որում՝ հոգին, ունենալով ավելի բարձր կարգավիճակ, պետք է գերիշխի մարմնի վրա: Ճգնակեցությունը

ՃԳՆԱՎՈՐ. ձգտում է պաշտպանել հոգին մարմ. բնազդներից, հնազանդեցնել մարմինը և այն ենթարկել հոգու կամքին՝ դարձնելով մարմինը հոգու հլու գործիք:

Ճ. բնորոշ է բոլոր զարգացած կրոն. վարդապետություններին, սակայն քրիստոնեության մեջ, ի տարբերություն արլ. կրոնների և մի շարք *աղանդների*, մարմնական բնությունն ինքնին չարիքի պատճառ չի համարվում: Մարմինը նույնպես արարված է Աստծո կողմից և, ըստ այդմ, բարի է իր բնությամբ: Մարմինն ապականվել է՝ ենթարկվելով չարին սոսկ աստվածային *մեղքի* հետևանքով, ուստի ճգնավոր. կյանքի հիմն. նպատակը ոչ այնքան մարմնի արտաքին խոշտանգումն է, որքան մարմնին հատուկ մեղքերի ներքին հաղթահարումը: Քրիստոնեության մեջ Ճ. ինքնանպատակ չէ, այլ՝ միջոց Աստծո անմիջական գերզգայական ճանաչողության և նրա հետ միավորվելու համար: Քրիստ. հոգևոր ավանդույթի մեջ մշակվել է Աստծո հետ վերամիավորմանը նպաստող ճգնակեց. կյանքի մի ճանապարհ, որի արդյունավետությունն արտացոլված է քրիստոնյա բաղում խորհրդազգացների (միստիկների) հոգևոր փորձառությամբ և ներանձնական կյանքով:

Քրիստ. խորհրդապաշտությունը, ինչպես այլ կրոնների խորհրդապաշտ. ուսմունքները, ձգտում է հասնել աստվածային բնության անմիջական հայեցողությանը: Հոգևոր կատարելությանը նպաստող բարոյական նորմերը, ճգնավոր. կենսաձևերը, հայեցողական խոկման հնարները որոշակի ընդհանրություններ ունեն քրիստ. և ոչ քրիստ. խորհրդապաշտություններում: Սակայն քրիստ. խորհրդապաշտությունն ունի իր առանձնահատկությունները, և քրիստոնյա խորհրդազգացների հոգևոր փորձը տարբերվում է այլ կրոնների հետևորդների միստիկ. ընկալումներից: Արլ. կրոններում հնարավոր է համարվում խորհրդապաշտի հոգու նույնացումը բացարձակ Նախապատճառի հետ, և այդ պատկերացումը դալիս է արլ. կրոններին բնորոշ անդեմ աստվածային էության և վերջինիս հետ մարդու հոգու գոյաբան. նույնության գաղափարից: Քրիստոնեությունը, որն Աստծուն ընկալում է իբրև բացարձակ Անձ, իսկ մարդկային հոգին համարում լոկ մի արարած, աղամական մեղսագործությամբ Աստծուց հեռացած և էապես տարբեր իր Արարչից, ժխտում է Աստծո և մարդու հոգու նույնացման հնարավորությունը: Բացի այդ, ոչ քրիստ. խորհրդապաշտության մեջ հիմնականում իշխում է այն համոզմունքը, որ մարդը կարող է բացարձակի հետ միստիկ. միության հասնել իր սեփական հոգևոր ջանքերի շնորհիվ, մինչդեռ քրիստոնյա խորհրդապաշտները հոգու մաքրագործումը և գերզգայական հայեցողությունն անհնարին են համարում առանց աստվածային *շնորհի* աջակցության և օգնության:

Աստծո հետ վերամիավորման ուղին բաժանվում է 3 մասի. դրանք են՝ *ապաշխարությունը*, մաքրագործումը և *Սուրբ Հոգու* շնորհի ընդունումը: Ապաշխարությունը կամավոր հրաժարումն է ամեն տեսակ մեղսավոր խոհերից և հակումներից: Խոստովանական ապաշխարությունը քրիստոնյային մեղքերից ձերբազատվելու հնարավորություն է ընձեռում, իսկ հանցանքների բուն թողությունը նա ստանում է՝ հաղորդվելով Քրիստոսի փրկարար մարմնին և արյանը: Ապաշխարությունն ու հաղորդությունն ազատում են քրիստոնյային մեղքի կապանքներից և մաքրագործում նրա հոգին: Բոլոր մեղքերից և չար խորհուրդներից ձերբազատվելը մաքրագործում է սիրտը և հանդարտեցնում այն: Հանդարտությունը (հուն.՝ *ἡσυχια* – հեսյուքիա) հոգու կատարյալ խաղաղություն է և ներքին լռություն, ինչն անհրաժեշտ է Սուրբ Հոգու շնորհի և Աստծո անեղ փառքի ճառագումներն ընկալելու համար: Միայն սրտի մշտական հանդարտությունը հնարավորություն է ընձեռում աղոթողին կտրվել այս աշխարհից և թափանցել աստվածային գոյի անդրանցական ոլորտը: Ըստ քրիստ. ճգնակեց. ավանդույթի՝ Աստծո հետ մերձեցումը և առ Աստված սերը անհասանելի է առանց *առաքինությունների* (*հավատ*, հույս, սեր, *աղոթք, պահք, ողորմություն* ևն): Ճգնակեց. բարոյականությունը սերտորեն կապված է քրիստ. մարդաբանության և հոգեբանության հետ: Վերջինիս համաձայն, ըստ *Գրիգոր Տաթևացու*, հոգին բաղկացած է 3 մասից՝ բանական, ցասմնական և ցանկական, և դրանցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առաքինությունները, համապատասխանաբար՝ խոհականությունը, արիությունը և ողջախոհությունը: Սրբագործվելով ապաշխարության և առաքինասեր վարքի միջոցով՝ քրիստոնյան արժանանում է Սուրբ Հոգու շնորհին, որ պարգևում է նրան հոգևոր հայեցողական ճանաչողության կարողություն:

Գործնական աստվածապաշտությունը հայոց մեջ, ինչպես ողջ արևելաքրիստ. ավանդությունում, համակված է խորհրդապաշտ. ոգով: Հայաստանում մեծ տարածում ստացած Ճ-յան հետ է կապված հայեցողական աստվածաճանաչողությունը: Մեծագույն հայ ճգնավորներից և խորհրդապաշտներից էին *Գրիգոր Ա Լուսավորիչը, Մեսրոպ Մաշտոցը, Հովհաննես Ա Մանդակունին, Հովհաննես Գ Օձնեցին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին*, Գրիգոր Տաթևացին և այլք:

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Հովհան Մանդակունի, Ճառք, Վնտ., 1836: Գրիգոր Լուսավորիչ, Յաճախապատում Ճառք եւ Աղօթք, Վնտ., 1954: Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Ե., 1985: Հուսիկ եպիսկոպոս, Անապատականներ և վանականություն, Վաղ-պատ, 1906: Աղոթագիրք, Ե., 1992: Սուրբերու կեանքը, [ժող.], Բեյրութ, 1994: *Откровенные рассказы странника духовному отцу, Казань, 1884; Мистическое богословие, Киев, 1991; Зарин С., Аскетизм по православно-христианскому учению, М., 1996.*

Արթուր Մաթևոսյան

«ՃՌԱՔԱՂ», կրոնական, բանասիրական երկշաբաթաթերթ, ապա՝ ամսագիր (1860-ից): Լույս է տեսել 1858–62-ին, Մոսկվայում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Մ. և Զ. Մսերյաններ: Կրել է «Յարգակ և ի չափածոյ բանից հին և նոր մատենագրաց» ենթավերնագիրը: «Ճ.», լինելով հայ հոգևորականության պահպանողական թևի խոսափող, լեզվի, կրոնի, եկեղեցու, լուսավորության հարցերում հակադրվել է «Հյուսիսափայլին», որն արծարծել է Հայ եկեղեցու բարեկարգման, կրոն. հանդուրժողականության, խղճի ազատության, ժողովրդի լուսավորության հարցեր, ճաղկել ազատ մտածողության և նորի հանդեպ թշնամ. վերաբերմունքը: Ամսագիրը, հատկապես 1859–61-ին, տպագրել է հոգևոր գործիչների բազմաթիվ թղթեր, ճառեր, քարոզներ, պատմ. վավերագրեր, հատվածներ Մ. Զամչյանի, Ուխտանես եպիսկոպոսի, Եվսեբիոս Կեսարացու և ուր. գործերից, ակնարկներ՝ նվիրված հայ պատմիչների կյանքին ու գործունեությանը, միջնադարյան տաղեր, կրոն. տոների, ծեսերի մեկնաբանություններ: «Ճ.»-ի խմբագիրների համոզմամբ, «... առավել, քան զամենայն ինչ՝ կրօ՛նն է, որ բարվոքում է՝ որպես զիւրաքանչիւր առանձնական մարդոյ՝ նոյնպէս և զամբողջ ազգի կամ ժողովրդի բարոյական վիճակը»՝ դառնալով «լուսաւորութեան և յառաջադիմութեան» անսպառ աղբյուր («Ճռաքաղ», 1860, № 1, էջ 4):

Գրական բաժնում Մ. Մսերյանը մշտապես հանդես է եկել կրոն. բնույթի բանաստեղծություններով, սաղմոսների մեկնություններով, չափածոյի է վերածել հայկ. առասպելներ, պատմ. որոշ անցքեր: «Ճ.» տպագրել է Ա. Ա-բարատյանի, Սեյադի և այլոց ինքնուրույն գործերը, Զ. Մսերյանի թարգմանությունները, ներկայացրել է Լազարյան ճեմարանի շնորհալի աշակերտների ստեղծագործությունները (Մ. Սադաթյան, Ս. Շահազիզ): Ամսագրի լեզուն հիմնականում գրաբարն էր:

Մարգո Մխիթարյան

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ, *Սուրբ Ծնունդի և Աստվածահայտնության* ու ս. *Զատիկի* նախընթաց երեկոյան կատարվող նախատոնական արարողություն՝ նախատոնակ: Այդպես է կոչվել եկեղեցու կանթեղները վառելու (ճրագ լցնելու կամ կպցնելու) և ներկա հավատացյալ ժողովրդին մոմեր բաժանելու համար:

Անցյալում բոլոր մեծ տոների նախատոնակ երեկոներին կատարվել է Ճ.:

Հայ եկեղեցում ներկայումս միայն վերոհիշյալ երկու տոներից առաջ է կատարվում Ճ., որի ընթացքում, *ժամերգությունից* հետո, ընթերցվում են հատվածներ Սուրբ Գրքից: Ընթերցվում է Դանիելի մարգարեությունը, որին անմիջապես հաջորդում է ս. Պատարագ (ընդ որում, միայն այս երկու նախատոնական պատարագներն են, որ ընդունված է կատարել երեկոյան):

Պատարագից հետո քահանայական թափորը գնում է սեղանատուն՝ նախատոնակն այնտեղ կատարելու: Ընթերցվում է Ավետարանը, երգվում տոնին հատուկ շարականը, ասվում է «պահպանիչն» ու եզրափակիչ շնորհավորական բարեմաղթանքը, ապա սկսվում է ավանդ. ընթրիքը:

Ճ-ի ժող. սովորություններից են՝ միմյանց ավետիս տալը, բանջարեղենի, ձվի և ձկնեղենի ճաշակումը՝ գինու հետ: Ճ-ի երեկոն կոչվել է նաև Խթում, որը կարելի է համարել ուտիքի նախատոնակը:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6-րդ հրտ., Թեհրան, 1999:

Լևոն Սարգսյան

Մ

ՄԱԹՈՒՍԱՂԱ, Մաթուսաղա Սյունեցի, Քերթող (ծ. թ. անհտ – 652), աստվածաբան, փիլիսոփա, բաբունապետ, Սյունիքի եպիսկոպոս (634-ից): Կենսագր. ստույգ տվյալներ մեզ չեն հասել: Կրթությունն ստացել է Սյունյաց վարդապետարանում, որտեղ և դասավանդել է: Եղել է ժամանակի ամենահեղինակավոր դավանաբան վարդապետներից: Ստեփանոս արք. Օրբելյանը նրան անվանել է «մեծ քերթող և անհաղթ փիլիսոփա»: 633-ի *Կարինի ժողովին* մասնակցելու համար Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին և նախարարները Հայոց կաթողիկոս *Եզր Ա Փառաժնակերտցուն* խորհուրդ են տվել որպես գիտուն աստվածաբանների իր հետ տանել Մ-ին և *Հովհան Մայրավանեցուն*՝ հույների հետ դավան. խնդիրներում ճիշտ կողմնորոշվելու համար: Մ., չցանկանալով թողնել վարդապետարանի գործը և պատճառաբանելով տկարությունը, Կարին է ուղարկել իր աշակերտ, Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի եղբորորդի Թեոդորոսին՝ հայոց դավանության մասին Բյուզ. Հերակլ կայսրին ուղղված իր թղթով: Դա Հերակլ կայսրի՝ հայերին ուղարկած դավան. գրի պատասխանն էր: Թղթում, որը զետեղված է Ստեփանոս արք. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ, Մ. հերքել է *եվտիքականությունը, նեստորականությունը, քաղկեդոնականությունը*, անդրադարձել *երևութականության, անապականության* խնդիրներին: Հեղինակը խոսում է «Երդ Երեքսրբենի» («Սուրբ Աստված») սրբասացության մեջ «խաչեցար»-ի հավելման մասին և հիմնավորում այդ հարցում Հայ եկեղեցու ուղղափառությունը: Անդրադառնալով այն մեղադրանքներին, թե Հայ եկեղեցին «Աստված խաչված» և «անմահն խաչված» է ասում, Մ. պատասխանում է, որ այստեղ ոչ մի հերետիկոսություն չկա, քանզի «անչարչարը չարչարվեց չարչարողով, անմահը մեռավ մահկանացուով, այսինքն թե՝ անչարչար Բանն Աստված մեռավ իր մարմնով» (Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն», 1986, էջ 141): Մ. չեշտել է, թե աստվածայինի և մարդկայինի անքակտելի և անճառելի միավորությամբ է, որ ասում ենք «Աստված խաչվեց» կամ «Աստված չարչարվեց», հետևաբար, «ով չի ասում «Աստված խաչված», չի էլ ընդունում Աստծուն Կույսից ծնված, իսկ Կույսին՝ Աստվածածին... քանի որ Հիսուս Քրիստոսը ուրիշ մեկը չէ, Բանն Աստված՝ ուրիշ, այլ՝ նույն և մեկ Աստված՝ ծնված Կույսից, իր աստվածությամբ նույն անչարչարելին, նույն անմահն ու նույն մեռածն իր մարմնով» (նույն տեղում, էջ 142): Մ. Հայ եկեղեցու ուղղափառությունը դավան. տարբեր հարցերում հիմնավորել է Ս. Գրքից վկայակոչումներով և *եկեղեցու հայրերի* գրվածքներից մեջբերումներով:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986:

Արտաշես Ղազարյան

ՄԱԿԱՐ Ա ԹԵՂՈՒՏՅԻ [6.4.1813, գ. Թեղուտ (Բիթլիս նահանգի Բուլանըխ գավառ) – 1891,

Էջմիածին], Ամենայն Հայոց կաթողիկոս 1885-ից: Հաջորդել է *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցուն*: 1828–29-ին, ռուս-թուրք. պատերազմի ժամանակ, ծնողների հետ գաղթել է Արլ. Հայաստան: Սովորել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանում: 1843-ին կարգվել է դպրանոցի տեսուչ, 1849-ին՝ մատենադարանապետ: 1864-ին նշանակվել է Վրաստանի թեմի առաջնորդ, 1876-ին՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ, 1882-ից՝ նաև Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի տեղապահ:

Մ. Ա Թ-ու ջանքերով 1885-ին ցար. արքունիքը վերանայել է իր 1884-ի հունվ. 27-ի «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին» որոշումը, թույլատրել վերաբացել հայկ. դպրոցները, վերականգնել կաթողիկոսի սահմանափակված իրավունքները:

Մ. Ա Թ., շարունակելով *Մովսես Գ Տաթևացի* կաթողիկոսի գործը, ավարտին է հասցրել Էջմիածնի Մայր տաճարի նորոգումը:

Կաթողիկոս. գահին Մ. Ա Թ-ուն հաջորդել է *Մկրտիչ Ա Վանեցին* (Խրիմյան Հայրիկ):

Վարդան Դևրիկյան

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ, ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր գյուղից 3 *կմ* հարավ-արևմուտք, Պայտաթափ լեռան անտառապատ լանջին: Հնագույն եկեղեցին (X–XI դդ.) ունի ներքուստ խաչաձև (բավական խոր թևերով), արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք: Կառուցվել է կարմրավուն կիսամշակ տուֆի խոշոր քարերով (XIII դ. գմբեթը և ծածկը վերակառուցվել են նույն տուֆի սրբատաշ քարով): Եկեղեցու բեմի ճակատը հարդարված է բուս. և երկրաչափ. նուրբ զարդաքանդակներով:

1198-ին վանքի արլ. կողմում Մ-ի վանահայր Հովհաննես Ա-ն կառուցել է ներքուստ խաչաձև (եռաբսիդ, արմ. ուղղանկյուն թևով), արտաքուստ ութանիստ, կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին: Լուսամուտների պսակներն ու խորշերի հովհարաձև մշակված կիսակոնաձև գագաթներն ընդգրկող գոտին զարդարված է թռչունների, առյուծների, վարդյակների, արծվի և վիշապի մենամարտ պատկերող հարթաքանդակներով: Եկեղեցուն հս-ից կից է փոքրիկ, թաղածածկ մատուռ: XII դ. վերջին կառուցվել է Մ-ի հյուսիսային դռները: 1205-ին Բազազ իշխանի որդի Վարդանը կառուցել է Մ-ի գլխ. եկեղեցին՝ մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածքով, Ավագ խորանի երկու կողմերում երկհարկ ավանդատներով (հս-արմ. խորշը հետագայում վերակառուցվել է ավանդատան): Ճակատները (արմ-ից բացի) մշակված են «հայկ. խորշերով»: Ճոխ զարդաձևերով արմ. շքամուտքի ճակատնապատը բազմագույն քարերի շախմատաձև շարվածքով է: Եկեղեցու հվ. պատի լուսամուտի տակ՝ ճանկերում հորթ բռնած արծվի բարձրաքանդակն է, որն ուշագրավ է կատարման մեծ վարպետությամբ: Ինքնատիպ է Ավագ խորանի հարդարանքը. կիսաշրջանաձև պատը զարդարված է 13 գոգավոր խորշերով, բեմի ճակատի ողջ մակերեսը ծածկված է միջնադարյան հայ արվեստի գլուխգործոցների թվին դասվող, ութանկյուն աստղերի և ութանիստ բազմանկյունների մեջ ներառված հարթաքանդակներով՝ երիզված հյուսկեն զարդերով կիսագլանաձև լայն շրջանակով: Ութանկյուն աստղերում քանդակված են հուշկապարիկներ, կենդան. և բուս. չկրկնվող զարդամոտիվներ, աստվածաշնչյան թեմայով («Հովհանը կետի երախում») պատկերաքանդակ ևն: Իսկ ձկան քանդակները (գալարվող ձկներ) իրենց պլաստիկայով և կատարման իրապաշտ. ոճով նմանը չունեն հայկ. քանդակագործ. արվեստում: Աստղերից մեկի վրա կերտված է շին. գործիքները ձեռքին եկեղեցու ճարտարապետի (և, անշուշտ, քանդակագործի) դիմապատկերը և անունը՝ «Երիտասարդ»:

XIII դ. 1-ին քառորդում Վաչե Ամբերդցին (Վաչուտյանների տոհմից) Մ-ի հնագույն եկեղեցուն արմ-ից և գլխ. եկեղեցուն հս-ից կից կառուցել է քառակուսի հատակագծով քառասյուն, կենտրոնակազմ գավիթ:

Արմ. շքամուտքի վրա կան հուշկապարիկի, առյուծի և ցուլի մենամարտ պատկերող դինամիկ բարձրաքանդակներ: Հարուստ է գավթի ներսի հարդարանքը՝ սյունները և որմնասյունները, կամարաղեղները, ութանկյուն երդիկը, առաստաղն ունեն բուս., երկրաչափ. ճոխ զարդաքանդակներ, իսկ կամարների հիմքերին և սյունների խոյակներին կան դրախտահավերի բարձրաքանդակներ: Գավթին և հնագույն եկեղեցուն հս-արլ-ից կից է այժմ ավերակ նշխարատունը (XIII դ.): Ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու, Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզուխաթունը XIII դ. ասեղնագործ նրբահյուս վարագույրներ է նվիրել *Դա-*

ՄԱՅՐ

դիվանքին, Հաղպատի վանքին, Գոշավանքին և Մ-ին: XIII դ. Մ. ստացել է բազմաթիվ նվիրատվություններ (այգիներ, դրամ, զարդեր, ձեռագրեր, խաչեր ևն): Մ-ի հվ. կողմում հյուրատան ավերակներն են, արմ. կողմում՝ խցերի և տնտ. շենքերի հիմնապատեր, վանքի կամարակապ դարպասը, պարսպից դուրս դեպի հս-արլ.՝ աղբյուրի շենքը, դեպի հվ-արմ. և արմ՝. 2 գերեզմանոց: 1970–80-ական թթ. համալիրը նորոգվել է: Մ. իր զարդաքանդակների ինքնատիպությամբ, հարստությամբ և բազմազանությամբ դասվում է *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու, *Բղենո Նորավանքի, Գանձասարի վանքի* շարքին և կարևոր տեղ գրավում հայ արվեստում:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.2, 3-րդ պատկերը:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Սարգսյան Գ., Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 2–5: Կարախանյան Գ., Մակարավանքի քանդակները և նրանց հեղինակը, ՊԲՀ, 1974, № 4: Դիվան հայ վիմագրության, պր. 6, Ե., 1977: Harutunian V., Gandolfo F., Makaravank, V., 1994 (Documenti di architettura armena, 22).

Մուրադ Հասրաթյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*:

ՄԱՅՐԱՎԱՆՔ, ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի մոտ: Հիշատակվում է VII դարից՝ կապված վանահայր *Հովհան Մայրավանեցու* (Մայրագոմեցի) հետ: *Եզր Ա Փառաժնակերտցի* կաթողիկոսը *միակամության* հարցում իրեն ընդդիմացած և Մ. քաշված Հովհան Մայրավանեցուն անարգելու նպատակով վանքն անվանել է «Մայրագոմ», իսկ Հովհանին՝ «Մայրագոմեցի»:

Մայրավանքի Ս. Աստվածածին եկեղեցին (XI–XII դդ.) հվ-արլ-ից

Մ-ի սրբատաշ բազալտից կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին (XI–XII դդ.) մեկ զույգ արմ. մույթերով դմբեթավոր դահլիճ է, խորանի երկու կողմերում երկհարկ ավանդատներով: Բեմի վեմքարի տեղ խաչքար է դրված: Եկեղեցու հվ-արմ. և հս. կողմերում միաբանության շենքերի ավերակներն են:

Գրկ. Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Սարգսյան Գ., Մայրավանք, «Էջմիածին», 1958, № 4:

Մուրադ Հասրաթյան

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 726, հայ-ասորական միացյալ եկեղեցական ժողով: Հրավիրվել է Հայոց կաթողիկոս *Հովհաննես Գ Օձնեցու* և Ասորի Հակոբիկ եկեղեցու առաջնորդ, Անտիոքի Աթանաս պատրիարքի նախաձեռնությամբ: Հայոց կողմից, կաթողիկոսից բացի, ժողովին մասնակցել են 31 եպիսկոպոս և 8 վարդապետ, որոնք ներկայացրել են Հայաստանի արլ. և արմ. հատվածների գրեթե բոլոր թեմերը, իսկ ասորական կողմից՝ պատրիարքը՝ 6 եպիսկոպոսների հետ: Մասնակիցների թվում հիշատակվում են ժամանակի նշանավոր հայ աստվածաբան վարդապետներ *Խոսրովիկ Թարգմանիչը* և *Գրիգորիս Արշարունին*, որոնք մեծապես օգնել են Հայոց կաթողիկոսին դավան. կարևորագույն որոշումներ ընդունելիս: Ժողովի նպատակն էր հարթել երկու Արևելյան եկեղեցիների դավան. տարաձայնությունները, որոնք ծագել էին Հաղբատի եկեղեցուն. աստվածաբաններ Հուլիանոս Հալիկառնասցու և Սևերիոս Անտիոքացու՝ Հիսուսի մարմնի *անապականության* շուրջ ծավալված վեճից: Ըստ XII դ. ասորի ժամանակագիր Միքայել Ասորու, երկու ասորի հոգևորական նամակ են հղել Հովհաննես Գ Օձնեցուն, որտեղ հայերին մեղադրել են Հուլիանոս Հալիկառնասցու ուսմունքին հարելու մեջ: Հայերն էլ իրենց հերթին ասորիներին մեղադրել են Սևերիոս Անտիոքացու ուսմունքին հետևելու մեջ: Նախապես որոշվել էր ժողովը հրավիրել Արծն քաղաքում, սակայն Արմինիայի արաբ կառավարիչը չի թույլատրել ժողովի գումարումն իր իշխանապետության սահմաններից դուրս: Ժողովատեղիի ընտրության հարցում արաբ ոստիկանի միջամտությունը վկայում է, որ հայ-ասոր. դավան. միությունը հովանավորել և թելադրել էր արաբ. խալիֆայությունը, որը նպատակ ուներ

Արևելքի ամենամեծ ուղղափառ եկեղեցիների դավան. միությունն ուղղել ընդդեմ *քաղկեդոնականության* և Բյուզ. կայսրության:

Պահպանվել են Մ. ե. ժ-ի արձանագրությունները հայերեն և ասորերեն, ինչպես նաև ժողովի սահմանած կանոններն ու նզովքները: Ենթադրվում է, որ Հովհաննես Գ Օձնեցին ժողովում կարդացել է *հուլիանոսականների* դեմ ուղղված իր «Ընդդէմ երևութականաց» ճառը:

Մ. ե. ժ. սահմանել է 10 նզովք, որոնք դատապարտել են Հուլիանոս Հալիկառնասցու և Սևերիոս Անտիոքացու ուսմունքներն ու դրանց հետևորդներին, *երևութականությունը*, քաղկեդոնականությունը, մեկ անգամ ևս հաստատել Սուրբ *Երրորդության* ուղղափառ բանաձևումը: Ժողովի որոշումների արդյունքում Հայ և Ասորի Հակոբիկ եկեղեցիների միջև կնքվել է դավան. միություն, որը, սակայն, չի հարատևել: Մ. ե. ժ-ում քննարկվել են նաև ծիս. խնդիրներ: Հայ և Ասորի եկեղեցիների համար սահմանվել է Քրիստոսի ծնունդը տոնել ոչ թե դեկտ. 25-ին, ինչպես՝ քաղկեդոնականները, այլ՝ հունվ. 6-ին, նաև որոշվել է հացն անխմոր և գինին անխառն մատուցել Պատարագի ժամանակ: Հովհաննես Գ Օձնեցու և Աթանաս Անտիոքացու միջև համաձայնություն է ձեռք բերվել երեք հայ հոգևորականների Ասորիք ուղարկելու մասին՝ այնտեղ բնակվող հայ քաղկեդոնականների գործունեությունը կանխելու նպատակով: Հիշատակություն կա նաև, որ Ասորիք ուղարկված հայ հոգևորականները զբաղվել են ասորերենից հայերեն թարգմանություններով:

Մ. ե. ժ. մեծ նշանակություն է ունեցել Հայ եկեղեցու դավան. մի շարք կետերի հստակեցման գործում: Նրա դավան. որոշումներն ամբողջացրել և վերջնական տեսքի են հասցրել Հայ եկեղեցու քրիստոսաբան. համակարգը:

Գրկ. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղ-պատ, 1893: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908:

Մհեր Պապյան

ՄԱՆԱՆԴՅԱՆ Հակոբ Համազասպի (22.11. 1873, Ախալցխա – 4. 2. 1952, Երևան), պատմաբան, բանասեր, աղբյուրագետ: Պրոֆ. (1925), պատմ. գիտ. դոկտոր (1938), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): Գիտ. վաստ. գործիչ (1935): Սկզբ. կրթությունն ստացել է Ախալցխայի Կարապետյան վարժարանում (1880–83), ապա սովորել է Թիֆլիսի 1-ին դասական գիմնազիայում (1883–93), Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի համալսարաններում (1893–97), մասնագիտացել արևելագիտության և լեզվաբանության մեջ: Էքստեռն կարգով ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի արլ. լեզուների ֆակ-ը (1898) և Յուրևի (Դորպատ) համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1909): 1900–05-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1906–1907-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1920-ին՝ Հայաստանի համալսարանում: Եղել է նույն համալսարանի պատմալեզվագր. ֆակ-ի դեկանի պաշտոնակատար, 1921-ին՝ ԵՊՀ ռեկտոր, 1921–23-ին՝ արևելագիտ. և պատմագր. ֆակ-ների դեկան, 1921–1925-ին՝ Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925–31-ին՝ նույն ամբիոնի պրոֆ.:



Հ. Մանանդյան

Մ. հեղինակ է հայ., ռուս., գերմ. լեզուներով գրված շուրջ 150 աշխատությունների՝ նվիրված հայոց հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմ. աշխարհագրությանը, չափագիտությանն ու վիմագրությանը, մշակույթին: Մ. զբաղվել է հուն. իմաստասիր. երկերի հայ. թարգմանությունների (Թեոն Աղեքսանդրացի, Հերմես Ռամեծ), հայոց մատենագիտության, այսպես կոչված՝ *Հունաբան դպրոցի* գործունեության («Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները», 1928), հատկապես *Դավիթ Անհաղթի* իմաստասիր. ժառանգության ուսումնասիրությամբ: «Հունաբան դպրոցը...» աշխատությունում հեղինակն արծարծել է խնդիրներ, որոնք առնչվում են Հայ եկեղեցու և դավանության պատմության կնճռոտ հարցերին (Հունաբան դպրոցի և թարգմանությունների սկզբնավորման, դավան. պայքարին հայոց մասնակցության և Քաղկեդոնի ժողովի մերժման ժամանակի վերաբերյալ՝ կապված *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն» երկի հայերեն թարգմանության թվականի ճշտման

հետ), ինչպես նաև Մովսես Խորենացու և Հովհաննես Ա Մանդակունու անունով «Գիրք թղթոց»-ում պահպանված երկու դավան. գրությունների հեղինակային պատկանելությանը ևն: «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» (1941, ռուս.) աշխատության մեջ Մ. բացահայտել է հայոց գրերի պատմության հետ կապված մի շարք խնդիրներ և հանգել այն եզրակացության, որ դրանք ստեղծվել են 392–393-ի ընթացքում:

Մ. բազմաթիվ ուսումնասիրություններում անդրադարձել է Հայ եկեղեցու պատմությանը և մատնանշել նրա կարևոր դերը հայ ժողովրդի հոգևոր, մշակութ. ու քաղ. կյանքում: Մասնավորապես քննարկման առարկա է դարձրել հին հուն. բնափիլ. և աստվածաբան. գրակ-յան հայերեն թարգմանությունների հանգամանքները, ինչպես, օր., «Գրիգոր Նազիանզացու ճառերի Նոնոսի մեկնությունների հին հայերեն թարգմանությունը» (1903, գերմ.), «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» (1904), «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, ընծայեալ Էլիասի Իմաստասիրի» (1911) և այլ ուսումնասիրություններ, ցույց տվել, որ հետաքրքրությունը դեպի անտիկ փիլիսոփայությունը ընդլայնել է հայերի մտահորիզոնը, ձևափոխել նրանց կրոն. մտածողության բացառիկությունը: Մ. ուսումնասիրություններ է կատարել քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու ժամանակի վերաբերյալ և տեսակետ հայտնել, թե Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն է հռչակվել միայն Մաքսիմիանոս կայսրի մահից հետո, հավանաբար՝ 314–316-ին: Քրիստոնեությունը պետ. կրոն ընդունելը համարել է քաղ. կարևորագույն գործոն՝ պարսիկների համաձուլողական քաղաքականության դեմ պայքարելու և զրադաշտականությունից խուսափելու միջոց:

1903-ին Հ. Աճառյանի հեղինակակցությամբ հրատարակել է «Հայոց նոր վկաները» վկայաբան. ժողովածուն, որտեղ ընդգրկված են 1155–1843-ի ընթացքում դավանանքի համար նահատակվածներին նվիրված պատմ. ու գեղ. ստեղծագործություններ՝ ձեռագրերի բաղդատությամբ, անհրաժեշտ ծանոթագրություններով:

Երկ. Երկ., հ. 1–6, Ե., 1977–85:

Գրկ. Բաբայան Լ., Հակոբյան Վ., Հակոբ Մանանդյան, Ե., 1974: Հակոբ Մանանդյան, Ե., 1981 (Կենսամատենագիտություն, կազմ. Պ. Հովհաննիսյան):

Պետրոս Հովհաննիսյան

ՄԱՆԵ, սուրբ Մանի (վախճ. 323), սուրբ կույս, տոնելի ճգնավորուհի: Ս. *Հռիփսիմյանց կույսերից՝ Նունեի* ընկերուհին: Մ. Հռոմից Հայաստան մեկնող սրբուհիների խմբի հետ չի հասել Վաղարշապատ, այլ առանձնացել է Եկեղյաց գավառի Սեպուհ լեռան մի այրում և երկար տարիներ ճգնել այնտեղ: Ըստ ավանդության, *Գրիգոր Ա Լուսավորիչն* է հողին հանձնել Մ-ի մարմինը և դրանից հետո մնացել նույն՝ Մանէայ (Մանյա) այրում և ճգնությամբ կրոնավորել:

Հայ եկեղեցին ս. Մ-ի տոնը նշում է Նունե կույսի հիշատակի հետ միասին, Ս. Էջմիածնի տոնին (Տոն Կաթողիկե սրբոյ Էջմիածնի) հաջորդող երեքշաբթի օրը:

Գրկ. Մովսես Խորենացի, Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց..., տես Մատենագրութիւնք, Վնտ., 1865, էջ 300: Նույնի, Հայոց պատմություն, Ե., 1997: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901, էջ 105: Ավգերյան Մ., Լիակատար վարք եւ վկայաբանութիւն..., հ. 3, Վնտ., 1812, էջ 130–140, 250: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Քնարիկ Տեր-Դավթյան

ՄԱՆԻՔԵՈՒԹՅՈՒՆ, III դարում Սասանյան Իրանում ծագած կրոն: Հիմնադիրն է Մանին՝ ծնված Հվ. Միջագետքում, 216-ին: Որդին էր Արշակունի իշխան Պատիկի (Պատակ), մոր անունը հավանաբար Մարիամ էր, ինչը վկայում է նրա հրեադավան կամ քրիստոնյա լինելը:

Մանին իր նոր կրոնի քարոզչությունն սկսել է Սասանյան արքա Շապուհ I-ի օրոք (240–271): Սկզբ. շրջանում վայելել է արքայի հովանավորությունը, բայց հետագայում, երբ պարզվել է, որ նոր կրոնը վտանգ է ներկայացնում զրադաշտականության համար, Վահրամ I արքան նրան մահապատժի է ենթարկել:

Մ. շուտով տարածվել է Հռոմ. կայսրության սահմաններում, Մերձ. Արևելքում, հասել մինչև Չինաստան: VIII դ. վերջին Մ. դարձել է ույղուրական խաքանության պետ. կրոնը: Մանիքեական գրություններ հայտնաբերվել են Հս. Աֆրիկայում, Ֆայյումում և Հս-Արմ. Թուրքեստանում: Մանիի գլխ. գրվածքներն են «Գաղտնիքների գիրքը», «Պատվիրանների գիրք ունկնդիրների համար», «Կենդանացուցիչ գիրքը» ևն:

Մ. եղել է դուալիստական ուսմունք, ներկայացրել Լույսի և Խավարի՝ որպես բնության հիմն. ուժերի միջև շարունակ ընթացող պայքարը, հետևաբար և բարոյական սկզբունքների՝ Բարու և Չարի պայքարը: Աղանդների մեջ դուալիզմը առաջ էլ կար, բայց միայն Մանիի միջոցով է այն համակարգվել: Հետագայում Մ. իր վրա է կրել արևմտյան ազդեցությունը (*գնոստիցիզմի* և հրեա-քրիստոնեական): Հին գնոստիկյան համակարգերը՝ մարկիոնականությունը, բասիլիդականությունը, բարդածայնականությունը և գնոստիկականության այլ մնացորդները, հետագայում վերջնականապես լուծվել են մանիքեական կրոնի մեջ՝ այնտեղ գտնելով իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Մ-յան համաձայն, տիեզերքը, ինչպես նաև մարդը, իրենցից ներկայացնում են մթին և լուսավոր տարրերի մի խառնուրդ: Տիեզերքի պատմությունը բաժանվում է երեք շրջանների. անցյալ, երբ Հոգին դեռևս չէր խառնված նյութի հետ, ներկա, երբ այդ երկու նախասկիզբները խառնվել են իրար, և առաջացել է լարվածություն ու բախում, և ապագա, երբ Չարը (Խավարը) և Բարին (Լույսը) բաժանված են երկու տարբեր գոտիների: Երկու նախասկիզբներից յուրաքանչյուրն ունի իր թագավորը՝ Հայրը՝ Լույսի, և Իշխանը՝ Խավարի: Խավարի իշխանը շրջապատված է դիվային ուժերով այն դեպքում, երբ Լույսը ուղարկում է իր աստվածային ճառագայթները: Մարդը սատանայի իշխանությունից ազատագրվելու համար պետք է մաքրվի չարի տարրերից, այն է՝ նյութական նախասկզբից: Աստված մարդուն ղեկավարելու համար ուղարկում է ուսուցիչներ՝ «Լուսո առաքյալներ». Բուդդային՝ Հնդկաստան, Զրադաշտին՝ Պարսկաստան, Քրիստոսին՝ Արևմուտք, իսկ Մանիին՝ Բաբելոնիա: Մանին հենց այն Մխիթարիչ Հոգին է (Պարակլետոս), որին Քրիստոսը խոստացավ աշխարհ ուղարկել. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի...» (Հովհ. 14.26):

Մանին իր նամակներում իրեն անվանել է «Հիսուս Քրիստոսի առաքյալ», որ եզրափակում և պսակում է «Լուսո առաքյալների» շարքը՝ գիտակցաբար ստեղծելով Արևելքը Արևմուտքի հետ միավորող համապարփակ համաշխարհային մի կրոն:

Մ-յան բարոյախոսությունը պահանջել է ճգնական կյանք՝ խավարի տարրերից հեռու մնալու և լուսավորների հետ հարաբերության մեջ մտնելու համար: Իսկական մանիքեցին չպետք է ունենար սեփականություն, ընտանիք և տուն, պետք է հրաժարվեր ամուսնությունից, գինուց, մսից, աշխարհիկ բոլոր վայելքներից: Նա պետք է բարձր կանգնած լիներ ամեն զգայականությունից: Մանիի հետևորդներից պահանջվել է խիստ պահեցողություն, աղոթքի կանոնավոր ժամեր: Բայց քանի որ այդքան խիստ ճգնավորությունը և կատարյալ իմացության ձեռքբերումը հասանելի էր միայն քչերին, այդ պատճառով մանիքեցիները բաժանվել են երկու դասի՝ «ընտրյալների» կամ «կատարյալների» կրոնը վարդապետող քարոզիչների, և «ունկնդիրների»: Վերջիններս կարող էին ունենալ տուն, ընտանիք, մասնագիտություն և սեփականություն, բայց պարտավոր էին օթևան տալ «կատարյալներին», հոգալ նրաց մասին:

Մանին ուներ 12 աշակերտ՝ Քրիստոսի առաքյալների թվին հավասար, որ մանիքեցիներն ընտրել էին «կատարյալների» միջից և կոչել «ուսուցիչներ», իսկ 13-րդին անվանել նրանց «Գլուխը»: «Ուսուցիչները» նշանակել են «վերադիտողներ» թվով 72 հոգու, Քրիստոսի 72 աշակերտների թվով, վերջիններս էլ նշանակել են «երեցներ» (360 հոգու):

Մանիքեցիները մերժել են մկրտության խորհուրդը, վարդապետել, որ զոհ մատուցելով և ծեսերով հնարավոր չէ փրկության հասնել, այլ՝ միայն աղոթքով: Նրանք ամբողջ օրվա ընթացքում աղոթել են Արեգակին, գիշերը՝ Լուսնին, եթե այն երևում էր: Մովսիսականությանը խոր ատելությամբ վերաբերվելով՝ մերժել են Հին կտակարանը, համարել, որ «Մովսեսին Օրենքը տվող և մարգարեների բերանով խոսող աստվածը, իսկական աստված չէ, այլ Խավարի տերը» (այսինքն՝ սատանան): Նոր կտակարանի գրքերը համարելով խեղաթյուրված՝ նրանք սրբագրել են դրանք, ընդունել միայն մի քանի պարականոն գրքեր, ինչպես՝ Թովմայի, Փիլիպպոսի, Պետրոսի, 12 առաքյալների ավետարանները, «Տիրոջ մանկությունը» խորագիրը կրող գիրքը ևն:

Մանիքեցիների նկատմամբ հալածանքները, որ սկիզբ են առել դեռևս III դ. 2-րդ կեսին Իրանում, չեն խանգարել այդ կրոնի լայն տարածմանը նաև Հռոմ. կայսրության սահմաններում դեռևս Դիոկղետիանոսի և Կոստան-

դին Մեծի ժամանակ: IV դ. վերջին և V դ. սկզբին մանիքեցիների դեմ ուղղված հատուկ օրենքներ են ընդունվել:

Քրիստոնեական աշխարհում Մ. մեծ ազդեցություն է ունեցել միջնադարյան զանազան աղանդների վրա, ինչպիսիք են *մծղնեությունը, պավլիկյանները, թոնդրակեցիները,* բոգոմիլները ևն: Այդ մասին և նրանց դաղափարախոսությունը քննադատող բազմաթիվ երկեր են գրվել (Պետրոս Սիկիլիացի, Պետրոս Վանական, Փոտ պատրիարք, Եվթիմիոս Ակմոնացի և ուր.): Փոտ պատրիարքի՝ պավլիկյանների դեմ գրված գիրքը վերնագրված է «Մանիքեցիների վերածլման մասին»:

Թեև ապացույց չկա Հայաստանում Մ-յան տարածված լինելու մասին, սակայն նրա դաղափարներն այստեղ օտարոտի չէին: Մանիի մասին խոսել է *Եղնիկ Կողբացին* իր «Եղծ աղանդոց» գրքում: Միջնադարյան հայ հեղինակները, անդրադառնալով մանիքեցիներին, ոչ միայն քննադատել են նրանց վարդապետությունը, այլև հետագայում հանդես եկած և Հայաստանում տարածված քրիստ. աղանդները՝ պավլիկյան, թոնդրակյան, համարել մանիքեցիների հետնորդներ: *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին* թոնդրակեցիներին համարել է մանիքեցիների մնացորդներ («մնացելոցն ի նորոց Մանիքեցւոցն», «Մանիքեցւոց նորոյ թոնդրակեացն»), մանիքեցիների աշակերտներ («որք ի մանիքեցւոցն ուսեալք անուանելոցն թոնդրակեցիք»):

«Մանիքեցի» հորջորջումը դարձել է անվանարկող ածական: Բյուզ. Հուստինիանոս I կայսրը (527–565) այդպես է անվանել իր քաղաքական հակառակորդներին, թեև նրանք մանիքեցիների հետ ոչ մի առնչություն չեն ունեցել:

Մ. բուդդայականության, զրադաշտականության, հունական մշակույթի և քրիստոնեության նպատակադրված համադրությունն էր: Այստեղից էլ այն սուր վեճերը, թե այդ կրոններից ու տարրերից որ մեկը կարելի է ընդունել որպես ելակետային և կառուցվածքային: Մինչև XIX դ. Մ. համարվել է քրիստոնեական աղանդ: Իրանագետները պաշտպանել են Մ-յան արևելյան ծագումը: XX դ. կեսից, նոր աղբյուրների հայտնագործմամբ՝ Մ-յան քրիստոնեական դաղափարներն է՛լ ավելի ցցուն են դարձել: Բայց, հակառակ դրան, այն բնորոշվում է ոչ թե որպես քրիստոնեական աղանդ, այլ՝ յուրատեսակ կրոն, որը մրցակցության մեջ էր քրիստոնեության հետ:

Գրկ. Մելիք-Բախչյան Ստ., Պավլիկյան շարժումը Հայաստանում, Ե., 1953: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարդացման պատմությունից, Ե., 1968, էջ 91–106: Բարթիկյան Հ., Աղանդավորական շարժումները Հայաստանում ըստ միջնադարի հայ և օտար հեղինակների (4–5-րդ դդ.), ԼՀԳ, 1984, № 10: *Кац А., Манихейство в Римской империи по данным Actoc Archelai, "Вестник Древней истории", 1955, № 3; Бартикян Р., Источники для изучения истории павликианского движения, Е., 1961;* Burkitt F., The Religion of the Manichees, Camb., 1925; Ort L., Mani. A Religio-Historical Description of his Personality, Leiden, 1967; Puech H. G., Le Manicheisme: son fondateur, sa doctrine, P., 1967.

Հրաչ Բարթիկյան

ՄԱՆՎԵԼ (Ստեփանոս) ԿՅՈՒՄՈՒՇԽԱՆԵՑԻ, Գյումուշխանեցի, Շահինյան, Ալթունյան [1.1.1768, Գյումուշխանե – 4.12.1843, Հին Ղրիմ (թաղված է հայոց Ս. Խաչ վանքի բակում)], մատենագիր, հասարակական գործիչ: Կրթությունն ստացել է Գյումուշխանեում, ապա՝ Կարինում: Աշակերտել է Ամասիայի առաջնորդ Հովհաննես արք. Սեբաստացուն, որի «սրբազնագործ աջովն» էլ 1796-ին ձեռնադրվել է աբեղա, ապա՝ վարդապետ: Հովհաննես արք. Սեբաստացու մահից (1797) հետո մեկնել է Կ.Պոլիս, որտեղ նրան սիրով ընդունել է պատրիարք Զաքարիա Կաղզվանցին: Վերջինիս մահից հետո ծառայության է անցել նորընտիր պատրիարք Դանիել Սուրմառեցու մոտ: Ամենայն հայոց կաթողիկոս *Ղուկաս Ա Կարնեցու* մահից հետո կաթողիկոս է ընտրվել Դանիել Սուրմառեցին (*Դանիել Ա Սուրմառեցի*): Սակայն ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ *Արղությանը*, ռուս. կառավարության օժանդակությամբ, հարկադրել է Բարձր դռանը չեղյալ հայտարարել Դանիել Սուրմառեցու կաթողիկոսությունը հավաստող ֆարմանը, վերջինս աքսորվել է Թենեդոս կղզի. կաթողիկոս է հաստատվել Հովսեփ Արղությանը: Մ. Կ. ուղեկցել և ինն ամիս շարունակ աքսորում սպասավորել է Դանիել Ա Սուրմառեցուն: Հովսեփ Արղությանը էջմիածին չհասած՝ հանկարծամահ է եղել: Կաթողիկոս է ընտրվել *Դավիթ Ե Էնեգեթցին*: 1802-ին Մ. Կ. մեկնել է Սանկտ Պետերբուրգ, որտեղ ռուսահայոց թեմի առաջնորդն էր Եփրեմ արք. Ջորագեղցին: Լազարյանների աջակցությամբ և նրանց ջանքերով Ռուսաց ցարը և կառավարությունը հակվել են

Դանիել Ա Սուրմառեցու կողմը: 1804-ին Եփրեմ արք. Ջորագեղցին Մ. Կ-ուն կարգել է Գրիգորիուպոլիս հայաբնակ քաղաքի առաջնորդական հաջորդ: Դանիել Ա Սուրմառեցու մահից հետո կաթողիկոս է ընտրվել *Եփրեմ Ա Ջորագեղցին*: Նա Մ. Կ-ու հետ ներկայացել է կայսրին, որը Մ. Կ-ուն պարգևատրել է ադամանդազարդ խաչով: Վերադառնալով Գրիգորիուպոլիս՝ Մ. Կ. բացել է ուսումնարան, կառուցել առաջնորդարան: Ռուսահայոց թեմի նորընտիր առաջնորդ Հովհ. արք. Գառնակերյանի հրամանով նշանակվել է Ղրիմի Ս. Խաչ վանքի վանահայր՝ գաղթական բուլղարացիների խլած վանքապատկան հողերը հետ վերցնելու հանձնարարականով: Տեղափոխվելով Ս. Խաչ վանք՝ նա բարեկարգել է վանքը, 15 տարի անդուլ պայքարից հետո հետ վերցրել խլված հողերը, Ղարասուբազար քաղաքում դպրոց բացել, 1819-ին իր ուղթ աշակերտներին ուղարկել Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում ուսանելու, միաժամանակ ճեմարանին նվիրաբերել 62 ընտիր ձեռագիր մատյան: 1827-ին Ներսես Աշտարակեցու հրավերով եկել է Էջմիածին, նշանակվել վանական կառավարության և բարձրագույն խորհրդարանի՝ Սինոդի անդամ, ձեռագրատան տնօրեն, կարգավորել ձեռագրատունը, կորընտից փրկել մշակութ. արժեքներ: Սակայն Ներսես Աշտարակեցու «պատվավոր» աքսորից հետո քաշվել է Խոր վիրապի, ապա՝ Սևանի վանքը, մտադրվել ընդմիշտ մնալ Սևանում, այնտեղ հայ առաջադեմ գործիչների հետ հաստատել գիտ. միաբանություն, բայց չի կարողացել իրականացնել իր մտադրությունը: Սևանից մեկնել է Թիֆլիս, 1836-ին վերադարձել Գրիգորիուպոլիս և Ղրիմ:

Մ. Կ. հեղինակ է պատմ. [«Կշիռ որպիսաածանոյց», 1803, «Պատմութիւն եղելութեանց ընդ մէջ կաթողիկոսացն Դանիէլի եւ Դաւթի», 1803 (հրտ. «Կոչունկ Հայոց աշխարհին», 1863, № 10, 11, 12), «Պատմութիւն անցից անցելոց Սէլանայ վանուց», 1830, հրտ. 1871], կրոնաբարոյախոս. («Դպրութիւն մանկանց», 1821, «Լուծ արմատոյն մերոյ», 1832, հրտ. 1841), դավանաբան. («Դեղաթափ ընդդեմ լիւթերականաց աղանդին», 1836, «Նամակ Մխիթարեաններին», 1814), հուշագր. («Համառօտութիւն ծննդեան և դիպուածոց...», 1830–39, «Աղէտ գիտելեաց մերոց», 1831) և այլ աշխատությունների, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են և հարուստ նյութեր են պարունակում XVIII դ. 2-րդ կեսի և XIX դ. 1-ին կեսի հայ եկեղեց., քաղ., մշակութ. կյանքի վերաբերյալ:

Երկ. Անձնական պատմութիւն Մանուէլ Կիւմուշխանացի վարդապետի, Ալթունեանի կամ Շահինովի, «Դիվան Հայոց պատմութեան», գիրք 12, Թ., 1917:

Գրկ. Շահազիզ Ե., Շահինյան Մանվել ծայրագույն վարդապետ Գյումուշխանեցի, «Էջմիածին», 1946, № 6–7: Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), Ե., 1967: Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962:

Վալտեր Դիլոյան

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ֆրանս. miniature, իտալ. miniatura, լատ. minium – ծիրանի գունանյութ, կինաբար, կարմիր ներկ, որով հնում զարդարել են ձեռագիր մատյանները), կերպարվեստի ստեղծագործություն, որն առանձնանում է փոքր չափերով ու գեղարվեստ. հնարքների նրբությամբ: Հայ միջնադարյան Մ-յան ոլորտը գրքարվեստն է՝ ձեռագիր մատյաններում գծային, գուաշի, տեմպերայի, ջրաներկի, ոսկու, հազվադեպ նաև արծաթի միջոցով պատկերազարդումները, որոնք ընդգրկել են անվանաթերթերը, *խորանները*, լուսանցազարդերը, պատմող. թեմատիկ տեսարանները՝ բնանկարի, ոսկու, ճարտ. միջավայրի կամ ուղղակի մագաղաթի և թղթի ֆոնի վրա:

Մ-յան հնագույն օրինակները պահպանվել են Հին Եգիպտոսում՝ պապիրուսի գալարների վրա (Ք.ծ.ա. 1900-ից ի վեր, հատկապես նոր թագավորության շրջանի «Մահվան գրքերում»): Աղոթքները, մոգական խոսքերը, մեղքերի քավումը սկզբում քանդակվել են տապանների վրա, հետագայում արվել պապիրուսի գալարներին և պատկերազարդվել: Վերջիններս դրվել են մումիայի լաթերի ներսում կամ թաղման աստվածություններ ներկայացնող նկարեն փայտե արձաններում: Հին հույները պապիրուսի գալարների վրա պատկերազարդել են ամբողջ տեքստը (հատկապես Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը»): Պապիրուսագալարների նկարները միմյանց են հաջորդել կոմիքսների կամ կինոկադրերի նման: Պապիրուսի գալարներին զուգահեռ Ք. ծ.ա. VI դ. սկսած արամեացիների (Իրանում), ավելի ուշ հոնիական (փոքրասիական) հույների գրելանյութը կաշին էր: Մագաղաթը որպես գրելանյութ սկսվել է օգտագործվել Պերգամոն քաղաքում, արտահանվել է գալարի ձևով և աստիճանաբար դուրս մղել պապիրուսը: Մագաղաթը մատյանի (լատ. codex) տեսք է ստացել ուշ անտիկ շրջանում՝ քրիստոնեության ազդեցությամբ: Մագա-

ղաթը պապիրուսի համեմատ այն առավելությունն ուներ, որ կարելի էր տեքստը ջնջել և նորը գրել: Կրկնագրերը կոչվել են պալիմպսեստներ. առաջին պալիմպսեստները մեզ են հասել VII դարից: Գրքի կամ մատյանի ձևը թելադրել է էջի պատկերազարդման սկզբունքը: Մեզ հասած հնագույն մագաղաթե մանրանկար ձեռագիրը Հոմերոսի «Իլիականն» է (մոտ 500, Միլանի Ամբրոզիանա գրադարան):

Հայկ. պահպանված ձեռագրերը մատյաններ են (կոդեքսներ, տես *Ձեռագիր մատյան*): Առայժմ, բացի ուշ միջնադարից մեզ հասած «հմայիլներից» («ամուլետ»), հայկ. ոչ մի գալար դեռևս չի հայտնաբերվել: Ի տարբերություն ձեռագր. այլ մշակույթների, հայկ. ձեռագրերի մեծ մասը հիշատակարանների շնորհիվ թվագրված է, հայտնի են գրչի, ստացողի (պատվիրատուի), հաճախ նաև՝ ծաղկողների անունները: Հայկ. Մ. աչքի է ընկնում ոճերի և դպրոցների բազմազանությամբ: Ամենից շատ պատկերազարդվել են *Ավետարանները*, ապա՝ *Աստվածաշունչը*, ծիսամատյանները (*Ճաշոց, Ճառընտիր, Շարակնոց, Մաշտոց* ևն): Մեզ հասած հայկ. առաջին մանրանկարները VI–VII դդ. նմուշներ են (տես «*Էջմիածնի Ավետարան*»): Ամբողջությամբ պատկերազարդված հնագույն հայկ. ձեռագիր մատյանները (Ավետարաններ) IX դարից են: «*Մլքե թագուհու Ավետարանը*» պահպանել է առանձին արժեք ներկայացնող վաղ հելլենաքրիստ. արվեստի առանձնահատկությունները: Այդ ձեռագիր մատյանից մեզ հասած միակ տերունական նկարի՝ «Համբարձման» մեջ հստակ սահմանազատված են երկնային (Քրիստոսը փառապսակում և հրեշտակները) ու երկրային (առաքյալները և Աստվածածինը) ոլորտները: X դարից պահպանված առավել ամբողջական Ավետարաններում պատկերներն ունեն հետևյալ կազմը. *Եվսեբիոս Կեսարացու* թղթի 3 խորանը, համաձայնության 10 կանոնները՝ հավաքված 7–10 խորաններում, այդ թվում՝ տեմպիետտոյի կամ Տիրոջ դերեզմանի պատկերը տաղավարի տեսքով («Էջմիածնի Ավետարան», Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 697, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2555), «Աբրահամի զոհաբերությունը», «Աստվածամայրը Մանկան հետ գահին», չորս ավետարանիչները (Էջմիածնի և Վիեննայի Ավետարաններ), որոնց Վիեննայի և այլ Ավետարաններում ավելանում են «Ավետումը», «Ծնունդը», «Մկրտությունը», «Համբարձումը»: 966-ի «Թարգմանչաց Ավետարանը» (Բալթիմոր, Ուոլթերս, ձեռ. № 537) ներկայացնում է Ավետարանի մեջ պատկերների դասավորության մի երկրորդ տիպ, որը հետագայում զարգացվում է հատկապես Կիլիկիայի և Գլաձորի դպրոցներում: Այստեղ ավետարանիչները պատկերվում են իրենց Ավետարաններից առաջ և ոչ մինչև Ավետարանների տեքստը՝ առանձին պրակում մյուս պատկերների հետ: Եթե X դ. մատյանները հիմնականում գրվել են բոլորագիծ (մեծ մեսրոպյան) երկաթագրով, ապա XI դ. մեծացել է ուղղագիծ (միջին մեսրոպյան) երկաթագրով գրված ձեռագրերի թիվը, ինչի շնորհիվ փոքրացել է գրքի չափը: XI դ. մեզ հասած ձեռագրերը հնարավորություն են ընձեռում հստակելու դպրոցների կամ ձեռագր. տեղական խմբերի գոյությունը:

Փոքր Հայքի մանրանկարչության դպրոց: XI դ. 1-ին կեսին Մեծ Հայքում և նույն դարի երկրորդ կեսին Մեծ Հայքում ու Փոքր Հայքում ստեղծված ձեռագրերում [Անի-Արշարունիքի և Փոքր Հայքի ու Մալաթիայի (Մելիտինե)] շարունակվել է Մլքե թագուհու և Էջմիածնի Ավետարանների պատկերազարդման տիպը: XI դ. առաջին հայկ. պատկերազարդ ձեռագիրը «*Ադրիանուպոլսի Ավետարանն*» է: Ձեռագրում ավետարանիչների և «Աստվածամայրը Մանկան հետ» նկարներն իրենց սառը կիսատոներով ու գույներով, նուրբ երկարացված համամասնություններով աղոտ հիշեցնում են Մակեդոնիայի XII դ. բյուզ. որմնանկարների (Օխրիդ, Կուրբինովո, Ներեզի) ոճը: Ընդ որում, ավետարանիչների գլուխների մոտ հունարեն գրված են նրանց անունները: Գույները ջրաներկային են, տարբերվում են բյուզ. արծնափայլ մանրանկարներից: XI դ. Արմ. Հայաստանի այն ծայրամասերում (Փոքր Հայք, Հս. Միջագետք, Բարձր Հայք, Կապադովկիա), որտեղ հայ բնակչությունը գրեթե հունացել էր, վերստին վերականգնվել է հայկ. աշխույժ կյանքը, երևան են եկել զանազան գրչատներ: Եփրատ գետի ափին գտնվող Կղոտ գավառի Թալաշա վանքում 1018-ին, տիկին Ծովուկի պատվերով, ընդօրինակվել է մի ձեռագիր՝ պարզունակ խորաններով, թռչուններով, ջրաներկային ցայտուն գույներով, այունաշարքի տակ կանգնած չորս ավետարանիչների պատկերներով, որոնց դեմքերը (նեղ ճակատ, նշաձև աչքեր) հիշեցնում

են *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու որմնանկարների դեմքերը: X–XI դդ. այս կարգի ձեռագրերի մեջ գլուխգործոց է 1038-ի Ավետարանը (գրիչ՝ Եվարգրիս, տեղն անհայտ է, Մատենադարան, ձեռ. № 6201), որը ոճով մոտ է «*Ծուղրութի Ավետարան*»-ին և «*Վեհափառի Ավետարան*»-ին: 1038-ի ձեռագրում Բյուզանդիայի Միքայել կայսրի անվան հիշատակումը, իսկ «Վեհափառի Ավետարան»-ում մի քանի մանրանկարներում հունարեն բառերի կամ անունների հունարեն գրությունը մատնանշում է մի վայր, որը եղել է Բյուզանդիայի իշխանության տակ: Սրանցում խորանների կառուցվածքը կորցրել է ճարտ. տրամաբանությունը, համակենտրոն կամարները հանդչում են այն քիվին և ոչ խոյակին: Դուրա-Եվրոպոսի (III դ.) ասորա-պալեստինյան վաղքրիստ. պարզագույն ոճն այստեղ հավատարմորեն պահպանվել է: Ասորա-եգիպտ. ազդեցության արձագանքները երևում են նաև պատկերագրության մեջ. «Ծնունդում» դա ակնառու է և՛ ոճում, և՛ պատկերագրությունում: Մարիամը և Հովսեփը ներկայացված են լուսապսակներով՝ դեմ դիմաց. Հովսեփը փիլիսոփայի դիրքով է, չկա մանկան լոգանքի տեսարանը ևն: Միօրինակ չեն նաև մյուս թեմաները՝ Ֆրիզաձև պատկերված «Մկրտությունը», «Պայծառակերպության» մեջ փառապսակի բացակայությունը, «Հարության» տեսարանում Տիրոջ գերեզմանն ունի սարկոֆագի ձև ևն: Այս և նմանատիպ ձեռագրերում մերկ կանանց տեսքով երևացող ծառերի ոգիները կարելի է տեսնել զպտական վաղքրիստ. քանդակներում և գործվածքներում:

Գրաֆիկական-սխեմատիկ այս ուղղությունը շարունակվել է նաև XI դ. կեսին՝ հիմնականում Փոքր Հայքում ստեղծված ձեռագրերում, որոնք վանական արվեստի հազվագյուտ նմուշներ են: Մանրանկարները հավաքված են տեքստին նախորդող պրակում. տերունական նկարներն ունեն պարզ շրջանակներ, իսկ գործողությունը ծավալվում է մագաղաթի ֆոնի վրա: 1041-ին Սեբաստիայում ընդօրինակված «Մալաթիայի Ավետարան»-ի (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 3624) հիշատակարանում նշված են գրիչ Սամուելի, Բյուզանդիայի Միքայել կայսրի և Հայոց կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի անունները: Փոքր Հայքի ձեռագրերի խորանները զարդարված են բուս. ու երկրաչափ. մոտիվներով, թռչուններով և հուշկապարիկներով: «Մալաթիայի Ավետարանը», ինչպես և 1057-ի ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 3784) ունեն ընդարձակ պատկերաշարք: Տերունական շարքն ավարտվում է չորս ավետարանիչների և խաչի պատկերներով: Բյուզանդիայում կայունացած տաններկու մեծ տոների պատկերներն այստեղ ներգործել են նկարների շարքի վրա, որոնք թերևս ունեն ոչ թե պատմող. (ինչպես «Վեհափառի Ավետարանը»), այլ՝ ծիսական բնույթ: Խորանները կորցրել են իրենց ճարտ. տեսքը, մեկ ամբողջական էջի վրա նույն շրջանակում նկարվել է երկու տեսարան, որ հիշեցնում է խառը ֆրիզաձև կառուցվածքով X–XI դդ. կապադովկյան որմնանկարները: Կապադովկյան ձևով միացված են «Ավետման» և «Մարիամի ու Եղիսաբեթի հանդիպման» տեսարանները: Ասոր. ոգով ստեղծված «Խորհրդավոր ընթրիքին» հատուկ է կիսաբոլոր սեղանը: Ի հայտ են գալիս նաև նոր թեմաներ՝ «Հուդայի համբույրը», «Թաղումը», «Դժոխքի ավերումը»: Մարդկանց և առարկաների պատկերները խիստ պայմանական, սխեմատիկ բնույթ են կրում: Որպես կանոն, առատ են շղագիր և բոլորգիր մակագրությունները:

Անիի մանրանկարչության դպրոց: XI դ. 2-րդ կեսին Արշարունիքի Սանդըղկավանքում ստեղծվել են յուրահատուկ ձեռագրեր, որոնք, հավանաբար, Բագրատունյաց շրջանի գրքարվեստի դպրոցի վերջին շքեղ վկաներն են: Դրանք մեծադիր փոլիանտներ են (1053-ի Ավետարանը, Մատենադարան, ձեռ. № 3793, «*Մողնու Ավետարանը*»), որոնց գրիչը Հովհաննեսն է. նա է ավարտել մեծ կորուստներով մեզ հասած «Բեգյունց Ավետարանը» (1060, Մատենադարան, ձեռ. № 10919): Հիշյալ ձեռագրերից է Հայաստանում սկսվել ավետարանիչների պատկերման կանոնական տիպը՝ առաջին երեքը նստած են, Հովհաննեսը կանգնած է գրի առնող, նստած աշակերտի՝ Պրոխորոնի կողքին: Այս ձեռագրերում են կանոնական տեսք ստանում նաև յուրաքանչյուր Ավետարանը սկսող անվանաթերթերը՝ նեղ գլխազարդ (կիսախորան)՝ բուս. և կենդ. զարդերով, վրան՝ խաչ, ավետարանիչի խորհրդանիշով զարդարուն սկզբնատառ. պակասում է, սակայն, զարդարուն խաչապսակ լուսանցազարդը, որը համատարած է դառնում XII դ. ձեռագրերում: Նմանատիպ սկզբնատառեր հատուկ են եղել Օթոնյան շրջանի (X դ. վերջ) գերմ. ձեռագրերին, իսկ XI–XII դդ. Բյուզան-

դիայում տարածվել է «պատմականացված սկզբնատառը»՝ պատմ. անձանց կամ սրբերի պատկերներով: Փոխվել է նաև խորանների գլխամասը. կամարի կիսաշրջանն առնվել է զարդարուն ուղղանկյան մեջ: Ի տարբերություն Փոքր Հայքի ձեռագրերի՝ խորաններն այստեղ պահպանել են իրենց ճարտ., բայց ավելի մեծ չափով դեկորատիվ վեհությունը՝ ավելի վերասլաց այուներով շարունակելով «Մլքե թագուհու Ավետարան»-ի և «Էջմիածնի Ավետարան»-ի հանդիսավոր ոճը: Խորանների կամարամեջերում հանդիպում են «Նեղոսյան տեսարաններ» («Մողնու Ավետարան»), բազմապիսի իրական և երևակայական կենդանիներ ու թռչուններ (Լ. Դուռնովոն «Մողնու Ավետարան»-ում հաշվել է թռչունների ու կենդանիների 34 տեսակ): Կամարներում երբեմն հանդիպում են կեղծ «քուֆի» գրեր, որոնք հայկ. ու արաբ. գրերի յուրահատուկ հիբրիդ են: Տերունական նկարները ծածկում են թերթի ոչ թե երկու, այլ մի երեսը, մյուսը մնում է դատարկ:

Սանդղկավանքում ստեղծված՝ Հովհաննեսի ընդօրինակած երեք Ավետարաններից ամենաշքեղը «Մողնու Ավետարանն» է՝ թե՛ իր խորաններով, թե՛ ընդարձակ տերունական շարքով, թե՛ պատկերային կառուցվածքով և յուրահատուկ հեռանկարչական համակարգով: Մանրանկարների գույներն ունեն յուրօրինակ փայլատություն ու մեղմություն. դա վկայում է որմնանկարի ազդեցության և, հավանաբար, որմնանկարչական դպրոցի գոյության մասին (հետագայում որմնանկարչական նշանավոր դպրոցներ են ստեղծվել Անիում, Քոբայրում, Ախթալայում, Հաղպատում, Կիրանց վանքում և այլուր): Մանրանկարները հարուստ են արևելաքրիստ. մոտիվներով՝ խորանի այուներին խաղողի ողկույզներ են (ինչպես IV–V դդ. Քասաղի բազիլիկում), նապաստակ, եղջերու, «սանրաձև սաղարթներ» (զվարական արվեստ, 586-ի ասոր. «Ռաբուլայի Ավետարան»), վարագույրներ (Ռավեննայի և Հռոմի վաղքրիստ. խճանկարներ), սափորների շուրջը՝ թռչուններ ևն: Անիում հույների ներկայությունն արտահայտվում է 1060-ի «Բեգյունց Ավետարան»-ի և 1053-ի Ավետարանի ավետարանիչների պատկերներում, հուն. անվանատառերում, բայց ավետարանիչների ծնկների Ավետարանների վրա գրված բառերը հայերեն են: Մանրանկարներում կապույտ ֆոնը դրանց տալիս է որմնանկարային կոթողային տեսք, ինչպես XI–XII դդ. ռոման., հայկ. ու վրաց. որմնանկարներում: Միևնույն շրջանակում հայտնվում են միմյանց վրա տեղադրված երկու նկար՝ ինչպես «Ավետումը» և «Մարիամի հանդիպումը Եղիսաբեթի հետ»: Էջով մեկ արված տեսարաններում («Ծնունդ», «Մուտք Երուսաղեմ» ևն) գործողությունը ծավալվում է ոչ թե ֆրիզաձև, երբ այն դիտելու համար մատյանը պետք է շրջել, այլ՝ էջի բարձրությամբ, դեկորատիվ մոնումենտալ լեռների ֆոնի վրա: Ճարտ. փովածքները հարուստ են և բազմազան:

XII դ. վերջի – XIII դ. սկզբի Անիի Մ-յան դպրոցից քիչ բան է հայտնի: Մեզ հասել են Անիում աշխատած Իգնատիոս մանրանկարչի ծաղկած մի քանի ձեռագրեր:

Առանձին խումբ են կազմում «բյուզանդամետ» համարվող *«Տրապիզոնի Ավետարանը»*, *«Կարսի Ավետարանը»*, 1071–78-ի Ավետարանները (Մատենադարան, ձեռ. №№ 6975 և 10434): «Տրապիզոնի Ավետարանը» ավելի է հակված բյուզանդա-հելլենիստ. ազդեցություններին ու վերապրուկներին: Ձեռագրի գրչությունն ու ուղղագրությունը հնամենի են. դրանք փոխվում են XI դ., երբ շատանում են կիրակագիրները (գլխավոր Ավետարանները): «Կարսի Ավետարանը» կրում է Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի գրքարվեստի զարգացման սաղմերը, այն է՝ ա. գլխազարդեր՝ բուս., թռչնային և երկրաչափ. մոտիվներով, բ. «Վեհափառի Ավետարան»-ից հետո երկրորդ ձեռագիրն է, որտեղ պահպանված են տեքստային մանրանկարներ, գ. պատվիրատուների պատկերներ, դ. լուսանցքներում, այունակների մեջ ու գլխատառերում հարյուրավոր սափորներ, բուս. և կենդանաթռչնային մոտիվներ:

XI դ. մատյանները մեծ մասամբ դեռևս խոշոր ֆոլիանտներ են, XII դ. ձեռագրերի չափերն ավելի փոքր են (Մատենադարան, ձեռ. № 7779՝ Կարին, ձեռ. № 2877՝ Երզնկա, ձեռ. № 6249՝ Սյունիք, ձեռ. №№ 4753, 379, 313՝ Եդեսիա, ձեռ. №№ 7635, 10360՝ Խարբերդ, Վենետիկի № 961/87 ձեռագիրը՝ Անի ևն): XII դ. ավելի շատ ձեռագրեր են ընդօրինակվել թղթի վրա: Ձևավորումը դարձել է համեստ, հաճախ բացակայում են այուժետային մանրանկարները և ավետարանիչների պատկերները: Բայց ավանդաբար պահպանվել է Քառավետարանի կազմությունը և որոշ առումով զարգացել: 1–3 էջ գրավել է Եվսեբիոս Կեսարացու խորանազարդ թուղթը, մինչև 9 էջ զբաղեցրել են

խորանները և 4 էջ՝ չորս Ավետարանների անվանաթերթերը: Ուղղանկյունաձև խորանները բազմապիսի կամարներով կանգնած են բարակ սյուների՝ երիզների վրա: Հատկապես բազմազան կտրվածքներ ունեն Մատենադարանի №№ 3756, 2952, 7737 ձեռագրերի խորանների գլխազարդերը: Փոխվել է գլխազարդի և սյուների համամասնությունը, դրանք բարձրությամբ գրեթե հավասարվել են: Բազմազան են զարդամոտիվները. խորանները վերածվում են դեկորատիվ զարդարուն թերթերի, խորանների գլխազարդերի շուրջը պատկերվում են մեծ թվով խորհրդանշական կենդանիներ, թռչուններ, բույսեր: Ավետարանիչների դիմանկարների և այուժետային մանրանկարների խիստ նվազումը թերևս պայմանավորված է մահմեդ. շրջապատով, որտեղ արգելվում է մարդու պատկերումը: Մատենադարանի №№ 2877 և 6264 ձեռագրերը հավանաբար արված են XI դ. վերջին, ինչի վկայությունն են գլխազարդերի ուղղանկյուն ձևը՝ միջից հատված եռանկյուններով (ինչպես XI դ. բյուզ. ձեռագրերում), մի թերթի վրա չորս ավետարանիչների պատկերումը և «Ավետման» հնավանդ պատկերագրությունը: Ընդ որում՝ № 2877 ձեռագրի մանրանկարների գույները, հրեշտակի ու Մարիամ Աստվածածնի դեմքերի հուզական արտահայտությունները նորություն էին հայ Մ-յան մեջ:

XII դ. վերջնական տեսք է ստացել չորս Ավետարաններից յուրաքանչյուրի անվանաթերթը, մեծացել են գլխազարդի չափերը, ստացել բարդ կտրվածքներ, հարստացել է գծագիրը: Ավետարանի վերնագիրը գրվում է մանր տառերով՝ գլխազարդի տակ կամ նրա բարդ կամարամիջում, երբեմն կվադրիֆոլիումի (քառատերևի) մեջ (Մատենադարան, ձեռ. №№ 10360, 313, 7635), առաջին տողը չեշտվում է գույնով կամ գրերի չափով, սկզբնատառերը հաճախ կազմվում են ավետարանիչների խորհրդանիշերից՝ մարդակերպ, առյուծակերպ, ցլակերպ, արծվակերպ (Մատենադարան, ձեռ. №№ 379, 6264, 2952, 7737): Սկզբնատառերը ձգվում են վեր՝ հաճախ ծաղկազարդ գծանկարով, բարդ ու հետաքրքիր հարաբերությունների մեջ մտնում գլխազարդի և տեքստի հետ: Սկզբնատառի առանցքը հյուսվում է հանգույցներից, հավասարակշռվում է գեղեցիկ դեկորատիվ լուսանցազարդով, որը պսակվում է խաչով: XII դ. տեքստերը գրվում էին ուղղագիծ, երբեմն՝ բոլորագիծ երկաթագրով: Ուղղագիծ երկաթագրի հետ օգտագործվել է «անցման» բոլորագիրը (Մատենադարան, ձեռ. №№ 379, 3777, 1522): Տառերի բարձրությունը երկարում է, գրչության ոճն ազատ է: Գլխավոր Ավետարանների (տոների ընթերցվածների կամ կիրակագիրների) սկզբնատառերը գրվում են ոսկով (Մատենադարան, ձեռ. №№ 2952, 7737), աչքի են ընկնում նաև չափով (Մատենադարան, ձեռ. №№ 379, 7737), գույնով (Մատենադարան, ձեռ. №№ 6249, 7635), կամ բարդանում է սկզբնատառի գծանկարը: Մատենադարանի ձեռ. № 7779 Ավետարանն օժտված է այուժետային պատկերներով («Մուտք Երուսաղեմ», «Մոգերի երկրպագությունը», «Հաղորդություն», «Մկրտություն» ևն), երկու լուսանցքային դիմանկարներով (Հովսեփ Արիմաթիացի), որոնք հնաոճ են, պարզ ու հմայիչ, ինչպես մանկական նկարները:

XII դ. ձևավորվում է Ճառընտիր Տոնականների (Մատենադարան, ձեռ. №№ 3777, 1522, 3782 ևն), Ժողովածուների (Մատենադարան, ձեռ. №№ 375, 2783) և մեկնությունների (Մատենադարան, ձեռ. № 2606) ձևավորման համակարգը, որին հատուկ են մեծ չափերը, լայն լուսանցքները, արագագիր ոճը: Ենթավերնագրերը գրվում են դեռևս չզարդացած գլխազարդի տակ՝ տեքստից մանր գրչությամբ: Առաջին, երբեմն էլ երկրորդ, երրորդ տողերն ավելի խոշոր բոլորագիծ երկաթագրի տառաձևերով են, ի տարբերություն բուն տեքստի, որ գրված է «անցման» բոլորգրով: Ճառերի կամ ընթերցվածների սկիզբը հատկանշվում է լուսանցքներում ընթերցվածների հեղինակների կամ հերոսների լուսանցանկարներով կամ լուսանցազարդերով: Սկզբնատառերը ձգվում են էջով մեկ՝ բոլորագիծ երկաթագրի տեսքով: Առանձնապես ուշագրավ են վկաների և եկեղեցու Հայրերի նկարները Մատենադարանի ձեռ. №№ 3777 և 1522 Տոնականների լուսանցքներում, որոնք ստեղծվել են *Հովհաննավանքի* և *Սաղմոսավանքի* գրչատներում: XII դ. 1-ին կեսին սելջուկների ասպատակությունները կասեցրել են Հայաստանի գեղ-մշակութ. կյանքի բնականոն ընթացքը: Մշակույթի կենտրոնները տեղափոխվել են դեպի արևմուտք, որտեղ ստեղծվել են բարձրորակ, նրբագեղ ձեռագրեր: Եդեսիայում և Երուսաղեմում ստեղծված հայկ. ձեռագրերը XII դ. գրքարվեստի ավանդույթները կապել

են Կիլիկյան գրքարվեստին: Գրքի պատկերազարդման համակարգում փոքրիկ ներտեքստային մանրանկարների առկայությունը՝ թերթով մեկ արված մանրանկարների հետ, տերունական տոների զարգացած պատկերաշարը, լուսանցազարդերի առատությունը բնորոշ են դառնում Կիլիկյան գրքի պատկերազարդման սկզբունքների համար:

Կիլիկիայի մանրանկարչության դպրոց: XII դ. հայոց քաղ., ինչպես նաև հոգևոր, մշակութ. և գեղ. կյանքի կենտրոնը տեղափոխվել է Կիլիկիա, որտեղ կազմավորվել է Կիլիկիայի հայկ. իշխանապետությունը, այնուհետև՝ թագավորությունը (1080–1375): Կիլիկյան Հայաստանի Հռոմկլա բերդաքաղաքը, որը 1149–1292-ին եղել է Հայոց կաթողիկոսության նստավայրը, դարձել է համահայկ. հոգևոր-մշակութ. կենտրոն, հռչակվել նաև իր ուրույն և բարձրարվեստ մանրանկարչական դպրոցով: Սակայն մեզ չեն հասել Հռոմկլայի գրչատան վաղ շրջանի պատկերազարդ ձեռագրերը: XII դ. սկզբից հայտնի կիլիկյան հատուկենտ ձեռագրերը դեռևս կրում են Մեծ Հայքի Մ-յան ավանդների զգալի ազդեցությունը: 1113-ին *Դրազարկի վանքում* պատկերազարդված Ավետարանում (պատվիրատու՝ վանահայր Կիրակոս վարդապետ, Մատենադարան, ձեռ. № 6763) այդ ազդեցությունն արտահայտված է ներգծված կամարներով ուղղանկյուն գլխազարդերում: 1113-ի ձեռագրում կիլիկյան գրքարվեստին հատուկ միակ գլխ. հատկանիշը լուսանցքում սրտաձև կազմված արմավազարդն է՝ վրան հառնող հավասարաթև խաչով, ինչպես նաև՝ կարմիրը, կապույտը և կանաչը՝ իբրև հիմն. գույներ: 1166-ի Հռոմկլայի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 7347) կազմված է Եվսեբիոս Կեսարացու թղթի 2 էջից, 8 խորանից. յուրաքանչյուր Ավետարան սկսվում է համապատասխան ավետարանիչի նկարով (ձախ կողմում) և զարդարուն անվանաթերթով (աջ թերթի վրա), որ հատուկ է դառնում կիլիկյան գրքարվեստին: Այդ ձեռագրում, խորաններից անմիջապես հետո, գիրքը գահին նստած Քրիստոսին մեկնող պատվիրատու (ստացող) Առաքել եպիսկոպոսի պատկերն է: Հետագայում կիլիկյան Ավետարաններում խորաններին հաջորդող մեկ կամ երկու էջը հատկացվում է ստացողի նկարին կամ ընծայագրին (հաճախ՝ խորանաձև):

XII դ. վերջի կիլիկյան մի քանի ընտիր ձեռագրեր (թե՛ մագաղաթի, թե՛ գրչության և թե՛ Մ-յան առումով) կապված են *Ներսես Լամբրոնացու* անվան և նրա հովանավորած *Սկևռայի* վանքի հետ: XII դ. Կիլիկյան Հայաստանում պատկերազարդված ձեռագրերից աչքի է ընկնում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանը», որի գրիչն է Գրիգոր Մլիճեցին, ստացողը՝ Ներսես Լամբրոնացին (1173, Մատենադարան, ձեռ. № 1568): Մանրանկարիչը նկարել է Գրիգոր Նարեկացու չորս դիմանկար, որոնցից երեքն ունեն մակագրություններ՝ «Գրիգոր Փիլիսոփայ», «Գրիգոր Հսկող», «Գրիգոր Ճգնաւոր»: Գրչության նրբագեղությունը, հղկվածությունը, գրերի հիմն. և երկրորդ. մասնիկների անկաշկանդ անցումները, լուսանցազարդի, սկզբնատառի հատվածավորման (ռուբրիկացիայի) սերտ կապը, մեծ և մանր գրերի, ոսկու և հիմն. մաքուր գույների ճարտար զուգակցումը ցույց են տալիս, որ գիրքը ձևավորվել է որպես առանձին մշակութ. երևույթ, ինչպես XI դ. Կ. Պոլսի և շատ ավելի ուշ՝ գրքարվեստի պարսկ. դպրոցներում: Ներսես Լամբրոնացու պատվերով մեզ հասած մյուս գլուխգործոցը 1197-ի «*Սկևռայի Ավետարանն*» է, որտեղ լուսանցանկարները՝ տերունական թեմաների համառոտումով, արդեն զուտ կիլիկյան երևույթ են:

XIII դ. 2-րդ կեսին Հռոմկլայի գրքարվեստի մեծ վերելքը, ինչպես Թորոս Ռոսլինի արվեստի ծաղկումը, կապված է Հայոց կաթողիկոս *Կոստանդին Ա Բարձրբերդցու* գործունեության հետ: XIII դ. Հռոմկլայի դպրոցից մեզ հասած առաջին պատկերազարդ ձեռագրերը Ավետարաններ են (1249, գրիչ՝ Կիրակոս, Մատենադարան, ձեռ. № 7690, 1251, գրիչ՝ Սարգիս, Մատենադարան, ձեռ. № 3033, գրիչ՝ Հովհաննես, Ջեստեր Բիտտ, Դուբլին, ձեռ. № 558), որոնք շարունակել են XII դ. ավանդները՝ 2 էջ Եվսեբիոս Կեսարացու թուղթը, 8 խորան, 2 էջ խորանաձև ընծայագիր, իրենց Ավետարանների տիտղոսաթերթերի դիմաց պատկերված ավետարանիչները, սինագոգի և եկեղեցու պատկերներ (Մատենադարան, ձեռ. №№ 7690, 3033), Աստծո գառը (Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 44. 17) ևն: Նորությունը զարդամոտիվների և դրանց նրբագույն պատկերման հարստությունն է: Խորանները զրկվել են ճարտ. տեսքից, դրանց վերևում և կողմնային լուսանցքներում երևում են աքաղաղներ, մոմակալ աշտանակներ, սիրամարգեր, նռան և ար-

մավի ծառեր, տաճարներ, սափորներից ելնող բուսազարդեր, այուների խոյակները և խարիսխները վերածվում են կենդ. դիմակների: Եվսեբիոս Կեսարացու թղթի խորաններում Եվսեբիոս Կեսարացու և Կարպիանոսի կիսանդրի դիմանկարները դառնում են կանոն, վերջն. տեսք են ստանում տիտղոսաթերթերը:

Հռոմկլայի դպրոցի խոշորագույն մանրանկարիչը *Թորոս Ռոսլինն* է: Հատկապես էջով մեկ արված նրա տերունական նկարները հայ Մ-յան գրեթե ամենադասական էջերն են հորինվածքի հավասարակշռությամբ, գունատոնային հարաբերություններով, նրբագույն գունաթափանցումներով, շարժումների վայելչությամբ և բնականությամբ: Խորաններում Եվսեբիոս Կեսարացու թղթի նմանողությամբ ծաղկողը կիսաշրջանների մեջ նկարում է մարգարեների կիսանդրիները, ինչը նորություն էր (հետագայում ստացել է այլ փոխակերպություն), իսկ խորանաձև ընծայագրերում նույնպիսի կամարների մեջ պատկերված են Քրիստոսի և Մարիամի կիսանդրիները:

Թորոս Ռոսլինից հետո, սկսած 1270-ական թթ-ից, արքայական ընտանիքների անդամների համար ստեղծվել են մի շարք աննախադեպ ճոխ ձեռագրեր: Արքունական այս դպրոցի վարպետների մոտ Թորոս Ռոսլինի հավասարակշռված դասական ոճը վերաճել է դրամատիկ մանիերիստական ոճի. կերպարները դարձել են ավելի եռանդուն, հուզական, ձգված, հարստացել են դեկորատիվ տարրերը, լարված են դարձել ու շեշտվել գունահարաբերությունները, գոգավոր, հոսուն կամ սուր անկյունագծային կառուցվածքներ են ստացել այուժետային նկարների հորինվածքները: «*Վասակ իշխանի Ավետարան*»-ում և «*Կեռան թագուհու Ավետարան*»-ում ընծայագրերի փոխարեն հայտնվում են պատվիրատուների ընտանիքների պատկերները «Դեիսուսի» («Բարեխոսություն») և Բարեգութ Աստվածամոր ու Քրիստոսի կերպարների հետ: 1280-ական թթ. ավարտին է հասել արքունական դպրոցի «նրբագեղ» ոճը, որ հետազոտողները մերթ համարում են կիլիկյան «բարոկկո», մերթ «մանիերիզմ»: «*Հեթում Բ թագավորի Ճաշոցը*», Մատենադարանի ձեռ. №№ 9422, 2629 Ավետարանները, «*Ութ մանրանկարիչների Ավետարանը*» ապշեցնում են զարդային և այուժետային ու ֆիգուրատիվ նկարների հարստությամբ և գեղ. միջոցների բազմազանությամբ, լուսագունային երանգավորմամբ: Մատենադարանի № 9422 Ավետարանում 10 խորաններ են, որոնց հաջորդում են էջով մեկ արված տերունական մանրանկարներ, այնուհետև՝ Եվսեբիոս Կեսարացու թուղթը 2 էջում և ավետարանիչների նկարները՝ համապատասխան Ավետարանների անվանաթերթերից առաջ: Անվանաթերթերն աչքի են ընկնում զարդանախշերի բարդագույն կառուցվածքով: Խորանների այուների խարիսխները և խոյակները փոխարինված են ոսկե ֆոնի վրա գազանների ու թռչունների, սերովբեների, ավետարանիչների, առաքյալների, մարգարեների մանրանկար ֆիգուրներով: Հարուստ են խորանների լուսանցքներն ու քիվերը. սավառնող, ճախրող, զանազան կեցվածքներով ու շարժումներով պատկերված թռչուններն ու կենդանիները ենթադրել են տալիս, որ կիլիկյան վարպետները քաջածանոթ են եղել չինական արվեստին: «Հեթում Բ թագավորի Ճաշոց»-ում և «Ութ մանրանկարիչների Ավետարան»-ում պատկերազարդ էջերի թիվը հասնում է մի քանի հարյուրի: Դա աննախադեպ և եզակի է հայ Մ-յան պատմության մեջ:

Գոնների ու Ակների վանքերում գործող Հովհաննես Արքաեղբոր դպրոցում նույնպես ստեղծվել են ձեռագրեր՝ մեզ հասած առաջին Աստվածաշունչ գրքերից մեկը (1270, Մատենադարան, ձեռ. № 345), Աստվածաշնչային ժողովածուն (1263–66, Մատենադարան, ձեռ. № 4243), Մատենադարանի ձեռ. № 197 Ավետարանը (1287, գրիչ՝ Հովհաննես Արքաեղբայր) ևն: Հովհաննես Արքաեղբոր ձեռագր. դպրոցի և գրչության վայրն անհայտ ու նախն. հիշատակարանները կորցրած մի քանի ձեռագրեր (օր.՝ «*Սմբատ Սպարապետի Ավետարանը*», Մատենադարանի ձեռ. № 7648 Ավետարանը ևն) միավորվում են որոշակի հատկանիշներով՝ ուլունքաշար գրաֆիկական արտակարգ կանոնավոր գրչություն, պատկերների ոսկե կամ սև ուրվագծեր, որոշ ակադեմիական ոճ, մի քանի բնորոշ զարդաձևեր ևն: Բայց ոճական առումով, ճոխությամբ, տերունական պատկերների հորինվածքային բարդությամբ հատկապես «Հովհաննես Արքաեղբոր Ավետարանը» (Մատենադարան, ձեռ. № 197) ավելի մոտ է արքունական դպրոցի մանրանկարչ. արվեստին:

XIII դ. վերջին տասնամյակին գրչության արվեստը Կիլիկյան Հայաստանում դեռևս մնում էր իր բարձրության վրա, բայց Մ. կրում է որոշակի փոփոխություններ: 1292-ի «Հե-

թում Բ թագավորի Աստվածաշունչ»-ի գրիչ (հավանաբար և ծաղկող) Ստեփանոսը թեև դեռևս հետևում է Հովհաննես Արքաեղբոր ձեռագր. դպրոցի գրչարվեստի ավանդներին, ձեռագրի պատկերազարդումը հիշեցնում է արքունական դպրոցի շքեղ, հարուստ ոճը, բայց նվազում է երևակայության ազատությունը, ստեղծագործ. թռիչքը: Ստեղծվել է մի նոր սխեմատիկ ոճ, որի ցայտուն արտահայտիչը *Սարգիս Պիծակի* հայր Գրիգոր Պիծակն է: 1307-ի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 7691) և 1317–18-ի Նոր կտակարանը (Մատենադարան, ձեռ. № 242) լուսանցանկարների պատկերագրությամբ, գունային գամմայով ընդհուպ մոտեցել են Սարգիս Պիծակի ոճին: 1307-ի Ավետարանն արված է զուտ դրաֆիկական գծանկարով և այուժեների համառոտումով, որոնք գրեթե նույնությամբ անցել են Սարգիս Պիծակի պատկերացանկի մեջ, իսկ 1317–18-ի Նոր կտակարանի մանրանկարները գրեթե չեն տարբերվում Սարգիս Պիծակի մանրանկարներից: Սարգիս Պիծակի պատկերազարդած Ավետարանները, պահպանելով հանդերձ XIII դ. կիլիկյան Ավետարանների պատկերազարդման համակարգը, ունեն նաև իրենց առանձնահատկությունները: Սարգիս Պիծակի արվեստը հակված է դեպի հնամենի ձևերը (մեկ ընդհանուր շրջանակի մեջ երկու տեսարան՝ նկարված մեկը մյուսի վրա, որ կիրառելի չէր Կիլիկյան Հայաստանում, ևն), նրա համաչափ հարթապատկերային ոճը մոտ է Մեծ Հայքի և Կապադովկիայի արվեստին: Նրա վերջին՝ 1353-ի «Բժշկության Ավետարանը» (Մատենադարան, ձեռ. № 6795) նորություն էր ոչ միայն Սարգիս Պիծակի, այլև առհասարակ հայ Մ-յան համար: Սարգիս Պիծակի արվեստը կիլիկյան Մ-յան վերջնակետն է:

Բարձր Հայքի, Արցախի մանրանկարչության դպրոցներ: Սելջուկյան ճնշումներից համեմատաբար ազատ բուն Հայաստանի արմ. մասերում (Բարձր Հայք, Խարբերդ ևն) և Հայաստանից դուրս հայերով բնակեցված վայրերում (Եդեսիա, Երուսաղեմ ևն) ստեղծվել են բարձրորակ ձեռագրեր, որոնցից է «*Մշո Ճառընտիրը*» (Երզնկայի Ավագ վանք, գրիչ՝ Ստեփանոս): Այդ ձեռագրի հետ զարդային հնարամտությամբ կարող են մրցել միայն X–XII դդ. իռլանդ. և անգլո-սաքսոն. ձեռագրերի սկսվածքները: Նուրբ, շողշողուն թանկարժեք փիրուզե կապույտի շեշտադրումով ոլորազարդերը և հանգույցները արլ. են, զուտ հայկական՝ խաչքարերի հյուսվածքների նման: *Ավագ վանքում* Ստեփանոսը գրչագրել է նաև մի Ավետարան (1201, Մատենադարան, ձեռ. № 10559), որտեղ խաչի պատկերը և Մատթեոսի Ավետարանի անվանաթերթերը հիշեցնում են «Մշո Ճառընտիրը»: Բարձր Հայքի Երզնկա քաղաքում ստեղծված մի գլուխգործոց է 1269-ին ընդօրինակված և մեզ հասած առաջին ամբողջական պատկերազարդ Աստվածաշունչը (տես «*Երզնկայի Աստվածաշունչ*»): Հեղինակների նկարների, խորանների, անվանաթերթերի, մի քանի համառոտած այուժետային պատկերների գծային նրբագեղությունը, ազնիվ համամասները մոտ են կիլիկյան Աստվածաշունչ և այլ ժողովածու մատյանների հետ: Հետագայում Բարձր Հայքը (հատկապես Բաբերդի դպրոցը), որտեղից մանրանկարիչների սերունդներ են տեղափոխվել Ղրիմ, կամուրջ է հանդիսացել Ղրիմի Մ-յան ծաղկման համար:

Աշխարհիկ քաղաքային կյանքին արձագանքող հայկ. Մ-յան եզակի ձեռագիր է «*Հաղպատի Ավետարանը*»: Հատկապես իր տերունական նկարներով առանձին տեղ է գրավում «*Թարգմանչաց Ավետարանը*»: Ձեռագիրը ոճական ու պատկերագր. ընդգրկումներով այնքան հարուստ է և ինքնատիպ, որ հիմք է տալիս հետազոտողներին այն վերագրելու Կարինի, Անիի, Արցախի դպրոցներին, թեև ունի ոճական այնպիսի յուրահատկություններ, որոնք բնորոշ են միայն այդ ձեռագրին: Բացարձակ գունային դրամատիզմով «Թարգմանչաց Ավետարանը» մոտ է Մատենադարանի ձեռ. № 2877 Ավետարանին (XI–XII դդ.), բայց պատկերազարդման ամբողջականության առումով Մեծ Հայքում իր նախորդը չունի: Այս երկու ձեռագրերը գունային հակադրությունների բացարձակ դրամատիկականությամբ կարող են մրցել X–XI դդ. Օթոնյան դպրոցի գերմ. ձեռագրերի հետ: Հայկ. գրքարվեստում առաջին անգամ «Թարգմանչաց Ավետարան»-ում է հանդիպում «Ննջումն Աստվածածնի» տեսարանը (մինչ այդ «Ննջի» պատկերը տեսնում ենք Անիի Տիգրան Հոնենցի Ս. Գրիգոր եկեղեցու որմնանկարներում):

Արցախի վանքերում մեծ թվով ձեռագրեր են հավաքվել Հայաստանի տարբեր վայրերի՝ Կիլիկիայի, Բարձր Հայքի, Անիի իշխանական կամ վանական հավաքածուներից (902-ի «*Կարմիր Ավետարանը*», XI դ. «Բեգյունց Ավետարանը», Հռոմկլայի 1166-ի Ավետարանը,

«Հաղպատի Ավետարանը», «Թարգմանչաց Ա-վետարանը» ևն): Արցախում պատկերազարդ-ված քիչ ձեռագրեր են մեզ հասել: 1224–61-ին Արցախում ստեղծված մի քանի Ավետա-րաններ իրենց լավ մշակված մագաղաթով, մանրանկարների դծային հիերոգլիֆային ո-ճով, ոսկու և գույների նրբությամբ ու ազնը-վությամբ իշխանական ծագում ունեն և կա-ռուցվածքով ու տիտղոսաթերթերի հորինված-քով մոտ են Անիում ստեղծված Իգնատիոս մանրանկարչի ձեռագրերին: Արտահայտիչ են ավետարանիչների սխեմատիկ կերպարները, ո-րոնք ոսկե ֆոնի վրա ստեղծում են ճախրան-քի պատրանք: Այդ ձեռագրերից են 1224-ի Խորանաշատի (Վանենի թագուհու) Ավետարա-նը (Մատենադարան, ձեռ. № 4823), Հասան-Ջալալյան իշխանի հայր Վախթանգ Տանգիկի և նրա տիկին Խորիշահի Ավետարանը (ծաղ-կող՝ Թորոս, Մատենադարան, ձեռ. № 378):

Գլաձորի մանրանկարչության դպրոցը գործել է *Գլաձորի համալսարանին* կից գրչատանը, XIII դ. վերջից մինչև XIV դ. կեսը: Այդ դպրոցի երեք մեծ մանրանկարիչնե-րը՝ *Մոմիկը, Թորոս Տարոնացին* և Ավագը, աչ-քի են ընկնում իրենց արվեստի բազմազանու-թյամբ: Գլաձորի Մ-յան դպրոցը հայ միջնա-դարյան գրքարվեստի այն դպրոցներից էր, որն առավել սերտորեն է առնչվել մոնումենտալ ար-վեստի և մշակույթի մյուս բնագավառներին (Մոմիկն ու նրա ուսուցիչ, մանրանկարիչ և ճարտարապետ Մատթեոսն աշխատել են թե՛ Մ-յան, թե՛ քանդակի և թե՛ ճարտ-յան բնագա-վառներում): Մոմիկը թերևս ամենից ավելի հա-րազատ է Վայոց ձորի և Սյունիքի քանդակա-գործ. ավանդույթներին: Նրա ստեղծագործու-թյան առաջին շրջանը հատկանշվում է ման-րանկարչությամբ. պատկերած ֆիգուրներում (տերունական նկարներ, ավետարանիչներ) զգացվում է քանդակային ծավալի մի ներքին զգացողություն, որը տարբեր է կիլիկյան վար-պետների «հելլենա-բյուզանդական» «քանդա-կայնությունից» և գալիս է իր իսկ՝ Մոմիկի ու նրա ուսուցչի գեղ. փորձից: Մոմիկի արվեստ-ի վրա կիլիկյան Մ. ավելի քիչ ազդեցություն ունի, քան Թորոս Տարոնացու և Ավագի ման-րանկարների վրա: Հատկապես նշանավոր է 1302-ին Մոմիկի պատկերազարդած «Պատե-րազմի Ավետարանը» (Մատենադարան, ձեռ. № 6792), որը թե՛ իր կառուցվածքով և թե՛ պատկերագրությամբ նորարարություն է հայ Մ-յան մեջ: Ձեռագիրը սկսվում է Հովհաննե-սի Ավետարանով, «Այ-լակերպության» մեջ Հիսուսն անմորուք է, «Ծնունդում» գլխ. կերպարը Հովսեփն է, ո-րոշ մանրանկարներում կարելի է նշմարել մին-չև 4–5 պլան, որ առավելագույն քանակ է Գլա-ձորի ծաղկողների համար: Այդ առումով, ինչ-պես նաև իրենց ներդաշնակ հավասարա-կշռված մոնումենտալ կառուցվածքով, Մոմի-կի մանրանկարները նմանվում են Թորոս Ռոս-լինի արվեստին:

Թորոս Տարոնացու ծաղկած ձեռագրերում խորանները, լուսանցազարդերը, անվանաթեր-թերի զարդամոտիվները մեծ մասամբ կրում են կիլիկյան Մ-յան ազդեցությունը: Կիլիկյան ա-կունք ունի նաև որոշ ձեռագրերում (1318-ի «Եսայի Նչեցու Աստվածաշունչը», Մատենա-դարան, ձեռ. № 206, XIV դ. սկզբի Ավետա-րանը, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսա-րան, ևն) Աստվածաշնչի կամ Ավետարանի գրե-թե ամեն մի գրվագ նկարազարդելու կամ զար-դանախշելու ձգտումը: Կան խորանապատկեր-ներ կամ լուսանցազարդեր, որոնք կարելի է շփո-թել կիլիկյան նույնատիպ պատկերների հետ: Բայց հաճախ դրանց միջև ընկնում են հերալդիկ կամ այլ կարգի դրվագներ, որոնց ակունքները Վայոց ձորի ճարտ. դեկորն է: Տերունական նկարներում ավելի ուժեղ են Մեծ Հայքի զա-նազան դպրոցների ազդեցությունները:

Գլաձորի Մ-յան դպրոցի վերջին խոշոր վարպե-տը Ավագն է՝ «աստանդական նկարիչը» (Լ. Դուռ-նովո): Ավագը եղել է Գլաձորի համալսարանի սա-նը, ստեղծագործել (1329–58) Սյունիքում, Ատրպա-տականում (Սուլթանիե), Փայտակարանում, Թավրի-զում և այլուր: 1352-ին նրա պատվերով Սարգիս Պիծակը պատկերազարդել է մի Ավետարան: Սկզբնապես կրելով Մոմիկի ու Թորոս Տարոնացու ազդեցությունը, հետագայում Ավագը հասել է շար-ժումների և հոգեբանական ավելի մեծ արտահայտ-չականության՝ հիմնականում սովորելով կիլիկյան վարպետներից: Նրա լավագույն մանրանկարներում չեշտված են գործող անձանց արտահայտությունները. կեցվածքները, հագուստները ծածանվում, ծա-լավորվում են ինչպես հողմի ժամանակ: Օձաձև գա-լարվող քղանցքները, շարժման նկատմամբ սերը գո-թական ազդեցություններ են: Ավագը, ի տարբերու-թյուն Մոմիկի և Թորոս Տարոնացու, խուսափում է բազմապլանայնությունից, Սարգիս Պիծակի պես կերպարները և մոտիվները (զարդային, բնության, ճարտ.) բերում է մի հարթության: Ավագի արվես-տում ի հայտ է գալիս երկու ավանդույթ՝ գլաձոր-յան և կիլիկյան: Եթե դեմքերը, բնանկարի զանա-զան ձևեր կրում են Թորոս Տարոնացու ազդեցու-թյունը, ապա գունային համակարգում, չափազանց-

ված շարժումներում, ծալքերի մշակման մեջ ակնհայտ են կիլիկյան ազդեցություններ:

Տաթևի մանրանկարչության դպրոցը գործել է *Տաթևի համալսարանում*: Շարունակել է Գլաձորի դպրոցի ավանդույթները, բայց դրանք հարստացրել ավելի մոնումենտալ ոճով (*Գրիգոր Տաթևացու* և նրա աշակերտի մանրանկարները 1378-ին ծաղկած 1297-ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 7482), կիրառել հայ քանդակագործության ու Մ-յան մեջ գործածված ամենապարզ զարդաձևեր, միաժամանակ զարգացրել այնպիսի ազատ դունադեկորատիվ լուծումներ (գրիչ՝ Գրիգոր, Մատենադարան, ձեռ. № 6305), որոնք մոտենում են XIV–XV դդ. մահմեդ. արվեստում նմանատիպ դունադեկորատիվ որոնումներին: Քրիստ. կանոնական պատկերագրության մեջ մտնում են մոտիվներ, որոնք վերցված են կենդանի իրականությունից, ինչպես № 7482-ի ձեռագրի «Ծննդյան» պատկերում ընկողմանած Աստվածամոր ձեռքի խնձորը՝ իբրև կուսության և պտղաբերության նշան: Մատենադարանի № 6305 ձեռագրում սուրբ ձիավորների պատկերները հնագույն մի ավանդույթի վերականգնումն էր (Լմբատավանքի, Կարմրավորի VII դ. որմնանկարների բեկորները):

Վասպուրականի մանրանկարչության դպրոցն առավել նշանավոր է եղել XIII–XV դդ.: Այդ շրջանում այն խիստ ինքնատիպ էր իր պահպանող. բնույթով, յուրահատուկ հնավանդ պատկերագր., հորինվածքային ու կերպարային ձևերով, որոնք ավելի շատ հիշեցնում էին մերձավոր-արլ. և հայկ. վաղքրիստ. արվեստը, քան ժամանակի բյուզ. կամ հայկ. դպրոցները: Միաժամանակ պահել է մի վիպական ոգի, որ հատուկ էր X–XI դդ. Փոքր Հայքի, Մալաթիայի, 1038-ի Ավետարանի և «Վեհափառի Ավետարան»-ի մանրանկարներին ոգուն, Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու զարդագոտիների ռելիեֆներին: Մյուս կողմից Վասպուրականի Մ. իր բազմազանությամբ, դրչակենտրոններով ու դպրոցներով (Աղթամարի, Արճեշի, Արծկեի, Աղբակի, Բերկրիի, Խիզանի, Վարագի, Մեծոփի, Վանի, Նարեկի, Լիմի են) և մանրանկարիչների արվեստի խոր անհատականությամբ (Զաքարիա Աղթամարցի, Սիմեոն Արճիշեցի, Հովհաննես Խիզանցի, Կիրակոս Աղբակեցի, Ծերուն, Ռստակես, Վարդան Արծկեցի, *Գրիգոր Խլաթեցի*, Ստեփանոս և ուր.) այնքան էլ մեկուսացած չի եղել և իր ստեղծագործությունների «արխաիկ» բնույթով զուգորդվել է պատմաաշխարհագր. մեծ տարածքի հետ (Եգիպտոս, Ասորիք, Կապադովկիա, իռլանդա-իսպան. ազդեցությամբ արևմտաեվրոպ. ամենաբազմապիսի ձեռագրեր են): 1113-ին ստեղծված Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունն իր կնիքն է դրել Վասպուրականի Մ-յան պահպանող. ոգու վրա: Եթե Կիլիկյան Հայաստանում և Գլաձորում պատվիրատուները հիմնականում բարձրաստիճան հոգևորականներն էին, թագավորները, թագուհիները, արքաեղբայրները և արքայորդիները, ապա Վասպուրականում՝ քահանաները, աբեղաները, տանուտերերը, առևտրականները, արհեստավորները: Այդ պատճառով ձեռագրերն ավելի համեստ են՝ հիմնականում թղթից, նկարները՝ գծով և ջրաներկագուշային թեթևակի մշակումով: Որոշ ձեռագրերում գույնի զարմանալի պայծառությունն ու թափանցիկությունը, գծային անսպառ երևակայությունը, գործող անձանց և պատկերված առարկաների վրա մակագրությունների առատությունը, գծային կորերով առարկաների և բնապատկերի յուրահատուկ հիերոգլիֆային ընկալումը Վասպուրականի դպրոցը դարձրել են հմայիչ և յուրովի գեղագիտական: Գողթն գավառը նույնպես գործել է Վասպուրականի դպրոցի ազդեցության դաշտում:

Վասպուրականի Մ-յան դպրոցի լավագույն ստեղծագործություններից են Մատենադարանի 1294-ի ձեռ. № 4814, 1305-ի ձեռ. № 2744, 1306-ի ձեռ. № 4806, 1338-ի ձեռ. № 4813, Կիրակոս Աղբակեցու 1330-ի ձեռ. № 2929, Զաքարիա Աղթամարցու 1357-ի ձեռ. № 5332, Ծերուն Ծաղկողի 1391-ի ձեռ. № 8772, Հովհաննես Խիզանցու 1401-ի ձեռ. № 4223 և այլ Ավետարանները:

XV դ. վերջից և XVI դ. սկզբից Վասպուրականի Մ-յան մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ. տեղական ավանդական ձևերն աստիճանաբար կորցրել են իրենց երբեմնի հետաքրքրությունը, կենսունակությունն ու ինքնուրույնությունը և իրենց տեղը զիջել նոր ժամանակների գաղ. միտումներին ու նախասիրություններին:

Հայկ. Մ. զարգացել է նաև գաղթավայրերում, որտեղ ստեղծվել են Մ-յան ինքնատիպ դպրոցներ: Դրանցից Ղրիմինը (XIV–XVII դդ.) և Նոր Ջուղայինը (XVII–XVIII դդ.) տվել են արժեքավոր, մնայուն գեղ. գործեր:

Ղրիմի մանրանկարչության դպրոց: Ղրիմի գրիչների, մանրանկարիչների, հատկապես բարձրաստիճան հոգևորականների (գաղթել էին հիմնականում Բարձր Հայքից և Կիլիկիայից) մի քանի սերունդ պահպանել էր կապերը հայրենիքի հետ, և իբրև օրինակելի նմուշներ Ղրիմի մանրանկարիչներն ունեցել են կիլիկյան ձեռագր. օրինակներ, որոնք հետագայում ղրիմահայերի մեծ մասի հետ տեղափոխվել են Նոր Նախիջևան (մեզ հասած ձեռագրերն այժմ գտնվում են Մատենադարանում):

Ղրիմի գրչության և Մ-յան առավել նշանավոր կենտրոններն էին Սուրխաթը (այժմ՝ Ստարի Կրիմ) և Կաֆան (այժմ՝ Թեոդոսիա), որտեղ աշխատել են Գրիգոր Սուքիասանցը, Առաքելը, Նատերի որդիներ Ավետիսը և Ստեփանոսը, վերջինիս որդի Հովհաննեսը: XIV–XV դդ. Ղրիմի Մ-յան դպրոցի լավագույն ձեռագրերից են 1356-ին Սուրխաթում Առաքելի պատկերազարդած Ճաշոցը (Մատենադարան, ձեռ. № 7408), 1401-ին Կաֆայում Հովհաննեսի պատկերազարդած Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանը» (Մատենադարան, ձեռ. № 3863): Սուրխաթի, Կաֆայի, Ղարասուբազարի գրչության կենտրոնները լայնորեն շփվել են իտալացիների և հույների հետ, ուստի հայ մանրանկարիչների գործերում ակներև է ոչ միայն կիլիկյան և Մեծ Հայքի դպրոցների, այլև բյուզ. «պալեոլոգյան» շրջանի (XIII–XIV դդ.) արվեստի ազդեցությունը: Հոգևորականության շրջանում ճգնավոր. կենցաղի, սրբերի և անապատականների նկատմամբ մեծ հետաքրքրությունը Ղրիմի Մ-յան մեջ արտահայտվել է նրանց վարքերը բովանդակող մատյանների պատկերազարդումով («Հարանց վարք», 1430, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 285, ծաղկող՝ Թադեոս Ավրամենց): XVII դ. Ղրիմի հայ մանրանկարիչներից են Խասպեկը (1666-ի Ավետարան, Կաֆա, Մատենադարան, ձեռ. № 6606), Նիկողայոս Ծաղկարարը (1684-ի Ավետարան, Կաֆա, Մատենադարան, ձեռ. № 6341) և ուրիշներ:

Նոր Ջուղայի մանրանկարչության դպրոցի մեծագույն ներկայացուցիչը *Հակոբ Ջուղայեցին* է, որը շարունակել է Վասպուրականի Մ-յան դպրոցի ավանդույթները՝ ձեռք բերելով նոր որակ: Հակոբ Ջուղայեցին հայկ. Մ-յան վերջին մեծ նկարիչն է:

XVII–XVIII դդ. հայ գրքի տպագր. մշակույթի զարգացման հետ Մ. աստիճանաբար իր տեղը զիջել է գրքի պատկերազարդման տպագր. արվեստին:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.3, 1–3-րդ, 11.4, 1–4-րդ և 11.5, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Ճանաչյան Մ., Հայկական մանրանկարչություն, հ. 1, Վնտ., 1966: Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964: Հայկական մանրանկարչություն (ներածությունը և նկարների բացատրությունները Լ. Ա. Դուռնովոյի), Ե., 1967: Ավետիսյան Ա., Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե., 1971: Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Հակոբյան Հ., Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք 1,2, Ե., 1976, 1982: Նույնի, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII–XIV դդ., Ե., 1989: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, 2, Ե., 1983, 1987: Ղազարյան Վ., Այուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ – XIV դ. սկիզբ), Ե., 1984: Խորանների մեկնություններ (աշխատասիր. Վ. Ղազարյանի), Ե., 1995: Քոթանջյան Ն., «Էջմիածնի Ավետարանը», Ե., 2000: *Дрампян Р., Армянская миниатюра и книжная искусства. Очерки по истории искусства Армении, М.-Л., 1939; Дурново Л.А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1978; Измайлова Т.А., Армянская миниатюра XI века, М., 1979; Корхмазян Э.М., Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1979; Матенадаран, т. 1, Армянская рукописная книга VI–XIV веков (составители Казарян В., Манукян С.), М., 1991; Дрампян И.Р., Торос Рослин, Е., 2000;* Der Nersessian S., L'art arménien, P., 1977; Նույնի, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, v. 1–2, W., 1993; Mattews Th. F. and Sandjian A., Armenian Gospel Iconography. The Tradition of the Glajor Gospel, W., 1990; Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, ed. by Th. F. Mathews and R. S. Wieck, N. Y., Baltimore, 1994.

Վիգեն Ղազարյան

ՄԱՆՐՈՒՍՈՒՄ, մանրուսմունք, հայ միջնադարյան երգչածիսական մատյան, խազգիրք: Մ. ժողովածուները մեծ տարածում են ստացել հատկապես XII դարից, Կիլիկյան Հայաստանում, *Ներսես Շնորհալու* անմիջական նախաձեռնությամբ: Դրանք, իբրև առավել բարդ, զարդոլորուն ոճի հոգևոր երգերին վերաբերող ձեռնարկներ, սերտորեն առնչվել են եկեղեցական երգեցողության և խազագիտության գործնական ուսուցման հետ: *Կոմիտասը* ժողովածուի անվանումը բացատրել է իբրև «ուսումն եկեղեցական երգերի, եղանակների և խազերի մասին»: Ներսես Շնորհալին իր

ՄԱՆՈՒԵԼ «Թուղթ ընդհանրական»-ում պարտադիր է համարել Մ-ան արվեստի տիրապետումը բոլոր քահանաների համար: Մ-ան երգերի (մեղեդիներ, ալելուներ, ժամամուտներ, փառքեր, եղիցիներ, Պատարագի սրբասացություններ ևն) խազավորումը աչքի է ընկնում խիտ և ճոխ հյուսվածքով, որի պատճառով Մ-ան գրքերը կոչվել են նաև խազգրքեր: Մ-ան խազերի նկարագիրը տարբերվում է *չարականի* խազերից: Բոլոր տվյալները վկայում են, որ Ներսես Շնորհալին է հղացել Մ-ան խազերի մի նոր, ածանցյալ բնույթի և բարդ նկարագիր ունեցող խազերի խմբի ներմուծումը այդ ժողովածուների մեջ: Մ. ամենաքիչ հետազոտված միջնադարյան երաժշտական ժողովածուն է: Հիմն. խոչընդոտը հայ միջնադարյան խազային նոտագրության վերծանման խնդիրն է, թեև Մ-ան մի քանի մասեր հնարավոր է վերականգնել *ըստ Ժամագրքի* և *Խորհրդատետր-Պատարագամատույցի* հետ ունեցած ընդհանուր բաժինների: Մ. ընդհանրություններ ունի բյուզ. Փսալտիկոն և Պապադիկի կոչվող երգչական մատյանների հետ: Մ. երգերի զգալի մի հատված դուրս է եկել գործածությունից արդեն ուշ միջնադարում: Ներկայումս Մ. պահպանում է իր նշանակությունը որպես խազագրության ուսումնասիրման կարևորագույն աղբյուրներից մեկը: Ազգ. հավաքածուներում պահվում են բազմաթիվ ընտիր գրչագիր Մ. գրքեր, որտեղ զետեղված են նաև Մ-ան ձայնեղանակների անվանացուցակները, որոնց վրա առաջինը ուշադրություն է դարձրել և հրապարակել Ղ. Ալիշանը: Մ-ան խազերի և ձայնեղանակների հետազոտմամբ հատուկ զբաղվել է Կոմիտասը: Նա դասակարգել է դրանք ըստ ութ ձայնի և հաշվարկել ձայնեղանակների ընդհանուր քանակը, որը XII–XIV դդ. հասել է 152 չափանմուշ եղանակի:

Գրկ. Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873, էջ 448: Նույնի, Սիսուան, Վնտ., 1885, էջ 154: Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 112–125: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Ե., 1973, էջ 12–15: Նույնի, Երաժշտությունը Հայկական Կիլիկիայում, Ե., 1989, էջ 24–25: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959, էջ 82–83, 89–92: *Аревшатян А., Сборник "Манрусум" и монастырская певческая традиция XII–XIV вв. Киликийской Армении, сб. "Монастырские певческие традиции в древнерусской музыке" (к 600-летию Кирилло-Белозерского монастыря), СПБ, 1997.*

Աննա Արևշատյան

ՄԱՆՈՒԵԼ (ծ. և մ. թթ. անհտ), ճարտարապետ, նկարիչ և քանդակագործ: Ստեղծագործել է X դ. 1-ին կեսին: Եղել է Արծրունյաց թագավորական տան գլխ. ճարտարապետը: Կառուցել է Ոստան ավանը և նրա պալատ. համալիրը, Աղթամար բերդ-քաղաքը, Գագիկ Արծրունու թագավոր. պալատը, *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցին:

Մ-ի մասին տեղեկություններ է հաղորդում X դ. պատմիչ Թովմա Արծրունու Պատմությունը շարունակող Անանուն Արծրունին, որը պալատի կառուցման առնչությամբ Մ-ին անվանել է «իմաստուն և հանճարեղ» ճարտարապետ, իսկ Ս. Խաչ եկեղեցու կառուցման մասին գրել է. «Եվ քանզի ճարտարապետն էր Մանուելը, իմաստնությամբ լի և իր գործում զորավոր մի մարդ... հրաշակերտեց եկեղեցին զարմանալի արվեստով»: Թագավոր. պալատը (չի պահպանվել), ըստ Անանուն Արծրունու, ունեցել է արտակարգ մեծ չափեր. «պալատի մեծությունը ահավոր է ու ապշեցնող», քառանկյունի չենք, «... որի լայնության և երկարության չափը քառասուն կանգուն էր, նույնքան էր և բարձրությունը... Պալատի շինվածքը, հիմքից մինչև օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն առանց այունների, ինչն արդարև մտքից վեր է ու զարմանքի արժանի» (Թովմա Արծրունի եվ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, գլ. Ը–Թ): Ըստ Հ. Օրբելու կատարած վերակազմության, պալատի ծածկն իրականացված է եղել փոխհատվող կամարների միջոցով, որի շնորհիվ Մ-ի այս շինությունը միջնադարյան հայ արվեստի եզակի նմուշներից է:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.6, 1-ին պատկերը:

Գրկ. Թովմա Արծրունի եվ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1999: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Մնացականյան Ստ., Վարպետաց վարպետ Մանուել. Տրդատ. Մոմիկ, Ե., 1982: *Орбели И. А., Избранные труды, т. 1, М., 1968;* Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Ստեփան Մնացականյան

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՑ Գրիգոր [1773, գ. Հախում – 1846, գ. Հախում (այժմ՝ գ. Վարագավան, ՀՀ Տավուշի մարզում)], արքեպիսկոպոս, հայ ազատագրական շարժման գործիչ: Կրթությունն ստացել է Նոր Վարագավանքի վարժարանում: Հայ ժողովրդի ազատագրումը կապելով Այսրկովկասում ռուս. առաջխաղացման հետ՝ Մ.

գործունորեն մասնակցել է XIX դ. Պարսկաստանի դեմ Ռուսաստանի մղած պատերազմներին: 1804–13-ի ռուս-պարսկ. 1-ին պատերազմի ժամանակ Մ. Ջավախքի և Շամշադինի (Տավուշի) հայերից կազմել է մի զորաջոկատ (500 հոգի), որը մասնակցել է Գանձակի (Գյանջայի) գրավմանը (1804-ի հունվ. 3), այնուհետև՝ ռուս. զորքերի երևանյան 1-ին (1804) և 2-րդ (1808) արշավանքներին: Ջոկատը հատկապես աչքի է ընկել Նախիջևանի գրավման ժամանակ (1808-ի նոյեմբ. 1), որտեղ Մ. վիրավորվել է: Ցուցաբերած արիության և ծառայությունների համար Մ. պարգևատրվել է Ս. Գեորգիի IV աստիճանի, Ս. Վլադիմիրի և Ս. Աննայի շքանշաններով: Ցար. կառավարությունը նրան նշանակել է ցմահ թոշակ: 1826–1828-ի ռուս-պարսկ. 2-րդ պատերազմի տարիներին Մ-ի 300 հոգուց բաղկացած նոր ջոկատը կրկին աչքի է ընկել պարսկ. զորքերի դեմ մղած պարտիզան. կռիվներում՝ ապահովելով Ղազախի, Շամշադինի, Դիլիջանի հայ բնակչության անվտանգությունը և ռուս. բանակի մատակարարումը պարենով ու զինամթերքով: 1826-ին Մ. 40 ձիավորով Հաղպատի վանքից Թիֆլիս է ուղեկցել *Եփրեմ Ա Զորագեղցի* կաթողիկոսին: Մ-ի ջոկատի վճռական գործողությունների շնորհիվ ճնշվել է Բորչալուի թուրք խաների և աղալարների հրահրած խռովությունը, գերությունից ազատվել են մի քանի հարյուր հայ ընտանիքներ: Ջոկատը հաջող մարտեր է մղել նաև Զուրաբ խանի և պարսիկների կողմն անցած վրաց արքայազն Ալեքսանդրի զորքերի դեմ: Մ-ի միջնորդությամբ Կովկասի կառավարիչ Ա. Երմոլովը հատուկ հրամանագրով ազատել է Ղազախ-Շամշադինի հայ գյուղացիներին մահմեդ. կալվածատերերի ենթակայությունից: Մ-ի ջոկատը մասնակցել է Երևանի բերդի գրավմանը (1827-ի հոկտ. 1): Պատերազմից հետո վերադարձել է հայրենի գյուղ, վերաշինել Նոր Վարագավանքը: Հախումում Մ. բացել է նաև ծխական դպրոց:

Գրկ. Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւն և Կովկասի Հայք XIX դարում, հ. 1, Թ., 1894: Գրիգորյան Ա., Գրիգոր Մանուչարյանցի պարտիզանական ջոկատը, Ե., 1978:

Պավել Զոբանյան

ՄԱՇԿԵՎՈՐԻ ՎԱՆՔ, Մաշկավոր, միջնադարյան կրոնական, գիտական և դրչության նշանավոր կենտրոն Կիլիկյան Հայաստանի Ճկեր գավառում, Սև լեռներում (Մարաշից ոչ հեռու): XII դ. սկզբին կառուցել է Թորոս Ա Ռուբինյան իշխանը: 1130-ին Մ. վ-ում ավարտվել է մի Ճառընտիր, որի գրիչը նույնացվում է «Վայ ողբոց» նշանավոր ստեղծագործության հեղինակ Գրիգոր Մաշկևորի հետ (որոշ ուսումնասիրողներ այս անվան հետ են կապում վանքի անունը): Մ.վ-ի եկեղեցին նվիրվել է Աստվածածնին, Հովհաննես Կարապետին և առաքյալներին: XIV դ. վանքը եղել է եպիսկոպոսանիստ: Հիշատակարանները հավաստում են, որ Մ.վ. ուսուն կյանք է ապրել, և միաբանները մշտապես կարևորել են ուսումն ու գիտությունը: Առաջնորդների (Դավիթ Հովհաննես, Թորոս, Հայրապետ, Գրիգոր, Պողոս և այլք) մեծ մասն արժանացել է եպիսկոպոս. աստիճանի: Վանքի երևելի միաբաններից էր Բարսեղ վրդ. Մաշկևորցին: Նա Մ.վ-ի Հայրապետ առաջնորդի օրոք կատարել է Մարկոսի Ավետարանի մեկնությունը (1325), որի միայն երկրորդ մասն է մեզ հասել: Բարսեղ Մաշկևորցու մեկնությունը լավագույններից է, ունի արժեքավոր հիշատակարան: XII դ. վերջի անվանի գրիչ և ծաղկող Վարդանից մեզ է հասել լուսանցազարդերով ու զարդագրերով զարդարված մի Ավետարան (1187) և մի Ճաշոց (1192): XIII դարից հայտնի են հինգ ձեռագիր (գրված 1259, 1265, 1268, 1274 և 1298-ին), իսկ XIV դարից՝ երեք (գրված 1301, 1302 և 1335-ին): Մ. վ-ում են գործել ականավոր գրիչներ Դավիթ վանահայրը (XII դ.), Կիրակոսը, Առաքել Հնազանդենցը (կազմարար), Բարսեղ արքեպիսկոպոսը (երեքն էլ՝ XIII դ.), Հովհաննեսը, Ներսես Քահանան (XIV դ.) և այլք: Վանքում ստեղծված և մեզ հասած ձեռագրերը պահվում են Երևանի, Վենետիկի, Նոր Ջուղայի մատենադարաններում:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Ոսկյան Հ., Կիլիկիայի վանքերը, Վնտ., 1957:

ՄԱՇՏՈՑ, Հայ եկեղեցու ծիսարան-ժողովածու, որը պարունակում է քրիստոնեական ծիսակարգի կանոններ, ինչպես նաև հատուկ աղոթքներ, օրհնություններ: Անվան ծագումը կապվում է, ըստ ավանդության՝ Մեսրոպ Մաշտոցի, ըստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ *Մաշտոց Ա Եղիվարդեցի* կաթողիկոսի անվան հետ: Հայագիտության մեջ ավելի հավանական է համարվում Կիրակոս Գանձակեցու վկայությունը: Ձևավորվել է IV–V դարերից սկսած՝ պահպանելով հեթանոս. Հայաստանում

տարածված մի շարք հնագույն ծեսերի հետքերը: Դրանցից են՝ կյանքի հիմն. հանգուցակետերին նվիրված (մկրտություն, պսակ, թաղում), ջրի պաշտամունքի հետ կապված (ջրօրհնեք, խաչալվա, ոտնլվա, ջրհորի օրհնություն ևն), երկրագործության, նաև բուսականության և պտղաբերության պաշտամունքներից բխող (սերմ, շեղջ, կալ, հնձան, անդաստան, խաղողօրհնեք) ծեսերը, ընտանիքի պաշտամունքի (տան, ընտանիքի, սեղանի, աղի ևն) օրհնությունները: Մ-ում տեղ են գտել նաև սկզբնապես հմայական և ոգեկոչման գործողությունների հետ կապված ծեսեր (դիվահարի, լուսնոտի, դժվարածին կնոջ վրա, երաշտի դեմ կարդացվող աղոթքները, մատաղի և հացի օրհնությունները ևն): Մ-ի կազմավորմանն ու հարստացմանը մասնակցել են Գրիգոր Ա Լուսավորիչը, Սահակ Ա Պարթևը, Հովհաննես Ա Մանդակունին, Մաշտոց Ա Եղիվարդեցին, Գրիգոր Բ Վկայասերը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և ուր.: Ծիսարանի մեջ են մտել Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Երուսաղեմացու ամբողջական կանոնների, առանձին քարոզների և աղոթքների թարգմանությունները, ինչպես նաև հայ հեղինակների ծիսական բովանդակության ինքնուրույն նյութերը: Մ. սովորաբար բաժանվում է երեք մասի՝ Փոքր կամ Առձեռն Մ., բովանդակում է քահանայի խորհուրդները և արարողությունները (մկրտություն, դրոշմ, մեռելաթաղ, սովորական օրհնություններ). Մայր Մ., պարունակում է եպիսկոպոսական արարողություններ (ձեռնադրություն, գավազանի ընծայություն, եկեղեցու օծում, քահանայաթաղ, մեծ օրհնություններ). Հայր Մ., կաթողիկոսին պատկանող արարողություններ (թագավորի, կաթողիկոսի օծում, եպիսկոպոսի ձեռնադրություն, մյուռոնօրհնեք ևն): Հարուստ և բազմազան է Մ-ի երաժշտ. բաղադրիչը՝ պայմանավորված երաժշտածիս. գրքերի կենցաղավարման համակարգում Մ-ի առանձնահատուկ դերով: Ի տարբերություն մյուս եկեղեց. գրքերի, Մ. ի սկզբանե նախատեսված էր նաև արտաեկեղեց. կենցաղավարման համար: Այստեղից էլ նրա մշտական շփումը ժող. ծիսականության և բանահյուսության հետ: Ձեռագիր Մ-ներում կանոնների ընթերցվող նյութը ընդմիջարկում են խազագրված սաղմոսներ, շարականներ, գանձեր և տաղեր:

Ուշ միջնադարում երևան են եկել խառը տիպի ժողովածուներ՝ Մ-Գանձարաններ, Մ-Տաղարաններ, որտեղ աշխարհականացման ոգին դրսևորվում է ոչ միայն երաժշտաբանաստեղծ. նյութի առավել շեշտադրումով, այլև աշխարհիկ և ժող. տաղերի և ողբերի երևան գալով: Կանոնագրված և չկանոնագրված երգասացությունների առկայությունը Մ-ի երաժշտ. շարքերի շրջանակներում, այդ շարքերի, այսպես կոչված՝ «բաց ձևի» միտումը կազմում է Մ-ի հիմն. տարբերությունը մյուս երաժշտածիս. գրքերից: Դարերի ընթացքում հայ գրիչներն ստեղծել են մի շարք ընտիր Մ-ներ: Հիշատակելի են Երևանի Մատենադարանի № 1001, Վենետիկի Ս. Ղազար վանքի մատենադարանի № 457 (երկուսն էլ՝ IX–X դդ.), Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի № 2027 (1266) ձեռագրերը ևն:

Առաջին տպագիր Մ. լույս է տեսել 1667-ին, Ամստերդամում, *Ոսկան Երևանցու* ջանքերով:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.6, 2-րդ պատկերը:

Գրկ. Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Արեվշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Conybeare Fr., Rituale Armenorum, Oxf., 1905.

Աննա Արևշատյան

«**ՄԱՇՏՈՑ**», 1266-ի մագաղաթե պատկերազարդ ձեռագիր: Սսում ընդօրինակել է գրիչ Ավետիք քահանան, Հռոմկլայում ծաղկել է *Թորոս Ռոսլինը*: Պատվիրատուն է Վարդան եպիսկոպոսը: Պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում (ձեռ. № 2027): Ձևավորված խորաններից, լուսանցազարդերից, գլխատառերից ու գլխազարդերից բացի, ձեռագիրն ունի նաև ողջ էջը գրավող տերունական պատկերներ, որոնց շարքն սկսվում է նույն էջի վրա իրար կից ներկայացված Հովնանի մարգարեության դրվագներով: Սաղմոսագրքի թեմաներով պատկերները մեզ հայտնի առաջին հայկ. մանրանկարներն են, իսկ «Հովհաննես ավետարանիչի թաղումը» և «Կարմիր ծովի անցումը» հայ արվեստում ներկայացված են առաջին անգամ: «Մ.»-ի մանրանկարների պատկերագրության առանձնահատկությունները մատնանշում են ծաղկողի կողմնորոշումը դեպի XI դ. բյուզ. գրքարվեստը և վաղ միջնադարյան արվեստը: Ձեռագրի որոշ մանրանկար-

ներում երևան են եկել քրիստ. արվեստի նույնանուն երկերում գրեթե չհանդիպող հատկանիշներ, օր., «Կարմիր ծովի անցումը» հորինվածքում՝ երկնքից իջնող սրազեն հրեշտակի պատկերը: Նրբությամբ ու բծախնդրությամբ են նկարված կերպարների դեմքերը և այլ մանրամասներ «Երեք մանուկները կրակե հնոցում» մանրանկարում:

«Մ.»-ի ձևավորման մեջ Թորոս Ռոսլինի պատկերագր. նորամուծությունները և կատարող. բարձր վարպետությունը թույլ են տալիս մատյանը դասել միջնադարյան գրքարվեստի լավագույն նմուշների շարքը:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.6, 3-րդ պատկերը:

Գրկ. Արեվշատյան Ա., X–XVIII դարերի «Մաշտոցների» երաժշտական կազմի առանձնահատկությունները, ԼՀԳ, 1985, № 1: *Чугасзян Л.Б., Миниатюра Тороса Рослина "Переход через Красное море", ԼՀԳ, 1990, № 10;* Narkiss B., Armenian Art Treasures of Jerusalem, Oxf., 1980.

ՄԱՇՏՈՑ Ա ԵՂԻՎԱՐԴԵՑԻ, Եղիվարդցի, Սևանցի [ավազանի անունը՝ Ստեփանոս, 833, գ. Սոթք (Սոթք գավառ) – 898, ամփոփված է Գառնիի տաճարի մոտ գտնվող մատուռում], Ամենայն հայոց կաթողիկոս 897-ից: Հաջորդել է *Գևորգ Բ Գառնեցուն*: Առաջին ուսուցիչը եղել է հայրը՝ Եղվարդ գյուղի քահանա Գրիգորը, ապա ուսանել է Թեոդորոս կրոնավորի, այնուհետև՝ Գեղարքունիքի *Մաքենյաց վանքում* Ստեփանոս վարդապետի մոտ՝ հմտանալով Սուրբ Գրոց մեկնության մեջ: Այնույնյաց Դավիթ եպիսկոպոսը նրան ձեռնադրել է քահանա և օծել Մաշտոց անունով: Այնուհետև, որպես ճգնավոր, անապատական կյանք է վարել Արտավազդիկ (Ծաղկաձորի մոտ, Աբասաձորում), 860-ին՝ Սևանի մենաստաններում: Մաշտոց վարդապետի ջանքերով, Այնույնյաց Գաբուռն Վասակի կնոջ՝ Մարիամ Բագրատունու միջոցներով Սևանա կղզում 871-ին կառուցվել են Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները: Հիմնադրել է Ս. Առաքելոց վանքի միաբանությունը: Հայաստանի տարբեր վայրերից այդտեղ են հավաքվել հոգևորականներ, որոնք ճգնել են՝ ըստ Բարսեղ Կեսարացու կազմած կանոնների: Հայոց իշխան, հետագայում՝ Հայոց թագավոր Աշոտ Ա (855–890), ի նշան հարգանքի, Մաշտոց վարդապետին է նվիրել Վասիլ թագավորի ամենակարող Սուրբ խաչը, ինչպես նաև վանքապատկան տիրույթներ՝ 7 գյուղ Գառնիում և այգի՝ Երևանում:

Մաշտոց վարդապետը *Սևանավանքում* հիմնել է վարժարան, որը եղել է Մաքենյաց դպրոցի և Այնույնյաց վարդապետարանի շարունակությունը: Վարժարանում հոգևոր առարկաներից բացի դասավանդվել են նաև քերականություն, ճարտասանություն և փիլիսոփայություն: Սևանի վարդապետարանը բացի քահանայական ուսուցումից ունեցել է նաև վարդապետական աստիճան շնորհելու իրավունք:

Մաշտոցի աշակերտներից է եղել նրա վարքագիրը՝ Ստեփանոս գրիչը, որի թողած վարքհիշատակարանը կարևոր սկզբնաղբյուր է նաև վանքի պատմության ուսումնասիրման համար: Աշակերտների մեջ առանձնացել են Հովհաննես Դրասխանակերտցին (Հայոց կաթողիկոս *Հովհաննես Ե Դրասխանակերտցի*)՝ նրա աջակիցն ու համախոհը, Ստեփանոս վրդ. Սևանցին (Հայոց կաթողիկոս *Ստեփանոս Գ Սևանցի*):

Մեզ է հասել Մ. Ա Ե-ու գրած երկու թուղթ. մեկը՝ ուղղված սպարապետ Աբասին, մյուսը՝ 893-ի երկրաշարժի արհավիրքից տուժածներին:

Մ. Ա Ե. կարգավորել և խմբագրել է նախորդ հայրապետների (Գրիգոր Ա Լուսավորչից սկսած) կողմից տարբեր ժամանակներում ծիսական համակարգ ներմուծված կանոնները՝ ամփոփելով մեկ ժողովածուի մեջ, որը նրա անունով կոչվում է *Մաշտոց*:

Կաթողիկոս. գահին Մ. Ա Ե-ուն հաջորդել է Հովհաննես Ե Դրասխանակերտցին:

Գրկ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե–ԺԲ դդ., աշխատասիր. Ա. Մաթևոսյանի, Ե., 1988: Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Ստեփանոս Օրբելյան, Այնիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Ղազարոսյան Ա., Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, «Էջմիածին», 1991, № 1–3:

Արփենիկ Ղազարոսյան

ՄԱՍԻՍ, Արարատ, լեռնազանգված Մեծ Հայքի Այրարատ նահանգում, Արարատյան դաշտավայրի հարավում: Կազմված է երկու կոնաձև գագաթներից, որոնցից մեծը (մշտաձյուն գագաթովը) կոչվում է Մեծ Մասիս, իսկ փոքրը՝ Փոքր Մասիս կամ Սիս: Մեծ Մասիսի բարձր. 5165 *մ* է (Հայկ. լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը): Մ. այն բիբլիական սուրբ լեռն է, որի վրա իջևանել է *Նոյյան տապանը*՝ Ջրհեղեղի ժամանակ: Համաշխ. ջրհեղեղից լեռան գագաթին փրկվել են ութ հոգի՝ նոր

մարդկության նախահայր *Նոյն* ու իր կինը, նրանց որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը՝ իրենց կանանց հետ: Նոյի և իր ընտանիքի փրկության պատմությունը արձանագրված է Աստվածաշնչում (Ծննդ. 7, 8): Ջրհեղեղից հետո Նոյը Մ-ի վրա զոհասեղան է պատրաստել և զոհ մատուցել Աստծուն. Աստված Նոյի հետ *ուխտ* է կնքել, որ այլևս երկիրը չի կործանի ջրհեղեղով. ի հաստատումն իր՝ աստվածային հավիտենական ուխտի, Աստված առաջին անգամ ամպերի մեջ կապել է ծիածանը (Ծննդ. 9.12–17): Այսպիսով, Մ-ի դագաթից է սկսվել նոր՝ հետջրհեղեղյան մարդկության պատմությունը:

Աստվածաշնչում Մ. հիշատակվում է Ա-ր ա ր ա տ անվամբ: Արարատի երկիր և Արարատյան թագավորություններ անվամբ է հիշատակվում նաև Հայաստանը. «...Ադրամելեքն ու Սարասարը նրան [Սենեքերիմ արքային] սրով հարվածեցին և Արարատի երկիրը փախան» (Դ Թագ. 19.37), «...Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին և ասքանազյան գնդին...» (Երեմիա 51.27, տես նաև Եսայի 37.38): Տես նաև *Թորգոմա տուն* հոդվածը:

Մ-ի հետ են կապված բազմաթիվ ավանդություններ՝ նրա ստորոտում ապրող վիշապների, նրա լանջերին անդնդասույզ եղած Հայոց Արտավազդ արքայի մասին: Հայոց հին վիպասանական երգերում Մ. անվանվում է «ազատն»՝ հավանաբար պահպանելով հինավուրց իրողության՝ Ջրհեղեղից զերծ, ազատ մնալու կամ Նոյի՝ Մ-ով ազատվելու հիշողությունը: Պատմիչները (*Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի*) վկայում են, որ Հայոց *Տրդատ Գ* Մեծ ապաշխարյալ թագավորը *Հռիփսիմյանց կույսերի* վկայարանի համար սուրբ Մ-ից մեծամեծ քարեր է շալակած բերել: Իսկ *Հակոբ Մծբնացին* Նոյյան տապանը տեսնելու և նրանից մի փայտե մասունք բերելու նպատակով փորձել է բարձրանալ Մ-ի դագաթը: Աստծո հրեշտակը նրան տապանից մի խաչաձև փայտ է ուղարկել, երբ նա հոգնած ննջելիս է եղել Մ-ի լանջին: Նույն տեղում բխել է աղբյուր, որը կոչվել է Հակոբա աղբյուր: Մ-ի հս-արլ. լանջի Ակոռի գյուղում IV դ. հիմնվել է *Ակոռիի Ս. Հակոբ վանքը*, որը Ակոռի գյուղի հետ կործանվել է 1840-ի երկրաշարժի ժամանակ:

Դարերի ընթացքում բազմաթիվ հավատացյալներ, ուխտագնացներ և գիտ. արշավախմբեր փորձել են Մ-ի դագաթին հայտնաբերել Նոյյան տապանը:

Մ-ի և Նոյյան տապանի հանդեպ մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում արդի ժամանակաշրջանում ևս:

Մ. երկնադեպ ու սուրբ վկան է մնում աստվածաշնչյան խորհրդավոր իրողությունների: Ըստ եկեղեց. ավանդության՝ Մ-ի վրա թևածում են Նոյյան տապանի պահապան հրեշտակները: Մ. հայ ժողովրդի, Հայոց պետականության, Արմ. Հայաստանի կորսված տարածքների («դերյալ Արարատ») սրբազան խորհրդանիշն է: Պատկերված է XX դ. վերստեղծված հայկ. պետության՝ Հայաստանի Հանրապետության երեք զինանշաններում (առաջին և նրանից վերցված երրորդ հանրապետության զինանշաններում՝ Նոյյան տապանով):

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.6, 4-րդ պատկերը:

Լևոն Սարգսյան

«**ՄԱՍԻՍ**», հասարակական, քաղաքական, կրոնական, գրական օրաթերթ, ապա շաբաթաթերթ (1884-ից): Լույս է տեսել 1852–1908-ին, Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Կ. Ություճյան, Տ. Արփիարյան, Գ. Զոհրապ, Հ. Աստուր, Ա. Արփիարյան, Մ. Շամտանճյան, Սիպիլ և ուր.: «Մ.» Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթի՝ «Հայաստանի» շարունակությունն է, բայց երբևէ չի ընդունել իր՝ պատրիարքարանի պաշտոնաթերթ լինելը: Խմբագիր Կ. Ություճյանը թերթին տվել է անկախ ուղղություն, սակայն գրեթե բոլոր հիմն. հարցերում արտահայտել է պատրիարքարանի տեսակետները, մշտապես տպագրել նրա պաշտոն. հայտարարությունները, ազդերը: Թերևս սրանով է բացատրվում, որ Կ. Ություճյանի խմբագիր լինելու տարիներին (1852–84), «Մ.» միանշանակ վերաբերմունք չի ունեցել կղերի, արևմտահայ հանրության մեջ նրանց տեղի ու դերի նկատմամբ: Պաշտպանել է Մայր աթոռի անվանական առաջնությունը Հայ առաքելական եկեղեցու պատրիարքությունների և նվիրապետ. այլ աթոռների հանդեպ՝ չթաքցնելով, սակայն, որ կողմնակից է Կ. Պոլսի հայոց պատրիարքության լիակատար անկախության գաղափարին:

Թերթն ի սկզբանե սատարել է (1850–60) արևմտահայերի սահմանադրությունը (տես *Ազգային սահմանադրություն*): Այդ առումով ավելի վճռական է դարձել Խրիմյան Հայրիկի (տես *Մկրտիչ Ա Վանեցի*) պատրիարքության տարիներին: Նպատակային նյութեր է տպագրել հօգուտ գավառահայության ազգ. և կրոն. իրավունքների (ի դեմս Ազգային սահմանադրության վերանայման) և գավառի առաջնորդների իրավասությունների ընդլայնման: Գավառահայության հարստահարումների թեման արծարծելիս՝ «Մ.» 1870-ական թթ. կարևորել է հայ լուսամիտ և առաքինի կղերի գործունեությունը, հայրենասիրությունը և սկզբունքայնությունը: Նրա էջերում քննադատվել են Հայ եկեղեցու ավանդներից շեղված, անձն. նպատակներ հետապնդող անձինք: Այս մոտեցումն առանձնապես ընդգծվել է Ն. *Վարժապետյանի* պատրիարքության տարիներին, երբ «Մ.» հայ կղերի, մանավանդ գավառի առաջնորդների առջև դրել է ժողովրդի տնտ. և հոգևոր կացության բարելավմանը հետամուտ խնդիրներ:

Հայ հարամվանությունների հանդեպ «Մ.» ունեցել է հիմնականում զուսպ դիրքորոշում, սակայն շարունակաբար պայքարել է օտար քարոզիչների ազդավեր գործունեության դեմ: Հակադրվել է կաթոլիցիզմի և բողոքականության՝ այս ուղղությամբ գործադրած ջանքերին և Հայ եկեղեցուց ակնկալել դրա դեմն առնող միջոցներ: Պաշտպանել է տարբեր դավանության պատկանող հայերի ազգ. միասնության գաղափարը: Հայ կաթոլիկների առաջնորդ Անտոն Հասունյանի՝ Վատիկանի սադրանքներով հայերին դավանափոխ անելու գործելակերպի պատճառով սկիզբ առած Հասունյան-Հակահասունյան բախումների ժամանակ անվերապահորեն ջատագովել է առաջադեմ հակահասունյաններին: «Մ.» ժողովրդավարության դիրքերից քննադատել է պատրիարք Խ. Աշըգյանին, այլ հոգևորականների և գավառական մի շարք առաջնորդների՝ Հայ եկեղեցու առանձնաշնորհումները օսմ. Թուրքիայում պաշտպանելու, հոգևոր դասին ազդանվեր գործունեության մղելու նպատակով: «Մ.» լուսաբանել է նաև արևմտահայ գրական կյանքը, տպագրել գրաքննական հոդվածներ, հայ և եվրոպ. գրողների ստեղծագործություններ: Թերթին աշխատակցել են Հ. Պարոնյանը, Ե. Օտյանը, Մ. Աճեմյանը, Ե. Տեմիրճիպաշյանը և ուրիշներ:

Ալբերտ Խառատյան

ՄԱՍՅԱՑ

«**ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ**», ամսագիր: Լույս է տեսել 1855–60-ին, Փարիզում (հայերեն և ֆրանսերեն), 1860–65-ին՝ Թեոդոսիայում (հայերեն և ռուսերեն): Խմբագիր՝ Գ. *Այվազովսկի*: «Մ.ա.»-ի գաղափարական ուղղվածությունը պայմանավորված է եղել նրա խմբագրի դիրքորոշումով: Մինչև 1856-ը Գ. Այվազովսկին, լինելով *Մխիթարյան միաբանության* անդամ, հետևել է մխիթարյան ուղեգծին՝ ձգտելով հիմնականում շրջանցել Հայ առաքելական և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների դավան. հակասությունները կամ զուսպ դիրք գրավել դրանց հանդեպ: 1855-ի համարներում հետամուտ է եղել այն տեսակետին, որ ազգ. միաբանության հարցում կրոնը և դավանանքը առաջնային չեն, էականը հաս., քաղաքացիական միաբանությունն է: Նախապատվությունը տալով կաթոլիկ. դավանանքին՝ «Մ. ա.» երբեմն կասկածի տակ է առել Հայ եկեղեցու ուղղափառությունը, երբեմն էլ փորձել է համահարթեցնել Կաթոլիկ և Հայ եկեղեցիների տարբերությունները՝ շեշտը դնելով քրիստ. դավանանքի ընդհանրությունների վրա: Գ. Այվազովսկու Մայր եկեղեցի վերադառնալուց (1856) հետո «Մ. ա.» կտրուկ փոխել է իր դիրքորոշումը. քննադատել է մխիթարյաններին, նրանց մեղադրել մոլեռանդության, ազգից հեռանալու մեջ, ազգապահպանման ամենահզոր լծակ համարել ազգ. դավանանքը: Օրինակ բերելով լեհահայերին՝ նրանց ձուլվելու պատճառը համարել է՝ «Իրենց հայրենի դավանանքեն ետ կենալու ու կաթոլիկ ըլլալու մեջ» (1857, № 1, էջ 3): «Մ. ա.» տպագրել է կաթոլիկ Մ. *Զամչյանի* «Եկեղեցի հայոց թուղթ Վահանայ Արշարունւոյ» հոդվածը, որտեղ հեղինակը հերքել է Հայ եկեղեցու՝ հերձվածող լինելու մտայնությունը և պարսավել գոլեճցի կրոնամոլներին: 1857–58-ին ամսագիրը հրապարակել է Հայ եկեղեցու կանոնադրությունը՝ «Սահմանք տեսչութեան Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսիա»:

«Մ. ա.» *կաթոլիկության* քննադատությանը զուգակցել է *բողոքականության* հան-

դեպ իր անհաշտ կեցվածքը, անդրադարձել օսմ. Թուրքիայում ազգի կրոն. միասնությունը խարխլող բողոքականության գործունեությանը: Հայ հաս. կյանքում ազատամտության դեմ մղած իր պայքարը Գ. Այվազովսկին ներկայացրել է իբրև պայքար բողոքականության դեմ:

«Մ. ա.» հետաքրքրական տեղեկություններ է հաղորդել Հայ եկեղեցու տոների, ավանդությունների մասին, տպագրել հայոց վանքերի, եկեղեցիների պատմությանը նվիրված հոդվածներ: Ուշադրավ են «Կրոնը արվեստում» թեմայով նրա հրապարակած նյութերը, մասնավորապես՝ եվրոպ. կերպարվեստում ավետարան. սյուժեի մարմնավորմանը նվիրված էջերը՝ համապատասխան պատկերագրություններով հանդերձ: Քրիստ. վարդապետության և ազգ. եկեղեցու դավանանքի քարոզչությամբ «Մ. ա.» իր ուրույն տեղն ունի հայ կրոն. հրատարակությունների շարքում:

Ալբերտ Խառատյան

ՄԱՍՏԱՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Արագածոտնի մարզի Մաստարա գյուղի կենտրոնում: Վաղ միջնադարյան Հայաստանի ինքնատիպ և ամենակատարյալ եկեղեց. կառույցներից է: Ունի քառախորան, գմբեթավոր քառակուսի տիպի հորինվածք: Ըստ հվ. և արմ. ճակատների չին. արձանագրությունների՝ VII դ. կառուցել է Գրիգորաս վանականը, Դվինի 645-ի եկեղեց. ժողովի մասնակից Գնունյաց Թեոդորոս եպիսկոպոսի օրոք: Սակայն, նկատի ունենալով եկեղեցու ճարտ. խիստ հնավանդ ձևերը, կա տեսակետ (Ա. Երեմյան), որ եկեղեցին կառուցվել է V դ., իսկ VII դ. վերակառուցվել է: 891-ին Արտավազդ քահանայի որդի Սարգիսը նորոգել է հվ. չքամուտքը: Ուշ միջնադարում եկեղեցին շրջապատվել է բարձր պարսպով և վերածվել բերդի: Եկեղեցին տրոմպների եռաստիճան համակարգով ծածկված է հսկա գմբեթով, որի թմբուկը դրսից ութանիստ է, անկյունները հատված են եռանկյունաձև խորշերով: Խորանները ներսից պայտաձև են, դրսից՝ հնգանիստ: Ավագ խորանի երկու կողմերում կան ավանդատներ: Եկեղեցին ունի հնամենի հարդարանք. ավանդատների մուտքերի բարավորներին քանդակված են շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչեր, քերովբեներ, արմ. ճակատին՝ զույգ թռչուններով խաչ, կամարակապ պսակի վրա՝ աղավնիներ են: Մ. Ս. Հ. ե. աչքի է ընկնում ներսի տարածության միասնությամբ և ընդարձակությամբ, ծավալների ներդաշնակությամբ, ողջ կերպարի կոթողայնությամբ և վեհությամբ: 1899-ին քանդել են եկեղեցու պարիսպները, նորոգել եկեղեցին, ներսում՝ արմ. կողմում, կառուցել փայտե պատշգամբ:



Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու հատակագիծը

Մաստարայատիպ են Ոսկեպարի Ս. Աստվածածինը (VII դ.), Արթիկի Մեծ եկեղեցին (VII դ.), *Հառիճավանքի* Ս. Գրիգորը (VII դ.), *Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին* (X դ.):

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.6, 5-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Մանուչարյան Ա., Քննություն Հայաստանի IV–XI դարերի շինարարական վկայագրերի, Ե., 1977: *Еремян А., О взаимоотношениях армянской и византийской архитектуры IV–VII вв., Е., 1978;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

Մուրադ Հասրաթյան

ՄԱՍՈՒՆՔ սրբոց, սրբություններ, մահացած կամ մարտիրոսության պսակն ընդունած սրբի նյութական-մարմնավոր մնացորդներ, ինչպես նաև սրբի անձի հետ կապված առարկաներ և իրեր: Այսպիսի օրինակներ կան Հին կտակարանում (տես Դ Թագ. 2.13–14):

Քրիստոնյա մարտիրոսների կամ սրբերի աճյունների հիշատակությունը պաշտամունքի աստիճան բարձրացնելը սկսվել է քրիստոնեության շատ վաղ շրջանից: Պատմ. առաջին հիշատակությունն առկա է Թերևս «Մարտիրոսութիւնք Պողիկարպոսի» (II դ.) երկում, որտեղ սրբի Մ-ները դնահատվում են «ավելի թանկագին, քան ամենաթանկագին քարը, և ավելի ցանկալի, քան ամենաազնիվ ոսկին» (գլ. ԺԸ): Քրիստոնեության հալածանքներին հաջորդող շրջանում սրբերի Մ-ների պաշտամունքը շատ շուտ տարածվել է թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում: Հռոմ. եկեղեցում այն սկսվել է IV դարից և առնչվում է ստորերկրյա շիրիմների՝ կատակոմբների հետ (երբ Պատարագի արարողությամբ մեծարվել են արդեն սրբացած դերեզմանները): Նախապես սրբի Մ-ները շարժական տուփերի կամ աջերի մեջ ամփոփելու սովորություն չի եղել. դրանք ամփոփվել են վաղօրոք պատրաստված դերեզմաններում (եր-

բեմն նույն սրբի անունով բազմաթիվ գերեզմաններ են հանդիպում աշխարհագր. տարբեր վայրերում): Հայ եկեղեցում սրբերի Մ-ները պահելը հավանաբար սկսվել է IV դարից. այդ են վկայում հայոց հին գրականության մեջ առկա որոշ փաստեր: Ագաթանգեղոսը նկարագրում է, որ *Գրիգոր Ա Լուսավորիչը*, Կեսարիայում ձեռնադրվելով, Հայաստան վերադարձին իր հետ բերել է նաև Հովհաննես Մկրտչի և ս. Աթանագինեի Մ-ները և Թադեվ Ինանկընյան կոչվող վայրում, որը հեթանոս. պաշտամունքի կենտրոն էր, և այդ Մ-ների վրա էլ կառուցել եկեղեցի: Ղազար Փարպեցին պատմում է, որ Վարդանանց շարժման ժամանակ, երբ հայոց նախարարները Պարսկաստանից վերադարձել են Հայաստան, նրանց դիմավորել են ս. Մ-ներով. «Եվ նրանց ընդառաջ ելնելով, Քրիստոսի պաշտոնյաների դասն իր հետ բերել էր կենսատու խաչի նշանը և առաքելական նահատակ սուրբ Գրիգորի նշխարները...» («Հայոց պատմություն», 1982, էջ 129): Ավելի ուշ, ինչպես մյուս եկեղեցիները, Հայ եկեղեցին ևս որդեգրել է մանանատուփի սկզբունքը, որի նախն. ձևերը մարմնի մեկ մասի նմանողությամբ պատրաստված մանանատուփերն են: Դրանք կարող էին լինել *աչի*, ճաճանչի, պարզ տուփի և այլ ձևերով: Շատ հաճախ ի հայտ են գալիս նաև սրբի մեկից ավելի աչեր կամ մարմնի այլ մանանատուփեր: Դա բացատրվում է նրանով, որ մանանատուփի մեջ ամփոփված է սրբի Մ-ի աչի կամ մարմնի ոչ թե լրիվ, այլ նրա մի փոքր մասը:

Մանանատուփերի կամ մասանց պահարանների ընդունված ձևերից են ծալովի դռնակներով ուղղանկյունաձև պահարանները, որոնք պատրաստվում են փայտից, պատվում այուժետային և դեկորատիվ պատկերներով դրվագված թանկարժեք մետաղե թիթեղներով, զարդարվում քարերով: Մասանց պահարանների առանձին խումբ են կազմում աչի նմանությամբ պատրաստվածները, որոնց ներսում զետեղվում են սրբի Մ-ները: Այդպիսի մասանց պահարանները բնորոշ են Հայ եկեղեցուն: Մասանց պահարանների առանձին խումբ են կազմում խաչերը, որոնք չքեղ հարդարված և ադուցված են գունավոր քարերով: Նրանց կենտրոնում, երբեմն նաև թևերին, զետեղում են սուրբ Մ.: Իր ձևի մեջ եզակի է ս. Հովհաննես Կարապետի Մ-ով պահարանը: Այն իր մեջ համակցում է մասանց պահարանների բոլոր տեսակները՝ ծալովի պահարանը, աչը, խաչը:

Հայ եկեղեցու սրբաբազնագույն Մ-ներից են՝ արծաթե և փայտե մասանց պահարանը՝ *Նոյյան տապանի* Մ-ով, նույնպիսի մի պահարան՝ *Յոթը խոտաճարակների* և Հիսուս Քրիստոսի ս. Խաչափայտի Մ-ներով, *Լուսավորչի Աչը*, *Գեղարդը* (որով խոցել են խաչյալ Հիսուսին), *Թադեոս* առաքյալի Աչը, *Բարդուղիմեոս* առաքյալի և Խոտակերաց Ս. Նշանի մասանց պահարանները (պահվում են Մայր աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններում) ևն:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.7, 1–4-րդ պատկերները:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՄԱՏԱՂ, Հայ եկեղեցու ծիսական առանձնահատկություններից: *Գրիգոր Տաթևացին* տալիս է «մատռ աղ»-ի ստուգաբանությունը (մատուցիր աղը): Մ. Աստծուն ընծայաբերվող նվերն է: Մատուցվում է կենդանիներից ամենաընտիրը՝ արջառ, ոչխար, սուրբ թռչուն (հավ, աղավնի): Այսօր ընդունված է Մ. մատուցել միայն արու կենդանիներ, մինչ հնում մատուցվել է թե՛ արու և թե՛ էգ: Մ-ի մսի պատրաստման եղանակը այսօր միայն օրհնված *աղով* և ջրով խաշելն է, մինչ հնում այն ողջակեզ են արել:

Ըստ ավանդության, եթե Մ. կատարվում է վանքի կամ եկեղեցու բակում, ապա մորթին և աջ թևը պետք է տրվի հոգևորականներին: Եթե մատուցվում է արջառ, նախ պետք է 40 տուն բաժանել, ապա նոր սեղան նստել, եթե ոչխար՝ 7, եթե աքլոր՝ 3: Աղավնին չեն զոհում, այլ բաց են թողնում: Մ-ի միսը չի կարելի հաջորդ օրը պահել:

Մ-ի միսը պետք է եփվի օրհնված աղով, կամ անասունին մորթելուց առաջ պետք է աղ տալ: Աղի օրհնությունը կատարվում է Մ-ի միսը կուռքերին մատուցած զոհերից տարբերակելու համար: Ըստ Ստեփանոս արք. Օրբելյանի՝ աղը խորհրդանշում է առաքյալներին («Դուք եք երկրի աղը», Մատթ. 5.13), անբան կենդանիները՝ հեթանոսներին: Եվ ինչպես որ առաքյալների խոսքերը սրբում են մեզ, այնպես էլ աղը սրբում է անասունին՝ իր սկզբնական անիծվածությունից:

Մ-ի սովորությունը գոյություն է ունեցել դեռևս IV դ.: Նույն դարի ասորի պատմագիր Զենոբ Գլակը վկայում է, որ հոների դեմ տարած հաղթանակից հետո Տրդատ թագավորը, Գրիգոր Լուսավորիչը և հայ ավագանին բազ-

ՄԱՏԵՆԱԴԱՐ. մաթիվ արջառներ, նոխազներ ու գառներ են զոհ մատուցել ի գոհություն Աստծո և բաժանել աղքատներին:

Օտարները Հայ եկեղեցուն մեղադրել են Մ-ի համար՝ համարելով այն հրեական սովորություն կամ հեթանոսական զոհ: Անկախ այն հանգամանքից, որ Քրիստոսն ինքը չմերժեց զատկական գառի հրեական սովորությունը, հայկական Մ. չի նույնանում ո՛չ հրեական, ո՛չ էլ հեթանոս. զոհաբերման հետ: Այն ավելի առնչվում է առաքյալների հաստատած *ագապե* ճաշի հետ: Հայ եկեղեցում Մ. կատարվում է հիմնականում երեք նպատակով. ա. փրկության հույսի և մեղքերի թողության համար, բ. ննջեցյալների հոգու հանգստության համար, գ. Աստծո տված շնորհների դիմաց երախտագիտություն հայտնելու համար:

Սովորաբար Մ. կատարվում է Տերունական և այլ կարևոր տոներին, ս. Սեղան կամ ս. խաչ հաստատելու առիթով ևն: Հնում հանձնարարվել է կատարել այն բոլոր օրերին, երբ ս. *Պատարագ* է մատուցվել: XII դ. հայ աստվածաբան-փիլիսոփա Պողոս Տարոնացին ասում է, որ Քրիստոսի մարմինը և արյունը ճաշակելուց հետո պետք չէ անսուրբ կերակուրի մոտենալ, այլ նախ պետք է օրհնված և աղահար միս ուտել, ապա որևէ այլ ինչ: Ըստ Գրիգոր Տաթևացու, Մ. Քրիստոսի ճշմարիտ պատարագի ստվերն է և օրինակը: Հայկ. Մ., տարբերվելով հանդերձ, որոշ ընդհանրություն ունի նաև հինկտակարանային *Ուխտի* հետ:

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729, էջ 657–658: Պողոս Տարոնացի, Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային, ԿՊ, 1752, էջ 278–282: Ստեփանոս Օրբելյան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, ԿՊ, 1756, էջ 131–148: Մխիթար Գոշ, Թուղթ առ Վիրս, «Արարատ», 1901, էջ 61: Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատասիր. Ա. Աբրահամյանի, Ե., 1941, էջ 141: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, Ե., 1964, էջ 397–399, 400–402, հ. 2, Ե., 1971, էջ 14, 154:

Եզնիկ եպս. Պետրոսյան

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ձեռագրատուն, ձեռագիր մատյանների՝ գրչագրերի, գրքերի դարան, պահոց: Միջնադարյան Հայաստանում կոչվել է նաև գրատուն, գրանոց, արկեղք գրոց, դանձատուն, դիվան, ջամբռ:

Հայկ. առաջին Մ-ի մասին տեղեկություններ են հասել V դարից: Ըստ *Ղազար Փարպեցու*, Էջմիածնի կաթողիկոսությունն ունեցել է մի գրատուն, որտեղ պահվել են հայ. և հուն. մատյաններ: Միջնադարում Մ-ներ են եղել Էջմիածնում, Հաղպատում, Սանահինում, Սաղմոսավանքում, Տաթևում, Գլաձորում, Գեղարդավանքում, Բաղեշում, Ամարասում, Գետիկում, Սսում, Հռոմկլայում, Դրազարկում, Սկևռայում, Բարձրբերդում, Ակներում և այլուր: Հայաստանում բազմիցս ավերվել ու կողոպտվել են վանքերին ու մենաստաններին կից Մ-ները, ձեռագրատներն ու գրչության կենտրոնները, ոչնչացվել գիտ., մշակութ. և գեղ.՝ համաշխ. արժեք ներկայացնող գանձեր: Ձեռագրերն իրենց վրա կրում են արյան, ավերածությունների, նվաճումների ու գերության հետքեր: *Ստեփանոս Օրբելյանի* վկայությամբ, 1170-ին Բաղաբերդ ամրոցում սելջուկ թուրքերն ավարի են մատնել շուրջ 10 հզ. հայկ. ձեռագրեր: *Կիրակոս Գանձակեցին* արձանագրել է, որ օտար նվաճողները, 1242-ին գրավելով Կարին քաղաքը, տեղի Մ-ից հափշտակել են բազմաթիվ մատյաններ: Ըստ նորահայտ արաբ. մի մատյանի, 1298-ին եգիպտ. հրոսակները, Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Սսի գանձատունը կողոպտելիս, տարել են նաև բազում գրչագրեր: *Առաքել Դավրիժեցին* արձանագրել է Էջմիածնի Մ-ի կողոպուտը XVII դ.: Վերջին անգամ Էջմիածնի Մ. ավերվել է 1804-ին, ինչի վկայությունն է Ներսես Աշտարակեցու (*Ներսես Ե Աշտարակեցի*) կոմս Ն. Պ. Ռումյանցևին ուղղած նամակը. «... ապաբախտ եմք..., զի յաւուրս մեր բազմահարուստ գրատուն Արարատեան Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի... կողոպտեալ ի յաւար մատնեցաւ...» (Սեդրակյան Ա., «Յովհաննէս եպս. Շահխաթունեանցի կենսագրութիւնը», 1898, էջ 121–123): Մեծ ու փոքր Մ-ներ կային Արմ. Հայաստանի շատ վանքերում, որոնք հիմնահատակ կործանվել ու ոչնչացվել են Մեծ եղեռնի ժամանակ:

Ներկայումս աշխարհի տարբեր Մ-ներում, գրադարաններում ու թանգարաններում պահվող հայ. ձեռագրերի թիվը շուրջ 30 հզ. միավոր է, որոնք հիմնականում ունեն կրոն., աստվածաբան., փիլ., պատմ., գրական, գեղ., բնագիտ., տիեզերագիտ., բժշկ., աստղագիտ. և այլ բնույթ: Խոշորագույն հավաքածուն Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մ-ինն է. ձեռագրերի ընդհանուր թիվը առ 2000-ի հունվարի 1-ը 17014 միավոր է, որից հայ. ամբողջ. ձեռագրեր՝ 11085, հայ. պատառիկներ՝ 2105, հայ. հմայիլներ՝ 462, նորագույն հայ. ձեռագրեր՝ 327, օտարալեզու ձեռագրեր՝ 2879 և անտիպ

ձեռագրացուցակներ՝ 176: Նոր ժամանակներում Երևանի Մ-ի ձեռագրերը նկարագրել են Օ. Եգանյանը, Փ. Անթաբյանը և Ա. Զեյթունցյանը («Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. 1, 2, 1965, 1970, լույս է տեսնում նաև «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի»-ն, հ.1, 1984): Իսկ առաջին լիակատար ձեռագրացուցակը կազմել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբան Դ. Շահնազարյանցը («Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի», 1863):

Ձեռագրերի ընդհանուր քանակով երկրորդը *Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի* Մ. է, որն ունի ավելի քան 4 հզ. միավոր ձեռագիր (1976): Ձեռագրերը նկարագրել է Ն. արք. *Պողարյանը* («Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց», հ. 1–11, 1966–91): Ապա հայտնի է Վենետիկի Ս. Ղազար վանքի *Մխիթարյան միաբանության* Մ., որն ունի շուրջ 3800 գրչագիր. նկարագրել է Բ. Սարգիսյանը [«Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 1–3, 1914–66 (3-րդ հ.՝ Գ. Սարգսյանի հեղինակակցությամբ, Ս. Ճեմճեմյան, հ. 4–8, 1993–98)]: Վիեննայի Մխիթարյան միաբանության Մ. ունի շուրջ 2600 գրչագիր (1984). նկարագրել են *Հ. Տաշյանը*, *Հ. Ոսկյանը*, Օ. Սեքուլյանը («Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», հ. 1, 1895, հ. 2, 1963, հ. 3, 1983): Մայր աթոռ Ս. Էջմիածնի Մ. ունի 1081 ամբողջ. ձեռագիր (որոնցից 55-ը՝ մագաղաթե) և 88 պատառիկներ (որոնցից 8-ը՝ մագաղաթե): Ձեռագրերի նկարագրությունը տրված է «*Էջմիածին*» ամսագրի 1950-ի մայիս-հունիս միացյալ համարից սկսած: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Մ. ունի ավելի քան 600 մատյան. նկարագրել է Ս. Տեր-Ավետիսյանը («Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», 1970): Արժեքավոր ձեռագրեր կան նաև *Զմմառի վանքի* (Բեյրութ) Մ-ում. շուրջ 500 գրչագիր. նկարագրել է Մ. վրդ. Քեչիչյանը («Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի», 1964): Տարբեր երկրներում գործում են նվազ հարուստ և փոքր Մ-ներ:

Պատկերազարդումը տես ներդիր XI-ում, 11.8, 1–5-րդ պատկերները:

ՄԱՏԹԵՈՍ Ա ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Ջուհաճյան, Ջուխաճյան (1802, Կ. Պոլիս – 22.8.1865, Վաղարշապատ, ամփոփված է Էջմիածնի Ս. Գայանե վանքի գավթում), Ամենայն հայոց կաթողիկոս 1858-ից, օծվել է 1859-ի օգոստ. 15-ին: Հաջորդել է *Ներսես Ե Աշտարակեցուն*: Եղել է իր ժամանակի ամենապատրաստված, խոր և բազմակողմանի աստվածաբան. գիտելիքների տեր հոգևորականներից: Ստեփանոս Աղավնի պատրիարքի հանձնարարությամբ համագործակցել է Գր. Փեշտիմալճյանի հետ և հրատարակել *Հայսմավուրք* մեծածավալ ու մեծարժեք ժողովածուն (1834): Օծվել է վարդապետ (1826), եպիսկոպոս (1838), եղել Բուրսայի (1835–41), Զմյուռնիայի (1841–44) և Նիկոմեդիայի (1853–54) թեմերի առաջնորդ, Կ.Պոլսի հայոց պատրիարք (1844–48): Պատրիարք ընտրվելուց մեկ շաբաթ անց մատուցել է իր անդրանիկ Պատարագը (1844-ի հուլիսի 23), որի ժամանակ հիշատակել է ժամանակի Հայոց կաթողիկոսի՝ Ներսես Ե Աշտարակեցու անունը (Կ. Պոլսի հայոց պատրիարքությանը ենթակա թեմերում 1828-ից ընդհատվել էր Հայոց կաթողիկոսների անվան հիշատակությունը): Նրա ջանքերով կարգավորվել են հարաբերությունները Մայր աթոռ Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքարանի միջև: Փոխադարձ համաձայնությամբ որոշվել է, որ երկու աթոռները հարաբերությունները պահեն ուղղակիորեն միմյանց հետ, և ոչ թե յուրաքանչյուր վիճակ՝ առանձին: Կ. Պոլսի պատրիարքը ճանաչվել է Ս. Էջմիածնի փոխանորդը, նվիրակը և գանձապետը, այն է՝ միակ և լիազոր ներկայացուցիչը, արգելվել է այլ նվիրակների երթևեկը, դրամահավաքը, հստակեցվել են թեմական բաժանումների սահմանները ևն:

Մատթեոս պատրիարքը եղել է Հայ եկեղեցու սկզբունքների ամենահետևողական պաշտպաններից ու ջատագովներից: Անհաշտ պայքար է մղել արևմտահայ (որպես Կ. Պոլսի հայոց պատրիարք) և արևելահայ (որպես Ամենայն հայոց կաթողիկոս) բողոքականների, ինչպես նաև՝ հայ կաթոլիկների և պապականության նկրտումների դեմ: Նպաստել է կրթ. գործի զարգացմանը, գրական կյանքի աշխուժացմանը: Վերաբացել է Սկյուտարի ճեմարանը, որը թուրք. կառավարության որոշմամբ վերածվել էր զինվորական հիվանդանոցի, դպրոցներ է հիմնադրել Սամաթիայում, Զմյուռնիայում և այլուր: Նրա օրոք Կ. Պոլսում գործել են 25 բարձրակարգ վարժարաններ, բազմաթիվ տպա-

բաններ, հրատարակվել մի քանի նշանավոր պարբ-ներ, հիմնադրվել մշակութ. ընկերություններ: Նրա շնորհիվ բարձրագույն կրթություն ստանալու համար Եվրոպա են ուղարկվել բազմաթիվ շնորհաշատ երիտասարդներ: Մատթեոս Զուխաճյան պատրիարքի ջանքերով են վերջնականապես ձևավորվել արևմտահայ ազգ. իշխանությունների զույգ մարմինները՝ Հոգևոր ժողովը (14 անդամով) և Գերագույն ժողովը (20 անդամով), որոնք հիմք են դարձել *Ազգային սահմանադրության* մշակման ժամանակ: Նրա ձեռնարկները հանդիպել են Կ. Պոլսի ամիրայական շրջանակների դիմադրությանը, որոնց ճնշման ներքո հրաժարական է տվել 1848-ի սեպտեմբերին: 1855-ին նշանակվել է Հոգևոր ժողովի ատենապետ, եղել Արմաշի վանքի վանահայր:

Կաթողիկոս. դահ բարձրանալուց հետո Մ. Ա Կ. փորձել է բարեկարգել Մայր աթոռը, կանոնականացնել վանական ներքին կյանքը: Մեծ ուշադրություն է դարձրել դպրոց. գործին, 1861-ին հաստատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը, սահմանել ծխական և թեմական դպրոցների ծրագրերն ու կազմակերպման կանոնակարգերը, ավելի մեծ թվով աշխարհականների ներգրավել դպրոցների հոգաբարձուների կազմերում: Կարգավորել է Մայր աթոռի մատենադարանը, իր նշանակած մատենադարանապետ Դանիել վրդ. Շահնազարյանցին հանձնարարել է կազմել առաջին լիակատար ձեռագրացուցակը («Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի», 1863), որը հայտնի է «Կարինյան ձեռագրացուցակ» անունով: Առանձին ջանքեր է թափել՝ մեղմելու «*Պոլոժենիե*»-ի որոշ հոդվածներ, ընդլայնելու Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասությունները: Այդ նպատակով կազմել է Հայ եկեղեցու նոր կանոնադրություն («Կարգ և կանոն Հայաստանեայց եկեղեցւոյ կաթողիկոսութեան»), սակայն, ըստ Մ. Օրմանյանի, «թերի և անբավական» լինելու պատճառով չի ընդունվել անգամ «Պոլոժենիե»-ն քննադատողների կողմից:

Մ. Ա Կ. հեղինակ է կրոնագիտ. ու աստվածաբան. մեկ տասնյակից ավելի երկասիրությունների: «Խորհրդածութիւն շնորհաց և նշանաց և խորհրդոց քրիստոնէական Սուրբ եկեղեցւոյ» (1842) գրաբար աշխատությունում ներկայացրել է քրիստ. վարդապետության ընդհանուր սկզբունքները, պարզաբանել նաև Հայ եկեղեցու դավանանքը, ցույց տվել, որ այն առավել անաղարտ է ու հարազատ վաղ քրիստ. սկզբունքներին: «Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ» (1854) ջատագով. երկասիրությունն ուղղված է պապականության դեմ և պատասխան է Մխիթարյան այն հեղինակներին, ովքեր Հայ եկեղեցին համարել են հերձված և հերետիկոս: «Բարի մարդ և բարի քրիստոնեայ» երկասիրությունը (1856) հակաճառություն է կաթոլիկության և բողոքականության դեմ: «Հաստատութիւն ստուգութեան Դաշանց Թղթոյն» (1861) աշխատությունում առանց հիմնավոր փաստերի փորձել է վավերական համարել «Դաշանց թուղթը»:

Կաթողիկոս. դահին Մ. Ա Կ-ուն հաջորդել է *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին*:

Երկ. Ուղեցոյց քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան, Մ., 1861: Ներածութիւն աստուածաբանական գիտելեաց, Շուշի, 1863: Դիտողութիւն ճշմարտութեան Սուրբ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի, Տփխիս, 1863: Առաջնորդ լուսաշաւիղ ճանապարհին յաւիտենական կենաց..., Վաղ-պատ, 1864:

Գրկ. Պերպերյան Ա., Պատմութիւն Հայոց, ԿՊ, 1871: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927:

Պետրոս Հովհաննիսյան

ՄԱՏԹԵՈՍ Բ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ (ավազանի անունը՝ Սիմեոն Մարտիրոսի Իզմիրլյան, 22.2.1845, Կ. Պոլիս – 11.12.1910, Էջմիածին), Ամենայն հայոց կաթողիկոս 1908-ից: Հաջորդել է *Մկրտիչ Ա Վանեցուն* (Խրիմյան Հայրիկ): 1864-ին ձեռնադրվել է սարկավագ, 1869-ին՝ վարդապետ և դարձել Մկրտիչ Խրիմյան պատրիարքի անձն. քարտուղարը: 1872-ի մարտին ընտրվել է Կ. Պոլսի կրոն. ժողովի անդամ և ատենադպիր: 1873-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան և կարգվել Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցու քարոզիչ և ճեմարան-վարժարանի կրոնի ուսուցիչ: 1876-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: 1886–90-ին՝ Եգիպտոսի թեմի առաջնորդ: 1894–96-ին՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք: Պայքարել է Արմ. Հայաստանում քաղ. բարենորոգումներ անցկացնելու համար, բողոքել 1894–96-ի Հայկ. ջարդերի դեմ: Իր հաստատակամության համար կոչվել է Երկաթյա պատրիարք: Սուլթանի հրամանով 1896-ին աքսորվել է Երուսաղեմ: 1908-ին երիտթուրքերի հեղաշրջումից և Թուրքիայում հռչակված սահմանադրությունից հետո վերադարձել է Կ. Պոլիս և հոկտեմբերին վերընտրվել պատրիարք: Կաթողիկոս ընտրվելով՝ 1909-ի հունիսին ժամանել է Էջ-

միածին՝ դահակալելով ընդամենը մեկ տարի: Գրել է Ս. Էջմիածնի ընդհանրական իրավունքները պաշտպանող կրոն. աշխատություններ:

Կաթողիկոս. դահին Մ. Բ Կ-ուն հաջորդել է *Գևորգ Ե Սուրենյանցը*:

Երկ. Հայրապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ եւ Աղթամար ու Սիս, ԿՊ, 1881: Նամակաւոր, Կահիրե, 1911:

Ստեփան Ստեփանյանց

ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), XIV դարի վերջի և XV դարի սկզբի մեկնիչ, մատենագիր, գրիչ: Ծնունդով՝ Հին Ջուղայից: Կրթություն է ստացել *Տաթևի համալսարանում* աշակերտելով *Հովհան Որոտնեցուն* և *Գրիգոր Տաթևացուն*: 1391–93-ին գործել է Ապրակունիսի Ս. Կարապետ վանքում (Երնջակ), 1393–95-ին՝ Տանձափարախ առնապատում (*Տաթևի վանքի* մոտ), իսկ 1395-ից՝ Տաթևի համալսարանում որպես դասախոս: Նշանակալից դեր է կատարել Տաթևի համալսարանի կյանքում, ձեռք բերել այնքան համբավ և փորձառություն դասախոս. ասպարեզում, որ Գրիգոր Տաթևացին նրան է արժանավոր համարել լինելու իր ժառանգորդը: 1402-ին դարձել է Տաթևի համալսարանի գլխ. վարդապետներից մեկը՝ միաժամանակ վարելով Տաթևի վանքի վանահայրության պաշտոնը:

Մ. Ջ. թողել է գրական հարուստ ժառանգություն՝ դանձեր ու տաղեր, բազմաթիվ մեկնություններ, մոտ 50 քարոզ, վիճաբանական երկ, Գրիգոր Տաթևացու թաղմանը (1410-ի հունվար) արտասանած նշանավոր դամբանականը ևն: Որոշ երկեր պահպանվել են իր իսկ ինքնագրով և ընդարձակ հիշատակարաններով: Վայելելով մեծ հռչակ՝ նրա աշխատություններն ընդօրինակվել ու տարածվել են միջնադարյան Հայաստանում, ինչպես նաև Կիլիկիայի Հայկ. թագավորությունում: Մ. Ջ. գաղափար. պայքար է մղել ունիթորական շարժման (տես *Ունիթորություն*) դեմ՝ Հայ եկեղեցու ազգային-դավանական անկախության համար:

1391-ին Երնջակի Ապրակունյաց վանքում գրել է թվական ունեցող իր աշխատություններից առաջինը՝ «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին» (Մատենադարան, ձեռ. № 2519): Երկը գրված է հարց ու պատասխանի և ճառերի ձևով: Բաղկացած է 22 ճառից, որոնք պարունակում են 158 հարցեր: Ղուկասի Ավետարանի մեկնությունից հետո Մ. Ջ. գրել է Հովհաննեսի Ավետարանի մեկնությունը (Մատենադարան, ձեռ. № 1357)՝ դարձյալ ճառերի և հարց ու պատասխանների ձևով: Ինչպես վկայում է հեղինակն իր հիշատակարանում (Մատենադարան, ձեռ. № 5232), այս գործը Հովհաննեսի Ավետարանի կարևոր դրվագների մեկնությունն է, որտեղ մեծապես օգտվել է Հովհան Որոտնեցուց: Մի շարք ձեռագրերում Մ. Ջ-ու այս գործը սխալմամբ վերագրված է Հովհան Որոտնեցուն: Մ. Ջ-ու լավագույն աշխատությունը 1411-ին Տաթևի վանքում գրած «Քննութիւն Գործոց առաքելոց» (Մատենադարան, ձեռ. № 1402) մեկնող. բնույթի երկն է, որտեղ օգտագործել է *Հովհան Ոսկեբերանի* և *Եփրեմ Ասորու*՝ Գործք առաքելոցի մեկնությունները: 1392-ին, լինելով Աղթամարում, վեճի է բռնվել մահմեդ. մի հոգևորականի հետ և Շիրիան գյուղի տանուտեր Աբիսողոմի խնդրանքով շարադրել վեճի բովանդակությունը «Վասն հարցմանն անօրինաց. զանազան պատասխանիք» (Մատենադարան, ձեռ. № 969) խորագրով երկում: Պատասխան տալով մահմեդ. հոգևորականների հարցումներին՝ հեղինակը հիմնավորել ու պաշտպանել է քրիստ. գաղափարները և Հայ եկեղեցու վարդապետությունը: Մ. Ջ., ձգտելով փոխադարձ հարգանք հաստատել այլակրոն ժողովուրդների միջև, չի անարգել մահմեդականների կրոն. զգացումներն ու համոզմունքները, բայց միևնույն ժամանակ վճռականապես ընդվզել է հայերին բռնի մահմեդականացնելու քաղաքականության դեմ և քննադատել նման նկրտումները: 1393-ին Տանձափարախ անապատում գրել է իր «Վասն քարոզութեան Բանի» (1750) աշխատությունը: Տաթևի վանքում գրված գործերից, բացի Գործք առաքելոցի մեկնությունից, հայտնի են Մ. Ջ-ու «Հաւաքում բանից» (1395), «Վասն ժամանակաց գիտելոյ զորքանն» (1402) երկերը: Վերջինս ժամանակագր. դեպքերի աղյուսակ է՝ Ջրհեղեղից սկսած: «Տաղ ազնիւ»-ը (*Հակոբ Մծբնացի* հայրապետին նվիրված) գրել է 1386–91-ին, Լենկթեմուրի զորքերի պաշարած Երնջակում: Բազմաթիվ տաղեր և դանձեր գրել է Գրիգոր Ծերենցի պատվերով, աքրոստիքոսով՝ «ի Մաթէոսէ, խնդրեաց Գրիգոր» («Կանոն Երևման խաչին», «Կանոն մեծահրաշ կիրակէի» ևն): Տաղերի մի մասը ձայնագրված է երաժշտ. խաղերով, ինչից ենթադրվում է, որ Մ. Ջ. եղել է նաև երաժիշտ: Պահպանվել են Մ. Ջ-ու ընդօրինակած մի քանի արժեքավոր գրչագրեր, այդ թվում՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»

պոեմը՝ ընդօրինակված 1397-ին, Ատոմ աբեղայի խնդրանքով:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.1, 1-ին պատկերը:

Գրկ. Խաչիկյան Լ., Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, ԲՄ, 1956, № 3, էջ 57–84:

ՄԱՏՈՒՌ (< հուն. *μαρτύριον* – վկայարան բառից), վաղ միջնադարում աղոթատեղի, շինված վկայի՝ նահատակի գերեզմանի կամ մասունքների վրա, ինչպես նաև նրա հիշատակին: Հետագայում Մ. են անվանել ընդհանրապես փոքր եկեղեցիները, սակայն իրականում Մ-ի և եկեղեցու տարբերությունը ոչ թե մեծությունն է, այլ Մ-ի հիմքերը օրհնված և օծված քարերով նվիրագործված չլինելը: Մ-ները խաչաձև, կլոր, բազմանիստ կամ ուղղանկյուն հատակագծով, գմբեթավոր կամ թաղածածկ, խորանով կամ առանց խորանի առանձին կանգնած եկեղեցատիպ կառույցներ են բնակավայրերում, վանքերի համալիրներում, ճանապարհների վրա, գերեզմանոցներում, բարձունքների գագաթին: Միջնադարյան Հայաստանի Մ-ների (մեծ մասամբ նաև *Թուխ Մանուկ* կոչվող) տարածված ձևը թաղածածկ դահլիճն է՝ արլ. կիսաշրջանաձև կամ ուղղանկյուն խորանով: Մ-ներ են կոչվում նաև եկեղեցիների օծված *ավանդատները*, որոնք պատարագամատույց անչարժ սեղան ունեն:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Մուրադ Հասրաթյան

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ (մարգարե բառը ծագում է պահլավերեն mārgar և զենդերեն madran – կանխասաց, կանխագուշակ իմաստից), Աստվածաշնչում՝ ապագան տեսնելու աստվածատուր կարողությամբ օժտված առանձին անհատներ, տեսանողներ: Մ. կոչված էին մարդկանց հաղորդելու Աստծո կամքն ու պատվիրանը ոչ միայն անմիջականորեն, այլև միջնորդի շնորհիվ. օր., Ահարոնը Մովսեսի մարգարեն էր (Ելք 7.1), որովհետև նա էր, որ Մովսեսի ստացած աստվածային պատգամներն ու հրահանգները հաղորդում էր ժողովրդին: Մ. են կոչվել նաև երաժիշտները, բանաստեղծները, որոնք կանխագուշակել են ապագան (Ա Մնաց. 25.1): Նոր կտակարանում Մ. են անվանվում բոլոր նրանք, ովքեր *առաքյալների* համախոհն ու գործակիցը լինելով, Սուրբ Հոգու պատվիրաններին ունկնդիր, կանխատեսել են ապագա իրադարձությունները (Ա Կորնթ. 11.4–5, 14.1, 31): Այսպես, Անտիոքի եկեղեցում գործել են Բառնաբաս, Շմավոն, Ղուկիոս Կյուրենացի, Մանայեն, Սողոս (Պողոս) անունով Մ., որոնք ուսուցիչներ են կոչվել և կատարել Սուրբ Հոգու հրահանգները (Գործք 13.1–3):

Մ-ին բացառիկ դեր էր վերապահված Հին կտակարանում: Նրանց խոսքն ու գործը որոշիչ նշանակություն է ունեցել Հին Հրեաների կյանքում: Նրանք կոչված էին հրապարակելու Աստծո հրահանգները, կարգադրություններն ու վճիռները (Դ Թագ. 4.22, 17.13, Երեմ. 25.4), պահպանելու պետության աստվածակենտրոն կառուցվածքը: Այս է պատճառը, որ գործունորեն մասնակցել են երկրի քաղ., հաս. կյանքին: Մ-ին հատուկ էր խոնարհությունը Աստծո հանդեպ, հավատարմությունը, անձնվիրությունը (Դ Թագ. 1.8, Զաք. 13.4, Մատթ. 3.4), խստակեցությունը (Դ Թագ. 5.15–16): Անկախ կեցվածք ունենալով պարագայական գործոնների նկատմամբ, արիաբար հետամուտ լինելով աստվածադիր սկզբունքների պաշտպանությանն ու կենսագործմանը՝ Մ. հաճախ հալածվել են և նահատակվել (Մատթ. 23.34–37, Եբր. 11.32–38, Հակոբ. 5.10):

Աստվածաշունչը տեղեկություններ է պարունակում Գաբայում, Նավաթում, Բեթելում, Գաղգաղայում և Երիքովում գործած մարգարեական դպրոցների մասին (Ա Թագ. 10.5, 19.20, Դ Թագ. 2.3, 4.38): Շատերն էլ մարգարեանալու շնորհ են ստացել ի վերուստ (Գ Թագ. 19.20, Ամոս 7.14): Աստվածաշունչը վկայում է նաև կին Մ-ի մասին. Հին կտակարանում այդպիսիք են Մարիամը, Դեբորան և Ողդան, Նոր կտակարանում՝ Աննան, Եղիսաբեթը, Մարիամը (Միք. 6.4, Դատ. 4.4–5, Բ Մնաց. 34.22–28, Ղուկ. 1.39–42, ևն):

Մ. Աստվածության հետ հաղորդակցվել են հայտնությամբ՝ *տեսիլքի*, երազի, գերբնական հափշտակության շնորհիվ (հմմտ. Թվեր 24.2–16, Հովել 2.27–29, Գործք 10.11–12, Հայտն. 1.10–20): Հայտնության ժամանակ, Սուրբ Հոգու ներգործությամբ, ստացված պատվիրանները Մ. հաղորդել են գրավոր կամ բանավոր խոսքով, նաև՝ զանազան հրաշքներով, խորհրդավոր նշաններով ու ակնարկներով: Մարգարեություններ կան ոչ միայն մոտակա և հեռու իրադարձությունների, այլև գլխավորի՝ Տիրոջ Առաջին ու Երկրորդ գալուստների մասին: Հին կտակարանը պարունակում է 16 Մ-ի գրքերը: Մ-ից չորսը՝ Եսային, Երեմիան, Եզեկիելը և

Դանիելը, կոչվում են Մեծ, իսկ մնացյալ տասներկուսը՝ Փոքր:

Եսայու մարգարեությունն ունի 66 գլուխ, որ, բովանդակելով հրեաների պատմության երեք տարբեր ժամանակաշրջանները, համապատասխանաբար բաղկացած է երեք մասից: 1-ին մասը վերաբերում է Ք.ծ.ա. 740–700-ի, 2-րդ մասը՝ Ք.ծ.ա. 587-ի, 3-րդ մասը՝ Ք.ծ.ա. 538-ին հաջորդող իրադարձություններին: Պարունակում է բացորոշ մարգարեություններ Մեսիայի (Քրիստոսի) ծննդյան, կյանքի, տնօրինական գործունեության վերաբերյալ: Այս պատճառով *եկեղեցու հայրերը* տվյալ մարգարեությունը կոչում են «Ավետարան ըստ Եսայեայ»:

Օսէէի մարգարեությունները (14 գլուխ, գրվել են Ք.ծ.ա. շուրջ 750–721-ը) դասավորված են ոչ թե ժամանակագր. հերթագայությամբ, այլ՝ ըստ նյութերի. գլ. **1–3**՝ Օսէէի ամուսնական փորձառությունը և պատգամը, գլ. **4.1–9.9**՝ Իսրայելի վիճակը և դրա հոգևոր իմաստավորումը, գլ. **9.10–14.1**՝ Իսրայելի անհավատարմության արմատները, գլ. **14.2–10**՝ Աստծո սերը ամենազոր է:

Ամոսի մարգարեությունը (9 գլուխ, գրվել է Ք.ծ.ա. 760–747-ին): Իսրայելին վիճակված խաղաղ կացության մեջ անսպասելիորեն հնչում է ահազանգը հոգևոր թմբիրի մեջ ընկղմված Աստծո ընտրյալ ժողովրդի վախճանի մասին: Գրքի **7–9** գլուխները պարունակում են Աստծո հետագա միջամտության վերաբերյալ Ամոսի 5 տեսիլքները:

Միքիան ապրել է Եսայի մարգարեի օրոք (Ք.ծ.ա. շուրջ 740–700-ին): Նա ազդարարում է Երուսաղեմի մոտալուտ կործանումը՝ օրավուր ահազնացող մեղքերի հետևանքով: Մարգարեն կոչ է անում հնազանդվել Աստծո կամքին՝ սիրելով մերձավորին:

Հովելի մարգարեությունը (ըստ ոմանց՝ Ք.ծ.ա. VIII դ., առհասարակ անստույգ է, թե երբ է ապրել) բաղկացած է 3 գլխից, որտեղ հայտնությամբ նկարագրվում է այն օրը, երբ Աստված ցույց է տալու իր զորությունը և դատելու է ժողովուրդներին: Գիրքը հստակ ակնարկ է պարունակում Հոգեգալստյան վերաբերյալ (**3.1–2**, տես նաև Գործք **2.16–21**):

Աբդիուի մարգարեությունը (հավանաբար գրվել է Ք.ծ.ա. 587-ին) բաղկացած է 1 գլխից, հայտնում է, որ Իսրայելին թշնամի Եսավի հետնորդ Եդոմի ժողովրդի հետ կործանվելու են նրան հակառակորդ մյուս ժողովուրդները ևս:

Հովնանի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. 900-ական թթ.) բաղկացած է 4 գլխից, ունի ուսուցող. բնույթ: Շեշտում է, որ Աստծո սերն ու ողորմածությունը տարածվում է ոչ միայն իսրայելացիների, այլև օտարների վրա, ովքեր ունկնդիր են աստվածային նախազգուշացումներին:

Նավումի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. 663–612-ին) բաղկացած է 3 գլխից, ցույց է տալիս Աստծո զորությունը (**1**), այդ զորության ուժով՝ Նինվե քաղաքի կործանումն ու Հուդայի բնակչության ազատագրությունը (**2–3**):

Ամբակումի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. VII–VI դդ.) բաղկացած է 3 գլխից, ադամորդուն ուղղված կոչ է՝ հավատարիմ լինել Տիրոջը: Այդ հավատարմությունը հատուցվում է Աստծո միջամտությամբ:

Սոփոնիայի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. VII դ. վերջին) բաղկացած է 3 գլխից, շեշտում է, որ անկարելի է Աստծո հետ հաղորդակցվել առանց ստորադասելու սեփական-մարդկային շահը հոգևոր՝ աստվածային արժեքներին: Այդ արժեքները կրող խոնարհ մարդիկ միայն կարող են փոխել հասարակությունը:

Անդեի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. 520-ին) բաղկացած է 2 գլխից, պատմում է Երուսաղեմի տաճարի նորոգության և դրա շնորհիվ հասարակության հոգևոր վերաշինության մասին:

Զաքարիայի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. 520–518-ին) բաղկացած է 14 գլխից, իր բովանդակությամբ բաժանված է 2 մասի. առաջին մասը (**1–8**) կազմված է բացառապես տեսիլքներից, որոնք վերաբերում են Երուսաղեմի տաճարի վերանորոգությանը, իսկ երկրորդ մասը (**9–14**) խոսում է Աստծո արքայության մասին, որ երկրի վրա հաստատում է մե՛րթ մի խոնարհ և հաղթող թագավոր, մե՛րթ մի հովիվ կամ մահապարտ մի առաքյալ, որի հատկորոշ գծերը կատարելապես ցոլանում են Հիսուս Քրիստոսի անձի և տնօրինական սխրանքի մեջ (Մատթ. **21.4–5**, **26.31**, Մարկ. **14.27**, Հովհ. **19.37**):

Մաղաքիայի մարգարեությունը (գրված Ք.ծ.ա. V դ. 1-ին կեսին) բաղկացած է 4 գլխից, խոսում է կրոնական պարտավորու-

թյունների նկատմամբ հրեից քահանաների անտարբերության և մյուս կողմից՝ Աստծո սիրո, նրա մոտալուտ դալստյան ու դատաստանի մասին: Ազդարարվում է, որ Աստված ուղարկելու է իր Պատգամաբերին և Մարգարեին (ըստ մեկնիչների՝ ակնարկվում է Հիսուս Քրիստոսը):

Երեմիայի մարգարեությունը (Ք.ծ.ա. 626 – մոտ 597-ին) բաղկացած է 52 գլխից, պատմում է Նաբուքոդոնոսորի գլխավորությամբ Երուսաղեմ բաբելոնյան զորքերի արշավանքի (Ք.ծ.ա. 597-ին) մասին: Այս ողբերգական դեպքերի գլխ. պատճառը, ըստ Երեմիայի, հրեից ժողովրդի անհավատարմությունն է Աստծո նկատմամբ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ճանապարհը Երեմիան տեսնում է Աստծուն վերադառնալու մեջ: Ավանդությունը Երեմիա մարգարեին է վերագրում նաև Ողբը (գրքում պատմվում է Ք.ծ.ա. 587-ին բաբելոնյան զորքերի հարվածներից Երուսաղեմի կործանման մասին), որը Աստվածաշնչի հայկ. կանոնում Բարուքի գրքի հետ զետեղված է Երեմիայի մարգարեությունից հետո:

Դանիելի մարգարեությունը (Ք.ծ.ա. VII–VI դդ.) բաղկացած է 14 գլխից, պատմում է երեք երիտասարդ հրեաների (Սեդրակ, Միսակ, Աբեդնագով) մասին, որոնք բաբելոնյան գերության մեջ արիաբար ընդդիմանում են բոլոր փորձություններին և հավատարիմ մնում Աստծուն: Մարգարեության 1-ին մասը բովանդակում է 6 տարբեր պատմություններ (Շուշան, Դանիելը առյուծների գբում ևն), իսկ 2-րդ մասը՝ Դանիելի 4 տեսիլքները, որոնք ակնարկում են հրեաների՝ օտարների բռնապետության տակ գտնվելը և հետագայում նրանց պետության վերահաստատումը: Իր ուղղվածությամբ այն նման է Նոր կտակարանի Հայտնության գրքին:

Եզեկիելի մարգարեությունը (Ք.ծ.ա. 597–587-ին) բաղկացած է 48 գլխից, ըստ բովանդակության բաժանվում է 4 մեծ մասերի: 1-ին մասը պարունակում է հրեաներին ուղղված մեղադրանքներ և սպառնալիքներ՝ նախքան բաբելացիների կողմից Երուսաղեմի երկրորդ պաշարումը: 2-րդ մասում ասվում է, որ Աստծո դատաստանը պիտի տարածվի օտարների վրա նմանապես: 3-րդ մասը Երուսաղեմի անկումից հետո հրեաներին ուղղված սփոփանքի խոսք է: 4-րդ մասում, համաձայն տեսիլքի, ներկայացվում է Երուսաղեմի ապագա տաճարի նկարագրությունը: Իբրև քահանա կարևորելով տաճարի նորոգությունը՝ Եզեկիելը, այսուամենայնիվ, այն հոգևոր գաղափարն է առաջ քաշում, որ Աստծո ներկայությունը որևէ տարածքով (Երուսաղեմի տաճարի սրբարան) չի սահմանափակվում:

Ի գնահատություն Մ-ի անձի և գործի՝ հայ միջնադարում լայն շրջանառության մեջ է եղել «Մահ երկոտասան մարգարէից» հինկտակարանային անվավերը, որն ընդգրկում է ոչ միայն Փոքր, այլև՝ Մեծ Մ-ի մահվան, նահատակության պատմությունները: Աստվածաշնչի հայերեն ձեռագրերից շատերում այս միավորի մեջ առկա յուրաքանչյուր մարգարեի «Մահ»-ը կցված է նրա մարգարեության վերջում, երբեմն՝ սկզբում (օր., Մատենադարան, ձեռ. № 187, 201) կամ զետեղված առանձին (Մատենադարան, ձեռ. № 188): Յուրաքանչյուր մարգարեի «Մահ»-ը առկա է իբրև ընթերցված *Ճաշոց* ծիսամատյանում՝ համապատասխան մարգարեի տոնի օրը կարդալու համար: Ճառընտիրներում այն հաճախ հիշվում է *Եպիփան Կիպրացու* անվամբ. «Անուանք երկոտասան մարգարէիցն, թէ ուստի էին եւ որպէս վախճանեցան եւ կամ ուր թաղեցան՝ Եպիփանու եպիսկոպոսի ասացեալ» (Մատենադարան, ձեռ. № 6869, հմմտ. Մատենադարան, ձեռ. № 142, թ. 320ա–322բ): Հայերեն ձեռագրերում առկա են նաև հետևյալ հինկտակարանային միավորները. «Պատմութիւն համառօտ Եղիայի մարգարէի», «Քարոզ Յովնանու մարգարէին, որ ի Նինուէ քաղաքին», «Վասն Երեմիայի մարգարէին՝ ի գրոցն Բարուքայ», «Պատմութիւն սրբոյն Երեմիա մարգարէին եւ աշակերտաց նորա՝ Բարուքայ եւ Աբիմելեքայ», «Տեսիլ Դանիելի Եօթներորդ», «Հարցաքննութիւն Ազրի մարգարէին ընդ հրեշտակն Տեառն վասն հոգւոց մարդկան»: Համաբնույթ միավորներ զետեղված են նաև վարքագրական, վկայաբանական ժողովածուների՝ *Հայսմավուրքների* մեջ: Իբրև բացառիկ հեղինակություն վայելող մարգարեություններ՝ Հայսմավուրքի մեջ զետեղված են նաև Մովսես Նախամարգարեի (Բ 152, տպ. 1706, 95–98) և Եղիա մարգարեի (տպ. 1706, 714–716) մասին պատմող վարքագր. միավորներ:

Հայ թարգմ. և ինքնուրույն մատենագրության մեջ մասնավոր կարևորություն ունեն մարգարեությունների մեկնությունները (տես

Մեկնողական գրականություն), որոնք միջնադարի աստվածաբանության, իմաստասիրության, գիտության զանազան մարզերի հետազոտման լուրջ սկզբնաղբյուրներ են: Առավել կամ նվազ մանրամասնությամբ մեկնաբանված և վանական ուսուցման նպատակով շրջանառության մեջ դրված երկերից են՝ Եսայու (*Հովհան Ոսկեբերան*, Սարգիս Կոնտ, *Գևորգ Սկևռացի, Եսայի Նշեցի, Գրիգոր Տաթևացի*), Երեմիայի (Հովհան Ոսկեբերան, *Մխիթար Գոշ*, Անանուն), Դանիելի (Հիպպոլիտոս Բոստրացի՝ մահ. 235/236, *Վարդան Արևելցի*, Հովհաննես Ծործորեցի, Մարգար Խոջենց Երևանցի՝ XVIII դ.), Եզեկիելի (*Եփրեմ Ասորի*, Հովհան Ոսկեբերան, Թեոդորետոս Կյուրացի, Ստեփաննոս Սյունեցի, Եսայի Նշեցի, Մարգար Խոջենց Երևանցի), ինչպես նաև՝ 12 Փոքր Մ-ի (Հովհան Ոսկեբերան, *Ներսես Լամբրոնացի*) մեկնությունները: Մարգարեությունից քաղված բնաբաններով են շարադրվել շատ ճառեր և քարոզներ (Վարդան Արևելցի, Գրիգոր Տաթևացի), որոնք ըստ էության համապատասխան համարների վարդապետ., բարոյաբան. մեկնություններն են: Համաձայն մեկնաբան., ճառագր., քարոզխոս. երկերի, մարգարեությունների հիմն. բովանդակությունը Հիսուս Քրիստոսի մասին ակնարկելն ու վկայելն է (Ադաթանգեղոս, § 339, 422): Հայ (և ոչ միայն հայ) միջնադարի մեկնաբանական ավանդույթն իբրև այդպիսիք նկատում է հետևյալ տեղիները. Եսայի **7.**14, **11.**1–5, 10, **9.**6–7, **8.**14, **53.**1–3, 10, **49.**6–7, **43.**1–6, **42.**6–7, **65.**15–18 ևն, Երեմ. **23.**5–6, **33.**14–17, **31.**15, Եզեկ. **34.**23–24, **37.**21–24, Դանիել **7.**13–14, **9.**20–24, Միքիա **5.**2–4, Անգե **2.**6–9, Զաք. **6.**12–15, **9.**9, **13.**1–2, **11.**11–13, **12.**10:

Մարգարեությունները տվյալներ են պարունակում հայոց պատմության հետազոտման համար: Այսպես. Եսայու մարգարեության մեջ հիշատակվում է Արարատի երկիրը, ուր փախան Ադրամելեքը և Սարասարը (ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ Ադրամալեք և Սանասար), իրենց հորը՝ Ասորեստանի Սենեքերիմ թագավորին (Ք.ծ.ա. 705–680) սպանելուց հետո (Եսայի **37.**37–38, տես նաև Դ Թագ. **19.**36–37): Երեմիայի մարգարեության մեջ հիշատակվում է «Արարատյան թագավորությունը» (**51.**27), որն ակնարկում է Երվանդունիների նորաստեղծ հայկ. պետությունը (Ք.ծ.ա. 594–592): Եզեկիելի մարգարեության մեջ երկիցս հիշատակված «Թորգոմի տունը» (**27.**14, **38.**6) մասնագետները տեղադրում են Երկրորդ Հայքի տարածքում (Ք.ծ.ա. 593–570): Տես *Թորգոմա տուն* հոդվածը:

Հայ մատենագրության մեջ կենցաղավարում են շարականներ և տարբեր բանաստեղծություններ՝ նվիրված Մ-ին: Առավել հայտնի են Մովսես Խորենացու և *Ներսես Շնորհալու* անվամբ շարականներն ու Ներսես Լամբրոնացու «Ոտանաւոր ի կատարածի ԺԲ մարգարէիցն» քերթվածը (Մատենադարան, ձեռ. № 180, թ. 398ա):

Մ-ի պատկերագրությունը կարևոր տեղ է զբաղեցրել հայ միջնադարյան մանրանկարչության մեջ: Մ. պատկերված են գլխավորաբար Աստվածաշունչ պարունակող ձեռագրերում՝ տվյալ մարգարեությանը կից (Մատենադարան, ձեռ. № 180, 187 ևն):

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.1, 2–4-րդ և 12.2, 1–5-րդ պատկերները:

Գրկ. Թանգարան հին և նոր նախնեաց. Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Վնտ., 1896, էջ 207–227: Գիրք եւ ճառ հոգեշահ, ԿՊ, 1722, էջ 371–487: Գրիգոր Տաթեվացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, ԿՊ, 1741, էջ 276: Հովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Եսայեա մարգարէի, Վնտ., 1880: Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից, ԿՊ, 1825: Զաքարյանց (Գեորգ Ավետյան), Մարգարեական յարակցութիւն ընդ մէջ Հին եւ Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1875: Ավետիքյան Գ., Բացատրութիւն շարականաց, Վնտ., 1814, էջ 543–548: Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ–ԺԳ), Վնտ., 1889, էջ 186: Սարգիսյան Բ., Ուսումնասիրութիւնք Հին կտակարանի անվաւեր գրոց վրայ, Վնտ., 1898: Քյոսեյան Հ., Հունարեն բնագրով անհայտ հատվածներ Ս. Հովհան Ոսկեբերանի Եզեկիելի մեկնության հայերեն թարգմանությունից, «Էջմիածին», 1996, № 2–3: Թեոդորետոս Կյուրացի, Մեկնութիւն Եզեկիէլի, աշխատասիր. Հ. Քյոսեյանի, Ե., 2000:

Հակոբ Քյոսեյան

ՄԱՐԴԵՂՈՒԹՅՈՒՆ, տես *Դավանանք Հայաստանյայց առաքելական եկեղեցու* հոդվածում:

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Աստվածամայր, Տիրամայր, Աստվածածին, սուրբ Կույս Մարիամ (հուն. Θεομήτωρ, Θεοτόκος), մարդեղացյալ *Աստծո՝ Հիսուս Քրիստոսի* մայրը, որը նրան ծնեց կուսական հղությամբ՝ *Սուրբ Հոգով*, Բեթղեհեմում (Մատթ. **2.**1–12, Ղուկ. **2.**6–7). բացառիկ առա-

քելություն ունեցող երանելի Կույսը, ում վերապահված էր մարդկության Փրկչին աշխարհին ընծայելու աստվածային պատիվը, ինչպես մարգարեացված էր Հին ուխտում. «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Եսայի 7.14, տես նաև Միքիա 5.2–3): Մ. Ա. ընտրյալ այն անոթն է, որը մասնակցում է Աստծո փրկության ծրագրի իրականացմանը՝ մարդու փրկագործության պատմության մեջ, ուստի և *եկեղեցու* պաշտամունքային նվիրապետությունում Մ. Ա. բարձր է դասվում *սրբերից* և *հրեշտակներից*:

«Մարիամ» անունը մեկնաբանվում է մե՛րթ իբրև լուսավորյալ, մե՛րթ՝ Աստծո սիրելի, Աստծուց սիրված իմաստով: Ըստ ավանդության, Մարիամը մանուկ Հիսուսին ունեցել է իր կյանքի մոտ 16-րդ տարում, և Հիսուսն էլ ծնվել է մեր թվարկության 1-ին կամ 4-ին, հետևաբար Մարիամը ծնված պիտի լինի Ք. ծ. ա. մոտ 16-ին կամ 13-ին, ըստ ոմանց՝ Բեթղեհեմում, ըստ այլոց՝ Նազարեթում: Նրա ննջումը, ըստ ավանդության, եղել է Հիսուսի *խաչելությունից* 12 կամ 15 տարի անց, և Հիսուսն իր իսկ խոստման համաձայն Աստվածածնին վերափոխել է երկինք: Կույսի մարմինն ամփոփվել է Երուսաղեմին մերձ Գեթսեմանիում, վիմափոր գերեզմանի մեջ: Ըստ ավանդության, *Երուսաղեմից* բացակայող *Բարդուղիմեոս* առաքյալը, քարոզչական շրջագայությունից վերադառնալով Երուսաղեմ և իմանալով Աստվածամոր ննջման մասին, *առաքյալներին* թախանձել է բացել Տիրամոր գերեզմանը՝ նրա երեսը վերջին անգամ տեսնելու համար: Բացելով գերեզմանը՝ այն թափուր են գտել (տես *Վերափոխումն ս. Աստվածածնի*):

Մարիամը, ըստ Ավետարանների և *պարականոն գրքերի, ուխտի* զավակ էր, ինչպես օր., աստվածաշնչյան նահապետներից Աբրահամի ու Սառայի որդի Իսահակը կամ ինչպես Եղկանայի ու Աննայի որդի Սամուել մարգարեն: Մարիամի ծնողները՝ Հովակիմն ու Աննան, երեխա չեն ունեցել և ուխտել են՝ ունենալու դեպքում մանկանն ընծայել սուրբ Տաճարին: Ընծայյալ Մարիամը Տաճարում մնացել է 14 տարի (Տաճարի քահանայապետն էր դարձել Զաքարիան, որի կինն էր Եղիսաբեթը. նրանք էին *Հովհաննես Մկրտչի* ծնողները): Ապա Մարիամը նշանվել է Հովսեփի հետ, բնակվել Գալիլիայի Նազարեթ քաղաքում: Կյանքի մոտավորապես 15-րդ տարում սուրբ Կույսի հետ պատահել է մարգարեացված աստվածային հրաշքը. Գաբրիել հրեշտակն այցելել է նրան և ավետել. «Եվ ահա՛ դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրյալի որդի կկոչվի... «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ...» (Ղուկ. 1.26–38): Ժամանակ անց Մարիամը, Հիսուսով հղի, այցելել է Հովհաննես Մկրտչի մորը՝ Եղիսաբեթին, որը Սուրբ Հոգով մարգարեացել է՝ աղաղակելով. «Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, և օրհնյա՛լ է քո որովայնի պտուղը...» (Ղուկ. 1.41–45): Մարիամը ևս, Սուրբ Հոգով լցված, ասել է իր հրաշագեղ օրհներգությունը (որը կոչվում է Մեծացուսցե՝ Տիրոջը մեծացնելու՝ փառավորելու իմաստն ունենալու համար). «Իմ անձը կփառավորի Տիրոջը, և իմ հոգին ցնծաց իմ Փրկիչ Աստուծով, որովհետև նա իր հայացքը դարձրեց իր աղախնի խոնարհության վրա: Եվ ահա, այսուհետև բոլոր սերունդները ինձ երանի կտան...» (Ղուկ. 1.46–55):

Ընդհանրական եկեղեցին Մ. Ա-ի՝ Ամենասուրբ Կույսի (որը, ըստ հրեական մեսիական հավատքի՝ իր մեջ պետք է ընդուներ երկնքից սպասվող Փրկչին) մասին թանձրացյալ այլաբանություններ և մարգարեություններ է դիտում Հին կտակարանի որոշ տեղիները, որտեղ ապագա Աստվածամայրը հանդես է գալիս որպես Մեսիայի՝ Օծյալ Փրկչի տնօրինական գործունեությանը սերտորեն առնչվող անձ.

Մարիամը որպես ալիք Փրկչի մայրը: Աստված ասում է օձին (սատանային). «Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ [Մարիամի] միջև, քո սերնդի ու նրա սերնդի [Հիսուսի] միջև: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծննդ. 3.15): Տվյալ դեպքում սատանայական օձին ոտնակոխ անողը Հիսուսն է, իսկ «կինը»՝ Հիսուսի մայրը, ով մասնակցում է իր Որդու պայքարին և հաղթանակին, այսինքն՝ մարդկության փրկության գործին:

Մարիամը որպես այն Կույսը, որը ծնելու է Էմմանուելին. «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Եսայի 7.14, Միքիա 5.2–3, տես նաև նորկտակարանային արձագանքը՝ Մատթ. 1.22–23), այսինքն՝ հանդես է գալիս որպես Աստվածածին, քանի որ Էմմանուել նշանակում է «Աստված մեզ հետ»: Այդ անունն ակ-

նարկում է Փրկչի Աստվածությունը և Փրկչի Կույս Մոր աստվածային մայրությունը:

Փրկչին Բեղբեհեմում ծնող Կույսը: Եսայու մարգարեությանը Միքիան ավելացնում է մի կարևոր մանրամասն՝ Մեսիայի ծննդյան վայրը. «Եվ դու, Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամա՛րդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան, և նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է»: Այդ պատճառով Տերը նրանց կթողնի մինչև ծննդկանի ժամանակը...», Միքիա **5**.2–3): Մարգարեն «ծննդկանի ժամանակը» ասելով նկատի ունի Եսայու մարգարեության «Հղացող և ծնող Կույսին» (մարգարեության իրականացումը տես Մատթ. **2**.2–6):

Մ. Ա. որպես առաջինը Տիրոջ խոնարհների ու աղքատների մեջ, այսինքն նրանց, ովքեր սպասում էին Փրկչին խոնարհության ու աղքատության մեջ: Մարիամը գլուխն է «Տիրոջ աղքատների», ինչը երևակվում է մարգարեություններում ու սաղմոսներում: Մարիամի խոնարհության հաստատումը եղավ նրա ինքնաբնութագրումը («Տիրոջ աղախին»)՝ հրեշտակապետի ավետմանն ի պատասխան: Մարիամը՝ աղքատների մեջ ամենաաղքատը, դարձավ ամենահարուստը՝ Փրկչի Մայրը («Երանի՜ հոգով աղքատներիդ, որովհետև Աստծու արքայությունը ձերն է», Ղուկ. **6**.20) և խոնարհությունից բարձրացվեց մինչև փառքի գագաթնակետը՝ «խոնարհ և բարձր»:

Մ. Ա. որպես խորհրդաբանյալ «Սիոնի դուստրը», «Երուսաղեմի դուստրը», «Իսրայելի կույսը»: Մարիամը ճշմարիտ «Սիոնի դուստրն է», անձնավորումը կատարյալ Երուսաղեմի, որպես Աստծո ներկայության վայր, որն իր մեջ է կրում Փրկչին, ապրում, տառապում և գործում է նրան ծնելու կենդանի սպասումով. «Հրճվի՛ր, դո՛ստր Սիոնի, բարձրաձայն աղաղակի՛ր, Երուսաղեմ, ուրախացի՛ր և զվարճացի՛ր քո ամբողջ սրտով, դո՛ստր Երուսաղեմի, որովհետև... Իսրայելի թագավորը՝ Տերը, քո մեջ է...» (Սոփոնիա **3**.14–15, տես նաև Միքիա **4**.8–10, Երեմիա **31**.21–22): Մարիամը Հին կտակարանի «Սիոնի դստեր» ամենակատարյալ իրականացումն է և մարգարեության վավերացումը Նոր կտակարանում, Հին և Նոր կտակարանների եկեղեցու կապող օղակը: Նա է ավետավոր Կույսը, «Սիոնի դուստրը»՝ սուրբ Իսրայելի անձնավորումը, Հին ուխտի մարգարեության վավերացումը Նոր ուխտում և այն «երկնային տաճարը» (Գրիգոր Նարեկացի), որն իր մեջ է կրում Փրկչին, ուստի և ինքն է անդրանիկ Նոր եկեղեցին:

Նոր կտակարանում առկա են Մարիամի կյանքի հետևյալ հիմն. դրվագները.

Մ. Ա. Հիսուսի ծածուկ կյանքի տարիներին, որ միայն ակնարկված է կտակարաններում, սակայն նկարագրված է պարականոն գրվածքներում և բանավոր ավանդություններում:

Մ. Ա. Գալիլիայում: Ավետումը Նազարեթում (Ղուկ. **1**.26–38):

Մ. Ա. Հուդայի երկրում. այցելությունը Եղիսաբեթին (Ղուկ. **1**.39–56):

Մ. Ա. Բեթղեհեմում. Հիսուսի ծնունդը (Մատթ. **1**.18–25, Ղուկ. **2**.1–20):

Մ. Ա. Երուսաղեմի տաճարում (Ղուկ. **2**.22–33, տես *Տյառնընդառաջ*):

Մ. Ա. Եգիպտոսում, երբ սուրբ ընտանիքը (Մարիամը, Հովսեփը և մանուկ Հիսուսը) հրեշտակի հրահանգով, Հերովդես արքայի նենգ հրամանից խուսափելով, փախչում է Եգիպտոս (Մատթ. **2**.13–15, 19–23):

Մ. Ա. Երուսաղեմում. տասներկուամյա Հիսուսին կորցնելը և վերստին գտնելը Տաճարում (Ղուկ. **2**.41–52):

Մ. Ա. Կանայի հարսանիքում, որտեղ սուրբ Աստվածամոր բարեխոսությամբ Հիսուսը ջուրը գինի դարձրեց՝ հայտնելով աստվածային նշանների սկիզբը (Հովհ. **2**.1–11):

Մ. Ա. Հիսուսի փրկչական բացահայտ գործունեության ընթացքում, Կափառնայում քաղաքում, երբ զարմիկների հետ կամենում էր տեսնել Հիսուսին (Մատթ. **12**.46–49, Մարկ. **3**.31–35, Ղուկ. **8**.19–21). ևս երկու անգամ՝ հիշատակված տարբեր առիթներով (Մարկ. **6**.3, Ղուկ. **11**.27–28):

Մ. Ա. Հիսուսի երկրային կյանքի ավարտին, Գողգոթայի խաչելությանն ի տես: Ըստ Հովհաննես ավետարանչի՝ «... Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը և նրա մորաքույրը՝ Կղեոպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուս տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ» (Հովհ. **19**.25–27):

Մ. Ա. Հիսուսի փառավորումից՝ Հարությունից և Համբարձումից հետո՝ Վերնատանը (որտեղ Հիսուսը կատարել էր Վերջին ընթրիքը)

Հիսուսի աշակերտների հետ, հարատև աղոթքի հանձնված (Գործք **1.**13–14) կամ, այլ կերպ ասած՝ Մ. Ա. զինվորյալ (երկրային) եկեղեցում:

Մ. Ա. երկնքում՝ հավիտենության մեջ, կամ՝ Մ. Ա. հաղթական (երկնային) եկեղեցում. իրողություն, որը խորհրդաբանորեն տրված է Հովհաննեսի Հայտնությունում. «Եվ երկնքում մեծ նշան երևաց. մի կին՝ արեգակն իր վրա առած, լուսինն իր ոտքերի տակ և իր գլխի վրա մի պսակ՝ տասներկու աստղերից» (**12.**1):

Աստվածածնի վերաբերյալ կան նաև բանավոր ավանդություններ, զրույցներ, պարականոն գրքեր (Հակոբոսի նախավետարան, Կեղծ Մատթեոսի ավետարան, Մարիամի ծննդյան ավետարան, Մանկության արաբական ավետարան, Ատաղձագործ Հովսեփի պատմություն, Ամենասրբուհի Կույս Աստվածամոր Վերափոխման գիրք ևն): Դրանցում խոսվում են Մարիամի կյանքի այնպիսի դրվագների մասին, որոնք չեն գրառվել կանոնական Ավետարաններում (Մարիամի ծննդյան, մանկության, նրան Տաճարին ընծայելու, Եգիպտոսում անցկացրած տարիների, Նազարեթ վերադարձի, Աստվածամոր ննջման, Վերափոխման ևն):

Աստվածածինը հայրախոսական ավանդության մեջ: Առաքելական շրջանից հետո, սկսած II դ-ից, Մ. Ա-ի՝ որպես Փրկչի մոր և Փրկչի տնօրինական գործունեության մասնակցի, նրա հավիտենական կուսության և ապագա Վերափոխման վերաբերյալ հարցերը խորհրդածության առարկա են դարձել հայրախոս. ավանդության մեջ: Ուշադրավ են Իգնատիոս Անտիոքացու (մահ. 113/117) թղթերում (նամակներում) արտահայտված մտածումներն առ Մ. Ա., որպես Դավթի թագավոր. սերնդին պատկանող Կույսի և որպես սուրբ ընդունարան Աստվածության՝ Մայրն Աստծո Որդու: Եվա–Մ. Ա. հանդիպադրումն է առկա Հուստինոս Վկայի (մահ. մոտ 165) «Երկխոսություն Թրիփոն հրեայի հետ» գրության մեջ. ինչպես որ նախամոր՝ Եվայի պատվիրանազանցության (անհնազանդության) պատճառով մարդկությունը ընկավ մահվան անեծքի տակ, այնպես էլ Մ. Ա-ի սուրբ հնազանդությամբ՝ գտավ կյանք՝ հանձին Հիսուս Քրիստոսի: Իրենիոս Լուգդունացին (II դ.) իր «Ընդդեմ հերետիկոսությունների» գրվածքում հաստատագրել է, որ Մ. Ա., ծնելով Հիսուսին, մարդկությանը վերադարձրել է աստվածային *շնորհին*՝ հավիտենական կյանքին: Իրենիոս Լուգդունացին կոչվել է «Աստվածամոր առաջին աստվածաբանը»: *Կղեմես Աղեքսանդրացին* խոսել է Մարիամի աստվածային մայրության և մշտնջենական կուսության մասին՝ ոչ միայն Հիսուսի ծննդից առաջ, այլև՝ ծննդից հետո: Մեկնելով Հայտնության գրքի 12-րդ գլուխը՝ հանգել է հետևության, որ այնտեղ նկարագրված է Մ. Ա. և Մարիամի կերպարի միջոցով գծագրել է եկեղեցու դեմքը, նույն կերպարի մեջ միացնելով երկու Կույսերին և երկու Մայրերին՝ Մարիամին ու եկեղեցուն: Այսպիսով Մ. Ա. առաջին անգամ ընկալվում է նաև իբրև եկեղեցի: *Որոգինեսի* մեկնություններում (որոնք հայտնի են միայն լատ. թարգմանությամբ) ավանդաբար խոսվում է Մ. Ա-ի աստվածաշնորհ կուսության մասին՝ հղիանալու ընթացքում, նաև Հիսուսին ծնելուց հետո: Ընդունված կարծիքի համաձայն՝ Որոգինեսն է առաջին անգամ գործածել Θεοτόκος (Աստվածածին) եզրը: Որոգինեսն է առաջ քաշել Մարիամի՝ որպես կանանց վանականության (կուսակրոնության) գլուխն ու օրինակը լինելու գաղափարը: Հիպպոլիտոս Բոստրացին (մահ. 236) «Հակոբի օրհնությունները», «Բերոնիմոսի դեմ» գրվածքներում անդրադարձել է նույն թեմաներին, իսկ Մարիամին կոչել «Ամենասրբուհի միշտ Կույս Մարիամ»: Θεοτόκος եզրն Արևմուտքում առաջին անգամ գործածել է Ամբրոսիոս Մեդիոլանցին (340–397): Նա առաջինն է ուրվագծել Քրիստոսի խորհրդավոր մարմնի (եկեղեցու) բոլոր անդամների հանդեպ Մարիամի հոգևոր մայրության ուսմունքը, որն իր կատարելությանն է հասել Օգոստինոս Երանելու (354–430) աշխատություններում: Ամբրոսիոս Մեդիոլանցին համարվում է «լատին մարեմաբանության հայրը»:

Մ. Ա-ին և ընդհանրապես մարեմաբանության խնդիրներին իրենց գրություններում անդրադարձել են Տերտուղիանոսը (160–222), Ալեքսանդր Ալեքսանդրացին (մահ. 326), Հերոնիմոս Երանելին (IV դ.), *Եպիփան Կիպրացին*, Պրոկղ Կոստանդնուպոլսեցին (V դ.), Տիմոթեոս Երուսաղեմացին (V դ.) և ուրիշներ:

IV դ. 1-ին կեսին Աստվածամայր և Աստվածածին եզրերը լայն տարածում են ստացել և գործածվել բոլորի կողմից: Սակայն այդ եզրերը հենց այդ շրջանում էլ դարձել են մեծ վիճաբանության առարկա, և հատկապես *Անտիոքի* աստվածաբան. դպրոցի ներկայացուցիչները կասկածի տակ են առել Աստվածա-

մայր կամ Աստվածածին եզրի ուղղափառությունը և սկսել գործածել «Քրիստոսածին» կամ «մարդածին» եզրը (տես *Նեստորականություն* հոդվածում): *Կյուրեղ Ալեքսանդրացին* անհաշտ պայքար է մղել Նեստորի ուսմունքի դեմ, իսկ 431-ի *Եփեսոսի Գ տիեզերական ժողովը* դատապարտել է Նեստորի վարդապետությունը, դավանել Մարիամին Աստվածածին ու Աստվածամայր և Մարիամի աստվածային մայրությունը հռչակել որպես քրիստ. հավատքի ճշմարտություն (դոգմա):

Հռոմի եկեղեցին, հիմնվելով Արմ. եկեղեցու հայրերի, հատկապես Օգոստինոս Երանելու, Իլդեֆոնսոս Տոլեդացու (VII դ.), Սոֆրոնիոսի (VII դ.), Անդրեաս Կրետացու (VIII դ.), Հովհան Դամասկացու (VIII դ.) աշխատությունների վրա, արդեն VII–VIII դդ. առաջ է քաշել անարատ հղության (Աննայից Մարիամի անարատ հղությամբ ծննդի) վարդապետությունը: XII դ. Կաթոլիկ եկեղեցում հաստատվել է անարատ հղության տոն: Չնայած դոմինիկյանները չեն ընդունել այն և մերժել են այդ վարդապետության ուղղափառությունը, սակայն XIV դ. ինչպես անարատ հղության տոնը, այնպես էլ ուսմունքը, շնորհիվ Ֆրանցիսկյանների, Կաթոլիկ եկեղեցում ստացել են համընդհանուր ճանաչում, իսկ 1854-ին Հռոմի պապ Պիոս IX-ը անարատ հղության վարդապետությունը հռչակել է Հռոմի կաթոլիկ եկեղեցու պաշտոն. դոգմա: Համաձայն այդ վարդապետության, Մարիամն իր Աստված Որդու՝ Փրկչի աստվածային արժանիքների հեռանկարով, սրբությամբ զարդարված էր իր գոյության առաջին վայրկյանից, և ինչպես իր Որդին, նա ևս զերծ էր սկզբնական (աղամական) *մեղքից*: Աստվածաբան. երկար քննարկումներից հետո Արևմուտքը եկել է այն եզրակացության, որ սկզբնական մեղքից Մարիամի վերապահումը ամենակատարյալ և ամենավսեմ իրականացումն է այն փրկության, որ պարգևել է մեզ Քրիստոսը: Օգոստինոսը հաստատում էր, որ բոլոր մարդիկ, նաև ամենասուրբ վարք ունեցողները, իրենց կյանքի ընթացքում գործել են ինչ-որ մեղք, բայց Ամենասրբուհի Մարիամը բացառություն է համընդհանուր օրենքի մեջ, որովհետև «նրան տրվել է շնորհի մի այնպիսի գերառատություն, որով կարողացավ ամեն տեսակետով հաղթել մեղքին... և լույս աշխարհ բերել նրան, ով մեղք չունեցավ»: Ըստ Օգոստինոսի, Աստվածամոր և մեղքի միջև անընդունելի, անբմբռնելի և անմտածելի է որևէ հարաբերություն:

Արլ. ուղղափառ եկեղեցիները մերժում են անարատ հղության վարդապետությունը այն փաստարկված պատճառաբանությամբ, որ ինչը հատուկ է Աստծուն՝ Հիսուսին, տվյալ դեպքում՝ սկզբնական մեղքից զերծ լինելը, վերագրելի չէ մահկանացուներին, անգամ սրբերից առաջինին՝ Աստվածամորը:

Հայ մարեմաբանությունը սերտորեն կապված է քրիստոսաբանության հետ: Աստվածամոր կյանքն առնչվում է Քրիստոսի կյանքի և փրկագործության հետ: Աստվածածինը Տիրոջ Մարդեղությամբ մասնակից է դառնում Աստծո փրկության ծրագրին: Մ. Ա. «գործունյա նյութ է». դա նշանակում է, որ Տիրամայրը ոչ միայն Մարդեղության միջոց (գործիք) է, այլև՝ ուղղակի և դրական պայման: Հայ մարեմաբանության մեջ Մ. Ա-ի մայրությունն ունի երկու գլխ. հանգրվաններ՝ հղացման պարագաներ և մայրության իրավունքներ: Այդ երկու իրողությունները Բանի Մարդեղության վավերացումն են: Բանի Մարդեղությունից է սկսվում մարդու փրկագործական ընթացքը: Ուստի փրկագործական տնօրինության պայման հանդիսացող Աստվածամայրը դառնում է փրկագործության գործուն մասնակիցը:

Մարիամի էությունը սահմանված է իր կուսական մայրությամբ և ոչ թե իր անարատ հղությամբ: Մարիամն Աստվածածին էր ընտրվել իր սրբության և բարոյական մաքրության համար: Հղության ժամանակ Սուրբ Հոգին Մարիամին ազատել է իր մեղավոր բնությունից, որպեսզի Տիրոջը կրի շնորհի կատարելության մեջ: Մարիամի բարոյական սրբությունը շնորհի բերումով է էաբանական դարձել: Սուրբ Հոգին, Կույսի հղության հեղինակը լինելով, նաև նրա էաբանական մաքրագործման ու սրբացման հեղինակն է: Սուրբ Հոգու այդ ներգործությամբ է Մարիամը անարատ և ոչ թե ծնունդով (հղությամբ): Իր շնորհական ազդեցությամբ Մարիամը վերացնում է նախամայր Եվայի վրա ծանրացած անեծքը՝ դառնալով բոլոր «ողջերի» ճշմարիտ մայրը (Եպիփան Կիպրացի): Մ. Ա-ին վերապահված այս կարևորագույն առաքելությունը և բացառիկ շնորհը նրան գերադաս են դարձնում նույնիսկ հրեշտակների և քերովբեների նկատմամբ, որոնք անկարող են ըստ պատշաճի գովերգել Մարիամի մայրությունը: Դա աշխարհը վերափոխող, տիեզերքը փրկագործող մայրություն է:

Հայ մարեմաբանության սկզբունքներն են. Մարիամի աստվածային մայրության, նրա հավիտենական կուսության (*Գրիգոր Տաթևացին*, խոսելով Աստվածամոր հավիտենական կուսության մասին, վկայակոչում է Եզեկիելի մարգարեությունը. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այդտեղով: Այն փակ է լինելու, որովհետև առաջնորդ իշխանն է ներսում նստելու՝ Տիրոջ առաջ հաց ուտելու համար», Եզեկիել 44.2–3), Աստվածածնի սրբության և մաքրության, Տիրոջ առջև նրա բարեխոսական միջնորդության ընդունումը: Մարիամի կուսությունը, սակայն, դիսկուրսիվ տրամաբանության համար պարադոքսալ կերպով կապվում է հարսնության, ամուսնության հետ: Այս միտքը շեշտվում է *Գրիգոր Նարեկացու* «Պսակ կուսութեան մաքուր հարսնութեան» բնորոշումով, որն իր դավան. ենթիմաստով ուղղված էր *թոնդրակեցիների* դեմ: Նրանք մերժելով եկեղեց. ամուսնությունը՝ թույլ են տվել «արհամարհանք ամուսնության պսակի նկատմամբ, որ Տերն ինքը հրաշագործությամբ և մարդն Աստվածածնով հարգեց ու պատվեց»: Մարիամի կուսության հետ անխզելիորեն կապված է նրա սրբությունը: Աստվածաբան. գրականության մեջ այն հայտնի է «կատարսիսի տեսություն» (առաջ է քաշել *Գրիգոր Նազիանզացին*) անվամբ: Համաձայն այդ տեսության Քրիստոսը ծնվել է Սուրբ Հոգու կողմից նախամաքրված (*προκαθαρθειτης*) Կույսից՝ մարմնով և Հոգով: Սրբության, անարատ հղության մասին խոսող «նախամաքրված» եզրը, հակառակ իր երկդիմի բնույթի, Հայ եկեղեցու մարեմաբանության մեջ արժանացել է միանշանակ մեկնաբանության: Այսպես, *Ներսես Շնորհալին* Մատթեոսի Ավետարանի իր մեկնությունում ասում է, թե «Հոգին... մաքրեց Կույսին ամեն տեսակ մարմնական կրքերից»: Հաստատելով այս միտքը՝ Իգնատիոս Սկևռեցին (XIII դ.) Ղուկասի Ավետարանի իր մեկնությունում գրում է. «Սկզբից Հոգին հանդչում է Կույսի մեջ և նրան սրբում ամեն տեսակ մարմնական ցանկություններից»: Այսպիսով Հայ եկեղեցին, ցուցաբերելով պատշաճ զգուշավորություն, «նախամաքրված» եզրը բացառապես կապել է Սուրբ Հոգու ներգործելուց և Մ. Ա-ին ադամական մեղքից մաքրագործելուց հետո Բանի անապական մարմնացումը նախապատրաստող իրողության հետ:

Ընդհանուր մարեմաբանության մեջ արծարծված թեմաներից է Աստվածամոր կրած յոթ գլխ. ցավերը կամ վերքերը: Առաջին ցավը Տիրամայրը կրել է, երբ Սիմեոն ծերունին մարգարեացել է. «Իսկ քո [Մարիամի] հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բացվում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Ղուկ. 2.35): Երկրորդը Մարիամի Եգիպտոս փախչելն էր՝ մանուկ Հիսուսին Հերովդես թագավորի դաժանությունից փրկելու համար: Երրորդը տասներկու տարեկան Հիսուսին Տաճարում կորցնելն էր: Չորրորդ ցավը Աստվածամայրն ապրել է, երբ Հիսուսին դատապարտել են, և որդին խաչն ուսերին առած բարձրանում էր Գողգոթա լեռը: Հինգերորդ վերքը Աստվածամայրը ստացել է, երբ Որդուն խաչել են: Վեցերորդ ցավը Կույս Մարիամը կրել է, երբ Հիսուսը հոգին ավանդել է, տեգով խոցել են նրա կողը և մարմինը խաչից իջեցրել: Յոթերորդ անգամ Տիրամոր սիրտը խոցվել է իր Որդու թաղման ժամանակ:

Մ. Ա-ին նվիրված տոները հաստատվել են V դ-ից սկսած: Հայկ. ծեսում չորեքշաբթին Մ. Ա-ին նվիրված օրն է, որովհետև, ավանդության համաձայն, ինչպես Եվայի անհնազանդությունը, այնպես էլ դրա ժխտումը հանդիսացող Տիրամոր Ավետումը եղել է չորեքշաբթի (չորեքշաբթին Հայ եկեղեցում պահոց օր է): Հայ եկեղեցին Աստվածամոր հիշատակի համար սահմանել է 7 տոն (տես *Աստվածածնի տոներ*), որոնցից Վերափոխումն ս. Աստվածածնին Հայ եկեղեցու հինգ *Տաղավար* տոներից է:

Մ. Ա-ին նվիրված՝ մարեմական գրություններ (ճառ, մեկնություն, ներբող, տաղ ևն) ունեն *Պետրոս Սյունեցին, Թեոդորոս Քռթենավորը*, Գրիգոր Նարեկացին, *Ներսես Լամբրոնացին*, Գրիգոր Տաթևացին, *Առաքել Բաղիշեցին* և ուրիշներ: *Մովսես Խորենացին* իր «Պատմութիւն սրբուհւոյն Աստուածածնի և պատկերի նորա» (1994) գրվածքում անդրադարձել է Մ. Ա-ի ազգաբանությանը, մեկնաբանել նրա կենսագրության առանձին դրվագներ, շարադրել Աստվածածնի պատկերի պատմությունը: Ըստ պատմահոր, «ի փայտն նկարեալ» Աստվածածնի պատկերը Հովհաննես առաքյալի գործն է, որը Բարդուղիմեոս առաքյալը բերել էր Հայաստան՝ Անձևացյաց երկիր և Դարբնաց քար կոչված վայրում, Անահիտ

դիցուհու մեհյանի տեղում հիմնել Ս. Աստվածածին եկեղեցին:

Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» պոեմում Մ. Ա-ին անվանում և բնութագրում է որպես «Մարմնատեսիլ քերովբէ», «Եդեմ շնչական», «Ծառ կենացն անմահից՝ բոցեղեն սրովն պարուսնակեալ», «Հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ», «Խնամակալ Բարեխոս», «Ողջացուցիչ երկանցն Եվայի», «Տաճար երկնային», «Աղախին աստուծոյ և մայր», «անարատ», «երջանիկ», «բարեշնորհ» ևն:

Հայաստանում բազմաթիվ են Աստվածածին անունով եկեղեցիներն ու սրբավայրերը: *Շիրակի թեմի* առաջնորդանիստ եկեղեցին (Գյումրիում) կոչվում է Ս. Աստվածածին Յոթ վերք եկեղեցի (1843–56): Հայ եկեղեցու Մայր տաճարը՝ Ս. Էջմիածինը, օծված է հանուն Մարիամ Աստվածածնի: Մ. Ա-ի հետ են կապված բազում հրաշքներ ու հայտնություններ:

Երաժշտություն: Մ. Ա-ին նվիրված երգերը կոչվում են Մեծացուսցե, որը *Շարակնոցի* 8–9 օրհներգից բաղկացած հիմներգական *կանոնի* երրորդ միավորն է: Մեծացուսցեն երգվում է առավոտյան ժամին՝ իբրև Աստվածածնի «Մեծացուսցէ անձն իմ զՏէր» (Ղուկ. 1.46) երգի կցուրդ: Մեծացուսցեների առաջին նմուշներն ավանդաբար վերագրվում են Մովսես Խորենացուն: Մեծացուսցեները բնորոշվում են բերկրալից, քնար. և փառաբան. բնույթով, որտեղ Աստվածածինն անվանվում է «Արևելք գերարփին, օթարան լուսածին», «Մայր լուսոյ Մարիամ անհարսնացեալ», «Զանճառելի լուսոյ մայր», «Առաւօտ խաղաղութեան, արուսեակ զուարթաբար, տաճար լուսոյ» ևն: Մեղեդիապես Մեծացուսցեներն աչքի են ընկնում զարդոլորուն, ծորերգային հուզական արտահայտիչ նկարագրով:

Պատկերագրություն: Մ. Ա-ի պատկերագրությունը քրիստ. արվեստում ձևավորվել է II–III դդ.: Վաղ շրջանում առաջացել է Ավետման, Աղոթող Աստվածամոր (օրանտ), Մանկանը գրկած Աստվածամոր և հատկապես երկրպագող մոգերի հետ Մանուկը գրկին Աստվածամոր պատկերագրությունը: Մ. Ա-ի պատկերագրությունը ծագել է կանոնական չորս և պարականոն Ավետարաններից: Առաջին գեղ. պատկերները հանդիպում են II դ. կեսին վերագրվող Հռոմի Պրիսկիլլայի կատակոմբում՝ ստորգետնյա թաքստոցում, որտեղ քրիստոնյաները ժամանակին պատսպարվել են և արարողություններ կատարել:

«Ավետում» պատկերագր. թեմայի առաջին օրինակները Հայաստանում պահպանվել են VI–VII դդ. Օձունի կոթողի հս. սյան արմ. կողմում և «*Էջմիածնի Ավետարան*»-ի վերջում կցված VI–VII դդ. մանրանկարում ու փղոսկրե կազմի վրա: «Ավետման» տեսարանում սովորաբար Գաբրիել հրեշտակապետը պատկերվում է ձախ, Մարիամը՝ աջ կողմում, իսկ երկնքից դեպի Մարիամն է իջնում աղավնակերպ Սուրբ Հոգին: 1057-ի Ավետարանում (Փոքր Հայք, Մատենադարան, ձեռ. № 3784) և «*Մողնու Ավետարան*»-ում միմյանց մոտ նույն էջում պատկերված են «Ավետումը» և «Մարիամի ու Եղիսաբեթի հանդիպումը»: 1057-ի Ավետարանում Մարիամը մերժման ժեստով է (կապադովկյան տիպ), իսկ «Մողնու Ավետարան»-ում Մարիամը նստած է շքեղ տան առջև՝ մութաքայի վրա, աջ ձեռքն ափի կողմով դեպի մեզ՝ իբրև մերժում, ձախով իլիկ մանելիս: *Որմնանկարչության* մեջ «Ավետումը» պատկերվել է VII–XVIII դդ.: *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու և *Ախթալայի Ս. Աստվածածին վանքի* եկեղեցու «Ավետման» նկարները «Ծնունդի» և «Եգիպտոս փախուստի» հետ ներկայացնում են մեկ շարք:

XI–XII դդ. պատկերազարդված մի Ավետարանում (Մատենադարան, ձեռ. № 2877) Մարիամը պատկերված է երկու ձեռքով իլիկ մանելիս, ընդ որում, նրա մատների շարժումը միաժամանակ կապված է օրհնության, Սուրբ Երրորդության և Քրիստոսի աստվածային ու մարդկային բնությունների հետ: Կիլիկյան *մանրանկարչության* մեջ Մ. Ա. պատկերված է նստած՝ իլիկով (1223-ի Ավետարան, Ստամբուլի Ս. Գրիգոր եկեղեցի, ձեռ. № 35, «*Կեռան թագուհու Ավետարան*», «Հովհաննես Արքաեղբոր Ավետարան», Մատենադարան, ձեռ. № 197 ևն) և կանգնած («*Վասակ իշխանի Ավետարան*», XIII դ. 80-ական թթ-ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 9422 ևն): Ձեռագիր № 9422 Ավետարանում և Խաչատուր Խիզանցու 1455-ի Ավետարանում (Բալթիմոր, Ուոլթերսի հավաքածու, ձեռ. № 543) Աստվածածինը «Ավետման» մեջ աղոթողի (օրանտի) կեցվածքով է՝ երկու ձեռքերը դեպի վեր պարզած, ինչպես Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու «Ավետման» որմնանկարում: Պատկերագրության մեջ հրեշտակի և Մարիամի միջև կյանքի

ավազանը երբեմն փոխարինվում է արմավի ծառով՝ որպես արդարների փրկության խորհրդանիշ: *Սարգիս Պիծակը* վերադարձել է աջ ձեռքի ափով Մարիամի մերժման հին կապադովկյան տիպին, իսկ Մարիամի ձախ ձեռքին պատկերել է դալար: Նա պահպանել է նաև ավազանի կամ ջրհորի (որից չիթերի փոխարեն ցայտում են տերևներ՝ զուգորդվելով դեպի Տիրամայրն ընթացող աղավնակերպ Սուրբ Հոգու հետ) հնավանդ պատկերը: Այդ պատկերակերպը կրկնվում է Վասպուրականում: Իսկ *Թորոս Տարոնացին* և *Գրիգոր Տաթևացին* «Ավետումը» ներկայացնում են ջրհորի կամ աղբյուրի մոտ՝ հին ասոր. տարբերակով:

«Աստվածածինը Մանկան հետ» կամ «Աստվածամայրը մանուկ Հիսուսը գրկին» Մ. Ա-ի պատկերագրության առավել տարածված հորինվածքներից է: Հայաստանն առաջին երկրներից է, որտեղ IV դ. մշակվել և զարգացել է այդ պատկերագր. տիպը: Տիրամոր և մանուկ Հիսուսի պատկերներով հորինվածքը մասնագիտ. գրականության մեջ հայտնի է «Օդիգիտրիա» (հուն.՝ ուղի ցույց տվող) անունով: Հռոմի Պրիսկիլլայի որմնանկարի «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերում Մարիամը ներկայացված է գլխին կիսաթափանցիկ քողով (ի տարբերություն ավելի ուշ շրջանի մաֆորիոնի՝ իբրև ամուսնացած կնոջ նշան: Քողի տակ կարճ թևքերով քիտոն է, քիտոնի վրա՝ մանտիա կամ պելլոս: Մարիամի կողքին տոգայով մարգարեն է, վերևում՝ աստղ: Սակայն այս նմուշը հատկանշական չի դառնում հետագա պատկերագրության համար:

Եփեսոսի Գ տիեզերաժողովում Աստվածամայր ճանաչված Կույս Մարիամը սկսել է ընկալվել որպես երկնային թագուհի, և դահին բազմած մանուկ Հիսուսին գրկած Աստվածամայրն անջատվել է մոգերից (հնագույն արևելյան պատկերներում ներկայացվել է մոգերի հետ) ու ստացել սրբապատկերային նշանակություն: Աստվածամոր մշտական հագուստը դարձել է տունիկայի վրա գցված մաֆորիոնը (օմոֆորիոն անվան աղավաղում), որը միաժամանակ ծածկում էր և գլուխը, և ուսերով իջնում մինչև ծնկները:

«Օդիգիտրիայի» պատկերագր. այդ տիպը Հայաստանում տարածվել է IV–VII դդ. քառակող քանդակազարդ կոթողների և դրանցից մի քանիսի պատվանդանների վրա (Բերդաձորի, Հառիճի, Օձունի կոթողներ), իսկ Թալինի մի կոթողի վրա Աստվածամորն ու Մանկանը սպասարկում և հսկում են հրեշտակները: Թալինի և Խարաբավանքի կոթողների վրա (ՀՊՊԹ) Աստվածամայրը պատկերված է կանգնած՝ Մանկան հետ, որի ձեռքին կա գիրք: «Աստվածամայրը Մանկան հետ» հորինվածքի պատկերագր. հնավանդ այս տիպը գոթական ազդեցությամբ վերստին ի հայտ է եկել XIII–XV դդ. հայկ. մանրանկարչության մեջ (Վասպուրական և այլուր): «Էջմիածնի Ավետարան»-ի VI դ. փղոսկրե կազմի ստորին փեղկի կենտր. թիթեղին դահի վրա պատկերված է Մանուկը գրկին Աստվածամայրը՝ կողքին Պողոս և Պետրոս առաքյալները:

Հայկ. մանրանկարչության մեջ «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերների առաջին օրինակները պահպանվել են X–XI դդ. Ավետարաններում («Էջմիածնի Ավետարան», 1000-ի «Էջմիածնի Ավետարան», Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Մատենադարան, ձեռ. № 2555, 966-ի «Թարգմանչաց Ավետարան», Բալթիմոր, Ուոլթերսի հավաքածու, ձեռ. № 537 ևն):

Հայկ. եկեղեցիների արտաքին հարդարանքում թեմատիկ պատկերների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերաքանդակները (Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցի, *Արենիի Ս. Աստվածածին եկեղեցի, Նորավանքի, Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի, Արատեսի վանքի* եկեղեցիներ ևն): Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու արմ. պատին «Օդիգիտրիան» պատկերված է Գաբրիել և Միքայել հրեշտակապետների հետ (ինչպես Օձունում), մի մոտիվ, որն առկա է Կիրակոս Ծաղկողի 1351-ի Ավետարանում (Մատենադարան, ձեռ. № 2745), առանց հրեշտակների՝ «*Ադրիանուպոլսի Ավետարան*»-ում: «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերը հետագայում տարածում է ստացել Վայոց ձորի, Գլաձորի և Տաթևի մանրանկարչության ու ճարտ. դպրոցներում: Բյուզ. Էլեուսա (Գորովագին) Աստվածամոր ու Մանկան սրբապատկերի ազդեցությամբ XIII դ. վերջին և XIV դ. գորգազարդ ֆոնի վրա ձևավորվել է նստած Աստվածամոր և նրա գրկին ձեռքերը փարվելու համար տարածած Մանկան կերպարը (*Մոմիկ*, Արենիի Ս. Աստվածածին և Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցիների մուտքերի ճակատակալ քարերի վրա), իսկ գոթական ազդեցությամբ՝ Մանկանը կրծքով կերակրող Աստվածամոր կերպարը

(Թորոս Տարոնացի, 1323-ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 6289):

Հայ միջնադարյան որմնանկարչության մեջ «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերի պահպանված եզակի օրինակը *Գնդեվանքի* եկեղեցու հվ-արլ. ավանդատան ճակատի որմնանկարն է: «Օդիգիտրիան» հանդես է եկել նաև որպես Բարեխոս (մանուկ Հիսուսը գրկին կանգնած Աստվածամայրը պատվիրատուների հետ, *Հաղարծինի վանքում* գտնվող մի ճակատակալ քարի վրա, Հովհաննես Խիզանցու ծաղկած 1460-ի Ավետարանում, Մատենադարան, ձեռ. № 7566, ևն):

XVII–XVIII դդ. գեղանկարչ. գործերում «Աստվածամայրը Մանկան հետ» հորինվածքն ստացել է յուղաներկ սրբապատկերների տեսք, ավելացել են մանրամասներ (օր.՝ Մանկան ձեռքի խաչը ևն), որոնք հատուկ չէին միջնադարին: Հայ եկեղեց. գեղանկարչության մեջ մեզ հասած «Օդիգիտրիայի» առաջին գործերից են XVII դ. անհայտ նկարչի «Աստվածամայրը Մանկան հետ» (Սևանի Աստվածամայր), XVIII դ. անհայտ նկարչի «Աստվածամայրը Մանկան, Պողոս և Պետրոս առաքյալների հետ» կտավները, ինչպես նաև՝ Հովնաթան Հովնաթանյանի՝ Աստվածամորը նվիրված գործերը: «Աստվածամայրը Մանկան հետ» սրբապատկերային տիպի վերջին լավագույն օրինակը Վ. Սուրենյանցի «Աստվածամայրը գահի վրա» կտավն է (Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու Ավագ խորանում): Հայ եկեղեցու կանոնների համաձայն, Ավագ խորանի ս. *Սեղանի* նկարի վրա պետք է պատկերված լինի Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին:

«Դեխուսի» («Բարեխոսություն») պատկերագր. թեման, որը կապված է Փրկագործության խորհրդի հետ, Հայաստանում ունի իր հնագույն օրինակները: «Բարեխոսության» առաջին նմուշներից են Պեմզաշենի VI դ. կենտրոնագմբեթ եկեղեցու մուտքին պատկերված երկու կտիտորները՝ Հիսուսը գրկին կանգնած Աստվածամոր ոտքերի մոտ: Մարիամի երկու կողմերում սրբիչները ձեռքերին հորիզոնական ուղղությամբ ճախրող սպասարկու հրեշտակներ են: Աստվածամոր հետ կապված «Բարեխոսության» դասական թեման (գահին նստած Ամենակալ Քրիստոսը, ձախից Աստվածամայրը, աջից՝ Հովհաննես Մկրտիչը՝ որպես բարեխոսներ) հետագայում շարունակվել է *խաչքարերի* վրա (հատկապես Վայոց ձորի դպրոցում): Դրա ամենավառ օրինակը Պռոշ իշխանի XIII դ. խաչքարի պահպանված վերևի բեկորն է (Կեչառիսից բերված, այժմ՝ ՀՊՊԹ-ում), որտեղ «Բարեխոսությունն» ունի ընդլայնված տեսք (բազմած Հիսուսի ձախից Աստվածամայրն է, աջից՝ Հովհաննես Մկրտիչը, նրանց կողքերին՝ մեկական հրեշտակ): «... Բարեխաւս լեր Պռոշին...» վիմագիրը մատնանշում է պատկերաքանդակի բովանդակությունը: Վայոց ձորի դպրոցի «Բարեխոսության» թեմայով մյուս կարևոր հուշարձանը Մոմիկի 1308-ի խաչքարն է (այժմ՝ Ս. Էջմիածնում): «Բարեխոսության» դասական պատկերաքանդակի օրինակներից է Վայոց ձորի Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի երեք քարաբեկորները (ՀՊՊԹ):

«Դեխուսի» թեման ավելի բարդ ու նուրբ իմաստներ է ստացել կիլիկյան մանրանկարչության մեջ: *Թորոս Ռոսլինի* մոտ այն հանդես է եկել մի քանի փոխակերպություններով. ա. 1256-ի «Զեյթունի Ավետարան»-ում (Մատենադարան, ձեռ. № 10450) Մարկոսի Ավետարանի անվանաթերթի գլխազարդի վերևում պատանի անմորուք Քրիստոսի (Էմմանուելի) կիսանդրին է, իսկ նրանից ներքև, ձախում՝ Մարիամի, աջում՝ Հովհաննես Մկրտչի, բ. 1268-ի «Մալաթիայի Ավետարան»-ի (Մատենադարան, ձեռ. 10675) ընծայական հանդիպակաց խորանների գլխազարդերում Հիսուսի դիմաց Մարիամի կիսանդրին է՝ իբրև բարեխոս, իսկ 1260-ի Ավետարանի (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 251) ընծայականի գլխազարդում համակենտրոն երկու կամարների կենտրոնում Քրիստոս Էմմանուելի կիսանդրին է՝ շրջապատված երկու հրեշտակների և Մարիամի ու Հովհաննես Մկրտչի կիսանդրիներով, գ. Սեբաստիայի 1262-ի (Բալթիմոր, Ուոլթերսի հավաքածու, ձեռ. № 539) և Մալաթիայի Ավետարանների «Վերջին դատաստանի» պատկերներում աթոռին նստած դատավոր Հիսուսի կողքին, որպես արդարների բարեխոսներ, հրեշտակների բազմությամբ շրջապատված կանգնած են Մարիամը և Հովհաննես Մկրտիչը: «Բարեխոսության» թեման մի քանի այլ առանձնահատուկ դրսևորումներ է ստացել կիլիկյան մանրանկարչության մեջ, որտեղ պատկերված են նաև պատվիրատուները, որոնց համար բարեխոսում է Աստվածամայրը («Կեռան թագուհու Ավետարան») կամ իր փեչով հովանավորում է նրանց («Վասակ իշխանի Ավետարան»): «Բարեխոսության» թեման հայ ծաղկող-

ներն օգտագործել են նաև տերունական տոները պատկերող նկարներում («Ծնունդի» պատկերում, Ավագ, 1356–58-ի Աստվածաշունչ, Մատենադարան, ձեռ. № 6230, «Խաչելության» պատկերում, Սարգիս Պիծակ, «Մարիուն Թագուհու Ավետարան», Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1973, ևն):

«Մոգերի երկրպագությունը» պատկերագր. թեման ունի երկու տարբերակ. ըստ Մատթեոսի Ավետարանի, մոգերին առաջնորդում է աստղը՝ հայտնվելով Քրիստոսի ծնվելու պահին, իսկ ըստ Կեղծ Մատթեոսի պարականոն Ավետարանի՝ մոգերը նվերներով գալիս են Բեթղեհեմ և գտնում երկու տարեկան Մանկանը մոր գրկում: Հնագույն պատկերը Հռոմի Պրիսկիլլայի կատակոմբի հուն. մասի II դ. 1-ին կեսի որմնանկարն է, որտեղ Քրիստոսը բարուրված է և Աստվածամոր գրկում, մոգերը՝ արլ. հագուստներով, առանց թիկնոցների: IV դ. Կալիստայի կատակոմբում Մարիամը բազմած է բարձր գահին, ծնկներին՝ մանուկ Հիսուսը, աջը պարզած մոգերին:

«Էջմիածնի Ավետարան»-ի VI դ. փղոսկրե կազմի վրա «Մոգերի երկրպագությունը» նման է Հռոմի և Ռավեննայի սարկոֆագների պատկերագրությանը. Մարիամը նստած է հյուսածո պարտեզային բազկաթոռի վրա գրեթե երեք քառորդով, ծնկներին՝ մանուկ Հիսուսը, իսկ մոգերն առանց թիկնոցների են՝ արլ. թագերով ու տաբատներով, հրեշտակների առաջնորդությամբ պարգևները ձեռքներին մոտենում են Աստվածամորը: Եզակի պատկեր է նույն Ավետարանի «Մոգերի երկրպագությունը» (VI–VII դդ.), որտեղ Մարիամը պատկերված է որպես Աստվածածին, կրծքի մեդալիոնի կամ վահանի մեջ՝ Հիսուսը (կայսրի պատկերը կրծքերին կամ վահանների վրա կրող զինվորների նման): Այստեղ Հիսուսը հանդես է եկել իբրև երկնային արքա: Մոգերը սասանյան շքեղ հագուստներով են, ձեռքներին՝ ոսկեզրվագ ափսեներ. նրանցից երկուսը գահի աջ կողմում են, երրորդը հրեշտակի հետ՝ ձախ կողմում:

X–XI դդ-ից «Ծննդյան» պատկերում «Մոգերի երկրպագությունը» միացվում է «Հովիվների երկրպագության» և «Հրեշտակների ավետման», հաճախ նաև՝ «Մանկան լոգանքի», բնանկարի վրա Հովսեփի, որպես փիլիսոփայի, մսուրի ու կենդանիների պատկերների հետ:

Հայկ. մանրանկարչության մեջ և խաչքարերի պատկերաքանդակներում Մ. Ա. պատկերվում է նաև այլ տեսարաններում, որոնցից են «Տյառնընդառաջը» կամ «Ընծայումն տաճարին», «Համբարձումը», «Հոգեգալուստը» (շատ հազվադեպ Վասպուրականում), «Խաչելությունը», «Խաչից իջեցումը», «Թաղումը», «Ննջումն Աստվածածնի» կամ «Վերափոխումն Աստվածածնի», ինչպես նաև՝ հազվադեպ պատկերվող «Ծննդյան» շարքում («Ավետում», «Մարիամի և Եղիսաբեթի հանդիպումը», «Ծնունդ», «Փախուստ դեպի Երուսաղեմ» ևն):

(Տես նաև *Ավագ շաբաթ, Համբարձում, Հոգեգալուստ, Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն, Վերափոխումն ս. Աստվածածնի, Տյառնընդառաջ* հոդվածների Պատկերագրություն մասը):

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.3, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, ԿՊ, 1741: Ավետիքյան Գ., Խորհրդածութիւն ի վերայ եօթն գլխաւոր ցաւոցն սուրբ Աստուածածնին, Վնտ., 1988: Իգնատիոսյան Վ., Աստվածամայրը, 5 հրտ., Ե., 1993: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995: Տասնապետյան Թ., Աստուածածնի մասին, հոդվածների ժող., Անթիլիաս, 1996: Նույնի, Տիրամայր, շարք 1–3, Լիսաբոն-Բեյրութ, 1997–1998: Գալուստյան Շ., Աստուածաշնչական սուրբեր, 3-րդ հրտ., Ե., 1997: Տիրամայրն է շրջում [ժող.], Ե., 2000: Ավետիսյան Ք., Աստվածամոր պատկերաքանդակները Արենիում և Նորավանքում, «Նորավանք», Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի հայագիտ. տարեգիրք, 2-րդ հրտ., Մոնրեալ-Ե., 2001, էջ 110–121; *Покровский Н., Евангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских, СПБ, 1892;* Gordillo M., Mariologia Orientalis, Orientalia Christiana Analecta 141, Roma, 1954; Millet G., Recherches sur l'iconographie de l'Evangile aux XIVe, XVe et XVIe siécles d'apres les monuments de Mistra, de la Macedonie et du Mont Athos. Deuxiéme ed., P., 1960; Shiller G., Iconography of Christian Art, v. 1, L., 1971; George A., Marie dans le Nouveau Testament, Desclée de Brouwer, P., 1981; Kniazeff A., La Mère de Dieu dans l'Eglise orthodoxe, Cerf, P., 1990; Miller E., Samples R., The Cult of the Virgin. Catholic Mariology and the Apparitions of Mary, Michigan, 1994; Dasnabédian T., Le panégyrique de la Sainte Mère de Dieu de Grigor Narékatci, Antélias, 1995.

Հակոբ Քյոսեյան
Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան
Վիգեն Ղազարյան

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԱՆՔ, ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղից 2 *կմ* հարավ-արևմուտք, Ախուրյան գետի ձախ ափին: Բաղկացած է երկու հուշարձանախմբից՝ Մեծ և Փոքր (Վերին): Մ. վ-ի գլխ.՝ Կաթողիկե եկեղեցին (ըստ հվ. պատի արձանագրության) 988–1029-ին կառուցել է Վահրամ Պահլավունին (980–1020-ին՝ Իշխանաց-իշխան, 1020–45-ին՝ Հայոց սպարապետ): Նա վանքին է նվիրել գյուղեր, այգիներ, Անիում՝ տներ, կրպակներ ևն: Եկեղեցին երկու զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է՝ արլ. կրճատված խաչաթևով: Ավագ խորանը հարակից երկու ավանդատներով մոտեցվել է գմբեթատակ տարածությանը, որի շնորհիվ գմբեթը շենքի արտաքին ծավալում դրավել է կենտր. դիրք: Ներսում, ինչպես *Անիի Մայր տաճարում*, Կաթողիկե եկեղեցում որմնամույթերը մշակված են սլացիկ այունախրձերով, Ավագ խորանը՝ որմնախորշերով, իսկ ճակատներն արտաքուստ զարդարված են զույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարով և խոր լուսաստվեր ստեղծող «հայկ. խորշերով»: Գմբեթի 12 նիստանի թմբուկը, որը պսակված է հովանոցաձև վեղարով, զարդարված է կիսասյունների փնջերով, որոնք միմյանց են կապվում փոքրիկ ճակատոններով: Մ. վ-ի Կաթողիկե եկեղեցին հայկ. ճարտ-յան Անիի դպրոցի լավագույն կառույցներից է (ենթադրվում է, որ հեղինակը *Տրդատ* ճարտարապետն է): Վանքի երկրորդ եկեղեցին Կաթողիկեից հս. է, գրեթե նրան կից և վերջինիս փոքրացված ընդօրինակությունն է թե՛ հորինվածքով և թե՛ ճարտ. մանրամասներով ու հարդարանքով (հավանաբար միաժամանակ են կառուցվել): Երրորդ եկեղեցին (XI դ.) Կաթողիկեից հվ. է: Ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն կենտրոնագմբեթ կառույց է: Համալիրի հվ-արմ. կողմում 1954–56-ի պեղումներից բացվել է չորրորդ եկեղեցին՝ արտաքուստ կլոր, ներսից չորս ավանդատներով, քառախորան գմբեթավոր հորինվածքով (նման *Խծկոնքի վանքի* Ս. Սարգիս եկեղեցուն, XI դ.): Պահպանվել են զետնախարիսխը և պատերի ստորին երկու շարքերը: Հուշարձանախմբի արլ. և հվ. կողմերում գերեզմանատունն է: Վանքն ունեցել է իր ջրմուղը (հատվածները հայտնաբերվել են դավթից արմ.): Փոքր կամ Վերին վանքը գտնվում է Մեծ վանքից հս., բլրի վրա: Պահպանվել են խաչաձև գմբեթավոր եկեղեցու ավերակները, շուրջը՝ գերեզմանոցը, որտեղ թաղված է ճարտ. Շնավորիկը: Մ. վ. եղել է Պահլավունիների տոհմ. տապանատունը: 1045-ին Դվինի մոտ ճակատամարտում զոհված Վահրամ Պահլավունուն թաղել են Մ. վ-ի Կաթողիկե եկեղեցու արմ. պատի հս. կողմում (հետագայում այն ներառվել է եկեղեցուն արմ-ից կից կառուցված քառայուն դավթի մեջ, որից պահպանվել են պատերի ստորին մասերը): XIX դ. վերջին տապանաքարը փոխարինվել է նորով: XI դ. սելջուկ թուրքերի արշավանքներից Մ. վ. ավերվել է, Կաթողիկե եկեղեցին վերածվել է բերդի, իսկ վանքի տարածքում գյուղ է հաստատվել:

1225-ին Զաքարյան իշխանները (ըստ Կաթողիկե եկեղեցու հս. պատի արձանագրության) Պահլավունիներին վերադարձրել են հայրենի կալվածքները, այդ թվում՝ Մ. վ.: Նրանց օժանդակությամբ Վահրամ Պահլավունու թոռներ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր Ղարիբ իշխանը նորոգել են «անօրենների» ավերած Մ. վ., միավորել Մարմաշենի Մեծ և Փոքր (Վերին) վանքերը, վտարել վանքում բնակված գյուղացիներին, վերահաստատել միաբանությունը: Նրանք վանքին նվիրել են «պայծառազգեստ» հանդերձանք, ոսկե և արծաթե խաչեր, Հին և Նոր կտակարանների ձեռագիր մատյաններ, ինչպես նաև Ազատ և Տիրաշեն գյուղերը:

1239-ին Անիի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսը վերահաստատել է այդ նվիրատվությունները և որոշումը փորագրել *Անիի Ս. Առաքելոց եկեղեցու* պատին:

XIII դ. թաթար-մոնղոլների արշավանքներից Մ. վ. կրկին ավերվել է և լքվել:

XIX դ. 30-ական թթ. (1828–29-ի ռուս-թուրք. պատերազմից հետո), երբ Ախուրյան գետը դարձել է ռուս-թուրք. սահման, Կարսից գաղթած հայերի մի խումբ բնակություն է հաստատել Մ. վ-ի շուրջը՝ Կաթողիկե եկեղեցին դարձնելով ծխական եկեղեցի: 1870-ին Մկրտիչ Ջալալյանը նորոգել է վանքը, կից հիմնել դպրոց: 1883-ի երկրաշարժից քանդվել է վանքի հս. եկեղեցին: 1900-ին վանքում նորոգման որոշ աշխատանքներ է կատարել *Մկրտիչ Ա Վանեցի* (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսը: 1923-ից Կաթողիկե եկեղեցին դադարել է գործել, 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից վնասվել է (ճաքեր են դոյացել հվ. պատում՝ զետնախարսխից մինչև գմբեթի գագաթը):

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.4, 1-ին պատկերը:

ՄԱՐՄԵԼԻ

Գրկ. Մխիթարյանց Ա., Տեղագրութիւն Մարմաշինոյ վանացն ի Շիրակ, Վաղ-պատ, 1870: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Եղիազարյան Հ., Մարմաշենի վանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1957, № 5: Թամանյան Յու., Մարմաշենի վանքի վերանորոգումը, «Էջմիածին», 1971, № 5: Սաղումյան Ս., Մարմաշենի վանքը, Վաղ-պատ, 1998: *Халпахчьян О.Х., Архитектурные ансамбли Армении 8 в. до н.э. – 19 в. н.э., М., 1980;* Cuneo P., Le couvent de Marmašen et l'école architectural d'Ani, "Revue des études arméniennes", XXIII, P., 1992.

Մուրադ Հասրաթյան

ՄԱՐՄԵԼԻ ՇՐՋԱՆ, տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակությունն* հոդվածում:

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ, Մարտիրոս Կաֆացի, Քեֆեցի Թաթար Մարտիրոս [մոտ 1620, ք. Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա, Ղրիմում) – 25.8.1683, Եգիպտոս], Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարք, մատենագիր, տաղասաց: Թաթար մականունն ստացել է Կաֆայում ծնվելու և բուռն բնավորության համար: Սովորել է Կաֆայի Ս. Նշան, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքերում: Աշակերտել է պատրիարք Աստվածատուր Տարոնեցուն: 1659–60-ին՝ Կ. Պոլսի պատրիարք, 1661-ին՝ Անատոլիայի նվիրակ, 1661–64-ին՝ Ղրիմի հայոց առաջնորդ, 1677–80-ին և 1681–1683-ին՝ Երուսաղեմի պատրիարք:

1656-ին Մ. Ղ-ու և *Եղիազար Ա Այնթապցու* ջանքերով վերադարձվել են Երուսաղեմում մեկ տարի առաջ հույների սեփականացրած հայապատկան հաբեշական վիճակները: Երբ 1657-ին հույները Ս. Հակոբյանց վանքը ևս սեփականացնելու իրավունք են ստացել, Մ. Ղ. երկարատև պայքարից հետո կարողացել է վանքը հետ վերցնելու հրովարտակ ձեռք բերել: Նրա ջանքերով վերացվել են Կ. Պոլսի պատրիարքարանի պարտքերը: Մ. Ղ. կազմակերպել է Կ. Պոլսի 1660-ի հրդեհից հազարավոր աղետյալներին օգնելու գործը: Դրա համար Կ. Պոլսում Պատարագ մատուցելիս երկար ժամանակ մեծ երախտիքով հիշատակվել է նրա անունը:

Մ. Ղ. կարևոր դեր է կատարել Եղիազար-Հակոբյան պայքարում (1664–86): Եղիազար Այնթապցին փորձել է ստեղծել էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն, որի դեմ դուրս է եկել *Հակոբ Դ Ջուղայեցին*: Ընդդիմադիր թևը ղեկավարել է Մ. Ղ.: Նրան հաջողվել է կանխել միասնական կաթողիկոսության տրոհումը: Մ. Ղ. անհաշտ ու հետևող. պայքար է մղել Հայ առաքելական եկեղեցու դավանանքից շեղումների, ազգ. եկեղեց. կառույցը քանդելու տրամադրությունների դեմ: 1671-ին գումարված եկեղեց. ժողովում Մ. Ղ. հանդես է եկել ընդդեմ բողոքական վարդապետության, հալածել կաթոլիկացած հայերին և նրանց համակիրներին:

Մ. Ղ. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն՝ պատմ. չափածո երկեր, կրոնաուսուցող. բնույթի գործեր, ժամանակի կրոնավորներին ուղղված երգիծ. ոտանավորներ, դանձեր, ներբողներ, չափածո աղոթքներ, կոնդակ, տաղեր: Նրա անունով պահպանվել են իր իսկ պատվիրած ձեռագրերի հիշատակարաններ, եկեղեց. և քաղ. գործիչներին ուղղված բազմաթիվ նամակներ: Նրա գրչին են պատկանում «Կարգ և թիւ թագաւորաց Հայոց» չափածո ժամանակագրությունը, 1652-ի Երուսաղեմի եկեղեց. ժողովի չափածո պատմությունը, «Պատմութիւն Ղրիմայ յերկրին», «Ողբ Երեմիայ մարգարէին...» երկերը: Մ. Ղ. չափածոյի է վերածել Հայսմավուրք, «Յիշատակարան գրոց» խորագրի տակ՝ Հին և Նոր կտակարանները, մշակել վարդապետների համար օրհնության օրինակելի ձև՝ «Օրհնութիւն վանն ժողովրդոց ի ժամ քարոզութեան վարդապետաց» ևն:

Գրկ. Պոտուրյան Մ., Մարտիրոս Ղրիմեցի և իր գերթվածները, Բուխարեստ, 1924: Մարտիրոսյան Ա., Մարտիրոս Ղրիմեցի, Ե., 1958:

Արտաշես Մարտիրոսյան

ՄԱՐՏԻՐՈՍԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոս գյուղից հարավ-արևելք, Նզար լեռան մեջ փորված: Ըստ շին. արձանագրության՝ Ամիր Հասան Պռոշյան իշխանի հրամանով XIII դ. վանքը կառուցել է Մատթեոս վարդապետը (ճարտ.՝ Գրիգորիկ): Գեղարդի վանքից հետո Հայաստանի երկրորդ վիմափոր վանական համալիրն է. բաղկացած է քառակուսի հատակագծով նախագավթից, նրանից արլ., երդիկից լուսավորվող ժամատնից, որի հվ. պատից մուտք կա դեպի խաչաձև, անկյուններում ավանդատներով կենտրոնագմբեթ եկեղեցին (լուսավորվում է գմբեթի փոքր երդիկից): 1292-ին Մ. Ս. Ա. վ-ում Մատթեոս վարդապետն Ավետարան է ընդօրինակել և նկարազարդել, որը բավական արժեքավոր է իր բուս. ու կենդանակերպ բարձրարվեստ զարդանկարներով, խորաններով և, հատկապես, ավետարանիչների դիմանկարներով, որոնք աչքի

են ընկնում դեմքի և շարժումների իրական ու կենդանի արտահայտությամբ՝ պատկերված իրենց գրիչ-աշակերտներին թելադրելու պահին:

Գրկ. Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 1, Վաղ-պատ, 1928: Դիվան հայ վիմագրության, պր. 3, ե., 1967: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1913.*

Մուրադ Հասրաթյան

ՄԱՐՈՒԹԱՎԱՆՔ, Մարութա Բարձր Աստվածածին վանք, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում, Սասունի Մարութա լեռան գագաթին (ծովի մակերևույթից 2967 *մ* բարձր. վրա): Սասունի նշանավոր ուխտատեղին: Ըստ «Սասնա ծռեր» էպոսի, Մ. կառուցել են Սանասարն ու Բաղդասարը, վերակառուցել է Դավիթը, կարգել վանական միաբանություն և վանքը պաշտպանել օտար ոտնձգություններից: Մ. դարձել է Սասնա դյուցազունների սրբատեղին, որի զորությանն են ապավինել իրենց բոլոր նախաձեռնություններում: Վանքը կազմված է ոչ մեծ, միանավ եկեղեցուց, շրջապատված է ուղղանկյուն հատակագծով, անմշակ քարերից շարված պարսպով:

Գրկ. Ոսկյան Հ., Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վնն., 1953: Thierry J. M., Le Sasun. Voyages archéologiques, “Revue des études arméniennes”, t. XXIII, P., 1992.

Մուրադ Հասրաթյան

ՄԱՔԵՆՅԱՑ ՎԱՆՔ, Մաքենոցաց վանք, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղի եզերին: Հիշատակվում է վաղ միջնադարից, եղել է Հայաստանի նշանավոր կրոն. և կրթ. կենտրոններից: Ըստ Ստեփանոս արք. Օրբելյանի, Մ. վ-ի առաջնորդ, «Հայրերի հայր» Սողոմոն վարդապետը (*Սողոմոն Մաքենացի*) 701-ին կազմել է Տերունական տոների լուսաբանությունը և նահատակների հիշատակարանը՝ Տոնացույցը («Վարք սրբոց» և Հայսմավուրք): VIII–IX դդ. Մ. վ-ի դպրոցում ուսանել են *Ստեփանոս Սյունեցին* (Ստեփանոս Քերթող), *Վահան Գողթնացին*, կաթողիկոսներ *Սողոմոն Ա Գառնեցին*, *Մաշտոց Ա Եղիվարդեցին*:

728-ին Ատրպատականից պարսիկ Բաբանի հրոսակները ներխուժել են Գեղարքունիք գավառ, սպանել 15 հզ. հոգու, կողոպտել Մ. վ., այրել ու ավերել վանքի բոլոր շինությունները: Մինչ այդ, խույս տալով վտանգից, Մ. վ-ի միաբանության կեսը, Սողոմոն վարդապետի գլխավորությամբ, տեղափոխվել է Զրեսկ վանքը, մյուս կեսը՝ Արցախի Եղիշե առաքյալի վանքը: Լքված և ավերված վանքը 788-ին վերականգնել է Սողոմոն Գառնեցին: 855-ին Մ. վ-ում է թաղվել *Հովհաննես Դ Ովայեցի* կաթողիկոսը, որը վախճանվել էր Գեղարքունիք հովվական այցելության ժամանակ: IX դ. վերջին Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանը Մ. վ-ի միանավ բազիլիկ եկեղեցուն հս-արլ-ից կից սրբատաշ տուֆով կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցին, վանքը շրջապատել բարձր պարիսպով: Նա Մ. վ-ին նվիրել է այգիներ՝ Գառնիում, Երևանում, Եղեգիսում, 5 կրպակ՝ Անիում, նախիրներ ևն: Ս. Աստվածածին եկեղեցին գմբեթավոր, արտաքուստ՝ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչաձև, եռախորան, արլ-ում և հս-արմ. անկյունում ավանդատներով հորինվածք ունի: Վանքի հվ-արլ. կողմում կանգուն են միմյանց կից երկու թաղածածկ եկեղեցիներ (X դ.): 1170-ին *Ներսես Շնորհալին* Մ. վ-ից վերցրել է այնտեղ մշակված եկեղեց. կանոնակարգը՝ հայկ. մյուս վանքերում կիրառելու համար:

Մ. վ., հզորանալով, անկախացել է *Սյունյաց մետրոպոլիտությունից* և իշխել ու հոգևոր ղեկավարություն իրականացրել ողջ Գեղարքունիք գավառում՝ միայն 1513-ին ընդունելով *Տաթևի վանքի* գերակայությունը: Մ. վ. XVI դ. նորոգել է Մելիքբեկը, 1666-ին՝ վանահայր Խաչատուր Ջուղայեցին: XVIII դ. Մ. վ-ի թեմում եղել են Գեղարքունիքի 50 գյուղ և 5 անապատ: Վանքում պահվել է «Մաքենյաց ս. Նշան» խաչը՝ Կենաց փայտի մասունքով (բերվել է XI դ., Եդեսիայից):

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.4, 2-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի..., Վաղ-պատ, 1895: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 4, ե., 1973:

Մուրադ Հասրաթյան

ՄԵԼԻՏԵ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ (ծ. թ. անհտ – 456), Ամենայն Հայոց կաթողիկոս 452-ից: Հաջորդել է *Հովսեփ Ա Հողոցմեցուն*: *Աղբիանոսյանների* տոհմից: Մանակցել է Շահապիվանի 444-ի (որպես երեց) և Արտաշատի 449-ի (որպես եպիսկոպոս) ժողովներին: Վարել է չափավոր, հաճախ Գրիգոր Ա Լուսավորչի տոհմի շառավիղներին հակընդդեմ քաղաքականություն:

Կաթողիկոս. գահին Մ. Ա Մ-ուն հաջորդել է *Մովսես Ա Մանազկերտցին*:

Գրկ. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912:

ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ Ներսես (ավազանի անունը՝ Նիկողայոս) [16(28).3.1866, գ. Բռնակոթ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում) – 26.9.1948, Թավրիզ], արքեպիսկոպոս, ազգային-հասարակական գործիչ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1886), Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբան. ֆակ-ը (1900): Ուսուցչություն է արել Բռնակոթի, Շուշիի թեմական, Բաքվի Հայոց մարդասիր. ընկերության դպրոցներում (1888–96): 1900-ին *Մկրտիչ Ա Վանեցին* (Խրիմյան Հայրիկ) Մ-Թ-ին ձեռնադրել է կուսակրոն սարկավագ, 1901-ին՝ վարդապետ: Այնուհետև Մ-Թ. կարգվել է Տաթևի վանքի վանահայր և Սյունիքի թեմի առաջնորդական փոխանորդ: 1903-ին ընդդիմացել է Հայ եկեղեցու գույքի ու տիրույթների բռնագրավման վերաբերյալ ցար. կառավարության հրամանին: Այդ ծանր օրերին Ներսես վարդապետը դեգերել է Սյունիքի գյուղերում՝ փորձելով ամեն կերպ խոչընդոտել եկեղեց. հարստությունը պետության տնօրինությանը հանձնելուն: Հայրենանվեր այդ գործունեության համար Խրիմյան Հայրիկը նրան պարգևատրել է լանջախաչով: 1905-ին ցար. կառավարության հրահրած հայ-թաթար. արյունալի ընդհարումների ժամանակ Մ-Թ. սեբաստացի Մուրադի հետ կազմակերպել է Կապանի 50 հայկ. գյուղերի պաշտպանությունը, իսկ Փիդայիներ Կորյունի, Կայծակի և այլոց հետ կազմավորել կամավոր. խմբեր և հետ մղել ջարդարարներին: 1906-ին Խրիմյան Հայրիկը Մ-Թ-ին կարգել է Մայր աթոռի դիվանապետ: Սակայն ցար. կառավարությունը նրան անբարեհույս է համարել, հարուցել անհիմն մեղադրանքներ և 1907-ին աքսորել Ղրիմ՝ Ս. Խաչ վանքը: 1909-ին *Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսի միջնորդությամբ Մ-Թ. ազատվել է աքսորից, վերադարձել Էջմիածին, 1912-ին ընտրվել Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ, 1914-ին *Գևորգ Ե Սուրենյանց* կաթողիկոսը Մայր տաճարում նրան ձեռնադրել է եպիսկոպոս: Առաջին աշխարհամարտին, երբ թուրքական բանակը ներխուժել է Ատրպատական, Ներսես սրբազանը սատարել է տեղացի 24 հզ. հայերի և 20 հզ. ասորի քրիստոնյաների, 1915-ին նախաձեռնել Ատրպատականում գտնվող տարագիր վանեցիների խնամատարության գործը: 1917-ին Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով Մ-Թ. կարգվել է նաև Վասպուրականի հայոց թեմի առաջնորդ, իսկ Ատրպատականի թեմի պատգամավոր. ժողովի խնդրանքով կաթողիկոսը նրան շնորհել է արքության պատիվ և տիտղոս: Լեռնահայաստանի (Ինքնավար Սյունիքի Հանրապետություն) Հանրապետությանը օգնելու նպատակով հանգանակել և Զանգեզուր է ուղարկել 2000 թուման, զենք ու պարենամթերք:

Հայաստանի խորհրդ. իշխանությունները Մ-Թ-ին համարել են հակախորհրդային, վտանգավոր տարր, ստիպել Գևորգ Ե Սուրենյանցին հետ կանչել նրան Ս. Էջմիածին: Սակայն Ատրպատականի հայությունը թույլ չի տվել նրան մեկնել Հայաստան: Երկրորդ համաշխ. պատերազմի ժամանակ Ներսես սրբազանը միջոցներ է հայթայթել «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների ստեղծման, զոհված հայ բանակայինների երեխաներին օգնելու համար:

Մ-Թ-ի գիտ. հետաքրքրությունները ամփոփված են «Հայոց եկեղեցական իրավունքը» (1903–05) երկհատոր հիմնարար աշխատության մեջ: Նա առաջինը, ընդգրկելով գրեթե բոլոր փուլերը, հավաքել ու ի մի է բերել Հայ առաքելական եկեղեցու իրավ. հիմնահարցերը, եկեղեց. ժողովների որոշումները վաղ քրիստոնեությունից մինչև XX դ. սկիզբը, առաքյալների և Հայ առաքելական եկեղեցու հայրերի կանոնները: Նա առաջիններից էր, որ, գիտ. խոր մեկնաբանություններով հանդերձ, մանրազնին քննել է «*Պոլոժենիե*»-ն և *Ազգային սահմանադրությունը*: Աշխատությունում շարադրել է եկեղեցու օրենսդրությունը, ընդհանուր, կազմակերպ., վարչ., տնտ. կառավարման հետ առնչվող խնդիրներ:

Երկ. Աշխարհաբարի քերականութիւնը ամբողջութեամբ, Շուշի, 1893: Մշակ և Նոր դար: Կուսակցութիւններ և մի քանի խնդիրներ, Մ., 1894:

Գրկ. Ա ճ ե մ յ ա ն Հ., Տեր-Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի կյանքը և գործունեությունը, Թավրիզ, 1926: Հուշամատյան Ներսես Մելիք-Թանգյան արքեպիսկոպոսի, Թեհրան, 1968: Ս տ ե փ ա ն յ ա ն ց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994:

Ստեփան Ստեփանյանց

ՄԵԾ ՊԱՀՔ, քառասնորդական պահք, քառասնօրյա պահք, քառասնորդք, *եկեղեցու* օրինադրած *պահքերից* ամենաերկարը (ինչի համար կոչվում է մեծ): Տևում է 48

օր (այստեղից էլ՝ քառասնորդական կամ քառասնօրյա անունը)՝ *Բուն Բարեկենդանին* հաջորդող երկուշաբթի օրվանից մինչ *Ավագ շաբաթ* օրը, որին հաջորդում է *Զատիկը*: Մ. պ-ի օրերը կոչվում են աղուհացի օրեր, որովհետև նախկինում Մ. պ-ի որոշ օրերին միայն աղ ու հաց էին ուտում, այդպես էին վարվում հատկապես ճգնավորներն ու անապատականները: Ներկայումս աղուհացը պահքի այն օրերն են, երբ պահքի կերակուրներ են ուտում:

Պահոց օրերը, մասնավորապես Մ. պ-ի օրերը, բացի որոշ կերակուրներից հրաժարվելուց, ծոմապահությունից (վերջինս շաբաթ և կիրակի օրերին չի պահվում) և ժուժկալությունից, հոգևոր, ներանձնական խոկումի, ինքնաքննության, զղջումի, *աղոթքի, ապաշխարության*, բարոյական կատարելագործման, գործած *մեղքերի* թողության ու *քավության* շրջան է: Քառասուն օրը խորհրդանշում է աստված քաշված Քրիստոսի քառասնօրյա ծոմապահության շրջանը, ինչպես նաև Սուրբ Գրքում հաճախակի հիշվող 40 խորհրդանշական թիվը: Քրիստոսի քառասնօրյա առանձնացումը աղոթքի, ծոմապահության և ապաշխարության, իր հրապարակային գործունեության պատրաստության շրջանն էր: Քառասնօրյա պահքի մասին խոսվում է Առաքելական կանոններում, ինչպես նաև տեղական և ազգ. եկեղեց. ժողովների կանոններում: Մ. պ-ի շաբաթ օրերին տոնվում է սրբոց հիշատակը: Երբ Մ. պ-ին զուգադիպում են *Տյառնընդառաջի* և Ավետման (տես *Աստվածածնի տոներ* հոդվածում) տոները, Մ. պ-ի բոլոր ծիսական պահանջները դադարում են. եկեղեցու վարագույրը բացվում է, և *Պատարագ* է մատուցվում, բայց կերակրի պահեցողությունը չի խախտվում: Մ. պ-ի շրջանում փակվում է եկեղեցու խորանի վարագույրը, մատուցվում է փակ Պատարագ, ամուսնություններ տեղի չեն ունենում, մինչդեռ թույլատրվում է մկրտություն և նշանդրեք կատարել:

Մ. պ-ի շրջանին հատուկ են ապաշխարության *շարականները* (վերագրվում են *Մեսրոպ Մաշտոցին*), ինչպես նաև Մ. պ-ի կամ աղուհացի կիրակիների շարականների ամբողջ կանոնը (հեղինակն է *Ներսես Շնորհալին*): Մ. պ-ի յուրաքանչյուր կիրակի նվիրված է սուրբգրային որևէ դեպքի ու գաղափարի և նրանց անուններով էլ կոչվում է Բուն Բարեկենդան, Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան (տես *Կիրակի* հոդվածում):

ՄԵԾՈՓԱՎԱՆՔ, Ս. Աստվածածնի վանք, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառում, Ականց (Արճեշ) գյուղաքաղաքից մոտ 14 *կմ* հյուսիս-արևմուտք: Անվանումն ստացել է վանքից վերև գտնվող Մեծոփ (մեծ փոս) լճակի անունից: Ըստ արձանագրությունների՝ Մ. կառուցվել է 1120-ին: 1201-ին Աստվածատուր Արճիշեցին կառուցել է վանքի Ս. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցուց արլ. գտնված երկու մատուռներից մեկը կոչվել է Ս. Հակոբ: Մ. եղել է գավառի առաջնորդանիստ: XII դ. վերջից վանքում գործել է դպրոց: XIII դ. սկզբին այն ղեկավարել է «յոյժ իմաստուն և գիտնական» Թովման, իսկ դարավերջին (մինչև 1337-ը)՝ *Գլաձորի համալսարանի* սան *Մխիթար Սասնեցին*: Նրան գործակցել է դասակից Հովհաննես Ոսկնակեր Արճիշեցին: Մ. իր ծաղկմանն է հասել XIV դ.: Այստեղ ապրել և գործել են բարձրակիրթ կրոնավորների մի քանի սերունդներ: Մխիթար Սասնեցու օրոք Մ-ի դպրոցը, Գլաձորի համալսարանի ղեկավարությամբ, պայքարել է միաբարների (տես *Ունիթորություն*) դեմ: XIV դ. վերջին դպրոցի վարդապետը եղել է *Տաթևի համալսարանի* սան, *Հովհան Որոտնեցու* աշակերտ Հովհաննես Մեծոփեցին, որը վերակառուցել է Մ. և օժանդակ շինություններ կառուցել: 1408-ին *Գրիգոր Տաթևացին* Մ-ում հիմնադրել է բարձր տիպի դպրոց (160 աշակերտով և 8 վարդապետով), որտեղ ավելի ուշ բաբունապետ են եղել *Գրիգոր Խլաթեցին* ու *Թովմա Մեծոփեցին*: Մ-ի դպրոցը փաստորեն Խառաբատավանքի և Տաթևի վանքի բարձր տիպի դպրոցների շարունակությունն էր: Մ-ում գրվել ու ընդօրինակվել են մի շարք մատյաններ (Քարոզգիրք, Ճաշոց, Ավետարան, Հայսմավուրք, Շարակնոց, Ժամագիրք, «Գիրք հարցմանց», «Դավթի լուծմունք ճառից Աստուածաբանի», «Կարմիր Ավետարան» ևն): Մ. ունեցել է հարուստ մատենադարան. դպրոցում ծաղկել է հատկապես գրչության և մանրանկարչության արվեստը: Սաներից հայտնի են 22 գրիչներ՝ Հովհաննես Մանկասարենցը, Հունանը, Հակոբը, Հովհաննես Բաղիշեցին, Պետրոսը, Թովման, Ղազարը, Մկրտիչը, Զաքարիան, Հակոբ Բերկրեցին, Կարապետ Վանեցին, Ստեփաննոսը, Հայրապետը, Ներսեսը, Հովհաննես Արծկեցին, Կիրակոս Բանասերը և ուր., որոնցից մեզ է հասել շուրջ 200 ձեռա-

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ գիր: Մանրանկարիչներից Հայտնի է Մ-ի դպրոցի սան Մինաս ծաղկողը, որին աշակերտել են նշանավոր ծաղկողներ Կարապետ Բերկրեցին, Կարապետ Աղթամարցին: Հայտնի է նաև Հայրապետ կազմողը: Մ-ում խմբագրվել, սրբագրվել, մեկնվել են բազում երկեր, շարադրվել պատմություններ, տոմարագիտության, գրչության արվեստի, երաժշտության վերաբերյալ երկեր, նկարազարդվել, կազմվել, նորոգվել են բազմաթիվ գրքեր: Անապահով է եղել Մ-ի դպրոցը. մի քանի անգամ տեղափոխվել է մե՛րթ Բաղեշ, մե՛րթ *Մշո Ս. Առաքելոց վանք*: XVI դ. Մ. այրվել է: XVII դ. հիշվում է միայն Մ-ի մատենադարանը, որը կողոպտվել է 1895-ին: Պահպանված 100 ձեռագրերը 1915-ին անցել են քրդերի ձեռքը:

Արտաշես Մաթևոսյան

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մեկնություն (մեկնել՝ զատել, պարզաբանել, բացահայտել), եկեղեցական մատենագրության ճյուղերից. նպատակն է սուրբգրային տեքստերի վերլուծումը, այլաբանական իմաստների բացատրությունը և, ի վերջո, *Աստվածաշնչի* քարոզումը:

Աստվածաշունչը տարբեր լեզուներով թարգմանելուց հետո անհրաժեշտություն է դարձել աստվածաշնչյան տեքստերի ընկալումը և բացատրումը ճշմարիտ՝ ուղղափառ մտքով: Մեկնությունը վերածվել է սուրբգրային հասկացությունները հետազոտելու, բացատրելու և հաստատելու մեթոդի, որով հստակեցվել են եկեղեցու սկզբունքները, քրիստ. վարդապետության հիմունքները: Հայ միջնադարում կենցաղավարել են երկու կարգի մեկնություններ. Աստվածաշնչի («Սուրբ գրեանց») և կրոն. ու աստվածաբան. երկերի («Նուրբ գրեանց») մեկնություններ:

Տակավին Սահակ Ա Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը և նրանց թարգմանիչ աշակերտները մեծապես կարևորել են եկեղեցու ս. հայրեր *Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եվսեբիոս Կեսարացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու, Հովհան Ոսկեբերանի*, Պոլիկարպոս Զմյուռնացու, Պրոկղի և այլոց ինքնուրույն երկերի, ճառերի, մեկնությունների թարգմանության գործը: Շատ մեկնություններ պահպանվել են միայն հայերեն թարգմանության շնորհիվ, ինչպես՝ *Փիլոն Ալեքսանդրացու* «Արարածոց»-ը, *Որոգինեսի* «Ղևտականքը», Իրենիոս Լուգդունացու «Ցույցք առաքելական քարոզչութեան»-ը ևն: (Տես նաև *Թարգմանչաց շարժում*):

Մ. դ. ունեցել է պատմ. զարգացման երեք հիմն. փուլ. վաղ միջնադարյան (հայրախոսական՝ I–V դդ.), միջնադարյան (VI–XV դդ.) և նոր ժամանակներ (XVI–XX դդ.): Վաղ միջնադարյան մեկնությունները գլխավորապես իրականացվել են հրեական մեկնաբան. ավանդույթի հետևողությամբ: Սակայն ժամանակի ընթացքում նրա մեջ ներմուծվել են արևմտյան, անտիկ մեկնությունների սկզբունքները:

Մ. դ-յան նախն. տարրեր առկա են արդեն Ավետարաններում և Առաքելական թղթերում: Ավետարաններում Քրիստոսը մեկնում է իր իսկ առակները, իսկ Պողոս առաքյալը մասնավորապես Առ Հռովմայեցիս և Առ Կորնթացիս թղթերում մեկնաբանել է հինկտակարանային զանազան խոսքեր՝ դրանք առնչելով Նոր ուխտի հետ: Հին և Նոր կտակարանների հարաբերակցության ընդգծումը պետք է հետագայում ընկներ սուրբգրային բացատրություններում կարևոր տեղ զբաղեցնող տիպաբան. մեկնության հիմքում: *Եկեղեցու հայրերն* ու վարդապետներն իրենց քարոզներում և ճառերում բացառիկ տեղ են հատկացրել Աստվածաշնչի հատկապես մանվածապատ տեղերի բացատրությանը: Ժամանակի ընթացքում այս ճառերն ու քարոզները սղագրվել են և, բազմիցս ընդօրինակվելով, կենցաղավարել հասարակության մեջ՝ կատարելով դաստիարակչական դեր: Այս նույն դերով էր պայմանավորված նաև Աստվածաշնչի դասավանդումը քրիստ. դպրոցներում: Ի տարբերություն ճառական մեկնության, տվյալ պարագայում Աստվածաշունչը մեկնաբանվել է առավելագույն մանրամասնությամբ, բազմաբնույթ փաստերի (աստվածային-մարգարեական պատկերներ, տեսիլքներ, երազներ, առակներ, ծիսական և կենցաղ. պատկերներ, անուններ ևն) համակողմանի բացատրությամբ: Այսօրինակ մեկնող. երկերում նախ կանոնավորապես բերվել է Աստվածաշնչի մեկնաբանվող հատվածը, ապա՝ դրա մեկնաբանությունը: Քանի որ բացատրությունը պետք է շարադրվեր բացատրվող նյութին համերաշխ աստվածային հայտնությամբ (Սուրբ Հոգով), մեկնաբանելու իրավունք է վերապահվել բացառիկ սրբություն ունեցող՝ «բանի սպասավոր» վարդապետներին, որոնք կոչվել են «մեկ-

նիչ», «թարգմանիչ»: Մեկնիչներն օգտագործել են ոչ միայն աստվածաբան. գրակ-յան, այլև կանոնագիտ., պատմաբանասիր., լեզվագիտ., իմաստասիր., ազգագր., աշխարհագր. և այլ կարգի տեղեկություններ: Այս է պատճառը, որ մեկնություններն ունեն հանրագիտարանային բնույթ: Հայտնի են մեկնաբանման երկու եղանակներ. տառացի (բառացի) և այլաբանական: Տառացի եղանակը հիմնականում գալիս է աստվածաբանելու՝ հոգևոր և նյութ. իրողությունները մեկնաբանելու հրեական ավանդույթից, մինչդեռ այլաբանականը կրում է արևմտյան, անտիկ աշխարհընկալման մեջ տիրապետող վերացարկման դրոշմը: Ըստ այսմ, մեկնաբանելու տառացի եղանակը որդեգրել է սուրբգրային մեկնության *Անտիոքի* դպրոցը, իսկ այլաբանականը՝ *Ալեքսանդրիայի* դպրոցը: Անտիոքի դպրոցի հետևորդները (Լուկիանոս Սամոսատցի, Թեոդորոս Մոպսուեստացի, Հովհան Ոսկեբերան, Թեոդորոս Կյուրացի ևն) կարևորել են Աստվածաշնչի գերազանցապես ուղղակի, առարկայական իմաստի բարոյական, հոգեբան., պատմաբանասիր. բացատրությունը, մինչդեռ Ալեքսանդրիայի դպրոցի հետևորդները (Փիլոն Ալեքսանդրացի, *Կղեմես Ալեքսանդրացի*, Որոգինես, Գրիգոր Նյուսացի) տառացի մեկնաբանությունը միայն միջոց են նկատել՝ թափանցելու Աստվածաշնչի խորքային իմաստի մեջ, վերհանելու նրա առավել էական, այլաբանական բովանդակությունը:

Հայ Մ. դ-յան մեջ այս երկու եղանակներն էլ կիրառվել են: Սակայն հայ հեղինակներն ավելի հակվել են անտիոքյան դպրոցի կողմը՝ նախընտրելով տառացի եղանակը: Սա մեկնիչին զերծ է պահել այլաբանական մեկնության ժամանակ հնարավոր սայթաքումներից, որոնք կարող էին պատճառ դառնալ դավանաբան. մոլորությունների: Մեկնության եղանակի ընտրությունը թելադրվել է աստվածաշնչական գրքի բնույթով: Օր., եթե մարգարեությունները, Երգ երգոցը, Հովհաննեսի Հայտնությունը պահանջել են այլաբանական, ապա Դատավորաց, Թագավորությանց, Մակաբայեցվոց գրքերը, որոնք ունեն պատմողական բովանդակություն, պահանջել են տառացի, պատմաբանասիր. եղանակի կիրարկում:

Հայ Մ. դ-յան վաղ շրջանի ուսումնասիրման համար բացառիկ կարևոր են *Եղիշեի*՝ Ծննդոց, Հեսու Նավեի և Դատավորաց, *Ստեփանոս Սյունեցու*՝ Քառավետարանի, Եզեկիելի, Հոբի, Դանիելի (վերջին երկուսը՝ հատվածաբար) մեկնությունները, ինչպես նաև՝ *Համամ Արևելցու* Առակաց մեկնությունը: Աղբյուրագիտ. բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Տիմոթեոս վարդապետի Ծննդոց գրքի մեկնությունը, որի մեջ օգտագործված Եղիշեի համանուն երկի մեծ ու փոքր հատվածները զետեղվել են *Վարդան Արևելցու* Հնգամատյանի խմբագիր մեկնության մեջ և վերջինիս միջոցով հայտնի դարձել գիտ. աշխարհին:

X–XII դդ. հրապարակ են իջել այնպիսի խոշոր մեկնիչներ, որպիսիք են *Գրիգոր Նարեկացին, Անանիա Սանահնեցին, Ներսես Շնորհալին, Սարգիս Շնորհալին*, Իգնատիոս Սելեռնեցին, Սարգիս Կունդը և ուր.: Գրիգոր Նարեկացու սողոմոնյան Երգ երգոցի մեկնությունը շարադրված է այլաբանական ավանդներն իր մեջ լավագույնս մարմնավորած Գրիգոր Նյուսացու համանուն երկի հետևողությամբ: Մինչդեռ մյուս հեղինակների երկերը (Մատթեոսի, Ղուկասի Ավետարանների, Ընդհանրական թղթերի մեկնությունները, որոնք ունեն գլխավորապես պատմող., բարոյաբան. ուղղվածություն) շարադրված են Անտիոքյան դպրոցի երևելի ներկայացուցիչներ *Եփրեմ Ասորու*, Հովհան Ոսկեբերանի համանուն երկերի օգտագործումով: Ուշագրավ աշխատություն է Սարգիս Շնորհալու Կաթողիկե թղթերի մեկնությունը (1154): Աղբյուրագիտ. տեսակետից արժեքավոր աշխատություն է Իգնատիոս Սելեռնեցու՝ Ղուկասի Ավետարանի մեկնությունը՝ գրված Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի (1113–66) հանձնարարությամբ, 1130-ին: Հեղինակն օգտագործել է Հովհան Ոսկեբերանի Ղուկասի Ավետարանի մեկնության շատ հատվածներ, որոնց հուն. բնագրերն այսօր անհայտ են: Սարգիս Կունդի (XII դ.)՝ մասնավորապես Կաթողիկե թղթերի մեկնությունում (Մատենադարան, ձեռ. № 1408) ընդարձակորեն օգտագործված են Աթանաս Ալեքսանդրացու Կաթողիկե թղթերի հուն. բնագրով անհայտ մեկնության հատվածները: Այդպիսիք են նաև Ստեփանոս Սյունեցու, այժմ ամբողջապես անհայտ, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանների ընդարձակ մեկնություններից քաղված հատվածները Սարգիս Կունդի համապատասխան մեկնություններում:

Աստվածաբան. խորությամբ, հանրագիտարանային համակողմանիությամբ աչքի ընկնող աշխատություններ են *Ներսես Լամբրոնացու*

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ Սաղմոսաց ընդարձակ, Երկոտասան մարգարեից, ինչպես նաև՝ *Մխիթար Գոշի* Երեմիայի մարգարեության և *Վանական Վարդապետի* Հոբի գրքի մեկնությունները: XIV դ. մեկնաբանական մտքի հետաքրքիր դրսևորումներից է Բարսեղ Մաշկևորցու Մարկոսի Ավետարանի մեկնությունը (1325): Մեզ հասել է Ավետարանի Թ–ԺԶ գլուխների մեկնությունը միայն: Երկը հետաքրքիր է ոչ միայն աստվածաբան. դիտումներով, այլև ժամանակի բարքերի, անցուդարձի վերաբերյալ տեղեկություններով: Խորհրդապաշտ. ուշադրավ թափանցումներով գրված արժեքավոր աշխատություն է *Եսայի Նչեցու* Եզեկիելի մեկնությունը (1300), որտեղ հեղինակը վերլուծաբար օգտագործել է իր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրները (Հովհան Ոսկեբերան, Թեոդորետոս Կյուրացի, Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյունեցի): Մեկնող. երկերի հեղինակ է նաև Եսայի Նչեցու աշակերտ *Հովհաննես Երզնկացին* (Ծործորեցի): Նրա գրչին են պատկանում Մատթեոսի Ավետարանի մեկնությունը (1316), որ շարունակությունն ու ամբողջացումն է Ներսես Շնորհալու համանուն երկի, ինչպես նաև՝ Դանիելի մեկնությունը (Մատենադարան, ձեռ. № 1187): Վերջինս աչքի է ընկնում բազմաբնույթ փաստերի առատությամբ: Եսայի Նչեցու մյուս նշանավոր աշակերտը *Հովհան Որոտնեցին* է, որը մեկնող. աստվածաբանության Տաթևի դպրոցի հիմնադիրն է: Նա հեղինակ է Մատթեոսի, Հովհաննեսի Ավետարանների, Պողոսի թղթերի մեկնությունների, որոնք շարադրված են աստվածաբանական-իմաստասիր. խոր ընդհանրացումներով: Ի տարբերություն նախորդ մեկնիչների, Հովհան Որոտնեցին կիրառում է սխոլաստիկ մեկնաբանությանը հատուկ եղանակ: Նրա բացատրություններն ուղեկցվում են աստվածաբան. իրողությունների դասդասումով ու համակարգումով: Աստվածաբանելու այս եղանակը Հովհան Որոտնեցուց անցել է իր հետնորդին՝ *Գրիգոր Տաթևացուն*, որի գրչին են պատկանում Հոբի (Մատենադարան, ձեռ. № 1113), Եսայու (ձեռ. № 1128), Սաղմոսաց (ընդարձակ և համառոտ տարբերակներ, ձեռ. № 1125), Առակաց (ձեռ. № 1116), Երգ երգոցի (ձեռ. № 5056), ինչպես նաև Մատթեոսի (ձեռ. № 5060) և Հովհաննեսի (ձեռ. № 7462) Ավետարանների մեկնությունները: Նվազ ուշագրավ չէ տաթևյան դպրոցի մյուս ներկայացուցչի՝ *Մատթեոս Ջուղայեցու* մեկնաբան. վաստակը: Նրա գրչի արդյունքն են Ղուկասի (1391, Մատենադարան, ձեռ. № 1345) և Հովհաննեսի (Մատենադարան, ձեռ. № 5232) Ավետարանների, Գործք առաքելոցի (1411, Մատենադարան, ձեռ. № 5854) մեկնությունները:

Երեքհարյուրամյա դադարից հետո Մ. գ. վերստին ծաղկում է ապրել XVIII–XIX դդ.: Այս շրջանի խոշոր հեղինակներից են *Հակոբ Նալյանը, Պետրոս Նախիջևանցին*, Կիլիկիո կաթողիկոս Եփրեմ Ա Աջապահյանը (Սսեցի) և ուր.: Հակոբ Նալյանը հեղինակ է Սիրաքի գրքի մեկնության, որը հայ մեկնող. մատենագրության մեջ այդ գրքի միակ մեկնաբանությունն է: Պետրոս արք. Նախիջևանցուն են պատկանում Ծննդոց և Հոբի ընդարձակածավալ մեկնությունները (Մատենադարան, ձեռ. №№ 1174, 2718), որոնք շարադրված են հայրախոս. ժառանգության քաջ իմացությամբ: Հայտնի են նաև այս հեղինակի Երգ երգոցի, ավետարան. առակների, Հովհաննեսի Հայտնության մեկնությունները:

Ինքնուրույն մեկնություններից զատ հայ միջնադարյան մատենագրության մեջ լայն շրջանառություն են ունեցել նաև հայ հեղինակների կիրառած թարգմանականները: Արդեն V դ. Աստվածաշնչի թարգմանությունից հետո հայացվել են Ընդհանրական եկեղեցու ս. հայրեր Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Եպիփան Կիպրացու, Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Ալեքսանդրացու և այլոց մեկնող. երկերը: Դրանք ընդարձակորեն ներառվել են հայ հեղինակների կազմած խմբագիր մեկնություններում: V–VIII դդ. թարգմանվել են Հեսիքիոս Երուսաղեմացու՝ Հոբի, Որոգինեսի, Հիպպոլիտոս Բոստրացու՝ Երգ երգոցի, ինչպես նաև՝ Ղևատացվոց անանուն, Կյուրեղ Ալեքսանդրացու անվամբ (իրապես Թեոդորետոս Կյուրացուն պատկանող) Եզեկիելի մեկնությունները: Միաբարական շրջանի թարգմանություն է Բարթուղիմեոս Մարաղացու Արարածոց մեկնությունը՝ իրականացված 1332-ին, Հակոբ Քռնեցու կողմից:

Աստվածաշնչի *պարականոն գրքերը* նույնպես մեկնաբանվել են: Առավել նշանակալից է Ներսես Լամբրոնացու «Հանգիստ սրբոյն Յովհաննու Առաքելոյ եւ Աւետարանչի» երկի մեկնությունը («Գանձասար», 6, 1996, էջ 482–549):

Հայ միջնադարի Մ. գ-յան մեջ ուրույն բնագավառ է *Ծիսամատյանների* մեկնությունը:

Նպատակն էր բացատրել *Ժամերգությունն* ու *Պատարագը*: Այս բնագավառը ներկայացնող կարևորագույն երկերից են Ստեփանոս Սյունեցու Ժամակարգության մեկնությունը, *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսի «Հիմնարկեք եկեղեցւոյ» և «Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ» ճառերը, որոնցում տրված է ժամասացության մեջ ընդգրկված ընթերցվածների խորհրդական բացատրությունը: Ծիսական աստվածաբանության ուշագրավ գործերից են *Խոսրով Անձևացու* «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ, քարոզութեանց եւ աղաւթից իւրաքանչիւր ժամուց» և «Մեկնութիւն Պատարագի» երկերը: Ծիսական իրողությունների առավել մանրամասն բացատրությամբ աչքի է ընկնում Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնությունը, ինչպես նաև՝ «Քննութիւն կարգաց եկեղեցւոյ» աշխատությունը:

Սուրբգրային և ծիսական մատյանների մեկնություններից զատ հայ միջնադարում կենցաղավարել են նաև աստվածաբան., իմաստասիր. բնույթի՝ «նուրբ գրեանց» մեկնություններ՝ *լուծմունքներ*: Վաղ շրջանի եկեղեցու հայրերի հետևողությամբ «բանի սպասավոր» հայ հեղինակներն անտիկ մտածողների իմաստասիր. երկերը պարզաբանել, վերլուծել են՝ դրանք վանական դպրոցի սանին կամ համալսարանական ունկնդրին մատչելի դարձնելու նպատակով: Առավել տարածված են եղել Արիստոտելի երկերի մեկնությունները, որպիսիք են Տաան ստորոգությունների (կատեգորիաների) համառոտ լուծմունքը (Մատենադարան, ձեռ. №№ 5596, 8198), *Դավիթ Անհաղթի, Վահրամ Բաբունու*, Հովհան Որոտնեցու, *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսի մեկնությունները (Մատենադարան, ձեռ. №№ 1647, 1683), «Պերի արմենիաս»-ի Հովհան Որոտնեցու համառոտ լուծմունքը (Մատենադարան, ձեռ. № 5931), Պորփյուրի Ներածության և Առաջաբանության՝ Դավիթ Անհաղթի, Վահրամ Բաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու վերլուծությունները (Մատենադարան, ձեռ. №№ 1716, 59, 1809, 8503, 5674): Հովհան Որոտնեցու գրչին է պատկանում «Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ» երկը, որ Փիլոն Ալեքսանդրացու «Յաղագս նախախնամութեան» երկում հանդիպող խորհրդապաշտ. դժվարընկալելի տեղիների վերլուծությունն է (Մատենադարան, ձեռ. № 1701): Համաբնույթ երկերի թվին են պատկանում եկեղեցու նշանավոր հայրերի առավել կարևոր աշխատությունների լուծմունքները: Այդպիսիք են Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Եվագր Պոնտացու, Դիոնիսիոս Արիոպագացու երկերի՝ *Դավիթ Քոբայրեցու, Կիրակոս Երզնկացու*, Գրիգոր Տաթևացու, Մատթեոս Ջուղայեցու և անուններն անհայտ այլ հեղինակների լուծմունքները (Մատենադարան, ձեռ. №№ 5602, 1879, 1897, 4150, 6462, 6832, 5128):

Նյութի թելադրանքով Մ. դ-յան մեջ կատարվել են մեկնաբան. արվեստի սկզբունքներ ու հրահանգներ պարունակող տեսական բնույթի առանձին դիտարկումներ: Ուշագրավ են Ներսես Շնորհալու խորհրդածությունները: Նա հստակորեն տարբերում է մեկնաբան. եղանակի երկու կերպ ու մակարդակ՝ «պարզ տեսութիւն» և «խորին տեսութիւն»: «Պարզ»-ը վերաբերում է բառացի (տառացի), իսկ «խորին»-ը՝ փոխաբերական, այլաբանական մեկնաբանությանը: Ներսես Շնորհալին առաջադրում է բնագիրը մեկնաբանելու երեք կերպ ու եղանակ. նախ՝ տառացի, որի նպատակն է ներկայացնել առարկան կամ երևույթը՝ ինչպես այն կա իր նյութ. ձևի մեջ, երկրորդ՝ խորհրդանշական-փոխաբերական, երրորդ՝ հոգևոր, սրբազան, որն առաջին երկուսի ընդհանրացումն ու եզրակացությունն է: Տալով Ավետարանում առկա «քար» և «օձ» բառերի մեկնաբանությունը՝ նա նկատում է, որ առաջին եղանակն այդ առարկաների ինքնըստինքյան հասկանալի նյութ. իմաստն է, երկրորդը մատնանշում է արտաքին բնության և մարմնական ցանկության այլաբանական, իսկ երրորդը՝ աստվածային, բարձրագույն պարգևի՝ արքայության արժանացման իմաստը: «Գիրքը հասկանալու քանի՞ եղանակ կա» հարցին Մատթեոս Ջուղայեցին Գործք առաքելոցի մեկնության մեջ պատասխանում է՝ սահմանելով բնագրի բացատրության երեք հիմն. միջոց. նախ՝ մեկնաբանությամբ, երկրորդ՝ լուծմամբ, երրորդ՝ ընտրությամբ: Առաջին միջոցը ենթադրում է Աստվածաշնչում առկա մեկ իմաստից արտածվող բազում իմաստների բացահայտում: Ընտրությամբ իրականացվող բացատրությունը կատարվում է ամբողջ բնագրի մեկնաբանելի առանձին մասերի ընտրությունից հետո միայն: Այլ է «լուծման» պարագան. սա նշանակում է, որ բացատրվում են ոչ միայն և ոչ այնքան Աստվածաշունչը, այլև, և առավե-

լապես, մեծամուն հեղինակութիւնների, եկեղեցու նշանաւոր հայրերի երկերի մեջ առկա դժվարընկալելի առանձին բառեր և արտահայտություններ:

Գրկ. Վարդան Արևելցի, Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի, Ամստրդամ, 1797: Ներսես Շնորհալի, Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, ԿՊ, 1825: Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, ԿՊ, 1826: Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից, ԿՊ, 1826, էջ 1–241: Եփրեմ Ասորի, Մատենագրութիւնք, հ. 1, Վնտ., 1836: Զամչյանց Մ., Մեկնութիւն սաղմոսաց, հ. 1–10, Վնտ., 1815–23: Բերդումյան Պ., Մեկնութիւն Յայտնութեան ս. Յովհաննու առաքելոյ, Կալկաթա, 1846: Ստեփանոս Սյունեցի, Մեկնութիւն Աւետարանի, աշխատասիր. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, Ե., 1992: Համամ Արևելցի, Մեկնութիւն Առակաց, աշխատասիր. Մ. Սարիբեկյանի, Ե., 1992: Անանիա Սանահնեցի, Մատթէի մեկնութիւնը, աշխատասիր. Հ. Քյոսեյանի, «Գանձասար», 4, 5, 1993, 1994: Գրիգոր Տաթեվացի, Մեկնութիւն Սաղմոսաց (համառոտ տարբերակ), աշխատասիր. Ա. Քյոչկերյանի, Ե., 1994: Քյոսեյան Հ., Հատվածներ Ս. Հովհան Ոսկեբերանի Արարածոց մեկնության հայերեն թարգմանությունից, «Էջմիածին», 1997, № 6–7: Նույնի, Նշխարներ Ստեփանոս Սյունեցու Հոբի և Դանիելի մեկնություններից, «Էջմիածին», 1998, № 1: Նույնի, Նորահայտ հատվածներ Ստեփանոս Սյունեցու Մատթեոսի Ավետարանի մեկնությունից, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» (հոդ. ժող.), Ե., 2000: Թեոդորետոս Կյուրացի, Մեկնութիւն Եզեկիէլի, աշխատասիր. Հ. Քյոսեյանի, Ե., 2000: "Patrologia Orientalis", t. 42, Fasc. 1–2, № 190–191, Brépols, 1983.

Հակոբ Քյոսեյան

ՄԵՂՔ, անհնազանդություն Աստծուն, կամովին թե ակամա այն արարքը, խոսքը, զգացմունքը, միտքը, որը հակառակ է Աստծո կամքին, նրա սահմանած կարգին և նրա *պատվիրաններին*. անհնազանդություն արարիչ Աստծո և հնազանդություն՝ *սատանայի* հանդեպ: «Ով մեղք է գործում, այդ Սատանայից է, քանի որ Սատանան մեղանչող է ի սկզբանե» (Ա Հովհ. 3.8): Առաջին մարդը՝ Ադամը, հնազանդվեց սատանայի (չարի) թելադրանքին (իր կնոջ՝ Եվայի միջոցով), ճաշակեց բարու և չարի *գիտության ծառի* արգելյալ պտուղը, այսինքն՝ իր արարիչ Աստծո հանդեպ դրսևորեց անհնազանդություն, դարձավ մեղավոր և այդ պատճառով վտարվեց *դրախտից*: *Գրիգոր Տաթևացին* Մ. սահմանել է այսպես. «Մեղքն սահմանօրեն այս է: Մեղք է դարձուցանել զերեսս յանփոփոխելի բարւոյն որ է՛ առ Աստուած, եւ դառնալ առ փոփոխելի բարին որ է արարածքս» («Գիրք հարցմանց», 1729, էջ 569):

Սկզբնական կամ ադամական Մ. տարածված է ողջ մարդկային ցեղի վրա: Այն հայտնապես կամ ծածկաբար դրսևորվում է մարդկային գործերում՝ մարդուն դարձնելով ո՛չ թե Աստծո թագավորության (տես *Երկնային արքայություն*), այլ չարի իշխանության քաղաքացի:

Ըստ Աստվածաշնչի, մահը հետևանքն է Մ-ի, ինչպես երևում է պատվիրանազանց Ադամին ուղղված աստվածային անեծքից. «Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին և կերար այն ծառի պտղից, որի՛ց միայն քեզ պատվիրեցի չուտել..., թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. 3.17, 19):

Աստվածաշունչը Մ. համարում է անօրենություն՝ չեղում աստվածային օրենքից: Հովհաննես առաքյալի բնորոշմամբ՝ Մ. «ինքնին անօրենություն է» (Ա Հովհ. 3.4): Մ-երի թողություն կարող է տալ միայն Աստված:

Մինչև Հիսուս Քրիստոսի Մարդեղությունը Մ-ից ձերբազատվելու համար ողջակեզպատարագներ են կատարել նահապետները՝ նոխազներ մատուցելով սուրբ *Սեղանի* վրա (Աբելը, *Նոյը*, Աբրահամը, Հոբը և ուր.), իսկ Օրենքի տվյալության շրջանում՝ Մովսեսն ու Ղևտական կամ Ահարոնյան քահանայական ազգատոհմը: Բայց, ինչպես գրում է Պողոս առաքյալը (տես Եբր. 10), ցուլերի, նոխազների արյունը և շարունակական զոհաբերումները չէին կարող վերջնականորեն արդարացնել ու ազատագրել մարդուն Մ-ից ու Մ-ի ծառայությունից. Աստված մեկ այլ Քահանայապետ էր նախատեսել՝ ըստ Մելքիսեդեկի կարգի, իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ Գողգոթայի խաչի վրա (տես *Խաչելություն*) պատարագվելով՝ հաղթեց սատանային, խաչի վրա դամեց Մ.՝ այն թշնամական պատը, որ կար Աստծո և մարդու միջև, և հավիտենական կյանքի ավետիսը տվեց մարդուն: «Նա այն պատճառով հայտնվեց, որպեսզի վերացնի մեղքերը» (Ա Հովհ. 3.5) և «իր անձի պատարագումով» մեղքը ջնջի (Եբր. 9.26): Տես նաև *Քավություն*:

Հիսուս Քրիստոսը, որ առաքելություն ուներ հաշտեցնելու Աստծուն Ադամի սերնդի հետ, հանդես եկավ առ Աստված հավատքի և

հնազանդության հրավերով և Հայր Աստծո կամքի մատնանշումով՝ «...Քո կամքը լինի...» (տես *Տերունական աղոթք*): Արդարության տեսակետից՝ ինչպես որ մարդն իր ազատ կամքով հնազանդվեց սատանային, այժմ էլ պետք է զղջա և իր ազատ կամքով հավատա ու հնազանդվի Աստծուն՝ Մ-ից ազատվելու և *կենաց ծառից* վերստին ճաշակելու համար (տես *Հավատ*):

Ելնելով Սուրբ Գրքից՝ *եկեղեցու հայրերն* ընդունում են, որ մարդը մեղավոր է նախապես. ո՛չ թե որևէ Մ. գործելուց հետո է նա դառնում մեղավոր, այլ Մ. է գործում, որովհետև մեղսավոր է ի ծնե՝ իր մեջ կրելով սկզբնական Մ., որին թողություն է տրվում Հիսուս Քրիստոսի միջոցով, նրան հավատալով, ապաշխարելով և *Մկրտությամբ Սուրբ Հոգին* ընդունելով: Մկրտության խորհրդով ջնջվում է սկզբնական կամ աղամական Մ., իսկ *Ապաշխարության* խորհրդով՝ ներգործական Մ-երը:

Մ-երն ըստ կամքի լինում են կամա և ակամա, ըստ գիտակցման՝ գիտակցված և չգիտակցված:

Եթե ակամա գործված Մ-երը ներելի կամ դյուրավ ներելի են, ապա առավել դժվար ներելի են կամավոր, ազատ կամքով և գիտակցաբար կատարվածները, որոնցից յոթ մահացու Մ-երն առանձնապես ատելի են Աստծուն ու սրբերին:

Այդ յոթ մահացու Մ-երն են.

1. հպարտություն, 2. նախանձ, 3. բարկություն, 4. ծուլություն, 5. ագահություն, 6. որկրամոլություն, 7. բղջախոհություն (պիղծ մտածմունքներ ու գործեր, վավաշոտություն): Հիշյալ Մ-երի ճյուղավորումները կամ նմանակներն են՝ չարակնությունը, կախարդությունը, բանսարկությունը, շողոքորթությունը, հեշտասիրությունը, խստասրտությունը, հայհոյությունը, չնությունը, մարմնասիրությունը, ժլատությունը, խաբեությունը, ընչաքաղցությունը, մարդապաշտությունը, դրամապաշտությունը, փառասիրությունը, սանձարձակությունը, լպիրշությունը, խեղկատակությունը, դավաճանությունը, այլ չարաբարո մտածմունքներ ու արարքներ: Սրանք մարդու մեջ գործող դիվային ուժերի ծնունդներ են, սատանայական հատկանիշներ, որոնք ծնունդ են տալիս միմյանց և բազմանում:

Ընդդիմանալով Արևմուտքի լատին վարդապետներին՝ *Կիրակոս Երզնկացին* հաստատում է, որ Հայ եկեղեցին ընդունում է 7 մահացու Մ-երի առկայությունը և տալիս դրանց աստվածաբանական մեկնաբանությունը («Գանձասար», 6, 1996, էջ 571–573):

Հին և Նոր կտակարանները (ինչպես և եկեղեց. հայրերի մեկնող. գրվածքները) զատորոշում են ներելի և անները Մ-եր:

Բոլոր տեսակի Մ-երը Հիսուս Քրիստոսի քավչարար արյան զորությամբ ենթակա են ներման (թողության), եթե դրսևորվում է անկեղծ հավատ, զղջում և ապաշխարություն՝ իր պտուղներով հանդերձ (առաքինություն, ողորմություն, բարի գործեր): Անները և ամենածանր Մ-եր համարվում են Սուրբ Հոգու դեմ գործվածները: Հիսուսը նախազգուշացնում է. «Դրա համար ասում եմ ձեզ. ամեն մեղք և հայհոյություն կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյությունը չպիտի ներվի: Եվ ով որ մարդու Որդու դեմ խոսք ասի, նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում» (Մատթ. **12.**31–32):

Մ-ից ազատ լինելը, արդարանալն ու փրկությունն գտնելը Աստծո գերագույն *շնորհն* է՝ տրված մարդուն Հիսուս Քրիստոսով:

Լևոն Սարգսյան

ՄԵՌԵԼՈՑ, Հիշատակ մեռելոց, Հայ եկեղեցու սահմանած՝ աղոթքի և հիշատակության հինգ օրերը՝ նվիրված ննջեցյալներին: Հաջորդում են *Տաղավար* տոներին՝ *Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն, ս. Զատիկ, Վարդավառ, Վերափոխումն ս. Աստվածածնի, Խաչվերաց*: Այս տոներից անմիջապես հետո՝ երկուշաբթի օրերը, գերեզմանատների մատուռներում ննջեցյալների հոգիների հանգստության համար մատուցվում է Պատարագ: Հավատացյալ ժողովուրդն այցելում է հարազատների գերեզմանները, օրհնել է տալիս, խունկ ծխում՝ ի նշան քրիստոնեական հավատքի, որ Վերջին դատաստանին մեռելների հարություն է լինելու, և յուրաքանչյուր ոք տեսնելու է իր հարազատներին:

Գերեզմաններ այցելելու և գերեզմանօրհնեքը՝ հոգեհանգիստը, կատարելու բուն նշանակությունն ավետումն է, թե Հիսուսի օրինակով արդեն իսկ հաստատված է մեռելների հարությունը քրիստոսյան՝ անապակ մարմնով:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1996:

ՄԵՍՐՈՊ Ա ԱՐՏԱԶԵՑԻ (ծ. թ. անհտ – 1372), Ամենայն հայոց կաթողիկոս 1359-ից: Հաջորդել է *Հակոբ Բ Անավարզեցուն*: Մ. Ա. Ա. եղել է Արտազի եպիսկոպոսը և Ս. Թադէ վանքի առաջնորդը: Իր հայրապետ. գործունեությամբ պայքարել է կաթոլիկ. դիրքորոշման դեմ և պաշտպանել Հայ եկեղեցու դավանությունն ու հնավանդ ավանդույթները: Գումարել է Սսի 1361-ի ժողովը՝ 1307-ի Սսի և 1309-ի Ադանայի ժողովների լատինամոլ որոշումների հետևանքով ժողովրդի և հոգևորականների միջև ծագած հուզումները հարթելու և կաթոլիկ. ծեսերի դեմ պայքարելու նպատակով: 1364-ին հատուկ կոնդակով հիմնել է լեհահայոց արքեպիսկոպոսական թեմը:

Կաթողիկոս. գահին Մ. Ա Ա-ուն հաջորդել է *Կոստանդին Ե Սսեցին*:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Սիմեոն Երեվանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Արթուր Կարապետյան

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, սուրբ Մեսրոպ Մաշտոց [մոտ 360, դ. Հացեկաց (Տարոն գավառ) – 17.2.440, Վաղարշապատ, թաղված է Օշականում], հայկական գրի ստեղծող, հայոց դպրության հիմնադիր, հայ ինքնուրույն գրականության և *Թարգմանչաց շարժման* սկզբնավորող, քրիստոնեության քարոզիչ, վարդապետ, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Մատենագրության մեջ հայտնի է նաև Մեսրոպ անունով: Հնագույն աղբյուրներում, մինչև VII դ., Մաշտոց է, VII–X դդ. միաժամանակ գործածվել է և՛ Մաշտոց, և՛ Մեսրոպ, X դարից հետո հիմնականում՝ Մեսրոպ, XX դ. սկսեցին գործածել միատեղ՝ Մեսրոպ Մաշտոց:

Մ. Մ. ծնվել է ազնվականի ընտանիքում, Տարոնում ստացել հուն. կրթություն: Մոտ 389-ին հաստատվել է Վաղարշապատում և երկրի հազարապետ Առավանի ղեկավարությամբ որպես ատենադպիր պաշտոնավարել արքունիքում, ապա անցել զինվոր. ծառայության: 395-ին թողել է աշխարհիկ կյանքը և մտել միայնակեցության կարգի մեջ: Իր շուրջը հավաքել է աշակերտներ, զբաղվել Ավետարանի ուսուցմամբ: Մ. Մ. աշակերտների ուղեկցությամբ կատարել է քարոզչական շրջագայություններ. նախ եղել է Գողթն գավառում, որտեղ, ինչպես և Հայաստանի շատ վայրերում, պահպանվել էր հեթանոս. կրոնը: Տեղի իշխանի օգնությամբ դարձի է բերել բնակիչներին, հիմնել քրիստոնեական համայնքներ, եկեղեց. դասեր: Մ. Մ. այդ առաքելության ժամանակ սկսել է լրջորեն մտահոգվել երկրի վիճակով:

Քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել հարավից՝ ասորի, և արևմուտքից՝ հույն քարոզիչների միջոցով, որոնք իրենց հետ բերել էին ասորերենն ու հունարենը: Թեև քրիստոնեությունը Հայաստանում վաղուց էր ճանաչվել որպես պետ. կրոն (301), բայց ժողովուրդը մնացել էր անհաղորդ նոր կրոնին: Երկրում *Աստվածաշնչի* գրքերը, եկեղեց. երկերը եղել են հուն. կամ ասոր., ընթերցումները, ժամերգություններն ու ծեսերը կատարվել են ժողովրդի մեծ մասի համար անհասկանալի այդ լեզուներով: 387-ին Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև երկու մասի բաժանված Հայաստանի արլ. և արմ. հատվածները սկսել էին միմյանցից օտարանալ: Արմ. հատվածում Արշակունի հարստությունը հեռացվել էր իշխանությունից, և երկիրը դարձել էր կայսերական նահանգ, իսկ արլ. հատվածում Արշակունյաց թագավորությունը հարատևել է մինչև 428-ը: Եկեղեցին նույնպես տրոհվել էր. բյուզ. մասում ենթարկվել էր հուն. եպիսկոպոսությանը, եկեղեցու և պետ. լեզուն համարվել հուն-ը: Պարսկ. մասում արմատավորվել էր պարսկ-ը, իսկ ասոր-ը դարձել եկեղեցու լեզուն: Հայոց ազգ. հոգևոր կառույցի երկու կարևոր հեծանները՝ պետությունը և եկեղեցին, ճեղքվածք էին տվել: IV դ. վերջին փոխված երկրի քաղ. դրությունն առաջ էր բերել հավատի վերաքարոզչության, ժողովրդի լայն խավերին քրիստոնեական գաղափարներով համակելու խնդիրը: Մ. Մ. Գողթնում քարոզչության ժամանակ համոզվել է, որ անկարելի է «կյանքի խոսքը» (*Կորյուն*) սերմանել օտար, անհասկանալի լեզվով, և հանգել է քրիստոնեության հայերեն ավետարանությանը, հայերեն գիր ու գրականություն ունենալու հրատապ կարևորությանը:

Այդ մտահոգություններով գալով Վաղարշապատ՝ Մ. Մ. դիմել է *Սահակ Ա Պարթև* կաթողիկոսին, հայտնել իր ծրագիրը և ամբիշապես ստացել նրա լիակատար հավանությունը: Հայոց *Վռամշապուհ* թագավորը, որը նախանձախնդիր էր հայերեն գիր ստեղծելու գործում, նույնպես հավանություն է տվել այդ ծրագրին՝ հայտնելով, որ Ասորիքում Դանիել անունով եպիսկոպոսի մոտ հայերեն գրեր կան: Թագավո-

ը Վահրիճ իշխանին ուղարկել է Դանիելին մերձակից Հաբել երեցի մոտ: Վերջինս, Դանիելից առնելով գրերը, Վահրիճի հետ բերել է Հայաստան: Հիմնվել են դպրոցներ, Մ. Մ. ստացել է վարդապետի (ուսուցիչ) կոչում և սկսել բերված գրերով մանուկներին հայոց լեզու ուսուցանել: Բայց ժամանակի ընթացքում պարզվել է, որ դանիելյան նշանագրերը չեն համապատասխանում հայերենի հնչյունային համակարգին, անբավարար են հայերենն արտահայտելու, դասավանդելու և թարգմանություններ կատարելու համար:

Հայերեն դպրության գաղափարն իրագործելու, պաշտամունքը հայերեն դարձնելու ճանապարհին մեծ արգելք էր նաև ասորի հոգևորականությունը, որը, օգտվելով Պարսից պետության հովանավորությունից, վճռական դեր է ունեցել Հայ եկեղեցում: Արլ. Հայաստանում եկեղեցու արարողությունը և պաշտամունքը եղել է ասորերեն: Ասորի կրոնավորները չեն ցանկացել զիջել այդ շնորհը և թուլացնել իրենց դիրքերը: Ելք գտնելու նպատակով Սահակ Ա Պարթևը և Մ. Մ. գումարել են եկեղեց. ընդհանուր ժողով՝ «երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդ» (Կորյուն): Բայց ասորի հոգևորականների ճնշմամբ ժողովը չի արտոնել հայ. գիր ունենալու հարցը: Մ. Մ. և կաթողիկոսը ժողովից հետո դիմել են Վռամշապուհ թագավորին: Վերջինս Մ. Մ-ին ուղարկել է Ասորիք՝ ասոր. հոգևոր և քաղ. իշխանությունների հետ բանակցելու և նրանց միջոցով ներազդելու Հայաստանում գործող ասորի հոգևորականության վրա: 405-ին Մ. Մ. իր մի խումբ աշակերտների հետ գնացել է Ասորիք. նրան ընդունել են երկրի հոգևոր և աշխարհիկ իշխանությունները: Եղել է Ամիդ, ապա՝ Եդեսիա քաղաքներում, հայոց գրերի մասին խորհրդակցել ասորի հոգևորականների հետ, բայց՝ ապարդյուն: Կորյունի վկայությամբ, Մ. Մ. Եդեսիայում արարել է հայոց այբուբենը. «Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և աքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր»: Եդեսիայում Մ. Մ. նորագյուտ տառերը դասավորել է՝ օգտվելով հուն. այբուբենի հերթականությունից, տառերին տվել է անուններ (այբ, բեն), որոշել նրանց թվային արժեքները (Ա=1, Ժ=10, Ճ=100, Ռ=1000): Ապա, անցնելով Սամոսատ, հմուտ հունագետ Հռոփանոսի օգնությամբ գեղագրել է նշանագրերը: Այստեղ Մ. Մ. իր երկու աշակերտների՝ *Հովհան Եկեղեցացու* և *Հովսեփ Պաղնացու* հետ նոր գրերի օգնությամբ ձեռնարկել է Աստվածաշնչի թարգմանությունը՝ սկսելով Սողոմոնի առակներից, որոնց առաջին տողերն են՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Հայերեն գրված այդ առաջին բառերը դարձել են Թարգմանչաց շարժման բնաբանը՝ իր պատմության ամբողջ ընթացքում:

406-ին Մ. Մ. նորաստեղծ գրերով վերադարձել է Հայաստան: Երկրում ծավալվել է Թարգմանչաց շարժումը:

Տառերի գյուտից հետո Մ. Մ. իր աշակերտների հետ շրջագայել է Հայաստանում, բացել դպրոցներ, կրթել աշակերտներ, հիմնել վանքեր, որոնք դարձել են ուսման, գրչության և գիտության կենտրոններ, նշանակել եպիսկոպոս-տեսուչներ: Եղել է Կ. Պոլսում, բանակցել կայսրի և հունաց Ատտիկոս պատրիարքի հետ: Ստանալով կայսրի համաձայնությունը՝ Հայաստանի բյուզ. մասում նույնպես բացել է հայերենուսույց դպրոցներ, հայ երեխաներին կրթել մայրենի լեզվով: Եղել է Վրաստանում, որտեղ նրան ընդունել են Վրաց թագավոր Բակուրը և Մովսես եպիսկոպոսը: Կորյունի վկայությամբ, հորինել է նաև վրաց. գրեր: Այդ գործում Մ. Մ-ին օգնել է վրացերեն լեզվին քաջատեղյակ մի մարդ՝ Ջաղա անունով: Ըստ Կորյունի, Մ. Մ. Բենիամին երեցի օգնությամբ ստեղծել է նաև աղվանական տառերը: Մ. Մ. և Սահակ Ա կաթողիկոսն անհաշտ պայքար են մղել 431-ի *Եփեսոսի Գ տիեզերական ժողովում* բանադրված և Հայաստան ներթափանցած *նեստորականության* դեմ: Այդ առթիվ նրանց թղթակցությունները ժամանակի հայտնի հույն եպիսկոպոսների և աստվածաբանների հետ (Կ. Պոլսի Պրոկղ պատրիարք, Մելիտինեի Ակակիոս և Եդեսիայի Ռաբուլաս եպիսկոպոսներ) արտահայտել են հավատի անաղարտության և Ընդհանրական եկեղեցու ընդունած դավանական որոշումների նկատմամբ Հայ եկեղեցու սուրբ հայրերի՝ Սահակ Ա Պարթևի և Մ. Մ-ի բարձր նախանձախնդրությունը:

Մ. Մ-ի և Սահակ Ա կաթողիկոսի հիմնադրած թարգմանչական դպրոցն առաջին հերթին պետք է իրագործեր Աստվածաշնչի թարգմանությունը: Այդ գլխ. գործի իրականացումն սկսվել է գրերի գյուտից անմիջապես հետո: Սահակ Ա Պարթևն իր աշակերտների հետ 405–408-ին Աստվածաշունչը թարգմանել է ասոր.

Փեշիտտա կոչված բնագրից՝ ձեռքի տակ չունենալով եբրայերենը և հունարենը: Կարճ ժամանակում Ս. Գրքի հիմն. մասը թարգմանվել է հայերեն և բազմացվել գրչությամբ: Այդ թարգմանությունը ծառայել է իր նպատակին շուրջ քառորդ դար, մինչև 432–433-ը, երբ Կ. Պոլսից վերադարձած Մ. Մ-ի աշակերտներ *Ղևոնդ Երեցը* (Վանանդեցի), Կորյունը, *Եղնիկ Կողբացին* և Հովսեփ Պաղնացին, ի թիվս մի շարք գրքերի, երկու տիեզեր. ժողովների կանոնների, իրենց հետ բերել են Աստվածաշնչի Յոթանասնից հուն. թարգմանության ստուգված օրինակը: Մ. Մ. և Սահակ Ա Պարթևը, Եղնիկ Կողբացու ու Հովսեփ Պաղնացու հետ միասին, սկսել են ասոր-ից կատարված նախնական, Փուբթանակի կոչվող թարգմանության համեմատումը բերված հուն. բնագրի հետ և փաստորեն կատարել Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը, որով ստեղծվել է Աստվածաշնչի հայտնի Սահակ-Մեսրոպյան հայերեն թարգմանական բնագիրը: Այդ երկրորդ, ժամանակի ամենահմուտ ու բանիմաց հայ գրագետների կատարած վերջնական թարգմանությունը դարձել է դասական հայերենի մաքրության չափանիշ. Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարվում է «թարգմանության թագուհի»:

Շարունակելով թարգմանական և խմբագր. աշխատանքը՝ Մ. Մ. և Սահակ Ա Պարթևը կազմել են Հայ եկեղեցու *Խորհրդատետր-Պատարագամատույցի, Ժամագրքի* նախնական տարբերակները: Մ. Մ-ի անունով մեզ են հասել թուղթ, շարականներ, քարոզներ, ճառեր, թարգմանական և խմբագր. մի շարք երկեր, որոնց շատերի վավերականությունը չի հաստատված: Ըստ մատենագր. աղբյուրների, Մ. Մ. իր կյանքի ճգնավորական շրջանից սկսած, հոգևոր երգեր և բանաստեղծություններ է հորինել: Գրերի գյուտից հետո, երբ ծառայել է Հայ եկեղեցու արարողակարգի և պաշտոնագրության հայացման խնդիրը, Մ. Մ-ի երգերը որդեգրվել են եկեղեցու կողմից՝ հետագայում մտնելով *Շարակնոցի* մեջ: Շարականագիրների միջնադարյան ցուցակների հեղինակները «Ապաշխարության» երգերը (շուրջ 130 միավոր) վերագրում են Մ. Մ-ին: Դրանք մեսրոպյան տառերով գրված առաջին չափածո երկերն են, որոնցով Մ. Մ. դարձել է հայ գրավոր բանաստեղծության հիմնադիրը: Դրանք նաև հայ հոգևոր երգարվեստի առաջին նմուշներն են, քանի որ «Ապաշխարության» երգերը մշտապես կիրառվել են *ժամերգության* մեջ. երգվում են քառասնորդական պահոց շրջանում, շաբաթպահքերին՝ երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը, և բոլոր չորեքշաբթի և ուրբաթ օրերին, բացառությամբ Ծննդյան շաբաթվա (հունվ. 6–13) չորեքշաբթի և ուրբաթ օրերը ու ս. Զատկից մինչև Համբարձում ընկած շաբաթների չորեքշաբթի և ուրբաթ օրերը, որոնք պահոց օրեր չեն: Մաշտոցյան «Ապաշխարության» երգերի մեծամասնությանը բնորոշ են ազգային շարականերգության սկզբ. շրջանի (V–VI դդ.) հատկանիշները: Դրանք 3–4 տնից բաղկացած, սաղմոսատիպ, մատչելի լեզվով գրված, սակայն խորապես քնարական և հեղինակի բանաստեղծ. ներշնչանքի կնիքը կրող կցուրդներ են: Մեղեդիները հիմնականում աչքի են ընկնում պարզ դիատոնիկ կառուցվածքով, որը պայմանավորված է հայ հոգևոր երգարվեստի ատաղձը հանդիսացող ավանդ. ութ ձայնեղանակներով (տես *Ութձայն*): «Ապաշխարության» շարականների երաժշտաբանաստեղծ. արժանիքները խորապես ազդել են հետագա դարերի հեղինակների (Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի և այլք) ստեղծագործության վրա: Մ. Մ-ի «Ապաշխարության» երգերի մի մասը (մասնավորապես՝ ծանր տիպի երգերը) ակնհայտորեն վերաեղանակավորվել են X–XIV դդ.: Շարակնոցում հանրաճանաչ է Հայոց կաթողիկոս Հովհաննես Ա Մանդակունու (478–490) և XIII դ. պատմագիր, աստվածաբան Վարդան Արևելցու անուններով հասած Սրբոց թարգմանչաց կանոնը, որի մանկունքը («Նմանեալ Մովսէսի») հատկապես նվիրված է Մ. Մ-ին: Մ. Մ-ի երգերը, բացի Շարակնոցից, տեղ են գտել նաև *Մաշտոց* ծիսարանում և ժամագրքում:

Մ. Մ., Հայերենի առաջին ուսուցիչը, հայ դպրության, հոգևոր երաժշտության սկզբնավորողը լինելով, նաև հայ մանկավարժության հիմնադիրն է: Նա մշակել է հայոց լեզվի, հայ երաժշտության և հայկ. նորաստեղծ դպրոցներում ուսուցվող մյուս առարկաների դասավանդման սկզբունքները, որոշել հայկ. դպրոցի լեզվական հիմունքը՝ դասավանդումն սկսել մեսրոպյան տառերի և հայերենի՝ որպես մայրենի լեզվի ուսուցմամբ, առարկաները դասավանդել հայերեն, օտար լեզուները՝ հայոց լեզվի հիման վրա: Մաշտոցյան այդ սկզբունքը հետագա դարերում ավանդական է դարձել հայկ. դպրոցներում:

Մ. Մ-ի մահից հետո հազարապետ Վահան Ամատունին և զորավար Հմայակ Մամիկոնյանը մեծ բազմության ուղեկցությամբ նրա մարմինը տեղափոխել են Օշական, որտեղ երեք տարի անց Վահան Ամատունին տաճար է կառուցել՝ աճյունը տեղափոխելով այնտեղ: Մ. Մ-ի գերեզմանը դարձել է սրբատեղի: Նրա հիշատակը հարգելու համար Հովսեփ Ա Հողոցմեցի Հայոց կաթողիկոսը հանձնարարել է Մ. Մ-ի աշակերտ Կորյունին՝ գրել իր ուսուցչի կյանքն ու գործը:

Մ. Մ. սրբացվել է և դասվել Հայ եկեղեցու սրբերի կարգը: Նրան նախ սրբացրել է ժողովուրդը, ապա՝ Հայ եկեղեցին: *Հայսմավուրքում* ս. Մ. Մ-ի անունը հիշատակվում է երեք տոներում, բոլորն էլ՝ շարժական. 1. «Սրբոյն Իսահակայ Պարթևի հայրապետին մերոյ» (Հունվ. 24-ից մինչև փետր. 28-ը, Առաջավորաց պահքի կիրակիից հետո 14-րդ օրը, շաբաթ), 2. «Սրբոց Թարգմանչաց մերոյ Սահակայ և Մեսրովբայ» (Հունիսի 1-ից մինչև հուլիսի 16-ը, Հոգեգալուստից հետո 33-րդ օրը, հինգշաբթի), 3. «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոյ Մեսրովբայ, Եղիշեի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն» (Հոկտ. 3-ից մինչև նոյեմբ. 7-ը):

Հետագա սերունդները ս. Մ. Մ-ին կոչել են երկրորդ Լուսավորիչ: *Գրիգոր Ա Լուսավորիչը* և Մ. Մ. Հայոց քրիստոնեության երկու առաքյալներն են: Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեացրեց ազգը, Մ. Մ. ազգայնացրեց քրիստոնեությունը:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.4, 3–4-րդ պատկերները:

Գրկ. Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1995: Կարապետ Սասնեցի, Ներբողեան յաղագս վարուց և մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ, Վաղ-պատ, 1897: Թահմիզյան Ն., Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, ԲՄ, № 7, 1964: Ադոնց Հ., Հայոց գրերը, Ե., 1984: Մարտիրոսյան Ա., Մաշտոց, Ե., 1982: Արեվշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991:

Արտաշես Մարտիրոսյան

Աննա Արևշատյան

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ (հուն. *μητροπολίτης* – մայրաքաղաքացի), նախապես կոչվել է նաև գլխավոր եպիսկոպոս: Եկեղեցու նվիրապետական դասակարգման երրորդ աստիճանը (պատրիարքից և արքեպիսկոպոսից հետո): Մայրաքաղաքի (մետրոպոլիայի) եպիսկոպոսը, որպես թագավորանիստ քաղաքի հոգևոր առաջնորդ, աստիճանաբար ավելի մեծ նշանակություն է ստացել և կոչվել Մ.: Այս աստիճանը հաստատվել է Նիկիայի Ա տիեզերական ժողովում (325): Մ. ավելի լայն իրավասություններից է օգտվել, քան սովորական եպիսկոպոսը: Նա իրավունք է ունեցել՝ ա. իրականացնելու տվյալ երկրի մեջ մտնող եկեղեցիների կառավարում, բ. պաշտոնի նշանակելու և ձեռնադրելու եպիսկոպոս, գ. հրավիրելու եկեղեց. ժողովներ, դ. դատաստան կիրառելու եպիսկոպոսների նկատմամբ: Մ-ի անունը հիշատակվում է իր կառավարման ներքո գտնվող եկեղեցիներում:

«Մ.» եզրը հայ մատենագրության մեջ գործածվել է իր սկզբնավորման ժամանակներից (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի): Հայ եկեղեցու Մ-ի աստիճանը հաստատվել է *Հովհաննես Ե Դրասխանակերտցի* կաթողիկոսի (898–929) ջանքերով: Նպատակն էր՝ ամբողջացնել նվիրապետական ինն աստիճանները՝ որպես կռվան այն օգտագործելով հայ-հուն. և հայ-լատ. եկեղեցաքաղ. հարաբերություններում: Թեև ավելի վաղ, նույն նպատակով, Դվինի 610-ի ժողովում (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) Այունյաց աթոռը հռչակվել է մետրոպոլիտական, բայց դա գործնական կիրառություն չի ունեցել: Այունյաց գահակալները մինչև X դ. կոչվել են եպիսկոպոսներ (տես *Այունյաց մետրոպոլիտություն*): Հայ իրականությունում մետրոպոլիտական է եղել միայն Այունյաց աթոռը, թեև հիշատակվել է Սեբաստիայի, Մելիտինեի և Մարտիրոսաց քաղաքների հայկ. Մ-ների գոյությունը (Ստեփանոս արք. Օրբելյան): X–XI դդ. Այունյաց իշխանության հզորացումով է պայմանավորվել Այունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի գործնական վերահաստատումը, որն իր ենթակայության տակ ունեցել է տասներկու եպիսկոպոսական վիճակ: Հայ եկեղեցին Մ-ներին այնպիսի մեծ դեր չի վերապահել, ինչպիսին եղել է Հույն և Կաթոլիկ եկեղեցիներում: *Աղվանից կաթողիկոսության* վերացումից հետո կաթողիկոսների հաջորդները կոչվել են Մ-ներ՝ առանց արտաքին կարգի իրավունքի:

Գրկ. Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ..., Վնտ., 1847:

Սամվել Սարգսյան

ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, կրոնական կազմակերպություն, ուխտ, կրոնավորների միաբանական կյանք, հոգևոր-կրոնական, ընկերային-հավաքական կեցության մի ձև, որտեղ յուրաքանչյուր վանական ապրում է միաբանական փոխադարձ պարտավորություններով:

Միջնադարյան Հայաստանում հատկապես մեծ հարգանք ու հեղինակություն են վայելել Մաքենացոց (VII դ.), Թանահատի (VIII դ.) և Հաղպատ-Սանահնի (XI–XIII դդ.) Մ-ները: Աղբյուրների վկայությամբ, Հաղպատ-Սանահինում բնակվող միաբանների թիվն անցել է հազարից: Այս Մ-ներն աչքի են ընկել հոգևոր, ուսումնագիտ., մշակութ. գործունեությամբ:

Եվրոպ. միջնադարում (XII–XVI դդ.) Կաթոլիկ եկեղեցու ծոցում առաջացել են կրոն. կազմակերպություններ (Դոմինիկյան, Ֆրանցիսկյան, Կարմելյան, Հիսուսյան և այլն), որոնք կրոնաբարեգործ. քողի տակ հետամտել են Հռոմի կաթոլիկ եկեղեցու քաղ. նկրտումների իրագործմանը: Յուրաքանչյուր Մ. ունի Հռոմի պապի կամ եպիսկոպոսի հաստատած իր կանոնադրությունը: Մ-ների եռանդուն գործունեության շնորհիվ Կաթոլիկ եկեղեցին իր թևերն է տարածել Արևելքում՝ մինչև Ճապոնիա, Արևմուտքում՝ Ամերիկա աշխարհամաս, Աֆրիկա և այլուր: Մ-ները գործել են Հռոմի պապի անմիջական իրավասության ներքո և չեն ենթարկվել տեղական եկեղեց. իշխանություններին: Հայ իրականության մեջ այդպիսին էր XIV դ. Ծործորում և Քռնայում աշխույժ գործունեություն ծավալած Ֆրանցիսկյան միաբանությունը, որի անդամների գործուն ջանքերով լատ-ից հայերեն են թարգմանվել կաթոլիկ դավանանքը ջատագովող շատ աշխատություններ:

Կրոնականից զատ միջնադարում կենցաղավարել են նաև աշխարհիկ բնույթի Մ-ներ: Այդպիսիներից էին միջնադարյան Հայաստանում (Անի, Կարին, Վան, Երզնկա) և հայկ. գաղթավայրերում (Ուկրաինա, Լեհաստան, Մոլդովա, Ռումինիա, Հունգարիա) գործող Եղբայրների կամ Կորիճների Մ-ները: Հատկապես հայտնի էին Երզնկայի «Եղբարց միաբանություն»-ը (կազմակերպված՝ 1280-ին) և Կամենեց-Պոդոլսկ, Յազլովեց քաղաքների Կորիճվորաց եղբայրությունները (1522, 1658), որոնք ունեցել են իրենց կանոնադրությունները: Սրանց նպատակն էր ամուրի երիտասարդների մասնակցությամբ կազմակերպել հաս. կյանքն ու կենցաղը, պահպանել բարիդրացիական հարաբերություններ հարևան ժողովուրդների հետ, անհրաժեշտության դեպքում զինված պայքարով պաշտպանել հայրենի քաղաքը:

Հոգևոր, ուսումնակրթ., գիտ. և մշակութ. նպատակներով XVIII դ. սկզբին (1701-ին), *Մխիթար Սեբաստացու* ջանքերով, ստեղծվել է Մխիթարյան Մ. (սկզբնապես՝ Անտոնյան): Վենետիկի և նրանից ցայտղավորված Վիեննայի Մխիթարյանների (1773-ին՝ Տրիեստ, 1811-ից՝ Վիեննա) գործունեությունն ունեցել է կրոնական-կաթոլիկական և հայագիտական-բանասիրական ուղղվածություն (տես *Մխիթարյան միաբանություն*):

Հայ առաքելական եկեղեցում զգալիորեն տարբեր է Մ-յան ըմբռնումը թե՛ տեսական և թե՛ գործնական առումով: Յուրաքանչյուր վանք Մ. է՝ իր միաբաններով: Մ. կուսակրոնների հոգևոր ուխտ է, որի նպատակն է Ավետարանը քարոզել, հոգևոր-կրթ. գործին ծառայել, հայագիտությունն ու հայ գեղարվեստը մշակել, աստվածահաճո հիմնարկություններ հաստատել և պահել, եկեղեցու համար հոգևոր վարիչներ պատրաստել: Միջնադարյան Մ-ները ղեկավարվել են հիմնականում վանահայրերի կամ մասնավոր շնորհներով օժտված վարդապետների կենցաղավարական խրատներով: Եվ միայն XX դ. սկզբին մշակվել է մի ընդհանրական կանոնադրություն, որը վավերացվել է 1919-ին՝ *Գևորգ Ե Սուրենյանցի* կողմից, սակայն չի գործադրվել՝ 1930-ական թվականներից հետո եկեղեցու շուրջ ստեղծված քաղ-գաղափարախոս. աննպաստ հանգամանքների բերումով: Այդ կանոնադրության համաձայն, Մայր աթոռի միաբան են համարվել Ս. Էջմիածնում ձեռնադրված բոլոր եպիսկոպոսները, միաբան ընդունված վարդապետները, սարկավագները և դպիրները: Մ., որը վարում է համայնական կյանք, իբրև վանահայր իրեն գլուխ ունի Ամենայն Հայոց Հայրապետին: Յուրաքանչյուր միաբան վանքում հավասարապես ստանում է բնակարան, սնունդ, բժշկական խնամք և այլն:

Գրկ. Խաչիկյան Լ., 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1951, № 12: Նույնի, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.), ԲՄ, № 6, 1962:

Սամվել Սարգսյան
Հակոբ Քյոսեյան

ՄԻԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ, մոնոֆիզիտիզմ, տես *Եվտիքականություն*:

ՄԻԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ, VII դարում Բյուզանդիայում ձևավորված քրիստոնեական դավանաբանական ուսմունք՝ Քրիստոսի երկու բնության առկայության հետ մեկ կամք և մեկ ներգործություն ունենալու մասին: *Քաղկեդոնի ժողովից* (451) հետո, երբ Ընդհանրական եկեղեցին պառակտվել է, և Արևելքի պատրիարքություններից երեքը (Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի), ինչպես նաև Հայ եկեղեցին չեն ընդունել ժողովի դավան. որոշումները, քրիստոնյա Արևելքում Կ. Պոլսի աթոռը մնացել է առանձնացած: Դա դժվարություններ է հարուցել նաև Բյուզ. կայսրությանը՝ Արևելքի ուղղափառ քրիստոնյաների վրա իր ազդեցությունն ուժեղացնելու համար: VII դ. սկզբին պատերազմում հաղթելով Պարսկաստանին՝ բյուզ. Հերակլ կայսրը (610–641) վերըստին կայսրությանն է միացրել իր նախկին արլ. նահանգները՝ Սիրիան, Պաղեստինը ևն, որտեղ մեծ տարածում ուներ արևելյան (ոչ քաղկեդոնիկ) ուղղափառությունը: Քաղ. նկատառումներով կայսրը սիրաշահել է հակաքաղկեդոնականներին, որպեսզի Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Հայաստանը ավելի սերտորեն կապվեն Բյուզանդիայի հետ: Այսպես, Կ. Պոլսի պատրիարք է ընտրվել ծագումով ասորի հակաքաղկեդոնական Սերգիոսը (610–638): 629-ին Հերակլ կայսրը ասորի հակաքաղկեդոնական պատրիարք Աթանասին նշանակել է Անտիոքի պատրիարք, իսկ 630-ին Ալեքսանդրիայի պատրիարք է նշանակվել մոլեռանդ հակաքաղկեդոնական Կյուրոսը: Դավան. պառակտումը վերացնելու համար Կ. Պոլսի քաղ. և կրոն. իշխանությունները մտահղացել են Մ-յան ուսմունքը, որն իրենց կարծիքով ընդունելի կլիներ թե՛ քաղկեդոնականների, թե՛ հակաքաղկեդոնականների համար: Նախապես կյանքի է կոչվել Քրիստոսի մեկ ներգործություն ունենալու մասին դավանանքը, ըստ որի՝ Քրիստոսն ունի երկու բնություն՝ աստվածային և մարդկային (զիջում քաղկեդոնականներին), բայց քանի որ երկու բնությունները միացած են մեկ անձի մեջ, ապա Քրիստոսն ունի մեկ ներգործություն (զիջում հակաքաղկեդոնականներին): Սկզբում դավան. այդ նոր բանաձևին համաձայնել է նաև Հռոմի Հոնորիոս I պապը (625–638): Սակայն քաղկեդոնականների (աստվածաբան Մաքսիմոս Խոստովանողի, Երուսաղեմի Սոփրանոս պատրիարքի և այլոց) անդիջում դիրքը և Հռոմի պապի այդ մտքից հրաժարվելը ստիպել են Սերգիոս պատրիարքին ձևափոխել հավատո նոր խոստովանությունը: Առաջ է քաշվել մեկ ներգործություն և մեկ կամք բանաձևը, համաձայն որի՝ Քրիստոսն ունի երկու բնություն, բայց քանի որ այդ երկուսը միացած են մեկ անձի մեջ, նա ունի միայն մեկ ներգործություն և մեկ կամք՝ աստվածայինը: Հերակլ կայսրը ստորագրել է նոր օրենքը, որը Մ-յան էության բացատրականով փակվել է (638) Ս. Սոֆիայի մուտքի պատին: Սերգիոսի հաջորդ Պյուռոս պատրիարքը (638–641, 654) նույնպես պաշտպանել է նոր դավանանքը:

Սակայն Հերակլ կայսրի մահից հետո Մ. պաշտպանություն չի գտել ո՛չ Բյուզանդիայում, ո՛չ Հռոմում, և միակամականները չեզոքացվել են: Քաղկեդոնականները Մ. դիտել են որպես միաբնակության մի նոր արտահայտություն, բացի այդ, նոր դավանանքը չի կատարել պառակտված եկեղեցին միավորող իր դերը: 680-ի Կ. Պոլսի ժողովը (անվանված Զ տիեզերական ժողով) դատապարտել է Մ., նզովել այն կյանքի կոչողներին կամ պաշտպանողներին: Ընդունվել է Քրիստոսի երկու բնություն, երկու ներգործություն և երկու կամք (աստվածային և մարդկային) ունենալու բանաձևը: Երկու կամքերը չեն մաքառում իրար դեմ, մարդկային ներգործություն-կամքը ստորադաս է աստվածային ներգործություն-կամքին: Բյուզ. Կոստանդին IV կայսրը (668–685), որը պայքարել է միակամականների դեմ, փառաբանվել է որպես հերձվածողներին պատուհասող և «ուղղափառության փարոս»: 680-ի Կ. Պոլսի ժողովի որոշումները Մ-յան վերաբերյալ լրացվել են Տրուլլոսի ժողովի (691/692) սահմանումներով: Բյուզ. հայազգի կայսր Փիլիպիկոս-Վարդանը (711–713) փորձել է վերակենդանացնել Մ., բայց Անաստաս II կայսրը (713–715) վերջ է տվել միակամական վեճերին և հաստատել 680-ի Կ. Պոլսի ժողովի որոշումները:

Սասանյանների դեմ Հերակլի հաղթանակները և Հայաստանի մի շարք նահանգների ընդգրկումը կայսրության կազմում ստիպել են կայսրին ձեռնարկել նաև Հայ եկեղեցու հետ միության գործը՝ Հայաստանն ավելի սերտորեն Բյուզանդիային կապելու և Պարսկաստանից կտրելու համար: Քաղկեդոնի ժողովի հետևան-

քով Հայ և բյուզ. եկեղեցիների միջև առաջացած վիհը կամրջելու և հայերին սիրաշահելու նպատակով Հերակլ կայսրը ձեռնարկել է Մ. Հայաստանում ևս տարածելու քաղաքականությունը: Այդ նպատակով 633-ին նա *Եզր Ա Փառաժնակերտցուն* և բազում եպիսկոպոսների ու վարդապետների հրավիրել է Կարին (տես *Կարինի ժողով 633*): Զներկայանալու դեպքում՝ Հերակլը սպառնացել է Մորիկ կայսրի օրինակով մի հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել (տես *Ավանի կաթողիկոսություն*) և վերացնել Հայոց կաթողիկոսի առանց այն էլ սահմանափակ իրավասությունները Հայաստանի բյուզ. մասում: Հայ պատվիրակները Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի գլխավորությամբ, ժամանակի քաղ. իրադրությունից և հանգամանքներից պարտադրված, ստորագրել են Հերակլի և Սերգիոս պատրիարքի ներկայացրած դավան. թղթերը: Բայց Մ. Հայաստանում չի արմատավորվել և համարվել է քաղկեդոնականություն: Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի դեմ ժամանակի հայ աստվածաբաններից միայն *Հովհան Մայրավանեցին* է բացահայտ հանդես եկել, իսկ կաթողիկոսն ավելի ուշ համարվել է քաղկեդոնիկ: Իրականում Եզր Ա Փառաժնակերտցին բյուզանդացիների հետ համաձայնության է եկել ոչ թե քաղկեդոնականության, այլ Մ-յան հարցի շուրջ, ինչը լուրջ հետևանքներ չի ունեցել Հայ եկեղեցու համար:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Սեբեոս, Պատմութիւն, աշխատասիր. Գ. Աբգարյանի, Ե., 1979: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: *Болотов В. В., Лекции по истории древней церкви, т. 4, П., 1918, с. 438–506;* Tournebize Fr., Histoire politique et religieuse de l'Arménie, P., 1900, p. 352–354; Grumel V., Recherches sur l'histoire du monothélisme, "Echos d'Orient", t. 27 (1928), p. 6–16, 257–277, t. 28 (1929), p. 19–32, 272–282, t. 29 (1930), p. 16–28; Beck H. G., Kirche und theologische Literatur in Byzantinischen Reich, München, 1959, p. 292–295.

Հրաչ Բարթիկյան

ՄԻՆԱՍ Ա ԱԿՆԵՑԻ (ծ. թ. անհտ – 12.5.1753), Ամենայն Հայոց կաթողիկոս 1751-ից: Հաջորդել է *Ղազար Ա Ջահկեցուն*: Սկզբում եղել է Մշո Ս. Կարապետ վանքի առաջնորդ, 1749–1751-ին՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք: Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսի մահից հետո Մայր աթոռի միաբանությունը դիմել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքությանը՝ Մ. Ա Ա-ուն կաթողիկոս ընտրելու ցանկությամբ: Պոլսահայության համաձայնությամբ պատրիարքը մեկնել է Էջմիածին և սեպտ. 15-ին օծվել կաթողիկոս: Կաթողիկոս դառնալով՝ Մ. Ա Ա. վերջ է տվել Էջմիածնի միաբանությունում հոգևորականների միջև բուն դրած թշնամանքին:

Կաթողիկոս. դահին Մ. Ա Ա-ուն հաջորդել է *Աղեքսանդր Բ Բյուզանդացին*:

Վարդան Դերիկյան

ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, Տիգրանյան, Խարբերդցի [մոտ 1658, Դիարբեքիր (Տիգրանակերտ) – 12.5.1740, Մոսկվա], Հայ եկեղեցու դավանական հանդուրժողականության թևի ներկայացուցիչ, ազգային-ազատագրական շարժման գործիչ: Մոտ 1680-ին մտել է Դիարբեքիրի Ս. Առաքելոց եկեղեցին և ընդունել կուսակրոնություն, 1684-ին ձեռնադրվել աբեղա: 1694-ին դարձել է Արցախի Մեծիրանից Ս. Հակոբա վանքի վանահայրը: Մասնակցել է Անգեղակոթի ժողովին (1699, ապրիլ) և նշանակվել հայ ազգ-ազատագր. շարժման գործիչ Իսրայել Օրու ուղեկից: Վերջինիս հետ այցելել է Պֆալց (1699), եղել Ֆլորենցիայում և Հռոմում (1700), իսկ 1701-ից մինչև կյանքի վերջը բնակվել Մոսկվայում: Մասնակցել է Հայաստանի ազատագրության համար ցար. արքունիքի հետ Իսրայել Օրու բանակցություններին, իսկ վերջինիս մահից (1711) հետո՝ շարունակել նրա գործը՝ հիմնականում միջնորդի դեր կատարելով ցար. կառավարության և հայ ազատագր. շարժման ղեկավարների միջև: Ռուս. արքունիքի հատուկ հանձնարարությամբ, 1716–17-ին եղել է Այսրկովկասում, այցելել Գանձասար և Ս. Էջմիածին: 1716-ին Աղվանից (Գանձասարի) կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Մ. Վ-ին ձեռնադրել է եպիսկոպոս և նշանակել ռուսահայոց հոգևոր առաջնորդ: Մասնակցել է Պետրոս Մեծի պարսկ. («Կասպիական») արշավանքին (1722): 1720-ական թթ. ծավալված ազգ-ազատագր. շարժումների ընթացքում ռուս. արքունիքում պարբերաբար ներկայացրել և պաշտպանել է հայ ժողովրդի շահերը: Զբաղվել է նաև հայանպաստ հոգևոր գործունեությամբ, Մոսկվայում և Աստրախանում հայկ. եկեղեցիներ կառուցելու խնդրագրով դիմել ռուս. կառավարությանը (1719): Մահից 2 շաբաթ առաջ ընդունել է օրթոդոքսություն:

Գրկ. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, մաս 2, Ե., 1959: *Эзов Г. А., Сношения Петра Великого с Армянским*

народом, СПБ, 1898; Меликсет-Бек Л., К биографии сподвижника Израэля Ори — Минаса вардапета, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1946, № 1:

ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅՈՒՆ (< լատ. missio – առաքում, հանձնարարություն), քարոզչություն, առաքելություն, որևէ կրոնի կամ դավանանքի տարածում, եկեղեցիների և նրանց կազմակերպությունների քարոզչական գործունեություն: Մ-յան պարզագույն ձևերը բնորոշ են բոլոր կրոններին, բայց այն առավել մեծ դրսևորում է ստացել քրիստոնեության մեջ: XI–XII դարերից սկսած ընդունել է կազմակերպ. որոշակի ձև, և Մ-յամբ զբաղվել են հատուկ դրա համար ստեղծված կազմակերպությունները (սկզբում՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցին և կաթոլիկ. կազմակերպությունները, այնուհետև, XVII–XVIII դարերից՝ նաև բողոքական եկեղեցիները և նրանց քարոզչական ընկերությունները): Մ. հետապնդել է հեթանոսներին, անհավատներին և այլադավանների «դարձի բերելու» և «Աստծո խոսքը» նրանց մեջ տարածելու նպատակ: Խաչակրաց արշավանքներից (XII դ.) սկսած Մ. ստացել է հիմնականում քաղ. երանգ և նպաստել համեմատաբար հզոր երկրների, որոշակի խավերի քաղ. նպատակների իրագործմանը:

Քրիստոնեության առաջին քարոզիչը Հիսուս Քրիստոսն է, որը մկրտվելուց հետո «քարոզում էր Աստծո Ավետարանը» (Մարկ. 1.14) և իր առաքյալների հետ միասին քրիստ. հավատի դարձնում հեթանոսներին՝ «որովհետև հենց դրա համար եմ եկել» (Մարկ. 1.38): Հարությունից հետո Հիսուսը նույնը պատվիրել է իր առաքյալներին. «Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցեք Ավետարանը բոլոր մարդկանց» (Մարկ. 16.15): Գործք առաքելոցում վկայվում է աշխարհի չորս ծագերում առաքյալների քարոզչության մասին, որոնք տարածել են Աստծո խոսքը և դարձի բերել հազարավոր մարդկանց: Ըստ ավանդության, Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչներն ու տարածողներն են եղել *Թադեոս* և *Բարդուղիմեոս* առաքյալները: Մինչև Հայաստանում քրիստոնեության պաշտոն. ճանաչումը (301) և դրանից հետո երկրում քարոզչ. եռանդուն գործունեություն են ծավալել ասորի և հույն քարոզիչները: Հայոց առաջին հայրապետ *Գրիգոր Ա Լուսավորիչը* քարոզչություն է արել ոչ միայն Մեծ Հայքի նահանգներում ու գավառներում, հիմնել թեմեր ու եկեղեցիներ, դարձի բերել արքայական ընտանիքին ու հայ ազնվականու ներկայացուցիչներին, մկրտել ժողովրդին ու զինվորներին, այլև քրիստոնեությունը տարածել է Վրաց և Աղվանից երկրներում: Նրա թոռը՝ *Գրիգորիսը*, քրիստոնեություն է քարոզել Ատրպատականում, Փայտակարանում, Արցախում և Մասքութների երկրում, որտեղ էլ նահատակվել է: Հայտնի է, որ *Մեսրոպ Մաշտոցը* և նրա աշակերտները քարոզչ. մեծ գործունեություն են ծավալել Գողթն գավառում, Արցախում, Սյունյաց աշխարհում, Վիրքում և Աղվանքում: VI դ. սկզբին, հատկապես 506-ի Դվինի Ա եկեղեց. ժողովից հետո, երբ առաջին անգամ Հայ եկեղեցին դատապարտել է *Քաղկեդոնի ժողովը*, հայ հոգևորականները եռանդուն հակաքաղկեդոն. քարոզչություն են ծավալել Ասորիքում, Միջագետքում և քարոզել Հայ եկեղեցու դավանանքը, նրա հակաքաղկեդոն. դիրքորոշումը:

Հայաստանում և հայերի մեջ միսիոներական (քարոզչական) գործունեություն են ծավալել հատկապես Կաթոլիկ եկեղեցին, ավելի ուշ՝ նաև բողոքական քարոզիչները: Կաթոլիկ. Մ. Կիլիկյան Հայաստանում աշխուժացել է XIII դ. 2-րդ կեսին՝ երկրի թուլացման և շրջակա մահմեդ. իշխանությունների ասպատակությունների հաճախացման շրջանում: Կիլիկիայի Հայկ. թագավորության աշխարհիկ տերերը և հոգևորականության մի մասը (այդ թվում՝ որոշ Հայոց կաթողիկոսներ) հույս ունեին ծիսադավան. զիջումների գնով ստանալ կաթոլիկ Եվրոպայի աջակցությունը և պահպանել երկրի երերուն անկախությունը հարևանների ոտնձգություններից: Տալով սին խոստումներ՝ Արևմուտքը օգնության նախապայման է համարել Հռոմի պապի գերիշխանության ճանաչումը, Կաթոլիկ եկեղեցու ծեսի ու դավանանքի ընդունումը: 1307-ի Սսի և 1316-ի Ադանայի եկեղեց. ժողովներում ընդունվել են լատինամետ որոշումներ, որոնք, սակայն, կիրառություն չեն գտել, և 1361-ի Սսի եկեղեց. ժողովում չեղյալ են հայտարարվել նախորդ ժողովների որոշումները: Բուն Հայաստանում կաթոլիկ քարոզիչները՝ նախ՝ Ֆրանցիսկյան, իսկ 1318-ից՝ Դոմինիկյան միաբանության անդամները, հայտնվել են 1240-ական թվականներից: Նրանք իրենց քարոզչության կայան-առաջնորդարանները հաստատել են վաճառաշահ խոշոր քաղաքներում և տարանցիկ առևտրի հանգուցակետերում, լատինադավան (կաթոլիկ) համայնքներ ստեղծել

ՄԻՍԻՈՆԵՐ. Հայաստանի մի շարք շրջաններում, ինչպես նաև Իրանի և Կովկասի հայաշատ քաղաքներում: Հռոմի պապի հատուկ կոնդակով հիմնվել է նոր արքեպիսկոպոսություն՝ դոմինիկյանների գլխավորությամբ, Սուլթանիե (Ատրպատական) կենտրոնով: Ընդգրկել է Արլ. Հայաստանը, Իրանը, Միջին Ասիան, Հնդկաստանը, Եթովպիան: Մ-յան հետևանքով կաթոլիկությունը տարածվել է Ա-նիում, Կարինում, Արտազում, Թավրիզում, Մարաղայում, ավելի մեծ չափերով՝ Նախիջևանի Երնջակ գավառի Քոնա (որտեղ 1330-ին Հովհաննես Քոնեցու գլխավորությամբ ստեղծվել է եպիսկոպոսություն և գործել մինչև 1766-ը), Ապարաներ, Սալիթաղ, Ապրակունիս, Խոշկաշեն և Ջահուկի շրջանի Ջահուկ ու Շահապոնս գյուղերում: Դոմինիկյան միսիոներները պայքար են ծավալել Հայ եկեղեցու դեմ, և Հայաստանում սկսվել է դավանաբան. լարված պայքարի մի ժամանակաշրջան: Այնպես հոգևորականները, հատկապես Գլաձորի և Տաթևի համալսարանների ուսուցչապետներն ու վարդապետները (*Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի* և ուր.) եռանդուն պայքար են ծավալել լատինադավանության դեմ: Կիլիկիայից և բուն Հայաստանից արտագաղթած կաթոլիկ հայերը, հաստատվելով Եվրոպայում, ձուլվել են ընկալող ազգերին, իսկ տեղում մնացածների զգալի մասը մահմեդականություն է ընդունել: XVI դ. վերջին – XVII դ. սկզբին Հայաստանում և Եվրոպայի հայկ. գաղթավայրերում գործել են Հիսուսյան (ճիզվիտներ, 1650-ից), Թեատինյան, Կարմելյան և այլ միաբանությունների անդամները և Ուրբանյան դպրոցի (որի հայկ. բաժինը 1884-ին վերածվել է Քահանայապետական Լևոնյան վարժարանի) ուսուցիչներն ու սաները: Նրանց գործունեության արդյունքում մինչև XVIII դ. լեհահայությունն ու հունգարահայությունը կաթոլիկացվել են, իսկ հետագայում՝ ուծացվել: Հայաստանում և հայկ. գաղթավայրերում գործած կաթոլիկ միսիոներներից հատկապես նշանավոր են *Բարդուղիմեոս Բոլոնիացին*, Պողոս Պիրոմալին, Կղեմես Գալանոսը, Հակոբ Վիլլոտը, Գաբրիել Շենոն, Տ. Լոնժոն, Ռուն և ուրիշներ (տես նաև *Հայ կաթողիկե եկեղեցի, Ունիթորություն*):

Ավետարանական (բողոքական) միսիոներները հայերի շրջանում գործել են XIX դ. սկզբից: Արլ. և Արմ. Հայաստանում, Թուրքիայի և Կովկասի հայաշատ վայրերում գործել են գերմ., շվեդ., շվեյց., ամերիկ., անգլ., նորվեգ. միսիոներները: Շվեդ. Մ., որը ռուս. Ալեքսանդր I ցարի արտոնությամբ 1802-ին հաստատվել էր Հս. Կովկասի Պյատիգորսկ քաղաքի մոտ և հիմնել Կարրաս անունով մի գյուղ, կապեր է հաստատել հայերի հետ, քարոզիչներ ունեցել Թիֆլիսում և Շուշիում: Շվեդ. «Աքաչ» քարոզչ. ընկերությունը համագործակցել է ավելի ուշ Շուշիում հաստատված բազելյան քարոզիչներ Ֆ. Զարեմբայի և Ա. Դիտրիխի հետ: Գերմանացի քարոզիչները գերմ. ընտանիքների հետ Կովկաս են գաղթել Գերմանիայի Վյուրտեմբերգ քաղաքից և 1817-ին հաստատվել Վրաստանում: Գերմանացի գաղթականների 194 գերդաստան հիմնավորվել է Գանձակի գավառում՝ Հայաստանի Գարդմանք աշխարհում: Ինչպես Գարդմանքի, այնպես էլ Թիֆլիսի և այլ վայրերի գերմ. լյութերական քարոզիչները, հայերի հետ կապեր հաստատելով, մեծ ազդեցություն են ունեցել ավետարանականության տարածման և նրանց կրոն. համոզմունքների վրա:

Արևելահայերի շրջանում (հատկապես՝ Ղարաբաղում և Շամախիում) ավետարանականության տարածման գործում ամենանշանակալի դերը խաղացել է Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերությունը», որը Կովկասում գործել է 1823–37-ին: Արմ. Հայաստանում, Կ. Պոլսում, Կիլիկիայում հիմնականում գործունեություն է ծավալել (1831-ից) ամերիկ. «Բորդ» միսիոներ. ընկերությունը (տես նաև *Հայաստանյայց ավետարանական եկեղեցի*):

Երբեմն միսիոներների սխալ գործելակերպը (բացահայտ մարդորսություն, Հայ եկեղեցու ծիսադավան. ավանդության, տեղական բարքերի և սովորությունների անտեսում ևն) հանդեցրել է հայ հոգևորականության և աշխարհիկ տերերի դժգոհությունների, կաթոլիկ և ավետարանական հայերի հանդեպ հալածանքների և բանադրանքի: Տարբեր հարանվանությունների պատկանող հայերի միջև երբեմն արյունահեղությունների հասնող երկպառակությունները ժողովրդին ավելի անպաշտպան են դարձրել արտաքին ճնշումների հանդեպ, չեղել ազգ. կենսական խնդիրներից:

Մ-յան տարածման ամենաազդեցիկ միջոցներից էր դպրոցը: Միսիոներները մեծ կարևորություն են տվել կրթ. ծառայություններին՝ հիմնելով բազմաթիվ դպրոցներ, վարժարան-

ներ, քոլեջներ, ճեմարաններ (Կ. Պոլսում, Հալեպում, Բեյրութում, Խարբերդում, Մարզվանում, Մարաշում, Այնթապում, Տարսոնում, Իզմիրում, Բաղեշում, Վանում, Տրապիզոնում, Ուրֆայում, Պարտիզակում, Շուշիում, Շամախիում, Թիֆլիսում ևն): Նրանք, հատկապես Մեծ եղեռնից հետո, բացել են որբանոցներ, հիվանդանոցներ, ծերանոցներ, ստեղծել բարեգործ. հիմնադրամներ, նյութ. օգնություն ցույց տվել կարիքավոր հայ ընտանիքներին, ցեղասպանության արհավիրքներից ազատել տասնյակ հազարավոր հայերի: Միսիոներներից շատերը փորձել են աջակցել Հայկ. հարցի արդարացի լուծմանը, բողոքել մեծ տերությունների երկդիմի քաղաքականության դեմ: Իրենց հայանպաստ գործունեությամբ աչքի են ընկել Մ. Յակոբսենը, Կ. Եփփեն, Յո. Լեփսիուսը, Ա. Յոհանսոնը, Է. Մ. Ուինչեսթերը, Է. Ռոբինսոնը, Ջ. Հորդը և ուր.: Ֆրանցիսկյան, Կապուչինյան, Հիսուսյան միաբանությունների կրոնավորները արհավիրքի տարիներին մարդասիր. զգալի օգնություն են ցուցաբերել տեղահանված հայերին Հունաստանում, Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում:

Հայ կաթոլիկներն ու ավետարանականները ներկայումս հակամարտ չեն Հայ առաքելական եկեղեցուն, համագործակցում են նրա հետ հոգևոր, կրթ., բարեգործ. և ընկերային ասպարեզներում: Արդի շրջանում Հայաստանի Հանրապետությունում միսիոներ. գործունեություն են ծավալում հիմնականում ամերիկ. կրոն. տարաբնույթ հոսանքներ:

Գրկ. Ղուկասյան Հ., Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ, Թ., 1886: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914, հ. 3, Երուսաղեմ, 1927: Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1946: Քասունի Ե., Լուսաշաւիղ. Պատմութիւն հայ աւետարանական շարժման. 1846–1946, Բեյրութ, 1947: Եղիայան Բ., Հայ կաթոլիկ և աւետարանական յարանվանութեանց բաժանումը ԺԹ դարուն, Անթիլիաս, 1971: Խաչիկյան Լ., Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, ԲՄ, № 11, 1973:

Գևորգ Տեր-Վարդանյան
Արտաշես Ղազարյան

ՄԻՔԱՅԵԼ Ա ՍԵԲԱՍՏԱՑԻ (ծ. թ. անհտ – 1576), Ամենայն հայոց կաթողիկոս 1567-ից: Հաջորդել է *Ստեփանոս Ե Սալմաստեցուն*, որի աթոռակիցն է եղել 1545-ից: Շնորհիվ կազմակերպչական մեծ կարողությունների՝ կարգավորել է Ամենայն հայոց կաթողիկոսության հարաբերությունները Աղվանից և Աղթամարի կաթողիկոս. աթոռների հետ, պաշտպանել Ս. Էջմիածնի դահերեցությունն ու իրավասությունները: 1557-ին շահ Թահմազ Ի-ից ստացած հատուկ հրովարտակով Ս. Էջմիածնի վիճակներ են համարվել Գանձակը, Պարտավը, Լոռին, Նախիջևանը, Գեղարքունիքը, Կապանը, Խոյը, Սալմաստը և Զակամը, որոնց նկատմամբ հավանականություններ է ունեցել Աղվանից կաթողիկոսությունը: Նման հրովարտակ է ստացել նաև սուլթան Սուլեյման Ի-ից, որով Վասպուրականը, Ամիդը, Արճեշը, Խլաթը, Մուշը և Բաղեշը հաստատվել են Մայր աթոռի վիճակներ: Եռանդուն մասնակցել է հայ ազգ-ազատագր. շարժմանը, եղել Էջմիածնի 1547-ի (տես *Էջմիածնի ժողովներ 1547, 1677*) գաղտնի ժողովի կազմակերպիչներից: 1562-ին Սեբաստիայի Ս. Նշան վանքում հրավիրել է ժողով, որին մասնակցել են ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հոգևոր-եկեղեց. և աշխարհիկ նշանավոր շատ գործիչներ: Ժողովը որոշել է Հայաստանի ազատագրության հարցի շուրջ բանակցություններ վարել Հռոմի պապի հետ և այդ նպատակով ստեղծել է հատուկ պատվիրակություն: Այդ կապակցությամբ Մ. Ա Ս. 1562-ի մայիսի 20-ին կազմել է երկու դիմումագիր՝ ուղղված Պիոս IV պապին, և *Աբգար Թոխաթեցու* միջոցով ուղարկել Հռոմ: 1563-ին կրկին դիմել է Հռոմի պապի օգնությանը՝ պարսկ. և թուրք. լծից Հայաստանի ազատագրությանը աջակցելու խնդրանքով, սակայն որևէ արդյունքի չի հասել: Մ. Ա Ս. մեծ նպաստ ունի հայկ. տպագրության կազմակերպման գործում: Նրա հանձնարարությամբ Աբգար Թոխաթեցին 1565-ին Վենետիկում հիմնել է տպարան և տպագրել գրքեր:

Կաթողիկոս. գահին Մ. Ա Ս-ուն հաջորդել է *Գրիգոր ԺԲ Վաղարշապատցին*:

Գրկ. Ջամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Սիմեոն Երեվանցի, Ջամբռ, Վաղպատ, 1873: Պալճյան Ա., Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վնն., 1878: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Աղավնի Ութուջյան

«ՄԼՔԵ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ», IX դարի հայկական ձեռագիր մատյան, հայտնի ամենավաղ պատկերազարդ հայերեն Ավետարանը: Պարունակում է 35x29,5 *սմ*-անոց 464 մագաղաթե թերթ: Գրված է մեսրոպյան ընտիր բոլորանկյուն երկաթագրով: 1832-ից ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան

մատենադարանում (№ 1144/86): Ընդօրինակ-վել է 862-ին, Վասպուրականում, Արծրունյաց տոհմի պատվերով (բուն պատվիրատուի անունը ջնջված է): «Մ. Թ. Ա.» է կոչվում Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու երկրորդ կնոջ՝ Մլքե թագուհու անունով: 922-ին Մլքե թագուհին այն նվիրաբերել է *Վարագավանքի* Ս. Աստվածածին եկեղեցուն, որտեղից, սկսած 1208-ից, բազմիցս առևանգվել է, փրկագնվել և կրկին վերադարձվել եկեղեցուն:

Ավետարանի գեղ. հարդարանքն ամբողջությամբ չի պահպանվել: Ներկայացված է վեց մանրանկար խորաններով (երեքը՝ Եվսեբիոսի թուղթը Կարպիանոսին, երեքը՝ կանոնների աղյուսակներ), Համբարձման տերունական պատկերով և չորս ավետարանիչների դիմանկարներով:

Խորաններն առանձնանում են մոնումենտալ ճարտ. կառուցվածքով: Հաստաբուն զանգվածային այուները, որոնց մշակումը հիշեցնում է մարմարե ճարտ. բնօրինակները, իրենց վրա են կրում կամարակապ խորանաճակատները: Վերջիններս պատկերազարդված են «նեղոսյան տեսարաններ» հիշեցնող ժանրային բնանկարներով (ձկներ, հավալուսններ, նավակներ, ձկնորսներ ևն): Անտիկ արվեստին բնորոշ այս ծովային մոտիվների արտացոլումն առկա է հելլենիստ. Հայաստանում հայտնի Գառնիի բաղնիքի հատակի խճանկարում: Անտիկ արվեստի ազդեցությունը նկատելի է նաև ավետարանիչների պատկերներում, որոնցից երկուսը՝ Մատթեոսը և Ղուկասը, ներկայացված են կանգնած, իսկ Մարկոս և Հովհաննես ավետարանիչները՝ նստած: Դիմանկարների պատկերագր. և ոճական առանձնահատկությունները բնորոշ են միջնադարյան արվեստի գեղ. սկզբունքների կազմավորման շրջանին՝ ներդաշնակելով անտիկ ավանդույթներն արևելաքրիստ. արվեստի սկզբունքներին: Այդ կերպ է բնորոշվում նաև «Համբարձման» պատկերը: Վերջինս ներկայացնում է դեռևս չհաստատված պատկերագր. տիպ, որում տեղ են գտել հորինվածքային մի շարք անսովոր մանրամասներ, ինչպես, օր., Քրիստոսի երկու կողմերում պատկերված նիզակակիր հրեշտակապետները, Պողոսի և Պետրոսի խոնարհված դիրքը կամ հրեշտակների բացակայությունը Տիրամոր շուրջը:

Գեղ. և պատկերագր. առումով «Մ. Թ. Ա.» հայկ. գրքարվեստի կազմավորման ամենավաղ և կարևորագույն շրջանից հայտնի սակավաթիվ և չքեղ օրինակներից է:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.5, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ճանաչյան Մ., Հայկական մանրանկարչություն, հ. 1, Վնտ., 1966: *Дурново Л. А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1970;* Weitzmann K., Die armenische Buchmalerei des 10 und beginnenden 11 Jahrhunderts, Bomberg, 1933; Der Nersessian S., L'art arménien des origines au XVII siécle, P., 1977.

Նիկոլայ Քոթանջյան

ՄԽԻԹԱՐ Ա ԳՌՆԵՐՑԻ, Տեր Մխիկ (ծ. թ. անհտ – 1355), Ամենայն հայոց կաթողիկոս 1341-ից: Հաջորդել և նախորդել է *Հակոբ Բ Անավարզեցուն* (1327–41 և 1355–59): Մինչև կաթողիկոս դառնալը Կիլիկիայի Բարձրբերդ գավառի Գռների վանքի վանահայրն էր: Պետ. շահի թելադրանքով, Հռոմի պապի հետ բանակցելով և հարաբերություններ հաստատելով հանդերձ, դեմ էր Հայ եկեղեցում կաթոլիկ ծեսերի գործադրմանը: Գահակալության գրեթե ողջ ընթացքում զբաղվել է ունիթոր. գործիչ, մատենագիր Ներսես Պալիանենցի և ուրիշների՝ Ավինյոնի (1309–77-ին Հռոմի պապերի հարկադիր նստավայրը Ֆրանսիայում) պապական արքունիք ներկայացրած, Հայ եկեղեցուն վերագրված «117 մոլորությունների» ցուցակին և նրա բազմաթիվ տարբերակներին պատասխան-հերքումներ տալով: Նրա օրոք, 1345-ին Սսում գումարված եկեղեց. ժողովը, Եվրոպայից օգնություն ստանալու հույսով, ձևականորեն ընդունել է Կաթոլիկ եկեղեցու հետ միանալու Հռոմի պապի առաջարկը. որոշումը, սակայն, մնացել է թղթի վրա և չի իրագործվել: Մ. Ա Գ-ու կաթողիկոսության շրջանի նշանակալի դեպքերից է 1345-ին այսպես կոչված «Հայ-լատին» Մաշտոցի ստեղծումը և պաշտոնական «ընդունումը» (չի գործածվել), որով հայ ավանդ. Մայր Մաշտոցին խառնվել են 1185-ից հետո *Ներսես Լամբրոնացու* թարգմանած լատ. ծիսարանի կանոնները:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ (1230/35, Երևան – 1297/1300, Այրիվանք, թաղված է իր ճգնարան-քարայրի շեմին), մատենագիր, պատմիչ, մանկավարժ, վարքագիր, բանաստեղծ, երգահան: Մ. Ա-ու մասին պահպանված կենսագր. տեղեկությունները կցկտուր են: Հայտնի է, որ

նա 1265–75-ին Խոր վիրապի վարդապետարանում ծավալել է գիտամանկավարժ. լայնածավալ գործունեություն: 1265-ին ընդօրինակված ձեռագրերից մեկում հիշատակվում է որպես «անդրանիկ վարդապետ», իսկ 1268–71-ի ընթացքում գրված ձեռագրում՝ «գերահռչակ և բարերջանիկ, վսեմախոհ բաբունի», «բաբունյաց բաբունի»: Առնչվել է Հովհաննես Վանականի ու *Վարդան Արևելցու* դպրոցների հետ և իր ստեղծագործ. ողջ կյանքում շարունակաբար զարգացրել դրանց մանկավարժ. ավանդույթները: Մինչև 1275-ը ապրել և գործել է Օրբելյաններին ենթակա հոգևոր կենտրոններում, ապա եկեղեց. և գիտամանկավարժ. գործունեությունը շարունակել Խաղբակյանների իշխանությանը ենթակա Այրիվանքում (տես *Գեղարդավանք*): 1277–79-ին որպես «Այրիվանքի սուրբ ուխտի» եպիսկոպոս վարել է Սրկղունիքի Ս. Հակոբ եկեղեցու և Թանահատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու նավակատյաց տոնակատարությունները: Մինչև 1289-ը որպես արքեպիսկոպոս ղեկավարել է Պռոշյաններին ենթակա հոգևոր կենտրոնների եկեղեց. գործերը: 1289-ին Այրիվանքի բարձրադիր ժայռերից մեկի քարայրում կառուցել է տվել ճգնարան-աշխատատեղի, մեկուսացել արտաքին աշխարհից, ապրել ճգնավորի 24 ժամվա համար նախատեսված կանոններով, շարունակել իր ստեղծագործ. աշխատանքը:

Մ. Ա-ու գիտամանկավարժ. և գրական գործունեության առաջին շրջանն աղերսվել է Պատարագամատույց (տես *Խորհրդատետր-Պատարագամատույց*), *Հայսմավուրք*, *Մաշտոց* եկեղեցածիս. ժողովածուների հետ: Վերջինիս հետ են կապվել մի քանի ստեղծագործություններ, որոնց անդրանիկ նմուշը 1253–73-ի ընթացքում գրված «Երրորդ աւուրն գալստեան հոգոյն և աւրհնութիւն ձիթոյ» գանձն է: Բացի այդ նա ունի ծիսական նպատակներով, համապատասխան տաղով ու աղոթքով գրված մի գանձ ևս՝ «Նորակերտ գրոց» (Մատենադարան, ձեռ. № 3987): Մաշտոց ծիսարանի հետ են աղերսվում Մ. Ա-ու եկեղեց. պատկերների օրհնությանը նվիրված երգը և «Աղ աւրհնելոյ», «Խունկաւրհնելոյ», «Դրան եկեղեցւոյ» աղոթքները, որոնք նրա ինքնագրով պահպանված են Ճառընտիր ժողովածուի մեջ զետեղված Պատարագամատույցում: Նրա վաղ շրջանի հեղինական գործերից են նաև *Ստեփանոս Սյունեցու* պատմագր. բնույթի, թարգման. գրականությունից հայտնի Ալեքսիանոս Կրոնավորին նվիրված վարքերը, որոնք մուտք են գործել Հայսմավուրք ժողովածուներ:

1280-ական թթ. սկսվել է Մ. Ա-ու գիտամանկավարժ. և գրական գործունեության երկրորդ՝ առավել բեղուն շրջանը: Նրա շնորհիվ մեծ հռչակ է ձեռք բերել Այրիվանքի ուսումնագիտ. կենտրոնը, իր խոսքերով՝ «Այրիվանաց մեծ ուխտը»: Այդ տարիների դպրոցի բարձր մակարդակի վկայությունն է Մ. Ա-ու կազմած վարդապետ. բարձրագույն դպրոցներում եղյալ գիտությունների տեսական, իմաստասիր., աստվածաբան. առարկաների դասավանդման համար հանձնարարվելիք գրականության ուսումնական ծրագիրը: Միջնադարից մեզ հասած միակ ամբողջական այս ծրագրում գրականությունը բաժանված է երկու մասի՝ «Սուրբ գրքեր» և «Նուրբ գրքեր»: Առաջին մասում ընդգրկված են Աստվածաշնչի կանոնական և պարականոն գրքերը, Աղոթամատույց և Պատարագամատույց ծիս. ժողովածուները, երկրորդում՝ ինքնուրույն և թարգման. գրականությունից հայտնի 13 հեղինակների 40-ից ավելի աստվածաբան., իմաստասիր. բնույթի երկեր: Ծրագրում ընդգրկված հեղինակները և նրանց երկերը միմյանց նկատմամբ ունեն կայուն դասակարգում և հաջորդականություն: Ծրագիրը գիտ. աշխարհում հայտնի է «Կարգադրութիւն գրոց սրբոց...» խորագրով և թարգմանված է մի քանի լեզուների: Այրիվանքում 1283-ին ի մի բերելով վերոհիշյալ ծրագրով նախատեսված ամբողջ գրականությունը՝ նա 170 օրում, իր իսկ ընդօրինակությամբ, կազմել է դրան համապատասխան ուս. ձեռնարկ-ժողովածու՝ քրեստոմատիա (Հայագիտության մեջ ճանաչված է Ճառընտիր անունով): Մ. Ա-ու՝ հմուտ գիտնական խմբագրի 2000 մեծադիր էջերից բաղկացած փիլ., աստվածաբան., իմաստասիր. երկերի ինքնագիր այդ ժողովածուն (Մատենադարան, ձեռ. № 1500) իր կառուցվածքով ու բովանդակությամբ մատենագիտ. մեծարժեք հատընտիր է, հազվագյուտ գանձարան: Այն եզակի արժեք ունի ոչ միայն հայ, այլև միջնադարյան համաշխ. գրական հուշարձանների շարքում:

1268-ին Մ. Ա. ստեղծել է հոգևոր անհատ. երգերի իր չափածո ժողովածուն՝ *Գանձարանը*, որը մեծ ճանաչման է արժանացել դեռևս միջնադարում և մեզ հասել հարյուրավոր ընդ-

օրինակությունները: Այն թվակիր ամենահին անհատ. ժողովածուն է հին և նոր խմբագրությամբ Հայտնի գանձարաններում: Ժողովածուի հիմն. խմբում ընդգրկվել են տերունական, վկաներին, սրբերին նվիրված 19 գանձ, ծիսական բնույթի 2 գանձ, 2 երգ և ինքնագիր չափածո հիշատակարան (Մատենադարան, ձեռ. №№ 4011, 6529): Մ. Ա. եղել է իր իսկ գանձերի երգահանը: Նրա գանձերը բանաստեղծ. խոսքով օժտված չափածո ստեղծագործություններ են և, իբրև համաբնույթ հոգևոր երգեր, կոչված են գովերգելու Տերունական տոները, ներբողելու սրբերին, վկաներին, քարոզելու աստվածապաշտություն, բարեպաշտություն, հավատապաշտություն: Գանձերում կան նաև քրիստ. եկեղեցու ընդհանուր պատմությունից, հայ ժողովրդի անցյալի քաղ., հոգևոր ու մշակութ. կյանքից քաղված պատմ. նկարագրություններ՝ «Սրբոց Հայրապետացն երեք ժողովոյն», «Գանձ ամենայն սրբոց Թադաւորաց»: Փաստ. հարուստ նյութ են պարունակում ազգ. թեմաներով գրված «Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ», «Սրբոց Հռիփսիմեանց», «Կաթողիկէ եկեղեցւոյ», «Ամենայն սրբոց Թադաւորաց» գանձերը: Ժողովածուում արծարծվել են նաև հեղինակի հայրենասիր., ազգ. զգացմունքները: Անդրադառնալով սոցիալ. հարցերին՝ հասարակության բոլոր դասերին հորդորել է զերծ մնալ ախտերից՝ հարբեցողությունից, ստախոսությունից, ագահությունից ևն: Մ. Ա-ու գրակ. ժառանգության մեջ ուրույն տեղ են գրավում նրա բանաստեղծությունները, որոնք հիմնականում տաղեր են, օրհնության երգեր՝ հորինված եկեղեց. ձեռնարկների և ծիսական նպատակների համար: Նրա չափածո ստեղծագործությունները ձեռագրերում պահպանվել են խազագրված, երգվել ու երգվում են ժամերգություններում: Նա հեղինակ է նաև Ստեփանոս Սյունեցուն նվիրված շարականի, որը ցայժմ անհայտ է:

Մ. Ա-ուն պատմիչի ճանաչում է բերել «Նոր պատմութիւն» (1289, հրտ. «Պատմութիւն Հայոց», 1860) ժամանակագր. բնույթի երկը, որն ընդգրկում է հայ և հարևան ժողովուրդների պատմությունն Արարչագործությունից մինչև XIII դ.: Օգտագործված են կորած սկզբնաղբյուրներ, որի շնորհիվ մեզ են հասել պատմ. եզակի տեղեկություններ: Կարևոր են Հայաստանի, Կիլիկյան Ռուբինյան իշխանության, Հայոց Արևելից Կողմանց, Վրաստանի ներքին կյանքի անցուդարձերը, մշակույթին վերաբերող տվյալները: Երկը նորություն է իր կառուցվածքով, ոճային առանձնահատկություններով, աշխատության առաջին մասում զետեղված մատենագիտ. նշանակության 35 անվանացանկերով:

Մ. Ա., լինելով ճանաչված գիտնական, Հայ եկեղեցու դավան. սկզբունքների զորավիգ, չէր կարող անտարբեր մնալ ժամանակի անցուդարձին: Իբրև ջերմ հայրենասեր և Հայ առաքելական եկեղեցու դաղափարախոսության ջատագով, նա աշխատել է նպաստել կաթողիկոս. աթոռն ու թագավոր. գահը Հայաստան տեղափոխելու ծրագրերի մշակմանը: Կյանքի վերջին տարիներին գրել է «Տոմարի տեսություն» աշխատությունը, որը մեզ չի հասել: Դրա առանձին հատվածներ պահպանվել են «Նոր պատմութիւն» երկում:

Գրկ. Հովսեփյան Գ., Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն և երկեր, Երուսաղեմ, 1931: Հարությունյան Է., Մխիթար Այրիվանեցի, Ե., 1985:

Էլեոնորա Հարությունյան

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ [1120-ական թթ., ք. Գանձակ – 1213, Նոր Գետիկ վանք (Գոշավանք)], գիտնական, օրենսդիր, դավանաբան, մեկնիչ, մատենագիր, առակագիր, մանկավարժ, *արևելյան վարդապետների* ղեկավար (XII դ. վերջից մինչև մահը): Ձափահաս դառնալով՝ ձեռնադրվել է կուսակրոն քահանա, աշակերտել Հովհաննես վրդ. Տավուշեցուն և ուրիշ գիտնականների, ստացել վարդապետի կոչում: Այնուհետև Մ. Գ. գնացել է Կիլիկյան Հայաստան, թաքցնելով վարդապետ. աստիճան ունենալը՝ ուսանել է Սև լեռան վանքերի համբավավոր վարդապետների մոտ, ավելի խորացել աստվածաբանության ու այլ գիտությունների բնագավառում և վերստին ստացել վարդապետի աստիճան: Վերադառնալով հայրենիք՝ սկզբում ապրել է Գանձակում, սակայն ինչ-ինչ տարաձայնությունների պատճառով նրա և Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հարաբերությունները սրվել են, և Մ. Գ. տեղափոխվել է Հաթերքի իշխան Վախթանգի մոտ, այստեղից էլ՝ Գետիկ վանք: Որոշ ժամանակ անց վանքն ու շրջակա գյուղերը երկրաշարժից ավերվել են: Ամիրսպասալար Զաքարե Բ Մեծ, Իվանե Ա Զաքարյան և Կայեն գավառի իշխանների հովանավորությամբ ու օժանդակությամբ Մ. Գ. Գետիկից ոչ հեռու՝ Տանձուտա ձորում կա-

ռուցել է Նոր Գետիկ վանքը և մինչև կյանքի վերջը բնակվել այնտեղ: Մ. Գ-ի իմաստության համբավն այնքան է տարածվել, որ շատերը (նույնիսկ վարդապետներ) հեռավոր վայրերից եկել են աշակերտելու նրան:

Մ.Գ. մանակցել է 1205-ի Լոռեի և 1207-ի *Անիի եկեղեցական ժողովներին*: Ժամանակակիցներն ու հետագա սերունդները Մ. Գ-ի անունը հիշել են մեծ հարգանքով ու ակնածանքով, նրան դասել հայոց եռամեծ վարդապետների շարքը, մեծարել «այր իմաստուն ու հեզ», «վարդապետական ուսմամբ հռչակեալ», «մեծ վարդապետ», «հռչակաւորն և մեծիմաստն գիտութեամբ» պատվանուններով: Մ. Գ. մեծ հեղինակություն է վայելել նաև ժամանակի քաղ. ու պետ. գործիչների շրջանում, եղել է Զաքարե Բ Մեծ Երկայնաբազուկի խոստովանահայրն ու խորհրդատուն: Միջնադարում նրա մասին հյուսվել են բազում ավանդություններ:

Մ. Գ-ի գրչին են պատկանում մատենագրության տարբեր ճյուղերին վերաբերող մեկ տասնյակից ավելի աշխատություններ: *Կիրակոս Գանձակեցին* վկայում է, որ մեծ վարդապետը թողել է, որպես «յիշատակ և արձան գերեզմանի», իմաստախոհ գրքեր՝ հօգուտ ուսումնասերների: Այդ գործերն են. «Գիրք Դատաստանի» (Դատաստանագիրք), «Համառօտ մեկնութիւն մարգարեութեանն Երեմիայի մարգարէի», «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Աղամայ առ որդիս նորա» (մեզ չի հասել), «Առակք», «Շարք հայրապետացն Աղուանից», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ», «Թուղթ խրատական», «Փիլոնի Յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ», «Ճառ ի յարութիւն Ղազարու», «Տաղ», «Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալ Խոսրով», աղոթքներ:

Հայ իրավաբան. մտքի մեծագույն նվաճումներից է Մ. Գ-ի Դատաստանագիրքը («Գիրք Դատաստանի»)՝ կազմված 1184-ին: Պահպանվել են բազմաթիվ ձեռագրեր (շուրջ 40-ը՝ Մատենադարանում, այդ թվում՝ հնագույնը, ձեռ. № 488): Հայտնի են Դատաստանագրքի Ա, Բ, Գ խմբագրությունները: Ա խմբագրությունը բաղկացած է նախադրությունից և բուն Դատաստանագրքից (251 հոդված): Բ խմբագրությունը բաժանվում է աշխարհական (130 հոդված) և եկեղեց. մասերի (124 հոդված): Գ խմբագրությունը նույնանում է Ա-ի հետ, սակայն համառոտ է և պարունակում է գործնական իրավանորմեր: Ենթադրվում է, որ գործածվել և կիրառվել է առավելապես Գ խմբագրությունը: Դատաստանագրքի աղբյուրներն են Աստվածաշունչը (Մովսիսական օրենքներ), հայոց կանոնական իրավունքը և սովորութային իրավունքը: Գրվել է հայ ժողովրդի ազգ-ազատագր. ոգին բարձրացնելու, հայոց պետականության վերստեղծման, ապագա թագավորության պետաիրավական հիմունքները սահմանելու, հայ հասարակությունում Հայ առաքելական եկեղեցու դիրքերն ամրապնդելու, օտարների դեմ պայքարում ազգային ինքնությունը պահպանելու նպատակով: Հայոց թագավորության վերականգնումը իրական և գործնական հիմքերի վրա դնելու համար Մ. Գ. ձգտել է ստեղծել ազգ. օրենսգիրք, բավարարել հայ հասարակության բոլոր խավերի իրավական պահանջմունքները, կանոնակարգել նրանց իրավահարաբերությունները և, ամենակարևորը, պաշտպանել ընդհանուր համազգ. շահերը, ժողովրդի ինքնությունն ու քաղ. պայքարը: Այդ պատճառով Դատաստանագիրքը հոգևոր մեծ արժեք լինելուց բացի դարձել էր ամենօրյա կիրառության ուղեցույց և իրավաքաղ. ծրագիր: Իր Դատաստանագրքով Մ. Գ. ազդեցիկ զենք է տվել հայ իշխաններին և ավատատերերին՝ իրենց քաղ. դիրքերն ամրապնդելու, սեփական իշխանությունը հաստատելու (այդ ժամանակ Զաքարյանները հաջող պայքար էին մղում մահմեդ. ցեղերի և իշխանությունների դեմ և ազատագրում Հս. Հայաստանը), Հայ եկեղեցուն՝ կրոնադավան. պայքարում (բուն Հայաստանում Հույն և Վրաց եկեղեցիների, Կիլիկյան Հայաստանում՝ Հույն և Կաթոլիկ եկեղեցիների հետ միություն կազմելու փորձերի դեմ) իր ինքնուրույնությունը պահպանելու, նվիրապետությունը սրբագործելու, հոգևորականությանը՝ իր արտոնությունները պահպանելու, ինչպես նաև շինականներին՝ ավատական կամայականություններից, գերկեղեքումից, պաշտոնական չարաշահումներից պաշտպանվելու համար: Մ. Գ. իր Դատաստանագրքով ջանացել է ապահովել երկրի ներսում արդարադատությունն ու խաղաղությունը, կայունացնել հասարակության ներքին անդորրը, որպեսզի երկրի բոլոր ուժերը կարողանան հարմար պահին հզոր պոռթկումով, հոգևոր և

ֆիզ. ուժերի կենտրոնացումով պայքարել անկախության համար և վերականգնել «յանուրջս երեւութացող» թագավորությունը:

Դատաստանագիրքը գրելու պատճառը ոչ միայն բարքերի անկումն էր, խախտված իրավահարաբերությունները, այլև գրավոր դատաստանագիրք չունենալու հայերին ուղղված մեղադրանքները և հայերի գործերը մահմեդ. դատարաններում չքննվելու մտահոգությունը: Դատաստանագրքի երևան գալու նախադրյալներն էին նաև քաղաքների աճը, քաղաքային կյանքի աշխուժացումը, առևտրի, վաշխառության, արհեստների զարգացումը և դրանց հետ կապված՝ իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը:

Մ. Գ. Դատաստանագիրքը կազմել է իր պետաիրավական տեսության հիման վրա, որը նրա ընդհանուր քաղ. տեսության մասն էր կազմում: Անցյալի փորձի և իր ժամանակի կյանքի դիտարկումների ընդհանրացմամբ Մ. Գ. հանգել է այն եզրակացության, որ պետությունն ու եկեղեցին են այն երկու հիմն. այուները, որոնք պահում են հասարակության ամբողջ շենքը որպես քաղ. իրողություն: Դատաստանագրքի ամբողջ նյութը հիմնականում ընտրված է այդ այուներին համապատասխան և հյուսված դրանց վրա: Մ. Գ. ներկայացրել է պետություն-եկեղեցի, պետություն-իշխաններ, պետություն-ռամիկներ և եկեղեցի-պետություն, եկեղեցի-իշխաններ, եկեղեցի-ռամիկներ իրավահարաբերությունները: Ըստ Մ. Գ-ի, թագավորության նպատակահարմար կառուցվածքը կենտրոնացված իշխանությունն է՝ ժառանգական միապետի գլխավորությամբ: Թագավորը կարգվում է Աստծուց, և միայն Աստված կարող է նրան փոխել: Մ. Գ. թագավորի անձը հայտարարում է սրբազան ու անձեռնմխելի: Կենտրոնացված ու խիստ ուժեղ թագավորական իշխանության մեջ է Մ. Գ. տեսել ռազմաքաղ. ուժեղ և կենսունակ պետության գրավականը: Պետականության վերականգնման և թագավորական իշխանության ստեղծման գործում օրենսդիրն առաջնակարգ նշանակություն է տվել Հայ եկեղեցուն, որը համահայկ. միակ կենտրոնացված կառույցն էր և մեծ հնարավորություններ ուներ հայ ժողովրդին ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելու: Մ. Գ. եկեղեցին դիտել է որպես ազգ. և պետ. գաղափարախոսության կրող և, լինելով ազգ. եկեղեցու գաղափարի կողմնակից, մերժել է Հույն և Կաթոլիկ եկեղեցիների հետ միությունը: Եկեղեցիների միությունը նա պատկերացրել է առաքելական շրջանի եկեղեցու նման, երբ ընդհանրության գաղափարը հատկանշում էր նաև եկեղեցիների հավասարությունն: Մ. Գ. իր Դատաստանագրքով ձգտել է ամրապնդել Հայ եկեղեցին՝ որպես հուսալի պատվար թե՛ ընդդեմ քրիստոնյա Արևմուտքի և թե՛ ընդդեմ մահմեդականների: Մ. Գ. պաշտպանել է Հայ եկեղեցին ոչ միայն որպես ազգ. գաղափարների կրողի և համահայկ. կառույցի, այլև՝ որպես ավատական հաստատություն: Դատաստանագրքում բազմաթիվ են այն հոդվածները, որոնք վերաբերում են եկեղեցու սեփականատիր. իրավունքներին և ունեցվածքի պաշտպանությանը: Այդ հոդվածները հորդորից, խրատից, քարոզից ու բարոյախոսությունից զատ նախատեսում են նաև ծանր ու խիստ պատիժներ եկեղեցու ունեցվածքի դեմ ոտնձգություն կատարողների համար: Մ.Գ. աշխարհիկ իշխող դասին քարոզում է չմիջամտել հոգևոր գործերին, չհափշտակել եկեղեցու ունեցվածքը, միաժամանակ խրատում՝ չափից ավելի չնեղել շինականներին, իսկ եկեղեց. դասին հրահանգում է՝ զբաղվել հոգևոր գործերով, ծառայել Աստծուն և ոչ մամոնային:

Ըստ «Գիրք Դատաստանի»-ի, դատական համակարգը հետևյալն է՝ պետ. դատարաններ (թագավորական, թագավորին առընթեր, իշխանական, իշխանին առընթեր, ստորին), ավատատիրական (տերունական, դասային), կորպորատիվ (համայնքային, համքարային, եղբայրությունների), եկեղեցական (կաթողիկոսական, եպիսկոպոսական, վարդապետական, քահանայական) և արտակարգ: Դատաստանագրքում մեղքն ընկալվում է երկու իմաստով՝ կրոնական և իրավական, առաջինը որպես աստվածադիր, մյուսը՝ մարդու սահմանած օրինականության խախտում: Ընդունելով, որ մեղքն իրավական իմաստով միաժամանակ մեղք է կրոն. իմաստով (հակառակ իմաստով՝ ոչ միշտ) Մ. Գ., համապատասխանաբար, նախատեսում է երկու բնույթի պատիժ՝ հոգևոր-եկեղեց. և մարմնական: Առաջինը նշանակել են միայն եկեղեց., երկրորդը՝ աշխարհիկ դատարանները: Մ. Գ. ընդունել է հետևյալ պատիժները՝ հոգևոր-եկեղեց. (բանադրանք, նզովք, ապաշխարություն՝ իր տեսակներով, աստիճանազրկում, պաշտոնազրկում), մարմնական-նյութական [մահապատիժ, մարմն. պատիժներ (ծեծ, անդամահատում), ազատությունը զրկող կամ սահմանա-

փակող, գույքային-դրամական]: Մ. Գ. ընդունել է հանցանքի ու պատժի համամասնության սկզբունքը: Դատաստանագիրքն ուշագրավ դրույթներ է արտահայտում նաև ամուսիններ. անձն. և գույքային հարաբերությունների կարգավորման բնագավառում: Ըստ Դատաստանագրքի՝ հպատակ մահմեդականը դրվում է հպատակ հային հավասար վիճակի մեջ, օրենսգրքում չկա մահմեդականի նկատմամբ կրոն. անհանդուրժողականություն և իրավական խտրականություն, չի ոտնահարվում նրա մարդկային արժանապատվությունը, մահմեդականը չի վճարում լրացուցիչ հարկ ու տուրք, նրա անձը, կյանքը, գույքը պաշտպանվում են օրենքով: Դրանով Մ. Գ. կրոնագաղափար. հակառակորդներին հակադրել է կրոն. հանդուրժողականություն (ինչն առկա է նաև նրա դավան. գործերում) և վսեմ գաղափարաբանություն, զինական թշնամիների իրավաքաղ. խտրական համակարգին՝ անխտրական համակեցության լայնախոհ, մարդամեծար ծրագիր:

«Գիրք Դատաստանի»-ն բացառիկ կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի ներքին կյանքին վերաբերող տեղեկությունների առումով: Այն հայկ. իրավաքաղ. և ընդհանրապես միջնադարի համաշխ. իրավական մտքի խոշորագույն հուշարձաններից է, ամփոփում է ժամանակի համար շատ առաջավոր դրույթներ, որոնք այժմեական են: Օր., Մ. Գ. գտնում է, որ պատիժը պետք է ունենա ոչ թե տանջանք պատճառելու և վրեժ լուծելու, այլ խրատելու, ուղղելու-դաստիարակելու նպատակ: Այս իմաստով ևս Մ. Գ. միջնադարյան հումանիզմի ներկայացուցիչներից է:

«Գիրք Դատաստանի»-ն բուն Հայաստանից բացի կիրառվել է նաև Կիլիկյան Հայաստանում և հայ գաղթավայրերում՝ Լեհաստանում (լատ. խմբագրությունը կրճատված, տեղի և պայմանների համեմատ փոփոխված հաստատվել է լեհ. սեյմում, 1519-ին, Լեհահայոց Դատաստանագիրք), Աստրախանում, Վրաստանում ևն: Կիրառվել է նաև XX դ., Հնդկաստանի և Սուդանի հայկ. գաղթավայրերում: Թարգմանվել է լատ. (հրտ. 1862), լեհ. (1843, 1869), ղփչաղերեն (հայատառ), վրաց. (որը Վախթանգ V-ի կազմած «Հավաք օրինաց»-ի մեջ կազմել է «Հայկ. իրավունք» բաժինը, 1928, 1963), ռուս. (առաջին անգամ հրտ. 1828-ին): Դատաստանագիրքն առաջին անգամ հայերեն հրատարակել է Վ. Բաստամյանցը, 1880-ին:

Խոսրով Թորոսյան

Մ. Գ-ի առակների ժողովածուն (190 առակ) առաջին անգամ հրատարակվել է 1790-ին, Վենետիկում: Եթե Դատաստանագրքում Մ. Գ. հաս. կյանքում տեղի ունեցած փոփոխություններն աշխատել է կարգավորել օրենսդր. միջոցներով, ապա առակներում նույն նպատակին ձգտել է հասնել խրատ. միջոցներով: Մ. Գ-ի առակների նյութը հիմնականում հաս. ու կենցաղ. խնդիրներն են: Այստեղ արտացոլված է դարաշրջանի հասարակության պատկերը բազմազան գծերով: Առակագիրը շոշափել է սոց. խնդիրներ, որով նրա ժողովածուն առանձին կարևորություն է ստանում ժամանակի սոց-պատմ. իրադրության պարզաբանման համար: Ըստ հեղինակի, ժողովուրդը պետք է հնազանդվի իշխողներին, իսկ վերջիններս պարտավոր են նրան պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգներից: Մ. Գ. ձգտել է մեղմել հասարակության տարբեր շերտերի հակամարտությունը, աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հակասությունները՝ ազգ. ուժերը համախմբելու և արտաքին թշնամու դեմ կենտրոնացնելու նպատակով, ինչով պայմանավորված էր նաև նրա Դատաստանագրքի երևան գալը: Առակներում ևս արծարծվել է կենտրոնացված ուժեղ պետականության գաղափարը: Մ. Գ-ի առակները թարգմանվել են ֆրանս. և ռուս.:

Մ. Գ-ի «Յայտարարութիւն»-ը («Արարատ», 1900, էջ 497–504, 162–568, 1901, էջ 55–61, 121–127), որը հայագիտության մեջ հայտնի է նաև «Գծագրութիւն... յաղագս Վրաց» և «Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ» անուններով, հեղինակի կարևոր դավան. երկասիրությունն է: Այն վրացի մատենագիր Արսեն Վաչեսձեի «Դոգմատիկոն»-ի «Երեսուն գլուխ հայոց հերձվածք» գլխում հայերին ներկայացված մեղադրանքների պատասխանն է: Թղթի նպատակն է ներկայացնել հայոց դավանանքն ու ծիսակարգը, բացատրել դրանց յուրահատկությունները և ցույց տալ, որ հայերը, ինչպես և հույներն ու վրացիները, հերձվածողներ չեն: Երկն աչքի է ընկնում ազգամիջյան համերաշխության և կրոն. հանդուրժողականության ոգով և, այդ առումով, չահեկանորեն տարբերվում նույն ժամանակի հույն և վրացի հեղինակների՝ հայերին և Հայ առաքելական եկեղեցուն ուղղված հայհոյախառն գրություններից: Մ. Գ. դեմ է դավան. տարբերությունները ժո-

ղովուրդների հարաբերությունների լարման առիթ դարձնելուն և, պաշտպանելով Հայ եկեղեցու ուղղափառությունը, հերձված չի համարում երկաբնակությունը (տես *Քաղկեդոնականություն*) և կոչ է անում մյուս ազգերի հոգևորականներին վարվել նույն կերպ՝ «թէև ոչ է միաբանելոյ հնար, այլ հնար է զհայհոյութիւնն բառնալ»: Եկեղեցիների միության անհնարինությունը չի կարող ու չպետք է վերածվի ժողովուրդների թշնամության, և եթե չեն կարող միաբանվել հինգ ազգերը (հայերը, հռոմեացիները, հույները, ասորիները, վրացիները), «բայց կարող են թշնամիք միմեանց չլինել, զխաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ»: Ըստ Մ. Գ-ի՝ ազգերը պետք է հարգեն իրար և միմյանց «կարգերը», թողնեն, որ յուրաքանչյուր ազգ ապրի այն «կարգով», որ ընտրել է ինքը:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.5, 3-րդ պատկերը:

Երկ. Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու, տես Ալիշան Ղ., Հայապատում, մաս 2, Վնտ., 1901: Առանձին: Տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը Էմ. Պիվազյանի, Ե., 1951: Գիրք Դատաստանի, աշխատասիր. Խ. Թորոսյանի, Ե., 1975: Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, աշխատասիր. Պ. Մուրադյանի, «Գանձասար», 6, 1996:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Մելիքսեթ-Բեկ Լ., Մխիթար Գոշի անտիպ երկերից, «Էջմիածին», 1959, № 12: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Մուրադյան Պ., Դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, «Գանձասար», 4, 1993: *Армянский Судебник Мхитара Гоша (пер. Паповяна А. А. с древнеармянского, ред., вступительная статья и примечания Арутюняна Б. М.), Е., 1954; Орбели И., Басни средневековой Армении, Избр. труды, т. 1, М., 1968;* Karst J., Grundriss der Geschichte des armenischen Rechtes “Zeitschrift fur Vergleichende Rechtswissenschaft”, 1906, Bd. 19.

ՄԽԻԹԱՐ ՍԱՄՆԵՑԻ, Կերմանեցի [մոտ 1260, գ. Կերմանց (Ապահունիք գավառ) – 1337, Մեծոփավանք], մատենագիր, մեկնիչ, մանկավարժ, գրիչ: Սովորել է Հայրենի գյուղում, ապա՝ *Մեծոփավանքում*, որտեղ ձեռնադրվել է քահանա: 1282–85-ին ուսումը շարունակել է *Գլաձորի համալսարանում*, աշակերտել *Ներսես Մշեցուն* և *Եսայի Նչեցուն*, վերջինից ստացել վարդապետ. դավազան: Վերադառնալով հայրենի գավառ՝ որոշ ժամանակ ծավալել է քարոզչ. գործունեություն, ապա հաստատվել Մեծոփավանքում, մինչև իր մահը ղեկավարել վանքի դպրոցը, ծավալել քարոզչ., գիտ. բեղմնավոր գործունեություն, պայքարել *ունիթորության* դեմ: Զբաղվել է նաև գրչությամբ ու մանրանկարչությամբ՝ ստացվածքը բաժանելով աղքատներին և կարոտյալներին: Դեռևս կենդանության օրոք մեծարվել է «երիցս երանյալ սուրբ հայր», «փիլիսոփա», «բանահյուս», «աստվածաշնորհ և բանիբուն վարդապետ», «քաջ հռետոր Հայոց», «տիեզերալույս վարդապետ» պատվանուններով:

Մ. Ս. իր երկերը գրել է Մեծոփավանքում: Գլխ. աշխատությունը ճառերի ժողովածուն է (1321), որտեղ արծարծել է աստվածաբան-դավան. խնդիրներ, պաշտպանել Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու ուղղափառ դավանանքը՝ ընդդեմ ունիթորների քայքայիչ քարոզչության: Կաթոլիկ եկեղեցու և ունիթորների դեմ Հայ եկեղեցու գաղ. պայքարին են առնչվում նաև Մ. Ս-ու «Թուղթը», որը նույն նպատակով Եսայի Նչեցու գրած շրջաբերականի արձագանքն է, և *Լևոնի տոմարի* դեմ գրած հակաճառ. գործը: Մ. Ս. ունիթորներին համարել է «սուտ առաքեալք և նենգութեան մշակք», Աստվածաշնչից բերված համապատասխան վկայություններով ցույց է տվել, որ քրիստոնյաները միմյանց նախատելու «հրաման» չունեն, և որ դա նույնիսկ արգելվում է «կանոնական հրամաններով»: Քննադատել է հատկապես հայ ունիթորներին, որոնք, հետևելով «ֆռանգ վարդապետներին», հայհոյում են հայոց ավանդությունները, Հայ եկեղեցու դավանանքն ու ծեսերը: Մ. Ս. ունիթորությունը համարել է ազգի ուծացմանը նպաստող երևույթ՝ ուղղված ոչ միայն հայոց դավանանքի, այլև՝ ազգ. ավանդների և հաս. կարգերի դեմ: Մ. Ս. հեղինակել է նաև Հովհաննես առաքյալի Կաթողիկե երեք թղթերի, ինչպես նաև առաքյալի մահվանը նվիրված («Հանգիստ երանելւոյն Յովհաննու») մեկնություններ:

Մ. Ս-ուց մեզ է հասել տասը ձեռագիր (հինգը՝ ամբողջական, հինգը՝ մասնակի՝ համառոտագրված կամ այլ տեքստերի կցված), որոնցից չորսը պահվում է Մատենադարանում (ձեռ. №№ 193, 952, 1180, 3606), երկուսը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում են: Ճառերի ժողովածուն ամերիկացի հայագետ Փ. Քաուլի աշխատասիրու-

թյամբ հրատարակվել է 1993-ին (Mxitar Sasnec'is Theological discourses):

Գրկ. Հովսեփյան Գ., Մխիթար Սասնեցի, «Ա-բարատ», 1899, № 3–4: Խաչերյան Լ., Հայագիր դպրության ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները և համալսարանները միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում (V–XVI դդ.), Լիսաբոն, 1998:

Բաբկեն Բոզիկյան

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ (7.2.1676, Սեբաստիա – 27.4.1749, Վենետիկ, ամփոփված է Ս. Ղազար կղզում), գիտամշակութային, եկեղեցական, հասարակական գործիչ, *Մխիթարյան միաբանության* հիմնադիրը: Որդին Պետրոսի և Շահրիստանի, ավազակի անունը՝ Մանուկ: Նախն. կրթությունն ստացել է Սեբաստիայի Ս. Նշան վանքում (1685–91), ապա՝ Էջմիածնի, Սևանի, Կարինի վանքերում (1691–92): 1695-ին մեկնել է Հալեպ, ծանոթացել լատին կրոնավորների հետ: 1691-ին ձեռնադրվել է սարկավագ, 1696-ին՝ կուսակրոն քահանա, 1699-ին՝ վարդապետ: Քսան տարեկանում հղացել է հոգևոր նոր միաբանություն հիմնելու գաղափարը. նպատակն էր աջակցել ազգի հոգևոր և իմացական վերելքին, ծավալել ուսումնակրթ., գիտ. և մշակութ. գործունեություն: Ստեղծվելիք կրոն. միաբանության անդամները սոսկ ճգնավոր աբեղաներ չպետք է լինեին, այլ՝ ազգի լուսավորության ու զարթոնքի գործուն առաջնորդներ: 1697-ին Կ. Պոլսում իր մտադրությունը հայտնել է *Խաչատուր Էրզրումեցուն*՝ արժանանալով նրա քաջալերանքին: 1700-ին Կ. Պոլսում, դավան. հակամարտությունների այդ կենտրոնում, Մ. Ս. իր շուրջն է համախմբել 8 աշակերտի և գաղտնի կաթոլիկություն քարոզել նրանց, հիմնել իր վանական միաբանությունը և հրատարակել կրոն. բնույթի 4 գիրք՝ Թովմա Գեմբացու «Յաղագս համահետեւմանն Քրիստոսի» (1700–01), Խաչատուր Էրզրումեցու «Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցն Սողոմոնի» (1700–01), Պետրոս Թիֆլիսեցու թարգմանությունները լատ-ից՝ «Գիրք մեկնութեան յայտնութեանն սրբոյ Յօհաննու աւետարանչի» (1700–01) և «Գիրք մտածական աղօթից» (1701): Դավան. հալածանքներից խույս տալու համար նա երկու տարի անց միաբանությունը տեղափոխել է Եվրոպա՝ Վենետիկի հասարակապետության տիրապետության ներքո գտնվող Մեթոն բերդաքաղաքը: Կրելով բազում դժվարություններ՝ Մեթոնում կառուցել է առաջին հայկ. եկեղեցին: 1712-ին Հռոմի պապը վավերացրել է միաբանության սահմանադրությունը, որի հիմքում դրվել են Բենեդիկտոսի կանոնները, իսկ Մ. Ս-ուն շնորհել է «աբբահայր» տիտղոս: 1715-ին, թուրք. հարձակման լուրն առնելով, չնայած 14 տարիների անդուլ աշխատանքին, թողել է Մեթոնը և ապաստանել Վենետիկում: 1717-ին Ծերակույտի հրովարտակով Մխիթարյան միաբանությունը շնորհվել է քաղաքամերձ Ս. Ղազար կղզին: 1717-ի սեպտեմբերի 8-ին Մ. Ս. իր 16 աշակերտներով ոտք է դրել բորոտների այդ բուժարանը, որը շուտով դարձել է հայաշունչ մենաստան: Այստեղ նրա բազմարդյուն գործունեությունը տվել է իր պտուղները: Մեկնող., աստվածաբան., լեզվաբան., թարգման. գործունեությանը զուգընթաց՝ նա ձեռնհասությամբ վարել է նորածիլ միաբանության վարչ., ուս., գրահրատարակչ., տնտ. վանական աշխատանքները:



Մխիթար Սեբաստացի

Մ. Ս. երբեք չի սահմանափակվել միայն հոգևոր-կրոն. խնդիրներով, ծավալել է իր նախաղեպը չունեցող գործունեություն, որի արդյունքում կրոն. միաբանությունը աստիճանաբար վերածվել է նաև գիտամշակութ. հաստատության: Ս. Ղազարում կառուցել է եկեղեցի, բացել դպրոց, որին ինքը «Համալսարան» է կոչել: Ուս. ծրագրերի հիմքում դրել է աստվածաբանությունը, միաժամանակ աշակերտներին տվել բազմակողմանի կրթություն: Սկզբից ևեթ մերժել է օտարազգիների անդամակցությունը, միշտ վառ պահել սերը հայ ազգի նկատմամբ, ջանացել պատրաստել հայ ժողովրդի լայն խավերի շրջանում լուսավորություն տարածող միաբան գործիչներ: Մ. Ս. հիմնել է մատենադարան, դրել հայ հին ձեռագրերի հավաքման և ուսումնասիրման սկիզբը, կազմել դասագրքեր: Մ. Ս. հրատարակել է շուրջ 50 հատոր գիրք (14-ը՝ ինքնագիր), որոնց մեծ մասը կոչված էր քարոզելու քրիստ. վարդապետությունը: Երևույթ էր նրա հրատարակած Աստվա-

ծաչունչը (1733)՝ նրբաճաշակ փորագրություններով, ձևավոր տառերով, գեղեցիկ լուսանցազարդերով: Մ. Ս. այն բաղադատել է յոթ այլալեզու թարգմանությունների հետ՝ օգտագործելով Սուրբ Գրքի հայերեն ձեռագիր օրինակները: Ուծացման վտանգը կանխելու նպատակով Թուրքիայի օտարախոս ազգակիցների համար հայատառ թուրքերենով լույս է ընծայել «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» (1727) դասագիրքը, որի հավելվածը պարունակում է հայ-թուրք. բառարան: Մ. Ս. ջանք չի խնայել կրոն. կրթությունը ժողովրդականացնելու ուղղությամբ. խաղի միջոցով կրոն սովորեցնելու նպատակով, դարձյալ աշխարհաբարով, հրատարակել է երեխաների համար նախատեսված «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» (1727) աշխատությունը: Տպագրելով «Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազեան սեռի» (1730) գործը՝ նա իր առջև խնդիր է դրել ձերբազատել հայերենը լատինաբանության խորթ երևույթներից:

Մեկնող. և ջատագով. բնույթի, ինչպես և աստվածաբան. հարցերի վերլուծմամբ առանձնանում է հատկապես Մ. Ս-ու «Մեկնութիւն սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի» (1737): Մեկնությունը գրելիս ուղենիշ է ընդունել Թովմա Աքվինացու երկերը, եվրոպ. մի շարք մեկնիչների աշխատություններ: Այստեղից պարզորոշ երևում է, որ կաթոլիկ դավանանքը հեղինակի տեսական խոր համոզումների արտահայտությունն է և չի կրել որևէ «քաղաքագիտական հանգամանք» (Հ. Աճառյան) կամ չի ծառայել իբրև «դիվանագիտական միջոց» (Ա. Զոպանյան): Սակայն նրան քննադատել են և՛ առաքելական, և՛ կաթոլիկ հայերը: Առաջինները մեղադրել են Հռոմի եկեղեցու գիրկն ընկնելու և վերջինիս գերակայությունն ընդունելու մեջ, երկրորդները նրան ներկայացրել իբրև ըմբոստ ու ինքնիշխան՝ Հռոմի եկեղեց. իշխանությունից անկախ: Նման ամբաստանությունների գլխ. պատճառը թերևս այն էր, որ ընդունելով կաթոլիկ դավանանքը և անվերապահորեն նաև Հռոմի աթոռի գերակայությունը՝ Մ. Ս. մնացել է ճշմարիտ հայասեր ու հայրենասեր, հավատարիմ ազգային ծեսերին ու արարողակարգին, հետևողական իր հիմնած միաբանության հայադրոշմ նկարագիրը պահպանելու խնդրում: Ըստ նրա՝ ազգը և կրոնը տարբեր հասկացություններ են, ուստի և հարկ չկա մեկի համար մյուսը զոհել: Քարոզներում նա շարունակ եղբայրության ու խաղաղության կոչ է արել, մերժել կրոն. երկպառակությունը հայոց մեջ, իր հրատարակած գրքերի տիտղոսաթերթերի վրա միշտ նշել տվյալ ժամանակի Ամենայն հայոց կաթողիկոսի անունը, կտրականապես դեմ եղել կաթոլիկ հայերի առանձին կաթողիկոսություն ունենալուն:

Հայագիտության մեջ խոշոր ներդրում է Մ. Ս-ու՝ ժամանակի ձեռագիր ու տպագիր բառագանձն ընդգրկող «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, 1749, 1769) գործը, որի վրա նա աշխատել է 1727-ից, ընդհատումներով շարունակել մինչև կյանքի վերջը՝ այդպես էլ չտեսնելով իր Բառգրքի լույս աշխարհ գալը: Խորհրդանշական է աշխատության առաջաբանի վերջին հատվածը, որը մահամերձ հեղինակի ընծայականն է մայր ժողովրդին. «Խոնարհամիտ սրտիւ ընծայեմ քեզ զպտուղ բազմամեայ աշխատութեանս՝ նուէր սիրոյ. զի ցանկալի է ինձ յինէն առնուլ և քեզ տալ» («Բան առ ընթերցօղս», էջ 19): Դարագլուխ կազմող կոթողային այս աշխատությունն աչքի է ընկնում գիտ. բարեխղճությամբ, հայերենի լեզվական իրողությունները քննելու խորիմացությամբ, նրա նախկին անաղարտությունը վերականգնելու հմտությամբ. այն նշանակալի երևույթ էր ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության մեջ:

Մ. Ս. իր կազմակերպ. ջանքերի շնորհիվ կարողացել է շարունակելի դարձնել միաբանությունը: Պատահական չէ, որ դեռ կենդանության օրոք նրան կնքել են «Երկրորդ Լուսավորիչ ազգիս», «Երկրորդ Մեսրոպ» և նմանօրինակ այլ անուններով: Մահվանից հետո միաբանությունը կոչել են նրա անունով, սկսած գործը շարունակել աշակերտները: Նրանք ընդարձակել ու խորացրել են իրենց ուսուցչապետի ազգօգուտ ծրագիրը՝ երեք դար շարունակ հաստատ պահելով «Մխիթարի տան» ավանդույթները:

Գրկ. Ագոնց Ս., Պատմութիւն կենաց և վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ ռաբունապետի եւ Աբբայի, Վնտ., 1810: Սարգիսյան Բ., Երկհարիւրամեայ գրականական գործունեութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905: Թորոսյան Հ., Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Վնտ., 1932: Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, 1973, էջ 482–509: Ճեմճեմյան Ս., Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւ-

նը, Վնտ., 1980: Զ ո պ ա ն յ ա ն Ա., Երկեր, Ե., 1988, էջ 354-371:

Լևոն Լաճիկյան

ՄԽԻԹԱՐ ՏԱՇՐԱՑԻ, Մ խ ի թ ա ր Ս կ ևռ ա ց ի (մոտ 1200–1271), աստվածաբան, վարդապետ: Հայ մատենագրությունը նրա կյանքի և եկեղեց. գործունեության մասին շատ քիչ բան է պահպանել: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է, որ Մ. Տ. ընդգրկված է եղել Կիլիկիայից Ոսկե Հորդայի Բաթու և Մանգու խանների մոտ ուղարկված դեսպանագնացությունների կազմում: Մ. Տ-ու գրչին են պատկանում սակավաթիվ գործեր, որոնց մեջ առանձնանում է «Յաղագս համապատուութեան երկոտասանից առաքելոց» երկը: Գրվել է Հայոց թագավոր Հեթում Ա-ի (1226–70) հրամանով ու Կաստաղոնի եպս. Հակոբի հորդորներով և ներկայացնում է հեղինակի հաշվետվությունը 1263-ին Աքքա կատարած դիվանագիտ. այցի մասին: Մ. Տ., որպես Հեթում Ա-ի և կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221–67) նվիրակ, այցելել է լատ. Արևելքի նշանավոր կենտրոններից մեկը՝ Աքքա, հանդիպելու Հռոմի Ուրբանոս IV պապի լեգատին (դեսպան)՝ Գուլիելմոս արքեպիսկոպոսին: Հռոմի եկեղեցին *Հռոմկլայի կաթողիկոսարանից* պահանջել է անվերապահորեն ենթարկվել պապական աթոռին՝ պատճառաբանելով, թե Պետրոսը առաքյալներից գլխավորն է և եկեղեցու վեմը, հետևաբար բոլոր պատրիարքներն ու կաթողիկոսները պետք է հնազանդվեն Պետրոսի աթոռին, այն է՝ Հռոմի եկեղեցուն, որպես գլխավորի: Մ. Տ., իր երկում հետևելով *Վարդան Արևելցու* մշակած եկեղեցաքաղ. գծին, ապացուցել է այդ պահանջի անարդարացիությունը և ավետարանական խոսքերի աղավաղման, սեփական իշխանատենչության տեսանկյունից դրանց մեկնաբանման միտումը: Սեփական մոլորությունը հիմնավորելու համար անթույլատրելի է ախտակից դարձնել սրբին և մարմնական գերագահությունը տարածել նաև հոգևորի և աստվածային վրա, եզրակացրել է հեղինակը: Հայ եկեղեցու անկախ նվիրապետական կառույցը լատին կղերի ոտնձգություններից պաշտպանելու համար հայ աստվածաբանը հիմնվել է միայն Ս. Գրքի վկայությունների վրա: Հիսուսն առաքյալների մեջ գահերի տարբերություն չի դրել. բոլոր տասներկու առաքյալներին տվել է նույն իշխանությունը և հավասարությունը: Հետևաբար, Հռոմի եկեղեցին ոչ մի իշխանություն ունենալ չի կարող մնացած աթոռների, այդ թվում՝ Հայ եկեղեցու վրա: Մ. Տ. ցույց է տվել, որ Հայ եկեղեցին նույնպիսի հաջորդ է Տիեզերական եկեղեցու առաքելական ավանդույթի, ինչպիսին ներկայացնում են Երուսաղեմի, Հռոմի, Կոստանդնուպոլսի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքական աթոռները: Պաշտպանելով Հայ եկեղեցու շահերը՝ Հայ աստվածաբանը, միաժամանակ, իր երկում մեծագույն հարգանքով է խոսել քույր եկեղեցիների և մյուս ազգերի մասին՝ կոչ անելով Հռոմի աթոռին նույնպիսի վերաբերմունք դրսևորել:

Հայտնի է Մ. Տ-ու երկի մոտ 20 ընդօրինակություն, որոնք պահպանվում են Երևանում, Փարիզում և Երուսաղեմում: Դրանց մեծագույն մասը ներկայացնում է «Յաղագս համապատուութեան երկոտասանից առաքելոց» երկի բնագրի համառոտ խմբագրությունը: Երկը, հավանաբար, ստեղծվել է XIV դ. վերջին: Դրա ընդարձակ, այս դեպքում՝ իսկագիր ընդօրինակության հնագույն ձեռագիրը պահպանվում է Փարիզի Ազգ. գրադարանի հայկ. ձեռագրերի պահոցում և կրում հերթական՝ 42 համարը: Մատյանն ընդօրինակված է 1274-ին, ստացողն է Կեռան թագուհին:

Առավել ամբողջական և ընդգրկուն են երկի երուսաղեմյան երեք հրատարակությունները (1857, 1860, 1865): Այս ձեռագրերից է երկը Ֆրանս. թարգմանել և մասնակիորեն հրատարակել հայագետ Էդուարդ Դյուլորիեն (1869):

Գրկ. Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Հայոց պատմություն, Ե., 1982: Պ ո ղ ա ր յ ա ն Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971: Բ ո ղ ո յ ա ն Ա., Մխիթար վարդապետ Տաշրացին (Սկեւռացին)՝ Հայոց եկեղեցու նուիրապետական կառույցի պաշտպան, «Գանձասար», 5, 1994:

Ազատ Բոզոյան

ՄԽԻԹԱՐՅԱՆ Աբել (1804–1873, Վաղարշապատ), արքեպիսկոպոս, Տրապիզոնի հայոց հոգևոր առաջնորդ, հայագետ-պատմաբան: Ուսանել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, դարձել Մայր աթոռի միաբանության անդամ, վարել հոգևոր ու կրթ. պաշտոններ (նաև Կ. Պոլսում): Հիմնադրել է «Թանգարան Հայկազյան» ընկերությունը, եղել «*Արարատ*»-ի առաջին խմբագիրը, աշխատակցել «Կռունկ Հայոց աշխարհին», «Բանասեր» և այլ պարբերների: Առանձին գրքերով հրատարակվել են «Ճանապարհորդութիւն յԱնի» (1855), «Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ»

(1856), «Վէպ գաղթականութեան Հայոց Տրապիզոնու» (1857), «Անուշաւան ի գերեւարս» (1860), «Ճանապարհորդութիւն ի Դավրէժ» (1861), «Հայոց ազգի քաղաքական վիճակը միջին դարերէն» (1862), «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ...» (1874), «Վաղարշապատ քաղաքամայր Հայաստանի...» (1874), «Կաթուղիկէ Մայր եկեղեցի Վաղարշապատայ...» (1875) երկերը:

Արմեն Տեր-Ստեփանյան

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, Մխիթարյաններ, հայ կաթոլիկական վանական և մշակութային հաստատություն: Հիմնադրել է *Մխիթար Սեբաստացին* 1701-ի սեպտ. 8-ին, Կ. Պոլսում՝ հոգևոր, ուսումնակրթ., գիտ. և մշակութ. գործունեություն ծավալելու նպատակով: Միաբանությունը դրվել է Տիրամոր մանավոր պաշտպանության ներքո՝ «Որդեգիր Կուսին, Վարդապետ Ապաշխարության» նշանաբանով, որի սկզբնատառերն այսօր էլ գրված են Մ. մ-յան զինանշանի վրա: 1706-ին միաբանությունը տեղափոխվել է վենետիկապատկան Մորեա թերակղզու (Հունաստան) Հվարմ-ում գտնվող Մեթոն բերդավան, 1717-ից հաստատվել Վենետիկի մոտ գտնվող Ս. Ղազար կղզում: 1712-ին Վատիկանը Մխիթար Սեբաստացուն ճանաչել է միաբանության առաջնորդ, նրան շնորհել աբբահոր կոչում:

XIX դ. սկզբին, երբ Ֆրանսիան վերացրել էր իր տիրապետության ներքո գտնվող բոլոր կրոն. միաբանությունները, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I Բոնապարտը 1810-ի օգոստ. 17-ի հրովարտակով Ս. Ղազարի հայկ. միաբանությունը ճանաչել է գիտ. հաստատություն՝ «Հայկական ակադեմիա» պատվավոր տիտղոսով, և պահպանել այն:

Իր ստեղծման օրվանից Մ. մ. ծավալել է հայագիտ-բանասիր. և մշակութ. բուռն գործունեություն: XVIII դ. 1-ին կեսին Մ. մ-յան հայագիտ. գործունեության նշանակալից երևույթը Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, 1749, 1769) բացատր. բառարանի հրատարակումն էր: Վենետիկի Մխիթարյանների տպարանը հիմնվել է 1789-ին: Առաջին տպարանապետն է եղել Հովհ. Զոհրապը: Մխիթարյանների հրատարակչ. գործունեությունը սերտորեն առնչվել է իրենց տպարանի աշխատանքի հետ: Առաջին տարում տպարանը լույս է ընծայել Գրիգոր Նարեկացու երկերը՝ «Գիրք աղօթից» («Մատեան ողբերգութեան») և «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի», ապա՝ Մխիթար Գոշի առակները («Առակք և ոտանաւորք խրատական», 1790), Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը (1793), Մովսես Խորենացուն վերագրվող «Գիրք պիտոյից»-ը (1796) ևն: Տպագրվել են նաև միաբանների գործերից: 1800-ին այդտեղ տպագրվել է Մխիթարյանների առաջին (հայոց երկրորդ) պարբ-ը՝ «Տարեգրութիւն»-ը: Վենետիկի Մխիթարյանների կարևորագույն հրատարակություններից է Աստվածաշնչի երկրորդ (1805, առաջինը՝ 1733) հրատարակությունը՝ Հովհ. Զոհրապի աշխատասիրությամբ: XVIII դ. 2-րդ կեսից Մ. մ. վերելք է ապրել հայ մշակութ. և գիտ. առաջնակարգ գործիչներ Ս. Ագոնցի (1740–1824), Մ. *Զամչյանի*, Գ. *Ավետիքյանի*, Մ. *Ավգերյանի*, Հ. Ավգերյանի (1774–1854), Ղ. Ինճիճյանի (1758–1833), Մ. Ջախջախյանի (1770–1835), Ե. Թովմաճանի (1777–1848), Ա. Բագրատունու (1790–1866), Է. Հյուրմյուզյանի (1799–1876), Ղ. *Ալիշանի*, Գ. Զարբհանալյանի (1827–1901) և այլոց գործունեության շնորհիվ: Սկսվել է «Մատենագիրք նախնեաց» և նույնի համառոտ հանրամատչելի բնույթ կրող «Ընտիր մատենագիրք», ինչպես նաև «*Սոփերք հայկականք*» շարքերի հրատարակությունը: Բնագրագիտ. ճշգրտումներով, առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվել են Գրիգոր Նարեկացու «Մատենագրութիւնք» (1827), Բարսեղ Կեսարացու «Ճառք...» (1830), Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» (1832), Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» (1832), Դավիթ Անհաղթի «Մատենագրութիւնք» (1833), Եղիշեի «Մատենագրութիւնք» (1838), Մովսես Խորենացու «Մատենագրութիւնք» (1843, 2-րդ հրտ. 1865) և համաշխ. ու հայ դասականների այլ գործեր: Մխիթարյանները հանդես են եկել նաև ինքնուրույն հայագիտ., պատմաբանասիր., աշխարհագր., բառարանագիտ., աստվածաբան. և այլ բնույթի աշխատություններով:

XIX դ. բեղմնավոր էր նաև Մ. մ-յան գրական-գեղ. գործունեությունը, որի հիմքը դրել էր Մխիթար Սեբաստացին իր «Տաղարան» (1727) բանաստեղծությունների ժողովածուով, որը կլասիցիզմի առաջին ամբողջական դրսևորումն է հայ գեղ. գրականության մեջ: Հայ կլասիցիզմը հետագա զարգացում է ստացել

Ղ. Ինճիճյանի, Մ. Ջախջախյանի, Է. Հյուրմյուզյանի, Գ. Ավետիքյանի ստեղծագործություններում և թարգմանություններում («Տաղք մխիթարեան վարդապետաց», հ. 1–3, 1852–54), իսկ Ա. Բագրատունու «Հայկ Դիւցազն»-ով (1858) հասել է իր գագաթնակետին: XIX դ. 2-րդ կեսից կլասիցիզմին փոխարինել է ռոմանտիզմը, որի հիմնադիրը Ղ. Ալիշանն է:

Մխիթար Սեբաստացու ջանքերով, նրա անձն. գրադարանի հիմքի վրա Ս. Ղազար կղզում հիմնադրվել է Վենետիկի մատենադարանը, որը սկզբ. շրջանում համալրվել է նվիրատվություններով, հետագայում՝ նաև գնումներով: XIX դ. կեսին կառուցվել է գրադարանի նոր շենք՝ երկու մասնագիտացված գրապահոցով, որտեղ հավաքվել են ձեռագիր մատյաններ, պարբ-ներ ու տպագիր հրատարակություններ՝ հայերեն և այլ լեզուներով: Ներկայիս տպագիր ֆոնդը շուրջ 100 հզ. միավոր է (հազվագյուտ հրատարակություններ հայերեն և այլ լեզուներով), ձեռագիր ֆոնդը՝ 4 հզ.:

1772-ին, Ս. Մելգոնյանի (1717–99) աբբահայրության ժամանակ, երբ Մ. մ-յան անդամների միջև անհամաձայնություն և վեճ է ծագել կանոնադրության փոփոխության կապակցությամբ, միաբանների մի խումբ՝ Ա. Բաբիկյանի (1738–1825) գլխավորությամբ, թողնելով Վենետիկը, 1773-ին հաստատվել է Տրիեստում (Ավստրիա), 1810-ից՝ Վիեննայում: 1811-ի հունիսի 8-ին ավստրիական կառավարությունը պաշտոնապես ճանաչել է նրանց գոյությունը: Մ. մ-յան Վիեննայի ճյուղավորումը կարճ ժամանակում կրկնապատկել է իր անդամների թիվը: 1874-ին միաբանության տարածքում կառուցվել է եկեղեցի: Ժամանակի ընթացքում միաբանությունում ստեղծվել է մատենադարան, որտեղ պահվում են շուրջ 2600 հայերեն ձեռագրեր, ավելի քան 120 հզ. գիրք՝ հայերեն և օտար լեզուներով, հայ պարբ. մամուլի հարուստ հավաքածու: Միաբանությունն ունի նաև թանգարան, որի բազմաթիվ ցուցանմուշներից հատկապես հայտնի են հայկ. դրամների, եկեղեց. զգեստների և սպասքի հավաքածուները: 1811–12-ին Վիեննայի Մ. մ. հիմնել է տպարան (գրքեր է տպագրել 50 լեզուներով) և ծավալել գրահրատարակչ. լայն գործունեություն: Վիեննայի Մ. մ. իր ծաղկուն շրջանն է ապրել XIX դ. 2-րդ կեսից՝ նշանավոր գիտնական հայագետներ Վ. Զալբիյանի (1803–34), Մ. Գարագաշյանի (1818–1908), Հ. *Գաթըրճյանի*, Ղ. Հովնանյանի (1817–97), Կ. Սիպիլյանի (1824–78), Ա. Այտընյանի (1825–1902) և այլոց գործունեության շնորհիվ, որոնք զարգացրել են հայ քննական լեզվաբանությունը, պատմագրությունը, դրամագիտությունը, ձեռագրագիտությունը ևն: Հիմնադրման սկզբից Վիեննայի Մխիթարյանների գործունեության մեջ գերակշռել են հայագիտ-բանասիր., լեզվաբ-թարգմ. աշխատությունները, հրատարակվել են կրոնասաստվածաբան. բնույթի գործեր՝ «Խորհրդատետր սրբոյ պատարագին...» («Պատարագամատույց», 1803 ևն): Հիշատակության արժանի են Պ. Հովնանյանի «Մարդկային լեզուին սկզբան» (1857), Հ. Գաթըրճյանի «Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս» (հ. 1, 2, 1849, 1852), Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1866), Ս. Տերվիշյանի «Հնդեւրոպական նախալեզու» (1885) և այլ աշխատությունները: Ստեղծվել են գեղ. երկեր, կատարվել թարգմանություններ:

XIX դ. վերջից – XX դ. սկզբից Մ. մ-յան երկու ճյուղավորումները սերտորեն համագործակցում են միմյանց հետ և իրենց կարևոր նպաստը բերում հայ գիտությանն ու մշակույթին: XIX դ. վերջից իրենց գիտ., գրական, մշակութ. գործունեությամբ հայտնի են Գ. Գալեմքյարյանը (1862–1917), Բ. Սարգիսյանը (1852–1921), Հ. *Տաշյանը*, Ա. Ղազիկյանը (1870–1932), Ս. Էփրիկյանը (1873–1952), Վ. Հացունին (1870–1944), Բ. Զրաքյանը (1877–1970), Հ. Աստուրյանը (1880–1950), Մ. Պոտուրյանը (1881–1959), Ն. *Ակինյանը*, Վ. Հովհաննիսյանը (1894–1977), Հ. *Ոսկյանը* (1895–1968), Վ. Ինգլիզյանը (1897–1968), Մ. Ճանաչյանը (1908–74), Պ. Անանյանը (1920–98), Ս. Ճեմճեմյանը (1939–96), Օ. Սեքուլյանը (ծ. 1921), Լ. Զեքիյանը (ծ. 1943) և ուրիշներ:

Մխիթարյանները գործուն մասնակցություն են ունենում հայագիտ. միջազգ. գիտաժողովներին, սերտորեն համագործակցում Հայաստանի գիտնականների հետ: 1993-ից ՀՀ-ում գործում է «Հայաստանի Մխիթարյան կենտրոնը», որի նպատակն է օժանդակել Հայաստանի և սփյուռքի ազգ-մշակութ. և կրթ. կյանքին, ավելի սերտացնել հայրենիքի և սփյուռքի գիտնականների համագործակցությունը Ս. Ղազարի ակադեմիայի հետ: Կենտրոնը (2000-ից ղեկավարն է Սերոբ վրդ. Զամուրլյանը) կազմակերպում է դասախոսու-

թյուններ, հրատարակում գրքեր: *Հայ կաթողիկե եկեղեցու* Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմի առաջնորդն է Մխիթարյան հայր Ներսես արք. Տեր-Ներսիսյանը (նստավայրը՝ Գյումրիում):

Մ. մ., Վենետիկի և Վիեննայի պատմ. զույգ ճյուղավորումներով, երկարատև բանակցություններից և քննարկումներից հետո Վենետիկի Ս. Ղազար Մայրավանքում 2000-ի հուլիսի 10–21-ը կազմակերպել է միացյալ ընդհանուր արտակարգ ժողով, որին մասնակից երկու հաստատությունների բոլոր միաբանները որոշել են միավորվել՝ ստեղծելով Մխիթարյան միացյալ միաբանություն՝ մեկ կենտր. վարչությունով: Վենետիկի Ս. Ղազար Մայրավանքը Մխիթարյան միացյալ միաբանության գլխ. կենտրոնատեղին է, Վիեննայի վանքը՝ առաջին գլխ. մենաստանը, որը պետք է ունենա տեղական աբբահայր տիտղոսը կրող մի վանահայր:

Զույգ միաբանությունների բոլոր առաքելավայրերն ու կենտրոնները կառավարվելու են նորընտիր ընդհանրական աբբահոր և իր Միացյալ վարչ. խորհրդի կողմից: Ընդհանուր ժողովի հուլիսի 9-ի նիստում Եղիա ծ. վրդ. Քիլաղայանն ընտրվել է Մխիթարյան միացյալ միաբանության 15-րդ Ընդհանուր աբբահայր:

Մ. մ-յան գործունեության կարևոր ասպարեզներից է ուսումնակրթ. առաքելությունը: 1732-ին Ս. Ղազարի վանքին կից հիմնվել է ճեմարան (ակադեմիա), որը հետագայում դարձել է ճանաչված ուսումնագիտ. կենտրոն: Այստեղ հայոց լեզվին ու մշակույթին են ծանոթացել Եվրոպայի բազմաթիվ անվանի մտավորականներ՝ Բայրոնը, Բրեյնդը, Ստենդալը, Պետերմանը, Վ. Սկոտը և ուր.: Միաբանությունը 1834-ին վարժարան է հիմնել Պադուայում (Մուրատյան), 1836-ին՝ Վենետիկում (Ռափայելյան), որոնք 1870-ին միավորվել են և կոչվել Վենետիկի *Մուրատ-Ռափայելյան վարժարան*: Վենետիկի Մխիթարյանների տնօրինության տակ գործել է նաև Փարիզի Սամուել Մուրատ վարժարանը (1846–1988): Վիեննայի Մխիթարյանների դպրոցներից հնագույնը հիմնվել է 1774-ին, Տրիեստում: Վիեննայում գործում է Աստվածաբանական կղերանոց (ուսումնարան), որտեղ տարբեր երկրներից եկած ապագա Մխիթարյան վարդապետներ ուսումնասիրում են աստվածաբանություն, հայ ժողովրդի և եկեղեցու պատմություն, փիլիսոփայություն, հայ բանասիրություն և այլ առարկաներ:

XIX դ. Մ. մ. Կ. Պոլսում ունեցել է 6 նախակրթարան: Կ. Պոլսի Ֆրանցիսկյան վանքին կից Վիեննայի Մխիթարյանները 1830-ին հիմնել են դպրոց, որը 1857-ից տեղափոխվել է Բանկալթիի թաղամասը (Հայտնի է Մխիթարյան լիցեյ անունով): Դպրոցներ են հիմնվել Հունգարիայի հայ գաղթավայրերում՝ Եղիսաբեթուպոլսում (1746, ծրագիրն ու կանոնադրությունը 1790-ին կազմել է Մ. Զամչյանը), Վարատինում (1749), Սիբվիզում (1797), ինչպես նաև՝ Տրապիզոնում (1817), Ղարասուբազարում (1821), Ախալցխայում (1831), Սիմֆերոպոլում (1850), Քավթառլու գյուղում (1880, այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գ.), Պարտիզակում (1883), Սավորայում (1885), Նիկոմեդիայում (1887), Մուշում (1892), Մերդինում (1911), Խարբերդում (1912) և հայաբնակ այլ վայրերում: Մինչև առաջին համաշխ. պատերազմը Վիեննայի Մխիթարյաններն ունեցել են 26 դպրոց: 1918-ին Կ. Պոլսի Շիշլի թաղամասում հիմնվել է որբանոց-դպրոց, որը 1921-ին տեղափոխվել է Գատը գյուղ, 1922-ին՝ Իտալիայի Ֆիեսոլե գյուղ, ապա՝ Միլան: 1936-ին նոր դպրոցներ են հիմնվել Ալեքսանդրիայում, Հալեպում (վերջինս՝ լիցեյի ծրագրով): Բեյրութի Հազմիե արվարձանում Մխիթարյաններն ունեն երկրորդական մի վարժարան, 1972-ին բացվել է միաբանության Ռաուդայի (Լիբանանում) դպրեվանքը, 1956-ին՝ Բուենոս Այրեսի (վենետիկյան), 1979-ին՝ Լոս Անջելեսի (վիեննական) Մխիթարյան դպրոցները:

Մ. մ. հայ գիտամշակութ. կյանքում կարևոր ներդրումն է ունեցել իր պարբերական մամուլով: 1843-ից անընդմեջ Վենետիկի Մխիթարյանները հրատարակում են «*Բազմավեպ*» ամսագիրը, որը ներկայումս հրատարակվող հայ ամենահին պարբ-ն է: Վիեննայի Մխիթարյանները 1847–63-ին հրատարակել են «Եվրոպա» շաբաթաթերթը, 1887-ից՝ «*Հանդես ամսօրյա*» ամսագիրը: Մխիթարյանների հրատարակած պարբ-ներից առավել հայտնի են նաև՝ «Եղանակ բյուզանդյան» (1803–20), «Դիտակ բյուզանդյան» (1812–16), «Հայ ընտանիք» (1969-ից, դպրոց. պատկերազարդ ամսագիր, 1947–60-ին՝ «Մխիթարյան ընտանիք», 1960–62-ին՝ «Ընտանիք», 1963-ից՝ կրկին «Մխիթարյան ընտանիք») հանդեսները ևն:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.5, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Մխիթարեան յոբելեան 1701–1901, Վնտ., 1901: Սարգիսյան Բ., Երկհարիւրամյա գրականական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկո Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905: Ակինյան Ն., Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան միաբանութեան գրական գործունեութեան վրա, Վնն., 1912: Յարտըմյան Տ., Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին և հայագիտութեան, Լոս Անջելես, 1987: Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի, Վնն., 1972: Գրացուցակ Մխիթարեան տպարանին. 1700–1978, Վնտ., 1978: Apat M.K., Die Wiener Mechitaristen. Armenische Mönche in der Diaspora, Wien-Köln, 1990.

ՄԾՂՆԵՈՒԹՅՈՒՆ, քրիստոնեական *աղանդ.*: Ծագել է Միջագետքում, տարածվել Ասորիքում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Հայաստանում: Վարդապետության հիմքում ընկած են եղել I–III դդ. տարածված գնոստիկյան (տես *Գնոստիցիզմ*) գաղափարները: Անունը ծագել է ասորերեն mşlyn բառից (աղոթող ժողովուրդ): Հուն. աղբյուրներում աղանդի հետևորդները կոչվել են մեսալյաններ, նաև՝ եվքիտներ (աղոթողներ), որը մեսալյան բառի հուն. թարգմանությունն է: Մեսալյանները (մծղնեները) երբեք չեն եղել կազմակերպված աղանդ, չեն ունեցել նվիրապետ. կազմակերպություն, արտահայտել են քրիստոնեության մեջ արմատական խմբերի հույզերը: Նրանք հավատացած են եղել, որ մարդու հոգում ի ծնե չար դև է նստած, և ո՛չ մկրտությունը, ո՛չ էլ եկեղեց. որևէ խորհուրդ ի վիճակի չեն հեռացնել նրան: Միայն հոգևոր մաքրությունը՝ «կրակով մկրտությունը», կարող է մարդկանց ազատել *սատանայի* ուժից, իսկ մաքրման միակ միջոցը *աղոթքն* է, որը հաճածում, արտաքսում է դևին: Աղոթքն է իսկական կրոն. խորհուրդը, որի միջոցով մարդը ձերբազատվում է կրքերից, և *Սուրբ Հոգին* իջնում է նրա վրա:

Մ-յան գլխ. մեկնաբանը եղել է Մակարիոս Սիմեոնը կամ Կեղծ Մակարը (IV դ. վերջ – V դ. սկիզբ): Մակարիոս Սիմեոնը պայմանական անունն է այն հեղինակի, որի աշխատությունները բովանդակում են 50 քարոզ-ճառեր և առանձին ձեռագրերում վերագրվում IV դ. եգիպտացի վանական Մակարիոս Մեծին:

Մեսալյանների մասին ամենավաղ տեղեկությունները հաղորդել է *Եպիփան Կիպրացին*: Հիշյալ աղանդավորների ի հայտ գալը նա թվագրել է Կոստանդիոս կայսրի ժամանակով (351–361)՝ զանազանելով հեթանոս մեսալյաններին և քրիստոնյա մեսալյաններին: Առաջինները, թեև հեթանոս, դավանել են միաստվածություն և իրենց աստծուն անվանել Ամենակալ, քրիստոնյա մեսալյանները, գիտակցելով սատանայի մեծությունն ու զորությունը, նրա բարյացակամությունը շահելու և դավերից խուսափելու համար երկրպագել են նրան և իրենց անվանել սատանաներ: Եպիփան Կիպրացու վկայությամբ՝ մեսալյանները հրաժարվում էին սեփականությունից, լքում իրենց բնակատեղիները ու ապրում մուրացկանությամբ: Նրանք մերժում էին ծոմապահությունը և մշտապես աղոթում: Եպիփան Կիպրացու ժամանակաշրջանում դաժանաբար հալածվել են, դրա համար էլ իրենց անվանել են մարտիրոսներ, նահատակներ:

Վաղ բյուզ. պատմիչ Թեոդորետոս Կյուրացին մեսալյանների հանդես գալը թվագրել է Վալենտինիանոս (364–375) և Վաղես (364–378) կայսրերի իշխանության շրջանով: Ըստ նրա, այդ աղանդավորները կոչվել են նաև «էնթուսիաստներ», քանզի ինչ-որ դևի ազդեցությամբ հավատացել են, թե իրենց մեջ Սուրբ Հոգին է մուտք գործել, և այդ պատճառով ընկել են հիազմայլանքի (էքստազի) մեջ, որը և անվանել են «էնթուսիասմոս»: Թեոդորետոս Կյուրացին վկայում է, որ Անտիոքի պատրիարք Փլավիանոսը (381–404), տեղեկանալով Եդեսիայում աղանդավորների տարածված լինելու մասին, վանականների խումբ է ուղարկել այնտեղ, նրանց բերել տվել Անտիոք և ջանացել «դարձի բերել»: Սակայն նրա բանակցությունները ծերունի աղանդապետ Ադելփիոսի հետ ապարդյուն են անցել, և պատրիարքը արտաքսել է նրանց: Անտիոքից նրանք գնացել են Պամփյուլիա, տարածել իրենց վարդապետությունը, ինչի համար հալածվել են, գաղթել Փոքր Ասիա՝ իրենց կողմը գրավելով մի շարք մենաստանների: Թեոդորետոս Կյուրացին պահպանել է մեսալյանների աղանդապետների անունները՝ Սաբբաս, Ադելփիոս, Դադոես, Սիմեոն, Հերմաս:

Մեսալյանների մասին իրենց իսկ գրքերից քաղած մանրամասն տեղեկություններ է հաղորդել բյուզ. աստվածաբան Հովհան Դամասկացին (VIII դ.): Նրանց ընկալմամբ մարդու մեջ ամուր նստած է Սուրբ Հոգին, ինչպես և սատանան, որը դևերի հետ մեկտեղ տիրել է մարդու մտքին ու բնությանը: Մարդու հոգին կարող է մաքրել միայն հանապազօր աղոթքը, որին նրանք հսկայական ուժ են վերագրել: Ըստ

ՄԿՐՏԱՐԱՆ Հովհան Դամասկացու՝ մեսալյանները մերժել են եկեղեցին, ընդունել միայն իրենց աղոթարանները, խորշել Փիզ. աշխատանքից:

Մեսալյանների վարդապետության դեմ գրել են Փոքր Հայքի մայրաքաղաք Մելիտենի եպիսկոպոս Լեոնտիոսը, Իկոնիոնի եպիսկոպոս Ամփիլոքիոսը, որը գլխավորել է աղանդավորներին դատապարտող Սիդեի եկեղեց. ժողովը (391): Անտիոքի պատրիարք Փլավիանոսը 391-ին Անտիոքում նույնպես գումարել է եկեղեց. ժողով ընդդեմ մեսալյան աղանդի: *Եփեսոսի Գ տիեզերական ժողովը* (431) նզովել է մեսալյան աղանդավորներին,դատապարտել նրանց «Գիրք ճգնավորականը»: Նրանց գրքերի դեմ քսանչորս նզովքներ է գրել Կեսարիայի եպիսկոպոս Արքելայոսը, ապա և՝ նյուսացի եպիսկոպոս Հերակլիդեսը: Մեսալյաններն այնքան են մտահոգել բարձր հոգևորականությանը, որ անգամ Կ. Պոլսի Ատտիկոս պատրիարքը (406–425) գրել է Պամփյուլիայի եպիսկոպոսներին, Սիդեի եպիսկոպոս Ամփիլոքիոսին՝ պատվիրելով հալածել աղանդավորներին: Մեսալյանների դեմ հարատև պայքարել է նաև նեստորական եկեղեցին:

Հայաստանում մծղնեների (հայկ. աղբյուրներում նրանք մեսալյաններ չեն կոչվել) տարածված լինելը հիմնականում երևում է *Շահապիվանի եկեղեցական ժողովի* կանոններից. դրանք վկայում են, որ *Մեսրոպ Մաշտոցի* և *Սահակ Ա Պարթևի* մահից հետո աղանդը տարածվել է երկրում, ընդգրկել ոչ միայն աշխարհականների, այլև հոգևորականների (երեց, սարկավագ, աբեղա) շրջանակը: Ժողովականները ծանր պատիժներ են սահմանել նրանց դեմ: Աղանդավոր հոգևորականին կարգալույծ են հայտարարել, ճակատին աղվեսադրոշմ խարանել և արգելափակել վանքում: Եթե աղանդավոր հոգևորականը դարձի չի եկել, իշխանությունները դիմել են մարմն. խիստ պատիժների և նետել գոդենոց: Ավելի ծանր են եղել պատժամիջոցները աշխարհիկ աղանդավորների նկատմամբ. նրանց անմիջապես ենթարկել են մարմն. պատիժների, ճակատներին աղվեսադրոշմ խարանել և նետել գոդենոց, իսկ նրանց անչափահաս երեխաներին հեռացրել են ծնողներից, հանձնել հոգևորականների խնամքին: Աղանդավորներին հովանավորելու, թաքցնելու և իշխանություններին չհանձնելու համար մեղադրվող հոգևորականության դեմ է ուղղվել 20-րդ կանոնը:

Հայկ. աղբյուրներում մծղնեների գաղափարախոսության մասին տեղեկություններ չկան, եղածներն էլ նրանց դեմ ուղղված լուտանքներ են: *Եզնիկ Կողբացին* միայն վկայում է, որ մծղնեները մերժել են ամուսնության խորհուրդը: Մ. ավելի խոր հետք է թողել Հայաստանում, քան աղանդավոր. մյուս շարժումները: *Հովհաննես Գ Օձնեցին* իր «Ընդդէմ պաւղիկեանց» ճառում *պավլիկյաններին* համարել է «նախկին մծղնեության խեշերանք» (մնացորդ): *Արիստակես Լաստիվերցին թոնդրակեցիների* գործունեությունը՝ «մծղնէ գործ», իսկ *Կիրակոս Երզնկացին* գրել է. «Մծղնագործութիւն, որ առաւել է քան զամենայն մեղս»: Մծղնե անունը ստացել է «աղանդավոր», «հերձվածող», «պիղծ» իմաստը:

Գրկ. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1994: Տեր-Մկրտչյան Կ., Մծղնէից աղանդը, «Արարատ», 1895, № 1, էջ 3–8: Նույնի, Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երևոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղեմ, 1938, էջ 65–76: Խաչիկյան Լ., Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դ.), Ե., 1951: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, 2, Ե., 1964, 1971: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968, էջ 73–85: Բարթիկյան Հ., Աղանդավորական շարժումները Հայաստանում ըստ միջնադարի հայ և օտար հեղինակների (IV–V դդ.), ԼՀԳ, 1984, № 10: Photius, Bibliothèque, P., 1959; Staats R., Gregor von Nyssa und die Messalianer, Berlin, 1968.

Հրաչ Բարթիկյան

ՄԿՐՏԱՐԱՆ, եկեղեցուն մոտ կամ կից շինություն՝ *Մկրտության* ծիսակատարության համար: Ճարտարապետորեն առնչվում է հեթանոս. շրջանում ջրի պաշտամունքին նվիրված հատուկ շինությունների հետ:

Մ-ները եղել են երկու տիպի՝ ա. Մկրտության ավազանը տեղադրվել է հատուկ շենքում, որը կոչվել է մկրտատուն (կառուցվել է մինչև XIV դ.), բ. ավազանը տեղադրվել է եկեղեցու ներսում կամ նրան կից: Երկու ձևն էլ Հայ եկեղեցու կանոնների համաձայն (Սահակ Ա Պարթևի կանոնախումբ, Դվինի 554 ժողովի կանոններ) կիրառվել են վաղ միջնադարից և բնորոշ են հայկ. ճարտ-յանը:

Մկրտատան և ավազանի հատակագծային ձևերը (հիմնականում՝ բոլորաձև, բազմանիստ և խաչաձև) ունեցել են հեթանոսությունից փոխանցված նշանաբան. իմաստ: IV դարից այդ ձևերը հաստատել են նախ՝ արլ., ապա արմ. ե-

կեղեցիները: Հայկ. ճարտ-յանը հայտնի հնադույն Մ-ներից են Ողջաբերդի քառակուսի հատակագծով գմբեթավոր մկրտատունը (IV դ.), Արզնու Ս. Կիրակի (VI դ.)՝ արտաքուստ ութանիստ, ներսից քառախորան կենտրոնագմբեթ շինությունը ևն:

Մկրտատուն չկառուցվելու դեպքում ավազանը տեղադրվել է՝ ա. եկեղեցու ներսում, հս. պատի արլ. մասի խորշում (ուշագրավ է Էջմիածնի Մայր տաճարի *ավանդատան* միջի ավազանը), բ. եկեղեցուն կից, արլ. ավանդատներից դեպի դուրս երկարող և եկեղեցին շրջապակող այնուաշար սրահի բացվող թևերում: Եզակի է *Զվարթնոց* տաճարի աղոթասրահի հատակի ավազանը:

Գրկ. Khatchatrian A., Les baptistéres paléochrétiens, P., 1962.

Արմեն Զարյան

ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ (Խրիմյան Մկրտիչ), Խրիմյան Հայրիկ (4.4.1820, Վան – 29.10.1907, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս 1892-ից: Հաջորդել է *Մակար Ա Թեղուտցուն*: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կտուց անապատների վանական դպրոցներում: 1842-ին հաստատվել է Կ. Պոլսում: 1847-ին ճանապարհորդել է Պարսկաստանի հայաշատ վայրերում, Անդրկովկասում, այցելել Երուսաղեմ: 1848–1850-ին ուսուցչություն է արել Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասի իգական դպրոցում: 1851-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ մեկնել է Կիլիկիա՝ կրթական գործի զարգացմանը նպաստելու և տեղի հայության կյանքն ուսումնասիրելու նպատակով: 1854-ին ձեռնադրվել է վարդապետ: 1855-ի հունիսից 1856-ի հունիսը Կ. Պոլսում հրատարակել է «*Արծվի Վասպուրական*» ամսագիրը: 1856-ի հունիսին վերադառնալով Վան՝ սուլթանի ֆերմանով և Կ. Պոլսի հայոց պատրիարքի կոնդակով ստանձնել է Վարագավանքի վանահայրությունը: 1857-ին վանքում հիմնադրել է հոգևոր ժառանգավորաց վարժարան, իսկ 1858-ին վերսկսել «Արծվի Վասպուրական»-ի հրատարակությունը: 1860-ին մեկնել է Արլ. Հայաստան, եղել Երևանում, Էջմիածնում, Այնտեղ աշխարհում, Արցախում, Թիֆլիսում: 1862-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը նրան է հանձնել Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնը և Ս. Կարապետ վանքի վանահայրությունը: Տարոնում հիմնադրել է նոր հոգևոր ժառանգավորաց վարժարան և հրատարակել (1863–65) «*Արծվիկ Տարոնո*» երկշաբաթաթերթը՝ Գարեգին Սրվանձտյանցի խմբագրությամբ: Ծավալել է եռանդուն գործունեություն հայ գյուղացու ծանր վիճակը թեթևացնելու, թուրք և քուրդ աղաների, պետ. պաշտոնյաների հարստահարությունները սահմանափակելու ուղղությամբ: Ժողովուրդը Մկրտիչ Խրիմյանին մեծարել է «Հայրիկ» պատվանունով: Ժողովրդանվեր գործունեության համար թուրք. կառավարությունը նրան համարել է քաղաքականապես անբարեհույս հոգևորական և փակել դպրոցն ու տպարանը: 1868-ին Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, 1869-ին Կ. Պոլսի Ազգային ժողովի կողմից ընտրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք: Իբրև պատրիարք Ազգային ժողովի քննարկմանն է դրել *Ազգային սահմանադրության* վերանայման, գավառահայության հարստահարությունների, գավառների հոգևոր առաջնորդների ընտրության հարցերը: Պայքարել է ողջ արևմտահայության շահերը Ազգային ժողովում ներկայացնելու, գավառական երեսփոխանների թիվը Ազգային ժողովում ավելացնելու համար: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է գավառահայության հարստահարությունները քննող հանձնաժողով, որի կազմած տեղեկագիրը Ազգային ժողովը 1872-ին ներկայացրել է Բ. Դռանը: Այդ գործունեությունը հարուցել է թուրք. կառավարության և Կ. Պոլսի հայ մեծահարուստների դժգոհությունը, որոնց գործադրած սադրանքների պատճառով նա 1873-ի օգոստ. հրաժարվել է պատրիարքությունից:

Իբրև 1878-ի Բեռլինի վեհաժողովի հայկ. պատվիրակության ղեկավար նախապես այցելել է եվրոպ. մեծ տերությունների (Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա) պետ. պաշտոնյաներին, պատրիարքարանի կազմած տեղեկագիրը ներկայացրել Բեռլինի վեհաժողովին՝ հույս ունենալով դիվանագիտ. ճանապարհով լուծել Հայկ. հարցը: Հիասթափված նրա արդյունքներից՝ շրջադարձ է կատարել դեպի

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Հայրիկ)

ազգ-ազատագր. պայքարը: 1879-ին ընտրվել է Վասպուրականի հոգևոր առաջնորդ, եռանդուն գործունեություն ծավալել այդ նահանգում, օժանդակել Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» ազգ-ազատագր. գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը: Նրա անվան հետ կապելով արևմտահայ գավառների ժող. հուզումները՝ 1885-ին Բ. Դուռը նրան կանչել է Կ. Պոլիս: Չնայած խիստ հսկողությանը, Խրիմյան Հայրիկը այդտեղ ևս ծավալել է հաս. գործունեություն: Կրոնական ժողովի ատենապետ Մկրտիչ Խրիմյանը Համագումար ժողովի անունից բողոքագիր է ներկայացրել Բ. Դռանը: 1890-ի Կ. Պոլսի Գում գափուի ցույցից հետո Թուրք. կառավարությունը նրան աքսորել է Երուսաղեմ: 1892-ի մայիսին ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս, սակայն սուլթանը չի համաձայնել նրան թուրքահպատակությունից ազատել, և միայն 13 ամիս անց ռուս. ցարի միջնորդությամբ նրան թույլատրվել է ժամանել Էջմիածին: 1893-ի սեպտ. 26-ին օծվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Հայկ. հարցը ռուս. արքունիքում ներկայացնելու նպատակով Մ. Ա. Վ. 1895-ին մեկնել է Պետերբուրգ: Բողոքել է 1894–96-ի Համիդյան ջարդերի դեմ, ցար. արքունիքին հղած տարբեր խնդրագրերով ապահովել հանգանակությունների իրականացումը ռուս. կայսրության հայաբնակ տարածքներում: Մեծ ջանքեր է ներդրել կոտորածներից մազապուրծ գաղթականության ֆիզ. գոյությունն ապահովելու և վերստին երկիր վերադարձնելու համար: Եռանդուն պայքար է մղել հայ եկեղեցապատկան կալվածքները բռնագրավելու մասին ցար. կառավարության 1903-ի հունիսի 12-ի օրենքի կենսագործման դեմ (տես *Եկեղեցական գույքի բռնագրավման օրենք 1903*), հրամայել հոգևոր թեմական առաջնորդներին՝ չենթարկվել այդ որոշմանը և խոչընդոտել նրա կիրառությանը:

Մ. Ա. Վ. գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ առանձնակի տեղ են գրավում հոգևոր-կրոն. ստեղծագործությունները: Դրանցից է դեռևս 1851-ին լույս տեսած «Հրավիրակ երկրին ավետյաց» չափածո պոեմը, որտեղ նկարագրում և գովերգում է քրիստ. եկեղեցու համար սրբազան դարձած Երուսաղեմը, Փրկչի գործունեության սուրբ վայրերը: Պոեմն աչքի է ընկնում աստվածաբան. գրականության իմացությամբ և հոգևոր ներշնչմամբ: Քրիստ. վարդապետությանը նվիրված այդ քերթվածը ցուցադրում է Մ. Ա. Վ.-ու քաջատեղյակությունը հայ մատենագիտության նմանատիպ աշխատություններին՝ IV դ. հույն աստվածաբան Հովհան Ոսկեբերանից մինչև «Յաճախապատում ճառք»: «Մարգարիտ արքայության երկնից» (1866) աշխատությունը Մատթեոսի Ավետարանի 5–7 գլուխների մեկնությունն է, որտեղ հեղինակը համեմատում է Մովսեսի օրենքներն ու Քրիստոսի վարդապետությունը՝ գերապատվությունը տալով վերջինին: «Հիսուսի վերջին շաբաթ. խաչի ճառ և...» (1876) աշխատությունը նվիրված է «Հայաստանեայց եկեղեցվո ուխտին, հայ հոգևորականներին», որոնց Մ. Ա. Վ. համարել է «խաչի զինվորներ ու Ավետարանի պաշտոնյաներ», նրանց քարոզել Հիսուսի ճշմարիտ վարդապետությունը, զգուշացրել փառասիրության, իշխանատենչության, մամոնայի վարակիչ ախտից: Կրոնաբարոյախոս. թեմաներով են գրված նաև «Դրախտի ընտանիք» (1876), «Սիրաք և Սամվել» (1878), «Պապիկ և թոռնիկ» (1894) աշխատությունները: Կաթողիկոս Մ. Ա. Վ. ի պաշտոնե ձեռնամուխ է եղել հայ հոգևորականության դաստիարակության, կրթված հոգևորականների նոր սերունդ ստեղծելու խնդրին: «Արարատի» էջերում (1894, № 3) լույս է տեսել Մ. Ա. Վ.-ու «Արշեն երեց» ծածկանունով քարոզը, որտեղ արծարծվել է հասարակ գյուղական քահանաների և ընդհանրապես ողջ հայ հոգևորականության կրթության ու զարգացման մակարդակը բարձրացնելու հարցը: Հոդվածն իր վրա է հրավիրել ժամանակի պարբ-ների ուշադրությունը, բանավեճ է սկսվել քահանայական խնդրի շուրջն ընդհանրապես («Մուրճ», «Արճագանք», «Մշակ»), որին մասնակցել են նաև այլ բարձրաստիճան հոգևորականներ: Մ. Ա. Վ. զբաղվել է նաև ամուսնալուծության, այրիացած քահանաների կրկնամուսնության թույլտվության հարցերով: Նրան մտահոգել են նաև կուսակրոնության խնդիրները, սակայն այդ հարցերը ծիսակարգային ուժ չեն ստացել: Մ. Ա. Վ.-ի օրոք Էջմիածնում կառուցվել են նոր հյուրանոց, Սինոդի նոր շենք, թանգարան, նոր մատենադարան: Նորացել և հարդարվել են Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերը:

Կաթողիկոս. գահին Մ. Ա. Վ.-ուն հաջորդել է *Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին*:

Երկ. Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929: Երկ., Ե., 1992:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927: Ահեմյան Հ., Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929: Գյուզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Բեյրութ, 1954: Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000:

Էմմա Կոստանդյան

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ [մոտ 1394, գ. Պոռ (Բիթլիսի նահանգ) – մոտ 1470], տաղերգու, բանաստեղծ, նկարիչ, Միջագետքի հայոց հոգևոր առաջնորդ: Ծնվել է քահանայի ընտանիքում: Ըստ ինքնագիր մի հիշատակարանի՝ Մ. Ն. 1418-ին եղել է սարկավագ: Կրթություն է ստացել Բաղեշի Ս. Անանիա և Ս. Գևորգ վանքերում, ուսանել նաև Մեծոփավանքում՝ աշակերտելով *Թովմա Մեծոփեցուն*: Մ. Ն-ի կենսագրությունը («Յիշատակարան գրոցս պատմագրաբար...») դեռևս նրա կենդանության օրոք գրել է Աստվածատուր վարդապետը՝ դեպքերը հասցնելով մինչև 1449-ը («ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս 1, կազմ. Լ. Խաչիկյան, 1955, էջ 622–631):

1420-ական թթ. Մ. Ն. որդու՝ Մեսրոպի հետ տեղափոխվել է Միջագետքի Ամիդ (Դիարբեքիր) քաղաքը, որտեղ ձեռնադրվել է վարդապետ: 1430-ին Հայոց կաթողիկոս *Կոստանդին Զ Վահկացին* նրան ձեռնադրել է եպիսկոպոս, իսկ 1431-ին՝ նշանակել Ամիդի եպիսկոպոս և Միջագետքի հայոց հոգևոր առաջնորդ: Որդին նույնպես դարձել է հոգևորական: Նա երեց էր և սպանվել է 1451-ին՝ Ամիդի պաշարման ժամանակ:

Մ. Ն. նկարիչ լինելու համար ստացել է Նաղաշ (նկարիչ, ծաղկող) մականունը:

Ընդօրինակել և նկարազարդել է ձեռագրեր, որոնցից մի քանիսը հասել են մեզ: Իր մարդասիրությամբ ու սրբակենցաղ վարքով վայելել է ոչ միայն հայերի, այլև այլազգիների համակրանքը: Բարեկամական հարաբերություններ է ունեցել Միջագետքի Օթման բեկ ամիրայի հետ, որի շնորհիվ կարողացել է վերացնել տալ եկեղեց. հարկերը և որոշ արտոնություններ ձեռք բերել հայերի համար:

Մ. Ն. ծավալել է նաև շին. աշխատանքներ: 1434-ին նրա նախագծով կառուցվել է Արղընիի Բարձրահայաց Ս. Աստվածածին եկեղեցին, իսկ 1439–43-ին՝ վերակառուցվել Ամիդի Ս. Թեոդորոս կաթողիկեն: Վերջինիս գմբեթը բարձր է եղել քաղաքի մինարեներից, ինչը առիթ է դարձել Մ. Ն-ի դեմ մոլեռանդ մահմեդականների հալածանքների: Օթման բեկի որդին՝ Համզան, որը հաջորդել էր հորը, հրամայել է քանդել կաթողիկեի գմբեթը: Մ. Ն. խորվիշտ է ապրել և Ամիդից մեկնել նախ Կ. Պոլիս, ապա՝ Կաֆա (Թեոդոսիա): Երբ Համզային հաջորդել է նրա որդին՝ Ջհանգիր Միրզան, Մ. Ն-ին հրավիրել է Ամիդ, թույլ տվել վերակառուցել կաթողիկեն՝ չափավոր բարձրությամբ: Վերակառուցումն ավարտվել է 1447-ին՝ Նեքամատ վարպետի ձեռքով:

Մ. Ն. գրել է տաղեր, ողբ, հիշատակարաններ, Կոստանդին Զ Վահկացու ու պատմագիր Թովմա Մեծոփեցու հանձնարարությամբ՝ «Պատասխան լատինացւոց թխտոյն» (1436) պատմ. փաստաթուղթը: Այստեղ անդրադարձել է Լատին և Հայ եկեղեցիների միության՝ Վատիկանի ժողովում քննարկվելիք խնդրին, օտար եկեղեցիների գերիշխանության գաղափարին հակադրել Հայ եկեղեցու անկախության և հավասարության գաղափարը՝ եկեղեցիների միության երաշխիք համարելով այդ հավասարության ճանաչումը:

Մ. Ն-ի տաղերը միջնադարյան հայ քնարերգության գեղեցիկ և ինքնատիպ էջերից են: Նա խորացրել է միջնադարյան քնարերգության աշխարհիկ բովանդակությունը: Մ. Ն-ի ստեղծագործություններին բնորոշ են սոցիալական, խոհախրատական մոտիվները: XV դ. հոգևորականության մեջ ուժեղացել էր բարոյալքման ախտը: Վանքերը դարձել էին շվայտության վայրեր, դավերն ու խարդավանքները՝ սովորական: Ժամանակի բարոյական այդ մթնոլորտի գեղ. պատկերումն է Մ. Ն-ի «Խրատական բաներս ագահութեան և անընչութեան ի Նաղաշ վարդապետէ ասացեալ» ծավալուն բանաստեղծությունը՝ գրված արևելյան դազելի ձևի ուրույն կիրառմամբ: Բոլոր չարիքների ակունքն ու աղբյուրը Մ. Ն. համարում է մարդկային ագահության անհագ կիրքը: Անդրադարձել է քրիստ. բարոյականության հարցերին, ձաղկել թե՛ աշխարհիկ տերերի, թե՛ հոգևորականության հոռի բարքերը:

Միջնադարյան շատ բանաստեղծների նման նա ևս անդրադարձել է մահվան թեմային՝ կյանքին, մարդուն ու աշխարհին նայելու և իմաստավորելու միտումով: Մ. Ն. հորդորում է փարվել ոչ թե կյանքի հաճույքներին, այլ՝ բարի գործ անելուն:

Մ. Ն-ի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում պանդխտության թեման: Նրա «Տաղ վասն ղարիպի ասացեալ» բանա-

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ստեղծությունը գրված է երկխոսության ձևով: Իբրև հոգևորական՝ նա պանդուխտին մխիթարում է հանդերձյալ կյանքի պայծառ տեսիլով: Մ. Ն-ի լեզուն միջին հայերենն է՝ պարզ և մատչելի: Նրա ստեղծագործությունները, հատկապես պանդխտության տաղերը, մեծ ազդեցություն են գործել ուշ միջնադարի հայ քնարերգության վրա:

Երկ. Մկրտիչ Նաղաշ, աշխատասիր. Է. Խոնդկարյանի, Ե., 1965:

Գրկ. Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, հրտ. Կ. Կոստանյան, Վաղ-պատ, 1898: Զամինյան Ա., Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջևան, 1914, էջ 214–221: Աբեղյան Մ., Երկեր, հ. 4, Ե., 1970, էջ 473–480:

Արշալույս Ղազինյան

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ, Օծություն, *Սուրբ Հոգու* ընդունումը քրիստոնյայի կողմից, որով մկրտվողը դառնում է քրիստոնեական եկեղեցու անդամ: Ըստ Նոր կտակարանի՝ առաջինը Հիսուսը տեսանելի նշանով օծվեց *Սուրբ Հոգով*, Հորդանան գետում, *Հովհաննես Մկրտչի* ձեռքով մկրտվելուց հետո, և Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ նրա վրա (Մատթ. **3**.13–17, Մարկ. **1**.9–11, Ղուկ. **3**.21–22, Հովհ. **1**.32–34): Այնուհետև, Պենտեկոստեի (տես *Հոգեգալուստ*) օրը, Սուրբ Հոգին իջավ աշակերտների վրա (Գործք **2**.1–4)՝ համաձայն Հիսուսի նախապես տված խոստման:

Մ. քրիստ. եկեղեցու կարևոր խորհուրդներից մեկն է և նախապայմանը՝ մյուս խորհուրդների: Ըստ Հայ եկեղեցու՝ այս խորհրդի միջոցով մկրտվողը վերստին ծնվում է հոգով, սրբվում մեղքերից, դառնում քրիստոնյա և Աստծո որդի, ժառանգակից Քրիստոսի և տաճար Սուրբ Հոգու:

Մ-յան ծեսը հնուց ի վեր գոյություն է ունեցել ոչ միայն հրեաների, այլև արլ. ժողովուրդների (բաբելացիներ, պարսիկներ, հնդիկներ, եգիպտացիներ ևն) և հույների ու հռոմեացիների մոտ: Դա բացատրվում է մարդկային բնության՝ բարոյական մաքրության ընդհանուր կրոն. պահանջով, որի ֆիզիկական խորհրդանիշը ջրի միջոցով մաքրումն էր:

Հրեաների մոտ ևս լվացումը կապվել է բարոյական մաքրության հետ (Եսայի **1**.16, Սաղմ. **50**.9, 12): Նույն իմաստն ուներ նաև Հովհաննես Մկրտչի կատարած Մ., որը զղջման Մ. էր՝ մեղքերի թողության համար (Մատթ. **3**.11, Մարկ. **1**.4, Ղուկ. **3**.3, Գործք **13**.24, **19**.4):

Քրիստոսը Համբարձումից առաջ պատվիրել է իր աշակերտներին. «Գնացեք, ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. **28**.19): Քրիստոսը մի նոր խորհուրդ ունեցող Մ. է հաստատել, որի իմաստը վերըստին ծնունդն է՝ Սուրբ Հոգով. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել...» (Հովհ. **3**.5): Արդեն Հովհաննես Մկրտիչը զատորոշել է իր և Քրիստոսի Մ-ները՝ իբրև «ջրի» և «Սուրբ Հոգու» ու «հրի» Մ-ներ. «Ես ձեզ ջրով եմ մկրտում՝ ապաշխարության համար... Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով» (Մատթ. **3**.11, հմմտ. Մարկ. **1**.8, Ղուկ. **3**.16): Նույն զատորոշումը արել է նաև Քրիստոսը՝ իր աշակերտներին ասելով. «...Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք կմկրտվեք Սուրբ Հոգով» (Գործք **11**.16):

Տիրոջ Համբարձումից հետո առաքյալները նորադարձ քրիստոնյաներին մկրտել են քրիստ. համայնք ընդունելիս: Առաքելական Մ-յան նախապայմաններն էին ապաշխարությունը և Հիսուս Քրիստոսին «Տեր» խոստովանելը, ըստ առաքելական խոսքի, թե՝ «Ապաշխարեցեք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով...» (Գործք **2**.38): Կարճ ժամանակ անց, սակայն, պարզ հավատքը և Հիսուսի անվան խոստովանությունն անբավարար են համարվել: Անհրաժեշտ է նկատվել Մ-ից առաջ ուսուցանել քրիստ. հավատքի սկզբունքները, ինչը ժամանակի ընթացքում հարստացել է նոր դավանաբան. տարրերով (Եբր. **6**.1–2): Մ-ից առաջ պահանջվել է նաև պահեցողություն (տես *Պահք*):

Հնում Մ. ուներ 2 փուլ. ա. նախապատրաստում, բ. Մ-յան խորհրդի ծեսի կատարում: VI դարից, երբ տիրապետող է դարձել մանկամկրտությունը, նախապատրաստությունն աստիճանաբար դարձել է ձևական մի կարճ գործողություն՝ մանուկների կրոն. դաստիարակությունը թողնելով ապագային:

Ըստ Պողոս առաքյալի, Մ. խորհրդանշում է Տիրոջ մահը և հարությունը. «Կամ չգիտե՞ք, թե մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, նրա մահով է, որ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք նրա հետ մահվան մեջ, որպեսզի, ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք քայլենք նոր կյանքով» (Հռոմ.

6.3–4): Պողոս առաքյալը քրիստոնյաների Մ. համեմատում է հրեաների՝ Կարմիր ծովով անցնելու հետ (Ա. Կորնթ. 10.1–2), իսկ Պետրոսը՝ Ջրհեղեղից *Նոյյան տապանի* փրկության հետ (Ա. Պետր. 3.20–21):

Հայ եկեղեցում Մ. կատարվում է ջրի մեջ 3 անգամ ընկղմամբ՝ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Եթե հիվանդության կամ այլ պատճառով ջրի մեջ ընկղմվել չի կարելի, թույլատրելի է հեղմամբ կամ սրսկումով կատարել այն:

Մ-յան արարողության հիմն. տարրերն են. ա. հրաժարումը *սատանայից*. մկրտվողը դառնում է դեպի արևմուտք և հրաժարվում սատանայից ու նրա բոլոր խորհուրդներից. բ. հավատքի խոստովանություն. մկրտվողը դառնում է դեպի արևելք և խոստովանում քրիստ. հավատքի հիմն. սկզբունքները. գ. ջրի օրհնություն. ծիսակատար քահանան ջուրը լցնում է ավազանը, օրհնում այն աղոթքով և *Մյուռոնով* (Մ-յան ջրի օրհնությունը հին ծիսական սովորություն է, նպատակ է ունեցել աստվածային շնորհներով սրբել ջուրը և ոչնչացնել այնտեղ թաքնված սատանայական ուժերը). դ. ջրի մեջ ընկղմում. Մ-յան հիմնական մասը:

Մ-յան արարողությանը հաջորդում է *Դրոշմի* արարողությունը:

Մ. պետք է կատարվի եկեղեցու վիմակերտ ավազանում: Տանը կամ այլ հարմար վայրում թույլատրվում է մկրտել, եթե մոտակայքում եկեղեցի չկա, կամ՝ եթե մկրտվողը հիվանդ է:

Մ. անկրկնելի խորհուրդ է և կատարվում է միայն մեկ անգամ: Հայ եկեղեցին վավերական է ճանաչում Ուղղափառ, Կաթոլիկ և այն բողոքական եկեղեցիների կատարած Մ., որն իրականացվում է Սուրբ *Երրորդության* անունով:

Տես նաև *Օծում*:

Եղնիկ եպս. Պետրոսյան

Երաժշտություն: Մ-յան կանոնը հիմնարար տեղ է գրավում *Մաշտոց* ծիսարանում: Այդ կանոնով է բացվում առձեռն Մաշտոցը: Ըստ «Օրհնութիւնաբեր ցուցակի» տվյալների, Մ-յան կանոնի նախնական երաժշտագր. ձևակերպումը պատկանում է կաթողիկոս *Հովհաննես Ա Մանդակունուն*: Հնագույն ձեռագրերում Մ-յան կանոնում սաղմոսներից (Սաղմ. 30, 24, 25, 28) բացի այլ երգասացություններ չեն հիշատակված: XIII–XV դդ. աղբյուրների համաձայն, դրանց ավելանում են 80, 120 սաղմոսները, ինչպես նաև՝ մի քանի շարական. «Աստուածածին երկնային», «Արեգակն արդարութեան», «Առաքելոյ աղաւնոյ իջանելով», «Մարմնացեալդի կուսէն» ևն: Եկեղեցուց դուրս նույն առիթով կատարվում է Ծննդյան տաղերից «Այսօր տոն է Սուրբ Ծննդեան» տաղը: Ընդհանուր առմամբ, Մ-յան կանոնի երաժշտ. բաղադրիչը աչքի է ընկնում հանդիսավոր, տոնական տրամադրությամբ: Սաղմոսերգությունից և շարականներից հետո հնչող տաղը շարքի իմաստային հանրագումարն է ներկայացնում, որը պատշաճորեն ավարտում է ծեսը:

Աննա Արևշատյան

Պատկերագրություն: Հիսուսի Մ-յան վաղագույն պատկերները մեզ են հասել II–III դարերից, հայկ. արվեստում՝ IV–V դարերից՝ Թալինի և Օձունի քարակոթողների վրա, իսկ մանրանկարչության մեջ VI դարից՝ «*Էջմիածնի Ավետարան*»-ում:

Տեսարանի պատկերագր. ամենատարածված տարբերակը հետևյալն է. կենտրոնում Հիսուսն է՝ կանգնած Հորդանանի ջրերի մեջ, հաճախ մինչև ուսերը կամ գոտկատեղը ջրածածկ: Վաղ շրջանում պատկերվել է պատանու տեսքով, ավելի ուշ՝ ավանդ. արտաքինով՝ մերկ կամ կոնքակապով, մեկ կամ երկու ձեռքով օրհնելիս: Քրիստոսի ձախ կողմում ներկայացվում է Հովհաննես Մկրտիչը՝ մորուքավոր, երկար մազերով, մորթեղեն կամ ճգնակյացի հագուստով: Վաղ շրջանում Հովհաննես Մկրտիչն ու Հիսուսը պատկերվել են Հորդանանի հակադիր ափերին կանգնած: V–VI դդ. Քրիստոսից աջ ներկայացվում են հրեշտակները՝ ձեռքերին սրբիչներ և հանդերձներ, երբեմն նաև՝ յուղի սրվակներ: Պատկերի վերին մասում, անմիջապես Քրիստոսի գլխավերևում, կենտրոնում կամ հորինվածքի ձախ անկյունում, Աստծո Աջն է, որից բխող աղավնակերպ Սուրբ Հոգին գլխիվայր իջնում է դեպի Հիսուսը: «Մկրտության» տեսարանում Սուրբ Երրորդությունը պատկերվում է երեք անձով՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի:

Հորդանանի ջրերի մեջ լինում են զանազան խորհրդանիշ պատկերներ, ինչպես, օր., մարդկանց փրկագնված հոգիները խորհրդանշող ձկները կամ շղթայակապ երկու կիսամերկ մարդկանց (տղամարդ և կին) պատկերները: Վերջիններս, ներկայացնելով Ադամին ու Եվային, խորհրդանշում են ադամական մեղքն ու մահը: Պատկերվում են սափորը ձեռքին կամ փող փչելիս, երբեմն մեջքը Հիսուսին արած՝

փախչելիս: Քրիստոսի ոտքերի տակ ներկայացվում է նաև վիշապը, որի օձագալար մարմինը կապ է դցված: Երբեմն Ադամը, Եվան և հրեշը՝ վիշապի կերպարանքով, մեկտեղվում են է՛լ ավելի ընդգծելու համար Մ-յան խորհուրդը:

Հորդանանի ափերը պատկերվում են բլրապատ կամ ժայռապատ, հաճախ գետափին լինում է ծառ, որի բնին կամ արմատին կացին է խրված: Վերջինս Հովհաննես Մկրտչի «որովհետև կացինն ահա ծառերի արմատին է դրված...» (Մատթ. 3.10, Ղուկ. 3.9) արտահայտության պատկերային դրսևորումն է և նրա վարդապետության խորհրդապատկերը:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.6, 1–2-րդ պատկերները:

Աննա Լեյլոյան

Գրկ. Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց եկեղեցու քրիստոնէականը, Վաղ-պատ, 1900: Ճեմճեմյան Ս., Մկրտության խորհրդի բանաձևը, «Բազմավեպ», 1967, № 7–8, էջ 135–142: Նույնի, Կանոն Մկրտության, «Բազմավեպ», 1972, № 2–3, էջ 211–231: Ջեպեյան Ղ., Հայ եկեղեցվո յոթը խորհուրդները, Անթիլիաս, 1988: Արեվշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Սարգսյան Ս., Հայոց եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 1, 1992: Մաթեվոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Էջմիածին, 1995: Conybeare Fr. C., Rituale Armenorum, Oxf., 1905; Schiller G., Iconography of Christian Art, v. 1, L., 1971; Chevalier J., Cheerbrant A., Dictionnaire des Symboles, P., 1982; Renoux Ch., Initation Chrétienne, Rituels arméniens du Batêm, P., 1996.

ՄՅՈՒՌՈՆ, Սրբալույս մյուռոն, մեռոն (< հուն. *μύρον* – անուշաբույր յուղ, ձեթ), քրիստոնեական եկեղեցում օծման համար կիրառվող սրբազան հոտավետ յուղ («բույսից հոսող հյութ»): Հին կտակարանի սրբության յուղը կամ սուրբ օծության յուղը նախատիպն է ներկայիս Մ-ի: Աստված է Մովսես մարգարեին հայտնել Մ-ի բաղադրության, պատրաստման և կիրառման ոլորտի մասին. «Տերը խոսեց Մովսեսի հետ ու ասաց. «Վերցրո՛ւ անուշահոտ համեմունքներ... Դրանցից կպատրաստես սուրբ օծության համար յուղ այնպես, ինչպես վարպետ յուղագործները ձեթ են պատրաստում: Այն սուրբ օծության համար յուղ թող լինի: Դրանով կօծես վկայության խորանը, վկայության տապանակը, զոհասեղանն ու նրա ամբողջ սպասքը, աշտանակն ու նրա ամբողջ սպասքը, խնկարկության սեղանը, ողջակեզների սեղանն ու նրա ամբողջ սպասքը, ավազանն ու նրա պատվանդանը: Կսրբագործես դրանք, և դրանք կլինեն սրբությունների սրբություն: Ամեն ոք, որ դիպչի դրան, կմաքրվի: Կօծես Ահարոնին ու նրա որդիներին, կսրբագործես նրանց, որպեսզի նրանք ինձ համար քահանայություն անեն» (Ելք 30.22–30):

Ձիթենու յուղը, զանազան անուշահոտ բույսերի հետ (խնկեղեգ, ծաղիկներ ևն) վաղնջական ժամանակներից ի վեր գործածել են արլ. ազգերը (մասնավորապես հրեաները՝ տոնական օրերին. Սաղմ. 22.6, Ամոս 6.6): Քրիստոսի Մարդեղության ընթացքին դեռևս կենսունակ էր հյուրի գլուխը կամ ոտքերն օծելու խորհրդանշական գործողությունը (Մարկ. 14.3, Հովհ. 12.3), ընդ որում, ազնվագույնն էր դիտվում նարդոսի յուղը (Երգ երգոց 1.12, Մարկ. 14.3):

Հին ուխտի մեջ բազմիցս հիշատակվող օծման արարողությունը, որպես Բարձրյալ Աստծուց շնորհված գաղտնասուրբ և նվիրական խորհուրդ, ծանուցում էր Ս. Հոգու էջքը աշխարհի վրա՝ Հիսուս Քրիստոսի՝ Օծյալ Փրկչի ձեռքով. նրա՛ միջոցով, որ իրական պատկերն էր աներևույթ Հայր Աստծո և բացարձակ Օծյալը (երբ. «Մեսիա» անվան հուն. համարժեքը «Քրիստոս»-ն է և նշանակում է Օծյալ): Այսպիսով, օծության յուղը Հին կտակարանում ներկայացնում է աստվածային շնորհի նյութեղեն դրսևորումը և գալիք Մեսիայի մասնավոր նշանը, որով սրբագործվել են Աստծո ընտրյալ անձինք, Իսրայելի (Աստծո ժողովրդի) վրա կարգված թագավորները, ինչպես նաև տաճարն ու տաճարական խորհրդապատկերային առարկաները:

Վաղ քրիստ. համայնքներում յուղով օծելու սովորույթը, ինչպես ակնարկվում է առաքելական թղթերում, նորոգվել է և սկսել կենցաղավարել որպես մկրտվելու՝ *Սուրբ Հոգին* ընդունելու նվիրական նշան: Մկրտվելը կամ կնքվելը ցայժմ իրականացվում է եկեղեցու ընդունած երկու խորհուրդների՝ *Մկրտության* և *Դրոշմի* խորհրդակատարության միջոցով, երբ Մ-ի դրոշմումով վավերացվում է (կամ վավերացված է համարվում) Սուրբ Հոգով մկրտվելը կամ բուն օծությունը: Հույն եկեղեցին այս խորհուրդը կոչում է պարզապես Մ., իսկ Հայ եկեղեցին անվանում է Դրոշմ, որը և Մ-ի ակնարկումն է: *Գրիգոր Տաթևացին* այս առնչությամբ գրում է. «Թեպետեւ ինչ-

պէս այժմ բոլոր եկեղեցիները ունին և ինչպես կուսուցանեն բոլոր եկեղեցիներուն վարդապետությունները, ներկայիս չկայ Դրոշմ առանց միւռոնի, և ոչ իսկ ընդունելի կ'ըլլայ խորհուրդը առանց օծումի» (Գիրք հարցմանց, 1993, էջ 593):

Հայ իրականության մեջ հայկ. Մ-ի և Մյուռոնօրհնության վերաբերյալ առկա են մի շարք ավանդություններ: Ըստ հնագույն մի ձեռագրի (տես «Էջմիածին», 1983, № 11–12, էջ 42), *Թադեոս* առաքյալն է Հայաստան բերել ս. Մ.: Այդ անուշաբույր յուղը պատրաստել էր Մովսես մարգարեն: Իսրայելցիներն այն տարել էին Ավետյաց երկիր, ապա պահել Երուսաղեմի տաճարում: Տաճարի կործանումից հետո Զաքարիա մարգարեի կինը՝ Եղիսաբեթը, այն թաքցրել է ժայռի մեջ: Նրա որդուց՝ Հովհաննեսից հետո յուղը փոխանցվել է Մարիամ Մագդաղենացուն, ապա՝ Թադեոս առաքյալին, հետո՝ *Գրիգոր Ա Լուսավորչին*...: Ըստ մեկ այլ ավանդության՝ հայկ. Մ. Հիսուսի ձեռքով օրհնված այն ձիթայուղն է, որ նրա առաքյալներն են բերել Հայաստան (Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին, 1993, էջ 168): *Արիստակես Լաստիվերցու* և Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, երբ *Պետրոս Ա Գետադարձ* կաթողիկոսը *Ջրօրհնեքին* Մ. հեղել է գետի մեջ՝ Աստվածահայտնության տոնի առթիվ, շուրջը լույս է փայլատակել, և, իբրև ապացույց հայկ. Մ-ի սրբության, գետն առժամանակ կանգ է առել, անշարժացել...

Հայաստանյայց եկեղեցում Մ-ի կիրարկումը գալիս է առաքելական ժամանակներից: Ավանդության համաձայն՝ Մ. օրհնել է Գրիգոր Ա Լուսավորիչը՝ Ս. Էջմիածնում. այն փոխանցվել է սերնդեսերունդ, ընդ որում, Մյուռոնօրհնեքի ընթացքում հին, լուսավորչավանդ ս. Մ. մշտապես խառնվում է նորի հետ՝ հնավանդ սրբալույս չնորհը նորի մեջ փոխանցելու նպատակով: Հայ եկեղեցին Մյուռոնօրհնության ծեսը կատարում է 5–7 տարին մեկ. օրհնության իրավունքը վերապահվում է կաթողիկոսին՝ ըստ *Հովհաննես Գ Օձնեցու* հաստատած կանոնի: Նախապես Մ. օրհնվել է Ավագ հինգշաբթի օրը՝ *Պատարագի* ընթացքում, սակայն հետագա դարերում տեղափոխվել է եկեղեց. այլ տոն օրեր ևս (*Հոգեգալուստ, Խաչվերաց* ևն): Վերջին շրջանում Հայ եկեղեցում Մյուռոնօրհնությունը կատարվում է աշնանը, Պատարագի արարողությունից հետո: Կանոնի համաձայն, Մյուռոնօրհնությունից քառասուն օր առաջ ձիթենու յուղով լեցուն կաթսան դրվում է Մայր տաճարի Ավագ սեղանի վրա. ամեն օր կատարվում է հատուկ պաշտոն՝ քարոզ, աղոթք ևն, երեկոյան՝ նաև հսկման կարգ: Մյուռոնօրհնության օրը, հատուկ ծիսակարգով, հոգևորական դասը թափորով տանում է Ս. Էջմիածնի սրբությունները՝ Ավետարանները, սուրբ Մ-ի նյութերի սափորը, հին Մ-ով լի Մյուռոնաղավնին, ս. Կենաց Փայտը, Աստվածամուխ *Գեղարդը, Լուսավորչի Աջը, Հակոբ Մծբնացի* հայրապետի Աջը և այլ սրբություններ: Մյուռոնօրհնությունը կատարվում է խորհրդավոր ծեսով, կաթողիկոսի՝ Վեհափառ հայրապետի առաջնորդությամբ, որն «Առաքելո աղաւնոյ» շարականը երգելով՝ մյուռոնաբույր կաթսայի մեջ է հեղում ծաղիկների հյութը, բալասանը, հին Մ. և Գեղարդով, Լուսավորչի Աջով ու այլ սրբություններով տյառնագրում (խաչակնքում) ս. Մ.: Ապա կաթսան փակվում է կափարիչով ու յոթ շղարշներով: Նոր և հին Մ. խառնվում են իրար:

XX դ. Ս. Էջմիածնում Մ. օրհնվել է ինն անգամ: XXI դ. հայոց առաջին Մյուռոնօրհնությունը կատարել է Գարեգին Բ կաթողիկոսը 2001-ի սեպտ. 22-ին:

Ներկայումս քրիստոնյա եկեղեցիներում առկա է Մ-ի պատրաստման երկու եղանակ. պարզ, որի հիմքում ձիթենու յուղն է, և բաղադրյալ՝ ձիթենու մաքուր յուղին ավելացրած բալասան և զանազան համեմունքներ: Հայ եկեղեցին ընդունել է Մ-ի պատրաստման բաղադրյալ եղանակը: Բաղադրիչները՝ նարդոս, դարչին, խունկ, մշկընկույզ, ծառի խեժ, ծաղկահյութեր ևն (ավելի քան 40՝ բուսական ծագում ունեցող նյութեր, ինչպես նաև կտավատի ձեթ և գինի) մեծ մասամբ բերվում են տարբեր երկրներից (Իսրայել, Հնդկաստան, Պաղեստին, Սոմալի ևն): Հիշյալ նյութերը որոշակի հաջորդականությամբ լցնում են օրհնված կաթսայի մեջ, երկու օր շարունակ եռացնում թույլ կրակի վրա, ապա զանգվածը քամում մաքուր կտավներով և պահում մինչև Մյուռոնօրհնության օրը: Այս ամենը կատարվում է խորհրդավոր արարողությամբ, բարեպաշտական երկյուղածության մթնոլորտում:

Մ-ի պատրաստման վերաբերյալ մանրամասն հրահանգներ կան Մաշտոցում:

Տես նաև *Օծում*:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.6, 3–7-րդ պատկերները:

Գրկ. Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին, Վաղ-պատ, 1890: Մաշտոց, Վաղ-պատ, 1905, էջ 54–56: Գարեգին Բ Կաթողիկոս, Հող, մարդ և գիր, Անթիլիաս, 1991: Սրբալույս Մյուռոնը և Մյուռոնօրհնեքը Հայաստանյայց եկեղեցու ավանդության մեջ (աշխատասիր. Մուշեղ սարկավագ Ժոռոյանի), Ս. Էջմիածին, 1996: Սրբալույս Մյուռոն (հոդ. ժող.), Ս. Էջմիածին, 2001:

Լևոն Սարգսյան

ՄՇԿԱՎԱՆՔ

ՄՇԿԱՎԱՆՔ, Մշակավանք, ՀՀ Տավուշի մարզի Կողբ գյուղի մոտ, անտառապատ բարձրադիր սարահարթի վրա: Պահպանվել են Ս. Աստվածածին եկեղեցին և արմ-ից կից գավիթը: Կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Մ-ի եկեղեցին 1219-ին հիշատակվում է իբրև կանգուն կառույց («Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», 1862): Եկեղեցին հատակագծում քառակուսի միանավ դահլիճ է՝ ծածկված կիսագլանային թաղով: Խորանի երկու կողմերում երկհարկ նեղ ավանդատներ են: Երկայնական ճակատներից բացվում է մեկական կլոր պատուհան: Արլ. ճակատին, Ավագ խորանի պատուհանից վեր, ոճավորված խաչ է, որի վերին թևում պատկերված է ցուլի գլուխ: Միակ՝ արմ. մուտքը բացվում է դեպի գավիթ, որը վերարտադրում է փոխհատվող զույգ կամարների համակարգով անսյուն

Մշկավանքը (XIII դ.) հվ-արլ-ից

կենտրոնակազմ գավիթների հորինվածքը՝ արմ-ից երկարացված լրացուցիչ տարածությամբ (ինչպես *Հաղպատի վանքի, Գանձասարի վանքի* գավիթներում): Վերջինս գավթի քառակուսի մասից բաժանվում է կլոր հատվածքի զույգ զանգվածեղ սյուներով: Փոխհատվող զույգ կամարների կառուցվածքային հնարքը կիրառված է նաև գավթի կենտր. մասի ծածկում: Մուտքն արմ-ից՝ պսակված հեռանկարային շքամուտքով, որը երիզված է բազմագույն ձևավոր քարերով զարդարված շրջանակով: Մ. հարուստ է խաչքարերով և վիմ. արձանագրություններով: Շուրջը հին գերեզմանատուն է: Վերականգնվել է 1955–60-ին:

Գրկ. Բարսեղյան Լ., Մշակավանք, «Էջմիածին», 1959, № 3: Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986: *Якобсон А.Л., Из истории армянского средневекового зодчества. Монастыри XIII в. Хоракерт и Мшкаванк, "Советская археология", XIV, 1950.*

Գառնիկ Շախկյան

«ՄԵՌ ՃԱՌԸՆՏԻՐ», Տ օ ն ա կ ա ն, հայերեն ամենամեծ մագաղաթե ձեռագիրը (55,5x70,5 *սմ*, քաշը՝ 28 *կգ*): Գրվել և պատկերազարդվել է 1200–02-ին, Երզնկայի Ավագ վանքում: Գրիչ՝ Վարդան Կարնեցի, ծաղկող՝ Ստեփանոս, պատվիրատու՝ Բաբերդի տանուտեր Աստվածատուր: Ձեռագիրը դեռևս անավարտ էր (գրված չէր հիշատակարանը և պատրաստ չէր կազմը), երբ ավերվել է Բաբերդ քաղաքը, Աստվածատուրը սպանվել, իսկ ձեռագիրն ընկել է մի թուրք դատավորի ձեռքը: Երկու տարի անց *Մշո Ս. Առաքելոց վանքի* վանականների հանգանակությամբ ձեռագիրը գնվել և տեղափոխվել է հիշյալ վանքը, որտեղ պահվել է մինչև 1915-ը: Մեծ եղեռնի օրերին կրկին փրկվել է ոչնչացումից. ձեռագրի մի մասը մեծ դժվարությամբ Երևան են բերել հայ գաղթական կանայք, մյուս մասը ռուս. բանակի սպա Նիկոլայ դե Ռոբերտին բերել է Թիֆլիս և հանձնել Հայկական գթության ընկերության թանգարանին: Այժմ ձեռագրի երկու մասերն էլ պահվում են Մատենադարանում (ձեռ. № 7729): «Մ. Ճ.»-ից ժամանակին անջատված էջերից 17 մագաղաթե թերթ պահվում է Վենետիկում, 1 թերթ՝ Վիեննայում:

«Մ. Ճ.» ըստ տարվա տոների դասավորված ճառերի, վարքերի, վկայությունների, պատմ. քաղվածքների և ներբողների ժողովածու է: Այստեղից էլ՝ Տօնական անունը: Ձեռագիրը մեծ արժեք է ներկայացնում ինչպես իր պարունակած գրավոր նյութերով, այնպես էլ՝ նկարազարդումներով: Այն ունի չորս տերունական մանրանկար՝ «Քրիստոսը բազմած գահին», «Ծնունդ», «Մկրտություն», «Մուտք Երուսաղեմ», մեկ անվանաթերթ և բազմաթիվ ու բազմատեսակ լուսանցազարդեր: Ձեռագրի նկարազարդումներն առանձնանում են կատարման բարձր վարպետությամբ, վառ գույների ներդաշնակությամբ: Մատյանի մեծ չափերին համապատասխանում են խոշոր, բայց ոչ կոպիտ, ճկուն ուրվագծերով նկարված զարդերը: «Մ. Ճ.» գրված է գեղեցիկ դասական երկաթագրով, որն առանձին հմայք է հաղորդում ձեռագրին:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.7, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Հովսեփյան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Անթիլիաս, 1951: Մաթեվոսյան Ա., Ե՞րբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական-Ճառընտիրը, ԲՄ, № 9, 1969: *Дурново Л., Краткая история древнеармянской живописи, Е., 1957, с. 29–30;* Der Nersessian S., L'art Arménien, P., 1977, p. 208–220; Esbroeck Van M., Répertoire de l'Homélaire de Muš (Maténadaran 7729), "Revue des études arméniennes", t. XVIII/1–2, 1984, p. 237–280.

Էմմա Կորխմազյան

ՄՇՈ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ, Ս. Ղազարի վանք, Տիրինկատարի վանք, Ս. Թադեոս վանք, Ս. Թարգմանչաց վանք, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում, Մուշ քաղաքից 4 *կմ* հարավ: Ըստ ավանդության, 312-ին հիմնել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*, առաքյալների՝ Հռոմից բերած մասունքների վրա: Առաջին վանահայրը եղել է *Զենոբ Գլակի* եղբայր Եղիազարը (այստեղից էլ՝ Ղազարի վանք անունը): Վանքը հայտնի է դարձել XI դարից, բարգավաճել՝ XII դ.: Գլխ.՝ Ս. Առաքելոց եկեղեցին (XI դ.) աղյուսաշեն է, ունի ներքուստ խաչաձև, անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք: Արլ. կողմում կա XI–XII դդ. արձանագրություններով, նրբահյուս զարդաքանդակներով 3 խաչքար: Ըստ խաչքարերից մեկի արձանագրության, վանքը 1125-ին նորոգվել է: XII դ. որպես նվիրատվություն Թոռնիկյան իշխաններից ստացել է Բերդակը՝ իր շրջակա հողերով: XIV դ. վերջին՝ Լենկթեմուրի արշավանքների ժամանակ, Մշո դաշտավայրի բնակչությունն ապաստանել է պարիսպներով պաշտպանված Մ. Ս. Ա. վ-ում: 1439-ին Մուշի ամիրայի հրոսակախումբը կողոպտել է վանքը: Այն նորոգելու համար 1517-ին վանահայր Թադևոս եպիսկոպոսը հանգանակություն է կատարել: 1555-ին վանահայր Կարապետ Բաղիշեցին Ս. Առաքելոց եկեղեցուն արմ-ից կից կառուցել է քարաշեն, չորս մույթերով, ուղղանկյուն հատակագծով դավիթ: 1597-ին Բարսեղ վարդապետը կառուցել է վանքի ջրաղացը, 1609-ին՝ բարձրացրել պարիսպները: 1663-ին Ս. Առաքելոց եկեղեցուն հվ-ից կից (XIV դ. ավերված շենքի հիմքի վրա) կառուցվել է Ս. Ստեփանոս միանավ, թաղածածկ քարաշեն եկեղեցին, իսկ հս-ից կից նշմարվում են Ս. Գևորգ եկեղեցու հետքերը:

XVII դ. վանքը բազմաթիվ նվիրատվություններ է ստացել: 1791-ին Հովհաննես վարդապետը դավթի արմ. մուտքի առջև կառուցել է եռահարկ, ութսյուն ռոտոնդայով զանգակատուն և վերակառուցել պարիսպները: 1888-ին վանքում բացվել է նախակրթարան: 1915-ին Մ. Ս. Ա. վ. ավերվել է և լքվել:

Վանքի համալիրից մոտ 300 *մ* արլ. կանգուն է համեմատաբար լավ պահպանված Ս. Թադեոս գմբեթավոր ոչ մեծ եկեղեցին (XI–XII դդ.), որի կառուցող. տեխնիկան եզակի է, պատերի արտաքին շերտը շարված է սրբատաշ տուֆով, իսկ ներսը՝ աղյուսով: Միջնադարյան Հայաստանի կիրառ. արվեստի լավագույն նմուշներից է Մ. Ս. Ա. վ-ի փայտե դուռը (1134, քանդակազարդող վարպետ՝ Ղուկաս գծող, ՀՊՊԹ): Փեղկերը ծածկված են երկրաչափ., շրջանակի կողերը՝ առասպելական և



Մշո Ս. Առաքելոց վանքի ընդհանուր տեսքը

իրական կենդանիներ պատկերող զարդանախշերով, իսկ բարավորը՝ զինված հեծյալների բարձրարվեստ հարթաքանդակներով:

Մ. Ս. Ա. վ-ում մշակութ., գիտ. կյանքը սկսվել է դեռևս հիմնադրումից: Արդեն V դ. թարգմանություններ են կատարվել (այստեղից էլ վանքի մյուս՝ Ս. Թարգմանչաց անունը): Մ. Ս. Ա. վ-ի դպրոցը զարգացում է ապրել XI դ. վերջին և XII դ. սկզբին՝ վանահայր *Պողոս Տարոնեցու* օրոք և իր ծաղկմանը հասել 1271–81-ին, երբ *Վարդան Արևելցու* մահից հետո *Ներսես Մշեցին* խոր վիրապից այստեղ է տեղափոխել վարդապետարանը, որտեղ ուսանելու են եկել Հայաստանի տարբեր վայրերից, նաև Կիլիկիայից: Մ. Ս. Ա. վ-ի բարձրագույն դպրոցից մեզ ձեռագրեր են հասել Ներսես Մշեցու, նրա աշակերտ *Եսայի Նչեցու*, Բարսեղի, Ստեփանոսի և ուրիշների ընդօրինակություններով: Բազմաթիվ ընդօրինակություններ են կատարվել 1205–1915-ը՝ վանքում պահպանված «*Մշո Ճառընտիր*»-ից:

Գրկ. Ոսկյան Հ., Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վնն., 1953: Ղազարյան Մ., Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, Ե., 1989: Thierry J.M., Le couvent des Saint-Apôtres de Mus, ՀԱ, 1976, № 1–2.

Մուրադ Հասրաթյան

ՄՇՈ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ, Մշո Սուլթան Ս. Կարապետ, Գլակավանք, Ինակնյան վանք, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում, Մուշ քաղաքից հյուսիս-արևմուտք, Քարքե լեռան լանջին: IV դ. սկզբին հիմնել է *Գրիգոր Ա Լուսավորիչը* Գիսանե և Դեմետրե հեթանոս. կուռքերի մեհյանի տեղում՝ այդտեղ ամփոփելով Կեսարիայից բերած *Հովհաննես Մկրտչի* (Կարապետ, որի անունով էլ կոչվել է Ս. Կարապետ) և Աթանագինե եպիսկոպոսի մասունքները: Նա առաջին վանահայր է կարգել *Զենոբ Գլակին* (որի անունով վանքն անվանվել է նաև Գլակավանք) և վանքին նվիրել նախկին մեհյանի տիրույթները: Մ. Ս. Կ. վ. անվանվել է նաև Ինակնյան՝ ինն աղբյուրների մոտ կառուցված լինելու պատճառով:

Գրիգոր Ա Լուսավորիչը վանքի առաջին՝ Ս. Կարապետ եկեղեցին կառուցել է Դեմետրեի մեհյանի տեղում և, ինչպես հավաստում է Զենոբ Գլակը, «եկեղեցու հիմքը դրված է ճիշտ նույն տեղում, նույն չափով՝ լայնությամբ և երկարությամբ ու միայն այն տարբերությամբ, որ աղոթարանը (երկրպագելու կողմը) դեպի արևմուտք էր»: Ըստ Մ. Ս. Կ. վ-ի կանոնադրության՝ խստորեն արգելվել է կանանց մուտքը վանք:

Մշո Ս. Կարապետ վանքը հվ-արմ-ից

Գրիգոր Ա Լուսավորիչը, թողնելով հայրապետ. աթոռը, եկել է Մ. Ս. Կ. վ., սկզբում հաստատվել մոտակա Ավետյաց բլրում, *Անտոն* և *Կրոնիդես* անապատականների մոտ, այնուհետև տեղափոխվել Մանյա այրք:

Ըստ VII դ. պատմիչ Հովհան Մամիկոնյանի, 602-ին վանքն ավերվել է երկրաշարժից. վերակառուցել է իշխան Մուշեղ Մամիկոնյանը: VII դ. Մ. Ս. Կ. վ. ծաղկում է ապրել. ունեցել է 398 միաբան, նվիրատվություն ստացել բազմաթիվ գյուղեր: Վանքը դարձել է նաև Մամիկոնյան իշխան. տան տոհմական տապանատուն: Վանահայր Ստեփանոսը *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսից վերցրել է *Հռիփսիմյանց կույսերի* մասունքներից, բերել Մ. Ս. Կ. վ., ապա կառուցել վանքի Ս. Ստեփանոս եկեղեցին:

XI դ. վանահայր Սարգիս եպիսկոպոսի հետ նամակագրություն է ունեցել *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*, որի գործակալ, Վասակ իշխանի որդի Հրահատը կառուցել է Մ. Ս. Կ. վ-ի ապարանքը: Ըստ պատմիչ Արիստակես Լաստիվերցու, 1058-ին սելջուկ-թուրքերը գրավել և հրդեհել են վանքը. այրվել են ապարանքը, ժամատունը և Ս. Գրիգոր փայտաշեն եկեղեցին: Նույն թվականին Թոռնիկ իշխանը Դինար ամիրայից ազատագրել է Մ. Ս. Կ. վ.:

XIII դ. վանքում *Հովհաննես Երզնկացին* (Պլուզ) գրել է շարական՝ ձոնված Անտոն և Կրոնիդես անապատականներին: XIII–XIV դդ. վանքը որպես նվիրատվություն ստացել է բազմաթիվ ձեռագրեր: XIV–XV դդ. եղել է գրչության կենտրոն:

Լենկթեմուրի ասպատակությունների ժամանակ գավառի բնակչության մի մասն ապաստանել է պարիսպներով պաշտպանված վանքում: 1441-ին Մ. Ս. Կ. վ-ի միաբանությունը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ Հայոց հայրապետ. աթոռը Էջմիածնում վերահաստատելու համար:

1463-ին վանահայր Հովհաննես եպիսկոպոսն ամբաստանվել է մզկիթ քանդելու և դրա քարերը վանքի Ս. Կարապետ ու Ս. Ստեփանոս եկեղեցիների նորոգման ժամանակ օգտագործելու համար: Այդ պատրվակով Բաղեշի ամիրան նրան տանջամահ է արել: 1481-ին նորոգվել են վանքի եկեղեցիների գմբեթները: 1493-ին Կարապետ աբեղան պատրաստել է Մ. Ս. Կ. վ-ում պահվող՝ Հեթում թագավորի Ավետարանի ոսկեզօծ և արծաթապատ պահպանակը, որի վրա դրվագված են Քրիստոսը գահի վրա նստած, նրա դիմաց Աստվածածինը՝ շրջապատված 12 առաքյալներով:

1529-ին Աստվածատուր եպիսկոպոսը գրել է Մ. Ս. Կ. վ-ի պատմությունը: XVI դ. 1-ին կեսին վանահայր Գրիգոր Մշեցին կառուցել է վանքի դպրոցը, խցերը: 1560-ական թթ. վանահայր Մելքիսեդեկը հիմնովին վերակառուցել է Ս. Կարապետ եկեղեցին: 1570-ական թթ. թշնամիներից թաքստոցում պահված ձեռագրերը զգալի վնասվել են, և Սիմեոն սարկավագը ձեռագրերը տարել է Ամիդ՝ նորոգելու:

XVII դ., *Մովսես Գ Տաթևացու* դահակալության օրոք, Սահակ եպս. Գառնեցին փորձել է Մ. Ս. Կ. վ-ում Մայր աթոռ Ս. Էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն հիմնել՝ ստանալով Թուրքիայի սուլթան Մուրադի արտոնագիրը: 1661-ին Արիստակես Պարոնտերը նորոգել է վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու գմբեթը, թաղերը, պարիսպը, աղբյուրը: 1709-ին Մ. Ս. Կ. վ. ավերվել է երկրաշարժից: *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի* և *Գրիգոր Շղթայակիր* եպիսկոպոսները վանքի նորոգման համար Բաղեշում արտոնագիր են ստացել և Կ. Պոլսում հանգանակած գումարով նորոգել այն: 1716–30-ին վանքի առաջնորդն է եղել Աբրահամ եպիսկոպոսը (*Աբրահամ Ա Խոշաբեցի*): 1749-ին վանահայր Մինասը կառուցել է վանքի ագարակը:

1750-ական թթ. պարսից զինվորները հրդեհել են Ս. Կարապետ եկեղեցին: 1763–64-ին վանահայր Հովնանը Արմ. Հայաստանն ազատագրելու նպատակով կապեր է հաստատել Վրաստանի Հերակլ II թագավորի և Հովսեփ Էմինի հետ:

1784-ին երկրաշարժից քանդվել են Ս. Ստեփանոս եկեղեցու գմբեթը, սեղանատունը, խցերը, պարսպի մի մասը, զանգակատունը: 1787–88-ին վանքը հիմնովին վերակառուցվել է, գավթի հաշվին ընդարձակվել է Կաթողիկե եկեղեցին: Մ. Ս. Կ. վ-ի հնագույն՝ Ս. Կարապետ վկայարանը գմբեթավոր դահլիճ է, որի հս-արմ. որմնախորշում ամփոփված են Հովհաննես Կարապետի, իսկ հվ-արմ-ում՝ Աթանագինեի մասունքները: Ավագ խորանի առջևի պատին ագուցված է 1718-ի մարմարյա չորս խաչքար: Եկեղեցու հս. կողմում, միմյանց կից, Գրիգոր Ա Լուսավորչի նեղ և մութ ճգնարանն է և Ս. Գևորգ թաղածածկ եկեղեցին, իսկ հս. կողմում՝ ներքուստ խաչաձև, անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր Ս. Ստեփանոս և խոշոր, թաղածածկ Ս. Աստվածածին եկեղեցիները: Վերջինս կառուցել է իշխան Վարդ Պատրիկ Արծրունին՝ իր կնոջ՝ Մարիամի հիշատակին: Ըստ ավանդության, նա պատժվել էր մահով, քանի որ անտեսել էր կանանց՝ Մ. Ս. Կ. վ. մուտք չունենալու կարգը:

Նշված չորս եկեղեցիների մուտքերը բացվում են վանքի գլխ.՝ Կաթողիկե եկեղեցու մեջ, որը բավական մեծ, քառակուսի հատակագծով, 16-սյունանի հնգանավ բազիլիկ է: Նրա միջին նավն արլ-ում ավարտվում է Ավագ խորանով, կողայիններից հս-ը՝ Հակոբ Տյառնեղբորը, իսկ հվ-ը՝ Գրիգոր Ա Լուսավորչին նվիրված սեղաններով խորաններով: Կաթողիկեի արմ. մուտքի առջև 1787-ին Աստվածատուր եպիսկոպոսը կառուցել է եռաստիճան, երկրորդ հարկում՝ Ս. Հոգուն նվիրված սեղանով խորան և ութայուն ռոտոնդայով պսակված սլացիկ զանգակատուն:

Վանքը շրջապատված է ուղղանկյուն հատակագիծ ունեցող պարսպով, որին կից են երկհարկանի բնակելի և տնտ. շենքերը և պատով անջատված՝ ուխտավորների սենյակները:

1827-ին վաչկատուն քրդերի հրոսակախումբը հարձակվել է Մ. Ս. Կ. վ-ի վրա, կողոպտել գանձերը և սպասքը, ոչնչացրել կահկարասին, ձեռագրեր, կտրատել նկարները, որից հետո վանքը շուրջ վեց ամիս մնացել է լքված:

1839-ին Հարություն եպս. Եդեսացին կառուցել է առաջնորդարանի երկհարկանի շենքը, Կաթողիկե եկեղեցու կենտրոնում տեղադրել վանահոր՝ ամպհովանիով գահավորակը, իսկ ագուլիսցի Սարգիս Ամիրջանյանը նվիրել է ս. Ստեփանոսի և Աստվածածնի նկարները: 1840-ին վանահայր Պետրոս Կյուրացին կառուցել է վանքի հս. կողմի շինությունները, 1850-ին Զաքարիա վարդապետը՝ վանքի դպրոցը, 1875–76-ին Մամբրե եպիսկոպոսը՝ Նոր վարժարանը:

Վանքի հեղինակությունն աճել է 1860–80-ական թթ., երբ վանահայր են եղել Խրիմյան Հայրիկը (*Մկրտիչ Ա Վանեցի*) և Գարեգին Սրվանձտյանցը: 1883-ից վանահայր է դարձել Մաղաքիա *Օրմանյանը*: 1896-ից վանքին կից բացվել է որբանոց և 45 աշակերտով դպրոց:

1900–02-ին վանքը նորոգվել է: XIX դ. և XX դ. սկզբին Մ. Ս. Կ. վ. մեծ թեմ է ունեցել, որն ընդգրկել է Տարոն, Վարդո, Ճապաղջուր, Բուլանըխ և այլ գավառների հայաբնակ գյուղերը, ստացել զգալի հասույթներ, նվիրատվություններ, գյուղացիներից գանձել պտղի հարկ: Վանքը եղել է գրչության, կրթության և մշակութ. կենտրոն, ունեցել է խոշոր մատենադարան: Եղել է Հայաստանի երկրորդ հոգևոր կենտրոնը՝ Էջմիածնից հետո: Կոչվել է «մենաստանների մայրաքաղաք», նշանավոր ուխտատեղի (նաև արևելահայերի համար): Ուխտագնացության օրերն են եղել Վարդավառի և Աստվածածնի Վերափոխման տոները, երբ տեղի են ունեցել նաև աշխարհիկ հանդեսներ, կազմա-

կերպվել տոնավաճառներ: Մ. Ս. Կ. վ. համարվել է ամենակարող, իղձերն իրագործող, բուժող, չնորհք պարգևող (ներառյալ՝ նաև արվեստի): Ժող. բանահյուսության մեջ պահպանվել են Մ. Ս. Կ. վ-ին նվիրված ուխտագնացության երգեր:

Վանքի պարսպի մոտ եղել է Ս. Լուսավորիչ անունով աղբյուր, որի քառակուսի ավազանը, ըստ ավանդության, պատրաստել էր Տրդատ Գ Մեծ թագավորը, իսկ Գրիգոր Ա Լուսավորիչն այնտեղ բազում մկրտություններ է կատարել:

Մեծ եղեռնի օրերին Տարոնի հայ բնակչության զգալի մասն ապաստանել է վանքում և շրջակա անտառում, երկու ամիս դիմադրել թշնամու գերակշռող ուժերին: Հաջողվել է փրկել վանքում եղած 1750 ձեռագրերը, որոնք 1916-ին, երբ ռուս. զորքը և հայ կամավոր. ջոկատներն ազատագրել են Տարոնը, տեղափոխվել են Էջմիածին (այժմ Երևանի Մատենադարանում են):

Ներկայումս Մ. Ս. Կ. վ. ամբողջովին ավերված է: Վանքի մոտ՝ Անտոն և Կրոնիդես անապատականների գերեզմանի վրա կանգնեցված Ս. Հարություն եկեղեցու տեղում մզկիթ է կառուցվել:

Մատենադարանում պահվում են Մ. Ս. Կ. վ-ում ընդօրինակված ձեռագրերից Ավետարաններ (1505, 1509, 1512, երեքն էլ՝ գրիչ Մարտիրոս), Հայսմավուրքներ (1526, գրիչ՝ Կարապետ Բաղիշեցի, 1591, գրիչ՝ Ծերենց), Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Թղթոցն Պօղոսի» (1613, գրիչ՝ Փիլիպպոս Բազվեցի), Մկրտիչ Նախիջևանցու ընդօրինակած Ժողովածու (1737), Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Ղուկասու» (1738) ևն:

Գրկ. Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Ե., 1989: Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., 1971: Սարգիսյան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վնտ., 1864: Ոսկյան Հ., Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վնն., 1953: Թիերի Ժ. Մ., Արևելյան Թուրքիա կատարած հնագիտական ճանապարհորդական նոթեր, «Հուշարձան», տարեգիրք, 1, Ե., 1987: Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ՄՈԽՐԵՆԵՍԻ ՕԽՏԸ ԴՌՆԻ ՎԱՆՔ, ԼՂՀ Հադրութի շրջանի Մոխրենես գյուղից 3,5 *կմ* հյուսիս-արևմուտք, Յուղուսեն լեռան անտառապատ լանջին: Վանքի եկեղեցին կառուցվել է V–VI դդ., կոպտատաշ բազալտ քարով: Ունի քառախորան, չորս անկյուններում երեք քառորդ խորշերով կենտրոնագմբեթ հորինվածք (գմբեթը քանդված է) և «հռիփսիմեատիպ» եկեղեցիների հնագույն օրինակն է: Խորանները և խորշերը արտաքուստ բոլորաձև են, ներքուստ՝ շեշտված պայտաձև, ինչպես և գմբեթարդները: Արլ. խորանի որմնայուների խոյակներն ունեն խիստ արխաիկ, ատամնագնդիկավոր զարդամոտիվներով քանդակներ:

Եկեղեցու հս-արմ. կողմում միանավ թաղածածկ մատուռի ավերակներն են. պահպանվել են խորանը, պատերի ստորին շարքերը և հս. մուտքը՝ վաղմիջնադարյան ճարտ-յանը բնորոշ լյունետով: Մ. Օ. դ. վ-ի գերեզմանոցում խաչքարերից վաղագույնը 997-ինն է, եկեղեցու հվ-արմ. կողմում կանգուն, վանքի միաբան Կանդիլի խաչքարը՝ 1044-ինը:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.7, 3-րդ պատկերը:

Գրկ. Մկրտչյան Շ., Աբգարյան Ռ., Կարապետյան Ս., Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքը, «Էջմիածին», 1982, № 11–12: Hasratyan M., La tetraconque a niches d'angle de Moxrenis, "Revue des études arméniennes", t. XXI, 1988–89.

Մուրադ Հասրաթյան

ՄՈԿԱՑ Ս. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ, Փութկու վանք, Սարի վանք, Վասպուրական նահանգի Մոկաց գավառում, Արտոս լեռնաշղթայի Եղերով լեռան արևելյան լանջին (ծովի մակերևույթից 2400 *մ* բարձրության վրա): Հիմնել են Վասպուրականի Արծրունյաց թագավորները՝ X–XI դդ.: XIV–XV դդ. վանքում գործել է դպրոց, որտեղ ուսանել են գրիչներ, ընդօրինակվել ձեռագրեր: XVI դ. սկզբին դպրոցը փակվել է, սակայն գրչատունը գոյատևել է մինչև XVII դ.: Հայտնի են գրիչներ Աստվածատուրը և նրա որդիներ Ստեփանոսն ու Հովհաննեսը: 1601-ին Ստեփանոս եպիսկոպոսի նախաձեռնությամբ վանքը նորոգվել է, թաղածածկ դահլիճի հորինվածքով Ս. Գևորգ եկեղեցուն արմ-ից կցվել է երկմույթ գավիթ: 1839-ին շրջակայքում բնակվող քրդերը ներխուժել են վանք, սպանել վանահորը: 1887-ին Աղթամարի կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյանը նորոգել է վանքը, կառուցել եկեղեցուն հվ-ից կից մատուռ (որտեղ պահվում են ս. Գևորգի մասունքները), հյուրատուն:

XIX դ. վերջին Մ.Ս.Գ.վ-ի ձեռագրերը տեղափոխվել են *Աղթամարի վանք*:

Գրկ. Շերենց Գ., Սրբայրեր, Թ., 1902: Լալայան Ե., Վասպուրական. նշանավոր վանքեր, ԱՀ,

գիրք 22, Թ., 1912: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 3, Վնն., 1947: Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988; Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

«ՄՈՂՆՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ», պատկերազարդ, երկաթագիր, ձեռագիր մատյան: Գրիչն ու ծաղկողը Հովհաննես Սանդղկավանեցին է: Ձեռագրի ընդօրինակման վայրի ու ժամանակի մասին որևէ տեղեկություն չի պահպանվել: Սակայն, ելնելով 1053-ի Ավետարանի (Մատենադարան, ձեռ. № 3593) մի քանի մանրանկարների հետ «Մ.Ա.»-ի անառարկելի նմանությունից, համարվում է, որ այն նկարազարդվել է XI դ. կեսին, Սանդղկավանքում: Ուշ միջնադարում եղել է *Հաղպատի վանքում*, ապա՝ հարյուր տարի (1822–1922) Թիֆլիսի Մուղնու Ս. Գևորգ եկեղեցում (այստեղից էլ՝ անունը): Այժմ պահվում է Մատենադարանում (ձեռ. № 7736, չափերը՝ 42x32,5 *սմ*, 383 մագաղաթե թերթեր, կազմը՝ թավշապատ, արծաթազարդ):

Ձեռագիրը պատկերազարդված է 10 *խորաններով* (3-ը Եվսեբիոսի թուղթն է ուղղված Կարպիանոսին, 7-ը կանոնների աղյուսակներ են), 12 լիաէջ տերունական տեսարաններով (առաջին երկուսը՝ նույն էջում), որոնք դասավորված են ձեռագրից առաջ («Ավետում», «Մարիամի այցը Եղիսաբեթին», «Ծնունդ», «Տյառնընդառաջ», «Մկրտություն», «Պայծառակերպություն», «Ղազարոսի հարությունը», «Մուտք Երուսաղեմ», «Խորհրդավոր ընթրիք», «Խաչելություն», «Համբարձում», «Հոգեգալուստ»), 4 ավետարանիչների պատկերներով, 4 անվանաթերթերով և լուսանցազարդերով: «Մ. Ա.»-ի գեղանկարչությանը բնորոշ է հանդիսավորությունն ու վեհակերտությունը: Այդ տպավորությունն ստեղծվում է և՛ չափերի մեծությամբ, և՛ մանրանկարների ոճով: Հորինվածքները պարզ են ու ձգտում են զուգաչափության: Խոշոր կերպարները հանդարտ, վեհորեն շարժվում են լեռնային բնանկարի և բարդ ճարտ. կառուցվածքի միջով (նշմարվում են հայկ. բնանկարների ծանոթ գծերն ու ազդ. ճարտ-յան բնորոշ ձևերը): Այս ամենը պատկերված է խիտ երկնագույն ֆոնի վրա: Ֆոնը և մյուս սպիտակավուն ներկերն ու ողջ վեհակերտ կերպարները՝ լեռները, ծառերը և անգամ «Ավետման», «Մարիամի այցելությունը Եղիսաբեթին» պատկերների դիրքը, մեկը մյուսի վրա տեսարանների դասավորությունը վկայում են «Մ. Ա.»-ի մանրանկարների սերտ կապը *որմնանկարչության* հետ (մասնավորապես՝ Ախթալայի) և հիմք են տալիս ենթադրելու, որ նրանց վարպետը կարող էր լինել նաև որմնանկարիչ:

«Մ. Ա.»-ի խորաններն աչքի են ընկնում նույնպիսի վեհաշուք հանդիսավորությամբ և նույնպես հագեցած են երկրաչափական զարդանկարների, բուսազարդերի, ծառերի պատկերների, այուների բոլորքը պարուրող վարագույրների և անգամ ճարտ. կառույցների տարրերով: Հատկապես հարուստ է խորանների կենդ. աշխարհը. բազմապիսի թռչունները, գազանները և ընտանի կենդանիները դրկից են արծվաձայծներին, սֆինքսներին ու հուշկապարիկներին, իսկ խորաններից մեկում պատկերված է, այսպես կոչված՝ «Նեղոսյան տեսարանը», որը «*Մլքե թագուհու Ավետարան*»-ի նմանատիպ պատկերի արձագանքն է: Երկու մերկ ձկնորսներ կանգնած են բարձրախել նավակում, նրանցից մեկը քաշում է ձկներով լի ցանցը. ջրի մակերևույթը ծածկել են մեդուզաները, իսկ առաջին պլանում սֆինքսն է և արծվաձայծները:

«Մ. Ա.» արդեն գրեթե ձևավորված միջնադարյան հին ձեռագրերի վաղ շրջանի նմուշներից է: Այստեղ կանոնիկ տեսք են ստացել ավետարանիչների դիմանկարներն ու անվանաթերթերը՝ ուղղանկյուն գլխազարդերով, խոշոր սկզբնատառերով, ավետարանիչների խորհրդանշաններով: Թանկարժեք նյութերի (նուրբ, թափանցիկ մագաղաթ, բազմերանգ գույներ և ոսկի), մանրանկարների գեղանկարչ. ու կատարող. արվեստի կատարելության, նրանց հանդիսավոր ոճի շնորհիվ «Մ. Ա.» դասվում է մեծաշուք տոնական ձեռագրերի շարքը:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.7, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Մաթեվոսյան Ա., Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողնու Ավետարանը»), ԲՄ, № 10, 1971: *Дрампян Р. Г., Армянская миниатюра и книжное искусство, сб. "Очерки по истории искусства Армении", М.-Л., 1939; Свирин А. Н., Миниатюра древней Армении, М.-Л., 1939; Дурново Л.А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; Измайлова Т. А., Иованнес Сандухкаванеци, Е., 1986.*

Նիկոլայ Քոթանջյան

ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ՄՈՄԻԿ, Մոմիկ Վարդապետ (ծ.թ. անհտ – 1333, այլ ենթադրությամբ՝ 1339 կամ 1340, Նորավանք), գրիչ, մանրանկարիչ, քանդակագործ, ճարտարապետ: Գլաձորի մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչ: Ստեղծագործել է Սյունիքում, մասնավորապես Վայոց ձորում, վաղ շրջանում, հավանաբար, նաև Կիլիկիայում: Աշակերտել է Հովասափ կուսակրոն քահանային, սովորել *Գլաձորի համալսարանում*: Որոշ ժամանակ կատարել է քարտուղարի (ատենադպիր) պարտականություններ: Մ-ի անունն առաջին անգամ հիշատակվում է 1283-ի «Տեսութիւն յայտնութեան Յովհաննու և մեկնութիւն» ձեռագրում (Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. № 571), որտեղ պահպանված միակ խորանի վրա գրված է. «զՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցեք աղաչեմ»: 1292-ին Մ. ընդօրինակել և նկարազարդել է (Քարկոփի վանքի Ս. Գևորգ եկեղեցու Հովհաննես և Թադեոս քահանա եղբայրների պատվերով) Նորավանքի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 2848), որտեղ պատկերել է երեք ավետարանիչներին և Պրոքորոնին (Մատթեոսի պատկերը կորել է): Մ-ի վաղ շրջանի մանրանկարներն աչքի են ընկնում մոնումենտալությամբ, դունային ներդաշնակությամբ, դիմանկարների արտահայտչականությամբ, զարդանկարի հստակությամբ:

Մ-ի լավագույն գործը (պատվիրել է Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանը) 1302-ին Ամաղուի *Նորավանքում* նկարազարդած Ավետարանն է («Պատերազմի Ավետարան», Մատենադարան, ձեռ. № 6792): Անվանումն ստացել է 1406–11-ին Տուրուբերանի Բզնունյաց գավառի Պատերազմի Ս. Նշան վանքում, որտեղ 1406-ին Գրիգոր վրդ. Խլաթեցին վերականգնել է վնասված ձեռագիրը: Անսովոր փոքր չափեր ունեցող ձեռագրում (12x8,5 *սմ*, էջում՝ 17 կերպար) Մ. վարպետությամբ զետեղել է Ավետարանի 12 տերուն. պատկերաշարի հիմն. տեսարանները, «Հովհաննես ավետարանիչը Պրոքորոնի հետ», Հակոբ և Պետրոս առաքյալների պատկերները, անվանաթերթեր, լուսանցազարդեր, զարդագրեր: Մ-ի տերուն. պատկերների կառուցվածքային հենքը վաղ. քրիստոնեական և XIII դ. վերջի – XIV դ. 1-ին կեսի պատկերագրությունն է՝ մեկնված ըստ Հայ եկեղեցու կանոնի: Մ-ի մանրանկարներին բնորոշ են հավաք. ճարտ. ֆոնը, դունային միջավայրի մեղմությունը, մանրանկարների համախմբումը:

Ենթադրվում է, որ Մ. ծաղկել է նաև 1283-ին ընդօրինակված «Կեռան թագուհու Ավետարանը» և 1287-ին Թեղենյաց վանքում գրված հիշատակարանում Դավիթ գրչի նշած «Մոմիկի շքեղազարդ» մատյանը: ԱՄՆ-ում գտնվող 1331-ի մի ձեռագիր հիշատակարանում (պատվիրել է Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի հայր, իշխան Տարսայիճը) Մ. վկայում է, որ 1307-ի աշնանը տեսողությունը վատացել է և պատվիրած Ավետարանը չի ավարտել (գրել է միայն համաբարբառը): Գործն ավարտել են գործընկերները՝ «Յոհանէս գրիչ զթերին ելից. եւ Թորոս՝ զվոսկենկարսն»: Շուրջ 17 տարի (1307–24) Մ-ի տեսողությունը թույլ է եղել. ենթադրվում է, որ այդ շրջանում նա զբաղվել է քանդակագործությամբ և ճարտարապետությամբ:

Մ. Նորավանքում կերտել է *Ստեփանոս Օրբելյանի* հիշատակին (անթվակիր, հավանաբար 1303-ից՝ մետրոպոլիտի մահից հետո), 1308-ին՝ իշխանուհի Թամթա Խաթունի պատվերով Տարսայիճ «ատապակի» հիշատակին և նրա որդիներ «Բուրթելի եւ Բուղտայի արեւշատության» (երկուսն էլ էջմիածնում են՝ Գանձատանը և Վեհարանում) խաչքարերը: Առաջինի վերնամասում Քրիստոսի քանդակն է, խաչի կողքերին՝ վեցական հյուսածո շեղանկյունիներ, երկրորդում «Բարեխոսություն» («Դեիսուս») հորինվածքն է՝ կիսախորաններում տեղադրված կերպարներով (կենտրոնում՝ Քրիստոսն է, ձեռքին գիրք՝ վրան գրված «Ես եմ լույսը աշխարհի», կողքերին՝ Աստվածամայրն ու Հովհաննես Մկրտիչը), որոնք իրենց գծանկարով և կատարման ոճով նախորդել են հետագայում Նորավանքում կերտված քանդակներին: Մ-ին են վերագրվում նաև Բուրթել և Իվանե Օրբելյաններին նվիրված նրբահյուս խաչքարի մի բեկոր, 1982–83-ի պեղումներով Նորավանքում գտնված խաչքարը՝ խաչի կողերի շեղանկյունիների մեջ 12 առաքյալների պատկերներով (այժմ՝ Եղեգնաձորի թանգարանում), Նորավանքի գլխավոր՝ Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու վերակառուցված գավթի մուտքի և լուսամուտի ճակատակալ քարերի քանդակները և Ս. Աստվածածին («Բուրթելաշեն») եկեղեցու բարձրաքանդակները: Մ. իր ստեղծագործությունները ստորագրել է «Մոմիկ Վարդապետ», այսինքն՝ ճարտարապետ:

Մ-ի ճարտարապետական վավերական (կա չին. արձանագրություն) գործը *Արենիի Ս. Աստվածածին եկեղեցին* է: Մ-ին է վերագրվում *Տաթևի վանքի* Ս. Գրիգոր (1295), Եղեգիսի Զորաց, Բուրթել իշխանի հանձնարարությամբ Նորավանքի Ս. Աստվածածին [«Բուրթելաշեն», որի նախանկարը (ենթադրաբար) կատարել էր դեռևս 1292-ին ծաղկած Ավետարանի լուսանցազարդում] եկեղեցիների շինարարությունը:

Աստվածաբան. հարուստ գիտելիքներով օժտված Մ. իր մանրանկարները և քանդակները կերտել է խորհրդանշական շեշտադրումներով, երբեմն՝ աննախադեպ հորինվածքներով: Մ. ստեղծել է քանդակակերտ ծաղկահյուս գորգերի և գահավորակների վրա նստած Աստվածամոր և Մանկան պատկերագր. մի ամբողջ շարք: Որպես գրիչ իր քանդակներում առանձին սիրով է ներառել հայոց գրերը՝ ստեղծելով, այսպես կոչված, «հայկ. առաջին արաբեսկները»:

Մ. ինքնատիպ մոտեցում է ունեցել Արենիի, Եղեգիսի եկեղեցիները, հատկապես՝ «Բուրթելաշեն»-ը հատակագծելիս: Վերջինս երկհարկ է, սլացիկ ռոտոնդայով պսակված, և յուրաքանչյուր հարկն ունի միմյանցից տարբեր հատակագիծ: Համեմատաբար վերգիդ համաչափություններ ունեցող երկրորդ հարկը և վերսլաց, այնուազարդ գմբեթը համակցված են զարմանալի ներդաշնակությամբ և հորինվածքային կուռ միասնություն են կազմում: Գետնից մինչև երկրորդ հարկի շքամուտքը տանող աստիճանները յուրօրինակ եռանկյունաձև շրջանակ կազմելով առաջին հարկի մուտքի համար, զուգակցվելով քանդակազարդ ճակատակալ քարերի ու զարդաքանդակ այլ մանրամասների հետ, ստեղծում են ճարտ. անկրկնելի կերպար: Եկեղեցու գմբեթին խորհրդանշական 12 այուների վրա պատկերված են Բուրթել իշխանը՝ եկեղեցու մանրակերտը ձեռքին, նրա որդիները, Աստվածամայրն իր Միածին Որդով և այլոք: Մ. իր գլուխգործոցում հասել է գեղարվեստի միջոցով մարդուն աստվածապաշտությամբ համակելու, վեհացնելու գաղափարին:

Նորավանքում Մ-ի հիշատակին կանգնեցված խաչքարը խիստ հողմահարության պատճառով, ունի տարընթերցումներ՝ «ՉՉԲ»-1333, «ՉՉԸ»-1339, «ՉՉԹ»-1340: Հավանականը 1339 է, որովհետև «Բուրթելաշեն»-ը ավարտվել է այդ թվին (փորագրված է եկեղեցու պատին): Մ-ի հիշատակին կանգնեցված խաչքարի խոսքերն են՝ «Յիշես Քրիստոս Աստված զՄոմկա հոգին եւ ողորմեա»:

Մ-ի արձանը կանգնեցված է Եղեգնաձորում՝ իր անունը կրող զբոսայգու մուտքի մոտ: Մ-ի անունով է կոչվում նաև Հայաստանում գործող քրիստոնեական մշակույթի միությունը (տես «*Մոմիկ*»):

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.8, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Մնացականյան Ս., XIV դարի հայ քանդակագործ, ճարտարապետ և նկարիչ Մոմիկը, ՊԲՀ, 1968, № 3: Թամանյան Յու., Ազատյան Շ., Մոմիկը որպես ճարտարապետ, «Էջմիածին», 1969, № 3: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Ե., 1987: Մաթևոսյան Կ., Մոմիկ, Ե., 1999: *Аветисян А., О художнике Момике*, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1956, № 2:

«ՄՈՄԻԿ», հայ քրիստոնեական մշակույթի երիտասարդական միություն, հասարակական կազմակերպություն: Ստեղծվել է 1991-ին, Երևանում, Ս. Էջմիածնի միաբան Աբրահամ վրդ. Մկրտչյանի նախաձեռնությամբ: Նպատակն է համախմբել ազգ-եկեղեց. թեմաներով ստեղծագործող երիտասարդներին, ծավալել հրատարակչ., մշակութ. գործունեություն: Ընդգրկում է հիմնականում արվեստագետների: Հայաստանի տարբեր քաղաքներում (Երևան, Վաղարշապատ, Գյումրի, Գորիս) և արտասահմանում (Կանադա) կազմակերպել է ցուցահանդեսներ, ներկայացրել քրիստոնեական թեմաներով և Հայ եկեղեցու պատմությանը նվիրված գեղանկարչական, մանրանկարչական և կիրառական արվեստի ստեղծագործություններ: Լույս է ընծայել գրքեր, կազմակերպել քրիստ. արվեստի պատմությանը նվիրված դասախոսություններ:

Կարեն Մաթևոսյան

ՄՈՎՍԵՍ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ (ծ. թ. անհտ – 461), Ամենայն հայոց կաթողիկոս 456-ից: Հաջորդել է *Մելիտե Ա Մանազկերտցուն*: Սերել է Աղբիանոսյանների տոհմից: Սկզբում եղել է Մանազկերտի եպիսկոպոսը: Մ. Ա Մ. իր գործունեությամբ հակված էր դեպի պարսկ. կողմնորոշում ունեցող նախարարները:

Կաթողիկոս. գահին Մ. Ա Մ-ուն հաջորդել է *Գյուտ Ա Արահեզացին*:

Գրկ. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՄՈՎՍԵՍ Բ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ (ծ.թ. անհտ – 604), Ամենայն Հայոց կաթողիկոս 574-ից: Հաջորդել է *Հովհաննես Բ Գաբեղենցուն*: Նրա օրոք գործածության մեջ է դրվել *Հայոց տոմարը*, որն ընդունվել էր դեռևս 551-ին: 591-ին Բյուզանդիայի կայսր Մորիկը (Մավրիկիոս) ժողով է գումարել Կ. Պոլսում և Մ. Բ Ե-ուց պահանջել, որ Հայ եկեղեցին ընդունի *քաղկեդոնականություն*. նպատակն էր Հայ եկեղեցին միացնել բյուզանդականին և գաղափարապես ամրապնդել կայսրության տիրապետությունը Հայաստանում: Սակայն Մ. Բ Ե. մերժել է այդ առաջարկը, որից հետո կայսրը Հայաստանի բյուզ. մասում ստեղծել է հակաթոռ կաթողիկոսություն՝ կաթողիկոս նշանակելով Հովհաննես Բագարանցուն (591–611), որի աթոռանիստն էր Կոտայք գավառի Ավան գյուղաքաղաքը (տես *Ավանի կաթողիկոսություն*):

Կաթողիկոս. գահին Մ. Բ Ե-ուն հաջորդել է *Աբրահամ Ա Աղբաթանեցին*:

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՑԻ, Մովսես Գ Սյունեցի, Աճանանցի, Խոտանանցի [1578, գ. Խոտանան (Սյունիք) – 1632, Երևան, ամփոփվել է Կողեռնի գերեզմանոցում], Ամենայն Հայոց կաթողիկոս 1629-ից: Հաջորդել է *Դավիթ Դ Վաղարշապատցուն*: Կրթությունը ստացել է Տաթևի վանքում, 1592-ին ձեռնադրվել կուսակրոն աբեղա, մեկնել Ամիդ և մինչև 1606-ը աշակերտել Սրապիոն Եղեսացուն (Ուռհայեցի): 1610-ին մեկնել է Երուսաղեմ, դարձել Ս. Հարությունն տաճարի լուսարար: 1613-ին վերադարձել է Տաթև, մտել *Սյունյաց Մեծ անապատ*, որն իր հորդորով 1611-ին հիմնել էին *Սաղմոսավանքի* Սարգիս վարդապետը և Կիրակոս Տրապիզոնցի քահանան: Նախքան կաթողիկոս դառնալը՝ հիմնել է դպրոցներ, զբաղվել դրանց բարեկարգման հարցերով, կարգավորել Սյունիքի վանքերը: Մոտ 1620-ին եղել է Երևանում, քարոզել Ս. Կաթողիկե եկեղեցում, վերաշինել *Երևանի Ս. Անանիա առաքյալ անապատը*, որը վերածվել էր ավերակի, կարգավորել է Այրարատի եկեղեցիներն ու վանքերը, վերաբացել *Հովհաննավանքի* և Սաղմոսավանքի վանական դպրոցները: 1623-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1626-ին եղել Սպահանում, որտեղ Պարսից շահ Աբբաս Ի-ը, 1627-ի հունվ. ներկա գտնվելով և հիանալով Ս. Ծննդյան տոնի՝ նրա կատարած արարողությամբ, պարգև է առաջարկել և տվել խնդրածը՝ Ս. Էջմիածնի վանքի լուսարարի պաշտոն և վանքը նորոգելու թույլտվություն-հրովարտակ: 1627-ի հունիսին վերանորոգել է վանքը, Վեհարանը, օժանդակ կառույցները և պարիսպները: 1628-ի սկզբից հիշատակվել է որպես «ընտրեալ կաթողիկոս», բայց պաշտոնապես օծվել է 1629-ի հունվ. 13-ին: Մ. Գ Տ. նոր շահից ստացել է իր կաթողիկոսության հաստատման և Ս. Էջմիածնի վանքի պարտքի զիջման հրովարտակներ: Իր աշակերտների և հետևորդների (Փիլիպոս Աղբակեցի, Խաչատուր Կեսարացի, Եսայի Կարճավանցի և ուր.) հետ վերակենդանացրել է ավերված Արլ. Հայաստանի մշակութ., կրթ., լուսավորական և գրական կյանքը, վերականգնել ու բարվոքել եկեղեցիներն ու վանքերը:

Կաթողիկոս. գահին Մ. Գ Տ-ուն հաջորդել է *Փիլիպոս Ա Աղբակեցին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Ակինյան Ն., Մովսես Գ կաթողիկոս Տաթևացի..., Վնն., 1936: Ամատունի Կ., Մովսես Գ Տաթևացի կաթողիկոս Էջմիածնի, Վնտ., 1992:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ [1250-ական թթ., Անի-Կամախ բնակավայրում (Երզնկայի մոտ) – 1323, Երզնկա], մատենագիր, մեկնիչ, մանկավարժ: Եղել է իր ժամանակի ամենազարգացած, հեղինակավոր հոգևորականներից: Ծնվել է ազնվատոհմ ընտանիքում: Նախն. կրթությունն ստացել է Երզնկայի *Ավագ վանքում*, որտեղ և ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1290-ական թթ. ճանապարհորդել է Արլ. Հայաստանում և Կիլիկիայում: Ուսումը շարունակել է *Սկևռայի* գիտամշակութ. կենտրոնի բարձր տիպի դպրոցում, աշակերտել *Գրիգոր Սկևռացուն*: Կիլիկիայում ընդօրինակել է բնագրային ուսումնասիրման և հայ ձեռագրագիտության համար խիստ արժեքավոր մի Աստվածաշունչ (Մատենադարան, ձեռ. № 177): Կիլիկիայից «բազում գրենօք» վերադարձել է Երզնկա (մինչև 1307-ը) և մինչև կյանքի վերջը Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում զբաղվել ուսուցչությամբ ու գրչությամբ՝ արժանանալով «Հայոց վարդապետ», «գերահռչակ բաբունապետ» կոչմանը: 1311-ին կառուցել է վանքի Ս. Աստվածածին եկեղեցին (Մատենադարանի № 5077 ձեռագրի հիշատակարան):

Բազմաժանր է Մ. Ե-ու մատենագր. վաստակը: Գրել է մեկնող., դավան., խրատական-կանոնական, չափածո և այլ բնույթի գործեր:

Մեկնող. գործերից են «Մեկնութիւն ժամակարգութեան» և «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն աբարեալ է սրբոց լուսաւոր հարցն» խմբագիր աշխատությունները: Ժամակարգության մեկնությունը *Խոսրով Անձևացու* մեկնության խմբագրությունն է, որտեղ նա որոշ հավելումներ է կատարել *Հովհաննես Գ Օձնեցու, Մովսես Քերթողի* և *Ստեփաննոս Սյունեցու* գործերից: Մեկնությունում վերլուծվել են հայոց եկեղեց. օրհնությունները, աղոթքներն ու մաղթանքները, քարոզները, դրանց արարողակարգը: «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին...» վեց մասից բաղկացած աշխատությունը Մ. Ե. գրել է 1293-ին, Երզնկայում, ուսուցչի՝ *Հովհաննես Երզնկացու* (Պլուզ) խնդրանքով: Հեղինակն օգտվել է շուրջ 10 աղբյուրներից, որոնցից քաղել է և՛ ամբողջական, և՛ կրճատումներով հատվածներ: Առաջադրության մեջ անդրադարձել է ս. *Հաղորդության* խորհրդի հաստատման կարևորությանը և նրա հետ առնչվող հարցերին (աշխարհի ստեղծում, առաջին մեղք, Երկնավոր Հոր մարդասիրության երևան գալն իր Միածին Որդուն աշխարհ ուղարկելով, մարդկանց մեղքերի թողության և նրանց բժշկության համար Որդի Աստծո զոհում, Քրիստոսի պատվերը Վերջին ընթրիքի ժամանակ ևն): Մ. Ե. իր խրատներն է հղել ապագա սերունդներին ս. Հաղորդության խորհրդին մասնակցելու և Քրիստոսի մեղսաքավիչ մարմինը ճաշակելու համար:

Դավան. աշխատություններում Մ. Ե. հանդես է եկել որպես Հայ եկեղեցու դավանության, ծիսակարգի, սովորությունների ջերմ պաշտպան: «Ոսկեփորիկ» ժողովածուն 200-ից ավելի խրատներ, վարքեր, դավան. այլընտրական նյութեր պարունակող հավաքածու խմբագիր աշխատություն է: «Պատասխանիք Թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երեց» դավան. թուղթը Տրապիզոնի հունադավան Գրիգոր քահանայի՝ Հայ եկեղեցու մասին գրած ամբաստանագիր-թղթի պատասխանն է: Մ. Ե-ու հակաճառ. պատասխանից երևում է, որ Գրիգոր երեցը մտադիր է եղել արձանագրել Հայ եկեղեցու «թերությունները» ըստ հունադավան միտումների, այն է՝ հաղորդության բաժակի մեջ ջուր խառնել, Սուրբ Ծնունդը տոնել դեկտեմբերի 25-ին և ոչ՝ հունվարի 6-ին, դավանել «երկու բնութիւն ի Քրիստոս», Հովհաննես Մկրտչի ծնունդը տոնել հունիսի 25-ին և ոչ՝ հուլիսի 11-ին, «Լուսոյ» յուղը (մեռոն) պետք է միայն պտղի ձեթ լինի և ոչ այլ նյութից ևն: Մ. Ե., քաջատեղյակ դավան. և ծիս. խնդիրների բոլոր նրբություններին, խոր վերլուծություններով ապացուցել է Հայ եկեղեցու ընդունած սկզբունքների ճշմարտացիությունը:

«Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՁԾԸ» չորս մասից բաղկացած թուղթը Մ. Ե. գրել է Սսի 1307-ի ժողովի (տես *Սսի եկեղեցական ժողովներ*) որոշումներին ընդդիմացած *արևելյան վարդապետների* անունից: Թղթի առաջին մասում մեջբերել է ժողովի արձանագրությունը, ըստ որի՝ Սսի ժողովականները որոշում են կայացրել Հայ եկեղեցում ընդունելու հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու սովորությունը: Երկրորդ մասում ընդհանուր գծերով անդրադարձել է ժողովի անմտությանն ու անօգտակարությանը, երրորդում՝ խոսել է *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի *Զատկի* ճառի գրության պատճառի մասին և ապա մեջբերել այդ ճառից մի հատված՝ ցանկանալով ապացուցել, որ չպետք է հավատալ Արևմուտքի եկեղեցիների կեղծ ուսմունքներին ու խոստումներին և մոռանալ Հայ եկեղեցու առաքելահաստատ դավանանքն ու ավանդությունները: Թղթի չորրորդ մասը առաջինի, այսինքն՝ Սսի ժողովի որոշումների հակաճառությունն է: Մ.Ե. Սսի ժողովն անվանել է հակականոնական, անիմաստ մի հավաքույթ, որին «սուտ ժողովոյս պարտ է ասել և ոչ՝ սուրբ»:

«Մովսէսի վարդապետի ասացեալ ի խնդրո Յակոբայ» խրատական-կանոնական երկը Մ. Ե. գրել է 1322-ին, Երուսաղեմում: Այն հայտնի է նաև «Մովսէսի Երզնկացւոյ Դաւանութիւն հաւատոյ» վերտառությամբ, թեև հեղինակը միայն առաջին տողում է անդրադառնում հավատքի դավանությանը՝ «Հաւատոյ դաւանութիւնն ծանոթութիւն է առ Աստուած» (Մատենադարան, ձեռ. № 108): Ըստ էության երկը նվիրված է կրոնավորի վարքին, նրա գործունեությանը: «Խրատ կանոնականքը...» մեզ է հասել տասնյակ ընդօրինակություններով և զետեղված է հեղինակի «Ոսկեփորիկ» ժողովածուում՝ իբրև առաջաբան: Խրատականում հիմնականում խոսվում է աշխարհիկ մարդկանց վարք ու բարքի, եկեղեցու և ծիսակատարությունների նկատմամբ նրանց պարտականությունների մասին: Հիշարժան է նաև ուսուցչի՝ *Գևորգ Սկևռացու* մահվան առիթով

գրված «Ողբը» (1301, տես Ալիշան Ղ., «Հայապատում», 1901, էջ 504–507): Մ. Ե. գրել է նաև «Մարգարէից սա սերմանումն» տաղը, որի տների առաջին տառերը հոդում են «Մովսէսի է սա» նախադասությունը (Պողարյան Ն., «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբյանց», հ. 3, էջ 227–228):

Գրկ. Պողարյան Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971: Պետրոսյան Ե., Մովսես Երզնկացու «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը, «Էջմիածին», 1973, № 9, 11: Նույնի, Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉԾԸ» դավանաբանական թուղթը, «Էջմիածին», 1974, № 9–10: Օղլուգյան Ա., Մատենագրական հետազոտություններ Մովսես վարդապետ Երզնկացու գրական առեղծվածի շուրջ, Ս. Էջմիածին, 2001:

Եզնիկ եպս. Պետրոսյան

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմահայր, Քերթողահայր [մոտ 410, գ. Խորոնք (Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառ) – մոտ 490], պատմիչ, քերական, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան: Աշակերտել է *Մեսրոպ Մաշտոցին* և *Սահակ Ա Պարթևին*, ուսումնառությունը շարունակել *Ալեքսանդրիայի* դպրոցում (մոտ 430–440), հմտացել պատմագիտության, քերականագիտության, ճարտասանության, քերթողական արվեստի բնագավառներում: Մոտ 440-ին (իր ուսուցիչների մահից հետո) վերադարձել է Հայրենիք, որտեղ ստիպված թաքնվել է տգետ եկեղեցականներից հետապնդվելու և հալածվելու պատճառով: Նորընտիր կաթողիկոս *Գյուտ Ա Արահեզացու* կողմից Մ. Խ. նշանակվել է Բագրեվանդի թեմակալ առաջնորդ, զբաղվել մանկավարժությամբ, թարգմանչությամբ և մատենագրությամբ: Երկասիրությունների գլուխգործոցը «Պատմութիւն Հայոց»-ն է՝ գրված իշխան Սահակ Բագրատունու պատվերով (մոտ 480-ին): Այն Հայոց պատմության ամբողջական շարադրման առաջին փորձն է. բաղկացած է երեք գրքից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է պատմ. մի որոշակի ժամանակաշրջանի: Առաջին գրքում հեղինակն անդրադարձել է հայ ժողովրդի ծննդաբանությանը, մանրամասնորեն կանգ առել Հայոց անվանադիր նախնի Հայկ Նահապետի և նրա սերունդների (Արամ, Արամանյակ, Արա և այլք) գործունեության վրա: Երկրորդը նվիրված է Արշակունյաց արքայատոհմի պատմությանը և ավարտվում է Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու իրադարձությունների նկարագրությամբ: Երրորդը վերարտադրում է IV դ. 2-րդ կեսի և V դ. սկզբի պատմ. դեպքերը, Հայաստանի առաջին բաժանումը (387), հայկ. պետականության կործանումը ևն: Երկը հին Հայաստանի պատմության եզակի և ստուգապատում սկզբնաղբյուր է, մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հայաստանի քաղ., տնտ., մշակութ. և հաս. կյանքի վերաբերյալ: «Պատմութիւն Հայոց»-ի կուռ կառուցվածքը, հստակ ու ճշգրիտ ժամանակագրությունը («Առանց ժամանակագրության պատմությունն ստույգ չէ»), պատմության պարբերացման սկզբունքը, շեշտված հայրենասիր. ուղղվածությունը երկը դարձրել են անփոխարինելի ազգ. արժեք, որը շուրջ 1400 տարի (մինչև XIX դ. կեսը) հայկ. դպրոցներում ծառայել է իբրև պատմության դասագիրք, իսկ հետագա բոլոր հայ պատմիչների համար եղել պատմությունը շարադրելու չափանիշ: Աշխատությունը հավաստի և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի մերձավոր ու հեռավոր երկրների պատմության վերաբերյալ: Այն դուրս է եկել ազգ. պատմության շրջանակներից և դարձել համաշխ. պատմագիտ. մտքի նշանավոր կոթողներից, մարդկային քաղաքակրթության ակնառու ձեռքբերումներից: «Պատմութիւն Հայոց»-ի բնագիրը լույս է տեսել 19, աշխարհաբարի վերածված՝ 10 անգամ. թարգմանվել է ռուս. (4 անգամ), ֆրանս. (4), լատ. (2), իտալ. (2), գերմ., հունգ., անգլ., վրաց., պարսկ., արաբ., հատվածաբար՝ 20 այլ լեզուներով: Մ. Խ-ու անձի ու գործի վերաբերյալ ստեղծվել է բազմաբնույթ ու բազմալեզու վիթխարի գրականություն (ամենաշատը հայ մատենագիրներից), լույս տեսել շուրջ 3 հզ. ուսումնասիրություն:

Պատմությունում, ի շարս բազում հարցերի, Մ. Խ. արժեքավոր հաղորդումներ է տվել (առանց արհամարհանքի ու հեգնանքի արտահայտության) հին հայկ. հեթանոս. կրոնի, մշակույթի ու դիցարանի վերաբերյալ: Նրա երկի առաջին գիրքն ու երկրորդի մի մասը հիմնված են վիպական ավանդույթների վրա, որոնք բարեխղճորեն մշակելով՝ հեղինակը ցույց է տվել դրանց պատմ. արժեքն ու հավաստիությունը: Քննական մոտեցումով օգտագործել է բազմաթիվ և բազմաբնույթ աղբյուրներ:

ժող. բանավոր ավանդույթներից և այլալեզու գրավոր աղբյուրներից քաղելով՝ Մ. Խ. ներկայացրել է Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի վիպաառասպել. զրույցները, Վահագնի, Տորքի, Արտավազդի առասպելները, Վիպասանք վիպաշարը ևն: Եզակի են տեղեկությունները Հայկ. հեթանոս. դիցարանի երեք տարբեր շերտերի՝ Հայկ, Արա, Տորք Անգեղ, Աստղիկ (առաջին), Արամազդ, Վահագն, Անահիտ, Տիր, Միհր (երկրորդ), հելլենականացված պանթեոն (երրորդ), հեթանոս. դիցարանների, բագիններիի, քրմերի, պաշտամունք. առանձնահատկությունների, մեհենական մշակույթի և հատկապես՝ գրականության վերաբերյալ: Առաջնային արժեք ու նշանակություն ունեն Հայաստանում քրիստոնեության տարածման և պետ. կրոն հռչակվելու մասին Մ. Խ-ու տեղեկությունները, որոնց հավաստիությունը հաստատվում է այլ աղբյուրների միջոցով: Նա լայնորեն անդրադարձել է *Աբգարի* և Հիսուս Քրիստոսի թղթակցությանը, առաքյալների հայաստանյան գործունեությանը, հայկ. առաջին քրիստ. համայնքների իրողությանը և հարակից այլ հարցերի, ավելի մանրամասն նկարագրել հատկապես *Գրիգոր Ա Լուսավորչի, Ներսես Ա Մեծի*, Սահակ Ա Պարթևի գործունեությունը: Մ. Խ. բարձր է գնահատել *Տրդատ Գ Մեծին* և նրան համարել քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու գլխ. դերակատարը: Եկեղեցի-պետություն հակամարտության և փոխհարաբերությունների մասին խոսելիս՝ նրա համակրանքը եկեղեցու ու հովվապետների կողմն է:

Մ. Խ-ու դավան. աշխատությունները զգալիորեն նպաստել են հայ աստվածաբան. մտքի զարգացմանը: Նշանակալի է «Պատմութիւն Սրբուհւոյն Աստուածածնի և պատկերի նորա» երկասիրությունը, որը Մ. Խ-ունն հղված Վասպուրականի մեծ իշխան Սահակ Արծրունու նամակի պատասխանն է՝ «Պատասխանի թղթոյն Սահակայ» վերտառությամբ: Այստեղ հեղինակը մանրամասն անդրադարձել է Մարիամ Աստվածածնի ազգաբանությանը, մեկնաբանել նրա կենսագրության առանձին դրվագներ, շարադրել նրա պատկերի պատմությունը, ներբողել Աստվածամորը, որը «արդարության արեգակի պես ծագեց երկրում և նրանից մարմնով ծնվեց Հիսուս Քրիստոսը»: Աշխատությունը նպատակաուղղվել է նաև զորեղացնելու Հայ եկեղեցու գաղափար. դիրքը և ազգ. ոգին՝ ընդդեմ օտար ոտնձգությունների: Արժեքավոր է նաև Մ. Խ-ու «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» վարքագր. կարճառոտ երկասիրությունը (գրված է «Պատմութիւն Հայոց»-ի բնագրային հիմքի վրա), որտեղ վեր է հանվել *Ագաթանգեղոսի* մոտ բացակայող՝ Հայաստանում քրիստոնեության տարածման առանձին մանրամասներ: Այս աշխատությունը սերտորեն աղերսվում է «Ներբող ի Սուրբն Հռիփսիմէ» քնար. ստեղծագործությանը, որը V դ. հայ եկեղեց. գրականության ամենանշանակալի երկերից է: Մ. Խ-ու աստվածաբան. ժառանգության մեջ ճանաչող. մեծ արժեք ունի «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ներբողը, որը բանասիրության մեջ ավանդաբար անվանվել է «Ճառ»: Այստեղ հեղինակը քնար. մեծ վարպետությամբ փառաբանել է Հիսուս Քրիստոսի այլակերպությունը, ծնունդը և հրաշագործությունները:

Պատմագրի անունով մեզ են հասել փիլ-դավան. մի քանի երկասիրություններ՝ «Հարցմունք Հոբնաղի և պատասխանիք Մովսէսի Հայոց Քերթողի և Դավիթ Անյաղթ փիլիսոփայի», «Վիճումնական հարցաբանութիւն Մելիտոսի յունաց փիլիսոփային ընդ Աթէնականն Մովսէս փիլիսոփային Հայոց տրամաբանական ոճիւ», «Սրբոյն Թէոդորոսի ծննդեանն և սննդեանն եւ վարուց նորա», «Թուղթք» ևն, որոնց հեղինակային պատկանելությունը տակավին պարզված չէ: Մ. Խ-ու՝ Հուն-ից կատարված թարգմանություններից արժեքավոր է Կեղծ Կալիսթենեսին վերագրվող «Պատմութիւն վարուց Աղեքսանդրին» երկը: Այդ թարգմանությամբ է պայմանավորված հայ միջնադարյան քնարերգության յուրահատուկ տեսակներից մեկի՝ կաֆաների ժանրային ձևավորումը, ինչպես և մանրանկարչության մեջ աշխարհիկ թեմատիկայի սկզբնավորումը: Մ. Խ. է թարգմանել նաև *Գրիգոր Նազիանզացու* «Ճառերի» զգալի մասը, որոնք քրիստ. աշխարհում ճանաչվել են որպես «ուղղափառությունն ուղենչող» երկեր: Նրա վաղ շրջանի ստեղծագործություններից է համարվում «Գիրք պիտոյից»-ը (1796, 1993, ռուս. թրգմ. 2000), որը ճարտասան. վարժությունների («Նախակրթութիւնների) ժողովածու է: Ըստ ընդգրկված վարժությունների տեսակների՝ բաղկացած է 10 գլխից: Գրքի ողջ բնագիրը հագեցած է աստվածաշնչային վկայությունների մեջբերումներով, հիշատակություններով և վերապատումներով: Ս. Գրքի թեմաներով

գրված նախակրթությունները պահանջել են աղբյուրի առավել խոր իմացություն, ստեղծագործ. մոտեցում, վարպետություն, երևակայություն: Մ. Խ-ուն են վերագրվում նաև Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնությունը՝ «Մովսիսի Քերթողահօր մեկնութիւն քերականի» խորագրով, քերական. բովանդակություն ունեցող մի քանի փոքր գրվածքներ, «Աշխարհացոյց»-ի (1881) բնագիրը ևն:

Մ.Խ. նաև նշանավոր երաժիշտ-բանաստեղծ է և շարականագիր (վկայում են *Վանական Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին* և այլք): Նրա «Պատմութիւն Հայոց»-ում տրված են վիպասանների, գուսանների, նրանց գործածած նվագարանների և առհասարակ հին Հայաստանում կենցաղավարող երաժշտ. սինկրետիկ տեսակների արժեքավոր նկարագրություններ և բնորոշումներ: Հեղինակը ներկայացրել է հեթանոս վիպերգերի կատարման կերպը «ի նուագս փանդռան և յերգս ցցոց և պարուց»: Ըստ միջնադարյան ցուցակների՝ նրան են վերագրվում շուրջ 100 հոգևոր երգեր: Զգալի է Մ. Խ-ու ավանդը հատկապես հիմներգության (շարականագրության) ասպարեզում: Նրա գրչին են պատկանում Ծննդյան, Աստվածահայտնության, Տյառնընդառաջի, Հարության և մյուս տոներին նվիրված բազում շարականներ, Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակին, Գրիգոր Լուսավորչին ձոնված մի շարք երգեր ևն: Առավելապես հայտնի են «Խորհուրդ մեծ և աքանչելի», «Ծագումն հրաշալի», «Ուրախացիր, սրբուհի» երգերը, որոնց բնորոշ են հանդիսավոր տոնական քնար. ջերմ զգացմունքների արտահայտությունը և վիպերգական շունչը: Այստեղ շարականների երաժշտաոճական քննությունը ցույց է տալիս թե՛ իրենց նախն. նկարագիրը պահպանած ստեղծագործությունների և թե՛ ավելի ուշ ժամանակներում վերաեղանակավորված երգերի առկայությունը: Մ. Խ-ու անունով մեզ հասած երգասացություններում կան կցուրդներ, ավետիսներ. մեծարժեք են Աստվածամորն ուղղված «Մեծացուսցէ» կոչված ձոներգերը (թվով 57), որոնք իրենց գեղ. արժանիքներով և մեղեդիական ինքնատիպությամբ հող են նախապատրաստել հետագա հայ եկեղեց. երաժշտության զարգացման համար: Գանձարաններում Մ. Խ-ու անունով վավերացվել են Գրիգոր Լուսավորչին և Տրդատ Գ Մեծին նվիրված մեկական խազագրված մեղեդիներ:

Պատկերազարդումը տես ներդիր XII-ում, 12.8, 3–5-րդ պատկերները:

Երկ. Մատենագրութիւնք, 2-րդ հրտ., Վնտ., 1865: Պատմութիւն Հայոց (աշխատասիր. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, լրացումները Ա. Բ. Սարգսյանի), Ե., 1991: Նույնը (աշխարհաբար թրգմ., ներածութ. և ծնթգր. Ստ. Մալխասյանցի), Ե., 1997: Պատմութիւն Սրբուհւոյն Աստուածածնի և պատկերի նորա, Անթիլիաս, 1994: Ներբող ի Սուրբն Հռիփսիմէ և Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց, Անթիլիաս, 1995 (քննական բնագրերը Թ. Տանապետյանի): Աստվածաբանական երկեր, Ե., 2001:

Գրկ. Հրանտ Արմեն, Պատմություն Խորենացիի քննադատության, Երուսաղեմ, 1954: Աբրահամյան Ա., Մովսես Խորենացի, Ե., 1959: Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968: Սարգսյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ե., 1991: Թահմիզյան Ն., Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը, «Էջմիածին», 1979, № 5–6: Արեվշատյան Ա., Մովսես Խորենացու հիմներգական ժառանգությունը, «Բազմավեպ», 1992, № 1–4: Հովհաննիսյան Պ., Մովսես Խորենացու մատենագիտությունը, Ե., 1991: Թոփչյան Ա., Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Ե., 2001:

Պետրոս Հովհաննիսյան

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), VII դարի մատենագիր, պատմիչ: Ծնվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Կաղանկատույք գյուղում: Որոշ ուսումնասիրողների (Ք. Պատկանյան, Կ. Շահնազարյան) կարծիքով եղել է վանական: Նրա անունով մեզ է հասել երեք մասից (գիրք) կազմված «Պատմութիւն Աղուանից աշխարհի» խորագրով երկը: Այն հայ մատենագիրներին ծանոթ է VIII դ-ից (*Սողոմոն Մաքենացի*), իսկ հեղինակին առաջինը Մ. Կ. է կոչել *Կիրակոս Գանձակեցին*: Երկի՝ մեզ հասած ամենահին գրչագիրը թվագրվում է 1289-ին (Մատենադարան, ձեռ. № 1531): Պատմության առաջին երկու գրքերը («աշխարհի ստեղծումից» մինչև VII դ. 1-ին կես) գրել է Մ. Կ., երրորդի հեղինակը X դ. մատենագիր Մովսես Դասխուրանցին է: Հետագայում աշխատությանը հավելվել է Աղվանից կաթողիկոսների անվանացանկը (X դ. 2-րդ կեսից լրացրել է *Մխիթար Գոշը*)՝ մինչև XVIII դ.:

Երկասիրության նյութը հիմնականում Արցախ և Ուտիք նահանգների (Հայոց Արևելից Կողմանց, հայկ. Աղվանքի) պատմությունն է, որն իբրև հայոց ընդհանուր պատմության մի մաս, ի տարբերություն մյուս հայ մատենագիրների, Մ. Կ. լուսաբանել է մանրամասն ու բազ-

մակողմանի: Այդ ժամանակ Արցախն ու Ուտիքը (461-ին Սասանյան Իրանը քաղ. նկատառումներով մտցրել է Աղվանից մարզպանության մեջ) բուն Աղվանքի ու մերձկասպյան մի շարք երկրամասերի հետ ներառվել էին ընդհանուր նվիրապետության մեջ (տես *Աղվանից եկեղեցի, Աղվանից կաթողիկոսություն*):

Պատմության առաջին գրքի սկզբում շարադրված են հատկապես IV–V դդ. իրողությունները, որոնց նկարագրությունը մեծ մասամբ քաղված է *Փավստոս Բուզանդից, Մովսես Խորենացուց, Ագաթանգեղոսից, Եղիշեից*, դավան. ու վարքագր. թղթերից և այլ գրավոր աղբյուրներից: 7–8-րդ գլուխները վերաբերում են նահատակված քրիստոնյա սրբերին, նրանց մասունքների որոնմանն ու հայտնաբերմանը և Աղվանից աշխարհ տեղափոխելուն, Աղվանից եկեղեցու վաղ շրջանի պատմությանը:

Աղվանից եկեղեցու առաքելական ծագումն ապացուցելու մտահոգությամբ՝ մատենագիրն առաջին գրքի 6-րդ գլխում պատմում է, որ Հայաստանում քրիստոնեություն տարածող *Թադեոս* առաքյալի աշակերտ *Եղիշեն*, Երուսաղեմում վարդապետ ձեռնադրվելուց հետո, եկել է Աղվանից աշխարհ, Գիս ավանում եկեղեցի կառուցել և քրիստոնեություն քարոզել: Հեղինակը պատմում է, որ հայրենի երկրամասի և նրա եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու համար Աղվանից իշխան Վարազ-Տրդատը *Գրիգոր Ա Լուսավորչի* նշխարներից բերելու նպատակով Այրարատյան նահանգ է ուղարկել *Իսրայել* եպիսկոպոսին: Այրարատում երկար թախանձանքներից ու մեծ տիկնոջ՝ Հեղինեի (Աղվանից Ջևանշեր իշխանի քույրը և մարզպան Գրիգոր Մամիկոնյանի կինը) միջնորդությունից հետո Իսրայել եպիսկոպոսին զիջել են Գրիգոր Ա Լուսավորչի ծնոտի մի մաս, որը բերվելով՝ հանդիսավորապես տեղադրվել է Գլխովանքում: Պատմիչը միաժամանակ նշել է Գրիգոր Ա Լուսավորչի մասունքների բաժանումն արգելված լինելու և, իբրև բացառություն, Աղվանից եկեղեցուն նվիրելու փաստը: Հանգամանորեն շարադրվել է Գրիգոր Ա Լուսավորչի թոռ *Գրիգորիսի*՝ Աղվանքում քարոզչության, Աղվանից և Վրաց եպիսկոպոսապետ ձեռնադրվելու, նահատակության, նշխարների գյուտի պատմությունը:

Առաջին գրքի 16-րդ գլխում պատմագիրը ներկայացնում է մոտ երեսնամյա ժամանակահատված [Առանշահիկներ՝ Վաչեից մինչև Վաչագան Գ Բարեպաշտը (480-ական թթ. վերջ)], երբ երկիրը չի ունեցել իր թագավորը: Նույն գլխում ներկայացնելով Պարսից Պերոզ արքայի (459–484) նվաճող. քաղաքականությունը՝ ցասումով է նկարագրել, թե ինչպես է նա քանդել եկեղեցիները, կառուցել ատրուշաններ, հալածել, աքսորել ու կոտորել քրիստոնյաներին՝ ձգտելով տարածել զրադաշտ. կրոնը: 17-րդ գլխում պատմվում է Պերոզի հաջորդ Վաղարշի (484–488) նոր քաղաքականությունը, Վաչագան Գ Բարեպաշտի (480-ական թթ. վերջ – 510)՝ երկրում իշխանական տները վերահաստատելու, քրիստոնեությունը վերատարածելու, աղանդները, մազդեզականությունը վերացնելու, կախարդներին, քրմերին կոտորելու, երկրամասը բարեկարգելու, մշակութ., կրթադաստիարակչ. գործունեության մասին, որոնք պատմ. արժանահավատ հաղորդումներ են (մեզ անհայտ աղբյուրներից քաղված) և մեծարժեք են *Վարդանանց* հերոսամարտից հետո ընկած ժամանակաշրջանի իրադարձություններն ուսումնասիրելու առումով: Պատմ. կարևոր նշանակություն ունեցող վավերագիր է նաև առաջին գրքի 26-րդ գլուխը, որը մի կանոնադրություն է՝ հաստատված Վաչագան Գ Բարեպաշտի ու Շուփհաղիշո եպիսկոպոսի կազմակերպած եկեղեց. ժողովի կողմից (տես *Աղվենի եկեղեցական ժողով*): Հայոց պատմության համար արժեքավոր նյութ է Հայոց Արևելից Կողմանքում *Մեսրոպ Մաշտոցի* ծավալած կրթ. ու լուսավորչ. գործունեության հանգամանալից նկարագրությունը (նույն գրքի 27 և 28-րդ գլուխներում):

Երկրորդ գրքում Մ. Կ. պատմագրել է VII դ. 1-ին կեսի իրադարձությունները: Այն ցայժմ անփոխարինելի աղբյուր է խազարների (ըստ հեղինակի՝ խազիր) արշավանքներն ու դրանց քաղ. ու տնտ. դրդապատճառներն ուսումնասիրելու, հս. ցեղերի, Անդրկովկասի ժողովուրդների և Պարսկաստանի ու Բյուզանդիայի փոխհարաբերությունների մի շարք հարցեր պարզաբանելու համար: Նույն գրքի 14-րդ գլխում ներկայացվում են Շաթի (խազարների առաջնորդ Ջեբու խաքանի որդու) Աղվանք կատարած արշավանքը (628) և Աղվանից կաթողիկոս Վիրոյի (595–629) գործունեությունն ու տառապանքները: Մ. Կ. լրացրել է արաբ. արշավանքների պատմությունն Անդրկովկասում և դրանից հս. ընկած երկրներում: Երկը միակ աղբյուրն է Հայոց պատմության մեջ կարևոր դեր կատարած Միհրանյան ու Ա-

ռանշահիկ հարստությունների ծագման ու պատմության ուսումնասիրման համար: Մ. Կ-ու շնորհիվ է մեզ հասել իր ժամանակակից բանաստեղծ *Դավթակ Քերթողի* «Ողբք...» բարձրարվեստ քերթվածքը (պահպանված աշխարհիկ հնագույն քերթվածքն է հայ գրակ. մեջ), որը գրվել է Աղվանից աշխարհի իշխան Ջևանշերի եղերական մահվան առիթով:

Շարունակելով և ամբողջացնելով «Պատմութիւն Աղուանից...» երկը (երրորդ գիրք, VII դ. կեսից մինչև X դ. կեսը)՝ Մովսես Դասխուրանցին հիմնականում վեր է հանել եկեղեցու պատմությանն առնչվող խնդիրները, Հայաստանյայց և Աղվանից եկեղեցիների առընչությունները, նկարագրել արաբ. արշավանքները, Հայոց Աղվանքի, Բյուզանդիայի և Արաբ. խալիֆայության հարաբերությունները, Բաբեկի հակահայկ. ձեռնարկումները, *Համամ Արևելցու* (IX դ. 2-րդ կեսի իշխան, ապա՝ թագավոր Հայոց Արևելից Կողմանց) և Սահլ Սմբատյանի (Արցախի հս. գավառների իշխան IX դ. 1-ին կեսին) ազգանպաստ գործունեությունը, հաղորդել այլ արժեքավոր տեղեկություններ: Երկը շարադրված է խիստ հակիրճ ոճով և ժամանակագր. կարգով:

Պատմությունն առաջին անգամ հրատարակել է Մ. Էմինը 1860-ին, Մոսկվայում: 1861-ին տպագրվել է ռուս.՝ Ք. Պատկանյանի թարգմանությամբ: Թարգմանվել է նաև ֆրանս., անգլ., վրաց., թուրք., հատվածաբար՝ հունգ., գերմ., ունեցել է հայերեն մի քանի հրատարակություն, այդ թվում՝ աշխարհաբար (1969):

Երկ. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983:

Գրկ. Զարբհանալյան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վնտ., 1886: Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Ե., 1966: Պողարյան Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 171–173: Սվազյան Հ., Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, ՊԲՀ, 1972, № 3:

ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂ, Սյունեցի (ծ. և մ. թթ. անհտ), VII դարի 2-րդ կեսի քերական, մեկնիչ, աստվածաբան, թարգմանիչ, ծիսագետ և երաժիշտ-տեսաբան: Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Հայ հին մատենագրության մեջ նույնացվել է *Մովսես Խորենացու* հետ: Մ.Ք-ին աշակերտել է *Ստեփանոս Սյունեցին*, որը և հաջորդել է նրան Սյունյաց եպիսկոպոս. աթոռին: Մ. Ք-ին են վերագրվում մի շարք թարգմանություններ, մեկնություններ և այլ գործեր: Պահպանվել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» նրա մեկնությունը, որն աչքի է ընկնում առհասարակ արվեստի և մասնավորապես՝ քերական. արվեստի ռացիոնալիստ. ըմբռնումներով: Արժեքավոր է Մ.Ք-ի «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրվածքը (հրտ. «Անահիտ», 1930, № 3, սեպտահոկտ.), որտեղ հայ միջնադարյան երաժշտատեսական մտքի պատմության մեջ առաջին անգամ տրված է հայկ. *ութձայն* համակարգի զուտ եկեղեց. շրջանակներում ձևավորված նորովի գեղագիտ. մեկնությունը: Վերջինս, ի տարբերություն հեթանոս. աշխարհիկ երաժշտ. մշակույթի վերապրուկներն արտացոլող այլ «ձայնից մեկնությունների», հատկանշվում է իր ժամանակի աստվածաբան. պատկերացումներով, որտեղ նկատելի է հայրախոսական, մասնավորաբար՝ արիոպագիտյան (*Դիոնիսիոս Արիոպագացու* և նրան վերագրված գործերի) գրականության ազդեցությունը: Հստակորեն զատորոշված 4 բուն, 4 կողմ և 2 ստեղի ձայնեղանակներն այստեղ բնորոշվում են նաև ըստ իրենց զգայական-բարոյաբանական բնույթի, նշված է ժամերգության մեջ կատարվող ընդհանրացած երգասացությունների պատկանելությունը այս կամ այն ձայնեղանակին: «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրվածքը, ըստ երևույթին, պաշտոներգության տարբեր (ծիսական, գեղագիտ., երաժշտատես. և գործն.) հարցեր շոշափող մեկնողական բնույթի մեծածավալ երկասիրության պահպանված մի հատվածն է, որը մեծ ազդեցություն է թողել հայ գեղագիտ. մտքի հետագա զարգացման վրա:

Հայ եկեղեցին ս. Մ.Ք-ի հիշատակը նշում է *Խաչվերացի* հինգերորդ կիրակին նախորդող շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» տոնի հետ, հոկտ. ամսին:

Գրկ. Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954: Թահմիզյան Ն., Մովսես Սյունեցին և նրա «Յաղագս կարգաց» գրվածքը, ԼՀԳ, 1972, № 11: *Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, П., 1915.*

Աննա Արևշատյան

ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ, Ծովիզի վանք, ՀՀ Տավուշի մարզի Լուսահովիտ գյուղի (նախկին Ծովիզ գ.) հարավ-արևմտյան ձորակի աջ ափին: Վանքի Ս. Աստվածածին քառախորան կենտրոնագմբեթ եկեղեցին կառուցվել է V դ., կոպտատաշ բազալտ քարով (նախնական ծա-

վալը պահպանվել է մինչև գմբեթարդները): VI–VII դդ. սրբատաշ բազալտով վերակառուցվել են գմբեթակիր կամարները, գմբեթարդները և գմբեթը: Խորանները ներսից պայտաձև են, դրսից՝ կիսաշրջանաձև (բացառությամբ դրսից ուղղանկյուն հվ. խորանի): Արլ. խորանի գմբեթակիր կամարների խոյակները և նրանց միջև ձգվող հորիզոնական գոտին ունեն նշտարաձև, ստորին մասում՝ հյուսածո զարդաքանդակների շարքեր:

Մ. Ջ. վ. բարգավաճել է XII–XIII դդ. և դարձել Մահկանաբերդի գավառի հոգևոր կենտրոններից: 1177–78-ին Մահկանաբերդի տեր և վանքի հովանավոր իշխան Քուրդ Արծրունին Մ. Ջ. վ. ազատել է բոլոր հարկերից: Այդ վճիռը հաստատել է Վրաստանի Գեորգի III թագավորը՝ Ս. Աստվածածին եկեղեցու հս. խորանի գմբեթարդի իր արձանագրությամբ: 1197-ին իշխան Իվանե Զաքարյանը և իր քույր Նանան նորոգել են Մ. Ջ. վ., վերականգնել Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը և ծածկը: 1213-ին եղբայրներ Զաքարե և Իվանե Զաքարյան իշխանները վերստին նորոգել են վանքը և նրա վանահայր հաստատել հայր Եվագրին:

Մ. Ջ. վ. մոնղոլ. արշավանքներից հետո կորցրել է իր արտոնությունները, միաբանությունը ցրվել է, և Ս. Աստվածածին եկեղեցին գործել է մինչև XIX դ.՝ որպես ծխական եկեղեցի: 1980-ական թթ. վերանորոգվել են Մ. Ջ. վ-ի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը և խորանների ծածկերը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.1, 1-ին պատկերը:

Գրկ. Բարխուդարյան Մ., Արցախ, Բաքու, 1895: Ավագյան Ս., Մորո Ջորո վանքը և նրա վիմարձանագրությունները, «Էջմիածին», 1967, № 3, 4, 5: Դիվան հայ վիմագրության, պր. 6, ե., 1977: Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, ե., 1982:

Մուրադ Հասրաթյան

ՄՐԵՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում, Ախուրյան գետի աջ ափին (այժմ՝ Թուրքիայում): Ըստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու, եկեղեցին կառուցվել է 613-ին (ըստ շին. արձանագրության, ավարտվել է 639-ին): Արմ. ճակատի շին. արձանագրությունում նշված են կառուցողները՝ Հայաստանի կառավարիչ, իշխան Դավիթ Սահառունին, Շիրակի և Արշարունյաց տեր իշխան Ներսեհ Կամսարականը և Թեոփիլոս եպիսկոպոսը:

Մ. Կ. ե. ունի քառամույթ գմբեթավոր հորինվածք՝ ուղղանկյուն ծավալից արլ-ում դուրս եկող հնգանիստ խորանով, որի երկու կողմերում խաչվող թաղերով ծածկված ավանդատներ են: Պահպանվել է գմբեթի նախնական կղմինդրե տանիքը: Մ. Կ. ե-ու հս. շքամուտքի բարավորին քանդակված է եկեղեցու հիմնադրման տեսարանը. կենտրոնում Ներսեհ Կամսարականն է՝ ծնկաչոք, գետնին տնկած բարձր խաչը բռնած, նրանից աջ Թեոփիլոս եպիսկոպոսն է, որը ձեռքին պահած բուրվառով խնկարկում է եկեղեցու հիմնօրհնեքը, աջում Կենաց ծառն է, ձախում՝ ձիու հետ խաչին մոտեցող Դավիթ Սահառունին: Արմ. շքամուտքին նույնպես պատկերված են իշխաններ Դավիթ Սահառունին, Ներսեհ Կամսարականը և Թեոփիլոս եպիսկոպոսը՝ խմբավորված կենտրոնում նստած Քրիստոսի ու նրա երկու կողմերում կանգնած Պողոս և Պետրոս առաքյալների շուրջը: Վերևում զույգ հրեշտակներ են: Քանդակը բավական ոճավորված է, մարդիկ և սրբերը պատկերված են դիմահայաց, հարթ, սիմետրիկ դասավորությամբ: Նրանց դիրքը, հագուստների ծալքերի գծագրությունը բնորոշ են վաղքրիստ. քանդակագործ. արվեստին և խիստ կանոնիկ են: Մ. Կ. ե-ու պատկերաքանդակները իրենց գեղ. բարձր արժեքով կարևոր տեղ են գրավում վաղ միջնադարի հայկ. արվեստում:

Գագիկ Ա Բագրատունի արքան Արշարունյաց Սահակ եպիսկոպոսի խնդրանքով Մրենն ազատել է կոռից: 1251-ին Մ. Կ. ե-ու հվ. ճակատին իշխան Շահնշահ Զաքարյանի փորագրած հրամանով՝ արգելվել է անչափահասների ձեռնադրությունը: 1261-ին Անիի մեծահարուստ Զենոբ Սահմադինը Զաքարյաններից գնել է Մրենը և 1284-ին ու 1288-ին ազատել հարկերից: 1277-ին նորոգվել է Մ. Կ. ե-ու խորանը, 1295-ին եկեղեցին նվիրատվություններ է ստացել:

Մ. Կ. ե. ներկայումս կիսավեր է, 1964-ին քանդվել է եկեղեցու հվ-արմ. անկյունը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.1, 2-րդ պատկերը:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, ե., 1982: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, ե., 1942: Մանուչարյան Ա., Մրենի և Թալինի տաճարների շինարարական արձանագրությունները, ՊԲՀ, 1966, № 1: Սարգսյան Մ., Մրենի տաճարի հիմնադիրների

ՄՈՒՂՆՈՒ

պատկերաքանդակները, ՊԲՀ, 1966, № 4: *Орбели И., Избранные труды, Е., 1963;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Thierry M. et N., La Cathédrale de Mren et sa décoration, “Cahiers Archéologiques”, XXI, 1961; Scalesse T., La Cattedrale di Mren in Armenia, “XX Corso di cultura sull Arte Ravennate e Byzantina”, Ravenna, 1973; Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ, ՀՀ Արագածոտնի մարզի Մուղնի գյուղի հարավային ծայրին: Ըստ XVII դ. պատմագիր Զաքարիա Սարկավագի, վանքը հիմնադրել է *Հովհաննավանքի* միաբանությունը՝ այնտեղ տեղափոխելով ս. *Գևորգի* մասունքները: Հավանաբար դա տեղի է ունեցել XIII դ. 1-ին կեսին, որովհետև արդեն 1278-ին Մ. Ս. Գ. վ-ում ձեռագիր է ընդօրինակվել: Մ. Ս. Գ. վ-ից ս. Գևորգի մասունքների մի մասը տարվել է Վրաստան՝ վրաց արքայազնի բուժման համար: Այդ մասունքները պահելու համար հետագայում կառուցվել է Թիֆլիսի Մողնու Ս. Գևորգ եկեղեցին (այստեղ է պահվել «*Մողնու Ավետարանը*»): XIII–XV դդ. այստեղ ձեռագրեր են գրվել, վանքը դարձել է հռչակավոր ուխտատեղի: 1580-ին վանքի առաջնորդ Ոսկան վարդապետը Մ. Ս. Գ. վ-ում եպիսկոպոսական աթոռ է հաստատել: Վանքը ծաղկում է ապրել XVII դ., երբ համալիրը երկու անգամ հիմնովին վերակառուցվել է: 1632–55-ին վանքի առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսը քանդել է արդեն խարխուլ եկեղեցին ու մյուս շինությունները և կառուցել նորը՝ երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկը, պարիսպներ և խցեր: Սակայն XVII դ. 2-րդ կեսին անմշակ քարով շինված այս եկեղեցին չէր համապատասխանում համահայկ. ուխտատեղիի պահանջներին, որի պատճառով Հովհաննես վարդապետը, ստանալով պարսից շահի թույլտվությունը, հիմնովին քանդել է այն և սրբատաշ տուֆ քարերով 1664–69-ին կառուցել նորը: Հովհաննես վարդապետը 1669-ին, մինչև շինարարության ավարտը, վախճանվել է Ագուլիսում (գնացել էր եկեղեցու կառուցման համար դրամ հանգանակելու): Շինարարությունը ավարտել է Դավիթ վարդապետը: Վանքի Ս. Գևորգ եկեղեցու ճարտարապետն է Սահակ Հիզանեցին, որի մահից հետո (1666) նրան փոխարինել է իր փեսա և աշակերտ Ուստա Մուրադը: 1734-ին Մ. Ս. Գ. վ. ուխտի է եկել կաթողիկոս *Աբրահամ Բ Խոշաբեցին*: 1811-ին առևտրական Հովհաննեսը և նրա կին Թամարը վանքին վարագույր են նվիրել՝ խաչելության և վիշապին նիզակահարող հեծյալ ս. Գևորգի պատկերներով (այժմ՝ ՀՊՊԹ-ում): XIX դ. Մ. Ս. Գ. վ. ուխտավայր է եղել նաև վրացիների և պարսիկների համար: Մ. Ս. Գ. վ. մանանկի վերանորոգվել է XIX դ.: Վանքի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը 1830-ին նորոգել է եկեղեցու տանիքը, 1839-ին՝ կայծակից փշրված գմբեթի ծայրը: Մարտիրոս արք. Կեսարացին վերանորոգել է վանքի պարիսպը, բնակելի և տնտ. շինությունները: 1863-ին վանահայր է դարձել Մեսրոպ արք. Սմբատյանցը: Աբել եպս. Մխիթարյանը, դառնալով վանքի առաջնորդ, 1870-ին այնտեղ դպրոց է հիմնել, 1889-ին շարադրել վանքի պատմությունը: 1895-ին երևանցի Աղամալ Մելիք-Աղամալյանի ծախսով կառուցվել է հս-արլ. կողմի բնակելի սենյակների 2-րդ հարկը: Համալիրի հս-արմ. կողմում է աղբյուրի փոքրիկ շենքը՝ զուգակցված ջրամբարի հետ: Արլ. պարսպապատին կից են թաղածածկ սեղանատունը, մթերանոցը: 2000-ին վանքը նորոգվել և տարածքը բարեկարգվել է Մ. արք. Աշճյանի հոգածությամբ: 2000-ի հոկտեմբերի 8-ին Գարեգին Բ Ներսիսյան կաթողիկոսի ձեռամբ վերաօծվել է Մ. Ս. Գ. վ-ի եկեղեցին:

Սև և կարմիր տուֆի սրբատաշ քարերով շինված քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով եկեղեցուն արմ. կողմից կից է երակամար բաց սրահ, որի միջին հատվածի վրա բարձրանում է զանգակատան 12-սյունանի ռոտոնդան: Ընդարձակ և բարձր աղոթասրահի կենտրոնում խաչաձև մույթերի վրա բարձրանում է գլանաձև թմբուկով և հովանոցաձև վերարով գմբեթը: Աբսիդի և դահլիճի հս-արլ. անկյան վրա Գրիգոր Ա Լուսավորչի կողմից Տրդատ Գ Մեծի մկրտության, ս. Գևորգի՝ Գաբրիել հրեշտակապետից սուր ստանալու, Աստվածածնի Վերափոխման, Ստեփանոս Նախավկայի, ս. Նիկողայոս Հայրապետին և Համբարձման տեսարանը պատկերող XIX դ. որմնանկարներ են: Եկեղեցու արտաքին հարդարանքում մեծ դեր է խաղում բազմագունությունը՝ սև և դեղնակարմրավուն տուֆի օգտագործումով: Գմբեթի թմբուկին չորս ավետարանիչների խորհրդանշանների հարթաքանդակներն են: Հվ. մուտքը ուշագրավ է բացառիկ հարուստ և բարձրարվեստ ձևավորումով: Մ. Ս. Գ. վ-ի եկեղեցին ճարտ. ձևերի դեղա-

գիտ. բարձր հատկանիշներով ուշ միջնադարի Հայաստանի լավագույն կառույցներից է:

Մուղնու գրչության կենտրոնում Սիմեոն երեցը 1278-ին ընդօրինակել է նկարազարդ Տոնական, 1280-ին՝ Ավետարան (Մատենադարան, ձեռ. №№ 995, 355): 1484-ին և 1491-ին Մկրտիչ երեցը ընդօրինակել է Գանձարան և Ճաշոց (Մատենադարան, ձեռ. №№ 7553, 6293): Վանքում պահվող սրբություններից են եղել ս. Գևորգի Աջը, Թադեոս առաքյալի և Մատթեոս ավետարանչի մասունքները: Մ. Ս. Գ. վ-ի տոնի օրն է սեպտեմբերի 18-ը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.1, 3-րդ պատկերը:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, Վաղ-պատ, 1870: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Եղիազարյան Հ., Մուղնու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1960, № 7: Սաղումյան Ս., Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին և նրա վիմագրերը, «Էջմիածին», 1977, № 1: Հասրաթյան Մ., Մուղնու վանքի ճարտարապետական համալիրը, Հայկական արվեստ, ժող., № 2, Ե., 1984: Մաթևոսյան Կ., Մուղնու Սուրբ Գևորգ վանքը, Ե., 2000:

Մուրադ Հասրաթյան

ՄՈՒՇԵ Ա ԱՅԼԱԲԵՐՑԻ [ծ. թ. անհտ, գ. Այլաբերք (Կոտայք գավառ) – 534], Ամենայն Հայոց կաթողիկոս 526-ից: Հաջորդել է *Սամվել Ա Արծկեցուն*: XIII դ. պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի վկայությամբ, Սյունիքի եպս. Մուշեի մահից հետո Սյունյաց նախարարի այրին՝ Սահակիա իշխանուհին, Մ. Ա Ա-ուն հրավիրել է Սյունիք՝ եպիսկոպոս. ընտրություններ անցկացնելու: 526-ին Մ. Ա Ա. մեկնել է Սյունիք, գումարել ընտրական ժողով և հայր Երիցակին ձեռնադրել եպիսկոպոս (Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, 1912):

Կաթողիկոս. գահին Մ. Ա Ա-ուն հաջորդել է *Սահակ Բ Ուղկեցին*:

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնել է *Մխիթարյան միաբանությունը* Հնդկաստանի հայ վաճառականներ Մուրատի և Ռափայելի կտակի համաձայն. 1834-ին՝ Պադուայում՝ Մուրատյան (1846-ին տեղափոխվել է Փարիզ), 1836-ին՝ Վենետիկում՝ Ռափայելյան անուններով: 1870-ին Մուրատյան և Ռափայելյան վարժարանները միավորվել են և կոչվել է Մ-Ռ. վ.: 1917-ին տեղափոխվել է Հռոմ, 1918-ին՝ դարձյալ Վենետիկ: 1929-ին նախկին Մուրատյան վարժարանն անջատվել է, վերաբացվել Փարիզում, սակայն Մ-Ռ. վ. պահպանել է իր անունը: Երկրորդ համաշխ. պատերազմի ժամանակ փակվել է, վերաբացվել՝ 1950-ին: Սկզբ. շրջանում վարժարանն առաջնորդվել է գիմնազիական ծրագրով, ունեցել 6-ամյա դասընթաց: 1867-ին՝ Ֆրանսիայի, 1879-ին Իտալիայի կառավարությունները Մ-Ռ. վ-ին տվել են լիցեյի կարգավիճակ: Վարժարան ընդունվել են 14 տարին լրացած պատանիներ: Ուսման տևողությունը՝ 5 տարի՝ 2 միջնակարգ և 3 բարձրագույն դասարաններով: Լավագույն շրջանավարտներին վարժարանի տեսչությունը շնորհել է Իտալիայի կրթության նախարարության կողմից վավերացված վկայականներ, որոնք իրավունք են ընձեռել առանց մուտքի քննությունների ուսանել եվրոպ. և ամերիկ. համալսարաններում: Վարժարանի նպատակն էր պահպանել հայոց լեզուն և մշակույթը, զարգացնել հայագիտությունը: Վարժարանն ունեցել է ուսումնանյութ. լայն հնարավորություններ, հարուստ գրադարան, թանգարաններ, մարզ. հրապարակներ ևն: Սաներն ուսանել են հայոց լեզու, գրաբար, հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն, աշխարհագրություն, ինչպես նաև օտար լեզուներ: Մ-Ռ. վ-ում դասավանդել են Ղ. *Ալիշանը*, բանասեր, ազգագրագետ Վ. Հացունին, ֆրանսիացի և իտալացի ուսուցիչներ, վարժարանի «Հայկական քայլերգի» երաժշտության հեղինակ Ս. Պոնցիլաքուան: Շրջանավարտներից են Դ. Վարուժանը, Վ. Սվաճյանը, Վ. Փափազյանը, Է. Շահինը և ուր.: Սովորել են նաև եվրոպացիներ: Հայագետներ Հ. Հյուբշմանը, Մ. Բրոսսեն, Ֆ. Ֆեյդին և ուր. մշտական կապեր են ունեցել Մ-Ռ. վ-ի հայագետների հետ:

1985-ից շրջանավարտների թիվը նվազել է: 1991-ից Մ-Ռ. վ-ում ուսանել են պատանիներ նաև Հայաստանից: 1998-ին նյութական դժվարությունների պատճառով Մ-Ռ. վ. փակվել է:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.1, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Թեոդորյան Ս., Պատմութիւն Մուրատեան վարժարանին..., հ. 1, Փարիզ, 1857:

Յ

ՅՈԹԸ ԽՈՏԱՃԱՐԱԿՆԵՐ, Խոտաճարակ մարտիրոսներ (VI դ. վերջ – VII դ. սկիզբ), տոնելի սուրբ ճգնավորներ, վկաներ, որոնք ապրել են Հայոց Սմբատ Բագրատունի (VI դ. վերջ) իշխանի մարզպանության օրոք:

Մշո Ս. Կարապետ վանքի շուրջը հավաքվել են, ըստ Մ. *Ավգերյանի*, «թլուով իբրեւ 398» ճգնակեցներ, Թոդիկ կամ Թադիկ կոչեցյալ վանահոր օրով: Վանքի հռչակը լսելով՝ Արևմուտքից (հուն. Հայաստանից) և Արևելքից (պարսկ. Հայաստանից) եկել են նաև Յ. խ., հաստատվել Ս. Կարապետին մերձ անտառում, շուրջ 20 տարի ապրելով այստեղ «մեծ ճգնութեամբ և խոտաբուտ կենօք», հաճախակի Հաղորդությունը ճաշակելով վանքում: Երբ 604-ին Պարսից Խոսրով թագավորը պատերազմ է հայտարարել հույներին, կոչ է արել Մուշեղ Մամիկոնյանին՝ միանալ իրեն: Սակայն հայերը չեն համաձայնել: Այդ պատճառով պարսից զորքի մի թևը, Տարոնով անցնելիս, հարձակվել է Մշո Ս. Կարապետ վանքի վրա, որի պահպանությունը հանձն էին առել վանքում կամավոր մնացած Յ. խ.: Նախ գլխատել են նրանց գլխավորին՝ Պողիկարպոսին, ապա՝ մնացած վեցին, որոնց անունները՝ Թեովնաս, Սիմեոն, Հովհաննես, Եպիփան, Դիմարիոս և Նարկիսոս, պահպանվել են: Երեք օր անց, պարսկ. բանակի քաշվելուց հետո, վանքի փրկված միաբանները վերադարձել են և նրանց ամփոփել *Անտոն* և *Կրոնիդես* ճգնավորների գերեզմանների մոտ:

Յ. խ-ի հիշատակը Հայսմավուրքները նշել են սեպտ. 30-ին: Ներկայումս Հայ եկեղեցին նրանց հիշատակը տոնում է *Խաչվերացից* հետո՝ չորրորդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը:

Հայոց մեծ դարձին, ս. Անտոնին և ս. Կրոնիդեսին ու Յ. խ-ին է նվիրված «Յովհաննիսի է երգ» ակրոստիքոսը կազմող մի շարական.

«...Եօթն աստեղան երկնից կամարք, Աստուածութեանն կամարարք. Ճրագնողք մարմնով խոտաճարակք, Մաքուրք հոգւով լուսով տաճարք...»:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912, էջ 598: Սուրբերը և մենք (խմբ. արք. Մ. Աշճյան), Նյու Յորք, 1993: Սուրբերու կեանքը, Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

Ն

ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ, Ուռհայեցի (ծ.թ. անհտ – 13.6.1705, Էջմիածին, ամփոփվել է Ս. Շողակաթ եկեղեցու բակում), Ամենայն հայոց կաթողիկոս 1691-ից: Հաջորդել է *Եղիազար Ա Այնթապցուն*: Եղել է Եդեսիայի եպիսկոպոսը, կաթողիկոսի խորհրդակիցն ու գործակիցը: Կաթողիկոս է օծվել Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ընտրությամբ և հավանաբար՝ հանգուցյալ կաթողիկոսի ցանկության համաձայն: Ն. Ա Ե-ու հայրապետ. գործունեության սկիզբը նշանավորվել է շին. աշխատանքներով: Կառուցել է Օշականի կամուրջը, Մայր աթոռի վանատունը, վերակառուցել Էջմիածնի Շողակաթ եկեղեցին (1694), վանատունն ու հարակից շինությունները, նորոգել Երևանի, Ջորագյուղի, Կոնդի, Քանաքեռի եկեղեցիները, Հրազդանից ջրանցք է անցկացրել վանքապատկան հողերը ոռոգելու համար, ընդարձակել է Էջմիածնի վանքի կալվածքները: Ն. Ա Ե-ու անհաշտ գործելակերպի պատճառով Աղթամարի Թովմաս կաթողիկոսը 1693-ին խզել է հարաբերությունները Ս. Էջմիածնի հետ: Ն. Ա Ե. Թովմաս կաթողիկոսի վրա զայրանալով՝ վերջինիս զրկել է կաթողիկոսությունից և Ավետիս եպիսկոպոսին ձեռնադրել է Աղթամարի կաթողիկոս: Սակայն Թովմասը թուրք կուսակալի օգնությամբ Ավետիսին վտարել է Աղթամարից և Սահակ Արծկեցի եպիսկոպոսին (որպեսզի իր ծերության պատճառով կաթողիկոս. աթոռը թափուր չմնա և անկախ լինի Ս. Էջմիածնից) օծել է աթոռակից: 1697-ին Թովմաս կաթողիկոսը թուրք կուսակալի միջոցով վտարել է Ս. Էջմիածնին հպատակ Վանի եպիսկոպոսին և Վանի եպիսկոպոսությունը ենթարկել Աղթամարի կաթողիկոսությանը:

Մայր աթոռի միաբանները, դժգոհ Ն. Ա Ե-ու կառավարումից, որովհետև, ըստ XVIII դ. պատմագիր Խաչատուր Ջուղայեցու, «սաստկությամբ վարէր զգործ կաթողիկոսութեանն», Նախիջևանի և Գողթնի եպիսկոպոսների գլխավորությամբ դիմել են Նոր Ջուղայի հայերին՝ կաթողիկոսին դահընկեց անելու և Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցուն կաթողիկոս կարգելու խնդրանքով: Կաթողիկոսը, զգալով իր անկարողությունը, ապաստանել է Թավրիզում: Ստեփանոս Ջուղայեցին ժամանել է Ս. Էջմիածին և 1695-ին օծվել կաթողիկոս: Սակայն տասը ամիս անց Ն. Ա Ե. Իրանի շահ Սուլթան Հուսեյնի օգնությամբ դահընկեց է արել նրան և վերադարձել Էջմիածին:

Պարսկ. իշխանությունների հետ հարաբերությունները չվատացնելու նպատակով Ն. Ա Ե. 1699-ին մերժել է Իսրայել Օրու՝ դավանափոխության միջոցով ազգ-ազատագր. պայքար ծավալելու ծրագիրը:

Կաթողիկոս. դահին Ն. Ա Ե-ուն հաջորդել է *Աղեքսանդր Ա Ջուղայեցին*:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղ-պատ, 1873: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ [1661, գ. Շոռոթ (այժմ՝ Նախիջևանի Ի-ում) – 28.10.1722, գ. Շոռոթ], գրիչ, նկարիչ, բանաստեղծ, աշուղ: Հովնաթանյան ընտանիքի (տես *Հովնաթանյաններ*) ներկայացուցիչ: Նախն. կրթությունն ստացել է հոր՝ Հովհաննես (Յոհան) քահանայի մոտ, այնուհետև սովորել Ա-գուլիսի Ս. Թովմա վանքի դպրոցում: Ն. Հ-ի նկարչական առաջին քայլերը կապված են Ա-գուլիսի հետ, որտեղ ընդօրինակել և ծաղկել է ձեռագրեր (Մատենադարան, ձեռ. № 3628): Ենթադրվում է, որ Ագուլիսում, Երնջակում, Շոռոթում որմնանկարել է եկեղեցիներ: Ն. Հ-ի ստեղծագործ. կարողություններն ավելի ուշ դրսևորվել են նաև հատոցային ու մոնումենտալ դեղանկարչության բնագավառներում: Ա-պարանքներ և եկեղեցիներ է ձևավորել նաև Վրաստանում, Պարսկաստանում, ճանաչվել է որպես հմուտ նկարիչ և վաստակել «նաղաշ» (արաբ.՝ զարդանկարիչ) պատվավոր տիտղոսը:

Ն. Հ-ի մասին միակ գրավոր աղբյուրը Նաղաշ Հակոբի «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովնաթանի Նաղաշ...» ողբն է: 1679-ի Երևանի մեծ երկրաշարժից հետո հրավիրվել է Երևան, ստեղծագործել այդտեղ, նկարազարդել Ս. Պողոս-Պետրոս (պահպանված հատվածները գտնվում են ՀՊՊԹ-ում, Երևան), Զորավոր (Անանիա առաքյալ անապատ) և Կաթողիկե եկեղեցիները: Գրել է «Գովասանութիւն Երևանայ քաղաքին» տաղը: XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին հրավիրվել է Վրաստան: Թիֆլիսում ունեցել է արվեստանոց, աշակերտներ, ստեղծել դիմանկարներ, սրբապատկերներ: Եղել է Քարթլիի Վախթանգ VI թագավորի պալատական երգիչն ու նկարիչը, ձևավորել նրա նորակառույց պալատը, որտեղ գրել է «Գովեմ սրտիվ ուրախական» երգը՝ նվիրված «Վրաստանի գողալներին»: Ն. Հ. 1710-ական թթ. հրավիրվել է Էջմիածին, նկարազարդել Մայր տաճարը (ավարտել է 1720-ին): Պահպանվել է «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին» որմնանկարից հատված (ՀԱՊ, Երևան): Ուշագրավ են տաճարի բեմի եզրապատի Աստվածամոր և առաքյալների պատկերները, որոնք առանձնանում են ազդ. տիպականացմամբ, դիմանկարչական մեկնաբանություններով, կերպարների դրաֆիկ. ընդգծվածությամբ: Սրբապատկերային կանոններից հեռանալու միտումով է կատարված «Աստվածամայր» փոքրիկ սրբանկարը (Թեհրան, Առաջնորդարան): Հայկ. *որմնանկարչության* մեջ նոր երևույթ է տաճարի դեկորատիվ հարդարանքը՝ բուս. զարդանախշերն իրենց շքեղ, հարուստ և գունագեղ հատվածներով (պահպանվել է գմբեթի հատվածը): Ն. Հ. հայկ. կերպարվեստ է ներմուծել երևույթների աշխարհիկ ընկալումներ, հատոցային նկարչության սկզբունքների կիրառում:

Ն. Հ. միջնադարի նշանավոր բանաստեղծներից է, XVII դ. հայ աշուղ. պոեզիայի հիմնադիրը: Նրա գրական ժառանգության (ավելի քան 90 բանաստեղծություն) հարուստ և ամբողջ. ձեռագրերը պահպանվում են Երևանի (ձեռ. №№ 3263, 4426) և Վիեննայի Մխիթարյանների (ձեռ. №№ 537, 647) մատենադարաններում: Ն. Հ-ի բանաստեղծությունները գրված են սիրո, ուրախության և խնջույքի, խոհախրատ. ու երգիծ. մոտիվներով: Քարոզել է ստեղծագործ. աշխատանք, մարդկային ազնիվ ու մաքուր հարաբերություններ («Աստուած սիրէք, ում սրտում որ նախանձ կայ՝ հանի»), բողոքել է չարիքի, անարդարության դեմ, քննադատել իրականության հոռի կողմերը, դրվատել գիտությունն ու արվեստը: Ունի նաև կրոնածիսական տաղեր: Ն. Հ. օգտվել է ժող. բանահյուսությունից, գրել ժամանակի ժող. լեզվով, ազդ. ավանդ. տաղաչափ. ձևերին ներդաշնակել է աշուղ. բանարվեստի նվաճումները և ստեղծել նորատիպ երգեր: Ինքն է իր բանաստեղծությունների համար ընտրել կամ հորինել եղանակներ ու ինքն էլ երգել ու նվագել է դրանք:

Երկ. Բանաստեղծություններ, Ե., 1951: Տաղեր, Ե., 1983:

Գրկ. Զոպանյան Ա., Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910: Ակինյան Ն., Հովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Հովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վնն., 1911: Լեվոնյան Գ., Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, № 1, 2, 4: Մկրտչյան Մ., Նաղաշ Հովնաթան, Ե., 1957: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974: Նույնի, *Художники Овнатаняны, М., 1968.*

ՆԱՎԱԿԱՏԻՔ, Նավակատիկ (նոր կերտել, նոր շինել), կրոնական իմաստով՝ Նորաշեն տաճարի, եկեղեցու, ավելի լայն իմաստով՝ տան, ամեն նորի բացման, տարեդարձի ու նվիրագործության հանդես: Ն. է նոր ավարտված եկեղեցու առաջին նվիրագործությունը, ինչպես նաև՝ նվիրագործության տարեդարձը:

Հայ եկեղեցին Ն-ները սկսել է կատարել կամ հիշատակել մեծահանդես տոների նախընթաց օրերին, շաբաթապասի վերջին (տես *Պահք*): Ն-ով պահքի խստությունը մեղմացվում է՝ առանց այն ամբողջովին վերացնելու, այսինքն՝ մսեղենը խստիվ արգելելով՝ ներվում է ձկնեղենի ու կաթնեղենի կիրառությունը Պատարագի մատուցումից հետո: Դրանից ելնելով էլ՝ մեղմացված պահքի կերակուրը նույնպես Ն. է կոչվում: Այդպես է նաև Հայ եկեղեցու հինգ *Տաղավար* տոների նախընթաց օրերին: Այսինքն՝ Վարդավառի, Աստվածածնի Վերափոխման ու *Խաչվերացի* նախընթաց շաբաթ օրերին, առավոտյան Պատարագից հետո, իսկ Ս. Ծննդյան ու ս. Զատկի ճրագալույցներին, երեկոյան Պատարագից հետո կաթնեղեն ու ձկնեղեն գործածելը նույնպես Ն. է նշանակում: Ն. իբրև առանձին տոն նշվում է Խաչվերացի տոնի նախընթաց շաբաթ օրը, IV դ. բյուզ. կայսրուհի Հելինեի նախաձեռնությամբ Երուսաղեմի Ս. Հարություն մեծ տաճարը շինվելուց հետո այն նվիրագործելու և օծելու տարեդարձի օրը, որն ամբողջ քրիստոնյա աշխարհի համար կարևոր հիշատակ է:

Արտաշես Ղազարյան

ՆԱՐԵԿԱՎԱՆՔ, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառում, Վանա լճի հարավային ափի մոտ, Նարեկ գյուղում: X դ. վանքը հիմնադրել են կրոն. հալածանքների պատճառով Բյուզանդիայից փախած և Հայաստանում ապաստանած հայ վանականները: *Ստեփանոս Տարոնեցու* վկայությամբ, Ն., *Հռոմոսի վանքը* և Կամրջաձոր վանքն առաջնորդվել են նույն կանոնադրությամբ: Ն-ի գլխավոր՝ Ս. Սանդուխտ եկեղեցին եռախորան, արլ. կողմում զույգ ավանդատներով, արմ. կամարակապ խորշերով, արտաքուստ ուղղանկյուն կառույց է՝ ութանիստ թմբուկով և բրգաձև վեղար ունեցող գմբեթով: Ըստ ավանդության, հվ. խորանում է գտնվում ս. *Սանդուխտի* գերեզմանը: Եկեղեցուն արլ-ից կից է *Գրիգոր Նարեկացու* գմբեթավոր մատուռ-դամբարանը, իսկ հվ-ից՝ մեկ զույգ որմնամույթերով, պայտաձև Ավագ խորանով գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Աստվածածին եկեղեցին:

Ն. ծաղկում է ապրել *Անանիա Նարեկացու*, հետագայում՝ Գրիգոր Նարեկացու վանահայրության տարիներին: Անանիա Նարեկացու ջանքերով վանքում հիմնվել է դպրոց, որտեղ ուսանել են *Ուխտանեսը*, Գրիգոր Նարեկացին և ուր.: Գրչության այս կենտրոնում կատարվել են Պատարագի և ժամերգության մեկնության ընդօրինակություններ, գրվել են ձեռագրեր: Ն-ից մեզ հասած առաջին ձեռագիրը 1069-ին գրված մի Աֆետարան է: Զնայած հետագայում էլ շարունակվել է ձեռագրերի ընդօրինակումը, սակայն Ն-ի դպրոցն այլևս չի հասել X–XI դդ. իր մակարդակին:

1707-ին Մինաս վրդ. Ղափանցին հիմնովին նորոգել է վանքը: 1787-ին վանահայր Բարսեղ վարդապետը եկեղեցիներին արմ-ից կից կառուցել է ուղղանկյուն, քառամույթ ընդարձակ գավիթ, որտեղ թաղված են Գրիգոր Նարեկացու եղբայր Հովհաննես վարդապետը և Անանիա Նարեկացին: 1812-ին գավթի արմ. մուտքի առջև կառուցվել է եռահարկ զանգակատուն: 1843-ին Ն-ի գմբեթները նորոգել են

Նարեկավանքի (X դ.) ընդհանուր տեսքը

ճարտարապետ Սահրատ Մեմարբաշին և նրա որդի Մովսեսը: 1858-ին վանքը բարեկարգել է Հովհաննես վարդապետը, 1867-ին վանահայր Հովսեփ Բաբունին Գրիգոր Նարեկացու մատուռ-դամբարանի վրա կանգնեցրել է մարմարե խաչքար՝ վրան քանդակված Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, նրանց առջև ծնրադիր՝ Գրիգոր Նարեկացին: 1884-ին Արիստակես վարդապետը վանքում բացել է վարժարան: 1896-ին Ն-ի վրա հարձակվել են քրդերը, սպանել վանահայր Եղիշեին և 12 միաբանների: 1901-ին վանքում բացվել է (Ջանչյան ընտանիքի բարերարությամբ) որբանոց-վարժարան:

Ն-ի ուխտագնացության օրերն են Վարդավառի և Վարագա ս. Խաչի տոները: Ն-ից հս-արմ., մոտ 2 *կմ* հեռու, գտնվում է նվիրական սրբավայր համարվող այն քարայրը, որտեղ

ճգնել է Գրիգոր Նարեկացին: Ն. ավերվել է Մեծ եղեռնի ժամանակ:

Գրկ. Լալայան Ե., Վասպուրական. նշանավոր վանքեր, պր. 1, Թ., 1912: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: Thierry J.M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ՆԵՌ, դերաքրիստոս, հակաքրիստոս, Քրիստոսին հակառակվող անձ, հակաքրիստոս, սուտ Քրիստոս, սուտ մեսիա, չար, Անօրեն (Բ Թեսաղ. **2.**8): Քրիստոնեության արշալույսից ի վեր այս անունն են կրել քրիստոնյաներին հալածողները, քրիստոնեության անունից գործող այն անհատները, ովքեր, բացարձակացնելով իրենց անձը, *Հիսուս Քրիստոսի* հատկություններն իրենց են վերագրել, բայց իրականում գործել են հակառակ Քրիստոսի և քրիստոնեության (Ա Հովհ. **2.**18): Նմանների վարդապետության բնորոշ առանձնահատկությունը Հայր Աստծո, Որդի Աստծո և Սուրբ Հոգի Աստծո ուրացումն ու Քրիստոսի՝ մարմնով գալու մերժումն էր (Ա Հովհ. **2.**18–23, **4.**2–3): Քրիստոնեության վաղ շրջանում տիրապետող էր այն մտայնությունը, թե Ն. հայտնվելու է Քրիստոսի Երկրորդ գալստից առաջ: Պողոս առաքյալը նրան անվանում է «անօրենության մարդը» (Բ Թեսաղ. **2.**3): Հիմնվելով Հայտնության գրքում (**13.**18) տրված «գազանի» թվի (666) հունարեն անվանական համարժեքի («ՆԵՌ») վրա, ելնելով անվան բացորոշ նմանությունից՝ հայրախոսական մատենագրությունը (*Կյուրեղ Երուսաղեմացի, Եվսեբիոս Կեսարացի, Եփրեմ Ասորի* և այլք) այն նույնացնում է Ներոն կայսրի (54–68)՝ իբրև քրիստոնեության ոխերիմ հակառակորդի անվան հետ: Ն. մարմնացումն է այն գազանի, որ հարկադրում է մարդկանց երկրրպագել իրեն, իսկ «ով չերկրպագի գազանի արձանին, նրան սպանի...» (Հայտն. **13.**5): Ն-ի իշխանությունը շարունակվելու է 42 ամիս (Հայտն. **13.**5), ինչը հակապատկերն է երկրի վրա Քրիստոսի եռամյա տնօրինական գործունեության:

Համաձայն միջնադարյան որոշ մեկնիչների, Ն-ի ծննդավայրը աստվածամարտ Քաղաքն է: Ի հակակշիռ Մարիամ Աստվածածնի կուսական հղության, նա ծնվելու է կուսության խոստումը դրժած կույսից կամ արյան պիղծ խառնակումից: Հռչակելով իր կեղակարծ առաքինություններն ու հրաշագործությունները՝ Ն. երեք պատերազմներում հաղթելու է Եգիպտոսի, Լիբիայի ու Եթովպիայի թագավորներին (հմմտ. Դանիել **11.**42–43), ապա հաստատելու է իր համաշխ. տիրապետությունը: Սրանից հետո Ն. դառնալու է համընդհանուր պաշտամունքի առարկա պղծված եկեղեցիներում կամ Երուսաղեմի նորոգված տաճարում, որտեղ նա իրեն ներկայացնելու և բազմելու է իբրև Աստված (Բ Թեսաղ. **2.**4): Սակայն, երբ ժամանակը լրանա, Ն. իր հետևորդներով հալածվելու է, և, սարսափելով Քրիստոսի մոտալուտ գալստից, դահավիժելու է բարձր լեռան վրայից:

Վախճանաբանական և փրկաբանական այս գաղափարները, որոնք վաղ անցյալում սկիզբ են առել Միջագետքում ու Եգիպտոսում, անցել իրանական և հրեական աստվածաբանություն և ապա մուտք գործել Արևելքի հելլենիստ. պետություններ և Հռոմ. կայսրության մեջ, նպաստավոր հող են ստեղծել համաբնույթ գրականության հորինման համար: Հայ թարգմանական մատենագրության մեջ լայն շրջանառության մեջ են եղել երկեր՝ Հիպպոդիտոս Բոստրացու (մահ. 235/236), Մեթոդիոս Պատարացու (մահ. 311/312), *Ներսես Ա Մեծի, Հովհան Ոսկեբերանի*, Ագադրոնի (XII–XIII դդ.) և այլոց անուններով, ինչպես նաև՝ մի շարք անանուն երկեր: Այս գրականության հիման վրա աստվածաբան. միտքը բնութագրում է Ն-ին, վեր հանում նրա գործունեության ուղղվածությունը: Հիմնվելով հույն աստվածաբաններ Անդրեաս Կեսարացու (VI դ.) և Արեթաս Կեսարացու (X դ.)՝ Հովհաննեսի Հայտնության մեկնության վրա, Գրիգոր Տաթևացին տալիս է Ն-ի թվային հայերեն համարժեքը՝ «Ուրանամ կամաւ զԱրարիչն» (Կամովին ուրանում եմ Արարչին) – ՈԿԶ՝ 666: Համաձայն Գրիգոր Տաթևացու մեկնաբանության, Ն. ոչ թե *սատանա* է, այլ, լինելով մարդ (Բ Թեսաղ. **2.**3)՝ սատանայի արբանյակն է, որին բացարձակապես խորթ են ինչպես բնական և գրավոր, այնպես էլ ավետարանական օրենքները: Ն. հակառակ է ճշմարտությանն ու բարությանը, խաչին, եկեղեց. պաշտամունքին ու առհասարակ բարեպաշտությանը: Ն. գործելու է վերջին օրերին, Քրիստոսի Երկրորդ գալստից առաջ: Իմանալով աշխարհի մոտալուտ վախճանի և այդու՝ իրեն սպառնացող տանջանքների մասին՝ Ն. գործում է առավել կատաղորեն: Ն-ի նման անկաշկանդ գործունեությունն ու ժամանակավոր հաջողությունը եկեղեցու

հայրերը բացատրում են, մասնավորաբար, վերջին օրերին մարդկանց մեջ տիրական դարձած՝ Քրիստոսի ճշմարիտ սիրո նկատմամբ բացահայտ ատելությամբ, հոգեփրկության, Աստծո խոսքի հանդեպ լիակատար անտարբերությամբ, Քրիստոսի տնօրինական սխրանքների և հրաշքների ժխտումով:

Միջնադարի հայ իրականության մեջ, իբրև խորքային իրողություն, գաղափարական համազորը դիտվելով հեթանոս. Միհր աստծո, Ն. համարվել է չարության կամ հակառակության անձնավորում:

Ն-ի հետ կապված վախճանաբանական տրամադրությունները հայ (և ոչ միայն հայ) իրականության մեջ աշխուժացել են Ն. անվան թվային արժեքին համապատասխանող 666 թվականին և Քրիստոսի ծննդյան, մկրտության ու խաչելության հազարամյակներին (1000, 1030, 1033 թթ.): Ն-ի ծննդյան կամ գալստյան կանխանշան են համարվել երկրաշարժերը, կլիմայական անկանոնությունները և ռազմաքաղ. ու սոցիալական ցնցումները: Այսպես. *Հովհաննես Կոզեռնի* տեսիլքի համաձայն, 1022-ին տեղի ունեցած երկրաշարժն ու արեգակի լիակատար խավարումը կապվում են Հայտնության գրքում բերված նկարագրության հետ, ըստ որի, հազար տարի անց պետք է ազատ արձակվի Քրիստոսի մկրտությամբ շղթայված սատանան: Սրան անդրադառնում է պատմիչ *Սամուել Անեցին*, որը 1030-ին՝ Քրիստոսի մկրտության հազարամյակին, թուրքերի գրոհը Բերկրիի վրա, արեգակի խավարումը, ինչպես նաև՝ 1037-ին Եղեսիայի գրավումը և արեգակի կրկնված խավարումը կապում է Հովհաննես Կոզեռնի տեսիլքում պատմվող Ն-ի մոտալուտ գալստյան հետ: Մատնանշելով 1033-ի (Քրիստոսի խաչելության հազարամյակին) հունիսի 29-ին՝ ուրբաթ օրը տեղի ունեցած արեգակի խավարումը, XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին նկատում է, թե գիտնականներից շատերի կարծիքով, դա ազդարարն էր Ն-ի ծննդյան կամ կանխանշանը մեծամեծ չարիքների («Պատմութիւն», 1963, էջ 49): Նույն բովանդակությամբ նկարագրություն առկա է XIII դ. պատմիչ Մխիթար Այրիվանեցու Պատմության մեջ («Պատմութիւն Հայոց», 1860, էջ 58):

Գրկ. Ի գ ն ա տ ի ո ս Ա ս տ ո ւ ա ծ ա զ գ ե ա ց, Թուղթք, ԿՊ, 1783, էջ 100: Կ յ ո ւ ր ե ղ Ե ր ուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, Վնն., 1832, էջ 318: Եփրեմ Խուրի Ասորի, Մատենագրութիւնք, հ. 3, Վնտ., 1836, էջ 34, 35: Եվսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, Վնտ., 1877, էջ 435: Մատենագրութիւնք Եւթաղի, աշխատասիր. Ա. Վարդանյանի, Վնն., 1930, էջ 143: Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթեւի, տես «Սոփերք հայկականք», հ. 6, Վնտ., 1853: Գ ր ի գ ո ր Տ ա թ է վ ա ց ի, Քարոզգիրք. Ամառան հատոր, ԿՊ, 1741, էջ 609–613: Ն ո ւ յ ն ի, Ոսկեփորիկ (աշխարհաբար թրգմ. ու ծնթգր. Հակոբ Քյոսեյանի), Ե., 1995, էջ 134–149: Ա վ ե տ ի ք յ ա ն Գ., Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելւոյ, հ. 2, Վնտ., 1811, էջ 885: Ա լ ի շ ա ն Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վնտ., 1895, էջ 332: Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն Թ., Միհրը հայոց մէջ, Վնն., 1929, էջ 149–159: Ա կ ի ն յ ա ն Ն., Նեռն, ՀԱ, 1929, էջ 703–704: Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Ե., 1957, էջ 19–20: Ա ն ա ս յ ա ն Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 144–151:

Հակոբ Քյոսեյան

ՆԵՍՏՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հերետիկոսական ուսմունք, ըստ որի՝ Քրիստոսն ունի երկու բնություն և երկու անձ, ի տարբերություն ուղղափառ վարդապետության, որը մեկ միավորյալ բնություն և մեկ անձ է ընդունում Քրիստոսի մեջ: Ուսմունքը կոչվում է Կ. Պոլսի պատրիարք Նեստորի (428–431) անունով: Ն-յան գաղափար. ակունքները գալիս են անտիոքյան (տես *Անտիոք*) քրիստոսաբանության մեջ տեղ գտած մոլորություններից, որոնք հետևանք էին *ապողինարիզմի* դեմ պայքարի չափազանցությունների: Ապողինարիզմին հակադիր այս ծայրահեղության գաղափարախոսներ են համարվում Դիոդորոս Տարսոնացին և հատկապես՝ Թեոդորոս Մոպսուեստացին, որոնք հետագայում ճանաչվել են Ն-յան նախակարապետներ: Նրանք Քրիստոսին չափազանց մոտեցնում էին «սովորական մարդկանց»՝ ակնհայտորեն սխալ մարդաբան. շեշտադրումներ կատարելով Աստվածամարդու խորհրդի մեկնաբանության մեջ: Ի վերջո, ողջ Անտիոքյան դպրոցը գայթակղվել է մարդապաշտությամբ (հումանիզմ), և այս գայթակղությունից դուրս է սողոսկել Ն.:

Նեստորը չուներ համակարգված աստվածաբան. հայացքներ, սակայն որպես քարոզիչ օժտված էր խոսքի շնորհով: Միայն արտաքին պատմ. հանգամանքներն են մղել նրան աստվածաբան. շարժումների կենտրոն և ամենից առավել՝ այն փաստը, որ նա Կ. Պոլսի արքեպիսկոպոսն էր: Այդ իսկ պատճառով նրա խոսքերը հնչում էին իշխանությամբ և տարածվում ամենուր:

ՆԵՍՏՈՐԱԿԱՆ. Նեստորը ելնում էր այն բանից, որ Քրիստոսի մեջ Աստվածությունը և մարդկությունը գոյություն ունեն յուրաքանչյուրն իր հատկության, անձնավորության և էության մեջ, և մարդկությունը Քրիստոսի մեջ այնքան լիարժեք է, որ կարող է ինքնուրույն ապրել ու զարգանալ: Նա ընդունում էր «երկու բնություն», և սա նրա համար փաստորեն նշանակում էր «երկու դեմք», թեպետև նա գործածում էր «միացության դեմք» արհեստական եզրը: Նեստորը, բաժանելով Քրիստոսին «երկու բնություններ», միացնում էր նրանց «խոնարհման» մեջ: Ըստ Նեստորի՝ Քրիստոսի մեջ Աստված երբեք չի գործել առանց մարդու: Սակայն, նախ և առաջ սա կամային միացում է, միացում է սիրո մեջ: Նրա համար մարմնավորման ողջ իմաստը սպառվում է կամքի և ներգործության միությամբ: Եվ հենց այս միությունն է Նեստորի համար նշանակում «միացության դեմք»: Այդ միությունը նա սահմանում է որպես «կերպարների փոխադարձ գործածություն»: Աստվածությունը օգտվում էր մարդկային դեմքից, իսկ մարդը՝ աստվածային դեմքից. այս իմաստով Նեստորի համար գոյություն ուներ «միացության դեմքը»: Այս միությունը նրա համար զարգացող միություն է. կատարյալ միավորմանը նախորդում է ճգնությունների և պայքարի ժամանակը, երբ դեռ Օծյալը ժառանգության և իշխանության իրավունք չուներ, երբ դեռ կրքերը չէին հաղթահարվել ևն: Քրիստոսը դեռ հրաշքներ չէր գործում, ուսուցանելու իշխանություն չուներ, այլ միայն ենթարկվում էր և կատարում պատվիրանը: Միայն Հովհաննես Մկրտչի կողմից մկրտվելուց և անապատում փորձվելուց հետո, հոգով բարձրանալով առ Աստված, իր կամքը համաձայնեցնում է նրա կամքի հետ և իր հաղթանակի համար պարգև ստանում՝ քարոզելու և ավետարանելու երկնքի արքայությունը:

Նեստորը Քրիստոսի մեջ ուրիշ ոչինչ չէր տեսնում, բացի մարդկային ճիգերից, որոնց միջոցով իր վրա էր հրավիրում Աստծո բարեհաճությունը: Հատկանշական է, որ Նեստորը հակադրում էր Բան Աստված և Քրիստոս անունները: Նա խուսափում էր Քրիստոսին անվանել Մարմնացյալ Բան, այլ սահմանափակվում էր էմմանուել՝ «մեզ հետ է Աստված» անվամբ: Աստվածածին անվան ժխտումն անհրաժեշտորեն հետևում էր Նեստորի ենթադրություններից: Դրան նա հակադրում էր Քրիստոսածին անունը, որը ցույց էր տալիս այն բնությունը, որով ծնեց նրան Մարիամը:

Ն-յան դեմ պայքարելիս պարզվել է այն ժամանակվա քրիստոսաբան. լեզվի ողջ անհստակությունը: Սակայն ճիշտ չէ Նեստորի բոլոր սխալներն ու անճշտությունները վերագրել նրա աստվածաբան. և մեկնող. լեզվի անհստակությանը, աստվածաբան. ըմբռնումների անորոշակիությանը, ընդհանուր և առանձնահատուկ անունները շփոթելուն: Նեստորի մոլորությունը գալիս է նրա մարդաբանական ենթադրություններից, Քրիստոսի խորհուրդի սխալ ընկալումից:

Նեստորի գլխ. գրություններն իր նամակներն ու քարոզներն են, որոնք մասամբ են պահպանվել: 1895-ին հայտնաբերվել և ապա 1910-ին հրատարակվել է Նեստորի ջատագովության ասորերեն բնագիրը՝ «Հերակլիդեսի գիրքը» վերնագրով: Այսպիսի վերնագրի ընտրությունը հավանաբար պայմանավորված էր գրվածքի ոչնչացման վտանգով, և դա պատահական չէր, քանի որ այդ գրության, ինչպես նաև Նեստորի բոլոր գործերի հունարեն բնագրերն անհետացել են:

Նեստորի աղանդի դեմ եկեղեցին լարված պայքար է ծավալել, որը գլխավորել է *Կյուրեղ Ալեքսանդրացին*: 431-ի *Եփեսոսի Գ տիեզերական ժողովը* նզովել է Նեստորին և նրա հետևորդներին: Աթոռազրկված Նեստորին Եփեսոսի ժողովից հետո թույլատրվել է վերադառնալ Անտիոքին մոտ գտնվող մի վանք, իսկ 435-ին աքսորվել է Եգիպտոս: Հայտնի է, որ բյուզ. Մարկիանոս կայսրը հրավիրել է նրան մասնակցելու *Քաղկեդոնի ժողովին*, սակայն ճանապարհին մահացել է: Եփեսոսի ժողովից անմիջապես հետո Կյուրեղ Ալեքսանդրացին ձեռնամուխ է եղել Նեստորի նախորդների քրիստոսաբան. հայացքների քննադատությանը և վերլուծմանը:

Եփեսոսի ժողովից հետո Նեստորի համախոհ մի շարք եպիսկոպոսներ հիմնել են առանձին Նեստորական եկեղեցի, որի կենտրոնը Պարսկաստանում էր: Նեստորականները Եդեսիայում հիմնել են իրենց նշանավոր աստվածաբան. դպրոցը: Սակայն հականեստոր. տրամադրությունների սրման պատճառով նրանք Եդեսիայից (դպրոցը փակվել է 489-ին՝ բյուզ. Զենոն կայսրի հրամանով) տեղափոխվել են Պարսկաստան: 499-ի Սելևկիայի ժողո-

վում Ն. հռչակվել է Պարսկաստանի քրիստոնյաների պաշտոն. դավանանք: Մծբինը դարձել է նեստոր. մշակույթի կարևորագույն կենտրոնը. այնտեղ հիմնված աստվածաբան. դպրոցը փոխարինել է Եդեսիայի դպրոցին: Նեստորականները բավականին մեծ քարոզչ. գործունեություն են ծավալել ամբողջ Արևելքում. Ն. տարածվել է Արաբիայում, Միջին Ասիայում՝ հասնելով մինչև Հնդկաստան և անգամ՝ Չինաստան: Արաբ. տիրապետության շրջանում Ն. մեծ ծաղկում է ապրել: XIII դ. նեստորական պատրիարքության ենթակայության տակ կար 25 մետրոպոլիտություն և 150 եպիսկոպոսական թեմ: Այս ժամանակներից էլ սկսվել է Ն-յան անկումը: Մոնղոլ. արշավանքները կործանարար են դարձել ոչ միայն խալիֆայության, այլև Նեստորական եկեղեցու համար. մազապուրծ եղած նեստորականները քաշվել են Քրդստանի անմատույց լեռները: XVI դ. սկզբից բնակություն են հաստատել Ասորիքում և Միջագետքում՝ ընդունելով թուրք. հպատակություն, ինչը խիստ անբարենպաստ է եղել նրանց համար, և նրանք հովանավորություն են փնտրել Արևմուտքում: Նեստորականների մի մասը միացել է Հռոմի եկեղեցուն (քաղդեացիներ), մի փոքր մաս էլ՝ 1898-ին Ռուս ուղղափառ եկեղեցուն:

Նեստորականները (կոչվում են ասորիներ) ներկայումս ապրում են հիմնականում Իրաքում, Իրանում և Սիրիայում: Նրանց թիվը կազմում է 175 հզ. (ներառյալ ԱՄՆ գաղթածները): Հոգևոր կենտրոնը Իրաքում է, առաջնորդն է պատրիարքը (կոչվում է Անտիոքի պատրիարք): Նեստոր. եկեղեցին հորջորջվում է նաև Արևելքի եկեղեցի կամ Պարսից եկեղեցի: 1984-ին նեստոր. պատրիարքը և Հռոմի պապը ստորագրել են մի դավան. համաձայնագիր, որով նեստորականները պաշտոնապես հաղորդություն մեջ են մտել Հռոմի եկեղեցու հետ:

Հայ եկեղեցին անմասն չի մնացել հականեստոր. պայքարից, որի վկայություններից է *Սահակ Ա Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* թղթակցությունը (պահպանվել է «*Գիրք թղթոցում*») Կ. Պոլսի Պրոկղ պատրիարքի հետ: Ն. Հայ եկեղեցին դատապարտել է Դվինի 506-ի և 554-ի ժողովներում (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*): Ն-յան դեմ պայքարը Հայ եկեղեցու ուշադրության կենտրոնում է եղել մինչև VII դ. սկիզբը: Պարսկաստանում Ն-յան դիրքերի թուլացումով հականեստոր. պայքարը կորցրել է իր կարևորությունը Հայ եկեղեցու համար, սակայն շարունակել է մնալ հայ հակաճառ. գրականության գլխավոր թեմաներից մեկը՝ երբեմն նույնացվելով *քաղկեդոնականության* հետ:

Գրկ. Կյուրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, ԿՊ, 1717: Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.1, ԿՊ, 1912: *Поснов М.Э., История христианской церкви, Брюссель, 1964; Болотов В.В., Лекции по истории древней церкви, т. 4, М., 1994;* Loofs F., Nestoriana, Halle, 1905; Bethume-Baker J.F., Nestorius and His Teaching, with Special Reference to the Newly Recovered Apology of Nestorius, Camb., 1908; Florovsky G.V., Byzantine Fathers of the V–VIII [centuries], 1933; Grillmeier A., Christ in Christian Tradition, v. 1,2, 1975.

Մեսրոպ քհն. Արամյան

ՆԵՐԲՈՂ, փոքրածավալ սրբախոսական գրականության ժանր: Հայ միջնադարյան գրականության մեջ սկզբնավորվել է V դ., հանդես եկել թեմատիկ կառուցվածքային ոճաարտահայտչ. այն հատկանիշներով, որոնք արդեն մշակվել էին քրիստ. առաջին դարերի բյուզ. գրականության մեջ: Ն-ի, իբրև գրական ժանրի, տեսական սահմանումը և նրա հատկանիշների բնութագրումը տրվել է «Պիտոյից գրքում», որը բովանդակում է անտիկ ճարտասանության հիմն. դրույթները: Գրքի թարգմանությունը, ինչպես և առանձին մասերի հեղինակությունը, վերագրվում է *Մովսես Խորենացուն*. «Ներբողեան է բան արտադրական եղելոց բարեաց...»,– ասված է գրքում: Այստեղ առկա է Ն-ի էական հատկանիշների ըմբռնումը. Ն. բարի գործերի, առաքինության գովերգությունն է: Ն-ի սահմանումը առավել հստակ է Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» ձեռնարկում, որը նույնպես հայերեն է թարգմանվել V դ.: Ըստ նրա, Ն. այն խոսքն է, որը ցույց է տալիս որոշակի անձանց մեծությունը՝ նրանց առաքինի գործերով և այլ բարի հատկանիշներով: Այս միտքը անվերապահորեն ընկալելի է եղել հայ միջնադարյան գրականության մեջ: Ն. հյուսելու կարգ ու կանոնները լայնորեն կիրառվել են վարքերի, ճառերի, գովեստների, անգամ պատմագրության մեջ:

Անտիկ աշխարհում Ն-ի նյութը մարդն էր, երկրայինը, մինչդեռ քրիստոնեության դա-

ում նահատակներն ու սրբերն էին, կրոն. սրբություններն ու եկեղեց. տոները, մարդու բարեպաշտությունն ու հոգևոր սխրանքը: Էական տարբերությունը, սակայն, թեմատիկան չէ, այլ գաղափար. մեկնակետն ու գեղ. մարմնավորումը: Հայ ներբողագրությունը բացառապես տոգորված է քրիստ. աշխարհայեցողությամբ: Ելնելով Ն-ների բովանդակակիր տարրերի հիմն. հատկանիշներից՝ մատենագրության մեջ տարբերակվում են վարքագր., դամբանօրհներգ. և այլ Ն-ներ: Բյուզ. գրականությունը հարուստ է ներբող. վարքերով, որոնց զգալի մասը նույնպես թարգմանվել է հայերեն: Դա նպաստել է հայ վարքագրության ձևավորմանն ու նրա ուրույն գծերի մշակմանը: Ներբող. վարքի դասական օրինակ է *Հովհան Ոսկեբերանի*՝ Գրիգոր Լուսավորչին նվիրած գրվածքը, որը խոր հետք է թողել հայ միջնադարյան ներբողագրության վրա: Ն. ունի երեք կայուն հատկանիշ՝ նախաբան, բուն նյութ և վերջաբան: Հայ ներբողագրության մեջ վերջաբանին հատուկ է ընդգծված ազդ. երանգը:

Պահպանելով իրենց կրոնաուսուցող. նշանակությունը և պաշտպանելով քրիստ. վարդապետության գաղափարները՝ հայ միջնադարյան գրականության զարգացման առաջին շրջանի (V–X դդ.) Ն-ներում, անկախ դրանց տեսակից, կենսական ճշմարտությունները բացահայտվել են նյութի քրիստ. մեկնաբանման և հեթանոսության հետ նրա ունեցած հարաբերության, պայքարի և հակադրության ձևով: Ներբողելի անձի համար ոչինչ էր երկրային փառքը, աշխարհայինը, էականը Քրիստոսի իդեալն էր, հոգով անմահանալը: Որոշ վերապահումներով հայ առաջին ներբող. գրվածքը պետք է համարել Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: Հայ ներբողագրության գլխ. հերոսը Գրիգոր Լուսավորիչն է: Նրան նվիրված Ն-ներ են գրվել հայ գրականության զարգացման բոլոր դարերում. հայտնի են Գրիգոր Սարկավագապետը (VI դ.), Հովհաննես Երզնկացին (XIII դ.), Առաքել Սյունեցին (XIV–XV դդ.), Բաղդասար Դպիրը (XVII–XVIII դդ.) և այլք: Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված Ն-ներից լավագույնը բյուզ. գրականության մեջ Հովհան Ոսկեբերանինն է, հայ գրականության մեջ՝ Հովհաննես Երզնկացունը (Պլուզ):

Քրիստոնեության հաստատման և կռապաշտության մերժման պայքարի գաղափարն արտահայտվել է Մովսես Խորենացու՝ ս. Հռիփսիմե կույսին ու նրա ընկերուհիներին նվիրած Ն-ում: Հանուն նոր հավատի կյանքը զոհաբերելու, մարմնական տանջանքներն արհամարհելու և նահատակի լուսապսակի արժանանալու այս օրհներգությունը, ըստ էության, տարփողում է գիտակց. մահով անմահանալու գաղափարը: Հեթանոսության դեմ պայքարն արտացոլվել է նաև խաչին, եկեղեցուն, Ծաղկազարդի, Վարդավառի և այլ տոների նվիրված Ն-ներում: Ն-ի հերոսի գերագույն բաղձանքն է մերձենալ, հաղորդվել, նմանվել Աստվածորդուն՝ մահից հետո հոգով նրա մեջ անմահանալու համար: Արտաքին գեղեցկությունը դիտվել է որպես հոգևոր, ներքին գեղեցկության տեսանելի արտահայտություն: Հերոսի արտաքին գեղեցկության ներբողման այս յուրահատկությունն առանձնապես վառ է արտահայտվել Հովհաննես Գ Օձնեցու՝ Հռիփսիմե կույսի գեղեցկության դրվագման մեջ: Հեղինակն իր խնդիրն է համարել նկարագրել Հռիփսիմեի գեղեցկությունը «ըստ ներքին մարդոյն, որ երկնային թագավորին է հաճելի»:

Ներբող. գրականության զարգացման գործում մեծ է *Գրիգոր Նարեկացու* ավանդը: Քնարականությունից բացի նրա Ն-ներին բնորոշ է խոհախմաստասիր. երանգը: Հակոբ Մծբնացի հայրապետին նվիրած վարքագր. Ն-ում Գրիգոր Նարեկացին աշխարհը համարել է մի ծով, որը ծփում է ոչ թե ջրեղեն ալիքներով, այլ մեղքերից պղտոր՝ զանազան պատահարներով, ուր անվերջ բախվում են ներհակ զգացումները: Գրիգոր Նարեկացուն հատուկ է բնության կենդանի զգացողությունը, նա տալիս է նաև բնության անձնավորման օրինակներ: Բնության գեղեցկության գովքը, սակայն, Ն-ներում նպատակ չէ, այլ միջոց՝ հոգևոր նշանակության դիտանկյունից կրոն. մտքեր և զգացումներ արտահայտելու համար: Իր Ն-ներում բնության երևույթների պատկերմանը մեծ տեղ է տվել Մովսես Խորենացին: Նրա «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» Ն. համակված է լույսի ու արևի, ջրի ու ծաղկի հին պաշտամունքի ցնծությամբ:

Հայ գրականության զարգացման նոր շրջանում (XI–XVII դդ.) վերելք ապրելով՝ ներբողագրությունը հատկապես իր բարձունքին է հասել XIII դ.: Ներբողագրության զարգացմանը նպաստել է Գրիգոր Բ Վկայասերի, Ներսես Շնորհալու և ուր. թարգմանագործունեու-

թյունը: Թարգմանվել են քրիստ. եկեղեցու հայրերի վարքերը, Ն-ները, ճառերը: Նոր թափ է ստացել կրոնաուսուցող. ներբողագրությունը: Աստվածածին Կույսին նվիրված Ն. է գրել Մխիթար Սեբաստացին, ս. Խաչին նվիրված՝ Հովհան Վանանդեցին: Ստեղծվել են նաև Ս. Էջմիածնին ձոնված գովերգեր, որոնց բնորոշ էր հայրենասիր. շունչը, Հայ առաքելական եկեղեցու ազգապահպան դերի դրվատումը: Առավել հարուստ ու բազմազան էին դառնում ներբող. վարքերը, որոնց մի մասն ուներ պատմ. բնույթ: Գեղ. առումով դրանք արձակ ու չափածո գովասանություններ էին՝ նվիրված անցյալի ու ներկայի կրոն. ու մշակութ. գործիչներին: Պատմ. արձակ ներբողների մեջ առանձնանում են Կարապետ Այունեցու՝ Մեսրոպ Մաշտոցին և Վարդան Արևելցու՝ Մեսրոպ Մաշտոցին, գրերի գյուտին, Սահակ Ա Պարթևին, Հովհաննես Գ Օձնեցուն, Գրիգոր Բ Վկայասերին և թարգմանիչներին նվիրված Ն-ները: Ներբողական վարքերը ձեռք են բերել ոչ միայն պատմ. սկզբնաղբյուրի արժեք, այլև գեղ. նոր որակ: Գաղափար. աշխարհայացքային առումով արդեն նկատվում էր չարիքի, աղետի պատճառները իրականության և ոչ թե քրիստ. նախաստեղծ մեղքի կամ զուտ բարոյական մոլորությունների մեջ փնտրելու միտումը: Բարոյական վերածնության, կատարելագործման պահանջներից բացի ավելի որոշակի է արտահայտվել քաղ. ազատության, ժողովրդի անկախության, ազգ. միասնության գաղափարը: Հայ ներբողագրությունը տոգորված է քրիստ. վարդապետության կրոն. աշխարհայեցողությամբ: Կրոնասիրությունը, սակայն, ինքնանպատակ չէ: Հայ իրականության մեջ այն հայրենասիրության, ազգ. ինքնուրույնության ու ինքնատիպության արտահայտություն է:

Գրկ. Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վնտ., 1840: Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Ե., 1991: Ղազինյան Ա., Ներբողը միջնադարյան հայ գրականության մեջ, «Էջմիածին», 1984, № 6, 10: Վարդան Արևելցի, Ճառք, ներբողեանք, աշխատասիր. Հ. Քյոսեյանի, Ե., 2000:

Արշալույս Ղազինյան

ՆԵՐՍԵՍ Ա ՄԵԾ, սուրբ Ներսես Ա Պարթև (մոտ 329–373, ամփոփված է Եկեղյաց դավառի Թիլ ավանում), Ամենայն հայոց կաթողիկոս 353-ից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: *Վրթանես Ա Պարթևի* թոռը և *Գրիգոր Ա Լուսավորչի* ծոռը: Հաջորդել է *Փառեն Ա Աշտիշատցուն*: Հուն. կրթությունն ստացել է Կեսարիայում: Հայաստան վերադառնալուց հետո Հայոց թագավոր Արշակ Բ նրան նշանակել է արքունի սենեկապետ: 351-ին, Արշակ Բ-ի հանձնարարությամբ մեկնել է Կ. Պոլիս և վերականգնել հայ-բյուզ. դաշինքը, Հայաստան բերել Կոստանդիոս կայսրի մոտ պատանդ պահված Հայոց թագավորի եղբորորդիներ Գնելին և Տիրիթին, ինչպես նաև կայսրի վաղամեռ եղբոր նշանածին՝ Օլիմպիային՝ Արշակ Բ-ի հետ ամուսնանալու: Ն. Ա Մ-ի՝ Հայաստան վերադառնալուց հետո Արշակ Բ մեծամեծների ժողովում նրան շնորհել է հոգևոր բոլոր աստիճանները, 13 եպիսկոպոսների հետ ուղարկել Կեսարիա՝ Հայոց կաթողիկոս օծվելու: 356-ին Ն. Ա Մ-ի նախաձեռնությամբ գումարվել է Աշտիշատի ժողովը (տես *Աշտիշատի եկեղեցական ժողովներ*): 359-ին, դժգոհելով Արշակ Բ-ի՝ որոշ հայ նախարարական տների հալածելու քաղաքականությունից, Ն. Ա Մ. թողել է կաթողիկոս. գահը: Մոտ 364-ին, Արշակ Բ-ի խնդրանքով, կրկին նստել է կաթողիկոս. աթոռին և, որպես հայ նախարարներից կազմված պատվիրակության ղեկավար, մեկնել Կ. Պոլիս՝ հայ-բյուզ. լարված հարաբերությունները կարգավորելու նպատակով, բայց՝ ապարդյուն: Արշակ Բ-ի մահից հետո Ն. Ա Մ-ի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի խնդրանքով բյուզ. Վաղես կայսրը պատանդությունից ազատել և Հայոց թագավոր է ճանաչել Արշակ Բ-ի որդի Պապին: Ն. Ա Մ. ծավալել է հոգևոր-կրթ. մեծ գործունեություն, համարվել Հայ եկեղեցու առաջին մեծ բարեփոխիչը: Պայքար է ծավալել պարսկ. ազդեցության տարածման դեմ, ոչնչացրել զրադաշտ. ատրուշաններն ու մոգության դպրոցները, արգելել պարսկ-ի ուսուցումը, ձեռնամուխ եղել Հայաստանում քրիստոնեության տարածման և ամրապնդման գործին: Բացել է դպրոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ, բարեխնամ այլ հաստատություններ, վերակառուցել մի շարք վանքեր ու եկեղեցիներ: Ն. Ա Մ. փորձել է մեծացնել եկեղեցու դերը երկրի ներքին կյանքում: Նրա օրոք եկեղեցին դարձել է խոշոր հողատեր և մեծ ազդեցիկ ուժ: Պապ թագավորն իր հերթին, կամենալով թուլացնել հոգևորականության տնտ. և քաղ. աճող ազդեցությունը, փակել է տվել Ն. Ա Մ-ի նախաձեռնությամբ բացված հաստա-

տությունների մի մասը, վերացրել նրա սահմանած մի շարք կանոններ, պետականացրել եկեղեցու տիրույթների մեծ մասը, կիրառել մի շարք այլ միջոցառումներ՝ ընդդեմ հոգևորականության:

Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին հաղորդում են, որ Ն. Ա. Մ. թունավորվել է Պապի նախաձեռնությամբ: Այլ վարկածի համաձայն՝ նա մահացել է թոքերի հիվանդությունից, որով տառապել է դեռևս Կեսարիայում սովորելու տարիներին:

Հայ եկեղեցին ս. Ն. Ա. Մ-ի հիշատակը տոնում է Խաղ եպիսկոպոսի հետ՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին հաջորդող շաբաթ օրը (հունիս-հուլիսի սկիզբ): Եթե Գրիգոր Ա. Լուսավորիչը համարվում է «Լուսաւորիչ հոգւոց»՝ հավատի լույսը տարածելու, *Սահակ Ա. Պարթևը*՝ «Լուսաւորիչ մտաց»՝ հայ դպրության հիմնադրման և զարգացման, ապա Ն. Ա. Մ.՝ «Լուսաւորիչ սրտից»՝ բարոյական և կրոն. բարեկարգության նոր շրջանի սկզբնավորման համար:

Կաթողիկոս. գահին Ն. Ա. Մ-ին հաջորդել է *Շահակ Ա. Մանազկերտցին*:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.2, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Հովնանյան Ղ., Մեծն Ներսէս և Հայաստանի վրա ունեցած ազդեցությունը, Վնն., 1851: Մեսրոպ Երեց, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, «Սոփերք հայկականք», հ. 6, Վնտ., 1853: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՆԵՐՍԵՍ Բ ԲԱԳՐԵՎԱՆԴՅԻ, Ներսես Բ Աշտարակեցի [ծ. թ. անհտ, դ. Աշտարակ (Բագրեվանդ գավառ) – 557], Ամենայն Հայոց կաթողիկոս 548-ից: Հաջորդել է *Ղևոնդ Ա Երասխեցուն*: Գահակալման առաջին տարիներին ուժեղացել էին Հայ եկեղեցու հանդեպ պարսից պաշտոնյաների կիրառած կրոն. հալածանքները: Ըստ *Ստեփանոս Տարոնեցու*, Ն. Բ Բ-ու հորդորով Պարսից արքունիքը հետ է կանչել Հայաստանի մարզպան Դենշապուհ Նիխորականին (548–552), որը փորձել է բռնությամբ դավանափոխել հայերին: Նոր մարզպան Վահրամ Վշնասպը հրահանգ է ստացել վարել մեղմ քաղաքականություն և մոգերին թույլ չտալ բռնի կրոնափոխել հայերին:

VI դ. կեսին աճել էր Հայ եկեղեցու հեղինակությունն ու ազդեցությունը քաղկեդոնական մերժած Արևելյան եկեղեցիների շրջանում, որոնք սկսել էին ապավինել Հայ եկեղեցու՝ որպես ուղղափառության պատվարի, հովանավորությանը *քաղկեդոնականության* և *նեստորականության* դեմ պայքարում: Իսկ Պարսից արքա Խոսրով Անուշիրվանը, ելնելով իր քաղ. շահերից, հաշվի է առել մեծ հեղինակություն վայելող Հայ եկեղեցու դավան. կողմնորոշման հակաբյուզ. ուղղվածությունը և իրեն հպատակ քրիստոնյա եկեղեցիներից առաջնությունը վերապահել Հայ եկեղեցուն: Ն. Բ Բ., օգտվելով եկեղեցաքաղ. նպաստավոր հանգամանքներից, ավելի է թուլացրել Հայ եկեղեցու համար մեծ վտանգ ներկայացնող և նախկինում պարսից հովանավորությունը վայելող նեստորականության դիրքերը՝ իր պաշտպանության ներքո առնելով դավանակից ուղղափառ (հակասևերյան, հականեստորական) ասորիներին: Նեստորական եկեղեցին հրաժարվել է հայերի հովանավորությունը վայելող ուղղափառ ասորիների հետ ունեցած հակամարտությունը վերարծարծելուց: Ն. Բ Բ. ուղղափառ ասորիների համար եպիսկոպոս է ձեռնադրել Աբդիշոյին, որի թեմը ենթարկվել է Հայ եկեղեցուն: «*Գիրք թղթոց*»-ում պահպանվել է Աբդիշոյի նամակը Ն. Բ Բ-ուն և Տարոնի ու Մամիկոնեից Մերշապուհ եպիսկոպոսին: Թղթում ուղղափառ ասորիները գրել են, որ հալածվում են իրենց հավատքի համար և խնդրում, որ Հայ եկեղեցին հաստատի իրենց դավանությունը՝ որպես ուղղափառ դավանություն, և իր հեղինակությամբ պաշտպանի իրենց հակառակորդներից: Ասորիները թղթում նզովել են *Քաղկեդոնի ժողովը*, *Լևոնի տոմարը*, Եվտիքեսին (տես *Եվտիքականություն*), Արիոսին (տես *Արիոսականություն*), մերժել նաև ապականության սևերյան վարդապետությունը (տես *Անապականություն* հոդվածում): Հայոց կաթողիկոսը պատասխան թղթով ճշմարիտ և ուղղափառ է ճանաչել նրանց հավատքը:

Ն. Բ Բ-ու կարևորագույն ձեռնարկումը 554-ի Դվինի երկրորդ ժողովի գումարումն էր (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*), որը շրջադարձային նշանակություն է ունեցել Հայոց հոգևոր-եկեղեց., հաս-քաղ. կյանքում: Ժողովը, որին մասնակցել են նաև ասորիները «Աբդիշոյ Ասորեաց ուղղափառաց եպիսկոպոսի» գլխավորությամբ, ընդունել է «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» թուղթը, որտեղ հիշատակվել են միայն երեք տիեզեր.

ժողովներ, նզովվել նեստորականությունը, մծղնեից աղանդը (տես *Մծղնեություն*): Համաձայն տիրող կարծիքի և աղբյուրների վկայության, Դվինի 554-ի ժողովը պաշտոնապես նզովել է Քաղկեդոնը, և Դվինի ժողովից է սկսվել Հայ և բյուզ. եկեղեցիների պաշտոն. բաժանումը: Ժողովում որոշվել է նաև «Սուրբ Աստված» («Երգ երեքսրբենիի») սրբասացությունը «խաչեցարով» երգել, ինչպես նաև քննվել է *Հայոց Մեծ թվականի* սկզբնավորման հարցը, որը պաշտոնապես ընդունվել է 584-ին՝ *Մովսես Բ Եղիվարդեցու* օրոք: Ստեփանոս Տարոնեցու հավաստմամբ՝ Հայ և Հույն եկեղեցիների միմյանցից սահմանազատվելն այն աստիճան նշանավոր իրողություն էր, որ այդ տարվանից (554) հայերը սկզբնավորել են իրենց ազգ. թվականությունը՝ «կարգեցին զթուականն Հայոց», որով Հայ եկեղեցին կարող էր ստեղծել նաև ինքնուրույն Տոնացույց և ծիսակարգ: Ժողովում ընդունվել են 87 բարենորոգչական կանոններ, որոնք «*Կանոնագիրք Հայոց*» են մտել «Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» անունով: Ն. Բ Բ-ուց պահպանվել է ևս մեկ թուղթ՝ գրված Դվինի ժողովից հետո, ուղղված Արծրունյաց և Մարդպետական (Սեպհական) եպիսկոպոսներին: Թղթում Հայոց կաթողիկոսը հիշեցնում է նեստորականության դեմ Դվինի եկեղեցաժողովի որոշումները և հանձնարարում խստությամբ ու ճշտորեն գործադրել դրանք: Մուշեղ Բագրատունի իշխանի խնդրանքով Ն. Բ Բ. գրել է «Թուղթ հաւատոյ» գրությունը, որը չի պահպանվել:

Կաթողիկոս. գահին Ն. Բ Բ-ուն հաջորդել է *Հովհաննես Բ Գաբեղենցին*:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերությունները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կպ, 1912:

Արտաշես Ղազարյան

ՆԵՐՍԵՍ Գ ՏԱՅԵՑԻ, Ներսես Գ Իշխանցի, Ներսես Գ Շինող (ծ. թ. անհտ – 661), Ամենայն Հայոց կաթողիկոս 641-ից: Հաջորդել է *Եզր Ա Փառաժնակերտցուն*: Ծնվել է Տայքի Իշխան գյուղում: Կրթվել է Բյուզանդիայում և այնտեղ մտել զինվոր. ծառայության: Վերադառնալով հայրենիք՝ ստացել է եկեղեց. ձեռնադրություն, ապա կարգվել Տայքի եպիսկոպոս: Կաթողիկոս է դարձել Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունու հավանությամբ, ծավալել եկեղեցական գործունեություն, որի համար ստացել է Շինող մականունը: Նորոգել է Դվինի Ս. Սարգիս, Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցիները, Վասպուրականի Ձորո վանքը, կառուցել Խոր վիրապի Ս. Գրիգոր մատուռը, *Զվարթնոցի* Ս. Գրիգոր կաթողիկեն՝ հարակից հայրապետանոցով և պարիսպներով: 645-ին գումարել է Դվինի 5-րդ ժողովը, որի ընդունած 12 կանոնները մտել են Կանոնագրքի մեջ: 648-ի Դվինի 6-րդ ժողովում Ն. Գ Տ. և Թեոդորոս Ռշտունին մերժել են բյուզ. կայսր Կոստաս II-ի (Կոստանդին) և Կ. Պոլսի պատրիարք Պյուռոսի՝ բյուզ. եկեղեցուն միանալու և *Քաղկեդոնի ժողովն* ընդունելու առաջարկը (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*): 652-ին Կոստաս II կայսրը ներխուժել է Հայաստան, հալածել ընդդիմադիր հայ նախարարներին ու հոգևորականներին և կրկին առաջ քաշել եկեղեցիների միության խնդիրը: Այդ նպատակով, մի կիրակի, Դվինի Կաթողիկե եկեղեցում կայսրը հրամայել է հուն. ծեսով մատուցել Պատարագ, և կաթողիկոսի հետ միասին հաղորդվել են նաև հայ եպիսկոպոսները: Քաղ. պարտադրող իրադրության պայմաններում առժամանակ և հարկադրաբար ընդունված *միակամության* դավանությունը՝ որպես հաշտության եզր պառակտված եկեղեցիների միջև, ի վերջո մերժվել է երկուստեք և Հայ եկեղեցու համար որևէ լուրջ հետևանք չի ունեցել:

652-ին, երբ Թեոդորոս Ռշտունին արաբ. զորքերի օժանդակությամբ բյուզանդացիներից ազատագրել է Հայաստանը, Ն. Գ Տ., խույս տալով արաբ. կողմնորոշում ունեցող նախարարների հետ բախումից, մեկնել է Կ. Պոլիս՝ ակնկալելով կայսրի պաշտպանությունը: Նույն թվականի վերջին հուսախաբ վերադարձել է Հայաստան և մինչև 659-ը քաշվել Հայրենի Իշխան գյուղը. չհեռանալով հայրապետ. առաջնորդությունից՝ մեկուսացել է երկրի քաղ. գործերից: Թեոդորոս Ռշտունու մահից (658) և արաբ. սպառնալիքների մեղմացումից հետո, 659-ին վերադարձել է Վաղարշապատ, շարունակել Զվարթնոցի օժանդակ կառույցների շին. աշխատանքը:

Ն. Գ Տ-ու գահակալման օրոք կարևոր իրադարձություններից էր ս. Խաչի գյուտը և այդ առթիվ Վարագա ս. Խաչի տոնի (տես *Խաչի տոներ*) հաստատումը (653), որը Հայ եկեղեցու տոներից է: Կաթողիկոսը նույն վայրում՝

ՆԵՐՍԵՍ Վարագա լեռան վրա, որտեղ հայտնաբերվել է Հիսուս Քրիստոսի խաչափայտի մի մասունքը, կառուցել է Ս. Նշան եկեղեցին: Ն. Գ Տ. ամփոփվել է Զվարթնոցի հս. կողմում, իր կենդանության օրոք կերտած շիրիմում:

Կաթողիկոս. գահին Ն. Գ Տ-ուն հաջորդել է *Անաստաս Ա Ակոռեցին*:

Գրկ. Սեբեոս, Պատմություն, Ե., 1979: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ, տես *Ներսես Շնորհալի*:

ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ (13.2.1770, Աշտարակ – 13.2.1857, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս 1843-ից, ազգային-ազատագրական շարժման գործիչ: Հաջորդել է *Հովհաննես Ը Կարբեցուն*: Սովորել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում: Երևանյան առաջին արշավանքի ժամանակ (1804) օգնել է ռուս. զորքերին: 1814-ին նշանակվելով Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ՝ ծավալել է տնտ. և կրթ. գործունեություն, Թիֆլիսում հիմնադրել (1824) Ներսիսյան դպրոցը: 1826-ի ռուս-պարսկ. պատերազմի ժամանակ կազմակերպել է հայկ. կամավոր. խմբեր, անձամբ մասնակցել Երևանի, Էջմիածնի, Սարդարապատի ազատագրմանը: Երևանի գրավումից հետո նշանակվել է երկրամասի ժամանակավոր վարչության անդամ, պարգևատրվել Ալեքսանդր Նևսկու շքանշանով (1828): Նշանակալից դեր է կատարել Պարսկաստանից հայերի ներգաղթի կազմակերպման գործում: Ռուսաստանի հովանավորության ներքո հայկ. ինքնավարություն ստեղծելու՝ Ներսես արք. Աշտարակեցու ձգտումները շուտով հարուցել են ցար. կառավարության դժգոհությունը, և նա հեռացվել է Անդրկովկասից՝ նշանակվելով Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ (1828): Ընտրվելով կաթողիկոս՝ Ն. Ե Ա. վերադարձել է Էջմիածին, դիմադրել Հայ եկեղեցու նկատմամբ ցար. կառավարության ոտնձգություններին, զբաղվել հաս., կրթ. և շին. գործունեությամբ: Նրա ջանքերով կարգավորվել են Մայր աթոռի և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հարաբերությունները: 1840-ական թթ. կեսից ավելի շատ զբաղվել է տնտ. գործունեությամբ: Նրա առաջնահերթ նպատակն է դարձել վերականգնել կաթողիկոսի՝ «*Պոլոժենիե*»-ով ոտնահարված իրավունքները: Դրա համար հարկ էր կայունացնել Հայ եկեղեցու տնտ. վիճակը (պատահական չէ, որ «Պոլոժենիե»-ն ծրագրելիս ցար. կառավարությունը ամեն կերպ ջանացել էր Հայ եկեղեցուն զրկել իր եկամտի աղբյուրներից): Ն. Ե Ա-ու գահակալությունը եղել է անդիջում պայքար Հայ եկեղեցու ազգ-ավանդ. կարգի պահպանման համար, և այդ պայքարում կաթողիկոսը հաճախ է անտեսել «Պոլոժենիե»-ն և գործել ինքնուրույն: Իր ձեռքում կենտրոնացնելով եկեղեց. ողջ իշխանությունը՝ Ն. Ե Ա. չի համալրել *Սինոդի* կազմը, ամլության է մատնել նրա գործունեությունը՝ չհաստատելով Սինոդի արձանագրությունները: Թեմերում իր նշանակած ներկայացուցիչների միջոցով սահմանափակել է թեմական առաջնորդների իրավունքները և աչալրջորեն վերահսկել աթոռապատկան եկամուտները: Զբավարարվելով այդ ամենով՝ կազմել է տվել Հայ եկեղեցու նոր կանոնադրություն, որով Հայ եկեղեցու գործերի վարչությունը կենտրոնացվել է կաթողիկոսի ձեռքում: Իր հիմքում ունենալով Հայ եկեղեցու ավանդ. կարգը, այն իրենից ներկայացրել է «Պոլոժենիե»-ին բոլորովին հակադիր մի կանոնադրություն: Այդ պատճառով Ն. Ե Ա. այն չի ներկայացրել ցար. կառավարության հաստատմանը՝ քաջ գիտակցելով, որ վերջինս հավանություն չի տալու դրան, սակայն գործել է համաձայն Հայ եկեղեցու կանոնադրության իր տարբերակի: Դրանով նա ի չիք է դարձրել ցար. կառավարության հետապնդած նպատակները: Կաթողիկոսը, շատ շուտ հասու լինելով ցարիզմի իրական նպատակներին և ազատվելով Ռուսաստանի հովանավորության ներքո հայկ. ինքնավարություն ստեղծելու պատրանքներից, իր տիրական ձեռքով ուղղություն է տվել ազգային-պահպանողական մի հոսանքի, որի խնդիրն ամենից առաջ Հայ եկեղեցու ազգ. ոգու և ավանդ. կարգի պահպանումն էր:

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցի

Եկեղեցու և կառավարության հարաբերություններում արմատական դիրքորոշում որդե-

գրած Ն. Ե Ա. վարել է շատ ավելի զգուշավոր քաղաքականություն, երբ խոսքը հայ ժողովրդի և տվյալ տերության (Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան) փոխհարաբերությունների մասին էր: Իր կոնդակներով, գրություններով շարունակաբար հորդորել է հայության տարբեր հատվածներին զերծ մնալ անխոհեմ քայլերից, որոնք առաջ կբերեին տվյալ տերության դժգոհությունը և հակազդեցությունը:

Կաթողիկոս. գահին Ն. Ե Ա-ուն հաջորդել է *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին*:

Գրկ. Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, հ. 1–2, Թ., 1894–95: Նույնի, Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար, Թ., 1877: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927: Պարսամյան Վ., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1947:

Կարեն Ալեքսանյան

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ (ավազանի անունը՝ Սմբատ, 1153, Լամբրոն – 14.7.1198, Սկևռայի վանքի Ս. Աստվածածին եկեղեցի), աստվածաբան, մեկնիչ, մատենագիր, պետ. գործիչ, հրապարակախոս, բանաստեղծ, շարականագիր: Լամբրոնի բերդատեր, Հեթումյան իշխան Օշին Բ-ի և *Ներսես Շնորհալու* Շահան եղբոր դուստր Շահանդուխտ Պահլավունու որդին: Առաջին ուսուցիչն ու դաստիարակը եղել է մայրը, որից էլ սովորել է հունարեն (տիրապետել է նաև լատ., ասոր., եբր., զպտերեն լեզուներին): Սովորել է Սկևռայի վանքում, ապա *Հռոմկլայի կաթողիկոսարանի* բարձրագույն դպրոցում՝ Հայոց կաթողիկոսներ *Գրիգոր Դ Պահլավունու* և Ներսես Շնորհալու հովանավորությամբ: Ներսես Շնորհալին նրան 16-ամյա հասակում ձեռնադրել է քահանա՝ տալով իր անունը: 1175-ին *Գրիգոր Դ Տղան* Ն. Լ-ուն ձեռնադրել է Տարսոն քաղաքի արքեպիսկոպոս: Կյանքի վերջին տարիներին պաշտոնավարել է Լևոն Բ Մեծագործի արքունիքում՝ որպես ատենադպիր, խորհրդատու և թարգմանիչ:

Ն. Լ. XII դ. 2-րդ կեսի Մերձավոր Արևելքի ամենահայտնի եկեղեցաքաղ. գործիչներից է: Մասնակցել է 1178-ի *Հռոմկլայի եկեղեցական ժողովին*, Լևոն Բ Ռուբինյան իշխանի հանձնարարությամբ ուղարկվել է դիմավորելու Ֆրիդրիխ Շիկամորուսի (Բարբարոսա) գլխավորած երկրորդ խաչակրաց բանակին (1189), պաշտոն. դեսպանագնացությամբ այցելել Կ. Պոլիս (1197), մասնակցել Կիլիկյան Հայաստանի արտաքին գործերի կարգավորմանը:

Գործելով Տարսոնում, Լամբրոնում, Հռոմկլայում, Սաղրիում, Սկևռայում, Սև լեռներում և այլուր՝ Ն. Լ. նպաստել է Կիլիկյան Հայաստանի հոգևոր և մշակութ. կյանքի վերելքին, հորից ժառանգած նյութ. միջոցներով օժանդակել դպրոցներին, գրադարաններին, գրչատներին, 30 հզ. ոսկի դահեկան է նվիրաբերել ձեռագրերի գնմանը, ընդօրինակմանը, վանքերի, եկեղեցիների կառուցմանը: Պատվիրել կամ անձամբ ընդօրինակել է բազմաթիվ հին հայկ. ձեռագրեր, որոնց մի մասը հասել է մեզ (պահվում են Երևանի, Վենետիկի, Վատիկանի, Փարիզի և այլ մատենադարաններում): Ն. Լ-ու պատվերով ընդօրինակված՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը մեզ հասած ամենահին (1173) ու լավագույն ձեռագիրն է (պահվում է Մատենադարանում):

Ն. Լ. իր ճարտասան. կարողությամբ վաստակել է հմուտ հրապարակախոսի և քարոզչի համբավ (հայ և օտարազգի հեղինակները նրան համեմատել են Դեմոսթենեսի, Կիկերոնի, Հովհան Ոսկեբերանի և այլոց հետ): Երկար տարիներ ճգնել է Տավրոսի, Սեպուհ, Սև լեռների անապատներում ու վանքերում, հռչակվել իր սրբակրոն վարքով և իմաստությամբ նաև հույների, լատինների ու ասորիների շրջանում: Ն. Լ-ու աշակերտները (Խաչատուր Սկևռացի, Գրիգոր Սկևռացի) նրան ձոնել են երկեր, գրի առել նրա կյանքն ու գործը: Բնութագրելով ուսուցչին՝ Գրիգոր Սկևռացին գրել է. «Բղխէր իբրև զաղբիւր, յառաջէր որպէս զգետ, ծաւալէր իբրև զծով»: Նրան անվանել են «երկրորդ Պողոս Տարսոնացի առաքեալ», մեծարել «աքանչելի և կատարեալ այր», «Հայաստանեայց եկեղեցու լուսաւոր վարդապետ», «առաքելաշաւիղ հայրապետ», «սուրբ», «բերան քարոզութեան սրբոյ եկեղեցւոյ», «տիեզերական վարդապետ» և այլ մակդիրներով: Հանկարծամահ է եղել քարոզի ժամին:

Ն. Լ. եղել է Հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնության և պետականության մեծ գաղափարախոսներից: Պայքարել է Հայ եկեղեցու և Կիլիկյան Հայաստանի անկախության ու բարեկարգության համար: Եկեղեցիների միության հարցում պաշտպանել է իր մեծ նախորդի և ուսուցչի՝ Ներսես Շնորհալու գաղափար. գիծը, այն է՝ բոլոր եկեղեցիների հավասարու-

թյան սկզբունքի և ա-վանդ-ազգ. դիմագծի պահպանումով հասնել քրիստ. եկեղեցիների համերաշխությանն ու միաբանությանը, քարոզել լուսամիտ, մարդասիր. գաղափարներ, ազգամիջյան համերաշխություն և դավան. հանդուրժողականություն: Մերժել է Հույն և Կաթոլիկ եկեղեցիների միության առաջարկները՝ դրանցում տեսնելով քաղ. նպատակներ, Հայ եկեղեցու և պետության անկախության դեմ ոտնձգության փորձեր, քննադատելով և՛ քաղկեդոնականներին, և՛ այն հայ հոգևորականներին, հատկապես *արևելյան վարդապետների* առավել արմատական թևի ներկայացուցիչներին (*Գրիգոր Տուտեորդի* և ուր.), որոնց գործելակերպը և մտայնությունը խորացնում էին եկեղեցիների բաժանումը:

Բազմաժանր ու բազմաբնույթ է Ն. Լ-ու մատենագր. ժառանգությունը: Չնայած իր կարճատև կյանքին և պետ-եկեղեց. բուռն գործունեությանը, եղել է չափազանց բեղմնավոր հեղինակ և հայ միջնադարյան ամենանշանավոր մեկնիչներից: Նրա գրչին են պատկանում Աստվածաշնչի գրքերի բարձրարժեք մեկնություններ, որոնցից մեզ են հասել Արարածոց, Առակաց, Ժողովողի, Իմաստության, Երգ երգոցի, տասներկու մարգարեների, Դանիելի, Սաղմոսների, Մատթեոսի, Կաթողիկե թղթերի, Հովհաննեսի Հայտնության, Հովհաննեսի ննջման պարականոն պատմության մեկնությունները: Գրված լինելով ճգնավոր. կյանքի առանձնության մեջ՝ դրանք հագեցած են ոչ միայն աստվածաբան. նրբին լուսաբանումներով, այլև ներանձնական աստվածապաշտ. սկզբունքներով: Եկեղեցու վարդապետության ուղղափառ մեկնող. ավանդությունը համակարգելուց և զարգացնելուց բացի դրանք ամփոփում են խրատականներ՝ հիմնված կենդանի ճգնավոր. փորձառության վրա:

Ն. Լ-ու գրած առաջին մեկնությունը (գրել է 23–24 տարեկանում) և նրա ստեղծագործության թագն ու պսակը «Պատարագի մեկնութիւն»-ն է («Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», 1847), որը համաքրիստ. մեկնող. գրականության և, հատկապես, *Պատարագի* մեկնությանը նվիրված նշանակալի երևույթ է ու համաշխ. ճանաչում ստացած աշխատություն (բազմիցս թարգմանվել և վերահրատարակվել է լատ., գերմ., ֆրանս., անգլ., հուն. և այլ լեզուներով): Իրավամբ համարվել է «եռահրաշ և հոգիազարդ մատեան», «գիրք աստուածային և խորհուրդ բարձրագոյն», իսկ Ղ. Ալիշանն այն բնութագրել է որպես «հայերեն դպրության գլուխ և նախադաս» այդ ժանրի գրվածքների մեջ:

Ն. Լ-ու «Պատարագի մեկնութիւն»-ը, ըստ էության, ինքնուրույն և քննական մի ստեղծագործություն է՝ նվիրված Հայ եկեղեցու կարգերին, ծեսերին, ավանդություններին, և հատկապես՝ Պատարագի արարողությանը: Նպատակն էր վերականգնել հատկապես Կիլիկյան Հայաստանում Հայ եկեղեցու խախտված կարգերը, ավանդական և կանոնական արարողություններն ու ծիսակատարությունները մաքրել խորթ նորամուծություններից ու աղավաղումներից: Ն. Լ-ու խնդիրն էր Հայ եկեղեցում կատարվող Պատարագը (որը Կիլիկյան Հայաստանի հոգևորականության զգալի մասը դարձրել էր առուծախի առարկա և վերածել սոսկ հարուստ հանգուցյալների հոգիների փրկության համար վարձով կատարվող անշուք ու նսեմացած մի արարողության) ծառայեցնել իր նպատակին՝ «ի պէտս հաշտութեան, փրկութեան և խաղաղութեան աշխարհի»: Նա եկեղեցու բոլոր սպասավորներին կոչ է արել վերականգնել Հայոց Պատարագի երբեմնի վսեմությունն ու պարզությունը, նախկին տպավորիչ ու վեհ արարողությունը և, ընդհանրապես, այն ամենը, ինչը կանոնական ու նվիրական է եղել Հայ եկեղեցու համար: Ն. Լ. քարոզել է եղբայրություն մարդկանց միջև, համերաշխություն ազգերի միջև: Ըստ նրա, ամեն ազգ իր եկեղեցում միաժամանակ աղոթում է մյուս ազգերի բարեկեցության և խաղաղության համար: Թեև տարբեր ազգեր Պատարագը կատարում են տարբեր լեզուներով, ազգ. ծեսերով, այն իր բովանդակությամբ համաքրիստոնեական է՝ «Խորհուրդ պատարագին համահաւասար է ամենայն ազգացս»: «Պատարագի մեկնութիւն»-ը կարևոր աղբյուր է հայոց Պատարագի զարգացման փուլերը և պատմությունն ուսումնասիրելու համար: Հոգևոր-պատմ. արժեքի հետ ունի նաև գրական-գեղ. նշանակություն: Հարուստ է համեմատություններով, այլաբանություններով ու փոխաբերություններով:

Ն. Լ-ու մեկնող. աշխատություններից ուշագրավ են Հովհաննեսի Հայտնության գրքի մեկնության հայերեն թարգմանության վերանայումն ու սրբագրումը (Երուսաղեմ, 1855),

ինչպես նաև՝ Հովհաննես ավետարանչի ննջման պարականոն պատմության մեկնությունը: Վերջինս եզակի երևույթ է համաքրիստ. մեկնող. գրականության մեջ: Այդ պատմության հուն. բնագիրը չի պահպանվել և տեղ է գտել միայն Հայերեն Աստվածաշունչ մատյաններում: Հովհաննես ավետարանչի ննջման պատմությունը լայն գործածություն է ունեցել Հայ եկեղեցու ծիսակարգում՝ զետեղված լինելով *Ճաշոցներում* և *Ճառընտիրներում*: Իր մեկնությամբ Ն. Լ. նպատակ է ունեցել ընթերցողին ոչ թե սոսկ տեսական իմացություններ հաղորդել, այլև նրա առջև բացահայտել այդ պատումի մեջ խորհրդանշական (սիմվոլիկ) ու սեղմ խոսքերով «ծածկագրված» ներքին աստվածապաշտ. կյանքի խորհուրդներն ու նշանակությունը:

Նոր կտակարանի Հայտնության գրքի հայերեն թարգմանությունը և Աստվածաշնչի հայկ. կանոն ներմուծելը վերագրվում է Ն. Լ-ուն:

Ն. Լ-ու նշանավոր «Ատենաբանութիւն»-ը (առաջին հրտ. 1749, 1810-ին թրգմ. լատ., 1834-ին՝ գերմ., 1865-ին՝ ռուս.) հայ միջնադարյան հոգևոր ճարտասանության լավագույն կոթողն է իր ձևով և մարդասիր. գաղափարներով: Ելակետ ունենալով քրիստ. վարդապետության խաղաղասիր. սկզբունքը և հայ ժողովրդի աշխարհիկ ու հոգևոր կյանքի պայմանները՝ Ն. Լ. շեշտել է եղբայրության, խաղաղության, համամարդկային սիրո, տարբեր ազգերի միջև համերաշխություն հաստատելու անհրաժեշտությունը: Բարձրացրել է Կիլիկյան Հայաստանի ժամանակի հուզող կրոն., աշխարհիկ, ազգ. և միջազգ. բնույթի խնդիրներ, առնչառ քննադատել քրիստ. բարոյականությունից չեղվող երևույթները: Ըստ Ն. Լ-ու, պետք է համարձակ քննադատել և վեր հանել նույնիսկ օրենքներում եղած թերությունները, եթե դրանք իրենց էությամբ վնասակար են ներկայի համար: Հեղինակը խիստ քննադատել է քրիստ. զանազան աղանդները: Մանավանդ վերջիններիս առաջնորդները, ըստ ատենախոսի, խոտորված քրիստ. իսկական վարդապետության և ճշմարտության լուսավոր ճանապարհից, աղետալի հետևանքների պատճառ են դարձել շատ ժողովուրդների համար: Ն. Լ. չի խնայել նաև տարբեր ազգերի այն հոգևորականներին, ովքեր չարաշահել են իրենց կոչումը, մեծ վնասներ հասցրել ժողովուրդներին՝ նրանց մեջ սերմանելով թշնամություն: Այդպիսիներին հակադրել է անցյալի հոգևոր հայրերին, ովքեր, արհամարհելով անձնական շահն ու փառքը, քարոզել են ճշմարտություն և մարդասիրություն: Ն. Լ. ձաղկել է նրանց, ովքեր մյուս ազգերի վարքն ու բարքը համարում են պիղծ, անմաքուր, անարգում ուրիշների կրոնը՝ հայտարարելով, որ միայն իրենց ազգ. հավատն է ճշմարիտ և ուղղափառ: Նա գտնում է, որ ազգերի միջև խտրականություն, գժտություն և թշնամանք առաջացնող պատճառները նաև դավան. և ծիսական տարբերություններն են: Ն. Լ. հատկապես խիստ և պատկերավոր ոճով մերկացնում է երկաբնակներին (հույներին և լատիններին), որոնք դավանանքի պատրվակի տակ ձգտում են իշխել փոքր ազգերի վրա և՛ կրոնով, և՛ պետ. իրավունքներով:

Ն. Լ., որպես իր ժամանակի համար առաջադեմ և համարձակ գաղափարների քարոզիչ, մեծ մտածող ու հայրենասեր, երբեք չի նահանջել Հայ առաքելական եկեղեցու սկզբունքներից և չի թերագնահատել ազգ. արժեքները, ինչպես փորձել են ներկայացնել ժամանակի և հետագայի որոշ հոգևորականներ: «Ատենաբանություն»-ում նա այն կարծիքն է հայտնել, որ աստվածադիր օրենքներին (սուրբգրային) հավասարարժեք ու նվիրական են նաև մեր հայրերի ավանդներն ու կարգերը, իսկ ազգ. ավանդությունները նույնպիսի սրբություններ են, ինչպիսին աստվածային օրենքներն են: Ն. Լ. քարոզել է սեր և խաղաղություն, ազգ. և կրոն. անհանդուրժողականությունից զերծ ազգամիջյան հարաբերություններ, հույս և հավատ ճշմարտության հաղթանակի հանդեպ:

«Թուղթ առ Լևոն արքայն» երկը («Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», 1838, էջ 203–242) հայ բանավիճային գրականության ընտիր նմուշներից է, որով Ն. Լ. ջանացել է հերքել Գրիգոր Տուտեորդու և արևելյան մյուս վարդապետների՝ իր դեմ հարուցած մեղադրանքները Հայ եկեղեցու շահերն անտեսելու և բյուզ. կողմնորոշման մեջ: Որպես երաժիշտ Ն. Լ. հորինել է ավելի քան երկու տասնյակ շարականներ և անձամբ երգել: Շարակնոցում տեղ են գտել Ն. Լ-ու՝ Զատկի («Այսօր յարեաւ»), Նոր կիրակիի («Նորոգեալ կըզգիք»), Համբարձման («Համբարձաւ Տէրն մեր») և Գրիգոր Ա Լուսավորչի որդվոց և թոռանց («Որ ըզլոյս աստուածային») կանոնները: Նշանավոր են «Համբարձումն Տեառն» և «Գալուստ Հոգւոյն Սրբոյ» ներբողյանները,

ՆԵՐՍԵՍ

Ներսես Շնորհալուն և Պահլավունյաց տոհմին նվիրված «Գովեստ ներբողական, պատմագրական բանիւ» չափածո երկը ևն: Կարևոր են նաև ասոր-ից և հուն-ից Ն. Լ-ու թարգմանած (1191–96) օրենքները, որոնք հայտնի են Ն. Լ-ու օրենքներ անունով: Դրանք [«Աւրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի» (Ասորա-Հռոմեական դատաստանագիրք), «Համառօտ ժողովումն օրինաց վերստին», «Աւրէնք և գիրք ի ձեռն Մովսեսի յելից գրոց», «Օրէնսգիրք, քաղուած ի Ղևտական գրոց...», «Զինուորական օրէնք» (բյուզ. «Էկլոգայի» չորս հավելվածներից մեկը)] Ն. Լ. հարմարեցրել է հայ իրականության պայմաններին: Ն. Լ-ու օրենքներն ունեցել են միջնադարյան հայ իրավական առօրյան կարգավորելու և օրինականություն հաստատելու գործնական դեր և սահմանել քաղաքացիական, ամուսնալնտանեական, դատական, զինվորական և այլ հաս. հարաբերությունների ոլորտներին վերաբերող իրավական նորմեր, նպաստել Կիլիկյան Հայաստանի միասնական պետության ու բանակի, ինքնուրույն ու համահավաք ազգ. օրենսդրության ստեղծմանը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.2, 3-րդ պատկերը:

Երկ. Տեսութիւն աղօթից. պատմութեան բանից ննջման Աստուածաբան աւետարանչին Յովհաննու, ԿՊ, 1736: Հանգիստ երանելւոյն Յովհաննու՝ ստուգեալ իբրեւ վաւերական, հանդերձ ծանօթութեամբք Հ. Գաթրճյանի, Վնտ., 1877: Յովհաննէս Աստուածաբան աւետարանչի ննջման պատմութեան աղօթքի խօսքերի մեկնութիւնը, աշխարհաբարի փոխադրումը՝ Ս. Ստամբոլցյանի, «Գանձասար», 6, 1996, էջ 487–549: Ատենաբանութիւն, Վնտ., 1812: Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից, ԿՊ, 1825: Ընտիր մատենագիրք, Վնտ., 1865:

Գրկ. Գրիգոր Սկեվռացի, Ներբողեան ասացեալ ի վարս մեծի քահանայապետի ի Ս. Ներսեսի Լամբրոնացւոյ, տես «Սոփերք հայկականք», հ. 15, Վնտ., 1854: Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Ակինյան Ն., Ներսես Լամբրոնացի, Վնտ., 1956: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Հակոբյան Գ., Ներսես Լամբրոնացի, Ե., 1971: Գրիգորյան Գ., Հասարակական-փիլիսոփայական միտքը հայկական Կիլիկիայում (XII դ. կես), Ե., 1979: Թահմիզյան Ն., Երաժշտությունը հայկական Կիլիկիայում, Ե., 1989: Մեր երանելի հայր Ներսես Լամբրոնացու վարքը, «Գանձասար», 2, 1992, էջ 302–305: Անանյան Գ., Ներսես Լամբրոնացին՝ հրապարակախոս, Անթիլիաս, 1995: Խաչատրյան Տ., Ներսես Լամբրոնացու «Յովհաննէս աւետարանչի ննջման պատմութեան» մեկնությունը, «Գանձասար», 6, 1996, էջ 478–481:

ՆԵՐՍԵՍ ՄՇԵՑԻ, Տարոնացի (XIII դ. սկիզբ, Մուշ – 1284, Աղբերց վանք), մանկավարժ, բաբունապետ, գրիչ: Ուսանել, ապա պաշտոնավարել է *Մշո Ս. Առաքելոց վանքի* դպրոցում: Կատարելագործվել է *Վարդան Արևելցու* հիմնադրած (1255) *Խոր վիրապի վանքի* վարդապետարանում, աշակերտել նրան: Ն. Մ. կատարելապես տիրապետել է հուն-ին և լատ-ին: Վարդան Արևելցու մահից (1271) հետո դարձել է բաբունապետ և վարդապետարանը Խոր վիրապից տեղափոխել Մշո Ս. Առաքելոց վանք: Երկրում տիրող բարդ իրավիճակի պատճառով 1281-ին դպրոցը ժամանակավորապես փակել է և, ապահովության համար, Ն. Մ. *Եսայի Նչեցու* հետ մեկնել է *Մեծոփավանքի* դպրոց, իսկ 1282-ին՝ Վայոց ձոր: Պռոշյան իշխանական տունը նրան է տրամադրել Աղբերց վանքը, որտեղ Ն. Մ., հավաքելով իր աշակերտներին, շարունակել է ուսուցումը: Որոշ ժամանակ անց բաբունապետ է կարգել Եսայի Նչեցուն: Ն. Մ-ու մահից հետո դպրոցը շարունակել է գործել և ճանաչվել է որպես *Գլաձորի համալսարան*:

Արտաշես Մաթևոսյան

ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ, Վանեցի, Բեղլու [մոտ 1575, գ. Հասկնջավ (Մոկք գավառ) – 1625, Վանա լճի Լիմ կղզի], բանաստեղծ, կրթական-լուսավորական գործիչ, փիլիսոփա: Մշո Ս. Առաքելոց վանքի «Հարանց վարք»-ի հիշատակարանում ասվում է, թե 1609-ին Ն. Մ. եղել է Երուսաղեմի Ս. Բարդուղիմեոս վանքում, այդտեղ էլ Բարսեղ Գավառացուց ստացել վարդապետ. աստիճան: Իր կրթության, դաստիարակության և հաս. գործունեության ամբողջ ժամանակը Ն. Մ. անցկացրել է վանական միաբանությունների և դպրոցների միջավայրում: Նրա գործունեությունը կապված է Բաղեշի Ամրդոլու վանքի, *Սյունյաց Մեծ անապատի* և Լիմ կղզու միաբանության հետ, որի հիմնադիրն է (1621) ինքը: Ավանդել է արտաքին գիտություններ:

Ն. Մ-ու ստեղծագործությունը կարելի է բաժանել 3 խմբի՝ պատմ., հոգու և մարմնի փոխհարաբերության, ավանդական-առասպելական: Պատմ. երկերում հեղինակը հաղորդում է այնպիսի փաստեր, որոնք չկան այլ աղբյուրներում: Այդպիսին է «Օրհնեալ տէր Յիսուս Փրկիչ» տողով սկսվող ներբողը, որը նվիրված է Սյունյաց Մեծ անապատի հիմնադրմանն ու հիմնադիրներին: Մի այլ գանձում

պատկերել է Անդրեաս քահանայի նահատակությունը՝ շահ Աբբասի հրամանով (1617): «Ի հոլովել ժամանակին» տողով սկսվող ողբում նկարագրել է Սալահ ադ Դինի կողմից Երուսաղեմի գրավումը (1187): Ն. Մ-ու փիլ. հայացքները դրսևորվել են «Մանուկ մտավարժ էի...» և «Վիճաբանություն երկնի և երկրի» այլաբանական բանաստեղծությունների մեջ: «Մանուկ մտավարժ էի...» բանաստեղծությունում առկա են հեղինակի անձն. կյանքին վերաբերող որոշ տեղեկություններ: Տաղում Ն. Մ. ձաղկել է մարդկային իրականության արատավոր երևույթները: «Վիճաբանություն երկնի և երկրի» բանաստեղծության մեջ պատկերել է հոգու և մարմնի պայքարը:

Ն. Մ-ու «Ներբողեան վիպասանական ի փոխումն Աստուածածին կուսին...» ընդարձակ քերթվածը՝ 100 տուն, գրվել է Երուսաղեմում. մնացած 300 տունը շարունակել է նրա աշակերտը՝ Ստեփանոս Շատախեցին: Այս ներբողյանը նվիրված է Աստվածածնի վերափոխմանը և Բարդուղիմեոս առաքյալի՝ Հայաստանում քրիստոնեություն տարածելուն: Այն յուրատեսակ գովք է՝ քրիստոնեության հաղթարշավի, աշխարհին օծյալ Փրկիչ պարգևող, ախտերը բուժող Աստվածամոր, նաև նոր, առաջադեմ գաղափարների՝ ընդդեմ հեթանոս. առասպելաբանության, կռապաշտության ու արատավոր սովորույթների:

Երկ. Բանաստեղծություններ, Ե., 1985:

Գրկ. Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Ակինյան Ն., Բաղեշի դպրոցը, Վնն., 1952: Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956: Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր, Ե., 1969: Լեո, Երկ. ժող., հ. 3, գիրք 1, Ե., 1969:

Աելիտա Դոլուխանյան

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Ներսես Դ Կլայեցի, սուրբ Ներսես Շնորհալի, երգեցող [մոտ 1100, Ծովք բերդ (Ծոփաց նահանգի Անձիտ գավառ) – 13.8.1173, Հռոմկլա], Ամենայն հայոց կաթողիկոս 1166-ից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Հաջորդել է ավագ եղբորը՝ *Գրիգոր Գ Պահլավունուն*: *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* ծոռը, իշխան Ապիրատ Պահլավունու որդին, *Գրիգոր Բ Վկայասերի* քրոջ թոռը: Մեծացել է Գրիգոր Բ Վկայասերի, այնուհետև *Բարսեղ Ա Անեցու* խնամքի ներքո, հիմնավոր կրթություն ստացել Քեսունի մոտ գտնվող Շուղրի Կարմիր վանքի դպրոցում՝ աշակերտելով Ստեփանոս Մանուկ եպիսկոպոսին: 16 տարեկանում ձեռնադրվել է կուսակրոն քահանա և վերանվանվել Ներսես (հայտնի չէ ավազանի անունը): Մինչև կաթողիկոս դառնալը եղել է Գրիգոր Գ Պահլավունու օգնականն ու խորհրդատուն: 1116-ից ապրել և ստեղծագործել է Կոմմագենեի Տլուք գավառի Ծովք գյուղակում, 1150-ից՝ Հռոմկլայում: Դա պայմանավորված է եղել կաթողիկոս. աթոռը Ծովք, այնուհետև Հռոմկլա տեղափոխություններով: 1121–35-ին զբաղվել է եկեղեց-ազգ. գործունեությամբ:

Ն. Շ. և Գրիգոր Գ Պահլավունին մտադիր են եղել հայրապետ. աթոռը փոխադրել բուն Հայաստան՝ Անի, և վերականգնել հայկ. իշխանությունը Անիում: Սակայն Հայաստանի ծանր քաղ. պայմանները թույլ չեն տվել իրագործել այդ ծրագիրը, և երկու եղբայրները հայրապետ. աթոռը Ծովքից տեղափոխել են Հռոմկլա (տես *Հռոմկլայի կաթողիկոսարան*), որտեղ և ծավալվել է Ն. Շ-ու հովվական-եկեղեց., մշակութ., մատենագր. և մանկավարժ. բեղուն գործունեությունը: Ենթադրվում է, որ 1121–35-ին այցելել է Անի, շրջել բուն Հայաստանում, մոտիկից ծանոթացել հայ ժողովրդի կյանքին ու կենցաղին: Իր կաթողիկոսության տարիներին Ն. Շ. սերտ կապեր է պահպանել Հայաստանի բոլոր նշանավոր վանքերի և *արևելյան վարդապետների* հետ, թղթակցել նրանց հետ դավան., եկեղեց., ազգ., ինչպես նաև գրական ու գիտ. բազում խնդիրների շուրջ: Որպես մեծ հեղինակություն վայելող անձնավորություն նրան են ուղարկել (1164) հաշտեցնելու Կիլիկյան Հայաստանի երկու հայ իշխաններին՝ Թորոս Բ Ռուբինյանին և Լամբրոնի բերդի տեր Օշին Բ Հեթումյանին: 1141-ին իր կաթողիկոս եղբոր հետ մասնակցել է Անտիոքի ժողովին, որը գումարվել էր Անտիոքի Ռուդոլֆ լատին պատրիարքի գործունեությունը քննելու համար: Այդ ժողովից են սկսվել հայ-կաթոլիկ եկեղեց. հարաբերությունները:

Ն. Շ. միջեկեղեց. ճանաչում և համբավ է վայելել իր բացառիկ գիտականությամբ, աստվածաբան. պատրաստվածությամբ, առաքինազարդ վարքով, սրբակեցությամբ: Համարվել է ավետարանական ոգով եկեղեցիների միության և համագործակցության ջատագով, եկեղեցու մեծ վարդապետ համաքրիստ. մտքի և մշակույթի պատմության մեջ: Ն. Շ-ուն հույները, ասորիները և հռոմեացիները նմանեցրել

են III–V դդ. եկեղեցու մեծ հայրերին, նրա համբավը տարածվել է բոլոր ազգերի, այդ թվում՝ ոչ քրիստոնյաների մեջ: Ն. Շ-ուն ժամանակի հուն. և ասոր. աղբյուրները կոչել են «Նոր Գրիգոր Աստվածաբան»: Հայ եկեղեցու պատմության մեջ *Գրիգոր Ա Լուսավորչից, Սահակ Ա Պարթևից, Մեսրոպ Մաշտոցից* և *Գրիգոր Նարեկացուց* հետո ոչ ոք այնքան մեծարանք ու սեր չի վայելել իր ժամանակակիցների և հետագա սերունդների մոտ, որքան Ն. Շ.՝ իբրև սուրբ, հայրապետ և մատենագիր: Մեծարվել է կենդանության օրոք, իսկ չիրիմը դարձել է ուխտատեղի: Նրա մահը սգացել են բյուզ. արքունիքը, ողջ քրիստոնյա աշխարհը: Բացի «Շնորհալի» պատվանունից, որն ընդունված էր Կիլիկյան Հայաստանում (մասնավորապես Սև լեռան վանքերի դպրոցներում), ինչպես «Քերթողը»՝ Սյունիքում, Հայոց կաթողիկոսը մեծարվել է «Երկրորդ Լուսավորիչ Հայոց», «եռամեծ վարդապետ», «երանաշնորհ սուրբ», «աղոթք Հայ եկեղեցու և Հայ հոգու», «տիեզերալույս վարդապետ», «համահրեշտակ» և այլ որակումներով:

Ն. Շ. հայ ամենաբազմարդյուն և բազմավաստակ մատենագիրներից է, համաքրիստ. չափանիշով մեծ մատենագիր: Նրա մատենագր. ժառանգությունը գրեթե անկորուստ հասել է մեզ: Գործերի մեծ մասը տպագրվել է, թարգմանվել տանյակ լեզուներով և բազմիցս վերահրատարակվել: Նրա բազմաժանր ստեղծագործությունները՝ աստվածաբան., դավան., մեկնող., ծիսապաշտամունք., պատմ., փիլ., մանկավարժ. բնույթի երկերը, բանաստեղծություններն ու պոեմները, նամակներն ու քարոզները, աղոթքներն ու շարականները հայոց «արծաթե դարի» և Կիլիկյան Հայաստանի պատմության առաջին շրջանի հոգևոր-մշակութ., կրոնաաստվածաբան. մնայուն արժեքներից են, որտեղ արտահայտված են ժամանակի ազգ-քաղ. տրամադրությունները, Հայոց պետության և Հայ եկեղեցու գաղափարախոսությունը, վերջինիս ինքնանկախության, ազգ. նկարագրի, ուղղափառության պաշտպանությունը:

Ն. Շ-ու մատենագր. վաստակն ընդունված է բաժանել երկու մասի՝ արձակ և չափածո: Կաթողիկոս ընտրվելուց հետո գրված առաջին արձակ գործը «Ատենաբանութիւն»-ն է: Սա ճառ է, որը Ն. Շ. արտասանել է իր կաթողիկոս. ձեռնադրության և օծման առիթով, Ծաղկազարդի օրը, 1166-ի ապրիլի 17-ին, Հռոմկլայում գումարված ազգ-եկեղեց. ժողովում: Նշելով իր կաթողիկոս եղբոր արժանիքները՝ այնուհետև անդրադառնում է իր ժամանակի դժվարություններին, մասնավորապես հայ ժողովրդի՝ հայրենի երկրից, անցյալի փառքից, պետականությունից զրկված լինելուն, կաթողիկոս. աթոռի տարագիր վիճակին, որոնց պատճառով շատ դժվար էր կատարել հայրապետ. գործերը, ժողովրդին խրատել, ուսուցանել և սերմանել Աստծո խոսքը: Ճառի վերջում Ն. Շ. աղոթում է, որ Աստված իրեն ուժ ու կարողություն տա՝ իր հոտը հովվելու, մխիթարելու, հույս հայտնում, որ Աստված կփրկի «զմեզ ի բերանոյ առիւծոց», կազատի գերության կապանքներից և բոլորին կվերադարձնի հայրենիք:

Ն. Շ-ու արձակ գործերի պսակն է «Թուղթ ընդհանրական»-ը, որը գրվել է «Ատենաբանութիւն»-ից երեք ամիս անց: «Թուղթ ընդհանրական»-ը Ն. Շ-ու անդրանիկ կոնդակն է՝ ուղղված հայ ժողովրդին: Այն որակվել է «ջահ լուսատու աստուածասիրացն մտաց», «պանծալի մատեան», «դաւանութիւն ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյս մերոյ», որտեղ ամբարված են նաև հոգևոր դասին և ժողովրդին ուղղված աստվածային պատվիրաններ, հոգեշահ խրատներ: «Թուղթ ընդհանրական»-ը սկսվում է սիրո ողջույնով և հայրապետ. օրհնությամբ: Ն. Շ. խոսում է իր կաթողիկոս ընտրվելու, եղբոր՝ Գրիգոր Գ Պահլավունու մահվան, իր վրա դրված հայրապետ. բարձր պարտականությունների մասին: Ներածականում համառոտ, բայց ամբողջական ձևով ներկայացնում է Հայ եկեղեցու ուղղափառ դավանությունը, եկեղեց. կարգն ու կանոնը, ավանդությունները: Այնուհետև իր հայրապետ. խոսքն ուղղում է ժամանակի բոլոր դասերին և հաս. խմբերին՝ «Առ կրօնաւորս», «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», «Առ առաջնորդս եկեղեցւոյ», «Առ դասս քահանայից», «Առ իշխանս», «Առ զինուորաց դասս», «Առ քաղաքականսդ» (քաղաքի բնակչության), «Առ երկրագործս», «Առ կանանց դասս», նրանց տալով իր խրատը և պատգամը՝ կրոն., եկեղեց. ու ազգ. պարտականությունների մասին: «Թուղթ ընդհանրական»-ը ժամանակի Հայ եկեղեցու, հոգևորականության, ժողովրդի կյանքի և բարքերի հայելին է, պատմ. վավերագիր և արժեքավոր գրական

երկ: Հայոց կաթողիկոս *Հակոբ Ա Կլայեցին* 1268-ին «Թուղթ ընդհանրական»-ը նույնությամբ ընդօրինակել է տվել և ուղղել ժողովրդին՝ որպես իր անդրանիկ կոնդակ: Այն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը և ազդեցությունը՝ որպես եկեղեց. կանոնների, հոգևոր կյանքի և եկեղեց. բարեկարգության լավագույն ձեռնարկ և ուղեցույց:

Ն. Շ. իր կաթողիկոս եղբոր հանձնարարությամբ գրել է Մատթեոսի Ավետարանի մեկնությունը (հրտ. 1825), որը հասցրել է մինչև 5-րդ գլխի 17 համարը: Մեկնությունը համարվում է «գեղեցիկ և հանճարեղ բանիւ» գրված գործ: Անհայտ են մեկնությունը կիսատ թողնելու հանգամանքները. այն շարունակել է *Հովհաննես Երզնկացին* (Ծործորեցի): Ն. Շ. գրել է նաև Կաթողիկե թղթերի մեկնությունը:

Ն. Շ-ու արձակ գործերի մեջ կարևոր տեղ են գրավում նրա թղթերը և նամակները, որոնք մեծ մասամբ վերաբերում են դավան., կրոն., եկեղեց. միության խնդիրներին: Հիշատակելի են «Առ Մանուել թագաւոր Հոռոմոց» երեք, «Թուղթ առ Միքայել պատրիարք Հոռոմոց», ինչպես նաև արևելյան վարդապետներին գրած դավան. թղթերը, *արևորդիների* աղանդի մասին պատմող «Ի Սամոստիա քաղաք յաղագս արևորդաց դարձի» և համաճարակի վտանգին ենթարկված եդեսացիներին ուղղված նամակները:

Ն. Շ. արևելյան վարդապետների խնդրանքով թարգմանել է ս. Սարգսի վկայաբանությունը, *Դավիթ Անհաղթի* նշանավոր «Բարձրացուցէք» ներբողի և *Գրիգոր Նյուսացու* «Ամենայն չար» ճառի մեկնությունը: Թարգման. արժեքավոր գործերից են «Վարք սուրբ Պարսամայ», «Ներբողեան Յովհաննու Ոսկեբերանի ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց», «Վարք Տարագրոսի և Պրոբոսի» ևն:

Ն. Շ-ու առաջին չափածո ստեղծագործությունը «Վիպասանութիւն» քերթվածն է՝ գրված 1121-ին (հրտ. 1643): Հեղինակի վկայությամբ՝ շարադրվել է «Հոմերական վիպասանությամբ»՝ հայ գրականության մեջ հիմք դնելով մի նոր ժանրի (լրիվ վերնագիրն է՝ «Շարադրութիւն Հոմերական վիպասանութեամբ սակս Հայկազանցն սեռի և Արշակունեացն զարմի ի սկզբանց մինչև ի վախճան»): Բաղկացած է 1600 տողից: Քրիստ. ոգով և հայրենասիր. շնչով գրված այս քերթվածը հայ ժողովրդի չափածո պատմությունն է՝ սկզբից մինչև իր ժամանակները: Ն. Շ., հետևելով Մովսես Խորենացուն, պատմում է Հայկազն, Արշակունի, Բագրատունի տոհմերի մասին, երախտագիտությամբ խոսում Գրիգոր Ա Լուսավորչի, Ներսես Ա Մեծի, Սահակ Ա Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, նրանց եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության մասին: Հանգամանորեն անդրադարձել է Պահլավունի իշխաններին և կաթողիկոսներին՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն, Գրիգոր Բ Վկայասերին, Բարսեղ Ա Անեցուն, Գրիգոր Գ Պահլավունուն և այլոց, դրվատել նրանց գործերը: Սրտառուչ ու հայրենասիր. ոգով է նկարագրված Վարդանանց պատերազմը, Ղևոնդյանց քահանաների ադիությունը:

Ն. Շ-ու չափածո հայրենասիր. ստեղծագործության գլուխգործոցը «Ողբ Եդեսեայ քաղաքի» պոեմն է (1145, հրտ. 1810), որը բաղկացած է 2096 տողից և ունի չորս մաս՝ նախերգանք, Եդեսիայի պաշարումն ու կոտորածը, անեծքները և Ն. Շ-ու հույսերը գալիքի նկատմամբ: «Ողբ Եդեսիոյ»-ն միջնադարյան հայ և համաշխ. գրականության ամենանշանավոր ստեղծագործություններից է՝ գրված քրիստ. կրոնի սկզբունքների ջատագովությամբ և հայրենասիր., քնարական շնչով: Պոեմի նյութը և եղելությունները պատմական են, բովանդակությունը 1144-ին Հալեպի Զանգի ամիրայի կողմից Եդեսիա (Ուռհա) քաղաքի պաշարման, գրավման, քրիստոնյա բնակչության անգութ կոտորածի և քաղաքի կործանման մասին է: Ն. Շ. պոեմը գրել է իր Շահան եղբոր որդու՝ Ապիրատ իշխանի (հետագայում՝ Հայոց կաթողիկոս *Գրիգոր Զ Ապիրատ*) խնդրանքով, որը պաշարման ժամանակ եղել է Եդեսիայում, ազատվելով՝ գնացել է Ծովք և այդ ողբերգական դեպքերը պատմել հորեղբորը:

Պոեմը գրված է դիմառնության ձևով. Եդեսիան անձնավորված է իբրև որդեկորույս, որբևայրի մի կին, որն ավերակների վրա նստած սգում է իր դժբախտությունը և հրավիրում քրիստ. եկեղեցիներին և համայն քրիստոնյա աշխարհին ողբակից լինել իրեն: Այնուհետև իր խոսքն ուղղում է Մեծ Հայքին, Վաղարշապատ և Անի քաղաքներին, Հայ եկեղեցուն, ոգեկոչում իր անցյալի փառավոր պատմությունը՝ դրանով, ի դեմս Եդեսիայի, ողբալով ողջ Հայաստանի և իրենց փառքից ու հզորությունից զրկված Հայոց երկու նշանավոր մայրաքաղաքների դառն իրականու-

թյունը: Ն. Շ-ու գրչի տակ Եդեսիայի անկումը դարձել է աշխարհածավալ, համամարդկային և համաքրիստոնոզ ու վիշտ: Ողբի հիմն. գաղափարը Հայաստանի անկախության կորուստն է և նրան ազատագրված տեսնելու երազն ու հավատը: «Ողբ Եդեսիոյ» պոեմում Ն. Շ. հանդես է գալիս թե՛ որպես քրիստոնյա մեծ մտածող, հումանիստ և թե՛ ճշմարիտ ու ջերմ հայրենասեր: Նա քրիստ. գաղափարախոսությունը և ազգասիրությունը զուգորդում, շաղկապում է միմյանց՝ երկը վերածելով քրիստոնյա բոլոր ժողովուրդների եղբայրության և համերաշխության մի օրհներգի՝ ընդդեմ բռնության և չարիքի: Պոեմն ավարտվում է լավատեսությամբ, հայ ժողովրդի և Հայաստանի ազատագրության հույսով:

Ն. Շ-ու չափածո գործերից է «Բան հաւատոյ» (1151, հրտ. 1928, տես «Բանք չափաւ», էջ 182–238) քերթվածը: Բաղկացած է 1500 տողից և ունի կրոնադավան. բովանդակություն: Գրվել է *եկեղեցու հայրերի* դավան. գրվածքների հետևողությամբ: Հեղինակի նպատակն է եղել հերքել *քաղկեդոնականությունը*, պաշտպանել և հաստատել Հայ եկեղեցու ուղղափառությունը: «Բան հաւատոյ»-ն հետագա դարերում հայ դավանաբանների համար եղել է հակաքաղկեդոն. պայքարի գաղափար. զենք:

Ն. Շ-ու բանաստեղծ. տաղանդի գլուխգործոցն է «Յիսուս Որդի» պոեմը (1152, հրտ. 1643)՝ բաղկացած 4000 տողից և երեք գրքից: Համարվում է հայ մատենագրության երկրորդ Նարեկը, որովհետև կոչվում է նաև «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց»: «Յիսուս Որդի»-ն Հին և Նոր կտակարանների պատմության բանաստեղծ. վերարտադրությունն է՝ ընդելուզված Ընդհանրական եկեղեցու պատմության դրվագներով: Քերթվածն ավարտվում է Քրիստոսի Երկրորդ գալստյան, Վերջին դատաստանի և աշխարհի վախճանի դանթեական նկարագրությամբ: Ըստ հեղինակի բնութագրման՝ պոեմը բովանդակում է մարդկության անցյալը, ներկան և ապագան, «խօսք է ընդ Աստուծոյ», բազմազան աղոթքների մի շարք, որտեղ երևում են մեծ երգասացի, աղոթողի զգացումները, հոգեվիճակը և ողջ էությունը: «Յիսուս Որդի»-ն դարերի ընթացքում հայ ժողովրդի մեջ վայելել է մեծ ժողովրդականություն և եղել ընթերցանության ամենասիրելի գրքերից (բազմիցս վերահրատարակվել է, թարգմանվել մի շարք օտար լեզուներով): «Վիպասանութիւն»-ը, «Ողբ Եդեսիոյ»-ն, «Բան հաւատոյ»-ն և «Յիսուս Որդի»-ն գեղ. չափածո խոսքի նոր տեսակներ են, հայ վիպերգական և վիպաքնարական պոեմների նախօրինակները:

Ն. Շ-ու չափածո գրվածքների մեջ իր ուրույն տեղն ունի «Հաւատով խոստովանիմ» նշանավոր աղոթքը: Առաջին անգամ լույս է տեսել 1616-ին, Լվովում, «Սաղմոս ի Դաւիթ» գրքում, ապա՝ 1661-ին Ամստերդամում՝ «Կարճառօտ ժամագիրք» ժողովածուում: Առանձին գրքով առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում, 1690-ին, այնուհետև բազմիցս վերահրատարակվել: «Հաւատով խոստովանիմ»-ը համաչխ. հոգևոր գրականության գոհարներից է (թարգմանվել է 36 լեզուներով): Բաղկացած է 24 տնից (օրվա 24 ժամերի համեմատ) և բովանդակում է աղոթքի բոլոր տեսակները (դավան., զղջական, պաղատական, խոստովանական ևն): Հեղինակն այն անվանել է «Քրիստոսին հավատացող յուրաքանչյուր անձի աղոթք»: Գրված է արձակ, բայց հոգևոր ապրումների, հույզերի հարստությամբ և ներքին ռիթմով ազատ բանաստեղծություն է:

Ն. Շ-ու չափածո գործերից են ներբողյանները՝ «Ի սուրբ Խաչն», «Առ սուրբ Հրեշտակսն» ևն, խրատներ, առակներ (Հանելուկ իմաստով): Հանելուկի՝ իբրև գրական առանձին տեսակի ստեղծումը, մշակումը և դասական կատարելագործումը կապվում է Ն. Շ-ու անվան հետ: Նրանից մնացել է ավելի քան 300 հանելուկ, որոնք գրվել են «վասն ուրախութեան մարդկան», և որոնց նպատակն էր զվարճալի եղանակով ուսուցանել մարդկանց, նրանց մեջ զարգացնել սրամտություն, դիտողականություն: Ն. Շ-ուց պահպանվել են մանկավարժ-ուսուցող. բնույթի ոտանավորներ, ուղերձներ ու բանքեր, որոնք չունեն իրենց նախօրինակը հայ բանաստեղծության մեջ: Գրվել են ընթերցողին բարոյապես կրթելու, օգտակար դիտելիքներ տալու նպատակով: Խրատ. ոտանավորներից մի քանիսն ունեն կարճ տողեր՝ բաղկացած 36 հանգավոր տներից, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է հայոց այբուբենի հերթական տառի անունով: Հեղինակն այս ձևն է ընտրել, ինչպես ինքն է նշել, որպեսզի մանուկները կարողանան հեշտությամբ և՛ նյութը մտապահել, և՛ յուրացնել հայոց գրերի կարգը: Ն. Շ. ժամանակի մեծ գիտնական և իր բարեկամ բժշկապետ Մխի-

թար Հերացու խնդրանքով գրել է «Յաղագս երկնից և զարդուց նորա» (1162) տիեզերագիտ. պոեմը: Գրվածքի վերջում կա մի «Յորդորակ» 62 տողից բաղկացած, որը հավատի դավանություն է արարչության, Ամենասուրբ Երրորդության և Բանի Մարդեղության մասին: Յուրաքանչյուր տան (երկտողի) սկզբի տառերը կազմում են «Մխիթար բժիշկ, ընկալ ի Ներսեսէ զայս բան» գլխակապը:

Ն. Շ-ու գործունեության և մատենագր. վաստակի մեջ առանձնահատուկ և կարևոր տեղ են գրավում միջեկեղեց. հարաբերությունները հույների հետ և Հայ ու Հույն եկեղեցիների միության հարցի շուրջ նրա գրած թղթերը՝ ուղղված Բյուզանդիայի Կիր Էմմանվել կայսրին, Կ. Պոլսի Միքայել պատրիարքին, ինչպես նաև արևելյան վարդապետներին: 1165–73-ին Ն. Շ. գրել է իր նշանավոր երեք դավան. թղթերը՝ «Գիր խոստովանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» և «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ» (Հրտ. «Թուղթք ընդհանրական»-ում, 1865): Այդ թղթերում Ն. Շ. ներկայացրել է Հայ եկեղեցու դավանությունը և հստակորեն ճշտել ու սահմանել միության հարցում Հայ եկեղեցու դիրքը: Եկեղեցիների միության հարցում Ն. Շ-ու առաջ քաշած սկզբունքները Հայ եկեղեցին անփոփոխ պահպանել է հետագա դարերում. դրանք գործում են նաև այսօր, իսկ միջեկեղեց. հարաբերություններում Հայոց հայրապետներն ու վարդապետները առաջնորդվել են Ն. Շ-ու ոգով և նախանշած ուղիով: Բյուզանդիան եկեղեցիների միությունը ձգտել է ծառայեցնել իր քաղ. նպատակներին, այն է՝ խարխլել Կիլիկիայում նորահաստատ հայ ազգային պետականության հիմքերը, իրեն ենթարկել նաև բուն Հայաստանը, իսկ Հայ եկեղեցուն զրկել ինքնուրույնությունից և միացնել կայսերական եկեղեցուն, հայերին դարձնել քաղկեդոնական: Հետագայում եկեղեցիների միության հարցը Հռոմի կաթոլիկ եկեղեցին ևս ըմբռնել է նույն կերպ՝ որպես ամբողջական ենթարկում Հռոմի պապի գերագույն քաղ. և հոգևոր իշխանությանը:

Ն. Շ. եկեղեցիների միության հարցին մոտեցել է նոր սկզբունքներով: Ըստ նրա՝ միությունը պետք է լինի բոլորի համաձայնությամբ, հիմնված փոխադարձ հարգանքի, զիջողության և հանդուրժողականության վրա: Ն. Շ. գտնում էր, որ դավան. և ծիսական տարբերություններն ու ազգ. ավանդությունները եկեղեց. հարաբերություններում վճռական նշանակություն չունեն, և դրանք չպետք է հիմք դառնան հակառակության և ազգամիջյան թշնամության: Երբ տարբեր եկեղեցիներ ընդունում են քրիստ. հավատի հիմն. ճշմարտությունները, ապա Ս. Ծնունդը հունվ. 6-ին թե դեկտ. 25-ին տոնելը, «Սուրբ Աստված» (Երգ Երեքսրբենի) սրբասացությունը Սուրբ Երրորդությանը թե Որդուն վերագրելը, անգամ գլխ. հարցը՝ Քրիստոսի մեջ մեկ կամ երկու բնություն դավանելը Ն. Շ. համարել է *ուղղափառության* սահմանի մեջ, եթե դրանք ասվում են առանց հակառակության ոգու, առանց փոխադարձ մեղադրանքների և աննախապաշար մտքով: Լինելով եկեղեցիների միության ջերմ պաշտպան՝ Հայոց կաթողիկոսը հույներից պահանջել է հարցը քննել ոչ որպես «Տէր ընդ ծառայի» հրամայելով, այլ՝ «հաւասար ընդ հաւասարի» բանակցելով, ոչ թե «թագաւորական ահարկու զօրութեամբ», այլ՝ «քաղցրագոյն խոնարհութեամբ», փոխադարձ հասկացողությամբ և զիջումներով: Եկեղեցիների բաժանումը հակառակ է Ավետարանին և Աստծո կամքին: Ն. Շ. հայտարարում էր, որ Հայ եկեղեցին միությունը պատկերացնում է ոչ թե մոլորությունից դարձ դեպի ճշմարտություն, այլ հանուն աստվածային սիրո հաղորդությունը վերահաստատելու պայման: Ն. Շ. իր միութենական ձգտումների մեջ քրիստ. և ավետարանական սկզբունքների հետ դրել է նաև ազգ. նպատակներ՝ հայ ժողովրդի ապահովությունը, խաղաղությունն ու բարօրությունը փնտրելով քրիստոնյաների համերաշխ միության և փոխադարձ օգնության մեջ: Ըստ Մ. Օրմանյանի, Ն. Շ. «բարձրաբարբառ քարոզիչն է Հայոց եկեղեցու ներողամիտ և լայնախոհ տեսության, որ եկեղեցու միությունն ըմբռնում էր հիմնական կետերի համաձայնության և փոխադարձ հոգևոր հաղորդակցության մեջ և մերժում է տիրապետության ու ստրկաբար նմանողության ամեն պահանջները, որոնց վրա հաստատած են Հույն և Լատին եկեղեցիներ միության անհրաժեշտ պայմանը» («Ազգապատում», հ. 1, 1912, էջ 1417):

Ն. Շ-ուց սկսած, և հատկապես, ի դեմս նրա, Հայ աստվածաբան. միտքը և կրոնաեկեղեց. գաղափարախոսությունը դեռևս XII դ. հանդել է նրան, ինչը ներկայումս քրիստոնյա աշխարհում անվանվում է *էկումենյան շարժում*:

Ն. Շ. որպես երաժիշտ և շարականագիր թողել է բազմաժանր երաժշտ. ժառանգություն՝ Տերունական, պահոց օրերի, սրբերին նվիրված, դավան., վարքագր., ազգային-հայրենասիր. բովանդակությամբ բազում շարականներ, տաղեր, գանձեր, մեղեդիներ: Դարեր շարունակ մեծ ժողովրդականություն են վայելել գիշերային ժամի «Առաւօտ լուսոյ»-ն, «Յիշեսցուք»-ը, «Զարթիք»-ը, «Աշխարհ ամենայն»-ը, առավոտյան ժամի «Նորաստեղծեալ»-ը, «Արարչական»-ը (ըստ շաբաթվա 6 օրերի), արևագալի ժամի երգերը՝ «Յարևելից մինչև ի մուտս», «Ճգնաւորք Աստուծոյ», «Լոյս, արարիչ լուսոյ», «Անեղանելիդ Աստուած», «Ճանապարհ և ճշմարտութիւն», ճաշու կամ երրորդ ժամի «Օրհնեմք զքեզ»-ը, «Նահապետին Աբրահամու»-ն, խաղաղական ժամի «Նայեաց սիրով»-ը, «Ի քէն հայցեմք»-ը ևն: Ն. Շ-ուն են պատկանում նաև Համբարձումից մինչև Հոգեգալուստ պահք պահելու, Վարդավառի, Հոգեգալստյան և Վերափոխման տոները երեքօրյա և բազմօրյա դարձնելու հրահանգը և այդ տոներին նվիրված շարականները: Հիշարժան են Աբգար Թագավորին, Տրդատ Գ Մեծին և Աշխեն Թագուհուն, ս. Գևորգ և ս. Սարգիս զորավարներին, Ավարայրի հերոսներին, Ղևոնդյանց նահատակներին նվիրված շարականները: Առանձնապես բարձր արվեստով են ստեղծված Վարդանանց նվիրված «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» շարականները:

Ն. Շ-ու երգերից ու շարականներից շատերը սկսվում են իր անվան սկզբնատառով՝ կազմելով «Ներսէսի երգ»:

Ն. Շ. հայ երաժշտության կիլիկյան դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչն է և առհասարակ միջնադարյան Հայաստանի մանրագետ բանաստեղծ-երաժիշտներից մեծագույնը: Նա իր արվեստի խորքով, տարողությամբ ու արժեքով դուրս է գալիս ազգային սահմաններից ու դառնում համաքրիստ. (մանավանդ՝ արևելաքրիստ.) քաղաքակրթության խոշոր երևույթներից մեկը: Պահպանված գրական ու երաժշտ. շատ նյութեր, ձեռագր. փաստեր ցույց են տալիս, որ Ն. Շ. եղել է ոչ միայն բազմարդյուն երգահան, այլև՝ իր ժամանակի լավագույն երգիչ կատարողներից մեկը, դեղագետ, տեսաբան, ուսուցիչ, իսկ որպես ստեղծագործող հորինել է հոգևոր (եկեղեցական) արտապաշտամունքային ու, ամենայն հավանականությամբ, նաև աշխարհիկ երգեր: Արտապաշտամունքային են կոչվում այն ստեղծագործությունները, որոնք թեև արդյունք են կրոն. ներշնչման, բայց նախատեսվել են ոչ թե պաշտոներգության մեջ ներմուծելու, այլ կենցաղում կատարելու համար: Ն. Շ-ու արտապաշտամունքային գործերից «Յիսուս Որդի» ծավալուն պոեմն անցյալում եղանակավոր (սերգի ձևով) պատմվել ու մի ամբողջ շարք հատվածներում էլ նաև երգվել է, ինչպես «Սասունցի Դավիթ» էպոսը:

Հոգևոր երաժշտության բնագավառում Ն. Շ. մեծ բարեհորոգիչ է թե՛ իր բուն ստեղծագործությամբ և թե՛ պաշտոներգության ծիսական կողմի բարեկարգությամբ: Նա կարգավորել է հայոց մինչ այդ այլայլված, աղքատացած պաշտոներգությունը, բարեձևություն ու միակերպություն հաղորդել դրան, բազմապիսի ստեղծագործություններով ճոխացրել և, միաժամանակ, XII դ. համար արդեն հնացած մասերից ու ձևերից մաքրել նույն պաշտոներգությունը՝ զետեղելով սեփական տաղանդավոր հեղինակությունները երկար ու ձիգ սաղմոսասացությունների փոխարեն: Ն. Շ. վերանայել է հայկ. միջնադարյան ծիսական-երաժշտ. բոլոր գրքերը. դրանցից մի քանիսը լրացրել հիմնովին: Միջնադարյան ձեռագրերում ցրված Ն. Շ-ու երգերը քննության են ենթարկվում դրանց գրական խոսքի կառուցվածքի (տաղաչափություն), ձայնեղանակների նշման ու գործնական կիրառման և խազավորման (խազագրերի հյուսվածքի) տեսակետներով: Բացի այդ, նույն երգերի մի ստվար մասն առկա է նաև Էջմիածնում՝ XIX դ. հայկ. ձայնագրության նոր համակարգի նշաններով ձայնագրված ժողովածուներում: Վերջիններս ներկայացնելով հայոց հոգևոր երգարվեստի, մասնավորապես երգեցողության, ուշ միջնադարյան պատկերը՝ միաժամանակ անդրադարձնում են այդ արվեստի հին ու հնագույն շատ շերտեր, որով և համեմատելի են միջնադարյան դրչագիր համապատասխան մատյանների հետ: Հիշյալ ձայնագրյալ ժողովածուներում ներփակված Ն. Շ-ու ավելի քան 200 ստեղծագործությունների (շարականների և Պատարագի ու ժամագրքի երգերի) որոշումը հնարավորություն է տալիս գաղափար կազմելու նրա երաժշտաբանաստեղծ. արտահայտվելակերպի գլխ. առանձնահատկությունների մասին, տարբերելու այդ ստեղծագործության ժանրային-ոճական հիմն. ոլորտները և խորամուխ լինելու նրա արվեստի փիլիսոփայության մի քանի էական կողմերի մեջ: Դրանք են՝ ձգտու-

մը դեպի դեղ. կատարելությունը, որ հոգևոր երգարվեստում բարձրացնում է երաժշտության գեղագեղայական ներգործության ուժը, արլ. ու արմ. մասնագիտացված արվեստների, նաև սեփական ժողովրդի աշխարհիկ երգ-երաժշտության կենսունակ տարրերի համարձակ օգտագործումը, որ նոր առումներ է հաղորդում հոգևոր երգին՝ երբեմն նույնիսկ աշխարհընկալման տեսակետով: Վերջապես, մեղեդիական ազատ, զարդոլորուն ոճի զարգացումը, որը, բարդ համաձայնությունների (լադերի) ու բաղադրյալ (խրոմատիկ) հնչյունաշարի աստիճանների անկաշկանդ կիրառման պայմաններում, քնարական զեղումները հաճախ տեղափոխում է ներքին ապրումների ոլորտը: Ն. Շ. հայկ. միջնադարի այն մեծերից է, որը Գրիգոր Նարեկացու, *Մանուել* և *Տրդատ* ճարտարապետների, *Թորոս Ռոսլինի* և *Սարգիս Պիծակի* նման հազվադյուտ արվեստագետների շարքում իր գործունեությամբ արժեքավոր ավանդ է մուծել Վերածննդի շրջանն ու դրան հատուկ հումանիզմի շարժումը հեռուներից նախապատրաստելու գործում:

Հայ եկեղեցին ս. Ն. Շ-ու հիշատակը տոնում է *Խաչվերացի* հինգերորդ կիրակիի նախորդ շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» հետ:

Կաթողիկոս. գահին Ներսես Դ Կլայեցուն հաջորդել է *Գրիգոր Դ Տղան*:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.2, 4-րդ պատկերը:

Երկ. Բանք չափաւ, Վնտ., 1830: Նամականի, Վնտ., 1838: Թուղթք ընդհանրական, Էջմիածին, 1865: Յաղագս երկնի և զարդուց նորա. Հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, Ե., 1968: Ողբ Եդեսիոյ, Ե., 1973: Վիպասանութիւն, Ե., 1981: Ցիսուս Որդի, աշխարհաբարի փոխադրումը Վ. Ղազարյանի, Ե., 1991: Թուղթ ընդհանրական, Ե., 1991:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1981: Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վնտ., 1873: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Հակոբյան Գ., Ներսես Շնորհալի, Ե., 1964: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Ներսես Շնորհալի (հոդվածների ժող.), Ե., 1977: Զեքիյան Լ., Համամիութենական տրամախոսություն մը ԺԲ դարու: Բանակցություն ս. Ներսես Շնորհալիի և կայսերական նվիրակ Թեոդիանոսի միջև..., Վնտ., 1978: Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ, Ե., 1980: «Էջմիածին», 1973, № 12 (համարը նվիրված է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին):

ՆԵՐՍԵՍ ՊԱԼԻԱՆԵՆՑ, Պալիենց, Պալենց, Պալոն, Պաղոն (XIII դ. վերջ, Սիս – 1363, ենթադրվում է՝ Մանազկերտ), մատենագիր, ունիթորական շարժման ներկայացուցիչ: 1330-ական թթ. եղել է Ուրմիայի եպիսկոպոս: Հարելով հայ ունիթորներին (տես *Ունիթորություն*)՝ հրաժարվել է Հայ առաքելական եկեղեցու չնորհած եպիսկոպոս. կոչումից: 1336-ին մեկնել է Կիլիկիա, Կարինի Սիմեոն Բեկ եպիսկոպոսի և ուրիշ համախոհների հետ քարոզել կաթոլիկություն, լատ. եկեղեցու ծեսով մկրտել հայերին: Այդ հանգամանքը հուզումների տեղիք է տվել, և իշխանությունը բանտարկել ու աքսորել է կաթոլիկ քարոզիչների համախոհներին: 1338-ին Բենեդիկտոս XII պապը Ն. Պ-ին կարգել է Մանազկերտի արքեպիսկոպոս: 1341-ին նա Ավինյոնում պապին է ներկայացրել մի գրքույկ, որտեղ Հայ առաքելական եկեղեցուն վերագրել է 117 «մեղադրանք»: Ն. Պ. թարգմանել է Մարտինոս Օպավացու «Ժամանակագրութիւն քահանայապետաց և կայսերաց» երկը (1348–51): Հայոց պատմությունը դիտելով իբրև ընդհանուր պատմության մաս՝ թարգմանության մեջ զետեղել է հայոց պատմությանն առնչվող ժամանակագր. տեղեկություններ, վերջում կցել հայ կաթողիկոսների, թագավորների, իշխանների անվանացանկերը, որոնք կազմելիս օգտվել է Մովսես Խորենացու և Եվսեբիոս Կեսարացու երկերից: Ն. Պ. թարգմանել է նաև լատ. Մաշտոցը (ծիսարան): Թարգմանությունների ընագրերը պահվում են Երևանի և Վենետիկի Մխիթարյանների մատենադարաններում:

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ., հ. 2, կազմ. Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 196–206: Վարդանյան Յու., Ներսես Պալիանենցին վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին, ՊԲՀ, 1980, № 3:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՆԵՐՔԻՆԱՑՅԱԼՆԵՐ, աղանդավորական հոսանք՝ տարածված Բյուզանդիայում IV–V և Հայաստանում՝ X–XII դարերում: Ն-ի մասին վկայող սկզբնաղբյուրներն են՝ *Հովհան Ոսկեբերանի*՝ Պողոս առաքյալի Առ Գաղատացիս թղթի մեկնությունը, *Անանիա Սանահնեցու* և *Հովհաննես Սարկավագի* դավանաբան. աշխատությունները: Հետևելով *մանիքեությանը*՝ Ն. դավանել են ճգնակեցական ծայրահեղ գաղափարներ, որոնց համաձայն, ամեն տեսակ նյութ չարիք է: Բացարձակացնելով հոգևորը

և նրան հակադրելով նյութականը՝ Ն. մերժել են մարմինն ու մարմնի իրավունքները: Այս է պատճառը, որ Ն-ի մեջ շատ տարածված է եղել սեռական օրգանների անդամահատումը (այստեղից էլ այդ հոսանքի անվանումը՝ ներքինի, ներքինացած): Անանիա Սանահնեցին վկայում է, որ Ն., խախտելով բնության աստվածադիր օրենքները, ոչ միայն ընկնում են սեռապես չեզոք վիճակի մեջ, այլև նմաններին կարգում են «ի գլուխ դահերիցության», այսինքն՝ համայնքի ղեկավար, ինչը խստորեն դատապարտելի է եկեղեցու համար:

Գրկ. Քյոսեյան Հ., Անանիա Սանահնեցու «Հակառության» պատմամշակութային նշանակությունը, տես Հեղինակի Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Էջմիածին, 1995, էջ 157–166:

Հակոբ Քյոսեյան

ՆԶՈՎՔ (նզով < պահլ. nizav բառից, նշանակում է «վերից ցած՝ մեկի վրա կանչել»): *Աստծո* անունից եկեղեցու սահմանած բարձրագույն պատիժ, արգելք՝ ուղղափառ դավանանքի և ուսուցման դեմ մեղանչողների, մասնավորապես՝ Քրիստոսի անձն ու բնությունը սխալ մեկնաբանողների նկատմամբ: Որպես եկեղեցու սահմանած համազոր պատիժ կիրառվում է նաև բանադրանքը: Համարժեքն է հուն. *ἀνάθεμα* (անաֆեմա, անաթեմա) բառի, որը նշանակում է վերադրություն, վրան դրված բան (խոսք), այստեղից էլ՝ բանադրանք, բանադրել: Վերջինս լատ. կոչվում է excommunicatio (անջատում), եբր.՝ cherem (դատապարտում): Բանադրանքն առավելապես կիրառվում է եկեղեցու և նրա կարգի դեմ օրինազանց գործունեության, անհնազանդության պարագայում: Երկու դեպքում էլ (Ն-ի և բանադրանքի) անձը զրկվում է եկեղեցու հաղորդությունից և վտարվում համայնքից: Բանադրանքը մնայուն չէ և կարող է վերացվել, եթե բանադրվածն ապաշխարում է և վերադառնում եկեղեցու հաղորդության: Բանադրանքը վերացնում է բանադրողը կամ էլ նրա օրինավոր հաջորդներից մեկը: Իմաստային որոշ տարբերություններով հանդերձ՝ Ն. և բանադրանք եզրերը հաճախ գործածվում են որպես հոմանիշներ:

Առաջին՝ աստվածային Ն. (անեծքը) տրվել է օձին (փոխաբերաբար՝ *սատանային*)՝ Եվային խաբելու, Եվային՝ օձին անսալու և Ադամին՝ Աստծո պատվիրանին չհնազանդվելու, այսինքն՝ *մեղք* գործելու համար (Ծննդ. **3**.14–19): Հին ուխտում Աստված *պատվիրաններ* է տվել Մովսեսին: Մովսիսական օրենքով նզովյալները՝ Աստծո օրենքներն ու պատվիրանները խախտողները, Աստծուն անհնազանդները, մարդասպանները, չնացողները ևն, ենթակա էին աստվածային պատուհասի, քարկոծումով սպանվելուն (Ղևտ. **20**, նաև Կորխի, Դաթանի և Աբիրոնի պատիժը, Թվեր **16**.1–33, Աքարի մեղքը և պատիժը, Հեսու **7** ևն): Իսրայելացիներին խոստացված էր *օրհնություն*՝ պատվիրաններն ու օրենքները կատարելու համար, իսկ զանց առնելու և չկատարելու դեպքում՝ Ն. կամ անեծք (Բ Օրենք **11**.26–28, տես նաև Ղևտ. **26**): Ն-ի վերացման համար հին հրեաները կատարել են տարբեր *զոհաբերություններ*:

Նոր կտակարանում նզովվում են բոլոր նրանք, ովքեր անհնազանդություն են հայտնում Հիսուս Քրիստոսին, Տիրոջ *Ավետարանից* բացի այլ ավետարաններ քարոզողներին, *առաքյալների* ավետարանած ճշմարտություններից չեզվողներին, խռովություններ սերմանողներին (տես Հռոմ. **9**.3, Ա Կորնթ. **16**.22, Գաղատ. **1**.8–9): Քրիստ. եկեղեցում սկզբ. շրջանում Ն. կամ բանադրանքն ունեցել են բարոյական պատժի նշանակություն, հետագայում՝ IV դ. սկսած, Ն. օգտագործվել է որպես անեծքի բանաձև, բայց առհասարակ խուսափել են անձին անվանապես նզովելուց: Նզովվել է նրա մոլար համարված ուսմունքը կամ էլ ընդհանուր ձևով՝ «այդպես դավանողներին» կամ «այդպես ասողներին» արտահայտությամբ: Հայտնի են *Կյուրեղ Ալեքսանդրացու* 12 Ն-ները՝ ընդդեմ Նեստորի (տես *Նեստորականություն*) վարդապետության: Դրանց ի պատասխան Նեստորը հրապարակել է իր 12 հականզովքները: Կյուրեղ Ալեքսանդրացու Ն-ներն սկսվում են «Եթե մեկն ասի» կամ «Եթե մեկը չխոստովանի» խոսքերով և ավարտվում «նզովեալ եղիցի» բառերով, առանց որևէ մեկի (աղանդավորի, հերետիկոսի) անունը տալու: Այդպես է նաև *Հավատո հանգանակի* հավատքի խոսքերից հետո ասվող վերջին՝ նզովման հատվածում. «Իսկ ովքեր ասում են, թե կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ թե՝ ոչէից եղան, կամ ասում են՝ այլ էությունից են Աստծո Որդին և կամ Սուրբ Հոգին և թե փոփոխելի են կամ այլայլելի, այնպիսիներին նզովում է Կաթողիկե և Առաքելական Սուրբ Եկեղեցին»: *Տիեզերական ժողովները*

նզովել են հերետիկոս. վարդապետությունները, դատապարտել կամ բանադրել դրանց հեղինակներին ու հետևորդներին և կիրառել պատիժներ (աթոռազրկել, կարգալույծ արել, աքսորել ևն): Հետագայում եկեղեցիներն իրենց «Հրաժարիմք»-ներում, «Նզովման բանաձևեր»-ում, «Հավատո խոստովանություններ»-ում մտցրել են բանադրված աղանդապետների անունները և հանվանե նզովում են նրանց: Հայ եկեղեցում, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, կոչումի արարողության ընթացքում ձեռնադրիչ եպիսկոպոսն ընծայյալներին մի շարք հարցումներ է ուղղում, որոնք վերաբերում են տիեզերաժողովների կողմից դատապարտված վարդապետություններին, և անուն առ անուն նզովվում են աղանդապետները՝ Արիոսը (տես *Արիոսականություն*), Եվտիքեսը (տես *Եվտիքականություն*), Ապողինարիոսը (տես *Ապողինարիզմ*), Մակեդոնը, Փոտինոսը (դատապարտվել են 381-ի *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովում*), Նեստորը, Սաբելիոս Լիբիացին (II դ.), Պողոս Սամոստացին (III դ.) և ուր.: Ընծայյալը նզովում է աղանդավորներին, ապա ուղղափառ և ճշմարիտ եկեղեց. վարդապետներին հետևելու իր ուխտն է անում և կարդում Հավատո դավանությունը:

Կաթոլիկ եկեղեցում Ն-ին կամ բանադրանքին հետևել են (հատկապես ինկվիզիցիայի ժամանակներում՝ XIII–XVIII դդ.) խիստ պատիժներ (մահապատիժ, խարույկի վրա այրում, ցից հանել, աղանդավոր. գրքերի հրապարակային այրում, գրքերի վրա դրված արգելք ևն):

Դարեր շարունակ, *Քաղկեդոնի ժողովից* սկսած, քաղկեդոնական (օրթոդոքս և կաթոլիկ) և ոչքաղկեդոնական (Արևելյան ուղղափառ) եկեղեցիները որպես հերետիկոսների և հերձվածողների դատապարտել, բանադրել կամ նզովել են նաև աստվածաբանների, վարդապետների, պատրիարքների, որոնք այս կամ այն եկեղեցում (եկեղեցիների ընտանիքներում) արժանացել են հարգանքի, մեծարանքի, նույնիսկ՝ երբեմն սրբացվել: Սուրբ «հերետիկոսների» կամ «հերձվածող» սրբերի (ինչպես անվանում են նման հոգևորականներին) նկատմամբ Ն-ների և դատապարտությունների վերացման հարցը ներկայումս դարձել է միջեկեղեց. երկխոսությունների գլխ. թեմաներից և քննարկվել մասնավորապես *Արևելյան ուղղափառ եկեղեցիների* և Հռոմի կաթոլիկ եկեղեցու միջև աստվածաբան. երկխոսության Վիեննայի հինգ ոչ պաշտոն. խորհրդակցություններում (1971, 1973, 1976, 1978, 1988): Սուրբ «հերետիկոսներն» են. 1. Նրանք, ովքեր մեծարանքի են արժանացել Հռոմի կաթոլիկ և Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներում, սակայն բանադրվել են Արևելյան ուղղափառ եկեղեցիների կողմից. Լևոն I պապը և *Լևոնի տոմարը*, Փլաբիանոս, Անատոլիոս, Գեննադիոս պատրիարքները: 2. Նրանք, ովքեր մեծարվել են Արևելյան ուղղափառ եկեղեցիներում, սակայն բանադրվել են Հռոմի կաթոլիկ և Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների կողմից. Դիոսկորոս Ալեքսանդրացի, Սևերիոս Անտիոքացի, *Տիմոթեոս Կուզ*, Փիլոքսենոս Մաբուգեցի (Քսենայաս): Քննարկման արդյունքում բոլոր կողմերի ներկայացուցիչները (Հայ եկեղեցու կողմից մասնակցել է Կենտր. Եվրոպայի հայրապետ. պատվիրակ Մեսրոպ արք. Գրիգորյանը) գտել են, որ «հարմար չէ պաշտոնապես վերացնել նզովքը: Բավական է այն այլևս չկիրառել գործնականում և մոռանալ դրա մասին», և արել են հետևյալ եզրակացությունը. «Մի հատվածի կողմից մյուս հատվածի վարդապետների և հայրերի նկատմամբ ներկայումս արտասանվող նզովքի հարցում մենք այն կարծիքին էինք, որ հարկ չկար պնդել, որ այդ վարդապետներն ու հայրերն ընդունվեն նրանց կողմից, ովքեր պաշտոնապես դատապարտել են նրանց: Նզովքների պաշտոնական վերացումը կարող է նաև անհրաժեշտ չլինել: Հնարավոր է, որ եկեղեցիները պարզապես ծիսական կառույցից դուրս թողնեն մյուս կողմի սրբերի և վարդապետների նզովքը, ինչպես որ որոշ եկեղեցիներ արդեն սկսել են անել» (Գրիգորյան Մ., «Վիեննայի հինգ եկեղեցական խորհրդակցությունների արդյունքների աստվածաբանական նշանակությունը», «Էջմիածին», 1998, № 7):

ՆԻԿԻԱՅԻ Ա ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 325, գումարվել է բյուզանդական կայսր Կոստանդիանոս Մեծի հրամանով, Բիթինիայի Նիկիա քաղաքում, մայիսի 20-ին: Ժողովին մասնակցել են *Ընդհանրական եկեղեցու* խորհրդանշական թվով 318 (Ծննդ. **14.**14) հայրապետներ, այդ թվում՝ *Ալեքսանդրիայի* պատրիարք Ալեքսանդր Ալեքսանդրացին, *Աթանաս Ալեքսանդրացին* (այդ ժամանակ դեռևս սարկավագ), *Գրիգոր Ա Լուսավորչի* կրտսեր որդին՝ Արիստակեսը (*Արիստակես Ա Պարթև*), եկե-

ղեցու այլ մեծանուն հայրեր: Առաջին տիեզեր. ժողովի հրավիրման հիմն. նպատակն էր Ալեքսանդրիայի եռեց Արիոսի հերետիկոս. ուսմունքի քննությունը և դատապարտումը:

Արիոսականության գաղափարական առանցքներն էին հրեական միաստվածությունը (մոնոթեիզմ) և միջինպլատոնականությունը, որոնցից Արիոսը վերցրել էր Աստծո կատարյալ միակության և ինքնափակ եզակիության գաղափարը: Ըստ Արիոսի՝ կա մեկ և միակ Աստված. դա Հայր Աստվածն է: Մնացած ամեն ինչ, որ գոյություն ունի, իր էությամբ խորթ է Աստծուն և ունի մեկ այլ ինքնուրույն էություն: Աստվածային գոյության կատարելությունը բացառում է այն բանի հնարավորությունը, որ Աստված իր էությունը հաղորդի կամ հատկացնի մեկ ուրիշին: Ըստ այդմ, Բանը կամ Աստծո Որդին, որպես անձ, որպես գոյավոր էակ, խորթ է և նման չէ Հորը: Նա իր գոյությունը ստանում է Հորից, ինչպես այլ արարածները, և գոյության գալիս որպես միջնորդ արարչության մեջ՝ աշխարհի տնօրինության համար: Հոր և Որդու միջև գոյություն ունի ժամանակային տարածք, և Որդին համահավերժ չէ Հորը: Հակառակ դեպքում, ըստ Արիոսի, կլինեին երկու «անսկիզբներ», այսինքն՝ երկու «սկիզբ», և մեկաստվածության ճշմարտությունը կժխտվեր: Այլ խոսքով՝ Որդին չի եղել և ապա առաջացել է, այսինքն՝ արարած է: Այդ պատճառով ունի «փոփոխական» բնություն, ինչպես այլ առաջացած բաները, իսկ Աստվածային փառքը նրան հաղորդվում է դրսից՝ «ըստ շնորհի»: Ծանոթ լինելով եկեղեցու վարդապետությանը Հոր, Որդու և *Սուրբ Հոգու* մասին՝ Արիոսը զուգահեռ է անցկացնում դրա և միջինպլատոնականների տիեզերաբան. (կոսմոլոգիա) պատկերացումների միջև և եզրակացնում, որ Որդին (նաև Սուրբ Հոգին) պետք է դուրս հանվի աստվածային ոլորտից և վերադրվի Արարչի և արարված աշխարհի (հյուլե) միջև գտնվող «միջանկյալ ոլորտին», որը, ըստ նրա, նույնպես արարված է, թեև գերակա է մյուս արարածների նկատմամբ:

Ն. Ա տ. ժ. իմաստասիր. սահմանումների միջոցով մերժել է արիոսականությունը և նզովել Արիոսին ու նրա համախոհներին: Ընդունել է ուղղափառ դավանության հիմն. դրույթները պարունակող մի *Հավատո հանգանակ* (Նիկիական հանգանակ), որը, համաձայն եկեղեցու սրբազան *ավանդության*, աստվածային հայտնությամբ տրվել է Աթանաս Ալեքսանդրացուն: Նիկիական հանգանակը որպես դավանության հիմք ցայսօր գործածվում է առաքելական եկեղեցիներում, այդ թվում՝ Հայ եկեղեցում: Հանգանակի կարևորագույն աստվածաբան. եզրն է համագոյությունը (ὁμοούσια), համաձայն որի՝ Որդին համագո (էակից) է Հորը, այսինքն՝ նույն Հոր բնությունից է: Համագոյությունը նշանավորել է քրիստոնեության հաղթանակը հրեական և միջինպլատոն. մտքի վրա՝ ցույց տալով, որ հին կրոնաիմաստասիր. համակարգերն ի վիճակի չէին ընկալելու և եզրակերպելու Բանի Մարդեղության խորհուրդը: Քրիստոնեությունը պահանջում էր հավատի սահմանման նոր և ստույգ եզրաբանական համակարգ, որը բացահայտել և ամրագրել է Ն. Ա տ. ժ.՝ «Նոր գինին նոր տիկերի մեջ» (Մատթ. 9.17):

Ն. Ա տ. ժ. ընդունել է 20 կանոն («*Կանոնագիրք Հայոց*»-ում Նիկիական կանոնները 21 են), որոնք վերաբերում են դարձի եկած աղանդավորներին և եկեղեցու հետ նրանց փոխհարաբերություններին, ձեռնադրություններին և եկեղեցու նվիրապետ. աստիճանների հետ կապված հարցերին, սիմոնականությանը, կաշառակերությանն ու վաշխառությանը, կիրակի օրն առանց ծնրադրելու՝ հոտնկայս աղոթելուն ևն: Ն. Ա տ. ժ-ի արձանագրությունները չեն պահպանվել: Հայտնի է, որ ժողովը քննության է առել Ալեքսանդրիայի եկեղեցում պառակտում առաջացրած Լիկոպոլսի եպիսկոպոս Մելիտիոսի հերձվածը («մելիտոսական խզում») և *Զատկի* տոնի շուրջ ծագած տոմարագիտ. տարաձայնությունները:

Ն. Ա տ. ժ. առանցքային նշանակություն է ունեցել ոչ միայն Ընդհանրական եկեղեցու, այլև՝ մարդկության պատմության մեջ: Այն ոչ միայն առաջինն է տիեզերական ժողովների մեջ, այլև կարևորագույնը՝ ժողովների ժողովը, որը նախանշել է աստվածաբան. և իմաստասիր. մտքի հետագա զարգացման ուղին: Ոչ մի այլ իրադարձություն այդպիսի նշանակություն և ազդեցություն չի ունեցել աստվածաբան. մտքի ձևավորման վրա: Ն. Ա տ. ժ-ի շուրջ ծավալված քննարկումները շարունակվել են ամբողջ IV դ. ընթացքում:

Հայ եկեղեցին Ն. Ա տ. ժ-ի 318 սուրբ հայրապետների հիշատակը տոնում է Վերափոխման չորրորդ կիրակին նախորդող շաբաթ օրը՝ սեպտեմբեր ամսին:

Մեսրոպ քհն. Արամյան

ՆՇԽԱՐ, սուրբ նշխար, 1. ս. *Հաղորդության* նյութերից (հաց ու գինի) մեկը, որ կիրառվում է ս. *Պատարագի* ժամանակ: Ն. փոքր, բոլորաձև, անթթխմոր հաց է՝ բաղարջ, վրան՝ խաչելության կամ տնօրինական մեկ այլ խորհրդի պատկեր, իսկ երկու կողմերին մակագրություն՝ Հիսուս Քրիստոս: Ն. թխվում է երկաթե թիթեղի վրա, առանց այրելու և առանց տապակելու, սովորաբար ունենում է 6–10 *սմ* տրամագիծ, 5–7 *մմ* հաստություն: *Տաղավար* տոներին պատրաստվում են ավելի մեծ Ն-ներ՝ հաղորդվողների բազմությանը բավարարելու համար:

Ն-ի՝ որպես սուրբ հացի կիրառման համար հիմք են հանդիսացել Հիսուսի խոսքերը, թե՝ «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը» (Մատթ. **26.**26, տես նաև Մարկ. **14.**22, Ղուկ. **22.**19, Ա Կորնթ. **11.**23–24):

Առաքելական կանոնների համաձայն՝ ս. Պատարագի հացը՝ Ն., պատրաստվում է նույն օրը և թարմ վիճակում բարձրացվում ս. *Սեղան*, իսկ այն Ն-ները, որոնք տրվում են տնօրհնեքի, հոգեհանգստի և կամ ս. Պատարագի ժամանակ՝ հիմնականում քահանայական դասին, կարող են նախապես էլ պատրաստված լինել: Ն. պատրաստվում է և բաժանվում պատարագիչ քահանայի ձեռքով:

Ագաթանգեղոսը Ն. հիշատակում է «եկեղեցու օրհնյալ հաց» ձևով: Ն. բառացիորեն նշանակել է կտորտանք: Ինչպես Ընդհանրական, այնպես էլ նրա անբաժանելի մաս կազմող Հայ եկեղեցին Ն. դիտում է որպես Քրիստոսի մարմնի խորհրդանշանը, քանի որ ս. Պատարագի խորհրդի կատարման ժամանակ այն փոխակերպվում է Հիսուս Քրիստոսի մարմնին, ինչպես նշվում է հայոց *Խորհրդատետր-Պատարագամատույցում*. «Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապես արասցես Տեառն մերոյ և Փրկչին Հիսուսի Քրիստոսի»: Եկեղեց. հայրերից Ն-ի փոխակերպման մասին հիշատակություն ունեն Խոսրով Անձևացին (X դ.), Ներսես Լամբրոնացին (XII դ.), Գրիգոր Տաթևացին (XIV դ.) և ուրիշներ:

2. Ն. երբեմն գործածվում է նաև սրբոց մասունքներ իմաստով (տես *Մասունք* սրբոց):

Մաս: Ն-ի մնացորդը, որ ս. Սեղանի վրա օգտագործվելուց հետո բաժանվում է ժողովրդին, նրանց, ովքեր դեռևս լիովին պատրաստ չեն հաղորդվելու Տիրոջ մարմնին (հաց) և արյանը (գինի):

Տես նաև *Հաց* հաղորդության:

Գրկ. Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ Պատարագին, Վնտ., 1847: Գրիգոր Տաթեվացի, Գիրք հարցմանց, Երուսաղեմ, 1993, էջ 684: Կարապետյան Ա., Հոգևոր բարեպաշտական արարողություններ, «Էջմիածին», 1998, № 7:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՆՈՅ, Նոյ Նահապետ (եբր. հանգիստ, մխիթարություն, ըստ այլ մեկնությունների՝ նոր), համաշխարհային Ջրհեղեղից փրկված մարդը, մարդկության երկրորդ նախահայրը Ադամից հետո, Սեմի, Քամի և Հաբեթի հայրը: Ըստ *Աստվածաշնչի* հաղորդած ազգաբանության՝ Ադամից հետո տասներորդ սերունդը. սերում է Ադամի Սեթ որդու ճյուղից. երկինք հափշտակված Ենովքի ծոռն է, Մաթուսաղայի թոռը, Ղամեքի որդին: Ծննդոց գրքում ասվում է. «Ղամեքը հարյուր ութսունութ տարեկանին ծնեց որդի: Նա նրա անունը դրեց Նոյ: Ղամեքն ասաց. «Սա մեզ կհանգստացնի մեր գործերից, մեր ձեռքերի ցավերից և այն երկրից, որ անիծեց Տեր Աստված» (Ծննդ. **5.**3–29):

Ն. Նահապետի օրոք երկրի վրա բազմացել էր մեղքը՝ կապված «մարդկանց դուստրերի» և «Աստծո որդիների» խառնակումից ծնված հսկաների հետ: Աստված որոշում է վերացնել մեղսագործ մարդկությանը. «Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են երկրի վրա, և ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարագործություններ է նյութում, զղջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա, և տրտմեց իր Հոգու խորքում: Տեր Աստված ասաց. «Երկրի երեսից վերացնելու եմ իմ ստեղծած ամեն մի էակ...»: Նոյը, սակայն, արժանացել էր Տեր Աստծու սիրուն» (Ծննդ. **6.**5–8): Ն. Աստծո առջև չնորհ էր գտել, որովհետև «կատարյալ և արդար մարդ էր իր ազգի մեջ» (Ծննդ. **6.**9): Վերահաս Ջրհեղեղից ազատվելու համար, Աստծո հրահանգով, Ն. եռահարկ նավ՝ տապան է կառուցում (տես *Նոյյան տապան*) իր ընտանիքի (ինքը, կինը, երեք որդիներն իրենց կանանց հետ՝ ութ հոգի), ինչպես նաև երկրի բոլոր ցամաքային կենդանի արարածների ու թռչունների համար, որոնցից տապանի մեջ է վերցնում յոթ-յոթ կամ երկու-երկու՝ արու և էգ:

«Նոյի կյանքի վեցհարյուրերորդ տարում, երկրորդ ամսի քսանյոթին ժայթքեցին ստորգետնյա բազում աղբյուրներ, բացվեցին երկնս-

քի ջրվեժները: Երկրի վրա անձրև թափվեց քառասուն օր ու քառասուն գիշեր» (Ծննդ. 7.11–12): Ջուրը հարյուր հիսուն օր ողողում է երկիրը՝ ոչնչացնելով ամեն կենդանի էակ՝ մարդ թե անասուն: Նոյյան տապանը անձրևի դադարից հետո նստում է Արարատ (*Մասիս*) լեռան վրա: Այս իսկ պատճառով Հայաստանի խորհրդանիշ Արարատ լեռն ընկալվում է իբրև Նոյյան տապանի և ապագա ողջ մարդկության փրկավայր: Ն. Ջրհեղեղի դադարից քառասուն օր հետո բացում է տապանի պատուհանը, արձակում է մի ագռավ, որը չի վերադառնում: Ապա, տեսնելու համար, թե արդյո՞ք երկրի վրա ջուրը քաշվել է, արձակում է աղավնի, որը, ոտք դնելու տեղ չգտնելով, վերադառնում է տապան: Յոթ օր հետո նորից է արձակում աղավնուն, որը վերադառնում է՝ կտուցին ձիթենու շյուղ՝ կյանքի ավետիսը: Եվս յոթ օր սպասելով՝ Ն. դարձյալ արձակում է աղավնուն, որն այլևս չի վերադառնում: Իր կյանքի վեցհարյուրմեկերորդ տարում Ն. դուրս է գալիս տապանից, զոհասեղան է պատրաստում Արարատ լեռան վրա և զոհության պատարագ-ողջակեզ մատուցում Աստծուն: Աստված օրհնում է Նոյին, տալիս պատվիրաններ և ամպերի մեջ առաջին անգամ կապում է ծիածանը՝ որպես իր և ողջ երկրի միջև հավիտենական *ուխտի* նշան (Ծննդ. 8.1–22, 9.1–17): Ն. ապրում է 950 տարի (Ծննդ. 9.28–29):

Ն-ի երեց որդու՝ Սեմի սերնդից սերած Փաղեկի օրոք արդեն բազմացած մարդկությունը ցրվում է՝ ժառանգելով երկրի տարբեր մասերը. Աստվածաշնչից ելնելով, «*Բառարան սուրբ գրոցն*» արձանագրում է, թե Հաբեթի սերունդը տնօրինում է Եվրոպան, Սեմինը՝ Ասիան, իսկ Քամինը՝ Աֆրիկան:

Ն-ի որդիների ճյուղագրությունը տրված է Աստվածաշնչի Ծննդոց գրքում (9–10 գլուխներ): Հիմք ընդունելով Ս. Գիրքը և այլ պատմ. աղբյուրներ՝ Մովսես Խորենացին նույնպես տվել է Նոյի և նրա որդիների ազգաբանությունը, ընդ որում Հաբեթի ճյուղագրությունը հասցնելով մինչև Արա Գեղեցիկ (Հայոց պատմություն, Ա գիրք, գլ. Դ–Ե):

Ն-ի հիշատակը նշվում է Ընդհանրական, ինչպես նաև Հայ եկեղեցու կողմից: Հայերն ու հույները այն հիշատակում են աստվածաշնչյան սուրբ նախահայրերի (Ադամ, Աբել, Սեթ, Ենովս, Ենովք, Մելքիսեդեկ, Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Հովսեփ, Մովսես, Ահարոն, Եղիազար, Հեսու, Սամուել, Սամփսոն, Գեդեոն և այլք) հիշատակի օրը, իսկ հռոմ. եկեղեցին՝ նոյեմբ. 10-ին:

Եկեղեցին Ն-ի սուրբգրային պատումը խորհրդաբանում է իբրև պատմություն առհասարակ Արդարի փրկության մասին. ըստ այնմ՝ Նոյյան տապանը խորհրդանշում է Հիսուսին (որով պատսպարված՝ մարդն ունի փրկություն), իսկ ձիթենու շյուղը բերող աղավնին՝ Կենաց խոսքը մատակարարող Սուրբ Հոգին:

Գրկ. Գալուստյան Շ., Աստվածաշնչական սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ, Նոյի նավ (եբր. տապան՝ նավ բառից. ըստ այլ մեկնության՝ տապան նշանակում է տապ կենալու, թաքնվելու, պահվելու տեղ՝ տապարան կամ թաքնարան), *Նոյ* Նահապետի՝ աստվածային հրահանգով պատրաստված նավը, որով փրկվեց մարդկային սերունդը՝ ապաստանելով Արարատ (*Մասիս*) լեռան գագաթին («Յոթներորդ ամսի քսանյոթին...», Ծննդ. 8.4): Ն. տ-ի պատրաստման մասին պատմվում է Ծննդոց գրքում. «...Արդ, դու քեզ համար քառակուսի փայտից տապան կշինես: Տապանը բաժանմունքներով կպատրաստես և ներսից ու դրսից կուպրով կծեփես: Տապանն այսպես կշինես. թող երեք հարյուր կանգուն լինի տապանի երկարությունը, հիսուն կանգուն՝ լայնությունը, և երեսուն կանգուն՝ բարձրությունը» (6.14–15):

Նոյը, նույն աստվածային հրահանգով, տապանի մեջ կուտակում է սնունդ՝ Ջրհեղեղի օրերին կերակրվելու և իր հետ տապան մտած կենդանիներին ու թռչուններին կերակրելու համար: Երբ սկսվում է Ջրհեղեղը («Նոյի կյանքի վեցհարյուրերորդ տարում, երկրորդ ամսի քսանյոթին...», Ծննդ. 7.11), ինքը Աստված փակում է Ն. տ., որը, Ջրհեղեղից հետո, բացվում է երկրորդ ամսին («Նոյի կյանքի վեցհարյուրմեկերորդ տարում...», Ծննդ. 8.13–14):

Ն. տ-ին հար և նման տապանի ու մեծ Ջրհեղեղի վերաբերյալ հիշատակություններ կան նաև հնագույն ազգերի ավանդությունների մեջ:

Հայ եկեղեցին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ի թիվս այլ սուրբ մասունքների, պահում է նաև մի փայտի բեկոր՝ Ն. տ-ից, որը, ըստ ավանդության, Մասիսի լանջին հրեշտակից ստացել է ս. *Հակոբ Մծբնացին*:

Յայսօր ողջ քրիստոնյա աշխարհը և գիտ. հասարակայնությունը մեծ հետաքրքրությամբ

են վերաբերվում Մասիս լեռանը՝ ջանալով նրա գագաթին հայտնաբերել Ն. տ.:

Լևոն Սարգսյան

«ՆՈՐ ԴՐԱՁԱՐԿ», ամսաթերթ: Լույս է տեսնում 1984-ից, Անթիլիասում (Լիբանան): Հայաստանյայց եկեղեցու կիլիկնօրյա դպրոցների վարչության պաշտոնաթերթ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հրատարակություն, «Դրազարկ» ամսագրի շարունակությունը: Ամսաթերթի նպատակն է Հայ առաքելական եկեղեցու վարդապետության տարածումն ու կրոն. դաստիարակության սերմանումը: Կիլիկիայի կաթողիկոսության հովանու ներքո գործող կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների համար տպագրում է կրոն., եկեղեց. ու մանկավարժ. անհրաժեշտ գիտելիքներ, համակարգում կաթողիկոսության թեմերի դպրոցների աշխատանքը: «Ն.Դ.» հրատարակում է նաև սուրբգրային, եկեղեց., մանկավարժ. բնույթի նյութեր, կիրակնօրյա դպրոցների առօրյան լուսաբանող հոդվածներ ևն: Հատուկ ուշադրություն է նվիրում ազգ. կրոն. ծեսերին, աբարողություններին, Հայ եկեղեցու դավան. նկարագրին, սրբերին, տոներին: Տպագրել է Գարեգին Բ կաթողիկոսի հայրապետ. կոնդակներն ու կրոն. բովանդակությամբ հոդվածները, Ս. վրդ. Սարգիսյանի, Ն. արք. Բախտիկյանի, Զ. եպս. Ազնավուրյանի, Գ. վրդ. Խաչերյանի, Ն. սրկ. Պերպերյանի և այլոց հոդվածները, քարոզներն ու զրույցները: Տպագրում է գեղ. ստեղծագործություններ, թարգմանություններ եվրոպ. կրոն. գրականությունից: Անդրադառնում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմերի (Լիբանան, Կիպրոս, Բերիա, Հունաստան, Քուվեյթ, Հյուսիսային Ամերիկա), կիրակնօրյա դպրոցների հանդիսություններին, ընդհանրացնում այդ դպրոցների գործունեության արդյունքները:

Ալբերտ Խառատյան

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, Աստվածաշնչի երկրորդ՝ քրիստոնեական մասը: Տես *Աստվածաշունչ*:

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Համբարձումյան նոտագրություն, Լիմոնճյանի համակարգ, Հայկական եկեղեցական ձայնագրություն, Հայկական նոտագրություն, ձայնանիշերի ոչ գծային համակարգ, ստեղծել է Հ. *Լիմոնճյանը*, ապա կատարելագործվել է նրա աշակերտներ Արիստակես Հովհաննիսյանի և Հովհաննես Մյուհենտիսյանի ջանքերով: Համակարգի ստեղծման նպատակն էր վերաձայնագրել, մոռացությունից փրկել ու օտար ազդեցություններից զերծ պահել հայ հոգևոր երգերը, որոնք ավանդվում էին բանավոր: Փոխարինել է միջնադարյան *խազագրությանը*: Այս համակարգով Ամենայն Հայոց կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* օրոք և նրա նախաձեռնությամբ, Նիկողայոս *Թաշճյանի* ղեկավարությամբ Մայր աթոռ Ս. Էջմիածնում կաթողիկոսից, ինչպես նաև հայկ. եկեղեցիների առավել փորձառու դպիրներից գրառվել և լույս են տեսել «Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» (1874), «Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց...» (1875), «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանյայց ս. եկեղեցւոյ» (1877) հատորները:







Ն. Հ. ձ. կարևոր դեր է խաղացել եկեղեց. երաժշտության ձայնագրության և պահպանման գործում, խթանել է XIX դ. հայ երաժշտատեսական մտքի, մանկավարժության, փոլկլորագիտության և կոմպոզիտորական ստեղծագործու-

թյան զարգացումը: Որպես պարտադիր առարկա ընդգրկվել է հայկ. դպրոցների և ճեմարանների ուս. ծրագրերում, ստեղծվել են դասագրքեր: Ն. Հ. Ձ-յամբ կատարվել են ժող. երգերի կոմիտասյան գրառումները: «Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» հատորում զետեղված եղանակները մեղեդիական հիմք են դարձել Մակար *Եկ-*

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ



մալյանի և *Կոմիտասի* բազմաձայն պատարագների ստեղծման համար:

Ն. Հ. Ձ-յան համակարգում օգտագործվում են ձայնանիշերի, տևողության, ձայնահատի (պաուզա), հնչյունների բարձրությային տարբերակման (ալտերացիա), զարդարանքի, կապի, կրկնողության և այլ նշաններ, որոնք վերցված են (գրառման ձևը և անվանումը) խազային համակարգից: Ձայնանիշերը յոթն են: Դրանք են (եվրոպ. ձայնագրության բաղդատությամբ).

Նոր հայկական ձայնագրություն	Եվրոպական ձայնագրություն
Փուշ (կրճատ՝ փո)	դո
Էկորճ (Է)	ռե
Վերնախաղ (վե)	մի
Բենկորճ (բե)	ֆա
Խոսրովային (խո)	սոլ
Ներքնախաղ (նե)	լյա
Պարույկ (պա)	սի բեմոլ

Գրկ. Թաշճյան Ն., Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղ-պատ, 1874: Բրուտյան Ա., Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղ-պատ, 1890: Հիսարլյան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնաց, ԿՊ, 1914: Ա թ ա յ ա ն Ռ., Ջեռնարկ հայկական ձայնագրության, Ե., 1950:

Անահիտ Բաղդասարյան

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ցարական Ռուսաստանի հայոց թեմերից: Առաջնորդանիստը Քիշնևի Ս. Աստվածածին եկեղեցին էր: Կազմավորվել է 1830-ին՝ 1812-ից գործող Բեսարաբիայի թեմի փոխարեն: Վերջինս միավորել է Բեսարաբիայի, Մոլդովայի, Ղրիմի և Ռուսաստանի կայսրության հվ. շրջանների և ամբողջ Նովոռուսիայի հայկ. համայնքները: Թեմի առաջին առաջնորդն էր Գրիգոր արք. Զաքարյանը (1812–1827): 1828-ին Բեսարաբիայի թեմի առաջնորդ է նշանակվել ցար. իշխանությունների կողմից Անդրկովկասից հեռացված, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցին (1843–57-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Ներսես Ե Աշտարակեցի*):

Ն. Ն. և Բ. թ. միավորել է Ռուսաստանի կայսրության արմ. և հվ-արմ. տարածաշրջանների՝ Նոր Նախիջևանի, Ղրիմի, Բեսարաբիայի և Նովոռուսիայի հայկ. համայնքները: Ռուսահայ մյուս համայնքները (Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի, Հս. Կովկասի, Պովոլժիեի, Սիբիրի և Միջին Ասիայի) շարունակել են մնալ *Աստրախանի թեմի* իրավասության ներքո: Ներսես արք. Աշտարակեցու եռանդուն գործունեությամբ ավելացել են թեմի եկամուտները, կառուցվել նոր եկեղեցիներ, բացվել ծխական նոր դպրոցներ: 1835-ին թեմի տարածքում գործել են 35 եկեղեցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ (կառուցվել է 1783–1807), Ս. Աստվածածին (կառուցվել է 1781–87) ևն, 11 ծխական դպրոց, մեկ հոգևոր ճեմարան: Զարգացել է տպագրությունը, որին նպաստել է *Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքին* կից գործող՝ Հ. արք. *Արղությանի* նախաձեռնությամբ 1789-ին Պետերբուրգից տեղափոխված Խալդարյան տպարանը: 1784-ին բացվել է Ս. Խաչի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը: Եկեղեցուն կից գործել են նաև մատենադարան, թանգարան:

Ն. Ն. և Բ. թ-ի գործունեությունն ընդլայնվել է նաև XIX դ. 2-րդ կեսին և XX դ. սկզբին: Այդ ժամանակաշրջանի առավել հայտնի թեմական առաջնորդներից է Գաբրիել եպս. *Այվազովսկին*, որի վաստակը զգալի է թեմի համայնքներում մշակույթի և լուսավորության զարգացման բնագավառում: Նրա ջանքերով 1858-ին Թեոդոսիայում հիմնվել է Խալիբյան վարժարանը (գործել է մինչև 1871-ը): 1868-ին Գրիգորիուպոլում Դավիթ վրդ. Շահինյանցի ջանքերով բացվել է իգական թեմական դպրոց: 1875-ին հիմնվել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցը (1881–1920-ին՝ թեմական հոգևոր սեմինարիա): Թեմի համայնքներում շարունակվել է հայկ. եկեղեցիների կառուցու-

մը: XIX դ. կեսին Նոր Նախիջևանում կառուցվել է Ս. Կարապետ (1875–81), Գրիգորիուպոլում՝ Ս. Նշան, Բելցիում՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ (1910–12), Յալթայում՝ Ս. Հռիփսիմե (1905–17) եկեղեցիները: Թեմի հոգևորականությունը մասնակցել է համայնքի հաս. գործունեությանը, զգալի օժանդակություն ցուցաբերել թուրքական ջարդերից հետո Ռուսաստանի հվ-ում ապաստան գտած արևմտահայ փախստականներին: 1895-ին թեմի կենտրոնը Քիշնևից տեղափոխվել է Նոր Նախիջևան: Ն. Ն. և Բ. թ-ի վերջին առաջնորդն է եղել Ներսես արք. Խուդավերդյանը (1898–1918):

Խորհրդ. իշխանության հաստատումից հետո (1918-ից) Ռուսաստանի հայոց թեմերը լուծարվել են, հայկ. եկեղեցիների մի մասը փակվել է, մի մասը՝ ավերվել: 1918-ին Բեսարաբիան Ռումինիային անցնելով՝ Բեսարաբիայի հայկ. եկեղեցիները մտել են *Ռումինիայի թեմի* մեջ: Հայկ. մնացած համայնքներն ընդգրկվել են Նոր Նախիջևանի թեմի մեջ, կենտրոնը՝ Դոնի Ռոստով: 1966-ին Նոր Նախիջևանի, Հս. Կովկասի, Աստրախանի թեմերի և Մոսկվայի հովվության միավորմամբ կազմավորվել է *Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը*, կենտրոնը՝ Մոսկվա:

Գրկ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, հ. 1, 2, Ե., 1964, 1970: *Ա ն ա ն յ ա ն Ж. А., Армянская колония Григориополь, Е., 1969; Б а р х у д а р я н В.Б., История армянской колонии Новой Нахичевании (1779—1917 гг.), Е., 1996.*

Ժորես Անանյան
Վարդան Խաչատրյան

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄ Հ ա յ ա ս տ ա ն յ ա յ ց ա ռ ա ք ե լ ա կ ա ն ե կ ե ղ ե ց ի ս, կազմավորվել է 1966-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով՝ Նոր Նախիջևանի, Հս. Կովկասի և Աստրախանի թեմերի և Մոսկվայի հովվության միավորման հիման վրա (տես *Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմ, Աստրախանի թեմ*): Առաջնորդանիստը՝ Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցի:

Հայ առաքելական եկեղեցին մշտապես մեծ դեր է խաղացել ռուսահայ համայնքների ազգ. կյանքում: Հիմնել է դպրոցներ, մշակութ., բարեգործ., լուսավոր. ընկերություններ և միություններ՝ հանդես գալով որպես հայապահպանության գլխ. գործոն: Հայկ. եկեղեցիներ են գործել Ռուսաստանի գրեթե բոլոր համայնքներում, եկեղեցու շուրջն է կազմավորվել նրանց ազգ. կյանքը:

Խորհրդ. իշխանության տարիներին Ռուսաստանի հայկ. եկեղեցիները փակվել են, մի մասը՝ ավերվել: Ամբողջատիր. համակարգի փլուզումից հետո, ազգ. և հոգևոր զարթոնքի պայմաններում, Հայ եկեղեցին կրկին իր տեղն է գրավել Ռուսաստանի հայերի կյանքում: XVIII դ-ից Հայ եկեղեցին Ռուսաստանում ունեցել է իր թեմերը:

Մինչև 1990-ական թթ. սկիզբը Ն. Ն. և Ռ. թ. ունեցել է 7 եկեղեցի՝ Մոսկվայի Ս. Հարությունը, Սանկտ Պետերբուրգի, Արմավիրի, Դոնի Ռոստովի, Զալդբրի, Վլադիկավկազի, Բուդյոնովսկի (Ս. Խաչ) եկեղեցիները: *Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը* XVIII դ. վերջից մինչև XX դ. սկիզբը եղել է հաս. և մշակութ. կարևոր կենտրոն: Այս վանքում է բացվել Նոր Նախիջևանի առաջին հայկ. դպրոցը (1784-ին) և Ռուսաստանի առաջին հայկ. տպարանը (1789–95): Վանքի պատերի մոտ թաղված են հայ մշակույթի նշանավոր գործիչներ Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Հ. Ալամդարյանը և ուր.: 1972-ից վանքում գործում է ռուս և հայ ժողովուրդների բարեկամության պատմության թանգարան:

Երկրում կատարված ժողովրդավար. արմատական փոփոխությունների, Հայաստանի անկախացման, հայկ. համայնքներում ազգ. կյանքի աշխուժացման շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվել Ռուսաստանի հայկ. համայնքներում եկեղեցու գործունեության ծավալման, եկեղեցու դերի բարձրացման համար: Հայկ. համայնքները խնդիր են դրել ոչ միայն վերադարձնել հայկ. եկեղեցիները, այլև կառուցել նոր եկեղեցիներ (Սարատովում, Վոլգոգրադում, Կոստրոմայում, Տվերում, Ռյազանում և այլ վայրերում): Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցին վերադարձվել է համայնքին: Թեմի խնդրանքով Մոսկվայի իշխանությունները մայրաքաղաքում տարածք են տրամադրել՝ հայկ. նոր եկեղեցիներ (Ս. Խաչ և Ս. Հովհաննես Մկրտիչ) կառուցելու համար:

1988-ի ապրիլին գրանցվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սանկտ Պետերբուրգի համայնքը: Նույն թվականին վերաբացվել և հայ համայնքին է վերադարձվել Սանկտ Պետերբուրգի Ս. Հարություն եկեղեցին, իսկ 1993-ին՝ Ս. Կատարինե եկեղեցին (կառուցվել է 1770-ին Նևսկի պողոտայի վրա, XVIII դ. վերջից մինչև XX դ. 1-ին տասնամյակները եղել է հայ հաս. կյանքի կենտրոն): 1993-ին

Ս. Հարություն եկեղեցուն կից բացվել է կիրակնօրյա հայկ. դպրոց, որը վերածվել է ուս. կենտրոնի: 1993-ից լույս է տեսնում Սանկտ Պետերբուրգի հայ հոգևոր համայնքի «Հավատամք» ամսաթերթը (հայ., ռուս.), գործում է «Նարի» հայկ. ռադիոժամը: 1999-ին հիմնովին նորոգվել և վերաօծվել է Ս. Կատարինե եկեղեցին:

1990-ական թթ. ընթացքում Ն. Ն. և Ռ. թ. զգալի օգնություն է ցուցաբերել Ադրբեջանից գաղթած և Ռուսաստանի տարբեր քաղաքներում ապաստանած հայ փախստականներին, մասնակցել է հայկ. նոր համայնքների կազմավորմանը:

1997-ի հունվ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի կոնդակով Ն. Ն. և Ռ. թ. վերակազմավորվել է երեք թեմերի՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմ, *Հարավային Ռուսաստանի թեմ, Ուկրաինայի թեմ*: Ն. Ն. և Ռ. թ-ի առաջնորդը միաժամանակ Մայր աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչն է Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության մոտ: Ներկայումս թեմի վարչ. սահմաններն ընդգրկում են Ռուսաստանի Դաշնության տարածքը (բացառությամբ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի և Հս. Կովկասի ինքնավար միավորումների), ինչպես նաև Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Բելառուսը, Մոլդովան և Մերձբալթիկան: Թեմի առաջնորդն է Եզրաս եպս. Ներսիսյանը (2001-ի ապրիլից):

Թ ո ւ ր ք մ ե ն ս տ ա ն: XIX դ. վերջին քառորդում, Թուրքմենստանում հայ բնակչության հաստատմանը զուգընթաց, ձևավորվել է հոգևոր կյանքը: Հայկ. առաջին եկեղեցին հիմնադրվել է 1884-ին, Աշգաբադում (օծվել է 1887-ին): Տարիների ընթացքում եկեղեցիներ են կառուցվել Ղզըլ Արվադ, Կրասնովոդսկ, Թեջեն քաղաքներում: 1910-ին Թուրքմենստանի հինգ քաղաքներում գործել են հայկ. եկեղեցիներ: Դրանց կից հիմնվել են ծխական դպրոցներ:

Սկզբ. շրջանում Թուրքմենստանի, ինչպես նաև ամբողջ Միջին Ասիայի հայկ. եկեղեցիները պատկանել են *Շամախու թեմին*: 1892-ին, ցար. իշխանության պահանջով երկրամասի հայկ. եկեղեցիները հանձնվել են Աստրախանի թեմին, ավելի ուշ՝ Ադրբեջանի և Թուրքեստանի թեմին: Թուրքեստանում խորհրդ. իշխանության հաստատումից հետո հայկ. եկեղեցիները փակվել են, մի քանիսը՝ քանդվել: Հոգևորականները ենթարկվել են հալածանքների:

1990-ական թթ. վերջին հայկ. շրջանակները աշխատանք են ծավալել Թուրքմենստանում հայ հոգևոր կյանքը վերստեղծելու, մասնավորապես՝ Թուրքմենբաշի քաղաքում պահպանված հայկ. եկեղեցին համայնքին վերադարձնելու, ինչպես նաև Աշգաբադում նոր եկեղեցի կառուցելու ուղղությամբ:

Ո ւ զ բ ե կ ս տ ա ն: Ուզբեկստանում հայերի ազգ. կյանքը կազմակերպվել է եկեղեցիների շուրջ, որոնց հովանու ներքո գործել են հայկ. ծխական դպրոցներ: Առաջին հայկ. եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, կառուցվել է Սամարղանդում, XIX դ. վերջին: Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին հատուկ կոնդակով չնորհավորել է վաճառական Թադևոս Հովսեփյանցին, որի բարերարությամբ կառուցվել էր եկեղեցին: 1903-ին կառուցվել է Տաշքենդի Ս. Հռիփսիմե հայկ. եկեղեցին, 1910-ին՝ Կոկանդի հայկ. եկեղեցին: XX դ. սկզբին եկեղեցիներ են կառուցվել նաև Անդիժանում, Բուխարայում: Ուզբեկստանի հայկ. եկեղեցիները գտնվել են Աստրախանի թեմի, իսկ հետագայում՝ Ադրբեջանի և Թուրքեստանի թեմի իրավասության ներքո:

Խորհրդ. իշխանության տարիներին հայկ. բոլոր եկեղեցիները փակվել են, մեծ մասը՝ քանդվել: Եկեղեցիների ունեցվածքը բռնագրավվել է, հայ քահանաները ենթարկվել են հալածանքների:

1990-ական թթ. սկզբին, երբ արտերկրի հայ համայնքներում սկսվել է ազգ. ինքնագիտակցության վերելքը, Ուզբեկստանի հայերը պահանջել են իրենց վերադարձնել հայկ. եկեղեցիները: 1995-ի օգոստ., ուզբեկահայ բարերար Արթուր Մարտիրոսյանի միջոցներով հիմնովին վերանորոգվելուց հետո, օծվել է Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցին, որը ներկայումս Միջին Ասիայի միակ գործող հայկ. եկեղեցին է:

Ղ ա զ ա խ ս տ ա ն: Ալմա Աթայի քաղաքային իշխանությունները հայ համայնքին տրամադրել են հողամաս՝ եկեղեցի կառուցելու համար: Կուստանայի հայերը նույնպես հարց են հարուցել քաղաքում հայկ. եկեղեցի կառուցելու համար:

Բ ե լ ա ռ ո ւ ս: Տեղի հայ համայնքը պաշտոնապես հիմնվել է 1989-ին (վերագրանցվել է 1992-ին): Համայնքը ներկայացնում է «Հայաստան» կրթամշակութ. ընկերությունը: Երկ-

րում առայժմ հայկ. եկեղեցի չկա, սակայն ձեռք է բերվել կառուցելու թույլտվություն: 1992-ից Մինսկում գործում է կիրակնօրյա դպրոց, որտեղ դասավանդվում են հայոց լեզու և պատմություն:

Մոլդովա: 1803–04-ին կառուցվել է Քիշնևի Ս. Աստվածածին եկեղեցին (1870–85-ին և 1976–82-ին վերանորոգվել է): 1991-ին հայ համայնքի օժանդակությամբ և Գուլկանյան եղբայրների բարերարությամբ եկեղեցին վերանորոգվել է, 1993-ին՝ օծվել: Բելցիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1912-ին (չի պահպանվել): Օրգև քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1902–1903-ին: 1812-ից Մոլդովայի հայ համայնքը մտել է Բեսարաբիայի, 1830-ից՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի մեջ:

Լատվիա: Լատվիայում հայ համայնք ստեղծելու առաջին քայլերը կատարվել են 1988-ի նոյեմբ., երբ մի խումբ հայ մտավորականների նախաձեռնությամբ գումարված Լատվիայի հայության համընդհանուր համագումարում հիմնվել է հայ ազգ. մշակութ. կազմակերպություն՝ Լատվիա-հայկ. ընկերությունը (ԼՀԸ): 1993-ի հուլիսին Ն. Ն. և Ռ. թ-ի կազմում գրանցվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Ռիգայի համայնքը: Ռիգայի քաղաքապետարանը քաղաքի կենտր. մասում համայնքին հատկացրել է հողակտոր՝ եկեղեցի կառուցելու համար: 1997-ին սկսվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությունը՝ համայնքային գործիչներ Վաչագան Պողոսյանի, Սերգեյ Ավետիսյանի, Արթուր Իսախանովի, Սպարտակ Տեր-Ավետիսյանի, Արամ Ավետիսյանի, Սերգեյ Իսախանովի բարերարությամբ:

Լիտվա: Լիտվահայ համայնքը պաշտոնապես գրանցվել է 1994-ին: Նույն թվականին ստեղծվել է Հայ առաքելական եկեղեցու Լիտվայի հոգևոր համայնքը՝ «Սուրբ Վարդան» անունով, ընտրվել է եկեղեց. խորհուրդ: Համայնքը գտնվում է Սանկտ Պետերբուրգի հոգևոր հովվության հովանու ներքո: 1994-ից գործում են հայ համայնքի Կաունաս, Վիսագինաս քաղաքների բաժանմունքները:

Էստոնիա: Հայոց համայնքային կյանքը սկզբնավորվել է 1980-ական թթ. վերջին: 1989-ին պաշտոնապես գրանցվել են Տալլինի և Տարտուի հայկ. մշակութ. ընկերությունները, 1993-ի նոյեմբ. Տալլինում՝ Հայ առաքելական եկեղեցու էստոնահայ կրոն. համայնքը (Ս. Գրիգորի ծուխ), որը նույն թվականին անդամակցել է Էստոնիայի եկեղեցիների խորհրդին: 1994-ին Էստոնիայի Առվետարանական եկեղեցու խորհուրդը էստոնահայ համայնքին է հանձնել (անհատույց վարձակալությամբ, 99 տարով) Տալլինի Սուրբ Իանի անկելանոցի շենքը (XVI–XVII դդ.), որը վերակառուցվելուց հետո գործում է որպես հայկ. եկեղեցի: Համայնքի հոգևոր ղեկավարությունն իրականացնում է Սանկտ Պետերբուրգի հայոց հոգևոր հովիվը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.2, 5-րդ պատկերը:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ, ՌԴ Դոնի Ռոստով քաղաքից հյուսիս, Մյասնիկյանի մոտ, ձորաբլրի գագաթին: Հիմնադրել են 1778-ին Ղրիմից գաղթած հայերը և կոչել *Սուրխաթի Ս. Խաչ վանքի* անունով: Ն. Ն. Ս. Խ. վ-ի եկեղեցին ռուս. կլասիցիզմի ոճով աղյուսից կառուցվել է նախկին փայտաշեն եկեղեցու տեղում, 1783–91-ին և օծվել 1792-ին (ճարտ. Ի. Ստարով): Ունի խաչաձև (հվ. և հս. թևերը քառասյուն սրահներ են) գմբեթավոր հորինվածք՝ արլ-ում արտաքուստ կիսաշրջանաձև շեշտված խորանով: Պատերը զարդարվել են Ղրիմից բերված 13 մանրաքանդակ խաչքարերով: Վանքն ունեցել է մոտ 50 *հա* հողատարածք, որը վարձակալության է տրվել:

Ն. Ն. Ս. Խ. վ-ում 1784-ին *Հ. Արղությանի* նախաձեռնությամբ բացվել է դպրոց՝ Ս. Խաչի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարան անունով, որը գործել է տարրական դպրոցի ծրագրով (դասավանդել են կրոն, վայելչագրություն, թվաբանություն, ձեռքի աշխատանք, գյուղատնտեսությանը վերաբերող առարկաներ), ունեցել է գրադարան, թանգարան: Եղել է առաջին հայկ. գիշերօթիկ դպրոցը: Երբ 1791-ին, ռուս-թուրք. պատերազմի ժամանակ Ա. Սուվորովը գրավել է Իզմայիլը, քաղաքի 30 հայ որբերին բերել են այստեղ, և երեխաները ապրել ու կրթվել են վանքի միջոցներով:

1789-ին Հ. Արղությանը Ս. Պետերբուրգից Ն. Ն. Ս. Խ. վ. է տեղափոխել Գ. Խալդարյանի տպարանը, որը դարձել է Հվ. Ռուսաստանի առաջին տպարանն ընդհանրապես: Նույն թվի աշնանը հնդկահայերի նյութ. օժանդակությամբ վանքի եկեղեցու արլ. կողմում կառուցվել է մեծ, 37 սենյականոց շենք՝ առաջնորդարանի, դպրոցի և տպարանի համար: Տպարանում մոտ քսան գիրք է հրատարակվել՝ նպատակ ունե-

նալով հակադրվել կաթոլիկ վարդապետությանը դրավոր քարոզարշավին և պաշտպանել Հայ առաքելական եկեղեցու սկզբունքներն ու անաղարտությունը, նպաստել լուսավորության գործին՝ ապահովելով հայկ. դպրոցները դասագրքերով, օժանդակել Ռուսաստանի նորահաստատ հայ գաղթավայրերի բնակիչների՝ ռուսերենին տիրապետելուն: Դպրոցի և տպարանի շնորհիվ Ն. Ն. Ս. Խ. վ. հիմնադրման օրից մինչև XX դ. սկիզբը եղել է հայ մշակույթի և կրթության կարևոր կենտրոններից:

XIX դ. վանքից հս., Տեմերնիկ գետի ափին հիմնվել է 17,5 *հա* տարածքով վանքի այգին (կոչվել է Հայկական պարտեզ), որը դարձել է Նոր Նախիջևանի բնակիչների հանգստավայրը: Ն. Ն. Ս. Խ. վ. եղել է Հվ. Ռուսաստանի հայերի ուխտավայրը. տոնախմբությունը կատարվել է Վարդավառի օրը:

1832-ին Ն. Ն. Ս. Խ. վ. է տեղափոխվել բանաստեղծ, մանկավարժ, հաս.-քաղ. գործիչ վրդ. Հարություն Ալամդարյանը, որը 1834-ին դավադրաբար սպանվել է և թաղվել վանքի եկեղեցու առջև: 1862-ին վանահայր Գաբրիել *Այվազովսկին* հիմնովին վերանորոգել է վանքի եկեղեցին, առաջնորդարանի շենքը, կառուցել եկեղեցու արմ. ճակատի առջև երկհարկանի զանգակատունը, բլրի թեք լանջին՝ դեպի այգին տանող քարե աստիճանները, վանքի աղբյուրի խոշոր ըմպելասրահը: 1865-ին եկեղեցու առջև թաղվել է գրող, հրապարակախոս, փիլիսոփա, հայ քննադատության և գեղագիտության հիմնադիր Միքայել Նալբանդյանը, 1892-ին՝ բանաստեղծ, արձակագիր, հաս. գործիչ Ռափայել Պատկանյանը: 1902-ին նրանց գերեզմանների վրա, հանգանակված միջոցներով, դրվել են քանդակագործ Անդրեաս Մարուքյանի պատրաստած կիսանդրիները:

Ն. Ն. Ս. Խ. վ. և նրա դպրոցը դադարել են գործել Ռուսաստանում խորհրդ. կարգեր հաստատվելուց (1917) հետո: 1960-ին քանդել են զանգակատունը, առաջնորդարանի շենքը, հանել և ոչնչացրել են եկեղեցու պատերին ագուցված խաչքարերը, անհետացել է Սուրխաթի Ս. Խաչ վանքից բերված քանդակազարդ փայտե դուռը:

1972-ին, Հայաստանի վարպետների ձեռքով Ն. Ն. Ս. Խ. վ-ի եկեղեցին նորոգվել է և վերածվել Ռուս-հայկական բարեկամության թանգարանի: Հ. Ալամդարյանի գերեզմանի վրա խաչքար է կանգնեցվել (ճարտ. Մ. Գրիգորյան):

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.3, 1-ին պատկերը:

Գրկ. Շահազիզ Ե., Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանք, Թ., 1901: Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779–1861 թթ.), Ե., 1967: *Халпахчьян О., Архитектура Нахичевани-на-Дону, Е., 1988.*

Մուրադ Հասրաթյան

«ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆ», 1610 թվականի հայկական ձեռագիր մատյան (Մատենադարան, ձեռ. № 7639): Գրիչ և ծաղկող՝ *Հակոբ Ջուղայեցի*, պատվիրատու՝ Խոջա Ավետիք (նվիրել է Նորաշենի Տիրամայր Ս. Աստվածածին եկեղեցուն): Ավետարանը (չափերը՝ 24,5x18,5 *սմ*) ունի 302 թերթ, գրված է բոլորգրով, բացառիկ հարուստ է նկարազարդումներով: Ձեռագրում նշվում է, որ 1605-ին Շահ Աբբասը Իրան է բռնագաղթեցրել Ջուղայի բնակիչներին, իսկ բուն ձեռագիրն անվանվում է «լուսազարդ և վարդափթիթ սուրբ աւետարանս...»: Ձեռագիրը պարունակում է տերուն. և վախճանաբան. թեմաներով 59 մանրանկար (որոնք զետեղված են ձեռագրի սկզբում), տասը խորան, ավետարանիչների չորս դիմանկար, զարդանկարված չորս անվանաթերթ, Քրիստոսի տոհմագրությունից 3 թերթ, տեքստում՝ մեկ մանրանկար և լուսանցազարդեր: Ձեռագրի բուն տեքստը նեբառված է չքազարդ, գմբեթավոր շրջանակների մեջ, ըստ որում չորս Ավետարաններից յուրաքանչյուրը տեքստի ուրույն երիզապատման ձև ունի: Պատկերագր. տարրերի բազմազանությամբ և հարստությամբ հանդերձ նկարիչը պահպանել է կոմպոզիցիայի հստակությունը, հասել բարձր վարպետության: Բազմազան է զարդապատկերը՝ գունահագեցած, զարդաձևերը՝ համաչափ, աշխույժ խաղով: Ավետարանի կերպարները քիչ են հիշեցնում սրբերի. դրանք հասարակ մարդիկ են, նկարչի ժամանակակիցները: «Ն. Ջ. Ա.» ձեռագիրն իր գեղ. առանձնահատկություններով հայկ. մանրանկարչության նվաճումներից է:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.3, 2-րդ պատկերը:

Գրկ. Հայկական մանրանկարչություն (ալբոմ), կազմ. և առաջաբանը՝ Լ. Ա. Դուրնովո, Ե., 1967: Դրամբյան Ի., Հակոբ Ջուղայեցու մանրանկարների պատկերագրությունը, ԲՄ, 1971, № 10: Նույնի, *Новые материалы по биографии Акопа Джугаеци*, ԼՀԳ, 1969, № 10.

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ, Իրանի Սպահան քաղաքի հարավային կողմում, Մեծ մեյդան թաղում: Հայ եկեղեցու *Սպահանի թեմի* առաջնորդանիստը: Հիմնադրվել է 1606-ին, անվանվել Հին Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի անունով: 1636-ին Նոր Ջուղայի առաջնորդ և Ն. Ջ. Ս. Ա. վ-ի վանահայր (1620–46) Խաչատուր Կեսարացին վանքում հիմնել է տպարան՝ առաջինը Իրանում և ողջ Միջին Արևելքում: 1638–42-ին այստեղ հրատարակվել է «Սաղմոս ի Դավիթ»-ը, «Հարանց վարք»-ը, «Խորհրդատետր»-ը և «Ատենի ժամագիրք»-ը: 1655–64-ին վանահայր Դավիթ եպիսկոպոսը վանքի հին եկեղեցու տեղում կառուցել է նոր՝ Ս. Հովսեփ Հարեմաթցի եկեղեցին (ս. Հովսեփի Աչը պահվում է վանքում): Եկեղեցին մեկ զույգ հզոր մույթերով գմբեթավոր դահլիճ է, ներսից հնգանիստ խորանով: Գմբեթը կրկնակի է՝ ներքին կիսագնդաձև ու արտաքին ձվաձև ոլորտներով: Մահմեդ. ճարտյանը բնորոշ այս լուծումը հայկ. շինարվեստում հանդիպում է միայն Նոր Ջուղայի եկեղեցիներում: XVII դ. կեսին վանքում հիմնվել է դպրոց, որտեղ աշակերտներին սովորեցրել են եվրոպ. լեզուներ և «վաճառականության արվեստ»: XVII դ. 1-ին կեսին վանքում հիմնվել է մատենադարան: Այժմ ունի կրոն., պատմ., բժշկագիտ. բնույթի մոտ 600 ձեռագիր, որոնցից շուրջ 40-ը մագաղաթյա է (ամենահինը X դ. Ավետարան է): Ձեռագրերի մեծ մասն ունի մանրանկարչական ընտիր ձևավորում:

1702-ին եկեղեցու արմ. կողմում կառուցել են կամարակապ, երկհարկ, այունազարդ գմբեթով զանգակատուն: Եկեղեցուն հվ-ից կից 1860–65-ին, առաջնորդարանի հին շենքի տեղում կառուցվել է նոր երկհարկ զանգակատուն: 1906-ին վանքի հս. կողմից միաբանության խցերի տեղում կառուցվել է մատենադարանի նոր շենքը, 1915-ին վանքի արլ. կողմում՝ երկհարկանի վարչական շենք, որը բաժանում է տնտ. բակը գլխավորից: 1931-ին վանքի արմ. մուտքի վրա կառուցվել է ժամացույցով եռահարկ աշտարակ: 1971-ին վանքի գլխ. բակի հս. կողմում կառուցվել է թանգարանի երկհարկ շենքը: Վանքի Ս. Հովսեփ եկեղեցու ինտերիերն ունի շքեղ հարդարանք՝ կազմված հախճասալերի և որմնանկարների զուգակցումով: Եկեղեցու ներսում, պատերի ստորին մասը 1710-ին, իսկ խորանը՝ 1716-ին ծածկվել են բուս. զարդամոտիվներով, հրեշտակների պատկերներով, կապույտ ու դեղին գույների գերակշռությամբ նկարազարդված հախճասալերով: Եկեղեցին XVII–XVIII դդ. զարդարվել է որմնանկարներով (որոշ հեղինակների անուններ պահպանվել են արձանագրություններում՝ Սիմոն, Մինաս, Տեր-Ստեփանոս, Հովհաննես վարդապետ ևն): Որմնանկարները (Հին և Նոր կտակարանների թեմաներով, Գրիգոր Ա Լուսավորչի չարչարանքները պատկերող) ծածկում են եկեղեցու ողջ ներքին տարածությունը՝ հախճասալերից վերև: Իրենց ինքնատիպ ոճով զուգակցում են հայկ. մանրանկարչության, արևմտաեվրոպ. դասական հաստոցային գեղանկարչության և պարսկ. դեկորատիվ արվեստի սկզբունքները: Որմնանկարների հորինվածքներում օգտագործվել են Եվրոպայից ներմուծված գեղանկարչական աշխատանքներ ու գրաֆիկ. նկարներ:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Ե ր ե մ յ ա ն Ա., Նոր Ջուղայի ԺԷ դարու որմնանկարչական հուշարձանները, Նյու Յորք, 1942: Մ ի ն ա ս յ ա ն Լ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971: *Б а й б у р т я н В., Армянская колония Новой Джульфы XVII в., Е., 1969;* C a r s w e l l J., New Julfa, Oxf., 1968; H a k h n a z a r i a n A., M e h r a b i a n V., Nor-Djulfa, V., 1992 (Documenti di architettura armena, 21).

Արմեն Հախնազարյան

ՆՈՐ ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, Ա ն ա պ ա տ, ՀՀ Տավուշի մարզի Վարագավան գյուղից մոտ 2 *կմ* հարավ-արևմուտք, անտառապատ լեռան լանջին: Հիմնադրել է Նոր Բերդի Դավիթ իշխանը, 1193–98-ին կառուցելով վանքի առաջին՝ զույգ անհավասար խորաններով միանավ եկեղեցին և նրան հս-ից կից տոհմական տապանատունը (1200): Հետագայում, վերջինիս սիմետրիկ, եկեղեցուն հս-ից համամասն միանավ, թաղածածկ մատուռ են կցել: Ն. Վ-ի համալիրի հս. կողմում կանգուն Ս. Աստվածածին եկեղեցին՝ դեղնականաչավուն սրբատաշ ֆելզիտից, կառուցել է Դավիթ իշխանի որդի Վասակ Բ 1224–37-ին (օծվել է 1240-ին): Եկեղեցին ներքուստ խաչաձև է, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, գլանաձև թմբուկով պսակվող գմբեթով: Խորանի գմբեթարդին կա «Անեցի վարդապետ Գազան» արձանագրությունը (հավանական է, որ 1244-ին Կարսի բերդը կառուցող նույն ճարտարապետն է): Ս. Աստվածածին եկեղեցու հվ. շքամուտքն ունի միջնադարյան հայկ. արվեստում ինքնատիպ ու եզակի ձևա-

վորում՝ խճանկար հիշեցնող, մուգ մանուշակագույն և բաց կապույտ, աստղաձև, շեղանկյուն և վեցանկյուն սալիկներով, որոնց վրա կան կենդանակերպ ու բուս. թեմաներով հարթաքանդակներ: Ն. Վ.-ի երկու գավիթներից փոքրը (այժմ՝ ավերակ) կից է եղել Ս. Աստվածածին եկեղեցուն հվ.-ից, իսկ մեծը՝ արմ.-ից: Այն կառուցել է Ն. Վ.-ի վանահայր Հովհաննես Տուեցին 1237–61-ին: Վանքի պարսպից մոտ 200 *մ* հս. գերեզմանոցն է՝ մատուռով: Ն. Վ. ունեցել է ջրմուղ, որը 1253-ին անցկացրել է ոմն Շառա: Սկզբնապես Անապատ կոչվող վանքը 1237-ից հետո վերանվանվել է Ն. Վ., երբ Վասպուրականի Վարագավանքի վանահայր Ղուկասը, Ջալալ էդ Դինի 1231-ի ասպատակությունից հալածված, վերցրել է վանքի հռչակավոր Վարագա ս. Խաչը և, վեց տարի դեգերելուց հետո, 1237-ին հաստատվել Կյուրիկյանների այս հոգևոր կենտրոնում:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.3, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Սարգսյան Գ., Անապատ կամ Նոր-Վարագավանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1952, № 9–12: Քարտաշյան Հ., Նոր Վարագավանքի ճարտարապետական համալիրը, ԼՀԳ, 1984, № 7:

Մուրադ Հասրաթյան

ՆՈՐ ՎԿԱՆԵՐ, հայոց նոր վկաներ, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սրբերի կարգը չդասված, *Տոնացույց* չմտած, սակայն *Հայսմավուրքում* հիշատակված *վկաներ* (XII դ. սկսած): Առաջին անգամ Ն. վ. արտահայտությունը հանդիպում է Խոսրով Գանձակեցու և Հովսեփ Դվնեցու *վկայաբանություններում* (Ճառընտիր, 1187, Մատենադարան, ձեռ. № 1522): 1425-ին Հայսմավուրքի վերջին խմբագիր *Գրիգոր Խլաթեցին* համալրել է իր ժողովածուն XIII–XV դդ. վարքերով (տես *Վարքագրություն*) ու Ն. վ-ի վկայաբանություններով և հաստատել նրանց հիշատակման օրերը: Հետագա դարերում ևս ճանաչված հոգևորականների, մատենագիրների և հասարակ գրիչների կողմից գրված իրենց ժամանակների մարտիրոսների՝ Ն. վ-ի վկայաբանությունները ներմուծվել են Հայսմավուրք և այլ ժողովածուներ: XII–XIX դդ. Ն. վ-ի վկայաբանությունները հավաքել և հրատարակել են Հ. Մանանդյանն ու Հ. Աճառյանը «Հայոց նոր վկաները (1155–1843)» 795-էջանոց գրքում:

Այս վկայաբան. ժողովածուում ամփոփված են Էջմիածնի մատենադարանի և այլ տեղերում պահվող ավելի քան 2000 ձեռագրերից քաղված Ն. վ-ի վկայաբանությունները, ապա զանազան տպագիր երկերում ցրված վկայաբանություններ, վկայաբան. տաղեր, տապանագրեր և Ն. վ-ին նվիրված համառոտ հիշատակարաններ: Ժողովածուն ընդգրկում է գրեթե 700 տարվա ժամանակահատված՝ թուրք-սելջուկյան, թաթար-մոնղոլ. արշավանքների, Հայաստանում թուրքմեն. ցեղերի տիրապետության, պարսկա-թուրք. պատերազմների և օտար տիրապետության շրջանում քրիստ. հավատի համար նահատակված բազմաթիվ մարտիրոսների վկայաբանություններ:

Ստորև ներկայացնում ենք հրատարակիչների կազմած նոր վկաների այբբենական ցուցակը (էջ 765–774, անուն, նահատակության տեղ, թվական): Հանված են Բ ցուցակի երկրորդ սյունակը (էջ 775–780, վկայաբանության աղբյուր), ինչպես նաև Հայսմավուրքների և այլ ժողովածուների համար հրատարակիչների կողմից օգտագործված լատին. և հուն. այբուբենն ու համառոտագրությունները:

Նոր վկաներ՝ անուն	Տեղ՝ թիվ նահատակության
Աբրահամ քհն. և Աքանտար Ուռհայեցի	Եդեսիա, 1600 հունվ. 22
Ազիզ, տես Պատվական	–
Ամենավաղ Դերջանցի	Դերջան, 1335 մարտ 10
Անդրեաս քհն.	Ադուլիս, 1617 նոյեմբ. 18
Անտոն Թիֆլիսեցի (տապանագիր – տպնդ.)	Շուշի, 1794–95
Առաքել քհն. (տպնդ.)	Կեչրոր, 1908
Աստվածատուր Խթայեցի (տաղ)	Բաղեշ, 1519
Աստվածատուր Կաֆացի (տաղ)	Կաֆա, 1488 ապրիլ
Արիստակես, տես Մկրտիչ ևն	–
Ավագ Սալմաստեցի	Բաղեշ, 1890 փետր. 23
Ավետիս Ոստանցի	Փիզան բերդ, 1656 մարտ 20
Ավետիք կրոնավոր (տաղ)	Ղրիմ, 1509 դեկտ. 11
Բաղդասար Թոխաթցի	Կարին, 1672 հունիս 4
Բարունակ, տես Պուտախ Ամթեցի	–

Գաբրիել Ղալաթիացի	Կ. Պոլիս, 1662 սեպտ. 17
Գալուստ Երեց	Երևան, 1640
Գասպար, Մարիամ և Վառվառե Կարնեցիք (տաղ)	Կարին, 1810 հունիս 8, հուլիս 16
Գասպար Կովան (տաղ)	Սեբաստիա, 1677 ապրիլ 29
Գոհարինե, Ռատիոս, Ծամիղես և Տուկիոս Սեբաստացիք, տես *Գոհարինյանք*	Սեբաստիա, 1155 հուլիս 28
Գրիգոր Բալուեցի, Սիմեոն և Կիրակոս	Խարբերդ, 1290 փետր. 10
Գրիգոր Արփայեցի	Ներքին Խոյիկան, 1622
Գրիգոր վրդ. Խլաթեցի	Արծկե, 1496 մայիս 19
– Եղերերգություն	–
– Համառոտ վկայաբանություն	–
Գրիգոր Կանցի (Կարնեցի)	Կ. Պոլիս, 1682 մայիս 19
Գրիգոր Կեչրորցի (տապանագիր)	Կեչրոր, 1222
Գրիգոր Հաղբակեան	Գանձակ?, 1223
Գրիգոր Տաթևացի Մանուկ	Մուշ, 1676
Գրիգոր եպս. Կարնեցի	Կարին, 1321 հունիս 20
Դանիել բեկ Խաչենեցի (տապանագիր)	Շուշի, 1790–91
Դավիթ աբղ., տես Հովհաննես եպս. ևն	–
Դավիթ Խարբերդցի	Խարբերդ, 1474 հունվ. 16
Դավիթ Սեբաստացի (տաղ)	Սեբաստիա, 1677 փետր. 22
Եղիսաբեթ ի Խարաբատայ	Վան, 1391 մարտ 9
Երեք անանուն վկայք	Կարին, Սեբաստիա, Կամուրջ գ., 1673
Երեց Շնքուռկու գեղջ	?, 1535
Երկու մանկունք Կոտեից	Արծնի գ., 1638–39
Զաքարիա կաթողիկոս Աղթամարա	Ոստան, 1393 հունիս 25
– Գանձ Զաքարիա կաթողիկոսի	–
Զաքարիե տանուտեր	Արծկե, 1420
Զուատ մանուկ	?, 1317 ?
Թադեոս երեց Սեբաստիոյ	Սեբաստիա, 1534
Թամամ կույս Շաղկերտցի	Եղավարդ գ., 1690–91
Թամար Մոկացի	Ոստան, 1398 ապրիլ 22
Թեոդորոս աբղ. Սեբաստացի	Սեբաստիա, մոտ 1155 հունիս 22
Թեոդորոս Կեսարացի	Կեսարիա, 1201 մայիս 18
Թեոդորոս, տես Ստեփանոս և այլք	–
Թովմա վրդ. ի Պուտլիկ վանաց	?, 1423–25
Թորոս Եդեսացի	Եդեսիա, 1528
Թորոս Հռոմկլայեցի	?, 1494 օգոստ. 1
Թուխման Մանուկ (տաղ)	Տիգրանակերտ, 1784
Իսահակ (Հովսեփ) Թավրիզեցի	Շամախի, 1417 ապրիլ 18
– Այլ խմբագրություն	–
– Մատուռի արձանագիրը	–
Լույս Գրիգոր	Սպահան, 1703 հուլիս 20
Խանում վկայուհի (տաղ)	Ալաշկերտ, 1755 մայիս 3
– Այլ տաղ	–
– Ավանդություն	–
Խաչատուր Տիգրանակերտցի	Տիգրանակերտ, 1652 օգոստ. 20
Խաչատուր Կողբեցի	Տիգրանակերտ, 1517 ապրիլ 5
Խըտրըշահ Մանուկ (տաղ)	Մարզվան, 1541 կամ 1441
Խոսրով Գանձակեցի	Գանձակ, 1167 հուլիսի 10
– Ներբողյան	–
– ըստ Հայսմավուրքների	–
Ծամիղես, տես Գոհարինե Սեբաստացի	–
Կատարյալ Կույս, տես Թամամ	–
Կարապետ Վանեցի, տես Մելքիսեթ	–
Կարապետ Մալաթիացի	Մալաթիա, 1524
Կիրակոս, տես Գրիգոր Բալուեցի	–
Կիրակոս Միակեաց? (տապանագիր)	Ընդեղի մատուռ, 1291
Կիրակոս վրդ. (տապանագիր)	Անի գ., 1348-ից առաջ
Կոկճայ Սեբաստիո (տաղ)	Սեբաստիա, 1536

Հայրապետ աբդ.	Սեբաստիա, 1528 կամ 1533
Հսպաշ քահանայք	Խիզան, 1421
Հռիփսիմե Սիլիվրրցի ?	?, 1554 փետր. 14
Ղազար վրդ. Բաղիշու	Սասնո լեռ, 1428
Ղզլար Նորագավթեցի	Նորագավիթ գ., 1638–39
Մարգարե սրկ. և Շահրամ	Տիգրանակերտ, 1580 սեպտ. 6
Մարիամ Կարնեցի, տես Գասպար ևն	–
Մարտիրոս Կողբեցի	Երասխ գետ, 1387-ից հետո
Մելքիսեթ և Կարապետ	Վան, 1403
Միրաք Թավրիզեցի	Թավրեզ, 1486 մարտ 24
Մխիթար Վանեցի	Վան, 1655 նոյեմբ. 12
Մկրտիչ, Հովհաննես, Արիստակես և այլ 8 վկայք	Արծկեի գյուղերը, 1420
Մուսեֆիր, տես Ստեփանոս քհն.	–
Մուրատ Վանեցի	Վան, 1485
Մուրատշահ Արծկեցի	Արծկե, 1420
Հակոբ Ովսաննացի վրդ.	Անծղնապատ վանք, 1428
Հակոբ որդի Ղուլեկի	Կարին, 1673 մայիս 27
Հարություն Կարնեցի (տաղ)	Զմյուռնիա, 1806 փետր. 26
– Տապանագիրը	–
– Ավանդություն	–
– Տաղ Հարություն մանկանն ?	–
Հարություն Տփղիսեցի [Սայաթ-Նովա]	Տփղիս, 1795 սեպտ.
Հիմար Վանեցի	Վան, 1418
Հովակիմ Սամաթիացի (տապանագիր)	Կ. Պոլիս, 1843 օգոստ. 17
Հովհաննես եպս., Սարգիս եպս., Դավիթ աբդ.	Ամասիա, 1506 հոկտ. 17
Հովհաննես եպս. Դարանաղյաց	Կարին, 1591–92
Հովհաննես եպս. Տարոնո	Բաղեշ, 1463 ապրիլ 19
Հովհաննես քհն. Զմշկածագցի	Զմշկածագ, 1403 սեպտ. 10
Հովհաննես աբեղա	Դրախտի գ., 1500
Հովհաննես Խլաթեցի	Խլաթ, 1438 փետր. 22
– Այլ խմբագրություն	–
Հովհաննես Մալաթիացի (տաղ)	Եվդոկիա, 1775
Հովհաննես, տես Մկրտիչ և այլք	–
Հովսեփ Դվնեցի Պարսիկ	Միջոց, 1170 հոկտ. 24
– Ներբողյան	–
– ըստ Հայսմավուրքների	–
Հովսեփ Թավրիզեցի, տես Իսահակ	–
Հորդանան վկա տաճիկ	Կարին, 1182
Նիկողայոս Տիգրանակերտցի	Տիգրանակերտ, 1642 ապրիլ 15
Նիկողայոս Պրուսացի	Պրուսա, 1694 մարտ 14
Շահրման, տես Մարգարե սրկ.	–
Շնորհավոր Բաբերդցի	Բաբերդ, 1494
Ոգջա, տես Կոկճա	–
Պալի Կարնեցի	Կարին, 1781–86
Պատվական կամ Ազիզ կին	Նախիջևան, 1668–89
Պարոն Լույս Կաֆացի	Կաֆա, 1567 մայիս 15
– Տաղ	–
– Այլ տաղ ի Վրթանեսե	–
– Այլ տաղ ի Թումայե	–
– Այլ ոտանավոր	–
Պետրոս քհն., տես Ստեփանոս վրդ. ևն	–
Պետրոս Նիժեցի (տապանագիր)	?, 1826 սեպտ. 13
Պուտախ (Բարունակ) Ամթեցի	Տիգրանակերտ, 1524
Պողոս սրկ. Սղերդցի	Սղերդ, 1691
Ջալալ իշխան Խաչենո	Ղազուին, 1261
Ռատիոս, տես Գոհարինե Սեբաստացի	–
Սահակ Բրուտեցի	Ազախ, 1715 հոկտ. 17
Սահակ Մսը Կարնեցի	Կարին, 1778 հուլիս 23
– Տաղաչափ վկայաբանություն	–
– Այլ տաղ	–

Սամվել Մանիսացի (տապանագիր)	Զմյուռնիա, 1723 հուլիս 15
Սայաթ-Նովա, տես Հարություն Տփղիսեցի վկայաբանություն	–
Սարգիս իշխան Խաչենեցի	Գանձակ, 1182 մարտ 26
Սարգիս Մելիտինեցի (տապանագիր)	Զմյուռնիա, 1550 ապրիլ 15
Սարգիս Նահատակ	Խաչի ձոր, Անի, XIV դ.
Սարգիս եպս., տես Հովհաննես եպս. ևն	–
Սարգիս սրկ. Կարսեցի	Կարս, 1691-92
Սարուխան Հիզնացի	Բաղեշ, 1631 փետր. 4
Սեղբեստրոս, տես Ստեփանոս վրդ. ևն	–
Սիմեոն, տես Գրիգոր Բալուեցի	–
Սիրուն Հիզնացի	Հիզան, 1476 հունվ. 14
Սիրուն Ալյուրցի	Վան, 1655 օգոստ. 5
Ստեփանոս արք. Սեբաստիո, Սեղբեստրոս և Թեոդորոս – Տաղ ի Տեր Ստեփանոս	Աղշարու լեռ, Սեբաստիա, 1383
Ստեփանոս արք. Տաբնու, քեռորդի յուր և մորեղբորորդի	Թավրեզ, 1483
Ստեփանոս վանահայր	Գերեթին ?, 1257
Ստեփանոս և Մուսեֆիր	Արծկե, 1395
Ստեփանոս վրդ. և Պետրոս քհն. Խիզանցիք և Ստեփանոս ուրացող	Խիզան և Սորբ գ., 1424 հունիս 2 և 11
Ստեփանոս մանուկ	Կ. Պոլիս, 1471
– Ս. Ստեփանոսի նշխարքը	–
Ստեփանոս ուրացող, տես Ստեփանոս վրդ. ևն	–
Սքանտար, տես Աբրահամ քհն.	–
Վաղին Արծկեցի, տես Մուրատշահ	–
Վանակ. եպս. Բջնոյ	Բջնի, 1387
Վառվառե Դվնիկցի, տես Գասպար ևն	–
Վարդան Բաղիշեցի	Բաղեշ, 1421 հունվ. 4
Տուկիոս, տես Գոհարինե Սեբաստացի	–
Փռանկուլ որդի Ազիզի (տապանագիր)	Ղարասուբազար, 1757

Հավելված Ա

Անանուն նհտ. Տրապիզոնի ?	Գերեզման Տրապիզոնում, ?
Անանուն նհտ. (ավանդ.)	Գերեզման Պոկեսբերք վանքում, ?
Գրիգոր (տապանագիր)	Խաչվեմ Քեռթանլու գ. մոտ, ?
Գրիգոր և Մարիամ (ավանդ.)	Հանգստարանք Արփա գ. մոտ, ?
Զաքին (ավանդ.)	Հանգստարան Պարանապատ անտառում, ?
Խալիլ, տես Մանսուր	–
Ծեր նհտ. (ավանդ.)	Գերեզման Պտրեցիք գ. մոտ, ?
Կարապետ քհն. (ավանդ.)	Թորոսլի գ., 1708–10 ?
Հղեգեանա նհտ. (ավանդ.)	Խաչարձան վանք գ. մոտ, ?
Ճամալ, տես Փիր	–
Մանսուր, Խալիլ և Նասիմի	?, 1524-ից առաջ
Մարտիրոս Հիզնացի	Բաղեշ, XV դ.
Մարիամ, տես Գրիգոր Արփայեցի	–
Հակոբ վրդ. և ընկերք (տաղ)	Արճեշ գավառ, ? օգոստ. 14
Հարություն Մլղրցի (տապանագիր)	Մանիսա ք., 1855 (1833?)
Նահապետ Մալացի (ավանդ.)	Մալա գ., XVIII դ. ?
Նահատակք ի կոտորածի Կետիկ Ահմետ փաշայի	Ղրիմ, 1475-ից հետո
Նասիմի, տես Մանսուր	–
Ներսես (տապանագիր)	Տապան Վայոց ձորում, ?
Ոսկեթել Նհակուհի (ավանդ.)	Մատուռ Հարցհանգիստ գ. մոտ, ?
Սարգիս քհն. Ղարսեցի	Ղարս, 1796 հուլիս 25
Արաբեկ (ավանդ.)	Մատուռ Դաշուշենի մոտ, ?
Վասակ պատրոնիկ (արձնդ.)	?, 1201-ից առաջ
Ռուսկան (ավանդ.)	Մատուռ Փիփի կողմում, ?
Փիր, Ջամալ և քույր նոցին (ավանդ.)	Փիր-Ջամալ և Նախիջուանիկ գ., ?
Փոշնին ?	Գերեզման Դահրավ գ. մոտ, ?

ՆՈՐԱՎԱՆՔ

Գրկ. Հայոց նոր վկաները (1155–1843), աշխատասիր. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղ-պատ, 1903: Հայկական վարքեր և վկայաբանություններ. V–XV դդ., թրգմ. աշխարհաբարի Ա. Մադոյան, առաջաբանը՝ Ք. Տեր-Դավթյանի, Ե., 1997: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք [ժող.], կազմ. Ռ. Մաթևոսյան, Ս. Էջմիածին, 1999: Մաթեվոսյան Ա., Մարաբյան Ս., Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Ե., 2000: Աշճյան Մ., Հայոց եկեղեցու սուրբերն ու սրբոց տոները, տես Հայոց սրբերը և սրբավայրերը գրքում, Ե., 2001, էջ 7–18: *Новые армянские мученики (1155–1843), перевод, предисловие и примечания К. Тер-Давтян, Е., 1998.*

Քնարիկ Տեր-Դավթյան

ՆՈՐԱՎԱՆՔ, Ամաղու Նորավանք, ՀՀ Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղից 3 *կմ* հյուսիս-արևելք, Արփա գետի վտակի խոր կիրճի լանջին: Ըստ *Ստեփանոս Օրբելյանի*, սրբատեղի է եղել դեռ վաղ միջնադարում: Այդ ժամանակաշրջանից հայտնի է Ս. Փոկաս եկեղեցին, որը գտնվել է վանքի այժմյան տարածքում: Եկեղեցու բեմի տակից աղբյուր է բխել, որն ունեցել է բուժիչ հատկություն: IX դ. կառուցվել է Ս. Կարապետ եկեղեցին: Այդ ժամանակ վանքը կոչվել է Ավագ կամ Խորաձոր անապատ (Ն. է վերանվանվել 1221-ին):



Նորավանքի հատակագիծը

X դ. եղել է գրչության կենտրոն: 1105-ին Վահանավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը տեղափոխվել է Ն., որից հետո նրա մոտ է հաստատվել եղբայրը՝ Համտուն իշխանը, և կրոնավոր դարձել: Երկու եղբայրները վանքի շրջակայքից հեռացրել են աշխարհականներին, հարևան գյուղերի բնակիչներից հողեր գնելով՝ ընդարձակել վանքի կալվածքները և Ն-ի տիրույթի սահմաններին նշանաքարեր կանգնեցրել: Նրանք տիրել են նաև Հրասեկա ու Անապատ բերդերին և 12 ագարակների: Ն-ի Ստեփանոս եպիսկոպոսը Ելտկուզ սուլթանից նվեր է ստացել Ագարակի ձորը, Անապատի բերդը, հարկերից ազատել Սյունիքի վանքերը: Նրա օրոք՝ XIV դ. սկզբին Ն. դարձել է Սյունյաց հոգևոր կենտրոնը: 1216-ին Ստեփանոս եպիսկոպոսին հաջորդած քեռորդին՝ Սարգիս եպիսկոպոսը, Սյունյաց թեմը բաժանել է Ն-ի և *Տաթևի վանքի* միջև: Ն-ին են մնացել միայն Վայոց ձորը, Ճահուկն ու Նախիջևանը: 1216–21-ին իշխան Լիպարիտ Օրբելյանը և Սարգիս եպիսկոպոսը Ն-ում կառուցել են Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին, որի օծման ժամանակ (1223) Լիպարիտ Օրբելյանի անեը՝ Մեծ իշխան Բուպակը, վանքին է նվիրել Աղբերիս գյուղը: 1223–61-ին կառուցվել է Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավիթը: 1261-ին Իշխանաց իշխան Սմբատը նորոգել է եկեղեցին, ավարտել գավթի կառուցումը, վանքին նվիրել բազմաթիվ գյուղեր և կալվածքներ, իսկ Բուրթել իշխանը խաչքար է կանգնեցրել իր մոր՝ Թամթայի հիշատակին: 1273-ին Ն-ում է թաղվել Թավրիզում վախճանված Իշխանաց իշխան Սմբատը, որի գերեզմանի վրա 1275-ին Տարսայիճ իշխանը ճարտ. *Սիրանեսի* ձեռքով կառուցել է Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատունը: 1287-ին Սյունյաց մետրոպոլիտ է դարձել Ստեփանոս Օրբելյանը, որը, ստանալով մոնղոլ. իշխանությունների հովանավորությունը, միացրել է Տաթևի և Ն-ի առաջնորդարանները, բազմապատկել Սյունյաց միացյալ թեմի տնտ. հզորությունը, ձեռք բերել նորանոր կալվածքներ: Նա Ն-ում 1299-ին ավարտել է «Պատմություն նահանգին Սիսական» աշխատությունը: 1300-ին զոհվել է Էլիկում իշխանը, որին թաղել են Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատանը: Ստեփանոս Օրբելյանը գրել է «Ողբ ի կաթողիկե» պոեմը, իսկ նրա պատվերով 1302-ին *Մոմիկն* Ավետարան է ընդօրինակել և նկարազարդել: Ստեփանոս Օրբելյանը թաղվել է վանքի գավթում: Նրան հաջորդած հորեղբոր՝ Լիպարիտ իշխանի որդի Հովհաննես Օրբելյանի պատվերով Մոմիկը 1321-ին կառուցել է *Արենիի Ս. Աստվածածին եկեղեցին*, Ն-ում խաչքար կերտել, ընդօրինակել բազմաթիվ մատյաններ: XIV դ. 1-ին տասնամյակը Ն-ում Մոմիկի բեղմնավոր գործունեության տարիներն էին. 1304-ին խաչքար է կերտել Ստեփանոս Օրբելյանի հիշատակին, 1307-ին Պողոս վարդապետի հետ Ավետարան

գրչագրել և նկարազարդել, 1308-ին Թամթա իշխանուհու պատվերով կերտել խաչքար՝ նրա որդիներ Բուրթելի և Բուղդայի «արևշատության» համար: 1318-ին Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատանը թաղել են պատերազմում զոհված Բուղդա իշխանին, որի եղբայր Բուրթելը նրա հիշատակին Ն-ում խաչքար է կանգնեցրել: Վանքի տարածքում է թաղված նաև Մոմիկը: 1324–31-ին Այունյաց հոգևոր կենտրոնը ղեկավարել է մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճ Օրբելյանը, որն ուսանել էր *Գլաձորի համալսարանում*, եղել *Եսայի Նչեցու* սանը: 1331–39-ին Բուրթել իշխանը կառուցել է Ն-ի Ս. Աստվածածին երկհարկ եկեղեցին (Բուրթելաշենը): XV–XVI դդ. Ն. շարունակել է մնալ հոգևոր-մշակութ. կենտրոն, այստեղ կանգնեցվել են նոր խաչքարեր: XVII դ. կառուցվել են վանքի պարիսպը, բնակելի ու տնտ. շենքերը: XVIII դ. վանքում տնօրինություն են արել մահմեդ. հրոսակախմբերը: 1813-ին պարսից Ֆաթալի շահը Ն. հանձնել է Պետրոս-Բեկ Օրբելյանին և հրամայել, որ Ամաղու գյուղի եկամուտը տրամադրվի վանքին: 1840-ին Ն. ավերվել է երկրաշարժից ու լքվել: 1948–49-ին մասնակի նորոգվել է, իսկ 1982-ին սկսվել են նրա պեղման, շենքերի վերակառուցման աշխատանքները: Վերականգնվել են Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու ու գավթի գմբեթներն ու ծածկերը, Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատան ծածկը, Ս. Աստվածածին եկեղեցու այունազարդ գմբեթը: 1998-ի ապրիլի 18-ին ձեռամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի վերաօծվել է Ն-ի Ս. Աստվածածին եկեղեցին:

Վանքի համալիրի հիմն. հուշարձանախմբի հվ-ում հնագույն՝ Ս. Կարապետ միանավ դահլիճն է, կենտրոնում՝ գլխավոր, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն Ս. Ստեփանոս Նախավկա դմբեթավոր եկեղեցին, հս-ում՝ Ս. Գրիգոր միանավ թաղածածկ եկեղեցի-տապանատունը: Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցուն արմ-ից կից գավիթը ծածկված է գոցվող թաղերով, ինչը եզակի է հայկ. նույնատիպ կառուցվածքների համար: Համալիրի արլ. կողմում առանձին կանգնած է Ս. Աստվածածին երկհարկ-եռաստիճան եկեղեցին՝ գմբեթի այունազարդ ռոտոնդայով: Միջնադարյան հայկ. արվեստում ինքնատիպությամբ, գեղ. բարձր հատկանիշներով առանձնանում են Ն-ի աստվածաշնչային ու ավետարան. թեմաներով պատկերաքանդակները, հատկապես գավթի արմ. մուտքի և լուսամուտի ճակատակալ քարի վրա կերտվածները: Դռան վերևում քանդակված Աստվածածինը, ձախ ծնկին նստած մանուկ Հիսուսով, ներկայացնում է հանրահայտ և Հայաստանում լայն տարածում ստացած «Նստած Օդիգիտրիա» պատկերագր. տիպը: Նրանից ձախ, լուսապսակով Հովհաննես Մկրտչի գլուխն է, իսկ աջ, համապատասխան մակագրությամբ՝ Եսայի մարգարեն: Փրկչական մարգարեության և Աստվածածնի այսպիսի համատեղ պատկերագրությունը եզակի է հայկ. արվեստում: Գավթի լուսամուտի ճակատակալ քարն ունի ավելի հարուստ բովանդակությամբ բարձրաքանդակ: Կենտրոնում Հայր Աստծո կիսանդրին է՝ կերտված մարդու կերպարանքով, տպավորիչ դիմագծերով, փառահեղ մորուքով, խոշոր, ձվաձև աչքերով, դանդուր մազերով և երկար գիսակներով: Աստծո այսպիսի պատկերագրությունն աննախադեպ է, որովհետև ընդհանրապես միջնադարյան արվեստում Հայր Աստվածը պատկերվում է խորհրդանշական ձևով (օր., երկնքից իջած Աջի տեսքով): Աստծո մորուքից ցած քանդակված է Սուրբ Հոգու խորհրդանիշը՝ խաչաձև լուսապսակով աղավնին, որի կտուցը հպված է Աստծո ձախ ձեռքում պահվող Ադամի (քանդակված է միայն գլուխը) շուրթերին: Քարի աջ եզրին սերովբեի քանդակ է, իսկ աջ կողմում, Հայր Աստծո օրհնող Աջի տակ՝ խաչված Քրիստոսը, որի երկու կողքերին Աստվածածինը և Հովհաննես ավետարանիչն են: Ներքևում պատկերված է պառկած և ձեռքը դեպի «Խաչելությունն» ուղղած Դանիել մարգարեն: «Խաչելության» դասական պատկերագրությունը զուգակցված է Ահեղ դատաստանի հետ: Ն-ում բարձրաքանդակի հեղինակը միանգամայն ազատ է մեկնաբանել և կերտել կանոնիկ պատկերագր. թեմաները: Դրա արտահայտություններից է նաև Աստծո շունչը Սուրբ Հոգով փոխարինելը, որը եզակի է քրիստ. պատկերագրության մեջ: Ուշագրավ է նաև Հայր Աստծո մորուքի մեջ պատկերված աղավնին, որը կտուցով ուղղված է դեպի Աստծո շուրթերը: Այս բոլոր առանձնահատկությունների շնորհիվ Ն-ի գավթի քանդակները դուրս են գալիս ազգ. արվեստի շրջանակներից:

Ս. Աստվածածին եկեղեցու 1-ին հարկի մուտքի բարավորին քանդակված են դահավո-

բակի վրա նստած Աստվածածինը՝ գոգին մանուկ Հիսուսը և երկու կողմերում կանգնած Գաբրիել ու Միքայել հրեշտակապետները, վերին հարկի մուտքի ճակատակալ քարին՝ Քրիստոսը (մինչև գոտկատեղը), նրա երկու կողքերին՝ Պողոս և Պետրոս առաքյալները: Յուրօրինակ հորինվածքով կտիտորական բարձրաքանդակ (այժմ՝ խիստ վնասված) կա եկեղեցու գմբեթի այուներին, որոնցից արմ-ի վրա քանդակված է գորգով ծածկված, բազմոցին նստած Աստվածածինը՝ ձախ ձեռքով մանուկ Հիսուսին պահած: Կողքի այուներին պատկերված են Բուրթել իշխանը՝ եկեղեցու մանրակերտով, և Բեշքեն իշխանը՝ ողջ հասակով: 1983-ին Ս. Աստվածածին եկեղեցու մոտ գտնվել է արլ. պատից ընկած (այժմ ազուցված է տեղում) Օրբելյան իշխանատան զինանշանը՝ մագիլներում եղնիկ բռնած արծվի բարձրաքանդակը, իսկ Ս. Գրիգոր եկեղեցու կողքին՝ մի գեղաքանդակ խաչքար, որի վերին մասում «Քրիստոսը փառքի մեջ» պատկերաքանդակն է, շուրջը՝ ավետարանիչների խորհրդանիշերը, իսկ խաչի երկու կողմերում, շեղանկյունիների մեջ պատկերված են (մինչև գոտկատեղը) տաններկու առաքյալները՝ Ս. Գիրքը ձեռքերին: Ն. իր ճարտ. և քանդակների առանձնահատկություններով և գեղ. բարձր արժանիքներով Հայաստանի XIV դ. լավագույն վանական համալիրն է:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.4, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 2, Տփղիս, 1858: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Վայոց-ձոր, նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք 26, Թ., 1916: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Եղիազարյան Հ., Ամաղու Նորավանք, «Էջմիածին», 1972, № 1–2: Գրիգորյան Գ., Այունիքն Օրբելյանների օրոք, Ե., 1984: Հասրաթյան Մ., Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում, ԼՀԳ, 1984, № 8: *Халпахчьян О. Х., Архитектурные ансамбли Армении, М., 1980;* Alpago Novello A., Jeni G., Amaghu Noravank, Milano, 1985 (Documenti di architettura armena, 14).

Մուրադ Հասրաթյան

ՆՎԻՐԱԿ (նվեր բառից – նվիրատվություններ հավաքող), եպիսկոպոս կամ վարդապետ, որը Ամենայն հայոց կաթողիկոսի հրամանով գործում է հիմնականում հայկական գաղթավայրերում՝ տարագիր հայության շրջանում կաթողիկոսի անունից հոգևոր ու բարոյական մխիթարիչ լինելու և հանուն Մայր աթոռի կամավոր նվիրատվությունը ժողովելու համար: Ն-ի պաշտոնը, գործունեության ծավալման վայրերը և ժամկետը վավերացվել են կաթողիկոս. հատուկ՝ նվիրական կոնդակով: Ն-ին ուղեկցել և ծառայության մեջ օժանդակել են ցածր աստիճան ունեցող մեկ կամ մի քանի սպասավորներ: Ն., դուրս գալով Ս. Էջմիածնից, բացի հայրապետ. կոնդակից, իր հետ վերցրել է նաև ս. Մյուռոն՝ ժողովրդին բաշխելու համար: Նվիրակության պաշտոնը Մայր աթոռի համար ժողովրդից նվերներ հավաքելուց զատ կապված էր Մյուռոնի բաշխման հետ: Նվիրակության համար եղել են առանձին թեմեր, շրջաններ, որոնցից յուրաքանչյուրում նշանակվել է մեկական Ն., որը սովորաբար իր գործը կատարել է երեք, երբեմն ավելի տարիների ընթացքում: Ն. հաստատուն նստավայր չի ունեցել, ինչպես թեմի առաջնորդը: Նա շրջել է բնակավայրերում և հայկ. գաղթավայրերում ներկայացրել Հայոց կաթողիկոսին: Վերջինս թեմերի հետ հարաբերվել է նաև Ն-ի միջոցով: Ն. իր ամեն քայլի համար պետք է հաշվետու լիներ կաթողիկոսին: Շատ անգամ կաթողիկոսը հաշվի է առել Ն-ի կարծիքը տվյալ շրջանի որևէ հոգևորականի եպիսկոպոս ձեռնադրելու նպատակահարմարության մասին: Յուրաքանչյուր նվիրապետ. շրջան ունեցել է իր գանձարանը, որտեղ հավաքվել են Մայր աթոռի անունով ժողովված բոլոր նվերները: Գանձարաններն ունեցել են գանձապետներ կամ գանձապահներ, որոնց վստահվել է նվիրատվությունների նկատմամբ հսկողության իրականացումը և դրամի կամ բեռների Մայր աթոռ տեղափոխումը: Նվիրակության ժամանակ եպիսկոպոս Ն. հաճախ իր սպասավոր սարկավագին ժողովրդի բազմության առաջ ձեռնադրել է վարդապետ՝ օտար ափերում հայրենի ավանդներին և ծեսերին հայությանը հաղորդակից դարձնելու համար: Բացի այդ Ն. իր շրջանում ձեռնարկել է զանազան արարողություններ, բարենորոգություններ, օծել եկեղեցիներ, հիմնել դպրոցներ, կազմակերպել բազմամարդ ուխտագնացություններ Ս. Էջմիածին ևն: Հատկապես հանդիսավորությամբ են կատարվել ուխտագնացությունները: Ն-ների առաջնորդությամբ ուխտավորները հեռավոր վայրերից ս. Հռիփսիմյանց տոնին Ս. Էջմիածին ուխտ գալով, եկեղեց. թափորով առաջնորդվել են դեպի Մայր

տաճար: Փակ դռան առաջ ասվել է «Խոստովան եղերուք» սաղմոսը մինչև «Բացէք» տունը, ապա եկեղեցու դուռը բացվել է, և «Զողորմութեանց քոց դուռն» շարականը երգելով՝ մտել են տաճար: Ս. Իշման սեղանի առաջ երգվել է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը: Հանդիսադիրը, որը Ն. էր, սաղմոս երգելով և աղոթելով երկրպագել է ս. Սեղանին՝ համբուրելով խաչն ու Ավետարանը: Ապա «Պահպանիչ»-ով օրհնել է ուխտավորներին, որից հետո սկսվել է նրանց ուխտադրությունը: Սակայն XIX դ. սկզբից՝ Նվիրակության դադարումով, վերացել են ուխտավորների խմբովին Ս. Էջմիածին գալը և Մայր տաճար մտնելու արարողությունը:

Նվիրակության մասին առաջին անգամ հիշատակում է Ստեփանոս արք. Օրբելյանը: Համաձայն նրա, Կիլիկիայում գահակալած Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսը (1293–1307) Ն-ի կարգավիճակով Հայաստան է ուղարկել Կոստանդին վարդապետին: Նվիրակությունը, որպես Հայ եկեղեցու ներսում սկզբնավորված նոր երևույթ, ծաղկել և զարգացման բարձր աստիճանի է հասել XVII–XVIII դդ., երբ Հայոց կաթողիկոսները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել Ն-ների գործունեությանը: Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսը (1737–51) օսմ. իշխանություններից ձեռք է բերել մի ֆերման (հրովարտակ), որով թուրք պաշտոնյաներին հրահանգվել է չխոչընդոտել կաթողիկոս. Ն-ների գործունեությանը կայսրության սահմաններում: Կաթողիկոս Հակոբ Ե Շամախեցին (1759–63) նմանօրինակ մի արտոնագիր է ձեռք բերել պարսկ. իշխանություններից: Երևանի Ալի Հուսեին խանը Ն-ներին արտոնել է ազատ շրջագայել պետության սահմաններում՝ տալով նրանց մաքսային որոշ արտոնություններ: Ն-ների դերի բարձրացմանը զուգընթաց, կամավոր տուրքերից բացի, ըստ կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու, նրանց միջոցով են հավաքվել նաև կաթողիկոս. և առաջնորդ. տուրքերը: Եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսի (1809–30) ժամանակ կազմվել է Նվիրակության վերաբերյալ մի կանոնադրություն՝ 18 հոդվածից բաղկացած, որով սահմանվել է Նվիրակության դերը և Ն-ների գործունեությունը: Սակայն այս կանոնադրությունը չի գործադրվել, իսկ Նվիրակության գործը գնալով թուլացել է: Թեև Եփրեմ Ա Ջորագեղցուն հաջորդած կաթողիկոսները երբեմն Ն-ներ են ուղարկել տարբեր վայրեր, բայց նրանց դերը հետզհետե փոխվել է՝ կորցնելով նախկին նշանակությունը:

Գրկ. Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղպատ, 1873: Դիվան հայոց պատմության, հ. 3, թ., 1894: Թաղիադյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ..., ե., 1975: Կանայան Խ., Էջմիածնի Նվիրակությունը ԺԸ դարում, «Էջմիածին», 1977, № 2–4:

Արտաշես Ղազարյան

ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, եկեղեցու ձեռնադրված պաշտոնեության կամ եկեղեցական վարչության սրբազան իշխանություն: Եկեղեց. իշխանությունն աստիճանաբար Ն-յան է վերաճել III դ. 1-ին կեսին՝ կարգապահական և վարչ. խնդիրների արծարծման բուռն շրջանում, եկեղեցու հայրեր Տերտուղիանոսի, Կիպրիանոսի և այլոց եռանդուն ջանքերով: Իբրև *առաքյալներից* ավանդված ժառանգության լիակատար տնօրինողներ, Նվիրյալները կամ ընծայյալները (անձինք, ովքեր իրենց ընծայում կամ նվիրում են Աստծո ծառայության և եկեղեցու սպասավորության) համարվում են եկեղեցու սրբազան պաշտոնյաները, վարդապետները և դատական իրավունքն իրականացնողները: Եկեղեցին ուսուցանում է, որ Ն. իր ծագումով պարտական է աստվածային հիմնադրության ոլորտին, և որ նրա բոլոր անդամներն ունեն Սուրբ Հոգու հատուկ շնորհը՝ փոխանցված *Ձեռնադրության* խորհրդի կատարման միջոցով:

Ն-յան կառուցվածքի աստիճանականության հարցում Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիները տարբեր մոտեցումներ ունեն: Առաջինը Ն-յան բարձրագույն ատյան է համարում տիեզերական ժողովը՝ կազմված տեղական բոլոր եկեղեցիների Նվիրապետ. աթոռներից: Մինչդեռ Կաթոլիկ եկեղեցին Նվիրապետ. իշխանությունն ամբողջապես մարմնավորում է պապի՝ որպես եկեղեցու տեսանելի պետի և իր գործունեության մեջ բացարձակ անսխալական հովվի, անձի մեջ: Ն-յան հիմն. աստիճանները երեքն են՝ սարկավագություն, քահանայություն, եպիսկոպոսություն:

Հայ եկեղեցում Նվիրապետական կարգի գլուխն է Ամենայն հայոց կաթողիկոսը: Հայ եկեղեցու Ն-յան մեջ երեք հիմն. աստիճաններին ավելանում է չորրորդը՝ կաթողիկոսությունը, քանի որ, ի տարբերություն մյուս եկեղեցիների, Հայ եկեղեցու կաթողիկոսը մի կարգ բարձր է եպիսկոպոսությունից:

Եկեղեցու ս. Հայրերը դարերի ընթացքում եկեղեց. Ն-յան մեջ հաստատել են ինը կարգ. 1. դռնապանություն, 2. ընթերցողություն, 3. երգմնեցուցչություն, 4. ջահընկալություն, 5. կիսասարկավագություն, 6. սարկավագություն, 7. քահանայություն, 8. եպիսկոպոսություն, 9. կաթողիկոսություն: Առաջին չորս կարգերը կոչվում են դպրության աստիճաններ, դրանք ստացողները՝ դպիրներ: Դպիր նշանակում է գրչության պաշտոնյա, ուսյալ, կարդացող և գրող: Նրա պաշտոնը Հին կտակարանի գրքերը մեկնելն ու ժողովրդին ուսուցանելն է եղել: Նրանք կոչվել են նաև օրինաց վարդապետներ կամ օրինականներ: Առաջին դարերից եկեղեցու ծառայության նվիրվածներից գիրք, սաղմոս և շարական կարդացողները կոչվել են դպիր: Ներկայումս դպիր են կոչվում նաև եկեղեցու երգեցիկ խմբի անդամ և եկեղեցու ծառայության մեջ գտնվող արժանավորները, որոնց շնորհվում են դպրության չորս աստիճանները: Երգեցիկ դպիրների խումբը կոչվում է դպրաց դաս: Դպրության չորս աստիճանների տվչությունից առաջ ձեռնադրիչ եպիսկոպոսը սաղմոսերգության և ավելածության պաշտոններ է տալիս նվիրյալին՝ մանավոր արարողությամբ: Կաթոլիկ եկեղեցում ընծայյալի գլուխը պսակաձև ածիլում են՝ իբրև Հիսուսի փշե պսակի խորհրդանշան: Հայ եկեղեցում եպիսկոպոսը խաչաձև կտրում է մազերը՝ իբրև խորհրդանշան երկրային և մարմնավոր ցանկություններից հրաժարվելու: Այս արարողությամբ նվիրյալը դառնում է Աստծո ծառա և եկեղեցու սպասավոր (կան սպասավորության տարբեր կարգեր՝ կղերիկոս կամ ժառանգավոր, ավելածու, ժամկոչ, լուսարար, հնում՝ փակակալ ևն):

Նվիրապետ. սանդղակի վրա առանձնանում է երկու շերտ. ա. բարձրաստիճան հոգևորականություն (մեծ աստիճաններ), բ. ստորին կամ խոնարհ պաշտոնեություն (փոքր աստիճաններ): Առաջինի մեջ ընդգրկվում են *քահանաները, եպիսկոպոսները* և *կաթողիկոսը*, որոնք իրենց իշխանությունն ստանում են Ձեռնադրությամբ և *օծումով*: Երկրորդում ընդգրկվում են դռնապանությունից մինչև սարկավագության (տես *Սարկավագ*) աստիճանները և սպասավորները (կղերիկոս, ավելածու, սաղմոսերգու, ժամկոչ ևն), որոնց տվչությունը կատարվում է միայն Ձեռնադրությամբ: Դպիրները, սարկավագները և քահանաները կարող են լինել կուսակրոն (տես *Կուսակրոնություն*) կամ ամուսնացած, ինչպես նաև զբաղվել աշխարհիկ այլ գործերով:

Արտաշես Ղազարյան

ՆՈՒՆԵ, սուրբ Նունե կույս, սուրբ Նինո [ծ. թ. անհտ – մոտ 340, Վիրք (Վրաստան)], III դարի վերջի – IV դարի 1-ին կեսի ճգնավոր, տոնելի սրբուհի, որ քրիստոնեություն է քարոզել Հայաստանում և Վրաստանում: Նրա քարոզչությամբ և Հիսուս Քրիստոսի անունով կատարած հրաշագործությունների շնորհիվ քրիստոնեություն է ընդունել վրաց արքունիքը և ապա՝ ամբողջ ժողովուրդը:

Հայսմավուրքներում և այլ աղբյուրներում պահպանված վկայաբանության համաձայն, Ն. եղել է ս. *Հռիփսիմյանց կույսերից* մեկը, որը նրանց հետ Հռոմից հասել է Հայաստան: Վանի սահմաններում, Վարագ լեռան մոտ առանձնացել է ընդհանուր խմբից և, ըստ վկայաբանության, «երկնային ազդմամբ» մեկնել Վիրք, ճգնողական կյանքը շարունակել Մցխեթ (Մծխիթա) քաղաքի մոտակայքում: Այստեղ քրիստոնեություն է քարոզել և Սուրբ Հոգու զորությամբ կատարել բժշկումներ: Ըստ ավանդության, այնքան է հռչակվել, որ Վրաց Միհրան թագավորն ու Նանա թագուհին նրան հրավիրել են արքունիք՝ բուժելու իրենց հիվանդ զավակին: Կույսը բուժել է նրան՝ խաչակնքելով, ապա բժշկել նաև հիվանդացած թագուհուն: Իսկ Վրաց Միհրան թագավորը, մի անգամ որսորդության գնալիս, հանկարծակի շրջափակվել է մութ մառախուղով: Որոշել է աղոթք հղել Ն-ի քարոզած Աստծուն. խավարը փարատվել է, որից հետո թագավորը հրաման է արձակել՝ ընդունել Հիսուս Քրիստոսին որպես Բարձրյալ Աստծո Որդու, իսկ Ն-ին՝ որպես առաքելուհու: Թագավորի գործակցությամբ Ն. քանդել է տվել Կուր (Քուռ) գետի ափին՝ բլրի վրա կանգնեցված Արամազդի արձանը և փոխարենը կանգնեցրել Քրիստոսի խաչի նշանը (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, 1997, գլ. ԶԶ): Այդ փայտե անշուք խաչը տեսնելով՝ նախարարները և ժողովուրդը հիասթափվել են, բայց երբ Ն-ի աղոթքով ամպի այուն է իջել ու երկնային բուրմունքով պարուրել բլուրը, և հետո ծագել է խաչանման պայծառ լույս ու տաներկու աստղերով կանգնել փայտե խաչի վրա, այդ

հրաշքին ի տես, բոլորը դարձի են եկել և ընդունել քրիստ. կրոնը:

Ն-ի խորհրդով Վրաց թագավորը պատգամավորություն է ուղարկել Կոստանդիանոս կայսրին (ըստ վրաց վկայաբանության) կամ՝ Գրիգոր Ա Լուսավորչին (ըստ հայկ. վկայաբանության), որպեսզի հոգևորականներ առաքվեն Վրաստան՝ քրիստ. կարգ ու կանոն հաստատելու և պաշտոնավարելու համար: Ժողովրդային մկրտություն է տեղի ունեցել Կուր գետում: Ապա Մցխեթում կառուցվել է Սուրբ Խաչ եկեղեցին: Իսկ Ն. շրջել է վրաց. մյուս գավառներում և քարոզել երկնքի արքայությունը: Վախճանվել է խաղաղությամբ՝ բնական մահով: Գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի, որն ուխտավայր է դարձել:

Ըստ վրաց. աղբյուրների՝ ս. Ն. դեպի Վիրք իր ուղևորության սկզբում եղել է Ջավախքում, Փարվանա լճի մոտ՝ տեղեկանալու, թե որտեղ է Մցխեթը: Այստեղ նա մնացել է 2 օր, կերակուր խնդրել ձկնորսներից, հովիվների հետ խոսել հայերեն, որը սովորել էր ոմն դվնեցի հայուհուց (տես Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, հ. 1–3, 1934–55, հ. 1, էջ 13, 18–20, 22, 125, 140, 169, հ. 2, էջ 37, 98, 103, 104):

Վրաց. վկայաբանությունը ս. Ն-ի հիշատակի տոնը նշանակել է հունվ. 14-ին: Հայ եկեղեցին ներկայումս այն նշում է Տոն Կաթողիկեին (Տոն Ս. Էջմիածնի) հաջորդող երեքշաբթի օրը՝ ս. *Մանե* կույսի հիշատակի հետ միասին:

Գրկ. Ակինյան Ն., Քրիստոնէութեան մուտքը Հայաստան և Վրաստան. ս. Հռիփսիմե և ս. Նունե, Վնն., 1949: Գալուստյան Շ., Համաքրիստոնէական սուրբեր, Ե., 1997: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմ. Ռ. Մաթևոսյան, Էջմիածին, 1999:

Շ

ՇԱՀԱԿ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ (ծ. թ. անհտ – 377), Ամենայն հայոց կաթողիկոս 373-ից: *Աղբիանոսյանների* տոհմից: Հաջորդել է *Ներսես Ա Մեծին*: Եղել է Մանազկերտի եպիսկոպոսը: Հայ կաթողիկոսներից առաջինն էր, որ Պապ թագավորի հրամանով ձեռնադրվել է ոչ թե Կեսարիայում, այլ՝ Հայաստանում: Պապ թագավորի եկեղեց. բարենորոգումների հանդեպ ցուցաբերել է համաձայնողական վերաբերմունք, իրեն հեռու պահել Արշակունյաց Հայաստանում տեղի ունեցող քաղ. անցուդարձերից:

Կաթողիկոս. գահին Շ. Ա Մ-ուն հաջորդել է *Զավեն Ա Մանազկերտցին*:

Գրկ. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Օրմանյան Մ., Ազգապատում, հ.1, ԿՊ, 1912:

Հակոբ Հարությունյան

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 444, գումարվել է Նորաբեր տոնի օրը՝ հունիսի 24-ին, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառի Շահապիվան ավանում՝ Հայոց թագավորների բանակատեղիում, *Հովսեփ Ա Հողոցմեցու* կաթողիկոսության և Վասակ Այուսնու մարզպանության օրոք: Ժողովին մասնակցել են 40 եպիսկոպոսներ, վանականներ, երեցներ, սարկավագներ, նախարարներ, ազատներ և շինականներ, «որք էին նախանձախնդիր աւրինաց եւ սրբութեան»: Շ. ե. ժ-ի կանոնների Առաջաբանում նշվում է, թե ինչ նկատառումներով է այն գումարվել. գլխավորապես, ի լրումն և ի հաստատումն առաքելական ու Նիկիական կանոնների, որոնք խախտել էին բազմաթիվ հոգևորականներ, ի վերահաստատումն Հայ եկեղեցու ներքին կարգերի և բարոյական նորմերի, ինչպես նաև ի դատաստան աշխուժացած աղանդավորների, հատկապես *մծղնեության*, և հանցավորների՝ առանց դասի և աստիճանի խտրության: Շ. ե. ժ. կանոնական էր, սակայն նրա որոշումները, ի տարբերություն ուրիշ կանոնախմբերի, միակն են, որ հանցագործությունների համար սահմանել են պատիժներ և դրանով իսկ դուրս եկել կանոնական շրջանակներից ու ստացել դատաստանագրքի նշանակություն: Ժողովի ընդունած 20 կանոններից միայն մեկը՝ ԺԵ կանոնը, ունի խրատական բնույթ և պատիժ չի նախատեսում: Կանոններից 6-ը ամբողջությամբ (Ա, Բ, ԺԴ, ԺԶ, ԺԷ և ԺԸ), իսկ 4-ը՝ մասամբ (Թ, ԺԳ, ԺԹ, Ի) վերաբերում են հոգևորականներին, որոնց գործած կանոն. խախտումների և հանցանքների համար նախատեսված են կանոն. և քրեական պատիժներ՝ համապատասխան պատժաչափերով: 9 կանոն ամբողջությամբ և 4-ը՝ մասամբ, ազատների՝ իշխանների և շինականների մասին են՝ դասազան պատժաչափերի սահմանումով: Ընդ որում, շինականների համար նախատեսվել է մարմնական պատիժ՝ ծեծ, իսկ ազատներին՝ միայն խրատ, տուգանք և ապաշխարություն: Սակայն մի շարք հանցանքների դեպքում շինականի և ազատի համար սահմանվել է միևնույն պատիժը, իսկ պատժաչափը որոշվել է ըստ հանցանքի: Բացի այդ շինականի տուգանքը կազմել է ազատի տուգանքի կեսը կամ

կեսից պակաս: Տուգանքի չափի տարբերությունը բխել է սոցիալ. այդ երկու դասերի տնտ. վիճակից, որը հաշվի էր առնվել կանոններում: Ժողովի որոշումների համաձայն, բոլոր տեսակի տուգանքներն անցնելու էին հիմնարկներին (եկեղեցիներին, գողենոցներին, ծերանոցներին)՝ որպես նրանց եկամտի մասնակի աղբյուր, իսկ առանձին դեպքերում էլ տուգանքի որոշ մասը նախատեսվում էր բաժանել աղքատներին: Շ. ե. ժ-ի կանոններում, հակառակ Արևելքի երկրներում կնոջ իրավազրկության, կինն օրենքի առաջ հավասար էր տղամարդուն. «Եթէ այր եւ եթէ կին՝ կանոն այդ կացցէ»: Շ. ե. ժ. խիստ որոշումներ է ընդունել աղանդավորների՝ մծղնեների դեմ (ԺԹ և Ի կանոնները): Աղանդներին հարող ընտանիքի չափահաս անդամներին հասարակությունից մեկուսացնելու նպատակով արգելափակել են գողենոցներում, իսկ անչափահաս երեխաներին խլել ծնողներից և հանձնել եկեղեցուն, որն էլ ստանձնել է նրանց հոգևոր դաստիարակությունը:

Շ. ե. ժ. կարևոր նշանակություն է ունեցել Հայ եկեղեցու հիմքերի ամրապնդման, պետականության բացակայության պայմաններում նրա դերի բարձրացման, եկեղեց. կարգ ու կանոնի վերահաստատման, հայ իրավական մտքի ձևավորման և զարգացման գործում:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Մխիթարյանց Ա., Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1874: Թանդյան Մ., Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք 1, Շուշի, 1903: Ակինյան Ա., Շահապիվանի ժողովոյն կանոնները, ՀԱ, 1949, № 4–12, էջ 79–170: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ.1, Ե., 1964:

Արտաշես Ղազարյան

ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆՑ Հովհաննես Գեորգի [20.5.1799, գ. Շահրիար (Շարուր գավառ) – 1.3.1849, գ. Շահրիար], պատմաբան, հնագետ, մատենագետ: Ս. Էջմիածնի միաբանության անդամ: Սերել է ազնվական ընտանիքից: Ուսանել է Էջմիածնում՝ վանեցի Մկրտիչ վարժապետի մոտ, ապա *Եփրեմ Ա Զորագեղցին* նրան ուղարկել է Կ. Պոլիս, Ս. Էջմիածնի նվիրակ Աստվածատուր եպիսկոպոսի մոտ՝ որպես սպասավոր: Վերջինս Շ-ին հանձնել է «արժանավոր վարժապետաց», որոնցից նա սովորել է հունարեն և թուրքերեն: Ս. Էջմիածին վերադառնալուց հետո Աստվածատուր եպիսկոպոսը 1826-ին Շ-ին ձեռնադրել է կուսակրոն քահանա: 1830-ին Եփրեմ Ա Զորագեղցու հրամանով նշանակվել է Ս. Էջմիածնի Բարձրագույն խորհրդարանի ատենադպրի օգնական, 1832-ին՝ Բարձրագույն խորհրդարանի անդամ և մատենադարանի վարիչ: *Հովհաննես Ը Կարբեցի* կաթողիկոսի դեմ ծայր առած հուզումների պատճառով 1833-ին հրաժարվել է այդ պաշտոններից, հանդես եկել կաթողիկոսի գործելակերպի դեմ բողոքող ութ եպիսկոպոսների և վարդապետների խմբում: Սակայն Գրիգոր Արդվինցու և Ստեփանոս Արարատյանցի հետ բաժանվել է բողոքողներից ու կրկին անդամակցել խորհրդարանին: 1834–35-ին եղել է Երևանի վիճակի առաջնորդական փոխանորդ: «*Պոլոժենիե*»-ի (1836) ընդունումից հետո մինչև մահ եղել Հայ եկեղեցու նոր կանոնադրությամբ ստեղծված *Սինոդի* անդամ, միաժամանակ վարել տարբեր պաշտոններ՝ Մայր աթոռի տպարանի կառավարիչ, ժառանգավորաց դպրոցի ուսուցիչ ու վերատեսուչ, վանական կառավարության անդամ: 1841-ին ձեռնադրվել է եպիսկոպոս:

Սինոդի հանձնարարությամբ Շ. կազմել է Ս. Էջմիածնի գրատան ձեռագրացուցակը (312 անուն), որի մասին գովեստով է արտահայտվել հայագետ ակադեմիկոս Մ. Բրոսսեն: Վերջինս թարգմանել է ձեռագրացուցակը և 1840-ին հրատարակել ֆրանս. ու ռուս.: Շ. գրել է Դավիթ-Դանիելյան անցքերի պատմությունը, «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» (հ. 1–2, 1842) աշխատությունը, որը փաստական նյութեր է պարունակում քաղաքամայր Վաղարշապատի սրբավայրերի ու հուշարձանների, Այրարատի հինգ գավառների վերաբերյալ: «Պատմութիւն գետնաշարժին ի 1840 ամի» ձեռագիր երկում նկարագրել է Այրարատի 1840-ի երկրաշարժը և Ակոռի գյուղի ու Ս. Հակոբ վանքի կործանումը:

Շ. իբրև գիտնական հայտնի է եղել նաև օտարներին: 1844-ին Ստ. Նազարյանցի միջնորդությամբ ընտրվել է Կազանի համալսարանի թղթակից անդամ: Մշտական հարաբերություններ և նամակագր. կապեր է ունեցել Խ. Աբովյանի, Ստ. Նազարյանցի և ուրիշ առաջադեմ գործիչների հետ: Նա Մ. Մսրյանի, Խ. Աբովյանի, Մ. Սալլանթյանի հետ ցանկացել է Սևանա կղզում գիտ. միաբանություն ստեղծել, բայց այդ մտահղացումը չի իրականացել: *Ներսես Ե Աշտարակեցին* մեծ հարգանքով ու հավատով է վերաբերվել նրան: 1843-ին Շ.

նշանակվել է Վրաստանի հայոց թեմի նվիրակ և մեկնել Թիֆլիս:

Գրկ. Սեդրակյան Ա., Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, ՍՊԲ, 1898:

Վալտեր Դիլոյան

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ, Շիրվանի թեմ, Բաքվի և Թուրքեստանի թեմ, Ադրբեջանի թեմ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է բուն Աղվանքի (Կուրի ձախափնյակի) հայահոծ շրջաններում: Կենտրոնները՝ 1660-ից՝ Սաղիանի Ս. Ստեփանոս Նախավկա վանք, 1838-ից՝ Շամախու Ս. Աստվածածին, 1918-ից՝ Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներ:

Աղվանքի հայկ. եկեղեցիներն սկզբնաղբյուրներում հիշատակվում են վաղ միջնադարից: Շ. թ-ի սկզբնավորման ստույգ թվականը և եպիսկոպոսանիստ առաջին եկեղեցին մատենագրական աղբյուրներում վկայված չեն: Համարվել է *Աղվանից կաթողիկոսության* թեմերից մեկը: XI դարից բուն Աղվանքը հայտնի էր Շիրվան կամ Շիրվանայ երկիր անունով: Շիրվանի մայրաքաղաքն էր Շամախին: XVI դարից Շ. թ-ի ենթակայության ներքո էին գտնվում Շաքիի (Նուխի) եկեղեցիներն ու վանքերը: Ցար. արքունիքի 1836-ի մարտի 11-ի ընդունած կանոնադրությամբ («*Պոլոժենիե*») վերացվել է մետրոպոլիտությունը, և նախկին Աղվանից կաթողիկոսությանը ենթակա շրջաններում ստեղծվել են Մայր աթոռին ենթակա երկու առաջնորդական թեմ և մեկ հաջորդական վիճակ: Առաջինը Արցախի թեմն էր, երկրորդը՝ Շամախու կամ Շիրվանի թեմը, որն ընդգրկել է Գյոկչայի, Շամախու, Ղուբայի, Սաղիանի, Բաքվի շրջանները և Դերբենդ քաղաքը: Կանոնադրությամբ Շաքին և Լենքորանը հանձնվել են Արցախի թեմին: Թեմական առաջնորդ Հովհաննես եպս. Շահխաթունյանցի օրոք (1838–40) 1838-ին առաջնորդանիստը Սաղիանից տեղափոխվել է Շամախի քաղաք, և տեղի Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1701-ին) դարձել է առաջնորդանիստ: Նույն թվականից գործել է թեմի վիճակային ատյանը (կոնսիստորիա): 1853-ին թեմում գործել են 34 եկեղեցի, 31 հոգևորական: Բաքվում, 1869-ին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումից հետո, եկեղեց. գործերը վարելու նպատակով, 1872-ին Էջմիածնի Սինոդի հրամանագրով ստեղծվել է Բաքվի հայոց եկեղեցիների գործակալություն: 1890-ին թեմի տարածքում կար հայաշատ բնակչություն ունեցող չորս քաղաք (Բաքու, Դերբենդ, Ղուբա, Շամախի), 48 հայկ. գյուղ, 39 եկեղեցի և երկու վանք [Սաղիանի Ս. Ստեփանոս Նախավկա, Մեյսարիի Ս. Աստվածածին (հիմն. 1688-ին)]: 1844-ին, Թուրքեստանի Աշգաբադ քաղաքում հայկ. առաջին եկեղեցու հիմնադրումից հետո, այն հանձնվել է Շ. թ-ի տնօրինությանը: 1891-ին Թուրքեստանում Աշգաբադ և Ղըզլ-Արվադ քաղաքներում կար 2 գործող եկեղեցի: 1892-ին ռուս. իշխանությունների պահանջով Շ.թ-ում գտնվող Թուրքեստանի հայկ. եկեղեցիները հանձնվել են *Աստրախանի թեմին*: 1905-ին հիմնադրվել է Բաքվի հայոց ծխական հոգաբարձությունը: Զբաղվել է եկեղեցիների, դպրոցական շենքերի, աղքատանոցների կառուցման, պահպանման ու վերաբացման աշխատանքներով: Հայկ. դպրոցներից են Շամախու հոգևոր սեմինարիան (հիմն. 1844-ին), Սանդուխտյան օրիորդաց դպրոցը (1869), Սաղիան գ. Ս. Ստեփանոս Նախավկա վանքին կից վանական դպրոցը (1864–85, 1888-ին վերաբացվել է), Մատրասա գ. ծխական մեկդասյան դպրոցը (1870), օրիորդաց ծխական դպրոցը (1872): Բաքվում 1869-ին հիմնվել է Մեսրոպյան ծխական երկդասյան արական դպրոցը, Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը, 1894-ին՝ Բաքվի Ս. Աստվածածին եկեղեցուն կից երկրորդ օրիորդաց դպրոցը: 1872-ին կաթողիկոսի հատուկ կոնդակով հիմնվել է Բաքվի հայկ. միջնակարգ հոգևոր սեմինարիան: Դերբենդում 1873-ին բացվել են հայկ. օրիորդաց Մարիամյան մեկդասյան դպրոցը, արական դպրոցը ևն: 1914-ին հայ բնակչությունը թեմի տարածքում կազմել է շուրջ 133 հզ.: 1916-ին թեմում գործել է 39 եկեղեցի, որից 14-ը՝ Շամախու, 17-ը՝ Գյոկչայի, 2-ը՝ Ղուբայի գավառներում, 1-ը՝ Դերբենդում և 5-ը՝ Բաքվում (Ս. Աստվածածին, հիմն. 1799-ին, Ս. Գրիգոր Լուսավորիչ, հիմն. 1863–1869-ին, Ս. Հովհաննես Մկրտիչ, հիմն. 1895-ին, Ս. Թադեոս և Բարդուղիմեոս, հիմն. 1907–11-ին, Ս. Թարգմանչաց, հիմն. թ. անհտ է): 1917-ից Բաքվում գործել է «Բաքվի հայ քահանաների միություն»-ը: 1918-ի մարտի վերջին Շամախիում բռնկած հայ-թաթար. ընդհարումների ժամանակ թաթարներն այրել են թեմի առաջնորդարանն ու վիճակային ատյանը: Թեմը մեծ վնասներ է կրել 1918-ի հունիս-սեպտ. ամիսներին, երբ թուրք. զորքերի՝ Բաքվի արշավանքի ընթացքում ավերվել են հայկ. բազմաթիվ գյուղեր, եկեղեցիներ ու վանքեր, կոտոր-

վել հազարավոր հայեր: Ճակատագր. այդ օրերին թեմական Բագրատ եպս. Վարդազարյանը Գյոկչա և Շամախի գավառների կոտորածներից փրկված հայերի հետ գաղթել է Բաքու, որտեղ 1918-ին հիմնել է Ինքնօգնության կոմիտե (զբաղվելու էր հայ գաղթականության օգնության խնդիրներով): 1918-ին նա ընդգրկվել է Բաքվի հայոց Ազգային խորհրդում, այնուհետև դարձել նրա նախագահը, Շամախի քաղաքից այստեղ տեղափոխել թեմի առաջնորդարանն ու վիճակային ատյանը և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին դարձրել առաջնորդանիստ:

Բաքվում խորհրդ. իշխանության հաստատումից հետո թեմի առաջնորդարանն ու վիճակային ատյանը դադարել են գործել: 1920-ի օգոստ. թեմը ժամանակավորապես միացել է Գանձակի փոխանորդությանը, իսկ կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի սեպտ. 3-ի կոնդակով Տաշքենդի, Սամարղանդի, Անդիժանի, Կոկանդի, Աշգաբադի, Զարջոուի, Ղըզլ-Արվադի, Նոր Բուխարայի, Կրասնովոդսկի և Զաքիչլարի հայկ. եկեղեցիները, վանքերը, մատուռներն ու ուխտատեղիները միացվել են Շ. թ-ին և միասնաբար կոչվել Բաքվի և Թուրքեստանի թեմ: 1921-ին Գանձակի փոխանորդությունն առանձնացվել է, և կազմվել է համանուն առանձին թեմ: Իրանա-Հնդկաստանի թեմում առաջնորդ չլինելու պատճառով կարճ ժամանակով (1923-ի հուլիս-նոյեմբեր) Պարսկաստանի Ատրպատական նահանգի Նիշապուր, Սաբզվար, Ղոզան, Մեշխեդ և այլ շրջանների եկեղեցիները միացվել են Բաքվի և Թուրքեստանի թեմին: 1922-ին ստեղծվել է Բաքվի և Թուրքեստանի թեմական խորհուրդը, իսկ 1926-ին Շամախի քաղաքում կարճ ժամանակով գործել է «Շամախի քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու կրոնական համայնք» ընկերությունը: 1927-ին Լենքորանը կրկին միացվել է Բաքվի և Թուրքեստանի թեմին: 1930-ական թթ. Խորհրդ. Միությունում եկեղեցու դեմ իշխանությունների վերսկսած հալածական քաղաքականության հետևանքով Ադրբեջանում և Միջին Ասիայում նույնպես ավերվել ու քանդվել են հայկ. եկեղեցիները (Բաքվի Ս. Թադեոս և Բարդուղիմեոս, Շամախու Ս. Աստվածածին ևն), աքսորվել և գնդակահարվել մեծ թվով եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ: 1930-ական թթ. սկզբներից Թուրքեստանում փակվել են հայկ. եկեղեցիները: Հայրենական մեծ պատերազմից հետո Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ Զորեքչյանը ձեռնամուխ է եղել Հայ եկեղեցու թեմերի վերակազմավորման և վերաբացման աշխատանքներին: 1945-ին Արցախի ու Գանձակի թեմերը միավորվել են Բաքվի և Թուրքեստանի թեմին, որտեղ գործել են միայն Բաքվի և Գանձակի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները (1945-ից): Թուրքեստանում գործող եկեղեցիներ չլինելու պատճառով կոչվել է Ադրբեջանի թեմ, առաջնորդանիստը մնացել է Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Թեմական խորհրդի հրավերով Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը հովվապետական այցելություններ է կատարել թեմ (1957, 1962, 1969-ին): 1988–90-ին Ադրբեջանի իշխանությունների որդեգրած հայահալած քաղաքականության և շուրջ 300 հզ. հայերի բռնագաղթի պատճառով թեմը դադարել է գործել: 1989-ի դեկտ. հրկիզվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

Թեմի վերջին առաջնորդն էր Անանիա եպս. Արաբաջյանը (1981–89-ի դեկտ.):

Գրկ. Բարխուդարյանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. 2, Թ., 1907: Նույնի, Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թ., 1893: Երիցյանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX-րդ դարում, մաս 2, Թ., 1895: Սմբատյանց Մ., Նկարագիր սբ. Ստեփանոսի վանից Սաղիանի...., Տփխիս, 1896: Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, 2, Տփխիս, 1842, 1858: Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ՊԲՀ, 1989, № 2: Ստեփանյան Գ., Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանի հոգևոր և հասարակական գործունեությունը Բաքվի նահանգում 1918 թ., «Էջմիածին», 1994, № 11–12:

Գևորգ Ստեփանյան

ՇԱՏԻՆ ՎԱՆՔ, Շատիկ անապատ, ՀՀ Վայոց ձորի մարզի Շատին գյուղից մոտ 4 *կմ* արևելք, Եղեգիսի ձախ ափին բարձրացող լեռան լանջին, գագաթից քիչ ցածր: Ըստ Ստեփանոս արք. Օրբելյանի, 929-ին հիմնադրել է Սյունյաց Տեր Հակոբ եպիսկոպոսը՝ «...Սմբատ իշխանի, նրա կին Սոփիայի ու եղբայր Սահակի աջակցությամբ: Այնտեղ կանգնեցնում է եկեղեցի՝ տաշած վեմերով, զարդարում զանազան երանգներով գեղեցիկ նկարներով»: Ըստ պատմիչի՝ վանքը եղել է «խստակրոն, մեծահռչակ մշտնջենավորանոց»: Շատինում պահպանվել են X–XIV դդ. բազմաթիվ խաչքարեր, վիմագիր արձանագրություններ և դրանց բեկորներ: XIV դարից հետո վանքը անկում է ապրել. հավանաբար ավերվել է, որովհետև

ՇԱՐԱԿԱՆ XVII դ. կեսին նույն տեղում փաստորեն նոր վանք են կառուցել: Ներկայիս եկեղեցին՝ երկու զույգ Т-աձև մույթերով, կիսաշրջանաձև խորանի երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներով, երկթեք տանիքով եռանավ բազիլիկը, կառուցվել է սրբատաշ բազալտ քարերով 1655-ին և կոչվել Ս. Սիոն: Մեկենասը նախկին վաճառական Հակոբ Ջուղայեցին է, ում անունով մարմարե խաչքար է ագուցված Ս. Սիոն եկեղեցու արմ.

Շատին վանքի Ս. Սիոն եկեղեցին (1655) հվ-արմ-ից

դռան վերևում: Նա, թողնելով աշխարհիկ կյանքը, դարձել է Շ.վ-ի միաբան՝ իր միջոցները ի նպաստ դնելով կրոն. կենտրոնի ընդարձակման և բարգավաճման գործին:

XVII դ. 2-րդ կեսին վանքի միաբանությունը որոշել է այն վերահաստատել որպես *անապատ*: Բայց չունենալով համապատասխան կանոնադրություն, ըստ XVII դ. պատմիչ Զաքարիա Սարկավագի, դիմել է Հովհաննավանքի եպիսկոպոս Հովհաննեսի օգնությանը, որը մինչ այդ յոթ տարի անցկացրել էր *Լիմ անապատում* և քաջ ծանոթ էր անապատական կյանքի առանձնահատկություններին: Վերափոխումից հետո Շ. վ. կոչվել է Շատիկ անապատ և հետագայում հիշատակվում է այս երկու անուններով:

Վանքի մոտավորապես ուղղանկյուն հատակագծով, հվ-ից երեք կիսաշրջանաձև բուրգերով ուժեղացված պարիսպները, դրանց կից բնակելի սենյակները, սեղանատունը (այժմ՝ քանդված) կառուցել է Մովսես վարդապետը 1655–68-ին, իսկ պարիսպներից դուրս գտնվող գոմը և ախոռը՝ Անտոն վարդապետը՝ 1749-ին: Շ. վ. եղել է ուշ միջնադարի Այունիքի կրոն. և մշակութ. խոշոր կենտրոններից, ունեցել 90 միաբան: Նրա տնտ. հզորության վկայությունն են արտադրական (ձիթհան, ջրաղաց) ու մեծաքանակ օժանդակ շինությունները, ջրանցքը և կամուրջը: Վանքի բարգավաճմանը նպաստել են նրա հարմար աշխարհագր. դիրքը (Նախիջևանը և Այունիքը Սևանի ավազանին կապող ճանապարհի վրա տեղադրված լինելը) և սերտ կապերը Ջուղայի ու Գողթն գավառի հետ: Շ. վ. եղել է նաև նշանավոր գրչության կենտրոն, և այդ գործում մեծ ավանդ ունի *Հակոբ Ջուղայեցին*, որի գրչին է պատկանում ձեռագրերի մի մասը: Շ.վ-ի մշակութ. և տնտ. ծաղկման գործում Հակոբ Ջուղայեցու ունեցած մեծ վաստակի աննախադեպ գնահատականն է դեռ կենդանության օրոք՝ 1661-ին նրա պատվին կանգնեցված խաչքարը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ. 1–3, Վաղ-պատ, 1870: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Հասրաթյան Մ., Այունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973:

Մուրադ Հասրաթյան

ՇԱՐԱԿԱՆ (շար, մեկնվել է նաև եբր. šir – երգ, ասոր. šahrā – հսկում, հսկման *երգ* բառերից, հետագայում նույնացվել հուն. *ἑιρμός* – շարք-ին), պաշտոնապես ընդունված և եկեղեցական *Տոնացույցի* որևէ օրվա համապատասխան ժամին կատարվող հոգևոր *երգ* կամ հոգևոր երգերի ամբողջական շարք (հոմանիշներն են՝ *կանոն*, կարգ, սարք), նաև՝ այդ երգաշարքերը բովանդակող ժողովածու՝ *Շարակնոց*: Առաջին գրավոր հիշատակությունն առկա է IX–X դդ. երկաթագիր հնագույն *Մաշտոցներում*:

Հոգևոր երգը որպես ինքնուրույն, սաղմոսներից և մարգարեական օրհնություններից տարբեր երաժշտաբանաստեղծ. ձև հիշատակված է Պողոս առաքյալի թղթերում: V դ. առաջին նորաստեղծ ինքնուրույն հոգևոր երգերը՝ Շ-ները, հայոց մեջ կոչվել են կցուրդ կամ կցորդ: Կցուրդները փոքրածավալ, 3–4 տնից բաղկացած, պարզագույն սաղմոսատիպ երգեր էին, որոնք, լինելով Աստվածաշնչի տարբեր դրվագների և Քրիստոսի տնօրինությունների մատչելի վերաշարադրումը կամ մեկնությունը, հարասացությունների ձևով կցվել են *սաղմոսին* կամ մարգարեական օրհնությանը: Կցուրդները ծավալվում են *ութձայնի* եղանակներում՝ հետևելով նրա «խիստ ոճի» օրենքներին: Այդ տեսակի ընդերքում (*սաղմոսերգությանը* զուգընթաց) մշակվել են

Հայ եկեղեցու երգեցողության հիմն. տիպերը՝ հորդոր, չափավոր-միջակ և ծանր երգերը, որոնց մեջ տեմպը (շարժումը) պայմանավորել է նաև գրական խոսքի հնչյունավորման կերպը: Երգեցողության այդ տիպերի մշակումը կապված էր պաշտոնագրության մեջ նրանց գրաված տեղով, ծիսական կիրառությամբ: Հասարակ օրերի ժամերգության համար նախատեսված Շ-ներն ունեն պարզ նկարագիր, կատարվում են դպրաց դասերի կողմից՝ խմբակային: Կիրակի օրերին և եկեղեց. խոշոր տոների ժամանակ կատարվող Շ-ները օրվա հանդիսավորությունն ընդգծելու նպատակով ստանում են ավելի մեծ ծավալ, մելիզմատիկ (երգային-զարդոլորուն) տեսք և հնչյունավորվում մենակատար հմուտ երգեցողների կողմից: Հնագույն շրջանի կցուրդներում որոշակիորեն կազմավորվել են հայ շարականերգության հատուկ կերպարային արտահայտչականության հիմն. ոլորտները, աստվածաշնչային նյութի բանաստեղծ. մշակման հնարները: Ճգնավորության, ապաշխարանքի, մարդու մեղավորության գաղափարը և Վերջին դատաստանի սպասումը արտահայտող Շ-ների կողքին քիչ չեն պատմող. և մեկնող. բովանդակությամբ, ինչպես և փառաբանական օրհներգային բնույթի երգեր, որոնք արտահայտում են լուսավոր, բերկրալից, քնարական զգացումներ: Հնագույն կցուրդները տաղաչափության առումով հիմնականում ազատ էին: Դրանց ստեղծումն ավանդաբար վերագրվում է *Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Ա Պարթևին, Մովսես Խորենացուն* և *Հովհաննես Ա Մանդակունուն*: Տվյալ շրջանի Շ-ների բանաստեղծ. ոճի բնորոշ նմուշներից են ապաշխարության բազմաթիվ հարցերը, որոնք, լինելով հնոցի մեջ նետված 3 մանուկների աղոթքի կցուրդներ, գրեթե ամբողջապես կազմված են Հին կտակարանից քաղված բառային բանաձևերից: Նմանապես, Ապաշխարության Տեր երկնիցներում, 148-րդ սաղմոսի կցուրդներում շարականագիրը գրեթե չի շեղվում տվյալ սաղմոսը կազմող գաղափարներից ու բանաձևերից:

VII–VIII դդ. հայ շարականերգությունը նկատելի զարգացում է ապրել: Հանդես են եկել նոր շարականագիր հեղինակներ՝ *Կոմիտաս Ա Աղցեցի, Անանիա Շիրակացի, Սահակ Գ Ձորոփորեցի, Բարսեղ Ճոն, Հովհաննես Գ Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի* և ուրիշներ: Բյուզ. «կոնտակիոն» ձևի ազդեցությամբ առաջացել է Շ-ի ավելի ընդարձակ մի ձև՝ կացուրդը: Տվյալ ժամանակաշրջանի չափամուշային կոթող է Հայոց կաթողիկոս Կոմիտաս Ա Աղցեցու *Հռիփսիմյանց կույսերի* հիշատակին նվիրված «Անձինք նուիրեալք» Շ.: Ի տարբերություն հնագույն կցուրդների, այն վիպաքնարական բնույթի, լայնածավալ ներբող է (36 քառատող տուն)՝ ընդգծված պատկերավոր ու դրամատիկ տարրերով: Բյուզ. նմուշների օրինակով գրված է զուտ շեշտական տաղաչափությամբ և այբբենական ակրոստիքոսի սկզբունքով: Այդ երաժշտաբանաստեղծ. տեսակը մեծ տարածում է գտել հետագա դարերում: Այնուհետ այբբենական ծայրակապով գրված Շ-ները ստացել են նաև «Անձինք» անվանումը: VII–VIII դդ. հեղինակների Շ-ներում անցում է կատարվել նախորդ շրջանի խստաշունչ սաղմոսատիպ կցուրդներից դեպի ծավալուն, ծորերգային ոճի երգերը, որոնք բնորոշվում են երաժշտ. ռիթմի ձերբազատմամբ, հանկարծաբանական (իմպրովիզացիոն) զարգացումով, մեղեդային մանրամասների նրբակերտությամբ և գեղ. ընդհանրացման ավելի բարձր աստիճանով: Այդ առումով ցայտուն օրինակ են Սահակ Գ Ձորոփորեցու, Անանիա Շիրակացու, Բարսեղ Ճոնի ծանր տիպի Շ-ները, նաև *Խոսրովիդուխտի* նշանավոր ողբը կամ գովքը՝ ճոնված իր նահատակ եղբոր՝ *Վահան Գողթնացու* հիշատակին:

Շ-ի զարգացման նոր փուլը նշանավորվել է Ստեփանոս Սյունեցուն (VIII դ.) վերագրվող Հարության Ավագ օրհնությունների 8 շարքերի՝ կանոնների ստեղծմամբ: Կանոնի ձևավորման համար հիմք են հանդիսացել Հին կտակարանի 10 մարգարեական օրհնությունները: Ներկայացնելով որոշակի հաջորդականությամբ և տրամադրությամբ հորինված երգերի շարք՝ կանոնը, որպես ցիկլային ստեղծագործության տեսակ, նոր հնարավորություններ է ընձեռել շարականագիրներին, նոր որակ և աստիճան ստեղծել հոգևոր երգարվեստում: Սկզբնապես կանոնները կազմվել են ժամասացության մեջ կիրառվող կցուրդներից և կացուրդներից, սակայն աստիճանաբար ստեղծվել են հատուկ նոր կանոններ: Կանոնի ներմուծումը սերտորեն առնչվել է ուղղափառ համակարգի կիրառության հետ: Հնագույն օրհներգերում գերակշռող դիալեկտիկ հակադրումների համակարգը փոխարինվել է զուգորդական կապերի համակարգով, որն ուղղված է կանոնի 8 մասերի (Օրհնություն, Հարց, Մեծացուսցէ, Ողորմեա, Տեր երկնից, Մանկունք, Ճաշու, Համբարձի) շրջա-

նակներում իրադարձությունների ներքին հարազատության բացահայտմանը և սրբազան պատմությունն իբրև ինքնամփոփ, անփոփոխ ամբողջություն ներկայացնելուն: Կանոնի երգերում առավել ցայտուն են դրսևորվում տվյալ տոնի իմաստային-կերպարային հիմքի հետ կապված քնարական ոլորտի հարուստ երանգները: Յուրաքանչյուր մաս սովորաբար կազմված է 3 տնից, որոնցից առաջինը համապատասխան նմուշօրինակի բովանդակության շարադրանքն է՝ քրիստոսաբանական տարրերով, երկրորդը ներկայացնում է Քրիստոսի Խաչելության և Հարության տեսիլքը, իսկ երրորդը նվիրված է Աստվածածնին:

IX–XI դդ. ընդլայնվել և համալրվել են Շարակնոցում ընդգրկված եկեղեց. տարվա մի քանի կարևոր շրջաններին վերաբերող խոշոր շարքերը՝ Պահքի, Հարության, Հոգեգալստյան, ինչպես նաև՝ Խաչի, Համորեն մարտիրոսաց, Ննջեցելոց և այլ կանոնները: Այս շրջանում ակնառու ներդրում են ունեցել *Պետրոս Ա Գետադարձը, Հովհաննես Սարկավագը, Սարգիս Ա Սևանցին*, Ստեփանոս Ապարանցին, *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին* և ուրիշներ: Զարգացնելով V–VIII դդ. շարականերգության լավագույն ձեռքբերումները՝ նրանք ընդլայնել են Շ-ի ավանդ. թեմաների շրջանակը: Նրանց գործերում առանձնակի հնչեղություն է ստացել հայրենասիր. թեման՝ կապված ժամանակի իրողությունների հետ: Շ-ներում արտացոլվել են ոչ միայն համաքրիստ. գաղափարներն ու զգացումները, այլև՝ հայ ժողովրդի պատմության, հաս. կյանքի կարևորագույն երևույթները՝ հեթանոսության դեմ պայքարի և առաջին քրիստոնյա նահատակների շրջանը, քրիստոնեության հաստատման և ազգ. նոր մշակույթի ջատագովությունը, համաժող. դիմադրությունը պարսից մազդեականության ու արաբ. տիրապետությանը ևն: Կանոնական արվեստի պայմաններում հայ շարականագիրները կարողացել են հագեցնել իրենց երկերը իրապես կենսական հնչեղությամբ, կրոն. և բանաստեղծ. խոր ապրումներով:

Շ. աննախադեպ վերելք է ապրել X–XIV դդ.: Նոր երաժշտաբանաստեղծ. տեսակների ծնունդը (*գանձ, տաղ*) իր ազդեցությունն է թողել կանոնի բաղադրիչների վրա՝ նկատելիորեն հարստացնելով նրանց կերպարաելևէջային նկարագիրը: Կարևոր գլուխ են կազմում Կիլիկիայի Հայկ. թագավորության շրջանի շարականագիրների ստեղծագործությունները: Հատկապես նշանակալից դեր է կատարել *Ներսես Շնորհալին*, որի գրչին է պատկանում Շարակնոցի երգերի առնվազն 1/3-ը: Ներսես Շնորհալին բարձրագույն մակարդակի է հասցրել Ստեփանոս Սյունեցուց սկիզբ առած զուգորդական բանաստեղծ. ոճը, որն իր հետևորդների մոտ երբեմն կրում է նույնիսկ յուրահատուկ պաճուճազարդության տարրեր: Զհրաժարվելով «հին» օրհներգերի «արձակ բանաստեղծությունից»՝ Ներսես Շնորհալին միաժամանակ հարստացրել է Շ. վանական և վանական-շեշտական տաղաչափության զանազան նմուշներով: Նա նաև հարստացրել է ավանդ. ութձայնը բազմաթիվ զարտուղի, դարձվածքանման և ստեղիատիպ եղանակներով, որոնք հաճախ օժտված են հեղինակային անհատականության գծերով: Մի շարք *Տերունի տոներին* նվիրված կանոնները լրացնելուց բացի նա ներմուծել է տարբեր սրբերի և ազգ. հերոսների նվիրված նոր՝ «մանկունք» տիպի մեկական երգեր: Դրանցից են *Տրդատ Գ* թագավորին, Սահակ Ա Պարթևին, *Հովհան Ոսկեբերանին, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Նազիանզացուն, Վարդանանց* նվիրված Շ-ները: Այդ ավանդույթը սկիզբ է առել Խոսրովիդուխտի՝ Վահան Գողթնացու նահատակությունը օրհներգող գովքով և զարգացվել Պետրոս Ա Գետադարձի կողմից՝ *Սանդուխտ* կույսի, *Դավիթ Դվնեցու, Սուքիասյանց, Ոսկյանց*, Վարդանանց և այլ նահատակների սիրագործությունը գովերգող մանկունքներով:

XII–XIII դդ. հանդես են եկել մի շարք խոշոր շարականագիրներ: Բուն Հայաստանում գործած հեղինակներից առավել նշանավոր են *Հովհաննես Երզնկացին* (Պլուզ), *Խաչատուր Տարոնացին, Վարդան Արևելցին*, իսկ կիլիկյան հեղինակներից՝ *Գրիգոր Գ Պահլավունին, Հակոբ Ա Կլայեցին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Սկևռացին* և ուրիշներ: Հատկապես նշելի են Հովհաննես Երզնկացու՝ Գրիգոր Լուսավորչին և Ներսես Ա Մեծին նվիրված Շ-ները, Խաչատուր Տարոնացու՝ քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» տաղատիպ Շ., Հակոբ Կլայեցու՝ Աստվածածնի ծննդյան և Վարդան Արևելցու՝ սրբոց թարգմանչաց կանոնները: Ժամանակագր. առումով առավել ուշ ապրած հեղինակի Շ-ով է ամփոփվում մեզ հասած կանոնական Շարակնոցը: Դա XIV–XV դդ. հեղինակ Կիրակոս Երզնկացու՝

Աստվածածնի ննջմանը նվիրված «Արևելք դեբարփի» այբբենական ակրոստիքոսով գրված Շ. է: Նույն ժամանակներում Շ-ի զարգացման դադարը պայմանավորվել է արտաքին ու ներքին պատճառներով: Արտաքին պատճառներից են ուշ միջնադարին բնորոշ ընդհանուր քաղ-տնտ. ճգնաժամը և մշակույթի աստիճան. անկումը: Բացի այդ գործածության մեջ գտնվող Շ-ների աճն արդեն չէր համապատասխանում ժամակարգության պահանջներին. այն փակվել է՝ Շարակնոցի վերջնական խմբագրությունից դուրս թողնելով բազմաթիվ պարականոն (անվավեր) Շ-ներ: Ներքին պատճառը պայմանավորված էր միջնադարյան սքոլաստիկ գեղագիտ. աշխարհայացքի նահանջով. Վերածնության գաղափարների ազդեցությունը շարակներգությունը վերածում էր նրբին, անհատականացված երաժշտաբանաստեղծ. արվեստի: Զարգացման այս միտումն աննկատելիորեն խաթարել է քարոզի ընկալումը և աստիճանաբար բերել փակուղու՝ սպառելով Շ-ի, իբրև արվեստի կենդանի ձևի, հնարավորությունները: Այդուհանդերձ, Շ. մնում է միջնադարյան հայ հոգևոր մշակույթի հարուստ բնագավառներից մեկը, որի բազմակողմանի ուսումնասիրությունը XIX դ. սկզբից առ այսօր կարևորվում է ինչպես հայ հոգևոր երաժշտության, այնպես էլ՝ արևելաքրիստ. մյուս եկեղեցիների երաժշտության հետ ունեցած տարբեր առնչությունների հետազոտման տեսանկյունից:

Գրկ. Ավետիքյան Գ., Բացատրութիւն շարականաց, Վնտ., 1814: Ջայնագրեալ շարական հոգեւոր երգոց, Վաղ-պատ, 1875: Ամատունի Ս., Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղ-պատ, 1911: Աբեղյան Մ., Երկ., հ.3, Ե., 1968, էջ 526–563: Տնտեսյան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցվո, 2 տպագր., Ստամբուլ, 1933: Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Ե., 1973: Նույնի, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5–15-րդ դարերում, Ե., 1985: Հակոբյան Գ., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Ե., 1980: Աբգարյան Ա., Հիմներգության ժանրը (Հայ միջնադարյան գրականության ժանրերը), Ե., 1984: Հակոբյան Լ., Շարակնոցի երգերի եղանակները և նրանց ստորաբաժանումները, «Էջմիածին», 1992, № 4: Արեվշատյան Ա., Մովսես Խորենացու հիմներգությունը, «Բազմավեպ», 1992, № 1–4: Նույնի, Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավեպ», 1995, № 1–4: Գյոսեյան Հ., Հայ եկեղեցու աստվածաբանությունը շարականներում և տաղերում, տես հեղինակի «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության», Ս. Էջմիածին, 1995: Շարակնոց, հ. 1, Ե., 1997: *Шаракан. Богослужебные каноны и песни армянской восточной церкви, 2-е изд., М., 1914; Шаракан. Из армянской поэзии V–XV вв., Е., 1980;* Ter-Mikaëlian N., Das armenische Hymnarium, Lpz., 1905; Conybeare Fr. C., The Hymnal of the Armenian Church, “The Journal of Theological Studies”, 7, 1906; Hakobyan L., The Versification of Šarakan – hymns, “Revue des études arméniennes”, t. 24, 1993.

Աննա Արևշատյան
Լևոն Հակոբյան

ՇԱՐԱԿՆՈՑ, հայ միջնադարյան երաժշտական մատյան, *շարականների* ժողովածու: Ենթադրվում է, որ ձևավորվել է VII–VIII դդ.: Հայկ. մատենագր. աղբյուրներում հանդիպում է նաև Կցորդարան անվանումը, որն արտացոլում է Շ-ի կազմավորման հնագույն փուլը: Հոգևոր ինքնուրույն երգերի կարգավորման առաջին փորձը կատարել է Շիրակի Դպրեվանքի առաջնորդ *Բարսեղ Ճոնը* (VII դ.)՝ կազմելով «Ճոնընտիր» ժողովածուն, որը հիմք է ծառայել ապագա Շ-ի համար: Շ-ի ձևավորման գործում մեծ դեր է ունեցել *Ստեփանոս Սյունեցին* (VIII դ.): Նա շարքերի (տես *Կանոն*) մեջ է միավորել և դասակարգել ըստ *ութձայն* համակարգի արդեն գոյություն ունեցող բազմաթիվ ինքնուրույն հոգևոր երգերը (կցուրդներն ու կացուրդները), ինչպես նաև համալրել է Շ. իր հեղինակած երգերով, այդ թվում՝ Ավագ օրհնություններով: Շ-ի հետագա բարեկարգման գործում մեծ դեր է խաղացել *Ներսես Շնորհալին* (XII դ.), ում պատկանում է մեզ հասած Շ-ի երգերի առնվազն մեկ երրորդը: Նա լրացրել է ժողովածուի թերի կանոնները, հնացած շարականները փոխարինել նորերով, հարստացրել Շ. մի շարք սրբերի տոներով և նրանց ձոնել հատուկ երգեր: Ձեռագր. ազգային հավաքածուներում պահվում են բազմաթիվ խազագրված Շ-ներ, որոնցից երիցագույնն են մինչշնորհալիական խմբագրությունը ներկայացնող Զմմառի վանքի № 64 (1187) և Երևանի Մատենադարանի № 9838 (1193) ձեռագրերը: Շ-ի հետշնորհալիական խմբագրություններից հատկապես նշելի է Կիլիկյան Հայաստանի Սկևռայի դպրոցի ներկայացուցիչ *Գրիգոր Խուլ* երաժշտապետի իրագործածը (XIII դ. 1-ին քառորդ), որն ընդհուպ մինչև XVII–XVIII դդ. ձեռագրական տարբեր աղբյուրներում գնահատվում է որպես ընտիր և օրինակելի: Շ-ում երգերը դասավորված են ըստ եկեղեց. տոնակարգի կամ ըստ ձայնեղանակների («Ձայնքաղ

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ Շարական»): Առաջին անգամ Շ. տպագրվել է 1664–65-ին, Ամստերդամում՝ *Ոսկան Երևանցու* ջանքերով, այնուհետև հրատարակվել է նոր հայկ. նոտագրությամբ՝ 1875-ին՝ Վաղարշապատում (աշխատասիր. Ն. Թաշճյանի), 1934-ին՝ Կ.Պոլսում (աշխատասիր. Ե. Տնտեսյանի), 1954–76-ին՝ Վենետիկում (աշխատասիր. Ղ. Տայյանի):

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.5, 1-ին պատկերը:

Գրկ. Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990, էջ 27–40: Շարակնոց, հ. 1, Ե., 1997:

Աննա Արևշատյան

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ, Բագրատունիների թագավորանիստ ու արքունի կալվածք Երազգավորսում, Անիից հյուսիս-արևելք, Ախուրյանի աջ ափին (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Ըստ պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցու, կառուցել է Սմբատ Ա Բագրատունին (890–914)՝ օծմանը եկեղեցին զարդարելով ոսկեհյուս հանդերձանքով ու շղարշե ծածկույթով, պատարագամատույց սեղանին համակ ոսկուց պատրաստած ականակուռ կամար դնելով:

Շիրակավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցին (890–914) հվ-արլ-ից

Շ. Ս. Ա. ե. ունի երկու զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք և ներդաշնակ զուգակցում է վաղ միջնադարի հայկ. ճարտ-յան ու ոճական նոր ուղղության ձևերը: Եկեղեցին տուժել է 1064-ի սելջուկյան արշավանքից և վերանորոգվել XI դ. վերջին՝ Գնել իշխանի ու Անիի Բարսեղ եպիսկոպոսի (հետագայում՝ Հայոց կաթողիկոս Բարսեղ Ա Անեցի) կողմից: Ըստ եկեղեցու պատերին փորագրված 1228-ի և 1231-ի արձանագրությունների՝ իշխան Իվանե Զաքարյանը և նրա եղբորորդի Շահնշահն ազատել են Շիրակավանը հարկերից: Շ. Ս. Ա. ե. միջնադարում վերածվել է ամրոցի. շարվածքով փակվել են որոշ լուսամուտներ և արլ. ճակատի խորշերը, անկյուններում բարձրացվել են պատերը, և տանիքը վերածվել է հարթակի, դրսից վեր տանող քարե աստիճաններ են կառուցվել:

Եկեղեցու գմբեթը XIX դ. սկզբին, ռուս-թուրք. պատերազմի ժամանակ, հրետակոծությունները ավերվել է: XIX դ. վերջին Ավագ խորանում դրվել է սրբապատկերներով զարդարված չքեղ խաչկալ: 1950-ական թթ. Շ. Ս. Ա. ե. պայթեցվել է:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 1, Ե., 1942: Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

Մուրադ Հասրաթյան

ՇԻՐԱԿԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու: Վերակազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի՝ 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Գյումրու Ս. Աստվածածին Յոթ վերք եկեղեցի: Ընդգրկում է ՀՀ Շիրակի մարզը: Մինչ այդ, 1988-ին Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Շիրակի տարածաշրջանում ստեղծվել էր Շ.Թ.: Առաջնորդն էր Գրիգորիս արք. Բունիաթյանը (1988–97):

Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառը IV դարից հիշատակվում է որպես Հայոց նշանավոր եպիսկոպոսանիստ: *Գրիգոր Ա Լուսավորչի* հունարեն վարքում անվանապես հիշվում են նրա ձեռնադրած 12 եպիսկոպոսներ, այդ թվում՝ Շիրակի Արսուկես անունով եպիսկոպոսը: Վաղ միջնադարյան սկզբնաղբյուրներում Շիրակի եպիսկոպոսությունը չի հիշատակվում, քանի որ եպիսկոպոս. որոշ աթոռներ գործել են հայտնի նախարար. տներին զուգահեռ (նրանց տիրույթում) և կոչվել այդ տների անուններով: Շիրակը III–VIII դդ. եղել է Կամսարականների նախարար. տոհմի տիրույթը և գտնվել Կամսարական տան եպիսկոպոսի վերակացության ներքո: Կամսարական եպիսկոպոսները եկեղեց. ժողովների մասնակիցների ցուցակներում նշվել են նաև որպես Արշարունիքի եպիսկոպոսներ: IX դարից Շիրակի տեր է դարձել Բագրատունիների նախարար. տունը, որը նույնպես ուներ եպիսկոպոս. աթոռ: X դ. կեսից մինչև XI դ. կեսը Շիրակում (Ար-

գինա, Անի) է գտնվել Հայոց կաթողիկոս. աթոռը (տես *Անիի կաթողիկոսարան, Արգինայի կաթողիկոսարան*): 1046-ին Բյուզանդիան կազմալուծել է Անիի կաթողիկոս. աթոռը, 1072-ին *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսը Անի քաղաքի և Շիրակ գավառի արքեպիսկոպոս է ձեռնադրել Բարսեղին: Այդ ձեռնադրությամբ հիմնվել է Անիի և Շիրակի եպիսկոպոսությունը՝ որպես Հայ եկեղեցու առանձին վարչատարածքային միավոր: Անիի վերջին եպիսկոպոսը հիշվում է XV դ., որից հետո Շիրակը դարձել է Կարսի եպիսկոպոսության վիճակներից մեկը: Ռուս. կայսրության հաստատած «*Պոլոժենիե*»-ով (1836) Շիրակի փոխանորդությունը Հայ եկեղեցու Երևանի թեմի կազմում ստեղծված չորս վիճակներից մեկն էր (ղեկավարում էր առաջնորդական փոխանորդը):

Թեմի տարածքում են գտնվում Լեռնակերտի (IV դ.), Սարալանջի (V դ.) եկեղեցիները, *Ներսիսյանի Ս. Կարապետ վկայարանը* (V դ.), Պեմզաշենի եռաեկեղեցի համալիրը (V–VII դդ.), Նոր կյանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ (VI դ.), Սարակապի Ս. Աստվածածին (VI դ.), Մայիսյանի Ս. Աստվածածին (VII դ.), Աղինի Ս. Հակոբ (XIX դ.) եկեղեցիները, Արփիի, Բաշդյուղի, Ջորագյուղի եկեղեցիները, Գոգահովտի Ս. Աստվածածին, Թորոսգյուղի Ս. Աստվածածին, Լեռնագյուղի Ս. Հովհաննես եկեղեցիները (բոլորն էլ՝ XIX դ.), Բենյամինի, Արևիկի եկեղեցիները (երկուսն էլ՝ XX դ.), Հայրենյացի Կարմիր վանքը (V–VI դդ.), *Հառիճավանքը* (VII–XIII դդ.), *Մարմաշենի վանքը* (X–XI դդ.), Սառնաղբյուրի Հոգեվանքը (XII դ.) ևն: 1988-ի դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժից հետո բազմաթիվ եկեղեցիներ ավերվել են: Թեմի գործող եկեղեցիներն են Գյումրու Ս. Աստվածածին Յոթ վերք եկեղեցին, Ս. Հռիփսիմե մատուռը, Հառիճավանքը, Ազատանի Ս. Ստեփանոսը և Սառնաղբյուրի Ս. Թադեոսը:

Շ. թ-ում գործում է Ընծայարան, որի սաներն ավարտելուց հետո ուսումը շարունակում են Ս. Էջմիածնի *Գևորգյան ճեմարանում*:

Շ. թ-ի առաջնորդական տեղապահն է Միքայել եպս. Աջապահյանը (1999-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.5, 2-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.10:

Գրկ. Մաթևոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, № 2–3:

Կարեն Մաթևոսյան

ՇԻՐԱԿԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ, տես *Դպրեվանք*:

ՇՆՀԵՐԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ, ՀՀ Սյունիքի մարզի Շինուհայր գյուղի հին գյուղատեղիի հարավային ծայրին: Հիմնվել է XVII դ.: Հայ ճանապարհորդ, վաճառական Զաքարիա Ագուլեցու 1669-ի այցելության ժամանակ անապատն ուներ 60 միանձնուհի: Ըստ չին. արձանագրության, անապատի Ս. Աստվածածին՝ մեկ զույգ խաչաձև մույթերով, կիսաշրջանաձև խորանի երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներով երկթեք ծածկով եռանավ բազիլիկը կառուցել է ագուլիսցի մահտեսի Ազարիան 1676-ին՝ վասպուրականցի ճարտ. Ուստա Մուրադի ձեռքով: Հվ. կողմում կանգուն երկու թաղակիր կամարներով սեղանատունը կառուցել են ցղնեցի Հովհաննեսը և նրա որդի Աստվածատուրը՝ 1720-ին: Անապատը XVII դ. վերջին դարձել է գրչության կենտրոն, իսկ միանձնուհիների թիվն անցել է 100-ից: Այստեղ 1694-ին գրված Ավետարանի հիշատակարանում նշվում է, որ այն գրչագրել է Հռիփսիմե կրոնավորը Շ. Կ. ա-ում, որտեղ կար 120 միանձնուհի: Սակայն XVIII դ. մենաստանը անմխիթար վիճակում էր, Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսի 1735-ի այցելության ժամանակ կար ընդամենը 20 միանձնուհի, իսկ չինությունները կիսավեր էին: XIX դ. վերջին անապատի համալիրի հսում կառուցվել է դեպի ընդհանուր պատշգամբ բացվող դասասենյակներով եկեղեցական-ծխական դպրոց:

Գրկ. Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Ե., 1938: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1893: Լալայան Ե., Զանգեզուր, ԱՀ, գիրք 4, Թ., 1898: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Հասրաթյան Մ., Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973:

Մուրադ Հասրաթյան

ՇՆՈՐՀ, շնորհք, Աստվածային բնության էական հատկություն: *Գրիգոր Տաթևացին* Շ. բնորոշում է այսպես. «Յուրաքանչյուր շնորհ բխում է և ճառագայթ՝ անեղ Լույսից իջած բոլոր իմանալի և զգալի էակների վրա, և զարդարում է նրանց ըստ այդ պարգևած շնորհի նմանության՝ թե՛ ըստ բնության, և թե՛ անհատապես՝ հրեշտակներին և մարդկանց: Շնորհն ըստ իր էության անեղ է՝ առաջ եկած անեղ էից, և նախախնամաբար հաղորդվում է եղական [էակներին] և իր էությունը չի փոխում» (Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», 1729, էջ 140):

ՇՈՂԱԳԱՎԱՆՔ Շ., որպես *Աստծո* ա-նեղ էության ճառագայ-թում (էմանացիա), ա-նեղ է իր էությամբ: Շ. բխում է մեկ Աստծուց, ուստի իր էությամբ մեկ է, սակայն արարածնե-րի վրա ներգործում ու դրսևորվում է զանա-զան որակներով (Ա Կորնթ. **12.**4, 7–11): Արար-չից դեպի արարչություն ուղղորդված Շ. արար-չության մեջ հաստատում է առ Աստված ուղ-ղորդված կարգավորություն: Արարչության՝ Ա-րարչի էությանը հաղորդ դառնալը շնորհական է. Շ-ով է, որ Աստված արարածներին մոտեց-նում է իրեն՝ բարձրացնելով կատարելության ավելի բարձր աստիճանների, այսինքն՝ արարա-ծի աստվածացումը տեղի է ունենում Շ-ի մի-ջոցով: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ Շ. իր էու-թյամբ անչափելի է, սակայն դառնում է չափե-լի ըստ Աստծո կամքի և Շ. ընդունողի կարո-ղության: Շ. իր էությամբ պարզ է, սակայն բա-ղադրյալ է ըստ ներգործության: Շ. իր էու-թյամբ անփոփոխելի է, սակայն փոփոխելի է ըստ ներգործության ևն:

Շ-ի կարևորագույն դրսևորումներից է նրա՝ փրկագործող զորություն լինելու հանգամանքը, որը դրսևորվեց մարդու մեղանչումից հե-տո: Շ-ով է, որ Աստված վերականգնում է ըն-կած մարդկային բնությունը, լրացնում մարդու հոգու և մարմնի կենսական զորությունների պակասը և հետզհետե ավելացնում դրանք՝ ուղ-ղելով դեպի *առաքինության* գործերի կատա-րումը: Շ-ով է Աստված մարդուն արդարացնում ու սրբացնում: Շ-ով է տրվում *հավատը*, և Շ-ով է տեղի ունենում հոգևոր առաջընթացը:

Ի տարբերություն այլ կրոնների, քրիստ. վարդապետության մեջ փրկագործության կարևորագույն հանգամանքը Շ. է, այսինքն՝ փրկությունը շնորհական է: Փրկության Շ. կա և գործում է անկախ մարդու կամքից. մարդու խնդիրն է սեփական ազատ կամքով թույլ տալ, որ այն ներգործի իր մեջ, և կամքի այդ հոժա-րությունը նույնպես հետևանք է Աստծո Շ-ի ներգործության: Փրկության շնորհական լինե-լը վկայում են Սուրբ Գրքի այն հատվածները, որտեղ փրկությունը համեմատվում է վերստին ծննդյան (Հովհ. **3.**3–7), նոր արարչագործու-թյան հետ (Բ Կորնթ. **5.**17, Եփես. **2.**10), կամ՝ երբ այն կոչվում է կենդանացում և հարություն (Եփես. **2.**5, Կող. **2.**13, **3.**1): Ինչը որ քրիստոն-յան ունի, ունի ոչ թե ինքնին, այլ ստացել է Աստծուց՝ որպես Շ. (Ա Կորնթ. **4.**7), և նրա բոլոր աստվածահաճո գործերը գործվում են Շ-ով (Ա Կորնթ. **15.**10): Այնուհանդերձ ուղիղ վարդապետությունը չի հերքում մարդու ա-զատ, կամավոր և գործուն մասնակցությունը սեփական փրկության գործին, այլ ընդհակա-ռակը՝ հաստատում է այդ: Դրա վկայությունն են ապաշխարության, հավատքի, արթնության, ճգնության մեջ մնալու և առաքինության գոր-ծեր գործելու սուրբգրային բազմաթիվ հորդոր-ները (Մատթ. **7.**13, 14, **24.**42, Մարկ. **1.**15, **5.**36, **13.**35, Հովհ. **6.**29, **10.**38, **12.**36, **14.**1, 11, Գործք **2.**38, **14.**22, **16.**31, Ա Կորնթ. **9.**24–27, **16.**13, Թեսաղ. **3**, Բ Տիմոթ. **2.**5, **4.**7, Եբր. **3.**7, Ա Պետր. **6.**8, Հայտն. **3.**20, **16.**15, ևն): Այսպիսով, փրկա-գործության համար անհրաժեշտ են թե՛ Աստծո Շ., թե՛ մարդու ազատ կամքը և ճիգերը, թեև առաջնային նշանակություն ունի Շ. «Աստծու շնորհով եմ, ինչ որ եմ..., ոչ թե ես, այլ Աստ-ծու շնորհը, որ ինձ հետ էր» (Ա Կորնթ. **15.**10):

Բացի վերոհիշյալ նշանակություններից, Շ. եզրը Սուրբ Գրքում գործածվում է նաև որ-պես Շ. ընդհանրապես, պարզև իմաստով՝ «զամենայն շնորհ» (Բ Կորնթ. **9.**8): Նշանա-կում է նաև Աստծո կողմից տրված երկրավոր բարիքներ (Ա Պետր. **4.**10), նաև՝ զանազան պարգևներ ու կարողություններ, որոնք տրվում են հավատացյալներին ընդհանուր շա-հի համար (Հռոմ. **1.**5, **12.**3, 6, **15.**15, Ա Կորնթ. **3.**10, Գաղ. **2.**9, Եփես. **3.**2, 7), նաև՝ հոգևոր կամ նյութական բարեգործություն, օրինակ՝ հոգևոր խրատ (Եփես. **4.**29) կա՛մ ողորմու-թյուն աղքատ քրիստոնյաներին (Ա Կորնթ. **16.**3, Բ Կորնթ. **8.**1, 4, 6, 10, **9.**8, 14), կա՛մ առաքինության գործին համապատասխան հո-գևոր դիրքորոշում (Բ Կորնթ. **7**):

Գրկ. Գրիգոր Տաթեվացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Նույնի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմերան հատոր, ԿՊ, 1740: Նույնի, Գիրք քարոզու-թեան, որ կոչի Ամարան հատոր, ԿՊ, 1741:

Արա Նալչաջյան

ՇՈՂԱԳԱՎԱՆՔ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջորագյուղ գյուղում: Ըստ Ստեփանոս արք. Օրբելյանի, վանքը, բազմամարդ միաբանու-թյամբ, հիմնել է Գեղարքունիքի իշխանուհի Մարիամը (Հայոց իշխան Աշոտ Բագրատունու դուստրը): Վաղամեռիկ ամուսնու՝ իշխան Վա-սակ Գաբուռի հիշատակին 877–886-ին կառու-ցելով Ս. Պետրոս եկեղեցին (արձանագրության մեջ՝ Ս.Պողոս)՝ վանքին որպես կալվածք նվիրել է հարկերից ազատված Շողագա և Գներ գյու-ղերը: Եկեղեցին ունի հայկ. ճարտ-յան Այունի-քի դպրոցի IX–X դդ. մշակած՝ կենտրոնա-

գմբեթ, ներսից խաչաձև (եռախորան, արմ. ուղղանկյուն թևով), չորս անկյուններում ավանդատներով հորինվածք: Պահպանվել է հս. պատը, վրան՝ մեկ տողով շենքի պարագծով ձգվող չին. արձանագրության մի հատվածը: Վանքի հս-արմ-ում գտնվում են թաղածածկ, արտաքուստ հնգանիստ խորանով եկեղեցու (V–VI դդ.) ավերակները, շուրջը՝ տապանաքարեր: 910-ի արաբների արշավանքի պատճառով Արցախում ապաստանած և այնտեղ մահացած Մարիամ իշխանուհու դին որդիները բերել և թաղել են Շ-ում: Հետագայում Շ-ում կառուցվել են Շողակաթ, Ծիրանավոր, Ս.Աթանագինես եկեղեցիները (չեն պահպանվել): Շ. գործել է մինչև ուշ միջնադար, XVII դ. վանքում Հայրապետ գրիչը ընդօրինակել է ձեռագրեր:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Մնացականյան Ստ., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 4, Ե., 1973:

Մուրադ Հասրաթյան
Արփինե Ղազարոսյան

«ՇՈՂԱԿԱԹ», եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդես: Կ. Պոլսի Հայոց պատրիարքության պաշտոնական հրատարակություն: Լույս է տեսնում 1952-ից, Ստամբուլում, անկանոն պարբերականությամբ (1977–1990-ին ընդհատվել է): Խմբագիրներ՝ Գ. պատրիարք *Խաչատուրյան* (հիմնադիր), Շ. պատրիարք *Գալուստյան*, Գ. Տամատյան, Մ. արք. Մութաֆյան (1995-ից, 1998-ից՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք): «Շ.» առաջին շրջանում (1952–76) լուսաբանել է պոլսահայ համայնքի մշակութ. կյանքի համապատկերը, անդրադարձել համահայկ. և համայնքային նշանավոր հոբելյաններին՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքության հաստատման 500-ամյակին, Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին, Գ. Գալֆայան հաստատության հիմնադրման 100-ամյակին, պոլսահայ տպագրության 400-ամյակին ևն: Հատվածներ է վերատպել Մ. արք. Օրմանյանի, Ե. արք. Դուրյանի աշխատություններից, տպագրել Մ. Օրմանյանի «Պատմութիւն Արմաշու Դպրեվանքին» անտիպ երկը ևն:

«Շ.» իր գործունեության երկրորդ շրջանում (1991-ից) անդրադարձել է միջնադարյան գրականությանը, պատմագրությանը, մատենագրությանը, կարևորել մանկավարժությանը, բժշկությանը, ճարտարապետությանն ու արվեստին վերաբերող հոդվածների հրատարակումը: «Շ.»-ի 1970, 1971–1972, 1973, 1974–76, 1977 թթ. հատորները նվիրված են Կոմիտասի, Հ. Թումանյանի և Գ. Կյուլպենկյանի 100-ամյա, Գրիգոր Նարեկացու 300-ամյա հոբելյաններին: Հանդեսը հրապարակում է Ամենայն հայոց կաթողիկոսության և պատրիարքարանի պաշտոն. հաղորդագրությունները, կոնդակներ, քարոզներ, ծանոթացնում պոլսահայ համայնքի և պատրիարքության առօրյային, արժեքավոր հոդվածներ նվիրում սրբախոսությանը («Սուրբ Նիկողայոս Աքանչելագործի մեծարանքը և հայոց միջնադարը»), պոլսահայերի պատմությանը («Իսթանպուլի առաջին հայկական եկեղեցիները և Ս. Գէորգ պատրիարքանիստ եկեղեցին»), հայրախոս. ժառանգությանը («Բան հաւատալի» երկի հեղինակի խնդիրը»), բանահյուսությանը, գեղարվեստին ևն:

«Շ.»-ին աշխատակցել են Ա. Ալպոյաճյանը, Հ. Պերպերյանը, Ս. Տեր-Ներսիսյանը, Հ. Օշականը, Զ. Արշակունին, Հ. Տեր-Անդրեասյանը, Ա. Զոպանյանը, Ա. Անդրեասյանը, Հ. Ճ. Սիրունին, Զահրատը, Գ. Բամպուքճյանը, Ա. Երեմյանը և ուրիշներ:

Կարինե Ավետյան

ՇՈՂԱԿԱԹ ՎԱՆՔ էջմիածնի, Վաղարշապատի հյուսիսային կողմում, արքունի հնձանների տեղում՝ շինված, ըստ ավանդության, *Հռիփսիմյանց կույսերից* ս. Մարիանեի նահատակության վայրում (կոչվել է նաև Ս. Մարիանե վանք): *Գրիգոր Ա Լուսավորչի* 301-ին կառուցած ս. Մարիանեի վկայարանի փոխարեն, VII դ., ինչպես և ս. Հռիփսիմեի և ս. Գայանեի գերեզմանների վրա, կառուցվել է եկեղեցի՝ երկու զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածքով: Եկեղեցու անունը կապվում է ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հետ և նշանակում է երկնքից «Լույսի շող կաթեց»: Ըստ Վաղարշապատում գրված Հայսմավուրքի հիշատակարանի, Շ. վ. 1694-ին վերակառուցել է *Նահապետ Ա Եղեսացի* կաթողիկոսը՝ շոռոթեցի Աղամալ իշխանի բարերարությամբ (ըստ եկեղեցու արմ. դռան վերևի արձանագրության): XVII դ., եկեղեցու շինարարության հետ միաժամանակ, արմ. ճակատին կից կառուցվել է սրահ՝ վրան զանգաշտարակ: Սրահում են թաղված Նահապետ Ա Եղեսացի և Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսները: Եկեղեցու հվ. ավանդատանը գտնվում է ս. Մարիանեի տապանաքարը՝ «Սուրբ Շողակաթ» մակագրությամբ: XIX դ. Շ. վ. եղել է մենաստա-

նի եկեղեցի՝ շրջապատված բուրգերով ուժեղացված պարիսպնե-
րով: Հվ. գավիթը քանդվել է 1804-ին: Եկեղեցին 1960-ին նորոգել է Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսը: Հայ եկեղեցին ունի Շ. վ-ին նվիրված տոն, որը նշվում է օգոստոսի 1-ին կեսին, *Վերափոխումն ս. Աստվածածնի* տոնի նախընթաց շաբաթ օրը (տես *Եկեղեցու տոներ*):

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.5, 3-րդ պատկերը:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հ.1, Էջմիածին, 1842: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: *Токарский Н. М., Архитектура Армении IV—XIV вв., Е., 1961.*

Մուրադ Հասրաթյան

ՇՈՌՈԹԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ, Մեծ Հայքի Սյունիք նահանգի Երնջակ գավառի Շոռոթ գյուղի կենտրոնում (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Ջուլֆայի շրջանում): XIII դարից հիշատակվող եկեղեցու ներկայիս շենքը, ըստ շին. արձանագրության, կառուցվել է 1642-ին, գմբեթը 1704-ին վերակառուցել է Սիմեոն վարդապետը՝ շոռոթեցի Սամուելի և Էյվազի միջոցներով: XX դ. սկզբին տանիքի արմ. կողմում փոքր զանգակատուն է կանգնեցվել: Եկեղեցին խաչաձև մույթերով գմբեթավոր խոշոր բազիլիկ է, արմ-ից կից եռակամար գավիթ-սրահով, որն ավերվել է 1840-ի երկրաշարժից: Շ. Ս. Հ. ե-ու հիմն. ծավալը կառուցված է բազալտով, իսկ բարձր, սլացիկ թմբուկով գմբեթը՝ աղյուսով: Գավթի փլատակներում գտնվում են մանուկ Հիսուսը գրկին Աստվածածնի հարթաքանդակը, XV–XVII դդ. խաչքարեր:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.6, 1-ին պատկերը:

Գրկ. Սեդրակյան Ա., Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղ-պատ, 1872: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Այվազյան Ա., Շոռոթի և Գաղի եկեղեցական ճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», 1977, № 5:

Մուրադ Հասրաթյան

ՇՎԵԴԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1992-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Ժնևի Ս. Հակոբ եկեղեցի:

Հայկ. աղբյուրներում Շվեյցարիան առաջին անգամ հիշատակվել է Մարտիրոս եպս. Երզընկացու (XV դ. 2-րդ կես) ճանապարհորդ. նոթերում (Հակոբյան Վ., «Մարտիրոս Երզընկացու ճանապարհորդական նոթերը», «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1957, № 6):

Շվեյցարահայ հոգևոր համայնքը ձևավորվել է 1960-ական թթ.: 1969-ին ստեղծվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Շվեյցարիայի հովվությունը: Նույն թվականին Ժնևում կառուցվել է Ս. Հակոբ եկեղեցին (ազգային բարերարներ Հակոբ Թոփալյանի, Շառլ Փիլիպոսյանի, Ժակ Գաբրալի նախաձեռնությամբ ու միջոցներով), կից գործում են մեկօրյա դպրոց, Հայ մշակութային կենտրոն և տիկնանց հանձնախումբ:

1992-ին Շ. թ-ի առաջնորդ է նշանակվել Վիգեն եպս. Այքազյանը: Սակայն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակը չի իրականացվել: Համայնքում ներկայումս, փաստորեն, գործում են երկու հոգևոր հովվություններ (հոգևոր խորհուրդներ). մեկը՝ երկրի Ֆրանսախոս հատվածում (կենտրոնը՝ Ժնև), Աբել քհն. Օղլուգյանի գլխավորությամբ, մյուսը՝ գերմանախոս մասում, 1992-ից Ցյուրիխում հաստատված Շնորհք վրդ. Զեքիջյանի գլխավորությամբ: Հոգևոր վարչատարածքային այս երկու միավորները գտնվում են Հայաստանյայց առաքելական եկեղեցու *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության* (կենտրոնը՝ Փարիզ) իրավասության ներքո:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.6, 2-րդ պատկերը:

ՇՈՒՇԱՆԻԿ, սուրբ Շուշանիկ (ավագանի անունը՝ Վարդենի, ծ. մոտ 409 – նահ. մոտ 475, Վրաստան, թաղվել է Տփղիսի միջնաբերդում), Հայ և Վրաց եկեղեցիներում ճանաչված ընդհանրական տոնելի սուրբ: Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրը: 451-ին հաջորդած տասնամյակում Գուգարաց Աշուշա բդեշխը Պարսից արքա Հազկերտից արտոնություն է ձեռք բերել՝ գերությունից ազատելու և բդեշխության կենտրոն Ցուրտավ տանելու իր կին Անուշվռամի հարազատներին և մերձավորներին, մանավանդ՝ զոհված և գերեվարված նախարարների մանկտի ժառանգներին, որոնց մեջ էր նաև Վարդենի-Շ.:

Շ. ամուսնացել էր Աշուշայի որդու՝ Վազգենի (Վարաքենի) հետ, որը շուտով փոխարինել է հորը և բդեշխություն ստացել: Քաղ. նկա-

տառումներով Վազգենն ուրացության է դիմել և, իբրև զրադաշտական, պարսկուհու հետ էլ է ամուսնացել: Շ. մերժել է հավատուրաց ամուսնուն, զրկվել նույնիսկ իր երեխաներին տեսնելու կարելիությունից և ապաշխարության մտել Ցուրտավի եկեղեցուն կից մութ ու խոնավ մի խուց: Ապարդյուն են անցել նրան ուրացության մղելու հնարանքները՝ ծեծ ու սաստ, աղերսանք ու խարդավանք, բանտարգելություն: Շ-ի կրած չարչարանքները շարունակվել են վեց տարի, յոթերորդի սկզբին՝ 475-ին, նահատակվել է: Ըստ պատմիչ Ղազար Փարպեցու՝ Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության տարիներին ուրացյալ Վազգենն սպանվել է Վրաց Վախթանգ Գորգասալ թագավորի ձեռքով (482 կամ 484-ին):

Շ-ին վերաբերող տեղեկությունների հիմն. աղբյուրը սրբի «Վկայաբանությունն» է, որն ավանդված է հայ. և վրաց. լեզուներով և երկու՝ ընդարձակ ու համառոտ խմբագրություններով: Այն ձևավորվել է Ցուրտավի եկեղեցում, սրբի հիշատակի օրվա տոնակատարության պահանջով՝ միաժամանակ կարդացվելով հայերեն և վրացերեն: Նախն. խմբագրությունը, որից սերում են Անդրեաս կրոնավորի և Հակոբ երեցի մշակումները, չի պահպանվել, ուստի առկա ընդարձակ խմբագրություններն անմիջականորեն մեկը մյուսի թարգմանությունը չեն: Հայ. համառոտ խմբագրությունը սերում է հայերեն ընդարձակի՝ մեզ չհասած տարբերակից, վրաց. համառոտը՝ թարգմանված է հայ-ից: X դ. Ահարոն Վանանդեցին Շ-ին վերաբերող տեղեկություններ է քաղել Անդրեաս կրոնավորի երկից և «Վկայաբանության» հայ. ու վրաց. ընդարձակ խմբագրություններից: Ուխտանես ու Գրիգոր Խլաթեցին օգտվել են նաև Վանանդեցու մշակումից: «Վկայաբանության» ընդարձակ խմբագրություններն իրարից անկախ լրացվել են. հայերենը քաղումներ ունի Ագաթանգեղոսից, վրացերենը՝ Թեկղեի վարքի՝ հայերենից վրացերեն կատարված թարգմանությունից: Հայկ. ընդարձակ խմբագրությունը թարգմանվել է լատ. (Պ.Պետրոս), անգլ. (Գ. Մագուսյան), ռուս. (Ք. Տեր-Դավթյան):

Հայ եկեղեցին ս. Շ-ի տոնը նշում է Խաչվերացի 2-րդ կիրակին հաջորդող երեքշաբթի օրը՝ ս. Փեփրոնե և ս. Մարիամե կույսերի տոնի հետ:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.6, 3-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Ցուշիկք հայրենեաց հայոց, հ.1, Վնտ., 1869, էջ 373–404: «Սոփերք հայկականք», հ. 9, Վնտ., 1853, էջ 11–17: Հակոբ Ցուրտավեցի, Վկայաբանութիւն Շուշանկայ (աշխատասիր. Ի. Աբուլաձեի), Թ., 1978 (վրաց.): Մուրադյան Պ., Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, Ե., 1996:

Պարույր Մուրադյան

ՇՈՒՇԻԻ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ, ԼՂՀ Շուշի քաղաքի կենտրոնում: Կառուցվել է 1868–87-ին, փոքր միանավ եկեղեցու տեղում, Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ) գյուղից Շուշի գաղթած բնակիչների միջոցներով, ճարտ. Սիմոն Տեր-Հակոբյանի նախագծով: Օծվել է 1888-ի սեպտ. 20-ին: Սրբատաշ կաթնագույն կրաքարով կառուցված Շ.Ղ.Ս.Ա.Ե. հայկ. ամենախոշոր եկեղեցիներից է (35 *մ* երկարությամբ, 23 *մ* լայնությամբ և 35 *մ* բարձրությամբ): Նրա արտաքուստ խաչաձև, չորս մույթերի վրա դրված բարձր գմբեթով ծավալատարած. հորինվածքում ակնհայտ է *էջմիածնի Մայր տաճարին* նմանեցնելու ձգտումը: Եկեղեցում պահվել է ս. *Գրիգորիսի* Աջը: Դեպի արմ. շուշեցի բարերար Ա. Խանդամիրյանցի կառուցած եռահարկ զանգակատունն է, որի 2-րդ հարկի չորս անկյուններում հրեշտակների մեծադիր արձաններ են դրվել:

Եկեղեցին գործել է մինչև 1930-ը, մասամբ նորոգվել 1981–88-ին՝ վերականգնող վարպետ Վ. Բաբայանի ջանքերով: 1988-ին Շուշիից հայերին արտաքսելուց հետո ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների արձանները և եկեղեցին վերածել զինապահեստի: 1992-ի մայիսի 8-ին Շուշիի ազատագրումից հետո շարունակվել է եկեղեցու և զանգակատան նորոգումը, որն ավարտվել է 1998-ին: Շ.Ղ.Ս.Ա.Ե. վերաբացվել և մեծ հանդիսությամբ օծվել է 1998-ի հուլիսի 19-ին՝ Քրիստոսի Պայծառակերպության օրը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.6, 4-րդ պատկերը:

Գրկ. Բարխուդարյանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Ե., 1980: Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992:

Մուրադ Հասրաթյան

ՇՔԱՆՇԱՆՆԵՐ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, տես *Պատվո աստիճաններ և պարգևատրումներ Հայաստանյայց առաքելական եկեղեցու* հոդվածում:

Ո

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ, ըստ Աստվածաշնչի՝ Աստծո ողորմածության արդյունք, շնորհ, սիրուց ու գթությունից բխող արարմունք. քրիստոնեական *առաքինություններից* մեկը: Ո-յամբ, Արարչից զատ, կարող է տոգորվել նաև մարդը: Ըստ «Հայկազեան բառարանի՝ նշանակում է «գթութիւն», որի բացատրությունը և իմաստը «փափուկ սիրտ, ողորմած սիրտ» ունենալն է: Ո-յան մասին շատ ենք կարդում Սուրբ Գրքում, բայց չեշտված ձևով հանդիպում ենք Հիսուսի Լեռան քարոզի երանիների մեջ. «Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթ. 5.7): Ո. կամ գթությունը, ավետարանական ոգու համաձայն, հավատացյալի ներքին իղձն է՝ օգնելու և բարձրացնելու իր նմանին, որը ընկերային կյանքի խախտված ներդաշնակության պատճառով հայտնվել է ծանր վիճակում: Ո. կամ գթությունն անող քրիստոնյայի մոտ բացառվում է վրեժի, չարամտության, ատելության, քինախնդրության ոգին:

Հիսուսը հորդորել է Ո. կատարել գաղտնաբար, ոչ ի ցույց մարդկանց. «...թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6.3–4):

Ո-յան արտահայտություններից է *բարեգործությունը*:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, Ղլիճենց (հունվար, 1614, Նոր Ջուղա – 4.2.1674, Մարսել), արքեպիսկոպոս, տպագրիչ-հրատարակիչ, մշակութային գործիչ, լեզվաբան: Նախն. կրթությունն ստացել է Նոր Ջուղայի ծխատեր քահանայի մոտ, ապա հաճախել Խաչատուր Կեսարացու Ամենափրկիչ վանքի դպրոցը, այնուհետև Երևանում Խաչատուր Կեսարացու և Սիմեոն Ջուղայեցու հետ աշակերտել Մելքիսեդ Վժանեցուն: Մոտ 1634-ին Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի հրավերով Նոր Ջուղայից եկել է Էջմիածին, *Ուշիի Ս. Սարգիս վանքում* նշանակվել վանահայր: Էջմիածնում Ո. Ե. ծանոթացել է Դոմինիկյան վանական, գիտնական Պաուլո Պիրոմալլիի հետ, որը Հայաստան էր եկել Աստվածաշնչի հայ. բնագիրը լատ. Վուլգատային հարմարեցնելու հանձնարարությամբ: Ո. Ե. նրանից սովորել է լատիներեն, փիլիսոփայություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, քերականություն, փոխադրել լատ. քերականության մի դասագիրք, ապա հարմարեցրել գրաբարին, դարձրել լատ. կաղապարով գրաբարի քերականության դասագիրք, լատ-ից կատարել մի շարք թարգմանություններ:

Ո. Ե., իր հետ ունենալով *Հակոբ Դ Ջուղայեցու* հանձնարարականը, 1662-ին մեկնել է Եվրոպա՝ Աստվածաշունչը հայերեն հրատարակելու: Նախ գնացել է Լիվոռնո, ապա՝ Հռոմ, որտեղ ջանացել է Վատիկանից ստանալ Հռոմում կամ Իտալիայի որևէ քաղաքում Աստվածաշունչը տպագրելու թույլտվություն: Սակայն նրա բոլոր ջանքերն ի դերև են անցել, և նա մեկնել է Ամստերդամ, 1664-ի աշնանը

ստանձնել Ամստերդամի Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվ. տպարանի (1660-ին հիմնել էր Մատթեոս Ծարեցին) տնօրինությունն ու ձեռնարկել Աստվածաշնչի տպագրության նախապատրաստ. աշխատանքները: Փորագրիչներին պատվիրել է նոտրգիր, նոր տեսակի գլխատառեր և թռչնագրեր, բնագիրը պատրաստել տպագրության ու իր աշակերտներ Կարապետ Անդրիանացու և Օհան Երևանցու հետ սկսել տպագրությունը: Տպագրության համար իբրև հիմք-բնագիր, ամենայն հավանականությամբ, օգտագործել է Կիլիկիայի Հեթում Բ թագավորի անունով հայտնի գրչագիր Աստվածաշունչը, որը գրվել էր 1295-ին՝ Հեթում Բ-ի պատվերով (Մատենադարան, ձեռ. № 180): Այս բնագիրը Ո. Ե. խմբագրել է ըստ Վուլգատայի, տպագրության ընթացքում թարգմանել և ավելացրել Հին կտակարանի մի քանի գրքեր, որոնք չեն եղել հայերեն Աստվածաշնչում (և նրա կանոնում): Տպագրելիս փորձել է միջին դիրք գրավել՝ դասական հայերեն բնագրի և Վուլգատայի միջև, որպեսզի այն ընդունելի լիներ հայոց տարբեր դավան. համայնքների համար, որոնց նա լատ. գրքի փոխարեն առաջարկելու էր հայերենն ու հայատառը:

Ոսկանյան Աստվածաշունչը տպագրվել է 2 տարի 7 ամսում (1666 մարտի 11 – 1668 հոկտ. 13): Տպագրությունը կատարված է վարպետորեն: Անվանաթերթերը կազմված են չորս փայտափորագիր կտորներից, աջ և ձախ զարդանկարների մեջ Հավատ և Հույս խորհրդանշանները ներկայացնող մարդկային կերպարանքներ են: Աստվածաշունչ բառը թռչնագրով է, կազմը՝ կարմիր կաշեպատ, հաստ տախտակից: Բանիմացորեն կիրառված են հայկ. առոգանության գրեթե բոլոր հիմն. նշանները, գործածված են յոթ տեսակ տպագրատառեր (խոշոր և փոքր զարդագիր, խոշոր և փոքր գլխագիր, խոշոր և փոքր բոլորգիր, Ոսկանի նոտրգիր): Գրեթե բոլոր նկարները գերմանացի Քրիստոֆել վան Զիխեմ կրտսերի փորագրություններն են, որոնք կատարվել են Ռաֆայելի, Ալֆրեդ Դյուրերի, Հենդրիկ Գոլցիուսի և եվրոպ. ուրիշ նշանավոր վարպետների հայտնի նկարներից:

Ամստերդամում Ո. Ե. հրատարակել է 14 անուն գիրք՝ Նոր կտակարան (1668), Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» (1669), «Տօնացոյց» (1669), Շարակնոց (1664–65, 1669) ևն: Նա մտադրվել էր Ֆրանսիայի որևէ քաղաքում տպարան հիմնել: Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IV-ը տվել է նրան այդ իրավունքը՝ պայմանով, որ հրատարակվելիք գրքերը հակառակ չլինեն կաթոլիկ եկեղեցու դավանանքին: Սակայն Ո. Ե. չի հաշտվել այն մտքին, որ պետք է «սրբագրվեր» իր ժամագիրքը, Մաշտոցը՝ «Հռոմեական կրոնի վարդապետությանը» հակառակ չերևալու համար: Նա Ֆրանսիայից անցել է Իտալիա, կանգ առել Լիվոռնոյում, այնտեղ տպագրել «Պարտէզ հոգեւոր» (1670) և Ռոբերտոս Բելարմինոսի «Վարդապետութիւն քրիստոնէական» (1670) թարգման. գրքերը: Այստեղ նյութ. աջակցություն չգտնելով՝ տպարանը փոխադրել է Մարսել՝ ընկերանալով քահանա Համազասպյանի հետ, որը, սակայն, հետագայում մեծ անախորժություններ է պատճառել նրան: Տեղի կաթոլիկ հոգևոր իշխանությունը Հռոմից կարգադրություն է ստացել հետևել Ո. Ե-ու հրատարակություններին: Նրանից պահանջել են հայ. ու լատ. գրված «Հավատո դավանության» գրությունն և հայտնել, որ գրաքննվելու են նրա տպարանում հրատարակվող գրքերը: Չնայած այդ ամենին, նա որոշել է «Հայաստանեայց եկեղեցու ծեսերուն» հակառակ որևէ բան չտպագրել: Բայց նրա գործընկեր Համազասպյան քահանան այդ մասին տեղեկացրել է իշխանությանը: Սկսվել է գործի քննություն: Ո. Ե. հուսալքված անկողին է ընկել ու մահացել:

Ոսկանյան տպարանը գործել է քառորդ դար: Այդ ընթացքում Ամստերդամում, Լիվոռնոյում, Մարսելում տպագրվել են 40 անուն կրոնաեկեղեց. և աշխարհիկ բարձրորակ տպագրությամբ հայերեն գրքեր:

Գրկ. Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Լեո, Հայկական տպագրություն, Երկ. ժող., հ. 5, Ե., 1986: Լեվոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958: Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:

ՈՍԿՅԱՆ Համազասպ [ավազանի անունը՝ Անտոն, 1.7.1895, գ. Խանդաձոր (Էրզրումի նահանգի Կիսկիմ գավառ) – 25.2.1968, Վիեննա], պատմաբան, բանասեր, ձեռագրագետ, մանկավարժ: Ուսանել է Վիեննայի Մխիթարյան վանքի դպրոցում: 1914-ից՝ *Մխիթարյան միաբանության* անդամ, 1919-ին ձեռնադրվել է քահանա, 1922-ին ստացել Վիեննայի համալսարանի աստվածաբանության դոկտորի կո-

չում: 1928–31-ին եղել է Պլովդիվի (Բուլղարիա) Մխիթարյան վարժարանի ուսուցիչ, 1931–37-ին՝ տնօրեն, 1947–1960-ին՝ Բեյրութի Մխիթարյան վարժարանի տնօրեն: 1920-ական թթ. աշխատակցել է «*Հանդէս ամսօրյա*»-ին, ապա դարձել նրա խմբագրապետը (1938–46, 1963–68): 1932-ին Պլովդիվում հրատարակել է «Ուսումնարան» դպրոցական ամսաթերթը:

Ո. ավելի քան կես դար զբաղվել է գիտ. գործունեությամբ, հրատարակել 26 հայագիտ. ուսումնասիրություն, 16 մանկավարժ. երկ, շուրջ 82 հոդված և գրախոսական: Առավել արժեքավոր են Հայաստանի վանքերի պատմությանը վերաբերող աշխատությունները («Վասպուրական-Վանի վանքերը», մաս 1–3, 1940–47, «Սեբաստիայի վանքերը», 1946, «Բարձր Հայքի վանքերը», 1951, «Տարոն-Տուրուբերանի վանքերը», 1953, «Արցախի վանքերը», 1953, «Կիլիկիայի վանքերը», 1957, «Գուգարքի վանքերը», 1960, «Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիրի և Տրապիզոնի նահանգներու վանքերը», 1962): Ուսումնասիրել է հայ նախարար. տների պատմությունը, միջնադարյան մատենագիրներ Հովհաննես Սարկավագի, Ներսես Լամբրոնացու, Հովհաննես Վանականի, Վարդան Արևելցու, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու կյանքն ու ստեղծագործությունը: «Զորս հայ տաղասացներ և անոնց տաղերը» (1966) աշխատությունում ներկայացրել է միջնադարյան բանաստեղծներ Հովհաննես Կարնեցուն, Գրիգոր արք. Օշականցուն, Մովսես Կարնեցուն, Մարտիրոս Ղրիմեցուն և նրանց ստեղծագործությունները: Աշխատասիրել և հրատարակել է «Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը» (1924), «Սարդիկէի ժողովքի հայերէն կանոնները» (1945), Ստեփանոս Ռոշքայի «Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք» (1964), Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ» (1965) գործերը, թարգմանել Զ. Օբերտինսկու «Լեհահայերը եւ անոնց Անդրէաս արքեպիսկոպոսը Յազլովիցի մէջ» (1963) աշխատությունը: Հետազոտել, կազմել և հրատարակել է «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին ի Վիեննա» (հ. 2, 1963) ձեռագրացուցակը, որը *Հ. Տաշյանի* համանուն գործի շարունակությունն է: Սփյուռքի հայերի համար կազմել է հայերեն դպրոցական ձեռնարկներ («Դասագիրք Հայոց պատմութեան», հ. 1–5, 1959–60, ևն): Ո. թողել է 11 անտիպ գործեր («Այրարատ նահանգի վանքերը», «Սյունյաց աշխարհի վանքերը», «Հայ վանքեր ի սփյուռս», «Հարյուրամյա կյանք և գործ Անարատ հղության քույրերու միաբանության» ևն):



Հ. Ոսկյան

Երկ. Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, Վնն., 1922: Մատենագրական քննութիւններ, Վնն., 1926: Գնունեաց և Ռշտունեաց նախարարութիւնները, Վնն., 1952: Հայրենի յուշերս, Բեյրութ, 1952: Ուսումնասիրութիւններ հայ նախարարութիւններու մասին, Վնն., 1955: Ստեփանոս Ռոշքա եւ Մատթէոս Վ. Ջուղայեցի, Վնն., 1968:

Գրկ. Ադյան Մ., Տեր-Պողոսյան Պ., Հ. Համազասպ վ. Ոսկյան, ՀԱ, 1968, № 1–3:

Սուրեն Քոլանջյան

ՈՍԿՅԱՆՔ, սուրբ Ոսկյանք (նահ. Ք.ծ.հ. 100 կամ 107, Եփրատի վտակ Արածանիի ակունքների մոտ), I դարի տոնելի վկաներ, ճգնավորներ (5 հոգի, հռոմեացիներ), *Թադեոս* առաքյալի աշակերտներ: Հայոց Տոնացույցում հիշատակվում են Քահանայք անունով: Ըստ հայոց վկայաբանության (գրի է առնվել V դ., VII–VIII դդ. թարգմանվել վրացերեն), հռոմ. կայսրը նրանց, որպես արքունի պատգամավորների, ուղարկել է Հայոց Սանատրուկ թագավորի մոտ, բայց Ո., Հայաստանում հանդիպելով Թադեոս առաքյալին, մկրտվել են նրա ձեռքով, հրաժարվել իրենց աշխարհիկ առաքելությունից ու հաստատվել քրիստ. հավատի և քարոզության մեջ: Թադեոս առաքյալը նրանց գլխավորին, որ կոչվել է Խրյուսոս (հայերեն՝ Ոսկի), ձեռնադրել է քահանա: Նրա անունով էլ խումբը անվանվել է Ո.:

Թադեոս առաքյալի նահատակությունից հետո նրանք հաստատվել են Եփրատ գետի հվ-արլ. ակունքների մոտ, Ծաղկոտն գավառի Ծաղկավետ կամ Ծաղկոտն լեռներում: Ավելի քան 40 տարի, ինչպես պատմում է վկայաբանությունը («Սոփերք հայկականք», հ. 19, 1854, էջ 59–66, Ավգերյան Մ., «Լիակատար վարք և վկայաբանութիւն...», հ.2, 1811, էջ 127)՝ «հրեշտակային վարքով» ճգնելուց հետո, աստվածային ազդումով, իջել են լեռ-

ներից և գնացել Արտաշատ՝ Հայոց արքունիք՝ Ավետարանը քարոզելու Հայոց Արտաշես թագավորին, Սաթենիկ թագուհուն և ողջ պալատին: Նրանց քարոզչությամբ քրիստ. հավատք են ընդունել թագուհու ազգականները՝ ալանաց իշխաններ Սուքիասյանները (տես *Սուքիասյանք*): Հայոց արքայորդիները, գտնելով արքունիքը լքած Սուքիասյանց և չկարողանալով նրանց տարհամոզել՝ վերադառնալու արքունական կյանքին, իրենց զայրույթը թափել են Ո-ց վրա, որպես իրենց մոր ազգականներին մոլորեցնողների, և սպանել են նրանց:

Հայ եկեղեցին ս. Ո-ց հիշատակը նշում է Առաջավորաց պահքին հաջորդող հինգշաբթի կամ Տյառնընդառաջի նախընթաց երեքշաբթի օրը՝ ս. Սուքիասյանց հիշատակի հետ:

Ս. Ո-ց է ձոնված «Որք արժանաւորեցաք կոչիլ յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի, Եւ աստուածային հրով մաքրութեան Ոսկի փորձեալ գըտայք ի բնակարանս հրեշտակաց» սկսվածքով շարականը (Շարական, 1853, էջ 638):

Գրկ. Սուրբերու կեանքը, 3 հրտ., Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Քնարիկ Տեր-Դավթյան

ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գեղանկարչության տեսակ. պատերի, առաստաղների կամ ճարտարապետական շինության տարբեր մակերեսների վրա պատկերներ, զարդապատկերներ ստեղծելու արվեստը: Ո., որը մեծ մասամբ կատարվում է ֆրեսկոյի (իտալ. fresco – թարմ), սոսնձաներկերի, մոմանկարչության, տեմպերայի (ներկի տեսակ), յուղաներկերի ընձեռած հնարավորություններով, պատկանում է մոնումենտալ արվեստի բնագավառին:

Հայաստանում քրիստոնեության հաստատման առաջին իսկ դարերում կառուցվող եկեղեցիները հարդարվել են որմնանկարներով: Վաղ միջնադարում որմնանկարներից բացի, օգտագործվել է նաև խճանկարը: Միջնադարյան Հայաստանի խճանկարային արվեստի մասին են վկայում խճանկարների մի քանի բեկորները [զարդանախշային հատվածը Դվինի V դ. բազիլիկում, Աստվածամոր պատկերի մնացորդները Դվինի Մայր տաճարում (VI–VII դդ.), *Զվարթնոցի* ավերակներում և *Էջմիածնի Մայր տաճարի* հատակի տակ գտնված սմալտայի (հալեճաքարի) կտորները]: Հայկ. IV–VII դդ. խճանկարների նմուշներ են պահպանվել նաև Հայաստանի սահմաններից դուրս: Երուսաղեմի հին հայկ. գերեզմանոցներում հայտնաբերվել են երկրաչափ. և կենդանակերպ նախշազարդ յոթ խճանկարային պանոներ (մեծ չափի նկար): Ի տարբերություն խճանկարչության, որը հատուկ էր վաղ միջնադարին, Ո. հայկ. եկեղեց. շինարարության մեջ օգտագործվել է գրեթե ողջ միջնադարի ընթացքում: Ինչպես քրիստոնյա երկրների մեծ մասում, այնպես էլ Հայաստանում որմնանկարներն ստեղծվել են ֆրեսկոյի տեխնիկայով. աշխատանքը կատարվել է խոնավ, չչորացած սվաղի վրա: Խոնավ ավազի կիրն ու մանր ավազը ներծծել են ջրաներկը և չորանալուց հետո, առանց սոսնձի կամ ամրացնող որևէ նյութի խառնուրդի, ձուլվել միմյանց: Հայկ. Ո-յանը բնորոշ է նաև արդեն պատրաստ նկարի վրա տեմպերայի օգտագործումը՝ վերջնական մանր ուղղումներ կատարելու համար (ներկերը սոսնձվել են ձվով): Այդ նպատակով երբեմն գործածվել են նաև ոսկին (*Արուճի Ս. Գրիգոր եկեղեցի*) և արծաթը (*Անիի Ս. Առաքելոց եկեղեցի*): Հայկ. որմնանկարների գրունտի շերտը բարակ է (հաստ շերտը երկար չէր դիմանա), որովհետև այն ծածկել է ոչ թե աղյուսի, այլ սրբատաշ քարի մակերեսը, որի շնորհիվ էլ որմնանկարը պահպանվել է դարեր շարունակ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վաղմիջնադարյան գրեթե բոլոր հայկ. եկեղեցիները [Աղցի (IV դ.), *Ծիծեռնավանքի*, Քասաղի (V–VI դդ.), *Թանահատի վանքի, Եղվարդի Ս. Թեոդորոս վանքի*, Զովունու Ս. Պողոս-Պետրոս (V–VI դդ.) եկեղեցիները, *Երերույքի Ս. Կարապետ վկայարանը*, Օձունի, Երևանի Ս. Պողոս-Պետրոս (VI–VII դդ., վերակառուցված XVII դ.), Աշտարակի Ծիրանավոր (V–VI դդ.) և Կարմրավոր (VII դ.), Արթիկի Ս. Աստվածածին (V դ.), Եղվարդի Ս. Զորավոր (VII դ.) և այլ եկեղեցիներ] հարդարվել են որմնանկարներով, որոնցից սոսկ բեկորներ են մնացել: Միայն Արուճի Ս. Գրիգոր, Թալինի Կաթողիկե, *Լմբատավանքի*, մասամբ՝ *Կոչի Ս. Ստեփանոս վանքի* եկեղեցիների մի քանի որմնանկարներ հնարավորություն են ընձեռել որոշելու դրանց գեղ. որակը, պատկերագր. առանձնահատկությունները, գաղափար կազմելու վաղ շրջանում հայկ. եկեղեցիներում ընդունված որմնանկարների ընդհանուր դեկորատիվ ծրագրի մասին: Դա այն ժամանակահատվածն էր, երբ քրիստ. պատկերագրությունը դեռ նոր էր ձևավորվում, և Հայաստանն այդ արվեստի հիմքերը դնող երկրների թվում էր:

ՈՐՄՆԱՆԿԱՐ. Վաղ միջնադարի հայկ. Ո. պատկերագր. ընդհանուր գծեր է ունեցել քրիստոնյա Արևելքի և Արևմուտքի Ռ-յան հետ, միաժամանակ դրսևորել ինքնուրույն ռոմանումների տարրեր: Որպես կանոն, ամենից լավ պահպանվել են եկեղեցիների գլխավոր՝ արլ. կամ Ավագ խորանի որմնանկարները: Վաղ



Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարի «Մանկան լոգանքի» և «Հովիվների ավետման» տեսարանները (վերակազմություն)

միջնադարի բոլոր հայկ. եկեղեցիների Ավագ խորանի գմբեթարդում պատկերված է Քրիստոսի «Համբարձումը»: Բայց «Համբարձման» տեսարանի պատկերագրությունը դեռևս խիստ կանոնականացված չէր. գրեթե յուրաքանչյուր որմնանկարում տրվել է այդ տեսարանի յուրովի տարբերակը: Այսպես, Էմբատավանքի և Կոչի Ս. Ստեփանոս վանքի եկեղեցիների որմնանկարներում Քրիստոսը բազմած է գահին՝ շրջապատված քառակերպերով և սերովբեներով, *Թալինի Կաթողիկե եկեղեցում* Քրիստոսի կերպարը փոխարինված է էթիմասիայով (եռմիասնական Աստծո գահով), իսկ Արուճի Ս. Գրիգոր եկեղեցում, որտեղ հասակով մեկ կանգնած Փրկիչը ձախ ձեռքում պահում է ավետարանական քաղվածքով գալարը, «Համբարձման» տեսարանը համատեղված է Օրենքի արձակման հետ: Հատկանշական է, որ այդ բոլոր որմնանկարներում «Համբարձումը» պատկերված է ոչ թե «պատմական» տեսանկյունից, այսինքն՝ ըստ Ավետարանների և Գործք առաքելոցի, այլ ընդգրկում է Հին կտակարանի տեքստերով ներշնչված տարրեր: Վաղ շրջանի հայկ. եկեղեցիների մյուս՝ հս., հվ., արմ. պատերի որմնանկարների մասին պատկերացում է տալիս *Վրթանես Քերթողը*: Նա իր «Յաղագս պատկերամարտից» գրվածքում անդրադարձել է եկեղեցիներում ավետարանական թեմաներ պատկերող որմնանկարներին: «Համբարձման» հետ մեկտեղ նա թվարկել է մի շարք այլ պատկերագր. տեսարաններ Քրիստոսի կյանքից («Ծնունդ», «Մկրտություն», «Զարչարանքներ», «Խաչելություն», «Թաղում», «Հարություն»), ինչպես նաև՝ հայոց սրբերի ու նահատակների վարքերից (Գրիգոր Լուսավորչի, Գայանեի, Հռիփսիմեի և Հայաստանում առանձնապես մեծարված Ստեփանոս Նախավկայի):

Հայկ. վաղմիջնադարյան Ռ-յան մեջ գեղ. առումով առանձնանում է երկու հիմն. ուղղություն. առաջինը (Արուճի Ս. Գրիգոր եկեղեցի) պահպանել է կապերը հելլենականացված գեղանկարչության պատկերման համակարգի հետ, մյուսը (Էմբատավանքի, Թալինի Կաթողիկե եկեղեցիներ) հենվել է արլ. ժող. արվեստի առավել պայմանական սկզբունքների վրա:

Արաբ. տիրապետության շրջանը (VII–IX դդ.) ընդհատել է հայկ. մշակույթի բնականոն ընթացքը, արգելակել նաև Ռ-յան զարգացումը, որն ավելի, քան գեղանկարչության մյուս բնագավառները, կախված է եղել պատմաքաղ., տնտ. և սոց. բարենպաստ պայմաններից: Ռ-յան զարգացման հաջորդ շրջանը սկսվել է X դ. և շարունակվել մինչև XI դ. կեսը: Ազգ. մշակույթի նոր վերելքը Ռ-յան բնագավառում արտահայտվել է ոչ միայն նշանավոր կոթողների ստեղծմամբ, այլև դեկորատիվ ծրագրի հետագա զարգացմամբ:

Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարի «Ահեղ դատաստանի» տեսարանը (վերակազմություն)

X–XI դդ. Ռ-յան նմուշներից ամենից լավ պահպանվել են *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցում (915–921) և *Տաթևի վանքի* Ս. Պողոս-Պետրոս տաճարում (930): Միմյանցից հեռու գտնվող այս եկեղեցիները տվել են դեկորատիվ ծրագրի երկու տարբերակ՝ իր ժամանակի համար բավական առաջատար (Տաթև) և

համեմատաբար հնավանդ (Աղթամար): Բայց երկու դեպքում էլ գեղ. կերպարների որոնումները ենթարկվել են խաչագմբեթ տաճարի առանձնահատկություններին (Աղթամարում՝ դասական տիպի, Տաթևում կառուցվածքը ներդաշնակվել է գմբեթավոր դահլիճի տիպին): Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարները և՛ իրենց ծրագրով, և՛ ուրույն գեղ. ոճով կապված են արևելաքրիստ. ավանդույթներին և տերունական շարքի տեսարանների հետ մեկտեղ ներառում են նաև խորհրդանշական իմաստ ունեցող հինկտակարանային իրադարձությունները: Թեմաները դասավորված են գոտիներով և իրադարձությունների պատմ. հաջորդականությամբ հետևում են միմյանց: Տաթևի որմնանկարներում միջադեպերը կազմում են պարզ ու հստակ տոնական շարք: Բացի այդ, Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարն այն ամենավաղ քրիստ. կառույցներից է, որտեղ պատկերվել է (արմ. պատի վրա) «Ահեղ դատաստանի» լայնածավալ հորինվածքը: Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցում նույնպես առկա է «Երկրորդ գալստյան» տեսարանը (հվ. պատի դռան վերին մասում), սակայն պակաս զարգացած հորինվածքով: Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու Ավագ խորանում վաղ ծրագրից պահպանվել է «Համբարձման» տեսարանը, Ս. Խաչ եկեղեցում՝ «Դեհսուսը» («Բարեխոսություն», Քրիստոսը Աստվածամոր և Հովհաննես Մկրտչի միջև), իսկ երկու որմնանկարների հաջորդ շարքում պատկերված են առաքյալները:

Ռ-յան բեկորներն Անիի եկեղեցիներում՝ *Անիի Մայր տաճարի* (1001) խորանում (որտեղ ներկայացված են գահին բազմած Փրկիչը և խաչը խնկարկող հրեշտակները), Ս. Փրկչի ուխտանիստ եկեղեցում (1035, «Փրկիչը հրեշտակների հետ»՝ Ավագ խորանում, «Խորհրդավոր ընթրիքը», ավետարանիչների պատկերները և նկարչի՝ Սարգիս Փառչիկի ինքնանկարը) վկայում են, որ Անիում գոյություն է ունեցել մայրաքաղաքային հրաշալի արվեստանոց: Վերջինս, որոշ առումով կապված լինելով բյուզ. լավագույն ավանդույթներին, միևնույն ժամանակ տարբերվել է գործող անձանց պատկերների ավելի ազատ մշակումով, կենսական մեծ ուժով, կերպարների որոշակի անհատականացմամբ և ընդհանրապես՝ պակաս կանոնականությամբ:

X–XI դդ. Ռ-յան բեկորներ են պահպանվել նաև *Գնդեվանքի, Հաղպատի վանքի, Կապուտկողի Ս. Հակոբ վանքի* և Թիլի (Եկեղյաց գավառ) եկեղեցիներում: XI դ. սելջուկների արշավանքների հետևանքով կրկին ընդհատված հայոց հոգևոր, մշակութ. կյանքը նոր վերելք է ապրել Հս. Հայաստանում Զաքարյանների ժամանակաշրջանում: Մեծ աշխուժություն է նկատվել նաև Ռ-յան ոլորտում և շարունակվել XIII–XIV դդ.: Այդ շրջանից մեզ են հասել Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու [պահպանվել են միայն որմնանկարների 4 բեկորներ, գտնվում են Էրմիտաժում (Սանկտ Պետերբուրգ)], Տիգրան Հոնենցի (Ս. Գրիգոր Լուսավորիչ) և Հոնենցների տոհմական գերեզմանատան, *Ախթալայի Ս. Աստվածածին վանքի, Քոբայրավանքի, Կիրանց վանքի*, Հաղպատի վանքի հվ. և հս. պատերի, Ծիծեռնավանքի հս. պատի, Անիի Ս. Առաքելոց եկեղեցու, *Կեչառիսի վանքի, Դադիվանքի* և Առաչաձորի եկեղեցու որմնանկարները: Այդ ժամանակաշրջանի ընդհանուր դեկորատիվ ծրագիրը հետևյալն է՝ գմբեթում (եթե գմբեթային կառույց է) «Համբարձումն» է (Կիրանց վանք), թմբուկի վերին մասում՝ հրեշտակներով ու առաքյալներով շրջապատված աղոթող Աստվածամայրը (օրանտ): Ավագ խորանի որմնանկարների համար ընտրվել է երկու հիմն. տարբերակներից մեկը՝ կամ «Դեհսուսը» (*Տիգրան Հոնենցի եկեղեցի*, Հոնենցների գերեզմանատուն, Քոբայրավանքի փոքր եկեղեցի, Հաղպատի, Կեչառիսի վանքեր), կամ «Աստվածամայրը Մանկան հետ» («Օդիգիտրիա», Ախթալայի Ս. Աստվածածին վանք, Քոբայրավանքի մեծ եկեղեցի, Կիրանց վանք): Որմնանկարի հաջորդ երկու հարկաշարում, որպես կանոն, «Հաղորդությունն» է և սրբերի դասը: Տերունական տեսարաններում տաճարների հիմն. մասը լրացվել է շարքերով՝ կապված այն սրբի վարքի հետ, որին նվիրված էր եկեղեցին (Գրիգոր Լուսավորչի վարքաշարքը Տիգրան Հոնենցի եկեղեցում, Աստվածամոր շարքը Ախթալայի Ս. Աստվածածին վանքում և Քոբայրավանքի փոքր եկեղեցում):

Միջնադարում հայկ. եկեղեցիները որմնանկարներով զարդարվել են ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Նշանավոր են Սոխակ եկեղեցու (Լիբիական անապատում, մոտ XI դ.), *Լվովի Ս. Աստվածածին եկեղեցու*, Ղրիմի եկեղեցիների (XIV–XV դդ., տես *Սուրխաթի Ս. Խաչ վանք*), Նոր Ջուղայի

ՈՐՈԳԻՆԵՍ (XVII–XVIII դդ.) աշխարհիկ և եկեղեց. որմնանկարները: Ինքնօրինակ են Կիլիկյան Հայաստանի որմնանկարները (հավաստում են գրավոր աղբյուրները), որոնք վատ են պահպանվել և գրեթե ուսումնասիրված չեն: Համեմատաբար լավ վիճակում է վաղ շրջանի կիլիկյան որմնանկարներից Զորավարաց (Անազարբայում) եկեղեցունը (կառուցել է Թորոս Ա իշխանը XII դ. 1-ին քառորդին): Որմնանկար է պահպանվել այդ եռանավ քառասյուն ոչ մեծ բազիլիկի խորանում (պատկերված է Քրիստոսը գահին նստած՝ ավետարանիչների խորհրդանիշներով ու երկու սերովբեներով), ինչպես նաև՝ ավանդատան արմ. մասում (ս. զինվորի պատկերը): Այդ սխեման հիշեցնում է VII դ. հայկ. եկեղեցիների գեղանկարչ. հարդարանքը:

Եկեղեց. շինությունների հետ մեկտեղ միջնադարում զարդարվել են նաև աշխարհիկ շինությունները՝ հիմնականում թագավոր. պալատները: Այդ որմնանկարները, սակայն, չեն պահպանվել. մեզ են հասել միայն գրավոր աղբյուրների վկայությունները: *Թովմա Արծրունին* նկարագրել է Աղթամար կղզում Գագիկ թագավորի պալատի որմնանկարները, որտեղ պատկերված են եղել գահին բազմած թագավորը, նրան սպասարկող պատանիները, պարուհիներն ու երգիչները, որսի տեսարաններն ու կրկեսային ներկայացումները: Որմնանկարներով է զարդարվել նաև Անիի Բագրատունիների պալատը: Ն. Մառը նկատել է, որ 1907–1908-ի պեղումների ժամանակ հայտնաբերված պատերին նկարված են եղել ծաղկազարդ պարտեզներ և հեծյալների խումբ՝ թագավորների ու թագուհիների պատկերներով:

XVII–XVIII դդ. նկարազարդվել են հայկ. բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր՝ Էջմիածնի Մայր տաճարը, Ագուլիսի, Քանաքեռի, Երևանի, Գնդեվանքի (ուշ շերտ), Մեղրիի, Նոր Ջուղայի եկեղեցիները (Ս. Հովսեփ Հարեմաթացի, Ս. Կատարինե, Ս. Նիկողայոս, Ս. Հովհաննես ևն), ինչպես նաև բնակելի տներ (հայտնի են հատկապես Նոր Ջուղայի հայ խոջաների առանձնատների աշխարհիկ որմնանկարները): Այդ որմնանկարները կատարվել են հիմնականում տեմպերայով, անգամ յուղաներկով՝ կտավի վրա (Նոր Ջուղա): Կրոն. (եկեղեցիներում) և աշխարհիկ (տներում) թեմաների հետ մեկտեղ մեծ դեր է կատարել նաև զարդանկարը: Երբեմն այն ծածկել է ողջ մակերեսը, երբեմն՝ զուգակցվել թեմատիկ տեսարաններին՝ իբրև շրջանակավորում: Իրենց բնույթով բուս. այդ մոտիվները՝ ցանցկեն գծանկարներով ու հարուստ մանրամասներով, արլ. արվեստի համար տիպական նմուշներ են: Թեմատիկ պատկերներում հաճախ նկատվում է արմ. գեղանկարչության ազդեցությունը: Կատարող վարպետները, անշուշտ, քաջատեղյակ են եղել եվրոպ. արվեստի կոթողներին, իսկ ոմանք, հավանաբար, համապատասխան դպրոց են անցել: Պահպանվել են նաև նկարիչների անունները՝ Մինաս Զոհրաբյան (XVII դ., Նոր Ջուղա), *Հովհաննես Մրքուզ* և *Հովնաթանյանների* տոհմի երեք սերնդի ներկայացուցիչները, որոնք պատկերազարդել են Էջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիներ Երևանում, Թիֆլիսում, Ագուլիսում:

Կանոնական համակարգերի համեմատաբար ազատ մեկնաբանումը, գեղ. լեզվի ինքնատիպությունը, որ արդյունք է տեղական ժող. արվեստի և հելլենիստ. գեղանկարչության ավանդույթների զուգորդման, և, վերջապես, տեխնիկայի յուրօրինակությունը միջնադարյան հայկ. Ո. (որի մի մանչան մասն է մեզ հասել) դասում են արևելաքրիստ. մոնումենտալ գեղանկարչության նվաճումների շարքը:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.7, 1–5-րդ պատկերները:

Գրկ. Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: *Марр Н.Я., Ани. Книжная история города и раскопки на месте городища, Л.-М., 1934; Дурново Л.А., Краткая история древнеармянской живописи, Е., 1957;* Նույնի, *Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; Аракелян Б.Н., Армянские мозаики IV–VII вв.,* ԼՀԳ, *1971, № 3; Дрампян Р.Г., Искусство XVII–XVIII вв., "Искусство народов СССР", т. 4, М., 1976; Котанджян Н.Г., Цвет в раннесредневековой живописи Армении, Е., 1978;* Der Nersessian S., L'art Arménien, P., 1979; Kotandjian N., Fresques arméniennes du VIIe siècle d'après les monuments d'Arménie Soviétique, "Atti del Quinto simposio internazionale di Art Armena", V., 1988; Drampian I., Kotanjian N., The Frescoes in the Church of St. Gregory the Illuminator Founded by Tigran Honents in Ani, "Armenian review", v. 43, 1990.

Իրինա Դրամբյան
Նիկոլայ Քոթանջյան

ՈՐՈԳԻՆԵՍ, Որիգենես, Որիգինես, Օրիգենես Ալեքսանդրացի (185, Ալեքսանդրիա - 254, Փյունիկե), աստվածաբանական գիտության հիմնադիրը, քրիստոնեական մտքի մեծագույն ներկայացուցիչներից,

մեկնիչ, փիլիսոփա, քարոզիչ, մանկավարժ: Ծնվել է քրիստոնյա ընտանիքում: Նախն. կրթությունն ստացել է հոր՝ քերականության ուսուցիչ Լեոնիդեսի դպրոցում: Հայրը 202-ին նահատակվել է մարտիրոսական մահով, բազմամարդ ընտանիքը զրկվել է հայրական կալվածքից և ծայրաստիճան աղքատացել: Ո-ին համարել են «պողպատե մարդ», «զարմանալի Որոգինես», որ լի էր և կատարյալ ամենայն գիտությամբ» (Եվսեբիոս Կեսարացի): *Կղեմես Ալեքսանդրացուց* հետո 203–215-ին վարել է *Ալեքսանդրիայի* դպրոցի տեսչի պաշտոնը: Նա ընդհանուր դասախոսություններին մասնակցելու իրավունք է տվել նաև հեթանոս աշակերտների, որոնցից շատերը հետևել են նրա քրիստ. ուսմունքին և ընդունել Աստծո խոսքը: 212-ին եղել է Հռոմում, հանդիպել նշանավոր եկեղեցական ու հայտնի փիլիսոփա Հիպոլիտի հետ, 215-ին այցելել է Արաբիայի քրիստ. համայնքը, ապա՝ Անտիոք, Աթենք, Նիկոմեդիա, Կապադովկյան Կեսարիա: 216-ին թողել է Ալեքսանդրիան (դպրոցը փակվել է) և հաստատվել Պաղեստինյան Կեսարիայում, ձեռնադրվել քահանա, բացել աստվածաբան. նոր դպրոց և այն ղեկավարել 20 տարի: Այստեղ նրան աշակերտել են *Գրիգոր Աքանչելագործը* և *Եվսեբիոս Կեսարացին*: Ավանդվող փիլիսոփայությունն ու արտաքին գիտությունները համարել է նախապատրաստական առարկաներ Աստվածաշունչն ու քրիստ. վարդապետությունն ուսումնասիրելու համար: Նրա ուսմունքի հիմն. դրույթն էր՝ «Փիլիսոփայորեն հիմնավորել և արդարացնել քրիստոնեությունը» (Դավիթ Անհաղթ, Երկ., 1986, էջ 4): Դեկոս կայսրի օրոք ենթարկվել է դաժան հալածանքների (250–253) և վախճանվել:

Ո. իր բազմաժանր ու հարուստ վաստակով (ըստ *Եպիփան Կիպրացու*՝ 6 հզ. աշխատություն) հարստացրել է *Ընդհանրական եկեղեցու* հոգևոր գանձարանը: Սակայն նրա ժառանգության մեծ մասը կորստյան է մատնվել հակաորոգինեսյան հակաճառությունների ընթացքում: Ո-ի մատենագր. վաստակի կարևոր փաստաթուղթ է նրա մասին Գրիգոր Աքանչելագործի գրած ներբողը (238): Աստվածաշնչյան բնագրագիտության համար եզակի աշխատություն է «Վեցէջեանը», որից մեզ են հասել միայն առանձին հատվածներ: Այն համարվում է առաջին գիտ. ուսումնասիրությունը Հին կտակարանի քննական բնագրի կազմման գործում, որին նա նվիրաբերել է իր ողջ կյանքը: Ո. գրել է Հին ու Նոր կտակարանների շուրջ 290 այլ մեկնություններ, որոնցից 275-ը կորել է: Ո-ի սուրբգրային մեկնություններից պահպանվել են որոշ պատառիկներ. Ծննդոցի, Սաղմոսների, Առակների, Եսայու և Եզեկիելի մարգարեությունների, տասներկու փոքր մարգարեների, Մատթեոսի, Ղուկասի, Հովհաննեսի Ավետարանների, Պողոս առաքյալի թղթերի, Երգ երգոցի, որը համարվում է ամենահայտնի այլաբանական մեկնությունը: Ո-ի ժառանգությունը բացառիկ դեր է կատարել հատկապես Աստվածաշնչի մեկնաբանության պատմության մեջ: Ալեքսանդրյան դպրոցի հետևորդների և կապադովկյան հայրերի (*Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի*) աստվածաբան. մտակառուցման հիմքում ընկած է Ո-ի հիմնակարգած մեկնաբան. վերլուծման այլաբանական սկզբունքը: Դավան., ջատագով. մտքի պատմության ուսումնասիրման համար խիստ արժեքավոր են «Յաղագս սկզբանց» (220–230), «Ընդդէմ Կելսոսի» (246–249), «Երկխոսութիւններ Հերակլիդասի հետ» (240–242) երկերը: «Յաղագս սկզբանց» երկը քրիստ. աստվածաբանության առաջին համակարգված շարադրանքն է: Բաղկացած է 4 գրքից՝ Աստված, Աշխարհ, Ազատություն, Հայտնություն: Առաջինում ներկայացրել է Աստծո (իբրև ոգի, միտք կամ միակ), Լոգոսի (=Բանի), Սուրբ Հոգու, ոգեկան էակների նախատիեզեր. արարչագործությունը, նրանց անկումն ու վերականգնման ուժը. երկրորդում անդրադարձել է ներկա տիեզերքի արարչագործությանը, Հին և Նոր կտակարաններում ներկայացված Աստծո նույնությանը, Լոգոսի մարմնավորմանը, Սուրբ Հոգու բխմանը, հարությանը, դատաստանին և հավիտենական երանությանը. երրորդում արծարծել է բանական էակների ազատության, ինքնիշխանության խնդիրներ. չորրորդում ամփոփել է առաջին երեք գրքերը, խոսել Սուրբ Գրքի Աստվածաշունչ լինելու և մեկնողական կանոնների մասին: Հիսուս Քրիստոսի Աստվածությունը հավաստող ութ գրքից բաղկացած «Ընդդէմ Կելսոսի» աշխատությունը բացառումն է նորպլատոնական փիլիսոփա Կելսոսի «Ճշմարիտ խոսք» (178) հակաքրիստ. երկի: Այստեղ նա համառոտակի հերքել է Կելսոսի մեղադրանքները, ժխտել Հիսուս Քրիստոսի մեսիականու-

ՈՐՈՏՆԱՎԱՆՔ թյան դեմ հրեաների և Կելսոսի փաստարկնե-ը, չի ընդունել քրիստ. վարդապետությանն ու բարոյականությանն ուղղված Կելսոսի մեղադրանքները, մերժել է հեթանոս. պաշտամունքի ջատագովությունը: Երկի հիմնական գաղափարը Հիսուս Քրիստոսի Աստվածության հաստատումն է: Ո-ի գրչին են պատկանում նաև բարոյագործնական բնույթի երկեր՝ աղոթքի, նահատակության, Զատկի մասին:

Մեծ է Ո-ի ներդրումը քրիստ. աստվածաբան. մտքի ձևավորման ու զարգացման գործում: Նրան են պատկանում աստվածաբանության մեջ կարևոր դեր կատարած՝ «բնություն», «էություն», «ենթակայություն», «համագո», «աստվածամարդ» եզրերը: Սակայն նրա աստվածաբան. որոշ տեսակետներ (հոգիների նախագոյությունը, աշխարհի արարումը, կործանումն ու վերստին արարումը, որը հավիտենական գործընթաց է, մարդկության պատմությունը մի պարզ դիպված է նախաաշխարհյան և հետաշխարհյան զարգացման մեջ, բոլոր էակները, անգամ սատանան, անխտիր փրկվելու են ևն) կառուցված են անտիկ մտածողության ակնհայտ հետևողությամբ, ինչը պատճառ է դարձել ոչ միանշանակ այն վերաբերմունքի, որը եկեղեցին որդեգրել է նրա ժառանգության նկատմամբ: Եկեղեցու հայրերի մի մասը՝ կապադովկյան հայրեր, Եվագր Պոնտացի, Հովհան Ոսկեբերան և ուր., դրական են վերաբերվել Ո-ի վաստակին, մյուս մասը՝ Պետրոս Ալեքսանդրացի, Եպիփան Կիպրացի, Անտիպատրոս Բոստրացի և ուր.՝ բացասական: Ելնելով դավան. եկեղեցաքաղ. նկատառումներից՝ ժամանակի ընթացքում բացահայտ ժխտական վերաբերմունք է ձևավորվել Ո-ի ժառանգության նկատմամբ: Հուստինիանոս I կայսրի (527–565) հրովարտակով, 543-ին Ո. ու նրա վարդապետությունը նզովքի են ենթարկվել և դրա հիման վրա դատապարտվել 553-ի և 680–681-ի Կ. Պոլսի ժողովներում:

Հայերեն թարգմանությամբ պահպանվել են առանձին նշխարներ Ո-ի սուրբգրային մեկնություններից, որոնք մեզ են հասել մի շարք խմբագիր մեկնությունների (Ղևտիկոնի, Երգ երգոցի, Կաթողիկե թղթոց) *պատճառների*, Աստվածաշնչի գրքերին կցված առաջաբաններ ի միջոցով: Հայերեն ձեռագրերում հատվածներ կան նաև Արարածոց, Հոբի, Եզեկիելի գրքերի մեկնություններից: Ո-ի աշխատությունների քաղված հատվածներ զետեղվել են հայ դավանաբան. գրականության մեջ:

Երկ. Նշխարներ Որոգինեսի հայկական թարգմանություններից, Խաչաք Որոգինի, հրտ. Ե. Պետրոսյանի, Հ. Նաջարյանի, «Էջմիածին», 1979, № 2, 1980, № 5:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 649–653: Պետրոսյան Ե., Հայրաբանություն, հ. 1, Էջմիածին, 1996, էջ 131–160: Migne J. P., PG, t. 9–17, P., 1857–66.

Հակոբ Քյոսեյան

ՈՐՈՏՆԱՎԱՆՔ, Վաղատնի վանք, ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղից 2 *կմ* հարավ-արևելք, Որոտան գետի կիրճի եզրին: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի, Ո-ի հնագույն՝ Ս. Գրիգոր միանավ եկեղեցին (այժմ՝ ավերակ) հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*, վերակառուցել՝ Հայր Ստեփանոս ճգնավորը: Եկեղեցին վաղ միջնադարում հայտնի է եղել օձի խայթոցը բուժելու իր զորությամբ և դարձել նշանավոր ուխտատեղի: Սյունյաց Սմբատ թագավորի հրամանով Շահանդուխտ թագուհին Ս. Գրիգոր եկեղեցու մոտ՝ նրա հս-արլ. կողմում, 1000-ին կառուցել է թաղածածկ, հս. պատին կից երկու ավանդատնով, հվ-ից այնասրահով Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին, նրա գավիթը, տնտ.

Որոտնավանքը (XI դ.) արմ-ից

շինությունները, հիմնել մեծաթիվ միաբանությամբ վանք ու ադարակ նվիրել: Շահանդուխտի կրտսեր որդի, Սյունյաց Վասակ թագավորի եղբայր իշխան Սևադան Ո-ի արլ. կողմում 1006-ին կառուցել է Ս. Կարապետ եկեղեցին և նրան արմ-ից կից՝ կամարակապ գավիթ-սրահը: Եկեղեցին ունի կենտրոնագմբեթ, եռախորան, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով հորինվածք: Ներսը զարդարված է եղել որմնանկարներով, որոնցից հս. խո-

րանում պահպանված հատվածը պատկերում է շրջանի մեջ աստղազարդ կապույտ երկինք, կենտրոնում՝ հրեշտակ: Եկեղեցու հս. պատին կից, աստիճանաձև պատվանդանի վրա XI դ. հուշասյուն է կանգնեցվել՝ դագաթին խոյակի վրա դրված խաչարձանով: Շահանդուխտ թագուհին և իշխան Սևադան թաղվել են Ո-ում: XIII դ. 70-ական թթ. նորոգվել է Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին: 1315-ին Բուրթել և Բուղդա Օրբելյան իշխաններն այցելել են Ո., նվիրել այգիներ, դյուղեր, միջոցներ տրամադրել՝ վանքի նորոգման համար: 1340-ական թթ. *Գլաձորի համալսարանից* Ո. է տեղափոխվել *Հովհան Որոտնեցին* (այստեղից է նա սկզբնական «Կախիկ» մականվան փոխարեն ստացել «Որոտնեցի» անունը): XIII դ. 80-ական թթ. Ո-ում է գործել *Գրիգոր Տաթևացին*, որը 1386-ին այստեղ ընդօրինակել է Պետրոս Արագոնացու «Գիրք յոթն առաքինութեանցը»: 1407-ին Ո. է այցելել *Թովմա Մեծոփեցին*: Նույն տարում Ո-ում Առաքել ծաղկողը Ավետարան է գրչագրել և նկարազարդել: 1438-ին վանահայր Սարգիս Անգեղակոթցին վերակառուցել է Ս. Կարապետ եկեղեցու գմբեթը: Ո. գործել է մինչև XX դ. սկիզբը: 1931-ին երկրաշարժից ավերվել է. քանդվել են Ս. Կարապետ եկեղեցու գմբեթը և ծածկերը, հուշասյունը, այունասրահները, վանքի տնտ. շինությունները, պարիսպը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Զանգեզուրի գավառ, Սիսիան, Աշ, Թ., 1898: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960:

Մուրադ Հասրաթյան

Չ

ՉԱՄՉՅԱՆ Միքայել (Կարապետ) Աբրահամի (4.12.1738, Կ.Պոլիս – 30.11.1823, Կ.Պոլիս), պատմաբան, լեզվաբան, աստվածաբան: Վենետիկի *Մխիթարյան միաբանության* անդամ (1762-ից), վարդապետ (1769-ից), Կ.Պոլսի Մխիթարյանների Մեծավոր (1795–1823): Սովորել է Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան վարժարանում (1757–62), տիրապետել հին և նոր բազմաթիվ լեզուների: Զբաղվել է քարոզչությամբ և ուսուցչությամբ. եղել է Ս. Ղազարի Մխիթարյան դպրոցի վերատեսուչ (1776–89): Նրան աշակերտել են Մ. և Հ. Ավգերյանները, Մ.Ջախջախյանը, Ղ. Ինճիճյանը և ուրիշներ:

Չ. հեղինակել է «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատությունը (1779), որն ակնառու դեր է խաղացել հայոց լեզվի ուսուցման գործում և շուրջ հարյուր տարի օգտագործվել որպես դրաբարի քերականության լավագույն դասագիրք (1801–59-ին ունեցել է 15 վերահրատարակություն): Մերժելով լատինաբան հեղինակների քերականությունները, նրանց նորամուծությունները, որոնք, կաղապարվելով լատիներենին, չեն ներկայացրել դրաբարի քերականության իրական նկարագիրը, նա վերջնական ու վճռական հարված է հասցրել լատինաբանությանը և նպաստել հայերենի քերականության նախնական ու հարազատ վիճակը վերականգնելու և հայերենը խորթ ու օտար տարրերից մաքրելու գործին:

Չ-ի գիտ. ժառանգության գլուխգործոցը «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784» (պր. 1–3, 1784–86) երկասիրությունն է, որը Մովսես Խորենացու Պատմությունից հետո Հայոց ամբողջական, համահավաք պատմություն ստեղծելու առաջին փորձն է: «Պատմութիւն Հայոց»-ը պատմ. իրադարձությունները դիտել է որպես Աստծո կամքի արտահայտություն, նախախնամության հետևանք, նույնացրել ժողովրդի և եկեղեցու պատմությունը: Հայոց պատմության շատ հարցեր քննարկել է կաթոլիցիզմի շահախնդրության դիրքերից:

Մեծ է Չ-ի վաստակը հայ աստվածաբանության ու մեկնողական գրակ-յան զարգացման գործում: Նրա աստվածաբան. առաջին աշխատությունը «Վահան ուղղափառութեան» քառահատորյակն է (չի պահպանվել): Սա դավանաբան. վիճաբանություն է ընդդեմ Կ. Պոլսի *Հակոբ Նալյան* պատրիարքի «Գիրք կոչեցեալ վէմ հաւատոյ» և «Ճրագ ճշմարտութեան» հակակաթոլիկ. երկասիրությունների: Չ-ին առանձնակի հետաքրքրել են Սաղմոսարանն ու նրա հայերեն թարգմանությունները: Երկարատև տքնաջան աշխատանքի արդյունք են սաղմոսների Ավագ օրհնություններին նվիրված «Նուագարան օրհնութեանց...» (1801) երկասիրությունը և *սաղմոսները* մեկնող «Մեկնութիւն սաղմոսաց» տասը մեծադիր հատորները (հ. 1–10, 1815–23): Վերջինս հայ մեկնողական գրակ-յան գլուխգործոց է: Սաղմոսների հայերեն տեքստերը համեմատելով հուն., լատ., ասոր., եթիոպ., արաբ. թարգմանությունների հետ և ապա՝ եբր. բնագրի օգ-

նությամբ Զ. ներկայացրել է սաղմոսների հայերեն հնագույն թարգմանությունների նախնական ու հարազատ օրինակները՝ մանրամասն ծանոթագրություններով և բացատրություններով: Զ. մեկնաբանել է նաև սաղմոսների գեղ., իմաստասիր. և գեղագիտ. արժեքները: Անտիպ է Զ-ի նույն եղանակով մեկնված «Մեկնութիւն Ավետարանին Յովհաննու» աշխատությունը (գտնվում է Վենետիկի Մխիթարյանների ձեռագրատանը):

Զ. գործել է այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը մայր հայրենիքում և գաղթավայրերում տարաբաժանված էր դավան. երկու հակամարտ հատվածների: Առավել չափավոր ու ազդ. նկարագիր ունեցող հայ կաթոլիկ որոշ գործիչների, այդ թվում և Զ-ին, մտահոգել է այդ վիճակը: Գիտակցելով, որ դավան. անզիջում պայքարն է՛լ ավելի է մասնատում ժողովրդին և նրան դարձնում անպաշտպան ու թույլ, Զ. փորձել է հաշտեցնել հակամարտ կողմերին և քարոզել եղբայրական սեր ու միություն: Նա դեմ է եղել հայերի շրջանում կաթոլիկ միսիոներների հավատափոխ. գործունեությանը և հանդես եկել հայերի ազդ., մշակութ., կրոն. և կենցաղային ավանդույթներն անխաթար պահելու օգտին: Նրա ջանքերը նպաստել են լատինամոլների դեմ մղվող պայքարին: Զ. ձգտել է օսմ. կայսրությունում բնակվող հայ կաթոլիկների համար տանելի կացություն ստեղծել՝ օսմ. օրենքների համակերպությամբ, հայ կաթոլիկ հոգևոր վերնախավի և Կ. Պոլսի հայոց պատրիարքության հովանավորությամբ: Իր որդեգրած քաղաքականությունն իրականացնելու նպատակով հեղինակել է դավանաբան. բնույթի մի աշխատություն, որի հիմն. խնդիրը Հայ առաքելական եկեղեցու ուղղափառությունը հիմնավորելն էր: 40 տարուց ավելի նա աշխատել է «Վահան հաւատոյ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ սկսեալ ի Սրբոյն Գրիգորէ Հայաստանեայց Լուսաւորչէ մինչև ցայսօր» մեծածավալ (շուրջ 900 էջ) երկասիրության վրա: Աշխատության յուրաքանչյուր տասը գլուխներում Զ. մեկ առ մեկ հերքել է Վատիկանի կողմից Հայ եկեղեցուն ներկայացված տասը կարծեցյալ մոլորությունները: «Վահան հաւատոյ»-ն դավան. հաշտության կոչ էր հատկապես Կ. Պոլսի առաքելական և կաթոլիկ հայկ. համայնքներին: Ապացուցելով Հայ եկեղեցու ուղղափառությունը և մերժելով լատինամոլների ներկայացրած հերետիկոս և հերձվածող որակումները՝ Զ. շեշտել է, որ ինչպես Կաթոլիկ եկեղեցին, այնպես էլ Հայ եկեղեցին լիիրավ, համազոր և համահավասար անդամն է Ընդհանրական քրիստ. եկեղեցու, և որոշ վերապահությամբ է մոտեցել նույնիսկ պապական գերիշխանության հիմնահարցին: Զ. և նրա գաղափարակիցները չեն համարձակվել բացահայտ քարոզել «Վահան հաւատոյ»-ում արծարծված գաղափարները և թաքցրել են գիրքը: Սակայն 1815-ի մարտին Վատիկանի գործակալները գողացել են այն և ուղարկել Հռոմ: 1819-ի մայիսի 5-ին Հռոմի Հավատաքննության գերագույն ատյանը «Վահան հաւատոյ»-ն ճանաչել է չափազանց վտանգավոր, մոլորական ու հերետիկոսական և ոչնչացրել: Հայտնի է «Վահան հաւատոյ»-ի համառոտ մի տարբերակ, որից ծագել են տարբեր մատենադարաններում գտնվող բազմաթիվ գրչագիր օրինակներ: Դրանցից մեկը 1873-ին տպագրվել է Կալկաթայում՝ «Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» վերնագրով: Տեսական աշխատանքներից բացի Զ. դիմել է նաև գործնական քայլերի՝ Կ. Պոլսի հայ առաքելական և կաթոլիկ համայնքները միաբանելու ուղղությամբ: Այդ նպատակով բանակցություններ է վարել Կ.Պոլսի հայոց պատրիարքներ Հովհաննես Զամաշճյանի և Պողոս Գրիգորյանի հետ: Հրավիրվել են խորհրդակցություններ, պատրաստվել «Հրաւեր սիրոյ» հատուկ շրջաբերականը, սակայն՝ անարդյունք: Միութենական այդ ճիգերը դատապարտել են թե՛ Էջմիածինը, թե՛ Վատիկանը:

Երկ. Խրախճան պատմութեան հայոց, Վնտ., 1811: Հրահանգ յոթնեկի..., Վնտ., 1802: Պատկեր տօնից Սուրբ Աստուածածնին, Վնտ., 1805: Սեղան խնկոց, Վնտ., 1816:

Գրկ. Սարգիսյան Բ., Երկհարիւրամեա գրականական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկո Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905, էջ 8–42: Ութուջյան Ա., Պոլսահայ համայնքների միության խնդիրը և Մ.Զամչյանը, ԲԵՀ, 1978, № 3: Նույնի, Միքայել Զամչյան (կյանքի և գործունեության համառոտ ուրվագիծ), ԼՀԳ, 1988, № 9: Ճեմճեմյան Ս., Հ. Միքայել Զամչյան և իր Հայոց պատմությունը, Վնտ., 1983:

Աղավնի Ութուջյան

ՉԱՐԵՔԱ ԱՆԱՊԱՏ, Զարեքադետի անապատ, Զարեքավանք, Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդմանաձոր գավառում, Շամքոր գետի ձախ ափին (այժմ՝ Ադրբեջանի

ՉԱՐՉԱՐԱՆԱՑ Գետաբեկի շրջանում): Ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու, XVII դ. հիմնադրել է *Այունյաց Մեծ անապատի* սան Դավիթ եպիսկոպոսը և կառուցել երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկի հորինվածքով Ս. Աստվածածին եկեղեցին: Կարապետ Բ Ուլնեցի կաթողիկոսը (1726–29) Զ.ա-ին նյութ. օգնություն հասցնելու առթիվ գրած կոնդակում այն անվանել է «գլուխ ամենայն անապատաց, անուանի և հռչակեալն յամենայն երկրի, մեծ և սուրբ»: 1659-ին Զ. ա-ի հս-արմ.

Զարեքա անապատը (XVII դ.) հվ-արմ-ից

կողմում վանահայր Սարգիս վարդապետը կառուցել է քառակուսի հատակագծով, 8-այուսնանի աղյուսաշեն գմբեթով զանգակատունը՝ նվիրված Գաբրիել ու Միքայել հրեշտակապետներին: Զանգակատան հվ. ճակատին, լուսամուտի երկու կողմերում տեղադրված են սրնգահար հրեշտակների հարթաքանդակներ: 1684-ին վանահայր Ներսես վարդապետը Զ. ա-ի 70 միաբանների մասնակցությամբ կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցուն արմ. կողմից կից, բազիլիկ հորինվածքով գավիթը, որի հվ. ճակատը եռակամար այունասրահ է: 1667-ին Սարգիս վարդապետը Զ. ա-ի հս-արմ. բլրի գագաթին կառուցել է «Հարանց» կոչվող թաղածածկ մատուռը, որը հետագայում ծառայել է որպես անապատի վանահայրերի տապանատուն: 1717-ին Մկրտիչ վարդապետը կառուցել է Զ. ա-ի կամարակապ դարպասով պարիսպը, որին կից են թաղածածկ 30 խուց: Համալիրի արմ. կողմում խոհանոցով սեղանատունն է՝ քարե երկշարք սեղաններով:

1730-ին վանահայր Մկրտիչ վարդապետը հանգանակությամբ ձեռք բերած միջոցներով նորոգել է լեզգիների արշավանքից ավերված Զ. ա.:

XVII–XVIII դդ. Զ. ա-ում ձեռագրեր են նորոգվել և գրվել: XVIII դ. անապատն ունեցել է ընդարձակ կալվածքներ, անտառ, ձմեռանոցներ, ջրաղաց ևն, որոնք բազմիցս կողոպտել են շրջակա մահմեդ. բնակիչները: 1862-ին Սարգիս վարդապետը նորոգել է Զ. ա.: 1902-ին մահմեդ. ավազակախումբը կողոպտել է անապատը և սպանել վանահայր Աստվածատուր վարդապետին: 1918-ից Զ.ա. լքվել է և ամայացել:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Զալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Թ., 1842: Բարխուդարյանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Լալայան Ե., Գանձակի գավառ, ԱՀ, 1899, № 1: Ոսկյան Հ., Արցախի վանքերը, Վնն., 1953: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1982: Կարապետյան Ս., Գարդմանաց աշխարհի վանքերը. Զարեք, «Գարդմանք», 1996, № 2:

Մուրադ Հասրաթյան

ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՐԳԵՐ, տես *Ավագ շաբաթ* հոդվածի Երաժշտություն մասը:



Պ

ՊԱՀՔ, պաս, պահոց օրեր, պահեցողություն, ծոմ, ծոմապահություն, որոշ կրոններում ուտելիքի կամ դրա առանձին տեսակների համար որոշակի ժամկետով սահմանված արգելք, կերակուրներից լրիվ կամ մասնակի հրաժարում (պահեցողություն): Պ-ի արտահայտած մյուս իմաստն ինքնաքննության ու խոկումի ժամանակաշրջանն է, հատկապես Մեծ պահոց շրջանը (տես *Մեծ պահք*), երբ հավատացյալները ոչ միայն կերակուրներից են հրաժարվում, այլև՝ հեռու են մնում մարմնական հաճույքներից, ապաշխարությամբ ու աղոթասացությամբ չափավոր, զուսպ կյանք վարում: Պ. հիմնավորվում է մարմնի հանդեպ հոգու առաջնայնության ուսմունքով: Քրիստ., մահմեդ., հուդայական կրոններում Պ. հավատի ամրապնդման միջոց է, որն ունի նաև մաքրագործական և ճգնակեցական նշանակություն: Պ. քրիստ. եկեղեցու կյանքի կարևոր երևույթներից է: Բազմիցս վկայված է Աստվածաշնչում, ինչպես նաև՝ Նոր կտակարանում՝ երկնքի արքայությանն արժանի դառնալու և մեղքերից թողություն ստանալու համար:

Ներկայումս նույնացված Պ. և ծոմ բառերը նախկինում տարբեր իմաստներ են արտահայտել: Ծոմ նշանակել է օրական մեկ անգամ ուտելով պաս պահել, իսկ Պ.՝ ընդհանրապես կերակուր չուտել: Ներկայումս Պ. արտահայտում է պահեցողության այն տեսակը, որի ընթացքում թույլատրվում է գործածել բուս. ծագում ունեցող կերակուրներ՝ զերծ մնալով ամեն տեսակ մսեղենից ու կաթնեղենից:

Ըստ Հայ եկեղեցու սահմանած կարգի, տարվա մոտ վեց ամիսը պահոց օրեր են: Ըստ այդմ Հայ եկեղեցին տարվա օրերը բաժանել է երկու մասի՝ տոնական և պահոց օրերի: Եկեղեց. կանոնների համաձայն, յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերը Պ. են: Պահոց օրերը լինում են՝ բուն պահոց օրեր, երբ պետք է հրաժարվել կենդան. ծագում ունեցող կերակուրների (մսեղեն, կաթնեղեն, ձկնեղեն) օգտագործումից և նավակատյաց (տես *Նավակատիք*) պահոց օրեր, երբ կարելի է ուտել կաթնեղեն և ձկնեղեն: Նավակատիքի օրեր են հինգ *Տաղավարների* շաբաթապահոց շաբաթ օրերը: Պահոց օրերը բաժանված են երեք խմբի. ա. Օրական Պ., բ. Քառասնօրյա Պ. (Մեծ Պ.), գ. Շաբաթական Պ. (Շաբաթապահք):

Օրական Պ., յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերի Պ., որը, համաձայն Հայ եկեղեցու Տոնացույցի, վերաբերում է տարվա գրեթե բոլոր շաբաթներին, բացառությամբ Ս. Ծննդյան շաբաթվա (հունվ. 6–13) չորեքշաբթի և ուրբաթ օրերի և ս. Զատկից մինչև Համբարձում ընկած շաբաթների չորեքշաբթի ու ուրբաթ օրերի, որոնք պահոց օրեր չեն:

Քառասնօրյա Պ., կոչվում է նաև Մեծ Պ. (Բուն Բարեկենդանի երկուշաբթիից մինչև Ավագ ուրբաթ): Քառասուն օրը կապված է անապատ քաշված Քրիստոսի քառասնօրյա ծոմապահության, աղոթքի և ապաշխարության շրջանի, ինչպես նաև Ս.Գրքում հաճախակի հիշվող 40 խորհրդանշական թվի հետ: Իրա-

կանում Քառասնօրյա Պ. տևում է 47 օր, իսկ 48-րդ օրը ճրագալույց ս. Զատիկի նավակատիքն է: Քառասնօրյա Պ. օրերը կոչվում են «աղուհացի կամ աղևացքի օրեր», այսինքն՝ Մեծ Պ. աղով ու հացով անցկացնելու ժամանակաշրջան: Հնում աղ ու հացով էին ապրում ճգնավորներն ու անապատականները: Ներկայումս աղուհացի օրը պահոց այն օրն է, երբ պետք է Պ-ի կերակուրներ ուտել: Մեծ Պ-ի շրջանում փակվում է եկեղեցու խորանի վարագույրը, և պսակ չի կատարվում:

Շաբաթապահք, հիմնականում հինգ օրվա՝ երկուշաբթիից մինչև ուրբաթ ընկած Պ. է: Հայ եկեղեցու շաբաթապահքերի կարգադրությունը վերագրվում է Ներսես Բ Բագրեվանդցի կաթողիկոսին (548–557): Շաբաթական Պ-երը 12 են. Ծննդյան, Եղիական, Լուսավորչի, Վարդավառի, Վերափոխման (Աստվածածնի), Խաչվերացի, Վարագա Խաչի, Հիսնակաց, ս. Հակոբի, Առաջավորաց, Մեծ պահոց երկրորդ շաբաթվա, Ավագ շաբաթ: Շաբաթապահքերը բաժանված են երեք խմբերի.

1. Հինգ Տաղավարների կամ Տերունական օրերի շաբաթապահքեր՝ Ծննդյան, Հարության, Վարդավառի, Աստվածածնի, Խաչի:

ա. Ծննդյան Պ., Հիսուսի ծննդյան շաբաթվա յոթնօրյակն է, տևում է վեց օր: Այդ ընթացքում ոչ մի տոն չկա, վեց օրերը պահոց օրեր են և ոչ՝ ուտիքի: Ի հակադրություն նախածննդյան շաբաթապահքի, հետծննդյան առաջին շաբաթը (հունվ. 6–13) պահոց օրեր չեն:

բ. Հարության Պ., կոչվում է նաև Ավագ շաբաթի Պ., որովհետև վերաբերում է Զատկին նախորդող վեց օրերին: Ավագ երկուշաբթիից Ավագ շաբաթ օրը Հարության շաբաթապահքի օրերն են: Այս Պ. անբաժան մասն է Քառասնօրյա կամ Մեծ Պ-ի: Այս ընթացքում չկա ոչ մի տոն, հետևաբար վեց օրերն էլ պահոց են:

գ. Վարդավառի Պ., Այլակերպության այս շաբաթապահքը տևում է հինգ օր և տոն չունի:

դ. Աստվածածնի կամ Վերափոխման Պ., նույնպես տևում է հինգ օր և տոն չունի:

ե. Խաչի Պ., Խաչվերացի շաբաթապահքը տևում է հինգ օր և տոն չունի:

2. Տարվա չորս եղանակների շաբաթապահքեր՝ Մեծ պահոց երկրորդ շաբաթվա, Եղիական, Վարագա Խաչի, ս. Հակոբի Պ-եր:

ա. Մեծ պահոց երկրորդ շաբաթվա Պ., այս շաբաթապահքը (մարտին) կոչվում է նաև Գարնանամուտի Պ.: Պատկանում է Մեծ պահոց շարքին: Առանձնացված է եղանակային լինելու պատճառով: Տևում է հինգ օր և տոն չունի:

բ. Եղիական Պ., լինելով ամառնամուտի (հունիս) Պ., կոչվում է նաև Ամռան Պ., իսկ ժողովրդական լեզվով՝ նաև «Թրթուրի պաս»: Զատկից հետո առաջին շաբաթապահքն է: Եղանակային Պ. լինելով՝ կապ չունի Եղիա մարգարեի հետ, սակայն Եղիական է կոչվում, որովհետև շաբաթապահքի վերջին օրը հիշատակն է Եղիա մարգարեի: Տևում է հինգ օր և տոն չունի:

գ. Վարագա Խաչի Պ., աշնանամուտի (սեպտեմբեր) այս շաբաթապահքը կոչվում է նաև ս. Գևորգի Պ., որովհետև շաբաթավերջը ս. Գևորգի տոնն է: Այս Պ. ունի սրբոց տոներ և տևում է հինգ օր:

դ. ս. Հակոբի Պ., եղանակների շաբաթապահքերից վերջինն է, սկսվում է ձմեռնամուտին (դեկտեմբեր): Զուգադիպում է ս. Հակոբի տոնին, այստեղից էլ՝ իր ժող. անունը: Ունի սրբոց տոներ և տևում է հինգ օր:

3. Այլևայլ շաբաթապահքեր, դրանք են՝ Առաջավորաց, Հիսնակաց և Լուսավորչի Պ-երը:

ա. Առաջավորաց Պ., կոչվում է նաև Առաջավորք, նշանակում է առաջինը: Տևում է հինգ օր, ունի սրբոց տոներ: Շաբաթավերջը ս. Սարգսի տոնն է և կոչվում է նաև (ժող.) ս. Սարգսի Պ.:

բ. Հիսնակաց Պ., Հիսնակ նշանակում է հիսուն օրերի ժամանակաշրջան: Հնում հիսնակաց պահեցողությունն սկսվել է Քրիստոսի ծնունդից հիսուն օր առաջ և պահվել մինչև Աստվածահայտնության տոնը: Ներկայումս Հիսնակաց Պ. պահվում է միայն հինգ օր:

գ. Լուսավորչի Պ., այդպես է կոչվում, որովհետև նվիրված է ս. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտին: Տևում է հինգ օր և իր մեջ պարփակում է սրբոց այլ տոներ:

Կան նաև այլ՝ տարբեր առիթներով պահվող Պ-եր: Այսպես, եկեղեցականներն իրենց ձեռնադրությունից հետո 40 օր պետք է Պ. պահեն, ոմանք Պ. են պահում նաև հաղորդությունից առաջ ևն:

Արտաշես Ղազարյան

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, տես *Վարդավառ*:

ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐ, քրիստոնեական աղանդավորներ Հայաստանում և Բյուզանդիայում VII–IX դդ.: Պ. են կոչվել իրենց շրջանում մեծ հեղինակություն և հարգանք վայելած քրիստ. առաջին համայնքները կազմակերպողի՝ Պողոս առաքյալի անունով: Պ-ի ղեկավարները՝ աղանդապետները, կրել են Պողոս առաքյալի աշակերտների անունները (Կոստանդին-Սիլվան, Սիմեոն-Տիտոս, Գեգնեսիոս-Տիմոթեոս, Հովսեփ-Էպափրոդիտոս, Սերգիոս-Տյուքիկոս): Իրենց համայնքները նույնպես անվանել են Պողոս առաքյալի հիմնած համայնքների անուններով (Կիբոսա-Մակեդոնիա, Մանանալի-Աքայա, Մոպսուեստիա-Եփեսոս, Պոնտոսի Կինոխորիոն-Լաոդիկիա ևն):

Պ-ի *աղանդը* ծագել ու ծավալվել է Հայաստանի բյուզ. մասում, տարածվել կայսրության բազմաթիվ նահանգներում՝ իր շարքերում ընդգրկելով հույների և ասորիների: Դեպի Թրակիա Պ-ի գաղթեցումների հետևանքով աղանդը և նրա գաղափարախոսությունը տարածում են գտել նաև բուլղարացիների շրջանում:

Պ-ի ծագման ու տարածման մասին գոյություն ունի երեք պատում՝ բյուզ., հայկ. և բուլղ.: Հնագույնը բյուզանդականն է, համաձայն որի՝ Կալինիկե անունով աղանդավոր մի կին իր երկու որդիներին՝ Պողոսին և Հովհաննեսին, Սամոսատից ուղարկում է Էպիսպարիս (հավանաբար՝ Բարձր Հայքի Սպերը), որտեղ նրանք քարոզում են աղանդի գաղափարները: Աղանդը մանիքեության փոխարեն սկսում է կոչվել պավլիկյանություն: Ըստ Կ. Պոլսի Փոտ պատրիարքի, Կալինիկեի որդիների Պավլոս և Իոաննես անունների միացումից (Պավլոիոաններ) է առաջացել պավլիկյան անվանումը: Պատումի հիմն. նպատակն է Պ-ին համարել մանիքեցիների հետնորդներ: Ինչ վերաբերում է Կալինիկեի որդի Պողոսին, ապա նա արտացոլումն է III դ. նշանավոր աղանդապետ Պողոս Սամոսատցու, որի աղանդը՝ պավլիանիտությունը, աղբյուրներում սխալմամբ կամ որոշակի միտումով նույնացվել է պավլիկյանության հետ:

Հայկ. առասպելի համաձայն՝ հոռոմների մի կայսր Պ-ին հալածել է, և նրանք փախել են Կովկասյան լեռներից այն կողմ: Նրանց գլխավորել է Մարե անունով մի կախարդ կին: Շեթի անունով մեկ այլ կին Թուրքերի (հավանաբար՝ արաբների) տիրապետությունից հետո եկել է Հայաստան, որտեղ հարաբերության մեջ է մտել սուրբ Եփրեմի մոտ աշակերտող Այրարատ նահանգից ոմն Պողոսի հետ: Աղանդավորները Քրիստոսին նույնացրել են արեգակի հետ՝ ոչ մահացած և ոչ հարություն առած: Առասպելի պատմականն այն է, որ աղանդը Հայաստան մուտք է գործել բյուզ. Հայաստանից՝ կայսրերի հալածանքների հետևանքով: Առասպելում արտահայտված է նաև բարի և չար աստվածների գոյության մասին Պ-ի դավանությունը:

Ըստ բուլղ. առասպելի՝ Պայլ անունով մի սատանայի աշակերտներ Սուբոտինն ու Շուտիլը Բուլղարիա են գնացել Կապադովկիայից, կոչվել Պողոս և Հովհաննես (հիշենք Կալինիկեի որդիների անունները) և պավլիկյանություն քարոզել: Հովհան Ոսկեբերանը, Կ. Պոլսից գալով Պետրիչ (Փիլիպուպոլսի Պետրիցոս գյուղը, որտեղ կառուցվել է Գրիգոր Բակուրյանի վանքը), հրամայել է մորթազերծ անել Սուբոտին-Պողոսին և Շուտիլ-Հովհաննեսին, նզովել է Պ-ին և նրանց աշակերտներին: Շուտիլ անվան մեջ հավանաբար իր արտացոլումն է գտել հայկ. առասպելի Շեթին, իսկ ի դեմս Սուբոտինի (հուն.՝ Սիմբատիոս)՝ գուցե թոնդրակյան առաջնորդ Սմբատ Զարեհավանցին: Ենթադրվում է, որ նրանք Հովհաննես I Զմշկիկի կողմից Փիլիպուպոլիս գաղթեցված թոնդրակեցիներն են:

Բուլղ. առասպելը ստեղծվել է բյուզ. և հայկ. նույն բովանդակությամբ առասպելներին քաջածանոթ միջավայրում, հավանաբար Փիլիպուպոլսի Գրիգոր Բակուրյանի վանքի հայ քաղկեդոն. հոգևորականության շրջանում:

Պ. առաջին անգամ հիշատակվում են VIII դ. սկզբին Պարտավում գումարված եկեղեց. ժողովի որոշումներում: Հայ հեղինակներից աղանդի մասին գրել է *Հովհաննես Գ Օձնեցին* իր «Ընդդէմ պաւղիկեանց» ճառում, որտեղ, սակայն, չի տրված ո՛չ Պ-ի պատմությունը և ո՛չ էլ նրանց գաղափարախոսությունը: Սակավաթիվ պատմ. փաստերը վկայում են Պ-ի դեմ *Ներսես Գ Տայեցու* հալածանքների և «թլփատված բռնակալների»՝ արաբների հետ նրանց դաշնակցելու մասին: Դվինի 719/720-ի ժողովի (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) ընդունած Հովհաննես Գ Օձնեցու հեղինակած կանոններից երկուսը (29-րդ և 32-րդ) ամբողջությամբ վերաբերում են Պ-ին և խիստ պատիժներ սահմանում նրանց դեմ:

Պ-ի և նրանց գաղափարախոսության մասին հիմն. աղբյուրները բյուզ. պատմ. երկերն ու ժամանակագրություններն են, մասնավորապես՝ IX դ. հեղինակ Պետրոս Սիկիլիացու հանգամանալից ու արժեքավոր «Պավլիկյանների պատմությունը» (Կ. Պոլսի Փոտ պատրիարքը տվել է դրա վերաշարադրանքը), ժամանակագիրներ Թեոփանես Խոստովանողի (IX դ.), Աննա Կոմնենայի (XII դ.) երկերը ևն:

Ըստ Պետրոս Սիկիլիացու, Պ-ի աղանդը ծագել է բյուզ. Կոստաս II կայսրի օրոք (642–668), Հայաստանի Սամոսատ (Արշամաշատ) քաղաքի Մանանալի ավանում, իսկ աղանդի

ՊԱՎԼԻԿՅԱՆ. հիմնադիրը Կոստանդին անունով մի հայ է: Վերջինս, ընդունելով Պողոս առաքյալի աշակերտ Սիլվանոսի անունը, փոքրասիական Կողոնիայի Կիբոսա ավանում հիմնել է համայնք և կոչել Մակեդոնիա, իսկ աղանդի դաղափարները քարոզել 27 տարի: Բյուզ. կայսր Հուստինիանոս II-ի օրոք (685–695, 705–711) Կոստանդին-Սիլվանոսը, ինչպես նաև նրան հաջորդած և երեք տարի աղանդավորներին գլխավորած Սիմեոն-Տիտոսը ենթարկվել են մահապատժի: Փախչելով հալածանքներից՝ Պ. ապաստանել են Պոնտոսում: Նրանց գլխավորել է Գեգնեսիոս-Տիմոթեոսը՝ «Պողոս հայի» որդին, և հիմնադրել Աքայա (Մանանալի) համայնքը: Նրա մահից (748) հետո աղանդապետ է դարձել Գեգնեսիոսի որդի Հովսեփ-Էպաֆրոդիտոսը, որը Պոնտոսում հիմնել է Փիլիպեցիների համայնքը: Պ. այստեղ անհաջող փորձ են կատարել՝ միանալու իշխան, զորավար Գրիգոր Մամիկոնյանի (մահ. 750) գլխավորած հակաարաբ. ապստամբությանը: Ըստ Պետրոս Սիկիլիացու՝ «տեղի իշխանավորներից մեկը՝ Կրիկորակեսը» (Գրիգոր Մամիկոնյանը) հալածել է նրանց, Հովսեփը փախել է Պիսիդիայի Անտիոք քաղաքը, իսկ Հայաստանում Պ-ին գլխավորել է Վահան անունով մի հայ: Այդ նույն ժամանակ հանդես է եկել Պ-ի խոշորագույն աղանդապետ Սերգիոս-Տյուքիկոսը, և աղանդը տրոհվել է երկու հակամարտ կողմերի: Հաղթող է դուրս եկել Սերգիոս-Տյուքիկոսը, որի գլխավորությամբ էլ (801–834) Պ. հասել են իրենց հզորության գագաթնակետին: Սերգիոս-Տյուքիկոսը հիմնել է Կողոսացիների (Արգովանում), Լավոդիկեցիների (Պոնտոսի Կիմոխորիոն ավանում) և Եփեսացիների (Մոպսուեստիայում) պավլիկյան համայնքները:

Բյուզ. կայսրերը, Պ-ին հալածելով, ջանացել են նրանց հեռացնել հարազատ միջավայրից: Առաջինն այդ քայլին է դիմել Կոստանդին V-ը (741–775), որը, 752-ին արաբներից գրավելով Թեոդոսուպոլիսն (Կարին) ու Մելիտենեն, տեղի Պ-ին (նաև հակաքաղկեդոն. ասորիներին) գաղթեցրել է Թրակիա և բնակեցրել հատուկ նրանց համար կառուցված ավաններում և Փիլիպուպոլիս (այժմ՝ Պլովդիվ) քաղաքում: Բյուզ. կայսրերը հետագայում Փիլիպուպոլիս են գաղթեցրել նաև հայ *թոնդրակեցիներին*, որոնց բյուզ. աղբյուրները պավլիկյան (նաև մանիքեցի) են անվանել: Ռազմատենչ աղանդավորներին գաղթեցնելով Թրակիա՝ բյուզ. կայսրերը նպատակ ունեին նրանց օգտագործել կայսրության հս. սահմանները թշնամիներից պաշտպանելու համար:

Հուստինիանոս II-ի, Լևոն III Իսավրացու, Կոստանդին V-ի օրոք սկսված հալածանքները սաստկացել են IX դ. սկզբից՝ Պ-ի հզորացմանը զուգընթաց: Միքայել I (811–813), Լևոն V (813–820), Թեոփիլոս (829–842) կայսրերը և հատկապես Թեոդորա կայսրուհին (842–856) վարել են Պ-ին բնաջնջելու քաղաքականություն: Սկզբնաղբյուրների չափազանցված տվյալների համաձայն՝ Թեոդորա կայսրուհու օրոք սպանվել է շուրջ 100 հզ. պավլիկյան: Աղանդավորները Սերգիոս-Տյուքիկոսի գլխավորությամբ փախել են արաբ. տիրապետության տակ գտնվող Հայաստան, գլխավորապես՝ Մելիտենե: Սկզբ. շրջանում արաբները, նպատակ ունենալով օգտագործել Պ-ի ռազմ. ուժերն ընդդեմ Բյուզ. կայսրության, հովանավորել են նրանց, սակայն շուտով փոխել են իրենց վերաբերմունքը և սկսել հալածանքները: Պ. Մելիտենեից փախել են Տևրիկ (Տիվրիկ, Տեփրիկե, Դիվրիգ) և շրջակա ավաններ ու բերդեր, որտեղից իրենց զորավարներ Կարբեասի և Խրիսոխիրի գլխավորությամբ համառ կռիվներ են մղել Վասիլ I կայսրի (867–886) դեմ: Ասպատակելով Փոքր Ասիան՝ Պ. հասել են մինչև Անկյուրա, Նիկիա և Նիկոմեդիա: Վասիլ I-ին հաջողվել է պարտության մատնել Պ-ին (872) և գրավել ու կործանել Տևրիկը: Պ-ի բեկորներն անցել են Արլ. Հայաստան և նպաստել թոնդրակյան աղանդի ծավալմանն ու դաղափարախոսության ձևավորմանը:

Պարտություն կրելով Փոքր Ասիայում և Հայաստանում՝ Պ. իրենց գոյությունը շարունակել են Թրակիայում: Նրանց միացել են Հովհաննես I Զմշկիկ կայսրի (969–976) բռնագաղթեցրած թոնդրակեցիները: Աղանդավորների դեմ սուր պայքար է մղել Ալեքսիոս I Կոմնենոս կայսրը (1081–1118): Նրա զորավար, Արևմուտքի մեծ դոմեստիկոս հայ քաղկեդոնական Գրիգոր Բակուրյանի Փիլիպուպոլսի Պետրիցոս (Բաչկովո) վայրում 1083-ին կառուցած վանքի հոգևորականության վրա է դրվել Պ-ին դարձի բերելու պարտականությունը: Թրակիայի Պ. մեծապես նպաստել են բոգոմիլների աղանդի առաջացմանն ու նրանց դաղափարախոսության ձևավորմանը: Թրակիայի Պ. գոյատևել են մինչև XIX դ.: Բուլղարիայի միջնադարյան մայրաքաղաք Տռնովո-

յի մոտ մինչև օրս գոյություն ունի Պավլիկենի (Պավլիկյաններ) անունով դյուղ, իսկ Լովեչի շրջանում՝ Գոռնոպավլիկենի (Լեռնային պավլիկյաններ) և Դոլնոպավլիկենի (Դաշտային պավլիկյաններ) անունով դյուղեր: Բուլղարիայի Պ. ժամանակի ընթացքում մոռացել են իրենց լեզուն, ծագումը, դարձել բուլղարներ՝ համարվելով բուլղար հասարակության ամենացածր խավը: «Պավլիկյան» անունը դարձել է վիրավորական: XVII դ. սկսվել է նրանց կաթոլիկացումը:

Պ. կազմակերպված էին համայնքների ձևով: Բացի նշվածներից պավլիկյան համայնքներ են եղել նաև Փոյուգիայում և Լիկաոնիայում: Նրանց գլխավորել է աղանդապետը, որին ընտրել են սինեկդեմոսները (ուղեկիցներ. այդպես են կոչվել Պողոս առաքյալի աշակերտները), վերջիններիս ենթարկվել են նոտարները: Թե՛ սինեկդեմոսները, թե՛ նոտարները ոչնչով չեն տարբերվել մնացյալներից. համայնքներում բոլորը եղել են հավասար: IX դ. 40-ական թթ-ից Պ. կազմավորել են իրենց զինված ուժերը, որոնց գլխավորել է զորավարը (և ոչ աղանդապետը): Սերգիոս-Տյուքիկոսի՝ վերջին աղանդապետի սպանությունից (834) հետո Պ., իրենց շարքերում խառնակությունների և հուզումների տեղիք չտալու համար, նոր աղանդապետ չեն ընտրել: Կարբեասն ու Խրիսոխերը «զինված ուժերի» հրամանատարներն էին:

Պ-ի գաղափարախոսությունը հիմնված էր *գնոստիցիզմի* և վաղմիջնադարյան այլ աղանդների գաղափարների, ուսմունքների վրա: Նրանք մերժել են *մանիքեության*, ինչպես նաև III դ. աղանդապետ Պողոս Սամոսատցու (Սամոստացի) հետևորդներն ու նրանց գաղափարների կրողները լինելու եկեղեցու պնդումները: Իրենց համարել են իսկական քրիստոնյաներ: Նրանց ուսմունքի հիմքում ընկած էր դուալիզմը. ընդունել են երկու աստվածների՝ տեսանելի և շոշափելի աշխարհի չար աստծո (սատանայի) և երկնային հոր՝ բարի աստծո գոյությունը: Տեսանելի աշխարհի և մարդկանց արարիչը չար աստվածն է, որն իշխանություն ունի այս աշխարհում: Բարի, երկնային աստվածն այս աշխարհում իշխանություն չունի, բայց ունենալու է ապագայում: Նրան է վերաբերում անտեսանելին, աննյութականը և մտայինը: Նա արեգակի և մարդու հոգու արարիչն է: Պ-ին, ինչպես և գնոստիկյան շատ աղանդների, բնորոշ էր դոգետիզմը (տես *Երևութականություն*): Ըստ նրանց՝ Քրիստոսը երկնային աստծո հրեշտակներից մեկն է, իսկ Մարիամին չեն համարել Աստվածածին: Լինելով դոգետներ՝ գտել են, որ Քրիստոսը մարմին չի առել Ս. Կույսից, այլ՝ իր հետ երկնքից բերած մարմնով, ինչպես ջուրը խողովակի, անցել է Աստվածածնի միջով: Պ. չեն ընդունել հոգևոր ոչ մի խորհուրդ (նաև Հաղորդությունն ու Մկրտությունը), մերժել են Հին կտակարանը, Քրիստոսի խաչը՝ այն համարելով անիծյալ գործիք: Մարգարեներին համարել են մոլորեցնողներ և ավազակներ, ընդունել միայն չորս Ավետարանները, Գործք առաքելոցը, Պողոս առաքյալի, Հակոբի, Հովհաննեսի և Հուդայի թղթերը (ինչպես նաև՝ իրենց աղանդապետ Սերգիոս-Տյուքիկոսի թղթերը): Մերժել են Պետրոս առաքյալին և նրա թղթերը, եկեղեցին և նրա նվիրապետությունը: Պ. իրենց ժողովարաններն անվանել են «ուղղափառ եկեղեցի» և «աղոթատեղի»:

Գրկ. Հովհաննես Օձնեցի, Մատենագրութիւնք, Վնտ., 1853: Սարգիսյան Բ., Ուսումնասիրութիւն Մանիքէա-պաւղիկեան թոնրակեցիներու առանդին..., Վնտ., 1893: Տեր-Մկրտչյան Կ., Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երևոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղեմ, 1938: Մելիք-Բախչյան Ս., Պավլիկյան շարժումը Հայաստանում, Ե., 1953: Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968: *Бартикян Р., Источники для изучения истории Павликианского движения, Е., 1961;* Նույնի, *Еще раз о происхождении имени "Павликиане"*, ԼՀԳ, 1973, № 2; Conybeare F., The Key of Truth. A Manual of the Paulician Church of Armenia, Oxf., 1898; Garsoian N., The Paulician Heresy, P., 1967; Nersessian V., The Tondrakian Movement. Religious Movements in the Armenian Church from the Fourth to the Tenth Centuries, L., 1987.

Հրաչ Բարթիկյան

ՊԱՏԱՐԱԳ (պահլ.՝ patarag, զենդ.՝ paitiragayami – նվեր, ընծա), քրիստոնեական գլխավոր աստվածապաշտական արարողությունը, *Հաղորդության* խորհրդի *ծեսի* և արարողությունների ամբողջական մշակված համակարգը: Պ. տարբեր ձևերով ընդունված է քրիստ. բոլոր դավանանքներում: Քրիստ. ներկայիս ըմբռնմամբ՝ զոհ, *զոհաբերություն* նշանակությամբ, գործածական է դարձել II դ-ից սկսած և նշանակել է մարդկության փրկության համար *Հիսուս Քրիստոսի* զոհաբերումը՝ պատարագվելը խաչի վրա: Պ-ի հուն. անվանումը՝ «լիտուրգիա» (ընդհանուր, ժող. գործ, ընդհանուր ծա-

ռայություն), սկզբ. շրջանում չի ունեցել հոգևոր իմաստ, այլ պարզապես մատնանշել է Աթենքում ընտրված անձի կողմից ժողովրդին մատուցված ընդհանուր ծառայությունը: Այդ բառն ավելի ուշ շրջանում մուտք է գործել ծիսակրոն. կյանք և գործածվել կրոն. արարողությունների պարագայում: Քրիստ. շրջանում այն արդեն նշանակել է երկու իրողություն. 1. կրոն. արարողությունների ընդհանուր անվանումը և 2. արարողություններից մեկը, որի առանցքը կազմում է Հաղորդության խորհուրդը: Ներկայումս քրիստ. եկեղեցին Պ. եզրը լայն առումով օգտագործում է արտահայտելու համար Հաղորդության արարողությունը (առավելապես գործածվում է արևելաքրիստ. ուղղափառ եկեղեցիներում): Արևելաքրիստ. ուղղափառ եկեղեցիները Պ. բառն օգտագործում են նույն իմաստով, ինչ՝ «մեսսան» Արևմուտքում: Նրանց համար Պ. միասնական արարողություն է և ոչ մտերմիկ հանդամանք. պատարագիչ քահանայից բացի լիարժեք և ընդունելի է համարվում հավատացյալ ժողովրդի մասնակցությունը և, ի տարբերություն Կաթոլիկ եկեղեցու, մերժվում թիվ կամ անձայն Պ.:

Պ-ի հիմքում ընկած է Հաղորդության խորհուրդը. գլխ. պահը հավատացյալների հաղորդությունն է Հիսուսի մարմնին և արյանը, նվիրաբերումը, ընծայաբերումը, վերաբերումը (անաֆորա), սակայն Պ. Հաղորդության ժամանակ կատարվող ծեսն է և ոչ թե բուն Հաղորդությունը: Պ-ի ընթացքում Հիսուսի մարմնի և արյան հաղորդությամբ հոգևոր, իրական միավորում է տեղի ունենում հավատացյալների միջև և Հիսուսի հետ, և դրանով իսկ բովանդակում քրիստ. եկեղեցու գլխ. գաղափարն ու նպատակը՝ հայտնությունն ու իրականացումը Աստծո նոր ժողովրդի միավորության՝ Քրիստոսով և հանուն Քրիստոսի. «...Հիսուս մեռնելու էր... ոչ միայն ազգի համար, այլ՝ որպեսզի նաև Աստծու ցրված որդիներին ի մի հավաքի» (Հով. 11.51–52):

Քրիստ. եկեղեցում կատարվող Պ. անարյուն զոհ կամ ընծա է և կոչվում է անարյուն Պ.՝ ի տարբերություն Հին ուխտի շրջանի՝ կենդանիների արյան հեղումով կատարվող պատարագ-զոհաբերությունների (ողջակիզում, մեղքերի, փրկության կամ խաղաղական զոհաբերություններ, որոնք Հիսուսի զոհագործության նշանակներն էին), և, գլխավորը՝ Հիսուսինքը մեկ անգամ և մեկընդմիշտ պատարագվեց՝ Գողգոթայի խաչի վրա հեղելով իր անմեղ և սուրբ արյունը՝ իբրև հավիտենական Պ.: Անարյուն Պ. մարդկության մեղքերի համար Հիսուսի թափած արյան և կատարած Փրկագործության խորհրդի հիշատակությունն ու շարունակությունն է: Պ-ի խորհրդակատարության ժամանակ ամեն անգամ Հիսուսը դարձյալ ինքն իրեն է մատուցում, բայց քահանայի ձեռքով՝ անարյուն և խորհրդավոր կերպով՝ սրբագործված հացի ու գինու միջոցով: Արարողության ընթացքում կարդացվող աղոթքների, քարոզների, սուրբգրային ընթերցումների, երգվող շարականների, սրբասացությունների և կատարվող ծեսերի միջոցով պատմվում են Քրիստոսի Մարդեղությունը, խաչելությունը, քավչարար մահը, հրաշափառ Հարությունը, մշտնջենական բարեխոսությունը և Երկրորդ գալուստը:

Պ., որպես Հաղորդության խորհրդի արարողություն, հաստատել է Հիսուս Քրիստոսը Վերնատանը, Վերջին ընթրիքի ժամանակ: Առաքյալների ժամանակ Պ. միացած էր սիրո (համայնական) ճաշի կամ *ագապեի* հետ: Եկեղեցին Վերջին ընթրիքի ծեսը հավերժացրել է ոչ միայն որպես սիրո ճաշ, այլև հատկապես՝ «զոհություն» կամ զոհաբերական արարողություն: Հաղորդությունը, որ իրականանում է հացի և գինու՝ Քրիստոսի մարմնի և արյան ճաշակումով, հետագայում իր մեջ ընդգրկել է զոհաբերության գաղափարը: Քրիստոսի մարմինն ու արյունը տրվել են զոհաբերության միջոցով, և դրա հիշատակն ունեցել է զոհաբերական բնույթ: Դեռևս II դ. Հուստինոս Վկան Հաղորդությունն անվանել է զոհաբերություն: Վերջին ընթրիքի զոհաբերական բնույթն էլ, որպես Աստծուն ուղղված և նվիրված մի կերակուր (որի նպատակն էր դրա միջոցով հաղորդակցություն հաստատել Աստծո հետ), «պատարագ» բառը վերադրել է Հաղորդության ծեսին: Պ-ի ժամանակ *Սուրբ Հոգու* ներգործությամբ հացի և գինու փոխակերպված Հիսուսի մարմինն ու արյունը պատարագիչ քահանայի ձեռքով հավատացյալների կողմից ընծայվում, պատարագվում, նվիրվում, զոհաբերվում է Հայր Աստծուն՝ մեղքերի քավության համար: Այդ առիթով նաև գոհություն և փառաբանություն է մատուցվում Աստծուն ու շնորհներ խնդրվում ներկաների համար:

Պ-ի ընթացքում, սրբագործման պահին, հացն ու գինին խորհրդավոր, անճառելի կեր-

պով փոխակերպվում են Քրիստոսի ճշմարիտ մարմնի և արյան: Հայ եկեղեցու վարդապետներն ասում են, որ հացը և գինին «փոխվում են», «փոխակերպվում են», «անդրակերպվում են», իսկ *Ներսես Լամբրոնացին* գործածում է նաև «հոգիացում» եզրը: Թե ինչպես է փոխակերպումը, հոգիացումը, անդրակերպումը տեղի ունենում՝ «խորհուրդ խորին» է, անքննելի ու անբացատրելի և ըմբռնելի է միայն հավատով:

Ըստ *Գրիգոր Տաթևացու*՝ հացն ու գինին, ըստ ձևի մնալով նույնը, ստանում են նոր զորություն, որով նրանց մեջ Սուրբ Հոգու ներգործությամբ, խորհրդավոր կերպով հաստատվում է Քրիստոսի մարմնի և արյան իսկությունը:

Արևելաքրիստ. ուղղափառ եկեղեցիները (այդ թվում և Հայ եկեղեցին) հացի և գինու մեջ Քրիստոսի իրական ներկայությունն են տեսնում, ուստի մերժում են դոյափոխության՝ նյութի փոփոխությունը մեկ այլ դոյացության (տրանսսուբստանցիացիա) կաթոլիկ. գաղափարը: Ըստ Ներսես Լամբրոնացու՝ «նիւթոյն ոչինչ լինի այլայլութիւն կամ առաւելութիւն, այլ միայն՝ զի իմանալի զօրութիւն ընկալաւ»:

Թեև Պ-ի արարողությունը ժամանակի ընթացքում փոխվել ու հարստացել է նոր տարրերով ու ծեսերով, սակայն խորհրդի էությունը և նրա ավետարան. հիմքը մնացել են անփոփոխ: Հիմքը նորկտակարանային Վերջին ընթրիքի «գոհության» (Հաղորդության) կամ «գոհություն մատուցելու» արարողությունն է: Նորկտակարանային ժամանակներում առկա էին Պ-ի էական տարրերի մեծ մասը՝ Ս. Գրքի ընթերցում, սաղմոսների և հիմների օգտագործում, քարոզներ, աղոթքներ, նվիրաբերում, Հաղորդություն ևն: Դրանք գրի են առնված Գործք առաքելոցում և առաքելական թղթերում (Գործք **2.**42, **20.**7, Ա Կորնթ. **11.**4, 5, 20, **13.**23, Եբր. **10.**25 ևն), որոնք, հիմնված լինելով Վերջին ընթրիքի իրողության վրա, միացած էին հրեական Զատկի (Պասեքի) ծիսարարողակարգին (իր որոշակի տարբերություններով հանդերձ): Այդ մասին է վկայում «Առաքելական սահմանումներ» կոչված գրքի (III դ., խմբագրվել IV դ. 2-րդ կեսին, վերջն. տեսքի բերվել V դ. սկզբին) 8-րդ գլխում պահպանված սկզբ. Պ.: Այն առաքյալներն են ավանդել նորահաստատ եկեղեցուն, որտեղ էլ գրի է առնվել:

Պ-ի նախն. տարրերը՝ հավաքույթներին առաքյալների նամակների ընթերցումը (Ա Թեսաղ. **5.**27, Կողոս. **4.**26), «խաղաղության համբույրը» (Ա Թեսաղ. **5.**26, Ա Կորնթ. **16.**20, Բ Կորնթ. **13.**12, Ա Պետ. **5.**14), նվիրատվություն տալու ավանդույթը (Ա Կորնթ. **16.**1, Բ Կորնթ. **8.**9), Պողոսի թղթերի և Հովհաննեսի Հայտնության զոհաբերական լեզուն ևն, դարձել են հետագա Պ-ի արարողությունների կարևոր հատվածները: Քրիստոնյաների կողմից I–II դդ. կատարվող Պ-ի արարողության կարգը նկարագրել են I–II դդ. հեղինակներ Կղեմես Հռոմեացին (Հռոմայեցի), Իգնատիոս Անտիոքացին, Հուստինոս Վկան, Իրենեոս Լուգդունացին, Աթենագորաս Աթենացին և ուր.: Ըստ Հուստինոս Վկայի, II դ. ագապեն արդեն անջատվել էր Հաղորդությունից և վերածվել նվիրատվության սովորության՝ կարիքավորների համար ողորմություն հավաքելուն: III դ. սկզբին արդեն Պ. ձևով միատարր էր, միայն տարբեր՝ մանրամասնությունների մեջ: Գոյություն է ունեցել որոշակի և համասեռ ծես, աղոթքները կրկնվել են այնքան, մինչև որ անփոփոխ տեսք են ընդունել: Հատուկ ընդհանուր թեմաները դարձել են հաստատուն՝ ինչպես գոհության աղոթքը, բոլոր մարդկանց թողությունը և հավատքի խոստովանությունը: Հաղորդությունն ստացել է ընդհանուր ձև, այսինքն ունեցել է երկու կարևոր մաս՝ ա. «խոսքի ծես» կոչվող նախապատրաստական արարողությունը և բ. հիմն. արարողությունը, որը հետագայում կոչվել է անաֆորա:

Առաջին դարերի սաղմնային ծեսերն աստիճանաբար բյուրեղացվել և IV դ. վերածվել են ուրույն Պ-ների՝ տարբեր եկեղեցիներում: Տեղական եկեղեց. ավանդությունները ձևավորվող Պ-ի ծեսի մեջ առաջ են բերել որոշ առանձնահատկություններ, որոնք թեև խորքում եղել են նույնը և նման ընդհանուր գծերով, սակայն տարբերվել են մանրամասների մեջ: «Առաքելական սահմանումների» Պ-ից, որ Հաղորդության խորհրդի արարողությունը նկարագրող եկեղեց. ամենահին ամբողջ. կանոնն է, սկիզբ են առել միմյանցից ծեսերով տարբերվող եկեղեցիների Պ-ները կամ Պ-ի տարբերակները՝ Երուսաղեմ-Անտիոքի, Ասորիքի, Արլ. ասորական եկեղեցու, Ալեքսանդրիայի, Կապադովկիայի, Կ. Պոլսի, Հս. Աֆրիկայի եկեղեցու, Հռոմի ևն: Առաջին երեք դա-

բերի միասեռ Պ-ի ձևն ատիճանաբար հիմք է դարձել չորս մեծ կամ մայր (Երուսաղեմ-Անտիոքի, Ալեքսանդրիայի, Հռոմի և Գաղղիայի ծեսերը) Պ-ների համար, որոնցից էլ առաջացել են բոլոր մյուսները: Համաձայն ավանդության, որն ընդունում են բոլոր եկեղեցիները, Պ-ի առաջին կազմողները եղել են Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբայր առաքյալը (Երուսաղեմ-Անտիոքի եկեղեցիների Պ.) և Մարկոս ավետարանիչը (Ալեքսանդրիայի եկեղեցու Պ.): Հայոց Պ-ի ակունքները սերում են Երուսաղեմ-Անտիոքի, Ալեքսանդրիայի և Հռոմի ծեսերից, առավելապես՝ Երուսաղեմ-Անտիոքյան Պ-ից:

Հայ գրերի գյուտից հետո հայերեն է թարգմանվել *Բարսեղ Կեսարացու* համառոտ կամ «կապադովկյան» Պ., որը ծագումով անտիոքյան էր և գործածվել է Հայ եկեղեցում իբրև տիրապետող Պ. մինչև V դ. վերջը (բարսեղյան ընդարձակ կամ «բյուզանդական» Պ. թարգմանվել է IX դ. 2-րդ կեսին): Բարսեղյան Պ. հայերեն ձեռագրերում հայտնի է *Գրիգոր Ա Լուսավորչի* անունով (այդ Պ. Գրիգոր Ա Լուսավորիչն է Կեսարիայից Հայաստան բերել և դարձրել կիրարկելի): Այնուհետև Հայ եկեղեցում ի հայտ են եկել նոր անուններով Պ-ներ, որոնք հետզհետե մոռացության են մատնել բարսեղյան Պ.: Այդ Պ-ները, որոնք մեզ են հասել Գրիգոր Ա Լուսավորչի, *Սահակ Ա Պարթևի, Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Ալեքսանդրացու* անուններով, իրականում *Գրիգոր Նազիանզացու* գործերն են (ենթադրվում է, որ թարգմանել է *Հովհաննես Ա Մանդակունին*): Հայ եկեղեցում գործածվել է նաև *Հովհան Ոսկեբերանի* Պ., որը շատ նման է բարսեղյան Պ-ին և կիրառվում է գլխավորապես Հույն եկեղեցում:

Նազիանզյան Պ-ներից Հայոց մեջ հատկապես գործածական (մինչև X–XI դդ.) և սիրված է եղել 378–381-ի ընթացքում գրվածը, որը հայտնի է Աթանաս Ալեքսանդրացու Պ. անունով: Հայոց Պ. հետագայում ենթարկվել է մի շարք փոփոխությունների և ստացել ներկայիս տեսքը: Հայոց Պ-ի կազմավորման գործում մասնակցություն են ունեցել Գրիգոր Ա Լուսավորիչը, Սահակ Ա Պարթևը, Հովհաննես Ա Մանդակունին, *Հովհաննես Գ Օձնեցին, Խոսրով Անձևացին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին*, Ներսես Լամբրոնացին, *Խաչատուր Տարոնացին*: Պ-ի ամբողջ. մեկնություններ են գրել Խոսրով Անձևացին, Ներսես Լամբրոնացին, Հովհաննես Արճիշեցին (Ոսկնակեր) և ուր.: Պ-ի ծիսակարգն ամփոփված է Պատարագամատույց գրքերում (տես *Խորհրդատետր-Պատարագամատույց*):

Հայոց Պ. բաղկացած է չորս հիմն. մասերից, որոնք միասին կազմում են մեկ ամբողջություն: Դրանք են՝ Պատրաստություն, Երախայից (չմկրտվածների) Պ. կամ պաշտոն Ճաշու, Հավատացելոց կամ Բուն Պ. և Օրհնություն կամ Արձակում: Պ-ի արարողությունն իրականացնում են պատարագիչ քահանան, սարկավագը և դպիրները:

Քահանան Պ. մատուցողն է՝ խորհրդակատարը, պատարագիչը: Նա ժողովրդի ներկայացուցիչն է Աստծո ս. *Սեղանի* առջև, միաժամանակ՝ ժողովրդի մոտ Քրիստոսի փոխանորդը. արտասանում է նրա խոսքերը և հավատացյալներին բաշխում Քրիստոսի մարմինն ու արյունը: Սարկավագը քահանայի անմիջական օգնականն է և Պ-ի ս. Սեղանի սպասավորը, պատարագիչ քահանայի և ժողովրդի միջնորդը: Նրա պարտականություններն են՝ խնկարկել, Ավետարան կարդալ, վերաբերում կատարել, ժողովրդի ուշադրությունը հրավիրել արարողության վրա, քահանայից օրհնություն հայցել ժողովրդի համար, ողջույնով Քրիստոսի հայտնության ավետիսը փոխանցել ժողովրդին, իսկ վերջում՝ հրավիրել Քրիստոսի մարմինն ու արյունը ճաշակելու: Դպիրների պաշտոնն է Պ-ի երգեցողությունները կատարել, կարդալ օրվա սաղմոսները, մարգարեական գրքերն ու առաքելական թղթերը:

Պ-ի ժամանակ գործածվող սպասքի ու զգեստների մասին տես *Զգեստ* եկեղեցական և *Սպասք* եկեղեցական հոդվածներում:

Պատրաստությունը սկսվում է ավանդատան մեջ քահանայի զգեստավորմամբ,«Խորհուրդ խորին» շարականով, սաղմոսասացությամբ և աղոթքներով, ապա՝ խորանի առջև լվացումով, մեղքերի հրապարակային խոստովանությամբ և խորան բարձրանալով: Ավարտվում է թափորով, խնկարկությամբ և օրհնություններով:

Երախայից Պ. կամ Ճաշու արարողությունը սկսվում է թափորից հետո քահանայի խորան բարձրանալով և «Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ...» աղոթքով: Կոչվում է Ճաշու արարողություն կամ պաշտոն Ճաշու, որովհետև կազմում է *ժամերգության* մասերից մեկը (Ճաշու) և կատարվում է նաև հասարակ օ-

րերին: Այս մասում արտասանվում է *Հավատո հանգանակը*, որից հետո քահանան կարդում է Գրիգոր Ա Լուսավորչին վերագրվող «Իսկ մեք փառաւորեսցուք...»-ը: Երախայից Պ. շարունակվում է մինչև այն պահը, երբ սարկավագը ազդարարում է. «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս»: Հնում սարկավագի այս խոսքերից հետո չմկրտված նորադարձները (երախաները), ապաշխարանքի մեջ եղող մեղավորները, թերահավատներն ու մեղքերից չմաքրվածները դուրս են եկել եկեղեցուց և աղոթել դավթում, որովհետև հաջորդ՝ Հավատացելոց Պ-ին կարող են մասնակցել միայն այն հավատացյալները, ովքեր մկրտված են և ապաշխարությամբ նախապատրաստված՝ ընդունելու հաղորդությունը:

Հավատացելոց Պ. սկսվում է ընծայի վերաբերումով, այսինքն՝ սարկավագը խորանի աջակողմյան խորհրդանոցից ընծան (հացն ու գինին) և սկիհը վերցնում ու բերում է՝ շրջանցելով ս. Սեղանը, իսկ երբ վերաբերման թափորը հասնում է ս. Սեղանի առջև, քահանան խնկարկում է սրբությանը, և սարկավագը սկիհը հանձնում է քահանային՝ ասելով. «Սա ինքն է Թագաւոր Փառաց»: Հավատացելոց կամ Բուն Պ-ի ընթացքում է, որ տեղի է ունենում սրբագործումը հացի և գինու, որոնք Ս. Հոգու ներգործությամբ փոխակերպվում են Քրիստոսի ճշմարիտ մարմնի ու արյան՝ ի հաղորդություն հավատացյալների:

Պ-ի չորրորդ մասը՝ Օրհնությունը կամ Արձակումը, գոհաբանական և վերջին օրհնությունից հետո ժողովրդի արձակումն է: Եկեղեցուց դուրս գալու ժամանակ հավատացյալներին տրվում է մաս՝ օրհնված հաց, որը սիրո ճաշի կամ ագապեի հիշատակն է:

Պ. հայ մանանգիտացված մոնոդիական երգարվեստի հնագույն ժանրերից է, որն իր արտասանվող ու երգվող հատվածներով մտահղացված է որպես ամբողջ. եկեղեցածիս. ստեղծագործություն: Ժամանակի ընթացքում հարստացվել է (նախապես կարդացվող որոշ հատվածների եղանակավորում), նոր երգերով լրացվել, վերախմբագրվել: Այդ գործում նշանակալից դեր է կատարել Ներսես Շնորհալին: Խազերով գրված Պ-ի առանձին պատառիկներ պահպանվել են XI–XII դդ-ից, ամբողջությունը՝ XIII դ-ից գրառված Մանրուսման գրքերում և այլ ժողովածուներում: Խազերը գործածությունից դուրս գալուց հետո, բանավոր հաղորդվելով, Պ-ի երաժշտությունը կրել է փոփոխություններ, գոյացել են այլևայլ տեղային տարբերակներ: Պ-ի երգերը վերստին գրառելու մի շարք փորձեր են եղել. առավել ամբողջականն ու արժանահավատը Ն. *Թաշճյանի* գրառումն է (*Նոր հայկական ձայնագրությամբ*, հիմնականում՝ Հայոց կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* երգածից, գրառմանը մասնակցել է նաև Մ. *Եկմալյանը*), որը հրատարակվել է 1874-ին և 1878-ին, Վաղարշապատում՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» վերնագրով: Երկրորդ, լրացված հրատարակությունը պարունակում է Պ-ի բուն երգերը, սրբասացությունները, մեղեդիները, տաղերը ևն, նաև՝ նշումներ առոգանությամբ կատարվող հատվածների (սաղմոսներ ևն) մասին. գրված է չորս տարբերակ, հատկացված կիրակի կամ լուր (հասարակ) օրերին, եկեղեց. հատուկ տոներին ևն: Բուն Պ-ի երգերը, նրա տեքստային բովանդակության հիմն. բաժիններին համապատասխան, խմբվում են չորս գլխ. եղանակների շուրջ՝ «Սուրբ Աստուած», «Սուրբ, սուրբ», «Հայր մեր» և «Միայն սուրբ», որոնց ելևէջները ներթափանցում են համապատասխան բաժինների այլ երգերում, քարոզներում, աղոթքներում, մաղթանքներում: Որոշ երգեր ներկայացված են երկու կամ ավելի տարբերակով, կան նաև «անկախ» եղանակներ, ինչպես, օր., բազմաթիվ «Տէր, ողորմեա»-ները:

Իրենց ոճական-գեղ. արժանիքների շնորհիվ ներկայումս ընդունված են Մ. Եկմալյանի (հրտ. 1896, Լայպցիգ-Վիեննա) և *Կոմիտասի* (հրտ. 1933, Փարիզ) բազմաձայն Պ-ները, որտեղ, ընտրությամբ և խմբագրելով, օգտագործված են Ն. Թաշճյանի գրառած եղանակները, և հավելված են էջմիածնում պահպանված այլևայլ հատվածներ:

Հայ եկեղեցում Պ. մատուցվում է մեկ *խորանի* վրա և մեկ պատարագիչի միջոցով: Կաթոլիկ եկեղեցին, խորանների քանակին հավասար հոգևորականների է թույլատրում Պ. մատուցել: Հայ եկեղեցում նույն օրը նույն քահանայի կողմից Պ. չի կրկնվում, Կաթոլիկ եկեղեցում օրվա ընթացքում մի քանի Պ. կարելի է մատուցել: Պ. մատուցելու տեղը եկեղեցին է կամ էլ օրհնված մատուռները, որոնք ունեն օրհնված սեղաններ:

Հայաստանում I–IV դդ. Պ. է մատուցվել և՛ կիրակի, և՛ շաբաթվա այլ օրերին: Բացի կիրա-

ՊԱՏԱՐԱԳ. կիից պատարագելի են համարվել ուրբաթ օրերը, ինչի մասին վկայում են Մովսես Խորենացին և Հովհաննես Ա Մանդակունին: IV–V դդ. եղել են Պ-ի այլ օրեր՝ նվիրված առաքյալներին, մարտիրոսներին: Ըստ Փավստոս Բուզանդի, Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևը, երբ այցելել է որևէ տեղ, մատուցել է «զպատարագն օրհնութեան»: VI դ. Պ-ի 2 օր է եղել, սակայն ոչ թե ուրբաթն ու կիրակին, այլ շաբաթն ու կիրակին: IX–X դդ-ից սկսած Պ-ի օրերը շատացել են: Գրիգոր Տաթևացու, Զաքարիա Քանաքեռցու և այլոց վկայությամբ՝ պատարագել են նույնիսկ ամեն օր: Սակայն XV դ-ից ամենօրյա Պ-ները որոշ վայրերում դադարել են, իսկ ըստ Առաքել Դավրիժեցու, Սյունիքում՝ Հարանց անապատում XVII դ. *Տերունի տոնե-րից* բացի պատարագել են միայն շաբաթ և կիրակի օրերին:

Ներկայումս Հայ եկեղեցում Պ., որպես կանոն, կատարվում է կիրակի օրերին, նաև՝ շաբաթ օրերին և սրբերին նվիրված հիշատակության օրերին: Սովորաբար Պ. մատուցվում է առավոտյան ժամերին, բայց Ս. Ծննդյան և Զատկի Ճրագալույցին՝ նաև երեկոյան: Ավագ հինգշաբթի օրը (տես *Ավագ շաբաթ*) Պ. մատուցվում է ճաշից հետո, որովհետև Վերջին ընթրիքն այդ ժամին է կատարվել: Պ-ի համար կան նաև արգելված օրեր: Այսպես, *Առաջավորաց պահքի* հինգ օրերին և *Մեծ պահքի* հասարակ օրերին (ոչ շաբաթ և կիրակի) Հայ եկեղեցում Պ. չեն կատարում: Բացառություն են կազմում *Երուսաղեմի* և Բեթղեհեմի սրբավայրերը, որտեղ Պ. կատարվում է ամեն օր, բացի Ավագ ուրբաթից և *Բուն Բարեկենդանի* երկուշաբթի օրվանից: Այսպես, Երուսաղեմի Ս. Հարություն տաճարում ամեն գիշեր ժ. 12-ից մինչև առավոտյան 7-ը նախ՝ հույները, ապա՝ հայերը, հետո կաթոլիկները Պ. են մատուցում Քրիստոսի Ս. Գերեզմանի վրա: Ամեն օր հաջորդաբար հայերն ու հույները Պ. են մատուցում նաև Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարում, Գեթսեմանիի Ս. Աստվածածին եկեղեցում գտնվող Ս. Կույսի գերեզմանի վրա:

Գրկ. Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վնտ., 1847: Խոսրով Անձևացի, Մեկնութիւն աղօթից Պատարագին, Վնտ., 1869: Վարդապետութիւն ԺԲ առաքելոց, ԿՊ, 1898: Գաթըրճյան Հ., Սրբազան Պատարագամատոյցք Հայոց..., Վնտ., 1897: Հացունի Վ., Սուրբ Պատարագի օրերն, տեսակք եւ ժամեր Հայ եկեղեցւոյ մէջ, Վնտ., 1899: Կոմիտաս, Երգեցողութիւնք Ս. Պատարագի... ի ձեռն Մ. Եկմալյանի, տես նրա Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Աթայան Ռ., Մակար Եկմալյան, ՊԲՀ, 1981, № 1–2: Ալապահյան Մ., Քրիստոնեական պատարագի նախադրյալները, «Գանձասար», 1, 1992: Ներսոյան Տ., Համառօտ մեկնութիւն Պատարագամատոյցի, Փարիզ, 1999: *Петровский А., Апостольские литургии Восточной Церкви, СПБ, 1897; Лебедев А.П., Наука о богослужении Православной Церкви, М., 1904; Мень А., Православное Богослужение, М., 1991.*

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՒՅՑ, տես *Խորհրդատետր-Պատարագամատույց*:

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, կրոնաքաղաքական շարժում Բյուզանդիայում 726–842-ին. մերժել է *սրբապատկերների* պաշտամունքը (տես *Պատկերապաշտություն*): Շարժումը գլխավորել է պետությունը՝ ջանալով սահմանափակել եկեղեցու քաղ. դերը, վանականության աճն ու տարածումը: Բյուզանդիայում դեռևս IV դարից ելույթներ են եղել պատկերապաշտության դեմ. այն որակվել է կռապաշտություն (*Եվսեբիոս Կեսարացի, Եպիփան Կիպրացի* և ուր.) և ստացել կրոնադավան. բնույթ:

Բյուզանդիայում Պ. ունեցել է երկու ժամանակաշրջան: Առաջինը սկսվել է 726-ին, Լևոն III-ի՝ սրբապատկերներն արգելող հրովարտակով: Պ. ուժեղացել է Կոստանդին V-ի (741–775) և որոշ անկում ապրել Կոստանդին VI-ի (780–797) ու կայսրուհի Իրենեի (797–802) ժամանակ: VII–VIII դդ. բյուզ. եկեղեցու ներսում անզիջում պատերազմներ են սկսվել պատկերամարտների և պատկերապաշտների միջև: Չնայած պատկերամարտների որոշ հաջողություններին՝ պատկերապաշտությունը տարածվել է բյուզ. եկեղեցաքաղ. ազդեցության բոլոր ոլորտներում և ավելի արմատավորվել՝ իբրև քրիստ. հավատի ուղղափառ դրսևորում: 787-ի Նիկիայի ժողովը (անվանված VII տիեզերական) դատապարտել է Պ.: Լևոն V Հայկազնի (813–820) օրոք սկզբնավորվել է Պ-յան երկրորդ ժամանակաշրջանը, սակայն տևել է կարճ, և 842–843-ին հայազգի կայսրուհի Թեոդորան (842–856) վերականգնել է սրբապատկերների պաշտամունքն ու ապահովել պատկերապաշտության վերջն. հաղթանակը: Հույն եկեղեցում դա հռչակվել է «ուղղափառության տոն», և քառասնօրյա

պահքի առաջին կիրակին տոնվում է որպես «ուղղափառության կիրակի»:

VI–VII դդ. Պ. տարածվել է նաև Հայաստանում: Պատկերամարտներ էին *պավլիկյաններն* ու *թոնդրակեցիները*, որոնք «կռապաշտութիւն զմերս պաշտօն համարելով իբր եթէ պատուողացն զնշան խաչին և զպատկերս սրբոցն» (Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, 1910, էջ 168–170): Պ-ի դեմ պայքարել են *Վրթանես Քերթողը, Հովհաննես Գ Օձնեցին, Հովհան Մայրավանեցին* և ուր.: Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից»-ը հայոց մեջ Պ-ի դեմ ամենաընդարձակ և հանգամանալից երկն է, որևէ լեզվով այդ շարժման դեմ գրված ամենահին գրությունը: Վրթանես Քերթողը և Հովհան Մայրավանեցին տեղեկություններ են հաղորդել հայ պատկերամարտների մասին, որոնք գործել են Սոթք գավառում և Արցախում, ունեցել են անգամ հակապատկերապաշտ. գրվածքներ: Նրանք պատկերների պաշտամունքը համարել են բյուզ. երևույթ և *քաղկեդոնականություն*, կոչ արել ոչնչացնել դրանք: Հայ իրականությունում պատկերամարտների և պատկերապաշտների հակադրությունն ընթացել է Հայ եկեղեցու հակաքաղկեդոն. գաղափար. պայքարի շրջանակներում, երբ երկու կողմերն էլ քաղկեդոնականություն են համարել մի դեպքում պատկերապաշտությունը, մյուս դեպքում՝ Պ.: Հայ եկեղեցին մերժել է երկու ծայրահեղ մոտեցումները: Նա սրբապատկերների պաշտամունքի նկատմամբ երբեք բացասական դիրք չի ունեցել, բայց այդ պաշտամունքը չի էլ հասցրել բյուզ. եկեղեցում տեղ գտած չափազանցությունների:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Սեդրակյան Ա., Հայ եկեղեցու պատկերահարգությունը, ՍՊԲ, 1904: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Մելքոնյան Ե., Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը, «Էջմիածին», 1970, № 6–7: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 114–132, 145–156:

ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, պատկերահարգություն, Հիսուս Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի, աստվածաշնչյան և կրոնական թեմաներով պատկերների, սրբանկարների պաշտամունք: Պ-յան դեմ ելույթներ են եղել դեռևս IV դ. (*Եվսեբիոս Կեսարացի, Եպիփան Կիպրացի* և ուր.): IV դ. սկզբին Էլվիրի (Իսպանիա) եկեղեց. ժողովը, Պ. համարելով կռապաշտություն, արգելել է *սրբապատկերների* պաշտամունքը: Ի պաշտպանություն իրենց դաղափարների, պատկերապաշտները վկայակոչել են Եդեսիայի *Աբգար* թագավորին ուղարկված Քրիստոսի վարշամակի մասին ավանդությունը, համաձայն որի, դրա վրա եղել է Տիրոջ անձեռագործ պատկերը: Քրիստոսի պատկերումը մարդկային կերպարանքով կանոնացվել է 692-ի Տրուլլոսի եկեղեց. ժողովում: VII դարից Բյուզանդիայում հանդես են եկել պատկերամարտները (տես *Պատկերամարտություն*), որոնք պայքար են մղել Պ-յան դեմ: Պ. կանոնացվել է 787-ի Նիկիայի եկեղեց. ժողովում այն պայմանով, որ պաշտամունքի առարկա է ոչ թե պատկերի նյութը՝ փայտն ու ներկերը, այլ պատկերվածը:

Հայ եկեղեցին, մասնակցելով պատկերամարտների և պատկերապաշտների միջև պայքարին, խրախուսել է պատկերահարգությունը՝ խուսափելով նրա ծայրահեղ դրսևորումներից: Հայ եկեղեցու հայրերն ու վարդապետները մեղք են համարել սրբապատկերի ոտնահարումը, հակաճառել պատկերամարտության հայ և օտար գաղափարախոսներին, հարգալից վերաբերմունքի կոչ արել պատկերների հանդեպ՝ բացատրելով դրանց արժեքը, նշանակությունն ու անհրաժեշտությունը: Միաժամանակ նրանք խորհուրդ են տվել չընկնել կռապաշտության գիրկը և հեթանոսների նման միայն պատկերներին չապավինել: Ըստ հայ վարդապետների՝ պետք է պաշտել ոչ թե պատկերները, այլ փառավորել նկարված սրբերին և նրանցից բարեխոսություն խնդրել, խաչին և սրբերին երկրպագել որպես միջնորդի՝ Աստծո օգնությունը հայցելու համար: Պ. իր չափավոր ձևի մեջ պաշտպանել են *Վրթանես Քերթողը, Հովհաննես Գ Օձնեցին, Հովհան Մայրավանեցին* և ուրիշներ:

Հայ եկեղեցում պատկերների պաշտամունքը, սկսած VII–VIII դարերից, հիմնականում հանդել է խաչին և Քրիստոսին: Սրբապատկերները, մի շարք մասնավոր դեպքերից բացի, չեն դարձել պաշտամունքի կենտր. առարկա և մեծ տարածում չեն գտել: Դրանց պաշտամունքը, ի տարբերություն մյուս եկեղեցիների, մղվել է հետին պլան. «Յոյնք և վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, և Հայք՝ զխաչ» (Մխիթար Գոշ, «Թուղթ...», տես «Արարատ», 1900, նոյեմբ., էջ 562): Հովհաննես Գ Օձնեցին և Ղեվոնդ պատմիչը (VIII դ.)

խաչի հետ միաժամանակ սրբապատկերներից հիշատակում են միայն Քրիստոսի պատկերը. «... որ պատուէ զխաչն Քրիստոսի և զպատկեր նորին, զնոյն ինքն պատուեալ լինի զՔրիստոս...» (Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, Մատենագրութիւնք, 1834, էջ 55): VIII և հետագա դարերի հայ պատկերամարտները (*պավլիկյաններ, թոնդրակեցիներ* և այլ աղանդավորներ) նույնացրել են խաչապաշտության և Պ-յան երևույթները և, քանի որ պատկերների պաշտամունքը Հայաստանում թույլ էր արտահայտված, ընդդիմախոսության թիրախ են դարձրել խաչապատկերների պաշտամունքը: Հովհաննես Գ Օձնեցին նրանց անվանել է «խաչամարտներ», որոնք «...վերացեալ ելին ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի Քրիստոսատեցութիւն» (նույն տեղում, էջ 78): Այդ հոսանքին դիմադրավելու համար Հովհաննես Գ Օձնեցին պատկերների ջատագովությունից անցել է խաչերի պաշտպանության, նպաստելով հայոց մեջ խաչի քարոզչության ու պաշտամունքի տարածմանը, և սկիզբ դրել զուտ խաչապաշտության պաշտպանությանը: Խաչապաշտության ջատագովության ավանդույթը հունադավանության ու աղանդավորության դեմ մղած իրենց գաղափար. պայքարում շարունակել են հետագայի նշանավոր վարդապետներ *Անանիա Սանահնեցին, Հովհաննես Սարկավագը, Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը* և ուրիշներ:

Գրկ. Սեդրակյան Ա., Հայ եկեղեցու պատկերահարգութիւնը, ՍՊԲ, 1904: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Սահակյան Ա., Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, ՊԲՀ, 1987, № 2: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 145–166:

ՊԱՏՃԱՌ, մեկնողական գրականության ժանր: Պ-ի նպատակը արևելաքրիստ. մատենագրության մեջ առավել կարևոր տեղ զբաղեցնող աստվածաբան. երկերի հորինման շարժառիթների, ժամանակի, հեղինակային պատկանելության և այլ հարակից հանգամանքների վերլուծությունն ու պարզաբանումն է: Պ. երկի ստեղծման գրական պատմությունն է, նրա աստվածաբան. արժեքավորումը: Ունենալով մատենախոսական հարուստ բովանդակություն՝ Պ-ները ներառվել են հայ միջնադարյան բարձրագույն դպրոցների և վարդապետարանների ուս. ծրագրերի մեջ: Դրանք եղել են բարոյական աստվածաբանության ձեռնարկներ, որտեղ տեսականորեն ամբողջացված է դասական համարում ունեցող հայրախոսական ժառանգությունը: Պ-ի հորինման գործում հատկապես մեծ է *Դավիթ Քոբայրեցու* վաստակը: Նրա գրչին են պատկանում *Փիլոն Ալեքսանդրացու* (Եբրայեցի), *Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու* երկերի, ինչպես նաև՝ *Դավիթ Անհաղթի* «Սահմանք իմաստասիրութեան», «Ի Սուրբ Խաչն աստուածընկալ»-ի Պ-ները: Իր տեսակի մեջ բացառիկ է XIII դ. հեղինակ Գրիգոր Ապասյանի (տես *Գրիգոր որդի Աբասա*) կազմած «Գիրք պատճառացը», որտեղ ի մի են բերված մինչ այդ հրապարակի վրա եղած Պ-ները:

Գրկ. Դաւթայ վարդապետի Պատճառ Պահոցն գրոց՝ ի Բարսղէ կարգելոցն՝ ասացեալ ի հմտութիւն վարժողաց (աշխատասիր. Կ. Մուրադյանի), «Գանձասար», 5, 1994: Դավիթ Քոբայրեցի, Պատճառք ճառից Գրիգորի Նիւսացւոյ (աշխատասիր. Կ. Մուրադյանի), «Շողակաթ», Ստամբուլ, 1995, էջ 137–155: Մուրադյան Պ., Դավիթ Քոբայրեցին և նրա «Պատճառները», «Գանձասար», 5, 1994:

Հակոբ Քյոսեյան

ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ տասը, տասնաբանյա, աստվածային պատգամներ՝ տրված մարդուն, որպեսզի վերջինս, որպես ազատ կամք և ընտրության հնարավորություն ունեցող բանական էակ, ընտրություն կատարի բարու և չարի, կյանքի և մահվան, *շնորհի* և *մեղքի*, ի վերջո՝ *Աստծո* և *սատանայի* միջև: Նախքան տասնաբանյան Աստված առաջին պատվիրանը տվել էր դրախտաբնակ մարդուն: Երբ Ադամն ու Եվան պահում էին Երկնավորի պատգամը՝ սնվում էին երկնավոր շնորհներով, բայց, խախտելով այն՝ նրանք ընտրեցին չարը, արտաքսվեցին *դրախտից*, դարձան մեղսական և մահկանացու: Սակայն բազմագութ Աստված, այնուամենայնիվ, շարունակեց խնամարկել մարդուն: Նա հայտնվեց իր ժողովրդին Հանձին Մովսեսի, որի առաջնորդությամբ էլ դուրս բերեց նրան «կրակե հնոցից»՝ Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր: Ելքի ճանապարհին, սուրբ Սինա լեռան վրա, Տերը Մովսեսին հաղորդեց տասը Պ., որպեսզի նա փոխանցի ժողովրդին (Ելք **20.1**–17): Պ-ները գրված էին քարե տախտակների վրա: Դրանք վերաբերում են ոչ միայն հրեա, այլև բոլոր հավատացյալ ժողովուրդներին.

«Տերը հայտնեց հետևյալ բոլոր պատգամները՝ ասելով.

«Ե՛ս եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեցի Եգիպտացիների երկրից՝ ստրկության տնից: Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար [1]:

Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի՛ երկրպագես ու չպիտի պաշտես դրանց, որովհետև ե՛ս եմ քո Տեր Աստվածը՝ մի նախանձոտ Աստված. հայրերի մեղքերի համար պատժում եմ որդիներին, ինձ ատող մարդկանց նույնիսկ երրորդ ու չորրորդ սերնդին, իսկ ինձ սիրող ու իմ հրամանը կատարող մարդկանց մինչև հազարերորդ սերնդին ողորմում եմ [2]:

Քո Տեր Աստծու անունն զուր տեղը չպիտի արտասանես, որովհետև Տերը արդար չի համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում [3]:

Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթներորդ օրը քո տեր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես…., որովհետև Տեր Աստված վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, ինչ դրանց մեջ է, իսկ յոթներորդ օրը հանգստացավ: Դրա համար էլ Տերն օրհնեց յոթներորդ օրը և այն սուրբ հռչակեց [4]:

Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես… [5]:

Մի՛ սպանիր [6]:

Մի՛ շնացիր [7]:

Մի՛ գողացիր [8]:

Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր [9]:

Ո՛չ քո մերձավորի տան, ո՛չ նրա ագարակի վրա աչք մի՛ ունեցիր: Ո՛չ քո մերձավորի կնոջ վրա, ո՛չ նրա ծառայի վրա, ո՛չ նրա աղախնու վրա, ո՛չ նրա եզան վրա, ո՛չ նրա էշի վրա, ո՛չ նրա անասունի վրա, ո՛չ այն ամենի վրա, ինչ քո մերձավորինն է, աչք մի՛ ունեցիր» [10]:

Աստված տվել է նաև այլ պատվիրաններ ու հրահանգներ, որոնք վերաբերում են ժողովրդին, քահանաներին ու քահանայապետներին, սակայն հիմնականը հիշյալ տասնաբանյան է, որտեղ հիշատակված հրեական շաբաթը՝ հանգստյան օրը, քրիստոնյա աշխարհը փոխարինել է *կիրակիով* (միաշաբթի):

Նշյալ մեղքերը՝ սպանություն, շնություն, սուտ ևն, Աստվածաշնչի տեսակետից սատանայի (Օձի, Բանսարկուի, Հակառակորդի) հարուցած մեղքերն են, ուստի և ատելի են Աստծուն: Խոսելով մովսիսական օրենքի մասին՝ Պողոս առաքյալը ասում է, որ «…օրենքը սուրբ է, պատվիրանն էլ՝ սուրբ և արդար ու բարի» (Հռոմ. **7.**12), բայց գտնում է, որ «… Աստծո արդարությունը ի Հիսուս Քրիստոս եղած հավատի միջոցով է բոլոր հավատացողների համար» (Հռոմ. **3.**22): Հիսուս Քրիստոսն ամենամեծ Պ. է համարում նախ՝ սերն առ Աստված և ապա՝ սերն ընկերոջ (մերձավորի, ընդհանրապես՝ մարդու) հանդեպ: Նա աշակերտներին բացահայտում է իր առաքելության իմաստը՝ աստվածային Օրենքի (Պ-ի) և մարգարեությունների կատարումը. «Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու [իրականացնելու]» (Մատթ. **5.**17): Հիսուս Քրիստոսը ողջ Օրենքը, մարգարեությունները և Պ. ամփոփում է հետևյալ խոսքի մեջ. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծը և առաջին պատվիրանը. և երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը: Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և մարգարեները» (Մատթ. **22.**37–40, Մարկ. **12.**29–31, Ղուկ. **10.**25–28):

Լևոն Սարգսյան

ՊԱՏՎՈ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, վաստակաշատ հոգևորականներին և նշանակալից ծառայություններ մատուցած աշխարհականներին շնորհվող պատվավոր պարգևներ:

1. Պատվո աստիճաններ

ա. Ավագություն, տրվում է վաստակաշատ ամուսնացյալ *քահանաներին* (ավագ քահանա):

բ. Արքություն, տրվում է վաստակաշատ *եպիսկոպոսներին* (արքեպիսկոպոս): Արք կամ արհի նշանակում է մեծ: Այն եպիսկոպոսը, որն իր վարչ. իրավասության ներքո ունի մեկ կամ ավելի եպիսկոպոս, կոչվում է մեծ եպիսկոպոս, այսինքն՝ արքեպիսկոպոս: Հայ եկեղեցում արքեպիսկոպոսը նվիրապետ. աստիճան չէ, այլ՝ տիտղոս և պատիվ, որ շնորհվում է կաթողիկոս. *կոնդակով*: Արքեպիսկոպոսը և *պատրիարքը* ձեռնադրությամբ և օծումով եպիսկոպոսներ են: Երուսաղեմի և Կ. Պոլսի հա-

յոց պատրիարքներն արքեպիսկոպոսներ են ի պաշտոնե:

2. Պար՝ ատրումներ

ա. Խաչակրութիւն, լանջախաչ կրելու իրաւունք. տրվում է թե՛ ամուսնացյալ քահանաներին (պղնձե արծաթաջուր կամ ոսկեզօծ) և թե՛ *վարդապետներին* (արծաթե ոսկեզօծ, ակնակուռ):

բ. Ծաղկյա սև փիլոն, տրվում է վաստակ ունեցող ամուսնացյալ քահանաներին և վարդապետներին:

գ. Ծաղկյա մանուշակագույն փիլոն, տրվում է ծայրագույն վարդապետներին և բացառիկ դեպքերում՝ ամուսնացյալ քահանաներին:

դ. Շքանշաններ, ներկայումս Հայ եկեղեցին ունի երեք շքանշան՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» և «Ս. Ներսես Շնորհալի»: Սկզբ. շրջանում Հայ եկեղեցին ունեցել է միայն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, որ շնորհվել է առաջին և երկրորդ կարգերով: Սահմանվել է 1911-ին, *Գևորգ Ե Սուրենյանցի* կողմից. պատրաստվել է արծաթից, եղել ոսկեջրած և տեղ-տեղ էմալով պատած, շքանշանների երկու եզրերին՝ «Գ. Ե» (Գևորգ Ե) տառերը: Եղել է երկու տեսակ՝ հոգևորականներին և աշխարհականներին շնորհվող: Ունեցել է կաթողիկոս. պատվանշաններ՝ կաթողիկոս. թագ (կարմրագույն էմալով պատած, կենտրոնում էմալե սպիտակ փոքր խաչ՝ ոսկե շրջանակով), կաթողիկոս. խաչ և ոսկե գավազան, եմիփորոն՝ կապտագույն էմալով պատած: Աշխարհականներին տրվող շքանշանն ավելի փոքր էր՝ վերցված ոսկե փոքր դափնեպսակի մեջ, իսկ հոգևորականներինը՝ առանց դափնեպսակի: Երկու շքանշաններն էլ երկու կարգի էին՝ Ա և Բ: Ա կարգինը ադամանդազարդ էր, հատկապես թագը՝ մանր ադամանդներով զարդարուն: Շքանշանը մինչև խորհրդ. իշխանության հաստատումը որպես պատվո նշան տրվել է թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում ապրող ազգայիններին, իսկ խորհրդ. կարգերի հաստատումից հետո՝ միայն սփյուռքահայերին: 1946-ին *Գևորգ Զ Զորեքչյանը* Փարիզում պատրաստել է տվել աշխարհականներին տրվող «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի երկու շքանշան՝ եզրերի տառերը դարձնելով «Գ. Լ.» (Գրիգոր Լուսավորիչ): Երկկարգ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը շնորհվել է մինչև 1961-ը, որից հետո *Վազգեն Ա Պալճյանը* նախաձեռնել է շքանշանի նորացված տարբերակի պատրաստման գործը, սահմանել ևս երկուսը: 1978-ի նոյեմբ. Գերագույն հոգևոր խորհուրդը հաստատել է Վազգեն Ա Պալճյանի առաջարկը՝ Հայոց հայրապետության կողմից շնորհվելիք բարձրագույն պարգևների մասին:

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի չափերն են 50x40 *մմ*: Շքանշանի ներքնամասի կենտրոնում Ս. Էջմիածնի Մայր տաճարի քանդակն է՝ Արարատի ֆոնի վրա: Վերևի մասում հայրապետ. պատվանշաններն են՝ թագ, գավազան և խաչ: Շքանշանը աջ և ձախ կողմերից երիզված է դափնու տերևներով: Շնորհվում է հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր աթոռ Ս. Էջմիածնի՝ ի նշանավորումն մեծ բարերարությունների, որոնք մատուցվում են հայ ժողովրդին և Հայաստանյայց առաքելական եկեղեցուն:

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանի չափերն են 50x42 *մմ*: Կենտրոնում Ս. Էջմիածնի Մայր տաճարի քանդակն է՝ Արարատի ֆոնի վրա: Աջ և ձախ կողմերում կանգնած են ս. Սահակը և ս. Մեսրոպ Մաշտոցը՝ ձեռքերին Աստվածաշունչը, որի երկու երեսներին քանդակված են հայոց այբուբենի Ա և Բ տառերը: Շքանշանը երիզված է բոլորաձև զարդամոտիվներով և ներքևում ունի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» մակագրությունը: Շնորհվում է հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր աթոռ Ս. Էջմիածնի՝ Հայ եկեղեցու և հայկ. մշակույթի զարգացմանը մատուցած նշանակալից ծառայությունների համար:

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի չափերն են 50x40 *մմ*: Պատկերի կենտրոնում Ս. Էջմիածնի Մայր տաճարի քանդակն է՝ Արարատի ֆոնի վրա: Վերևում աղավնակերպ Ս. Հոգին իր լույսի ճառագայթներն է ցոլարձակում Մայր տաճարի վրա: Ներքևում Մայր տաճարի պատկերն իրենց վրա կրող երկու արծիվների քանդակներն են: Շքանշանը երիզված է ոլորահյուս տերևներ պատկերող զարդամոտիվով, իսկ ներքևի ժապավենը պարունակում է «Ս. Ներսես Շնորհալի» մակագրությունը: Շնորհվում է հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր աթոռ Ս. Էջմիածնի՝ ի գնահատումն բազմամյա բեղմնավոր աշխատանքի, որ կատարվում է ի նպաստ Մայր աթոռ Ս. Էջմիածնի, նվիրապետ. աթոռների, Հայաստանում և սփյուռքում գործող հայկ. եկեղեցիների և եկեղեց. կազմակերպությունների:

Երեք չքանչանների հեղինակներն են ճարտ. Բ. Արզումանյանը և ոսկերիչ Ժ. Զուլոյանը:

Պ. ա. և պ. տրվում են առանց եկեղեց. ծիս. արարողության, կաթողիկոս. կոնդակով կամ թեմական առաջնորդ եպիսկոպոսի գրությամբ:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.7, 6–8-րդ պատկերները:

ՊԱՏՐԻԱՐՔ (հուն.՝ հայրապետ, հայրերի ա-վագ), Ուղղափառ եկեղեցու գահակալի բարձ-րագույն տիտղոս: Եկեղեց. պատմության մեջ Պ. են կոչվել *Ընդհանրական եկեղեցու* հինգ ա-թոռների՝ Հռոմի, Կոստանդնուպոլսի, Ալեք-սանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի եպիսկո-պոսները (հերթականությունը սահմանվել է 381-ի Կ. Պոլսի Բ տիեզեր. ժողովի 3-րդ կանո-նով, վերահաստատվել 451-ի Քաղկեդոնի ժո-ղովի 28-րդ կանոնով): 1054-ին Հռոմի և Կ. Պոլ-սի եկեղեցիների բաժանումից հետո Պ. են կոչ-վել միայն Ուղղափառ եկեղեցու հոգևոր պետե-րը: Հետագայում մի շարք Ուղղափառ ինքնու-րույն (ավտոկեֆալ) եկեղեցիների (ռուս., բուլղ., ռումին., սերբ. ևն) առաջացումից հետո դրանք նույնպես գլխավորել են Պ-ները: Վրաց, ինչ-պես նաև Հայ կաթողիկե եկեղեցու հոգևոր ա-ռաջնորդները կոչվում են կաթողիկոս-պատ-րիարք: Հայ առաքելական եկեղեցին ունի երկու պատրիարքություն՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի, ո-րոնց աթոռների գահակալները կոչվում են Պ-ներ: Հայոց մեջ Պ-ները ձեռնադրությամբ և օծմամբ եպիսկոպոսներ են՝ արքեպիսկոպոսի տիտղոսով, ընտրված իրենց միաբանություննե-րի և ժողովրդի կողմից, որպես վարչ. պաշտոն: Ունենալով միայն վարչ. իրավասություններ՝ Ե-րուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Պ-ները եպիսկո-պոս. ձեռնադրություն և մյուռոնօրհնություն չեն կատարում և արքություն չեն շնորհում ի-րենց իշխանության ներքո գտնվող եպիսկոպոս-ներին (դրանք վերապահված են միայն Ամենայն հայոց կաթողիկոսին): Հայ եկեղեցու զույգ պատրիարքություններն ի հոգևորս ենթակա են Ամենայն հայոց կաթողիկոսությանը: Ամենայն հայոց կաթողիկոսը XVI–XVII դարերից կոչ-վում է նաև Ծայրագույն Պ.՝ պայմանավորված Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Պ-ների, Աղթա-մարի, Գանձասարի (Աղվանից) և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների վրա Ամենայն հայոց կաթողիկոսի գերագահությամբ:

Արտաշես Ղազարյան

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՔԵՐ, անկանոն գրքեր, գաղտնի գրքեր, սուտ գրքեր, ծածուկ գրքեր, ապոկրիֆ գրքեր (հուն. ապոկրիֆոս-գաղտնի, ծածուկ), քրիստոնեական գրականու-թյան պատմության մեջ այն գրվածքները, ո-րոնք բովանդակությամբ առնչվում են Աստ-վածաշնչին, առաքյալներին և սուրբգրային անձերին, սակայն եկեղեցու կողմից մերժվել են և դուրս մնացել *Աստվածաշնչի* Կանոնից (տես *Կանոնական գրքեր*): Պ. գ-ի մեծ մասը գրվել է II–IV դդ.: Դրանք ստեղծվել կամ խմբագրվել են Աստվածաշնչի կանոնական գրքերի (հիմնականում՝ նորկտակարանային երկերի) նմանությամբ: Գոյություն ունեն պա-րականոն ավետարաններ, գործքեր, նամակներ, հայտնություններ, թղթեր: Նորկտակարանա-յին Պ.գ-ին զուգահեռ երևան են եկել նաև մի շարք հինկտակարանային անկանոնականներ, ո-րոնք հիմնականում հին տեքստերի քրիստ. խմբագրություններ են: Հին կտակարանի պա-րականոնների մեծ մասի հեղինակներ են հա-մարվում մովսիսական կամ քրիստոնեացած հրեաները: Պ. գ. երևան են եկել տարբեր պատ-ճառներով: Քանի որ Նոր կտակարանը բազ-մաթիվ բացեր ունի Քրիստոսի մանկության և պատանեկության տարիների, առաքյալների քարոզչական գործունեության, Աստվածածնի կյանքի և այլնի վերաբերյալ, մի շարք «ջեր-մեռանդ» քրիստոնյաներ փորձել են լրացնել այդ բացերը: Բազմաթիվ Պ. գ. են գրել նաև հերետիկոսները, քրիստ. աղանդավորները և, գլխավորապես, գնոստիկյանները (տես *Գնոս-տիցիզմ*)՝ իրենց գաղափարախոսությունը Սուրբ Գրքի տեսքով ճշմարտացի ներկայաց-նելու համար: Քիչ չեն նաև այն Պ.գ., որոնք ստեղծել են եկեղեց. կենտրոնները կամ Աթոռ-ները՝ ցույց տալու համար իրենց եկեղեցու կա-պը այս կամ այն առաքյալի հետ:

Եկեղեցին միշտ բացասաբար է վերաբերվել Պ. գ-ին, պայքարել նրանց դեմ: Հայ եկեղեցին նույնիսկ միջոցներ է ձեռնարկել՝ վանքերում կասկածելի և պատահական մարդկանց միջո-ցով գրքերի ընդօրինակումն ու բազմացումը կանխելու նպատակով: Այդ մտահոգությամբ է, որ Սսի 1243-ի ժողովի ընդունած ԺԱ կա-նոնով պահանջվել է «զսուրբ գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց, գիտնոց և ուղղափա-ռաց»: Այնուհանդերձ, Ընդհանրական եկեղե-ցին, թյուրիմացաբար, մի կարճ ժամանակ ըն-դունել է որոշ Պ. գ. (Պետրոսի Հայտնությու-նը, Պողոսի Առ Կորնթացիս Գ նամակը ևն)՝

իբրև աստվածաշնչական, և դրանք ներմուծել Նոր կտակարանի կանոնում: Պողոսի Առ Կորնթացիս Գ նամակը որոշ չրջան կանոնական է համարվել նաև Հայ և Ասորի եկեղեցիներում: Հին և Նոր կտակարանների անկանոնականները, որոնք հիմնականում գրվել են հունարեն, միջին դարերում թարգմանվել են (ղպտերեն, եթիոպերեն, հայերեն, արաբերեն, լատիներեն, սլավոներեն ևն) և տարածվել քրիստ. բոլոր երկրներում:

Հայ եկեղեցին տարբեր ժամանակներում կազմել է Հին և Նոր կտակարանների կանոնական գրքերի, ինչպես նաև անկանոն գրքերի ցուցակներ: Դրանք հայ մատենագիտ. գրականության հնագույն նմուշներն են և մեծ արժեք են ներկայացնում հայ մատենագիտության պատմության, բանասիրության և հայագիտության համար: Հայկ. ինքնուրույն Պ. գ. որպես այդպիսիք չկան: Հայտնի են բավական մեծ թվով հայերեն Պ.գ., որոնք թարգմանություններ են հուն-ից և ասոր-ից, անկանոն գրքերից ծագած գրական վերամշակումներ կամ բանահյուս. ստեղծագործություններ են: Պ. գ-ի հայերեն թարգմանությունները մեծ մասամբ կատարվել են V–VI դդ.:

Պ.գ-ի հայերեն ցանկերից առաջինը *Սամուել Անեցու* ավանդածն է: Ըստ նրա, 590-ին Հայաստան են եկել ասորի նեստորական քարոզիչներ, որոնք շուտով հալածվել են, բայց նրանց բերած «սուտ» գրքերը թարգմանվել են հայերեն: Սամուել Անեցին տալիս է նաև թարգմանված գրքերի անունները՝ թվով 10, իսկ մեկ այլ՝ առավել լրիվ ցանկում հիշատակվում են 16 անկանոնականների անուններ: Դրանց հաջորդում են (XIII դ. ընդօրինակությամբ) *Մխիթար Այրիվանեցու* «Ճառընտիր»-ում պահպանված, նրա ժամանակ (XIII դ.) գոյություն ունեցող հայերեն Պ. գ-ի երեք ցուցակները: Ցուցակներից առաջինը, որ կրում է «Գիրք զոր ունին Հրեայքն ի ծածուկ» խորագիրը, վերաբերում է Հին կտակարանի անկանոն գրքերին և թվարկում է 10 գիրք: Հաջորդը, որը կրում է «Իսկ ըստ Նորոյս» խորագիրը, վերաբերում է Նոր կտակարանի Պ. գ-ին և թվարկում է 5 կամ 7 գիրք (եթե վերջում հիշատակվող ընդհանրական թղթերը հաշվենք առանձին-առանձին): Երրորդ ցուցակում Մխիթար Այրիվանեցին նշել է Կղեմես Հռոմայեցու (I դ.) «ընդունելի» համարած գրքերը, որոնցից 6-ը նորկտակարանային անկանոնականներ են: Մխիթար Այրիվանեցին ավանդել է նաև *Հովհաննես Սարկավագի* (XI դ.) կազմած «Կարգադրութիւնք գրոց սրբոց»-ը, այսինքն՝ Աստվածաշնչի Կանոնը, որոնց մեջ կան Հին և Նոր կտակարանների մի քանի Պ. գ.: Բացի այդ ցուցակներից հայ մատենագրության մեջ պահպանվել են հարյուրից ավելի պարականոններ (առավելապես՝ նորկտակարանային), որոնց զգալի մասը մեզ է հասել զանազան տարբերակներով, խմբագրություններով և խորագրերով:

Պ. գ., լինելով կրոնական հին ավանդություններ և նաև՝ պատմ. հիմք պարունակող գրություններ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում նախնական եկեղեցու պատմության, հոգևոր և ծիսական դրության պատկերն ամբողջացնելու տեսակետից, պատկերացում են տալիս Հին եկեղեցու ծոցում ծնված աղանդների, եկեղեցու կյանք ներթափանցած գնոստիկյան, հուդայական, հունական, տիեզերաբան. և փիլ. հայացքների, ինչպես նաև առաջին քրիստոնյաների բարքերի ու սովորությունների մասին: Պ. գ. որոշ ազդեցություն են թողել հին քրիստ. և միջնադարյան արվեստի ու գրականության վրա, պատճառ են դարձել եկեղեց. մի շարք տոների և ավանդությունների ձևավորման, անուղղակիորեն նպաստել են առաքելական ավանդության ճշմարտության, ուղղափառության և վավերականության ըմբռնմանը:

Հայ իրականությունում Պ. գ. ազդեցություն են ունեցել արվեստի և գրականության վրա: XV դ. սկզբին Առաքել Սյունեցին իր նշանավոր «Ադամագիրք»-ը, XVIII դ. սկզբին Թովմա Ագուլեցին իր «Պատմութիւն Թովմայի առաքելոյն» ծավալուն բանաստեղծությունը մասամբ կամ ամբողջովին հյուսել են անկանոնականների վրա: Պ. գ-ից ազդվել են հայկ. մանրանկարչությունը, քանդակագործությունը ևն:

Գրկ. Զարբհանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889: Անկանոն գիրք Հին կտակարանաց, Վնտ., 1896 (հրտ. Հովսեփյան Ս.): Սարգիսյան Բ., Ուսումնասիրութիւնք Հին կտակարանի անվավեր գրոց վրա, Վնտ., 1898: Անկանոն գիրք Նոր կտակարանաց, Վնտ., 1898 (հրտ. Տայեցի Ե.): Տայեցի Ե., Հայկական հին և նոր դպրութեանց անվավեր գիրք Նոր կտակարանաց, «Բազմավեպ», 1899, էջ 128–136: Անկանոն գիրք առաքելականք, Վնտ., 1904 (հրտ. Զրաքյան Գ.): Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ.1, Ե., 1959, էջ 898–913: Պետրոսյան Ե., Հայրաբանություն, մաս 1, Ս. Էջմիածին, 1996, էջ 259–288:

Արտաշես Ղազարյան

ՊԱՐՁՅԱՆ Սուքիաս [10.12.1837, Աստապատ (Նախճավանի դավառ) – 12.9.1914, Վաղարշապատ], արքեպիսկոպոս, բանասեր, մանկավարժ: Ավարտել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը (1856): 1863-ին նշանակվել է Թիֆլիսի վիճակի կոնսիստորիայի անդամ: 1869-ից՝ վարդապետ, 1875-ից՝ եպիսկոպոս, 1893-ից՝ արքեպիսկոպոս: Եղել է *Սինոդի* անդամ (1886–91), Ախալցխայի (1869–72), Ալեքսանդրապոլի (1872–74, 1875–77), Նոր Նախիջևանի (1881–1883), Աստրախանի (1883–86), Երևանի (1888–1890, 1899–1903), Ատրպատականի (1893–95) հայոց թեմերի առաջնորդ: Դասավանդել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում (1860–63), *Գևորգյան ճեմարանում* (1874–75, 1895–99), եղել ճեմարանի տեսուչ (1895–99), «*Արարատ*» ամսագրի խմբագրապետ (1897–99): Մատուցած ծառայությունների համար ցար. կառավարությունը 1886-ին նրան շնորհել է Ս.Ստանիսլավի առաջին կարգի շքանշան: Պ. զորավիդ է եղել հայ դպրոցական կյանքի բարելավմանը, պայքարել Հայ եկեղեցու ներքին գործերին միջամտելու, եկեղեց. գույքի բռնագրավման, հայկ. դպրոցները փակելու՝ ցար. կառավարության քաղաքականության դեմ: Հակակառավար. ելույթների համար աքսորվել է Օրյոլ (1891–1893) և Օրենբուրգ (1903–05):

Պ-ի նյութ. օժանդակությամբ են իրականացվել «Պատմագիրք Հայոց» մատենաշարի հատորների [Ղազար Փարպեցի (1904), Ագաթանգեղոս (1909), Մովսես Խորենացի (1913)], Ս. Ամատունու «Հին և նոր պարականոն ու անվավեր շարականներ» (1911) ուսումնասիրության, Գրիգոր Կամախեցու «Ժամանակագրության» (1915), Մ. Օրմանյանի մի շարք երկասիրությունների տպագրությունը, Էջմիածնի տպարանի շինարարությունը ևն: Խոշոր գումար է կտակել հայ հին մատենագիրների երկերի (շուրջ 40) քննահամեմատական բնագրերը հրատարակելու համար (իրագործվել է մասամբ):

Հայ եկեղեցու պատմության հարցերին նվիրված նրա երկասիրությունները կարևոր սկզբնաղբյուր են նաև XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ հաս. կյանքի ուսումնասիրության համար:

Երկ. Ճանապարհորդական տպավորութիւնք և համառօտ նկարագիր դեպքերի վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, Ե., 1907: Պատվիրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Պետերբուրգ. Հոգեւոր դպրոցների մասին, Վաղ-պատ, 1907:

Ստեփան Ստեփանյանց

ՊԱՐՍԻՑ ԺՈՂՈՎ 612/613 (այլ ենթադրությամբ՝ 615/616-ին), Տիզբոնի եկեղեցական ժողով: Հրավիրել է Պարսից արքա Խոսրով II Ափարվեզը նեստորականների (տես *Նեստորականություն*) կաթողիկոսության խնդրի առիթով: Արծարծվել են նաև դավանական հարցեր: Ժողովի ընթացքի, ընդունած որոշումների և Պարսից արքայի դիրքորոշման վրա մեծ ազդեցություն են գործել Պարսից թագուհի, ուղղափառ ասորուհի Շիրինը, արքունի ուղղափառ դուրուստպետ (բժշկապետ) Գաբրիել Շիգդարացին և Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին: Հայաստանից Պ.ժ-ին մասնակցել են Մամիկոնեից Կոմիտաս եպիսկոպոսը (վերադարձից հետո՝ *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոս) և Ամատունյաց Մատթեոս եպիսկոպոսը: Ուղղափառ Գաբրիել բժշկապետը Շիրին թագուհու միջոցով այնպիսի ազդեցություն է ձեռք բերել եկեղեց. խնդիրներում Պարսից պետության մեջ, որ ամեն կերպ աշխատել է բոլորովին ոչնչացնել նեստորականությունը և հաստատել արլ. ուղղափառություն: Նեստորականներին, որոնք մի քանի տարի չունեին կաթողիկոս, Պ. ժ-ում ոչ միայն չի հաջողվել իրավունք ստանալ իրենց համար կաթողիկոս ընտրելու, ինչը ժողովի գլխ. խնդիրն էր, այլև Գաբրիել բժշկապետի դրդմամբ թագավորը նրանց գլխավորներին բանտարկել է, իսկ նեստորական նշանավոր աստվածաբան Գեորգ Իզալացուն՝ խաչել: Գաբրիել բժշկապետին, սակայն, չի հաջողվել իր ուզած մարդուն նեստորական եկեղեցու կաթողիկոս դարձնել, ինչպես նրան լիազորել էր Խոսրով II-ը:

Պ. ժ-ին ներկայացվել է Հայ եկեղեցու Հավատո գիրը կամ Դավանության թուղթը, որ գրել էր Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը: Երկար վիճաբանություններից հետո ընդունվել են միայն երեք *տիեզերական ժողովները*, մերժվել է *Քաղկեդոնի ժողովը*, ինչպես նաև նեստորականությունը: Հայ եկեղեցու դավանանքը Պարսից տերության սահմաններում ճանաչվել է ուղղափառ դավանություն:

Գրկ. Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Տեր-Մինասյան Ե., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971, էջ 45–58:

Արտաշես Ղազարյան

ՊԱՐՏԱՎԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ, գումարվել է 768-ին, Հայոց կաթողիկոս *Սիոն Ա*

ՊԵՏՐՈՍ

Բավոնեցու նախաձեռնությամբ, Մեծ Հայքի Ուտիք նահանգի Պարտավ քաղաքում, որն այդ ժամանակ Աղվանից կաթողիկոսության աթոռանիստն էր: Հայաստանի մայրաքաղաք և կաթողիկոսանիստ Դվինը գրավել էին արաբները, և դրանով է Սիոն Ա Բավոնեցին բացատրել ժողովը Պարտավում անցկացնելու հանգամանքը: Մասնակցել են եպիսկոպոսներ, երեցներ, ինչպես նաև ազատներ ու նախարարներ՝ սպարապետ Սահակ Բագրատունու գլխավորությամբ: Այն հոգևորականները, որոնք չեն կարողացել գալ Պարտավ, գրով հայտնել են իրենց համաձայնությունը ժողովի կայացնելիք որոշումներին: Մասնակցել են նաև Աղվանից Դավիթ կաթողիկոսը, Աղվանից աշխարհի իշխաններ և ազատներ: Ժողովն ընդունել է 24 կանոն, որ «*Կանոնագիրք Հայոց*»-ում հայտնի է «Սիոն կաթողիկոսի կանոնախումբ» անունով: Կանոնները վերաբերում են եկեղեց. կարգ ու կանոնին, եկեղեցականների պարտավորություններին և իրավունքներին: Եպիսկոպոսներին արգելվել է մյուռոն օրհնել, բռնի տուգանքներ գանձել, տուգանքները և հարկերը գրպանել, իրենց չենթարկվող վիճակների համար քահանաներ ձեռնադրել, եկեղեց. հասույթներով հարկեր վճարել: ԺԱ կանոնն արգելել է հեթանոսների հետ ամուսնությունը, ԺԳ կանոնը՝ երրորդ ամուսնությունը: ԺԶ կանոնով արգելվել է ազգականների միջև ամուսնությունը՝ մինչև չորրորդ սերունդ (նույն արգելքը հայոց եկեղեց. իրավունքում մինչ Պ. ե. ժ. սահմանել են նաև Շահապիվանի ժողովի ԺԳ, Աղվենի ժողովի Ժ կանոնները): ԺԷ կանոնը խստիվ արգելել է ուրիշ վիճակներից եկած թափառաշրջիկներին ողորմություն տալը. մուրացիկներին պետք է օգնություն ցույց տրվեր ըստ իրենց թեմի տարածքի: Դրա համար պատվիրվել է կառուցել անկելանոցներ՝ հիվանդներին և անկարողներին մի տեղ հավաքելու և թույլ չտալու, որ նրանք մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվեն: Մեկ այլ կանոնով թեմի առաջնորդներն ու ազատները պարտավոր էին հոգալ ավերված անկելանոցները, բարեխնամ հաստատությունները նորոգելու, նշանակված տուրքը ժողովրդից հավաքելու և դրանով կարոտյալներին խնամելու մասին: ԻԴ կանոնով կանոնական են ճանաչվել Հին կտակարանի գրքերից 37-ը:

Գրկ. Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 2, Ե., 1971, էջ 3–18: Մխիթարյանց Ա., Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1874: Ղլտճյան Ա., Կանոնք Պարտավի ազգային ժողովի (Սիոնն կաթողիկոսի), Վաղ-պատ, 1905: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արտաշես Ղազարյան

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ (ծ. թ. անհտ – 1058, Սեբաստիա, ամփոփվել է Ս. Նշան վանքի բակում), Ամենայն հայոց կաթողիկոս 1019-ից: Հաջորդել է *Սարգիս Ա Սևանցուն*, նրա կենդանության օրոք ու նրա ձեռքով կաթողիկոս օծվել Անիում: Պ. Ա Գ-ի աթոռակալության սկիզբը համընկել է Անիի Բագրատունյաց թագավորության ճգնաժամի հետ, երբ Հայոց Գագիկ Ա թագավորի մահից (1020) հետո նրա երկու որդիների՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտ Դ-ի միջև գահակալ. կռիվներ են ծագել: Պ. Ա Գ. այդ պայքարում աջակցել է Հովհաննես-Սմբատին: Թեև այդ վեճը կաթողիկոսի և իշխանների միջնորդությամբ 1021-ին հարթվել է, բայց երկիրը կրկին մասնատվել է. Անին չրջակայքով անցել է ավագին՝ Հովհաննես-Սմբատին, իսկ թագավորության մնացած մասը (Դրուց աշխարհ)՝ Աշոտին: 1022-ին բյուզ. զորաբանակի ներխուժումը Բագրատունյաց Հայաստան կանխելու նպատակով, Հովհաննես-Սմբատի կարգադրությամբ, Պ. Ա Գ. Տրապիզոնում Վասիլ II կայսրի հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն, Անիի թագավորությունը Հովհաննես-Սմբատի մահից հետո անցնելու էր կայսրությանը: Տրապիզոնի պայմանագիրը մեծ զայրույթ է առաջացրել Անիում. Պ. Ա Գ. ստիպված անցել է Սեբաստիա և Անի վերադարձել միայն 1026-ին: Տրապիզոնում բյուզ. կայսրի և ավագանու ներկայությամբ մասնակցել է *Ջրօրհնեքի* հանդիսավոր արարողությանը՝ կատարելով մի ծես, որի չափազանցված արձագանքները հետագայում ծնունդ են տվել կաթողիկոսի Գետադարձ մականվանը: Ծեսի ժամանակ հայ հոգևորականները կաթողիկոսի գլխավորությամբ կանգնել են գետի հոսանքի վերին մասում, իսկ հույն հոգևորականները՝ ստորին, որպեսզի հայերի օրհնած ջուրը վերստին օրհնեն: XI–XII դդ. բյուզանդացիների հետ բորբոքված դավանաբան. վեճերի մթնոլորտում Հայաստանում ստեղծվել է այն ավանդապատումը, թե Պ. Ա Գ-ի օրհնությունից հետո գետի հոսանքը կանգ է առել, ապա՝ հետ դարձել:

Պ. Ա Գ-ի բյուզանդամետ քաղաքականությունը 1031-ին առաջացրել է բողոքի նոր ալիք, և նա ստիպված անցել է կայսրության տիրապետության ներքո գտնվող Վասպուրականի Ջորավանքը (նախկին կաթողիկոսանիստ): 1037-ին Հովհաննես-Սմբատը հետ է կանչել նրան և արգելափակել Բջնու ամրոցում՝ կաթողիկոս օծելով Սանահինի վանահայր Դիոսկորոսին: Սակայն մեկ տարի անց Պ. Ա Գ-ի կողմնակիցներին հաջողվել է Աղվանից կաթողիկոս Հովսեփի գլխավորությամբ հոգևորականների, իշխանների ու ազատների ժողով գումարել և նրան վերահաստատել (1039-ին) կաթողիկոս. աթոռին, իսկ Դիոսկորոսը վերադարձել է Սանահին:

Հովհաննես-Սմբատի և նրա եղբոր մահից (1041) հետո վերջինիս որդի Գագիկ Բ-ին Պ. Ա Գ. 1042-ին Անիում օծել է Հայոց թագավոր: Այս շրջանում կաթողիկոս. տեղապահ է հաստատել իր քրոջ որդուն՝ Խաչիկին (*Խաչիկ Բ Անեցի*): Հավատարիմ մնալով Տրապիզոնի պայմանագրին՝ Պ. Ա Գ. իշխան Վեստ Սարգսի գործակցությամբ 1045-ին Գագիկ Բ-ին դրդել է մեկնել Կ. Պոլիս և ներկայանալ Կոստանդին Մոնոմախ կայսրին, իսկ նրա մեկնումից հետո կայսրին է ուղարկել իրեն վստահված Անիի բանալիները: Հանցակցելով հայկ. պետականության կործանմանը՝ Պ. Ա Գ. հույս է ունեցել Բյուզանդիայի հովանավորությամբ ամրապնդել իր կաթողիկոս. իշխանությունը: Սակայն կայսրությունը, որը մտադիր էր վերացնել նաև Հայ եկեղեցու անկախությունը, Անին գրավելուց հետո կտրուկ փոխել է իր վերաբերմունքը Պ. Ա Գ-ի հանդեպ և սկսել հալածել նրան: Պ. Ա Գ. 1046-ի վերջին հարկադրված թողել է Անին և տեղափոխվել Արծն, իսկ 1047-ի ապրիլին Խաչիկ Բ Անեցու հետ միասին ձերբակալվել և ուղարկվել է Կ. Պոլիս, բայց շուտով ազատ է արձակվել: Համոզվելով, որ հալածանքները կշարունակվեն նաև հետագայում, Պ. Ա Գ. 1049-ին, Կ. Պոլիս մեկնելուց առաջ կաթողիկոս. օծմամբ Խաչիկ Բ Անեցուն թողել է փոխանորդ Անիում: Ջորս տարի Կ. Պոլսում «պատվավոր աքսորականի» վիճակում պահելուց հետո, Պ. Ա Գ-ին իրավունք են տվել հաստատվել Սեբաստիայում, որտեղ և մնացել է մինչև իր մահը:

Կյանքի վերջին տարիներին Պ. Ա Գ., տեսնելով, որ Բագրատունյաց թագավորության վերացումից հետո հույներն անթաքույց պայքար են ծավալել Հայ եկեղեցու ու նրա կենտրոնի՝ կաթողիկոս. աթոռի դեմ, վերանայել է իր նախկին քաղ. կողմնորոշումը: Նրա պատվերով այդ տարիներին *Անանիա Սանահնեցին* գրել է «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» երկը՝ նպատակ ունենալով զորացնել Հայ եկեղեցու դաղափարական, դավանաբան. ոգին՝ ընդդեմ բյուզ. նկրտումների: Պ. Ա Գ-ի պատվերով Անանիա Սանահնեցին կազմել է նաև Պողոսի թղթերի մեկնությունը, իսկ Հովհաննես վրդ. Տարոնեցին (*Հովհաննես Կոզեռն*) գրել է Բագրատունյաց տան պատմությունը (չի պահպանվել):

Պ. Ա Գ. հայ հոգևոր երգարվեստի երախտավորներից է: Շարականագիրների միջնադարյան ցուցակների հեղինակները միահամուռ նրա գրչի վաստակն են համարում Ննջեցելոց և Մարտիրոսաց կարգերի բազմաթիվ *շարականները*: Առավել հայտնի է Պ. Ա Գ-ի ս. Վարդանանց կանոնի «Արիացեալք առ հաղառկան» մանկունքը, որն աչքի է ընկնում մեղեդիական հարուստ և ինքնատիպ նկարագրով:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ Պ. Ա Գ-ին հասցեագրած բազմաթիվ նամակներից երևում է, որ կաթողիկոսը ժամանակի ամենազարգացած և ուսյալ անձնավորություններից էր: Միաժամանակ հայ պատմիչները նշել են նաև նրա իշխանասիրությունն ու արծաթասիրությունը, ինչի համար պարսավանքի է ենթարկվել դեռ կենդանության օրոք:

Կաթողիկոս. գահին Պ. Ա Գ-ին հաջորդել է Խաչիկ Բ Անեցին:

Գրկ. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., 1971: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Կոստանյան Կ., Տէր Պետրոս Ա Գետադարձ, Վաղ-պատ, 1897: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Մաթեվոսյան Կ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և քաղաքամայր Անին, «Էջմիածին», 1992, № 9–11: Արեվշատյան Ա., Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավեպ», 1995, № 1–4:

Կարեն Մաթևոսյան

ՊԵՏՐՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ, Բերդումյան, Աղամալյան (1720/22, Նախիջևան – 1787, Էջմիածին, թաղված է միաբանական գերեզմանատանը), արքեպիսկոպոս, աստվածաբան, մեկնիչ, փիլիսոփա, բանաստեղծ: Կ. Պոլիս տեղափոխվելուց հետո աշակերտել է XVIII դ. նշանավոր բանաստեղծ, գիտնական

Բաղդասար Դպիրին: Հինգ տարում Կ. Պոլսի Մայր դպրատան լրիվ դասընթացն ավարտելուց հետո, 1740-ական թթ. վերջին, Կ. Պոլսի Հակոբ Նալյան հայոց պատրիարքի (1741–64) օրոք ընդունել է հոգևոր կոչում՝ ձեռնադրվելով աբեղա: Այնուհետև ուղարկվել է Ղրիմ՝ Ս. Օգսենտի վանքը, որպես վանահայր և առաջնորդ: Ղրիմից տեղափոխվել է Էջմիածին, իսկ 1759-ին *Հակոբ Ե Շամախեցի* Հայոց կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվել է եպիսկոպոս: 1759–62-ին կաթողիկոսի նվիրակն էր Կարինում, որտեղ լրացրել է իր ուսումը՝ ստանալով ասոր. և լատ. կրթություն: *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսի օրոք Էջմիածնում ծավալել է բեղմնավոր մանկավարժ. գործունեություն:

Պ. Ն. գրել է մի շարք աստվածաբան. և մեկնողական գործեր «ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ»: 1764-ին պատրաստ էր նրա ավետարանական առակների մեկնությանը նվիրված աշխատությունը, որը հայտնի է «Աղբիւր բացեալ» անվամբ: 1769–73-ին Էջմիածնում Պ. Ն. գրել է իր աստվածաբան., մեկնողական, փիլ. երկերի, քարոզների, աղոթքների մեծ մասը, որոնք հիմնականում նախատեսված էին Էջմիածնի ժառանգավորաց դպրոցի աշակերտության համար: Սակայն Սիմեոն Ա Երևանցու անբարյացակամ վերաբերմունքը (նույնիսկ Պ. Ն-ու երկերը այրելու հրաման է արձակել) զգալի ստվեր է գցել նրա գործունեության վրա: Կաթողիկոսը Պ. Ն-ուն հեռացրել է Էջմիածնից և 1772-ին նշանակել կաթողիկոսության նվիրակ Եվդոկիա (Թոքատ) քաղաքում: Այստեղ նա ավարտել է իր «Մեկնութիւն Յոբայ» երկը (1776): 1777-ին վերադարձել է Էջմիածին, սակայն Եվդոկիայում նվիրակության ժամանակ թույլ տված վարչ. սխալների պատճառով չկարողանալով Մայր աթոռին վճարել պահանջվող գումարը՝ վերջնականապես գժտվել է կաթողիկոսի հետ, հեռացվել միաբանությունից և բանտարկվել:

Եղբոր մահից հետո կտակի հետ կապված հարցերը լուծելու համար ազատ է արձակվել և 1778-ի ապրիլին մեկնել է Կ. Պոլիս՝ պայմանով, որ վերադառնալու է և որևէ վայրում առաջնորդ չի նշանակվելու: Սակայն հակառակ Սիմեոն Ա Երևանցու կամքի, Կ. Պոլսի Զաքարիա Կաղզվանցի պատրիարքը ջերմ ընդունելություն է ցույց տվել Պ. Ն-ուն և նշանակել Եվդոկիայի հոգևոր առաջնորդ, բայց, հավանաբար, Պ. Ն. չի հասցրել պաշտոնը ստանձնել: 1780-ին վախճանվել է Սիմեոն Ա Երևանցին, իսկ նոր կաթողիկոսը՝ Ղուկաս Ա Կարնեցին, Պ. Ն-ուն հրավիրել է Էջմիածին: 1782-ի նոյեմբ. Պ. Ն. վերադարձել է Մայր աթոռ և վերականգնվել Էջմիածնի միաբանության շարքերում: 1783-ի ապրիլին նշանակվել է Կարինի առաջնորդ: Կյանքի վերջին տարիների մասին գրեթե ոչինչ հայտնի չէ:

Պ. Ն. թողել է գրական մեծ ժառանգություն: Երևանի Մատենադարանում ավելի քան 160 ձեռագրեր պարունակում են նրա մոտ 20 անուն գործերը: Գրել է բազմաժանր և բազմաբնույթ երկեր, որոնք բաժանվում են 4 հիմն. խմբի.

ա. Մեկնողական երկեր. «Մեկնութիւն Ծննդոց», գրել է 1777-ին: Իր բոլոր գործերի նման այս աշխատությունն էլ մեծածավալ է: Ծննդոց գրքի հիսուն գլուխները մեկնված են տող առ տող՝ համեմված Աստվածաշնչյան մյուս գրքերի մեջբերումներով և այլևայլ հեղինակներից կատարած հղումներով: «Մեկնութիւն Յոբայ» (1776), «Մեկնութիւն Երգ երգոցի» (1771): Վերջինս թերի է, մեկնված է ընդամենը 4 համար՝ Ա 4, Գ 8 և Դ 11–12: Սակայն այդ վիճակով էլ երկն աստվածաբան. արժեքավոր նյութ է պարունակում և հեղինակի մեկնողական ուշագրավ գործերից է: «Աղբիւր բացեալ»-ը (Մեկնություն ավետարանական առակների) Պ. Ն-ի ամենահայտնի և ամենատարածված երկն է: Միայն Մատենադարանում կան այս գործը պարունակող 60-ից ավելի ձեռագրեր: Երկու անգամ հրատարակվել է Էջմիածնում (1845, 1857): «Մեկնութիւն Յայտնութեան ս. Յովհաննու» (հրտ. 1846, Կալկաթա): Ի տարբերություն մյուս գործերի, սա խմբագր. աշխատություն է, որտեղ ի մի են բերված նախորդ մեկնողական երկերը՝ Հովհաննեսի Հայտնության վերաբերյալ: Մեկնող. երկերից են նաև՝ «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս» (հրտ. 1850, Երուսաղեմ) և «Մեկնութիւն Գործք առաքելոցի» (չի պահպանվել):

բ. Աստվածաբանական-փիլիսոփայական երկեր. «Աստուածամանութիւն» (հրտ. 1827, Կալկաթա): Երկու հատորից բաղկացած այս աշխատությունը լուրջ պատկերացում է տալիս XVIII դ. աստվածաբան. մտքի զարգացման աստիճանի մասին: 15 գլուխներից կազմված առաջին հատորում հեղինակը հանգամանորեն և խոր իմացությամբ քննել է Աստծո ստորոգելիները, Աստծո ճա-

նաչման միջոցներն ու հնարավորությունները, Աստծո պատկեր հանդիսացող մարդու՝ Գերագույնի այս կամ այն հատկության հետ ունեցած նմանություններն ու տարբերությունները: Երկրորդ հատորը (յոթ գլուխ) նվիրված է Ս. Երրորդությանը և նրա երեք Անձերին: «Կշիռ արդարութեան» գործը հավանաբար գրվել է Էջմիածնում, հեղինակի ուսուցչության տարիներին: Իր բովանդակությամբ որոշ չափով «Աստուածանմանութեանը» նմանվող այս երկը նույնպես գրվել է «ի յօգուտ մանկանց»: Փիլ. բնույթի երկերն են. «Տրամաբանութիւն», «Մեկնութիւն վերլուծութեանցն Արիստոտելի», «Ասացուածք իմաստնոց» (թարգմանական ժողովածու անտիկ և քրիստոնյա փիլիսոփաների ասույթներից):

Գ. Քարոզներ եվ աղոթքներ. Պ. Ն-ու մատենագր. վաստակի մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում քարոզները, որոնք արտասանվել են տարվա ընթացքում՝ եկեղեց. բոլոր տոներին, և ապա գրի են առնվել: Քարոզները բաղկացած են երկու հատորից՝ «Քարոզք տարեկան» (1771), որոնք պարունակում են հիսուն ինքնուրույն գործեր՝ նվիրված այս կամ այն Տերունական խոսքին կամ հատուկ տոներին: Սա այն գործերից է, որ Սիմեոն Ա Երևանցին հրամայել էր այրել ու ոչնչացնել:

Պ. Ն. հորինել է նաև հատուկ արձակ աղոթքներ՝ մանավանդ ճանապարհորդների և վաճառականների համար, որոնք հաճախ ձեռագրերում տեղադրվում են «Ապաշխարան» կոչվող տաղերի ժողովածուի մեջ՝ որպես 2-րդ հատոր: Պ. Ն-ու աղոթքները հրատարակել է Էջմիածնի միաբան Հովհաննես եպս. Շահխաթունյանցը 1845-ին՝ «Երգարան աղօթից ի պէտս վաճառականաց և ճանապարհորդաց» վերնագրով:

Դ. Զատիկ երկեր. Պ. Ն. իր ժամանակի նշանավոր բանաստեղծներից և տաղասացներից էր: Իր տաղերի մի մասը հեղինակը 1760-ական թթ. հավաքել է մի ժողովածուի մեջ, որը կոչվել է «Ապաշխարան»: Այստեղ հավաքված են հեղինակի լավագույն կրոն. բանաստեղծությունները՝ նվիրված Սուրբ Երրորդության երեք Դեմքերին, Աստվածամորը, ավետարանական տարբեր թեմաների: Գրել է նաև «Յիսուս փեսայ» անունով մեծածավալ մի պոեմ, 100-ից ավելի տաղեր՝ հիմնականում Աստվածաշնչյան թեմաներով:

Գրկ. Մսերյանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի..., Մ., 1876: Ալպոյաճյան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Կահիրե, 1952, էջ 714–716: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Լեո, Երկ. ժող., հ. 3, Ե., 1973: Նազարյան Շ., Պետրոս Նախիջևանցին և XVIII դարի վերանորոգվող հայ հոգևոր երգը, ՊԲՀ, 1981, № 3: Ալչապահյան Մ., Պետրոս արք. Բերդումյան (կյանք և մատենագրական վաստակ), «Էջմիածին», 1991, № 7–8: Նույնի, Պետրոս Բերդումյանի նորահայտ «Երգ երգոցի մեկնությունը», «Գանձասար», 2, 1992, էջ 220–252:

ՊԵՏՐՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, Պետրոս Քերթող (ծ. թ. անհտ – մոտ 558), մատենագիր, մեկնիչ, թարգմանիչ, Սյունյաց եպիսկոպոս (547–556): Մասնակցել է *Ներսես Բ Բագրեվանդցի* կաթողիկոսի՝ նեստորականների դեմ գումարած ժողովներին, այդ թվում՝ 554-ի Դվինի Բ ժողովին: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի, գրել է բազմաթիվ գործեր (պատմություն, մեկնություններ, ճառեր, ներբողներ), զբաղվել թարգմանչ. աշխատանքով: Պ. Ս-ու պատմության մասին հիշատակում են VII դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում և Ստեփանոս արք. Օրբելյանը՝ իր «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում: Պ. Ս-ուց մեզ հասած ամբողջական գործերից է «Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ միշտ կոյս Մարիամ...» ճառը, որն ընթերցվում էր Հիսուսի ծննդյան տոնին: «Յաղագս Հաւատոյ» երկում տրված է երեք տիեզերական ժողովների, ինչպես նաև Եփեսոսի երկրորդ և Քաղկեդոնի ժողովների համառոտ պատմությունը: Ժամանակի դավան. խնդիրների նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշման հստակեցման տեսանկյունից կարևոր է «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զանազանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի և Իմաստասիրի» («Արարատ», 1902) երկը, որին հաջորդել է «Հարցումն Վաչագանա իշխանի և պատասխան Պետրոսի Սիւնեաց վերադիտողի» (Մատենադարան, ձեռ. № 3074) խորագիրը կրող գործը (թվով 24 հարց): Այստեղ երևում է հեղինակի հակաքաղկեդոն. դիրքորոշումը: Պ. Ս. իբրև իր գրությունների աղբյուր օգտագործել է *Դավիթ Անհաղթի* գործերը, ինչպես նաև Ընդհանրական եկեղեցու սուրբ հայրեր *Կյուրեղ Ալեքսանդրացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու* և այլոց դավանաբան. երկերը: Գրել է նաև Ծննդյան ճառ, որից մեզ են հասել առանձին պատառիկներ:

Գրկ. Տեր-Մկրտչյան Գ., Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Վաղարշապատ, 1902: Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932: Աբեղյան Մ., Պետրոս Քերթող, Անդոկի և Բաբիկի զրույցը, Երկ., հ. 3, Ե., 1968, էջ 441–447: Պողարյան Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 44–46:

«ՊՈԼՈԺԵՆԻԵ» («*Положение*») («Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան»), կանոնադրություն, որով պետք է առաջնորդվեր Հայ եկեղեցին Արևելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելուց (1828) հետո:

Նկատի առնելով Հայ եկեղեցու վարչության հետ փոխհարաբերությունների ճշտման ու կանոնավորման անհրաժեշտությունը՝ Ռուսաստանի կառավարությունը Արլ. Հայաստանի միացումից անմիջապես հետո ձեռնամուխ է եղել Հայ եկեղեցու համար իր քաղ. շահերին համապատասխանող կանոնադրության մշակմանը: Այդ նպատակով Կովկասի կառավարչապետ Ի. Ֆ. Պասկևիչը 1828-ի դեկտ. կազմել է հատուկ գաղտնի հանձնաժողով, որին անդամակցել են իշխան Բ. Հ. Բեհբութովը, Սերովբե վրդ. Արարատյան Կարնեցին, ուսուցիչ Հակոբ Շահան Ջրպետյանը և ռուս. աստիճանավոր, ազգությամբ լեհ Օչկինը: Սերովբե վարդապետը կաթոլիկությունից էր վերադարձել Հայ եկեղեցու գիրկը, Հ. Շահան Ջրպետյանը և Օչկինը կաթոլիկներ էին, իսկ Բ. Հ. Բեհբութովը բոլորովին անիրազեկ էր եկեղեց. գործերին: Զորսի գաղտնի հանձնաժողովը կազմել և 1830-ի մարտին Ի. Ֆ. Պասկևիչին է ներկայացրել Հայ եկեղեցու ներքին կյանքը կարգավորող կանոնադրության նախագիծ, որը Պետերբուրգում վերաքննվելուց և որոշ փոփոխությունների ենթարկվելուց հետո, 1836-ի մարտի 11-ին Նիկոլայ I կայսրի հրամանագրով վավերացվել է, իսկ 1837-ի հունվ. 1-ից՝ գործադրվել: Առաջին անգամ «Պ.»-ի հայերեն վերտառության մեջ օգտագործվել է «Լուսավորչական Հայոց եկեղեցի» արտահայտությունը (ռուսերենում՝ Գրիգորյան), որն այնուհետև շրջանառության մեջ դրվելով՝ համընդհանուր տարածում է գտել, թեև հակասել է Հայ եկեղեցու բուն էությանը, ծագմանը և ավանդությանը:

«Պ.» բաղկացած էր 141 հոդվածից և բաժանվում էր 10 գլխի: Առաջին գլուխը վերաբերում էր Հայ եկեղեցու ընդհանուր իրավունքներին և արտոնություններին, երկրորդը՝ կաթողիկոսին, երրորդը՝ *Սինոդին*, չորրորդը՝ թեմական առաջնորդներին, հինգերորդը՝ հոգևոր ատյաններին և հոգևոր կառավարություններին, վեցերորդը՝ մենաստաններին, յոթերորդը՝ ամուսնացած եկեղեցականներին, ութերորդը՝ հոգևոր դպրոցներին, իններորդը՝ եկեղեց. կայքի կառավարմանը, տասներորդը՝ եկեղեց. պաշտոնյաների եկամուտներին:

Ըստ առաջին գլխի, եկեղեցին վայելելու էր կայսերական հովանավորություն «Հաւասար այլոց օտարազգի» դավանությունների. կարող էր տիրել իր անշարժ կայքին և ստանալ նորերը, եկեղեցականներն ազատորեն կատարելու էին պաշտամունքը, կախում էին ունենալու իրենց հոգևոր իշխանություններից, ազատ էին լինելու հարկատվությունից, ընտանիքով ու սերունդներով չէին ենթարկվելու մարմնական պատիժների: Կրոն. խնդիրների համար դատելու էին հոգևոր իշխանությունները, իսկ քաղաքաց. ու քրեական գործերի և օտարազգիների հետ ունեցած խնդիրների համար՝ սովորական դատարանները:

Ըստ երկրորդ գլխի, կաթողիկոսը ճանաչվում էր Հայ եկեղեցու գլխ. կառավարիչն ու վերին տեսուչը, պահպանում և վայելում էր իր հին տիտղոսները, դավան. ու պաշտամունքային և նմանօրինակ խնդիրների համար նրան էր պատկանում վերջնական վճիռ արձակելու իրավունքը, օրհնում էր Մյուռոնը և ձրի բաժանում այն, ձեռնադրում էր եպիսկոպոսներ, վարձատրում եկեղեցականներին, հրատարակում ընդհանրական թղթեր, ըստ իր հայեցողության տնօրինում վանական գործերը: Սինոդը պետք է միշտ գործակից լիներ նրան: Կաթողիկոսին արգելվում էր իր իշխանությունը, լիազորությունն ու իրավունքները փոխանցել ուրիշ ատյանի կամ անձի: Ընտրական ժողովը տեղի էր ունենալու Ս. Էջմիածնի Մայր տաճարում: Քվեարկուներն էին՝ Սինոդի ութ անդամները, Ս. Էջմիածնի միաբանության յոթ երիցագույն անդամներ (եպիսկոպոս կամ վարդապետ), յուրաքանչյուր թեմի առաջնորդը կամ նրան ներկայացնող մի եկեղեցական և ժողովրդի ընտրած մեկ աշխարհական:

Երրորդ գլուխը վերաբերում էր Սինոդին, որը սահմանում էր նրա կազմը, անդամների ընտրության կարգը, իրավասություններն ու պարտականությունները:

Ռուս. կայսրության տարածքում գտնվող հայկ. և հայաբնակ շրջանները բաժանվում էին

վեց եկեղեց. թեմերի՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի, Շամախու (Շիրվանի), Նոր Նախիջևան-Բեսարաբիայի և Աստրախանի:

Թեմական առաջնորդներն օժտվում էին համապատասխան կրոն. և հոգևոր իշխանությամբ իրենց թեմի շրջանակներում: Նրանց նշանակում և ազատում էր «թագավոր-կայսրը»: Թեմերում ստեղծվում էին հոգևոր ատյաններ (կոնսիստորիաներ)՝ չորսական անդամներով (մի վարդապետ և երեք քահանա): Նախագահը թեմական առաջնորդն էր: Կոնսիստորիաները նույն դերն էին կատարում առաջնորդի մոտ, ինչ որ Սինոդը՝ կաթողիկոսի: Անդամների ընտրությունը կատարում էր առաջնորդը՝ Սինոդի հավանությամբ, որին ենթակա էր կոնսիստորիան: Եկեղեց. ատորին վարչական միավորը ծխական համայնքն էր, որի անդամներն ընտրում էին քահանա և երեցփոխ:

Վեցերորդ գլխի համաձայն, վանքերի միաբանների թիվը ութից պակաս չէր կարող լինել: Միաբան լինելու համար երեսուն տարին պետք է լրացած լիներ: Հարկատու և ճորտական դասին պատկանողները կարող էին միաբան դառնալ Սենատի թույլտվությամբ: Ընծայացուներ կարող էին լինել միայն չափահասները: Ամուսնացած եկեղեցականներն օժտվում էին ազատության կամ ազնվականության իրավունքով՝ սերնդով հանդերձ, ազատվում էին հարկատվությունից:

Ըստ «Պ.»-ի, Էջմիածնում պետք է ստեղծվեր մեծ հոգևոր դպրոց (ճեմարան), իսկ յուրաքանչյուր թեմ ունենալու էր մեկ հոգևոր թեմական դպրոց: Այդ հիման վրա թեմական դպրոցներ են բացվել Երևանում (1837) և Շուշիում (1838): Բացի այդ, պահանջների և միջոցների համեմատ, վիճակներում կարող էին բացվել ծխական դպրոցներ:

Վերջին գլուխը վերաբերում էր քահանաների, ստորադաս հոգևորականության հասույթներին և որբերի ու այրիների հոգածությանը: Հասույթներն էին՝ ա. ծխականների կողմից տրվող որոշակի թոշակ, բ. պաշտոնից, այսինքն եկեղեց. պաշտոնակատարության համար տրվող տուրք, գ. կամավոր ընծայատվություն: Խոստովանությունը և հաղորդությունը կատարվելու էին ձրի:

«Պ.» էապես կրճատում էր Ամենայն հայոց կաթողիկոսի և առհասարակ Հայ եկեղեցու իրավասությունները: Կաթողիկոսն արտասահմանի Հայ համայնքների հետ կարող էր հաղորդակցվել միայն արտաքին գործերի նախարարության միջոցով, կաթողիկոսի հաստատումը զրկվում էր համահայկ. բնույթից: Բոլոր որոշումներն ու կանոնները ենթակա էին պետ. հաստատման: Տեղում Սինոդի պրոկուրորի մշտարթուն հսկողությունից զատ, բոլոր տեղեկագրերը, հիշատակագրերը, վիճակագրերը, հաշվետվությունները պետք է հաղորդվեին ներքին գործերի նախարարությանը: Թեմական առաջնորդների հաստատման եղանակը նսեմացնում էր կաթողիկոսի դերը, հակառակության ու չենթարկվելու ցանկության դուռ բացում առաջնորդների համար: «Պ.», ըստ էության, Հայ եկեղեցին կախման մեջ էր դնում ցար. կառավարությունից: Հայ եկեղեցին դժգոհությամբ է ընդունել «Պ.», ժողովուրդն այն իրավամբ համարել է հայոց ազգ. իրավունքներն ու ավանդույթները սահմանափակող օրենք: Դրա հետ մեկտեղ «Պ.» ինչ-որ առումով նպաստել է Հայ եկեղեցու ներսում որոշակի կարգուկանոն հաստատելուն:

Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսն իր գահակալության ողջ ընթացքում գրեթե անտեսել է «Պ.» և գործել անկախաբար: *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսը փորձել է ամբողջովին վերանայել «Պ.», դրա փոխարեն ընդունել տալ իր ներկայացրած նախագիծը, որով վերականգնվելու էր Ամենայն հայոց կաթողիկոսի լիակատար անկախությունը և միանձնյա իշխանությունը: Կառավարությունը, սակայն, անտեսել է այդ նախագիծը: *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսը հասել է այն բանին, որ 1868-ին Հօգուտ եկեղեցու ի վերջո լուծել է կուսակրոն հոգևորականության թոշակների հարցը, 1874-ին բացել է *Գևորգյան ճեմարանը*, զարկ տվել ծխական դպրոցների ցանցի ընդլայնմանը: Դպրոցական գործի ծավալման առումով «Պ.» դրական դեր է խաղացել: Դադարել է գործելուց 1917-ին:

Վալտեր Դիլոյան

ՊՈՂԱՐՅԱՆ Նորայր (ավազանի անունը՝ Ադամ-Նորայր) (17.1.1904, Այնթապ – 19.12.1996, Երուսաղեմ), ձեռագրագետ, հայագետ, բանասեր, մանկավարժ: Գրչանունները՝ Ծովական և Վանատուր: Նախն. կրթությունն ստացել է Այնթապի Վարդանյան, ապա՝ *Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում* (1922–27): Աշակերտել է Ե. *Դուրյանին*, Մ. Նարոյանին, Բ. *Կյուլեսերյանին*: Լոնդոնի Քինգս քոլեջում և Մանչեստրի համալսարանում հետևել է աստ-

վածաբանության դասընթացների (1928–30): 1928-ից՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ: 1923-ին ձեռնադրվել է սարկավագ, 1928-ին՝ կուսակրոն քահանա, 1951-ին՝ եպիսկոպոս, 1973-ին Վազգեն Ա կաթողիկոսը նրան շնորհել է արքեպիսկոպոսի պատիվ և տիտղոս: 1930–1935-ին և 1941-ից՝ ուսուցիչ Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, 1935–40-ին՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի նորաստեղծ Դպրեվանքի վերատեսուչ և ուսուցիչ: Դասավանդել է Սուրբ Գիրք և մեկնություն Սուրբ Գրոց, ժամակարգություն, աստվածաբանություն, եկեղեց. կանոնագիտություն, Հայ և Ընդհանրական եկեղեցու պատմություն, հայոց լեզու, հայ մատենագրություն, ծիսագիտություն, Նոր կտակարանի ներածություն ևն: Կազմել ու հրատարակել է հայ մատենագրության, կանոնագիտության, ծիսագիտության, տոմարագիտության և այլ դասագրքեր: 1943–1957-ին եղել է վանքի ելևմտից տեսուչը, միաբանության ընդհանուր ժողովի ատենապետը, 1949–92-ին՝ Երուսաղեմի մատենադարանապետը: Աշխատակցել է «Սիոն», «Հայ խոսնակ», «Բանբեր Մատենադարանի», «Հասկ» (1936–1939-ին՝ խմբագիր), «Էջմիածին», «Արմաշ» և այլ պարբերականների:

Պ-ի ուսումնասիրությունները վերաբերում են հիմնականում պատմագիտությանը, բանասիրությանը, աստվածաբանությանը, ծիսագիտությանը, վավերագրությանը, ինչպես և գրչությանը, գրչագրերին, անտիպ երկերին: Ուսանելի և երախտիքի արժանի է նրա՝ հայ մատենագիրներին նվիրած «Հայ գրողներ (Ե–ԺԷ դար)» (1971) երկը: Պ. հեղինակել է նաև «Հայ նկարողներ (ԺԱ–ԺԷ դար)» (1989), «Ծիսագիտութիւն» (1990), «Տաթևյանց սերունդ» (1991), «Հայկական խաչեր» (1991), «Հայ գրիչներ (Թ–ԺԷ դար)» (1992), «Հայ եկեղեցվո Հավատո հանգանակները» (1993), «Գրիգոր Նարեկացի – ներբողներ» (1995), «Ժամակարգութիւն (ԺԶ դար)» (1996) և այլ, թվով 37 գիրք ու շուրջ 1600 հոդված: Խմբագրել, գիտականորեն վերակազմել և լույս է ընծայել «*Գիրք թղթոց*» (1994) ժողովածուն: Պ-ի գիտ. վաստակի գլուխգործոցը Երուսաղեմի ձեռագրատան գրչագրերի՝ ժամանակագրություններով, հիշատակագրություններով մատենագիտությունն է՝ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց» (ՀՀ. 1–11, 1966–1991), որի շնորհիվ հազարավոր գրչագիր մատյաններ, հայոց մշակույթի պատմությանը վերաբերող բազմաթիվ նյութեր փրկվել են մոռացությունից: Ցուցակում ամփոփվել է 3890 ձեռագրի նկարագրություն, առաջին անգամ ներկայացվել բնագրագիտ. մի շարք նորահայտ մեծարժեք ձեռագրեր:

Գրկ. Տեմիրճյան Վ., Նորայր արք. Պողարյան, «Հասկ», 1995–96, 1997, էջ 673–679: «Սիոն», 1997, էջ 263–377:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՊՈՂՈՍ Ա ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ – 1382, Սիս), Ամենայն հայոց կաթողիկոս 1374-ից: Հաջորդել է *Կոստանդին Ե Սսեցուն*: Գահակալությունը զուգադիպել է Կիլիկյան Հայաստանի պետականության անկման ծանր ժամանակաշրջանին: Պայքարել է Կիլիկիայի թագավոր Լևոն Զ-ի լատինամոլ քաղաքականության դեմ: 1375-ին, երբ Եգիպտոսի սուլթանությունը գրավել է Սիսը, Լևոն Զ-ի, եպիսկոպոսների և իշխանների հետ գերեվարվել է Հալեպ, ապա՝ Կահիրե: Նույն տարվա վերջին վերադարձել է Սիս և աթոռակալել Հալեպի ամիրայի իշխանության ներքո:

Կաթողիկոս. գահին Պ. Ա Ս-ուն հաջորդել է *Թեոդորոս Բ Կիլիկեցին*:

Գրկ. Հովհան Դարձել, Ժամանակագրութիւն հայոց..., ՍՊԲ, 1891: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:

ՊՈՂՈՍ Բ ԳԱՌՆԵՑԻ (ծ. թ. անհտ, Գառնի – 1430, Սիս), Ամենայն հայոց կաթողիկոս 1418-ից: Հաջորդել է *Գրիգոր Ը Խանձողատին*: Կրթությունն ստացել է Տաթևի վանքում: 1415-ից եղել է Երուսաղեմի հայոց պատրիարք: 1418-ին գալով Սիս՝ գահընկեց է արել Գրիգոր Ը Խանձողատին և օծվել կաթողիկոս: Կատարել է շին. աշխատանքներ, կառուցել Ս. Աննա կաթողիկոսանիստ վանքը, գեղազարդել Սսի վանքը: 1424–26-ին, Մատթեոս վարդապետի հետ ուղևորվել է Երուսաղեմ՝ հայոց պատրիարքության հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով: Վերադառնալով Սիս՝ զբաղվել է հիմնականում շին. աշխատանքներով: Իր մոտ է հրավիրել *արևելյան վարդապետներին*՝ որպես օգնականներ, սակայն դա տեղիք է տվել ներքին պառակտումների՝ առաջ բերելով Սսի եպիսկոպոսների դժգոհությունը: Թունավորվել է կաթողիկոս. աթոռը Աղթամար տեղափոխել ցանկացողների ձեռքով:

Կաթողիկոս. դահին Պ. Բ Գ-ուն հաջորդել է *Կոստանդին Զ Վահկացին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

Գրիգոր վրդ. Զիֆչյան

ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ, Պողոս Վարդապետ (ծ. թ. անհտ – 1123), փիլիսոփա, դավանաբան, մատենագիր, Մշո Առաքելոց վանքի առաջնորդ: XI–XII դդ. ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին նրան համարել է «Հայոց երկրորդ Լուսավորիչ և ադամանդյա վեմ ընդդեմ հերձվածողների»: Սասունի իշխան Թոռնիկ Մամիկոնյանի որդի Զորդվանելի պատվերով, ի պատասխան հունադավան հայ իմաստասեր և թարգմանիչ Թեոփիստեի՝ հայերին հղած երկաբնակ դավանությամբ թղթի, 1101-ին գրել է «Թուղթ ընդդէմ գրոյն Թէոփիստեայ երկդաւան հայհոռոմ փիլիսոփային» (1752) երկը, որով վայելել է Հայ եկեղեցու դավանանքի ջատագովի համբավ: 1122-ին Պ. Տ. երկը համալրել է դավանաբան. նոր ճառերով: Ծավալուն այս աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջինում քննության նյութ են դարձել աստվածաբան., դավանաբան., մասնավորաբար՝ երրորդաբանական, քրիստոսաբանական խնդիրներ, իսկ երկրորդում՝ ծիսական: Աշխատությունը, որն ուղղված է *Քաղկեդոնի ժողովի* որոշումներով առաջնորդվող երկաբնակների դեմ, նվիրված է Հայ եկեղեցու դավան. տեսակետների պաշտպանությանը: Պ. Տ-ու երկն ունի պատմաաղբյուրագիտ. կարևոր նշանակություն *թոնդրակեցիների* և *ծաթերի* աղանդավոր. գաղափարախոսության հետազոտման համար: Հայ հռոմեադավան հոգևորականությունը հետագայում մերժել է նրա երկը: Պ. Տ. գրել է նաև այլ գործեր («Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ...», «Յաղագս քառասնորդաց պահոց», «Յաղագս առաջաւորաց պահոց»), որոնք ձեռագիր վիճակում են:

Գրկ. Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Պողարյան Ն., Հայ գրողներ, Երևան, 1971, էջ 207–209: Մանուչարյան Հ., Պողոս Տարոնացի, Ե., 1982:

Հակոբ Քյոսեյան

ՊՍԱԿ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ, Պսակ ամուսնության, Սուրբ Պսակ, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից: Քրիստոնեական եկեղեցին տղամարդու և կնոջ միությունը նվիրագործել է կրոնական ծեսով, ամուսնության համար հատուկ արարողություններ հաստատել և դասել խորհուրդների կարգը: Պ. և ա. ողջախոհության և մաքուր կյանքի, ընտանիքի սրբության խորհուրդն է:

Հիսուս Քրիստոսը տղամարդու և կնոջ միությունը համարել է Աստծո կողմից հաստատված, և դրա համար այրը պետք է թողնի իր հորն ու մորը և իր կնոջ հետ լինի՝ որպես մեկ ամբողջություն, մեկ մարմին (Մարկ. **10.7–9**): Պողոս առաքյալն ամուսնական միությունը նմանեցրել է եկեղեցու հետ Քրիստոսի ունեցած միության և փոխադարձ սիրո: Առաքյալը պատվիրել է, որ այրերը սիրեն իրենց կանանց, ինչպես Քրիստոսը սիրեց եկեղեցին, իսկ կանայք հնազանդ պետք է լինեն իրենց ամուսիններին՝ իբրև տիրոջ, քանզի այրն է կնոջ գլուխը, ինչպես Քրիստոսը գլուխն է եկեղեցու (Եփես. **5.21–25**):

Ամուսնության համար եկեղեցին պահանջում է հետևյալ պայմանները. ա. ֆիզիկական և մտավոր առողջություն, բ. չափահասության տարիք, գ. կանոնական հասունություն, այսինքն՝ հարսնացուն և փեսացուն մոտ ազգականներ չպետք է լինեն, դ. փոխադարձ համաձայնություն և սեր, ե. ազգային և կրոնական նույնություն. նույն կրոնին և նույն եկեղեցուն պատկանելը պարտադիր է: Եթե արտոնվում է օտարի հետ ամուսնանալ, ապա՝ հետևյալ պայմաններով. 1. օտարադավանը, եթե ցանկանում է պսակվել հայադավանի հետ հայկ. ծեսով և հայկ. եկեղեցում, պետք է դրավոր ընդունի Հայ եկեղեցու դավանությունը: 2. Ոչքրիստոնյան, եթե ուզում է պսակվել Հայ եկեղեցու զավակի հետ, պետք է դրավոր հայտնի իր ցանկությունը, այնուհետև մկրտվի, դրոշմվի, հաղորդվի և ապա՝ պսակվի: 3. Այլ հարանվանության (օր., բողոքական) պատկանող հայը, եթե չի դրոշմված, պետք է դրոշմվի Հայ եկեղեցու ծեսով և ապա պսակվի հայկ. եկեղեցում:

Պ. և ա-յան արարողությունն ամուսնացող զույգի սիրո և հավատարմության ուխտ է Աստծո և հանրության առջև: Խորհուրդը կատարվում է եկեղեցում՝ ժողովրդի և խաչեղբոր վկայությամբ: «Պսակը եկեղեցու մեջ պետք է կատարել, այլապես անվավեր կհամարվի, մինչև որ նորից եկեղեցում պսակը կատարվի» (Դվինի Ե ժողով, Կանոն ԺԵ): Խորհուրդի արարողության խաչեղբայրը փեսայի և հարսի օրինավոր ամուսնության պաշտոնական վկան է,

ՊՏՂՆԱՎԱՆՔ որն արարողության ժամանակ Քրիստոսի խաչը բռնում է նրանց գլխավերևում (հաճախ խաչեղբայրը կոչվում է կնքահայր): Ամուսնության արարողությունը կոչվում է Սուրբ Պսակ, որովհետև փեսայի և հարսի գլխին թագ կամ պսակ է դրվում. փեսան կոչվում է թագավոր, իսկ հարսը՝ թագուհի:

Պ. և ա-յան խորհուրդը կատարում է քահանան, որը Մաշտոց ծիսամատյանի հրահանգի համաձայն հարցնում է փեսային. «Որդյակ իմ, մինչև մահ տե՞ր ես»: Փեսան պատասխանում է. «Այո, հայր սուրբ, տեր եմ հրամանովն Աստծո»: Այնուհետև քահանան հարցնում է հարսին. «Որդյակ իմ, և դու մինչև մահ հնազա՞նդ ես»: Հարսը պատասխանում է. «Այո, հայր սուրբ, հնազանդ եմ հրամանովն Աստծո»: Դրանից հետո քահանան հարսի ձեռքը հանձնում է փեսային և օրհնում: Այնուհետև օրհնում է գինին և տալիս փեսային, հարսին, ներկաներին: Գինու օրհնությունն ու բաշխումը հիշատակությունն է Կանայի հարսանիքի, որտեղ Հիսուս Քրիստոսը ջուրը գինու փոխելով՝ ուղարկեց սեղանապետին, որ բաշխի բազմությանը: Հիսուսն իր կատարած հրաշքով օրհնեց այդ հարսանիքը և ուրախացրեց նրանց (Հովհ. 2.1–11): Պսակի արարողության վերջում գինու բաժակի վրա կատարած աղոթքով քահանան Հիսուսի նմանությամբ օրհնում է ամուսնացող զույգին, ներկա բազմությանը և ուրախացնում նրանց:

Հայ եկեղեցին թույլատրում է երկրորդ անգամ ամուսնանալ. «Կանոն կուսի պսակի» և «Կանոն երկրորդ պսակի» (Մաշտոց): Երրորդ պսակ գոյություն չունի:

Գրկ. Զեպեյան Ղ., Հայ եկեղեցվո յոթը խորհուրդները (Կանոնագիտական նկատումներ), Անթիլիաս, 1988:

Արտաշես Ղազարյան

ՊՏՂՆԱՎԱՆՔ, ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի գյուղի կենտրոնում: VI դ. վերջին – VII դ. սկզբին կառուցել է իշխան Մանուել Ամատունին: Ունի երկու զույգ մույթերով դմբեթավոր դահլիճի հորինվածք: 606-ին Պ-ի ներկայացուցիչ Իսրայելը ստորագրել է Հայաստանի եպիսկոպոսների ու վանահայրերի միությունը հաստատող փաստաթուղթը: Պ. կիսավեր է. պահպանվել են հս. պատը, հվ. պատի արլ. հատվածը և արլ. դմբեթակիր կամարը: Ունի բուս. մոտիվներով (արմավենի, ականթ, որթատունկ, նուռ, շուշանածաղիկ, խաղողի ողկույզի և տերևի փոխեփոխ շարքեր ևն), երկրաչափ. (քառակուսիներ, վեցանկյուններ) զարդաքանդակներով ու պատկերաքանդակներով հարուստ հարդարանք: Եզակի է սափորների քանդակաշարով քիվը: Հվ. շքամուտքի կամարի կենտրոնում, մեդալիոնի մեջ, երկու կողքերին հրեշտակներով Աստվածածնի պատկերաքանդակն է, նրանից աջ և ձախ, երեքական մեդալիոնների մեջ՝ առաքյալների դիմաքանդակները (մյուս վեցը, հավանաբար, եղել են չպահպանված արմ. շքամուտքի վրա):

Հվ. մուտքի զարդակամարի ձախ՝ հորիզոնական մասին առյուծին նետահարող, քառատրոփ սլացող ձի հեծած Մանուել Ամատունու քանդակն է, նրա աջ կողմում՝ առյուծի հետ նիզակով մենամարտող Սահակ Ամատունին (Մանուելի որդին): Հս. ճակատի լուսամուտների կամարակալներին մեծ վարպետությամբ, իրենց բնորոշ շարժման մեջ պատկերված են ամենատարբեր թռչուններ (բադ, սագ, հավ, աղավնի, արծիվ, փասիան ևն): Ուշագրավ է արմավենու ծառի տակ նստած առյուծի քանդակը: Պ-ի պատկերաքանդակները վաղ միջնադարի հայկ. արվեստի արժեքավոր և ինքնատիպ ստեղծագործություններից են:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.8, 1-ին պատկերը:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակույթի պատմության, պր. 3, Նյու Յորք, 1944: Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակը IV–VII դարերում, Ե., 1949: Մնացականյան Ստ., Պտղնիի տաճարը, ՊԲՀ, 1961, № 3–4: Ասմարյան Հ., Պտղնիի տաճարի զարդաքանդակները, ԲԵՀ, 1973, № 2:

Մուրադ Հասրաթյան

Ջ

ՋԱԼԱԼՅԱՆ Սարգիս [1810, գ. Եղինդ (Արտազ գավառ) – 16.10.1879, Թիֆլիս], եկեղեցական-հասարակական գործիչ: Սերել է Հասան-Ջալալյան իշխանական տոհմից: Հինգ տարի սովորել է տարոնացի Կարապետ վարդապետի մոտ, 1841-ին *Գանձասարի վանքում* աշակերտել է Հովսեփ վարդապետին: Երկար տարիներ եղել է *Սանահինի վանքի* վանահայր: 1828-ին ձեռնադրվել է սարկավագ, 1830-ին՝ կուսակրոն քահանա, 1855-ին՝ եպիսկոպոս: 1857-ին նրան շնորհվել է արքության պատիվ և տիտղոս: Վրաստանի և Իմերեթիայի թեմական առաջնորդի պաշտոնը 1847-ից մինչև մահ, ըստ էության, վարել է *Ներսես Ե Աշտարակեցին*, իսկ կոնսիստորիայի նախագահինը՝ Ջ.: Այդ ժամանակամիջոցում կաթողիկոսը նրան ուղարկել է ռուսահայոց թեմերում ստուգումներ կատարելու: Այստեղ տեղի է ունեցել նրա բախումը Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի հետ, որը վերածվել է կատաղի պայքարի: Լինելով խիստ պահպանողական՝ նա Հայաստանի ապագան տեսել է անցյալի անխաթար վերականգնման մեջ, անհանդուրժող. դիրք գրավել և հետապնդել բոլոր այն ազգ. գործիչներին, ովքեր երկրի ապագան դիտել են ժողովրդի նյութ. և հոգևոր կյանքը նորոգելու տեսանկյունից: 1857–63-ին Ջ. եղել է Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդ, անզիջում պայքար մղել Ներսիսյան դպրոցի տեսուչ Պ. Շանչյանի ու նրա կուսակիցների դեմ, Շանչյանին համարել «բողոքականության բովից արտաժայթքած մի անհավատ ու անաստված կեղծավոր, մարդախաբ, մոլորեցուցիչ ու մատաղ նոր սերնդին խմորող մարդ» և հեռացրել տեսչությունից: *Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսը Ջ-ին պաշտոնանկ է արել. կառավարության միջամտությամբ նա քաշվել է Սանահինի վանքը, որտեղ մնացել է մինչև 1865-ը: 1865–76-ին եղել է Ղարաբաղի թեմի առաջնորդ: Այդ ընթացքում (1867–70) *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին* նրան ուղարկել է Կ. Պոլիս՝ Էջմիածնի մնայուն ներկայացուցչություն ստեղծելու առաջադրանքով, որը, սակայն, ձախողվել է օսմանյան կառավարության և Կ. Պոլսի հայոց պատրիարքության ընդդիմության պատճառով: Վերադառնալով Ղարաբաղ՝ Ջ. իր միջոցներով Շուշիում ընդարձակել է Բաղդասար *Հասան-Ջալալյանի* կառուցած առաջնորդարանի շենքը, որտեղ տեղավորել է նաև ազգ. դպրոցը, վիճակային կոնսիստորիան և տպարանը, ապա կառուցել ս. Հռիփսիմյան օրիորդաց հոգևոր դպրոցի երկհարկանի շենքը: Տկարության պատճառով գնացել է Թիֆլիս, խնդրել, որ իրեն ազատեն առաջնորդության պաշտոնից:

Ջ. հեղինակել է «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (հ. 1, 2, 1842, 1858) երկը, որը արժեքավոր նյութեր է պարունակում հայոց վանքերի, եկեղեցիների պատմության, դրանց տեղադրության, ինչպես նաև հայ ազգագրության վերաբերյալ: «Նամակ Տ. Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց գրեալ առ յարգոյ ազգային ոմն ի Պոլիս» (1867) գործում թվարկել է իր ծառայությունները ազ-

գին ու հայրենիքին, ջանացել հերքել իր նկատմամբ եղած՝ որոշ դեպքերում անհարկի և չինծու մեղադրանքները: «Պատմութիւն աշխարհին Աղուանից» վերտառությամբ անտիպ գրքույկում ներկայացրել է Ղարաբաղի մելիքների պատմությունը XVIII դ., իսկ «Ծագումն Ղարաբաղու մելիքների» (ձեռագիր) փոքրածավալ երկում՝ տվել նրանց ծագումնաբանությունը: Յուրօրինակ և հետաքրքրական է Ջ-ի կտակը: Նա գանձարան է մուծել 25 հզ. ռուբլի՝ հինգ տոկոս տոկոսադրույքով, որը պետք է տնօրինվեր 125 տարի հետո, բաժանվեր 24 մասի, տրամադրվեր կտակում հիշատակված հաստատություններին՝ ազգի լուսավորության նպատակով:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927: Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1–2, Ե., 1955–56: Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962:

Վալտեր Դիլոյան

ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ [հուն. *ἀπολογία* (ապոլոգիա) – միջնորդություն, արդարացում], *հայրաբանության* վաղագույն տեսակներից, ձևավորվել է II դ.: Սկզբ. փուլում Ջ-յան նպատակն էր նախ ցույց տալ հեթանոսների, իմաստասերների, հրեաների և առհասարակ ոչ քրիստոնյաների՝ *քրիստոնեության* և քրիստոնյաների դեմ հարուցած մեղադրանքների անհիմն լինելը և ապա բացատրել, թե ինչ է քրիստոնեությունը, ում են հավատում քրիստոնյաները, հաստատել քրիստոնեության իրավունքները, որոնք հիմնված են նրա բովանդակած հայտնութենական, աստվածահիմն ճշմարտության վրա: Քրիստոնյաները մեղադրվել են անաստվածության (որովհետև չեն պաշտում կուռքերին և չաստվածներին), Հռոմ. կայսրության դեմ ունեցած կարծեցյալ թշնամանքի (որ հետևանք էր նոր, հոգևոր թագավորության մասին քրիստ. վարդապետության սխալ ընկալման), անբարոյականության (իբր քրիստոնյաները պաշտամունքի ժամանակ ուտում են ազգականների միսը, կենակցում նրանց հետ ևն) մեջ: Այսօրինակ անհեթեթ մեղադրանքները հերքելու համար հրապարակ են եկել Ջատագովները, որոնք, օգտվելով *Աստվածաշնչից*, ժամանակի արտաքրիստ. մշակույթից, փիլիսոփայությունից, մասամբ՝ եկեղեց. իրականությունից, ապացուցում էին, որ քրիստոնեությունը միակ ճշմարիտ, ընդունելի կրոնն է, իսկ քրիստոնյաները՝ կայսրության հուսալի, օրինավոր քաղաքացիները:

Ելնելով իր առջև դրված խնդիրների գործնական բնույթից՝ Ջատագով. գրականությունը չի արծարծել տեսական *աստվածաբանության* հարցեր: Սա պայմանավորված էր հակառակորդների (Փրոնտոն՝ մահ.166, Լուկիանոս Սամոստացի՝ մահ. 192, Կելսոս՝ մահ. 178, Պորփյուր՝ 232–303, Հուլիանոս Ուրացող կայսր՝ 361–363) հակաքրիստ. մեղադրանքները քրիստոնեության ընդհանուր սկզբունքների միջոցով ժխտելու անհրաժեշտությամբ, ինչն ինքնին բացառել է հրամանակարգային (դոգմատիկ) հարցերի քննարկումը: Աստվածաշնչում (Մարկոսի Ավետարան, Գործք առաքելոց, Պողոս առաքյալի թղթեր) արդեն առկա է հակահրեական Ջ., որն իր շարունակությունն է ունեցել Առաքելական հայրերի ժառանգության մեջ: Նրանցից առավել նշանավոր են Բառնաբաս առաքյալը (I դ.) իր նամակով, Արիստոն Պելլացին (I դ., «Ջատագովություն Պապիսկոսի և Յասոնի՝ Քրիստոսի մասին»), Հուստինոս Վկան (մահ. 161, «Երկխոսություն Տրիփոնի հետ» և «Ջատագովություն» վերնագրով 2 երկ), Ապոլինարիոս Հիերապոլսեցին (169–176, «Ընդդեմ հրեաների»): Մեզ հասել են միայն Բառնաբասի և Հուստինոս Վկայի երկերը: Հակահրեական այդ աշխատությունների հիմքում ընկած է Քրիստոսի աստվածության, մեսիականության գաղափարի հաստատումը և վավերացումն այն իրողության, թե հինկտակարանային մարգարեությունները կատարվել են Քրիստոսով:

II դարի երկրորդ քառորդից հանդես են եկել Ջատագովներ Կոդրատոսը և Արիստիդես Աթենացին: 125–126-ին Կոդրատոսը Էլիոս Ադրիանոս կայսրին (117–138) է հանձնել իր «Ջատագովությունը», որը մեզ չի հասել: Այսօր հայտնի հնագույն ամբողջական Ջատագով. գործը մոտ 146-ին գրված Արիստիդես Աթենացու երկն է, որ նա հանձնել է Ադրիանոս Անտոնիս Պիոս կայսրին (138–161): Երկի աստվածաբանությունն ամփոփվում է արարչաբանական և քրիստոսաբան. այն վարդապետության մեջ, ըստ որի Աստված ամեն ինչի արարիչն է, և Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, որ իջել է երկնքից՝ մարդկանց փրկության համար, և մարմնացել ս.Կույսից՝ Ս. Հոգու միջոցով:

«Ջատագովություն» խորագրով աշխատություն է գրել (մոտ 170-ին) Մելիտոն եպս.

Սարդեցին: Նա ընդգծել է, որ քրիստոնեության և Հռոմ. կայսրության մեջ պետք է տիրի լիակատար ներդաշնակություն: Ջատագով. երկերի հեղինակներ են նաև Աթենագորաս Աթենացին («Միջնորդություն քրիստոնյաների համար քրիստոնյա փիլիսոփա Աթենագորաս Աթենացու», գրել է մոտ 170-ին), Տատիանոս Ասորին («Ընդդեմ հույների», գրել է 165-ից առաջ), Անտիոքի եպիսկոպոս (169–188) Թեոփիլոս Անտիոքացին (180-ին գրել է «Քրիստոնեական հավատի մասին» երկը՝ ուղղված ոմն Ավտոլիկոսի):

III–V դդ. քրիստոնեության պաշտպանությամբ հանդես են եկել *Որոգինեսը*՝ «Ընդդեմ Կելսոսի» երկով (գրել է 246–249-ին), *Եվսեբիոս Կեսարացին*՝ «Ավետարանական նախապատրաստություն», «Ցույցք ավետարանական», *Աթանաս Ալեքսանդրացին*՝ «Ճառ ընդդեմ հեթանոսների», «Ճառ Աստված-Բանի մարմնավորման մասին» երկերով, *Բարսեղ Կեսարացին* իր նշանավոր «Վեցօրեայքով», *Կյուրեղ Ալեքսանդրացին*՝ Հուլիանոս Ուրացող կայսրի «Ընդդեմ Գալիլեացու» պարսավագրի ժխտումով ևն:

Արևմուտքի մեծագույն ջատագովը Տերտուղիանոսն է (II–III դդ.), որի գրչին են պատկանում «Ջատագովություն», «Խոսք ուղղված հեթանոսներին», «Ընդդեմ հրեաների», «Խոսք ուղղված Սկապուլասին» երկերը: Նրա աշակերտ Կիպրիանոս Կարթագենացուց (200–258) մեզ են հասել «Խոսք ուղղված Դեմետրիանոսին», «Կուռքերը աստվածներ չեն», «Վկայությունների երեք գիրք ընդդեմ հրեաների» ջատագով. երկերը: Հռետոր Լակտանտիոսի (մոտ 250–330) անունով հայտնի է հեթանոս. առասպելների դեմ գրված «Աստվածային հրահանգներ» (304–313) աշխատությունը: Արևմուտքի ջատագով. գրականության լավագույն նմուշներից է Օգոստինոս Երանելու «Աստծու քաղաքի մասին» երկը, որը գրելու շարժառիթը հետևյալն է. 410-ին գոթերի հարվածներից Հռոմի խորտակման պատճառը համարվել է քրիստոնեությունը, և իբր միաստվածության կրոնի կողմից բազմաստվածյան կրոնի դուրսմղումը զայրացրել է հավիտենական քաղաքը կառուցած հին աստվածներին: Օգոստինոսը ժխտել է այդ թյուր մեղադրանքը:

Քրիստոնեության հզորացմամբ աստիճանաբար վերացել է այն պաշտպանելու անհրաժեշտությունը: Թերևս այդ է պատճառը, որ մինչև հայոց գրերի գյուտը (405) հեթանոս. ընդդիմությունը հիմնականում (թեև ոչ լիովին) հաղթահարած հայ իրականության մեջ մեծ թիվ չեն կազմել ջատագով. երկերը: Դրանցից վաղագույնը «*Կանոնագիրք Հայոց*»-ի միջնադարյան խմբագրությունների մեջ զետեղված «Երանելույն Մեսրոպայ վարդապետի» խորագրով փոքրածավալ բնագիրն է, որն ուղղված է *Մեսրոպ Մաշտոցի* օրոք հայոց մեջ տակավին կենսունակ հեթանոս. հմայություններին դեմ (ԲՄ, № 7, 1964, էջ 309): Ջատագով. բնույթ ունի «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն և պատասխանիք նորա» երկը (Նույն տեղում, էջ 315–328): Այստեղ ևս խոսվում է հեթանոս. սնահավատության, կախարդությունների, հմայությունների մասին, ապացուցվում դրանց անհեթեթությունը և աստվածաշնչյան վկայություններով հերքվում դրանք:

Հայ ջատագով. գրականության պսակը *Եզնիկ Կողբացու* «Եղծ աղանդոց» երկն է, որն օտար հայրաբանները համարում են V դ. ջատագով. գրականության կարևորագույն երկերից: Նախորդ համաբնույթ գործերից «Եղծ աղանդոց»-ը տարբերվում է շարադրանքի պարզությամբ, նպատակասլացությամբ, վարդապետական սկզբունքների պաշտպանության առավել տրամաբանվածությամբ: Իբրև կանոն՝ այդտեղ ջատագով. հերքմանը նախորդում է փաստերի համադրումը, երևույթի հանգամանալից վերլուծությունը: Իր աշխատությունը Եզնիկ Կողբացին նվիրել է հին հեթանոս. իմաստասիր. ուսմունքների (պյութագորյան, պլատոնական, արիստոտելյան, ստոիկյան, էպիկուրյան), մարկիոնական աղանդի, ինչպես նաև՝ հայոց քրիստոնեությանն ուղղակիորեն սպառնացող պարսից զրադաշտ. կրոնի տարատեսակներից մեկի՝ մազդեականության քննությանն ու հերքմանը: Իր առջև նպատակ դնելով ապացուցել քրիստ. ճշմարտությունների բացարձակ գերադահությունը հեթանոս. իմաստասիրության հանդեպ՝ Եզնիկ Կողբացին անհրաժեշտաբար արծարծում է կամքի ազատության, չարի և բարու ծագման խնդիրներ, հերքում գնոստիկյան աղանդների (տես *Գնոստիցիզմ*) դուալիստ. ընկալումները, չարի սուբստանցիոնալ գոյությունը հաստատող դրույթները:

Հայ ջատագով. աստվածաբանության ավանդները շարունակել են հետագա հեղինակ-

ները: Այս տեսակետից հիշատակելի է *Վահրամ Բաբունու* «Հարցումնք եւ պատասխանիք ի գիրս Ծննդոց» երկը (հրտ. Եղիշեի անունով, Վնն., 1924), որտեղ լայնորեն օգտագործված է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա» երկը:

Հայ ջատագով. աստվածաբանության զարգացմանը նպաստել են թարգմանական ջատագով. երկերը: Իր երկը շարադրելիս Եղնիկ Կողբացին թարգմանելով օգտագործել է Մեթոդիոս Ոլիմպիացու կամ Պատարացու (մահ. 312) «Ինքնիշխանության (կամքի ազատության) մասին» երկի մեծ մասը, Արիստիդես Աթենացու «Ջատագովությունը», *Եպիփան Կիպրացու* «Ընդդեմ հերձվածների» (Պանարիոն) երկը, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը», Հիպպոլիտոս Բոստրացու կամ Հռոմեացու (170–236) «Ընդդեմ բոլոր հերձվածների» (Ֆիլոսոֆումենա), Թեոդորոս Մոպսուեստացու (IV–V դդ.) «Ընդդեմ պարսից մոգերի ուսմունքի», Կյուրեղ Ալեքսանդրացու «Մեկնություն Ծննդոց» երկերը, ինչպես նաև՝ Որոդինեսի, Իրենեոսի (II դ.), Դիոդորոս Տարսոնացու (IV դ.), *Եփրեմ Ասորու* և այլոց աշխատությունները: Հետագայում ևս հայոց մեջ չի նվազել ջատագով. երկերի նկատմամբ հետաքրքրությունը: *Ներսես Լամբրոնացին* 1197-ին Կ. Պոլսում իրականացրել է Բառնաբաս առաքյալի նամակի հուն-ից հայերեն թարգմանությունը, որը, սակայն, մեզ չի հասել:

Քրիստ. ջատագով. աստվածաբանությունը սկսած XIX դ-ից վերատեսության է ենթարկել իր մեթոդաբանությունը և կենտրոնացել մարդկային ճանաչողականության արժեքի, արտաքին իրականության մեջ մարդու դերի, ինչպես նաև հավատի ընկալման ու մեկնաբանության հիմնահարցերի շուրջ: Աստվածաբանության այս բնագավառը՝ Ջ., այլևս չի զբաղվում լոկ ջատագովելով, այլ իր առանցքային նպատակադրումներից է համարում նաև հավատի նկատմամբ մարդու դիրքն իմացաբանորեն և մեկնողաբար հիմնավորելու պահանջը:

Գրկ. Գալեմքյարյան Գ., Նորագույն աղբերք Եղնկայ Կողբացւոյ Ընդդէմ աղանդոց մատենին, Վնն., 1919: Խաչիկյան Լ., Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես հայ մատենագրության երախայրիք, ԲՄ, № 7, 1964: Անանյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 1245: Պետրոսյան Ե., Հայրաբանություն, հ. 1, Ս.Էջմիածին, 1996: *Сочинения древних христианских апологетов, рус. пер. П. Преображенского, СПБ, 1895; Аревшатян С.С., Формирование философской науки в Древней Армении, Е., 1973.*

Հակոբ Քյոսեյան

ՋՐՎՇՏԻԿ ՎԱՆՔ, Ս. Եղիշե առաքյալ վանք, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղից հյուսիս-արևմուտք, Մռավի անտառածածկ լեռնաբազուկներից մեկի հարավային լանջին: Հիմնվել է ս. *Եղիշե* վկայի գերեզմանի վրա: Եղել է Հայոց Արևելից Կողմանց հնագույն սրբավայր: Նախապես հայտնի է եղել Ներսմիհրի ուխտ անունով, քրիստոնեության ընդունումից հետո կոչվել է Ջրվշտիկ՝ վանքի մոտ գտնվող Ջրվշտիկ ջրվեժի անունով, ապա՝ Ս. Եղիշե առաքյալ վանք: Ըստ պատմիչ Մովսես Կաղանկատվացու, V դ. Արցախի Վաչագան Բարեպաշտ թագավորը ս. Եղիշեի նահատակության տեղում հուշայուն է կանգնեցրել, գերեզմանի վրա մատուռ-դամբարան կառուցել և ինքն էլ վախճանվելուց հետո թաղվել դրա մոտ: Վաղ միջնադարում Ջ. վ. սերտորեն կապված է եղել Արցախի կրոն. և քաղ. կենտրոնների մոտակայքում գտնվող Գլխո վանքի, արքայանիստ Գյուտականի, Կաղանկատույքի, Բերդակուրի հետ՝ լինելով պատմ. Արցախի նվիրական սրբավայր-ուխտատեղին:

1244-ին Սերոբ սարկավագը հնագույն եկեղեցու հիմքերի վրա կառուցել է վանքի Ս. Եղիշե առաքյալ եկեղեցին: XII–XIII դդ. կառուցվել է Ջ. վ-ի գլխ., միանավ թաղածածկ եկեղեցին, 1264-ին՝ նրան արմ-ից կից երկայուն գավիթը, որի երկլանջ տանիքին 1323-ին կանգնեցվել է քառայուն զանգաշտարակը: 1286-ին վանահայր Սիմեոնը Վաչագան Բարեպաշտ թագավորի գերեզմանի վրա եկեղեցի է կառուցել: Հս-ից հվ. շարքով կանգուն յոթ եկեղեցիներն ու մատուռները (XIII–XVII դդ.) թաղածածկ, երկթեք տանիքով շենքեր են, որոնք ունեն տարբեր եզրաձևով (կիսաշրջանաձև, ուղղանկյուն, զույգ կիսաշրջանաձև) և տարբեր քանակի խորաններ: Խորանների այսպիսի բազմազանությունը մեկ մենաստանում բացառիկ է հայկ. վանքերում:

Ջ. վ-ի համալիրի հվ. կողմում են խցերն ու սեղանատունը, որոնց շարքում իր ճարտ-յամբ առանձնանում է վանահոր երկհարկ շենքը (1552): XVI դ. կառուցված վանքի պարիսպը նորոգվել և ամրացվել է 1716-ին, միաժամանակ կառուցվել են երկու կամարակապ դարպասները:

Միջնադարում Ջ. վ-ում պահվել են աշխարհիկ ու կրոն. կարևոր վավերագրեր, ձեռագիր մատյաններ, եկեղեց. սպասք: Վանքը եղել է դպրության և գրչության կենտրոն, այստեղ ընդօրինակվել և նվիրատվությամբ ստացվել են տարաբնույթ արժեքավոր ձեռագրեր: 1899-ին գտնվել են Ջ. վ-ի VII–VIII դդ. բրոնզե բուրվառները, որոնցից մեկը զարդարված է Տերունական սրբապատկերով (Գարեգին վրդ. Հովսեփյանը բուրվառները նվիրել է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանին):

Ժող. ավանդազրույցը Վաչագան Բարեպաշտ թագավորի և Անահիտ թագուհու անունների հետ է կապում Ջ. վ-ի արմ. կողմում գտնվող աղբյուրը, իսկ վանքի բակի խաչաքանդակ տապանաքարը համարում է Անահիտի գերեզմանը:

XVIII դ. Ջ.վ. եղել է հայ ազդ-ազատագր. պայքարի կենտրոններից: Այդ ժամանակաշրջանում մեծ հռչակ է ունեցել վանքի միաբան, քաջակորով Ավագ վարդապետը, իսկ մենաստանը վայելել է Արցախի մելիքների հոգածությունը, որոնցից գահերեցը՝ Ջրաբերդի նշանավոր Մելիք-Ադամը, թաղվել է Ջ. վ-ի բակում, Ս. Եղիշե առաքյալ եկեղեցու մոտ:

Գրկ. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983: Բարխուդարյանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Ե., 1982: Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992:

Արտակ Ղուլյան

ՋՐՕՐՀՆԵՔ, արարողություն, որը կատարվում է Սուրբ Ծննդյան Պատարագից անմիջապես հետո: Խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի մկրտությունը: Նախապես եղել է միայն Երուսաղեմի եկեղեցուն հատուկ արարողություն, որը տեղի է ունեցել Հորդանան գետի ափին: Հետագայում քրիստոնյա մյուս եկեղեցիները ևս հաստատել են Ջ-ի արարողությունը: Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներում սովորություն է այն կատարել գետի, լճի կամ ծովի ափին: Հայ եկեղեցին ջրի օրհնությունը կատարում է եկեղեցում:

Հայոց պատմության մեջ հիշատակված են պատմական երկու Ջ-ներ: Առաջինը՝ 1022-ին, *Պետրոս Ա Գետադարձ* կաթողիկոսի օրոք, Տրապիզոնի մոտ: Երկրորդ Ջ. տեղի է ունեցել 1211-ին, Կիլիկյան Հայաստանի Սիս մայրաքաղաքում: Լևոն Բ Մեծագործ թագավորը և բարձրաստիճան հայ ու օտար հյուրեր ներկա են եղել գետեզերքին Ջ-ի արարողությունը, որից հետո կայացել են ժող. խրախճանքներ:

Ջ-ի արարողության ընթացքում կատարվում են սուրբգրային ընթերցումներ, աղոթքներ, հանդիսավոր բերվում է նաև ս. *Մյուռոնի* աղավնին: Պատարագիչ եկեղեցականը «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգակցությամբ Մյուռոնը կաթեցնում է ջրի մեջ, ապա ջրի մեջ դցված խաչը «Պահապանիչ»-ի ժամանակ հանում, տալիս է օրվա խաչի կնքահորը: Արարողությունից հետո հավատացյալներն օրհնված ջուրը տանում են տուն:

Ջ-ի ծեսը, ըստ *Մաշտոց* ծիսարանի «Օրհնությունաբեր ցուցակի» տվյալների, հաստատել է *Բարսեղ Կեսարացին*, իսկ Սահակ Ա Պարթևի հրամանով թարգմանել և Հայաստան է բերել Խոսրով թարգմանիչը: Ջ-ի *կանոնի* սկզբ. երաժշտ. ձևավորումը սահմանափակվել է հիմնականում 28-րդ սաղմոսի «Ձայն Տեառն ի վերայ ջուրց» (**28.3**) կցուրդով և «Տէր թագաւորեաց» սաղմոսով (**92.1**): Հետագայում սաղմոսներին ավելացել են XII-XIII դդ. հեղինակների գործերը՝ *Հովհաննես Երզնկացու* «Յամենայն ժամ օրհնեմք օրհնեալդ փրկիչ Էմմանուէլ» քարոզ-գանձը, «Այսօր ձայնն հայրական» տաղը, Կոստանդին Սրիկի (XIII դ.) «Քրիստոս, բանդ Հօր» մեղեդին և *Գրիգոր Գ Պահլավունու* «Ո՛վ զարմանալի» հորդորակը, որով ավարտվում է Ջ-ի ծիսակատարությունը: Իր կանոնականությամբ հանդերձ Ջ-ի երաժշտ. շարքը հաճախ կազմվել է բավական ազատ: Այսպես, Ջ-ի կանոնում, բացի սաղմոսներից և նշված գործերից, ըստ XIV-XVII դդ. առձեռն Մաշտոցների, առկա են նաև հետևյալ ստեղծագործությունները. *Մխիթար Այրիվանեցու* Ջ-ի *Ճրագալույցին* նվիրված «Տարփումն ըղձական, տոչոր անձկական» գանձը, Կոստանդին Սրիկի «Հրճուիմք այսօր մեք հոգեպէս» տաղը, ինչպես նաև՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի», «Լոյս ի լուսոյ», «Ուրախ լիցին այսօր երկինք», «Առաքելոյ աղաւնոյ» շարականները: Գանձ-շարքերի նման տարբերությունները և մեղեդիների տարբեր հաջորդականությունը, հավանաբար, արտացոլում են որոշակի շրջանների կամ վանքերի տեղային ավանդույթները:

Գրկ. Արևշատյան Ա., Ջրօրհնեքի և Ոնվալի կանոնները «Մաշտոց» ծիսարանում, «Էջմիածին», 1986, № 1:

Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան



Ռ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1931-ին: Առաջնորդանիստը՝ Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց Մայր տաճար: Ռումինիայի հայերը դեռևս XIV դարում Բոտոշանում (1350), Ռոմանում (1355), Յասսիում (1395) կառուցել են քարաշեն եկեղեցիներ և ունեցել իրենց հոգևոր թեմը, որը 1365-ից ենթարկվել է Լվովի հայոց եպիսկոպոսությանը: XIV դ. Ռումինիայում հայերի թիվն այնքան է ստվարացել, որ Մոլդովայի իշխան Ալեքսանդր Բարեպաշտը 1401-ի հուլիսի 30-ի հրովարտակով մայրաքաղաք Սուչավայում արտոնել է հայերին հիմնել հայոց եպիսկոպոսական թեմ՝ Հովհաննես եպիսկոպոսի գլխավորությամբ (1401–15): Հետագայում, երբ Մոլդովայի մայրաքաղաքը տեղափոխվել է Յասսի, 1565-ին այստեղ է հաստատվել նաև թեմի կենտրոնը: XVIII դ. վերջից մինչև XX դ. սկիզբը Մոլդովայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնը վարել են Կ.Պոլսի հայոց պատրիարքությունից ուղարկված հոգևորականներ: 1922-ին Ռումինիայի հայերի թեմական պատգամավորական ժողովն ընդունել է համայնքի կանոնադրությունը և ընտրել թեմական գործադիր մարմին (կառավարությունը վավերացրել է 1931-ին): 1931-ի հուլիսի 31-ին հիմնվել է Ռումինիայի հայոց թեմը: 1943–55-ին Ռ. թ-ի առաջնորդն էր Վազգեն եպս. Պալճյանը (1955–94-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Վազգեն Ա Պալճյան*):

Ռումինիայում կառուցված հայկ. եկեղեցիներից ցարդ պահպանվել են. Բոտոշանում՝ Ս. Աստվածածինը (հիմն. 1350-ին, նորոգվել է 1826-ին), Ս. Երրորդությունը (1560-ին կառուցված Ս. Օգսենտ եկեղեցին 1795-ին վերակառուցումից հետո վերանվանվել է Ս. Երրորդություն), հայոց գերեզմանոցում՝ Ս. Աստվածածին մատուռը (հիմն. 1884-ին), Սուչավայում՝ Ս. Սիմեոնը կամ Կարմիր Աշտարակը (հիմն. 1513-ին), Ս. Խաչը (հիմն. 1521-ին, խորանի մոտ կա 1428-ի ապրիլի 14-ի թվագրությամբ տապանաքար): 1619-ին կառուցվել է Ս. Խաչ եկեղեցու զանգակատունը, կից՝ Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռը (հիմն. 1776-ին), Ս. Աստվածածին կամ Հաճկատար (հիմն. 1512-ին, զանգը բերվել է Տաթևի վանքից, վրան փորագրված է 1244-ի արձանագրություն) և Ս. Օգսենտ կամ Զամկա (հիմն. 1551-ին) վանքերը: Վերջինս մինչև 1686-ը եղել է Մոլդովայի հայերի հոգևոր կենտրոնը, որտեղ գործել են դպրոց և մատենադարան: Հայոց նոր գերեզմանոցում կառուցվել է Ս. Հարություն մատուռը (1902): Ռոմանում պահպանվել են Ս. Աստվածածին (հիմն. 1609-ին, վերակառուցվել է 1864-ին), Գալացում՝ Ս. Աստվածածին (հիմն. 1669-ին, վերակառուցվել է 1858-ին), Տուլչայում՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ (հիմն. 1882-ին, 1830-ին կառուցված փայտաշեն մատուռի տեղում), Պիտեշտում՝ Ս. Հովհաննես Մկրտիչ (հիմն. 1693-ին, վերակառուցվել է 1852-ին) եկեղեցիները: Հայերը Ֆոկշանում կառուցել են Ս. Գևորգ (1710–15, այժմ՝ ավերված), Ս. Աստվածածին (1730, տրված է ռումինացի ուղղափառներին) եկեղեցիները, Հա-

յոց գերեզմանոցում՝ Ս. Հարութիւն մատուռը (1891), Բրբիլայում՝ Ս. Աստվածածին (1837, օգտագործում են ռումինացիները) եկեղեցին:

Առաջնորդանիստ Ս. Հրեշտակապետաց Մայր տաճարը (1911–15) կառուցվել է 1638-ին հիմնված եկեղեցու տեղում: Քաղաքի հայկ. գերեզմանատանը կանգուն է Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռը (1920), կան պատմափաստագր. արժեք ներկայացնող տապանաքարեր: Կոստանցայում հայ համայնքը ներկայումս եկեղեց. չենք չունի. 1880-ին կառուցվել է Ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցին, որը 1940-ին այրվել է: Այսօր եկեղեցին զբաղեցնում է աղոթատեղիի վերածված դպրոցի վերնասրահը: Կից կառուցվել է զանգակատուն (1990): Ներկայումս (2001) Ռումինիայում գործում են Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց Մայր տաճարը, Կոստանցայի աղոթատեղին և Պիտեշտի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Ռումինահայերը դեռևս միջնադարում վանքերին և եկեղեցիներին կից դպրոցներ են հիմնել Սուչավայում (XV դ.), Բոտոշանում (XV դ.), Յասսիում (XVI դ.), Գեռլայում (XVII դ.), Դումբրբվենում (XVII դ.):

Հայկ. դրչության կենտրոններն են եղել Սուչավան, Յասսին, Աքքերմանը, Բրբիլան, Գեռլան, Բուխարեստը: Աքքերմանի հայ դրչության դպրոցում դեռևս 1459-ին գործել է գրիչ և մանրանկարիչ Նիկողայոս եպիսկոպոսը: XVII դ. 2-րդ տասնամյակում Սուչավայում բազմաթիվ ձեռագրեր է ստեղծել գրիչ և հեղինակ Ղազար Բաբերդացին: Ստեղծված ձեռագրերը պահվում են Երևանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների մատենադարաններում:

Յասսի, Գալաց, Տուլչա, Բրբիլա, Բուխարեստ քաղաքներում գործել են տպարաններ, որտեղ տպագրվել են հայերեն գրքեր, շուրջ 50 անուն պարբ-ներ (առաջինը՝ Գալացի Ղևոնդ քհն. Փափազյանի տպարանում 1895–99-ին հրատարակված «Հայկական տարեցույց»-ները ևն): Հայերը Զամկա վանքին կից ունեցել են մատենադարան, դիվանատուն:

1927-ից առաջնորդարանին կից հիմնվել է մատենադարան, գրադարան, թանգարան (որտեղ պահվում են 1351-ին Կաֆայում ընդօրինակված Ավետարան, 1666-ին Ամստերդամում տպագրված Աստվածաշունչ, 1649-ին Հաճկատարում ընդօրինակված Աղոթագիրք ևն): Թանգարանում է պահվում Ալեքսանդր Բարեպաշտի հրովարտակը, որով արտոնվել է Սուչավայում 1401-ին հիմնել հայոց թեմ: Գրքերի, մանրանկար ձեռագրերի հավաքածուներ ունեն Կոստանցայի, Պիտեշտի, Սուչավայի, Յասսիի եկեղեցիները:

Համայնավար. վարչակարգի պայմաններում (1945–90-ական թթ. սկիզբ) հայոց կրոն. համայնքի գործունեությունը սահմանափակվել է, մի շարք եկեղեցիներ փակվել են: Երկրում ժողովրդավար. կարգի հաստատումից հետո զարթոնք է ապրել նաև հայոց հոգևոր կյանքը: 1994-ին թեմ. խորհուրդը որոշում է կայացրել հայկ. նախկին եկեղեցիները վերաբացելու և նորերը կառուցելու մասին:

Ռ. թ-ի առաջնորդն է Տիրայր արք. Մարտիկյանը (1968-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.8, 2-րդ պատկերը:

Սարգիս Սելյան

Ս

ՍԱՀԱԿ Ա ՊԱՐԹԵՎ, Ի սահակ Պարթև, Մեծն Սահակ, Սուրբ Սահակ [29.9.348, Կեսարիա – 7.9.439, գ. Բլուր (Բագրեվանդ գավառ)], Ամենայն Հայոց կաթողիկոս 387-ից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Հաջորդել է *Ասպուրակես Ա Մանազկերտցուն*: *Ներսես Ա Մեծ* Պարթևի և Տարոնի իշխան Վարդան Մամիկոնյանի դուստր Սահանդուխտի որդին: Հոր աթոռակալման ժամանակ երկար տարիներ ուսանել է Կեսարիայի, Ալեքսանդրիայի և Կոստանդնուպոլսի դպրոցներում: Տիրապետել է հուն., ասոր. և պարսկ. լեզուների: Ձեռնադրվելով եպիսկոպոս՝ իր 60 աշակերտների հետ կրոնավորել է Վաղարշապատի Ս. Էջմիածին վանքում: Կաթողիկոս ընտրվելուց հետո աջակցել է Հայոց Խոսրով Գ Թագավորին, որը ջանում էր վերամիավորել հայկ. հողերը և վերականգնել Մեծ Հայքի միասնականությունը: Սասանյան արքունիքը 389-ին Խոսրով Գ-ին բանտարկել է Անհուշ բերդում, իսկ Ս. Ա Պ-ի հայրապետությունը համարել անվավեր: Հայոց նոր թագավոր *Վռամշապուհի* աջակցությամբ վերահաստատվել է իր աթոռին: Ս. Ա Պ-ի միջնորդությամբ Պարսից արքա Վռամ III Կրմանը վավերացրել է հայ նախարարությունների Գահնամակը, Մամիկոնյաններին շնորհել 5-րդ պատվավոր դահը, Ս. Ա Պ-ի փեսային՝ Համազասպ Մամիկոնյանին, ճանաչել Հայոց սպարապետ, ներում շնորհել Ամատունիներին ու Կամսարականներին: Ս. Ա Պ-ի ջանքերով 422-ից Հայոց թագավոր է ճանաչվել Վռամշապուհի 18-ամյա որդի Արտաշես Գ: Այնուհետև, շուրջ քառորդ դար տևած խաղաղ պայմաններում Ս. Ա Պ. իր տեղապահ *Մեսրոպ Մաշտոցի* համագործակցությամբ ծավալել է մշակութ. եռանդուն գործունեություն, Վռամշապուհ թագավորի և Առավան Հազարապետի հովանավորությամբ խթանել ազգ. կրթության և լուսավորության նոր վերելքը: Հայոց նոր գրերի ստեղծումից (405–406) հետո Ս. Ա Պ-ի հրամանով արգելվել են օտար լեզուներով և գրություններով ուսուցումները, և ամենուրեք կրթությունն իրականացվել է հայերենով: Ս. Ա Պ-ի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները սկսել են ուսուցանել մաշտոցյան գրերը, ասոր. և հուն. լեզուներից թարգմանել աստվածաբան., իմաստասիր., պատմ. և այլ գրքեր:

Ս. Ա Պ. աշխույժ գործունեություն է ծավալել նաև Հայաստանի բյուզ. մասում: 417-ին հատուկ պատգամավորությամբ (Մեսրոպ Մաշտոց, Դերջանի Գնիթ եպիսկոպոս, Համազասպի որդի Վարդան Մամիկոնյան) նա դիմել է բյուզ. կայսրին և Կոստանդնուպոլսի պատրիարք Ատտիկոսին՝ խնդրելով ճանաչել Հայոց կաթողիկոսության հոգևոր իշխանությունը, ինչպես նաև Հայոց սպարապետ՝ իր թոռ Վարդան Մամիկոնյանին: Հայաստանում ազդեցությունն ամրապնդելու և հայերի թշնամանքը չբորբոքելու համար բյուզ. արքունիքը բավարարել է Ս. Ա Պ-ի խնդրանքը: Պարսից Վռամ V արքան, քաղ. մեղադրանքներ հարուցելով Ս. Ա Պ-ի և Հայոց թագավոր Արտաշես Գ-ի դեմ, 428-ին նրանց հրավիրել է Տիզբոն և ձերբակալել: Սակայն հայերի դժգոհությունը-

ները մեղմելու համար Վռամ V 432-ին աքսորից ազատել է Ս. Ա. Պ-ին՝ նրան վերապահելով Մեծ դատավորության պաշտոնը, եկեղեց. տուրքերի տնօրինությունը և ձեռնադրության իրավունքը, պայմանով, որ նա գործակցի Հայոց մարզպանի՝ պարսիկ Վեհմիրշապուհի հետ: 439-ին, երբ Պարսից արքա Հազկերտ II-ը պատերազմ է հայտարարել Բյուզանդիային, ռազմաբեմ դարձնելով Հայաստանն ու Հայոց Միջագետքը, Ս. Ա. Պ., ընդառաջ ելնելով, փորձել է կանխել արյունահեղությունը, բայց վախճանվել է ճանապարհին (Բլուր գյուղում): Նրա աճյունը փոխադրվել է Տարոն և ամփոփվել Աշտիշատում:

Նշանակալի է Ս. Ա. Պ-ի մատենագր. ժառանգությունը: Նա կարգավորել է հայկ. Տոնացույցը, գրել եկեղեց. ու աշխարհիկ դասերին, պաշտոնյաներին, հայ ընտանիքին, ամուսնությանը և այլ հարցերին վերաբերող բազմաթիվ կանոններ, գրել և եղանակավորել է շարականներ, պատարագամատույց, ծիսական աղոթքներ, հատկապես վճռական դեր է խաղացել հուն. Աստվածաշնչի թարգմանության և կանոնացման գործում: *Ղազար Փարպեցին* գրում է, որ Մեսրոպ Մաշտոցը և մյուս թարգմանիչները, հայ. և հուն. հնչյունաբանությունը համեմատելիս, հաճախ դիմել են Ս. Ա. Պ-ին, որովհետև նա ստացել էր հիմնավոր ուսում, կատարելապես տիրապետում էր հնչյունաբանությանն ու հռետորական մեկնաբանությանը, քաջատեղյակ էր փիլ. ճարտասանություններին: Ս. Ա. Պ-ի անունով պահպանվել են դավանաբան. թղթեր՝ ընդդեմ *Նեստորականության, բորբորիտների* ու մծղնեների (տես *Մծղնեություն*), ինչպես նաև նամակներ՝ ուղղված Թեոդոսիոս II կայսրին, Անատոլիոս կուսակալին, Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքին, Ատտիկոս, Ակակիոս եպիսկոպոսներին: Այս թղթերում (Գիրք թղթոց, էջ 1–21) Ս. Ա. Պ. և Մեսրոպ Մաշտոցը *Եփեսոսի Գ տիեզերական ժողովից* հետո բանաձևել են Հայ եկեղեցու ուղղափառ դիրքորոշումը, հատկապես Պրոկղ պատրիարքին ուղղված պատասխան թղթում Հայ եկեղեցու ս. հայրերը հաստատել են Մարդեղության խորհրդի (ընդդեմ Նեստորի) վերաբերյալ Նիկիայի Հանգանակի բանաձևումը, երեք տիեզերաժողովների դավանական վճիռները: Այդ թուղթը, իբրև ուղղափառության փաստ, ընթերցվել է 553-ի Կ. Պոլսի ժողովում՝ *Կյուրեղ Ալեքսանդրացու* թղթից անմիջապես հետո:

Ս. Ա. Պ. կարևոր դեր է խաղացել Հայ եկեղեցու պաշտոնագրության, երաժշտաթիս. գրքերի հայացման և կազմավորման գործում: Մեսրոպ Մաշտոցի հետ նա հայ հոգևոր ինքնուրույն երգերի սկզբնավորողն է: Նրա անունով հայտնի են ժամագրքում զետեղված Գիշերային ժամի չորս երգեցիկ քարոզները, ինչպես նաև բազմաթիվ շարականներ՝ Ղազարի հարության, Ծաղկազարդի կանոնները, երկրորդ Ծաղկազարդի հին կանոնի երգերը և Ավագ շաբաթվա բոլոր օրե-

«Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» (1950, փայտ, բնօրինակը՝ գիպս, 1943, քանդ.՝ Ա. Սարգսյան, ՀԱՊ, Երևան)

րի կանոնների երգերի մեծամասնությունը: Ուշագրավ է նաև միջնադարյան գրչագիր Գանձարաններում պահպանված Ս. Ա. Պ-ի «Պարագրի անպարագրելի բանն» սկզբնատող ունեցող տաղը: Մի շարք հայ միջնադարյան աղբյուրներ Ս. Ա. Պ-ին են վերագրում հայոց եկեղեց. ձայնեղանակների՝ *ութձայնի* առաջին կարգավորումը:

Հայ եկեղեցին ս. Ս. Ա. Պ-ի հիշատակը տոնում է տարին երկու անգամ: Հիշատակի օրերից առաջինը նշվում է Մեծ Բարեկենդանին նախորդող կիրակիի նախընթաց շաբաթ օրը (Առաջավորաց պահքի կիրակիի 14-րդ օրը՝ հունվ. 24-ից փետր. 28-ը), երկրորդը՝ ս. Մեսրոպ Մաշտոցի հետ՝ Հոգեգալստյան 4-րդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը (հունիսի 1-ից հուլիսի 16-ն ընկած շրջանում):

Կաթողիկոս. գահին Ս. Ա Պ-ին հաջորդել է *Հովսեփ Ա Հողոցմեցին*:

Գրկ. Պատմութիւն Սրբոյն Սահակայ Հայրապետին և Ս. Մեսրոպեայ վարդապետին, «Սոփերք հայկականք», հ. 2, Վնտ., 1853: Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1981: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց հայոց, հ. 1, Վնտ., 1869: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, Ե., 1964: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դարերում, Ե., 1985, էջ 133–144: Արեվշատյան Ա., Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, ՊԲՀ, 1992, № 2–3:

Մաքսիմ Կատվալյան
Աննա Արևշատյան

ՍԱՀԱԿ Բ ՈՒՂԿԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Ուղկի (Հարք գավառ) – 539], Ամենայն Հայոց կաթողիկոս 534-ից: Հաջորդել է *Մուշե Ա Այլաբերցուն*: Ս. Բ Ու-ու Հայրապետ. գործունեության մասին ոչինչ չի ավանդված:

Կաթողիկոս. գահին Ս. Բ Ու-ուն հաջորդել է *Քրիստափոր Ա Տիրառիջցին*:

ՍԱՀԱԿ Գ ՁՈՐՈՓՈՐԵՑԻ, Ձորոփորցի, Ձորափորեցի [ծ. թ. անհտ, գ. Արքունաշեն (Գուգարքի Ձորոփոր գավառ) – 703, Խառան], Ամենայն Հայոց կաթողիկոս 677-ից: Հաջորդել է *Իսրայել Ա Ոթմսեցուն*: Աշակերտել է *Թեոդորոս Քռթենավորին*: Եղել է Ուտիքի Ռոտ Պարսյան գավառի եպիսկոպոս: Գահակալել է Հայաստանի նվաճման համար արաբ-բյուզ. պատերազմների և արշավանքների ծանր ժամանակաշրջանում, երբ միաժամանակ, հատկապես 680-ի և 692-ի Կ. Պոլսի ժողովներից հետո, սաստկացել էին Հայ և Հույն եկեղեցիների դավան. վեճերը: Բյուզ. Հուստինիանոս II կայսրը, արշավելով Հայաստան, Ս. Գ Ձ-ուն մոտ 693-ին պատանդ է տարել Կ. Պոլիս՝ նրան և Հայ եկեղեցուն քաղկեդոնականություն պարտադրելու նպատակով: Հուստինիանոս II-ի գահընկեցությունից (695) հետո վերադարձել է հայրենիք և շարունակել աթոռակալությունը: Նորոգել է կապը *Աղվանից եկեղեցու* հետ, շարունակել Աղվանից Իսրայել եպիսկոպոսի՝ հոներին քրիստոնյա դարձնելու քարոզչությունը: Հայաստանի առաջին արաբ ոստիկան Աբդալլահը 702-ին ձերբակալել է Ս. Գ Ձ-ուն և ուղարկել Դամասկոս: Երբ ապստամբ հայ իշխանները 703-ին Վարդանակերտի ճակատամարտում ջարդել են Աբդալլահի ջոկատը, Ս. Գ Ձ. մեկնել է Խառան՝ կանխելու զորավար Մուհամմեդ իբն Օկբայի պատժիչ արշավանքը Հայաստան: Ս. Գ Ձ. Խառանում մահացել է՝ խնդրագիր թողնելով արաբ զորավարին, որը մեղմացած հետ է դարձել: Ղևոնդ պատմիչը (VIII դ.) կաթողիկոսի՝ արաբ զորավարին ուղղված խնդրագիրը զետեղել է իր երկում:

Ս. Գ Ձ. հեղինակ է ծիսական կանոնների և ճառերի, որոնցից նշանավոր է *Ծաղկազարդին* ձոնված «Ճառ Արմավենյացը»: Նա նաև հայ ամենահայտնի շարականագիրներից է, *խաչին* և եկեղեցուն նվիրված *շարականների* մեծագույն մասի հեղինակը: Նրա գրչի արգասիքն են Շողակաթի, Նավակատյաց և Վերացման ութ օրերի, Վարագա Ս. Խաչի և Գյուտ Խաչի (տես *Խաչի տոներ*) կանոնների մեծ մասի շարականները՝ շուրջ 60 երգ, որոնք աչքի են ընկնում բանաստեղծ. առինքնող ապրումով, լեզվի հարստությամբ, ձևի կատարելությամբ և մեղեդիական հղկվածությամբ: Դրանցից «Էջմիածին ի Հօրէ», «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի», «Որ նշանաւ ամենայաղթ», «Ի Ս. Խաչն», «Այսօր ուրախացեալ» ևն հետագայի հեղինակների համար ձեռք են բերել չափանմուշի նշանակություն:

Կաթողիկոս. գահին Ս. Գ Ձ-ուն հաջորդել է *Եղիա Ա Արճիշեցին*:

Գրկ. Ղևոնդ, Պատմություն, Ե., 1982: Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Ե., 1996: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Թահմիզյան Ն., Սահակ Ձորափորեցին և Խաչի ու եկեղեցու շարականները, «Էջմիածին», 1980, № 11:

Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան

ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ, Սահակդուխտ (ծ. և մ. թթ. անհտ, թաղված է Գառնու ձորում), VIII դարի երգահան, երաժիշտ: Դվինի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի դուստրը, *Ստեփանոս Սյունեցու* քույրը: Պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի վկայությամբ, Ս. մանուկ հասակից ընդունել է «զվարս կուսութեան» և Դվինից հեռանալուց հետո ցմահ ճգնել Գառնիի կիրճի անձավներից մեկում: Հոգևոր երգեր հորինելուց զատ, նրան թույլատրվել է մանուկներին ուսուցանել (վարագույրի հետևից): Ստեփանոս արք. Օրբելյանը հիշատակում է, որ Ս. ավանդել է նաև երաժշտ. արվեստ: Ըստ Մխիթար Այրիվանեցու, գրել է

Ծննդյան և փոխման բազմաթիվ քաղցրեղանակ մեղեդիներ և կցուրդներ. «Սա արար տաղս բազումս եւ մեղեդիս եւ կցուրդս ծնընդեան եւ փոխմանն, յորոց մի է Սրբուհի Մարիամն»: «Սրբուհի Մարիամ» երգն ունի անհամաչափ տաղաչափություն և գրված է ակրոստիքոսով. տների առաջին տառերով հոդվում է բանաստեղծուհու անունը (Սահակադուխտ): Այդ երգի մասին հիշատակել է նաև Ստեփանոս Օրբելյանը, առաջին տան մի տարբերակ հրապարակել է Ղ. Ալիշանը: Երգի ամբողջական բնագիրը հետագայում հայտնաբերել և 1951-ին «*Հասկ*» ամսագրում հրատարակել է Նորայր *Պողարյանը* (Ծովական):

Գրկ. Հովսեփյան Գ., Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985:

Մհեր Նավոյան

ՍԱՂՄՈՍ (Սաղմոսարան) [Սաղմոս < հուն. *ψαλμός* (փսալմոս – քնարի վրա երգ) բառից, որը համարժեքն է եբրայերեն բնագրի 57 սաղմոսների սկզբում հանդիպող միզմոր (օրհներգություն) եզրի], *Սուրբ Հոգու* ներգործությամբ ստեղծված աղոթք-մարգարեություն-օրհներգություն, հոգևոր երգ, համաշխարհային գրականության մեջ անգերազանցելի քնարական երկ: Իսրայելում ի սկզբանե Ս-ները սահմանված էին երաժշտության ընկերակցությամբ Աստծո առաջ երգվելու համար:

Սուրբ Գրքում Ս. բառը գործածվում է միայն Սաղմոսարանում, դրանից հետո՝ Նոր կտակարանում: Սաղմոսարանը կամ Սաղմոսաց գիրքը Ս-ների ժողովածու է, որն իբրև առանձին գիրք պատկանում է հինկտակարանային իմաստության գրականությանը: Սաղմոսարանում ընդգրկված են 151 Ս-ներ, որոնցից 150-ը կանոնական են, իսկ վերջինը՝ երկրորդականոն:

Այս գիրքը Աստվածաշնչի եբր. բնագրում մասնավոր անուն չի ունեցել, ուշ շրջանում կոչվել է Սեֆեր Թեհիլլիմ՝ Գովաբանության գիրք, իսկ հունարեն Յոթանասնից թարգմանությունում՝ Փսալտերիոն, որը թարգմանվում է տասնալար (տասնաղի) նվագարան, տավիղ, սաղմոսարան: Այդպես է նաև հայերենում. Սաղմոսարան նշանակում է և՛ Ս-ների ժողովածու, և՛ Ս-ներ երգելու նվագարան: Սաղմոսարանի եբրայական և հունական անվանումները փաստորեն պայմանավորված են՝ եբրայականը նրանց բովանդակության հիմն. ներքին բնույթով՝ իբրև Աստված փառաբանող երգեր, իսկ հունականը՝ այդ երգերի կատարման արտաքին եղանակով, այսինքն՝ լարային նվագարանի ընկերակցությամբ:

Հեղինակները: Սուրբգրային ավանդության մեջ Սաղմոսարանը կոչվում է «Գիրք սաղմոսաց Դավթի»: Դավթի անունը հիշատակված է 73 Ս-ների խորագրերում և հատկապես ժողովածուի առաջին գրքում, որն այդ պատճառով կոչվում է «Դավթյան մեծ ժողովածու»: Ընդ որում՝ 13 անգամ նշված է նրա կյանքի որևէ իրադարձություն: Դավիթը միայն թագավոր ու քաջարի զինվոր չէր, այլև աստվածաշնորհ երգիչ, բանաստեղծ և երաժշտ. գործիքներ հնարող: Սուրբ Գիրքը նրան է վերագրում պաշտամունքի կազմակերպման և ծիսական երգեցողության երախտիքը: Թեև, անկասկած, Դավիթն է ժողովածուի գլխ. հեղինակը և կազմողը, այնուամենայնիվ նրա անվամբ այն կոչելը փոխանունություն է (մետոնիմիա), այսինքն՝ մասով ամբողջը կոչելու երևույթ: Խորագրերը հիշատակում են նաև մյուս հեղինակների անունները՝ Մովսես, Սողոմոն, Ասաֆ, Եման, Եթան, Իդիթուն, Կորխի որդիներ: Ս-ների գգալի մասն անանուն է:

Սակայն անկախ հեղինակների թվից ու զանազան ժամանակներում կազմված լինելուց, Ս-ները նույնական են ծագումով և աղբյուրով. հեղինակներին ներշնչողը Սուրբ Հոգին է: *Եպիփան Կիպրացին* Դավթին նմանեցնում է թանաքի մեջ թաթախված գրչի, որ «թացեալ և ներկեալ է շնորհօք Հոգւոյն Սրբոյ»:

Խորագրերը: Սաղմոսաց գրքի բոլոր Ս-ները համարակալված են և մեծ մասամբ ունեն զանազան երկարության խորագրեր, որոնք զատված չեն բնագրերից: Իրենցից ինքնության վկայական ներկայացնող այս խորագրերը տեղեկություններ են պարունակում հեղինակի, Ս-ի ծագման, տեսակի, մեղեդու, նվագակցող գործիքի, երաժիշտների ղեկավարի և ծիսական կիրառության մասին: Որոշ եզրեր անհասկանալի են, քանզի այսօր բավարար տեղեկություններ չկան Հնամենի իսրայելական երաժշտության և գործիքների մասին:

Ս-ների բովանդակությունը: Սաղմոսարանը թե՛ Իսրայելում, թե՛ քրիստ. աշխարհում առանձնացվել է աստվածաշնչյան մյուս սրբազան գրքերից՝ գործածվելու իբրև ընդհանրական և առանձնական աստվածապաշտության

աղոթագիրք՝ ծիսական: Սակայն աղոթքը կամ հոգևոր երգը Ս-ների արտաքին ձևն է՝ գրական ժանրը, մինչդեռ բովանդակային առումով նրանք խտացումն են հինկտակարանային օրենսդր., պատմ., իմաստության և մարգարեական գրքերի: Ըստ *Հովհան Ոսկեբերանի* Ս-ները խոսում են և՛ ներկայի, և՛ ապագայի և՛ տեսանելի ու անտեսանելի էակների մասին, սովորեցնում բազում բաներ՝ հարություն, Հիսուս Քրիստոս, հանդերձյալ կյանք, արդարների հանգստություն և մեղավորների տառապանք, ինչպես նաև բարոյական ու դավան. վարդապետություններ. «Սաղմոսարանի յուրաքանչյուր բառը բովանդակում է մտքերի անհուն ծով» («Մեկնութիւն առ Հռովմայեցիս»):

Այս չափածո, երբեմն էլ արձակ բանաստեղծություններն ի հայտ են բերում հայտնութենական ճշմարտություններ, ինչպես նաև՝ ըստ ամենայնի բացահայտում մարդու ներաշխարհը, նրա իղձերն ու զգացմունքները, մարդկային հոգու հուզումնալից զեղումներն ու ակնկալիքները, կրոն. փորձառությունը: Սաղմոսերգուները խոսում են Աստծո մասին, բայց և նրան ուղղում իրենց սրտի խոսքը:

Ս-ները ոչ միայն սովորեցնում են ապրել Աստծուն ապավինելով, երկյուղածությամբ և արդարությամբ, այլև ուսուցանում են, թե ինչպես և ինչ խոսքերով է պետք աղոթել կյանքի զանազան իրավիճակներում ու փորձություններ հորձանուտում: Ի՛նչ խոսքեր է պետք արտաբերել նեղվելիս, ի՛նչ խոսքերով ապաշխարել մեղանչելիս, գոհանալ՝ հոգևոր և նյութ. բարիքներ ստանալիս, ցնծալ՝ թշնամիներից ձերբազատվելիս: Այլ խոսքով՝ Սաղմոսարանը վայելուչ ու աստվածահաճո աղոթքների ձեռնարկ է, որի խոսքերը ժամանակի ընթացքում յուրացվում ու դառնում են յուրաքանչյուրի համար հոգեհարազատ. «... այնպես՝ կարծես թե իրենը լինեին, յուրաքանչյուր ոք երգում է այնպես՝ կարծես թե գրված լինեին իր համար» (Ա թ ա ն ա ս Ա լ ե ք ս ա ն դ ր ա ց ի, Սաղմոսների մեկնություն, 2000, էջ 20):

Ս-ների բովանդակային բաժանումը: Սաղմոսաց գիրքն իր ներկայիս տեսքով ի մի է բերվել և խմբագրվել Եզրասի կողմից, Ք.ծ.ա. V դ.: Ամբողջ ժողովածուն Հնգամատյանի օրինակով բաժանված է հինգ մասի (1–40, 41–71, 72–88, 89–105, 106–150), որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ խորքն ու երանգը և ավարտվում է ծիսական փառաբանությամբ:

Ս-ներին հատուկ բազմաոարկայնությունն ու բազմազանությունը, մտքերի ու զգացմունքների հարստությունը, միևնույն ստեղծագործության մեջ մի թեմայից մյուսին հանկարծական անցումները, շարադրանքի տխուր բնույթի փոփոխությունն ուրախի և հակառակը, դժվարություններ են հարուցում նյութի բովանդակային ճշգրիտ ու ստույգ բաժանման համար: Այնուամենայնիվ ընդունված է Ս-ները դասակարգել ըստ չորս տարբեր խմբերի՝ 1. փառաբանական, 2. պաղատական, վստահության և գոհության, 3. ուսուցողական, 4. մեսիական:

Փ ա ռ ա բ ա ն ա կ ա ն Ս-ներ: Այս խմբին են պատկանում բուն թեհիլլիմ նշանակությամբ Ս-ները, որոնցում գովերգվում է Միակ, Մշտնջենական, Ամենակարող, Ամենագետ Աստված: Ունեն հետևյալ կառույցը. սաղմոսերգուն դիմում է մե՛րթ իր անձին, համայնքին, ժողովրդին, մե՛րթ՝ բնության տարերքին և անգամ երկնային էակներին, նշում փառաբանության դրդապատճառները և հանգամանալից վերլուծության ենթարկում իրավիճակը (Ս. 102):

Այս խումբը կազմված է առանձին հավաքածուներից: Ուխտի Տիրոջն օրհներգում են 8, 18, 32, 99, 102, 103, 110, 112, 113, 116, 134, 135, 144–150 Ս-ները: Այս շարքից են պ ա տ մ ա կ ա ն Ս-ները (77 և 104), որտեղ բարեբանվում են Տիրոջ գործերը փրկության պատմության մեջ: Թ ա գ ա վ ո ր ո ւ թ յ ա ն օրհներգերը (92, 95–98) հար և նման են նախորդ հավաքածուին և բարեբանում են իր դահին բազմած Թագավորին՝ Իսրայելի դատավորին և բոլոր ժողովուրդների Տիրոջը: Երգերը հատկանշվում են «Տերը թագավորեց» հաստատումով: Սիոնի երգերը (45, 47, 75, 83, 86, 121, նաև 23, 67 և 131) բարեբանում են Աստծո գահանիստ վայր ու հանգստավայր ընտրված Երուսաղեմը և Տաճարը: Աստիճանների օրհնություն կոչվող Ս-ները (119–133) տարեկան մեծ տոներին Երուսաղեմ ճանապարհվող ուխտագնացների օրհներգերն են: Իսկ ըստ եբրայական այլ ավանդության, այս օրհներգերը երգել են ղևտացիները՝ Տաճարի 14 աստիճանների վրա: Ա ր ք ա յ ա կ ա ն Ս-ները (2, 17, 19, 20, 44, 71, 88, 100, 109, 131 և 143) մեծարում են երկրային միապետներին: Նրանց մեծարումը վե-

բաղվում է Աստծուն, ում անունից նրանք կառավարում են ժողովրդին:

Պաղատանքի, վստահության եվ գոհության Ս-ներ: Այս տարաբնույթ աղոթքներն ընդհանուր են մի բանում, այն է՝ նեղության և անձկության: Պաղատանքի աղոթքները բնույթով լինում են անհատական և հավաքական: Անհատականները թվով ամենամեծն են (5, 6, 7, 12, 16, 21, 24, 25, 27, 30, 34, 35,37, 38, 41, 42, 50, 53–56, 58, 60, 62, 63, 68, 69, 70, 85, 87, 101, 108, 119, 129, 139–142): Հիվանդները, դժբախտները, հալածվածները և փախստականները կանչում են Տիրոջ անունը, բնութագրում ծանր կացությունը, ապա արտահայտում լսված լինելու իրենց համոզվածությունը: Այս մարդիկ իրենց տառապանքը գնահատում են իբրև պատիժ՝ գործած մեղքերի համար և խոստովանում դրանք: Առանձին շարք են կազմում ապաշխարության Ս-ները (6, 31, 37, 50, 101, 129 և 141), որոնք զղջում են պարունակում: Հավաքական աղոթքները (11, 43, 57, 59, 73, 78, 79, 82, 84, 89, 93, 107, 122, 132, 136, նաև 76, 81, 105, 125) նույն սկզբունքով են կառուցված և ռազմ. պարտության, կոտորածի, Տաճարի պղծության, ընկերային անարդարության և կեղեքման ծնունդ են: Վստահության Ս-ները (3, 4, 9բ, 15, 22, 26, 61, 120, 130, նաև 90) պաղատական աղոթքների խթանն են և արտահայտում են խաղաղություն, ուրախություն, ապահովություն, խոստովանում իրենց հավատը, երգում Աստծո հետ իրենց բարեկամության մասին: Գոհության Ս-ներում (9ա, 9բ, 29, 31, 33, **39.**2–12, 40, 91, 114, 115, 137) արտահայտվում է մարդու երախտագիտությունն առ Աստված՝ իր խնդրածը ստանալու համար:

Ուսուցողական Ս-ներ: Թեև ուսուցողական-խրատական տարրը հատուկ է բազմաթիվ Ս-ների, սակայն լիիրավորեն այս խմբի մեջ են մտնում 1, 36, 48, 72, 111, 118, 126, 132, նաև 127 և 139 Ս-ները, որտեղ օգտագործված են զանազան գրական ժանրեր՝ *քարոզ*, խորհրդածություն բարոյականության շուրջ, պատմ. դաս ևն: Առանձնակի գեղեցկությամբ է շարադրված օրենքի թեման (1, **18.**8–15, 118), արդարների երջանկությունն ու չարերի կործանումը (1, 36, 72):

Մեսիական Ս-ներ: Այս բանաստեղծությունները հինկտակարանային մյուս մարգարեությունների հետ ավետում են *Հիսուս Քրիստոսի* գալստյան, կյանքի, առաքելության, չարչարանքների, մահվան, հարության և բովանդակ տիեզերքում Աստծո արքայության հաստատման մասին: Մեսիական են համարվում հետևյալ Ս-ները՝ 2, 8, 15, 19, 21, 39, 40, 44, 46, 50, 67, 68, 71, 77, 88, 94, 96, 101, 109, 117, 118, 129, 131, 142, որոնք լինում են երկու տեսակ՝ մարգարեական և նախատիպային: Առաջինը հայտնության պարզ շարադրանքով է պատկերում Մեսիային (109), երկրորդը գալիք իրադարձությունը շարադրում է կատարված իրադարձության պատմ. գծերով: Օր., 8-րդ Ս.՝ Քրիստոսի մուտքը Երուսաղեմ մանկահասակ երեխաների փառաբանական բացականչությունների ներքո նկարագրում է այնպես, ինչպես Կարմիր ծովն անցնելիս իսրայելացի մանկահասակ երեխաները փառաբանում էին Աստծուն (Մատթ. **21.**16): Քրիստոսը քանիցս վկայակոչել է այդ Ս-ներից՝ ի հաստատումն և ի վկայություն իր մեսիական առաքելության: Ընդհանրապես Նոր կտակարանում հինկտակարանային 283 մեջբերումներից 116-ը քաղված են Սաղմոսարանից:

Առաջին և երկրորդ Ս-ները բովանդակ ժողովածուի ներածությունն են, ընդ որում, առաջինը բարոյական, ուսուցողական բնույթ ունի, իսկ երկրորդը՝ մեսիական:

Ս-ները ժամանակի մեջ: Հայաստանյայց առաքելական եկեղեցին, ինչպես նաև բոլոր քույր եկեղեցիները, առանձնահատուկ նախասիրություն ունեն Ս-ների նկատմամբ: Հայոց ծիսարանը և մասնավորապես *Ժամագիրքը* հիմնականում Ս-ներից է կազմված: Հայ հոգևոր երգերը, *շարականները, գանձերը, տաղերը*, ինչպես նաև *Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու* և այլոց աղոթքները նրանցից են ներշնչված ու հարսված: Սաղմոսարանը հայերի ամենասիրելի ու գործածական գիրքն է եղել դարերի ընթացքում՝ Նոր կտակարանից հետո: Հին դպրոցներում Սաղմոսարանը օգտագործել են իբրև դասագիրք: *Ղազար Փարպեցին* վկայում է, որ Սուրբ Գրքի թարգմանությունից հետո մեծերն ու փոքրերը սովորել ու ամենուր զվարճացել են «սաղմոսներ ու կցուրդներ» ասելով: Իսկ ըստ *Կիրակոս Գանձակեցու*, եթե ուրիշ ազգերը «գրքով են երգում սաղմոսները», ապա հայերը «անգիր են ասում»: Հայոց վանքերում պարտադիր է եղել առնվազն Նոր կտակարանի (մանավանդ՝ Ավետարանների) և Սաղմոսարանի անգիր իմանալը:

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ Ս-ները սերնդեսերունդ հրեաների և քրիստոնյաների աստվածապաշտ. կյանքի առանցքն են հանդիսացել և այդպիսին են ցայսօր:

Ս-ների մեկնությունները: Ս-ները մեկնել են *Ընդհանրական եկեղեցու* գրեթե բոլոր նշանավոր հայրերը՝ *Աթանաս Ալեքսանդրացին, Եփրեմ Ասորին, Բարսեղ Կեսարացին,* Հովհան Ոսկեբերանը և այլք: Հայոց մեջ առաջինը *Ներսես Լամբրոնացին* է հանգամանալից քննության առել 150 Ս-ները: Մեկնություններ են գրել *Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին* և ուր.: Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին, Նահապետ Ագուլեցու խնդրանքով, 1686-ին ի մի հավաքելով Ս-ների հայերեն մեկնությունները, հրատարակել է բնագրի հետ մեկտեղ: Ս-ների ամենածավալուն մեկնությունը կատարել է Մ. *Զամչյանը* («Մեկնութիւն սաղմոսաց», հ. 1–10, 1815–23): Երևանի Մատենադարանում պահվում է 150 ձեռագիր Սաղմոսարան, որոնցից հնագույնը № 6473 ձեռագիրն է՝ գրված 1298-ին, Գրիգոր գրչի կողմից: 1565–1566-ին *Աբգար Թոխաթեցին* Վենետիկում առաջինն է տպագրել հայերեն Սաղմոսարան:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.8, 3-րդ պատկերը:

Գրկ. Գիրք սաղմոսաց Դաւթի, Երուսաղեմ, 1988: Տեր-Միքելյան Ա., Ուսումն Ս. Գրոց, Թ., 1900: Եղիայան Բ., Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, գիրք 5, Անթիլիաս, 1976: Հացունի Վ., Աստուածաշունչն ու Հայաստան, տես Յուշարձան Աստուածաշունչի հայերեն թարգմանութեան 1500 ամեակի, Երուսաղեմ, 1938: Սաղմոսարան (աշխարհբ. թրգմ. Մ. Ճյուրյան), Ե., 1992: Ներածություն Հին կտակարանի, աշխատասիր. Գ. Դարբինյանի, Ս. Էջմիածին, 2000:

Գրիգոր Դարբինյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ, ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան գյուղի արևելյան կողմում, Քասաղ գետի աջ ափին, կիրճի եզրին: Ըստ ավանդության, հիմնել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*: 1215-ին իշխան Վաչե Վաչուտյանը կառուցել է Ս-ի Ս. Սիոն եկեղեցին և վանքին գյուղ նվիրել: Ներքուստ՝ խաչաձև, արտաքուստ՝ ուղղանկյուն, անկյուններում երկհարկ ավանդատներով գմբեթավոր դահլիճ է: Եկեղեցու ճակատները մշակված են «հայկ. խորշերով»: Գմբեթի գլանաձև սլացիկ թմբուկը կառույցին հաղորդում է վերձիգ համաչափություն: XIII դ. առաջին քառորդում Վաչե Վաչուտյանը Ս. Սիոն եկեղեցուն արմ-ից կից կառուցել է քառասյուն գավիթ, որի առաստաղի կենտր. հատվածն ունի 12-նիստանի վրանաձև ծածկ, բոլորաձև երդիկ՝ վրան բարձրացող 6-սյունանի նրբաձեղ ռոտոնդա: Միմյանցից տարբեր և ինքնատիպ են լուծված ծածկի մյուս հատվածները (հայելային, գլանաձև, խաչվող թաղերով, դեկորատիվ տրոմպներով ևն): Ս-ի գավթի ծածկի համակարգը հայկ. ճարտ-յան բացառիկ օրինակներից է: Ինքնատիպ են գավթի հվ. ճակատի խոշոր, զույգ լուսամուտները, պայտաձև կամարով արմ. բարձր շքամուտքը:

1255-ին իշխան Քուրդ Վաչուտյանը և նրա կին Խորիշահը իրենց վաղամեռիկ դստեր՝ Մամախաթունի հիշատակին կառուցել են գրատուն՝ օգտագործելով Ս. Սիոն եկեղեցուց և գավթից հվ-արլ. կողմում, նրանց և միանավ եկեղեցու միջև ընկած տարածքը: Ճարտարապետը վարպետորեն լուծել է տեղադրության հետ կապված դժվարությունները՝ խաչվող կամարներով իրականացնելով շենքի ծածկի բարդ համակարգը: Գրատան տանիքին կանգուն 8-սյունանի ռոտոնդայով Ս. ստացել է եռագմբեթ գեղատեսիլ ուրվագիծ: Վանքի գավիթը և գրատունը XIII դ. հայկ. աշխարհիկ ճարտ-յան բարձրարվեստ կառույցներից են: Ս-ի հս. կողմի գերեզմանատանը պահպանվել են XIII–XIV դդ. մի շարք ուշագրավ որմնափակ խաչքարեր: Վանքը շրջապատված է եղել կիսաշրջանաձև բուրգերով ուժեղացված պարիսպներով: 1267-ին *Վարդան Արևելցին* Ս-ում հիմնադրել է դպրոց: 1267-ին *Գևորգ Սկևռացին* ընդօրինակել է Տոնապատճառ ժողոված-ուն (ներկայումս Ս. Էջմիածնում է): Ս-ի դպրոցում կարճ ժամանակ դասավանդել է *Գրիգոր Տաթևացին*:

Ս. եղել է գրչության կենտրոն: Պահպանվել են այստեղ գրված և ընդօրինակված մի քանի ձեռագրեր: Ուշագրավ են Մարկոս և Մխիթար գրիչների 1185–88-ին ընդօրինակած Ճառընտիրը, 1436-ին Կարապետ վարդապետի արտագրած Մաշտոցը, 1496-ին Հովհաննես աբեղայի ընդօրինակած Ավետարանը և այլ ձեռագրեր: Ս-ի գրիչներին ձեռագրեր են պատվիրել Մեծոփավանքը և Սանահինի վանքը:

1611-ին Ս-ի Սարգիս վարդապետը Երուսաղեմում հանդիպել է տրապիզոնցի Կիրակոս քահանային. միասին վերադառնալով Հայաստան՝ հիմնել են *Սյունյաց Մեծ անապատը*:

1661-ին Ս-ի առաջնորդ է դարձել *Ոսկան Երևանցին*: 1669-ին Ս. նորոգել է Գաբրիել վարդապետը: Վանքի եկամուտներն ստացվել

են հիմնականում Նիգ գավառի տարածքի կալվածքներից և գյուղերից:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.8, 4-րդ պատկերը:

Գրկ. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1848: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Պետրոսյանց Վ., Սաղմոսավանք, «Էջմիածին», 1981, № 3: Յակոբսոն Ա., Սաղմոսավանք, Ե., 1984: Jakobson A., Ghafadarian K., Kasakhi vanker, Milano, 1986 (Documenti di architettura armena, 15).

Մուրադ Հասրաթյան

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒԹՅՈՒՆ (հուն. *ψαλμωδία*, Cantatio psalmorum, psalmus, *սաղմոսների* երգեցողություն, սաղմոսասացություն, սաղմոս), համաքրիստոնեական երգարվեստի արտահայտություն, երգաձև, որն ունի ինչպես պարզ, ասերգային, այնպես էլ զարգացած երաժշտական նկարագիր: Հիմնականում բնորոշվում է ասերգային ոճով: Վերջինիս թելադրած պայմանով՝ խոսքային տեքստի (չափածո կամ արձակ) թե՛ կառուցվածքային, թե՛ շեշտական հատկանիշները ելակետային և վճռորոշ նշանակություն ունեն սաղմոսի երաժշտ. մարմնացման համար:

Մինչ գրերի գյուտը Հայ եկեղեցում երգասացությունը դրսևորվել է սաղմոսների միջոցով: Հայ եկեղեցին, IV դարից սկսած, լայնորեն գործածել է սաղմոսները ժամասացությունների ընթացքում, նույնիսկ հայկ. *ժամերգություններից* մեկը հնում կոչվել է Ս.: Հայ հոգևոր մշակույթի համատեքստում Ս-յան համար երաժշտ. առումով առաջին հերթին հիմք են հանդիսացել հայ երաժշտության տարբեր դրսևորումները, հատկապես՝ ժող. երգը և վիպական ասերգը: Ըստ Կոմիտասի՝ հայ իրականությունում սաղմոսները երգվել են «հավանաբար ժողովրդական հին եղանակներով»: Դրանք, դասակարգվելով ըստ *կանոնների* և ըստ ձայնեղանակների (տես *Ութձայն*), զետեղվել են *Ժամագրքում*: Լինելով ժամերգության կարևոր բաղկացուցիչ՝ սաղմոսները հիմք են հանդիսացել կցուրդների (տես *Շարական* հոդվածում) ձևավորման համար:

Հայ եկեղեցին Ս. բաժանում է երկու կարգի՝ սաղմոսասացություն և թվերգություն (տես *Թվերգ*): Ս-յամբ (իր երկու ճյուղերով հանդերձ) մատուցվում են սաղմոսները, օրհներգությունները, *աղոթքները, քարոզը, Աստվածաշունչը* (և՛ Հին կտակարանից, և՛ Ավետարանից քաղվող հատվածները): Սրանք միմյանցից կարող են տարբերվել արձակ կամ չափածո տեքստային հիմքով, առավել կամ պակաս զարգացած երաժշտ. նկարագրով և այլ հատկանիշներով:

Գրկ. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: *Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977.*

Մհեր Նավոյան

ՍԱՄՈՍԱՏ, Շամուշատ [այժմ՝ Սամսատ (Թուրքիայում)], հնագույն քաղաք Կոմմագենեում, Եփրատ գետի աջ ափին: Աքեմենյանների օրոք (Ք.ծ.ա. VI–IV դդ.) եղել է Կոմմագենեի հայկ. սատրապության կենտրոնը և հավանաբար կոչվել Կոմմագենե: Ք.ծ.ա. III դ. 1-ին կեսին դարձել է Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության մայրաքաղաքը և հայ Երվանդունի Սամոս Ա (Շամես) թագավորի անունով վերանվանվել Ս.: Տիգրան Բ Մեծի և Արտավազդ Բ-ի օրոք (Ք.ծ.ա. I դ.) մտել է Մեծ Հայքի թագավորության մեջ: 72-ին Հռոմ. կայսրությունը Ս. (Կոմմագենեի հետ) կցել է իր տիրապետության տակ գտնվող Ասորիք նահանգին: Բյուզ. կայսրության տիրապետության շրջանում Ս. գտնվել է Եփրատացիք նահանգի (ապա՝ բանակաթեմի) կազմում: 639-ին արաբները գրավել են Ս. և մտցրել Ջազիրա (Վերին Միջագետք) նահանգի մեջ: 958-ին բյուզանդացիները կրկին գրավել են Ս., որտեղ հաստատվել են մեծ թվով հայեր: XI դ. վերջին – XII դ. Ս-ին տիրել են սելջուկների գերիշխանությունն ընդունած հայ իշխանները, որոնց հիշատակում է ասորի պատմիչ Միքայել Ասորին: Միաժամանակ քաղաքը գտնվել է հայ իշխան Փիլարտոս Վարաժնունու ենթակայության տակ:

Ս. հայտնի է որպես քրիստոնեական հարուստ անցյալ և ավանդույթներ ունեցող քաղաք: Այստեղ, ինչպես և ողջ երկրում (Կոմմագենե), ի թիվս Հռոմ. մյուս պրովինցիաների (Ասորիք, Կապադովկիա, Փոքր Հայք ևն), քրիստոնեությունը տարածվել է դեռևս առաքելական շրջանում (I–II դդ.): III դարից Ս. դարձել է քրիստոնեության կարևոր կենտրոն, պատկանել է *Անտիոքի* աստվածաբան. դպրոցին, եղել նրա գաղափարաբանությունը սկզբնավորող կենտրոններից: Այստեղ է ծնվել և սկզբ. կրթությունն ստացել II դ. աստվածաբան, Արիոսի (տես *Արիոսականություն*) հոգևոր ուսուցիչ Լուկիանոս Սամոսատցին, որի աշխատությունները արիոսականները համարել են ի-

բենց ուսմունքի գլխ. սկզբնաղբյուր: 260–268-ին Ս-ի եպիսկոպոսն էր Հայտնի աղանդապետ Պողոս Սամոսատցին (Սամոստացի), որը համարվում է նեստորական վարդապետության (տես *Նեստորականություն*) գաղափարական նախահայրը: Ս. եղել է հուն. և ասոր. դպրության կարևոր կենտրոններից: Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների մի խմբին Ս. է ուղարկել՝ հունարեն և աստվածաբանություն ուսանելու, այնուհետև իր երկու օգնականների՝ *Հովհան Եկեղեցացու* և *Հովսեփ Պաղնացու* հետ անձամբ այցելել Ս., հույն գեղագիր Հռոփանոսի օգնությամբ վերջնականորեն ձևավորել հայկ. նշանագրերը: Այստեղ էլ կատարվել է հայերեն առաջին թարգմանությունը Աստվածաշնչի Սողոմոնի առակների գրքից, որն սկսվում է «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» տողերով: V–XII դդ. Ս. դարձել է բազմաթիվ աղանդների կենտրոն: Աղանդավորներն այստեղից մուտք են գործել Հայաստան և տարածել իրենց գաղափարները: V–VI դդ. Ս. հայտնի էր հատկապես մարկիոնական և մանիքեական (տես *Մանիքեություն*) համայնքներով: Ս. քաղաքից էին *պավլիկյանների* առաջին աղանդապետ համարվող Կալինիկեի որդի Պողոս Սամոսատցին (VII դ. սկիզբ), նրա եղբայր Հովհաննեսը: IX դ. կեսին Տեր-ի (Դիվրիգ) նման Ս. դարձել է պավլիկյանների գլխ. ռազմ. հենակետը, որտեղից արաբների հետ միասին նրանք պայքարել են բյուզանդացիների դեմ: Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին հիշատակում է XII դ. Ս-ում բնակվող՝ *արևորդիներ* կոչված աղանդավորներին, որոնք որոշել էին հրաժարվել հերձվածի գաղափարներից և վերադառնալ Հայ եկեղեցու գիրկը:

Սելջուկյան արշավանքներից (XI դ.) հետո Ս. աստիճանաբար կորցրել է իր երբեմնի նշանակությունը և վերածվել աննշան քաղաքի: XII–XIV դդ. քաղաքին տիրել են խաչակիրները, բյուզանդացիները, Եգիպտոսի Այյուբյանները, մոնղոլները, թուրքմեն. ցեղերը: XV դ. Ս. նվաճել է օսմ. կայսրությունը: Մինչև Մեծ եղեռնը Ս-ի բնակիչները հիմնականում եղել են հայեր:

Երվանդ Մարգարյան

ՍԱՄՎԵԼ Ա ԱՐԾԿԵՑԻ [ծ. թ. անհտ, ք. Արծկե (Բզնունիք գավառ) – 526], Ամենայն Հայոց կաթողիկոս 516-ից: Հաջորդել է *Բաբկեն Ա Ոթմսեցուն*: Սերել է Աղբիանոսյան տոհմից: Ս. Ա Ա-ու օրոք 517-ին, երբ հոները ասպատակել են Հայաստանի գավառները, Մժեժ Գնունին միավորել է հայ որոշ իշխանների զորաուժը և ջախջախել հոներին: Այդ հաղթանակի համար պարսից արքան հետ է կանչել պարսիկ մարզպանին և Մժեժ Գնունուն նշանակել Հայաստանի մարզպան:

Կաթողիկոս. գահին Ս. Ա Ա-ուն հաջորդել է *Մուշե Ա Այլաբերցին*:

ՍԱՄՎԵԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), X–XI դարերի մատենագիր: Ենթադրվում է, որ ուսումը ստացել է Այրարատի Արշարունիք գավառի Կամրջաձոր վանքում, որի վանահայրն է դարձել հետագայում: Ըստ միջնադարյան աղբյուրների, 1007-ի Ծռազատկի խռովություններից հետո բյուզ. Վասիլ II կայսրի հրավերով մեկնել է Կ. Պոլիս, մասնակցել զատական վեճերին և հիմնավորել *Զատիկի* վերաբերյալ Հայ եկեղեցու տոմարական հաշվարկների պատմականությունն ու ճշգրտությունը: Ս. Կ. հեղինակ է մի շարք աստվածաբան., մեկնողական երկերի: *Խաչիկ Ա Արշարունու* հանձնարարությամբ 986-ին գրել է ջատագովական մի թուղթ՝ ուղղված հունաց Թեոդորոս մետրոպոլիտին: Ս. Կ-ու անունով մեզ է հասել դավանաբան. մի *հարցուպատասխանի*, որը պարունակում է Ոսկեձեռն անունով մի իշխանի հարցերն ու Ս. Կ-ու պատասխանները: Նրա գրչին է պատկանում նաև *Տերունի տոնների* իմաստը մեկնաբանող մի երկ: Համաձայն *Ստեփանոս Տարոնեցու* (Ասողիկ) և Մատթեոս Ուռհայեցու, Ս. Կ. գործուն մասնակցություն է ունեցել *Հայմավուրք* և *Տոնապատճառ* ժողովածուների կազմման և խմբագրման աշխատանքին, նաև իր երկերով հարստացրել դրանք: Տոնապատճառում նրա գրչին են պատկանում աբարչության օրվա պատճառը կամ մեկնաբանությունը: Այդտեղ տեղ են գտել նաև հատվածներ Ս. Կ-ու «Վերլուծութիւն ընթերցուածոց գրոց» և «Վասն աղուհացից» երկերից, որոնք պարունակում են ծիսական ընթերցվածների և *պահքի* բացատրությունը: Ս. Կ. թաղվել է Կամրջաձոր վանքում:

Գրկ. Անթաբյան Փ., «Տօնապատճառ» ժողովածուն, ԲՄ, № 10, 1971: Պողարյան Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 162–163:

Հակոբ Քյոսեյան

ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ, Սամուել Երեց (մոտ 1100/05–1185/90), պատմիչ-ժամանակագիր,

տոմարագետ, տիեզերագետ: Ենթադրվում է, որ ծնվել է Անիում կամ մոտակա բնակավայրերից մեկում: Աշակերտել է *Հովհաննես Սարկավագին* և, ըստ *Կիրակոս Գանձակեցու*, եղել Անիի Կաթողիկե եկեղեցու քահանա: Ս. Ա-ուց մեզ է հասել երկու երկասիրություն՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» և «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» խորագրերով: Առաջինը գրվել է *Գրիգոր Դ Տղա* կաթողիկոսի պատվերով և ընծայվել նրան: Սկսվում է Ադամից և հասցվում մինչև 1180-ը: Այլ հեղինակներ շարունակել են Ս. Ա-ու ժամանակագրությունը և հասցրել մինչև 1665-ը՝ պահելով նույն ոճն ու համառոտությունը: Ս. Ա. միջնադարյան այն բացառիկ պատմիչներից է, ով նշում է օգտագործած աղբյուրները, փորձում ճշտել պատմ. իրադարձությունների, արքայատոհմերի, տիրակալների, կաթողիկոսների ժամանակագրությունը: Օգտագործելով *Եվսեբիոս Կեսարացու, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Փավստոս Բուզանդի, Սեբեոսի*, Շապուհ Բագրատունու, *Հովհաննես Ե Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարոնեցու*, Հովհաննես Սարկավագի և այլոց գործերը՝ Ս. Ա. հաճախ հակադրվում է նրանց՝ իրադարձությունները ներկայացնելով սեփական պատկերացմամբ, ինչը մեծացնում է երկի պատմ. արժեքը: XII դ. իրադարձությունները, որոնք Ս. Ա. շարադրել է իբրև ականատես, կարևոր սկզբնաղբյուր են այդ ժամանակաշրջանի բուն Հայաստանի և մանավանդ Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար: Արժեքավոր նյութեր կան նաև հարևան երկրների ու ժողովուրդների մասին: Ս. Ա-ու երկը թարգմանվել է լատ. և 1818-ին հրատարակվել Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հետ: Տարբեր ժողովածուներում ֆրանս. հատվածներ են հրատարակվել Մ. Բրոսսեի և Է. Դյուլորիեի թարգմանությամբ:

Ս. Ա-ու երկրորդ աշխատության խորագիրը («Մեկնութիւն տումարի...») ամբողջությամբ չի համապատասխանում նրա բովանդակությանը, քանի որ ունի և՛ տոմարական, և՛ տիեզերագիտ. տեքստ: Երկի առաջին՝ տոմարական մասում (շարադրված է *հարցուպատասխանի* ձևով) քննված հարցերի մասին Ս. Ա-ուց առաջ ավելի գիտականորեն և մանրամասն գրել է Հովհաննես Սարկավագը: Հեղինակն անդրադարձել է հռոմ. տոմարին, որն օգնում է ճիշտ հաշվելու և ճիշտ հասկանալու հայկ. տոմարը: Մեկնության մեջ ավելի արժեքավորը երկրորդ՝ տիեզերագիտ. մասն է, որն սկսվում է տոմարական գրականության մեջ գործածված արաբ. ինը բառերի հայերեն թարգմանությամբ: Այնուհետև հեղինակը փորձել է, իր ժամանակի ըմբռնումների համաձայն, բացատրել ծիածանը, գիսավոր աստղը, աստղի թռիչքը, փայլակը, որոտը, շանթը, անձրևը, մառախուղը, ցողը և բնական բազմաթիվ այլ երևույթներ: Ս. Ա. իր երկի տոմարական մասում մեծապես օգտվել է *Անանիա Շիրակացու* «Տիեզերագիտութիւն և Տոմար» աշխատությունից: Տիեզերագիտ. մասի աղբյուր է եղել Անանիա Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից» աշխատությունը: Ս. Ա-ու տոմարական-տիեզերագիտ. երկասիրությունն արժեքավոր է ինչպես գիտության պատմության, այնպես էլ հայ մատենագրության պատմության համար: Մատենադարանում պահվում են երկի բազմաթիվ ընդօրինակություններ, որոնցից ամենահինը 1373-ինն է (ձեռ. № 2001), իսկ լավագույնը՝ 1621-ին գրչագրվածը (ձեռ. № 2018):

Երկ. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., աշխատասիր. Ա. Տեր-Միքելյանի, Վաղ-պատ, 1893: Մեկնութիւն տումարի..., աշխատասիր. Ա. Աբրահամյանի, «Էջմիածին», 1952, № 1–2:

Գրկ. Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին գրականութեան (Դ–ԺԳ դար), Վնտ., 1932: Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX–XIII դարեր), Ե., 1981:

ՍԱՆԱՀԻՆԻ ՎԱՆՔ, միջնադարյան հոգևոր, մշակութային և գիտակրթական նշանավոր կենտրոն Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիրք գավառում: Այժմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում (նախկին Սանահին գ.), Դեբեդ գետի աջափնյա բարձրադիր սարավանդի վրա:

Վանական համալիրի առաջին՝ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է X դ. 30–40-ական թթ. (Աբաս Ա Բագրատունի թագավորի օրոք): 966-ին Աշոտ Գ Ողորմած թագավորն ու Խոսրովանույշ թագուհին կառուցել են Ս. Ամենափրկիչ եկեղեցին՝ իրենց որդիներ Կյուրիկեի (Գուրգենի) և Սմբատի արևշատության համար, հիմնադրել են միաբանություն և բարձրագույն

կարգի հոգևոր դպրոց, հրավիրել եկեղեցականներ, գիտնական վարդապետներ, գրիչներ: Հիմնադիր վանահայրն էր Պոլիկարպոսը, որին հաջորդել է վարդապետ-գիտնական Հովհաննեսը:

979-ին Սմբատ Բ թագավորի հրովարտակով Ս. վ. դարձել է նորակազմ Կյուրիկյան թագավորության եպիսկոպոս. աթոռանիստը (մինչև XI դ. կեսը), և Տաշիրքի թեմակալ է ձեռնադրվել Եսային: Երևելի վանահայրերից էր «մեծ հռետոր» հռչակված Դիոսկորոս Սանահնեցին (1039–63): Նրա օրոք կառուցվել են գրատունն ու Ս. Գրիգոր մատուռը, հոգևոր դպրոցը դարձել է ուսումնական մեծ կենտրոն, հարստացել է գրադարանը, գրվել, ծաղկվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Նրան աշակերտել, դպրոցում դասավանդել ու ստեղծագործել են գիտնական վանականներ *Անանիա Սանահնեցին* և Հակոբոս Քարափնեցին: Աստվածաբանությունից բացի դպրոցում դասավանդվել են փիլիսոփայություն, հռետոր. արվեստ, երաժշտություն, բժշկություն, տոմարագիտություն և այլ գիտություններ: Ըստ ավանդության՝ դպրոցում դասավանդել է նաև *Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*, նրա անունով էլ Ս. Աստվածածին և Ս. Ամենափրկիչ եկեղեցիների միջև կառուցված սրահը կոչվել է «Մագիստրոսի ճեմարան»:

XI դ. 2-րդ կեսին սկսված սելջուկյան արշավանքների ու նրանց տիրապետության ընթացքում, ինչպես նաև Կյուրիկյան թագավորության անկումից հետո (1113) Ս. վ. ապրել է տևական վտթար ժամանակաշրջան: XII դ. վերջին Տաշիրք գավառի կազմում դառնալով Զաքարյան իշխանների սեփականությունը՝ վանքը վերականգնել է իր դերը երկրի հոգևոր ու գիտամշակութ. կյանքում: Այդ շրջանում կատարվել են նաև լայնածավալ շին. աշխատանքներ: XII դ. 80-ական թթ-ից մինչև XIII դ. 30-ական թթ. կառուցվել են Ս. Ամենափրկիչ և Ս. Աստվածածին եկեղեցիների գավիթները, զանգակատունը, գրատան արտաքին սրահը, հյուրատունը (չի պահպանվել), Զաքարյանների տոհմական դամբարանը, կանգնեցվել են *Գրիգոր Տուտեորդու* և Սարգսի բարձրարվեստ խաչքարերը, նորոգվել Ս. Ամենափրկիչ եկեղեցին: XII դ. վերջին Դեբեդ գետի վրա կառուցվել է Սանահինի նշանավոր կամուրջը, որով անցնում է վանք տանող ճանապարհը, իսկ գյուղում՝ աղբյուր:

XII–XIII դդ. Ս. վ-ում հայտնի էին վանահայրեր Գրիգոր Տուտեորդին, Հովհաննես Խաչենցին (Զաքարե և Իվանե Զաքարյան իշխանների ուսուցիչը), Վարդանը: Մեծ համբավ է ունեցել վանահայր Գրիգոր բաբունապետը (տես *Գրիգոր Որդի Աբասա*), որի «Պատճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց» գիրքը ծառայել է նաև որպես ուս. ձեռնարկ: Գրիգոր բաբունապետը վանքին նվիրել է 13 ձեռագիր, գրել այլ աշխատություններ: Վանքի բնականոն գործունեությունը դարձյալ ընդհատվել է 1230-ական թթ. սկսված մոնղոլ. արշավանքների և նրանց տիրապետության ողջ ընթացքում: XIV դ. սկզբին թուլացել և դարավերջին տրոհվել է Զաքարյանների իշխանական տունը, և Սանահին գյուղը շրջակայքով ու վանքով դարձել նրանց շառավիղների՝ Արղության-Երկայնաբազուկների սեփականությունը (մինչև XX դ. սկիզբը):

XIV–XV դդ. Ս. վ-ում նոր վերելք է ապրել գրչության արվեստը (այդտեղ գրչագրված ձեռագրերից 35-ը պահվում է Մատենադարանում): Առավել հիշարժան է Սանահինի «Քոթուկը» (ձեռ. № 3032), որը բովանդակում է վանքի ժամանակագրությունը, արժեքավոր տեղեկություններ միաբանության պատմության վերաբերյալ:

XVII դ. կեսին, Սարգիս արք. Արղությանի առաջնորդության օրոք, էապես նորոգվել են ժամանակի և երկրաշարժերի ազդեցությամբ վնասված վանքի հիմն. կառույցները: 1831-ին հս. պարսպին կից միակամար աղբյուր է կառուցել վանքի տոհմիկ առաջնորդ Հարությունն արք. Տեր-Բարսեղյանցը (ճակատին պահպանվել է նրա չափածո արձանագրությունը), կատարել է նաև վիմագրությունների վերծանման և կառույցների նորոգման աշխատանքներ: XX դ. սկզբին վանքի գործունեությունը դադարել է: Խորհրդ. իշխանության ժամանակաշրջանում Ս. վ. որպես պատմամշակութային հուշարձան եղել է պետ. պահպանության ներքո, կատարվել են կառույցների ամրակայման և վերականգնման աշխատանքներ: 1998-ին ՀՀ կառավարության որոշմամբ այն հանձնվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի տնօրինությանը:

Ս. վ-ի ճարտ. համալիրը ձևավորվել է շուրջ երեք հարյուրամյակի ընթացքում. յուրաքանչյուր նոր շինություն կառուցվել է նախորդների գործառնական դերը, զբաղեցրած տեղն

ու ոճական հատկանիշները հաշվի առնելով: Արդյունքում ստեղծվել է ասիմետրիկ, բայց ծավալային հավասարակշիռ հորինվածքով, ներդաշնակ և միասնական համակառույց՝ համահունչ նաև շրջակա գեղատեսիլ բնությանը: Համալիրն ընդգրկում է Ս. Աստվածածին և Ս. Ամենափրկիչ եկեղեցիներն իրենց գավիթներով, ճեմարանը, Ս. Գրիգոր մատուռը, գրատունը, զանգակատունը, Ս. Հակոբ եկեղեցին, Ս. Հարություն մատուռը, Կյուրիկյանների, Զաքարյանների և Արղության-Երկայնաբազուկների տոհմական դամբարանները:

Կառույցների հիմն. շինանյութը տեղական բաց մոխրագույն սրբատաշ բազալտն է, որն օգտագործվել է նաև տանիքների ծածկասալերի համար: Ճարտ. ձևերը և հարդարանքը, ընդհանուր առմամբ, պարզ են և մոնումենտալ՝ պատերի հարթ մակերեսների վրա քիվերի, դռների և պատուհանների շրջակալների զուսպ չեչտվածությամբ: Ներքին տարածքների գեղ. արտահայտչականությունն ստեղծվել է ծածկերի՝ թաղերի, թաղակիր կամարների, գմբեթարդների և դրանք կրող հենարանների պարզ, տրամաբան. ու համաչափ կառուցվածքով և համադրությամբ:

Ս. Աստվածածին եկեղեցին, որի շուրջը կազմավորվել է համալիրը, հայ միջնադարյան դասական ճարտ-յան բնորոշ գմբեթավոր դահլիճ տիպի խաչագմբեթ ենթատիպի վաղագույն օրինակներից է: Գմբեթի թմբուկն ի սկզբանե եղել է բազմանիստ, որը եկեղեցու 1652-ի նորոգման ժամանակ վերափոխվել է գլանաձևի և պսակվել պարզ կոնաձև վեղարով: Նրա ներսում պահպանվել են երբեմնի որմնանկարների որոշակի հետքեր:

Ս. Ամենափրկիչ (կոչվել է նաև Կաթողիկե) եկեղեցին համալիրի գլխ. և ամենամեծ շինությունն է. կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցու հվ. կողմում՝ 4 մ հեռավորությամբ: Եկեղեցին իր հզոր ծավալով գերիշխող դիրք ունի և դարձել է համալիրի ընդհանուր հորինվածքի ծանրության կենտրոնը: Կառույցի տիպը դարձյալ խաչագմբեթն է, սակայն ի տարբերություն նախորդի, ունի երկհարկ ավանդատներ: Եկեղեցին ունեցել է երկու մուտք՝ հս. և արմ. կողմերում, որոնցից առաջինը հետագայում փակվել է եկեղեցիների միջև ճեմարանի սրահը կառուցելու պատճառով: Կառույցի արլ. ճակատը և հվ. ու հս. ճակատների դրան կից հատվածները ձևավորվել են նրբագեղ որմնասյուների վրա հենված դեկորատիվ կամաքաշարով: Հիմքեր կան ենթադրելու, որ այն ունեցել է շարունակություն և այդ կերպով հարդարված են եղել նաև եկեղեցու նախն. գմբեթի թմբուկն ու Ավագ խորանը, որոնք ավերվել են երկրաշարժից և վերականգնվել առավել պարզ ձևերով:

Եկեղեցու արլ. ճակատի վերնամասում՝ ճակատոնը պսակող քիվի անմիջապես տակը, տեղադրված է ուղղանկյուն շրջանակի մեջ առնված մի խորաքանդակ՝ Կյուրիկեի ու Սմբատի պատկերներով (անունները փորագրված են



Սանահինի վանքի հատակագիծը. 1. Ս. Աստվածածին եկեղեցին, 2. եռանավ գավիթը, 3. Ս. Ամենափրկիչ եկեղեցին, 4. ներքին գավիթը, 5. Մագիստրոսի ճեմարանը, 6. Ս. Գրիգոր մատուռը, 7. գրատունը, 8. սրահը, 9. զանգակատունը, 10. Կյուրիկյանների դամբարանը, 11. Արղության-Երկայնաբազուկների դամբարանը, 12. խաչքարեր, 13. մուտքեր

շրջանակի վերին մասում): Քանդակի ստեղծումից տարիներ անց նրանցից առաջինը հիմնադրել ու գլխավորել է Կյուրիկյան թագավորությունը, իսկ երկրորդը՝ թագավորել Անիում և հռչակվել «Տիեզերակալ»: Խորաքանդակը նրանց պատկերում է ողջ հասակով դեմհանդիման կանգնած, ձեռքերին՝ եկեղեցու մանրակերտը: Իր բովանդակությամբ, հորինվածքային մտահղացմամբ և ոճավորմամբ այս ստեղծագործությունը նշանավոր երևույթ է դարձել հայ միջնադարյան մոնումենտալ արվեստում և նախադեպ հանդիսացել հետագա նմանատիպ քանդակների համար (Հաղպատ, Անի ևն):

Ս. Ամենափրկիչ եկեղեցու պատերը նույնպես ծածկված են եղել որմնանկարներով (պահպանվել են աննշան հետքեր): Ըստ վիմագր. տվյալների՝ եկեղեցին առաջին անգամ և հիմնավորապես նորոգվել է 1181-ին՝ վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետի ջանքերով ու Գրիգոր Տուտերդուս և Քուրդ ամիրայի օժանդակությամբ: Վերաշարվել են երկրաշարժից վնասված հվ. պատը, գմբեթը՝ ամբողջությամբ, ինչի հետևանքով այն դարձել է ավելի ցածր, ամրացվել և լրացվել են կառույցի մյուս կիսավեր կամ խարխլված հատվածները: Երկրորդ մեծ վերանորոգումը կատարվել է 1652-ին, վանքի ընդհանուր նորոգության ժամանակ՝ առաջնորդ Սարգիս արք. Արղության օրոք և ուստա Սարգսի ղեկավարությամբ: Փոքր նորոգումներ կատարվել են նաև հետագայում, 1815-ին՝ հազարապետ Սոլոմոն Արղության ու Զաքարե իշխանի ծախսերով և 1881-ին՝ Արղության Հովսեփ Փարսադանյանի ղեկավարությամբ ու ջանքերով:

Ս. Աստվածածին և Ս. Ամենափրկիչ եկեղեցիները դեռևս X դ. 80-ական թթ. ունեցել են ընդհանուր գավիթ, ինչի մասին հիշատակվում է Կյուրիկե Ա թագավորի՝ Սանահինի «Քոթուկում» մեջբերված հրովարտակում, որով նա երկու չքեղ ջահ է նվիրել վանքին: Այդ կառույցը քանդվել է հավանաբար 1181-ի լայնածավալ շին. աշխատանքների ժամանակ՝ Ս. Ամենափրկիչ եկեղեցու նոր գավիթը կառուցելիս: Վերջինս քառակուսի հատակագծով կենտրոնակազմ և քառասյուն ընդարձակ դահլիճ է՝ կառուցված եկեղեցու արմ. պատին կից, նույն առանցքով և լայնությամբ: Արտաքին դուռը տեղադրված է հս. պատի կենտրոնում: Գավթի հաստահեղույս սյուները կամարներով կապվում են միմյանց և համապատասխան հանդիպակաց պատերի փնջաձև որմնասյուների հետ՝ ներքին տարածքը բաժանելով կենտր. մեծ և եզրային ութ փոքր քառակուսի հատվածների: Կենտր. քառակուսին պսակում է երդիկավոր ցածր գմբեթը, անկյունայիններն ունեն հարթ առաստաղ, իսկ առանցքային միջին հատվածները ծածկված են գլանաձև թաղերով: Տարածական այս բարդ և պլաստիկ կառուցվածքային հորինվածքին յուրահատուկ գեղ. արտահայտչականություն են հաղորդում սյուներ-նախարիսխների և խոյակների հյուսածո զարդամոտիվները և կենդանիների գլուխների խորհրդանշանային քանդակները: Որմնակամարներից մեկի վրա փորագրված արձանագրությունը հիշատակում է ճարտարապետի անունը՝ Ժամհայր:

Ս. Աստվածածին եկեղեցու գավիթը (կոչվում է նաև նախագավիթ) կառուցվել է 1211-ին, Վաչե Վաչուտյան իշխանի պատվերով, ինչը վկայում է գավթի ներսում, հվ. պատին պահպանված արձանագրությունը: Կառույցը տեղադրվել է այդ եկեղեցու արմ. և Ս. Ամենափրկիչ եկեղեցու գավթի հս. պատերին կից և գրավում է դրանց միջև գոյացած անկյունային տարածքը: Պահպանված են կից կառույցների առանցքների նկատմամբ սիմետրիան, իսկ արլ-արմ. ուղղությամբ՝ նաև չափը, ինչի շնորհիվ այդ համադրությունը ընկալվում է որպես ամբողջական մի կառույց: Գավթի հատակագիծը հս-հվ. ուղղությամբ մի փոքր ձգված ուղղանկյուն է, որը լայնական ուղղությամբ տարված երկու կամարակապ սյունաշարով բաժանվում է երեք հավասար նավերի: Դրանցից յուրաքանչյուրը ծածկված է գլանաձև թաղով և երկթեք տանիքով, որոնք արմ. ճակատի վրա կազմում են սուր գագաթներով բարձր ճակտոնների շարք: Գավթի այդ միակ ամբողջությամբ երևացող ճակատը ձևավորված է երեք զույգ լայն և կամարակապ բացվածքներով, որոնք ծառայել են ներքին տարածքի լուսավորության և ելումուտի համար: Գավիթն ունեցել է նաև միջանցիկ դեր՝ եկեղեցիներ, մյուս գավիթ և ճեմարան անցնելու համար: Ճարտ. ներքին հարդարանքը պարզ է և զուսպ. ցածրադիր և զանգվածեղ սյունները և որմնասյունները, լինելով միատիպ, տարբեր են խարիսխների, ֆուստերի (ֆուստ՝ սյան բունը) և խոյակների զարդաքանդակների մշակմամբ: Տիպաբան. առումով այս գավիթը եզակի նմուշ է հայկ. ճարտ-յան մեջ:

Ճեմարանի կառուցման ստույգ ժամանակն անհայտ է, սակայն շինարարական-շերտագրական վերլուծությամբ թվագրվում է XI դ. 1-ին կեսով: Կառույցի հատակաձևը ստեղծվել է ինքնաբերաբար՝ պայմանավորված եկեղեցիների միջև ընկած նեղ, միջանցքաձև տարածքով, որը ճարտարապետն օգտագործել է հնարամտորեն և նպատակահարմար:

Գրատունն ու Ս. Գրիգոր մատուռը կառուցվել են 1063-ին՝ վանահայր Դիոսկորոս Սանահնեցու նախաձեռնությամբ և ղեկավարությամբ, Դավիթ Անհողինի դստեր՝ Հրանույշ թագուհու միջոցներով: Շինությունները տեղադրված են համալիրի հս-արլ. մասում, միմյանցից մոտ

3 մ հեռավորությամբ: Միջանկյալ այդ տարածքում, դրատան մուտքի առջև XIII դ. 1-ին քառորդում կառուցվել է նախասրահ:

Դրատունը քառակուսի հատակագծով սրահ է, որի չորս պատերի կենտրոններում մեկական տեղադրված որմնասյուները միմյանց հետ կապվում են հատակագծում պատերի նկատմամբ 45°-ով շեղված կամարներով: Դրանցով կազմվում է սրահի եզրագծին ներգծված մի նոր՝ առավել փոքր քառակուսի, որի վրա առադաստների միջոցով հենվում է հիմքում՝ շրջանաձև, իսկ վերևում՝ ութանիստ, երդիկավոր գմբեթը: Սրահի անկյունային հատվածները ծածկված են մի դեպքում տրոմպով, մյուս դեպքում՝ հատվող կիսագլան թաղերով: Ցածրադիր և զանգվածային որմնասյուներն ունեն հարուստ և միմյանցից տարբեր զարդաքանդակային մշակում: Պատերի հարթությունը ջլատված է կիսաշրջան կամ սլաքաձև կամարներով պսակվող խոր որմնախորշերով, որոնք եղել են պահոցներ գրքերի և նշխարների համար:

Ս. Գրիգոր մատուռը եռաստիճան գետնախարսխով, արտաքուստ՝ շրջանաձև, ներքուստ՝ խաչաձև, քառախորան կենտրոնագմբեթ փոքր կառույց է: Ճակատի գլանաձև հարթությունը և մուտքի շրջանակը մշակված են նրբագեղ, դեկորատիվ որմնասյուներով և կամարաշարով, իսկ պատի՝ խորանների միջև ընկած առավել թանձր հատվածները ակոսված են ուղղաձիգ, հատակագծում եռանկյունաձև խորշերով: 1652-ին վերակառուցվել են երկրաշարժից ավերված գմբեթն ամբողջությամբ և պատերի վերին հատվածները՝ աղճատելով մատուռի նախն. տեսքը և համաչափությունը:

Վանքի զանգակատունն (XIII դ. 1-ին քառորդ) այդ տիպի վաղագույն նմուշներից է, կառուցվել է Ս. Ամենափրկիչ և Ս. Աստվածածին եկեղեցիների արմ. ճակատների եզրագծի շարունակությամբ, վերջինիս հս. պատի արմ. հատվածին կից: Այն քառակուսի հատակագծով եռահարկ կառույց է, որ պսակվում է վեց այուների վրա հենված զանգաշտարակով: Առաջին հարկը պարզ թաղակապ սրահ է՝ հս. կողմից առանձին մուտքով: Արմ. ճակատին ասիմետրիկ տեղադրված շքամուտքը քարե աստիճաններով տանում է երկրորդ և երրորդ հարկերը: Երկրորդ հարկն են կազմում միմյանց կից երեք փոքր ավանդատները, որոնցից մեկի մուտքի ճակատին պահպանվել է չին. անթվակիր արձանագրություն, ըստ որի՝ զանգակատունը կառուցել է Աբասի որդի Վաղը: Երրորդ հարկն ամբողջական մի սրահ է՝ ծածկված չորս զույգ որմնասյուների վրա հենված փոխհատվող կամարների կոնստրուկցիայով՝ իր վրա կրելով զանգաշտարակը: Արմ. ճակատի առանցքով, տրամատված լայն շրջանակի մեջ ագուցված է կարմիր գրանիտե քանդակազարդ մեծ խաչ, ճակատների դեկորատիվ հարդարանքի մյուս տարրերը՝ շքամուտքի և պատուհանների քանդակազարդ շրջանակները, ներդիր խաչքարերը տեղադրված են ասիմետրիկ, ազատ, բայց խիստ հավասարակշիռ հորինվածքով:

Գլխ. հուշարձանախմբից հվ-արլ., շուրջ 70 և 100 մ հեռավորությամբ գտնվում են ևս երկու փոքր, կիսավեր կառույցներ՝ Ս. Հակոբ եկեղեցին և Ս. Հարություն մատուռը: Եկեղեցին X դ. 2-րդ կեսին կառուցված գմբեթավոր դահլիճ է՝ արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագծով: 1753-ին ավերվել է, քարերի մի մասը 1815-ին օգտագործվել Ս. Ամենափրկիչ եկեղեցու նորոգման համար: Մատուռը (XIII դ. 2-րդ կես) պարզ, ուղղանկյուն թաղածածկ սրահ է՝ արլ. երկու հավասարաչափ խորաններով և հարուստ մշակված արմ. շքամուտքով:

Կյուրիկյան, Զաքարյան և Արղության-Երկայնաբազուկ իշխանների տոհմական դամբարաններից ճարտ. հորինվածքի առումով առավել յուրօրինակ ու հետաքրքիր է Զաքարյանների դամբարանը: Բաղկացած է միմյանց կից և հաղորդակից արլ. ու արմ. մասերից: Առաջինը (կառուցված X դ. վերջին կամ XI դ. սկզբին) կիսագետնափոր թաղածածկ սրահ է՝ տանիքին բարձրացրած երեք փոքր մատուռներով, որոնցից կենտրոնականն ունի ուղղանկյուն, իսկ եզրայինները՝ շրջանաձև հատակագծեր: Արմ. մասը քանդակազարդ շքամուտքով, երկթեք տանիքով թաղածածկ սրահ է. 1189-ին կառուցել են Իվանե և Զաքարե եղբայրները՝ իրենց պապի և հոր՝ Վահրամ ու Սարգիս իշխանների գերեզմանների վրա: Վերջինիս հիշատակին կանգնեցված է նաև արձանագիր խաչքար:

Շուրջ 50 խաչքար է պահպանվել վանքի և շրջակա տարածքում: Պատմ. արժեքով ու գեղ. մշակմամբ առավել նշանավոր են Գրիգոր Տուտեորդու խաչքարը (գործ՝ Մխիթար Կազմիչի՝ կանգնեցված 1184-ին, Ս. Հարություն եկեղեցու հս. պատի տակ, և ամիրայությունների դեմ մղվող պատերազմի զոհերից մեկի՝ Սարգսի գերեզմանի վրա 1215-ին կանգնեցված խաչքարը՝

ՍԱՆԴՂԿԱՎԱՆ. Ս. Աստվածածին եկեղեցու գավթի արմ. պատին կից: Պահպանվել են X–XIX դդ. ընդգրկող շուրջ 190 վիմագրեր (կառույցների, խաչքարերի ու տապանաքարերի վրա): Դրանցից 19-ն ունեն շին. բնույթ (մինչև 1225-ը), մյուսները բովանդակում են թագավորական, իշխանական հրովարտակներ, աղոթքներ, հիշատակագրեր, վանքին նվիրատվությունների վերաբերյալ տեղեկություններ:

Պատկերազարդումը տես ներդիր XIII-ում, 13.8, 5–6-րդ պատկերները:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 1, Տփղիս, 1842: Հարությունյան Ի., Սանահին, ԱՀ, գիրք 3, 1898: Լալայան Ե., Բորչալուի գավառ, ԱՀ, գիրք 7–8, 1901: Ղաֆադարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957: Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Ե., 1986: Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 246–249, 295–298: *Халпахчьян О. Х., Санаин, М., 1973;* Нույնի, *Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 181–199;* Ghalpakhtchian O. Kh., Alpago-Novello A., Sanahin, Milano, 1970 (Documenti di architettura armena, № 3).

Կորյուն Ղաֆադարյան

«ՍԱՆԴՂԿԱՎԱՆՔԻ ԱՎԵՏԱՐԱՆ», հայկական ձեռագիր մատյան: Գրչության արվեստի գլուխգործոցներից: Սակավաթիվներից է իր համարյա անխաթարությամբ և գեղեցկագրությամբ: 1053-ին, միջնադարյան գրչության կենտրոն Սանդղկա Ս. Աստվածածին վանքում (Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արշարունիք գավառ) ընդօրինակել և մանրանկարել է Հովհաննես Սանդղկավանեցին: Պահվում է Մատենադարանում (ձեռ. № 3793):

«Ս. Ա.» ունի 39x30 *սմ* մեծություն, 310 մագաղաթե թերթ, գրված է երկաթագրով: Ձեռագրի նկարազարդումից պահպանվել են չորս ավետարանիչների, անվանաթերթերի և երկու խորանների պատկերները, որոնք գեղ. մտահղացմամբ ու ոճով համահունչ են նույն գրչի ընդօրինակած և ծաղկած «*Մողնու Ավետարան*»-ին և «Բեգունց Ավետարան»-ի համապատասխան մանրանկարներին: Ավետարանը թվագրված հայկ. ձեռագրերից առաջինն է, որտեղ գունավոր զարդագրի հետ հանդիպում են նաև լուսանցազարդ և գլխազարդ: Հիշատակարանում գրիչը բացի իր ծնողներից՝ Դավթից և Մարիամից, հիշատակում է ձեռագրի գրչությանն ու մանրանկարչությանն օժանդակող անձանց՝ մագաղաթ հետող Մովսեսի, ոսկեզեղ կազմող Հովհաննես Սողիկի և ոսկեզեղ զուգող Թորոս Խաղբակի անունները:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.1, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Մաթևոսյան Ա., Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողնու Ավետարանը»), ԲՄ, 1971, № 10:

Կարեն Մաթևոսյան

ՍԱՆԴՈՒԽՏ, սուրբ Սանդուխտ կույս (ծ. և նահ. թթ. անհտ), I դարի վկա, Հայ եկեղեցու նախամարտիրոսուհին, *Թադեոս* առաքյալի աշակերտուհին, տոնելի սուրբ: Հայոց Սանատրուկ թագավորի դուստրը: Շնորհք արք. Գալուստյանի բնորոշմամբ՝ «Ինչ որ է Ս. Ստեփանոս Քրիստոնեական եկեղեցիի համար, նույն է Ս. Սանդուխտը Հայ եկեղեցիի համար» (Հայազգի սուրբեր, 1997, էջ 204):

Ըստ Ս-ի վկայաբանության մի տարբերակի, երբ Թադեոս առաքյալը *Աբգար* թագավորին բուժելուց հետո մեկնել է Արտազ գավառի Շավարշան գյուղաքաղաքը, նրա կատարած սքանչելի գործերին ի տես՝ քրիստոնեություն է ընդունել նաև արքայադուստրը՝ հազիվ 15 տարեկան Ս., որն այնուհետև աշակերտել է առաքյալին և մկրտվել Սուրբ Հոգով:

Կռապաշտ թագավորի հրամանով քանիցս բանտարկել են Ս. կույսին, Թադեոս առաքյալին և մյուս հավատակիցներին, սակայն երկնային լույսի ճառագումով նրանց կապանքները քանդվել են: Հայրը դստերը հորդորել է հրաժարվել «մոլորեցնողից»՝ Թադեոս առաքյալից, և վերադառնալ հայրենի կուռքերի պաշտամունքին, որին ի պատասխան՝ Ս. մոլորեցնող է անվանել կուռքերին, իսկ Թադեոս առաքյալին՝ մոլորությունից դեպի լույսը տանող: Ս-ին կրկին կապանքների մեջ են դրել և չարչարել, որպեսզի ուրանա Հիսուսին: Եվ կրկին, ըստ վարքագրության, լույս է փայլատակել, քանդվել են կույսի կապանքները, իսկ դահիճների աչքերը խավարել են: Կապանքներից ազատվելով՝ Ս. գնացել է Թադեոս առաքյալի մոտ և երկրպագել Հիսուսի երկնավոր դեսպանին: Ապա Ս. մկրտել է նորահավատ Զարմանդուխտ իշխանուհուն, որին թագավորը հրամայել է նահատակել: Քանի որ արդեն շատերն էին հարում Ս-ին, Սանատրուկը կարգադրել է վերջ տալ իր երկրավոր հորը մերժած և երկնավոր Հորն ընդունած Ս-ի կյանքին: Ըստ վարքագրի, երբ դահիճը պատրաստվել է կտրել սրբուհու գլուխը, դահճապետը սպանել է դահճին: Խառնաշփոթության մեջ զորականներից մեկը սու-

ը մխրճել է կույսի կուրծքը. բխել է արյուն և արյան հետ՝ երկնային անուշահոտություն:

Ս-ի գերեզմանն անհայտ է մնացել երկար ժամանակ և, ի վերջո, տեսիլքով հայտնվել Կիրակոս անունով մի մենակյացի: Ըստ Մ. Օրմանյանի՝ սկզբնապես Ս-ի հիշատակը տոնվել է առանձին, այնուհետև միացվել Թադեոս առաքյալի տոնին:

Հայսմավուրքները Ս-ի նահատակության (որը և հիշատակի օրն է) տարբեր օրեր են նշում՝ դեկտ. 23, դեկտ. 15: Ներկայումս Հայ եկեղեցին ս. Ս-ի հիշատակի օրը նշում է Վարդավառի տոնին հաջորդող շաբաթ օրը, Թադեոս առաքյալի հիշատակի հետ մեկտեղ:

Ս. կույսին է նվիրված մի «Մանկունք» շարական. «...Աշակերտեցար Առաքելոյն Թադէոսի, եւ ի հաւատս ճշմարիտս հաստատեցար, ոչ խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնսն արժանի եղեր վերանալ առ Հայր»:

Գրկ. «Սոփերք Հայկականք», հ. 8, Վնտ., 1853: Սուրբերու կեանքը, 3 հրտ., Բեյրութ, 1994: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք [կազմ. Ռ. Մաթևոսյան], Ս.Էջմիածին, 1999:

Լևոն Սարգսյան

«ՍԱՄՆԱ ԾՌԵՐ», «Սասունցի Դավիթ», հայ ժողովրդական հերոսավեպ: Վիպասացները և բանասացները կոչել են նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» ևն:

«Ս. ծ.»-ի հերոսներից Սանասարի և եղբոր մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Դ Թագ. **19.**35–37), հետագայում՝ Մովսես Խորենացու (գիրք Ա, ԻԳ) և Թովմա Արծրունու երկերում: Իսկ Դավթի և Խանդութի մասին զրույցների, Սասունում կատարված դեպքերի մասին որոշ հիշատակություններ պահպանվել են XVI դ. պորտուգալացի ճանապարհորդների (Ա. Տենրեյրո, Մ. Աֆոնսո) ուղեգրական նոթերում: Ուշ հայկ. աղբյուրների (Ղ. Ինճիճյան, Ն. Սարգսյան) թռուցիկ հիշատակությունները վերաբերում են XIX դ. հանդիպող վեպի հերոսների անունները կրող տեղավայրերին:

«Ս. ծ.» հայտնաբերել ու գրառել է Գ. Սրվանձտյանցը 1873-ին, Մշո Առնիստ գյուղում և հրատարակել Կ. Պոլսում («Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 1874): Երկրորդ տարբերակը 1886-ին Ս. Էջմիածնում գրառել է Մ. Աբեղյանը և հրատարակել Շուշիում («Դավիթ և Մհեր», 1889): Այնուհետև գրառվել ու հրատարակվել են նորանոր տարբերակներ: Մինչև 1980-ը հայտնաբերվել և գրառվել է շուրջ 160 պատում, որից հրատարակվել է մոտ 70-ը: 1938–39-ին, «Ս. ծ.»-ի 1000-ամյա հոբելյանի կապակցությամբ, մինչ այդ գրառված 60 պատումների հիման վրա հյուսվել-կազմվել է (Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան) մի միասնական համահավաք բնագիր («Սասունցի Դավիթ», 1939):

«Ս. ծ.»-ի վիպող-պատմողները մեծ մասամբ գյուղացիներ են, արհեստավորներ, պանդուխտներ, գաղթականներ: Վիպասացների բուն հայրենիքը Վանա լճի ավազանն ու նրանից հվ-արմ. և հս-արլ. ընկած գավառներն են (Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկք, Շատախ, Վան, Հայոց ձոր, Խլաթ, Արճեշ, Մանազկերտ, Ալաշկերտ, Բայազետ): Պատումներն իրենց կառուցվածքով, լեզվաբարբառային և վիպ. հատկանիշներով բաժանվում են տիպաբանատեղագր. երեք մեծ խմբի՝ Սասնա, Մշո և Մոկաց: Հիշյալ խմբերից զատ կան և խառը պատումներ, որոնք միավորում են դրանց տարբեր հատկանիշները:

«Ս.ծ.»-ում գործում է միմյանց ազգակից վիպ. հերոսների չորս հիմն. սերունդ՝ Սանասար և Բաղդասար, Մեծ կամ Ջոջ Մհեր, Դավիթ, Փոքր կամ Պստիկ Մհեր: Ճյուղերը, առանձին ամբողջություն լինելով հանդերձ, միավորվում են վիպ. ժառանգականության մի շարք ընդհանրություններով: «Ս.ծ.» դյուցազնական տոհմի չորս սերնդի վիպ. պատմությունն է, որն սկիզբ է առնում տոհմի ծագումից, Սասնա տան հիմնումից ու ավարտվում տոհմի վերջին ներկայացուցչի՝ անմահ, անժառանգ Փոքր Մհերի ժայռում փակվելով: Հերոսավեպը մի շարք փուլերից, թեմաներից, այուժեներից բաղկացած համապարփակ վիպ. համակարգ է: Առաջնային և միավորիչ թեման, որ առկա է բոլոր ճյուղերում, հակադրությունն ու պայքարն է օտար և հայրենի երկրների, դրանց շահերը մարմնավորող օտար, այլադավան բռնակալի և յուրային, արդար ու ուղղահավատ հերոսի միջև:

«Ս. ծ.» բաղկացած է հնագույն առասպելներից, ավանդ. վիպ. այուժեներից, պատմ. խավավորումներով երգ-զրույցներից՝ վիպ. մի ամբողջական համակարգի մեջ ձուլված, մշակված, փոխակերպված: Սանասարի և Բաղդա-

սարի ճյուղը ձևավորվել է երկվորյակ սրբազան նախնիների և ամպրոպային վաղնջական առասպելների հիմքի վրա: Մեծ Մհերի և Փոքր Մհերի ճյուղերի նախահիմքում ընկած են հին հայկ. և հնդիրան. երկնային լույսի և արեգակի աստված Միհրի (Միթրա) առասպելաբան. մոտիվները՝ զուգորդված ժայռում փակված հերոսների տեղական հնագույն առասպելին: Դավթի ճյուղի նախահիմքում ընկած է ամպրոպային կռվի հին հնդեվրոպ. առասպելը: Սանասարի, Դավթի, Մեծ Մհերի և Փոքր Մհերի ճյուղերի առասպելաբան. նախահիմքերը ենթարկվել են վիպ. թանձր խավավորումների, տեղական ավանդության և պատմ. անցուդարձերի զորեղ ազդեցությամբ կերպափոխվել, հին վիպ. ավանդությունից («Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ») իրենց մեջ ներառել մի շարք այուժեներ, մոտիվներ, անուններ, ձեռք բերել պատմ. չեշտված երանգ:

«Ս. ծ.»-ի նախնական բաղադրիչ տարրերը սերում են խոր հնադարից, իսկ վիպ. զարգացումը, ճյուղերի հարակցումը, վերամշակումը ժող. վիպասացներն իրականացրել են միջնադարում (VII–XIII դդ.)՝ նախ Բաղդադի արաբ. խալիֆայության ստրկացուցիչ տիրապետության, ապա Եգիպտոսի (Մսրա) Էյուբյան արաբ տիրակալների դեմ հայ ժողովրդի մղած ազատագր. պայքարի զորեղ ու խոր ներգործությամբ: Դավթի ճյուղի պատմ. խավավորման վրա բացառիկ ազդեցություն են թողել արաբների հարկային ծանր քաղաքականության դեմ ուղղված սասունցիների 749-ի և 851-ի ապստամբությունները:

«Ս. ծ.»-ում զգալի դրսևորումներ են գտել հին հեթանոս. հավատալիքները, պատկերացումները, ծիս. սովորույթները՝ հերոսների ջրից սերում ու զորացում, դյուցազն. շնորհի աստվածային տուրք և հովանավորում, հմայիլ սուրբ խաչի զորությանն ապավինում, կռվից առաջ քառասուն անծին երինջներին արյան մեջ լողացնելը, հմայական խոսքի և արարողության զորության հավատք, երազների ու աստղերի միջոցով գալիքի գուշակում, ցասման ժամի, նախնիների պաշտամունքի, սգի և հոգեհացի ծիս. արարողություններ ևն, որոնք մեծ մասամբ ձուլվել են քրիստ. հավատալիքներին, դարձել կենդանի կրոն. զգացում ու աշխարհայացք: Հին հեթանոս աստվածությունները քրիստ. սրբերի (Գաբրիել հրեշտակ, ս. *Սարգիս*) անուններով հանդես են եկել որպես Սասնա հերոսների գործակիցներ և հովանավորներ: Աստվածապաշտությունը, քրիստ. բարեպաշտությունն ու եկեղեցասիրությունը Սասնա հերոսներին բնորոշ հատկանիշներ են: Դավթի համար «աստված էն է, ինչը որ իրեն ստեղծել է ու պահում է», «նա բարերար է և ողորմած», «օրհնյալ է և միշտ հիշյալ»: Վեպում ոչ մի նշանավոր գործ կամ երևույթ առանց Աստծո չի կատարվում: Աստծո հրամանով ձին լեզու է առնում, քամի է բարձրանում, կոտրած ձեռքը կպչում է, խավարած աչքը լույս տալիս, շղթայակապ Դավիթը թափահարվում է, ու շղթայի կտորները վայր են թափվում, ձին մի ակնթարթում տեղ է հասնում, Մհերի ծնողները գերեզմանից ձայնում են նրան: Աստված է բաշխում մարդկանց «ներքին շնորհք», այն հարատև է «տվածուրիկ», աստվածային տուրք, ձրի շնորհ, պարգև: Նախամայր Ծովինարը, ամուսնանալով կռապաշտ թագավորի հետ, իր հետ է տանում ծպտված վարդապետի կամ տերտերի, որպեսզի նա այլադավան միջավայրում ժամասի, կնքի իր զավակներին, պահպանի հավատը: Նորահայտ մի պատումում նա անգամ հղիանում է կաթողիկոսի տված ցորենի երկու հատիկից: Սանասարն ու Բաղդասարը նորաշեն Սասունում փոքր եկեղեցի են կառուցում և օրը երեք անգամ աղոթք են անում ու ժամ ասում: Դավիթը վերակառուցում է նախնիների կառուցած Մարութա Բարձր Աստվածածնի վանքը, կարգում բազմամարդ վանական միաբանություն, հոգում վանքի բոլոր ծախսերը, ապահովում շքեղ գույքով ու հանդերձանքով, պաշտպանում վանքը օտար ոտնձգություններից: Ի վերջո, այն դառնում է Սասնա դյուցազունների մեծագույն ու հեղինակավոր սրբատեղին, որի զորությանն են ապավինում վեպի հերոսներն իրենց բոլոր նախաձեռնություններում, աղոթքի հատուկ բանաձևով նրան են դիմում ու միշտ ստանում ակնկալվող օգնությունն ու հովանավորությունը: Վեպում կրոն. գաղափարն ու զգացողությունն այնքան զորեղ են, որ յուրային (հայ) և օտար (այլազգի) էթնիկական հակադրությունը հիմնականում արտահայտվում է խաչապաշտ և կռապաշտ կրոն. հակադիր ըմբռնումներով ու նրանց միջև մղվող անհաշտ պայքարով: Սասնա յուրային հերոսները ճշմարիտ աստվածապաշտ են, իսկ բոլոր այլադավան օտարները՝ անհավատ կամ կռա-

պաշտ: Այսինքն՝ էթնիկական տարբերական առաջնությունը տրված է կրոն. հատկանիշին:

«Ս. ծ.»-ի ամենաբնորոշ գիծը հերոս. անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպել. դյուցազուններ հերոս. սխրանքներով և հայ ժողովրդի դարավոր ոսոխների, հատկապես VIII–X դդ. աբաբ. բռնապետության դեմ մաքառումների հերոս. պատմությամբ: Դյուցազն. հաղթ. ոգին դրվել է պատմ. որոշակի հողի վրա, տիեզեր. հակադիր ուժեր մարմնավորող բարի դյուցազունների և նրանց չար հակառակորդների դեմ անզիջում պայքարը պատմականորեն կոնկրետացել, դարձել է հայրենի երկրի հերոսների պայքար՝ ընդդեմ օտար բռնակալների, հայրենի հերոսների անխուսափելի հաղթանակով: Հին առասպելական-ավանդականը ձուլվել է նորին, պատմականին, վերամշակվելով թարմացել և ձեռք բերել կոնկրետ ազգային նկարագիր ու բովանդակություն, սակայն խպառ չի վերացել:

Որոշակի պատմաշրջանի հավաստի դրոշմ կրելով հանդերձ, «Ս. ծ.» իր վիպ. հնավանդ ու բարդ բաղադրությամբ, մանավանդ բանավոր հորինվելու և դարեր շարունակ բանավոր ավանդվելու շնորհիվ, իր մեջ է ներառել և գեղարվեստորեն համաձուլել հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութ. ու հոգևոր կյանքի տարբեր իրողություններ՝ ձեռք բերելով պատմամշակութ. հուշակոթողի արժեք:

«Ս. ծ.» բազմիցս ենթարկվել է գրական-գեղ. մշակման (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Ն. Զարյան), թարգմանվել բազմաթիվ լեզուներով (ռուս., գերմ., ֆրանս., չին., պարսկ., լեհ., վրաց., ադրբ., բելառուս. ևն), լայնորեն արտահայտվել կերպարվեստում (Հ. Կոջոյան, Ե. Քոչար, Ա. Մամաջանյան, Մ. Աբեղյան, Հ. Շավարշ, Է. Իսաբեկյան, Ա. Հովսեփյան), երաժշտության մեջ (Սպենդիարյան-Բուդաղյան՝ «Խանդութ», բալետ, Է. Հովհաննիսյան՝ «Սասունցի Դավիթ», բալետ-օպերա), ասմունքային արվեստում (Ժ. Էլոյան, Ս. Քոչարյան):

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.1, 3-րդ պատկերը:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 1, Ե., 1966, էջ 325–554: Ղանալանյան Ա., Սասունցի Դավիթ, Ե., 1939: Մելիք-Օհանջանյան Կ., Միթրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ, «Գրական-բանասիրական հետազոտություններ», Ե., 1946, էջ 269–327: Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Ե., 1956: Հարությունյան Ս., Վիշապամարտը «Սասնա ծռերում», ԼՀԳ, 1981, № 11:

Սարգիս Հարությունյան

ՍԱՏԱՆԱ (< եբր. Sātān – ոսոխ, հակառակորդ, ապստամբ, չարախոս իմաստից), չար զորություն, որն ամբողջովին հակառակ է Աստծուն:

Աստվածաշնչում տրվում են Ս-ի զանազան բնորոշումներն ու անվանումները, որոնք հայտորոշում են նրա տարբեր հատկությունները. «աշխարհի իշխանը» (Հովհ. **12.**31), «օդում տիրող իշխան» (Եփես. **2.**2), «այս աշխարհի աստվածը» (Բ Կորնթ. **4.**4), «վիշապ, հին օձ» (Հայտն. **20.**2), «չար» (Ա Հովհ. **5.**18), «մոնչող առյուծ» (Ա Պետր. **5.**8), «մարդասպան», «ստի հայր» (Հովհ. **8.**44), «Բեեղզեբուղ» (Մատթ. **12.**24), «Բելիար» (Բ Կորնթ. **6.**15), «եղբայրների դեմ չարախոսող» (Հայտն. **12.**10): Ըստ այդմ Ս. անձ է և «ստի հայր» (Հովհ. **8.**44): Ս-ից է ծնվում *մեղքը*:

Համաշխարհային և հայ միջնադարյան աստվածաբանական գրականության մեջ հստակորեն արձանագրված է, որ Ս. կամ Ս-ի չարությունը ոչ թե Աստվածությանը՝ իբրև բացարձակ բարիքին հավասարարժեք ինքնագո սկզբունք է, այլ՝ հետևանք, որ առաջացել է *հրեշտակներին* տրված անձնիշխան կամքի չարաշահումից: Ս. կա և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ մնվում է չարությամբ, այսաշխարհային շահագրգռություններով ապրող, Աստծուց օտարացած մարդու չար խորհուրդներով: Ս-ի համար նպաստավոր միջավայր է աստվածային պատվիրաններին անհաղորդ սիրտը և հոգևոր մտածումներից թափուր՝ շեղված, եսակենտրոն կամքը: Ս. խաթարում է մարդու հոգեկան աշխարհը, նրան զրկում բանականությունից: Ավետարանում նկարագրվող այդ վիճակը՝ դիվահարությունը, համարվել է մարդու ներսում Ս-ի ներկայության ցուցիչ (Մատթ. **8.**31, **9.**32–33, Մարկ. **1.**34, 39, **16.**17, Ղուկ. **4.**42, **8.**2): Քրիստոսի տնօրինական գործունեությամբ Ս. կորցրեց իր՝ մինչ այդ մարդու վրա ունեցած իշխանությունը, համաձայն Քրիստոսի այն խոսքի, թե՝ «այս աշխարհի իշխանը դատապարտված է» (Հովհ. **12.**31, **16.**11): Բայց սրանով խորտակվեց Ս-ի իշխանությունը միայն և ոչ Ս. ինքը: Այժմ Ս. ոչ թե նախասկզբնական մեղքով պարտադրված մեղանչական զորություն է, այլ՝ փորձիչ, որի նպատակն է՝ խաթարել մարդու և Աստծո ներդաշնակ հարաբերությունը, մարդուն օտարել աստվածային շնորհից: Նպատակ ունենալով

զբաղեցնել Քրիստոսի տեղը, տիրել աշխարհը՝ Ս. հաճախ ներկայանում է դիմակով՝ իբրև բարի սկիզբ (տես *Նեռ*):

Ս., սկզբնապես լինելով Աստծո հրեշտակներից մեկը և նախանձելով Աստծուն, ցանկանում է նրան հավասարվել: Այս պատճառով ապստամբում է Բարձրյալի դեմ՝ իրեն համախոհ ունենալով իր կողմ հակված չար հրեշտակներին: Հենվելով Աստվածաշնչի՝ «Արդ, ինչպես երկնքից ընկավ արուսյակը, որ ծագում էր առավոտյան, նա, որ ուղարկվում էր բոլոր ազգերին, ընկավ գետին ու խորտակվեց: Մտքիդ մեջ ասում էիր. «Երկինք կբարձրանամ, իմ գահը կդնեմ երկնային աստղերից ավելի վեր. կնստեմ բարձր լեռան վրա... կբարձրանամ ամպերից էլ վեր, կնմանվեմ Բարձրյալին»: Բայց ահավասիկ դժոխք ես իջնելու և երկրի խորքերը» (Եսայի **14.**12–15) պարբերության վրա՝ մեկնաբանական ավանդույթը հիշատակված արուսյակը համարում է Ս-ի այլաբանությունը: Ի մի բերելով եկեղեցական գրականության մեջ այս մասին եղած ավանդական պատումները՝ Գրիգոր Տաթևացին ասում է, որ «... բոլոր հրեշտակական էությունները տեսան Բանին (Աստծո Խոսքին՝ Որդուն) Ադամի կերպարանքով, ու երկրպագեցին, օրհնեցին, մինչդեռ Ս. չերկրպագեց..., ... չարացրեց (հրեշտակների) վերին դասերին՝ զայրույթով, և ներքին դասերին՝ սասանմամբ, և համակամներին իր կողմը քաշեց, այլև մեր նախնիներին (Ադամին, Եվային) խաբեց և չարացրեց» (Քարոզգիրք. Ամառան հատոր, 1741, էջ 572–573):

Ապաշխարյալին Ս-ի մեղանչական ազդեցությունից զերծ պահելու համար Հայ եկեղեցու վարդապետները ժամագրքի սկզբում զետեղել են հետևյալ հրահանգ-հանձնառությունը («Հրաժարիմք»). «Հրաժարվում ենք սատանայից և նրա ամեն տեսակ խաբեությունից, նրա պատրանքներից, նրա խորհուրդներից, նրա ընթացքից, նրա չար կամքից, նրա չար հրեշտակներից, նրա չար պաշտոնյաներից, նրա չար կամքը կատարողներից և նրա ամեն տեսակ զորությունից հրաժարվելով հրաժարվում ենք»:

Քրիստոսի Երկրորդ գալուստից հետո Միքայել հրեշտակապետի ձեռքով Ս. կապվելու է և, արդարների ու մեղավորների հետ դատվելուց հետո, նետվելու է իր և իր արբանյակների համար նախապատրաստված *դժոխքի* մեջ (Մատթ. **25.**41, Հայտն. **20.**9–10, 15): Հայ և առհասարակ արևելաքրիստ. մեկնողական գրականության մեջ Ս-ի խորհրդանշաններն են համարվել Սոդոմ-Գոմորը, Եգիպտոսը, Փարավոնը, Գողիաթը ևն:

Հայ միջնադարյան մանրանկարչության, գլխավորաբար «Մկրտության» պատկերագրության մեջ Ս. պատկերվել է ջրի խորքում երևացող հրեշակերպ վիշապի տեսքով և «Ավերումն դժոխոց»-ում՝ Քրիստոսի ոտքերի մոտ բերանքսիվայր ընկած, կմախքացած, գզգզված մազերով շղթայված մարդու կերպարանքով:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.1, 4-դ պատկերը:

Գրկ. Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Տփխիս, 1900, էջ 115–121:

Հակոբ Քյոսեյան

ՍԱՐԳԻՍ, սուրբ Սարգիս Զորավար, Մար Սարգիս, տեր Սերգիոս [ծ. թ. անհտ – նահ. 362 կամ 363, ք. Դաղման (Պարսկաստան)], վկա՝ դասված հայազգի սրբերի կարգը. օժտված է «արագահաս», «բարեխոս», «չնորհատու» հատկանիշներով: *Ներսես Շնորհալու* «Գիր Հաւատոյ խոստովանութեան» մեջ («Թուղթք Ընդհանրական», էջ 105–106) ասվում է, որ ս. Ս. «բարեպաշտ» իշխան էր «Մեծն Կոստանդիանոսի» և նրա որդու օրոք, որին հաջորդել է Հուլիանոս Ուրացող կայսրը (361–363): Ըստ *Հայսմավուրքների* Ս. ազգությամբ «հռոմ» էր (հույն) և Կոստանդիանոս կայսրի կողմից «իշխան և ստրատելատ» էր կարգված Կապադովկիայի վրա, որի մայրաքաղաքն էր Կեսարիան:

Ս. հռչակվել էր իբրև ամենահաղթ ռազմիկ՝ բարբարոսների դեմ մղված ճակատամարտերում, ինչպես նաև դթասիրտ քրիստոնյա՝ իր ինչքերը սիրահոժար աղքատներին բաշխող: «Ամբարիշտ Հուլիանոսի» թագավորության ժամանակ նրան աստվածային հայտնությամբ թելադրվել է ապաստանել Հայաստանում, իր որդու՝ Մարտիրոսի հետ: Սակայն հայերը, երկյուղելով Հուլիանոսից, սուրբին թելադրել են գնալ Պարսկաստան և զինվոր. ծառայության անցնել Շապուհ թագավորի (310–379) մոտ: Այստեղ ևս բազում սխրալի և հրաշապատում գործեր կատարելով՝ մոգերի և մոլեռանդ ամբոխի կողմից մեղադրվել է պարսկ. զորքի մեջ քրիստոնեություն տարածելու համար, բռնադատվել իր Մարտիրոս որդու հետ, որը հորից առաջ է զոհ գնացել կրակապաշտ խառնամբոխի ծեծին՝ ընդունելով մարտիրոսության պսա-

կը: Թագավորի հրամանով Ս. բանտարկվել է: Նրան, որպես կրակն ու ուռքերը անարգողի, առաջարկվել է ուրանալ Հիսուսին և ընդունել զրադաշտ. կրոնը: Երբ նա անսասան է մնացել իր հավատքի մեջ՝ արձակվել է գլխատման հրաման: Նահատակության վայրում (Դաղման կոչված քաղաքի մոտ), գլխատումից առաջ, Ս. աղոթք է հղել առ Աստված, որ ի կատար ածվեն իր անունով աղոթողների բաղձանքները:

Պարսիկ զորականներից 14 հոգի, որոնք հետևել են քրիստոնեական հավատքին, վերցրել են սրբի մարմինը, պատել մաքուր կտավով՝ պատվով թաղելու համար, և այդ պատճառով նրանց ևս նահատակել են: Հավատացյալները թաքուն վերցրել են Ս-ի և մյուս նահատակների մարմինները և ամփոփել Համիան կոչված քաղաքում, որտեղից էլ, ըստ հայոց Հայսմավուրքների, Մեսրոպ Մաշտոցը վերցրել է Ս-ի մարմինը, բերել Հայաստան, ամփոփել Կարբի ավանում և վրան վանք կառուցել: Ապա սրբի ատամներից մեկն առնելով՝ զետեղել է խաչափայտի մեջ և այն կանգնեցրել Վրաստանում՝ «ի դաշտն Գագա» Գագա բլուրի գագաթին, որը ցայսօր կոչվում է Գագա Ս. Սարգիս, որ «... մեծամեծ սքանչելիքներ և հրաշքներ է գործում գերյալների, բանտարկյալների և հիվանդների վրա»: Այս դեպքերը հիշատակվում են նաև Ներսես Շնորհալու հորինած շարականի մեջ («Շարական Ս. Սարգսի»):

«Ամենասուրբ երրորդութեանն ընտրեալ
Ծառայ եւ հաւատարիմ,
Յաղթող սպառազէն և քաջ նահատակ.
Արդահաս Սուրբդ Սարգիս, շնորհաց օթեւան,
Քրիստոսի բարեխօսե ամենքիս համար...»:
(«Շարակնոց»)

Եվրոպայում ս. Ս-ի հիշատակի օրը տոնվել է իբրև Կեսարացի սուրբի տոն՝ փետր. 24-ին (հույները՝ հունվ. 20-ին): Հայերը տոնել են հունվ. 31-ին, իսկ ներկայումս՝ *Առաջավորաց պահքին* հաջորդող շաբաթ օրը. այս պատճառով էլ այդ պահքը սխալմամբ կոչվում է ս. Սարգսի պահք, մինչդեռ Հայ եկեղեցում սրբերը պահք չունեն: Իսկ եթե այդ օրը համընկնում է *Տյառնընդառաջին*, ապա ս. Ս-ի տոնը նշվում է ս. Ատոմյանց հիշատակի հետ (տես *Ատոմյանք*):

Հայերի մեջ տարածված սովորույթ է՝ շփոթությամբ ս. Ս-ին նվիրված պահքի վերջին շաբաթ օրվա գիշերը (փետր.) ամանների մեջ դնել փոխինդ (փոխինձ), որի վրա դրոշմվում է սրբի ձիու սմբակի կամ պայտի հետքը՝ իբրև բարիքի, երջանկության նշան: Իբրև «մուրազատու» սուրբ, ս. Ս. զուգահեռ ունի *Հովհաննես Մկրտչի* հետ:

Ս. Ս. հռչակված է ոչ միայն հայոց, այլև ողջ արևելյան քրիստ. աշխարհում: Նույնիսկ պարսիկները նրան կոչել են «անհաղթ վկա պարսից և կատարող բոլոր խնդրվածքների»: Նրա անունը, իբրև հրաշագործ վկայի, տարածված էր նաև Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում և այլուր:

Հայ մանրանկարչության մեջ ս. Ս. պատկերվել է ճերմակ նժույգի վրա, զինավառ կերպարանքով, հաճախ՝ վիշապ օձին նիզակահարելիս:

Հայաստանում ս. Ս-ի անունով եկեղեցիներ են կառուցվել, որոնցից է *Երևանի Ս. Սարգիս եկեղեցին*:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.1, 5-րդ պատկերը:

Գրկ. Սուրբերու կեանքը, 3 հրտ., Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ (ծ. թ. անհտ – 1022, ամփոփվել է Հոռոմոսի վանքում), Ամենայն հայոց կաթողիկոս 992–1019-ին: Հաջորդել է *Խաչիկ Ա Արշարունուն*: Ուսանել է *Սևանավանքում*, եղել է *Շողակավանքի*, այնուհետև՝ Սևանավանքի վանահայր: Կաթողիկոս է ընտրվել Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունու հովանավորությամբ: 992-ին Ս. Ա Ս. կաթողիկոս. աթոռը Արգինայից տեղափոխել է Ա-նի՝ նորակառույց Կաթողիկե (Մայր տաճար) եկեղեցի: 1006-ին Սյունյաց Վասակ թագավորի խնդրանքով և Կատրամիդե թագուհու (Գագիկ Ա Բագրատունու կինը, Սյունյաց Վասակ թագավորի դուստրը) միջնորդությամբ Ս. Ա Ս. վերահաստատել է ըմբոստության համար զրկված Սյունիքի եպիսկոպոս. աթոռի նախկին առանձնաշնորհումները:

X դ. վերջին, երբ Ատրպատականի ամիրա Մամլանը հարձակվել է Հայաստանի վրա, և Ապահունիքում նրան դիմակայել են հայ-վրաց. դաշնակից զորքերը, Ս. Ա Ս. մասնակցել է պաշտպանությանը, քաջալերել ժողովրդին: Պայքարել է Ապահունիք, Մանանդի, Հարք գավառներում հզորացող *թոնդրակեցիների* դեմ: 1007-ին՝ 257 տարվա ընդհատումից հետո, վերականգնել է Ծռազատկի տոնը (առաջին անգամ նշվել էր 665-ին, երկրորդ անգամ՝ 750-ին):

Ս. Ա Ս. կատարել է չին. աշխատանքներ: 1010-ին Անիի Մայր տաճարի հարևանությամբ հիմնել է Ս. Հռիփսիմյանց վկայարան և Վաղարշապատից այստեղ փոխադրել սրբերի մասունքների մի մասը: Զբաղվել է նաև գրական-երաժշտ. ստեղծագործությամբ: *Շարակնոցում* նրա գրչին է պատկանում Հանգստյան կարգի «Սարսափելի որոտմամբ» սկզբնատողով, Ահեղ դատաստանի տեսարանները պատկերող և մեղեդիական առումով ներքին ուժ ու դրամատիկ. հաստատակամություն արտահայտող Տեր երկնիցը: Այն գրված է անվանական ակրոստիքոսի ձևով և հողում է հեղինակի անունը:

Ս. Ա Ս. ծեր հասակում՝ 1019-ին, ինքնակամ հրաժարվել է կաթողիկոս. աթոռից և իր ձեռքով կաթողիկոս օծել *Պետրոս Ա Գետադարձին*:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Արեվշատյան Ա., Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավեպ», 1995, էջ 211–214:

ՍԱՐԳԻՍ Բ ԱՋԱՏԱՐ (ծ. թ. անհտ – 1474, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս 1469-ից: Հաջորդել է *Արիստակես Բ Աթոռակալին*: 1460-ին եղել է Էջմիածնի կաթողիկոս. գահին առժամանակ տիրած Զաքարիայի օգնականը, 1462-ից՝ *Գրիգոր Ժ Ջալալբեկյանցի*, 1465-ից՝ Արիստակես Բ Աթոռակալի առաջին աթոռակիցը: «Աջատար» կոչվել է 1460-ին *Լուսավորչի Աջը* Էջմիածնից հափշտակելու և Թավրիզ տանելու համար (կաթողիկոս դառնալու նպատակով): Կաթողիկոս ընտրվելուց հետո փորձել է վերադարձնել Աջը, որը Զաքարիա Գ տարել էր Աղթամար: Այդ նպատակով Վրթանես եպիսկոպոսին հանձնարարել է Աղթամարի կաթողիկոսությունից Աջը գողանալ: Սակայն մինչ Ս. Բ Ա-ի նպատակը կիրագործվեր, մահացել է: 1470-ին աթոռակից է օծել Հովհաննես եպիսկոպոսին:

Կաթողիկոս. գահին Ս. Բ Ա-ին հաջորդել է *Հովհաննես Է Աջակիրը*, որի օրոք էլ Լուսավորչի Աջը հասել է Էջմիածին:

ՍԱՐԳԻՍ Գ ՄՅՈՒՍԱՅԼ (ծ.թ. անհտ – 1515, Էջմիածին), Ամենայն հայոց կաթողիկոս 1484-ից: Հաջորդել է *Հովհաննես Է Աջակրին*: 1476-ից եղել է աթոռակից և այդ շրջանի մյուս կաթողիկոսների նման մի քանի աթոռակիցներ է ունեցել: Նրա գահակալության շրջանում հիշատակության արժանի որևէ իրադարձություն տեղի չի ունեցել:

Կաթողիկոս. գահին Ս. Գ Մ-ին հաջորդել է *Զաքարիա Բ Վաղարշապատցին*:

ՍԱՐԳԻՍ Դ ՎՐԱՍՏԱՆՑԻ (ծ. թ. անհտ – 1536), Ամենայն հայոց կաթողիկոս 1520-ից: Հաջորդել է *Զաքարիա Բ Վաղարշապատցուն*: Չնայած Զաքարիա Բ-ին աթոռակից ընտրվելուն, մինչև նրա մահը նստել է Վրաստանում՝ լինելով Վիրահայոց թեմի առաջնորդ: Ս. Դ Վ-ու գահակալության տարիները համընկել են թուրք-պարսկ. պատերազմների վերսկսմանը, և հոգևոր-մշակութային ու չին. ձեռնարկումներից առավել իր խնդիրն է եղել Մայր աթոռը պահպանել վերահաս վտանգներից:

Կաթողիկոս. գահին Ս. Դ Վ-ուն հաջորդել է *Գրիգոր ԺԱ Բյուզանդացին*:

Վարդան Դևրիկյան

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Սարգիս Մեկնիչ (ծ. և մ. թթ. անհտ), XII դ. մատենագիր, հայ մատենագրության կիլիկյան դպրոցի նշանավոր դեմքերից: Սովորել է Քեսունի Կարմիր վանքում, աշակերտել անվանի վարդապետ Ստեփանոս Մանուկին: Հետագայում հաստատվել է Կիլիկիայի Սև լեռան Քարաշիթի վանքում: Հեղինակ է ճառերի, խրատների, մեկնությունների: Լեզվի գեղեցկության, դյուրըմբռնելիության և խորիմաց վարդապետության համար ստացել է «Շնորհալի» անունը: Ս. Շ-ու աշխատություններից առանձնապես հայտնի է Կաթողիկե թղթերի մեկնությունը (Մատենադարան, ձեռ. № 5321, 6195 ևն), որն ավարտել է 1156-ին: Աշխատությունը, գրված *Հովհան Ոսկեբերանի* մեկնող. երկերի հետևողությամբ, աչքի է ընկնում աստվածաբան. ուշագրավ բացատրություններով, հոգեղեն խորհրդածություններով: Դրանք ընդհանուր հայտարարի են բերված բարոյաբան. բնույթի հորդորակներում: 1116-ին Ս. Շ., հավանաբար ուս. նպատակով, պատրաստել է երկի համառոտ տարբերակը:

Երկ. Գիրք Մեկնութեան եօթն թղթոցն Կաթուղիկէից, կՊ, 1743: Հորդորակներ, աշխարհաբարի վերած. Ա. վրդ. Դանիելյան, Անթիլիաս, 1978:

Գրկ. Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վնտ., 1873: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Դուրյան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933: Պողարյան Ն., Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971:

Հակոբ Քյոսեյան

ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ (ծ. և մ. թթ. անհտ), մանրանկարիչ և գրիչ, XIV դարի կիլիկյան գրքարվեստի խոշորագույն վարպետ: Ապրել և ստեղծագործել է Կիլիկյան Հայաստանի նշանավոր կենտրոններ Սիսում, Սկևռայում, Դրազարկում, Կոպիտառում, Փոս անապատում: Ունեցել է համահայկ. համբավ: Այդ են վկայում նրա պատվիրատուները ոչ միայն Կիլիկիայից, այլև՝ Մեծ և Փոքր Հայքի տարբեր վայրերից: 1320-ին նրան է հանձնարարվել ավարտել «*Ութ մանրանկարիչների Ավետարան*»-ի ձևավորումը: Ս. Պ-ի «Արքունական Ավետարանը» (1336, Մատենադարան, ձեռ. № 5786) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում դարձել է պաշտամունքի առարկա, իսկ «Բժշկության Ավետարան»-ին (1353, Մատենադարան, ձեռ. № 6795) վերագրվել է հրաշագործ ուժ:

Ս. Պ-ի ստեղծագործ. շրջանն ընդգրկում է շուրջ 70 տարի (1300–70): Առաջին անգամ հիշատակվում է 1301-ին, հոր՝ գրիչ և ծաղկող Գրիգոր քահանայի ձեռագրում՝ որպես օգնական (Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանք, ձեռ. № 2566): Վերջին գործը՝ Շարակնոցը (Նյու Յորքի հանրային գրադարան, Սպենսերի հավաքածու, Հայկ. ձեռ. № 2), Կոստանդին Ե Թագավորի պատվերով գրված, թվագրվում է 1365–73: Ս. Պ-ի ծաղկած մատյանների թիվը հասնում է 40-ի: Դրանցից 11-ական ձեռագիր պահվում են Երևանի և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարաններում, մյուսները՝ Փարիզում, Վենետիկում, Նյու Յորքում, Դուբլինում, Ստամբուլում, Թեհրանում, Հալեպում, Բեյրութում (Անթիլիաս, Զմմառ), Տյուբինգենում և այլուր:

Ծաղկելու արվեստը Ս. Պ. ժառանգել է հորից՝ Գրիգոր Պիծակից, որի երկրաչափականացված ոճը փոխարինել է XIII դ. նրբագեղ արքունական մանրանկարչությանը և գերիշխել Կիլիկիայում՝ XIV դ. սկզբին: Միաժամանակ Ս. Պ. դիմել է մինչկիլիկյան՝ դունագեղությամբ և հարթապատկերային գծային մտածողությամբ աչքի ընկնող ժող. ուղղության գրքարվեստին, ստեղծելով ուրույն ոճ: Ձևավորման տարրերը տիպականացվում են, զարդամոտիվների բազմազանությունից ընտրվում են մի քանի սխեմայացված նմուշներ: Կենդ. և բուս. մոտիվները հեռանում են իրենց նախատիպերից, մարդկային ֆիգուրների ձևերն ու համաչափությունները խախտվում են, կրճատվում, մոտենում երկրաչափականին: Շրջանակները, խորանները, գլխազարդերը, զրկվելով նախկին ճոխ պլաստիկ հարդարանքից, դառնում են շեշտված ուղղանկյուն: Վառ, անխառն գույների հակադրումները զուգորդվում են ոսկե ֆոնի և ոսկե ուրվագծերի հետ: Այս գեղ. լեզուն Ս. Պ. այնքան է հղկել, այնպիսի վարպետության հասցրել, որ նրա պատկերները ստացել են նշանի, աստվածայինի խորհրդանիշ, հիերոգլիֆի ուժ: Նկարելու այս եղանակն էլ հնարավորություն է տվել պատկերազարդելու մեծ թվով ձեռագրեր: Իսկ տիպականացված տարրերը հետագայում հիմք են հանդիսացել առաջին տպագիր հայկ. գրքերի կլիշեների համար: Ս. Պ-ի արվեստում հաճախ են հանդիպում իր ժամանակին հատուկ միջավայրի տարրեր, որոնք արտահայտում են նկարչին բնորոշ դիտողականությունը: Ս. Պ. ծաղկել է միջնադարյան հայկ. մատյանների գրեթե բոլոր տեսակները՝ Աստվածաշունչ, Շարակնոց, Մանրուսում, Մաշտոց, Անտիոքի օրինագիրք, Հայսմավուրք, Սաղմոսարան և մեծ թվով Ավետարաններ:

Ավետարանների պատկերազարդման համակարգը մոտ է XIII դ. կիլիկյան Քառավետարաններին, սակայն ունի իր առանձնահատկությունը: Սկսվում է հանդիպակաց էջերի տասը չքեղ խորաններով, որոնցից երկու էջը պարունակում է Եվսեբիոս Կեսարացու թուղթը Կարպիանոսին, ութը՝ չորս Ավետարանների համաձայնության տախտակները: Յուրաքանչյուր Ավետարանից նախադրված է ավետարանիչի դիմանկարը՝ զարդամոտիվներով և շրջանակով զուգորդված հանդիպակաց էջի չքեղ տիտղոսաթերթի հորինվածքի հետ: Ի տարբերություն կիլիկյան XIII դ. Ավետարանների, որոնց տերուն. պատկերները ներմուծված էին տեքստի մեջ՝ մերթ ընդ մերթ հաջորդելով տեքստային էջերին, Ս. Պ. ավետարանիչների դիմանկարներից առաջ պատկերում է էջով մեկ տերուն. մանրանկարներ: Սակայն նկարչի Ավետարանների փոքր մասն ունի էջով մեկ տերուն. պատկերներ: Ավելի հաճախ տեքստի հետ համադրված են լուսանցքային զարդանախշային, խորհրդանշական և այուժետային մանրանկարներ: Վերջինները համառոտված են՝ դառնալով հաճախ միաֆիգուր և նույնատիպ:

Տարիների ընթացքում Ս. Պ-ի գրաֆիկական եղանակը հարստացել է գեղանկարչ. և պլաստիկական հատկանիշներով, վառ ծիածանային գույները՝ կիսատոներով, ուրվագծերը՝ վրձնահարվածներով: «Բժշկության Ավետա-

բանը», որը պարունակում է Քրիստոսի հրաշքների և բժշկության տեքստերն ու պատկերները, տարբերվում է Ս. Պ-ի նախորդ մատյաններից տեքստամիջյան և լուսանցքային ոչ կրճատ այուժետային մանրանկարների առկայությամբ: Էջի հորինվածքի մեջ ներմուծված են տեքստի և պատկերի նոր հարաբերակցություններ: Այն ամբողջությամբ կազմում է տեքստի և պատկերի գեղ. անքակտելի միասնություն:

Ս. Պ-ի ծաղկած Աստվածաշունչն ու այլ մատյանները շարունակել և զարգացրել են Հովհաննես Արքաեղբոր դպրոցի (XIII դ. 60–80-ական թթ.) ժողովածուների համակարգը: Յուրաքանչյուր գլուխ կամ գիրք սկսվում է ուղղանկյուն գլխազարդից, զարդագիր գլխատառից և հեղինակի կամ հերոսի լուսանցքային պատկերից: Այդ մատյաններում հանդիպում են ուղղահայաց դասավորված տեքստամիջյան մանրանկարներ: Այդ տիպը ներմուծված է արևմտաեվրոպ. լատ. ձեռագրերից: Նորություն են նկարչի ինքնադիմանկարները՝ ավետարանիչի պատկերի հորինվածքով: Շարունակելով XIII դ. կիլիկյան դիմանկարչության ավանդույթները՝ Ս. Պ. պատկերել է պատմ. անձանց և իր ժամանակակիցներին (ս. Գրիգոր Լուսավորիչ, ս. Հակոբ Մծբնացի, ս. Ներսես Շնորհալի, Լևոն Դ Թագավոր, Հակոբ կաթողիկոս, Մարիուն թագուհի):

Ս. Պ. Կիլիկիայի Հայկ. թագավորության անկման շրջանի վերջին և միակ խոշոր նկարիչն է: Նրա արվեստը, օժտված միջնադարին բնորոշ վերացական լեզվով, ժող. ստեղծագործության (վառ գույներ, պարզ կերպարներ) հատկանիշներով և ապագայի ռացիոնալ մշակույթի տիպականացման միտումներով, յուրահատուկ էջ է հայկ. գրքարվեստում:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.2, 1–4-րդ պատկերները:

Գրկ. Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, Ե., 1980: *Казарян В., Манукян С., Матенадаран. Армянская рукописная книга VI–XIV вв., т. 1, М., 1991, с. 199–214;* Der Nersessian S., Manuscrits arméniens illustrés de XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des pères Mékihitaristes de Venise, P., 1937; Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, N. Y., 1994, p. 185–186, 208–209.

Սեյրանուշ Մանուկյան

ՍԱՐԿԱՎԱԳ, սարկավագություն, Հայ առաքելական եկեղեցու նվիրապետության ստորին՝ վեցերորդ աստիճանը: Բառը (հուն. դիակոն) ստուգաբանվում է «ծառա», «սպասավոր», «սպասավորություն», «ծառայողների գլուխ» կամ՝ «գլխավոր պաշտոնյա»: Ս. եկեղեցու և ս. *Սեղանի* գլխ. սպասավորն ու ձեռնադրված պաշտոնյան է: Քահանայի օգնականն է ժամերգությունների, խորհրդակատարությունների և բոլոր արարողությունների ժամանակ՝ քարոզներ կարդալով և խնկարկելով: Իսկ ս. *Պատարագի* ընթացքում ընթերցում է Ավետարանը և կատարում վերաբերում: Ս. հիշատակվում է Առաքելական թղթերում, իսկ Գործք առաքելոցում նկարագրվում է, թե ինչպես է տեղի ունենում Ս-ների ընտրությունը, և ինչպես են առաքյալները նրանց պաշտոն հանձնում, որպեսզի ս. Սեղանին սպասարկեն և հոգածու լինեն նպաստի բաշխմանը: Նրանց պարտականությունն էր նպաստ հավաքել և կարիքավորներին բաժանել, այցելել աղքատներին, հիվանդներին, այրիներին, որբերին, հալածյալներին և նրանց կարիքները հոգալ: Հետագայում Ս-ի պաշտոնը սահմանափակվել է եկեղեցու մեջ: Պողոս առաքյալը Ս-ների համար հետևյալ խորհուրդներն է տվել. «Նմանապես և սարկավագները թող լինեն պարկեշտ, ոչ երկդիմի խոսող, ոչ գինեսեր, ոչ շահամոլ, այլ թող պահեն հավատի խորհուրդը մաքուր խղճով: Նախ իրենք թող փորձի ենթարկվեն և եթե անմեղադրելի գտնվեն, ապա պաշտոն կատարեն:...Սարկավագները թող մեկ կնոջ մարդ լինեն, իրենց որդիներին և իրենց տները լավ կառավարեն» (Ա Տիմ. 3.8–12):

Մաշտոցում Ս-ի ձեռնադրության համար գոյություն ունի հատուկ արարողություն, որը կատարվում է ս. Պատարագի արարողությանը զուգընթաց, բեմի վրա: Ս. եկեղեցում շապիկի վրայից իր ձախ ուսից ուրար է կախում, որը ծառայության և լուծի խորհրդանշանն է: Ս-ները կարող են լինել կուսակրոն (տես *Կուսակրոնություն*) և ամուսնացած: Կուսակրոն Ս-ները վանքերում պատրաստվում են կուսակրոն քահանայության համար: Ամուսնացած և եկեղեցում տարիներ ծառայած անձինք կարող են ձեռնադրվել Ս. և ծառայել եկեղեցում:

Գրկ. Զեպեյան Ղ., Հայ Եկեղեցվո յոթը խորհուրդները, Անթիլիաս, 1988: Սարգսյան Ս., Հայոց Եկեղեցվո խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար», 1992, 2, էջ 50–51:

Արտաշես Ղազարյան

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ, Ս. Հովհաննես Ոսկեբերան վանք, Սեբաստիա (Սվազ) քաղաքից հյուսիս-արևելք, Մայ-

բագոմ լեռան ստորոտին՝ սարավանդի վրա: Ըստ XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցու, հիմնադրել է 1022-ին Բյուզ. կայսրությունից իր երկրի փոխարեն Սեբաստիան և նրա շրջակայքը ստացած Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ-Հովհաննեսի որդի Ատոմը: Վանքում հաստատվել են Ս. *Վարագավանքից* իրենց գույքով և մատենադարանով այստեղ տեղափոխված միաբանները: Ս. Ս. Ն. վ-ում են պահվել Սենեքերիմ-Հովհաննեսի գահը և Վարագա Սուրբ Խաչը, որի անունով էլ կոչվել է Նորակառույց վանքը:

Ս. Ս. Ն. վ-ի Ս. Աստվածածին եկեղեցու (XI դ. 1-ին կես) հորինվածքի համար նախատիպ է ծառայել Վարագավանքի՝ Սենեքերիմ-Հովհաննեսի կառուցած Ս. Աստվածածին եկեղեցին: Քառակուսի հատակագծով քառախորան գմբեթավոր կառույց է, խորանների հատման անկյուններում ուղղանկյուն խորշերով, որոնցից արլ-ից մուտք է բացվում դեպի ավանդատները: Նրան կից Ս. Նշան եկեղեցին (XI դ., օծել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու աշակերտ, վանահայր Եղիշե եպիսկոպոսը) ունի մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք: Խորանի երկու կողմերում մատուռ-ավանդատներն են՝ նվիրված Պետրոս և Պողոս առաքյալներին: Եկեղեցու ներսակողմը, պատերի բարձրության կիսով չափ, երեսպատված է Քյոթահիայի (Կուտինա) հախճասալերով: Արտաքին ճակատներում ագուցված են խաչքարեր: Արմ. ճակատին կից գավիթը ծառայել է որպես վանքի առաջնորդների ու միաբանների տապանատուն: Վանքի երրորդ՝ Ս. Կարապետ եկեղեցին, ըստ ավանդության, հիմնել է Գրիգոր Ա Լուսավորիչը՝ որպես մատուռ:

1025-ին վախճանված Սենեքերիմ-Հովհաննեսի աճյունը և Վարագա Սուրբ Խաչը նրա որդիները տեղափոխել են Վարագավանք՝ Ս. Ս. Ն. վ-ում թողնելով Ս. Խաչի մասունքը: 1026-ին վանք են տեղափոխել *Հովհան Ոսկեբերանի* մարմարե տապանաքարը, որից հետո Ս. Ս. Ն. վ. ստացել է իր երկրորդ՝ Ս. Հովհաննես Ոսկեբերան անվանումը: 1058-ին վանքի գերեզմանոցում է ամփոփվել Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի դին:

1178-ին վանահայր Պսակ եպիսկոպոսը մասնակցել է Հռոմկլայի ժողովին: 1198-ին Տարսոնում, Կիլիկիայի Հայկ. թագավորության հռչակման և Լևոն Բ իշխանապետին Հայոց թագավոր օծելու տոնահանդեսին մասնակցել է Ս. Ս. Ն. վ-ի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը, որը 1203-ին Իկոնիայի սուլթանի հովանավորությամբ իրեն կաթողիկոս է հռչակել և աթոռը հաստատել Ս. Ս. Ն. վ-ում: Անանիա հակաթոռ կաթողիկոսը 1207-ին վախճանվել է և թաղվել վանքի Ս. Նշան եկեղեցու կողքին:

1317-ին վանահայր Ստեփանոս եպիսկոպոսը մերժել է ընդունել Ադանայի ժողովի կաթոլիկամետ որոշումները, 1320-ին Կիլիկիայի հայոց Օշին Ա թագավորից ստացել է արքունի մատենադարանում պահվող կիսավարտ Ավետարան, որը նրա պատվերով ավարտել է *Սարգիս Պիծակը*:

1387-ին, Բուրհանադին ամիրայի հավատուրացման պահանջը մերժելով, նահատակվել է վանահայր Ստեփանոսը, իսկ վանքը կողոպտվել է. հափշտակել են սպասքը, խաչերը, գրքերը: XV դ. վանքը եղել է գրչության կենտրոն:

1533-ին, մերժելով հավատուրացումը, ողջակիզմամբ նահատակվել է վանքի միաբան Հայրապետ աբեղան, 1534-ին, քարկոծմամբ՝ Թադևոս քահանան:

1562-ին Ս. Ս. Ն. վ-ում, Հայոց կաթողիկոս *Միքայել Ա Սեբաստացու* մասնակցությամբ, գաղտնի խորհրդակցություն է կայացել Հայաստանը պարսկա-թուրք. տիրապետությունից ազատագրելու խնդրով: 1648-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս է ընտրվել Ս. Ս. Ն. վ-ի վանահայր Ներսես արքեպիսկոպոսը: 1654–64-ին վանահայր Մելիքսեթը բարեկարգել է վանքը, Կոստանդնուպոլսից գնել սպասք, խաչեր, Ավետարան, նորոգել շենքերը, գրավից ազատել վանքի սպասքը, վճարել պարտքերը:

1696-ին Ս. Ս. Ն. վ-ում քահանա է ձեռնադրվել *Մխիթար Սեբաստացին*:

1714-ին Աստվածատուր արքեպիսկոպոսը Կոստանդնուպոլսի սեբաստացիների միջոցներով նորոգել է վանքը, գնել խոշոր, արծաթե գահ, կտավատի արտ:

1728-ին վանահայր Առաքել Ակնեցին վերակառուցել է Ս. Նշան եկեղեցու գմբեթը, կամարները, ծածկի թաղերը, արմ. կողմում վերնատուն կառուցել, նորոգել Ս. Աստվածածին եկեղեցին, սվաղել Ս. Կարապետ եկեղեցու ներսը և սեղան կանգնեցրել Հանուն Գրիգոր Ա Լուսավորչի, կառուցել առաջնորդարանի երկհարկանի շենքը՝ միաբանների սենյակներով, մառանով, գինետնով, նորոգել և բարձրացրել վանքի պարիսպը, ծաղկազարդել բա-

կը: 1731-ին հանգանակություն է կատարել և վճարել վանքի պարտքերը, ձեռք բերել ոսկե և արծաթե սպասք, եպիսկոպոսական թագ ևն:

1781-ին Հակոբ եպս. Արմտանցին կառուցել է վանքի սեղանատունը, ուխտավորների համար՝ երկհարկանի հյուրատուն, 1787-ին՝ միաբանների սենյակները և տնտ. շինությունները: 1799-ին Գրիգոր եպս. Գաղատեցին նկարազարդել է տվել Ս. Աստվածածին եկեղեցու ներսը և նոր՝ ոսկեզօծ խաչկալ պատրաստել, մասնակցել է Ս. Էջմիածնում Դանիել Սուրմառեցու (կաթողիկոս Դանիել Ա. Սուրմառեցի) ընտրությանը:

Հովհաննես եպս. Սեբաստացին 1815-ին Ս. Ս. Ն. վ-ում բացել է վարժարան, 1827-ին՝ վերանորոգել վանքը, Ս. Նշան եկեղեցու խորանում պատրաստել տվել ոսկեզօծ խաչկալներ՝ օծված Գրիգոր Ա. Լուսավորչի և Հակոբոս առաքյալի անուններով, շարադրել է Սեբաստիայի պատմությունը: 1827-ին վանքի գերեզմանոցից Ս. Աստվածածին եկեղեցու ավանդատներ են փոխադրել Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսի և Թեոդորոս աբեղայի աճյունները:

1840-ին Ս. Նշան եկեղեցու պատերի վերին մասերը զարդարվել են սրբապատկերներով: 1842-ին քանդել են վանքի գավիթը և տեղում կառուցել Ս. Հովհաննես Ոսկեբերան եկեղեցին, 1857-ին հիմնովին վերակառուցվել է Ս. Կարապետ եկեղեցին:

XIX դ. վանքն ունեցել է դաշտեր, արտեր, այգիներ, տներ, խանութներ: Եղել է նշանավոր ուխտատեղի՝ հայերի և հույների համար: Ուխտագնացության օրերն էին Ս. Աստվածածնի և Ս. Խաչի տոները և Ավագ ուրբաթը:

1915-ին Ս. Ս. Ն. վ. ամայացել է և ավերվել:

Գրկ. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., 1971: Հովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, Ե., 1974: Ալեքսանդրյան Ա., Պատմութիւն ակնավոր քաղաքին Սեբաստիոյ..., Վնտ., 1911: Ոսկյան Հ., Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիրի և Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վնտ., 1962:

Մուրադ Հասրաթյան

ՍԵԲԵՈՍ [միջնադարյան աղբյուրներում նաև՝ Սեբիոս, Եվսեբիոս (ծ. և մ. թթ. անհտ, սերել է Բագրատունիների տոհմից)], VII դարի պատմիչ: Եպիսկոպոս: Ս-ի մասին կենսագր. տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Հայտնի է, որ նա մասնակցել է 645-ի Դվինի ժողովին: Պարսից Խոսրով II Ափարվեզ արքայի օրոք կարճ ժամանակ ապրել է պարսից արքունիքում: 617-ին (ըստ Ն. Ակինյանի) Տիզբոնից Սմբատ Բագրատունի Վրկանից մարզպանի նշխարները տեղափոխել է Դարույնք ամրոցը (Կոգովիտ գավառում), որտեղ Բագրատունիների տոհմական դամբարանն էր:

Ս. գրել է «Պատմութիւն» («Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն») մեծարժեք պատմ. երկը, որն ընդգրկում է VI–VII դդ. պատմությունը՝ հասնելով մինչև 661-ը (հնագույն ձեռագրերում հեղինակի անունը և գրքի վերնագիրը պահպանված չեն, Մատենադարան, ձեռ. № 2639): Հայ պատմիչի երկը արժեքավոր սկզբնաղբյուր է իր ժամանակի Հայաստանի և նրա հարևան երկրների պատմ. անցքերի ուսումնասիրման համար (պարսիկների՝ 614-ի Երուսաղեմի գրավումը, քաղաքի կործանումը, հրեաների վտարումը, կենարար խաչի փոխադրումը Պարսկաստան, Պարսկաստանից՝ Կ. Պոլիս, ապա՝ Երուսաղեմ ու կրկին Կ. Պոլիս, Խոսրով II Ափարվեզի և Հերակլիոսի պարսկաբյուզ. պատերազմները, արաբների քաղ. ասպարեզ իջնելը, Սասանյանների անկումը ևն): Ս. կարևոր տեղեկություններ է հաղորդել նաև VI–VII դդ. Հայ առաքելական եկեղեցու պատմության վերաբերյալ. նկարագրել է Բյուզանդիայի Մավրիկիոս (Մորիկ) կայսրի բռնարարքները՝ քաղկեդոն. դավանանքի պարտադրում, հայ կաթողիկոս. աթոռի պառակտում, Ավանում հայ. քաղկեդոն. հակաթոռ կաթողիկոսության հիմնում («Պատմութիւն», գլ. ԺԹ), գրել Կոստաս II կայսրի և Կ. Պոլսի պատրիարքի՝ Հայոց կաթողիկոսին և Թեոդորոս Ռշտունի իշխանին հղած նամակի մասին, որտեղ նրանք հորդորել են վերջիններին ընդունել քաղկեդոն. դավանանք: Նամակին պատասխանելու համար Դվինում 648-ին հրավիրվել է ժողով, որին, ինչպես Ս. է հավաստում, մասնակցել են Հայոց բոլոր նախարարներն ու 70 եպիսկոպոսներ: *Ներսես Գ Տայեցի* կաթողիկոսը, ըստ Ս-ի, մերժել է դավան. միության բյուզ. առաջարկը:

Ս. անդրադարձել է նաև Սասանյան Պարսկաստանի և այլ երկրների քրիստ. եկեղեցիներին: Ներկայացրել է *Պարսից ժողովը*, որտեղ մերժվել են *Քաղկեդոնի ժողովի* որոշումները և *Նեստորականությունը*: Խոսրով II-ի հրամանով Պարսից տերության մեջ պաշտոնական է ճանաչվել Հայ առաքելական եկեղեցու դավանանքը: Այդ առիթով Ս. գրել է, որ ժողովի ընթացքի վրա մեծ ազդեցություն են ունեցել

պարսից թագուհին՝ ուղղափառ ասորուհի Շիրինը, և Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին:

Ս-ի «Պատմության» մեջ հաղորդվում է, որ *Կոմիտաս Ա Աղցեցի* կաթողիկոսը հիմնովին նորոգել է Վաղարշապատի Ս. Էջմիածին կաթողիկեն (608), նախկին վկայարանի տեղում (618) կառուցել Ս. Հռիփսիմե վանքը, Ներսես Գ Տայեցին կառուցել է *Զվարթնոցի* Ս. Գրիգոր կաթողիկեն (Ս. անվանել է Զվարթնոց): Ս-ի երկից օգտվել են պատմագիրներ Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ), Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Սիմեոն Ապարանցին և ուրիշներ:

Երկն առաջին անգամ հրատարակել է Թ. Միհրդատյանը՝ «Պատմութիւն ի Հերակլն» վերնագրով, 1851-ին: Երկու անգամ հրատարակվել է ռուս. (Գ. Պատկանյանի թրգմ., 1862-ին, Ս. Մալխասյանցի՝ 1939-ին), ֆրանս. (Ֆ. Մակլերի թրգմ., 1904-ին), հատվածաբար՝ գերմ. (Հ. Հյուբշմանի թրգմ., 1875-ին):

Երկ. Պատմութիւն, աշխատասիր. Գ. Աբգարյանի, Ե., 1979:

Գրկ. Ակինյան Ն., Սեբէոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր «Պատմութիւնն ի Հերակլ», Վնն., 1924: Գրիգորյան Մ., Դիտողություններ Սեբեոսի պատմագրոց բնագրին վրա, Վնն., 1970:

Ռաֆիկ Մաթևոսյան

ՍԵՂԱՆ, կրոնական իմաստով՝ 1. սուրբ և սրբարար պատարագամատույց, քառանկյուն շինվածք՝ *խորանի* կենտրոնում, որի վրա կատարվում է Աստծո Գառի՝ *Հիսուս Քրիստոսի* հավիտենական *Պատարագի* խորհուրդը: Ս. կոչվում է նաև Աստծո աթոռ, որի վրա անտեսանելիորեն բազմում է Սուրբ *Երրորդությունը*:

Ս. մարմարե տափարակ է՝ կանգնեցված քարե այան վրա, բոլոր կողմերից օծված է տասներկու տեղերով, իսկ Ս-ի կենտրոնը կոչվում է Ս-ի *օծում* և գլխ. դագաթ: Ներկայիս Ս., ի տարբերություն հին՝ չորս կողմից բաց Ս-ների, միայն առջևի ու երկու կողմերից է բաց, իսկ հետևից դրվում է խաչկալ: Ի տարբերություն բոլոր քրիստ. եկեղեցիների, *Էջմիածնի Մայր տաճարը*, բացի հիմն. պատարագամատույց Ս-ից, օծված է նաև Իշման Սուրբ Ս-ով, որը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի՝ *Գրիգոր Ա Լուսավորչին* տեսիլքով ցույց տրված իշման տեղը:

Ս-ի վրա մշտապես դրվում է Ատյանի Ավետարանը. դա մեզ հիշեցնում է քրիստոսյան պատվիրաններն ու Ահեղ դատաստանի օրը, երբ Ավետարանով՝ Աստծո խոսքով, քննվելու են և դատվելու մեր բոլոր խորհուրդներն ու գործերը: Հավատացյալները համբուրում են այն եկեղեցի մտնելիս և արարողության ավարտին:

2. Ս-ներ են կոչվել նաև Հին ուխտի զոհասեղանները, որոնց վրա զոհեր մատուցելով՝ Աստծո ընտրյալ անձինք արտահայտել են իրենց անձերի ընծայումն Աստծուն, կատարել մաքրագործության ակտը՝ մեղքերի *քավության* և Աստծո հետ հաղորդակցություն հաստատելու համար: Մինչև Մովսեսը Ս. են պատրաստել և նրանց վրա զոհեր (ընծաներ) մատուցել դեռևս մինչջրհեղեղյան շրջանում, ինչպես՝ արդար Աբելի (Ծննդ. **4.**3–5) զոհը: Ջրհեղեղից հետո *Նոյը* զոհասեղան է սարքել *Մասիսի* վրա և զոհ մատուցել:

Մովսիսական Վկայության խորանում և *Երուսաղեմի* տաճարում առանձնացվել են երեք Ս-ներ. մեկը՝ առաջավորության 12 հացերի (Աստծուն նվիրված պատարագ կամ ընծա, որից արտոնված էր ուտել միայն քահանաներին, տես Ելք **25.**23–30), երկրորդը՝ խունկ ծխելու (Ելք **30.**1–10), իսկ երրորդը՝ զոհեր մատուցելու՝ ողջակեզների համար (Ելք **27.**1–8):

Ողջակեզի Ս. անփուտ սատիմի փայտից էր՝ պղնձապատ, ինչի համար կոչվել է նաև «պղնձե սեղան»: Չորս անկյուններում կային չորս եղջյուրներ, որոնցից բռնող հանցապարտներից ոմանք կարող էին պաշտպանություն գտնել: Խնկարկության Ս. նույնպես սատիմի փայտից էր՝ ոսկեպատ: Քահանաները նրա վրա խունկ են ծխել: Հացի Ս. նույնպես պատրաստվել է կարծր փայտից և պատվել ոսկով: Նրա վրա մատուցվել է գինի և դրվել առաջավորության հացերը:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.3, 1-ին պատկերը:

Լևոն Սարգսյան

ՍԵՊՈՒՀ ԼԵՌԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՎԱՆՔ, Հանգիստ Լուսավորչի վանք, Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Դարանաղյաց և Եկեղյաց գավառների սահմանում՝ Սեպուհ լեռան վրա: Հիմնադրվել է *Գրիգոր Ա Լուսավորչի* գերեզմանի տեղում: 921-ին կաթողիկոս *Հովհաննես Ե Դրասխանակերտցին* ուխտագնացություն է կատարել Ս.Լ.Ս.Գ.Լ.վ. և կառուցել եկեղեցի: Վանքը ծաղկել է XIII–

XVI դդ., եղել կրթ. և գրչության կենտրոն, որտեղ ընդօրինակվել են բազում ձեռագրեր: 1590–97-ին վանքի կրոնավոր է եղել *Գրիգոր Դարանաղցին*: 1439-ին ակկոյունլու ցեղախումբը կողոպտել է վանքը, և միաբանությունը որոշ ժամանակ ցրվել է: XVII դ. Ս.Լ.Ս.Գ.Լ.վ. տուժել է ջալալիների ասպատակություններից և անկում ապրել: XIX դ. ունեցել է ընդարձակ կալվածքներ (գյուղեր, անտառներ, վարելահողեր), եղել նշանավոր ուխտատեղի (ուխտագնացության օրը Գրիգոր Ա Լուսավորչի տոնի օրն էր): 1895-ին վանքը կողոպտվել է և լքվել: 1939-ին զգալիորեն ավերվել է երկրաշարժից:

Աղյուսաշեն բարձր պարսպով շրջապատված վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ դամբարան-եկեղեցին («Հանգիստ Լուսավորչի») համալիր կառույց է՝ բաղկացած արլ. կողմում դրսից և ներսից կիսաշրջանաձև խորանով ու գմբեթով պսակված բուն դամբարանից (գմբեթը քանդված է), որին հվ-ից և հս-ից կից են ավանդատները: Դամբարանին ու ավանդատներին արմ-ից կից է քառասյուն, եռանավ բազիլիկ՝ արլ-ում խորանով, որը, փաստորեն, գավթի դեր է կատարում: Դամբարանից հս-արլ. գտնվում է գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Ամենափրկիչ եկեղեցին (գմբեթը չի պահպանվել): Նրա հվ. կողմում «Բարեհամ» կոչվող աղբյուրն է, որը, ըստ Ներսես Շնորհալու հիշատակած ավանդության, բխեցրել է Գրիգոր Ա Լուսավորիչը: Ս. Ամենափրկիչ եկեղեցու հվ-արլ. կողմում է գտնվում ս. *Հռիփսիմյանց կույսերից Մանեի* քարանձավը (Մանյա այրքը), որտեղ հետագայում ճգնել է Գրիգոր Ա Լուսավորիչը:

Գրկ. Սյուրմեյան Գ., Երզնկա, Կահիրե, 1947: Ոսկյան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վնն., 1951: Թիերի Ժ.Մ., Սեպուհ լեռան հուշարձանները (հնագիտական ուսումնասիրություն), «Էջմիածին», 1989, № 4,5,6:

Մուրադ Հասրաթյան

ՍԵՎ ԼԵՌԱՆ ԺՈՂՈՎ 1113, գումարվել է Կիլիկյան Հայաստանի Սև լեռան Քեսունի Կարմիր վանքում, կաթողիկոսական աթոռի համար *Գրիգոր Գ Պահլավունու* և Աղթամարի եպիսկոպոս Դավիթ Արծրունու վեճի առիթով: Նորընտիր կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու դեռահասությունը պատրվակ դարձնելով՝ Դավիթ եպիսկոպոսը Վասպուրականի Ջորավանքում համախոհ հինգ եպիսկոպոսների կողմից ձեռնադրվել էր հակաթոռ կաթողիկոս: Վերջինս, ի հակադրություն Կիլիկյան Հայաստանի, ջանում էր ճանաչում գտնել բուն Հայաստանում: Ս. լ. ժ. (մասնակցել են 2500 եպիսկոպոսներ, վարդապետներ, իշխաններ, աշխարհականներ) օրինական կաթողիկոս է ճանաչել Գրիգոր Գ Պահլավունուն: Սակայն Դավիթ եպիսկոպոսը, մերժելով Ս. լ. ժ-ի որոշումը, Աղթամարում հիմնադրել է կաթողիկոսություն (տես *Աղթամարի կաթողիկոսություն*): Ս. լ. ժ-ում ընդունվել է եկեղեց. նոր կանոն, ըստ որի, Հայոց կաթողիկոսի ընտրությունը վավերական է համարվել միայն բուն Հայաստանի չորս եպիսկոպոս. մեծ աթոռների (Բջնու, Հաղպատի, Արտազի, Տաթևի) համաձայնության դեպքում:

Գրկ. Մխիթարյան Ա., Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1874: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՍԵՎԱՆԱՎԱՆՔ, Սևանի անապատ, հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը՝ 305-ին, Սևանա լճի կղզում (այժմ՝ թերակղզի) և հեթանոսական մեհյանի տեղում կառուցել Ս. Հարություն եկեղեցին: IX դ. Ս-ի վանական կյանքի վերածնունդը կապված է Մաշտոց Եղիվարդեցի վարդապետի (ապագա կաթողիկոս *Մաշտոց Ա Եղիվարդեցի*) գործունեության հետ: Նա հիմնել է Ս. Առաքելոց միաբանությունը և 874-ին Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու դուստր, Սյունիքի Վասակ Գաբուռ իշխանի կին Մարիամի միջոցներով կառուցել Ս. Կարապետ և Ս. Առաքելոց եռախորան, խաչաձև գմբեթավոր եկեղեցիները (դրանք այն 30 եկեղեցիներից էին, որ իշխանուհին ուխտել էր կառուցել իր վաղամեռիկ ամուսնու հիշատակին): Հվ-արլ. անկյունում ավանդատնով Ս. Առաքելոց եկեղեցին ունի տրոմպային փոխանցումով կառուցված 8-նիստ թմբուկով գմբեթ, իսկ Ս. Աստվածածին եկեղեցին արլ. կողմում ունի երկու ավանդատներ, որոնցից հս-արլ. հավելվել է հետագայում: Արմ. կողմում կցվել է քառասյուն գավիթ, որը հնագույններից է (կանգուն է եղել մինչև 1930-ական թթ.): Գավթի սյունները պսակվել են հայկ. կիրառ. արվեստի արժեքավոր նմուշներ փայտե քանդակազարդ խոյակներով (այժմ՝ ՀՊՊԹ-ում և ՍՊԲ Էրմիտաժում): Ս. առաջնորդվել է *Բարսեղ Կեսարացու* համակեցության 9 կանոններով: Միաբանները զբաղվել են Սուրբ Գրքի ընթերցանությամբ և դրանց ընդօրինակությամբ: 874-ին Աշոտ Բագրատունին վանքին է նվիրաբերել 6 գյուղ, այ-

գիներ Գառնիում և Երևանում: Մաշտոց Ա Եղիվարդեցին բացել է դպրոց ու հարստացրել վանքի մատենադարանը: XV դ. Ս-ում Դանիել վարդապետը բացել է Սևանի վարդապետարանը: XVII դ. համահայկ. անապատական կյանքի վերածննդի տարիներին Ս. գործել է որպես անապատ, որտեղ բացի Բարսեղ Կեսարացու համակեցությունից կանոններից կիրառվել են նաև Սարգիս Սաղմոսավանեցու կազմած 7 կանոնները: Միաբաններն ուսումնասիրել են նաև արտաքին գիտությունները (փիլիսոփայություն, քերականություն, տոմար):

XVII դ. կեսին Թիֆլիսցի Զիթաղյան եղբայրների միջոցներով վերանորոգվել են միաբանության եկեղեցիները: XVII դ. կղզու արմ. ստորոտին կառուցվել է Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցին: Ս-ում ապրել ու գործել են կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցին*, կաթողիկոս ու պատմիչ *Հովհաննես Ե Դրասխանակերտցին*, 1692-ից, երկու տարի միաբանությունում է մնացել *Մխիթար Սեբաստացին*: 1825-ին Ս-ում Զաքարիա Գուլասպյան Տփխիսեցին վանքի առաջնորդ Սարգիս վարդապետի պատվերով գրել է Ս-ին նվիրված առաջին մենագրությունը: 1828-ին Էջմիածնի Սինոդի անդամ Մանվել Կյումուշխանեցին ավարտել է Ս-ի միաբանության պատմության շարադրանքը: 1840-ական թթ. կղզի է այցելել Հովհաննես եպս. *Շահխաթունյանցը*, ուսումնասիրել և իր գրքում հատուկ գլուխ հատկացրել Ս-ի պատմությանը:

Ս-ի սարկավագների և դպիրների ուսումնառության կարիքները հոգալու նպատակով, կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու հրամանով, 1869-ին կղզում բացվել է հոգևոր դպրոց, որի ուսուցիչները Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասախոսներն էին (դպրոցն իր գործունեությունը շարունակել է մինչև 1880-ը): 1895-ին Ս-ի վերջին վանահայրը Սարգիս Փիլոյան դպիրն էր, որը ևս գրել է վանքի պատմությունը և հրատարակել: 1898-ին Ավետիս Ղուկասյանի բարերարությամբ դպրոցական շենք է կառուցվել:

Ս. մինչև 1830-ը առանձին միավոր էր, որից հետո մտել է Երևանի կոնսիստորիայի իրավասության տակ: 1901-ին կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցու* (Խրիմյան Հայրիկ) կոնդակով Ս. վերածվել է աղոթատեղիի: Ս. Կարապետը, Ս. Առաքելոցը, Ս. Աստվածածինը որպես գործող եկեղեցիներ գոյատևել են մինչև 1930-ական թթ., այնուհետև փակվել են, իսկ Ս. Աստվածածին եկեղեցին քանդվել է: Այսօր Ս. Կարապետ և Ս. Առաքելոց եկեղեցիները գործող են:

Ս-ի վարդապետարանը հիմնել է Դանիել վարդապետը 1451-ին: Հաջորդել է *Տաթևի համալսարանին*՝ կոչվելով Արևելյան տան վարդապետարան, իսկ նրա ղեկավարը՝ «Բաբունապետ համայն ազգի»: Դանիել վարդապետը Տաթևի վարդապետարանի սանն էր, սովորել էր Շմավոն բաբունապետի մոտ, ապա՝ Էջմիածնի դպրատանը: Վարդապետարանը ղեկավարել է մինչև XVI դ. սկիզբը: Ս-ում Դանիել վարդապետի սաներն են եղել Ներսեսը (հետագայում՝ Ս-ի առաջնորդ), Հորդանան վարդապետը (*Տաթևի վանքի* ապագա առաջնորդ), Գալուստ վարդապետը (*Հովհաննավանքի* ապագա առաջնորդ) և ուր.: Ս-ի վարդապետարանում սովորել են Աբրահամ Սևանցի, Գրիգորիս արքեպիսկոպոս, Սահակ վարդապետ ծաղկողները: Վարդապետարանի ուս. ծրագիրը կրկնել է Տաթևի համալսարանի ծրագիրը: 1990-ին բացվել է Ս-ի դպրանոցը և Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անունով կոչվել *Վազգենյան հոգևոր դպրանոց*:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.3, 2-րդ պատկերը:

Գրկ. Մանվել Կյումուշխանեցի, Պատմութիւն անցից անցելոց Սեվանայ վանուց, Վաղ-պատ, 1871: Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր Բայազիտ գավառ, Վաղ-պատ, 1895: Լալայան Ե., Սևան, ԱՀ, գիրք 17, Թ., 1908: Ղազարոսյան Ա., Սևանա կղզու եկեղեցիները, ԼՀԳ, 1990, № 1: Նույնի, Դանիել Բաբունապետը և Սևանի դպրոցը, ՊԲՀ, 1986, № 3:

Արփինե Ղազարոսյան

ՍԵՎԵՐԻՈՍՅԱՆՆԵՐ, քրիստոնեական վարդապետության հետևորդներ, որի հիմնադիրը Սևերիոս Անտիոքացին է (465–538)՝ հակաքաղկեդոնական պայքարի ամենանշանավոր աստվածաբաններից մեկը: 512–518-ին եղել է *Անտիոքի* պատրիարքը: Բյուզ. կայսր Հուստինոս I-ի (518–527) օրոք, երբ վերսկսվել են հալածանքները *Քաղկեդոնի ժողովը* մերժողների դեմ, Սևերիոս Անտիոքացին 518-ին մի շարք հայտնի եպիսկոպոսների հետ աքսորվել է *Ալեքսանդրիա*: Աքսորյալների մեջ էր նաև Հալիկառնասի Հուլիանոս եպիսկոպոսը, որի հետ Սևերիոս Անտիոքացին վեճի է բռնվում Տիրոջ մարմնի *անապականության* շուրջ:

Ըստ Սևերիոս Անտիոքացու՝ Տիրոջ մարմինն ապականացու է, կամ Հիսուս Քրիստոսը սովորական մարդկանց պես ակամա և հարկադրա-

բար է կրել մարդկային կրքերը: Ապականություն և անապականության եզրերն այդ վիճաբանության (տես նաև *Հուլիանոսականներ*) մեջ կիրառվում էին ոչ թե Տիրոջ մարմնի քայքայման կամ ոչ քայքայման իմաստով (բոլորն էլ համաձայն էին, որ Տիրոջ մարմինը ենթակա չէ մեղքի և քայքայման), այլ՝ Փրկչի մարդկային կիրքընդունակության ակամա և կամովի լինելու իմաստով: Հարցն այն մասին էր, թե որքանով են Քրիստոսին բնորոշ մարդկային, այսպես կոչված՝ անմեղ (անանգոնելի, անպարսավելի) կրքերը՝ տխրություն, երկյուղ, սով, ծարավ ևն, որոնք դիտարկվում են որպես մեղքի հետևանքային վիճակներ:

Հայ եկեղեցին կտրականապես մերժել է Սևերիոս Անտիոքացու «ապականության» ուսմունքը: VI–VIII դդ. «ապականության» հետևորդների դեմ սուր պայքար է ծավալվել, որը եզրափակվել է 726-ի *Մանազկերտի եկեղեցական ժողովով*: Ըստ եկեղեցու հայրերի՝ Քրիստոսը մարդկային կրքերը կրում է կամավորապես և ոչ «ի հարկէ», առանց բնության բռնադատվածության: Քրիստոսի երկրային կյանքը փրկական տնտեսություն է և զերծ պատահականություններից: Քրիստոսը մեր փրկության համար կրել է բոլոր մարդկային տկարությունները և ազատորեն անցել մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով մեղքը մարմնի մեջ և ազատելով մարդկանց մեղքի իշխանությունից:

Սևերիոս Անտիոքացու գործերը մեծ մասամբ պահպանվել են (125 ճառ, 400 նամակ), հիմնականում՝ ասորերեն թարգմանություններով, սակայն ամբողջությամբ հրատարակված չեն:

Գրկ. Գրիգոր Տաթեվացի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, Մատենագրութիւնք, Վնտ., 1833: Հովսեփյան Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Արամյան Մ., Հովհաննես Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից» ժողովածուն, «Գանձասար», 6, 1996: *Болотов В. В., Лекции по истории древней церкви, т. 4. М., 1994;* Lebon J., Monophysisme se've'rien, Louvain, 1909; Draguet R., Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ, Louvain, 1924.

Մեսրոպ քհն. Արամյան

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ (1710, Երևան – 26.7.1780, Վաղարշապատ, ամփոփվել է Ս. Գայանե վանքի գավթի հվ. կողմում), Ամենայն Հայոց կաթողիկոս 1763-ից: Հաջորդել է *Հակոբ Ե Շամախեցուն*: Ուսանել, ապա դասավանդել է Էջմիածնի Մայր աթոռի դպրոցում: Եղել է Էջմիածնի նվիրակ Կ. Պոլսում և Մադրասում: Կաթողիկոս ընտրվելուց հետո ամրապնդել է Էջմիածնի կաթողիկոսության քաղ. դերը, հեղինակությունն ու նյութ. բարեկեցությունը, հետևողական պայքար մղել Հայ եկեղեցու միասնության համար, դադարեցրել կաթոլիկության քարոզները Ախալցխայում, Ալաշկերտում, Բայազետում: Մեծ ջանքեր է գործադրել Գանձասարի կաթողիկոսության նկատմամբ Էջմիածնի իրավունքները պահպանելու, մահմեդ. իշխողների ոտնձգություններից Հայ եկեղեցին պաշտպանելու ուղղությամբ: Ս. Ա Ե-ու գործունն միջամտությամբ դադարեցվել է Արցախում ինչպես հակաթոռ կաթողիկոսների միջև եղած պայքարը, այնպես էլ նրանց անհնազանդությունը Մայր աթոռի հանդեպ: Իրան. և թուրք. տիրապետության պայմաններում, քաղ. նկատառումներով ստիպված է եղել դատապարտել Հայաստանի ազատագրման Հովսեփ Էմինի ծրագիրը, ապա նաև Մադրասի խմբակի գործունեությունը: Սակայն դեմ չի եղել Հայաստանի ազատագրմանը որևէ հզոր քրիստոնյա պետության օգնությամբ և այդ նպատակով կապ է հաստատել ռուս. արքունիքի հետ: Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսահայոց թեմի նկատմամբ վերականգնելու համար 1766-ի օգոստ. 1-ին, Դավիթ վարդապետի գլխավորությամբ, պատվիրակություն է ուղարկել Սանկտ Պետերբուրգ՝ Եկատերինա II կայսրուհուն ուղղված կոնդակով: Կայսրուհին 1768-ի հրովարտակով հաստատել է Էջմիածնի Մայր աթոռի իրավասությունը Ռուսահայոց թեմի նկատմամբ: Այդ վիճակն ամրապնդելու համար Ս. Ա. Ե. 1773-ին Ռուսահայոց առաջնորդ է կարգել Հովսեփ արք. *Արղությանին*:

Ս. Ա. Ե. ծավալել է շին. և կրթ. լայն գործունեություն: 1766-ին պարսպապատել է տվել Էջմիածնի վանքը, Էջմիածնի վանքի պարսպի ներսում կառուցել նոր սեղանատուն, վանական դպրոցի նոր շենք, նորոգել է Վեհարանը, տաճարի տանիքը և այուներից մի քանիսը: Աշխուժացրել է *Էջմիածնի դպրոցի* գործունեությունը, հիմնել Էջմիածնի տպարանը (1771) և թղթի գործարան (1776):

Ս. Ա. Ե. հեղինակ է կրոն., փիլ., պատմ. բնույթի մի շարք երկերի: Հայ պատմագրության աչքի ընկնող երկերից է 25 գլխից բաղկացած նրա «Ջամբռ» (1873) աշխատությու-

նը, որտեղ համառոտակի շարադրել է Հայ եկեղեցու պատմությունը, նախորդ կաթողիկոսների գահակալման տարիները, հակաթոռ կաթողիկոսությունների և պատրիարքությունների անջատողական գործունեության հասցրած վնասը ևն: Մի շարք գլուխներում ներկայացրել է Հայոց տերունի (Մայր աթոռին անմիջաբար հարկատու) և առաջնորդական վիճակները, դրանց սահմանները, բնակավայրերը, հասույթների գանձման կարգը, կաթողիկոսի իրավունքներն ու արտոնությունները, Աղվանից (Գանձասարի), Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսությունների սահմանափակ իրավասությունները: Երկի 20–24-րդ գլուխներում բերված են Հայ եկեղեցուն իրան. և թուրք. իշխանությունների չնորհած հրովարտակների, հրամանագրերի, պաշտոնագրերի բովանդակությունը: Վերջին գլուխը նվիրված է Երևանի խանության 21 վանքերին: Ս. Ա Ե. գրել է նաև դավանաբան. [«Գիրք որ կոչի Պարտավճար» (1779)], փիլիսոփայական («Համառօտ լուծմունք Պորփիւրի», Մատենադարան, ձեռ. № 1818, թ. 4ա–36ա, «Մեկնութիւն Պրոկղի», ձեռ. № 2573, թ. 1ա–164ա, «Լուծմունք արտաքին գրեանցն», ձեռ. № 1817, թ. 43բ–49ա, 51բ–113բ, 114ա–150բ), քարոզխոսական (Մատենադարան, ձեռ. № 2212, 2314) երկեր, եկեղեց., հայրենասիր., հայ ժողովրդի ծանր ներկան ողբացող տաղեր և աղոթքներ («Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգեւոր», 1772): Լրացրել, կարգավորել և հրատարակել է Հայ եկեղեցու «Տօնացոյցը» (հ. 1, 2, 1774)՝ ծեսերի ու արարողությունների մեջ միաձևություն մտցնելու նպատակով: Այն գործադրվել է 1777-ի սկզբից:

Կաթողիկոս. գահին Ս. Ա Ե-ուն հաջորդել է *Ղուկաս Ա Կարնեցին*:

Երկ. Կարգ թաղման կարգաւորաց, Էջմիածին, 1777: Տաղարան փոքրիկ, Էջմիածին, 1777: Սահմանադրութիւն վասն հնգից կիւրակէից, ԿՊ, [ա.թ.]:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Լեո, Երկ. ժող., հ. 3, գիրք 2, ե., 1973:

Պավել Զորանյան

ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑԻ, Սիմեոն Զամոսցացի, Սիմոն Միկոլայովիչ [1584, ք. Զամոսց (Լեհաստան) – 1637, Լվով], գրիչ, ուղեգրող, բանաստեղծ, մանկավարժ: Սովորել է ծննդավայրի հայկ. վարժարանում, եղել տաղերգու և գրիչ Հակոբ Թոխաթցու սանը: Ուսումը շարունակել է Կ. Պոլսում, աշակերտել Գրիգոր Կեսարացուն, կաթողիկոս Մովսես Գ Տաթևացուն, Ազարիա Սասնեցուն (1608–11), ստացել դպրի աստիճան: 1608–19-ին ճանապարհորդել է Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Հս. Աֆրիկայի երկրներում, այցելել Հայաստան: 1624–36-ին հաստատվել է Լվովում, տեղի հայկ. դպրոցում եղել ուսուցիչ, զբաղվել է գրչությամբ, գրական աշխատանքով: Ս. Լ-ու երկասիրություններից արժեքավոր է հատկապես «Ուղեգրությունը», որն իր ձևով ու բովանդակությամբ եզակի երևույթ էր միջնադարյան գրականության մեջ: Հեղինակը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդել հայկ. գաղթավայրերի, Հայաստանի քաղ. և սոցիալ-տնտ., մշակութ. կյանքի վերաբերյալ, անդրադարձել Հայ եկեղեցու պատմությանը, նկարագրել այցելած եկեղեցիներն ու վանքերը, ներկայացրել եպիսկոպոսներին, վարդապետներին, քահանաներին, ծանոթացրել եկեղեցու վիճակին, դպրոց. գործի դրվածքին: «Տարեգրություն»-ում, որն առաջինի շարունակությունն է, շարադրել է Լեհաստանի պատմության 1623–35-ի կարևորագույն իրադարձությունները, մեծ տեղ հատկացրել լեհահայ համայնքին, այնտեղ ծագած դավան. խնդիրներին: Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրման համար ուշագրավ է «Վիպասանություն» երգիծ. պոեմը (զետեղվել է Ղ. Ալիշանի հրատարակած «Կամենից. Տարեգիրք...» երկում, 1896): Ուղղված է կաթոլիկ. գաղափարախոսության և Լեհաստանի հայկ. համայնքի հոգևոր առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի շահատակությունների դեմ: Պատմ. մեծ արժեք ունեն Ս. Լ-ու հիշատակարանները: *Վարդան Արևելցու* «Մեկնութիւն Հնգամատենին» (ընդօրինակել է Ս. Լ.) երկում թողած հիշատակարանում (1636) նա նկարագրել է Մելքիսեդեկ աթոռակից կաթողիկոսի Լվով ժամանելու, Նիկոլ Թորոսովիչին առաջնորդ կարգելու և այդ ամենի հետ կապված իրադարձությունները: Ըստ Ս. Լ-ու՝ սեփական պետականության բացակայության պայմաններում հայերի գլխ. խնդիրը գոյատևումն է՝ մայրենի լեզվի, դպրոցի, հայ առաքելական եկեղեցու ավանդույթների և ինքնուրույնության պահպանմամբ: Այս և հակակաթոլիկ. հայացքների համար հալածվել է, բանտարկվել: Ս. Լ. ընդօրինակել է բազում ձեռագրեր (պահպանվել են 12-ը):

Երկ. Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, Վնն., 1936:

Գրկ. Ակինյան Ն., Սիմեոն դպիր Լեհացի, ՀԱ, 1932, էջ 447–464:

Պետրոս Հովհաննիսյան

ՍԻՄԵՈՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1595–1600, Հին Ջուղա – 27.2.1657, Եվդոկիա), փիլիսոփա, տրամաբան, քերական, մանկավարժ: Սկզբ. կրթությունն ստացել է Նոր Ջուղայում, 1620-ից աշակերտել տեղի հոգևոր առաջնորդ Խաչատուր Կեսարացուն՝ Ս. Ամենափրկիչ վանքին կից նրա բացած դպրոցում: 1629-ի վերջին Խաչատուր Կեսարացին՝ որպես Էջմիածնի նվիրակ, իր երեք աշակերտների հետ, որոնց թվում նաև Ս. Ջ., մեկնել է Լեհաստան: Ճանապարհին նրանք այցելել են Կեսարիա, Կ. Պոլիս, Ղրիմ և հայաշատ այլ վայրեր: Լվովում ականատես են եղել լեհահայերի բռնի կաթոլիկացման փորձերին: Լեհահայոց հոգևոր առաջնորդը և նրա աջակից կաթոլիկ միսիոներները զգալով, որ լեհահայերի կաթոլիկացմանն ընդդիմացող Էջմիածնի պատվիրակները մեծ համբավ ու հեղինակություն են ձեռք բերել ժողովրդի շրջանում և խոչընդոտել են իրենց հայակործան գործունեությանը, նրանց վարկաբեկելու դիտավորությամբ կազմակերպել են դավանաբան. և գիտ. բանավեճ, որտեղ ի հայտ են եկել հայաստանցիների կրթ. ցածր մակարդակն ու գիտելիքների պակասը, և Էջմիածնի պատվիրակները պարտված վերադարձել են Հայաստան: 1631-ի սկզբին Խաչատուր Կեսարացին, Ս. Ջ. և *Ոսկան Երևանցին* սկսել են ուսանել ճանաչված փիլիսոփա ու մանկավարժ Մելքիսեթ Վժանեցու մոտ: 1631-ի աշնանը Խաչատուր Կեսարացին և Ս. Ջ. մեկնել են Նոր Ջուղա, որտեղ մանկավարժ. գործունեությանը զուգընթաց Ս. Ջ. զբաղվել է ինքնակրթությամբ, մասնակցել Խաչատուր Կեսարացու հայկ. տպարանի հիմնման (1638) ու հետագա աշխատանքներին: Շուրջ երեք տարի խորամուխ լինելով «արտաքին գիտությունների» մեջ՝ Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում դասավանդել է քերականություն և փիլիսոփայություն: Տպարանը փակվելուց հետո Ս. Ջ. *Փիլիպոս Ա Աղբակեցի* կաթողիկոսի հրավերով եկել է Հայաստան: 1641-ին կարգվել է վարդապետ և դասավանդել Հովհաննավանքի դպրոցում, ապա դպրոցի հետ Հովհաննավանքից տեղափոխվել Էջմիածին: Հավանաբար 1641–43-ի ընթացքում եղել է Կ. Պոլսում և կրոնադավանաբան. հարցերի շուրջ վեճի բռնվել հայագետ, կաթոլիկ միսիոներ Գալանոս Կղեմեսի հետ: Վերջինս խոստովանել է, որ Ս. Ջ. ունեցել է «ամենիմաստ վարդապետի» համբավ և շատ հետևորդներ: Իր «յոյժ բարեբարոյ, հեզահոգի և անընչասէր» բարքի համար Երևանի բնակչության և հոգևորականության պահանջով 1640-ական թթ. կեսին Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսը Ս. Ջ-ուն նշանակել է նրանց հոգևոր առաջնորդ (հավանաբար, այդ առիթով էլ ձեռնադրել եպիսկոպոս), և նա տեղափոխվել է Հավուց թառ վանքը:

Կրոնադավանաբան. ըմբռնումներով Ս. Ջ. պաշտպանել է Հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնությունը: Մարտնչել է վերաբորբոքված միարարական շարժման (տես *Ունիթորություն*) դեմ, ղեկավարել հակամիարար. պայքարը, նպաստել հայ ժողովրդի ազգ. ինքնագիտակցության բարձրացմանը: Փիլիսոփայության հարցերում Ս. Ջ. եղել է Արիստոտելի, Նեմեսիոս Եմեսացու, Պրոկղ Դիադոխոսի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու հետևորդը, վերականգնել ու շարունակել հայ իմաստասիրության դարավոր ավանդները: Նա ընդունել է Աստծո գոյությունն ու արարչագործությունը, բնության համեմատությամբ Աստծո առաջնային լինելը: Բնության ու Աստծո փոխհարաբերության հարցը քննելիս հայտարարել է, թե Աստված բնությունը և ամեն ինչ ստեղծել է ոչնչից: Թեև նա այն կարծիքին է, որ աշխարհում ամեն ինչ կատարվել է Աստծո գիտությամբ, սակայն չի ժխտել նաև բնության մեջ պատճառակցական կապերի գոյությունը: Նրա ըմբռնմամբ, Աստված ոչ միշտ ու ամենուր է արարիչ. նա այդպիսին է միայն ի սկզբանե, այսինքն՝ բնության ստեղծման գործում, իսկ դրանից հետո բնությունը սկսում է զարգանալ իր ներքին օրենքներով ու օրինաչափություններով: Ս. Ջ. անսկիզբ ու անվախճան է համարել միայն Աստծուն, իսկ մնացածը Աստծո ստեղծածն է, այսինքն՝ սկիզբ ունի: Եվ հետո, թեև Աստված է ստեղծել բնությունը, բայց դրանք իրարից բացարձակապես կտրված ու մեկուսացած չեն, այլ Աստված բնության մեջ է, ինչպես ընդհանուրը՝ առանձինների, իսկ անձը՝ մարմնի մեջ:

Հոգու և մարմնի փոխհարաբերության հարցը քննելիս Ս. Ջ. գտնում է, որ չի կարելի հոգին ու մարմինը շփոթել կամ նույնացնել միմյանց հետ: Աստված դրանք ստեղծել է միաժամանակ, որովհետև մեկն առանց մյուսի գոյություն ունենալ չի կարող: Մարմինը չի կարող լինել առանց հոգու ներգործության, իսկ հոգին, օժտված լինելով ներգործելու զորությամբ, կդադարի գոյություն ունենալ, եթե չունենա ներգործելու համապատասխան

օբյեկտ, որը հենց մարմինն է: Հոգու միջոցով է մարդն սկսում գոյություն ունենալ և որևէ գործ կատարել, այլ կերպ ասած, հոգին է ակտիվության աղբյուրն ու կրողը: Ըստ նրա, հոգին կատարյալ է ու անփոփոխ, իսկ մարմինը՝ անկատար ու փոփոխական, ուստի և՝ վախճանական: Ս. Ջ. ընդունել է մարդկային հոգու անվախճան լինելը: «Հոգիք մարդկան սերելով լինին, սակայն յետ եղելութեան են անշարժ, մշտնջենաւոր և անվախճան» (Սիմեոն Ջուղայեցի, Մեկնութիւն Պրոկղի, Մատենադարան, ձեռ. № 2297):

1637-ին Ս. Ջ. գրել է իր մեծարժեք աշխատությունը՝ «Գիրք, որ կոչի քերականութիւն» (հրտ. 1725): Փոքրածավալ այս դասագիրքը, փաստորեն, հայոց լեզվի առաջին հայերեն ամբողջ. քերականությունն է, որտեղ հեղինակը ինքնուրույն քննարկել է հայերենի հնչյունաբանությունը, բառագիտությունը, ձևաբանությունն ու շարահյուսությունը: 1649-ին (ըստ Ն. Ակինյանի) գրել է մյուս կարևորագույն աշխատությունը՝ «Գիրք տրամաբանութեան» (հրտ. 1728), որը դարձել է XVII–XVIII դդ., անգամ XIX դ. սկզբների հայկ. դպրոցների հիմն. դասագիրքը, իսկ XVIII դ. թարգմանվել է վրացերեն: Այն պարունակում է գոյաբան., իմացաբան., լեզվաբան. և այլ հարցեր: Ս. Ջ. առաջինն է հայ իրականության մեջ փորձել տրամաբանությունը զատել քերականությունից և դարձնել ինքնուրույն գիտություն: Հիմնականում դա նրան հաջողվել է, թեև քերականությանը տվել է ռացիոնալիստ-տրամաբան. թեքում, իսկ տրամաբանության մեջ հաճախ նույնությամբ պահպանել քերական. ձևակերպումները:

Ս. Ջ. խմբագրել է V դ. հույն փիլիսոփա, նորպլատոնական Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք» երկի և նրան կից ոմն Օմելախոսի մեկնությունների՝ Սիմեոն Պղնձահանեցու վրաց-ից հայերեն կատարած թարգմանությունը, ինչպես նաև գրել Պրոկղ Դիադոխոսի աշխատության մեկնություն (Մատենադարան, ձեռ. № 2304 ևն), որը XVIII դ. թարգմանվել է վրացերեն: Ս. Ջ-ու գրչին են պատկանում նաև «Արտադրութիւն վասն անձին մարդոյ» անավարտ փիլ. երկը (մասնակի հրտ. 1728, լրիվ՝ 1794, որպես «Գիրք տրամաբանութեան» աշխատության հավելված), հիշատակարաններ (Մատենադարան, ձեռ. № 4064), տաղեր (Մատենադարան, ձեռ. №№ 1721, 2389):

Երկ. Նամակ Ոսկան Երևանցուն, «Բազմավեպ», 1967, № 6–7:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Միրզոյան Հ., Սիմեոն Ջուղայեցի, Ե., 1971:

Հրաչիկ Միրզոյան

ՍԻՆՈԴ (հուն. *σύνοδος* – հավաքույթ, ժողով), բարձրաստիճան հոգևորականների ժողով մի շարք ուղղափառ և բողոքական եկեղեցիներում: Ռուսաստանում ստեղծվել է 1721-ին՝ որպես Ռուս ուղղափառ եկեղեցու կառավարման բարձրագույն մարմին (Սրբազան Ս.), որը փոխարինել է վերացված պատրիարքությանը: Ս-ի իրավասության ներքո գտնվել են զուտ եկեղեց. հարցեր (եկեղեց. դոգմաների մեկնաբանություն, ծիսակատարությունների, աղոթքների կարգադրում ևն), եկեղեց. պատժիչ բնույթի գործեր (պայքար հերձվածողների և աղանդավորների դեմ, եկեղեց. բանտերի և դրաքննության վարույթ), եկեղեցավարչ. և տնտ. կառավարումը (եկեղեց. պաշտոնյաների նշանակում և ազատում, եկեղեց. գույքի տնօրինում), հոգևորականների դատ. գործը: Ս-ի անդամներին բարձրագույն հոգևորականներից նշանակել է ռուս. կայսրը:

Խորհրդ. կառավարության առաջին դեկրետներից մեկով Ս., որպես պետ. մարմին, վերացվել է, ապա՝ Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքության վերականգնումից (1917) հետո, վերստեղծվել է որպես պատրիարքին կից զուտ եկեղեց., խորհրդակցական մարմին՝ կազմված բարձրաստիճան հոգևորականներից:

Արլ. Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց (1828) հետո, ըստ «*Պոլոժենիե*»-ի (Գլ. Գ. Յաղագս Լուսավորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի, հոդվ. 33–54), 1837-ի փետր. 22-ին ստեղծվել է նաև Ամենայն հայոց կաթողիկոսին կից Ս.: Այն բաղկացած էր ութ հոգուց՝ Ս. Էջմիածնի միաբանության անդամ չորս եպիսկոպոսներից և չորս վարդապետներից: Կաթողիկոսը Կովկասի կառավարչի միջոցով կայսրին է ներկայացրել Ս-ի անդամի յուրաքանչյուր տեղի համար երկու թեկնածու, և կայսրը հաստատել է նրանցից մեկին: «Պոլոժենիե»-ն կազմողները նկատի են ունեցել ցար. իշխանության դիրքորոշումը Ռուս եկեղեցու նկատմամբ: Այստեղ կայսրը եղել է եկեղեցու գլուխ և կառավարել այն իր հրամաններով ու պաշտոնաբաշխություններով, որոնք կատարվել են Սրբազան Ս-ի միջնոր-

դությունններով: Նույն կարգը մտել է նաև Հայ եկեղեցու վարչության մեջ: Կաթողիկոսը միայն միջնորդողի և խնդրողի դեր է կատարել:

Ի սկզբանե կաթողիկոսի իրավասությանը պատկանող կրոն. և հոգևորական գործերի մեջ (դավանանք, եկեղեց. պաշտամունք և ծես, պսակադրություն, ձեռնադրություն ևն) Ս-ին տրվել է նախաքննության և վճռահատության իրավունք: Հոգևորականությանը վերաբերող այն գործերը, որոնք ենթակա չէին քաղաքացիական դատարանի վճռահատությանը, անցել են Ս-ի իրավասությանը, և վերջինս ստացել է դատ. ատյանի իրավունք: Առանձին հոդվածով Էջմիածնի Ս-ում կառավարիչ Սենատը նշանակել է պրոկուրոր: Նրա պարտականությունն էր հսկել, որպեսզի սինոդական որոշումներն օրենքին չհակասեին: Ս-ի մեջ այս պաշտոնը ստեղծվել է կաթողիկոս *Հովհաննես Ը Կարբեցու* առաջարկով, որպեսզի Ս. պետ. ատյաններին համահավասար իրավունքներ ունենար: Որպես այդպիսին Ս-ի որոշումները վճռական ուժ էին ստանում, և պետ. գործադիր պաշտոնյաները պարտավոր էին կատարել դրանք: Ս-ի պրոկուրորը և պաշտոնյաները, ստանձնելով իրենց պարտականությունները, հավատարմության երդում են տվել ոչ թե կաթողիկոսին կամ Ս-ին, այլ՝ ռուս. կայսրին: Էջմիածնի Ս. օժտված էր այնպիսի ընդարձակ իրավունքներով, որոնք ի սկզբանե Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասություններն էին: Ի դեմս Ս-ի պրոկուրորի, դանձապետի և մյուս աստիճանավորների, ռուս. գործավարության օրինակով ստեղծվել էր մի բյուրոկրատական մարմին՝ լիովին ենթարկված ցար. վարչությանը և պատասխանատու նրան: Էջմիածնի Ս. անմիջական կախում է ունեցել ներքին գործերի նախարարությունից և միջնորդաբար՝ կայսերական կառավարիչ Սենատից: Տեղական գործերով դիմել է Կովկասի կառավարչին, իսկ ընդհանուր գործերով՝ նախարարին:

Էջմիածնի Ս. գոյատևել է մինչև 1917-ը:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927: Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս 2, Թ., 1895:

Կարեն Ալեքսանյան

«**ՍԻՈՆ**», կրոնական, գրական, բանասիրական ամսագիր: *Երուսաղեմի հայոց պատրիարքության* պաշտոնական պարբերական: Լույս է տեսնում 1866-ից, Երուսաղեմում (1878–1926-ին ընդհատվել է): 1866–77-ին (հին շրջան) խմբագիրներ են եղել՝ Տ. Սավալանյանը (հիմնադիր), Մ. Մարկոսյանը, Ս. Խապայանը, Մ. Մուրադյանը: Ամսագիրն ունեցել է կրոն., բանասիր., պատմ., ժամանակագր., ուս. և այլ բաժիններ: Սկզբունք է ընդունվել գրել միայն աշխարհաբարով, որևէ հարցի առիթով երբեք նախահարձակ չլինել: Այդ շրջանում «Ս.» մեծ տեղ է հատկացրել *Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի* ուս. ծրագրերին, աշակերտների առօրյային, անդրադարձել նրանց ավարտաճառերին՝ լավագույնները հայերենին զուգահեռ հրատարակելով ֆրանսերեն, հայատառ թուրքերեն: «Նշխարք ազգային պատմության» բաժնում հրատարակել է հայոց պատմության հարցերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, տպագրել ճամփորդ. նոթեր, տաղեր, Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունից» հատվածներ:

Կեսդարյա ընդմիջումից հետո պատրիարք Ե. *Դուրյանի* նախաձեռնությամբ, եպիսկոպոս Բ. *Կյուլեսերյանի* եռանդուն գործակցությամբ ամսագիրը 1927-ից վերստին սկսել է հրատարակվել: Նոր շրջանում «Ս.»-ի խմբագիրը պաշտոնապես համարվում է պատրիարքը, իսկ միաբանության անդամներից նշանակվում է փոխխմբագիր: Փոխխմբագիրներ՝ Բ. Կյուլեսերյան, Տ. Ներսոյան, Կ. Սրապյան, Ս. Մանուկյան, Թ. *Գուշակյան*, Հ. Վարդանյան, Շ. *Գալուստյան*, Ա. Գալայճյան (պաշտոնակատար), Ե. Տերտերյան, Թ. Մանուկյան: «Ս.»-ի կրոն. խմբագրականներն ունեն ուսուցողադաստիարակչ. նպատակ՝ հասկանալի լեզվով ընկալելի դարձնել կրոն. բարոյագիտությունը («Դասեր Աւետարանէն», «Խօսք մը ծննդեան առթիւ», «Պարզ քարոզներ», «Պօղոս առաքեալի հովուական թուղթերը»): «Ս.» միաժամանակ իր խմբագրականներով ընդդիմանում է մամուլում կրոնի և եկեղեցու դեմ ուղղված հարձակումներին, անդրադառնում Հայ եկեղեցու բարեկարգմանը վերաբերող խնդիրներին, լուսաբանում կենսականորեն անհրաժեշտ բազմապիսի հարցեր: «Ս.» հրատարակում է Ամենայն հայոց կաթողիկոսության, Կիլիկիայի կաթողիկոսության ու պատրիարքարանի կոնդակներ, շրջաբերականներ, ազգ-եկեղեց. ժողովների կանոնադրություններ, արձանագրություններ, միջեկեղեց. հարաբերություններն արտացոլող նյութեր: «Ս. Յակոբի ներսէն» բաժնում տպագրում է միաբանների կենսագրականներ,

տեղեկություններ հաղորդում կրթ., հրատարակչ. գործունեության մասին: Արժեքավոր են Հայ եկեղեցու ազգ. դիմագիծն ու պատմակառնորեն անկախ գոյավիճակը հաստատող՝ Բ. Կյուլեսերյանի, Ե. Դուրյանի, Մ. Աղավնունու, Մ. Օրմանյանի, Տ. Ներսոյանի, Զ. Զինչինյանի և այլոց ուսումնասիրությունները («Տեղիք աստուածաբանութեան», «Հայ եկեղեցին իբրեւ ինքնութեան բեւեռ», «Եկեղեցւոյ անկախութիւնը» ևն): Հաճախադեպ քննարկվող հարց է «Ս. տեղեաց խնդիրը» կաթոլիկ և ուղղափառ համայնքների հետ: Ամսագիրը հրատարակում է աստվածաբանությանը, ծիսական արարողությունների պատմությանը, մատենագրությանը, փիլ-յանը, մանրանկարչությանը, գիտության այլևայլ բնագավառներին վերաբերող հայ, օտարազգի հետազոտողների հոդվածներ, գրախոսականներ: Պարբերաբար նշում է հոբելյաններ, տարելիցներ (Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը, Վարդանանց դյուցազնամարտի 1500-ամյակը ևն): «Դիւան սուրբ Յակոբայ» բաժնում տպագրում է միաբանության դիվանի հին վավերագրեր (նամակներ, կոնդակներ, զանազան թղթակցություններ), ներկայացնում Մ. Օրմանյանի երկերը, Ե. Դուրյանի ուսումնասիրությունները, թարգմանությունները, գրական դեմքերի՝ Վ. Թեքեյան, Հ. Օշական, Վ. Վահյան, Եղիվարդ, Վ. Մավյան, Պ. Սևակ, Հ. Շիրազ:

«Ս.»-ին աշխատակցել են Գ. Հովսեփյանը, Ն. Ադոնցը, Ն. Պողարյանը, Ն. Ակինյանը, Հ. Աճառյանը, Հ. Պերպերյանը, Կ. Բասմաջյանը, Մ. Զերազը, Ն. Աղբալյանը, Հ. Անասյանը, Հ. Օշականը, Գ. Աբգարյանը և ուրիշներ:

Կարինե Ավետյան

ՍԻՈՆ Ա ԲԱՎՈՆԵՑԻ [ծ.թ. անհտ, գ. Բավոնք (Արագածոտնի գավառ) – 775], Ամենայն Հայոց կաթողիկոս 767-ից: Հաջորդել է *Տրդատ Բ Դասնավորեցուն*: Ուսանել է Դվինի կաթողիկոսարանում: Եղել է Աղձնիքի եպիսկոպոսը: Ըստ X դ. պատմիչ, կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցու, Աղձնիքի եպիսկոպոս եղած ժամանակ Ս. Ա Բ. դիմել է Աստծուն, և Աստծու զորությամբ Սասունի գավառի Սիմ լեռան ստորոտի ցամաքած աղբյուրը հորդել է: Դա նպաստել է արաբ ոստիկան Սուլեյմանի համաձայնությամբ Ս. Ա Բ-ու կաթողիկոս ընտրվելուն: Նախաձեռնել է *Պարտավի եկեղեցական ժողովը* (768): Ս. Ա Բ-ու օրոք 774–775-ին արաբ. բռնատիրության դեմ հայերն ապստամբել են: Ապստամբությունը նախաձեռնել է Արտավազդ Մամիկոնյանը: Նա իր ջոկատով Շիրակի Կումայրի ավանում կոտորել է արաբ հարկահաններին, և այդ առիթով երկրում ծավալվել են ազատագր. կռիվներ: Պայքարը շարունակել է իշխան Մուշեղ Մամիկոնյանը: Արաբ. խալիֆայությունից դժգոհ մի խումբ նախարարների հետ նա Արտագես ամրոցից արշավանքներ է ձեռնարկել Բագրեվանդում, Կարինի շրջակայքում գտնվող արաբ. զորաջոկատների վրա, ջախջախել նրանց: Այդ հաղթանակներից ոգևորված Մուշեղ Մամիկոնյանին են միացել շատ նախարարներ, այդ թվում՝ սպարապետ Սմբատ Բագրատունին: 775-ի ապրիլի 14-ին տեղի է ունեցել Արճեշի, նույն թվականի ապրիլի 24-ին Արձնիի ճակատամարտերը: Արձնիի ճակատամարտում զոհվել են սպարապետ Սմբատ Բագրատունին, Մուշեղ Մամիկոնյանը և ուր. իշխաններ:

Կաթողիկոս. գահին Ս. Ա Բ-ուն հաջորդել է *Եսայի Ա Եղիպատրուշեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՍԻՐԱՆԵՍ (ծ. և մ. թթ. անհտ), XIII դարի ճարտարապետ: Ապրել ու ստեղծագործել է Վայոց ձորում: 1265-ին կառուցել է *Արատեսի վանքի* խաչվող կամարներով գավիթը և 1275-ին *Նորավանքում*, Տարսայիճ Օրբելյանի պատվերով՝ Իշխանաց իշխան Սմբատ Օրբելյանի գերեզմանի վրա՝ միանավ թաղածածկ Ս. Գրիգոր եկեղեցի-դամբարանը: Իշխան Տարսայիճ Օրբելյանը նրա հս. պատին գեղագիր արձանագրությամբ հաղորդում է կատարած աշխատանքի համար «Սիրանես վարդպետին», իբրև ժառանգ. սեփականություն, Հալիձոր գ. մոտ (այժմ՝ Սյունիքի մարզում) կալվածք նվիրելու և 500 արծաթ վճարելու մասին: Արձանագրությունը, որի հեղինակը Ս. է, կատարման բարձր արվեստով XIII դ. լավագույն նմուշներից է: Նվիրաբերած կալվածքում Տարսայիճ Օրբելյանը կանգնեցրել է մեծ խաչքար, որի արմ. երեսի արձանագրությամբ վերստին հաստատել է «Սիրանես քարգործի» իրավունքը հողաբաժնի վրա և ճշտել նրա սահմանները: Ճարտարապետը կալվածքում կառուցել է մատուռ և բնակելի շենքեր: Պահպանվել է Ս-ի և նրա եղբայր Հզարմելի՝ իրենց ծնողներ Գոր-

քի (Գևորգ) ու Թենի-կայի հիշատակին կանգ-նեցրած (նրանց գերեզ-մանների վրա) բարձր պատվանդանով գեղա-քանդակ խաչքարը:

Ս. միջնադարյան միակ հայ ճարտարապետն է, որի տոհմագրությունը և վարձատրման չա-փը հասել են մեզ, իսկ ինքը կենդանության օրոք արժանացել է նյութ. ու բարոյական բարձր գնահատանքի: Ս. հեղինակ է նաև Օր-բելյանների իշխանական տան տիրույթներում կառուցված այլ շինությունների և հավանա-բար եղել է նրանց գլխ. ճարտարապետը:

Գրկ. Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967:

Մուրադ Հասրաթյան

ՍԿԵՎՌԱ, վանք, ուսումնադիտական և մշա-կութային կենտրոն Կիլիկյան Հայաստանում. գործել է Լամբրոն բերդին կից: Ունեցել է բարձր տիպի դպրոց, մատենադարան, գրչա-տուն, կուսանոց: Պատկանել է Լամբրոնի Օ-շինյան հայ իշխաններին: Մինչ Օշինյանների տիրապետությունը (1071) եղել է Հուն. վանք: Կիլիկյան Հայաստանի իշխան. և թագավոր. տոհմերի՝ Օշինյանների և Հեթումյանների հա-մար եղել է տոհմային դամբարան: Ս-ի վանքն առաջին անգամ հիշատակվում է 1173-ին: XII–XIII դդ. վանքում ծաղկում են ապրել գրչու-թյունը, մանրանկարչությունը, փորագրությու-նը: Առավել բեղմնավոր է եղել Ս-ի վանքի մա-տենադարանի, բարձրագույն դպրոցի, ուսում-նամշակութ. կենտրոնի հիմնադիր և ղեկավար *Ներսես Լամբրոնացու* և բաբունապետ *Գրի-գոր Սկևռացու* գործունեության շրջանը: Վան-քի դպրոցում դասավանդվել են քերականու-թյուն, գրչության արվեստ, մանրանկարչու-թյուն, խազագրություն և երաժշտություն, հռետորական արվեստ: Կատարվել են սուրբ-գրային մեկնություններ, թարգմանվել աշխա-տություններ, ընդօրինակվել և նկարազարդվել ձեռագիր մատյաններ: 1197-ին այստեղ Գրի-գորն ընդօրինակել, նկարազարդել է նշանավոր «*Սկևռայի Ավետարանը*» (պահվել է վանքի մատենադարանում), որը Կիլիկյան Հայաստա-նի մանրանկարչության դպրոցի լավագույն ստեղծագործություններից է: Գրչության ար-վեստին զուգահեռ զարգացել են որմնանկար-չությունը, փորագրությունը, արծաթագործու-թյունը: Կիլիկյան Հայաստանի կիրառական ար-վեստի ամենաուշագրավ նմուշներից է 1283-ին Ս-ում պատրաստված եռափեղկ պահարան-մատնատուփը, որը վանքի վանահայր Կոստան-դինը պատվիրել էր Հռոմկլայի հերոս պաշտ-պանների հիշատակին: Մատնատուփն այժմ պահվում է Էրմիտաժում (Սանկտ Պետեր-բուրգ): Ս-ի վանքը եղել է նաև Կիլիկիայի ման-րուսման նշանավոր կենտրոններից, մեզ են հա-սել այստեղ գրված բազմաթիվ խազագրքեր:

XII դ. 2-րդ կեսից Ս. դարձել է Կիլիկյան մանրանկարչության երկրորդ խոշորագույն կենտրոնը *Դրազարկի վանքի* դպրոցից հետո: Ս-ի մանրանկարիչների ընդօրինակած, ծաղկած և նկարազարդած ձեռագիր մատյանները պատմ. և գեղ. մեծ արժեքից զատ նշանավորել են նոր փուլ հայկ. մանրանկարչության մեջ (տես *Մանրանկարչություն* հոդվածի Կիլի-կիայի մանրանկարչության դպրոց մասը):

Ս-ի վանքը հռչակված է եղել անվանի վար-դապետներով, մատենագիրներով, բանա-ստեղծներով, գեղագիր գրիչներով ու ծաղ-կողներով, որոնք կատարել են նաև Կիլիկիա-յի արքաների պատվերները: XII–XIII դդ. այստեղ բեղմնավոր աշխատանք են կատարել Գրիգոր Ծաղկողը (Գրիգոր Մլիճեցի), Կոս-տանդին, Արիստակես, Սամվել, Հովսեփ, Հու-սիկ, Ներսես գրիչներն ու մանրանկարիչնե-րը, մատենագիր, լեզվաբան, երաժիշտ Գևորգ Սկևռացին, գրիչ և մանրանկարիչ Գրիգոր Պիծակը, նրա որդին՝ նշանավոր մանրանկա-րիչ *Սարգիս Պիծակը*, Սիմոն երաժիշտը, Մխիթար Սկևռացի վարդապետը, Սիոն ծաղ-կողը, գրիչներ Ավետիսը, Ստեփանոս Սկևռացին, բաբունապետներ Խաչատուրը, Հով-հաննեսը, Մովսես Երզնկացին և ուր.: XIII դ. վերջին Ս-ի վանքը ենթարկվել է թուրքերի հարձակումներին և հրկիզվել: XX դ. սկզբին պահպանվել էին վանքի ավերակները:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.3, 3-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Ոսկյան Հ., Կիլիկիայի վանքերը, Վնտ., 1957:

Հասմիկ Բաղալյան

«ՍԿԵՎՌԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Լվովի Ա-վետարան», «Լեմբերգի Ավետա-րան», 1197-ի մագաղաթե ձեռագիր մատյան: Գրիչ և մանրանկարիչ՝ Գրիգոր Սկևռացի, պատվիրատու՝ *Ներսես Լամբրոնացի*: «Ս. Ա.» գրված է բոլորգիր, երկաթագիր, ունի 426 էջ, չափերը՝ 28,9x21,5 *սմ*: Ձեռագրում *Սկևռայի* վանքի անունը չի հիշատակվում, սակայն այն

գտնվել է Օշինյան (Լամբրոնի) իշխանների տիրույթում, և վանքը ծաղկում է ապրել այդ տան ներկայացուցիչ Ներսես Լամբրոնացու գործունեության ժամանակ:

Ենթադրվում է, որ «Ս. Ա.»-ի վրա 1198-ի հունվ. 6-ին թագադրվելիս, երդվել է Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Բ Մեծագործը: 1239-ին «Ս. Ա.»-ում գրված հիշատակարանում հավաստվում է. «Ի թուականից Հայոց ի ՈԿԸ հանդեաւ ի Քրիստոս թագաւորն Հայոց Լեւոն ի մայիս ամսոյ ի մեկն...»:

1592-ին լեհահայ մեծահարուստ Թորոս Բեռնարտովիչը (Պեռնաթենց) Ավետարանը տվել է նորոգման, և մինչև 1830-ը այն եղել է Լվովի հայ համայնքում: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ձեռագիրը Լվովի հայ արքեպիսկոպոսարանից անհետացել է: 1993-ի մարտին գերմանացի բյուզանդագետ Գ. Պրինցիգը «Ս. Ա.» հայտնաբերել է Լեհաստանի Գնիեզնո քաղաքի արքեպիսկոպոսարանի արխիվում, որտեղից ձեռագիրն ուղարկվել է Գերմանիայի Մայնց քաղաքի Գուտենբերգի թանգարան՝ վերանորոգման: 1997-ի գարնանը «Ս. Ա.» ցուցադրվել է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում կազմակերպված «Բյուզանդիայի փառքը» ցուցահանդեսում:

«Ս. Ա.»-ի պատկերազարդումը բաղկացած է Կարպիանոսին հղած *Եվսեբիոս Կեսարացու* թղթից՝ Եվսեբիոս Կեսարացու և Կարպիանոսի կիսանդրիների պատկերներով, 7 խորանից (պակասում է Բ կանոնի խորանը), յուրաքանչյուր Ավետարան սկսվում է նստած ավետարանչի պատկերով (միայն Հովհաննեսն է կանգնած՝ իր աշակերտ Պրոխորին ներշնչված թելադրելիս) և չքեղ անվանաթերթից: Վերջինս բաղկացած է ավետարանիչների խորհրդանիշներն ընդգրկող գլխատառից, կալեյդոսկոպային (բուս.) զարդատառերից, *n*-աձև կրկնակի կամ լյունետով (կամարային) հատված մեծ ուղղանկյուն գլխազարդից (որի վրա երևակայական թռչունների, ծաղկած խաչի, Աստծո Գառի և այլ պատկերներ են), ինչպես նաև ծաղկող խաչով ավարտվող լուսանցազարդից (Մատթեոսի Ավետարանում խաչը ծաղկում է միմյանց վրա պատկերված Քրիստոսի նախահայրերի վերևում, որը Կիլիկիայում «Հեսսեի ծառի» առաջին օրինակներից է): Ձեռագրի լուսանցքներում պատկերված են զարդեր և ավետարանական գործող անձինք, որոնք կապված են Քրիստոսի հրաշքների (բժշկությունների), առակների, Պետրոսի ուրացման հետ: Բացակայում են էջով մեկ նկարված Տերունական տոները: Հիմն. գույները (կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե), զարդերը, թռչունների ու կենդանիների իրական և երևակայական պատկերները, խորանների կառույցի վերածումը դեկորատիվ-զարդային հարթության, լուսանցազարդերը հիմք են հանդիսացել XIII դ. կիլիկյան մանրանկարչության զարգացման համար: Կիլիկյան մանրանկարչության հիմն. տարրերը մշակվել են XII դ. 90-ական թթ. Ավետարաններում, որոնցից ամենակատարյալը «Ս. Ա.» արքայական ձեռագիրն է:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.3, 4–5-րդ պատկերները:

Գրկ. Ակինյան Ն., Սկեւռայի Աւետարանը 1197 թուականէն Լվովի հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մէջ, Վնն., 1930: Das Lemberger Evangeliar. Eine wiederentdeckte armenische Bilderhandschrift des 12 Jahrhunderts. Herausgegeben von A. von Euw, Chr. Hannick, M. K. Krikorian, A. Lang-Edwards, G. Prinzig, A. Schmidt, Christian Weise, Wiesbaden, 1997.

Վիգեն Ղազարյան

«ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԱՎԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան՝ ստեղծված XIII դարի 60–70-ական թթ., կիլիկյան մանրանկարչության զարգացման շրջանում (Մատենադարան, ձեռ. № 7644): Ավետարանի գլխ. հիշատակարանը չի պահպանվել, կան միայն կարճ հիշատակագրություններ՝ գրված պատվիրատու Սմբատ Սպարապետի (Գունդստաբլի) ձեռքով, որը եղել է Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա թագավորի եղբայրը, զորավար և դիվանագետ, պատմաբան և օրենսդետ: Բարձրաստիճան պատվիրատուի պահանջներին համապատասխան ստեղծվել է այս չքեղ ձեռագիրը, ընտիր մշակված մագաղաթի վրա, մանր գեղեցիկ բոլորգրով և զարդարված մանրանկարներով՝ խորաններով, անվանաթերթերով, ավետարանիչների պատկերներով, լուսանցազարդերով, որոնք արված են բարձրորակ ներկերով, ոսկու առատ օգտագործմամբ:

Կիլիկիայի Հայկ. թագավորության անկումից (1375) հետո ձեռագիրը տարվել է Ղրիմ, որտեղ բազմիցս ընդօրինակվել է: Այնտեղ նորոգվել և լրացվել է տերուն. մանրանկարներով՝ «Ծնունդ», «Մուտք Երուսաղեմ», «Ղազարոսի հարությունը», «Պայծառակերպություն», «Խաչելություն», «Դժոխքի ավերում», «Համբարձում», «Հոգեգալուստ»: Պահպանվել է երկրորդ նկարչի անունը՝ Ավետիք («Խաչե-

լություն» պատկերող մանրանկարի վրա՝ փոքր արձանագրության մեջ): Այդ մանրանկարները նույնպես կատարված են մեծ վարպետությամբ և պատշաճ ձևով ներդաշնակվում են «Ս. Ս. Ա.»-ի նախնական հարդարանքի հետ:

Որոշ տվյալներ հուշում են երկրորդ նկարազարդման ժամանակը՝ 1420-ից հետո, քանի որ նույն թվին Կաֆայում Ավետարանն ընդօրինակվել է, բայց՝ առանց տերուն. նկարների, որոնք ոճական առումով առնչվում են XV դ. Ղրիմի հայկ. մանրանկարչության նմուշների հետ: Վերջինները բնորոշվում են կիլիկյան և, որոշ չափով, բյուզ. արվեստի ազդեցությամբ, պատկերված մարդկային ֆիգուրների և առանձին առարկաների ծավալը բացահայտելու միտումներով, դեկորատիվ հարդարանքի և պատկերագր. տարբերակների այնպիսի առանձնահատկություններով, որոնք հատուկ են նաև «Ս. Ս. Ա.»-ի տերուն. մանրանկարին:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.4, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964: Դուռնովո Լ., Հայկական մանրանկարչություն, [Ալբոմ], Ե., 1967: Նույնի, *Краткая история древнеармянской живописи, Е., 1957; Корхмазян Э., Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978;* Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, W., 1993.

Էմմա Կորխմազյան

ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ, Սիսավանի վանք, Սիսիանի Ս. Գրիգոր եկեղեցի, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի, Ս. վ-ի Ս. Գրիգոր եկեղեցին (հետագայում վերանվանվել է Ս. Հովհաննես) հայոց թվականությունից առաջ հիմնադրել է Սյունյաց Վարազդուխտ իշխանուհին: Վանքի առջև Սյունյաց իշխանները կառուցել են արքունական տուն և իշխանանիստ ապարանք: Եկեղեցին VII դ. վերջին քառորդում հիմնովին վերակառուցել են Կոհազատ իշխանն ու Սյունյաց եպս. Հովսեփ Ա-ն (670–689)՝ Թեոդորոս Սիոն վանականի օժանդակությամբ: Ստեփանոս արք. Օրբելյանը Ս. վ. իր նշանակությամբ համարել է Սյունիքի վանքերից երրորդը:

Սրբատաշ կապտավուն բազալտից կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին ունի «Հռիփսիմեատիպ»՝ միջանկյալ երեք քառորդ խորշերով քառախորան, չորս անկյուններում ավանդատներով հորինվածք: Գմբեթի 12-նիստանի թմբուկը զարդարված է կամարաշարով, քիվերը՝ հյուսածո զարդաքանդակով, գմբեթակիր կամարները հենվում են ոլորազարդ խոյակների վրա: Գմբեթի քիվին չորս ավետարանիչների դիմապատկերներն են՝ քանդակված մինչև դոտի, աջ ձեռքը վեր բարձրացրած (անունները փորագրված են ներքևում): Արմ. ճակատին Հովհաննես եկեղեցականի խիստ եղծված հարթաքանդակն է: Ներսում, գմբեթի կիսաոլորտի ներքևի մասում Կոհազատ իշխանի, Հովսեփ եպիսկոպոսի և Թեոդորոս վանականի պատկերաքանդակներն են, որոնք աչքի են ընկնում ընդգծված անհատականությամբ: Ս. վ-ի Ս. Գրիգոր եկեղեցու քարերին չինարար վարպետների նշաններն են՝ մեծ մասամբ անվան սկզբնատառի ձևով: Ս. վ. վերանորոգվել է 1959–61-ին:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.4, 3-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Լալայան Ե., Զանգեզուրի գավառ, հ. 1, Սիսիան, ԱՀ, Թ., 1898: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Մնացականյան Ս., Սիսավանի տաճարը, ՊԲՀ, 1965, № 4:

Մուրադ Հասրաթյան

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, վերակազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ընդգրկում է ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերը:

Մինչ այդ, 1988-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Զանգեզուրի տարածաշրջանում ստեղծվել էր Ս. Թ.: Առաջին առաջնորդն էր Ասողիկ եպս. Արիստակեսյանը (1988–93):

Ս. Թ. Հայ եկեղեցու հնագույն և ամենանշանավոր եպիսկոպոս. աթոռներից է (ըստ *Ստեփանոս Օրբելյանի*, հիմնել է Գրիգոր Ա Լուսավորիչը): Սյունիքը Հայաստանի ներկա եպիսկոպոս. աթոռների թվում միակն է, որ միջնադարում մետրոպոլիտության կարգավիճակ է ունեցել (տես *Սյունյաց մետրոպոլիտություն*): Սյունյաց եպիսկոպոսությունը միջնադարում մեկն էր այն չորս աթոռներից, առանց որոնց համաձայնության օրինական չէր համարվում Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը: Սյունյաց աթոռի պատմության վերաբերյալ տեղեկություններն ավելի ամբողջա-

կան են շնորհիվ մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի Պատմության և հարուստ մատենագրության վիմագիր սկզբնաղբյուրների: Ս. Թ. Հայ եկեղեցու պատմության մեջ մեծ դեր է կատարել ոչ միայն նվիրապետական համակարգում իր ունեցած առանձնահատուկ դիրքի շնորհիվ, այլև որպես վարդապետական կենտրոն:

Ս. Թ-ի տարածքում գտնվող Թանահատի (V դ.), Սյունի (VII դ.), Տաթևի (IX–XVII դդ.), Խոտակերաց (IX–XI դդ.), Ցաղաց քար (X–XI դդ.), Արատեսի (XI դ.), Հերմոնի (X–XVII դդ.), Թանադե (XIII դ.) վանքերը, Բղենո Նորավանքը (X–XI դդ.), Գնդեվանքը (X դ.), Որոտնավանքը (XI դ.), Վահանավանքը (X–XI դդ.), Նորավանքը (XIII–XIV դդ.), *Գլաձորի համալսարանը* (XIII դ.), *Սյունյաց Մեծ անապատը, Շատին վանքը, Տաթևի Մեծ անապատը* (երեքն էլ՝ XVII դ.) հայ միջնադարյան եկեղեց., կրթ., մշակութ. կյանքի ջահակիրներ են եղել: Ս. Թ-ի գործող վանքերն ու եկեղեցիներն են՝ Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչը, Վայքի Ս. Տրդատը, Մալիշկայի Ս. Աննան, Մարտիրոս գյուղի Ս. Հակոբը, Թառաթումբ գյուղի Ս. Հովհաննեսը, Եղեգնաձորի Ս. Աստվածածինը, Գլաձորի Ս. Խաչը, Տաթևի վանքը, Տաթև գյուղի Ս. Ստեփանոսը, Վերիշենի Ս. Նորակնունքը, Մեղրիի Ս. Աստվածածինը, Ս. Հովհաննեսը, Սիսիանի Ս. Հովհաննեսը, Արենիի Ս. Աստվածածինը, Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոցը, Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմեն, Ծավ գյուղի Ս. Գևորգը, Նորավանքը, Գնդեվանքը: Թեմի տարածքում՝ Գորիսում, Սիսիանում, Եղեգնաձորում, գործում են կիրակնօրյա դպրոցներ, հիմնվել է քարոզչ-մշակութ. կենտրոն: Գորիսում Մայր աթոռի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնը բացել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, գործում են եկեղեց. երգչախմբեր: Ս. Թ. ունի բարեգործ. ճաշարաններ, զոհված ազատամարտիկների երեխաների համար գործում է «Սիրանույշ» բարեգործ. ճամբարը:

Ս. Թ-ի առաջնորդն է Աբրահամ եպս. Մկրտչյանը (1993-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.4, 4-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.11:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Մկրտչյան Ա., Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995: Մաթևոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, № 2–3:

Կարեն Մաթևոսյան

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ, Հալիձորի Հարանց անապատ, ՀՀ Սյունիքի մարզի Հալիձոր գյուղի դիմաց, Որոտան գետի աջ ափին: 1611–13-ին հիմնադրել են *Սաղմոսավանքի* Սարգիս վարդապետը և Տրապիզոնից քահանա Կիրակոսը: Նրանք մինչ այդ ուխտի են մեկնել Երուսաղեմ, ծանոթացել *անապատների* կանոնադրությանը: Այցելել են Սյունիք՝ անապատական կյանքի հինավուրց և ավանդական կենտրոնը, եղել *Տաթևի վանքում, Թանահատի վանքում*, ապա, ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, նրանք որոնել են առավել խաղաղ և ապահով վայր ու Որոտան գետի ափին անապատ հիմնել, կառուցել եկեղեցի և մենակյացին պատշաճ խավար ու մթին փոքր խցեր:

XVII դ. մահմեդ. նվաճողներից ասպատակված, հոգևոր-մշակութ. անմխիթար վիճակում գտնվող Հայաստանում Ս. Մ. ա. կարևոր դեր է խաղացել ժողովրդի կրթության, մշակութ. կյանքի վերելքի գործում:

Ս. Մ. ա. 1658-ի երկրաշարժի և դրան հետևած սողանքի պատճառով ավերվել է, իսկ երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկը սահել ի-ջել է այժմյան տեղը: Երկու տարի անց միաբանությունը լքել է անապատը, տեղափոխվել այլ վայր և կառուցել նոր՝ *Տաթևի Մեծ անապատը*: XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին արդեն Հալիձորի անապատ անվանվող Ս. Մ. ա. վերստին կենդանացել է: Եկեղեցին նորոգել և գավիթը կառուցել է Սահակ աբեղան, պարիսպը՝ Տաթևի վանքի առաջնորդ Կիրակոս վարդապետը, իսկ դարպասը՝ 1817-ին, մի խումբ նվիրատուներ: XVIII դ. կեսին անապատը նորից լքվել է:

Հալիձորի Հարանց անապատը որպես կրոն., կրթ. և մշակութ. կենտրոն երկար չի գոյատևել: Սակայն Հայաստանում նրա շնորհիվ սկզբնավորված հոգևոր-մշակութ. շարժումը շարունակել են անապատից ելած լուսավորիչները, որոնց հիմնադրած նոր մենաստաններից ու անապատներից յուրաքանչյուրը դարձել է մշակութ. և կրթ. կենտրոն: Անապատի սաներից Ներսես վրդ. Մոկացին հիմնել է Լիմի, Կարապետ եպս. Էջմիածնեցին՝ Սևանի, Տեր Արիստակեսը՝ Տանձափարախի, Դավիթ եպս. Շամքորեցին՝ Զարեքամապատի, Մովսես վարդապետը (ապագա կաթողիկոս *Մովսես Գ Տաթևացի*)՝ Երևանի Ս. Աննայի առաքյալ անապատը: Ըստ Լեոյի, «գրական-կրթական իդեալներ պաշտող» Հալիձորի Հարանց անապատը ներ-

կայանում է նաև «իբրև նախատիպ այն վանական հիմնարկության, որ հարյուր տարի հետո հաստատեց Մխիթար Սեբաստացին Վենետիկի կղզիներից մեկի վրա»:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս 2, Տփխիս, 1858: Լեո, Հայկական տպագրութիւն, Թ., 1904: Լալայան Ե., Զանգեզուրի գավառ, հ. 1, Սիսիան, Թ., 1898: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Հասրաթյան Մ., Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973:

Մուրադ Հասրաթյան

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆ, Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևորվարչատարածքային միավոր Մեծ Հայքի Սյունիք նահանգում: Եղել է Հայ եկեղեցու միակ մետրոպոլիտությունը: Ենթադրվում է, որ ստեղծվել է X դ.՝ կապված Սյունյաց դահերեց իշխանների, Սյունյաց եպիսկոպոսական աթոռի հզորացման, անկախության ձգտումների և Սյունյաց անկախ թագավորության հռչակման (987) հետ: Հայոց կաթողիկոս *Անանիա Ա Մոկացին* է իր «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» գրվածքում («Արարատ», 1897, էջ 129–144) առաջին անգամ Սյունյաց եպիսկոպոսին (Հակոբ Ա.) հիշատակում *մետրոպոլիտ* կոչումով:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունյաց աթոռը Հայոց կաթողիկոս *Ներսես Ա Մեծից* է ստացել մետրոպոլիտության իրավունք՝ իր իշխանության տակ միավորելով Սյունյաց աշխարհի 12 եպիսկոպոսություններ:

Հայոց կաթողիկոսական աթոռի դեմ Սյունյաց Հակոբ Ա եպիսկոպոսի ապստամբությունը, կենտրոնախույս գործողությունները և *Աղվանից կաթողիկոսության* հետ մերձենալու փորձերը հանգեցրել են նրան, որ Անանիա Ա Մոկացին բանադրել է Սյունյաց եպիսկոպոսին և զրկել աթոռը մետրոպոլիտության աստիճանից: Սյունյաց աթոռին Հակոբ Ա-ին հաջորդած եպիսկոպոսները մինչև Հովհաննես (1006) չեն կրել մետրոպոլիտի կոչում: Հայոց կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցին*, ընդառաջելով Սյունյաց Վասակ թագավորի, նրա դստեր՝ Հայոց թագուհի Կատրանիդեի և իշխանների խնդրանքին, 1006-ին վերականգնել է Ս. մ., վերադարձրել նրա նախկին առանձնաշնորհումները և կաթողիկոսանիստ ու մայրաքաղաք *Անի* գնացած Հովհաննես կրոնավորին ձեռնադրել Սյունյաց մետրոպոլիտ: Ըստ *Ստեփանոս Օրբելյանի*՝ Սարգիս Ա Սևանցին Հովհաննեսի ձեռնադրության առիթով նրան է հանձնել Հայոց կաթողիկոսարանում պահած «Սյունյաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժեք գավազանը և պատվական գահավորակը»: Սյունյաց մետրոպոլիտի իրավունքն էր իր ենթակայության տակ գտնվող 12 թեմերում ձեռնադրել եպիսկոպոսներ (նաև քորեպիսկոպոսներ), վարդապետներ, քահանաներ և եկեղեցու այլ սպասավորներ, Հայոց կաթողիկոսից ստացած մյուռոնը բաժանել իր իրավասության տակ գտնվող վանքերին ու եկեղեցիներին, գումարել տեղական նշանակության եկեղեց. ժողովներ, կարգավորել և լուծել ծագած վեճերն ու վարչատարածքային խնդիրները, հետևել դպրության և լուսավորության գործին:

Հայոց կաթողիկոսները, Ս. մ-յան կենտրոնախույս միտումներին վերջ դնելու համար, Սյունյաց անհնազանդ եպիսկոպոսներին երբեմն զրկել են մետրոպոլիտության պատվից՝ նրանցից վերցնելով այդ աստիճանը խորհրդանշող խաչը, գավազանը և գահավորակը: Ս. մ. կրկին վերականգնվել է XII դ., երբ Գրիգոր Մեղրեցին մեկնել է Կիլիկյան Հայաստան, Հայոց կաթողիկոս *Գրիգոր Գ Պահլավունուց* ձեռնադրվել եպիսկոպոս և նշանակվել Սյունյաց մետրոպոլիտ: Նրան հաջորդել է որդին՝ Ստեփանոս Գ (Ստեփանոս Ցախր էլ Մսեհ), որը մետրոպոլիտ նշանակվելու համար մեկնել է Կիլիկյան Հայաստան և *Ներսես Շնորհալուց* ձեռնադրվել եպիսկոպոս: Նրա առաջնորդության օրոք (1170–1216) Ս. մ-յան աթոռանիստն է դարձել Ամաղուի *Նորավանքը*: Դա պայմանավորված էր Սյունյաց թագավորության վերացմամբ (1170), *Տաթևի վանքի* ավեր վիճակով և Վայոց ձորում (որտեղ գտնվում էր Նորավանքը) Կապանի իշխանական տոհմերի ժառանգների հաստատմամբ: Դրանից բացի Վայոց ձորը Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունու ժամանակ (989–1020) անջատվել էր Սյունյաց թագավորությունից և միացվել Բագրատունյաց թագավորությանը, ինչի շնորհիվ չէր տուժել սելջուկյան ավերածություններից: Ս. մ-յան գահանիստը սկզբնապես եղել է Շաղատ գյուղաքաղաքը, ապա՝ Տաթևի վանքը, XIII դ. կեսից՝ Նորավանքը: Ստեփանոս Օրբելյանը մետրոպոլիտ է նշանակվել Տաթևի աթոռի վրա, բայց նստել է Նորավանքում: Ստեփանոս Գ-ի մահից (1216) հետո մինչև 1287-ը՝ Ստեփանոս Օրբելյանի գահակալումը, Սյունյաց մետրոպոլիտ. աթոռը բաժանվել է երկու

աթոռների՝ Նորավանքի և Տաթևի վանքի, ինչը երկարատև ընդհարումների և գժտություններ տեղիք է տվել: Ս. մ-յան երկփեղկումից հետո Նորավանքի և Տաթևի աթոռակալները պարզապես կոչվել են եպիսկոպոս և ոչ թե մետրոպոլիտ կամ արքեպիսկոպոս, իսկ Սյունյաց աթոռը դադարել է մետրոպոլիտություն լինելուց:

Սյունիքի միացյալ աթոռի վրա Ստեփանոս Օրբելյանի մետրոպոլիտ (1287–1303) նշանակվելուց հետո Տաթևի և Նորավանքի միջև ընդհարումներն աստիճանաբար դադարել են, իսկ նրանց եպիսկոպոսները միավորվել են Սյունյաց եպիսկոպոսների իշխանության ներքո: Ստեփանոս Օրբելյանը, *Կոստանդին Բ Կատուկեցուց* ձեռնադրվելով եպիսկոպոս, նշանակվել է Սյունյաց մետրոպոլիտ ու Մեծ Հայքի պրոտոֆրոնտես, այսինքն՝ նախաթոռ արքեպիսկոպոս: Ըստ Մ. Օրմանյանի, դա նշանակում էր բուն Հայաստանի վրա կաթողիկոսական ներկայացուցիչ, քանի որ Կիլիկյան Հայաստանում գտնվող Հայոց ընդհանրական կաթողիկոսությանը դժվար էր անմիջական հսկողություն սահմանել հեռավոր թեմերի վրա: Ստեփանոս Օրբելյանի գահակալության տարիներին Ս. մ. ծաղկման աննախադեպ շրջան է ապրել. բարեկավվել է Սյունյաց աթոռի տնտ. վիճակը, նոր նվիրատվությունների միջոցով զգալիորեն ընդարձակվել են Տաթևի վանքի և Նորավանքի հողային տիրույթները, նորոգվել Տաթևի վանքի և Սյունիքի մյուս ավերված եկեղեցիները, կառուցվել նորերը, իսկ Սյունիքը դարձել է Արլ. Հայաստանի եկեղեց., հոգևոր., մշակութ., գիտ. նշանավոր կենտրոն: Հիմնվել է *Գլաձորի համալսարանը*, որին նյութ. նվիրատվություններով մեծապես օգնել են Ստեփանոս Օրբելյանը, Պռոշյան և Օրբելյան իշխան. տները: Ավելի ուշ հիմնադրված *Տաթևի համալսարանը* շարունակել է «Երկրորդ Աթենքի»՝ Գլաձորի համալսարանի հոգևոր-մշակութ., գիտամանկավարժ. արդյունավետ գործունեությունը:

Ս. մ-յան վերազարթոնքը շարունակվել է Ստեփանոս Օրբելյանին հաջորդած Հովհաննես Օրբելու (1303–24) և Ստեփանոս-Տարսայիճի (1324–31) մետրոպոլիտության օրոք, որոնք, նեցուկ կանգնելով Գլաձորի համալսարանին, ուսումնագիտ. և գրչության մյուս կենտրոններին, անհրաժեշտ պայմաններ են ստեղծել նրանց հետագա զարգացման համար: Սյունյաց վարդապետներից և մշակութ. գործիչներից հռչակված էին Ստեփանոս Օրբելյանը, *Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Մոմիկը, Թորոս Տարոնացին*, մանրանկարիչ Ավագը և ուր.:

Գլաձորի և Տաթևի համալսարանների շուրջ համախմբված Սյունյաց վարդապետները Սյունյաց մետրոպոլիտների գլխավորությամբ պայքարել են կաթոլիկ քարոզիչների և *ունիթորության* դեմ՝ Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու ծիսադավան. կարգերն անաղարտ պահելու համար: Նրանք *արևելյան վարդապետների* հետ անհաշտ պայքար են ծավալել Սսում նստող (տես *Սսի կաթողիկոսարան*) Հայոց կաթողիկոսների լատինամետ քաղաքականության դեմ՝ Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միությունը և ծիսադավան. նորամուծությունները դիտելով սպառնալիք ոչ միայն Հայ եկեղեցու, այլև՝ ընդհանրապես Կիլիկյան Հայկ. թագավորության գոյությանը:

Ս. մ. վերացվել է 1837-ին: «*Պոլոժենիե*»-ի ընդունումից (1836) հետո Ս. մ-յան տարածքը մտել է Երևանի թեմի մեջ (տես *Արարատյան հայրապետական թեմ* հոդվածում): 1988-ին Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Արարատյան հայրապետական թեմից առանձնացվել և կազմավորվել է *Սյունյաց թեմը*, որը վերահաստատվել է *Գարեգին Ա Սարգիսյանի* 1996-ի մայիսի 30-ի կոնդակով:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1–2, ԿՊ, 1912–14: Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Ե., 1966: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XV դարեր), Ե., 1981: Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987: *Григорян Г., Очерки истории Сюника (IX–XV вв.), Е., 1990.*

ՍՈՂՈՄՈՆ Ա ԳԱՌՆԵՑԻ [ծ. թ. անհտ, գ. Գառնի (Այրարատ նահանգի Մազազ գավառ) – 792], Ամենայն հայոց կաթողիկոս 791-ից: Հաջորդել է *Հովաբ Ա Դվնեցուն*: Ս. Ա Գ. ուսանել է Գեղարքունիքի Մաքենյաց, ապա՝ Ջավախքի Զրեսկ վանքում: Հետագայում ստանձնել է Զրեսկի միաբանության առաջնորդությունը: Աղվանից կաթողիկոս Միքայելի (707–744) հրավերով գլխավորել է Բերդ վանքի (Շամքոր) եկեղեց. ժողովը (740), որը դատապարտել է ամուսնությունը արյունակիցների միջև: Ս. Ա Գ. կաթողիկոս է ընտրվել զառամյալ հասակում: Վախճանվել է իր գահակալության տարին չբոլորած:

Կաթողիկոս. գահին Ս. Ա Գ-ուն հաջորդել է *Գևորգ Ա Բյուրականցին*:

ՍՈՂՈՄՈՆ

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ՍՈՂՈՄՈՆ ՄԱՔԵՆԱՑԻ (ծ. և մ. թթ. անհտ), VIII դարի մատենագիր, մանկավարժ, *Մաքենյաց վանքի* առաջնորդ: Ստացել է իր ժամանակի փայլուն կրթություն: Աղբյուրներում Ս. Մ. հիշվում է «Հրաշալի այր», «Հայաստանեայցն պարծանք» անուններով: Ս. Մ-ու առաջնորդության տարիներին հռչակվել է ոչ միայն սրբակրոն կյանքով ապրող Մաքենյաց մենաստանը՝ դառնալով Գեղարքունի գավառի ամենանշանավոր կրոնամշակութ. կենտրոնը, այլև՝ նրա հիմնած, գրեթե մեկ դար գոյատևած դպրոցը, որտեղ ուսանելու են եկել և՛ Այունյաց աշխարհից, և՛ Հայաստանի տարբեր վայրերից: Այդ դպրոցում են ուսանել *Ստեփանոս Սյունեցին*, Սողոմոն Գառնեցին (ապագա Հայոց կաթողիկոս *Սողոմոն Ա Գառնեցի*): Դասավանդվել է փիլիսոփայություն, աստվածաբանություն, սաղմոսերգություն, երաժշտություն:

Ս. Մ. մասնակցել է 726-ի *Մանազկերտի եկեղեցական ժողովին*, 740-ին՝ Աղվանից կաթողիկոսի հրավիրած Շամխորի ժողովին և գործուն մասնակցություն ունեցել Վրաց կաթողիկոսին ուղղված նախատինքի թղթի կազմմանը: 747-ին կազմել է «Տերունական տոների լուսաբանիչը և նահատակների հիշատակարանը»՝ Տոնական ծիս. ժողովածուն (տես *Ճառընտիր*), որի համար ստացել է «Հարանց հայր» պատվանունը: Ս. Մ. խմբագրել է Մեսրոպ Մաշտոցին նվիրված «Փոքր Կորյունը» պատմագիրքը, *Վահան Գողթնացու* վարքի երկրորդ տարբերակը: Նրան վերագրվող այլ գործեր մեզ չեն հասել: VIII դ. 40-ական թթ. միաբանության անդամների շրջանում առաջացած անհամաձայնություններ պատճառով Ս. Մ. իր համակիրների հետ տեղափոխվել և հաստատվել է Ջավախքի Զրեսկ կոչված վանքում, որտեղ հիմնել է նոր միաբանություն: Ս. Մ. մահացել է Զրեսկում, հետագայում միաբանության անդամներն աճյունը տեղափոխել են Մաքենիս:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Մաթեւոսյան Ա., Ե՞րբ և որտե՞ղ է գրվել Մշո Տօնական-Ճառընտիրը, ԲՄ, № 9, 1969:

Արփենիկ Ղազարոսյան

«ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ», մատենաշար, որտեղ ընդգրկված են մատենագրական ոչ մեծ ծավալի և մինչ այդ անտիպ մնացած մի շարք ստեղծագործությունների բնագրեր: Գրաբարում «փոքր» մասյանի իմաստ ունեցող «սոփերք» բառի հետևողությամբ Ղ. *Ալիշանը* «Ս. Հ.» է անվանել 1853–61-ին (հ. 1–22) փոքրիկ գրքույկներով հրատարակած շարքը:

«Ս. Հ.»-ի հատորները հաջորդել են «Մատենագրութիւն նախնեաց» շարքով հայ դասական պատմագրության և ընդհանրապես մատենագրության մի նշանակալից մասի միաբարյան հրատարակություններին: Ի տարբերություն վերջինիս, «Ս. Հ.»-ում զետեղված բնագրերն ունեն անհամեմատ պարզ շարադրանք և փոքր ծավալ՝ միտված լինելով հայ մատենագրության այս երկերի և դրանց միջոցով հայոց պատմության, ազգ-հոգևոր նվիրական տարբեր դրվագների տարածմանը: Թե՛ «Ս. Հ.»-ի պարագայում և թե՛ ընդհանրապես, Ղ. Ալիշանին բնորոշ է դասական մատենագրության որևէ գործի հրատարակությունը չսահմանափակել միայն տվյալ երկի բնագրագիտ. քննությամբ, այլ այն բնորոշել ու արժեքավորել առաջաբանների էջերում, ծանոթագրությունների սեղմ տողերում: Որևէ բնագիր գիտ. առումով գնահատելուց բացի, Ղ. Ալիշանն այն դիտել է իր ապրած ժամանակի հայացքով և ներառել գրական-հաս. գործընթացում «ի պետս ազգայնոց»: Հայ հին մատենագրության նման ստեղծագործությունները Ղ. Ալիշանի համար եղել են ոչ միայն հետազոտության ենթակա գրական կարևոր հուշարձաններ, այլև՝ ազգ. կյանքի կենդանի հիշատակարան: «Ս. Հ.»-ում զետեղված բնագրերը ոչ թե մեխանիկորեն իրար կցված ստեղծագործությունների շարք են, այլ՝ թեմատիկ ներքին տրամաբանությամբ միմյանց հաջորդող երկերի ամբողջություն:

«Ս. Հ.» սկսվում է «Բան խրատուց նախնի իմաստասիրաց» բարոյախրատ. գործով, որը, ըստ Ղ. Ալիշանի, թարգմանվել է V դ.՝ *Թարգմանչաց շարժման* ընդհանուր շրջագծում: Այն ժամանակագրորեն կանխում է շարքի մյուս ստեղծագործությունները, «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ...» խոսքերի ոգուն և էությանը համահունչ՝ դառնալով համամման յուրօրինակ մի սկիզբ և բնաբան մնացյալ հատորների համար:

Սրբախոս. գրականության տարբեր ժանրեր՝ վարք, վկայաբանություն, ողբ, տեսիլ, ներբողյան ներկայացնող այս գործերը թեմատիկ ա-

ռումով էլ բաժանվում են մի քանի խմբի՝ ուսենալով, սակայն, նույն նպատակաուղղվածությունը և դառնալով XIX դ. 50-ական թթ. հայ ազգ-հաս. կյանքն ալեկոծող մի շարք հրատապ հարցերի նրբին արձագանքը:

Առաջին թեմատիկ նման խումբը *Թադեոս* ու *Բարդուղիմեոս* առաքյալներին և ընդհանրապես առաքելական շրջանում հայոց քարոզությանը վերաբերող վկայաբանություններն են (Թադեոս առաքյալի և *Սանդուխտ* կույսի վկայաբանությունն ու նշխարների գյուտը՝ հ. 8, Բարդուղիմեոս առաքյալի, *Ոսկյանց* և *Սուքիասյանց* ու *Ատոմյանց* վկայաբանությունները՝ հ. 19): Երկրորդը *Գրիգոր Ա Լուսավորչին* ու նրա տոհմին նվիրված վարքերն ու ներբողյաններն են (Գրիգոր Ա Լուսավորչին նվիրված *Հովհան Ոսկեբերանի* ներբողը՝ հ. 4, Հովհաննես Սարկավագի, Վարդան Բարձրբերդցու և Հովհաննես Երզնկացու՝ հ. 5, Լուսավորչի տոհմի՝ հ. 10, Ներսես Ա Մեծի՝ հ. 6, 7): Այն ժամանակ, երբ փորձեր են արվել Հայ եկեղեցին ներկայացնել որպես մի հերձված, Ղ. Ալիշանը հրատարակել է այս գործերը՝ ցույց տալու համար Հայ եկեղեցու *առաքելականությունը, ուղղափառությունը* և Գրիգոր Ա Լուսավորչի տոհմի նման երանաշնորհ հայրապետներ ունենալը:

Երբ հայ ժողովուրդը ջլատվում և իր մտավոր-կենսական ուժերն էր սպառում դավան. ներքին վիճաբանություններով, Ղ. Ալիշանը հրատարակել է *Ներսես Շնորհալու* և *Ներսես Լամբրոնացու* անվան հետ կապված ընագրերը (հ. 14, 15), քանի որ այս «Ներսիսյանց» Մխիթարյանները ընդունել և ներկայացրել են որպես միության և եղբայրության ջատագովներ:

Հաջորդ խումբը կապվում է *Մեսրոպ Մաշտոցի* (հ. 11) և *Սահակ Ա Պարթևի* (հ. 2), Մծբնա Հակոբ հայրապետի (հ. 22), *Եղիշեի* (հ. 18), Սարկավագ Իմաստասերի (հ. 14) և ընդհանրապես հայ դպրության ու հոգևոր մշակույթի մեծերի և քրիստ. բարոյախոսության վրա խարսխված նրանց պատվիրանների ու խրատների հետ (հ. 3, 21):

Վերջին ծավալուն խումբը վկայաբանություններն են այն սրբերի, ովքեր, լինելով քրիստոնյա նահատակներ, նաև հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած հերոսներ էին: Օսմ. կայսրությունում հայության դեմ ուժեղացող հալածանքների պայմաններում «Ս. հ.»-ում զետեղված գործերի ընդհանուր քրիստ. և հայ նահատակների ու սրբերի՝ Քառասուն մանկանց (հ. 12), ս. *Սարգսի* (հ. 16), Արևելյան վկաների (հ. 20), *Շուշանիկ* Վարդենու (հ. 9) և *Վահան Գողթնացու* (հ. 13) օրինակով Ղ. Ալիշանը հորդորում է հավատարիմ մնալ հայրենատուր ավանդներին և նահատակների արյամբ ոռոգված հողին:

Վենետիկի Մխիթարյանների կողմից «Ս. հ.» շարունակելու մի փորձ էր 1933 և 1934-ին այս շարքով *Մխիթար Գոշի* «Խրատք ոգեշահք» և *Եփրեմ Ասորու* «Կցուրդք» գործերի ընագրերի հրատարակությունը, որոնցով էլ եզրափակվել է մատենաշարը:

Վարդան Դևրիկյան

ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու: Մինչև 1960-ը կոչվել է *Իրանա-Հնդկաստանի թեմ*: Առաջնորդանիստը՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք: 1958-ին անջատվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնից և անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գերակայության ներքո՝ պահելով թեմի անվանումը մինչև 1960-ը, ապա կոչվել է Սպահանի և Հարավային Իրանի թեմ, 1995-ից՝ Ս. թ.: Թեմի ներկա վարչ. սահմանների մեջ մտնում են Սպահանը (որի մեկ շրջանն է Նոր Ջուղան), Շահինշահը նորակառույց քաղաքը, Փերիայի գավառը, Շիրազը և Խուզիստանը: Ս. թ-ում գործում են թեմական և կրոն. խորհուրդներ, որոնք թեմական առաջնորդի նախագահությամբ վարում են թեմի կրոն., ազգ., մշակութ., կրթ. ու շին. աշխատանքները: Թեմական խորհրդին անմիջականորեն ենթակա են թեմի կրթ. խորհուրդը (Նոր Ջուղայի նախկին Հայոց դպրոցների հոգաբարձությունը), մշակութ. հանձնախումբը, Բարեսիրաց մարմինը, Գերեզմանատան բարեզարդման հանձնախումբը, Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը ևն: Կրոն. խորհրդի ենթակա մարմիններն են Կտակային տեսչությունն ու Նոր Ջուղայի հայոց եկեղեցյայց վարչությունը: Թեմի տարածքում եղել է ավելի քան 100 եկեղեցի, այսօր կանգուն են 30-ը:

Նոր Ջուղայում են գտնվում Ս. Կատարինե մենաստանը (1623), Ս. Հակոբ (1607), Ս. Գևորգ (1611), Ս. Աստվածածին (1613), Ս. Ստեփանոս (1614), Ս. Հովհաննես Մկրտիչ (1621), Ս. Գրիգոր Լուսավորիչ (1633), Ս. Սարգիս (1659), Ս. Մինաս (1659) և այլ եկեղեցիներ: Վերջինս ունի թանգարան: Ս. Ամենափրկիչ վանքի տարածքում են՝ որմնանկարնե-

րով հռչակված Ս. Աստվածածին եկեղեցին, Խաչատուր վրդ. Կեսարացու հիմնած և ցայսօր գործող Արևելքի առաջին տպարանը (1636), հայկ. մամուլի հավաքածուով հարուստ «Ս. Ներսես Շնորհալի» գրադարանը (շուրջ 25 հզ. գիրք): Ս. Ամենափրկիչ վանքի տնօրինության ներքո է գտնվում մոտ 750 գրչագիր ունեցող ձեռագրատունը:

Նոր Ջուղայում առաջնորդարանի ենթակայությամբ գործում են մանկապարտեզ, նախակրթարան, տղաների և աղջիկների տարրական 2 առանձին դպրոցներ «Արմեն» անունով, ինչպես նաև տղաների Ս. Կատարինյան (հիմն. 1858-ին) և աղջիկների Գևորգ Քանանյան (հիմն. 1899-ին) ուղեցույց ու միջնակարգ դպրոցները:

1976-ից ցայսօր (երկու ամիսը մեկ անգամ) թեմի առաջնորդի խմբագրությամբ լույս է տեսնում առաջնորդարանի «Նոր Ջուղա» տեղեկատուն (նախ՝ որպես երկշաբաթաթերթ, հետո՝ ամսաթերթ):

Շահինշահը փոքր քաղաքում (Նոր Ջուղայից 30 *կմ* հս.) առաջնորդարանի օժանդակությամբ գործում են Սրբոց Վարդանանց (տարրական) և Մասիս (ուղեցույց) դպրոցները: Համայնքը եկեղեցի դեռևս չունի, կրոն. արարողությունները կատարում է Նոր Ջուղայից հրավիրված քահանան Սրբոց Վարդանանց դպրոցի սրահում: Գործում է Հայ կանանց եկեղեցասիրաց միությունը:

Փերիա գավառում շուրջ 30 հայկ. գյուղերից ներկայումս յոթն է մնացել հայաբնակ: Կա 8 եկեղեցի՝ Ս. Ղուկաս (XVII դ.), Ս. Նշան (XVII դ.), Ս. Հովհաննես (1610), Ս. Գևորգ (1860-ական թթ.), Ս. Ստեփանոս (1887), Ս. Եղիշե (1890), Ս. Աստվածածին (1892), Ս. Ներսես (1917): Փերիայում այսօր հայկ. դպրոց չկա. երեխաները հաճախում են Նոր Ջուղայի կամ Շահինշահի հայկ. դպրոցները:

Շիրազ քաղաքի հնագույն թաղամասերից մեկում, որը հայտնի է Բազարչե Արամանե (Հայկական շուկա) անվամբ, գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցին (1662), որտեղ որպես քահանա պաշտոնավարել է հայ առաջին պարբերականի՝ «Ազդարար»-ի հիմնադիր և խմբագիր չիրազցի Հարությունն Շմավոնյանը: Համայնքի գործերը կառավարում են Շիրազի Հայոց եկեղեց. վարչությունը և Թեհրանի Հայ մարզ. «Արարատ» կազմակերպության մասնաճյուղը: Շիրազում ամենօրյա հայկ. դպրոց չի եղել, տեղի Հայ կանանց եկեղեցասիրաց միության ջանքերով, տասնամյակներ շարունակ, ուրբաթօրյա հայերենագիտության դասընթացների միջոցով հայ երեխաները ստացել են հայեցի կրթություն: 1979-ին առաջնորդարանի ջանքերով կառուցվել է Հայ տունը, որտեղ կազմակերպվում են եկեղեց. վարչության և համայնքի կրթ., մշակութ. աշխատանքները:

Բուշեր քաղաքում հայերն ունեցել են եկեղեցի (հիմն. 1819), որն իր շրջակա տապանաքարերով քաղաքի հնագիտական կարևոր վայրերից է: Մինչև 1979-ը քաղաքում եղել է հայկ. համայնք և եկեղեց. վարչություն: Այսօր Բուշերում հայեր չեն բնակվում:

Խուզիստանի նահանգի Ահվազ քաղաքում գործում են Ս. Մեսրոպ եկեղեցին (1968), Հայոց եկեղեցադպրոցական հոգաբարձությունը, մանկապարտեզ-նախակրթարան, տարրական «Գարուն» և ուղեցույց «Ռաֆֆի» հայկ. դպրոցները: Ներկայումս (2001) Ահվազում ապրում է շուրջ 60 հայ ընտանիք:

Ս. Թ-ի առաջնորդն է Կորյուն արք. Պապյանը (1978-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.4, 5-րդ պատկերը:

Գրկ. Մինասյան Լ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971: Նույնի, Նոր Ջուղայի եկեղեցիները, Նոր Ջուղա, 1992: Սարյան Ա., Պատմություն Զահարմահալ գավառի, Թեհրան, 1980:

Կորյուն արք. Պապյան
Լևոն Գ. Մինասյան (Իրան)

ՍՊԱՍԱՔ եկեղեցական, եկեղեցիներում ս. *Պատարագի* և այլ խորհրդակատարությունների ժամանակ օգտագործվող սրբազան անոթներ և զանազան առարկաներ:

1. Սկիհ, երբեմն կոչվում է հաղորդության բաժակ: Հիմնականում պատրաստված է լինում ազնիվ մետաղից, վրան՝ ավետարանական պատկերներ: Բոլորաձև պատվանդանի (միջնամաս) վրա՝ բաժակաձև հարմարանք, որի մեջ ս. Պատարագի ժամանակ լցվում է գինին: Բաժակն ունի իր ծածկոցը, որը կոչվում է մաղզմա. նման է սկավառակի, մի քիչ փոս ընկած: Մաղզմայի վրա դրվում է սրբագործելի *հացը* կամ *նշխարը*: Եթե հաղորդության բաժակը կամ սկիհը Հիսուսի արյան սրբագործման անոթն է, ապա նրա ծածկոցը՝ մաղզման, խորհրդանիշն է զոհի սեղանի, որի վրա զոհաբերվեց աստվածային գառը՝ Հիսուս Քրիստոսը:

2. Մասնատուփ, արծաթե տուփ, որի մեջ քահանաները պահում են սրբագործված *նշխա-*

ը՝ հոգևոր այցելությունների ժամանակ հիվանդներին հաղորդություն տալու համար:

3. Բուրվառ, անոթ-խնկանոց՝ գմբեթաձև, խաչագլուխ կափարիչով: Օգտագործվում է ս. Պատարագի և ծիսակատարությունների ժամանակ՝ իբրև խնկարկելու և բույր սփռելու միջոց: Ըստ *Հովհան Մայրավանեցու* բուրվառը (=խնկանոցը) Աստվածածնի խորհրդանշանն է. ինչպես Աստվածածինն է լի «Սուրբ Հոգով և Բարձրյալի զորությամբ», այնպես էլ բուրվառը՝ «սրբության հոտով»:

4. Խաչ, քրիստ. կրոնի խորհրդանիշն ու պաշտամունքի առարկան: Ունի ուղիղ անկյունով միմյանց ազուցված՝ երկու տարբեր չափի ձողերի տեսք: *Խաչերի* տեսակներն ու կիրառության կերպերն են. ձեռքի կամ ձեռաց խաչ, որն օգտագործում են բոլոր եկեղեցականները՝ ծիսակատարությունների ժամանակ և հանդիսավոր առիթներով: Խաչեր, որոնք դրվում են սրբազան խորանների վրա: Կան նաև եկեղեց. թափորների առջևից տարվող խաչեր, որոնք կոչվում են խաչվառ: Կաթողիկոսները որպես գնահատանք քահանաներին, վարդապետներին հատուկ կոնդակով պարգևատրում են լանջախաչով, որը եկեղեցականներին չնորհվող պատվո նշան է: Լանջախաչերի օգտագործումը Հայ եկեղեցի է մտել XIX դ.:

5. Աշտանակ, երբեմն օգտագործվում է նաև ճրագակալ անունով: Մեկտեղանոց կամ բազմատեղանոց մետաղե պատվանդաններ են, որոնց վրա դրվում են հատուկ մոմեր՝ եկեղեցական հանդեսներին վառելու համար:

6. Կանթեղ, արծաթից կամ գունավոր մետաղներից պատրաստված կիսակլոր աման, որի մեջ դրվում է ձեթով լցված ապակե հարմարանք, ներսում՝ բամբակից կամ թելից պատրաստված պատրույգ: Կանթեղը հիմնականում վառվում է եկեղեցու սուրբ խորանից կախված վիճակում:

7. Կերոն, կոկված փայտի վրա հարմարեցված, մոտավորապես մեկ մետր երկարություն և որոշակի հաստություն ունեցող մոմեր (ջահեր) են: Օգտագործվում են եկեղեցում Ավետարանի ընթերցման, ինչպես նաև՝ եկեղեց. թափորների և հանդիսությունների ժամանակ:

8. Քշոց: Նախնական շրջանում, երբ քրիստոնեությունը հալածվել է, քրիստոնյաները թաքնվել են գետնաղամբարաններում և հաղորդության խորհուրդը կատարել են այնտեղ: Քշոցներն այդ ընթացքում ծառայել են որպես ճանճ քշելու հարմարանք: Դրանք սկզբում վառակաձև են, եղերքը՝ բոժոժներով, մետաղե գլխիկով՝ հորիզոնական դիրքով հագցված մարդահասակ ձողի վրա. ս. Պատարագի ժամանակ սարկավագների ձեռքում որոշակի պահերի շարժվում են՝ բոժոժների ձայնը խառնելով ս. Պատարագի երգեցողությանը: Քշոցների ձայնը խորհրդանշում է հրեշտակների օրհներգը:

9. Մյուռոնաթափ աղավնի: Աղավնին Սուրբ Հոգու խորհրդանիշն է: Սուրբ *Մյուռոնի* աղավնին պատրաստվում է արծաթից կամ ոսկուց: Մյուռոնը նախապես լցվում է անամեջ աղավնու մեջ և օգտագործման ժամանակ հարկավոր չափով կաթեցվում կտուցից:

10. Բաժակաման, արծաթե անոթ, որի մեջ նախապես լցվում է ս. Պատարագի նյութերից մեկը՝ գինին: Այնուհետև պատարագիչ քահանան այդ բաժակամանի գինին խաչաձև շարժմամբ հեղում է սկիհի մեջ:

11. Տապանակ կամ խնկաման: Արծաթե արկղիկ՝ վերնամասում չորս փոքրիկ խաչերով և մի մոմակալով զարդարված, որի մեջ պահվում են խունկ և կնդրուկ: Տապանակի գործածությունը վերցված է Հին ուխտի եկեղեցուց: Տես *Ուխտի տապանակ*:

12. Խաչվառ, IV դարից կիրառվող խաչագլուխ և ձողամբարձ դրոշակ, որի վրա պատկերված է լինում խաչելության դրվագը կամ Տնօրինական մեկ այլ դեպք: Երբեմն նկարված է լինում նաև Աստվածածնի պատկերը: Խաչվառը գործածվում է ս. Պատարագի, Անդաստանի, Նախատոնակի, թափորի և հուղարկավորության ժամանակ:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.5, 1–7-րդ և 14.6, 1–7-րդ պատկերները:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՍՊԻՏԱԿԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Սպիտակավոր վանք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղից մոտ 7 *կմ* հյուսիս, լեռան լանջին: Համալիրի շենքերը կառուցված են սպիտակ սրբատաշ ֆելզիտից (դրանից էլ՝ վանքի անվանումը):

Վանքի միակ, Նորակնունք Ս. Աստվածածին կոչվող եկեղեցին գմբեթավոր դահլիճ տիպի պարզեցված հորինվածքով կառույց է: Հիմնադրել է Էաչի Պռոշյան իշխանը, որի զոհվելուց (1318) հետո շինարարությունը 1321-ին ավարտել է նրա որդին՝ Ամիր-Հասան Բ՝

նվիրաբերելով վանքին ընդարձակ կալվածներ: Ս. Ս. Ա. վ-ին հետագայում նյութապես օժանդակել են նաև Սյունյաց Օրբելյան իշխանները:

Եկեղեցին հարուստ է հոգևոր և աշխարհիկ պատկերաքանդակներով. գմբեթի ներսում Քրիստոսը և չորս ավետարանիչներն են, դրսում՝ հս. պատին, իշխան Էաչին և նրա որդի Ամիր-Հասանը (այժմ՝ Էրմիտաժում, Սանկտ Պետերբուրգ), հվ. որմին՝ Ամիր-Հասանը որսի ժամանակ (ՀՊՊԹ): Արմ. մուտքի ճակատակալ քարին պատկերված Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, XIV դ. հայկ. քանդակագործ. լավագույն ստեղծագործություններից է: Եկեղեցուն արմ-ից կից գրեթե քառակուսի հատակագծով թաղածածկ գավիթը (1321–30) այժմ կիսավեր է: Գավթի արմ. պատին կից եռահարկ զանգակատունը 1330-ին կառուցվել է Հովհաննես և Թաճի ամուսինների բարերարությամբ: Ունի ինքնատիպ հորինվածք. առաջին հարկը հատկանշվում է խուլ պատերով, երկրորդը՝ խորշով, երրորդը՝ միջանցիկ կամարակապ բացվածքով:

Ս. Ս. Ա. վ-ի գրչության կենտրոնը ծաղկում է ապրել XV դ. 2-րդ կեսին՝ մատենագիր Ավագտերի վանահայրության տարիներին. մեզ են հասել նրա օրինակած ձեռագրերից մի քանիսը: Ավագտերը ստեղծել է հայ գրչության իր դպրոցը: 1482-ին ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրիչ Աբրահամը նշել է, որ ինքը գրչության արվեստը, կազմարարությունը, ձեռագրերը ոսկով զարդարելու մասնագիտությունը սովորել է Ավագտերից: Իր հերթին Աբրահամը Ս. Ս. Ա. վ-ում պատրաստել է նոր շնորհաշատ սաներ:

XVI դարից Ս. Ս. Ա. վ-ի գրչության կենտրոնն աստիճանաբար դադարել է գործել: 1986-ին այս վանքում է թաղվել հայ ականավոր զորավար ու պետական գործիչ Գարեգին Նժդեհը:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.7, 1-ին պատկերը:

Գրկ. Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մաս 1, Վաղ-պատ, 1928: Եղիազարյան Հ., Սպիտակավոր Սուրբ Աստվածածին վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1966, № 6: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (13–15-րդ դդ.), Ե., 1981:

Գրիգոր Գրիգորյան

ՍՍԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, գումարվել են XIII–XIV դդ., Կիլիկյան Հայաստանի Սիս մայրաքաղաքում, կրոնաեկեղեցական և քաղաքական կարևոր խնդիրների լուծման համար: Կայացել է ութ ժողով: Առաջինը (1204) կաթողիկոս *Հովհաննես Զ Սսեցու* նախաձեռնությամբ քննարկել և ընդունել է հիմնականում ծիսական հարցերին վերաբերող ութ կանոն: Զաքարե Բ Մեծ Երկայնաբազուկի խնդրանքով թույլատրվել է, որ հայկ. բանակում զինվորներն ունենան շրջիկ եկեղեցի և սեղան: Երկրորդ ժողովը (1243) կաթողիկոս *Կոստանդին Ա Բարձրբերդցու* գլխավորությամբ սահմանել է քսանհինգ կանոն՝ ընդդեմ աշխարհականների և հոգևորականության մեջ տարածված չարաշահումների, կենցաղային ու եկեղեց. ախտերի (մերձամուսնության, ամուսնաթողության, ապօրինի կենակցության արգելում, պահքերի, աշխարհականների և եկեղեցականների կենցաղի կանոնավորում): Երրորդ ժողովը (1251) Հռոմի պապի առաջարկով քննել է Սուրբ Հոգու բխման խնդիրը: Դեռ 1250-ին Հռոմի պապը դիմել էր հայերին՝ առաջարկելով ընդունել «Filioque»-ի վարդապետությունը, ըստ որի՝ Ս. Հոգին բխում է ոչ միայն Հայր Աստծուց, այլև՝ Որդի Աստծուց: 1251-ի ժողովը, չկարողանալով վերջն. եզրակացության գալ, դիմել է *արևելյան վարդապետներին*, որոնք մերժել են ընդունել այն: Սսի չորրորդ ժողովում (1289) Հեթում Բ թագավորը և Գրիգոր եպս. Անավարզեցին (կաթողիկոս *Գրիգոր Է Անավարզեցի*) *Կոստանդին Բ Կատուկեցի* կաթողիկոսին դահընկեց են արել՝ Հռոմի պապ Նիկողայոս IV-ի լատինադավանությունն ընդունելու առաջարկին ընդդիմանալու համար: Հինգերորդ ժողովը (1307 մարտի 19) քննել է Եվրոպայից ռազմ. օգնության դիմաց լատինադավանություն ընդունելու՝ Կղեմես V պապի պահանջը: Թագավորահայր Հեթումի (Հեթում Բ), Լևոն Դ թագավորի և նորընտիր կաթողիկոս *Կոստանդին Գ Կեսարացու* ճնշմամբ ընդունվել է Կաթոլիկ եկեղեցու դավանանքը, ծեսը և Հռոմի պապի գերիշխանությունը: Ըստ նոր ընդունված կանոնների, Հայ եկեղեցին փաստորեն միանում էր Կաթոլիկ եկեղեցուն: Ժողովուրդը և արևելյան վարդապետներն ընդվզել են և չեն ենթարկվել նոր որոշումներին, ուստի Կիլիկիայի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները նախապես նույնիսկ որոշումների իրագործում չեն պահանջել: Ապա եղել են նաև արևելյան վարդապետների գրավոր բողոք-հերքումներ, եկեղեցականների և աշխարհականների բազմամարդ ժողովներ՝ առանց թագավորի

ու կաթողիկոսի ներկայության: 1308-ի Ադանայի և Սսի վեցերորդ եկեղեց. ժողովները (1309) չեղյալ են հայտարարել 1307-ի (հինգերորդ) «իշխանաժողովի» որոշումները, ընդունվել են Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ապահովող կանոններ: Նոր թագավոր Օշինը, չկարողանալով վերահաստատել նախորդի որոշումները, ժողովականներին ենթարկել է հալածանքների՝ բանտարկության և աքսորի (միայն 500 հոգևորական աքսորվել է Կիպրոս, որտեղ մեծ մասը զոհվել է), վերահաստատել է տվել Սսի 1307-ի եկեղեց. ժողովի որոշումները (տես *Ադանայի եկեղեցական ժողով 1316*): Յոթերորդ ժողովը (1345) գումարվել է կաթողիկոս *Մխիթար Ա Գոշերցու* օրոք: Ժողովը, Եվրոպայից ռազմ. օգնություն ստանալու հույսով, թեև ձևականորեն, ընդունել է Կաթոլիկ եկեղեցու հետ միանալու Հռոմի պապի առաջարկը: Սակայն ակնկալած օգնությունը չստանալու պատճառով, ինչպես նաև բուն Հայաստանի հոգևորականության դիմադրության շնորհիվ, ժողովի որոշումները չեն իրագործվել: Արևմուտքի և Հռոմի պապերի սին ու անիրականանալի խոստումներից և միարարական քաղաքականությունից դժգոհ Կոստանդին Դ թագավորի և *Մեսրոպ Ա Արտազեցի* կաթողիկոսի նախաձեռնությամբ 1361-ի ութերորդ ժողովը չեղյալ է հայտարարել Սսի 1307-ի և Ադանայի 1316-ի ժողովների որոշումները, վերացրել նորամուծությունները, վերահաստատել Հայ եկեղեցու անկախությունն ապահովող դավան. և ծես. ավանդ. կանոնները:

Գրկ. Մխիթարյան Ա., Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1874: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ, Հայոց կաթողիկոսության նստավայրը 1293–1441-ին Կիլիկյան Հայաստանի Սիս մայրաքաղաքում: 1292-ին, երբ Եգիպտոսի մամլուքները գրավել են Հռոմկլան, թալանել ու ավերել են *Հռոմկլայի կաթողիկոսարանը*, գերել Հայոց կաթողիկոս *Ստեփանոս Դ Հռոմկլայեցուն* և տարել Կահիրե, *Գրիգոր Է Անավարզեցին* Հայոց կաթողիկոսական ընդհանրական *աթոռը* տեղափոխել է Սիս և կաթողիկոսանիստ դարձրել քաղաքի հս. ծայրամասում գտնվող նախկին եպիսկոպոսանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եռախորան եկեղեցին (կից պահպանվում են Ամենայն Հայոց և Կիլիկիո կաթողիկոսների տապանաքարեր):

Սիսն ունեցել է մի քանի եկեղեցիներ ու վանքեր: Հայոց թագավոր Լևոն Բ Մեծագործի օրոք (1198–1219) հիմնվել են Ս. Էջմիածին կաթողիկեն, Ս. Մարինե և Ս. Աստվածածին (այստեղ է ամփոփվել Լևոն Բ-ի մարմինը) եկեղեցիները: Հայոց թագավոր Հեթում Ա-ի օրոք (1226–69) կառուցվել է արքունական Ս. Սոփի (Ս. Սոփիա) եկեղեցին, որի արտաքին ճակատին երկաթագիր տառերով փորագրված են եղել Հեթում Ա, Լևոն Գ և այլ թագավորների անունները: Եկեղեցում զետեղվել է առյուծի և արծվի պատկերաքանդակներով զարդարված թագավոր. մարմարե գահը: Ս. Սոփի եկեղեցին 1266-ին ավերել և հրկիզել են Եգիպտոսի արաբ. սուլթանության զորքերը: Կիլիկիո կաթողիկոս Կիրակոս Ա Աջապահյանը 1810–22-ին նորոգել է այն, վերանվանել Ս. Գրիգոր Լուսավորիչ և աթոռանիստը փոխադրել այնտեղ (հս-արմ. կողմում պահպանվել են կաթողիկոսների տապանաքարերը): Սսի հայկ. եկեղեցիներից աղբյուրներում հիշատակվում են նաև Ս. Հռիփսիմեն, Ս. Հակոբը, Ս. Հոգին, Ս. Նշանը, Ս. Սիմեոնը, Ս. Նիկողայոսը, Ս. Ստեփանոսը (կոչվել է նաև Գունդստաբլի եկեղեցի), Ս. Մերկեռիոսը, Ս. Պողոս-Պետրոսը, Ս. Աթանագինեն: Միջնադարյան հայ դպրության և երաժշտագիտության կենտրոն *Դրազարկի վանքից* բացի Սսի մերձակայքում հիշատակվում են նաև Տեր Պողոսի վանքը և գրչության կենտրոն Մեծքարի (Մեծայր) վանքը, որտեղ 1175-ին ամփոփվել է Մլեհ իշխանապետի աճյունը: Սսի բարեգործ. հիմնարկներից հայտնի էր Զաբել թագուհու հիվանդանոցը, որի հիմնադրման (1241) մասին մարմարե քարի վրա պահպանվել է թագուհու արձանագրությունը:

Սսում եկեղեցիներ են ունեցել հույները, ջենովացիները, վենետիկցիները, խաչակիր ասպետները և ասորիները: Իգնատիոս Բ Ասորին 1244-ին Սսում հիմնել է կաթողիկոսարան՝ Ս. Պարսամա և Ս. Աստվածածին եկեղեցիներով: Սսի արվարձաններից մեկում գործել է ասոր. Ս. Պաքսեմատի վանքը:

Սիսը, հատկապես Հայոց կաթողիկոսությունն այդտեղ հաստատվելուց հետո, եղել է համահայկ. մշակույթի խոշոր կենտրոն: Կաթողիկոսարանում և մասնագիտացված բարձրագույն դպրոցներում (վարդապետարան-համալսարաններ), որոնցից մեծահամբավը եղել է *Ներսես Լամբրոնացու* հիմնադրած համալսարանը, կրթվել և գործել են ժամանակի նշանավոր

հայ գիտնականներ, հոգևորականներ, Հայոց կաթողիկոսներ: Հավաքվել, ուսումնասիրվել, բազմացվել և պատկերազարդվել են հազարավոր ձեռագրեր, ստեղծվել նորերը, թարգմանվել (հուն., լատ., ասոր., արաբ. ևն) աստվածաբան., գրական, պատմ. արժեքավոր երկեր: Ս. կ-ի սկզբ. շրջանում ծաղկում են ապրել Կիլիկյան Հայաստանի վանքերը, վարդապետարանները, գրչության և մանրանկարչության կենտրոնները (Դրազարկ, Սկևռա, Ակներ, Մեծքար ևն): Սսում են գումարվել դավան., համապետ. և համազգ. նշանակություն ունեցող ժողովներ (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), որոնցից վերջին չորսը (1307, 1309, 1345, 1361)՝ Ս. կ-ի գոյության շրջանում:

Կաթողիկոսարանը գործուն մասնակցություն է ունեցել երկրի քաղ. կյանքին, Կիլիկյան Հայաստանի քաղ. իշխանությունների հետ մասնակցել է արտաքին մի շարք խնդիրների, հատկապես հայ-եգիպտ. հարաբերությունների կարգավորմանը: *Կոստանդին Դ Լամբրոնացին* 1323-ին մեկնել է Եգիպտոս և 15-ամյա հաշտություն կնքել Նասր սուլթանի հետ, իսկ *Հակոբ Բ Անավարզեցին* 1337-ին օգնել է Լևոն Ե-ին՝ եգիպտացիների հետ հաշտություն կնքելու: Ս. կ-ի միջեկեղեց. և եկեղեցաքաղ. հարաբերություններում կարևորագույն տեղ է գրավել հայ-հռոմ. եկեղեց. միության խնդիրը: Ս. կ-ի գոյության գրեթե ողջ ժամանակաշրջանն անցել է քաղ. ծանր և անանպատ պայմաններում, հաճախակի են դարձել եգիպտ. մամլուքների և փոքրասիական թուրքմեն ցեղերի հարձակումները Կիլիկյան Հայաստանի և Սսի վրա: Սրվել են դավան. վեճերը Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու ծիսադավան. կարգերն անաղարտ պահելու կողմնակիցների և լատինամետ կիլիկյան հոգևորականության ու լատինադավանների միջև: Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միության հարցում հակասություններն ավելի են խորացել կիլիկյան հոգևորականության և *արևելյան վարդապետների* միջև. վերջիններս խիստ քննադատել են Սսի Հայոց կաթողիկոսների և լատինամետ հայ հոգևորականների քաղաքականությունը եկեղեցիների միության հարցում: Այդ շրջանի Հայոց կաթողիկոսներից ոմանք (Գրիգոր Է Անավարզեցի, *Կոստանդին Գ Կեսարացի, Մխիթար Ա Գոշերցի* և ուր.) նահանջել են Հայ եկեղեցու ծիսադավան. դիրքերից՝ հուսալով Հայ եկեղեցին Հռոմի կաթոլիկ եկեղեցուն ենթարկելու, լատ. ծիսադավան. նորամուծությունների և Արևմուտքին եկեղեց. լուրջ զիջումների գնով շահել կաթոլիկ Եվրոպայի և Հռոմի պապի քաղ. աջակցությունը մահմեդ. պետությունների ու արտաքին թշնամիների դեմ Կիլիկյան Հայաստանի մղած պայքարում: Կաթոլիկ եկեղեցին, օգտվելով դրանից, խոստումներից բացի ոչինչ չձեռնարկելով, լատինամետ հայ հոգևորականների և Հայոց արքունիքի, ինչպես նաև միաբարական շարժման (տես *Ունիթորություն*) միջոցով փորձել է իր ազդեցության տակ դցել Հայ եկեղեցին, ինչը նաև լուրջ սպառնալիք էր Հայոց պետականության համար Կիլիկյան Հայաստանում: Արևմուտքից քաղ. աջակցության ակնկալիքներով Ս. կ-ի լատինամետ քաղաքականությանն աջակցել, հաճախ էլ որպես նախաձեռնող է հանդես եկել Կիլիկիայի Հայոց արքունիքը: Վերջինս 1307-ի Սսի և 1316-ի *Ադանայի եկեղեցական ժողովների* լատինադավան որոշումները փորձել է բռնի ուժով պարտադրել ժողովրդին, բայց, հանդիպելով ժողովրդի և արևելյան վարդապետների անզիջում դիրքորոշմանը, ոչ մի արդյունքի չի հասել: Արքունիքի և Ս. կ-ի քաղաքականությանը և հատկապես 1307-ի Սսի ժողովի որոշումներին ընդդիմացել է նաև *Երուսաղեմի հայոց պատրիարքությունը* և 1311-ին խզել հարաբերությունները Ս. կ-ի հետ: Կիլիկյան Հայաստանի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների քաղաքականության դեմ անհաշտ պայքար են ծավալել նաև Այնտյաց վարդապետներն ու իշխանները: *Ստեփանոս Օրբելյանի* գլխավորությամբ Գրիգոր Է Անավարզեցուն գրած նշանավոր թղթում նրանք քննադատել են Հայոց կաթողիկոսի լատինամետ քաղաքականությունը և հորդորել չհեռանալ հայրենի սրբազործված ավանդներից: Չնայած Սսի Հայոց կաթողիկոսներից ոմանք (Կոստանդին Դ Լամբրոնացի, Հակոբ Բ Անավարզեցի, *Մեսրոպ Ա Արտազեցի*) ընդդիմացել են լատինամետությանը, այնուամենայնիվ հոգևորականության ազդեցիկ մասին, լատինադավան թագավորներին և իշխաններին հաջողվել է խարդավանքների, ճնշումների, դահընկեցությունների միջոցով չեզոքացնել նման փորձերը:

Ս. կ-ի վիճակն ավելի է վատթարացել Կիլիկիայի Հայկ. թագավորության անկումից (1375) և Սսի վրա թուրքմեն ամիրա Ռամազանի արշավանքներից (1404) հետո: Հայոց կաթողիկոս *Կարապետ Ա Կեղեցին*, Կիլիկիայի կառավարիչ, զորավար Կոստանդին Կիլիկեցին և Սսի կա-

ռավարիչ պարոն Կարապետը, ձգտելով Սսի բնակիչներին փրկել կոտորածներից, նրանց բոլոր իշխանների հետ գաղթեցրել են Կիպրոս և Եվրոպա: Քաղաքում մնացած Հայոց կաթողիկոսը և փոքրաթիվ բնակիչները, չկարողանալով դիմադրավել Ռամազանի զորքերին, 1404-ի հունիսի 6-ին անձնատուր են եղել: 1441-ի *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովի* որոշմամբ Կիլիկիայում մեկուսացած և հայ ժողովրդի համար քաղ. ու հոգևոր-կրոն. երբեմնի կենտրոնի նշանակությունը կորցրած, տնտեսապես քայքայված Մայր աթոռը Սսից տեղափոխվել է բուն Հայաստան և վերահաստատվել իր նախն. վայրում՝ *Վաղարշապատում*: 1446-ից Ս. կ. դարձել է նորահաստատ Կիլիկիո կաթողիկոսության (տես *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո*) աթոռանիստ կենտրոնը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, 2, ԿՊ, 1912–14: Քելեչյան Մ., Սիս-Մատյան, Բեյրութ, 1949: Անապատական, Համառօտ պատմութիւն հայ-լատին յարաբերութեանց սկզբէն մինչև 1382, Անթիլիաս, 1981:

ՍՏԵՓԱՆԵ Խորեն, Ստեփանոս Ստեփանե, Ստեփանոս Ստեփանյանց, Իշխան Բագրատունի (1840, Թիֆլիս – 14.11.1900, Թիֆլիս), հոգևորական, մանկավարժ, խմբագիր, թարգմանիչ, բանաստեղծ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1858): Սովորել է Մոսկվայի համալսարանի իրավաբ. ֆակ-ում (1858–62): 1872-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա, 1880-ին՝ ծայրագույն վարդապետ, 1894-ին՝ եպիսկոպոս: 1882-ին նշանակվել է Ախալցխայի և Ախալքալաքի առաջնորդական փոխանորդ, 1887-ին՝ Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ, 1895-ին՝ Աստրախանի թեմի առաջնորդական փոխանորդ, 1896-ին՝ Ղրիմի Ս. Խաչ վանքի վանահայր: Զբաղվել է մանկավարժ. գործունեությամբ, հիմնել է Մարիամյան օրիորդաց վարժարանը, դասավանդել Թիֆլիսի 1-ին դասական գիմնազիայում, Վաղարշապատի ժառանգավորաց դպրոցում, Գևորգյան ճեմարանում, Շուշիի, Բաքվի դպրոցներում, եղել Երևանի, Ախալքալաքի և Ախալցխայի թեմական ծխական դպրոցների տեսուչ, կարևոր դեր խաղացել հոգևոր կրթության կազմակերպման ու կատարելագործման ուղղությամբ: Հրատարակել և խմբագրել է «Հայկական աշխարհ» (1864–79), «Մանկավարժանոց» (1884–87) հանդեսները, եղել *«Արարատ»* ամսագրի խմբագիրը: Ազգ. բուռն գործունեության համար ցար. կառավարությունը հետապնդել է նրան և աքսորել Ղրիմի Ս. Խաչ վանքը: Ս. աշխարհաբարի է վերածել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը», որն ընդարձակ առաջաբանով և հարուստ ծանոթագրություններով հրատարակել է 1889-ին Սանկտ Պետերբուրգում (վերահրտ.՝ 1897-ին): Ստեփանոս Ստեփանյանց և Իշխան Բագրատունի գրական կեղծանուններով բանաստեղծություններ է տպագրել ժամանակի հայկ. մամուլում, կատարել փոխադրություններ և թարգմանություններ: «Հայկական այբուբեն» (1870) ուսումնասիրությունում անդրադարձել է հայոց գրերի ստեղծման շարժառիթներին, չափազանց բարձր գնահատել Հայ եկեղեցու և հատկապես կաթողիկոս *Սահակ Ա Պարթևի* դերն այդ գործում:

Գրկ. Գասպարյան Մ., Խորեն եպիսկոպոս Ստեփանեի մանկավարժական գործունեությունը, «Էջմիածին», 1960, № 5:

Պետրոս Հովհաննիսյան

ՍՏԵՓԱՆՈՍ Ա ԴՎՆԵՑԻ (ծ.թ.անհտ, Դվին – 790), Ամենայն հայոց կաթողիկոս 788-ից: Հաջորդել է *Եսայի Ա Եղիպատրուշեցուն*: Նրա հայրապետ. գործունեության մասին գրեթե ոչինչ չի ավանդված:

Կաթողիկոս. գահին Ս. Ա Դ-ուն հաջորդել է *Հովսեփ Ա Դվնեցին*:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՂԱՎՆԻ, Ստեփանոս Բ Աղավնի Զաքարյան (1777, Պրուսա – 1853, Իզմիր), Կ. Պոլսի հայոց պատրիարք 1831–39 և 1840–41-ին: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1816-ին: Ս. Ա-ու պաշտոնավարության ընթացքում կատարվել են մի շարք կարևոր ձեռնարկումներ: 1834-ին Կ. Պոլսում բացվել է Ազգային հիվանդանոցը: 1832–38-ին նորոգվել է 16 եկեղեցի, կառուցվել են Թոփգափուի Ս. Նիկողայոս (1832), Գուզկունճուքի Ս. Լուսավորիչ (1835), Պեշիկթաշի Ս. Աստվածածին (1838) եկեղեցիները: Բացվել են Պեզճյան (Էյուպում), Ս. Սահակյան (Սամաթիայում), Ս. Ներսեսյան (Խասքյոյում) վարժարանները, Սկյուտարի ճեմարանը (1838): 1832-ին լույս է տեսել Կ. Պոլսի առաջին հայերեն թերթը՝ «Լրո գիր» անվամբ:

Ս. Ա. սատարել է Արմաշի վանքի վարժարանի գործունեությանը:

ՍՏԵՓԱՆՈՍ Բ ՌԸՇՏՈՒՆԻ, Ստեփանոս Բ Ռշտունեցի (ծ. թ. անհտ – 930), Ամենայն Հայոց կաթողիկոս 929-ից: Հաջորդել է *Հովհաննես Ե Դրասխանակերտցուն*: Ս. Բ Ռ. եղել է Վասպուրականի եպիսկոպոսներից: Նրա հայրապետ. գործունեության մասին գրեթե ոչինչ չի ավանդված:

Կաթողիկոս. գահին Ս. Բ Ռ-ուն հաջորդել է *Թեոդորոս Ա Ռշտունին*:

ՍՏԵՓԱՆՈՍ Գ ՍԵՎԱՆՑԻ (ծ. թ. անհտ – 972), Ամենայն Հայոց կաթողիկոս 969-ից: Հաջորդել է *Վահան Ա Սյունեցուն*: Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածը 969-ին Անիում ժողով է հրավիրել, որտեղ քննարկվել են Վահան Ա Սյունեցուն հասցեագրված մեղադրանքները: Վերջինս ժողովին չի մասնակցել, ապաստանել է Վասպուրականի Համազասպ-Աբուսահլ թագավորի մոտ: Ժողովը գահընկեց է հայտարարել Վահան Ա Սյունեցուն և կաթողիկոս ընտրել Սևանի վանահայր Ստեփանոսին: Գահազրկված կաթողիկոսը բանադրել է Անիի ժողովն ու նրա մասնակիցներին: 971-ին Ս. Գ Ս. Անիում մի նոր ժողով է գումարել, որի որոշմամբ երկու վարդապետների ուղեկցությամբ գնացել է Վասպուրական՝ բանակցելու Վահան Ա Սյունեցու և Աբուսահլի հետ: Սակայն վերջիններս Աղթամարում բանտարկել են Ս. Գ Ս-ուն և վարդապետներին: Որոշ ժամանակ անց երկու վարդապետներն ազատ են արձակվել, իսկ Ս. Գ Ս. փոխադրվել է Կոտորոց բերդ, որտեղ և վախճանվել է:

Կաթողիկոս. գահին Ս. Գ Ս-ուն հաջորդել է *Խաչիկ Ա Արշարունին*:

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912:

Արթուր Կարապետյան

ՍՏԵՓԱՆՈՍ Դ ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ [ծ.թ.անհտ, գ. Խախ (Բարձր Հայքի Եկեղյաց գավառ) – 1293, Կահիրե], Ամենայն Հայոց կաթողիկոս 1290-ից: Հաջորդել է *Կոստանդին Բ Կատուկեցուն*: Ուսանել է *Հռոմկլայի կաթողիկոսարանում*, դարձել անապատական: 1290-ին Կիլիկիայի Հեթում Բ թագավորի կամքով և *արևելյան վարդապետների* հավանությամբ գահընկեց արված Կոստանդին Բ Կատուկեցու փոխարեն ընտրվել է կաթողիկոս: Ս. Դ Հ. աթոռակալել և գործել է Հեթում Բ-ի և լատինադավան ուղղությանը հետևող Գրիգոր եպս. Անավարզեցու (ապագա կաթողիկոս) թելադրանքով, թեպետ երբեմն ընդդիմացել է լատինամետ քաղաքականությանը: 1291-ին Հեթում Բ թագավորը և Գրիգոր եպս. Անավարզեցին, առանց կաթողիկոսի մասնակցության և հավանության, ժողով են գումարել, որոշել Զատկի տոնը նշել լատինների հետ՝ ապրիլի 6-ին: Սակայն այդ որոշումը չի ընդունվել ո՛չ Հայաստանում, ո՛չ Երուսաղեմի հայոց պատրիարքարանում:

1292-ին Հռոմկլան գրված եգիպտ. զորքերը Ս. Դ Հ-ուն, 12 եպիսկոպոսների գերել և տարել են Կահիրե: 1293-ին, մեկ տարի բանտում մնալուց հետո, կաթողիկոսը վախճանվել է և հայ համայնքի ջանքերով ամփոփվել Կահիրեում:

Կաթողիկոս. գահին Ս. Դ Հ-ուն հաջորդել է *Գրիգոր Է Անավարզեցին*:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914: Անապատական, Համառոտ պատմութիւն հայ-լատին յարաբերութեանց սկզբէն մինչև 1382, Անթիլիաս, 1981:

Արթուր Կարապետյան

ՍՏԵՓԱՆՈՍ Ե ՍԱԼՄԱՍՏԵՑԻ, Կոստանդնուպոլսեցի (ծ. թ. անհտ, Սալմաստ – 1567), Ամենայն Հայոց կաթողիկոս 1545-ից, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, մատենագիր: Հաջորդել է *Գրիգոր ԺԱ Բյուզանդացուն*: Կրթությունն ստացել է Կ. Պոլսում, հմտացել լեզուների (պարսկ., թուրք., արաբ., լատ. ևն) ուսումնասիրության և աստվածաբանության մեջ: Պաշտոնավարել է Լեհաստանի հայկ. գաղթավայրերում: 1540-ին տեղափոխվել է Ս. Էջմիածին, նշանակվել Մաղարդի (Երնջակ) Ս. Ստեփանոս վանքի դպրոցի բաբունապետ, ուսուցանել բազմաթիվ աշակերտների, հռչակվել «քաջ բաբունապետ»: Գրիգոր ԺԱ Բյուզանդացին 1541-ին նրան նշանակել է աթոռակից կաթողիկոս: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելով՝ Ս. Ե Ս. փորձել է բարձրացնել Մայր աթոռի հեղինակությունը, միաբանությունը համալրել կարող ուժերով, վերաբացել է հոգևոր վարժարանը, կատարել չին. աշխատանքներ, զբաղվել մատենագիտությամբ, մեկնել Հովհաննեսի Ավետարանը, գրել Քրիստոսի և ավետարանիչների վարքը, տաղեր («Եղուկ և վայ ինձ» ևն): Ս. Ե Ս. համարվում է XVII–XVIII դդ. ազգ. և մտավոր

զարթոնքի նախակարապետը: Արծարծել է Հայաստանի ազատագրության հարցը, կապեր հաստատել հակաօսմանյան լիգա ստեղծելու միտումով գումարված Տրիտենդյան եկեղեց. ժողովի (1545) հետ: Արլ. Հայաստանը պարսկ. տիրապետությունից ազատագրելու հարցը քննարկելու նպատակով, 1547-ին Էջմիածնում հրավիրել է արևելահայ մելիքների («Տերանց Հայոց») և բարձրաստիճան հոգևորականների գաղտնի խորհրդաժողով (տես *Էջմիածնի ժողովներ 1547, 1677*): Նույն թվականին, իրեն աթոռակից նշանակելով Միքայել Սեբաստացուն, գլխավորել է Արլ. Հայաստանի մելիքների հանձնարարական նամակներով Արմ. Եվրոպա մեկնող պատվիրակությունը: 1548-ին ժամանել է Վենետիկ, այնուհետև՝ Հռոմ, բանակցություններ վարել Վենետիկի Հանրապետության դոժի, Հռոմի Պողոս III և Հուլիոս III պապերի (1549–50), Հռոմեական սրբազան կայսրության կայսր Կարլ V-ի (1550) և Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ II Ավգուստի (1551) հետ: Հիասթափված արևմտաեվրոպ. տերությունների երկդիմի դիրքորոշումից՝ Լեհաստանի, Արմ. Ուկրաինայի և Ղրիմի հայկ. գաղթավայրերն այցելելուց հետո վերադարձել է Ս. Էջմիածին (1552):

Մայր աթոռի տնտ. վիճակը բարելավելու միտումով աթոռակից կաթողիկոսներ է նշանակել նաև Բարսեղ Գ Վաղարշապատցուն և Գրիգոր Բ Վաղարշապատցուն, սակայն թուլացել է կաթողիկոսարանի կենտրոնամետ քաղաքականությունը:

1552-ին Լվովում Ս. Ե Ս-ու վախճանվելու և իբր իր կտակի համաձայն այնտեղ կաթոլիկ. ծեսով թաղվելու մասին կարծիքը ժխտվում է հիշատակարանի վկայություններով: Լվովի Հայոց Մայր եկեղեցում նրա անունով կեղծ տապանաքարն ու արձանագրությունը հետապնդել են տեղի հայերին դավանափոխության մղելու նպատակով:

Կաթողիկոս. գահին Ս. Ե Ս-ուն հաջորդել է *Միքայել Ա Սեբաստացին*:

Գրկ. Ալպոյաճյան Ա., Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Առնջեցի կաթողիկոսներու ժամանակագրությունը, «Սիոն», 1931, № 10: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Ե., 1959: Պետրովիչ Գ., Ստեփանոս Ե Սալմաստեցի. կաթողիկոս Էջմիածնի, Վնտ., 1964:

Աղավնի Ութուջյան

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ, Լվովցի, Իլովացի (ծ. թ. անհտ, Լվով – 1689, Էջմիածին), աստվածաբան, թարգմանիչ, փիլիսոփա: Կրթությունն ստացել է Լվովում, տիրապետել լատիներենին և լեհերենին: 1630-ական թթ. տեղափոխվել է Էջմիածին, ձեռնադրվել վարդապետ: Մասնակցել է մտավոր-գրական շարժմանը՝ վաստակելով «քաջ հռետորի», «անհաղթ փիլիսոփայի» և «ներհուն թարգմանչի» համբավ:

1651-ին լեհերենից թարգմանել է XV դ. կազմված և կաթոլիկ երկրներում տարածված «*Հայելի վարուց*» բարոյախրատական գրույցների ժողովածուն (հրտ. «Գիրք հայելի վարուց որ ասի հարանց վարք», 1702), 1660-ին՝ I դ. հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսի «Հրեական պատերազմի մասին» գիրքը (հրտ. «Գիրք պատմութեանց Յովսեպոս Եբրայեցւոյ արաբեալ յաղագս պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս, և աւերման Երուսաղէմի», 1787): Ս. Լ.-ից թարգմանել է Պրոկլ Դիադոխոսի «Գիրք պատճառաց»-ը (մոտ 1660, հրտ. «Գրգուկ որ կոչի պատճառաց», 1750), որը հայկ. դպրոցներում օգտագործվել է որպես փիլիսոփայության դասագիրք: Ս. Լ-ուն է պատկանում *Դիոնիսիոս Արիոպագացու* «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց», «Յաղագս եկեղեցական քահանայապետութեանց», «Յաղագս աստուածային անուանց», «Յաղագս խորհրդական աստուածաբանութեան» աշխատությունների, 11 «Թղթերի», «Պատմութեան» և նշված աշխատությունների՝ Մաքսիմոս Խոստովանողի կատարած մեկնությունների թարգմանությունները (թրգմ. լատ., մինչև 1662, Մատենադարան, ձեռ. № 110): Նշված գործերը դեռ VIII դ. հուն-ից թարգմանել էր *Ստեփանոս Սյունեցին*, սակայն թարգմանությունը թերի էր և դժվարամատչելի: Դիոնիսիոս Արիոպագացու երկերը Ս. Լ. բաժանել է գլուխների, յուրաքանչյուր գլխի բուն շարադրանքից առաջ համառոտակի ներկայացրել դրա բովանդակությունը, լրացրել Մաքսիմոս Խոստովանողի մեկնությունները: Ենթադրվում է, որ Ս. Լ. է լատ-ից թարգմանել Արիստոտելի «Հոգու մասին» աշխատությունը: Լատ-ից վերաթարգմանել է նաև Հովհան Անգլիացու «Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ» երկը (մինչև 1668, Մատենադարան, ձեռ. № 606), որը 1337-ին թարգմանել էր Հակոբ Քոնեցին: Ս. Լ-ու թարգմանչական բեղուն գործունեության ամենալուրջ արդասիքը Արիստոտելի «Մետաֆիզիկա»-ի թարգմանությունն է (թրգմ. լատ., մինչև

1675, Մատենադարան, ձեռ. № 10032), որը մինչ այդ թարգմանվել էր միայն արաբ. և լատ.: Ս. Լ. XVII դ. հայ տպագրիչ *Ոսկան Երևանցու* պատվերով լատ-ից թարգմանել է նաև «Իմաստութիւն Սիրաքայ» (մինչև 1666, Մատենադարան, ձեռ. № 705, սակայն ուշացման պատճառով չի մտել Աստվածաշնչի ոսկանյան հրատարակության մեջ, ուստի Ոսկան Երևանցին այնտեղ զետեղել է նույնի իր թարգմանությունը), «Ղուրան» (մինչև 1680, Մատենադարան, ձեռ. № 3109), «Բուրաստան աղօթից» (Մատենադարան, ձեռ. № 553, հրտ. 1685) և այլ գործեր: Նրա բանաստեղծ. փայլուն ձիրքի վկայությունն են № 553 ձեռագրում սփռված թարգմանական չափածո ստեղծագործությունները, որոնցից հատկանշական է «Երգ ոտանաւոր առ Յիսուս Քրիստոս արարեալ սրբոյն Բեռնարտոսի» ծավալուն ստեղծագործությունը (49 քառատող):

Ս. Լ. թողել է նաև ինքնուրույն աշխատություններ, որոնցից ամենաարժեքավորը «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք...» ծավալուն բառարանն է (մինչև 1662, Մատենադարան, ձեռ. № 110): Բառարանում տրված են ժամանակի աստվածաբան., փիլ., գեղագիտ., բարոյագիտ. առավել կարևոր հասկացությունները՝ տարբեր աղբյուրներից քաղված բացատրություններով: Կրոնաղավանաբան. և եկեղեցիների փոխհարաբերության հարցերում, ի տարբերություն միարարականների (տես *Ուսնիթորություն*) ու հակամիարարականների, ուսնեցել է փոխզիջողական դիրքորոշում:

Գրկ. Ակինյան Ն., Ստեփանոս վարդապետ Լեհացի, ՀԱ, 1912, № 1–2: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. 5, Անթիլիաս, 1951: Գրիգորյան Գ., Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական բառարանը, ՊԲՀ, 1975, № 2: Թարվերդյան Յու., Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները, Ե., 1979: Հայելի վարուց, աշխատասիր. Ք. Տեր-Դավթյանի, Ե., 1994: Միրզոյան Հ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Ե., 1983:

Հրաչ Միրզոյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ, սուրբ Ստեփանոս Նախավկա (Ստեփանոս անունը հուն. է, նշանակում է պսակ), I դարի քրիստոնյա, հելլենական հրեա. անդրանիկ վկան, որն իր արյունը թափեց՝ Հիսուս Քրիստոսին Աստծո Որդի վկայելով: Մեկը Հիսուսի յոթանասուն (կամ յոթանասուներկու) աշակերտներից, որին, ուրիշ վեց հոգիների հետ, նախնական եկեղեցին Պետրոս առաքյալի առաջնորդությամբ կարգեց եկեղեցու սեղանի սպասավոր (սարկավագ):

Սուրբ Գիրքը Ս. Ն-ի մասին վկայում է, որ նա լցված էր աստվածային «շնորհներով և զորությամբ», «... ժողովրդի մեջ զարմանալի գործեր և մեծամեծ նշաններ էր անում» (Գործք **6.**8): Սուրբ Հոգու զորությամբ քարոզել է Հիսուս Քրիստոսին, ինչի պատճառով արտասահմանից եկած հրեաները Ս. Ն-ի դեմ են դրդռել Երուսաղեմի հրեա ժողովրդին, քահանաներին ու օրենսգետներին և նրան հանձնել բարձրագույն ատյանին: «Եվ բերեցին կանգնեցրին սուտ վկաներ, որոնք ասում էին. «Այս մարդը չի դադարում հայհոյական խոսքեր ասել այս սուրբ տեղի և օրենքի դեմ...»... Եվ բոլոր նրանք, որ նստած էին ատյանում, նրան նայելով՝ տեսան, որ նրա երեսը հրեշտակի երեսի նման էր» (Գործք **6.**13–15):

Ի պատասխան այդ բանսարկության՝ Ս. Ն. ատյանում սկսել է Սուրբ Հոգով մեկնել Հին կտակարանը, թե՝ բոլոր մարգարեները նախապես վկայել են Արդարի՝ Մեսիայի՝ Հիսուս Քրիստոսի գալուստը: Եվ եզրափակելով՝ ասել է. «Ձեր հայրերը մարգարեներից որի՞ն չհալածեցին: Եվ սպանեցին նրանց, որոնք նախօրոք պատմեցին Արդարի գալստյան մասին, որի մատնիչներն ու սպանողները եղաք դուք այժմ, դուք, որ հրեշտակների հրամանների միջոցով օրենքն ստացաք, բայց այն չպահեցիք» (Գործք **7.**52–53):

Ս. Ն-ին քարկոծելով սպանել են Երուսաղեմի շրջակայքում, երբ նա բացականչել է. «Ահա տեսնում եմ երկինքը բացված և մարդու Որդուն, որ կանգնած է Աստծո աջ կողմը» (Գործք **7.**55): Ս. Ն., Աստծուց թողություն խնդրելով իրեն քարկոծողների համար, մեռել է (Գործք **7.**59): Նրա սպանությանն ակնատես և կամակից Սողոսը (ապագա Պողոս առաքյալը) հետագայում, դարձի գալուց հետո, գրել է. «Եվ երբ թափվում էր քո վկայի՝ Ստեփանոսի արյունը, ես ինքս էի, որ նրա մոտ էի կանգնել և համաձայն էի լինում նրա սպանմանը. և նրան սպանողների զգեստներն էի պահում» (Գործք **22.**20):

Ըստ վկայագիրների՝ Ս. Ն-ին թաղել են Գամալիելը (Պողոս առաքյալի ուսուցիչը) և Նիկոդեմոսը (Հիսուսի ծածուկ աշակերտներից)՝ իրենց ագարակում, որտեղ հետագայում թաղել են նաև նրանց: Այնուհետև Ս. Ն-ի տապան-

կը Հուլիանե իշխանուհին (նահ. IV դ. սկզբին) ամփոփել է Կ. Պոլսում: Հետագայում նրա մասունքները տեղափոխվել են Վենետիկ և դրվել Ս. Գևորգ կղզու Մայր եկեղեցու մեջ, որտեղ ամեն տարի տոնվում է սուրբի հիշատակը:

Հայ եկեղեցին ս. Ս. Ն-ի հիշատակը նշում է Ավագ տոների հետ՝ դեկտ. 25-ին կամ հաջորդ օրը (եթե դեկտ. 25-ը կիրակի կամ պահոց է լինում), հունադավան եկեղեցիները՝ դեկտ. 27-ին և օգոստ. 2-ին, Կաթոլիկ եկեղեցին՝ դեկտ. 26-ին, մայիսի 7-ին և օգոստ. 3-ին:

Ս. Ն. անդրանիկ վկան է, որն իր նահատակությամբ նմանվում է Հիսուսին՝ ճանապարհ բացելով հետագա վկաների ու մարտիրոսների համար: Եկեղեցու հայրերն ու վարդապետները ներբողյաններ են հյուսել ս. Ս. Ն-ի մասին, որոնցից նշանավոր են Եփրեմ Ասորու, Պրոկղի, Գրիգոր Նյուսացու, Օգոստինոսի ներբողյան-ճառերը:

Ս. Ն-ի անունով Հայաստանում վանքեր ու մատուռներ են կառուցվել, որոնցից նշանավոր են Ջուղայի Ս. Ստեփանոս Նախավկա, Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա, Աստապատի Ս. Ստեփանոս Նախավկա վանքերը:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.7, 2-րդ պատկերը:

Գրկ. Բառարան սուրբ գրոց, ԿՊ, 1881: Սուրբերու կեանքը (ժող.), 3 հրտ., Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Աստվածաշնչական սուրբեր, Ե., 1997:

Լևոն Սարգսյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ, Ստեփանյան (12.8. 1670, Կամենից Պոդոլսկ – 31.10.1739, Ստանիսլավով), աստվածաբան, քարոզիչ, բառարանագիր, ժամանակագիր: Նախն. կրթությունն ստացել է Կամենիցում, ապա ավարտել Լվովի հայոց հոգևոր բարձրագույն դպրանոցը, 1691-ից սովորել է Հռոմի Ուրբանյան դպրանոցում, ստացել աստվածաբանության ու փիլ-յան դոկտորի աստիճան, ձեռնադրվել քահանա: 1701-ին վերադարձել է Լեհաստան, պաշտոնավարել Կամենիցում, Ստանիսլավովում, եղել հայ կաթոլիկ համայնքների հոգևոր հովիվ, ավագերեց, եպիսկոպոս, 1713-ից՝ Լվովի թեմի առաջնորդական փոխանորդ: Ծավալել է մշակութ., մանկավարժ., ազգ-եկեղեց. բուռն գործունեություն: Բարեկարգել է հայկ. եկեղեցիները, ստեղծել «կտրիճավորաց եղբայրություններ», նրանց համար գրել կանոններ: Ս. Ռ. անձնական սերտ կապեր ու նամակագրություն է ունեցել *Մխիթար Սեբաստացու*, Իսրայել Օրու, խաչատուր Կարնեցու, կոմս Ստ. Շեհրիմանյանի ու նրա որդիների, Թովմա Վանանդեցու և հայազգի այլ գործիչների հետ: Ս.Ռ. եղել է լեհահայ գաղութի հայալեզու վերջին մեծ գործիչը: Գրել է «Բարոյական աստվածաբանութիւն», «Տրամաբանութիւն և փիլիսոփայութիւն», «Յաղագս շրջանի և ծառաստեղին պատճառի» երկերը, ձեռնամուխ եղել հայ կաթոլիկ եկեղեցու համար Վ. արք. Հունանյանի խմբագրած, լատինաբանություններով խիստ աղճատված Մաշտոց, Պատարագամատույց, Տոնացույց ժողովածուները հայացնելու, խմբագրելու և հրատարակության պատրաստելու գործին: Հայրենակիցների համար լատ-ից հայերեն է թարգմանել «Դուռն ողորմութեան Աստուծոյ...» (1702) աղոթամատույցը, իտալացի աստվածաբան, կարդինալ Ռոբերտոս Բելարմինոսի «Մեկնութիւն քրիստոնէական վարդապետութեան» երկը: Ս. Ռ-ի գրչին է պատկանում նաև «Յաղագս հերետիկոսութեանց» աշխատությունը, որը դեռևս չի հայտնաբերվել:

Լինելով մեծ ազգասեր ու արևմտաեվրոպ. լուսավոր. նոր գաղափարների կրող՝ նա ազգի պահպանման ու փրկության հիմն. գործոններից մեկը համարել է կրթությունն ու լուսավորությունը: Այդ նպատակով գիտ. աշխատություններ է գրել ոչ թե ուծացող իր հայրենակիցների համար, որոնց ճակատագիրն արդեն որոշված է համարել, այլ «յօգուտ Հայաստանեայցն եղբարց»: 1718-ին ավարտել է «Քերականութիւն... ըստ իսկական ոճոյն լեզուին Հայոց...» աշխատությունը (անտիպ), որի ձեռագիր ընդօրինակումները պահվում են աշխարհի մի շարք մատենադարաններում: Ս. Ռ-ի հեղինակած «Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականքը» (հրտ. 1964) հայ մատենագրության մեջ պահպանված միակ աշխատությունն է, որտեղ նա ժամանակագր. կարգով՝ I դարից (Քրիստոսի ծննդից) մինչև 1739-ը ընդգրկող հատվածում, ներկայացրել է ընդհանուր և, մասնավորապես, Հայ եկեղեցու պատմությունը, Հայաստանում ու Լեհաստանում կատարված կարևորագույն դեպքերն ու իրադարձությունները: Լեհահայոց եկեղեցուն ու նրա կաթոլիկացման պատմությանը նվիրված հատվածները հրատարակել է Ղ. Ալիշանը («Կամենից», 1896), իսկ հայոց պատմությանն ու եկեղեցունը՝ Հ. Ոսկյանը («Ժամանակագրութիւն», 1964): Ս. Ռ-ի նշանավոր աշխատություններից է «Գանձարան հայոց լեզվի կամ

ՍՏԵՓԱՆՈՍ Բառգիրք Ստեփանեան» հայ-լատ., լատ-հայ., հայ մատենագրության վրա հիմնված հայերեն բառերի, դրանց մեկնաբանությունների ու բացատրությունների երկհատոր բառարանը: Ըստ իր «Նամականներ», նա սկսել է Բառգրքի վրա աշխատել 1700-ից, ավելի քան 30 տարի: Միջոցներ չլինելու պատճառով չի կարողացել հրատարակել: Ձեռագիր ութ ընդօրինակումները, ինչպես և նրա մյուս անտիպ երկերը, պահվում են Վենետիկի, Վիեննայի, Զմմառի, Վատիկանի, Կրակովի և այլ մատենադարաններում:

Գրկ. Ճանաչյան Մ., Ստեփանոս Ռոշքայանի բառարանը, «Բազմավեպ», 1955, էջ 129, 185, 249: Ոսկյան Հ., Ստեփանոս վարդապետ Ռոշքա, ՀԱ, 1965–1967: Բարսեղյան Բ., Լեհահայության մշակութային կյանքը և գրականությունը XIV–XIX դդ., Ե., 1992:

Բելլա Բարսեղյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ (նահ. 1387), նոր վկա: Սեբաստիա քաղաքի Ս. Նշան եկեղեցու վանահայր, արքեպիսկոպոս: Մահմեդականների կողմից չարախոսվել է՝ իբրև մանկակից Սեբաստիա քաղաքի սելջուկ տիրակալ Բուրհանեդդին սուլթանի դեմ ծագած ապստամբության: Ս. Ս., կաշառքով ազատելով Ս. Նշան եկեղեցու բոլոր վանականներին, ինքը երկու ավագազույն աբեղաների՝ Սեղբեստրոսի և Թորոսի հետ ներկայացել է Բուրհանեդդինին: Վերջինս պահանջել է, որ սրանք ուրանան Քրիստոսին: Մերժելով՝ երեքն էլ գլխատվել են հունիսի 23-ին:

Գրկ. Յայսմավուրք, ԿՊ, 1730: Հայոց նոր վկաները, Վաղ-պատ (ժող.), 1903, էջ 137–148:

Քնարիկ Տեր-Դավթյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, Ստեփանոս Քերթող, Ստեփանոս Սյունեցի երկրորդ (660/670, Դվին – 21.7.735, թաղված է Թանահատի վանքում), մատենագիր, աստվածաբան, մեկնիչ, թարգմանիչ, քերական, երաժիշտ, բանաստեղծ: Նրան կոչել են «Սիւն երկնի, խարիսխ հաւատոյ»: Դվինի կաթողիկոսարանի ավագերեցի որդին: Սովորել է Դվինի կաթողիկոսարանի, Մաքենյաց վանքի դպրոցներում, Սյունիքի վարդապետարանում, աշակերտել *Սողոմոն Մաքենացուն, Մովսես Քերթողին*: Կ. Պոլսում սովորել է հուն., լատ., ուսումնասիրել աստվածաբանություն, փիլիսոփայություն, երաժշտություն և այլ գիտություններ: Ուսումը կատարելագործելու նպատակով ուսումնակից ընկերոջ՝ քահանա Գրիգոր Այրիվանեցու հետ մեկնել է Աթենք (մոտ 710-ին): Գալով Կ. Պոլիս (712)՝ Դավիթ Հյուսպատոսի հետ ձեռնամուխ է եղել մի շարք երկերի հայացմանը: 728-ին վերադարձել է Հայաստան և մինչև 735-ը դասավանդել Դվինի կաթողիկոսարանի դպրոցում, զբաղվել մատենագրությամբ: 735-ին կարգվել է Սյունյաց եպիսկոպոս: Սպանվել է մի կնոջ ձեռքով, որին հանդիմանել է քարոզի ժամանակ:

Ս. Ս. թողել է մեծածավալ ժառանգություն՝ մեկնաբան., դավանաբան. աշխատություններ, թարգման. երկեր, հոգևոր երգեր, տաղեր: Նրա անունով մեզ են հասել «Մեկնութիւն չորից Աւետարանչացն» (731), «Պատճառք և թելադրութիւնք Առաջին տեսլեանն Եզեկիելի», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն Յոբայ», «Մեկնութիւն Արարածոց», «Մեկնութիւն քերականին» (հրտ. 1915), «Մեկնութիւն ժամակարգութեան» (հրտ. 1915–16):

«Ժամակարգութեան» մեկնության նպատակն է եղել ոչ միայն բացատրել ծիս. պարագաների խորհուրդը, այլև պահպանել ծիսակարգի հնավանդ մաքրությունն ու ազդ. նկարագիրը՝ զերծ մնալով օտարամուծությունների: Մեկնությունը հայտնի է ընդարձակ և համառոտ տարբերակներով: Դավանաբան. հայեցակետից ուշագրավ է Պատարագի Երից սրբասացությանը («Երգ Երեքսրբեանի») նվիրված Դ գլուխը, որտեղ հեղինակը հաստատում է «խաչեցար» ասելու Հայ եկեղեցու առաքելավանդ տեսակետը. «Սուրբ Աստուած, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր»: Ս. Ս. «Սուրբ Աստուած»-ի «խաչեցար» հավելմանը, համաձայն արևելաքրիստ. վարդապետության, տալիս է քրիստոսաբան. մեկնություն և այդ տեսակետը հիմնավորում նրանով, որ Կույսից մարմնացած Բանը Աստված է. երեք անգամ կրկնվող «սուրբ» բառը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի Աստվածությունը, հզորությունը և անմահությունը: Դրանով հեղինակը Երից սրբասացության բանաձևն ընկալում և վավերացնում է որպես ծիսական պահի համար կանխասահմանված հայտնութենական իրողություն, որի նպատակը դավան. ճշմարտությունների հաստատագրումն է: Ս. Ս-ու «Մեկնութիւն ժամակարգութեան», ինչպես և «Ի խորհուրդ Եկեղեցւոյ», «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», «Պատճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցւոյ» երկերը հետաքրքրական են եկեղեց. արարողակարգին առնչակից պատարագների տեսական բովանդակության ուսումնասիրման, եկեղեց. ճարտ-յան առանձին

մասերի աստվածաբան. բացատրության, այսինքն՝ խորհրդանշանի աստվածաբանության համար: «Մեկնութիւն չորից Աւետարանչացն»-ը Այունյաց մեկնողական դպրոցի հին շրջանի մեզ հասած միակ ամբողջ. երկն է: Երկար ժամանակ այն կորած է համարվել: 1917-ին Գարեգին եպս. Հովսեփյանը (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս *Գարեգին Ա Հովսեփյան*) գտել է 1155-ին գրված մի ձեռագրում: Ս. Ս. մեկնությունը գրել է *Դավիթ Ա Արամոնեցու* պատվերով: Նա մեկնել է Ավետարանի «դժվարապատում» բառերն ու խոսքերը, կատարել բնագրային ճշգրտումներ: Այս սկզբունքով մեկնել է Մատթեոսի Ավետարանը, ապա մյուս երեքի՝ Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի Ավետարանների այն հատվածները, որոնք չեն եղել Մատթեոսի Ավետարանում: Մատթեոսի, Մարկոսի (մեկնված է միայն 14-րդ գլխի 53 համարը), Ղուկասի, Հովհաննեսի Ավետարանների մեկնությունները պահվում են Մատենադարանում (ձեռ. № 5551, Հովհաննեսինը նաև՝ ձեռ. №№ 1349, 1350, 2520, 9372) և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատանը (ձեռ. № 1046):

«Վասն անապականութեան մարմնոյն Քրիստոսի» դավանաբան. աշխատությունը տեսականից զատ ունի նաև աղբյուրագիտ. նշանակություն: Այստեղ ուշագրավ վկայություններ են բերված ոչ միայն Ընդհանրական եկեղեցու նշանավոր հայրերի, այլև Հայ առաքելական եկեղեցու երևելի ներկայացուցիչներ Պետրոս Այունեցու, Դավիթ Հարքացու, Հովհան Կարնեցու, Հովհաննես Գ Օձնեցու, Հովհան Մայրավանեցու *անապականության* խնդրին վերաբերող դավանաբան. գործերից («Արարատ», 1902): Ս. Ս. գրել է նաև Կ. Պոլսի պատրիարք Գերմանոսին, Անտիոքի պատրիարքին, Աղվանքի վարդապետներին ուղղված դավանաբան. բնույթի պատասխան թղթեր՝ «Պատասխանի թղթոյն Գերմանոսի», «Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի» (զետեղվել են «Գիրք թղթոց»-ում, էջ 323–334, 373–395), «Պատասխանի առ վարդապետսն Աղուանից»:

Ս. Ս. որպես բանաստեղծ-երաժիշտ, շարականագիր հիշատակվել է միջնադարյան տարբեր աղբյուրներում: Նրան են վերագրվել շարականների ամբողջ. շարքեր (օր., «Մարտիրոսաց և ննջեցելոցը»), Հարության Ավագ օրհնությունները, սուրբ Խաչին նվիրված տաղեր ևն, ինչպես և Հինանց և պահոց ստողոգիական սաղմոսները, որոնք հետագայում զետեղվել են Մանրուսում ժողովածուներում և հարատևել: Ս. Ս-ու՝ որպես ակնառու երաժիշտ-տեսաբանի անվան հետ են կապվել մի շարք կարևոր տեղաշարժեր և բարեփոխումներ. *ութձայն* համակարգի տեսական իմաստավորում և բարեկարգում, կանոնի ժանրի վավերացում, խազերի կիրառման նախն. փորձեր (տես *Խազագրություն*): Դիոնիսիոս Թրակացու «Մեկնութիւն քերականին» երկասիրության մեջ Ս. Ս. ի մի է բերել V–VII դդ. երաժշտ. գեղագիտությանը վերաբերող Դավիթ Անհաղթի, Դավիթ Քերականի և իր ուսուցիչ Մովսես եպս. Այունեցու ձեռքբերումները՝ հարստացնելով այդ բնագավառն իր դիտարկումներով և դատողություններով: Աշխատության մեջ նա անդրադարձել է երաժշտ. արվեստի դասակարգման, գեղ. կերպարի ստեղծման ձևերի, միջոցների ու հնարանքների, դուսան. ու հոգևոր երաժշտության փոխհարաբերության և այլ հարցերի:

Վաղ միջնադարի ազգ. մշակույթի զարգացման ոլորտում հատկանշական է Ս. Ս-ու թարգման. գործունեությունը: Դավիթ Հյուպատոսի մասնակցությամբ նա թարգմանել է *Դիոնիսիոս Արիոպագացու* «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց», «Յաղագս եկեղեցական քահանայապետութեանց», «Յաղագս աստուածային անուանց» ևն (712, հրտ. 1987), *Կյուրեղ Ալեքսանդրացու* «Գիրք պարապմանց» (715, հրտ. 1717), Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» (719, հրտ. 1889) երկերը: Արժեքավոր են նաև Ս. Ս-ու թարգմանած *Աթանաս Ալեքսանդրացու* ճառերը (զետեղված են Աթանաս Ալեքսանդրացու երկերի ժող-ի մեջ, հրտ. 1899), Գեորգ Պիսիդեսի «Յաղագս Վեցօրեայ արարչութեան» չափածո երկը, որը նա վերածել է արձակի (հրտ. 1806)):

Երկ. Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Ե., 1994 (աշխատասիր. Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսի):

Գրկ. Ալիշան Ղ., Հուշիկք հայրենեաց Հայոց, հ. 1, Վնն., 1920: Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932: Թահմիզյան Ն., Այունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության Ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, № 2: Հակոբյան Գ., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV դդ.), Ե., 1980: Պետրոսյան Ե., Ավետարանների միջնադարյան հայկական մեկնություններ, «Էջմիածին», 1982, № 1: Քյոսեյան Հ., Խորհրդանշանը Ստեփանոս Այունեցու եկեղեցաբանական ժառանգության մեջ, «Էջ-

միածին», 1998, № 10–11: Նույնի, Նորահայտ նշխարներ Ստեփանոս Սյունեցու Մատթեոսի Ա-վետարանի մեկնությունից, տես «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», հոդ. ժող., Ե., 2000:

Հակոբ Քյոսեյան
Աննա Արևշատյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ, Ս տ ե փ ա ն ո ս Ա ս ո ղ ի կ (ծ. և մ. թթ. անհտ), պատմագիր: Ապրել և ստեղծագործել է X դ. 2-րդ և XI դ. 1-ին կեսին՝ հայ պետականության ամրապնդման, երկրի տնտ. և քաղ. վերելքի ժամանակաշրջանում: Տարոնեցի անունից ենթադրվում է, որ ծնվել է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում, իսկ Ասողիկ պատվանվանն արժանացել է հավանաբար հմուտ երաժիշտ և երգասաց լինելու համար: Կրթությունն ստացել է Անիում: Կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցու* հանձնարարությամբ գրել է «Պատմութիւն տիեզերական» վերնագրով երկը՝ Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը ներկայացնելով հարևան երկրների և ժողովուրդների պատմության հետ միահյուսված: Աշխատությունը բաղկացած է երեք հանդեսից (մասից): Սկզբում հեղինակը նշում է օգտագործված աղբյուրները՝ Հին կտակարան, Հովսեպոս Փլավիոս, Եվսեբիոս Կեսարացի, Սոկրատ Աքոլաստիկոս, իսկ հայկ. աղբյուրներից՝ իրեն նախորդած գրեթե բոլոր հայ պատմիչներին և մատենագիրներին (Ագաթանգեղոսից մինչև Հովհաննես Ե Դրասխանակերտցի): Օգտագործել է նաև Շապուհ Բագրատունու՝ մեզ չհասած պատմ. երկը: Հինգ գլխից բաղկացած առաջին հանդեսը սկսվում է աշխարհի Արարչագործությունից և ավարտվում Պարսկաստանում Սասանյան հարստության հաստատմամբ, իսկ Հայաստանում՝ մինչև Տրդատ Գ-ի թագավորելը (III դ. վերջ): Երկրորդ հանդեսը (6 գլուխ) սկսվում է Տրդատ Գ-ի թագավորելով և ավարտվում Հայաստանում Բագրատունյաց թագավորության հիմնադիր Աշոտ Ա-ի գահակալմամբ (885–890), իսկ Բյուզանդիայում՝ Մակեդոնական հարստության հաստատմամբ (IX դ. 2-րդ կես): Ամենաընդարձակն ու արժեքավորը երրորդ հանդեսն է, որը հեղինակը վերնագրել է «Պատմութիւն ժամանակաց ինքնախօսութեան»: Բաղկացած է 48 գլխից և բովանդակում է Աշոտ Ա-ից մինչև Գագիկ Ա Բագրատունու գահակալման 15-րդ տարվա (1004) հանդամանալից պատմությունը: Ի տարբերություն նախորդ երկուսի, որոնք փաստորեն ծաղկաքաղ են տարբեր աղբյուրներից, երրորդ հանդեսում հեղինակը ինքնուրույնություն է դրսևորել՝ հատկապես վերջին 75 տարիների պատմությունը շարադրելով որպես դեպքերի ժամանակակից և ականատես: Ս. Տ. իր երկում պաշտպանել է Հայոց կենտրոնացված պետականության և եկեղեցու ամրապնդման շահերը: Այդ ժամանակ Հայաստանում վերստին բորբոքվել էին միաբնակ-երկաբնակ վեճերը: Երրորդ հանդեսի 21-րդ գլուխը (ծավալով՝ հանդեսի կեսը) իրենից ներկայացնում է Հայոց հավատո խոստովանությունն ու պաշտպանությունը՝ շարադրված *Խաչիկ Ա Արշարունի* կաթողիկոսի հրամանով և հասցեագրված Սեբաստիայի հույն մետրոպոլիտին: Ս. Տ. միակն է, որ հիշատակում է Կ. Պոլսի Ս. Սոֆիայի տաճարի՝ երկրաշարժից քանդված գմբեթը (հեղինակի մոտ՝ ամբողջ տաճարը) վերակառուցած ճարտարապետի անունը՝ *Տրդատ*: Պատմության մեջ մեծարժեք վկայություններ կան Հայաստանում վանքերի շինարարության մասին, տեղեկություններ Կամրջաձորի, Նարեկի, Հաղպատի, Սանահինի, Հոռոմոսի և այլ վանքերի կառուցման, ինչպես նաև քաղաքաշինական շինությունների, օր., Անի քաղաքի պարիսպների մասին:

Ս. Տ-ու «Տիեզերական պատմութիւնը» առաջին անգամ հրատարակել է Կարապետ Շահնազարյանցը՝ Փարիզում (1859), այնուհետև՝ Ստ. Մալխասյանցը՝ առաջաբանով և ծանոթագրություններով (Սանկտ Պետերբուրգ, 1885): Հրատարակվել է նաև ռուս. (Մ. Էմինի թարգմանությամբ, 1864), գերմ. (Հ. Գելցերի թարգմանությամբ, 1907), ֆրանս. (Է. Դյուլորիեի թարգմանությամբ, 1883): Բացի «Տիեզերական պատմութիւն»-ից Ս. Տ. գրել է (մեզ չի հասել) Երեմիայի մարգարեության մեկնությունը: Այդ մասին հիշատակում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին. «Մեկնութիւն Երեմիայի մարգարէի, զոր գրեալ է Ասողկայ երջանիկ ծայրագոյնն ծերոյ»:

Երկ. Տիեզերական պատմություն, Ե., 2000:

Գրկ. Աբեղյան Գ., Կարծեցյալ Ստեփանոս Տարոնացին նույն ինքը Ստեփանոս Տարոնացի Ասողիկն է, ՊԲՀ, 1962, № 1: Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968: Adontz N., Étude arméno-byzantines, Lisbonne, 1965.

Հրաչ Բարթիկյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԵՐ ՀՈՒՍԿԱՆՈՐԴԻ (ծ. թ. անհտ, Արտամետ – 1251), մատենագիր, վարդապետ: Ս. Տ. Հ-ու ավագ ժամանակակիցը՝ *Կի-*

բակոս Գանձակեցին, նրան անվանել է «այր սքանչելագործ և սուրբ»: Ուսանել է *Արգելանի Ս. Աստվածածին վանքում*, եղել «բանիբուն» վարդապետ, ունեցել բազմաթիվ աշակերտներ ու հետևորդներ: Աշխատություններից հայտնի են երկուսը՝ «Պատմութիւն Երկրորդ գալստեանն Քրիստոսի» և «Խրատ հաւատացելոց» (Մատենադարան, ձեռ. №№ 1520, 2190, 3070): Ս. Տ. Հ-ու մահից հետո նրա վարքը մտել է *Հայսմավուրք*. պահպանվել են վարքի մի քանի խմբագրություններ, որտեղ ներկայացվում է նրա ընտանիքի դժվարին ճակատագիրը, նշվում նրա անվան հետ կապված զանազան հրաշագործություններ: Մահվանից հետո նրա գերեզմանը ձեռք է բերել բուժիչ սրբավայրի հռչակ և դարձել ուխտատեղի: Ս. Տ. Հ-ու գերեզմանի վրա XIII դ. հիմնվել է վանք և կոչվել նրա անունով՝ Ս. Ստեփանոս կամ Տեր Հուսկանորդի (տես *Բերկրիի Ս. Ստեփանոս վանք*):

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ (1250-ական թթ., Սյունյաց Ծղուկ գավառ – 1305, ամփոփված է Ամաղուի *Նորավանքի* Օրբելյանների տոհմական գերեզմանատանը), պատմագիր, աստվածաբան, բանաստեղծ, կրոն. և քաղ. գործիչ, արքեպիսկոպոս: Սյունիքի մետրոպոլիտ 1287-ից: Օրբելյանների իշխան. տոհմից: Հայրը Սյունիքի Իշխանաց իշխան, հայոց և վրաց ամբաբեկ Տարսայիճ Օրբելյանն էր: Ս. Օ-ի կենսագր. տվյալները պահպանվել են իր իսկ աշխատություններում: Մանուկ հասակում նրան որդեգրել է հորեղբայրը՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատը: Նախն. կրթությունն ստացել է *Տաթևի վանքում*, որտեղ նաև երաժշտություն է սովորել վանահայր Հայրապետ եպիսկոպոսից: 1273-ից, Սմբատ Օրբելյանի մահվանից հետո, Տարսայիճ Օրբելյանի ընտանիքը տեղափոխվել է Վայոց ձորի իշխանանիստ Եղեգիս գյուղաքաղաքը: Ս. Օ. ուսումը շարունակել է Ամաղուի Նորավանքի դպրոցում, դարձել դպիր, հետո՝ սարկավագ: 1280-ին Նորավանքում ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Եղել է *Գլաձորի համալսարանի* առաջին սաներից: Սյունիքի Օրբելյանները գերագահության համար մղվող պայքարում ձգտել են իրենց տոհմի մեծաշնորհը դարձնել նահանգի ոչ միայն քաղ. իշխանությունը, այլև՝ հոգևոր նվիրապետությունը: Ուստի 1285-ին, երբ հայրը՝ Տարսայիճ Օրբելյանը, դարձել է Սյունիքի իշխան, արդեն վարդապետ. գավազան ստացած Ս. Օ. ուղարկվել է Կիլիկյան Հայաստան՝ Հայոց կաթողիկոսից եպիսկոպոս օծվելու և Սյունյաց մետրոպոլիտ կարգվելու համար: Ս. Օ. երեք ամիս հյուրընկալվել է Լևոն Գ թագավորի արքունիքում՝ սպասելով նոր կաթողիկոսի ընտրությանը (Հակոբ Ա Կլայեցին վախճանվել էր): Նորընտիր Հայոց կաթողիկոս Կոստանդին Բ Կատուկեցուց Հռոմկլայում ձեռնադրվելով եպիսկոպոս և Սյունյաց մետրոպոլիտ՝ Ս. Օ. 1287-ին վերադարձել է Սյունիք: Հոր աջակցությամբ միավորել է Սյունյաց՝ Տաթևի ու Նորավանքի առաջնորդությունների երկփեղկված թեմը և այն ենթարկել իր հոգևոր իշխանությանը՝ «մի առաջնորդ և մի իշխեցող» նշանաբանով:

1289-ին Ս. Օ. հրավիրվել է Կիլիկյան Հայաստան՝ նոր հայրապետ. ընտրություններին մասնակցելու, սակայն մերժել է հեթում Բ թագավորի նվիրակ Ստեփանոս վրդ. Սկևռացուն, պատճառաբանելով, որ Կիլիկիայի Հայոց թագավորը հանիրավի է գահընկեց արել Կոստանդին Բ Կատուկեցուն՝ տեղի տալով կիլիկյան լատինամետ հոգևորականների և Հռոմի պապի պահանջներին: Սյունյաց վանքերն ու եկեղեցիները, նրանց սպասավորներին հարկերից ազատելու նպատակով Ս. Օ. մոնղոլ իշխաններ (այդ ժամանակաշրջանում Հայաստանը գտնվել է մոնղոլների իշխանության տակ) Արղունից (1284–91), Քեյղաթուից (1291–95) և Ղազանից (1295–1304) ձեռք է բերել Սյունյաց հոգևոր կենտրոնների և եկեղեցականների ապահարկության վիճակը հաստատող արտոնագրեր: Սյունյաց մետրոպոլիտն իր իշխան. ժառանգաբաժնից առատ նվիրատվություններ է կատարել Սյունյաց նահանգի դրչության և կրթ. կենտրոններին, նյութապես օգնել Գլաձորի համալսարանի ստեղծմանն ու բարգավաճմանը, աջակցել դասախոսներին և ուսանողներին, իր ծախսով ընդօրինակել տվել մի շարք ձեռագրեր, այդ թվում՝ Ավետարաններ, մեկնող., պատմ. երկեր: Նպաստել է վանական կալվածատիրության ընդարձակմանը, կարգավորել *Սյունյաց մետրոպոլիտության* վարչատնտ. խնդիրները: Ս. Օ. ծավալել է շին. աշխատանքներ, հիմնովին վերակառուցել Տաթևի վանքը (1297):

Ս. Օ. եղել է Հայ եկեղեցու ուղղափառության ու ավանդության, նրա ինքնուրույնության մեծ գաղափարախոսներից ու պաշտպաններից, *արևելյան վարդապետների* հետ ան-

զիջում պայքար մղել Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ միավորվելու փորձերի, Հայ եկեղեցում ծիսադավան. նորամուծությունների, կիլիկյան հայ հոգևորականության լատինամետ հոսանքի, *քաղկեդոնականության* դեմ: Մեծ է եղել Ս. Օ-ի դերը երկրի եկեղեց. և քաղ. կյանքում: 1297-ին Ս. Օ. հրավիրել է եկեղեց. ժողով, որը մերժել է Հայ եկեղեցու դավանանքի ու ծեսերի մեջ նորամուծություններ անելու և Հռոմի պապի գերիշխանությունն ընդունելու՝ *Գրիգոր Է Անավարզեցու* պաշտոն. առաջարկը:

Ս. Օ-ի եկեղեց. և քաղ. գործունեությունը զուգակցվել է գիտ-ստեղծագործ. բեղուն աշխատանքով: Գրել է հիմնականում պատմ. և դավան. բնույթի երկեր, թղթեր: Ամենահայտնի գործը «Պատմութիւն նահանգին Սիսական» կամ «Պատմութիւն տանն Սիսական» (1299) աշխատությունն է: Ս. Օ-ի նպատակն է եղել ներկայացնել Այունյաց աշխարհի եկեղեց. և քաղ. ամբողջական պատմությունն ու աշխարհագրությունը: Աշխատությունը գրելու համար ուսումնասիրել է ոչ միայն հայ և օտար պատմիչների երկեր, այլև վավերագրեր՝ Հայոց թագավորների և Այունյաց իշխանների, Հայոց կաթողիկոսների և Այունյաց եպիսկոպոսների նամակներ, հրովարտակներ, կալվածագրեր, ընծայագրեր, վիմական արձանագրություններ: Երկի բուն նյութը, ժամանակագր. առումով, ընդգրկում է Հայոց թագավոր Տրդատ Ա-ից մինչև XIII դ. վերջի իրադարձությունները: Առավել արժեքավոր են Պատմության այն հատվածները, որոնք հեղինակը շարադրել է իբրև ականատես:

Երկում շարադրված է Այունյաց նախարարության առաջացման, Հայաստանի կյանքում նրա խաղացած դերի, Այունիքում քրիստոնեության տարածման, Այունյաց եպիսկոպոսության, վանքերի հոգևոր-մշակութ., տնտ. և քաղ. կյանքի, գրչության կենտրոնների, վարդապետարանների, Օրբելյան իշխան. տան պատմությունը: Ս. Օ. կազմել և ներկայացրել է Այունիքի նախարարների, եպիսկոպոսների, ինչպես նաև Հայոց կաթողիկոսների ժամանակագրությունները: Պատմության մեջ է Ս. Օ. զետեղել (1986-ի հրատ-յան 69-րդ գլուխ) Գրիգոր Է Անավարզեցուն ուղղված արևելյան վարդապետների, Այունյաց նախարարների ու հոգևորականների ստորագրությամբ վավերացված իր գրած թուղթը: Ս. Օ. Հայոց կաթողիկոսին խորհուրդ է տվել «անթերի պահել երեք աստվածագումար ժողովների, սուրբ Գրիգորի և նրա որդիների ու թոռների հավատքի սահմանը», ազգ-եկեղեց. ժողովների կանոնները, հայոց ավանդություններն ու ծիսադավան. ուղղափառ սկզբունքները, հորդորել հետ կանգնել Հայ եկեղեցում նոր կարգեր ներմուծելու մտադրությունից և երբեք չհեռանալ սուրբ և առաքելական հայրերի ավանդներից: Թղթի վերջում կցել է *Գրիգոր Աքանչելագործի* և *Աթանաս Ալեքսանդրացու* դավան. գրությունները: Ս. Օ., մերժելով Գրիգոր Է Անավարզեցու և նրա համախոհների գործելակերպն ու լատինամետությունը, իր երկում միաժամանակ բարձր է գնահատել *Ստեփանոս Այունեցուն, Մաթուսաղային, Հովհաննես Գ Օձնեցուն, Սողոմոն Մաքենացուն* և Հայ եկեղեցու շատ այլ հայրերի ու վարդապետների, ովքեր միշտ կանգնած են եղել Հայ եկեղեցու ինքնուրույնության և ավանդապահության դիրքերում:

Երկն ամբողջությամբ առաջին անգամ հրատարակել է Կ. Շահնազարյանը՝ 1859-ին, Փարիզում: Նոր ձեռագրերի համեմատությամբ ու հակիրճ ծանոթագրություններով հրատարակել է նաև Մ. Էմինը՝ Մոսկվայում, 1861-ին (ռուս.): Մ. Բրոսսեի թարգմանությամբ տպագրվել է Ֆրանս. (հ. 1, 2, 1864, 1866), հատվածաբար՝ նաև ռուս. և վրաց.:

Ս. Օ-ի դավան. բնույթի ամենահայտնի գործը «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» (1302) ծավալուն երկասիրությունն է: Բաղկացած է 12 գլուխներից կամ ձեռնարկներից, որոնք նվիրված են քաղկեդոնականների (երկաբնակների) և աղանդավորների ուսմունքների հերքումներին, Քրիստոսի բնությունների, մարմնի *անապականության*, Պատարագի «Երդ Երեքսրբենի» սրբասացությունում «խաչեցար»-ի հավելման, Ս. Ծնունդն ու Մկրտությունը միասին տոնելու և ծիսական խնդիրներին: Ս. Օ., պաշտպանելով Հայ եկեղեցու ուղղափառ վարդապետության դարավոր ավանդները, պատասխան է տվել երկաբնակների՝ հայերին ուղղված բազմաթիվ մեղադրանքներին: Երկի երևան գալը պայմանավորված էր ծիսադավան. զիջումներ անելու կիլիկյան հոգևորականության լատինամետ դիրքորոշմանը հակահարված տալու անհրաժեշտությամբ: Աշխատությունը հակաճառություն լինելուց բացի, Հայ եկեղեցու դավանանքի, ինչպես նաև անկախության և ինքնուրույ-

նության գաղափարի ջատագովություն է և Հայ եկեղեցու զավակներին ուղղված՝ իրենց հավատի մեջ հաստատ մնալու, աչալուրջ լինելու, օտար ազդեցությունների տակ չընկնելու կոչ ու հորդոր: «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»-ը ոչ միայն իր ժամանակին, այլև հետագա դարերում եղել է աղանդավորության, հատկապես քաղկեդոնականության, Կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունների և *ունիթորության* դեմ պայքարելու զենք: Հակաճառության վերջին՝ 12-րդ գլուխը Գրիգոր Է Անավարզեցուն ուղղված «Թուղթ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ...» գրությունն է:

Ս. Օ-ի դավան. բնույթի գործերից են. «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի», գրել է 1302-ին, *Խաչատուր Կեչառեցու* խնդրանքով (հրատարակվել է «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»-ի հետ՝ որպես այդ երկի 11-րդ գլուխ), «Տեսիլ Ս. Մեթոդի՝ եպիսկոպոսին Պատարայ և վկայի...» (թարգմանել և ընդգրկել է Պատմության մեջ՝ որպես 32-րդ գլուխ): Ս. Օ. իր հայրենասիր. գաղափարներն ու ձգտումներն ավելի խտացված և ընդգծված արտահայտել է «Ողբ ի սուրբ Կաթուղիկէն» բանաստեղծությունում (1299–1300, առաջին անգամ հրատարակվել է Նոր Նախիջևանում, 1790-ին): Բանաստեղծությունը գրել է Խաչատուր վրդ. Կեչառեցու հորդորով և *Ներսես Շնորհալու* «Ողբ Եդեսիոյ» պոեմի ազդեցությամբ: Ս. Օ. իր գաղափարներն ու մտքերն արտահայտել է դիմառնաբար: Նա Կաթողիկեի (Ս. Էջմիածնի) բերանով ողբում է Հայաստանի քաղ. անկախության կորուստը, օտարների տիրապետությունը, երկրի անմխիթար վիճակը: Վերջում ցիրուցան եղած հայ ժողովրդին կոչ է անում վերադառնալ հայրենիք և վերակենդանացնել այն: Այստեղ բանաստեղծն արտահայտել է Հայաստանի պետ. անկախության վերականգնման և հայրապետ. աթոռը մայր հայրենիք վերադարձնելու գաղափարը:

Երկ. Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, ԿՊ, 1756: Ողբք եւ հառաչանք, Կալկաթա, 1846: Պատմութիւն նահանգին Սիսական, Թ., 1910: Սյունիքի պատմություն, աշխարհաբարի փոխադրումը Ա. Աբրահամյանի, Ե., 1986:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Նույնի, Հայապատում, Վնտ., 1901: Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ս., Ստեփանոս Օրբելյան, Ե., 1960: Ավետիքյան Զ., Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյան. «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն և նրա նորագյուտ հատվածները, «Էջմիածին», 1980, № 10: Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX–XIII դարեր), Ե., 1981: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (13–15-րդ դդ.), Ե., 1981: *Григорян Г., Очерки истории Сюника IX–XV вв., Е., 1990.*

ՍՐԲԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, սրբախոսական գրականություն, մարտիրոսաբանություն, սրբերի, քրիստոնյա վկաների, մարտիրոսների կյանքի նկարագրություն, նրանց նվիրված խոսք: Ս-յան հիմն. տեսակներն են *վկայաբանությունն* ու վարքը (տես *Վարքագրություն*):

Հայկ. սրբախոս. գրականությունը (վարք, վկայաբանություն, *ճառ, ներբող* ևն) ավանդված է պատմիչների (Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Կորյուն, Փավստոս Բուզանդ, Եղիշե և ուր.) երկերով, ընդգրկված է զանազան ժողովածուներում՝ *Տոնացույց, Ճառընտիր, Հայսմավուրք*, ինչպես նաև հեղինակային տարբեր աշխատություններում և այլուր:

Մատենագր. պատառիկային տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ մինչև Հայսմավուրքների կազմավորումը Ս-ներն ընդգրկվել են նախ Տոնացույց, Ճառընտիր և այլ կարգի ժողովածուներում: Այսպես, «Հարանց հայր» *Սողոմոն Մաքենացու* կազմած Տոնականում (747), որը Ստեփանոս արք. Օրբելյանի բնութագրմամբ՝ «էր պայծառացուցիչ տոնից տէրունական և յիշատակք մարտիրոսաց», կային շուրջ երկու տասնյակ վարքեր ու վկայաբանություններ (Մատենադարան, «Ցուցակ ձեռագրաց», 2, էջ 598): Հայոց *Գևորգ Բ Գառնեցի* և *Մաշտոց Ա Եղիվարդեցի* կաթողիկոսների օրոք Ս. Ատոմա ուխտի (տես *Ատոմյանք*) առաջնորդ Գագիկը կազմել է վկայաբանություններ պարունակող հատուկ ժողովածու (Ստեփանոս Տարոնեցի, «Պատմութիւն տիեզերական», 1885, էջ 160): Թեև հայագիտությանը տակավին անծանոթ են հիշյալ հավաքածուներն իրենց սկզբ. տեսքով, բայց հավաստի է, որ այդպիսիք եղել են և լայն ճանաչում ունեցել VII–X դդ.: Եղել են նաև թարգմանական ժողովածուներ, որոնք լրացվել են Հայ եկեղեցու ճանաչած տեղական սրբերի վարքերով ու վկայաբանություններով (Ակինյան Ն., «Հովսեփ Կոստանդնուպոլսեցի՝ թարգմանիչ Յայսմաւուրքի», ՀԱ, 1957, էջ 3, 10): Հուն-ից, լատ-ից և ասոր-ից սրբախոս. երկեր թարգմանելու, ինչպես նաև նորերը կազ-

մելու, «Վարք սրբոց-ները» լրացնելու և կարգավորելու գործում մեծ ավանդ են ներդրել *Գրիգոր Բ Վկայասեր, Ներսես Շնորհալի, Գրիգոր Է Անավարզեցի, Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսները, Վանական Վարդապետի (մահ. 1251) աշակերտներ Տեր Իսրայելն ու Կիրակոս Արևելցին, Հայսմավուրքի վերջին խմբագրողը՝ *Գրիգոր Խլաթեցին*:

Սրբախոս. գրականության ի մի բերման և հետազոտման ասպարեզում ներդրում ունեն Մ. *Ավգերյանը* («Լիակատար վարք և վկայաբանութիւն...», հ. 11, Յավելված, 1814, էջ 53–96), Ղ. *Ալիշանը* («Շնորհալի և պարագայ իւր», 1873, էջ 30–32), Գ. Զարբհանալյանը («Պատմութիւն հայ դպրութեան», 1898, էջ 569) և ուր.:

Հայոց սրբախոս. գրականությունը չի սահմանափակվել ազգային Տոնացույցով ընդունելի սրբերի վարքով ու վկայաբանություններով: Միջնադարում իբրև գրական ընթերցելիք հայերեն են թարգմանվել Արլ. ու Արմ. եկեղեցիներում ու մատենագրություններում առկա շատ վարքագր. ու վկայաբան. երկեր:

Հայ առաքելական եկեղեցու կողմից պաշտոնապես սուրբ չճանաչված բազմաթիվ նահատակների վկայություններ, որոնք տեղ չեն գտել Տոնացույցում, ամփոփվել են այլ ժողովածուներում (Մանանդյան Հ., Աճառյան Հ., «Հայոց նոր վկաներ», 1903, Գալուստյան Շ., «Հայազգի սուրբեր», 1997):

Գրկ. Զամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 1, Վնտ., 1784, էջ 17–18: Սարգսյան Գ., Գրիգոր Անավարզեցի, Հայրապետ և գրիչ, «Բազմավեպ», 1949, էջ 58–66: Անթաբյան Փ., «Տօնապատճառ» ժողովածուն, ԲՄ, № 10, 1971: Ավդալբեգյան Մ., «Յայսմաւուրք» ժողովածուները, Ե., 1982: Աշճյան Մ., Սուրբերը և մենք, Նյու Յորք, 1993: Peeters P., Pour l'histoire du Synaxaire arménien, "Analecta Bollandiana", t. 30, 1911, p. 5–26; Marr N., Le Synaxaire géorgien, P., 1926; Der Nersessian S., Le Synaxaire arménien de Crégoire VII d'Anarzabe, "Analecta Bollandiana", Bruxelles, v. 68, 1950.

Պարույր Մուրադյան

ՍՐԲԱՊԱՏԿԵՐ (հուն.՝ *εἰκων* – պատկեր, կերպար), լայն առումով՝ Հիսուս Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի, Մանկան հետ Աստվածամոր, սրբերի, Ս. Գրքի դրվագների և վարքերի պատկերներ, որոնց սրբազան (երբեմն՝ հրաշագործ) նշանակություն են տալիս հատկապես ուղղափառ եկեղեցիները: Նեղ իմաստով՝ միջնադարյան պաշտամունք. նկարչության տեսակ: Ծնունդ է առել II դ. և ծաղկում ապրել IV դ.: Ի տարբերություն կուռքերի (որոնք մարմնավորում էին հեթանոսների աստվածությունները)՝ քրիստ. եկեղեցին Ս. չի նույնացնում ո՛չ աստվածության, ո՛չ պատկերված անձի հետ: Ըստ քրիստ. դաղափարախոսության՝ Ս. աստվածության որևէ մաս չի պարունակում (ինչպես կարծում էր նորպլատոնական Յամբլիխոսը), այլ նյութ է, որը հնարավորություն է տալիս «օրինակ» վերցնելու «նախատիպից» (Հիսուսից, Աստվածամորից կամ պատկերված որևէ սրբից) կամ հաղորդակցվելու նրա հետ: Ի տարբերություն *որմնանկարչության* և *մանրանկարչության*՝ Ս. գեղանկարչ. առանձին ստեղծագործություն է փայտե տախտակների, հետագայում՝ կտավի և այլ նյութերի վրա՝ սկզբ. շրջանում մոմաներկերով, ավելի ուշ՝ խճանկարով և տեմպերայով, իսկ XVII–XVIII դդ.-ից՝ նաև յուղաներկերով: Բյուզանդիայում և սլավոն. ուղղափառ երկրներում (հատկապես՝ Ռուսաստանում) Ս-ները հաճախ կազմում են համալիր՝ իկոնոստաս, Ս-ների ճարտարապետորեն ձևավորված խումբ, որը եկեղեցու ինտերիերի ձևավորման կարևոր մաս է:

Ս-ների հնագույն պահպանված օրինակները VI դ.-ից են (Եգիպտոս, Սինա, Առաջավոր Ասիա): Ցայտման դիմանկարների (Եգիպտոս) նմանությամբ սկզբ. շրջանում ստեղծվել են սրբերի, նահատակների, ապա նաև Քրիստոսի ու առաքյալների և Մարիամ Աստվածածնի նկարներ: Լինելով հոգևոր ապրումների արտահայտիչ և հետևելով պատկերագր. որոշակի կանոնների՝ Ս. Վերածնության ազդեցությամբ աստիճանաբար վերածվել է կաղապարված ձևերի՝ հաճախ մեխանիկական մեկնաբանմամբ, իսկ ռոմանական և Եվրոպայի հս-արմ. երկրներում ստացել տարբեր բովանդակություն և գեղագիտ. հիմնավորում: Ս. դիմել է փոխգիջման՝ իրականությունը քիչ թե շատ հավատի վերարտադրող նոր արվեստի հետ: Մեզ հասած հայկ. Ս-ները հենց այդ փոխգիջումնային շրջանից (XVII–XVIII դդ.) են, որոնք, ի տարբերություն հուն. և ռուս. Ս-ների, զերծ են մնացել եկեղեցու խիստ հսկողությունից. այդ Ս-ները հաճախ նկարել են այս կամ այն չափով օժտված կամ գեղանկարչ. կրթություն ունեցող աշխարհիկ մարդիկ, ինչը բացառվում էր միջնադարյան մանրանկարիչների դեպքում:

Հայ մատենագրության մեջ Ս-ների մասին առաջին տեղեկությունները հանդիպում են

Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ում: Մեզ հայտնի առաջին վկայությունը վերաբերում է Հիսուսի նկարին՝ ուղարկված Եդեսիայի *Աբգար* թագավորին: Տարբեր աղբյուրներում (հայկ., հուն., ասոր.) այդ հրաշագործ պատկերի հեղինակ են համարվում Աբգարի սուրհանդակ Անանը, Հովհաննես ավետարանիչը և ինքը՝ Հիսուսը: Ըստ ավանդության՝ այդ նկարն էլ հիմք է դարձել Հիսուսի, որպես Նազովրեցու, պատկերման (ի տարբերություն Արևմուտքում տարածված անտիկ աստվածների տեսքով Հիսուսի պատկերների): Մյուս պատկերը Վասպուրականի Անձևացյաց գավառի *Հոգեաց վանքի* Ս. Աստվածածին եկեղեցու Աստվածամոր նկարն էր, որը, ըստ Մովսես Խորենացու, նկարել է Հովհաննես ավետարանիչը և նվիրել *Բարդուղիմեոս* առաքյալին: Առաքյալը պատկերը բերել է Վասպուրական և Դարբնաց քար կոչված վայրում (Անձևացյաց գավառում) հիմնել Ս. Աստվածածին եկեղեցին՝ այդտեղ պահելով Տիրամոր պատկերը («Պատմութիւն սրբուհւոյն Աստուածածնի և պատկերի նորա», 1994):

Միջնադարից հայկ. Ս-ների ոչ մի նմուշ առայժմ մեզ չի հասել, թեև Մովսես Խորենացին, *Վրթանես Քերթողը, Մովսես Կաղանկատվացին, Ներսես Շնորհալին, Անանիա Սանահնեցին* և ուր. գրել են սրբապատկերային արվեստի մասին: Ի տարբերություն Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների, Հայ եկեղեցին առավել չափավոր դիրքորոշում է ունեցել Ս-ների հանդեպ: Հայոց մեջ պատկերների փոխարեն առավել տարածված է եղել *խաչի* պաշտամունքը՝ խաչապաշտությունը (տես *Պատկերամարտություն* և *Պատկերապաշտություն*):

XVII–XVIII դդ-ից մեզ հասած հայկ. Ս-ների վրա իրենց անդրադարձն են ունեցել մի կողմից դրանց նկատմամբ Հայ եկեղեցու թույլ հսկողությունը (հետևելով չափավորությանը՝ Հայ եկեղեցին այդ հարցում զգալի տեղ է թողել ժող. բարեպաշտությանը, տեղական սովորությանը), մյուս կողմից՝ տպագիր գրքի տարածումը, երբ հայատառ գրքերում տպվել են եվրոպ. նկարիչների փորագրություններ: Այդ սրբանկարները (մեծ մասամբ յուղաներկերով արված կտավի վրա) հաճախ գտնվել են բարոկկոյի արվեստի ազդեցությունների տակ: *Նաղաշ Հովնաթանի* որդիներ Հակոբի և Հարությունի, ինչպես և վերջինիս թոռան՝ Հովնաթանի նկարները, որոնք ներկայացնում են Տիրամոր փառաբանումը, Տրդատ Գ Մեծ թագավորին, Վրթանես Ա Պարթևին, Հովհաննես Գ Օձնեցուն և այլոց, քիչ են նման Ս-ի: Դրանք ցուցադրական նկարներ են, որոնցում դժվար է ասել, թե նկարիչն զգեստների ճոխությունն է ավելի մեծ սիրով նկարել, թե՞ դեմքերը: Նման ցուցադրական նկարը գեղ. մեծ արժեք է ստանում, երբ ներկայացնում է տվյալ մարդուն այնպես, ինչպես նա կա և ինչպես նա ցուցադրում է իրեն և իր զարդերը (Հակոբ Հովնաթանյան): Կրոն. անկեղծ զգացումն ավելի ուժեղ է անհայտ նկարիչների գործերում, որոնք մեծ մասամբ պատկերում են Աստվածամորը Մանկան հետ՝ կա՛մ մանրանկարչության համար անսովոր մանրամասներով (խաչը մանուկ Հիսուսի ձեռքին, գավաթը Աստվածամոր ձեռքին) կա՛մ պատկերագրությամբ (նստած Աստվածամորը Մանկան հետ շրջապատում են Գրիգոր Լուսավորիչը և Հովհաննես Մկրտիչը, վերջինս երբեմն պատկերվում է գառան հետ, երբեմն առկա են առաքյալների կիսանդրիների պատկերները՝ իբրև շրջանակ): Սրանք, ինչպես նաև մի քանի պատկերազարդ վարագույրներ, խաչվառներ և մի քանի թեմատիկ նկարներ, լինելով շատ գծերով պարզունակ, անկեղծ հավատքի զգացում են արտահայտում և եկեղեցիներում (Սևանի, Էջմիածնի, Ագուլիսի ևն) ծառայել են իբրև Ս-ներ:

Հայ եկեղեցում Ս-ները տեղադրվում են որոշ կարգով ու Ավագ սեղանի վրա՝ Աստվածամայրը Մանկան հետ (տոների ժամանակ այն կարող է փոխարինվել տոնը ներկայացնող Ս-ով), խորանի ներսում 12 առաքյալների պատկերներն են, խորաններում և մատուռներում կարող են դրվել ս. Հովհաննես Մկրտչի և ս. Ստեփանոս Նախավկայի պատկերները, մկրտարանում՝ Մկրտության պատկերները: Գավթում ևս, մուտքի կողքերին, կարող է երկու Ս. կախվել: Նկարների թիվը կարող է ավելի մեծ լինել (առաքյալների, մարգարեների, 4 մեծ վկաներ ս. Սարգսի, ս. Գևորգի, ս. Թեոդորոսի, ս. Մերկուրիոսի, ազգային սրբերի): Պատկերները, անկախ ծագումից, հայկ. եկեղեցիներում դրվում են հայոց եկեղեց. ծեսով օրհնված և օծված լինելուց հետո:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.7, 3-րդ պատկերը:

Վիգեն Ղազարյան

ՍՈՒԴԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ, տես *Եգիպտոսի թեմ* հոդվածում:

ՍՈՒՐԲ, սրբություն, 1. *Աստծո* ստորոգելիներից: Սրբության աղբյուրն Աստվածն է՝ Ամենասուրբ *Երրորդությունը*՝ Հայրը, Որդին և *Սուրբ Հոգին*. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորությունների Տերը» (Եսայի 6.3): Աստված իր սրբությամբ է հայտնվում մարդկանց, և միայն սրբությամբ է, որ մարդը միանում է Արարչին: Սրբության մարմնացումը և կատարելության նախատիպարը *Հիսուս Քրիստոսն* է. Ս. է և նրա խորհրդավոր մարմինը՝ *եկեղեցին*: Ս. է Աստծո խոսքը՝ *Աստվածաշունչը*, որն անվանվում է «սուրբ գրվածքներ» (Հռոմ. 1.2):

2. Եկեղեցու կողմից սրբացված անձ: Ս. կատարյալ քրիստոնյային հատուկ անբասիր կյանքով, վարքով ապրած, ապաշխարությամբ *մեղքից* ազատագրված, արդարացված ու *հավատով* փրկված, *առաքինություններով* հատկանշված, Սուրբ Հոգու *շնորհն* ընդունած, Աստծո ներգործությունն իր մեջ կենդանի պահած և նրա հետ մշտապես հաղորդության մեջ եղած մարդն է: Ս. են Աստվածամայրը, *Հովհաննես Մկրտիչը*, աստվածաշնչյան նահատակները, *մարգարեները, առաքյալները*, ավետարանիչները, հավատի համար նահատակված և մարտիրոսացված քրիստոնյաները, *վկաները*, խոստովանողները:

Տարբեր եկեղեցիներում Ս. են հռչակվել նաև այն հոգևորականները, հայրապետները, աշխարհիկները, պետ. գործիչները, աստվածաբանները, կրոն. բարեկարգիչները, որոնք իրենց գործունեությամբ նպաստել են քրիստ. հավատի պահպանմանն ու տարածմանը, նաև՝ մեծ հետք թողել ազգ. կյանքի տարբեր ասպարեզներում:

Որևէ մարդ չի կարող Ս. կոչվել ըստ մարդկային չափանիշների և կամ ինքն իրեն Ս. հռչակել: Մարդու սրբությունն Աստծո սրբության ցոլացումն է (ճառագայթումն է) իր անձի մեջ և իր հաղորդությունը Աստծո հետ: Մարդը Ս. է Աստծո հետ իր հարաբերությամբ, այսինքն, երբ Աստծո ներկայությամբ է ներթափանցված և իր մեջ է կրում Աստծուն. «Սո՛ւրբ եղեք, քանզի ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ» (Ղևտ. 19.2, տես նաև Ա Պետ. 1.16): Մարդու սրբությունը Սուրբ Հոգու շնորհների ստացման մեջ է: Սրբագործությունը Սուրբ Հոգու շնորհն է, որի պտուղներն են սերը, ուրախությունը, խաղաղությունը, տառապանքի մեջ տոկունությունը, որոշակի կենցաղակերպը, պահեցողությունը, բարությունը, խոնարհությունը և այլ առաքինություններ: Սրբությունը և՛ ներանձնական ապրում է, և՛ արտաքին դրսևորում, այսինքն՝ օրինակ մյուսների համար: Սրբությունն ամբողջական հնազանդությունն է Աստծո կամքին, որն իր արտահայտությունն է գտնում մաքուր կյանքի և հոգևոր պաշտամունքի մեջ: Սրբությունն առանձնաշնորհում չէ, այլ՝ կոչում և կարելիություն: Ս-երը Հիսուսի ծառաներն ու հետևորդներն են, եկեղեցու առաքինազարդ սյուները և Աստծո առջև հավատացյալների (Զինվորյալ եկեղեցու) համար բարեխոսները (տես *Բարեխոսություն*):

Ս. հակիրճ սահմանվում է չորս իմաստներով. ա. աստվածային մարդիկ, բ. երկնքում բնակվող օրհնյալներ, գ. եկեղեցու կողմից սրբադասված անձինք, դ. արդարացածներ, որոնք հակադրվում են մեղավորներին: Ս. նշանակում է նաև զատված. Աստված ինքը զատված է ու տարբեր այլ «աստվածներից» և կրում է խորհրդավոր անուն. «Ես եմ որ էն», այսինքն նրա գոյությունը անժամանակյա է և պայմանավորված չէ մեկ ուրիշով: Ս. էր *Երուսաղեմի* տաճարի Սրբության Սրբոցը, որը զատված էր որպես Ս. վայր, և այնտեղ տարին մեկ անգամ մուտք ուներ միայն քահանայապետը: Վեցօրյա Արարչագործությունից հետո Աստված առանձնացրեց, զատեց յոթերորդ օրը. այն սրբացված է Աստծո կողմից և պահվում է Աստծո համար: Կան առանձնացված Ս. վայրեր, որտեղ մարդիկ ոտաբոբիկ պետք է մտնեն և, ի տարբերություն երկրի մնացած մասերի, ոտքի կոխան չպետք է դարձնեն: Այսպես, երբ Մովսեսը ցանկանում էր մոտենալ անկեզ մորենուն, Աստված ասաց. «Կոշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետև այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է» (Ելք 3.5): *Քահանաները* էլ կոչվել են Ս-եր, քանի որ բաժանված էին աշխարհիկներից և ամբողջությամբ նվիրված Աստծո ծառայությանը: Փարիսեցիներն իրենց սրբությունը դրսևորել են հասարակությունից զատված մնալով: «Փարիսեցի» բառի արմատը եբր. «paruch» կամ արամեերեն «perishaya» է, որ նշանակում է «անջատյալ» և հոմանիշն է եբր. «gadosh» (սուրբ) բառի: Հիսուս Քրիստոսը նրանց մեղադրել է ոչ որպես Ս-երի, այլ՝ որպես Ս. ձևացողների:

Սրբությունը բնորոշվում է նաև որպես անմեղություն, սրտի մաքրություն, բարոյական անարատություն. դրանք Քրիստոսը նախա-

պայման է նկատում Աստծուն տեսնելու համար. «Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5.8):

Սրբությունը հարգանքի, երկյուղածության, անձնատվության և հմայքի (գրավչության) համադրումարն է, որին հետագայում ավելացել է բարոյական հասկացությունը: Սրբությունը բարոյական սկզբունքներով կառավարվող կյանք է, ապրում, բարոյական կեցվածք, թեև չի բխում բարոյագիտությունից: Սրբությունն ընկալվում է նաև բարության հոմանիշ. բարությունը և սրբությունը Աստվածաշնչում նույնացված են՝ «Աստված բարի է»: Սրբությունը հակիրճ բնութագրվում է որպես «բացարձակ բարության վիճակ»:

Նոր կտակարանը նոր հանգրվան է սրբության ըմբռնման համար, որովհետև Սուրբ Աստվածը գալիս է մարդկանց մեջ բնակվելու և նրանց իր պես սրբացնելու. «Եվ ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ» (Հովհ. 17.19): Առաքելական շրջանում և II դ. բոլոր քրիստոնյաներն անխտիր Ս. բառով են բնորոշվել, որովհետև Սուրբ Հոգով սրբագործված, Սուրբ Երրորդության անունով մկրտված և Քրիստոսի հետևորդ լինելով, զատորոշվել են մյուսներից, իրենց համարել նոր ժողովուրդ, ճշմարիտ «Իսրայել», եկեղեցի, երկնքի քաղաքացիներ: Դառնալով Սուրբ Հոգու տաճար՝ մարդիկ սրբանում էին և արդարանում (տես Գործք 9.13, Հռոմ. 8.27, Ա Կորնթ. 6.1–2, Բ Կորնթ. 1.1, Փիլիպ. 1.1, 4.21–23, Կողոս. 1.2 ևն): Քրիստոնեության տարածումով և քրիստոնյաների թվի ավելացումով III դ. սկզբից եկեղեցին ինքն իրեն սկսել է ըմբռնել ոչ թե փրկվածների՝ «սրբերի հասարակություն», այլ՝ իբրև փրկության միջոց: Քրիստոնյա կոչումը դադարել է Ս. բառի հոմանիշը լինելուց, և քրիստոնյան ըմբռնվում է ոչ որպես Ս., այլ՝ սրբության կոչված: *Անապատականության, ճգնավորության*, ավելի ուշ՝ *վանականության* ի հայտ գալով, ճգնությունը, մենակյաց կենցաղակերպը, աշխարհիկ կյանքից հրաժարումը, հասարակությունից առանձնացումը, ճգնական-վանական կյանքը դարձել են ճշմարիտ քրիստոնյայի տիպար, ճգնակյացները՝ սրբակյացներ, թեպետ ոչ անպայման Ս.: Սրբակյաց վանականներից ոմանք դասվել են եկեղեցու Ս-երի կարգը: Սրբացվել են ոչ միայն նահատակները, մարտիրոսները, այլև՝ ժողովրդի մեջ հոգևոր ծառայություն կատարողները, վարդապետները, հայրապետները, թագավորները, իշխանազուններ, աշխարհիկները և ուրիշներ:

Ս-երի հրապարակային պաշտամունքը քրիստ. եկեղեցում սկսվել է II դարից: Տեղական համայնքները (եկեղեցիները) Ս-երի նահատակության տարելիցներին հավաքվել են նրանց գերեզմանների շուրջ և աղոթել, որ իրենց համար բարեխոսեն երկնքում: Հետագայում եկեղեցին Ս-երի շիրիմների վրա, վկայության վայրերում կառուցել է *վկայարաններ, մատուռներ*, մեծարել *մասունքների* և *նշխարների* պաշտամունքով, ուխտագնացություններով, ծիսական արարողություններով և ս. *Պատարագի* ժամանակ:

Հայ եկեղեցու ընդհանրականությունն ի հայտ է գալիս նաև իր Ս-երով: Հայոց *Տոնացույցում* Ս-երը մեծ մասամբ քույր եկեղեցիներից են: *Քաղկեդոնի ժողովով* եկեղեցիների բաժանումից հետո տարբեր եկեղեցիներ, նաև Հայ եկեղեցին, ունեցան իրենց առանձին Ս-երը: Հայ եկեղեցին ունի համաքրիստ. Ս-եր, այդ թվում՝ *եկեղեցու հայրերի* սեփական ցանկ, աստվածաշնչյան Ս-եր և հայազգի Ս-եր (տես *Սուրբեր Հայաստանյայց առաքելական եկեղեցու*):

Արևելյան ուղղափառ եկեղեցիներում Ս-երի նկատմամբ պաշտամունքը եկեղեցու պատմության և ավանդության մաս է կազմում: Վաղ ժամանակներում բոլոր եկեղեցիների համար Ս-երի կանոնացման (սրբադասման) ավանդությունը նույնն էր. միակ սկզբունքը ժողովրդի ընծայած հարգանքը, վերաբերմունքն ու ճանաչումն էր՝ հատկապես նահատակի կամ մարտիրոսի նկատմամբ: Երբ եկեղեց. իշխանությունը պաշտոնապես ընդունել է ժող. ճանաչումը, Ս-ի նահատակության օրը մտցրել է եկեղեց. օրացույց և հիշատակել ս. Պատարագի ժամանակ, վկայարան կառուցել նրա նահատակման վայրում ևն: Սրբադասման այս ձևը դրեթե անփոփոխ է մնացել արլ. եկեղեցիների մեծ մասի համար: Արմ., ավելի ուշ՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցին չեշտել է եկեղեց. իշխանության վճռի կարևորությունը, մանավանդ որ տեղական եկեղեցիները որևէ մեկին Ս. ճանաչելու իրենց ձեռնարկին ավելի մեծ վարկ տալու համար ձգտել են ունենալ Հռոմի պապի հավանությունը: Ժամանակի ընթացքում սրբադասումը պաշտոն. վավերացման բնույթ է ստացել և Կա-

թոլիկ եկեղեցում վերածվել սրբադասման հատուկ կարգի ու արարողության: Պապի ձեռքով (Հովհաննես XV) կանոնականացում ստացած առաջին Ս. գերմանացի եպիսկոպոս Ուլրիխ Աուսբուրգցին էր (993-ին): Ալեքսանդր III պապը (1159–81) սրբացնելու իրավունքը վերապահել է միայն Ս. աթոռին, իսկ պապի կողմից սրբադասումը 1234-ից՝ Գրիգոր IX պապի օրոք, դարձել է օրինաչափ: 1634-ին Ուրբանոս VIII պապը կոնդակով արգելել է որևէ մեկի սրբության մասին խոսել կամ Ս. ճանաչել, մինչև որ Վատիկանն այդ անձին «օրհնյալ» կամ «երանելի» չհռչակի: Բենեդիկտոս XIV պապը (1740–58) ամբողջացրել է այդ որոշումը, որն իր վերջն. ձևով տեղ է գտել Հռոմի կաթոլիկ եկեղեցու կանոնագրքում:

Հայ եկեղեցին, ինչպես արլ. մյուս եկեղեցիները, սրբադասման հատուկ կարգ չունի: Հայոց մեջ ժամանակի ընթացքում կիրարկվել են սրբացման մի քանի մակարդակներ. 1. ժող. ճանաչում, որը կարևորագույնն է որևէ մեկին Հայ եկեղեցու Ս. հռչակելու համար (այդպես են սրբացվել *Մեսրոպ Մաշտոցը, Գրիգոր Նարեկացին, Վարդանանք* և այլք): 2. Եկեղեց. տեղական իշխանության կողմից ճանաչում, որը նույնպես հիմնվում է ժող. հավաքական *բարեպաշտության*, ճանաչման և մեծարման վրա: Այս դեպքում որևէ նահատակի գերեզմանի վրա նահատակության տարեդարձը կամ նշխարների ու մասունքների ժող. մեծարանքը ճանաչվում է թեմի եպիսկոպոսի (կամ վանքի առաջնորդի) կողմից: Նահատակի շիրիմի վրա վկայարան է կառուցվում, կամ նշխարները փոխադրվում են եկեղեցի, իսկ նահատակության տարեդարձը սահմանվում է տեղական նշանակության տոն: Ժամանակի ընթացքում այդպես ճանաչված Ս-երի տոնը դուրս է գալիս տեղական համայնքի շրջանակներից (կարող է մնալ նաև միայն տվյալ շրջանին հատուկ) և ընդունվում ամբողջ եկեղեցու կողմից (այդպես են սրբացվել *Վահան Գողթնացին, Շուշանիկը* և այլք): 3. Եկեղեցու բարձրագույն իշխանության կողմից ընդհանրական ճանաչում, որը կատարում է կաթողիկոսը կամ իր նախաձեռնությամբ (*Վրթանես Ա Պարթևը* սահմանել է Վաչե Մամիկոնյանի հետ նահատակված զինվորների տոնը, որը ներկայումս չի նշվում, *Սիմեոն Ա Երևանցին* բազմաթիվ Ս-եր է մտցրել Հայոց Տոնացույց ևն), կամ ժողովրդի, ապա՝ տեղական եկեղեց. իշխանության նախն. ճանաչումից հետո:

Հայ եկեղեցին ունի տոնելի և հիշատակելի Ս-եր: Տոնելիները նրանք են, ովքեր մտել են Տոնացույց, ունեն հիշատակի օրեր, եկեղեց. օրացույցում հատուկ տոն (անհատական կամ խմբովի), հիշատակվում են ս. Պատարագի ժամանակ. նրանց համար սահմանվում են արարողություններ (տոնակատարություններ), հորինվում *շարականներ*: Հիշատակելի են կոչվում այն Ս-երը, ովքեր չեն մտել Տոնացույց, չունեն հատուկ տոն, բայց հիշատակվում են *Հայսմավուրքներում*, վարքերում և *վկայաբանություններում*, օր.՝ Հայոց *նոր վկաները*:

Հայ եկեղեցին XV դ. հետո նոր Ս. չի ավելացրել իր Տոնացույցում: Վերջին Ս., որ մտել է Տոնացույց, *Գրիգոր Տաթևացին* է: Սիմեոն Ա Երևանցին, որ Հայոց Տոնացույցի վերջին բարենորոգիչն էր (նրա Տոնացույցը կիրառության մեջ է մտել 1777-ից), Տոնացույց է մտցրել նաև *Մովսես Գ Տաթևացուն*, որը սակայն ներկայումս չի նշվում որպես տոնելի Ս.:

Հայ եկեղեցին Ս-երի տոները զատել է *Տերունի տոներից* և *պահքերից* և, ի տարբերություն Ուղղափառ (օրթոդոքս) ու Կաթոլիկ եկեղեցիների, Ս-երի տոները նշում է միայն երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերին (չորեքշաբթին և ուրբաթը պահոց օրեր են, իսկ *կիրակին*՝ Տերունի): Ս-երի տոնների, տոնախմբությունների, Ս-երի կենսագրությունների, վարքի մասին տեղեկություններն ամփոփված են Հայ եկեղեցու ծիսամատյաններում՝ Տոնացույց, Տոնական, *Ճաշոց, Տոնապատճառ, Ճառընտիր*, Հայսմավուրք: Կան նաև մարտիրոսների մասին ժողովածուներ, որոնք կոչվում են Մարտիրոսոգ և պարունակում են Ս-երի մասին վկայաբանություններ ու *վարքագրություններ*, իսկ *Շարակնոցում* կան Ս-երին նվիրված բազմաթիվ շարականներ (տես նաև *Սրբախոսություն*):

3. Կան նաև Ս. առարկաներ (տես *Սպասք եկեղեցական*), երևույթներ, իրադարձություններ (օր.՝ *տիեզերական ժողովները*), վայրեր (օր., *Մասիսը*, Երուսաղեմը ևն), ժամանակներ (օր.՝ Հին ուխտում՝ շաբաթը, քրիստոնյաների համար՝ կիրակին), քահանայական հանդերձները (տես *Զգեստ եկեղեցական*): Ս. են *խաչը*, որպես փրկության խորհրդանիշ, *Մյուռոնը*, եկեղեցու *ավանդությունը, ծեսերը*, խորհուրդները (տես *Խորհուրդներ եկեղեցական*):

Գրկ. Տօնացոյց, աշխատասիր. Սիմեոն կաթողիկոսի, հ. 1– 2, Էջմիածին, 1774–75: Հայոց նոր վկաները. 1155–1843, հրտ. Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Էջմիածին, 1903: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1–3, ԿՊ-Երուսաղեմ, 1912–27: Գուշակյան Թ., Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1939: Սուրբերը և մենք [ժող.], Նյու Յորք, 1993: Սուրբերու կեանքը [ժող.], Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Աստվածաշնչեան սուրբեր, Ե., 1997: Նույնի, Համաքրիստոնէական սուրբեր, Ե., 1997: Նույնի, Հայազգի սուրբեր, Ե., 1997: Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (IV–XVIII դարեր), Ե., 1999: *Новые армянские мученики [сб.], пер., предисловие и примечания К. Тер-Давтян, Е., 1998.*

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ, Հայ առաքելական եկեղեցու հինգ *Տաղավար* տոներից, որը նվիրված է Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյանն ու Աստվածահայտնությանը (Մկրտությանը):

Տիրոջ ծնդյան տոնակատարության առաջին հիշատակությունները սկսվում են III դարից: Արևելքում մինչև IV դ. Քրիստոսի ծնդյան տոնը կապվել է Աստվածահայտնության, այսինքն՝ Մկրտության տոնի հետ, որը նշվել է հունվարի 6-ին: Սակայն 336-ին Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես որոշել է Հիսուս Քրիստոսի ծնդյան օր: Այս միջոցով քրիստոնյաներն ամենայն հավանականությամբ նպատակ ունեին այդ օրը տոնվող Արևի չաստված Միթրայի մեծ ժողովրդականություն վայելող տոնակատարությանը հակադրել «Արդարության Արեգակի» Քրիստոսի ծնունդը: Հետագայում՝ IV դ. վերջին, Ասորիքում, իսկ ապա՝ V դ. կեսին, գրեթե ողջ Արևելքում (Ալեքսանդրիայում, Անտիոքում, Կ. Պոլսում) Քրիստոսի ծնդյան տոնի օրը փոխադրվել է դեկտ. 25-ին, իսկ հունվ. 6-ը մնացել որպես Տիրոջ Աստվածահայտնության օր: 451-ին *Քաղկեդոնի ժողովը* դեկտ. 25-ը վերջնականապես հաստատել է Հիսուսի ծնդյան օր, թեև Երուսաղեմի եկեղեցին մինչև 549-ը շարունակել է նշել հունվ. 6-ին: Միայն Հայ եկեղեցին է, որ հաստատուն է մնացել հնագույն ավանդույթին և Քրիստոսի Ծննդյան ու Աստվածահայտնության տոնը շարունակում է նշել միասին՝ հունվ. 6-ին: Հայ եկեղեցում Ս. Ծ. և Ա. օրացուցային տարվա առաջին տոնն է:

Եկեղեց. տոնակատարությունն սկսվում է հունվ. 5-ի երեկոյան՝ *Ճրագալույցի* կամ Խթման ս. Պատարագով, որին նախորդում է յոթօրյա պահեցողության ու ապաշխարության շրջանը: Երեկոյան ս. Պատարագի ընթացքում հնչում է ավետիսը՝ «Քրիստոս ծնավ և հայտնեցավ»: Պատարագից հետո պահքը լուծվում է, և սկսվում ուտիքի ու տոնակատարության շրջանը, որը տևում է մինչև հունվ. 13-ը: Այս բոլոր օրերին քրիստոնյաները միմյանց ողջունում են «Քրիստոս ծնավ և հայտնեցավ» ավետիսով, որի պատասխանն է՝ «Ձեզ և մեզ մեծ ավետիս»:

Գլխ. տոնակատարությունը կատարվում է հունվ. 6-ին՝ ս. Պատարագի հանդիսավոր արարողությամբ ու Ջրօրհնյաց մեծաշուք հանդեսով: *Ջրօրհնեքը* նվիրված է Տիրոջ մկրտությանը և այդպիսով՝ ջրի սրբագործման մեծագույն խորհրդին:

Հունվ. 7-ը, ինչպես և բոլոր Տաղավար տոներին հաջորդող օրերը, *մեռելոց* հիշատակության օր է, երբ հոգեհանգստյան ս. Պատարագից հետո հավատացյալներն այցելում են իրենց հարազատների շիրիմներին:

Հանդիսություններն ավարտվում են հունվ. 13-ին՝ Հիսուսի *անվանակոչության* տոնակատարությամբ, որը նվիրված է Տիրոջ յոթ օրական հասակում տաճար բերվելու, 8-րդ օրը թլփատվելու և Հիսուս անունը ստանալու հիշատակին:

Երաժշտություն: Ծննդյան տոնի հոգևոր երգերը վերագրվում են պատմահայր *Մովսես Խորենացուն* (ըստ Ն. Թահմիզյանի, Մովսես Խորենացուն պատկանող Ծննդյան, Տյառնընդառաջի, Աստվածածնի Վերափոխման և այլ տոներին նվիրված երգերի ընդհանուր թիվը 120 է): Դրանցից առանձնապես ճանաչված է «Խորհուրդ մեծ»-ը: Ջրօրհնեքին, ի թիվս այլ հոգևոր երգերի, կատարվում են երկու հանրածանոթ ստեղծագործություններ՝ Գրիգոր Գ Պահլավունու (XII դ.) «Ով զարմանալի» տաղը և Հովհաննես Երզնկացի Պլուզի (XIII դ.) «Այսօր ճայնն հայրական» հորդորակը: Տոնի սրբասացությունը Ներսես Շնորհալու «Բազմութիւնք հրեշտակացն» է:

Պատկերագրություն: Ըստ Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների՝ «Ծնունդը» քրիստ. արվեստում պատկերագր. հարուստ ավանդներ ունեցող, նաև հին կանոնից չեղվող, ձևի թարմության ձգտող թեմաներից է: «Ծննդյան» տեսարանի հին օրինակները պահպանվել են Պաղեստինի նկարազարդ սրվակներին, Կապադովկիայի ժայռափոր տաճարների որմերին, Հռոմի Սանկտա Սանկտորիում եկեղեցու մետաքսե գործվածքի վրա: Օձունի հայտնի կոթողի հարթաքանդակը և «*Էջմիածնի*

Ավետարան»-ի «Մոգերի երկրպագությունը» մանրանկարը (VI դ.) «Ծննդյան» թեման ներկայացնող հայկ. արվեստի վաղ շրջանի նմուշներից են: Քրիստ. կանոնի համաձայն՝ Բեթղեհեմի նշանավոր քարայրում մանուկ Հիսուսը շորերով փաթաթված կամ մերկ դրված է մսուրի մեջ, որի աջ մասում Տիրամայրն է, ձախում՝ եզ և ավանակ: Վերևի հատվածում սովորաբար պատկերվում են հրեշտակները, ներքևի մասում՝ հովիվներն ու մոգերը: Պատկերի առաջամասում՝ ամենաներքևի հատվածում, նկատելի է մտորող Հովսեփը: Այդ մասում երբեմն պատկերվում են Եվան ու Սողոմեն՝ ավազանի մեջ Հիսուսին լողացնելիս: Հայկ. արվեստում թեմայի լավագույն իրագործումներից են Թորոս Ռոսլինի, Գրիգոր Ծաղկողի, Հովհաննես Սանդղվանեցու համապատասխան մանրանկարները, *Աղթամարի վանքի* Ս. Խաչ եկեղեցու (921) որմնանկարը:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.7, 4–5-րդ պատկերները:

Միքայել ծ. վրդ. Աջապահյան
Մհեր Նավոյան
Մարտին Միքայելյան

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ Աստված [եբր. rūăh-haqōdeš, ruha dqūdsa, հուն. *πνεῦμα ἅγιον*, լատ. Spiritus sanctus, անվանվում է Աստծո Հոգի, քրիստոնեական ավանդույթի մեջ՝ Հոգի Հոր (Մատթ. **10.**20), Հոգի Քրիստոսի՝ Որդու Հոգին (Գաղ. **4.**6, Փիլիպ. **1.**19, Ա Պետ. **1.**11) և Մխիթարիչ, Ճշմարտության Հոգի (Հովհ. **14.**16, 17, 26, **15.**26, Գործք **2.**)], Սուրբ *Երրորդության* երեք Անձերից մեկը:

Ի մի բերելով արևելաքրիստոնեական ավանդույթը՝ *Վարդան Արևելցին* Ծննդոց գրքի մեկնության մեջ (մեկնաբանելով «եվ Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա» խոսքը, **1.**2) Ս.Հ. համարել է խորհրդապատկերը *Մկրտության* սուրբ ավազանի՝ «Նրանց համար, ովքեր ծնվում են ջրից և հոգուց՝ որդեգրվելով երկնավոր Հորը, հրավիրված լինելով երկնքի արքայության մեջ» (Մատենադարան, ձեռ. № 1267, թերթ 8ա): Ս.Հ-ու անմիջական թելադրանքով, նրա վերբանական և գերբնական ներկայությամբ է շարադրված *Աստվածաշունչը*, որի անվան ստուգաբանությունն իսկ (Աստծո շնչով, Հոգով գրված) ինքնին մատնանշում է նրա աստվածային հեղինակին՝ Ս. Հ-ուն:

Բաբբիական միտքը, զգուշորեն և վերապահությամբ խոսելով Ս. Հ-ու բնույթի մասին, նրա գործունեության տարածքը սահմանափակել, զետեղել է հրեական անցյալի սրբազան պատմության մեջ, որտեղ Ս. Հ. կրելու մենաշնորհը բացառապես տրված էր առանձին անհատների (մարգարեներ, նահապետներ): Հետագայում հրեական աստվածաբանությունը Ս. Հ-ու ներգործման հնարավորությունը գլխավորաբար կապել է Մեսիայի ակնկալվող գալստյան հետ: Ս.Հ-ու ներգործման այդ հնարավորությունն առարկայական իրականություն է դարձել Մեսիայի՝ Հիսուս Քրիստոսի գալըստյամբ [*Մարիամ Աստվածածինը* նրան հղացավ Ս. Հ-ով (Մատթ. **1.**20)] և տնօրինական գործունեությամբ: Վաղ քրիստ. միտքը հստակորեն գիտակցել է, թե՝ «Այս Հիսուսին է, որ Աստված հարություն տվեց, որին մենք ամենքս վկա ենք. Աստծո աջ ձեռքով բարձրանալով, Սուրբ Հոգու խոստումը ընդունելով Հորից՝ սփռեց այս, որ դուք այժմ տեսնում եք ու լսում» (Գործք **2.**32–33): Համաձայն քրիստ. աստվածաբանության (ի տարբերություն բաբբիականի), Ս. Հ. առանց խտրության հանդիսանում է բոլոր նրանց վրա, ովքեր Աստծո նկատմամբ տածում են անարկբա հավատ և սեր, ովքեր իրապես ապրում և վերապրում են Քրիստոսի տնօրինական սիրանքը (Խաչվելը և Հարությունը), որի միջոցով Ս. Հ. կենսագործում է աստվածային ծրագիրը մարդկային հոգիների մեջ: Սակայն ովքեր հայհոյում են կամ փորձում են խաբել Ս.Հ-ուն, նրանք չարաչար պատժվում են ինչպես այս կյանքում, այնպես էլ՝ հանդերձյալում (Մատթ. **12.**31–32, Մարկ. **3.**28–29, Գործք **5.**1–10): Ս. Հ. իբրև Մխիթարիչ ուղարկված է Քրիստոսի կողմից և վկայում է Քրիստոսի մասին (Հովհ. **15.**26, **14.**16, 26): Տիրոջ Մկրտության ժամանակ աղավնակերպ Ս. Հ-ու ներկայությունն (Մատթ. **3.**16) ինքնին հաստատում է Հիսուս Քրիստոսի Աստվածությունն ու Քահանայական, Արքայական, Մարգարեական պաշտոնը և վկայում նրա համաբնույթ լինելը Սուրբ Երրորդության մյուս Անձերի հետ: Ս. Հ-ու գործունեությունը նոր մակարդակով է ի հայտ գալիս *Հոգեգալստյան* պահին, երբ նա «Հողմից եկած ձայնի նման» կրակե լեզուների կերպարանքով իջնում է Վերնատան մեջ նստած առաքյալների վրա, որոնք այդ պահին սկսում են խոսել տարբեր լեզուներով (Գործք **2.**3–4): Հոգեգալստյան պահին Հողմի ձայնը գալիս էր ոչ թե անորոշ կողմից, այլ՝ երկնքից,

քանզի այնտեղ էր գնացել Տերը, և այնտեղից էլ պետք է «իջներ Հոգին, որ Աստված է»: Ս. Հ-ու իջնելով՝ հիմքն է դրվում քրիստոնեական ս. *Եկեղեցու*, որտեղ Ս. Հ. հանդես է գալիս առավել կատարյալ կերպով՝ իր պաշտոնի լիալիր գործադրմամբ:

Հիմնվելով Աստվածաշնչի վրա (Մատթ. **28.**19, Ա Կորնթ. **2.**10–11, **12.**8, Բ Կորնթ. **3.**17, Ա Հովհ. **3.**24)՝ քրիստ. աստվածաբանությունը տակավին իր զարգացման արշալույսին (III–IV դդ.) հիմնակարգում է երրորդաբանական այն գլխ. տեսակետը, ըստ որի Սուրբ Երրորդության երեք Անձերը՝ Հայրը, Որդին և Ս. Հ., իրենց գործունեության առանձնահատկությամբ տարբեր են, սակայն բնությամբ նույնն են իբրև մեկ Աստվածություն: Անձերի նույնաբնույթ (կամ՝ համաբնույթ) լինելն ինքնին ցույց է տալիս նրանց հավասարապատիվ և փառավորակից լինելը: Այստեղից էլ բխում է Ս. Հ-ու՝ Հոր և Որդու նկատմամբ ունեցած այն հարաբերությունը, որ հայտնի է «Համագոյություն» անունով: Իբրև երրորդաբանական հայտնություն այն որդեգրվել է *Նիկիայի Ա տիեզերական ժողովի* (325) կողմից և ունեցել հույժ կարևոր դեր Ս. Հ-ու աստվածաբանության հաստատագրման ընթացքում: Շնորհիվ այս վարդապետության եկեղեցին հակահարված է հասցրել աստիճանակարգային (սուբորդինացիոն) այն գաղափարներին, որոնց հետամուտ էր հուն. իմաստասիրության քննաբանական (ռացիոնալիստական) մտածողությունը տակավին չթոթափած եկեղեցականների մի ստվար մասը: Սրանց պարագլուխ Արիոսը (տես *Արիոսականություն*) Որդուն և Ս. Հ-ուն համարել է արարածներ (որոնք, անշուշտ, բարձր էին կանգնած ստորին կարգի եղական էակներից): Ս. Հ-ուն Աստվածության նկատմամբ ստորադաս էակ է համարել Մակեդոնը (տես *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381*): Աստվածաբանական միտքը Նիկիայի և Կ. Պոլսի տիեզերաժողովների միջոցով, հանձին *Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու* և եկեղեցու այլ հայրերի, պայքար է ծավալել հերձվածների դեմ՝ հաստատելով Ս. Հ-ու Աստվածությունն ու, իբրև համաբնույթ իրողություն, նրա՝ Հորից բխած լինելը (Հովհ. **15.**26): Հայտնությամբ (Աստվածաշունչ) և ավանդությամբ (երեք տիեզերաժողովների որոշումներ) առաջնորդվող Հայ եկեղեցու աստվածաբանության համաձայն, Ս. Հ. Հայր Աստծո կամքի իրագործողն է և Որդի Աստծո գործունեության ներքին կազմակերպողը: Նա Սուրբ Երրորդության իրավահավասար անդամներից մեկն է, Հոր և Որդու նման Անձնավորություն: Լինելով Աստվածության Անձերից մեկը՝ Աստծո Հոգին պատշաճորեն «Սուրբ» ստորոգելին է կրում, որով նա տարբերվում է ադամորդիների հոգիներից: Ս.Հ-ու գործունեության նպատակն Աստծո արքայության ստեղծումն է յուրաքանչյուր անհատի մեջ և սրա շնորհիվ նրա վերածումն Աստծո տաճարի: Ս.Հ-ու անձնավորական գործունեության տարածքն անհատ եկեղեցին (հավատացյալը) և հավաքական եկեղեցին (հավատացյալների խումբ) է: Ինչպես Ս. Հ., այնպես էլ Որդին Միջնորդիչ է, սակայն Ս.Հ. ուղղված է հանուն Որդու, նրա զոհագործության միջոցով, որպեսզի վկայի նրա մասին: Ավետարանում Որդին և Հոգին ներկայանում են որպես աշխարհ ուղարկված երկու աստվածային դեմքեր: Նրանցից առաջինը ուղարկված է, որպեսզի միավորվի մարդկային բնությանը և առողջացնի այն, իսկ երկրորդը՝ որպեսզի վերակենդանացնի մարդու անձն. ազատությունը: Այս իրողությամբ հանդերձ Որդին և Ս.Հ. (համաբնույթ լինելով Հորը) անդրանցական հարաբերության մեջ են աշխարհի նկատմամբ: Աստվածաբան. այս կանխադրույթներն են ընկած Հայ եկեղեցու *Հավատո հանգանակի* հիմքում. «Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, որպես անեղծ և կատարյալ, որ խոսեց Օրենքների, Մարգարեների և Ավետարանների մեջ, որ իջավ Հորդանանի վրա, քարոզեց առաքյալներին և բնակվեց սրբերի մեջ»: «Նրան դավանում ենք անեղ ու կատարյալ,– ասում է Ներսես Լամբրոնացին,– «անեղ», որովհետև անճառելի կերպով բխում է Հորից. «անեղ» լինելը հայտնի է նրանից, որ Ինքը արարածների արարիչ է, այդ պատճառով նրան խոստովանում ենք Հոր և Որդու արարչակից»: Հոր, Որդու և Ս. Հ-ու այս հարաբերությունն է պարզաբանում Հովհաննես Սարկավագը «Յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-ից» երկում, որտեղ, մեկնաբանելով Քրիստոսի «Եվ ահա ես ուղարկում եմ ձեզ իմ Հոր խոստումը, իսկ Դուք նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» խոսքը (Ղուկ. **24.**49), գրում է. «Եթե Քրիստոս Աստծո զորությունն է և նրա ավետիսն էլ՝ Որդու Հոգին, ապա աներկբա է, որ Հոր և Որդու բնությունը

նույնական է Սուրբ Հոգու բնությանը: Եվ եթե այսպես է, ապա նա կատարելապես ունի Աստվածության էությունն և պատիվ...»: Բխելով Հորից՝ Ս.Հ. չի դադարում Աստված լինել. «Քանզի Հայրը ծնեց Որդուն և ծնվելով չփոխեց իր բնությունը և ոչ էլ ընկավ Աստվածությունից: Նմանապես և Ս.Հ., որ դուրս է գալիս Հորից, բաժանված է անձնավորությամբ, սակայն բաժանված չէ բնությամբ կամ Աստվածությամբ»: Ըստ Հայ և Արևելյան ուղղափառ եկեղեցիների դավանության՝ Ս.Հ. բխում է Հայր Աստծուց, չընդունելով «եւ Որդւոյ» հավելվածը՝ բխման վարդապետության մեջ, ի տարբերություն Կաթոլիկ եկեղեցու:

Ս.Հ-ու մասնավոր փունկցիան, ներունակ գործունեությունը շնորհաբաշխությունն է: Հայ, և ոչ միայն հայ, վաղմիջնադարյան աստվածաբանության մեջ կարգորոշված է Ս. Հ-ու 7 և 9 շնորհ: Ս. Հ-ու 7 շնորհներն են՝ իմաստությունը, բանականությունը, խորհրդագդացությունը, հզորությունը, գիտությունը, բարեպաշտությունը, աստվածավախությունը: Հենվելով Ա Կորնթ. 12.1–11-ի վրա՝ հայ աստվածաբանները, ըստ հոգու երեք կարողության՝ մտքի, կամքի և զգայության, հայտանչում են Ս. Հ-ու 9 շնորհներ. ա. վարդապետական, որ ներառում է իմաստությունը, ճանաչողությունը և հոգիների ընտրությունը, բ. ավետարանական, որի մեջ մտնում են հավատքը, բժշկությունը, հրաշագործությունը, գ. հոգեկրական, որն ընդգրկում է մարգարեությունը, լեզվախոսությունը, թարգմանությունը: Ս. Հ-ու շնորհները բազմաբնույթ ու բազմաբովանդակ են, սակայն նրանց նպատակը մեկն է՝ մարդու եկեղեցագործումն ու փրկությունը:

Առաջնորդվելով հայրախոսական ժառանգության դասական ավանդներով՝ հայ միջնադարյան հեղինակները Ս. Հ-ու աստվածաբան. բովանդակությունը բացատրող շատ ճառեր և քարոզներ են հորինել: Հայ միջնադարի գեղ. միտքը նմանապես բազում երկեր է նվիրել Ս. Հ-ուն: Հայտնի են Հոգեգալստյանը նվիրված շարականները, որոնք հորինել են Մովսես Խորենացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Է Անավարդեցին և ուր.: Հռետոր. բարձր ընչով է գրված Ներսես Լամբրոնացու «Ներբող ի Գալուստ ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ» երկը, որտեղ ոչ միայն տարփողվում, այլև աստվածաբանորեն արժեքավորվում են Ս. Հ-ու շնորհները: Ս. Հ. պանծացվում է Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Հովհաննես Երզնկացու, Ստեփանոս Թոխաթեցու և այլոց տաղերում ու դանձերում:

Հայ միջնադարյան մանրանկարչության մեջ Ս. Հ. պատկերվում է գլխավորաբար «Մկրտության» հորինվածքում (Մատթ. 3.16, Մարկ. 1.10, Ղուկ. 3.22)՝ համաձայն եկեղեցու հայրերի սահմանած կանոնական միօրինակության: Այստեղ Ս. Հ. սովորաբար պատկերվում է աղավնու կերպարանքով, հաճախ էլ ներկայացվում Աստծո օրհնող Աջի տեսքով: Անանիա Սանահնեցին, Վանական Վարդապետը, Գրիգոր Տաթևացին և ուր. իրենց դավանաբան. աշխատություններում, հենվելով Աստվածաշնչի վրա (Ղուկ. 11.20), արձանագրում են, որ այստեղ հիշատակված «Աստծո մատը» ակնարկում է Ս. Հ-ուն:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.8, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ա թ ա ն ա ս Ա ղ ե ք ս ա ն դ ր ա ց ի, Ճառք, Թուղթք եւ Ընդդիմասացութիւնք, Վնտ., 1899, էջ 235–238, 239–242, 243–257: Յ ո վ հ ա ն ն ե ս Ս ա ր կ ա վ ա գ, Յաղագս Հոգւոյն, տես նրա «Յաղագս նշանակի հաւատոյ» (աշխատասիր. Մեսրոպ քհն. Արամյանի), «Գանձասար», 1996, 6, էջ 392–397: Ն ե ր ս ե ս Լ ա մ բ ր ո ն ա ց ի, Ներբող ի Գալուստ ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, տես Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1872, էջ 466–474: Գ ր ի գ ո ր Տ ա թ ե վ ա ց ի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729, էջ 62–66: Ն ո ւ յ ն ի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմերան հատոր, ԿՊ, 1740, էջ 669–675, 696–735: Փ ե շ տ ի մ ա լ ճ յ ա ն Գ., Լուսաշաւիղ, որ է բացատրութիւն Նիկիական հանգանակին..., ԿՊ, 1848, էջ 107–132: Տ ե ր Մ ի ք ե լ յ ա ն Ա., Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Տփխիս, 1900, էջ 231–241: Ա վ ե տ ի ք յ ա ն Գ., Բացատրութիւն շարականաց..., Վնտ., 1814, էջ 369–412: Ք յ ո ս ե յ ա ն Հ., Հայ եկեղեցու աստվածաբանությունը շարականներում և տաղերում, տես հեղինակի «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության», Ս. Էջմիածին, 1995:

Հակոբ Քյոսեյան

ՍՈՒՐԲԵՐ Հ ա յ ա ս տ ա ն յ ա յ ց ա ռ ա ք ե լ ա կ ա ն ե կ ե ղ ե ց ի, եկեղեցու կողմից *սուրբ* ճանաչված անձինք՝ մարգարեներ, առաքյալներ, մարտիրոսներ, քարոզիչներ, վկաներ, ճգնավորներ, նահատակներ, աստվածաբաններ, *եկեղեցու հայրեր* և առհասարակ *Սուրբ Հոգով* մկրտված սրբակյաց հավատացյալներ, որ անվանվում են նաև «Աստծո ժողովուրդ», «Աստծո բանակ», «Հիսուս Քրիստոսի զինվորներ» ևն:

Հայաստանյայց եկեղեցին, իբրև անբաժան մասը Ընդհանրական եկեղեցու, իր պաշտա-

մունքի մեջ հատուկ տեղ է տվել Ս-ին՝ որպես լույսի սյուների, հավատքի առաջնորդների և օրինակելի աղոթավոր հավատացյալների, որոնց աղոթքն ունի միջնորդական-բարեխոսական նշանակություն: Ս-ի Սուրբը և սրբության աղբյուրը թեև Աստվածն է (Ս. Հայր Աստված, Ս. Որդի Աստված և Ս. Հոգի Աստված), սակայն Աստծո միջոցով սրբացված անձինք ևս քույր եկեղեցիների կողմից հռչակվել են Ս., մուծվել եկեղեց. *Տոնացույցի* մեջ՝ որպես տոնելիներ կամ հիշատակելիներ (ընդ որում, որոշ եկեղեցիներ առավել ազատ և արդիական են նոր Ս. հռչակելիս, ինչպես՝ Կաթոլիկ եկեղեցին, որոշ եկեղեցիներ էլ՝ առավել պահպանողական, ինչպես՝ Հայ եկեղեցին, որ XV դարից ի վեր նոր սուրբ չի ճանաչել): Հայ եկեղեցին, սրբացման կամ սրբադասման հարցում առավելապես հետևել և հետևում է համահայկ-համաժող. ընկալմանը՝ որպես Ս. ընդունելով նաև եկեղեց. Տոնացույցի մեջ չմուծված բազում քրիստոնյաների, որոնք հաճախ կյանքով ու արյունով են սրբադործել իրենց հավատքը Հիսուս Քրիստոսի և հայոց դավանանքի համդեպ: Հայ եկեղեց. Տոնացույցի բարեկարգման և նոր Ս-ի ընդունման հարցով եղել են Թ. *Գուշակյանի*, Մ. *Օրմանյանի*, Բ. *Կյուլեսերյանի*, Վ. Հացունու առաջարկությունները.

ա. ընտրել այնպիսի Ս., որոնք ընդհանրական և տոնելի են Ընդհանրական եկեղեցու կողմից,

բ. հավելել հայազգի Ս., ս. *Սանդուխտի* հետ՝ Սամուել իշխանին ու Զարմանդուխտ իշխանուհուն, *Բարդուղիմեոս* առաքյալի հետ՝ Տերենտիոս հայրապետին և Ոգուհի արքայադքրոջը, *Թադեոս* առաքյալի աշակերտներից՝ ս. *Եղիշեին*, նախալուսավորչական հայրապետներին, ս. Վաչե Մամիկոնյանին, ս. *Շուշանիկին*, ս. *Ատոմյանց* ևն,

գ. հավելել հայոց *նոր վկաներ*՝ Խոսրով Գանձակեցուց (նահ. 1167) մինչև Սայաթ-Նովա (նահ. 1795), ապա նաև Մեծ եղեռնին զոհ գնացած Ս.՝ ընտրողաբար:

Նախապես Ընդհանրական եկեղեցին «սրբության» մակդիրով պատվել է Աստվածամորը, սրբակյաց ճգնավորներին և առհասարակ նրանց, ում հիշատակին կառուցվել էին վկայարան, մատուռ և հաստատվել ուխտագնացության օրեր: Հետագայում «սրբացումի» իրավունքն ստանձնել է Հռոմի կաթոլիկ եկեղեցին. պաշտոնական սրբացման առաջին դեպքն է ճանաչվում Սինոդի 993-ի որոշումը, որի հիման վրա Հովհաննես XV պապը արտոնել է տոնել իր ժամանակակից գերմանացի եպիսկոպոս Ուլրիխ Աուսբուրգցու հիշատակը՝ որպես սրբի և հրաշագործի: Այնուհետև Կաթոլիկ եկեղեցին մի շարք այլ որոշումներով կանոնակարգել է նոր Ս-ի կամ երանելիների պաշտոնական ճանաչման հարցը:

Հայ առաքելական եկեղեցին ցայսօր անփոփոխ տոնակատարում է իր 63 հայ Ս-ի հիշատակը. նրանք են (ըստ դարերի)՝ I դ.՝ Սանդուխտ կույս, *Ադդե* հայրապետ, *Աբգար* թագավոր, II դ.՝ *Ոսկյանք* քահանաներ, *Սուքիասյանք*, IV դ.՝ *Գրիգոր Ա Լուսավորիչ* (որ տոնում է նաև համայն Տիեզերական եկեղեցին), Հռիփսիմե, Նունե, Մանե (առհասարակ՝ *Հռիփսիմյանց կույսեր* և *Գայանյանց կույսեր*), *Արիստակես Ա Պարթև*, *Վրթանես Ա Պարթև*, *Գրիգորիս*, *Հուսիկ Ա Պարթև*, *Դանիել Քորեպիսկոպոս*, *Ներսես Ա Պարթև*, *Մեսրոպ Մաշտոց*, *Տրդատ Գ Մեծ*, *Աշխեն*, *Խոսրովիդուխտ*, *Անտոն*, *Կրոնիդես*, Ստեփանոս Ուլնեցի և ընկերներ, V դ.՝ *Հովսեփ Ա Հողոցմեցի*, *Սահակ Ա Պարթև*, Թաթիկ եպիսկոպոս, *Ղևոնդ Երեց*, Մուշե Երեց, Արշեն Երեց, Սամուել Երեց, Աբրահամ Երեց, Խորեն Երեց, Քաջաջ Սարկավագ, Աբրահամ Սարկավագ, *Եղիշե*, *Մովսես Քերթող*, *Դավիթ Անհաղթ*, Ատոմ զորավար իր գնդերով (Ատոմյանք), Մանաճիհր զորավար իր գնդերով, *Վարդանանք*, *Թաթուլ*, *Թումաս*, Շուշան, VI–VII դդ.՝ *Յոթը խոտաճարակներ*, VI դ.՝ Գրիգորիս Ռաժիկ, Աստվածատուր Մախոժ, VIII դ.՝ *Դավիթ Դվնեցի*, *Վահան Գողթնացի*, Սահակ Արծրունի, Համազասպ Արծրունի, *Հովհաննես Գ Օձնեցի*, IX դ.՝ Սահակ Կարնեցի, Հովսեփ Կարնեցի, X դ.՝ *Գրիգոր Նարեկացի*, XI դ.՝ *Ներսես Շնորհալի*, Գոհարինոս, Ռատիկոս, Ծամինդոս, Տուքիկոս (տես *Գոհարինյանք*), XIV դ.՝ *Հովհան Որոտնեցի*, XV դ.՝ *Գրիգոր Տաթևացի*:

Հայ եկեղեցու հիշատակելի Ս-ի հնագույն շերտը Աստվածաշնչյան Ս. են՝ նախահայրեր ու մարգարեներ՝ Ադամ, Աբել, Սեթ, Ենովք, *Նոյ*, Մելքիսեդեկ, Հակոբ, Աբրահամ, Մովսես, Սամուել, Գեդեոն, Միքիա, Հովել, Հոբ, Դավիթ, Եղիա, Եղիսե, Եսայի, Դանիել, Զաքարիա, Երեմիա, Եզեկիել, Մաղաքիա ևն, ապա՝ *Մարիամ Աստվածածինը*, *Հովհաննես Մկրտիչը*, տասներկու *առաքյալները*, չորս ավետարանիչները, հրեշտակապետները՝ Գաբրիել, Միքայել և ողջ Երկնային զորքը, Հիսուսի յոթանասուներ-

կու աշակերտները են (տես նաև *Տոներ* հոդվածը): Ի թիվս Ս-ի հիշատակի, նշվում են նաև Աստվածածնի սրբությունները և խորհուրդները, ինչպես, օր., *Ուխտի տապանակը* (Տոն Տապանակի):

Մյուս տոնելի խումբը քույր եկեղեցիների հետևյալ Ս. են (ոչ հայ Ս.) ըստ եկեղեցիների.

Անտիոքի եկեղեցի՝ Իգնատիոս Աստվածազգյաց հայրապետ, Քրիստինե կույս, Բարդամ Ծերունի, Բաբելուս եպիսկոպոս և աշակերտներ, Մելիտոս հայրապետ Անտիոքի, Ղուկիանոս քահանա, Կյուրեղ սարկավագ, Թեոդորիտոս քահանա, Ռոմանոս Երգեցող, Արտեմիոս Զինավոր (ընդամենը՝ 19 Ս.), **Կիլիկիո եկեղեցի՝** Կալինիկոս վկա, Անդրոնիկոս վկա են (ընդամենը՝ 8 Ս.), **Միջագետքի եկեղեցի՝** Պարսամ եպիսկոպոս, *Հակոբ Մծբնացի, Եփրեմ Ասորի* Խուրի, Սարգիս Զինավոր և ուր. (ընդամենը՝ 10 Ս.), **Երուսաղեմի եկեղեցի՝** *Կյուրեղ Երուսաղեմացի*, Հուդա-Կյուրեղ եպիսկոպոս, Աննա (մայր Հուդա-Կյուրեղի), Բարուլա՝ Խոստովանող Մանուկ են (ընդամենը՝ 6 Ս.), **Կիպրոսի եկեղեցի՝** *Եպիփան Կիպրացի* (1 Ս.), **Ալեքսանդրիայի եկեղեցի՝** Եվդիոնե կույս, նաև նրա հայրը՝ Փիլիպպոս, մայրը՝ Կղոդիա, եղբայրները՝ Սերգիոս և Ապիտոն, *Աթանաս Ալեքսանդրացի, Կյուրեղ Ալեքսանդրացի* և ուր. (ընդամենը՝ 37 Ս.), **Եթովպիո եկեղեցի՝** Խարիթյանք կամ Արեթյան վկաներ (1 խումբ), **Կեսարիայի եկեղեցի՝** *Գրիգոր Նյուսացի, Բարսեղ Կեսարացի* են (ընդամենը՝ 10 Ս.), **Սեբաստիո եկեղեցի՝** *Գրիգոր Սքանչելագործ*, Աթանագինես եպիսկոպոս, Քառասուն Մանկունք, Թեոդորոս Զինավոր են (ընդամենը՝ 13 Ս.), **Լիկայոնիո եկեղեցի՝** Տրիփոն վկա, Թեոդիտե վկայուհի և երեք որդիք, Կիրակոս Մանուկ (ընդամենը՝ 6 Ս.), **Պոնտոսի եկեղեցի՝** 5 Ս., **Եփեսոսի եկեղեցի՝** 7 Ս. (ընդ որում, ամենուրեք, 1 սուրբ է հաշվվում նաև Ս-ի 1 խումբը), **Կ. Պոլսո եկեղեցի՝** *Գրիգոր Նազիանզացի, Հովհան Ոսկեբերան* են (ընդամենը՝ 12 Ս.), **Թեսալիո եկեղեցի՝** 3 Ս., **Գաղատիո եկեղեցի՝** Կղեմես հայրապետ, Վաուլառե կույս են (ընդամենը՝ 6 Ս.), **Բյութանիո եկեղեցի՝** Կոդրատիոս վկա, *Գևորգ* Զորավար (ս. Գևորգ), Հուլիանե կույս են (ընդամենը՝ 24 Ս.), **Հռոմի եկեղեցի՝** Բագարատ եպիսկոպոս, Պիստիս՝ դուստր Սոփիայի, Էլպիս՝ դուստր Սոփիայի, Ստեփանոս հայրապետ են (ընդամենը՝ 15 Ս.), **Աֆրիկյան եկեղեցի՝** Կիպրիանոս եպիսկոպոս և Հուստիանե կույս, **Պարսից եկեղեցի՝** Մարկոս եպիսկոպոս, *Սարգիս* Զորավար (ս. Սարգիս), Մարտիրոս՝ որդի Սարգսի, Որմզդան վկա են (ընդամենը՝ 16 Ս.): Տես նաև *Եկեղեցու հայրեր*:

Ս-ի հոծ բազմություն են կազմում նաև *նոր վկաները*, որոնք թեև չեն անցել եկեղեց. օրացույցի մեջ, սակայն նշվում են տարբեր ժողովածուներում՝ *Ճաշոց, Հայսմավուրք*, Տոնացույց, *Տոնապատճառ* են, առկա են սրբախոսական գրակ. մեջ (*Վկայաբանություն, Վարքագրություն, Ճառ, Ներբող*) և տարբեր աշխատություններում՝ Մ. *Զամչյանի* «Հայոց պատմության» և Մ. *Օրմանյանի* «Ազգապատումի» մեջ և այլուր:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Հայոց նոր վկաները. 1155–1843, [ժող.], կազմ. Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Վաղ-պատ, 1903: Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւնք, հ. 1–12, Վնտ., 1811–15: Հացունի Վ., Հայ ծեսը 1911 տարւոյ ազգային Այունհոդոսի գործոց մեջ, Վնտ., 1919: Մանուկյան Թ., Հայ եկեղեցվո կորուստը Մեծ եղեռնին, Նյու Յորք, 1972: Գալուստյան Շ., Համաքրիստոնէական սուրբեր, Ե., 1997: Նույնի, Հայազգի սուրբեր, Ե., 1997: Սուրբերը և մենք, [ժող.], խմբագիր՝ Մեսրոպ արք. Աշճյան, Նյու Յորք, 1993: Սուրբերու կեանքը, [ժող.], 3 հրտ., Բեյրութ, 1994:

Մեսրոպ արք. Աշճյան

ՍՈՒՐԽԱԹԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ, Ղրիմի Իշ (Ուկրաինա) Ստարի Կրիմ քաղաքի մոտ, անտառապատ լեռան լանջին: Ըստ չափածո շին. արձանագրության, վանքի Ս. Նշան եկեղեցին 1338-ին կառուցել են Հովհաննես կրոնավորը և նրա եղբայրները: Եկեղեցին ունի ներքուստ խաչաձև, չորս անկյուններում կիսաշրջանաձև խորաններով ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք, ինչը բնորոշ է Հայաստանի X–XIII դդ. վանքերի եկեղեցիների ճարտ-յանը: XVI դ. եկեղեցուն արմ-ից կցել են մեկ զույգ մույթերով եռանավ, թաղածածկ գավիթ և համալիրի ներքին բակի արմ. կողմում կառուցել խոշոր խոհանոցով սեղանատուն: Գավթի պատերի և մույթերի շարվածքում ագուցված են խաչքարեր, որոնցից ամենավաղը թվագրվում է 1551:

XIV–XVII դդ. Ս. Ս. Խ. վ. հայտնի է եղել իր դպրոցով, գրչատնով, կրթված միաբաններով, որոնք զգալի դեր են կատարել Ղրիմի հայ գաղութի հոգևոր-մշակութ. կյանքում: Հայաստանից Ղրիմ արտագաղթած ուսուցիչների, տաղասացների, գրիչների մեծ մասը հանգրվանել է վանքում: XVII դ., ըստ Հակոբ

վրդ. Կաֆայեցու, Ս. Ս. Խ. վ-ում ճեմարան է գործել, որտեղ 1611-ից ուսուցչություն է արել տաղասաց և գրիչ Ստեփանոս Թոխաթեցին (Եվդոկացի):

1686-ին կառուցվել է վանքի բակ տանող դարպասը, 1719–22-ին Հակոբ արքեպիսկոպոսը կառուցել է պարիսպը և խցերի երկհարկանի շենքը: 1751-ին Ադամ արքեպիսկոպոսը վերանորոգել է վանքի համալիրը: 1860-ական թթ. կառուցվել են վանքի հյուրատունն ու բնակելի շենքի երկրորդ հարկը: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ռմբակոծությունից լիովին ավերվել է հյուրատունը, որը հետպատերազմյան տարիներին գրեթե նույնությամբ վերանորոգվել է՝ ըստ լուսանկարների և գրչանկարների: Վանքի տարածքի 1973-ի և 1976-ի պեղումներով բակի հս. կողմում բացվել են XIV–XV դդ. շինությունների հիմքերը:

Սուրխաթի Ս. Խաչ վանքի Ս. Նշան եկեղեցու (1358) գմբեթը

Ս. Նշան եկեղեցում պահպանվել են XIV դ. որմնանկարներ: Արմ. մուտքի վերևում պատկերված է Աստվածածինը Մանկան հետ, խորանին՝ «Բարեխոսության» տեսարանը: Որմնանկարների ոճը, մեղմ գույները, կերպարները նմանվում են Ղրիմի XIV դ. մանրանկարիչ Գրիգոր Սուքիասանցի ստեղծագործություններին (որմնանկարները նորոգվել են XVIII դ.):

(Տես նաև *Մանրանկարչություն* հոդվածի Ղրիմի մանրանկարչության դպրոց մասը):

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.8, 3-րդ պատկերը:

Գրկ. Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, [Հ.] 1, Ե., 1964: *Корхмазян Э., Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е, 1978; Домбровский О., Сидоренко В., Солхат и Сурб Хач, Симферополь, 1978; Якобсон А., Таманян Ю., Армянская архитектура в Крыму, Е., 1992. Бабаян Ф., Корхмазян Э., Армянские монастыри Сурб Хач и Св. Степаноса близ города Старый Крым, Е., 2000.*

Մուրադ Հասրաթյան

ՍՈՒՔԻԱՍՅԱՆՔ [նահ. Ք.Ծ.Հ.130 կամ 140/150, Բագրեվանդ գավառի Ջրաբաշխ կամ Սուկավետ (Սուքիասյան) կոչված լեռներում], նահատակների խումբ, տոնելի: Անվանումն ստացել են իրենց առաջնորդ Սուքիասի անունից, որը նկատվում է հուն. Հյուսիքոս անվան աղավաղված ձևը և նրա մկրտության անունն է. նախկինը եղել է Բահաթրա կամ Բարաքաթրա: Պահպանվել է Ս-ց վկայաբանությունը, որը համարվում է վաղ շրջանի սրբախոս. երկ: Ճառընտիրները և Հայսմավուրքները, որոնցից քաղում է նաև *Հովհաննես Ե Դրասխանակերտցին*, այս գրվածքը վերագրում են Անտոն գրչին: Մ. *Ավգերյանը* ենթադրում է, որ խոսքը Անտոն Անապատավոր Հռոմայեցու մասին է: Ըստ վկայաբանության՝ Ս. ալանաց իշխաններ էին, Սաթենիկ թագուհու ազգակիցները, և ապրել են հայոց արքունիքում: Ոսկյանների (տես *Ոսկյանք*) քարոզությամբ նրանք դավանափոխ են եղել և մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով: Ոսկյանց նահատակությունից հետո արքունիքը լքած Ս. առանձնացել են Բագրեվանդ գավառի Ջրաբաշխ լեռան ստորոտում, որը, ինչպես կարծում են, հետագայում նրանց անվամբ կոչվել է Սուկավ կամ Սուկավետ: 44 տարի անց Ս. նահատակվել են Ալանաց թագավոր Գիգիանոսի մարդկանց ձեռքով: Վկայաբանության մեջ հանվանե հիշատակված են սրանց մկրտական անունները. Սուքիաս, Ղուկիանոս, Պողիքտես, Կոդրատոս, Անտիոքոս, Իքսորոն, Մեմնաս, Փոկաս, Սերգիոս, Դոմետիոս, Ադրանիոս, Զոսիմոս, Բիկտորիոս, Թալկիսոս, Հորդանես, Անաստաս, Թեոդորոս ևն (մոտ 60–70 հոգի): Ըստ Հայսմավուրքի՝ *Գրիգոր Ա Լուսավորիչը* նրանց վկայության վայրում կառուցել է եկեղեցի: VII–IX դդ. Ս-ց վկայաբանությունը թարգմանվել է վրացերեն:

Հայ եկեղեցին ս. Ս-ց հիշատակը տոնում է Առաջավորաց պահքին հաջորդող երեքշաբթի օրը, իսկ երբ հիշյալ օրը տոնվում է Տյառնընդառաջը՝ ս. *Ատոմյանց* հիշատակի հետ: Ս-ց նվիրվել է շարական՝ «Շարական սրբոց Սուքիասանց».

«Ստուգութեամբ տեղեկացեալ հարցանելով զմարգարէն, ով ելցէ ի լեառն տեառն սրբութեան: Ահա տեսաք զՍուկաւետ լեառն դիտակ և բնակարան վրկչացն...» (Շարական, ԿՊ, 1853, էջ 634):

Գրկ. Յայսմաւուրք, ԿՊ, 1730, օգոստ. 27: Ավգերյան Մ., Լիակատար վարք և վկայաբանութիւն..., հ. 2, Վնտ., 1811, էջ 113–120: «Սոփերք հայկականք», հ. 19, Վնտ., 1854, էջ 33–56: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997: *Памятники армянской агиографии, Е., 1973, с. 176–185.*

Քնարիկ Տեր-Դավթյան

Վ

ՎԱԶԳԵՆ Ա ՊԱԼՃՅԱՆ [ավազանի անունը՝ Լևոն-Կարապետ, 20.9(3.10).1908, Բուխարեստ – 18.8.1994, Ս. Էջմիածին], Ամենայն հայոց կաթողիկոս 1955-ի սեպտ. 30-ից: Հաջորդել է *Գևորգ Զ Զորեքչյանին*:

Նախն. կրթությունն ստացել է Օդեսայի (որտեղ առաջին աշխարհամարտի տարիներին հաստատվել էր Պալճյանների ընտանիքը) հայկ. նախակրթարանում: Պալճյանների ընտանիքի՝ Ռումինիայում վերահաստատվելուց հետո սովորել է Բուխարեստի Միսաքյան-Քեսիմյան Ազգ., ապա՝ Բուխարեստի առևտրական բարձրագույն վարժարանում (1924–26): 1936-ին ավարտել է Բուխարեստի պետ. համալսարանի գրականության և փիլ-յան ֆակուլտետը, 1937-ին՝ գործնական մանկավարժության բաժինը (1937). պաշտպանելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» ավարտաճառը՝ ստացել է ուսուցիչ-մանկավարժի վկայական:

1930-ական թթ-ից ազգ-հաս., այնուհետև եկեղեց. եռանդուն գործունեություն է ծավալել ռումինահայ գաղութում՝ վերջինիս վերաբերող խնդիրներն արծարծելով նախ Փարիզում լույս տեսնող «Մարտկոց» թերթում (1933), ապա՝ Բուխարեստում իր իսկ հիմնած և հրատարակած գիտահաս. «Հերկ» ամսագրի 12 համարներում (1937-ի հունիսից 1938-ի մայիս): 1929–43-ին դասավանդել է Բուխարեստի հայկ. դպրոցներում, եղել Ռումինիայում գտնվող հայ ռազմագերիներին օգնող կոմիտեի (1942–44) կազմում: 1943-ի սեպտ. ռումինահայ թեմական խորհրդի որոշմամբ մեկնել է Աթենք, որտեղ Ս. Կարապետ եկեղեցում հունահայ թեմի առաջնորդ Կարապետ արք. Մազլումյանի ձեռամբ ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Վերադառնալով Բուխարեստ՝ Ս. Հրեշտակապետաց եկեղեցում մատուցել է անդրանիկ Պատարագը: Նույն օրը (նոյեմբ. 28) Ռումինիայի հայոց թեմական պատգամավորական ժողովը նրան ընտրել է թեմի առաջնորդական տեղապահ, այնուհետև՝ թեմի առաջնորդ (1947–55): 1948-ի մայիսի 23-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ Զորեքչյանից ստացել է ծայրագույն վարդապետ. աստիճան, 1951-ի մայիսին՝ օծվել եպիսկոպոս: 1954-ի դեկտ. 31-ին Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի որոշմամբ ստանձնել է նաև Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդի պարտականությունները:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյան

Դեռևս Ռումինիայում Վազգեն Ա իր կարևոր նպաստն է բերել հայրենիքին սատարելու, հայրենիք-սփյուռք կապերն ամրապնդելու գործին: Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելուց հետո, սփյուռքի համախմբվածությու-

նը զորացնելու և հայրենիքի հետ կապերն ամրապնդելու նպատակով, շուրջ 30 հովվապետ. այցելություններ է կատարել Հայ եկեղեցու թեմեր, միջեկեղեց. շրջանակներում հանդիպումներ ունեցել քույր եկեղեցիների հովվապետների հետ, արտերկրում ներկայացրել Հայ եկեղեցին ու հայ ժողովրդին:

Հայրապետ. անդրանիկ կոնդակում (1955-ի դեկտ. 1), ընդգծելով հատկապես եկեղեցիների և վանքերի շուտափույթ նորոգման անհրաժեշտությունը, ծավալել է եկեղեցաշին-վերականգնող. մեծ աշխատանքներ: Վերանորոգվել են Մայր տաճարը, Էջմիածնի Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ վանքերը, Գեղարդավանքը, Խոր վիրապի վանքը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց, Երևանի Ս. Սարգիս, Ս. Զորավոր, Ս. Հովհաննես, Բաքվի, Մոսկվայի, Դոնի Ռոստովի և Արմավիրի եկեղեցիները: Մայրավանքի շրջակայքում կառուցվել են Նահատակաց հուշարձանը, Խրիմյան Հայրիկին նվիրված աղբյուր-կոթողը, Գալուստ Կյուլպենկյան վանատունը, Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը: Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ և սփյուռքահայերի նվիրատվությամբ ժամանակակից սարքավորումներով վերազինվել է Մայր աթոռի տպարանը:

Վազգեն Ա մեծ ավանդ ունի նաև հոգևորմշակութ. նոր արժեքների ստեղծման, հների հավաքման գործում: Վեհափառ հայրապետի շնորհիվ փրկվել ու Երևանի Մատենադարանին են հանձնվել «Վեհափառի» և «Վեհամոր» անուններով կնքված երկու Ավետարանները, *Թորոս Ռոսլինի* ծաղկած «Զեյթունի Ա-վետարանը» և «Մալաթիայի Ավետարանը», *Թովմա Արծրունու* «Պատմություն Արծրունյաց տան» աշխատության պահպանված միակ ձեռագիր օրինակը և բազմաթիվ այլ ձեռագրեր, արժեքավոր վավերագրեր:

Մեծ է Վազգեն Ա-ի ավանդը Հայ եկեղեցու միասնության հաստատման, միջեկեղեց. հարաբերությունների ընդլայնման ասպարեզում: 1962-ին Հայ եկեղեցին դարձել է Եկեղեցիների համաշխ. խորհրդի (տես *Էկումենյան շարժում* հոդվածում), այնուհետև՝ Եվրոպական եկեղեցիների համաժողովի անդամ:

Դեռևս 1952-ին ընտրվելով Ռումինիայի խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ, հաջորդող տարիներին արդեն որպես Հայոց հայրապետ, Վազգեն Ա մասնակցել է կրոն. գործիչների Հանուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատման համաշխ. համաժողովներին (Մոսկվա, Բեռլին, Հելսինկի): Խաղաղարար այս գործունեության համար պարգևատրվել է Խաղաղության համաշխ. խորհրդի Ժոլիո Կյուրիի անվ. (1962) և Խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի (1968) ոսկե մեդալներով, Ռումինիայի «Հանրապետության աստղ» (1952), «Պատվո նշան» (1968), Ժողովուրդների բարեկամության (1978) շքանշաններով:

Ազգ-եկեղեց. այս գործունեությունն իր արտահայտությունն է գտել նաև Վազգեն Ա-ի իմաստասիր. և հրապարակախոս. բնույթի գործերում և հայրապետ. գրություններում, որոնք սկսած առաջին՝ «Նոր սերունդին համար» («Մարտկոց», Փարիզ, 1933, № 73) հոդվածից, արծարծել են սփյուռքահայությանը հուզող խնդիրներ, հայրենիք-սփյուռք հարաբերությունները և հայ ժողովրդի կյանքում Հայ եկեղեցու ունեցած դերի ու առաքելության հարցերը: Վազգեն Ա-ի գործերը գրված են համաշխ. գրականության, Ընդհանրական ու Հայ եկեղեցու հայրերի երկերի խորին իմացությամբ, որի շնորհիվ հոգևոր-եկեղեցական ավանդական հարցերը դիտարկվում են հայությանը հուզող արդիական խնդիրների լուծման տեսանկյունից՝ նրբին անդրադարձով քննելով նաև մարդու ներանձնական ու հոգևոր-իմացական աշխարհը («Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ»), «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ»: Հայաստանի աստիճանական վերականգնմանը նվիրված մի ձոն է «Հայրենի արևին տակ» ուղեգրական ակնարկաշարը: Պատարագի արարողության ընթացքն ու խորհուրդը մատչելի բացատրություններով ներկայացվում և ազգ. վերիմաստավորման են ենթարկվում «Մեր Պատարագը» գրքույկում:

Վեհափառ հայրապետն օրհնել է Հայաստանի նորոգ անկախությունը:

Դեռևս 1988-ի փետր. 25-ին Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցով դիմել է ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, Արցախյան շարժման ընթացքում խորհրդ. և միջազգ. ամենաբարձր ատյաններում լսելի է դարձրել արցախահայության ձայնը: Հայրապետ. առանձին տնօրինությամբ վերահաստատել է Հայ եկեղեցու *Արցախի թեմը* (1989), ձեռնարկել Արցախի մի շարք եկեղեցիների ու վանքերի վերաբացումն ու վերանորոգումը: Նրա ջանքե-

ով վերստին կյանքի են կոչվել Սյունիքի և Գուգարքի թեմերը:

Մեծ է Վեհափառի ավանդը «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման գործում, որին սատարելու և տեղային կառույցների ձևավորման համար 1992-ի մայիսի 28-ին հատուկ կոչով դիմել է Հայ եկեղեցու թեմական առաջնորդներին:

Իր երկարատև գահակալության ընթացքում հինգ անգամ ս. *Մյուռոնի* օրհնություն կատարելուց հետո, Վազգեն Ա իր կյանքի մայրամուտին օրհնած վերջին՝ վեցերորդ Մյուռոնը (1991-ի սեպտ. 29) անվանել է Անկախության Մյուռոն, որով և օծել է Մայր տաճարի Ավագ խորանի «Տիրամայրը Մանկան հետ» (նկարիչ՝ Գ. Խանջյան) պատկերը՝ այն անվանելով Անկախության Տիրամայր:

Ի գնահատություն տասնամյակների հոգևոր-եկեղեց. և գիտամշակութ. վաստակի, Վազգեն Ա ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ (1991, ապրիլի 30), առաջինն է արժանացել Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչմանն ու Հայրենիքի շքանշանին (1994-ի հուլիսի 29):

Կաթողիկոս. գահին Վ. Ա Պ-ին հաջորդել է *Գարեգին Ա Սարգիսյանը*:

Երկ. Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ, Բուխարեստ, 1940: Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ, Բուխարեստ, 1943: Խոսք Հայրենիքի մասին, Բուխարեստ, 1945: Մեր Պատարագը, Էջմիածին, 1990: Հայրենի արևին տակ, Բուխարեստ, 1954: Հոգեբանության դասեր, Էջմիածին, 1961: Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ, գիրք 1–4, Էջմիածին, 1958–83: Գալիքի տեսիլքով, գիրք 1, 2, Էջմիածին, 1988, 1993:

Գրկ. Հայրապետական ուղևորությունները, գիրք 1–8, Էջմիածին, 1957–78: Քոլանջյան Ս., Երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կյանքն ու գործը, հանգիստը և հուղարկավորությունը, Լոս Անջելես, 1996: Շտիկյան Ս., Վազգեն Առաջին. համառոտ տարեգրություն (1908–1955), Էջմիածին, 1986: Նույնի, Ն.Ս.Օ. Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Մատենագիտությունը, Էջմիածին, 1995: Հարությունյան Վ., Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1989:

Վարդան Դևրիկյան

ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑ, ուսումնական հոգևոր հաստատություն: Հիմնադրվել է Սևանի թերակղզում, 1990-ին, *Արարատյան հայրապետական թեմի* առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի (1999-ից՝ *Գարեգին Բ Ներսիսյան* Ամենայն հայոց կաթողիկոս) նախաձեռնությամբ, *Վազգեն Ա Պալճյան* Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ: Ի հիշատակ վեհափառ հայրապետի՝ հոգևոր դպրանոցը 1994-ին անվանակոչվել է «Վազգենյան»:

1990-ին Հայ եկեղեցուն վերադարձվել է Սևանի եկեղեց. համալիրը, այդ շարքում՝ *Մկրտիչ Ա Վանեցի* հայրապետի օրոք, 1897-ին շուշեցի մեծահարուստ Ավետիք Ղուկասյանի մեկենասությամբ կառուցված հոգևոր ընծայարանի շենքը: Սկզբ. շրջանում նորահաստատ դպրանոցի միակ մասնաշենքը 100-ամյա այդ կառույցն էր, որը ծառայեցվել է և՛ ուս., և՛ կենցաղ. նպատակների: 1992-ին ուս. մասնաշենքի է վերածվել դպրանոցին հանձնված «Սևան» ազգային պարկի ակումբը:

Վազգենյան դպրանոցը գիշերօթիկ, հնգամյա ուս. հոգևոր հաստատություն է, որի շրջանավարտները, ևս մեկ տարի ուսանելով Մայր աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, անցնում են հոգևոր լիարժեք սպասավորության: Դպրանոց կարող են ընդունվել միջնակարգ կրթությամբ երիտասարդները՝ հանձնելով ընդունելության քննություններ: Ստուգվում են նաև դիմորդների երաժշտ. ընդունակությունները:

Դպրանոցում դասավանդում են հոգևորականներ և հանրապետության բուհերի դասախոսներ: Ուսուցանվում են կրոն. առարկաներ՝ ընդհանուր աստվածաբանություն, Հին և Նոր կտակարանների ներածություն և մեկնություն, Հայ եկեղեցու և Ընդհանրական եկեղեցու պատմություն, դավանաբանություն, վարք սրբոց, շարականագիտություն, հայրաբանություն, ծիսագիտություն, նաև՝ գրաբար, հայ ժողովրդի և ընդհանուր պատմություն, պատմական աշխարհագրություն, մատենագիտություն, ընդհանուր և հայ փիլիսոփայության պատմություն, հայ և համաշխ. գրականություն: Մեծ ուշադրություն է դարձվում հայ., ռուս., անգլ., հուն. և լատ. լեզուների ուսումնասիրմանը, կապեր են հաստատվում տարբեր երկրների ուս. հաստատությունների հետ: Սարկավագական առաջին ձեռնադրությունը դպրանոցում եղել է 1992-ին: Վ. Հ. դ. առաջին շրջանավարտները (անդրանիկ ինը սարկավագներ) տվել է 1996-ին:

Դպրանոցի գործունեությանը զորակցում են Արարատյան հայրապետական թեմի ամերիկահայ բարերարները. 1998-ին հիմնվել է «Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց» հիմ-

նադրամը, Սևանի թերակղզում ընթանում են Ս. Աստվածածին եկեղեցու, Սևանի վանական համալիրի, հոգևոր դպրանոցի նոր մասնաշենքերի շին. աշխատանքները:

2000-ին դպրանոցում ուսանել է շուրջ 50 սան:

Անահիտ Անտոնյան

ՎԱՀԱՆ Ա ՍՅՈՒՆԵՑԻ [ծ.թ. անհտ – 972, գ. Ջորովանք (Վասպուրական նահանգի Տոսպ գավառ)], Ամենայն հայոց կաթողիկոս 968–969-ին: Սյունյաց նահանգի Բաղք գավառի գահակալ իշխան Ջևանշերի որդին, Ջագիկի թոռը: Հաջորդել է *Անանիա Ա Մոկացուն*: Ժամանակագրի կարծիքով, Վ. Ա Ս. հայրապետ. գահին բազմել է «Հրամանաւ Անանիայի (կաթողիկոսի), Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագաւորացն» ՆԻԵ (976) թվականին և վախճանվել 983-ին, ինչը թյուրիմացության արդյունք է: Այսպես են նշում նաև Գրիգոր Նարեկացու «Վարքի» հեղինակները: Պատմիչներ Սամուել Անեցու, Վարդան Վարդապետի և Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Վ. Ա Ս. գահակալել է ընդամենը մեկ կամ երկու տարի, իսկ ըստ Ասողիկի, Մատթեոս Ուռհայեցու և Ստեփանոս արք. Օրբելյանի՝ 5 տարի: Կրթությունն ստացել է *Վահանավանքի* դպրոցում, հորեղբոր՝ Վահանի հովանավորությամբ: Ապա, ընդունելով հոգևոր կոչում՝ օծվել է եպիսկոպոս, դարձել վանահայր (Վահանավանքում), իսկ Հակոբ Ա-ից հետո, 958-ից 6 տարի գլխավորել է Սյունյաց աթոռը, ընդարձակել նրա կալվածներն ու տնտեսությունը:

Վ. Ա Ս-ու գործունեությանը տրվել են հակասական գնահատականներ: Նրան մեծարանքով են ներկայացրել Ներսես Լամբրոնացին («Ատենաբանութիւն») և Ստեփանոս արք. Օրբելյանը («Պատմութիւն»), իսկ Մատթեոս Ուռհայեցին պարզապես գրում է՝ «լան ի բնաւիցս զերանելին Վահան», «սուրբ Հայրապետն Հայոց Վահան»: Ավանդապահ հայրերը նրան մեղադրել են *քաղկեդոնականությանը* հարելու մեջ: Նրանց կարծիքով՝ Հայոց հայրապետը հովանավորել է *պատկերապաշտությունը* և «ըստ Հոռոմոց սահմանին» կարգադրել է օգտագործել սրբապատկերներ (իկոնաներ) «և առանց կոնի ոչ մատուցաներ պատարագ»: Սկզբնաղբյուրների վկայությամբ, Վ. Ա Ս. ձգտել է Հայ եկեղեցին միավորել Հույն և Վրաց եկեղեցիների հետ, միության բովանդակությամբ նամակներ է հղել Մելիտինե քաղաքի Թեոդորոս մետրոպոլիտին և բյուզ. կայսր Հովհաննես Զմշկիկին՝ հավանաբար հետապնդելով քաղ. նպատակներ:

969-ին Անիում, Աշոտ Գ Ողորմած թագավորի մասնակցությամբ, տեղի է ունեցել եկեղեց. ժողով, որը քննարկել է Վ. Ա Ս-ուն հասցեագրված մեղադրանքները: Կաթողիկոսը չի մասնակցել այդ ժողովին և մեկնել է Վասպուրական՝ հանգրվան գտնելով Գագիկ Արծրունու որդի Համազասպ-Ապուսահլ թագավորի տանը: Եկեղեց. ժողովը գահընկեց է արել Վ. Ա Ս-ուն և նոր կաթողիկոս ընտրել Սևանի միաբանության վանահայր Ստեփանոսին (*Ստեփանոս Գ Սևանցի*): Երկփեղկված հայրապետ. աթոռի գահակալներն սկսել են միմյանց նզովագրեր հղել: Անորոշ վիճակին վերջ տալու նպատակով Վասպուրական է մեկնել պատվիրակություն՝ Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսի գլխավորությամբ, սակայն տեղ հասնելուն պես Համազասպ-Ապուսահլը կարգադրել է ձերբակալել պատվիրակության բոլոր անդամներին և, բացառությամբ Մովսես ու Բաբկեն վարդապետների, արգելափակել Աղթամար կղզում: 972-ին վախճանվել են երկու կաթողիկոսները: Հայոց կաթողիկոս է օծվել *Խաչիկ Ա Արշարունին*:

Վ. Ա Ս. շին. լայն գործունեություն է ծավալել հատկապես Սյունյաց աշխարհում. հիմնովին վերակառուցել է Վահանավանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր եկեղեցին, կառուցել գավիթն ու սյունասրահը, սեղանատունը, Տիգրանասարի ակունքներից կավե փողրակներով խմելու ջուր է բերել մինչև վանք, ընդլայնել Տաթևի ու մյուս վանքերի կալվածային տնտեսությունները՝ հատկապես իշխան. նվիրատվությունների միջոցով:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991: Ջամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (13–15-րդ դդ.), Ե., 1981:

Գրիգոր Գրիգորյան

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ, սուրբ Վահան Գողթնեցի [ծ. մոտ 700, Գողթն գավառ – նահ. 737, ք. Ռուծափ (Սերգիոպոլիս), Սիրիա], քրիստոնյա նահատակ, տոնելի: Որդին Գողթն գավառի իշխան Խոսրով Գողթնացու, որին արաբ. տիրապետության շրջանում Հայաստանի շուրջ 1200 իշխանների հետ, նենգ խաբեությամբ, Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում հավաքելով, այրել՝ կրակին են մատ-

ՎԱՀԱՆԱՎԱՆՔ նել արաբ հրոսակները (705-ին կամ 706-ին): Նախարար. այլ ընտանիքների հետ արաբները գերել և Դամասկոս են ուղարկել նաև մանուկ Վ. Գ-ուն: Դամասկոսում մահմեդականացրել են հայ մանուկներին՝ մահմեդ. կրոն ուսուցանելով: Այստեղ առաջադիմությամբ աչքի է ընկել Վ. Գ., որին կոչել են Վահաբ: Ուսումն ավարտելուց հետո նրան նշանակել են ամիրապետի ատենադպիր: Վ. Գ., «թեեւ բոլորովին իսլամացած և գրեթե արաբացած» (Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, 1997, էջ 197), սակայն տեղյակ էր իր քրիստոնյա իշխան. տոհմից սերված ու հայ լինելուն: Երբ *Հովհաննես Գ Օձնեցու* միջնորդությամբ 719-ին ընդհանուր ներում և վերադարձի իրավունք է շնորհվել գերյալ քրիստոնյաներին, Վ. Գ. ևս, պատճառաբանելով, որ կամենում է վերականգնել իր իշխան. իրավունքները Գողթն գավառում, Էոմեր (Օմար) ամիրապետից թույլտվություն է ստացել և վերադարձել Հայաստան, որտեղ վերստին ընդունել է քրիստոնեություն: Շրջել է վանքից վանք և ճգնել Շիրակ գավառում, ապա ամուսնացել է Սյունյաց իշխանի դստեր հետ՝ կամենալով վերջնականապես հաստատվել Հայաստանում: Սակայն Վ. Գ-ուն, որպես մահմեդականությունն ուրացածի, փնտրել է արաբ. իշխանությունը: Վ. Գ., Հիսուսին Տեր և Փրկիչ վկայելու և հանուն նրա իր արյունը թափելու հաստատ որոշմամբ, ինքնակամ մեկնել է Ռուծափ, ներկայացել ամիրապետին և խոստովանել քրիստոնեություն ընդունած լինելը: Անհողդողդ դավանել է Հիսուսին՝ որպես Աստծո Որդու և, արհամարհելով սպառնալիքներն ու չարչարանքները, մարտիրոսական պսակ ընդունել՝ գլխատմամբ: Հայսմավուրքները նրա մարտիրոսության օրը դնում են ապրիլի 14-ին, երկուշաբթի:

Հայ եկեղեցին ս. Վ. Գ-ու հիշատակը տոնում է «Ապայից» կոչվող տոների շարքում՝ Վարդավառից հետո 3-րդ կամ 4-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի կամ երեքշաբթի կամ հինգշաբթի օրերին և, տարեգրերի հետ կապված, նաև ուրիշ օրերի, իսկ երբեմն էլ՝ այլ սրբերի հիշատակի հետ: Նրան է ձոնված մի շարական, որը, ըստ ոմանց, հորինել է Վ. Գ-ու քույրը՝ *Խոսրովիդուխտը*. «...Որպես զքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ, կատարեցեր զընթացս քո արիաբար յազգացն հարաւայնոյ...»:

Գրկ. «Սոփերք հայկականք», հ. 13, Վնտ., 1854: Սուրբերու կեանքը, 3 հրտ., Բեյրութ, 1994: Հայ եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք [կազմ. Ռ. Մաթեւոսյան], Ս. Էջմիածին, 1999: *Памятники армянской агиографии, Е., 1973, с. 221–239.*

Քնարիկ Տեր-Դավթյան

ՎԱՀԱՆԱՎԱՆՔ, ՀՀ Սյունիքի մարզում, Կապան քաղաքից հարավ-արևմուտք, Տիգրանասարի լանջին: Հիմնադրել է Սյունյաց Նահանգի Բաղք գավառի գահակալ իշխան Ջաքիկի որդի Վահանը (նրա անունով էլ կոչվում է), կառուցել է գլխ. եկեղեցին՝ Ս. Գրիգորը (շին-յան ավարտը՝ 911-ին): Այն մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է, ճակատները «հայկ. խորշերով», կառուցված է սրբատաշ բազալտից: Արմ-ից կից գավիթը

Վահանավանքը (X–XI դդ.) հվ-արմ-ից

(ուղղանկյուն դահլիճ է, երեք թաղակիր կամարներով, գլխ. մուտքը հվ-ից է և բացվում է դեպի կից սյունասրահը, որը ձգվում է եկեղեցու և գավթի ողջ երկարությամբ) շինել է Վ-ի վանահայր և Սյունյաց մետրոպոլիտ Վահան եպիսկոպոսը XI դ. կեսին:

1046-ին Իշխանաց իշխան Գրիգորը (ապագա Սյունյաց թագավոր Գրիգոր Ա), ըստ շին. արձանագրության, վերակառուցել է Վ-ի գլխ. եկեղեցին, սրահը և գավիթը (արձանագրության մեջ՝ ժամատունը):

Վանական համալիրի հվ. կողմում, մուտքի թաղի վրա բարձրանում է 1086-ին Սյունյաց թագուհի Շահանդուխտ Բ-ի և նրա քույր Կատայի կառուցած երկհարկ, փոքրիկ, թաղածածկ եկեղեցին, որը հս-ից և արլ-ից ունի սյունազարդ պատշգամբ: Առաջին հարկում՝ դարպասի կողքին, փոքրիկ դամբարան է:

Վ. ունեցել է մոտ 100 միաբան, կից գործել է վանական դպրոցը, որտեղ ուսանելու են եկել Սյունիքի շատ գավառներից (դպրոցի սաներից էր ապագա կաթողիկոս *Վահան Ա Սյու-*

նեցին): Ըստ վիմագրի՝ Վ.-ի տարածքում եղել են ևս երկու եկեղեցիներ՝ Ս. Հարությունն և Ս. Սիոն, որոնց տեղադրությունը պարզված չէ: Վ. ունեցել է խոշոր կալվածքներ, սեփական գյուղեր, հանդեր ու արոտավայրեր:

Վ. հայտնի է նաև որպես դամբարանատուն. այստեղ են գտնվում Վահան իշխանի, Սահակ-Սևադա Բ-ի, Սոփի թագուհու, Իշխանաց իշխան Աշոտի («Աշոտիկի»), նրա թագակիր որդիներ Սմբատ Բ-ի և Գրիգոր Ա-ի, Վաչագան իշխանի մայր Խուշուշի դերեզմանները: 1966-ից Վ.-ում կատարվում են պեղումներ, 1978-ից՝ վերականգնման աշխատանքներ:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Ե., 1986: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Այունիքի դպրոցը, Ե., 1960: Գրիգորյան Գ., Վիմագրություններ Վահանավանքի 1970–1978 թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, № 2:

Գրիգոր Գրիգորյան

ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ, Վահրամ Վարդապետ Սեվլեռնցի (ծ. և մ. թթ. անհտ), XIII դարի աստվածաբան, իմաստասեր, պետական գործիչ: Ապրել և ստեղծագործել է Կիլիկիայի Հայկ. թագավորության հզորացման շրջանում, եղել Լևոն Գ թագավորի ատենադպիրը, արքունի գրասենյակի ղանցլերը: Կրթվել և վարդապետի աստիճանի է հասել Սև լեռների դպրոցներից մեկում: Կենսագր. այլ տվյալներ չեն պահպանվել: Վ. Ր. պաշտպանել է Հայ առաքելական և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների միավորման գաղափարը: Նրա անվան հետ է կապված XIII դ. հայ իմաստասիրության մեջ Արիստոտելի և *Դավիթ Անհաղթի* տեսական ավանդույթների վերակենդանացումը: Գրել է Արիստոտելի «Կատեգորիաներ» (հրտ. «Լուծմունք «Ստորոգութեանցն» Արիստոտէլի», 1967), «Մեկնության մասին» («Պերի արմէնիաս»), Պորփյուրի «Ներածության», Դավիթ Անհաղթի մեկնության («Պորփյուրի ներածության վերլուծություն»), *Գրիգոր Նյուսացու* «Մարդու կազմության մասին», *Դիոնիսիոս Արիոպագացու* «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկերի մեկնությունները (Մատենադարան, ձեռ. №№ 59, 631, 1683, ևն): Լևոն Գ թագավորի հանձնարարությամբ գրել է «Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց» պատմ. երկը (հրտ. 1859): Ուշադրավ է նաև Լևոն Գ-ի թագադրման կապակցությամբ արտասանած ընդարձակ ճառը («Արարատ», 1868, №№ 7, 12, 1869, № 1–5): Հեղինակ է նաև քարոզների և խրատների: Վ. Ր-ուն է վերագրվում «Լուծմունք Սահմանաց գրոց Դավիթ Անյաղթ փիլիսոփայի» և «Հարցմունք և պատասխանիք ի Գիրս Ծննդոց» աշխատությունները:

Վ. Ր-ու կրոնաբնազանցական հայացքների հիմքում ընկած է միաստվածության և Արարչագործության գաղափարը, ըստ որի, Աստված ոչնչից ստեղծել է ողջ տիեզերքը, կյանք պարգևել անշունչ և շնչավոր գոյացություններին: Արարչակարգն աստիճանակարգային, ներդաշնակ ու կատարյալ կառուցվածք ունի, որտեղ յուրաքանչյուր գոյացությանը նախասահմանված է որոշակի կարգավիճակ: Աստված ոչ միայն ստեղծել, այլև իմաստուն կերպով նախախնամում և կառավարում է աշխարհը: Անզուգական ու բացառիկ է մարդու տիեզերական կարգավիճակը, որն Արարչագործության գլուխգործոցն ու վերջնանպատակն է: Աստված նրան ստեղծել է իր պատկերով և նմանությամբ, օժտել բանական հոգով՝ շնորհել առավելություն մյուս արարածների նկատմամբ, որոնք ստեղծված են մարդու մարմն. ու հոգևոր կարիքները բավարարելու համար: Մարդն աստվածային-իմանալի և նյութական-զգալի աշխարհների շաղկապող օղակն է. բույսերի նման ունի տնկական հոգի, կենդանիների նման՝ զգայական հոգի և հրեշտակների նման՝ բանական հոգի: Հոգու այս երեք տեսակները մարդու մեջ «բնութեամբ միացեալք են յիրար»: Մարդը հոգու և մարմնի միասնություն է: Ծագումնաբան. առումով հոգու և մարմնի միջև առաջնայնության հարց չի կարող լինել, որովհետև դրանք ստեղծվել են միաժամանակ: Հոգին անմահական է ու անմահ, իսկ մարմինը՝ կազմված չորս տարրերից և ապականացու: Հոգին պատվավոր է մարմնից, քանի որ Աստծո պատկերն է, սակայն դա չի նշանակում, թե մարմինն արհամարհելի գոյացություն է: Հոգու և մարմնի հարաբերությունը պետք է հիմնված լինի արդարության սկզբունքի վրա:

Աստված մարդուն օժտել է ճանաչողական կարողություններով: Նա բանական քննությամբ՝ զգայություններով և բանականությամբ, ճանաչում է զգալի նյութ. աշխարհը, իսկ հավատի տեսությամբ՝ աստվածային աշխարհը: Շեշտելով մարդու իմացության ստացական բնույթը՝ Վ. Ր. քննադատում է բնածին գաղափարների մասին պլատոնյան տեսությունը: Հավատի և բանականության հարաբե-

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ բակցության հարցը վճռում է հավատի օգտին: Միևնույն հարցի վերաբերյալ երկու հակադիր ճշմարտություն չի կարող լինել. իմաստասերների դատողություններն այնքանով են ճշմարիտ, որքանով համապատասխանում են սուրբգրային հայտնություններին:

Իմաստասիր-տրամաբան. բնույթի հարցեր դիտարկելիս Վ. Ր. հետևել է Արիստոտելի և Դավիթ Անհաղթի տված լուծումներին: Նրա տեսական իմաստասիրության մեջ առանցքային ընդհանուր հասկացությունների (ունիվերսալիաների) հիմնահարցն է, որը դիտարկվել է երկու տեսանկյունից. մի դեպքում՝ իբրև աստվածային գաղափարների և արարված իրերի հարաբերության, մյուսում՝ իբրև իրերի մեջ ընդհանուրի և անհատականի, անհատ գոյացությունների և ընդհանուր հասկացությունների հարաբերակցության հարց: Մերժելով ընդհանուր էությունների՝ Աստծո բանականությունից և անհատ գոյացություններից անկախ և առանձին գոյությունը, Վ. Ր. գտնում է, որ ընդհանուրը իրերի մեջ գոյություն ունի հատկության, որակի կարգավիճակով: Դրանց ճանաչողության հիման վրա մտքում էանում է ընդհանուրը որպես այդպիսին: Վ. Ր. ընդունում է ընդհանուրի եռակի կեցության բանաձևը, ըստ որի, ընդհանուրը գոյություն ունի Աստծո գիտության մեջ՝ իբրև արարվելիք իրերի աննյութական նախատիպ, իրերի մեջ՝ իբրև դրանց հատկություն, և մարդկային բանականության մեջ՝ իբրև ընդհանուր հասկացություն:

Վ. Ր-ու մարդաբան. հայացքների հիմքում մարդու անձնիշխանության մասին քրիստ. դաղափարն է: Արարածներից միայն մարդն է, որ օժտված է կամքի ազատությամբ, բարու և չարի միջև ընտրություն կատարելու հնարավորությամբ: Առանց կամքի ազատության անհնար է պատկերացնել մարդու փրկության գործը: Վ. Ր. սկզբունքորեն մերժել է ճակատագրապաշտ. այն տեսությունները, որոնք կաշկանդում են մարդու ազատությունը, նրա գործողությունները կախման մեջ դնում արտաքին ուժերի ազդեցությունից: Աստվածային նախախնամությունը չի հակասում մարդու անձնիշխանության գաղափարին:

Վ. Ր-ու քաղաքագիտ. խորհրդածությունների կենտրոնում թագավորության առաջացման, նրա կանոնավոր գործառնության և ամրապնդման, թագավորի, իշխանների և հոգևորականների իրավունքներին ու պարտականություններին առնչվող հարցերն են: Նա տարբերակում է երկու կարգի թագավորություն՝ աստվածային և մարդկային: Աստված գերագույն թագավորն է, որի խնամքի տակ է գտնվում նաև մարդկային թագավորությունը: Թագավորությունը նա նմանեցրել է մարդկային օրգանիզմին, որտեղ յուրաքանչյուր անդամ կատարում է իրեն վերապահված գործառույթը: Թագավորի վարք ու բարքից, կառավարման հմտությունից շատ բան է կախված, քանզի «բարութիւն նոցա բազմաց, և չարութիւն յոլովից հասանէ»: Բարեպաշտությունը և հավատն առ Աստված այն առաքինություններից են, որոնք կարող են հզոր պահել պետությունը: Ուստի թագավորը պետք է լինի բարեպաշտ, իմաստուն, արդարամիտ, հոգ տանի հավատի ամրապնդման համար, հեռու մնա հեթանոս. նախապաշարմունքներից: Իշխանները նույնպես պետք է բարեպաշտ լինեն, քանզի հավատարմությունը երկնային թագավորին հաստատուն է դարձնում նվիրվածությունը երկրային թագավորին: Իշխանների նման հոգևորականները նույնպես պետք է հնազանդվեն իրենց երկրային թագավորին: Նրանց խնդիրն է մարդկանց «ի հնազանդութիւն յորդորել, ուսուցանել», աղոթել թագավորի համար, նրան ժամանակին հասցնել աստվածային օրենքները և «ծառայել մարմնաւոր Տեառն որպէս Աստուծոյ»:

Վ. Ր-ու հայացքները մեծապես ազդել են հետագա դարերի հայ աստվածաբանների և իմաստասերների, հատկապես *Հովհան Որոտնեցու* և *Գրիգոր Տաթևացու* աշխարհայացքի ձևավորման վրա:

Գրկ. Գրիգորյան Գ., Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Ե., 1969: Զաքարյան Ս., Վահրամ Բաբունի, Ե., 1995:

Սեյրան Զաքարյան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (1945–95-ին՝ Էջմիածին), քաղաք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում, Երևանից 20 *կմ* արևմուտք: Ամենայն հայոց կաթողիկոսության աթոռանիստը: Վ. է կոչվել Վաղարշ Ա Արշակունի թագավորի (117–140) անունով, որը պարսպապատել ու կառուցումներ է կատարել քաղաքում՝ դարձնելով արքայական երկրորդ աթոռանիստը Արտաշատից հետո: Քաղաքի դերը մեծացել է քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակվելուց (301) հետո, երբ այն

դարձել է Հայաստանում քրիստ. կրոնի գլխ. կենտրոնը և ձեռք բերել հոգևոր-մշակութ. խոշոր նշանակություն: Ագաթանգեղոսի վկայությամբ, *Գրիգոր Ա Լուսավորչին* տեսիլք է երևացել. Հիսուս Քրիստոսն իջել է Վ. և ձեռքի ոսկե ուռով ցույց տվել այն վայրը, որտեղ, ի հիշատակ ս. *Հռիփսիմյանց կույսերի* նահատակության, պետք է կառուցվեր «տուն աղօթից»: Կատարելով Աստծո կամքը՝ Գրիգոր Ա Լուսավորիչը *Տրդատ Գ* Թագավորի, նախարարների ու նոր կրոնի նվիրյալների օգնությամբ Սանդարամետի մեհյանի տեղում հիմնել է (301–303) Կաթողիկե եկեղեցի (տես *Էջմիածնի Մայր տաճար*), Հայոց քահանայապետությունը և Ս. Էջմիածնի միաբանությունը: Էջմիածին («Էջ Միածնի որդւոյ Աստուծոյ» կամ «Էջ Միածինն») անունը գործածության մեջ է մտել XIII–XV դարերից: Իսկ ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակման վայրում, Վ.-ի հս.-արլ. կողմում Գրիգոր Ա Լուսավորիչը կառուցել է Ս. Հռիփսիմյանց վկայարանը կամ հանգստարանը: Սկսած IV դարից (որոշ ընդհատումներով) Վ. ունեցել է հոգևոր-մշակութ. հարուստ կյանք, եղել ոչ միայն կրոնական կեղեց., այլև հայ մշակույթի, դպրության, դրչության կենտրոն, իսկ Ս. Էջմիածնի տաճարը, անկախ կաթողիկոս. աթոռանիստի տեղափոխություններից (տես *Կաթողիկոսություն ամենայն հայոց*) պահպանել է Մայր տաճարի առաջնային նշանակությունը:

Դեռևս Գրիգոր Ա Լուսավորչի կաթողիկոսության օրոք կառուցվել են հայրապետանոց, միաբանների և սպասավորների կացարան (V դարից հայտնի է «Սուրենյանց անապատ» անունով), հոգևորականներ պատրաստելու և նրանց կրթելու համար քաղաքում բացվել են հուն. և ասոր. դպրոցներ: Վ. հոգևոր-մշակութ. մեծ վերելք է ապրել հատկապես V դ., երբ բուռն գործունեություն են ծավալել Հայոց կաթողիկոս *Սահակ Ա Պարթևն* ու *Մեսրոպ Մաշտոցը*, որոնք *Վռամշապուհ* Թագավորի (388–413) սատարմամբ բացել են մեսրոպատառ առաջին դպրոցը (տես *Էջմիածնի դպրոց*): Թեև 484-ին կաթողիկոսարանը տեղափոխվել է Դվին, սակայն հոգևոր-մշակութ. կյանքը Վ.-ում շարունակել է ծաղկում ապրել: 484–486-ին Վահան Մամիկոնյանը հիմնովին նորոգել է վանքը, իսկ 486–491-ին վանքի հոգաբարձու *Ղազար Փարպեցին* հիմնադրել է Հայոց առաջին մատենադարանը: Այնուհետև Վ. դարձել է հայ դրչության նշանավոր կենտրոն, որտեղ տարբեր ժամանակներում գրվել, ընդօրինակվել ու ծաղկվել են բազմաթիվ ձեռագրեր: Հոգևոր-մշակութ. և շին. մեծ աշխատանքներ են ծավալվել VII դ., հատկապես՝ *Կոմիտաս Ա Աղցեցի, Եզր Ա Փառաժնակերտցի, Ներսես Գ Տայեցի* Հայոց կաթողիկոսների օրոք: 618-ին նորոգվել է Կաթողիկեն և կառուցվել Ս. Հռիփսիմե եկեղեցին, 630-ին՝ Ս. Գայանե եկեղեցին և քահանայական դասի կացարանը, 641–661-ին՝ *Զվարթնոցը*, նոր Վեհարան, բաղնիք, ջրհոր, հնձաններ: Սկսած VII դ. կեսից՝ արաբ., այնուհետև՝ սելջուկյան, մոնղոլ-թաթար. արշավանքների հետևանքով Վ. վերածվել է ավերված ու լքված գյուղաքաղաքի, կանգ է առել հոգևոր ու տնտ. կյանքը: Անշուք ու ամայի վիճակը շարունակվել է մինչև XV դ. կեսը, երբ 1441-ին գումարված *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովը* Ամենայն հայոց կաթողիկոսությունը Սսից (Կիլիկիա) տեղափոխել ու վերահաստատել է Վ.-ում: Վ. կրկին դարձել է համայն հայության հոգևոր-կրոն. կենտրոնը և Հայոց կաթողիկոսների աթոռանիստը, որպիսին մնում է առ այսօր: Հաստատվելով Վ.-ում՝ Հայոց կաթողիկոսները հնարավորություն են ստացել անձամբ հետևելու քաղաքի ներքին կյանքին, աշխուժացնելու միաբանության գործունեությունը, ծավալելու շին. աշխատանքներ: Երբ կաթողիկոս *Գրիգոր Ժ Ջալալբեկյանցը* գնել է Վ. և դարձրել վանքապատկան կալված (որպիսին մնացել է մինչև 1920-ը), կաթողիկոսարանն ու միաբանությունը սկսել են խրախուսել ու հովանավորել գյուղատնտեսության զարգացումը: Տնտ. աշխուժացումը որոշ ժամանակով կասեցվել է XVII դ. սկզբին՝ պարսից շահ Աբբաս Ի-ի արշավանքով: Տասնյակ հազարավոր հայերի տեղահանելուց հետո, հայրենիքին կապող նրանց հոգևոր թելերը կտրելու նպատակով շահ Աբբաս Ի-ը որոշել է Էջմիածնի տաճարը քանդել, քարերը տեղափոխել Սպահան և այնտեղ մի նոր «Էջմիածին» կառուցել: Շահի հրամանով Թահմազ Ղուլի խանը տեղահանել է տաճարի 15 որմերը, ինչպես նաև Սպահան է փոխադրել *Լուսավորչի Աջը*, մասունքներ ու սրբազան իրեր: Միայն Մայր տաճարի բոլոր քարերի տեղափոխության դժվարությունը Ս. Էջմիածինը փրկել է կործանումից: Թալանված, անբնակ ու անշուք են դարձել նաև Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերը, որոնց ավերյալ

վիճակը նկարագրել է պատմիչ Առաքել Դավրիժեցին: Քաղաքի և Մայր աթոռի միաբանական կյանքում աշխուժություն է սկսվել XVII դ. 2-րդ քառորդից, երբ Մայր տաճարի լուսարար Մովսես վարդապետը (հետագայում՝ կաթողիկոս *Մովսես Գ Տաթևացի*) իր մի խումբ համախոհների և սաների հետ ձեռնամուխ է եղել քաղաքի գլխ. սրբատեղիների վերականգնմանը: Մովսես Գ Տաթևացու հայրապետության օրոք նորոգվել են վանքերը, կատարվել նոր կառուցումներ՝ փուռ, սեղանատուն, տնտեսատուն, պարսպապատվել Մայր տաճարը: Շին. մեծ աշխատանքներ է կատարել նաև *Փիլիպոս Ա Աղբակեցի* կաթողիկոսը: Կառուցել է երկու գմբեթավոր ձիթհանք, քանքան (ստորերկրյա ջրերը հավաքելու և խոնավությունը վերացնելու համար) ևն: Շին. աշխատանքները գլխավորել է Ուստա Գրիգորը, որը 1639-ին արձանագրություն է թողել Տրդատա դռան վրա: Կաթողիկոսը ձեռնարկել է նաև Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերի նորոգումը, որոնց գմբեթներին կրկին հառնել է «տերունական խաչի նշանը»: Նրա ջանքերով 1640-ին վերաբացվել է Էջմիածնի դպրոցը՝ Վարդապետարան անունով: Ավելի վաղ՝ 1635–37-ին, Վ. էր փոխադրվել Հովհաննավանքի դպրատունը: Դպրոցը ծաղկում է ապրել, երբ այնտեղ սկսել են դասավանդել *Ոսկան Երևանցին, Սիմեոն Ջուղայեցին* և *Ստեփանոս Լեհացին*: 1654-ին Փիլիպոս Ա Աղբակեցին ձեռնարկել է Մայր տաճարի զանգակատան շինարարությունը, որն ավարտվել է 1658-ին՝ *Հակոբ Դ Ջուղայեցու* օրոք: 1694-ին իշխան Աղամալ Շոռոթեցու միջոցներով կառուցվել է *Շողակաթ վանքը*, իսկ *Աստվածատուր Ա Համադանցու* օրոք *Նազաշ Հովնաթանը* ստեղծել է Մայր տաճարի որմնանկարները: Պատկերազարդումներն ավարտել են նրա որդիները՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյանները, *Աբրահամ Գ Կրետացու* օրոք: Վերջինս կարողացել է ոչ միայն Վ. զերծ պահել Հայաստանում թուրք-պարսկ. պատերազմի ավերումներից, այլև Նադիր շահի՝ Վ. այցելության ժամանակ (1735, հունիս) որոշ արտոնություններ է ստացել քաղաքի համար: *Ղազար Ա Ջահկեցու* օրոք կառուցվել են Ղազարապատի հյուրանոցը (30-ից ավելի սենյակներով), պարտեզ, ջրավազան ևն: Վ.-ում շին. մեծ աշխատանքներ են կատարվել կաթողիկոս *Սիմեոն Ա Երևանցու* օրոք, աշխուժացել է ուս., հոգևոր-մշակութ. կյանքը: Սիմեոն Ա Երևանցին քանդել է տվել Մայր տաճարի հարակից շինությունները և վանքն առանձնացրել Վ.-ից: Ազատված ընդարձակ տարածությունը շրջափակել է պարիսպներով (արմ.-ից արլ. 275 *մ* երկարությամբ և հս.-ից հվ. 235 *մ* լայնությամբ), որոնք 4 կողմերում ունեցել են կամարակապ 4 դռներ և ևս 6 դռներ՝ տարբեր կողմերում: Իսկ Վ.-ի համար կառուցել է նոր եկեղեցի՝ Ս. Աստվածածինը: 1763-ին հիմնվել է երկու վարժարան, որոնց ուսուցիչ-տեսուչ է նշանակվել *Պետրոս Նախիջևանցի* եպիսկոպոսը: Այդ վարժարանները, որոնք փաստորեն Էջմիածնի դպրոցի բաժանմունքներն էին, այնուհետև հայտնի են դարձել Էջմիածնի ժառանգավորաց դպրոց անունով: 1771-ին Սիմեոն Ա Երևանցին Գ. Խոջաջանյանցի (Զաքիկյան) միջոցներով հիմնադրել է նաև Հայաստանում առաջին տպարանը, որտեղ 1772-ին լույս է տեսել Հայաստանում առաջին գիրքը՝ իր իսկ «Գիրք աղօթից որ կոչի Զբօսարան հոգեւոր»-ը: 1889-ին կառուցվել է տպարանի նոր շենքը, համալրվել տառաձուլական, տպագր. նոր մեքենաներով, հարստացվել տարբեր լեզուների տառատեսակներով: 1776-ին Վ.-ում Սիմեոն Ա Երևանցին հիմնել է թղթի առաջին գործարանը: Կաթողիկոսը Վ. է հրավիրել Հովնաթան Հովնաթանյանին, որը 1769-ից սկսել է Մայր տաճարի նոր պատկերազարդումը և ավարտել *Ղուկաս Ա Կարնեցու* օրոք: Վերջինս ավարտին է հասցրել տաճարի հիմն. վերակառուցումը: XVIII դ. Վ.-ի հոգևոր., մշակութ., տնտ., քաղ. նշանակությունը և դերը Հայաստանի կյանքում այնքան է մեծացել, որ երբ XVIII դ. վերջին Հովսեփ արք. *Արղությանը* ռուս. կառավարության հետ բանակցել է Հայոց անկախ թագավորությունը վերականգնելու նպատակով, որպես ապագա մայրաքաղաք առաջարկել է Անին կամ Վ.:

XIX դ. սկզբին Վ. գտնվել է ռուս-պարսկ. պատերազմի (1804–13) առաջավոր գծում: 1804-ին ռուս. բանակը գեներալ Ցիցիանովի գլխավորությամբ պաշարել է Երևանը, բայց, չկարողանալով գրավել, ստիպված վերադարձել է Թիֆլիս՝ նահանջի ճանապարհին կողոպտելով Ս. Էջմիածինը (արժեքավոր իրերի ու եկեղեց. սպասքի մի մասը վերադարձվել է պատերազմից հետո): Դրանից մի քանի օր անց Էջմիածին այցելած Իրանի Ֆաթալի շահը կարգի է բերել վանքն ու շրջակայքը, ռուսների

հասցրած վնասի չափերը տեսնելով՝ հրամայել առժամանակ հարկերից ազատել կաթողիկոսարանն ու Վ.: 1806-ի սեպտ. ռուս. զորքերը կրկին գրավել են Վ., սակայն 1813-ի Գյուլիստանի պայմանագրով ստիպված նորից զիջել պարսիկներին: XIX դ. 1-ին տասնամյակներին, չնայած ավերածություններին ու կողոպուտներին, աշխուժացել է Վ.-ի տնտ. և առևտր. կյանքը, զգալիորեն համալրվել է կաթողիկոս. գանձարանը՝ շնորհիվ նաև Արմ. Հայաստանում ունեցած հսկայական տիրույթների և նվիրատվությունների:

1828-ին Արլ. Հայաստանի կազմում անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ՝ Վ. մնացել է վանքապատկան, և ռուս. կառավարությունը, նախկին իշխանությունների նման, նույնպես ճանաչել է Մայր աթոռի միաբանության իրավունքները Վ.-ի վրա: Չնայած XIX դ. կեսից Վ. դարձել է Երևանի նահանգի Էջմիածնի վիճակի կենտրոնը, այնուամենայնիվ բուն քաղաքը կառավարել են կաթողիկոսարանն ու միաբանությունը՝ *Սինոդի* հետ մեկտեղ, որը սկսել էր գործել 1837-ից: XIX դ. 1-ին կեսին Վ.-ում նշանակալից աշխատանքներ են կատարվել *Եփրեմ Ա Ջորագեղցի, Հովհաննես Ը Կարբեցի և Ներսես Ե Աշտարակեցի* կաթողիկոսների օրոք: 1833-ին կանգնեցվել է հուշարձան 1827-ի Օշականի ճակատամարտում ընկած ռուս զինվորների հիշատակին, 1847-ին Ներսես Ե Աշտարակեցին սկսել է ձկնաբուծ. լճակի շինարարությունը, ընդլայնել (50 աշակերտի համար) իր իսկ հիմնադրած (1813) վարժարանը, վերակառուցվել է քաղաքային շուկան, հոդ տարվել քաղաքը խմելու ջրով ապահովելու մասին ևն: Կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* օրոք, 1868-ի մայիսին լույս է տեսել Հայաստանում առաջին պարբերականի՝ Մայր աթոռի պաշտոնաթերթ «*Արարատ*» ամսագրի առաջին համարը: 1869-ի մայիսի 25-ին հիմնադրվել է *Գևորգյան ճեմարանը*, որի բացումը կատարվել է 1874-ի սեպտ. 28-ին: Նույն թվին հիմնադրվել է Էջմիածնի թանգարանը: Ընդլայնվել է գրատուն-մատենադարանը, 1879-ին բացվել նոր ընթերցարանը: 1872-ին սկսել է գործել Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը (տես *Հռիփսիմյան օրիորդաց դպրոցներ*), որի շենքը կառուցվել է Մայր աթոռի ծախսերով: Կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցու* (Խրիմյան Հայրիկ) օրոք վանքում անցկացվել է էլեկտրական լուսավորություն: 1910-ին մեծահարուստ Ալ. Մանթաշյանի նվիրատվությամբ սկսվել է նոր Վեհարանի շինարարությունը:

XIX դ. վերջին Վ. վերստին դարձել է հայ հոգևոր-եկեղեց. և մշակութ. կյանքի կենտրոններից: Հրատարակվել են կրոն., աստվածաբան., հայագիտ. գրքեր և ուսումնասիրություններ: Վ.-ում ապրել ու գործել են *Կոմիտասը*, Հովհ. Հովհաննիսյանը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ե. Թադևոսյանը, Մ. Եկմալյանը, Գ. *Տեր-Մկրտչյանը* (Միաբան), Կ. *Տեր-Մկրտչյանը*, Գարեգին վրդ. Հովսեփյանը (*Գարեգին Ա Հովսեփյան*) և ուրիշներ:

Դարեր շարունակ Վ. եղել է պետականությունից զրկված, աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի ազգային-քաղ. կենտրոնը՝ շնորհիվ հայոց կյանքում Մայր աթոռի և Հայ եկեղեցու ազգահավաք, ազգապահպան դերի: Վ.-ում և Հայոց կաթողիկոսների ամմիջական մասնակցությամբ են լուծվել հայ ժողովրդի համար կենսական բազմաթիվ խնդիրներ: Վ. բազմիցս եղել է ինչպես եկեղեց. ժողովների գումարման (տես *Վաղարշապատի եկեղեցական ժողովներ*), այնպես էլ՝ ազատագր. շարժման կենտրոն (տես *Էջմիածնի ժողովներ 1547, 1677*):

Առաջին համաշխ. պատերազմի տարիներին (1914–18) Վ. գործուն դեր է խաղացել հայ ժողովրդի քաղ. պայքարում. այստեղից են հայկ. կամավոր. գնդերը, կաթողիկոսի օրհնությունը ստանալով, մեկնել ռազմաճակատ: Ազգային-ազատագր. պայքարի կենտրոն լինելու հետ մեկտեղ Վ. դարձել էր Մեծ եղեռնից մազապուրծ գաղթականների ու որբերի, ռազմաճակատից բերված հարյուրավոր վիրավորների հանգրվան: Այստեղ այդ տարիներին կազմակերպվել են հիվանդանոցներ ու որբանոցներ, գաղթականներին օգնող կոմիտեներ, մարդասիր. և բարեգործ. միություններ:

1918-ի մայիսին, Սարդարապատի ճակատամարտի օրերին, Վ. վճռորոշ դեր է խաղացել հայ ժողովրդի ճակատագրում: Մայր աթոռի բազմաթիվ միաբաններ, քաղաքի մտավորականներ ու աշխարհազորայիններ մասնակցել են Սարդարապատի ճակատամարտին, իսկ կաթողիկոս *Գևորգ Ե Սուրենյանցը*, չնայած քաղ. և զինվոր. ղեկավարության խնդրանքին, հրաժարվել է ապահովության նկատառումներով հեռանալ վանքից:

Առաջին հանրապետության տարիներին (1918–20) կրկին բարձրացել է Վ.-ի և Մայր

աթոռի դերը, սակայն խորհրդ. կարգեր հաստատվելուց (1920) հետո փորձեր են արվել նսեմացնելու նրանց նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Վանքը և միաբանությունը մեծապես տուժել են ստալինյան հալածանքներից: Սակայն այդ ծանր պայմաններում հայոց կաթողիկոսները հնարավորին չափ գործուն են պահել Վ.-ի հոգևոր-եկեղեց. կյանքը, կատարել են շին. աշխատանքներ: Վ. դարձել է սփյուռքահայությանը Հայաստան բերող հիմն. ազդակներից մեկը: 1944-ից հրատարակվել է Մայր աթոռի պաշտոնական պարբերականը՝ «*Էջմիածին*» ամսագիրը, 1945-ին *Գևորգ Զ Զորեքէյանի* նախաձեռնությամբ բացվել է *Էջմիածնի հոգևոր ճեմարանը*: 1950–60-ական թթ. նորոգվել են Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերը, բարեկարգվել Զվարթնոցի շրջակայքը: *Վազգեն Ա Պալճյան* կաթողիկոսի նախաձեռնությամբ մեծ շինարարություն է ծավալվել Ս. Էջմիածնի վանքում: Հիմնովին նորոգվել է Մայր տաճարը, վերականգնվել են որմնանկարները, 1962-ին ավարտվել է նոր Վեհարանի վերաշինությունը, 1968-ին նորոգվել է հին Վեհարանը և վերածվել թանգարանի, 1974-ին կառուցվել է սեղանատունը, 1978-ին՝ վանատունը, 1982-ին՝ Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը: Բացվել են հուշաղբյուրներ, տեղադրվել խաչքարեր: *Գարեգին Ա Սարգիսյան* կաթողիկոսի օրոք Մայր աթոռի տպարանում տպագրվել են կրոն., աստվածաբան., հայագիտ. մեծարժեք աշխատություններ, Գևորգյան ճեմարանի շենքը կրկին վերադարձվել է Մայր աթոռի տնօրինությանը: *Գարեգին Բ Ներսիսյան* կաթողիկոսի գահակալությամբ աշխուժացել են Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքները, բարեկարգվել է վանքի շրջակայքը, ավարտվել է Բաց խորանի շինարարությունը:

Գրկ. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1983: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1–3, ԿՊ-Երուսաղեմ, 1912–27: Շահխաթունյան Հ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եվ հինգ գաւառացն Արարատայ, հ. 1,2, Էջմիածին, 1842: Էփրիկյան Ս., Ս. Էջմիածին 303–1903, Վնտ., 1903: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 2, Ե., 1948: Հարությունյան Վ., Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, 1988: Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Ե., 1995:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, գումարվել են IV–V դարերում, Վաղարշապատ քաղաքում, դավանական, եկեղեցավարչական կարևոր խնդիրների քննարկման համար (կայացել է չորս ժողով):

Ըստ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու, առաջին ժողովը 325-ին հրավիրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը* որդու՝ Արիստակեսի՝ 325-ի *Նիկիայի Ա տիեզերական ժողովից* վերադառնալուց հետո: Ժողովն ընդունել է Նիկիայի *Հավատո հանգանակը* և 20 կանոնները՝ Գրիգոր Ա Լուսավորչի որոշ հավելումներով:

Երկրորդ ժողովը, որի մասին վկայում է Հովհաննես Ե Դրասխանակերտցին (X դ.), գումարվել է 366-ին՝ Հայոց թագավոր Արշակ Բ-ի նախաձեռնությամբ և *Ներսես Ա Մեծ* կաթողիկոսի նախագահությամբ: Քննարկվել է Հայոց կաթողիկոսության՝ Կեսարիայի աթոռից անջատելու և անկախ ճանաչելու հարցը: Այն իր վերջնական լուծումն է ստացել Պապ թագավորի օրոք՝ 372-ին, երբ վերջինս *Շահակ Ա Մանազկերտցուն* ձեռնադրման չի ուղարկել Կեսարիա:

Երրորդ ժողովը, որը գումարվել է 402 կամ 403-ին՝ *Մեսրոպ Մաշտոցի* և կաթողիկոս *Սահակ Ա Պարթևի* նախաձեռնությամբ, վճռել է Հայաստանում օգտագործվող հուն. և ասոր. դպրությունները փոխարինել հայկականով և այդ ծրագրի իրականացման նպատակով արքունի դիվանապետ Վահրիճին ուղարկել Եդեսիա՝ բերելու դանիելյան նշանագրերը:

Չորրորդ ժողովը գումարվել է 426-ին. հրավիրել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Ա Պարթևը՝ քննելու և հաստատելու Հայ եկեղեցու հայերեն նոր գրով կազմված կանոնները, որոնք հիմնականում մշակվել էին առաջին ժողովում: Հաստատվել են Սահակ Ա Պարթևի կազմած կանոնները, որտեղ սահմանված էին եպիսկոպոսների, քահանաների և վանականների պարտականությունները:

Մի շարք ուսումնասիրողներ *Բաբկեն Ա Ոթմսեցի* կաթողիկոսի 506-ին Դվինում հրավիրած ժողովը սխալմամբ համարել են Վաղարշապատի հինգերորդ ժողով՝ գումարված 491-ին: Վ. ե. ժ-ում կանոնական որոշումներ չեն ընդունվել:

Գրկ. Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. 1, Ե., 1964: Մխիթարյանց Ա., Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1874:

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Վանական Վարդապետ Տավուշեցի (1181, Ուտիք

նահանգի Տավուշ գավառ – 1251), աստվածաբան, մեկնիչ, մատենագիր, մանկավարժ, պատմագիր: Նախն. կրթությունն ստացել է ծննդավայրում, եղբոր՝ կուսակրոն քահանա Պողոսի մոտ: Ուսումնառությունը շարունակել է Նոր Գետիկի բարձրագույն դպրոցում: 1201-ին ձեռնադրվել է քահանա, դարձել *Մխիթար Գոշի* աշակերտն ու գործի շարունակողը: Ուսուցչի հետ մասնակցել է Լոռեի (1204) և Անիի (1207) եկեղեց. ժողովներին և շարադրել դրանց պատմությունը, որը մեզ չի հասել: Վ. Վ. վարդապետ. աստիճանը ստացել է Մխիթար Գոշից՝ 1207–08-ին, վերադարձել Տավուշ և գիտամանկավարժ. գործունեություն ծավալել հայրենի գավառում: Մխիթար Գոշի մահից (1213) հետո համարվել է Հայաստանի ամենահեղինակավոր աստվածաբանն ու գիտնական վարդապետը: Ժողովրդի եռանդուն աջակցությամբ հիմնադրել է *Խորանաշատի վանքն* ու ուսումնագիտ. դպրոցը, որը շուտով մեծ հռչակ է ձեռք բերել և դարձել Հայաստանի հեղինակավոր վարդապետարաններից մեկը: 1229-ին, երբ Ջալալ էդ Դինի հրոսակներն ավերել են Խորանաշատը, Վ. Վ. աշակերտների հետ ապաստանել է Տավուշ բերդի հվ. կողմում գտնվող Լորուտ գյուղին մերձակա մի բարձունքում, որի ստորոտին իր կառուցած փոքրիկ եկեղեցում շարունակել է գիտամանկավարժ. գործունեությունը: 1235–36-ին մոնղոլներն ավերել են Վ. Վ-ի դպրոցը, գերեվարել նրան և աշակերտներին: Մի քանի ամիս անց Գագ բերդի բնակիչները 80 դահեկան փրկագնով գերությունից ազատել են Վ. Վ-ին: Նա նորոգել է Խորանաշատի վանքը և վերսկսել գործունեությունը: 1238-ին գնացել է Տփղիս, այնտեղից Խորանաշատ է բերել գերվելիս մոնղոլների խլած երկու արծաթակազմ Ավետարաններից մեկը, որը նվաճողներից գնել էին տփղիսցիները:

1240-ին Ներքին Խաչենի իշխան *Հասան Ջալալ Դոլայի* հրավերով մի խումբ բարեբնապետների հետ մասնակցել է *Գանձասարի վանքի* օծմանը և թողել արձանագրություն: 1246-ին Խորանաշատում Վ. Վ-ին այցելել են Հայոց կաթողիկոս *Կոստանդին Ա Բարձրբերդցին* և Հայոց Արևելից Կողմանց կաթողիկոս Ներսեսը (1235–62):

Վ. Վ-ին են աշակերտել *Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին*, Գրիգոր Ակներցին, Սոսթենեսը և մշակութ. ու քաղ. այլ նշանավոր գործիչներ: Վ. Վ-ի գրական ժառանգությունը հարուստ է ու բազմաբովանդակ: Հավանաբար նրա կոթողային աշխատությունը եղել է «Պատմությունը», որը չի պահպանվել: Ըստ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու, այն ընդգրկել է Հայաստանի ամբողջական պատմությունը՝ սկզբից մինչև հեղինակի ապրած օրերը: Վ. Վ. գրել է մեկնություններ: Ամենածավալունը Հոբի գրքի մեկնությունն է («Մեկնութիւն Յոբայ»), որ Հիսիքիոսի, *Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու* և ուրիշների երկերից արված քաղագրություն է: Առավել ուշագրավ է «Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի» («Ճռաքաղ», 1858) երկը, որը բառական մեկնություններից բացի պարունակում է նաև հետաքրքիր այլաբանություններ: Նշանավոր է հատկապես Ամբակում մարգարեի «Տէր զլուր քո լուայ» աղոթքի մեկնությունը: Որոշակի արժեք ունեն նաև «Համեմատութիւն Հին Կտակարանայ ի Նորս», «Տեսութիւն շարականին Ուրախացիր պսակ կուսից» և «Մեկնութիւն սաղմոսին Այս ծով Մեծ» փոքրածավալ մեկնությունները: «Խրատ դաւանութեան» երկը գրվել է XIII դ. կեսին սկիզբ առած հռոմեա-բյուզ. դավանաբան. մի վեճի առթիվ՝ կապված Ս. Հոգու բխման հարցի հետ (Ինոկենտիոս IV պապը դիմել էր նաև Հայ եկեղեցուն): Գրությունը ներառված է Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ: Վ. Վ-ի «Պատճառք վասն առաջաւորաց պահոց» երկը ուշագրավ է այնտեղ պահպանված միջնադարյան զրույց-ավանդություններով: «Յաղագս տարեմտին» ճառը (նախատեսված է եղել Ամանորին եկեղեցիներում կարդալու համար) Վ. Վ. գրել է ժողովրդին աստղաբաշխության և տոմարագիտության (տարվա, ամիսների անունների, Արեգակի, Լուսնի, մոլորակների շարժման, մի շարք ժողովուրդների տոմարների) մասին գիտելիք տալու նպատակով: Օգտվելով *Անանիա Շիրակացուց*՝ նա ճիշտ է բացատրում Արեգակի և Լուսնի խավարումների պատճառները: Այդ երկում պահպանվել է նաև Հայոց Արտավազդ Ա արքայի մասին առասպելի տարբերակներից մեկը: Հեղինակը փորձել է նաև ստուգաբանել հայկ. ամսանունները: Վ. Վ-ի պահպանված գործերից ամենաարժեքավորն է «Հարցմունք և պատասխանիքը» (Մատենադարան, ձեռ. № 5611), որը խիստ գործածական է եղել միջնադարում և հայտնի է մի քանի

ՎԱՆԱԿԱՆ. տասնյակ ընդօրինակություններով (գրիչներն ու պատվիրատուները խմբագրել են ու համառոտել, առանձնացրել որոշ «հարցախմբեր», որոնք հետագայում սխալմամբ ընկալվել են որպես ինքնուրույն գործեր): Երկը բավական ծավալուն է և ընդգրկում է բոլոր այն գիտելիքները, որ ուսման սկզբ. շրջանում պարտավոր էր ձեռք բերել նրա վարդապետարանի աշակերտը: Այն փաստորեն դպրոցի ուս. ծրագրի համառոտ ամփոփումն էր և իր ժամանակի հանրագիտական բառարանը (ամփոփում էր XIII դ. հայ իրականության պատկերացումներն ու իմացությունը պատմության, ազգագրության, հավատալիքների, իմաստասիրության, մատենագրության, մատենագիտության, կենսաբանության, բուսաբանության, բժշկագիտության, աստղաբաշխության, երաժշտագիտության, բառագիտության, քերականագիտության, դավանաբանության, աստվածաբանության և այլնի վերաբերյալ): Ուշադրավ են աղվանական ցեղերին և լեզուներին վերաբերող հաղորդումները: Շարադրված է գրեթե խոսակցական, միջին հայերենով և այդ շրջանի հայոց լեզվի ուսումնասիրման կարևոր աղբյուր է: Հայսմավուրքային ժողովածուի հայացումը, նրան ազգային նկարագիր տալն ու ազգապահպանման պահանջներին հարմարեցնելը սերտորեն կապված են Վ. Վ-ի անվան հետ: Սույն ժողովածուի երկու խմբագրությունների հեղինակները՝ Խաչենի արքեպիսկոպոս Տեր Իսրայելը և Կիրակոս Գանձակեցին, նրա աշակերտներն են: Ընդ որում, այդ աշխատանքը Տեր Իսրայելը կատարել է Վ. Վ-ի պատվերով:

Վ. Վ. գործուն մասնակցություն է ունեցել իր ժամանակի դավանաբան. կնճռոտ հարցերի լուծմանը: 1250-ին բանադրել է Դավիթ Ծարեցու XIII դ. 40–50-ական թթ. գլխավորած աղանդավոր. շարժման մասնակիցներին: Նրա դեմ գրել է մեղադրական թուղթ՝ «Թուղթ առ Դաւիթ մոլորեցուցիչ» վերնագրով, որը չի պահպանվել: Վ. Վ-ի մատենագրությունը դեռևս բավարար ուսումնասիրված և մեկնաբանված չէ:

Իր կտակի համաձայն՝ Վ. Վ. թաղվել է Խորանաշատի մերձակայքում գտնվող աղքատների գերեզմանոցում:

Երկ. Յաղագս տարեմտին, «Գիտական նյութերի ժող.», հ. 1, Ե., 1941, էջ 151–169: Վանական վարդապետին ասացեալ՝ բան հաւատալի ազգիս մերում, աշխատասիր. Մ. Մութաֆյանի, «Շողակաթ», 1995, էջ 162–163:

Գրկ. Վարդան Վարդապետ Արեւելցի, Հաւաքումն պատմութեան, Վնտ., 1862: Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Ոսկյան Հ., Յովհաննէս Վանական և իւր դպրոցը, Վնն., 1922: Շահնազարյան Ա., Վահրամյանների իշխանությունը, Ե., 1990:

Արտաշես Շահնազարյան

ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, աշխարհիկ կենցաղավարությունը մերժած, պարտադիր կուսակրոն կյանքով ապրող և որոշակի կանոնակարգի ենթարկվող անձանց կրոնական կամավոր ընկերակցություն, որի կանոնադրությունը պահանջում է նաև անձնական ունեցվածքի բացակայություն և ազգակցական ու ընկերային հարաբերությունների խզում:

Վ. լայն ծավալ է ստացել IV դ., թեև միայնակեցության տեսքով հանդես է եկել քրիստոնեության ավելի վաղ շրջանում (III դ.) և տվել այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Պողոս Թեբայիդացին և նրա աշակերտ Անտոն Անապատականը: Սակայն Վ., իր նեղ առումով, իբրև ճգնավորների համակեցության պայմաններում կանոնադրությամբ օժտված հաստատուն կազմակերպություն, իր հիմնադրությամբ պարտական է հույն վանական Պաքոմոսին (Պախոմիոս): Նա է Եգիպտոսում, Նեղոսի կղզիներից մեկում հիմնել առաջին վանական հաստատությունը՝ Տաբեննայի վանքը (IV դ.):

Վ., եկեղեց. մի շարք եռանդուն գործիչների շնորհիվ, Եգիպտոսից թափանցել է նաև այլ վայրեր (Պաղեստին, Ասորիք, Կապադովկիա, Հայաստան ևն): Հայաստանում Վ-յան տարածման գործում մեծ ավանդ է ունեցել Սեբաստիայի եպիսկոպոս Եվսթաթեոս բժիշկը, որը, վանքեր հիմնելով, նպաստել է ճգնավորների կենցաղում համակեցության հաստատմանը: Վ. հատկապես խթանվել է *Ներսես Ա Մեծ* կաթողիկոսի օրոք (IV դ.), ապա աշխուժացել IX–XIII դդ. և XIV–XV դդ., այնուհետև՝ XVII դ.: Ի տարբերություն կաթոլիկական Վ-յան (սովորաբար մի քանի վանք միավորված էին մեկ միաբանությունում), Հայ եկեղեցում յուրաքանչյուր վանք կազմել է ինքնուրույն միաբանություն: Հայկ. պետականության անկման և օտար զավթիչների տիրապետության պայմաններում Վ. Հայաստանում զուրկ է եղել երկրի ներքին կյանքին միջամտելու հնարավորությունից և սահմանափակվել է հիմնականում ուսումնագիտ. գործու-

նեությամբ: Սկսած XIX դ. վերջից Վ. Հայաստանում վերածվել է Հայ եկեղեցու համար կուսակրոն պաշտոնյաներ պատրաստող խավի:

Տես նաև *Ճգնավորություն* և *Անապատականություն*:

Գրկ. Ինճիճյան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. 3, Վնտ., 1835: Հուսիկ եպիսկոպոս, Անապատականներ և վանականութիւն, Վաղ-պատ, 1906:

ՎԱՆԱՆԴԵՑԻ Հովհաննես, Հովհան (Ամիրզադե Միրզայի Միրզայան, 1772, Վան – 3.2.1841, Զմյուռնիա), աստվածաբան, դյուցազներգակ բանաստեղծ, մշակութային գործիչ, թարգմանիչ: Սկզբ. կրթությունն ստացել է ծննդավայրի Կտուց անապատում: Այստեղ էլ աչքի է ընկել բանաստեղծելու իր ձիրքով, ինչի շնորհիվ դպրոցի տնօրինությունը նրան անվանակոչել է Հովհաննես (ի պատիվ *Հովհան Ոսկեբերանի*): 1798-ին Վ. ավարտել է Կ. Պոլսի Մայր դպրատունը, 1799-ից աստվածաբանություն և հայկաբանություն է դասավանդել Զմյուռնիայի Նորաբաց Մեսրոպյան վարժարանում: Իր առաջին՝ «Ճառ ներբողական ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագա» (1816, հրտ. 1853) գործում տալիս է Վարագա վանքի պատմությունը, կարևորում քրիստոնեության դերը հայ ժողովրդի կյանքում:

Զմյուռնիայում Վ. ավարտել է «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի» (հրտ. 1856) դյուցազներգությունը: Հիմնականում հետևելով Մովսես Խորենացուն՝ Վ. «չափական բանիւ» վերաշարադրել է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպասքը՝ որոշ հավելումներով ու չեղումներով: Մյուս՝ «Արփիական Հայաստանի» (հրտ. 1836) դյուցազներգությունում (10 հզ. տող) շարադրված է հայ ժողովրդի՝ քրիստոնեություն ընդունելու պատմությունը (ըստ Ագաթանգեղոսի): Որոշ ընդմիջումից հետո Վ. գրել է իր վերջին՝ «Ոսկի դար Հայաստանի» (1841) դյուցազներգությունը: Ունենալով հարուստ գիտելիքներ, տիրապետելով հայ բանաստեղծ. արվեստի օրինաչափություններին, դարձյալ անդրադառնալով պատմաաստվածաշնչային թեմայի՝ հեղինակը ստեղծել է բարձրարժեք գործ:

Իր այս երեք դյուցազներգություններով Վ. որոշակի ձև և գրական նպատակաուղղվածություն է տվել հայկ. կլասիցիզմին և առաջադիր տեսական սկզբունքներ մշակել նրա համար:

Վ-ու բանաստեղծություններից հայտնի է «Առ Հայաստանը» (առավելապես իր առաջին՝ «Հայաստան, երկիր դրախտավայր» չափատողով), որ երգի է վերածել Կոմիտասը:

Իր ստեղծագործություններում Վ. զարգացրել է կրոն-աստվածաբան. այն տեսակետը, թե դրախտը եղել է Հայաստանում, և հետևաբար մարդկությունը սերվել է Հայաստանից, որ ինչպես Քրիստոսը, այնպես էլ Ադամն ու Եվան խոսել են հայերեն, ուրեմն մեր լեզուն՝ «աստուածապարգեւն գրաբարը», գերերկրային, աստվածային ծագում ունի: Վ. սկզբունքային պայքար է ծավալել կաթոլիցիզմի դեմ՝ ընդդիմանալով լատին և հայ կաթոլիկ միսիոներների XVIII դ. ծավալած եռանդուն հավատորսական գործունեությանը:

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Շտիկյան Ս., Հովհան Վանանդեցի, տես Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962:

Սուրեն Շտիկյան

ՎԱՆԵՎԱՆ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղից 24 *կմ* հարավ-արևելք: Ըստ շին. արձանագրության, Վ-ի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին վաղ միջնադարից կանգուն միանավ բազիլիկ եկեղեցուց հս., 903-ին կառուցել է Հայոց սպարապետ Շապուհ Բագրատունին, իր քրոջ՝ Այունյաց իշխանուհի Մարիամի տեսչությամբ: Հիմնել է նաև վանական միաբանություն և Վ-ին չորս գյուղ ու



Վանեվանը (X դ.) հվ-արմ-ից

ջրաղացներ նվիրել: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցված է կոպտատաշ բազալտով, իսկ կամարները և գմբեթը՝ տուֆով: Ունի ներքուստ քառախորան, արլ-ում զույգ ավանդատներով հորինված: Ըստ պատմիչ Ստեփանոս արք. Օրբելյանի, Վ-ում 914-ին

թաղվել է Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին, իսկ 980-ական թթ. վանքը նորոգել և, հավանաբար, երկու եկեղեցիների միջի գավիթը կառուցել է Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածի որդի Գագիկը (ապագա Գագիկ Ա Բագրատունի թագավորը): Վ. XIII–XIV դդ. բազմաթիվ նվիրատվություններ է ստացել: 1502-ին գավթում թաղվել է Մելքիսեթ եպիսկոպոսը և վրան խոշոր խաչքար կանգնեցվել: 1871–80-ին վանահայր Թեոդորոս Շիրակացին նորոգել է վանքի շինությունները:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունիքի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղ-պատ, 1895: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 4, Ե., 1973:

Ստեփան Մնացականյան

ՎԱՆՔ, մենաստան, ուխտք, միաբնական կանոնադրությամբ ապրող վանականների համայնք, հոգևոր և մշակութային կենտրոն, կրոնական և աշխարհիկ շինությունների համալիր: Վ. գլխավորում է վանահայրը, որին ընտրում են Վ-ի միաբանները: Վանականները ամրակցված են եղել Վ-ին, բնակվել այնտեղ և զուրկ եղել սեփականության իրավունքից՝ ընդհանուր որոշ գծերով նմանվելով անապատականներին (տես *Անապատականություն*): Հայաստանում առաջին Վ-երը ստեղծվել են վաղ միջնադարում, *վանականության* շարժման հետևանքով: Ըստ հայ պատմիչների, Հայոց կաթողիկոս *Ներսես Ա Մեծը* հիմնել է հազարից ավելի Վ-եր: Հայկ. Վ-երը առաջնորդվել են *Գրիգոր Ա Լուսավորչի* մշակած կանոնադրությամբ, որը հետագայում փոփոխվել և լրացվել է: Հայաստանում Վ-երի կազմավորումը և շինարարությունը բուռն վերելք է ապրել IX–XIII դդ., երբ դրանք դարձել են հարուստ կալվածատեր. կազմակերպություններ՝ որպես նվիրատվություն ստանալով գյուղեր, մեծ հողատարածքներ, այգիներ, ագարակներ, իշխանություններից ձեռք են բերել կարևոր արտոնություններ (ապահարկություն, դատ., վարչ. ինքնուրույնություն ևն): Վ-երը հիմնվել են ավանդ. սրբավայրերի տեղում, վաղ միջնադարում կառուցված եկեղեցիների շուրջը, ինչպես նաև նոր վայրերում: Որոշ Վ-եր նաև ուխտատեղիներ են: Վ-երի համալիրները կազմում եկեղեցիներից, մատուռներից, զանգակատներից, դամբարաններից բացի լինում են նաև գավիթներ ու ժամատներ, դրատներ, հյուրատներ, բնակելի, տնտ. շենքեր (մառաններ, սեղանատներ, խոհանոցներ, գոմեր, ախոռներ), այլ կառույցներ (կամուրջներ, աղբյուրներ, ջրանցքներ) ևն: Միջնադարում խոշոր Վ-երը կրթ., գիտ., գրչության, մշակութ. կենտրոններ էին: Այստեղ գործող վարդապետարաններում աստվածաբանության հետ սովորեցրել են նաև լեզուներ, քերականություն, աշխարհագրություն, տոմարագիտություն, մանրանկարչություն, երաժշտություն, գրչության արվեստ ևն: Հայկ. ճարտ-ը և քանդակագործությունը միջնադարում զարգացել են հիմնականում վանական համալիրներում:

IX–XIII դդ. խոշոր Վ-եր են կառուցվել Հայաստանի բոլոր նահանգներում՝ Այրարատում (*Գեղարդավանք, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Մարմաշենի վանք, Խծկոնքի վանք, Հոռոմոսի վանք*), Սյունիքում (*Տաթևի վանք, Նորավանք, Թանադե վանք*), Արցախում (*Գանձասարի վանք, Դադիվանք*), Գուգարքում (*Հաղպատի վանք, Սանահինի վանք*), Վասպուրականում (*Աղթամարի վանք, Վարագավանք, Նարեկավանք*), Տարոն-Տուրուբերանում (*Մշո Ս. Կարապետ վանք*) ևն: Հայաստանում Վ-երի շինարարությունը նոր վերելք է ապրել XVII դ., երբ տեղի է ունեցել նաև վանականների կարգավիճակի փոփոխություն. ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու, նրանք անձն. սեփականության իրավունք են ստացել: XVII դ. նորաստեղծ Վ-երը շրջապատվել են ամրոցներին բնորոշ, բուրգերով ուժեղացված պարիսպներով, ստեղծվել է կրոն. և պաշտամունք. համալիրների յուրօրինակ միավորում (*Խոր վիրապի վանք, Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանք, Շատին վանք, Արտազի Ս. Թադե վանք, Ամարասի վանք* ևն): Վ-երի ճարտ. կերպարի ձևավորման գործում կարևոր դեր են խաղացել, եկեղեցիներից բացի, նաև աշխարհիկ շենքերի, գավիթների, զանգակատների ծավալները, որոնք հարստացրել են համալիրների հորինվածքը, ինքնատիպ ուրվանկար ստեղծել: Վ-ում զարգացել է միջնադարյան հայկ. քանդակագործ. արվեստը, որը սերտորեն կապված էր ճարտ. հետ: XX դ. ՀՀ տարածքի Վ-երի ճնշող մեծամասնությունը դադարել է գործել և միայն 1991-ից՝ անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանում տեղի է ունեցել վանական

շարժման նոր վերածնունդ, վերաբացվել են նախկինում փակված որոշ Վ.-եր:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. 1, Էջմիածին, 1908:

Մուրադ Հասրաթյան

«ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Վասակ արքաեղբոր Ավետարան», XIII դ. 70-ական թթ. պատկերազարդ ձեռագիր մատյան (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2568): Ընդօրինակվել (գրիչ՝ Ավետիս) և պատկերազարդվել է Կիլիկիայի Հայոց Հեթում Ա արքայի եղբոր՝ Վասակ իշխանի պատվերով: Նրա համար նույն Ավետիս գրիչն ընդօրինակել է Վաչինգտոնի Ֆրիր պատկերասրահում գտնվող «Վասակի Ավետարանը» (ձեռ. № 32.18), որի պատկերազարդումը վերագրվում է *Թորոս Ռոսլինին*: Երուսաղեմի ձեռագրի Վասակ արքաեղբոր սեփականությունը լինելը հավաստում են Աստվածամոր առջև նրա և որդիների ծնկաչոք պատկերը և գեղեցիկ բոլորգրով գրված մակագրությունը: «Վ.ի.Ա.»-ում չեն պահպանվել *Եվսեբիոս Կեսարացու* թուղթը, մի քանի *խորաններ*: Պահպանվել են Ա և Ժ կանոնների խորանները, ավետարանիչների պատկերները, անվանաթերթերը և էջով մեկ արված տերունական մանրանկարները. Մատթեոսի Ավետարանում՝ «Ծնունդը», «Մկրտությունը», «Խաչելությունը», «Յուղաբեր կանայք տիրոջ գերեզմանի մոտ», Ղուկասի Ավետարանում՝ «Ավետումը», «Տյառնընդառաջը», «Համբարձումը», Հովհաննեսի Ավետարանում՝ «Ոտնլվան», ձեռագրի վերջում՝ Վասակի և նրա Կոստանդին ու Հեթում որդիների նկարը: Համապատասխան տեքստային հատվածների մոտ կա նաև տասը լուսանցանկար՝ «Ավետում», «Մարիամի և Եղիսաբեթի հանդիպումը», «Ծնունդ», «Ավետում հովիվներին», «Քրիստոսը և դպիրները» ևն:

«Վ. ի. Ա.»-ում և «*Կեռան Թագուհու Ավետարան*»-ում լուսանցքների և էջով մեկ արված նկարներն ավելի նրբագեղորեն փոխակերպում են Թորոս Ռոսլինի ոճը ակադեմիական-մանիերիստական ոճի: Վասակ արքաեղբոր և նրա երկու որդիների նկարը պատկերագր. առումով կարելի է համարել նորույթ Թորոս Ռոսլինի ստեղծած Լևոն արքաորդու (1269–89-ին՝ Լևոն Գ արքա) և Կեռանի պատկերի (1262, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2660) համեմատությամբ: Վասակ արքաեղբոր ու նրա որդիների պատկերում Վասակի հետևում կանգնած և իր փեշով նրա ընտանիքը հովանավորող Աստվածամայրը նաև բարեխոսի դեր է կատարում՝ մի ձեռքը պարզած դեպի Քրիստոսը: Սա Բարեգութ Աստվածամոր ամենավաղ օրինակներից է և եզակի՝ իբրև գթության և բարեխոսության համադրում: Բազմապիսի տերևներով կազմված շրջանակներում տերունական համառոտած լուսանցանկարները բացառիկ են կիլիկյան մանրանկարչության մեջ: Էջով մեկ տերունական նկարները մի կողմից հարազատ են «Կեռան Թագուհու Ավետարան»-ի նկարներին, մյուս կողմից՝ ազդել են Հովհաննես Արքաեղբոր 1289-ի Ավետարանի մանրանկարների վրա: Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի Հեսսեի ծառի պատկերը (Քրիստոսի նախնիների կիսանդրիները հանդիպակաց տերևազարդերում և բոլորի վերևում սպիտակափառ Քրիստոսի պատկերը) նույնպես եզակի է իր ձևով և նրբագեղությամբ:

Պատկերազարդումը տես ներդիր XIV-ում, 14.8, 4-րդ պատկերը:

Գրկ. Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964: Der Nersessian S., L'art arménien, P., 1977; Նույնի, Miniature Painting in Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, v. I–2, W., 1993.

Վիգեն Ղազարյան

ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉ, տես *Խաչի տոներ* հոդվածում:

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, Վարագա վանք, Վանքաղաքից հարավ-արևելք, Վարագ լեռան արևմտյան լանջին: Նշանավոր կրոն., կրթ. ու մշակութ. կենտրոն: Ըստ ավանդության՝ *Հռիփսիմյանց կույսերից* Հռիփսիմեն Վաղարշապատ ուղևորվելիս այդտեղ է թաքցրել իր պարանոցին կրած ս. Նշանը՝ Խաչափայտի մասունքով սուրբ Խաչը: Երբ 653-ին հայտնի է դարձել Վարագա Սուրբ Խաչի (ս. Նշանի) տեղը, կաթողիկոս *Ներսես Գ Տայեցին* Վարագ լեռան վրա կառուցել է Ս. Նշան եկեղեցին և հաստատել Վարագա Սուրբ Խաչի տոնը (տես *Խաչի տոներ* հոդվածում): 870-ին արաբները գրավել են Վ., սակայն շատ չանցած իշխան Աշոտ Արծրունին ազատագրել է այն: Վ. ծաղկում է ապրել X դ. սկզբին, Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու հովանավորությամբ:

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ թյամբ, որի կինը՝ Մլքեն, վանքին է նվիրել հայկ. ամենանշանավոր ձեռագրերից մեկը՝ «*Մլքե թագուհու Ավետարանը*»: 946-ին Վ.-ի առաջնորդ Անանիա եպիսկոպոսն ընտրվել է Հայոց կաթողիկոս (*Անանիա Ա Մոկացի*): 975-ին վանքի միաբանությունը բանադրել է Աբլղարիբ իշխանին, որի մատնությամբ արաբները գերել են Վասպուրականի Դերենիկ թագավորին:

981-ին, ըստ շին. արձանագրության, Վասպուրականի Սենեքերիմ թագավորի կինը՝ Գագիկ Բագրատունու դուստր Խուշուշը, կառուցել է Վ.-ի Ս. Սոփիա եկեղեցին (ուշ միջնադարում ամրոցի վերածվելու պատճառով կոչվել



Վարագավանքի տեսքը XX դ. սկզբին

է նաև Բերդավոր): Եկեղեցին մեկ զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է, որի խորանը լուսավորվում է զույգ պատուհաններով (այժմ պահպանվել է եկեղեցու միայն արլ. մասը): Հս.-ից նրան կից է Ս. Հովհաննես (կամ Քառասուն աբեղա) եկեղեցին (X դ.), որը եռախորան է, գմբեթավոր, երկայնական պատերում խորշեր ունեցող արմ. խաչաթևով: Պատերը շարված են սրբատաշ քարով, իսկ ծածկը և գմբեթը՝ աղյուսով: 2,5 *մ* դեպի հս. կանգուն է Վ.-ի գլխ.՝ Ս. Աստվածածին եկեղեցին (XI դ.), որն ունի «հռիփսիմեատիպ» կառույցների հորինվածք՝ քառախորան, գմբեթավոր, 3/4 շրջանի հատակագծով խորշերով, արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ ներառված ավանդատներով, որոնցից արմ.-ները մուտք ունեն արմ. խորանից: Եկեղեցու պատերը քարից են, իսկ ծածկը և գմբեթը՝ աղյուսից (այժմ՝ քանդված):



Վարագավանքի հատակագիծը

Ս. Աստվածածին եկեղեցուն հս.-ից կից է գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Նշան եկեղեցին (XI դ.):

1021-ին Վասպուրականը Բյուզանդիային բռնակցվելուց հետո Սենեքերիմ-Հովհաննես թագավորը Վարագա սուրբ Խաչը տարել է Սեբաստիա, որտեղ նրա որդի Ատոմը 1022-ին հիմնել է *Սեբաստիայի Ս. Նշան վանքը*: 1025-ին, Սենեքերիմ-Հովհաննեսի վախճանվելուց հետո, որդիներն աճյունը Սեբաստիայից վերաթաղել են Վ.-ում՝ միաժամանակ վանքին վերադարձնելով Վարագա սուրբ Խաչը:

1085-ին, Անտիոքի Փիլարտոս Վարաժնունի իշխանի ճնշմամբ, Վ.-ի վանահայր Պողոս վարդապետը Մարաշում հռչակվել է Հայոց կաթողիկոս, սակայն վեց ամիս անց հրաժարվելով գահից՝ վերադարձել է Վ.:

1237-ին Վ.-ի վանահայր Ղուկասը, Ջալալեդդինի ասպատակություններից խուսափելով, Վարագա սուրբ Խաչը տարել է Նոր Բերդի Կյուրիկյան իշխանության Անապատ վանք, որը վերանվանվել է *Նոր Վարագավանք*:

1318-ին թաթար-մոնղոլները ներխուժել են վանք, կողոպտել, ավերել շենքերը (բացառությամբ Ս. Հովհաննես եկեղեցու, որի երկաթե դուռը ներսից փակել էին այնտեղ ապաստանած միաբանները): 1320–50-ական թթ. Վ. հիմնովին նորոգվել է: XIV–XVI դդ. այդտեղ արդասաբեր գործել է գրչության կենտրոն: 1441-ին Վ.-ի վանահայր Հովհաննեսը մասնակցել է *Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովին*:

1534-ին Պարսից շահ Թահմազը կողոպտել է Վ.: 1648-ին, ի շարս Վասպուրականի շատ վանքերի, Վ. ավերվել է երկրաշարժից: Վանահայր Կիրակոսն անմիջապես սկսել է Վ.-ի նորոգումը, որին իրենց նպաստն են բերել Վանի մեծահարուստները: Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու՝ խոջա Ամրխանը նորոգել է Ս. Խաչ, Մարխաս Ջելեբին՝ Ս. Աստվածածին, խոջա Դիլանչին՝ Ս. Սիոն, իսկ խոջա Հովհաննեսը՝ Ս. Նշան եկեղեցին: 1648-ին ճարտ. Տիրատուրը Ս. Աստվածածին եկեղեցուն արմ.-ից կից կառուցել է քառակուսի հատակագծով, չորս սյուներով կենտրոնակազմ գավիթ (XIX դ. օգտագործվել է որպես եկեղեցի և կոչվել Ս. Գևորգ): Գավթին արմ.-ից կից է եռակամար բաց նախասրահը (XVII դ.), հս.-ից՝ Ս. Խաչ թաղածածկ եկեղեցին, իսկ հվ-

ից՝ Ս. Սիոն եկեղեցին (XVII դ.): Որպես եկեղեցիների արմ. մուտքերի բարավոր օգտագործվել են սեպագիր արձանագրություններով ուրարտ. կոթողներ (այժմ տեղափոխված են Վանի Թանգարան):

Վ. երկար ժամանակ եղել է եպիսկոպոսանիստ, և նրա վանահայրերը համարվել են Վանի ու շրջակայքի առաջնորդ: Վանքում զարգացել են գրչագրությունը, մանրանկարչությունը, մատենագրությունը, տաղասացությունը ևն: XVII դ. 1-ին կեսին գրիչներ Զաքարիան և Սահակը այստեղ բազմաթիվ ձեռագրեր են ընդօրինակել: Եղել է նշանավոր ուխտավայր. վանքի տոնի օրը փետր. 28-ն է:

1651-ին Խոշաբի բերդակալ Սուլեյման բեկի հրոսակները ներխուժել են Վ., կողոպտել սպասքը, ձեռագրերը, սրբությունները, այդ թվում՝ Վարագա սուրբ Խաչը, որը հետո վանեցիները փրկագնել են և զետեղել (1655-ին) Վանի Ս. Տիրամայր եկեղեցում: XVII դ. վերջին վանքն անկում է ապրել, 1679-ին տնտ. դժվարությունների պատճառով վաճառվել են գանձերը: 1724-ին վանահայր Բարդուղիմեոս եպս. Շուշանցին նորոգել է վանքը: 1759-ին վանքի Ս. Տիրամայր եկեղեցուց քաղաքի Ս. Էջմիածին եկեղեցի են տեղափոխել Վարագա սուրբ Խաչը, որն այդուհետ կոչվել է Ս. Նշան:

1779-ին վանահայր Բաղդասար վարդապետը Վ-ի գավթի ներսը զարդարել է Աբգար թագավորին, Թեոդոս կայսրին, Գայանեին, Հռիփսիմեին, Խոսրովիդուխտին, Գաբրիել հրեշտակապետին պատկերող որմնանկարներով, որտեղ նկարիչը չի կաշկանդվել պատկերագր. ընդունված կանոններով, ինչպես նաև ներդաշնակորեն զուգակցել է հայկ., պարսկ. և արևմտաեվրոպ. արվեստին բնորոշ ոճական առանձնահատկությունները: 1803-ին կառուցվել են վանքի պարիսպը, առաջնորդարանը, խցերի երկհարկանի շենքը, բաղնիքը ևն: 1817-ին վանահայր Գալուստ եպիսկոպոսը հիմնովին վերակառուցել է Վ-ի Ս. Խաչ եկեղեցին և վերածել մատենադարանի: 1832-ին Վանի Թամուր փաշան խեղդամահ է արել Վ-ի վանահայր Մկրտիչ վրդ. Գաղատացուն և հափշտակել վանքի ունեցվածքը: 1849-ին Գաբրիել վրդ. Շիրոյանը վերակառուցել է երկրաշարժից ավերված Ս. Սիոն եկեղեցին և դարձրել ցորենի շտեմարան:

1857-ին Վ-ի վանահայր է կարգվել Խրիմյան Հայրիկը (*Մկրտիչ Ա Վանեցի*), որը մեծ ջանքերով վանքը հանել է Վանի առաջնորդների իրավասությունից և դարձրել անկախ (միայն Կ. Պոլսի հայոց պատրիարքին ենթակա)՝ ազատելով այն Վանի իշխանությունների շահատակություններից: Խրիմյան Հայրիկը Վ-ում բացել է տպարան և շարունակել «*Արծվի Վասպուրական*» շաբաթաթերթի հրատարակությունը (1858–64), հիմնել է ժառանգավորաց դպրոց, որտեղ դասավանդել են եվրոպ. կրթություն ստացած ուսուցիչներ: Ժառանգավորացը եղել է նոր տիպի դպրոց, որտեղ վերացվել են աշակերտների մարմն. պատիժները, ներդրվել մանկավարժության առաջադիմ. ձևեր ու մեթոդներ: Դասավանդվել են կրոնի պատմություն, աստվածաբանություն, երաժշտություն, ճարտասանություն, քերականություն, աշխարհագրություն, հայոց պատմություն և հայրենագիտություն (առաջին անգամ՝ Վասպուրականում): Դպրոցում որոշ ժամանակ ուսուցիչ է եղել Ռաֆֆին: 1862-ից դպրոցը տվել է շրջանավարտներ, որոնցից են Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Հ. Սևիկյանը, Ա. Փոխանյանը և այլք: 1880-ին ժառանգավորաց դպրոցը վերածվել է երկրագործ. վարժարանի, Եվրոպայից բերվել են գյուղատնտ. գործիքներ, գնվել է խոշոր կալվածք՝ ուս. գործը պրակտիկ հիմքերի վրա դնելու համար:

1896-ին Վ. կողոպտվել է, վարժարանի ուսուցիչների և աշակերտների մի մասը սպանվել: 1915-ին Վ. լքվել է: Ներկայումս ամբողջովին ավերակ է:

Երևանի Մատենադարանում են պահվում Վ-ում ընդօրինակված տասնյակ ձեռագրեր, որոնց թվում՝ մանրանկարներով 1293-ի Ավետարան (գրիչ՝ Վարդան), Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը (1369, գրիչ՝ Ստեփանոս), Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը» (1418, գրիչ՝ Նիկողոս), չորս ավետարանիչների մանրանկարներով Ավետարան (1505, գրիչ՝ Հովհաննես Մանդասարենց), Սահակ աբեղայի օրինակած սրբանկարներով «Ժողովածու» (1627), Սաղմոսարան (1628), «Մաշտոց ձեռաց» (1631) ևն:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.1, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1999: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Լալայան Ե., Վասպուրական. նշանավոր վանքեր, Թ., 1912: Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 1, Վնն., 1940: Thierry J. M., Monuments arméniens du Vaspurakan, P., 1989.

Մուրադ Հասրաթյան

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, Մարաթացի, Ամթեցի, Կիլիկեցի (ծ. և մ. թթ. անհտ), XII–XIII դդ. մատենագիր, դավանաբան, առակագիր: Ծնվել է Տլուք գավառի Հայաբնակ Մարաթա գյուղում (ինքն իրեն կոչել է Մարաթացի): Սովորել է ծննդավայրում, այնուհետև՝ Սև լեռների Արքակաղնի վանքում, ստացել վարդապետի աստիճան, զբաղվել քարոզչությամբ նախ՝ Ամիթում (այստեղից էլ՝ Ամթեցի), ապա՝ Տլուքում: 1198-ին մասնակցել է Կիլիկյան Հայաստանի Լևոն Բ Մեծագործ թագավորի թագադրության հանդեսին: Ենթադրվում է, որ եղել է Լամբրոնի արքեպիսկոպոս և Սկևռայի առաջնորդը: Ինչ-ինչ պատճառներով հալածվել է և 1208-ին հարկադրված հեռացել հայրենի վայրերից: 1210-ին հաստատվել է Սև լեռների Դոսխ (Տոսխ) կոչված այգեվետ ձորի Այգեկ վանքում (այստեղից էլ՝ Այգեկցի):

Վ. Ա-ու մեզ հասած գործերից, ըստ ժամանակագրության, առաջինը և ամենանշանավորը 1205-ին ավարտած «Արմատ հաւատոյ» դավան. ժողովածուն է, որը հայտնի է նաև «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ», «Հաւատարմատ», «Համառաւտ հաւաքումն սրբոց վարդապետաց» անուններով: «Արմատ հաւատոյ»-ն նվիրված է Հայ եկեղեցու ինքնուրույնության, ուղղափառ դավանության և ծիսապաշտամունք. կարգերի պաշտպանությանը՝ «ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց»: Վ. Ա-ու դավան. այդ երկի նպատակը լատ. Արևմուտքի օրավուր աճող գաղափարաքաղ. ճնշմանը դիմակայելն էր, Կիլիկյան Հայաստանում Հռոմի կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը հաստատելու փորձերի դեմ պայքարը: Ինչպես հույների, այնպես էլ լատինների դեմ Հայ եկեղեցու դարավոր մաքառումը շարունակվում էր հակաքաղկեդոն. դրոշի ներքո: Սակայն «Արմատ հաւատոյ»-ն ուղղված էր ոչ միայն *քաղկեդոնականության*, այլև՝ Միջագետքի հայոց մեջ մուտք գործած ասոր. եկեղեցու որոշ գաղափարների ու խորթ սովորույթների դեմ: Վ. Ա. իր առջև խնդիր չի դրել քննադատել մյուս եկեղեցիների դավանանքն ու ծիսակարգը, այլ միայն հաստատելով փաստել, որ Հայ եկեղեցու դավանանքն ու ծեսը հիմնված են նախնական եկեղեցու նվիրագործած ծիսակարգի, սովորություններ (Ս. Ծնունդն ու Աստվածահայտնությունը կատարել նույն օրը՝ հունվ. 6-ին, Պատարագը մատուցել անխմոր և անջուր ևն), երեք *տիեզերական ժողովների* ընդունած որոշումների և դավան. հիմնադրույթների վրա, որոնցից հեռացել է Կաթոլիկ եկեղեցին:

«*Արմատ հավատոյ*»-ն կառուցվածքով նման է *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն» երկին և «*Կնիք հավատոյ*» դավան. ժողովածուին. բաժանված է գլուխների, որոնցից յուրաքանչյուրը փաստարկվում է նյութին պատշաճող սուրբգրային և հայրախոսական առատ վկայություններով: «Հակաճառություն»-ից և «Կնիք հավատոյ»-ից «Արմատ հաւատոյ»-ն տարբերվում է նրանով, որ եթե առաջին երկուսը զուտ դավան. հարցեր են շոշափում, ապա վերջինը միաժամանակ՝ և՛ դավան. և՛ ծիսական հարցեր: Հայտնի է «Արմատ հաւատոյ»-ի երկու խմբագրություն՝ ընդարձակ և համառոտ: Ընդարձակ խմբագրությունը բաղկացած է 16 գլխից, որոնցից առաջին երկուսը առաջաբաններ են: Ունի հիշատակագրություններ և հիշատակարան: Ենթադրվում է, որ համառոտը ծագել է ոչ թե ընդարձակից, այլ այդ երկու խմբագրություններն ունեն մեկ ընդհանուր աղբյուր՝ հեղինակային նախօրինակը:

Ժողովածուն արծարծած խնդիրներով պայմանականորեն բաժանվում է երկու մասի՝ դավան. (1–9 գլուխներ) և ծիսական (10–16 գլուխներ): Առաջին մասում աստվածաբան. կարևորությամբ առաջին տեղը զբաղեցնում է Հայ եկեղեցու դավան. դրության խնդիրը, որը ներկայացված է «Ուղիղ դաւանութիւն Սուրբ Երրորդութեանն» խորագրով 3-րդ գլխում և 6-րդ գլխի վերջում զետեղված դավանագրերում: Շոշափվում են նաև Մարդեղության, Քրիստոսի բնությունների, *անապականության* և քրիստոսաբան. ու աստվածաբան. զանազան այլ հարցեր: Ծիսական հարցերին նվիրված գլուխներից 11-րդը և 13-րդն ուղղված են Կաթոլիկ եկեղեցու դեմ, մնացածը՝ Ասորի եկեղեցու, ավելի ճիշտ՝ ասորածես հայերի դեմ:

Վ. Ա. իր ժողովածուն կազմելիս օգտվել է ինչպես դավան. բնույթի ժողովածուներից, այնպես էլ *Ընդհանրական եկեղեցու* ս. հայրերի, հույն և ասորի աստվածաբանների, Հայ եկեղեցու հայրերի ու վարդապետների աստվածաբան. ժառանգությունից (վկայակոչված հեղինակների և աղբյուրների թիվը հասնում է 100-ի):

«Արմատ հաւատոյ»-ն դավան. հեղինակավոր և հզոր զենք է եղել Հայ եկեղեցու ձեռ-

քին՝ երկաբնակությունն և օտարամուտ հոսանքների դեմ մղած նրա պայքարում, մեծ ընդունելություն և ճանաչման արժանացել Կիլիկիայի Հայոց արքունիքում, դարձել հակաքաղկեդոն. դավան. պայքարը կազմակերպող հանձնարարելի և հեղինակավոր ձեռնարկ: Վ. Ա., իր երկասիրության նկատմամբ ցուցաբերվող մեծ հետաքրքրությանը գոհացում տալու համար կարճ ժամանակում 12 անգամ ընդօրինակել է այն և տարածել՝ ուրիշներին հանձնարարելով վարվել նույն կերպ: «Արմատ հաւատոյ»-ն իբր առավել «վտանգավոր մոլորություններ» պարունակող գիրք հիշատակվում է 1341-ին Ավինյոնում (Ֆրանսիա, Հռոմի պապերի ժամանակավոր նստավայրը. մոտ 70 տարվա այդ ժամանակաշրջանը Հայտնի է «Պապերի Ավինյոնյան գերություն» անունով) *Ներսես Պալիանենցի* կազմած և Բենեդիկտոս XII պապին ներկայացված ցուցակի մեջ: Դավան. պայքարում ժողովածուի ներգործուն դերի մասին է վկայում նաև այն փաստը, որ XIII դ. կեսին քաղկեդոն. հայերը հարկադրված հրապարակ են հանել նույնանուն քաղկեդոն. մի աշխատություն՝ մարդկանց մոտ շփոթություն ստեղծելու, «Արմատ հաւատոյ»-ն մեկուսացնելու կամ նրա ներգործությունը մեղմելու նպատակով:

Վ. Ա-ու դավան. բնույթի գործերից են «Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյ Հայաստանեայց» և «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» խորագրով երկերը, որոնք Երևանի Մատենադարանի № 8356 ձեռագրում (ընդօրինակված՝ 1322-ին, Կիլիկիայի Կարմիր անապատում) հայտնաբերել, ուսումնասիրել և հրատարակել է (սկզբում՝ «Բազմավեպ»-ի 1968-ի 7–12 համարներում, այնուհետև՝ առանձին գրքով՝ Վենետիկում, 1969-ին) Հ. *Անասյանը*: «Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց» փոքրածավալ երկը լուսաբանում է այն խնդիրները, որոնք ծնունդ են տվել «Արմատ հաւատոյ» ժողովածուին, և գրվել է գրեթե նույն ժամանակամիջոցում: Այդ գործը ևս գրվել է Հայրենի ավանդությունները պահպանելու ձգտումով և հիմնականում նվիրված է Հայ եկեղեցու առաքելական ծագմանն ու նրա հիմքերի պաշտպանությանը: Այն ուղղված է քաղկեդոնականությանը հարող հայերին, որոնք գաղափար չունենալով Հայ եկեղեցու դավանության մասին, բամբասել են, թե «Հայք տգէտ և վերջին ազգ են»:

«Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» խորագրով ընդարձակ թուղթն իր բնույթով ու բովանդակությամբ տարբերվում է Վ. Ա-ու մյուս դավան. գործերից: Գրվել է Դոսխի (Տոսխ) Այգեկ վանքում և ուղղված է հեղինակի ծննդավայր Մարաթայի ու նրա հարակից շրջանների, այսինքն՝ Տլուք գավառի Հայ, Հույն և ասորի բնակիչներին: Իր այս թղթով Վ. Ա. հանդես է գալիս որպես ժողովուրդների բարեկամության ջատագով, խաղաղության պաշտպան, անկողմնակալ հաշտարար և համերաշխության գաղափարախոս: Նա իր «Հոգևոր որդիներին»՝ Տլուք գավառի Հայ, ասորի և Հույն բնակիչներին, հորդորում է վերջ տալ կրոն. անիմաստ վեճերին, վիրավորանքներին, ազգամիջյան խռովություններին, դավան. երկպառակություններին: «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» թղթում Վ. Ա. շարունակել և զարգացրել է *Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Դ Տղայի* ազգ. ու կրոն. համերաշխության, փոխադարձ հանդուրժողականության և եկեղեցիների միասնության գաղափարները:

Վ. Ա-ի խրատներն («Խրատք», Վնտ., 1956) ու քարոզներն ուղղված են մարդկային արատների դեմ: Ճառերն ու քարոզները համեմված են առակներով ու զրույցներով, որոնք ավելի ընկալելի են դարձնում քարոզվող գաղափարները: Դրանով Վ. Ա. հայ գրականության մեջ մտցրել է նոր գրական տեսակ՝ առակավոր ճառեր: Նա միջնադարի հայ նշանավոր առակագիրներից է: Խրատների մեջ ներառված առակների համար հիմն. աղբյուրներ են եղել եզոպոսյան առակները և «Բարոյախոս» ժողովածուն: Միջնադարում Եզոպոսից թարգմանված 60 առակներից Վ. Ա. իր ճառերի մեջ հյուսել է 13-ը՝ դրանց աշխարհիկ բարոյախոսությունը փոխարինելով հոգեշահ խրատներով: «Բարոյախոսից» քաղել է 8 նյութ՝ փոխելով դրանց այլաբանությունը: Ենթադրվում է, որ Վ. Ա., ինքը հավաքելով իր ճառերում գործածած առակները, կազմել է մեկ կամ երկու ժողովածու. այդ օրինակով նման ժողովածու-առակագրքեր են կազմել նաև ուրիշները: Այդպիսի ժողովածուներից է «Աղվեսագիրքը», որը, ըստ Ն. Մառի՝ Վ. Ա-ու առակախմբերի մի ուրույն խմբագրություն է: «Աղվեսագիրք» անվանումը տարածվել է XVII դ.՝ *Ոսկան Երևանցու* հրատարակությունից հետո (1668, ունեցել է

ևս 3 հրտ.՝ 1683, 1698 և 1827): Վ. Ա.-ու անունով տարածում գտած ժողովածուները, հարստանալով ժող. բանահյուսությունից վերցված նյութերով, հոգևոր սնունդ են տվել միջնադարյան ընթերցողին և ունկնդրին: Դրանց մեջ տեղ գտած ստեղծագործությունները (առակներ, զրույցներ, պատմություններ, մանրապատումներ են) միջնադարի գեղ. արձակի լավագույն նմուշներից են, միաժամանակ՝ կարևոր աղբյուր ժամանակի կյանքի, ժողովրդի, հատկապես քաղաքային միջավայրի կենցաղի ու բարքերի լուսաբանման համար:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.1, 3-րդ պատկերը:

Երկ. Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք, Ամստերդամ, 1668: Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, քնն. բնագիրը՝ Շահե քհն. Հայրապետյանի, ներածությունը՝ Հ. Քյոսեյանի, Ե., 1998: Խրատներ, աշխարհաբարի վերածեց Շ. քհն. Հայրապետյանը, Ե., 1999: *Марр Н., Сборники притч Вардана, ч. 2* («Ժողովածոյք առակաց Վարդանայ»), *СПБ, 1894, ч. 3, Приложение, СПБ, 1894.*

Գրկ. Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Տաշյան Հ., Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վնն., 1900: Անասյան Հ., Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ, Վնտ., 1969: Նույնի, Վարդան Այգեկցին որպես համեմատաշխության գաղափարախոս, «Էջմիածին», 1969, № 7–8: *Марр Н., Сборники притч Вардана, ч. 1, Исследование, СПБ, 1899; Орбели И. А., Избр. труды, т. 1, М., 1968.*

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, Վարդան Գանձակեցի, Աղվանից Վարդան, Վարդան Կիլիկեցի, Վարդան Մեծ, Վարդան Պատմիչ, Վարդան Վարդապետ (մոտ 1200, Գանձակ – 1271, Խոր վիրապ), պատմագիր, մեկնիչ, աստվածաբան, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ: Նախն. կրթությունն ստացել է Նոր Գետիկի վանքում, որտեղ աշակերտել է *Մխիթար Գոշին*: Այնուհետև ուսանել է Տավուշի *Խորանաշատի վանքում*, աշակերտել *Վանական Վարդապետին*, հմտացել աստվածաբանության, մատենագիտության և քերականագիտության մեջ, տիրապետել բազմաթիվ լեզուների: Վարդապետի, իսկ 1235-ից՝ բաբունապետի աստիճան ստանալուց հետո ծավալել է ուսումնագիտ. բեղմնավոր գործունեություն: Հիմնել է Կայենաբերդի Ս. Անդրե վանքի դպրոցը և այնտեղ զբաղվել ուսուցչությամբ (1235–39, 1252–53): 1239-ին ուխտագնացության է մեկնել Երուսաղեմ: Վերադարձին Կիլիկիայի Հայոց Հեթում Ա թագավորի և Հայոց կաթողիկոս *Կոստանդին Ա Բարձրբերդցու* հրավերով այցելել է Կիլիկյան Հայաստան: Մասնակցել է Սսի 1243-ի ազգ-եկեղեց. ժողովին (տես *Սսի եկեղեցական ժողովներ*), այնտեղ սահմանված կանոնները 1245-ին բերել մայր Հայաստան՝ *արևելյան վարդապետներին*: 1248-ին դարձյալ անցել է Կիլիկիա՝ իր հետ տանելով արևելյան վարդապետների պատասխան թուղթը, մասնակցել է Կիլիկիայի հայկ. պետության քաղ. և հաս. կյանքին, Կաթոլիկ եկեղեցու ու Բյուզանդիայի ոտնձգությունների դեմ պայքարին: Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի համագործակցությամբ գրել է Հայաստանի բնակչությանն ուղղված «Թուղթ խրատական»-ը և Հռոմի պապի դավանաբան. գրության պատասխանը, մասնակցել Սսի 1251-ի ժողովի ընդունած կանոնների մշակմանը: 1252-ին վերադարձել է Հայաստան, գումարել Հաղպատի և Ջագավանի եկեղեց. ժողովները (տես *Ջագավանի եկեղեցական ժողով 1270*), հիմնել Սաղմոսավանքի, Թեղենյաց մենաստանի, Աղջոց վանքի, Խոր վիրապի, Հառիճի վանքի, Խորակերտի դպրոցները: Վ. Ա. ճառ է արտասանել Հառիճի վանքում՝ նվիրված Մարիամ Աստվածածնին (չի պահպանվել), իսկ Խորակերտի վանքի ճակատին արձանագրված է նրա անունը՝ որպես համբավավոր վարդապետի: Խոր վիրապում նրան աշակերտել են միջնադարյան հայ մշակույթի նշանավոր գործիչներ Գևորգ Սկևռացին, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Գրիգոր Բալուեցին և ուրիշներ:

Վ. Ա. թողել է մատենագիտ. հարուստ ժառանգություն՝ պատմ., մեկնող., քերականագիտ. բնույթի երկասիրություններ, բազմաթիվ ճառեր, ներբողներ, խրատներ, թղթեր: Վ. Ա. հայ մեկնաբան. մտքի ամենանշանավոր դեմքերից է, մի ամբողջ մեկնաբան. դպրոցի հիմնադիր: Հայ և Ընդհանրական եկեղեցու ս. հայրերի մեկնող. երկերը համակարգելիս նա սոսկաբար չի շարադրել նրանց մտքերը, այլ տվել է նոր մեկնություններ, որոնք չեն ունեցել նախորդները: Հայ մեկնող. գրականության լավագույն նմուշներից են «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Հնգամատենին», «Մեկնութիւն Դանիէլի» և այլ գործեր, իսկ Երգ երգոցի նրա մեկնությունը հայ մեկնաբան. մտքի կարևոր երկերից է: Այդ մեկնությունը որոշ ձեռագրերում անվանվում է պարզություն (պարզաբանություն): Վ. Ա. պարզ,

դյուրըմբռնելի ներկայացրել է իր նախորդ մեկնությունների ամբողջ. պատկերը: Երկի հիմք ընդունելով *Գրիգոր Նյուսացու* մեկնությունը՝ Վ. Ա. պարզաբանելով շարադրել է նրա մտքերը՝ լրացնելով Ընդհանրական եկեղեցու մյուս ս. հայրերի և Գրիգոր Նարեկացու մեկնություններով: Իսկ սկսած 6.7-ից տվել է իր ինքնուրույն մեկնությունը:

Բազմաթիվ և բազմաբնույթ են Վ. Ա-ու ճառերը, խրատները, ներբողները ու թղթերը, որոնք արծարծում են աստվածաբան. խնդիրներ, ծիսական հարցեր կամ նվիրված են սուրբերի կյանքին ու գործունեությանը (Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին և թոռներին, Հովհաննես Գ Օձնեցուն, Մարիամ Աստվածածնին, Հովհաննես Մկրտչին): Առավել հայտնի են. «Ճառ ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստան աշխարհիս», «Յայտարարութիւն բանից յերիցս երանեալ հոգին մեր ի Ս. Հայրապետն Յովհան Աւձնեցին», «Թուղթ առ Հայոց կաթողիկոսն Կոստանդին» ևն:

Վ. Ա. մեծ ուշադրություն է դարձրել երաժշտության տեսության և գեղագիտության հարցերին, անդրադարձել ձայնեղանակների մասին ուսմունքին, երաժշտության զգայական մեծ ազդեցությանը: Նա հայտնի է նաև որպես բեղուն շարականագիր: Վ. Ա-ու գրչի արգասիքն են Շարակնոցում Աստվածածնի ծննդյան առաջին կանոնը («Որ նախիմաց իմաստութեամբ»), տասներկու առաքյալների օրհնությունը («Ի յանսահման ծովէն») և ս. Թարգմանչաց կանոնի օրհնության երկու պատկերները («Որք զարդարեցին» և «Որ թագաւորաց»): Վ. Ա-ուն են վերագրվում խաչին նվիրված ճառեր, «Կանոնական բանս» գրվածքը, առակներ, ընդարձակ և համառոտ տարբերակներով պահպանված «Աշխարհացոյց»-ը: Հեղինակ է նաև քերական. երկու աշխատությունների՝ «Մեկնութիւն քերականին» և «Վասն բանին մասանց», որոնք գրված են ժամանակի խոսակցական լեզվով: Առաջինը, որը գրել է Հեթում Ա-ի պատվերով, Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեկնությունն է, իսկ երկրորդը՝ հայոց լեզվի շարահյուսության սկզբունքների նկարագրությունը: Հեղինակը քերականությունը զատում է ճարտասանությունից ու տրամախոսությունից՝ այն ներկայացնելով որպես խոսքի մասերին նվիրված ինքնուրույն գիտություն: Տեղեկություններ է հաղորդել նաև բարբառների մասին:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ ուրույն տեղ ունի Վ. Ա-ու «Լուծմունք ի Ս. Գրոց» ժողովածուն՝ գրված Հեթում Ա թագավորի պատվերով (հայտնի է «Ժղլանք» անունով): Բազմաթիվ և բազմաբնույթ նյութերից կազմված, դյուրըմբռնելի միջին հայերենով շարադրված, հանրագիտ. բնույթի ծավալուն այս երկը եղել է միջնադարյան Հայաստանի ամենատարածված գրքերից: Վ. Ա-ու պատմ. գլխ. երկասիրությունը «Հաւաքումն պատմութեան» գիրքն է, որը համընդհանուր պատմություն շարադրելու նոր փորձ էր հայ պատմագրության մեջ: Բաղկացած է «Նախերգանքից» և հարյուր գլխից: Բուն պատմությունն սկսվում է Բաբելոնյան աշտարակաշինությունից և հասնում մինչև կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու մահը (1267): Որպես սկզբնաղբյուր հեղինակն օգտագործել է Եվսեբիոս Կեսարացու, անցյալի գրեթե բոլոր հայ պատմիչների ու մատենագիրների, իր ժամանակակիցներից՝ Վանական Վարդապետի, Կիրակոս Գանձակեցու և ուրիշների աշխատությունները, վիմ. արձանագրություններ, դիվան. փաստաթղթեր, ժող. պատումներ: Հատկապես արժեքավոր է իր ապրած ժամանակաշրջանի՝ XII դ. վերջի և XIII դ. պատմ. իրադարձությունների նկարագրությունը: Երկը կարևոր աղբյուր է այդ ժամանակաշրջանի Հայաստանի և հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Նշանակալից է նաև Վ. Ա-ու թարգմանչ. գործունեությունը. հուն-ից, լատ-ից և ասորից թարգմանել է բազմաթիվ գործեր: Ասորի Իշող քահանայի աշխատակցությամբ 1248-ին թարգմանել է ասորի ժամանակագիր Միքայել Ասորու (1126–99) «Ժամանակագրութիւնը» և «Յաղագս քահանայութեան» գործը: Խմբագրել ու լրացրել է Տոնապատճառ ծիսական ժողովածուն:

Վ. Ա. իր գրական մեծ վաստակի և հոգևորկրթ. գործունեության շնորհիվ հսկայական ճանաչում է ունեցել միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում: Ժամանակակիցները նրան մեծարել են «սուրբ», «հոգիապայծառ սուրբ հայր», «լուսավոր վարդապետ», «եռամեծ», «տիեզերալույս վարդապետ» պատվանուններով: Իսկ Գրիգոր Տաթևացին նրան միշտ ներկայացրել և պատվել է «Մեծն Վարդան» անունով:

Երկ. Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի, Աստրախան, 1797: Տեսութիւն անթառամ ծաղիկ մեծացուսցէին, Երուսաղեմ, 1834: Ներբողք ի ս. Գրիգոր Լուսաւորիչ, «Սոփերք Հայկականք», հ. 5, Վնտ., 1853, էջ 39–82: Հաւաքումն պատմութեան, Վնտ., 1862: Աշխարհացոյց, Փարիզ, 1960: Ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց թարգմանչացն (աշխատասիր. Փ. Անթաբյանի), ԲՄ, № 7, 1964, էջ 377–397: Մեկնութիւն քերականին (աշխատասիր. Լ. Խաչերյանի), Ե., 1972: Ճառք, ներբողեանք (աշխատասիր. Հ. Քյոսեյանի), Ե., 2000:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Ոսկյան Հ., Վարդան Արևելցի, ՀԱ, 1921, № 7–12: Խաչիկյան Լ., Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ», հաս. գիտ., 1943, № 2: Նույնի, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին, ԲՄ, № 4, 1958: Անթաբյան Փ., Վարդան Արևելցու «Ժղլանքը», ԲՄ, № 8, 1967: Նույնի, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք 1, 2, Ե., 1987, 1989: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970:

Պետրոս Հովհաննիսյան

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ [ծ. թ. անհտ, խողց գյուղաքաղաք – 31.3. 1704/1705, Բաղեշ (Բիթլիս)], *Ամրդոլու վանքի* վանահայր, ժամանակագիր: Ուսանել է Ամրդոլու վանքում, դարձել վարդապետ և 1663-ից ցկյանս առաջնորդել նույն վանքը: Ծավալել է մշակութ. և շին. եռանդուն գործունեություն: 1669–71-ին այցելել է Հայաստանի հոգևոր կենտրոնների դպրոցները: Եղել է Լիմում, նաև՝ Տարոնում, որտեղ փակել է Ս. Առաքելոց վանքի պարտքերը, նորոգել եկեղեցու գմբեթը և վերստին շինել տվել Ս. Ստեփանոս տաճարը, որը կործանվել էր Լենկթեմուրի արշավանքների հետևանքով:

Վ. Բ-ուց մեզ են հասել Ամրդոլու մեծահռչակ մատենադարանի ձեռագիր ու տպագիր գրքերի ցուցակը, ապա մի ժամանակագրություն, որն ընդգրկում է 1170–1657-ի Հայաստանի պատմ. անցքերի համառոտ շարադրանքը, ինչպես նաև հայ պատմիչների գործերի և օտարազգի պատմիչների հայերեն թարգմանությունների (V դ. – XVIII դ. սկիզբ) ցանկեր: Ցանկերում նշված են նաև այնպիսի պատմիչների անուններ, ովքեր թեև հայտնի են, բայց նրանց պատմությունները մեզ չեն հասել. Վ. Բ-ու ջանքերով նրանց երկերը ժողովվել են Ամրդոլու վանքում: Վանքի դպրոցը ծաղկում է ապրել Վ. Բ-ու 42 տարիների արդասավոր առաջնորդության ժամանակաշրջանում: Նրա օրոք դասավանդվող առարկաներին ավելացվել են հայ մատենագրություն, մանրանկարչություն, որմնանկարչություն, և վանքի դպրոցը վերածվել է համալսարանի: Վ. Բ-ու վախճանվելուց հետո դպրոցը դադարել է գործել: Մեզ է հասել Վ. Բ-ու դիմանկարը, որ նկարել է տվել Երուսաղեմի պատրիարք *Գրիգոր Շղթայակիրը* և պահել մատուռում՝ ի հիշատակ սիրելի ուսուցչի: Վ. Բ-ու կրթած և ուսուցանած նշանավոր սաներից են նաև *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին*, Աբրահամ Քեղեցին և այլք: Վ. Բ-ուն ներբողել է Գրիգոր Շղթայակիրն իր «Վիպասանութեան» մեջ: Նրան է ձոնվել նաև աշուղական մի երգ՝ «Գովասանք Վարդան վարդապետին Բաղիշեցւոյ, ասացեալ յաշըղներաց» խորագրով:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.1, 4-րդ պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: Ակինյան Ն., Բաղեշի դպրոցը, Վնտ., 1952, էջ 231–311: Լեո, Երկ. ժող., հ.3, Ե., 1969:

Ալիտա Դոլուխանյան

ՎԱՐԴԱՆ ՀԱՂՊԱՏԵՑԻ (ծ. թ. անհտ – 1191/1195, Հաղպատ), մատենագիր, մանկավարժ: Հաղպատի վանքի միաբանության անդամ: 1160–90-ական թթ. ուսանել է Կիլիկիայում, սովորել հուն. և ասոր., աշակերտել *Ներսես Շնորհալուն*: Վ. Հ-ու խնդրանքով Ներսես Շնորհալին գրել է *Դավիթ Անհաղթի* «Բարձրացուցեք զդէր Աստուած մէր» (1170) ճառի մեկնությունն ու *պատճառը*: Վ. Հ. ընդարձակել է Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառի Ներսես Շնորհալու մեկնությունը, գրել *Գրիգոր Նյուսացու* ճառերի մեկնություններ: Ներսես Շնորհալու մահից հետո՝ 1173-ին վերադարձել է Հաղպատ:

Վ. Հ. եղել է սիրված մանկավարժ: Նրա աշակերտները մեծ հիացմունքով ու հարգանքով են հիշատակել իրենց ուսուցչին, անվանել նրան «սրբերի հայր», «քրիստոնյաների պարծանք», «եկեղեցու լուսավորիչ»:

Վ. Հ., իբրև Հայ և Հույն եկեղեցիների միության սկզբունքային հակառակորդ, ընդդիմացել է *Գրիգոր Դ Տղա* կաթողիկոսի՝ միության նպատակով ձեռնարկած քայլերին, մանակցել *Հռոմկլայի եկեղեցական ժողովին* և պաշտպանել «Հյուսիսային Կողմանց վարդապետների» (տես *Արևելյան վարդապետներ*)՝ Հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնությունն ապա-

հովող տեսակետը: Հաղպատի և Սանահինի վարդապետները չեն ներկայացել ժողովին, այլ մյուս արևելյան վարդապետների հետ գրել ու ստորագրել են մերժող. նամակ՝ պաշտպանելով Հայ եկեղեցու ավանդույթները, հորդորել են կաթողիկոսին չընդունել Բյուզանդիայի առաջարկը: Նամակը ստորագրել է նաև Վ. Հ.:

Գրկ. Ներսես Շնորհալի, Մեկնութիւն «Բարձրացուցեք» ճառի Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ի սուրբ խաչն, «Ճառաքաղ», հ. 3, 1861–62: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Ակինյան Ն., «Վարդան վարդապետ Հաղբատեցի», տես նրա Մատենագրական հետազոտություններ, հ. 1, Վնն., 1922:

Ռաֆիկ Մաթևոսյան

ՎԱՐԴԱՆԱՆՔ, սուրբ Վարդանանք, 451-ի մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտում, հաջորդ օրերի հետապնդումների ու մարտերի ընթացքում ընկած 1036 *վկաները*, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սրբերի, «Հայրենիքի սուրբ նահատակների» հավաքական անունը, որոնք «Հանուն հավատքի և հայրենյաց» կռվել են պարսկ. զորքի դեմ: Ավելի լայն իմաստով՝ պարսկ. տիրապետության դեմ 449–451-ին Հայոց սպարապետ (422-ից) Վարդան Մամիկոնյանի, հոգևոր դասի և սպարապետի կողմնակից նախարարների գլխավորությամբ հայրենիքի ազատագրության, քրիստոնեության և Հայ եկեղեցու պաշտպանության համար հայ ժողովրդի մղած պայքարի՝ Վարդանանց պատերազմի մասնակիցները, նահատակները:

428-ին կործանելով Հայ Արշակունիների թագավորությունը և իր տիրապետությանը ենթակա Հայաստանը վերածելով պարսկ. մարզպանության՝ Սասանյան արքունիքը Պարսից թագավոր Հազկերտ II-ի գլխավորությամբ վարել է հայ ազնվականության ներքին ինքնավարությունը վերացնելու, ժողովրդի քրիստ. հավատն արգելելու, ազգ. ու կրոն. զգացումները ոտնահարելու և բռնի կրոնափոխելու քաղաքականություն: Հոների դեմ հաղթանակից (449) հետո Հազկերտ II-ը հատուկ հրովարտակով հրամայել է կրոնափոխել քրիստոնյա բոլոր հպատակներին և նրանց պարտադրել զրադաշտականություն: Պետականության կորստից հետո քրիստ. կրոնը և Հայ եկեղեցին դարձել էին հայոց ինքնության միակ խարիսխը, և եկեղեց. ու աշխարհիկ իշխանությունները, մտավորականությունը, զինվորականությունը հստակ գիտակցել են, որ Հազկերտ II-ի հրովարտակն ուղղված է ոչ միայն հայոց հավատի, այլև՝ ժողովրդի բուն ֆիզ. գոյության դեմ: 449-ի սկզբին Արտաշատում գումարված հայ նախարարների ու հոգևորականների ժողովը մերժել է Հազկերտ II-ի կրոնափոխության հրամանը: Պարսից արքունիքին մերժող պատասխան են ուղարկել նաև դրացի վրացիներն ու աղվանները: Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանությունների իշխող ներկայացուցիչները կանչվել են Տիզբոն՝ պատասխանատվության: Մահապատժի սպառնալիքի ներքո նրանք ստիպված դիմել են առերես հավատուրացության (հայրենիք վերադառնալու և անհրաժեշտ դիմադրություն կազմակերպելու հույսով): Պատանդներ պահելուց հետո Հազկերտ II-ը հայ նախարարներին՝ 700 մոգի և հսկիչ զորախմբի ուղեկցությամբ, արձակել է Հայաստան՝ նրանց հանձնարարելով մեկ տարում եկեղեցիները վերածել ատրուշանների, հիմնել պարսկ. դպրոցներ, արմատախիլ անել քրիստոնեությունը և տարածել զրադաշտականություն: 449-ի սեպտ. վերջին, երբ Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառի Անգղ ավան ժամանած մոգերը փորձել են տեղի եկեղեցին վերածել ատրուշանի, հայ շինականները՝ *Ղևոնդ Երեցի* գլխավորությամբ, կոտորել են նրանց և ջուրը նետել զրադաշտ. սրբությունը՝ «անշեջ հուրը»: Անգղի օրինակին են հետևել նաև Զարեհավանի բնակիչները: Այդ դեպքերից հետո ժող. տարերային շարժումը ծավալվել է ամբողջ երկրում: Ապստամբության առաջնորդ է ընտրվել Վարդան Մամիկոնյանը: Չնայած բյուզ. Մարկիանոս կայսրը մերժել է օգնել հայերին և այդ մասին գաղտնի տեղեկացրել Հազկերտ II-ին, ուխտապահ նախարարներն ու հոգևոր դասը նախապատրաստվել են դիմադրության: Հայ հոգևորականության մեծ մասի, մասնավորապես Հայոց կաթողիկոս *Հովսեփ Ա Հողոցմեցու* և Ղևոնդ Երեցի արմատական դիրքորոշման և սպարապետ Վարդան Մամիկոնյանի դրսևորած վճռականության ու կամքի շնորհիվ ապստամբ. շարժումը շարունակվել է, չնայած նրանք քաջ գիտակցել են, որ հաջողության հավանականությունը մեծ չէ: Հոգևորականությունը ժողովրդին կոչ է արել նահատակի պսակ ընդունել հանուն հավատի պայքարում, վստահություն ներշնչել հաղթանակի հանդեպ: 450-ի վերջին Արտաշատում գումարված ժողովում ուխտապահ նախարարներն ու բարձրաստիճան հոգևորականները Վարդան Մամիկոնյանին ընտրել են Հայոց տանուտեր՝ ի հակակշիռ Հայոց մարզ-

պան Վասակ Սյունու, որը համագործակցում էր Պարսից արքունիքի հետ և դեմ էր ծավալվող ապստամբությանը: Վարդան Մամիկոնյանը վերականգնել է հայ նախարարությունների և հոգևորականության ոտնահարված իրավունքներն ու արտոնությունները, ամրացրել բերդերը, համախմբել իր կողմնակիցների ռազմ. ուժերը և նախապատրաստվել վճռական գոտեմարտի:

Հայ-պարսկ. սուր հակասությունները հանգեցրել են խոշոր ճակատամարտի Ավարայր գ. մոտ, Տղմուտ գետի ափին: Ճակատամարտից առաջ քահանայից դասը քաջալերել է զորքին, չմկրտվածները մկրտվել են, բոլորը հաղորդվել: Հովսեփ Ա Հողոցմեցու կարգադրությամբ զորականների բազմության առաջ հանդես է եկել Ղևոնդ Երեցը, խրախուսել և ոգեշնչել նրանց, կոչ արել սրտապնդվել հանուն մեծ գաղափարի և հաստատուն հավատով կռվել երկիր ներխուժած թշնամու դեմ: *Ղազար Փարպեցու* վկայությամբ՝ Հովսեփ Ա Հողոցմեցին և Ղևոնդ Երեցը հայ զինվորներին, նախարարներին խրախուսել և գոտեպնդել են «հոգեւոր բանիւք»:

Զորքին ոգևորել և խրախուսել է նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Նա կոչ է արել չվախենալ հեթանոսների բազմությունից և մահկանացուի սրին թիկունք ցույց չտալ, քանզի Աստված իրենց հաղթանակ կտա, իսկ եթե բախտ է վիճակվել մեռնելու պատերազմի դաշտում, ապա այն պետք է ընդունել սրտի խնդությամբ: Խիստ տպավորիչ են Հայոց սպարապետի խոսքերը, թե երկյուղը թերահավատության նշանակ է, ուստի պետք է մեր մեջ մերժել թերահավատությունը, որով և վախն ու երկյուղը կանհետանան մեր մտքից ու խոհերից: Վ-անց հերոսամարտի ականատես-պատմիչ *Եղիշեն* ժողովրդի ազատագր. պայքարի փիլիսոփայությունը, հանուն մեծ գործի գիտակցաբար մահը հանձն առնելու, մահը մահով հաղթելու և Քրիստոսով անմահանալու քրիստ. գաղափարաբանությունն արտահայտել է «Զիմացյալ մահը մահ է, իսկ իմացյալը՝ անմահություն» ասույթ դարձած խոսքերում:

Հայկ. 66 հզ. զորքը դիմակայել է պարսկ. 80–90 հազարանոց բանակին: Ճակատամարտը տևել է մեկ օր, պարսիկները տվել են 3544 զոհ: Ճակատամարտից հետո հայկ. զորքը հեռացել է երկրի խորքերը և շարունակել դիմադրությունը:

Ավարայրի ճակատամարտը կանխորոշել է հայ ժողովրդի ազատագր. պայքարի ելքը: Պարսկ. արքունիքը, համոզվելով, որ հայերին հնարավոր չէ ստիպել ուրանալ քրիստոնեությունը, Հայաստանում սկսել է նոր քաղաքականություն: Զնայած ապստամբության ղեկավարների և հոգևորականների (տես *Ղևոնդյանք*) նկատմամբ հետագա հալածանքներին, Հազկերտ II-ը հարկադրված հետ է կանչել իր զորքին, ճանաչել Հայաստանի ներքին ինքնավարությունը, հրաժարվել բռնի կրոնափոխության ծրագրից, թեթևացրել հարկերը, վարել հայերին սիրաշահելու քաղաքականություն: Իսկ հայ ժողովրդի ազատագր. պայքարը շարունակվել է նաև հետագա տասնամյակներում և 481–484-ին՝ Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորած Վահանանց պատերազմում հասել լիակատար հաջողության ու հաղթանակի: 484-ին կնքված հայ-պարսկ. Նվարսակի պայմանագրով պարսից արքունիքը վերացրել է քրիստոնյաների հանդեպ հալածանքները, քանդել Հայաստանում կառուցած տաճարները, Հայ եկեղեցուն տվել ազատ գործելու իրավունք, իսկ երկրին՝ վարչ. մեծ ինքնուրույնություն:

Վ. դարձել են օտար բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագր. պայքարի, ազգ. ինքնուրույնության պահպանման և աննկուն կամքի դրսևորման խորհրդանիշ: Նրանք հայոց պատմության առաջին նահատակներն էին, որոնք գիտակցել են հայրենիքի զոհասեղանին իրենց կյանքը նվիրաբերելու անհրաժեշտությունը: V դ-ից մինչև մեր օրերը հայոց պատմությունն իր հիմն. խորքով ու էությամբ կրում է Վ-անց հերոսների և պայքարի ազդեցությունը:

Դեռևս V դ. մի հայ ուխտավոր Երուսաղեմի հայկ. սրբատեղիներից մեկում իր ծախսով կերտել է տվել մի խճապատկեր հուշարձան և հայերեն բոլորաձև երկաթագրով գրել, որ այն նվիրվում է Վ-անց պատերազմում զոհված անանուն հերոս նահատակների հիշատակին: Վ-անց է նվիրված Պետրոս Ա Գետադարձի «Արիացեալք» և *Ներսես Շնորհալու* «Նորահրաշ» շարականները: Ավարայրի ճակատամարտի թեման արտացոլվել է միջնադարյան մի շարք հայկ. ձեռագրերի մանրանկարներում: Կիլիկիայի XV դ. Շարակնոցում (Մատենադարան, ձեռ. № 1630) և XV դ. Ճառընտիրում (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 588), Բաղեշի XVI դ. Շարակնոցում (Մատենադարան, ձեռ. № 1920) ճա-

կատամարտն ունի պատկերագր. նույն կառուցվածքը՝ պարսից զորքը նկարված է ձախից, հայոց զորագունդը՝ աջից, կանգնած դեմ դիմաց, մարտն սկսելու պահին:

Վարդան Մամիկոնյանի և Ավարայրի ճակատամարտի թեման արտահայտվել է նաև ժամանակակից հայ քանդակագործների և նկարիչների ստեղծագործություններում: Երևանում Ե. Քոչարի «Վարդան Մամիկոնյան» արձանը օժտված է տարածական տպավորիչ ուրվագծով, սպարապետի կանոնիկ պատկերագրությամբ: Գ. Խանջյանի և Վ. Խորենյանի մեծադիր կտավներում պատկերված է Ավարայրի ճակատամարտը, որտեղ հայ մարտիկներից յուրաքանչյուրի կերպարն ունի շեշտված անհատականություն: Է. Իսաբեկյանը նկարազարդել է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը:

Վարդան Մամիկոնյանի և Վ-անց հերոսների կերպարները XIX դ. 60–70-ական թթ. հայ թատերագրության մեջ և թատրոնում մարմնավորվել են Կ. Պոլսում՝ Ռ. Սետեֆճյանի «Վարդան Մամիկոնյան», Վանում՝ Տ. Ամիրջանյանի «Մեծն Վարդան», Թիֆլիսում՝ Հ. Կարենյանի «Վարդանանց պատերազմ» ներկայացումներում: Գեղ. գրականության մեջ թեմայի լավագույն արտացոլումը Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպն է:

Վաղ միջնադարից սկսած Վարդան Մամիկոնյանին և Վ-անց նվիրված եկեղեցիներ ու վանքեր են կառուցվել Հայաստանի բազմաթիվ նահանգներում, հայկ. գաղթավայրերում, հետագայում նաև՝ սփյուռքում: Ս. Վարդանի անունը կրող հնագույն կառույցը Զովունիի V դ. մատուռ-դամբարանն է, որտեղ, ըստ ավանդության, թաղված է սպարապետի զինակից, Ավարայրի ճակատամարտում իր 19 զինվորների հետ նահատակված իշխան Տաճատ Գնթունին: Վանի Ս. Վարդան եկեղեցում պահվել է Վարդան Մամիկոնյանի մասունքը (ճկույթը): Ռշտունիքում, Նարեկավանքի դիմաց գտնվում է XIII դարից հիշատակվող Ս. Վարդան, Մոկսում, Գավաշ գ. մոտ՝ Ս. Վարդան Զորավար, Հայոց ձորում՝ Ս. Վարդան վանքերը ևն: Ս. Վ-անց նվիրված վանքեր կան Համշենում՝ Տրապիզոնի մոտ, և Բարձր Հայքում՝ Սյուրմենե գ. մոտ: Նախիջևանում, Աստապատ ավանի մոտ Ս. Վարդան վանքը (XVII դ.) Արաքս գետի ջրամբարի կառուցման հետևանքով մնացել է ջրի տակ: Ախալցխայի հվ. բարձունքի վրա կանգուն է Ս. Վարդանանք գմբեթահարկ եկեղեցին (XIX դ.): Կոտայքի մարզի Ալափարս գ. Ս. Վարդան Զորավար եկեղեցու (1857) բեմի վրա դրված է սև գույնի քար, որը, ըստ ավանդության, ներկված է Վարդան Մամիկոնյանի արյունով (քարը բերվել է Մակու քաղաքից, երբ բնակիչները գաղթել են Պարսկաստանից և հաստատվել Ալափարսում):

Սփյուռքում կառուցված Ս. Վարդան անունով եկեղեցիների շարքում հայաոճ ճարտյամբ առանձնանում են ԱՄՆ-ում՝ Նյու Յորքի, Լիբանանում՝ Բեյրութի, Ռուսաստանում՝ Կիսլովոդսկի (օծվել է 1997-ին) եկեղեցիները:

Հայ եկեղեցին ս. Վարդան Մամիկոնյանի և ս. Վ-անց 1036 վկաների հիշատակը տոնում է *Բուն Բարեկենդանին* նախորդող հինգշաբթի օրը:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.2, 1–3-րդ պատկերները:

Գրկ. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1994: Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982: Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1985: Գարագաշյան Ա., Քննական պատմութիւն Հայոց, մաս 4, Թ., 1895: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Գուշակյան Թ., Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1939: Լեո, Երկ. ժող., հ. 2, Ե., 1967: Վարդանյան Վ., Հայ հոգևորականները 450–451 թթ. ժողովրդազատագրական պատերազմի հորձանուտներում, «Էջմիածին», 2000, № 10: *Еремян С.Т., Народно-освободительная борьба армян против персов в 450—451 гг., ВДИ, 1951, № 4.*

Մաքսիմ Կատվալյան
Մուրադ Հասրաթյան

ՎԱՐԴԱՊԵՏ, Հայ առաքելական եկեղեցու կուսակրոն քահանայության գիտական աստիճան: Նշանակում է ուսուցիչ, ուսման առաջնորդ, մեկնիչ, որից և վարդապետել՝ սովորեցնել, քարոզել, մեկնել: Հին կտակարանում օրենքի Վ-ները մեծ ազդեցություն և հեղինակություն են վայելել իրենց գիտակցությամբ և ուսումնականությամբ, օրենքի իմացությամբ ու մեկնությամբ: Նոր կտակարանում ևս Վ-ները մեծ տեղ են գրավում եկեղեցու հոգևոր կյանքում: Առաքյալների ժամանակ եղել են Հին կտակարանին խորամուտ Վ-ներ, որոնք մեկնաբանել են մարգարեական գրքերը, քարոզել Աստծո խոսքը և ուսուցանել: Պողոս առաքյալի վկայությամբ, Վ. եկեղեցու երեք գլխավորներից մեկն էր՝ առաքյալներից և մարգարեներից հետո, որ Աստված կարգեց եկեղեցում և զորավոր գործեր

ՎԱՐԴԱՊԵՏ. կատարելու շնորհներ պարգևեց (Ա. Կորնթ. **12.**28):

Հայ եկեղեցում Վ. կոչման գործածությունը գալիս է վաղ շրջանից. առաջին մեծ Վ. է համարվում *Մեսրոպ Մաշտոցը*: Վ. բառը հայ մատենագրության մեջ հիշատակվում է «ուսուցիչ» իմաստով: Վ-ի տիտղոս ունեցող հոգևորականն իրավունք և իշխանություն է ստանում Աստծո խոսքը մեկնելու, քարոզելու, ուսուցանելու և ի նշան այդ կոչման՝ եկեղեցում կարող է քարոզելու ժամանակ վարդապետ. *գավազան* բռնել: Եղել են եպիսկոպոսներ, պատրիարքներ՝ չունենալով Վ-ի գիտ. կոչում: Մեծ է Վ-ների վաստակը հայ մատենագրության, աստվածաբանության, արվեստի և մշակութ., եկեղեց. կյանքում: V դարից սկսած Հայ եկեղեցին լուրջ ուշադրություն է դարձրել այն հոգևոր կենտրոններին՝ դպրեվանքեր, համալսարաններ, *վարդապետարաններ*, որտեղ պատրաստել են ապագա Վ-ներ: Միջնադարյան Հայաստանի այդպիսի մեծահամբավ կրոն. և գիտ. կենտրոններից էին՝ Էջմիածնի դպրոցը, Այուդայց, Խորանաշատի, Սանահինի վարդապետարանները, Նարեկավանքը, Գլաձորի ու Տաթևի համալսարանները ևն:

Հայ եկեղեցին ունի վարդապետ. տասնչորս աստիճաններ, որոնք որպես տիտղոս և կոչում շնորհվում են ուսումնառությունն ավարտած և ավարտաճառ ներկայացրած կուսակրոն քահանաներին հատուկ արարողությամբ՝ հնում ծայրագույն կամ մեծ Վ-ների, ներկայումս՝ միայն եպիսկոպոսների կողմից: Առաջին չորս աստիճանները կոչվում են մանավոր վարդապետություն, իսկ մնացած տասը՝ ծայրագույն վարդապետություն: Վ. և ծայրագույն Վ. համապատասխանում են եվրոպ. աստվածաբանության արտոնավորի և մագիստրոսի գիտ. աստիճաններին: *Մխիթար Գոշն* իր «Դատաստանագրքի» «Յաղագս դատաստանաց վարդապետաց» բաժնում կանոնադրել է վարդապետ. կարգը, իսկ *Գրիգոր Տաթևացին*՝ վարդապետ. տասնչորս աստիճանները և նրանց տվչության կարգը, ինչը մտել է Մաշտոց և ներկայումս գործածվում է Հայ եկեղեցում:

Վ. են կոչվում նաև համաքրիստ. կամ Ընդհանրական և Հայ եկեղեցու սուրբ հայրերը (տես *Եկեղեցու հայրեր*), որոնք մտել են Տոնացույց և Հայ եկեղեցու տոնելի սուրբեր են՝ «երկոտասան վարդապետք» (համաքրիստ. սուրբ հայրեր), «եկեղեցւոյ սուրբ հարք», «վարդապետք եկեղեցւոյ», «թարգմանիչ վարդապետք» անուններով:

Գրկ. Կյուլեսերյան Բ., Վարդապետության աստիճանները Հայ եկեղեցվո մէջ, Անթիլիաս, 1980:

Արտաշես Ղազարյան

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ, վարդապետանոց, միջնադարում վանքերին կից բարձր կարգի դպրոց, որի շրջանավարտներին կարող էր շնորհվել *վարդապետի* գիտական աստիճան և ինքնուրույն գործելու (դպրանոց հիմնելու, վարդապետելու, քարոզելու ևն) իրավունք: Ունեցել է կանոնադրություն, ուսումնական. աստիճանավորում, ավարտաճառերի պաշտպանություն: Ուս. ծրագիրը ընդգրկել է հոգևոր և աշխարհիկ կրթությանը վերաբերող առարկաներ՝ Սուրբ Գիրք, աստվածաբանություն, փիլիսոփայություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, մատենագիտություն, թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, գրչության արվեստ, մանրանկարչություն, երաժշտություն, խազագիտություն ևն:

Վ-ները եղել են նաև գրչության, գիտության ու մշակույթի արդասաբեր կենտրոններ: *Ձեռագիր մատյանները* հիմնականում գրվել, ընդօրինակվել, նկարազարդվել, կազմվել ու պահպանվել են Վ-ներում: Անդրանիկ Վ. հիմնադրվել է *Վաղարշապատում*: Մեծահռչակներից են եղել Այուդայց, Արշարունյաց, Սանահինի, Սևանի, Անիի, Հաղպատի, Տաթևի, Գոշավանքի, Խորանաշատի, Խոր վիրապի, Մշո Առաքելոց, Գլաձորի, Հերմոնի, Գեղարդի, Երզնկայի, Խառաբաստա վանքի, Ամրդոլու, Մեծոփավանքի և Կիլիկյան Հայաստանի Դրազարկի, Ակների, Արքակաղնիի, Հռոմկլայի, Սկևռայի, Գոնեի վանքերի Վ-ները, որոնք տվել են հոգևոր, մշակույթի, գիտության, հաս. ու քաղ. բնագավառների բազմարդյուն գործիչներ:

Գրկ. Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1946: Քասունի Ե., Պատմութիւն հին հայ դաստիարակութեան, Բեյրութ, 1959: Սարգսյան Ե., Միջնադարյան Հայաստանի վարդապետարանները և Ս. Գեղարդա վանքի մշակութային կյանքը, «Էջմիածին», 1982, № 3:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ուսմունք, ուսուցում (հուն.՝ *διδασκαλια*, *διδαχή*, լատ.՝ doctrine), *աստվածաբանության* մեջ Վ. եզրով բնորոշվում է ուղղափառ *դավանանքի* վրա հիմնված *հավատի* ուսուցումը, որն անհրաժեշտ է փրկության համար: Քրիստ. Վ. *Սուրբ Հոգու* սրբազան *ավանդության* անբաժանելի մասն է.

Աստծո Հոգին մշտապես ներգործում է *եկեղեցում* որպես կենդանի ուսուցիչ և հոգևոր կյանքի առաջնորդ: Ճշմարիտ Վ. հաստատվում և վավերացվում է եկեղեցու փորձառությամբ: Եկեղեցին Աստծուց շարունակաբար տրվող հայտնութենական ճշմարտությունների ոչ միայն կենդանի կրողն է, այլև՝ այդ ճշմարտությունները վարդապետ. ուղիներով փոխանցողը: Վ-յան պատմ. փոխանցումը տեղի է ունենում Աստծո «սրբազան անթների՝ *եկեղեցու հայրերի* և *վարդապետների* միջոցով, որոնց տրված է առանձնահատուկ վարդապետ. շնորհ: Վարդապետ. գիտելիքի արդասավորման համար անհրաժեշտ է, որ այն իրագործվի սեփ. փորձառությամբ՝ թե՛ ուսուցանողի և թե՛ ուսուցանվողի կողմից:

Քրիստ. Վ. փիլիսոփայական համակարգ չէ, այլ ճշմարիտ Վարդապետի՝ *Հիսուս Քրիստոսի* փրկագործությամբ հաստատված կյանքի գիտություն, որ տանում է մարդուն դեպի հավիտենական կյանք: Քրիստ. Վ. մշտապես նորոգվում է Սուրբ Հոգու շարունակական ուսուցմամբ.«Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի իմ անունով, նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչը ես ասացի ձեզ» (Հովհ. **14**.26):

Քրիստ. Վ. նույնացվում է կատեխիզիսի հետ, որը նախապես նշանակել է հավատքի ուսուցում մկրտության նախապատրաստվողների համար, սակայն այսօր գործածվում է ավելի լայն իմաստով՝ որպես քրիստ. հավատքի ընդհանուր ուսուցում:

Մեսրոպ քհն. Արամյան

ՎԱՐԴԱՎԱՌ, Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Այլակերպութիւն, Հայ եկեղեցու հինգ *Տաղավար* տոներից: Համաձայն Ավետարանի՝ Քրիստոսն իր քարոզչական գործունեության երրորդ տարվա ամռանը, իր մահվան և հարության մասին առաքյալներին հայտնած կանխասացությունից վեց օր հետո, Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Հիսուսը նրանց առաջ պայծառակերպվում և այլակերպվում է. «դեմքը փայլեց ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ՝ ինչպես լույսը» (Մատթ. **17**.2, հմմտ. Մարկ. **9**.2, Ղուկ. **9**.29): Աչակերտների ապշած աչքերի առջև Քրիստոսը խոսում է շուրջ հազար տարի առաջ վախճանված Մովսեսի և հրեղեն կառքով երկինք համբարձված Եղիա մարգարեի հետ: Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ նրանք խոսում էին Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի դեպքերի մասին, որ տեղի պիտի ունենային Երուսաղեմում (Ղուկ. **9**.31): Շուտով մի ամպ հովանի է լինում իրենց, և մի ձայն ամպի միջից ասում. «Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեցեք» (Մարկ. **9**.6, հմմտ. Մատթ. **17**.5, Ղուկ. **9**.35):

Ի հիշատակ այս իրադարձության՝ եկեղեցին հաստատել է տոն, որը հայերի մեջ տարածված է Վ. անունով: Որոշ հետազոտողներ և աստվածաբաններ Վ-ի տոնը կապում են Զրհեղեղի և Նոյի՝ տապանից իջնելու հետ՝ միմյանց վրա ջուր ցանելը, աղավնի բաց թողնելը դիտելով իբրև Զրհեղեղն ու նրանից ազատվելը հիշատակող կամ խորհրդաբանող արարողություն:

Հույները և լատինները Վ. տոնում են օգոստ. 6-ին: Հայ եկեղեցին, Գրիգոր Ա Լուսավորչի կարգադրությամբ, նախկինում տոնել է հայկ. տոմարի տարեգլխին, Նոր տարվա առաջին օրը՝ Նավասարդ ամսվա 1-ին, որ համապատասխանում է օգոստ. 11-ին: Ըստ մեկ այլ տեսակետի՝ այս կարգադրությամբ Գրիգոր Ա Լուսավորիչը քրիստոնեացրել է Նավասարդի հեթանոս. այն մեծ տոնը, որը հանդիսավորությամբ կատարվել է հեթանոս. Հայաստանի գլխ. սրբավայրեր Աշտիշատում և նրանից քիչ հեռու ընկած Իննակնյա մեհյանի շուրջը (*Մշո Ս. Կարապետ վանքի* տեղում):

Հայկ. թվականի հաստատումով (551 թ. = հայոց 1 թ.) Վ-ի տոնը բաժանվել է Նավասարդից, կապվել Քրիստոսի Հարության տոնի շարքին և սկսել տոնվել ս. Զատկին հաջորդող 14-րդ կիրակի օրը՝ տատանվելով հունիսի 28-ից օգոստ. 1-ի միջև: Թեև բաժանվել է Նավասարդյան տոնից, սակայն պահպանել է Վ. անունը և հեթանոս. այնպիսի սովորություններ, ինչպիսիք են վարդերով ու ծաղիկներով զարդարվելը, միմյանց վրա ջուր ցողելը, աղավնի թռցնելը ևն: Ինչպես Վ-ի, այնպես էլ մյուս չորս Տաղավար տոներին հաջորդող օրը *մեռելոց* է՝ հիշատակի օր, երբ ննջեցյալների հոգիների համար մատուցվում է ս. Պատարագ և կատարվում հոգեհանգիստ:

Հայ մատենագրության մեջ Վ-ին նվիրված առավել հայտնի երկերից են Մովսես Խորենացու անվամբ կենցաղավարած «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» (Մովսես Խորենա-

ցի, «Մատենադրութիւնք», 1865, էջ 326–338), «Ի մեծի աւուր տապանակին..., որ ի Կարիաթարիմ, որ բերէ զտօն Վարդավառի» («Սոփերք հայկականք», հ. 18, 1854, էջ 71–86) ճառերը, *Գրիգոր Նարեկացու* նշանավոր տաղը («Գոհար վարդն...»), *Ներսես Շնորհալու* տաղերը («Արփիական լոյն...» ևն):

Երաժշտություն: Շարակնոցում Վ-ի Ա օրվա կանոնը («Որ ի լերինն այլակերպեալ») վերագրվում է *Անանիա Շիրակացուն*, իսկ Բ («Ճառագայթ փառաց») և Գ («Այսօր որ էն ի յերկինս բան») օրերի կանոնների երգերը հեղինակել է Ներսես Շնորհալին: Գրչագիր Գանձարաններում ևս պահպանվել են Վ-ին նվիրված մի շարք խազագրված տաղեր և մեղեդիներ, որոնցից մի քանիսը երգվում են առ այսօր: Դրանցից են, օր., Գրիգոր Նարեկացու «Տաղ Վարդավառի», ինչպես նաև անանուն «Այսօր լեառն Թաբոր» և «Լեառն ցնծա՛ դու Թաբոր» տաղերը:

Պատկերագրություն: «Պայծառակերպության» կամ Վ-ի պատկերագրությունն իր կանոնական հորինվածքով, գունային և լուսային համապատասխան հարաբերակցությամբ մասնավոր տեղ է զբաղեցրել հայ միջնադարի մանրանկարչության և արվեստի մեջ: «Պայծառակերպության» տեսարանի հնագույն օրինակն Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարն է (921), սակայն այս թեմայի պատկերումները հայտնի են դեռևս VI դ. բյուզ. արվեստից:

Մանրանկարներում սովորաբար Հիսուսը պատկերվում է Թաբոր լեռը խորհրդանշող բարձունքի վրա, աջ և ձախ կողմերում՝ Եղիա և Մովսես մարգարեները, ներքևում՝ վախեցած կամ զարմացած Պետրոս, Հակոբոս, Հովհաննես առաքյալները: Երբեմն Քրիստոսին նկարում են կլոր կամ էլիպսաձև մանդորլայի (Քրիստոսի փառքի խորհրդանիշը) մեջ: Հին օրինակներում վերևում պատկերվում են Աստծո Աջը, աստղեր, խաչ: Եղիան և Մովսեսը պատկերվում են կիսատ մարմնով, իսկ առաքյալների փոխարեն պատկերվում են երեք դառներ: Հատկապես ուշագրավ են XI–XIII դդ. հայկ. մանրանկարները:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.3, 1-ին պատկերը:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մովսես Խորենացի, Վարդավառի խորհրդի մասին, «Գանձասար», 2, 1992: Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: Ղազարյան Վ., Այուժետային մանրանկարները Կիլիկիայում, Ե., 1984: Մաթեվոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993: Schiller G., Iconography of Christian Art, v. 1, L., 1971.

Եղնիկ եպս. Պետրոսյան
Աննա Արևշատյան
Մարտին Միքայելյան

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Ներսես, Ներսես Բ Վարժապետյան Իսթանպուլցի (ազգանվան անունը՝ Պողոս, 28.1.1837, Կ.Պոլիս – 26.1.1884, Կ.Պոլիս), Կ.Պոլսի հայոց պատրիարք 1874–84-ին: Սովորել է Խասգյուղի (Կ.Պոլսում) Ներսեսյան վարժարանում: 1853-ից զբաղվել է ուսուցչությամբ (Ադրիանուպոլսում, Տարոնում, Նիկոմեդիայում): Վարդապետ է ձեռնադրվել 1858-ին, եպիսկոպոս՝ 1862-ին: 1861-ին, Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ, որպես քարոզիչ մեկնել է Ռումինիա, այնուհետև՝ Տրանսիլվանիա: 1866-ին էջմիածնում մասնակցել է Ամենայն հայոց կաթողիկոս *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու* ընտրությանը: 1872-ին Վ. եղել է Նիկոմեդիայի հոգևոր առաջնորդը: Նրա պատրիարքության տարիներին կրոն. ժողովը կանոնավորել է իր գործունեությունը, հաստատել հոգևոր աստիճան շնորհելու տարիքային նվազագույն սահման: Վ. գործունորեն մասնակցել է «Միացյալ ընկերություն հայոց» կրթասիր. կազմակերպության աշխատանքներին: Օգտվելով 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմից հետո Հայկ. հարցի արծարծման համար ստեղծված նպաստավոր պայմաններից՝ խնդրագիր է ներկայացրել Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ին՝ հայցելով արևմտահայերի պաշտպանությունը: Համագործակցելով Կ.Պոլսի Ազգ. ժողովի հետ՝ մեծ աշխատանք է կատարել Սան Ստեֆանոյի պայմանագրում (1878) արևմտահայերի մասին հատուկ հոդված (16-րդ) մտցնելու համար: Բեռլինի կոնգրեսում (1878) Հայկ. հարցի քննարկումը նախապատրաստելու նպատակով Մկրտիչ Խրիմյանի (*Մկրտիչ Ա Վանեցի*) գլխավորությամբ Եվրոպա է ուղարկել հայկ. ազգ. պատվիրակություն: Շրջահայաց քաղաքականություն է վարել Բարձր դռան, Ռուսաստանի

Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյան

և Մեծ Բրիտանիայի միջև՝ Հայկ. հարցում նրանց բարեհաճ վերաբերմունքը շահելու նպատակով: 1879-ին դիմել է եվրոպ. երկրների ներկայացուցիչներին՝ Հայաստանում բարեկարգումներ անցկացնելու, և անգլ. դեսպանին՝ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը գործադրելու պահանջով, սակայն՝ ապարդյուն: Բարձր դռանը ներկայացրած հուշագրերը նույնպես անպատասխան են մնացել:

Հրատարակվել են Վ-ի «Քրիստոսի սուրբ եկեղեցին և անոր հակառակորդները» (1864) և «Ուսումն համաբարբառ Աւետարանի Տեառն մերոյ» (1875) խորագրերը կրող աշխատությունները: Վերջինս Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանների համեմատական միացումն է՝ գրաբար բնագիր և աշխարհաբար բացատրություններ պարունակող տեղեկություններով ու խորհրդածություններով: Առաջաբանում հեղինակը նշել է, որ համառոտել է «Հնուց և նորոց կարևորագույն բացատրությունները»՝ հենվելով առավելապես Հայ եկեղեցու և սուրբ հայրերի գրվածքների վրա: Այն երկար ժամանակ իբրև կրոնի դասագիրք է ծառայել արևմտահայ դպրոցներում: Վ. 1884-ին ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս, սակայն առողջական վիճակի պատճառով հրաժարվել է:

Գրկ. Օրմանյան Մ., Ազգապատում, մաս 3, Երուսաղեմ, 1927: Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), Ե., 1978: Նույնի, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.), Ե., 1980:

Էմմա Կոստանդյան

ՎԱՐՈՍ ճգնավոր, սուրբ Վարոս, Գյուտ (ծ. և մ. թթ. անհտ), տոնելի սուրբը, V դարի վերջի հայ ճգնավորության նշանավոր ներկայացուցիչներից, Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից: Եղբոր՝ *Թաթուլի* հետ ճգնել է Գաբեղենից (Գաբեղյանց) գավառի լեռներում գտնվող Վիշապաձոր վայրում (արդի Կաղզվան քաղաքի մոտակայքում), ապա առանձնացել և, մարդկանցից լրիվ մեկուսացած, խստակրոն ճգնական կյանք է վարել Դիցմայր (Դիցմայր) կոչված լեռնային քարանձավում: Տարիներ անց մարդիկ պատահաբար գտել են նրան ճգնելիս և, իսկական անունը չիմանալով, անվանել են Գյուտ: Այստեղ հավաքվել են բազմաթիվ ճգնակյացներ և կառուցել Գյուտի վանքը: Առաջնորդ են ընտրել Վ-ին՝ որպես տեսանողի և Սուրբ Հոգու առաջնորդության ունեցողի, և հաստատել վանական կարգ ու կանոն: Վ. վախճանվել է խոր ծերության հասակում և ամփոփվել ճգնավայրում՝ Գյուտի վանքում (ըստ այլ պատումի՝ Գյուտի վանքը կառուցվել է նրա մահից հետո):

Հայ եկեղեցին ս. Վ-ի, ս. Թաթուլի և ս. *Թումասի* հիշատակը տոնում է Խաչվերացի 5-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի օրը՝ ս. *Անտոն* և ս. *Կրոնիդես* ճգնավորների հիշատակի հետ միասին:

Գրկ. Տես *Թաթուլ* ճգնավոր հոդվածի գրկ.:

ՎԱՐՔ, տես *Վարքագրություն*:

«ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ», Հայրերի վարք, քրիստոնեական եկեղեցու նշանավոր *սուրբերի* կյանքը, գործը, խրատական իմաստախոսությունները ու խորհրդածությունները պարունակող ժողովածու: «Վ. Հ.»-ի մաս կազմող միավորներից (հոդվածներից) շատերը թարգմանվել են V դ., հուն-ից, ասոր-ից և հետագայում՝ VIII դ. զետեղվել *Սողոմոն Մաքենացու* կազմած *Ճառընտիր* ժողովածուի մեջ, որի նյութերի թարգմանիչներից է Սիմեոն Միայնակյացը: Նա հիշվում է իբրև թարգմանիչ 70 վարքագր. միավորների: Սիմեոնից զատ, իբրև թարգմանիչներ հիշվում են Ս. Ատոմավանքի վանահայր Գագիկը (IX–X դդ.) և *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսը (1113–66): «Վ. Հ.»-ի ցաքուցրիվ միավորները, առաջին անգամ մեկտեղվելով, ի մի են բերվել 1192-ին, Կիլիկիայի Սկևռա վանքում՝ *Ներսես Լամբրոնացու* հանձնարարությամբ:

XIV դ. Կիլիկիայում հուն-ից և ասոր-ից ի նորո կատարված թարգմանություններով վերստին կազմվել է մի նոր «Վ. Հ.», որն ամենայն հավանականությամբ հիմնված էր ժամանակի ընթացքում առավել ճոխացված հուն. և ասոր. համապատասխան ժողովածուների վրա: «Վ. Հ.» ժողովածուն կազմված է շուրջ 100 զանազանաբնույթ միավորներից, որոնք բովանդակում են անապատական հայրերի վարքն ու բարքը, հոգևոր, կենցաղավարական հրահանգները («Վարք Պաւղոսի Անապատականին», «Անտոնեայ կենցաղական», «Սերապիոնի թուղթ առ աշակերտս Անտոնի», «Վարք Պաւղոսի Միայնակեցի», «Պատմութիւն Մակարայ Եգիպտացւոյ», «Վասն կատարեալ առաքինութեան», «Վասն հանդարտութեան», «Վասն արիութեան եւ համբերութեան», «Սերապիոնի Թումացւոյ բանք»,

ՎԱՐՔԱԳՐ. «Մովսէսի Միայնակեցի առ Ամոն», «Խրատք Նեղոսի» ևն):

«Վ. հ.» լայնորեն կիրառվել է հայ միջնադարի վանական դպրոցներում: Ուս. նպատակների համար այնտեղ առկա առավել ներկայանալի միավորները ներմուծվել են առանձին ժողովածուների մեջ: Այդպիսիներից է *Վարդան Արևելցու* կազմած «Ի Հարանց վարուց քաղածոյ» (Մատենադարան, ձեռ. №№ 108, 657) բնագիրը: Տես նաև *Վարքագրություն*:

Գրկ. Վարք սրբոց հարանց եւ քաղաքաւարութիւնք նոցին..., հ. 1, 2, Վնտ., 1855:

Հակոբ Քյոսեյան

ՎԱՐՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ագիոգրաֆիա, միջնադարյան գրական ժանր, *սրբախոսության* գլխավոր տարատեսակներից մեկը: Եկեղեցու կողմից ընդունված՝ կանոնացված պատմություն սրբի, նրա կյանքի, հոգևոր սխրանքների ու չարչարանքների, կատարած հրաշագործությունների և այլնի մասին: Վ. (ինչպես և *վկայաբանությունը*) սկզբնավորվել է քրիստ. կրոնի հետ մեկտեղ, թեև ունեցել է առավել հին՝ հինկտակարանային սկզբնակերպեր: Վ-յան ձևավորման գործում մեծ է եղել անտիկ շրջանում ստեղծված գրական ժառանգությունը: Այսպես, անտիկ գրականության մեջ հայտնի էին. 1. հիպոմնեմատիկ՝ տեղեկատու-գործնական կենսագրությունը, որտեղ հերոսի կյանքը ներկայացվում էր հատուկ կետերով, 2. գովասանական կամ պարսավող հռետորական կենսագրությունը և 3. բարոյահոգեբանական պատումը (էթյուդ), որն ավելի ուշ առաջ գալով՝ ունեցել է խրատական բնույթ: Այդ երեք կարգի կենսագրություններն էլ փոխանցվել են բյուզ. գրականություն: Սակայն Վ-յան մեջ ավելի շատ զգացվում է բարոյահոգեբանական պատումի ազդեցությունը: Սրբախոսությունը սեփականել է նրա վառ արտահայտված բարոյախոս. բնույթը: Հետագայում երեք կարգի կենսագրությունները միախառնվել են, ինչն իր արտահայտությունն է գտել բյուզ. դասական շրջանի սրբախոսության մեջ (VI–VIII դդ.): Այդ ժանրի հիմքն են հանդիսացել առաջին եկեղեց. հայրերի վարքագր. գրվածքները: Դրանց շարքում հատուկ տեղ է գրավում *Գրիգոր Նազիանզացու* Դամբանաճառը՝ գրված *Բարսեղ Կեսարացու* մահվան առթիվ: *Գրիգոր Նյուսացու*, Գրիգոր Նազիանզացու, Բարսեղ Կեսարացու և IV դ. այլ եկեղեց. հայրերի թղթերում, ճառերում և ներբողյաններում աստիճանաբար ձևավորվել է վարքագրական հերոսի՝ քրիստ. իդեալի և բարոյականության կրողի կերպարը: Կենսագրականների կառուցման սկզբունքներն ամփոփվել են անտիկ աշխարհում լայն տարածում գտած ճարտասանական ձեռնարկների մեջ: Դրանցից էր նաև «Պիտոյից գիրքը», որը V դ., իսկ ըստ ոմանց՝ է՛լ ավելի առաջ, հայտնի էր Հայաստանում: Ըստ «Պիտոյից գրքի»՝ ներբող. վարքն ունի հետևյալ կառուցվածքը. 1. սկսվում է հատուկ առաջաբանով, բացահայտում գրության դրդապատճառը, 2. այնուհետև փառաբանվում է հերոսի ծագումը, 3. դրան հետևում է հերոսի մանկության և ուսումնառության նկարագրությունը, 4. վարքի գլխ. մասը նվիրվում է հերոսի գործունեությանը, 5. հերոսը համեմատվում է որևէ նշանավոր անձնավորության հետ, 6. վարքն ավարտվում է հերոսի վախճանի նկարագրությամբ:

Վարքի կառուցվածքում կարևոր տեղ է հատկացվում առաջաբանին, որը սրբի կենսագրության նախերգանքն էր: Վարքի առանցքը կազմում է հերոսի արարքների, նրա գլխ. գործի նկարագրությունը: Զանց են առնվում երկրորդական դրվագները կամ մտերմիկ բնույթ կրող դեպքերը, քանի որ միայն ժամանակավորից ազատագրված մարդը կարող էր դառնալ Վ-յան հերոս: Հերոսը պետք է լինի բարու և կատարելության ընդհանրացած մարմնավորում: Վ-յան հերոսի դերում հանդես են եկել իրական մարդիկ, և հաճախ նրանց կենսագրությունը գրել են իրենց անմիջական աշակերտներն ու հետնորդները, հանգամանք, որը չէր կարող իր դրոշմը չդնել վերացական իդեալի որոշակի կերպավորումների վրա: Հայկ. վարքերը, նվիրված լինելով մշակութ., եկեղեց., հաս. գործիչներին, մեծ արժեք են ներկայացնում նաև որպես պատմ. աղբյուրներ, հատկապես միջնադարյան համալսարանների, վարդապետարանների, վանական դպրոցների պատմության ուսումնասիրման համար: Մեզ են հասել *Մեսրոպ Մաշտոցի* և *Սահակ Ա Պարթևի* (V դ.), *Մաշտոց Ա Եղիվարդեցու* (IX դ.), *Գրիգոր Նարեկացու* (X դ.), *Հովհաննես Սարկավագի* (XI–XII դդ.), *Ներսես Շնորհալու* (XII դ.), *Սարգիս Շնորհալու* (XII դ.), *Ներսես Լամբրոնացու* (XII դ.), Հովհաննես Վանականի (XII–XIII դդ.), *Ստեփանոս Տեր Հուսկանորդու* (XIII դ.), *Ներսես Մշեցու* (XIII դ.), *Գևորգ Սկևռացու* (XIII դ.), *Մխիթար Սասնեցու* (XIII–XIV դդ.), Մաղաքիա Ղրիմեցու (XIV դ.), *Հովհան Որոտնեցու* (XIV դ.), *Գրիգոր Տաթևացու* (XIV–XV

դդ.), *Գրիգոր Խլաթեցու* (XIV–XV դդ.), *Թովմա Մեծոփեցու* (XIV–XV դդ.), *Մկրտիչ Նաղաշի* (XIV–XV դդ.), Ներսես Անկյուրացու (XV դ.) և այլոց վարքերը:

Հայ Վ.-յան զարգացման փուլերի մեջ առանձնակի տեղ են գրավում V և XI–XII դարերը: Առաջին սրբախոսությունների հետ հայերի ծանոթությունը տեղի է ունեցել դեռևս դրերի գյուտից շատ առաջ: Այդ են վկայում V դ. հայ պատմիչների երկերում պահպանված ասոր. և հուն. սրբախոս. զրույցների ու պատմությունների արձագանքները և հետքերը, IV դ. *Թադեոս* և *Բարդուղիմեոս* առաքյալների վկայաբանությունների, *Գրիգոր Ա Լուսավորչի* վարքի և *Հռիփսիմյանց կույսերի* վկայաբանության առկայությունը հավաստող փաստերը: Սակայն վարք-վկայաբանությունը իսկական զարթոնք է ապրել հայ գրերի գյուտից հետո, առաջին թարգմանիչների ջանքերով, հայ մատենագրություն ներմուծած ասոր. և հուն. Վ.-յան, ինչպես նաև նույն ժամանակամիջոցում ստեղծված հայկ. Վ.-ների շնորհիվ: Ասվածաշնչից հետո ամենավաղ թարգմանություններից էին «Հարանց վարքի» մանակի թարգմանությունները (Աթանաս Ալեքսանդրացու գրչին պատկանող՝ Անտոն Անապատականի, Հերոնիմոսի գրչին՝ Պողոս Անապատականի վարքերը, ապա Մակար Եգիպտացու, Հովհան Գբացու վարքերը՝ թարգմանված հուն-ից, սուրբ Թեկղիի վարքը՝ ասոր-ից, Ապողոնի վկայաբանությունը՝ հուն-ից, Հովհաննես Թեզբացու վարքը՝ ասոր-ից), ապա՝ Մարութա Նփրկերտցու «Վկայք արևելից» ժողովածուն՝ ասոր-ից, Գրիգոր Նազիանզացու ներբողյանները ևն:

V դ. հայկ. Վ.-ները, ըստ թեմատիկ ընդգրկման, հիմնականում հետևյալներն են. 1. հայ ժողովրդի դարձին, քրիստոնեության ընդունմանը նվիրված *Ագաթանգեղոսի* Պատմությունը, որի բաղկացուցիչ մասերն են Գրիգոր Լուսավորչի վարքը և Հռիփսիմյանց կույսերի վկայաբանությունը, ապա *Մովսես Խորենացու* հեղինակությամբ հայտնի Հռիփսիմյանց վկայաբանության մեկ այլ տարբերակը, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների վկայաբանությունների V դ. խմբագրությունները ևն, 2. հայոց գրերը ստեղծող Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Ա Պարթևին նվիրված երկը (*Կորյուն*, «Վարք Մաշտոցի»), 3. *Եղիշեի* «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը, որտեղ ազատագր. պատերազմում զոհված Վարդան Մամիկոնյանն ու նրա զինակիցները ներկայացված են որպես վկաներ: Այդ խմբին են հարում նաև *Շուշանիկի* և *Ատոմյանց* վարք-վկայաբանությունները: Սրբախոսության մեջ առկա են թե՛ ներբողական (Կորյուն, «Վարք Մաշտոցի»), թե՛ ժող. (Փավստոս Բուզանդ, ապա մասամբ՝ Ագաթանգեղոս) տիպի վարքերը: Այս շրջանի Վ.-յան առանձնահատկությունը նրա դեռևս չտարբերակված բնույթն է՝ պատմ., վիպ. արձակի հետ միահյուսված հանդես գալը:

V դ. հայ Վ.-յան ամենամեծ նվաճումն է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: VI–X դարերից պահպանված վարքերից և վկայաբանություններից (Ագաթանգեղոսի երկից սերած Գրիգոր Լուսավորչի որդիների, թոռների համառոտ վարք-վկայաբանությունը), մեզ հասած վարքերի առանձին կտորներից, վարքերի հետագա մշակումներից (Ստեփանոս Սյունեցու վարքի խմբագրությունը՝ պահպանված Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ) կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակաշրջանում գերակշռել են գործնական-տեղեկատու բնույթի վարքերը: IX–X դդ., շնորհիվ Ատոմավանքի վանահայր Գագիկի թարգման. գործունեության, Վ. համալրվել է մի քանի ասոր. վկայաբանություններով: 991–992-ին Հովսեփ Կոստանդնուպոլսեցին հայերեն է թարգմանել բյուզ. *Հայսմավուրքը*, որի հիման վրա կազմվել են հայկ. Հայսմավուրքների հետագա խմբագրությունները: Նույն շրջանի հետ է կապվում վարքի մի նոր ենթատեսակի՝ վարքհիշատակարանի ծագումը, որի առաջին նմուշը Մաշտոց Ա Եղիվարդեցու վարքն է:

XI դարից հայ Վ. թևակոխել է զարգացման մի նոր շրջան, որը որակապես տարբերվում է նախորդից: Այդ շրջանի Վ.-ների վրա իրենց կնիքն են դրել նախ գրական ընդհանուր վերելքը և հայ հասարակության կյանքում տեղի ունեցած կարևոր տեղաշարժերը, ապա՝ սրբախոսության գործն. նշանակության ընդլայնումը, խրատական կողմի խորացումը: XI–XIII դդ. հայ Վ. կրում է նաև իր ժամանակի բյուզ. սրբախոսության ազդեցությունը՝ վերջինիս նման աստիճանաբար վերածվելով «բարձր» գրականության ժանրի: Հայ Վ.-յան բուռն ծաղկմանը մեծապես նպաստել է *Գրիգոր Բ Վկայասերի*, ապա Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու գրական վաստակը: Հսկայական աշխատանք է կատարվել հնագույն վարքերի ու վկայաբանությունների ժողովման,

ՎԵՀԱՓԱՌԻ ընդօրինակման և աստ-ից ու հուն-ից թարգմանելու ուղղությամբ: Վերջնական տեսք է ստացել և լրացվել V դ. թարգմանված «Վարք սրբոց հայոց» ժողովածուն: Ժողովածուի շատ վարքեր ժամանակի ոգով թարգմանվել են երկրորդ անգամ: Միայն Գրիգոր Բ Վկայասերի անունով հայտնի թարգմանությունների թիվն անցնում է մեկ տասնյակից (Հովհան Ոսկեբերանի վարքը, վերջինիս նվիրված Պրոկղի ներբողյանը, Գրիգոր Նազիանզացու, Գևորգ Զորավարի վարքերը, Պարսակևայի վկայաբանությունը, Վարվառայի և Հուղիտայի վկայաբանությունը ևն): Գրիգոր Բ Վկայասերի գրչին է պատկանում նաև «Տոնամակ» սրբախոսական-արարողական ժողովածուի վերախմբագրման, ամբողջականացման գործը: XI–XII դդ. հայ Վ-յան մեջ առանձնացվում են. 1. վարքեր և ներբողյաններ՝ նվիրված ժամանակի հոգևոր և մշակութ. խոշոր գործիչներին (Վարդան Արևելցու ներբողյանները՝ նվիրված Գրիգոր Բ Վկայասերին, Ներսես Շնորհալուն, Գրիգոր Սկևռացու ներբողյանը՝ նվիրված Ներսես Լամբրոնացուն ևն), 2. ներբողյաններ՝ նվիրված անցյալի գործիչներին (Վարդան Արևելցու ներբողյանները՝ նվիրված Գրիգոր Ա Լուսավորչին, Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Ա Պարթևին): Հիշյալ գովասանական-հռետոր. բնույթի վարքերի կողքին ստեղծվել են նաև ժող. ուղղությանը հարող տեղեկատու տիպի վարքերի տարբեր տարատեսակներ. 1. պարզ պատմողական, 2. հայսմավուրքային, 3. հիշատակարանատիպ: Սրանց թիվը գնալով աճել է և XIV–XV դդ. Վ-յան մեջ գերակշռող դարձել: XI–XV դդ. գրված պարզ-պատմող. վարքերն են Հովհաննես Սարկավագի, Ստեփանոս Տեր Հուսկանորդու, Ստեփանոս Սյունեցու վարքի՝ Մխիթար Այրիվանեցու խմբագրությունը, Գրիգոր Խլաթեցու, Թովմա Մեծոփեցու, Գրիգոր Տաթևացու և այլոց վարքերը: Սրանց բաղկացուցիչ մասն են կազմում տեսիլքներն ու հրաշապատումները: Սակայն կենցաղային, առօրեական տարրերը աստիճանաբար դուրս են մղում առաջին շրջանին բնորոշ հրաշքների ֆանտաստիկ տարրերը:

X–XV դդ. լայն տարածում են ստացել գործնական-արարողական ժողովածուները: Հայտնի են Հայսմավուրքների մի քանի՝ Տեր-Իսրայելի (XIII դ. 40-ական թթ.), Գրիգոր Գանձակեցու, *Գրիգոր Է Անավարզեցու* (XIV դ. սկիզբ), Գրիգոր Խլաթեցու (1401) խմբագրությունները: Հայսմավուրքային վարքերի, վկայաբանությունների, սրբերի հիշատակին նվիրված ընթերցվածքների առանձնահատկությունը, պայմանավորված ժողովածուի գործնական-արարողական պահանջներով, կառուցվածքի միաձևությունն է և ընթերցվածքների համառոտությունը: Հարյուրավոր վարքագրական երկերի դասավորումը, ըստ եկեղեց. Տոնացույցի օրվա, բերում է համապատասխան բանաձևերի մշակման, վարքերի սկսվածքների և եզրափակումների նմանության: Սակայն Հայսմավուրքի առանձին խմբագրությունների վրա իրենց հետքն են թողել նրա խմբագիրների հաս-դավան. դիրքորոշումները և ժամանակը:

Գրական վերելքի ու գրչության զարգացման շնորհիվ XI–XII դարերից զգալի զարգացում և տարածում են ստացել վարք-հիշատակարանները (Գրիգոր Նարեկացու, Ներսես Լամբրոնացու, Մխիթար Սասնեցու, Գրիգոր Տաթևացու, Մկրտիչ Նաղաշի և այլոց): Այս կարգի վարքերի հեղինակները մեծ մասամբ եղել են հերոսների ժամանակակիցներն ու մտերիմները: Նման գրվածքներում խրատաուսուցող. կողմն ունի երկրորդ. նշանակություն, առաջնակարգ են դառնում որոշակի կենսագր. տեղեկությունները: Իրենց բնույթով այս վերջինները մոտ են պատմ. աղբյուրներին: Հիշատակարանատիպ վարքերի տարածումը վկայում է Վ-յան եկեղեց. շրջանակներից դուրս գալու, այլ հատկանիշներ ձեռք բերելու մասին:

XVI–XVII դդ. Վ. նոր առաջընթաց չի ապրել: Գրիչները բավարարվել են հին երկերի ընդօրինակություններով: Երբեմն հանդիպում են հատուկենտ նոր վարքեր, որոնք փաստորեն արդեն նոր ժամանակի կենսագրություններ են:

Գրկ. Տեր-Դավթյան Ք., XI–XV դարերի հայ վարքագրությունը, Ե., 1980: Նույնի, Վկայաբանություն և վարք, տես «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, Ե., 1984: Leo F., Die griechisch-römische Biographie nach ihre literarischen form, Lpz., Teubner, 1901; Mertel H., Die Biographische form der griechischen Heiligen legenden, München, 1909; *Лопарев Х., Греческие жития святых VIII–IX веков, ч. I, П., 1914; Полякова С.В., Византийские легенды, Л., 1972.*

Քնարիկ Տեր-Դավթյան

«ՎԵՀԱՓԱՌԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Վազգեն Վեհափառի Ավետարան», X դ. վերջի – XI դ. 1-ին կեսի պատկերազարդ ձեռագիր մատյան: Գրչի և ծաղկողի հիշատակարանները չեն պահպանվել: Մեզ հասած առաջին հիշա-

տակարանը (1088) ձեռագրի նորոգման մասին է: Հետագա հիշատակարաններից (XV դ. կեսից) տեղեկանում ենք, որ ձեռագիրը գտնվել է Գեղարքունիքի գավառում, ապա տերերի հետ տեղափոխվել Արցախ-Խաչեն (XVIII դ.՝ Խադավանք): 1978-ին *Վազգեն Ա Պալճյանը* ձեռագիրն ստացել է Մ. և Թ. Անթիկյաններից և նվիրել Մատենադարանին (ձեռ. № 10780): Չափերը՝ 30,5x22 *սմ*, բաղկացած է մագաղաթե 265 թերթից, երկսյուն է, ուղղաձիգ երկաթագիր:

«Վ. Ա.» իր մանրանկարներով V–X դդ. ձեռագիր մատյանի և *մանրանկարչության* զարգացման ուղին մատնանշող օղակներից է և այդ առումով ունի նույն նշանակությունը, ինչ VI–VIII դդ-ից պահպանված ասոր. և հուն. հատուկենտ ձեռագրերը և պատառիկները: Այն հատկապես ուշագրավ է ձեռագրի էջի և տեքստադաշտին ուղղահայաց (հիմքով դեպի խորքի լուսանցքը) նկարների հարաբերությամբ, ինչից կարելի է եզրակացնել, որ ձեռագրի մանրանկարների համար օրինակ է ծառայել գալարաթերթը կամ գալարից արված ընդօրինակությունը (սերում է ասորա-պաղեստինյան միջավայրից) և այնքան հնավանդ է, որ չի շեշտում եկեղեց. գլխ. տոների պատկերաշարը (դրանք առանձնացվել և որոշակիորեն կազմավորվել են Բյուզանդիայում՝ IX դ., Վասիլ I կայսրի և Կ.Պոլսի Փոտ պատրիարքի ջանքերով): Այդ տեսակետից ձեռագիրը եզակի է նաև թե՛ ասոր., թե՛ հուն. ձեռագրերի շարքում, իսկ ոճի յուրահատուկ նախնականությամբ մի կողմից հասնում է վաղ արևելաքրիստ. ակունքներին (մինչև ասոր. Դուրա-Եվրոպոսի մատուռի և սինագոգի III–IV դդ. որմնանկարներին), մյուս կողմից՝ ոճական առումով թերևս սկիզբ դառնում 1038-ի Ավետարանի (Մատենադարան, ձեռ. № 6201) և X–XI դդ. «*Ծուղրութի Ավետարան*»-ի նման ձեռագրերի պատկերների համար (նուրբ ուրվագիծ, ջրաներկված շեշտադրումներ, ֆրիզաձև կամ միմյանց վրա պատկերված խմբեր): Ինչպես 1038-ի Ավետարանի, այնպես էլ «Վ. Ա.»-ի որոշ նկարների վրա կան հուն. մակագրություններ («Ավետման» տեսարան, ավետարանիչների պատկերներ): Ձեռագրի մանրանկարները (գեղ. որոշակի լեզուն՝ հատկանշված ուրվագծով, ջրաներկված շեշտադրումներով, ֆրիզաձև կամ միմյանց վրա պատկերված խմբերով, յուրահատուկ զարդային ռիթմով) մատնանշում են Բյուզանդիային մոտ գտնվող տարածաշրջանների (Փոքր Հայք, Կապադովկիա) մանրանկարչության հետ «Վ. Ա.»-ի աղերսները: Մյուս կողմից՝ «Վ. Ա.»-ում առկա ավետարան. այուժետային դրվագները, Քրիստոսի հրաշքներն ու առակները ներկայացնող տեսարանները, երբ կան որոշակի շարքեր (ինչպես «Խաչելության» շարքը մի քանի դրվագներով, որտեղ խաչի վրա մերկանդամ Քրիստոսի առաջին պատկերներից մեկն է), ներկայացնում են մի համակարգ, որն իր լիակատար զարգացումն է գտնում կիլիկյան մանրանկարչության մեջ (*Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, «Ութ մանրանկարիչների Ավետարան»*): Մերձավորարլ. մի հնավանդ ավանդույթ ևս կա «Վ. Ա.»-ում, այն է՝ նկարների մեջ և դրանց առընթեր մակագրությունները, երբ հաճախ մեկի բերանից դուրս եկող խոսքը արձանագրվում է մինչև մյուսի ականջը և իր բովանդակությամբ (քաղվածք Ավետարանից և բացատրություններ) հուզական հավելյալ լիցք տալիս մանրանկարներին և շեշտում դրի հանդեպ պաշտամունքը: Այդ ավանդույթը (ավելի զուսպ արտահայտչաձևերով) հետագայում շարունակվել է Փոքր Հայքի (XI դ.) և ավելի մանրամասն՝ երբեմն Վասպուրականի մանրանկարչության մեջ (XIII–XV դդ.): Կերպարների անհամաչափ կառուցվածքը չի խոչընդոտում հուզական ռիթմին և ձեռքերի արտահայտիչ շարժումներին, որոնք կատարելության են հասնում կիլիկյան մանրանկարչության մեջ: «Վ. Ա.»-ի խորաններ նման են 1038-ի Ավետարանի խորաններին: Ձեռագրում հանդիպում ենք հայ մանրանկարչության մեջ պատվիրատուի մեզ հայտնի առաջին պատկերներից մեկին (թերթ 5ա). թվում է՝ նա միացած է «Հովիվների և մոգերի երկրպագությանը» և նկարված օրանտի (աղոթողի) տեսքով՝ ձեռքերը վեր պարզած:

Բոլոր այդ հատկանիշները ձեռագիրը դարձնում են անզուգական և կապող օղակ վաղ և հասուն միջնադարի դրքարվեստի միջև:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.3, 2-րդ պատկերը:

Գրկ. Մաթևոսյան Ա., «Վեհափառի Ավետարանը», «Էջմիածին», 1978, № 5: Մաթևոսյան Ա., Իզմայլովա Տ., «Վազգեն Վեհափառի Ավետարանը». Ժ դար (նմանահանություն), Ե., 2000: *Матенадаран, т. 1. Армянская рукописная книга VI—XIV веков, составление и авторы текста В. Казарян, С. Манукян, М., 1991.*

Վիգեն Ղազարյան

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, տես *Մխիթարյան միաբանություն*:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ, Ննջումն Աստվածածնի, *Մարիամ Աստվածածնի* երկինք փոխադրվելու հիշատակի օրն է, որ Հայ եկեղեցին տոնում է ս. Աստվածածին, Փոխում, Ննջում, Վերափոխում անունների ներքո: Հայ եկեղեցու հինգ *Տաղավար* տոներից է, կատարվում է օգոստ. 15-ի մերձակա կիրակի օրը (օգոստ. 12–18-ը), ունի շաբաթապաս, *նավակատիք* և *մեռելոց*:

Մարիամ Աստվածածնի վերափոխման մասին Նոր կտակարանում հիշատակություններ չկան: Գոյություն ունի մի ավանդություն, ըստ որի, Հիսուսը համբարձվելուց առաջ, Ձիթենյաց լեռան վրա առաքյալներին պատվերներ տալիս՝ մորը խոստացել է տանել իր մոտ: Քանի որ *խաչելությունից* առաջ Հիսուսը Հովհաննես առաքյալին էր ասել. «Ահա քո մայրը»: Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ» (Հովհ. 19.27), Տիրոջ համբարձումից հետո Աստվածամայրը տասնհինգ տարի ապրել է Հովհաննես առաքյալի խնամակալության ներքո և սպասել Որդու խոստմանը: Ննջելուց հետո Աստվածամորն առաքյալները հուղարկավորել են Գեթսեմանիի պարտեզում, որտեղ, ինչպես ավանդությունն է վկայում, թաղումից հետո երեք օր անընդմեջ հրեշտակների օրհնության ու փառաբանության երգերն են հնչել: *Բարդուղիմեոս* առաքյալը, որ ներկա չի եղել հուղարկավորությանը, վերադառնալով Երուսաղեմ և իմանալով ս. Կույսի ննջումի մասին, ստիպել է առաքյալներին բացել գերեզմանը՝ գոնե Տիրամոր դեմքը տեսնելու և նրան վերջին հրաժեշտը տալու համար: Սակայն, ի զարմանս առաքյալների, մարմինը գերեզմանում չեն գտել և հասկացել են, որ հրեշտակների երեքօրյա փառաբանության երգերը Աստվածածնի երկնային արքայության վերափոխմանն են վերաբերել, և որ Հիսուսը մորը չի թողել գերեզմանում, այլ, իր խոստման համաձայն, հարություն է տվել ու տարել իր մոտ: Այս ավանդության վրա հիմնվելով՝ *եկեղեցու հայրերը* հաստատել են ս. Աստվածածնի Վերափոխման տոնը:

Հայկ. ավանդության համաձայն, Տիրամոր պատկերը տրվել է Բարդուղիմեոս առաքյալին, որն էլ այն բերել է Հայք: Սկզբում Անձևացիք գավառում (Դարբնաց քար կոչված վայրում) կառուցել են Ս. Աստվածածին եկեղեցին, ապա՝ կուսանոց և *Հոգեաց վանքը*, իսկ պատկերը դրվել է այնտեղ: Շուտով վանքն ու շրջապատը դարձել են ուխտավայր-սրբատեղի, ուր մարդիկ այցելել են պատկերի միջոցով բժշկվելու նպատակով: Դարերի ընթացքում սրբապատկերի հետքերը կորել են, բայց մնացել է տոնը և Աստվածածնի անունը կրող եկեղեցիներն ու վանքերն ուխտի գնալու սովորությունը: Հին Հայաստանում գրեթե յուրաքանչյուր բնակավայր ուներ Աստվածածնի տոնի առիթով ուխտագնացության իր սրբատեղին (եկեղեցի, վանք, մատուռ, խաչքար, ս. մասունք): Երևանի և նրա շրջակայքի բնակչության համար դա հիմնականում Նորքի Ս. Աստվածածին եկեղեցին էր, Ջավախքի համար՝ Վարձիայի Վերափոխման կամ Գյումրու Յոթ վերք եկեղեցիները, Օձունի շրջակա բնակավայրերի համար՝ Օձունի Ս.Աստվածածին կամ Խաչգունդ եկեղեցին են:

Հայ եկեղեցին Վերափոխման տոնի օրը ս. Պատարագի ընթացքում կատարում է *Խաղողօրհնեք*, որը տոնի մաս է կազմում:

Երաժշտություն: Վ. Ս. Ա. տոնի շարականները միջնադարյան աղբյուրներում վերագրվում են *Մովսես Խորենացուն* և *Հովհաննես Ա Մանդակունուն*: XII դ. Վերափոխման և Խաղողօրհնեքի կանոնները ճոխացրել և վերանայել է *Ներսես Շնորհալին*, որը և հեղինակել է տոնի Բ և Գ օրերի կանոնների շարականները:

Պատկերագրություն: «Ննջումն Աստվածածնի» պատկերագր. թեմայի տարբերը սկզբնավորվել են IX դ. և զարգացել հետագա դարերում: Հայ արվեստում հնագույն պատկերները Աղթամարի վանքի Ս.Խաչ (921), Անիի Տիգրան Հոնենցի (XIII դ.) եկեղեցիների որմնանկարներն են: Առանձնահատուկ պատկերագր. սկզբունքներով և գեղ. բարձր մակարդակով աչքի է ընկնում «*Թարգմանչաց Ավետարան*»-ի (XIII դ.) համապատասխան մանրանկարը:

«Վերափոխման» տեսարանում սովորաբար ներկայացվում է մահվան մահճում ասես քնած Աստվածածինը, ում շուրջը խմբված են առաքյալներն ու հրեշտակները: Սնարի վերևում ս. Կույսին երկինք փոխադրելու առաքելությամբ հայտնված Հիսուս Քրիստոսն է (պատկերվում է նաև երկնքում՝ հրեշտակների ուղեկցությամբ): Աստվածամոր հոգին պատկերվում է մանկան կերպարանքով: Այն Հիսուսի գրկում է, երբեմն Գաբրիել հրեշտակապետն է իր գրկից մանկանը փոխանցում Հիսուսին:

Գլխավոր այս պատկերի ներքևում որոշ մանրանկարիչների ստեղծագործություններում երևում են Աստվածամոր դագաղին հարվածող Սոփոնիան և նրա ձեռքերը սրով կտրող հրեշտակը: «Վերափոխման» տեսարանում պատկերագր. տարբեր լուծումներ է ունեցել հատկապես այս վերջին գործողությունը, որը ծագում է պարականոն գրքերից:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.3, 3-րդ պատկերը:

Արտաշես Ղազարյան
Աննա Արևշատյան
Մարտին Միքայելյան

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ, տես *Կարգ հիվանդաց և Վերջին օծում*:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, տես *Մխիթարյան միաբանություն*:

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ (պահլավ. vem – քար, արձան և գրություն բառերից, որի տարբերակն է՝ արձանագրություն): Նեղ իմաստով նշանակում է քարի վրա փորագրված գրություն, սակայն գործածության ընթացքում իմաստն ընդլայնվել է՝ ընդգրկելով նաև իրերի, առարկաների, պատերի վրա փորագրված հիշատակության ու մակագրության նմուշները: Գրանյութի առանձնահատկության պատճառով վիմագիրները համառոտել են հաղորդելիքը և քանդակել հիմնականում եզակի օրինակով: Վ-ները բազմաբնույթ են (քաղ., ռազմ., շին., օրենսդր., տնտ., առևտր., կենսագր. ևն) և առաջնակարգ նշանակություն ունեն այս կամ այն ժամանակաշրջանի համակողմանի ուսումնասիրման համար: Դրանց հետազոտությամբ զբաղվում է վիմագիտությունը: Վ. առավելապես տարածված է եղել Հին Եգիպտոսում, Միջագետքում, Հնդկաստանում, Իրանում, Հին Հունաստանում, Հռոմում, Հայաստանում և այլուր: Հնագույնները Ք. ծ. ա. V–III հազարամյակից են:

Հայաստանը Վ-ներով հարուստ մշակութ. միջավայր է. այստեղ հայտնաբերված ամենահին Վ-ները Ք.ծ.ա. XII–VI դդ-ից են (աքքադ. և ուրարտ.), որոնց փոխարինել են արամեերեն, հուն., պահլավ., լատ. արձանագրությունները: Հայ. վիմագրության անդրանիկ նմուշներն ստեղծվել են մեսրոպյան գրերի գյուտից հետո (V դ., Տեկոր, Երուսաղեմ): Պատկառելի թիվ են կազմում VII դ. շին. արձանագրությունները (Բագավան, Բագարան, Մրեն, Նախճավան, Արուճ, Եղվարդ, Ավան, Մցխեթ ևն): Հայոց մեծ թվականը առաջին անգամ գործածվել է Բագավանի 639-ի վիմագրում՝ Հայոց ՁԸ թվականին (88+551): Հայկական վիմագրությանը բնորոշ է թվագրման ստուգությունը (այստեղ անվերապահ է Մովսես Խորենացու ազդեցությունը), բազմաքանակությունը: Վերջինս հետևանք է քաղ. անկայունության, երբ դժվար էր ապահովել վավերագրերի, վճիռների, նվիրատվությունների, հարկային սահմանումների և այլ պայմանավորվածությունների պահպանումը արքունական, կաթողիկոսական կամ իշխանական դիվաններում: Սրբատաշ քարակերտ պաշտամունքային կառույցների պատերը երաշխավորել են, որպես ուխտատեղի, վավերագրերի պահպանման տևականություն և անվերապահ կատարում: Իբրև անփոխարինելի աղբյուր Վ-ները պատմ. շարադրանքում օգտագործել են Մովսես Խորենացին, Սեբեոսը, Ստեփանոս արք. Օրբելյանը, Առաքել Դավրիժեցին, Զաքարիա Քանաքեռցին և այլք: XVIII դարից սկսվել և XIX դ. կաթողիկոս *Ներսես Ե Աշտարակեցու* հորդորով լայն ծավալներ է ստացել վիմագրերի հավաքման և հրատարակման գործը: Հաղարավոր արձանագրություններ են ընդօրինակել և հրապարակել Հովհ. Շահխաթունյանցը, Հ. Շնողեցին, Ս. Ջալալյանցը, Մ. Բրոսսեն, Ն. Սարգսյանը, Ղ. Ալիշանը, Ա. Մխիթարյանը և այլք: Սակայն կազմված անդրանիկ ժողովածուն Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգիրն» է (1913)՝ ակադ. Նիկողայոս Մառի գիտ. խմբագրությամբ: Հայ վիմագրության հավաքման ու վերլուծության մարզում բացառիկ է ակադ. Հովսեփ Օրբելու վաստակը: Նրա գործը շարունակել են հնագետ-վիմագրագետներ Ս. Բարխուդարյանը, Կ. Ղաֆադարյանը, Ա. Քալանթարը և հայագետ Ս. Ա-վագյանը: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստ-ը հրատարակում է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարը (պր. I–VIII, 1960–99): Մեծարժեք են Պ. Մուրադյանի, Գ. Գրիգորյանի, Ս. Սաղումյանի, Գ. Սարգսյանի և այլոց հրատարակությունները:

ՎԻՄԱԳՐՈՒԹ.

Գրկ. Օրբելի Հ., Հայկական վիմական արձանագրությունների գիտական նշանակությունը, տես «Դիվան հայ վիմագրության», պր. I, կազմ. Հ. Օրբելի, Ե., 1966: Բարխուդարյան Ս., Հայկական վիմագրություն, նույն տեղում: *Марр Н., Новые материалы по армянской эпиграфике, ЗВО, 1893, т. VIII, с. 69–103.*

Պարույր Մուրադյան

ՎԿԱ, խոստովանող, նահատակ, մարտիրոս (հուն. *μάρτυρος* – նահատակ, վկա), քրիստոնեական հավատքի համար նահատակված անձ: Վ. են անվանվում հավատքը վկայելու, խոստովանելու, այսինքն՝ Հիսուս Քրիստոսին մինչ ի մահ Աստծո Որդի և Տեր դավանելու և հանուն դրա անձն ու աշխարհը ուրանալու համար [համաձայն Պողոս առաքյալի խոսքի՝ «...նրանք, որ քրիստոսյաներ են, խաչն են հանում իրենց մարմինները՝ կրքերով ու ցանկություններով հանդերձ» (Գաղ. **5.**24)]:

Վ.-ների կամ վկայության նախօրինակները բազմաթիվ են Հին ուխտում. նրանք Աստծո Վ.-ներն էին՝ աստվածային պատգամներին նախանձախնդիր մարգարեներ, նահապետներ, առաջնորդներ, դատավորներ, քահանաներ, զինվորներ, սրբուհիներ, աստվածամվեր անձինք: Եբրայեցիներին ուղղված ընդհանրական թղթում Պողոս առաքյալը հիշատակում է Գեդեոնի, Բարակի, Սամսոնի, Հեփթայեի, Դավթի, Սամուելի և մյուս մարգարեների մասին, որոնք վարել են հավատքի հաղթական կյանքը, շատերն էլ ենթարկվել են տարաբնույթ չարչարանքների՝ մեղսալի կյանքից գերադասելով մահը, «...որպեսզի հասնեն լավագույն հարության» (Եբր. **11.**35):

Վ.-ների գլուխը Հիսուսն է, այն մշտնջենավոր զոհը, որն իր քավչարար արյունը թափեց հանուն մարդու փրկագործության: Նոր կտակարանի ռահվիրա-Վ.-ներից են Հիսուսի *առաքյալները*, որոնք գրեթե բոլորն էլ մարտիրոսական մահով հաստատեցին սուրբ հավատքը: Անդրանիկ Վ. է դիտվում ս. *Ստեփանոս Նախավկան*, որը հետագա Վ.-ների համար դարձել է հոգևոր խիզախության, կատարյալ սիրո ու հնազանդության օրինակ:

Հայ իրականության մեջ Վ.-ների բանակը հաստատագրված է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հիմնադիր-առաքյալների՝ ս. *Թադեոսի* և ս. *Բարդուղիմեոսի* զոհաբերական քարոզչությամբ, նրանց աշակերտների՝ ս. *Ադդե* հայրապետի, Կումսիի, բազմաթիվ ճգնավորների ու անապատականների գործունեությամբ: Հայոց հին Վ.-ներից առավել հայտնի են ս. *Սանդուխտ* կույսը (I դ.), ս. *Ոսկյանք* և ս. *Սուքիասյանք* (II դ.), ս. *Գրիգոր Ա Լուսավորիչը*, ս. *Հռիփսիմյանց կույսերը* և ս. *Գայանյանց* կույսերը, ս. *Մանե* և ս.*Նունե* կույսերը, ս. *Դանիել Քորեպիսկոպոսը*, ս. *Ատոմյանք*, ս. *Վարդանանք*, ս. *Շուշանիկը* (V դ.), ս.*Վահան Գողթնացին* (VIII դ.), ս. *Գոհարինյանք* (XI դ.) ևն:

Հայ եկեղեցին ընդունում է (թեև չի ընդգրկել Տոնացույցի մեջ) Վ.-ների մի ստվար բազմություն ևս, որոնք կոչվում են Հայոց *նոր վկաներ*: Այս հասկացությունը պատկանում է *Հայսմավուրքի* վերջին խմբագիր *Գրիգոր Խլաթեցուն*, որն իր խմբագրության մեջ ոչ միայն ներմուծել է XII–XIV դդ. Վ.-ների *վկայաբանությունները*, այլև հավելել իր ժամանակի մի շարք Վ.-ների կենսագրությունները: Վ.-ների վկայաբանությունների (մինչև XIII դ.) ուսումնասիրման և հրատարակման գործում մեծ ավանդ ունեն Մխիթարյանները (Մ. Ավդերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւնք...», հ. 1–12, 1810–15, «Սոփերք հայկականք», հ. 1–22, 1853–61 ևն): Հետագայում, հայ պատմիչների երկերում, Հայսմավուրքներում սփռված վկայաբանություններն ամփոփելով՝ Հ.Մանանդյանն ու Հ.Աճառյանը հրապարակել են 1155–1843-ի ժամանակահատվածում հայտնի Վ.-ների վերաբերյալ «Հայոց նոր վկաներ» ժողովածուն (1903), որտեղ ցանկերով տրվում են բազմաթիվ Վ.-ներ, նշվում վկայության աղբյուրները, մարտիրոսության հանգամանքները, վայրը, թվականը ևն: Մեսրոպ արք. Աշճյանն իր խմբագրած-կազմած «Սուրբերը և մենք» (1993) գրքում զետեղել է հայոց հին և նոր Վ.-ների (I դարից մինչև 1820-ական թթ.) ցանկերը: Ընդ որում տվել է նաև հայոց Մեծ եղեռնի ապրիլյան զոհերի մի ստվար ցանկ (հոգևորականներ, մտավորականներ)՝ Հայ եկեղեցու և հասարակայնության ուշադրությունը բևեռելով այն կարևոր հանգամանքին, որ թեև հիշյալ նահատակներն անուն առ անուն Տոնացույցի մեջ չեն մուծվել, բայց իրենց անձնուրացությամբ ըստ էության քրիստ. հավատքի Վ.-ներ են:

Հայ եկեղեցին ապրիլյան զոհերի հիշատակը նշում է ապրիլի 24-ին:

Տես նաև *Սուրբեր Հայաստանյայց առաքելական եկեղեցու*:

Գրկ. Յայսմաւուրք, կՊ, 1730: Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հոտին, աղետալի 1915 տարին, Նյու Յորք, 1985: Սուրբերու կեանքը [ժող.], Բեյրութ, 1994: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997: Նույնի, Համաքրիստոնէական սուրբեր, Ե., 1997: Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք [ժող., կազմ. Ռ.Մաթևոսյան], Էջմիածին, 1999: *Армянские жития и мученичество V–XVII вв., пер. с древнеарм., вступ. статьи и примеч. К. Тер-Давтян, Е., 1994.*

Քնարիկ Տեր-Դավթյան
Լևոն Սարգսյան

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, մարտիրոլոգիա, սրբախոսական գրականության գլխավոր տարատեսակներից, միջնադարյան գրական ժանր: Երևան է եկել II–III դդ.՝ քրիստոնյաների դեմ դաժան հալածանքների ժամանակաշրջանում, որպես պատում՝ նվիրված քրիստոնյա նահատակներին, *վկաներին*: III–IV դդ. արդեն Արևելա-Հռոմ. կայսրության սահմաններում մշակվել են Վ.-ների հորինման սկզբունքները՝ նախօրինակ ունենալով հին հուն. հերոսներին նվիրված պատումները: Սակայն քրիստ. դարաշրջանը բերել է նոր գաղափարախոսությանը համապատասխանող հերոսականության իր պատկերացումը, որը խարսխված է հոգևոր-գաղափարական մղման վրա և ոչ մի կապ չունի մարմնավոր արիության հետ: Առաջին քրիստոնյա փիլիսոփաներ *Կղեմես Ալեքսանդրացին* և *Որոգինեսը* քրիստոնյաներին բաժանել են կատարյալների և անկատարների: Կատարյալ քրիստոնյան նա է, ով վստահում է Աստծուն և զոհաբերում իր անձը՝ հանուն նրա սիրո: Ահա կատարելության այս սկզբունքն է ընկած Վ.-յան հիմքում: Այս առումով Վ. և *վարքագրությունը* կամ վարքը ունեն ընդհանրություն՝ երկուսն էլ ոչ թե սովորական, այլ *սուրբի*, կատարյալ մարդու կենսագրություն են: Վ. վկայի հերոս. նահատակության հետ կապված իրադարձությունների պատմությունն է:

Այս ժանրի կառուցվածքի համար հիմք են հանդիսացել այսպես կոչված՝ «իրական ակտերը», որոնք կրել են զուտ դատական հետաքննության բնույթ՝ կազմված նահատակությանը նախորդող դեպքերի նկարագրությունից, հարցաքննությունից և մահապատժից: Վկայի կերպարի բացահայտումը հիմնականում տեղի է ունենում արտաքին բախումների՝ քրիստոնեության թշնամիների (քրմի, հեթանոս տիրակալի) հետ սուր հակադրության միջոցով: Ամենուր տիրում է ծայրահեղ անձնուրացության ոգին՝ վկայի գերմարդկային չարչարանքների նկարագրություն, անսովոր դիմակայում այդ տանջանքներին, վկայի հետ կապված հրաշքներ և տեսիլքներ: Իդեալական-ընդհանրական կերպարների ստեղծման միտումը խորանում է՝ հանգեցնելով ժանրի վերջնական ձևավորմանը (VII–X դդ.). Վ.-ները հագեցվում են աղոթքներով, վկայի ապաշխարանքի, աշխարհիկ կյանքի հրաժարման դրվագներով:

Վ.-յան զարգացումը հայ իրականության մեջ զգալիորեն պայմանավորված է եղել նաև ժողովրդի ողբերգ. պատմությամբ: Եթե Արևելա-Հռոմ. կայսրությունում քրիստոնեության պաշտոն. ճանաչումից հետո արագ թափով զարգացող վարքագրությունը Վ.-յանը մղել է հետին շարք, ապա Հայաստանում Վ. շարունակել է զարգանալ (վարքի կողքին և նրանից ավելի բուռն) ընդհուպ մինչև XVIII դ.: Մեզ են հասել 200-ից ավելի արձակ և մեծաթիվ չափածո Վ.-ներ:

Ամենավաղ շրջանի Վ.-ները կապված են քրիստոնեության մուտքի, ապա հայերի դարձի պատմության հետ (*Թադեոս* և *Բարդուղիմեոս* առաքյալների Վ., ս. *Գրիգոր Ա Լուսավորչի* վարքի և Վ.-յան, ս. *Հռիփսիմյանց կույսերի* Վ.-յան ագաթանգեղոսյան խմբագրություններ): Հերոսների կերպավորման առումով սրանք մեծ ընդհանրություն ունեն ասորահուն. գրական հուշարձանների հետ: Նշված հուշարձանները բնորոշվում են մի ընդհանուր դարձաբան. բնույթով. վկայի, քարոզչի մահվանն անպայման հաջորդում է հեթանոսների դարձը:

V դ. կեսից արդեն Վ.-ների հերոսները ազգությամբ հայեր են, իսկ քրիստոնեությունը Հայաստանում ոչ միայն իշխող կրոն է, այլև՝ ազգապահպանման կարևոր գործոն: Հեթանոսների (քրիստոնյա վկաներին հալածողների) դերում հանդես են գալիս այլազգի՝ օտարերկրյա զավթիչները, և դարձաբան. ոգին այս հուշարձաններում փոխարինվում է ազգ-ազատագրականով. քրիստ. հավատի նահատակ, վկա և հայրենիքի համար զոհված մարտիկ հասկացությունները նույնացվում են: Արդեն *Եղիշեի* պատմ. երկում Վարդան Մամիկոնյանն ու նրա 1036 զինակիցները ներկայացվում են որպես վկաներ և օժտվում վերջիններիս հատկանիշներով: Հայկ. բուն վկայաբան. երկերից շատերի հերոսները նույնպես ազատագր. պայքարում զոհված զորականներ և զինվորներ են, ինչպես Ատոմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին՝ իրենց զինակիցներով, Համազասպ և Սահակ Արծրունիները:

Հայ Վ.-ների ազգ-ազատագր. երանգավորումը վառ արտահայտություն է գտել ս. *Շուշանիկի* և ս. *Վահան Գողթնացու* Վ.-ներում, որոնք հայ միջնադարյան արձակի լավագույն նմուշներից են: Այդ յուրահատկությունը՝ ազգ-ազատագր. երանգավորումը, հատկապես ցայտուն դրսևորվել է V–X դդ. Վ.-ներում, երբ դեռ հայերը վերջնականապես չէին զրկվել պե-

տականությունից և պայքարում էին օտար նվաճողների դեմ:

XI–XII դդ. հայ Վ. թեւակոխել է մի նոր շրջան, որը բնութագրելի է «ժողովրդական» տիպի հուշարձանների տարածումով, Վ-ների գործնական-կիրառական նշանակության ընդլայնումով: «Ժողովրդականացման» միտումը իր արտահայտությունն է գտել նաև Գրիգոր Խլաթեցու (Ծերենցի) Հայսմավուրքի խմբագրության մեջ: Պարզ լեզվով գրված այդ Վ-ները նպատակամիտված էին հավատարմության և հաստատակամության օրինակ ծառայել գոյության անողոք կռվի մեջ գտնվող հայ քրիստոնյային:

XI–XV դդ. Վ-ների հերոսները, կերպարային առումով, «մանրացել» են. հակամարտության հիմքում այժմ ընկած են առօրյա, կենցաղային դեպքերը՝ քրիստոնյայի բռնի ամուսնության փորձ մահմեդ. կնոջ հետ (Խոսրով Գանձակեցի), քրիստոնյայի կողմից պարտքը վճարելու անկարողություն (Թեոդորոս Կեսարացի, Ամենավաղ Դերջանցի), մահմեդ. տիրակալի սանձարձակ վերաբերմունք հայ կնոջ հանդեպ և վերջինիս վկայություն՝ հանուն հավատի և պատվի պաշտպանության (Թամար Մոկացի), դավանափոխ անելու փորձ՝ վկայի նկատմամբ ևն:

XVI–XVIII դդ. վկայաբան. գրականությունը դեռևս շարունակել է գոյատևել: Վ-ները մեծ տեղ են գրավել Զաքարիա Քանաքեռցու և Առաքել Դավրիժեցու երկերում, սակայն արդեն պատմ. պատումների տեսքով:

Տես նաև *Նոր վկաներ* հոդվածը:

Գրկ. Տեր-Դավթյան Ք., XI–XV դդ. հայ վարքագրությունը, Ե., 1980: Նույնի, Վկայաբանություն և վարք, տես «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, Ե., 1984: Գալուստյան Շ., Հայազգի սուրբեր, Ե., 1997: *Полякова С. В., Византийские легенды, Л., 1972; Святые армянской церкви, кн. I, Мученики, Св. Эчмиадзин, 1996.*

Քնարիկ Տեր-Դավթյան

ՎԿԱՅԱՐԱՆ, ս. *վկաների* նահատակման, թաղման տեղում կամ մասունքների վրա կառուցված շինություն: Հայաստանում առաջին Վ-ները, ըստ Ագաթանգեղոսի, կառուցել է *Գրիգոր Ա Լուսավորիչը* Վաղարշապատում, *Հռիփսիմյանց կույսերի* նահատակման վայրում՝ այնտեղ ամփոփելով սուրբերի աճյունները: Առաջին Վ-ները կիսագետնափոր, թաղածածկ, արլ-ից արմ. ձգված դամբարաններ էին, որոնց վրա եկեղեցիներ են կառուցվել (*Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանք, Էջմիածնի Ս. Գայանե վանք, Ամարասի վանք* ևն): V դարից կառուցվել են բավական խոշոր չափերի Վ-ներ՝ ինչպես՝ բազիլիկ (օր., *Երերույքի Ս. Կարապետ վկայարան*), այնպես էլ գմբեթավոր (օր., *Տեկորի Ս. Երրորդություն վանքի* Ս. Սարգիս Վ.) հորինվածքով:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983:

Մուրադ Հասրաթյան

ՎԱՌԱՄՇԱՊՈՒՀ, Վաղարշ Գ (ծ. թ. անհտ – 414), Հայոց Արշակունի թագավոր 389-ից: Հաջորդել է եղբորը՝ Խոսրով Գ-ին, որին Պարսից արքունիքը գահազրկել և բանտարկել էր Անհուշ բերդում՝ Մեծ Հայքը վերամիավորելու և ինքնուրույն քաղաքականություն վարելու մեղադրանքով: Հետևելով Հռոմ. կայսրության օրինակին՝ Սասանյան Պարսկաստանը նույնպես փորձել է իր ազդեցության ոլորտում գտնվող Արլ. Հայաստանում վերացնել Արշակունյաց թագավորությունը: Սակայն հանդիպելով հայ ազնվականության հուժկու դիմադրությանը՝ Պարսից արքա Վռամ կամ Վահրամ IV Կրմանը (388–399) հարկադրված Մեծ Հայքի թագավոր է ճանաչել Խոսրով Գ-ի կրտսեր եղբայր Վաղարշին, որի «հավատարմությունը չահելու» մտոտի հավատով՝ նրան տվել է «Վռամշապուհ» անունը (իր և հոր՝ Շապուհ IV-ի անուններով):

Վ. բարեկամ. և շահավետ հարաբերություններ է հաստատել թե՛ Սասանյան Իրանի և թե՛ Հռոմ. կայսրության արքունիքների հետ, վարել խաղաղ և ողջամիտ քաղաքականություն: Վ-ի հոգածությամբ Հայոց կաթողիկոս. աթոռին վերահաստատվել է *Սահակ Ա Պարթևը*, իսկ նրա տեղապահ ընտրվել *Մեսրոպ Մաշտոցը*: Կառավարման նվիրապետ. համակարգում՝ «Գահնամակում», Վ. նորովի է կարգավորել և Պարսից արքունիքի միջոցով վավերացրել հայ նախարար. տոհմերի տեղերն ու պաշտոնները: Սահակ Ա Պարթևի խնդրանքով Մամիկոնյան տոհմին հատկացրել է պատվավոր 5-րդ «գահը», իսկ նրա փեսա Համազասպ Մամիկոնյանին կարգել Հայոց սպարապետ: 398-ին Հայոց թագավորը մեկնել է Միջագետք և իր հեղինակավոր միջնորդությամբ կանխել պարսկա-բյուզ. թշնամանքն ու զորաբախումները:

Վ. նախքան Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի՝ հայոց նոր գրերի ստեղծմանն աջակ-

ցելու հարցով իրեն դիմելը, ելնելով երկրի պետ. գործերը մայրենի լեզվով վարելու անհրաժեշտությունից, ուղիներ է փնտրել հայերեն նշանագրեր ունենալու համար: Միջագետքում եղած ժամանակ տեղեկացել է ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ դեռևս պահպանված հայկ. հին (նախաքրիստ.) նշանագրերի մասին: Վ. և նրա շուրջը համախմբված պետ. գործիչներն ու մտավորականներն իրենց նախորդների՝ շուրջ մեկդարյա փորձով համոզվել էին, որ օտարերկրյա դպրոցներով և «մուրացածո» լեզուներով (հուն., ասոր., պարսկ.) անհնար է զարգացնել ազգ. կրթությունը, գիտությունը և մշակույթը: Արքունի դպրապետ Վահրիճ Խադունու միջոցով Վ. Եդեսիայից բերել և Սահակ Ա Պարթևին է հանձնել հայոց լեզվի «վաղնջուց գրեալ» նշանագրերը, որոնցով Մեսրոպ Մաշտոցը երկու տարի դասավանդել է նորաբաց հայկ. դպրոցներում: Համոզվելով, որ այդ նշանագրերը պակասավոր են (ըստ *Մովսես Խորենացու*՝ ձայնավոր հնչյունները), Վ.-ի աջակցությամբ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Ա Պարթևը լրացրել և կատարելագործել են դրանք, կարգավորել «հունարեն ալփաբետի նմանությամբ», ապա հանձնարարել ընդհանուր գործածության: Իր 25-ամյա խաղաղ գահակալման ընթացքում Վ. մեծապես նպաստել է Հայաստանի բարգավաճմանը, մասնավորապես՝ ազգ. կրթության վերազարթոնքին և մշակութ. կյանքի բուռն վերելքին, որոնցով սկզբնավորվել է Հայոց ոսկեդարը: Վախճանվել է ծեր հասակում և, հավանաբար, թաղվել Արշակունի թագավորների նոր դամբարան Աղցում:

Գրկ. Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1994: Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Ե., 1997: Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982:

Մաքսիմ Կատվալյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄ, Վիրահայոց թեմ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, առաջնորդանիստը՝ Թբիլիսիի Ս. Գևորգ (Կաթողիկե Ս. Գևորգ) եկեղեցի: Ենթադրվում է, որ թեմը հիմնվել է XII դարում: Առաջնորդանիստն է եղել Տփղիս (Թբիլիսի) քաղաքի Ս. Գևորգ եկեղեցին (XIII դարից): Թեմական առաջնորդների մասին ամենահին հիշատակությունը վերաբերում է XII դ. 70-ական թթ.: Հիշվում է Բարսեղ (Բասիլիոս) արքեպիսկոպոսը, որը 1178-ին մասնակցել է Հռոմկլայի եկեղեց. ժողովին: Նախքան Վ. թ-ի հիմնվելը, դեռևս VII դ. վիրահայ համայնքը ղեկավարել են հայ եպիսկոպոսներն ու քահանաները, հայերն ունեցել են իրենց եկեղեցիներն ու մատուռները: 754-ին Տփղիսում կառուցվել է հայկ. Հրեշտակապետաց եկեղեցին (1593-ին ավերվել է, հիմնովին վերակառուցվել է 1781-ին և վերջնականապես քանդվել 1937-ին): Պատմիչ Ուլխտանեսի վկայությամբ, 850-ական թթ. Տփղիսում գործել է հայ Կիրակոս քահանան, որը գերազանց տիրապետել է վրաց գրին ու գիտությանը: 931-ին կառուցվել է Հարանց վանքը (վերանորոգվել է 1430, 1715-ին, իսկ 1900-ին՝ հայ մեծահարուստ բարերար Ա. Մանթաշովի միջոցներով): Եկեղեցուն կից եղել է հայկ. գերեզմանատուն:

Ըստ հս-արմ. արտաքին պատի արձանագրության, Կաթողիկե Ս. Գևորգ եկեղեցին կառուցել է հայազգի իշխան Ումեկը 1251-ին՝ վերակառուցելով արաբ. արշավանքների ժամանակ հիմնահատակ քանդված եկեղեցին: Եկեղեցու հս. պատի տակ են գտնվում գուսան Սայաթ-Նովայի (ավանդություն) և գեղանկարիչ Գ. Բաշինջաղյանի գերեզմանները: Եկեղեցու բակում են թաղված հայ նշանավոր զորավարներ կոմս Մ. Լոռիս-Մելիքովը, գեներալներ Ա. Տեր-Ղուկասովը, Հ. Լազարյանը, Բ. Շելկովնիկովը և ուր.:

Հետագա դարերում Տփղիսում կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ՝ Մուղնու Ս. Գևորգը (կառուցվել է 1356-ին, նորոգվել՝ 1752, 1860-ին), Նորաշենի Ս. Աստվածածինը (կառուցվել է 1507-ին, նորոգվել՝ 1650, 1795, 1830-ին): Վերջինիս ներսում պահպանվել են XVIII դ. պալատական նկարիչ Հ. Հովնաթանյանի որմնանկարները:

Հիշատակության արժանի են նաև Թիֆլիսի Բեթղեհեմի Ս. Աստվածածին (կառուցվել է XIII դ. 2-րդ կեսին, նորոգվել՝ 1718, 1884, 1898-ին), Կուսանաց Ս. Ստեփանոս (կառուցվել է 1727-ին, նորոգվել՝ 1868, 1910-ին), Ս. Նշան Նիկողայոս (կառուցվել է 1703-ին, նորոգվել՝ 1784, 1868-ին) եկեղեցիները, Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցին: Վերջինս հայ իշխան Բեհբութովները 1655-ին կառուցել են որպես տապանատուն, որը վերածվել է պանթեոնի: Այստեղ են թաղվել հայ մեծանուն իշխաններ, բարձրաստիճան հոգևորականներ, մշակույթի հայտնի դեմքեր Բաֆֆին, Ղ. Աղայանը, Մուրացանը, Գ. Արծրունին, Ջիվանին, Նար-Դո-

սը, Պ. Պռոշյանը, Գ. Սունդուկյանը, Հ. Թումանյանը, Ա. Ծատուրյանը, Մ. Եկմալյանը և ուր.: 1804-ին Թիֆլիսում գործել է շուրջ 35 հայկ. եկեղեցի և մեկ մենաստան: Վիրահայոց թեմի առաջնորդներից շատերը եղել են ականավոր հոգևորականներ, մտավորականներ, հաս-քաղ. գործիչներ, ովքեր ազգանվեր աշխատանք են կատարել ոչ միայն Վրաստանի, այլև համայն հայության կյանքում: Նրանցից վեցը՝ *Սարգիս Դ Վրաստանցին, Հովհաննես Ը Կարբեցին, Ներսես Ե Աշտարակեցին, Մակար Ա Թեղուտցին, Գևորգ Ե Սուրենյանցը, Գևորգ Զ Զորեքչյանը,* հետագայում օծվել են Ամենայն հայոց կաթողիկոս, *Գարեգին Ա Հովսեփյանը*՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Վիրահայոց թեմի առաջնորդներ են եղել բանաստեղծ, մանկավարժ, հաս-քաղ. գործիչ Հարություն վրդ. Ալամդարյանը, Ստեփանոս արք. Արղությանը, որի օրոք Թիֆլիսում կառուցվել է թեմի եռահարկ առաջնորդարանը: 1824-ին Ներսես արք. Աշտարակեցին հիմնել է Ներսիսյան դպրոցը, որը նշանակալից դեր է խաղացել հայոց կրթ., հոգևոր և մշակութ. կյանքում:

1826–28-ի ռուս-պարսկ. պատերազմի ժամանակ Թիֆլիսում Ներսես արք. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի նախաձեռնությամբ ստեղծվել են հայկ. կամավոր. գումարտակներ՝ ռուս. բանակի կովկասյան կորպուսի ռազմ. գործողություններին աջակցելու նպատակով: 1827-ի մայիսի 15-ին Ս. Գևորգ եկեղեցու գավթում առաջին գումարտակին հանձնվել է հատուկ զինադրոշ: Առաջին աշխարհամարտի ժամանակ Վ. թ-ի եռանդուն աջակցությամբ հայկ. կամավոր. ջոկատներ են ստեղծվել Կովկասյան ռազմաճակատում գործող ռուս. բանակը համալրելու և Հայաստանը թուրք. լծից ազատագրելու նպատակով:

Վիրահայոց թեմում իր գործունեությամբ աչքի է ընկել հատկապես արքեպիսկոպոս *Կարապետ Բագրատունին*: Նրա առաջնորդության տարիների ընթացքում կառուցվել են շուրջ 60 եկեղեցի, բազմաթիվ հայկ. դպրոցներ, որոնցից նշանավոր են նոր Կարապետյան վարժարանը (հիմն. 1842–44-ին) Ախալցխայում և Մեսրոպյան արական դպրոցը՝ Ախալքալաքում: 1837-ին Վրաստանում հաշվվում էր 198 հայկ. եկեղեցի, վանք ու մատուռ, իսկ 1903-ին, ներառյալ Արդվին-Արտանուշ շրջանը, եկեղեցիների թիվը հասել է 256-ի: Խորհրդ. իշխանության տարիներին ծավալված բռնությունների և հալածանքների հետևանքով փակվել են թեմի տարածքում գործող գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Թբիլիսիում քանդվել են Կուկիայի Ս. Գրիգոր (կառուցվել է 1789-ին), Հավլաբարի Ս. Կարապետ (կառուցվել է 1400-ին, վերակառուցվել 1790-ին), Ս. Գրիգոր Լուսավորիչ (կառուցվել է 1894-ին), Խարփուրի Ս. Սարգիս (կառուցվել է 1716-ին), Հարանց վանք, Հրեշտակապետաց, Մետեխիի Ս. Վարդան (կառուցվել է 1893-ին), Ջիգրաշենի Ավետյաց Ս. Աստվածածին (կառուցվել է 1704-ին), Նավթլուղի Ս. Գևորգ (կառուցվել է 1897-ին), Խոջիվանքի և այլ եկեղեցիներ ու վանքեր: Վրաստանում VII–XX դդ. կառուցվել է մոտ 650 հայկ. եկեղեցի, որոնցից կանգուն են շուրջ 320-ը:

Թբիլիսիում ներկայումս գործում են Կաթողիկե Ս. Գևորգ և Հավլաբարի Էջմիածնեցոց Ս. Գևորգ, Ախալքալաքում՝ Ս. Խաչ, Նինոծմինդայում (նախկին Բոգդանովկա)՝ Ս. Սարգիս, Ախալցխայում՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Ախալցխայի Ծուղրութ գյուղում ցայսօր պահվում է միջնադարյան արվեստի և մանրանկարչության արժեքավոր ձեռագիր մատյաններ «*Ծուղրութի Ավետարանը*» (X դ.) և «Գինոսենց Ավետարանը» (X դ. 1-ին կես): Վերականգնող. աշխատանքներից հետո սկսել են գործել ևս 4 եկեղեցի Ախալցխայի շրջանում, Ս. Փրկիչը՝ Բաթումում, Ս. Աստվածածինը՝ Մառնեուլի շրջանում:

Վ. թ-ի առաջնորդն է Գևորգ արք. Սերայտարյանը (1973-ից): Մեսխեթ-Ջավախքում առաջնորդական փոխանորդ է նշանակվել Բաբկեն աբեղա Սալբիյանը (2000-ից), Բաթումում հոգևոր հովիվ կարգվել Աբգար աբեղա Հովակիմյանը (1998-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.3, 4-րդ պատկերը, քարտեզը՝ ներդիր XVII-ում, 17.12:

ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻ, Վրաց ուղղափառ եկեղեցի, վրաց ժողովրդի ազգային եկեղեցին: Մայր աթոռը՝ Մցխեթի Կենարար սյուն տաճարում, վանատունը՝ Թբիլիսիի Ս. Սիոն Մայր տաճարում: Համայն Վրաց կաթողիկոս-պատրիարքն է Իլիա Բ (1977-ից, Վ. ե-ու 140-րդ գահակալը):

Վրաց. ավանդությունները (ձևավորված X դ-ից հետո) Վ. ե-ու սկզբնավորումը կապում են Բարդուղիմեոս [Արլ. Վրաստանում (Վիրք)]

և Անդրեաս [Արմ. Վրաստանում (Կողքիս)] առաքյալների քարոզչության հետ՝ հիմնավորելու համար Վ. ե-ու առաքելական ծագումը և ինքնուրույնությունը (ավտոկեֆալությունը) նվիրապետ. խնդիրներ արծարծելիս:

«Վրաստան» հասկացությունն այսօրվա ընդգրկմամբ՝ աղբյուրները հիշատակում են միացյալ թագավորության կազմավորման շրջանից (XI դ.): Քրիստոնեացման շրջանում (IV դ.) այն բաժանված էր երկու մասի՝ Կոլխիդա-Լազիկա (Արմ. Վրաստան) և Իբերիա-Վիրք-Քարթլի (Արլ. Վրաստան): Նոր հավատը Արմ. Վրաստան մուտք է գործել Բյուզանդիայից, Քարթլիում՝ Պաղեստին-Ասորիք-Հայք ճանապարհով:

Համավրաց. ավանդությունը երկրի դարձը կապում է *Հռիփսիմյանց կույսերի* հետ առաքելության եկած *Նունեի* (Նինո) քարոզչության հետ, որն ի նորո է դարձի բերել Վիրքը: VII–VIII դդ-ից հետո մշակված ու խմբագրված նրա «Վարքի» առկա խմբագրություններում և «Վրաց դարձը» երկում Նունեի քարոզչության տարածքն ընդգրկել է Կուր գետից հյուսիս՝ մինչև Կովկասյան նախալեռներ ու Բոդբե, մինչդեռ Հվ. Քարթլիի դարձը կապված է Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Արլ. Վրաստանի այդ երկու հատվածների (Վիրք) վարչամշակութ. միասնականացումն առաջ է բերել Գրիգոր Լուսավորչի և Նունեի պաշտամունքների միահյուսում, իսկ Հայ եկեղեցուց Վ. ե-ու բաժանումից (VII դ.) հետո ազդայնացող Վ. ե. հետզհետե ազդայնացրել-ամբողջացրել է նաև դարձի բերողի՝ առաջավորասիական-հայկ. դիցարանին բնորոշ անուն կրող, «Արմազի դուստր» Նանե-Նունե-Նինոյի պաշտամունքը:

Հայկ., վրաց. աղբյուրները (Մովսես Խորենացի, Փավստոս Բուզանդ, Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Արսեն Սափարացի, Ջուանշեր և ուր.) վկայում են Վիրքում և Այսրկովկասի մյուս շրջաններում Գրիգոր Լուսավորչի ուղարկած քարոզիչների կողմից նոր հավատի տարածման մասին: Հայոց հայրապետը նաև իր թոռ *Գրիգորիսին* ձեռնադրել է Վրաց և Աղվանից եպիսկոպոսապետ: Մինչև հայ-վրաց. եկեղեց. բաժանումը Վ. ե. գործել է՝ ընդունելով Հայ եկեղեցու ավագությունը՝ իբրև առաջինը հավասարների մեջ:

Վրաց-հայկ. աղբյուրները Վիրքի անդրանիկ քրիստոնյա թագավոր են ճանաչում Միհրանին, որի օրոք՝ 355–356-ին (ըստ ակադ. Կ. Կեկելիձեի հաշվարկման), տեղի է ունեցել Վիրքի պաշտոն. դարձը (այլ տարբերակով՝ 337-ին): Վիրքի դարձը պատմող աղբյուրներից հնագույնը (որից էլ օգտվել են հայ և վրաց հեղինակները) Պաղեստինյան Կեսարիայի մետրոպոլիտ (367–395) Գեղասիոսի հաղորդումն է:

Արմ. Վրաստանի քրիստոնեացումն այլ ընթացք է ունեցել. նոր վարդապետությունը նախ ընդունվել է մերձափնյա հուն. բնակավայրերում, ապա աստիճանաբար թափանցել վրաց միջավայր (ըստ *Ագաթանգեղոսի* Պատմության արաբ. և հուն. խմբագրությունների՝ Գրիգոր Լուսավորիչը քարոզիչներ և քահանաներ է ուղարկել նաև Լազերի և Աբխազների երկիր, Արածանիում մկրտել նրանց թագավորներին): Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) տեղեկությամբ՝ լազերը, ափչիլ-աբխազները և Կողքիսի մյուս էթնիկ միավորները վաղուց արդեն քրիստոնյաներ էին: Սակայն հայտնի է, որ լազերի Ծաթե թագավորը 520–522-ին է Կ. Պոլսում ընդունել քրիստոնեություն, իսկ Հուստինիանոս I-ի օրոք (527–565) դեռ կային դարձի եկող համայնքներ: Մինչև VIII–IX դդ. ներառյալ արևմտավրաց. եկեղեցու արարողության լեզուն հունարենն էր, նկատելի էր Կեսարիայի աթոռի ազդեցությունը:

Մինչև Քարթլիի թագավոր Վախթանգ Գորգասալի (V դ. վերջին քառորդ) ձեռնարկած վարչանվիրապետ. բարեփոխումները՝ Վիրքը ներկայացրել է եկեղեց. մեկ ամբողջություն՝ եպիսկոպոսապետի գլխավորությամբ (մյուս եպիսկոպոսները թագավորի, բդեշխի կամ իշխանական տան դրան եպիսկոպոսներ էին): Վախթանգ Գորգասալը 487-ին հաստատել է կաթողիկոս. ինստիտուտ և երկիրը բաժանել 13 թեմի (այդ շրջանից է Վրաց եպիսկոպոսապետը կոչվել կաթողիկոս, ավելի ուշ՝ կաթողիկոս-պատրիարք): Հաջորդ տասնամյակներում թեմերի տրոհումը շարունակվել է. 506-ի Դվինի եկեղեց. ժողովին մասնակցող վրաց եպիսկոպոսների թիվը հասել է 22-ի (բացի կաթողիկոսից ու դրան եպիսկոպոսից): Նոր հաստատված թեմերից էին Հայաստանին սահմանակից Ցուրտավի, Կումուրդոյի և Կածարեթի եպիսկոպոսությունները: VII դ. եպիսկոպոս. աթոռների թիվը հասել է 35-ի: Հայոց օրինակով Վիրքում նույնպես կաթողիկոսությունը ժառանգական էր, և 523-ից

(թագավորության վերացումից հետո) ժառանգման իրավունքը վիճարկել են երկու՝ պարսկամետ և բյուզանդամետ ընտանիքներ:

VI դ. վերջից բյուզ. Մորիկ, ապա Հերակլ կայսրերի արլ. քաղաքականության թելադրանքով Վիրքում գերիշխել է քաղ. և դավան-մշակութ. կողմնորոշումը դեպի Բյուզանդիա: Նորընծա Կյուրիոն կաթողիկոսը որդեգրել է արևմտամետ (բյուզ.) կողմնորոշում, ըմբոստացել է և 608-ին խզել Վ. ե-ու ավանդական մշակութ., դավան. և նվիրապետ. կապը Հայ եկեղեցուց և ընդունել *քաղկեդոնականություն*:

IV–VI դդ. Հայոց և Վրաց եկեղեց-նվիրապետ. կապը և դավան. միասնությունը ծնել ու սնել են գրի ու գպրության (*Կորյունի* վկայությամբ՝ *Մեսրոպ Մաշտոցն* ու նրա օգնական վրացի Ջաղան են վրաց. գրերի հեղինակները), մատենագրության, ծեսերի, տոների, ճարտ. պաշտամունք. կառույցների, մշակութ. ու հոգևոր կերտվածքի բազում ընդհանրություններ: Հայերենից և հայերենի միջնորդավորությամբ են վրաց մշակույթին փոխանցվել մատենագր. ոչ քիչ թվով արժեքներ, որոնց գոյությունն իրեն զգալ է տվել հայ-վրաց. եկեղեց. բաժանումից հետո երկար ժամանակ: Ճանաչվել են ընդհանուր սրբեր, շարժական տոներ ու տոմար, միասնական պահքեր, անշարժ վեմ-սեղան, ժամասացության կարգ և երուսաղեմյան խմբագրության կանոններ ևն: Պակաս խոսուն չեն վրաց եպիսկոպոսապետներին Հայաստանում օծելու, Ներսես Ա Մեծի սարկավագ Հոբ Հային վրաց եպիսկոպոս ձեռնադրելու, Յուրտավի թեմակալ եպիսկոպոսներից ոմանց՝ հայ, ոմանց վրացի լինելու փաստերը ևն:

Հայ-վրաց. եկեղեց. բաժանումից հետո Վ. ե. մինչև XI դ. ճանաչել է Անտիոքի պատրիարքության գերակայությունը (պատրիարքի անվան հիշատակություն, Վրաց կաթողիկոսների օծում, հարկերի վճարում), սակայն արաբ. տիրապետության շրջանում (VII–IX դդ.) հաղորդակցությունը գերազանցապես անվանական էր:

Մինչև Աբխազ. (արևմտավրաց.) կաթողիկոսության կազմավորումը (X դ.) Փազիսում (Փոթի) է նստել Լազիկայի հույն մետրոպոլիտը, իսկ Աբազգական (Աբխազ.) ինքնակա արքեպիսկոպոսության նստավայրն է եղել Սուխումը (Սեբաստուպոլիս-Յիսում-Սոտերիոպոլիս): Կաթողիկոսության ստեղծումից հետո մետրոպոլիտությանը փոխարինել է Ճղոնդիդի եպիսկոպոս. աթոռը, իսկ արքեպիսկոպոսությանը՝ Բիճվինթայի կաթողիկոսությունը՝ երկուսն էլ նվիրապետությամբ նախապես Կ. Պոլսի աթոռին կապված: Միացյալ Վրաստանում Մցխեթի կաթողիկոսությունը պահպանել է իր նախամեծարությունը:

Արևելաքրիստ. ավանդույթի հետ է կապված վրաց վանականության և անապատականության սկզբնավորումը: Վրաց հոգևոր կյանքի այդ ոլորտը կապված է VI դ. «երեքտասան ասորի հայրերի»՝ քրիստոնյա Արևելքի վանական կենտրոններից (մասնավորապես՝ Անտիոքի ու նրա շրջակայքի անապատներից) հալածվող միաբնակների փախուստի և Քարթլիում ապաստանելու հետ: Ենթադրվում է, որ «ասորի» կոչվող հայրերը Արևելքի անապատներում հաստատված վրացի ճգնավորներ էին, քանի որ Վիրքում բնակչության հետ շփվելու լեզվական դժվարություն չեն ունեցել, իսկ նրանցից Դավիթ Գարեջացին, ըստ վարքի տեղեկության, իմացել է նաև հայերեն:

Իբրև արևելաքրիստ. ընտանիքի անդամ Վրաստանը Ասորիքում և Պաղեստինում ունեցել է ազգ. վանքեր ու մենաստաններ: Հետագայում վրաց. միաբանություններ են հաստատվել տարբեր վայրերում՝ կրկին Անտիոք-Սև լեռ, Աթոս (Հունաստան), Ռոմանա (Կ. Պոլսի մոտ), Պետրիծոն (Ֆիլիպուպոլսի մոտ) ևն:

IX դ-ից սկսած նշանավոր վանական-գրչության կենտրոններ են հաստատվել Վ. ե-ուն հարած Տայքի ու Կղարջքի վերազարթոնք ապրող վանքերում: Այդ վանական միությունները եղել են գիտության ու մշակույթի կենտրոններ, հաղորդակցվել Արևմուտքի և Արևելքի քրիստ. եկեղեցիներում ընթացող գրական-մշակութ. աշխատանքների հետ, պայքարել աղանդների ու հերձվածների դեմ: Վրաց ազգ. մատենագրության բարձրարժեք հուշարձաններ (վարքեր, մեկնություններ, ներբողներ, շարականներ ևն) ստեղծվելուց բացի մեծ վերելք է ապրել թարգման. գործունեությունը:

Վ. ե-ու գումարած ազգ-եկեղեց. ժողովներից նշանավոր էր 1103-ին Ռուիս-Ուրբնիսիում Դավիթ Շինարար թագավորի պահանջով հրավիրված ժողովը, որը կոչված էր սաստելու բարձրատոհմիկ ազնվականության ներկայացուցիչների՝ եկեղեց. աթոռներին տիրանալու նկրտումները, կարգավորելու ընտրության արժանավորության, ձեռնադրության տարիքի, անկաշառության և այլ խնդիրներ: Ժողովում քննարկվել է նաև հայերի հետ ու-

նենալիք հարաբերության հարցը. որոշվել է Հայ եկեղեցու ուղղափառ դավանությունը որակել իբրև հերձված և կրկին մկրտություն պահանջել հայադավանությունից քաղկեդոնականության անցածներին (այդ որոշման դեմ է ուղղված *Մխիթար Գոշի* «Յաղագս վրաց» ջատագովական թուղթը): Վրաց Թամար թագուհու և Հայոց Զաքարյան իշխան. տան ռազմաքաղ. դաշինքի թելադրանքով, ինչպես նաև հայ-վրաց. միացյալ բանակում ծիսական հարցերը հարթելու նպատակով Զաքարե Բ Մեծը նախաձեռնել է Լոռեի 1205-ի և Անիի 1207-ի ժողովները (տես *Անիի եկեղեցական ժողով 1207*), որտեղ փորձ է արվել հայ զինվորների համար ևս թույլատրել գործածել (ինչպես վրացիների մոտ) Պատարագի չարժական սեղան: *Արևելյան վարդապետները* Մխիթար Գոշի գլխավորությամբ մերժել են Հայ եկեղեցու կանոններին հակասող այդ ծիսական նորամուծությունը:

Վարչաքաղ. հանգամանքների թելադրանքով XI–XIV դդ. ընդարձակվել են Վ. ե-ու ազդեցության շրջանակները. քաղկեդոն. եպիսկոպոսություններ են հաստատվել Վաղարշակերտում (Զանգլի), Անիում, Կարսում, հունադավան միաբանություններ ձևավորվել *Քոբայրավանքում, Ախթալայի Ս. Աստվածածին վանքում, Հնեվանքում* ևն: Միաժամանակ վրաց հոգևորականությունը քարոզչ. գործունեություն է ծավալել օս-ալանների, լեզգիների, ավարների և հարևան հյուսիս-կովկասյան այլ էթնիկ կազմավորումների շրջանում:

Վրաց պետականության տևական պահպանումը եկեղեցուն ազատ է պահել ոչ հոգևոր խնդիրների ծանրաբեռնումից, ուստի հոգևորականության ջանքերը կենտրոնացվել են կրոն., գրական-մշակութ. ոլորտներում: Վ. ե-ու ներսում տեղական աղանդներ գրեթե չեն ձևավորվել: Սակայն XVI–XVII դդ-ից սկսած Վրաստանը ենթարկվել է պարսկ. և օսմ. նվաճումների, կրել տարածքային մեծ կորուստներ, բնակչությունը ենթարկվել է բռնագաղթերի: Այդ ամենն ուղեկցվել է բնակչության բավական հոծ զանգվածների կրոն. օտարմամբ (լազեր, աճարներ, մեսխեր, ինգիլոներ), մասամբ՝ էթնիկ. այլ գիտակցության արմատավորմամբ: Վ. ե. չի կարողացել բավարար չափով ընդդիմանալ դրսեկ կաթոլիկ վարդապետության քարոզչությանը, ուստի ունեցել է համայնքային կորուստներ: XVII–XVIII դդ. սահմանագլխին Ս.-Ս. Օրբելիանին և որոշ այլ բանագնացներ փորձել են կաթոլիկության հանդեպ ցուցաբերվող հանդուրժողականությունը ծառայեցնել Արևմուտքի հետ քաղ. մերձեցումներին, սակայն շոշափելի արդյունքների չեն հասել: Նույնը վերաբերում է Անտոն Ա կաթողիկոսի դիվանագիտ-մշակութ. գործունեությանը:

1801-ին Վրաց թագավորությունը վերացվել է, և երկիրը միացվել ռուս. կայսրությանը, իսկ 1811-ին Մցխեթի դարավոր ինքնակա կաթողիկոսությունը վերակազմվել է էքզարքության: 1814-ին վերացվել է նաև Արմ. Վրաստանի կաթողիկոսությունը: Շուրջ հարյուր տարի անց, 1917-ի Փետր. հեղափոխությունից հետո Վրաստանը վերականգնել է Մցխեթի իր կաթողիկոսությունը, որի գլուխը կրել ու կրում է «Համայն վրաց կաթողիկոս-պատրիարք» տիտղոսը:

Խորհրդ. իշխանության տարիներին (1921–1991) Վ. ե. պահպանել է իր ինքնակա և պետությունից անկախ գոյությունը: 1962-ին դարձել է Եկեղեցիների համաշխ. խորհրդի անդամ (1997-ից դադարեցրել է անդամակցությունը): Ունեցել է հոգևոր սպասավորների և սրբարանների կորուստներ, սակայն նրա գրական-մշակութ., հոգևոր և նյութ. արժեքներն անվանի վրացագետների (Ի. Ջավախիշվիլի, Կ. Կեկելիձե, Ե. Թաղայշվիլի, Ս. Կակաբաձե, Գ. Զուբինաշվիլի, Շ. Ամիրանաշվիլի, Ի. Աբուլաձե և այլք) նվիրական ու համարձակ գործունեության շնորհիվ մեծ կորուստներ չեն ունեցել, երկրից դուրս տարված ազգ. շատ գանձեր անկորուստ հայրենիք են վերադարձվել:

XX դ. վերջին տասնամյակներին վրացագիտության նոր սերնդի որոշ ներկայացուցիչներ վերակենդանացրել և գործնական նպատակների են ծառայեցրել հարյուր տարի առաջ մարտնչող-սիրողական միջավայրում հորինված այն տեսությունը, թե Քարթլիի ու Կախեթի վրացախոս հայության զանգվածներ հայադավանությանն անցած էթնիկ վրացիներ են: Պետ. մարմինների և ակադեմիական շրջանակների հովանավորությամբ Վրաստանի ԳԱ պատմության և ազգագրության ինստ-ում ազգությունը և ազգանունը «վերականգնող» գրասենյակ է ստեղծվել՝ հազարավոր հայորդիների վրացազգի հայտարարելով: Միաժամանակ, Թբիլիսիում կառուցված մի քանի հայկ. եկեղեցիներ (Բեթղեհեմ, Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ) «ուսումնասիրվել» ու վերականգնու-

մից հետո օծվել են իբրև վրաց. աղոթարաններ:

Վ. ե., բացի իր առտնին հոգևոր կոչումից, ի թիվս այլ վաստակների և ծառայություններ, բախտորոշ ավանդ ունի վրաց ժողովրդի էթնո-մշակութ. դիմագիծը կերտելու գործում: Նրա պատերից ներս մշակվել է վրաց գրական լեզուն, որը հավասարապես ընկալելի և ճանաչելի է դարձել ցեղակից բոլոր էթնիկ միավորներին (քարթեր, եգրիսացիներ, սվաններ, լազեր)՝ այդ լեզվով ստեղծելով ու պահպանելով վրաց ինքնուրույն և թարգման. հարուստ մատենագրություն, որի շատ էջեր ներկայացնում են ընդհանուր քաղաքակրթ. արժեք:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Ակինյան Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վնն., 1910: Նույնի, Քրիստոնէութեան մուտքը Հայաստան և Վրաստան, Վնն., 1949: Ամատունի Կ., Հայ կաթողիկոսական աթոռին ինքնավարութիւնը, «Բազմավեպ», 1968, էջ 173–210: Մուրադյան Պ., Armeno-Georgica, հ. 1, 3, 5, Ե., 1977–96: *Марр Н., История Грузии (культурно-исторический набросок), СПБ, 1906;* Նույնի, *Очерк истории Грузинской церкви, СПБ, 1907;* Նույնի, *Исторический очерк грузинской церкви с древнейших времен, "Церковные Ведомости", 1907, № 3, с. 107–144; Джавахов И., История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, "Известия" АН, 1908, VII серия, № 5–6; Мелик-сет-Бек Л., К вопросу о настоящем имени просветительницы Грузии, Тифлис, 1914;* Bernadette Martin-Hisard, Christianisme et Eglise dans le monde géorgien, "Histoire du christianisme", 4, Desclée, 1993, p. 549–603. Հին վրացական վարքագրական գրականության հուշարձաններ, գիրք 1, Թ., 1963 (վրաց.): Արսեն Սափարացի, Վասն բաժանման Վրաց ի Հայոց, հրտ. Զ. Ալեքսիձեի, Թ., 1980 (վրաց.): Կեկելիձե Կ., Դրվագներ վրաց հին գրականության պատմությունից, հ. 1–14, Թ., 1956–86 (վրաց.): Ջավախիշվիլի Ի., Վրաց ժողովրդի պատմություն, հ. 1–3, Թ., 1979–82 (վրաց.):

Պարույր Մուրադյան

ՎՐԹԱՆԵՍ Ա ՊԱՐԹԵՎ, սուրբ Վրթանես (262, Կեսարիա – 341, Վաղարշապատ, ամփոփվել է Բարձր Հայքի Դարանաղի գավառի Թորդան ավանում), Ամենայն Հայոց կաթողիկոս 333-ից, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: *Գրիգոր Ա Լուսավորչի* ավագ որդին: Հաջորդել է կրտսեր եղբորը՝ *Արիստակես Ա Պարթևին*: Մինչև հոգևորական ձեռնադրվելը եղել է զինվորական: Կեսարիայից Վաղարշապատ է եկել Հայոց թագավոր Տրդատ Գ-ի հրավերով և մինչև 324-ը մնացել արքունիքում: 324-ին դարձել է Գրիգոր Ա Լուսավորչի օգնականը եկեղեց. հարցերում: Աթոռակալման սկզբում հեթանոսները փորձել են սպանել Վ. Ա Պ-ին, բայց, ըստ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի, նրանց ձեռքերը կապվել են: Մասնակցել է պետ. գործերին, աջակցել Հայոց թագավոր Խոսրով Բ Կոտակին: Վերջինիս և Վ. Ա Պ-ի հրահանգով Աղբիանոս եպիսկոպոսը ուղարկվել է հաշտեցնելու իրար դեմ պայքարող Մանավազյան, Բզնունյաց և Որդունի նախարար. տներին, որոնք հետագայում թագավորի հրամանով ընաջնջվել են, իսկ նրանց տիրույթները հանձնվել կաթողիկոսի իշխանությանը: Այնուհետև, Հայաստանում ստեղծված ծանր պայմաններում (նախարարների միջև ընթացող պատերազմները, Սանատրուկ Արշակունու՝ Փայտակարանում իրեն թագավոր հռչակելը, Աղձնիքի Բակուր բդեշխի անկախանալը ևն) Վ. Ա Պ. «Թուղթ» է հղել հռոմ. կայսր Կոստանդին I-ին՝ խնդրելով ռազմ. օգնություն: Շուտով Հայաստան է եկել Անտիոքոս զորավարը և երկրում կարգավորել իրադրությունը: Պարսիկների դեմ մարտում Վաչե սպարապետի զոհվելուց հետո Վ. Ա Պ. ամեն տարի նշել է նրա հիշատակը (Վաչեանց տոն, ներկայումս չի նշվում): Պայքարել է հեթանոսության մնացուկների դեմ: Խոսրով Բ Կոտակի մահից (338) հետո Վ. Ա Պ. երկրի իշխանությունն առժամանակ հանձնել է Արշավիր Կամսարականին, իսկ ինքը թագաժառանգ Տիրանի հետ ուղևորվել Կ. Պոլիս և նրան հռչակել Հայոց թագավոր: Վ. Ա Պ-ի երկվորյակ որդիներից *Գրիգորիսը* կարգվել է Վրաց և Աղվանից Կողմերի եպիսկոպոս:

Հայ եկեղեցին ս. Վ. Ա Պ-ի հիշատակը տոնում է Գրիգոր Ա Լուսավորչի «սրբոց որդւոց և թոռանց» հետ Սուրբ Ծնունդի 3-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը կամ Վարդավառի 2-րդ կիրակին հաջորդող շաբաթ օրը: «Մանկունք» շարականում նրան են նվիրված հետևյալ տողերը. «Բանաւոր հօտին Քրիստոսի ընտրեալ հովիւ քաջ, Ի Հօրէն Լուսոյ բըղխեալ շառաւիղ բարի...»:

Կաթողիկոս. դահին Վ. Ա Պ-ին հաջորդել է *Հուսիկ Ա Պարթևը*:

Գրկ. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

Հակոբ Հարությունյան

ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ, Քչկանորդի (VI դ. կես – VII դ. սկիզբ), մատենագիր, դավանաբան: Ըստ X դ. պատմիչ Ուխտանեսի, սովո-

րել է *Դվինի կաթողիկոսարանի* դպրատանը: Վ. ՔՀ. Գրիգոր անունով մի վարդապետի հետ մասնակցել է Կ. Պոլսում 589-ին գումարված եկեղեց. ժողովին՝ որպես *Մովսես Բ Եղիվարդեցի* կաթողիկոսի նվիրակ: Վերջինիս մահից հետո՝ 604-ին, ընտրվել է կաթողիկոս. տեղապահ մինչև *Աբրահամ Ա Աղբաթանեցու* ընտրությունը: Եղել է ժամանակի ուսյալ և գիտուն աստվածաբաններից, ընտիր ոճով գրելու համար նրան տրվել է Քերթող մակդիրը: Վ. ՔՀ-ի տեղապահության օրոք սկիզբ են առել հայ-վրաց. եկեղեց. վեճերը՝ կապված *քաղկեդոնականության* ընդունելու Վրաց եկեղեցու դիրքորոշման հետ: Մեծ է եղել նրա դերը «*Գիրք թղթոց*»-ի կազմման գործում, որտեղ, ինչպես նաև Ուխտանեսի «Հայոց պատմության» մեջ, պահպանվել են նրա անվամբ մեզ հասած բազմաթիվ թղթեր, շրջաբերականներ, դավանաբան. գրություններ, նամակներ՝ ուղղված հայ և վրացի հոգևորականներին: Դրանց զգալի մասը Վ. ՔՀ-ի և Գուգարքի Յուրտավ քաղաքի եպիսկոպոս Մովսեսի թղթակցություններն են՝ *Քաղկեդոնի ժողովի, Նեստորականության* դեմ և երկաբնակության խնդիրների շուրջ: Որպես Ս. Հռիփսիմե տաճարի կառուցման ժամանակակից և ականատես՝ գրել է նրա համառոտ պատմությունը: Գլխ. գործը «Յաղագս պատկերամարտից» (ձեռագրերում հանդիպում են նաև «Ընդդեմ ընդդիմամարտից», «Յաղագս ընդդիմամարտաց» խորագրերը) գրվածքն է, որն ուղղված է *պատկերամարտության* դեմ: Թուղթը մեծ արժեք է ներկայացնում և՛ Ընդհանրական եկեղեցու, և՛ հայ պատկերամարտության պատմության համար: Ուսումնասիրողները (Ն. Ակինյան, Մ. Աբեղյան, Ս. Տեր-Ներսեսյան) հաստատել են, որ այն պատկերամարտության դեմ առաջին գրվածքն է ընդհանուր եկեղեց. գրականության մեջ, որ հասել է մեզ: Վ. ՔՀ. արժեքավոր տեղեկություններ է հայտնում հայ արվեստի (նկարչության, որմնանկարչության, քանդակագործության ևն) վերաբերյալ, խոսում եկեղեցիներում իր տեսած պատկերների, մասնավորապես՝ Գրիգոր Ա Լուսավորչի, Գայանեի և Հռիփսիմեի, Ստեփանոս Նախավկայի նկարների ու որմնանկարների մասին, նկարագրում ավետարանական թեմաներով, հատկապես՝ Քրիստոսի փրկչական տնօրինություններին նվիրված նկարները (ծնունդ, մկրտություն, չարչարանքներ, խաչելություն, թաղում, հարություն, համբարձում): Հեղինակի վկայությամբ, եկեղեցիներում եղել են նաև Ավետարանի ոսկե և արծաթե նկարազարդ տուփեր, փղոսկրե և կարմիր մորթուց պատրաստված կազմեր, հեթանոս. տաճարներն էլ ունեցել են մեծ թվով նկարներ և քանդակներ: Գրելով «կուռքերի մեհյաններում» Անահիտի, Աստղիկի, Աֆրոդիտեի նկարների ու քանդակների մասին՝ «իրենց պղծություններով, արբեցություններով և անառակություններով», Վ. ՔՀ. համեմատել է քրիստ. և հեթանոս. արվեստը, տվել դրանց նշանակության, գործածման, ընկալման և մեկնաբանման տարբերությունները: Ըստ հեղինակի, քրիստ. «պատկերները աստվածության պատվի և երկրպագության փառքի սպասավորության համար են», քանզի քրիստոնյաները ոչ թե նյութն են պաշտում, այլ պատկերված սրբերին են փառավորում և նրանցից բարեխոսություն խնդրում: Երբ երկրպագում կամ համբուրում են Ավետարանը, ոչ թե փղի ոսկորներին կամ կաշվին են երկրպագություն մատուցում, «այլ Փրկչի խոսքին, որ գրված է մագաղաթի վրա»: Պատկերային համեմատություններով և սուրբգրային վկայություններով Վ. ՔՀ. հիմնավորել է պատկերահարգությունը և հանգել այն եզրակացության, որ պատկերների պաշտամունքը չեղում չէ Սուրբ Գրքից:

Գրվածքն արժեքավոր է նաև նրանով, որ բովանդակում է «դեղերի» (ներկերի) բաղադրությունը՝ պատկերացում տալով, թե դեռևս վաղ շրջանում ինչից են պատրաստել այն ներկերը, որոնցով ստեղծված գործերը մինչև հիմա պահել են իրենց պայծառությունը:

Երկ. Զարբհանալյան Գ., Յաղագս բարեխոսութեան Սրբոց..., Վնտ., 1852, «Յաւելուած»:

Գրկ. Ակինյան Ն., Վրթանես վրդ. Քերթող եւ իւր երկասիրութիւնք, ՀԱ, 1910: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Դուրյան Ե., Ուսումնասիրութիւնք և քննադատութիւնք, Երուսաղեմ, 1935, էջ 299–308: Մելքոնյան Ե., Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը, «Էջմիածին», 1970, № 6–7: Տեր-Ներսեսյան Ս., 7-րդ դարի մի երկ նվիրված պատկերների պաշտպանությանը տես Հեղինակի «Հայ արվեստը միջնադարում», Ե., 1975: Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 114–132:

Տ

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Սյունյաց բարձր տիպի դպրոց, Սյունյաց վարդապետարան, միջնադարյան Հայաստանի խոշորագույն ուսումնագիտական հաստատություն *Տաթևի վանքում*: Որպես համալսարան հիշատակվում է 1390-ից: Գործել է մինչև 1435-ը: *Գլաձորի համալսարանի* փակվելու պատճառով *Հովհան Որոտնեցին* տեղափոխվել է *Որոտնավանք*, հիմնել դպրոց, ապա հաստատվել Տաթևի վանքում և, վերակառուցելով Տաթևի կրթարան-վարդապետարանը, հիմք դրել նոր, բարձր տիպի դպրոցի՝ համալսարանի: Այնտեղ են հավաքվել ժամանակի գիտուն ու բանիմաց շատ վարդապետներ, մոտ 500 կրոնավոր, փիլիսոփաներ, աստվածաբաններ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ ևն: Ավելի ուշ՝ միաբանների թիվը հասել է 1000-ի: Տ. հ. հովանավորել են Օրբելյան իշխանական տունը և *Սյունյաց մետրոպոլիտությունը*: Ունեցել է երեք լսարան (ուսումնարան)՝ ուսումնարան սուրբ, ներքին և արտաքին դրոց, գրչության արվեստի, երաժշտության: Առաջինում ուսումնասիրվել են Ս. Գիրք, աստվածաբանություն, փիլ., ճարտասանություն, քերականություն, պոետիկա, մանկավարժություն, ինչպես նաև մայրենի լեզու, գրականություն, պատմություն ևն, երկրորդում՝ գրչության արվեստ, գեղագրություն, գրքերի գեղ. ձևավորում, մանրանկարչություն, իսկ երաժշտության լսարանում՝ երգ և երաժշտություն, երաժշտության տեսություն: Հովհան Որոտնեցին մահից առաջ իրեն փոխարինող և հայոց բաբունապետ է կարգել (1386) իր աշակերտ *Գրիգոր Տաթևացուն*: Նրա բաբունապետության շրջանում Տ. հ. ծաղկման շրջան է ապրել և դարձել գիտության, մշակույթի, արվեստի, հոգևոր կյանքի համահայկ. կենտրոն, Հայ եկեղեցու ուղղափառ դավանության և ավանդության պաշտպանության ամրոց: Տ. հ-ի գիտնական վարդապետները Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ անհաշտ պայքար են մղել Հայաստան ներթափանցած կաթոլիկ քարոզիչների՝ միաբարների (տես *Ունիթորություն*) դեմ:

Գրիգոր Տաթևացին կատարելագործել է համալսարանի ծրագիրը. կազմել դասագրքեր («Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան...», «Ոսկեփորիկ»), որոնք եղել են նաև քարոզության արվեստի (տես *Քարոզ*), *աստվածաբանության* և Հայ եկեղեցու դավանության լավագույն ձեռնարկներ: Գրիգոր Տաթևացու գործունեությունը նպաստել է գրչության արվեստի զարգացմանը: Նա վարել է գրչության տեսական դասընթաց և անցկացրել գործնական պարապմունքներ: Պատրաստել է մոտ 60 գրիչ: Համալսարանում որպես դասագիրք օգտագործվել են Հին և Նոր կտակարանները, *եկեղեցու հայրերի*, ինչպես նաև Արիստոտելի, *Փիլոն Ալեքսանդրացու*, Պորփյուրի և այլոց աստվածաբան., փիլ. աշխատությունների մեկնությունները, *լուծմունքները* և թարգմանությունները: Լայնորեն օգտագործելով հայերեն և հունարեն գրականությունը՝ մշակվել և զարգացվել են մի շարք գիտություններ ու արվեստներ: Տ. հ. ու-

նեցել է կանոնադրություն, ուսումնադիտ. ատիճանավորում: Սովորելու են եկել ոչ միայն Սյունիքից, այլև Եկեղյաց գավառից, Այրարատ նահանգից, Կիլիկյան Հայաստանից, Վասպուրականից, Տարոնից, Արցախից, Ուտիքից, Պարսկահայքից, Ղրիմից ևն: Մշտապես ունեցել է մեծ թվով ուսանողներ (150–300 և ավելի): Համալսարանի սաներից են Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Գրիգոր Արարատեցին, Սարգիս Սալնապատեցին, Բարսեղ Բաղիշեցին, Մատթեոս Ջուղայեցին, Հակոբ Անձևնապատեցին, Սիմեոն Եղվարդեցին, Մկրտիչ Նահապետենցը և ուր.: Ուսման տևողությունը եղել է 7–8 տարի (չհաշված քահանայական կրթության տարիները): Պատրաստել են վարդապետներ, քարոզիչներ, մանկավարժներ, գրչության արվեստի մասնագետներ, երաժիշտներ:

Տ. հ. ունեցել է հարուստ մատենադարան, որը գոյատևել է մինչև 1911–12-ը (մատենադարանի 140 ձեռագիր մատյաններ այժմ պահվում են Երևանի Մատենադարանում): Տ. հ. հռչակվել է նաև իր մանրանկարչության դպրոցով (տես *Մանրանկարչություն* հոդվածի Տաթեվի մանրանկարչության դպրոց մասը): Գրիգոր Տաթևացու մահից հետո (1409) համալսարանի նախկին հռչակը խամրել է: Մինչև 1425-ը Տ. հ. ղեկավարել է Մխիթար րաբունապետը, ապա՝ Եղեկիել վարդապետը: 1435-ի Շահռուխի արշավանքի ընթացքում Տաթևի վանքն ավերվել է, իսկ միաբաններն ապաստանել են Գուգարքում:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.4, 1-ին պատկերը:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1946: Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (13–15-րդ դդ.), Ե., 1981:

Արտաշես Մաթևոսյան

ՏԱԹԵՎԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև գյուղից հվ-արլ., Որոտան գետի աջ ափին, Տաթև սարի ստորոտին: Կառուցվել է XVII դ. 2-րդ կեսին և XVIII դ. լրացվել որոշ շինություններով: Հիմնադրման առիթը նույն ձորում, դեպի հվ. գտնվող Հալիձորի *Սյունյաց Մեծ անապատի* (Հարանց անապատ) կործանումն էր 1658-ի երկրաշարժից, որից շատ չանցած *Հակոբ Դ Ջուղայեցին* որոշել է նոր մենաստան կառուցել և այնտեղ տեղափոխել նախկին անապատի միաբանությունը (այս պատճառով դրականության մեջ այս երկու անապատները հաճախ շփոթում են): Տ. Մ.-ի շինարարությունն սկսվել է 1660-ին, Ս. Աստվածածին եկեղեցին հիմնադրվել է 1663-ին: 1668-ին անապատն ուներ 70 միաբան, և սկսվել էր պարիսպների ու դրանց կից խցերի կառուցումը: Առանձին *Γ*-աձև հատակագծով բնակելի սենյակների մասնաշենքը կառուցվել է 1682-ին: Եկեղեցուն կից մատուռդամբարանում թաղված է անապատի հիմնադիր, 1669-ին վախճանված վանահայր Արիստակես վարդապետը: Տաթևի վանքի առաջնորդ Հովասափ Աղուերձեցին XVII դ. վերջին կառուցել է սեղանատունը հս-ից կից խցերը, Ներսես եպիսկոպոսը XIX դ. 1-ին կեսին՝ օժանդակ շինությունները, Ղուկաս վարդապետը 1711-ին՝ պարիսպների վերին մասը: Եկեղեցու արմ. ճակատին կից եռակամար գավիթ-սրահը կառուցվել է 1743-ին, Մելիք Եգանի միջոցներով: Համեմատաբար հարթ տեղանքը հնարավորություն է տվել համալիրն իրականացնել կանոնավոր հատակագծով. ողջ հորինվածքը կազմված է ուղղանկյուն պարիսպներով պարփակված հիմն. մասից և նրան հարակից սեղանաձև հատակագծով օժանդակ մասից: Ս. Աստվածածին եկեղեցին երկու զույգ մույթերով, երկթեք տանիքով եռանավ բազիլիկ է, որը տեղադրված է համալիրի հվ-արմ. մասում, առանձին կանգնած: Թաղածածկ, բուխարիով և որմնախորշով խցերը փոքր են, նախատեսված մեկ հոգու համար. լուսավորվում են ու մուտք ունեն բակի կողմից: Հվ. պարսպին կից խոշոր սեղանատունը ձգված թաղածածկ դահլիճ է՝ երկայնական պատերի տակ դրված քարե նստարաններով և քարե սեղաններով: Սեղանատունը բավական լուսավոր է, որովհետև

Տաթևի Մեծ անապատի (XVII դ.) ընդհանուր տեսքը

ՏԱԹԵՎԻ

Տ. Մ. ա-ի կանոնադրությամբ՝ միաբանները ճաշելիս պետք է Սուրբ Գիրք կարդային: Այդ պատճառով սեղանատունը վերածվել է նաև ընթերցարանի:

Տ. Մ. ա-ի համալիրը բարձր պարիսպներով ամբողջովին անջատվում է արտաքին աշխարհից: Մեկուսացումն ավելի է շեշտվում պարըսպապատերի խուլ լինելով՝ չկա ոչ մի բացվածք դեպի դուրս: Սա բխում է, առաջին հերթին, անապատների առանձնահատկությունից, որոնք ստեղծված են առանձնանալու, ճգնելու ու աղաչաբարելու համար և հեռու են այն ամենից, ինչը կապում է աշխարհիկ կյանքին, նույնիսկ՝ բնությանը:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Ե., 1938: Լալայան Ե., Սիսիան, ԱՀ, գիրք 3, Թ., 1898: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Հասրաթյան Մ., Տաթևի Մեծ անապատի ճարտարապետական անսամբլը, ԲԵՀ, 1969, № 1:

Մուրադ Հասրաթյան

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ, Ս. Եվստաթեոս առաքյալի ուխտ, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև գյուղի հարավում, Որոտան գետի վտակի անդնդախոր ձորի աջափնյա եզերքին: Ավանդության համաձայն՝ վանքը կոչվել է *Թադեոս* առաքյալի աշակերտ *Եվստաթեոսի* անունով: Ըստ *Ստեփանոս Օրբելյանի*, Տ.վ-ի առաջին եկեղեցին կառուցվել է IV դ., ունեցել անշուք տեսք, սակավաթիվ ճգնավոր միաբաններ: VIII դ. վերջին եղել է Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը: Այստեղ են բերվել Քրիստոսի խաչափայտի մասունքով արծաթե հսկա (մարդաչափ) «Բաբկենյան խաչը» (պատրաստել էր Բաբիկ իշխանի որդի Վասակը), Բյուզանդիայից՝ «Աստվածամուխ սուրբ Նշանը», ս. Հովհաննեսի, ս. *Ստեփանոս Նախավկայի*, տասնմեկ առաքյալների, ս. Գրիգոր Ա Լուսավորչի, ս. Հռիփսիմեի մասունքները, Աստվածածնի մազերը:

Տ. վ-ի տարածքը IX դ. արդեն չի բավարարել Սյունյաց աթոռի պահանջները: 839-ին Դավիթ եպիսկոպոսը Սյունյաց Փիլիպե իշխանից գնել է վանքի շրջակայքի Արծիվ կոչված տարածքը: 844-ին նա նույն իշխանից նվեր է ընդունել Տաթև գ., որտեղ և հիմնադրել է հետագայում հռչակ ստացած վանքը: Կալվածքներ գնելու և նվիրատվությունների շնորհիվ վանքը դարձել է խոշոր ավատատեր: 844-ին Կովսական գավառի իշխան Հրահատը Տ.վ-ին է նվիրել Նորաշենիկ գ., 848-ին իշխան Փիլիպեն կառուցել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 881-ին վանահայր Սողոմոն եպիսկոպոսը գնել է Դարատափ գ., վանքին վերադարձրել Խոտ գ. և ս. Նշանի համար ճարտար վարպետների ձեռքով պատրաստել թանկարժեք քարերով զարդարված ոսկե խաչ: Սյունյաց Աշոտ իշխանի պատվերով Հովհաննես եպիսկոպոսը ձեռնարկել է հայկ. ամենախոշոր եկեղեցիներից մեկի՝ Ս. Պողոս-Պետրոս տաճարի կառուցումը, ինչին օժանդակել են Սյունյաց իշխանները, հատկապես տիկին Շուշանը իր ամուսնու՝ գահերեց իշխան Աշոտի հետ: Տաճարի հիմքը դրվել է 895-ին, շինարարությունն ավարտվել 906-ին: Սրբատաշ բազալտից կառուցված տաճարի գմբեթը հենվում է երկու խոշոր մույթերի և արմ. ավանդատների անկյունների վրա: Մույթերը խորհրդանշում են Պողոս և Պետրոս առաքյալներին, որոնց մասունքները դրվել են մույթերի հիմքերում և անկյուններում: Տաճարի օծմանը ներկա են եղել Հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորը, Գագիկ Արծրունի իշխանը (հետագայում՝ Վասպուրականի Գագիկ Ա թագավոր), Հայոց կաթողիկոս *Հովհաննես Ե Դրասխանակերտցին*, Աղվանից Սիմոն Բ կաթողիկոսը, Սյունիքի ու Աղվանքի բոլոր իշխաններն ու եպիսկոպոսները: Օծման առթիվ ներկա գտնվողները Տ. վ-ին գյուղեր և կալվածքներ են նվիրել Բաղք, Ծղուկ, Հաբանդ, Գեղարքունիք, Արևիք գավառներում: Վանքին նվիրված մոտակա Ցուրաբերդ, Տամալեք և Բերդ գյուղերի բնակիչներն ըմբոստացել են այդ որոշման դեմ, չեն ենթարկվել, իսկ 915-ին ցուրաբերդցիները ապստամբել են, կողոպտել վանքը, միաբաններից ոմանց սպանել: Հովհաննես եպիսկոպոսը Ս. Պողոս-Պետրոս տաճարի կառուցումը նշանավորել է նրա հվ. մուտքի դիմաց Ս. Երրորդությանը նվիրված հուշասյուն կանգնեցնելով (կոչվել է «Գավազան»), որը շարնիրային սկզբունքով իրականացված հիմքի շնորհիվ ճոճվել է: Տ. վ. պարսպապատվել է, թեք տեղանքը բարձր հենապատերի միջոցով հարթվել, կառուցվել են թաքստոցներ, նկուղներ, դեպի բակը բացվող խցեր, սեղանատուն, արհեստանոցներ, մթերանոցներ, գրատուն, տաճարի առջև՝ գավիթ (որպես աղոթատեղի) և Սյունյաց իշխանների տապանատուն: IX դ. Տ. վ. Հայաստանի ամենախոշոր ու նշանավոր վանքն էր. ունեցել է շուրջ 500 միաբան, վարդապետարան: Վանքում աշ-

խատել, ստեղծագործել են փիլիսոփաներ, երաժիշտներ, մանրանկարիչներ, գրիչներ:

918-ին Հովհաննես եպիսկոպոսը վախճանվել է (թաղվել է Տ.վ-ի բակում), և Հովհաննես Ե Դրասխանակերտցին Սյունյաց եպիսկոպոս է նշանակել Հակոբ Դվինեցուն, որը շարունակել է Տ. վ-ի կալվածքների ընդլայնման գործը: Հակոբ եպիսկոպոսը 932-ին գտնել է Վաբարակ գետի ջուրը, կառուցել երկար ջրանցք՝ մինչև վանքի մոտ գտնվող Ցաքուտ ամայի վայրը, և այն մշակելի դարձրել:

Տնտեսապես հզորանալով՝ Տաթևի եպիսկոպոսությունը 940–950-ական թթ. փորձել է անկախանալ Հայոց հայրապետ. աթոռից: Ի պատասխան Հակոբ եպիսկոպոսի անջատող. գործողությունների՝ Հայոց կաթողիկոս *Անանիա Ա Մոկացին* բանադրել է նրան: Օգտվելով դրանից՝ Գեղարքունիքի, Երնջակի, Գողթնի հոգևոր առաջնորդները հրաժարվել են ճանաչել Տ. վ-ի գերագահությունը և հիմնել են առանձին եպիսկոպոսություններ, իսկ աշխարհիկ իշխանները տիրացել են վանքի կալվածքների մեծ մասին: 958-ին եպիսկոպոս ընտրված Վահան Սյունեցուն (968–969-ին՝ Հայոց կաթողիկոս *Վահան Ա Սյունեցի*) հաջողվել է մասամբ վերականգնել Տ. վ-ի իրավունքներն ու կալվածքները: XI դ. Ցուրաբերդի բնակիչները վերսկսել են իրենց պայքարը Տ. վ-ի դեմ: 1003-ին ապըստամբ գյուղացիները սպանել են եպիսկոպոսին, ինչի համար Սյունյաց Վասակ Ա թագավորը հիմնահատակ ավերել է Ցուրաբերդը: 1006-ին կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցու* շրջաբերականով Տաթևի եպիսկոպոսությանն են վերադարձվել նրա նախկին բոլոր վիճակները: 1043-ին Հովհաննես եպիսկոպոսը կառուցել է Ս. Պողոս-Պետրոս տաճարին հվ-ից կից սրահը: 1044-ին հարևան ամիրայությունների հրոսակները հարձակվել են Տ. վ-ի վրա, սպանել միաբաններին, կողոպտել վանքը, հրկիզել ու ավերել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, բնակելի շենքերը, արհեստանոցները, որոնք շուտով վերականգնվել են: 1046-ին Հովհաննես եպիսկոպոսը Սյունյաց Սմբատ Բ թագավորի օժանդակությամբ վերակառուցել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ որմնապատ վերևում ագուցելով Գրիգոր Ա Լուսավորչի մասունքը: Նրա հաջորդը՝ Գրիգոր եպիսկոպոսը, 1087-ին կառուցել է գավիթներ, հովանոցներ, վանքի դարպասը՝ վրան կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին, Սյունյաց Սենեքերիմ Ա թագավորի հրամանով հետ ստացել Տ. վ-ից խլված կալվածքները: 1138-ի երկրաշարժից ընկել է Տ. վ-ի Ս. Պողոս-Պետրոս տաճարի գմբեթը, ավերվել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 1170-ին Բաղաբերդը գրաված սելջուկյան թուրքերը կողոպտել են Տաթևի եպիսկոպոսարանի գանձերը, այրել ձեռագրերը (մոտ 10 հզ.), երկիրն ավերակ ու անմարդաբնակ դարձրել: Ամայացել է նաև Տ.վ.: Նրա առաջնորդները տեղափոխվել են Վայոց



Տաթևի վանքի հատակագիծը. 1. Ս. Պողոս-Պետրոս տաճարը, 2. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 3. սրահը, 4. Ս. Աստվածածին եկեղեցին, 5. «Գավազան» հուշասյունը, 6. զանգակատունը, 7. առաջնորդարանը, 8. սեղանատունը, 9. դարպասը, 10. բնակելի և տնտեսական շինությունները, 11. աղբյուրը, 12. ձիթհանը

ձորի *Նորավանքը*: 1216-ին այնտեղ եպիսկոպոսություն է հիմնվել, և Սյունյաց աթոռը տրոհվել է երկու մասի: 1261-ին Սմբատ և Տարսայիճ Օրբելյանները նորոգել ու բարեկարգել են Տ. վ.: 1273-ին Տարսայիճ Օրբելյանը Ս. Պողոս-Պետրոս տաճարին է նվիրել թանկարժեք սպասք, հանդերձանք, Տ. վ-ին վերադարձրել նրա նախկին տիրույթները: 1270-ական թթ. Հայրապետ եպիսկոպոսը նորոգել է Ս.Պողոս-Պետրոս տաճարի ծածկերը և տանիքը: 1282-ին մեկնել է Կիլիկիա և Լևոն Գ թագավորից վանքի համար բերել բյուզ. արքունական մետաքսից գործված և չքեղ զարդարված եկեղեց. հանդերձանք, թանկարժեք սկիհներ, խաչեր և այլ նվերներ:

Տ. վ. վերստին հզորացել է, երբ 1286-ին Կիլիկիայում *Կոստանդին Բ Կատուկեցի* կաթողիկոսը Ստեփանոս արք. Օրբելյանին օծել է Սյունյաց աթոռի մետրոպոլիտ և Հայոց պրոտոֆրոնտես (նախաթոռ եպիսկոպոս): Նա միավորել է Սյունյաց տարանջատված եպիսկոպոսարանները, մեկնել Մոնղոլիա՝ Արղուն խանի մոտ և հաստատել Տ. վ-ի գերագահությունը Սյունիքի բոլոր թեմերի նկատմամբ:

1295-ին Ստեփանոս արք. Օրբելյանը հիմնովին վերակառուցել է երկրաշարժից ավերված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և Տ. վ-ին նվիրել սեփական Աբիտ գ., 1297-ին վանքում ավարտել է «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը: 1302-ին և 1304-ին արքեպիսկոպոսի պատվերով Տ. վ-ի համար ձուլվել են երկու խոշոր պղնձե զանգեր: XIII դ. վերջին վանքը դարձել է *ունիթորության* դեմ մղվող պաքարի կենտրոն: XIV դ. Տ. վ. գիտամշակութ. վերելք է ապրել: Այստեղ են հավաքվել ժամանակի աչքի ընկնող աստվածաբաններ, փիլիսոփաներ, աստղագետներ, տրամաբաններ, երաժիշտներ, նկարիչներ: Կրոնավորների թիվը գնալով մեծացել է (հասել մոտ 1000-ի): Վերակառուցվել է վանական կրթարանը, 895-ին հիմնված վարդապետարանը դարձել է համահայկ. մշակութ. կենտրոն, հիմք է դրվել նոր, բարձր տիպի դպրոցի՝ *Տաթևի համալսարանի*: Վանքին կից X դ. գործել է Տաթևի մատենադարանը, որը համալսարանի գոյության տարիներին հարստացել է և գոյատևել մինչև 1911–12-ը, իսկ ավերից ու ավարառություններից փրկված 140 ձեռագիր մատյաններ տեղափոխվել են Էջմիածին, ապա՝ Երևանի Մատենադարան: Համալսարանին կից գործել է մանրանկարչության դպրոց (տես *Մանրանկարչություն* հոդվածի Տաթևի մանրանկարչության դպրոց մասը): Մեզ են հասել սակավաթիվ, բայց բարձրարժեք արվեստի գործեր:

XIII–XIV դդ. Տ. վ-ի եպիսկոպոսությունն ուներ 677 հարկատու գյուղեր՝ իր թեմում գտնվող 14 գավառներում (Ծղուկ, Եվայլախ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոթք, Աղահեճ, Հաբանդ, Բաղք, Քաջունիք, Կովսական, Արևիք, Ջորք, Երնջակ, Ճահուկ), բազմաթիվ վանքեր: XIV դ. *Հովհան Որոտնեցին* Տ. վ-ի գավթի վրա կառուցել է կամարակապ, երկհարկանի զանգակատուն: 1381–87-ին Լենկթեմուրի՝ Սյունիք կատարած արշավանքի ժամանակ վանքը կողոպտվել է, հրկիզվել, կորցրել կալվածքների մեծ մասը: 1434-ի թեմուրյան դահակալ Շահռուխի ասպատակությունից հետո Շմավոն եպիսկոպոսը միաբանների հետ տեղափոխվել է *Սանահինի վանք*: Տ. վ. վերստին բարգավաճել է XVII–XVIII դդ.: Առաքել եպիսկոպոսը կառուցել է վանքի հվ. կողմի գավիթը, *Գրիգոր Տաթևացու* հիշատակին խաչքար կերտել, Սիմեոն Անգեղակոթցին Պարսից շահից հետ է ստացել Տ. վ-ից խլված կալվածքները, Հովհաննես Շինաթաղցին բազմիցս մեկնել է Սպահան՝ Պարսից Հուսեին շահի մոտ և վերահաստատել Տ. վ-ի իրավունքները կալվածքների նկատմամբ, կառուցել արլ. դահլիճը, սրբատաշ քարից սենյակներ: Ներսես եպիսկոպոսը բարեկարգել է վանքը, 1646-ին կառուցել արմ. խցերը և Տաթև գ-ի Ս. Ներսես եկեղեցին: Զաքարիա եպիսկոպոսը կառուցել է առաջնորդարանի շենքը, իսկ 1671-ին՝ բնակելի սենյակներ: Կիրակոս Աղուերձեցին նորոգել է Ս. Պողոս-Պետրոս տաճարի գմբեթը և վանքի պարիսպը: 1705-ին Խոջա Անտոնի միջոցներով Տեր Միքայելը նորոգել է տաճարը: XVIII դ. Հովհաննես Ղալամյանցը նորոգել է վանքի շենքերը, եկեղեցիների տանիքները, կառուցել տնտ. շինություններ և 1745-ին՝ Տաթև գ-ի աղբյուրը: Մինաս Շինաթաղցին նորոգել է վանքի պարիսպը, կառուցել սեղանատուն, խոհանոց, հացատուն: Աբրահամ Աստապատեցին XVIII դ. 2-րդ քառորդին Տ. վ-ում դպրոց է բացել (գործել է մինչև XX դ.), համալիրի հս-արլ. կողմում կառուցել 16 դասասենյակով դպրոցի շենք, որն արժեքավոր է որպես Հայաստանի ուշ միջնադարի՝ կրթական կառույցի մեզ հասած միակ օրինակ: Հովակիմ արքեպիսկոպոսը 1787-ին տաճարի հվ. մուտքի առջև կառուցել է Գրիգոր Տաթևացու դամբարանը, հս. պարսպի բուրգերը, բնակելի սենյակներ, ձիթհանքի շենք ևն: 1796-ին և 1826-ին վանքն ասպատակել են պարսկ. զորքերը և կողոպտել:

Արլ. Հայաստանը Ռուսաստանին միանալուց (1828) հետո Տ. վ-ի վանահայր Մարտիրոս եպիսկոպոսը ռուս. իշխանությունների միջոցով վերադարձրել է վանքից խլված կալվածքները, հիմնովին նորոգել Տ. վ-ի համալիրը, Տաթև գ-ի ճանապարհը, Կաքավասարից ջուր անցկացրել, տնտ. նոր շենքեր կառուցել: 1837-ին Տ. վ-ի մետրոպոլիտությունը վերացվել է, և Սյունիքը կազմել է Երևանի թեմի մի մասը: 1858-ին Տ. վ. ունեցել է 70 հարկատու գյուղեր, 1898-ին՝ 15 գյուղ և 5 միաբան: 1862-ին Ս. Պողոս-Պետրոս տաճարի արլ. կողմը նորոգել է Հովհաննես արք. Ասլանյանը, 1865-ին վանքի հս. կողմի շենքերը՝ վանահայր Սարգիս Գասպարյանցը: XIX դ. վերջին քանդել են վանքի գավիթն ու զանգակատունը և XX դ. սկզբին, տաճարի արմ. ճակատին կից, կառուցել բարձր, եռահարկ, չքեղ քանդակազարդ զանգակատուն: 1931-ին Տ. վ. երկրաշարժից ավերվել է, քանդվել են Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Աստվա-

ծածին եկեղեցիները, տաճարի գմբեթը, զանգակատունը, այնասրահը: 1974–98-ին վերակառուցվել են եկեղեցիները, տաճարի գմբեթը, նորոգվել բնակելի և տնտ. շենքերը, պարիսպը, զանգակատան առաջին հարկը:

Տ. վ-ի Ս. Պողոս-Պետրոս տաճարում պահպանվել է X դ. որմնանկարչական ամբողջական հարդարանքը, որը պատկերացում է տալիս վաղմիջնադարյան հայ եկեղեց. նկարազարդման համակարգի մասին: Պատկերներն արվել են ֆրեսկո տեխնիկայով, հայկ. որմնանկարչությանը հատուկ 3–4 *մմ* հաստության սվաղի վրա՝ տեղական բնական հանքաներկերով, մասնավորապես՝ լաջվարդով: Խորանի կոնքում պատկերված է եղել «Քրիստոսը Փառքի մեջ» տեսարանը: Կոր պատի վրա երեք նախշերիզված շարքերով, կամարների ներքո ներկայացված են մարգարեները, առաքյալները և Հայ եկեղեցու հայրերը՝ սրածայր խույրերը գլխներին: Առաքյալների շարքում կենտր. պատուհանի հս. և հվ. կողմերից նկարված են, համապատասխանաբար, *Հովհաննես Մկրտիչը* և Աստվածամայրը՝ Քրիստոսի հետ կազմելով «Դեիսուսի» պատկերագրությունը: Այս հիերարխիկ հորինվածքն արտահայտում է Երկնային և Երկրային եկեղեցիների, Հին և Նոր կտակարանների հաջորդությունը խորհրդանշող գաղափարները և համընկնում վաղմիջնադարյան որմնանկարչական պատկերագրությանը: Խորանի հանդիսավոր հորինվածքին հակադրված է արմ. պատի «Ահեղ դատաստանի» խիստ դինամիկ տեսարանը, որից պահպանվել են կենտր. և ստորին հատվածները. որոշ դրվագներ վերականգնվել են 1950-ական թթ. Լ.Դուրնովոյի արած վավերագր. պատճեններով և սխեմատիկ վերակազմությամբ (պահվում են ՀԱՊ-ում): Տեսարանն ամբողջական մեծ հորինվածքում ներառում է «Ահեղ դատաստանը» և «Փրկչի երկրորդ գալուստը» ըստ Մատթեոսի Ավետարանի (**24.**30–31) ու Հովհաննեսի Հայտնության գրքի: Վերևում պատկերված է եղել «Երկնային դատաստանը»: Քրիստոս-Դատավորին երկու կողմից շրջապատել են առաքյալները. Պողոսը՝ Քրիստոսի աջ կողմից, Պետրոսը՝ ձախ, առանձնացած: Գահի տակ երկու բացված գրքեր են, որոնցով, ըստ Հովհաննեսի Հայտնության, պետք է դատվեին մեռյալները (**20.**12): Հորինվածքի միջնամասը զբաղեցնում են երկու մեծ հրեշտակներ՝ տեքստերով գալարակները ձեռքերին, աջ գալարակի վրա Հայտնության գրքի խոսքերն են՝ «Եկաւ... մեռելների ժամանակը որ դատվեն» (**11.**18): Աջ կողմում դրախտի Կենաց ծառն է, ձախ կողմում՝ դժոխքի հրե գետը, որն այստեղ մեծ մասամբ կապույտ է, ինչպես Հայտնության գրքի «կենդանի ջուրը» (**22.**1): Հորինվածքի ամենաուշագրավ մասը ստորին հատվածն է՝ ծածկված մեռելների հարության տեսարանով: Դեն նետելով դագաղների կափարիչները՝ Փրկչի Երկրորդ գալստյան դատին են ելնում կանգնում մեռելները. նրանց կենտրոնում են Ադամն ու Եվան: Հս. պատին պատկերված «Ծննդյան» հորինվածքից պահպանվել են պատուհանների մեջտեղի երկու հատվածները՝ «Մանկան լոգանքը» և «Հովիվների ավետումը»: Տաթևի տաճարի որմնանկարների պատկերագրությունը, առավել մոտ լինելով հետկարոլինգյան X–XI դդ. մանրանկարներին, ներկայանում է նաև բազմաթիվ արխաիկ գծերով, որոնք ունեն վաղքրիստ. ծագում և հանդիպում են Իտալիայում ու քրիստոնյա Արևելքում:

Որմնանկարների ոճն ընդգծված արտահայտչականությամբ դրսևորվում է կերպարների ձգվածությամբ, բարդ կեցվածքով ու դիրքերով, տարամասշտաբայնությամբ, ժեստերի ընդգծվածությամբ, գծային կառուցվածքների քմահաճ խաղով: Գունային գամման արտասովոր է սպիտակի առկայությամբ, տոնային նուրբ բազմերանգները հարաբերակցում են բաց փիրուզագույն և կապույտ հիմնագույներին: Գեղ. այս ոճը, ինքնատիպ պատկերավորությունը, կերպարների դասականացված շունչը եզակի են հայ արվեստում և մերձենում են IX–XI դդ. իտալ. այն որմնանկարներին ու խճանկարներին, որոնք իրենց մեջ կրում են կարոլինգյան և վաղքրիստ. ավանդույթները:

Տ.վ-ի որմնանկարները, շնորհիվ գեղ. բարձր արժանիքների և ինքնատիպության, բացառիկ նշանակություն ունեն միջնադարյան արվեստի պատմության համար, մանավանդ որ X դ-ի եվրոպ. որմնանկարներ գրեթե չեն պահպանվել:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.4, 2–5-րդ պատկերները:

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Տեր-Մովսիսյան Մ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղեմ, 1938: Դիվան հայ վիմագրության, պր. 2, Ե., 1960: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: *Якобсон*

ՏԱՂ

Հ. Լ., Из истории армянской средневековой архитектуры, 3. Татевский монастырь, "Советская археология", т. IX, 1947; Манукян С., Фрески в Татевском монастыре в Армении, Памятники культуры. Новые открытия, Ежегодник, 1975, М., 1976, с. 131–137; Дурново Л., Очерки искусства средневековой Армении, М., 1979, с. 144–148; Thierry N. et M, Peintures murales de caractére occidental en Arménie: église Saint-Pierre et Saint-Paul de Tatèv (début Xe siècle), "Byzantion", 1968, t. 38, f. 1, p. 180–242; Der Nersessian S., L'art arménien, P., 1977, p. 93–97.

Մուրադ Հասրաթյան
Սեյրանուշ Մանուկյան

ՏԱՂ, 1. չափածո ստեղծագործություն, բանաստեղծություն: Հայ մատենագրության մեջ «տաղ» բառն ավանդվել է V դ. 2-րդ կեսից՝ քերակ., փիլ., ճարտասան. բնույթի մի քանի հուն. երկերի հայերեն թարգմանություններում՝ որպես բնագրերում հանդիպող *ἔπος* (էպոս) և երբեմն էլ *στίχος* (ստիքոս) բառերի համարժեք: Այդ թարգմանություններում, որոնցից են Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստ», *Փիլոն Ալեքսանդրացու* «Ի լինելիութեանն», «Յաղագս վարուց կենաց տեսարանի», Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց», Պլատոնի «Պաշտպանութիւն Սոկրատայ», «Յաղագս օրինաց և օրէնսդրութեանց», «Ի Մինովս և յաղագս օրինի» երկերը, «տաղ» բառը գործածվել է ինչպես գրական, այնպես էլ ոչ գրական նշանակությամբ, նայած թե բնագրային «էպոսը», որը հին հուն-ում ունեցել է տասից ավելի իմաստ, ինչպես նաև «ստիքոսը», տվյալ շարադրանքում ինչ նշանակություն են արտահայտել: Կայունանալով որպես եզրաբառ (տերմին)՝ Տ. հայ մտածողների (Դավիթ Քերական, *Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, Ներսես Շնորհալի* և ուր.) երկերում ըմբռնվել ու մեկնաբանվել է միայն գրական նշանակությամբ՝ որպես ռիթմիկ կառուցված չափածո խոսք. «Զտաղն՝ զչափով գրեալն», բացատրված է Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանությանը կցված բառացանկում: «Վանգիւք չափեալ բանին տաղ ասի, այսինքն՝ չափեալ»,– նշել է *Հովհաննես Երզնկացին* (Պլուզ): «Տաղ կոչէ՝ զչափով գրեալն»,– բառի իմաստը մեկնաբանել է *Եսայի Նչեցին*: «Տաղ է չափով և կշռով գրեալքն»,– գրել է Դավիթ Զեյթունցին:

Թեպետ Տ-ի մասին հայ մտածողների տեսական ըմբռնումները գալիս են ոսկեդարից, այնուամենայնիվ որոշակիորեն պարզաբանված չէ, թե մինչև X դ. հորինված որևէ չափածո երկ կոչվե՞լ է Տ., թե՝ ոչ: Հանրահայտ է, որ հայ գրականության մեջ Տ-ի պահպանված հնագույն նմուշներն ստեղծվել են միայն X դ. գրական-երաժշտ. բնույթ ունեցող *Գանձարան* ժողովածուի կազմավորման պահանջով՝ որպես տվյալ ժողովածուի առանձին մասերը ներկայացնող *կանոնների* բաղկացուցիչ միավորներ: Եվ քանի որ այդ կանոնները կոչված էին զարդարելու ազգ. եկեղեց. տոների հանդիսությունները, ուստի դրանց մեջ ընդգրկվող տաղային միավորներն անհրաժեշտաբար պետք է ուներ նային հոգևոր բովանդակություն: Հետևաբար՝ պահպանված հնագույն Տ-երը հոգևոր ստեղծագործություններ են:

Հոգևոր Տ-երի (մեզ հասած) առաջին հորինողը *Գրիգոր Նարեկացին* է, որի գրական ավանդները հետագայում զարգացրել է Ներսես Շնորհալին: Քրիստոսի Ծննդյան ու Հայտնության, Ջրօրհնեքի, Տյառնընդառաջի, Հարության, Համբարձման, Հոգեգալստյան, Վարդավառի, Խաչի, Եկեղեցու և այլ տոների համար նրանք ստեղծել են գեղեցիկ Տ-եր, որոնք մեծ մասամբ արտահայտում են ուրախ, տոնական տրամադրություններ: Գրիգոր Նարեկացու որոշ գործեր («Տաղ Յարութեան», «Տաղ յօրհնել ջրոյն», «Տաղ Ծննդեան», «Տաղ Վարդավառի», «Մեղեդի Ծննդեան» ևն) հոգևոր գաղափարներն ու զգացմունքներն արտացոլում են կենդանի իրականությունից վերցված պատկերներով, իսկ Ներսես Շնորհալու Տ-երը՝ ուղղագիծ, նրբագեղ ու կանոնիկ արտահայտչաձևերով: Ներսես Շնորհալու տաղային ժառանգությունն ընդգրկում է նաև Հովհաննես Մկրտչի, Աստվածածնի, Ծաղկազարդի, Խաչելության, Ստեփանոս Նախավկայի, Անտոն Անապատականի, հրեշտակապետների, առաքյալների, մարգարեների, հայրապետների, մարտիրոսների տոները: Ներսես Շնորհալին հորինել է նաև ազգ. եկեղեց. սրբերին նվիրված հոգևոր Տ-եր: Հայտնի են Գրիգոր Լուսավորչին, *Տրդատ Դ* թագավորին, ս. Հռիփսիմեին և *Հռիփսիմյանց կույսերին, Ներսես Ա Մեծին* ձոնված նրա ստեղծագործությունները:

Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու գործը շարունակել են Հովհաննես Երզնկացին, *Խաչատուր Կեչառեցին*, Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, *Առաքել Սյունեցին, Առաքել Բաղիշեցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթա-*

մարցին և ուր.՝ ոչ սոսկ Գանձարաններ կազմելու շարժառիթով, այլ եկեղեց. կանոններից դուրս տարաբնույթ բովանդակությամբ Տ-եր ստեղծելու նպատակով:

Տերունական տոներին նվիրված Տ-ում Ա-վետարաններից վերցված նյութը հաճախ, պակաս հուզականությամբ, վերաշարադրվել է: Մինչդեռ ավելի քնարական են Աստվածածնին նվիրված Տ-երը, որոնք բաժանվում են երեք խմբի՝ ա. Աստվածածնի գովեստներ, բ. Աստվածամորն ուղղված պաղատագին դիմումներ, գ. մայրական սրտի մորմոքները պատկերող ողբեր: Գովեստներն աչքի են ընկնում այն կանոնիկ փոխաբերությունների գործածությամբ, որոնք դեռևս VI դ. մեկնության հատուկ առարկա են դարձել *Պետրոս Այունեցու* «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» գրվածքում («այգի վայելուչ», «մորենի անկիզելի», «գաւազան ծաղկեալ», «սափոր ոսկի», «տուփ անուշահոտ խնկոց», «պարտէզ փակեալ», «աղբիւր կնքեալ» ևն): Աստվածամորն ուղղված աղաչանքներում իշխում է նրա միջնորդությամբ թողության արժանանալու գաղափարը («Զքեզ ունիմ միջնորդ, կենաց ճար և յո՛յս», «Ի նեղութեան ժամոյն օգնեա՛ եղկելո՛յս»): Իսկ Աստվածածնի ողբերը արտացոլում են որդու կրած տառապանքների նկատմամբ սիրող մոր դրսևորած անհուն վիշտն ու կսկիծը («Սիրտըս խոցեալ կըսկըծի, Աղիք ծնօղիս գալարի, Զքեզ տեսնեմ ծարաւի Արբեալ քացախ և լեղի»): Կան Տ-եր, որոնք այս երեք մոտիվներն ընդգրկում են միաժամանակ:

Արծարծվող նյութի տեսակետից տարբեր խմբեր են ներկայացնում հոգու և մարմնի հարաբերության, աշխարհի ունայնության, մեղքի և ապաշխարանքի խնդիրներին վերաբերող Տ-երը, ինչպես նաև չափածո վկայություններն ու տեսիլները:

Ժանրային պատկանելության առումով՝ հոգևոր Տ-երը օրհնություն են, գովեստ, ողբ, աղաչանք, խրատ: Ամբողջությամբ վերցրած՝ դրանք հորինված են հայոց լեզվի տաղաչափության գրեթե բոլոր տեսակներով: Հոգևոր Տ-երի օրինակով և հետևությամբ միջնադարյան Հայաստանում ստեղծվեցին կազմվել և հաստատվել են աշխարհիկ բովանդակությամբ Տ-եր:

Վարագ Ներսիսյան

2. Հայկական միջնադարյան երգարվեստի դրսևորում: Ունեցել է երկու հիմն. նշանակություն՝ ընդհանուր իմաստով՝ *երգ* (ինչպես նաև չափածո տեքստով), նեղ իմաստով՝ երաժշտաբանաստեղծ. ժանր:

Տ. դրսևորվել է և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր բովանդակությամբ, առաջինը՝ առավել հակիրճ ծավալով, իսկ հոգևորը՝ զարգացած և ծավալուն նկարագրով: Հոգևոր երգաստեղծության մեջ Տ-երը առաջ են եկել հանդիսավոր *ծեսի* անհրաժեշտությամբ, գերծ են մնացել կանոնացումից, ինչը նպաստել է Տ-երի առավել ազատ և բուռն զարգացմանը: Այս ժանրի շրջանակներում (զարգացման որոշակի ժամանակահատվածում) հաղթահարվել է ձայնեղանակային մտածողությունը:

Տ-ի երաժշտաբանաստեղծ. զարգացած հատկանիշները նրան մոտեցրել են տարբեր ժանրերի, օր., վոկալ կամ նվագարանային արիաների (Ռ. Աթայան): *Կոմիտասը* Տ. համարել է *ներբող*, որի բովանդակությունը Քրիստոսի, քրիստ. սրբերի կյանքի ամենաազդեցիկ դրվագների պատկերումն է: Ըստ Կոմիտասի՝ Տ-ի ժանրը ծագել է V դ. և սկզբնապես՝ ժող. երգարվեստի ոլորտում: Սակայն զարգացումն ու բուռն վերելքը կատարվել են Գրիգոր Նարեկացու (X դ.) ժամանակաշրջանում և, թերևս, նրա շնորհիվ: Իրենց եղանակներով բանավոր ավանդմամբ (XIX դ. 2-րդ կեսին հայկ. նոտագրությամբ գրառված) մեզ հասած՝ Գրիգոր Նարեկացու մի քանի Տ-երը վկայում են հայկ. միջնադարյան երաժշտաբանաստեղծ. արվեստի հզոր զարգացման և գեղ. անանխադեպ բարձր մակարդակի մասին: Նրանց երաժշտ. նկարագիրն արտացոլում է հայ երգարվեստի մյուս ճյուղերի (օր., գուսանական) հետ ունեցած սերտ առնչությունները: Ակնհայտ է, որ, ի տարբերություն համաքրիստ. երգարվեստում զուգահեռներ ունեցող հոգևոր երգաժանրերի, Տ-երը ձևավորվել են հատկապես տեղական (նախաքրիստ.) երգաստեղծական մշակույթի հիման վրա և նրա թելադրած հատկանիշներով: Այսօր էլ փաստելի են հոգևոր Տ-երի և վիպական արվեստի միջև եղած ժառանգ. կապերը:

Տ-երը, հայկ. միջնադարյան մասնագիտացված երգարվեստի ամենազարգացած ժանրերից մեկի արտահայտությունը լինելով, արտացոլել են ժամանակի գաղափարատեսական, գեղ. ամենավառ դրսևորումները, որոնք կրել են համամշակութ. բնույթ: Այս ժանրի շրջանակում երաժշտ. լեզվաոճի հզոր զարգացումն ազդել է նաև հոգևոր այլ երգաժանրերի վրա:

ՏԱՂԱՎԱՐ Տ. ժանրի առանցքի շուրջ առաջացել է որոշակի ընդհանրություններով պայմանավորված ժանրերի լայն ոլորտ՝ «Տաղային արվեստ» անվանումով (Ն. Թահմիզյան): Հետագայում առաջ են մղվել աշխարհիկ Տ-երը (թեև ձևականորեն ներառել են հոգևոր բնույթի որոշ ձևակերպումներ):

Նշանավոր տաղերգուներից են Գրիգոր Նարեկացին, *Գրիգոր Գ Պահլավունին*, Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին (Պլուզ) և ուրիշներ:

Մեղեդիական հնչողությամբ մեզ հասածներից մեծ արժեք են ներկայացնում Գրիգոր Նարեկացու «Հաւուն, հաւուն», «Ահեղ ձայնս» կամ «Ես ձայն զառիւծուն ասեմ», «Սայլն այն իջանէր», «Հաւիկ մի պայծառ տեսի» (նախկինում վերագրվել է այլ հեղինակի), անեցի Անանուն հեղինակի «Տիրամայրն» (հավանաբար՝ XI–XII դդ.) և այլ Տ-եր: Գրիգոր Նարեկացու հիշյալ Տ-երը («Սայլն այն իջանէր»-ը՝ մասնակիորեն) վերականգնել է Կոմիտասը:

Գրկ. Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Ե., 1981: Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, Ե., 1987: Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Աբեղյան Մ., Երկ., հ. 2–4, Ե., 1967–70: Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975: Ներսիսյան Վ., Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները (XIII–XVI դդ.), Ե., 1976: Նույնի, Տաղերգության ժանրերը, տես «Հայ միջնադարյան գրական ժանրեր» գրքում, Ե., 1984: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Աթայան Ռ., Հայկական տաղերը պատմական անցյալում և մեր օրերում, «Ժողովրդական արվեստը և պրոֆեսիոնալ արվեստը», գիտ. աշխատություններ. միջբուհական ժողովածու, Ե., 1985: Նույնի, *Жанр тагов, как носитель гуманистического начала..., Е., 1978.* Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Նավոյան Մ., Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մանագիտացված երգարվեստում, Ե., 2001: *Кушнарев Х., Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958.*

Մհեր Նավոյան

ՏԱՂԱՎԱՐ, Տաղավար տոներ, Հայ առաքելական եկեղեցու հինգ մեծ *Տերունի տոների* անվանումը, որոնք ունեն շաբաթապաս (տես *Պահք*), *նավակատիք, մեռելոց* և տևում են մի քանի օր: Այդ տոներն են՝ *Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն* (8 օր), *Զատիկ* (50 օր, Զատիկից մինչև *Հոգեգալուստ* 50 օրերը, կոչվում են Հինունք կամ Հիսունք, Տերունի են՝ ի պատիվ Հարության տոնի), *Վարդավառ* (Այլակերպություն և Պայծառակերպություն՝ 3 օր), *Վերափոխումն Ս. Աստվածածնի* (9 օր) և *Խաչվերաց* (7 օր):

Հին կտակարանում նկարագրվում է հրեաների մեծահանդես արարողությամբ տոնակատարվող Տաղավարահարաց տոնը՝ աշնանային բերքահավաքի տոնը. կատարվել է յոթերորդ ամսվա 15-րդ օրը և տևել յոթ օր (Ղևտ. 23.33–43, Բ Օր. 16.13–17): Տաղավարահարաց տոնը հիշատակվում է նաև Նոր կտակարանում (Հովհ. 7.2–10), նաև հիշատակվում են Հիսուսի ուսուցումները տոնակատարության ժամանակ (Հովհ. 7.11–24, 37–39): Այդ օրերին հրեաները յոթ օր ապրել են վրաններում (տաղավարներում, այստեղից էլ՝ տոնի անունը) և մեծ տոնախմբություններով, ողջակեզ մատուցելով, հանդեսներով երախտագիտություն հայտնել Աստծուն՝ պարգևած բարիքների համար: Ենթադրվում է, որ Տ. անվանումն առաջացել է այդտեղից և գործածական դարձել քրիստ. մեծ Տերունի տոների համար:

ՏԱՃԱՐ, կրոնական ծեսերին և արարողություններին ծառայող պաշտամունքային շինություն: Նախաքրիստ. շրջանում՝ հեթանոս. կուռքերի տուն, կռատուն: Տաճարային առաջին շենքերը կառուցվել են Եգիպտոսում, Միջագետքում, Հունաստանում, Հռոմում: Աստվածաշնչում Տ. է անվանվում *Երուսաղեմում* Սողոմոնի կառուցած և Զորոբաբելի ու Հեսուի վերակառուցած պաշտամունքային շենքը: Հայաստանի պահպանված վաղագույն Տ-ներից են Էրեբունի ամրոցի Սուսիի, Խալդիի (Քր. ծ. ա. VII դ.), Գառնիի հեթանոս. (Քր. ծ. հ. I դ.) Տ-ները:

Հայաստանում քրիստոնեության ընդունման և տարածման ժամանակ (IV դ.) հեթանոս. Տ-ները հիմնականում ոչնչացվել կամ վերափոխվել են՝ հարմարեցվելով կրոն. նոր գաղափարախոսության գործառն. և գեղագիտ. պահանջներին: Քրիստ. Տ-ներն իրենց հատակագծային և ծավալատարած. լուծումներով էապես տարբերվում են հեթանոսականներից, որոնց հորինվածքը թեպետ մերժվել, սակայն անվանումն անցել է նոր կրոնի մոնումենտալ շենքերին: Քրիստ. Տ-ի, ինչպես ընդհանրապես եկեղեցու, պարտադիր բաղադրիչներն են աղոթասարահը, արլ. կողմում՝ Ավագ խորանը՝ բեմի և դասի հետ: Համընդհանուր ճանաչման են ար-

ժանացել Հռոմի Ս. Պետրոսի, Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի, Փարիզի Աստվածամոր, Կիևի Ս. Սոֆիայի, Մոսկվայի Վասիլի Երանելու և այլ Տ-ները: Տ-ները, մեծ մասամբ կառուցված լինելով քաղաքային և վանքային համալիրներում, ունեցել են քաղաքաշին. կարևոր նշանակություն՝ առանձնացել իրենց դիրքով, չափերով, նորարար լուծումներով, արտահայտիչ կերպարով: Հայաստանում Տ. են անվանվել Մայր եկեղեցիները: Հայկ. միջնադարյան Տ-ները (*Էջմիածնի Մայր տաճար*, *Զվարթնոց տաճար*, *Անիի Մայր տաճար*) վառ արտահայտված ազգ. ինքնատիպությամբ, մտահղացման համարձակությամբ, դեղ. բարձր հատկանիշներով քրիստ. պաշտամունքային ճարտ. լավագույն նմուշներից են (տես նաև *Եկեղեցի*):

Գառնիկ Շախկյան

ՏԱՆՁԱՓԱՐԱԽ, մենաստան, ՀՀ Սյունիքի մարզում, Կապան քաղաքի շրջագծի մեջ մտնող Բեխ գյուղից հարավ-արևելք, անտառապատ բարձրադիր վայրում: Առաջին անգամ հիշատակվում է X դ., երբ Սյունյաց Վահան իշխանը, ըստ Ստեփանոս արք. Օրբելյանի, «հրաժարվեց աշխարհական կարգից, կրոնավորի տարազ հագավ ու երկար ժամանակ ճգնում էր Տանձափարախի սուրբ վկայարանում»: Տ. եղել է *անապատ*. պատմիչը նշում է, որ նրա կրոնավորները «խարազնազգեստ ու սակավապետ էին»: Տ. լքվել և ավերվել է ուշ միջնադարում: XVII դ. 1-ին կեսին վերականգնվել է: Ինչպես հայտնում է XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցին, Տաթևի Մեծ անապատից Տեր Արիստակեսը «գնաց Տանձափարախ անվանված վայրը, այստեղ շինեց անապատ և մնաց մինչև իր կյանքի վերջը ու այստեղ թաղվեց. անապատը կա հաստատուն մինչև այսօր» (տեղի բնակչությունը այն կոչում է նաև «Արիստակես անապատ»):

Տ. եղել է նաև մշակութ. կենտրոն, այստեղ գրվել են ձեռագրեր: Տ-ում աշխատել է *Գրիգոր Տաթևացու* աշակերտ Մաթևոս վարդապետը, որը 1393-ին «Քարոզգիրք» է գրել: XVII դ. վերականգնվելուց հետո անապատը գործել է մինչև XVIII դ. վերջը: Եկեղեցում կա 1751-ի խաչքար: Համալիրից պահպանվել են որմնախորշերով միանավ դահլիճի հորինվածքով եկեղեցին և նրա հվ. կողմում թաղածածկ սեղանատունը, որոնց պատերի շարվածքում օգտագործված են մենաստանի հնագույն շինքերի ատամնավոր քիվի և քանդակազարդ գոտու հատվածներ:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Հասրաթյան Մ., Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973:

Մուրադ Հասրաթյան

ՏԱՇՅԱՆ Հակոբոս [Թաշճյան Փրանկիսկոս Մելքոնի, 25.10.1866, գ. Արծաթի (Կարինի գավառ) – 3.2.1933, Վիեննա], ձեռագրագետ, բանասեր, լեզվաբան, հայագետ: Նախն. կրթությունն ստացել է Կարինի ծխական դպրոցում, 1880-ի ամռանը հաճախել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանը, աշակերտել Հ. *Գաթըրճյանին*, ապա ուսանել Վիեննայի Մխիթարյանների ընծայարանում: 1883-ին ստացել է Հակոբոս անունը, 1885-ին անդամագրվել *Մխիթարյան միաբանությանը*: 1889-ին ձեռնադրվել է քահանա: Ուսումն ավարտելուց հետո (1889) Մխիթարյան կրթարանում դասավանդել է փիլիսոփայություն, հայոց լեզու: 1893–1912-ին եղել է Վենետիկում, Բեռլինում (այստեղ ուսումնասիրել և նկարագրել է Արքունի մատենադարանի հայերեն ձեռագրերը), Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կարինում, Տայոց աշխարհում: 1909-ին հաստատվել է Կ. Պոլսի Մխիթարյան վանատան մեծավոր: Տ. հայերեն է սովորեցրել ֆրանսիացի նշանավոր լեզվաբան Անտուան Մեյեին (վերջինս հպարտացել է դրանով): Անձն. ծանոթություն, նամակագր. կապեր է ունեցել ժամանակի հայտնի հայ և եվրոպացի հայագետների՝ Գ. *Տեր-Մկրտչյանի*, Մ. արք. *Տեր-Մովսիսյանի*, Բ. *Կյուլեսերյանի*, Հ. Հյուբշմանի, Հ. Պետերմանի, Պ. Ֆետտերի, Ֆ. Մյուլլերի, Ֆ. Կոնիբերի և ուր. հետ: Տիրապետել է բազում լեզուների (լատ., հուն., ասոր., արաբ., եթիոպ., գերմ., անգլ. ևն):

Հ. Տաշյան

Տ. 45 տարի անընդմեջ աշխատել է հայագիտության բնագավառում՝ ստեղծելով մեծարժեք գործեր: Հեղինակ է «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ...» (1898), «Ուսումն դասական հայերէն լեզուի» (1920), «Բառախօսական դի-

տողութիւններ հայերէն գիտական լեզուի մասին» (1926) լեզվաբան. բնույթի և «Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կարին...» (1921), «Հայ ազգի տարագրութիւնը...» (1921), «Հաթեր և ուրարտեանք» (1934), «Հին Հայաստանի արեւմտեան սահմանը» (հրտ. 1948) պատմական և պատմաաշխարհագր. աշխատությունների: Արժեքավոր լրացումներով, հուն., ասոր., արաբ., եթովպ. և այլ աղբյուրների հետ համեմատելով՝ Տ. հրատարակել է «Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը...» (1896): Բանասիր. վիթխարի աշխատանքի արդյունք է Հ. Գաթրճյանի «Սրբազան Պատարագամատոյցք Հայոց...» երկի հրատարակումը (1897)՝ ծանոթագրություններով և լրացումներով: Տ. զբաղվել է նաև քիմիայի և բնական այլ գիտությունների հայերեն տերմինաբանության հարցերով: Թարգմանել է Հ. Հյուբշմանի, Հ. Պետերմանի, Ա. Կարիերի, Կ. Կոնիբերի, Ն. Մառի և ուրիշ հայագետների աշխատություններ:

Տ-ի գիտ. հարուստ ժառանգության մեջ առանձնանում է «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895) աշխատությունը, որը կազմելիս նա ի հայտ է բերել «մեծագույն գիտնականի հմտություն, գործելու հազվագյուտ ուժ» (հայագետ Պ. Ֆետտեր): Հայ բանասիրության մեջ ցուցակագրման Տ-ի եղանակն անվանվել է «տաշյանական ոճ»: Ձեռագրացուցակում ընդգրկված են Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 571 ձեռագիր մատյաններ, 7 ներդիր նկարներ: Նկարագրությունների մեջ մանրամասն տեղեկություններ են հաղորդվում ձեռագրի ստեղծողի, մատյանի արտաքինի, գրի մասին, բացահայտվում յուրաքանչյուր ձեռագիր մատյանի (քարոզ, մեկնություն ևն) բովանդակությունը: Ձեռագրի հանգամանալից նկարագրությունը, ծանոթագրությունները, ցանկերը, հարուստ տեղեկատվությունը հանրագիտական տեղեկատուի արժեք ունեն:

Երկ. Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին..., Վնն., 1891: Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վնն., 1892: Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, մաս 1, 2, Վնն., 1895, 1901, մաս 3, ՀԱ, 1900–01:

Գրկ. Ակինյան Ն., Հակոբովս վրդ. Տաշյան, ՀԱ, 1933, № 1–2:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՏԵԿՈՐԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՎԱՆՔ, Տեկորի տաճար, Անիից մոտ 20 *կմ* հարավ-արևմուտք, Ախուրյանի վտակ Տեկորի աջ ափին (այժմ՝ Թուրքիայում): Ըստ չին. արձանագրության՝ Տ. Ս. Ե. վ-ի եկեղեցին V դ. վերջին քառորդում կառուցել է իշխան Սահակ Կամսարականը: Այն որպես Ս. Սարգսի վկայարան հիմնարկել են կաթողիկոս *Հովհաննես Ա Մանդակունին* և Արշարունյաց Հովհաննես

Տեկորի Ս. Երրորդություն վանքի եկեղեցին (478–490) հս-արմ-ից

եպիսկոպոսը՝ վանքի երեց Տայրոնի, Մանան Հազարապետի և Ուրան Հոռոմի մասնակցությամբ: Տ. Ս. Ե. վ-ի այս արձանագրությունը մեզ հասած հայերեն ամենահին գրությունն է և պատկերացում է տալիս մեսրոպյան այբուբենի նախ. տառաձևերի մասին:

Սկզբնապես (12–13 շարք) Տ. Ս. Ե. վ-ի եկեղեցին կառուցվել է վարդագույն տուֆով՝ որպես եռանավ բազիլիկ: Շինարարությունն ընդհատվել է 481–484-ին (կապված Պարսկաստանի տիրապետության դեմ հայերի համաժող. ապստամբության հետ) և շարունակվել սպիտակավուն տուֆով՝ եկեղեցուն տալով քառամույթ գմբեթավոր հորինվածք, որի շնորհիվ այն քրիստ. ճարտ-յան մեջ տվյալ տիպի հնագույն թվագրված կառույցն է: Տ. Ս. Ե. վ-ի եկեղեցին բարձրացել է բազ-



Տեկորի Ս. Երրորդություն վանքի Ս. Սարգիս վկայարանի հատակագիծը

մաստիճան որմնախարսխի վրա, հս-ից, արմ-ից և հվ-ից ունեցել բաց այունասրահներ, իսկ արտաքուստ եռանիստ ծավալով արլ-ից շեշտված խորանի երկու կողմերում՝ հս-ից հվ. ձգվող ավանդատներ: Հզոր մույթերի վրա բարձրացել է խորանարդաձև գմբեթը, որը հայկ. եկեղեց. ճարտ-յան մեջ մեզ հայտնի ամենավաղ քարե գմբեթն է և իր ձևով՝ միակը: Հարուստ հարդարանք են ունեցել արտաքին ճակատները, այունասրահների որմնասյունները, շքամուտքերը, լուսամուտների պսակները: Գերակշռել են ականթի, խաղողի որթատունկի և ողկույզների քանդակները, ոճավորված զարդաձևերը, որոնցից մի քանիսն առաջին անգամ են հանդես եկել հայկ. արվեստում: Արմ. ճակատնի հարթության մեջ, խաչաձև լուսամուտների երկու կողմերում, քանդակված են եղել երկու կիսանդրի, վերևում՝ գավթի մեջ դրված խաղողի ողկույզ կտցահարող զույգ սիրամարգեր: Խորանը ծածկված է եղել որմնանկարներով:

Հայտնի է Տ. Ս. Ե. վ-ի վանահայր Հովհաննեսը, որին 724-ին կաթողիկոս *Հովհաննես Գ Օձնեցին* մեղադրել է դավանաբան. մոլորությունների մեջ: X դ. նորոգվել է եկեղեցու գմբեթի վերարը, նախկին կղմինդրե ծածկը փոխարինվել է քարե սալերով, նեղացվել են ճակատների լուսամուտները: Ըստ պատերի փորագրված արձանագրությունների՝ 971-ին Խոսրովանույշ թագուհին (Աշոտ Գ Ողորմածի կինը) ազատել է Տեկորը հարկերից, 999-ին վանքը ստացել է նվիրատվություններ, 1008-ին Կատրանիդե թագուհին (Գագիկ Ա Բագրատունու կինը) ազատել է Տեկորը «քուստակ» հարկից, 1014-ին և 1018-ին հաստատվել է Տեկորի ապահարկությունը, 1036-ին *Խծկոնքի վանքը* և Տ. Ս. Ե. վ. կանոնակարգել են Տեկոր գետակի ջրից օգտվելը: 1042-ին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրը (իշխան Վեստ Սարգսի կինը) ազատել է Տեկորը հարկից: XVII դ. վանահայր Հովհաննես վարդապետը դիմադրել է վանքը կողոպտող ավազակներին և նահատակվել: XIX դ. Տ. Ս. Ե. վ. ունեցել է մոտ 300 *հա* վարելահողեր և արոտատեղիներ, որոնք 1888-ին տրվել են վարձով: XX դ. սկզբին վանքի եկեղեցու վթարային վիճակի պատճառով ժամասացությունները դադարեցվել են: 1911-ին փլվել է եկեղեցու գմբեթը: 1920-ից հետո Տ. Ս. Ե. վ. լրիվ ավերվել է՝ շրջակա գյուղերի բնակիչները պատերից պոկել են քարերը և օգտագործել:

Տ. Ս. Ե. վ-ի եկեղեցու քառամույթ գմբեթավոր բազիլիկ հորինվածքը հետագայում նախատիպ է ծառայել Հայաստանի VI–XVII դդ. բազմաթիվ եկեղեցիների համար, իսկ IX–XI դդ. անցել է Բյուզանդիա ու լայն տարածում ստացել ուղղափառ (օրթոդոքս) երկրներում:

Գրկ. Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Տեր-Մովսեսյան Մ., Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, ՍՊԲ, 1905: Թորամանյան Թ., Տեկորի տաճարը, Թ., 1911: Ղաֆադարյան Կ., Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը, ՊԲՀ, 1962, № 2: Մնացականյան Ս., Տեկորի տաճարի կտիտորական բարձրաքանդակը, ՊԲՀ, 1971, № 4: *Выцоцкий А.М., Церковь в Текоре и её строительная история, Е., 1978*; Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

Մուրադ Հասրաթյան

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, տես *Եկեղեցական ժողովներ* հոդվածում:

ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔ, ՀՀ Արագածոտնի մարզում, Բյուրականից հյուսիս, նախկին Տեղեր գյուղում: Վանքի Ս. Աստվածածին եկեղեցին և նրան արմ-ից կից գավիթը, ըստ չին. արձանագրության, 1213–32-ին կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանի կինը՝ Մամախաթունը, ճարտ. Աղբայրիկ վարդապետի ձեռքով: Եկեղեցին ունի ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք: Գմբեթային փոխանցման համակարգն առադաստային է, թմբուկը ներսից և դրսից՝ գլանաձև: Եկեղեցին առանձնանում է իր խիստ ձևերով և դեկորատիվ հարդարանքի գրեթե իսպառ բացակայությամբ: Գավթի չինարարությունը, ըստ այուներից մեկի վրա պահպանված արձանագրության, տևել է 11 տարի և ավարտվել 1232-ին: Այն իր չափերով գերազանցում է եկեղեցուն: Գավիթը պատկանում է XIII դ. լայն տարածում ստացած քառասյուն, կենտրոնակազմ տիպին, 12-նիստանի ցածրադիր վրանաձև գմբեթով: Սրբատաշ բազալտ քարով կառուցված եկեղեցին և գավիթն առանձնանում են իրենց խիստ ձևերով և հարդարանքի գրեթե բացակայությամբ:

Հայկ. ճարտ-յան մեջ սկզբունքային նորություն և բացառիկ են գավթի ծածկի վրա հս-արմ. և հվ-արմ. անկյուններում կանգուն գմբեթավոր մատուռները (մուտքերը բացվում

են դավթի ծածկի միջից), որոնք բավական ինքնատիպ եռագմբեթ ուրվագիծ են հաղորդում Տ. վ-ին: Նրանք առնչվում են դավթում թաղված ննջեցյալների հիշատակի հավերժացման հետ և զուգահեռներ ունեն այդ դարաշրջանում տարածում գտած երկհարկ դամբարան-եկեղեցիների ընդհանուր հորինվածքի հետ:

1467-ին Սարգիս վրդ. Բյուրականցին կառուցել է վանքի պարիսպը: 1948-ին Տ. վ-ի համալիրը երկրաշարժից զգալի վնասվել է: 1950–52-ին նորոգվել են եկեղեցու և մատուռների գմբեթները, տանիքները ծածկվել տուֆե սալերով: 1975–76-ին ամրացվել են քիվերը, նորոգվել եկեղեցու ու դավթի պատերի վերին շարքերը:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.5, 1-ին պատկերը:

Գրկ. Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: *Яковсон А. Л., Из истории армянского средневекового зодчества: Церковь в селе Дигор, Краткие сообщения Института истории материальной культуры АН СССР, XIII, М., 1946; Мнацаканян С. Х., Архитектура армянских притворов, Е., 1952.*

Ստեփան Մնացականյան

ՏԵՍԻԼՔ, տեսիլ, երևում, արթմնի երազ, աստվածային *հայտնության* կերպ, անդենական իրողությունների դրսևորում: Տ. իր բնույթով հայտնութենական է: Աստվածային նախախնամությամբ, մարդկային տեսողությանը մատչելի աննյութեղեն պատկերների միջոցով Տ. հաղորդում կամ ակնարկելով մատնանշում է ճշմարտություններ, որոնք վերաբերում են թե՛ անցյալին, թե՛ ներկային և թե՛ ապագային, բայց այն գլխավորաբար միտված է վերջինին: Այս իմաստով Տ. ունի մարգարեական ուղղվածություն:

Տ-ի վաղագույն օրինակներ առկա են Եսայու (**6**), Եզեկիելի (**1**), Դանիելի (**8**) մարգարեություններում, ինչպես նաև՝ Գործք առաքելոցում (**10.**10–20 ևն):

Տ-ներից է բաղկացած Զաքարիայի մարգարեությունը (ա. Ձիերի տեսիլքը, բ. Եղջյուրների տեսիլքը, գ. Չափելու լարի տեսիլքը, դ. Մեծ քահանայի տեսիլքը ևն): Նորկտակարանային Տ-ներից ուշագրավ են Պետրոս առաքյալի Տ. Հոպպեում (կենդանիներով ու թռչուններով լեցուն անոթ՝ «ինչպես մի մեծ սփռոց», Գործք **10.**1–16), որով Պետրոսին ծանուցվում էր, թե Ավետարանը պիտի քարոզվի նաև հեթանոսներին և նրանց վրա էլ պիտի իջնի *Սուրբ Հոգին*, ինչպես նաև Սողոսի՝ նույն ինքը Պողոս առաքյալի Տ. (Գործք **9.**3–9)՝ Դամասկոսի ճանապարհին (երկնքից փայլատակող լույս և ձայն, որն ասում էր. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ», Գործք **9.**4): Հովհաննեսի Հայտնությունը ևս լեցուն է Տ-ներով, որոնք ցույց են տալիս Քրիստոսի Երկրորդ գալուստը:

Տ-ներ առկա են ինչպես հինկտակարանային («Տեսիլք Եզեկիայ արդարոյն», «Տեսիլք Դանիելի Եօթներորդ», տես Թանգարան հին եւ նոր նախնեաց, Ա, Անկանոն գիրք հին կտակարանաց, Վնտ., 1896), այնպես էլ նորկտակարանային («Տեսիլք ս. Աստուածածնի», «Տեսիլք ս. առաքելոյն Պօղոսի», տես Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, Բ, Անկանոն գիրք Նոր կտակարանաց, Վնտ., 1898) պարականոն գրվածքներում:

Հայրախոս. մատենագրության մեջ հայտնի են աստվածաշնչական Տ-ների՝ *Հովհան Ոսկեբերանի* (Եզեկիելի՝ «Էջմիածին», 1996, № 2–3, էջ 189–198, Դանիելի՝ Vasiliev A., Anecdota graeco-byzantia, 1893, p. 33–38), Թեոդորետոս Կյուրացու (V դ., Մեկնութիւն Եզեկիէլի, 2000), Վարդան Անեցու (X–XI դդ., Անեցի Վարդան վարդապետի երգել ի կառս, ԲՄ, № 10, 1971, էջ 276–291), *Վարդան Արևելցու* (Ճառք, ներբողեանք, 2000, էջ 122–134), *Եսայի Նչեցու* (Եզեկիելի՝ Մատենադարան, ձեռ. № 6573, թ. 75 ա–101 ա), *Հովհաննես Երզնկացի* Ծործորեցու (Դանիելի՝ Մատենադարան, ձեռ. № 1187, թ. 305ա–379բ) մեկնություններն ու ներբողական բացատրությունները:

Համաձայն իր դրսևորման կերպի՝ Տ. անդենական բնույթի 2 կարգի իրողություն է ներկայացնում. անդրանցական-աստվածաշնչական (ա. Աստվածության՝ մարդուն մատչելի պայմանական դրսևորում կամ ակնարկ կատարվելիք որևէ իրողության մասին, բ. երբ Տ-ում երևացողը Աստվածաշնչում հիշվող անձ կամ երևույթ է՝ *Հիսուս Քրիստոս, Մարիամ Աստվածածին, մարգարեներ, Հովհաննես Մկրտիչ, խաչ* ևն) և վախճանաբան-եկեղեցաքաղ. (երբ Տ-ում ուղղակի թե անուղղակի ակնարկվում են ազգ. պատմության մեջ բացառիկ կարևոր դեր կատարած կամ կատարող դեմքեր, դեպքեր, որոնք ունեն վախճանաբ. երանգ): Առաջին կարգի իրողության **ա** ենթակետին են պատկանում Եզեկիելի և Դանիելի Տ-ները, որոնցում Աստվածությունը երևում է քառա-

կերպ Կառքի, Ծերունու, մարդու Որդու և գրող Ձեռքի (Դանիել 5) կերպարանքով:

Առաջին կարգի իրողության Ք ենթակետին են պատկանում Հովհաննես Գառնեցու (XII–XIII դդ.) Տ. (երբ երևում են Մովսես և Եղիա մարգարեները. տես Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, գլ. ԾԴ), «*Վարք հարանց*», *Հայսմավուրք* ժողովածուներում բազմիցս նկարագրված Հիսուս Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի երևումները ճգնակյաց անապատականներին ու սրբերին:

Երկրորդ կարգին են պատկանում (վախճանաբանական-եկեղեցաքաղ. Տ-ներ) *Գրիգոր Ա Լուսավորչի* Տ., որում նկարագրվում է Միածնի էջքը (Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, գլ. ՃԲ, §731–755), Գրիգոր Ա Լուսավորչի հանդիպումը և զրույցը Հրեշտակի հետ («Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր եհարց Հրեշտակն Տեառն մինչ էր յայրին՝ վասն հոգւոց մարդկան», Մատենադարան, ձեռ. № 715, թ. 37բ–45ա), ինչպես նաև՝ Վաղարշապատում նրա տեսած Տ. (Մատենադարան, ձեռ. № 952, թ. 216բ–223բ, ձեռ. № 8029, թ. 103ա–109ա, ձեռ. № 4505, թ. 133բ–137ա):

Հայ միջնադարում լայն տարածում են ունեցել *Ներսես Ա Մեծ* և *Սահակ Ա Պարթև* Հայրապետների Տ-ները, որոնք Մեթոդիոս Պատարացու (մահ. 311, «Տեսիլք սրբոյն Մեթոդի եպիսկոպոսի Պատարայ և վկայի՝ յաղագս անցեալ, ներկայիս և ապառնեացն...», Մատենադարան, ձեռ. № 1487, թ. 18բ–26ա), Հիպպոլիտոս Բոստրացու (մահ. 236, «Երանելւոյն Հիպպոլիտեայ եպիսկոպոսի ասացեալ վասն կատարածի աշխարհիս և վասն Նեռին եւ յերկրորդ գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ասացեալ բան մարգարութեան», Մատենադարան, ձեռ. № 944, թ. 36բ–55 բ), Ագաթոնի կամ Ադաղրոնի («Ագաթոնի անյաղթ փիլիսոփայի ասացեալ վասն ժամանակին, որ յայտնելոց է ս. թագաւորին Կոստանդիանոսի...», Մատենադարան, ձեռ. № 3839, թ. 198բ, ձեռ. № 4669, թ. 233ա, հրտ.՝ Ավդերյան Հ., «Բազմավեպ», 1913, էջ 396–400 և շար.) անուններով քրիստ. իրականության մեջ շրջանառված Տ-ների վերապատումներն ու տեղայնացված վերաիմաստավորումներն են:

Ըստ Ներսես Ա Մեծի Տ-ի («Սոփերք հայկականք», հ. 6, 1853)՝ հայ Արշակունիների և հայ Պարթևների անկումից հետո պարսիկները նվաճելու են Երուսաղեմը և գերեվարելու Խաչափայտը, որը պետք է գերեդարձվի հույների միջոցով: Սակայն հույների իշխանությունը հետագայում խորտակվելու է «աղեղնավորների» կամ «նետողների» (սելջուկներ) հարվածներից: Շատ չանցած «նետողները» պարտվելու են «ֆրանկների» (խաչակիրների) զինական ուժի հարվածներից: Հռոմ. իշխանության հաստատումով վերջ է դրվելու հայոց տառապանքին: Տ-ում արտահայտված է ոչ միայն հայերի՝ հույների հանդեպ հուսախաբությունը, այլև՝ ազատագր. նոր սպասումները: Վախճանաբան-եկեղեցաքաղ. միտումներ է բովանդակում նաև Ագաթոնի Տ.: Համաձայն դրա՝ ֆրանկների Մեծն Կոստանդինոս կայսրը և Սեղբեստրոս պապը Հայաստանի Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Ա Լուսավորչի ուղեկցությամբ ուխտի են գնում Երուսաղեմ, ապա ուղևորվում Հռոմ: Նրանց ուղեկցում է 70-հազարանոց հայոց զորքը: Հյուրերին ճանապարհելով Հայաստան՝ կայսրն իր մոտ է պահում հայոց զորքից 200 մարդ, որոնցից սերվում է «որմանք» կամ «արամանք» (= արմենք) հորջորջվող ժողովուրդը: Հետագայում սրանց միջից դուրս է գալու մի նոր Կոստանդինոս, որը 12 խաչապաշտ թագավորների խնդրանքին անսալով, ձեռնարկելու է տիեզերքի փրկագործումը և հույներին ազատելու է «նետողների» (սելջուկներ) լծից: Կոստանդինոսի ջանքերով ի մի է բերվում ցրված հայությունը, հայոց բանակի զորավար է կարգվում Արշակունի թագավորազն Վաղարշակը: Վերջինս, պատերազմելով Բյուզանդիայի դեմ, վերականգնելու է Հայաստանի հին սահմանները: Կոստանդինոսի մահից հետո հռոմ. գահին նստելու են Տիբերիոս և Վիզանդ կայսրերը: Վերջինիս օրոք կրկին պիտի երևան իսմայելացիները (արաբներ՝ մուհամեդականներ) և ավերեն Կարինը: Սրի ճարակ դարձած հայերից շատ քչերը պիտի փրկվեն: Վիզանդը վրեժխնդիր պետք է լինի հայերի համար: Նրան հաջորդելու է Թեոդենը, որի ժամանակ ծնվելու է *Նեռը*: Սրա բռնությունը վերջ է գտնելու Քրիստոսի զորությամբ: Այստեղ ուշագրավն այն է, որ Թեոդենի ժամանակ, 56 տարի թագավորելուց հետո, մահանալու է Վաղարշակը: Նրան հաջորդելու է ծագումով Արշակունի խաղաղասեր ու շինարար մեկը՝ «Թորգոմի ազգից և տոհմից Շիրակի որդի Արշավանի որդին»: Սրա օրոք վերջանալու է Արշակունյաց և Գրիգոր Լուսավորչի իշխանությունը: Եթե Ագաթոնի Տ-ի հին տարբերակում արտահայտված է հայերի հուն.

կողմնորոշումը, ապա նորում դրսևորված է արևմտյան (ֆրանկներ կամ խաչակիրներ), այսինքն՝ հակահուն. միտումը. Տ-ի նոր տարբերակում ազատարար Արշակունիները նվաճում են Յոթ բլուրների վրա հանդչող Բյուզանդիոնը: Սահակ Ա Պարթևի Տ-ում նմանապես արտացոլված է Արշակունիների և Պարթևների իշխանության վերականգնման գաղափարը (տես Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց, գլ. Դ), որը VII–VIII դդ. վերակենդանացել է Բյուզանդիայի քաղ. օժանդակության հետ հույսեր կապող հայ իրականության մեջ:

Հայոց քաղ. ակնկալությունների դրսևորումն է *Հովհաննես Կոզեռնի* անվան հետ կապված Տ.: Ըստ Տ-ի՝ 1023-ին տեղի ունեցած երկրաշարժն ու Արեգակի խավարումը, նմանությամբ Հովհաննեսի Հայտնության, նշանավորում է Քրիստոսի մկրտությամբ շղթայված *սատանայի* ազատումը: Հայ պատմագրության մեջ (*Սամուել Անեցի*) այդ Տ-ի իրականացումն է նկատվում «Քրիստոսի մկրտության հազարամյակին»՝ 1030-ին թուրքերի գրոհը Բերկրիի վրա, ինչպես նաև 1037-ին Եղեսիայի գրավումը թուրքերի կողմից և նույն այդ տարում տեղի ունեցած զարհուրելի երկրաշարժն ու Արեգակի խավարումը: Դրանք համարվում էին հազարամյակի նախանշանները, երբ կապանքներից ազատված սատանան ավերելու էր աշխարհը (ըստ Մատթեոս Ուռհայեցու): Համաձայն Հովհաննես Կոզեռնի Տ-ի՝ Հայաստանում հաստատվելու էր թուրքերի 60-ամյա բռնատիրությունը: Սրան հետևելու էր Երուսաղեմի գրավումը ֆրանկների կողմից, իսկ 50 տարի հետո՝ քրիստոնյաների համատարած ազատագրումը: Հովհաննես Կոզեռնի Տ-ում արտացոլված են հայոց փրկությունը Արևմուտքի (ֆրանկներ) հետ կապող բյուզանդամետ և լատինամետ հոգևոր ու աշխարհիկ վերնախավի քաղ. հույսերն ու ակնկալությունները:

Եկեղեցաքաղ. բնույթի է *Գրիգոր Տաթևացու* Տ.՝ կապված *Աղթամարի կաթողիկոսության* վրայից նզովքը վերացնելու խնդրի հետ: Այդօրինակ Տ. է *Թովմա Մեծոփեցու* նկարագրածը, որտեղ ակնարկվում է Սսից կաթողիկոս. աթոռի վերադարձը Ս. Էջմիածին: Ըստ այդ Տ-ի և դրա մեկնաբանության՝ երկնքից կախված կանթեղը, որ պայծառ լույս է տարածում շուրջբոլորը, Ս. Էջմիածինն է, որ «շատ վաղուց խավարել էր և հիմա Աստված ողորմություն արեց, և ուզում է լուսավորել... և հայկազյան աշխարհի հավանությամբ, աղոթքով, բոլոր սրբերի բարեխոսությամբ հայրապետ և կաթողիկոս հաստատեցինք Թադեոսի, Բարդուղիմեոսի և մեր Լուսավորչի Առաքելական աթոռի վրա» (Թովմա Մեծոփեցի, Ցիշատակարան, 1892, էջ 41, 45):

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.5, 2-րդ պատկերը:

Գրկ. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Ե., 1957: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 144–151: Տեր-Դավթյան Ք., XI–XV դդ. հայ վարքագրությունը, Ե., 1980, էջ 156–172: *Мар Н., Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей, "Записки Восточ. отдел. импер. русск. археолог. общ.", т. V, 1890, с. 211–241.*

Հակոբ Քյոսեյան

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Երվանդ Գալուստի [7(19).11.1879, գ. Հառիճ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում) – 12.7.1974, Երևան], բանասեր, պատմաբան, բառարանագիր: Փիլ. (1904) և բանասիր. (1943) գիտ. դ-ր, պրոֆ. (1945): Գիտ. վաստ. գործիչ (1959): Նախն. կրթությունն ստացել է Հառիճի վանքի դպրոցում (1892), ապա ավարտել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1900): 1900–04-ին սովորել է Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում, ի թիվս այլ գիտությունների ուսումնասիրել աստվածաբանություն, հին և նոր լեզուներ, աշակերտել գերմանացի հայտնի աստվածաբան Ա. Հառնակին: Վերադառնալով Էջմիածին՝ ձեռնադրվել է վարդապետ (1905), դասավանդել Գևորգյան ճեմարանում, եղել Էջմիածնի տպարանի տնօրեն: 1910-ին հրաժարվել է հոգևոր կոչումից, նվիրվել գիտ., մանկավարժ. գործունեության, դասավանդել Էջմիածնի, Երևանի, Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի դպրոցներում: 1921-ին նշանակվել է Էջմիածնի գիտ. ինստ-ի (հետագայում՝ Հայաստանի գիտ. և արվ. ինստ.) գիտ. քարտուղար, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» տարեգրքի խմբագիր: 1943–49-ին՝ ԵՊՀ օտար լեզուների ամբիոնի

Ե. Տեր-Մինասյան

վարիչ, 1956–70-ին՝ ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստ-ում բառարանագրության բաժնի վարիչ:

Տ-Մ-ի աշխատությունները հիմնականում վերաբերում են հայ-ասոր. եկեղեց. հարաբերություններին, Ընդհանրական եկեղեցու պատմությանը, Արևելքում և հայոց մեջ տարածված քրիստ. աղանդների ծագմանը, V–VII դդ. հայ եկեղեցու դավան. դիրքորոշմանը, քրիստոնյա աշխարհն ալեկոծած դավանաբան. պայքարին հայերի մասնակցության չլուսաբանված հարցերին, եկեղեց. ժողովներին, եկեղեց. մատենադիրների, հայ, հույն և ասորի աստվածաբանների դավանաբան. գործերի քննությանը ևն: Տ-Մ. շոշափելի ավանդ ունի նաև երկլեզվյան թարգմ. բառարանների ստեղծման գործում:

Տ-Մ. եղել է հայ-ասոր. եկեղեց. կապերի ուսումնասիրման բնագավառի հիմնադիրը և լավագույն հետազոտողը: Այդ թեմային են նվիրված նրա «Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ» (դերմ. 1904, հայ. հրտ. 1908) և «Նեստորականությունը Հայաստանում» (1946) աշխատությունները: Հեղինակը հայ-ասոր. եկեղեցաղավանաբան. հարաբերությունների մի շարք մասնակի խնդիրներ է քննել նաև հետևյալ հոդվածներում. «Այսպես կոչված Պարսից ժողովը» (1907), «Մանազկերտի 726-ի ժողովի վեց ասորի եպիսկոպոսները և Խոսրովիկ Թարգմանչի հիշած երկու ասորական վանքերը» (1907), «Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը» (1908), «Կնիք հաւատոյ» ժողովածուն և «Հայոց եկեղեցու դավանաբանական դիրքը Զ և Է դարերում» (1921–22) և «Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը» (1960): Մասնավորապես Տ-Մ-ի անվան հետ է կապված Հայ եկեղեցու պատմության և դավան. դիրքորոշման փուլերի ուսումնասիրման համար երեք կարևոր դրույթների գիտ. հիմնավորումը. 1. Ասորական եկեղեցին Հայաստանում ազդեցություն է ունեցել միայն մինչև V դ. կեսը: Սկսած VI դարից Հայ եկեղեցին, ընդհակառակն, ինքն է «ազդեցություն գործում բաժան-բաժան եղած Ասորական եկեղեցու թուլացած հատվածների վրա և վերջիններիս կողմից ճանաչվում իբրև ուղղափառ և օրինակելի եկեղեցի» («Հայոց եկեղեցու հարաբերությունները...», էջ 62): 2. VI դ. կեսից մինչև VIII դ. սկիզբը Հայ եկեղեցին պաշտոնապես հարել է հակաքաղկեդոն. դավանության ամենահետևողական թևին՝ հուլիանականությանը: 3. *Նեստորականությունը* թեև բազմաթիվ փորձեր է կատարել Հայաստանում հաստատվելու, բայց որևէ հաջողության չի հասել և սկզբից ևեթ վճռական հակահարված է ստացել: Տ-Մ. արծարծել է հայ-ասոր. գրական առնչությունները իր «Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը և նրա ասորական սկզբնատիպը» (1921) դրախոսությունում և «Զգօն» կոչված գրքի հեղինակի հարցը» հոդվածում (1964): Իր հետազոտություններում ճշտել է մի շարք եկեղեց. ժողովների (Դվինի 506-ի և 554-ի, 613-ի Պարսից ժողովի, 726-ի Մանազկերտի ժողովի) ժամանակը, բացահայտել դրանց գումարման շարժառիթները և կայացրած վճիռները:

Տ-Մ. մեծ ներդրում ունի Հայ եկեղեցու պատմության ամենաշրջադարձային իրողություններից մեկի՝ *Քաղկեդոնի ժողովի* նկատմամբ բռնած դիրքի, քաղկեդոնական խնդիրներին Հայ եկեղեցու մասնակցության ժամանակի և դրանց հետ առնչված, հայագիտության մեջ մեծ կարևորություն ունեցող *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառութիւն» երկի թարգմանության ժամանակի պարզաբանման գործում: Տ-Մ. իր մի շարք գործերում քննել է հայ գրավոր մշակույթի, լեզվի պատմության հարցեր, ճշտել հայոց այբուբենի ստեղծման թվականը, անդրադարձել Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի լուսավոր., թարգման. գործունեությանը («Ոսկեդարի հայ գրականությունը», 1946, «Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին», ԲՄ, 1967, № 7): «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» (1968) ուսումնասիրության մեջ քննության է ենթարկել սինկրետիզմը, միթրայականությունը, գնոստիկականությունը և գնոստիկյան դպրոցները, բորբորիտների աղանդն ու մծղնեությունը, մազդակյան կրոնը, մանիքեությունը, բոգոմիլների, կաթարների աղանդը, Պավլիկյան ու Թոնդրակյան շարժումները:

Տ-Մ. «Արարատ» ամսագրում առաջ է քաշել արմատական և հիմնարար եկեղեց. բարեկարգության ծրագիր («Արարատ», 1908, էջ 465–486)՝ կարևորելով Հայ եկեղեցու «Հիմքից ի վեր վերածնության և վերանորոգության» խնդիրը: Ըստ Տ-Մ-ի, բարենորոգումները պետք է կատարվեն հիմնականում եկեղեց. վարչության և կազմակերպության, դավանանքի ու պաշտամունքի մարզերում:

Տ-Մ-ի հրատարակած աղբյուրագիտ., բնագիտ. գործերից են 1904-ին Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցում նրա հայտնաբերած՝ Իրենիոս Լուգդունացու «Ցույցք առաքելական քարոզութեանն» (հրտ. 1907, Կ. *Տեր-Մկրտչյանի* հետ), Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն...» (1908, Կ. Տեր-Մկրտչյանի հետ) և «Ընդդէմ հերձուածոց» (Դ և Ե գրքեր, 1910, Կ. Տեր-Մկրտչյանի հետ) երկերը, որոնց հուն. բնագրերը կորել են: 1957-ին պատրաստել է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի քննական բնագրերը և հրատարակել աշխարհաբար զուգահեռ թարգմանությամբ:

Երկ. Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. 1, Հին եկեղեցին, Վաղ-պատ, 1908: Կրոնների պատմութիւն, Վաղ-պատ, 1909: Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971:

Գրկ. Տեր-Պետրոսյան Լ., Հայ-սասրական հարաբերությունների մեծագույն հետազոտողը, «Էջմիածին», 1980, № 2–3:

ՏԵՐ-ՄԻՔԵԼՅԱՆ Արշակ (1.2.1864, Շուշի – 25.6.1901, Շուշի), աստվածաբան, պատմաբան, հայագետ, մանկավարժ: Փիլ. գիտ. դ-ր (1892): Ավարտել է Շուշիի քաղաքային ուսումնարանը (1881), Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը (1888), աշակերտել Մ. *Օրմանյանին*, որը նրա մեջ սեր է արթնացրել աստվածաբան. գիտությունների հանդեպ: Ուսուցչի խորհրդով, աստվածաբան. գիտությունների մեջ կատարելագործվելու նպատակով, մեկնել է արտասահման, ավարտել Ենայի համալսարանը (1892), ուսանել հայագետ Հ. Գելցերին, աստվածաբան Ա. Հառնակին և այլոց: Ավարտաճառը՝ «Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք» (1892, գերմ.), թարգմանել է հայերեն, լրացրել է և 1892-ին հրատարակել Մոսկվայում: Աշխատությունն արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակի: 1892-ին, Արիստակես եպիսկոպոսի տեսչության օրոք, ուսուցչության է հրավիրվել Գևորգյան ճեմարան: 1894-ին *Մկրտիչ Ա. Վանեցու* (Խրիմյան Հայրիկ) հատուկ խնդրանքով մեկնել է Շուշի՝ աշխատելու թեմական դպրոցում: Տ-Մ. աշխատակցել է «Նոր Դար», «Լուսմա», «Արարատ» պարբերականներին:

Տ-Մ-ի գիտական երախայրիքը «Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք» երկն է, որով ազդարարվել է հայկ. բյուզանդագիտ. դպրոցի ստեղծումը: Հեղինակն ընդհանուր գծերով ներկայացրել է Հայ եկեղեցու պատմությունը մինչև XIII դ., անդրադարձել երկու եկեղեցիների դավան. և ծես. վեճերի ակունքներին: Այս թեման շարունակել է «Միջին դարերի կաթողիկոսների ճգտումները եկեղեցական խաղաղության համար», «Եկեղեցական աղմուկները ԺԴ դարի սկզբում», «Սսի և Ատանայի իշխանաժողովը» հոդվածաշարերում՝ հրապարակելով հայագիտությանը մինչ այդ անհայտ բազմաթիվ վավերագրեր: Հիշատակելի է նաև Սամուել Անեցու՝ Տ-Մ-ի առաջաբանով, համեմատություններով, հավելվածներով և ծանոթագրություններով հրատարակած «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» (1893) երկը: Տ-Մ. «Աստուածաբանական գիտութիւնները» (1893), «Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին եւ իւր սուրբ կարգը» (1897) աշխատություններում բացատրել է Հայ եկեղեցու ծեսի և վարդապետության յուրահատկությունները, գտնելով, որ պետք է գնալ դրանք եկեղեցու ողջ պատմությամբ և ավանդություններով բացատրելու, ժողովրդի կյանքում ավելի կիրառելի դարձնելու և ոչ թե դրանցից հրաժարվելու ճանապարհով: «Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը» (1900) երկում առաջին անգամ համակարգել ու դասդասել է հայ դավան. բազմադարյան փորձն ու ձեռքբերումները:

Գրկ. Աղանյանց Գ., Արշակ Տէր Միքելեանց, «Լուսմա», 1901, Զ տարի, գիրք Բ, էջ 483–485:

Ազատ Բոզոյան

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ (Տեր-Սարգսյան) Գալուստ Մկրտչի, Միաբան [9(21).4.1860, գ. Ծուղրութ (այժմ՝ Վ.Հ Ախալցխայի շրջանում) – 3.7.1918, Էջմիածին], Մայր աթոռի միաբան, հայագետ, պատմաբան, բնագրագետ-աղբյուրագետ, թարգմանիչ: Սկզբ. կրթությունն ստացել է Ախալցխայի Կարապետյան դպրոցում, 1874–1878-ին սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1878–81-ին դասավանդել է Շամախու և Ախալցխայի դպրոցներում: 1881-ին ավարտական քննություններ է հանձնել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1884-ին ավարտել է Փարիզի Քաղաքական գիտությունների ազատ դպրոցի հասարակագիտ. բաժանմունքը: Դասախոսություններ է ունկնդրել Մյունխենի համալսարանում: Ուսանող. տարիներին Փարիզից տարբեր բնույթի հոդվածներով աշխատակցել է «Մեղու Հայաստանի» լրագրին, 1885-ին վերադառնալով հայրենիք՝ պաշտոնավարել է Ախալցխայի երկսեռ դպրոցում, 1887-ին՝ դարձել

Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամ (դպիրի աստիճանով), նվիրվել գիտ. գործունեությանը: 1888-ին, հիվանդության պատճառով, ընդմիշտ զրկվել է քայլելու ունակությունից: 1892–94-ին և 1902-ին եղել է «*Արարատ*» ամսագրի խմբագիրը, որտեղ «Միաբան» ստորագրությամբ տպագրել է բազմաթիվ հայագիտ. ուսումնասիրություններ՝ արժանանալով լայն ճանաչման: Երկար տարիներ գործակցել է Մոսկվայի կայսեր. հնագիտ. ընկերությանը և հայագիտության ասպարեզում ունեցած վաստակի համար 1894-ին ընտրվել այդ ընկերության թղթակից, իսկ 1900-ից՝ իսկական անդամ: Եղել է հայ գրերի 1500 և հայ տպագրության 400-ամյակի տոնակատարության կենտր. հոբելյանական հանձնաժողովի նախագահը, «Շողակաթ» գիտ. ժողովածուի (1913) խմբագիրը:



Գ. Տեր-Մկրտչյան

Տ-Մ-ի հայագիտ. հետազոտությունները բազմաբնույթ են՝ հայ հին մատենագրություն, վիմագրություն, հնագրություն, ձեռագրագիտություն, միջնադարյան հայ առակագրություն, ազգագրություն և բանահյուսություն, վարքագրություն և վկայաբանություն, աղանդավոր. շարժումների արձագանքներ Արմ. Եվրոպայում, դրամագիտություն, Հայաստանում ճշգրիտ գիտությունների պատմություն ևն: Մեծ է նրա ներդրումը բնագրագիտության և աղբյուրագիտության մեջ: Ստ. Մալխասյանի աշխատակցությամբ կազմել և հրատարակել է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (1904), Ստ. Կանայանի հետ՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» (1909), Հ. Աճառյանի հետ՝ Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» («Քննություն և հաճեմատություն Եղնկա Նորագյուտ ձեռագրին», 1904) երկերի քննահամեմատական բնագրերը: Հայտնաբերել, ուսումնասիրել և հրապարակել է հայ մատենագրությունն անծանոթ կամ կորած համարված բնագրեր՝ Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան»-ը (1892), Անանիա Շիրակացու տիեզերագիտ. աշխատությունները և խնդրագիրքը («Անանիա Շիրակացի», 1896), «Գիրք հերձվածոց»-ը (1902), Աբրահամ Խոստովանողի (V դ.) թարգմանած «Վկայք Արևելից» ժողովածուն («Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից», 1921, հետմահու) ևն: Ուսումնասիրությունների մի մեծ խումբ վերաբերում է միջնադարի քիչ հայտնի հայ մատենագիրների, դավանաբանների, փիլիսոփաների կյանքին և նրանց գործերին՝ «Պետրոս Այունյաց եպիսկոպոս» (1902), «Ստեփանոս Իմաստասեր» (1902), «Դավիթ Հարքացի» (1903) ևն, ինչպես նաև Հայոց կաթողիկոսներ Հովհաննես Ա Մանդակունու (478–490) և Անանիա Ա Մոկացու (946–968) մի շարք գրությունների, ճառերի, խրատների, քարոզների հրատարակմանը:

Տ-Մ. առանձին ուսումնասիրության առարկա է դարձրել վկաների, հատկապես Հայոց *Նոր վկաների* վարքերը և վկայաբանությունները, տվել դրանց գիտաքննական բնագրերը՝ «Խոսրով Գանձակեցի» (1896), «Հովսեփ Նորաշենցի» (1897), «Գրիգոր Մանանահր Ռաժիկ Միհրան տոհմից» (1902): Այս շարքից հեղինակի հավաքած և ուսումնասիրած վկայաբան. շատ նյութեր դեռևս անտիպ են: Հ. Մանանդյանը և Հ. Աճառյանը մեծապես օգտվել են Տ-Մ-ի հավաքած վարքագր. և վկայաբան. հարուստ նյութից՝ իրենց «Հայոց նոր վկաները» (1903) աշխատությունը գրելիս:

Հայ մատենագրության պատմության և հայագիտության հարցերին նվիրված լուրջ հետազոտություններ են Տ-Մ-ի «Խորենացու Պատմության ուսումնասիրությունը» (1896), «Ղազար Փարպեցու ձեռագրերը» (1902), «Փավստոսի ձեռագրերը» (1904), «Հայկականք» հոդվածաշարը (Ա–ԺԲ, 1894, ԺԳ–ԺԹ, 1899):

Տ-Մ-ի «Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայերեն թարգմանության ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «Նորաբեր» հայ թարգմանությունը» հետազոտությունը (1908) հեղաշրջել է հայագիտության մեջ մինչ այդ գոյություն ունեցող տեսակետները՝ մշակելով նոր ու ճշգրիտ ժամանակագրություն՝ *հունաբան դպրոցի* և թարգմանությունների սկզբնավորման, ինչպես նաև հայ դավանաբան. գրականության ձևավորման, հակաքաղկեդոն. դավան. պայքարին Հայ եկեղեցու մասնակցության և Քաղկեդոնի ժողովի հանդեպ Հայ եկեղեցու դավան. դիրքորոշման հարցերում: Խնդիրների պարզաբանումը կարող էր տալ *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն» երկի հայ. թարգմանու-

թյան թվագրման ճշտումը: Տ-Մ-ի տոմարագիտ. ճշգրիտ հաշվումների վրա հիմնված տեսակետը, թե Տիմոթեոս Կուզի երկը հայերեն է թարգմանվել 480–484-ի միջև՝ Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի օրոք, հակառակ որոշ ընդդիմության, ընդունել են ինչպես իր ժամանակի, այնպես էլ ներկայիս բազմաթիվ հայագետներ: Հետագայում Տ-Մ. իր «Հայ մատենագրության հնագույն թվականները» («Շողակաթ», 1913) հոդվածով կրկին պաշտպանել է իր տեսությունը, այն հիմնավորել նոր փաստերով:

Տ-Մ. կատարել է բազմաթիվ թարգմանություններ, գրել բանաստեղծություններ և վեպ (անտիպ): Կյանքի վերջին տարիներին հայտնաբերել է միջնադարյան զրույցների մի շարք, պատրաստել բնագիրը, սակայն չի հասցրել գրել ուսումնասիրությունը: Տ-Մ-ի արխիվից անհայտ հանգամանքներում կորել են մեծ ու փոքր անտիպ հոդվածներ, ուսումնասիրություններ, հրատարակության պատրաստ բնագրեր, ինչպիսիք են Կորյունի «Վարք Մաշտոցի», Անանիա Շիրակացու տիեզերագիտ. մեծ աշխատության քննական բնագրերը, «Գյուտ նշխարաց Հռիփսիմյանց», «Ծանոթություն և աղբյուրներ Կայսերաց գրոց», «Պատմություն սրբո կուսին Մարիամա», «Պատմություն վարուց Եպիփանու Կիպրացվո» բնագրերի ուսումնասիրության նյութերը ևն:

Երկ. Հայագիտական ուսումնասիրություններ, առաջաբան և ծանոթագրություններ Պ. Հակոբյանի, հ. 1, Ե., 1979, հ. 2, Ե., 1998:

Գրկ. Մեսրոպ եպիսկոպոս (Տեր-Մովսիսյան Մ.), Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան), «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք 1–2, Վաղ-պատ, 1921–22: Բեհբուդյան Ս., Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան), «Էջմիածին», 1959, № 1:

Պիոն Հակոբյան

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Կարապետ [29.3.1866, գ. Ցղնա (Գողթն գավառ) – 2.12.1915, Բաքու], եպիսկոպոս (1909), աստվածաբան, պատմաբան, բանասեր: Փիլ-յան դ-ր (1893), աստվածաբանության լիցենցիատ (մագիստրոս, 1894): Սկզբ. կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական, ապա՝ Զաքաթալայի գավառ. դպրոցում: 1888-ին ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա՝ դասավանդել այնտեղ, վարել մատենադարանապետի պաշտոնը: 1889-ին Գևորգ Զորեքչյանի (*Գևորգ Զ Զորեքչյան*) և Գարեգին Հովսեփյանի (*Գարեգին Ա Հովսեփյան*) հետ ձեռնադրվել է կուսակրոն սարկավագ: 1889–94-ին աստվածաբանություն է ուսանել Լայպցիգի, Հալլեի և Բեռլինի համալսարաններում: Դասախոսություններ է լսել Տյուբինգենի համալսարանի կաթոլիկ աստվածաբանության բաժնում, Փարիզի Սորբոնի համալսարանում, Մարբուրգի բողոքական աստվածաբան. ֆակ-ում: Ուսումնառության տարիներին գիտ. հոդվածներով աշխատակցել է գերմ. հայտնի կրոն. հանդեսներին: 1894-ին վերադարձել է Էջմիածին, ձեռնադրվել կուսակրոն քահանա, կարգվել Գևորգյան ճեմարանի տեսչի օգնական և աստվածաբանության ու կրոն. առարկաների ուսուցիչ: 1894-ի դեկտ. նշանակվել է «*Արարատ*»-ի կրոն. բաժնի խմբագիր, այնուհետև՝ մինչև 1899-ը, ամսագրի խմբագիր: 1895-ին ստացել է վարդապետ. աստիճան, նույն թվին կարգվել Մայր աթոռի «Ուսումնական վարչական հանձնաժողովի» անդամ: 1899–1902-ին կարգվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1903–1905-ին՝ Երևանի թեմական փոխանորդ: 1902, 1904, 1905–06-ին կարճ ժամանակով կրկին եղել է «Արարատ»-ի խմբագիր: 1907-ին ստացել է ծ. վարդապետի աստիճան: 1907-ին, խույս տալով Մայր աթոռի որոշ միաբանների հարուցած խոչընդոտներից ու զրպարտություններից, մեկնել է Բաքու, տեղի գիմնազիայում աշխատել ուսուցիչ: 1907–12-ին եղել է Ատրպատականի թեմի առաջնորդը, Թավրիզում նախաձեռնել «Առավոտ» շաբաթաթերթի (1909–12) հրատարակումը: Պարսկաստանի տարբեր վայրերից հայթայթել և Էջմիածնի մատենադարան է ուղարկել հայկ. հին ձեռագրեր: 1914-ից մինչև կյանքի վերջը վարել է Շամախու հայոց թեմի առաջնորդությունը:

Տ-Մ. նշանավոր հայ աստվածաբան հոգևորականներից էր, ում աշխատությունները, ձեռագրագիտ. հազվագյուտ հայտնագործությունները մեծ հետաքրքրություն են ներկայացրել Եվրոպայի գիտ. աշխարհում, առատ նյութ տվել Ընդհանրական եկեղեցու և քրիստոնեության վաղ շրջանի պատմության ուսումնասիրության համար: «Պավլիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և նրանց մերձավոր հերձվածային երևույթները Հայաստանում» (1893, գերմ.), «Թոնդրակեցիք մեր օրերում» (1895, գերմ.) աշխատություններում և «Պավլիկյանց և թոնդրակեցվոց աղանդները արդի քննադատությամբ» («Արարատ», 1900, հուլիս) հոդվածում անդրադարձել է միջնադարյան Հայաստանում տարածված աղանդավոր.

այդ շարժումներին, դրանց վարդապետություններին: Հատկապես ուշագրավ են XVIII–XIX դդ. դեռևս իրենց գոյությունը պահպանած *թոնդրակեցիների* հետևորդների և նրանց դավանագրքի՝ «Բանալի ճշմարտության» վերաբերյալ վերջին երկու ուսումնասիրությունները: Տ-Մ. հերքել է արևելագետ, Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Ֆ. Կոնիբերի «Բանալի ճշմարտության» երկի՝ IX դ. գրված լինելու մասին թեզը, հիմնավորել է նաև «նոր թոնդրակեցիների» կապը բողոքական մի շարք ուղղությունների, մասնավորապես՝ կրկնամկրտականության (անաբապտիզմ), մկրտականության, լյութերականության հետ: «Ազգային եկեղեցի» (1903) գրքույկում հեղինակը Հայ առաքելական եկեղեցին ներկայացրել է իր երեք հիմն. գծերով՝ ազգ. բնավորությամբ, կրոն. ոգով և հալածական վիճակով:

1902–03-ին Տ-Մ-ին են հանձնարարվել Աստվածաշնչի նոր հրատարակության պատրաստման և խմբագրման աշխատանքները: Նա Մայր աթոռի ձեռագրատան Աստվածաշնչի 40 ձեռագրերից ընտրել է 8–9 հիմնականները, համեմատել եբրայերեն բնագիրը և Յոթանասնից թարգմանությունը և տպագրության պատրաստել Ծննդոց ու Ելից գրքերը: Սակայն 1903-ին եկեղեց. գույքի բռնագրավման և Մայր աթոռում ստեղծված իրավիճակի պատճառով գործը չի հրատարակվել և չի հասցվել իր ավարտին:

1904-ին Տ-Մ. Երևանի Կաթողիկե եկեղեցում հայտնաբերել է մի կարևոր հայերեն ձեռագիր, որը բովանդակել է II դ. հեղինակ Իրենիոս Լուգդունացու գրվածքները: Դրանցից առաջինը՝ «Ցույցք առաքելական քարոզության» երկը, մեծ արժեք է ներկայացնում II դ. քրիստ. դավանաբանության համար: Հուն. բնագիրը կորած է, և միայն վերնագիրն էր հայտնի *Եվսեբիոս Կեսարացու* «Եկեղեցական պատմություն»-ից: Ե. *Տեր-Մինասյանի* հետ Տ-Մ. գերմաներեն է թարգմանել ձեռագիրը և հայերեն զուգադիր տեքստով, պրոֆ. Ա. Հառնակի ծանոթագրություններով, 1907-ին հրատարակել է Լայպցիգում՝ «Բնագրեր և հետազոտություններ» վերնագրով: Նույն ձեռագրի մեջ էր նաև Իրենիոսի «Ընդդեմ հերձվածոց» աշխատության IV և V գլուխների հայերեն թարգմանությունը, որը Տ-Մ. 1910-ին Լայպցիգում Ե. Տեր-Մինասյանի հետ հրատարակել է «Բնագրեր և հետազոտություններ» շարքում՝ գերմ. առաջաբանով: Այդ հրատարակություններով Եվրոպան ծանոթացել է քրիստոնեության վաղ շրջանի վրա լույս սփռող կարևոր գրվածքներին:

1897-ին Տ-Մ. Մայր աթոռի մատենադարանում հայտնաբերել է Ալեքսանդրիայի պատրիարք *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն» երկի հայ. թարգմանությունը, որը գերմ. ու հայ. առաջաբանով Ե. Տեր-Մինասյանի հետ հրատարակել է Լայպցիգում, 1908-ին: Տիմոթեոս Կուզի երկը կարևոր նշանակություն ունի V դ. դավանաբան. վեճերի և Ընդհանրական եկեղեցու պատմության ուսումնասիրման համար: Աշխատության հուն. բնագիրը կորած է և հայ. թարգմանությամբ է միայն հայտնի դարձել գիտ. աշխարհին: Հայտնաբերած երրորդ ձեռագիրը, որը 1911-ին Տ-Մ. գտել էր Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքում, «*Կնիք հավատո*» (1914, Ե. Տեր-Մինասյանի հետ) դավանաբան. ժողովածուն էր: Այդ գործին կցված ընդարձակ «Ներածությունը» գնահատելի ուսումնասիրություն է Հայ եկեղեցու VI–VII դդ. պատմության, դավան. դիրքորոշումների և մատենագրության վերաբերյալ: Աշխատության հետ առնչություն ունի հեղինակի մեկ այլ՝ «Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի» (1913) ուսումնասիրությունը: Այս գործերում Տ-Մ. անդրադարձել է Հայ եկեղեցու պատմության ամենակնճռոտ և վիճելի հարցերից մի քանիսին, այն է՝ քրիստոնյա աշխարհում դավանաբան. վեճերին հայոց մասնակցության, *Քաղկեդոնի ժողովի* մերժման, Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայ. թարգմանության ժամանակին, «*Գիրք թղթոց*»-ի մի շարք գրությունների հեղինակային պատկանելության, գրելու շարժառիթների խնդրին ևն: Պաշտպանել և հիմնավորել է այսօր արդեն հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, թե Հայ եկեղեցին Քաղկեդոնի ժողովի հանդեպ իր բացասական դիրքորոշումը հստակեցրել է V դ. վերջին քառորդին՝ *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսի օրոք:

Տ-Մ. հրատարակել է մի շարք հիշատակարաններ Մայր աթոռի մատենադարանի ձեռագրերից: Դրանցից երկուսը լույս են տեսել առանձին (Հովհան Երուսաղեմացու և Հովհաննես Գ Օձնեցու թղթերը): «Արարատ»-ում հրատարակել է «Գիրք թղթոց»-ի մի շարք գրություններ, մասնավորապես՝ Բաբկեն Ա Ոթմսեցի, Ներսես Բ Բագրեվանդցի, Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսների թղթերը, նոր լույս սփռելով Հայ եկեղեցու VI–VII դդ. պատմու-

թյան մի շարք հարցերի վրա: 1908-ին Վաղարշապատում լույս է տեսել Տ-Մ-ի «Հայոց եկեղեցու պատմության» առաջին հատորը: Ժողովրդի կրոնաբարոյական դաստիարակության համար աշխարհաբար է փոխադրել Մատթեոսի Ավետարանը (անտիպ):

Երկ. Նիւթեր հայ մելիքութեան մասին, պր. 1, 2, Վաղ-պատ, 1913–14: Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղեմ, 1938:

Գրկ. Տեր-Մինասյան Ե., Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Մ., 1911: Հովսեփյան Գ., Տ. Կարապետ եպիսկոպոս, «Արարատ», 1915, № 11–12, էջ 849–856: Stephan S., Karapet Episkopos Ter-Mkrtschjan (1866–1915), Halle, 1983.

Արտաշես Ղազարյան

ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ Մեսրոպ (ավազանի անունը՝ Փարսադան), Մեսրոպ Մագիստրոս [7. 5. 1865, գ. Շիկահող (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում) – 3. 6. 1939, Երևան, 1989-ին աճյունը տեղափոխվել է Ս. Էջմիածին, ամփոփվել Ս. Գայանե վանքի գերեզմանատանը], արքեպիսկոպոս, հայագետ, հասարակական գործիչ: Ավարտել է Շուշիի թեմական, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները, Դորպատի համալսարանը (1891), Սանկտ Պետերբուրգի համալսարանի արլ. լեզուների ֆակ-ը, պաշտպանել մագիստրոս. թեզը՝ «Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը» թեմայով (հրտ. 1902, ռուս.): Դասավանդել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1893-ին դարձել միաբանության անդամ, ձեռնադրվել աբեղա, ընդգրկվել նորընտիր կաթողիկոս *Մկրտիչ Ա Վանեցուն* (Խրիմյան Հայրիկ) Երուսաղեմից Ս. Էջմիածին ուղեկցող պատգամավորության կազմում: Նույն թվականին նրան շնորհվել է վարդապետի աստիճան, 1895-ին կարգվել է Երևանի, 1896-ին՝ Շուշիի թեմական դպրոցների տեսուչ, 1898-ին՝ Շուշիի կոնսիստորիայի նախագահ:

Հայ-թաթար. ընդհարումների ժամանակ (1905) Տ-Մ. Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում կազմակերպել է հայերի ինքնապաշտպանությունը: 1906–07-ին Գևորգյան ճեմարանի տեսուչն էր, 1908-ից՝ *Սինոդի* անդամ: 1909-ին Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը նրան ձեռնադրել է եպիսկոպոս: 1913-ին կարգվել է Վիրահայոց թեմի առաջնորդ, 1914-ին ազգ. բյուրոյի պատվավոր նախագահն էր, հայ կամավոր. ջոկատների կազմավորման նախաձեռնողը: 1916-ին Աստրախանի թեմի հոգևոր առաջնորդն էր, 1918-ին՝ Մայր աթոռի մատենադարանապետը, 1922–31-ին՝ Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդը: Տ-Մ. Հայաստանի պետ. համալսարանի հիմնադիրներից էր և առաջին դասախոսներից: 1938-ին հրաժարվել է հոգևոր կարգից, հաստատվել Երևանում:

Մեծ է Տ-Մ-ի գիտ. վաստակը: Նա հեղինակել է ձեռագրագիտ., բնագրագիտ., աղբյուրագիտ., ինչպես և վիմագր., ազգագր., հնագիտ. բնույթի շուրջ 130 աշխատություն:

Երկ. Նկարագրութիւն հոգեւոր վարուց Յովսաֆիու..., Վաղ-պատ, 1897: Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ, պր. 1, Վաղ-պատ, 1906: Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938:

Գրկ. Տեր-Վարդանյան Գ., Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Ե., 1999:

Գևորգ Տեր-Վարդանյան

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ, Հայր մեր, *Հիսուս Քրիստոսի* շնորհական *աղոթքը*, որ նա հայտնեց իր աշակերտներին՝ *երանիներն* ասելուց հետո (Մատթ. **6.**9–13)՝ որպես ճշմարիտ աղոթքի օրինակ: Ասվում է (երգվում է) բոլոր խորհրդաժամերգությունների ժամանակ՝ սկզբում և վերջում, ամեն անգամ խորհրդանշելով Տիրոջ հայտնութենական խոսքն իր իսկ մասին, թե՝ «Ես եմ Ալֆան և Օմեղան, Սկիզբը և Վախճանը, Առաջինը և Վերջինը» (Հայտն. **22.**13):

Տ. ա. հետևյալն է.

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը, Քո արքայությունը թող գա, Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է: Մեր հանապազօրյա հացը տո՛ր մեզ այսօր: Եվ թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին: Եվ մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր մեզ չարից. քանի որ Քոնն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն:

Մատթեոսի Ավետարանում Տ. ա. հետևում է երանիներին՝ որպես նրանց շարունակություն, իսկ Ղուկասի Ավետարանում Տ. ա. տրվում է աշակերտների խնդրանքով՝ «Մեզ աղոթել սովորեցրու»: Ղուկասի Ավետարանը «և մի տար մեզ փորձության» արտահայտությունից հետո չունի «այլ փրկիր մեզ չարից, որովհետև քոնն է...» խոսքերը (Ղուկ. **11.**2–4):

Տ. ա. պարունակում է յոթ ասույթ (խնդրվածք). առաջին երեքը (սուրբ լինի Քո անունը, գա Քո արքայությունը, Քո կամքը լինի...) փառաբանում են *Աստծուն*, մյուս չորս

սուլթները (խնդրվածքները) վերաբերում են մարդուն. մարդը խնդրում է, որ Աստված իրեն տա հանապազօրյա հացը, թողնի պարտքերը, չենթարկի փորձության և ազատի չարից: Եվ քանի որ աղոթողն իրեն ամբողջովին հանձնում է Աստծուն, ուստի և աղոթքի վերջում նրան է միայն ճանաչում հավիտենական արքա, հավերժ զորավոր ու փառավորյալ, ասելով՝ «Քանի որ Քոնն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»: Սա նաև նշանակում է, որ աղոթողը թողնում է իր կամքը, իր իշխանությունը, իր անձնական փառքը և խնդրում արարիչ ու նախախնամ Աստծո տնօրինությունը: Աղոթքի բուն առանցքն այն է, որ մեր կամքը (մեր թագավորությունը), որպես հին, ադամական ժառանգություն, վերանա, և մեր մեջ, ինչպես նաև երկրի վրա, հաստատվի Աստծո կամքն ու թագավորությունը (տես *Երկնային արքայություն*):

Հայ *մեկնողական գրականության* մեջ Տ. ա. ավետարանական ամենաշատ մեկնված հատվածն է: *Եղիշեն* Աստծո Հայր լինելը կոչում է ամենամեծ պարգևը՝ տրված մարդկանց, գտնում, որ նրա անունը հենց Սուրբ է, իսկ Աստծո կամքը մարդու սուրբ լինելն է: Հիսուս Քրիստոսն է Արքան երկնային թագավորության և մեր եղբայրը, իսկ խնդրվող հացը Հիսուս Քրիստոսն է, և Վերնատանը նա ինքն իրեն է բաժանել՝ հաստատելով սուրբ *Հաղորդության* խորհուրդը: Իսկ պարտքերը թողնելը նշանակում է ողորմած լինել՝ արժանանալու համար Տիրոջ ողորմությանը [«Հայր մեր» աղոթքի մասին, տես Աղօթագիրք (ժող.), 2000, էջ 233–243]: *Ներսես Լամբրոնացին* ևս «հանապազօրյա հացը» մեկնել է որպես Քրիստոսի մարմին, որ առաքյալները խնդրում են Հորը՝ «տուր զհաց մեր»: Ժողովուրդը նույնպես աղոթում է Հորը և կենաց հացը նրանից է խնդրում, հիշեցնում որդեգրության պայմանը և պարտքերի թողություն հայցում (Ներսես Լամբրոնացի, «Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի», 1842, էջ 138–139): Աղոթքի մասին խոսելիս եկեղեցու հայրերն ու վարդապետները (*Գրիգոր Ա Լուսավորիչ, Հակոբ Մծբնացի, Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան,* Նեղոս Սինայեցի, *Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Նարեկացի, Սիմեոն Ա Երևանցի* և ուր.) ուղղակի կամ անուղղակիորեն անդրադարձել են Տ. ա-ին, մեկնաբանել այս կամ այն արտահայտությունը կամ ենթատեքստում նկատի ունեցել Տ. ա.:

Գրիգոր Տաթևացուց պահպանվել են Տ. ա-ի երկու ընդարձակ մեկնություններ. մեկը Մատթեոսի Ավետարանի՝ Գրիգոր Տաթևացու մեկնության մեջ (Մատենադարան, ձեռ. №№ 1198, 1264, 1266, 1300), մյուսը՝ նրա «Գիրք քարոզութեան որ կոչի Ջմերան հատոր...» երկում (1740, էջ 309–314): Գրիգոր Տաթևացին մանրակրկիտ, բառ առ բառ մեկնաբանել է Տ. ա., հաճախ նույն հասկացությունը կամ բառը բացատրել տարբեր մեկնակետերից (տվել է տասից ավելի բացատրություն): Խոսելով Աստծո կամքի մասին՝ նա անում է ուշագրավ դիտարկումներ, որոնցից մեկն էլ հետևյալն է. Աստծո կամքը նաև այն է, որ մենք, որպես Հիսուս Քրիստոսի Մարմնի [Եկեղեցու] անդամներ, միավորվենք Գլխի [Հիսուս Քրիստոսի] հետ: Ուրեմն, «եղիցին կամք Քո» արտահայտությունը նշանակում է՝ Քո կամքն այն է, որ միավորվենք Քրիստոսի հետ: «Հանապազօրյա հացը» մեկնվում է երկու իմաստներով՝ որպես մարմնավոր հաց և որպես հոգևոր հաց կամ կենաց հաց, որը Տիրոջ մարմինն է: «Պարտքերը» սատանայից փոխառնված *մեղքերն* են, որոնց մեջ երկար մնալու դեպքում ավելանում է պարտքի [մեղքի] չափը, ուստի և Աստծուն խնդրում ենք, որ նա ների մեր մեղքերը: Տ. ա., ասում է Գրիգոր Տաթևացին, պարունակում է յոթ խնդրանք, որոնք օգուտ են հոգուն ու մարմնին: Այն ժամանակ ենք մեր կյանքում կենսագործում Տ. ա., երբ դառնում ենք Աստծո որդիներ ու ժառանգակիցներ. այդ ժամանակ մենք սպանում ենք «չար զավակներին» [նախանձ, բարկություն, ագահություն ևն] և ապրեցնում «հոգևոր զավակներին» [սեր, համբերություն, ողորմություն ևն]:

«Հանապազօրյա հացը» ընդհանրապես մեկնաբանվում է որպես՝ 1. նվիրաբերում, ըստ որի՝ խոսքը հացի բերկման՝ Հաղորդության մասին է (Տիրոջ մարմնի). 2. վանճանաբանական իմաստով, ըստ որի՝ խոսքը երկնային արքայության (հավերժական կյանքի) մասին է. 3. ուղղակի իմաստով՝ խոսքը ամենօրյա մարմնավոր հացի մասին է: «Պարտքերը» հասկացվում են հոգևոր առումով՝ Աստծուն տրվելիք հոգևոր պարտքերը, որոնք ներվում են, երբ մենք ներում ենք մեր «պարտապաններին». «մի տար մեզ փորձության»՝ նշանակում է ապավինել Աստծուն, որը մեզ չի գցի մեր ուժերից վեր փորձության մեջ, քանի որ մեր փոխարեն

փորձվել է ինքը՝ մեր Տերը: Տ. ա-ի վերջին ասույթը («Քանի որ Քոնն է արքայությունը...») փառաբանում է Աստծուն (տես նաև *Օրհնություն*)՝ եզրափակելով «ամեն»-ով, որը նշանակում է՝ «ճշմարի՛տ է, թող լինի՛»:

Լևոն Սարգսյան

ՏԵՐՈՒՆԻ ՏՈՆԵՐ, Տերունական տոներ, Հիսուս Քրիստոսի կյանքի հետ կապված ամենակարևոր դրվագների հիշատակության օրեր, որոնք քրիստոնյա եկեղեցին տոնում է մեծ հանդիսավորությամբ: Դրանք են.

Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն. տոնակատարության օրն անփոփոխ է: Կատարվում է հունվ. 6-ին:

Անվանակոչություն Քրիստոսի. կատարվում է միշտ նույն օրը՝ հունվ. 13-ին:

Տյառնընդառաջ. օրն անփոփոխ է՝ կատարվում է փետր. 14-ին:

Ծաղկազարդ, Ավագ Շաբաթ, ս. Զատիկ կամ Հարություն, *Համբարձումն* Քրիստոսի:

Հոգեգալուստ կամ Պենտեկոստե. Սուրբ Հոգու՝ աղավնու կերպարանքով իջնելն է առաքյալների վրա:

Վարդավառ կամ Պայծառակերպություն Քրիստոսի (բոլորն էլ շարժական են):

Վերափոխումն Ս. Աստվածածնի կամ Գալուստ Տեառն ի փոխումն Կուսին: Տոնվում է օգոստ. 15-ի մերձավոր կիրակի օրը:

Տ. տ. են տարվա բոլոր *կիրակիները*, որոնք նվիրված են Հիսուսի Հարության հիշատակին՝ երբեմն ունենալով տերունական այլ տնօրինության հիշատակ: Տ. տ. են Հայ եկեղեցու հինգ *Տաղավար* տոները: Տ. տ-ի մաս են կազմում *Աստվածածնի* տոները, ս. *Խաչի տոները* և *Եկեղեցու տոները*, որոնք Հիսուս Քրիստոսի տնօրինական տոներ չեն, բայց կատարվում են ի պատիվ և հանուն Հիսուսի:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ ԵԿԵՂԵՑԻ, Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, «Նախշլի»: Ըստ շին. արձանագրության, կառուցվել է 1215-ին, մեծահարուստ Տիգրան Հոնենցի միջոցներով, Անիի արլ. կողմում, ձորալանջին: Տ. Հ. ե. մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է՝ շքեղ հարդարված արտաքին ճակատներով ու վերձիգ բազմանիստ թմբուկ ունեցող գմբեթով, որոնք մշակված են զույգ որմնասյուների վրա հանգչող նրբագեղ կամարաշարով, թռչունների և կենդանիների բարձրարվեստ հարթաքանդակներով, բուս. և հյուսածո զարդաքանդակներով: 1215–51-ի ժամանակաշրջանում Տ. Հ. ե-ուն արմ-ից կցել են եռակողմ, բաց կամարներով գավիթ-սրահ, հս-ից՝ մատուռ: Եկեղեցին, գավիթն ու մատուռը նկարազարդվել են: 1261-ին եկեղեցու բեմի առաջ թաղվել է Շահնշահ Ա Զաքարյանը: 1310-ին ոմն Մատեն ջուր է անցկացրել դեպի եկեղեցու տարածքը:

Տ. Հ. ե-ու այժմ կիսավեր գավթի ու մատուռի ներսը ամբողջությամբ նկարազարդված է: Եկեղեցու գմբեթին պատկերված է «Համբարձման» տեսարանը, թմբուկին, երկու շարքով՝ հրեշտակներ և առաքյալներ (վերևում) ու մարգարեներ (ներքևում), իսկ առագաստներին՝ չորս ավետարանիչները: Խորանի գմբեթարդին՝ «Բարեխոսության» և նրանից ցած «Հաղորդության» տեսարաններն են ու երկու շարքով սրբերի պատկերները, որոնց մեծ մասը կապված է Հայ եկեղեցու պատմության հետ. Գրիգոր Ա Լուսավորիչը, նրա որդիներ Արիստակես Ա Պարթևը և Վրթանես Ա Պարթևը, Կեսարիայի եպիսկոպոս Ղևոնդիոսը (Գրիգոր Ա Լուսավորչին ձեռնադրողը), Հռոմի պապ Սեղբեստրոսը: Խորանի կամարին առաքյալների դիմապատկերներն են:

Մնացած որմնանկարները նվիրված են ավետարանական թեմաներին և Գրիգոր Ա Լուսավորչի վարքին (նրա հալածանքներին ու տանջանքներին, Հռիփսիմեի, Գայանեի և նրանց ընկերուհիների նահատակությանը, ապա՝ Հայաստանում քրիստոնեության տարածմանը):

Տ. Հ. ե-ու որմնանկարները կատարված են արևելաքրիստ. արվեստի ավանդույթներով. գլխավորը գծանկարն է, օգտագործված են սահմանափակ թվով գույներ (հագեցած կապույտ, կարմիր և դեղին):

Նկարիչները ծանոթ են եղել բյուզ. որմնանկարչական արվեստին, այդ են վկայում անձնավորություններին դասական համաչափություններով պատկերելը, նրանց բնական կեցվածքն ու շարժումները: Գավթի ու մատուռի որմնանկարները կրում են բյուզ. արվեստի ազդեցությունը: Գավթում դրանք պատկերում են Ահեղ դատաստանի և Քրիստոսի Երկրորդ գալստյան տեսարանները, որոնք զբաղեցնում են գավթի բոլոր պատերը,

բացի արլ-ից, որի վրա պատկերված է եկեղեցու կառուցման մեկենաս Տիգրան Հոնենցը՝ Գրիգոր Ա Լուսավորչի առջև կանգնած:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.5, 3–4-րդ պատկերները:

Գրկ. Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [հ.] 1, Ե., 1942: Հարությունյան Վ., Անի քաղաքը, Ե., 1964: Դիվան հայ վիմագրության, պր. 1, Ե., 1966 (կազմ. Հ. Օրբելի): *Тер-ри Н., Росписи церкви св. Григория Тиграна Оненца в Ани (1215 г.), Тб., 1977; Каковкин А., Роспись церкви Григория Тиграна Оненца в Ани (1215 г.),* ԲԵՀ, *1983, № 2;* Thierry N. et M., L'église Saint-Grégoire de Tigran Honenc' à Ani (1215), Louvain-P., 1993.

Մուրադ Հասրաթյան
Նիկոլայ Քոթանջյան

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, տես *Ընդհանրական եկեղեցի*:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, քրիստոնեական եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականության համընդհանուր (տիեզերական, ընդհանրական) եկեղեցական ժողովներ, որոնց ընդունած որոշումները պարտադիր է համարում ողջ *Ընդհանրական եկեղեցին:* Ի տարբերություն տեղական ժողովների (տես *Եկեղեցական ժողովներ*), որոնք գումարվել են արդեն II դարից (Առաքելական շրջան), Տ. ժ. սկսել են հրավիրվել քրիստոնեությունը Հռոմ. կայսրության կողմից պաշտոնապես ճանաչվելուց հետո: Հրավիրվել են Հռոմ., ապա՝ բյուզ. կայսրերի հրամանով, ովքեր հաճախ նախագահել են այդ ժողովներին, և նրանց համաձայնությամբ ու հավանությամբ է հաղթանակել այս կամ այն վարդապետությունը: Տ. ժ. հրավիրվել են այն ժամանակ, երբ Ընդհանրական եկեղեցու միասնությանը վտանգ է սպառնացել, և կրոն. վեճերը դարձել են սպառնալիք նաև կայսրության ամբողջականությանը: Նվիրված են եղել հիմնականում դավանության, հավատքի մաքրության և *ուղղափառության* պաշտպանության, աղանդավորների (տես *Աղանդ*) դեմ պայքարի խնդիրներին: Քննարկվել են նաև պաշտամունքի, եկեղեցու բարեկարգությանը վերաբերող հարցեր, որոնք ստացել են կանոնական իրավունք: Տ. ժ-ին մասնակցել են ոչ միայն եպիսկոպոսներ, այլև՝ երեցներ, քահանաներ, սարկավագներ, որոնք, սակայն, չեն ունեցել վճռական ձայնի իրավունք, այլ հանդես են եկել որպես եպիսկոպոսների օգնականներ կամ խորհրդականներ:

Տ. ժ. եկեղեցու նկատմամբ պետության գերիշխանության և եկեղեցու գործերին նրա միջամտության վառ դրսևորումն էին: V դ. եկեղեց. պատմիչ Սոկրատ Աքոլաստիկոսը գրել է. «Այն ժամանակվանից, երբ կայսրերը դարձան քրիստոնյա, եկեղեցու գործերը դարձան նրանցից կախված և նրանց կամքով էին գումարվում մեծ ժողովները»: Սկսած Ա տիեզեր. ժողովից հետապնդվել են պաշտոն. եկեղեցու և Տ. ժ-ի կողմից հերետիկոս ճանաչվածները. հետապնդումներն ուղեկցվել են պետության պատժիչ գործողություններով: Տ. ժ-ի որոշումները բարձրացվել են պետ. օրենքի աստիճանի: «Դադարիր Աստծո Որդու մասին մտածել այնպես, ինչպես դու ես մտածում», այսինքն՝ Քրիստոսին վերաբերող որոշում կարող էր կայացնել միայն տիեզեր. ժողովը, որը հասցվել է պաշտոն. դավանանքի աստիճանի և վայելել պետ. պաշտպանություն: Այդպես ստեղծվել է դոգման, ձևակերպված եկեղեցու պաշտոն. բանաձևումներով, և դրանից ամեն մի շեղում հայտարարվել է *հերետիկոսություն*:

Ժողովների տիեզեր. կոչման, հրավիրման, եկեղեցիների պարտադիր մասնակցության, որոշումների վավերացման հարցերը կանոնացված չեն: Ոչ մի ժողովի տիեզերականությունն ի սկզբանե երաշխավորված և որոշված չի եղել, այսինքն՝ հաճախ ժողովները տիեզերական են հռչակվել ոչ թե անմիջապես, այլ՝ ավելի ուշ, ինչպես, օր., Կ. Պոլսի Բ (381) և Ե (553) ժողովները: Եվ հակառակը. կան ժողովներ, որոնք նախապես գումարվել են որպես տիեզերական, սակայն չեն արժանացել նման տիտղոսի, օր., Հռոմի (341), Սարդիկայի Բ (347), Եփեսոսի Բ (449) ժողովները ևն: Պարտադիր չէ, որ Տ. ժ-ին մասնակցեն բոլոր եկեղեցիները: Կ. Պոլսի 381-ի ժողովում Հռոմի եկեղեցին և ողջ Արևմուտքը ոչ մի ներկայացուցիչ չեն ունեցել, սակայն այդ ժողովի տիեզեր. հեղինակությունը ճանաչել են բոլոր եկեղեցիները: Ժողովը տիեզեր. կոչվելու համար վճռական պայման չէ նաև կայսրի կամ Հռոմի պապի կողմից վավերացված լինելը: Այսպես, Եփեսոսի 449-ի կամ Կ. Պոլսի 754-ի (*պատկերամարտության* դեմ) ժողովները թեև ժամանակի կայսրերը հռչակել են իբրև Տ. ժ., բայց եկեղեցու հայրերը մերժել են այդ ժողովների նման տիտղոսավորումը: Իսկ Կ. Պոլսի 381-ի ժողովը տիեզեր. է ճանաչվել առանց Հռոմի պապի վավերացման:

Այնուամենայնիվ երկու հանգամանք, նույնպես ոչ կանոնացված, էական են որևէ ժողով տիեզեր. ճանաչելու համար. 1. *Սուրբ Հոգու* ներշնչանքի սկզբունքի հետ կապված լինելը: Դավանաբան-աստվածաբան. տեսակետից Տ. ժ. եկեղեցում ապրող Ս. Հոգու մասն են: *Եկեղեցու հայրերը* հավաքվում են Ս. Հոգու թելադրանքով և նրա ոգեկոչումով՝ հավատալով, որ Ս. Հոգին կթողնի իր Աստվածային թագավորությունը հավաքվածների մեջ, և դավան. որոշումները կընդունվեն Ս. Հոգու առաջնորդությամբ: Տ. ժ-ի ս. հայրերն ասել են միմյանց. «... հաճելի թվաց Սուրբ Հոգուն եւ մեզ» (Գործք **15.**28), քանի որ այդպես են ասել առաքյալներն իրենց ժողովի (Երուսաղեմի 51-ի) որոշման մեջ:

2. Հետագա ժողովների ցուցաբերած վերաբերմունքը տվյալ ժողովի և նրա ընդունած որոշումների հանդեպ:

Տիեզերական և այդպիսին անվանված ժողովները մինչև VIII դ. կոչվել են նաև Արևելյան, քանի որ գումարվել են Արևելքի քաղաքներում (Նիկիա, Կ. Պոլիս, Եփեսոս, Քաղկեդոն), և մասնակից եպիսկոպոսներն էլ ճնշող մեծամասնությամբ կամ բացառապես եղել են Արևելքից և Արևելքի եկեղեցիներն են ներկայացրել: Մյուս ժողովները կոչվել են Արևմտյան, քանի որ միայն Արևմուտքում են գումարվել, և մասնակիցներն էլ բացառապես արմ. կաթոլիկ եկեղեցիների եպիսկոպոսներն են եղել: Ուղղափառ երկաբնակ եկեղեցիները ճանաչում են առաջին յոթ ժողովների տիեզեր. հեղինակությունը:

Լատին և հույն եկեղեցիների բաժանումից (1054) հետո Հռոմի պապերը վերականգնել են Կաթոլիկ եկեղեցու բարձրագույն հոգևորականության հավաքները՝ շարունակելով դրանք անվանել Տ. ժ.: Հրավիրվել են պապի հրամանով, իսկ ընդունված որոշումները պապի հաստատելուց հետո պարտադիր են եղել բոլոր կաթոլիկների համար: Հայ եկեղեցու ներկայացուցիչները, ի թիվս այլ եկեղեցիների, որպես դիտորդներ մասնակցել են Կաթոլիկ եկեղեցու XXI (Վատիկանի II) տիեզեր. ժողովին:

Հայ եկեղեցին ընդունում է միայն երեք Տ. ժ.՝ *Նիկիայի Ա տիեզերական ժողով 325, Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381, Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431,* որոնց ընդունած աստվածաբան-քրիստոսաբան. սկզբունքները կազմում են Հայ եկեղեցու դավան. հիմքը: Այդ երեք Տ. ժ-ում հաղթանակել է Ալեքսանդրյան դպրոցի (տես *Ալեքսանդրիա*) աստվածաբանությունը: Այդ ժողովները վճռել են Քրիստոսի Աստվածությունը, այսինքն՝ Հայր Աստծուն համագո և էակից լինելը (ընդդեմ Արիոսի, Նիկիա – 325), Որդու մշտնջենավորությունը, Ս. Հոգու Աստվածությունը, Ս. Երրորդության խորհուրդը, Մարդեղության իսկությունը, որ է Աստվածության և մարդկության միավորությունը (ընդդեմ Փոտինոսի, Մակեդոնի, Ապողինարիոսի, Կ. Պոլիս – 381), Քրիստոսի բնությունների փոխհարաբերությունների և Անձնավորության, Աստվածամարդու և նրանում Աստվածային առաջնայնության հարցը (ընդդեմ Նեստորի, Եփեսոս – 431): Երեք ժողովների վճիռներով ամբողջացել են քրիստ. կրոնի գլխ. սկզբունքները, որոնք կազմում են ուղղափառ հավատքի հիմքը, այն է՝ Սուրբ *Երրորդություն*, Մարդեղություն և Փրկագործություն: Հայ եկեղեցու *Հավատո հանգանակը* կամ Հավատամքը այդ դավան. վճիռների բյուրեղացումն է: V դ. վերջին կամ VI դ. սկզբին Զենոն կայսրի «*Հենոտիկոնի*» ընդունումով, որտեղ հիշվում և ուղղափառ են ճանաչվում միայն երեք ժողովները, Հայ եկեղեցին ճանաչել է դրանց տիեզեր. հեղինակությունը: Իսկ VI դ. կեսից արդեն հայ դավանաբան. գրվածքներում այդ երեք ժողովները հիշվում են միասին՝ որպես սուրբ ժողովներ, իսկ նրանց վճիռները՝ որպես ուղղափառ դավանության սահման և Քրիստոսի Ընդհանրական եկեղեցու հավատքի արտահայտություն:

Տիեզերական ժողովներ

I – Նիկիայի Ա տիեզերական ժողով 325
II – Կ. Պոլսի Բ տիեզերական ժողով 381
III – Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431
«Տիեզերական» անվանված ժողովներ
IV – Քաղկեդոնի ժողով (451)
V – Կ. Պոլսի II ժողով (553)
VI – Կ. Պոլսի III ժողով (680–681)
VII – Նիկիայի II ժողով (787)
VIII – Կ. Պոլսի IV ժողով (869–870)
IX – Լատերանի I ժողով (1123)
X – Լատերանի II ժողով (1139)
XI – Լատերանի III ժողով (1179)
XII – Լատերանի IV ժողով (1215)
XIII – Լիոնի I ժողով (1245)
XIV – Լիոնի II ժողով (1274)
XV – Վիեննի ժողով (1311–12)
XVI – Կոստանցի ժողով (1414–18)
XVII – Բազելի ժողով (1431–49), երբեմն կաթոլիկ պատմագրությունը տիեզերական է

համարում Ֆլորենցիայի ժողովը, իսկ Բազելի ժողովի առաջին 25 նիստերը դիտում է որպես նրա սկիզբ:

XVIII – Լատերանի V ժողով (1512–17)

XIX – Տրիդենտի (Տրիենտի) ժողով (1545–1563)

XX – Վատիկանի I ժողով (1869–70)

XXI – Վատիկանի II ժողով (1962–65)

Գրկ. Հովնանյանց Պ., Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ..., Վնն., 1847: Տեր-Մի-քելյան Ա., Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Տփխիս, 1900: Աշճյան Մ., Տիեզերական ժողովներու ընդունման հարցը Հայ եկեղեցվո կողմէ, «Հասկ», 1969, № 11–12, 1970, № 1–2: Ներսեսյան Ն., Տիեզերական ճանաչում ստացած եկեղեցական ժողովների հեղինակութեան եւ անսխալականութեան աղբիւրները, «Սիոն», 1992, № 1–3: *Лебедев А.П., История Вселенских Соборов, часть 1, Вселенские Соборы IV и V веков, Серг. Пос., 1896; Карташев А.В., Вселенские Соборы, Париж, 1963; Поснов М.Э., История Христианской Церкви, Брюссель, 1964; Болотов В.В., История Церкви в период Вселенских Соборов, т. 3, СПБ, 1913;* Dumeige G., Histoire des Conciles Œcuméniques, P., 1962.

Արտաշես Ղազարյան

ՏԻՄՈԹԵՈՍ ԿՈՒԶ, Էլուրոս, Ալեքսանդրացի (IV դ. վերջ – 477), V դարի հույն հակաքաղկեդոնիկ աստվածաբան, *Ալեքսանդրիայի* պատրիարք (457–460, 476–477): V դ. եկեղեց. կյանքի և աստվածաբան. մտքի նշանավոր դեմքերից, Ալեքսանդրյան աստվածաբան. դպրոցի ամենահայտնի ներկայացուցիչներից: Եղել է հականեստոր. (տես *Նեստորականություն*) և հակաքաղկեդոն. (տես *Քաղկեդոնի ժողով 451*) պայքարի ղեկավարներից, Ալեքսանդրիայի պատրիարքներ *Կյուրեղ Ալեքսանդրացու* և Դիոսկորոսի զինակիցը: Տ. Կ. 460-ին զրկվել է պատրիարքական աթոռից և իր եղբոր հետ աքսորվել նախ Գանգրա, ապա՝ Քերսոն: Իր աշխատությունների մեծ մասը գրել է աքսորավայրում: Մեզ է հասել դրանց շատ քիչ մասը, հիմնականում հատվածներ երկերից՝ հայ., ասոր. և զպտ. թարգմանությամբ: Ենթադրվում է, որ հուն. բնագրերը ոչնչացրել են քաղկեդոնականները: Տ. Կ-ի ամենահայտնի և ամբողջական պահպանված աշխատությունը «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» երկն է, որը մեզ է հասել միայն հայ. թարգմանությամբ և ասոր. համառոտված, փոփոխված տարբերակով:

«Հակաճառութիւնը» V դ. ներքրիստոնեական դավան. պայքարի ամենահիմն. աղբյուրներից է, որն արտահայտում է արևելյան ուղղափառության հոգևոր կենտրոնի՝ Ալեքսանդրիայի և նրա աստվածաբան. դպրոցի պաշտոն. դաղափարախոսությունը:

Տ. Կ-ի գործը հայ թարգման. գրականության ամենաարժեքավոր երկերից է, որը մեծ ազդեցություն է ունեցել հայ դավանաբան. գրականության վրա, օրինակ եղել հայ դավանաբանների համար և կարևոր դեր խաղացել Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշման հստակեցման և իր դավանության պաշտպանության գործում: «Հակաճառութեան» նմանողությամբ հետագայում կազմվել են «*Կնիք հավատո*» (VII դ.) և *Վարդան Այգեկցու* «Արմատ հավատո» (XIII դ.) դավանաբան. ժողվածուները:

«Հակաճառութիւնը» մեծ արժեք է ներկայացնում նաև հայրաբան. գրականության տեսակետից. պարունակում է *եկեղեցու հայրերի* երկերից բազմաթիվ քաղվածքներ, որոնց զգալի մասի բնագրերը չեն պահպանվել: Ուշադրավ են հատկապես աղանդավոր հեղինակների՝ Պողոս Սամոստացու (III դ.), Նեստորի (V դ.), Թեոդորետի (IV դ.) աշխատություններից կատարված քաղվածքները:

VII դ. սկզբին Վրաց եկեղեցու *քաղկեդոնականություն* ընդունելու կապակցությամբ գրված Մովսես Յուրտավեցու «Պատճառք Դ ժողովոյն երկաբնակացն» գրության մեջ «Հակաճառութիւնը» դասակարգվել է Քաղկեդոնի ժողովը և *Լևոնի տոմարը* մերժող հինգ կարևոր գրությունների շարքում՝ բյուզ. Զենոն կայսրի «*Հենոտիկոնի*», բյուզ. կայսր Անաստասի, Հայոց *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսի և Անտիոքի պատրիարք Պետրոս Անտիոքացու (Թափիչ) թղթերի հետ միասին:

«Հակաճառութեան» նպատակը շարադրված է գրքի հակիրճ նախաբանում, այն է՝ Աստծո ճշմարիտ վարդապետությունը քարոզող սուրբ և ուղղափառ հայրերի վկայություններով հերքել Լևոնի տոմարը և Քաղկեդոնի ժողովի սահմանումները՝ ապացուցելու համար, որ Ընդհանրական եկեղեցու ս. հայրերի գրվածքներում խոսք չկա Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի երկու բնությունների վարդապետության մասին: Տ. Կ. մեծ տեղ է հատկացրել Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբաններին՝ *Աթանաս Ալեքսանդրացուն* (Մեծ), Թեոփիլոսին, Ալեքսանդր Ալեքսանդրացուն, Պետրոսին և, մանավանդ,

ՏՅԱՌՆԸՆԴ. Կյուրեղին ու Դիոսկորոսին, եկեղեցու ս. հայրերի վկայություններով հիմնավորել ալեքսանդրյան դավանաբանության ուղղափառությունը:

«Հակաճառութիւնը» բաղկացած է երկու մասից: Առաջին մասը նվիրված է Լևոնի տոմարի, իսկ երկրորդը՝ Քաղկեդոնի ժողովի սահմանումների հերքմանը: Երկում արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում Եփեսոսի 449-ի և Քաղկեդոնի ժողովների շուրջ ծավալված պատմ. իրադարձությունների, հակաքաղկեդոն. գործիչների կրած հալածանքների և այլ դեպքերի մասին:

Տ. Կ-ի «Հակաճառութեան» հայերեն թարգմանության թվագրումը հայագիտության կարևոր խնդիրներից է. դրանից է կախված, մի կողմից՝ *հունաբան դպրոցի* և հունաբան թարգմանությունների սկզբնավորման, մյուս կողմից՝ Քաղկեդոնի ժողովի հանդեպ Հայ եկեղեցու դիրքորոշման և քաղկեդոն. վեճերին հայոց մասնակցության ժամանակի պարզաբանումը: Մի շարք ուսումնասիրողներ (Ե. *Տեր-Մինասյան*, Ն. *Ակինյան*, Հ. *Մանանդյան*, Ն. *Ադոնց*, Պ. Անանյան, Ժ. Գարիտ) այն տեսակետն են հայտնել, որ Տ. Կ-ի «Հակաճառութիւնը» հայերեն է թարգմանվել VI դ. կեսին՝ 552–564-ին: Հեղինակների մեկ այլ խումբ (Կ. *Տեր-Մկրտչյան*, Ստ. Մալխասյանց, Գ. *Տեր-Մկրտչյան*, Մ. Աբեղյան, Ս. Արևշատյան) գտնում է, որ երկը թարգմանվել է 480–484-ի միջև՝ Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի օրոք: Դրա համար հիմք է ծառայել Գ. Տեր-Մկրտչյանի (Միաբան) տոմարագիտ. հաշվումը: Ներկայումս հայագիտության մեջ գերակշռում է վերջին տեսակետը:

Երկ. Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի, աշխատասիր. Կարապետ ծ. Վարդապետի և Երվանդ Վարդապետի, Էջմիածին, 1908:

Գրկ. Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Ակինյան Ն., Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ. քննական ուսումնասիրութիւն, Վնն., 1909: Տեր-Մկրտչյան Գ., Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «Նորաբեր» հայ թարգմանութիւնը, «Արարատ», 1908, էջ 564–589, 707–708: Նույնի, Հայ մատենագրութեան հնագոյն թուականները, «Շողակաթ», Վաղ-պատ, 1913, էջ 154–163: Մանանդյան Հ., Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վնն., 1928, էջ 95–102: Անանյան Պ., Պատմական յիշատակարան մը Դվինի Բ ժողովքի մասին, «Բազմավեպ», 1957, էջ 111–121, 1958, էջ 64–72, 117–131: Տեր-Մինասյան Ե., Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը, ԲՄ, № 5, 1960: Աբեղյան Մ., Երկեր, հ. 3, ե., 1968, էջ 647–652: Տեր-Պետրոսյան Լ., Դասեր Հայ եկեղեցական մատենագրությունից (Ե դար), Սոչի, 1993: *Арев-шатян С., Формирование философской науки в Древней Армении (V–VI вв.), Е., 1973, с. 169–173;* Garitte G., La Narratio de rebus Armeniae, Louvain, 1967, p. 32–36, 163–165; Lebon J., Version arménienne et version syriaque de Timothée Elure, ՀԱ, 1927, էջ 713–722:

Արտաշես Ղազարյան

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ, Տեառնընդառաջ, Տոն Քառասնօրյա Գալստյանն Քրիստոսի ի Տաճարն (ժողովրդախոսակցական ձևով՝ Տերենդեզ, Տըրնդեզ, Տերընտաս ևն), Հայ եկեղեցու *Տերունի տոներից*՝ նվիրված քառասնօրյա մանուկ Հիսուսի ընծայմանն Աստծուն՝ Երուսաղեմի տաճարում, որտեղ Սիմեոն ծերունին ու Աննա մարգարեուհին ընդառաջ են եկել Հիսուսին: Չորս Ավետարաններից միայն Ղուկասի Ավետարանն է նկարագրում այս խորհրդավոր իրադարձությունը. «Եվ երբ ութ օրերը լրացան, և նա թլփատվեց, նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել մոր որովայնում: Երբոր նրանց սրբադործման օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»: Եվ Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ» (Ղուկ. 2.21–24):

Եվ ահա, երբ Մարիամ Աստվածածինն ու Հովսեփը Ղուկաս ավետարանչի հիշատակած «Տիրոջ Օրենքը» (տես Ղևտ. 12) կատարելու համար այցելել են տաճար, Սուրբ Հոգուց առաջնորդվելով՝ տաճար է եկել «արդար ու աստվածավախ» Սիմեոն ծերունին, որին «Սուրբ Հոգուց հրամայված էր» մահ չտեսնել, մինչև որ տեսներ Տիրոջ Օծյալին: Արդար ծերունին գրկել է մանուկ Հիսուսին, օրհնել Աստծուն և ասել. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետև աչքերս տեսան քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար» (Ղուկ. 2.29–32): Ապա դառնալով Տիրամորը՝ ասել է. «Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խոր-

հուրդներ հայտնի դառնան» (Ղուկ. 2.35): Տաճարի մեջ Տիրոջը գոհություն է հայտնել նաև Աննա մարգարեուհին, պատմել խորհրդավոր Մանկան մասին (Ղուկ. 2.36–38): Ավետարանական այս իրողությունն է ընկած Տ-ի տոնակատարության հիմքում:

Հայ եկեղեցին Տ., որպես անշարժ տոն, կատարում է փետր. 14-ին: Փետր. 13-ի երեկոյան, եկեղեց. ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ, անդաստան. ծիսակատար քահանան վառում է ս. Սեղանի վրա դրված մոմերը: Հավատացյալները, վառելով իրենց մոմերը, տանում են տուն:

Տ-ի օրը եկեղեցում ս. *Պատարագ* է մատուցվում, եկեղեցու չորս անկյուններում կարդացվում են Ավետարանի համապատասխան մասերը, գովերգվում է լույսը՝ ակնարկելով Սիմեոն ծերունու խոսքը՝ «Լոյս ի յատնութիւն հեթանոսաց», հիշատակվում են նույն Սիմեոնը և Աննա մարգարեուհին, երգվում են շարականներ, որոնք պատմում են Սուրբ Կույսից մարմին առած մանուկ Հիսուսի տաճար բերվելը, փառաբանվում է Փրկչի Մարդեղության խորհուրդը: Այնուհետև եկեղեցու բակում, հինավուրց ավանդույթի համաձայն, խարույկ են վառում, ինչը սահմանված չէ քրիստ. և եկեղեց. որևէ օրենքով կամ կանոնով: Ուսումնասիրողները գտնում են, որ կրակ վառելու ավանդույթը գալիս է հեթանոս. շրջանից. հայոց մեջ՝ կապված Միհր կամ Տիր կուռքերի, հնդիրանական ժողովուրդների մոտ՝ Ագնիի կամ նույն Միհր (Միթրա) կուռքի պաշտամունքի հետ: Մ. արք. Օրմանյանը հավանական է համարում, որ Տ. անվան փոխարեն ժողովրդի մեջ գործածվող Տերնտաս անվանումը վկայում է հենց Տիր կուռքի պատվին կատարված վաղնջական ծեսի մասին:

Հուրը, ըստ Աստվածաշնչի, ունի. ա. փորձիչ նշանակություն: Դա առկա է, օր., Դանիելի մարգարեության մեջ, երբ Դանիելի երեք ընկերները՝ Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը, Նաբուքոդոնոսոր արքայի կողմից գցվել են կրակի հնոցը, սակայն մնացել անվնաս, քանզի մաքուր էին, և Աստված իրենց հետ էր (3.8–97). բ. պատժիչ, կործանիչ նշանակություն: Այսպես, երբ Օքոզիա արքայի հիսնապետները գնացել են լեռան վրա օթևանած Եղիա մարգարեի մոտ՝ նրան բռնությամբ արքայի մոտ տանելու, Եղիան երկնքից երկու անգամ կրակ է իջեցրել, որը լափել է հիսնապետներին ու զինվորներին (Դ Թագ. 1.1–11): Վերջին՝ Դատաստանի օրը, ինչպես բազմիցս նշվում է մարգարեություններում ու Նոր կտակարանում, դատաստանը կատարվելու է կրակի միջոցով. գ. մաքրագործիչ, զորացուցիչ նշանակություն, իբրև Սուրբ Հոգուն ուղեկից հատկություն և Աստծո ներկայության ցուցիչ («Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները. նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով. նա, որի քամհարը իր ձեռքում է, և կմաքրի իր կալը, ցորենը կհավաքի իր շտեմարանում և հարդը կայրի անշեջ կրակով», Մատթ. 3.11–12, տես նաև Մարկ. 1.1–8, Ղուկ. 3.16–17, Հովհ. 1.26–27):

Կրակը (հուրը) Աստվածաշնչում խորհրդաբանվում է իբրև Բարձրյալ Աստծո ամենաառաջնային հատկություններից մեկը, երկնային երևույթ:

Տ-ի ծիսակատարության մաս կազմող կրակը, հավանաբար, III դարից հետո Հայ եկեղեցու ծիսակարգն է մուծվել՝ նկատի ունենալով կրակի վերոհիշյալ՝ աստվածաշնչյան խորհրդաբանությունը: Հավանաբար, Գրիգոր Ա Լուսավորչից հետո, Սահակ-Մաշտոցյան շրջանում է մտել *Տոնացույց*: Տ-ի շարականը վերագրվում է Մովսես Քերթողին:

Ժամանակին հայ իրականության մեջ գոյություն են ունեցել Տ-ի տոնակատարության հետ կապված ազգ. սովորույթներ, ավանդություններ ու պատկերացումներ: Այսպես, հին Ջուղայում նորապսակ երիտասարդներն իրենց ձեռքերի վառված մոմերով, քահանայից հետո, վառել են եկեղեցու բակում դրված փշե դեզը, վառված մոմերով վերադարձել տները և վառել տանիքների վրա դրված դեզերը, որից հետո ցատկել են կրակի վրայով: Այդ օրը նորահարսին նվերներ են տվել: Գրեթե նույնը, որոշ փոփոխակներով, կատարել են նաև Շիրակում, Բասենում, Վաղարշապատում, Վանում և այլուր: Տ-ի խարույկի ծխի ուղղությամբ որոշել են, թե որ կողմի դաշտերն են բերրի լինելու. եթե տանը հիվանդ է եղել, նրան երդիկով դուրս են բերել տան կտուրը՝ դեզի մոտ, որ լավանա: Դեզի վրայով ցատկելը բացատրել են կրակի բուժիչ, մաքրագործ և դիվահալած նշանակությամբ, որ ի զորու է ազատագրելու ամեն «չլավից» (ոչ լավ, չար բանից):

Տ-ի ժող. տոնակատարումը գրեթե նույնությամբ պահպանվել է և առավելաբար առընչ-

վում է նորահարսների և առաջիկա բերքի օրհնության հետ:

Երաժշտություն: Շարականագիրների միջնադարյան ցուցակների հեղինակները Տ-ի կանոնի շարականների հորինումը միահամուռ ընծայում են *Մովսես Խորենացուն*: Կանոնում առկա են ինչպես «չափավոր», այնպես էլ՝ «ծանր» տիպի երգեր, որոնք իրենց մեղեդիական-ոճական հատկանիշներով ընորոշ են Մովսես Խորենացու անվանն առնչվող առավել հավաստի շարականների ձայնեղանակային ինքնատիպ հորինվածքին: Դրանցից նշելի են Տ-ի կանոնի «ծանր» Հարցը՝ «Օրհնեմք զքեզ», «չափավոր» Մեծացուսցեն՝ «Այսօր քրովբէական» կամ «չափավոր ծանր» Համբարձին՝ «Մարմնացեալդ ի Կուսէն»:

Պատկերագրություն: «Տյառնընդառաջ» թեմայի նկարներն ու բարձրաքանդակները պատկերում են Երուսաղեմի տաճարի դիմաց կամ ներսում քառասուն օրական Հիսուսին, որին Տիրամայրը, իբրև Հայր Աստծուն ընդառաջ գնալու խորհրդանշական քայլ, ներկայացնում է Սիմեոն ծերունուն և Աննա մարգարեուհուն: Սովորաբար, Մանկանը գրկած Մարիամը զբաղեցնում է պատկերի ձախ հատվածը, նրա կողքին կամ հետևում Հովսեփն է: Երբեմն տեղերը փոխվում են. Հովսեփը գրկած է լինում Հիսուսին, Մարիամը հետևում է տեսարանին: Կենտրոնում տաճարի խորանն է, որի մեջ ոսկե սափորն է և Աստծո *Ուխտի տապանակը*: Կենտրոնից դեպի աջ պատկերվում են Սիմեոնը և Աննան: Որոշ նկարներում Մանուկը հայտնվել է Սիմեոնի գրկում: Հովսեփը ձեռքերում պահում է երկու տատրակ:

Հայկ. մանրանկարչության զանազան դպրոցներ հանդես են բերել Տ-ի նույն պատկերագրությունը, սակայն՝ տարբեր ոճավորումներով: Թորոս Ռոսլինի, Թորոս Տարոնացու, Հովհաննես Սանդղկավանեցու, Մելքիսեդեկի, Ռստակեսի պատկերումները հարստացնում են թեմայի համաքրիստ. պատկերագրությունը:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.6, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մաթեվոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Ե., 1993: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6-րդ հրտ., Թեհրան, 1999:

Լևոն Սարգսյան
Աննա Արևշատյան
Մարտին Միքայելյան

ՏՆՏԵՍՅԱՆ Եղիա [29.3(10.4).1834, Կ. Պոլիս – 23.4(5.5).1881, Կ. Պոլիս], երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, տպագրիչ: Նախն. ընդհանուր և երաժշտ. պատրաստությունն ստացել է Կ. Պոլսի Միջազգուղ թաղի դպրոցում: 1848-ից որպես աշակերտ-տպագրիչ աշխատել է «Սրապյան» տպարանում, հետագայում Հ. Մյուհենտիսյանի ղեկավարությամբ կատարելագործել է արհեստը, մասնագիտացել նաև հայկ. և եվրոպ. նոտատպության գործում: Երուսաղեմում և Ս. Էջմիածնում ուսումնասիրել է երգվող շարականները և դրանց խազագրությունը: 1864-ին Կ. Պոլսում հրատարակել է «Բովանդակութիւն նվագաց Հայաստանեայցս ս. եկեղեցւոյ» «տետրը», որտեղ, եվրոպ. հեղինակների (Յո. Շրյոդեր, Շ. Վիլլոտո, Հ. Պետերման) հրապարակումներից հետո, առաջին անգամ խորագիտակորեն ներկայացրել է շարականների սկվածքները (ձայնեղանակների լադա-ելևէջային խտացված բանաձևերը) և հատընտիր շարականներ: Տ. եռանդուն մասնակցություն է ունեցել ազգ. հոգևոր երաժշտությունը վերաձայնագրելու, կարգավորելու և հետագա խեղաթյուրումներից զերծ պահելու, ինչպես նաև ժողովրդի երաժշտագիտ. լուսավորման նպատակով Կ. Պոլսում տարվող աշխատանքներին: 1869–71-ին հայկ. նոտաներով գրառել է Շարակնոցն ամբողջությամբ, կազմել հայկ. նոտագրության համառոտ ձեռնարկ՝ «Տարերք երաժշտության» (հրտ. 1933): Մինչկոմիտասյան շրջանի հայ երաժշտագիտության կարևորագույն նվաճումներն է ամփոփում նրա «Նկարագիր երգոց Հայաստանեայցս ս. եկեղեցւոյ...» (1874) գիրքը: Տ. հրատարակել է նաև «Նուագք Հայկականք» պարբերականը (1879):

Տ-ի գործունեությունը նշանակալից հետք է թողել հայ երաժշտության տեսության բնագավառում: Հատկապես կարևոր են հոգևոր երաժշտության մոնոդիկ (մեներգեցողության) էության ընկալումն ու հետազոտումը՝ կապված այդ երաժշտության հնչյունաշարի տեմպերացիայի առանձնահատկությունների և հայկ. ձայնեղանակային համակարգի (տես *Ութձայն*) ամբողջականության հետ: Տ-ի գիտահետազոտ. և գործնական ձեռնարկումներն ուղղված են եղել ազգ. երաժշտության ինքնուրույնության ու ինքնատիպության հաստատմանն ու պահպանմանը:

Տ. 1880-ական թթ. Արմ. Հայաստանում ծավալված համիդյան բռնությունների առաջին զոհերից է: Իր «Նոր երգարան հայոց» ժողո-

վածուում Մ. Նալբանդյանի «Ազատություն», ազատախոհ այլ բանաստեղծություններ, ինչպես նաև ֆրանս. «Մարսելյեզը» տպագրելու առիթով բանտարկվել է և բանտում էլ մահացել:

Գրկ. Հիսարլյան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան..., ԿՊ, 1914: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959:

Ռոբերտ Աթայան

ՏՆՕՐՀՆԵՔ, տես *Հոգևոր բարեպաշտական արարողություններ* հոդվածում:

ՏՈՆԱԿԱՆ, տես *Ճառընտիր*:

ՏՈՆԱՊԱՏՃԱՌ, Պատճառ տօնի՛ց, հայոց *Տոնացույցի*՝ «Կանոնք ընթերցվածոց»-ի տոների շարքի և դրա հետ կապված առանձին ընթերցվածների՝ Հին և Նոր կտակարաններից մեջբերված բնագրերի մեկնությունների, վերլուծությունների ժողովածու: Տ-ում լուսաբանվում են տոների իմաստները, եկեղեց. մատենագրության մեջ առանձին կարևորություն ունեցող մի շարք ճառերի և մեկնող. երկերի հորինման շարժառիթները, բացատրվում են աստվածաբան., վարդապետ. մասնավոր ուղղվածությամբ: Սկզբնապես հայտնի էին «Մեկնություն ընթերցվածոց» անվամբ: Տ-ի մեջ հայրախոս. տեքստերից բացի առկա են նաև Աստվածաշնչի և մի շարք ճառերի մեջ հանդիպող առավել խրթնիմաստ բառերի և արտահայտությունների կարճառոտ մեկնաբանություններ՝ *լուծմունքներ*, դավանաբան. երկեր, ինչպես նաև՝ *մարգարեների, առաքյալների*, նահատակների (տես *Վկա*) վերաբերյալ համառոտ պատմություններ, որոնք, զերծ լինելով վարքերին ու *վկայաբանություններին* հատուկ նկարագրականությունից, ունեն առավելապես բարոյական հրահանգի, վերլուծական պատգամի բովանդակություն: Ի տարբերություն գործն. կիրառության համար սահմանված ծիսական մատյանների (տես *Ծիսամատյան*), որոնք ժամանակի ընթացքում անխուսափելիորեն ենթարկվել են ինչ-ինչ փոփոխությունների, Տ. ժողովածուն, ունենալով գերազանցապես տեսական բովանդակություն, քիչ է ենթարկվել արտաքին ազդեցության: Իբրև տեսական-աստվածաբան. անհրաժեշտ գիտելիքներ պարունակող կարևոր դասագիրք՝ Տ. լայնորեն կիրառվել է վանական դպրոցներում:

Ձեռագրական ավանդույթը Տ. ժողովածուի ստեղծումը կապում է *Արիստակես Ա Պարթև* կաթողիկոսի (325–333) անվան հետ: Սակայն Տ-ի կազմավորման մեջ շատ ավելի էական է համարվում նախ՝ *Գրիգորիս Արշարունի* քորեպիսկոպոսի (VII–VIII դդ.), ապա *Զաքարիա Ա Զագեցի* կաթողիկոսի (855–876) մասնակցությունը: Ժողովածուի բովանդակային ճոխացմանը կարևոր նպաստ է բերել նաև *Սամվել Կամրջաձորեցին* (X–XI դդ.)՝ այն համալրելով նոր միավորներով, այդ թվում նաև՝ իր հորինած մեկնողական ճառերով: Իբրև այս ժողովածուի խմբագիրներ հիշվում են նաև *Վարդան Հաղպատեցին* (XII դ.), XIII դ. հեղինակներ Հովհաննես Գանձակեցին, *Վարդան Արևելցին* և ուրիշներ:

Տ. ժողովածուի առավել ներկայանալի օրինակներ են Մատենադարանի №№ 1007, 2021, 2039, 4139 ձեռագրերը:

Գրկ. Անթաբյան Փ., «Տօնապատճառ» ժողովածուն..., ԲՄ, № 10, 1971: Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (4–18-րդ դարեր), Ե., 1999:

Հակոբ Քյոսեյան

ՏՈՆԱՑՈՒՅՑ, Հայաստանյայց առաքելական եկեղեցու տոների մասին ցուցումներ պարունակող *ծիսամատյան*, տոների օրացուցային կարգի և արարողությունների կատարման ուղեցույց, որտեղ արձանագրված է յուրաքանչյուր օրվա ներքին ծիսակարգը՝ իր մասնավոր հերթագայությամբ, կատարման համար սահմանված ընթերցումներով (Աստվածաշունչ, քարոզ, աղոթք, շարական ևն): Համաձայն ավանդության, Հայ եկեղեցու տոների կարգավորության պաշտոնական հիմնադիրը *Գրիգոր Ա Լուսավորիչն* է: Այդ գործին մեծապես նպաստել է *Սահակ Ա Պարթևը*: Մասնավորաբար հայկ. Տ-ին հատուկ յոթնյակ ձևը (երբ ս. Զատկի շարժականությամբ թելադրված՝ մի շարք տոներ յոթ օրվա տատանումով են նշվում) կապվում է նրա անվան հետ: Տ-ի կազմավորման գործին իրենց մասնակցությունն են բերել *Գյուտ Ա Արահեզացի, Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսները: *Հովհաննես Գ Օձնեցին* կանոնակարգել է Ս. Ծննդյան չորս Ավագ տոներն իբրև նախատոնակ: *Ներսես Շնորհալին* սահմանել է *Հոգեգալուստը*՝ յոթ և Վերափոխումը՝ ինն օր տոնախմբելու կարգը:

Տ. խմբագրել և վերստին «ստուգաբանել» է Գևորգ Լամբրոնացին (XIII դ.): Նա Կանոնա-

գրքից քաղած վկայություններով հաստատագրել է Հայ եկեղեցու տոնական կարգավորությունը: Նշանակալից է *Սիմեոն Ա Երևանցու* մասնակցությունը Տ-ի կարգավորման աշխատանքներին: Նրա ջանքերով հայ եկեղեց. Տ. ձեռք է բերել նոր և հաստատուն կերպարանք: *Կիրակի* օրվա սրբությունը պահելու նկատառումով նա Տերունական և Սրբոց տոների կապակցությամբ Տ. է ներմուծել 21 օրեր, հանել Մեծի պահոց կիրակիների մեջ Հարության հիշատակումը, մշակել գործածության առավել դյուրին և հաստատուն մի ձև, որը ցույց է տալիս 36 տարեգրերի համար մարտի 22-ից մինչև ապրիլի 25-ը տեղի ունեցող ս. Զատկի տոնի փոփոխությունները: Սիմեոն Ա Երևանցու Տ. կիրառվում է ցայսօր:

Ըստ Տ-ի, Հայ եկեղեցին տարին բաժանում է երեք տեսակ օրերի՝ *տոների*, սրբոց օրերի (տես *Սուրբեր Հայաստանյայց առաքելական եկեղեցու*) և ապաշխարության կամ պահոց օրերի (տես *Պահք*):

Տես նաև *Տոնապատճառ*:

Գրկ. Ակինյան Ն., Քննութիւն ս. Սահակի վերագրուած կանոններու եւ Հայոց եկեղեցական տարին է դարու սկիզբը, Վնն., 1950: Բաղալյան Հ., Օրացույցի պատմություն, Ե., 1970: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 959–962: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990, էջ 68–75: Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին, Ե., 1993: Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (4–18-րդ դարեր), Ե., 1999:

Հակոբ Քյոսեյան

ՏՈՆԵՐ եկեղեցական, աստվածապաշտության կամ ծեսի և պաշտամունքի բաղկացուցիչ հիմնական բաժիններից: Կատարվում են եկեղեց. հանդիսավոր արարողություններով, նվիրված են որոշակի դեպքերի ու անձերի ոգեկոչումներին կամ ուղղակի միջոց են հոգևոր խորհրդածությունների: Նպատակն է նվիրվել օրվա խորհրդին, Աստծո փառաբանությանը և կրոն. պաշտամունքին, ապրել հոգևոր բարեպաշտ. կյանքով և խորհել հոգևոր արժեքների մասին:

Քրիստ., այդ թվում և Հայ եկեղեցու տոները նվիրված են Հիսուս Քրիստոսին, Աստվածածնին, խաչին, սուրբերին և մարտիրոսներին, ինչպես նաև ազգ-եկեղեց. նշանակություն ունեցող իրադարձություններին (Հայոց համար այդպիսիք են Թարգմանչաց, Վարդանանց տոները): Մի շարք քրիստ. տոների հետ միախառնվել են նաև հեթանոս. շրջանի տոներ որոշ տարրեր և ժող. սովորույթներ: *Կիրակին* Տերունական օր է, նվիրված է Հիսուս Քրիստոսի Հարությանը և միշտ նշվում է որպես եկեղեց. տոն: Շաբաթվա մնացած օրերը սրբոց և պահոց օրեր են: Հայ եկեղեցու գլխ. հինգ եկեղեց. տոները կոչվում են *Տաղավար (Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն, ս. Զատիկ, Խաչվերաց, Վերափոխումն Ս. Աստվածածնի, Վարդավառ)*: Այդ տոների հաջորդ օրը *մեռելոց* է, կատարվում է դերեզմանօրհնեք: Հայ եկեղեցին տարվա օրերը բաժանել է երեք հիմն. խմբի. տոներ, սրբոց (մարտիրոսաց) օրեր կամ սրբոց հիշատակներ և պահոց օրեր (տես *Պահք*): Տոները բաժանվում են չորս խմբի. 1. *Տերունի տոներ*՝ նվիրված Քրիստոսի փրկագործ տնօրինության հիշատակներին, 2. *Աստվածածնի տոներ*, 3. *Խաչի տոներ*, 4. *Եկեղեցու տոներ*: Աստվածածնի, Խաչի և Եկեղեցու տոները Տերունի տոների մասեր են և նույնպես համարվում են Տերունի, քանի որ կատարվում են ի պատիվ և հանուն Տիրոջ:

Սրբոց օրերը նվիրված են սուրբերի (տես *Սուրբ*) հիշատակին: Հայ եկեղեցին ունի Ընդհանրական (Տիեզերական) եկեղեցու սուրբերի և զուտ Հայ եկեղեցու սուրբերի տոներ (տես *Սուրբեր Հայաստանյայց առաքելական եկեղեցու*): Սուրբերի կարգին են դասվել նաև *հրեշտակները*, որոնց նվիրված տոներ ևս ունի Հայ եկեղեցին:

Հայ եկեղեցու տոները լինում են շարժական և անշարժ: Անշարժ են այն տոները, որոնք հաստատուն կերպով կապված են ամսաթվերին և ոչ թե շաբաթվա օրերին: Դրանք են հունվ. 5-ից մինչև 13-ը ներառող իննյակ օրերի տոները. *Ճրագալույց* Ս. Ծննդյան (հունվ. 5), Ս. Ծնունդ և Աստվածահայտնություն (հունվ. 6), Ս. Ծննդյան յոթնյակը կամ ութօրեքը (հունվ. 7–12), *Անվանակոչություն* (հունվ. 13), *Տյառնընդառաջ* (փետր. 14), Աւետում (ապրիլի 7), Ծնունդ Աստվածածնի (սեպտ. 8), Ընծայումն Աստվածածնի (նոյեմբ. 21), Հղություն Աստվածածնի (դեկտ. 9): Հաստատուն օրեր ունեն Աստվածածնի Վերափոխման (օգոստ. 15) և Խաչվերաց (սեպտ. 14) տոները, բայց Հայ եկեղեցին դրանք նշում է այդ օրերին ամենամոտ կիրակի օրը: Սրբոց հիշատակ կատարվում է ոչ թե ամիսների հաստատուն օրերով, այլ՝ յոթնյակի դրությամբ, որը շաբաթների հաջորդությունն է: Շաբաթվա մեջ միայն երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերին կարող են սուրբերի հիշատակ-

ները նշվել: Շարժական տոները կապված են ս. Զատկի (Հարության) տոնի հետ՝ համաձայն Լուսնի լրումի:

Արտաշես Ղազարյան

«ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ», XI դ. 1-ին կեսի պատկերազարդ, տոնական ձեռագիր մատյան: Ընդօրինակվել է, հավանաբար, Բագրատունիների վերջին թագավորներից մեկի պատվերով: Գրչության վայրը, գրիչը և ծաղկողը անհայտ են: XII դ. եղել է մի ազնվականի մոտ: 1803-ին Իգնատիոս Փափազյանը Վենետիկ է բերել Տրապիզոնից (այստեղից էլ՝ անունը): Պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում (ձեռ. № 1400, չափերը՝ 47,5x36,5 *սմ*, բաղկացած է մագաղաթե 634 թերթից, կազմը կաշվից է, ուշ շրջանի՝ մինչև 1425-ը): Ձեռագիրը Ս. Ղազար վանքի ամենամեծ մատյանն է: «Տ. Ա.»-ի գեղ. ձևավորումը լրիվ չէ: Պահպանվել են ճոխ պատկերազարդված 10 խորանները, իրենց Ավետարաններից առաջ տեղավորված 4 ավետարանիչների նկարները, չքեղ նկարազարդված անվանաթերթերը (Մատթեոսի նկարը և անվանաթերթն ավելի ուշ շրջանի աշխատանք են), մի մանրանկարում՝ 4 ավետարանիչների նկարները և 7 թեմատիկ տերունական տեսարանները («Ավետում», «Ծնունդ», «Տյառնընդառաջ», «Մկրտություն», «Պայծառակերպություն», «Դեհոսուս», «Քրիստոս Ամենակալը»):

«Տ. Ա.» այն հազվագյուտ ձեռագրերից է, որը կրել է բյուզ. գեղանկարչության զգալի ազդեցությունը (սակայն ոչ բոլոր մանրանկարներում հավասարաչափ): Դա արտահայտվում է հատկապես խորանների քառակուսի համաչափություններում ու երանգներում, որոնք ստեղծվում են հիմնականում կարմիր-դարչնագույն, ոսկեգույն, դեղին և երկնագույն գույներանգներից: Դրվագավորման ու երանգավորման առումով դրանց մերձ են անվանաթերթերը: Որմնանկարչության մեջ և ավետարան. տեսարանների մեծ մասի ոճում նույնպես բավականաչափ զգալի է բյուզ. ազդեցությունը: Մյուս մանրանկարների ոճը («Պայծառակերպություն», «Քրիստոս Ամենակալը» և Մարկոս ավետարանիչի դիմանկարը) առավելապես աղերսվում է արևելաքրիստ. արվեստի ավանդույթների հետ: Չնայած այս տարբերություններին, ձեռագիրը զարդանկարվել է միաժամանակ և նույն արվեստանոցում. դա հավաստում է զարդանկարային մոտիվների ընդհանրությունը խորաններում և այուժետային մանրանկարների շրջանակներում (անգամ այնպիսիները, որոնք հակված են արևելաքրիստ. ավանդույթներին): Տարբերությունները բացատրվում են զանազան նմուշների օգտագործումով և մի քանի նկարիչների աշխատանքով, ընդ որում՝ հայ նկարիչների, ինչի հավաստիքն է խիստ արտահայտված գրաֆիկական սկիզբը և հուն. մակագրությունների նկարված (վերանկարված), քան գրված լինելը: «Տ. Ա.»-ի մանրանկարներն արտացոլում են որմնանկարչային գեղանկարչության ազդեցությունը գունային լուծումներում (սպիտակավուն երանգներ, կապույտ ֆոն), ձևերի հակիրճ մեկնություններում, որ հատկապես պարզորոշ է «Քրիստոս Ամենակալի» պատկերում, և հենց որմնանկարչությունն ու առարկայի հեռանկարային դիրքերի ծավալները վկայում են «Համբարձման» դմբեթային հորինվածքի փոխառված լինելը:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.6, 3-րդ պատկերը:

Գրկ. Ճանաչյան Մ., Հայկական մանրանկարչություն, [հ. 1], Վնտ., 1966: *Измайлова Т.А., Армянская миниатюра XI в., М., 1979;* Weitzmann R., Die armenische Buch malerei des 10. und beginnenden 11. Jahrhunderts, Baniberg, 1933; Der Nersessian S., Armenia and the Byzantine Empire, Camb., 1947; Նույնի, L'art arménien des origines au XVII siécle, P., 1977.

Նիկոլայ Քոթանջյան

ՏՐԴԱՏ (940-ական թթ. – մ.թ. անհտ), ճարտարապետ, քանդակագործ, Բագրատունիների թագավորական տան գլխավոր ճարտարապետը: Շին. գործունեությունը կենտրոնացած է եղել հիմնականում Շիրակում: Կառուցել է *Արգինայի կաթողիկոսարանի* Կաթողիկե եկեղեցին (973–977), Կ. Պոլսի Ս. Սոֆիայի տաճարի գմբեթը (989–992), *Անիի Մայր տաճարը* (989–1001), *Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցին* (1001–10): Ենթադրաբար Տ-ին են վերագրվել նաև *Հաղպատի վանքի* Ս. Նշան, *Սանահինի վանքի* Ս. Ամենափրկիչ, *Մարմաշենի վանքի* գլխ., Անիի Ս. Փրկիչ եկեղեցիները, Արգինայի կաթողիկոսարանի համալիրը, Անիի Սմբատաշեն պարիսպը ևն: Տ-ի առաջին վավերական գործը *Խաչիկ Ա Արշարունի* կաթողիկոսի պատվերով Արգինայում կառուցած եկեղեցին է, որտեղ ակնհայտ է ճարտարապետի նորարար. մոտեցումը և վաղ միջնադարյան ավանդույթների ստեղծագործ. կիրառումը: 980-ական թթ. Տ. արդեն նշանավոր, Հայաս-

տանի սահմաններից դուրս ճանաչված ճարտարապետ էր: Նա է վերականգնել Կ. Պոլսի Ս. Սոֆիայի տաճարի՝ երկրաշարժից ավերված գմբեթը: Ըստ *Ստեփանոս Տարոնեցու*, երբ բյուզանդացի ճարտարապետները չեն կարողացել վերականգնել գմբեթը, Տ. «իմաստուն հանճարով» նախօրոք պատրաստել է մանրակերտը և նոր միայն վերակառուցել (31 *մ*-ից ավելի տրամագիծ ունեցող) միջնադարյան ճարտ-յան հրաշալիքներից մեկը, «որ պայծառ էր քան զառաջինն»: Տ-ի կառուցած գմբեթը կանգուն է ավելի քան հազար տարի:

Տ-ի ստեղծագործությունների գլուխգործոցը Անիի Մայր տաճարն է, որտեղ վաղ միջնադարյան գմբեթավոր բազիլիկների (Օձուն, Գայանե, Մրեն) հորինվածքը նոր հնչեղություն է ստացել՝ պայմանավորելով դարաշրջանի ճարտ. և գեղագիտ. ըմբռնումները: Գագիկ Ա Բագրատունի թագավորի հանձնարարությամբ կառուցել է Անիում Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցին՝ նախօրինակ ունենալով *Զվարթնոց* տաճարի հորինվածքը: Հիշարժան է եկեղեցու պատին Գագիկ արքայի քանդակը՝ կառույցի մանրակերտը ձեռքին: Գրեթե բոլորաքանդակ այս արձանում (միակը միջնադարյան հայկ. արվեստում) դրսևորվել է Տ-ի քանդակագործ. տաղանդը: Տ. կարևորել է մայրաքաղաք Անիի համայնապատկերում կառույցների քաղաքաշին. դերը, դիտողական ընկալման, համալիրային ներդաշնակման խնդիրները: Մեծ ազդեցություն է ունեցել հայկ. ճարտ-յան հետագա զարգացման, ոճական նոր ուղղության և հորինվածքային սկզբունքների ձևավորման գործում: Ունեցել է իր ստեղծագործ. դպրոցը, և նրա մտահղացումներն ու գաղափարներն իրականացրել են աշակերտները, որոնք կերտել են զարգացած միջնադարի առաջնակարգ մոնումենտալ շատ կառույցներ:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.6, 4-րդ պատկերը:

Գրկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, [Հ.] 2, Ե., 1948: Լեվոնյան Գ., Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», 1949, № 1–2: Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Մնացականյան Ս. Խ., Վարպետաց վարպետներ Մանուել, Տրդատ, Մոմիկ, Ե., 1982: *Оганесян К.Л., Зодчий Трдат, Е., 1951;* Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918; Cuneo P., L'architettura della scuola regionali di Ani nell' Armenia medievale, Roma, 1977.

Գառնիկ Շախկյան

ՏՐԴԱՏ Ա ՈՒԹՄՍԵՑԻ [ծ.թ. անհտ, գ. Ութմուս (Վանանդ գավառ) – 764], Ամենայն հայոց կաթողիկոս 741-ից: Հաջորդել է *Դավիթ Ա Արամոնեցուն*: Սերում է Վանանդեցի նախարար. տոհմից: Հավանաբար եղել է Վանանդի եպիսկոպոսը: Կաթողիկոս-պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցին Տ. Ա Ո-ու մասին վկայում է իբրև «այր սուրբ եւ պարկեշտ, եւ փայլեալ առաքինութեամբ»: Տ. Ա Ո. 741-ին միջնորդել է Բաղդադի ամիրապետին՝ հետ կանչել 12 տարի շարունակ հարկահավաքությամբ հայերին կեղեքող արաբ ոստիկան Եզիտին:

Կաթողիկոս. գահին Տ. Ա Ո-ուն հաջորդել է *Տրդատ Բ Դասնավորեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՏՐԴԱՏ Բ ԴԱՍՆԱՎՈՐԵՑԻ (ծ.թ. անհտ, Տուրուբերան նահանգի Դասնավորք գավառ – 767), Ամենայն հայոց կաթողիկոս 764-ից: Հաջորդել է *Տրդատ Ա Ութմսեցուն*: Տ. Բ Դ-ու հայրապետական գործունեության ժամանակաշրջանն աչքի է ընկել արաբ ոստիկան Հասանի կազմակերպած խժդժություններով, բռնություններով ու աղետալի վիճակով:

Կաթողիկոս. գահին Տ. Բ Դ-ուն հաջորդել է *Սիոն Ա Բավոնեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՏՐԴԱՏ Գ Մեծ, սուրբ Տրդատ (250-ական թթ. – մոտ 330), Հայոց Արշակունի արքա 287-ից: Քրիստոնեությունը պետական կրոն դարձրած առաջին թագավորը, Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: Հոր՝ Խոսրով Ա Մեծի (211–259) դավադր. սպանությունից հետո (ըստ Ագաթանգեղոսի՝ Անակ Պարթևի կողմից) մանկահասակ Տրդատին նախարար Արտավազդ Մամիկոնյանն փախցրել է Հռոմ: Կրթվել և դաստիարակվել է Հռոմ. արքունիքում՝ Լիկինիոսի (Լիկինիոս, 308–324) մոտ (313-ից՝ Հռոմ. Արևելքի տիրակալ): Վայելել է կայսրեր Ավրելիանոսի, Տակիտոսի, Պրոբոսի և Կարոսի հովանավորությունը: Կատարելա-

պես տիրապետել է լատիներենին, հունարենին, և ունենալով արտակարգ ուժ, աչքի է ընկել կրկեսամարտերում, զինավարժության մեջ ու Հռոմ. կայսրության մղած պատերազմներում: Պարսից տերության դեմ Ավրելիանոսի հաղթական արշավանքին մասնակցած Տրդատը նշանակվել է Հռոմին ենթակա Արմ. Հայաստանի թագավոր (274–276): 287-ին Հռոմ. կայսր Դիոկղետիանոսը Տրդատին ճանաչել է Հայոց թագավոր: Վերջինս Հռոմ. զորքերի աջակցությամբ Հայաստանից դուրս է մղել պարսկ. նվաճողներին և հաստատվել հայրենի գահին: Նախապես հս-ից թիկունքն ամրապնդելով ալանների հետ կնքած դաշնագրով (կնության է առել Ալանաց թագավոր Աշխադարի դուստր Աշխենին)՝ Տ. Գ ավելի քան տասը տարի պատերազմել է Սասանյան Պարսկաստանի դեմ: 298-ին Մծբինում կնքված հռոմեա-պարսկ. քառասնամյա խաղաղության պայմանագրով (Հայաստանին են վերամիավորվել Անգեղտունը, Ծոփքը, Աղձնիքը, Կորդուքը, Ծավդեքը) Սասանյաններն ստիպված հրաժարվել են «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսից և ճանաչել Տ. Գ-ի գահակալումը:

Վերականգնելով հայկ. պետության անկախությունը՝ Տ. Գ վերահաստատել է պարսկ. տիրապետության ժամանակ խախտված «Արտաշիսական» սահմանները (վարչատարածքային բաժանումը բդեշխությունների ու նախարարությունների միջև), անցկացրել նոր «աշխարհագիր», կարգավորել հարկային համակարգը ևն: Գահակալման առաջին տարիներին հոր և Դիոկղետիանոսի օրինակով հալածել է քրիստոնեության հետևորդներին: Սոսկալի չարչարանքների է ենթարկել իրեն հավատարմորեն ծառայած, քրիստոնեության ջատագով Գրիգորին (*Գրիգոր Ա Լուսավորիչ*) և իմանալով, որ նա Անակ Պարթևի որդին է, հրամայել է գցել Խոր վիրապի մեջ (տես *Խոր վիրապի վանք*): Ապա հրապարակելով հրովարտակ՝ կոչ է արել ջերմորեն պաշտել հայրենի աստվածներին, իսկ քրիստոնեության հետևողներին զրկել կյանքից ու գույքից: Մոտ 300-ին Տ. Գ-ի հրամանով Վաղարշապատի մերձակայքում նահատակվել են Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերը: Ըստ Ագաթանգեղոսի՝ ի տրիտուր այդ ամենի, թագավորն ու նախարարները պատժվել են «Տիրոջ պատուհասով»: Արքան դիվահարվել է, դարձել խոզակերպ: *Խոսրովիդուխտին* (թագավորաքրոջը) երևացած տեսիլքի համաձայն՝ ընկնավորներին կարող էր բուժել միայն Արտաշատում «կապյալ Գրիգորը»: Նրան Վաղարշապատ է բերել Խոսրովիդուխտի խնամակալ Օտա Ամատունին (301): Գրիգորը նախ աղոթքով վերադարձրել է դիվաբախների զգաստամտությունը, ապա, 65 օր ժողովրդին քրիստոնեություն քարոզելուց հետո, անսալով Տ. Գ-ի ու ցավագարների աղաչանքին՝ կատարելաբար բուժել է նրանց: Ապաշխարած ու դարձի եկած թագավորի մեծագործություններից էր եռանդուն մասնակցությունը երեք վկայարանների (տես *Էջմիածնի Ս. Գայանե վանք, Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանք, Շողակաթ վանք*) և *Էջմիածնի Մայր տաճարի* կառուցմանը: Տ. Գ, հաշվի չնստելով «դաշնակից» Հռոմ. կայսրության տիրակալի հետ (որն անկախ պետության գրավականն էր), ընտրել է գաղափարաքաղ. ու կրոն. նոր ուղի և 301-ին պետ. կրոն հռչակել Հռոմ. պետության մեջ հալածվող քրիստոնեությունը: Տ. Գ-ի բուն նպատակը Հայաստանի քաղ. և հոգևոր միասնության, անկախ գոյավիճակի ապահովումն էր, հարևան այլակրոն պետությունների ազդեցությունից նրան զերծ պահելը: Երբեմնի մոլեռանդ հեթանոս թագավորը կործանել է հին հավատի տաճարներն ու բագինները և դրանց տեղում հիմնադրել քրիստ. սրբերի վկայարաններ, եկեղեցիներ: Սկզբ. շրջանում Հռոմ. կայսրությունը թշնամաբար է վերաբերվել քրիստոնեությունը պետ. կրոն ճանաչած Տ. Գ-ին, սակայն հետագայում Հայոց արքային հաջողվել է դաշնակցային հարաբերություններ ստեղծել Կոստանդիանոս Մեծ կայսրի (306–337) հետ:

Տ. Գ գիտակցել և կարևորել է թագավորության ամրապնդման գործում ամրակուռ նվիրապետության ստեղծումը: Առաջնահերթ խնդիր համարելով և պետ. հիմքերի վրա դնելով Հայոց եկեղեցապետի ընտրությունը՝ հրավիրել է հայ ավագանու ժողով և Գրիգոր Լուսավորչին կարգել Հայոց եպիսկոպոսապետ, ինչը վկայում է, որ եկեղեցին և հովվապետը պետք է ենթարկվեին թագավորական իշխանությանը:

302-ին Տ. Գ Գրիգոր Ա Լուսավորչին ուղարկել է Կապադովկիայի Կեսարիա քաղաք, որտեղ կատարվել է նրա զուտ ծիսական բնույթ ունեցող ձեռնադրությունը: 303-ի հունվ. 6-ի այգալույսին՝ Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության օրը, Բագավանում (Արածանիի ակունքների մոտ) Գրիգոր Ա Լուսավորիչը

մկրտել է Տ. Գ-ին և արքունիքը: Ըստ ավանդության՝ մկրտությունից հետո թագավորը վերանվանվել է Հովհաննես (ի սեր Հովհաննես Մկրտչի), որի նշխարների մասերից մեկն էլ Գրիգոր Ա Լուսավորիչը բերել էր Բագավան: Արքայի մկրտության վայրում կա մի քար, որ կոչվում է «Տրդատի արձան»: Ըստ Ագաթանգեղոսի՝ նույն վայրում, յոթ օրերի ընթացքում մկրտվել են արքունական զորքը (թվով՝ «տասնհինգ բյուր») և ժողովուրդը («չորս հարյուր բյուր»): Հայ եկեղեցու սպասավորության մեջ Տ. Գ-ի կամքով ընդգրկվել են նաև նախկին քրմեր և քրմորդիներ: Նա հոգ է տարել եկեղեցու համար սպասավորներ պատրաստելու մասին, հիմնադրել է դպրոցներ, որտեղ ուսուցանել են հուն. և ասոր. լեզուներով: Նվիրապետության տնտ. հիմքերի ամրապնդման նպատակով՝ Տ. Գ-ի հրամանով գյուղերի եկեղեցիներին հատկացվել են չորսական ծխաբաժին հողատիրույթներ, ավանների՝ յոթական: Թագավորի կամքով հոգևորականությունը դասվել է ազատների կարգը և օժտվել ապահարկությամբ: Տ. Գ-ի սատարմամբ և Գրիգոր Ա Լուսավորչի ջանքերով Հայ եկեղեցին յուրացրել է հեթանոս. հավատքի առավել ժողովրդական տարրերը (տես *Վարդավառ, Տյառնընդառաջ* ևն), որոնք ազգային երանգներ հաղորդելով քրիստոնեությանը, էականորեն նպաստել են նրա ժողովրդականացմանը:

Տ. Գ հետևողական պայքար է կազմակերպել հեթանոսության դեմ, որը հատկապես աշխուժացել էր Գրիգոր Ա Լուսավորչի վախճանվելուց հետո՝ *Արիստակես Ա Պարթև* կաթողիկոսի օրոք: Պայքարն ուղղված էր հեթանոսությունը սատարող պարսից Շապուհ II արքայի (309–379) դեմ: Վերջինս, չնայած Մծբինի պայմանագրին, չէր հրաժարվել նվաճող. նկրտումներից և ձգտում էր դրանք իրականացնել կրոն. գործոնի միջոցով (Հայաստանի հեթանոսամետ նախարարները վերածվել էին պարսկասեր ուժերի): Շապուհին հաջողվել է Տ. Գ-ի դեմ հանել նրա քաղաքականությունից դժգոհ նախարարներին և Հս. Կովկասի ցեղերին: Սակայն Հայոց թագավորը նախ հաշվեհարդար է տեսել ապստամբ նախարարների հետ (ըստ Մովսես Խորենացու՝ բնաջնջել է Սլկունիների տոհմը), ապա Աղվանքի Գարգարացվոց դաշտում հաղթական ճակատամարտ տվել հս. ցեղերին և պահպանել Հայաստանի միասնությունն ու արմատավորված քրիստոնեությունը: Հռոմ. կայսրությունից ստանալով օգնական ուժեր՝ Տ. Գ սահմանային շրջաններում հաղթական մարտեր է մղել նաև պարսկ. զորքերի դեմ: Նրան հաջողվել է վերականգնել Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջությունը (սահմանները՝ ըստ 64-ի Հռանդեայի պայմանագրի), քաղ. ամուր դաշինք կնքել Հռոմ. կայսրության հետ, ճնշել նախարարների անջատական ձգտումները և ստեղծել կենտրոնացված հզոր պետություն:

330-ին հրաժարվելով գահից՝ Տ. Գ հեռացել է Դարանաղի գավառի Սեպուհ լեռան Մանյա այրք կոչված վայրը, որտեղ 325-ից ճգնել էր Գրիգոր Ա Լուսավորիչը: Նախարարների բարեպաշտորեն ապրելու խոստումներից հետո շուտով վերադարձել է գահին և հաղթել հս. ցեղերին: Սակայն որոշ նախարարներ, դրժելով իրենց խոստումները, կրկին վարել են հեթանոս. կենցաղ, և Տ. Գ նորից գնացել է Մանյա այրք: Ըստ Մովսես Խորենացու՝ Տ. Գ-ին թունավորել են հայ նախարարները՝ հանգցնելով «աստվածապաշտության բազմափայլ ճառագայթը»: Նրա դին արծաթապատ դագաղով տեղափոխվել և ամփոփվել է Դարանաղի գավառի Թորդան ավանում, ս. Գրիգոր Ա Լուսավորչի կողքին:

Հայ եկեղեցին ս. Տ. Գ-ի հիշատակը տոնում է Հոգեգալստյան 5-րդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ ս. *Աշխենի* և ս. Խոսրովիդուխտի հետ: Այդ տոնին երգվում է Թագավորաց հատուկ շարականը:

Տ. Գ ըստ արժանվույն է գնահատվել թե՛ միջնադարյան պատմիչների, թե՛ նոր ուսումնասիրողների կողմից: Մովսես Խորենացին Տ. Գ-ին բնորոշել է որպես Հայոց վերջին հզոր թագավոր, իսկ քրիստոնեությունը տարածելու և ամրապնդելու գործում առաջատար դերը վերապահել է նրան: Տ. Գ իր արդյունաշատ գործունեությամբ պարարտ հող է նախապատրաստել գրերի գյուտի և հայ մատենագրության ստեղծման համար:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.7, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997: Զամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, մաս 1, Նոր Նախիջևան, 1908: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Աստուրյան Հ., Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռոմայ, Վնտ., 1912: Մանանդյան Հ., Երկ., հ. 2, Ե., 1978:

Հակոբ Հարությունյան
Սահակ Սահակյան

Ց

ՑԱՂԱՑ ՔԱՐ ՎԱՆՔ, Ցախացքարի վանք, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղից մոտ 6 *կմ* հյուսիս-արևելք, բարձրադիր սարավանդի վրա: Ըստ XI դ. պատմիչ Ստեփանոս Տարոնեցու, վանքը հիմնադրվել է Հայոց Աբաս Բագրատունի թագավորի օրոք (929–953): Ստեփանոս արք. Օրբելյանը Ց. ք. վ. անվանել է «բարձրահռչակ և սուրբ առաքինարան»: Վանքի համալիրը կազմված է չինությունների երկու խմբից: Պարսպափակ բակով, կոպտատաշ բազալտից կառուցված արմ. խմբի (այժմ՝ կիսավեր) հվ. կողմում միանավ, թաղածածկ Ս. Հովհաննես եկեղեցին է (989) և մատուռը, հս. կողմում՝ քառախորան, չորս անկյուններում ավանդատներով կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին (X դ.), որին հվ-ից կից է այսնասրահը, իսկ արմ-ից՝ երկայնական պատերում խոշոր կամարակապ խորշերով գավիթը:

Ց. ք. վ-ի համալիրի արլ. խմբում կանգուն են 1041-ին Վարդիկ վանահոր՝ սրբատաշ բազալտից կառուցած երկու եկեղեցի: Արմ. կողմում ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով գմբեթավոր Ս. Կարապետ եկեղեցին է, որի հս. ճակատի վերին մասում առյուծի և ցուլի մենամարտը ներկայացնող խոշոր հարթաքանդակն է, իսկ ճոխ մշակում ունեցող չքամուտքով հվ. պատի վերևում՝ ճիրաններում խոյ բռնած թևատարած արծվի քանդակը (այժմ՝ ցած ընկած): Դեպի հս-արլ. Ս. Հովհաննես փոքր, թաղածածկ եկեղեցին է, որի գավթի վրա բարձրացող մատուռը, նրա երկու կողքերին դրված գեղաքանդակ խաչքարերը և երկկամար խորշը կազմում են կառույցի երկրորդ հարկը:

Ց. ք. վ. 1051-ին՝ Վարդից և 1211-ին Գրիգոր իշխանից որպես նվիրատվություն այգիներ է ստացել: 1222-ին նորոգվել է Ս. Աստվածածին եկեղեցին: 1251-ին իշխան Տարսայիճ Օրբելյանը Ց. ք. վ-ին նվիրել է Գեղարքունիքի Գառնակեր գ., 1317-ին իշխան Էաչի Պռոշյանը՝ Սրկղոնքի իր ձեռատունկ այգին:

Ց. ք. վ-ում XV դ. գործել է գրչատուն, որտեղ ընդօրինակվել են. 1437-ին՝ Շարակնոց, 1463-ին և 1492-ին՝ Ավետարաններ, 1483-ին՝ Տոնացույց:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.7, 3–5-րդ պատկերները:

Գրկ. Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Վայոց ձոր. նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք 26, Թ., 1916: Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, պր. 3, Ե., 1967: *Материалы по археологии Кавказа, в. 13, М., 1916.*

Մուրադ Հասրաթյան

ՑԻՊՆԱՎԱՆՔ, Դաստակ, Ս. Ստեփանոս Նախավկա վանք, Արծկեի վանք, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառում, Վանա լճի հյուսիսային մասում, Ցիպան կամ Արծկե կղզու հարավում: Հիշատակում է Թովմա Մեծոփեցին (1378–1446): Ըստ նրա, Դաստակ է կոչվել այդտեղ

ՑՂՆԱՅԻ ս. *Ստեփանոս Նախավկայի* դաստակը պահելու համար: Ց. ունեցել է բարձրակարգ դպրոց [հիմն. XIV դ. 60-ական թթ., Վարդան Ճգնավորի (Տիրատուր բաբունապետի սան) ջանքերով], եղել միջնադարյան Հայաստանի կրթ. և գրչության կենտրոններից: Հետագա գործունեության մասին տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է, որ այդ դպրոցի սան *Գրիգոր Խլաթեցու* բաբունապետությամբ, 1406-ին Ց-ում է տեղավորվել Խառաբաստավանքի վարդապետարանը, որը շուտով փակվել է: Հետագայում Ց-ում Գրիգոր Խլաթեցին հիմնել է դպրոց, որտեղ գիտամանկավարժ. բեղուն գործունեություն է ծավալել, խմբագրել է Հայսմավուրք, Տոնական, Գանձարան ժողովածուները, ինչպես նաև ընդօրինակել բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մի քանիսը (№№ 3440, 3414, 5328, 8366 ևն) պահվում են Մատենադարանում: Ց-ում Գրիգոր Խլաթեցու աշակերտներից Հովհաննեսը, Կարապետը, Թովման, Առաքել Բաղիշեցին և այլք գրել են իրենց ուսուցչի վարքը:

Գրկ. Ոսկյան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, հ. 2, Վնն., 1942:

ՑՂՆԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, պատմական Գողթն գավառի Ցղնա գյուղում (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջանում): Հիշատակվում է XIV դարից (1349-ին վանքում Ավետարան է ընդօրինակվել): Վանքի եկեղեցին կառուցվել է 1683-ին, XII–XIII դդ. եկեղեցու տեղում, քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով, վաճառականներ Անդրեասի, Սիմոնի, Հակոբի, Բաղդասարի և Գուրգենի միջոցներով: Մահանալուց հետո նրանց, բացառությամբ կարգով, թաղել են եկեղեցու բակում: Հվ. և արմ. դռներն ունեն ճոխ հարդարված շքամուտքեր, որոնցից արմ-ի բարավորին քանդակված է գույդ հրեշտակների կողմից թագադրվող Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, իսկ հվ-ին՝ Պողոս և Պետրոս առաքյալները: Մուտքերի ուղղանկյուն բացվածքները պարագծով եզերող լայն գոտիները ծածկված են արևմտաեվրոպ. բարոկկոյի ոճի զարդաքանդակներով, ինչն արդյունք է Գողթն գավառի հայ վաճառականների՝ եվրոպ. երկրների և, առաջին հերթին, Իտալիայի հետ XVII դ. ունեցած առևտրական սերտ կապերի: Արմ. պատին հայկ. քանդակագործ. արվեստում իր պատկերագրությամբ եզակի՝ Քրիստոսի մկրտության տեսարանն է. աջ կողմում կանգնած է Հովհաննես Մկրտիչը, իսկ ձախում Հորդանան գետի խորհրդանշանն է: Եկեղեցու հվ. մուտքի առջև եռաստիճան դամբարանն է, որի առաջին հարկի մույթերին, խորշերի մեջ, խաչելության և կանգնած, ձեռքերը կրծքին խաչած Աստվածածնի խոշոր, ցցուն, համարյա ազատ ծավալով իրականացված քանդակներն են, որոնք կատարման ձևով ու ոճավորումով բացառիկ են ուշ միջնադարի հայկ. արվեստում: Եկեղեցու ներսում եղել են



Ցղնայի Ս. Աստվածածին վանքի եկեղեցին (1683) Հվ-արլ-ից

ս. Գրիգոր Ա Լուսավորչին և ս. Սեղբեստրոսին պատկերող որմնանկարներ (չեն պահպանվել): Վանքի պարսպապատ տարածքում դերեզմանոցն է՝ XVI դ. տապանաքարերով:

Գրկ. Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Լալայան Ե., Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան կամ Գողթն, Ա.Հ, գիրք 11, 12, Թ., 1904–05: Այվազյան Ա., Ցղնայի ճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», 1978, № 3:

Մուրադ Հասրաթյան

ՈՒ

«ՈՒԹ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱՎԵՏԱՐԱՆ», Կիլիկյան պատկերազարդ ձեռագիր մատյան ընտիր թավշյա մագաղաթից: Պատկերազարդել են XIII դ. վերջին քառորդի անհայտ նկարիչներ և 1320-ին՝ *Սարգիս Պիծակը*: Կիլիկյան մանրանկարչության ծաղկման շրջանի գոհարներից է: Գրիչը նշանավոր Ավետիսն է, որը հայտնի է *Թորոս Ռոսլինի* ծաղկած *«Մաշտոց»*-ի, *«Կեռան Թագուհու Ավետարան»*-ի և այլ եզակի ձեռագրերի ընդօրինակություններով: «Ու. մ. Ա.» Ավետիսի անունով մեզ հասած վերջին աշխատանքն է: Պահվում է Մատենադարանում (ձեռ. № 7651): Ձեռագիրը ստացող Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսը 1320-ին հիշատակարանում գրել է, որ Կիլիկյան Հայաստանի Օշին արքայի հրամանով պալատի մատենադարանում («յարկեղս տանն») բազմապիսի ձեռագրերից ընտրել է «Ու. մ. Ա.» և տվել Սարգիս Պիծակին՝ պատկերազարդումն ավարտելու, որովհետև տերունական նկարների մի մասը նկարված էր, մի մասն ուրվագծված («նշանագծեալ»), շատերի համար էլ տեղ էր թողնված: Հիշատակարանից երևում է, որ Ստեփանոս եպիսկոպոսի պատվերով Սարգիս Պիծակն ուրվագծվածները ծածկել է գույներով, պատկերներով լրացրել բաց մնացած տեղերը:

«Ու. մ. Ա.»-ի *խորանների* պատկերները մեզ չեն հասել, դրանք ներկայացված են իբրև համաբարբառի աղյուսակներ: Փոխարենը ձեռագրի գրեթե բոլոր էջերն ունեն մանրանկար: Որոշ էջերի վրա ներտեքստային երկու և լուսանցքում պատկերված մեկ՝ այուժեով միմյանց կապված մանրանկարներ են: Ձեռագրում կա ավելի քան 250 մանրանկար: Դա եզակի երևույթ է քրիստ. գրքարվեստում՝ տեքստի և մանրանկարների ու լուսանցքների հարաբերությունների բազմազանության առումով: Ձեռագրի մանրանկարների համար հիմք են ծառայել և՛ XI–XII դդ. բյուզ. ամենահարուստ պատկերազարդ ձեռագրերից մեկը (Ֆլորենցիայի Լաուրենցիանա գրադարան, VI, 23), և՛ *«Հեթում Բ թագավորի Ճաշոց»*-ի մի քանի մանրանկար: Հիշյալ բյուզ. ձեռագրից ուղղակի ընդօրինակված է 17 մանրանկար, իսկ նրա պատկերազարդման ձևերը դրսևորված են ավելի մեծ թվով մանրանկարներում: Դա արտահայտված է մագաղաթե ֆոնի վրա ֆրիզաձև մանրանկարներով, որոնք պարունակում են միմյանց հաջորդող, երբեմն նույն կերպարների՝ երկու-երեք անգամ պատկերող տեսարանները. այուժետային գործողության հաջորդական փուլերը միմյանցից անջատված են սխեմատիկ շենքերով կամ բլրակի զանգվածով, կամ ազատ տարածքներով: «Հեթում Բ թագավորի Ճաշոց»-ին հետևող մանրանկարներն ավելի բազմազան ձևեր են ընդունում, քան մագաղաթի ֆոնի վրա ֆրիզաձև մանրանկարները տեքստի ներսում, վերևում կամ ներքևում: Դրանց համար ֆոն են ծառայում ոսկին կամ շենքերը, որոնց շնորհիվ պատկերված անձինք ռելիեֆային տեսք են ստանում, հաճախ միանում են լուսանցազարդերին կամ ուղեկցվում մարգարեի նկարով: Երրորդ խումբը ոսկու ֆոնի վրա շրջանակված ֆրիզաձև նկարներ են: Մի շարք մանրանկար-

ների դունավորումից երևում է Սարգիս Պիծակի միջամտությունը: Ավետարանիչներին, առակներն ու այլաբանական պատկերները մեծ մասամբ նկարել է Սարգիս Պիծակը: Ֆրիզաձև մանրանկարների ազատ շարժվող, գրեթե ջրաներկային թափանցիկությամբ նկարված ֆիգուրների վրա զգացվում է Հովհաննես Արքաեղբոր դպրոցի Աստվածաշնչային ժողովածուի (Մատենադարան, ձեռ. № 4243) ազդեցությունը:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.8, 1–2-րդ պատկերները:

Գրկ. Ղազարյան Վ., Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ – XIV դարի սկիզբ), Ե., 1984: *Дрампян Р., Из истории армянской миниатюры XIII–XIV вв.*, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1948, № 5:

Վիգեն Ղազարյան

ՈՒԹՁԱՅՆ, քրիստոնեական պաշտոնագրության հիմքում ընկած, եկեղեցու կողմից կանոնակարգված ձայնեղանակների համակարգ: Բնորոշվում է, այսպես կոչված, չորս «բուն» (հիմնական) և չորս «կողմ» (օժանդակ) ձայնեղանակների միակցությամբ, որի հիմքում ընկած է սրբազան ութ թվի խորհրդաբանությունը: Սկիզբ է առել քրիստոնեության առաջին դարերի երուսաղեմյան ավանդույթից, ըստ որի՝ ս. *Զատկի* 8 օրերից յուրաքանչյուրին վերաբերող երգասացությունները կատարվել են օրվա հատուկ եղանակով: Եղանակների 8-օրյա շարքը շուտով տարածվել է ս. Զատկի առաջին օրից հաշվարկած 8 կիրակիների վրա: Ավելի ուշ օրհներգությունների շարքը կրկնվել է ողջ տարվա ընթացքում մինչև Նոր Զատիկը՝ կազմելով տարվա տոնական շրջանը: Այսպիսով, սկզբնապես մեկ ընդհանուր տեսական հիմք ունեցող համակարգից առանձնացվել են արլ. (Սևերիոս Անտիոքացի, Հովհաննես Դամասկացի) և արմ. (Ամբրոսիոս Մեդիոլանցի, Գրիգոր I պապ) քրիստոնյա երաժշտ. մշակույթներին հատուկ Ու-երը, այնուհետև՝ արևելաքրիստ. երաժշտարվեստի սահմաններում ձևավորվել և տարանջատվել են մի շարք ազգ. Ու-եր, որոնցից յուրաքանչյուրը սերել է տվյալ ժողովրդի դարավոր ֆոլկլորային ավանդույթներից և հիմնվել աշխարհիկ մասնագիտացված երաժշտության մեջ բյուրեղացած հնագույն բնորոշ ձայնեղանակների վրա: Այդ է պատճառը, որ հայկ. Ու. եղանակներից յուրաքանչյուրը (բացառությամբ՝ երկրորդի) ունի մեկ կամ մի քանի հարող կամ ածանցյալ, այսպես կոչված՝ «դարձվածք» եղանակ: Դրանից բացի, հայկ. Ու. առանց «դարձվածքների» էլ մշտապես հիշատակվում է երկու «ստեղի» ձայնեղանակներով համալրված, ինչն արդեն իսկ դուրս է գալիս ութի սահմաններից: Դրանում է հայկ. Ու-ի ելևէջային հարստության յուրահատկությունը: Ուստի Ու. միջնադարյան կանոնական արվեստի պահանջների պայմաններում հանդես է գալիս որպես հոգևոր միաձայն երգարվեստը կանոնավորող կաղապար, որը կարևոր դեր է կատարել եկեղեց. երգարվեստի հիմն. ելևէջային մեղեդիական նկարագրի հարատևման և պահպանման գործում:

Հայկ. Ու. համակարգը սկսել է ձևավորվել IV–V դդ.: Նրա առաջին կարգավորումը, ըստ *Հայսմավուրքի*, պատկանում է *Սահակ Ա Պարթևին*, որը և սահմանել է ութ ձայն և երկու «ստեղի» հավելյալ եղանակ: VII–VIII դդ. Ու-ի գործնական և տեսական բարեկարգումով հավանաբար զբաղվել է *Բարսեղ Ճոնը*՝ ստեղծելով հոգևոր ինքնուրույն երգերի Ճոնընտիր ժողովածուն, որտեղ երգասացություններն արդեն պետք է դասակարգված լինեին ըստ որոշակի սկզբունքի, և *Ստեփանոս Սյունեցին*, որին վերագրվում է Հարության Ավագ օրհնությունների՝ ըստ ութ ձայնեղանակների դասավորված հանդիսավոր մեծ երգաշարքերի հորինումը: Ու-ի օրինաչափություններին է ենթարկված հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագիրքը՝ իր ութ կանոններով, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է մի ձայնեղանակ, և *Շարակնոցը*, որի մեջ ձայնեղանակների կրճատ նշումներն արվել են օրհներգերից անմիջապես առաջ: Պաշտոնագրության մեջ ընդգրկված երգասացությունների գործնական ուսուցման և յուրացման համար կարևոր նշանակություն է տրվել նաև բանավոր ավանդվող այսպես կոչված սկսվածքներին, որոնք կազմում էին Ու-ի փոքրաչափ հատվածը: X–XIV դդ. Ու-ի կայունացած ձայնեղանակների համակարգը հետզհետե ընդլայնվել և ճյուղավորվել է, ընդգրկելով Ու-ի կանոնական սահմաններից դուրս եկող և հաճախ ինքնուրույն «ստեղիատիպ», «զարտուղի» և «դարձվածքանման» ձայնեղանակներ (այսպես կոչված՝ «մանրուսման եղանակներ»), որոնց առկայությունը մեծապես պայմանավորված էր տաղային արվեստի ծաղկումով:

Հայ մատենագրության մեջ պահպանվել են ձայնեղանակների յուրահատուկ մեկնությունները

ներ, այսպես կոչված «մեկնութիւնք ձայնից», Ու-ի գյուտին և մեկնաբանությանը նվիրված գրվածքներ, որոնց հեղինակների թվում են *Մովսես Քերթողը*, Ստեփանոս Սյունեցին, *Անանիա Նարեկացին, Գրիգոր Տաթևացին* և ուրիշներ: Այդ գրվածքներն արտացոլում են հայ միջնադարյան մտածողների Ու. համակարգի տեսագեղագիտ. իմաստավորումը, ի մի բերելով ինչպես հնագույն հեթանոս. պատկերացումների մնացուկները, այնպես էլ՝ աստվածաշնչային հայեցակարգի շրջանակներում ձևավորված մտահղացքը:

Հայկ. Ու. իր ուրույն տեղն ունի քրիստ. եկեղեցիների նմանատիպ համակարգերի շարքում: Արևելաքրիստ. երաժշտ. մշակույթների համատեքստում հայկ. Ու. աչքի է ընկնում իր մեղեդիական մեծ հնարավորություններով և ազգ. վառ ինքնատիպ գծերով, որոնք արտացոլում են հայ *հոգևոր երաժշտության* ելևէջային կազմին հատուկ հիմն. ոճական առանձնահատկությունները:

Գրկ. Թաշճյան Ն., Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղ-պատ, 1874: Բրուտյան Ա., Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրութեան, Վաղ-պատ, 1890: Տնտեսյան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, ԿՊ, 1933: Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Թահմիզյան Ն., Ութձայնի սկզբունքները, «Էջմիածին», 1972, № 2–5: Նույնի, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: *Кушнарёв Х., Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958; Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977; Аревшатян А., Армянские средневековые "Толкования на гласы", "Гимнология", вып. I, кн. 2, М., 2000, ст. 510–516;* Outtier B., Recherches sur la génèse de l'Octoèchos Arménien, "Essays on Armenian Music", L., 1978.

Աննա Արևշատյան

ՈՒԽՏ, երդում, խոստում, դաշինք՝ կնքված Աստծո և մարդու միջև: Աստվածաշունչը հիշատակում է հավիտենական Ու-եր, որ Աստված է կնքել Նոյի («Տեր Աստված ասաց Նոյին. «Իմ ու ձեր միջև, ձեզ հետ եղող ամեն կենդանի էակի միջև գալիք բոլոր սերունդների համար իմ հաստատած ուխտի նշանն այս է. իմ ծիածանը կկապեմ ամպերի մեջ: Եվ դա թող լինի իմ ու ողջ երկրի միջև հավիտենական ուխտի նշանը... Այլևս ջրհեղեղ չի լինի, որպեսզի բոլոր էակները չոչնչանան», Ծննդ. **9.**12–17), Աբրահամի (Ծննդ. **15**, **17**), Մովսեսի կամ Իսրայելի (Ելք **24**, **34.**10–27) և մյուս նահապետների հետ:

Թվեր գրքում Մովսեսի ձեռքով հաստատվել են ուխտյալների կանոնները. ուխտյալը պիտի հրաժարվի ոգելից խմիչքից և Ու-ի ամբողջ ժամանակընթացքում գլուխը չածիլի, քավության զոհ ու նվերներ մատուցի Տիրոջը ևն (Թվեր **6**):

Հիշյալ կանոնները հայ քրիստ. իրականության մեջ պահպանվել են և՛ նույնությամբ, և՛ բովանդակային որոշ փոփոխակներով. Ու. առողջ խոստանում է ընծայվել՝ ծառայել որևէ սրբության (սուրբին, վանքին ևն), պատերազմել հանուն հավատքի, քահանայագործել, բարեգործել (կառուցել եկեղեցի, դպրոց, դրամ բաժանել չունևորներին ևն), զոհաբերություն կատարել, իր կամ իր զավակի վարսերը առժամանակ չկտրել, կատարել ուխտագնացություն, ծոմ պահել ևն: Այսօրինակ Ու-երը, ի տարբերություն վերոհիշյալ հավիտենական Ու-ի, մարդն է հաստատում իր և Աստծո միջև. դրանք ժամանակավոր Ու-եր են, որոնց վերջնական նպատակն է՝ մաքրագործվելու միջոցով արժանի լինել փրկության, աստվածային որևէ շնորհի կամ բարեգործության: Ու-ի ձևեր են նաև *ճգնավորությունը* և *կուսակրոնությունը*:

Հայ եկեղեցին, ինչպես և ողջ Ընդհանրական եկեղեցին, հիմնվելով Ս. Գրքի վրա, որպես հավիտենական և մեծագույն Ու. է ընդունում Աստծո Ու.՝ Հիսուս Քրիստոսի միջոցով կնքված իր՝ Հայր Աստծո և մարդկանց միջև. դա Հայր Աստծո ծրագիրն է՝ այն հաշտարար ու փրկարար Ու., որ ի կատար ածեց Աստծո Որդին՝ մարդանալով և իր քավիչ աբյունը հեղելով Գողգոթայի խաչի վրա: Մյուս Ու-երն այս Ու-ի նախօրինակներն են: Մեծագույն ուխտյալն ինքն Աստվածն է, և Հիսուսն է նրա հաշտության հավիտենական ծիածանը: Նոր կտակարանում, Հիսուսի ծնունդն ավետելիս, երկնային զորքերը ազդարարում են հովիվներին հենց այդ Ու-ի կատարումը. «...Փա՜ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՛ւն և հաճությո՛ւն՝ մարդկանց մեջ...» (Ղուկ. **2.**14):

Ինքը՝ Հիսուսը, վերջին՝ զատկական ընթրիքի ժամանակ, օրհնելով հացն ու գինին, հայտնում է իր տնօրինական Ու-ի կատարումը՝ ասելով. «Խմեցեք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. **26.**28, տես նաև Ղուկ. **22.**19–20):

ՈՒԽՏԱԳՆԱՑ. Ուխտագնացություն: Ու-ի կատարման մի ձև, որը I դարից՝ առաջին քրիստոնյաներից եկած և ցայսօր ապրող ավանդույթ է՝ այցելել Երուսաղեմ՝ իրենց աչքերով տեսնելու Քրիստոսի կյանքի հետ կապ ունեցող սրբավայրերը՝ Բեթղեհեմը, Գողգոթան, Հիսուսի գերեզմանը, մյուս սրբությունները: Այսօրինակ այցելուն կոչվել է ուխտյալ կամ մահտես: Ուխտագնացություն կատարվում է նաև այլ սուրբ տեղիներ. դա կարող է լինել որևէ վանք, մատուռ, մարտիրոսի գերեզման ևն:

Ուխտագնացության հետ սերտորեն առընչվում են ուխտագնացության երգերը, որոնք հայ ժող. երաժշտության մեջ մի առանձին բաժին են կազմում: Դրանցում արծարծվում են հիշյալ ծեսի հետ կապված տարբեր պահեր՝ Ու-ի նպատակը, ուխտատեղիի գովքն ու նկարագիրը ևն: Հատկապես նշանավոր են «մուրազատու» «Մշո սուլթան» Ս. Կարապետ վանքին նվիրված երգերը, որոնք կոչվում են նաև «Ս. Կարապետի երգեր»: Ու-ի երգերը հայ իրականության մեջ քանիցս հրատարակվել են (Սեդրակյան Ա., «Քնար մշեցւոց և վանեցւոց», 1874, էջ 6–9): Եղանակները հայտնաբերել է *Կոմիտասը*:

Կան նաև հատուկ ուխտագնացության պարեր, ինչպես «Մշո շորորը», որը նույնպես գրառել ու մշակել է Կոմիտասը:

Ու. է կոչվում նաև կուսակրոնների եկեղեց. այն միաբանությունը, որի անդամները խոստացել կամ ուխտել են ապրել և ծառայել ժողովրդին ու Աստծուն (օր., Մխիթարյան Ու., Երուսաղեմի առաքելական աթոռի Ու.):

Ու. նշանակում է նաև վանք՝ Արքայակաղնի Ու. (*Արքայակաղնի վանք*), Մաքենյաց Ու. (*Մաքենյաց վանք*) ևն:

Ու-ի գրքեր են անվանվում Աստվածաշնչի մասերը. Հին կտակարանը՝ Հին Ու., և Նոր կտակարանը՝ Նոր Ու.:

Ու-ի կատարման համար Ս. Գիրքը հեռուստյալ պատվերն է տալիս հավատացյալ ժողովրդին, նրա՛նց, ովքեր կամենում են Ու. կապել Աստծո հետ. «Եթե չես ցանկանում ուխտել, ապա դա մեղք չի համարվի քեզ: Ինչ որ դուրս է գալիս քո շրթունքներից, զգո՛ւյշ եղիր, որ անես այնպես, ինչպես որ ուխտել ես քո Տեր Աստծուն...» (Բ Օրինաց 23.22–23):

Լևոն Սարգսյան

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ, տես *Ուխտ* հոդվածում:

ՈՒԽՏԱՆԵՍ, Ուխտանես episkopոս, Ուխտանես Սեբաստացի, Ուխտանես Ուռհայեցի (մոտ 935–1000), պատմագիր, Սեբաստիայի հայոց թեմակալ առաջնորդ (մոտ 970–985): Ուսանել է Նարեկավանքում՝ աշակերտելով *Անանիա Նարեկացուն*, հմտացել աստվածաբանության մեջ: Հավանաբար (985-ից հետո) վարել է նաև Ուռհայի (Եդեսիա) հայոց վիճակավորի պաշտոնը: *Վարդան Արևելցու* վկայությամբ՝ Ու. առաջինն է սահմանել Սեբաստիայի Քառասուն մանկանց տոնը: Ու-ի «Պատմութիւն Հայոց» երկից երևում է, որ շրջագայել է ողջ Հայաստանում, մասնավորապես քաջատեղյակ է Վասպուրականին, Փոքր Հայքին, Շիրակին, Տայքին ու Վրաստանին:

Ու. Պատմությունը գրել է Անանիա Նարեկացու պատվերով և ուղղակի ցուցումներով: Նրանք 980-ի հուլիսի 4-ին «յեզր գետոյն, որ կոչի Ախուրյան» զրուցել են «բերան ի բերան... յաղագս պատմութեանս»: Այսինքն՝ միասին են քննարկել ու ծրագրել աշխատության թե՛ կառուցվածքը, թե՛ ծավալը և թե՛ բովանդակությունը: Ժամանակի հակաքաղկեդոնականության ականավոր ներկայացուցիչ Անանիա Նարեկացին իր դրոշմն է դրել Պատմության վրա: Ու. հակաքաղկեդոն. մաքառման այն գործիչներից էր, որոնց ջանքերն ուղղված էին Բյուզանդիայի ծավալապաշտ. ձգտումների դեմ: Պատմությունը երկասիրելու ժամանակահատվածում (982–984) Բյուզանդիայի մարտավարությունը Հայաստանում հասել էր զգալի հաջողությունների, և Ու-ի գործը նշանակալից է եղել կայսրության նվաճող. քաղաքականության ու բյուզ. եկեղեցու նկրտումների դեմ մղվող դավան. պայքարում:

Երկասիրության ամբողջական խորագիրն է «Պատմութիւն յերիս հատուածս»: Այն բաժանված է երեք մասերի, որոնք հեղինակն անվանում է հատվածներ՝ ա. Պատմութիւն Հայրապետաց և Թագավորաց Հայոց, բ. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, գ. Յաղագս մկրտութեանն ազգին այնմիկ Ծադն կոչեցեալ: Մեզ են հասել 1-ին մասը կամ հատվածն ամբողջությամբ, երկրորդը՝ փոքր-ինչ թերի, երրորդը չի պահպանվել: Առաջին հատվածը Հայոց ամփոփ պատմությունն է՝ Ադամից մինչև *Տրդատ Գ Մեծ*: Բաղկացած է 76 գլուխնե-

րից, որոնցից առաջինը խոսում է աշխատանքի նպատակաուղղվածության ու ստեղծման հանգամանքների մասին և ընծայական է Անանիա Նարեկացուն: Առաջին հատվածի պատմ. արժեքը մեծ չէ. Ու. գրեթե կրկնել է Ագաթանգեղոսի, Զենոբ Գլակի, Եվսեբիոս Կեսարացու և հատկապես Մովսես Խորենացու արդեն հայտնի տեղեկությունները: Օգտվել է նաև *Անանիա Շիրակացուն* վերագրված «Ժամանակագրութիւն»-ից, եկեղեց. հայրերի ճառերից, վկայաբանություններից և այլ երկերից: Հեղինակը տվել է Հայոց թագավորների և կաթողիկոսների, հռոմ. կայսրերի ու քահանայապետների ցանկերը, I–IV դ. Հայաստանի քաղ., կրոն. պատմությունը: Այս հատվածում ամենաարժեքավորը թերևս «Գահնամակ»-ի վերաբերյալ ակնարկությունն է, որը տեսել և օգտագործել է հեղինակը: Կարևոր է նաև IX դ. վերջի և X դ. սկզբի հայ պատմիչ Շապուհ Բագրատունու կորած երկի մասին հիշատակությունը: Որոշ ուսումնասիրողների ենթադրությամբ՝ առաջին հատվածն էլ մեզ չի հասել ամբողջությամբ: Հայ-վրաց. հարաբերություններին նվիրված երկրորդ և առաջին հատվածների միջև բաց է մնում շուրջ 300-ամյա պատմություն: Երկի երկրորդ հատվածում (բաղկացած 70 գլխից) Ու. մանրամասն անդրադառնում է VI դ. վերջին և VII դ. սկզբին Հայ, Վրաց և Աղվանից եկեղեցիների փոխհարաբերությունների ու հատկապես Հայ եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման պատմությանը: Ցույց է տվել երկու եկեղեցիների միջև նախապես եղած կատարյալ միությունն ու համաձայնությունը: Դեռևս 506-ին, Դվինի եկեղեց. ժողովում Վրաց Գաբրիել կաթողիկոսը նզովել է Քաղկեդոնն ու նրա որոշումները: Ու-ի համոզմամբ Հայ եկեղեցու հակաքաղկեդոն. դիրքորոշումը Հայ և վրաց ժողովուրդներին զերծ է պահել օտար ազդեցություններից ու ենթակայության վտանգից և ունեցել դրական նշանակություն: Սակայն *Մովսես Բ Եղիվարդեցի* կաթողիկոսի օրոք սկսվել են եկեղեց. բաժանման խմորումներ, և Վրաց եկեղեցին VII դ. սկզբին վերջնականապես անջատվել է Հայ եկեղեցուց: Դատապարտելով Վրաց կաթողիկոս Կյուրիոնի անջատողականությունը՝ Ու. հանդել է այն եզրակացության, որ պառակտումն իրականացվել է բյուզ. եկեղեցու ու կայսրության դրդմամբ, և որ եկեղեց. երկատմամբ կթուլանար նրանց դիմադրողականությունը: Այս հատվածի շարադրման համար Ու. օգտագործել է «*Գիրք թղթոցը*», VII դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, թուղթ-շրջաբերականներ, դիվանական վավերագրեր, վրաց. փաստաթղթերի թարգմանություններ ևն: Հեղինակը մեջ է բերում ժամանակաշրջանի Հայոց և Վրաց կաթողիկոսների, Սմբատ Մարզպանի և Վրաց կաթողիկոս Կյուրիոնի ողջ թղթակցությունը: Աշխատության երկրորդ հատվածի 26 գլուխները թղթակցություններ են, 44-ը՝ հեղինակի պատմ. մեկնաբանություններ: Առանձին գլխում են ընդգրկված տիեզերական ժողովներն ու նրանց որոշումները: Վերջերս հայտնաբերվել է այս հատվածի վերջաբանության մեծ մասը (11 էջ ձեռագիր), որն առ այսօր անտիպ է:

Պատմության երրորդ հատվածն ունեցել է շեշտված դավան-աստվածաբան. բնույթ: Այն նվիրվել է *ծաթերի* (քաղկեդոնիկ հայերի) կրկնամկրտության եղելությանը. Հայ եկեղեցին նրանց բռնությամբ ենթարկել էր իր իշխանությանը: Այնտեղ շարադրված է եղել ծաթերի պատմությունը, նրանց բնակեցրած տարածքի պատմաաշխարհագր. նկարագիրը: Երրորդ հատվածի բովանդակության մասին հակիրճ ակնարկվում է երկի նախերգանքում: Պատմ. կարևորագույն արժեք ներկայացնող այս հատվածը որպես սկզբնաղբյուր օգտագործել է XIII դ. պատմիչ Մխիթար Այրիվանեցին: Պատմության քննությունից պարզվում է, որ հեղինակն սկզբնապես մտահղացել է միայն երրորդ հատվածը, որտեղ նկարագրվող իրադարձությունների մասնակիցն է եղել: Այնուհետև ծրագրվել են առաջին և երկրորդ հատվածները, որոնք հիմք էին հանդիսանալու երրորդի համար: Երրորդ բաժինը պետք է ծառայեր ժամանակի հայոց պետ. գաղափարախոսությանն ու քաղ. նպատակներին, Բյուզանդիայի դեմ կրոնաքաղ. մաքառման գաղափարին: Ու. մեծապես ազդվել է Մովսես Խորենացու Պատմությունից, որը նրա համար բացարձակ հեղինակություն էր և գլխ. աղբյուրներից մեկը: Ու. նրան է հետևում ինչպես ժամանակագր. համակարգով, այնպես էլ ժող. զրույցների ու ավանդությունների նկատմամբ քննախույզ մոտեցմամբ: Նա եզակի տեղեկություններ է հաղորդում նաև Անանիա Նարեկացու «Պատմութիւն Հայոց» և «Հաւատարմատ» կորած երկասիրությունների մասին: Նրա լեզուն

պարզ է և սահուն, սակայն զերծ չէ երկարաբանություններից:

Ու-ի Պատմության բնագիրը մեզ է հասել 1663-ի ընդօրինակությամբ (Մատենադարան, ձեռ. № 1774), մյուս չորս ձեռագրերը գրչագրված են դրանից և պահվում են Երևանի, Սանկտ Պետերբուրգի, Վենետիկի և Փարիզի ձեռագրատներում: Պատմության միակ հրատարակությունը (1871) առատ է բազմատեսակ սխալներով: Մ. Բրոսսեն այն թարգմանել է ֆրանսերեն (Սանկտ Պետերբուրգ, 1870–71): Զ. Ալեքսիձեի թարգմանությամբ վրացերեն է հրատարակվել (Հայ. բնագրին զուգահեռ) երկի երկրորդ հատվածը (Թբիլիսի, 1975): Նույն հատվածը, Զ. Արզումանյանի թարգմանությամբ, հրատարակվել է անգլերեն (ԱՄՆ, Ֆորտ Լոդերդեյլ, 1985):

Գրկ. Ակինյան Ն., Ուխտանես Եպիսկոպոս պատմագիր, ՀԱ, 1908, էջ 17–20, 70–74, 112–115: Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX–XIII դդ.), Ե., 1981: Քոլանջյան Ս., Ճշգրտումներ Ուխտանես պատմիչի կենսագրության վերաբերյալ, ՊԲՀ, 1980, № 4:

Պետրոս Հովհաննիսյան

ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿ, Վկայության տապանակ, Տապանակ, սրբություն, Աստծո և Աստծո ժողովրդի միջև կնքված ուխտի առարկայական նշանը. նվիրական արկղ-պահպանարան, որի մեջ, ըստ Հին ուխտի (Հին կտակարանի)՝ դրվել են Սինա լեռան վրա Մովսես մարգարեին տրված տասը պատվիրանները (Տանաբանյան)՝ նոր քարե տախտակների վրա (Ելք **34**), մանանայով լեցուն ոսկե սափորը (Ելք **16.**32–36) և Ահարոնի ծաղկած գավազանը (Թվեր **17**):

Ու. տ-ի նկարագիրն առաջին անգամ տրվում է Ելք գրքում. Աստված հրահանգում է Մովսեսին. «Վկայության տապանակ կպատրաստես կարծր փայտից: Երկուսուկես կանգուն թող լինի դրա երկարությունը, մեկուկես կանգուն՝ դրա լայնությունը, մեկուկես կանգուն՝ դրա բարձրությունը: Այն կպատես մաքուր ոսկով՝ ներսից ու դրսից կոսկեզօծես այն: Դրա վրա շուրջանակի կդնես ոսկյա պսակ... Լծակները կանցկացնես տապանակի կողքերին ամրացված օղակների մեջ, որպեսզի դրանցով բարձրացնեն տապանակը... Քավության խնկամանի կափարիչը կպատրաստես մաքուր ոսկուց... Կոփածո երկու ոսկյա քերովբեներ կպատրաստես և դրանք կդնես կափարիչի երկու ծայրերին... Ես քեզ կհայտնվեմ այնտեղ և վկայության տապանակի կափարիչի վրա գտնվող երկու քերովբեների արանքից քեզ հետ կխոսեմ այն ամենի մասին, ինչ պատվիրելու եմ քեզ Իսրայելի որդիների վերաբերյալ» (Ելք **25.**10–22):

Ու. տ. դրվում էր Վկայության խորանում: Այն որպես Աստծո իմանալի ներկայության խորհրդաբանական և սուրբ ամփոփարան-պատգամատույց, զևտացի քահանաները տանում էին Իսրայելի բանակի առջևից՝ Սինայի անապատից մինչև Քանանի երկիր: Ու. տ-ի զորության շնորհիվ է Հորդանան գետը բացվում՝ բաժանվելով երկու մասի (Նավեի որդի Հեսուի գիրքը, **3.**1–17), և կործանվում Երիքովի պարիսպը (Նավեի որդի Հեսուի գիրքը, **6.**4–20):

Ու. տ., իսրայելացիների Քանան մտնելուց հետո, առժամանակ մնում է Գաղգաղայում, ապա տեղափոխվում Սելով: Պատերազմի ժամանակ գերվում է փղշտացիների կողմից, որոնց Ու. տ. հարվածում է աստվածառաք պատիժներով. ուստի փղշտացիներն այն վերադարձնում են (Ա Թագ. **4.–5.–6.–7**): Դավիթ թագավորը յոթանասուն հազար երիտասարդներով գնում է Հուդայի երկիր, Ամինադաբ Բլրացու տունը, որտեղ էր Ու. տ., «որի վրա նստած էր Աստված քերովբեների միջև» (Բ Թագ. **6.**2): Ու. տ. դնելով մի նոր սայլի վրա՝ այն կամենում է տանել Սիոն՝ «Դավթի քաղաքը», բայց ճանապարհին տեսնելով Ամինադաբի որդիներից Օզիային պատահածը (վերջինս մեռնում է՝ հանդգնելով ձեռք տալ Ու. տ-ին, Բ Թագ. **6.**6–10)՝ երկյուղում է և Ու. տ. տանում գեթացի Աբեդդարի տունը, որը օրհնվում է Ու. տ-ի շնորհիվ: Ի վերջո, Դավիթ արքան, Աստծո տապանակի առջև պարելով և փող հնչեցնելով տալով, մեծ ուրախությամբ այն տեղափոխում է Սիոն՝ Երուսաղեմ (Բ Թագ. **6.**12–23, Ա Մնաց. **15.**, **16.**): Այնուհետև, Դավթի որդին՝ Սողոմոն թագավորը, Ու. տ. դնում է իր կառուցած Երուսաղեմի տաճարում՝ Խորանի կամ Սրբության Սրբոց կոչված ներքին բաժնի մեջ (Բ Մնաց. **5**): Տաճարից առժամանակ հանված Ու. տ. Հոսիաս թագավորի օրոք նորից դրվում է իր տեղը (Բ Մնաց. **35.**3): Անհետանում է Երուսաղեմի կործանման ժամանակ, Բաբելոնի արքա Նաբուքոդոնոսորի (Նաբուգոդոնոսոր) օրոք. Բաբելոնյան գերությունից հետո վերաշինված Տաճարն այլևս չի ունենում Ու. տ.: Կա ենթադրություն, որ այն թաքցվել է մի անհայտ տեղ՝ բաբելաչտ հրեաների կողմից: Ու. տ-ում կար նաև Օրինաց գրքից մի օրինակ՝ դրված հետագայում, Մովսեսի հրամանով (Բ Օրինաց **31.**24–26):

Եկեղեցին Ու. տ. մեկնաբանում է իբրև Աստծո ներկայության խորհրդապատկեր՝ զուգահեռվելով Աստծո Որդու և նրա միջոցով Աստծուց բխած Սուրբ Հոգու հետ. սրբու-

թյուն, որ մահացու է անարժանաբար իրեն դիպչողի և օրհնաբեր՝ մաքուր սիրտ ու ձեռքեր ունեցողի համար:

Հայ եկեղեցին Ու. տ-ի տոնը նշում է *Վարդավառի* նախընթաց նավակատիքի օրը, իբրև «Յիշատակ Տապանակին հնոյ և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ»՝ իբրև Հին ուխտի հաստատությունը, որը նախընթացը և օրինակը եղավ Նոր ուխտի, այն է՝ Քրիստոսի եկեղեցու:

Գրկ. Բառարան սուրբ գրոց, ԿՊ, 1881: Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Ե., 1992: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, 6 հրտ., Թեհրան, 1999:

Լևոն Սարգսյան

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի 1991-ի սեպտ. 1-ի վճռագրով: Առաջնորդանիստը՝ Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցի:

Ուկրաինայի հայերը տարբեր ժամանակաշրջաններում գտնվել են Հայ եկեղեցու տարբեր թեմերի հովանու ներքո: XIII դ. Լվովում գործել է հայկ. եպիսկոպոսություն (տես *Լեհահայոց կրոնական համայնք*): 1830-ին կազմավորվել է Հայ եկեղեցու *Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը*, որը միավորել է ռուս. կայսրության արմ. և հվ-արմ. տարածաշրջանների, ինչպես նաև Ուկրաինայի հայկ. համայնքները: 1918-ին՝ խորհրդ. իշխանության հաստատումից հետո, Ռուսաստանի հայոց թեմերը լուծարվել են, եկեղեցիները փակվել, մի մասը՝ ավերվել: Բեսարաբիան Ռումինիային անցնելով (1918)՝ Բեսարաբիայի հայկ. եկեղեցիները մտել են *Ռումինիայի թեմի*, իսկ ռուսահայ մնացած համայնքները՝ Նոր Նախիջևանի թեմի մեջ: 1966-ին կազմավորվել է *Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը*՝ միավորելով ԽՍՀՄ հանրապետությունների հայկ. եկեղեց. համայնքները, բացառությամբ Անդրկովկասի: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի 1991-ի սեպտ. 1-ի վճռագրով Ուկրաինայում սկսվել է ազգային եկեղեց. կյանքի վերազարթոնքը: Կարճ ժամանակում ծխական համայնքներ են ստեղծվել նաև այն քաղաքներում, որտեղ չեն եղել հայկ. եկեղեցիներ:

1997-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի հունվարի 13-ի կոնդակով Ուկրաինայի հայոց թեմը ստացել է կանոնական ճանաչում՝ առաջնորդ է նշանակվել Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Ներկայումս (2001) Ուկրաինայի հայոց թեմն իր իրավասության ներքո ունի պաշտոնապես գրանցված եկեղեց. համայնքներ Լվովում, Կիևում, Խարկովում, Օդեսայում, Բելգորոդ-Դնեստրովսկում (Ակքերման), Թեոդոսիայում (Կաֆա), Յալթայում, Եվպատորիայում (Գյոզլև), Սիմֆերոպոլում, Դոնեցկի մարզի Մակեևկա քաղաքում, Դնեպրոպետրովսկում, Նիկոլաևում, Իզմայիլում:

Թեմի տարածքում գործում են Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման (1363), Թեոդոսիայի Ս. Սարգիս (XIII դ.) և Միքայել ու Գաբրիել Հրեշտակապետաց (1408), Եվպատորիայի Ս. Նիկողայոս (1817), Յալթայի Ս. Հռիփսիմե (1905–17), Օդեսայի Ս. Գրիգոր Լուսավորիչ (1995), Սիմֆերոպոլի Ս. Հակոբ (1997), Մակեևկայի Ս. Խաչ (1998) եկեղեցիները:

Թեմի գրեթե բոլոր համայնքներն ունեն կիրակնօրյա դպրոցներ:

Ու. թ-ի առաջնորդն է Գրիգորիս արք. Բունիաթյանը (2001-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.8, 3-րդ պատկերը:

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ (հուն. *ὀρθοδοξία* – օրթոդոքսիա՝ ուղիղ, ճշմարիտ հավատ, ուղիղ, ճիշտ փառք), քրիստոնեության մեջ՝ 1. Հիսուս Քրիստոսի *առաքյալների* հիմնած առաքելական, ավանդական և պատմական եկեղեցիների *դավանանքի, վարդապետության* ու կարգերի ամբողջությունը: «Ուղղափառություն» անվանումն առաջին անգամ հանդիպում է II դ. քրիստոնյա գրողների մոտ (*Կղեմես Ալեքսանդրացի* և ուր.), երբ ի հայտ են եկել քրիստ. եկեղեցու ուսմունքի առաջին բանաձևերը: Նշանակել է բոլոր եկեղեցիների հավատը՝ ի հակադրություն հերետիկոսների տարամիտության և աղավաղումների:

Ու-յան սահմանները և սահմանումը միշտ եղել են վեճի առարկա: Սակայն Ու-յան հիմնական չափանիշ է ճանաչվում Հիսուս Քրիստոսի և նրա առաքյալների ուսմունքի անփոփոխ պահպանումը և անշեղորեն հետևելը, ինչպես շարադրված է *Աստվածաշնչում*, սրբազան *ավանդությունում, Հավատո հանգանակում, Ընդհանրական եկեղեցու* գումարած *տիեզերական ժողովների* բանաձևերում, *եկեղեցու հայրերի* ուսուցումներում: 451-ի *Քաղկեդոնի ժողովի* հետևանքով Ընդհանրական ե-

ՈՒՂՂԱՓԱՌ. կեղեցու պառակտումից հետո եկեղեցիները կամ եկեղեցիների ընտանիքները, ունենալով տիեզեր. ժողովների և եկեղեցու հայրերի սեփական ցանկեր, տարակարծիք են Ու-յան բնորոշման, ինչպես նաև դավան. որոշ բանաձևերի Ու-յան հարցում:

Քրիստ. եկեղեցու հիմն. հավատալիքները, որոնք կազմում են նրա դավանանքը, բանաձևվել են երեք տիեզեր. ժողովների (տես *Նիկիայի Ա տիեզերական ժողով 325, Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381, Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431*) վճիռներով: Այն բոլոր եկեղեցիները, որոնք ընդունել են երեք տիեզեր. ժողովների հաստատած հավատամքը՝ Հոր և Որդու համագոյությունը, *Սուրբ Հոգու* Աստվածությունը, Ս. *Երրորդության*, Մարդեղության և Փրկագործության խորհուրդները, ս. Կույսի Աստվածածին կամ Աստվածամայր լինելը, ճանաչվում են ուղղափառ եկեղեցիներ:

2. Քրիստոնեության հիմն. երեք ուղղություններից (*կաթոլիկության* և *բողոքականության* հետ միասին) մեկը: Տվյալ դեպքում Ու. բնութագրում է տեղական ինքնավար, ազգ. եկեղեցիների կամ արևելաքրիստոնեության երկու խոշոր ընտանիքներին՝ *Արևելյան ուղղափառ եկեղեցիներ* (*Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի, Ասորի ուղղափառ եկեղեցի, Եթովպական ուղղափառ եկեղեցի, Ղպտի ուղղափառ եկեղեցի,* Հնդկաստանի Մալաբար ասորական ուղղափառ եկեղեցի) և Ուղղափառ (օրթոդոքս) կամ երկաբնակ (քաղկեդոնիկ) եկեղեցիներ: Վերջիններս կոչվում են նաև հունադավան, քանի որ ծագում են Հույն կամ բյուզ. եկեղեցուց (տես *Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքություն*), ունեն նույն եկեղեց. ավանդությունը, արարողակարգը և համանման կանոնական կառույցը: Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներն այսօր իրենց մեջ պարփակում են ազգ. ավանդություններ, լեզուներ և յուրահատկություններ: Սակայն նրանք բոլորն էլ ունեն միևնույն պատմ. սկիզբը, այն է՝ բյուզ. ուղղափառ քրիստոնեությունը: Ընդհանրական եկեղեց. կազմակերպություն մեկ եկեղեց. կենտրոնով (ինչպես Վատիկանը Կաթոլիկ եկեղեցու համար) Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիները չունեն:

Հռոմ. կայսրության բաժանումից (395) հետո կայսրության եկեղեցին կազմակերպորեն տրոհվել է հռոմեական-արևմտյան և հունական-արևելյան մասերի: Քաղկեդոնի ժողովից հետո Հռոմի և Կ. Պոլսի աթոռները տարբեր պատճառներով հակառակությունների, տարանջատումների, մրցակցության մեջ են եղել. 1054-ին Սուրբ Հոգու բխման վարդապետության մեջ «եւ Որդւոյ» (Filioque) հավելվածի (ըստ որի՝ Ս. Հոգին բխում է Հորից և Որդուց) ներմուծումը Հռոմի եկեղեցու կողմից՝ հանգեցրել է երկու եկեղեցիների բաժանմանը և փոխադարձ նզովքների: Հռոմ. եկեղեցին կոչվել է կաթոլիկական, իսկ հունաբյուզ. եկեղեցին՝ ուղղափառ: Խաչակիրների արշավանքն ավելի է խորացրել պառակտումը, քանի որ լատին եպիսկոպոսություններ են հիմնվել այնտեղ, որտեղ Հույն եկեղեցին ունեցել է իր պատրիարքական աթոռներն ու թեմերը: 1204-ին խաչակիրների կողմից Կ. Պոլսի գրավումով՝ բաժանումը դարձել է վերջնական, իսկ հետագա դարերի միութենական փորձերը ոչ մի արդյունքի չեն հասցրել: Հռոմի պապի և Կ. Պոլսի պատրիարքի 1054-ի փոխադարձ նզովքները վերացվել են 1964-ին՝ Հռոմի պապ Պողոս VI-ի և Կ. Պոլսի տիեզերական պատրիարք Աթենագորասի հանդիպման ժամանակ:

IX–XI դդ-ից սկսած կազմավորվել են ինքնագլուխ (ավտոկեֆալ) երկաբնակ եկեղեցիներ (*Վրաց եկեղեցին*՝ ավելի վաղ), որոնք միավորվում են Ուղղափառ (Արևելյան երկաբնակ) եկեղեցիներ անվան տակ: Դրանք են՝ նախ՝ բյուզ. չրջանի հին պատրիարքությունները՝ Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի (Դամասկոսում, Սիրիա), Երուսաղեմի աթոռները, ապա՝ Մոսկվայի (Ռուս Պրավոսլավ եկեղեցի), Սերբիայի, Բուլղարիայի, Ռումինիայի պատրիարքությունները, հուն. եկեղեցիները՝ Հելլադայի (Հունաստանի), Կիպրոսի, Սինայի, Վրաց, Ալբանիայի, Ֆինլանդիայի, Չեխիայի, Սլովակիայի, Լեհաստանի, Ճապոնիայի, ինչպես նաև Աֆրիկայի, ԱՄՆ-ի ուղղափառ եկեղեցիները: Դրանք բոլորն էլ առաջնորդվում են նույն նվիրապետ. աստիճանակարգով (եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ): Եկեղեցու աշխարհիկ դասը կազմում է նրա գործունեությունը, համաձայն 1848-ի արլ. պատրիարքների հղած կոնդակի՝ «Եկեղեցու ամբողջական մարմնին է պատկանում նրա ճշմարտության պահպանումը»: Բոլոր Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների մեջ առաջնության պատիվը վայելում է Կ. Պոլսի տիեզերական պատրիարքությունը: Կ. Պոլսի գրավումից (1453) և Բյուզ.

կայսրության անկումից հետո մինչև 1917-ը Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների մեջ ղեկավար դեր է ունեցել Ռուս եկեղեցին:

Ուղղափառ ավանդության մեջ զատորոշվում են երեք կարևոր տարրեր՝ վարդապետական, ծիսական և հոգևոր ավանդությունները: 842-ին *պատկերապաշտության* վերջնական հաղթանակի առիթով, երբ բյուզ. Թեոդորա կայսրուհին (842–856) վերականգնել է սրբապատկերների պաշտամունքը, սահմանվել է «Ուղղափառության տոն», որն ամեն տարի քառասնօրյա պահքի առաջին կիրակին հանդիսավորությամբ տոնվում է որպես «ուղղափառության կիրակի»: Ուղղափառ երկաբնակ եկեղեցին պնդում է, որ քրիստ. հավատն իր ամբողջության մեջ ինքն է պահել և այդպիսով դարձել Մեկ, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական: Այդ պնդումը հիմնավորվում է Ուղղափառ դավանության մեջ, որտեղ եկեղեցին համարվում է «ճշմարտության սյուն և արմատ»: Տիրոջ մարմինը և Սուրբ Հոգին միասին հավիտենապես եկեղեցուն առաջնորդում են դեպի ճշմարտություն: Եկեղեցին անսխալականության միջոց չէ. նա անսխալական է իր ամբողջության մեջ, իր տիեզերական ըմբռնումով. նա չի ընդունում որևէ բան իբրև ճշմարտություն, եթե այն հակառակ է կամ հակասում է Սուրբ Հոգու առաջնորդությանը: Ուղղափառ երկաբնակ եկեղեցին ունի հավատի երկու աղբյուր՝ Աստվածաշունչը և սրբազան ավանդությունը, պայմանով, սակայն, որ ավանդության մեջ չլինի Ս. Գրքին հակասող որևէ բան:

Ուղղափառությունը հավատում է, որ Աստվածաշունչն արդյունք է երկնային ներշնչանքի իր ամբողջության մեջ և ոչ մեկին չի զրկում Աստվածաշունչը կարդալու և մեկնաբանելու իրավունքից, պայմանով, որ դա լինի եկեղեցու ավանդությանը համապատասխան և առաջնորդվի եկեղեցու ս. հայրերի մեկնություններով: Ուղղափառ երկաբնակ եկեղեցին ընդունում է յոթ ժողովների տիեզերական հեղինակությունը (325-ի Նիկիայի, 381-ի Կ. Պոլսի, 431-ի Եփեսոսի տիեզերաժողովները, ինչպես նաև՝ 451-ի Քաղկեդոնի, 553-ի Կ. Պոլսի, 680–681-ի Կ. Պոլսի, 787-ի Նիկիայի, 869–870-ի Կ. Պոլսի ժողովները) և նրանց վարդապետ. սահմանումները: Ընդունում է եկեղեցու հայրերի (տարբերվում է Հայ առաքելական և Կաթոլիկ եկեղեցիների հայրերի ցանկերից) վկայությունը՝ իբրև ճշմարիտ մեկնիչներ, թարգմանողներ և եկեղեցու հավատի պահպանողներ: Ամենանշանավոր հայրերն են *Աթանաս Ալեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Գրիգոր Նյուսացին, Կյուրեղ Ալեքսանդրացին, Հովհան Ոսկեբերանը*, ինչպես նաև Մաքսիմոս Խոստովանողը (VII դ.), Հովհաննես Դամասկացին (VIII դ.), Գրիգոր Պալամասը (XIV դ.): Նրանց վկայությունները անսխալականության աղբյուր չեն: Եկեղեցու հայրերի գործերում Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին տեսնում է Ու-յան ընդհանուր ոգին, նրանց ամբողջական նվիրումը եկեղեցու վարդապետությանը՝ այդ աստվածաբանների գործերն ընդունելով իբրև օրինակելի նմուշներ: Արևելաքրիստ. Ու. չի ընդունում Կաթոլիկ եկեղեցու «տիեզերական ժողովները» և նրանց վարդապետ. որոշումները (Ս. Հոգու բխման վարդապետության մեջ «և Որդւոյ» հավելումը, Մարիամ Աստվածածնի մարմնով համբառնումը, Մարիամ Աստվածածնի անարատ հղությունը, պապի անսխալականությունը, քավարանը, հացի ու գինու գոյափոխությունը Պատարագի ժամանակ ևն): Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին գտնում է, որ եկեղեց. օրենքները ձևակերպվել են իր ընդունած յոթ տիեզեր. ժողովների ընթացքում՝ եկեղեցու հայրերի կողմից: Այդ կանոնները կարգավորում են եկեղեցու կյանքը, բայց դրանք իրավական չափանիշներ չեն: Այդ օրենքներն ավելի շուտ նկարագրում և պաշտպանում են Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին, քան սահմանում այն:

Երկաբնակ ուղղափառների գլխ. ժամերգությունը ս. Պատարագն է: Եկեղեցու համար ամենակարևոր «արդիականացումը» ժողովրդի մասնակցությունն է Քրիստոսի փառավորյալ մարմնին՝ ս. Պատարագի ժամանակ, ինչպես երկնային թագավորության, որն այս աշխարհի համար դեռևս «գալիք թագավորությունն է» խորհրդանշում: Պաշտամունքի միջոցով եկեղեցին դառնում է «այն, ինչ որ էր», այսինքն՝ նոր ժողովուրդ Աստծո Սուրբ Հոգու ներգործությամբ: Հունադավան ուղղափառ ծիսական ավանդության մեջ զանազանվում են ընծայման՝ Մկրտության, ս. Մյուռոնի և Հաղորդության պատարագները, որոնք ամբողջապես և բարձրագույն ձևով իրականացնողը եկեղեցին է: Այդ պաշտամունքները սրբացնում են ժամանակը՝ օրվա ընթացքը, շաբաթվա օրերը և տարվա շրջանը: Հունադավան պաշտամունք-

ները նկարագրված և բացատրված են մոտ երեք տասնյակ ծիսական գրքերում: Դրանցից ամենակարևորներն են՝ Ծիսարանը, որը բովանդակում է գրություններ ս. Պատարագի արարողությունների մասին և եկեղեց. խորհուրդները, Օկտոեխոս հոգևոր երգերի ժողովածուն (շաբաթվա շրջանի), տասներկու Մենայանները (տարեկան շրջանի) և երկու Տրիոդիաները (պահոց և Զատկական շրջանների): Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների մեծ մասի օրացույցը կազմվում է հուլյան տոմարով: Քահանաները պետք է ամուսնացած լինեն (ընդ որում՝ մեկ անգամ):

Երկաբնակ ուղղափառ եկեղեցու վարդապետ. և ծիսական ավանդույթները չեշտում են կյանքում կատարելությունը: Սրբերի հանդեպ պաշտամունքը հաստատվել է նրանց մասին եղած հավատի փաստերով և որ Աստծո շնորհը՝ բաշխված Քրիստոսի միջոցով, իր մեջ պարունակում է վերափոխելու և պայծառակերպելու զորություն: Դրանով մարդկային բնությունը Հիսուսի Մարդեղությամբ դառնում է կարողունակ՝ ընդունելու Ս. Հոգին և աստվածացումը (Թեոսիս): Հոգևոր հայրերը, սրբերը հավատի ուսուցիչներն են: Նրանք իրենց կյանքով ու գործով և հոգևոր փորձառությամբ սովորեցնում են մարդկանց ընդունել Ս. Հոգին: Հոգևոր փորձառություններ են ունեցել վաղ եկեղեցու անապատական ճգնավոր հայրերը՝ Անտոն Անապատականը, Պախոմիոսը և ուր. (տես *Անապատականություն* հոդվածում), բյուզ. միստիկները՝ Սիմեոն Երիտասարդը (XI դ.), Գրիգոր Պալամասը և XVIII–XIX դդ. Ռուս եկեղեցու սրբերն ու հոգևոր դաստիարակները՝ Տիխոն Զադոնսկին, Պայիսի Վելիչկովսկին, Սերաֆիմ Սարովսկին և ուր.: Հոգևոր ավանդություններին վերաբերող դասական տեքստերը հավաքված են «Ֆիլոդալիա» խորագրով գրքի հատորներում:

Հայոց մեջ հունադավան կամ քաղկեդոնիկ հայերը կոչվել են հոռոմներ և *ծաթեր*:

Գրկ. Барсов Н. И., Вопрос о религиозности русского народа, СПБ, 1881; Смирнов П. А., О православии вообще и в частности по отношению к славянским народам, СПБ, 1893; Нуйнь, Прославление святых церкви христианской православной, СПБ, 1903; Лебедев А. П., Наука о богослужении Православной церкви, М., 1904; Флоровский Г. В., Византийские Отцы V–VIII вв., Париж, 1933; Титов В. Е., Православие, 2 изд., М., 1974.

ՈՒՆԻԹՈՐՈՒԹՅՈՒՆ (ունիտորություն, լատ. unitor – միաբանող), միարարություն, Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ քրիստոնեական տարբեր եկեղեցիների միության (ունիայի) գաղափարի վրա հիմնված եկեղեցական ուղղություն, որն ընդունում է Հռոմի պապի գերագահությունը, կաթոլիկ. դավանանքը, ծեսը՝ պահպանելով ժամերգության ազգային լեզուն: Գոյություն ունեն Արևելյան միացյալ (Uniate) եկեղեցիներ կամ պատրիարքություններ, ինչպիսիք են Մարոնիտ (1216), Քաղդեական (1553), Հույն (Մելքիդ՝ 1724), Ասորի (1783), Ղպտի (1824) կաթոլիկ պատրիարքությունները: 1742-ին կազմավորվել է Հայ կաթողիկե պատրիարքությունը (տես *Հայ կաթողիկե եկեղեցի*): XVI դ. վերջին ունիթորական եկեղեցի է ստեղծվել նաև Ուկրաինայում և Բելառուսում:

Ու-յան առաջացումը պայմանավորված էր պապականության և արևմտաեվրոպ. տերությունների աշխարհակալական քաղաքականությամբ, իսկ Ու-յան նախադրյալներն ստեղծվել են XI դ. վերջին՝ պայմանավորված առաջին խաչակրաց արշավանքներով: Հայ իրականության մեջ նույնպես Ու. ուներ քաղ. երանգավորում. Կաթոլիկ եկեղեցու հետ միավորվելու ձգտումը նպատակ էր հետապնդում Արմ. Եվրոպայի ռազմաքաղ. օգնությամբ ազատագրվել օտար լծից և վերականգնել հայկ. պետականությունը: Ու. տարածվել է նաև Կիլիկյան Հայաստանում, որի լատ. և լատինամետ (առևտրատնտ. կապերով Եվրոպայի հետ սերտորեն կապված) հայ բնակչությունը որոշակի ուժ ու դիրք է ձեռք բերել և իր նկրտումներն առավել եռանդով դրսևորել հատկապես ճգնաժամային պայմաններում: Կիլիկյան Հայաստանի Լևոն Բ թագավորը թագադրումից (1198) առաջ առերես ծիս. որոշ զիջումներ է խոստացել Հռոմի պապին և Կիլիկիայում նրա քարոզիչներին ազատ գործելու հնարավորություն տվել, սահմանային մի շարք ամրոցներ իբրև ավատ հանձնել եվրոպ. ռազմիկ-միաբանություններին: Կիլիկյան միաբարների և ազգ. ավանդներին հավատարիմ հոսանքի հետևորդների միջև սուր պայքար է ծավալվել Կիլիկիայի Հայկ. պետության թուլացման և անկման շրջանում (1289–1375): 1307-ին Սսում և 1316-ին Ադանայում (տես *Ադանայի եկեղեցական ժողով 1316*) գումարված ժողովներն ընդունել են Կաթոլիկ եկեղեցու դավանանքը, ծիսակարգը և Հռոմի պապի

գերիշխանությունը: Սակայն ակնկալած ռազմաքաղ. օգնությունը չստանալով՝ 1361-ին Սսում չեղյալ է հայտարարվել նախորդ ժողովների ընդունած «ունիան» (տես *Սսի եկեղեցական ժողովներ*): Հայ եկեղեցու դավանանքի, ծիսակարգի անաղարտության, ավանդ. կարգի և ինքնուրույնության պահպանման համար Ու-յան ու Կիլիկիայի լատինամետ հայ հոգևորականների դեմ անհաշտ պայքար է մղել հայ հոգևորականության ավանդապահ թևը՝ Հայոց Հյուսիսային Կողմանց կամ *արևելյան վարդապետները*:

1240-ական թթ. պապական քարոզիչները թափանցել են նաև բուն Հայաստան և տարանցիկ առևտր. ճանապարհների կարևոր հանգուցակետերում հիմնել արքեպիսկոպոսություններ (Սուլթանիե, Խանբալիկ-Պեկին) և եպիսկոպոսություններ (Թավրիզ, Մարաղա, Դեհխարկան, Թիֆլիս, Նախիջևան)՝ փորձելով «ճշմարիտ հավատի» բերել արևելյան հին քրիստոնյա, առաջին հերթին՝ հայ և ասորի ժողովուրդներին: Սկզբում գործել են Ֆրանցիսկյան միաբանները, որի արդյունքում կաթոլիկացվել է Արտազի թեմական կենտրոն Ս. Թադե վանքը: 1318-ից Հռոմի պապ Հովհաննես XXII-ի հանձնարարությամբ նրանց փոխարինել են Դոմինիկյան կրոնավորները, որոնց աջակցությամբ ավելացել է Անիի, Կարինի, Թիֆլիսի, Թավրիզի, Մարաղայի և այլ վայրերի կաթոլիկացած հայ համայնքների անդամների թիվը: Ամենանշանակալին Նախիջևանի Երնջակ գավառի եպիսկոպոսությունն էր, որը հաստատվել է 1330-ին, *Քռնայի Ս. Աստվածածին վանքում՝* Հովհաննես Քռնեցու գլխավորությամբ, և գործել մինչև 1766-ը (ունեցել է 38 գահակալներ, որոնցից 32-ը՝ հայ վանականներ): Վանքում գործել է Քռնայի բարձր տիպի դպրոցը, որի դեմ դավանաբան. պայքար են մղել Գլաձորի և Տաթևի համալսարանների ուսուցչապետներն ու վարդապետները՝ *Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին* և ուր.: Հովհաննես Քռնեցին այստեղ հիմնել է «Կարգ Սուրբ Գրիգոր Լուսավորչի» անունով միաբանություն, որդեգրել Դոմինիկյանների տարազը (քիչ տարբերությամբ) և կանոնագիրը: Այդ միաբանության կրոնավորները կոչվել են «Հայ միաբանող եղբայրներ» կամ ունիթորներ:

XVI դ. վերջին սկսվել է Ու-յան՝ դեպի արևելք տարածվելու երկրորդ շրջանը: Հիսուսյան, Թեատինյան ու այլ միաբանությունների անդամների և Ուրբանյան դպրոցի (որի հայկ. բաժինը 1884-ին վերածվել է քահանայապետական Լևոնյան վարժարանի) ուսուցիչների ու սաների ջանքերով կաթոլիկ հայերի համայնքներ են ստեղծվել նաև այլ վայրերում: Հայ կաթողիկե պատրիարքության հաստատումից (1742) հետո, երբ ստեղծվել են կաթոլիկ նվիրապետ. թեմեր և միաբանություններ, Ու. աստիճանաբար կորցրել է իր նշանակությունը և մարել՝ չիրականացնելով իր հետապնդած նպատակները (տես նաև *Միսիոներություն*):

Գրկ. Սրապյան Ս., Հայք և ունիթոռք, ՀԱ, 1909, № 11, էջ 321–327: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1–2, Ե., 1957–59: Անասյան Հ., XVII դ. ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961: Պետրոսիչ Գ., Միաբանող եղբայրները և Հայ եկեղեցին, Վնն., 1971: Խաչիկյան Լ., Քռնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քռնեցու գիտական գործունեությունը, տես Յովհաննես Քռնեցի, Յաղագս քերականին, Ե., 1977: Oudernijn M. A., Linguae Haicanae Scriptores, Bern, 1960; Richard J., La papaute et les Missions d'Orient au Moyen Age (XIIIe–XVe siècles), Roma, 1998.

Գևորգ Տեր-Վարդանյան

ՈՒՇԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔ, ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի գյուղից 1 *կմ* արևմուտք, բարձունքի վրա: Համալիրի կազմում են երկու եկեղեցի, գավիթը, պարսպապատերը, օժանդակ շինությունները: Ըստ Հայսմավուրքում պահպանված տեղեկության, հիմնադրվել է V դ., երբ *Մեսրոպ Մաշտոցը* ս. *Սարգսի* անվանը բերել է սկզբում Կարբի, ապա՝ Ուշի և սրբի մասունքների վրա հիմնել վանք: Հնագույնը Ս. Սարգիս միանավ թաղածածկ եկեղեցին է, որի պայտաձև Ավագ խորանից մուտք կա դեպի հս-ից կից ավանդատուն: Պատերի ստորին՝ վաղմիջնադարյան մասը շարված է կոպտատաշ բազալտ քարով, իսկ վերին մասը 1203-ին վերակառուցվել է սրբատաշ սև տուֆով: XII դ. վերջին – XIII դ. 1-ին կեսին Ս. Սարգիս եկեղեցուն հվ-ից կից, մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածքով կառուցվել է վանքի գլխ.՝ Ս. Աստվածածին եկեղեցին: Պահպանվել են սրբատաշ տուֆով շարված պատերի ստորին մասը, բուս. և երկրաչափ. զարդաքանդակներով արմ. և հվ. շքամուտքերը, շքեղ քանդակազարդ բեմառաջքը, առանձին մանրամասներ (գմբեթի բազմանիստ թմբուկի զարդագոտու ու քիվի բեկորներ ևն):

եկեղեցու Ավագ խորանը և առաստաղը ծածկված են եղել որմնանկարներով, շենքի գեղ. արտահայտչականությանը նպաստել է նաև բազմազույն քարերի օգտագործումը:

XIII դ. վանքը Վաչուտյան իշխաններից ստացել է մի շարք նվիրատվություններ: 1264-ին Ս. Աստվածածին եկեղեցուն հվ-ից կից կառուցվել է վանքի գավիթը՝ քառակուսի հատակագծով, հզոր որմնամույթերի վրա հիմնվող երկու զույգ խաչվող կամարներով իրականացված ծածկով (այժմ՝ քանդված): Ունի երկու մուտք՝ հս-ից՝ Ս. Աստվածածին եկեղեցուց, և արմ-ից, հվ. պատին կան լայն, զույգ լուսամուտներ:

Գավթի և Ս. Աստվածածին եկեղեցու արմ. ճակատի դիմաց կցվել է ուղղանկյուն սրահ, որի հվ. ծայրին 1311-ին կառուցվել է զանգակատուն (չի պահպանվել):

1654–57-ին Ու. Ս. Ս. վ-ի վանահայր *Ոսկան Երևանցին* կոպտատաշ բազալտ քարով կառուցել է վանքը շրջափակող, ուղղանկյուն հատակագծով, աշտարակներով ուժեղացված պարիսպներ, որոնց ներսից կից եղել են բնակելի և տնտ. շինություններ: Հվ-արմ. կողմում թաղածածկ մեծ սրահն է և նրա շարունակությունը կազմող երկհարկանի խցերը: Վանքի գլխ. մուտքը հվ-արլ-ից է:

1827-ին Ու. Ս. Ս. վ. երկրաշարժից ավերվել է: 1999-ից, Շահե արք. Աճեմյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ, սկսվել են վանական համալիրի պեղումները (ղեկ.՝ Ֆ. Բաբայան), որոնց ընթացքում բացվել են Ս. Աստվածածին եկեղեցին, սրահի, օժանդակ շինությունների ավերակները, հայտնաբերվել են մշակութ. արժեք ներկայացնող հնագիտ. նյութեր, խաչքարեր, դրամներ ևն:

Պատկերազարդումը տես ներդիր XV-ում, 15.8, 4-րդ պատկերը:

Գրկ. Յայսմաւուրք, ԿՊ., 1706: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842: Գասպարյան Ռ., Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմագրական արձանագրությունները, ԼՀԳ, 1993, № 1:

Ֆրինա Բաբայան

ՈՒՐՑԱՁՈՐԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ, ՀՀ Արարատի մարզում, Ուրծի լեռնաշղթայի հարավային լանջի սարահարթի վրա: XIV դ. սկզբին, որպես տոհմական տապանատուն, հիմնադրել են Օրբելյան իշխանները: Վանքի Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցին, ըստ Տիրացու գրչի փորագրած շին. արձանագրության, 1301-ին Կիրակոս վարդապետի հսկողությամբ կառուցել է Իվանե Զաքարյանի դուստր, Զալալ Օրբելյանի կին Գոնցան: Նա եկեղեցուն նվիրել է Քալաս գյուղը, հողեր, այգիներ, ջրաղացներ, ձիթհանք: Առանձին արձանագրությամբ նշվել է ճարտարապետի անունը՝ Բուտ:

Եկեղեցին զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է, որի սլացիկ, գլանաձև թմբուկով գմբեթը պսակված է հովանոցաձև վեղարով: Միակ՝ արմ. շքամուտքի բարավորին և նրանից վերև բարձրարվեստ հարթաքանդակներ են, որոնց հեղինակն է Սարգիս վարդապետը: Բարավորին, ծաղկահյուս ֆոնի վրա պատկերված է Աստվածածինը Մանկան հետ, կողքերին՝ կանգնած հրեշտակներ: Վերևում, կամարակապ խորշում քանդակված է Քրիստոսը, շուրջը՝ չորս ավետարանիչների խորհրդանշաններ: Գմբեթի թմբուկին հապավումներով փորագրված են. արլ. նիստին՝ Կիրակոս, Բուտ, հվ-ին՝ Զալալ, Գոնցա, հս-ին՝ Տիրացու (արմ-ինը ջնջված է, հավանաբար՝ Սարգիս): Եկեղեցուց հվ-արմ., ուղղանկյուն հատակագծով ժամատունն է (XIV դ., մինչև 1346-ը), որը ծառայել է նաև որպես տապանատուն: Ժամատանն արմ-ից կից է երկհարկ եկեղեցի-դամբարանը (XIV դ.), որի երկրորդ հարկի կիսաշրջանաձև խորանը դրված է ժամատան ծածկի վրա:

1346-ին Զալալի և Գոնցայի որդի Էլիկում Օրբելյանը վանքին խոշոր նվիրատվություններ է կատարել: 1679-ին երկրաշարժից ավերվել են ժամատունը և եկեղեցի-դամբարանի զանգակատան ռոտոնդան: 1896–97-ին վանական համալիրի արմ. կողմում կառուցվել են միաբանության շենքերը և ուղղանկյուն հատակագծով պարիսպը, 1898-ին՝ շտեմարանը: Պահպանվել են ջրմուղի և ջրավազանի մնացորդները: Վանքի գերեզմանատանը կանգուն են նուրբ զարդաքանդակներով խաչքարեր և կենցաղային պատկերներով գերեզմանաքարեր:

Ու. Ս. Հ. Կ. վ. հայկ. միջնադարյան այն սակավաթիվ հուշարձանախմբերից է, որը պահպանել է ինչպես կառուցող մեկենասների, այնպես էլ ճարտարապետի, քանդակագործի, շին. աշխատանքների ղեկավարի, փորագրող գրչի անունները:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.1, 1-ին պատկերը:

Գրկ. Եղիազարյան Հ., Հովհաննես Կարապետի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1962, № 1: Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: *Овсепян Г., Потомство Тарсаича и Мина Хатуны, "Христианский Восток", т. 2, в. 2, СПБ, 1913;* Cuneo P., Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, t. 1–2, Roma, 1988.

Մուրադ Հասրաթյան

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԹԵՄ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, կազմավորվել է 1983-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով, որով Հվ. Ամերիկայի հայրապետ. պատվիրակությունը բաժանվել է երեք առանձին՝ Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի թեմերի: Առաջնորդանիստը՝ Մոնտեվիդեոյի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցի:

Ուրուգվայում հայերը հաստատվել են 1920-ական թթ.: 1923-ին հիմնվել է ուրուգվահայության առաջին ազգ. կառույցը՝ Գաղութային միությունը, ընտրվել է վարչություն: Նույն թվականին Մոնտեվիդեոյի Սերրո կոչվող թաղամասում հայերը գնել են տուն, որը ծառայել է որպես եկեղեցի և դպրոց: 1929-ին համայնքում իրարից անջատ գործել են երկու եկեղեցականներ՝ Ներսես վրդ. Տոլապճյանը և Դիոնիսիոս քհն. Տրեզյանը: Նրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր հետևորդները: 1933-ին Ուրուգվայի հայ հոգևոր համայնքն Արգենտինայի և Բրազիլիայի հետ ընդգրկվել է Հվ. Ամերիկայի հայրապետ. պատվիրակության կազմում (կենտրոնը՝ Բուենոս Այրես): Հայրապետ. պատվիրակ է նշանակվել Գարեգին արք. Խաչատուրյանը (1937–1951, 1951–61-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք): Նա շրջաբերականով դիմել է տեղի հայությանը՝ վերջ տալու հոգևոր ծխերի անջատ գործունեությանը: Հոգևոր հովվության կանոնադրությունն առանձին գրքույկով լույս է տեսել 1939-ին, նույն թվականին հաստատվել է հայրապետ. պատվիրակության կողմից, հետագայում վավերացրել է նաև Ուրուգվայի կառավարությունը: 1964-ին կատարվել է Ս. Ներսես Շնորհալի եկեղեցու հիմնարկեքը, 1965-ին՝ օծումը: Նախկին եկեղեցիները, որոնք պարզ շինություններ էին, դադարել են գործել:

Համայնքը ղեկավարող և պաշտոնապես ներկայացնող կազմակերպությունը եկեղեցու կենտր. վարչական խորհուրդն է: Մոնտեվիդեոյում թեմի հովանավորությամբ գործում է Ներսեսյան ամենօրյա վարժարանը, կից՝ մանկապարտեզ և նախակրթարան:

Ու. թ-ի առաջնորդն է Հակոբ եպս. Գըլընճյանը (1984-ից):

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.1, 2-րդ պատկերը:



Փ

ՓԱՌԱԿԱՅԻ Ս. ՀԱԿՈԲ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՆՔ, Գողթն գավառի Փառակա գյուղից 1 *կմ* հյուսիս-արևմուտք (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջանում): Վանքի քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով եկեղեցին, ըստ արմ. շքամուտքի բարավորի վրայի չին. արձանագրության (չափածո), կառուցվել է 1691–1701-ին: Պատերի շարվածքում օգտագործվել է բազմադունության հնարք՝ կարմրավուն և սպիտակ սրբատաշ քարերի համադրությամբ, որը եկեղեցու ճարտ. զուսպ կերպարին շրջակա բնությանը ներդաշնակ տեսք է հաղորդում: Ներսում, գմբեթատակ քառակուսու առագաստներին, չորս ավետարանիչների խորհրդանշանների բարձրաքանդակներն են: Շքեղ հարդարված արմ. ճակատին կից է եղել եռակամար գավիթ-սրահ (այժմ՝ քանդված): Եկեղեցու հվ. կողմում սեղանատան խոշոր, արմ-ից արլ. ձգված շենքն է՝ օժանդակ սենյակներով (պահպանվել են հիմքերը):

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.1, 3-րդ պատկերը:

Գրկ. Ալայան Ե., Օրդուբադի կամ Վերին Աղուլիսի ոստիկանական շրջան կամ Գողթն, ԱՀ, գիրք 11–12, Թ., 1904–05: Այվազյան Ա., Փառակայի ճարտարապետական հուշարձանները, ԲԵՀ, 1979, № I:

Մուրադ Հասրաթյան

ՓԱՌԵՆ Ա ԱՇՏԻՇԱՏՅԻ (ծ. թ. անհտ – 352), Ամենայն հայոց կաթողիկոս 348-ից: *Աղբիանոսյանների* տոհմից: Հաջորդել է *Հուսիկ Ա Պարթևին*: Եղել է Տարոնի Աշտիշատի եկեղեցու քահանայապետը: Հայոց թագավոր Տիրանի օրոք Արշակունիների և Գրիգոր Ա Լուսավորչի հայրապետ. տոհմի միջև հարաբերությունների սրումից և Հուսիկ Ա Պարթևի սպանությունից (347) հետո որոշ նախարարներ (Սահառունի, Արտավան Վանանդեցի, Կարեն Ամատունի, Վարազ Դիմաքսյան և ուր.) փորձել են կաթողիկոս ընտրել Գրիգոր Ա Լուսավորչի աշակերտ Դանիել ասորի քորեպիսկոպոսին: Սակայն կենտրոնացված իշխանության կողմնակիցները (Վասակ Մամիկոնյան, Մեհենդակ Ռշտունի, Անդովկ Այունի, Արշավիր Կամսարական և ուր.) սպանել են Դանիելին և կաթողիկոս ընտրել Փ. Ա Ա-ուն: Հայոց արքունիքին հավատարիմ Փ. Ա Ա. համագործակցել է Արշակունիների հետ՝ կենտրոնացված ուժեղ թագավորության ստեղծման գործում:

Կաթողիկոս. աթոռին Փ. Ա Ա-ուն հաջորդել է *Ներսես Ա Մեծը* (Պարթև):

Գրկ. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ (ծ. և մ. թթ. անհտ), V դ. մատենագիր, պատմիչ: Ստ. Մալխասյանցի կարծիքով՝ Բուզանդ մականունը բաղկացած է «բու» և «զանդ» հնդեվրոպ. արմատներից և նշանակում է եղելությունների, զրույցների մեկնիչ: Ըստ նրա՝ մատենագրի «Պատմութիւն Հայոց»-ի իսկական և համապատասխան անունը եղել է «Բյուզանդարան պատմութիւնք» բնորոշ հոդնակի ձևով, այսինքն՝ պատմությունների ժողովածու Բուզանդի:

Փ. Բ-ի վերաբերյալ առաջին տեղեկությունը հաղորդող *Ղազար Փարպեցին* նրա «Պատմութիւն»-ը համարում է երկրորդը (*Ագաթանգեղոսի* երկից հետո) և նրանում հանդիպող թերությունները վերագրում հետագա թերուս մարդկանց: Երկասիրությունը պարունակում է *Տրդատ Գ* Մեծից հետո Հայաստանի պատմությունը՝ մինչև նրա առաջին բաժանումը (387) Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Այն բաղկացած է առաջաբանից և չորս դպրություններից (Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ), որոնք բաժանվում են մանրամասն վերնագրեր ունեցող գլուխների: Երրորդ դպրությունը (21 գլուխ, վերնագրում գրված է «Ի սկիզբն» բառը) ընդգրկում է Խոսրով Բ Կոտակի (330–338) ու Տիրանի (338–350) թագավորությունների ժամանակաշրջանը: Չորրորդը (59 գլուխ)՝ Արշակ Բ-ի (350 – մոտ 368) գահակալության շրջանը մինչև նրա՝ Անհուշ բերդում բանտարկվելը: Հինգերորդը (44 գլուխ) վերաբերում է Պապի (370–374) ու Վարազդատի (374–378), Արշակ Գ-ի (378–390) և աթոռակից Վաղարշակի թագավորելու ժամանակահատվածներին: Վեցերորդը (վերնագրում նշվում է «Վերջ») բաղկացած է 16 գլխից, որոնցից առաջինում Հայաստանի բաժանման պատմությունն է (Պարսից և Հունաց միջև), իսկ հաջորդ 15-ում՝ համառոտ տեղեկություններ հայ եպիսկոպոսների մասին:

Փ. Բ. երկը շարադրելիս օգտվել է Աստվածաշնչից, վարքաբան-վկայաբան. գրքերից, հայկ. նախորդ պատմագիտ. գրականությունից, ավանդազրույցներից («Արշակ և Շապուհ»): Պատմագիտ. և բանասիր. մեծ արժեք է ներկայացնում երկում զետեղված «Պարսից պատերազմը» ժող. ավանդավեպը, որի առանցքը Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի մղած հերոս. պայքարի պատմությունն է: Հայրենասիրությամբ տոգորված գիրքը կոչված էր Հայաստանի ծանր կացության պայմաններում բարձր պահել ժողովրդի ազատագր. ոգին, նրան սատարել հայրենապաշտպան պայքարում: Այն միաժամանակ ներթափանցված է քրիստ. գաղափարախոսությամբ (երկի գրեթե մեկ երրորդը կազմում են զանազան տեսիլներ, սրբերի վարքագրություններ, հրաշքներ, քարոզներ, խրատներ, վարդապետություններ, աղոթքներ ևն): Երկում բացակայում է ժամանակագրությունը, առկա են անճշտություններ և պատմ. դեպքերի ու դեմքերի որոշակի վիպականացում: Մեծ տեղ է տրված Մամիկոնյան սպարապետներին (Վասակ, Մուշեղ, Մանվել)՝ նրանց ներկայացնելով իբրև քաջահաղթ կռվողներ եկեղեցու, հայրենիքի ու Արշակունի հայ թագավորների պաշտպանության համար: Քաղ. պատմությանը ներհյուսված ընդարձակ տեղեկություններ են հաղորդվում հայ նշանավոր հոգևորականների մասին: Փ. Բ-ի աշխատությունը երկրորդն է (Ագաթանգեղոսի երկից հետո) իր պատմ. արժեքով, որի շնորհիվ հնարավոր է պարզել Հայ առաքելական եկեղեցու սկզբնավորման և գոյության առաջին հարյուրամյակի պատմությունը: Սկսելով *Գրիգոր Ա Լուսավորչի, Արիստակես Ա Պարթևի* և նրանց շիրիմների մասին պատմությամբ՝ հեղինակը տեղեկություններ է հաղորդում հաջորդների վերաբերյալ (*Վրթանես Ա Պարթև, Հուսիկ Ա Պարթև, Ներսես Ա Մեծ*), որոնք ժառանգաբար նստել են կաթողիկոս. աթոռին: Փ. Բ. նկարագրել է նրանց պայքարը հեթանոս. սովորությունների դեմ, մասնակցությունը երկրի քաղ. կյանքին, ներքին հակասությունները եկեղեցու և թագավոր. իշխանության միջև (Հուսիկ Ա Պարթև և Տիրան, Ներսես Ա Մեծ և Արշակ Բ, Պապ): Կարևոր տեղ է գրավում Ներսես Ա Մեծի գործունեությունը. եկեղեցու բարեկարգում, Աշտիշատի եկեղեց. ժողովի հրավիրում (տես *Աշտիշատի եկեղեցական ժողովներ*), մասնակցությունը պետ. գործերին, միջնորդությունը հայ-հռոմ. հարաբերություններին ևն: Անդրադարձել է *Գրիգորիսի*, Խադ եպիսկոպոսի (տեղապահ), Արտաշատի Զվիթ քահանայի գործունեությանը (վերջինս գերեվարվելով Պարսկաստան՝ մերժել է մոգությունն ընդունելու Պարսից Շապուհ արքայի պահանջը և նահատակվել):

Պատմությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում IV դ. Հայ եկեղեցու կառուցվածքի, Աշտիշատի Մայր եկեղեցու, կաթողիկոսարանի որոշ գործակալությունների մասին: Մեծարժեք է Փ. Բ-ի վկայությունը Ներսես Ա Մեծից հետո *Աղբիանոսյանների* տոհմից ընտրված *Շահակ Ա Մանազկերտցուն* (ըստ հեղինակի՝ Հուսիկ եպիսկոպոս) Պապ թագավորի կողմից Կեսարիա ձեռնադրության չուղարկելու մասին: Կեսարիայի Բարսեղ եպիսկոպոսը ցասումնալից նամակ է գրել Հայոց թագավորին ու կաթողիկոսին և վերջինիս զրկել եպիսկոպոս ձեռնադրելու իրավունքից:

Սակայն նրա այդ կարգադրությունը չի կատարվել: Պատմագրի եզակի հաղորդումները (Դանիել եպիսկոպոսի պաշտոնների թվարկում ևն) պատկերացում են տալիս Հայ եկեղեցու վերին ատյաններում կառավարման կարգի մասին. եղել է եկեղեցիների կառավարչի և վերահսկողի պաշտոն (կամ պաշտոններ), որը կենտրոնացվել է Դանիել եպիսկոպոսի ձեռքում: Ըստ հաղորդումների՝ Տարոնի եկեղեցին (նկատի ունի Աշտիշատի Մայր եկեղեցին) գլխավորն էր բոլոր «Մայր եկեղեցիների» թվում: Նշված են նաև Հայ եկեղեցու սրբատեղիները՝ *Հովհաննես Մկրտչի* մարգարեանոցը և առաքյալների հանգստարանը: Համաձայն Փ. Բ-ի մեկ այլ վկայության, Աշտիշատի եկեղեցին եղել է «նախնեաց եկեղեցական ժողովների ժողովատեղին» (Զորրորդ դպրություն, գլուխ Դ, էջ 119):

«Պատմութիւն Հայոց»-ը շարադրված է ճոխ և պատկերավոր լեզվով: Այն հայկ. մատենագրության արժեքավոր երկերից է: Առաջին անգամ «Բիւզանդարան պատմութիւն...» խորագրով հրատարակվել է 1730-ին, Կ. Պոլսում: Մ. Էմինի թարգմանությամբ լույս է տեսել ֆրանս. (1867), Մ. Լաուերի թարգմանությամբ՝ գերմ. (1879): Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանությունը, նրա ներածությամբ և ծանոթագրություններով, հրատարակվել է 1947-ին, Երևանում:

Երկ. Հայոց պատմություն, Ե., 1987:

Գրկ. Մալխասյան Ս., Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան, Վնն., 1896: Գելցեր Հ., Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնավորութիւն, թրգմ. Հ. Թորոսյան, Վնտ., 1896: Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության (V–VIII դարեր), Ե., 1977:

Ռաֆիկ Մաթևոսյան

ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆ, տես *Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն* հոդվածում:

ՓԻԼԻՊՈՍ Ա ԱՂԲԱԿԵՑԻ [1593, գ. Էրնկան (Աղբակ գավառ) – 1655, Էջմիածին, ամփոփվել է Ս. Հռիփսիմեի տաճարի հս. խորանում], Ամենայն Հայոց կաթողիկոս 1632-ից: Հաջորդել է *Մովսես Գ Տաթևացուն*: 1630-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: Մինչ կաթողիկոս դառնալը եղել է իր ուսուցչի՝ Մովսես Գ Տաթևացու գործակիցը, իսկ հայրապետ. գործունեությամբ շարունակել նրա եկեղեց-բարեկարգչական, կրթ-լուսավոր., շին. աշխատանքները, վերականգնել Մայր աթոռի տնտեսությունը, աշխուժացրել վանական-միաբան. կյանքը: Վերանորոգել է Էջմիածնի Մայր տաճարն ու հարակից շինությունները, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե, Հաղպատի, Սանահինի վանքերը, Երևանի Ս. Անանիա առաքյալ անապատը, կառուցել նորերը: 1654-ին սկսել է Մայր տաճարի զանգակատան կառուցումը, որն ավարտվել է նրա վախճանից հետո՝ 1658-ին: Էջմիածին է փոխադրել Հովհաննավանքի դպրատունը՝ ուսուցիչ նշանակելով *Սիմեոն Ջուղայեցուն*: Փ. Ա Ա. 1638-ին ուղևորվել է Սպահան և Մայր աթոռ փոխադրել 1612-ից Պարսկաստանում պահվող Հայոց հայրապետական գլխ. մասունքը՝ *Լուսավորչի Աջը*:

Հայ եկեղեցու բարեկարգության, Մայր աթոռի իրավասությունների պաշտպանության, Երուսաղեմի և Սսի աթոռների հետ բնականոն հարաբերություններ հաստատելու նպատակով Փ. Ա Ա. 1651-ին ուղևորվել է Երուսաղեմ, կարգավորել աթոռների միջև՝ հատկապես եպիսկոպոս. ձեռնադրության շուրջ ծագած խնդիրները: Նույն թվին Երուսաղեմում գումարվել է եկեղեց. ժողով, որտեղ ընդունվել է 13 կանոն: Երուսաղեմից ուղևորվել է Կ. Պոլիս՝ Հայոց պատրիարքության ներսում տիրող անհամաձայնությունները հարթելու նպատակով: Կաթողիկոսի ջանքերով կարգավորվել են նաև լեհահայոց գաղութում Նիկոլ արք. Թորոսովիչի լատինամետ գործունեության պատճառով առաջ եկած հուզումները: 1653-ի օգոստոսին, ավարտելով իր երկարատև ուղևորությունը, Փ. Ա Ա. վերադարձել է Ս. Էջմիածին:

Կաթողիկոս. գահին Փ. Ա Ա-ուն հաջորդել է *Հակոբ Դ Ջուղայեցին*:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, կՊ, 1914:

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ, Փիլոն Եբրայեցի (Ք. ծ. ա. մոտ 20 – Ք. ծ. հ. մոտ 50), հրեա հունալեզու աստվածաբան, փիլիսոփա, Սուրբ Գրքի մեկնիչ: Փ. Ա-ու կյանքի մասին տվյալները սակավ են: Սերվել է *Ալեքսանդրիայի* հելլենակիրթ հարուստ և ազդեցիկ ընտանիքից: 39–40-ին, որպես Ալեքսանդրիայի հրեաների պատվիրակության ղեկավար, մեկնել է Հռոմ՝ Գայոս Կալիգուլա կայսրի մոտ՝ Ալեքսանդրիայի հրեա համայնքի հանդեպ հալածանքներին վերջ տալու խնդրանքով:

Սակայն նրա առաքելությունն ապարդյուն է անցել: Փ. Ա., տիրապետելով դարաշրջանի հելլենական փիլիսոփայության մանագիտ. լեզվին, հայեցակարգերին և, միաժամանակ՝ հրեական Օրենքին, փորձել է կցորդել այդ երկու մշակույթների առանցքային երևույթները՝ հայտնությունը «այլաբանելով» փիլիսոփայությամբ: Դրանով իսկ հիմք է դրվել մտավոր նոր ոլորտի՝ ռացիոնալ աստվածաբանության զարգացմանը: Փ. Ա-ու աշխատությունները (Հնգամատյանի զանազան մեկնություններ, ինչպես նաև մի քանի փիլ. և պատմաջատագով. երկեր) հավանաբար ստեղծվել են նույն այն միջավայրում և մտավոր մթնոլորտում, որտեղ սկզբնավորվում էր *քրիստոնեությունը*: Դրանով են բացատրվում փիլոնյան աշխատությունների և ավետարանական, հատկապես՝ Հովհաննես ավետարանչի և *առաքյալների* թղթերի հայացքների միջև եղած ընդհանրությունները, ինչպես և այն փաստը, որ Փ. Ա-ու գրական ժառանգությունը պահպանվել է միայն քրիստ. ավանդության մեջ: Սակայն հետագայում Փ. Ա-ու հանդեպ քրիստոնյա հայրերի վերաբերմունքը եղել է ոչ միանշանակ. բազմիցս օգտվելով փիլիսոփայի երկերից՝ *Կղեմես Ալեքսանդրացին, Որոգինեսը*, Ամբրոսիոս Մեդիոլանցին, Օգոստինոս Երանելին, *Գրիգոր Նյուսացին* և ուր. նախընտրել են բացահայտորեն չհիշատակել աղբյուրը կամ էլ Փ. Ա-ու դրույթները բերել են վիճաբանորեն: Բացառություն է կազմել միայն *Եվսեբիոս Կեսարացին*, որը ոչ միայն չի թաքցրել իր համակրանքը, այլև նրա շնորհիվ են Փ. Ա-ու աշխատություններից պահպանվել տեղեկություններ և բնագրային պատառիկներ: Անտիոքյան դպրոցը (տես *Անտիոք* հոդվածում), իր կողմից՝ ի դեմս Թեոդորոս Մոպսուեստացու, պայքարելով ալեքսանդրյան մեկնողական (այլաբանական) մեթոդի դեմ, մեղադրել է Փ. Ա-ուն «հեթանոսական հնարը» Սուրբ Գրքի նկատմամբ կիրառելու և այսպիսով՝ բնագրի իմաստը աղավաղելու համար: Այս պարագայում փիլոնյան երկերի հայտնվելը հայ մատենագրության մեջ դժվար է դիտել որպես չեզոք երևույթ. այն կարելի է մեկնաբանել իբրև հայ հոգևորականների որոշ մասի ալեքսանդրյան կողմնորոշման ապացույց և ենթադրել, որ Փ. Ա-ու ժառանգության մի մասը հայերին փոխանցվել է կա՛մ անմիջապես Ալեքսանդրիայում, կա՛մ, առավել հավանական է՝ Պաղեստինում, որի հետ հայերը կապված են եղել բազում կապերով: Այդտեղ երկար ժամանակ պահպանվել են Կղեմես Ալեքսանդրացու, Որոգինեսի և այլ ալեքսանդրիացի վարդապետների կրթ. ավանդույթները:

Փ. Ա-ու հայացքները, համակարգված չլինելով հանդերձ, այնուամենայնիվ բոլորվել են մի քանի գլխ. թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ Օրենքի և փիլիսոփայության խորքային ազգակցությունը (բխում է նրանից, որ երկուսն էլ շնորհվել են մարդկանց Աստծո կողմից), բնության և մարդկային հանրության օրենքների նույնությունը, «բնաբանության» երկու ուղիների առկայությունը, որոնցից առաջինը՝ բնագետին բերում է այն համոզմունքին, թե գոյություն ունի ղեկավարող և հոգացող մտավոր բարի էակ, իսկ երկրորդը՝ նույն ուսումնասիրողին ստիպում է խոստովանել Աստծո բացարձակ անճանաչելիությունը, որը բացառում է բնական էակների և երևույթների որևէ պաշտամունք: Ըստ Փ. Ա-ու, Աստված նախախնամում է մարդկանց, ինչպես նաև բնությունն իր երկու գլխավոր՝ արարչական ու շնորհաբաշխ և սահմանադրող ու պատժող ուժերի միջոցով, ուստի և Աստված գիտակցվում է ըստ մարդու բանական կարողության՝ մե՛րթ որպես բացարձակ եզակիություն, մե՛րթ որպես երրորդություն: Աստծո Նախախնամությունն ու Իմաստությունը, որն իր մեջ է ամփոփում հավերժ աստվածային կաղապարներ՝ աշխարհ ստեղծելու և ղեկավարելու համար, դա «Աստծո մարդ» կամ «երկրորդ Աստված» կամ «Նախածին Աստծո Որդի» Բանն է (Լոգոս): Բանը միջնորդում է մարդու և Աստծո միջև՝ օգնելով մարդուն ճանաչել Աստծո գոյությունը, հայտնելով նրան Հոր կամքը: Փ. Ա-ու համոզմամբ՝ այսպիսի հայտնություններից ամենամեծը Մովսեսի միջոցով տրված Օրենքն է, որի տառացի պահպանումը պարտադիր է հրեաների համար, սակայն հոգևոր բովանդակության առումով Օրենքն ունի համամարդկային արժեք, քանի որ այն, հետ պահելով մարդուն նյութ. հաճույքներից և դրանցից բխող շահախնդրությունից, դաստիարակում է մարդու մեջ երկու գլխ. առաքինություն՝ բարեպաշտություն և մարդասիրություն: Օրենքի շնորհումը նշանակում է, որ մարդն ազատ, անձնիշխան էակ է և պատասխանատվություն է կրում սեփական արարքների համար, ուստի և ենթակա է նախախնամության պատժին ու պարգևներին: Սակայն իսկական երանության

ՓՐԿԱԳՈՐԾ. է հասնում միայն նա, ով մաքրելով բանականությունը և հրաժարվելով մեծամտությունից, Աստծո ողորմածությամբ մանակից և «բարեկամ» է դառնում նրա կամքին: Մտավոր և բարոյական մաքրությունը հարկավոր է մարդուն՝ նաև Սուրբ Գրքում խրատական և խորհրդավոր («այլաբանական») տեղիները որոշելու և պատշաճ եղանակով մեկնելու համար:

Փ. Ա-ու աշխատությունները հայերեն են թարգմանվել «Հունաբան» (տես *Հունաբան դպրոց*) ոճով (V դ. կամ VI դ. 2-րդ կես): Թարգմանական դիվանը բաղկացած է տասը վավերական և երկու կեղծանուն բնագրերից, որոնք հայ մեկնող. գրականության մեջ սովորաբար խմբավորվում են յոթ «գլուխներում»: Այս հավաքածուի միայն հինգ միավորներն են, որ պահպանել են հուն. բնօրինակը («Օրենքի այլաբանություն», «Նահապետներ», «Հեսսեների կամ տեսական կյանքի մասին», «Տասնաբանյա օրենքի մասին», «Մասնավոր օրենքների մասին»): Ինչ վերաբերում է մնացած թարգմանություններին՝ ապա դրանց հուն. բնագրերը կա՛մ մեզ հասել են հատակոտոր, կա՛մ առհասարակ չեն պահպանվել: Փ. Ա-ու երկերի թարգմանությունների ոճական ազդեցությունն առկա է հատկապես *Եղիշեի, Ղազար Փարպեցու* և *Մովսես Խորենացու* մոտ, թեև փիլոնյան երկերին ծանոթ են շատ այլ հեղինակներ: Փիլոնի գաղափարների ազդեցությունը հայ աստվածաբան. մտքի վրա դեռևս չի ուսումնասիրվել: Նրա երկերը թարգմանվելուց ի վեր պետք է որ ուսանելի լինեին հոգևոր դպրոցների սաների համար, սակայն առաջին ստույգ տեղեկությունն այդ մասին մեզ հասել է միայն XII դարից, *Հովհաննես Սարկավագի* դպրոցից: Փ. Ա-ու՝ հայերեն թարգմանված բոլոր աշխատությունների վերաբերյալ մեկնող. ընթերցանությունների արդյունքում պահպանվել են բազմաթիվ *լուծմունքներ*: Դրանք են՝ «Առաջաբանութիւն Փիլոնի» լուծմունք-սեղմագիր (կազմվել է, հավանաբար, *Վանական Վարդապետի* դպրոցում), «Նախախնամության մասին» և «Անասուն կենդանիների բանականությամբ օժտված լինելու մասին» երկերի երեք լուծմունքներ (որոնցից մեկը թերևս վերագրելի է *Մխիթար Գոչին*): Երկուական լուծմունքներ են պահպանվել «Օրենքի այլաբանության», «Նահապետների», «Ծննդոց գրքի խնդիրների և լուծումների» և «Հեսսեների կամ տեսական կյանքի մասին» երկերի վերաբերյալ: Մեկական լուծմունք նվիրված է «Ելք գրքի խնդիրներին և լուծումներին», «Տասնաբանյա օրենքին», «Մասնավոր օրենքների» չորս պատառներին և «Աստված՝ բարեգործ հուր» կտորին, ինչպես նաև կեղծ-փիլոնական «Հովնանու մասին» և «Սամփսոնի մասին» ճառերին: Լուծմունքներին են հարում «Նախախնամության մասին» երկի *Հովհան Որոտնեցու* «Հավաքում»-վերապատումը, հինգ ներածական դասախոսություն Փ. Ա-ու և նրա աշխատությունների մասին (*պատճառներ*), որոնցից մեկը պատկանում է Մխիթար Գոչին, մեկը՝ *Դավիթ Քոբայրեցուն* և մի խումբ բառգրքեր («Բառք Փիլոնի», «Բառք խորանի», «Յոթներորդ գլուխ գրոց»), որոնք պարունակում են լուծմունքներից քաղած բառամթերք: Ձեռագրային նյութը ցույց է տալիս, որ հոգևոր դպրոցներում Փ. Ա-ու երկերով առավելապես հետաքրքրվել են XII–XIII դդ.: XIV դարից սկսած հայ փիլոնական ավանդությունը մտել է զուտ պահպանական փուլ և հետզհետե սպառվել:

Երկ. Բանք երեք ձև ի լոյս ընծայեալք..., աշխատասիր. Մ. Ավգերյանցի, Վնտ., 1822: Մնացորդք ի Հայս, աշխատասիր. Մ. Ավգերյանցի, Վնտ., 1826: Ճառք, Վնտ., 1892:

Գրկ. Գրիգորյան Գ., Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները, ԲՄ, № 5, 1960: Անթաբյան Փ., Հովհաննես Սարկավագին վերագրված «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ, ՊԲՀ, 1983, № 1: Վարդազարյան Օ., Մեկնողական ընթերցանությունները և Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերեն մեկնությունները, ԲՀ, № 3, 2000: Zuckerman C., A Repertory of Published Armenian Translations of Classical Texts, revis. by M. E. Stone, Jerusalem, 1995; Wolfson H.A., Philo. Fundations of Religious Philosophy in Judaism, Christianity and Islam, v. 1–2, Camb., 1962; Runia D.T., Philo in Early Christian Literature: A Survey. Compendia Rerum Iudaicarum ad Novum Testamentum, sec. III. Jewish Traditions in Early Christian Literature, v. 3, Minneapolis, 1993.

Օլգա Վարդազարյան

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, տես *Դավանանք Հայաստանյայց առաքելական եկեղեցու* հոդվածում:

Քահանա

ՔԱՀԱՆԱ (արամերեն՝ kāhāna – Աստծո սպասավոր), քահանայություն, երեց, եկեղեցու նվիրապետական կարգի յոթերորդ աստիճանը: Ք. եկեղեցու խորհուրդները (բացի *ձեռնադրությունից*), *ծեսերն* ու արարողությունները կատարող անձն է և *ծխի* հովիվը: Նա միջնորդն է Աստծո և մարդկանց միջև և մեղքերին *քավություն* տվողը (Ղևտ. **4**.26, 31, 35, **5**.8, 13, **6**.7 ևն): Հին ուխտի շրջանում քահանայության պաշտոնի կոչվածները եղել են ղևտացիները՝ Մովսես մարգարեի եղբայր Ահարոնը և նրա որդիները (Ահարոնի կարգի քահանայություն, տես Ելք **28**.1, 41, **29**.9 ևն), որոնք կատարել են *մեղքերի* քավության համար մատուցվող *զոհաբերությունը*: Նրանց կատարած ծեսերն ու փրկության զոհաբերումները Նոր ուխտի Քահանայապետի՝ Հիսուս Քրիստոսի կատարելիք զոհագործության ստվերներն էին: Սակայն Ղևտական քահանայությունն անկատար էր, որովհետև մահն արգելք էր լինում, որ նրանք տևապես Ք. մնային (տես Եբր. 7.23), և Աստված կարգեց նոր Ք.՝ «Դու հավիտյան քահանա ես, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. **5**.6) կամ «... հավիտյանների Քահանայապետ, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. **5**.10), ինչպես որ մարգարեացված էր Հին ուխտում (Սաղմ. **109**.4):

Հիսուս Քրիստոսը կոչվել է հավիտենական Ք. և Քահանայապետ, որովհետև «... ունի անանց քահանայություն: Ուստի և կարո՛ղ է իր միջոցով Աստծուն մոտեցողներին մեկընդմիշտ փրկել. քանի որ նա միշտ կենդանի է՝ բարեխոս լինելու նրանց համար» (Եբր. **7**.24–25): Հիսուս Քրիստոսը հավիտյանների Քահանայապետ է, որովհետև ուղարկված էր Հայր Աստծուց քահանայանալու և բոլոր մարդկանց մեղքերին թողություն տալու, այլ ոչ թե Ղևտական քահանայապետների նման «...նախ իր մեղքերի համար զոհեր մատուցելու և ապա՝ ժողովրդի մեղքերի համար» (Եբր. **7**.27): Հիսուս Քրիստոսն իր քահանայական պաշտոնը կատարեց՝ ինքն իրեն պատարագ մատուցեց և «...բոլոր իրեն հնազանդվողներին հավիտենական փրկության պատճառ դարձավ» (Եբր. **5**.9): Հայր Աստված, իր Միածին Որդու քահանայապետական միջնորդությունն ու *բարեխոսությունն* ընդունելով, բացեց *դրախտի* դուռը, որ փակված էր Ադամի մեղքի պատճառով: Երուսաղեմի թագավորի՝ Մելքիսեդեկի (թարգմանվում է արդարության թագավոր) կարգի քահանայությունը, որ տրված է Հիսուս Քրիստոսին, հավիտենական և կատարյալ է՝ Որդու հավիտյան կատարյալ լինելու շնորհիվ:

Որպես հավիտենական Ք. ու Քահանայապետ՝ Քրիստոսը հաստատել է նոր քահանայություն, որին կոչվածները պետք է ավետարանեին իր կատարած Փրկագործության խորհուրդը: Ուստի իր աշակերտներին նա շնորհել է քահանայական կարգ և տվել իշխանություն մեղքի կապանքներից ապաշխարող մեղավորներին արձակելու, իր մարմնով ու արյամբ մարդկանց հաղորդություն տալու, հոտը հովվելու, Աստծո խոսքը քարոզելու, օրենքները սովորեցնելու, մկրտելու, հիվանդ-

ներին այցելելու ևն: Սկզբ. շրջանում առաքյալների կողմից ձեռնադրվող Ք-ներն իշխանություն են ստացել՝ կատարելու եկեղեցու բոլոր խորհուրդները, այդ թվում՝ ձեռնադրությունը, բայց հետագայում ձեռնադրության խորհրդի կատարումը վերապահվել է միայն *եպիսկոպոսներին*:

Հայ եկեղեցին ունի ամուսնացյալ և կուսակրոն քահանայություն (տես *Կուսակրոնություն*), որոնք առանձին կարգ չեն, որովհետև քահանայությունը մեկ է ձեռնադրությամբ և *օծումով*: Քահանայական ձեռնադրությունն ունի երկու մաս՝ կոչումն քահանայության (կատարվում է ձեռնադրության նախընթաց օրը, երեկոյան ժամերգությունից հետո) և ձեռնադրություն ու օծում:

Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում առանձին գլուխ է նվիրել քահանայական դասին: Հայոց կաթողիկոսն իր հոգեշահ խրատներով, հորդորներով ու խորհուրդներով Ք-ներին կոչ է արել ճանաչել քահանայության երկնավոր գործի զորությունը, որը «... հրեշտակային գերաշխարհիկ զորություններից ավելի վեր է նրանց համար, ովքեր անարատությամբ և սրբությամբ են կատարում այն» (Ներսես Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», 1991, էջ 80):

Երկարատև և բարեխիղճ ծառայության համար Ք-ներին տրվում է ավագության պատիվ, և նրանք կոչվում են ավագերեց կամ ավագ Ք.:

Արտաշես Ղազարյան

ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, երկաբնակություն, երկբնություն, քրիստոսաբանական համակարգ, որն աստվածաբանական մտքի պատմության մեջ է մտել *Քաղկեդոնի ժողովով*: Վերջինս միայն առաջադրել է որոշակի քրիստոսաբան. պնդումներ, սակայն չի տվել V դ. քրիստոսաբան. միտքը հուզող կարևորագույն խնդիրների բացատրությունները և լուծումները: Մասնավորապես անորոշ էր մնում, թե ինչով է Քաղկեդոնի հանգանակը տարբերվում *Նեստորականությունից*, և ինչպես հաղթահարել թե՛ Ք-յան, թե՛ Նեստորականության մեջ բույն դրած «անտիոքյան» անլուծելի երկվությունը (Քրիստոսի մեջ երկու բնությունների պնդումը): Այս մեկնաբանությունները տրվել են ավելի ուշ՝ բյուզ. աստվածաբան Ղևոնդիոս Բյուզանդացու (VI դ.) կողմից և ապա զարգացել բյուզ. աստվածաբաններ Մաքսիմոս Խոստովանողի (VII դ.) և Հովհաննես Դամասկացու (VIII դ.) աշխատությունների շնորհիվ և ընդհանրացել Քաղկեդոնի ժողովն ընդունած եկեղեցիների դավան. համակարգում:

Քաղկեդոնի ժողովը չեն ընդունել *Արևելյան ուղղափառ եկեղեցիները*, մասնավորապես՝ Հայ եկեղեցին, որի պատմությունը դարեր շարունակ ուղեկցվել է հակաքաղկեդոն. լարված պայքարով: Քաղկեդոնի դեմ գրված հակաճառ. գրականության մեջ նշանավոր է *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն» երկը, որը մեծ ազդեցություն է թողել հայ հակաճառ. մտքի ձևավորման վրա: Հայկ. աղբյուրներից կարելի է առանձնացնել «*Կնիք հավատո*» և «*Գիրք թղթոց*» ժողովածուները, *Հովհաննես Գ Օձնեցու*, *Խոսրովիկ Թարգմանչի*, *Անանիա Սանահնեցու*, *Հովհաննես Սարկավագի*, *Մխիթար Սասնեցու*, *Եսայի Նչեցու*, *Գրիգոր Տաթևացու* դավան. աշխատությունները:

Պատմականորեն Քաղկեդոնի ժողովը հրավիրելու պատճառը *եվտիքականության* դեմ պայքարն էր: Եվտիքականությունն առաջացել էր հականեստոր. պայքարի ծայրահեղություններից: Եվտիքեսն ակնհայտորեն չարաշահում էր «մեկ բնություն» բանաձևը և չէր ընդունում Քրիստոսի մարդեղության իրականությունը: 448-ի տեղական ժողովում Կ. Պոլսի Փլաբիանոս պատրիարքի գլխավորությամբ Եվտիքեսը դատապարտվել է, և առաջ է քաշվել «երկու բնություն» բանաձևը: 449-ին Ալեքսանդրիայի Դիոսկորոս պատրիարքի գլխավորությամբ մի նոր ժողով է հրավիրվել, որտեղ Եվտիքեսը ներկայացրել է երեք տիեզերաժողովներին համաձայն մի դավանություն և արդարացվել, իսկ Փլաբիանոսը դատապարտվել է: 449-ին Հռոմի Լևոն I պապը Փլաբիանոսին է ուղարկել մի թուղթ՝ *Լևոնի տոմարը*, որը մեծ ազդեցություն է թողել Քաղկեդոնի ժողովի որոշումների վրա:

Լևոնի տոմարի քրիստոսաբանության մեջ առկա է նույն «անտիոքյան» անլուծելի երկվությունը, որն ընդունվել է որպես հավատի խոստովանության հիմք: Լևոնի տոմարի աստվածաբան. ընկալումներն իրենց որոշակիությանը և ամբողջականությանն են հասել Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումներում:

Քաղկեդոնի հանգանակի կառույցը շատ նման է Լևոնի տոմարին, սակայն վերջինիս բառացի կրկնությունը չէ: Ընդունելով երկու բնությունների մեջ ճանաչելի, Քաղկեդոնի

հանդանակը Քրիստոսին միավորում է մեկ անձով: Թե ինչ նկատի ունեին Քաղկեդոնի ժողովականները մեկ անձ ասելով և ինչով է այն տարբերվում Նեստոր. «միացության դեմքից», մնում էր անորոշ: Քաղկեդոնը չի տվել այդ հարցի պատասխանը: Նրա լեզուն աստվածաբան. նորամուծություն էր, որը պարտադիր էր դարձնում եզրաբանական որոշակի համակարգ՝ արգելելով ցանկացած ուրիշը: Այն նախևառաջ արգելում էր *Կյուրեղ Ալեքսանդրացու* լեզուն:

Քաղկեդոնի ժողովն *Ընդհանրական եկեղեցու* պառակտման պատճառ է դարձել: Այն չեն ընդունել Ալեքսանդրյան դպրոցը և նրա ավանդությանը հարազատ մնացած Արևելյան ուղղափառ եկեղեցիները (այդ թվում և Հայ եկեղեցին): Այդ մերժումը կապված էր աստվածաբան. համակարգերի այլությամբ, քրիստոսաբան. խոստովանությունների անհամընկնելիությամբ, առաքելական ավանդության իրարամերժ ընկալմամբ, *Ալեքսանդրիայի* և *Անտիոքի* աստվածաբան. դպրոցների առանձնահատկություններով: Ալեքսանդրյան աստվածաբանությունը չունի մտաբանական խճողումներ և հավատի խորհուրդը մտքի համար դյուրընկալելի դարձնելու հակումներ: Քրիստոսը կատարյալ Աստված է և կատարյալ մարդ: Աստվածությունը և մարդկությունն անփոփոխելի, անշփոթելի և անբաժանելի կերպով միացած են «մեկ բնության» մեջ: Այս միությունն էական ու բնական միություն է, միևնույն ժամանակ՝ անճառելի և անհասանելի մտքի համար: Ալեքսանդրյան ավանդությունը մերժում է ցանկացած բաժանություն և երկվություն Քրիստոսի մեջ: Մեկ է Քրիստոսը՝ մարմնացյալ Բանը. մեկ աստվածամարդկային բնություն, մեկ անձ, մեկ դեմք, մեկ կամք, մեկ ներգործություն [համածական (integral) սկզբունք]: Երկու բնությունների տրոհելը և անձով ու դեմքով միավորելը՝ արևելյան վարդապետության կողմից դիտարկվում է որպես Աստվածամարդու անճառ խորհրդի նսեմացում, հավատի հայեցողական խոստովանությունը մտաբմբռնելի մեխանիզմի վերածելու փորձ:

Քաղկեդոնի ժողովով որոշվել է վերջ տալ «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարդացելոյ» ալեքսանդրյան «անհանգիստ» բանաձևին, քանի որ այն շահարկել էին Ապողինարը (տես *Ապողինարիզմ*) և Եվտիքեան իրենց հերձվածող. ուսմունքներում: Քաղկեդոնի ժողովականները «մեկ բնություն» բանաձևում շփոթից և մարդաբանական թերացումից բացի ուրիշ ոչինչ տեսնել չէին ուզում: Նրանք գտնում էին, որ միակ ճիշտ քրիստոսաբան. կառույցը կարելի է կառուցել անտիոքյան «երկու բնություն» բանաձևի հիման վրա: Սակայն անտիոքյան քրիստոսաբանությունն ուներ հայտնի թույլ կողմեր, որոնք ամենայն սրությամբ երևան էին եկել Նեստորի քրիստոսաբան. համակարգում (ուշադրավ է, որ Քաղկեդոնի ժողովը ոչ մի քննադատ. խոսք չի ասել Նեստորի վարդապետության մասին) և սուր քննադատության ենթարկվել Կյուրեղ Ալեքսանդրացու կողմից: Ըստ Անտիոքյան դպրոցի՝ Քրիստոսն ունի «երկու բնություն», և Քրիստոսի մեջ ամեն ինչ որոշակիորեն բաշխված ու բաղդատված (ածանցված) է ըստ աստվածության և մարդեղության բնական հատկությունների: «Երկու բնությունների» ընդունումը սպառնում էր «երկու կենտրոնների» և «երկու անձերի» վտանգով: Այս «ճեղքվածը» հաղթահարելու համար Նեստորը գնացել է հետևյալ ճանապարհով. «երկու բնությունները» կարող են միավորվել վերբնութենական կամ միջբնութենական ինչ-որ կապով, որը նա արտահայտել է «միացության դեմք» եզրով: Նեստորի մոտ երկու բնություններն անձնավոր և ինքնուրույն են, որոնք, սակայն, միացած են խոնարհման մեջ՝ «միացության դեմքով»: Ակնհայտորեն այս արհեստական համակարգում խախտվել է փրկաբանական իդեալը, այսինքն՝ Աստվածամարդու էական և դոյաբանական միությունը: Նեստորական հերձվածի բացահայտումն Ալեքսանդրյան դպրոցի փայլուն նվաճումներից էր:

Քաղկեդոնականները շարժվել են մեկ այլ ճանապարհով: Նրանք «երկու բնությունները» միավորել են ոչ միայն դեմքով, այլև՝ մեկ անձով, այսինքն՝ բնութագրական «դեմքը» փորձել են ամրապնդել դոյաբանական «անձով»: Այսուհանդերձ, դեռևս այս վիճակով քաղկեդոնյան միավորումը հեռու չէր Նեստորականությունից, և տակավին անորոշ էր միության պահը: Եթե ընդունվում է բնությունների անձնականությունը և ինքնակենտրոնությունը, ապա նորից խախտվում է Աստվածամարդու միությունը: Այս հարցն այնքան էլ պարզ չէր Քաղկեդոնի ժողովականների համար: «Լուծումը» առաջադրվել է Քաղկեդոնի ժողովից շուրջ հարյուր տարի հետո՝ Ղևոնդիոս Բյուզանդացու կողմից և քաղկեդոն.

վարդապետության մեջ վերջնականապես ամրապնդվել Մաքսիմոս Խոստովանողի և Հովհաննես Դամասկացու աշխատությունների շնորհիվ:

Ըստ Ղևոնդիոս Բյուզանդացու, բնությունը կարող է իրականանալ կամ անձնավորվել մեկ այլ բնության անձով, այսինքն՝ հնարավոր են մեկ անձով անձնավորված (կայացած) բնություններ (այս բաղադրյալ բնությունների միությունն արտահայտվում է անձի եզակիությամբ): Այս արհեստական համակարգը, ըստ որի հնարավոր են մեկ անձով անձնավորված բազմակի բնություններ, Ղևոնդիոս Բյուզանդացին ստեղծել է զուտ իր քրիստոսաբան. ենթադրությունները հիմնավորելու համար: Ըստ նրա, Քրիստոսի մեջ մարդկային անանձ բնությունն անձնավորվում է Աստծո Միածին Որդու՝ Բանն Աստծո Անձով: Հետևաբար երկու բնությունները միավորվում են Բանի Անձի մեջ (hypostatic union):

Այսպիսով, քաղկեդոնյան համակարգում որոշակիորեն խոստովանվում է մարդկային անձի բացակայությունը, այսինքն՝ մարդկային բնության անանձնականությունը Քրիստոսի մեջ (հենց այստեղ է Ք-յան տարբերությունը Նեստորականությունից): Եթե Նեստորը երկու անձնավոր բնությունները փորձել է միավորել վերբնութենական կամ միջբնութենական կապակցումով, ապա, ըստ Ք-յան, մեկ անձնավոր բնությունը սերտաճում է մյուս անանձ բնության հետ կամ մեկ անձնավոր բնությունն իր անձով անձնավորում և գոյության է կոչում մյուս բնությանը:

Հայ եկեղեցու հայրերն իրավամբ գտել են, որ քաղկեդոնյան համակարգում կա քողարկված մարդաբան. առնվազություն (մինիմալիզմ), այսինքն՝ քաղկեդոնականները չեն ընդունում կատարյալ մարդկայինը Քրիստոսի մեջ կամ խոստովանում են թերի մարդեղություն: Նրանք սուր քննադատության են ենթարկել բնությունների այս արհեստ. կապակցումը: Մարդկային բնությունն անձնավոր բնություն է: Անանձ մարդկային բնություն գոյություն չունի, հետևաբար այն սոսկ տեսական ըմբռնում է և իրական չէ: Մարդկային անձի ժխտումը Քրիստոսի մեջ նշանակում է մարդկային անկատարություն կամ անգոյություն ներմուծել Քրիստոսի մեջ և դրանով անկատար ու անիրական խոստովանել մեր փրկությունը:

Եթե անեղ աստվածային Անձին հնարավոր է եղական բնություն շարակցել և մարդկային եղական անձը հնարավոր է փոխարինել Բանի անեղ Անձով, ապա մարդկային կրքերը վերագրելի են Աստծուն, և մարդկային եղական անձը հավասարազոր է դառնում աստվածային անեղ Անձին: Եթե Քրիստոսի մեջ մարդկային բնությունն անձ չունի, ապա Քրիստոսի մեջ ոչընչանում է մարդկային անհատականությունը և ինքնությունը (մարդաբան. կատաստրոֆա), և բոլոր մարդիկ Քրիստոսի մեջ են, խաչվում են նրա հետ, թաղվում, հարություն առնում (առանց անհատականորեն և կամովին այդ ամենին մասնակցելով): Եթե մարդկային բնությունը գոյության է կոչվում (կայանում է) աստվածային Անձով, ապա մարդկայինը Քրիստոսի մեջ ազատ ու ինքնաշարժ չէ և միաձուլված է աստվածությամբ: Անանձ մարդկային բնությունն անգո է և ընդամենը տեսական հասկացություն, որը բնորոշում է մարդեղությունն ընդհանրապես: Եթե Քրիստոսը մարմնավորվել է անանձ մարդկությամբ, ապա նա որոշակի մարդ չէ, նրա մարդեղությունն ուղղակի մի աստվածային «հրաշք» է, «հնարամտություն»: Նման համակարգը հղի է փրկաբանական իդեալի խախտմամբ, քանզի եթե Քրիստոսը որպես կատարյալ մարդ չի գործում ազատ և ինքնիշխան կերպով, ապա փրկությունը դառնում է «դերբնական երևույթ» մարդկության համար:

Ըստ Հայ եկեղեցու հայրերի, Բանն Աստված Կույսից վերցրել է անձնավոր և դիմավոր մարդկային բնությունը, այսինքն՝ իրեն է միավորել կատարյալ և անթերի մարդկություն՝ իրենից օտարացած մարդկությանը փրկագործելու համար: Քրիստոսի մեջ աստվածամարդկային միությունը ոչ թե բնությունների հարակցություն, կապակցություն կամ վերաբերություն է, այլ՝ էական, գոյաբանական և բնութենական միություն, որի մեջ հնարավոր չէ ներմուծել որևէ բաժանում կամ լուծարում: Աստվածայինը և մարդկայինը անձով, բնությամբ, կամքով և ներգործությամբ անբաժանելիորեն միավորված են մեկ Տեր Հիսուս Քրիստոսի մեջ: Ուստի մեկ է մարդացած Բանն Աստծո անձը, բնությունը, կամքը և ներգործությունը, և մերժելի են մեր փրկության իսկությունը սասանող որևէ բաժանություն կամ երկվություն Հիսուս Քրիստոսի մեջ: Հովհաննես Գ Օձնեցու խոսքերով՝ «Միության մեջ պետք չէ ուրանալ յուրաքանչյուրի կատարելությունը, ոչ էլ յուրաքանչյուրի կատարելու-

թյան պատճառով հրաժարվել մեկ կատարելությունից՝ միությունն խոստովանելով անայլայլության մեջ և անայլայլություն՝ միության մեջ: Ուրեմն մեկ բնություն և մեկ դեմք ունի Քրիստոսը ոչ թե ըստ բնության նույնության կամ ըստ մեկանձնականության, քանզի այս երկուսը միասին գրեթե զրկում են Աստծուն մարդանալուց և մարդուն՝ աստվածանալուց, այլ ըստ Բանի՝ իր մարմնի հետ անճառ միավորության» (տես «Ընդդէմ երեւութականաց», «Մատենագրութիւնք», 1833, էջ 51–52):

Դարեր տևած քաղկեդոն. վեճերն այսօր փոխարինվել են աստվածաբան. երկխոսությամբ: Միմյանց նկատմամբ ատելությունը հետզհետե փոխարինվում է հանդուրժողականության և փոխադարձ ըմբռնման մթնոլորտով: Թարգմանվում են սկզբնաղբյուրներ, որոնք թույլ են տալիս ոչ միջնորդավորված պատկերացումներ ձեռք բերել այս կամ այն ավանդության մասին: Բայց, այսուհանդերձ, կողմերի միջև մնում են մի շարք կարևոր դավան. տարաձայնություններ և Փրկագործության խորհրդի իրարամերժ ընկալումներ:

Գրկ. Կ յ ո ւ ր ե ղ Ա լ ե ք ս ա ն դ ր ա ց ի, Գիրք պարապմանց, ԿՊ, 1717: Գ ր ի գ ո ր Տ ա թ է վ ա ց ի, Գիրք հարցմանց, ԿՊ, 1729: Սկզբնագիրք տումարի սրբոյն Լեւոնի եւ սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի, Վնտ., 1805: Հ ո վ հ ա ն ն ե ս Ի մ ա ս տ ա ս ե ր Օ ձ ն ե ց ի, Մատենագրութիւնք, Վնտ., 1833: Տ ի մ ո թ է ո ս Ա լ ե ք ս ա ն դ ր ա ց ի, Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովոյն Քաղկեդոնի, Էջմիածին, 1908: Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Հ ո վ ս ե փ յ ա ն Գ., Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղ-պատ, 1899: Ա ր ա մ յ ա ն Մ., Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրվագծեր (VI–VIII դդ.), «Գանձասար», 2, 1992: *П о с н о в М.Э., История христианской церкви, Брюссель, 1964; Б о л о т о в В.В., Лекции по истории древней церкви, т. 4, М., 1994;* G r i l l m e i e r A., Christ in Christian Tradition, v. 1,2, 1975; The Seven Ecumenical Councils, Nicene and Post-Nicene Fathers, second series, v. 14, 1995.

Մեսրոպ քհն. Արամյան

ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎ 451, գումարվել է Փոքր Ասիայի Քաղկեդոն քաղաքում, հոկտեմբերի 8–31-ը՝ բյուզ. կայսր Մարկիանոսի և Հռոմի պապ Լևոն Ի-ի նախաձեռնությամբ: Ժողովին մասնակից 636 եպիսկոպոսներից գրեթե բոլորը Կ. Պոլսի և *Անտիոքի* պատրիարքություններին ենթակա շրջաններից էին: Ժողովը վարել են Մարկիանոս կայսրի և Պուլքերիա կայսրուհու նշանակած պաշտոնյաները, որոնք Հռոմի պապի երեք պատվիրակներն էին, իսկ կայսրը մասնակցել է միայն վեցերորդ նիստին: Քաղկեդոնում քննարկվող գլխ. խնդիրները երկուսն էին. ա. Եվտիքեսի վարդապետության (տես *Եվտիքականություն*) դատապարտումը և առաջ եկած դավան. խնդրի լուծումը, որի ընթացքում քննարկվել է նաև այն հոգևորականների հարցը, որոնք մասնակցել են այդ աստվածաբան. վեճին, և բ. պատրիարքական աթոռների դերագահության և փոխհարաբերությունների, *Ալեքսանդրիայի*, Անտիոքի և Կ. Պոլսի պատրիարքությունների եկեղեց. կառավարման կարգավորումը:

Ձգտելով հասնել Ալեքսանդրիայի աթոռի ազդեցության թուլացմանը և Կ. Պոլսի աթոռի դերի բարձրացմանը՝ բյուզ. կայսրի ու Հռոմի պապի ներկայացուցիչները կարողացել են Արևելքին ուժով պարտադրել նոր վարդապետություն, որը խորթ էր Ալեքսանդրյան աստվածաբան. դպրոցի ավանդությանը: Մեծ հարված է հասցվել Ալեքսանդրիայի աթոռին, դատապարտվել և աքսորվել է պատրիարք (444–451) Դիոսկորոս Ալեքսանդրացին: Կայսրի և պապի ներկայացուցիչները, չկարողանալով Դիոսկորոս Ալեքսանդրացուն մեղադրել հերձվածողության և ուղղափառությունից շեղվելու մեջ, նրան աթոռազրկել են եկեղեց. կարգապահությունը խախտելու և բռնություններ գործադրելու պատճառաբանությամբ: Իսկ Քաղկեդոնի ժ-ին մասնակցած փոքրաթիվ ալեքսանդրացիները չեն ստորագրել հավատի նոր հանգանակը: Քաղկեդոնի ժ. չի դատապարտել *Նեստորականության* նախահայրեր համարվող Դիոդորոս Տարսոնացուն և Թեոդորոս Մոպսուեստացուն: Երկար վեճերից հետո բավարարվել է միայն Եվտիքեսին և Նեստորին նզովելով, ուղղափառ ճանաչել Լևոն Ի պապի դավանական թուղթը՝ *Լևոնի տոմարը*: Քաղկեդոնի ժ. ընդունել է դավան. դրույթների մի հանգանակ, որը հայտնի է Քաղկեդոնի հանգանակ անունով:

Քաղկեդոնի ժ. միայն առաջադրել է որոշակի քրիստոսաբան. պնդումներ, սակայն չի տվել դրանց բացատրություններն ու լուծումները: Դրանք արվել են ավելի ուշ՝ բյուզ. աստվածաբաններ Ղևոնդեոս Բյուզանդացու (VI դ.), Մաքսիմոս Խոստովանողի (VII դ.), Հովհաննես Դամասկացու (VIII դ.) աշխատություններում և ընդհանրացել Քաղկեդոնի ժ. ընդունած եկեղեցիների դավան. համակարգում: Քրիստոսաբան. այդ համակարգը կոչվում է *քաղկեդոնականություն*:

Ք. ժ. ընդունել է 28 կանոն, որոնցից վերջինը վերստին հաստատում էր *Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի* (381) երրորդ կանոնը՝ առավել ընդարձակությամբ և իրավունքներով, այն է՝ Կ. Պոլսի աթոռը ճանաչվում է երկրորդը Հռոմից հետո, իսկ Թրակիայի, Ասիայի և Պոնտոսի դիոցեզերը (թեմերը) վերածվում էին Կ. Պոլսի աթոռին ենթակա մետրոպոլիտությունների: Լևոն I պապը, հասկանալով այդ կանոնի վտանգավորությունը Հռոմի համար, չի ընդունել այն, իսկ պապի պատվիրակները բողոքելով հեռացել են Քաղկեդոնից:

Ք. ժ. *Ընդհանրական եկեղեցու* պառակտման պատճառ է դարձել: Այն չեն ընդունել Ալեքսանդրյան դպրոցը և նրա ավանդությանը հարազատ *Արևելյան ուղղափառ եկեղեցիները* (այդ թվում և Հայ եկեղեցին): Քաղկեդոնը մեծ հուզումներ է առաջ բերել ողջ Արևելքում, նրա որոշումները դիմադրության են հանդիպել Երուսաղեմում, Եգիպտոսում, Արևելքի բոլոր նշանավոր աթոռներում, անգամ Անտիոքում, որը միշտ Ալեքսանդրիայի հակառակորդն է եղել: 451-ից մինչև 518-ը Բյուզ. կայսրությունը քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների կրոն. վեճերի ու պայքարի մեջ է եղել: Այդ խռովությունները մեծ վտանգ են ներկայացրել պետության միասնության համար, ուստի կայսրերը (Լևոն, Զենոն, Անաստաս) միջոցներ են ձեռնարկել հակառակությունները մեղմելու համար: 476-ին Բասիլիկոս կայսրը հրապարակել է մի հրովարտակ, որով նզովել է Ք. ժ. և վերացրել հակաքաղկեդոնականների դեմ հալածանքները: Երկու կողմերին հաշտեցնելու փորձ էր Զենոն կայսրի նշանավոր «*Հենոտիկոնը*» («Միության գիր»), որը Ք. ժ-ի լռելյայն դատապարտությունն էր՝ առանց նրա անունը տալու: Սակայն 518-ին գահ բարձրացած Հուստինոս I կայսրը, ձգտելով վերականգնել իր նախորդների կրոնաեկեղեց. քաղաքականության պատճառով Հռոմի հետ խզված հարաբերությունները, դատապարտել է Զենոնի «Հենոտիկոնը», Ք. ժ. հռչակել «սուրբ և տիեզերական», հալածանքներ սկսել հակաքաղկեդոնականների դեմ և ողջ Բյուզ. կայսրությունում, բացի Եգիպտոսից, Ք. ժ-ի որոշումներն ու Լևոնի տոմարը հռչակել պաշտոն. դավանանք:

Հայ եկեղեցին սկսած V դ. վերջից՝ Հայոց կաթողիկոս *Հովհաննես Ա Մանդակունու* օրոք, երբ ընդունվել է «Հենոտիկոնը» և հայերեն է թարգմանվել *Տիմոթեոս Կուզի* «Հակաճառություն» հակաքաղկեդոն. աշխատությունը, հստակեցրել է իր վերաբերմունքը Ք. ժ-ի հանդեպ և կանգնել հակաքաղկեդոն. դիրքերի վրա: Իսկ 506-ի Դվինի առաջին ժողովում (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) Հայ եկեղեցին մերժել է Ք. ժ. և, ինչպես այդ ժամանակ ընդունված էր Արևելքում, առանց ժողովի անունը տալու դատապարտել այն: Ք. ժ. առաջին անգամ հայ դավան. գրվածքներում և մատենագրության մեջ հիշատակվում է Հայոց կաթողիկոս *Բաբկեն Ա Ոթմսեցու*՝ Դվինի 506-ի ժողովից անմիջապես հետո ուղղափառ ասորիներին գրած «Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս» երկրորդ թղթում և անվանվում «ստութիւն» ու նեստորականներին զորություն տվող: Հայ եկեղեցու պատմությունը դարեր շարունակ ուղեկցվել է հակաքաղկեդոն. լարված պայքարով, քաղկեդոնականության միջոցով Հայ եկեղեցին Հույն և Կաթոլիկ եկեղեցիներին ենթարկելու և դավանափոխելու փորձերով, քաղ. ճնշումներով: Հայ եկեղեցու հայրերն ու վարդապետները գրել են բազմաթիվ հակաճառ. գործեր, կազմվել են դավան. բնույթի ժողովածուներ («Կնիք հաւատոյ», «Գիրք թղթոց», «Արմատ հաւատոյ» ևն), որտեղ հիմնավորվել է Հայ եկեղեցու ուղղափառ ընկալումը քրիստոսաբան. այդ կարևոր հարցում (տես *Դավանանք Հայաստանյայց առաքելական եկեղեցու*):

Գրկ. Սկզբնագիրք տումարի սրբոյն Լեւոնի եւ սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի, Վնտ., 1805: Տիմոթեոս Ալեքսանդրացի, Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, Էջմիածին, 1908: Կնիք հաւատոյ..., Էջմիածին, 1914: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994: Տեր-Միքելյան Ա., Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք, Մ., 1892: Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Էջմիածին, 1908: Արամյան Մ., Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրվագծեր (VI–VIII դդ.), «Գանձասար», 2, 1992: *Поснов М. Э., История христианской церкви, Брюссель, 1964;* Grillmeier A., Bacht H., Das Konzil von Chalkedon, 3 Bd., Würzburg, 1951–54; Mansi J. D., Sacrorum conciliorum nova et amplissima collectio, t. 6–7, Graz, 1960; Sarkissian K., The Council of Chalcedon and the Armenian Church, L., 1965.

ՔԱՌԱՄՆՈՐԴԱՑ ՊԱՀՔ, տես *Մեծ պահք*:

ՔԱՎՈՒԹՅՈՒՆ, փրկանք, հատուցում, փրկագին, մարդկանց գործած *մեղքերի*,

հանցանքների պատժապարտության վերացումը Աստծո կողմից և նրա կամքով, ա՛յն պարագայում, երբ լրացվում կամ հագեցվում է նրա սրբությունն ու արդարությունը այնպիսի՛ *զոհաբերությամբ*, որը պատշաճում կամ ընդունելի է Աստծուն:

Հին ուխտի՝ Ք-յան համար Աստծուց սահմանված խորհրդավոր զոհերը նախօրինակներն ու նշանակներն էին Հիսուսի և նրա թափած քավչարար արյան: Հիսուսի նախանշանն էր զատկական մեկ տարեկան արու և անարատ ոչխարի (գառան, ուլի) զոհաբերումը հրեական տարվա առաջին ամսի տասնչորսին, Աստծուց սահմանված առաջին *Զատկին*, Եգիպտոսից իսրայելացիների դուրս գալու նախընթաց օրվա երեկոյան:

Այնուհետև Ք-յան օր է սահմանվել յոթերորդ ամսվա 10-րդ օրը (հոկտ. սկզբին), Տաղավարահարաց տոնից հինգ օր առաջ. (Ղևտ. **23.**26–32): Դա տարվա մեջ միակ պարտադիր ծոմի օրն էր, որի արարողությունները մանրամասնորեն նկարագրված են Ղևտացիների գրքի 16-րդ գլխում: Այդ օրը Ք. կատարելու համար քահանայապետը, մտնելով Վկայության *խորանի* Սրբությունների Սրբությունը, հատուկ արարողակարգով նոխազի արյունը սրսկել է երկու քերովբեների միջև գտնվող *Ուխտի տապանակի* ոսկե կափարիչին (որը կոչվել է Ք. կամ Ք-յան սեղան): Նույն օրն է կատարվել նաև ազատ արձակվող նոխազի աբարողությունը, որ Տերը պատվիրել էր Մովսեսին (Ղևտ. **16.**1–10). երկու նոխազ են ընտրել, մեկի գլխի վրա ձեռք դնելով՝ իրենց մեղքերն ու անօրենությունները թափել են կենդանու գլխին կամ փոխանցել նրան և ժողովրդի մեղքերով բեռնավորյալ՝ ազատ արձակել դեպի անապատ (տես Ղևտ. **16.**20–28). մյուսը զոհաբերել են Տիրոջը՝ քահանայապետի, նրա ընտանիքի և ողջ ժողովրդի մեղքերի Ք-յան համար: Հատուկ ծիսակարգով կատարել են նաև այլ ողջակեզներ (փրկության, հատուցման, թողության ևն) և անարյուն զոհաբերություններ (տես Ղևտ. **1–6** ևն), որոնց վերջնական նպատակը մեղքերի Ք. էր, մեղքերի թողությամբ՝ մարմնավոր ու հոգևոր մաքրագործումը և *ուխտի* նորոգումը: Հին ուխտում Աստված Ք. շնորհում էր կենդանիների զոհաբերությամբ, իսկ նորում՝ Աստծո Գառի՝ ճշմարիտ ու կատարյալ զոհի՝ Հիսուս Քրիստոսի արյամբ. «Ահա՛ Գառն Աստուծո, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. **1.**29, տես նաև Մատթ. **26.**28, Մարկ. **14.**24, Ա Կորնթ. **5.**7, Եփես. **1.**7, Եբր. **9.**26 ևն): Պողոս առաքյալի խոսքերի համաձայն, Ք-յան «...պատարագները, որ մատուցում էին տարեցտարի, չէին կարող կատարյալ դարձնել մատուցողներին» (Եբր. **10.**1) և «...նոխազների և ցուլերի արյունը չէր կարող վերացնել մեղքերը» (Եբր. **10.**4), քանի որ դրանք ժամանակավոր և երկրային Ք-ներ էին:

Աստված նախատեսել էր կատարյալ և հավիտենական Ք՝. Հիսուս Քրիստոսին, որն իր անձի պատարագումով հավիտենական Ք. շնորհեց իրեն հավատացողներին (Եբր. **9.**6–10, 18, **10.**10, **13.**12, Հովհ. **4.**9–10 ևն). «եվ նա՛ է քավությունը մեր մեղքերի, և ոչ միայն մեր մեղքերի, այլև՝ ամբողջ աշխարհի» (Ա Հովհ. **2.**2): Ք-յանը հետևում է մեղքերի թողությունը, փրկությունը, Տիրոջ մարմնի և արյան *Հաղորդությունը*: Տես նաև *Ապաշխարություն*:

Լևոն Սարգսյան

ՔԱՐԿՈՓԻ ՎԱՆՔ, տես *Խոտակերաց վանք*:

ՔԱՐՈԶ, քրիստոնեական հավատի ուսուցման և տարածման միջոց, կրոնադավանական, բարոյախրատական պատվիրանների հրապարակային ուսուցում, խրատ: 1. Եկեղեցու բեմից հոգևորականի՝ ժողովրդին ուղղված խոսք: Լայն առումով վաղքրիստ. լեզվում հասկացվել են նաև հավատացյալներին և քրիստ. առաջին համայնքներին ուղղված *թղթերը*, ավելի ուշ՝ *ճառերը*: Թեմատիկ առումով թղթերից և ճառերից Ք. տարբերվում է նրանով, որ ավելի շատ նվիրված է ոչ թե կրոնադավան. զանազան հարցերի արծարծմանն ու բացատրությանը, այլ՝ այդ հասկացությունների միջոցով ունկնդրի և ընթերցողի վրա ներազդելուն՝ նրան մղելով ապրել քրիստ. հավատով և բարոյականությամբ: Ք., ունենալով ընդհանուր ճանաչող., մեկնող., ջատագով. և ներբող. բնույթ, հիմնականում բարոյադաստիարակչական է: Ք-ի ժամանակ քրիստ. հիմն. հավատալիքները՝ Սուրբ Երրորդություն, Քրիստոսի Աստվածություն, Մարդեղություն, Փրկագործություն ևն, փոխանցվում են ժողովրդին ոչ թե դավանաբան. խրթին բանաձևումներով, այլ՝ բարոյական սկզբունքների հետ ընդելուզված ձևով: Քրիստ. Ք-ի առարկան Քրիստոսի քարոզած խոսքերն ու ճշմարտություններն են, որոնք ուղղակի, անմիջական աղերս ունեն մարդկանց առօրյա կյանքի, ապրելակերպի, գործերի

և փոխհարաբերությունների հետ: Քարոզխոսության բարձրագույն նպատակը Քրիստոսի անձի և գործի մշտնջենական վերակենդանացումն է եկեղեցու հավատացյալների գիտակցության և կյանքի մեջ:

Քարոզի կարևորությունը, անհատի ու հասարակության վրա ունեցած ներազդեցությունը չեշտվում է դեռևս Հին կտակարանում, իսկ Նոր կտակարանում թե՛ Հովհաննես Մկրտչի, թե՛ Քրիստոսի և թե՛ առաքյալների գործունեությունն սկսվում է Քարոզով: Առաքյալներին պատվիրելով տարածել նոր վարդապետությունը՝ Հիսուսն ասում է. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցեք Ավետարանը բոլոր մարդկանց» (Մարկ. 16.15): Քարոզությունը Քրիստոսի առաքելության տարածման գլխ. միջոցն է:

Քանի որ առաքյալների գործունեությունն սկսվել է քարոզությամբ, քրիստոնեության վաղ շրջանում ավետարանելը և քարոզելը նույնացվել է ու միմյանց համարժեք ներկայացվել: Հետագայում Քարոզի գործառնական նշանակությունը փոխվել է: Եթե սկզբ. շրջանում այն ծառայել է ավետարան. քարոզչությանը, քրիստոնեության տարածմանն ու ամրապնդմանը, ապա ավելի ուշ՝ քրիստ. դաղափարների, արժեքների և բարոյականության անխաթար պահպանմանը, այսինքն՝ ավետարանելուն փոխարինել է ավետարանված դաղափարներին հետևելու քարոզությունը: Եթե ավետարանելը ծառայում է նոր կրոնի տարածմանը, անհատական և հաս. գիտակցության հեղաբեկմանը, ապա Քարոզը՝ ընդունված հոգևոր-բարոյական նորմերից չշեղվելուն (որն իրականացվում է հրապարակախոս. ներազդման միջոցով):

Քարոզի և Քրիստոսի խոսքի տարածումը, սկսած առաքելական շրջանից, եկեղեցու հովիվների կյանքի և գործունեության կարևոր տեղն է գրավում: Քարոզությունը առաքյալներից և առաքելական հայրերից փոխանցվել է *Ընդհանրական եկեղեցու* հայրերին, և Քարոզը դարձել է հեթանոսության դեմ մղվող պայքարում քրիստոնեության գլխ. զենքը: Եկեղեցու առաջին չորս դարերի հայրերը հռչակվել են իրենց կենդանի քարոզխոսությամբ, որը հիմնականում կրել է ջատագով. բնույթ: Քարոզի ներգործունը ուժը և թողած տպավորությունը լավագույնս արտահայտվել է Ընդհանրական եկեղեցու հռչակավոր հայրերից *Հովհան Ոսկեբերանին* տրված «Ոսկեբերան» բնորոշման մեջ:

Քարոզը իր գործուն ազդեցությունն է ունեցել նաև հայոց կյանքում, մեծ կարևորություն և նշանակություն ստացել Հայ եկեղեցում: Հայոց դարձը սկսվել է քարոզությամբ: *Գրիգոր Ա Լուսավորիչը* Խոր վիրապից ելնելուց հետո իր քարոզությամբ ժողովրդին նախապատրաստել է քրիստոնեության ընդունմանը: Գրիգոր Ա Լուսավորիչով սկիզբ առած հայկ. քարոզխոսությունն իրենց հովվական և ուսուցողական գործունեությամբ շարունակել են Հայ եկեղեցու հայրերը (*Ներսես Ա Մեծ, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Ա Պարթև, Հովհաննես Ա Մանդակունի, Հովհաննես Գ Օձնեցի, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Մ. Օրմանյան, Ե.Դուրյան* և ուր.), որոնք նաև իրենց ժամանակի մեծագույն քարոզիչներն են եղել: Քարոզխոսությունն այնքան է կարևորվել, որ Գրիգոր Տաթևացին այն ավելի հեղինակավոր դարձնելու նախապայման է համարել վարդապետ. իշխանություն ունենալը: Վարդապետ. և ծայրագույն վարդապետ. *գավազանի* տվչությունը, որպես նշան ուսուցող., քարոզչ. իշխանության, խորհրդանշում է Հայ եկեղեցում քարոզխոսության կարևորությունն ու արժեքը:

Քարի կառուցվածքին, ունեցած նշանակությանը, դերին ու ազդեցությանն անդրադարձել է Գրիգոր Տաթևացին իր «Վասն մեղայ լեզուի» և «Վասն երկրագործաց» Քարներում, որոնցից առաջինը նվիրված է Քարի մատուցման կերպին ու միջոցներին, երկրորդը՝ կառուցվածքին: Նա Քարի ժանրային կառուցվածքը բաժանել է հինգ մասի՝ բնաբան, նախերգան, քարոզ, հորդորակ և օրհնություն:

Քարը ասվում է բարձր տեղից, ըստ Սուրբ Գրքի՝ «պարիսպների գլխից» (Առակ. 1.21): Ժողովրդից վեր մի կետից քարոզելու գաղափարն իր արտահայտությունն է գտել նաև եկեղեցու ընդհանուր կառուցվածքում: Եկեղեցու բեմը, որի բարձրությունից քարոզում է քահանան, համաձայն քրիստ. խորհրդաբանության, միջանկյալ տեղ է գրավում երկնքի ու երկրի միջև: Ս. Գրքում շեշտվում է նաև, որ Քարը պետք է լինի հրապարակային: Դրա լավագույն օրինակը «Լեռան քարոզն» է (Մատթ. 5.1–12), որը նաև կոչվում է «փոքր Ավետարան», իսկ Խրիմյան Հայրիկի խոսքերով՝ «մար-

գարիտ Արքայության երկնից», և խտացված ձևով բովանդակում է քարոզած ճշմարտությունների բուն կորիզը: Ըստ Պողոս առաքյալի, Ք. բխում է ոչ թե մարդկային կամեցողությունից կամ իմաստությունից, այլ՝ աստվածային Սուրբ Հոգուց, և պետք է ասվի Սուրբ Հոգու զորությամբ ու վարդապետությամբ (Ա Կորնթ. 2.3–5, 11–14):

Ք. հիմնվում է Աստվածաշնչի, մասնավորապես՝ Նոր կտակարանի վրա: Սուրբ Գրքի ընթերցումից հետո քարոզիչը բեմ է բարձրանում և օրվա ընթերցումներից ընտրում իր Ք-ի բնաբանը: Ավելի ուշ շրջանում բնաբաններ են ընտրվում նաև շարականներից և առանձին դեպքերում՝ հայ դասական մատենագրության՝ եկեղեցու կողմից նվիրագործված հատվածներից: Ք-ները, նվիրված լինելով օրվա տոնին կամ այդ օրը եկեղեցում կարդացվող սուրբգրային համապատասխան ընթերցվածին (սաղմոններ, մարգարեական, առաքելական և ավետարան. հատվածներ, որոնք որոշված են հաստատուն կերպով), այնուհետև տվյալ տոնը շաղկապում են ժամանակի խնդիրներին և ազգ. կարևոր իրադարձություններին, իսկ օրվա ընթերցվածների վրա խարսխված Ք-ներում, նույն կերպ ավետարան. գաղափարներն արծարծելուց հետո, քարոզիչներն անդրադառնում են այն հարցին, թե որքանով են մարդիկ կարողանում հավատարիմ մնալ այդ գաղափարներին: Դրանով սուրբգրային մնայուն գաղափարներին, քրիստ. բարոյականությանը և արժեքներին հաղորդվում է արդիական հնչեղություն: Ք. սոսկ իր բնաբանի մեկնությունը չէ, այլ ուղղված է տվյալ ժամանակի ունկնդրին, որի համար տարբեր ժամանակներում աստվածաշնչյան միևնույն մնայուն մտքի ու հոգևոր խորհրդի արտահայտությունն իմաստային տարբեր նրբերանգներ է ձեռք բերում և ըստ այդմ էլ ընկալվում ու կարևորվում:

Հայ եկեղեցու քարոզիչը, եթե *եպիսկոպոս* կամ *վարդապետ* է, կրում է իր իշխանությամբ տրված գավազանը: *Քահանա* քարոզիչը կրում է ձեռաց խաչ, *սարկավագը*՝ Ավետարան: Հոգևորականը, «Ամեն»-ով ավարտելով Ք., ձեռքի խաչով խաչակնքում է՝ «կնքէ զբանն»: Ծիսական այս ընթացքի հոգևոր խորհրդի բացատրությունը Գրիգոր Տաթևացին խարսխում է Ղուկասի Ավետարանի «սերմը Աստծո խոսքն է» (Ղուկ. 8.11) և Մարկոսի Ավետարանի «Եվ լավ հողի մեջ սերմանվածները այն մարդիկ են, որ լսում են խոսքը և ընդունում ու պտուղ են տալիս...» (Մարկ. 4.20) խոսքերի վրա: Ըստ այդ զուգահեռի, Ք. այն սերմն է, որ ծլարձակում է մարդու հոգում, այսինքն՝ ներազդում նրա վրա, և ինչպես հողագործները սերմանելուց հետո ջրում են, նույն կերպ և քարոզիչները քարոզելուց հետո խաչով կնքում են, այսինքն՝ օրհնում այն հոգիները, որտեղ սերմանել են «Բանն Աստուծոյ»: Գրիգոր Տաթևացին զգուշացնում է նաև, որ Ք. կարող է ներազդել միայն այն դեպքում, եթե քարոզիչը հետևում է իր քարոզածին և ապրում իր քարոզած կյանքով:

2. Եկեղեցական մատենագրության ժանր: Եկեղեցու հայրերը և մատենագիրները Քրիստոսի խոսքի մեկնության և տարածման համար գրել են Ք-ներ, որոնք հայոց մեջ երբեմն հայտնի են ճառ անունով: Դրանք ունեցել են աստվածաբան., դավանաբան., փիլ., մեկնող., ջատագով., ներբող., բարոյադաստիարակչ. բնույթ և եկեղեց. քարոզխոսության ու հրապարակախոսության լավագույն նմուշներից են: Հայկ. քարոզագրությունն սկսվել է V դ., *Աթանաս Ալեքսանդրացու, Բասիլ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Եփրեմ Ասորու,* Հովհան Ոսկեբերանի, *Կյուրեղ Ալեքսանդրացու* և եկեղեցու այլ նշանավոր հայրերի Ք-ճառերի թարգմանությամբ ու մեկնությամբ: Ք-ներից կազմվել են ժողովածուներ՝ Քարոզգրքեր: Գրիգոր Ա Լուսավորչին վերագրվող «Յաճախապատում ճառք»-ը և Հովհաննես Ա Մանդակունուն վերագրվող «Ճառք»-ը Հայ եկեղեցու առաջին Քարոզգրքերն են: Հայ քարոզագրության լավագույն նմուշներից է Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզչութեանը»՝ իր «Ամարան» և «Ձմերան» հատորներով:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.1, 4-րդ պատկերը:

Գրկ. Տեր-Մկրտչյան Կ., Քարոզի նշանակությունը և գործադրության եղանակը, «Արարատ», 1895, № 2, էջ 41–43: Կյուլեսերյան Բ., Քարոզելու արվեստը, «Լույս», 1905, № 3, էջ 49–54: Հովսեփյան Գ., Դեպի լույս և կյանք, Անթիլիաս, 1986, էջ 7–10: Գարեգին Ա., Համառոտ ձեռնարկ հովվական աստվածաբանության, Էջմիածին, 1995: Վարդանյան Մ., Քարոզը որպես միջնադարյան հրապարակախոսության հոգևոր արտահայտություն, «Էջմիածին», 2000, № 4:

ՔԱՐՈԶ, որպես հայ հոգևոր երաժշտության ժանր ունի հետևյալ իմաստները. 1. *Թվերգի* տեսակներից, որը համընդհանուր է քրիստոնյա եկեղեցիների համար իբրև *ժամերգության*

մեջ գործածվող ասերգ, առհասարակ՝ ժամերգության ընթացքում սարկավագի կողմից կատարվող բոլոր մասերը: Քահանայի ցայտուն օրինակ են *Պատարագի* Քահանայի, սարկավագի ազդարարող և համայնքին ընդհանուր աղոթքի հրավիրող կոչերը, որոնք կարևոր դեր են կատարում Պատարագի առանձին ավարտուն երգեցիկ մասերն իրար կապելու գործում, ինչի շնորհիվ ստեղծվում է Պատարագին բնորոշ միջանցիկ երաժշտաձիսական ձևը: Քահանայի հնչյունային ծավալը չի գերազանցում մաքուր հնդյակի սահմանները, մեղեդին ունի չեշտված հռետորական, երաժշտաարտասանական բնույթ՝ դիատոնիկ հիմքով և վանկային կառուցվածքով: 2. Հայ հոգևոր երգաստեղծության հնագույն տեսակներից մեկը, որի նմուշները գրանցված են *Ժամագրքում*: Ի տարբերություն Պատարագի Քահանայի, որը հիմնված է համընդհանուր քրիստոնեական ծիսական բանաձևերի վրա, ժամագրքային Քահանան կրում է հեղինակային ստեղծագործության դրոշմը, որն առավել զգալի է գրական բաղադրիչում: Ժամագրքային երգվող Քահանաների ձևավորման վրա առավելապես ազդել են հին եբրայական երգեցիկ ընթերցանության, հին հունական պրոսոդիայի սկզբունքները, ինչպես նաև՝ հույն և ասորի վաղքրիստոնեական հեղինակների արձակ և չափածո Քահանաների ոճական առանձնահատկությունները: Երգվող Քահանաները չունեն կայուն ծավալ: Բաղկացած են փոքր պարբերություններից կամ մի շարք տներից, որոնք սկսվում և վերջանում են բնորոշ բանաձևային կոչերով: Քահանաներն ունեն հատկանշական անփոփոխ ավարտական մաս: Երգվող Քահանայի հնագույն նմուշները հանդես են եկել դեռևս IV–V դդ. սկսած: Ձեռագրերում զետեղվել են *Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Ա Լուսավորչին* վերագրվող խազագիր Քահանաներ: Պահպանվել են *Սահակ Ա Պարթևի* և *Հովհաննես Ա Մանդակունու* անուններով հասած գիշերային ժամի երգվող Քահանաները՝ իրենց եղանակներով: Պահպանված բնորոշ նմուշներից են նաև *Մաշտոց* ծիսարանում տեղ գտած Զրօրհնեքի, Ոտնլվայի և Անդաստանի երգվող Քահանաները: Ժամագրքային հնագույն երգվող Քահանայում հիմք է հանդիսացել *գանձ* երաժշտաբանաստեղծական տեսակի ձևավորման համար, որի հետ այն պահպանել է մի շարք ընդհանուր գծեր: *Գրիգոր Նարեկացու* և *Ներսես Շնորհալու* գանձերը ձեռագրերում ունեն «Քահանայ» վերնագիրը:

Գրկ. Արեվշատյան Ա., Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, ՊԲՀ, 1992, № 2–3:

Աննա Արևշատյան

ՔԵՍՈՒՆԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ, Կիլիկիայի Սև լեռան վրա: Եղել է հայ իշխան Գող Վասիլի՝ 1082–1112-ին ստեղծած հայկական իշխանության հոգևոր կենտրոնը, 1105–16-ին՝ կաթողիկոսանիստ: Հայաստանից արտագաղթած վանականների ուժերով Քահանայի-ում գործել է բարձրագույն դպրոց: *Գրիգոր Բ Վկայասերը* իշխան Գող Վասիլի և նրա կնոջ հրավերով կյանքի վերջին տարիներն անցկացրել է Քահանայի-ում, որտեղ էլ 1105-ին վախճանվել է ու մեծ շուքով թաղվել: Նրա հաջորդը՝ *Բարսեղ Ա Անեցին*, իր աթոռը հաստատել է Քահանայի-ում՝ 1105-ին կաթողիկոսարանը Անիից այստեղ տեղափոխելով: 1112-ին Քահանայի-ում է թաղվել նաև իշխան Գող Վասիլը: Բարսեղ Ա կաթողիկոսը Քահանայի-ում ժողով է գումարել և Քեսունի իշխանությունը հանձնել ծագումով Կամսարական Վասիլ Տղա իշխանին:

XII դ. 1-ին տասնամյակներում Քահանայի. հռչակվել է որպես կրթական բարձրագույն կենտրոն, որտեղ ուսանելու են եկել ողջ Հայաստանից: Վանքում պատրաստվել են բազմակողմանի կրթված և կրոնական բարձր նկարագիր ունեցող վարդապետներ: Այստեղ ուսուցանել են Ս. Գիրք, կրոնի և եկեղեցու պատմություն, տոմարագիտություն, երաժշտություն, գրչության արվեստ ևն: Բաբունապետ Ստեփանոս Մանուկ վարդապետը եղել է XII դ. Հայաստանի կրթության և եկեղեցական բարեկարգման եռանդուն ու արդյունավետ գործիչ: Քահանայի-ի վարդապետարանի ամենանշանավոր սանը եղել է *Ներսես Շնորհալին*: 1113-ին վախճանվել է Բարսեղ Ա Անեցին, և կաթողիկոս է ընտրվել *Գրիգոր Գ Պահլավունին*: Այս ընտրությանը հակառակ, Աղթամարի վանքի եպիսկոպոս Դավիթ Թոռնիկյանը համախոհների օգնությամբ հռչակվել է կաթողիկոս: Նույն՝ 1113-ին Քահանայի-ում հրավիրվել է Հայաստանի 2500 եպիսկոպոսների, վարդապետների, վանահայրերի ժողով, որը բանադրել է Աղթամարի աթոռի ոտնձգությունը (տես *Սև լեռան ժողով 1113*): 1114-ին երկրաշարժից Սամոսատի, Մասիսի, Մարաշի հետ ավերվել են նաև Սև լեռան վանքերը: 1116-ին Եդեսիայի կոմս Բոլդուինը զավթել է Քեսունի իշխանությունը, և նույն թվին Գրիգոր Գ Պահլավունին կաթողիկոս. աթոռը տեղափոխել է ավելի ապահով Ծովք դղյակը: Սակայն Քահանայի-ի վարդապետա-

րանը շարունակել է գործել: Այնտեղ է աշխատել ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին, որը վանքում ավարտել է իր «Ժամանակագրությունը»: Ըստ Մատթեոս Ուռհայեցու, 1136-ին Սուլթան Մահմուդը հարձակվել է Ք.Կ.վ-ի վրա, հրդեհել վանքի շինությունները, ջարդել խաչերը, պատարագամատույց սեղանն ու քանդակազարդ դուռը, կողոպտել սպասքը: Ք.Կ.վ. անկում է ապրել XVI–XVII դդ., բազմիցս կողոպտվել է, իսկ XVIII–XIX դդ. բռնագրավվել են հողերը: Հովհաննես վրդ. Գառնեցին 1849-ին փորձել է վերակենդանացնել վանքը, սակայն՝ ապարդյուն: Ք.Կ.վ. մնացել է որպես ուխտավայր. Հռոմկլայի Ս. Ներսես Շնորհալի վանքն ուխտի գնացողները ավանդաբար կանգ են առել լքված Ք.Կ.վ-ում և մատաղ ու Պատարագ մատուցել: Ք.Կ.վ-ի մեծաքանակ ձեռագիր մատյանները, որոնք պահվել են Քեսուն քաղաքի հայկ. եկեղեցում, ոչնչացել են 1915-ին:

Գրկ. Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Ե., 1991: Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վնտ., 1956: Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873: Նույնի, Սիսուան, Վնտ., 1885: Ոսկյան Հ., Կիլիկիայի վանքերը, Վնն., 1957: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, կՊ, 1912: Յարտըմյան Տ., Քեսունի Կարմիր վանքը, Վնտ., 1976:

Մուրադ Հասրաթյան

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ (ծ. և մ. թթ. անհտ), XVI–XVII դարերի խաչքարերի ու տապանաքարերի քանդակագործ: Եղել է ամենաբեղմնավոր քարգործ վարպետը: Նրանից պահպանվել են 54 խաչքար և 10 տապանաքար: Հիմնականում աշխատել է Գեղարքունիքում (ծնունդով այս գավառից էր), սակայն հրավիրվել է և խաչքարեր կերտել նաև Այրարատի, Տավուշի բնակավայրերում (Էջմիածին, Աշտարակ, Եղվարդ, Բերդ ևն): Նշանավոր են Գավառի «Դարի գլուխ» գերեզմանատանը կանգնեցված նրա կերտած զույգ խաչքարերը, մեկը՝ Հախնազարի (1596, պահվում է Երևանի Մատենադարանում), մյուսը՝ Շահնազարի հիշատակին: Ք. Կ-ի գործերի մեծ մասը գտնվում է Նորատուսում (32 խաչքար): Նրա ստեղծագործությունները բնորոշվում են հեղինակի ճարտ. մտածողության ինքնատիպ դրսևորմամբ և նորարարությամբ: Ք. Կ-ի խաչքարերը և, առաջին հերթին, ընդհանուր պատվանդանով խաչքարերի խմբերը ճարտ. փոքր ձևեր են՝ նման կառույցին հատուկ ենթաբաժանումներով: Ք. Կ. առաջինն է կիրառել խաչքարերի սեղանաձև սալեր, խաչքանդակը ներդրել ցռուկաձև կամարով խորշի մեջ, կատարելության հասցրել խաչքարերի «մանրաքանդակ ոճը»:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.2, 1-ին պատկերը:

Գրկ. Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963: Դիվան հայ վիմագրության, պր. 4, Ե., 1973: Հասրաթյան Մ., Խաչքարային արվեստի Գեղարքունիքի դպրոցը, «Արծիվ», Բեյրութ, 1995, № 24: *Якобсон А. Л., Армянские хачкары, Е., 1986.*

Մուրադ Հասրաթյան

ՔՈԲԱՅՐԱՎԱՆՔ, Քոբայրի վանք, ՀՀ Լոռու մարզում, Քոբեր երկաթուղային կայարանից արևմուտք, Դեբեդ գետի ձորալանջին, բարձրադիր ու դժվարամատչելի վայրում: Վանքի տարածքից վեր կան բազմաթիվ ժայռափոր կացարաններ, որոնց հետ է կապվում «Քոբայր» տեղանունը: Ք-ի վերաբերյալ հնագույն հիշատակությունները պահպանվել են XIII դ. պատմիչներ Վարդան Արևելցու ու Մխիթար Այրիվանեցու մոտ: Վանքը պատկանել է Կյուրիկյան Բագրատունիներին, ապա, անցնելով Զաքարյան իշխանական տոհմի վրացադավան ներկայացուցիչներին, XIII դ. կեսին վերածվել է քաղկեդոնիկ վանքի:

Ք. եղել է Հս. Հայաստանի գրչության, հոգևոր ու մշակութ. նշանավոր կենտրոն: Այստեղ է գործել XII դ. նշանավոր մատենագիր *Դավիթ Քոբայրեցին*: Վանքի համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից, զանգակատուն-տապանատնից ու սեղանատնից և շրջապատված է եղել բրգավոր, բարձրաբերձ պարիսպներով: Շրջակայքում պահպանվել են բազմաթիվ մատուռների ավերակներ, խաչքարեր:

Ք-ի հնագույն կառույցը Մարիամաշեն միանավ, թաղածածկ եկեղեցին է՝ տեղադրված Համալիրի արլ. մասում, ժայռի եզրին: Ըստ բարավորի վրա պահպանված շին. արձանագրության (1171), կառուցել է Կյուրիկե Բ թագավորի դուստր Մարիամը: Եկեղեցուն հետագայում հվ-ից կցվել է ուղղանկյուն հատակագծով մատուռ: Ք-ի գլխ. եկեղեցին (XII դ. վերջ – XIII դ. սկիզբ) գտնվում է վանքի հվ-արլ. մասում: Ուղղանկյուն հատակագծով միանավ դահլիճ է՝ ծածկված կիսագլանաձև թաղով: Աղոթասրահն արլ-ից ավարտվում է կիսաշրջանաձև խորանով, որը լուսավորվում է եր-

կու շարքով տեղադրված հինգ պատուհաններով: Եկեղեցու արլ. ճակատը մշակված է քանդակազարդ պարակալներով պսակված պատուհաններով և ճակատի ուղղաձիգ առանցքը շեշտող բարձրաքանդակ խաչով: Եկեղեցին 1276-ին վերանորոգել է Շահնշահ Զաքարյանի որդի Գիորգի աբեղան: Սալարկվել են եկեղեցու սրահն ու բակը, ամրացվել ու նորոգվել խարխլված հատվածները (այժմ եկեղեցին կիսավեր է): Գլխ. եկեղեցուն հս-ից կցվել է մատուռ-ավանդատունը: 1279-ին Շահնշահ Զաքարյանի որդի Մխարգրձելին և նրա կին Վանենին կառուցել են վանքի զանգակատուն-տապանատունը՝ արլ-ում խորանով սրահ, ութասյուն զանգաշտարակով (պահպանվել են միայն սյուների խարիսխները): Հատակը ծածկված է տապանաքարերով: Վանքի հս. կողմում, գլխ. մուտքի դիմաց թաղածածկ, միանավ, երկրորդ եկեղեցին է (XIII դ.): Ք-ի սեղանատունը (XIII դ.) գտնվում է տապանատուն-զանգակատնից արմ.: Ք. եզերող բարձր պարսպապատերից պահպանվել են միայն հս. և արլ. հատվածները: Ք-ում են թաղված Զաքարե Բ Զաքարյանի որդի Շահնշահը, վերջինիս որդիներ Գիորգին, Մխարգրձելին և եղբայրը՝ աթաբակ Վահրամը:

Ք. հռչակված է իր բարձրարվեստ որմնանկարներով, որոնք զարդարում են նրա 4 շինությունները՝ մեծ եկեղեցին, մատուռ-ավանդատունը, սյունասրահը և զանգակատան տապանատունը: Վերջին երկուսում մնացել են որմնանկարների միայն աննշան մասերը: Մեծ եկեղեցում պահպանվել է միայն բեմի որմնանկարը: Գմբեթարդին պատկերված է Աստվածածինը Մանկան հետ, երկու կողքերին՝ հրեշտակապետները, միջին շարքում «Հաղորդության» տեսարանն է, ներքևում, ողջ հասակով՝ ութ սուրբ, որոնց թվում՝ ս. Գրիգոր Աստվածաբանը, ս. Բարսեղ Մեծը, ս. Հովհաննես Ոսկեբերանը և ս. Կյուրեղ Ալեքսանդրացին: Մատուռ-ավանդատնում որմնանկարներից պահպանվել են միայն հատվածներ, համեմատաբար ամբողջականը բեմի վրայինն է: Գմբեթարդին պատկերված է «Բարեխոսության» տեսարանը, միջին շարքում՝ «Հաղորդությունը», ներքևում՝ սրբերը: Արմ. և հս. պատերին նկարված են «Տիրամոր ննջումը» և պատվիրատու-մեկենասները՝ ս. Գևորգի առջև կանգնած:

Ք-ի որմնանկարների պատկերագրությունն առնչվում է բյուզ. գեղազարդման համակարգին, սակայն նրանց ոճական առանձնահատկությունները վկայում են, որ գերիշխողը տեղական ավանդույթն է, արևելաքրիստ. միտումով (հարթապատկերայնության հակումը, շարժումների պայմանականությունը, եզրագծերի օգտագործումը որպես գեղ. արտահայտչականության միջոց, սրբերի արևելյան դիմագծերը ևն):

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.2, 2–3-րդ պատկերները:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982: Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մ., 1860: Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Ե., 1977: Շախկյան Գ., Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Ե., 1986: *Дурново Л., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; Драмбян И., Фрески Кобайра, Е., 1979;* Thierry N., Les peintures de la Cathédrale de Kobayr (Tachir), “Cahiers archeologiques”, v. 1, P., 1980–81.

Ալեքսանդր Ջալալյան
Իրինա Դրամբյան

ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ, հոգևոր աստիճան Հայ եկեղեցու պատմության վաղ շրջանում: Կարգվել է ընդարձակ եպիսկոպոսական թեմերում և կատարել առաջնորդական փոխանորդի, գավառների և գյուղերի հոգևոր տեսչի պարտականություններ: Նրանց երբեմն կոչել են նաև գավառական եպիսկոպոսներ: Պատմիչներ Զենոբ Գլակը (IV դ.), Փավստոս Բուզանդը (IV–V դդ.), Եղիշեն (V դ.) հիշատակել են Ք-ների: Ք-ի աստիճան անցյալում ունեցել են նաև Հույն և Վրաց եկեղեցիները: Ներկայումս Հայ եկեղեցում նման հոգևոր աստիճան չկա:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան

ՔՌՆԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, պատմական Երնջակ գավառում (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Ջուլֆայի շրջանում), Օձասար լեռան հարավ-արևմտյան լանջին: 1330-ին հիմնադրել է *Գլաձորի համալսարանի* սան Հովհաննես Քռնեցի վարդապետը: Նա 1328-ին մեկնել է Մարաղայի Դոմինիկյան միաբանության առաջնորդ *Բարդուղիմեոս Բոլոնիացու* մոտ, կաթոլիկություն ընդունել, սովորել լատիներեն, Բարդուղիմեոսին և նրա գործընկերներին հայերեն սովորեցրել և նրանց հետ լատից հայերեն մի շարք գրքեր թարգմանել: Վերադառնալով Քռնա՝ ժողով է հրավիրել Երընջակ գավառի 12 վարդապետների մասնակցությամբ, որոնք որոշել են գավառի իրենց ենթակա համայնքներում կաթոլիկություն տա-

րածել: Քռնայի վանքի Ս. Աստվածածին («Կուսաբեր») եկեղեցին 1330-ին կառուցվել է Հովհաննես Քռնեցու քեռու՝ Քռնայի դյուղապետ Գորգի միջոցներով, ընդամենը 70 օրում: Այն ունի կենտրոնագմբեթ հորինվածք, սրբատաշ և կիսամշակ քարերով, իսկ վերին մասը՝ աղյուսով իրականացված: Եկեղեցու պարսպապատ տարածքում եղել են երկու տասնյակի հասնող վանքապատկան շինություններ (հիմնովին ավերված են): Ս. Աստվածածին եկեղեցուց մոտ 600 *մ* հվ-արմ. մինչև 1970-ական թթ. նշմարելի էին Քռնայի Ս. Հռիփսիմե եկեղեցու ավերակները:

Ունիթորական միաբանություն (տես *Ունիթորություն*) ունեցող վանքում գործել է բարձր տիպի կրթ. հաստատություն, գրադարանում ընդօրինակվել են ձեռագրեր, թարգմանություններ ու մեկնողական աշխատություններ: Քռնայի դպրոցի ուսուցիչներ են եղել Մարաղայից հրավիրված Բարդուղիմեոս Բոլոնիացին, Պետրոս Արագոնացին, Հովհաննես Անգլիացին, Հովհաննես Քռնեցին և Հակոբ Քռնեցին, Զաքարիան և ուր.: 1333-ին Բարդուղիմեոս Բոլոնիացու մահից հետո դպրոցը, մինչև 1347-ը, ղեկավարել է Պետրոս Արագոնացին: 1333-ին Հովհաննես Քռնեցին մեկնել է Հռոմի պապի մոտ և վերադարձից հետո դարձել Երնջակ գավառի ունիթորական եկեղեցու առաջնորդ: Քռնայի դպրոցում հայերեն են թարգմանվել աստվածաբան. և դավանաբան. բնույթի, իմաստասիր. և բնագիտ. թեմաներով գրքեր (հայտնի է ավելի քան 15-ը) կամ ինքնուրույն աշխատություններ շարադրվել: Այս երկերը տարածվել են նաև Հայ առաքելական եկեղեցու կրթ. կենտրոններում, ինչը հնարավորություն է տվել ծանոթանալու բնական ու հաս. երևույթների մասին XIII–XIV դդ. Եվրոպայում հայտնի գիտելիքներին: Ք.Ս.Ա.վ. գոյատևել է մինչև XVIII դ. կեսը:

Գրկ. Սեդրակյան Ա., Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղ-պատ, 1872: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Այվազյան Ա., Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978:

Մուրադ Հասրաթյան

ՔՐԻՍՏԱՓՈՐ Ա ՏԻՐԱՌԻՋՑԻ [ծ. թ. անհտ, գ. Տիրառիջ (Այրարատ աշխարհի Բագրեվանդ գավառ) – 545], Ամենայն հայոց կաթողիկոս 539-ից: Հաջորդել է *Սահակ Բ Ուղկեցուն*: Հայտնի է, որ Ք. Ա Տ. Հայաստանում և հարևան երկրներում բուռն պայքար է մղել *նեստորականության* և *քաղկեդոնականության* դեմ: Ուղևորվել է Միջագետք, Պարսկաստան, Վերին Ասորիք, ամենուրեք քարոզել Եփեսոսյան ուղղափառ դավանությունը (տես *Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431*) և ամրապնդել Հայ եկեղեցու դիրքն ու հեղինակությունը *Արևելյան ուղղափառ եկեղեցիների* մեջ:

Կաթողիկոս. գահին Ք. Ա Տ-ուն հաջորդել է *Ղևոնդ Ա Եռաստեցին*:

Գրկ. Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ ԱՊԱՀՈՒՆԻ (ծ. և մ. թթ. անհտ), Ամենայն հայոց կաթողիկոս 628–630-ին: Հաջորդել է *Կոմիտաս Ա Աղցեցուն*: Ք. Բ Ա. սերել է Ապահունյաց նախարար. տոհմի Աբրահամյան ճյուղից: Եղել է Ապահունյաց եպիսկոպոսը: Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու առաջադրմամբ ընտրվել է կաթողիկոս: Սակայն երկամյա գահակալությունից հետո հակադրվել է ժամանակի մարզպան Վարազտիրոց Բագրատունուն: Մարզպանը և նրա կողմնակիցները Ք. Բ Ա-ու դեմ հարուցել են կեղծ մեղադրանքներ: Վերջինս հարկադրված 630-ին հրաժարվել է գահից: Կյանքի մնացած մասն անցկացրել է Մասյացոտն գավառի Ուղիք գյուղի մոտ կառուցված մենարանում:

Կաթողիկոս. գահին Ք. Բ Ա-ուն հաջորդել է *Եզր Ա Փառաժնակերտցին*:

Գրկ. Սեբեոս, Պատմութիւն, Ե., 1979: Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996: Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, Տիեզերական պատմություն, Ե., 2000: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ՔԴՔԿ) Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ստեղծվել է 1995-ի սեպտեմբերին, Ս. Գայանե վանքում՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Ա Սարգիսյանի* կոնդակով:

Կենտրոնի խնդիրներն ու նպատակներն են քրիստ. կրոն դասավանդող ուսուցիչների պատրաստումը, կիրակնօրյա դպրոցների հիմնումը, հանրակրթ. դպրոցներում քրիստ. կրոնի դասավանդումը, քրիստ. կրթության և դաս-

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹ. տիարակության ծրագրերի մշակումը, դասագրքերի և կրթ. համակարգին վերաբերող նյութերի հրատարակումը: Քարոզչական գործունեության ուղղություններն են դավան., մեկնող., տոնախոս., ջատագով., քարոզխոս. և խրատ. գրքերի հրատարակումը, հեռուստատեսային ու ռադիոհաղորդումների պատրաստումը, հոգևոր կրոն. թերթի հրատարակումը, ազգային եկեղեց. տոնախմբությունների, ուխտագնացությունների կազմակերպումը: Կենտրոնում գործում են հրատարակչ., մշակույթի, կրոն դասավանդող ուսուցիչների պատրաստման բաժիններ:

1995–99-ի ընթացքում կրոնի դասավանդումը կիրակնօրյա վարժարաններում և հանրակրթ. դպրոցներում ապահովելու նպատակով ՀՀ 11 քաղաքներում կազմակերպվել են քրիստ. կրոնի ուսուցիչների լսարաններ: 1995–99-ին Հայաստանի թեմերում բացվել են շուրջ 50 կիրակնօրյա դպրոցներ: 1998-ից ԼՂՀ և Քաջաթաղի տարածաշրջանի դպրոցներում դասավանդվում է «Քրիստոնեական կրոն» առարկան:

ՔԴՔԿ հրատարակում է կրոն. դասագրքեր, կրոնի դասավանդման ուս. ուղեցույց ծրագիր, «Հոգևոր գրադարան» մատենաշարի գրքեր: Կենտրոնը ՀՀ հանրային հեռուստատեսության հետ համատեղ եթեր է հեռարձակում հոգևոր հաղորդաշարեր:

1997-ից հրատարակվում է «*Քրիստոնյա Հայաստան*» երկշաբաթաթերթը: Կենտրոնի հովանավորությամբ գործում են պատանի ջութակահարների խումբ, մանկ. հոգևոր երգչախումբ: ՔԴՔԿ համագործակցում է քրիստ., մշակութ. կազմակերպությունների հետ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ, միակ ճշմարիտ *Աստծո*՝ տիեզերքի Արարչի և Նախախնամողի *հայտնությունը* երկիր ուղարկած իր միածին Որդու՝ մարդկության Փրկչի՝ *Հիսուս Քրիստոսի* միջոցով (այստեղից էլ՝ Ք. անվանումը): Համաշխարհային *կրոնների*ց: Բառն առաջին անգամ օգտագործել է Իգնատիոս Անտիոքացին (մահ. 113/117) Մագնեզիայի, Հռոմի և Ֆիլադելֆիայի եկեղեցիներին հղած նամակներում: Ք-յան գլխ. հատկանիշներն են՝ ա. միաստվածությունը՝ օրինակարգված Աստվածության միության (միակության) մեջ դրսևորվող դեմքերի՝ *Երրորդության* (Հայր Աստված, Որդի Աստված, *Սուրբ Հոգի* Աստված) վերաբերյալ վարդապետությամբ: Դարերի ընթացքում Երրորդության վարդապետությունը դրսևորել և դրսևորում է քրիստ. հայտնության բոլոր հնարավոր կողմերը: բ. Հասկացություն Աստծո՝ ոչ միայն որպես բացարձակ Հոգու, բացարձակ Բանականության և Ամենազորության, այլև բացարձակ Բարու և Սիրո մասին: գ. Վարդապետություն մարդկային անձի՝ իբրև Աստծո պատկերով և նմանությամբ արարված անմահ հոգևոր գոյության, բոլոր ադամորդիների՝ երկնավոր Հոր առջև հավասար լինելու, ազատ կամքի և աստվածային *շնորհի* միջոցով Աստծուն միանալու, աստվածային կատարելությանը հասնելու և հավիտենական երանությունը վայելելու վերաբերյալ: դ. Վարդապետություն նյութի նկատմամբ հոգու լիակատար գերիշխանության մասին: Աստված է նյութ. աշխարհի Արարիչը, մարդուն վերապահված է տերը լինել նյութ. արարչության՝ մարմնի միջոցով նյութ. աշխարհում իր վերին կոչումը իրականացնելու համար: Ք. նյութին իբրև արարչություն դնում է հոգուց լիակատար կախվածության մեջ՝ նյութը նկատելով հոգու գործունեության միջավայր: Ք-յան համար հավասարապես խորթ է ինչպես բնազանցական և բարոյական նյութապաշտությունը (մատերիալիզմ), այնպես էլ՝ նյութի և նյութ. աշխարհի հանդեպ մերժող. կեցվածքը: Չարիքը ոչ թե նյութի մեջ է և նրանից, այլ՝ հոգևոր էակների (*հրեշտակ*, մարդ) ազատ կամքի չեղ գործադրումից: Նյութի և նյութ. իրականության հանդեպ Ք-յան իրատես վերաբերմունքն իր պատշաճ արտահայտությունն է գտել՝ ե. մարմնի հարության, արդարների հարություն առած մարմնի երանության և նրանց հոգինները լուսավոր, հավիտենական, նյութ. աշխարհում հարատևելու, ինչպես նաև՝ զ. Ք-յան կարևորագույն հրամանակարգի (դոգմա)՝ *մեղքից*, մահից և անեծքից մարդուն ազատելու նպատակով իրապես մարմնացած և մարդացած Աստվածամարդու, Նախահավիտենական Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին վարդապետության մեջ: Ք-յան մեջ դրսևորվում է հոգու և նյութի համերաշխ ներդաշնություն, ընդունվում է թե՛ մեկը և թե՛ մյուսը՝ ցույց տալով, որ դրանք միայն միջոցներ են աստվածային կատարելության և աստվածանմանության հասնելու համար:

Ժամանակի ընթացքում, պատմ. հանգամանքների և աստվածաբան. մտքի զարգացման թելադրանքով, առաջին երկու դարերի քարոզ-

խոս. Ք-յանը աստիճանաբար փոխարինել է երախայից (չմկրտվածներ կամ մկրտության նախապատրաստվողներ) ուսուցումը, որն ամփոփել է քրիստ. վարդապետության գլխ. սկզբունքները: Ք-յան պաշտպանությանը (տես *Ջատագովություն*) զուգընթաց Արևելքում և Արևմուտքում երևան են եկել հայտնության այս կամ այն կողմի յուրովի ընկալում և կարևորում, ինչը III դ-ից վերածվել է համակարգի և ուսմունքի: Դա իր հերթին նոր խնդիրներ է դրել աստիճանաբար ձևավորվող ու զորեղացող *եկեղեցու*՝ իբրև հայտնությունը կրող և արդեն վարչ. և կազմակերպչ. ձև ստացող միավորի վրա: Այս հիմքի վրա *աստվածաբանությունը* երկփեղկվել է արևելյանի և արևմտյանի, ինչը հետևանք էր ոչ միայն հայտնության ընկալման, այլև՝ պատմաքաղ. կացության առանձնահատկությունների: Եկեղեցագործվող Ք. բաժանվել է արևելաքրիստ. և արևմտաքրիստ. ուղղությունների (տես *Ուղղափառություն* և *Կաթոլիկություն*), իսկ XVI դ., Ռեֆորմացիայի արդյունքում ձևավորվել է Ք-յան երրորդ մեծ ուղղությունը՝ *բողոքականությունը*:

Ք-յան սրբազան գիրքը *Աստվածաշունչն* է (իր երկու անխախտելի մասերով՝ Հին կտակարան և Նոր կտակարան), որն Աստծո խոսքն է՝ ուղղված իր իսկ արարած աշխարհին: Հայտնությամբ դրված քրիստ. *դավանանքի* հիմն. դրույթները համառոտ և ամփոփ բանաձևված են *Հավատո հանգանակներում*:

Դարերի ընթացքում Ք. ստեղծել է հարուստ գրականություն, մշակույթ, արվեստ, գիտություն: Հայտնութենական ներուժը կրող Նոր կտակարանից են սնվում քրիստ. միտքը զարգարող բազմաթիվ ստեղծագործություններ, որոնց նպատակն է բարոյացնել ադամորդուն, նրա մեջ ուժեղացնել անթեղված գեղեցիկի բնազդը՝ նրան մոտեցնելով բացարձակ Գեղեցիկին:

(Տես նաև *Անապատականություն, Ավանդություն, Ավետարան, Եկեղեցու հայրեր, Ժամերգություն, Խաչ, Խորհուրդներ եկեղեցական, Ծես, Հավատ, Ճգնավորություն, Նվիրապետություն, Պահք, Պատարագ, Սուրբ, Վանականություն, Տիեզերական ժողովներ, Տոներ* եկեղեցական հոդվածները):

Ք. Հայաստան մուտք է գործել I դ., Հայոց առաջին լուսավորիչներ, Հիսուս Քրիստոսի *առաքյալներ Թադեոսի* և *Բարդուղիմեոսի* քարոզչությամբ: Հայաստանում առաքյալների գործունեությամբ և նահատակությամբ էլ I դ. կեսին դրվել է *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու* հիմքը, իսկ Մեծ Հայքը Թադեոս առաքյալի անունով (առաջինը նա է քարոզել Հայոց կողմերում) ստացել է «Թադեի վիճակ» կամ «Թադեի աթոռ» անվանումը: Առաքելական քարոզչությունից սկսած Հայաստանում կազմավորվել են քրիստ. համայնքներ (եկեղեցիներ), եղել են նոր հավատի սպասավորներ, եպիսկոպոսներ, որոնք կապեր են ունեցել հարևան երկրների, հատկապես Միջագետքի, Ասորիքի, Կապադովկիայի հավատակիցների, *Ալեքսանդրիայի, Սամոսատի, Եդեսիայի, Անտիոքի*, Կեսարիայի աթոռների և համայնքների հետ: Հայտնի է, որ Ծոփքի Մեհրուժան եպիսկոպոսը, ըստ *Եվսեբիոս Կեսարացու*, III դ. կեսին նամակագր. կապ է ունեցել Ալեքսանդրիայի Դիոնիսիոս պատրիարքի հետ: II–IV դդ. Հայաստանում նոր հավատի բազմաթիվ հետևորդներ՝ *Ոսկյանք, Սուքիասյանք, Սանդուխտ* արքայադուստր, *Գայանյանց կույսեր, Հռիփսիմյանց կույսեր* ևն, հալածանքի զոհ են դարձել. նրանք Հայ եկեղեցու առաջին սրբերն ու նահատակներն են: Քրիստ. առաջին համայնքների հիմնումը, մատուռների ու վկայարանների կառուցումը, քրիստոնյաների նահատակությամբ ժողովրդի ամենատարբեր խավերի, այդ թվում արքունական ընտանիքի անդամների շրջանում ամրապնդվող նոր հավատը նպաստավոր պայմաններ է ստեղծել Հայոց առաջին հայրապետ *Գրիգոր Ա Լուսավորչի* համար՝ երկրում Ք-յան արմատավորման, հեթանոսության դեմ պայքարի, Հայ եկեղեցու նվիրապետության հաստատման գործում: 301-ին՝ Հայոց *Տրդատ Գ* Մեծ թագավորի օրոք, Ք. պաշտոնապես հռչակվել է Մեծ Հայքի թագավորության պետ. կրոն: Պատմության մեջ առաջին անգամ Ք. հալածված և հետապնդվող հավատից դարձել է պետության կողմից հովանավորվող: Գրիգոր Լուսավորիչը, դառնալով առաջին քահանայապետ, շարունակել է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործը և ապահովել Հայոց առաքելահաստատ *Աթոռի* ժառանգականությունն ու հարատևությունը պատմ. նոր իրադրությունում: Հայոց դարձը չի ամփոփվել և չի սահմանափակվել էթնիկ. շրջանակով: Իր աշխարհագր. և պետքաղ. դերի թելադրանքով Հայաստանը դարձել է կենտրոնատեղի՝ խթանելով Ք-յան տարա-

ՔՐԻՍՏՈՆՅԱ ծումը Վրաստանում, Աղվանքում, Հս. Կովկասում:

Քրիստոնեայ ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՈՒՍԱՎԱՌԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԵՐԹ

Քրիստոնեայ ՀԱՅԱՍՏԱՆ

Քրիստոնեայ ՀԱՅԱՍՏԱՆ

Քրիստոնեայ ՀԱՅԱՍՏԱՆ



Օ

ՕԾՈՓԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Շահապոնք գավառի Օծոփ գյուղի մոտ (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Շահբուզի շրջանում): Հիշատակվում է XII դ. վերջից, երբ իշխան Վասակ Խաղբակյանը վերցրել է վանքին *Ստեփանոս Օրբելյանի* նվիրած «Կամարակապ» կոչվող խաչը և տվել *Կեչառիսի վանքին*: 1292-ին Օ. Ս. Ա. վ-ում գրվել է չքեղ կազմով և նկարազարդ Ավետարան, որի հիշատակարանում նշված է վանքի միաբանության բազմանդամ լինելը: XIII դ. 1-ին քառորդում վանքը եպիսկոպոսանիստ էր, նրա վանահայր Շմավոն եպիսկոպոսը մասնակցել է 1307-ի Սսի ժողովին: XIV դ. կեսին *Եսայի Նչեցու* աշակերտ Մարգարե Օծոփեցի վարդապետը հարել է ունիթորներին (տես *Ունիթորություն*) և դարձել Հովհաննես Քռնեցու գործակիցը:

Ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու, 1477-ին Օ. Ս. Ա. վ-ի Վրթանես եպիսկոպոսը *Լուսավորչի Աջը* փախցրել է Աղթամարից և բերել Նախիջևան, որի համար որպես վարձատրություն ցմահ նշանակվել է կաթողիկոսների աթոռակալ, իսկ նրա վախճանվելուց հետո (1493) մինչև XVII դ. Ամենայն Հայոց կաթողիկոսները յուրաքանչյուր տարի այցելել են Օ. Ս. Ա. վ., նրա հիշատակին Պատարագ մատուցել, դրամ բաժանել վանականներին և կերակրել աղքատներին:

Վանքի ներկայիս եկեղեցին կառուցվել է 1651-ին, սրբատաշ բազալտից՝ քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով, արմ-ից կից փոքր գավթով (այժմ՝ ավերակ): Ավանդատների մուտքերի վերևում ագուցված են քանդակազարդ խաչքարեր, որոնցից մեկին Գրիգոր Լուսավորչի պատկերաքանդակն է: Հվ. մուտքի բարավորին քանդակված են մանուկ Հիսուսին գրկած Աստվածածինը և «Ռճ» (1651) տարեթիվը, հվ. պատին՝ օձ կոցահարող արագիլ, իսկ ներսում, հվ-արմ. մույթին՝ առյուծ: Վանքի պարսպից դուրս, դեպի արլ. գերեզմանատունն է՝ XIV–XVII դդ. տապանաքարերով: Եկեղեցու հվ. մուտքը վերակառուցվել է 1671-ին, գլանաձև թմբուկով գմբեթը՝ 1701-ին: XVII–XVIII դդ. վանքը ստացել է բազմաթիվ նվիրատվություններ՝ այգիներ, ձեռագրեր, արծաթե սպասք, Մարտիրոս եպիսկոպոսից 1624-ին՝ «Խոտակերաց Սուրբ Մինաս» կոչվող խաչը, 1750-ին գնել է այգիներ և հնձան: Կաթողիկոս *Ղազար Ա Ջահկեցին* 1749-ին կոնդակով թույլատրել է վանահայր Մարկոս վարդապետին միջոցներ հանգանակել՝ Օ. Ս. Ա. վ. նորոգելու համար:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.3, 1-ին պատկերը:

Գրկ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Ալիշան Ղ., Սիսական, Վնտ., 1893: Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, մաս 3, Նյու Յորք, 1942: Այվազյան Ա., Օծոփի և Կուքիի հուշարձանները, ՊԲՀ, 1976, № 2:

Մուրադ Հասրաթյան

ՕԾՈՒՄ, Օծություն, *Սուրբ Հոգով* օծվելը, կնքվելը կամ Սուրբ Հոգու կնիքն իր վրա ընդունելը, որ կատարվում է *Հիսուս Քրիս-*

տոսի՝ Օծյալ Փրկչի անունով մկրտվելուց հետո: Այդ Օ. ի վերուստ սահմանված է Հիսուսին հավատացողների համար, ովքեր մաքրված են նրա քավչարար արյան և հրաշափառ Հարության զորության շնորհիվ: Սուրբ Հոգու Օ. Աստծո Ուխտի հաստատումն է, որով քրիստոնյան կնքվում է որպես Աստծո ընտրյալ, և որով հաստատագրվում է նրա սրբացումը:

Օ-ի տեսանելի, զգայելի դրսևորումը կամ նրա առարկայական խորհրդանշանը ներկայումս ս. *Մյուռոնն* է: Մ յ ու ռ ո ն օ ծ ու թ յ ո ւ ն ը կատարվում է Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից մեկի՝ *Դրոշմի* արարողության ժամանակ: Հնում, ինչպես նշվում է Աստվածաշնչում, Օ-ի առարկայական խորհրդանիշը սրբազան յուղն էր կամ օծության յուղը՝ ներկայիս Մյուռոնի նախօրինակը: Այն, որպես սրբարար և նվիրագործյալ յուղ, խորհրդանշում էր գալիք Մեսիային, որն իր գալուստից դեռ շատ առաջ կոչվում էր «օծյալ» (այսինքն՝ Քրիստոս), որի շնորհիվ եղավ Սուրբ Հոգու պարգևը՝ բուն և ճշմարիտ Օ.: Այսինքն՝ Օծյալից եղավ Օ.:

Հին կտակարանում Օ-ի յուղն առաջին անգամ հիշատակվում է Ելք գրքում, երբ Տերը Մովսեսին պատվիրում է, ի թիվս սուրբ խորանին տրվող այլ ընծաների՝ վերցնել նաև «... օծության յուղի ու խնկի համար բաղադրանյութեր» (**25.**6): Այնուհետև պատվիրում է ոսկեխույրի վրա «Սրբություն Տյառն» փորագիրը տանող Ահարոնին և քահանայագործող ահարոնյան դասին օծել. «... Կ՚օծես նրանց, կ՚օրհնես ու կսրբագործես նրանց, որպեսզի ինձ համար քահանայություն անեն» (Ելք **28.**41): Օ-ի յուղի բաղադրության, կիրառման և սրբագործ նշանակության մասին առավել մանրամասն խոսվում է Ելք գրքի հետագա գլուխներում (**30.**22–33, **40.**9–13), որոնցից պարզ է դառնում, որ Օ-ով սրբացվել են ոչ միայն անձինք, այլև՝ խորանը, սպասքը, ողջակեզների սեղանը, ավազանը, Ահարոնի պատմուճանը ևն:

Օ-ի խորհրդավոր ծեսը, Հին ուխտի համաձայն, պիտի անպայման կատարվեր օծյալի վրա. օծվում էին քահանայապետները, քահանաները, մարգարեները, Իսրայելի ժողովրդի դատավորներն ու թագավորները՝ որպես Աստծո պատգամաբերներ ու պատվիրանները գործադրողներ: Նրանք միայն սուրբ Օ-ով կարող էին վերահասու լինել աստվածային պատգամին և արժանանալ հոգևոր պարգևների ու շնորհների:

Մարգարեություններում ակնարկվում է Բացարձակ Օծյալի՝ Հիսուս Քրիստոսի գալստյան և նրա բերած բացարձակ օծության մասին: Հիսուսը դիտվում է և՛ իբրև օծյալ, և՛ որպես Սուրբ Հոգին՝ Բացարձակ Օծությունը շնորհող, ուստի և՝ Բացարձակ Օծությունն ինքը: Նա բնորոշվում է իբրև **Տիրոջ Հոգով օծված** («Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ նա օծեց ինձ...». Եսայի **61.**1), **Օծիչ** («Գլուխս յուղով օծեցիր». Սաղմ. **22.**6), **Օծյալ** («Այնտեղ պիտի Դավթին եղջյուրներ ծլեցնեմ, իմ օծյալի համար ճրագ պատրաստեմ». Սաղմ. **131.**17):

Օ-ի յուղի՝ որպես աստվածային սրբության գործածումը օտար և արգելյալ բաների նկատմամբ դիտվել է անպատշաճ, իսկ օծյալ վիճակում մեղք գործելը համարվել մահացու հանցանք (Ելք **30.**23–33, Եզեկ. **23.**41): Չօծվելը նշան էր սգավորության, իսկ օծվելը՝ ուրախության (Սաղմ. **103.**15): Օծվել են ենթակայի մաղերը, գլուխը, մորուքը, ոտքերը, երբեմն՝ ողջ մարմինը (Սաղմ. **132**):

Օ. ընդունված էր նաև Հիսուսի ժամանակ, և ինքը՝ Հիսուս ևս, իբրև իր թաղման կանխանշան, ընդունում է Օ. բորոտ Սիմոնի տանը, Բեթանիայում (Մատթ. **26.**6–13, Մարկ. **14.**3–9, Հովհ. **12.**1–8):

Առաքյալներն Օ-ին տվել են բուժիչ նշանակություն («Եվ բազում դևեր էին հանում, բազում հիվանդների օծում էին յուղով ու նրանց բժշկում». Մարկ. **6.**13, «Հիվա՞նդ է ձեզնից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, և նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուղով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի...». Հակ. **5.**14–15): Դեռևս առաքելական ժամանակներից է սերում հիվանդին օծելու ավանդույթը, որ Հայ եկեղեցում ստացել է *Կարգ հիվանդաց և Վերջին օծում* անունը:

Հայ եկեղեցու ծեսի համաձայն, սրբալույս Մյուռոնով օծվում են եկեղեց. պաշտոնյաները՝ քահանայից մինչև կաթողիկոս: *Ձեռնադրության* ժամանակ օծվում են ենթակայի ճակատն ու ձեռքերը, կաթողիկոսի օծվելու պարագային Մյուռոնը հեղվում է նրա գլխին՝ իբրև խորհրդանշան եկեղեցու գերագույն գլխի: Օ-ի մաս է կազմում նաև մի շարք սրբազան իրերի ու առարկաների սրբագործումը: Օ. են ստանում եկեղեցիները, եկեղեցու սեմը, ս. *Սեղանը*, մկրտու-

թյան ավազանը, եկեղեց. սպասքը, սրբոց պատկերները, *խաչը*, խաչքարերը են:

Նախնական շրջանում Քրիստոսին հավատացողները սուրբ յուղով օծվել են մկրտությունից հետո: Այս Օ. Հայ եկեղեցին ներկայումս անվանում է Դրոշմ, Հույն եկեղեցին՝ Մյուռոն:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.3, 2–3-րդ պատկերները:

Գրկ. Բառարան Սուրբ գրոց, ԿՊ, 1881: Նալբանդյան Զ., Հովիւը և հօտը, Նյու Յորք, 1989, էջ 17–19: Սրբալույս Մյուռոնը, աշխատասիր. Մ. Ժոռոյանի, Էջմիածին, 1996: Սրբալույս Մյուռոն, Ս. Էջմիածին, 2001:

Լևոն Սարգսյան

ՕՁՈՒՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, խաչգունդ եկեղեցի, ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղի կենտրոնում: XIII դ. պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին եկեղեցու կառուցումը վերագրում են Հայոց կաթողիկոս *Հովհաննես Գ Օձնեցուն* (717–728), սակայն ճարտ-գեղ. վերլուծությամբ Օ. Ս. Ա. ե. թվագրվում է VI դ. վերջ:

Եկեղեցին ունի գմբեթավոր բազիլիկի հորինվածք (20,7x31,6 *մ* արտաքին չափերով), կիսաշրջանաձև խորանի երկու կողքերին երկհարկ ավանդատներով: Աղոթասրահը երեք զույգ մույթերով բաժանվում է երեք նավի, որոնցից միջինը երեք անգամ լայն է կողայիններից: Ի տարբերություն նմանատիպ հայկ. եկեղեցիների, որոնք քառամույթ են, Օ. Ս. Ա. ե. մույթերի երրորդ զույգի շնորհիվ ունի դասական գմբեթավոր բազիլիկներին բնորոշ համաչափություններ: Եկեղեցին հս., հվ. և արմ. կողմերից եզերվում է արմ. կողմում սենյակով և հվ-ում աբսիդով արտաքին կամարաշարով, որը, դատելով պատերին պահպանված քարե պահոնակներից, կառուցվել է շենքի հիմն. ծավալի հետ միաժամանակ: Սրահը վաղ միջնադարում վերակառուցվել է (հավանաբար՝ Հովհաննես Գ Օձնեցու կողմից): Օ. Ս. Ա. ե-ու հորինվածքը կարևոր նշանակություն ունի վաղմիջնադարյան եռանավ բազիլիկներից գմբեթավորին անցնելու ընթացքի բացահայտման համար:

Եկեղեցու պատերին կան վաղքրիստ. քանդակագործ. արվեստի արժեքավոր մի շարք պատկերաքանդակներ: Արլ. ճակատի կենտր. լուսամուտի պսակի դագաթին, արմավենու ոճավորված տերևների մեջ Քրիստոսի անդրին՝ ձախ ձեռքով բաց գիրք բռնած, որի երկու էջերին Հովհաննեսի Ավետարանի առաջին խոսքերն են: Հվ. պատի լուսամուտի պսակին, երկու կողմերում սավառնող հրեշտակների հարթաքանդակն է, ներսում, մկրտության ավազանի խորշում՝ «Աստվածածինը Մանկան հետ» պատկերաքանդակը: Տպավորիչ է արմ. շքամուտքի շրջանակը՝ զարդարված խաղողի տերևի և ողկույզի քանդակների շարքով:

1888-ին եկեղեցին նորոգել են Զ. և Բ. Աբովյանները: Օ. Ս. Ա. ե-ուց մոտ 10 *մ* հս-արլ. կանգուն կոթողը (V–VI դդ.) վաղքրիստ. արվեստի կարևոր հուշարձաններից է: Աստիճանաձև պատվանդանի վրա, երեք մույթերով կամարակապ բացվածքներում տեղադրված են մոտ 4 *մ* բարձրությամբ երկու քառակող այուներ՝ քանդակազարդ նիստերով: Դեպի հուշարձանի պատերը նայող նիստերին բուս. և երկրաչափ. զարդաքանդակներ են, հս. այան արմ. երեսին՝ «Աստվածածինը Մանկան հետ», «Հիսուսի մկրտությունը», Կոստանդինոս Մեծ կայսրը քրոջ հետ, հվ. այան արմ. նիստին՝ 12 առաքյալները լուսապսակներով, ձեռքերին՝ Ավետարան: Այուների արլ. նիստերին պատկերված են Տրդատ Գ Մեծի խոզակերպ դառնալը, նրա բուժվելը, Թագավորի քույր Խոսրովիդուխտը, Հռիփսիմեի վկայարանը, Տրդատ Գ Մեծի և Գրիգոր Ա Լուսավորչի երթը: Օձունի կոթողի քանդակները պատկերում են քրիստոնեության հաղթանակը Բյուզանդիայում և Հայաստանում: Իրենց ինքնատիպությամբ դրանք վաղքրիստ. արվեստի լավագույն ստեղծագործություններից են:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.4, 1-ին պատկերը:

Գրկ. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. 1, Թ., 1842: Լալայան Ե., Բորչալուի գավառ, ԱՀ, 1901, գիրք 7–8: Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները IV–VII դարերում, Ե., 1949: Ազարյան Լ., Օձունի և Բրդաձորի կոթողները, ՊԲՀ, 1965, № 4: Շախկյան Գ., Օձունի եկեղեցին, Ե., 1983: Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Ե., 1987:

Մուրադ Հասրաթյան

ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղում: *Արագածոտնի թեմի* առաջնորդանիստ եկեղեցին (1996-ից): 443-ին կառուցել է իշխան Վահան Ամատունին՝ *Մեսրոպ Մաշտոցի* գերեզմանի վրա:

XVII դ. Օ. Ս. Մ. Մ. ե. եղել է կիսավեր: *Առաքել Դավրիժեցին* գրել է. «... հոյակապ,

լայնանիստ, բարձրաբերձ... այս տաճարհանգստարանի ողջ տանիքը վաղ ժամանակներից փլվել, նստել էր, միայն Ավագ խորանն էր մնացել ծածուկ»: 1639–45-ին *Փիլիպոս Ա Աղբակեցի* կաթողիկոսը հիմնովին նորոգել է եկեղեցին: XIX դ. Օ. Ս. Մ. Մ. ե. վերստին եղել է խարխուլ և վթարային վիճակում, ուստի 1850-ին *Ներսես Ե Աշտարակեցին* կոնդակով դիմել է Սինոդին՝ եկեղեցին նորոգելու առաջարկով: 1860-ին Միքայել Նալբանդյանը, Հնդկաստան մեկնելուց առաջ, ուխտի է եկել Օշական, և Օ. Ս. Մ. Մ. ե-ու ամխիթար վիճակը տեսնելով, բանաստեղծությամբ իր վիշտն ու դառնությունն արտահայտել: 1668–72-ին եկեղեցու վերակառուցման համար Գրիգոր վարդապետի ղեկավարությամբ նախապատրաստական աշխատանքներ են կատարվել: 1872-ին *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին* կոնդակով հայ ժողովրդին կոչ է արել՝ նյութապես սատարել եկեղեցու վերակառուցմանը: 1873–79-ին օշականցիների մասնակցությամբ Օ. Ս. Մ. Մ. ե. հիմնովին վերակառուցվել է և 1879-ի հոկտ. 21-ին օծվել: Փաստորեն նոր եկեղեցի է կառուցվել, նոր հորինվածքով (մինչև XX դ. դեռևս պահպանված են եղել նախկին շենքի պատերի հետքերը, արլ-ում՝ արտաքուստ բազմանիստ Ավագ խորանով): Նոր եկեղեցին թաղածածկ դահլիճ է՝ երեք թաղակիր կամարներով, ճվաճև հատակագծով Ավագ խորանի երկու կողմերում՝ ուղղանկյուն ավանդատներով: Արտաքին ճակատները զարդարված են դեկորատիվ կամարաշարով: Ավագ խորանի տակ Մեսրոպ Մաշտոցի դամբարանն է (443). ուղղանկյուն թաղածածկ խուց է, արլ-ում՝ խորշով, հս-ից և հվ-ից՝ մուտքերով (հս-ը փակվել է, իսկ հվ-ը բացվել է դեպի ավանդատուն):

1880-ին, եկեղեցու հվ. կողմում, Վահան Ամատունու դերեզմանի վրա, կանգնեցվել է հուշակոթող, 1884-ին եկեղեցուն արլ-ից կցել են երկհարկ, 8-սյունանի ռոտոնդայով պսակված զանգակատուն, որը բացառիկ է հայկ. ճարտ-յան մեջ իր տեղադրությամբ, գլանաձև ծավալով և Ավագ խորանից բացվող մուտքով:

1913-ին եկեղեցու հվ. կողմում կառուցվել է դպրոցի շենք: 1960–64-ին *Վազգեն Ա Պալճյանի* հոգածությամբ, միլանահայ Հ. և Թ. Ղազարոսյան եղբայրների բարերարությամբ, բարեկարգվել է եկեղեցու շրջապատը, նորոգվել են Մեսրոպ Մաշտոցի դամբարանը և եկեղեցին, դեպի դամբարան տանող մուտքի դիմաց կանգնեցվել է կոթող՝ մեսրոպյան այբուբենի երկաթագիր տառերով, և դրվել դամբարանի արլ. խորշում (ճարտ.՝ Բ. Արզումանյան), աղոթասրահում կախվել է երկաթակուռ ջահ (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան): 1962-ին Մեսրոպ Մաշտոցի բազալտե դերեզմանաքարը փոխարինվել է օնիքս քարից պատրաստված նոր տապանաքարով: 1964-ին եկեղեցու հվ-արմ. անկյան մոտ կառուցվել է աղբյուր (ճարտ.՝ Ա. Իսրայելյան): 1966-ին Ավագ խորանում մարմարե նոր սեղան է պատրաստվել՝ վրան «Աստվածածինը Մանկան հետ» սրբապատկերով (նկարիչ՝ Հ. Մինասյան):

1964–66-ին, հնդկահայ Պ. Ալեքսանյանի բարերարությամբ, եկեղեցու ներսը նկարազարդվել է «Փառք հայ գրի և դպրության» որմնանկարով (նկարիչներ՝ Հ. Մինասյան, Հ. Մամյան): Որմնանկարն իրականացվել է եռապատկեր հորինվածքով՝ ճարտ-յանը ներդաշնակ: Արմ. պատի որմնանկարում պատկերված է Մեսրոպ Մաշտոցը՝ նորաստեղծ այբուբենը ձեռքին: Որմնանկարը կամարակապ լուսամուտով բաժանվում է երկու մասի՝ ձախ կողմում Մեսրոպ Մաշտոցն է՝ շրջապատված աշակերտներով, աջ կողմում՝ հայրապետական դահին բազմած Սահակ Ա Պարթևը, կողքին կանգնած են Վռամշապուհ թագավորը և թագուհին, Վահան Ամատունի իշխանը և նախարարները, նրանց վերևում Արարատի ճյունազարդ գագաթն է և Հռիփսիմեի տաճարը: Կենտրոնում հնարամտորեն օգտագործված է լուսամուտի բացվածքը, որի ապակու վրա, դրսից պայծառ լույսով ողողված, գրված է հայոց այբուբենը:

Հվ. պատին կանգուն և ծնրադիր նետաձիգ զինվորներն են՝ Հայոց աշխարհի պահապանները, նրանց գլխավերևում՝ ուժի, հայրենիքի կենսունակության խորհրդանիշ թևատարած արծիվը: Հս. պատին պատկերված է Հայաստանի դարունը՝ ծաղկած ծառերով, զվարթ աղջիկներով: Որմնանկարը զուգակցում է հայկ. մանրանկարչության, միջնադարյան քանդակագործության ու որմնանկարչության ավանդները և XX դ. հայկ. մոնումենտալ արվեստի լավագույն ստեղծագործություններից է:

1995-ին եկեղեցու արմ. կողմում կանգնեցվել է հուշակոթող: 1996-ին Գարեգին Ա Սարգիսյանի հովանավորությամբ և Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպս. Կճոյանի ջանքերով, ամերիկահայ Ջ. Կոբոյանի բարերարությամբ, եկեղեցամերձ դպրոցի շենքը հիմ-

նովին վերակառուցվել է, և 1997-ին այնտեղ բացվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատունը (ճարտ.՝ Բ. Արզումանյան): Երկհարկանի, սյունազարդ և գմբեթավոր դահլիճներով, ցուցասրահներով, հարուստ գրադարանով, շքեղ կահավորված շենք է, որի սրահներում ներկայացված են հայ անվանի արվեստագետների ստեղծագործություններ: 1999-ին Դպրատունը կազմակերպվել է «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովը, իսկ նույն թվականից, Թարգմանչաց տոնին, ամենամյա «Մաշտոցյան ընթերցումներ» գիտաժողովները: 1997-ին եկեղեցու արմ. կողմում, Ժ. և Հ. Գաբրիելյանների բարերարությամբ կառուցվել է առաջնորդարանի շենքը (ճարտ.՝ Հ. Բաբախանյան), 2000-ին Ջ. Կոբոյանի միջոցներով բարեկարգվել է Օ. Ս. Մ. Մ. ե-ու տարածքը:

Պատկերազարդումը տես ներդիր XVI-ում, 16.4, 2–4-րդ պատկերները:

Գրկ. Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ե., 1994: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990: Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1848: Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890: Տերյան Վ., Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, «Էջմիածին», 1963, № 3: Խանջյան Գ., Օշականի եկեղեցու վերանորոգության առթիվ, «Էջմիածին», 1968, № 3: Հարությունյան Վ., Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1988:

Մուրադ Հասրաթյան

ՕՐՀՆԵՐԳ, տես *Շարական*:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, *Աստծո* բարեհաճության և սիրո հեղումը մարդու վրա. *շնորհ*, նախապայման հոգևոր և նյութական բարգավաճման. գոհաբանական, փառաբանական *աղոթք* (օրհնության *սաղմոսներ*) առ Աստված. որևէ անձի սիրո դրսևորումը մերձավորի նկատմամբ՝ նրա վրա աստվածային բարեհաճության հրավիրումով: *Նզովքի* կամ անեծքի հակոտնյան:

Ըստ Աստվածաշնչի՝ Օ-ները կարող են հեղվել Աստծուն սիրելի անձի վրա, եթե նա շարժվում է Աստծո կամքի համաձայն, ինչպես հավատքի հայր Աբրահամի դեպքում. «Անչափ պիտի օրհնեմ քեզ և երկնքի աստղերի, ծովեզերքի ավազի չափ պիտի բազմացնեմ քո սերունդը» (Ծննդ. **22.**17): Մարդ էակին տրվող աստվածային Օ. կարող է լինել հավիտենական, ինչպես Աբրահամին և նրա սերնդին տրված Օ., և ժամանակավոր, ինչպես Լաբանի վրա իջած Օ., որը Հակոբի՝ Աստծո սիրելիի շնորհիվ եղավ. «Լաբանը պատասխանեց նրան. «Քանի որ արժանացա քո բարեհաճությանը, փորձով համոզվեցի, որ Աստված ինձ օրհնեց իմ տուն քո ոտք դնելու առթիվ» (Ծննդ. **30.**27):

Աստծուն հղված Օ-յան, փառաբանության ցայտուն օրինակ է Մովսեսի երգը, որը Մովսեսն ու իսրայելացիներն ուղղեցին Աստծուն՝ աստվածային հրաշագործությամբ Կարմիր ծովն անցնելուց հետո. «Օրհնենք Տիրոջը, որ փառքով է փառավորված... Նա՛ է իմ Աստվածը և ես նրան եմ փառավորելու...» (Ելք **15.**1, 3): Մերձավորին օրհնել՝ նշանակում է նրա վրա հրավիրել Աստծո բարեհաճությունը՝ Օ., պահպանությունը, զորությունը: Այդպես օրհնեց Հակոբը Հովսեփի որդիներին՝ Եփրեմին ու Մանասեին. «Աստված, որին հաճո եղան իմ նախնիները՝ Աբրահամն ու Իսահակը... Հրեշտակը, որ փրկեց ինձ ամեն տեսակ փորձանքներից, թող օրհնի այս մանուկներին..., նրանք օրհնյալ լինեն երկրի վրա և շատ բազմանան» (Ծննդ. **48.**15–16):

Օ-յան աղբյուրը Աստվածն է՝ Հայրը, Որդին և *Սուրբ Հոգին*, և նա՛ է մարդու մեջ ներդնում բարի կամեցողությունը, *բարեխոսությունը*, աղոթքը և սուրբ իղձերը: Օրհնյալ մարդը, օժտվելով աստվածային շնորհներով, հաղորդակցվում է աստվածային բնությանը և երանական կյանքին:

Նոր կտակարանում Աստծո օրհնյալ է անվանվում *Մարիամ Աստվածածինը*. «Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, և օրհնյա՛լ է քո որովայնի պտուղը» (Ղուկ. **1.**42):

Աստվածային գերագույն Օ-յան և իշխանության աղբյուրն ու միաժամանակ կրողն է Աստծո Որդին՝ *Հիսուս Քրիստոսը*, ինչպես և ասվում է Հովհաննեսի Հայտնությունում. «Արժանի է այդ մորթված Գառը [Հիսուս] ընդունելու մեծություն, իմաստություն, զորություն, պատիվ, փառք և օրհնություն» (Հայտն. **5.**12). «Նա, որ նստած է աթոռի վրա, ինչպես և Գառը [Հիսուս], թող օրհնյալ, բարգրացյալ և փառավորյալ լինի հավիտյանս հավիտենից» (Հայտն. **5.**13):

Սուրբ *Երրորդության* անունից օրհնվում են եկեղեցու բոլոր խորհուրդները, *հոգևոր բարեպաշտական արարողությունների* ընթացքում կիրառվող նյութերն ու առարկաները (օր., խունկը): Քահանան, խաչակնքելով, կարող է Աստծո Օ. հրավիրել նաև որևէ անձի կամ նվիրական առարկայի վրա:

ՕՐՄԱՆՅԱՆ

Համապատասխան ծիսակարգով օրհնվում են տունը (տնօրհնեք), *խաչը* (խաչի օրհնություն և *օծում*), *աղը* (աղօրհնեք), սրբալույս *Մյուռոնը* (մյուռոնօրհնություն), սուրբ *Սեղանը*, ջուրը (տես *Ջրօրհնեք*), բերքը (տես *Խաղողօրհնեք*) ևն: Եկեղեցում, սաղմոսներից զատ, կատարվում են Օ-յան *շարականներ*:

Լևոն Սարգսյան

ՕՐՄԱՆՅԱՆ Մաղաքիա (ավազանի անունը՝ Պողոս) [11(23).2.1841, Կ. Պոլիս – 6(19).11.1918, Կ. Պոլիս], Կ. Պոլսի հայոց պատրիարք (1896–1908), աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային պահպանողական ուղղության հասարակական գործիչ: Նախն. կրթությունն ստացել է Կ. Պոլսում, 1851-ից ուսումը շարունակել Հռոմի Անտոնյանց Ս. Լուսավորիչ վանքում, 1858-ից՝ Վատիկանի հոգևոր դպրոցում: Նույն թվին ստանալով աստվածաբանության մագիստրոսի աստիճան՝ նշանակվել է Հռոմի Քարոզչության դպրոցում հայերենի ուսուցիչ: 1866-ին վերադարձել է Կ. Պոլիս, նշանակվել Անտոնյանց միաբանության քարտուղար, իսկ 1867-ին՝ ստանձնել Հռոմի Անտոնյանց վարժարանի տեսչի պաշտոնը: 1868-ին Հռոմում ստացել է իմաստասիրության, աստվածաբանության և եկեղեց. իրավագիտության մագիստրոսի գիտ. աստիճան, ընտրվել Հռոմի աստվածաբան. ակադեմիայի անդամ: 1870-ին, խուսափելով կաթոլիկ հոգևորականության հալածանքներից, վերադարձել է Կ. Պոլիս, որտեղ զբաղվել է հրապարակախոսությամբ՝ ֆրանս. և հայ. թերթերում տպագրած հոդվածներով բացահայտ պայքարել հայ կաթոլիկ համայնքը պառակտելու, հայ կաթոլիկների մեջ հայկ. ավանդությունները վերացնելու Վատիկանի քաղաքականության դեմ: Այդ շրջանում է գրել Հռոմի կաթոլիկ եկեղեցու և հայոց վեճը լուսաբանող աշխատություններ, ինչպիսիք են՝ «Արևելյան հայ-կաթողիկե հայերը» (1870, իտալ.), «Արևելյան կաթոլիկաց կրոնական ազատությունը և քաղաքացիական իրավունքները» (1872, ֆրանս.), «Ռևերսորուս կամ Հայք և պապություն» (1872, իտալ.), «Վատիկան և Հայք» (1873, ֆրանս.) գրքերը, որոնք 1874-ին ներառվել են Վատիկանի արգելած գրքերի ցանկի մեջ: 1875-ին Իտալիայում հանդիպել է երկրի ազգ-ազատագր. պայքարի ղեկավար Ջ. Գարիբալդիին, նրա հետ քննարկել հայ և իտալացի ժողովուրդների ազատագր. պայքարին վերաբերող հարցեր:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյան

1876-ին Օ. վերջնականապես որոշել է խզել իր կապերը Վատիկանի հետ և հրաժարվել է կաթոլիկությունից: 1877-ին դիմել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյանին՝ Հայ եկեղեցու գիրկը դառնալու խնդրանքով: 1879-ին Կ. Պոլսի Գումգափուի Մայր եկեղեցում Վարժապետյան պատրիարքի ձեռքից ստացել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու ծայրագույն վարդապետ. աստիճան: Հայ եկեղեցու ծոցում Օ. իր գործունեությունն սկսել է որպես քարոզիչ Կ. Պոլսի Ղալաթիա թաղամասի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: 1880-ին նշանակվել է Կարինի թեմի առաջնորդ, վճռական դեր խաղացել Կարինի Սանասարյան վարժարանի բացման (1881) գործում, ստանձնել վարժարանի տեսչական մարմնի նախագահությունը, կապեր հաստատել իր աթոռանիստ Կարինում 1881-ին ստեղծված «Պաշտպան Հայրենյաց» ազատագր. գաղտնի կազմակերպության ղեկավարների հետ, աջակցել նրանց կազմակերպչ. աշխատանքներում: 1886-ին Ս. Էջմիածնում Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսը նրան ձեռնադրել է եպիսկոպոս: 1887-ին Օ. թողել է Կարինի առաջնորդությունը և Մակար Ա Թեղուտցու կոնդակով հրավիրվել Ս. Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում աստվածաբանություն դասավանդելու: Սակայն Օ-ի ազատագր. տոգորումները և ազատախոհ ճառերը գրավել են ցար. իշխանությունների ուշադրությունը, և նա, ռուսահպատակ չլինելու պատրվակով, արտաքսվել է ռուս. կայսրության սահմաններից: 1889-ին վերադարձել է Կ. Պոլիս և նշանակվել Արմաշի վանքի վանահայր և իր կազմակերպած դպրեվանքի տեսուչ:

Օ. Կ.Պոլսի հայոց պատրիարք է ընտրվել սուլթան Աբդուլ Համիդ II-ի արյունոտ բռնապետության պայմաններում, երբ Կ. Պոլսում ու Արմ. Հայաստանի նահանգներում սկսվել էին հայկ. ջարդերն ու տեղահանությունները: Ստեղծված իրավիճակում Օ. հնարավոր միջոց-

ներով փորձել է մեղմացնել Աբդուլ Համիդ II-ի՝ հայերի դեմ ունեցած ատելությունը, կանխել ավելի մեծ աղետները և քիչ թե շատ տանելի վիճակ ստեղծել: Օ., Հայ եկեղեցու գիրկը վերադառնալուց հետո, մանավանդ՝ իր պատրիարքության տարիներին, «բանիւ և գործով» միշտ բարձր է պահել Ամենայն Հայոց կաթողիկոսության հեղինակությունը: Նա եղել է Մայր աթոռի՝ որպես Հայաստանյայց առաքելական եկեղեցու գերագահ աթոռի, դերի և հեղինակության բարձրացման ամենաջերմ ջատագովներից և պայքարել է նրանց դեմ, ովքեր փորձել են պառակտել և թուլացնել այն: Իր պատրիարքության գրեթե ամբողջ ընթացքում Հայոց Հայրապետն էր Խրիմյան Հայրիկը և, չնայած վերջինիս գործունեության ու մեթոդների հանդեպ իր ունեցած բոլոր վերապահումներին, Օ. եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսի և Մայր աթոռի ամենահուսալի հենարանն ու գործակիցը ամենադժվարին տարիներին՝ 1903-ի եկեղեց. գույքի բռնագրավման (տես *Եկեղեցական գույքի բռնագրավման օրենք 1903*), ինչպես նաև Կիլիկիո աթոռի և Ս. Էջմիածնի իրավասությունների վերաբերյալ խնդիրներում:

Օ-ի պատրիարքությունը եղել է ինչպես նրա փառքի, այնպես էլ դառնության ժամանակաշրջանը: Նա իր զգույշ և պահպանողական քաղաքականությամբ առաջ է բերել Կ. Պոլսի ազգ. որոշ շրջանակների, ինչպես նաև՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հոգևորականության մի մասի դժգոհությունը և հանիրավի ամբաստանվել է: 1906-ին, Հայոց *Ազգային սահմանադրության* վերաքննման և, փաստորեն, արգելման վերաբերյալ Աբդուլ Համիդ II-ի հրամանի առիթով Օ. սուլթանին ներկայացրել է հրաժարական, որը չի ընդունվել: 1908-ի հուլիսի 16-ին Կ. Պոլսում կազմակերպված բազմամարդ ցույցի մասնակիցները խուժել են պատրիարքարան և Օ-ին հայտարարել պաշտոնանկ: «Հիշատակագիրք երկոտասանամյա պատրիարքության» գրքում (1910) Օ. հերքել է իր դեմ եղած այն ամբաստանությունները, թե իբր խուլ է եղել ազգի ցավերին, դավաճանել է Ազգային սահմանադրությանը, ծնկի է եկել բռնակալի առաջ, կառչած է մնացել պատրիարքական աթոռին և մենատիրություն հաստատել ազգ-եկեղեց. գործերում: 1913-ի հունվ. 3-ին Ազգային երեսփոխանական ժողովը, որտեղ ի պաշտպանություն Օ-ի ճառով հանդես է եկել գրող Գրիգոր Զոհրապը, արդարացրել է նախկին պատրիարքին: Նույն թվին Օ. ընտրվել է եկեղեց. համագումարի պատգամավոր, կրոնական ժողովի անդամ և ապա՝ Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ, բայց հրաժարվել է ստանձնել այդ պաշտոնը: 1914–17-ին Օ. Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում վարել է մի շարք պաշտոններ, դասավանդել ժառանգավորաց վարժարանում: 1918-ին վերադարձել է Կ. Պոլիս, որտեղ և վախճանվել է:

Օ. եղել է ժամանակի ամենանշանավոր և բեղմնավոր հայ գիտնական հոգևորականը: Նա թողել է գրական, գիտ., մատենագր. հարուստ ժառանգություն, եկեղեցապատմ. մի շարք կոթողային աշխատություններ: Հայ կրոն. գրականության ամենաուշագրավ երկերից է «Համապատումը» (1911), որն անմիջապես ջերմ ընդունելություն է գտել Հայ հոգևորականության շրջանում: Հեղինակի խոսքերով, այն «փորձ մըն է համաձայնեցնելու հորս Ավետարանները իրարու և ընթերցողին պարզելու բոլոր չփոթությունները»: Նպատակն էր հստակ և դյուրըմբռնելի ոճով ժողովրդին բացատրել Ավետարանների բովանդակությունը, լուսաբանել դեպքերի, երևույթների, ինչպես նաև բառերի իմաստը:

Հայ եկեղեցու դավանանքն ու վարդապետությունը, ծեսերն ու ավանդույթներն օտարին ճանաչել տալու, դարերի ընթացքում կուտակված թյուրիմացությունները ու առասպելները մեկընդմիշտ ցրելու, Հայ եկեղեցու դիմագիծը, նրա տեղը մյուս եկեղեցիների ընտանիքի մեջ ճշտելու մտահոգությամբ է Օ. ձեռնարկել «Հայոց եկեղեցին» (1911) աշխատությունը: Ուղղված լինելով Եվրոպային՝ այն սկզբում լույս է տեսել (1910) Ֆրանսերեն և մեծ արձագանք գտել ժամանակի եվրոպացի աստվածաբանների և գիտնականների շրջանում: «Հայոց եկեղեցին» ևս անցել է Վատիկանի նզոված գրքերի ցանկը, ինչը խթան է դարձել այդ գրքի ավելի ևս տարածվելուն և կարճ ժամանակում տարբեր լեզուներով թարգմանվելուն: Գրքում շոշափված հարցերը վերաբերում են Հայ եկեղեցու պատմությանը, վարդապետությանը, վարչությանը, բարեկարգությանը, գրականությանը և ներկա կացությանը, նրա առաքելական ծագմանը, ի սկզբանե ինքնուրույնության ու անկախության կարևորությանը ևն: Օ. ձգտել է հատկապես ներկայացնել Հայ եկեղեցու ժողովրդավար ոգին և ազատախոհ նկարագիրը:

Օ-ի հիմն. մտահոգություններից է եղել Հայ եկեղեցին ներկայացնել նաև իր ծեսերով, որպեսզի ժողովրդին հասկանալի դարձնի եկեղեց. պաշտամունքն ու արարողությունների իմաստը: Իր պատրիարքության տարիներին, Կ. Պոլսի Ազգային հիվանդանոցի «Ընդարձակ օրացույց»-ում, 1905-ից սկսած, չորս տարի հաջորդաբար լույս են տեսել նրա «Ծիսական բառարան»-ի առանձին մասերը, որտեղ հակիրճ ներկայացված են Հայ եկեղեցու տոները, եկեղեց. սպասքն ու զարդերը, եկեղեց. արարողություններն ու պաշտամունքը: «Ծիսական բառարան»-ի անտիպ մասերը՝ հիմնականում ժամերգություններին վերաբերող, Գնել եպս. Գալեմքյարյանի ջանքերով լույս են տեսել հետմահու՝ Կ. Պոլսի «Հայ խոսնակ»-ի 1933–35-ի համարներում:

Հայ եկեղեցու պատմությանը և դերին է նվիրված Օ-ի «Ազգապատում» կոթողային աշխատությունը: Հեղինակը սկզբնապես մտադիր էր շարադրել միայն Հայ եկեղեցու պատմությունը, բայց աշխատանքի ընթացքում չի մնացել իր գծած շրջանակում, քանզի Հայ եկեղեցին հնարավոր էր լիարժեքորեն ներկայացնել միայն Հայ ժողովրդի պատմության համատեքստում: Այս նկատառումով շարադրվել են «Հայ Ուղղափառ Եկեղեցվո անցքերը սկզբեն մինչև մեր օրերը՝ հարակից ազգային պարագաներով պատմված»: Գրքի առաջին երկու հատորները լույս են տեսել Կ. Պոլսում, 1912–14-ին, իսկ երրորդը՝ հետմահու (Երուսաղեմ, 1927): Օ. Հայ եկեղեցու պատմությունը հասցրել է մինչև Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցու ընտրությունը (1908): Սակայն հեղինակի «Խոհք և խոսք» (Երուսաղեմ, 1929) աշխատության մեջ, որը գրել է կյանքի վերջին տարիներին, արժեքավոր նյութեր կան Հայ եկեղեցու (մանավանդ՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքության) և Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ մինչև 1918-ը:

Օ., չեշտելով Հայ ժողովրդի պատմության մեջ Հայ եկեղեցու կատարած դերը, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ եկեղեցին ազգային կյանքի միակ խարիսխն էր և չընդհատված իրողությունը, չի վախեցել ի ցույց դնել նաև այն սայթաքումներն ու ցավալի վրիպումները, որ ունեցել են Հայոց կաթողիկոսները: «Ազգապատում» աշխատության մեջ հեղինակը ցանկացել է դեպքերը ներկայացնել ժամանակագր. կարգով, սակայն, կենտրոնանալով կաթողիկոսների հաջորդականության խնդիրների վրա, Հայ ժողովրդի և Հայ եկեղեցու պատմությունը շարադրել է ըստ կաթողիկոսների գահակալության տարիների և պատմության անցքերը կապել ժամանակի կաթողիկոսի հետ: Իր թերի կողմերով և պատմագիտ. վիճելի հայացքներով հանդերձ «Ազգապատում»-ը, իբրև Հայ կյանքի յուրօրինակ հանրագիտարան, շատ առումներով այսօր էլ մնում է չգերազանցված:

Օ. հրապարակախոս., դավան., գիտ. և գրական բազմաթիվ հոդվածներ է տպագրել «Մասիս», «Արևելք», «Արարատ», «Լումա» պարբերներում, հանդես եկել եվրոպ. մամուլում: Ունի մի շարք անտիպ և անավարտ գործեր:

Երկ. Աթոռ Հայաստանյայց, Էջմիածին, 1972: Ծիսական բառարան, Ե., 1992: Հայոց եկեղեցին..., Ե., 1993: Համապատում. Զորս Ավետարանների պարունակությունը, Էջմիածին, 1997:

Գրկ. Պողոսպալյան Հ., Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի համառոտ կենսագրությունը, «Էջմիածին», 1961, № 5: Սիրունի Հ., Օրմանյան և իր ժամանակը, «Էջմիածին», 1961, № 5–9, 11–12, 1962, № 1–5:

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

աբդ. (անվան հետ) – աբեղա
ազգ. – ազգային
ԱԺ – Ազգային ժողով
ակադ. – ակադեմիկոս
անգլ. – անգլերեն, անգլիական
ասոր. – ասորերեն, ասորական
ավ. – ավագ
ավանդ. – ավանդական
արաբ. – արաբերեն, արաբական
արլ. – արևելք, արևելյան
արձն. – արձանագրություն
արմ. – արևմուտք, արևմտյան
արք. (անվան հետ) – արքեպիսկոպոս
բաբել. – բաբելական
բյուզ. – բյուզանդական
բարձր. (թվի հետ) – բարձրություն
բրիտ. – բրիտանական
բուս. – բուսական
գ. (անվան հետ) – գյուղ
ԳԱԱ – Գիտությունների ազգային ակադեմիա
գեղ. – գեղարվեստական
գլխ. – գլխավոր
դ. (թվի հետ) – դար
դդ. (թվերի հետ) – դարեր
դավան. – դավանական
դավանաբան. – դավանաբանական
դեկտ. – դեկտեմբեր
եբր. – եբրայերեն, եբրայեցերեն, եբրայական
եգիպտ. – եգիպտերեն, եգիպտական
ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
եպս. (անվան հետ) – եպիսկոպոս
եվրոպ. – եվրոպական
թ. (թվի հետ) – թվական
թթ. (թվերի հետ) – թվականներ
թուրք. – թուրքերեն, թուրքական
ժող. – ժողովրդական
ԻՀ – Ինքնավար Հանրապետություն
ինստ. – ինստիտուտ
իսպ. – իսպաներեն, իսպանական
իտալ. – իտալերեն, իտալական
լատ. – լատիներեն, լատինական
ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
լ-շղթա – լեռնաշղթա
ծ. – ծնվել է
ծ.թ. անհտ – ծննդյան թվականն անհայտ է
ծ. և մ. թթ. անհտ – ծննդյան և մահվան թվականներն անհայտ են
կենտր. – կենտրոնական
կրթ. – կրթական
կրոն. – կրոնական
հայկ. – հայկական
համաշխ. – համաշխարհային
ՀԱՊ – Հայաստանի ազգային պատկերասրահ
հաս. – հասարակական
ՀԲԸՄ – Հայ բարեգործական ընդհանուր միություն
հզ. (թվի հետ) – հազար
հիմն. – հիմնական
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
հոկտ. – հոկտեմբեր
ՀՊՊԹ – Հայաստանի պատմության պետական թանգարան
հռոմ. – հռոմեական
հս. – հյուսիս, հյուսիսային
հս-արլ. – հյուսիս-արևելք, հյուսիս-արևելյան
հս-արմ. – հյուսիս-արևմուտք, հյուսիս-արևմտյան
հվ. – հարավ, հարավային
հվ-արլ. – հարավ-արևելք, հարավ-արևելյան
հվ-արմ. – հարավ-արևմուտք, հարավ-արևմտյան
հուն. – հունարեն, հունական
հունվ. – հունվար
ճարտ. (անվան հետ) – ճարտարապետ
ճարտ. – ճարտարապետություն, ճարտարապետական
Մատենադարան – Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտ, Մատենադարան
մ.թ.անհտ – մահվան թվականն անհայտ է
միջազգ. – միջազգային
մլն (թվի հետ) – միլիոն
մլրդ (թվի հետ) – միլիարդ
մշակութ. – մշակութային
մոնղոլ. – մոնղոլերեն, մոնղոլական
նահ. (թվի հետ) – նահատակվել է
նախն. – նախնական
նեստոր. – նեստորական
նյութ. – նյութական
նոյեմբ. – նոյեմբեր
պարբ. – պարբերական
պարսկ. – պարսկերեն, պարսկական
պետ. – պետական
ռուս. – ռուսերեն, ռուսական
ս. – սուրբ
սեպտ. – սեպտեմբեր
սկզբ. – սկզբնական

սրկ. (անվան հետ) – սարկավագ
վկայաբան. – վկայաբանական
Վ.Հ – Վրաստանի Հանրապետություն
վրաց. – վրացերեն, վրացական
վրդ. (անվան հետ) – վարդապետ
տնտ. – տնտեսական
ուս. – ուսումնական
ուր. – ուրիշներ
փետր. – փետրվար
փիլ. – փիլիսոփայական
ք. (անվան հետ) – քաղաք
քաղ. – քաղաքական
քաղկեդոն. – քաղկեդոնական
քերակ. – քերականական
Ք.ծ.ա. – Քրիստոսի ծնունդից առաջ
Ք.ծ.Հ. – Քրիստոսի ծնունդից հետո
քհն. (անվան հետ) – քահանա
քրիստ. – քրիստոնեական
օգոստ. – օգոստոս
օր. – օրինակ
ևն – և այլն
ֆրանս. – ֆրանսերեն, ֆրանսիական

Համառոտագրություններ՝ հապավումներ մատենագիտական նկարագրություններում

ԱՀ – «Ազգագրական հանդես»
ԲԵՀ – «Բանբեր Երևանի համալսարանի»
ԲՀԱ – «Բանբեր Հայաստանի արխիվների»
ԲՄ – «Բանբեր Մատենադարանի»
գլ. – գլուխ
Գրկ. – գրականություն
Ե. – Երևան
ԵԼԺ – Երկերի լիակատար ժողովածու
Երկ. – երկեր
Երկ. ժող. – Երկերի ժողովածու
երկասիր. – երկասիրությամբ
Թ. – Թիֆլիս, Թբիլիսի
թրգմ. – թարգմանություն (ը)
ժող. – ժողովածու
ԼՀԳ – «Լրաբեր հասարակական գիտությունների»
ԽԱ – «Խորհրդային արվեստ»
ծնթգր. – ծանոթագրություն
կազմ. – կազմեց
ԿՊ – Կ. Պոլիս
հ., հհ. – հատոր, հատորներ
ՀԱ – «Հանդես ամսօրյա»
ՀԵՀ – «Հանդես Երևանի համալսարանի»
հրտ. – հրատարակություն, հրատարակիչ, հրատարակեց
ձեռ. – ձեռագիր
Մ. – Մոսկվա
ՊԲՀ – «Պատմա-բանասիրական հանդես»
պր. – պրակ
ՍՊԲ – Սանկտ Պետերբուրգ
Վաղ-պատ – Վաղարշապատ
վերամշկ. – վերամշակված
Վնն. – Վիեննա
Վնտ. – Վենետիկ
«Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ» – «Տեղեկագիր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի»

Օտար լեզուներով

в. — *выпуск*
Е. — *Ереван*
Л. — *Ленинград*
М. — *Москва*
М.-Л. — *Москва-Ленинград*
П. — *Петроград*
с. — *страница*
сб. — *сборник*
Соч. — *Сочинение*
СПБ — *Санкт-Петербург*
Тб. — *Тбилиси*
Тр. — *Труды*
B. – Berlin
Cal. – California
Camb. – Cambridge
L. – London
L.A. – Los Angeles
Lpz. – Leipzig
N.Y. – New York
Oxf. – Oxford
P. – Paris
V. – Venezia
W. – Washington

¶ ñùÇ å ³ ï ñ³ ëï Ù³ ÝÁ Ù³ ëÝ³ Ï ó»É»Ý

ä ³ ï ³ ëË ³ Ý³ ï áõ ù³ ñï áõÕ³ ñÇ Í ³ é³ ÛáõÃÛáõÝÁ

Ô»Ï ³ í ³ ñª **Î .ì . ² É»ùë³ ÝÛ Ý**, · ñ³ Ï ³ Ý ÑëÏ Çã-á×³ µ³ Ý, ³ í ³ · · Çï ËÙµ³ · Çñª
Ü.ä . ² Ý³ ÝÇÏ Û Ý, Ù³ ï »Ý³ · »ï , ³ í ³ · · Çï ËÙµ³ · Çñª**Ä.ì . ê ³ ñ· ëÛ Ý**

´ ³ é³ ó³ ÝÏ Ç ¨ Ñ³ Ù³ ÉñÙ³ Ý µ³ ÅÇÝÁ

ì ³ ñÇª **Ð.² . ¶ ñÇ· áñÛ Ý**, ³ í ³ · · Çï ËÙµ³ · ÇñÝ»ñª¾ê . ² Û ³ ½Û Ý,
¾ø . êáõÙÇ³ ëÛ Ý, · Çï ËÙµ³ · Çñª**È.º . ² é³ ù»ÉÛ Ý**

ä ³ ï Ï »ñ³ ½³ ñ¹ Ù³ Ý ¨ ù³ ñï »½³ · ñáõÃÛ Ý Ë Ùµ³ · ñáõÃÛáõÝÁ

ì ³ ñÇª **ê.ê . ² ñÙ³ Õ³ ÝÛ Ý**, · »Õ. ËÙµ³ · Çñª**Î .Î . Ê ³ ã³ ï ñÛ Ý,**
· Çï ËÙµ³ · Çñª**Èì . Î ³ ñ³ å »ï Û Ý**, Éáõë³ ÝÏ ³ ñÇãÝ»ñª **ê.´ . ² · ñ³ Ù³ ÝÛ Ý,**
² .¶ . ´ ³ ñë»ÕÛ Ý, ù³ ñï »½Ý»ñÁª **´ .Ð. Ð³ ñáõÃÛáõÝÛ ÝÇ, ¶ .Ø. ´ ³ ¹ ³ ÉÛ ÝÇ,**
ì .¶ . ØË ÇÃ³ ñÛ ÝÇ

êñµ³ · ñ³ Ï ³ Ý µ³ ÅÇÝÁ

ì ³ ñÇª **¶ .È. ¸ ñ³ óÛ Ý**, ³ í ³ · ëñµ³ · ñÇãÝ»ñª **Â .ì . Ð³ ñáõÃÛáõÝÛ Ý,**
ø .¶ . Ðáí Ñ³ ÝÝÇëÛ Ý

² ñï ³ ¹ ñ³ Ï ³ Ý ¨ Ñ³ Ù³ Ï ³ ñ· ã³ ÛÇÝ µ³ ÅÇÝÁ

ì ³ ñÇª **ê.² . ø »ñáµÛ Ý**, ¿ç³ ¹ ñáÕÝ»ñª **È.Þ. ¶ ñÇ· áñÛ Ý, ² .ê . Ô³ ½³ ñÛ Ý**,
ß³ ñí ³ Í ùÇ Í ³ é. å »ï ª **¶ .² . ² Õ³ Ù³ ÉÛ Ý**, ³ í ³ · ûå »ñ³ ï áñª **² .Þ. ² µñ³ Ñ³ ÙÛ Ý**,
ûå »ñ³ ï áñÝ»ñª **È.² . Î Çñ³ Ï áëÛ Ý, ² .º . Ä ³ ÙÏ áãÛ Ý, ² .² . êí ³ Éáí ³ ,**
ê.² . ê ³ ñ· ëÛ Ý, å ³ ï Ï »ñÝ»ñÇ Ñ³ Ù³ Ï ³ ñ· ã³ ÛÇÝ Ùáõï ù³ · ñáõÙ ¨ Ùß³ Ï áõÙª
î .¾ ¶ ³ µñÇ»ÉÛ Ý, ² .² . ¶ ³ ëå ³ ñÛ Ý, Æ² . ØË ÇÃ³ ñÛ Ý, ø .è . Ð³ ñáõÃÛáõÝÛ Ý,
Ó¨ ³ í áñáÕ ËÙµ³ · Çñª º **.¸ . Ø»ÉÇùÛ Ý**

ø 935 §øðÆêî àÜÚ² Ð² Ú² êî ² Ü¦ Ð² Üð² ¶ Æï ² ð² Ü
¶ Çï ³ Ë Ùµ³ · ñ³ Ï ³ Ý Ë áñÑáõñ¹ ª Ð.Ø. ² Ûï ³ ¼Ã Ý (· ËË. Ë Ùµ³ · Çñ·ï Ýûñ»Ý) ¨ áõñÇß. _ º ., 2002,
1076 ¿ç: ÜÏ ., ù³ ñï »½

ХРИСТИАНСКАЯ АРМЕНИЯ: ЭНЦИКЛОПЕДИЯ

/Ред. колл. О.М. Айвазян (гл. ред.) и др. – Е., 2002,
1076 с., илл., на армянском языке

Ð² ÚÎ ² Î ² Ü Ð² Üð² ¶ Æï ² ð² ÜÆ ¶ ÈÊ ² ì à ð Ê Ø´ ² ¶ ð à ôÂ Úà ðÜ
375001, º ñ¨ ³ Ý_1, Â áõÙ³ ÝÛ³ Ý 17

Ð³ ÝÓÝí ³ Í ¿ ß³ ñí ³ Í ùÇ 23.01.2001:
êï áñ³ · ñí ³ Í ¿ ï å ³ · ñáõÃÛ³ Ý 4.02.2002:
â ³ ÷ ëÁª 70x1001/16, ÃáõÕÃÁª ûý ë»Ã: î ³ é³ ï »ë³ Ï Áª §¶ ñùÇ Üáñ¦ :
î å ³ · ñ. 67,25 Ù³ Ù. ï »ùëï , 7,75 Ù³ Ù. å ³ ï Ï ., å ³ ÙÙ. 87,425 Ù³ Ù., Ññ³ ï . 134,5 Ù³ Ù.:
î å ³ ù³ Ý³ Ï Áª 2000: ä ³ ï í »ñª 50:

¶ ÇñùÁ ï å ³ · ñí »É ¿
§î Æ¶ ð ² Ü Øº Ì Ðð ² î ² ð ² Î â à ôÂ Úà ôÜ¦ ö ´ À
ï å ³ ñ³ ÝáðÙ

î ÝûÑ»Ýª ì .ì . Ø³ ñÏ áëÛ Ý, · ÉË ³ í áñ ×³ ñï ³ ñ³ · »ï ª ² .ê . ¶ ³ ëå ³ ñÛ Ý,
· áðÝ³ µ³ Å³ ÝáÕª ² .Î . ¶ ñÇ· áñÛ Ý, ÙáÝï ³ ÅáÕª È.ê . Ô³ ½ ÝãÛ Ý,
ï å ³ · ñÇãÝ»ñª è .È. Î ³ ñ³ å »ï Û Ý, ² .ê . Ê áõñßáõ Û Ý

1

3

2



4

1. ***Ա·ստան·եղոս.*** *«Ս. Տրդատ թագավորը, ս. Գրիգոր Լուսավորիչը և Ագաթանգեղոսը», մանրանկար 1569-ին Բաղեշում Վարդան Բաղիշեցու ծաղկած Ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 1920): 2.* ***Ա·ուլիսի Ս. Թովմա առաքյալ վանքը*** *(XVII դ.): 3. «****Ադրիանուպոլսի Ավետարան****»: «Հովհաննես Պրոքսիմոս», մանրանկար 1007-ին Ադրիանուպոլսում գրված և պատկերազարդված «Ադրիանուպոլսի Ավետարան»-ից (Վենետիկի Ս. Ղազար վանքի մատենադարան, ձեռ. № 887/116): 4.* ***Աբանաս Ալեքսանդրացի.*** *«Ս. Աթանաս Ալեքսանդրացի», մանրանկար XVI–XVII դդ. Հայսմավուրքից, ծաղկող՝ Թորոս (Մատենադարան, ձեռ. № 7478):*

1.2.

1



2

3

1. ***Արոռ.*** *Կաթողիկոսական գահ: 2.* ***Ախալցխայի Ս. Վարդանանց եկեղեցին*** *(1862–68) հվ-արմ-ից: 3.* ***Ախթալայի Ս. Աստվածածին վանքի*** *(XIII դ.) ընդհանուր տեսքը:*



1

3

2

4

Ականց անապատ. *1. «Դժոխք իջնելը», մանրանկար 1287-ին Ականց անապատում ընդօրինակված և պատկերազարդված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 197): 2. Ականց անապատի գրչության դպրոցի ձեռագրի նմուշ: 3.* ***Ակոռիի Ս. Հակոբ վանք.*** *«Գրիչ Հովհաննես, նրա օգնականը՝ Պետրոս և եղբայրը՝ Մարտիրոս», մանրանկար 1417-ին Ակռռիի Ս. Հակոբ վանքում Աստվածատուրի ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 4841): 4.* ***Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանքը*** *(XIII դ.) հվ-արմ-ից:*

1.4.

1



2

3

Աղրամարի վանք. *1. Վանքի Ս. Խաչ եկեղեցին (915–921, ճարտ.՝ Մանուել) հվ-ից: 2. Ս. Խաչ եկեղեցու արլ. ճակատի հատված: 3. Ս. Խաչ եկեղեցու ներքին տեսքը:*



1

2



3



5

4

1. ***Աղջոց վանքի*** *Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու (1270) արմ. ճակատը: 2.* ***Ամարասի վանքի*** *Ս. Գրիգորիս եկեղեցին (1858) հվ-արլ-ից: 3.* ***Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի*** *առաջնորդանիստ Նյու Յորքի Ս. Վարդան եկեղեցին: 4.* ***Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան թեմի*** *առաջնորդանիստ Լոս Անջելեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 5.* ***Անգլիայի թեմի*** *առաջնորդանիստ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցին:*

1.6.

1

2



4

3

5

Անի. *1. Անիի Սմբատաշեն պարիսպներն ու գլխ. մուտքը (Ավագ դուռը): 2. Անիի Ս. Փրկիչ եկեղեցին (1036): 3. Անիի Պարոնի պալատի (XIII դ.) չքամուտքը: 4.* ***Անիի Մայր տաճարը*** *(989–1001, ճարտ.՝ Տրդատ) հվ-արմ-ից: 5.* ***Անիի Ս. Առաքելոց եկեղեցու*** *գավթի առաստաղի հատված:*

1



2

3



4

1. ***Աշխեն.*** *«Տրդատ թագավորը կնոջ՝ Աշխենի, քրոջ՝ Խոսրովիդուխտի հետ ազոթելիս», Նաղաշ Հովնաթան (1710-ական թթ., Էջմիածնի Մայր տաճարի որմնանկար, այժմ՝ ՀԱՊ, Երևան): 2.* ***Ապրակունիսի Ս. Կարապետ վանքը*** *(XVII դ.) հվ-արլ-ից:* ***Աջ.*** *3. Ս. Թադեոս առաքյալի Աջը մասունքով, XVII դ., արծաթ, գունավոր քարեր, զուգաթել, հատիկազարդում, ոսկեզօծում, ձուլում, քարերի ագուցում (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 4. Ս. Հակոբ Մծբնացու Աջը, 1709, վարպետ՝ Աբրահամ վարդապետ, արծաթ, գունավոր քարեր, նռնաքար, ամետիստ, գրվագում, ձուլում, ոսկեզօծում, արծնապատում, փորագրություն (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

1.8.

1

2

3

4

1. ***Առաքել Սյունեցի.*** *«Առաքել Սյունեցի», մանրանկար 1693-ին Ադրիանուպոլսում Մինաս Էտրենեցու ծաղկած Մաշտոցից (Մատենադարան, ձեռ. № 1225):* ***Առաքյալներ.*** *2. «Խորհրդավոր ընթրիք», մանրանկար XIII–XIV դդ. Արցախում ընդօրինակված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 316): 3. «Սուրբ Հոգու գալուստը», մանրանկար XIII դ. 80-ական թթ. Կիլիկիայում գրված և պատկերազարդված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 9422): 4. «Պողոս և Պետրոս առաքյալները», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502)*

Առաքյալներ. *1. 12 առաքյալները. Ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի ճակատային մասի նկարազարդումից (XVIII դ., հեղ.՝ Հովնաթանյաններ):*

2.2.

1

2

3



4

5

*1. **Ասրված.** Հայր Աստծո պատկերաքանդակը Նորավանքի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավթում: 2. **Ասրվածածնի տոներ.** «Ավետումն», մանրանկար XIII դ. 80-ական թթ. Կիլիկիայում գրված և պատկերազարդված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 9422): 3. **Ասրվածաշնչային ընկերություն.** Հայաստանի Աստվածաշնչային ընկերության խորհրդանշանը: 4. **Ասրվածաշնչի համաբարբառ.** Համաբարբառի ձեավորում, ծաղկող՝ Խաչատուր, Ավետարան, 1641, Քեոթահիա (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): **Ասրվածաշունչ.** 5. Աստվածաշնչի հնագույն պատկերազարդ ձեռագրերից, 1270, Գոներ, ծաղկող՝ Թորոս Ըոոբինանց (Մատենադարան, ձեռ. № 345):*

1

2

3

4

Ասպվածաշունչ. *1. Աստվածաշնչի հայերեն առաջին հրատարակության տիտղոսաթերթը (1666, Ամստերդամ): 2. «Մարգարեների տոհմածառը», մանրանկար 1318-ին Գլաձորում Թորոս Տարոնացու ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 206): 3. Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը 1318-ին Գլաձորում Թորոս Տարոնացու ծաղկած Աստվածաշնչից: 4. «Երրորդություն», «Ադամ և Եվա», «Ահարոն և Մովսես», մանրանկարներ 1338-ին Սարգիս Պիծակի ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 2627):*

2.4.

1



2



3

4



5

1. ***Ապրվածրնկալ վանքը*** *(V–XIII դդ.) հս-արլ-ից: 2.* ***Ավա· վանքի*** *ընդհանուր տեսքը: 3.* ***Ավանի կաթողիկոսություն.*** *Ավանի Կաթողիկե Ս. Հովհաննես եկեղեցին (591) հվ-արմ-ից:* ***Ավետարան.*** *4. Ավետարանի կազմ (1268, Մատենադարան, ձեռ. № 10675): 5. Ավետարանի կազմ (XV դ., Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

1

2

3



4

Ավետարան. *1. Մարկոսի Ավետարանի անվանաթերթը, մանրանկար 1232-ի Աստվածաշնչից, գրիչ և ծաղկող՝ Իգնատիոս (Մատենադարան, ձեռ. № 1519): 2. Ավետարանի կազմ (1471, Մատենադարան, ձեռ. № 6767): 3. Ավետարանի կազմ (1607, Մատենադարան, ձեռ. № 6785): 4. Ավետարանի կազմ (1636, Մատենադարան, ձեռ. № 10382):*

2.6.

1

2

4

3



5

*1. **Ավետիս.** Մանրանկար 1320-ին Կիլիկիայում Ավետիսի ընդօրինակած «Ութ մանրանկարիչների Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. 7651): 2. **Ավստրալիայի՝ Նոր Զելանդիայի թեմի** առաջնորդանիստ Սիդնեյի Ս. Հարություն եկեղեցին: 3. **Ատրպատականի թեմի** առաջնորդանիստ Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցին: 4. **Արա·ածոտնի թեմի** առաջնորդանիստ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: 5. **Արատեսի վանքի** գավիթը (1270, ճարտ.՝ Սիրանես):*

1

2

3



4

1. ***Արարատյան հայրապետական թեմի*** *առաջնորդանիստ Երևանի Ս. Սարգիս եկեղեցին: 2.* ***Ար·ևմտինայի թեմի*** *առաջնորդանիստ Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 3.* ***Արևևիի Ս. Աստվածածին եկեղեցին*** *(1321, ճարտ.՝ Մոմիկ) հվ-արլ-ից: 4.* ***Ար՞ մտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն.*** *Մարսելի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Սրբոց Թարգմանչաց եկեղեցին:*

2.8.



1



2

3

4

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն. *1. Փարիզի առաջնորդանիստ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: 2. Լիոնի Ս. Հակոբ եկեղեցին: 3. Միլանի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցին: 4.* ***Արմավիրի թեմի*** *առաջնորդանիստ Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցին:*

1

2

1. ***Արփազի Ս. Թադև վանքը*** *(VI–IX դդ.) Հվ-արմ-ից: 2.* ***Արցախի բևմ.*** *Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին (XIX դ.):*

3.2.



1

3

2

4



5

*1. **Արուճի Ս. Գրի·որ եկեղեցին** (666) հվ-ից: 2. **Բարդուղիմեոս.** «Սբ Բարդուղիմեոս առաքյալ», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. **Բարձրաքաշ Ս. Գրի·որ վանքի** Ս. Աստվածածին եկեղեցու (1221) ներսը: **Բարձրյալ Խաչ.** 4. Բարձրյալ Խաչ մատուռ-դամբարանը (V–VI դդ.) հվ-արլ-ից: 5. Բարձրյալ Խաչ մատուռ-դամբարանի քիվը (հատված):*

1

2

3

1. ***Բարսեղ Կեսարացի.*** *«Ս. Բարսեղ Կեսարացի», մանրանկար 1286-ին ընդօրինակված «Հեթում Բ թագավորի Ճաշոց»-ից (Մատենադարան, ձեռ. № 979): 2.* ***Բերկրիի Ս. Ստեփանոս վանքը*** *(XVII դ.) հվ-արմ-ից: 3.* ***Բիստի Ս. Նշան վանքի*** *եկեղեցին (1668) հվ-արմ-ից:*

3.4.

1



2



3

4

5

*1.**Բղենո Նորավանքը** (1062) հվ-արմ-ից: 2. **Բջնիի Ս. Աստվածածին վանքի** եկեղեցին (1031) հս-արմ-ից: **Բռի Եղցի վանք.** 3. Բռի Եղցի վանքի որմնափակ խաչքար (XIII դ.): 4. Վանքի եկեղեցիներից (XIII դ., ճարտ.՝ Խաչենիկ Անեցի): 5. **Բրազիլիայի քեմի** առաջնորդանիստ Սան Պաուլոյի Ս. Գևորգ եկեղեցին: 6. **Բուլղարիայի քեմ.** Բուրգասի Ս. Խաչ եկեղեցու (1853) զանգակատունը (1958):*



6

1



3

2

1. ***Գա·կաշեն Ս. Գրի·որ եկեղեցու*** *(1001–10, ճարտ.՝ Տրդատ) խոյակը:* ***Գանձասարի վանք.*** *2. Գանձասարի վանքը (XIII դ.) հվ-ից: 3. Վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու (1216–38) գմբեթի թմբուկը:*

3.6.

1

2

3

Գանձատուն. *1. Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը (1982, ճարտ.՝ Բ. Արզումանյան, Էջմիածին): 2. Գանձատան ցուցասրահներից: 3. Գանձատան ցուցափեղկերից:*

1

2



3

4

5

Գավազան. *1. Հայրապետական գավազան, XVIII դ., Վան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 2. Վազգեն Ա կաթողիկոսի հայրապետական գավազանը (1980, հեղ.՝ Բ. Արզումանյան և Ժ. Զուլոյան, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Եպիսկոպոսական ասա, XIX դ., Էջմիածին (հին Վեհարան): 4. Եպիսկոպոսական գավազան, XVII դ.: 5. Վարդապետական գավազան, XIX դ., Փիլիպե (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

3.8.



1



2

3



4



5



6

Գավիթ. *1. Սանահինի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու գավթի (1211) ներքին տեսքը: 2. Հովհաննավանքի գավթի (1250) ներքին տեսքը: 3.* ***Գեղարդ.*** *Ս. Գեղարդ (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան):* ***Գեղարդավանք.*** *4. Գեղարդավանքը (XIII դ.) հվ-արլ-ից: 5. Վանքի Կաթողիկե եկեղեցու գավթի (1215–25) ներքին տեսքը: 6. Վանքի ժայռափոր երկրորդ եկեղեցու (1283) գմբեթը:*



1

2

3

5

4



6

1. ***Գեղարքունիքի թեմի*** *առաջնորդանիստ Գավառի Ս. Աստվածածին եկեղեցին: 2.* ***Գ՝ որ՝.*** *«Ս. Գևորգ զորավար», մանրանկար XIV դ. պատկերազարդված Ավետարանից, ծաղկող՝ Գրիգոր Տաթևացի (Մատենադարան, ձեռ. № 6305): 3.* ***Գ՝ որ՝յան ճեմարանի*** *շենքը: 4.* ***Գեղամանիայի թեմի*** *առաջնորդանիստ Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցու ներքին տեսքը: 5.* ***Գլաձորի համալսարան.*** *Խորան 1323-ին Գլաձորում Թորոս Տարոնացու պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 6289): 6.* ***Գմբեթ.*** *Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքի եկեղեցու (618) գմբեթը ներսից:*

4.2.

1



2



3

4

5

1. ***Գնդեվանքը*** *(X դ.) հվ-արմ-ից:* ***Գոշավանք.*** *2. Գոշավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1237–41) արմ. ճակատը: 3. Գոշավանքի (XII–XIII դդ.) տեսքը հվ-արմ-ից: 4.* ***Գոների վանք.*** *Մեկ էջ 1284-ին Գոներում գրված և պատկերազարդված «Մասունք Նոր կտակարանի» ձեռագրից, գրիչ՝ Կոստանդին, ծաղկողներ՝ Ստեփանոս Վահկացի, Գրիգոր Պիծակ (Մատենադարան, ձեռ. № 196): 5.* ***Գոչավանքը*** *(XIII դ.) հվ-արմ-ից:*

1

2

3

4

Գրի·որ Ա Լուսավորիչ. *1. Ս. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատ Գ արքային: Զորս կողմերի կլոր շրջանակներում պատկերված են Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքները (1628, փորագրանկար): 2. «Ս. Գրիգոր Լուսավորիչ», մանրանկար 1286-ին ընդօրինակված «Հեթում Բ թագավորի Ճաշոց»-ից (Մատենադարան, ձեռ. № 979): 3. «Ս. Գրիգոր Լուսավորիչ», անհայտ հայ նկարիչ (XVIII դ. 2-րդ կես, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 4. Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքը Նեապոլի Ս. Գրիգոր Հայի եկեղեցում:*

1



2

3

1. ***Գրի՛ր Ա Լուսավորիչ.*** *«Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ թագավոր», մանրանկար 1633-ին Կ. Պոլսում պատկերազարդված ձեռագրից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 66): 2.* ***Գրի՛ր Բ Վկայասեր.*** *«Գրիգոր Վկայասեր», մանրանկար 1763–64-ին ընդօրինակված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 6988): 3.* ***Գրի՛ր Խլաթեցի.*** *«Գրիգոր Խլաթեցի», մանրանկար 1419-ին Վասպուրականում ընդօրինակված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 3714): 4.* ***Գրի՛ր Մա՛խտրոս Պահլավունի.*** *«Մանուչէ և Գրիգոր Մագիստրոս», մանրանկար 1763–64-ին ընդօրինակված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 6988): 5.* ***Գրի՛ր Նազիանզացի.*** *«Ս. Գրիգոր Նազիանզացի», մանրանկար XVI–XVII դդ. պատկերազարդված Հայսմավուրքից, ծաղկող՝ Թորոս (Մատենադարան, ձեռ. № 7478): 6.* ***Գրի՛ր Նարեկացի.*** *«Ս. Գրիգոր Նարեկացի», մանրանկար 1173-ին Գրիգոր Մլիճեցու պատկերազարդած «Մատյան ողբերգության» ձեռագրից (Մատենադարան, ձեռ. № 1568): 7.* ***Գրի՛ր Նյուսացի.*** *«Ս. Գրիգոր Նյուսացի», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502):*



4

5

7

6

1

2

3

4



5

*1. **Գրի·որ Սքանչելա·ործ.** «Ս. Գրիգոր Սքանչելագործ», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502): 2. **Գրի·որ Տաթ՚ացի.** «Ս. Գրիգոր Տաթևացի», մանրանկար 1449-ին Կաֆայում (Ղրիմ) պատկերազարդված Ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 1203): **Գրչության կենտրոններ.** 3. «Հովհաննես ավետարանիչ և Հովհաննես Արքաղբայր», մանրանկար 1263–66-ին Բարձրբերդում Ստեփանոս Վահկացու պատկերազարդած «Մասունք Աստվածաշնչի» մատյանից (Մատենադարան, ձեռ. № 4243): 4. «Ննջումն Աստվածամոր», մանրանկար 1437-ին Սանահինում Հովհաննես Սանահնեցու պատկերազարդած Շարակնոցից (Մատենադարան, ձեռ. № 8979): 5. «Ավետում և Ծնունդ», մանրանկար 1360-ին Կաֆայում պատկերազարդված Ճաշոցից (Մատենադարան, ձեռ. № 7741):*

1



4

2

5

3

6

1. ***Գրչուրյան կենտրոններ.*** *Հաղպատի վանքի գրատան (1258–62) ներքին տեսքը: 2.* ***Գու·արքի բեմի*** *առաջնորդանիստ Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցին: 3.* ***Դաղիվանքը*** *(XII–XIII դդ.) հվ-արմ-ից: 4.* ***Դամասկոսի բեմի*** *առաջնորդանիստ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցին: 5.* ***Դավիթ Անհաղթ.*** *«Դավիթ Անհաղթ», մանրանկար 1651–1654-ին ընդօրինակված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 1764): 6.* ***Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկա վանքը*** *հվ-արմ-ից:*

1

2

4

3

5

1. ***Դժոխք.*** *«Դժոխք իջնելը», մանրանկար 1232-ին պատկերազարդված «Թարգմանչաց Ավետարան»-ից, ծաղկող՝ Գրիգոր (Մատենադարան, ձեռ. № 2743): 2.* ***Դիոնիսիոս Արիոպա·ացի.*** *«Ս. Դիոնիսիոս Արիոպագացի», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502): 3.* ***Դվինի կաթողիկոսարանի*** *հս. սյունազարդ դահլիճի խոյակներից (VII դ.): 4.* ***Դվինի Ս. Գրի·որ եկեղեցու*** *(IV–V դդ.) ավերակներն արլ-ից: 5.* ***Դրազարկի վանք.*** *Խորան 1295-ին Դրազարկում Հոհանի ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 6290):*

4.8.



1



2

3

4



5



6



7

8



9

*1. **Ե·իպտոսի թեմի** առաջնորդանիստ Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 2. **Եզնիկ Կողբացի.** «Եզնիկ Կողբացի», մանրանկար Ղրիմում XIV դ. պատկերազարդված Ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 8029): **Եկեղեցական ճարտարապետություն.** 3. Լեռնակերտի միանավ բազիլիկ եկեղեցին (IV դ.): 4. Աշտարակի եռանավ բազիլիկ Ծիրանավոր եկեղեցին (V–VI դդ.): 5. Արագածի բազմախորան Գրիգորաշեն եկեղեցին (VI դ.): 6. Արտաշավանի փոքր խաչաձև գմբեթավոր Ս. Ամենափրկիչ եկեղեցին (VII դ.): 7. Ոսկեպարի Ս. Աստվածածին եկեղեցին (VII դ.) հս-արմ-ից: 8. Անիի վեցախորան Աբուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցու (X դ.) առաստաղապատկերը: 9. Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցու (X դ.) արլ. ճակատի հատված:*

1



2



3

4

5

Եկեղեցական ճարտարապետություն. *1. Գառնիի Ս. Աստվածածին եկեղեցին (XIII դ.): 2. Աշտարակի Ս. Մարինե եկեղեցին (XIII դ.): 3. Եղվարդի երկհարկ Ս. Աստվածածին եկեղեցի-զանգակատունը (XIV դ.): 4. Թեոդոսիայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (XIV դ.): 5.* ***Եղիշե.*** *«Ս. Եղիշե վարդապետ», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502):*

1

4



2



3



5

6

1. ***Եղվարդի Ս. Թեոդորոս վանքի*** *եկեղեցին (661–685): 2.* ***Եպիփան Կիպրացի.*** *«Ս. Եպիփան Կիպրացի», մանրանկար 1713-ին Կաֆայում Քրիստոսատուրի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 7391): 3.* ***Եսայի Նչեցի.*** *«Եսայի Նչեցի», մանրանկար 1318-ին Գլաձորում Թորոս Տարոնացու ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 206): 4.* ***Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին*** *(XIII դ.) հվ-արմ-ից: 5.* ***Երևանի Ս. Անանիա առաքյալ անապատի Զորավոր*** *Ս. Աստվածածին եկեղեցին (1693) հվ-ից: 6.* ***Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին*** *(1996–2001, ճարտ.՝ Ստ. Քյուրքչյան) արմ-ից:*

1

2

3



4



5

6

1. ***Երևանի Ս. Սարգիս եկեղեցին*** *(XIX դ., վերակառուցվել է 1971–1976-ին) արմ-ից:* ***Երևույթի Ս. Կարապետ վկայարան.*** *2. Երևույթի Ս. Կարապետ վկայարանը (V դ.) հվ-արմ-ից: 3. Վկայարանի հվ. ճակատը (հատված): 4.* ***«Երզնկայի Աստվածաշունչ».*** *Գիրք Ծննդոցի անվանաթերթը, մանրանկար «Երզնկայի Աստվածաշունչ»-ից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1925): 5.* ***Երից Մանկանց վանքի*** *եկեղեցու (1691) հվ. ճակատի հատված: 6.* ***Երրորդություն.*** *«Սուրբ Երրորդություն», մանրանկար 1338-ին Սարգիս Պիծակի պատկերազարդած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 2627):*

5.4.

1

2

3

4

Երուսաղեմ. *1. Երուսաղեմի տաճարի մանրակերտը: 2. Հիսուս Քրիստոսի գերեզմանը Ս. Հարություն տաճարում: 3. Ս. Հարություն տաճարը (IV դ.): 4. Ս. Կույսի գերեզմանը Գեթսեմանիի Ս. Աստվածածին եկեղեցում:*

1



2

3

Երուսաղեմի հայոց պատրիարքություն. *1. Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի եկեղեցու Ավագ խորանը: 2. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ս. Հարություն տաճարում: 3.* ***Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի*** *եկեղեցու ներքին տեսքը:*

1

*1. **Եփրեմ Ասորի.** «Ս. Եփրեմ Ասորի», մանրանկար 1418-ին կազմված և պատկերազարդված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 2690): 2. **Զան·ակապուն.** Հաղպատի վանքի զանգակատունը (1245): **Զատիկ.** 3. «Հարություն», մանրանկար 1268-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի ծաղկած «Մալաթիայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10675): 4. «Հարություն», մանրանկար 1419-ին Ոստանում Աստվածատուրի պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 2670):*

2

3

4



1

Զ·եսպ եկեղեցական. 1. Հայրապետական զգեստավորում: 2. Կոնքեռ (1713, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Սաղավարտ (XVII դ., Ս. Էջմիածին): 4. Վակաս (1642, Վաղարշապատ, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 5. Փորուրար (1716, Քանաքեռ, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):

2



3



5

4

5.8.

1

2

3



4

5

Զ·եար և կ ե ղ ե ց ա կ ա ն. *1. Շուրջառ (XVIII դ., Վենետիկ, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 2. Գոտի ճարմանդով (XVIII դ., Կարս, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Պանակ (XVIII դ., Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 4. Խույր արտախուրակներով (1795, Ս. Էջմիածին): 5. Խույր (1711, Ս. Էջմիածին):*

1

2

3



4

***Զ·եստ** եկեղեցական. 1. Բազպաններ (1771, Ս. Էջմիածին): 2. Շապիկի ուսանոց (1734, Վաղարշապատ, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Շապիկ (1776, Ս. Էջմիածին): 4. Հողաթափեր (1881, Ս. Էջմիածին):*

6.2.

1

2



3



4

5

Զմմառի վանք. *1. Զմմառի վանքը (XVIII դ.) արմ-ից: 2. Վանքը արլ-ից: 3. Վանքի Ս. Աստվածածին եկեղեցու (1771) ներսը:* ***Զոհաբերություն.*** *4. «Աբրահամի զոհաբերությունը», մանրանկար 1462-ին Արճեշում Կարապետ Բերկրեցու նկարազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 4778): 5. «Աբրահամի զոհաբերությունը», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

1

2



3



4

5



6

1. ***Զովունու Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին*** *(V–VI դդ.) արլ-ից: 2.* ***Զորաղիրի Ս. Էջմիածին եկեղեցին*** *(VI–VII դդ.) հս-արմ-ից: 3.* ***Զորաց Ս. Աստվածածին եկեղեցին*** *(XIV դ.) արմ-ից:* ***Զվարթնոց.*** *4. Զվարթնոց տաճարի մանրակերտն ըստ Թ. Թորամանյանի վերակազմության: 5. Տաճարի հվ. խորանը: 6. Տաճարի զարդաքանդակներից:*

6.4.

1



2

3

4

*«**Էջմիածնի Ավետարան**». 1. «Էջմիածնի Ավետարան»-ի փղոսկրե կազմը (VI դ.): 2. «Քրիստոսը գահի վրա», մանրանկար 989-ին ընդօրինակված «Էջմիածնի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 2374): 3. «Մոգերի երկրպագությունը», մանրանկար «Էջմիածնի Ավետարան»-ից: 4. **Էջմիածնի հոյ որ ճեմարանի** շքամուտքը (1909):*



1



2

3



4

Էջմիածնի Մայր տաճար. *1. Էջմիածնի Մայր տաճարը հվ-արմ-ից: 2. Մայր տաճարի Ավագ խորանի խաչակալը: 3. Մայր տաճարի Իջման սեղանը: 4. Մայր տաճարի ներսը:*

6.6.

1



2

3

Էջմիածնի Ս. Գայանե վանք. *1. Ս. Գայանե վանքի եկեղեցին (630) Հվ-արմ-ից: 2. Վանքի եկեղեցու ներսը: 3.* ***Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքի*** *եկեղեցին (618) Հս-արմ-ից:*

1

2

3

4

*1. **Թադեոս.** «Սբ Թադեոս առաքյալ», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 2. **Թալինի Կաթողիկե եկեղեցին** (VII դ.) հվ-արլ-ից: 3. **Թանադե վանքը** (XIII դ.) հվ-արմ-ից: 4. **Թանահատի վանքի** Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու (V դ.) խորանի կամարը (հատված):*

6.8.

1

2

3



4

*1. «**Թարգմանչաց Ավետարան**», «Ծնունդ», մանրանկար 1232-ին պատկերազարդված «Թարգմանչաց Ավետարան»-ից, ծաղկող՝ Գրիգոր (Մատենադարան, ձեռ. № 2743): 2. **Թարգմանչաց շարժում.** Հայ գրերի կոթողն Օշականում: 3. **Թելեքի Ս. Գ՝ որ· վանքի** (XVII–XIX դդ.) ընդհանուր տեսքը: 4. **Թեհրանի քեմի** առաջնորդանիստ Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցին:*



1



2

3

4



5

Թեղենյաց վանք. *1. Թեղենյաց վանքի գավիթը (1207) հվ-արլ-ից: 2. Վանքի Կաթողիկե եկեղեցու (XII դ.) բեմի զարդաքանդակները: 3.* ***Թովմա Մեծոփեցի.*** *«Թովմա Մեծոփեցի և Պողոս առաքյալ», մանրանկար 1435-ին Մեծոփավանքում ընդօրինակված Մեկնությունից (Մատենադարան, ձեռ. № 1380):* ***Թորոս Ռոսլին.*** *4. «Ծնունդ», մանրանկար 1268-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի պատկերազարդած «Մալաթիայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10675): 5. Մարկոսի Ավետարանի անվանաթերթը, մանրանկար 1256-ին Թորոս Ռոսլինի պատկերազարդած «Զեյթունի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10450):*

7.2.

1

2

3

Թորոս Տարոնացի. *1. Թորոս Տարոնացու 1323-ին պատկերազարդած Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը (Մատենադարան, ձեռ. № 6289): 2. Թորոս Տարոնացու ինքնանկարը 1318-ին Գլաձորում ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 206): 3.* ***Իրաքի քեմի*** *առաջնորդանիստ Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:*



1



2

3

4



5

*1. «**Լազարյան Ավետարան**». Խորան 887-ին Սահակ Վանանդեցու ընդօրինակած և ծաղկած «Լազարյան Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 6200): 2. **Լմբատավանքի** Ս. Ստեփանոս եկեղեցին (VI դ.) Հվ-արլ-ից: **Լվովի Ս. Աստվածածին եկեղեցի.** 3. Եկեղեցու (1363–70) Ավագ խորանը: 4. Եկեղեցու գմբեթի որմնանկարը: 5. **Լուսավորչի Աջ.** Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, 1657: Ոսկի, գունավոր քարեր: Դրվագում, ձուլում, քարերի ագուցում (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

1

2

3

4

5

*1. **Խաղավանքի** զանգակատունը (XIV դ.): **Խաչ.** 2. Խաչ ս. Կարապետի մասունքով, XIV դ., Ադանա, 1665, վերանորոգման վարպետ՝ Ալեքսան Ուրֆացի: Արծաթ, գունավոր քարեր: Դրվագում, ոսկեզօծում, քարերի ագուցում, զուգաթել (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Աշոտ Երկաթ թագավորի խաչը՝ պահարանով: Խաչը՝ 914–929-ին, Անի, պահարանը՝ XVIII դ., Կարս: Արծաթ, երկաթ, փայտ: Ձուլում, դրվագում, քարերի ագուցում (Մայր տաճարի թանգարան, Էջմիածին): 4. Խաչ մասունքով, 1735, Մուշ: Արծաթ, գունավոր քարեր: Ձուլում, դրվագում, զուգաթել, քարերի ագուցում (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 5. Ձեռաց խաչ, XI–XII դդ., Անի: Բրոնզ, ձուլում (Մայր տաճարի թանգարան, Էջմիածին): 6. Թևավոր խաչքար (XVII դ., Էջմիածին):*

6

1



2

3

1. ***Խաչատուր Էրզրումացի.*** *«Խաչատուր վարդապետ Էրզրումացի», մանրանկար 1715-ին Ղրիմում կազմված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 2106):* ***Խաչելություն.*** *2. «Խաչելություն», մանրանկար 1450-ին Արծկեում Մինասի պատկերազարդած Ճաշոցից (Մատենադարան, ձեռ. № 982): 3. «Խաչելություն», մանրանկար «Սմբատ Սպարապետի Ավետարան»-ից, ծաղկող՝ Ավետիք (Մատենադարան, ձեռ. № 7644): 4.* ***Խաչքար.*** *Նորատուսի գերեզմանատան խաչքարերից:*

4

7.6.



1

2



3



4



5

Խաչքար. *1. Խաչքար (IX դ., Մաքենիս, այժմ՝ Էջմիածնում): 2. Խաչքար-հուշակոթող (1195, Կոչ): 3. «Ամենա-փրկիչ» խաչքար (1279, Ուրծ, այժմ՝ Էջմիածնում): 4. Խաչքար (1291, Գոշավանք, վարպետ՝ Պողոս): 5. Խաչքար (1602, Ջուղա, այժմ՝ Էջմիածնում):*

1

2



3

1. ***Խծկոնքի վանքի*** *Ս. Սարգիս եկեղեցին (1027): 2.* ***Խոսրով Անձ՞ ացի.*** *«Խոսրով Անձևացին պատարագ մատուցելիս», մանրանկար 1714-ին Թոխաթում պատկերազարդված Խորհրդատետրից (Մատենադարան, ձեռ. № 7804): 3.* ***Խոսրովիդուխտ.*** *«Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ Գ թագավոր և Խոսրովիդուխտ», մանրանկար 1596-ին Վանում խաչատուր Խիզանցու ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 4681): 4.* ***Խոտակերաց վանքը*** *(910) Հվ-արմ-ից:*

4

1

2

Խոր վիրապի վանք. *1. Վանքի ընդհանուր տեսքը: 2. Վանքի Ս. Աստվածածին եկեղեցին (XVII դ.) հվ-արմ-ից: 3.* ***Խորակերտի վանքը*** *(XIII դ.) արմ-ից:*



3

1

2



3



4

Խորան. *1. Խորան 1211-ին Մարգարեի ծաղկած «Հաղպատի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 6288): 2. Խորան 1268-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի պատկերազարդած «Մալաթիայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10675): 3. Խորան XIII դ. 60–70-ական թթ. Կիլիկիայում ընդօրինակված «Սմբատ Սպարապետի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7644): 4. Խորան 1374-ին պատկերազարդված Ավետարանից, ծաղկող՝ Խաչատուր Կեսարացի (Սեպուհ լեռ, Մայր աթոռ Ս. Էջմիածին, ձեռ. № 96):*

8.2.



1



2



3

1. ***Խորանաշատի վանքի*** *(XIII դ.) ընդհանուր տեսքը: 2.* ***Խորիրդատեսիր-Պատարա·ամատույց.*** *«Ս. Աթանաս Ալեքսանդրացին պատարագ մատուցելիս», մանրանկար 1356-ին Սուրխաթում (Ղրիմ) պատկերազարդված Պատարագամատույցից (Մատենադարան, ձեռ. № 3046): 3.* ***Խուճապի վանքը*** *(IX–XIII դդ.) հվ-ից: 4.* ***Ծաղկազարդ.*** *«Մուտք Երուսաղեմ», մանրանկար 1336-ին Սարգիս Պիծակի ծաղկած «Արքունական Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 5786):*

4



1



2

3

Ծիծեռնավանք. *1. Ծիծեռնավանքը (IV–V դդ.) հվարլ-ից: 2. Ծիծեռնավանքի ներքին տեսքը: 3.* ***Ծործորի վանքի*** *Ս. Աստվածածին եկեղեցու (1298–1314) ընդհանուր տեսքը: 4. «****Ծուղրուրի Ավետարան****» «Հարություն», մանրանկար 974-ին պատկերազարդված «Ծուղրութի Ավետարան»-ից:*

4

8.4.

1

2

3

4

5

6

Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո. *1. Անթիլիասի կաթողիկոսանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը (1940, ճարտ.՝ Ա. Ալթունյան) արմ-ից: 2. Բերիո թեմի առաջնորդանիստ Հալեպի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցու ներսը: 3. Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդանիստ Հոլիվուդի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին: 4. Լիբանանի թեմի առաջնորդանիստ Բեյրութի Ս. Նշան Մայր եկեղեցին: 5. Կիպրոսի թեմի առաջնորդանիստ Նիկոզիայի Ս. Աստվածածին եկեղեցին: 6. Աթենքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:*

1

2

3

4

*1. **Կանադայի թեմի** առաջնորդանիստ Մոնրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 2. «**Կարմիր Ավետարան**». «Ծնունդ», մանրանկար «Կարմիր Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 6202): 3. **Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցին** (VII դ.) արմ-ից: 4. «**Կարսի Ավետարան**». «Քրիստոսի հայտնությունը աշակերտներին», մանրանկար XI դ. պատկերազարդված «Կարսի Ավետարան»-ից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2556):*

8.6.



1



2

1. ***Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին*** *(X դ.) հվ-արլ-ից:* ***Կենաց ծառ****. 2. «Կենաց ծառ», որմնանկար Էրեբունիի պալատի մեծ դահլիճից (Ք.ծ.ա. VIII դ.): 3. «Կենաց ծառ», մանրանկար 1323-ին Թորոս Տարոնացու ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 6289): 4. «Փեսի ծառ» (XIX–XX դդ., Արթիկ):*

3

4



1

2

1. ***Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակություն.*** *Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցին: 2.* ***Կեչառիսի վանքը*** *(XI–XIII դդ.) հս-արմ-ից: «****Կեռան թա·ուհու Ավետարան****». 3. Կեռան թագուհին և Լևոն Գ թագավորը զավակների հետ, վերևում՝ Քրիստոսը գահի վրա, երկու կողմում՝ Մարիամը և Հովհաննես Մկրտիչը, մանրանկար 1272-ին պատկերազարդված «Կեռան թագուհու Ավետարան»-ից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2563): 4. «Խաչելություն», մանրանկար «Կեռան թագուհու Ավետարան»-ից:*

3



4



1

2

1. ***Կիրակոս Երզնկացի.*** *«Կիրակոս և Մկրտիչ Երզնկացիներն աշակերտների հետ», մանրանկար 1334-ին Երզնկայում Մանուելի ծաղկած Մեկնությունից (Մատենադարան, ձեռ. № 1379): 2.* ***Կիրանց վանքը*** *(XIII դ.) հվ-արմ-ից: 3.* ***Կյուրեղ Երուսաղեմացի.*** *«Ս. Կյուրեղ Երուսաղեմացի», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502): 4.* ***Կոնդակ.*** *Կաթողիկոսական կոնդակ (ուղերձ):*



3

4

1



2

1. ***Կոշի Ս. Ստեփանոս վանքը*** *(VII դ.) հվ-ից: 2.* ***Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն.*** *Կոստանդնուպոլսի Ս. Աստվածածին Մայր եկեղեցին (XIV դ.): 3.* ***Կոտայքի թեմի*** *առաջնորդանիստ Ծաղկաձորի Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:*

3

9.2.

1

2

3

*1. **Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու** (XIV դ.) զանգակատունը: 2. **Հակոբ Ա Կլայեցի.** «Հակոբ կաթողիկոս Կլայեցի և Հովհաննես Երզնկացի Պլուզ», մանրանկար 1741-ին ընդօրինակված Մեկնությունից (Մատենադարան, ձեռ. № 6396): 3. **Հակոբ Ջուղայեցի.** «Հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց», մանրանկար 1610-ին Հակոբ Ջուղայեցու պատկերազարդած «Նոր Ջուղայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7639): **Հաղարծինի վանք.** 4. Վանքը (X–XIII դդ.) հս-արմ-ից: 5. Խաչքար վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հվ. մուտքի մոտ (XIII դ.):*

4

5

1

2

Հաղորդություն. *1. «Հաղորդություն», մանրանկար Ծերուն ծաղկողի 1391-ին պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 8772): 2. «Հաղորդություն», մանրանկար 1397-ին Խիզանում Ռստակեսի պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 7629): «**Հաղպատի Ավետարան**». 3. «Մուտք Երուսաղեմ», մանրանկար 1211-ին ընդօրինակված և պատկերազարդված «Հաղպատի Ավետարան»-ից, գրիչ՝ Հակոբ, ծաղկող՝ Մարգարե (Մատենադարան, ձեռ. № 6288): 4. Խորան «Հաղպատի Ավետարան»-ից:*

3



4

9.4.

1

Հաղպատի վանք. *1. Վանքի Ս. Նշան եկեղեցին (976–991) հվ-արլ-ից: 2. Ուքանանց տոհմի տապանատան խաչքարը (1220) վանքի «Համազասպի ժամատան» հս-արմ. կողմում: 3. Վանքը (X–XIII դդ.) հվ-արմ-ից:*



2

3

1

2

3

4

Համբարձում. *1. «Համբարձում», մանրանկար «Մղոնու Ավետարան»-ից, XI դ., ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի (Մատենադարան, ձեռ. № 7736): 2. «Համբարձում», մանրանկար 1287-ին Կիլիկիայում (Ակներ) պատկերազարդված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 197): 3. «Համբարձում», մանրանկար 1610-ին Հակոբ Ջուղայեցու պատկերազարդած «Նոր Ջուղայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7639): 4.* ***Հայերեն.*** *Հայոց այբուբենը (1976, հեղ.՝ Բ. Արզումանյան և Ժ. Ջուլոյան, Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

9.6.

1

2

3

Հայսմավուրք. *1. Մեկ էջ 1438-ին ընդօրինակված և կազմված Հայսմավուրքից, գրիչ՝ Ազարիա (Մատենադարան, ձեռ. № 4517): 2. Կիսախորան 1438-ին Ազարիա գրչի ընդօրինակած Հայսմավուրքից: 3. Մանրանկար 1709-ին Մարաշում Սարգիս երեցի գրչագրած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 4547): 4–5.* ***Հայտնություն.*** *«Հայտնություն», մանրանկարներ 1368-ին և 1660-ին պատկերազարդված Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 2705):*

4



5

1

3

4

2

5



6

1. ***Հայրավանքը*** *(IX–XIII դդ.) հս-արլ-ից:* ***Հառիճավանք.*** *2. Վանքը (VII–XIII դդ.) հվ-արմ-ից: 3. Վանքի Ս. Աստվածածին եկեղեցու (1201) գմբեթի թմբուկը:* ***Հավուց թառ վանք.*** *4. Վանքի Ս. Ամենափրկիչ եկեղեցին (XIII դ.) հս-արմ-ից: 5. Վանքի Ս. Կարապետ եկեղեցին (1721) հս-արմ-ից: 6.* ***Հարավային Ռուսաստանի թեմի*** *առաջնորդանիստ Կրասնոդարի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին:*

9.8.

1

2



3

4

*«**Հերում Բ թա·ավորի ճաշոց»**. 1. «Մուտք Երուսաղեմ», մանրանկար 1286-ին Կիլիկիայում ընդօրինակված և պատկերազարդված «Հեթում Բ թագավորի ճաշոց»-ից (Մատենադարան, ձեռ. № 979): 2. «Երեք մանուկները հնոցում», մանրանկար «Հեթում Բ թագավորի ճաշոց»-ից: 3. **Հերհերի Ս. Սիոն անապատի** ընդհանուր տեսքը: 4. **Հերմոնի վանք**. «Հովհաննես ավետարանիչ և Պրոքորոն», մանրանկար 1481-ին Հերմոնի վանքում Եսայու պատ-կերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 6699):*

1

2

3

4

5

Հիսուս Քրիստոս. *1. «Եկայք առ իս...», Վ. Սուրենյանց (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 2. «Ամենափրկիչ» խաչքար (1273, Հաղպատի վանք), հատված: 3. Հիսուս Քրիստոսի բարձրաքանդակը Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու արմ. ճակատին: 4. «Հիսուս Քրիստոս», մանրանկար 1266-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 5458): 5. «Դեհիսուս», մանրանկար 1268-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի ծաղկած «Մալաթիայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10675):*

10.2.



1



2

3

*1. **Հնդկաստանի՝ Ծայրա·ույն Արՙ եկլի հայրապետական պատվիրակություն.** Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 2. **Հնավանքի** (VII–XIII դդ.) ընդհանուր տեսքը: 3. **Հո·հաց վանքի** ընդհանուր տեսքը:*

1

2

3



4



5

Հոն·ալուսպ. *1. «Հոգեգալուստ», մանրանկար 1268-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի պատկերազարդած «Մալաթիայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10675): 2. «Հոգեգալուստ», մանրանկար XIII դ. կեսին Կիլիկիայում ընդօրինակված «Սմբատ Սպարապետի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7644): 3.* ***Հովհան Ոսկեբերան.*** *«Ս. Հովհան Ոսկեբերան», մանրանկար 1418-ին կազմված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 2690): 4.* ***Հովհան Որոտնեցի.*** *«Ս. Հովհան Որոտնեցի և ս. Գրիգոր Տաթևացի», մանրանկար XVIII դ. ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 3295): 5.* ***Հովհաննավանքի*** *կաթողիկե եկեղեցին (1216–21) վերակառուցումից հետո:*

1



2

*1. **Հովհաննավանքի** գավիթը (1250) հվ-արմ-ից: 2. **Հովհաննես Ա Մանդակունի.** «Ս. Հովհաննես Մանդակունի», մանրանկար XIV դ. Ղրիմում կազմված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 8029): 3. **Հովհաննես Գ Օձնեցի.** «Ս. Հովհաննես Օձնեցի», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502): 4. **Հովհաննես Երզնկացի** Պ ո ւ ղ. «Հովհաննես Երզնկացի և Ապլոց իշխան», մանրանկար 1644-ին Հալեպում կազմված ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 7046): 5. **Հովհաննես Մկրտիչ.** «Հովհաննես Մկրտիչ», հատված Սիմեոն Արճիշեցու 1305-ին Արճեշում պատկերազարդած Ավետարանի «Մկրտություն» մանրանկարից (Մատենադարան, ձեռ. № 2744):*

3



4

5

1

2

3

Հովնաթանյաններ. *1. Հովնաթան Հովնաթանյան. «Խորհրդավոր ընթրիք» (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 2. Հովնաթան Հովնաթանյան. «Աստվածամոր թագադրումը» (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Հովնաթան Հովնաթանյան. «Նոյի զոհաբերությունը» (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*



1

2

3

4

Հովնաթանյաններ. *1. Հովհաննես (Յոհան Շոռոթեցի) Հովնաթանյան. «Մատթեոս ավետարանիչ», մանրանկար 1653-ի Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 2494): 2. Մարգար Հովնաթանյան. մանրանկար 1679-ի Ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 4418): 3–4. Նաղաշ Հակոբ և Հարություն Շոռոթեցի Հովնաթանյաններ. «Եղիշե» և «Ներսես Շնորհալի», մանրանկարներ 1725–30-ին էջմիածնում պատկերազարդված Հայմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1533):*

1

2

3

4

Հռիփսիմյանց կույսեր. *1–2. «Սբ Գայանե» և «Սբ Հռիփսիմե», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):* ***Հրեշտակներ.*** *3. Հրեշտակի բարձրաքանդակը Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու արմ. ճակատին: 4. «Հրեշտակը և ս. Մարիամը», 1330-ին Կիրակոս Աղբակեցու պատկերազարդած Ավետարանի «Ավետում» մանրանկարում (Մատենադարան, ձեռ. № 2929):*

1

2

Հրեշտակներ. *1. «Ավետում», մանրանկար 1585-ին Հակոբ Ջուղայեցու ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 9691): 2. «Հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց», մանրանկար 1286-ին ընդօրինակված և պատկերազարդված «Հեթում Բ թագավորի ճաշոց»-ից (Մատենադարան, ձեռ. № 979): 3. «Հրեշտակներ», հատված Հովհաննես Խիզանցու 1402-ին պատկերազարդած Ավետարանի «Ծնունդ» մանրանկարից (Մատենադարան, ձեռ. № 5562): 4. «Հրեշտակի բարեխոսությունը», մանրանկար 1318-ին Գլաձորում Թորոս Տարոնացու ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 206):*

3

4



1

2

3

Ձեռագիրը մատյան. *1. 1053-ին Սանդղկավանքում Հովհաննես Սանդղկավանեցու ընդօրինակած Ավետարանի երկաթագիր վերջաբանը՝ խաչի տեսքով (Մատենադարան, ձեռ. № 3793): 2–3. 1255-ին Հռոմկլայում ընդօրինակված 1249-ի Ավետարանի արծաթե, ոսկեջրած կազմի ա փեղկը «Դեխսուսի» պատկերով, բ փեղկը չորս ավետարանիչների պատկերով (Մատենադարան, ձեռ. № 7690):* ***Ձեռնադրություն.*** *4. «Ձեռնադրություն», մանրանկար 1287-ին Կիլիկիայում (Ակներ) Հովհաննես Արքաեղբոր ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 197): 5. «Կաթողիկոսի ձեռնադրություն», մանրանկար 1471-ին Աղթամարում Կարապետի ծաղկած Մաշտոցից (Մատենադարան, ձեռ. № 5702):*

4

5

11.2.

1

2

3

1. ***Ճաշոց.*** *Մանրանկար 1667-ի ձաշոցից, գրիչ՝ Հերապետ (Մատենադարան, ձեռ. № 4502): 2.* ***Ճառընտիր.*** *Մեկ էջ 1401-ին Ոստանում Մերուների ընդօրինակած և ծաղկած Ճառընտիրից (Մատենադարան, ձեռ. № 4670): 3.* ***Մակաբավանքը*** *(XI–XIII դդ.) արմ-ից:*



1

2

3

Մանրանկարչություն. *1. «Հովնան մարգարեին գցում են կետ ձկան երախը», մանրանկար 1286-ին ընդօրինակված «Հեթում Բ թագավորի ճաշոց»-ից (Մատենադարան, ձեռ. № 979): 2. Խորան XIII դ. 80-ական թթ. Կիլիկիայում ընդօրինակված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 9422): 3. «Հոբ Երանելին և նրա ընկերները», մանրանկար 1269-ին Երզնկայում ծաղկած Աստվածաշնչից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1925):*

11.4.



1

2

Մանրանկարչություն. *1. «Մուտք Երուսաղեմ» և «Ոտնլվա», մանրանկար 1392-ին Պետրոս գրչի ընդօրինակած և Հովհաննես Խիզանցու ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 3717): 2. «Իմաստուն և հիմար կույսեր», մանրանկար XIII դ. Արցախում գրված ու պատկերազարդված Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 4820): 3. «Հովհաննես ավետարանիչ և Պրոքորոն», մանրանկար 1224-ին Խորանաշատում գրված «Վանանու Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 4823): 4. «Քրիստոսին դագաղ դնելը» և «Հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց», մանրանկարներ 1302-ին Մոմիկի ծաղկած «Պատերազմի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 6792):*

3

4

1



2

3

4

Մանրանկարչություն. *1. «Մկրտություն», մանրանկար 1323-ին Գլաձորում Թորոս Տարոնացու ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 6289): 2. «Համբարձում», մանրանկար 1356-ին Ղրիմում ընդօրինակված Ճաշոցից, ծաղկող՝ Կարապետ (Մատենադարան, ձեռ. № 7408): 3. «Հովհաննու Հայտնությունը», մանրանկար 1669-ին Ղրիմում ընդօրինակված Աստվածաշնչից, ծաղկող՝ Նիկողայոս Ծաղկարար (Մատենադարան, ձեռ. № 7623): 4. «Ավետում», մանրանկար XIV դ. Տաթևի վանքում պատկերազարդված Ավետարանից, ծաղկող՝ Գրիգոր Տաթևացի (Մատենադարան, ձեռ. № 6305):*



1

2

3

4



5

*1. **Մանուել.** Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցու (915–921, ճարտ.՝ Մանուել) արմ. ճակատը: 2. **Մաշտոց.** «Մեռոնի օրհնությունը», մանրանկար 1471-ին Աղթամարում պատկերազարդված Մաշտոցից, ծաղկող՝ Կարապետ Աղթամարցի (Մատենադարան, ձեռ. № 5702): 3. «**Մաշտոց**». «Կարմիր ծովի անցումը», մանրանկար 1266-ին Թորոս Ռոսլինի ծաղկած «Մաշտոց»-ից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2027): 4. **Մասիս.** Փոքր և Մեծ Մասիսները: 5. **Մասպարայի Ս. Հովհաննես եկեղեցին** (VI–VII դդ.) Հվ-արլ-ից:*



1

2

3

4

Մասունք *սրբոց. 1. Մասանց պահարան «Նոյյան տապանի մասունքով», 1698, Քանաքեռ: Արծաթ, փայտ: Դրվագում, ոսկեզօծում, քարերի ագուցում, արծնապատում (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 2. Մասանց պահարան «Խոտակերաց սուրբ Նշան», 1300, Վայոց ձոր: Արծաթ, փայտ: Դրվագում, քարերի ագուցում, ոսկեզօծում (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 3. Մասանց պահարան ս. Բարդուղիմեոս առաքյալի մասունքով, X դ., վերանորոգված 1143-ին, Վան: Արծաթ, փայտ, կաշի: Դրվագում, ոսկեզօծում (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 4. Խաչ մասունքով, 1746, Լիմ, Վասպուրական: Արծաթ, սերդոլիկ, մարջան, գունավոր քարեր: Զուգաթել, հատիկազարդում, ձուլում, դրվագում, քարերի ագուցում, ոսկեզօծում, փորագրում (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

1

2

3

4

5

Մատենադարան. *1. Երևանի Մատենադարանի շենքը (1945–57, ճարտ.՝ Մ. Գրիգորյան): 2. Մատենադարանի ձեռագրապահոցը: 3. Վիեննայի Մխիթարյան Մայրավանքի մատենադարանը: 4. Վենետիկի Ս. Ղազար վանքի ձեռագրատան ներքին տեսքը: 5. Զմմառի վանքի մատենադարանի ընթերցասրահը. հանրագիտարանների բաժին:*

1

3

2



4

*1. **Մատթեոս Ջուղայեցի.** «Մատթեոս Ջուղայեցի», մանրանկար 1715-ին Կարինում պատկերազարդված Քարոզգրքից, ծաղկող՝ Թեոդոս (Մատենադարան, ձեռ. № 6607): **Մար·ապեներ.** 2. «Մարգարեների տոհմածառը», մանրանկար 1450-ին Արծկեում Մինասի ծաղկած Ճաշոցից (Մատենադարան, ձեռ. № 982): 3. «Դանիել մարգարե», մանրանկար 1263–66-ին Բարձրբերդում պատկերազարդված «Մասունք Աստվածաշնչի»-ից (Մատենադարան, ձեռ. № 4243): 4. «Երեմիա մարգարե», մանրանկար 1268-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի ծաղկած «Մալաթիայի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10675):*

12.2.

1

2

3

4

5

Մար·արևներ. *1. «Մովսես մարգարե», մանրանկար 1338-ին Սարգիս Պիծակի ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 2627): 2. «Դավիթ մարգարե», մանրանկար XIV դ. Վասպուրականում Ղազարի պատկերազարդած Ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 1979): 3. «Եսայի մարգարե», մանրանկար 1450-ին Արծկեում պատկերազարդված Ճաշոցից, ծագող՝ Մինաս (Մատենադարան, ձեռ. № 982): 4. «Եզեկիել մարգարե», մանրանկար 1477-ին Արճեշում պատկերազարդված Ճաշոցից (Մատենադարան, ձեռ. № 6378): 5. «Սամուել մարգարե», մանրանկար XV դ. Տաթևում պատկերազարդված Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 7361):*

1

2

3

Մարիամ Աստվածածին. *1. «Աստվածամայրը գահի վրա», Վ. Սուրենյանց (Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու Ավագ խորանում): 2. «Մարիամ Աստվածածինը մանուկ Հիսուսի հետ», լուսանցազարդ մանրանկար 1286-ին ընդօրինակված «Հեթում Բ թագավորի Ճաշոց»-ից (Մատենադարան, ձեռ. № 979): 3. «Տիրամայրը Մանկան հետ», Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային ճակատի բարձրաքանդակ հորինվածքը:*

1



2

1. ***Մարմաշենի վանքը*** *(X–XI դդ.) հվ-ից: 2.* ***Մաքենյաց վանքը*** *(VII–IX դդ.) արմ-ից:* ***Մեսրոպ Մաշտոց.*** *3. «Ս. Մեսրոպ Մաշտոց», մանրանկար 1713-ին կազմում պատկերազարդված Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 7391): 4. Մեսրոպ Մաշտոցի արձանը (1967, քանդ.՝ Ղ. Զուբարյան, Երևան):*

3

4



1

2

3

4

5

*«**Մլքե թա·ուհու Ավետարան**». 1. Խորան 862-ին Վասպուրականում պատկերազարդված «Մլքե թագուհու Ավետարան»-ից (Վենետիկի Ս. Ղազար վանքի մատենադարան, ձեռ. № 1144/86): 2. «Համբարձում», մանրանկար «Մլքե թագուհու Ավետարան»-ից: 3. **Մխիթար Գոշ.** «Մխիթար Գոշ», մանրանկար 1713-ին կազմված պատկերազարդված Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 7391): **Մխիթարյան միաբանություն.** 4. Վենետիկի Ս. Ղազար կղզին: Մխիթարյան Մայրավանքի ընդհանուր տեսքը: 5. Վիեննայի Մխիթարյան միաբանության Մայրավանքի Ավագ խորանը:*

1

3

2

4



5

6

7

Մկրտություն. *1. «Մկրտություն», մանրանկար 989-ին ընդօրինակված «Էջմիածնի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 2374): 2. «Մկրտություն», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):* ***Մյուռոն.*** *3. Սրբալույս Մյուռոնի օրհնությունը, Ս. Էջմիածին: 4. Ս. Մյուռոնի սափոր, 1815, արծաթ, գունավոր քարեր (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 5. Ս. Մյուռոնի կաթսա, 1883, արծաթ, պղինձ, գունավոր քարեր (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 6. Մեռոնաթափ աղավնի, 1797, ոսկի, ռուբիններ (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 7. Հին Մյուռոնի խառնումը նորին Մյուռոնօրհնության ժամանակ:*

1

2



3

*«**Մշո Ճառընտիր**». 1. «Մուտք Երուսաղեմ», մանրանկար 1200–02-ին պատկերազարդված «Մշո Ճառընտիր»-ից, ծաղկող՝ Ստեփանոս (Մատենադարան, ձեռ. № 7729): 2. «Քրիստոսը գահի վրա», «Մկրտություն», «Ծնունդ», մանրանկարներ «Մշո Ճառընտիր»-ից: 3. **Մոխրեվանի Օխտը դռնի վանքի** եկեղեցու (VI դ.) ներսը: «**Մողնու Ավետարան**». 4. «Խաչելություն», մանրանկար XI դ. պատկերազարդված «Մողնու Ավետարան»-ից, ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի (Մատենադարան, ձեռ. № 7736): 5. Խորան «Մողնու Ավետարան»-ից:*

4



5

12.8.

1

2

3

4

5

Մոմիկ. *1. «Համբարձում», մանրանկար 1302-ին Մոմիկի ծաղկած «Պատերազմի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 6792): 2. Մոմիկի կերտած 1308-ի խաչքարը (Նորավանք, այժմ՝ Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):* ***Մովսես Խորենացի.*** *3. «Սբ Մովսես Խորենացի», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 4. «Մովսես Խորենացի և Սահակ Բագրատունի» (ներքևում՝ ձեռագրի պատվիրատու Ներսես Գնունեցին), մանրանկար Խիզանում 1567-ին պատկերազարդված ձեռագրից (Մատենադարան, ձեռ. № 2865): 5. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ձեռագրերից մեկի տիտղոսաթերթը (Մատենադարան, ձեռ. № 2865):*



1



2



3

4

5

*1. **Մորո Ջորո վանքի** Ս. Աստվածածին եկեղեցին (V դ.) արլ-ից: 2. **Մրենի Կաթողիկե եկեղեցին** (613–639) հս-արմ-ից: 3. **Մուղնու Ս. Գ՝ որ· վանքը** հվ-արմ-ից: **Մուրատ-Ռափայելյան վարժարան.** 4. Մուրատ-Ռափայելյան վարժարանի շենքի ներքին ճակատը և պարտեզը: 5. Վարժարանի սրահներից:*

13.2.



1



2

3

Ներսես Ա Մեծ. *1. «Սբ Ներսես», Հովնաթան Հովնաթանյան (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 2. «Ս. Ներսես Մեծը պատարագ մատուցելիս», մանրանկար 1672-ին Ամրդոլու վանքում Սահակ Վանեցու ծաղկած ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 2639): 3.* ***Ներսես Լամբրոնացի.*** *«Ներսես Լամբրոնացի», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502): 4.* ***Ներսես Շնորհալի.*** *«Ս. Ներսես Շնորհալի», մանրանկար 1352-ին Սուրխաթում պատկերազարդված Մանրուսումից (Մատենադարան, ձեռ. № 591): 5.* ***Նոր Նախիջ՝ անի՝ Ռուսաստանի քեմի*** *առաջնորդանիստ Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցին:*



4

5



1

2

3

4

5

1. ***Նոր Նախիջ՚անի Ս. Խաչ վանքի*** *եկեղեցին (1783–91): 2.* ***«Նոր Ջուղայի Ավետարան»****. «Մատթեոս ավետարանիչ», մանրանկար «Նոր Ջուղայի Ավետարան»-ից, ծաղկող՝ Հակոբ Ջուղայեցի (Մատենադարան, ձեռ. № 7639): 3.* ***Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի*** *Ս. Հովսեփ Հարեմաթցի եկեղեցին (1655–64) հվ-արմ-ից:* ***Նոր Վարագավանք****. 4. Նոր Վարագավանքի Ս. Աստվածածին եկեղեցին (1224–37) արմ-ից: 5. Վանքի Անապատ եկեղեցին (1198) և տապանատունը (1200) արմ-ից:*

1

2

3

Նորավանք. *1. Նորավանքը (XIII–XIV դդ.) հս-ից: 2. Վանքի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին (1216–21) և Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատունը (1275) հվ-արլ-ից: 3. Վանքի գավթի արևմտյան մուտքի ճակատակալ քարը:*

1

3

1. ***Շարակնոց.*** *Մոսկի Սուրբ գյուղում 1658-ին գրված և պատկերազարդված Շարակնոցի մանրանկարներից (Մատենադարան, ձեռ. № 4620): 2.* ***Շիրակի թեմի*** *առաջնորդանիստ Գյումրու Ս. Աստվածածին Յոթ վերք եկեղեցին: 3.* ***Շողակաթ վանքը*** *(1694) Հվ-արմ-ից:*

2

1

3

2

4

1. ***Շոռոթի Ս. Հակոբ եկեղեցին*** *(1642) հվ-արմ-ից: 2.* ***Շվեյցարիայի թեմի*** *առաջնորդանիստ ժնևի Ս. Հակոբ եկեղեցին: 3.* ***Շուշանիկ.*** *«Ս. Շուշանիկ», մանրանկար 1651-ին Մարկոս Պատկերահանի ծաղկած Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 1502): 4.* ***Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին*** *(1868–87) արմ-ից:*

1

2

3



4

5

6

7

8

Որմնանկարչություն. *1. Էմբատավանքի (VII դ.) Ս. Ստեփանոս եկեղեցու քառակերպ էակ պատկերող որմնանկարը: 2. Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու (չի պահպանվել) Բարդուղիմեոս առաքյալին պատկերող որմնանկարը: 3. «Հաղորդություն», հատված Քոբայրավանքի մեծ եկեղեցու (XII–XIII դդ.) որմնանկարներից: 4. Հատված Ախթալայի Ս. Աստվածածին վանքի (XIII դ.) որմնանկարներից: 5. Մի անկյուն Անիի Տիգրան Հոնենց եկեղեցու (XIII դ.) նկարազարդ որմերից:* ***Պապվո ապրիճաններ՝ պար՝ ապրումներ.*** *6. Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանը: 7. Ս. Սահակ–Ս. Մեսրոպ շքանշանը: 8. Ս. Ներսես Շնորհալի շքանշանը:*

13.8.



1



2

3



4

5

6

*1. **Պտղնավանքը** (VI–VII դդ.) հվ-արմ-ից: 2. **Ռումինիայի թեմի** առաջնորդանիստ Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց Մայր տաճարը: 3. **Սաղմոս** «Դավիթ մարգարէ», մանրանկար XVI դարում Հովակիմ Երեցի ծաղկած Սաղմոսարանից (Մատենադարան, ձեռ. № 1641): 4. **Սաղմոսավանքը** (XIII դ.) արմ-ից: **Սանահինի վանք.** 5. Սանահինի վանքը (X–XIII դդ.) հվ-արլ-ից: 6. Գրիգոր Տուտեորդու խաչքարը (1184, գործ՝ Մխիթար Կազմողի) Սանահինի վանքի Ս. Հարութիւն եկեղեցու հս. կողմում:*

1

2

3

5

4

*«**Սանդղկավանքի Ավետարան**». 1. Մեկ էջ 1053-ին Սանդղկավանքում Հովհաննես Սանդղկավանեցու ընդօրինակած և ծաղկած «Սանդղկավանքի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 3793): 2. «Ղուկաս ավետարանիչ», մանրանկար «Սանդղկավանքի Ավետարան»-ից: 3. «**Սասնա ծռեր**». Դրվագ «Սասնա ծռեր» էպոսի պահպանակից, Հ. Կոջոյան (1935, ՀԱՊ, Երևան): 4. **Սարգիս**. «Սատանան և չարի իշխանությունը», խճանկար (XIII դ., Ֆլորենցիա): 5. **Սարգիս**. «Ս. Սարգիս զորավար», մանրանկար XVI–XVII դդ. Հայսմավուրքից (Մատենադարան, ձեռ. № 7478):*

14.2.

1

2

Սարգիս Պիծակ. *1. «Ոտնլվա», մանրանկար 1336-ին Սարգիս Պիծակի ծաղկած «Արքունական Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 5786): 2. «Ավետում» և «Տեառնընդառաջ», մանրանկար «Արքունական Ավետարան»-ից: 3. Ինքնանկար, «Մատթեոս ավետարանիչ», «Հակոբ կաթողիկոս», մանրանկարներ 1338-ին Սարգիս Պիծակի ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 2627): 4. «Հովհաննես ավետարանիչ և Պրոքորոն», Հովհաննեսի Ավետարանի տիտղոսաթերթը, ծաղկող՝ Սարգիս Պիծակ (Մատենադարան, ձեռ. № 10449):*

3



4



1

2



3

4

5

*1. **Սևան.** Էջմիածնի Մայր տաճարի Ավագ սեղանի առաջամասը: 2. **Մ՝ անավանքը** (X դ.) արլ-ից: 3. **Սկ՝ ռա.** «Ս. Գրիգոր Նարեկացի», մանրանկար 1173-ին Սկևռայում Գրիգոր Մլիճեցու ծաղկած «Մատյան ողբերգության» ձեռագրից (Մատենադարան, ձեռ. № 1568): «**Սկ՝ ռայի Ավետարան**». 4. «Հովհաննես ավետարանիչ», մանրանկար 1197-ին պատկերազարդված «Սկևռայի Ավետարան»-ից (գտնվում է Լեհաստանի Գնիեզնո քաղաքում): 5. Մարկոսի Ավետարանի սկզբնաթերթը «Սկևռայի Ավետարան»-ից:*

14.4.

1

2

*«**Սմբատ Սպարապետի Ավետարան»**. 1. «Մարկոս ավետարանիչ», մանրանկար XIII դ. 60–70-ական թթ. Կիլիկիայում ընդօրինակված «Սմբատ Սպարապետի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7644): 2. «Համբարձում», մանրանկար «Սմբատ Սպարապետի Ավետարան»-ից: 3. **Սյունի վանք.** Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցին (670–689) հս-արմ-ից: 4. **Սյունյաց թեմի** առաջնորդանիստ Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 5. **Սպահանի թեմի** առաջնորդանիստ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը:*



3

4

5


1

2

3

Սպասք եկեղեցական. *1. Սկիհ, 1623, Էդիրնե, արծաթ (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 2. Սկիհի ծածկոց, 1754 (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Բուրվառ, XVIII դ., Վաղարշապատ, արծաթ (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 4. Խաչ ս. Սեղանի, XVIII դ., Վասպուրական, արծաթ, մարջաններ (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 5. Աշտանակ, 1872, արծաթ (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 6. Կանթեղ, 1734, Ամստերդամ, արծաթ (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 7. Կանթեղ, 1870, Ակն, արծաթ, ոսկի (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան):*

4


5

6

7

1



2



3

4

5

6

7

***Սպասք** եկեղեցական. 1. Քչոց, 1765, Լիմ, Վասպուրական, արծաթ (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 2. Խնկաման-տապանակ, XVIII դ., Ակն, արծաթ, գունավոր ապակի (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 3. Խնկանոց, 1721, Աստապատ, արծաթ, գունավոր ապակի (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 4. Ս. Գրիգոր Լուսավորչի խաչվառը, 1448, մետաքս (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): 5. Ս. Սեղանի գոգնոց, XVIII դ., փայտ, արծաթ, մահուդ (Հին վեհարան, Էջմիածին): 6. Ցողման սրվակ, XVIII դ., Տրապիզոն, արծաթ (Էջմիածնի Մայր տաճարի թանգարան): 7. Մասնատուփ խաչով, XIV–XVIII դդ. (Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):*

1



3

1. ***Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի*** *եկեղեցին (1321) հս-արմ-ից: 2.* ***Ստեփանոս Նախավկա.*** *«Ս. Ստեփանոս Նախավկա», մանրանկար 1450-ին Արծկեում Մինասի ծաղկած ճաշոցից (Մատենադարան, ձեռ. № 982): 3.* ***Սրբապատկեր.*** *«Տիրամայրը Մանկան հետ», պատկերված են նաև ս. Գրիգոր Լուսավորիչը, Հովհաննես Մկրտիչը, տասներկու առաքյալները, անհայտ նկարչի սրբանկար (XVIII դ., Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին): Սուրբ Ծնունդ՝ Աստվածահայտնություն. 4. «Քրիստոսի Ծնունդը», մանրանկար 1318-ին Գլաձորում Թորոս Տարոնացու ծաղկած «Եսայի Նչեցու Աստվածաշնչից» (Մատենադարան, ձեռ. № 206): 5. «Ծնունդ», մանրանկար 1336-ին Սարգիս Պիծակի պատկերազարդած «Արքունական Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 5786):*

2

4

5

1

2

3

4

Սուրբ Հոգի. *1. «Հոգեգալուստ», մանրանկար «Մողնու Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7736): 2. «Հոգեգալուստ», մանրանկար Սիմեոն Արճիշեցու 1305-ին պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 2744):* ***Սուրխաթի Ս. Խաչ վանք.*** *3. «Աստվածամայրը և Աբրահամը», մանրանկար 1332-ին Սուրխաթում Գրիգոր Սուքիասանցի պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 7664): 4. «* ***Վասակ իշխանի Ավետարան****». «Քրիստոսը և Աստվածամայրը հովանավորում են ծնրադիր Վասակ իշխանին և նրա զավակներին», մանրանկար XIII դ. պատկերազարդված «Վասակ իշխանի Ավետարան»-ից (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2568):*

1

2

Վարա·ավանք. *1. Վարագավանքի (X–XVII դդ.) այժմյան տեսքն արմ-ից: 2. Վանքի գավթի (1648) որմնանկարները: 3.* ***Վարդան Այ·եկցի.*** *«Վարդան Այգեկցի», մանրանկար XVII դ. ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 7006): 4.* ***Վարդան Բաղիշեցի.*** *«Հարություն», մանրանկար 1571-ին Բաղեշում Վարդան Բաղիշեցու պատկերազարդած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 4845):*

3



4

1

Վարդանանք. *1. Գ. Խանջյան. «Վարդանանք» գոբելենի նախապատկերը, թուղթ, կավճաներկ (1981, նկարչի ընտանիքի սեփականություն, Երևան): 2. «Ավարայրի ճակատամարտը», մանրանկար 1482-ին Ականց անապատում Կարապետ Բերկրեցու ծաղկած Շարակնոցից (Մատենադարան, ձեռ. № 1620): 3. «Վարդան Մամիկոնյան», մանրանկար 1569-ին Բաղիշում Վարդան Բաղիշեցու ծաղկած Ժողովածուից (Մատենադարան, ձեռ. № 1920):*



2

3

1

2

1. ***Վարդավառ.*** *«Այլակերպություն» («Պայծառակերպություն»), մանրանկար XIII դ. ընդօրինակված «Սմբատ Սպարապետի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7644): 2.* ***«Վեհափառի Ավետարան».*** *«Հուդայի մատնությունը», մանրանկար X–XI դդ. ընդօրինակված և պատկերազարդված «Վեհափառի Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 10780): 3.* ***Վերափոխումն Ս. Աստվածածնի.*** *«Ննջումն Աստվածամոր», մանրանկար 1336-ին Սարգիս Պիծակի ընդօրինակած և ծաղկած «Արքունական Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 5786): 4.* ***Վրաստանի թեմի*** *առաջնորդանիստ Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցին:*



3



4

1



4

5

2



3

*1. **Տաթ՝ ի համալսարան.** «Ավետում», մանրանկար 1378-ին Տաթևի վանքում Գրիգոր Տաթևացու ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. № 7482): **Տաթ՝ ի վանք.** 2. Տաթևի վանքի ընդհանուր տեսքը: 3. Վանքի Ս. Աստվածածին եկեղեցին (1087) և դարպասը: 4. Մարգարեների պատկերները վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարի Ավագ խորանի որմնանկարում: 5. Վանքի Ս. Երրորդություն հուշասյունը («Գավազան»):*

1

2

3

1. ***Տեղերի վանքը*** *(XIII դ.) Հվ-արլ-ից: 2.* ***Տեսիլք.*** *«Եզեկիելի տեսիլքը», մանրանկար 1498-ին Առնաց գյուղում պատկերազարդված Ավետարանից, ծաղկող՝ Կարապետ Աղթամարցի (Մատենադարան, ձեռ. № 4955):* ***Տի·րան Հոնենցի եկեղեցի.*** *3. Տիգրան Հոնենցի եկեղեցին (1215) Հվ-արմ-ից: 4. Եկեղեցու ներքին տեսքը:*



4

1

3

Տյառնընդառաջ. *1. «Տյառնընդառաջ», մանրանկար «Մողնու Ավետարան»-ից, ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի (Մատենադարան, ձեռ. № 7736): 2. «Տյառնընդառաջ», մանրանկար «Հեթում Բ թագավորի ճաշոց»-ից, ծաղկող՝ Թորոս Ռոսլին (Մատենադարան, ձեռ. № 979): 3. «**Տրապիզոնի Ավետարան**»ն «Ամենակալ Քրիստոսը», մանրանկար «Տրապիզոնի Ավետարան»-ից (Վենետիկի Ս. Ղազար վանքի մատենադարան, ձեռ. № 1400): 4.* ***Տրդատ.*** *Անիի Մայր տաճարի (989–1001, ճարտ՝ Տրդատ) հվ. ճակատը (հատված):*

2



4

1


2


3

4


5

Տրդատ Գ Մեծ. *1. Տրդատ Գ Մեծի մկրտության հիշատակին Արածանիի ափին կանգնեցված հուշաքարը՝ «Տրդատի արձանը»: 2. «Ս. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին», սրբապատկեր (XVIII դ., Սուչավա, այժմ՝ Ա. և Մ. Մանուկյան գանձատուն, Էջմիածին):* ***Յաղաց քար վանք.*** *3. Վանքի Ս. Հովհաննես եկեղեցին (1041) հս-արմ-ից: 4. Վանքի Ս. Կարապետ եկեղեցին (1041) հս-արմ-ից: 5. Ս. Կարապետ եկեղեցու հվ. շքամուտքը և արծվի հարթաքանդակը:*

1

2



3

*«**Ութ մանրանկարիչների Ավետարան**». 1. «Թագավորազնի որդին կենդանանում է», մանրանկար «Ութ մանրանկարիչների Ավետարան»-ից (Մատենադարան, ձեռ. № 7651): 2. «Դիվահարների և հարյուրապետի ծառայի բուժումը», մանրանկար «Ութ մանրանկարիչների Ավետարան»-ից: 3. **Ուկրաինայի թեմի** առաջնորդանիստ Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցին (1363–70): 4. **Ուշիի Ս. Սարգիս վանքը** (V–XVII դդ.) հս-արմ-ից:*

4



1

2



3

*1. **Ուրցաձորի Ս. Հովհաննես Կարապետ վանքի** Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցին (1301) հս-արմ-ից: 2. **Ուրու·վայի թեմի** առաջնորդանիստ Մոնտեվիդեոյի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին: 3. **Փառակայի Ս. Հակոբ Հայրապետ վանքի** եկեղեցին (1691–1701) հվ-արլ-ից: 4. **Քարոզ** «Պողոս առաքյալը քարոզելիս», մանրանկար 1318-ին Թորոս Տարոնացու ծաղկած Աստվածաշնչից (Մատենադարան, ձեռ. № 206):*

4

16.2.

1

2



3

4

1. ***Քիրամ Կազմոդ.*** *Քիրամ Կազմոդի խաչքարերը Նորատուսի գերեզմանոցում:* ***Քոբայրավանք.*** *2. Քոբայրավանքի գլխավոր եկեղեցու Ավագ խորանը: 3. Վանքը (XII–XIII դդ.) արլ-ից: 4.* ***Քրիստոնեություն.*** *Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված նամականիշներ:*

1



2

*1. **Օծոփի Ս. Աստվածածին վանքի** եկեղեցին (1651) հվ-արմ-ից: **Օծում.** 2. «Թագավորի օծումը», մանրանկար 1471-ին Աղթամարում պատկերազարդված Մաշտոցից, ծաղկող՝ Կարապետ Աղթամարցի (Մատենադարան, ձեռ. № 5702): 3. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանի կաթողիկոսական օծումը:*

3

1

2

3



4

*1. **Օձունի Ս. Աստվածածին եկեղեցին** (VI դ.) հարմ-ից: **Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի.** 2. Եկեղեցու (1873–79) ներքին տեսքը: 3. Եկեղեցու «Փառք հայ գրի ու դպրության» որմնանկարի աջ մասը (հեղ.՝ Հ. Մինասյան, մասնակցությամբ Հ. Մամյանի): 4. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը եկեղեցու խորանի տակ:*